ՀԱՅ
ԺՈՂՈՎՐԴԻ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

VI

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

ИСТОРИЯ АРМЯНСКОГО НАРОДА

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ МНОГОТОМНИКА

Агаян Ц. П., Акопян А. М., Аракелян Б. Н.,
Галоян Г. А., Еремян С. Т., Иоаннисян А. Г.,
Нерсесян М. Г., Хачикян Л. С.

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН · 1981

ДУБЛЕТ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

A III/6515

ԲԱԶՄԱՀԱՏՈՐՅԱԿԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ

Աղայան Ծ. Պ., Առաքելյան Բ. Ն., Գալոյան Գ. Ա., Երեմյան Ս. Տ., Խաչիկյան Լ. Ս., Հակոբյան Ա. Մ., Հովհաննիսյան Ա. Գ., Ներսիսյան Մ. Գ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ · 1981

ТОМ VI

АРМЕНИЯ
В 1870-1917 ГОДАХ

РЕДАКЦИЯ ТОМА

Агаян Ц. П. (ответственный редактор),
Амбарян А. С. (зам. отв. редактора), *Барсегян Х. А., Ерканян В. С.,*
Иоаннисян А. Г. (ответственный редактор),
Мурадян Д. А., Оганнисян Р. П.

ՀԱՏՈՐ VI

ՀԱՅԱՍՏԱՆԸ
1870-1917 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

ՀԱՏՈՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ադայան Ժ. Պ. (պատասխանատու խմբագիր),
Բարսեղյան Հ. Հ., Երկանյան Վ. Ս., Համբարյան Ա. Մ. (պատասխանատու խմբագրի տեղակալ), Հովհաննիսյան Ա. Գ. (պատասխանատու խմբագիր), Հովհաննիսյան Ռ. Փ., Մուրադյան Դ. Ա.

ԳՄԴ 63.3 (2 Հ) 1
Հ 24

Տպագրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Հ 24 *Հայ ժողովրդի պատմություն /ՀՍՍՀ ԳԱ, Պատմ. ին-տ. խմբ. կոլեգիա Մ. Պ. Աղայան, Ա. Գ. Հովհաննիսյան, Մ. Գ. Ներսիսյան, Գ. Ա. Գալոյան և ուրիշ.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1981.*

Հ. 6. Հայաստանը 1870—1917 թվականներին. 1050 էջ. 4 քարտեզ

Հայ ժողովրդի պատմության ներկա հատորում լուսաբանվում է Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների զարգացման, հայ պրոլետարիատի ձևավորման պատմությունը, հասարակական-քաղաքական հոսանքների և կուսակցությունների գործունեությունը։ Միաժամանակ ցույց են տրվում Արևելյան Հայաստանում ծավալված հեղափոխական շարժումները, ինչպես նաև հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ։

Առանձին բաժիններ են հատկացվում ժամանակաշրջանի գիտության, մշակույթի, արվեստի, գրականության և հայ գաղթավայրերի պատմության հարցերին։

0505040000 ԳՄԴ 63.3 (2 Հ) 1
Հ ———————21—79 9 (C 43) 1
703 (02)—81

© Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1981

Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

«Հայ ժողովրդի պատմության» վեցերորդ հատորն ընդգրկում է XIX դարի 70-ական թվականներից մինչև 1917 թ. հոկտեմբերը, մի ժամանակաշրջան, որ հարուստ է ժողովրդի սոցիալ-տնտեսական զարգացման և քաղաքական կյանքի, ազգային-ազատագրական շարժումների ու հեղափոխական պայքարի պատմության դրվագներով։

XIX դարի կեսերից, հատկապես գյուղացիական ռեֆորմից հետո, ամբողջ Անդրկովկասում, այդ թվում և Արևելյան Հայաստանում, սկսեցին զարգանալ կապիտալիստական հարաբերություններ։ Առաջ եկան արդյունաբերական ձեռնարկություններ, զգալի հաջողությունների հասավ ճանապարհաշինությունը, հատկապես Թիֆլիս — Ալեքսանդրապոլ — Երևան, Ալեքսանդրապոլ — Կարս երկաթուղագծերի կառուցումը, որի շնորհիվ արագացավ տնտեսական առաջընթացը, զարգացան շուկայական հարաբերությունները։ «Ռուսական կապիտալիզմը,— 1898 թ. գրել է Վ. Ի. Լենինը,— Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր ֆաբրիկանների համար շուկա էր ստեղծում։ Հետռեֆորմյան ժամանակաշրջանի սկզբին... երկիրը, դառնում էր նավթարդյունաբերողների, գինու առևտրի անողնների, ցորենի ու ծխախոտի ֆաբրիկատերերի երկիր...»[1]։

Բուրժուական հարաբերությունների զարգացումը սրում էր դասակարգային հակասությունը քաղաքում և գյուղում։ Արդյունաբերական ապրանքների առաքումը Ռուսաստանից և արտասահմանից արագացնում էր արհեստավորության քայքայումը, գյուղում կուլակային խավի կողմից հողերի բռնագրավումը և վաշխառուական կապիտալի ուժեղացումը քայքայում էին մանր սեփականատերերի տնտեսությունը, որի հետևանքով գյուղացիության մի զգալի մասն արտագնացության էր դիմում Անդրկովկասի և Ռուսաստանի արդյունաբերական կենտրոնները, իսկ մյուս մասը բատրակությամբ զբաղվում։ Ձևավորվում է հայ բանվոր դասակարգը, որը բոլոր թելերով կապված էր Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատի հետ։ Հայաստանից դուրս գտնվող մի շարք արդյունաբերական քաղաքներում (Բաքու, Թիֆլիս, Բաթում և այլն) հայ բանվորությունը զգալի տոկոս էր կազմում։ Դրան զուգահեռ ձևավորվում էր բուն Հայաստանի բանվոր դասակարգը, որը կապված լինելով Անդրկովկասի և Ռուսաստանի արդյունաբերական կենտրոնների հետ, մասնակից էր դառնում ծավալվող հեղափոխական շարժումներին։

---

1 Վ. Ի. Լենին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, էջ 771։

Բուրժուական հարաբերությունների բուռն վերելքը արտահայտվում էր տնտեսական կյանքում կատարված տեղաշարժերով, մամուլի, գրականության և հասարակական մտքի զարգացումով։ Բուրժուազիան իր շահերն ապահովելու և տնտեսական ու քաղաքական վիճակն ամրապնդելու համար ձգտում էր ազգի առաջնորդ լինել, ցանկանում էր հասարակության բոլոր խավերին իրեն ենթարկել։ Այդ նպատակին հասնելու համար նա ստեղծում էր իր մամուլը, զազափարական պայքարի այլ միջոցներ և քաղաքական կազմակերպություններ ու կուսակցություններ։

Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում ու Արևելյան Հայաստանում հեղափոխության ժամանակաշրջանը բնութագրվում է որպես ազատագրական շարժման ռազնոչինյան, բուրժուադեմոկրատական, նարոդնիկական շրջան։ Վ. Ի. Լենինը իր «Ռուսաստանի բանվորական մամուլի անցյալից» նշանավոր հոդվածում գրում է. «Ռուսաստանում ազատագրական շարժումն անցել է երեք գլխավոր էտապներ, համապատասխան ռուսական հասարակության այն երեք գլխավոր դասակարգերի, որոնք իրենց կնիքն են դրել շարժման վրա. 1) ազնվականական ժամանակաշրջան, մոտավորապես 1825-ից մինչև 1861 թվականը, 2) ռազնոչինական կամ բուրժուադեմոկրատական, մոտավորապես 1861-ից մինչև 1895 թ., 3) պրոլետարականը՝ 1895 թվականից մինչև ներկա ժամանակը»[2]։

Այնուհետև Վ. Ի. Լենինը շարունակում է. «Ճորտատիրական իրավունքի անկումը երևան բերեց ռազնոչինեցին, որպես թե՛ առհասարակ ազատագրական շարժման և թե՛ մասնավորապես դեմոկրատական, անցնելոզրային մամուլի գլխավոր մասսայական գործչի։ Ռազնոչինեցի տեսակետին համապատասխանող՝ տիրապետող ուղղություն դարձավ նարոդնիկությունը»[3]։

Արևելահայ իրականության մեջ ևս 1860—1890-ական թվականներին հասարակական զարգացման մեջ ակտիվ դեր է խաղում ռազնոչին (տարասրիճան) մտավորականությունը։

XIX դ. վերջին Ռուսաստանում պրոլետարիատն արդեն հանդես է գալիս որպես առաջատար հեղափոխական ուժ, դառնալով բոլոր ճնշվածների սոցիալական և ազգային-ազատագրական պայքարի դրոշակակիրն ու առաջնորդը։ Համաշխարհային հեղափոխական շարժման կենտրոնը Արևմուտքից տեղափոխվում է Ռուսաստան։

Պրոլետարական շարժումը, որն սկզբնական շրջանում տարերային բնույթ էր կրում Ռուսաստանում, նոր ընթացք ստացավ, երբ Վ. Ի. Լենինը նոր պայմաններում ստեղծագործաբար զարգացնելով մարքսիզմը, հանդես եկավ աշխարհը վերափոխող իր ուսմունքով։ Լենինյան գազափարների լույսի տակ ստեղծվում են հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ, պրոպագանդայի հզոր միջոցներ։ Ռուսաստանում լայնորեն տարածվում է մարքսիստական գրականությունը։ Լենինյան «Իսկրայի» ստեղծումը և բոլշևիզմի հանդես գալը որպես գազաքական մտքի հոսանք և որպես քաղաքական կուսակցություն[4], բախտորոշ դեր խաղացին հեղափոխական պայ-

---

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 297։
3 Նույն տեղում, էջ 298։
4 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր հ. 31, էջ 9։

քարը կազմակերպելու և մարքս-լենինյան ուղիով տանելու համար։ Հայ աշխատավորական զանգվածները ռուսական հեղափոխական մտքի, լենինյան գաղափարների ներգործության շնորհիվ մեծ առաջընթաց ապրեցին և մասնակից դարձան ռուսական պրոլետարիատի հեղափոխական պայքարին։ Սակայն հայ ժողովուրդը շարունակում էր մնալ երկփեղկված։ Եթե նրա արևելյան հատվածը, չնայած ցարիզմի գաղութային քաղաքականությանը և տեղական շահագործողների ճնշումներին, այնուամենայնիվ, Ռուսաստանի կազմում զգալի առաջընթաց ապրեց, ապա արևմտյան հատվածը Օսմանյան կայսրության ծանր լծի տակ ենթարկվում էր ոչ միայն տնտեսական, քաղաքական, ազգային ու կրոնական բիրտ հալածանքների, այլև ֆիզիկական ոչնչացման։

Թուրքական, ինչպես և բոլոր մյուս արևելյան բռնապետություններն անհամատեղելի են բուրժուական հարաբերությունների զարգացման հետ. այնտեղ «ձեռք բերած հավելյալ արժեքը,— գրում է Ֆ. Էնգելսը,— ոչնչով ապահովված չէ սատրապների ու փաշաների գիշատիչ ձեռքերից, գոյություն չունի բուրժուական շահույթի առաջին հիմնական պայմանը՝ վաճառականի անձի և սեփականության ապահովությունը»[5]։

Արևմտյան տերություններն իրենց գաղութատիրական քաղաքականությունն անցկացնելու, նոր շուկաներ ու տարածքներ զավթելու նպատակով հովանավորում էին սուլթանին, սանձազերծում նրա ջարդարարական քաղաքականությունը, զոհաբերում ճնշված փոքր ազգություններին։ Նրանք շահագրգռված չէին Օսմանյան կայսրության բուրժուական զարգացման ընթացքով, ընդհակառակը, ամեն ինչ անում էին պահպանելու ֆեոդալական հարաբերությունները և իրենց ծառայեցնելու թուրքական շուկան։

Աբդուլ-Համիդյան և ապա երիտթուրքական ոճրագործները, օգտվելով արևմտյան տերությունների հովանավորությունից, հայ ժողովրդի նկատմամբ գործադրեցին պատմության մեջ նախադեպը չունեցող ցեղասպանություն։ Զանգվածային կոտորածից զերծ մնացած արևմտահայության բեկորները ցրվեցին աշխարհով մեկ, ստվարացնելով հայկական վաղեմի գաղթօջախները և ստեղծելով նորերը։ Հայության զանգվածային ոչնչացումը ողջ աշխարհի առաջադեմ մարդկության զայրույթն առաջացրեց։

Սակայն հայ ժողովուրդը երբեք գլուխ չի խոնարհել բռնակալների առջև և մահու ու կենաց պայքար է մղել ազատության համար։ Իր պայքարում նա հույսը կապել է հեղափոխական Ռուսաստանի հետ, ռուս ժողովրդի հետ։

Բոլշևիկի կոնգրեսից հետո, երբ Սան-Ստեֆանոյի պայմանագրի՝ հայերին վերաբերող 16-րդ հոդվածը փոխարինվեց չարաբաստիկ 61-րդ հոդվածով, նահամոզվեց, որ բալկանյան ժողովուրդների օրինակով պետք է սեփական ուժերով ձեռք բերել իր ազատությունը։ Այդ այն շրջանն էր, երբ Ռուսաստանում, Արևմտյան Եվրոպայում և Ասիայի որոշ երկրներում ծավալվող ժողովրդական շարժումները, դեմոկրատական-հեղափոխական պայքարը գնալով լայն արձագանք էին գտնում ճնշված ժողովուրդների մոտ։ Նման պայմաններում ձևավորվում են հայկական բուրժուական և մանր-բուրժուական քաղաքական կազմակերպությունները ու կուսակցությունները (արմենական, հնչակյան, դաշ-

---

[5] *К. Маркс и Ф. Энгельс*, Соч., том 22, М., 1962, стр. 33.

Նակցական), որոնցից յուրաքանչյուրը, առաջնորդվելով իր դասակարգային շահերով, առաջադրում է ծրագրեր և պայքարում դրանց իրագործման համար։

Ստեղծված պայմաններում Օսմանյան կայսրության ռազմաֆեոդալական դաժան կարգերը տապալելու համար անհրաժեշտ էր դրանց հակադրել բոլոր ճնշված ազգությունների ու բուրք աշխատավորության միասնական ուժերը, համընդհանուր ապստամբական շարժումը։ Սակայն տիրող հետամնացությունն ու կրոնական մոլեռանդությունն արգելակում էին միասնական ճակատ առեղծելուն։ Դրան խանգարում էին նաև ազգայնական կուսակցությունների քաղաքականությունը և տիրող դասակարգերի հակամարտությունները։

Հայ ազատագրական շարժումներն իրենց բնույթով դեմոկրատական, առաջադիմական շարժումներ էին, քանի որ ուղղված էին սուլթանական բռնակալական կարգերի, ֆեոդալական ճնշման ու ազգային հալածանքների դեմ։ Ազատագրական այդ պայքարում հերոսական էջեր գրեց Զեյթունի, Սասունի, Վասպուրականի և Արևմտյան Հայաստանի այլ շրջանների հայ բնակչությունը։ Այդ պայքարը լայն արձագանք էր գտնում կովկասահայության մեջ, որն իր եղբայրներին օգնելու համար հայթայթում էր նյութական միջոցներ, կազմակերպում կամավորական խմբեր և ուղարկում սուլթանիզմի դեմ մարտնչող պարտիզանական ջոկատներին օգնության։ Դրանց զինելու գործը իրենց ձեռքն էին վերցրել Ռուսաստանում և Արևմտյան Եվրոպայում գործող հայկական խմբակներն ու ընկերությունները։

Վ. Ի. Լենինը XIX դարի 90-ական թվականների բուրքական ռազմաֆեոդալական կարգերի դեմ ուղղված հայկական շարժումները համարել է առաջադիմական։ «Պրոլետարիատի կռիվը», «Պրավդա» և բոլշևիկյան մամուլի այլ օրգաններ բազմիցս անդրադարձել են արևմտահայության ազատագրական պայքարին։ Այդ պայքարին կարևոր նշանակություն էին տալիս նաև հայ լենինյանները՝ Կ. Բ. Կնունյանցը, Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ս. Կասյանը և ուրիշներ։

Հայ ժողովրդի ազատագրական պայքարը նոր հունի մեջ մտավ ռուսական առաջին հեղափոխության տարիներին։ 1905—1907 թթ. Արևելյան Հայաստանի աշխատավորները, սրտագանքելով Ռուսաստանի բանվոր դասակարգին, հեղափոխական պայքարի մեծ դպրոց անցան։ Ալավերդու և Ղափանի պղնձահանքերի բանվորները, Ալիբանդրապոլի և Կարսի երկաթուղայինները, Լոռիի և Սարիղամիշի զորամասերը, Հաղպատի, Ջանգեզուրի և այլ շրջանների գյուղացիներն ակտիվորեն արձագանքեցին ռուսական հեղափոխությանը։

Իմպերիալիստների կողմից սանձազերծված առաջին համաշխարհային պատերազմը ահավոր աղետի առջև կանգնեցրեց հայ ժողովրդին։ Բազմաչարչար, բոլորի կողմից լրված, անօգնական հայ ժողովուրդը փրկության ելք էր որոնում։ Այդ ելքը ռուսական հեղափոխության ուղիներում էր։ Պատերազմը ավելի ողբերգական դարձրեց արևմտահայության դրությունը։ Պատերազմի տարիներին ծնունդ առավ հայկական կամավորական շարժումը, որն ակնկալում էր Ռուսաստանի և նրա դաշնակիցների օգնությամբ արևմտահայությանն ազատագրել թուրքական լծից։

Հայ ժողովրդի զավակները, հավատարիմ հայ-ռուսական դարավոր բարեկամության ավանդություններին, թե՛ ռուսական բանակի կազմում և թե՛ կա-

մավորական ջոկատներում կռվում էին Բշնամու՝ գերմանաթուրքական բլոկի դեմ[6]։

Պատերազմի հետևանքով Արևելյան Հայաստանը տնտեսապես քայքայվեց, իսկ Արևմտյան Հայաստանը ավերվեց և մեկ ու կես միլիոն հայեր ցեղասպանության զոհ գարձան։

1917 թ. Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը հայ ժողովրդի ազատագրման ու նրա վերածննդի նոր դարագլուխ բացեց, նրա տնտեսական, քաղաքական ու կուլտուրական բարգավաճման համար լայն հնարավորություններ ստեղծեց։

Հատորում ընդհանրացվում են վերջին տասնամյակների ընթացքում սովետահայ պատմագրության կողմից կուտակված գիտական արդյունքները. նորահայտ բազմաթիվ փաստերի ու արխիվային նյութերի հիման վրա զբաղված ուսումնասիրությունները։ Նրանում լայն տեղ են գտել պատմագիտության զարգացման մեջ լենինյան գաղափարների, մարքս-լենինյան ամենահաղթ ուսմունքի գերն ու նշանակությունը հասարակական-քաղաքական մտքի զարգացման և հեղափոխական շարժումների ծավալման գործում։ Կոնկրետ փաստերով ցույց են տրվում, որ հայ ժողովրդի ազատագրման միակ ճիշտ ուղին դասակարգային, հեղափոխական պայքարի ուղին էր, Վ. Ի. Լենինի ցույց տված ուղին, որն ապահովեց հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրումն ու նրա վերածնունդը։

«Հայ ժողովրդի պատմության» VI հատորում առաջին անգամ առանձին բաժնում ընդհանրացվում է հայ գաղթօջախների և համայնքների պատմությունը, ցույց տրվում, որ տարագիր հայությունն աշխարհի տարբեր երկրներում զգալի ավանդ է մուծել իրեն հյուրընկալած երկրի տնտեսական և մշակութային զարգացման բնագավառում և կապված լինելով մայր հայրենիքի հետ, զարգացրել ու պրոպագանդել է հայ ժողովրդի մշակույթի արժեքները։

Հատորում բավականին ամփոփված է նաև մշակույթի բաժինը, որտեղ բազմաթիվ հարցեր առաջին անգամ են լուսաբանվում։ Հատկապես ընդգծվում է ռուսական առաջադեմ մշակույթի ու դեմոկրատական հեղափոխական մտքի բարերար ազդեցությունը հայ հոգևոր կյանքի զարգացման վրա։

* * *

Հատորը պատրաստել է հեղինակային կոլեկտիվը հետևյալ կազմով՝ Աբրահամյան Ա. Գ., Աբրահամյան Ռ. Ա., Ադոբաշյան Վ. Լ., Ազատյան Վ. Դ., Աղայան Ծ. Պ., Արզումանյան Մ. Վ., Բաբլոյան Մ. Ա., Բարխուդարյան Վ. Բ., Բարսեղյան Խ. Հ., Գրիգորյանց Ա. Ա., Երկանյան Վ. Ս., Էլչիբեկյան Հ. Մ., Թավաքալյան Ն. Ա., Թումասյան Ն. Ռ., Թոփուզյան Օ. Խ., Թումանյան Բ., Խաչատրյան Վ. Ա., Կարախանյան Գ. Հ., Գարապետյան Ն. Վ., Կծոյան Ա. Ս.,

---

6 Տե՛ս «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967, էջ 173։

Համբարյան Ա. Ս., Հարությունյան Գ. Ս., Հարությունյան Ս. Բ., Հարությունյան Վ. Մ., Հովհաննիսյան Ա. Գ., Հովհաննիսյան Ռ. Փ., Հովնանյան Ս. Վ., Ղազարյան Մ. Մ., Մադոյան Գ. Ա., Մալխասյան Է. Գ., Մարջանյան Կ. Ս., Մելիքսեթյան Ս. Ա., Միքայելյան Վ. Ա., Մկրյան Մ. Մ., Մուրադյան Ա. Մ., Մուրադյան Դ. Ա., Պետրոսյան Հ. Ա., Ռշտունի Վ. Հ., Սարգսյան Ե. Ղ., Սևյան Վ. Ղ., Վարդումյան Դ. Ս., Փարթամյան Վ. Հ., Քոլանջյան Ս. Է.։

Հատորի ժամանակագրությունը և մատենագրությունը կազմել է պատմական գիտությունների թեկնածու Է. Ա. Կոստանդյանը, անձնանունների և տեղանունների քանկերը՝ Ժ. Մ. Ադոնցը։



ԲԱԺԻՆ Ա

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊՐՈՒԹՅՈՒՆԸ 1870—1900 ԹԹ.

1. ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ ԵՎ ԱՋԳԱԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆԸ

XIX դարի վերջին տասնամյակներին Հայաստանը թևակոխեց արդյունաբերական կապիտալիզմի ժամանակաշրջանը։ Երկրի տնտեսության բնագավառում կատարվող տեղաշարժերը լուրջ փոփոխություններ առաջացրին նրա հասարակական-քաղաքական կյանքում։ Ձևավորվեց բանվոր դասակարգը, որը բայլելով ռուսական պրոլետարիատին համընթաց, համալրեց ինքնակալության դեմ պայքարողների շարքերը։ Կապիտալիզմի ժամանակաշրջանում ծավալվեցին հայ ազգային-ազատագրական շարժումները, որոնք սուր ծայրով ուղղված էին ֆեոդալական բռնությունների ու կապիտալիստական-գաղութային հարստահարությունների դեմ։ Ներքաշվելով կապիտալիստական հարաբերությունների հորձանուտի մեջ, հայ ժողովուրդն ավելի մոտիկից շփվեց մարդկության համաշխարհային հոգևոր գանձերին և հնարավորություն ստացավ անհամեմատ հարստացնելու իր ազգային մշակույթը։ Վ. Ի. Լենինը ցույց է տալիս, որ «կապիտալիստական «հեղաբեկման» մի քանի տասնամյակներն... ավելի շատ բան արին, քան նախընթաց պատմության ամբողջ դարերը»[1]։

Վարչական բաժանումը: *XIX դ. 70-ական թվականներին Արևելյան Հայաստանը մտնում էր Ռուսական կայսրության կազմի մեջ, իսկ Արևմտյան Հայաստանը շարունակում էր մնալ Թուրքական տիրապետության տակ։ Ցարական կառավարությունը Ռուսաստանի ազգային շրջաններում հաստատել էր այնպիսի վարչական բաժանում ու կառավարում, որոնք հեշտացնում էին տիդական ժողովուրդների սոցիալական հարստահարումը և խոչընդոտում նրանց ազգային-ազատագրական շարժումների ծավալմանը։*

1867 թ. դեկտեմբերի 9-ի օրենքով Անդրկովկասը բաժանվեց հինգ նահանգների՝ Քութայիսի, Թիֆլիսի, Երևանի, Ելիսավետպոլի և Բաքվի։ Թիֆլիսի ու Բաքվի նահանգները բաժանվեցին վեցական, իսկ Երևանի, Ելիսավետպոլի և Քութայիսի նահանգները՝ հինգական գավառների։ Գավառների սահմանագծման հիմքում դրվեց այն սկզբունքը, որ նրանցից ոչ մեկն իր տարածությամբ չգերազանցի 6500 քառ. վերստից, իսկ բնակչությամբ՝ 10000 տնտեսությունից կամ 80.000 մարդուց[2]։

---

1 Վ. Ի. Լենին, *Երկերի լիակատար ժողովածու*, հ. 3, էջ 383։

2 Տե՛ս «Отчет по главному управлению наместника кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краем его императорским высочеством великим князем Михаилом Николаевичем, 6 декабря 1862—6 декабря 1872 гг.», Тифлис, 1873, стр. 49—50.

Արևելյան Հայաստանի տարածքի մեծ մասը մտավ Երևանի, իսկ մնացած շրջանները՝ Ելիսավետպոլի ու Թիֆլիսի նահանգների մեջ։ 1874 թ. Երևանի նահանգը բաժանվեց յոթ գավառների՝ Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Նախիջևանի, Սուրմալուի և Շարուր-Դարալագյազի, իսկ 1878 թ. Ռուսաստանին միացված հայկական հողերից ստեղծված Կարսի մարզը՝ չորս շրջանների (օկրուգների)՝ Կարսի, Կաղզվանի, Օլթիի և Արդահանի[3], 1888 թ. Անդրկովկասի բոլոր գավառները բաժանվեցին տեղամասերի (ուչաստկաների), որոնց կառավարման համար նշանակվեցին պետեր (պրիստավներ)։



Երևանի բնդհանուր տեսարանը

1862—1882 թվականներին Կովկասյան երկրամասը կառավարում էր փոխարքան՝ ցարի եղբայր մեծ իշխան Միխայիլ Նիկոլաևիչ Ռոմանովը, որի իշխանության տակ գործում էին նրա գլխավոր վարչությունը, Թիֆլիսի դատական և արքունական պալատները։ 1882 թ. վերացվեց փոխարքայությունը և ստեղծվեց Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր կառավարչապետություն։ Կառավարչապետի պաշտոնում սկզբում նշանակվեց իշխան Ա. Մ. Դոնդուկով-Կորսակովը (1882—1890), ապա՝ Ս. Ա. Շերեմետևը (1890—1896), այնուհետև՝ իշխան Գ. Ս. Գոլիցինը (1897—1904)։

Անդրկովկասի նահանգները և մարզերը կառավարում էին նահանգապետերը, որոնք թե՛ քաղաքացիական գլխավոր կառավարիչներ էին և թե՛ զինվո-

[3] Տե՛ս «Всеподданнейший отчет о состоянии Карской области за 1887 г.», Карс, 1889, стр. 1.

բական հրամանատարներ։ Գավառները ղեկավարում էին ցարական աստիճանավորներից նշանակված գավառապետերը, իսկ տեղամասերը՝ տեղամասային պրիստավները։ 1867 թ. դեկտեմբերի 9-ի օրենքով վերացվեցին տեղամասերը, հետևաբար և պրիստավի պաշտոնը։ Նրանց փոխարեն նշանակվեցին գավառապետի մեկ կամ երկու օգնականներ, որոնք կատարում էին ոստիկանական պարտականություններ։ Երկրամասի այն շրջաններում, ուր բնակչությունն աչքի էր ընկնում «անհանգիստ» վարքով, համաձայն 1867 թ. օրենքի, նշանակվեցին առանձին ոստիկանական պրիստավներ։ Արևելյան Հայաստանում այդպիսի շրջաններ համարվեցին Շիրակն ու Լոռին, իսկ սահմանամերձ Օրդուբադը դրվեց ոստիկանական հսկողության տակ։ Քոչվոր ցրդերին հսկելու համար 1868 թ. նոյեմբերի 15-ին հաստատվեց նաև երկու պրիստավություն, մեկը՝ Երևանի, մյուսը Էջմիածնի գավառներում[4]։ Կարսի մարզի շրջանները ղեկավարում էին շրջանների պետերը, իսկ տեղամասերը՝ տեղամասային պրիստավները։ Ամեն մի օկրուգային պետ ուներ իր տեղակալը, գործերի կառավարիչը և այլ ենթակա աստիճանավորներ։

Տեղական ժողովրդի ներկայացուցիչներից շատ քչերին էր հաջողվում պաշտոններ գրավել պետական ապարատում։ Արհամարհված էր նաև բնիկների լեզուն։ Գործավարությունը տարվում էր միայն ռուսերեն։ Եթե 70-ական թվականներին կային որոշ թվով հայ կամ այլազգի պաշտոնյաներ, ապա 80-ական թվականների սկզբից նրանց թիվը խիստ նվազում է։

Ցարական պաշտոնեության ամենաստորին աստիճանին կանգնած էր գյուղական տանուտերը (ստարշինան)՝ իր օգնականներով, որոնք «ընտրվում» էին երկու-երեք տարին մեկ՝ գյուղի ընդհանուր ժողովում։ Տանուտեր կարող էր ընտրվել նա, ով ստանում էր ձայների մեծամասնությունը և ուներ 25-ից ոչ պակաս տարիք։ Սակայն վերադաս պաշտոնյաները՝ նահանգապետերն ու գավառապետերը, չարաշահելով տանուտերի հաստատման իրենց տրված իրավունքները, հաճախ մերժում էին համայնքների թեկնածուներին և առաջադրում իրենց ցանկացածներին։ Տանուտերներն ազատվում էին պետական հարկերից ու պարհակներից, վարձատրվում էին գյուղի հաշվին։ Աշխատավարձի չափը որոշում էր գյուղի ընդհանուր ժողովը[5]։

Արևելյան Հայաստանի քաղաքները կառավարում էին տեղական ոստիկանական վարչությունները, որոնք կազմված էին ոստիկանապետից, քաղամասային պետերից (կամ կատարածուներից), սրանց օգնականներից, գրագրից և այլն։ Ոստիկանապետը նշանակվում էր նահանգապետի, իսկ քաղամասերի պետերը՝ ոստիկանապետի կողմից՝ նահանգապետի համաձայնությամբ։

XIX դարի վերջին տասնամյակներում թուրքական կառավարությունը Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումը թեպետ մի քանի անգամ փոխեց, բայց միշտ էլ առաջնորդվում էր այն սկզբունքով, որ հայերը ոչ մի

---

4 Տե՛ս «Отчет по главному управлению наместника кавказского...», стр. 68.

5 Տե՛ս С. А. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч. 1, Казань, 1889, стр. 100—101.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՒՆԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

տեղ մեծամասնություն չկազմեն։ 1860-ական թվականների վերջերին Արևմտյան Հայաստանի մեծ մասը բաժանված էր Կարինի (Էրզրումի) նահանգի (վիլայեթի), իսկ որոշ շրջանները՝ Դիարբեքիրի (Տիգրանակերտի) ու Սեբաստիայի (Սվազի) նահանգների։ Նահանգները բաժանված էին գավառների (սանջակների), գավառները՝ գավառակների (կազաների), իսկ վերջինները՝ նահիեների։ Կարինի նահանգը տրոհված էր յոթ գավառի՝ Կարինի, Ջղրի, Կարսի, Բայազետի, Վանի, Մուշի և Երզնկայի[6]։ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, Կարինի վիլայեթը բաժանվեց չորս նահանգի՝ Կարինի, Վանի, Հնթյարիի ու Մուշի։ 1879 թ. ստեղծվեցին Դերսիմի ու Խարբերդի կամ Մամուրեթ-ուլ-Ազիզի նահանգները։ 1880 թ. Դերսիմը միացվեց Խարբերդի նահանգին, իսկ Հնթյարին՝ Վանի նահանգին[7]։ 1886 թ. Արևմտյան Հայաստանը բաժանվեց Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Դերսիմի, Բիթլիսի (Բաղեշ), Վանի, Հնթյարիի ու Սվազի, իսկ 1895 թ.՝ Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Սվազի ու Էրզրումի նահանգների[8]։ Այսպիսով, XIX դարի 90-ական թվականների վերջին, Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումը հետևյալ պատկերն էր ներկայացնում. Վանի նահանգը բաժանված էր երկու գավառի (Վանի և Հնթյարիի), Բիթլիսի նահանգը՝ չորս (Բիթլիսի, Գենջի, Մուշի և Սղերդի), Դիարբեքիրի նահանգը՝ երեք (Դիարբեքիրի, Արղնի-Մադենի և Մարդինի), Էրզրումի նահանգը՝ երեք (Էրզրումի, Բայազետի և Երզնկայի), Խարբերդի նահանգը՝ երեք (Խարբերդի, Դերսիմի և Մալաթիայի կամ Մելիտինեի), իսկ Սվազի նահանգը՝ չորս գավառի (Սվազի, Ամասիայի, Կարահիսարի կամ Կարահիսար-Շարքի և Թոքատի կամ Եվդոկիայի)։ Այդ վեց նահանգներն ընդգրկում էին 270200 քառ. կմ տարածություն[9]։ Ինչ վերաբերում է պատմական Կիլիկիային, ապա XIX դ. վերջին այն բաժանված էր Ադանայի ու Հալեպի նահանգների։

Թուրքիայում 1870 թ. օրենքով նահանգը կառավարում էր կուսակալը (վալին), գավառը՝ գավառապետը (մութասարիֆը), գավառակը՝ գավառակապետը (կայմակամը), գյուղախումբը՝ գյուղախմբի պետը (մյուդիրը), իսկ գյուղը՝ տանուտերը (մուխթարը, ռեսը)։ Այդ պաշտոնյաները հաստատվում էին սուլթանի, մեծ վեզիրի կամ ներքին գործերի մինիստրի կողմից։ Տանուտերը ընտրվում էր համագյուղացիների ժողովում, բայց իրականում նշանակվում էր մյուդիրի և այլ վերադաս պաշտոնյաների կողմից։ Նահանգներում, գավառներում և գավառակներում համապատասխան ղեկավարների

---

6 Տե՛ս Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ (այսուհետև ՌԱՔԱ), ֆ. «Գլխավոր արխիվ», 1874, գ. 1086, թ. 22—23։ Я. Д. Малама, Описание Эрзерумского вилайета, СПб., 1874, стр. 3; А. Убичини, Современное состояние Оттоманской империи, СПб., 1877, стр. 34, 83.

7 Տե՛ս ՍՍՀՄ Կենտրոնական պետական ռազմա-պատմական արխիվ (այսուհետև ԿՊՌՊԱ) ֆ. 1300, ց. 23, գ. 14, էջ 25, 38—39։ Հայկ. ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվ (այսուհետև ՀՍՍՀ ԿՊՊԱ), «Քաղվածքների ֆոնդ», գ. 39, թ. 2—3։

8 Տե՛ս А. Н. Гиппиус, Статистические таблицы вилайетов Турецкой империи ближайших Закавказью, Тифлис, 1889, стр. 11—14; «Энциклопедический словарь Брокгауза и Ефрона», СПб., 1902, т. 34, стр. 231.

9 Տե՛ս «Ընդարձակ օրացույց ս. Փրկչյան հիվանդանոցի հայոց 1903 թ.», կ. Պոլիս, էջ 187, 190։

իշխանության ներքո գործում էին վարչական խորհուրդներ, որոնք բաղկացած էին չորսական անդամից՝ երկուսը՝ մահմեդական, երկուսը՝ քրիստոնյա։ Դրանք ընտրվում էին բնակչության կողմից, հարուստ և ազդեցիկ մարդկանցից։ Քոչվոր քրդերին կառավարում էին գավառապետի իրավունքներով օժտված նրանց ցեղապետերը։ Ինչ վերաբերում է քաղաքներին, ապա դրանք բաժանվում էին թաղերի (մահալների), որոնց կառավարում էին առանձին պաշտոնյաներ[10]։

1877 թ. օրենքի համաձայն գյուղախմբի պետի հաստատման իրավունքը տրվում էր կուսակալին։ Եթե 1867 թ. օրենքով գյուղախմբեր կազմվում էին միայն ընդարձակ գավառակներում, ապա 1877 թ. օրենքով՝ բոլոր գավառակներում։ Ընդ որում, գյուղախմբից յուրաքանչյուրը պետք է ունենար առնվազն 200 տնտեսություն։ 1880 թ. օրենքով գյուղախմբի պետի պաշտոնը դառնում է ընտրովի։ Նա պետք է ընտրվեր գյուղախմբում գերակշռող, իսկ տեղակալը՝ քանակով երկրորդ մեծություն ունեցող ազգության ներկայացուցիչներից։

Կառավարության կողմից լայն իրավունքներ էր տրված կուսակալին։ 1868 թ. նա ստանում է նաև մուշիրի դիվանորական տիտղոսը, որով ավելի են ընդարձակվում նրա դիվանորական և քաղաքացիական իրավասությունները։ Որոշակի իրավունքներ ունեին նաև գավառապետերն ու գավառակապետերը։

Սուլթանական կառավարությունը, վարելով շովինիստական քաղաքականություն, բոլոր պաշտոնները տալիս էր մահմեդականներին և դրանով ոտնակոխ անում դեռևս Թանզիմաթի տարիներին ժողովուրդների հավասարության մասին հանդիսավոր ազդարարած խոստումները։ Պաշտոնները սովորաբար տրվում էին կաշառքով և հաճախ աճուրդի առարկա դառնում։ Գեներալ-նահանգապետերից մինչև ստորին տանուտերի պաշտոններում նշանակվում էին ոչ թե ըստ արժանիքի, այլ կաշառատվությամբ,—գրել է անգլիական պառլամենտի անդամ Կառլայլ Մակ Կոանը։ Շատ անգամ պաշտոնի հավակնորդը պարտք էր վերցնում որևէ դրամատիրոջից, կաշառում բարձրաստիճանավորներին, իսկ նշանակվելուց հետո անխնա կողոպտում բնակիչներին[11]։

Սուլթանական վարչական ապարատը գերագույն չարիք էր աշխատավորության և հատկապես քրիստոնյա բնակչության համար։ Թուրքական կառավարությունը Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումն անցկացնելիս ոչ միայն անտեսում էր տեղական ժողովուրդների ազգային առանձնահատկությունները, այլև, ղեկավարվելով քաղաքական նպատակներով, արգելում էր գործածել Հայաստան անունը։

Ազգաբնակչությունը: Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացումից հետո թեպետ սկսվել էր հայերի ազգային համախմբումը, սակայն նրանք

---

10 Արևմտյան Հայաստանի վարչական կառավարման մասին մանրամասն տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Գլխավոր արխիվ», 1874, գ. 1086, թ. 22—23։ Տե՛ս Л. М. Пржевальский, Вилайет Эрзерум, Тифлис, 1904, стр. 11—28.

11 Տե՛ս Карлайль, Мак Коан, Наш новый протекторат. Описание географических, этнографических и экономических свойств Турецкой Азии, М., 1884, стр. 172.

դեռևս ցրված էին աշխարհով մեկ[12]։ 1897 թ. մարդահամարի տվյալներով Ռուսաստանում հայերը հաշվվում էին 1.173.036 մարդ, որից 441.000-ը բնակվում էր Երևանի նահանգում, 292.188-ը՝ Ելիսավետպոլի, 196.189-ը՝ Թիֆլիսի, 52233-ը՝ Բաքվի նահանգներում, 73.406-ը՝ Կարսի մարզում, 24.043-ը՝ Քութայիսի նահանգում ու Բաթումի մարզում։ Մնացած հայերը ապրում էին կայսրության այլ շրջաններում. 6282-ը՝ Սևծովյան նահանգում, 4863-ը՝ Մինչին Ասիայում, 2080-ը՝ Բեսարաբիայում, 1604-ը՝ Մոսկվայում, 753-ը՝ Պետերբուրգում և այլն[13]։ Այսպիսով, արևելահայության մոտ 60 տոկոսը ապրում էր Արևելյան Հայաստանում, այսինքն Երևանի նահանգում, Կարսի մարզում, Ջանգեզուրի, Շուշիի, Ղազախի գավառներում և Լոռու գավառամասում։

XIX դարի վերջին քառորդում, Ռուսաստանի բարերար աղդեցության պայմաններում, արևելահայերի քանակը շարունակում էր աճել։ 1873 թ. Երևանի նահանգում հաշվվում էր 292.978, իսկ 1897 թ.՝ 441.000 հայ։ Կարսի մարզում 1879 թ. կար 19.446 հայ, իսկ 1897 թ.՝ նրանց թիվը հասավ 73.406-ի[14]։ Արևելյան Հայաստանում հայերից բացի բնակվում էին նաև ռուսներ, ադրբեջանցիներ, քրդեր և այլ ազգեր, որոնց թվաքանակը նշված ժամանակաշրջանում նույնպես աճում էր։ Արևելյան Հայաստանի ամբողջ ազգաբնակչությունը 1873—1897 թթ. 969.518-ից հասավ 1508926 մարդու[15]։ Միաժամանակ աճում էր բնակչության խտությունը։ Եթե 1873 թ. Երևանի նահանգում մեկ քառակուսի կիլոմետրի վրա բնակվում էր միջին հաշվով 22,4, ապա 1897 թ.՝ 29,0 մարդ[16]։ Ուշագրավ է, որ Արևելյան Հայաստանում բնակչությունն ավելի խիտ էր, քան հարևան երկրներում։ 1897 թ. Երևանի նահանգում 1 քառ. կմ-ի վրա բնակվում էր 29,0 մարդ, իսկ Թիֆլիսի նահանգում՝ 23,2, Բաքվի նահանգում՝ 20,7, Ելիսավետպոլի նահանգում՝ 19,2 և այլն[17]։

Կապիտալիզմի զարգացման հետևանքով Արևելյան Հայաստանում տեղի էր ունենում բնակչության հոսք գյուղից քաղաք։ 1886—1897 թթ. Երևանի նահանգում քաղաքային բնակչությունն աճեց 44,7 տոկոսով, գյուղականը՝ 17,7 տոկոսով, իսկ ամբողջ բնակչությունը՝ 20 տոկոսով։ 1897 թ. Երևանում

---

12 Բելգիացի իրավագետ Ռոլեն Ժեքմենի տվյալներով 1877—87 թթ. ամբողջ աշխարհում հաշվվում էր շուրջ 5.000.000 հայ, որից 3.000.000-ը բնակվում էր Թուրքիայում, 1.807.907-ը՝ Ռուսաստանում, 200.000—225.000-ը՝ Պարսկաստանում, 46.000-ը՝ Հնդկաստանում, Ճավայում ու Չինաստանում, 30.000-ը՝ Ավստրո-Հունգարիայում, 97.000-ը՝ Եվրոպայի, Ամերիկայի ու Աֆրիկայի զանազան երկրներում։ Տե՛ս «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», М., 1896, стр. 9—11.

13 Տե՛ս «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г.», под ред. Н. А. Тройницкого; «Общий свод по империи результатов разработки данных первой всеобщей переписи населения, произведенной 28 января 1897 г.», т. II, СПб., 1905, стр. XV—XVI.

14 Տե՛ս «Сборник сведений о Кавказе», т. V, Тифлис, 1879, т. VII, Тифлис, 1880, стр. LXV; «Первая всеобщая перепись...», т. II, стр. XV—XVI.

15 Տե՛ս «Кавказский календарь на 1878 г.», Тифлис, 1877, стр. 326; «Коммерческая деятельность Тифлисско-Кареско-Эриванской железной дороги», стр. 392; «Первая всеобщая перепись...», т. II, стр. 55, LXIII, Елисаветпольская губерния, стр. 1—2.

16 Տե՛ս «Кавказский календарь на 1878 г.», стр. 326; «Кавказский календарь на 1901 г.», стр. 43.

17 Տե՛ս «Кавказский календарь на 1901 г.», отд. III, стр. 30—43.

ապրում էր 29.033, Ալեքսանդրապոլում՝ 32.018, Նոր Բայազետում՝ 8507 մարդ[18]։ Արևելյան Հայաստանի քաղաքային բնակչությունն այդ թվականին կազմում էր նրա ամբողջ բնակչության շուրջ 10 տոկոսը։ Դա նշանակում է, որ Արևելյան Հայաստանում արդյունաբերությունը թույլ էր զարգացած։ Անդրկովկասում դեռևս 1886 թ. քաղաքային բնակչությունը կազմում էր 11 տոկոսը, իսկ Եվրոպական Ռուսաստանում՝ 12 տոկոսը[19]։



Սիփան սարը Կառուց կղզուց

Արևելյան Հայաստանի քաղաքներում հայերը կազմում էին բնակչության հարաբերական մեծամասնություն։ 1897 թ. տվյալներով Երևանի նահանգի քաղաքներում ապրում էր 92.323 մարդ, որից 53.976-ը հայեր։ Այդ թվականին Կարսի մարզի քաղաքներում բնակվում էր 37.838 մարդ, որից 16.529-ը հայեր[20]։ Հայերը հարաբերական մեծամասնություն էին կազմում նաև Կովկասի մի շարք քաղաքներում։ 1897 թ. Կովկասում հաշվվում էր 1.118.094 հայ, որից 238.869-ը բնակվում էր քաղաքներում, 1.509.785 ադրբեջանցի, որից 177. 866-ը՝ քաղաքներում և 1.350.275 վրացի (վրացիներ, իմերներ, մենգրելներ, սվաններ), որից 125.791-ը՝ քաղաքներում[21]։ Այլ կերպ ասած, Կովկասի

18 Տե՛ս «Сборник статистических сведений по Закавказскому краю», ч. I, Тифлис, 1902, стр. 19.

19 Տե՛ս «Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края», т. IV, Тифлис, 1888, стр. 421.

20 Տե՛ս «Первая всеобщая перепись...», т. I, стр. 264—267.

21 Տե՛ս «Первая всеобщая перепись...», т. II, стр. 2—19.

քաղաքներում բնակվում էր հայերի 21,4 տոկոսը, ադրբեջանցիների՝ 11,8 և վրացիների 9,2 տոկոսը։ Այս տվյալները ցույց են տալիս, որ հայերը ավելի շատ էին ներքաշված կապիտալիստական հարաբերությունների ոլորտը, քան կովկասյան այլ ժողովուրդները[22]։

Հայ ազգաբնակչությունն աստիճանաբար դուրս էր գալիս հետամնացությունից և սերտորեն առնչվում ժամանակի առաջավոր մշակույթին։ Արդեն 1897 թ. Երևանի նահանգում քաղաքաբնակ հայերի 27,2%-ը գրագետ էր։ Սակայն գյուղերում գրագիտության տոկոսը դեռևս ցածր էր։ Այդ նույն ժամանակաշրջանում Երևանի նահանգում գրագետ էր գյուղական բնակչության ասոսկ 6,4%-ը[23]։

1876 թ. Պոլսի հայոց պատրիարքարանի տվյալներով Օսմանյան կայսրության մեջ հաշվվում էր մոտ երեք միլիոն հայ, որից 400.000-ը բնակվում էր Կոստանդնուպոլսում և Բալկաններում, 600.000-ը՝ Փոքր Ասիայում և Կիլիկիայում, 670.000-ը՝ Փոքր Հայքում և Կեսարիայի շրջանում, իսկ 1.330000-ը՝ Մեծ Հայքում[24]։ Այսպիսով, հայերի մեծամասնությունը ապրում էր Փոքր և Մեծ Հայքում. Հետագա տարիներին թուրքական կառավարության վարած հայաջինջ քաղաքականության հետևանքով հայերի թիվը նվազեց։ Միայն 90-ական թվականներին բնաջնջվեց շուրջ 300.000 հայ։ Արևմտահայերի մի մասն էլ հարկադրված եղավ դավանափոխվել[25] կամ բռնել արտագաղթի ճամփան։ Այդուհանդերձ XIX դարի վերջին Արևմտյան Հայաստանում հայերը շարունակում էին կազմել հարաբերական, իսկ առանձին շրջաններում՝ բացարձակ մեծամասնություն։ Այդ տեսակետից կարելի է հիշատակել Վանի (74%), Բուլանըխի (67%), Մոկսի (63%), Արճեշի (64%), Ադյլավազի (60%), Մուշի (62%) շրջանները և այլն[26]։

Արևմտյան Հայաստանում հայերից բացի ապրում էին նաև քրդեր, թուրքեր, ասորիներ, հույներ, պարսիկներ, հրեաներ, չիչեններ, չերքեզներ և այլ

---

22 Տե՛ս «Сборник сведений о Кавказе», т. VI, Тифлис, 1880, стр. 94.

23 Տե՛ս «Первая всеобщая перепись...», т. LXXI, Эриванская губерния, стр. 1.

24 Տե՛ս «Սրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանի», Կ. Պոլիս, 1878, էջ 30։

25 Բելգիացի իրավագետ Ռոլեն Ժեքմենը 80-ական թվականների կեսերին գրում էր. «Հայաստանում ապրող մահմեդականների մի մասը հայկական ծագում ունի։ Շատ տեղերում նրանք տակավին պահում են իրենց ազգի լեզուն, բարքերն ու սովորույթները, հաճախ կարելի է հանդիպել այնպիսիների որոնք դեռ կրում են իրենց հայրերի կամ նախնիների անունները» (М. Г. Ролен-Жекмен, Армения, армяне и трактаты, перевод с француз. М., 1896, стр. 10). Արևմտահայության որոշ զանգվածներ էլ եվրոպական միսիոներական կազմակերպությունների ջանքերով հարեցին կաթոլիկ ու բողոքական ուղղություններին։ Նրանք հայերին հավատացնում էին, որ ընդունելով քրիստոնեության այդ դավանանքները, կազատվեն թուրքական ճնշումներից ու հալածանքներից։ Իրականում միսիոներները ձգտում էին Արևելքում տեղծել եվրոպական կապիտալիզմի քաղաքական ներթափանցման հենարաններ։ Բայց, չնայած նրանց ջանքերին, կաթոլիկներ ու բողոքականներ դարձավ արևմտահայության ասոկ աննշան մասը։ Դարավերջին ամբողջ Թուրքիայում հաշվվում էր 83.000 կաթոլիկ ու 41.550 բողոքական հայ (տե՛ս Սաւակ-Մեսրոպ, Հայուն տարեցույցը, Կ. Պոլիս 1913, էջ 42), որոնք միասին չէին կազմում արևմտահայության նույնիսկ 5 տոկոսը։ Ուշագրավ է, որ Ռուսաստանում 1897 թ. հաշվվում էր 38840 հայ կաթոլիկ («Первая всеобщая перепись...», т. I, стр. 1248), որոնց ճնշող մեծամասնությունը տարբեր ժամանակներում ներգաղթել էր Թուրքիայից։

26 Տե՛ս «Записка Кавказского отдела императорского русского географического общества», кн. XVIII, Тифлис, 1896, стр. 18—19 (Приложение).

ժողովուրդներ։ Հայերից հետո մեծամասնություն էին կազմում քրդերը, ապա թուրքերը, իսկ ասորիները, չերքեզները, չեչեններ և մյուսները փոքրաթիվ էին։ Սուլթանական կառավարության վարած շովինիստական քաղաքականության հետևանքով դարավերջին քրիստոնյաների (հայեր, ասորիներ) թիվը նվազում էր, իսկ մահմեդականներինը (քրդեր, թուրքեր, չերքեզներ և այլն)՝ աճում։

Քրդերը բնակվում էին հիմնականում Վանի, Բիթլիսի ու Դիարբեքիրի նահանգներում և զբաղվում երկրագործությամբ ու խաշնարածությամբ։ Երկրագործ քրդերը կոչվում էին ռայաներ (հոտ, ստրուկ), իսկ խաշնարած կամ կիսաքոչվոր ու քոչվոր քրդերը՝ աշիրեթներ։ Նրանց համայնքներն ու ցեղերը կոչվում էին իրենց առաջնորդների կամ բնակավայրերի անուններով։

Թուրքերն ապրում էին գլխավորապես Սվազի, Կարինի ու Խարբերդի նահանգներում, բայց որոշ չափով թափանցել էին նաև Արևմտյան Հայաստանի մյուս շրջաններըը։ Դարավերջին Վանի կուսակալությունում նրանք կազմում էին բնակչության 12,5 տոկոսը և ապրում էին գերազանցապես քաղաքներում։ Երկրի մի շարք շրջաններում թուրք գյուղացիները ցրված էին հայաբնակ վայրերում։ Բիթլիսում, Մուշում և այլ քաղաքներում քրդական ցեղային որոշ զանգվածներ (զաբիլաքներ), կառավարության կողմից արտոնություններ ստանալով, թուրքացել էին։

Ասորիները բնակվում էին Վանի կուսակալությունում, գլխավորապես Հեքյարիի գավառի Ջուլամերկի, Տիարի, Բեյթ-ու-Շյութաբի, Բաշկալեի շրջաններում, ինչպես նաև Դիարբեքիրի կուսակալության լեռնային վայրերում։ Նրանք հաշվվում էին 70.000—100.000 մարդ և զբաղվում էին երկրագործությամբ ու անասնապահությամբ։ Երկրագործները (ռայաներ) բնակվում էին երկրի դաշտային, իսկ անասնապահները (աշիրեթներ)՝ լեռնային շրջաններում։ Նրանց հոգևոր ու աշխարհիկ զեկավարը մարշիմոնն էր, որ նստում էր Ջուլամերկի Կոճանիս գյուղում և իր տրամադրության տակ ուներ ռազմական ղգայի ուժեր։

Չեչեններն ու չերքեզները Արևմտյան Հայաստանում երևացին Ղրիմի պատերազմից հետո։ Նրանք ապրում էին կամ առանձին շրջաններում, կամ հայաբնակ վայրերում։ 1871 թ. Սեբաստիայի նահանգում կար 220, Կարինի նահանգում՝ 115, Դիարբեքիրի նահանգում՝ 70 բնակավայր չեչեն[27]։ Չերքեզները դարավերջին հաշվվում էին Դիարբեքիրի նահանգում՝ 10.000 և Վանի նահանգում՝ 500 մարդ[28]։ Հավատարիմ թուրքական կառավարության խոստումներին, նրանք թոդնում էին Հյուսիսային Կովկասն ու Դանուբյան և արտագաղթում Թուրքիա։ Սուլթանական կառավարությունը լեռնականներին որոշ արտոնություններ էր տալիս հայերի հաշվին և աշխատում այդ կերպ ավելի սրել ազգամիջյան հակասությունները։ Լեռնականները Թուրքիայում բնակելով ավելի ծանր վիճակի մեջ, ձգտում էին ետ վերադառնալ Ռուսաստան։ Նրանցից շատերը փախչում էին Թուրքիայից և խնդրում «կամ մի բեր, կամ մահ, մենք համաձայն ենք, միայն թե չվերադառնանք Թուրքիա»[29]։

---

27 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Դլխավոր արխիվ», Ա-Ա$_2$, գ. 1081, թ. 29։

28 Տե՛ս «Ազատամարտ», 1909, № 67։

29 ՌԱՔԱ, ֆ. «Դլխավոր արխիվ», Ա-Ա$_2$, գ. 1081, թ. 31։

Հրեաները բնակվում էին Վանի նահանգում, հատկապես Աղբակ գավառում, հույները՝ Խարբերդի ու Կարինի նահանգներում, իսկ պարսիկները ցրված էին երկրով մեկ։ Դրանք կազմում էին երկրի ազգաբնակչության աննշան տոկոսը։

Բնակչության խտությամբ աչքի էին ընկնում Խարբերդի ու Բիթլիսի նահանգները, ուր 1900 թ. մեկ քառ. կմ-ի վրա համապատասխանաբար ապրում էր 17,1 և 14,7 մարդ, մնացած նահանգները համեմատաբար սակավամարդ էին (Կարինի նահանգում մեկ քառ. կմ-ի վրա բնակվում էր 13,0, Դիարբեքիրի նահանգում՝ 12,6, Սեբաստիայի նահանգում՝ 10,7 և Վանի նահանգում՝ 10,0 մարդ[30])։

Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության ճնշող մեծամասնությունն ապրում էր գյուղում և միայն փոքր մասը (մոտ 10 տոկոսը)՝ քաղաքում։ XIX դարի վերջին, սուլթանական կառավարության հայահալած քաղաքականության հետևանքով, հայերի թիվը նվազում է Արևմտյան Հայաստանի ոչ միայն գյուղերում, այլև քաղաքներում։ Արդեն 80—90-ական թվականներին երկրի մի շարք քաղաքներում թուրքերը մեծամասնություն էին կազմում։ Այսպես, 1893 թ. Կարինում ապրում էր 40.000 մարդ, որից հայեր էին 10.500-ը, Բիթլիսում՝ 30.000, որից հայեր էին 10.000-ը, Մուշում 1883 թ. կար 2500 տուն-տեսություն, որից հայկական էին 1000-ը և այլն։ Սակայն այլ քաղաքներում հայերը մեծամասնություն էին կազմում։ 1893 թ. Վանում հաշվվում էր 30.000 մարդ, որից հայեր էին 20.000-ը[31]։ Հայերը զբաղվում էին առևտրով ու արդյունաբերությամբ, իսկ թուրքերը՝ պետական պաշտոնավարությամբ, զինվորական ծառայությամբ, կապալառուությամբ ու վաշխառուությամբ, բանջարաուծությամբ և որոշ չափով արհեստներով ու առևտրով։ Սակայն 90-ական թվականների հայկական ջարդերից հետո կայսրության ինչպես այլ շրջաններում, այնպես էլ Արևմտյան Հայաստանում թուրքական բուրժուազիան առևտրի մեջ սկսեց արագորեն արտամղել հայերին և գրավել կարևոր տեղ։ Այդուհանդերձ հայերը Թուրքիայի առևտրական կյանքում տակավին պահում էին իրենց առաջատար դիրքերը։ Նրանց դերը մեծ էր նաև երկրի մշակութային կյանքում։ Ի. Ի. Գոլոբորոդկոն գրում էր, որ Թուրքիայի «քաղաքներում առանց հայերի չի կարող լոկ գնալ տեխնիկայի, գիտության, արվեստի ու արհեստի ոչ մի քիչ թե շատ լուրջ ճյուղ։ Հայերը Ասիական Թուրքիայի ամենակուլտուրական տարրերն են»[32]։

Այսպիսով, Հայաստանի երկու հատվածների հայ ազգաբնակչության կացությունը և զարգացման մակարդակը զգալիորեն տարբեր էին։ Արևելյան Հայաստանում, Ռուսաստանի բարերար ազդեցության պայմաններում, հայերը աճում ու առաջադիմում էին, մինչդեռ Արևմտյան Հայաստանում, սուլթանական կառավարության ազգահալած քաղաքականության հետևանքով, նրանք նվազում ու բնաջնջվում էին։

---

30 Տե՛ս «Ընդարձակ օրացույց ս. Փրկչյան հիվանդանոցի հայոց 1903 թ.», էջ 187—190։

31 Տե՛ս Х. Ф. Б. Линч, Армения, Путевые очерки и этюды, т. II, Тифлис, 1910, стр. 101, 194, 264; Մ. Միւռխուրյան, Նկարագրական ուղեւորություն ի հայաբնակ գաւառս Արեվելեան Տաճկաստանի, կ. Պոլիս, 1884, մասն Ա, էջ 39։

32 И. И. Голобородько, Турция, М., 1912, стр. 221.

2. 1860—1870-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԸ: ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՌԵՖՈՐՄԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

XIX դարի երկրորդ կեսից ցարական կառավարությունը Երկրում անցկացրեց մի շարք բարենորոգումներ, որոնք ընդառաջում էին բարձրացող բուրժուազիայի պահանջներին: 1861 թ. փետրվարի 19-ի կանոնադրությամբ վերացվեց ճորտատիրական իրավունքը: Այդ տարեթիվը դարձավ Ռուսաստանի պատմության մեջ իբրև նոր՝ կապիտալիստական դարաշրջանի սկիզբ: Վ. Ի. Լենինը գրում է. «1861 թվականի փետրվարի 19-ը նշանավորում է ճորտատիրական դարաշրջանից բարձրացող նոր, բուրժուական Ռուսաստանի սկիզբը»[33]:

1864 թ. հունվարի 1-ի օրենքով ստեղծվեցին զեմստվոները՝ բոլոր դասերի ներկայացուցիչներից ընտրված տեղական կառավարման նոր ժամանակ օրգաններ և վերացվեցին նախաեռեփորմյան շրջանում գործող դասային-կալվածատիրական բյուրոկրատական կառավարման ձևերը: Զեմստվոները զբաղվելու էին տեղական խնդիրներով՝ նահանգի ու գավառի ճանապարհների, դպրոցների, հիվանդանոցների բարենորոգումներով, արդյունաբերության ու առևտրի զարգացումով, ագրոկուլտուրաների տարածումով և այլ հարցերով: Հին սիստեմի համեմատությամբ զեմստվոյի ստեղծումն առաջընթաց քայլ էր: Սակայն ընտրությունների հիմքում դնելով գույքային ցենզը, ցարիզմը զեմստվային հիմնարկներում ապահովեց կալվածատերերի ներկայացուցիչների գերակշռությունը: Օգտվելով դրանից, զեմստվոների իրավասության տակ գտնվող տնտեսական միջոցների մեծ մասը զավթում էին ազնվականները, իսկ պետական հարկերի ու պարհակների հիմնական ծանրությունը դրվում էր աշխատավոր գյուղացիության վրա: Զեմստվոները վարչական իշխանություն չունեին և կարող էին կենսագործել իրենց որոշումները միայն տեղական իշխանությունների միջոցով: Փաստորեն նրանք ինքնակալության պետական ապարատի կցորդն էին: Հետագայում (հատկապես 1889—1890 թթ.) ցարիզմն ավելի ուժեղացրեց նահանգապետերի ու գավառապետերի իշխանությունը զեմստվոների վրա, ավելի սահմանափակեց նրանց իրավունքները և, թեպետ «չվերացրեց, այլ դիմազրկեց ու գունազրկեց զեմստվոն»[34]: Զեմստվոներում գլխավոր դերը հատկացվում էր ռուս ազնվականությանը, իսկ երկրի այն մասերում, ուր ընդհանրապես ազնվականություն չկար (Սիբիր) կամ եղածը ռուսական չէր (Լեհաստան, Լիտվա, Բելոռուսիա, Միջին Ասիա, Անդրկովկաս), զեմստվո չստեղծվեց: Հայ լիբերալ շրջանները և հատկապես վրաց ազնվականությունը թեպետև տասնյակ տարիներ շարունակ պայքարում էին, որպեսզի զեմստվոներ ստեղծվեին նաև Անդրկովկասում, սակայն ցարական կառավարությունը տարբեր պատճառաբանություններով հետաձգելով հարցը, այնպես էլ չլուծեց այն: Ցարական պաշտոնյաները հաճախ բացեիբաց հայտարարում էին, որ երկրամասի ժողովուրդները դեռ չեն հասունացել ինքնակառավարման համար:

1870 թ. հունիսի 16-ին ցարական կառավարությունը հրատարակեց քաղաքային կանոնադրություն: Այդ օրենքով ստեղծվեցին քաղաքների կառա-

33 Վ. Ի. Լենին. Երկ., հ. 20, էջ 213:
34 Վ. Ի. Լենին. Երկ., հ. 3, էջ 59:

վարման ոչ դասային մարմիններ, որոնք ընտրվում էին ըստ գույքային ցենզի՝ չորս տարին մեկ։ Կարգադրիչ մարմինը քաղաքային դուման էր, իսկ գործադիրը՝ քաղաքային վարչությունը։ Երկուսն էլ գործում էին քաղաքագլխի ղեկավարությամբ։ Քաղաքային դումայի պատգամավորներին կարող էին ընտրել միայն քաղաքային հարկ վճարող բնակիչները, այսինքն՝ տնատերերը և առևտրաարդյունաբերական ձեռնարկությունների տերերը։ Ընտրական իրավունքից զրկված էին բանվորները, արհեստավորների դպրի մասը, մատավորականության որոշ խավերը։ Քաղաքական ղեմստվային վարչության նախագահը և քաղաքագլուխը հաստատվում էին նահանգապետի, իսկ նահանգական ղեմստվային վարչության նախագահն ու քաղաքագլուխը՝ ներքին գործերի մինիստրի կողմից։ Քաղաքային ինքնավար մարմիններն զբաղվում էին քաղաքի բարեկարգման, տնտեսության, առևտրի և կուլտուր-լուսավորական հարցերով։ Չնայած սահմանափակության, քաղաքային ռեֆորմի անցկացումը մի քայլ էր դեպի առաջ։ Այն ստեղծում էր բարենպաստ պայմաններ քաղաքային կյանքի, բուրժուական հարաբերությունների զարգացման համար։ Քաղաքային ռեֆորմը 70-ական թվականների ընթացքում կիրառվեց կայսրության մի շարք մասերում, բացառությամբ Լհհաստանի, Ֆինլանդիայի ու Միջին Ասիայի (այն կենսագործվեց միայն Տաշքենդում), իսկ Անդրկովկասում կիրառվեց մի քանի խոշոր քաղաքներում[35], այդ թվում Երևանում։ Այստեղ քաղաքային նորաստեղծ մարմիններն սկսեցին գործել 1879 թ. հոկտեմբերի 1-ից։ Ավելի քան 20.000 բնակչություն ունեցող Երևանում ընտրությունններին մասնակցեց մի քանի հարյուր մարդ։ Պատգամավորների ճնշող մեծամասնությունն ունևոր խավից էր։ Այսպես, 1894 թ. Երևանյան դումայի 24 անդամներից 10-ը առևտական էին, 8-ը՝ վաճառական, 2-ը՝ ավագ սպայության ներկայացուցիչ և միայն 4-ը՝ շարքային բնակիչ[36]։ XIX դարի վերջին, ցարիզմի վարած հետադիմական քաղաքականության հետևանքով, ինչպես ղեմստվոների, այնպես էլ քաղաքային ինքնավար մարմինների իրավունքներն ավելի սահմանափակվեցին։ 1892 թ. քաղաքային նոր կանոնադրությունը փաստորեն ընտրելու և ընտրվելու իրավունք էր տալիս միայն առավել ունևոր խավերին։

1864 թ. նոյեմբերի 20-ի օրենքով անցկացվեցին դատական ռեֆորմներ։ Հին դասային դատարանը փոխարինվեց ընդհանուր դատարանով։ Ստեղծվեցին հաշտարար, օկրուգային դատարաններ և դատաստանական պալատ։ Առաջինը քննում ու լուծում էր տեղական մանր, երկրորդը՝ նահանգային, իսկ երրորդը՝ մի քանի նահանգների գործերը։ Ստեղծվեցին նաև դատարանիչների և տեղակալների պաշտոններ։ Դատարանից դժգոհ քաղաքացիները կարող էին բողոքել սենատին, որի վճիռը վերջնական էր։ Դատարանը վարչական իշխանություններից անկախ էր համարվում, իսկ դատավորները հեռացվում էին պաշտոնից միայն հանցագործության թույլ տալու դեպքում։ Եթե ռեֆորմից առաջ դատավարությունն ընթանում էր փակ, երկու կողմերի կամ նրանցից մեկի բացակայությամբ, ապա այժմ այն տեղի էր ունենում դռնբաց, երկու կողմերի ներկայությամբ։ Դատական ռեֆորմում բուրժուական սկզբունքներն ավելի ցայտուն արտահայտվեցին, սակայն դատավորների անկախությունը շատ պայմանական էր։ Հաշտարար դատավորներն ընտրվում էին ղեմստվային ժողովներում ու քաղաքային դումաներում՝ այն թեկնածուներից, որոնց ցու-

35 Տե՛ս «История СССР», т. V, М., 1968, стр. 112—113.

36 Տե՛ս Ռ. Խ. Հակոբյան, *Երևանի պատմությունը (1879—1917)*, Երևան, 1963, էջ 23—24։

ցակը նախապես արժանացել էր նահանգապետի հավանությանը և վերջնականապես հաստատվել սենատի կողմից։ Գյուղացիների, հոգևորականների ու զինվորականների համար պահպանվեցին առանձին դատարաններ։ Անդրկովկասում դատական ռեֆորմները կիրառվեցին ուշացումով՝ 1868—1871 թթ.։ Ի տարբերություն Եվրոպական Ռուսաստանի, Անդրկովկասում, այդ թվում Արևելյան Հայաստանում, դատական բոլոր գործերը քննվում ու վճռվում էին օկրուգային դատարաններում՝ առանց երդվյալ ատենակալների։ Ռուսական նահանգներում հաշտարար դատավոր ընտրվում էր, իսկ այստեղ՝ նշանակվում։

1874 թ. հունվարի 1-ին հրատարակվեց նաև զինապարտության կանոնադրությունը, համաձայն որի քսան տարին լրացրած բոլոր տղամարդիկ, անկախ դասային պատկանելությունից, պարտավոր էին ծառայել բանակում։ Շատ այլազգիներ (Միջին Ասիայի, Դաղստանի, Ծայրագույն Հյուսիսի և մի շարք այլ երկրամասերի բնիկներ), որոնք կազմում էին երկրի բնակչության մի զգալի մասը, չէին զորակոչվում բանակ, քանի որ համարվում էին «անբարեհույսներ»։

Անդրկովկասի բնակչությունը ռազմական իշխանությունների նախաձեռնությամբ ու խթանումով երկրամասի Ռուսաստանին միացման առաջին իսկ օրից ակտիվորեն մասնակցում էր ռուսական բանակի մարտական գործողություններին՝ ընդդեմ Իրանի ու Թուրքիայի։ Այն հավաքագրվում էր այսպես կոչված միլիցիայում, որն ըստ էության, ոչնչով չէր տարբերվում աշխարհազորից։ Բայց դա համընդհանուր ռազմական պարտականի կատարում չէր։ Այդ պարտականի կատարման կանոնադրությունը սկսվեց քննվել Թիֆլիսի զինվորական շրջաններում 1871 թ. և հարց հարուցվեց կառավարության առաջ, որ այն տարածվի նաև Անդրկովկասի վրա։ Սակայն դա տեղի չունեցավ անգամ 1874 թ. հունվարի 1-ի զինապարտության կանոնադրության հրատարակումից անմիջապես հետո, քանի որ, նախ՝ խանգարեց 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և ապա ցարական պաշտոնական շրջանները համընդհանուր զինվորական պարտականի տարածումը Անդրկովկասի վրա անժամանակ էին համարում։ Տևական քննարկումներից հետո, վերջապես, 1886 թ. մայիսի 28-ին, որոշվեց 1874 թ. հունվարի 1-ի զինապարտության կանոնադրությունը տարածել նաև Անդրկովկասի վրա։ Առաջարկվեց քրիստոնյաներին՝ հայերին ու վրացիներին զորակոչել բանակ, իսկ մահմեդականներից՝ իբրև անբարեհույսների դրա փոխարեն գանձել զինվորական հարկ տարեկան 534.400 ռուբլի[37]։

Վաթսունական թվականներին Ռուսաստանում իրականացվեցին նաև ֆինանսական ռեֆորմներ, որոնց նպատակն էր մեծացնել պետական եկամուտները և նպաստել արդյունաբերության ու առևտրի զարգացմանը։ Այդ ռեֆորմներով կառավարական եկամուտների հիմնական մասը ուղղակի և անուղղակի հարկերի ձևով հավաքվում էր գյուղացիներից։

1864 թ. հուլիսի 14-ի «կանոնադրությամբ» բարենորոգումներ մտցվեցին լուսավորության ասպարեզում։ Ժողովրդական նախակրթական ուսումնարաններ կարող էին բացվել ինչպես հասարակական հաստատությունների, այնպես էլ առանձին անհատների կողմից։ Սակայն ուսուցման ղեկավարությունը

---

[37] Տե՛ս Ш. В. Мегрелидзе, Вопросы Закавказья в истории русско-турецкой войны 1877—1878 гг., Тифлис, 1969, стр. 78.

մնում էր պետական մարմինների իրավասության տակ։ Գիմնազիաները բաժանվեցին ռեալական և դասական կարգերի։ Առաջինները պետք է կադրեր պատրաստեին հիմնականում ժողովրդական տնտեսության, իսկ երկրորդները՝ պետական հիմնարկների համար։ Ռեալական գիմնազիաներում ընդունվում էին տովորաբար բուրժուաների, իսկ դասական գիմնազիաներում՝ ազնվականների երեխաները։ 60—70-ական թվականներին որոշ փոփոխություններ մտցվեցին բարձրագույն կրթության բնագավառում, որոնց հետևանքով երկրում աճեցին համալսարանների ու տեխնիկական բուհերը։ 1863 թ. հունիսի 18-ի կանոնադրությամբ վերականգնվեց Նիկոլայ I-ի ժամանակ վերացված համալսարանների ինքնավարությունը, որը հնարավորություն տվեց պրոֆեսորական խորհուրդներին ընտրելու ռեկտորներ, դեկաններ, ինչպես նաև նոր պրոֆեսորադասախոսական կադր։ Սակայն ուսանողներին արգելվեց ստեղծել կազմակերպություններ։ 1865 թ. օրենքով բարեփոխություններ մտցվեցին գրաքննության մեջ և որոշ չափով հեշտացվեց գրքերի, ամսագրերի ու թերթերի հրատարակումը, բարձրացվեց հեղինակների ու խմբագիրների պատասխանատվությունը օրենքի առջև, կայսրության ծայրամասերում պահպանվեց նախնական գրաքննությունը։

* * *

XIX դարի 60—70-ական թվականներին ցարական կառավարությունը կայսրության ծայրամասերում անցկացրեց նաև գյուղացիական բարեփոխումներ։ Հայտնի է, որ 1861 թ. գյուղացիական ռեֆորմը վերաբերում էր Ռուսաստանի կենտրոնական և Ուկրաինական նահանգներին, իսկ 1863 թ. ռեֆորմների կանոնադրություններ հրապարակվեցին Լիտվայի, Բելոռուսիայի և Աջափնյա Ուկրաինայի համար։ Անհրաժեշտություն դարձավ նաև Անդրկովկասում գյուղացիական ռեֆորմ անցկացնելու հարցը։ 1861 թ. մարտին Կովկասի փոխարքա Ա. Ի. Բարյատինսկուն արքունիքից տեղեկացնում են, որ կայսրն անհրաժեշտ է գտնում գյուղացիական ռեֆորմն իրագործել նաև Անդրկովկասում։ Սկսվում է Վրաստանի գյուղացիական ռեֆորմի նախապատրաստումը նախ Թիֆլիսի, ապա Քութայիսի նահանգներում, ավելի ուշ Վրաստանի մյուս մասերում, իսկ 1866 թ.՝ Ադրբեջանում ու Արևելյան Հայաստանում՝ Ելիսավետպոլի, Բաքվի ու Երևանի նահանգներում։

Անդրկովկասում ռեֆորմի նախագծի պատրաստման նպատակով ստեղծվեց Անդրկովկասյան Կենտրոնական կոմիտե, որի մեջ մտան վրաց ազնվականության ներկայացուցիչները. ազնվականությունից էին ընտրված նաև գավառական կոմիտեները։ Ցարական իշխանությունները ձգտում էին ամեն կերպ պաշտպանել տեղի ազնվականության շահերը։ Արևելյան Հայաստանում և Ադրբեջանում գյուղացիական ռեֆորմը անցկացվեց 1870 թ. մայիսի 14-ի օրենքով։ Հայտնի է, որ 1846 թ. հրովարտակի հիման վրա հրատարակված 1847 թ. կանոնադրությունը վերաբերում էր գլխավորապես Ադրբեջանի կալվածատիրությանը։ Երևանի նահանգի համար կազմված 1851 թ. հունիսի 8-ի նույնանման կանոնադրությունը չիրագործվեց։ Իհարկե, այդ կիսաճորտատիրական կանոնադրության անկատար մնալը Հայաստանի կալվածատիրական շերտերին զրկեց մի շարք արտոնություններից, որոնց արժանացել էին Ադրբեջանի հողատերերի զանազան խմբերը։ Այդ պատճառով 1860-ական թվականների սկզբին փոխարքային ուղղած գրության մեջ Հայաստանի կալվածատերերը

գանգատվում էին իրենց իրավունքների անորոշությունից և անկայունությունից, նշելով, որ «երկրի ամեն մի տեղական կառավարիչ կամ չինովնիկ» այդ իրավունքները սահմանում էր իր տեսակետով՝ «հիմք չունենալով ոչ մի փաստ»[38]։

Արևելյան Հայաստանի՝ իրենց «տոհմիկ» համարող կալվածատերերի այդ բողոքը չանտեսվեց Անդրկովկասի իշխանությունների կողմից և 1870 թ. ռեֆորմն իրագործելուց առաջ փոխարքայի առաջարկով Երևանի, ինչպես նաև Բաքվի ու Ելիսավետպոլի նահանգներում ստեղծվեցին բեգական հանձնաժողովներ, որոնք պետք է պարզեին «բարձր դասին» պատկանող հողատերերի իրավունքները։ Հենց այդ էլ գյուղացիական ռեֆորմի նախապատրաստության միջոցառումներից մեկն էր։

Երևանի նահանգի հանձնաժողովն իր աշխատանքներն սկսեց 1866 թ. մայիսին և ավարտեց մեկ տարի հետո։ Նրա կողմից «բարձր դասին» պատկանող ճանաչվեց 282 տոհմ, իսկ 304 տոհմի այդ իրավունքը մերժվեց։ Թե ինչ ապօրինություններ տեղի ունեցան Երևանի բեգական հանձնաժողովում, «բեգական դասին» պատկանող որքան նոր տոհմեր երևան եկան, կարելի է եզրակացնել այն բողոքներից, որ հանձնաժողովի որոշումների դեմ բարձրացրեց նահանգի գյուղացիությունը։

Արևելյան Հայաստանի և Ադրբեջանի գյուղացիական ռեֆորմի նախապատրաստման մյուս քայլն այն էր, որ փոխարքան հանձնարարեց գյուղացիական գործերի Անդրկովկասի կենտրոնական կոմիտեին՝ 1847 թ. դեկտեմբերի 26-ի, այսպես կոչված, Աղալարական կանոնադրությունը վերանայել Թիֆլիսի և Քութայիսի նահանգների կանոնադրությունների ոգով։ Կոմիտեն հանգեց այն եզրակացության, որ աղալարները, իրենց դիրքն օգտագործելով, «հաճախ կամայականորեն էին տնօրինում գյուղացիական հողը, իսկ պարհակները երբեմն պահանջում էին մեծացրած չափերով»։ Կոմիտեն ծանոթացավ 1846 թ. հրովարտակին, 1847 թ. ապրիլի 20-ի, 1851 թ. հունիսի 8-ի կանոնադրություններին և մշակեց 1861 թ. ռեֆորմի պահանջներից ելնող նոր կանոնադրություն։

Արևելյան Հայաստանի և Ադրբեջանի կալվածատիրական գյուղացիության «ազատագրության» մասին գյուղացիական օրենքը սահմանված էր 1846, 1847, 1851 թվականների ցարական օրենսդրական ակտերի հիման վրա։ Սակայն այն չէր տարածվում «բարձր դասին» չպատկանող հողատերերի կալվածքներում ապրող գյուղացիության (իսկ այդպիսի հողատերերը Երևանի նահանգում կազմում էին կալվածատերերի 20%-ը), ինչպես և «բարձր դասին» պատկանող կալվածատերերի այն գյուղացիների վրա, որոնք կամավոր համաձայնությամբ ապրում էին նրանց կալվածքում։

1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությունը[39] Արևելյան Հայաստանում հողի սեփականատեր ճանաչեց կալվածատերերին, իսկ գյուղացիներին իրավունք

---

38 *Տե՛ս Վ. Ռշտունի*, Крестьянская реформа в Армении в 1870 г., Ереван, 1947, стр 222.

39 *Այս կանոնադրության տեքստը տե՛ս* «Свод законов Российской империи», СПб., 1899, т. IX, стр. 423—433; «Положение о поземельном устройстве государственных поселян, водворенных на землях лиц высшего мусульманского сословия, а равно меликов из армян в губерниях закавказских: Елисаветпольской, Бакинской, Эриванской и части Тифлисской».

տվեց միայն օգտվելու դրանից։ Կանոնադրությունը գյուղացիների հողաբաժնի նորման սահմանեց 15 տարեկանից բարձր արական սեռի մի շնչին 5 դեսյատին, թողնելով նրանց տրամադրության տակ այն բոլոր հողամասերը (վարելահողերը, խոտհարքները, խաղողի և պտղատու այգիները, բանջարանոցները, տնամատղերը և այլն), որոնք կային մինչև 1870 թ.։ Բայց դրա հետ մեկտեղ հողատերերին իրավունք վերապահվեց իրենց ձեռքում պահելու կալվածատիրական բոլոր հողերի $^1/_3$-ը։

Նոր կանոնադրությունը թուլացնում էր գյուղացիներին փրկագնելու իրենց հողաբաժինը՝ 7 դեսյատինից ոչ պակաս և 15 դեսյատինից ոչ ավելի։ Հողաբաժինները փրկագնելիս, գյուղացիները պետք է վճարեին ոչ թե հողի շուկայական գինը (ինչպես դա կատարվում էր ազատ առք ու վաճառքի ժա-



Ալեքսանդրապոլի տեսարանը XIX դարի վերջին

մանակ), այլ այն գումարը, որը կազմում էր կալվածատիրոջ տարեկան հասույթը $16^2/_3$-ով բազմապատկելիս, այսինքն՝ փրկագինը հավասարեցվում էր այն կապիտալին, որը դրվում էր բանկ 6 %-ով և յուրաքանչյուր տարի կալվածատիրոջը կբերեր գյուղացիներից նրա հավաքած հարկաչափին հավասար եկամուտ։ Հաշվումները ցույց են տալիս, որ գյուղացիներն իրենց հողաբաժինները փրկագնելիս պետք է վճարեին նրանց արժեքից երեք-չորս անգամ ավելի։ Քանի դեռ գյուղացիները չէին փրկագնել իրենց հողաբաժինները, շարունակելու էին կատարել կալվածատիրական պարտավորությունները՝ վճարել բերքի 4/30-ը և դրամական տուրքը (բանջարանոցներից և բոստաններից 80 կոպեկ, իսկ այգիներից 1 ռ. 20 կ.՝ յուրաքանչյուր 360 քառ. սաժեն տարածության համար)։ Դրամական տուրքի վերաբերվեց նաև կալվածատիրոջը գործավոր տալու պարտակը։ Բեգական ու մուլքադարական գյուղացիներն իրենց հողաբաժնի ամեն մի դեսյատինի համար պետք է կալվածատիրոջը վճարեին 30 կոպեկ։

Կանոնադրությամբ ամեն մի ծխի համար սահմանվում էր տուրքի վճարման անհատական կարգ։ Իսկ հաշտարար միջնորդներին իրավունք էր տրվում տուրք չվճարողների կամ խուսափողների նկատմամբ հարկադրանք գործադրել։

Ի տարբերություն եվրոպական Ռուսաստանի, որտեղ կալվածատերերի և գյուղացիների հողային փոխհարաբերությունները կազմում էին կալվածատերերը, Արևելյան Հայաստանում այն հանձնարարվեց հաշտարար միջնորդներին՝ իշխանության նորահաստատ ատյանների միջոցով։ Սրանք նահանգում ստեղծված գյուղացիական գործերի ատյանի ղեկավարությամբ, որի գլուխ էր կանգնած նահանգապետը, զբաղվելու էին կալվածատերերի և գյուղացիների միջև ծագած վեճերի լուծումով։

Կանոնադրերը կազմելիս շատ կեղծիքներ կատարվեցին ի վնաս գյուղացիների։ «Կանոնադրերը ոչ մի էական հարցում չապահովեցին գյուղացիների շահերը,— գրում է Մ. Ն. Կուչաևը,— իսկ հողատերերին միայն զենք ծառայեցին... պետական հողերը հափշտակելու համար»[40]։

1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությունը գյուղացիներին իրավունք էր վերապահում իրենց հողաբաժինները նագնել կամ ամբողջ համայնքով կամ անհատապես՝ ընտանիքներով։ Թվում էր, որ գյուղացիներին հողաբաժնի նագնման գործում նույնիսկ արտոնություն էր տրվում, քանի որ նրանք կարող էին այն պահանջել նաև առանց կալվածատիրոջ համաձայնության։ Բայց այդ արտոնությունն աներևույթ էր, քանի որ պետությունը հողաբաժնի նագրնման դեպքում գյուղացիներին ոչ մի վարկ կամ նյութական աջակցություն չէր տալիս։ Այդ հարցում Արևելյան Հայաստանի ինչպես և Ադրբեջանի[41] գյուղացիները դնվում էին ամենածանր վիճակում և այդ պատճառով էլ մինչև 1912 թ., այսինքն 40 տարվա ընթացքում, հողի նագնման մի քանի դեպքեր են միայն հայտնի։ Կալվածատիրական գյուղացիները փաստորեն մնացել էին ժամանակավոր կախյալ վիճակում։ 1872-ից սկսած Անդրկովկասի իշխանությունները կանոններ մշակեցին նագնման անցնելու համար։ Սակայն կալվածատերերին ընդառաջելու և բյուրոկրատական բարշրշուկի հետևանքով հարցը լուծում չստացավ։

1875 թ. մայիսի 14-ին կանոններ հրատարակվեցին Թիուլդարների մասին։ Այդ կանոններով Երևանի, Էջմիածնի, Նոր Բայազետի և Նախիջևանի գավառների Թիուլդարներին գյուղացիական ամեն մի ծխից տրվող բնաուրքը (բերքի 3/30 չափով և 2 ռ. 50 կոպեկ դրամական տուրքը) վերացվում էր։ Թիուլդարությունը ճանաչվում էր ցմահ իրավունք և Թիուլդարներին նշանակվում էր կենսաթոշակ՝ իրենց նախկին եկամուտների չափով։ Այդ նոր կարգն ուժի մեջ էր մտնելու այն ժամանակ, երբ Կովկասի փոխարքան կլուծեր Թիուլդարների թոշակի հարցը, որն իր լուծումը չստացավ մինչև 1912 թվականը։

1877 թ. սեպտեմբերի 5-ին ցարական կառավարությունը կանոններ հրատարակեց նաև «բարձր դասին» չպատկանող հողատերերի և նրանց հողերի վրա ապրող գյուղացիների մասին։ Թեև այդ կալվածատերերի հողային իրավունքները հիմնականում պահպանվեցին, բայց նրանց գյուղացիական տրնտեսությունների զարգացման համար իրավապես ավելի նպաստավոր պայ-

---

[40] «Свод материалов...», т. I, ч. II, стр. 68—69.

[41] Գյուղացիական ռեֆորմի մասին Ադրբեջանում տե՛ս Ц. П. Агаян, Крестьянская реформа в Азербайджане в 1870 г., Баку, 1956.

մաններ ստեղծվեցին, քանի որ գյուղացիների ամբողջ հողաբաժինն ամրացվում էր նրանց, իսկ տնատեղերը և մյուս հողակտորները տրվում էին իբրև սեփականություն։ Հողատերերը բարձրացնելու իրավունք ունեին միայն ցանքերից։ Նրանք չէին կարող դրամական պարհակներ գանձել գյուղացիներից և իրենց պահել կալվածահողերի 1/3-ը կամ 30 դեսյատին, եթե գյուղացիների տրական շնչի ամեն մի հոգուն 5 դեսյատին հող չէր տրված։ Յուրաքանչյուր ձախ թույլատրվում էր նաև հատկման դեպքում 15 դեսյատինից ավելի հող ձեռք բերել։ Մնացած բոլոր կետերում պետք է կիրառվեին 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրության դրույթները[42]։

1870 թ. գյուղացիական ռեֆորմը պահպանեց Հայաստանում գոյություն ունեցող ֆեոդալական հարաբերությունները։ Այն նպաստեց, մի կողմից, կալվածատիրական հողատիրության ընդարձակմանը, իսկ մյուս կողմից՝ գյուղացիության սակավահողության ու հողազրկության ուժեղացմանը։ Ռեֆորմն ըստ էության պահպանեց գյուղացիների կալվածատիրական պարտավորությունները և դրանց գանձման ու կատարման համար գործադրվող արտատնտեսական հարկադրանքի գրեթե բոլոր ձևերը։

Ի տարբերություն Եվրոպական Ռուսաստանի, որտեղ 1861 թ. փետրվարի 19-ի կանոնադրությունը 1866 թ. տարածվեց նաև պետական գյուղացիների վրա, Արևելյան Հայաստանում 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությունը տարածվեց միայն կալվածատիրական գյուղացիների վրա, որոնք կազմում էին ամբողջ գյուղացիության շուրջ 1/4-ը։ Եվրոպական Ռուսաստանում կառավարությունը գյուղացիների հողաբաժինների փրկագնման համար տրամադրեց զգալի միջոցներ, մինչդեռ Արևելյան Հայաստանում ոչինչ չհատկացրեց։ Այդ պատճառով Ռուսաստանում գյուղացիական տնտեսություններն ինքնուրույն զարգացման ավելի լայն հնարավորություններ ստացան, քան Հայաստանում։ Եթե Կենտրոնական Ռուսաստանում գյուղացիական ռեֆորմը վերացրեց կալվածատիրական գյուղացիների բնավճարները, ապա Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում դրանք պահպանվեցին։

Այս ամենից հետևում է, որ գյուղացիական ռեֆորմն Արևելյան Հայաստանում այնպիսի խոշոր նշանակություն չունեցավ կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար, ինչպես Եվրոպական Ռուսաստանում։ «Ընդհանրապես 60-ական թվականների ամբողջ «ռեֆորմների դարաշրջանը»,— գրել է Վ. Ի. Լենինը,— գյուղացուն թողեց աղքատ, ընկճված, խավար, կալվածատեր-ճորտատերերին ենթարկված և՛ գաստառանում, և՛ կառավարման մարմիններում և՛ դպրոցում, և՛ զեմստվոյում»[43]։ 60—70-ական թվականների բարենորոգումները նման հետքեր թողեցին նաև Անդրկովկասում ու Արևելյան Հայաստանում. այն տարբերությամբ սակայն, որ այստեղ աշխատավորները մնացին առավել ընկճված և ավելի շատ ենթակա ինքնակալական-բյուրոկրատական ապարատին, քան Եվրոպական Ռուսաստանում։

Այնուամենայնիվ, բուրժուական ռեֆորմները Անդրկովկասում ու Արևելյան Հայաստանում ստեղծեցին որոշակի պայմաններ կապիտալիզմի զարգացման համար։ 1870 թ. գյուղացիական ռեֆորմը երկրի մի շարք շրջաններում

---

42 Գյուղացիական ռեֆորմի մասին Արևելյան Հայաստանում մանրամասն տե՛ս Վ. Հ. Ինջըճյանի, Ուրվագծեր Հայաստանի գյուղատնտեսության պատմության, հ. Բ, Երևան, 1968։

43 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 20, էջ 212։

վերացրեց գյուղացիական հողերի օգտագործման համայնական եղանակը և այն փոխարինեց ծխային եղանակով, ամրացրեց յուրաքանչյուր տնտեսության հողաբաժինը և վերացրեց հողի պարբերաբար կրկնվող վերաբաժանումները, իրավունք տվեց գյուղացիներին վաճառելու, նվիրելու կամ գրավ դնելու իրենց հողակտորները համայնքի ներսում, իսկ այգիները, բանջարանոցները և տնատեղերը՝ նույնիսկ համայնքից դուրս։ Ռեֆորմը կալվածատիրական որոշ բնա-



Բջնի գյուղի ընդհանուր տեսարանը

տությունները վերածեց դրամականի և այդպիսով նպաստեց ապրանքակապիտալիստական հարաբերությունների զարգացմանը։ 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությունը գյուղացիներին տվեց նաև քաղաքացիական որոշ իրավունքներ։ Կանոնագրերը կնքելիս նրանք կարող էին հանդես գալ իրենց անունից, հաշտարար դատավորը չէր կարող դրանք կնքել առանց նրանց համաձայնության կամ ներկայության և այլն։

3. ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։ ՀԱՐԿԵՐՆ ՈՒ ՊԱՐՀԱԿՆԵՐԸ

Հողային հարաբերություններ։ *XIX դարի վերջին Արևելյան Հայաստանում շարունակեցին գոյատևել նախկին պետական, կալվածատիրական կամ մասնատիրական և վանական-եկեղեցական հողատիրության ձևերը։ Դրանցից ամենաընդարձակը պետական հողատիրությունն էր։ Արևելյան Հայաստանի ամբողջ տարածքը կազմում էր 6838835 դես. (1 դես.=1,092 հեկ.), որից 80-ական թվականներին սեփականության իրավունքով պետությանը պատկանում էր 6249401 (91,4%), կալվածատերերին՝ 441328 (5,5%), վանքերին*

ու եկեղեցիներին՝ 140.000 (2,0%), իսկ աղգաբնակչության ճնշող մեծամասնությունը կազմող գյուղացիներին՝ ընդամենը 8006 դես. (0,1%) հող[44]։

Ցարական կառավարությունը իր հողերի մեծ մասը տալիս էր գյուղացիներին՝ մշտական ու ժառանգական օգտագործման համար և փոխարենը գանձում բազմաթիվ հարկեր ու տուրքեր։ Այդ գյուղացիները կոչվում էին պետական գյուղացիներ, որոնք 80-ական թվականների կեսերին կազմում էին 165.051 տնտեսություն (827.623 մարդ) և հանդիսանում գյուղական բնակչության ճնշող մեծամասնությունը (72,0%)[45]։ Երկրի տարբեր շրջաններում նրանց վարելահողերի չափերը տարբեր էին։ Երևանի գավառում, օրինակ, յուրաքանչյուր տնտեսություն ուներ 5,19, Էջմիածնի գավառում՝ 7,26, Սուրմալուի գավառում՝ 5,34, Նախիջևանի գավառում՝ 4,83, Նոր Բայազետի գավառում՝ 9,07, Ալեքսանդրապոլի գավառում՝ 9,79, Զանգեզուրի գավառում՝ 7,14 դես. վարելահող[46]։

Թեև այս տվյալները չափազանցված են պաշտոնական վիճակագրության կողմից, այնուհանդերձ ցույց են տալիս, որ Արևելյան Հայաստանում գյուղացիները տառապում էին սակավահողությունից։ Վ. Ի. Լենինը, խոսելով ռուսական գյուղացու հողային ապահովվածության մասին, գրում էր, որ 8 դես. «բավական չէ ընտանիք պահելու համար» և նշում, որ «ծայրը ծայրին հասցնելու համար նյութապես ապահով հողային տնտեսությանը 15 դեսյատինից ոչ պակաս հող է հարկավոր»[47]։ Երկրի համարյա բոլոր շրջաններում գյուղացիները գանգատվում էին սակավահողությունից։ Նրանց բազմաթիվ բողոքների ճնշման տակ ցարական իշխանությունները հարկադրված եղան զբաղվել երկրամասի հողային հարցով։

1892 թ. պետական ունեցվածքների մինիստր Օստրովսկու առաջարկությամբ Թիֆլիսում ստեղծվեց հատուկ հանձնաժողով՝ Կովկասի պետական ունեցվածքների լիազոր, գաղտնի խորհրդական Յա. Ս. Մեդվեդևի նախագահությամբ և տարբեր մինիստրությունների ու Կովկասի գլխավոր կառավարչության ներկայացուցիչների անդամությամբ, որի վրա պարտականություն դրվեց մշակել Անդրկովկասի հինգ նահանգների, Կարսի մարզի և Բաթումի ու Արդվինի օկրուգների պետական գյուղացիների հողաշինարարության նախագիծը։ Սկսելով աշխատանքները 1893 թ. ապրիլին, հանձնաժողովն անհրաժեշտ գտավ պետական գյուղացիների դրության մասին եղած հայտնի «նյութերի» և պաշտոնական այլ աղբյուրների հիման վրա նախապես կազմել մի ընդարձակ զեկուցագիր և ներկայացնել քննարկման։ Որոշ ժամանակ անց

---

44 Տե՛ս «Сборник статистических данных о землевладении и способах хозяйства в пяти губерниях Закавказского края», Тифлис, 1899, стр. III—VII, Приложение IV, стр. 2—25, 86; «Сборник статистических сведений о частном землевладении в Тифлисской и Кутаисской губерниях, изданный Тифлисским дворянским депутатским собранием под редакцией Ф. Г. Гогичайшвили», Тифлис, 1910, стр. 30; «Обзор Карской области за 1896 г.», Карс, 1897, стр. 6; ЦГИАЛ, ф. 1276, оп. 19, д. 2, л. 35. ф. 396, оп. 2, д. 1160.

45 Տե՛ս «Сборник статистических данных...», стр. 18—20, 326, Приложение IV, стр. 2—25, 86; «Кавказский календарь на 1895 г.», отд. V, стр. 36—37.

46 Տե՛ս «Сборник статистических данных...», стр. 18—20, 326—327

47 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 17, էջ 74—75։

Յա. Ս. Մեդվեդևը պատրաստեց այդ զեկուցագիրը[48], ուր վիճակագրական բազմաթիվ տվյալների հիման վրա արձանագրվում էր, թե երկրամասի համարյա բոլոր գավառներում հողը բաժանված է տարբեր գյուղերի միջև միանգամայն անհավասար։

Յա. Ս. Մեդվեդևը գտնում էր, որ սակավահող գյուղացիներին կարելի է բավարարել կամ պետական ազատ հողերի, կամ ավելին ունեցող գյուղերի հաշվին։ Նա առաջարկում էր Անդրկովկասի տարբեր շրջաններում սահմանել հողաբաժնի տարբեր չափեր. լեռնային շրջաններում յուրաքանչյուր շնչի համար նախատեսում էր 4—6 դես., նախալեռնային շրջաններում՝ 2—4 դես., իսկ ցածրադիր շրջաններում՝ 0,75—2 դես. ամեն կարգի հող։ Դրանցից ավելին ունեցողների հողերը պետք է տրամադրվեին կարիքավորներին։ Ձանտեսելով մասնավոր սեփականության բազմաթիվ առավելությունները, Մեդվեդևը, սակայն, գտնում էր, որ հողը պետք է տալ գյուղացիներին մշտական օգտագործման իրավունքով, իսկ համայնքի պաշտպանության համար կառավարությունը պետք է կտրականապես արգելի հողաբաժինների օտարումը կամ գրավ դնելը։ Ապա գտնում էր, որ գյուղացիներին, հողաբաժնից զատ, անհրաժեշտ է բավարարել նաև անտառներով և իբրև նորմա յուրաքանչյուր տնտեսության համար նախատեսում էր 1—16 դես. (նայած տվյալ շրջանի անտառային տարածությանը)։ Այս ամենի դիմաց գյուղացիները պետք է վճարեին հողահարկ՝ պետական հանդակներից օգտվելու և անտառահարկ՝ անտառներից օգտվելու համար։

Յա. Ս. Մեդվեդևի այդ «Զեկուցագիրը» ցարական պաշտոնական դիրքերից ելնող և կյանքից կտրված մի փաստաթուղթ էր, որովհետև պաշտպանելով տիրապետող հողային հարաբերությունները, առաջարկում էր «կարգավորել» գյուղացիական հողատիրությունը անիրագործելի եղանակներով։

1896 թ. փետրվարին Յա. Ս. Մեդվեդևի «Զեկուցագիրը» քննվեց Հանձնաժողովի նիստում, և նյութերն ուղարկվեցին Պետերբուրգ։ Երկու տարի անց այդ նյութերը հրկրագործության ու պետական ունեցվածքների մինիստրության եղրակացության հետ միասին վերլուծվեցին կենտրոնական հանձնաժողովում, և ընդունած նախագիծը հանձնվեց պետական խորհուրդ, որի հիման վրա հրատարակվեց 1900 թ. մայիսի 1-ի օրենքը։

Ցարական կառավարությունն իր մեծապետական-ագրարային քաղաքականությունն անցկացրեց նաև Կարսի մարզում։ Պատմական Հայաստանի այդ տարածքը Ռուսաստանին միացնելուց անմիջապես հետո, նա ստեղծեց զանազան հանձնաժողովներ, որոնց վրա պարտականություն դրեց՝ ուսումնասիրել Թուրքիայի տիրապետության տարիներին մարզում եղած հողային հարաբերությունները և միջոցներ մշակել կառավարության գաղութային քաղաքականության անցկացման ուղղությամբ։ Հանձնաժողովներն իրենց նյութերը ներկայացրին Կովկասի գլխավոր կառավարչություն, ուր 1887 թ. մշակվեցին համապատասխան կանոններ։

Այդ կանոնների համաձայն Կարսի մարզի հողատարածքը և բնական հարստությունները համարվում էին պետական սեփականություն։ Գյուղացինե-

---

48 Տե՛ս ՍՍՀՄ կենտրոնական պետական պատմական արխիվ (այսուհետև ՍՍՀՄ ԿՊՊԱ), ֆ. 396, ց. 2, գ. 1160։ «Записки по вопросу об основаниях поземельного устройства государственных крестьян в пяти губерниях Закавказского края».

րը պետք է օգտվեին իրենց հողաբաժիններից համայնական կարգով։ Սակայն մարզի մի շարք վայրերում դեռ Թուրքիայի տիրապետության ժամանակ գոյություն ունեցող ծխային հողատիրությունը պահպանվեց։ Արոտավայրերից գյուղացիներն օգտվելու էին համատեղ, ընդ որում շատ տեղերում մի քանի գյուղերին տրվեց մի ընդհանուր արոտավայր։ Համայնքի թույլտվությամբ գյուղացիները կարող էին արոտավայրերը դարձնել վարելահողեր և կցել դրանք իրենց հողաբաժիններին։ Նրանք կարող էին համայնական հողատիրությունից անցնել ծխական հողատիրության, եթե համայնքի անդամների 2/3-ը կքվեարկեր այդ որոշման օգտին։ Այգիներն ու բանջարանոցները ճանաչվում էին մասնավոր, իսկ անտառները՝ պետական սեփականություն։ Հայկական վանքերին ու եկեղեցիներին պատկանող հողերը մնում էին անձեռնմխելի, իսկ զինվորական մասերը տարածություններ էին ստանում ըստ իրենց պահանջների։ Պետության համար կատարած ծառայությունների դիմաց առանձին անձինք պարգևատրվում էին հողային ընդարձակ տարածություններով։

Ցարական քաղաքացիական ու զինվորական իշխանությունները գաղութացման նպատակներին հատկացրին Թուրքիա արտագաղթած մահմեդականների հողերը։ Զբաղվարարվելով դրանով, նրանք այդ տարածություններն ընդարձակելու նպատակով կատարեցին նաև բնակավայրերի խտացում, բնակեցնելով յուրաքանչյուր գյուղում առնվազն 15 ընտանիք[49]։ Իշխանությունները հատուկ ուշադրություն դարձրին վերաբնակիչների ազգային կազմին։ Նրանք որոշեցին՝ Կարսի մարզը բնակեցնել ուղղափառ ռուսներով և ստեղծել նրանց համար արտոնյալ պայմաններ, նախատեսելով յուրաքանչյուր տնտեսությանը 15—30 դես. լավորակ հող[50]։ Կայսրության ինչպես այլ ծայրամասերում, այնպես էլ Անդրկովկասում ու Արևելյան Հայաստանում ցարական իշխանությունները դրանով իրագնում էին իրենց ռուսացման կուրսը, ոտնահարելով տեղացիների կենսական շահերը։ Խոսելով Անդրկովկասի գաղութացման մասին, Վ. Ի. Լենինն ընդգծում էր տեղացիների սակավահողությունն ու հողազրկությունը և ցույց էր տալիս, որ այստեղ «վերաբնակեցման ֆոնդը ստեղծվում է բնիկների հողային իրավունքների աղաղակող խախտման միջոցով, իսկ վերաբնակեցումը Ռուսաստանում կատարվում է ի փառս «ծայրամասերի ռուսականացման» միևնույն նացիոնալիստական սկզբունքի»[51]։ Սակայն ցարական կառավարության այդ քաղաքականությունը ինչպես ամենուր, այնպես էլ Արևելյան Հայաստանում տապալվեց։ Ռուս վերաբնակիչները ոչ միայն պատվար չդարձան ցարին, այլև պատեհ առիթով ծառացան նրա դեմ, խաղալով դրական դեր «տեղական ժողովուրդների քաղաքական-հասարակական գիտակցության հեղափոխականացման գործում»[52]։

Արևելյան Հայաստանում պետական գյուղացիները տարբեր հողամասերից օգտվում էին տարբեր կերպ։ Նրանք իրենց կալատեղերը, խոտատեղերը, բանջարանոցներն ու ոչ մեծ այգիները համարում էին սեփականություն և

49 Տե՛ս Ա. Մ. Պողոսյան, նշված աշխ., էջ 133—143։

50 Տե՛ս Խ. Հ. Ավդալբեգյան, Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801—1917 թթ.), Երևան, 1959, էջ 178—179, 204։

51 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 21, էջ 407—408։

52 Տե՛ս Վ. Ա. Ավետիսյան, Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Երևան, 1976, էջ 74։

դարձնում գործարքի առարկա։ Վարելահողերից օգտվում էին համայնական կարգով և պարբերաբար վերաբաժանում իրար մեջ։

Երկրի տարբեր շրջաններում վերաբաժանումները կատարվում էին տարբեր սկզբունքով (ըստ ընտանիքի բոլոր անձանց թվի կամ միայն ըստ տղամարդկանց քանակի, ըստ ամուսնացած զույգերի թվի, ըստ վճարած հարկերի ու տուրքերի չափերի և այլն), բայց ավելի հաճախ՝ «համփա-չարեք» սկզբունքով։ Համփան համարվում էր հողաբաժնի առավելագույն չափը, որը տրվում էր ունևոր ընտանիքներին, իսկ չարեքը՝ նվազագույնը և տրվում էր չքավոր ընտանիքներին։

Արոտավայրերից պետական գյուղացիներն օգտվում էին բացառապես համայնական կարգով։ Մինչև 1862 թ. արոտավայրերն իշխանությունների կողմից տրվում էին կապալով և դրամատերերը վերցնելով դրանք, վերադրներով տալիս էին բնակչությանը։ 1862 թ. արոտավայրերի օգտագործման այդ ձևը փոխարինվեց համայնական օգտագործումով։ Արոտավայրերից օգտվողներն այժմ պետք է պետությանը վճարեին յուրաքանչյուր խոշոր եղջերավոր անասունի համար 10 կոպեկ, իսկ մանր եղջերավորի համար՝ 1 կոպեկ։ 1877 թ. հարկման այդ ձևը վերացվեց և հաստատվեց, այսպես կոչված, դեսյատինային վճարը։ Համաձայն նոր կարգի յուրաքանչյուր գյուղ պարտավոր էր պետությանը վճարել ոչ թե ըստ անասունների գլխաքանակի, այլ իր տրամադրությանը հանձնված արոտատեղերի տարածության։

Երկրի որոշ շրջաններում (հատկապես Արագածի լանջերին և Կարսի բարձրավանդակում), ուր բնակվում էին անասնապահ քրդերը, պետական օրենքին դուգահեռ, գործում էր նաև արոտավայրերի օգտագործման «չգրված օրենքը»՝ սովորույթը (ադաթը)։ Քրդական յուրաքանչյուր գյուղ բաժանված էր մի քանի խմբերի, որոնց գլուխ կանգնած էին ազդեցիկ հարուստներ։ Դրանք կոչվում էին օբաբաշիներ, իսկ խմբի շարքային անդամները՝ ջուլեր։ Օբաբաշիներն արոտատեղիները բաժանել էին իրենց խմբերի միջև և դարձել դրանց փաստացի տերերը։ Ցարական կառավարությունն, իր սոցիալական հենարանը քրդերի մեջ ամրապնդելու նպատակով, 80-ական թվականների կեսերին ոչ միայն չընչացրեց այդ կարգը, այլև օրինականացրեց այն, արոտատեղիները գրանցելով օբաբաշիների անունով։ Նման պայմաններում օբաբաշիները դարձան ավելի արտոնյալ և ջուլերից սկսեցին հավաքել պետության սահմանածից մի քանի անգամ ավելի գումար[53]։

Ոռոգող ջրից օգտվելու համար ամեն մի գյուղ ընտրում էր իր հավատարմատարներ, որոնք գավառապետի կամ նրա օգնականի ներկայությամբ, փակ քվեարկությամբ, ընտրում էին միրաբ՝ 1—3 տարի ժամանակով։ Գյուղն ընտրում էր ջուվարիներ, որոնք օգնում էին միրաբին և հսկում առուներին։ Միրաբն ուներ վարչական ու դատական իրավունքներ, բաժանում էր ջուրն ըստ համայնքների և լուծում նրանց միջև առաջացած վեճերը։ Գյուղացիները ոռոգող ջուրը ստանում էին իրենց հողաբաժինների չափի համեմատ։

Արևելյան Հայաստանի պետական հողերի համեմատաբար փոքր մասը կառավարությունը հանձնում էր վարձակալներին և ամեն կերպ ձգտում ավե-

---

53 Տե՛ս «Аграрная политика царизма и крестьянское движение в Армении в начале XX в.», составил проф. В. Ртуни, при участии К. Степаняна, Ереван, 1951, стр. 152—155.

լացնել այդ հողատարածությունները։ Դրա համար տեղական իշխանությունները նախ և առաջ օգտագործում էին դեռևս 1861 թ. հունիսի 29-ի Անդրկովկասում հողային սահմանազատումներ անցկացնելու մասին հրատարակած օրենքը։ Նրանք հարևան գյուղերի միջև եղած վեճերը կարգավորելու առիթներով խլում էին վիճելի տարածությունները և սեփականացնում։

1887 թ. հունիսի 2-ին կառավարությունը նոր օրենք հրատարակեց Անդրկովկասում հողային սահմանազատումների մասին։ Ի տարբերություն 1861 թ. հունիսի 29-ի կանոնադրության, որով սահմանազատվում էին առանձին գյուղերի հողային տարածությունները, իսկ վեճերը լուծվում վարչական կարգով, նոր օրենքով սահմանազատվում էին առանձին շրջանների հողային տարածությունները, իսկ վեճերի կարգավորումը անտեսվում էր[54]։ 1897 թ. մայիսի 26-ին կառավարությունն առաջարկեց լուծել հողային սահմանազատումների հարցը 1861 թ. հունիսի 29-ի կանոնադրության համաձայն և ամբացնել յուրաքանչյուր գյուղին ու տնտեսությանը այն հողամասերը, որոնք գտնվում էին նրանց փաստացի օգտագործման տակ[55]։ Ցարական կառավարությունը բնի անընդհատ փոխում էր հողային սահմանազատումների օրենքները, սակայն դրանց հիմքում մշտապես դնում էր պետական վարձակալային հողերի ընդարձակման սկզբունքը։ Հետևողականորեն կենսագործելով այդ քաղաքականությունը, 25—30 տարվա ընթացքում (1861—1892) Արևելյան Հայաստանում նա ստեղծեց ավելի քան 243.000 դես. պետական վարձակալային հողերի ֆոնդ[56]։

Կառավարությունը վարձակալային հողերն իբրև պարգև երբեմն տալիս էր առանձին պաշտոնյաների ու նշանավոր անհատների և այդ ճանապարհով ամրապնդում իր սոցիալական հենարանը։ Այսպես, 1880-ական թվականների սկզբներին Կարսի մարզում 37 հոգի ստացան 100—500-ական դեսյատին հող[57]։ Վարձակալային հողերը երբեմն տրամադրվում էին հարուստ անհատներին ու ընկերություններին կամ ուղ վերաբնակիչներին։ Կարսի մարզում միայն 1880 թ. պետական հողերում հիմնվեց վերաբնակիչների 3105 տնտեսություն։ Սակայն իշխանությունները վարձակալային հողերի մեծ մասը տալիս էին սակավահող գյուղացիներին և, օգտվելով նրանց անելանելի դրությունից, պարբերաբար բարձրացնում վարձակալման գները։ Բազմաթիվ դեպքերում պետական վարձակալային հողերն անցնում էին մեծագումար դրամատերերի ձեռքը, որոնք կրկնակի ու քառակի գներով տալիս էին դրանք գյուղացիներին։ Շատ հաճախ դրամատերերի ու գյուղացիների միջև հանդես էին գալիս միջնորդներ, որոնք ավելի էին բարձրացնում վարձակալման գները։ Պետական հողերը չէին անցնում անմիջապես գյուղացիների ձեռքը նախ այն պատճառով, որ պաշտոնյաները շահադիտական նպատակներով դրանք տալիս էին դրամատերերին, երկրորդ՝ աճուրդի ժամանակ գյուղացիները պարզապես անկարող էին մրցել դրամատերերի հետ։ 80-ական թվականների կեսերին

---

54 Տե՛ս Վրացական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 14, գ. 29, թ. 61 (այսուհետև ՎՍՀ ԿՊՊԱ)։

55 Տե՛ս նույն տեղում, թ. 63—64։

56 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 396, ց. 2, գ. 1160։ «Всеподданнейший отчет о состоянии Карсской области за 1884 г», Приложение № 11.

57 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 49/113, ց. 2, գ. 513, թ. 169—176։

արդեն կապալառուների ձեռքում էր պետական վարձակալային հողերի մեծ մասը[58]։

Արևելյան Հայաստանում կալվածատերերի դասակարգը բաղկացած էր աղաներից, բեգերից, մուլքադարներից և թիուլդարներից։ Դրանց մեջ մեծ թիվ էին կազմում մուլքադարները, ապա՝ բեգերն ու աղաները և վերջում՝ թիուլդարները։ Մուլքադարական հողատիրությունը հաստատված էր Արարատյան դաշտում, Նախիջևանի, Շարուր-Դարալագյազի և Նոր Բայազետի գավառներում, թիուլդարականը՝ Երևանի, Էջմիածնի գավառներում, ինչպես և Նախիջևանի, Շարուր-Դարալագյազի ու Նոր Բայազետի գավառների որոշ շրջաններում, իսկ բեգական-աղալական հողատիրությունը՝ Շուշիի, Ջանգեզուրի գավառներում, Ղազախի, Շամշադինի, Լոռիի շրջաններում և աննշան չափով՝ Սևանի ավազանում։ Ֆեոդալական հողատիրության այս ձևերն իրարից տարբերվում էին գերազանցապես գյուղացիներից վերցրած ռենտայի չափերով և նրանց նկատմամբ գործադրած արտատնտեսական հարկադրանքի եղանակներով։ Արևելյան Հայաստանում կալվածատերերը բաժանված էին «բարձր դասին պատկանող» և «բարձր դասին չպատկանող» կարգերի։

1870 թ. մայիսի 14-ի կանոնադրության կիրառման ժամանակ, օգտվելով իշխանությունների պաշտպանությունից, կալվածատերերը շատ տեղերում գյուղացիական հողաբաժիններից բազմաթիվ կտորներ զավթեցին և կցեցին իրենց տնտեսություններին։ Նույնիսկ Երևանի նահանգապետը գտնում էր, որ այդ անողոք զավթումները գյուղացիության համար ծանր դրություն են ստեղծում[59]։ Կալվածատերերը գյուղացիների հողերի հետ միասին բռնագրավում էին նաև ոռոգող ջուրը։

Կտրատելով ու հափշտակելով գյուղացիական հողաբաժինները, կալվածատերերն ամենուրեք ընդարձակեցին իրենց հողատարածությունները։ Սակայն 80—90-ական թվականներին ապրանքադրամական հարաբերությունների զարգացման հետևանքով նրանց մի մասը վաճառեց իր տիրույթները։ Կալվածատիրական հողատիրությունը 1870-ական թվականներից մինչև 1890-ական թվականների կեսերը 391411 դեսյատինից իջավ 264116 դեսյատինի։ Այնուամենայնիվ, Արևելյան Հայաստանում այդ հողատիրությունը դեռ զգալի էր։ Կալվածատիրական հողերի մեծ մասը գտնվում էր Ջանգեզուրի, Շուշիի ու Ղազախի գավառներում ու Լոռիի գավառամասում։

Արևելյան Հայաստանում գերակշռում էր մանր կալվածատիրական հողատիրությունը։ 1894 թ. աղալական-բեգական երեք խոշոր շրջաններում (Ջանգեզուրի, Ղազախի և Շուշիի գավառներում) կար 1533 տիրույթ, որոնցից 1191-ի տարածությունը չէր անցնում 50-ական դեսյատինից։ Միայն 56 տիրույթներից յուրաքանչյուրի տարածությունն էր կազմում 500-ական և ավելի դեսյատին[60]։ Իբրև կանոն կալվածատերերը տիրում էին ամենաերքրի հողերին։ Կալվածատերերի մի մասը հարկադիր աշխատանքի հետ միասին օգտագործում էր նաև վարձու աշխատանք։ Բայց նրանց մեծ մասը իր հողերը տալիս էր մշակելու գյուղացիներին[61]։

---

58 Տե՛ս «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», т. I, Тифлис, 1885, стр. 35; т. III, ч. I, стр. 72.

59 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1268, ց. 21, գ. 199, թ. 44։

60 Տե՛ս «Сборник статистических данных...», стр. 87—101.

61 Տե՛ս նույն տեղում, Приложение 4, стр. 25, 86.

Կալվածատիրական գյուղացիների տնտեսությունը 70-ական թվականներին հանում էր 40850-ի, այսինքն կազմում էր ամբողջ գյուղացիության մոտ 28 տոկոսը։ Նրանք հայտնի էին մուլքադարական, պետական մուլքադարական, քիուլդարական, վանքապատկան, քիուլամուլքադարական (Երևանի, Էջմիածնի, Սուրմալուի և Նոր Բայազետի գավառներում), բեգական, աղալարական, մելիքական (Զանգեզուրի, Շուշիի, Ղազախ-Շամշադինի գավառներում), խոզանական (Լոռիում) և այլ անուններով։ 1870 թ. ռեֆորմից հետո այդ գյուղացիների մեծ մասը պաշտոնապես արդեն կոչվում էր «ժամանակավոր պարտավորյան», քանի որ մինչև իրենց հողաբաժինների փրկագնումը պարտավոր էր կատարել մի շարք կալվածատիրական պարտավորություններ։

Ռեֆորմը չբարելավից կալվածատիրական գյուղացիների ո՛չ տնտեսական և ո՛չ էլ քաղաքական դրությունը։ 70-ական թվականների սկզբներին չուբարանչյուր գյուղացիական տնտեսություն ուներ Զանգեզուրի գավառում 3,53, Ղազախի գավառում՝ 3,24, Երևանի գավառում՝ 4,97, Նախիջևանի գավառում՝ 6,91, Նոր Բայազետի գավառում՝ 14,17, Սուրմալուի գավառում՝ 9,10, Շարուր-Դարալագյազի գավառում՝ 3,48, Էջմիածնի գավառում՝ 7,13 դես. տնամերձ, այգի, շրարբի ու անջրդի վարելահող[62]։

Այսպիսով, համարյա ամենուրեք գյուղացիներն ստացան 3—4 անգամ պակաս հողաբաժին, քան հայտարարվում էր 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությամբ։ Երկրի մի շարք շրջաններում կալվածատիրական գյուղացիների հողաբաժինն ավելի քիչ էր, քան պետական գյուղացիներինը։

Ի տարբերություն պետական գյուղացիների, որոնք իրենց վարելահողերից օգտվում էին գերազանցապես համայնական կարգով, կալվածատիրական գյուղացիները օգտվում էին ծխային կարգով։ Այդ հանգամանքը, անշուշտ, նպաստում էր հողի ներքաշմանը ապրանքակապիտալիստական հարաբերությունների ոլորտը։ Սակայն արտատնտեսական հարկադրանքի բազմաթիվ ձևերը («ժամանակավոր պարտավոր» հարաբերությունները, համապատասխան երաշխավորությունը, կալվածատիրոջ միջամտությունը գյուղացիների տնտեսական գործերին և այլն), որոնք պահպանվել էին եռանիֆորմյան տարիներին, լրջորեն խոչընդոտում էին գյուղում բուրժուական հարաբերությունների զարգացմանը։

Ցարական կառավարությունը 80—90-ական թվականներին մի շարք օրենքներ ընդունեց կալվածատերերի և գյուղացիների փոխհարաբերությունների մասին։ 1879 թ. կանոններով կալվածատերերի հողերի վրա ապրող գյուղացիների հարկերն ու պարհակները վեր էին ածվում դրամականի։ Իսկ այնտեղ, որտեղ գյուղացիների մշակած հողերը պատկանում էին թե պետությանը և թե կալվածատերերին, կանոնագրեր կնքելիս պետք է մասնակցեր նաև պետության ներկայացուցիչը։ 1887 թ. դեկտեմբերի 15-ի օրենքի համաձայն, նրե երբեմն դասին չպատկանող կալվածատերերի հողերի վրա ապրող գյուղացիները տեղափոխվեն «երբեմն դասին» պատկանող կալվածատերերի հողերը, ապա վերջիններս չպետք է ավելացնեին նրանց հարկերի ու պարհակների չափերը։ 1889 թ. հրատարակված կանոններով այդպիսի գյուղացիներին նույնիսկ իրավունք էր տրվում պահանջել, որ իրենց հողաբաժիններն ավելացվեն այնքան, որ ամեն մի արական շնչին, անկախ տարիքից, հասնի

---

62 Տե՛ս «Сборник статистических данных...», Приложение IV, стр. 18—25, 86—87.

հինգ դես. հող։ Այս բոլոր օրենքները, կալվածատիրության շահերը պաշտպանելով հանդերձ, ճանապարհ էին հարթում ապրանքադրամական հարաբերությունների զարգացման համար։

Ետռեֆորմյան տարիներին Արևելյան Հայաստանում պետական ու կալվածատիրական հողատիրության կողքին պահպանվել էր նաև վանական-եկեղեցական հողատիրությունը՝ ընդգրկելով 140.000 դես. հող։ Բացի Արևելյան Հայաստանից, էջմիածինն ընդարձակ կալվածքներ ուներ Վրաստանում ու Ադրբեջանում, ինչպես նաև Ռուսաստանի տարբեր շրջաններում։

1870 թ. գյուղացիական ռեֆորմը 1879 թ. դեկտեմբերի 13-ին տարածվեց Թիֆլիսի նահանգի Ախալցխայի, 1882 թ. դեկտեմբերի 31-ին՝ Ելիսավետպոլի նահանգի հայկական վանական-եկեղեցական, իսկ 1886 թ. դեկտեմբերի 3-ին՝ Գեղարդի վանքի ու Նախիջևանի Կարմիր վանքի գյուղերի վրա։ Սակայն դա չվերաբերվեց Երևանի նահանգում գտնվող էջմիածնապատկան գյուղերին։ Վանքը ետռեֆորմյան տարիներին շարունակում էր այդ գյուղերի բնակիչների ֆեոդալական շահագործումը։ 1886 թ. էջմիածինը Երևանի նահանգում ուներ 22000 դես. հող և հինգ գյուղ՝ 8435 բնակիչով։ Այդ հողերից գյուղացիներին իբրև հողաբաժին տրվել էր 12 հազ. դեսյատինը, կամ շնչին՝ միջին հաշվով 1,4 դես. ամեն տեսակ հող։

Կալվածատիրական հողատիրությունը ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Արևելյան Հայաստանում խոչընդոտում էր հասարակության տնտեսական առաջընթացը։

Օսմանյան կայսրության 1858 թ. ապրիլի 22-ի հողային օրենքով երկրի բոլոր հողերը բաժանվում էին հինգ կատեգորիաների՝ արազի-մեթրուքե, արազի-մեվաթ, արազի-միրի, վակֆային և մուլքային։

Արազի-մեթրուքեի *մեջ մտնում էին ամառային ու ձմեռային արոտավայրերը (յայլաներն ու կշլակները), անտառները, շուկաները, փողոցները, քարհանքերը, սրբավայրերը և այլն, իսկ* **արազի-մեվաթ** *հողերի մեջ՝ գյուղից կես ժամ հեռավորության վրա գտնվող սարերը, մացառուտներն ու ճահիճները։ Ի տարբերություն արազի-մեթրուքեի, այս հողերը կարող էին անցնել անհատական օգտագործման. եթե մեկը մաքրում էր քարերը կամ չորացնում ճահիճները և այդպիսով մեռյալ հողամասը դարձնում պիտանի, իրավունք ուներ մեկ, իսկ եթե շատ աշխատանք էր թափել, նաև երկու տարի օգտվելու դրանից, առանց պետությանը որևէ տուրք վճարելու։ Այնուհետև յուրացված հողն անցնում էր արազի-միրի հողերի շարքը և օգտագործվում սրանց համար սահմանված կարգով։*

Արազի-միրին *գերազանցապես վարելահողերն ու մարգագետիններն էին։ Եթե մեկը ցանկանում էր հող ձեռք բերել, դիմում էր տեղական իշխանություններին, որոնք հանձնարարում էին իրենց ենթակա պաշտոնյաներին՝ չափել հողամասը, որոշել նրա սահմանները, գնահատել այն և կատարել անհրաժեշտ գրանցումներ։ Այնուհետև առաջարկվում էր դիմողին՝ մուծել պետական դրամարկղ սահմանված գումարը, որից հետո նրան տալիս էին անդորրագիր (կոչան)։ Դա պայմանագրի նախնական ձևն էր. կազմվում էր երեք օրինակից, որոնցից մեկը տրվում էր դիմողին, երկրորդը մնում էր գավառի խորհրդում, իսկ երրորդն ուղարկվում էր Կոստանդնուպոլիս՝ բարձրագույն*

իշխանություններին։ Հաստատման դեպքում դիմողին տրվում էր գնման կայքագիր (թափու), որը պայմանագրի ավարտված ձևն էր։

Կայքագիր ունեցողը օգտվում էր հողամասից ցմահ և ժառանգաբար. համապատասխան իշխանությունների թույլտվությամբ կարող էր բաժանել այն իր հարազատների և որդիների միջև, նվիրել, գրավ դնել, վաճառել, նրա վրա շենքեր կառուցել, ծառեր տնկել և այլն։

Մուլքային հողերը կազմում էին առանձին անհատների սեփականությունը։ Տերերը իրավունք ունեին դրանք վաճառել, գրավ դնել կամ ժառանգել։ Մուլքային հողերը կարող էին անցնել արագի-միրի հողերի շարքը, եթե նրանց



Կաբինի ընդհանուր տեսարանը

տերերը մեռնում էին անժառանգ, բայց արագի-միրի հողերն էլ իրենց հերթին կարող էին անցնել մուլքային հողերի շարքը, եթե նրանց տիրողները, իշխանությունների թույլտվությամբ, կառուցում էին շենքեր կամ գյուղ այգիներ։

Վակֆային հողերը մահմեդական հոգևոր հաստատության անձեռնմխելի ունեցվածքն էին։ Դրանք չէին կարող լինել մասնավոր սեփականություն, գնվել կամ վաճառվել։ Այդ հողերը տրվում էին գյուղացիներին վարձակալությամբ, իսկ եկամուտը հատկացվում էր կրոնական հաստատություններին։

Ինչ վերաբերում է հայոց վանական-եկեղեցական հողատիրությանը, ապա թուրքական կառավարությունն այն համարում էր անժառանգ (մահկոչ) և չէր արգելում, եթե մեկը փորձեր սեփականացնել այն։ Վանքերի ու եկեղեցիների կալվածքների ընդհանուր ղեկավարությունը գտնվում էր Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի ձեռքում։ Դրանց անմիջական կառավարիչները գավառների հոգևոր առաջնորդներն ու վանքերի միաբաններն էին, որոնք, օգտվելով սուլթանի թողտվությունից, վանական հողերը ձևակերպում էին իրենց անուններով։

Այսպիսով, Թանզիմաթի տարիներին հրապարակված թուրքական հողային օրենքը չէր ոչնչացնում միջնադարից եկող պետական, մասնատիրական և վանքապատկան-մզկիթապատկան հողատիրությունը։ Դրանցից տիրապետողն Արևմտյան Հայաստանում աղայական-ֆեոդալական հողատիրությունն էր, որը բացատրվում է ոչ միայն այդ անբարեկամական հարաբերությունների թույլ զարգացումով, այլ նաև թուրքական կառավարության ազգահալած քաղաքականությամբ։ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Աբդուլ Համիդ II-ը, նպատակ ունենալով ամրապնդել իր սոցիալական հենարանը, սրել հայ-քրդական հակասությունները և օգտագործել քուրդ աղաների նյութական ու ռազմական հնարավորություններն ընդդեմ արևմտահայ բնակչության ազատագրական շարժումների, համայնց ֆեոդալների դասակարգը և նպաստեց նրա հզորացմանը։ Ֆեոդալների դասակարգը մասամբ ամրապնդվեց Թանզիմաթի տարիներին Արևմտյան Հայաստանից արտաքսված աղաներին ու նրանց ժառանգորդներին կրկին ետ վերադարձնելու, իսկ ավելի շատ «համիդիե գնդեր» («համիդիե») կազմակերպելու ճանապարհով։ Սուլթանն արտոնություններ էր տալիս այդ գնդերը մտնող քրդական ցեղապետերին ու խրախուսում, որ բռնագրավեն հայկական հողերը։ XIX դարի վերջին, հատկապես 90-ական թվականների ջարդերի տարիներին, աղաները վեց նահանգներում հայ գյուղացիներից բռնագրավեցին 1.030.000 օրավար (741.600 հեկտար) հող, որից 100.000 օրավարը՝ Կարինի, 200.000-ը՝ Խարբերդի, 80.000-ը՝ Սեբաստիայի, 200.000-ը՝ Դիարբեքիրի, 100.000-ը՝ Վանի, 350.000-ը՝ Բիթլիսի նահանգներում[63]։ Աղաները բռնագրավեցին նաև քուրդ ու թուրք գյուղացիների հողերը և ամրապնդեցին իրենց տնտեսական հզորությունն ու քաղաքական ազդեցությունը։

Քրդական ցեղապետերից շատերը կատարում էին աշխարհիկ ու հոգևոր առաջնորդի դեր։ Նրանք ունեին զգալի թվով ռազմիկներ (ղոլամներ), որոնց օգտագործում էին նոր հողեր ու գյուղեր բռնագրավելու, խաղաղ բնակիչներին թալանելու և նրանց ազատագրական շարժումները ճնշելու համար։ Ղոլամները ցեղապետի «հավատարիմ գերիներն են կամ կույր գործիքները,— ասված է վավերագրերից մեկում,— թե հրամայե զարնել, կը զարնեն, կողոպտել՝ կը կողոպտեն, սպանել՝ կը սպաննեն և այլն։ Սորա գրեթե ոչ բնավ երկրագործությամբ և արհեստով կը զբաղին, և ոչ իսկ շատ տեղեր հաստատ բնակութիւն ունին, այլ զէն ի ձեռին կը շրջին ամենուրեք... կը հափշտակեն երկրագործ հայ ժողովրդեան պարէնը, կզողնան նոցա դուարը, կայրեն նոցա ցորենի օրանները և խոտի դէզերը, և կը բռնաբարեն նոցա պատիւն ու կյանքը»[64]։

Թուրքական կառավարությունն ուղղակի և անուղղակի միջոցներով արգելակում էր քրիստոնյաներին, հատկապես հայերին, անցնել հողատերերի շարքը։ Եթե 80-ական թվականներին հատկապես Վասպուրականում ու Խարբերդում որոշ թվով հայեր ձեռք էին բերել հողային կալվածքներ, ապա 90-ական թվականների ջարդերի տարիներին նրանք կամ բնաջնջվեցին, կամ զրկվեցին այդ կալվածքներից։

---

63 Տե՛ս Գ. Տեր-Կարապետյան, Հողային հարցը հայաբնակ նահանգներուն մէջ, Կ. Պոլիս, 1911, էջ 43—44։

64 Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915, էջ 143։

Գյուղացիների հողերը բռնագրավելիս աղաները նրանց մի մասին հողաբաժիններ հատկացրին՝ նպատակ ունենալով իրենց ապահովել մշտական աշխատուժով։ Սակայն գյուղացիների զգալի մասին նրանք զրկեցին հողից։ Դրա հետևանքով աճեց հողազուրկ գյուղացիների զանգվածը՝ մարաբա ընդհանուր անունով[65]։ Այս գյուղացիների մի մասը վարձվում էր հողատերերի ու հարուստների մոտ և այդպիսով հիմք դնում բատրակների կամ գյուղական պրոլետարների բանակին։ Բայց նրանց ճնշող մեծամասնությունը ենթարկվում էր ֆեոդալական շահագործման։

Արևմտյան Հայաստանում մարաբաների մի մասն ուներ բանող անասուններ և երկրագործական գործիքներ, իսկ մյուսը՝ ոչինչ չուներ։ Նրանք վարձակալում էին աղաների հողը տարբեր պայմաններով. մի դեպքում աղայից վերցնում էին միայն հող, մի այլ դեպքում՝ նաև սերմացու, երրորդում՝ նաև եղներ ու գյուղատնտեսական գործիքներ։ Աղաների ու մարաբաների հարաբերությունները հաճախ վեր էին ածվում իսկական ճորտական հարաբերությունների։ Կալվածատերերը ոչ միայն արգելում էին իրենց մարաբաների տեղաշարժերը, այլև նրանց վաճառում ու գնում էին, նույնիսկ սպանում։ Ականատեսների վկայությամբ Տարոնում աղաները «սկսան իրենց մէկպա՝ ճորտ հայերը իրարու ծախել կամ նուիրել»[66]։ Մարաբաները համարյա ճորտական կացության մեջ էին գրված նաև Խարբերդի դաշտում ու այլ վայրերում[67]։

Սուլթանական կառավարության վարած քաղաքականության հետևանքով երկրի մի շարք շրջաններում արևմտահայ այն գյուղացիները, որոնք XIX դարի կեսերին ազատ էին ֆեոդալական կախումից, մեծ մասամբ ընկան աղաների ու բեյերի իշխանության տակ և զարձան կիսազատներ, իսկ կիսազատները՝ ճորտեր։ Իշխանություններն ու աղաները ուղղակի արգելում էին հայ գյուղացիների տեղափոխությունները։ Եթե պատահում էր, որ գյուղացիները հեռանում էին առանց աղայի գիտության, ապա բռնությամբ ետ էին վերադարձվում ու պատժվում։ 1891 թ. մարտի 22-ին Կարինի ռուսական գլխավոր հյուպատոսը Կ. Պոլսի իր դեսպանին գրում էր. «Տեղական իշխանությունները Ալաշկերտի հայերից ոչ մեկին թույլ չեն տալիս հեռանալու գավառի սահմաններից և նույնիսկ անցնելու մի գյուղից մյուսը»[68]։

Սակայն XIX դարի վերջին հողային հարաբերությունները տարբերվում էին միջնադարյան ֆեոդալական հարաբերություններից։ Եթե առաջ Արևմտյան Հայաստանում տիրապետում էր ռազմալենային հողատիրությունը, ապա այժմ զարգանում էր կալվածատիրական հողատիրությունը, որն արդեն ներգրավվել էր ապրանքադրամական հարաբերությունների մեջ։ Աղաները կապվում էին շուկայի հետ։ Նրանք վաճառում էին գյուղատնտեսական մթերքներ կապիտալ շահելու, իսկ գյուղացիները՝ հարկերը վճարելու համար։

Արևմտյան Հայաստանում մասնատիրական ֆեոդալական հողատիրությունից բացի նշանակալի հողային տարածություններ ունեին նաև կրոնական

---

65 *Տե՛ս* Ա. Ս. Համբարյան, *Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914)*, Երևան, 1965, էջ 216—217։

66 Սարգիս և Միսակ Բդեյան, *Հարազատ պատմութիւն Տարօնոյ, խմբագրեց Աղան Տարօնեցի*, Գահիրէ, 1962, էջ 9։

67 *Տե՛ս* А. М. Колюбакин, Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, т. III, ч. I, Тифлис, 1891, стр. 386—389.

68 ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1889—1894, գ. 1630, թ. 90—91։

հաստատություններ։ Վանի նահանգի ս. Խաչ վանքը 70—80-ական թվականներին ուներ 12 արտ, այգիներ ու պարտեզներ, ս. Վարագա վանքը՝ 150 դես. վարելահող, մեծ քանակությամբ անասուններ։ Ընդարձակ տարածություններ ունեին նաև ս. Նարեկա, ս. Առաքելոց, ս. Կարապետ, ս. Հովհաննես, ս. Սորսորու, ս. Դատեմի, ս. Աստվածածնի Կարմիր ու այլ վանքեր[69]։

1890-ական թվականներին աղաները ձեռնամուխ եղան վանքապատկան հողերի բռնագրավմանը։ Նրանք քանդում ու ավերում էին վանքերն ու եկեղեցիները[70], հաճախ էլ դարձնում իրենց հարկատուն։ Հարկ է նկատել, որ հայոց հողերի եկամուտների հաշվին էին պահվում ազգային դպրոցներն ու կուլտուր-լուսավորական հաստատությունները։



Խարբերդի բնդհանուր տեսարանը

XIX դարի 60—70-ական թվականներին Արևմտյան Հայաստանում պետական հողերն զգալի տարածություններ էին զբաղեցնում, սակայն հաջորդ տասնամյակներում աղաների հափշտակումների հետևանքով դրանք խիստ նվազեցին և մի շարք գավառներում բոլորովին անհետացան։ 1899 թ. «Մուրճ» գրում էր, որ Թուրքիայի հայաբնակ վայրերում «պետական ազատ հողեր շատ քիչ կան, կարելի է ասել, թե բոլորովին չեն մնացել, որովհետև դրանց մեծ մասը օրինական թե անօրեն ճանապարհներով զանազան բիւրք ու չերքէզ բեգերի ու աղաների ձեռքն են անցել, նրանց սեփականությունը դարձել»[71]։

---

69 Տե՛ս Մ. Միրախորյան, Նկարագրական ուշադրություն ի հայրենիս գավառս Արևելյան Տաճկաստանի, մաս Բ, էջ 84, մաս Գ, էջ 175, Ա-Դս, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 23—24, 56, Հ. Ոսկյան, Վասպուրական-Վանի վանքերը, Վիեննա, 1940, մաս Ա, 1942, մաս Բ։

70 «Բյուզանդիոն», 1908, հոկտեմբերի 9 (№ 3660)։

71 «Մուրճ», 1899, № 10, էջ 1209։

Պետական հողերի վրա բնակվող գյուղացիները 1858 թ. հողային օրենքով իրենց հողաբաժիններին համար պարտավոր էին ունենալ կայքագիր, բայց պաշտոնյաների չարաշահումների պատճառով երկար տարիներ չէին կարողանում ձեռք բերել այն։ 1867 թ. մայիսի 21-ին սուլթան Աբդուլ Ազիզը հատուկ օրենքով պարտադրեց գյուղացիներին՝ վճարել պետությանն իրենց եկամտի 15%-ը և ստանալ կայքագիր։ 1872 թ. կառավարությունն առաջարկեց ստուգել կայքագրերը և չունեցողներին պարտադրեց ձեռք բերել դրանք։ Դա, անշուշտ, նպատակ ուներ ոչ այնքան իրավականորեն ձևակերպել գյուղացիների հողաբաժինների չափը, որքան մեծացնել պետության եկամուտները։

Թուրքական իշխանությունների անմիջական միջամտությամբ ու հարկադրանքով 70—90-ական թվականներին Արևմտյան Հայաստանի գյուղացիների միայն մի մասը կայքագրեր ձեռք բերեց։ 1880-ական թվականների սկզբներին Գ. Սրվանձտյանցը նշում էր, որ Դիարբեքիրի նահանգում «քիչ հողեր կան թափու եղած ժողովրդևան վրա», իսկ Զարսանջակում «միայն մեծկերտը և աղճով գեղերու հայք և չնչին մաս մ'ալ բերդակցիք իրենց վրայ թափու ունին»[72]։

Արևմտյան Հայաստանի գյուղացիները վարելահողերից, այգիներից ու բանջարանոցներից օգտվում էին ծխական, իսկ արոտավայրերից համայնական կարգով։

Սուլթանական կառավարության քաղաքականության հետևանքով արևմտահայ գյուղացիության մեծամասնությունը առավելապես կախյալ և մի զգալի չափով ճորտական վիճակում տառապում էր ֆեոդալական կապանքներում։ Ֆեոդալական կախումից ազատ գյուղացիների թիվը քիչ էր։

Հարկերն ու պարեհակները։ Ցարական կառավարությունը, տեղական կալվածատերերն ու կրոնական հաստատությունները հավաքում էին գյուղացիներից զանազան հարկեր ու տուրքեր, ինչպես նաև ստիպում նրանց կատարել պարհակներ ու աշխատավճարներ։ Կառավարությունը գյուղացիներից վերցնում էր պետական հարկեր (ծխահարկ, հողահարկ) և երկրային տուրք (земский сбор), ապա հարկադրում նրանց վճարել հասարակական հարկեր՝ գյուղի վարչական ապարատի (տանուտիրոջ, նրա օգնականների, գրագրի, ցրիչի), ինչպես նաև քահանայի, գիշերային պահակի ու հանդապահի պահպանման համար։ Երկրի տարբեր շրջաններում այդ հարկերի չափերը տարբեր էին. 80-ական թվականների կեսերին յուրաքանչյուր գյուղացիական տնտեսություն Ալեքսանդրապոլի գավառում վճարում էր 3,50 ռուբ. պետական հարկ, 5,75 ռուբ. երկրային տուրք և 3,87 ռուբ. հասարակական հարկ, իսկ Երևանի գավառում համապատասխանաբար՝ 5,96 ռուբ., 6,82 ռուբ. և 3,28 ռուբ.։ Նրանք կատարում էին բազմաթիվ նախատեսված և չնախատեսված հարկադիր աշխատանքներ (ճանապարհների կառուցում, պաշտոնյաներին, զինվորականներին, ոստիկաններին բնակարանի ու փոխադրական միջոցների հատկացում և այլն)։[73]

---

72 Գ. Սրվանձտյանց, *Քորոս աղբար Հայաստանի ճամբորդ*, մասն Բ, Կ. Պոլիս, 1884, էջ 141, 191։

73 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 396, ց. 2, գ. 1160, Տե՛ս «Приложение к записке уполномоченного министра государственных имуществ на Кавказе Я. С. Медведева, представленной в комиссию по составлению проекта законоположений о поземельном устройстве государственных поселян Закавказского края».

Պետական հարկերն իրավականորեն բաշխվում էին ըստ հողի պտղաբերության. նահանգը բաժանվում էր գոտիների և սահմանվում էր դրանցից յուրաքանչյուրի հարկի չափը։ Գործնականում այդ սկզբունքը ոտնահարվում էր, և հարկերը բաշխվում էին կամայականորեն։ Երբեմն երկրամասի սակավաբեր շրջանները ևս դրվում էին ծանր հարկերի տակ[74]։

Հարկային լուծը համարյա ամբողջովին ընկած էր գյուղացիության վրա։ XIX դարի 80-ական թվականների կեսերին Զանգեզուրի գավառում կալվածատերերը 17 դես. հողի համար վճարում էին մեկ ռուբլի, իսկ գյուղացիները 1 դես. հողի համար՝ 1 ռուբ. 50 կոպ.։ Այդ ժամանակամիջոցում Երևանի նահանգում ու Զանգեզուրի գավառում հարուստ գյուղացիների վճարած հարկերն ու տուրքերը կազմում էին նրանց ծախսերի 2,2%-ը, այն դեպքում, երբ միջակներինը կազմում էր 5%-ը, իսկ չունևորներինը՝ 18,4%-ը։

Ինչպես երկրամասի այլ շրջաններում, այնպես էլ Արևելյան Հայաստանում ցարիզմը շարունակում էր բարձրացնել հարկերը և միայն հինգ տարվա ընթացքում (1871—1876) Երևանի գավառում յուրաքանչյուր ընտանիքի տուրքը 5 ռուբ. 61 կոպ.-ից հասավ 6 ռուբ. 47 կոպեկի[75]։

1887 թ. Կարսի մարզում կառավարությունը տասանորդը փոխարինեց դրամահարկով և 16 տարվա ընթացքում (1884—1900) հարկային գանձումները 277.696 ռուբլուց հասան 377.952 ռուբլու[76]։ 1890 թ. երկրային տուրքը տարածվեց նաև Արևելյան Հայաստանի այն մասի վրա, որը մինչ այդ ազատ էր դրանից։ Իշխանությունները ուղղակի հարկերի հետ բարձրացնում էին նաև անուղղակի հարկերը՝ ծխախոտից, սպիրտային խմիչքներից, աղից ու այլ ապրանքներից գանձվող գումարները։ Արևելյան Հայաստանում գյուղացիների հարկերը հետզհետե բարձրանում էին, իսկ հողաբաժինները կամ մնում էին անփոփոխ, կամ բնակչության բնական աճի և այլ հանգամանքների հետևանքով փոքրանում էին։ Հարկային հարստահարումը հանգեցրել էր այն բանին, որ շատ հաճախ շինականները հողաբաժնի համար վճարում էին ավելի, քան նրանց եկամուտներն էին։

Գյուղացիների դրությունը վատթարանում էր նաև նրանով, որ ցարական պաշտոնյաները պետական հարկերը հավաքելիս թույլ էին տալիս զանազան չարաշահումներ։ Նրանք գյուղացիներից ավելին էին վերցնում, քան սահմանված էր օրենքով։ Հարկային հարստահարությունները և պաշտոնյաների չարաշահումները տնտեսապես քայքայում էին գյուղացիներին[77]։ Ավելի ծանր էր կալվածատիրական գյուղացիների վիճակը։ Պետական հարկերն ու տուրքերը վճարելուց բացի, նրանք ստիպված էին կատարել «իրենց» մուլքադարների, թիուլդարների, մելիքների, բեգերի ու աղաների օգտին սահմանված բոլոր վճարումները։

Համաձայն 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրության, գյուղացիները մուլքադարներին պետք է վճարեին բահրա՝ գյուղատնտեսական մթերքների 4/30-ը և դրամ՝ յուրաքանչյուր 10 բաթման (360 քառ. սաժեն) բանջարանոցի համար

74 Տե՛ս «Материалы...», т. I, стр. 572—573.

75 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1268, ց. 19, գ. 62, թ. 75—78։

76 Տե՛ս «Всеподданнейший отчет о состоянии Карсской области за 1884 г.», Приложение № XI, «Обзор Карсской области за 1900 г.», стр. 11.

77 Տե՛ս Մ. Եզանյան, Հայաստանի հետռեֆորմյան ագրարային հարաբերությունները, Երևան, 1964, էջ 106—110։

80 կոպ., այգու համար՝ 1 ռուբ. 20 կոպ., կամ՝ ամեն մի դեսյատին բանջարանոցի համար՝ 3 ռուբ. 20 կոպ., իսկ այգու համար՝ 4 ռուբ. 80 կոպ.։ Նույն կանոնադրությամբ գյուղացիները բեգերին ու աղաներին պետք է վճարեին մալչհաք՝ իրենց գյուղատնտեսական մթերքների $^1/_3$-ը և կոռ՝ տարվա մեջ ութ օր աշխատեին նրանց համար կամ դրա դիմաց պետք է (փոխադարձ համաձայնության դեպքում) դրամ տային. բեգերին՝ յուրաքանչյուր դեսյատին պիտանի հողի համար 30 կոպ., իսկ աղաներին ու մելիքներին՝ 15 կոպ.։ 1875 թ. կանոններով շինականները քիուլղարներին պետք է վճարեին բնավճար ռենտա՝ իրենց գյուղատնտեսական մթերքների $^1/_3$-ը և դրամավճար ռենտա՝ յուրաքանչյուր տնտեսությունից տարեկան 2 ռուբ. 50 կոպ.։ 1877 թ. կանոններով գյուղացիները «բարձր դասին» չպատկանող հողատերերին պետք է վճարեին փոխադարձ համաձայնությամբ, իսկ հակառակ դեպքում՝ հաշտարար միջնորդի որոշումով։

Սակայն հողատերերը չէին բավարարվում 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությամբ սահմանված չափերով։ Հենվելով իրենց տնտեսական ուժի վրա և օգտվելով տեղական իշխանությունների պաշտպանությունից, հաճախ նրանք պահանջում էին գյուղացիներից ավելին և ստիպում տալ զանազան «նվերներ»։

Հողատերերը շահագործում էին գյուղացիներին նաև կապալային եղանակներով, իրենց հողերը վարձակալության տալով նրանց։ Այդ հողերը տարբեր տեղերում հանձնում էին տարբեր պայմաններով։ Երբեմն տալիս էին աշխատավճարով այն պայմանով, որ գյուղացիները մշակեն նրանց վարձակալությամբ չտրված հողերը։ Կալվածատերերը երբեմն գյուղացիներից վերցնում էին գյուղատնտեսական մթերքներ (Սուրմալուի գավառում՝ բերքի $^1/_2$—$^1/_4$-ը, Էջմիածնի գավառում՝ $^4/_{30}$-ը, Երևանի գավառում՝ $^1/_2$—$^1/_6$-ը և այլն)։ Շատ դեպքերում նրանք վերցնում էին անգամ հարգ։ Եթե հողատերերը հողի հետ միասին տալիս էին նաև սերմացու կամ անասուններ, ապա ստանում էին ավելի մեծ բաժին և վերցնում էին նաև դրամ. 1887 թ. նրանք մեկ դեսյատին միջին պտղատվությամբ հողի համար վերցրին Երևանի գավառում՝ 10, Էջմիածնի գավառում՝ 15 ռուբ.։ Վերջապես, հողատերերը գյուղացիներից տուրք էին վերցնում խառը ձևով՝ ինչպես աշխատավճարով, այնպես էլ արդյունավճարով ու դրամավճարով։ Այդ բոլոր ձևերից ամենածանրը բնավճարն էր, որը դրամավճարի համեմատությամբ մոտ երկու անգամ թանկ էր նստում շինականների վրա։

Եռոեֆորմյան տարիներին ծանր հարատահարման էին ենթարկվում հայկական վանքապատկան ու եկեղեցական գյուղացիները։ 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությունը տարածվեց Թիֆլիսի նահանգի Ախալցխայի գավառի, Ելիսավետպոլի նահանգի, Գեղարդի վանքի ու Նախիջևանի Կարմիր վանքի հայկական վանքապատկան գյուղերի վրա։ Նրանց բնակիչներին պարտադրվեց հայոց կրոնական հաստատություններին օգտին կատարել այն վճարումները, ինչ կատարում էին Երևանի, Ելիսավետպոլի ու Բաքվի նահանգների կալվածատիրական գյուղացիները։ Մայիսի 14-ի ուեֆորմը չկիրառվեց Էջմիածնի վանքապատկան հինգ գյուղերում (Վաղարշապատ, Օշական, Եղվարդ, Մաստարա, Մուղնի)։ Այդ գյուղերի բնակիչները դեռևս 1836 թ. եկեղեցական կանոնադրության համաձայն, «ազատված էին» արքունական հարկերից։ Կառավարությունը քաղաքական որոշ նկատառումներով իրավունք էր տվել Էջմիածնի վանքին՝ իր օգտին հավաքել նաև այն հարկերն ու տուրքերը, որոնք վան-

քապատական գյուղացիները պետք է տային պետությանը՝ էջմիածնի վանքը, օժտված լինելով մուլքադարական ու Քիուլդարական իրավունքներով, յուրաքանչյուր տարի իր գյուղերից վերցնում էր՝ իբրև մուլք նրանց գյուղատնտեսական մթերքների 4/30-ը, իբրև Քիուլ՝ 3/30-ը, այգիների յուրաքանչյուր սոմարից՝ (1 սոմարի վրա ցանվում էր 10 բաթման, իսկ բաթմանը 10 ֆունտ է) 1 ռ. 20 կոպ., բոստանների սոմարից՝ 80 կոպ. և դրամական հարկ՝ ամեն մի տնտեսությունից 4 ռ. 25 կոպ.։ Այդ բոլորից բացի պարտադրում էր գյուղացիներին կատարել նաև զանազան աշխատանքներ։ Հոգևորականությունը հրըամայում էր գյուղացիության նաև մյուս զանգվածներին՝ ինչպես պետական, այնպես էլ կալվածատիրական շինականներին։

XIX դարի վերջին հարկային հարստահարման էր ենթարկվում նաև Արևվելյան Հայաստանի քաղաքային բնակչությունը։ 1843 թ. հունվարի 26-ի գործող օրենքի համաձայն հարկային միասին համարվող ծխից գանձվում էր տարեկան ավելի քան 2 ռուբլի։ Քաղաքային բնակիչներից հավաքվում էր նաև երկրային տուրք, որն արատահայտվում էր ինչպես դրամով, այնպես էլ աշխատանքով։ Իշխանությունները հարկի տակ էին դրել նաև բնակարանները, այգիները, բանջարանոցները, արհեստագործական ու առևտրական կրպակները և այլն։ Դրանց մեջ միայն ծխահարկն էր կայուն, իսկ մյուսները տարբեր ժամանակներում կազմել են տարբեր դումարներ։ Պետական ծխահարկը Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում հավաքվեց շուրջ 50 տարի։ 1893 թ. դեկտեմբերի 27-ի օրենքով այն փոխարինվեց անշարժ գույքի հարկով, որի չափը որոշվում էր քաղաքացիների ունեցած անշարժ գույքով ու նրա նկամտով[78]։ Այդ փոփոխությունը պետությանն ավելի շատ եկամուտներ բերեց, քան նա ստանում էր ծխահարկից։ Նոր հարկի հետ միասին կառավարությունը շարունակում էր հավաքել նաև տների ու կրպակների, արհեստանոցների ու սպասդանոցների վրա դրված հին հարկերը, ինչպես և երկրային տուրքը։ Ցարիզմը բնակչությունից ամեն տարի հսկայական գումարներ էր գանձում իբրև երկրային տուրք և հայտարարում, որ դրանք ծառայելու են երկրամասի տնտեսական ու կուլտուրական բարելավմանը, բայց իրականում այդ գումարները ծախսվում էին ինքնակալության վարչական ու ոստիկանական ապարատի պահպանման և տեղական ժողովուրդների ազատագրական շարժումների ճնշման նպատակներին։

XIX դարի վերջին թուրքական իշխանությունները ու աղաները արևմտահայ գյուղացիներին ենթարկում էին անլուր կողոպտման ու հարստահարման։ Օգտագործելով բնակիչների անձի ու գույքի անապահովությունը, նրանց ավազակային հորդաները պարբերաբար հարձակվում էին գյուղացիների վրա, սպանում էին, տանում ունեցվածքը, որբացնում ու սովի մատնում երեխաներին։

Աղաները շինականներից հավաքում էին ինչպես հարկ, այնպես էլ ֆեոդալական ռենտա։ Հարկը հավաքում էին բունությամբ, քալանչիական արշավանքների և կշռակության միջոցով։ Քրդական ցեղապետերից շատերը աշ-. նանն իջնում էին սարերից և իրենց ցեղակիցների ու անասունների հետ ձմե-

78 Տե՛ս Ֆ. Ն. Հակոբյան, Երևանի պատմությունը (1879—1917 թթ.), էջ 197։

ռում նստակյաց ժողովուրդների, գերազանցապես հայկական գյուղերում։ Բնակիչներն ահ ու սարսափի տակ հարկադրված էին կերակրել նրանց։ Կշռակությունը հիմնականում տարածված էր Աղթամում, Մուշում, Վարդոյում, Խնուսում, Բուլանըխում, Մանազկերտում և այլ տեղերում։

Աղաները հարկը հավաքում էին նաև խաֆիրության միջոցով, նրանք իրենց հայտարարում էին գյուղացիներին կողմնակի հարձակումներից «պաշտպանողներ», որի համար ստիպում էին վճարել որոշակի հարկեր ու տուրքեր։ XIX դարի վերջին խաֆիրությունն արտահայտվում էր երկու ձևով։ Մի դեպքում գյուղացիները որպես հողատերեր հարկատու էին աղաներին, մյուս դեպքում, նրանք հողազուրկ լինելով, դառնում էին աղաների փաստացի ճորտերը։ Աղաները արգելում էին այդ գյուղացիների տեղաշարժերը, կառավարում ու դատում, գնում ու վաճառում, ծեծում ու անգամ սպանում էին, առանց որևէ մեկի առաջ պատասխան տալու։ Խաֆիրությունը տարածված էր Սասունում, Խութում, Մուշում, Խիզանում, Մոկսում, Շատախում, Բռնաշենում և այլ վայրերում։ Աղաները ֆեոդալական ռենտան հավաքում էին իրենց հողերի վրա բնակվող գյուղացիներից՝ գերազանցապես բնամթերով ու դրամավճարով։ Սասունում նրանք իրենց ճորտ գյուղացիներին բաժանել էին հարուստ, միջակ ու աղքատ խմբերի և յուրաքանչյուր խմբից պահանջում էին պարտավորություններ ըստ նրանց կարողության[79]։ Աղաները ռենտա էին ստանում նաև իրենց հողատարածությունները կիսարարությամբ կամ վարձակալությամբ տալու ժամանակ, վերցնելով մի տեղում բերքի $^1/_{10}$-ը (Կարնո դաշտում), մյուսում՝ $^1/_2$-ը (Մանազքուտում և Ճապաղջուրում), երրորդում՝ $^3/_4$-ը (Բուլանըխում) և այլն[80]։ Երկրի մի շարք շրջաններում (գլխավորապես Տարոնում) նրանք ստիպում էին կիսարարներին կամ մարաբաներին կատարել իրենց տնային ու դաշտային համարյա բոլոր աշխատանքները։ Ֆեոդալները ստանում էին այնքան ռենտա, որքան կարողանում էին, քանի որ պետության կողմից չկար որոշակի սահմանված չափ։ XIX դարի վերջին քաղորդում Արևմտյան Հայաստանում գերիշխում էր բնավճար ռենտան։

Արևմտյան Հայաստանի գյուղացիները զանազան հարկեր էին տալիս նաև պետությանը։ Նրանք վճարում էին տասանորդ (աշար, ուշար), տարեկան հարկ (սալյանե), որը 1872 թ. փոխարինվեց կալվածահարկով (էմլաք) և վաստակահարկով, եկամտահարկով (քեմեթե), ոչխարի հարկ (աղնամ-բեսմի), գինվորական հարկ (բեդելի-ասկերի) և այլն։

70-ական թվականներին տասանորդը հավաքվում էր գյուղացիների ստացած բերքից՝ ցորենից, գարուց, բրնձից, բանջարաբոստանային և այգեգործական մթերքներից, տեխնիկական կուլտուրաներից, խոտից։ Թուս-թուրքական պատերազմից հետո տասանորդը արդեն բնամթերքով հավաքվում էր միայն հացահատիկից, իսկ մնացած բերքից բնամթերքի փոխարեն հավաքվում էր դրամ։

Կալվածահարկը վերցվում էր գյուղացիների անշարժ գույքից՝ հողամասից, տնամերձ հողակտորից, կալից, տնից և այլ կառույցներից՝ 1000 դուրուշ արժեքից 4—10 դուրուշ։

Վաստակի հարկը կամ եկամտահարկը գանձվում էր գյուղացիների

---

79 «Մասիս», 1872, մայիսի 18 (№ 1239)։

80 «Դիվան հայոց պատմության», գիրք ԺԳ, Թիֆլիս, 1915, էջ 126։

կողմնակի զբաղմունքներից (առևտրից, արհեստից) ստացած եկամուտներից, դրանց 3—5%-ի չափով։ Ոչխարի հարկը վերցվում էր ոչխարների գլխաքանակից՝ յուրաքանչյուր գլխից երեք դուրուշ։ Զինվորական հարկ գանձվում էր միայն քրիստոնյաներից, զինվորական ծառայության փոխարին՝ յուրաքանչյուր տղամարդուց (անկախ տարիքից) տարեկան քսան դուրուշ։

Կառավարությունը հարկեր ու տուրքեր էր վերցնում նաև զանազան գործարքների համար։ Գյուղացին պարտավոր էր հողը վաճառելիս վճարել օտարման հարկ (ֆերաղ)՝ հողի արժեքի յուրաքանչյուր 1000 դուրուշից 25 դուրուշ, կայքագիր վերցնելիս՝ կայքագրի հարկ (քափու-վերգսի)՝ 6 դուրուշ, հացահատիկ վաճառելիս՝ հացահատիկի հարկ (քիլե-փարասի)՝ յուրաքանչյուր քիլեից (1 քիլեն=7—8 փթի) 1 փարա (5 փարան=1,03 կոպ.), հողը ժառանգությամբ ստանալիս՝ փոխանցման հարկ (ինթիհալ)՝ այդ հողի արժեքի 4—10%-ը և այլն։



Դիարբեքիրի ընդհանուր տեսարանը

Այդ բոլոր հարկերից ամենածանրը տասանորդն էր։ Հարկերը հավաքում էին պաշտոնական հարկահավաքներն ու տանուտերերը, իսկ տասանորդը՝ կապալառուները, որոնք սովորաբար աղաներն ու բեյերն էին։ Նրանք վարձակալում էին ոչ միայն ամբողջ գյուղախմբերի, այլև գավառակների տասանորդի հավաքման իրավունքը և այն տալիս մանր կապալառուներին, սրանք էլ՝ ավելի մանրերին և այդպիսով կառավարության ու գյուղացիության միջև առաջանում էր միջնորդների մի ամբողջ աստիճանավորում։ Խոշոր կապալառուները, որոնք կոչվում էին մյուլթեզիմներ, կապված էին պետական ու նահանգական բարձրաստիճան կառավարիչների հետ և իրրև հողատերեր մեծ ազդեցություն ունեին բնակչության վրա։ Անգամ քաղաքային դրամատերերը չէին համարձակվում աճուրդի ժամանակ մրցման մեջ մտնել նրանց հետ։ Ականատեսներից մեկը գրել է. «Երբ մոտենում է աճուրդի ժամանակը, քիւրդը կամ առնառուը լուր են տարածում, որ այս ինչ բակն է գնելու աշարը։ Ո՞վ է գժվել, որ յանդգնի աճուրդին մասնակցել. մասնակցողի կեանքն ու գույքը

վտանգի մեջ կը լինի անպատճառ։ Բոլորը ետ են քաշվում, մնում են մի կամ մի քանի հզոր վաշխառու բեկեր»[81]։

Թուրքական կառավարությունը պարբերաբար բարձրացնում էր հարկերի չափերը։ Այսպես, տասանորդը բերքի $^1/_{10}$ մասից XIX դարի վերջին հասցվեց 12,5 և ավելի %-ի։ 1879 թ. կալվածահարկը 4 ղուրուշից բարձրացավ 8 ղուրուշի[82], ոչխարի հարկը 1880-ական թվականներին կազմեց 3—4, զինվորական հարկը՝ 37,5 ղուրուշ։ Միաժամանակ մտցվեցին նոր հարկեր։ 1879 թ. սահմանվեց ճանապարհաշինության հարկ (յոլ-փարասին), որի համաձայն յուրաքանչյուր տղամարդ տարին 3—5 օր պարտավոր էր աշխատել ճանապարհների վրա։ Ըստ պահակության հարկի (փասմանդ-փարասը)՝ յուրաքանչյուր տնտեսություն տարեկան պետք է վճարեր 18—24 ղուրուշ, իբր ավազակներից ու գողերից պաշտպանության գործի կազմակերպման համար[83]։

Աղաներն ու բեյերը վճարում էին հարկերի աննշան մասը (շատ տեղերում ոչինչ չէին վճարում), իսկ գյուղացիները կրում էին հարկերի գրեթե ողջ ծանրությունը։ Հարուստ գյուղացիներն իրենց եկամուտների համեմատ ավելի քիչ էին վճարում, քան միջակները և չքավորները։ Հարկերի բաշխման գործում մեծ տեղ էր գրավում նաև կրոնական խտրությունը։ Դիարբեքիրի նահանգում 70-ական թվականների սկզբներին մահմեդական ընտանիքը տարեկան վճարում էր 147 ղուրուշ (8 ռուբ. արծաթով), իսկ քրիստոնյա ընտանիքը՝ 188 ղուրուշ (10 ռուբ. արծաթով)[84]։

Հարկերը սահմանվում էին գյուղացիների կարողությունից բարձր չափերով, որի հետևանքով կուտակվում էին ապառիկներ։ Միայն 1897 թ. գյուղացիները պետությանը պարտք էին Կարինի գավառում՝ 1.452 հազ., Դերջանում՝ 1.486 հազ., Քղղիում՝ 1.928 հազ., Խնուսում՝ 1.815 հազ., Բաբերդում՝ 633 հազար ղուրուշ և այլն[85]։

Իշխանությունները հարկերը հավաքում էին ամենայն խստությամբ։ Նրանք բռնագրավում էին գյուղացիների ունեցվածքը, անգամ անհրաժեշտը։ Ականատեսները հաղորդում են, որ Ալաշկերտի գավառում հարկերի համար «եգիպտական պատիժներ կը տեղան»[86]։ Վանի նահանգում հարկ էին հավաքում «այնպիսի գիւղացիներէ, որք Սովելոց յանձնաժողովի նպաստներովը միայն կապրին»[87]։ Հարկահանության ընթացքում հարկահավաքներն ապրում էին գյուղացիների հաշվին։ Նրանք դիմում էին ամեն տեսակ բռնություններին։ Իրազեկներից մեկն արձանագրել է, որ հայկական նահանգներում «հազիվ թէ գտնվի գյուղ, որ չունենա իր ողբերգական պատմությունը, հազիվ թէ գտնվի քրիստոնյա ընտանիք, որ չունենա սարսափելի հիշողություններ»[88]։

---

81 «Մշակ», 1904, հունիսի 17 (№ 126)։

82 Տե՛ս «Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի», էջ 229—230։

83 Տե՛ս «Մուրճ», 1899, № 1, էջ 84։

84 Տե՛ս «Материалы для географии Азиатской Турции, очерки Верхней Армении В. Штреккера полковника турецкой армии», Приложение I к тому II; «Известий Кавказского отдела императорского русского географического общества», Тифлис, 1873, стр. 81.

85 Տե՛ս А. М. *Пржевальский*, Вилайет Эрзерум, ч. I, стр. 39.

86 «Մասիս», 1881 ապրիլի 5 (№ 2851)։

87 «Մասիս», 1881, մայիսի 4 (№ 2872)։

88 М. Г. *Ролен-Жекмен*, Армения, армяне и трактаты, М., 1896, стр. 142.

Արևմտահայ գյուղացիությունը որոշակի պարտավորություններ ուներ նաև եկեղեցու հանդեպ։ Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը յուրաքանչյուր տարի վանքերից ու եկեղեցիներից ստանում էր տուրք՝ մուկաթաա, նրանց տարեկան եկամտի 10—20%-ի չափով։ Այդ տուրքը հիմնականում հավաքվում էր գյուղացիներից։ 1867 թ. պատրիարքարանը հարց հարուցեց աղգային ժողովի առաջ՝ հայ բնակչության վրա նոր տուրք սահմանելու մասին։ Սակայն քաղաքական մի շարք նկատառումներով հարցը առժամանակ հետաձգվեց։ 1881 թ. կրկին առաջ քաշվեց այն և որոշվեց եկամուտ ունեցող յուրաքանչյուր հայ լուսավորչականից տարեկան հավաքել՝ Կ. Պոլսում 20-ական իսկ գավառներում՝ 10-ական դուրուշ[89]։

Հայոց վանքերն ու եկեղեցիները պարտադրում էին գյուղացիներին կատարել զուբարա, այսինքն՝ աշխատել իրենց կալվածքներում։ Նրանք գյուղացիներից հավաքում էին նաև եկեղեցական տուրք՝ պողի։ Բնակչությունը պարտավոր էր որոշակի ծախսեր կատարել նաև եկեղեցու ծառայությունների համար։ Վանում մանկան մկրտության համար տալիս էին 2—5 դուրուշ, պսակադրման համար՝ 10—20 դուրուշ, ննջեցյալի թաղման համար՝ 5—20 դուրուշ, տնօրհնեքի համար՝ 30—40 փարա, գերեզմանի օրհնանքի համար՝ 20—40 փարա, քառասունքի առթիվ՝ 40—60 փարա և այլն (1 դուրուշը 1870-ական թվականներին հավասար էր ռուսական 5, իսկ 1900-ական թվականներին՝ 8 կոպեկի)։

Բազմազան ու բազմապիսի հարկերից և պարհակներից բայթալվող գյուղացիությունն ստիպված հաճախ դիմում էր վաշխառուներին, տոկոսով պարտք վերցնում և կրկնակի հարստահարվում։ Մուշի գաշտի հայկական գյուղերում չկար մեկը, որ պարտք չունենար[90]։ Բուլանըխի 30 հայկական գյուղերի $^3/_4$-ը պարտապաններ էին[91]։ Դրամատերերը Տարոնում վերցնում էին տված պարտքի 30—50 %-ը, Վանի նահանգի մի շարք շրջաններում՝ 80%-ը, Բասենում՝ 100—150%-ը[92] և այլն։ Վաշխառուները պարտքի ու տոկոսի փոխարեն բռնագրավում էին գյուղացիների ունեցվածքը և ստիպում նրանց ձրի աշխատել։

Այսպիսով, արևմտահայ գյուղացիության վիճակը չափազանց ծանր էր։ Եթե Արևելյան Հայաստանում հաստատված էր անձի և գույքի ապահովություն, ապա Արևմտյան Հայաստանում գյուղացին, ենթարկվելով զանազան հարբտահարումների ու կեղեքումների, պարբերաբար զրկվում էր իր ունեցվածքից և արագ թայբայվում։ Արևմտյան Հայաստանում գյուղացին ավելի շատ հարկեր ու տուրքեր էր վճարում, քան Արևելյան Հայաստանում։ 1890-ական թվականների սկզբներին արևմտահայ գյուղական յուրաքանչյուր ընտանիք միջին հաշվով տարեկան վճարում էր 734 դուրուշ[93] կամ 41 ռուբ. 69 կոպ., այն դեպքում, երբ արևելահայ գյուղական ընտանիքը վճարում էր 20 ռուբ[94]. պետական հարկ։ Արևելյան Հայաստանում գյուղացին հողատիրոջը տալիս էր բերքի

89 Տե՛ս «Մասիս», 1881, մարտի 8 (№ 2827)։

90 Տե՛ս «Մշակ», 1889, հունիսի 22 (№ 69)։

91 Տե՛ս «Արձագանք», 1894, հունվարի 9 (№ 3)։

92 Տե՛ս «Հորիզոն», 1911, մայիսի 28 (№ 113)։ Ա. Թոխմախյան. Մասիս լեռան հարավային սոտրոները, մաս Բ, Թիֆլիս, 1882, էջ 15։

93 Տե՛ս «Արձագանք», 1892, հուլիսի 10 (№ 80)։

94 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 396, ց. 2, գ. 1160։

որոշակիորեն սահմանված մի մասը։ Արևմտյան Հայաստանում դա կախված էր հողատիրոջ ցանկությունից, քանի որ պետության կողմից որոշակի սահմանված չափ չկար։ Սոցիալական հարստահարումների հետ մեկտեղ արևմտահայ գյուղացին ենթարկվում էր նաև ազգային անհամեմատ ավելի դաժան ճնշման ու հալածանքների։

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

Աղբյուրներ և գրականություն։ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին խոշոր իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում։ Դրա շնորհիվ հայերը զարգացման զգալի հնարավորություններ ստացան։ Նրանց տնտեսական, հասարակական-քաղաքական ու մշակութային կյանքն սկսեց դուրս գալ լճացումից և բռնել առաջընթացի ուղին։ Այդ առաջընթացն ավելի արագացավ հետռեֆորմյան ժամանակաշրջանում, երբ զարգացող ռուսական կապիտալիզմն իր հորձանուտի մեջ ներքաշեց կայսրության ծայրամասերը։

Վ. Ի. Լենինը ցույց է տալիս, որ հետռեֆորմյան ժամանակաշրջանում ռուսական կապիտալիզմը թափանցում է կայսրության ծայրամասերը և տնտեսապես նվաճելով, գաղութացնում դրանք։ Նա հարց է դնում. «Ի՞նչ է գաղութը քաղաքատնտեսական իմաստով», և պատասխանում. «այս հասկացության հիմնական հատկանիշներն ըստ Մարքսի հետևյալներն են. 1) չզբաղված, ազատ հողերի առկայություն, որոնք դյուրամատչելի են վերաբնակիչներին. 2) աշխատանքի կազմավորված համաշխարհային բաժանման, համաշխարհային շուկայի առկայություն, որի շնորհիվ գաղութները կարող են մասնագիտանալ գյուղատնտեսական մթերքների մասսայական արտադրության մեջ, դրանց փոխարեն ստանալով արդյունաբերական պատրաստի արտադրանք, «որոնք այլ պայմաններում պետք է որ իրենք պատրաստեին»[95], նշելով, որ Եվրոպական Ռուսաստանի հարավային ու արևելյան ծայրամասերը հետռեֆորմյան ժամանակաշրջանում արդեն դարձել էին նրա գաղութները, Վ. Ի. Լենինը շարունակում է. «գաղութի այս հասկացողությունն է՛լ ավելի կիրառելի է մյուս ծայրամասերի նկատմամբ, օրինակ, Կովկասի։ Նրա տնտեսական «նվաճումը» Ռուսաստանի կողմից շատ ավելի ուշ է կատարվել, քան քաղաքականը, իսկ տնտեսական այդ նվաճումը լիովին չի ավարտված մինչև այժմ էլ։ Հետռեֆորմյան ժամանակաշրջանում՝ մի կողմից, Կովկասը խիստ գաղութացման էր ենթարկվում, գաղութաբնակները մեծ չափերով հերկում էին հողերը (առանձնապես Հյուսիսային Կովկասում), վաճառքի համար արտադրելով ցորեն, ծխախոտ և այլն ու մեծ քվով գյուղական վարձու բանվորներ գրավելով Ռուսաստանից։ Մյուս կողմից, տեղի էր ունենում դարավոր բնիկ «տնայնագործական» արհեստագործությունների արտամղումը, որոնք Մոսկվայից բերվող ֆաբրիկատների մրցակցության հետևանքով անկում էին ապրում։ Ընկնում էր գենքի հինավուրց արտադրությունը՝ Տուլայից ու Բելգիայից բերվող ապրանքների մրցակցության շնորհիվ, ընկնում էր երկաթի տնայնագործական մշակումը ռուսական բերովի արտադրանքի մրցակցության շնորհիվ, ինչպես նաև ընկնում էր պղնձի, ոսկու և արծաթի, կավի, ճարպի և սողայի, կաշվի տնայնագործական մշակումը և այլն. այս բոլոր արդյունքներն ավելի էժան էին արտադրվում ռուսական ֆաբրիկաներում, որոնք իրենց

95 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 3, էջ 753։

ապրանքները Կովկաս էին ուղարկում։ Ընկնում էր եղյուրներից գավաթներ պատրաստելը՝ Վրաստանի ֆեոդալական կարգի անկման և նրա պատմական խնջույքների նվազման հետևանքով. ընկնում էր գլխարկի արհեստագործությունը՝ ասիական զգեստը եվրոպականով փոխարինելու հետևանքով. ընկնում էր տկերի ու կարասների արտադրությունը տեղական գինու համար, որն առաջին անգամ էր վաճառքի հանվում (զարգացնելով տակառագործական արտադրությունը) և իր հերթին նվաճում էր ռուսական շուկան։ Այդպիսով, ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավում էր համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ, համահարթում էր հինավուրց նահապետական ինքնամփոփվածության մնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր ֆաբրիկանների համար շուկա էր ստեղծում»[96]։

Հետռեֆորմյան ժամանակաշրջանում Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում արհեստագործության քայքայման հետ միասին տեղի ունեցավ տեղական համքարությունների կազմալուծում։ Դարավերջին նրանք զգալիորեն կրճատվեցին, իսկ արտադրության մի շարք ճյուղերում բոլորովին վերացան[97]։

Ցարական կառավարությունը ձգտում էր Անդրկովկասի ու Արևելյան Հայաստանի տնտեսությունն ի սպաս դնել ռուսական զարդացող կապիտալիզմի պահանջներին։ Բայց այդպիսի կարևոր խնդրի լուծման համար անհրաժեշտ էր ամենից առաջ բարեկարգել ճանապարհները և փոխադրական միջոցները։ Դեռ 1861 թ. Ալեքսանդր II-ը հավանություն էր տվել Կովկասի փոխարքա Բարյատինսկու առաջարկությանը՝ Փոթիից Թիֆլիս երկաթուղի անցկացնելու մասին։ 1872 թ. հոկտեմբերի 10-ին երկաթուղին հանձնվեց շահագործման։ 1883 թ. սկսեց գործել Թիֆլիս-Բաքու երկաթուղին։ 1880—1890-ական թվականներին իշխանությունների ու կապիտալիստական տարբեր ընկերությունների կողմից կառուցվեցին նաև Սամտրեդիա-Բաթում, Քութայիս-Ղուբուլի ու այլ երկաթգծերը և այդպիսով Անդրկովկասի արդյունաբերական ու հանքային հարստությունների գլխավոր կենտրոնները կապվեցին Կենտրոնական Ռուսաստանի հետ[98]։

Արևելյան Հայաստանում երկաթուղու շինարարությունն սկսվեց 90-ական թվականների կեսերից և 1899 թ. հունվարի 1-ին շահագործման հանձնվեց Թիֆլիս—Ալեքսանդրապոլ գիծը։ Երկաթուղիներին զուգընթաց կառուցվեցին նաև խճուղիներ և սայլուղիներ։ 1860—1890-ական թվականներին խճապատվեցին Թիֆլիս—Երևան—Ջուլֆա և Երևան—Նախիջևան—Շուշի—Եվլախ ճանապարհները։ Դրանցից առաջինը Երևանը միացնում էր Թիֆլիսի, իսկ երկրորդը՝ Բաքվի հետ, Արաքսի հովիտը՝ Կուրի հովտի հետ։ Թիֆլիս—Երևան—Ջուլֆա խճուղին տարանցիկ այն ճանապարհն էր, որը Եվրոպայի առևտուրը կապում էր Ասիայի հետ։

---

96 Նույն տեղում, էջ 753—755։

97 Տե՛ս С. А. Есиазаров, Исследования по истории учреждений в Закавказье, ч. II, городские цехи, организация и внутреннее управление закавказских амкарств, Казань, 1891; Վ. Ա. Աբրահամյան, *Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (XVIII—XX դդ. սկզբին)*, Երևան, 1971։

98 Տե՛ս А. Аргутинский-Долгоруков, История сооружения и эксплуатации Закавказской железной дороги за двадцать пять лет ее существования (1871—1896), Тифлис, 1896.

Այդ նույն թվականներին Արևելյան Հայաստանում կառուցվեցին ու խճապատվեցին Ղարաքիլիսա-Համզաչիման, Ալեքսանդրապոլ-Համամլու, Նոր Բայազետ-Բաշնորաշեն, էջմիածին-Աշտարակ, Ալիքուչակ-Խոշխարաբա, Երևան-Իգդիր և այլ ճանապարհներ։ Կովկասի փոխարքայի դիվանատան կառավարիչ բարոն Նիկոլաին 1872 թ. գրում էր, որ եթե «առաջ ճանապարհների կառուցումը պետք է ենթարկվեր առավելապես ռազմական պահանջներին, ծառայելով երկրամասի հպատակեցման և այստեղ մեր տիրապետության հաստատման նպատակներին, իսկ հիմա՝ կովկասյան պատերազմի ավարտումից հետո ճանապարհները (ծառայում են) գերազանցապես առևտրի ու արդյունաբերության համար»[99]։



Առաջին գնացքի մուտքն Ալեքսանդրապոլ (1899)

Հաղորդակցության միջոցների բարելավումը հնարավորություն տվեց ռուսական կապիտալիստներին մեծացնելու իրենց ապրանքների արտահանումը Անդրկովկաս։ Միայն հինգ տարվա ընթացքում (1872—1876) այդ արտահանումը կրկնապատկվեց, իսկ հետագա տարիներին ավելի քան տասնապատկվեց։ Ռուսական կապիտալիստներն Անդրկովկաս էին ներմուծում գերազանցապես արդյունաբերական ապրանքներ՝ բրդյա և բամբակյա գործվածքներ, մետաղյա արտադրանք, կաշվե ու փայտե իրեր, շաքար և այնտեղից արտահանում էին գյուղատնտեսական մթերքներ։

Ռուսական կապիտալիզմը նպաստեց երկրամասի տնտեսության զարգացմանը։ Անդրկովկասի հայ դրամատերերից շատերը սկսեցին իրենց միջոց-

99 «Отчет по главному управлению наместника кавказского...», стр. 175—176.

Նրանք առևտրական շրջանառության ոլորտից տեղափոխել արտադրության ոլորտը և ստեղծել զանազան գործարաններ ու ֆաբրիկաներ։ Տեսնելով հանքային հանածոների արտադրության շահութաբերությունը, նրանք իրենց միջոցները ներդրեցին առավելապես լեռնային արդյունաբերության մեջ։

Շուտով արդյունաբերության այդ բնագավառում հայտնվեցին նաև օտարերկրացի կապիտալիստներ։ 70-ական թվականներին Բաքվում հաստատվեցին շվեդացի Նորել եղբայրները, իսկ 1880-ական թվականներին՝ Ֆրանսիացի Ռոտշիլդի ֆիրմայի ներկայացուցիչները, Գևտաբեկի պղնձահանքերում՝ գերմանացի Սիմենս եղբայրները, իսկ Ախթալայում՝ ֆրանսիացիները։ Օտարերկրացիները տիրացան նաև Քութայիսի մարգանեցի և Ճիաթուրայի բարածխի հանքերին։ Առանձնապես ակտիվ էին գործում անգլիացիները, որոնք ձգտում էին իրենց ձեռքը դցել Բաքվի նավթարդյունաբերությունը։ Տեղական կապիտալիստներից շատերը չդիմանալով մրցմանը, ստիպված եղան մեկը մյուսի ետևից օտարել իրենց ձեռնարկությունները։ 1890-ական թվականներին Բաքվի նավթարդյունաբերության մեջ արդեն մեծ դեր էին խաղում Նոբելը, Ռոտշիլդը և Վիշաուն։ Անդրկովկասի լեռնային արդյունաբերությունն սկսեց արագորեն զարգանալ։ Այսպես, Բաքվում նավթի հանույթը «1870 թ. կազմում էր 1,7 մլն. փութ, 1875 թ.՝ 5,2 մլն. փութ, 1880 թ.՝ 21,5 մլն. փութ, 1885-ին՝ 116 մլն. փութ, 1890 թ.՝ 242,9 մլն. փութ, 1895 թ.՝ 384,0 մլն. փութ, 1902 թ.՝ 637,7 մլն. փութ»[100]։

Արևելյան Հայաստանում պղնձի արտադրության աճը համեմատաբար ուշ սկսվեց։ 1870—1880-ական թվականներին Ալավերդում և Ջանգեղուրում հանքերի մշակումը տակավին կատարվում էր պարզունակ եղանակներով, տիրապետում էր ձեռքի աշխատանքը։ Այդ վիճակը պայմանավորված էր մի կողմից Ռուսաստանում մետաղամշակման թույլ զարգացումով և ցարիզմի մաքսային քաղաքականությամբ, մյուս կողմից՝ տեղական կապալառուների ունեցած փոքր միջոցներով և ճանապարհների անբարեկարգ վիճակով։ 1880-ական թվականներին նշանակալի քայլեր կատարվեցին պղնձի արտադրությունն ավելացնելու ուղղությամբ. 1885 թ. կառավարությունը համարյա երեք անգամ մեծացրեց երկիր ներմուծվող պղնձի մաքսը, մեկ փթի համար գանձելով 1,5—3 ռուբ.՝ 1868 թ. սահմանված 60 կոպ. դիմաց։ 1880-ական թվականների վերջերին ու հատկապես 1890-ական թվականներին Ռուսաստանում արագ տեմպերով աճեց մետաղամշակման արդյունաբերությունը։ 1887 թ. ֆրանսիական կապիտալիստների «Ախթալայի հանքերի ընկերությունը» վարձակալեց Ալավերդու պղնձահանքերը և որոշ բարեփոխումներ կատարեց։ Այդ բոլորի հետևանքով Արևելյան Հայաստանում պղնձի արտադրությունն սկսեց դուրս գալ լճացումից և առաջադիմել։ Եթե 1888 թ. Ալավերդում արտադրվել էր 1,8 հազար փութ, ապա 1896 թ. արտադրվեց 4,5 հազ. փութ պղինձ[101]։ Պղնձի արտադրությունն աճեց նաև Ղափանում։ Միայն «Ույունիք» պղնձաձուլական գործարանը, որը կառուցվեց Մելիք-Ագարյանցի կողմից՝ 1897 թ., 1897 թ. արտադրվող 11,5 հազ փթի դիմաց 1900 թ. արտադրեց 38,8 հազ.

---

100 Վ. Ի. Լենին. Երկ., հ. 3, էջ 621։

101 Տե՛ս М. А. Адонц. Экономическое развитие Восточной Армении в XIX в., Ереван, 1957, стр. 418.

փութ պղինձ։ Արևելյան Հայաստանում պղնձի արտադրությունը 1870 թ. արտադրվող 13,4 հազ.-ից 1900 թ. հասավ 71,5 հազ. փթի, այսինքն 30 տարվա ընթացքում ավելի քան հնգապատկվեց։ XIX դարի վերջին քաոորդում Անդրկովկասի պղնձի արտադրությունը, որը գտնվում էր առավելապես Արևելյան Հայաստանում, իր տեմպերով առաջ անցավ Ռուսաստանի պղնձարտադրության մի շարք շրջաններից և կայսրության մեջ գրավեց երկրորդ տեղը[102]։

Արևելյան Հայաստանում որոշ չափով զարգացավ նաև աղի արտադրությունը։ 1880-ական թվականներին բոլոր աղահանքերն անցան հայտնի կապալառուներ Ջանփոլադյանների ձեռքը, որոնք օգտագործելով որոշ կատարելագործված գործիքներ, բարձրացրին աղի հանույթն ու վաճառքը։ Եթե, օրինակ, 1888 թ. Կողրում վաճառվել էր 153 հազ. փութ աղ ապա 1893 թ.՝ 568 հազ. փութ։

Առաջընթաց կատարվեց նաև գյուղատնտեսական արտադրանքի նախնական մշակման գործում։ 80—90-ական թվականներին Արարատյան դաշտում մեկը մյուսի ետևից հիմնվեցին բամբակազտիչ ձեռնարկություններ, որոնց արտադրանքն ուղարկվում էր ռուսական տեքստիլ արդյունաբերության կենտրոններ։ Բնորոշ է, որ այժմ բամբակը գտվում էր կատարելագործված «Չին» մեքենայով, օգտագործվում էր ջրի, շոգու ուժը, կիրառվում էին նավթային շարժիչներ։ Բամբակագործության մասնագետ Ն. Պ. Տարատինովը 1888 թ. նշում էր. «Ներկայումս Երևանի նահանգում քիչ է հանդիպում բամբակի գտումը ձեռքերով, ինչպես այդ հաճախ տեղի էր ունենում 5—6 տարի սրանից առաջ... Նախնադարյան հնդկական «գուրկան» կամ «չագրիխը» դառնում են հազվագյուտ բաներ՝ գոնե Երևանի նահանգում»[103]։

XIX դարի վերջին տասնամյակներում Արևելյան Հայաստանում աշխուժացավ մետաքսաթելի արտադրությունը։ Դրա գլխավոր կենտրոնը Շուշու գավառն էր։ Մետաքսաթելի արտադրությունը զգալի չափով զարգացած էր նաև Նախիջևանի գավառում, հատկապես Օրդուբադում։ Մետաքսաթելը ամբողջովին ուղարկվում էր Ռուսաստանի արդյունաբերական կենտրոնները։

Կաշվի մշակման հին ձեռնարկությունների կողքին երևան եկան նորերը, որոնք աչքի էին ընկնում կատարելագործված տեխնիկայով և համեմատաբար բարձր արտադրողականությամբ։ 90-ական թվականներին Երևանում գործում էր 18 կաշեգործական ձեռնարկություն՝ 100 բանվորով, իսկ Նախիջևանում՝ 6 ձեռնարկություն՝ 40 բանվորով[104]։ Նշանավոր էր հատկապես Գաբրիելյանի կաշեգործական ձեռնարկությունը, որը հիմնվեց Երևանում 1894 թ.։ Նախնական մշակումից հետո կաշիները ուղարկվում էին Թիֆլիս, Քութայիս, Եկատերինոդար, Դոնի-Ռոստով և այլ քաղաքներ։

Դեռևս 60-ական թվականների վերջերից սկսեց զարգանալ օղու և գինու արտադրությունը, բայց ցարիզմի հարկային (ակցիզային) քաղաքականության հետևանքով այն շուտով խաթարվեց։ 1873 թ. օրենքով յուրաքանչյուր մեկ աստիճան սպիրտից գանձվում էր մեկ կոպեկ։ 1884 թ. այդ նորման բարձրացվեց երեք կոպեկի, իսկ 1887 թ.՝ 5—6 կոպեկի։ 1873 թ. օրենքով գի-

---

102 Տե՛ս А. Д. Брейтерман, Медная промышленность России и мировой рынок, ч. II, Л., 1925, стр. 90, 113.

103 «Труды Кавказского общества сельского хозяйства, год тридцать третий», сентябрь—декабрь, № 9—12, Тифлис, 1888, стр. 621.

104 Տե՛ս «Обзор Эриванской губернии за 1893 г.», вед. № 2.

նկագործությամբ և օղագործությամբ կարող էին զբաղվել այն անձինք, ովքեր ունեին 30 դույլ տարողություն ից ոչ պակաս կաթսա։ Այս բաղաքականության հետևանքով բազմաթիվ մանր գյուղացի-գինեգործներ ու օղագործներ դուրս մղվեցին ասպարեզից։ 1884 թ. Երևանում գործող 74 օղեթորման սարքավորումներից 1886 թ. մնացին 12-ը։ Դրությունը համարյա նույնն էր Արևելյան Հայաստանի նաև մյուս շրջաններում։



Գանձձների զարձարաններ Երևանում

Արտամղելով մանր արտադրողներին, կառավարությունը նպաստում էր խոշոր ձեռնարկությունների ծավալմանը։ Երևան եկան գինեգործական և օղեթորման մի շարք գործարաններ։ Երևանի նահանգում 1889—1893 թթ. օղու արտադրությունը 54 հազ. դույլից հասավ 198.600 դույլի, իսկ գինու արտադրությունը՝ 1896—1900 թթ. 546.000 դույլից բարձրացավ 1.180.000 դույլի[105]։ Ձեռնարկատերերի մի մասն սկսեց արտադրել լիկյորներ։ Օղու արտադրությամբ Անդրկովկասում առաջին տեղը գրավում էր Արևելյան Հայաստանը։ Միայն Երևանի նահանգը տալիս էր երկրամասում արտադրված օղու 30—39 տոկոսը։ Սակայն գինու արտադրության մեջ առաջնությունը պատկանում էր Վրաստանին։

80-ական թվականներին գարեջրի ձեռնարկություններ կառուցվեցին Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում։ 1889 թ. երկրի քաղաքներում կար գարեջրի հինգ ձեռնարկություն։

XIX դարի վերջին սկսվեց կոնյակի արտադրությունը։ Կոնյակի գործարան բացեց Ն. Թաիրյանը (1887 թ.), այնուհետև նրան հետևեցին Դ. Սարաջևը, Կ. Աֆրիկյանը, Գ. Գյոդլևովը, Բաբախանովը և ուրիշներ։ Միայն չորս տար-

105 Տե՛ս О. Е. Туманян, Экономическое развитие Армении, ч. I, Ереван, 1954, стр. 190—191.

վա ընթացքում (1890—1894) նրանց գործարաններում կոնյակի արտադրությունը 34.848 ատիճանից հասավ 767.996 ատիճանի կամ մեծացավ ավելի քան 22 անգամ[106]։

Դարավերջին առաջադիմեց կաթնամշակումը։ 80—90-ական թվականներին Նոր Բայազետի, Ալեքսանդրապոլի գավառներում, Կարսի մարզում ու Լոռում հիմնվեցին տեղական, հոլանդական ու շվեյցարական պանիրներ արտադրող ձեռնարկություններ։ Տեղականը վաճառվում էր առավելապես Արևելյան Հայաստանում և Անդրկովկասի այլ շրջաններում, իսկ շվեյցարականն ու հոլանդականն արտահանվում էին Եվրոպական Ռուսաստանի զանազան քաղաքներ։

Արևելյան Հայաստանում զարգացան աննդի արդյունաբերության նաև այլ ճյուղերը։ 1880-ական թվականներին Զոլոտարևն ու Բլանկենբուրգը Երևանում կառուցեցին պահածոների պատրաստման և մրգի չորացման կիսամեքենայացված գործարան, իսկ էջմիածնի գավառապետ Խան-Ադովը 1882 թ. Վաղարշապատում հիմնեց ձկի ձեռնարկություն, որը գործում էր շոգու օգնությամբ։

Նկատելի տեղաշարժեր կատարվեցին արդյունաբերության նաև այլ ճյուղերում։ 1872 թ. Երևանում Անդրեաս Դալստյանը հիմնեց ատաղձագործական ձեռնարկություն, Ալի Հասան Օղլին՝ գինագործական արհեստանոց, Արոն Լեյբովիչը Ալեքսանդրապոլում բացեց եվրոպական ու ասիական հագուստների արհեստանոց, 80-ական թվականներին Դիլիջանում կառուցվեցին տակառագործական ու փայտասղոցման, իսկ Ալեքսանդրապոլում՝ կոշկակարական, լվածաղկի (երիցուկի) մշակման ձեռնարկություններ։ 1892 թ. Ե. Տեր-Ավետիքյանը Երևանում հիմնեց մետաղամշակման և գյուղատնտեսական գործիքների արտադրության կիսամեքենայացված գործարան։ 90-ական թվականներին Սուրմալուի, էջմիածնի և Ալեքսանդրապոլի գավառներում բացվեցին գորգագործական արհեստանոցներ, որոնց պատրաստած գորգերը վաճառքի էին ուղարկվում անգամ հեռավոր Մարսել։

Միաժամանակ երկրի քաղաքներում ու որոշ գյուղերում շարունակում էին գործել ոսկերչական, արծաթագործական, անագագործական, թաղիքագործական, թամբագործական, ինչպես նաև կաոքերի, ֆուրգոնների ու սայլերի պատրաստման ու վերանորոգման արհեստանոցներ։

Այսպիսով, Արևելյան Հայաստանի արդյունաբերությունը թևակոխեց կապիտալիզմի շրջանը։ Սակայն ցարիզմի վարած գաղութային քաղաքականության հետևանքով երկրում խոշոր արտադրությունը դեռևս թույլ էր զարգացած։

XIX դարի վերջին Թուրքիան շարունակում էր տնտեսական լճացում ապրել։ Երկրում տիրապետող ռազմաֆեոդալական հետամնաց կարգերը խանգարում էին բուրժուական ձեռնարկումներին, խոչնդոտում նոր մեքենայական արտադրության արմատավորմանը։ Եվրոպական կապիտալիստական խոշոր տերությունների համար Թուրքիան դարձել էր տնտեսական ու քաղաքական անկաշկանդ ներթափանցման ասպարեզ։ Նրանք օգտագործում էին բոլոր հնարավորությունները, որ գաղութացնեն Օսմանյան կայսրությունը և ստանան առավելագույն շահույթ։ Խոշոր տերություններն առատորեն Թուրքիա

106 Տե՛ս О. Е. Туманян, Экономическое развитие Армении, ч. I, стр. 194.

էին ներմուծում արդյունաբերական ապրանքներ և այնտեղից արտահանում գյուղատնտեսական մթերքներ ու հանքային հանածոներ։ Նրանք շահագործված չէին Թուրքիայի տնտեսական զարգացմամբ և իրենց վարած քաղաքականությամբ պահպանում էին երկրի մինչկապիտալիստական արտադրահարաբերությունները։ Սակայն որոշ դեպքերում, հենվելով իրենց շահերից, կապիտալիստական առանձին միավորումներ Թուրքիայում ստեղծում էին արտադրական ձեռնարկություններ կամ կառուցում երկաթուղիներ և այդպիսով նպաստում նրա տնտեսական առաջընթացին։ Մի շարք տեղերում այդ ձեռնարկումներին մասնակից էին դառնում նաև տեղական, հիմնականում հույն, հայ և հրեա կապիտալիստները։

Արևմտյան Հայաստանում եվրոպական խոշոր տերությունները չհիմնեցին կամ, համարյա չհիմնեցին, արդյունաբերական ձեռնարկություններ, չբարելավեցին հաղորդակցության միջոցները և համագործակցելով սուլթանի հետ, սաստկացրին աշխատավոր զանգվածների կեղեքումն ու շահագործումը։ Այդուհանդերձ Արևմտյան Հայաստանի տնտեսության մեջ կատարվում էին որոշ տեղաշարժեր։ Երկրի մի շարք արհեստներ կատարելագործվում էին։ Այսպես, Կարինում հայ արհեստավորները պատրաստում էին հրաշալի կողպեքներ և նույբ փորագրություններ անում պողպատի վրա, Վանում արտադրվում էին ոսկյա և արծաթյա գեղեցիկ իրեր, Մուշում՝ ոսկեզօծ զարդանախշերով կճումներ։ Խարբերդում գործում էին այնպիսի գործեր, որ «մարդ կը զարմանա, թէ ինչպես կը յաջողին այդչափ գեղեցիկ ու պատշաճաւոր եղանակով իրարու յարմարացնել բազմազան երանգներն, զորս իրենք, կը ներկեն՝ գործածելով զուտ տեղական բոյսեր և հանքեր»[107]։

Երկրի մի շարք վայրերում երևան են գալիս արհեստի նոր ճյուղեր կամ հին արհեստի նոր տեսակներ։ Առաջադիմեց նաև կահույքագործությունը, դերձակությունն ու կոշկակարությունը։ Բնորոշ է, որ եթե առաջ դերձակները ձեռքով էին կարում, ապա 80-ական թվականներից՝ «Զինգեր» մեքենայով, որի շնորհիվ դերձակությունը օրէցօր թև առավ և սկսեց առաջ վազել։ տարէցտարի «Ֆռանգ-թարղի»-ների (այսպես են կոչում մեքենայով գործող վարպետները....) թիւը շատանում է, և հագուստի ձևի մեջ նոր-նոր մոդաներ են մըտնում»[108]։ Վանում սկսեց զարգանալ ժամագործությունը։

Արհեստավորները գնալով վեր էին ածվում մանր ապրանք արտադրողների, արտադրելով արդեն հիմնականում շուկայի համար և իրենց արտադրանքը վաճառում էին անձամբ կամ գնորդ առևտրականների միջոցով՝ տեղում ու հեռավոր վայրերում։

XIX դարի վերջին տասնամյակներում Արևմտյան Հայաստանում սկիզբ է առնում ու զարգանում կապիտալիստական մանուֆակտուրան։ Ամենից առաջ այն երևան եկավ տեքստիլ արդյունաբերության մեջ։ 1870-ական թվականներին Թոխմախյան եղբայրները Վանում հիմնում են կտավագործական արհեստանոց, 80-ական թվականներին նրանց օրինակին են հետևում նաև ուրիշները։ 1887 թ. Վ. Փափազյանը գրում էր, որ Վանում «շնչանավոր են Թոխմախյանների, Քափամաճյանների, Չիլոց և այլ գործարանները, որտեղից արտադրում են ոչ միայն այդ (աբա — խմբ), այլև շալ, կտավ, բրդյա նուրբ,

---

107 «Մասիս», 1893, ապրիլի 24, էջ 252—253 (№ 3988)։

108 «Մուրճ», 1904, № 8, էջ 30։

ամեն գույներով և զարդերով վերարկուի և շալվարի կտորներ, ամառային հագուստների համար բամբակի գործվածքներ, մանուսա կոչվող ուղղահայաց կարմիր գծերով «զրունի» (արխալուղ պճղնավոր) համար կտորներ և նույնիսկ վերջին ժամանակներս «էշրամներ» (կանացի ծածկոց)...»[109]:

Կարինում 1880-ական թվականներին Լավինը կատարելագործեց իր աբայի (բրդյա հաստ և կոպիտ գործվածք) ձեռնարկությունը և մեծացրեց արտադրությունը, իսկ ամերիկացի միսիոներ Ջեյմպրսը 1897 թ. հիմնեց մանուսայի ձեռնարկություն[110]: Արաբկիրում 80-ական թվականներին կար 15 մանուսայի, 9 մանածագործական և 18 սավանի կամ սփռոցի «գործարան»: Դրանցից առանձնապես հռչակված էր Տեր-Պետրյան Պողոս էֆենդու մանուսայի ձեռնարկությունը: Գ. Սրվանձտյանցը 1879 թ. գրում էր, որ այն իր արտադրած գործվածքներով կարող է մրցել «Հալեպի և Շամի ապրանքներուն հետ»[111]: Խարբերդում կար կտավագործական երկու ձեռնարկություն, որոնք XIX դարի վերջին տարեկան արտադրում էին մոտ 1000 ոսկու կարմիր կտավ և արտահանում Կարին, Դիարբեքիր, Բալու, Քղի և այլ վայրեր: Կտավագործական ձեռնարկություններ կային նաև Բիթլիսում, Սղերդում, Դիարբեքիրում ու Երզնկայում:

Առաջադիմեց նաև կաշեգործությունը: Երկրի մի շարք քաղաքներում ու գյուղերում գոյություն ունեցող հին ձեռնարկությունների կողքին բացվեցին նորերը, որոնք, ի տարբերություն հների, կաշիների և մորթիների մշակումը կատարում էին կատարելագործված եղանակով: 1870-ական թվականներին նոթատիպ կաշեգործական մի ձեռնարկություն կար Վանում: Հետագայում այնտեղ կառուցվեցին նաև այլ կաշեգործարաններ. աչքի էր ընկնում հատկապես Պարթևյանի ձեռնարկությունը[112]: Կարինում 1870-ական թվականներին գործում էր վեց ձեռնարկություն, որտեղ տարեկան մշակվում էին 10.000 եզան ու գոմեշի կաշի, 20.000 ոչխարի ու այծի մորթի: Ընթացում կային կաշեգործական մի քանի ձեռնարկություններ: 1870-ական թվականներին կաշեգործությունը Ընթուշից ներթափանցեց Խարբերդի Նահանգի Թլկատին գյուղը և լայն զարգացում ստացավ: Կաշեգործությունն ավելի կամ պակաս չափերով տարածված էր նաև Մալաթիայում, Բիթլիսում, Երզնկայում ու այլ վայրերում: Ձեռնարկատերերը կաշիների մշակման առաջավոր եղանակներին ծանոթացել էին Ռուսաստանում, գլխավորապես Անդրկովկասում և Եվրոպայում:

Սպիրտային խմիչքների արտադրության մեջ աչքի էին ընկնում Կարինի երկու օղերորանները, որոնցից նշանավոր էր Շամբրանյան եղբայրների օղերորանը, Խարբերդում և Բալուում արտադրում էին ընտիր գինի, որը հայտնի էր «Խարբերդի գինի» անունով: Գինեգործությունը զարգացած էր նաև Վանի Նահանգի մի շարք գյուղերում, հատկապես Շադրաղում, որտեղ պատրաստում էին «ամենաոյատևական գինի, որ համբավ ունի ի Վան-Տոսպ, որպես Պորտոյինն՝ ի Յրանսիա»[113]:

---

109 Վ. Փափազյան, *Երկերի ժողովածու*, հ. 3, Երևան, 1953, էջ 407—408:

110 *Տե՛ս «Բյուզանդիոն», 1898, մարտի 16 (№ 423)*:

111 Գ. Սրվանձտյանց, *Թորոս աղբար Հայաստանի Համբորդ. մասն Ա, Կ. Պոլիս, 1879, էջ 281*:

112 *Տե՛ս* Վ. Փափազյան, *Երկերի ժողովածու*, հ. 3, էջ 409:

113 Մ. Միւռատեան, *Նշված աշխ., մասն Բ, էջ 249*:

Արևմտյան Հայաստանում առաջադիմել էր նաև բրուտագործությունը։ 90-ական թվականներին Վանի մերձակա Ջրաշեն գյուղում բրուտագործներն աշխատում էին գետնահարկային 6—7 արհեստանոցներում, որոնք կոչվում էին բանտուններ կամ բանելատեղեր։

Տեղաշարժեր նկատվեցին Արևմտյան Հայաստանի արդյունաբերության նաև այլ ճյուղերում։ Այսպես, 1880-ական թվականներին իտալացի կոմս Քոնտ դը Բիզանին Կարինում հիմնեց ծխախոտագործական ձեռնարկություն, որտեղ սկզբում աշխատում էին 50, իսկ հետագայում ավելի շատ բանվորներ։ Նույն ժամանակաշրջանում մի հայ Երզնկայում հիմնեց լուցկու ձեռնարկություն, բայց հենց որ լուցկիների տուփերի վրա երևաց «Լուցկիք Հայաստանի» մակագրությունը, թուրքական կառավարությունը փակեց ձեռնարկությունը։

Երկրի արդյունաբերության որոշ ճյուղերում երևան են գալիս նաև գործարաններ։ Այսպես, 1880-ական թվականներին Քյուրքչյան եղբայրները և Գրիգոր Իփեքչյանը (Ցարրիկաթորյանը) Խարբերդում և Մեզիրեում իրենց ձեռնարկությունները վերածեցին մետաքսամշակման գործարանների։ Նրանք մեքենաներ ներմուծեցին Եվրոպայից ու Ամերիկայից, իսկ բանվորները հիմնականում տնտեսապես քայքայված հայ արհեստավորներ ու գյուղացիներ էին։ 90-ական թվականների վերջերին նրանցից յուրաքանչյուրի ֆաբրիկայում արդեն աշխատում էր շուրջ 300-ական մարդ։ 1880—90-ական թվականներին Բարիկյան եղբայրները Խարբերդում և վարպետ Ալեքսանդրը Վանում, Ամերիկայից ու Եվրոպայից բերելով համապատասխան սարքավորում, կառուցեցին կիսամեքենայացված մեքենաշինական գործարաններ։ Նրանք արտադրում էին ջրհան մեքենաներ, քամհարներ, գյուղատնտեսական զանազան գործիքներ։

Արևմտյան Հայաստանում հանքային հարստությունները կամ տակավին չէին մշակվում, կամ մշակվում էին պարզունակ եղանակով։ 1881 թ. Արղնի-Մադենի պղնձահանքերում աշխատում էր 450 մարդ, որոնք տարվա մեջ բանում էին վեց ամիս՝ մայիսից մինչև հոկտեմբեր և արտադրում 50.000—60.000 կաֆ պղինձ[114]։ Ստացված պղինձը իրացվում էր գերազանցապես երկրի ներսում՝ տեղական արհեստավորների ու տնայնագործների կողմից։ Երկրի մյուս հանքերում շատ չնչին արտադրանք էր ստացվում։

Արևմտյան Հայաստանում մասնավոր ձեռնարկությունների կողքին կային նաև պետական և պատրիարքապատկան հատ ու կենտ ձեռնարկություններ։ Պետականում աշխատում էին հիմնականում զինվորները, իսկ պատրիարքապատկանում՝ անչափահաս որբերը։ Առաջինները հանդերձանք էին արտադրում թուրքական բանակի, իսկ երկրորդները՝ հայ որբերի համար։

Այսպիսով, XIX դարի վերջին տասնամյակներում Արևմտյան Հայաստանի արդյունաբերության հին ձևերի կողքին առաջ եկան նորերը՝ մանուֆակտուրան ու գործարանը։ Սակայն դրանք դեռ փոքրաթիվ էին և թույլ զարգացած։

Արդյունաբերության զարգացման տեսակետից Հայաստանի Արևելյան ու Արևմտյան հատվածներում կային լուրջ տարբերություններ։ Արևմտյան Հայաստանում տակավին շարունակում էին գերիշխել արդյունաբերության ցածր ձևերը՝ արհեստն ու մանր ապրանքային արտադրությունը, մինչդեռ Արևելյան

---

114 ՏԽ՛ս ՍՍՀՄ ՊԿՌՊԱ, ֆ. 1300, ց. 26, գ. 14, թ. 42։

Հայաստանում այդ ձևերն արդեն մղվում էին հետ պլան, իրենց տեղը զիջելով արդյունաբերության համեմատաբար բարձր ձևերին՝ մանուֆակտուրային և գործարանին։ Առաջինում կապիտալիստական արտադրությունն առաջացել էր արդյունաբերության սակավաթիվ ճյուղերում, իսկ երկրորդում՝ համեմատաբար շատ ճյուղերում։

Գյուղատնտեսություն։ Եռեֆորմյան տարիներին ցարական կառավարությունը, ձգտելով Արևելյան Հայաստանի գյուղատնտեսությունը ծառայեցնել ռուսական կապիտալիզմի շահերին, նպաստեց նրա մի շարք ճյուղերի առաջընթացին։ Բամբակագործության զարգացման համար դեռ 1870 թ. իշխանությունները երկարատև վարձակալությամբ զեներալ Կախանովին տվեցին Երևանի գավառի Արաղադզանի տափաստանը՝ 10.000 դես. և 1872 թ.՝ Շարուր-Դարալագյազի գավառապետ Շան-Դիրիլին՝ նույն գավառի Կիր հողամասը՝ 1950 դես. տարածությամբ։ Նրանք մտցրին որոշ բարելավումներ և բարձրացրին բամբակի արտադրությունը։

1879 թ. կառավարությունը արտասահմանից ներմուծվող բամբակի վրա մաքս սահմանեց՝ փթին 40 կոպ. չափով, այնուհետև այդ մաքսը պարբերաբար բարձրացրեց՝ 1891 թ. հասցնելով 1 ռուբ. 20 կոպեկի։ 1883 թ. Երևանի մոտերքում՝ նախկին Սարդարի այգում, հիմնվեց բամբակի պետական փորձադաշտ և միաժամանակ թույլատրվեց ձեռնարկատերերին ու բնակչությանը առանց մաքսի ներմուծել բամբակի բարձրորակ սերմ, ինչպես նաև բամբակազտիչ կատարելագործված «Ջին» մեքենաներ։

Ռուս կապիտալիստները ևս խթանեցին բամբակագործության զարգացմանը։ Արևելյան Հայաստանում հայտնվեցին «Սավվա Մորոզովի և Նիկոլաևյան մանուֆակտուրային ընկերության» (1884), «Անդրեյ Կորշինկինի մեծ Յարոսլավյան մանուֆակտուրային ընկերության» (1886), Մոսկվայից Ալեքսեևի, Լոձից՝ Պողնանսկու, իսկ Բիֆլիսից՝ Չիլախովի մանուֆակտուրային ֆիրմաների (1887) ներկայացուցիչները։ Նրանք բնակչությանը բերի բաժանեցին ամերիկյան լավորակ սերմեր, տրամադրեցին «ջիներ», բամբակագործության տեխնիկան ուսումնասիրելու նպատակով մի խումբ երիտասարդների ուղարկեցին Ամերիկա։ Այս ամենի շնորհիվ 19 տարվա ընթացքում (1880—1899) Երևանի նահանգում բամբակի արտադրությունը 81 հազարից հասավ 406 հազար փթի կամ ամենը 5 անգամ[115]։ Տեղական ցածրորակ «կարագոզ» (սև տփիկ) բամբակը փոխարինվում էր ամերիկյան բարձրորակ տեսակով։ 1890 թ. Երևանի նահանգում ամերիկյան տեսակի բամբակն արդեն կազմում էր հավաքած ամբողջ բերքի մոտ 70 տոկոսը։ Բամբակենին այնքան շահութաբեր դարձավ, որ գյուղացիները սկսեցին ընդարձակել դաշտերը՝ այլ կուլտուրաների ցանքատարածությունների կրճատման հաշվին։ 1890-ական թվականների սկզբներին ժամանակակիցներից մեկը գրում էր, որ Երևանի նահանգում բամբակի ցանքերն ընդարձակվում են. «Բամբակենին կամ արդեն արտամղել է ուրիշ՝ գյուղատնտեսության սակավարժեք կուլտուրաները, կամ նրանց չափերը հասցրել նվազագույնի, ինչպես օրինակ, ցորենի, գարու, կտավատի, ընդհի և այլն»[116]։

---

115 Տե՛ս «Памятная книжка Эриванской губернии на 1902 г.», отд. IV, стр. 127.

116 «Труды императорского кавказского общества сельского хозяйства», Тифлис, 1893, т. 3—4, стр. 117.

1880—1890-ական թվականներին Արևելյան Հայաստանը դարձավ Անդրկովկասի բամբակի արտադրության գլխավոր կենտրոնը։ 1900 թ. Երևանի նահանգում բամբակի ցանքերը կազմում էին 25 հազ., Ելիսավետպոլի նահանգում՝ 10 հազ., Բաքվի նահանգում՝ 3 հազ., Քութայիսի նահանգում՝ 3 հազ., իսկ Թիֆլիսի նահանգում Ջաքաթալայի օկրուգի հետ միասին՝ 0,4 հազ. դեսյատին[117]։ Երկրամասի բամբակը համարյա ամբողջապես արտահանվում էր Ռուսաստանի արդյունաբերական կենտրոնները։



Առաջ լծով, գութան անիվներով, շարֆացան աջառ և ռուսական լուծ

Հետռեֆորմյան տարիներին Արևելյան Հայաստանում աճեց նաև խաղողի արտադրությունը։ 1870 թ. հավաքված 984 հազ. փթի դիմաց 1880 թ. հավաքվեց 1085 հազ. փութ խաղող։ Սակայն 1880-ական թվականներին ցա-

117 Տե՛ս «Краткие сведения о состоянии на Кавказе сельского хозяйства», Тифлис. 1900, стр. 9.

րիզմի հարկային քաղաքականության հետևանքով խաղողի արտադրության տեմպերն ընկան։ Մի շարք տեղերում նույնիսկ խաղողի այգիները վերացվեցին։ Գյուղացիներն անշահավետ համարելով խաղողագործությունը, զբաղվեցին այլ կուլտուրաների, գլխավորապես բամբակենու մշակությամբ։ Բայց 1880-ական թվականների վերջերից սպիրտային խմիչքների արտադրության զարգացման շնորհիվ խաղողի այգիները նորից սկսեցին ընդարձակվել։ Միայն տասը տարվա ընթացքում (1885—1895) Երևանի նահանգի հինգ գավառներում խաղողագործությամբ զբաղվող գյուղերի թիվը 282-ից հասավ 325-ի, իսկ խաղողի բերքը՝ 1111 հազարից 1771 հազար փթի[118]։ Խաղողի արտադրության գլխավոր կենտրոններն էին Երևանի և Էջմիածնի գավառները, որտեղ գտնվում էին այգիների մոտ 70 տոկոսը[119]։ Մեկ դեսյատին տարածությունից ստացվում էր 200—400 փութ խաղող։

Սակայն Արևելյան Հայաստանը խաղողագործությամբ Անդրկովկասում գրավում էր վերջին տեղը։ 1898 թ. Թիֆլիսի նահանգում կար 20 հազար, Քութայիսիի նահանգում՝ 25, Ելիսավետպոլի նահանգում՝ 11, Բաքվի նահանգում՝ 10, իսկ Երևանի նահանգում՝ միայն 8 հազար դեսյատին խաղողի այգի[120]։

Գնալով ավելի ու ավելի ապրանքային նշանակություն էր ստանում այգեգործությունը։ Խնձորի, տանձի, դեղձի, ծիրանի և այլ մրգերի վաճառքով զբաղվում էին հատկապես Երևանի, Էջմիածնի ու Նախիջևանի գավառների այգեգործները։ XIX դարի վերջին այգեգործությունը զարգացավ նաև Կարսի մարզում և որոշ շրջաններում դարձավ բնակչության նույնիսկ հիմնական զբաղմունքը։ Այդ տեսակետից աչքի էին ընկնում Կաղզվանի օկրուգի Խար, Կարաբաղ, Կերս, Պակրան և այլ գյուղերը, Օլթիի օկրուգի Քաուսկերի տեղամասը, ինչպես նաև Օլթի ու Փոցխով գետերի հովիտները։ Կարսի նահանգապետար 1895 թ. գրում էր, որ Կաղզվանում այգեգործությունը բնակիչների գոյության հիմնական աղբյուրն է։ Նրանք թարմ ու չորացրած մրգերը նախալեռնային գյուղերում փոխանակում էին ցորենով ու այլ կենսամթերքներով, իսկ մասամբ էլ վաճառում հենց Կաղզվանում և Կարսում[121]։ 1897 թ. Կարսի մարզում արդեն կար 2022 դես. այգի։

Հեռուեֆորմյան տարիներին սերտացավ նաև բանջարաբուծության կապը շուկայի հետ։ Գյուղացիներն սկսեցին ավելի շատ վաճառել սեխ, ձմերուկ, սոխ և վարունգ։ Երևանի նահանգում բանջարաբուծության կենտրոններն էին Սուրմալուի և Էջմիածնի գավառների բազմաթիվ գյուղեր։ Բանջարեղենը ուղարկվում էր վաճառքի առավելապես երկրի նախալեռնային և լեռնային շրջաններ։ Բանջարաբոստանային կուլտուրաների արտադրությունը զարգացավ նաև Կարսի մարզում։ Թուրքական տիրապետության ժամանակ բանջարաբուծությունն այնտեղ «համարյա անհայտ էր, մարզում այն մտցրին գլխավորապես ռուսները և մասամբ Ալեքսանդրապոլի գավառից գաղթած հայե-

118 *Տե՛ս* *М. Балас*, Виноделие в России, СПб., 1897, ч. III, стр .223—225.

119 *Տե՛ս* «Обзор Эриванской губернии за 1897 г.», стр. 5.

120 *Տե՛ս* *В. Д. Мочалов*, Крестьянское хозяйство в Закавказье к концу XIX в., М., 1958, стр. 229.

121 *Տե՛ս* «Обзор Карсской области за 1896 г.», стр. 12.

րը»[122]։ Շուտով բանջարաբուծությունն այնքան լայն տարածում ստացավ, որ մարզի անգամ կիսաքոչվոր քրդերն սկսեցին զբաղվել դրանով։

Տեղաշարժեր կատարվեցին նաև հացահատիկի արտադրության մեջ։ 1870-ական թվականներին Արևելյան Հայաստանի ցորենն ու գարին սպառվում էր հիմնականում երկրի ներսում։ Բայց 1880-ական թվականներին, երբ կառուցվեց Թիֆլիս-Բաքու երկաթուղագիծը, իսկ Եվրոպայում բռնկվեց հա-



1. Ճառճառ. 2. Կամ

մատարած սովը, Հայաստանի հացահատիկն զգալի չափով սկսեց արտահանվել նաև արտասահման։ Երկրի որոշ շրջաններ դարձան հացահատիկի արտադրության կենտրոններ (Ալեքսանդրապոլի ու Նոր Բայազետի գավառները և հատկապես Կարսի մարզը)։ Սակայն 1890-ական թվականներին պատկերը փոխվում է, երբ Ռուսաստանի հացահատիկը լայնորեն մուտք է գործում Անդրկովկաս և մրցակցությանը չդիմացող գյուղացիներից շատերը գերադասում են զբաղվել գյուղատնտեսական այնպիսի մթերքների արտադրությամբ, որոնք նոր պայմաններում ավելի շահաբեր էին։

Բրնձի արտադրությունն Արևելյան Հայաստանում արագորեն աճեց,

---

122 «Район Тифлисско-Карсско-Эриванской железной дороги в экономическом и коммерческом отношениях, исследования А. М. Аргутинского-Долгорукова, В. П. Бочкарева и Р. И. Даниловича», Тифлис, 1897, стр. 419—420.

1876—1878 թթ. 342 հազար չետվերտից 1895—1897 թթ. հասնելով 1046 հազար չետվերտի (1 չետվերտը=է 9 փթի)։ Բրնձագործության գլխավոր շրջանը Երևանի և Շարուր-Դարալագյազի գավառներն էին, ուր տիղավորված էր նրա ցանքատարածությունների մոտ 80 տոկոսը։ Անդրկովկասում Արևելյան Հայաստանը հացահատիկի ու բրնձի արտադրության մեջ գրավում էր երկրորդ տեղը, առաջնությունը դիջելով Ադրբեջանին։

Տեղաշարժեր կատարվեցին Արևելյան Հայաստանի երկրագործության նաև երկրորդական ճյուղերում։ Շերամապահությունը, որը սկսած 1860-ական թվականներից անկում էր ապրում, 1880-ական թվականներին Ռուսաստանում և Անդրկովկասում մետաքսագործության զարգացման հետևանքով նորից է առաջադիմում։

Յուղատու բույսերի՝ կտավատի, քունջութի, վուշի, կանեփի ցանքատարածությունները 1870-ական թվականներին ընդարձակվում էին։ Բնակիչները դրանցից ստացվող ձեթը կամ օգտագործում էին իրենց տնտեսություններում, կամ վաճառում։ Սակայն 1880—1890-ական թվականներին, ցարիզմի վարած հարկային քաղաքականության և բաքվի նավթի որպես վառելանյութ ներթափանցման հետևանքով, այդ կուլտուրաների ցանքատարածությունները կրճատվեցին, իսկ արտադրությունն ընկավ։

Հետեֆորմյան տարիներին Արևելյան Հայաստանի անասնապահության մեջ տեղի ունեցան յուրատեսակ փոփոխություններ։ Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն աճում էր։ Երևանի նահանգում ու Կարսի մարզում 1886 թ. կար 465 հազ., իսկ 1900 թ.՝ 917 հազ. խոշոր եղջերավոր անասուն։ Բնակչության մեկ շնչին 1886 թ. ընկնում էր միջին հաշվով 0,75, իսկ 1900 թ.՝ 1,2 գլուխ խոշոր եղջերավոր անասուն։ Սակայն մանր եղջերավոր անասունների գլխաքանակը նվազում էր[123]։ Այդ փոփոխությունները պայմանավորված էին, մի կողմից, անասնապահության ավելի խոր ներգրավումով ապրանքադրամական հարաբերությունների մեջ, իսկ մյուս կողմից՝ կիսաքոչվորական ու քոչվորական անասնապահության բայքայումով։ Նստակյաց բնակիչները, հատկապես ունևորները, առևտրական նպատակներով մեծացնում էին խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, իսկ քոչվոր ու կիսաքոչվոր քրդերն ու ադրբեջանցիները նոր պայմաններում տնտեսապես քայքայվում էին ու դրկվում մանր եղջերավոր անասուններից։ Այդուհանդերձ Արևելյան Հայաստանում առևտրային անասնապահությունը զարգանում էր։ Աչքի էին ընկնում Կարսի մարզը, Լոռին, Ալեքսանդրապոլի ու Նոր Բայազետի գավառները և Դարալագյազը։ Գնորդ առևտրականներն ու հարուստ գյուղացիներն Ալագյազի, Գեղամա, Ջղդրի, Արգահանի, Գելի և Դարալագյազի արգավանդ արոտավայրերում ու մարգագետիններում գիրացնում էին սեփական ու գնած անասունները և ամեն տարի հազարներով վաճառում Անդրկովկասի ու Հայաստանի արդյունաբերական կենտրոններում։ Բացի մսատու անասնապահությունից, զարգանում էր նաև մթերային ու կաթնամթերային անասնապահությունը։

Այսպիսով, XIX դարի վերջին Արևելյան Հայաստանի գյուղատնտեսության բոլոր ճյուղերն արդեն ներգրավված էին շուկայական հարաբերությունների մեջ։ Ռուսական կապիտալիզմի պահանջներին համեմատ ապրանքային

---

123 Տե՛ս *А. С. Амбарян*, Развитие капиталистических отношений в армянской деревне (1860—1920), Ереван, 1959, стр. 68.

բնույթ էր ստացել ամենից շատ բամբակագործությունը, ապա խաղողագործությունը, անասնապահությունը և այլն։ Ի տարբերություն նախորդ տարիների, երբ գյուղացիներն իրենց ստացած արդյունքները վաճառում էին առավելապես անմիջական սպառողներին, ետռեֆորմյան շրջանում հրապարակ էին նկել գնորդ-առևտրականները, որոնք արդեն թափանցել էին գյուղատնտեսության համարյա բոլոր ճյուղերը։

Առևտրական հողագործության զարգացման շնորհիվ հարուստ գյուղացիները կիրառում էին արտադրության կատարելագործված գործիքներ, բարելավում էին գյուղատնտեսական կուլտուրանները, տեղական ոչխարներն ու այծերը փոխարինում ներմուծված ավելի մեքենատու ոչխարներով ու այծերով։

Արևմտյան Հայաստանի բնակլիմայական պայմանները հնարավորություն էին տալիս մշակելու ընդարձակ տարածություններ և աճեցնելու գյուղատնտեսական բազմազան կուլտուրաներ։ Սակայն տիրապետող տնտեսական ու քաղաքական կարգերի պատճառով մշակվում էր երկրի միայն փոքր մասը։ Ենթարկվելով անձի ու գույքի անապահովության սարսափների, պետական ու



Առաջավար

ֆեոդալական հարստահարումների, ինչպես նաև վաշխառուական կեղեքումների, գյուղացիներն ի վիճակի չէին մեծացնելու երկրագործական մեքենաների արտադրությունը։ 1891 թ. «Մուրճը», գրում էր, որ «խեղանդամ սաստիկ վախենում են շատացնել իրենց անասունները, որպեսզի «շան և գելիճ փայ չդառնանը»[124]։ Կամ՝ Մուշի դաշտում կապալառուները «պարտեզներու, այգիներու բանջարեղեններուն ու պտուղներուն ծանր տուրք կը պահանջեն և գիւղացիք այս պատճառով դադրեցուցած են ասոնց մշակութիւնը»[125]։ Ցածր էր բերքատվությունը, հին ու անարդյունավետ էին գյուղացու հողագործական գործիքներն ու միջոցները։

124 «Մուրճ», 1891, № 2, էջ 222։
125 «Փրկարար», 1901, № 1, էջ 26։

Օսմանյան կառավարության կողմից խրախուսվող աղաները ոչնչացնելով ու արտաքսելով հայերին, նրանց ցանքատարածությունները վեր էին ածում արոտավայրերի և այդպիսով արգելակում գյուղատնտեսության զարգացումը։

Արևմտահայ գյուղացիներն այդ պայմաններում նույնիսկ զբաղվում էին պապենական գյուղատնտեսությամբ, ցանում էին ցորեն, գարի, բրինձ, վարսակ, բամբակ, ծխախոտ, աճեցնում մրգեր ու հատապտուղներ։ Հացահատիկ մշակվում էր գերազանցապես Բասենի, Ալաշկերտի, Բուլանըխի, Կարճկանի, Արճակի, Ալջավազի, Արճեշի, Խարբերդի, Բալուի շրջաններում, ինչպես նաև Դերջանի գետահովիտներում։ Բրինձ մշակվում էր Ջուլամերկի ցածրադիր մասերում, բամբակն ու շերամը՝ Խարբերդի, Դիարբեքիրի դաշտերում ու Տալվորիկի ձորերում, ծխախոտը՝ Բաղեշի ու Մուշի գավառներում և Հեքյարիի Շամդինան գավառակում, հնդկական կանեփ՝ Խարբերդի ու Մալաթիայի գավառներում և այլն։

Այգեգործությունն ու բանջարաբուծությունը տարածված էին Թորթումում, Կիսկիմում, Սպերում, Բիթլիսի ու Մուշի գավառներում, Խարբերդի ու Մալաթիայի դաշտերում, Բալուում և հատկապես Արգնի-Մադենում[126]։

Անասնապահությամբ զբաղվում էին Նորդուզում, Խոշաբում, Աղբակում, Մոկսում, Արճեշում, Խիզանում, Սասունում, Բուլանըխում, Դերսիմում, բայց ավելի շատ Բյուրականի (Բինգյոլի) արոտավայրերում։ «Ոչ մի լեռնային շրջան,— գրում էր Ա—Դոն,— չի կարող խաշնարածության համար այնպիսի հարմար վայր հանդիսանալ, ինչպիսին է Բինգյոլյան շրջանը։ Դա մի մեծ լեռնադրախտ է իր արոտներով և հովասուն խոտատեղիներով»[127]։

XIX դարի վերջին տասնամյակներում Արևմտյան Հայաստանի գյուղատնտեսությունը ներգրավվել էր ապրանքադրամական հարաբերությունների մեջ։ Երկրի հացահատիկային գլխավոր շրջանները ցորենն ու գարին արտահանում էին արդյունաբերական կենտրոններն ու անասնապահական վայրերը։ Խարբերդի գավառը հացահատիկը գերազանցապես արտահանում էր Արաբկիր, Չարսանջակը՝ Դերսիմ, Դերջանը՝ Քղի, Ալաշկերտը՝ Վանի և Բիթլիսի նահանգների անասնապահական շրջանները։ Բրինձը Ջուլամերկից արտածվում էր Մոսուլ, իսկ Դիարբեքիրի և Բիթլիսի նահանգներից՝ Վանի նահանգ։ Մրգերն ու հատապտուղները երկրի ցածրադիր շրջաններից ուղարկվում էին լեռնային շրջանները։ Արաբկիրից արտահանվում էր հիմնականում թութ, Խարբերդից՝ սերկևիլ և նուշ, Թորթումից, Կիսկիմից և Սպերից՝ դեղձ, տանձ, բալ ու կեռաս, իսկ Արտամետից՝ խնձոր։

Շուկայական հարաբերությունների մեջ էր ներգրավվել նաև անասնապահությունը։ Անասունների առևտուրը համեմատաբար զարգացած էր Վանի, Կարինի, Բիթլիսի և մասամբ Դիարբեքիրի նահանգներում։ Արևմտյան Հայաստանից ապրանքային անասունների մեծ մասն ուղարկվում էր Եգիպտոս, Սիրիա, Լիբանան և Կ. Պոլիս, մասամբ նաև Ռուսաստան, գլխավորապես Անդրկովկաս։ Մորթին ու բուրդը արտահանվում էին Եվրոպա, առավելապես Ֆրանսիա, իսկ կաթնեղենը՝ Թուրքիայի եվրոպական մասերը՝ գլխավորապես Կ. Պոլիս։

---

126 Գ. Սրվանձտյանց, *Թորոս աղբար...*, մաս Բ, էջ 185։

127 Ա-Դո, նշված աշխ., էջ 182։

Երկրի գյուղատնտեսական ճյուղերից ամենից շատ ապրանքադրամական հարաբերությունների մեջ էին ներգրավված շերամապահությունն ու բամբակագործությունը, ապա անասնապահությունը, այնուհետև՝ այգեգործությունն ու բանջարաբուծությունը և, վերջապես, հացահատիկների արտադրությունը։

XIX դարի վերջին քառորդում Արևմտյան Հայաստանի գյուղատնտեսությունը գտնվում էր ավելի հետամնաց վիճակում, քան Արևելյան Հայաստանինը։ Առաջինում շինականները շարունակում էին մշակել իրենց պապերից ժառանգություն ստացած կուլտուրաների տեսակները, մինչդեռ երկրորդում ներմուծում էին նոր տեսակներ, որոնք հատկանշվում էին բարձր որակով ու



Գութանավար

բերքատվությամբ։ Արևմտյան Հայաստանում ոռոգման սիստեմը չէր կատարելագործվում ու ընդլայնվում, մինչդեռ Արևելյան Հայաստանում այն առաջադիմում էր։ Հայաստանի երկու հատվածներում էլ անասնապահությունն ընդունել էր ապրանքային բնույթ։ Նրա արևմտյան մասում զարգանում էր համարյա բացառապես մսային, իսկ արևելյան մասում՝ նաև կաթնամթերային անասնապահությունը։ Այդ տարբերությունները բխում էին Թուրքիայի սոցիալ-տնտեսական ու հասարակական-քաղաքական տարբերություններից։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՑԻ ՈՒ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՈՒ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Արևելյան Հայաստանի տնտեսական հետամնացության, արդյունաբերական զարգացման ցածր մակարդակի, ֆեոդալական հարաբերությունների մնացորդների առկայության, մեծ քաղաքների և երկաթուղային ճանապարհների բացակայության հետևանքով հայ բուրժուազիան կազմավորվեց նախ Անդրկովկասի արդյունաբերական գլխավոր օջախներում՝ Բաքվում, Բաթումում, Թիֆլիսում և ապա՝ Հայաստանում։

Հայ բուրժուազիայի կյանքում վճռական դեր է խաղացել Բաքվի նավթարդյունաբերությունը։ 1872 թ. հետո Ապշերոնյան թերակղզում հաջորդաբար շահագործման են հանձնվում նավթաբեր հողատարածքույունները։ Անդուլ մրցավազք է առաջանում ավելի շատ նավթ արտահանելու, խոշոր կապիտալ կուտակելու համար։ 1872 թ. 180 դեպյատին նավթագետու փոխարեն, 1900 թ. արդեն օգտագործվում էր 906 դեսյատին։

1879 թ. միայն Միրզոյանների ընտանիքն ուներ 137 դեսյատին նավթաբեր հող։ Հայերն առանձին և այլ ազգերի ընկերակիցների հետ միասին շահագործում էին 155 նավթահոր, ռուսներն ու եվրոպացիները՝ 79, իսկ մյուս ազգերի կապիտալիստները՝ 61 հոր[1]։

Նոբելի, Ռոտշիլդի և նավթային այլ մագնատների կողքին կապիտալիստական հարաբերությունների շրջապտույտի մեջ են նետվում հայ մեծահարուստ նավթարդյունաբերողները՝ Մանթաշովը, Լիանոզովը, Ղուկասովը, Պիտոևը, Մայիլովը, Արամյանցը, Ավան-Յուզբաշևը, Թադևոսյանը, Դոլուխանովը, Միրզոյանը, Զուբալովը, Այվազովը, Մելիք-Աղամիրովը, Տեր-Ակոպովը և ուրիշներ։ XIX դարի վերջին տասնամյակում Բաքվում արտադրված նավթի արժեքը կազմում էր 224, 639, 500 ռուբլի, որի $^2/_3$-ը պատկանում էր հայ կապիտալիստներին։ Բաքվում՝ 5000 մինչև 50000 ռուբլի արժողությամբ սեփականություն ունեցողների 17,5%-ը, իսկ 50000 ռուբլուց ավել ունեցողների 23,4%-ը հայ բուրժուաներն էին։ Բացի այդ, Բաքվի և նրա նահանգի առևտրական ձեռնարկությունների 25%-ից ավելին նույնպես պատկանում էր հայերին։ Նոբելի ընկերության հիմնական դրամագլուխը Բաքվում գարասկզբին կազմում էր 15 միլիոն, իսկ Ռոտշիլդինը՝ 6 միլիոն ռուբլի։ Նույն ժամանակաշրջա-

---

[1] *Տե՛ս Ст. Гукасамбаров*, Очерки развития и современное состояние нефтяной промышленности Бакинского района, Тифлис, 1880.

նում Մանթաշովի հիմնական դրամագլուխն անցնում էր 22 միլիոնից, Միրզոյան եղբայրներինը ավելի քան 3 միլիոն էր, Եղիազարյանինը՝ 2 միլիոն ռուբլի[2]։

Նավթարդյունաբերությունը ոչ միայն հարստացրեց Բաքուն, այլև տնտեսական մեծ աշխուժություն մտցրեց Բաթումի, Թիֆլիսի և երկրամասի այլ քաղաքների կյանքում։ 1890 թ. Բաթումում նավթի արտահանությամբ զբաղվող 18 ձեռնարկություններից 5-ը պատկանում էր հայերին։

Բաքվի նավթի շնորհիվ հարստացած հայ բուրժուազիան իր կուտակած կապիտալները շրջանառության մեջ էր դնում, երկրամասում կալվածքներ էր գնում, խոշոր շենքեր, ֆաբրիկաններ ու գործարաններ կառուցում։ Երկրամասի արդյունաբերական մյուս կարևոր օջախում՝ Թիֆլիսում, Ադելխանովը, Էնֆիաջյանցը, Թայիրյանը, Բոզարջյանը, Թամամշևը և շատ ուրիշ հայ կապիտալիստներ տնօրինում էին թեթև ու սննդի արդյունաբերության, կաշվի և այլ ձեռնարկությունները։

Հայաստանում հայ բուրժուազիայի աշքի ընկնող մասը հիմնականում իր ձեռքն էր վերցրել պղնձի ու կաշվի, գինու-կոնյակի և արտադրության այլ ճյուղեր։ Հայաստանում արդյունաբերական կապիտալի հայ ներկայացուցիչներն էին Մելիք-Ազարյանը, Մելիք-Փարսադանովը, Մելիք-Ղարագյոզովը, Մելիք-Ստեփանովը, Աֆրիկյանը, Դյոզալովը, Ջանփոլադյանը, Սողոմոնովը, Խոջամիրովը, Ջալաբովը, Բաբախանյանը, Մարտիրոսյանցը, Հարությունյանցը, Իսահակյանցը, Ավագովը և ուրիշներ։

Խոշոր առևտրականները գերազանցապես ապրում էին Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Ալեքսանդրապոլում։ Հատկապես աշքի էին ընկնում Արամյանցը, Անանովը, Աֆրիկյանը, Հովսեփ ու Գրիգոր Թամանյանները և ուրիշներ։ Հայ խոշոր բուրժուազիայի ներկայացուցիչներ կային նաև Մոսկվայում, Պետերբուրգում, Դոնի Ռոստովում և Ռուսաստանի այլ քաղաքներում։

Բուրժուազիայի մյուս խումբը կուլակությունն էր, որը հարստահարում էր գյուղացիությանը, գյուղական պրոլետարիատին՝ բատրակությանը։

Բուրժուազիայի ձևավորման հետ զուգընթաց հրապարակ իջավ և հայ արդյունաբերական պրոլետարիատը։ Արդյունաբերական պրոլետարիատը, ի տարբերություն մանուֆակտուրային պրոլետարիատի, հանդես է գալիս իբրև համակենտրոնացած հասարակական ուժ, որի աղբյուրը խոշոր կապիտալիստական արդյունաբերությունն է՝ ֆաբրիկանները, գործարանները, հանքերը և այլն։ Կապիտալը վարձու բանվորների հոծ զանգվածներ է համախմբում, որոնց իրավիճակը նույնն էր, շահերն ու ձգտումները համընկնում էին։ Արդյունաբերական պրոլետարիատի առաջացումը սոցիալ տնտեսական օբյեկտիվ երևույթ էր։

Արդյունաբերական հայ պրոլետարիատի ձևավորման սոցիալական գլխավոր աղբյուրը քայքայվող գյուղացիական զանգվածն էր և արհեստավորությունը, որոնք աշխատանք էին որոնում քաղաքներում։ «Կովկասի ուժեղ գաղութացման պրոցեսի ու նրա հողագործական բնակչության արագ աճի հետ,— գրել է Վ. Ի. Լենինը,— (զուգորկվելով այդ աճով) տեղի էր ունենում նաև բնակ-

---

[2] Տե՛ս Г. Пичкян, Капиталистическое развитие нефтяной промышленности в Азербайджане, см. «История классовой борьбы в Закавказье», сбор. статей, книга первая, Тифлис, ЗКУ, 1930, стр. 47, 108—110 и др.

չության՝ հողագործությունից կտրվելու և արդյունաբերությանը հարելու պրոցես...»[3]։

Վ. Ի. Լենինը, բնութագրելով XIX դարի վերջին Ռուսաստանում գյուղացիության դասակարգային շերտավորման պրոցեսը, նշել է. «Գյուղացիների մոտ հինգերորդ մասն արդեն այն դրության է անցել, որ «ամենագլխավոր զբաղմունքը» վարձու աշխատանքն է ունեևոր գյուղացիների և կալվածատերերի մոտ... Միևնույն «գյուղացիությունը» և շուկա է նետում միլիոնավոր բանվորների, որոնք վարձողներ են որոնում, և վարձու բանվորների պատկառելի պահանջարկ է ներկայացնում»[4]։

Աճում է Ռուսաստանի արդյունաբերական պրոլետարիատը։

Դարասկզբին միայն Հայաստանի գյուղերում պրոլետարական և կիսապրոլետարական բնակչության թիվը հասնում էր մոտ 300 հազար մարդու[5]։

Զանգվածային արտագնացության հոսք է սկսվում դեպի Բաքու, Թիֆլիս. Բաքում, երկրամասի շինարարական տեղամասերը, ոչ-հողագործական արտագնացությունը, ըստ էության, առաջադիմական երևույթ էր։ Այն նպաստում էր բանվոր դասակարգի ձևավորմանը, աստիճանաբար փոխում խավարում խարխափող գյուղացուն, բարձրացնում նրա դասակարգային գիտակցությունը, եվ, վերջապես, այն իր ազդեցությունն էր տարածում նաև բուն գյուղացիության վրա։ Գյուղացին ապրելով դրսում աշխատավարձով, ավելի ազատ էր զգում, թուլանում էին նահապետական հին սովորությունները, կինը ավելի ինքնուրույն էր դառնում՝ ընդգրկվում տնտեսական և այլ աշխատանքների մեջ։

1897 թ. Բաքվի նավթարդյունաբերության մեջ աշխատող բանվորների 29%-ը հայեր էին[6] (որոշ աղբյուրներում՝ 32%-ը)։ Նրանց մոտ 43%-ը կադրային էին, իսկ 20%-ից ավելին՝ վարպետներ։ Մեխանիկական գործարանի բանվորների 30,8%-ը նույնպես հայեր էին։ Հայերն ավելի մեծ թիվ էին կազմում շինարարությունում և ծխախոտի ֆաբրիկաներում։

1880-ական թվականներից սկսած Բաքուն Զանգեզուրից հազարավոր երիտասարդ կարող ուժ էր կլանում։ Միայն 1884 թ. 10 ամսվա ընթացքում Զանգեզուրից Բաքու աշխատանք որոնելու են մեկնել 2925 մարդ[7]։

Բաքվի խոշոր գործարանային 4000 բանվորներից 1500-ը հայեր էին, որոնք 1894—1895 թվականներին գաղթել էին Արևմտյան Հայաստանից։ 1898 թ. Երևանի նահանգից մոտ 20 հազար մարդ գտնվում էր պանդխտության մեջ։ Միայն 1892—1894 թթ. անձնագրերով նոր Բայազետից և Մեծ Ղարաքիլիսայից արտագաղթել են ավելի քան 4881 մարդ։

Արտագնացության դիմած հայերի մեծ մասը դառնում էր մշտական բանվորներ։ Այդ ցույց է տալիս Բաքվի պրոլետարիատի որակական կազմը։ Այսպես, 1899 թ. Բաքվում աշխատող բանվորների 38,8%-ն ուներ մինչև մեկ

---

3 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 3, էջ 755։

4 Նույն տեղում, էջ 287—288։

5 Տե՛ս А. Г. Рашин, Формирование промышленного пролетариата в России, М., 1940, стр. 104; «Краткая история рабочего движения России (1851—1917)», М., 1962, стр. 50; М. А. Адоиц, Экономическое развитие Восточной Армении, стр. 527.

6 Տե՛ս Խ. Գալոյան, Մարքսիստական տնտեսագիտական մտքի տարածումը հայ իրականության մեջ, Երևան, 1961, էջ 25։

7 Տե՛ս «Նոր-Դար», 1885, № 138։ Տե՛ս նաև «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», т. I, стр. 103.

տարվա աշխատանքային ստաժ, 43,8%-ը՝ մեկից մինչև հինգ տարվա, իսկ 17,4%-ը՝ հինգ տարուց ավելի։ 1903 թ. դրությունն ավելի էր փոխվել։ Բանվորների 50%-ն ուներ մեկից մինչև հինգ տարվա ստաժ, իսկ 27,6%-ը՝ հինգ տարուց ավելի[8]։

Երկրամասի բանվորների աճը ցույց է տալիս, որ դարասկզբին Բաքվում և նահանգում աշխատում էր 65 հազար արդյունաբերական բանվոր, Վրաստանում՝ մոտ 50 հազար։ Վ. Ի. Լենինի բերած տվյալներով միայն Կովկասի հանքարդյունաբերության մեջ աշխատում էր 17603 բանվոր[9]։

Հայաստանի բանվոր դասակարգի ձևավորման գործում կարևոր նշանակություն ունեցավ Թիֆլիս — Կարս, Ալեքսանդրապոլ — Երևան — Ջուլֆա երկաթուղային գծի շինարարությունը։ Թիֆլիսից Կարս երկաթուղին ձգվում էր 300 կիլոմետր երկարությամբ։ Նրա շինարարության վրա 1896 թ. աշխատել է մոտ 10 հազար հոգի, որոնց մի զգալի մասը հայեր էին։ Կային նաև հույներ և իտալացի վարպետներ, որոնք աշխատում էին Ջաջուռի թունելում։



Երկանիվ և քառանիվ սայլ

Բացի երկաթուղային ճանապարհների շինարարությունից, Ալեքսանդրապոլում, Ախուրյան գետի ափին կառուցվում էին «խոշոր գինանոցներ՝ հնծյալ գորքերի համար։ Այդ շինարարությունների վրա էլ աշխատում են բազմաթիվ հայ վարպետներ, հազարավոր մշակներ»[10]։

Երևանի նահանգում 1897 թ. եղած 3485 «ֆաբրիկա-գործարաններում» աշխատում էին ավելի քան 5600 բանվոր։ Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններում, երկաթուղային շինարարությունում և այլ տեղերում աշխատող շուրջ 13 հազար բանվորներից բացի, տասնյակ հազարավոր մարդիկ ժամանակավոր աշխատանքի էին մեկնում արդյունաբերական կենտրոններ։

8 Տե՛ս «Обзор Бакинской нефтяной промышленности за 1903 г.».

9 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկ, հ. 3, էջ 622։

10 «Մշակ», 6 օգոստոսի 1896։

Հայաստանում պրոլետարիատը բազմազգ էր։ Նրա շարքերում կային ռուսներ, ադրբեջանցիներ, վրացիներ, ուկրաինացիներ, հույներ, պարսիկներ և այլ ազգերի ներկայացուցիչներ։ XIX դարի վերջին երկրամասում կար շուրջ 70—80 հազար արդյունաբերական հայ բանվոր։ Նրանք հիմնականում կենտրոնացված էին Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում, Երևանում, Ալավերդում, Ալեքսանդրապոլում, Ղափանում, Նոր Բայազետում և այլուր։ Անդրկովկասում խոշոր մեքենայական արդյունաբերությունը, Ռուսաստանի օրինակով, վերջնականապես արդյունաբերությունը անջատում է հողագործությունից, ստեղծում «բնակչության մի հատուկ դասակարգ, որը բոլորովին նման չէ հին գյուղացիությանը, սրանից տարբերվում է կյանքի այլ կառուցվածքով, ընտանեկան հարաբերությունների այլ կարգերով, ինչպես նյութական, այնպես էլ հոգևոր պահանջմունքների բարձր մակարդակով»[11]։

Անդրկովկասում բանվորները՝ նավթագործները, երկաթուղայինները, լեռնահանքային արդյունաբերության, կաշվի և այլ ձեռնարկությունների աշխատողներն անասելի շահագործման էին ենթարկվում։ Շատ երկար էր աշխատանքային օրը, ցածր՝ վարձատրությունը, անմխիթար էին բանվորների կենցաղային պայմանները։

1872 թ. Թիֆլիսում Թայիրյանի մոմի գործարանում աշխատում էր 35 բանվոր, որոնց մեծ մասը հայեր էին։ Աշխատանքային օրը տևում էր 14 ժամ։ Վարձատրությունը շատ ցածր էր. ամսական 14 ռուբլի։ Գործարանում աշխատում էին 6—7 կանայք, որոնք օրական ստանում էին 20 կոպեկ։

Ավելի ծանր էին Ալավերդու և Ղափանի պղնձագործների աշխատանքի պայմանները։

1897 թ. հունիսի 2-ին ցարական կառավարությունը, բանվորական շարժումների ճնշման տակ, հատուկ օրենք էր ընդունել աշխատանքային օրվա կրճատման մասին[12], Թեև այն տարածվում էր նաև Անդրկովկասի արդյունաբերական ձեռնարկությունների վրա, բայց էական ոչ մի փոփոխություն չկատարվեց բանվորների կյանքում։ Ծանր էր հատկապես կանանց և անչափահաս երեխաների վիճակը։

Հայաստանում կառուցվող երկաթուղու շինարարությունում տարբեր ազգերի բանվորները ենթարկվում էին անասելի շահագործման, գտնվում էին կենցաղային անմխիթար պայմաններում։ Օրավարձով աշխատող բանվորները, որ եկել էին հայկական գյուղերից, իրենց հասանելիքի (օրական 50—60 կոպեկ) հազիվ մի մասն էին ստանում։ Պաշտոնյաներից յուրաքանչյուրն իր բաժին տոկոսներն էր կորզում։ Ստացվում էր այնպես, որ ի վերջո բանվորները վարձվում էին 6-րդ և 7-րդ ձեռքով։

Սովորական հողաշերտի մեկ խորանարդ սաժենը (=2,14 մետրի) փորելու համար կապալառուները ստանում էին 2 ռ. 50 կ., իսկ բանվորներին վճարում էին 1 ռ. 30 կ., ժայռոտ տեղամասի 1 խորանարդ սաժեն փորվածքի համար՝ 8 ռ. և 13 ռ. 50 կ. (միջին հաշվով 10 ռ. 50 կ.), իսկ բանվորներին վճարում էին 6 ռ. և 6 ռ. 50 կ., 1 խորանարդ սաժեն որմնաքարի համար ստա-

---

11 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 3, էջ 693։

12 Օրենքը սահմանում էր ֆաբրիկա-գործարաններում և երկաթուղային արհեստանոցներում 11 ու կես ժամ տևողությամբ բանվորական օր։ Դա Ռուսաստանի բանվոր դասակարգի նվաճումն էր։

նում էին 15 ռ., վճարում՝ 7 ռ. կամ 7 ռ. 50 կ. և այլն։ Ընդհանուր առմամբ կապալառուի եկամուտը կազմում էր կապիտալի ամբողջ գումարի գրեթե 20%-ը[13]։

Չնչին էր նաև հիմնական բանվորների աշխատավարձը։ Ավագ բանվորն ամսական ստանում էր 30 ռ., գծի վերանորոգող բանվորը՝ 18 ռ.։

Աշխատողներին երկար ժամանակ աշխատավարձ չտալը, նրանցից կաշառք վերցնելը և այլն սովորական երևույթ էին։

Հաճախ կապալառուները բանվորներին մի քանի ամիս աշխատավարձ չտալով, յուրացնում էին նրանց հասանելիքը և փախուստի դիմում։ Հազարավոր բանվորներ ապրում էին գետնախորշերում կամ էլ բացօթյա։ «Առանձնապես վատ են բանվորների կացարանները,— գրել է «Նովոյե օբոզրենիե» թերթը,— դրանք մեծամասամբ լուսամուտից զուրկ, մեկ դռնով, երբեմն էլ առանց դռան, մի կլոր անցքով միայն գետնախորշեր են։ Վեց արշին (մեկ արշինը հավասար է 71,12 սանտիմետրի) երկարությամբ և $2^1/_2$ արշին բարձրություն ունեցող այդ գետնախորշում տեղավորված են 10—12 մարդ... Ամռանը բանվորները պառկում են դրսում, ձմռանը կամա թե ակամա հարկ է լինում իրար վրա կուտակվել գետնախորշերում և կարելի է պատկերացնել, թե ինչ վիճակ է տիրում այնտեղ այդ պահին։ Բանվորների մեջ չափազանց մեծ են մահացությունները»[14]։ Համաճարակային հիվանդությունները բազմաթիվ զոհեր էին խլում։ Միայն 1900—1902 թթ. Ալեքսանդրապոլ — Երևան երկաթուղու շինարարության բանվոր-ծառայողներից 8992 մարդ հիվանդացել է, այդ թվում՝ 1900 թ. 3052, 1901-ին՝ 3709, 1902-ին՝ 2136։ Նույն ժամանակաշրջանում բանվորներից վնասվածքներ էին ստացել 1224 մարդ, որոնցից թոշակ է նշանակվել միայն 8-ին[15]։

Բանվորները զրկված էին ամենատարրական իրավունքներից։ Նրանք չէին կարող արհեստակցական միություններ ստեղծել, բանվորական թերթ հրատարակել և այլն։

Այս ամենը խորացնում էր բանվորների դժգոհությունը, արթնացնում նրանց քաղաքական գիտակցությունը։

2. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՇԵՐՏԱՎՈՐՈՒՄԸ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԳՅՈՒՂՈՒՄ

Ապրանքադրամական հարաբերությունների զարգացումը Արևելյան Հայաստանում արագացրեց գյուղացիության դասակարգային շերտավորումը և գյուղական բուրժուազիայի ու պրոլետարիատի ձևավորումը։ Հենվելով տնտեսական ուժի վրա, հարուստ գյուղացիներն իրենց ձեռքում սկսեցին կենտրոնացնել արտադրության հիմնական միջոցը՝ հողը։ Դրա համար նրանք օգտագործում էին ամենից առաջ համայնական վարելահողերի վերաբաժանումները, հատկապես «համփա-չարեք» սկզբունքը, որի համաձայն գյուղացիներն իրենց ժողովներում նախ որոշում էին յուրաքանչյուր ընտանիքի տնտեսական ուժն ու հարկերը վճարելու կարողությունը և ապա բաժանում հողը։ Դրա

---

13 Տե՛ս «Новое обозрение», 20 июня 1896; Նաև Վ. Ավետիսյան, Մի էջ Հայաստանի բանվորական շարժման պատմությունից, 1961, էջ 14։

14 «Новое обозрение», 20 июня 1896.

15 Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1975, № 3։

հետևանքով՝ հարուստները ստանում են ամենամեծ հողաբաժիններ՝ համփոններ, իսկ մնացած գյուղացիները՝ կիսահամփոն, չարեք համփոն, կիսաչարեք, պճեղ և այլն[16]։

Հողի կենտրոնացումն առանձին անհատների ձեռքում տեղի էր ունենում նաև պետական, կալվածատիրական ու վանքապատկան հողատարածությունների, տնտեսապես քայքայված գյուղացիների հողաբաժինների վարձակալության, հաճախ ուղղակի գնման, վաշխառության և զանազան չարաշահումների ճանապարհներով։ Այս ամենի հետևանքով գյուղացիության մեջ առաջացել էր սոցիալական շերտավորում, որը 1884 թ. Երևանի նահանգում հետևյալ պատկերն էր ներկայացնում. մինչև 1 դեսյատին հողաբաժին ունեցողները կազմում էին 111.633 շունչ, որոնցից 3037-ը բոլորովին հողազուրկ էին, 1—3 դեսյատին ունեցողները՝ 259614 և 3-ից բարձր՝ 57470 շունչ։ Այսինքն՝ աղքատները կազմում էին գյուղացիության 26,2%-ը, միջակները՝ 60,6%-ը, իսկ հարուստները՝ 13,2%-ը[17]։

Կուլակները հողի հետ միասին տիրում էին նաև ոռոգող ջրին։ Նրանք իրենց ձեռքում էին կենտրոնացնում այնուհետև անասունները, որի հետևանքով սոցիալական շերտավորումը գյուղում արտահայտվում էր նաև անասնապահության բնագավառում։ Այսպես, 1885 թ. Նոր Բայազետի գավառի հյուսիս-արևելյան մասում գյուղացիության 11,09%-ը կամ բոլորովին չուներ, կամ ուներ միայն մեկ գլուխ բանող անասուն, 20,89%-ն ուներ երկու, 38,05%-ը՝ 3—4, իսկ 29,97%-ը՝ հինգ և ավելի գլուխ բանող անասուն[18]։

90-ական թվականներին գյուղացիության սոցիալական շերտավորումն ավելի խորացավ, որը պայմանավորված էր ոչ միայն ապրանքային արտադրության զարգացումով, այլև պարբերաբար կրկնվող անբերրիությունից առաջացած սովով։ 1884—1894 թթ. Նոր Բայազետի գավառի հյուսիս-արևմտյան մասում անասնազուրկ տնտեսությունների տոկոսը 7,5-ից բարձրացավ մինչև 22,2-ի, Քանաքեռում հինգ տարվա ընթացքում (1887—1892) ունևորների տոկոսը 15-ից իջավ 12-ի, միջակներինը՝ 32,5-ից 28-ի, իսկ աղքատներինը՝ 52-ից բարձրացավ 60-ի։ 1894—1898 թթ. անասնազուրկ տնտեսությունների տոկոսը Կարսի մարզում ու Ալեքսանդրապոլի գավառում հասավ 17-ի, Էջմիածնի ու Երևանի գավառների լեռնային շրջաններում՝ 42—47-ի, իսկ Նոր Բայազետի գավառում՝ 29-ի[19]։

Անշուշտ, չպետք է կարծել, որ բոլոր հարուստ գյուղացիները կուլակներ էին, այսինքն՝ վարձու աշխատանք շահագործող գյուղական խոշոր բուրժուաներ։ Ընդհակառակը, նրանց մեծ մասը կամ մանր ապրանք արտադրողներ էին, մանր բուրժուաներ, կամ տակավին չէին ներքաշվել բուրժուական հարաբերությունների ոլորտը։ Իսկ կուլակները կազմում էին գյուղացիության աննշան փոքրամասնությունը։ Ըստ 1897 թ. մարդահամարի տվյալների, Երևանի նահանգում, Կարսի մարզում, Զանգեզուրի, Ղազախի ու Շուշու գավառ-

---

16 Տե՛ս «Материалы...», т. I, стр. 321.

17 Տե՛ս ՍՍՀՄ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության կենտրոնական պատմական արխիվ (այսուհետև ՍՍՀՄ ՀՀՍՇԿՊԱ), ֆ. 396, ց. 2, գ. 1160։

18 Տե՛ս «Материалы...», т. IV, ч .II, стр. 40.

19 Տե՛ս «Материалы по вопросу о распространении действий крестьянского поземельного банка на Закавказский край», СПб., 1904, стр. 262.

ներում հաշվվում էր 195.217 գյուղացիական տնտեսություն, որից բատրակներն ունեին 6198 տնտեսություն կամ բոլոր տնտեսությունների 3,1 տոկոսը[20]։

Առանձին գավառներում կուլակների տեսակարար կշիռը հետևյալ պատկերն էր ներկայացնում. Երևանի գավառում նրանք կազմում էին գյուղացիության 5,2, Ալեքսանդրապոլի գավառում՝ 1,5, Նախիջևանի գավառում՝ 2,9, Նոր Բայազետի գավառում՝ 1,8, Սուրմալուի գավառում՝ 2,1, Շարուր-Դարալագյազի գավառում՝ 3,3, Էջմիածնի գավառում՝ 5,4, Ղազախի գավառում՝ 3,0, Շուշու գավառում՝ 1,5, Զանգեզուրի գավառում՝ 1,0 և Կարսի մարզում՝ 5,3 տոկոսը[21]։ Այդ տվյալները ցույց են տալիս, որ կուլակային տնտեսությունները համեմատաբար զարգացած էին Արարատյան դաշտում ու Կարսի մարզում։ Դա պայմանավորված էր նրանով, որ Արարատյան դաշտում գյուղատնտեսության ճյուղերն իրենց բնույթի շնորհիվ ավելի շատ էին ներքաշված շուկայական հարաբերությունների մեջ, իսկ Կարսի մարզում գյուղացիական տնտեսությունները համեմատաբար շատ ունեին հող, քան երկրի մյուս շրջաններում։ Վերլուծելով կապիտալիզմի զարգացման հարցերը Լենինի ռուսական գյուղում, Վ. Ի. Լենինը նշում էր. «**որքան ավելի շատ հող ստանային գյուղացիները ազատագրվելիս, և որքան էժան գնով ստանային այն, այնքան ավելի արագ, ավելի լայն ու ավելի ազատ կընթանար կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում**»[22]։

Արևելյան Հայաստանում կուլակներն իրենց սակավազորության պատճառով վարձում էին քիչ թվով բատրակներ։ 1897 թ. մարդահամարի տվյալներով, Երևանի նահանգում եղած 3389 կուլակային տնտեսություններից 2986-ը վարձում էր մեկական բատրակ, 362-ը՝ երկու-երեքական, 34-ը՝ չորս-հինգական և միայն 7-ը՝ վեց ու ավելի բատրակ։ Դրությունը այդպիսին էր նաև երկրի մյուս շրջաններում։

Կուլակները բատրակներին վարձում էին մեկ-երկու և ավելի տարիներով կամ սեզոններով՝ ամբողջ գարնանացանի, հնձի կամ կալսի ժամանակ, բայց ավելի շատ վարձում էին օրերով, որովհետև ագրարային գերբնակչության պայմաններում իրենց համար դա շահաբեր էր։

Բատրակների վարձատրության չափը տարբեր գավառներում տարբեր էր, քանի որ ինչպես աշխատաժամերը, այնպես էլ աշխատավարձի նորման պետության կողմից իրավապես որոշված չէր։ Այսպես, Ղազախի գավառում մշակը տարեկան ստանում էր մինչև 20, Ալեքսանդրապոլի գավառում՝ 30, իսկ Շարուր-Դարալագյազում՝ 40 ռուբլի։ Դրամավճարի հետ միասին շատ հաճախ նա ստանում էր նաև բնավճար (հագուստ, ուտելիք կամ գյուղատնտեսական մթերքներ), որը կազմում էր նատուրալ տնտեսության մնացորդը և ըստ էության փողարկում դաժան շահագործումը։ Տղամարդկանց հետ հաճախ վարձու աշխատանք էին կատարում նաև կանայք ու երեխաները և իրենց կանոն վարձատրվում ավելի ցածր։ Դարավերջին տղամարդը միջին հաշվով տարեկան ստանում էր 20, կինը՝ 10, իսկ պատանին՝ 8 ռուբլի դրամավարձ և

---

20 Հաշվումները կատարված են հետևյալ աղբյուրների տվյալների հիման վրա. «Первая всеобщая перепись...», т. LXIII, стр. 5; «Общий свод по империи...», т. I, стр. 24—25, 32—33; «Памятная книжка Эриванской губернии на 1906 г.», отд. IV, стр. 162—163.

21 Տե՛ս նույն տեղում։

22 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 3, էջ 793։

պայմանավորված չափով բնավճար[23]։ Հատկանշական է, որ Ետուֆորմյան շրջանում բատրակի աշխատավարձը դանդաղ էր աճում, իսկ գյուղատնտեսական մթերքների գները՝ արագ։

Վարձու աշխատանքի օգտագործումը կուլակային տնտեսությունների կողմից կապիտալիստական հարաբերությունների զարգացած կամ ավարտուն ձևերի դրսևորումն էր։ Սակայն այդ հարաբերություններն Արևելյան Հայաստանի գյուղում արտահայտվում էին ոչ այնքան իրենց զարգացած, որքան նախնական, սաղմնային ձևերով՝ կաբալայով[24], եթե առաջներում առևտրա-վաշխառուական կապիտալը գործում էր համարյա բացառապես շրջանառության ոլորտում, ապա Ետուֆորմյան շրջանում այն թափանցում էր նաև արտադրության ոլորտը և միահյուսվելով արդյունաբերական կապիտալի հետ, ստեղծում կապիտալիստական հարաբերությունների սաղմնային ձևերը։ Առևտրավաշխառուական կապիտալի ներկայացուցիչները, Վ. Ի. Լենինի խոսքերով ասած, այժմ արդեն «բուրժուազիայի միասնական ու անբաժան բանակի մարտական դինվորներն են»[25]։ Արևելյան Հայաստանում գյուղական բուրժուազիայի տիպիկ ներկայացուցիչը ոչ թե գյուղական ձեռնարկատերն էր, որը կազմակերպում էր լրիվ վարձու աշխատանքի վրա հիմնված տնտեսություն, այլ կուլակն էր, որն իր ձեռնարկատիրական գործունեությունը միակցում էր առևտրավաշխառուական գործունեությանը։ Իսկ գյուղական պրոլետարի տիպիկ ներկայացուցիչը ոչ թե արտադրության միջոցներից բոլորովին զուրկ ազատավարձու բանվորն էր, այլ բատրակը, որը դեռ ուներ հողակտոր և շնչին տնտեսություն։ Իր դրությամբ նա շատ մոտ էր Կենտրոնական Ռուսաստանի այն մի շարք նահանգների պրոլետարիատին, որի մասին Վ. Ի. Լենինը գրում էր. «ռուսական գյուղական պրոլետարիատի ամենատիպիկ ներկայացուցիչը հողաբաժին ունեցող բատրակն է, օրամշակը, սևագործ բանվորը, շինարարական կամ այլ բանվորը։ Այդ տիպի հատկանշական գծերն են՝ փոքրիկ հողակտորի վրա տարվող տնտեսության ողորմելի չափը, այն էլ մի տնտեսություն, որը լիակատար անկման մեջ է գտնվում (այս մասին առանձնապես ակնառու կերպով վկայում է հողը վարձակալության տալը). առանց աշխատուժը վաճառելու գոյություն պահպանելու անկարելիությունը (=չքավոր գյուղացիության «արհեստագործություններ»), վերին աստիճանի ցածր կենսամակարդակը, հավանորեն ավելի ցածր, քան հողաբաժին չունեցող բանվորի կյանքի մակարդակն է»[26]։

Արևելյան Հայաստանում կուլակային տնտեսությունների աճն ավելի դանդաղ էր տեղի ունենում, քան պրոլետարական ու կիսապրոլետարական զանգվածների աճը։ Քաղաքային ձեռնարկատերերը, կալվածատերերն ու կու-

---

23 Տե՛ս «Сельскохозяйственный обзор по Закавказью за 1910 г.», Тифлис, 1911, стр. 168—169.

24 Քննադատելով Ստրուվեին, որ նա կաբալան կամ ստրկացումը համարում էր կապիտալիզմի հետ առնչություն չունեցող, միջնադարյան երևույթ, Վ. Ի. Լենինը ցույց էր տալիս, որ «նրա էությունը զուտ կապիտալիստական է, և ամբողջ առանձնահատկությունն այն է, որ կապիտալիստական հարաբերությունների այդ սկզբնական, սաղմնային ձևն ամբողջովին կաշկանդված է նախկին, ճորտատիրական հարաբերություններով», Վ. Ի. Լենին, Երկ, հ. 1, էջ 619—620)։

25 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 1, էջ 620 (ձանոթագրությունը)։

26 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 3, էջ 202—203։

յակներն ի վիճակի չէին աշխատանքով լրիվ բավարարել օբեցօր բազմապատկվող ընչազուրկներին։ Ուստի վերջիններս դիմում էին արտագնացության։

Կապիտալիզմի զարգացման հետևանքով ինչպես Ռուսաստանում ամենուր, այնպես էլ Արևելյան Հայաստանում քայքայվում ու արտամղվում էին ֆեոդալական հարաբերությունները, մասնավորապես ինքնակալության հենարանները՝ կալվածատիրական հողատիրությունն ու գյուղական համայնքը։ Ուստի ցարական կառավարությունը նրանց փրկության համար ձեռնարկում էր որոշակի միջոցառումներ։ 1885 թ. ապրիլի 21-ին հիմնեց ազնվականական հողային բանկը, իսկ հինգ տարի անց՝ 1890 թ. մարտին նրա բաժանմունքը բացեց Թիֆլիսում։ Բանկն ու իր բաժանմունքները մեծագումար վարկեր էին տալիս կալվածատերերին, վերցնելով նրանցից շուկայական տոկոսներ։ 1886 թ. հունիսի 12-ի օրենքով կալվածատերերին իրավունք տրվեց պայմանավորված ժամկետից շուտ հետացած ազատավարձու բանվորներին ոստիկանության միջոցով ետ բերել ու դատարանով պատժել։ 1882 թ. կարգադրվեց Երևանի նահանգում համայնական հողերը վերաբաժանել ոչ թե «համփա-չարեք» սկզբունքով, այլ բուն ընտանիքի անդամների քանակի։ 1886 թ. մարտի 18-ի օրենքով ընտանիքի բաժանման համար պետք էր ստանալ ոչ թե գյուղական ժողովի հասարակ մեծամասնության, ինչպես առաջ էր, այլ նրա $^2/_3$-ի և ընտանիքի ղեկավարի համաձայնությունը։ 1893 թ. հունիսի 8-ի օրենքն արգելից հողաբաժինների հաճախակի վերաբաժանումները և սահմանեց 12 տարին մեկ՝ գյուղական ժողովի, դեմստվային պետի և գավառական համգումարի համաձայնության դեպքում։ Նույն թվականի դեկտեմբերի 14-ի օրենքով հողաբաժինների վաղաժամ փրկագնումը պետք է տեղի ունենար համայնքի համաձայնությամբ, վճարովը քուլլատրվում էր միայն համայնքի ներսում, իսկ գրավ դնելը կտրականապես արգելվում էր։

Ղեկավարվելով կառավարության այդ օրենքներով, կովկասյան իշխանությունները ավելի սահմանափակեցին Անդրկովկասի գյուղացիների գործարքները նրանց բաժնեհողերի նկատմամբ։ 1893 թ. արգելեցին հողաբաժինների վաճառքն ու գրավ դնելը անգամ համայնքի ներսում, իսկ 1898 թ.՝ նաև դրանց վարձակալությամբ տալը։ Կովկասի կառավարչապետը առաջարկեց նահանգապետերին, գավառապետերին, հաշտարար միջնորդներին և այլ պաշտոնյաների չհաստատել գյուղացիների միջև կնքվող հողի վարձակալության գործարքները[27]։

Միաժամանակ ցարական իշխանություններն կարգադրում էին գյուղացիներին հնազանդությամբ կատարել պետական ու կալվածատիրական պարտավորությունները, սպառնալով հակառակ դեպքում խստապես պատժել։ 1889 թ. հաշտարար միջնորդը հայտարարում էր Երևանի գավառի Զոհրաբու գյուղի բնակիչներին, որ եթե նրանք շարունակեն խուսափել վճարումներից, ապա այդ «կդիտվի որպես բացահայտ դիմադրություն իշխանություններ» և նրանք կպատժվեն «ինչպես քրեական հանցագործներ»[28]։

Սակայն ցարական կառավարության այդ միջոցառումները չէին կարողանում կանխել կապիտալիզմի զարգացման ընթացքը և փրկել նրա սոցիալական հենարանները կործանումից։

---

27 Տե՛ս ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 12, ց. 10, գ. 780, թ. 1—2։

28 «Крестьянское движение в Армении в XIX в.», стр. 354.

3. ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԲՈՒՐԺՈՒԱԶԻԱՅԻ ՈՒ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Արևմտահայ բուրժուազիայի ու պրոլետարիատի ձևավորումը տեղի էր ունենում սուլթանական բռնապետության հայահարած և եվրոպական տերությունների Թուրքիայում վարած գաղութային քաղաքականության պայմաններում։

Բուրժուազիայի առանձին հատվածներ, մասնավորապես վաշխառուական շերտերը, արևմտահայ իրականության մեջ ձևավորվեցին ավելի շուտ։ Կ. Պոլսում հաստատված հայ մեծահարուստների մի մասը սուլթանների արքունիքում վատահրություն էր ձեռք բերել և պատասխանատու պաշտոններ էր վարում։ Նրանք հիմնականում զբաղվում էին վաշխառությամբ (սեղանավորությամբ կամ սառաֆությամբ), վարկավորելու փաշաներին կամ այլ պաշտոնյաների, վաճառականներին, անգամ սուլթաններին։ XIX դարի առաջին կեսին ամիրաները կազմեցին սեղանավորների մի «հակա ընկերություն»՝ անատոլիական ու ռումելիական մասնաճյուղերով։ Առաջինն իր գործակալների միջոցով հավաքում էր Անատոլիայի, իսկ երկրորդը՝ Ռումելիայի պետական հարկերը[29]։

Արևմտահայ վաշխառուական բուրժուազիան առավել ազդեցիկ էր XIX դարի առաջին կեսին։ Ղրիմի պատերազմից հետո, երբ Թուրքիայում հաստատվեցին արտասահմանյան բանկերը, հայ սեղանավորների դերն ընկավ։ Նրանք գերազանցապես սկսեցին գործել ազգային միջավայրում։ Հայ վաշխառուները տարբեր գործարքներ էին կնրում անմիջական արտադրողների հետ։ Նրանք տոկոսով պարտք էին տալիս և շահույթը ստանում դրամով, գյուղատնտեսական մթերքներով, անասուններով կամ պարտքի դիմաց խլում էին պարտապանների հողամասը[30]։

XIX դարի 80—90-ական թվականներին և հատկապես XX դարի սկզբին արևմտահայ վաշխառուական կապիտալն սկսեց արտամղվել նորելուկ թուրքական վաշխառուական կապիտալի կողմից։ «Այսօր Փոքր Ասիայի մեջ չկա մի գիւղ,— գրում էր «Երկրի ձայն» թերթը,— ուր կարևոր դեր չխաղայ... Թուրքերուն դրամագլուխը, իսկ բազմաթիվ են այնպիսի գիւղեր, որոնք գրեթէ ամբողջովին մաս կը կազմեն հարուստ թիւրքի դրամագլխին»[31]։ Այնուամենայնիվ, հայ վաշխառուները երկրի մի շարք շրջաններում դեռ առաջնակարգ դեր էին խաղում։

XIX դարի կեսերին Թուրքիայի՝ կապիտալիստական աշխարհին մերձենալու հետևանքով աշխուժացավ արևմտահայ առևտրական բուրժուազիան։ Կ. Պոլսի սառաֆներից կամ սեղանավորներից շատերը, թողնելով վաշխառությունը, դարկ տվին առևտրին։ Կ. Պոլսում ու եվրոպական քաղաքներում նրանք հիմնեցին առևտրական տներ և սկսեցին զբաղվել գերազանցապես մանուֆակտուրային ու երկաթեղեն ապրանքների առևտրով։ Նրանց գործարքները ուժեղացան նաև Եգիպտոսում, Սիրիայում, Լիբանանում, Կիլիկիայում և

---

29 *Տե՛ս «Մասնակի պատմութիւն հայ մեծատուններու 1400-էն 1900», գրեց Տ. Գ. Մ., Կ. Պոլիս, 1909, էջ 130։*

30 *Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններում, մասնավորապես Տարոնում ու Վասպուրականում, վաշխառությունը հայտնի էր արտրական սնեչ, սալաֆ կամ սըլըֆ անուններով, որ Նշանակում էր կանխավճար։*

31 *«Երկրի ձայն», 1906, № 8, էջ 14։*

Սև ծովի հարավային շրջաններում՝ Կահիրեում ու Ալեքսանդրիայում հայ առևտրականները հոչակվեցին ոսկու, Աղանայում, Մարաշում, Տարսոնում, Մերսինում՝ բամբակի ու արմատեղենների, Սամսունում, Տրապիզոնում և Ամասիայում՝ մանուֆակտուրային ապրանքների առևտրով։ Նրանցից ոմանք նշանավորվեցին նույնիսկ Ռումինիայի ցորենի առուծախով։ 1875 թ. հայերը Ամերիկայի Միացյալ Նահանգներ էին արտահանում ասիական զանազան գործվածքներ, հատկապես գորգեր։

Արևմտահայ առևտրական բուրժուազիան որոշակի դեր էր խաղում նաև Թուրքիայի ցամաքային առևտրում։ Թոքատում, Կեսարիայում, Զիլեում, Մարզվանում, Յողղատում և այլ քաղաքներում հայ վաճառականներն իրենց ձեռքն էին վերցրել առևտրի բաղմաթիվ ճյուղեր։ XIX դարի 60—70-ական թվականներին Արևմտյան Հայաստանում հանդես եկան մի շարք հարուստ վաճառականներ։ Նրանցից շատերը կազմեցին առևտրական միությունններ կամ ընկերություններ։ Սակայն այստեղ մեծագումար առևտրականները սակավաթիվ էին։ Այսպես, Վանում 1889 թ. կար 276 վաճառական, որոնցից 6-ն ուներ 5000—10000, 20-ը՝ 1000—2500, իսկ մնացած 250-ը՝ 200—1000 անգլիական ոսկի[32]։ Մեծագումար դրամատերերն ունեին իրենց գործակալները՝ օգայիները[33], որոնք նրանց ապրանքը իրացնում էին երկրի զանազան քաղաքներում ու գյուղերում։

Դարավերջին սկսեց ուժեղանալ թուրքական առևտրական բուրժուազիան։ Թուրքերն իրենց ձեռքն առան անասունների և անասնապահական մթերքների առևտուրը։ «Մանուֆակտուրան, մանրավաճառությունը և նմանօրինակ առևտրականներն, ուր չէին երևնար մահմեդականները, սկսած են այժմ նոյնպես անոնք գրաւել»[34]։ Չնայած այդ վայրէջքին, արևմտահայ առևտրական բուրժուազիան դեռ կարևոր դեր էր խաղում Թուրքիայի ու Արևմտյան Հայաստանի տնտեսական կյանքում։

Առևտրական կապիտալի զարգացումը դրական դեր էր կատարում քաղաքի ու գյուղի միջև տնտեսական կապերի ամրապնդման և, հետևաբար, ներքին շուկայի ընդլայնման գործում։ Այն նպաստում էր նաև հետամնաց Թուրքիայի մերձեցմանը առաջավոր կապիտալիստական աշխարհին։ «Վաճառականը,— գրում է Ֆ. Էնգելսը,— հեղափոխող տարրն է այն հասարակության մեջ, որտեղ առաջ ամեն ինչ անշարժ էր»[35]։

XVIII դարի վերջերից և հատկապես XIX դարի առաջին կեսին արևմտահայ առևտրավաշխառուական կապիտալը որոշակի քայլեր է կատարում շրջանառության ոլորտից արտադրության ոլորտն անցնելու ուղղությամբ։ Ամիրաների մի մասը, հատկապես Տատյանների նշանավոր գերդաստանը ակտիվորեն մասնակցում էր թուրքական պետության ձեռնարկած գործարանների ու ֆաբրիկանների կառուցմանը։ Կայսրության մայրաքաղաքում և ծովափնյա որոշ վայրերում մեկը մյուսի հետևից բացվում են գործարաններ ու ֆաբրիկաններ։ Դարի վերջերին դրանց թիվն արդեն հասնում էր 1500-ի, որոն-

---

32 Տե՛ս «Մշակ», 1889, հունիսի 17, № 67։

33 Թուրքերեն odəçi բառից, որ նշանակում է ցրիչ։

34 «Երկրի ձայն», 1906, № 9, էջ 13։

35 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, т. 25, ч. II, издание второе, М., 1972, стр. 475.

ցից 60-ն ուներ ժամանակակից սարքավորում[36]։ Այդ ձեռնարկությունների մի զգալի մասը կառուցում են հայ կապիտալիստները։ Այսպես, 60—70-ական թվականներին նրանք Կ. Պոլսում հիմնում են նավաշինական գործարան ու ծխախոտի մշակման ֆաբրիկա, 70—80-ական թվականներին Զմյուռնիայի մերձակայքում ընկած Գրքգաղաճ քաղաքում՝ բամբակի մշակման, ալյուրի ու ձեթի արտադրության գործարաններ, 80—90-ական թվականներին Եգիպտոսում (մասնավորապես Ալեքսանդրիայում ու Կիզայում) և Սիրիայում՝ ծխախոտի, երկաթի մշակման և կտավի արտադրության ֆաբրիկաներ[37]։

Հայ կապիտալիստներն արդյունաբերական օջախներ են հիմնում կայսրության նաև արևելյան շրջաններում։ Դեռ 1850-ական թվականների սկզբներին նրանք կառուցում են կտավագործական գործարաններ Այնթափում, ապա Մարաշում և Արաբկիրում, այնուհետև՝ Կեսարիայում, Մարզվանում, Ուրֆայում, Ամասիայում և այլուր։

Սակայն սուլթանական կառավարությունը, ելնելով թուրքական նոր զարգացող բուրժուազիայի շահերից, արգելակում էր ոչ միայն արևմտահայ առևտրավաշխառուական, այլև արդյունաբերական բուրժուազիայի զարգացումը։ Թուրքական կառավարության հայահալած և եվրոպական տերությունների դաղութային քաղաքականության պատճառով արևմտահայ արդյունաբերական բուրժուազիան առևտրավաշխառուական բուրժուազիայի համեմատությամբ թույլ էր զարգացած։ Այդուհանդերձ, հայ արդյունաբերական բուրժուազիան կարևոր դեր էր խաղում Թուրքիայի տնտեսական կյանքում։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին երկրի 284 ձեռնարկությունների 50%-ը պատկանում էր հույներին, 20%-ը՝ հայերին, 15%-ը՝ թուրքերին, 10%-ը՝ օտարերկրացիներին և 5%-ը՝ հրեաներին։ Արդյունաբերության մի շարք ճյուղերում հայ բուրժուազիան նույնիսկ գերիշխող էր։

XIX դարի երկրորդ կեսին արևմտահայ իրականության մեջ ձևավորվում է նաև պրոլետարիատը։ Նրա առաջացումը տեղի է ունենում քաղաքային արհեստավորների ու մանր ապրանքարտադրողների և գյուղի աշխատավոր զանգվածների քայքայման ու աղքատացման հետևանքով։ Արևմտաեվրոպական արդյունաբերական ապրանքների ներթափանցումը Օսմանյան կայսրություն մեծ հարված հասցրեց տեղական արտադրությանը և էնաֆությանը։ 1891 թ. «Մշակը» գրում էր. «Էնաֆական նախկին կարգերից այժմ միայն թշվառ փշրանքներ են մնացել։ Նահապետական պարզությունը վերանում է, բարքերը խանգարվում են, ամեն ինչ տակն ու վրա է եղել»[38]։ Մյուս կողմից՝ ապրանքային արտադրության զարգացումը Արևմտյան Հայաստանի քաղաքներում մանրարտադրողների ու արհեստավորների մեջ առաջ էր բերում սոցիալական շերտավորում։ Այդ շերտավորման մասին կարելի է մոտավոր պատկերացում կազմել հետևյալ տեղեկություններից.

---

36 Տե՛ս О. Г. Инджикян, Буржуазия Османской империи, Ереван, 1974, стр. 214.

37 Տե՛ս «Մշակ», 1881, հոկտեմբերի 7 (№ 178)։ «Մասիս», 1881, օգոստոսի 27։ Մ. Մբր-մբրեան, Թուրքահայոց հին վաճառականութիւնն և վաճառականք (1740—1890), Կ. Պոլիս, 1908, էջ 131։ Հ. Քոսեան, Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս, հատ. Բ, Վիեննա, 1899, էջ 149—150։ Աւշար Ալպոյաճեան, Արաբական միացեալ հանրապետութեան Եգիպտոսի նահանգը և հայերը (ի սկզբանէն մինչև մեր օրերը), Գահիրէ, 1960, էջ 191—194։

38 «Մշակ», 1891, հունիսի 20 (№ 68)։

1873 թ. «Արծւի Վասպուրականը» գրում էր. Վանում բնակիչներից «հարիւրէն 5-ը խիստ լաւ կապրին, 45-ը՝ միջակ, իսկ 50-ը՝ վատ»[39]։ Հետագայում չքավորների թիվն այդ քաղաքում գնալով մեծանում է։ 1900-ական թվականների սկզբներին ուսումնասիրողներից մեկը Վանի բնակիչներին բաժանել է չորս խմբի՝ առաջին խմբի մեջ մտնում էին նրանք, ովքեր ունեին տարեկան 60—100 լիրայի եկամուտ, երկրորդում՝ նրանք, ովքեր «ինչ որ շահում են, նույնութեամբ գործածում են», երրորդում՝ նրանք, ովքեր «իրենց վաստակով շատ անգամ չկարողանալով ապրել, պարտք են անում» և չորրորդում նրանք, ովքեր ապրում են վարձու աշխատանքով ու մուրացկանութեամբ։ Առաջին խումբը կազմում էր քաղաքի բնակչության 2%-ը, երկրորդը՝ 20, երրորդը՝ 70, իսկ չորրորդը՝ 8%-ը[40]։ Եթե առաջին խումբը համարենք հարուստների, երկրորդը՝ միջակների, իսկ երրորդն ու չորրորդը՝ չքավորների, ապա կտեսնենք, որ Վանի կիսապրոլետարական ու պրոլետարական բնակչության տոկոսը XX դ. սկզբին արդեն հասնում էր 78-ի։ Հայ քաղաքային բնակչության սոցիալական շերտավորման պատկերը մոտավորապես այդպիսին էր նաև երկրի մյուս քաղաքներում։ 1875 թ. մի հաղորդման մեջ նշվում էր, որ Թոքատում «հարուստք սակավաթիւ են, կան արհեստավորներ, որ միջակ դիրքով կ'ապրին... դարձեալ աղքատը մեծ մաս կը կազմէ»[41]։

Տնտեսապես քայքայվող արևմտահայերն ու մանր արտադրողները ստիպված էին դիմել վարձու աշխատանքի և համալրել պրոլետարիատի շարքերը։

Սակայն արևմտահայ պրոլետարիատը ստվարանում էր ոչ այնքան քաղաքի ստորին շերտերի, որքան ընչազուրկ գյուղացիության հաշվին։ Թուրքական կառավարության հայահալած քաղաքականությունը, աղաների դաժան հարստահարումը, անձի և գույքի անապահովությունը, հաճախակի կրկնվող անելորիությունն ու սովը նորանոր զանգվածներ էին արտամղում գյուղացիության շարքերից, որոնք բոնում էին քաղաքի ճամփան։ Նրանք վարձվում էին Արևմտյան Հայաստանի արդյունաբերական կենտրոններում։ Միայն Սեբաստիայի կուսակալության գործագործության մեջ աշխատում էր 4000—4500 բանվոր, Խարբերդի մետաքսագործական ֆաբրիկայում՝ 300, Արաբկիրի կտավագործական արհեստանոցներում՝ 1000, Վանի նույն տիպի ձեռնարկություններում՝ շուրջ 1500, Կարինի ծխախոտի ֆաբրիկայում՝ ավելի քան 50 բանվոր և այլն[42]։

Բայց Արևմտյան Հայաստանի մի քանի տասնյակ մանր ու միջին և սակավաթիվ խոշոր ձեռնարկությունները, ինչպես նաև մինչկապիտալիստական եղանակներով իրենց տնտեսությունը վարող աղաները կամ նորաթուխ գյուղական կուլակները չէին կարող աշխատանքով ապահովել արտադրության միջոցներից զրկվածների ստվարաթիվ բազմությանը։

Այդ պատճառով էլ աղքատացած զանգվածները հարկադրված էին թողնել հայրենիքը և աշխատանք որոնել Թուրքիայի արևմտյան քաղաքներում, հատկապես Կ. Պոլսում։ Միայն 1878 թ. արտագնացության դիմեցին Վանի գավառից 38000, Մուշի գավառից՝ 17000, Սղերդի գավառից՝ 5000, Քղղիի գավա-

39 «Արծւի Վասպուրական», 1873, մարտի 17։

40 Տե՛ս «Մուրճ», 1904, № 9, էջ 33—34։

41 Ա. Ալպոյաճեան, Պատմութիւն Եվդոկիոյ հայոց, Գահիրե, 1952, էջ 1303։

42 Տե՛ս «Բյուրակն», 1907, էջ 1844։ Ա. Ս. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), էջ 190, 193, 195։

ից՝ 3000, Բիթլիսի գավառից՝ 2800, Քեմախի գավառակից՝ 2000, Դերջանի գավառակից՝ 1000 մարդ[43]։

80-ական թվականներին Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր գյուղերն արտագնացներ ունեին։ 1887 թ. «Արձագանք»-ը գրում էր. «Այժմ պանդխտությեան վարակումը ծաւալած է ամեն գիւղ, ամեն խրճիթ։ Իւրաքանչիւր ընտանիք իւր թուէն նայելով 1—2 և մինչև 4 ու 5 պանդուխտներ ունի այսօր։ Օրինակի համար Մուշի Խաագիւղը, որ ունի 250 տուն, ունի 300—400 պանդուխտ, Նորշենն՝ 200 տուն և ունի 300 պանդուխտ, Բերդակ՝ 120 տուն, ունի 200 պանդուխտ... այսպես և միւս գիւղերը, աւաններն ու քաղաքները»[44]։

Տղամարդկանց հետ միասին արտագնացության են դիմում նաև կանայք։ 1880-ական թվականներին Բաֆֆին գրում էր. «Առաջ գնում էին միայն տղամարդիկ, իսկ այժմ կանայք նույնպես սկսել են օտար երկրներում բախտ որոնել։ Վանեցի կինը, որ իր տան ծածկի տակից չէր դուրս գալիս, որ նրա երեսը մի ուրիշ մարդ չտեսներ, այժմ պանդխտության մեջ վատնում է իր ավանդական համեստությունը»[45]։

Արտագնացները վարձվում էին Թուրքիայի գործարաններում ու արդյունաբերական այլ ձեռնարկություններում։ Կ. Պոլսի պողպատաձուլական գործարանում դարավերջին աշխատում էր ավելի քան 3000 բանվոր, Սիրիայի մահուդի ձեռնարկություններում՝ 6000, Կեսարիայի կտավագործական արհեստանոցներում՝ 3000, Այնթափի նույն տիպի ձեռնարկություններում՝ 6000, կայսրության բոլոր գործագործական գործարաններում ու արհեստանոցներում՝ 4000 տարբեր ազգության, այդ թվում նաև հայ բանվոր[46]։

Արևմտահայ արտագնացները համալրում էին նաև Թուրքիայի գյուղական պրոլետարիատի շարքերը։ Նրանք գնում էին Կիլիկիա, վարձվում Ադանայի բամբակի պլանտացիաներում, աշխատում որոշ ժամանակ և աշնանը նո՛ւ վերադառնում։ Հաջորդ գարնանն ու ամռանը նրանք իրենց հետ տանում էին նորերին և տարեցտարի ավելանում էր արտագնացների թիվը։ 80-ական թվականներին Ադանայի կուսակալությունում և նրա հարակից շրջաններում տարեկան աշխատում էին հազարավոր սեզոնային բատրակներ, որոնց զգալի մասը հայեր էին[47]։ Բացի Կիլիկիայից, արևմտահայ արտագնացները գնում էին նաև Միջագետք, Կենտրոնական Անատոլիայի հարթավայրային շրջանները, սևծովյան ափերը և աշխատում գյուղատնտեսության տարբեր ճյուղերում։

Արևմտահայ բանվորները ենթարկվում էին դաժան շահագործման։ Ձեռնարկատերերը նրանց աշխատեցնում էին այնքան, որքան ցանկանում էին, քանի որ աշխատանքի որոշակի տևողություն չէր սահմանված։ Շատ տեղերում բանվորները զուրկ էին անգամ հանգստյան օրերից։ «Վտակը» գրում էր, որ Դիարբեքիրում «բանվորները կաշխատին այնքան, որքան իրենց գործատէր աղան կամ վարպետ-արհեստաւորը կը հրամայէ։ Շատ բանվորներ գործի առաւտութեան ժամանակ ամբողջ 2 օրւայ ընթացքի մեջ հազիւ կը կարողանան

---

43 Տե՛ս Հայկական ՍՍՀ Գրականության և արվեստի թանգարան, Ք. Ագաթյանի արխիվ, գ. 40, թ. 6, գ. 47, թ. 23, գ. 49, թ. 6, գ. 57, թ. 87, գ. 59, թ. 7։

44 «Արձագանք», 1887, էջ 269։

45 Բաֆֆի, Երկեր, հ. 5, էջ 40։

46 Տե՛ս О. Г. Инджикян. Цит. раб., էջ 214, 216, 223։

47 Տե՛ս նույն տեղում, էջ 108։

Ց ժամւայ քուն-հանգիստ վայելել։ Կօշկակար ու դերձակ բանւորներու դրութիւնը տօներու նախորդ շաբաթներուն սոսկալի է, կաշխատին գիշեր ու ցորեկ անընդհատ, և այսպէս քանի մը օրեր շարունակաբար, առանց հանգստի, առանց դադարի»[48]։

Աշխատանքային օրվա տևողությունն ավելի երկար էր ցրված մանուֆակտուրաներում։ Գնորդ-առևտրականները տնայնագործներին ստիպում էին աշխատել գիշեր ու ցերեկ և օգտվելով այն բանից, որ նրանք բանում էին իրենց տներում, շահագործում էին նաև նրանց ընտանիքի անդամներին, քանի որ տնայնագործը երբ պառկում էր հանգստանալու, նրա գործը շարունակում էին կինն ու երեխաները[49]։

Թուրքական կառավարությունը չէր սահմանել բանվորական աշխատավարձի որոշակի չափեր։ Ձեռնարկատերերն էլ օգտվելով դրանից և աշխատուժի առատությունից, դաժան շահագործման դիմաց գործավորներին չնչին գումար էին վճարում։

XIX դարի 80—90-ական թվականներին Թուրքիայում ամենաբարձր աշխատավարձ ստանում էին հանքահորերում ու ձուլարաններում աշխատողները՝ օրական 18—20 դուրուշ։ Տնտեսության մնացած ճյուղերում նրանք վարձատրվում էին անհամեմատ ցածր։ Կարինում ատաղձագործն ստանում էր օրական 8 դուրուշ, խարբերդում հյուսնը՝ 8 դուրուշ, Թոքատում պղնձագործը՝ 5—6 դուրուշ, Վանում մասնագետ-բանվորների մոտ 70%-ը՝ 2—3 դուրուշ և այլն[50]։ Այսպիսով, տղամարդ բանվորները օրական ստանում էին միջին հաշվով 6 դուրուշ։

Կանայք ավելի ցածր էին վարձատրվում։ Նրանց օրական միջին վարձը կազմում էր մոտ 3,5 դուրուշ։ Ինչ վերաբերում է դեռահասներին, ապա տղաները ստանում էին օրական 2—3, իսկ աղջիկները՝ 1—1,5 դուրուշ։

Բանվորները չկարողանալով ապահովել ընտանիքին անհրաժեշտ աննդի գումարը, մի կերպ քարշ էին տալիս իրենց գոյությունը։ Կ. Պոլսում նրանք «պանիր, հաց և կամ մածնաթան (ուտիքի օրեր), սոխ, հաց (պահք օրեր) և կամ ջուրի մեջ հաց թաթախելով կուտեն։ Երբեմն ալ մի քիչ լորիա կլցնեն ջուրին մեջ ու խաշելով կուտեն։ Մսախառն կերակուր... ամսին մեջ հազիվ մի կամ երկու անգամ կպատահեր, որ ուտեն, այն ալ... հոտած տեսակեն»[51]։

---

48 «Վտակ», 1908, մարտի 1 (№ 47)։

49 Հատկանշական է, որ ապրանքակապիտալիստական արտադրության պայմաններում աշխատօրը երկար ու տևական էր նաև տնտեսապես քայքայված կամ քայքայվող արհեստավորների համար։ Զգալով պահպանել իրենց գոյությունը, նրանք նույնպես աշխատում էին օր ու գիշեր։ 1897 թ. «Բիւզանդիոնը» գրում էր. Վանում «քէչ խանութպաններ, և քէչ արհեստաւորներ ընդհանրապէս արևի ծագելէն ժամ մը, ժամ ու կէս յետոյ կսկսին գործը, իսկ իրեկոյան ևս ժամի 10 1/2-ին կը դադարին գործելէ» («Բիւզանդիոն», 1897, մարտի 15, № 112)։ Սակայն արհեստավորները չէին կարողանում խուսափել քայքայումից։ Գնալով նրանց ծախսերը գերազանցում էին եկամուտներին։ «Մուրճը» գրում էր, թե Վանի արհեստավորը տարեկան 20 լիրայի մուտք ունի, բայց «20—25 և նույնիսկ 30 լիրայի ելք է ունենում» («Մուրճ», 1904, № 9, էջ 27)։

50 Տե՛ս «Сборник географических, топографических и статистических материалов по Азии», вып. LXVI, Записки о Малой Азии, Генерального штаба полковника Путята, СПб.,1896, стр. 106; *Лынч*, Армения, путевые очерки и этюды, т. II, стр. 278. «Մուրճ», 1904, № 9, էջ 27։ «Մշակ», 1890, № 81։

51 «Մշակ», 1877, օգոստոսի 25 (№ 61)։ Հատկանշական է, որ տնտեսական քայքայման հետևանքով վերին աստիճանի ցածր էր նաև կիսապրոլետարացված արհեստավորների կենսա-

Անտանելի էին բանվորների բնակարանային պայմանները։ Նրանց մի մասն ապրում էր կիսախարխուլ տնակներում ու հյուղակներում, մի մասը վարձում էր այդպիսի բնակարաններ, մի մասն էլ՝ գերազանցապես գավառներից Կ. Պոլիս եկածները, քարշ էին գալիս եկեղեցիների գավիթներում, քարվանսարաներում, գետնախորշերում։ Նրանց կացությունն ուսումնասիրող բժիշկներից մեկը գրում էր, որ արտագնացներից շատերը ապրում էին մայրաքաղաքի Գասըմ փաշա կոչված թաղի այնպիսի տնակներում, որտեղ «փըլփըլկած պատերէն ամեն օր հող և քար վար կը թափին, մութ և խոնաւ տեղեր՝ ույց հետ բաղդատելով գազանի որջերն աւելի վայելչութիւն ունին»։ Մայրաքաղաքի Ըրղատ բազարի «սրճարաններու տակէն գետնափոր տեղերէ դեղնած երեսներով մարդեր դուրս կելնեն պատռտած և կեղտոտ շորեր հագած։ Ահա այդ մարդեր հայաստանցիներ են. 18—20—25 տարեկան երիտասարդներ... սոցա մէջ կգտուին 10—12 տարեկան պատանեակներ ալ, որպէս նաև կատարեալ հասակաւորներ և ծերեր... խեղճերն այդ գետնափոր տեղեր խմբովին կը պառկին խիտ առ խիտ, հայր, որդի, եղբայր, դրացի, 10—15 անձ միասին, որպեսզի վարձն աւելի աժանագին լինի...»[52]։

Ծանր էին նաև բանվորների աշխատանքային պայմանները։ Գործարաններում ու հանքահորերում չէին պահպանված նրանց կյանքի ապահովման տարրական կանոնները։ Դրա հետևանքով գործավորները հաճախ վնասվածքներ էին ստանում, հիվանդանում ու դառնում հաշմանդամ։

Հատկանշական է, որ արևմտահայ ընչազուրկ զանգվածները շատ հաճախ չէին կարողանում աշխատանք գտնել անգամ այդպիսի ծանր պայմաններով։ Գործազրկությունն ու կյանքի անտանելի պայմանները ստիպում էին նրանց թողնել Թուրքիան, անցնել արտասահման և համալրել միջազգային պրոլետարիատի շարքերը։

* * *

Ագրարային արտադրությունը Արևմտյան Հայաստանի գյուղերում նույնպես ստեղծում էր սոցիալական շերտավորում։ Տնտեսապես քայքայված գյուղացիների մի զգալի մասը հարկադրված վարձվում էր աղաների ու հարուստ գյուղացիների մոտ և կատարում նրանց տնային ու հատկապես դաշտային բազմաթիվ աշխատանքները։ Այդ գյուղացիները վարձվում էին սովորաբար օրերով ու սեզոններով, բայց հաճախ նաև տարիներով։ Աղաներն ու հարուստները վարձում էին այնքան բատրակներ, որքան կարողանում էին և ամենափորձվածին ու ձեռներեցին նշանակում ավագ մշակ, հանձնարարելով նրան բոլոր մշակների աշխատանքների կազմակերպումն ու հսկողությունը։ Ջափահասների հետ մեկտեղ տերերը վարձում էին նաև երեխաներին ու աշխատեցնում իբրև հովվներ, ջրկիրներ կամ տնային սպասավորներ։ Նրանք երեխաներին նույնպես վարձում էին տարբեր ժամկետներով, հաճախ վաղ զար-

---

մակարդակը։ Վանի «Հայ բնակչութեան մէջ հազիւ քսան բնտանիք կար, որոնք ունէր կը համարուէին և բնականաբար լաւ կապրէին. քարեկեցիկ վիճակ ունէին մաս մը խանութպաններ, արհեստանոցներու վարպետ տէրեր..., իսկ աղքատները, աշխատաւոր ձեռք չունեցողները, ոտքի վրա գործ ընողները, որոնք մեծ թիւ մը կը կազմէին, պարզապէս ցամաք հացով կապրէին, բըլիկ մը ժաժիկ. գլուխ մը սոխ կամ աղած բանջար. եթէ այդ ալ ամեն օր ունենային» (Մալխաս, Ճամբուս վրա, հատ. Ա, Նիւ-Յորք, 1950, էջ 105—106)։

52 «Մշակ», 1877, «գոստոսի 25 (№ 61)։

նանից մինչև ուշ աշուն[53], երկրի մի շարք շրջաններում այդ ժամանակահատվածը կոչվում էր հորթնոցուղ։

Վարձու աշխատանքի կիրառումն ինչպես ամենուր, այնպես էլ Արևմտյան Հայաստանում կապիտալիստական հարաբերությունների զարգացած ձևերի դրսևորումն էր։ Սակայն Արևմտյան Հայաստանում այդ ձևը տակավին թույլ էր, իսկ առավել տարածվածը կապիտալիստական հարաբերությունների նախնական կամ սաղմնային ձևն էր։

Արևմտահայ գյուղական պրոլետարիատը հնիարկվում էր դաժան շահագործման ու ճնշման։ Աղաներն ու հարուստ գյուղացիները բատրակներին չնչին վճարով աշխատեցնում էին վաղ լուսաբացից մինչև ուշ երեկո։ Բուլանըխում ձմեռվա երեք ամսվա համար մշակին տալիս էին հագուստ ու դրամ կամ բոլորը գումարով արտահայտած՝ 4,47—5,41 ռուբլի։ Ամռան ամիսների համար վճարում էին 44—54 փութ ցորեն, մի զույգ գուլպա, շապիկ, գլխի փաթթոց և այլն[54]։ Դիարբեքիրի կուսակալության Հազոյի դաշտում մեկ տարվա աշխատանքի համար մշակին տալիս էին 35—40 փութ ցորեն[55]։ Ավելի ցածր էին վարձատրում երեխաներին։ Մուշի դաշտում նրանց տալիս էին 3 շնիկ գարի, 3 շնիկ ցորեն, 3 շնիկ գլգիլ (մեկ շնիկը հավասար է 2 կոտի կամ փթի), շապիկ ու վարտիք և ուտելիք։ Այդ բոլորը «ելնէ դրամի վերածենք, միջին հաշվով՝ ինն ամսուայ վարձքը կըլլա իննսուն առ առավելն հարիւրքսան դուրուշ, կամ ամիսը՝ տաս-տասներկու դուրուշ»[56]։ Ուրեմն, չափահաս մշակը օրական ստանում էր 2—3, անչափահասը՝ 0,4 դուրուշ կամ առաջինը՝ 12—18, իսկ երկրորդը՝ 1,5 կոպեկ։ Սակայն աղաներն ու գյուղական հարուստները հաճախ չէին վճարում կամ զանազան պատրվակներով կրճատում էին անգամ այդ չնչին վարձը և բատրակներին դատեցնելով, դատարկ վոնդում էին։

Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում աշխատավորների դժոխային կացությունը պայմանավորված էր ոչ միայն տիրապետող բռնապետական կարգերով, այլև նրանով, որ պրոլետարիատը իբրև դասակարգ նոր էր ձևավորվում և դեռևս չէր դարձել այնպիսի ուժ, որ կարողանար կազմակերպված պայքարով բարելավել իր դրությունը։ Բանվորները ոչ այնքան կենտրոնացված էին խոշոր արդյունաբերական գործարաններում ու ֆաբրիկաներում, որքան ցրված էին միջին ու հատկապես մանր արհեստանոցներում։ Նրանց մոտ դեռ թույլ էր ինտերնացիոնալ համախմբվածությունը և դասակարգային ինքնագիտակցությունը։ Չկար նրանց ղեկավարող և ուղղություն տվող պրոլետարական կուսակցություն, որը կազմակերպեր բոլոր ճնշվածների պայքարը, կոփեր նրանց պրոլետարական ինտերնացիոնալիզմի և գրոհը տաներ բռնակալության դեմ։

4. ՀԱՅ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԱԶԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հայ բուրժուական ազգը որպես պատմական հասարակական կատեգորիա ձևավորվեց կապիտալիստական հարաբերությունների ծագման ու զարգացման ընթացքում։ «Ազգերը,— գրել է Վ. Ի. Լենինը,— հասարակական զարգացման

---

53 Տե՛ս Բենսե, *Բուլանըխ կամ Հարքի գավառ*, Թիֆլիս, 1901, էջ 66։

54 Նույն տեղում։

55 Տե՛ս «Ազատամարտ», 1910, օգոստոսի 7 (№ 343)։

56 Գեղամ Տեր-Պարապետյան, *Տարոնի աշխարհ, պատկերներ պատմվածքներ*, Փարիզ, 1931, էջ 41։

բուրժուական դարաշրջանի անխուսափելի արդյունքը և անխուսափելի ձևն էնա[57]։

Ազգի հիմնական հատկանիշներն են՝ ընդհանուր էթնիկական ծագումը, համազգային լեզուն, տարածքը, տնտեսական միասնական կապերը, հոգեկան կերտվածքը կամ ազգային բնավորությունը, որն արտահայտվում է ազգային մշակույթի, կենցաղի, սովանդույթի և բարքերի առանձնահատկությունների մեջ և ազգային պատկանելության ինքնագիտակցությունը։ Ազգի այս հատկանիշները սաղմնավորվում և այս կամ այն չափով զարգանում ու ձևավորվում են դեռևս մինչկապիտալիստական դասակարգային հասարակարգերում։ Սակայն միայն բուրժուական հարաբերությունների ոլորտում են վերջնականապես հասունանում, ձևավորվում ու կատարելագործվում այս հիմնական հատկանիշները, որոնց օրգանական միասնությամբ էլ բնորոշվում է ազգը հասկացությունը։

Հայ բուրժուական ազգը, կապիտալիզմի ծնունդ լինելով հանդերձ, ունեցել է իր կազմավորման առանձնահատկություններ։ Այդ առանձնահատկությունները պայմանավորվում էին նրանով, որ հայ ժողովուրդը մինչ ազգ դառնալը բեկուզ և արդեն մի կայուն սոցիալ-էթնիկական, ընդհանուր ծագում ունեցող հանրություն էր, բայց իրերի բերումով ստիպված էր ապրել մասնատված, իրարից պետականորեն և զգալի չափով տնտեսապես անջատված առանձին հատվածներով՝ առավելապես Արևմտյան Հայաստանում՝ Թուրքիայի և մինչ Ռուսաստանին միանալը Արևելյան Հայաստանում՝ Պարսկաստանի բռնատիրական պետությունների լծի տակ և գաղթավայրերում։

Մասնատված, բայց իր էթնիկական ընդհանրությունն ու հատկանիշները պահպանող հայ ժողովրդի կուռ զանգվածներով ապրող առանձին հատվածները ոչ միաժամանակ և տարբեր չափերով են ընդգրկվել կապիտալիստական հարաբերությունների ոլորտը՝ այս կամ այն հատվածի համար ստեղծված կապիտալիզմի զարգացմանը շատ քի թիչ նպաստող օբյեկտիվ պայմաններին համապատասխան։ Այդպիսի պայմաններ ավելի շատ ստեղծվել էին Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում՝ նրա Ռուսաստանի կազմի մեջ մտնելուց հետո։

Կապիտալիզմի զարգացումը հայ իրականության մեջ և դրա հետ կապված հայ բուրժուական ազգի ձևավորումը, ուժեղ ընթացք ստացավ XIX դարի երկրորդ կեսից, առավելապես դարի վերջին քառորդում։ Այդ ժամանակաշրջանում կատարվեցին խոշոր, անհնախընթաց տնտեսական, սոցիալական և մշակութային առաջադիմական տեղաշարժեր։ Ուժեղացան Հայաստանի տարբեր շրջանների, քաղաքների ու գյուղերի տնտեսական մասնագիտացումն ու կապերը, աշխուժացան արհեստն ու առևտուրը, հանդես եկան կապիտալիստական արդյունաբերական ձեռնարկություններ, աճեց քաղաքային բնակչության քանակը, սկսեցին անհետանալ, համահարթվել փակ բնատնտեսության, հինավուրց նահապետական ինքնամփոփվածության առանձնահատկությունները և այդ տնտեսությունն աստիճանաբար ընդգրկվեց շուկայական հարաբերությունների ոլորտը, ստանալով ապրանքային բնույթ։

Կապիտալիստական, ապրանքադրամական հարաբերությունների զարգացման պայմաններում հայ իրականության մեջ ստեղծվում է համազգային

---

57 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 78։

ներքին շուկան, որը կապվում է համառուսական և միջազգային շուկայի հետ։ Այդ նույն պայմաններում խորանում են ազգային ինքնագիտակցության գաղափարները, որոնք հատկապես դրսևորվում են դեռևս դարակեսին մեծ թափով ծավալված սահմանադրական, լուսավորական և ազգային-ազատագրական շարժման ու դրանով պայմանավորված հասարակական-քաղաքական հոսանքների բախման մեջ։ Ազգային ինքնագիտակցության վերելքի մասին էին վկայում նաև Թուրքիայի բռնակալական լծից արևմտահայերին ազատագրելու համազգային հզոր ձգտումներն ու ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության մշակումը, հայ իրականության մեջ տեղի ունեցող դրապայքարը՝ նոր (աշխարհաբար) և հին (գրաբար) լեզվի կողմնակիցների միջև։ Աշխարհաբարի կողմնակիցներն արտահայտում էին նոր զարգացող հարաբերությունները, գարշրջանի առաջադիմական պահանջները, որոնք կապված էին կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետ։ Գրաբարը պաշտպանում էին իրենց դարն ապրած, հետամնաց երևույթների կողմնակից՝ կղերաֆեոդալական համոզմունքների տեր մարդիկ։ Այս պայքարում հաղթող դուրս եկան զարգացման նոր պահանջներին արձագանքող աշխարհաբար լեզուն, գրականությունն ու մշակույթը՝ ազգի հոգևոր կերտվածքը բնորոշող ու արտահայտող այդ կարևոր միջոցներն ու հատկանիշները։ Լուսավորական շարժումը հաղթանակ տարավ կղերա-ֆեոդալական մտայնության դեմ։ Զևավորվեց ու արագ թափով զարգացավ աշխարհաբար, նոր աշխարհիկ գրականությունը, բարեփոխվեց հայկական դպրոցը, հիմնադրվեց ազգային թատրոնը, զարգացման նոր ընթացք ստացան գրատպությունը և արվեստը, գիտությունն ու ամբողջ մշակութային կյանքը։

Այս բոլորը երևույթներ էին, որոնք ցցուն կերպով արտացոլում էին հայ բուրժուական ազգի ձևավորման, նրա կազմավորման ընթացքը։

Կապիտալիստական Ռուսաստանի կազմում Արևելյան Հայաստանը, ինչպես նաև ամբողջ Կովկասը և նրա հայաբնակ վայրերը, անխուսափելիորեն, մտան բուրժուական հարաբերությունների դյորդու։ Ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավում էր համաշխարհային տարանքային շրջանառության մեջ[58]։

«Ռուսական կապիտալիզմը, որ տիրապետող արդյունագործական եղանակ էր դարձել Ռուսաստանում վերջին տասնամյակների ընթացքում,— գրել է Ս. Գ. Շահումյանը 1906 թ.,— մուտք գործեց և՛ մեր երկիրը, և՛ դրեց իր ուժեղ, և՛ ուրույն դրոշմը հայկական իրականության վրա։

Մենք ունենք արդեն խոշոր արդյունագործություն։ Մենք ունենք արդյունագործական կենտրոններ, որոնք ավելի նման են ժամանակակից եվրոպական կենտրոններին, քան իրենք իրենց, ինչպես նրանք գոյություն ունեին տասնից մի 10—15 տարի առաջ։ Մենք ունենք արդեն այդ քաղաքներում բուրժուազիա և պրոլետարիատ՝ իսկական եվրոպական իմաստով։ Եվ կապիտալիզմի ազդեցությունը չի սահմանափակվում, իհարկե, միմիայն քաղաքներով։ Ո՞վ չգիտե, որ հայկական գյուղն էլ ենթարկված է արդեն դրամական տնտեսության և կապիտալիստական արդյունագործական հարաբերությունների ազդեցության»[59]։

---

58 Տե՛ս Վ. Ի. Լենին, Նշվ., հ. 3, էջ 754—755։

59 Սա. Շահումյան, Նշվ., հ. 1, Երևան, 1975, էջ 152—153։

Հայաստանի արդյունաբերությունը XIX դարի վերջին թևակոխեց իր զարգացման մեքենայական ստադիան, իսկ գյուղատնտեսությունը, դուրս գալով նատուրալ տնտեսից, ավելի ու ավելի ընդունեց ապրանքային բնույթ։

Կապիտալիզմի զարգացումը Հայաստանում առաջացնում էր նաև համապատասխան սոցիալական տեղաշարժեր, փոխում բնակչության շերտավորման բնույթը։ 1897 թ. տվյալներով Արևելյան Հայաստանի բնակչության 17,1 տոկոսը կազմում էին խոշոր բուրժուազիան, կուլակները և այլ շահագործողները, 45,3 տոկոսը՝ պրոլետարներն ու կիսապրոլետարները և 37,6 տոկոսը՝ միջին խավերը[60]։ Հայ բուրժուազիան բաղկացած էր գերազանցապես առևտրա-վաշխառուական շերտերից։

Հայ բուրժուազիան գերակշռող ու առաջնակարգ տեղ էր գրավում Անդրկովկասում՝ երիտասարդ վրաց և նոր ձևավորվող ադրբեջանական բուրժուազիայի համեմատ։ Այն կենտրոնացած էր գլխավորապես երկրամասի արդյունաբերական ու առևտրական երկու խոշոր կենտրոններում՝ Բաքվում և Թիֆլիսում։

Անդրկովկասում հայ կապիտալը XIX դ. զգալի և ինքնուրույն դեր էր խաղում կապիտալիզմի տարածման մեջ, և ակտիվ մասնակցում էր տեղի արդյունաբերական կապիտալիզմի զարգացմանը[61]։

Հայ կապիտալը XIX դարում աստիճանաբար ներդրվում է նաև կապիտալիստական ուղիով զարգացող Արևելյան Հայաստանում, որտեղ հայ արդյունաբերական բուրժուազիայի որոշ ներկայացուցիչներ իրենց ձեռքն էին վերցրել տեղի արդյունաբերական ճյուղերը, հատկապես պղնձահանքերը, դարձել այդ հանքերի, ապա նաև պղնձաձուլական, գինու-կոնյակի, կաշեգործության գործարանների և այլ արդյունաբերական հիմնարկների տերերը։ Արևելյան Հայաստանի արդյունաբերության կենտրոններ էին Երևանը, Ալեքսանդրապոլը (Լենինական), Այրավերդին և Ղափանը։ XIX դարի վերջին միայն Ղափանում գործում էր 7 պղնձարդյունաբերական ձեռնարկություն։

Չնայած հայ խոշոր, գերազանցապես առևտրական, բուրժուազիայի առանձին ներկայացուցիչներ հանդես էին եկել տակավին XVII դարից, որոնք ապրում ու գործում էին Հայաստանից դուրս՝ այնտեղ, որտեղ կար ավելի բարենպաստ պայմաններ նրանց գործունեության համար, և չնայած «արդեն XVIII դարի երկրորդ կեսին իր զարգացման առաջին քայլերը կատարող հայ բուրժուազիան սկսեց «ազգային գաղափարների», «ազգային զգացմունքների», «ազգահավաքմանն» պրոպագանդան»[62], այնուամենայնիվ հայ բուրժուական ազգի և նրա արդյունաբերական բուրժուազիայի ձևավորումը որպես դասակարգի, կատարվեց միայն XIX դարի երկրորդ կեսին։

Այդ նույն ժամանակաշրջանում ձևավորվեց նաև հայ պրոլետարիատը։ Նրա առաջացման հիմնական աղբյուրը գյուղացիության քայքայումն էր՝ կապիտալիստական հարաբերությունների դյուղ ներխուժելու հետևանքով։

---

60 Տե՛ս *М. А. Адонц*, Экономическое развитие Восточной Армении в XIX веке, стр. 520.

61 *П. И. Лященко*, История народного хозяйства СССР ,т. II, М., 1956, стр. 550, 562.

62 Մ. Գ. Ներսիսյան, *Հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, 1850—1870 ԹԹ., Երևան, 1955, էջ 93։*

Այդ պրոցեսը խորապես ու զգալիորեն ընդգրկել էր հայ գյուղը՝ հատկապես XIX դարի երկրորդ կեսից[63]։

Հայ պրոլետարիատը, որպես ազգի առաջավոր ջոկատ, ձևավորվեց առավելապես Անդրկովկասի արդյունաբերական վայրերում՝ տեղի ռուս, վրացի, աղրբեջանցի և այլ ազգերի պրոլետարների հետ միասին, կազմելով մի ընդհանուր ինտերնացիոնալ դասակարգային կուռ բանակ, որը «կարևորագույն վերանորոգող գործոն էր Անդրկովկասի ժողովուրդների սոցիալական կյանքում։ Կարևորն այն էր, որ Անդրկովկասի պրոլետարիատը հենց սկզբից իր շարքերում ուներ առաջադեմ որակյալ ռուս բանվորներ և ձևավորվել է որպես ռուսական բանվոր դասակարգի անկապտելի մաս։ Միաժամանակ Անդրկովկասի պրոլետարիատի ձևավորումն ընթացել է բուրժուական ազգերի կոնսոլիդացիայի պայմաններում»[64]։ Այդ պրոլետարիատը հիմնականում կենտրոնացած էր Բաքվում և Թիֆլիսում, իսկ նրա զգալի մասը հայեր էին։ Հայ պրոլետարիատը համառուսական պրոլետարիատի մի զգալի ջոկատ էր, որը վճռական դեր կատարեց հայ ազգի զարգացման ու բախտորոշման, նրան ամեն տիպի ճնշումից վերջնականապես ազատագրելու գործում։

Ինչ մնում է հայ բուրժուական ազգի մեծամասնությունը կազմող գյուղացիությանը, ապա նա կապիտալիզմի զարգացման պայմաններում բայքայման ու շերտավորման խոր պրոցես էր ապրում, որի հետևանքով ավելի ու ավելի էին կղզիանում ու աճում նրա երկու հակադիր սոցիալական բևեռները՝ մի կողմից, բազմաթանակ աղքատ, ընչազուրկ, պրոլետարիզացիայի ենթարկվող գյուղացիական զանգվածները և գյուղական պրոլետարները՝ բատրակները, իսկ մյուս կողմից՝ մի բուռ սակավաթիվ գյուղական բուրժուազիան՝ կուլակները։ Այդ երկու հակադիր բևեռների միջև ընկած էր միջին անկայուն գյուղացիությունը, որը ևս քայքայվում ու հարում էր այս կամ այն բևեռին։

Այսպիսով, հայ բուրժուական ազգը բաղկացած էր փաստորեն երկու ազգից՝ ազգի ճնշող մեծամասնություն կազմող աշխատավորներից և մի բուռ շահագործողներից, որոնց տնտեսական, քաղաքական և հասարակական դրության արմատական տարբերությունը և տրամագծորեն հակադիր շահերը նրանց մեջ դասակարգային անհաշտ հակասությունների ու պայքարի անխուսափելի մթնոլորտ էին ստեղծում։ Հայ բուրժուական ազգին ևս լրիվ վերաբերում է Վ. Ի. Լենինի այն դրույթը, որ «Կա երկու ազգ ժամանակակից (բուրժուական—խմբ.) յուրաքանչյուր ազգի մեջ...»[65]։ «Սեփականատերերն ու վարձու բանվորները, աննշան թվով հարուստները («վերին տաս հազարը») և տասնյակ միլիոնավոր չունևորներն ու աշխատավորները, այդ, իսկապես, «երկու ազգ են»[66]—իրենց հակադիր դասակարգային շահերով ու նպատակներով, սպրելակերպով ու մտածողությամբ, գաղափարներով ու մշակույթով։ Հասկանալի է, որ այդպիսի ազգը չի կարող լինել ներքուստ միասնական ու համերաշխ, առանց հակադիր սոցիալական շահերի բախման ու դրանից բխող՝ անհաշտ դասակարգային պայքարի։

63 *Տե՛ս* *А. С. Амбарян*, Развитие капиталистических отношений в армянской деревне (1860—1920).

64 *Ц. П. Агаян*, К вопросу о формировании рабочего класса в Закавказье, *ФРЗ, 1974, № 3 (66), էջ 66։*

65 Վ. Ի. Լենին, *նշվ. հ. 24, էջ 162։*

66 Վ. Ի. Լենին, *նշվ. հ. 11, էջ 349։*

Հետռեֆորմյան շրջանում արագ զարգացող ռուսական կապիտալիզմի ազդեցության տակ կապիտալիստական հարաբերությունները աստիճանաբար ընդգրկում էին հայ հասարակության ոչ միայն վերին խավերը, այլև աշխատավորական լայն զանգվածները, որի հիմնական մասը գյուղացիությունն էր։ Հենց այդ զանգվածն էլ նոր՝ կապիտալիստական հարաբերությունների զարգացման պայմաններում հայ բուրժուական ազգի ձևավորման հիմքն ու գլխավոր առանցքն էր կազմում, նա էր փաստորեն ներկայացնում ազգը, նպաստում նրա ձևավորմանը, որոշում նրա դեմքը և ոչ թե հայ բուրժուազիան, ինչքան էլ առկա լինի նրա դերը ազգի ձևավորման մեջ, առանձնապես այդ պրոցեսի սկզբնական շրջանում։ Դեռ ավելին, որքան ընդլայնվում ու խորանում է ազգի ձևավորումը, ուժեղանում նրա ինքնագիտակցությունը և դրանով առնչված՝ հայ ազատագրական շարժումը, նույնքան ավելի ու ավելի էր հեռանում ազգից հայ բուրժուազիան, երես թեքում նրանից և, կլանված հարստություն կուտակելու տենչով, կոսմոպոլիտիզմի ու ազգային դիմահեղման ուղին էր բռնում[67]։ Եվ միանգամայն իրավացի էր Մ. Նալբանդյանը, երբ «Հասարակ ժողովրդի» մեջ տեսնելով ազգի հենարանն ու վերակենդանության լծակը, գրում էր. «ազգ ասելով չենք իմանում այն մի քանի մարդիկը, որ արժաթի սանդուղքով վեր էին բարձրացել ազգի մակերևույթից, այլ այն խեղճ և կարեկցության արժանի ժողովուրդը, որի վերա ծանրացել է ազգային ապարախտության հետևանքը»[68]։

Կապիտալիզմի հորձանուտն ընդգրկված հայ «հասարակ ժողովուրդը»՝ հիմնական որոշիչ ուժն ու ստեղծողն էր այն բոլոր հատկանիշների, որոնց ներդաշնակ համընդհանրությամբ էլ բնորոշվում է ազգը։ Ժողովրդի լեզուն էր, որ ամուր հիմք և նյութ ծառայեց ստեղծելու ազգի ընդհանուր գրական լեզուն, նրա երկու փոխադարձաբար սերտ կապված ճյուղերով՝ արևմտահայերենով և արևելահայերենով (աշխարհաբարով)։ Հայ աշխարհաբար գրական լեզուն՝ հայ բուրժուական ազգի այդ կարևոր հատկանիշը, հիմք ունենալով ժողովրդի բազմադարյան լեզուն, վերջնականապես կատարելագործված կերպով ձևավորվեց որպես ազգի լեզու միայն բուրժուական հարաբերությունների զարգացման պայմաններում։ Աշխարհաբար լեզուն հիմք ծառայեց ստեղծելու հայ ազգի նոր՝ աշխարհաբար գրականությունը, որը հանդիսանալով ազգի մշակույթն ու նրա հոգեկան կերտվածքն արտահայտող տարրը, ինքը ևս խոշոր դեր կատարեց ազգի ձևավորման գործում։

Ինչպես լեզվի, այնպես էլ ազգի մյուս հատկանիշների զարգացման ու կատարելագործման մեջ որոշակի էր հայ աշխատավոր ժողովրդի դերը։ Այդ նրա հերոսական պայքարի ու մաքառումների շնորհիվ էր, որ հնարավորության չափով պահպանվեց ազգի էթնիկական և տերիտորիալ հանրությունը՝ բազմազան նվաճողների ու վայրագ ցեղերի ասպատակություններից։ Աշխատավոր ժողովրդի քրտնաջան ուժերով էր, որ ձևավորվում ու ամրապնդվում էին ազգի տնտեսական կապերը՝ ինչպես միշտ, առավել՝ բուրժուական հարաբերությունների զարգացման մթնոլորտում։ Իսկ դա համապատասխանաբար

67 Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք երկրորդ, Երևան, 1956, էջ 207—208։

68 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, 1945, էջ 452։

անդրադառնում էր նրա հոգևոր կյանքի վրա, կոփում ու կատարելագործում հայ ազգի հոգևոր կերտվածքը, այն արտահայտող մշակույթը, ազգի բնավորությունն ու ինքնագիտակցությունը։

Ռուսաստանի կազմում Արևելյան Հայաստանը դարձավ հայ բուրժուական ազգի ձևավորման հիմնական կենտրոններից մեկը և նրա միասնական պահպանման ու կոնսոլիդացիայի օջախը։ Ժամանակի ընթացքում այստեղ է հավաքվում, ապրում ու գործում արևելահայության հիմնական մասը։

Հայ ազգի առանձին հատվածներ ապրում էին նույնպես Ռուսաստանի կազմի մեջ գտնվող Վրաստանում, Ադրբեջանում և Կովկասի այլ վայրերում։ Այս հատվածները տնտեսական, սոցիալական, բազաքական և մշակութային սերտ կապերի մեջ էին Արևելյան Հայաստանի հայ բնակչության հետ և միասին կազմում էին փաստորեն մեկ էթնիկական ընդհանրություն, մեկ ազգ։

Հայ բուրժուական ազգի ձևավորման պրոցեսը տեղի էր ունենում նաև արևմտահայերի մեջ, թեև Թուրքիայում տիրապետող կարգերը խիստ անբարենպաստ էին հայ ազգի սոցիալ-տնտեսական և կուլտուրական զարգացման համար։ Այնուամենայնիվ կապիտալիստական հարաբերությունները XIX դարի երկրորդ կեսից դանդաղ, բայց անշեղորեն զարգանում էին նաև Թուրքիայում և նրա կազմի մեջ մտնող Արևմտյան Հայաստանում։ Այստեղ կային հայկական կարևոր տնտեսական և մշակութային կենտրոններ, որոնք բարենպաստ դեր էին կատարում կապիտալիզմի զարգացման գործում և նպաստում արևմտահայերի բուրժուական ազգի ձևավորմանը։

Կապիտալիզմի զարգացմանը Թուրքիայում դգալիորեն նպաստում էր այլազգի, այդ թվում նաև հայ բուրժուազիան[69]։ Մեծ էր նրա դերը հատկապես առևտրի ասպարեզում։ «Ովկիանյան խոշոր նավահանգիստներում հիմնավորված հայերը, հույները, սլավոնները և արևմտաևրոպացիները,— գրում է Ֆ. Էնգելսը,— իրենց ձեռքում էին պահում ամբողջ առևտուրը»[70]։

Սակայն Թուրքիայի բարբարոսական հայահալած քաղաքականությունը ժամանակի ընթացքում՝ սիստեմատիկ կոտորածներից հետո, հայ ազգի արևմտյան հատվածն ի վերջո հասցրեց 1915 թ. զարհուրելի բնաջնջմանը։

Այսպիսով, եթե Թուրքիայի և Պարսկաստանի լծի տակ հայերի թիվը գնալով նվազում էր, վտանգելով ազգի գոյությունը, ապա Ռուսաստանի կազմում, ընդհակառակը, հայերի թիվը տարեցտարի աճում էր, կենտրոնանալով հիմնականում Արևելյան Հայաստանում, որտեղ, հակառակ ցարիզմի քաղաքականությանը, կային բարենպաստ պայմաններ հայ ազգի տնտեսական, սոցիալ-քաղաքական և մշակութային զարգացման համար։

Հայ բուրժուական ազգի արևելյան և արևմտյան հատվածները, գտնվելով տարբեր պետությունների կազմում, տնտեսապես խիստ թույլ էին առնչվում իրար, բայց լեզվով, մշակույթով, հոգեկան կերտվածքով, քաղաքական կյանքով ու միավորման բնական ձգտումով սերտորեն կապված էին միմյանց հետ։ Հետևապես, հայ բուրժուական ազգը պետք է դիտվի որպես մեկ էթնիկական ընդհանրություն, ներառնելով իր մեջ արևելահայ և արևմտահայ հատվածները։ Դա էլ հայ բուրժուական ազգի ձևավորման առանձնահատկությունն է։

---

69 Տե՛ս О. Г. Инджикян, նշված աշխ., էջ 19—20։

70 К. Маркс и Ф. Энгельс, Соч. т. IX, стр. 25.

Ուրեմն, հայ բուրժուական ազգի ձևավորման օրրանը բուն Հայաստանն էր, իր երկու՝ Արևելյան և Արևմտյան հատվածներով, որտեղ կենտրոնացված էր հայ ժողովուրդի մեծամասնությունը։

Հայ բուրժուական ազգի ձևավորմանը նպաստեցին նաև հայկական գաղթօջախները, այնտեղ կատարվող բուրժուական բնույթ կրող տեղաշարժերը։ Այդպիսի տեղաշարժեր առաջին հերթին կատարվում էին այն գաղթավայրերում, որոնք հիմնվել ու գործում էին կապիտալիզմի դարաշրջանը թևակոխած պետություններում կամ նրանց ու ընդհանուր կապիտալիստական համակարգի ազդոլորտի տակ գտնվող նույն ճանապարհով ընթացող այլ երկրներում։

Հայ գաղթօջախներում զգալի առաջադիմություն է նկատվում հատկապես հայ մշակույթի ասպարեզում։ Այդ են վկայում բազմաթիվ հայկական դպրոցները, տպարանները ու մշակույթի այլ օջախները, թերթերի, հանդեսների, գրքերի կամ էլ հայոց պատմության, գրականության, մատենագիտության և մշակույթի այլ արժեքների հրատարակությունները։ Դրանք ստեղծվել են հայ առաջադեմ գործիչների, այդ թվում նաև բուրժուազիայի ներկայացուցիչների ջանքերով ու միջոցներով և գրական դեր են կատարել ժողովրդի պահպանման, նրա ազգային զարթոնքի, ինքնաճանաչման ու ինքնագիտակցության գործում։ Իհարկե, ինչպես միշտ, բուրժուազիան ելնում էր իր սեփական շահերից, բողարկելով դրանք համազգային շահերի շղարշով։ Այնուամենայնիվ հայ բուրժուազիայի գուտ դասակարգային գործունեությունը ժամանակի կոնկրետ պայմաններում օբյեկտիվորեն նպաստում են ազգի ձևավորմանը, նրա ինքնագիտակցության զարթոնքին, համախմբմանը, ազատագրական շարժմանը, հայրենիքը օտար լծից ազատելու գործին։

Այսպիսով, հակադիր դասակարգերից կազմված հայ բուրժուական ազգը ձևավորվելով կապիտալիզմի դարաշրջանում, բուրժուական ազգերի կազմավորման ընդհանուր պրոցեսում, միաժամանակ ունեցել է իր առանձնահատկությունները։ Հայ ժողովրդի համար օբյեկտիվորեն ստեղծված կոնկրետ-պատմական պայմանների հետևանքով նրա ազգի վերածվելը ընթացել է տարբեր սոցիալ-տնտեսական ու քաղաքական միջավայրում՝ Ռուսաստանի և Թուրքիայի կազմում՝ մանրատված հատվածներով, բայց հիմնականում սևփական տարածքի վրա, հայրենիքում, սեփական պետականությունից զրկված ու այսօրեից բխող այլ անբարենպաստ պայմաններում, որոնք, բնական է, իրենց կնիքն են դրել ազգի ձևավորման վրա։

ԳԼՈՒԽ ԵՐԲՈՐԴ

1877—1878 ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

1. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ։ 1877—1878 ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԵՐԸ

1856 թ. Փարիզի հաշտության պայմանագիրը ոչ միայն ետ մղեց Ռուսաստանին սեւծովյան նեղուցների հարցն իր օգտին լուծելու բարվոք հնարավորությունից, այլև մեծ սպառնալիքի տակ դրեց նրա հարավը՝ Կովկասը, Ղրիմն ու Ուկրաինան։ Ուստի Ղրիմի պատերազմից հետո Ռուսաստանի արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը Եվրոպայում դարձավ Փարիզի հաշտության ծանր հետևանքների վերացումը։ Չկարողանալով վճռել այդ խնդիրը ռազմական ուժով, ցարիզմը ձգտում էր լուծել այն դիվանագիտական ճանապարհով։ 70-ական թվականների կեսերին նա օգտագործեց բալկանյան ժողովուրդների ապստամբությունը Թուրքիայի դեմ և սլավոններին պաշտպանելու պատրվակով փորձեց հաստատապես վերականգնել իր խաթարված դիրքերը Սև ծովի ափերին և իրագործել նվաճողական պլանները Մերձավոր Արևելքում։

1875 թ. ամռանն ապստամբեց Հերցեգովինան, ապա Բոսնիան, իսկ 1876 թ. գարնանը՝ Բուլղարիան։ Բուլղարիայի ազատագրմանը հետամուտ Բուլղարական կենտրոնական հեղափոխական կոմիտեն, որը մինչև ռուս-թուրքական պատերազմի սկսվելը քողարկման նպատակով կրում էր «Կենտրոնական բարեգործական ընկերություն» անվանը, կոչ էր անում. «Թե՛ հրանոթ ու հրացան չկա, ժողովուրդը քո մահակներով ելնի պայքարի»[1]։

1876 թ. հունիսի 30-ին կիսանկախ Սերբիան, լրիվ անկախություն ստանալու հույսով, պատերազմ հայտարարեց Թուրքիային։ Նրան միացավ Չերնոգորիան։ Սերբական բանակի շարքերում կռվում էին ավելի քան չորս հազար ռուս կամավորներ, իսկ զորքերի ընդհանուր հրամանատար էր նշանավոր ռուսական պաշտոնաթող գեներալ Մ. Գ. Չերնյաևը։

Եվրոպայի անճարակությունը չէր, հարկավ, որ խանգարում էր նրան լուծել Արևելյան հարցը։ Մեծ տերությունները միտումնավոր բարդություններ էին ստեղծում պահպանելու համար Թուրքիայի այսպես կոչված «ստատուս քվոն»։ Ֆ. Էնգելսի արտահայտությամբ այդ «ճնշամաշ դիվանագիտական լաբը... Թուրքիայի անբաժանելիության այդ հին, ֆիլիստերական տխմարությունը, այն «ստատուս քվոն», որն Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների համար նշանակում էր հավերժացնել Թուրքիայի կողմից նրանց

[1] Տե՛ս «История Болгарии», т. I, М., 1954, стр. 280.

նկատմամբ եղած դարավոր ճնշումը[2], օգնել Թուրքիային, որպեսզի նա չկործանվի և նրա կողմից ստրկացված հայ, սլավոն ու հույն ժողովուրդները չդրկվեն իրենց «քաղաքակրթիչ հոգաբարձուից»[3]։

Օսմանյան կայսրության ժառանգությունը վիճարկող երկրները վազուց էին առաջ քաշել Թուրքերին Եվրոպայից վտարելու հարցը և ահա 1875 թ. սկսված ճգնաժամով այն նորից մտնում էր օրակարգ։ Բայց եվրոպական տերությունները մտադիր չէին Թուրքերին Ասիա քշել հօգուտ Ռուսաստանի, որի համար, մանավանդ Կ. Պոլիսը, կենսական նշանակություն ուներ։

1876 թ. Թուրքական սահմանադրությունն ազդարարող հրանոթների համազարկի տակ ձախողվեց Կ. Պոլսում նույն թվականի դեկտեմբերին հրավիրված դեսպանախորհուրդը, որը Բ. Դռնից պահանջում էր ստորագրել Օսմանյան կայսրության եվրոպական մասի քրիստոնյա ազգաբնակչության վիճակը բարելավելու միջոցառումների ծրագիրը։

Կ. Պոլսի կոնֆերանսում Թուրքիան ներկայացնող և նիստում նախագահող Սավֆեթ փաշան շտապեց հայտարարել, թե քանի որ ընդունված սահմանադրությամբ Թուրքիան դադարում է բռնապետական երկիր լինելուց ու բարեկարգություններ են ձեռնարկվելու տերության բոլոր հպատակների համար, միայն քրիստոնյաների վիճակի բարելավում նախատեսող միջոցառումները, ինքնըստինքյան, կորցնում են իրենց իմաստը։

Այդ ճարպիկ խաղով տապալվեց Արևելյան ճգնաժամը վերացնելու նպատակով հրավիրված դեսպանաժողովը, որը և հանգեցրեց ռուս-թուրքական պատերազմի բացարձակ նախապատրաստմանն ու սանձազերծմանը։ Սուլթան Աբդուլ Համիդ II-ը մերժեց կոնֆերանսի մասնակիցների առաջարկությունը, թեպետ համոզված էր, որ մերժումը բերելու էր անխուսափելի պատերազմ Ռուսաստանի հետ։ Այդ քայլին նա չէր դիմի, եթե հույս չունենար Անգլիայի աջակցության վրա, քանի որ Անգլիան նպատակամղված էր օգնել Թուրքիային՝ ձախողելու դեսպանախորհուրդը, ձգտելով փոխարենը նրանից կորզել Կ. Պոլիսն իր շրջակայքով, Անգլիայի պաշտպանության տակ, «չեղոք» նավահանգստի վերածելու համաձայնությունը[4]։

Հատկանշական է նաև Գերմանիայի դիրքը, որը կանցկեր Օ. Բիսմարկի ջանքերով փորձում էր Ռուսաստանին հրել պատերազմի՝ Թուրքիայի, իսկ եթե հնարավոր է, նույնիսկ Անգլիայի դեմ։ Բիսմարկը չվարանեց անգամ 1877 թ. մարտին Բեռլինում գտնվող Իգնատևին համոզել, թե պատերազմը Ռուսաստանի համար կենսական անհրաժեշտություն է[5]։ Մանավանդ Ֆրանսիայից զավթած Էլզաս-Լոթարինգիայի պահպանման ռուսական երաշխիքի մերժումը նրան մղում էր Ռուսաստանի և Անգլիայի ուշադրությունը եվրոպական հարցերից շեղելու, Ֆրանսիային չեզոքացնելու։ Ուստի Գերմանիան նույնիսկ շահագրգռված չէր Կ. Պոլսի կոնֆերանսի դրական արդյունքով։

Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան Բուրգոենն իր կառավարությունից ստացել էր ուղղակի ցուցում, որ բարենորոգումների հարցն իրենց համար ոչ մի նշանակություն չունի, իրենք շահախնդիր են միայն ռուս-թուրքական պա-

---

2 Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 9, стр. 31.

3 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1940, էջ 89։

4 Տե՛ս «История дипломатии», т. 2, М., 1968, стр. 98.

5 Տե՛ս «Русская старина», 1914, № 3, стр. 502.

տերազմի կանխումով, որովհետև այդ պատերազմի դեպքում Ֆրանսիան այս կամ այն կերպ ստիպված կլինի մասնակցել դրան կամ միայնակ կմնա հենց այդ նպատակով ռուս-թուրքական պատերազմ հրահրող բիսմարկյան Գերմանիայի առջև։

Կոնֆերանսի ձախողումից հետո, 1877 թ. հունվարի 8—20-ին, մեծ տերությունները ժամանակավորապես ետ կանչեցին Կ. Պոլսի իրենց դեսպաններին։ Ճգնաժամի ծայրահեղ սրումն անխուսափելի էր և այն պայթից որպես ռուս-թուրքական պատերազմ։

Մեծ տերությունների ներկայացուցիչների Լոնդոնի խորհրդակցության մարտի 19/31-ի որոշումը, որով թուրքական կառավարությանը հիշեցվում էր քրիստոնյա ազգաբնակչության համար բարենորոգումներ կատարելու անհրաժեշտության մասին, ապրիլի 9-ին, Անգլիայի օգնության հույսով, գուցե և նրա գաղտնի թելադրանքով, մերժվեց Բ. Դռան կողմից, որպես Թուրքիայի ներքին գործերին միջամտելու փորձ։

Ռուսաստանն այդ պատերազմին նախապատրաստվել էր հանգամանորեն։ Սակայն, ինչպես իրավացի նշում էր Ռուսաստանի ռազմական մինիստր Դ. Ա. Միլյուտինը, որքան էլ նախապատրաստված, այնուամենայնիվ Ռուսաստանը պատրաստ չէր պատերազմի[6]։

Պատերազմին տենդով պատրաստվում էր նաև Թուրքիան։ Սակայն ռուսական բանակի մարտունակությունը, չնայած իր խոշոր թերություններին, շատ ավելի բարձր էր, քան թուրքական բանակինը։

1877 թ. ապրիլին, Թուրքիայից կիսանկախ վիճակում գտնվող և անկախության ձգտող Ռումինիայի հետ կնքած դաշնագրով ապահովելով նրա մասնակցությունը պատերազմին, Քիշինյով ժամանած Ալեքսանդր II-ը ապրիլի 12/24-ին, նույն օրը, երբ սկսվել էր 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմը, ստորագրեց պատերազմական մանիֆեստը։ «Սլավոն եղբայրներին» օգնելու դրոշով սկսած, բայց երկուստեք զավթողական այդ պատերազմում, ռուսական ցարիզմը հետապնդում էր Ղրիմի պատերազմի հետևանքով Բալկաններում կորցրած ազդեցության և ընդհանրապես իր միջազգային հեղինակության բարձրացմանը։ Նա, անշուշտ, հույս ուներ դրանով հասնել նաև երկրի ներսում նարոդնիկների հեղափոխական ընդվզումներով ծայր առած քաղաքական լարվածության թուլացմանը։

Պատերազմն իր հետևանքներով դրական նշանակություն ունեցավ։ Այն հասցրեց թուրքական բարբարոսական լծից բուլղար ժողովրդի ազատագրմանը, հեշտացրեց ու արագացրեց ամբողջապես փտած ասիական ֆեոդալիզմի և ամենաբարբարոսական ինքնակալության կործանումը Եվրոպայում[7], թուրքական լծից ազատագրեց հայ ժողովրդի խոշոր մի հատված։

Պատերազմն սկսվեց Բալկանյան և Կովկասյան ռազմաճակատներում միաժամանակ։ Ռուսական բանակների հիմնական ուժերը կենտրոնացված էին Բալկանյան ռազմաճակատում։ Սակայն միջազգային իրադրության լարվածության պայմաններում, կայուն երաշխիք չունենալով գերմանական ու ավստրո-հունգարական սահմաններում, Ռուսաստանը սահմանային այդ շրջաններից Բալկանյան ռազմաճակատ տեղափոխեց այնտեղ տեղակայված

---

6 Տե՛ս «Дневник Д. А. Милютина», т. 2, М., 1948, стр. 65.

7 Տե՛ս «История Болгарии», т. 1, стр. 59.

զորքերի մի մասը միայն։ Այդուհանդերձ, ռուսները կարողացան Բալկաններում կենտրոնացված թուրքական 160 հազարանոց բանակի դեմ հանել 185 հազարանոց բանակ։ Բալկանյան ռազմաճակատի հրամանատար նշանակվեց մեծ իշխան Նիկոլայ Նիկոլաևիչ Ռոմանովը։

Համակողմանի նախապատրաստությունից հետո ռուսական զորքերին հաջողվեց մեծ դժվարությամբ ճեղքել թշնամու դիմադրությունը և 1877 թ. հունիսի 27-ին թուրքերի համար անըմբռնելի գրոհով անցնել լայնահուն Դանուբը և ներխուժել Բուլղարիա։ Համառ մարտերից հետո գրավվեց Սվիշտավն, որտեղից ռուսական բանակն առաջ շարժվեց երեք հիմնական ուղղություններով՝ Ռուսչուկի ուղղությամբ՝ դեպի արևելք, Հարավ՝ դեպի Տըրնովո և արևմուտք՝ Նիկոպոլ, Պլևնա։



Գեներալ Ա. Տեր-Ղուկասյան (Տեր-Ղուկասով)

Բուլղարները ցնծությամբ էին դիմավորում ռուս զինվորներին, որոնց հետ էին նրանք կապում թուրքական դարավոր լծից ազատագրվելու իրենց վաղեմի երազանքը։ Ռուսական զորքերի Բուլղարիա մտնելու հետ նոր թափ առացավ բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը։ Ինչպես նախօրոք ձևավորված, այնպես էլ պատերազմի ընթացքում բանտեղվող աշխարհաղորը՝ նշանակալի դեր խաղաց ռուսական բանակների առաջ խաղացումն ապահովելու գործում։ Ռուսական բանակի հետ կողք-կողքի կռվում էին մոտ հինգ հազար բուլղար կամավորներ՝ ռուսական գեներալ Ն. Գ. Մտոլետովի գլխավորությամբ։ Առանձին գործող աշխարհազորային խմբերի հրամանատարներ էին դարձել արդեն նախկինում ճանաչված հայդուկապետեր Պ. Հիտովը, Ֆ. Բոտյուն, Ի. Մարկովը և ուրիշ շատերը։ Բալկանյան ռազմաճակատում աչքի ընկան ռուսական բանակի զորավարներ Մ. Ի. Դրագոմիրովը, Ի. Վ. Գուրկոն, Տ. Տ. Ռադեցկին և ուրիշներ։ Ռուսական բանակին ակտիվորեն օժանդակում էին նաև Բալկաններում բնակվող հայերը։

Երկարատև ու արյունահեղ մարտերում կոտրելով թուրքերի դիմադրությունը, Շիպկայի ու Պլևնայի մոտ տեղի ունեցած կատաղի մարտերից հետո, 1878 թ. հունվարի 4-ին ռուսական զորքերը մտան Սոֆիա։ Այսպ ընկան Պլովդիվը, Ադրիանապոլիսը և ռուսական առաջապահ զորամասերն ընդհուպ մոտեցան Կ. Պոլսին։

Կովկասյան ռազմաճակատը, որի հրամանատարն էր Ալեքսանդր II-ի մյուս եղբայրը՝ Միխայիլ Նիկոլաևիչը, նույնպես որոշակի դեր պետք է խաղար թուրքական բանակների ջախջախման և պատերազմը հաղթանակով ավարտելու գործում։

Կովկասյան բանակի առջև առաջին հերթին խնդիր էր դրված արևելյան

ռազմաճակատ քաշել հակառակորդի որքան հնարավոր է մեծաթիվ ուժեր, Բալկանյան կենտրոնական ռազմաճակատում Կ. Պոլսի վրա շարժվող ռուսական բանակների հաղթարշավը ապահովելու համար։ Նա ուներ կազմակերպված հարձակման ու թշնամու տարածքի հնարավորին չափ խորքերը թափանցելու որոշակի պլան։

Թուրքական սահմանին մոտեցող ռուսական բանակը բաժանվեց երկու առանձին միավորումների։ Սրանցից Քոբուլեթյան կոչված զորաբանակի առջև խնդիր դրվեց ապահովել կենտրոնից հարձակվող Կովկասյան գործող կորպուսի սևծովյան թևը և մտնել Բաթում։ Տեղական ուժերով համալրված և մարտական բարձր պատրաստականություն ունեցող կովկասյան մոտ վաթսուն հազարանոց կորպուսը, որի հրամանատարն էր գեներալ-ադյուտանտ Մ. Տ. Լորիս-Մելիքովը, իր հերթին բաժանվեց երեք մասի։ Նրանք պետք է կռվեին թուրքական 70-հազարանոց բանակի դեմ։



Գեներալ Հ. Ազարյան (Հ. Ազարև)

Գլխավոր հարվածը նախատեսվում էր կենտրոնից՝ Ալեքսանդրապոլ-Կարս ուղղությամբ, ուր կենտրոնացվեցին հիմնական ուժերը (մոտ 30 հազար զինվոր)։ Գեներալ Արշակ Տեր-Ղուկասովի հրամանատարությամբ գործող Երևանյան ջոկատը շարժվելու էր ձախ թևով՝ դեպի Ալաշկերտի հովիտը, իսկ գեներալ Դևելի Ախալցխայի ջոկատը՝ աջ՝ Ախալքալաք-Արդահան գծով[8]։

Թուրքերը մեծ հույսեր էին կապում Կարսի, Արդահանի և Կարինի ամրացված պաշտպանության հետ, ուր և կենտրոնացված էին նրանց հիմնական ուժերն ու ռազմական պաշարները։ Բայց ռուսական բանակի կողմից թուրքական սահմանն անցնելու հետ մեկտեղ ձախողվեց Սողանլուղի բարձունքներում ամրացած օսմանյան Արևելյան բանակի գլխավոր հրամանատար Ահմեդ Մուխթար փաշայի՝ կայծակնային արագությամբ ռուսներին չարդելու մասին մտադրությունը[9]։

Պատերազմ հայտարարելու չորրորդ օրը՝ ապրիլի 27-ին Երևանյան ջոկատը հայ աշխարհազորայինների հետ միասին Իգդիրից շարժվեց դեպի Բայազետ և երեք օր անց գրավեց քաղաքը. ապա անցավ Դիադին, Ալաշկերտ։ Կորպուսի գլխավոր ուժերից ու Երևանյան միավորումից առանձնացված երկու հարվածային ջոկատներ, հայ կամավորների հետ միասին, շարժվեցին

8 Տե՛ս «История русской армии и флота», т. 11, М., 1913, стр. 177; ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 59, ց. 1, գ. 56, թ. 495։

9 Տե՛ս Ա. Ս. Պողոսյան, Ռուս-հայ բարեկամության պատմությունից, Երևան, 1974, էջ 230—231։

գնալի կաղզվան և տեղացի հայերի օգնությամբ, առանց մեծ ջանքերի, մտան քաղաք։ Թուրքական կայազորը խուճապահար հեռացավ։ Ինչպես Բայազետի, այնպես էլ Կաղզվանի հայ բնակիչները աղ ու հացով դիմավորեցին ռուսական զորքերին։

Քիչ ուշ, ամռան սկզբներին, Երևանյան ջոկատը հաջող տեղաշարժեր կատարելով, հունիսի 16-ին հաղթական մի ճակատամարտ տվեց Դրամադողի լեռներում ու հետ շպրտեց ամուր դիրքեր բռնած ու թվական գերակշռություն ունեցող հակառակորդին։ Հունիսի 21-ին տեղի ունեցած Դահարի գժվարին ու արյունահեղ մարտում, ետ մղելով թուրքական բանակի կատաղի գրոհները, ռուսական զորամասերը նոր հաղթանակ տարան՝ մեծ կորուստներ պատճառելով թշնամուն։

Սակայն, երբ թուրքական զորքերի հրամանատար Մուխթար փաշան լրացուցիչ ուժեր կենտրոնացրեց ռազմաճակատի այդ հատվածում ու հարձակվեց Գեյմանի զորաբանակի վրա, և կենտրոնում գործող ռուսական զորքերն ստիպված ետ քաշվեցին, թուրքերի առաջխաղացման հետ կապված պաշարման սպառնալիքից խուսափելու համար Երևանյան ջոկատը նահանջի հրաման ստացավ։ Գեներալ Տեր-Ղուկասովն այդ նահանջը կազմակերպեց ռազմական փայլուն վարպետությամբ՝ իր հետ տանելով նաև մեծ թվով գաղթականներ։

Այդ օրերին ծանր վիճակ էր ապրում թուրքական զորքերի և բազմահազար բաշիբոզուկների կողմից պաշարված Բայազետը։ Քաղաքը գրավվել ու հրի էր մատնվել։ Միջնաբերդում կապիտան Ֆ. Շտոկովիչի գլխավորությամբ ամրացել ու 23 օր անվհատ ու հերոսաբար պաշտպանվում էին ռուսական փոքրիկ կայազորը և մի քանի հարյուր հայ կամավորներ։ Նահանջի ճանապարհին Ա. Տեր-Ղուկասովը կարողացավ փրկել՝ Սամսոն Տեր-Պողոսյանի[10] միջոցով իրենից օգնություն հայցող պաշարված կայազորին ու բնակչությանը։ Համառ մարտերից հետո թուրքական զորքերը չախչախվեցին ու ետ շպրտվեցին, քաղաքը նորից ազատագրվեց։

Այդ ընթում գեներալ Դևելի զորամասերը ջարդեցին թուրքական զորքերի դիմադրությունը, ապա իրենց օգնության եկած գեներալ Գեյմանի զորամասի հետ միասին մայիսի 17-ին գրոհով մտան Արդահան, որի գրավմամբ կանխվում էր Ախալքալաքի ու Ախալցխայի ուղղությամբ թուրքական բանակների հարձակման հնարավորությունը և ապահովվում Կարսի ու Բաթումի միջև եղած կապը։

Արդահանը գրաված զորքերի մի մասը նորից միացավ կենտրոնից շարժվող հիմնական ուժերին և Լոռի-Մելիքովի գլխավորությամբ, դարձյալ կենտրոնացվեց ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող պաշարված Կարսի շուրջը։ Բայց այս ուղղությամբ գործող թուրքական բանակը ժամանակավոր հաջողություններ հասավ և միայն ավելի ուշ, նոր համալրումներ ստանալուց հետո, 1877 թ. հոկտեմբերի 15-ին, Կարսի մոտ՝ Ալաջայի բարձունքներում, ռուսական բանակը ջախջախիչ հարված հասցրեց Մուխթար փաշայի զորագնդերին։ Խոշոր կորուստներ կրելով, թուրքական բանակն ստիպված էր անկանոն նահանջել։ Բայց ռուսական զորքերին չհաջողվեց հաղթարշավը շարունակել մինչև վերջ, և Կարսը գրոհով վերցնելու

10 Բաֆֆու «Աղբեր» վեպի հերոս Վարդանը։

Նախնական փորձերն ավարտվեցին ապարդյուն։ Ալաջայի հաղթական ճակատամարտից հետո ռուսական զորքերի մի մասը շարժվեց դեպի Կարին, մյուսը՝ վերատին պաշարեց Կարսը։ Հանգամանորեն նախապատրաստվելուց հետո, նոյեմբերի 18-ի գիշերը, գեներալ Հովհաննես Լազարևի ղեկավարած զրոհային ջոկատներին հաջողվեց առաջին գծում գտնվող հայ ուղեկցող-կամավորների օգնությամբ[11] մոտենալ, ապա լուսաբացին գրավել 30 հազարանոց կայազոր և 3 հարյուր հրանոթ ունեցող, օտարերկրյա ռազմական մասնագետների կողմից ամուր պաշտպանություն կազմակերպած անառիկ թվացող Կարսի բերդը։ Կարսի գրավումը կարևոր նշանակություն ուներ ինչպես Կովկասյան ռազմաճակատում ռուսական զորքերի առաջխաղացման, այնպես էլ պատերազմի ապագա ճակատագրի համար ընդհանրապես։

Ռուսական զորքերն ու հայ կամավորներն ընդհուպ մոտեցան Կարինին։ Թեժ մարտեր տեղի ունեցան նաև Կովկասյան ռազմաճակատի սևծովյան շրջանում։ Թուրքական հրամանատարությունը հաջողվել էր դեռ պատերազմի սկզբներին զորքեր առաքել Աբխազիայում և մտնել Սուխում։ Սակայն տեղի ազգաբնակչության եռանդուն աջակցությամբ ռուսական ծովափնյա պաշտպանության ջոկատներին հաջողվեց կասեցնել նրանց առաջխաղացումը։ Իսկ քիչ անց գեներալներ Ալխազովի, Դիբիչի ու Շելկովնիկովի նորաստեղծ զորամիավորումները, կամավորական խմբերի օգնությամբ, անցան հակահարձակման և թուրքերին ետ շպրտեցին նրանց գրաված շրջաններից։ Օգոստոսի 20-ին ազատագրվեց Սուխումը[12]։

Բալկանյան ռազմաճակատում Ադրիանապոլիսը գրաված ռուսական զորքերը կանգնել էին օսմանյան մայրաքաղաքի մատույցներում։ Պարտված Թուրքիան հաշտություն էր խնդրում։ 1878 թ. հունվարին կնքված զինադադարի համաձայն պատերազմական գործողությունները դադարեցին և թուրքական հրամանատարությունը փետրվարի 20-ին առանց կռվի Կարինը հանձնեց ռուսական զորքերին։

• • •

1877—78 թթ. պատերազմում հայ ժողովրդի համակրությունը Ռուսաստանի կողմն էր։ Եվ այն արտահայտվեց ոչ թե սոսկ ձևական համակրանքով, այլ ռուսական զենքի հաղթանակի հետ մեծ հույսեր կապած արևմտահայ և արևելահայ հատվածների ամենաակտիվ մասնակցությամբ այդ պատերազմին։

Թիֆլիսում, Բաքվում, Ելիսավետպոլում և Երևանի նահանգի մի շարք վայրերում, ինչպես նաև Ռուսաստանի հայաբնակ շատ շրջաններում հրապիրվում էին ժողովներ, կազմակերպվում ցույցեր, ժողովրդին կոչ անելով կամավորներ տալ գործող ռուսական բանակին՝ թուրքական լծի տակ հեծող արևմտահայերին ազատագրելու համար։

Դեռ պատերազմն սկսվելուց մի քանի ամիս առաջ Անդրկովկասի տարբեր վայրերում ձևավորված կամավորական ութ զորամիավորումները պատերազմի առաջին իսկ փուլում մտան ռազմական գործողությունների մեջ։

---

11 Տե՛ս C. O. Кишмишев, Война в Турецкой Армении 1877—1878 гг., СПб., 1884, стр. 84.

12 Տե՛ս Ш. В. Мегрелидзе, Вопросы Закавказья в истории русско-турецкой войны 1877—1878 гг., стр. 22—24.

Դրանցից երեքը՝ Ալեքսանդրապոլի, Ախալցխայի և Ջաքաթալայի ջոկատները, կազմված էին միայն հայ կամավորներից, վրացական ջոկատը՝ հայերից ու վրացիներից, իսկ Բորչալուինը, Ելիսավետպոլինը, Երևանինն ու Բաքվինը՝ հայերից ու ադրբեջանցիներից[13]։

Կամավորական խմբերի ստեղծումը շարունակվեց նաև պատերազմի ընթացքում։ Հարձակվող ռուսական բանակին տրամադրվեց ավելի քան 40 հազար զինվոր։ Կովկասյան ժողովուրդների կողմից այդ պատերազմի ժամանակ ռուսական զորքերին տարբեր կարգի օգնություն ցույց տված մարդկանց թիվը հասնում էր շուրջ 500 հազարի[14]։

Ստեղծված կամավորական ջոկատների զգալի մասը զինվում էր սեփական միջոցներով։ Ալեքսանդրապոլի, Սուրմալուի, Էջմիածնի, Նախիջևանի և մյուս գավառներում կամավորական շարժումն այնպիսի լայն ծավալ էր ստացել և ռուսական բանակին օգնելու, աշխարհազորային ջոկատներում ընդգրկվել ցանկացողների թիվն այնքան շատ էր, որ տեղական իշխանությունները շուտով ստիպված էին դադարեցնել կամավորների հավաքագրումը։

Արևմտյան Հայաստան մտած ռուսական բանակների կազմում հայ աշխարհազորայինները կովում էին որպես ավանգարդային ջոկատներ, ստանձնում առաջապահ ուղեկցողների դերը։ Արդահանի գրավման համար մղված մարտերում թաքաբաք կռված ու ընկած հայ հերոսներին էր ուղղված քաղաքի գրավման առիթով ռուսական հրամանատարության հրամանի այն տողերը, ուր ասվում էր. «Ներանք արժանի են իրենց հայրերին, որոնք մի անգամ չէ, որ կյանքը դրել են եղբայրակից քրիստոնյաներին պաշտպանելու համար»[15]։

Կաղզվանի գրավման ժամանակ ռուսական բանակին օգնություն ցույց տված հայ կամավորներից աչքի ընկան հատկապես Հարություն Մկրտչյանն ու Աստ Հակոբյանը, որոնք իրենց կյանքով վճարեցին այդ օգնության համար։ Շորագյալի հեծելազորային հարյուրյակն ու Երևանում ձևավորված երեք հարյուրակներն ամենառանդուն մասնակցություն ցուցաբերեցին Կարսի շրջանում մղված մարտերին ու Կարսի գրավմանը[16]։ Երևանի, Ելիսավետպոլի, Ջաքաթալայի զորամիավորումները մասնակցեցին Կաղզվանի տակ մղված մարտերին։

Ղարաբաղի հայերից կազմված հեծյալ հազարյակը, որի մեջ ընդգրկված էին նաև տեղացի ադրբեջանցիներ, Գրիգոր Մելիք-Շահնազարյանցի ու Համբարձում Հախումյանցի ղեկավարությամբ օգնության հասավ Բուրքերի կողմից պաշարված Բայազետին[17]։

Կովկասյան ռազմաճակատում պատերազմական գործողություններին մասնակցեցին յոթ հայ գեներալ և ավելի քան 500 սպա, որոնցից յոթնանասունը վիրավորվեցին կամ զոհվեցին տարբեր ռազմաճակատներում[18]։ Հա-

---

13 Տե՛ս Ա. Ն. Ներսիսյան, Հայերի մասնակցությունը 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին, Երևան, 1958, հավելված։

14 Տե՛ս Ш. В. Месреливдзе, նշված աշխ., էջ 69։

15 «Положение армян...», стр. 395.

16 Տե՛ս «Сборник материалов по русско-турецкой войне 1877—1878 гг. на кавказско-малоазиатском театре», вып. 3, ч. 2, СПб., 1903, стр. 417.

17 Տե՛ս «Հովիտ», 1914, № 46։

18 Տե՛ս Ա. Ն. Ներսիսյան, նշված աշխ., էջ 93։

գարավոր հայ կամավորներ զոհվեցին Կարսի, Էրզրումի, Բայազետի ու այլ քաղաքների պաշարման և գրոհների ժամանակ։ Պատերազմում ցուցաբերած արիության համար բազմաթիվ հայ հերոսներ արժանացան կառավարական շքանշանների, մեդալների ու այլ պարգևների։

Պատերազմին եռանդուն մասնակցություն էր ցույց տալիս նաև կամավորական ջոկատներում չընդգրկված ազգաբնակչությունը՝ որպես տեղական աշխարհազորայիններ զենք ստանալով ու միշտ պատրաստ՝ մարտնչելու թշնամու դեմ։ Երևանի նահանգապետը, Կովկասյան կորպուսի հրամանատարության կարգադրությամբ սահմանամերձ շրջանների հայերին էր բաժանել յոթ հազար հրացան[19]։ Իշխանությունների կողմից մեծ քանակությամբ զենք էր բաժանվել նաև Ալեքսանդրապոլի, Էջմիածնի, ինչպես և Հայաստանի ու Վրաստանի սահմանային մյուս գավառների բնակիչներին։ Գրավված շրջանների հայերը մեծ պատրաստակամությամբ դառնում էին ուղեկցողներ, թարգմանիչներ, ինչպես նաև համալրում շտապ կազմակերպվող տեղական աշխարհազորային ջոկատները։

Կազմակերպվում էր նաև ռուսական զորքերին պարենով օգնելու գործը։ Շատ դեպքերում ռուս վիրավոր զինվորներին տեղավորելով իրենց բնակարաններում, գրավված քաղաքների ու գյուղերի հայ բնակիչները մեծ զըրկանքների գնով խնամում, կերակրում էին նրանց։ Հայ գյուղացիները ռուսական զորաբանակներին ու հայկական կամավորական ջոկատներին տրամադրում էին բնակարան, վառելիք, մեծ քանակությամբ սննդամթերք, անասուններ, անասնակեր և այլն, իրենց սայլերով ու այլ փոխադրամիջոցներով, գործիքներով ու սեփական աշխատանքով օգնում էին սակրավորներին, անմիջական մասնակցություն ցուցաբերում ճանապարհների, կամուրջների և ամրությունների շինարարության ու նման այլ աշխատանքներում։

Հայկական կամավորական ջոկատները, ռուս զինվորների հետ ուս-ուսի կռվող հայ ռազմիկները, հայազգի զորավարներ Մ. Տ. Լոռիս-Մելիքովը, Հ. Դ. Լազարևը, Ա. Ա. Տեր-Ղուկասովը, Բ. Մ. Շելկովնիկովը, Յա. Կ. Ալխազովը, սպաներ Քիշմիշևը, Աթաբեկյանը, Կարապետյանը, Ստեփանյանը, Մանսուրյանը, Թարխանյանը, Միրզոյանը, Սուրենյանը, Երևանյան միավորման հեծյալ գնդի հրամանատար Ավետյանը, դեռևս Ղրիմի պատերազմում աչքի ընկած հարյուրապետ Գաբրիել Գեղամյանն ու շտաբս-կապիտան, հետախույզ Դանիել Հարությունյանը և շատ ուրիշներ անձնազոհ պայքարի փառավոր էջեր գրեցին պատերազմի տարեգրության մեջ։

Հարձակվող ռուսական զորքերին, հայերի հետ միասին, ըստ ամենայնի օգնում էին նաև Անդրկովկասի մյուս ժողովուրդները, որոնք նույնպես մասնակցում էին կամավորական շարժմանը, կազմակերպում պարենի հայթայթումը։ Դեռ պատերազմն սկսվելուց առաջ արդեն ձևավորվել էին Քութայիսի, Դաղստանի հեծյալ գնդերը, վրացական աշխարհազորայինների հետևակային ջոկատը և այլն։ Մեծ թվով աշխարհազորային խմբեր կազմակերպվեցին նաև տեղերում՝ պատերազմական ժամանակների կարգ ու կանոնի պահպանության նպատակով։

Հայերը ռուսական զորքերին դիմավորում էին որպես ազատարարների[20]։

---

19 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 102, գ. 40, թ. 56։

20 Տե՛ս *С. Кишмишев*, Война в Турецкой Армении 1877—1878 гг., стр. 12 և հտն.։

Հայ գյուղացին, գրում էր ռուսական լիբերալների պետերբուրգյան օրգան «Գոլոս» լրագիրը, ռուս զինվորի հետ բաժանում էր իր բերանի վերջին պատառը՝ ճիշտ բնորոշելով հայերի դիրքորոշումը, «Գոլոսը» գրում էր, որ ռուսական զորքերի հաջողություններով ոգևորված արևմտահայությունը ձգտում է թոթափել օսմանյան դարավոր լուծը։

Արևմտահայության ճնշող մեծամասնության, հատկապես գավառահայության հայացքը հառած էր Ռուսաստանին։ Նշանակալի է, որ պատերազմի օրերին զեյթունցիները գեներալ Լազարևին, իսկ կարնեցիք՝ Լոռիս-Մելիքովին էին հայտնել թուրքական կառավարության դեմ ապստամբելու իրենց պատրաստակամության մասին։ Պատերազմի ժամանակ և անմիջապես դրանից հետո բազմաթիվ հավաքական դիմումներ ուղարկվեցին ցարական կառավարությանը՝ խնդրելով իրենց ազատել թուրքական լծից։ Կ. Պոլսի ազգային ժողովի մի խումբ պատգամավորների կողմից էջմիածին ուղարկված ծրագրի մեջ խնդրվում էր կաթողիկոսին. «...Մեծ Հայքն կրկին տաճկաց չվերադարձնել, այլ յուր կայսերական իշխանության մեկ մասն համարել, միացնելով Արարատյան նահանգի հետ»։ Հնարավորության սահմաններում նրանք տենչում էին ինքնավարություն Ռուսաստանի հովանավորության տակ, իսկ ծայրահեղ դեպքում՝ խնդրում բարենորոգումները կատարել ռուսական զորքերի ներկայության պայմաններում[22]։

Հակառակ «Մեղու Հայաստանի» լրագրի պահպանողական և «Փորձի» չափավոր դիրքորոշմանը, «Մշակը» հանդես էր գալիս արմատական պահանջներով. բալկանյան ապստամբ ժողովուրդներին օրինակելու, Ռուսաստանի օգնությամբ անկախություն կամ ինքնավարություն ձեռք բերելու, կամ Արևմտյան Հայաստանը Արևելյանին միացնելու կոչերով։ Այդ օրերին Ի. Պատկանյանի և Բաֆֆու մարտաշունչ ստեղծագործությունները ազատության էին կոչում հայ ժողովրդին։

1877 թ. նոյեմբերին հրատարակվեց սուլթանի հրամանը (իրադեն), որով զենքի էին կոչում 17—45 տարեկան բոլոր քրիստոնյաներին։ Բայց Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովը ճնշող մեծամասնությամբ, մերժման քվե տվեց դրան։

Ինչպես 1876 թ. Ազգային ժողովի կողմից Բ. Դռանը ներկայացրած գավառական հարստահարությունների մասին տեղեկագրերի, այնպես էլ 1877 թ. զինվորագրությունը մերժելու առիթով, թուրքական մամուլն ու պետական շրջաններն սկսեցին հայերին մեղադրել «բարեխնամ» պետության նկատմամբ «ապստամբ», «ապա և «ապերախտ ու դավաճան» լինելու մեջ։ Իսկ Կ. Պոլսի անգլիական դեսպան Լեյարդը համոզում էր հայերին ընդունել զինվորագրությունը և կռվել Ռուսաստանի դեմ։

Հայ ժողովրդի համար զինվորագրությունը հույժ կարևոր էր։ Ինքնապաշտպանության կազմակերպման և ապագա անկախկալներին պատրաստ լինելու հարցը դրանով մասամբ լուծվում էր, ժողովրդի մարտունակության երաշխիքը որոշակիորեն ապահովվում։ Դրանից զեռ տարիներ առաջ արևմտահայ դիմորդատները հանձին Հ. Սվաճյանի, Ազգային ժողովում ուղղակի պահանջում էին հայերին զինվորագրության որոշման ընդունում։ Զին-

---

21 Տե՛ս «Голос», 24.XII.1877 г.

22 Տե՛ս ՀՍՍՀ ԿԳԳԱ, ֆ. 56, ց. 1, գ. 24, թ. 10, 13.

վորական տուրքը մեր տկարության տուրքն է, շարունակում էր նրան Գ. Օտյանը։ Իսկ Րաֆֆին գտնում էր, որ եթե Թուրքիայում ցանկանում են հայերի օգտին որևէ բարենորոգում, ապա առաջին հերթին այն պետք է արտահայտվի նրանց զենք կրելու իրավունք տալու և զինվորագրելու մեջ։ Բայց այս դեպքում, երբ Բ. Դուռը հայերի զինվորագրությունը փորձում էր կատարել ռուս-թուրքական պատերազմի թեժ օրերին, պատերազմ, որի հետ հայ ժողովուրդը մեծ հույսեր էր կապել, այն չէր կարող հաջողությամբ պսակվել և տապալվեց։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը վերջացավ սուլթանական Թուրքիայի պարտությամբ և ռուսական բանակների հաղթական երթն ավարտվեց՝ Կովկասյան ռազմաճակատում Կարինի գրավմամբ, իսկ Եվրոպայում՝ ռուսական զորքերին կանգնեցրեց Կ. Պոլսի դարպասների առջև։

1878 թ. հունվարի 19-ին կնքվեց Ադրիանապոլսի զինադադարը, իսկ մեկ ամիս անց ռուսական դիվանագետները, Շիպկայի, Պլևնայի ու Կարսի հերոսների սվինների ուժով, Սան-Ստեֆանոյում, հաղթողի իրավունքով, իրենց պայմանները թելադրեցին Թուրքիային։

2. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՈՅԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ ԵՎ ԲԵՌԼԻՆԻ ԿՈՆԳՐԵՍՈՒՄ

Սան-Ստեֆանոյի հաշտության պայմանագիրը և հայկական հարցը։ *Կ. Պոլսից 12 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Սան-Ստեֆանո ծովափնյա ավանի[23] այն ամառանոցում, որը պատկանում էր հայ մեծահարուստ Տատյան Առաքել բեյին և որտեղ իջևանել էր ռուսական բանակի գլխավոր հրամանատարը, 1878 թ. փետրվարի 19-ին (մարտի 3-ին) ստորագրվեց ռուս-թուրքական պատերազմի արդյունքներն ամփոփող Սան-Ստեֆանոյի պայմանագիրը։*

Սան-Ստեֆանոյի կոնֆերանսում ռուսական պատվիրակությունը գլխավորում էր Կ. Պոլսի ցարական դեսպան գեներալ Ն. Պ. Իգնատևը (մյուս պատվիրակը Նելիդովն էր), իսկ թուրքական պատվիրակության կազմում արտաքին գործերի մինիստր Սավֆեթ փաշայի և Բեռլինի թուրքական դեսպան Սաադուլլա բեյի հետ միասին, որպես պատվիրակության քարտուղար և խորհրդական մասնակցում էր հայազգի Սարգիս բեյ Համամճյանը։

Ադրիանապոլսի զինադադարից հետո, մեկ ամսվա ընթացքում, ռուսական դիվանագիտությունը հանձին Իգնատևի, եռանդով նախապատրաստում էր հաշտության բանակցությունները։

Կոնֆերանսին պատրաստվում էր և սուլթանական Թուրքիան, որին մեծապես օգնում և Ռուսաստանի դեմ էր տրամադրում Անգլիան։ 1877 թ. վերջերին անգլիական մամուլն արդեն ահազանգում էր, թե Հայաստանը գրավելով Ռուսաստանը փակում է Անգլիայի առևտրական ճանապարհները։ Ռուսաստանի առջև բացվում են բոլոր ուղիները դեպի հարավ, դեպի Նեղուցները[24]։

---

23 *Քեմալական կառավարության որոշմամբ 1924 թ. Սան-Ստեֆանոն վերանվանվեց Յեշիլ Քյոյ (Կանաչ գյուղ)։*

24 *Տե՛ս* Խորեն Գաբիկյան. *Հայկական հարցը. Պեյրութ, 1962, էջ 170։*

Դեռ պատերազմի սկզբներին Անգլիայի պրեմիեր-մինիստր լորդ Բիքոնսֆիլդը (Դիզրայելի) ահաբեկում էր Լոնդոնի ռուսական դեսպան Պ. Ա. Շուվալովին, որ ինքը հնդիկներով ու կանադացիներով համալրված անգլիական ռազմարշավային (էքսպեդիցիոն) բանակը կարող է հասցնել 300 հազար մարդու[25], իսկ պատերազմից անմիջապես հետո նա սպառնում էր ռուսական բանակների Կ. Պոլիս մտնելու դեպքում, անգլիական զորքերը առափնել Բուրգասի մայրաքաղաքում, եվ որպես նախաքայլ՝ 1878 թ. փետրվարի 15-ին բրիտանական նավատորմը խարխափ ձգեց Կ. Պոլսի դիմաց՝ Իշխանաց կղզիների առջև։

1878 թ. հունվարի 14-ին անգլիական կաբինետը Պետերբուրգի իր դեսպանի՝ Ավգուստ Լոֆտուսի միջոցով հայտնում է ռուսական վարչապետ, արտաքին գործերի մինիստր Ա. Մ. Գորչակովին, որ Ռուսաստանի և Բուրգասի միջև կնքվելիք համաձայնությունը, ինչ հակասի Փարիզի ու Լոնդոնի 1856 և 1871 թվականների համաձայնագրերին, անպայմանորեն կվերանայվի հիշյալ պայմանագրերն առորագրած երկրների կոնգրեսում։

Ռուսաստանի տարած հաղթանակների վավերացմանը խոչընդոտելուն էին ուղղված նաև եվրոպական մյուս տերությունների ջանքերը։ Եվ եթե դինադարի համաձայնագիրը կնքելուց առաջ ռուսները ցանկանում էին ձգձգել այն, Ավստրո-Հունգարիայի հետ համերաշխվելու հույսով, ապա համաձայնագիրը կնքելուց հետո Իգնատևին ուղղած հեռագրերում, Գորչակովը մատնանշում էր քաղաքական իրադրության՝ իրենց համար աննպաստ հեղաբեկումը։

Իգնատևն ու գլխավոր հրամանատարը չտապեցին արագացնել հաշտության պայմանագրի կնքումը։ Եվ այդ առաջին հերթին, միջազգային իրադրության անբարենպաստ ընթացքի պատճառով, որը սպառնում էր ամենաշահեկան անգլո-ռուսական պատերազմ, և որի հույսով էլ Բուրգասը ձգձգում էին բանակցությունները։ Սան-Ստեֆանոյի՝ 29 կետից կազմված հաշտության պայմանագիրը նշանավորվեց որպես բալկանյան քրիստոնյաների ազատագրման մանիֆեստ։ Աննախ էին հռչակվում Սերբիան, Չեռնոգորիան, Ռումինիան (վերջինիս հանձնվեց նաև Հյուսիսային Դոբրուջան՝ որպես փոխհատուցում Ռուսաստանին անցած Բեսարաբիայի համար)։

Բուլղարիան ստանում էր ինքնավար իշխանություն և միայն որոշ հարկ պետք է վճարեր Բուրգասին։ Նրա տարածքն ընդգրկելու էր Դանուբից ու Սև ծովից մինչև էգեյան ծովն ընկած հսկա մի տարածություն, որտեղ ռուսական զորքերը մնալու էին երկու տարի։ Ինքնավարություն էին ստանում նաև Բոսնիան և Հերցեգովինան։ Բոսֆորն ու Դարդանելը դառնում էին բաց նեղուցներ՝ չեզոք պետությունների առևտրական նավերի երթևեկության համար։ Ռուսաստանն ստանում էր 310 միլիոն ռուբլու ռազմատուգանք և տեր դառնում 1856 թ. կորցրած Բեսարաբիային (բացի Դանուբի գետաբերանում գտնվող կղզիներից), Արևմտյան Հայաստանի 35.650 քառ. կմ. տարածությամբ խոշոր մի հատվածի՝ Կարսին, Արդահանին, Բայազետին և մինչև Սողանլու (Մեծրաց լեռներ) ընկած տարածքին, ինչպես նաև խիստ կարևոր նշանակություն ունեցող Բաթումին։

---

[25] Տե՛ս П. А. Шувалов, О берлинском конгрессе 1878 г. («Красный архив», 1933, № 4 (59), стр. 87).

Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով միջազգային դիվանագիտության խաղացանկ էր մտնում Արևմտյան Հայաստանի բարենորոգումների, իսկ հետագայում ինքնավարության կամ անկախության խնդիրը՝ Հայկական հարց անունով։ Դառնալով Արևելյան հարցի բաղկացուցիչ մասը, այն աշխարհի վերաբաժանմանը նախապատրաստվող գաղութատիրական երկրներին հնարավորություն էր ընձեռում ցանկացած ձևով միջամտել Թուրքիայի ներքին գործերին։

Սակայն իր ներքին բովանդակությամբ Հայկական հարցն արևմտահայության ու Արևմտյան Հայաստանի ազատագրման հարցն էր։ Ուստի նրա արծարծումը ազատագրական շարժման աննախընթաց վերելքի խթան հանդիսացավ, բացահայտեց հասարակական տարբեր դիրքորոշումների շեշտված հակամարտը, դրսևորվելով նաև որպես քաղաքական կողմնորոշման համար մղվող պայքար։

Ադրիանապոլսի զինադադարի համաձայնագրում արևմտահայերին չանդրադառնալու փաստը ցնցեց պատերազմի հետ մեծ հույսեր կապած հայ գործիչներին ու հասարակական խմբավորումներին և նրանց գործունեությունը նպատակամղեց հասնելու Թուրքիայի հայ ազգաբնակչության տնտեսական ու իրավական վիճակի բարելավմանը, ինքնավարություն կամ քաղաքական այլ խնամակալություն ընդունելուն։

Հայ նշանավոր գրող և հասարակական գործիչ Ա. Արփիարյանը (Հայկակ) Բոսֆորի ափերից «Մշակին» տեղեկացնում էր, որ ռուսների Սան-Ստեֆանո մտնելուց հետո Կ. Պոլսի հայկական թերթերը «սկսած են շատ ազատ գրել, մինչև անգամ կհամարձակին Թուրքական Հայաստանի ինքնավարություն պահանջել»[26]։ Թատերական ներկայացումներից հետո Կ. Պոլսի թատրոնների դահլիճները դղրդում էին Մ. Նալբանդյանի «Ազատության» ու Ռ. Պատկանյանի «Էլ չլսելու» երգով, որը շունչ, ոգի առած, Պետրոս Ադամյանի շուրթերով պայքարի էր կոչում հայ ժողովրդին։ Այդ ոգևորությունը 1878 թ. փետրվարի 13-ին դրսևորվեց Ալեքսանդր II-ին և Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրին հասցեագրված նամակ-խնդրագրերում։

Նույն օրը Ներսես պատրիարքի կողմից մի նամակ ստորագրվեց՝ ուղղված Գևորգ կաթողիկոսին, ուր նշվում էր Պետերբուրգ առաքված հիշյալ դիմումների մասին և խնդրվում, որպեսզի նա նույնպես միջնորդի ցարի առջև՝ Հայաստանի դատը պաշտպանելու[27]։

Արևմտահայ ժողովրդի այդ ցանկությունը և Արևմտյան Հայաստանի զգալի մասը ռուսական զորքերի կողմից գրավված լինելու փաստը, որպես դրա գործնական երաշխիք, չէր կարող վրիպել Բ. Դռան և հատկապես Անգլիայի ուշադրությունից։

Սկսվեց Արևմտյան Հայաստանին ինքնավարություն շնորհելու, իսկ իրականում Ռուսաստանի կողմից գրավված շրջանները ետ կորզելու անգլո-թուրքական ճարպիկ խաղը։ Բ. Դուռը Կ. Պոլսի անգլիական դեսպան Լեյարդին խորհուրդ էր տալիս, որ վճռականորեն համոզի Ներսես Վարժապետյանին ինքնավարություն պահանջել Արևմտյան Հայաստանի համար առանց

26 «Մշակ», 1878, № 64։

27 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 4, գ. 24, թ. 1։

որևէ երկրորդ պայմանի, նպատակ ունենալով կանխել Ռուսաստանի կողմից գրաված շրջանների կորուստը[28]։

Ներսես պատրիարքին հայկական դատի համար ակտիվ գործունեության էր մղում նաև Մ. Խրիմյանի գլխավորությամբ դեռ 1877 թ. նոյեմբերին հրաժարականի սպառնալիքով նրան այցելած բարձրաստիճան հոգևորականների պատվիրակությունը՝ պահանջելով ամենագործնական միջամտություն Հայկական հարցի լուծման գործում։

Ներսես պատրիարքը, որ ավելի զգուշավոր քաղաքականություն էր վարում սուլթանական կառավարության նկատմամբ և գտնում էր, որ Հայկական հարցի լուծումը եվրոպական տերությունների օժանդակության հետ կապիլը առանձին հեռանկարներ չի կարող ունենալ, ի վերջո ստիպված եղավ տեղի տալ ակտիվ գործողության կողմնակիցներին։

Ազգային ժողովում Ներսես պատրիարքը անց է կացնում ինքնավարություն պահանջելու մասին որոշումը, և հայերի դիվանագիտական առաքելությունը նախօրոք ստանձնած Ռուսճուգլյանին փոխարինելու են գալիս, Բ. Դռան հրամանով, վիրավորներ տեղափոխելու անվան տակ Ադրիանապոլսում գտնվող թուրքական պետական պաշտոնյաներ Ստեփան Ասլանյանը և Հովհաննես Նուրյանը։ Սրանք էլ Թուրքիայի գերիշխանության տակ ինքնավարություն խնդրելու ծրագիրը, իբր գաղտնի, հանձնում են գերենալ Իգնատևվին։

Բ. Դռան գիտությամբ փետրվարի 25-ին Սան-Ստեֆանո է մեկնում նաև Ներսես պատրիարքը և տեսակցում ռուսական բանակի գլխավոր հրամանատարի հետ։ Ստ. Ասլանյանը, որ այդ շրջանում Ազգային ժողովի ատենապետն էր, 1887 թ. Ստ. Փափազյանին գրած մի նամակում անդրադառնալով Սան-Ստեֆանոյում Հայկական հարցի արծարծմանը, գրում էր, որ այդ խնդիրը չէր կարող չծագել, քանի որ «Տերությունն ալ մասնակցեցավ ազգայիններու ջանքերուն»։ Մասնակցեց, որպեսզի տապալի այն, տողատակում դիպուկ նկատում է Ա. Ջոպանյանը[29]։

Անգլիական նավատորմի Կ. Պոլսի առջև երևալը և թուրքերի ստացած հավաստիացումը, որ Ռուսաստանն ստիպված կլինի դատարկել ասիական Թուրքիայում գրաված տերիտորիաները, Բ. Դռանը համարձակություն տվեց հրահանգելու Սան-Ստեֆանոյի իր պատվիրակներին, Հայկական հարցի լուծումը համաձայնվել ավելի նեղ սահմաններում։ Եվ քանի որ Ռուսաստանի համար նույնպես ձեռնտու չէր Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը, թեպետ Իգնատևը պայմանագրի նախնական տարբերակում այն մտցրել էր, այդ հարցը՝ 16-րդ հոդվածի տակ, ձևակերպվեց որպես «բարվոքումների ու բարենորոգումների» խոստում միայն։ Ահա այդ հոդվածը։

«Նկատի ունենալով, որ ռուսական զորքերի կողմից Հայաստանում գրավված վայրերի մաքրումը, որոնք պետք է վերադարձվեն Թուրքիային, կարող է այնտեղ ընդհարումների և բարդությունների առիթ տալ, որոնք կարող են վնասակար անդրադառնալ երկու պետությունների բարեկամական հարաբերությունների վրա, Բարձրագույն Դուռը պարտավորվում է անհապաղ իրա-

---

28 Տե՛ս Ռ. Փ. Հովհաննիսյան. Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը, Երևան, 1965, էջ 125 և հտն.։

29 «Անահիտ», 1907, № 6—9, էջ 143։

գործել բարվոքումներ և բարենորոգումներ, որոնք կծագեն հայաբնակ գավառների տեղական պահանջներից ու ապահովել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից»[30]։

Ո՛չ սուլթանական Թուրքիան, ո՛չ եվրոպական գաղութատիրական երկրները և ո՛չ էլ ցարական Ռուսաստանը հայ ժողովրդին ինքնավարություն կամ անկախություն տալու որևէ ցանկություն չունեին։ Մեծ տերությունների կողմից տարբեր ազիրներով առաջ քաշված կամ պաշտպանված Հայաստանի ինքնավարության պահանջը քաղաքական այս կամ այն նպատակը հետապնդող խաղ է եղել միայն։

Իսկ ինչ տվեց հայերին 16-րդ հոդվածը։ Հայկական հարցը առաջին անգամ դարձավ միջազգային դիվանագիտության քննարկման առարկա, իսկ Բ. Դուրը հրապարակորեն ճանաչեց Հայաստանի և հայ ազգի գոյությունն Ասիական Թուրքիայում։

16-րդ հոդվածում կարևոր էր այն, որ բարենորոգումները պետք է անցկացվեին ռուսական զորքերի Արևմտյան Հայաստանում գտնվելու ժամանակ։

Բացի այս հոդվածից, Թուրքիայի մյուս ժողովուրդների հետ միասին, հայերին էին վերաբերում պայմանագրի 23-րդ հոդվածի այն մասը, ուր նշված էր, որ ռուսական զորքն Ասիական Թուրքիայից պետք է դուրս բերվի վեց ամսվա ընթացքում, վերջնական հաշտությունը կնքելու օրվանից սկսած. և 27-րդ հոդվածը, ըստ որի Բ. Դուրը պարտավորվում էր չպատժել Թուրքիայի այն բնակիչներին, որոնք կասկածվում էին պատերազմի ժամանակ ռուսական զենքի հաղթանակին այս կամ այն կերպ նպաստելու մեջ։ Թուրքական իշխանությունները արգելք չպիտի հանդիսանային նաև ռուսական զորքերի հետ հեռանալ ցանկացող օսմանյան հպատակներին[31]։

Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը, իր համեստ բովանդակությամբ, և պայմանագրին ընդհանրապես, ցնծությամբ ընդունվեց հայ հասարակական հոսանքների ու քաղաքական առանձին գործիչների կողմից։ Նրանք ցանկանում էին իրագործված տեսնել այդ բարեփոխումները։

Հայկական հարցը Բեռլինի կոնգրեսում։ Հայ ժողովրդի, 16-րդ հոդվածի հետ կապված հույսերը՝ լավագույն ձևով օգտագործել գոնե ստացած այդ նվազագույնը, ի դերև ելան։ Թուրքիայի ժառանգությունը վիճարկող երկրները չէին կարող հանդուրժել Ռուսաստանի միակողմանի հաջողությունը։

1878 թ. մարտին Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի մինիստր Յու. Անդրաշին պաշտոնապես պահանջեց միջազգային կոնգրեսի (վեհաժողով) հրավիրում, ուր պետք է քննարկվեր Սան-Ստեֆանոյի պայմանագիրը։ Սկսվեց կոնգրեսի դիվանագիտական նախապատրաստումը։ Անգլիան շտապեց տեղեկացնել, որ կոնգրեսին կմասնակցի միայն այն դեպքում, եթե Ռուսաստանն այնտեղ քննարկման ներկայացնի ոչ միայն Սան-Ստեֆանոյի պայմանագրի համաեվրոպական նշանակություն ունեցող հոդվածները, այլև ամբողջ պայմանագիրը։

---

30 *Ю. В. Ключников и Андрей Сабинин*, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. I, М., 1925, стр. 222.

31 *Տե՛ս «Հայաստանը միջազգային դիվանագիտական և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Երևան, 1972, էջ 96—97։*

Անգլիական դիվանագիտությունը փորձում էր ահաբեկել Ռուսաստանին, որը նրան, ի դեպ, հաջողվում էր։ Այդ օրերին Ռուսաստանի ռազմական մինիստր Դ. Ա. Միլյուտինը գրում էր, որ տվյալ իրավիճակում պատերազմը Ռուսաստանի համար կլինի մահացու[32]։ Իսկ Բեռլինի կոնգրես մեկնող Շուվալովին նա տալիս էր հետևյալ պատվիրանը. «Դուք վիճակը գիտեք։ Մենք այլևս կռվել չենք կարող։ Չենք կարող ո՛չ ֆինանսական, ո՛չ ռազմական տեսակետից։ Դուք հայրենասիրական պարտք եք վերցրել ձեզ վրա, ուստի պաշտպանեցեք մեզ որքան հնարավոր է լավագույն ձևով։ Պաշտպանեցեք այն կետերը, որոնք դուք հնարավոր կհամարեք պաշտպանել, և գիջեցեք, ավելի լավ է գիջեցեք բոլորը, միայն թե չխափանեք կոնգրեսը»[33]։

Ռուսաստանը խուսափում էր նոր պատերազմից ոչ միայն թուլացած լինելու և տնտեսական ծանր վիճակում գտնվելու, այլև ներքին, քաղաքական հակասությունների սրման և հեղափոխական շարժումների աշխուժացման պատճառով։ Ի դեպ, 1878 թ. մայիսին Ժնյուռնիայի «Արևելյան մամուլը» զրպանալի խորաթափանցությամբ մատնացույց էր անում հենց այս վերջին պատճառը. «Անգլո-ռուսական պատերազմ մը կրնար ներքին ընկերական հեղափոխություն մը բերել և ընդհանուր քաղաքական փոթորիկ մը հարուցանել Հյուսիսային պետության մեջ, կայսերական գահը վտանգի մեջ դնելով»[34]։

Թուրքիան բոլոր հնարավոր միջոցներով ջանում էր ձախողել Սան-Ստեֆանոյի պայմանագրի իրագործումը։ Թուրքիայի մինիստրներից մեկը՝ Ահմեդ Ռեֆիկ փաշան Սան-Ստեֆանոյի պայմանագրի կնքումից հետո բացորոշ հայտարարեց, որ այն վերջնական չէ[35], Իսկ Անգլիան, ելնելով իր «կենսական շահերից», ամեն կերպ աջակցում էր Թուրքերին, ձգտելով տիրանալ միջերկրածովյան կարևոր հանգույցներին։

Անգլիական բուրժուազիայի հայացքն առավել սևեռված էր Կիպրոսի վրա, որը նա դիտում էր որպես Առաջավոր Ասիայի ու Եգիպտոսի նվաճման գրավական։ Եվ ահա Բեռլինի կոնգրեսի բացումից ինը օր առաջ՝ 1878 թ. հունիսի 4-ին անգլիական դիվանագետներին հաջողվեց Թուրքերին պարտադրել Կիպրոսի համաձայնագիրը, որով ստրատեգիական նշանակություն ունեցող այդ կղզին հանձնվում էր Անգլիային։ Փոխարենը Թուրքիան ստանում էր առաջիկա կոնգրեսում Ռուսաստանի կողմից գրավված Բայազետի, Ալաշկերտի հովտի և մի շարք այլ շրջանների պաշտպանության խոստումներ։ Անգլիան իր վրա էր վերցնում Թուրքիայի քրիստոնյա ազգաբնակչության պաշտպանությունը, դրանով իսկ խոստանալով խափանել Ռուսաստանի կողմից հայերի նկատմամբ ձեռք բերած այն մենաշնորհը, որին հասել էր նա Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով։

Անգլիան այդ համաձայնագրով ճարպկորեն խաբեց Թուրքիային, քանզի նրան տված խոստումների զգալի մասն արդեն մինչ այդ՝ մայիսի 30-ին Լոնդոնում, Ռուսաստանի հետ կնքած պայմանագրով, ելնելով իր շահերից, կատարել էր, փոխարենը համաձայնվելով, որ Ռուսաստանին մնան Բաթու-

---

32 «Дневник Д. А. Милютина», III, стр. 61.

33 *П. А. Шувалов*, О берлинском конгрессе 1878 г. («Красный архив», 1933, № 4 (59), стр. 101).

34 «Արևելյան մամուլ», 1878, մայիս 33։

35 Տե՛ս *А. И. Молчанов*, Между миром и конгрессом, СПб., 1878, стр. 25—26.

մը, Կարսը, Արդահանը իրենց շրջակայքով ու Բեսարաբիայի՝ Ղրիմի պատերազմի ժամանակ Ռուսաստանից անջատված մասը։

Բեռլինի վեհաժողովին յուրովի պատրաստվում էր և հայ ժողովուրդը, որի անունից գործող Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի հանձնարարությամբ կոնգրեսին ներկայացնելու համար Գր. Օտյանը կազմել էր 1864 թ. Թուրքիայի հովանու տակ ինքնավարություն ստացած Լիբանանի սահմանադրության սկզբունքներով մի «Սրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանի»։

Հայ գործիչները ժողովրդին ազատագրելու իրենց հույսերը միամտորեն կապում էին արևմտյան աշխարհակալ պետությունների բարյացակամության հետ։ Նրանց մեջ կային և այնպիսիները, որոնք փորձում էին ընդդիմանալ, անխիտ կամ վտանգավոր էին համարում կոնգրեսին դիմելու ձեռնարկը։ Բժիշկ Հ. Քիրաքյանը Ներսես պատրիարքին գրած նամակում նախազգուշացնում էր, որ Հայկական հարցի բարձրացումը, տվյալ պայմաններում, նպատակահարմար չէ, և որ մեծ տերություններն իրենց շահերից ելնելով, այն կտապալեն[36]։ Իսկ Կ. Փանոսյանը Ազգային ժողովում գայրույթով հարցնում էր. «Ի՞նչ եք անում, ո՞ւր եք տանում ազգը, սևագլուխ և ինքնակոչ դիվանագետներ... ո՞վ կտա մեզ ինքնավարություն, ո՞րի վրա եք դնում ձեր հույսը։ Այն շահամոլ և նենգ Եվրոպայի վրա, որն ուզում է պահպանել Թուրքիայի գոյությունը իր շահադիտական նպատակների համար»[37]։

Առավել դիպուկ ու արմատական էր հանդես գալիս «Արևելյան մամուլը», ափսոսանք հայտնելով, որ հայ ժողովուրդն իր հույսերը դրել է բողոքների վրա. «Սուրն ու բնդանոթը ավելի զորությամբ կխոսեին, քան թե բողոք ու գրիչ»։ Մինչդեռ հայ ժողովուրդը «կկարծեր, իր դարավոր հավատարմությունը բավական ազդու երաշխավորություն մ'ե ստանալու խաղաղությամբ, ինչ որ այլ ձևերով խլելու ելել էին»[38]։

Հայկական պատվիրակությունը Բեռլին էր մեկնում սուլթանի դիտությամբ։ Դեռ ավելին, Հայաստանի ինքնավարության՝ կոնգրեսին ներկայացրած ծրագրին նախօրոք ծանոթացել և իր հավանությունն էր տվել Արդուլ Համիդը[39]։

Թուրքական կառավարությունը կոնգրեսում հայերի ինքնավարության առաջ քաշմամբ կարողացավ մոլորեցնել հայ գործիչներին, հետապնդելով Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածի ձախողումը միայն։

Կոնգրես մեկնող հայկական պատվիրակությունը ղեկավարում էր Մկրտիչ Խրիմյանը։ Պատվիրակության կազմում էին նրա քարտուղար և թարգմանիչ Մինաս Չերազը և Խորեն Գալֆայանը (Նար-Պեյ)։ Պատրիարքի հատուկ հանձնարարությամբ Բեռլին ժամանեց նաև Ստեփան Փափազյանը։ Բայց կոնգրեսին ներկայացվող փաստաթղթերն ստորագրում էին Խրիմյանն ու Նար-Պեյը։

---

36 Տե՛ս Սարգիս Իզմիրլյան, Դատումներ մեր հարյուրամյա հեղափոխության մասին, Պեյրութ, 1962, էջ 24—25։

37 «Մուրճ», 1907, № 2, էջ 61—62։

38 «Արևելյան մամուլ», 1878, մայիս, էջ 9—10։

39 Տե՛ս Մ. Օրմանյան, Ազգ և խոսք, էջ 422։ Հ. Սեմսյան, Հուշարձան Վան-Վասպուրականի, հ. 1, 1929, Ալեքսանդրիա, էջ 324։ Նաև «Մարմարա», 1945, էջ 712, 723։ «Թուրքական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», հ. Դ, Երևան, 1972, էջ 166 և այլուր։

Հայկական պատվիրակության կազմը, մանավանդ Խրիմյանի ընտրությունը այդպիսի մի առաքելության համար, խիստ անհաջող էր։ «Ինչ կար մի պաշտոն,— գրում է Լեոն,— որ ամենևին չէր գալիս Խրիմյանին, այդ հենց դիվանագիտական առաքելությունն էր, որովհետև բացի հոգևորականի հատկություններից, նա ուներ և ժողովրդական մարդու դյուրահավատությունը, բանաստեղծի երազուն հակումներ, մի խոսքով՝ մեծ չափերով ուներ այն ամենը, ինչ չպիտի ունենար մի դիվանագետ։ Երբ Խրիմյանին հարցըրին, թե ինչպես պետք է կատարի այդ դիվանագիտական շրջագայությունը, քանի որ եվրոպական ոչ մի լեզու չգիտեն, նա պատասխանեց. «Պիտի խոսեմ լեզու մը, որ համաշխարհային է և տառապանքի լեզու է միևնույն ժամանակ, այսինքն պիտի լամ։ Միանգամայն ճիշտ խոսքեր,— գրում է Լեոն,— պատկերացնելու համար հայ դիվանագիտությունը, որ առաջին անգամ գնում էր եվրոպա բիամարկների դռները ծեծելու[40]։



Մկրտիչ Խրիմյան

1878 թ. մարտի 8-ին Մ. Չերազի տուղկցությամբ Իտալիայի ճանապարհը բռնեց Մ. Խրիմյանը։ Հայաստանի ինքնավարության ծրագիրը Աբդուլ-Համիդ II-ին հանձնելու և ցարական բարյացակամությունը հայցելու հույսով Պետերբուրգ մեկնեց Ս. Նարպեյը (Գալֆայան)։ Իսկ Ամենայն Հայոց կաթողիկոսին ակտիվ գործունեության կոչելու դիտավորությամբ, էջմիածին ուղևորվեց ապագայի «երկաթյա պատրիարքը»՝ Մատթեոս Իզմիրլյանը։

Հայկական հարցի բարձրացումն ինչպես Սան-Ստեֆանոյում, այնպես էլ Բեռլինում օբյեկտիվորեն համընկնում էր հայ ժողովրդի անկախություն կամ ինքնավարություն ձեռք բերելու ձգտման հետ։ Դեռ պատերազմի ժամանակ հայկական տարբեր գաղթավայրերից ու Հայաստանից ուղարկած մի շարք հավաքական նամակներում պահանջում էին Գևորգ IV-ից հայ ժողովրդի անունից դիմումներ ուղարկել ցարին՝ թուրքական լծի տակ հեծող արևմտահայերի դառը պաշտպանելու, նրանց փրկության մասին հոգալու խնդրանքով[41]։ Սահմանադրական շարժման ականավոր դեմքերից մեկը՝ Սեր-

40 Տե՛ս Առ. Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա. Փարիզ, 1934, էջ 85։

41 Տե՛ս ՀՍՍՀ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 230, վավ. 228, 231, 236։

վիչենը 1878 թ. ապրիլին Կ. Պոլսից գրած նամակում համոզում էր կաթողիկոսին, որ Թուրքերի հետ միանալ, նշանակում է ուրանալ ազգը։ Եվ որ պետք է պայքարել հանուն հայ ժողովրդի հարատևության։ «Միանգամայն ազգ կազմելու և անհետանալու խնդիր կա մեջտեղը,— շարունակում է Սերվիչենը,— ...Դուք պարտազանց կըլլաք, եթե մեզ աջակից չըլլաք»[42]։ Սակայն կաթողիկոսը լուրթյան մատնեց այդ ամենը։

Պետերբուրգ մեկնած Ս. Նար-Պեյը 1878 թ. մարտին անձամբ ներկայանալով ցարին, նրան հանձնեց Թուրքիայի կազմում հայերի ինքնավարության ծրագիրը։ Ինչպես նաև հանդիպումներ ունեցավ Մ. Լորիս-Մելիքովի, Ա.Տեր-Ղուկասովի ու Կ. Եզյանի հետ։

Եվրոպա մեկնած պատվիրակները՝ Մ. Խրիմյանն ու Մ. Չերազը, Իտալիայում հանդիպումներ ունեցան քաղաքական մի շարք գործիչների, այդ թվում Իտալիայի արտաքին գործերի մինիստր կոմս Կորտիի հետ և ստացան կոնգրեսում հայերի ինքնավարության պահանջը պաշտպանելու ջերմ հավաստիացումներ[43]։

Իտալիայից Խրիմյանն ու Չերազն անցան Ֆրանսիա, որտեղ հանդիպումներ ունեցան Փարիզում գտնվող եգիպտահայ նշանավոր քաղաքական գործիչ Նուբար փաշայի և Ֆրանսիայի պետական գործիչների հետ, «Թեմպ» թերթի տնօրեն-խմբագիր Ադրիեն Էբրարի, Փարիզի գերմանական դեսպան իշխան Հոհենլոհեի, անգլիական դեսպան լորդ Լայսնի և այլոց հետ։ Հայ պատվիրակներին ընդունեց նաև ֆրանսիական հանրապետության արտաքին գործերի մինիստր Վիլյամ Հների Վադինգտոնը։ Ջուշացնելով ներկայացված ծրագրի ընդունման դժվարության մասին, քանի որ Լիբանանի նման ինքնավարություն Հայաստանում հայերի և մահմեդականների խառը բնակության պատճառով անհնարին է, Վադինգտոնը, սակայն, հանդիսավոր կերպով ավելացց, որ «Ֆրանսիան անտարբեր չէ Հայաստանի վիճակի նկատմամբ։ Ես անձամբ համակրում եմ ձեր դատին,— ավելացրեց նա,— որովհետև շըրջել եմ Ասիայում, ուսումնասիրել եմ ձեր ժողովրդի պատմությունն ու գրականությունը... Եվ տրամադիր եմ ձեր դատը պաշտպանելու կոնգրեսում, ուր ոչ ոք ինձանից լավ չի ճանաչում ձեր ազգն ու երկիրը»[44]։ Ինչ խոսք, որ դրանք միայն սին հուսադրումներ էին։

Հայ պատվիրակները եղան նաև Լոնդոնում, ուր ծավալվել էր հայասիրական մի շարժում ինչպես տեղի հայ գործիչների, այնպես էլ Ջեմս Բրայսի ջանքերով ստեղծված Անգլո-հայկական ընկերության կողմից։ Ընկերության գործնական ղեկավարությունն իր ձեռքն էր վերցրել հնդկահայ Սեթ Աբգարը, որը 1876 թ. Լոնդոնում ֆրանսերեն հրատարակել էր հայկական դատին նվիրված մի գրքույկ։

Հայ պատվիրակները ընդունվեցին Անգլիայի արտաքին գործերի մինիստր Սոլսբերիի կողմից, որը ոչինչ չասող խոստումներ տվեց, թե հայերը ձեռք կբերեն այն, ինչ կտրվի քրիստոնյա մյուս ժողովուրդներին։ Լոնդոնում Խրիմյանն ու Չերազն այցելեցին նաև Անգլիայի ընդդիմադիր կուսակցության

---

42 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 4, գ. 24, թ. 25—26։

43 Տե՛ս Մ. Չերազ, Հայաստան և Իտալիա, Կ. Պոլիս, 1879, էջ 18—19։

44 Սաթունի, Հայկական խնդիրն ու ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860—1910), Բիֆլիս, 1912, էջ 371։

առաջնորդ Գլադստոնին, ֆրանսիական, գերմանական դեսպաններին, Անգլիայի մայրաքաղաքում որպես հյուր գտնվող գերմանական թագաժառանգ Ֆրիդրիխ Վիլհելմին, վերջում՝ թուրքական դեսպանին։ Լոնդոնից հայկական պատվիրակությունը մեկնեց Բեռլին, կոնգրեսի աշխատանքներին մասնակցելու։

1878 թ. հունիսի 1-ին բացվեց Բեռլինի կոնգրեսը, որին մասնակցում էին Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի և Թուրքիայի պատվիրակությունները։ Առանձին նիստերի թույլատրվեց ներկա լինել նաև Հունաստանի, Ռումինիայի, Սերբիայի, Չեռնոգորիայի և Իրանի ներկայացուցիչներին։ Բուլղարական և հայկական պատվիրակներին հնարավորություն չտրվեց որևէ կերպ մասնակցել կոնգրեսի աշխատանքներին։

Կոնգրեսի առաջին նիստում Անդրաշիի առաջարկով նախագահ ընտրված Բիսմարկը, որը խոստացել էր միայն «աղնիվ միջնորդի» դեր կատարել, հայտարարեց, որ Սան-Ստեֆանոյի պայմանագիրը պետք է քննարկվի ոչ թե ըստ հոդվածների հերթականության, այլ ելնելով հարցերի կարևորությունից։ Այսպիսով, Անդրաշիի գաղտնի խնդրանքով, Բիսմարկը, որպես կոնգրեսի օրակարգի առաջնահերթ հարց, առաջ էր մղում բուլղարական խնդիրը։

Անգլիայի պրեմիեր մինիստր Բիքոնսֆիլդը, այդ առթիվ առաջինը նկատի ունենալով, փորձեց տեղն ու տեղը ճնշում գործադրել ռուսական պատվիրակության վրա, հայտարարելով, թե նախ անհրաժեշտ է քննել՝ հանդուրժելի է արդյոք, որ ռուսական զորքերը տակավին կանգնած են Կ. Պոլսի մատույցներում, և որ այդ վիճակում կոնգրեսն իր աշխատանքները հաջիստ շարունակել չի կարող։

Բալկաններում Ռուսաստանի ազդեցությունը խափանելուն ուղղված այս նկուղի դեմ պատասխան ճառով հանդես եկավ Գորչակովը, ռուսական զորքերի Կոստանդնուպոլսի շրջակայքում ու Բուլղարիայում մնալու անհրաժեշտությունը գիտակցելով որպես Թուրքիայում ապրող քրիստոնյաների անվրտանգության երաշխիք։ Սակայն Ռուսաստանը ինչպես այս, այնպես էլ բոլոր հիմնական հարցերում իրեն միայնակ տեսավ ողջ Եվրոպայի դեմ։

Կոնգրեսի համար որպես սկզբունք անգլիական պատվիրակության կողմից պարտադրվեց Սոլսբերիի բերանով երկրորդ նիստում արված այն հայտարարությունը, որ կոնգրեսի խնդիրն է «լրիվ ոչնչացնել պատերազմի արդյունքները»։

Հայկական հարցը, որպես երկրորդական, բավականին ուշ սիրտ քննարկվեր։ Եվ ահա սկսվում է հայ պատվիրակների եռուն աշխատանքը։ Նրանք բախում էին բոլոր փակ և բաց դռները՝ այցելում էին կոնգրեսի մասնակիցներին առանձին-առանձին։ Բազմաթիվ խնդրագրեր, Հայաստանի ինքնավարության ծրագրի հետ մեկտեղ, ուղարկվեցին կոնգրեսի պատվիրակներին։ Իտալիայի պատվիրակության ղեկավար Կորտին Բեռլին գնալուց առաջ ստացել էր նաև Հայաստանի՝ Ալիշանի կազմած աշխարհագրական տեղեկագիրը։

Պատրիարքարանի կազմած ծրագիրը պահանջում էր Արևմտյան Հայաստանի ինքնավարություն՝ հայ նահանգապետով։ Այդ ծրագրի հետ միասին եվրոպական պետությունների ղեկավարներին, ապա կոնգրեսի պատվիրակներին ներկայացվեցին հուշագիր (թե ինչ պատճառով է ինքնավարու-

թյունը հայերի համար օրինավոր երևույթ), Արևմտյան Հայաստանի՝ պրոֆ. Քիպերտի կազմած քարտեզը և Հայաստանի վիճակագրությունը։

Ըստ այդ վիճակագրության, Արևմտյան Հայաստանի այն մասը, որը Սան-Ստեֆանոյի պայմանագրով չէր անցել Ռուսաստանին և որի համար պահանջվում էր ինքնավարություն, ուներ 2.062.300 բնակիչ, որից 1.300.000 հայ, մնացածը՝ թուրք, քուրդ և այլն։ Հայերի ընդհանուր թիվը Թուրքիայում, չհաշված Սան-Ստեֆանոյի պայմանագրով Ռուսաստանին անցած շրջանների ազգաբնակչությունը, կազմում էր ավելի քան երեք միլիոն մարդ[45]։

Ներկայացված ծրագիրը, չնայած իր բավականին արմատական լինելուն, խստորեն քննադատվեց Գր. Արծրունու, այսինքն լիբերալ-բուրժուական մտավորականության արևելահայ ներկայացուցիչների կողմից։ Ըստ Արծրունու հարկավոր էր ծրագրում հիշատակել ապագա պետության պաշտոնական լեզվի մասին, որը չէր նշվում։ Նրա կարծիքով սխալ էր ծրագրի այն հոդվածը, ըստ որի ինքնավար Հայաստանի նահանգապետը պետք է նշանակվեր Բ. Դռան կողմից. նրան ժողովուրդը պետք է ընտրի[46]։

Մի քանի տարի անց, այդ և պատրիարքարանի մյուս ծրագրերի սուր և յուրահատուկ քննադատությամբ հանդես եկավ «Արևելյան մամուլը». «Երբ առաջին անգամ հայկական խնդիր կը հուզվեր, ամեն մարդ ծրագիր և հիշատակագիր պատրաստելու հեղինակ դարձած էր՝ Հայաստանի և հայոց ազգի համար, առանց Հայաստան ու հայոց ազգի վիճակը ճանաչելու ...Հիշատակագիրներու նկարագրած Հայաստանը բուն Հայաստանը չէր, այլ Հայաստանի քանի մը գավառներ։ Ազգահամարն չէր ազգահամար Հայաստանի ամբողջ հայության, այլ քանի մը բազմահայ գավառաց։ Այսպես թերի էին և այլ ամեն տեղեկությունները»[47]։

Սակայն հայկական պատվիրակության ներկայացրած ծրագրի հետ միասին Փարիզից լսվեց Նուբար փաշայի չափավոր բողոքը, որ ինքնավարությունն անհնարին է, պետք է խոսել միայն բարենորոգումների մասին, զսպել քրդերին, «սանձել անոնց ջոկերը», ունենալ ընդհանուր կառավարիչ և ժողովրդական աշխարհազոր՝ կազմված հայերից և թուրքերից։ «Հսկողություն ընել և հանրային խանգարիչներուն դեմ երկիրը ապահովելու»։ Նուբարի ծրագրում ինքնավարության մասին խոսք իսկ չկար։ Այդ ծրագիրը թուրքական կառավարության հովանավորությամբ և նրա միջոցով կատարվելիք բարենորոգումների հետ էր կապում արևմտահայության ապագան[48]։

Ունենալով անգլիական դիրքորոշում, Նուբար փաշան, սակայն, պարզ տեսնում էր այն որոշակի տարբերությունը, որ գոյություն ուներ հայ ժողովրդի արևելյան և արևմտյան հատվածների միջև։ Բայց այդ ճշմարտացի տարբերազատումը նրան մղում էր ոչ թե պրոպագանդելու հայ ժողովրդի մյուս հատվածի անցումը ցարական տիրապետության տակ, այլ այն դիվանագիտորեն մատնացույց անելու Բ. Դռանը՝ խորհուրդ տալով արևմտահայերի համար ստեղծել ապրելու բարվոք պայմաններ։

Մ. Խրիմյանը, ելնելով ստեղծված իրավիճակից, հակված էր ընդունելու Նուբարի ծրագիրը, բայց Ստ. Փափազյանն այդ առնչությամբ Խրիմյանի վրա

45 Տե՛ս Լեո, Հայոց հարցի վավերագրերը, էջ 82—87։

46 Տե՛ս «Մշակ», 1878, № 13։

47 «Արևելյան մամուլ», 1881 սեպտեմբեր, էջ 352։

48 Նուբար փաշայի ծրագիրը տե՛ս «Անահիտ», 1907, № 6—9։

բողոք գրեց պատրիարքին, որի միջոցով էլ Բ. Դուռը ոչ միայն արգելեց այդ ծրագրի ընդունումը, այլև մերժեց «Նուբարի Բեյլին երթը»։

Սակայն ինչպես Նուբար փաշայի ծրագիրը, այնպես էլ ռուսական դիրքորոշման բողոքը, որն այդ օրերին արտահայտվեց Խ. Նար-Պեյի կողմից կազմված Ռուսաստանի հովանու տակ Հայաստանի ինքնավարության ծրագրով, որն անգամ չհրապարակվեց «զոր արգելեցինք արտասանել ուրիշ անգամ» (Ստ. Փափազյան), անհաջողության էին դատապարտված, քանի որ Հայաստանի ինքնավարության հարցի առաջ քաշումը նրբորեն քողարկված խաղ էր միայն։ Սակայն շատերը ուզում էին հավատալ և այն իրականացված տեսնել։ Նրանք միմյանց շնորհավորում էին Հայաստանի անկախության վերականգնման առթիվ։ Որպես Հայաստանի առաջին կառավարիչ, մատնացույց էին արվում Ստ. Ասլանյանը, Սերվիչենը, Գր. Օտյանը, իսկ Բեյլինի պատվիրակների կողմից՝ Նուբար փաշան, Լորիս-Մելիքովը, Բեյլինի կոնգրեսում Իրանի պատվիրակ, Հայազգի Մելքոն (Մելքում) խանը։ Հուզվում, հառում էր Անդրկովկասի հայությունը։ Այս սին պատրանքների ելակետը եվրոպական պետությունների նկատմամբ տածած այն միամիտ հավատն էր, որ ունեին նրանց կողմից խաբված ժամանակի հայ քաղաքական գործիչները։ Նրանք չէին կասկածում, մանավանդ, Անգլիայի մարդասիրության։

Եվ ահա կոնգրեսի (հունիսի 22-ի) նիստում քննության դրվեց Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը։ Առաջինը ելույթ ունեցավ անգլիական պատվիրակ լորդ Սոլսբերին։ Հավաստիացնելով, թե ինքը համաձայն է հոդվածի այն մասին, որը վերաբերում է հայկական գավառներում բարեփոխություններ մտցնելուն, նա առաջարկեց ջնջել առաջին տողերը, որը կարդալիս թվում էր, թե ռուսական զորքերի ներկայությունից է կախված բարենորոգումների իրագործումը։ Ապա նա հայտարարեց, որ առաջիկա նիստերից մեկում ինքը կներկայացնի հայերի համար կազմած մի ծրագիր։ Անգլիական դիվանագետները և նրանց ետևում կանգնած անգլիական բուրժուազիան չէին կարող թույլ տալ, որ Արևմտյան Հայաստանում կատարվելիք բարենորոգումները կապվեն ռուսական բանակի ներկայության հետ, որը կուժեղացներ Ռուսաստանի հեղինակությունը հայերի մեջ և թույլ կտար նրան իսկապես օգտվելու պատերազմի դաշտում տարած իր հաղթանակներից, հնարավորության դեպքում ուղղակի իրեն կցելով Արևմտյան Հայաստանը։

Սոլսբերիից հետո հանդես եկած ռուսական պատվիրակ կոմս Շուվալովը երկյուղ հայտնեց, որ եթե ռուսական զորքերի հեռանալը տեղի ունենա նախքան խոստացած բարենորոգումների իրագործումը, կարող են լուրջ անկարգություններ առաջանալ։ Ապա նա խնդրեց բոլոր դիտողությունները հետաձգել մինչև այն պահը, երբ կոնգրեսն ամբողջությամբ կզբաղվի Հայկական հարցով[49]։

Վեհաժողովն, ինչ խոսք, ո՛չ ընդունեց հայկական պատվիրակությանը, ո՛չ էլ հաշվի առավ նրա ներկայացրած ծրագիրը։ Հայկական պատվիրակու-

---

49 Այսինքն՝ Սան-Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով։ Քանի որ կոնգրեսի 2-րդ նիստում միաձայն որոշում էր ընդունվել կոնգրեսին ներկայացրած որևէ խնդրագիր կամ առաջարկություն չքննարկել, եթե այն չի ներկայացվում կոնգրեսին մասնակցող լիազոր ներկայացուցիչներից որևէ մեկի կողմից։ Իսկ հայկական ինքնավարության ծրագիրը ոչ մեկի կողմից պաշտոնապես չներկայացվեց։

թյանը չկարողացավ մասնակցել անգամ 16-րդ հոդվածը քննարկող նիստերին։ Քիչ ուշ հայ պատվիրակները 61-րդ հոդվածի դեմ բողոքելու մասին պատրիարքարանից ստացված հեռագրից միայն իմացան, որ այդ հոդվածում Հայաստան անունն իսկ չկար։ Փորձեցին գոնե այն մտցնել տալ, բայց նրանց այդ էլ չհաջողվեց։

Հուլիսի 5-ին 16-րդ հոդվածը վերստին դարձավ օրակարգի հարց։ Լորդ Սոլսբերին նորից պնդեց հոդվածի առաջին տողերը հանելու մասին և առաջարկեց ավելացնել. «Նա (Բ. Դուրը) բացի դրանից (բարենորոգումներից) համաձայնություն կկայացնի վեց ուրիշ ստորագրող պետությունների հետ այս պարտավորությունների նշանակության և նրա գործադրության համար անհրաժեշտ միջոցների մասին»։ Այս արդեն ոչ թե ուղղում, այլ հականախագիծ էր, մի նոր հոդված, որով Արևմտյան Հայաստանի քրիստոնյա ազգաբնակչության բարեկեցության հսկողությունն առնվում էր Ռուսաստանից և դրվում մեծ տերությունների վրա։

Թուրքական պատվիրակ Ալեքսանդր Կարաթեոդորի փաշան ընդունեց, որ պատերազմի ժամանակ «ըմբոստ ցեղերը» իսկապես լուրջ անկարգություններ կատարեցին, բայց հարկ չկա որոշումներ ընդունել, շարունակեց նա, քանի որ նրանց նկատմամբ թուրքական կառավարությունը միջոցառումներ է ձեռնարկել։ Ըստ նրա, կոնգրեսին մնում էր որոշել, որ Բ. Դուրը պետք է վեց տերություններին հաղորդի այն միջոցառումների արդյունքները, որոնք արդեն ձեռնարկվել են։ Բայց Շուվալովը մերժեց թուրքական պատվիրակի ուղղումը և հայտարարեց, թե քանի որ օսմանյան կառավարության մշակած միջոցառումները մնացել են անիրագործելի, հետևաբար անօգուտ է նրանց հիշատակումը։ Սակայն Կարաթեոդորի փաշան շարունակում էր պնդել իր առաջարկը։ Թուրքական պատվիրակի բերանով խոսում էր կոնգրեսի բացումից իսն օր առաջ կնքված Կիպրոսի համաձայնագիրը, որն ի զարմանս բոլորի, կոնգրեսի նիստերից մեկում, որպես անակնկալ, նետվեց դիվանագիտական կանաչ սեղանին, ռուսական պատվիրակների առջև։

Վադդինգտոնը մոլեգնած արտակարգ հեռագիր ուղարկեց Տուրն, բայց արդեն ուշ էր։ Երբ հունիսի 28-ին ֆրանսիական երեք նավեր մտցեցան Կիպրոսի Ֆամագուստա նավահանգստին, մեկ օր առաջ՝ հունիսի 27-ին, համաձայնագրի հրապարակման օրը, այնտեղ արդեն խարիսխ էր ձգել անգլիական նավատորմի Միջերկրականի էսկադրան։

Ֆրանսիայի պրեմիեր-մինիստր Ֆամբետտան շտապեց հեռագրել Վադդինգտոնին, համաձայնագիրն առանց ստորագրելու վերադառնալ Փարիզ։ Բայց Սոլսբերին հանգստացրեց ֆրանսիական կրքերը, Վադդինգտոնին հայտնելով, որ Անգլիան չի առարկի ֆրանսիայի կողմից Թունիսի գրավմանը։ «Ազնիվ միջնորդ» Բիսմարկն ամենևին չառարկեց Անգլիայի այդ նվիրատվության դեմ, միաժամանակ շարունակելով իր անազնիվ խաղը, Իտալիային նույնպես խորհուրդ տալով գրավել Թունիսը և ծայր աստիճան սրելով ֆրանսիտալական հակասությունն ու շեղելով Ֆրանսիայի ուշադրությունը էլզաս-Լոթարինգիայից։

Կոնգրեսի նույն՝ 14-րդ նիստում, թուրքական պատվիրակից հետո նորից էլույթ ունենալով, Սոլսբերին առաջարկեց հայկական բարենորոգումների հարցը հետաձգել, որպեսզի ինքը հնարավորություն ունենա փոփոխություն մտցնել ծրագրի մեջ։ Ապա խնդրեց կոնգրեսին, նախ զրաղվել Սան-Ստեֆա-

նոյի պայմանագրի 19-րդ հոդվածի Բ կետով, որը վերաբերում էր Կարսին և Արդահանին։ Այս հարցի քննարկման ժամանակ անգլիական պատվիրակությունը, խախտելով Ռուսաստանի հետ կնքած գաղտնի համաձայնությունը, դեմ դուրս եկավ այդ քաղաքները Ռուսաստանին հանձնելուն, պատճառաբանելով, թե նման հանգամանքը կթուլացնի թուրքական կառավարության հնդինակությունը։ Իրականում Անգլիային թուրքական կառավարության անվանարկումը չէր, որ հետաքրքրում էր։ Նա չէր ցանկանում, որ ստրատեգիական նշանակություն ունեցող կարևոր այդ վայրերն անցնեն Ռուսաստանին։

Այս ընթացքում Անգլիայից հույսերը կտրած հայ գործիչներն այցելեցին ռուսական պատվիրակության փաստական զեկավար Շուվալովին[50], Հայկական հարցի մանրամասներին տեղեկանալու։ Վերջինս հայտնեց, որ այն հայերի ցանկացած լուծումը չի ստանա և առաջարկեց ներկայացնել մեկ այլ ավելի չափավոր ծրագիր։ Բայց հայ պատվիրակները մերժեցին այդ առաջարկությունը և անմիջապես հայտնեցին Ներսես Վարժապետյանին, որն շտապեց տեսակցել Կ. Պոլսի ռուսական դեսպանի հետ։

Անհույս ու աննկուն վիճակում Խրիմյանն ու նրա գործակիցներն ստիպված դիմեցին նաև Կարաթեոդորի փաշային՝ իրենց ծրագիրը կոնգրեսում պաշտպանելու աղերսով։ Բայց վերջինս մերժեց և հետագրեց Կ. Պոլիս, հայկական պատվիրակներին ետ կանչելու պահանջով։ Սակայն, երբ Բուռը պահանջեց, որպեսզի Ն. Վարժապետյանը ետ կանչի Բեռլինում գտնվող պատվիրակներին, ընդհանուր ոգևորությունից քիչ առած հայոց պատրիարքը հանդգնություն ունեցավ ոչ միայն հրաժարվելու, այլև հայտաբարեց ստիպելու դեպքում պատրիարքարանի դռնից կախվելու իր վճռականության մասին, ինչպես մի ժամանակ անմոռուկ կախվել էին հույն պատրիարքները։

Կոնգրեսի 13-րդ նիստում՝ հուլիսի 8-ին, քննարկման դրվեց Կոթուրի (Կոտոր) գավառի և Բայազետի ու նրա հարևան շրջանների հարցը։ Անգլիական պատվիրակները հանդես եկան Օսմանյան կայսրության շահերի պաշտպանի դերում, որի տակ հարկավ, թաքնված էր անգլիական շահերի անվտանգության ապահովումը։ Ռուսաստանը պարտավորվեց Թուրքիային վերադարձնել Ալաշկերտի հովիտը, բայց հիշատակելով, որ այն վերադարձվում է փոխանակության կարգով, վերականգնելով Կոթուրի նկատմամբ Պարսկաստանի ունեցած նախկին իրավունքները։

Սա Անգլիայի դիվանագիտության խոշոր նվաճումն էր։ Դրանով ապահովվում էր Սև ծովի վրայով Տրապիզոն-Կարին-Թավրիզ տանող նրա առևտրական ճանապարհը, որն Անգլիայի համար առավել քանկ էր մանավանդ այդ ժամանակաշրջանում, քանի որ դեռ չէր նվաճվել Եգիպտոսը և Սուեզի ջրանցքի մշտական օգտագործումը լրիվ ապահովված չէր։

Սուր պայքար ծավալվեց Բաթումի համար, որն ավարտվեց այն Ռուսաստանին հանձնելու և ազատ նավահանգիստ հայտարարելու որոշմամբ։ Սակայն Բաթումի հարցում խիստ դիրք բռնելը, ապա այն զիջելը, անգլիական դիվանագիտության երկդիմի խաղն էր, որով նա ստիպեց ռուսական պատվիրակներին մյուս հարցերում նահանջել։

---

50 80-ամյա Գորչակովը հիվանդության պատճառով մասնակցեց կոնգրեսի քան նիստերից երկքին միայն։

Նույն նիստում նախագահի հիշեցումից հետո, Սոլսբերին ներկայացրեց Կարաթեոդորի փաշայի հետ կուլիսների ետևում կազմած 16-րդ հոդվածի փոփոխման վերաբերյալ նախագիծը։ Ինքնավարության մասին ոչ մի խոսք չկար։ Արևմտյան Հայաստանի Ռուսաստանին միանալու վտանգն անցել էր և Անգլիան դեմ դուրս եկավ հայերի ինքնավարության պահանջին։ Տարօրինակն ու վրդովեցուցիչն այն էր, որ Ռուսաստանը կռվել, հաղթել էր, իսկ Անգլիան հաշտության պայմանագիր էր թելադրում նրա փոխարեն և նրա դեմ։

Սոլսբերիի բանաձևը, մասնակի խմբագրությամբ, արժանացավ հավանության և ընդունեց այսպիսի վերջնական տեսք. «Բարձրագույն Դուռը պարտավորվում է առանց հետագա հապաղման հայաբնակ շրջաններում իրագործել տեղական կարիքներից ելնող բարվոքումներ ու բարենորոգումներ և ապահովել հայերի անվտանգությունը չերքեզներից ու քրդերից։ Այդ նպատակով ձեռնարկած միջոցառումների մասին Բ. Դուռը պարբերաբար պետք է հաղորդի տերությունների, որոնք կհետևեն դրանց իրագործմանը»[51]։ Այս ձևակերպումը, ուր անգամ չէր նշվում, թե այն չկիրառելու դեպքում եվրոպական տերությունները ինչ միջոցների կդիմեն Թուրքիայի նկատմամբ, ընդունվեց և պայմանագրի մեջ մտավ որպես 61-րդ հոդված՝ հայկական բարենորոգումների անվան տակ։

Սան-Ստեֆանոյի պայմանագրով ապահովված՝ ռուսական զորքերի առկայության պայմաններում բարենորոգումներ ստանալու երաշխիքը փոխարինվում էր այս անորոշ բանաձևով։ Իսկ պայմանագրի 62-րդ հոդվածը Թուրքիայում ապրող ժողովուրդներին, այդ թվում նաև հայերին, քաղաքական ու քաղաքացիական իրավունքներից օգտվելու երաշխիք էր տալիս։

Այս հոդվածները հետագայում, իհարկե, իրականություն չդարձան, Ահա այսպիսի վախճան ունեցավ Հայկական հարցը Բեռլինի կոնգրեսում։

Բեռլինի կոնգրեսը միաժամանակ ռուսական դիվանագիտության պարտությունն էր։ Կրճատվեցին Բուլղարիայի՝ Սան-Ստեֆանոյի պայմանագրով որոշված սահմանները։ Նրա հարավային մասը (Արևելյան Ռումելիան) մնաց Օսմանյան կայսրության կազմում, ստանալով միայն վարչական ինքնավարություն։ Մակեդոնիան ու Թրակիան նույնպես մնացին թուրքական տիրապետության տակ, Ռուսաստանն ստիպված վերադարձրեց Հարավային Բեսարաբիան ու Բայազետի հովիտը։ Կրճատվեց ռուսական զորքերի Բուլղարիայում մնալու ժամկետը, Ավստրո-Հունգարիան իր «չեզոքության» համար իրավունք ստացավ գրավելու Բոսնիան ու Հերցեգովինան։

«Բեռլինի կոնգրեսը իմ ծառայության կարիերայի ամենասև էջն է կազմում»,— գրում էր Գորչակովն Ալեքսանդր II-ին։ «Նմանապես և իմ»,— մակագրում է վերջինս[52]։ Սլավոնաֆիլ Ի. Ակսակովը վրդովված աղաղակում էր, թե կոնգրեսը Բիսմարկի նախագահությամբ գումարված դավադրություն էր ռուս ժողովրդի դեմ և այդ դավադրությանը մասնակցեցին նաև Ռուսաս-

---

51 Տե՛ս Ю. В. Ключников и Андрей Сабинин, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. I, стр. 229; «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում» էջ 123։

52 Տե՛ս К. Скальковский, Внешняя политика России и положение иностранных держав, СПб., 1879, стр. 230.

տանի ներկայացուցիչները։ Իսկ Կատկովը «Մոսկովսկիե վեդեմոստի» էջերից Գերմանիային մեղադրում էր Ռուսաստանին դավաճանելու մեջ[53]։

Այսպիսով, պատերազմը հաղթանակով ավարտած ցարական Ռուսաստանին չհաջողվեց լիովին վայելել հաղթանակի պտուղները։ Բեռլինի վեհաժողովում ռուսների պարտությունը հարդարվել էր Անգլիայի ջանքերով Ռուսաստանի դեմ ստեղծված եվրոպական խմբավորման միասնական ճակատի կողմից։ Թուրքիայի «ստատուս կվոն» պաշտպանելու հարցով շահագրգռված էր նաև Գերմանիան, որը, Բիսմարկի խոստովանությամբ, քվեարկեց մեծամասնության հետ, և «Ռուսաստանը մնաց փոքրամասնության մեջ»[54]։ Թուրքիայի ժառանգության հարցը չլուծվեց։ Բայց պատերազմին ամենևին չմասնակցած Անգլիան հասավ դիվանագիտական խոշոր հաջողության։ Իսկ Հայաստանը դարձավ նրա կնքած «պատվավոր հաշտության» սեղանի զոհը[55]։

Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը տարբեր կերպով ընկալվեց ու գնահատվեց ժամանակի հայ և օտար մտավորականության ու հասարակական հոսանքների տարբեր ներկայացուցիչների կողմից։ 61-րդ հոդվածը ներկայացնելով, հարկավ, որպես մի փարոս, Ներսես պատրիարքը հուսադրում էր ժողովրդին, միաժամանակ փորձելով արդարացնել «իր կողմից» Հայկական հարցի բարձրացումը և նրա «անխուսափելիությունն ու ճշմարտացիությունը»[56]։

«Բեռլինի ժողովն մի ոսկեհանք շահեցանք, մեզ անկե խիզախել հաներ ոսկին»—կոնգրեսից վերադառնալով աղղադարեց Մինաս Չերազը[57]։ Արևելահայ պահպանողականները «Մեղու Հայաստանի» էջերում կոչ էին անում խոհեմությամբ պահպանել «այդ մեծ ժառանգությունը»[58]։ Կ. Պոլսի «Լրագիրը», առանց վարանելու գրում էր, թե. «...Պերլինի դաշնագրի 61-րդ հոդվածն ազատեց հայերուն... և հուսալի ապագայի մեջ մը դրավ»[59]։ «Մասիսն» ազդարարում էր. «Իրավունք ունինք հուսալու, թե Հայաստանի ներկա դժնդակ վիճակը վերջ գտնելու անհրաժեշտ հարկին մեջ է և թե անդորրության քաղցրազվարթ արշալույսը ծագելու մոտ է մեր բազմաչարշար հայրենյաց խավարամած հորիզոնին վրա»[60]։

Այլ բան էր ասում Խրիմյանը։ Նա արդեն հասկացել էր եվրոպական պետությունների խարդավանքները և նորից զենքի էր կոչում ժողովրդին. «Պերլինի մեջ հոգեճաշ հարիսա կցրվին բոլոր հպատակ ազգերին, ինձի ղրկեցիք, որ հայերին ընկած մասը առնեմ բերեմ, ես ալ պտուկն առի ու վազեցի» պատմում էր Խրիմյանը և ապա նշում, որ բոլորը երկաթե շերեփներով վերցրին և տարան իրենց բաժինը. «Դուք ինձի շերեփի տեղը թուղթ տվիք, այդ թղթի կտոր որշափ որ խոթեցի տաք հարիսային մեջ, թուղթ թացացավ, լխկեցավ, մեջն ընկավ, ես ալ պարապ թողի ետ եկա. մոռացա առաջուց մի քանի

---

53 *Տե՛ս Г. П. Гуч*, История современной Европы, М.—Л., 1925, стр. 28.

54 *О. Бисмарк*, Мысли и воспоминания, т. II, М., 1940, стр. 217.

55 *Տե՛ս Ллойд Джордж*, Правда о мирных договорах, т. II, М., 1957, стр. 390.

56 «Ատենագրություն Ազգային ժողովո», 1878, էջ 66—67։

57 *Տե՛ս Մ. Չերազ*, Թե ինչ շահեցանք Պերլինի վեհաժողովեն, Կ. Պոլիս, 1879, էջ 29—30։

58 «Մեղու Հայաստանի», 1879, № 45 և 50։

59 «Լրագիր», 1878, № 5։

60 «Մասիս», 1878, № 2145, 2148։

հատ զեյթունցի տանեի հետս, անոնք շերեփ ունեին, կարելի է ամանին տակեն, քովերեն բան մը փրցունեին»[61]։

Եթե 61-րդ հոդվածի մեջ Ջերազը նշմարում էր մի դրական եզր՝ այն է Հայկական հարցի միջազգային հարց դառնալը, ապա Խրիմյանը հենց դրանում էր զգում նրա ողջ բացասական շունչը, որն Աբդուլ Համիդ II-ի համար դարձավ հայ ժողովրդին ծրագրված ոչնչացնելու առավել գործուն խթան։ Արևմտահայ ժողովրդին փրկելու անվան տակ հորինված այդ հոդվածը, իրականում դարձավ նրա դեմ ուղղված չարիք։ Սպառնացող աղետը բավական շուտ տեսավ ու սթափվեց Գր. Օտյանը. «Հաջողեցանք 61-րդ հոդված մը դնել տալ Պերլինի դաշնագրին մեջ, իցիվ թե հաջողեինք ջնջել զայն»[62]։ Ստ. Փափազյանը, վրդովված, Ազգային ժողովում զինված պայքարի կոչ էր անում։ Նա մատնացույց էր անում բալկանյան ժողովուրդներին, որոնք զենքը ձեռքներին պայքարեցին և հաջողության հասան։ Եվ որովհետև հայերը աղերսում են այն ամենը, ինչ բալկանյան ժողովուրդները զենքը ձեռքներին պահանջում են, ուստի հայերին «կը զլացվի ամեն հավասարության իրավունք»[63]։ Կոնգրեսից հիասթափված Գ. Սրվանձտյանցը, հայ ժողովրդի մտավոր վերածնության ու ազատագրական պայքարի մեջ տեսնելով նրա փրկությունը, գրում էր. «Հայաստանի մեջ է բուն հայկական խնդիրը, մենք Պերլինի մեջ կորսնենք զայն»[64]։ Արևելահայ լիբերալ-դեմոկրատիան «Մշակի» շուրթերով մարգարեանում ու պատգամում էր. «Մեզ վրա հույս պետք է դնենք և ոչ թե Բեռլինի։ Այն ազգը, որն ինքն իր վրա հույս չունի, նա ապագա չունի»[65]։

3. ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Դառը փորձը վերջապես համոզեց հայ գործիչներին, որ եվրոպական պետություններն ամենևին էլ քրիստոնյա ժողովուրդների փրկիչները չեն, ինչպես մինչ այդ կարծում էին շատերը։ Եվ որ նրանց համար իրենց շահերից դուրս ոչինչ գոյություն չունի։

Արևմուտքի առաջադեմ շատ գործիչներ հանդես էին գալիս հայկական դատի պաշտպանությամբ, բայց նրանց ազնիվ ու ոգեշունչ ելույթները լոկ բարոյական աջակցություն էին անհավասար գոտեմարտի ելած հայ ժողովրդին։ Մինչդեռ այդ տերությունների կառավարություններին ու նրանց ետևում կանգնած իշխող դասակարգերին ղեկավարում էր սեփական շահախնդրությունը։

Հարցի ակունքները թաքնված էին եվրոպական բուրժուազիայի Թուրքիայում ունեցած բազմատեսակ շահերում։ Անգլիական կապիտալի հետ միասին ներխուժելով և ընդգրկելով Թուրքիայի տնտեսության մի շարք կարևորագույն ոլորտները, այնտեղից հսկայական տոկոսներ քլանող ֆրանսիական բուրժուազիան շահագրգռված էր Թուրքիայի ամբողջականության պահպանմամբ։ Սկսվում էր գաղութների նվաճման համար կապիտալիստական

---

61 «Արմենիա», 1888—1889, № 47։

62 Ա. Ալպոյաճյան, Պատմություն Մալաթիո հայոց, Պեյրութ, 1961, էջ 836։

63 «Ատենագրություն ազգային ժողովո», 1878—1879, էջ 351—352։

64 Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար..., մասն Ա, էջ 270։

65 «Մշակ», 1879, № 125։

երկրների անօրինակ վազքը։ Ֆրանսիական բուրժուազիայի հայացքը հառած էր Աֆրիկայի ու Ասիայի մի շարք երկրների վրա, որոնց գավթումը «կենսական անհրաժեշտություն» էր համարվում։

Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Վ. Ն. Վադդինգտոնը խոստացավ պաշտպանել հայ ժողովրդի օրինական պահանջները։ Բայց ահա երբ կոնգրեսի եռանախորշում Բիքոնսֆիլդը նրան հանձնեց Թունիսի գավթման երաշխիքը, նա մոռացավ հայկական հարցը պաշտպանելու իր խոստումը։

Անգլիական նվաճողական դիվանագիտության համար գրշի արժեք չունեին հայերին տված հավաստիացումները։ 1878 թ. հուլիսի վերջերին լորդերի պալատում ամփոփելով Բեռլինի կոնգրեսի արդյունքները, առաջին մինիստրը հայտարարում էր, որ իրենք Թուրքիայի ասիական մասում հատուկ շահագրգռվածություն ունեն իրենց հնդկական տիրապետության ապահովության իմաստով, և որ Անգլիան պարտավոր էր պաշտպանել Թուրքիային։

Անգլիական դիվանագիտությունը բնավ շահագրգռված չէր ինքնավար Հայաստանի ստեղծմամբ, որը, նրա կարծիքով, կդիմանար չափազանց կարճ և վաղ թե ուշ կմիացվեր Ռուսաստանին, ձախողելով Անգլիայի բոլոր դիտավորությունները։ Հայերին ինքնավարություն պահանջել հորդորող Լեյարդը 1878 թ. մայիսին՝ Բեռլինի կոնգրեսի նախօրյակին, Կ. Պոլսից հայտնում էր Սոլսբերիին, թե Հայաստանի հայերը անկարող են ինքնավարության։ Ինքնավար Հայաստանը մեկ ամիս էլ չի դիմանա և ձեռքը կմեկնի Ռուսաստանին[66]։ Իսկ մեկ տարի անց՝ 1879 թ. հունիսին, նույն հասցեատիրոջն ուղղած հեռագրում Լեյարդը դժգոհությամբ հայտնում էր, որ հայերի նպատակն էր վերականգնել հայկական պետականությունը[67]։

Քրիստոնյա ժողովուրդների պաշտպանի դերում հանդես եկող անգլիական կառավարությունը ոչ միայն հովանավորում, այլև հետևողականորեն հրահրում էր Բ. Դուան կողմից կազմակերպված արյունոտ ջարդերը։ Զուր չէր «Դեյլի Նյուսի» թղթակից Մակգահանը հրապարակորեն մերկացնում Կ. Պոլսի անգլիական դեսպան էլիոտի բանսարկություններն ու դավերը, իր լուր աշխարհի հայտարարելով, թե նա մեղսակից է թուրքերի հետ և պատասխանատու բուլղարական կոտորածների համար[68]։

Նույն ձևով էին հայերը գնահատում Լեյարդի վարքագիծը։

«Մշակը» պատերազմի շրջանում և նրա ավարտից հետո հետևողականորեն հանդես էր գալիս Անգլիայի՝ փոքր ժողովուրդների նկատմամբ վարած քաղաքականության քննադատությամբ։ 1877 թ. ռազմաճակատի գոտում գտնվող հայ ազգաբնակչության ջարդերի մասին խոսելով, նա նշավակում էր Անգլիային, որը գոհ կլիներ, եթե բոլոր հայերն էլ կոտորվեին, և երկիրը անապատ մնար, «Միայն որ Անգլիան ճանապարհ ունենար դեպի Հնդկաստան, միայն որ այդ անապատը ուրիշ տերության ձեռքը չընկնի»։ Արծրունին Անգլիային մեղադրում էր թուրքական շորերով Ռուսաստանի դեմ կռվելու, Թուրքիային զենք տրամադրելու և Արևելքում քրիստոնեությունը ջնջելու մտադրության մեջ[69]։

---

66 Տե՛ս Խ. Դաբիկյան, Հայկական հարցը, էջ 323։

67 Տե՛ս «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г». М., 1896, стр. 57.

68 Տե՛ս Е. Д. Макгаан, Зверства в Болгарии, СПб., 1877, стр. 98—105.

69 Տե՛ս «Մշակ», 1877, № 50 և 1878, № 48, 126։

Անգլիացիները բացահայտ ազդարարում էին, թե «Սուլթանի թշնամիները մեր թշնամիներն էին, նրա բարեկամները՝ մեր բարեկամները»[70]։

Ինչ վերաբերում է Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածին, գրում էր Մալկոլմ Մակքոլը «Անգլիայի պատասխանատվությունը Հայաստանի առջև» մեղադրական իր հոդվածում, այն մնաց որպես մեռած մի տառ։ Թուրքիան երբեք եվրոպական պետություններին չհաղորդեց պայմանագրի իր պարտավորությունների ուղղությամբ կիրառելիք միջոցառումների մասին, որովհետև որևէ միջոցառում իր կողմից, բնավ չէր ձեռնարկվել։ Իսկ պետությունները հաշտվեցին Թուրքիայի կողմից միջազգային պարտավորության խախտման հետ։ «Այդ բարձրագույն աստիճանի ամոթալի փաստի համար գլխավորապես և բոլորից շատ պատասխանատու է Անգլիան»[71]։

XIX դարի 80-ական թվականների երկրորդ կեսից, Եգիպտոսի գրավման շնորհիվ, Անգլիայի հետաքրքրությունը Հայկական հարցի նկատմամբ բնկնում է, տեղը զիջելով Բ. Դոան բարյացակամությունն ստանալու ձգտմանը։ Ուստի և «Կապուլտ գիրքը», որը մինչև այդ լի էր Թուրքիայի քրիստոնյա ազգաբնակչության հարստահարությունները նկարագրող պատկերներով, այդ շրջանում դադարում է Արևմտյան Հայաստանին վերաբերող փաստաթղթեր տպագրել։

Հետագայում անգլիական դիվանագետները սառնասրտորեն խոստովանում էին, որ «Անգլիական պատվիրակությունը Հայկական հարցը օգտագործեց սոսկ Ռուսաստանի դեմ պայքարելու և Թուրքիայում իր դիրքերը ամրապնդելու համար» և եթե չլիներ իրենց շարադետ միջամտությունը, ապա հայերի մեծամասնությունը դեռ 1878 թ. Սան-Ստեֆանոյի պայմանագրով կանցներ ռուսական գրոշի տակ[72]։

Հայկական հարցի դրական լուծումը բնավ չէր հետաքրքրում նաև Գերմանիային։ Հայ ժողովրդի ծանր վիճակը ոչ միայն չէր հուզում բիսմարկներին ու վիլհելմներին, այլ նույնիսկ հնարավորություն էր ընձեռում օգտագործել այն՝ իրենց աշխարհակալական նպատակներին հասնելու համար։

Ցարական դիվանագիտությունն էլ երկդիմի քաղաքականություն էր վարում։ Ռուս դիվանագետները Բեռլինի կոնգրեսում հայկական պատվիրակությանը պատասխանում էին, որ չեն կարող պաշտպանել հայերին, քանի որ «Արևելքի քրիստոնյաները չեն ջոկացել Ռուսաստանի քաղաքականությանը»[73]։ Հայտնի է նաև այն, որ կոնգրեսի օրերին Մ. Տ. Լորիս-Մելիքովը հայ պատվիրակներին խորհուրդ էր տալիս ինքնավարություն պահանջել Կիլիկիայում, որովհետև Արևմտյան Հայաստանը Կովկասի ռազմական քարտեզներում գծագրված է որպես Ռուսաստանի ապագա սեփականություն, այն ամեր ճանապարհն է»[74]։ Իսկ Գորչակովը որոշակի պատասխանեց, որ հայերի ինքնավարության պահանջը ինքը չի կարող պաշտպանել, որովհետև այն դուրս է իր ստացած հրահանգից[75]։

---

70 Մ. Գ. Ներսիսյան, *Հայ ժողովրդի ազատագրական պայքարը Թուրքական բռնապետության դեմ*, էջ 313։

71 «Положение армян...», стр. 195.

72 *Ллойд Джордж*, Правда о мирных договорах, т. II, стр. 390, 540.

73 Սաոռիսան, *Նշված աշխ.*, էջ 478։

74 *Տե՛ս* Հ. Ոսկյան, *Հուշարձան...*, հ. 1, էջ 103։

75 *Տե՛ս* Սաոռիսան, *Նշված աշխ.*, էջ 462։

Այսուհանդերձ, ժամանակի հայ գործիչների զգալի մասը հակված էր Ռուսաստանի կողմը և նրան դիտադասում էր ոչ միայն Թուրքիայից, այլև եվրոպական մեծ տերություններից, իրավացիորեն գտնելով, որ անկախություն ձեռք չբերելու դեպքում արևմտահայ ժողովուրդը նույնպես իր բախտը պետք է կապի Ռուսաստանի հետ։

Բեռլինի պայմանագիրն ստորագրելուց երկու ժամ առաջ հայ պատվիրակները մի վերջին բողոքագիր ներկայացնելով կոնգրեսին, իրենց առաքելությունը համարեցին ավարտված։

«Հայկական պատվիրակությունը,— ասված էր այնտեղ,— շուտով կմեկնի Արևելք, իր հետ տանելով այս դասը։ Այնուամենայնիվ նա հայտարարում է, որ հայ ժողովուրդը երբեք չի դադարի իր ձայնը բարձրացնել, մինչև որ Եվրոպան կատարի նրա պահանջների արդար դատաստանը»[76]։

Իսկ Հայկական հարցը, որն իր էությամբ արևմտահայության և Արևմտյան Հայաստանի ազատագրման հարցն էր, այնպես էլ իր լուծումը չստացավ...

* * *

Բեռլինի կոնգրեսի ավարտն ու 61-րդ հոդվածի ստեղծման լուրը Արևմտյան Հայաստանի հայ բնակչությանը հասավ սպառնալիքի այն ահազանգի հետ, թե հարևան թուրքերն ու քրդերը հենց այդ հոդվածի պատճառով իրենց պետք է կոտորեն։

Այդ սարսափը արագացրեց հայերի զանգվածային արտագաղթը, որն սկսվել էր դեռ պատերազմական գործողությունների ժամանակ և հղի էր ողբերգական հետևանքներով։ Թողնելով իրենց հինավուրց հայրենիքը, գաղթողները հաճախ այրում էին հացահատիկն ու խոտի դեզերը և Արևելյան Հայաստան խուժում սրահալած ու մազապուրծ, ուսներին մուրացկանի մաղախն ու գաղթի ճանապարհի փոշին։ Ողողելով Երևանի նահանգի փոքրիկ տարածքը, նրանք գերբնակչություն էին ստեղծում այնտեղ, կամ ճանապարհը շարունակում դեպի ռուսական հեռավոր տափաստանները։

Ի դեպ, ցարական կառավարությունը գաղթած հայերից շատերին Երևանի նահանգում հող չտնելու պատրվակով բնակեցնում էր Հյուսիսային Կովկասում և այլուր, մինչդեռ նույն շրջանում ռուս վերաբնակիչներ էր տեղափոխում Կարսի մարզ, Արարատյան դաշտ և Շիրակ։

Պատրիարքարանը գործնական միջոցների դիմեց ահաբեկված ժողովրդին գաղթելու մտագրությունից հետ պահելու համար։ Համոզելու նպատակով գավառներ մեկնեցին մի շարք գործիչներ։ Հարց դրվեց, որ Բ. Դուռը արագացնի բարենորոգումների կենսագործումը։

1878 թ. օգոստոսին Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում սկրտվեցին խստագույն ճնշումներ, ընդհուպ մինչև առանձին անձանց ձերբակալությունն ու աքսորը։ Առաջին զոհերից մեկը դարձավ «Ազգային երգարանի» հրատարակիչ Եղիա Տնտեսյանը, որը չդիմացավ բանտային կյանքին և շուտով մահացավ։

Բեռլինի կոնգրեսից հետո արևմտահայերի դրությունն ավելի վատթարացավ։ Բալկանյան երկրների անջատումն ահաբեկեց թուրք ազգայնական-

---

76 Ա. Բագրատյան, Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի դաշնագրում և Բեռլինի կոնգրեսում 1878 թ., Երևան, 1955, էջ 161 (Հավելված, արխիվային փաստաթղթեր)։

ներին և նրանց ուշադրությունը սևեռեց Արևմտյան Հայաստանի վրա։ Նախ, կեղծված տվյալներով պակաս ցույց տալով Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակչության թիվը, որտեղ նրանք հարաբերական մեծամասնություն էին կազմում, թուրքական իշխանությունները քիչ անց, բռնի ձուլման ու զանգվածային ջարդերի միջոցով ձեռնարկեցին այն արհեստականորեն նվազեցնելուն։

Հույների և բալկանյան մյուս ժողովուրդների ապստամբություններն ու նրանց դուրս գալը Օսմանյան կայսրությունից, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների հովանավորի անվան տակ, Թուրքիան բաժանելու համար մեծ տերությունների ձեռնարկած ջանքերն արագացնում էին հայերի ոչնչացման՝ օսմանյան պետության քաղաքական ծրագրով ուղեգծված պլանի իրագործումը։

Հայ գործիչները մեծագույն վտանգ էին կանխատեսում արևմտահայության համար, եթե նա ազատության դրոշով մղած պայքարի ճանապարհին չկազմակերպվեր և պատրաստ չլիներ զենքով պաշտպանելու իր գոյությունը։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 1870—1880-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. ԱԶԳԱՅԻՆ ՁՆՇՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

XIX դարի երկրորդ կեսին, երբ արևելահայությունն իր բախտն արդեն կապել էր Ռուսաստանի հետ, տնտեսական ու մշակութային կյանքի և մանավանդ ֆիզիկական գոյության համար ստեղծել անհամեմատ ավելի բարենպաստ պայմաններ, հայ ժողովրդի մյուս՝ ստվար հատվածը՝ արևմտահայությունը տակավին գալարվում էր թուրքական հարստահարիչների անագորույն լծի տակ։ Այդ պատճառով էլ իր ազատության ու անկախության համար հայ ժողովրդի մղած պայքարը սուր ծայրով ուղղվեց օսմանյան բռնապետության դեմ։

Ազգային զարթոնքի այդ արշալույսին շեփորվում էր արդեն զենքի միջոցով ազատություն ձեռք բերելու գաղափարը, որը ծնվել էր թուրք և քուրդ ֆեոդալների սանձարձակ կեղեքումներից արյունաքամ եղած արևմտահայ աշխատավորության մաքառումների բովում։

Հովհ. Թումանյանը մերժելով ժողովրդի ազատագրական պայքարը դրբսից ներմուծված լինելու մասին թյուր կարծիքը, իրավացիորեն գրում էր. «սխալ են բոլոր էն մարդիկ, որոնք կարծում են, թե էս ամենը կարող էին անցնել առանց ծայրահեղ դժգոհության բռնկումի, առանց հեղափոխության։ Այլև սխալ են նրանք, որոնք կարծում են, թե հեղափոխությունը գրսեցիները՝ ռուսահայերն են սկսել Տաճկաստանում»[1]։

XIX դարի 70—80-ական թվականներին բորբոքված հայ ազգային ազատագրական շարժումը ֆեոդալական բռնապետությունների դեմ եվրոպական բուրժուադեմոկրատական հեղափոխությունների արձագանքն էր։ Այդ հեղափոխությունները և բալկանյան ժողովուրդների ըմբոստացումը թուրքական բռնատիրության դեմ նպաստեցին նաև արևմտահայության ազգային-ազատագրական շարժման վերելքին։

Հայ ազատագրական շարժման ուղիներում ծնվեցին նախ ժողովրդին լուսավորելու և ազգային ինքնագիտակցության բերելու գաղափարները, իսկ ավելի ուշ՝ աբդեն հրապարակ իջան ազատագրական խմբակներն ու կազմակերպությունները, որոնց գործունեությունը հզորանում էր սուլթանական մոլեգնող ռեակցիային դիմադրի։ Այդ ռեակցիան հատկորեն արտահայտ-

---

1 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1958, էջ 317—318։

ված է Թուրք պետական գործիչ Քյամիլ փաշայի՝ 1870-ական թվականների վերջերին սուլթան Աբդուլ Համիդին հղած նամակում «...եթե Եվրոպիա մասին մեզ մեր ծոցը օձ սնուցինք, պետք չէ, որ նույն հիմարությունն ընենք մեր ասիական Տաճկաստանի մեջ. խելոքությունը ջնջել վերացնելն է այն ամեն տարրերը, որ օր մը կրնան մեզ նույն վտանգը ծնանիլ...»[2]։

Ազգային զարթոնքի պայմաններում և դարավոր խոշտանգումների դեմ ըմբոստացած հայ ժողովրդին ոչինչ չէր մնում անել, քան պատրաստվել և զինված ապստամբությամբ թոթափել Թուրքական արյունարբու լուծը։ Քանզի ստրկացած ժողովուրդները, ինչպես նշել են Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը, «իրենց հարստահարիչների դեմ մղած հերոսական, անընդհատ պայքարով են ապացուցում ազգային անկախության ու ինքնորոշման իրենց պատմական իրավունքը»[3]։

Օսմանյան բռնապետության դեմ խմորվող հայ ազատագրական շարժումները XIX դարի 60—70-ական թվականներից սկսած դառնում են ոչ միայն արևմտահայերին, այլև արևելահայերին հուզող մի խնդիր։ «Սահմանից այն կողմ» գտնվող եղբայրներին նրանց կենաց և մահու պայքարում օգնելու փափագն անձնազոհ մարտերի էր մղում արևելահայությանը։

Ազգային-ազատագրական բնույթով հանդերձ, հայ ժողովրդի ազատագրական պայքարն ուներ և դասակարգային բովանդակություն, որ ուղղված էր ոչ միայն քաղաքական, այլև սոցիալական տնարարդությունների դեմ։ Այն, ըստ էության, գյուղացիական բուրժուադեմոկրատական շարժում էր։ Այդ պայքարի գլխավոր ու առաջատար ուժն արևմտահայ գյուղացիությունն էր ու քաղաքի արհեստավոր դասը։ Արևմտյան Հայաստանի ազատագրմամբ, առաջին հերթին, շահագրգռված էր երկակի ճնշման տակ գտնվող հայ աշխատավորությունը, որն ազատագրված հայրենիքից էր ակնկալում իր քաղաքական և սոցիալական փրկությունը։ Ազգային բիրտ հալածանքներից, ինչպես նաև իշխող ազգերի բուրժուազիայի, տեզական մեծատուններից, օտար կապիտալի ու նրա սպասարկու հայ կոմպրադորների ճնշումներից նեղված վիճակն ստիպում էր հայ բուրժուազիային և մասնավորապես նրա գավառաբնակ հատվածներին փարել ազգային-ազատագրական շարժմանը։ Ազատագրական պայքարին ակտիվորեն մասնակցում էր հայ դեմոկրատական մտավորականությունը, որը կապված էր ժողովրդի լայն շրջանների հետ։ Մինչդեռ ազգային կերպարանքից գրեթե զրկված հայ խոշոր բուրժուաներն ու բարձրաստիճան պաշտոնյաները, շնչին բացառությամբ, սուլթանական ու ցարական կարգերի մեջ էին տեսնում իրենց գոյության հենարանը։ Դեմ լինելով ամեն մի դեմոկրատական շարժման, նրանք հիմնականում ընդդիմադիր կանգնեցին նաև ազգային-ազատագրական պայքարին։

Սակայն հայ ազատամարտի զեկավարները միջազգային անբարենպաստ պայմաններում, պայքարի իրենց ծրագրերը նետելով աչ ու ձախ, մոռացած տևական նախապատրաստման, ուժերի համախմբման մասին, տակավին անփորձ ու անմիաբան, նրանք անհավասար պայքարի մեջ մտան թուրքական

2 «Փորձ», 1879, № 7—8, էջ 204։

3 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 18, стр. 555.

բռնապետության հետ և չկարողացան ժողովրդին դուրս բերել դեպի ազատություն տանող լուսավոր մի ճանապարհ։

Հայ ազատագրական շարժման ալիքը բարձրանում էր առաջին հերթին որպես պատասխան ահավոր այն կեղեքումների, որոնց ենթարկվում էր արևմտահայ ժողովուրդը։ Օսմանյան կայսրության ստրկացված ժողովուրդներից շատերը՝ հույները, հայերը, արաբները, բուլղարները ունեին անհամեմատ շատ ավելի հին ու բարձր կուլտուրա, ապրել էին հասարակական զարգացման առավել բարձր աստիճաններ, քան թուրքերը։ Ռազմաֆեոդալական հասարակարգի պայմաններում, հանդես գալով որպես կապիտալիզմի սաղմնավորման ու զարգացման առաջամարտիկներ, այդ ժողովուրդները քաղաքակրթության կրողներ էին Թուրքիայում։ Նրանք ստեղծել և մարդկության սեփականությունն էին դարձրել հոգևոր ու նյութական մշակույթի բազմաթիվ բարձրարվեստ հուշարձաններ։ Մահմեդական զանգվածները հաղորդակից չէին վերնախավերում տիրապետող խրթին լեզվով գրված միջնադարյան ծանրաշունչ գրականությանը։ Կրոնական սխոլաստիկ ու հետադեմ գաղափարները թմրեցնում էին ժողովրդին, խափանում կուլտուրական առաջընթացի նրա ճանապարհը։

60-ական թվականներին Թուրքիայում ծայր առավ սահմանադրական անդրանիկ շարժումը, որի գաղափարախոսը 1848 թ. ֆրանսիական հեղափոխության ականատես Իբրահիմ Շինասին էր, որը և դարձավ թուրքական նոր գրականության հիմնադիրը։ 1865 թ. նրա համախոհների՝ Մահմեդ Նամըկ Քեմալի, Աբդուլ Համիդ Զիա բեյի, Ալի Սուավիի ու այլոց ջանքերով ձևավորվեց «Նոր օսմանների ընկերություն» քաղաքական գաղտնի կազմակերպությունը, որը, սակայն, մեկ տարվա կյանք ունեցավ միայն։ Նրա հիմնադիրները, սուլթանից հալածված, շուտով ստիպված էին թողնել Բոսֆորի ափերը և ապաստանել եվրոպական մայրաքաղաքներում։ Այնտեղ նրանք ստեղծեցին իրենց մամուլը և դարձան պանիսլամիզմի ռեակցիոն գաղափարախոսության նախապատրաստողները, ապա և տեսաբաններն ու տարածողները։ Մի քանի տարի անց, նրանց մի մասը վերադարձավ Թուրքիա և լայն աշխատանք ծավալեց երկրի ներսում։

«Նոր օսմանների» եռանդուն ջանքերով և անգլիական դիվանագետների օգնությամբ 1876 թ. Կ. Պոլսում կատարվեց պալատական հեղաշրջում և թուրքական սուլթանների գահին բազմեց Աբդուլ Համիդ II-ը։

1876 թ. դեկտեմբերի 7-ին «նոր օսմանների» պարագլուխ Միդհաթ փաշան նշանակվեց մեծ վեզիր։ Ապա ընդունվեց նաև 119 կետից կազմված և նրա անունը կրող օսմանյան սահմանադրությունը՝ որը, ինչարկե, ձևական նշանակություն ուներ միայն։ 1878 թ. Միդհաթը վտարվեց երկրից։

Միդհաթյան սահմանադրությունը զարդարված լինելով ազատության ու հավասարության մասին ճոռոմ ֆրազներով, չհասկացվեց Թուրքիայի ազգաբնակչության մեծ մասի, անգամ թուրքական բուրժուազիայի կողմից։ Սահմանադրության մեջ հոխորտացող պանիսլամիզմը, որպես միաձույլ ազգի ստեղծման ահազանգ, իրենից հեռու վանեց նաև Թուրքիայի օտարազգի բուրժուազիային։

Թուրքիայի ներքին գործերին մեծ տերությունների միջամտությունը կանխելու հետամուտ այդ քայլը ձախողվեց։ 1878 թ. փետրվարի 2-ին, Սան-Ստեֆանոյի կոնֆերանսի նախօրեին, արյունոտ սուլթանի ոստիկանները

ցրեցին թուրքական պառլամենտը և Համիդյան սահմանադրության հետ կապված բոլոր հույսերն ի դերև ելան։ Սկսվեց Աբդուլ Համիդի միահեծան տիրապետության ժամանակաշրջանը։ «Նոր օսմանների» հանդես գալը ինչ-որ չափով առաջադիմական երևույթ էր տակավին միջնադարյան խավարում գտնվող Թուրքիայի հասարակական քաղաքական կյանքում։ Սակայն մահմեդական կրոնի պատվիրաններով իրենց ճշմարտացիությունը փաստարկող թուրք գործիչները, սահմանադրական միապետության իրենց ձգտումներով չէին արտահայտում ժողովրդական զանգվածների շահերը և անսքող բշնամանքով էին վերաբերվում նվաճված ու հարստահարվող ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներին։ Նրանք բացահայտորեն հայտարարում էին, որ իրենք մտահոգված են ողջ մահմեդական աշխարհի ճակատագրով։

Դեմոկրատիզմի քողի տակով վարագուրված «նոր օսմանների» այդ շարժումն առավել մարտական կերպարանք ստացավ 80—90-ական թթ. նախ պանիսլամիզմի և ապա պանթյուրքիզմի ձևավորման շրջանում, և իրենն պահպանեց «Միություն և առաջադիմություն» («Իթթիհաթ վե թերաքը») երիտթուրքական ազգայնական կուսակցության ստեղծմամբ[4]։

Օսմանյան տիրապետողներն ահով ու զայրույթով էին դիտում հպատակ ժողովուրդների մտավոր վերելքը և փորձում էին արհեստականորեն արգելակել այն։ Կ. Պոլսում 1868 թ. հիմնադրված Գալաթասարայի (Ղալաթիո) դպրոցի (լիցեյ) իրավաբանական բաժնում, որտեղ դասավանդումը կատարվում էր ֆրանսերեն լեզվով, 1875 թ. 52 ուսանողից 45-ը հայեր էին։ Այստեղ հայերի շարունակական մեծամասնություն կազմելը պատճառ դարձավ, որպեսզի 1881 թ. սուլթան Աբդուլ Համիդի հրամանով այն փակվի։ Իսկ բժշկական ուսումնարանին ուղղակի ցուցում էր տրված՝ հայեր չընդունել, որովհետև մինչ այդ բոլոր սովորողները հայեր էին։

Օսմանյան նորելուկ բուրժուազիան արդեն դժվարությամբ էր հանդուրժում, որ Թուրքիայի քաղաքներում գիտության, տեխնիկայի, արվեստի և արհեստագործության բոլոր քիչ թե շատ լուրջ բնագավառներում ղեկավար դիրքերում հայեր կամ այլազգի ներկայացուցիչներ էին։ Սակայն, ինչպես հայերին, այնպես էլ կայսրության մեջ ապրող մյուս «անհավատներին» թուրք կառավարողները հանդուրժում էին լոկ այն պատճառով, որ նրանք նպաստում էին երկրի արդյունաբերության ու առևտրի բարգավաճմանը։ Իսկ երբ հետագայում թուրքական նորաստեղծ բուրժուազիան ի վիճակի չեղավ բացահայտ մրցության մեջ հաղթել այլազգի իր մրցակիցներին, չխորշեց դիմելու նրանց ոչնչացնելու, ապա և ջարդի արյունոտ մեթոդին։

Քրիստոնյաների ջարդերը դառնում էին պետական քաղաքականություն։ Այդ քաղաքականության հեղինակները բացեիբաց հայտարարում էին, որ թուրքական առաջին սուլթանների կողմից քրիստոնյաների նկատմամբ թույլ տրված սխալի հետևանք է, որ նրանք դեռ գոյություն ունեն Օսմանյան կայսրության մեջ, և իրենք պետք է ուղղեն այդ սխալը[5]։

---

[4] 1889 թ. ձևավորվեց երիտասարդների մի փոքրիկ խմբից կազմված «Օսմանյան միություն», որն ավելի ուշ՝ 1894 թ. իրեն մկրտեց «Միություն և առաջադիմություն» անունով։ Այդ անվամբ իսկ իր էությունը բացահայտող այս կուսակցությունը պայքարում էր հանուն 1876 թ. սահմանադրության վերահաստատման՝ սուլթանի միավորման ու առաջադիմության ճանապարհով։

[5] Տե՛ս «История XIX века», под ред. Лависа и Рамбо, т. 8, М., 1907, стр. 1—2.

Քուրդ և թուրք կեղեքիչների հետ միասին, անշուշտ, առավել փոքր չափերով, արևմտահայ աշխատավոր ժողովրդին հարստահարում ու կողոպտում էին նաև հայ մեծահարուստն ու վաշխառուն։ Նրանց և հայ աշխատավոր ժողովրդի շահերը չէին համընկնում։

Դավառահայ աշխատավորության սանձաթակ կեղեքումը մղում էր նրան բռնելու պանդխտության, ապա և գաղթի հեռավոր ուղին։ Անլուր շահագործումից փրկվելու հույսը կապելով պանդխտության հետ, հայ գյուղացին մեկնում էր կամավոր աքսոր։ Հայ պանդուխտի ու նրա տարաբախտ մտերիմների դառը հեծեծանքներից են հյուսվել «Անտունի» կոչված կարոտի լալահառաչ երգերը։ Արևմտահայ աշխատավորության համատարած պանդխտությունը, հարկավ, չսահմանափակվեց զուտ տնտեսական պատճառներով կատարվող տարագրությամբ, այլ մեկընդմեջ զուգորդվեց ֆիզիկական ոչնչացումից փախչող խոշոր գաղթականությամբ ու հողագնդով մեկ ցրեց հայ հայրենազուրկ ու անհանգրվան աշխատավորին։

Թուրքական կառավարության հալածական այդ քաղաքականությանը զուգընթաց ու նրան դիմադիր բարձրանում, հորդանում էր հայ ժողովրդի տարերային բողոքը, նրան դուրս բերում ազատագրական շարժման ճանապարհ։

Արևմտահայերի հարստահարության հարցը շուտով քննարկման նյութ դարձավ Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովում և բողոքագրի ձևով Բ. Դռանը ներկայացվեց 1869 թ. պատրիարք ընտրված Մկրտիչ Խրիմյանի ջանքերով։

Խրիմյանը կապված էր ժողովրդի հետ և հայ ազատագրական շարժման ակտիվ գործիչներից էր։ Նա գտնում էր, որ երբ ազգերը դեռ առանձին-առանձին գոյություն ունեն, մի ազգն իրավունք չպետք է ունենա ճնշելու մյուսին։ Եվ քանի որ հայերի հայրենիքը զավթել են օտարները, այն պետք է ազատագրել[6]։

Մ. Խրիմյանը հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության պաշտպանն էր և ջանում էր նրանց միջև ստեղծել միություն։ Եվ երբ այդ միության ստեղծումը հնարավոր չեղավ, նա կոչ էր անում դինվել և սեփական կյանքը, պատիվն ու գույքը պաշտպանել քուրդ աղաներից, բայց երբեք չպատերազմել քուրդ աշխատավոր ժողովրդի դեմ, որը նույնպես կրում է իր ազգակից հարստահարիչների ճնշումն ու բռնությունը։ Մ. Խրիմյանը հատուկ ուշադրություն դարձրեց Ազգային սահմանադրության, և դրանով իսկ դավառահայության հանիրավի ոտնահարված իրավունքների վերանայման հարցի վրա։ Նրա պայքարը սահմանադրության վերանայման համար գավառի ընդվզումն էր Կ. Պոլսի էֆենդիության դեմ։

Հայ ազատագրական ընդվզումների օրրանն էլ հենց գավառն էր, որտեղ ծնունդ առավ ու ծավալվեց այդ շարժումը։

1872 թ. սկզբներին հայրենասիրական ուժերի ջանքերով Վանում կազմակերպվեց «Միություն ի փրկութիւնս» գաղտնի ընկերությունը, որի նպատակն էր հայ ժողովրդին ազատագրել թուրքական բռնակալության լծից։ Կազմակերպության մարտի 3-ի թվագրված հայտարարության մեջ, որն ստորագրել էր 465 մարդ, նկարագրվում էր Վասպուրականի հայ ազգաբնակչության ծանր վիճակը և կոչ արվում փրկության միջոցներ գտնել, «ապա թե

---

6 Տե՛ս Մ. Խրիմյան, Ամբողջական երկեր, Նյու-Յորք, 1929, էջ 247։

ոչ կորուստ մերձ է իսպառ...»։ Ըստ որում պահանջվում էր ազատագրման համար պայքարելու իրենց որոշումը Վարդանանց միաբանության ուխտի նման սրբությամբ ու հավատարմությամբ, պահել մինչև արյան վերջին կաթիլը[7]։

Ապրիլի 26-ին Անգղ գյուղի բնակիչներն առանձին, իսկ Հորտենց, Խեկքեղ, Հնդստան, Նոր գյուղ, Հաուեղ գյուղերի բնակիչները՝ միացյալ դիմումներ են գրում «Միության»՝ նրան անդամագրվելու ցանկությամբ։ Գ. Սբրվանձտյանցի և այլոց նոանդուն ջանքերի շնորհիվ «Միությունը» ամրապնդվում է։ 1872 թ. մայիսին Թիֆլիս՝ Կովկասի փոխարքայի մոտ պատվիրակ գնացած «Միության ի փրկության» ներկայացուցիչները՝ Նշան Շերվանյանը և Հակոբ Կալոյանը փոխարքային ու նրևանի նահանգապետին կազմակերպության անունից ներկայացնում են Վասպուրականի հայության օգնելու մասին խնդրագրեր[8]։ Սակայն կազմակերպությունը շուտով ինքնալուծարքի ենթարկվեց։

«Միություն ի փրկություն» խմբի Վասպուրականում ծավալած գործունեության շրջանում Մ. Խրիմյանը Կ. Պոլսից խորհուրդ էր տալիս Վանում գտնվող Գ. Սրվանձտյանցին՝ խուսափել անժամանակ ընդվզումներից և բազմակողմանիորեն նախապատրաստվել, որի պայմաններից մեկը համարում էր արևելահայության մեջ հայրենասիրական տրամադրությունների բորբոքումը և նրանց հետ սերտ համագործակցության ստեղծումը։

1870-ական թվականների սկզբներին նորից ըմբոստանում է Զեյթունը։ 1875 թ. զինավառ զեյթունցիները քաղաքից վռնդելով գավառապետ Դաուդ Նիազիին, իրենց անկախ հռչակեցին, ձգտելով վերականգնել ավելի քան մեկ տասնամյակ առաջ կորցրած կիսանկախությունը։ Թուրքական կառավարության և նրա քաղաքականությունն իրականացնող տեղական իշխանությունների հարկային ապօրինություններից ու արյունոտ ոճիրներից վրդովված զեյթունցիները դուրս քշեցին նաև թուրքական մյուս պաշտոնյաներին և 1876 թ. հունիսին հրդեհեցին կառավարական շենքն ու թուրքական մզկիթը[9]։

Հայրենասիրական խմբեր էին կազմակերպվում Կ. Պոլսում, Կարինում և հայաշատ այլ կենտրոններում։ 1874 թ. Կարինում երիտասարդ Խ. Կերնքցյանը կազմակերպում է «Ազատություն» հայրենասիրական միությունը։

Թուրքական իշխանությունները չանում էին բնում խեղդել ազատագրական շարժման ամենաանշնշան փորձն անգամ։ Փակվում էին այս կամ այն չափի կասկածանք հարուցող ուսումնական հաստատություններ։

1873 թ. հունվարին Մ. Փորթուգալյանը եվդոկիայից հեռագրում էր Կ. Պոլիս՝ «Մանզումէի էֆքեարի» խմբագիր Կարապետ Փանոսյանին, որ իշխանությունները կամայականորեն փակել են իր տնօրինության տակ գտնվող Վարդուհյան վարժարանը և իրեն բանտ նետել. «Աստծո սիրուն մեր դպրոցը ու դիս ազատեցեք բռնակալներենք[10]։ Նա շուտով ազատվեց ու 1873 թ. դեկտեմբերին ստանձնեց Կ. Պոլսում հրատարակվող «Ասխա» թերթի խմբագրությունը։ Մ. Փորթուգալյանն արմատապես փոխեց այդ թերթի

7 Տե՛ս «Դիվան Հայոց պատմության», հ. ԺԹ, էջ 269—270։

8 Տե՛ս նույն տեղում, էջ 276—278։

9 Տե՛ս «Զեյթունի պատմագիրքը», Բուենոս-Այրես, 1960, էջ 345։

10 «Մանզումէի էֆքեարը», 1873, № 2083։

ուղղությունը, հետևողականորեն հանդես գալով ինչպես պոլսահայ պահպանողական մամուլի, այնպես էլ «Մասիսի» լիբերալ հայացքների քննադատությամբ։ «Ասիան» դարձավ երբեմնի իր հակառակորդի՝ «Մեղուի» մարտընկերը։

Սակայն այդ թերթը մի քանի ամսվա կյանք ունեցավ միայն։ Այն փակվեց իշխանությունների կողմից և այլևս չվերականգնվեց։

1869—1870 թթ. Կ. Պոլսում ձևավորված «Կիլիկիա», ապա «Դպրոցասեր-Արևելյան» ընկերություններին 1876 թ. ապրիլի 15-ին ավելացավ Մկրտիչ Փորթուգալյանի, Մինաս Չերազի, Արփիար Արփիարյանի և մի խումբ այլ գործիչների մասնակցությամբ Հայաստանում ձրի ուսում և արհեստ տարածելու նպատակով ստեղծված մի նոր ընկերություն։ Սրա նախաձեռնողներն սկզբում մտադիր էին այն կոչել Մ. Նալբանդյանի անունով, կամ «Երկաթագործ եղբայրք», բայց, կասկածների տեղիք չտալու համար կոչեցին «Արարատյան»։ Նույն տարվա հունիսին Մ. Փորթուգալյանն ընկերության ատենապետի պարտականությունները թողնելով Մ. Չերազին, կրթական տեսչի պաշտոնով մեկնում է Վան, որտեղ նրա ջանքերով բացվում է «Հայրենասեր» ընկերության առաջին լսարանը։ Վանից նա անցնում է Թիֆլիս և «Արարատյան» ընկերության ծրագիրը ներկայացնում Գր. Արծրունուն։ Վերջինս նրան խոստանում է ապահովել «Մշակի» և նրա կողմնակիցների նյութական ու բարոյական աջակցությունը։ Դրանով երաշխավորվում էր արևմտահայերի և արևելահայերի համագործակցության ամրապնդումը։ Հավանաբար Գր. Արծրունու խորհրդով և պատերազմի հետ կապված դժվարությունների պատճառով Մ. Փորթուգալյանը մոտ մեկ ու կես տարի մնում է Թիֆլիսում, աշխատակցում «Մշակին» և նրա օգնությամբ զբաղվում «Արարատյան» ընկերության օգտին հայտարարված հանգանակության կազմակերպմամբ։

1878 թ. Մ. Փորթուգալյանը վերադառնում է Վան ու նույն թվականի հոկտեմբերին հիմնադրում նշանավոր վարժապետանոցը, որը բացվում է 1879 թ. հունվարի 1-ին։

Այդ շրջանում էլ թուրքական ու քրդական հարստահարությունների դեմ պայքարելու, ժողովրդին ինքնապաշտպանության համար բարոյապես նախապատրաստելու և զինելու նպատակով Վանում և այլուր ձևավորվում են գաղտնի նոր կազմակերպություններ։

Միաժամանակ հայ ազատագրական շարժումներին հետամուտ ընկերություններ էին ստեղծվում նաև Արևելյան Հայաստանում։ 1869 թ. Ալեքսանդրապոլում, իսկ 1874 թ. Ղարաքիլիսայում հիմնադրվում են «Բարենպատակ ընկերություն» և «Հայրենիքի սիրո գրասենյակ» կազմակերպությունները, որոնց գլուխ էին կանգնած ուսուցիչ Արսեն Կրիտյանը, Պետրոս Հայկազունին, Համբարձում Բալասանյանը և ուրիշներ։ Միմյանց հետ համագործակցող արևելահայ ազատագրական այս առաջին խմբակների անդամները ծանոթ էին Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությանը, և հեղինակի մտքերն ու լուսանկարները տարածում էին երիտասարդության մեջ։ Թեև սոցիալական խայտաբղետ կազմ ունեցող այդ խմբակների անդամների մեջ քաղաքական-գաղափարական միասնություն չկար, բայց նրանց ընդհանուր նպատակը մեկն էր՝ ազատագրված տեսնել իրենց ժողովրդին։ Արսեն Կրիտյանի կողմից «Բարենպատակ ընկերության»

հիմնադրման շրջանում գրված մի կուռում հայ ժողովրդին ազատության համար պայքարի հանապարհ էր մատնացույց արվում, ազգն արյամբ փրկելու պատգամ տրվում նրան[11]։

Ժանդարմական վարչության կողմից 1875 թ. հայտնաբերված ու ջախջախված այս ընկերությունների գործունեությունն ուղղված էր սուլթանական ու ցարական բռնակալությունների դեմ։ Այդ նույն շրջանում հակապետական գործունեության մեջ էր մեղադրվում նաև ալեքսանդրապոլցի Ալեքսանդր Հովակիմյանը, որը հայրենասիրական բանաստեղծություններ էր արտասանում և տարածում, «հանցավոր» զրույցներ կազմակերպում համաքաղաքացիների շրջանում»[12]։

1876 թ. Դր. Արծրունին կոչ էր անում արևմտահայերին, բալկանյան ժողովուրդների օրինակով, ապստամբել թուրքական լծի դեմ[13]։

Հանգելով ապստամբելու և Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու դաղափարին Արծրունին գտնում էր, որ դրանով հայ ժողովուրդը կփրկվի ֆիզիկական ոչնչացումից։

Արևմտահայերն իրենք էլ հանդես էին գալիս թուրքական տիրապետությունից ազատագրվելու ծրագրերով և կաթողիկոսին հղած խնդրագրերում հորդորում նրան զբաղվել իրենց վիճակի բարելավման հարցով։ Կ. Պոլսից չորս հազար անձանց ստորագրությամբ ուղարկված այդ նամակներից մեկում նրանք հուսաբեկ գրում էին, որ հակառակ դեպքում ստիպված կլինեն կերության անտանելի լուծը թոթափել «...հեղամբ արյամբ մերոյ»[14]։

2. ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԵԼՔԸ 1877—1878 ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և Հայկական հարցի արծարծումը Սան-Ստեֆանոյի ու Բեռլինի պայմանագրերում չափազանց կարևոր նշանակություն ունեցան արևմտահայ ազգային-ազատագրական շարժման համար։ Հայ ժողովրդի արևմտյան հատվածի թուրքական բռնակալական լծից ազատագրման հույսն առավել ցայտուն կերպարանք ստացավ և մղեց նրան իր փրկության համար սեփական ուժերով պայքարելու ուղին։ Գարեգին Սրվանձտյանցն այդ օրերին գրում էր. «Ծառրեն պետք չէ բան հուսալ, չանենք մենք գմեզ հոգալ, պատրաստվիլ ու ցույց տալ ազգաց, թե մենք ալ ազգ մի ենք...»[15]։ Ժողովուրդը արձագանքում էր ազատագրական պայքարի կոչին։ Պանդուխտները Կ. Պոլսից և այլ վայրերից վերադառնալով, իրենց հետ, հարազատներին որպես նվեր, գենք էին տանում միայն[16]։

Առաջին ըմբոստացողները եղան զեյթունցիները։ Տակավին 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին ապստամբ լեռնականներն արդեն կազմել էին Զեյթունն ազատագրելու ինը կետից կազմված մի ծրագիր։ Այն կենսագործելու համար նրանց պատվիրակությունը մեկնեց Կարին

---

11 Տե՛ս Վ. Ա. Պարսամյան. Հայ ժողովրդի պատմություն, հ. 3, Երևան, 1967, էջ 312—313։
12 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1405, ց. 521, գ. 396, թ. 82—86։
13 Տե՛ս «Մշակ», 1878, № 28։
14 Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թ. 228, վավ. 23։
15 «Մասիս», 1879, № 2224։
16 Տե՛ս Հ. Նշյան. Առաջին կայծերը, 1930, էջ 83։

և օգնություն խնդրեց ռուսական բանակից, հատկապես իրենց զենք տրամադրելու հարցը դնելով գեներալ Լազարևի առջև։

Պատերազմից հետո սկսված արտագաղթի հախուռն օրերին, դարձյալ Զեյթունն էր, որ եզակի բացառությամբ, չտարվեց գաղթի համատարածով և նրանց որդիներն, իրենց Թաղապետ-իշխանների ղեկավարությամբ, Տավրոսի լեռնակածանների վրա երևացին պանդուխտի ցուպի փոխարեն հրացան բռնած։ Նորից որոտաց Սարգիս եպիսկոպոս Կիլիկյանի հրապարակորեն օծած Թմբուկի զորահավաք ազդարարող ձայնը, որը զեյթունցիների համար հընչում էր որպես ազատագրական պայքարի սրբազան կոչ[17]։

Վերստին ապստամբության դրոշ պարզած զեյթունցիների երիտասարդ ու անխոնջ առաջնորդ Նորաշխարհյան (Ենիտունյան) Պապիկ իշխանը, օգնություն խնդրելու համար ռուսական բանակ մեկնած պատվիրակներին սպասելով, իր փոքրաթիվ աշխարհազորայիններով ամրացել էր Պերզնկա լեռան քարանձավում։ Զեյթունից շատ հեռու գտնվող ռուսական բանակների վրա հույս դնելը գործնական չէր։ Հերոս լեռնականներին մնում էր սեփական ուժերով դիմագրել Զեյթունի վրա շարժվող թուրքական բանակներին։

1878 թ., երբ ծավալվեց Զեյթունի նոր ապստամբությունը, զեյթունցիներին դաշինք առաջարկող Ահմեդ բեկի առաջնորդությամբ սկսվեց նաև Կոզանյան կոչվող լեռնաբնակ թուրքերի ըմբոստությունը կառավարության դեմ։ Նույն թվականի սեպտեմբերին Ահմեդ բեկի զորքերին պարտության մատնած թուրքական զորախմբերը հոկտեմբերին արդեն արշավեցին Զեյթունի վրա, հանդիպելով Պապիկ իշխանի և նրա համախոհների կազմակերպած զինված դիմադրությանը։ Սակայն ապստամբներին օգնության շտապող Ավագկալ գյուղի դպրոցի տնօրեն Հարություն Ջագրյանի (Ջոլագ վարժապետ) և Ֆռնուզի վանահայր Նիկողայոս եպիսկոպոսի ղեկավարած վաշտերը մատնությամբ ծուղակն ընկան և անհավասար մարտում պարտություն կրելով, նահանջեցին, իսկ ղեկավարները գերի ընկան։ Բայց զեյթունցի քաջամարտիկները չընկճվեցին։ Ուստի ռուս-թուրքական պատերազմից հետո ռազմական հոգսերից ձերբազատված սուլթանական կառավարությունը որոշեց անհապաղ զբաղվել Զեյթունի հարցով։ Նա դիմեց ապստամբներին ընկճելու խաբեության իր փորձված միջոցին։ Բարենորոգումներ կատարելու անվան տակ Զեյթուն ժամանեց մի հանձնաժողով, և Գ. Զոհրապի բնորոշմամբ, իր պաշտած միակ աստվածը բռնապետությունը դարձրած թուրքական բարձրաստիճան հայ պաշտոնյա Հ. Նուրյանի ու Սսի Մկրտիչ կաթողիկոսի մասնակցությամբ։ Հանձնաժողովը զեյթունցիներից հավաքեց հազարից ավելի հրացան։ Ապա համոզեց նրանց չարգելել Զեյթունում նախատեսված կառավարական զինանոցի շինությունը։ Դրա փոխարեն զեյթունցիները հարկային ու քաղաքացիական աննշան առանձնաշնորհումներ ստացան միայն։ Կիլիկյայի ազատագրական շարժման ականավոր գործիչ Գր. Արարդյանը, որ հանդես եկավ կառավարության քաղաքականության դեմ, աքսորվեց Կ. Պոլիս։

Թուրքական կառավարության կողմից անարգորեն խաբված ապստամբ լեռնականները զենքը վար դրին՝ կրկին վերցնելու համար։ Զեյթունի քաղաքագլուխ Պապիկ իշխանի երկու հարյուրյակը 1884 թ. նորից ամրացել էր անմատչելի լեռներում ու վերստին դարձել ապստամբության ոգին։ Նույն

17 Տե՛ս Գ. Տեավլեր, Զեյթուն, հ. Բ, Փարիզ, 1946, էջ 64։

օրերին թուրքական զորքերի դեմ հերոսաբար մարտնչում էին Զեյթունի ու շրջակա գյուղերի ապստամբ լեռնականները՝ զեյթունցի նշանավոր հայդուկ Փանոս Քեշիշյանի ղեկավարությամբ։ Այս խումբն էր, որ մի քանի տարի անց նորից հանդես եկավ հարստահարվող հայ գյուղացիների պաշտպանությամբ և վերսկսեց դինված պայքարը կառավարական զորքերի դեմ[18]։

Կառավարությունը բոլոր միջոցներով փորձում էր կանխել շարժման հետագա ծավալումը։ Զեյթունի տասը կենտրոններում, Բ. Դռան ցուցումով, կազմակերպված հրդեհները մոխիր դարձրին հայ աշխատավոր ժողովրդի ողջ ունեցվածքը։

Զեյթունի ապստամբությանն ուշացումով արձագանքեցին Վասպուրականում, Սասունում, Ալաշկերտում, Արևմտյան Հայաստանի այս շրջաններում, հատկապես 1880 թ., զինված ելույթները հաջորդում էին միմյանց։ Վանում սովյալ բնակչությունը փորձեց գրավել կառավարական շտեմարանների ցորենը։

Այդ օրերին Արևմտյան Հայաստանում կատարված հարստահարությունների ու բռնությունների մասին տեղեկագրերը այլևս Բ. Դռանը ներկայացնելու փոխարեն, պատրիարքարանի կողմից շրջաբերականներով ուղարկվում էին Թուրքիայի օտարերկրյա դեսպաններին, իսկ արևմտահայ ժողովրդի ազատագրման համար գործնական ծրագրերով հանդես էին գալիս տեղերում ստեղծված ազատագրական խմբակները։ Սրանց ծնունդն ու գործունեությունն արդյունք էին և ուղիղ համեմատական ռեակցիայի մռայլ ու ռազմաշունչ այն հարձակմանը, որ մոլեգնեց սկսած հատկապես 1879—1880 թվականներից։

1880 թ. օգոստոսի 30-ի հրամանով Բ. Դռան կողմից արգելվեց «Հայաստան» անվան օգտագործումը պաշտոնական գրություններում։ 1881 թ. մարտի 7-ին Կարինի ռուսական հյուպատոսը զեկուցում էր Վարդան Մամիկոնյանի և «Մայր Հայաստան» նկարների ոչնչացման, ամենուրեք ժողովների բռնի ուժով խափանման, հայկական դպրոցներում հայոց պատմության դասավանդման արգելման և Բ. Դռան հայահալած քաղաքականության այլ դրսևորումների մասին[19]։ Կ. Պոլսում գրավաճառ Դ. Դավաֆյանը բանտ նետվեց միայն նրա համար, որ վաճառել էր Հևոն Զ-ի գերեզմանի նկարը։ Բռնագրավվում և այրվում էին բոլոր այն գրքերը, որոնցում Հայաստան անունն էր հանդիպում։ «Մշակի» հետ միասին արգելվեցին նաև «Փորձի» և «Մեղու Հայաստանիի» ու 1881 թ. հայկական օրացույցի մուտքը Թուրքիա։ Դեռ 1879 թ. Կ. Պոլսում արգելվեցին հայերեն ներկայացումները։ Սահմանվեց մամուլի և առավել ևս գրականության խիստ գրաքննություն[20], խստությունները սկսվեցին հայկական դպրոցների նկատմամբ։ Դավառական դատախազների քմահաճույքով փոխվում էին դպրոցական ծրագրերը, ամենաանմեղ գրքերը բռնագրավվում ու նետվում խարույկների մեջ։ 1881 թ. ապրիլին Վանի նահանգապետի հրամանով արգելվեցին դպրոցներում կազմակերպվող հրապարակային դասախոսությունները[21]։

---

18 Տե՛ս Հ. Մ. Պողոսյան, Զեյթունի պատմություն, Երևան, 1969, էջ 308—309։

19 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. Բազարխով, 1881/1884 թթ., գ. 1625, թ. 2—3։

20 Տե՛ս նույն տեղում։

21 Տե՛ս «Մշակ», 1881, № 74։

Հայկական նահանգները բնակեցվում էին Թուրքիայի եվրոպական մասից ու Կովկասից գաղթեցված մահմեդականներով։ Երկրում տեղական հայ պաշտոնյաների փոխարինում էին Թուրք չինովնիկները։ 1881 թ. ապրիլին պաշտոնից ետ կանչվեց Վանի փոխնահանգապետ Մկրտիչ Աղաթոնը։ Փոստային բաժանմունքներում ու մաքսատներում ստուգումներն այնքան էին խստացել, որ փորձեցին հսկողություն սահմանել օտարերկրյա, հատկապես ռուսական հյուպատոսների ստացած գաղտնի գրությունների վրա։ Նրանց կասկածում էին հայերի համար գաղտնի զենք ստանալու մեջ, դաշնամուրն անգամ հրանոթի տեղ ընդունելով[22]։ Ահռելներ էին որոնվում բունություններն ու ձերբակալությունները ավելացնելու։ Թուրքական ֆեսերի փոխարեն մշեցոց արախչինների ցուցադրական երևալը Կ. Պոլսում որակվեց որպես ցույց կառավարության դեմ։

1880 թ. հունվարին անհիմն մեղադրանքով բանտ նետվեցին «Բերճումանը էֆքյար» («Մտքերի թարգման») խմբագիր Տ. Ճիվելեկյանը և արտոնատեր Ա. Սարգսյանը, որոնք իշխանությունների կողմից կասկածվում էին հնդպոխական ինչ-որ կոմիտեի պատկանելու և հայերին զենքի կոչելու մեջ։ 1883 թ. օգոստոսին արգելվեց «Մենճուայի հավատիսը» («Մաղկաքաղ լուրերի»), որը հանդես էր գալիս թուրքական իրականության արատավոր երևույթների քննադատությամբ։ 1882 թ. հոկտեմբերի 21-ին գավազրաբար սպանվեց Մ. Նալբանդյանի համախոհներից մեկը՝ դոկտոր Հովհաննես Քյաթիպյանը։ Հետագայում խորհրդավոր հանգամանքներում իրենց մահկանացուն կնքեցին Զեյթունի հռչակավոր հերոս Պապիկ իշխանը, նշանավոր բժիշկ Տիգրան Փեշտիմալճյանը, խորեն արքեպիսկոպոս Գալֆայանը, Հակոբ Գազազյանը և ուրիշներ։ Գ. Զոհրապը հետագայում խոսելով թուրքական բռնությունների մասին, ամենասարսափելին համարում էր այն, որ դրանք առաջին հերթին ուղղված էին հայ ժողովրդի գմտքի ու սրտի դեմ»[23]։

Հայ ժողովրդի արևելյան հատվածը նույնպես ենթարկվում էր ազգային ճնշման։ Սակայն ակնհայտ էր հայությանն երկու հատվածների միջև եղած տնտեսական ու քաղաքական կացության շոշափելի տարբերությունը։ Արևելահայ ժողովրդի վիճակն անհամեմատ բարենպաստ էր Թուրքիայի ֆեոդալական, բարբարոսական իրավակարգում հոգևոր ու ֆիզիկական ոչնչացման սպառնալիքի առջև կանգնած արևմտահայության համեմատ։

Սակայն հայ ժողովրդի ազգային ազատագրության գաղափարը խորթ էր նաև ցարական կառավարությանը։ Անդրկովկասում ցարիզմի գաղութային քաղաքականությունն առավել ցայտուն դրսևորվեց 1881 թ. ապրիլյան մանիֆեստի հրապարակումից հետո, երբ սկսեց իշխել ռեակցիոներ Կ. Պ. Պոբեդոնոսցևի վարած քաղաքական գիծը։ Ընդհանուր ճնշման ուժեղացման հետ մեկտեղ, աստիճանական և հալածանքներն ու սահմանափակումները այլազգիների նկատմամբ[24]։

Ցարիզմն արհեստականորեն խոչընդոտում էր Անդրկովկասի ժողովուրդների մտավոր առաջընթացը։ 1884 թ. ուսուցիչ Ս. Ե. Համբարձումյանի դիմումին՝ արտոնել իրեն Թիֆլիսում հրատարակելու «Զրույց» անունով շա-

22 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. Քաղարխիվ, 1881/1884, գ. 1625, թ. 31։

23 Գ. Զոհրապ, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1962, էջ VI։

24 Տե՛ս М. Н. Гернет, История царской тюрьмы, т. 3, М., 1961, стр. 391—392.

բաթաթներ, պատասխանում են, որ Կովկասի քաղաքական վարչության ղեկավարությունը նպատակահարմար չի գտնում թույլատրել իրեն վստահված երկրամասում հայերեն լեզվով պարբերական մամուլի զարգացումը[25]։

Ցարական պաշտոնյաները փորձում էին քշնամանք սերմանել Կովկասյան ժողովուրդների միջև։ 1885 թ. փակվեցին Կովկասի հայկական դպրոցները։

1883 թ. նոյեմբերի 24-ին Ռուսաստանի հաղորդակցության մինիստրը կառավարությանը հայտնում էր իր այն ձեռնարկումների մասին, որոնք ուղղված էին հաղորդակցության բնագավառում աշխատող հայ պաշտոնյաներին հայաբնակ վայրերում ունեցած պաշտոններից ազատելուն և այլ շրջաններ տեղափոխելուն։ Այդ ուղղությամբ միջոցառումներ էին ձեռնարկվում նաև մյուս գերատեսչությունների գծով[26]։

Ցարական կառավարությունը քշնամական դիրք գրավեց նաև արևմտահայերի ազատագրման նկատմամբ։

1883 թ. մայիսի 17-ին Մոսկվա՝ Մելքոն Փանյանին գրած նամակում Րաֆֆին գանգատվում էր, որ «կառավարության տրամադրությունը Հայկական հարցի վերաբերմամբ այժմ ինչպես երևում է փոխվել է»[27]։ Իսկ «Կայծերի» երկրորդ հատորի հրատարակության առիթով Րաֆֆուն արդեն մեղադրում էին հեղափոխություն բարոզելու մեջ, քանի որ այն ուղղված էր ոչ թե Ռուսաստանի, այլ Թուրքիայի դեմ։ Գր. Արծրունին նույնպես դժգոհում էր, թե նախկինում գրաքննիչը՝ ինքը գալիս հորդորում էր խիստ հոդվածներ տպագրել Արևմտյան Հայաստանի վիճակի մասին, իսկ այժմ արգելում են գրել[28]։

Ահա այս իրադրության մեջ, ուժեղացող ռեակցիային դիմադիր բարձրանում ու ծավալվում էր արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը։

3. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ–ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԼՄԲԱԿՆԵՐՆ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ռուս-Թուրքական պատերազմից ու Բեռլինի կոնգրեսից հետո վերելք ապրող հայ ազատագրական շարժումը լայն թափ հաղորդեց Կ. Պոլսում և Թուրքիայի այլ քաղաքներում գործող և նորաստեղծ հայկական բարեգործական ընկերությունների աշխատանքներին։

1880 թ. հունիսի 1-ին Կ. Պոլսի Արարատյան, Դպրոցասիրաց-Արևելյան և Կիլիկյան հայկական բարեգործական ընկերությունները միավորվեցին «Միացյալ ընկերությունը հայոց» անունով։

Կ. Պոլիս ժամանած նոր սերնդի լիբերալ ներկայացուցիչները՝ Մ. Չեբաջը Լոնդոնից, Մ. Փորթուգալյանը՝ Վանից և Գր. Նիկողոսյանը՝ Թիֆլիսից, այլ գործիչների հետ միասին մտորում էին արևմտահայության ազատագրման ծրագրերը։ Սակայն ազատագրական շարժման խթանող ուժը գավառն էր, որտեղ ծնունդ էր առնում և հուժկու թափ ստանում աշխատավոր զանգ-

---

25 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 776, ց. 12, գ. 49, 1883, թ. 8։

26 Տե՛ս նույն տեղում, ֆ. 229, գ. 1136 թ. 3—10։

27 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, Երևան, 1964, էջ 572, 592

28 Տե՛ս «Դարձ», № 3, մասն Բ, Բաքու, 1917, էջ 93։

վածների ըմբոստությունը։ Վանում, Կարինում և այլ վայրերում կազմակերպված խմբակներն իրենց գործունեությունը նպատակամղեցին դեպի հայ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպման, ապա զինված ապստամբությամբ թուրքական լծից ազատագրման դժվարին ուղին։

Ռուս-թուրքական պատերազմից հետո Արևմտյան Հայաստանում ստեղծված գաղտնի կազմակերպություններից էր 1878—1879 թթ. Վանում ձևավորված «Սև խաչը»։ 1881 թ. Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպության ղեկավարներից մեկի՝ Ա. Կերեքջյանի այցելությունը Վան հնարավորություն է ստեղծում սերտ կապ հաստատել Արևմտյան Հայաստանի այդ երկու գաղտնի կազմակերպությունների միջև։

1882 թ. մայիսին, Ազգային սահմանադրության 22-րդ տարեդարձի օրը, Վարագում, տոնակատարությանը մասնակցելու նպատակով, գաղտնի կերպով զինվորական հագուստներ էին պատրաստվել հեծյալ ու հետիոտն այն հայ աշխարհազորայինների համար, որոնք պետք է ուղեկցեին երեք հազարանոց քափորին և որոնք «ամենքն ալ զինվորական մարզանքներով վարժված էին իբր զինվորներ, ունենալով իրենց սպաները, ենթասպաներ ու տասնապետները»[29]։

Վանում գործում էր «Զինակիր» կոչվող մի խումբ, որն զբաղվում էր ազատագրական մարտերի ապագա աշխարհազորայինների զինավարժությամբ։ Կազմակերպված էր նաև «Քաղաքական ակումբ», որտեղ, ինչպես և Հայկազյան կենտրոնական վարժարանում, հայրենաշունչ դասախոսություններով հանդես էին գալիս Մկրտիչ Փորթուգալյանը, Տաճատ Պիլեջյանը և ուրիշներ։ Իսկ «Հայրենասերների միությունը», որի տեսուչն էր Մարկոս Նաթանյանը, փաստորեն «Սև խաչի» լեգալ մի թևն էր։ «Սև խաչը» խստորեն պատժում էր՝ այն հայերին, որոնք թուրքերին, քրդերին կամ պարսիկներին զենք էին վաճառում։ «Սև խաչի» գործունեությունը շարունակվեց մինչև 80-ական թվականների կեսերը։ Այդ կազմակերպությունը հանդիսացավ Արմենական կազմակերպության միջուկը։

Վասպուրականում ազատագրական շարժման ոգին Մ. Խրիմյանից, Մ. Փորթուգալյանից և ռուսական փոխհյուպատոս Կ. Կամսարականից կազմված եռյակն էր։

Ռուսական բանակների հետ Կարին ժամանած Կոստանդին Կամսարականը, 1879 թ. արդեն որպես ռուսական փոխհյուպատոս, աշխատում էր Վանում։ Նրա հանձնարարությամբ ռուսերենից հայերեն թարգմանվեցին փոխադրության կանոնները, Վանում ձևնարկվեց ստեղծելու նման ընկերություն, որի շնորհիվ, նրա համոզմամբ, հայ գյուղացին կազատվեր վաշխառուի ճանկերից[30]։ Նա միջամտում ու լուծում էր հայերի և թուրքական իշխանությունների միջև եղած վեճերը, պաշտպանության տակ առնում օգնության կարիք զգացող հայ կարոտյալներին։

Կամսարականի հայասիրական գործունեությունը աչքի զարնվեց և ցարական կառավարությունը 1884 թ. նրան տեղափոխեց Արևմտյան Հայաստանից։ 1885 թ. Բ. Դռան հրամանով Վանից արտաքսվեցին Մ. Խրիմյանն ու

---

29 Հ. Ճանկեսյան. Հիշատակներ հայկական ճգնաժամեն, մաս Ա—Բ, Կ. Պոլիս, 1913, էջ 89։

30 Տե՛ս Ա. Թոխմախյան. Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, Թիֆլիս, 1881, էջ 83։

Մ. Փորթուգալյանը։ Քիչ ուշ շարժման մեջ կարևոր դեր սկսեց խաղալ Մկրտիչ Ավետիսյանը (Թերլեմեզյան)։

Հիշյալ եռյակին հարած խմբավորումն ուներ հակառակորդների մի ամբողջ բանակ Վանի նախկին առաջնորդ Պողոս վարդապետ Մելիքյանի զինակիցներից, որոնք իրենց հակառակորդների՝ ապողոսյանների կողմից պախարակվում էին որպես հայրենիքի դավաճաններ։ 1886 թ. հունիսին Վանի առաջնորդական ընտրությունների ժամանակ թուրքական իշխանությունները փորձեցին սվիններուի ուժով Պողոսին առաջնորդի աթոռին բազմեցնել, բայց ժողովրդական բողոքի ալիքն այնպիսի կերպարանք ստացավ, որ շուտով վերածվեց զինված ընդհարման։ Սակայն այն անողոքաբար ճնշվեց։ Վանի ժողովրդական հուզումների այդօրինակ բախը նույն 1886 թ. Պողոսին հորձանքով քշեց դեպի Լիմ անապատի մենաստանը, իսկ 1896 թ. սպանվեց ժողովրդական վրիժառուի գնդակով։

Շուտով ստեղծվեցավ արգելքից «Քաղաքական ակումբի» գործունեությունը։ Շուկայի պատին փակցված հայտարարությունը, ուր նշված էր Փորթուգալյանի բանախոսության թեման՝ «Ժամանակը հասել է, հայեր ի՞նչ ընենք» իր վրա հրավիրեց Վանի գլխավոր դատախազ Ռաֆֆի բեյի ուշադրությունը, և նա ակումբի գործունեությունն ու դասախոսությունները դադարեցնելու հրաման տվեց, իսկ Փորթուգալյանն իշխանությունների կողմից հարցաքննության ենթարկվեց որպես «զրգռիչ»։

«Սև խաչ» կազմակերպությունը փորձեց նախապատրաստել Դավաչի (Ռշտունիք) և շրջակա գյուղացիության ինքնապաշտպանությունը։ 1880 թ. վերջերին, 1881 թ. սկզբներին Վանի հայ երիտասարդությունը հանդես էր գալիս կառավարության դեմ ուղղված զինված ապստամբության բացահայտ կոչերով։ «Ենթե Հայկական հարցը դրականորեն լուծվի,— գրում էր այդ առթիվ Կ. Կամսարականը Կ. Պոլսի ռուսական դեսպանին,— ապա հայերի կողմից ապստամբական շարժումները Թուրքական կառավարության դեմ անխուսափելի են»[31]։

Այդ օրերին, հայ ազգաբնակչության հետ հաշվեհարդար տեսնելու նպատակով, Վանի թուրքական իշխանությունները համալրում էին բերդի կայազորը, զինում բոլոր մահմեդականներին, բանագրավում հայերի մոտ պահված զենքը։ Սրան ի պատասխան, և ի լրումն քաղաքի պատերին փակցված մարտական թռուցիկների, հայերը գաղտնի տարածում էին «Դիտող» ստորագրությամբ նամակներ, ուր դատապարտվում էին նահանգապետի ցուցումով կատարվող ապօրինությունները։

Ազատագրական շարժումն իր մեջ էր առել Վանը, Մուշը, Բիթլիսը և Արևմտյան Հայաստանի ու Թուրքիայի տարբեր շրջանների հայաշատ այլ քաղաքներ։ Բեռլինի կոնգրեսից հետո ազատագրական պայքարի իր գործունեությամբ Կ. Պոլսում, Երզնկայում ու Դերսիմում աչքի ընկավ Կարապետ Ղումբիկյանը։

Մշեցի Հակոբ տարկավագ Ղևոնդյանը (Տեր-Ղևոնդյան), 1879 թ. Կ. Պոլսում հրատարակած բանաստեղծությունների իր ժողովածուում, բոլշևնեբի օրինակով զենքի դիմելու և անկախության նվաճման կոչ էր անում։ 1880 թ. Կ. Պոլսի պանդուխտների գլուխ անցած նա մի բողոքագիր ներկա-

31 ՌԱՔԱ, ֆ. Կոստանդնուպոլսի դեսպանություն, 1881, գ. 1567, թ. 21—22։

յացրեց սուլթանին, որի համար էլ բանտարկվեց։ Բանտից ազատվելով, անցավ Մուշ և ակտիվորեն մասնակցեց գաղտնի խմբակների աշխատանքներին։ 1883 թ. սկզբներին Հ. Ղևոնդյանի ձիու քամբը ստուգելիս ոստիկանները հայտնաբերեցին «խռովարար թղթեր» և նա նետվեց Մուշի բանտը։

Սասունցիների հետ համախմբվելու և միացյալ ուժերով ապստամբական շարժումներ սկսելու նպատակով 1878—1880 թթ. նռանդով գործում էր «Թռչնիկ Պետրոսյանի» նախկին խմբագիր Գրիգորիս Ալեքձյանը։ Իսկ Մուշում ոգևորությունն այնտեղ էր հասել, որ Առաքելոց վանքի Միացյալ ընկերության Մուշի կենտրոնական վարժարանի սանները փողոցներում ու շուկայում շրջում էին՝ բարձրաձայն երգելով. «Կործանի Տաճկաստան, Կեցցե Հայաստան...» Դրա համար վարժարանի տեսուչ Մկրտիչ Սարբյանը նախ զգուշացվեց, ապա 1884 թ. որպես «խռովարար» ձերբակալվեց, իսկ 1887 թ. վերջերին կառավարական հրամանով վարժարանը փակվեց։

«Պաշտպան Հայրենյացի» առնչությամբ Կարինում կատարված ձերբակալությունների օրերին Բիթլիսի նահանգապետն իր գրասեղանի վրա անհայտ ձեռքով գրված հայերեն մի նամակ է գտնում, ուր պարզաբանված էր տրված, շորս օրվա ընթացքում հեռանալ քաղաքից, այլապես գաղտնի ընկերության գործադիր խորհուրդը հայտնում էր, որ որոշում է ընդունել ապանել նրան։ Սարսափը համատարած էր և նահանգապետը շտապեց ճողոպրել Սղերդ։ Երզնկայում դինվորական խստագույն միջոցներ ձեռնարկվեցին շարժման ևնթադրվող ելույթները վերացնելու և ապստամբությունը կանխելու համար։

1882 թ. տպագրած մի ոտանավորի պատճառով փակվեց «Մամուլը» և բանտ նետվեց նրա խմբագիր Գ. Այվազյանը, որին մեղադրում էին նաև «Պաշտպան Հայրենյացի» հետ կապեր ունենալու մեջ։ Հայ ժողովրդին «հինգհարյուրամյա քնից» արթնանալու կոչող այդ ոտանավորը ստորագրված էր կյուրինցի Մանուկ Զոհրանի անունով, ուստի ձերբակալություններ սկսվեցին նաև Կյուրինում (Սեբաստիայի մոտ)։

Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը։ 80-ական թվականների սկզբների արևմտահայ ազատագրական շարժման պատմության մեջ կարևոր դեր խաղաց Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը։ Բելինի կոնգրեսին հաջորդած հուզումնալի մի շրջանում Կարինի երիտասարդության ջանքերով հիմնադրվեց «Բարձր հայոց ընկերությունը»։ Թուրքական իշխանությունները «բարձր» բառի մեջ ինչ-որ քաղաքական երանգ տեսնելով այն արգելեցին։ Սակայն 1881 թ. մայիսին, Խաչատուր Կերեքեյանի ջանքերով հիմնադրվեց «Պաշտպան Հայրենյաց» գաղտնի կազմակերպությունը։ Հրապարակորեն «երկրագործական ընկերություն» անվանվ անունը կրող այս կազմակերպության ղեկավարությունն իրականացնում էր հինգ հոգուց կազմված խորհուրդը։ Հայ ժողովրդին ազգային-ազատագրական պայքարի հանելու հետամուտ այս կազմակերպության առաջնահերթ խնդիրը հայ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպումն էր, ապա և պայքարը ժողովրդի քաղաքական ազատագրության համար[32]։

«Պաշտպան Հայրենյացը» ուներ տասնապետության կազմակերպական

---

32 Տե՛ս Ռ. Փ. Հովհաննիսյան, Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպությունը, էջ 282—333։

սկզբունք։ Նրա տարբեր ջոկատներում ընդգրկված աշխարհազորայինները նախօրոք ոչ մի առնչություն չպետք է ունենային միմյանց հետ, չպետք է ճանաչեին ընկերության հիմնադիրներին ու ղեկավար գործիչներին։ Կազմակերպության անդամներից, առանց բացառության, երդում էին ընդունում, և այդ երդմնագրերը պահվում էին տասնապետների մոտ[33]։

Գործնական օգնություն ստանալու նպատակով Կերբեջյանը մեկնում է Թիֆլիս, ապա՝ Երևան։ Թիֆլիսում հանդիպումներ է ունենում արևելահայ մի շարք գործիչների հետ և համաձայնության գալիս, որ նրանցից մեկը, ապրատամբության հարցը խոր և բազմակողմանի ուսումնասիրելու և կազմակերպության աշխատանքներն առավել գործնական դարձնելու նպատակով մեկնի Կարին։ Այդ առաքելությամբ 1882 թ. հուլիսին Կարին են ժամանում Բագրատ Նավասարդյանը և Աբանն Թոխմախյանը, ինչպես նաև Հարոն (Նիկողայոս Տեր-Հարությունյան)։ Կարինում Բ. Նավասարդյանն օգնում է «Պաշտպան Հայրենյացի» կազմակերպական ամրապնդմանը։

Միջոցներ են ձեռնարկվում Անդրկովկասից և այլ վայրերից զենք ձեռք բերելու։ Նախատեսվում էր զենքի հայթայթումը կազմակերպել հայ վաճառականների միջոցով։ Դրա համար կամավոր նվիրատվություններ էին կատարում կազմակերպության քիչ թե շատ ունևոր անդամները։ Տարբեր նպատակների անվան տակ անց էր կացվում հանգանակություն։ Կազմակերպությունն ուներ նաև զինագործական գաղտնի արհեստանոց՝ Զայդարայի հեռավոր թաղամասում, Կարինի հայտնի զինագործ Ավետիս Վեմյանի ղեկավարությամբ, որը 1882 թ. կեսերին պատրաստվում էր որպես կազմակերպության ներկայացուցիչ մեկնել Զեյթուն և մնալ այնտեղ, Զեյթունում կենտրոնացված զինագործարան ստեղծելու մտադրությամբ։

«Պաշտպան Հայրենյացի» ղեկավարությունը տեղերում իրագործելու նպատակով որոշվում է Արևմտյան Հայաստանի քաղաքներում ստեղծել հեղափոխական խորհուրդներ։ Մշակված էր նաև կենտրոնների համար նշանաբանը ամիսը մեկ փոխելու կարգ։ Կազմակերպությունը պատրաստել և տարածել էր հեղափոխական թռուցիկներ։

Զերբակալությունների ժամանակ Պալաս Տեր-Ղազարյանի մոտ գտնված անդամատոմսը ցույց է տալիս, որ կազմակերպությունը ունեցել է մեծ թվով համակրողներ։ Իսկ կոշկակար Հարությունի մոտ եղած տոմսը վկայում է նրա հայկական աշխարհազորի ենթասպա լինելը[34]։

Կերբեջյանների տանը, ուր սկզբում տեղավորված էր «Պաշտպան Հայրենյացի» գաղտնի վիմագրատունը, տպագրվում է կազմակերպության 2400 անդամատոմս, որից 340-ը ուղարկվում է Վանի հեղափոխական խորհրդին։ Կազմակերպության գերագույն խորհուրդը ջանքեր գործադրեց կապեր հաստատել նաև քրդերի հետ։

1882 թ. նոյեմբերին «Պաշտպան Հայրենյացը» դիպվածով հայտնաբերվեց թուրքական իշխանությունների կողմից։ Սկսվեցին ձերբակալությունները։ Սակայն բանտարկվածների թիվը 76-ից չանցավ շնորհիվ կազմակեր-

---

33 Կազմակերպության անդամները ստանում էին անդամատոմսեր, որոնք «Պ. Հ.» («Պաշտպան Հայրենյացի») դրոշմով թերթիկներ էին։ Դրոշմագրերի վրա նկարված էր խաչաձևված թուր և գաղտնի ու գրված էր «Ազգային բարենպաստակ ձեռնարկ»։

34 Տե՛ս ՌԱՔՄ, ֆ. Քաղաքախվ. 1881/1884 թթ., գ. 1625, թ. 113—119։ Ռ. Փ. Հովհաննիսյան. նշված աշխ., Հավելվածը։

պության տասնապետական կառուցվածքի։ Ձերբակալություններ սկսվեցին նաև Թուրքիայի հայաշատ այլ քաղաքներում։

Կազմակերպության հայտնաբերումից անմիջապես հետո թուրքական իշխանությունները իրարանցման մեջ ընկան, և կուսակալի տագնապալի ու միտումնավոր հեռագրերն ազդարարեցին ողջ Արևմտյան Հայաստանը հեղափոխական շարժման մեջ լինելու և առաջիկայում Ռուսաստանի օգնությամբ հայկական ապստամբություն սկսվելու մասին։ Երզնկայում տեղավորված թուրքական 4-րդ բանակը շարժվեց դեպի Կարին։ Քաղաքի ամրոցի հրանոթներն ուղղվեցին դեպի հայկական թաղամասերը։ Այնպիսի իրարանցում էր սկսվել, կարծես «ահեղ բանակ մը օսմանյան գահուն հաստատությանը սպառնա»[35]։ Բայց հետո, երբ պարզվեց, որ այդպիսի իրարանցման հարկ չկա, նրանք հանդարտվեցին, և, Կ. Պոլսից ստացված հրահանգների համաձայն, ձերբակալություններն ու հարցաքննություններն սկսեցին կատարել ավելի գաղտնի։

Ձերբակալվածներին բանտում ենթարկում էին ահավոր խոշտանգումների։ Բայց ոչինչ չէր վհատեցնում հայրենասերներին։ Այդ օրերին Կարինի հույները հանգանակությամբ մի գումար են հավաքում և իրենց առաջնորդի միջոցով հանձնում Մ. Օրմանյանին՝ ձերբակալվածների ընտանիքներին օգնելու նպատակով։ Դա հույն ազգաբնակչության համերաշխությունն էր իրենց հայ բարեկամներին։

1883 թ. ապրիլի 6-ին ավարտվեց մեղադրական եզրակացությունը։ Պետական մեղադրողը հայտարարեց, որ կազմակերպության անդամները ցանկացել են հեղափոխական ճանապարհով Թուրքիայից անջատել «Օսմանյան երկրների մի մասը, այսինքն էրզրումը և շրջակայքը»[36]։ 1883 թ. ապրիլի 7-ին սկսվեց «Պաշտպան Հայրենյացի» 56 անդամների դատավարությունը, որն արևմտահայերի առաջին քաղաքական դատն էր Թուրքիայում։ Քառասուն հոգի դատապարտվեցին տարբեր ժամկետների (3—15 տարի) բանտարկության։ Որպես ղեկավարներ դատապարտվեցին խաչատուր Կերեքցյանը՝ 15 տարվա, Կարապետ Նշկյանը (հետակա կարգով)՝ 13 տարվա, Հակոբ Իշխալացյանն ու Հովհաննես Ասատուրյանը՝ 10-ական տարվա և Ալեքսանդր Էթալիկյանը՝ 7 տարվա բանտարգելության[37]։

«Պաշտպան Հայրենյացն» իր ճյուղերով տարածվել էր Արևմտյան Հայաստանում։ Նրա հենարանը քաղաքի արհեստավորական դասն էր և շրջակա գյուղացիությունը «...Գրեթե բոլորը կամ բոլորովին կարոտ են, կամ օրը աշխատող և օրը ուտող»,—գրում էր Օրմանյանը «Պաշտպան Հայրենյացի» բանտարկված անդամների մասին[38]։

1886 թ. սեպտեմբերին բանտից ազատված խ. Կերեքցյանի ու Հ. Իշխալացյանի ջանքերով «Պաշտպան Հայրենյացը» որոշ աշխուժություն ապրեց,

---

35 ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրության Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվ (ԳԱԹ), Թ. Ազատյանի ֆ., բաժին XII, վավ. 11507։

36 Նույն տեղում, վավ. 11508։ Տե՛ս նաև «Մասիս», 1883, № 3463—3464։

37 Չորս գործիչներ դատապարտվեցին 6, իսկ 31-ը՝ 5-ական տարվա ազատազրկման։ Միայն հետագայում պատժաչափի ժամկետները կրճատվեցին և 1884—1886 թթ. ընթացքում դատապարտյալները վերադարձան տուն։

38 ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., բաժին XII, վավ. 11512։ Տե՛ս նաև ՌԱՔԱ, ֆ. Քաղարխիվ, 1881/1884, գ. 1625, թ. 83—85։

որը հանգեցրեց 1890 թ. Կարինի տարաժամ զինված ելույթին։ Ընկերությունը ապրեց սոսկ կազմավորման շրջան և դադարեց գոյություն ունենալուց իր ձգտումների կենսագործման համար մղված պայքարի առաջին քայլերն անելիս։ Բայց նրա գործունեությունը նշանակալից երևույթ էր արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների մեջ։

* * *

Թիֆլիսում, Բաքվում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Շուշիում, Մոսկվայում, Պետերբուրգում, ինչպես նաև Եվրոպայի մի շարք քաղաքներում ստեղծված հայկական գաղտնի կազմակերպություններն ու խմբակները, չունենալով գործունեության միասնական ծրագիր, այս կամ այն կերպ նպաստում էին Արևմտյան Հայաստանում բորբոքված ազատագրական շարժումներին։ 80-ական թվականների սկզբներին սկսվեց արևելահայ գործիչների՝ «ազատության զինվորների» պարբերական անցումը «Երկիր»՝ Արևմտյան Հայաստան, ինչպես նաև կամավորական խմբերի ստեղծումը՝ արևմտահայերին զինված օգնություն ցույց տալու նպատակով։ Այդ շրջանում Պետերբուրգի հայ ուսանողներից շատերը թողեցին ուսումը, մեկնեցին Տուլա՝ զինագործություն սովորելու։ Իսկ ավելի ուշ անցան Թիֆլիս, ապա Պարսկաստան ու տեղակայվելով Մակուում, զբաղվում էին զենք հայթայթելու գործով։

1881—1882 թթ. Մոսկվայի հայ ուսանողության ջանքերով ձևավորվեց մի գաղտնի կազմակերպություն՝ «Հայրենասերների միություն» անունով։ Կազմակերպությունն իր խմորատիպ թերթի՝ «Ազատության ավետաբերի» էջերում ու հրապարակած մարտաշունչ թռուցիկներում, մի քանի տարի շարունակ, սոցիալական ու ազգային-ազատագրական պայքարի էր կոչում հայ ժողովրդին։

«Միության» ղեկավարները, հատկապես «Ազատության ավետաբերի» փաստական խմբագիր Ներսես Աբելյանը, կրում էին ռուս նարոդնիկների ազդեցությունը և հետապնդում օտար ու սեփական կեղեքիչներից հայ ժողովրդին ազատագրելու նպատակ։ Կազմակերպության աչքի ընկնող և հիմնադիր անդամներից էին նաև Դավիթ Ներսիսյանը, Թամար Ադամյանը, Միքայել Ջալլյանը, Աբգար Արտեմյանը, Սիմոն և Սրապիոն Տեր-Գրիգորյան եղբայրները և ուրիշներ։ «Հայրենասերների միության» գործունեությունը 1884 թ. արդեն խաթարվեց, բայց այն իր գոյությունը պահպանեց մինչև 1886 թ.։

«Միությունը» կապեր էր հաստատել նաև տակավին 1881—1882 թթ. ձևավորված ու Երևանում գործող «Հայասեր-ազգասեր» կազմակերպության հետ[39], «Հայասեր-ազգասերը» դատապարտում էր փոքրաթիվ ժողովուրդների նկատմամբ ցարիզմի վարած գաղութային քաղաքականությունը, աշխատավոր ժողովրդին հորդորում պաշտպանել իր իրավունքները։ Տարածում էր հայ թագավորների ու զորավարների, Անիի և Հին Հայաստանի այլ քաղաքների նկարները, ինչպես նաև «Մայր Հայաստան» («Հայաստանի ոգին») հանրահայտ նկարը։

---

39 Ժամանակակիցներն ըստ երևույթին այդ կազմակերպությունը կոչել են ինչպես «Հայասեր», այնպես էլ «Ազգասեր» անուններով, բայց այժմ պատմագրության մեջ շփոթության տեղիք չտալու համար (երբեմն կարծել են, թե սրանք երկու տարբեր կազմակերպություններ են եղել) ընդունված է կոչել «Հայասեր-ազգասեր»։

Կազմակերպության ակտիվ գործիչներից էին «Արաքս և Կուր գետերի գանգատը» բանաստեղծության հեղինակ Ռուբեն Ջալալյանը (Հասան-Ջալալյան), Երևանում հրատարակված առաջին հանդեսի՝ «Առողջապահական թերթի» (1881) հիմնադիր ու հրատարակիչ, բժիշկ Լևոն Տիգրանյանը, Վասիլ Եղիազարյանը, Հովհաննես Տեր-Զաքարյանը, Երևանի հայկական իգական դպրոցի տեսուչ Գայանե Հովհաննիսյանը, «Պսակ» թերթի խմբագիր Վասակ Պապաջանյանը, Տրդատ Վարդանյանը, Թովմաս Մհերյանը և ուրիշներ։

Ընկերության անդամները նամակագրություն ունեին Րաֆֆու հետ, որն իր նամակներից մեկում Ռուբեն Ջալալյանին խնդրում էր օգնել Կ. Պոլսի «Արարատյան» ընկերության հանձնարարությամբ արևմտահայերի ազատագրման ծրագրերով Անդրկովկասում շրջող Շահնազարին[40]։

Կազմակերպությունը «Հրատարակչական ընկերության» անվան տակ, զբաղվում էր հանգանակությամբ և այլ միջոցներով նոր տիպի զենքի ձեռք բերմամբ ու այն, ինչպես նաև գումարի որոշ մասը, Արևմտյան Հայաստան առաքելու հարցով։ Ռ. Ջալալյանը և Լ. Տիգրանյանը, կապեր ստեղծելով արևմտահայ գործիչների հետ, Հայաստանի երկու հատվածներում միաժամանակյա ապստամբության հորդորներ էին ստանում նրանցից[41]։

1883 թ. մարտին «Հայասեր-ազգասեր» կազմակերպությունը բացահայտվեց և նրա ղեկավարները աքսորվեցին։ Երևանում կատարված խուզարկությունների ժամանակ Ռուբեն Ջալալյանի մոտ հայտնաբերվեցին Րաֆֆու՝ նրան հասցեագրված 1879 թ. օգոստոսի 16-ի նամակը և այլ գրություններ։ Սրանք պատճառ դարձան «Մշակի» խմբագրությունում և Գր. Արծրունու, ապա Րաֆֆու բնակարաններում կատարված խուզարկության, որի հետևանքով «Մշակը» ժամանակավորապես դադարեցվեց, իսկ Րաֆֆին ենթարկվեց տնային կալանքի։ Վասակ Պապաջանյանի մոտ կատարված խուզարկության ժամանակ գտնվեց «Հայրենասերների միության» հրատարակած կոչերից մեկը։ Երևանի գիմնազիայի աշակերտ, 20-ամյա Ավետիս Օհանջանյանի ձերբակալության ժամանակ հայտնաբերված նամակների հիման վրա խուզարկության ենթարկվեց հեռավոր Բոգորոդսկում հանգստացող Սրապիոն Տեր-Գրիգորյանի բնակարանը, և այնտեղ գտնված թռուցիկների ու նամակների հետքերով հետապնդումներ սկսվեցին նաև Պետերբուրգի, Մոսկվայի ու Խարկովի հայ ուսանողության նկատմամբ։

«Հայասեր-ազգասերի» անդամների հետաքննության արդյունքները, եզրակացության հետ միասին, ուղարկվեցին բարձրագույն իշխանություններին, որտեղ դրանք որոշ ժամանակ մնացին անհետևանք։ Սակայն հայկական դպրոցների փակման նախօրյակին՝ 1885 թ. հունվարին, Երևանում ստացվեց ցարի հրամանը մեղադրվածներին քաղաքից արտաքսելու մասին։ Լ. Տիգրանյանը երեք տարով աքսորվեց Դորպատ, Ռ. Ջալալյանը, Հ. Մատակյանը, Հ. Տեր-Զաքարյանը և Գ. Հովհաննիսյանը՝ Օդեսա, Թ. Մհերյանը՝ Կազան[42]։

Արևմտահայության ազատագրման հարցով եռանդուն էր զբաղվում Թիֆլիսում կազմակերպված Արծրունու խմբակը, որտեղ գործուն դեր ուներ Րաֆ-

---

40 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1405, 1883—84 թթ., ց. 83—84, գ. 11224, թ. 1—279։ Խոսքը վերաբերում է Կ. Պոլսի «Դպրոցասիրաց-Արևելյան» ընկերության տնօրեն Հ. Շահնազարին, որն այդ օրերին գտնվում էր Թիֆլիսում։

41 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 115, ց. 2, գ. 12, թ. 1—23։

42 Տե՛ս Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1879—1917 թթ.), էջ 219—220։

ֆին։ Այս խմբակը 80-ական թվականների սկզբներին համագործակցում էր ինչպես Մոսկվայի «Հայրենասերների միության» Երևանի «Հայասեր-ազգասերի» այնպես էլ Կ. Պոլսի և Արևմտյան Հայաստանի գաղտնի խմբակների հետ։ Պատահական չէ, որ Գր. Արծրունու գրական-հասարակական գործունեության 25-ամյակի առթիվ Վանից ուղարկված նվերի՝ խաչաձև սրերով ոսկյա վահանի վրա գրված էր. «Թուրքահայաստանի ազատագրման առաջնորդին»։

Թիֆլիսի խմբակում Արծրունու և Րաֆֆու հետ միասին գործում էին «Խենթում» անմահացած բժշկապետ, 1881 թ. Թիֆլիսում ստեղծված «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» նախաձեռնող ու հիմնադիր Բագրատ Նավասարդյանը, գեներալ Դմիտրի Տեր-Աստատուրյանը, հայ մեծանուն դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանը, Արսեն Թոխմախյանը, Ալեքսանդր Ստեփանյանը (Սև Սանդրոն), Աբրահամ Դաստակյանը և ուրիշներ։ Հատկապես «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» միջոցով խմբակն արագ ճյուղավորվում էր, որպես սկզբունք պահպանելով միմյանց չճանաչելու և գրագրությունը ծածկագիր այբուբենով կատարելու պայմանը[43]։

Խմբակի հիմնական նպատակը արևմտահայության Թուրքիայի լծից ազատագրելու խնդիրն էր, որին պետք է ակտիվորեն մասնակցեին իրենք՝ արևմտահայերը։ Ըստ որում կային տակտիկական տարաձայնություններ, հատկապես ապստամբության նախապատրաստման գործում արևմտահայերին օգնելիս նախապատվությունն Արևմտյան Հայաստանի այս կամ այն նահանգին տալու հարցում։ Գր. Արծրունին ու Րաֆֆին ավելի կապված էին Մուշի և Ալաշկերտի հետ։ «Պաշտպան հայրենյացի» հետ համագործակցում էին հատկապես Բ. Նավասարդյանը, գեներալ Դ. Տեր-Աստատուրյանը և Գ. Սունդուկյանը։ Վերջինս մի քանի տարի դրանից առաջ Բ. Նավասարդյանի ազդեցությամբ արդեն մտերմացել էր արևմտահայերի ազատագրման ջատագով անձանց հետ, իսկ ավելի ուշ դարձել Թիֆլիսի գաղտնի խմբակի եռանդուն մասնակիցը։ Այս մտայնությունն էլ մղեց նրան դեռ Բեռլինի վեհաժողովի օրերին Եվրոպայից գրել Թիֆլիս՝ կնոջը. «Ինձ թե կու սիրես, իմ քաղցր Սոնա ջան, ուխտ դի աստծո մոտ, որ քու երեխանց հիդ քու ասկի լեզուն խոսիս»[44]։ Իսկ կյանքի մայրամուտին, սրտում անթեղած հոշոտվող ժողովրդի ահռելի վիշտը, իր կտակում նա գրում էր. «Մնաս բարով սիրելի ու պաշտելի ասկ. Աստուած վաթանիդ արժանի անէ»[45]։

Իրեն ամբողջությամբ հայ ժողովրդի ազատագրական պայքարին էր նվիրել Թիֆլիսի խմբակի անդամ Արսեն Թոխմախյանը։ Հայրենաշունչ զեկուցումներով նա մերթ երևում էր Թիֆլիսի հասարակական սրահներում, մերթ որպես կազմակերպիչ շրջում Անդրկովկասի հայաշատ քաղաքներում, այցելում Վան, Կ. Պոլիս, Կարին։ Ավելի հաճախ Ա. Թոխմախյանը հայտնվում էր Մակուում, որը նա առաջարկում էր հանդանակությամբ հավաքած միջոցներով գնել Պարսկաստանից և դարձնել հայ ազատագրական շարժման կենտրոն։

1883 թ. օգոստոսին Ա. Թոխմախյանի հետ «Երկիր» էին անցել նաև Հայկ-Օննիկը (Հայկ Մելիք-Դադյան), Տիգրան Փիրումյանը, Սանդալը

---

43 Տե՛ս Ե. Գեղամյան. Հիշողություններ («Լումա», 1906, № 4)։

44 Գ. Սունդուկյան. Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Երևան, 1961, էջ 348։

45 Գ. Սունդուկյան. Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1952, էջ 494։

(Ալեքսանդր Պետրոսյան) և ուրիշներ։ 1880-ական թվականների սկզբներին, վանից Պարսկաստան տանող ճանապարհին գտնվող ս. Բարդուղիմեոսի վանքի բակի մի անկյունում, ձղրակի սովալլուկ որբերին հավաքած ուսուցանում էր կովկասահայ մի երիտասարդ՝ Զաքի անունով, բայց ավելի հայտնի «Կարմրաշապիկ վարժապետ» անվամբ, շնորհիվ իր գարիբալդիականի կարմիր վերնաշապիկի, որը միշտ կրում էր։ Դա «Երկիր» անցած առաջին «սերմնացաններից» էր, հետագայում ճանաչված գործիչ Բագրատ Թավաքալյանը։

Հայրենասիրական մղումները «Երկիր» տարան նաև Կարապետ Փիլիպոսյանին (Հարություն Ստեփանյան), որը կարճ ժամանակ Վանի վարժապետանոցում ուսուցչություն անելուց հետո, ծառայության անցավ ռուսական հյուպատոսարանում՝ Կ. Կամսարականի մոտ, որը նրան հնարավորություն էր տալիս ազատ երթևեկելու Վան—Կարին—Կ. Պոլիս, ինչպես նաև Ալաշկերտ—Երևան—Թիֆլիս երթուղիներով։

Արծրունու խմբակի գոյությունը դադարեց 1883—1884 թթ., երբ պարզվեց, որ ռուսական կառավարությունն այլևս չի ցանկանում, որ արևելահայերն զբաղվեն արևմտահայության հարցով։

Թիֆլիսում 1882—1883 թթ. ձևավորվեց ու մինչև 1886 թ. հարատևեց նաև մինչ այդ գործող նարոդնիկական ինտերնացիոնալ կազմակերպությունից անջատված հայ նարոդնիկական առաջին խմբակը, որի կազմում էին Մոսկվայից Թիֆլիս ժամանած Ներսես Աբելյանը, Աբրահամ Դաստակյանը, Դավիթ Ներսիսյանը, Թամար Ադամյանը, Քրիստափոր Միքայելյանը, Ալեքսանդր Պետրոսյանը (Սանդալ), Խաչատուր Մալումյանը, Գաբրիել Միրզոյանը, Գևորգ Ղարաջյանը, ապա նաև Սիմոն Զավարյանը, Գալուստ Տեր-Մկրտչյանը (Մխաբան) և ուրիշներ։

1885 թ. փետրվարի 22-ին հրապարակված հայրենասիրական ցասկոտ թռուցիկում խմբակը մարտահրավեր էր նետում «իրեն հատուկ բռնակալությամբ» հայկական դարոցները փակող ռուսական միապետությանը և կոչ էր անում ժողովրդին պայքարի դրոշ պարզել բռնապետներ Ալեքսանդր III-ի, նրա մինիստրների ու կովկասի փոխարքայի դեմ[46]։ Խմբակը հրատարակում էր «Դրոշակ» խմբագրիայ լրագիրը և, արևմտահայերի ազատագրման տեսական հարցերի քննության հետ միասին, նյութական օգնություն կազմակերպում «Երկիր» մեկնողներին, աշխատելով տևական կապեր պահպանել նրանց հետ։

Հայրենասիրական միություններ էին ստեղծվում Բուլղարիայի տարբեր քաղաքներում, ինչպես նաև Ռումինիայում, Ֆրանսիայում, Անգլիայում և այլուր։ 1882 թ. սեպտեմբերին Վառնայում կազմակերպված «Հայրենասիրաց ընկերություն» 1883 թ. ընդունում է 93 կետից կազմված ընդարձակ մի կանոնադրություն[47]։ Այս ընկերությունը փորձում էր կապեր հաստատել ինչպես Թուրքիայում, այնպես էլ եվրոպական երկրներում գործող հայկական հայրենասիրական կազմակերպությունների հետ և ջանում նպաստել մեծ տերությունների կողմից 61-րդ հոդվածի կենսագործման համար ձեռնարկելիք միջոցառումների ապահովմանը։

---

46 Տե՛ս ՀՍՍՀ ԿԳԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 53, թ. 3։ Նաև Գ. Ղարաջյան, Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը Անդրկովկասում, Թիֆլիս, 1927, էջ 50—55։

47 Տե՛ս «Կանոնադրություն հայրենասիրաց ընկերության ի Վառնա», Կ. Պոլիս, 1889։

1885 թ. հոկտեմբերին Բուլղարիայում գործող հայոց հայրենասիրների միությունը, որն իրեն պաշտոնապես կոչում էր «Հայրենիքի իրավունքների պաշտպանության կոմիտե» և հաճախ հանդես էր գալիս Եվրոպայի բոլոր հայ հայրենասիրական կազմակերպությունների անունից, Վառնայի ռազմական փոխհրաձգարանին է հանձնում Ռուսաստանի արտաքին գործոց մինիստրին հասցեագրված մի դիմում, որի նամակները ուղարկվում են նաև մյուս մեծ տերությունների կառավարություններին, նրանց ուշադրությունը հրավիրելով բնաջնջման վտանգի առջև կանգնած արևմտահայության վրա[48]։ Այս ընկերությունն էր, որ Վառնայում հրատարակեց «Իրավունք» թերթը, որը երեք ամսվա կյանք ունեցավ միայն և որի էջերում հայ ժողովրդին պայքարի ու պատմական Հայաստանի տարածքում քաղաքական միավորման կոչ էր արվում[49]։ Բուլղարիայից հանում էին նաև եվրոպական դիվանագիտության վրա հույս չդնելու, սեփական ուժերով, համաժողովրդական հեղափոխությամբ ազատագրվելու կոչեր[50]։

1885 թ. Վանից արտաքսված Մ. Փորթուգալյանն անցնում է Եվրոպա, հաստատվում Մարսելում ու ձեռնարկում «Արմենիա» թերթի հրատարակմանը։ Ապա հետևելով Գր. Արծրունուն և իր մյուս նախորդներին, նա բուլղարների օրինակով պայքարի է կոչում արևմտահայությանը։

Ավելի ուշ՝ 1889 թ. նոյեմբերից, Լոնդոնում ֆրանսերեն լեզվով սկսեց լույս տեսնել նաև բուրքական հետապնդումներից խույս տված Մինաս Չերազի «Հայաստանը» (ալ'Արմենի»), որի էջերում տպագրվում էին հայ ժողովրդի ինչպես խաղաղ առաջադիմության, այնպես էլ պայքարի կոչով հոդվածներ։

Վասպուրականում ամրապնդվում ու հզորանում էր Մ. Փորթուգալյանի և նրա թերթի հետ իր անունը կապած Արմենական կազմակերպությունը, որի գործուն ղեկավարությունն իր ձեռքն էր առել Փորթուգալյանի եռանդուն հետևորդներից մեկը՝ Մկրտիչ Ավետիսյանը (Թերլեմեզյան)։

Արմենական կազմակերպության ծավալած գործունեությունը, հատկապես արևմտահայերի ինքնապաշտպանության կազմակերպման ուղղությամբ նրա ձեռնարկած գործուն միջոցառումները, լայն արձագանք գտան արևմտահայության մեջ։ Այդ կազմակերպությունը, չնայած իր գործունեության երբեմն շատ հեռուն ձգվող շառավիղներին, որոշ իմաստով պարփակված էր ու կրում էր տեղային բնույթ։

Արմենականները հայտարարում էին, որ իրենք, արտահայտում են ոչ միայն Վասպուրականի հայ ազգաբնակչության, այլ ամբողջ արևմտահայության համընդհանուր շահերը՝ թուրք և քուրդ հարստահարիչների դեմ ինքնապաշտպանության կազմակերպման, ապա և օսմանյան դարավոր լծից հայ ժողովրդի վերջնական ազատագրման մտայնությունը։

* * *

1880-ական թվականների երկրորդ կեսին հայ ազատագրական շարժումն արգասավորվեց նաև հայդուկային պայքարի հախուռն թափով։ Տա-

48 Տե՛ս «Геноцид армян в Османской империи», Сборник материалов, Ереван, 1966, стр. 10—13.

49 Տե՛ս С. В. Овнанян, Армяно-болгарские исторические связи, Ереван, 1968, стр. 217—220.

50 Տե՛ս Հ. Ճանկուլյան, Հիշատակներ հայկական հեղաժամեն, մաս Ա—Բ, էջ 133—134։

կավին 1884 թ. բանտից ազատված Հակոբ Սարկավագը նորից երևաց Խնուսում, ապա Կարինում՝ բորբոքվող ազատագրական շարժումների առաջավոր դիրքերում։ Վեց տարի շարունակ, որպես ճանաչված հայդուկ և ազատագրական շարժման գործիչ, նա շրխի կամ վանականի տարազով շրջում էր տեղից-տեղ, փոխադրում էր զենք, զրազվում հայ-քրդական դաշինքի իրագործման, ինչպես նաև Կարինում ազատագրական նոր, գաղտնի կազմակերպություն ստեղծելու գործով։

1886—1889 թթ. Վանում հայբենասեր երիտասարդության գլուխ էր կանգնած՝ հետագայում հայ նշանավոր նկարիչ Փանոս Թերլեմեզյանը։ 1889 թ. ստիպված հեռանալով Վանից, ուխտավորի տարազով նա անցնում է Մուշ և այստեղ մտերմանում ազատագրական շարժմանը հարած Ստեփան անունով մի երիտասարդի հետ։ Սրանք կապեր են հաստատում սասունցի Արաբոյի, Ռուսաստանից զենքի փոխադրությամբ զբաղվող Լևոնի և Մխո Շահենի (Սեֆերյան) հետ, որոնք արդեն ճանաչված Մարգար վարժապետի հետ մեկտեղ Տարոնի խանդավառ երիտասարդության ոգին էին դարձել[51]։ Սրանք, ինչպես նաև Հակոբ Սարկավագը, Հումոն (սալմաստեցի Հարություն աղա) և ուրիշներ, ազգային-ազատագրական շարժման նոր շրջանի առաջին հայ գեղարիներն էին, որ հանդես եկան 1885 թ. սկսած։

80-ական թվականների վերջերին, 90-ականների սկզբներին Երզնկայում ու Սեբաստիայում գործում էր Հովհաննես Մինասյանի (Մինաս օղլու) հայդուկային խումբը, որի գործունեության շառավիղները հասնում էին մինչև Սամսոն ու Տրապիզոն։

Հայդուկային-գեղարվեստական շարժումը, ազգային-ազատագրական պայքարի թեպետ հատվածական, բայց ըմբոստ ու արդարացի մի ձև էր, իր դասակարգային բնույթով հականիհղոլական, դյուղացիական-դեմոկրատական շարժում։ Սկզբնապես դրսևորվելով որպես տեղական հարստահարիչների դեմ ժողովրդի ինքնապաշտպանության համար զենքի դիմած փորրաթիվ խմբերի պարտիզանական պայքար, այն ուղղվեց այդ կեղեքիչների հովանավորող պետական պաշտոնեության ու կառավարության դեմ, ապա դարձավ օսմանյան բռնատիրությունը թոթափելու նպատակ հայ ազատամարտի տարերային ու հախուռն պայքարի կրողը։

Անշուշտ ոչ այնքան հայդուկային ռազմավարությունը, որքան հայ իրականության մեջ նրանց ծնունդն էր ողջունում այդ շարժումների անդրանիկ պատգամախոսը՝ Րաֆֆին, նրբ ոգևորված մատնացույց էր անում հեղափոխական հայդուկին, որպես բռնակալական լծի տակ ճնշված ու հարստահարված, մարդկային բոլոր իրավունքները կորցրած ժողովրդի բողոք, որպես ստրուկի ըմբոստացում իշխող բարբարոսության դեմ[52]։

Թուրքական իշխանությունները շարունակում էին իրենց բռնություններ, հինտորնական ու գավառական բանտերը լցնելով հազարավոր անմեղ մարդկանցով։ 1886 թ. Վանում բանտից ազատվեց Մկրտիչ Ավետիսյանը։ Սակայն մեկ տարի անց նա նորից ձերբակալվեց, այս անգամ Կ. Պոլսում, և աքսորի հանապարհին փախավ Եվրոպա։ Նույն թվականի դեկտեմբերին Ալաշ-

---

51 Տե՛ս ՀՍՍՀ Պետական պատկերասրահի արխիվային բաժին, Փ. Թերլեմեզյանի ձեռագիր հուշերը։

52 Տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1958, էջ 323—324 («Հայդուկներ»)։

կերտում ձերբակալվեց «Միացյալ ընկերության» տեսուչ Մկրտիչ Սարըյանը, իսկ Մուշում՝ ընկերության անդամ և Վանի գավառական ժողովի ատենապետ Մարկոս Նաթանյանը։ Այդ օրերին Վանում խմբերով բանտ նետվեցին նաև բազմաթիվ աշակերտներ։ 1887 թ. Հնթյարիից շղթայակապ Վան տարվեց Արսեն Թոխմախյանը։ Թաքցրած գենք գտնելու հույսով, մուրք ժանդարմները ներխուժեցին Վարագ և տակն ու վրա արեցին ողջ վանքը, ինչպես նաև Այլուր գյուղի եկեղեցին։ «Արտոսր Հայաստանի» աշխատության համար աքսորվեց Պողոս Նաթանյանը։

Ձերբակալություններն ուժեղացան հատկապես 1889 թ., երբ Գոլոշյանն ու Ագրիպասյանը «Երկիր» անցնելու ճանապարհին ընդհարվեցին Բուրքական ոստիկանության հետ, ինչպես նաև Տարոնի պատուհաս Մուսա բեյի կողմից Արգավանքի գյուղապետ Օհանին ողջակիզելու և հայ երիտասարդ գեղջկուհի Գյուլիզարին առևանգելու առթիվ ծագած ժողովրդական դժգոհությունները զսպելու համար։

Երբ մեծ տերությունների դեսպանությունների ճնշման տակ և եվրոպական հասարակական կարծիքին տեղի տալով 1889 թ. Բ. Դուրը Կ. Պոլիս կանչեց հիշյալ Մուսա բեյին՝ նրա կատարած հրեշավոր հանցագործությունների մասին հաշիվ պահանջելու, փորձված ավազակը պատասխանեց, որ ևն համարձակվեն իրեն պատժել, ինքը կհրապարակի իշխանության ներկայացուցիչներից ստացած այն նամակները, որոնցով իրեն մղում էին նմանագործության[53]։ Նույն թվականին Կ. Պոլսում խաղացվեց Բ. Դուռն կողմից հրահանգված մի դատ, որը փաստորեն ավարտվեց Մուսա բեյի արդարացմամբ և դատական ծախսերը դրվեցին Մուշի կեղեքված ազգաբնակչության վրա։ Այդ դատավարությամբ Բ. Դուռը, անշուշտ, առաջին հերթին հետապնդում էր հայ-քրդական հարաբերությունների սրում։ Միայն միջազգային հասարակական կարծիքի ճնշման տակ սուլթանը ստիպված եղավ առժամանակ աքսոր ուղարկել Մուսա բեյին։

Տակավին 1883 թ. Լազարյան ճեմարանից հեռացավ և 1884 թ. «Երկիր» անցավ 17-ամյա Վարդան (Ալեքսանդր) Գոլոշյանը։ 1884—1885 թթ. նա Վանում կապեր հաստատեց տեղի հայրենասեր երիտասարդների հետ, այնտեղից անցավ Սալմաստ ու ստանձնեց ուսուցչի պաշտոն։

1886 թ. Վ. Գոլոշյանը նորից Վանում էր, ապա Մուշում, Սասունում, Շատախում, իսկ 1887 թ. Թիֆլիսում, որպես հանդուցյալիցը ամենուր կազմակերպվող հայրենասիրական խմբակների։ Այդ շրջանում Թիֆլիսի երիտասարդ հայրենասերների հավաքներին մասնակցում էր նաև 18-ամյա Հովհաննես Թումանյանը[54]։ 1888 թ. իր մտերիմներից մեկի՝ Ներսես Մարտիրոսյանի ու Երևանում իրենց միացած Բարսեղ Մելիք-Դրիգորյանի հետ միասին, Իգդիրի վրայով, որտեղ նրանց օգնեցին տեղի երիտասարդ ուսուցիչներ Ա. Ահարոնյանը և Հ. Խոջանեթյանը, Գոլոշյանը մեկնում է Մուշ. Վան, ապա անցնում Սալմաստ և Հաքքվանում նորից մի կարճ ժամանակ զբաղվում ուսուցչությամբ։

1889 թ. մայիսի 15-ին, Հակոբ Սարկավագի հայդուկային խմբին միանալու մտադրությամբ նա իր երկու ընկերների՝ Հովհաննես Ագրիպասյանի

---

53 Տե՛ս «Արձագանք», 1889, № 36։

54 Տե՛ս Արամ Ինճիկյան, Հովհաննես Թումանյան, Երևան, 1969, էջ 199—200։

և Կարապետ Գուլագազյանի հետ մեկտեղ Սալմաստից դուրս գալով նորից բռնում է Վանի ճանապարհը։

Աղբակն անցնելուց հետո, Ջուխ Գյադուկ կիրճում, որը Բաշկալեից (Հայդամակերտ) Վան տանող անցքն էր, Սպիտակ կոչված աղբյուրի մոտ եղակը անակնկալի է բերվում Թերևս պատահականորեն այդ կողմերով անցնող քուրքական ոստիկանների մի ջոկատի կողմից և անհավասար մարտում, վիրավորելով երկու ոստիկանի, Գոլոշյանն ու Ագրիպասյանը քաջաբար կռվում ու ընկնում են, իսկ Գուլագազյանին հաջողվում է փախչել և խույս տալ հետապնդումից։ Ժողովրդի ազատագրման գաղափարին նվիրված հայրենասեր այս երիտասարդները հայ ազատամարտի ճանապարհին ընկած առաջին նահատակներից էին։

4. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԼՈՒԾ ՏԱԿ ՀԵՏՈՂ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Արևմտահայ ազգային-ազատագրական շարժման ուղիներում վաղուց էր ձևավորվել քուրքական լծի տակ հեծող մյուս ժողովուրդների հետ համերաշխվելու, հատկապես հայ-քուրդ-ասորական դաշնակցության գաղափարը։ Քուրդ ցեղապետերի սանձարձակ ասպատակությունները, որոնց մշտապես ենթակա էր արևմտահայությունը, թուրքական իշխանությունների հրահրմամբ հաճախ ոչ միայն խաթարում էին հայ ազատագրական շարժումը, այլև վտանգ սպառնում հայ ժողովրդի ֆիզիկական գոյությանը։ Այս հանգամանքն էլ մեծապես նպաստեց հայ-քրդական դաշնակցության գաղափարի ստեղծմանը։

XIX դարի 70—80-ական թվականներին, որպես Օսմանյան կայսրության հարստահարվող ժողովուրդների, հատկապես հայ, քուրդ, ասորի և հույն ժողովուրդների միասնական պայքարի ջատագովներ հանդես եկան Բաֆֆին, Մ. Խրիմյանը, Գ. Սրվանձտյանցը, Ա. Թոխմախյանը, Ս. Տևկանցը և շատ ուրիշներ։

Բաֆֆին, որ իր պատմական աշխատություններում իսկ բարձրացնում էր ժամանակի հուզող հարցերը, հետևողականորեն շոշափում էր նաև հայ-ասորական դաշինքի խնդիրը, իսկ «Սամվելում» ուղղակի շեշտում՝ ասորիների հետ համերաշխվելու անհրաժեշտությունը։ Ասորիները «...օր մը չէ օր մը հայոց հետ կարող են միանալ զիրենք հարստահարող բռնավորաց դեմ»,— ասում էր Տևկանցի հերոսը և նույնիսկ իր ծրագիրն առաջարկում նրանց առաջնորդին[55]։

Վասպուրականում կենտրոնացված էր քրիստոնյա ասորիների 70—80-հազարանոց մի համայնք, որի անդամների մեծ մասը, առաջնորդից սկսած, մշտապես զինված էին։ Ասորիների առաջնորդը՝ մարշիմոնը, հանգամում էր քրդերի միջոցով քրիստոնյաներին հալածելու և ոչնչացնելու Բ. Դռան հետին նպատակը, ուստի ինքն էլ, հատկապես նրան ենթակա մելիքները, հայ-ասորական, ինչպես նաև հայ-քուրդ-ասորական դաշնակցության ջատագով էին, մանավանդ, որ ասորիներն ընդունում էին Կ. Պոլսի հայոց պատրիարքի իրավասությունը՝ միջնորդի դեր կատարելու Բ. Դռան և իրենց միջև։

---

55 Տե՛ս Ս. Տեր-Սարգսեանց (Տևկանց), Շահենն ի Սիպիր, էջ 150—153։

1881 թ. փետրվարի 13-ին Կ. Պոլսի ռուսական դեսպան Նովիկովին գրած զեկուցում Կ. Կամսարականը հայտնում էր, որ ասորիների առաջնորդները (մելիքները), որոնք հիմնականում ռուսական կողմնորոշում ունեն, համակարծիք լինելով իրենց մարշիմոնի առաջարկին՝ թուրքական կառավարության դեմ ապստամբած Օբնյդուլյա[56] շեյխին օգնելու մասին, գաղտնի անելու սպառնալիքով, պահանջել են նրանից միանալ ոչ թե շեյխին, այլ հայերին և անմիջապես գործնական բանակցություններ սկսել վերջիններիս հետ, իրենց միացյալ ուժերի հետագա գործունեությունն ուղղնշելու համար։ Միաժամանակ ասորիները խոստանում էին հայերին՝ անհրաժեշտության դեպքում դուրս բերել մինչև 15 հազար կամավոր, նրանցից պահանջելով միայն 1000 հրացան[57]։

1880 թ. Դաբրիել Նորատունկյանը Գ. Սրվանձտյանցին ուղղած նամակում հայ ժողովրդի համար ամենակարևոր խնդիրը համարում էր քրդերի հետ մերձենալը և սերտ հարաբերություններ հաստատելը[58]։

Միասնական ճակատի ստեղծման ճանապարհին հայ գործիչները, հարկավ, նկատելին քրդերի հետ միության կազմելու, թուրքական կառավարության կողմից վարձված նրանց ցեղապետերին իրենց կողմը գրավելու և ընդհանուր ուժերով իշխանության դեմ մարտնչելու անհրաժեշտությունը։ Գ. Սրվանձտյանցի կողմից հայ-քրդական զինակցությունը դրվատող «Քիշե Պոլո» ժողովրդական զրույցի գրառումն ու հրապարակումը դրա մի վառ վկայությունն էր։

Թուրքական կառավարությունն զգում էր հայ-քրդական համագործակցության վտանգը և նաևնդով ձևնամուխ եղավ քրդական շարժումները հայ ժողովրդի դեմ ուղղելուն։ Մանավանդ, որ հայ և քուրդ աշխատավոր զանգվածների փոխհարաբերությունները, հիմնականում, բարեկամական էին։ Մեր հարևան նստակյաց քրդերը չէին վնասում մեզ, մենք սիրով էինք ապրում միմյանց հետ,— պատմել էին հայ գաղթականները Բաֆֆուն[59]։ «Այն քրդերը, որոնք գեղցի երկրագործ են, ոչ միայն անվնաս են և հայոց հետ խիստ սիրով, այլև քան զՀայերն առավել հարստահարյալ»[60], և նրանց հետ հայ ժողովուրդն ապրում էր «եղբոր պես»[61]։ Հաճախ ոչ միայն քուրդ, այլև թուրք աշխատավորներն էին հովանավորության տակ առնում իրենց հայ դրացիներին, նրանց պաշտպանում ոստիկանական կամայականություններից[62]։

Մինչև Ղրիմի պատերազմը և Եղդանշիրի նշանավոր ապստամբությունը, որի դրոշի տակ կռվում էր շուրջ հարյուր հազար զինվոր, Բ. Դուռը քրդերի նկատմամբ, առանձին բացառություններով, վարում էր բռնության ու հալածանքի իր վաղնջական քաղաքականությունը։ Ապստամբությունը ճնշելուց հետո կտրուկ փոխվեց թուրքական կառավարության դիրքորոշումը քրդերի նկատմամբ և իշխանությունները բռնեցին նրանց սիրաշահելու ուղին։ Բնա-

---

56 Այլ տեղերում նաև Իրգուլլա, Արեյդուլլա, Ուրեյդուլլա։

57 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. Կոստանդնուպոլսի դեսպանություն, 1881, գ. 1567, թ. 21—22։

58 Տե՛ս «Դիվան հայոց պատմության», հ. ԺԳ, էջ 345—346։

59 Տե՛ս Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, 1957, էջ 509։

60 «Դիվան հայոց պատմության», հ. ԺԳ էջ. 90։ Նաև ՌԱՔԱ, ֆ. Կոստանդնուպոլսի դեսպանություն, 1837, գ. 1573, թ. 5։

61 «Դիվան հայոց պատմության», ԺԳ, էջ 255։

62 Տե՛ս Սմբատ Բյուրատ, Արյունին ճամբուն վրա, Կ. Պոլիս, 1911, էջ 15 և այլուր։

լինի կոնգրեսից հետո Բ. Դուռը ղավաղրաբար հայկական բարենորոգումներին հակադրեց քրդական հարցը։

Թուրքական կառավարությունը ոչ միայն խանգարեց քրդերին հասկանալու, որ հայկական նահանգներում բարենորոգումների կենսագործումը օգտավետ է և քրդերին, այլև կարողացավ քրդական առաջնորդներին համոզել հակառակը։ Քուրդ ցեղապետ Հուսեյն աղան Ա. Թոխմախյանի հետ ունեցած զրույցում ասում էր, որ հայկական բարենորոգումների հարցը երևան գալուց հետո թուրքերը բարեկամացել են քրդերի հետ և իրենց ձեռքով ցանկանում են Օսմանյան երկիրը սրբել հայերից։ Այդ նպատակով «շատ մեծ գաղտնի աշխատություններ են եղել և լինում են»[63]։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ կառավարության կողմից քրդերին բաժանված նոր սիստեմի քսան հազար հրացանը, պատերազմից հետո հատուկ դիտավորությամբ նրանցից չհավաքվեց, որը և ողբերգական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար։ Սակայն քրդական առանձին առաջնորդներ հասկանում էին կառավարության քաղաքականության գեթ իրենց համար վտանգավոր կողմերը և երբեմն զգուշանում Բ. Դռան թելադրանքով կատարվող ջարդերի ու հարստահարությունների ահավոր չափերից, երբեմն էլ նույնիսկ դիմադրում կառավարության հայաջինջ քաղաքականությանը։ Դերսիմում ռուս-թուրքական պատերազմի օրերին ստեղծվեց նույնիսկ թուրք կառավարողների դեմ ուղղված հայ-քրդական զինական դաշինք։ Ու թեպետ կարճատև, բայց միացյալ ճակատ ստեղծվեց թուրքական զորքերի դեմ[64]։ Առհասարակ պատերազմի նկատմամբ Դերսիմի քրդերը չեզոք դիրք բռնեցին, թեպետ խիստ թշնամաբար էին տրամադրված թուրքական իշխանությունների նկատմամբ։

1878 թ. հոկտեմբերին սկսվեց թուրքական կառավարության դեմ տակավին 40-ական թվականներին ապստամբած Բեդրխանի որդիների՝ Հուսեյին և Օսման բեյերի գլխավորած քրդական շարժումը, որին անմիջապես հաջորդեց շեյխ Օբեյդուլլայի՝ 1880 թ. ազատ «Քուրդիստանի» լոզունգով բարձրացրած ապստամբությունը[65]։ Բ. Դռան ջանքերով, սակայն, այն իր սուր ծայրերով, ուղղվեց Վասպուրականի քրիստոնյա ազգաբնակչության ու հարևան Պարսկաստանի դեմ։ Բայց Օբեյդուլլան դեմ էր քրիստոնյա ազգաբնակչության զանգվածային ոչնչացման մասին կառավարությունից ստացած հրահանգների կատարմանը։

Այդ օրերին Մ. Խրիմյանն ահով գրում էր, որ կառավարության դրդումով քրդական մի միություն է կազմակերպվում, որն սպառնում է անդամալուծել Հայկական հարցը, դրան հակադրելով քրդականը և որ Թուրքիայում քրդական օջախ կազմելու նպատակով ամենավայրագ գործողություններ են ծավալվում Աղբակը հայաթափելու ուղղությամբ[66]։

1880 թ. հուլիսի վերջերին Շամդինանում հրավիրված շեյխերի համաժողովում, ուր քննարկվում էր թուրքական կառավարության դեմ ապստամբելու և անկախ Քուրդիստան ստեղծելու հարցը, պատասխանելով մի խումբ

63 Ա. Թոխմախյան, *Մասիս լեռան հարավային ստորոտներ*, էջ 51։

64 Տե՛ս Վ. Ա. Պարսամյան, *Հայ ժողովրդի պատմություն*, հ. III, էջ 291—292։

65 «Քուրդիստան» անվան տակ քրդական առաջնորդները հասկանում էին, իհարկե, նաև Արևմտյան Հայաստանի մի զգալի մասը, հատկապես Տարոն-Վասպուրականը։

66 Տե՛ս Լեո, *Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը*, հ. 2, էջ 120։

շեյխերի՝ քրիստոնյաներին բնաջնջելու մասին առաջարկներին, Օբնյդուլլան բացատրում էր, որ եթե մինչ այդ Բ. Դուռն օգնում էր բոլոր քրդերին, ապա այդ արվում էր նրանց քրիստոնեական տարրերին հակադրելու նպատակով, և եթե «Անատոլիայում» այլևս հայեր չլինեն, այն ժամանակ քրդերը ներքաշվելու են ներքին կռիվների մեջ[67]:

Կ. Պոլիս գնացած բազմաթիվ դիմումները, օտարերկրյա դեսպանների միջամտությունը և Օբնյդուլլայի Պարսկաստան կատարած արշավանքի պատճառով պարսկական կառավարության պաշտոնական բողոքն ու պահանջը՝ Օբնյդուլլային դատելու համար իրեն հանձնելու մասին, ստիպեցին Բ. Դռանը շեյխին հրավիրել մայրաքաղաք: Սկզբում նա երկմտում էր, վախենալով Բ. Դռան դավերից: Վերջապես Օբնյդուլլային շլացնող խարկանքով Կ. Պոլիս տարան, ուր 1881 թ. հուլիսին արքայավայել ընդունելություն ցույց տալով, մոտ մեկ տարի պահեցին այնտեղ և հայերին ջարդելու մասին մանրամասն հրահանգավորելուց հետո, խնամքով նսխապատրաստեցին իբր վաճառականի անվան տակ բաթնված, նրա «գաղտնի փախուստը» դեպի Շամդինան: Սակայն վերադարձից անմիջապես հետո նա փութով բացատրում և պատվիրում էր «...իր մարդոց, որ հայոց հետ լավ վարվին և թե թուրքերուն հայոց հետ բշնամաբար վարվիլը մինչև այժմ սխալ քաղաքականությամբ եղած է»[68]:

Օբնյդուլլան գուցե վերստին մտորում էր ազատ «Քուրդիստանի» համար պայքարի նոր ծրագրեր, բայց 1882 թ. վերջերին նա ձերբակալվում և 1883 թ. Բ. Դռան ցուցումով սպանվում է աքսորի ճանապարհին:

Քրդերի հետ դաշնակցելուն ամեն կերպ խանդարում էին և թուրք կառավարողները: Հայ-քրդական դաշնակցության ստեղծմանը չկարողացան նպաստել Խրիմյանի, Հայկ Մելիք-Դադյանի, Փիլիկ Քիշյանի և այլոց անձնվեր գործունեությունը: Ոչինչ չսվեցին նաև Հակոբ Տեր-Ղևոնդյանի և ժամանակի մյուս գործիչների այդ ուղղությամբ ձեռնարկած քայլերը:

Քրդական որոշ գործիչներ միայն XIX դարի վերջերին սկսեցին արծարծել հայ-քրդական դաշինքի հարցը:

Միասնական պայքարի գործնական ծրագրեր չմշակվեցին նաև արաբ գործիչների հետ, որոնց կողմից հայ-արաբական դաշնակցության ծրագրային փաստաթղթերը ասպարեզ եկան շատ ավելի ուշ: Հայ գործիչներին մշուշոտ երևաց հույն հայրենասերների հակաթուրքական գործունեությունը: Ժամանակին գործնական քայլեր չարվեցին նաև բուլղար հեղափոխականների հետ համերաշխվելու ուղղությամբ, որոնց պայքարի ծրագրերում, որպես կարևոր գործոն, մատնանշվում էր դաշինքի անհրաժեշտությունը թուրքական լուծը թոթափելու հնամամուտ մյուս ժողովուրդների հետ[69]: Մանավանդ, որ 60-ական թվականների վերջերին, 70-ականի սկզբներին Փոքր Ասիա աքսորված բուլղար հեղափոխականները նշանակալի դեր էին խաղացել արև-

---

67 Տե՛ս *К. П. Камсаракан*, Вторженне шейха Обейд-Уллы в Персию в 1880 г. «Сборник материалов по Азии», вып. IX, СПб., 1884, стр. 35; նաև *Карцов*, Заметки о курдах, Тифлис, 1896, стр. 18.

68 «Մշակ», 1882, № 216:

69 Տե՛ս *Стоянов*, Записки о болгарских восстаниях, М., 1953, стр. 80.

մըտահայ ազատագրական շարժման առաջամարտիկների գաղափարական ձևավորման գործում[70]։

Պայքարի իրենց դնդերումներում հայ գործիչները բեպետ նշմարեցին, բայց չկարողացան գործնականորեն հասնել հարստահարվող մյուս ժողովուրդների հետ համընդհանուր ճակատ կազմելուն։ Ավելին, Թուրքական իշխանություններին հաջողվեց հայ ազատագրական շարժմանը հակադրել, նրա դեմ հանել քրդական որոշ ցեղապետերի։

Այսպիսով, արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը մեկուսացած մնալով դրացի քուրդ, ասորի, հույն, արաբ ժողովուրդների պայքարից, չկարողացավ դուրս գալ համընդհանուր շարժման մայրուղի։

5. ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՀԱՐՑԸ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

XIX դարի 70—80-ական թվականներին իր վերելքը ենակոխած հայ ազատագրական շարժումների գաղափարախոսության առանցքը դինված պայքարի, մեծ տերությունների նկատմամբ կողմնորոշման, ազատագրական շարժման սոցիալական բովանդակության ու նրանց առնչության հարցն էր։

Դեմոկրատական ուղղության գործիչները, այդ թվում նաև նրանց հարողները արևմտահայ ժողովրդի փրկությունը տեսնում էին Թուրքական լծի դեմ բալկանյան ժողովուրդների նման ըմբոստանալու, իրենց ազատությունը դինված պայքարով նվաճելու գաղափարի մեջ։

Դատապարտելով Թուրքիայում «հավատարիմ հպատակի» ստրկամիտ բարոզը, նրանք հանդես էին գալիս խնկամանը վատոդամանով փոխարինելու (Մտ. Ոսկանյան), ազատությունը սրով ձեռք բերելու և պաշտպանելու (Րաֆֆի) կոչերով։ Դեռ 60-ական թվականներին հայ ժողովրդին ազատագրական պայքարի էր կոչում «Արծվի վասպուրականը»։ Բեռլինի կոնդրեսից հետո, նրա խմբագիր Մկրտիչ Խրիմյանը զայրույթով նշավակում էր օտար լուծը հեղությամբ տանող, չրողրող ու չպաստամրող հայ ժողովրդին, ապա զենքի ու ըմբոստության կոչում նրան. «...Դեռ պիտի կոտրվիք, դեռ պիտի մորթվիք... քանի որ անդին, անեղջուր, անասպար կապրիք»[71]։

Մեկտացնելով մեծ տերությունների զավթողական քաղաքականությունը, հայ ժողովրդի ազատագրումը դինված պայքարի անհրաժեշտության հետ էր կապում և Մ. Մամուրյանը, իսկ Գր. Չիլինկիրյանը խոսում էր հայրենիքի համար արյուն թափելու առաքինության մասին։ Ժամանակի հրաշունչ ոգին մարմնավորեց Մ. Պեշիկթաշլյանը, վ. Հյուգոյի «Հույն տղան» բանաստեղծության նմանողությամբ գրած իր «Հայ քաջորդուն», «Կուզեմ վառոդ և զնդակներ» ստեղծագործություններով։ Պ. Դուրյանի թախծոտ ու քնարական ոգին հայրենիքին օգնելու տենդով էր բաբախում, իսկ Հ. Պարոնյանն արդեն այդ օգնության ուղիներն էր նշմարում, որոնք անցնել չէր կարելի ոչ եվրոպական դիվանագիտության սարդոստայնի վրայով, ոչ էլ յաթով, քանզի «արտասուքը մանուկներու և կիներու (մեծ մանուկներու) բաժինն է»։ Անգամ ազգային-պահպանողական Կ. Շահնազարյանը փափագում էր, որ յուր

---

70 *Տե՛ս* Տիգրան Միւռեղ. *Ամիգայի արձագանքներ, Նյու-Յորք, 1950, էջ 192, 197։*

71 *Մ. Խրիմյան. Ամրողջական երկեր, էջ 275։*

ազգը «ոչ միայն ազատ ըլլար, այլև իր հայրենիքին ինքնիշխան տիրեր... Իր բազմաժամանակյա ստրկության գարշությունը ճանաչելով, ինքն ալ ցանկար օր առաջ մարդության նպատակին համեմատ ազատորեն ապրել. վանդի աստված զմարդ ազատ և ինքնիշխան ստեղծեր էր»[72]*, Մ. Նալբանդյանի անմիջական ազդեցությամբ իր քնարն էր հնչեցնում Սմբատ Շահազիզը, պատրաստ նրա նման և նրա օրինակով պայքարելու մինչև «սուր ու կախաղան»:*

Առաջընթացի դժվարին ճանապարհին հայ ազգային-ազատագրական շարժումը չկորցրեց իր ժողովրդական-դեմոկրատական բովանդակությունը: Պայքարի դրոշ էր դառնում արդեն «Ազատություն կամ մահ» բնաբանը, որն օրինական ուժ ստացավ Կարինի «Պաշտպան Հայրենյաց» կազմակերպության և Մոսկվայի «Հայրենասերների միության» գրավոր փաստաթղթերում:

«Ես և գուցե իմ բոլոր համախոհներս կընկնենք, բայց մեր անկումը ճանապարհ կբացանե մեր հետևողների առջև. նրանք կանցնեն մեր դիակների վրայով»[73]*. այսպիսի ազդով էր Րաֆֆին ընդհանրացնում ազատագրական շարժման իր գործնական ու տեսական ուղին: Րաֆֆու հերոսները գիտակցում էին, որ իրենք կարող են զոհվել, բայց մտածված գնում էին ողչակիզման ապագայի համար ճանապարհ հարթելու խանդով: Ջինված պայքարի անհրաժեշտությունը դարձել էր օրվա պահանջ, ուստի ժողովուրդների զգացմունքների իսկական արտահայտիչները հանդես էին գալիս «ի զեն» կոչով: «Ո՛վ հայրեր,—ասում էր Րաֆֆու հերոսներից մեկը,—ո՛վ պապեր... եթե դուք այս վանքերի տեղը... բերդեր շինեիք,— եթե դուք սուրբ խաչերի և անոթների փոխարեն... զենքեր գնեիք,— եթ դուք այս անուշահոտության տեղ, որ խնկարկում են մեր տաճարներում, վառոդ ծխեիք,— այնժամ մեր երկիրը բախտավոր կլիներ»*[74]*:*

Ազատության իր հրաշունչ երգերում հայ ժողովրդի ազատագրումը նրա բարձրացրած սրի ծայրին էր տեսնում Ռ. Պատկանյանը՝ կոչ անելով հայ գեղջուկի խոփից սուսեր կռել, մեկնել ռազմադաշտ, հաղթելու և ազատ վերադառնալու պատգամով:

Անգամ պատմական վեպը «ես... պատմական փաստի համար չեմ գրում, այլ ինձ գրավող ժամանակակից շարժման»,— ասում էր Րաֆֆին: Իսկ Վարդան Մամիկոնյանի երգը Ռ. Պատկանյանի առօրյա կոչն էր.

Թող լըռե մունջը, անդամալույծը,
Կամ՝ որոց քաղցր է թշնամու լուծը.
Բայց մենք, որ ունենք հոգի ու սիրտ քաջ,
Եկ անվախ ելնենք թշնամու առաջ,
Գոնե մեր փառքը մահով ետ խլենք
Ու այնպես լըռենք[75]*:*

---

72 *Տ՛ո Աչոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 2, Երևան, 1956, էջ 46—47:*

73 *Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 3, 1962, էջ 192:*

74 *Նույն տեղում, էջ 56—57:*

75 *Ռ. Պատկանյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1964, էջ 28:*

ման առաջին պայմանն հրացանն է[76]։ Իսկ հույն ժողովրդի ազգային հերոս Բոցարիսին գովերգող Վ. Փափազյանը Հայաստանի վաղվա օրն էր մատնանշում, գրվատելով երկար տառապանքներից հետո թուրքական լուծը թոթափած Հունաստանի ներկան, որն արդեն «բարձրագլուխ վայելում է մի փառավոր ազատություն»[77]։

Արսեն Թոխմախյանը, զոհաբերությունն ընկալելով որպես «մարդկային կյանքի անբաժանելի ընկերը», բարեբախտ էր համարում միայն այն երկիրը, այն հայրենիքն ու ազգը, որի որդիները մեծ նպատակների համար գիտեն մեռնել, որոնց համար մահը կյանքի սկիզբն է[78]։

1880 թ. գրած իր «Հայոց աշխարհ» երգում զինված պայքարի կոչ էր անում նաև աշուղ Ջիվանին։

Այլոց նման զենք չառար, գրավոր բան խնդրեցիր,
Կարծում եմ անիրավունք, նորա համար մնացիր[79]։

Մի ձեռքում արոր, մյուսում հրացան բռնելու Գր. Արծրունու կոչը բորբոքել էր անգամ շատ թմրած կրքեր։ Արևմտահայ ժողովրդի ազատագրումը կապելով զինված ապստամբության կամ Ռուսաստանի օգնության հետ, Գր. Արծրունին «Մշակի» էջերը ողողում էր պայքարի ազատաշունչ մարտակոչերով։ Իսկ Մ. Մամուրյանը գրում էր. «Հայաստանը սիրողը չխոսիր, չողբար, այլ անոր դարավոր վրեժը կլուծե... սուրը սրով վանել պետք է, երբ իրավանց ձայնն տկար և անլսելի է...»[80]

Այս հանգը հնչում էր նաև «Հին կռիվը» շարունակող Հ. Թումանյանի «Երկիր» անցնող երիտասարդների բերանում դրած երգի մեղեդիներից.

Հեյ գալիս ենք ով տանջվածներ,
Գալիս ենք մենք զինավառ
Եվ ազատ օր, և կյանք և սեր
Ողջ բերում ենք ձեզ համար[81]։

Իրենց ստեղծագործություններով, իսկ հաճախ նաև գործնական մասնակցությամբ, ազատագրական շարժման ուղեծիր էին ելնում Ա. Արփիարյանը, Մուրացանը, Պ. Պռոշյանը, Հ. Հովհաննիսյանը, Ղ. Աղայանը և ուրիշներ։

Ազատագրական շարժման առաջընթացի ճանապարհին դեմոկրատական ուղղության գործիչներն անհաշտ պայքարի մեջ էին պահպանողականների հետ, որոնց հմայիլ էր լուսավորական շարժման ճանապարհով ազատագրվելու պատրանքը։ «Դուք մի շտապեք, գայթակղության առիթ մի տաք։ Ժամանակը ինքնիրան, կամաց-կամաց, կանի ինչ-որ հարկավոր է»,—այսպես էր դատում «Մեղու Հայաստանիի» սյուներից մեկը՝ Եղիշե Գեղամյանը, Րաֆֆուն մեղադրելով Չերնիշևսկու գաղափարակիցը լինելու մեջ[82]։

---

76 Տե՛ս «Թատրոն», 1876, № 198։

77 Վ. Փափազյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1964, էջ 28։

78 Տե՛ս Ա. Թոխմախյան, Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, էջ 88—89։

79 «Փարոս Հայաստանի», 1881, № 1, էջ 11։

80 Մ. Մամուրյան. Սև լեռին մարդը, Աթենք, 1932, էջ 30, 52։

81 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1959, էջ 42։

82 Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1883, № 39։

Պատահական չէ, որ արևմտահայերի համար լուսավորությունից առաջ հաց պահանջող Ա. Թոխմախյանը «Մեղու Հայաստանի» կողմից դասվեց «ազգային ցեցերի» շարքում[83]։

Միջին գիծ փնտրող կենտրոնի ուղղությունը, «Փորձի» բերանով, արևմտահայ ժողովրդի հոշոտման պատասխանատվությունը գցում էր միայն տեղական իշխանությունների վրա, և մի կողմից կոչ անելով կռվով ձեռք բերել երազած ազատությունը, մյուս կողմից գրում էր. «Կռիվ ասել չենք ուզում հասկանալ հեղափոխական միջոցառումներ», այլ խաղաղ միջոցներով պայքարելը[84]։ Իսկ այդ ուղղության հաջորդ ձայնատարը՝ «Արձագանքը»՝ «...Հավասարապես թշնամի էր թե «Նոր-Դարին» և թե «Մշակին»։ Նա թեև պահպանողական էր, բայց ավելի դեպի ձախ. թեպետ ազատամիտ էր, բայց ավելի դեպի աջ։ Նա կենտրոնն էր և այդ պատճառով ատում էին նրան թե «Նոր-Դարը» և թե «Մշակը»»[85]։

Արևելահայ արիստոկրատիան Խ. Լազարյանի բերանով ազդարարում էր, թե հայերի ազատագրական բաղձանքը անմիտ ցնորք է։

Արևմտահայ լիբերալ-սահմանադրականների տեսակետն էր արտահայտում Մ. Ջերազը, 1870 թ. մայիսի 24-ին արտասանած ճառում նշելով, որ արևմտահայերը տասը տարի առաջ սահմանադրություն ստացան, որն իբր մի իսկական հեղափոխություն էր, ավելացնելով. բայց լավ էր, որ մենք այն արեցինք առանց «Ռոբեսպիերի տապարին» դիմելու։ «Օրհնյալ լինիք խաղաղության զինվորներ, իմաստասեր հեղափոխիչներ, դուք արյունը ատեցիք և ձեր աչը սուրբ պահեցիք»[86]։

1874 թ. Ազգային ժողովում արտասանած իր ծրագիր-elույթում արևմտահայ լիբերալիզմի նահապետներից մեկը՝ Ն. Ռուսինյանը խրատում էր պոլսահայ էֆենդիներին. «խոհեմությամբ զգուշանալ, սահմաննիս ու չափերնիս ճանաչել և բարեխնամ տերության վստահությունը միշտ վայելելու համար մեր գլխեն վեր խնդիրներու հանդգնությամբ չնախաձեռնել...»[87]։

1870—1871 թթ., երբ պատրիարքարանում ու Ազգային ժողովում զբաղվում էին հարստահարությունների մասին զեկուցագրեր կազմելով, Ն. Ռուսինյանը, Սերվիչենը և նրանց համախոհները կամ զգուշավոր լռություն էին պահպանում, կամ հաճախ բացակայում։

Թուրքական տիրապետության դեմ խմորվող ազգային-ազատագրական շարժման երկփեղկվածություն գոյություն ուներ նաև օսմանյան լուծը թոթափելու համար ոտքի կանգնած մյուս ժողովուրդների պայքարի դեգերումներում։

«Գործի պիտի դրվի դանակը, թանաքը արդեն չի օգնում»,—ասում էր բուլղարական ազատագրական շարժման առաջնորդներից Վասիլ Լևսկին։ Մի կարծիք, որ դրանից դեռ շատ վաղ առաջ էին քաշել ու պաշտպանել Մ. Նալբանդյանն ու նրա արևմտահայ բարեկամները։

Պախարակելով բուլղար «լուսավորականների» հեզ վարքագիծը, նրանց հայ համախոհներին էր ազդում Քրիստո Բոտևը, երբ 1875 թ. գրում էր, որ

---

83 Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1883, № 72։

84 «Փորձ», 1877—1878 թթ., № 4, «Ազգային տեսություն»։

85 Վ. Փափազյան, Պատմություն հայ գրականության, Թիֆլիս, 1910, էջ 539։

86 Մ. Ջերազ, Գրական փորձեր, Կ. Պոլիս, 1874, էջ 92։

87 «Ատենագրությունք ազգային ընդհանուր ժողովոյ», 1874, էջ 51—52։

Թուրքիան արդեն տարածել է իր մահացու ձեռքը բուլղար ժողովրդի բոլոր կենսունակ ուժերի վրա և ոչինչ չի կարող հետացնել այդ ձեռքը, բացի կրակից և սրից[88]։

Պահպանողական հոսանքների դեմ մղած պայքարում հայ դեմոկրատական միտքը հարվածի իր սլաքներն ուղղում էր նաև կղերականության դեմ։

Այն ժողովուրդները,— ասում է Մ. Մամուրյանի հերոսը,— որոնք իրենց ամբողջ պայքարը սահմանափակում են պատրիարքի կատարած գործողությամբ, «ազատասիրությունն զուրկ են, և իրենց հաշմությունները փիլոնին ներքև վարագուրելու տրամադիր»։ Վառողը սիրով ընդունող «Արևելյան մամուլը» ծանր ու վտանգավոր է գտնում խունկի հոտը, քանզի առաջինը ազատության, կենաց պայքարի նշանաբանն է, երկրորդն ստրկության թմբիրը[89]։

Այդ դիրքերում անսասան կանգնած էր նաև Բաֆֆին, որը ոչ միայն ազատագրական շարժման գաղափարախոսությանիր հենարանը չէր որնում էկեղեցու մեջ, այլև խախուտ համարելով, խարազանում էր այն։

Ինչպես համընդհանուր ապստամբություն քարոզող արմատական թևում, այնպես էլ նրանից տարբեր պատճենշներով անջրպետված լիբերալ, ազգային-պահպանողական ու կղերահետադիմական հոսանքների պայքարի դիզերումներում առանձնակի բարձրանում էր մեծ տերությունների նկատմամբ ունեցած կողմնորոշման հարցը։

Եվրոպական դիրքորոշումը, որն սկզբնապես բավական հզոր էր, որոշակի սասանվեց Բեռլինի կոնգրեսից հետո։

Առավել զանգվածային էր ռուսական կողմնորոշումը, որի ամենաջերմեռանդ ու գործունյա ներկայացուցիչը Գր. Արծրունին էր։

Ապստամբության կոչելով հայ ժողովրդին ընդդեմ թուրքական բռնապետության, Արծրունին պայքարի իր նիզակներն ուղղում էր նաև եվրոպայի դեմ, մարտահրավեր նետում «ննջգավոր, եսական... ձնշող ու հարստահարող» Անգլիային, որը հնարավորության դեպքում կկողոպտի, կքամի հայ ժողովրդին այնպես, ինչպես կեղեքում է իր գաղութների բազմամիլիոն ազգաբնակչությունը։ «Միակ պետությունը,— գրում էր նա,— որի վրա հայերը կարող են հույս դնել, Ռուսաստանն է»։ Նա համոզված էր, որ եթե Արևմտյան Հայաստանը միանա Ռուսաստանին, «մի քանի տարուց հետո երկիրը կլինի ծաղկած դրության մեջ»[90]։

Սակայն լիբերալ Գր. Արծրունու ռուսական կողմնորոշումը հետու լինելով սոցիալ-դասակարգային իմաստավորումից, նրան հաճախ հորձանքով տանում էր դեպի ցարիզմի նվաճողական քաղաքականության գովերգուի դիրքերը։

Այս և ուրիշ շատ հարցերում Գր. Արծրունուց ու «մշակականներից» իրենց հայացքներով որոշակի տարբերազատվում էին հայ լիբերալ նարոդնիկները, որոնց կարկառուն ներկայացուցիչներից մեկի՝ Հովսեփ Տեր-Մովսիսյանի շեշտված ռուսական կողմնորոշումը հագեցված էր դեմոկրատական բովանդակությամբ։ Ցարիզմի նվաճողական քաղաքականության փոխարեն

---

88 Տե՛ս Христо Ботев, Публицистика, М., 1952, стр. 159—161.

89 Տե՛ս «Արևելյան մամուլ», 1881, հոկտեմբեր, էջ 390։

90 «Մշակ», 1877, № 83։

նա հայ ժողովրդին, որպես բարեկամ ու դաշնակից, մատնացույց էր անում առաջադեմ Ռուսաստանը և ռուս ժողովրդին[91]։

Օսմանյան դիրքորոշում ունեին հատկապես Թուրքական ծառայության մեջ գտնվող հայ պաշտոնյաները։

Սակայն ինչպես բոլոր ողջախոհ հայ գործիչները, այնպես էլ ժողովրդական լայն զանգվածները, երկու պետությունները համեմատելիս, հարկավ, գերապատվությունը միշտ էլ տալիս էին Ռուսաստանին, անգամ իրավացի փաստարկելով, որ բարենորոգումները Թուրքիայում, միևնույն է, չեն իրագործվելու, և արևմտահայերը կամ պետք է հաշտեն Արևմտյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացմանը, կամ գտնեն հնարավորություններ՝ անկախություն ձեռք բերելու համար։

Ակնհայտ էին նաև արևմտահայ ազգային-ազատագրական պայքարում այդ շարժման խնդիրների նկատմամբ տարբեր դասակարգերի ու հասարակական խմբերի ներհակ վերաբերմունքն ու ակնկալությունները։ Նրանցից յուրաքանչյուրը հասարակական աստիճանի իր դիրքից էր նայում ինչպես անկախ հայրենիք ստեղծելուն, այնպես էլ բարեփոխումների կենսագործման հետ կապված հեռանկարներին։

Այս առնչությամբ անդրադառնալով Բեռլինի վեհաժողովի արդյունքներին, մասնավորապես հայերին վերաբերող 61-րդ հոդվածին, Ա. Թոխմախյանը դիպուկ նկատում է. «Չկա մի դասակարգ, որ 61-րդ հոդվածի իրականացումը չցանկանար, բայց ամեն մի դասակարգ յուր ցանկության բոլորովին տարբեր տեսակետով է նայում դրա վրա։ ...Տաճկաստանի էֆենդիների երես առած խմբերը նայում էին նորա վրա, ինչպես մի մեջոցի վերա, որ նրանց կմատակարարի իշխանական ազդեցություն, կամ վարչական բարձր պաշտոններ, դրա համար լինի թերևս, որ այդ խմբերից մի քանիսը արդեն ձգտում են հասնելու ազնվության... վաճառական, կալվածատեր, շորչի քաղաքացիները նրազում են յուրյանց լայնածավալ օպերացիայի վերա... Գյուղացու ակնկալությունը բոլորովին տարբեր է։ Նա սպասում է ֆշվառության արտասուքները սրբելու, կյանքի անդորրության, ազատ շունչ քաշել... ապահովություն յուր կյանքին, յուր ստացվածքին, յուր գործին»[92]։

Հարկավ Արևմտյան Հայաստանի ազատագրումն առաջին հերթին հուզում էր հայ բազմաշարշար աշխատավորություններ։ Իսկ հայ մեծատուններ սարսափում էին զինված պայքարի, հեղափոխության ուրվականից և հանդես էին գալիս «բարեխնամ» տերությանը ծառայելու, լավագույն դեպքում՝ գաղթելու կամ բարենորոգումների համար եվրոպական դիվանագիտությանը դիմելու պահանջով միայն։

Հայ ազատագրական շարժման գաղափարախոսության ելևէջներում հատակորեն ուղենշվում էր այն ճանապարհը, որ տանում էր դեպի ատելություն ու կռիվ Թուրքական բռնապետության, հայրենի երկիրն ավերող, տիրապետող դասակարգերի ու նրանց բռնության դեմ։

Ազատագրական շարժմանը հետամուտ դեմոկրատական կազմակերպությունների ու խմբակների տեսակետը հիմնականում հանգում էր հայ ժողո-

91 Տե՛ս Վ. Ոշականի, Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Երևան, 1956, էջ 392։

92 Ա. Թոխմախյան, Մասիս լեռան հարավային ստորոտներ, էջ 24—25։

վրդի ոչ միայն քաղաքական, այլև սոցիալական ազատագրման գաղափարին։

Հայ ժողովրդի քաղաքական ազատությունն իրական չէր կարող լինել առանց տնտեսական խնդրի, առանց հողային հարցի լուծման, այդ էր ընդգծում 80-ական թվականների սկզբներին Արսեն Բոխմախյանը։

Այս առնչությամբ հատկանշական է իր երկարաձգված ելևէջով Թիֆլիսի, Երևանի ու Արևմտյան Հայաստանի կազմակերպությունների հետ կապված Մոսկվայի «Հայրենասերների միության» դիրքորոշումը։ «Միության օրգան, «Ազատության ավետաբերը» հայ ժողովրդի պարտքն էր համարում ու հաղթանակի հավատով կոչ անում նրան՝ զինված ուժով տապալել սուլթանական անարդ լուծը և «տալ ազատասեր ժողովրդին վայել ինքնուրույն կյանքով»[93]։ Ապա նշավակելով քրդերի ու Թուրքերի հետ միասին իրենց հայրենակիցներին կեղեքող հայ մեծատուններին, նա համարձակորեն պարզում էր իր դավանանքը. որ քաղաքական ազատության մասին դատողությունները հայ ժողովրդի համար սնամեջ խոսքեր կլինեն, եթե հայ երկրագործը, արհեստավորն ու մշակը պետք է նորից հարստահարվեն։

Րաֆֆին, Ղ. Աղայանը և ուրիշներ, ազատագրական շարժման հետ միասին, շեփորում էին հավասարության սկզբունքով կառուցվելիք ապագա հասարակարգի մասին, իսկ Ե. Օտյանի հերոսը համարձակորեն բացատրում էր, որ «ամեն մարդ հավասար է, ժողովուրդը պետք է իր ճակատագրին տեր լլլա, ալ անցած են բռնակալության խավար դարերը, արևը ամենուն համար կփայլի»[94]։

Հայ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության սոցիալական այս ելակետով ինքնին բնորոշվում էր օտար լուծը թոթափելու ձգտող այդ շարժումների ժողովրդադեմոկրատական բովանդակությունը։

Սակայն այնքան էլ հստակ և միաձույլ ու անխոցելի չէր ոչ հայ ազգային-ազատագրական շարժումն ընդհանրապես և ոչ էլ նրա գաղափարաբանությունը։ Ժամանակի տիրական ոգին բյուրավոր ազնիվ ու անխոնջ հայրենասերների մոտ էր ինքնամոռաց ու անձնազոհ պայքարի, որոնք սակայն չէին գտնում այդ պայքարը հաղթանակով պսակելու ճշմարիտ ուղին։ Հայ ազատագրական շարժումները ղեկավարող գործիչներին ու խմբավորումներին չհաջողվեց պայքարի միասնական ծրագրեր մշակել ոչ միայն Օսմանյան կայսրության հարստահարվող մյուս ժողովուրդների, այլև նույնիսկ միմյանց հետ։ Հախուռն այդ պայքարում ժողովրդական լայն զանգվածների տարերայնությունը հաղթահարելու, նրան տևականորեն նախապատրաստելու փոխարեն, նրանք հաճախ իրենց հայացքը հառում էին մեծ տերությունների դիվանագիտական միջամտության մշուշոտ հեռանկարին։

Առաջընթացի իր ճանապարհին տարուբերվելով պայքարի այս դժվարին ելորպատուլյուններում, հայ ազգային-ազատագրական շարժումը, սակայն, ամենևին չկորցրեց իր համաժողովրդական-դեմոկրատական բնույթը՝ միշտ հետամուտ հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական վերջնական ազատագրման։

---

93 «Ազատության ավետաբեր», 1884, № 4։

94 Ե. Օտյան. Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1960, էջ 315։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐՆ ՈՒ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

1. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

XIX դարի 70—80-ական թվականներին ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Արևելյան Հայաստանի տնտեսական կյանքում և սոցիալական հարաբերությունների ասպարեզում զգալի փոփոխություններ տեղի ունեցան։ Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը, դասակարգային պայքարի սրումը, բանվոր դասակարգի ձևավորումը, գյուղացիության հողազրկումն ու գյուղական բատրակների հոծ բանակի առաջացումը և արտագնացության ծավալումն ստեղծեցին քաղաքական պայքարի նոր պայմաններ։ Արևմտահայության ամենուր ուժեղացող ազատագրական պայքարը նոր խնդիրներ դրեց հայ ժողովրդի քաղաքական և հասարակական բոլոր խավերի, նրանց շահերն ու գաղափարներն արտահայտող հասարակական հոսանքների առջև։

Հայ հասարակական-քաղաքական հոսանքները տնտեսական և սոցիալական, քաղաքական ու գաղափարական խնդիրներով բաժանվում էին հիմնականում երեք խմբի՝ պահպանողական, լիբերալ-բուրժուական և դեմոկրատական։

Արևելահայ իրականության մեջ 1870—80-ական թվականներին աղգային-պահպանողական հոսանքն արտահայտում էր տեղական մանր ու միջին արդյունաբերողների, կալվածատերերի և առևտրական բուրժուազիայի սոցիալական շահերը և խիստ անհանգստացած էր պետական հովանավորություն վայելող ռուսական բուրժուազիայի մրցակցությունից։ Պահպանողականները, հայկական պետականության բացակայության պայմաններում, օգտվում էին նկղեցու հեղինակությունից որպես աղգի միասնականության և պետական իրավասությունների օժտված հաստատության։ Բուրժուական արտադրական հարաբերությունների այդ հաստատման մեջ նշմարելով ցարական-պետական քաղաքականության հաղթանակը, նրանք խիստ անհանգստանում էին ցարիզմի ամստկացող հալածանքներից նաև հայոց լեզվի, դպրոցների, մշակույթի օջախների նկատմամբ և ի տարբերություն լիբերալների, ավելի ակտիվ պայքար էին մղում ցարիզմի ազգահալած քաղաքականության դեմ[1]։

Ազգային-պահպանողականներն իրենց քաղաքական կողմնորոշման մեջ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին համարելով դրական երև-

---

[1] *Տե՛ս* Աշոտ Հովհաննիսյան, *XIX դարի 50—60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները*, ՊԲՀ, 1965, № 4, էջ 65—66։

վույթ, Արևմտյան Հայաստանի նկատմամբ ձեռնպահ էին։ Ցարիզմի սաստկացող հալածանքներից հուսահատված, նրանք արևմտահայերի ազատագրության հույսերը չէին կապում միայն Ռուսաստանի հետ, մանավանդ դեմ էին ապստամբական շարժումներին Արևմտյան Հայաստանում։ Նրանք արևմտահայերին առաջարկում էին ավելի շուտ ինքնապաշտպանություն, քան ապստամբություն, իրենք ևս աջակցություն ցույց տալով ինքնապաշտպանության կազմակերպմանը։ Ազգային-պահպանողականները թերահավատ էին եվրոպական պետությունների անշահախնդիր օգնության նկատմամբ. երբեմն միայն թյուրիմացաբար կարծում էին, թե Անգլիայի շահերը որոշ չափով զուգադիպում են արևմտահայերի ազատագրության գործին։

Արևելահայ իրականության հասարակական առաջընթացի մեջ ազգային-պահպանողականները կողմնակից էին կապիտալիստական հարաբերությունների զարգացմանն Անդրկովկասում, սակայն տեղական ուժերի միջոցով։ Միաժամանակ, չըմբռնելով հասարակական զարգացման օրինաչափությունները, նրանք կարծում էին, որ այդ պրոցեսում կարելի է քայքայումից փրկել մանր ու միջին արտադրողներին և այդ ուղղությամբ ժամանակավրեպ միջոցներ էին առաջարկում։ Դրանով իսկ նրանք շահում էին գյուղափրկիչ ուտոպիստական գաղափարներով տարված հայ մտավորականության մի զգալի մասի համակրանքը, որն ակտիվորեն աշխատակցում էր նրանց մամուլին։

Ազգային-պահպանողական հոսանքի, նրա տպագիր օրգանների ու խմբագիր-հրապարակախոսների կարծիքները միշտ չէ, որ համընկնում էին հայ կյանքի մի շարք երևույթների գնահատության հարցում[2]։ Պետրոս Սիմոնյանցի «Մեղու Հայաստանի», Սպանդար Սպանդարյանի «Նոր Դար» պարբերականները ավելի պահպանողական էին, քան Արգար Հովհաննիսյանի «Փորձ» կամ «Արձագանք» շաբաթաթերթերը։ Այս վերջիններիս կողմնակիցները պահպանողականության ձախ թևն էին կազմում և միջին դիրք էին գրավում հայ պահպանողականության ու լիբերալիզմի միջև։

Աշխատավորական զանգվածների սոցիալական պայքարի հարցերում պահպանողականներն ամբողջովին կանգնած էին գոյություն ունեցող կարգերի պաշտպանության դիրքերում։ Այսպիսով, ազգային-պահպանողական հոսանքին հարում էին տարբեր հասարակաշերտեր. չափավոր բուրժուական զարգացման կողմնակիցներ և բուրժուական զարգացման հետևանքով քայքայում ապրող աշխատավորական զանգվածների ներկայացուցիչներ, մանավորապես նարոդնիկական-դեմոկրատական մտայնության արևելահայ գյուղագիրները։

Տնտեսական ու քաղաքական ճնշումները և ազգային հալածանքներն ուժեղացրին աշխատավորական զանգվածների դժգոհությունն ու սոցիալական հուզումները։ Նման պայմաններում տեղական վերնախավերը, դաշինքի մեջ մտնելով ցարական ռեակցիայի հետ, հաճախ դիմակայում էին հայ ժողովրդի քաղաքական պայքարին։ Նրանք երբեմն հակադրվում էին ազգային-ազատագրական շարժումներին ևս՝ համարելով դրանք «տղայական երազներ» և «վտանգավոր մտայնություն»։

---

2 Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 2, էջ 18—105։

Սակայն պետք է նշել, որ որոշ դեպքերում պահպանողականները պաշտպանում էին «նորամուծությունները», եթե դրանք նպաստում էին ազգի միասնությանն ու առաջընթացին։ Այստեղ արդեն նրանք որոշ առումով կամուրջ էին նետում դեպի լիբերալիզմը։ Հանդես գալով որպես ճնշված ազգի ներկայացուցիչներ, առանձին դեպքերում հակադրվում էին ցարիզմի վարած տնտեսական քաղաքականությանը Կովկասում և անգամ ձայնակցում ռուսական բուրժուազիայի մրցակցությունից քայքայվող և ռուսական ու անդրկովկասյան շուկայից դուրս մղվող հայ բուրժուազիային։ Ջնայած պահպանողականները առանձին դեպքերում քննադատում էին ցարիզմի քաղաքականությունը, բայց դեմ էին ըմբոստանալու և ապստամբելու բոլոր փորձերին, քանի որ դրանք տիրապետող պայմաններում համարում էին անհուսալի և վտանգավոր։ Այդ հոսանքի որոշ ներկայացուցիչներ ազգի զարգացման կարևոր խթանը տեսնում էին տնտեսական զարգացման և լուսավորության մեջ։ Սակայն նրանք հայ ժողովրդի սոցիալական և ազատագրական պայքարի հարցերում կանգնած էին պահպանողական դիրքերում։ Նրանք մերժում էին սոցիալական վերափոխումների հեղափոխական պայքարի ուղին։

Այլ էր վիճակը Արևմտյան Հայաստանում։ Թուրքական բռնապետության սոցիալական, ազգային ու կրոնական հալածանքների պայմաններում, այս կամ այն չափով ճնշվում էին հասարակության համարյա բոլոր խավերը, քանի որ քրիստոնյաների կյանքի ու գույքի ապահովության երաշխիք գոյություն չուներ։ Սակայն այստեղ էլ հայ ժողովրդի ազատագրման գործում տարբեր հասարակական խավեր տարբեր մոտեցում ունեին։ Կղերամիրապետական քևին հարող մեծատուններն ու պաշտոնյաները, իրենց շահերից ելնելով, ամեն կերպ աշխատում էին համակերպվել տիրող կարգերին և սուլթանի ողորմածությամբ որոշ բարեփոխումների հասնել։ Դրանք էլ հենց արտահայտում էին ժամանակի հետադիմական դաղափարախոսությունը և մերժում ժողովրդի ազատագրության հեղափոխական ուղին։

Ի տարբերություն պահպանողական հոսանքի, լիբերալ-բուրժուական հոսանքը իր դասակարգային արմատներով զգալի չափով կապված էր հայ դաղթավայրերի և Անդրկովկասի հայաշատ կենտրոնների հետ։ Պետերբուրգը, Մոսկվան, Նոր Նախիջևանը, Աստրախանը, Հյուսիսային Կովկասի քաղաքները, Թիֆլիսն ու Բաքուն ավելի էին կապված լիբերալ շարժման հետ, քան բուն Հայաստանը, որտեղ ավատական կարգերի մնացորդները դեռ զգալիորեն խոչընդոտում էին առաջադիմությանը։

Լիբերալ-բուրժուական հոսանքն արտահայտում էր զարգացող բուրժուազիայի շահերը և քանի որ հայ բուրժուազիան քույլ էր ու երկչոտ, ապա նա իր գոյությունը պաշտպանելու համար հակված էր տիրող կարգերի հետ կամակատար դառնալու։ Մյուս կողմից, քանի որ հայ ժողովուրդը սոցիալական և ազգային ճնշումներից ազատագրվելու մեծ ձիգեր էր գործադրում, հայ բուրժուազիան, ձգտելով շահել ժողովրդի համակրանքը, հանդես էր գալիս համազգային ոլիտակի տակ՝ ամիասնական ազգ» լոզունգով։

Սակայն սոցիալական ու քաղաքական պայքարի հարցերում նա կանգնած էր ռեֆորմիստական դիրքերում և հակադրվում էր հեղափոխական դեմոկրատիզմին։ Ժողովրդի ազատագրման ամենահանգուցային հարցում լիբերալիզմի և դեմոկրատիզմի անջատումը Վ. Ի. Լենինը համարում էր միան-

գամայն օրինական։ Նա նշում է, որ դրա համար պետք է «հասկանալ, թե ինչպիսի հասարակական ուժեր, ինչպիսի դասակարգեր են կանգնած լիբերալիզմի թիկունքում և դեմոկրատիայի թիկունքում, ինչպիսի քաղաքական ձգտումներ են ընկած այդ դասակարգերի էության մեջ»[3]։

Միանգամայն ակնհայտ է, որ հեղափոխության հիմնական հարցերում լիբերալիզմը թեքվում էր դեպի ռեակցիան։ Այնուհանդերձ կային նաև լիբերալ-բուրժուական հոսանքին հարող առաջադեմ գործիչներ, որոնք, սակայն, հեռու էին կանգնած ժողովրդի առօրյա, իսկական հոգսերից, նրա քաղաքական պահանջներից և պայքարից։

«Լիբերալ բուրժուազիան ընդհանրապես,— գրում է Վ. Ի. Լենինը,—լիբերալ բուրժուական ինտելիգենցիան մասնավորապես, չի կարող չձգտել ազատության ու օրինականության, որովհետև առանց դրան բուրժուազիայի տիրապետությունը լրիվ չի լինի, լիակատար չի լինի, ապահով չի լինի։ Բայց բուրժուազիան մասսաների շարժումից ավելի է վախենում, քան ռեակցիայից։ Այստեղից՝ լիբերալիզմի զարմանալի, անհավատալի թուլությունը քաղաքականության մեջ, նրա կատարյալ անզորությունը»[4]։

Ի տարբերություն նախորդ տասնամյակների, հայ հասարակական-քաղաքական հոսանքներն ավելի որոշակիորեն են արտահայտում կյանքում տեղի ունեցած փոփոխությունները, ավելի բյուրեղացած դրսևորում հասարակական հարաբերությունների հեղաբեկումը։ Բուրժուական արտադրական հարաբերությունների զարգացումը, ցարական կառավարության ազգային ճնշման քաղաքականության պայմաններում անգամ, իր հետ բերում էր բուրժուական գաղափարախոսության հաղթանակ։

XIX դարի 70—80-ական թվականներին գնալով վերելք ապրող արևելահայ բուրժուազիայի լիբերալ-բուրժուական հոսանքի նշանավոր ներկայացուցիչը Գրիգոր Արծրունին էր՝ հանձին իր «Մշակ» թերթի ու նրա շուրջը համախմբված մտավորականների։ Բուրժուական այդ նույն հոսանքի ձախ թևն էր արտահայտում Ավետիք Արասխանյանցը իր «Մուրճ» ամսագրով։

Արևմտահայ իրականության մեջ լիբերալ ուղղությունը շարունակում էին գլխավորել Ն. Ռուսինյանը, Սերվիչենը, Գ. Օտյանը և նրանց համախոհները, որոնք ժողովրդի բարեկեցության ապահովումը տեսնում էին Ազգային սահմանադրության շնորհիվ ստացած արտոնությունների մեջ։

Հայ դեմոկրատական հոսանքի գաղափարախոսությունը հատկապես իր արտահայտությունը գտավ 70—90-ական թվականների հայ դեմոկրատ գրողներ Ռ. Պատկանյանի, Րաֆֆու, Հ. Պարոնյանի, Ա. Արփիարյանի, Ղ. Աղայանի, Գ. Չիլինկիրյանի, Մ. Մամուրյանի երկերում և հրապարակախոսական աշխատություններում։ Դրանց ամենաականավոր ներկայացուցիչն անշուշտ Րաֆֆին էր։ Իր վեպերով, հրապարակախոսությամբ նա արևմտահայերի ազգային-ազատագրական գաղափարախոսությունը շաղկապում էր արևելահայերի դեմոկրատական-նարոդնիկական աշխարհայեցողության հետ։

Նախաիմպերիալիստական էպոխայում առաջադիմական էր ոչ միայն դեմոկրատիզմը որպես հասարակական-քաղաքական հոսանք, այլև լիբերալիզմը, իսկ ճնշված ազգերի մոտ, որպիսին էր հայ ժողովուրդը, համադե-

---

3 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 23, էջ 453։

4 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 22, էջ 145։

մոկրատական միտվածություն ուներ և նացիոնալիզմը, որպես ազգային գիտակցության գալու ազդակ։

Հայ դեմոկրատական մտավորականության, այդ թվում բազմաթիվ լեգալ և անլեգալ կազմակերպությունների գլխավոր մտահոգությունը ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրության հարցն էր թե՛ Արևմտյան և թե՛ Արևելյան Հայաստանում։ Բայց քանի որ հայ ժողովուրդը անհամեմատ ավելի ծանր ու անտանելի պայմաններում էր ապրում թուրքական տիրապետության տակ, ուստի դեմոկրատ մտավորականությունն ավելի էր մտահոգված արևմտահայության ազգային ազատագրության հարցով։

Հայ ժողովրդի երկու հատվածների սոցիալական և ազգային-ազատագրական պայքարի լուսաբանման խնդիրների վրա նոր լույս է սփռում Մարքս-Լենինյան տեսությունը։ Վ. Ի. Լենինը ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը դնելով խիստ պատմական հողի վրա, այն բաժանում է երկու էտապի։ Առաջինը՝ ֆեոդալիզմի և աբսոլյուտիզմի փլուզման շրջանն է, երբ ասպարեզ են գալիս բուրժուա-դեմոկրատական ուժերը, ազգային շարժումները մասսայական բնույթ են ստանում և քաղաքականության ասպարեզ ներգրավում «բնակչության բոլոր դասակարգերին՝ մամուլի միջոցով, ներկայացուցչական հաստատություններին մասնակցելու և այլ միջոցներով»[5]։ Մյուս էտապը լիովին կազմակերպված կապիտալիզմի դարաշրջանն է, պրոլետարիատի և բուրժուազիայի սուր հակամարտությունների դարաշրջանը, որը «կարելի է կապիտալիզմի փլուզման նախօրյակ անվանել»[6]։

Առաջին շրջանը, որը հատուկ է հայ ժողովրդի պատմության տվյալ ժամանակահատվածին, բնորոշ է ազգային շարժումների մեջ գյուղացիության լայն խավերի ընդգրկմամբ «երբ պայքարը մղվում է թե՛ ընդհանրապես քաղաքական ազատության և թե՛ մասնավորապես ազգության իրավունքների համար»[7], իսկ երկրորդում՝ առաջին պլանի վրա է մղվում «միջազգայնորեն միաձուլված կապիտալի և ինտերնացիոնալ բանվորական շարժման հակամարտությունը»[8]։ Վ. Ի. Լենինը հատկապես ընդգծում է, որ այդ դարաշրջաններն իրար հետ կապված են անցումային բազմաթիվ թելերով ու օղակներով։ Նա միաժամանակ անհրաժեշտ է գտնում հաշվի առնել ամեն մի երկրի ու ժողովրդի յուրահատուկ պայմանները, քանի որ առանձին երկրներ տարբերվում են «ազգային շարժման արագությամբ, բնակչության ազգային կազմով, նրա տեղավորմամբ և այլն, և այլն»[9]։

Կ. Մարքսը կարևոր նշանակություն տալով ճնշված ժողովուրդների ազատագրմանը, նրանց մղած ազգային-ազատագրական շարժումներին, այն դիտում է նաև որպես սոցիալական պայքար և սոցիալական ազատագրմանը խթանող միջոց։ «Քանի դեռ կենսունակ ժողովուրդը կաշկանդված է օտարերկրյա զավթիչների կողմից,—գրում է Կ. Մարքսը,— նա ըստ անհրաժեշտության բոլոր ուժերը, իր բոլոր ձգտումները, իր ամբողջ եռանդն ուղղում է արտաքին թշնամու դեմ, և այսպիսով, քանի դեռ նրա ներքին կյանքը մնում

5 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 499։
6 Նույն տեղում։
7 Նույն տեղում։
8 Նույն տեղում։
9 Նույն տեղում, էջ 500։

է չլատված, նա ի վիճակի չէ պայքարելու սոցիալական ազատագրման համար»[10]։

Որպես օրինակ Կ. Մարքսը նշում է Ռուսաստանի վիճակը մոնղոլական լծի տակ։ Երբ այդ լուծը կործանվեց, երկրում սոցիալ-տնտեսական կյանքն ու սոցիալական շարժումները բուռն ընթացք ստացան։

Այսպիսով, ազգային ճնշման վերացումը լայն հեռանկարներ էր բացում սոցիալական զարգացման համար։ Ահա հենց դրա համար էին պայքարում հայ դեմոկրատական հոսանքի ներկայացուցիչները, որոնք կարևոր տեղ էին տալիս ազգային-ազատագրական պայքարին։

Բեռլինի կոնգրեսից հետո մտավորականության զգալի մասն այն համոզմանն եկավ, որ հայ ժողովուրդը կարող է ազատագրվել միայն ապստամբական շարժումների միջոցով։ Հայ գյուղացու, մշակների ու պանդուխտ սովյալների. ինչպես նաև քայքայվող մանր արտադրողների շահերի արտահայտիչը դեմոկրատական հոսանքն էր, որի հիմնական պահանջը աշխատավորին հողով ու աշխատանքով ապահովելն էր, նրա սոցիալական և ազգային ազատությունը։ Տնտեսական և քաղաքական կյանքի զարգացումը հնարավոր չէ առանց բռնակալության վերացման։ «Մարդկության մեջ չի կարող լուսավորության ծիլ կանաչել»[11]։ Մ. Նալբանդյանի այս խոսքերը դեմոկրատական հոսանքի նշանաբանն էր։ Դրանք համահունչ էին ռուս և եվրոպական հեղափոխականների դաշափարախոսությանը[12]։

Հետագա սերունդների համար Մ. Նալբանդյանն ազատագրական պայքարի օրինակ էր։ Երևանի նահանգական ժանդարմական վարչության պետի 1873 թ. ապրիլի 9-ի հաղորդումից պարզվում է, որ Երևանում երիտասարդությունը գաղտնի ճանապարհով Թիֆլիսից ստանում էր Մ. Նալբանդյանի նկարները՝ «Հայրենիքի փրկիչը» մակագրությամբ և տարածում բնակչության մեջ։ «Այդ նկարները Թիֆլիսում բաժանվում են երիտասարդներին ձրիաբար,— գրում էր ժանդարմական վարչության պետ մայոր Զոլոտովսկին,— բաժանվում են և ուսումնական հիմնարկներում, դասընթացքն ավարտած հայերին»[13]։ 1880 թ. մարտի 10-ի մի փաստաթղթում նշվում է, որ Թիֆլիսի հոգևոր դպրոցի ուսանող, 18-ամյա Բ. Նավասարդյանը Նալբանդյանի նկարը 500 օրինակ իր ուսուցիչ Մարկոզովի նկարի անվան տակ բազմացրել և տարածել է քաղաքում, որի համար ձերբակալվել և բանտ է նետվել[14]։

Հեղափոխական դեմոկրատական գաղափարները լայն արձագանք էին գտնում ուսանող երիտասարդության շրջանում։ Ուշագրավ է այն փաստը, որ Պետերբուրգի, Մոսկվայի, Խարկովի, Նովոռոսիյսկի (Օդեսայի) հայ ուսանողները միավորված էին ինտերնացիոնալիստական սկզրունքներով և ակտիվորեն մասնակցում էին Ռուսաստանում հասունացող հեղափոխական շարժումներին։

Պետերբուրգի և Մոսկվայի ուսանողական շարժումներին մասնակցում էին մեծ թվով հայ ուսանողներ։ Ռուսիկանական մի հաղորդագրության մեջ

---

10 К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. 18, стр. 555.

11 Մ. Նալբանդյան, երկ, հ. 2, էջ 264։

12 Տե՛ս Աշոտ Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 1, Երևան, 1955, էջ 425—506։

13 Մ. Նալբանդյան, երկ, հ. 4, էջ 348։

14 Տե՛ս նույն տեղում, էջ 351։

նշվում է, որ ռուսական հեղափոխական խմբակներին մասնակցելու համար 1866 թ. 17 անդրկովկասցի ուսանողներ անվստահելի են ճանաչվել, որոնց թվում ռուսներ՝ Կուզմինները և Ն. Կալինինը, վրացիներ՝ Վ. Ջերքեզիշվիլին, Խ. Սավանելին, Ս. Ծերեթելին, հայեր՝ Ի. Իսաբլովը, Ի. Անանովը, Գ. Ջերքեզյանը, հույներ՝ Կանդաուրովները, ադրբեջանցի՝ Փ. Մուստաֆաևը[15]։ Ինտերնացիոնալ սկզբունքներով կազմված Նիկոլայ Կիպիանու խմբակի անդամների թվումն էին Վ. Ջերքեզիշվիլին, Դ. Արդուշելիշվիլին, Ս. Մեսխին, Կ. Ալիխանովը, Ն. Կանանովը, Իսահակյանը և ուրիշներ[16]։ Անդրկովկասցիները համաձույլ էին աշխատում ռուս, լեհ և այլ ազգի հեղափոխական գործիչների հետ։ 1867 թ. Նովոռոսիյսկի համալսարանի անվստահելի ուսանողների շարքում ուրիշ ազգերի հետ նշվում են նաև Է. Լազարևի, Մ. Տեր-Ակոպովի և ուրիշ հայ ուսանողների անունները[17]։

Պետերբուրգում հայ ուսանող Կ. Մելիքովի բնակարանը հեղափոխական կոմիտեի հավաքույթների գաղտնարաններից մեկն էր։ Այդ կոմիտեի կազմում էին նաև վրացի Ա. Բակրաձեն, ադրբեջանցի Իբրահիմ Շանաևը և ուրիշներ։ Երբ 1869 թ. հայտնաբերվեց Նեչաևյան հայտնի կազմակերպությունը, պարզվեց, որ նրա կազմում եղել են մեծ թվով կովկասցիներ։ Կովկասցի բարեկամների օգնությամբ Նեչաևն անցավ արտասահման։ «Հեղափոխական կոմունա» կազմակերպության ղեկավարների՝ Վ. Ջերքեզիշվիլու, Ջ. Իշխանովի, Ի. Ռահիմովի, Ա. Հաջիբեկովի Յ. Սարիբեկովի, Ի. Շանաևի, Ս. Մութաֆյանի գործը լսեց սենատի հատուկ դատարանը և նրանց խիստ պատժի ենթարկեց։ Ջ. Իշխանովը Նեչաևյան կազմակերպություններից մեկի աչքի ընկնող ղեկավարներից էր, որն իր շուրջն էր համախմբել շատ կովկասցիների[18]։ Միայն ուսանողության հայտնաբերած խմբակներում 70-ական թվականներին հայ, վրացի և ադրբեջանցի ուսանողների թիվը հասնում էր 120-ի։ Նրանք սերտորեն կապված էին հայրենի երկրի հետ և Անդրկովկասում հեղափոխական խմբակների կազմակերպման ու դեմոկրատական գաղափարների տարածման գործում ակտիվ դեր էին կատարում։

Հայտնի է Թիֆլիսում Անտոն Փուրցելաձեի կազմակերպած վրացի, հայ, ռուս տարատեսակ ուսանող երիտասարդներից կազմված ինտերնացիոնալ հեղափոխական նարոդնիկական խմբակը, որը գործում էր մտավորականության և գյուղացիության շրջանում։ Նրա մեջ էին Սարկիսովը, Այվազովը, Մամուլովը, Լ. Ջանդիերին, Վ. Սաչաբելին, Կ. Իվանովը և ուրիշներ[19]։ Նրանք հաճախակի նիստեր էին գումարում, ուսումնասիրում Պետերբուրգից և արտասահմանից ձեռք բերվող դեմոկրատական նոր գրականությունը և այն տարածում աշխատավորների շրջանում։

Կապիտալիստական հարաբերությունների զարգացմամբ Ռուսաստանում սրում էր դասակարգային պայքարը, նոր խնդիրներ առաջադրում հասարակական-քաղաքական շարժման առջև։

---

15 *Տե՛ս З. Л. Шеслидзе,* Очерки революционной борьбы Закавказья в 60—70-х годах XIX в., Тбилиси, 1971, стр. 157 (на груз. яз.).

16 *Տե՛ս* ЦГИАМ, ф. 95, оп. 1, д. 341, л. 441.

17 *Տե՛ս З. Л. Шеслидзе, նշվ. աշխ., էջ 182։*

18 *Տե՛ս նույն տեղում, էջ 196։*

19 *Տե՛ս* «Закавказская речь», 1911, № 256.

Ուժեղանում են սոցիալական ու ազգային ճնշումներն ու հալածանքները։ Խստանում է գրաքննությունը, արգելվում են մամուլի առաջադեմ օրգանները, փակվում են հայկական դպրոցները։ Հետապնդվում և բանտ են նետվում սոցիալական ու ազգային-ազատագրական պայքարի կոչող գործիչները, դեմոկրատական շարժման առաջամարտիկները։ Նման վիճակը հեղափոխական պայքարի էր մղում աշխատավոր մասսաներին։ Բանվորներն ու գյուղացիները հաճախ էին ըմբոստանում իրենց ճնշողների դեմ։ Գյուղացիական ելույթները շատ դեպքերում վեր էին ածվում զինված ընդհարումների։

Արևմտյան Հայաստանի քաղաքներում ստեղծվում են արդյունաբերական ձեռնարկություններ։ Սոցիալական ու ազգային ճնշումների ուժեղացման հետևանքով առաջանում է բանվորների և գյուղական մշակների մի հոծ բանակ, որն ապրուստի միջոցներ հայթայթելու նպատակով մեկնում է հեռավոր քաղաքներ, շփման մեջ մտնում իր բախտակից տարբեր ազգերի հաղարավոր աշխատավորների հետ։ Բանվոր դասակարգի ձևավորման այդ պրոցեսը, նոր երանգ էր մտցնում ոչ միայն սոցիալական պայքարի, այլ նաև ազգային-ազատագրական շարժումների ընթացքի մեջ՝ այդ շարժումներին հաղորդելով ինտեռնացիոնալիստական ոգի։

Դրան զուգընթաց, բուրժուազիայի հզորացման շնորհիվ, ուժեղանում է նաև տարբեր երկրների կապիտալի մրցակցությունը, ազատ շուկաներ ձեռք բերելու ձգտումը։ Գնալով ավելի մարտական դիրք է գրավում բուրժուա-նացիոնալիստական գաղափարախոսությունը։ Պայքարը սրվում է ոչ միայն տարբեր երկրների, այլև նույն երկրի տիրապետող և ճնշված ազգերի բուրժուազիայի միջև։ Նման պայմաններում բուրժուազիան ամեն կերպ ջանում էր իր ազդայնական գաղափարների իրականացման գործիք դարձնել աշխատավոր զանգվածներին։

Հզորանում ու միավորվում էին նաև հեղափոխական ուժերը։ Անհրաժեշտություն էր դառնում ճնշված ժողովուրդների միասնական ճակատի ստեղծումը։ Այդ ուղղությամբ զգալի աշխատանք էին տանում Արևմտյան Եվրոպայում գտնվող ցարական Ռուսաստանի և սուլթանական Թուրքիայի քաղաքական վտարանդիները, հայրենիքից հեռացած դեմոկրատ գործիչները։ Հեղափոխական գործիչները հաշվի էին առնում Բալկաններում, Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում հասունացող սոցիալական և ազգային-ազատագրական շարժումները։ Արևմտահայությունը բալկանյան ժողովուրդների օրինակով ձգտում էր հասնել ազատության։ Այդ գաղափարի իրականացման համար ժամանակի հայ հասարակական-քաղաքական հոսանքները սուր պայքարի մեջ մտան։ Այդ պայքարում կարևոր դեր կատարեցին հայ նարոդնիկները։

2. ՆԱՐՈԴՆԻԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1870—1880-ական թվականների արևելահայ դեմոկրատական հոսանքի առաջատարները նարոդնիկներն էին, առաջավոր մտավորականությունը, հատկապես սովորող երիտասարդությունը։

Նարոդնիկությունը Ռուսաստանում ձևավորվել է տարաստիճան (ռազնոչին) մտավորականության շրջանում և հասարակական-քաղաքական ուժ

դարձել XIX դարի 70—80-ական ԹԹ.։ Հեղափոխական նարոդնիկությունը տարբեր հոսանքներով ու երանգներով հասարակական լայն շարժում էր, որն իր քաղաքական ազդեցությունը տարածել էր Ռուսաստանում և նրա ծայրամասերում։ Հատկապես աչքի էր ընկնում «դեպի ժողովուրդը» (դեպի գյուղացիները) գնալու շարժումը, որը ծավալվեց 70-ական թվականներին։ Ինչպես գյուղացիական դեմոկրատիայի, գյուղացիական «հեղափոխության» գաղափարախոսները, նարոդնիկները ծրագրային առաջադիր խնդիր ունեին. «...ոտի՛ հանել գյուղացիությունը սոցիալիստական հեղափոխություն անելու համար՝ ընդդեմ ժամանակակից հասարակության հիմքերի»[20],—գրել է Վ. Ի. Լենինը։ Նարոդնիկությունը թեև խթանեց հասարակական մտքի առաջընթացին, բայց չհասկացավ Ռուսաստանի հեղափոխական պայքարի առաջ մղող ուժի դերն ու նշանակությունը։ Կապիտալիզմը Ռուսաստանում համարելով «պատահական երևույթ», նարոդնիկները ժխտում էին բանվոր դասակարգի հեղափոխական դերը, գերագնահատում գյուղացիական համայնքի նշանակությունը։ Նրանք անսասան հավատ էին տածում գյուղացու «կոմունիստական բնազդների» նկատմամբ։

Այդ բոլորը, իհարկե, ուտոպիա էր։ «Նարոդնիկական ուտոպիան ինտելիգենտ նարոդնիկի ու տրուդովիկ-գյուղացու երազանքն է այն մասին,— գրում է Վ. Ի. Լենինը,— թե իբր բոլոր հողերի նոր ու արդարացի բաժանումով կարելի կլիներ կապիտալի իշխանությունն ու տիրապետությունը վերացնել, վարձու ստրկությունը վերացնել կամ իբր կապիտալի տիրապետության օրոք, փողի իշխանության օրոք, ապրանքային արտադրության օրոք կարելի կլիներ պահպանել հողերի «արդար», «հավասարաբար» բաժանումը»[21]։ Մյուս կողմից այդ ուտոպիան «յուրահատուկ պատմական դեր էր խաղում։ Լինելով ուտոպիա այն հարցում, թե ինչպիսին պետք է լիներն (և կլիներն) հողերի նոր բաժանման տնտեսական հետևանքները, այն հանդիսանում է գյուղացիական մասսաների, այսինքն՝ բուրժուական-ճորտատիրական, արդի Ռուսաստանի բնակչության մեծամասնությունը կազմող մասսաների մեծ, մասսայական դեմոկրատական վերելքի ուղեկիցն ու սիմպտոմը»[22]։ Համեմատելով լիբերալների և նարոդնիկների ուտոպիան, Վ. Ի. Լենինը նշում է, որ, «լիբերալների ուտոպիան այլասերում է մասսաների դեմոկրատական գիտակցությունը։ Նարոդնիկների ուտոպիան, այլասերելով նրանց սոցիալիստական գիտակցությունը, հանդիսանում է նրանց դեմոկրատական վերելքի ուղեկիցը, սիմպտոմը, մասամբ մինչև անգամ արտահայտիչը»[23]։ Այնուհետև Վ. Ի. Լենինը նաև այն միտքն է շեշտում, որ «լիբերալ ուտոպիան գյուղացիական մասսաներին մոռանալ է տալիս պայքարելը։ Նարոդնիկական ուտոպիան արտահայտում է նրանց պայքարելու ձգտումները...»[24]։

Սակայն նա միաժամանակ զգուշացնում է, որ «մարքսիստները նարոդնիկական ուտոպիաների թևափանքից պետք է հոգատարությամբ զատեն գյուղացիական մասսաների անկեղծ, վճռական, մարտական դեմոկրատիզմի

20 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 1, էջ 327։
21 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 22, էջ 145։
22 Նույն տեղում, էջ 146—147։
23 Նույն տեղում, էջ 147։
24 Նույն տեղում, էջ 148։

առողջ ու արժեքավոր միջուկը»[25]։ Իր սխալներով ու տատանումներով հանդերձ նարոդնիկությունը որոշակի դեր խաղաց Ռուսաստանի հեղափոխական այն շարժումների մեջ, որոնք ուղղված էին ռազմաֆեոդալական կարգերի ու դրան սպասարկող ցարական ինքնակալության դեմ։ Հեղափոխական-նարոդնիկական շարժումները մեծապես նպաստեցին հասարակական զարգացման ընթացքին։

Անդրկովկասը, հանդիսանալով Ռուսական կայսրության մի մասը, ապրում էր գրեթե նույն սոցիալ-քաղաքական կյանքով։ Ռուսաստանում հասարակական զարգացման հիմնական ուղղությունը բուրժուա-դեմոկրատական հեղափոխության, ագրարային հարցի լուծման համար մղվող պայքարն էր։ Բոլշևիզմի տարաստիճան մտավորականության ներկայացուցիչները ռուս ժողովրդի զավակների հետ գործելով նարոդնիկական խմբակներում, պայքարում էին նույն խնդիրների կենսագործման համար։ Բայց, ի տարբերություն Ռուսաստանի, որի քաղաքական պայքարի հիմնական խնդիրը ագրարային հարցն էր, Անդրկովկասի նարոդնիկական խմբակներին մտահոգում էր նաև ազգային հարցը, ազգային-ազատագրական շարժումների ճակատագիրը։ Ուստի, նրանց 1870—1880-ական թթ. գործունեության մեջ, համընդհանուր քաղաքական պայքարի հետ միասին, զգալի տեղ էր գրավում ազգային հարցը։

Անդրկովկասի նարոդնիկական խմբակների ձևավորման առաջին իսկ օրերից որոշակիորեն նկատվում էր երկու ուղղություն։ Դրանցից մեկը «...առաջ քաշելով միայն ազգային հարցը նեղ առումով և այն չկապակցելով դեմոկրատական հեղափոխության ընդհանուր հարցերի հետ, իրեն հեռու էր պահում ընդհանուր, համառուսական հեղափոխական շարժումներից և աշխատում էր վարել բացառապես մեկուսացած ազգային ազատագրական պայքար»[26]։ Սեպարատիստական դիրքերի վրա գտնվող այդ ուղղության կողմնակիցները (Գևորգի Մերկելի, Ալեքսանդր Սարաջև, Ալիբեկյան և ուրիշներ) կարծում էին, թե մեկուսացած ձևով, առանց համառուսական հեղափոխական շարժումների, հնարավոր է կովկասյան բազմազգ ժողովուրդներին ազատագրել ցարիզմի լծից և ստեղծել ազգային-պետական միավորումներ կամ Կովկասյան մեկ միասնական պետություն՝ «Կովկասյան ֆեդերացիա»։ Դա սխալ ուղեգիծ էր։

Մյուս ուղղության կողմնակիցները (Նիկոլայ, Օլգա, Եկատերինա Նիկոլաձևներ, Ն. Գոգոբերիձե, Ի. Ջաբադարի, Ս. Ղարադշյան, Գ. Ջղանովիչ, Դ. Այվազյան և ուրիշներ), կանգնած լինելով համառուսական միասնական պայքարի ճիշտ ուղու վրա, Անդրկովկասի ժողովուրդների ազատագրության հարցը կապում էին հեղափոխական շարժումների, ռուս ժողովրդի ազատագրական պայքարի հետ։ Նրանցից շատերը ոչ միայն անձնական կապերի մեջ էին ռուս հեղափոխական դեմոկրատների, Մոսկվայի, Պետերբուրգի, Յուրիևի, Ժնևի և այլ քաղաքների նարոդնիկական խմբակների հետ, այլև ակտիվորեն գործում էին այդ խմբակներում, աշխատակցում «Կոլոկոլին» և նարոդնիկական այլ օրգաններին։ «Կոլոկոլում» տպագրվող Ն. Նիկոլաձևի հոդվածները համընկնում էին հեղափոխական-դեմոկրատների հայացքներին։

---

25 Նույն տեղում, էջ 149։

26 Մ. Նեչկինա, Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում, Երևան, 1940, էջ 14։

ժամանակակիցների վկայությամբ Ն. Նիկոլաձեն, Գ. Ծերեթելին, Ն. Գ. Գոգոբերիձեն և շատ ուրիշներ հաճախ են արժանացել Ն. Չերնիշևսկու «սիբալիր ու գրկաբաց վերաբերմունքին», խորհրդակցել նրա հետ։ Բավմաթիվ կովկասցի ուսանողներ «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության», «Զեմլյա ի վոլյա», «Կովկասցիներ» (Պետերբուրգ, 1873—1875), «Ցարմա» (Ցյուրիխ, 1872) և այլ նարոդնիկական խմբակների անդամ էին և մասնակցել են «դեպի ժողովուրդը» շարժմանն ու մեղադրվել են «50»-ի, «193-ի» և այլ նշանավոր դատական պրոցեսներով։

Գանձակեցի Ստեփան Ղարդաշյանը, որը դատվել է «50-ի պրոցեսով», զեկավար դեր է խաղացել Սոֆիա Բարդինայի գլխավորած Մոսկվայի «Համառուսական սոցիալ-հեղափոխական կազմակերպության» աշխատանքներում։ Պրեզդենի պոլիտեխնիկական ինստիտուտում սովորելիս նա մերձենում է ռուս քաղաքական վտարանդիներին, նամակագրական կապ հաստատում Ռուսաստանի հեղափոխական գործիչների հետ։ Նա ակտիվ մասնակցություն է ունենում կովկասյան ուսանողների 1874 թ. ձնհյան համագումարին, մտնում «Կովկասյան խմբակի» մեջ, որը զեկավարում էր Պետերբուրգի բժշկական ակադեմիայի նախկին ուսանող Ի. Ս. Ջաբադարին։ 1874 թ. խմբակը միավորվում է արտասահմանում սովորող Ռուսաստանից եկած ուսանողների՝ «Ֆրիչի» խմբակի հետ։ 1875 թ. նրանք վերադառնում են Ռուսաստան։ Ս. Ղարդաշյանը, իշխան Կ. Լակիձեի ծածկանվամբ, իր ընկերների հետ միասին, հեղափոխական աշխատանք է ծավալում Մոսկվայում, Պետերբուրգում, կապ է հաստատում Տուլայի, Օդեսայի, Կիևի, Սարատովի և այլ վայրերի հեղափոխականների հետ, գործուն աջակցություն ցույց տալիս արտասահմանից գրականություն ու զենք առաքելու և տարածելու գործին։

Ս. Ղարդաշյանի, Ս. Բարդինայի, Ի. Ջաբադարիի, Գ. Ձդանովիչի, Ե. Թումանովայի և այլոց օգնությամբ Վրաստանում հիմնվում է նարոդնիկական խմբակ։ 1875 թ. օգոստոսի 12-ին Մոսկվայում ձերբակալվում է Ս. Ղարդաշյանը և աքսորվում Սիբիր։ Քսանութ տարի բանտերում և աքսորում անցկացնելուց հետո, 1904 թ. ազատվում է աքսորից, վերադառնում Անդրկովկաս, աշխատում որպես երկաթուղային ինժեներ։

1872—1873 թթ. ձնհյան և հետո Փարիզում ռուս վտարանդիների նարոդնիկական խմբակներին ակտիվ մասնակցություն է ունեցել Եկատերինա Թումանովան։ Շվեյցարիայում նա Սոֆիա Բարդինայի, Վերա ու Օլգա Սուրոտինների և այլոց հետ միասին եղել է «ցյուրիխյան կոմունայի» կազմում։ 1875 թ. վերադառնալով Ռուսաստան, Եկատերինա Պետրոմնա ծածկանվամբ քաղաքական աշխատանք է ծավալում, 1876 թ. ձերբակալվում և 1877 թ. «50-ի պրոցեսով» դատապարտվում է։ Աքսորից նրան հաջողվում է փախչել արտասահման։

Նարոդնիկական շարժմանը ակտիվ մասնակցություն է ունեցել և «50-ի պրոցեսով» մեղադրվել նաև Ե. Թումանովայի քույրը՝ Հռիփսիմե Թումանովան, որը մասնակցել է Խարկովի Նահանգի Նովո-Բելգորոդյան բանտից Պյոտր Ալեքսեևի, Ստեփան Ղարդաշյանի և այլոց փախուստը նախապատրաստելուն։ Մոսկվայի, Պետերբուրգի, Ցյուրիխի, Կիևի, Օդեսայի նարոդնիկական խմբակներում հայերից աչքի են ընկել Դավիթ Այվազյանը, Օլգա Սաֆարյանը, Կոստանդին Մամիկոնյանը, Մելքոն Մուրզայանը, Ալեքսանդր Փի-

բումյանը, Արշակ Սաֆարյանը, Գրիգոր Արազյանը, Թամարա Ադամյան-Ներսիսյանը, Հովհաննես Մանուչարյանը և ուրիշներ։

Ռուսաստանի հայ գաղթօջախներից իր հեղափոխական առանդուն գործունեությամբ աչքի էր ընկնում հատկապես Նոր Նախիջևանի նարոդնիկական խմբակը, որը կապված էր Անդրկովկասի և Հայաստանի շրջանների հետ։ Հայ և ուրիշ ժողովուրդների երիտասարդությունը ընդգրկվում էր նարոդնիկական հեղափոխական շարժումների մեջ՝ նպատակ ունենալով տապալել ցարական ինքնակալությունը և հաստատել դեմոկրատական կարգեր։

Հեղափոխական նարոդնիկական գաղափարների առաջին պրոպագանդիստը Նոր Նախիջևանում և մյուս հայաշատ վայրերում Միքայել Նալբանդյանն էր։ Նրա բաղման բաղմահազարանոց թափորը ցույց տվեց, որ Նոր Նախիջևանում նա ուներ բազմաթիվ գաղափարակիցներ ու հետևորդներ։ Հուղարկավորության ժամանակ ճառով հանդես եկան Հովակիմյանցը և Բերբերյանը, նշելով մեծ հեղափոխականի ազդեցությունը ժողովրդի վրա։ Այդ գաղափարներով տարված քաղաքի երիտասարդությունն աստիճանաբար ընդգրկվեց նարոդնիկական հեղափոխական շարժման մեջ։

Նոր Նախիջևանը կապեր ուներ Պետերբուրգի, Մոսկվայի, Ղրիմի և Անդրկովկասի հետ։ Համեմատ այդ վայրերից այստեղ են ժամանում առանձին գործիչներ՝ հեղափոխական պայքարի կապը ամրապնդելու համար։ 1871 թ. Նոր Նախիջևանում ոստիկանությունը ձերբակալեց Կերչից այստեղ ժամանած Հակոբ Սունյանցին, մեղադրելով նրան հակապետական գործունեության և «կառավարությանը դատապարտելու համար»[27]։ 1872 թ. Ռոստովի ոստիկանական վարչությունը դատական պատասխանատվության ենթարկեց նաև Մկրտիչ Դանիկովին, որը եկել էր Կ. Պոլսից և բնակություն հաստատել Նոր Նախիջևանում։

70-ական թվականների վերջերին Ռոստովի և Նոր Նախիջևանի նարոդնիկական խմբակների ականավոր դեմքերից էին Սերոբ Պեշեքերովը և Հակոբ Շապովալովը։ Դեռևս 1878 թ. Հակոբ Շապովալովը մասնակցել էր լուսավորության մինիստրին ուղղված բողոքագրի կազմմանը, որտեղ մերկացվում էին ուսումնական հաստատություններում տիրող կամայականությունները։ Սերոբ Պեշեքերովը հայտնի զմռլեվոլեց Պ. Բոդինի՝ Ռոստովում կազմակերպած նարոդնիկական խմբակի ակտիվ գործիչներից էր[28]։ Հեղափոխական խմբակների գործունեությունը հատկապես ուժեղացավ 1879 թ. ապրիլի սկզբներին, Ռոստովի բանվորական ելույթներից հետո, որը տարածվեց նաև Նոր Նախիջևանում։ Պ. Կ. Պեշեքերովը, որը ականատես էր այդ դեպքերին, գրում է, որ բանվորները գրոհում էին ոստիկանական տեղամասերը հեղափոխական կազմակերպությունների ցուցումներով[29]։ Սերոբ Պեշեքերովը նույն թվականին ոստիկանության կողմից քննության է ենթարկվում քաղաքում տարածված Ալեքսանդր II-ի ծաղրանկարի համար։ Սկսած 1880 թ. Պեշեքերովի բնակարանը դառնում է նարոդնիկական խմբակի հավաքատեղի,

---

27 *А. Г. Терещенко*, Новонахичеванцы в революционном народническом движении, «ՊԲՀ», № 4, 1975, էջ 86։

28 *Տե՛ս* «Очерки истории большевистских организаций Дона», Ростов-на-Дону, 1965, стр. 23.

29 *Տե՛ս* «Народовольцы после первого марта 1881 г.», М., 1928, стр. 118.

որտեղ գալիս էին նաև երիտասարդ բանվորներ, 1880—1881 թթ. գործում էին տասը ինքնազարգացման խմբակներ, կազմված գիմնազիայի և ռեալական ուսումնարանի աշակերտներից։ Այդ խմբակներում ուսումնասիրվում էին Պ. Լավրովի «Պատմական նամակները», բանվորական հարցը, քաղաքատնտեսությունն և Կ. Մարքսի «Կապիտալը»։ 1880 թ. աշնանից Ս. Պեշեխերովը, ուսումը շարունակելով Պետերբուրգում, ավելի ակտիվորեն է նվիրվում հեղափոխության գործին, իսկ ամառվա արձակուրդներին գործունեությունը շարունակում է Ռոստովում ու Նոր Նախիջևանում։

Դնալով ուժեղանում են հակացարական ելույթները։ 1881 թ. Մկրտիչ Հայրապետովը պատասխանատվության է ենթարկվում ցարին հրապարակրեն հայհոյելու համար։ Հակացարական թռուցիկներ տպագրելու համար Ռոստովում իակվում է Բաքաևի լիտոգրաֆիան, գաղտնի գրականություն տարածելու և ակտիվ պրոպագանդայի համար ձերբակալվում է իրավաբան Ի. Ռաֆայլովիչը (Ռաֆայելյանը), որը լայն կապեր ուներ նարոդնիկական խմբակների հետ, ստանում էր մեծ քանակությամբ արգելված գրականություն և տարածում աշխատավորության շրջանում։ Հուզարկության ժամանակ ոստիկանությունը նրա բնակարանում հայտնաբերեց հեկտոգրաֆ և տպագրական այլ հարմարանքներ, բազմաթիվ արգելված գրականություն, թերթեր, կոչեր, նամակներ, գրություններ Ի. Ռաֆայլովիչի, որ գործում էր իր երեք եղբայրների հետ մեկտեղ, նպատակն էր Ռուսաստանի հարավային շրջանները, ինչպես նաև Անդրկովկասը ապահովել նարոդնիկական գրականությամբ։ 1882 թ. նա աքսորվում է Սիբիր։ Նույն թվականին բանտ է նետվում նաև Նոր-Նախիջևանցի Դ. Խոջաևը (Խոջայանը)[30]։

1882 թ. Ռոստովում Սերոբ Պեշեխերովը, միավորելով նախկին փոքրիկ խմբերը, ստեղծում է բավական ուժեղ նարոդնիկական մի կազմակերպություն, որտեղ կային մեծ թվով հայ երիտասարդներ։ Նրա երաշխավորությամբ կազմակերպությանը օգնելու, Պետերբուրգի նարոդովոլցիների փորձը Ռոստովում և Նոր Նախիջևանում տարածելու համար այստեղ են ժամանում Ալ. Լիսովինովը և Ան. Նեչվոլոդովը։ Նրանք ակտիվ աշխատանք են ծավալում բանվորների և սովորող երիտասարդության մեջ, որոնց օգնում են նաև Պետրոս և Պլատոն Պեշեխերովները։ Սակայն Սերոբ Պեշեխերովը ձերբակալվեց Պետերբուրգում, որի մոտ հայտնաբերվեց Տվերի նահանգ աքսորված Լ. Կոլեգաևի հետ նրա գաղտնագիր գրագրությունը։ 1883 թ. նա աքսորվեց Սիբիր, իսկ նրա եղբայրներն ու ընտանիքի անդամները ենթարկվեցին հալածանքի ու տարբեր պատիժների։ Սերոբ Պեշեխերովի հեղափոխական գործունեությունը նշանակալի հետք թողեց Ռոստովի և Նոր Նախիջևանի հասարակական շրջաններում։ Պատահական չէ, որ Ռուսաստանի հայությունում գործող հայտնի նարոդովոլեց Ա. Բախը Ռոստովի նարոդնիկական կազմակերպությունը «Պեշեխերովի խմբակ» էր կոչում, որը կապված էր Նովոռոսիյսկի, Տագանրոգի, Սյսկի, Եկատերինոդարի, Ստավրոպոլ-Կավկազսկիի, Ղրիմի, Հայաստանի և այլ վայրերի հետ[31]։ Պետրոս Պեշեխերովը ևս ակտիվ նարոդնիկ էր՝ պարա-

30 Տե՛ս А. Г. Терещенко, նշված հոդվածը, էջ 89։

31 Տե՛ս А. Н. Бах, Воспоминания народовольца, «Былое», 1907, № 2 (14), стр. 105։

պում էր բանվորական խմբակներում, մասնակցում «Նախանունեի» հեկտոգրաֆիական ամսագրի հրատարակմանը, տարածում հեղափոխական գրականություն[32]։

1884—1885 թթ. Նարոդովոլցիների ակնառավոր դեմքերից էին Գ. Լոպատինը, Վ. Սուխոմլինը, ինչպես նաև Ս. Իվանովը, Ա. Բախը, Պ. Յակուբովիչը, Բ. Օրժիխը և ուրիշներ, որոնք ցանկանալով վերականգնել ջախջախված Նարոդովոլյան կազմակերպությունները, մեծ հույսեր էին կապում Ռոստով-Նախիջևանյան կազմակերպության հետ։ Նրանցից շատերը այցելել են Ռոստով ու Նախիջևան և արդյունավետ աշխատանք տարել բանվորների, շրջակա գյուղերի գյուղացիների և մտավորականության շրջանում։ Գ. Լոպատինը և Վ. Սուխոմլինը «իրենց շուրջն էին համախմբում տնզական երիտասարդական խմբակներն ու ենթախմբակները»[33]։ Գ. Լոպատինի ձերբակալության ժամանակ ոստիկանությունը նրա մոտ հայտնաբերեց Ռոստով-Նախիջևան կենտրոնական խմբի երեք հոգուց բաղկացած զեկավար կազմի ցուցակը, որոնց մեջ էին Ռաֆայել Չերնիշևը և Պետրոս Պեշեքերովը։ Նրա թղթերում նշված էին նաև Մակար Պոպովի և Հակոբ Շապովալովի անունները։ Հ. Շապովալովը զբաղվում էր զենքի պատրաստման և գաղտնի տպարանի տնօրինման գործերով։ Նա ձերբակալությունից փրկել էր նարոդովոլյան պայքարի կազմակերպիչ Ս. Իվանովին, կանխել մի շարք քաղաքական մեղադրյալների ձերբակալությունը[34]։ 1884 թ. նոյեմբերին Հակոբ Շապովալովը ձերբակալվում և բանտ է նետվում[35]։

Նարոդովոլյան ակտիվ գործիչներից էր նաև Մելքոն Կայլովը, որը Պետերբուրգի լեռնային ինստիտուտում սովորելու ընթացքում ծանոթանում է «Մոլոդայա նարոդնայա վոլյա» կազմակերպության հիմնադիր Պ. Յակուբովիչի հետ, դառնում նրա գաղափարակիցը։

Ռաֆայել Չերնիշևի քեռու ամառանոցը Սուրբ Խաչ վանքի շրջակայքում, նարոդովոլցիների հավաքատեղին էր։ Այստեղ եղել են Ա. Բախը, Ս. Իվանովը, Գ. Լոպատինը և ուրիշներ[36]։ Գ. Լոպատինի մոտ գտնված նյութերի հիման վրա նա ձերբակալվում է և 1885 թ. մահանում բանտում։ Նոր Նախիջևանի կարի մեքենաների պահեստի աշխատող Մակար Պոպովը կարևոր դեր էր կատարում կապի, գաղտնի գրականության ստացման ու տարածման գործում։

1884 թ. հոկտեմբերին Ռոստով-Նախիջևան նարոդովոլյան խումբը մեծ հարված կրեց. ձերբակալվեց Պետրոս Պեշեքերովը և նրա հետ խմբի համարյա ողջ կազմը, որի զգալի մասը հայեր էին։ Դրանից հետո փաստորեն դադարում է խմբի գործունեությունը։ Ձերբակալություններից կարողանում է խուսափել Մակար Պոպովը և պահպանել նարոդովոլցիների գաղտնի տպարանի սարքավորումը, որտեղ 1884 թ. սեպտեմբերին տպագրվել էր «Նարոդնայա վոլյա» թերթի 10-րդ համարը և առաքվել Ս. Իվանովի նշած հասցե-

---

32 Տե՛ս «Народовольцы после 1 марта 1881 г.», стр. 120.

33 Տե՛ս նույն տեղում։

34 Տե՛ս А. Н. Бах, Записки народовольца, 1931, стр. 129—130.

35 Տե՛ս В. Сухомлин, Из эпохи упадка партии «Народная воля», «Каторга и ссылка», 1926, № 28—29, стр. 79.

36 Տե՛ս Мак. Попов, Мелочи прошлого, «Каторга и ссылка», 1924, № 12, стр. 124.

ներով[37]։ 1885 թ. ապրիլին ձերբակալվում է նաև Մակար Պոպովը և ուղարկվում Պետերբուրգ, որտեղ Գ. Լոպատինի խմբի հետ «21-ի պրոցեսը» անվան տակ 1887 թ. դատապարտվում է մահվան, որը փոխարինվում է երկարատև աքսորով Սիբիր[38]։

Ռոստովում ձերբակալվում է նաև ականավոր նարոդովոլցի Հովհաննես Մանուչարովը (Մանուչարյանցը), որը Նովոչերկասկում Խարիտոնով եղբայրների հետ կազմակերպել էր ընդհատակյա տպարան, մասնակցել Արմավիրում օսլայի գործարանի հիմնադրմանը, նարոդովոլյան կազմակերպությունները ֆինանսավորելու նպատակով։ Նա սերտորեն կապված էր տեղի հեղափոխական կազմակերպությունների հետ։ Հ. Մանուչարյանցը Խարիտոնով եղբայրների հետ ձերբակալվեց Ռոստովում, նարոդնիկական ընդհատակի հետ կապված Բ. Մարկովիչի[39] տանը։ Օդեսայի զինվորական դատարանը նրան մահապատժի դատապարտեց, որը փոխարինվեց տասը տարվա բանտարկությամբ[40]։

1884 թ. Պետերբուրգում մեղադրվող 142 ուսանողների մեջ էր նաև Ուլյանա Ասատուրովան, որի հայրը՝ Աստվածատուր Ասատրյանը Ռոստով-Նախիջևանի նարոդնիկական խմբակների գործունեության ակտիվ մասնակիցներից էր։ Ուլյանան դեռևս 1883 թ. հուլիսին հեղափոխական խմբակների աշխատանքներին մասնակցելու համար ձերբակալվել և որոշ ժամանակ պահվել էր Ռոստովի բանտում[41]։

Այսպիսով, համառուսաստանյան նարոդնիկական շարժման մեջ հայ գաղթավայրերի նարոդովոլցիներն զգալի ավանդ են մուծել և առաջավոր դիրքերում գտնվել հեղափոխական պայքարի արշալույսին։

Նարոդովոլցիների գործունեությունը բանվորական հեղափոխական խմբակների ստեղծման և սոցիալիստական գաղափարների պրոպագանդման գործում կարևոր նշանակություն ունեցան բանվոր հեղափոխական գործիչների նոր սերնդի ձևավորման համար։ Այդ խմբակներում իրենց մրկտությունն ստացան Ռոստովի բանվոր հեղափոխականներ Ա. Կարպենկոն, Վ. Կուղրյաշևը, Տ. Ռոմանչենկոն և շատ ուրիշներ։

Ռուս հեղափոխական նարոդնիկական շարժման ազդեցությամբ 1882 թ. ձևավորվում է Մոսկվայի հայ ուսանողների ընդհատակյա խմբակը՝ «Հայրենասերների միությունը», որի մեջ էին մտնում Ն. Աբելյանը և ուրիշներ։ «Միությունը» ուներ իր ընդհատակյա տպարանը, անլեգալ հրատարակում էր «Աղատության ավետաբեր» թերթը, հեղափոխական կոչեր և թռուցիկներ։ «Հայրենասերների միության» գլխավոր խնդիրն էր պայքարի միջոցով հայ ժողովրդի ազատագրումը օսմանյան լծից։

---

37 Տե՛ս «Обзор важнейших дознаний с 1 января 1885 года по 1 января 1886 г.», стр. 29; *Г. Н. Добрускина-Михайлова*, Лобатинский процесс, «Народовольцы», СПб., М., 1931, стр. 207.

38 Տե՛ս «Хроника социалистического движения в России (1878—1887). Официальный отчет», М., 1906, стр. 321.

39 Ուկրաինական հայտնի կին գրող Մարկո Վովչոկի որդին։

40 Տե՛ս *И. Манучаров*, Мой процесс, «Былое», 1906, № 7, стр. 50; *Екатерина Каламтар*, Человек с маяка, Ереван, 1968.

41 Տե՛ս *А. Г. Терещенко*, նշված հոդվածը, էջ 100։

«Հայրենասերների միության» պատգամներից մեկն է ազգերի համերաշխությունը,— ասված է «Ազատության ավետաբերում»,— ուստի մենք քարոզում ենք սերտ համերաշխություն Հայաստանում բնակվող ազգերի մեջ... Մենք հավասարաշափ հարգում ենք յուրաքանչյուր ազգի լեզուն, կրոնը և անկախությունը... Ուստի «Հ. Մ.-ն աշխատելու է, որ երկիրը, հողը իր բնական հարստություններով և աշխատանքի գործիքները դառնան աշխատավորների, բանվորների սեփականությունը... Մենք քարոզում ենք ընկերական միաբանություն, որտեղ ընդհանուրը հոգում է յուրաքանչյուրի համար, իսկ յուրաքանչյուրը՝ ընդհանուրի համար։ Ահա թե ինչու բոլոր մասնավոր կալվածատերերի և պետության ձեռքի հողերը պետք է անցնեն համայնքների ձեռքը, համայնքը միակ սեփականատերն է, միակ սպառողն է, որովհետև նա միակ աշխատող, արդյունաբերողն է։ Միևնույն ժամանակ համայնքները ներկայացնում են այն սկզբնական քաղաքական տարրերը, որոնցից պետք է կազմվի ընդհանուր քաղաքական դաշնակցություն, ֆեդերացիա»[42]։

Դյուրական համայնքի վերաբերյալ նրանց ծրագիրը լիովին ընդօրինակված էր ռուս նարոդնիկներից։ «Հայրենասերների միությունը» կոչ էր անում տապալել սուլթանական դաժան տիրապետությունը։ «Մենք ցանկանում ենք Հայաստանի ժողովուրդը ազատված տեսնել բարբարոսների լծից,— ասված է Միության «Հայեր» խորագրով թռուցիկում,— ... Հայաստանի ժողովուրդը իրավունքներ ձեռք բերելու և բարբարոսների լծից ազատվելու համար ունի միայն մի միջոց, այն է՝ արյունով գնել ազատությունը և ցույց տալ քաղաքակրթված աշխարհին, որ հայաստանցին ըմբռնել է ազատության գաղափարը և ընդունակ է այդ գաղափարին զոհել իր ունեցածի ամենաքաղցրը, ամենաագնիվը, իր սիրելի որդիների կյանքը»[43]։ «Հայրենասերների միությունը» երիտասարդությանը մղում էր դեպի դլխավոր նպատակը՝ հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատության նվաճումը։ Նա երիտասարդությանը կոչ էր անում «մտնել ժողովրդի մեջ, ցույց տալ անարդարության դեմ կռվելու նղանակներն ու միջոցները, «այդ վսեմ գաղափարը իրագործելու ժամանակը, օգնել նրան ամենայն կերպով և անձնվիրաբար»[44]։ Միությունը պարզաբանում էր, որ հայրենիքի փրկությունը երիտասարդությանն է վստահված։

«Հայրենասերների միությունը» Մոսկվայից կապ էր պահպանում Անդրկովկասի և ապա՝ Արևմտյան Հայաստանի հետ։ «Ազատության ավետաբերի» չորրորդ համարի՝ «Սարսափահար միջոցների (ահաբեկման) դերը մեր հեղափոխական գործունեության մեջ Տաճկահայաստանում», «Մի բացատրություն» և այլ հոդվածներում բացի Միության նարոդնիկական հայացքների շարադրանքից, պարզաբանված են նաև հայ ազգային-ազատագրական շարժման հետ կապված հարցերը։

Արևմտյան Հայաստանում կատարվող իրադարձությունները, նշում է «Ազատության ավետաբերը», իրենց խոր կնիքն են դնում հայ հասարակական մտքի վրա, աշխատավոր զանգվածներին արթնացնում և նրանց մեջ բոր-

---

42 «Ազատության ավետաբեր», № 4, փետրվար, 1884։

43 ՍՍՀՄ ՀՀՄԱ, ֆ. Ոստիկանության դեպարտամենտ, III գործավարություն, 1883, գ. 172, թ. 1։

44 Նույն տեղում։

բոքում հայրենասիրական տրամադրություններ, մղում ապստամբական պայքարի։ «Հայաստանը կանգնած է հեղափոխության շեմքին,— գրել է Թերթը,— այդ հեղափոխությունից հեռու մնալ մենք չենք կարող, որովհետև իրերի դրությունը նրան պատմական պահանջ է դարձրել։ Մեզ մնում է միայն կազմակերպել նրան և տալ նպատակահարմար ուղղություն»։ Հարկավոր է հայ ժողովրդին արթնացնել դարավոր թմրությունից։ Իսկ դա միայն լուսավորության միջոցով չէ, որ պետք է կատարվեր, այլ հեղափոխական խմբակների, ազատագրական պրոպագանդայի, ժողովրդի միասնության, որին և նվիրել էր իր գործունեությունը «Հայրենասերների Միությունը»։

Անդրկովկասում տարբեր ժամանակ գործել են նաև Ռուսաստանից արտաքսված (կամ իրենց կամքով եկած) բազմաթիվ նարոդնիկներ, այդ թվում ծովային սպա Ա. Գլասկոն, որը մերձավոր կապերի մեջ էր «Նարոդնայա վոլյայի», մասնավորապես Ա. Ժելյաբովի և Վ. Ֆիգների հետ, լեյտենանտ Ս. Կոլեշը, Ս. Ջախարյաշը (Պոգլասկայա), Ն. և Ս. Հոֆֆենգաուզենները (Ս. Հոֆֆենգաուզ-Խոննկովան ծանոթ է եղել Վ. Ի. Լենինի եղբոր՝ Ա. Ի. Ուլյանովի հետ), Օ. Ապտեկմանը, Մ. Նաթանսոնը, Ն. Ֆլերովը և ուրիշներ։ Նրանք հեղափոխական գաղափարների տարածման հետ մեկտեղ ակտիվ աջակցություն են ցույց տվել Անդրկովկասում նարոդնիկական խմբակների ստեղծմանը։

Տարաստիճան առաջադիմական մտավորականության ջանքերով նարոդնիկական գաղափարները տարածվում են Անդրկովկասում, միաժամանակ ձևավորվում են նաև նարոդնիկական խմբակները։ Անդրկովկասում այդպիսի առաջին կազմակերպությունը հիմնվել է 1875 թ. Թիֆլիսում և Քութայիսում, որն ուներ ինտերնացիոնալ կազմ։ Հայերից նրա մեջ էին Արշակ, Օլգա, Վարվառա Սաֆարյանները, Ալեքսանդր Վերմիշյանը, Ալեքսանդր Եվանգուլյանը և ուրիշներ։ «Դեպի ժողովուրդ»,— ահա երկրամասի նարոդնիկական առաջին կազմակերպության նշանաբանը։ Կազմակերպությունը որոշել էր անլեգալ կերպով ստացվող հեղափոխական հակապետական հրատարակությունները թարգմանել տեղական լեզուներով և տարածել։ Աշխատանք էր տարվում բնակչությանը նախապատրաստելու, ընդհանուր ապստամբություն բարձրացնելու համար[45]։ Չնայած իր կարճատև գոյությանը, նարոդնիկական այդ կազմակերպությունը որոշակի աշխատանք ծավալեց երկրամասի բազմազգ աշխատավորության, հատկապես գյուղացիության մեջ։

1881—1882 թթ. երկրամասում գործում էր նարոդովոլյան զինվորական խմբակը, որի ակտիվ գործիչներից էր Ալեքսանդրապոլի բերդապահ զորքի հրետանային սպա Սերգեյ Շեպելյովը։ Խմբակի կազմակերպիչ Աննա Կորբայի Թիֆլիսից հեռանալուց հետո ղեկավարությունն անցնում է Ս. Տեր-Գրիգորյանի ձեռքը։

1882 թ. վերջերին հայ մտավորականները (Գ. Միրզոյան, Գ. Ղարաջյան, Կ. Մելիքյան, Ք. Միքայելյան, Ա. Պետրոսյան (Սանդալ), Խ. Մալումյան, Ա. Դաստակյան, Ս. Ջավարյան, Գ. Տեր-Մկրտչյան (Միքան), Ի. Զուրաբյան, Գ. Աղաբաբյան, Հ. Թադևոսյան, Ա. Ադամյան և ուրիշներ) Թիֆլիսում կազմակերպում են նարոդնիկական մի անլեգալ խմբակ, որը գործում է

45 Տե՛ս «История классовой борьбы в Закавказье», кн. I, Приложение II, стр. 31; Մ. Ներսիսյան, Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում։

մինչև 1886 թ.։ Դա հայ անդրանիկ նարոդնիկական խմբակն էր Անդրկովկասում[46], որի անդամների մի մասը Ռուսաստանի բարձրագույն դպրոցների սովորողներ էին։ Խմբակի անդամները հետաքրքրություն էին հանդես բերում դեպի հայկական հարցը, ջանում նարոդնիկական գաղափարները տարածել գյուղացիության, արհեստավորության, ուսանողության մեջ։ Խմբակը գրավոր պրոպագանդայի առանձին քայլեր ես արեց. 1884 թ. հեկտոգրաֆով բազմացրեց Մ. Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատությունը, 1885 թ. հայկական դպրոցների փակման առթիվ հրատարակեց հակացարական բովանդակությամբ «Հայ եղբայրներ և հայ քույրեր» խորագրով թռուցիկը[47]։

70—80-ական թթ. նարոդնիկական գաղափարներ էին արծարծվում նաև հայ մամուլի՝ «Մեղու Հայաստանի», «Նոր-Դար», «Փորձ», «Արձագանք», «Մշակ» և այլ պարբերականների էջերում։ Դա ամենից առաջ արտահայտվում էր Անդրկովկասում կապիտալիզմի զարգացման, ազգային-ազատագրական պայքարի ծավալման, բանվորական խնդրի լուծման, գյուղացիական շարժումների գնահատման և այլ հարցերում։ Գյուղացիական ռեֆորմի և նրա արդյունքների նարոդնիկական գնահատմամբ հանդես էին գալիս Հ. Տեր-Մովսիսյանը, Ալ. Քալանթարը, Գ. Յուզբաշյանը, Ս. Ղորղանյանը և ուրիշներ։ Նրանք քննադատում էին երկրամասում կապիտալիստական հարաբերությունների զարգացման ընթացքը, ուղիներ որոնում դրանից խուսափելու համար։

Հ. Տեր-Մովսիսյանը 1878—1882 թթ. ուսանել էր Պետերբուրգի և Մոսկվայի բարձրագույն դպրոցներում և մոտիկից ծանոթ էր «Զեմլյա ի վոլյա», «Նարոդնայա վոլյա» կազմակերպություններին։ «Մեղու Հայաստանի», «Փորձ» և այլ պարբերականներում հրատարակված նրա հոդվածները տոգորված են նարոդնիկական գաղափարներով։ Երկրամասում արդյունաբերության զարգացումը կասեցնելու նպատակով Հ. Տեր-Մովսիսյանը դեմ էր երկաթուղու անցկացմանը։ «Ներքին տնտեսական առաջադիմության համար,— գրել է նա,— հարկավոր են ոչ այնքան երկաթուղիք, որքան կարգին և հարմար գյուղական ճանապարհներ»[48]։ Նրա կարծիքով պետք էր զարգացնել ոչ թե «գործարանական արդյունագործությունը», այլ «ժողովրդական արտադրությունը», որպեսզի հնարավոր լինի խուսափել «այն թշվառ պրոլետարիատից, որ այժմ Եվրոպայի շքեղության փայլը նսեմացնում է»։ Հ. Տեր-Մովսիսյանը անտեսում էր այն փաստը, որ «տնայնագործական արհեստագործությունները նույն կապիտալիզմն են՝ նրա զարգացման տարբեր աստիճաններում»[49]։ Հ. Տեր-Մովսիսյանը հայ ժողովրդի ազատագրությունը կապում էր

---

46 Տե՛ս Մ. Ներսիսյան, Նարոդնիկական խմբակները Անդրկովկասում։ Գ. Ղարաջյան, Անցյալի հիշողություններից, Թիֆլիս, 1918։ Նույնի Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը Անդրկովկասում։

47 «Հայ եղբայրներ և հայ քույրեր» թռուցիկից «Նարոդնայա վոլյա»-ն 1885 թվականի № 11—12-ում լայն քաղվածքներ է տպագրել։ Թռուցիկի լրիվ տեքստը հետագայում հրատարակվել է Գ. Ղարաջյանի «Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը Անդրկովկասում» գրքույկում (էջ 49—67), համապատասխան մեկնաբանություններով։ Տե՛ս նաև ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 33, ց. 5, գ. 17, թ. 1։

48 «Մեղու Հայաստանի», № 21, 1881։

49 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 1, էջ 666։

Ռուսաստանի հետ, ընդգծելով, որ ռուսական կողմնորոշման բոլոր հակառակորդները շփոթում են «հետագա ռուսացնողների կուսակցությունը ամբողջ Ռուսաստանի և ռուս ժողովրդի հետ»[50]։

Գյուղական հողային համայնքի վերաբերյալ նարոդնիկական հայացքներն իրենց արտահայտությունն են գտնում Մոսկվայի գյուղատնտեսական ակադեմիայի հայ ուսանողական ընկերության անդամներից Հ. Տեր-Բաբանեղյանի (Հրաչյա) «Գործ» ամսագրում տպագրված հոդվածում։ Նրա կարծիքով գոյություն ունեցող հողատիրության ձևերից համայնքը «ամենից լավ է համապատասխանում հողի վրա ունեցած մարդկային իրավունքին»[51]։ Նարոդնիկների ազդեցությամբ, գյուղացիական ռեֆորմի և նրա հետևանքների մասին հանդես է գալիս նաև Ս. Ղորղանյանը։

3. ՆԱՐՈԴՆԻԿՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ ԵՎ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԼԻԲԵՐԱԼԻԶՄԻ ՈՒԺԵՂԱՑՈՒՄԸ

80-ական թթ. սկզբներին ծայր առած ցարական ռեակցիայի պայմաններում Անդրկովկասի նարոդնիկների շարքերում ավելի սրվեցին ներքին տարաձայնությունները, հանգեցնելով նրանց կազմակերպական քայքայմանը, գաղափարական վերաորմանը։

Այդ մասին Վ. Ի. Լենինը գրում էր. «Քաղաքական մի ծրագրից, որ նպատակ ուներ ոտի հանել գյուղացիությունը սոցիալիստական հեղափոխության կատարելու ընդդեմ ժամանակակից ճասաբակության հիմքերի,—ծրագրից մի ծրագիր, որի նպատակն է կարկատել, «բարելավել» գյուղացիության գրությունը՝ պահպանելով ժամանակակից ճասաբակության հիմքերը»[52]։ Այս երևույթի մասնավոր արտահայտություններից էր նաև նարոդնիկների շարքերում ուժեղացող մեծապետական համաձուլողական նացիոնալիզմը։

Նման պայմաններում, հետևելով հեղափոխության ընդհանուր խնդիրներից, այսինքն՝ հրաժարվելով ցարիզմի դեմ պայքարից, 80-ական թվականների կովկասահայ նարոդնիկական կազմակերպությունները իրենց ուշադրությունը կենտրոնացրին գլխավորապես արևմտահայ ազգային-ազատագրական շարժման հարցերին։

Տակավին 70-ական թվականներին զեմլևոլյուններն էին անհրաժեշտ համարում առժամանակ հրաժարվել սոցիալիզմի պրոպագանդից և գյուղացիության մեջ կատարվող աշխատանքը հարմարեցնել առօրյա պահանջներին։ Ինչպես բացատրում էր նրանց զեկավարներից մեկը՝ Ս. Կրավչինսկին, զեմլևոլյուները սոցիալիզմից դեն էին նետում նրա եվրոպական համազգեստը և հագցնում ռուսական մուշտակ։

Սոցիալիզմից հրաժարվելը այն առաջին քայլն էր, որ Ռուսաստանի որոշ ծայրամասերում զեմլևոլյուների շարժումը մղեց դեպի ինքնաբավ ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսությունն ու կազմակերպչական ձևավորումը։

---

50 «Գործ», № 1, 1884։

51 «Գործ» № 1, 1882, էջ 41։

52 Վ. Ի. Լենին, երկ., հ. 1, էջ 327—328։

Այս երևույթը չէր կարող իր արձագանքը չգտնել նաև արևելահայ նարոդնիկների միջավայրում։ Սիմոն Տեր-Գրիգորյանը անդրկովկասյան նարոդնիկների պատակտումը բացատրում էր ռուս նարոդնիկների մեջ ուժ ստացած համաձուլողական տրամադրություններով[53], Ք. Միքայելյանը հարց էր դնում ստեղծել նարոդնիկական ազգային կազմակերպություններ, իսկ Գ. Տեր-Մկրտչյանը (հետագայում հայագետ Միքաելը) առաջարկում էր ընդհանուր հարցերից զատ խմբակներում զբաղմունքի նյութ դարձնել նաև առանձին ազգություններին հետաքրքրող հարցերը[54], 1882 թ. սկզբներին նարոդնիկական կազմակերպությունների վերատեսման հետևանքով առաջացան առանձին ազգային խմբեր ու կազմակերպություններ։

Մոսկվայի հայ ուսանողների «Հայրենասերների միություն» կազմակերպությունն արդեն իր գործունեությունը նվիրել էր ոչ թե ռուսական հեղափոխությանը, այլ Արևմտյան Հայաստանի ազատագրմանը, որը հայ ուսանողների համար կարևոր նշանակություն էր ստանում։

Արտահայտելով ժամանակի հայ երիտասարդության մտորումները, Ներսիսյան դպրոցի աշակերտ Փորսուղյանը իր հուշերում գրել է. «Պետք է ասել, որ այդ ժամանակ Տիֆլիսում երիտասարդական խմբակներ շատ կային, բայց առավելապես զբաղվում էինք ինքնազարգացումով, որովհետև դպրոցը չէր տալիս այն, ինչ որ մենք պահանջ էինք զգում։ Կարդում էինք առավելապես արգելված գրքեր. Չերնիշևսկու «Ի՞նչ անել» վեպը, Պիսարևի և Դոբրոլյուբովի քննադատական հոդվածները, Իտալիայի ու Բուլղարիայի ազատագրության վերաբերյալ գրքեր և բանաստեղծություններ։ Կարդում էինք նաև «Նարոդնայա վոլյա»[55] թերթից այն, ինչ որ մեր ձեռքն էր ընկնում։ Հիշյալ գրքերը, իհարկե, զրադարաններում ճարելը անհնարին էր, ձեռք էինք բերում ծանոթ բուկինիստներից, կամ Ռուսաստանից վերադարձած ուսանողները տալիս էին իրենց ծանոթ աշակերտներին»[56]։

Երիտասարդության մեջ նաև մեծ ձգտում էր նկատվում անցնել «Երկիր» (Արևմտյան Հայաստան), ծանոթանալ ժողովրդական տարբեր խավերի տրամադրություններին։ Վերադառնալով Կովկաս հրապարակային ելույթներ էին ունենում իրենց ուղևորությունների մասին և պրոպագանդում Հայկական հարցի լուծման օգտին։ Այդ տեսակետից ուշագրավ են 80-ական թվականների սկզբներին հրապարակված Արևմտյան Հայաստանին լավատեղյակ Արսեն Բոխմախյանի հրապարակային դասախոսությունները, ուր արծարծվում էին արևմտահայ գյուղացիական դեմոկրատիայի տրամադրությունները, որի համար պահանջվում էին բարձր ու վսեմ գաղափարներով դիմված «հնձվորների զոհաբերություններ»։

* * *

70—80-ական թթ. կապիտալիստական զարգացման պրոցեսը Անդրկովկասում և սոցիալ-քաղաքական պայքարի սրումը պայմաններ ստեղծեցին

---

53 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱԹ, Գ. Ասանովի ֆոնդ, գ. 21, թ. 36։

54 «Հայրենիքի» ամսագիր, 1925, 1, էջ 11, Գ. Զազարյանի հոդվածը։

55 Պետք է կարծել, որ խոսքը կամ այդ թերթի հին համարների մասին է, կամ Լավրովի և Տկաչևի խմբագրությամբ 80-ական թթ. կեսերին արտասահմանում տպագրված պարբերականների մասին։

56 Մշո հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 830, Թղթապանակ, 13 թ. 2։

արևելահայ լիբերալ և դեմոկրատական խմբավորումների հակամարտության ուժեղացման համար։ Հայ հասարակական-քաղաքական կյանքում լիբերալ բուրժուական և դեմոկրատական հոսանքների միջև սաստկացող այդ հակամարտը ցայտուն կերպով դրսևորվեց գաղափարական հակատում։ 80-ական թվականների ընթացքում ավելի ու ավելի էին ակներև դառնում գաղափարական թախումները։

«Մշակականների» քաղաքական հրապարակախոսությունը 1880-ական թթ. կեսերից ստանձնում էր գրեթե միայն ազգի ծխական-մշակութային մտահոգություններ՝ միշտ հետամուտ, որ ներքը «չվարկաբեկվի» կառավարության աչքում և կասկածի նշմարկ չդառնա «նիհիլիստ» համարված հայ երիտասարդությանը գործակցելու համար։

«Մշակի» որդեգրած ուղեգիծը պատահական չէր։ Հրապարակ իջնելով որպես կապիտալիզմի առաջամարտիկ, Արծրունին չէր բաժանում նարոդնիկների այն կարծիքը, թե կապիտալիզմը չի կարող հաղթանակել ոչ Ռուսաստանում, ոչ էլ մասնավորապես Անդրկովկասում։ Նրա աչքում նարոդովոլցիների տեռորիստական ելույթներն այլ ինչ չէին, քան «սարսափելի չարագործություն», «մի վտանգավոր ստորերկրյա շարժում»։ Ռուս լիբերալ հասմախոհների պես, Արծրունին կոչ էր անում «հասարակությանը» միանալ «պետությանը»։ Նա հավաստիացնում էր, որ նարոդնիկների երազական մտքերը խորթ են անդրկովկասցիներին, մանավանդ հայ ազգին։ «Անդրկովկասը երբեք չի ներկայացնի մի հարմար հող սոցիալական որևէ պրոպագանդայի համար»[57]։

Սոցիալիզմի դեմ կռվելու համար Արծրունին ազդու միջոց էր համարում լիբերալների առաջարկած քաղաքական ազատությունը։ «Միայն քաղաքական կատարյալ ազատության միջոցով կարելի է վերջնական մահվան հարված տալ սխալ, վնասակար ու հակահասարակական վարդապետություններին, ինչպիսին է սոցիալիստների սպառնալի վարդապետությունը»[58]։

80-ական թվականներին Բաֆֆին, հակադրվելով մշակական լիբերալիզմին, համակրելից Թուրքիայի ենթված ժողովուրդների ազատագրական պայքարի պաշտպանությամբ ու ոգեշնչմամբ։ Նրա երկերում լսելի են դառնում մի կողմից նալբանդյանի, մյուս կողմից կովկասահայ երիտասարդության մեջ ուժ ստացող դեմոկրատական հայացքների արձագանքները։ Բաֆֆու «Ենենքի» հերոսի երազից իսկ ակներև է Նալբանդյանի ազդեցությունը վիպասանի վրա։ Վարդանի երազած գյուղում գործարանները պատկանում են գյուղական համայնքին, որի ամեն մի անդամը մաս ունի դրանց մեջ[59]։

Նույն գաղափարներն են արծարծվում նաև «Կայծերում»։ Տուրք տալով 80-ական թվականների նարոդնիկներին, «Կայծերի» վերջում, երազելով Հայաստանի գալիք օրը, Բաֆֆին գրում է, որ որսորդ Ավոն իր գյուղի բոլոր հողերը դարձրեց համայնական սեփականություն, ինքը մնալով գյուղական համայնքի սոսկ անդամ։ Վեպում Բաֆֆին նկարագրում է Հայաստանը, որը դարձել է խաղաղ, շինարար, բախտավոր, երջանիկ ստեղծագործ մի երկիր, ուր ապահովված է շինականի թե կյանքը, թե կալքը։ «Ուրիշի վաս-

---

57 Տե՛ս Վ. Ոշականի, Հայ հասարակական հոսանքների պատմությունից, էջ 272։

58 «Մշակ», 1878, № 98։

59 Տե՛ս Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 361—362 և հան.։

տակով ապրող հասարակությունը մեռավ, երբ նրան ստիպեցին իր հաշվով ապրել...»։ Բաֆֆին պատկերացնում է ապագա Հայաստանը որպես «ազգային վաճառականության ծաղկող երկիր»։ «Մենք մինչև այժմ դժբախտ էինք, որ չգիտեինք օգտվել մեր երկրի արդյունքներից,— գրում է նա։— Եվրոպացին մեր բուրդն ու բամբակը տանում էր, պատրաստում էր և գործվածքները տասնապատիկ գնով մեզ վրա վաճառում էր։ Իսկ մենք մնում էինք աղքատ, միայն օտարի քսակն էինք լցնում»[60]։ Այստեղ ակներևաբար է «Երկրագործության» հեղինակի որոշակի ազդեցությունը Բաֆֆու վրա։

1885 թ. Բաֆֆին գրեց «Սամվել» պատմավեպը, որի քաղաքական պաթոսը ուղղված էր ցարիզմի քաղաքականության դեմ։ Վերջապես 80-ական թվականների կեսերին հրապարակած «Կայծեր» աշխատությունում նա հակադրվելով Արևմտյան Հայաստանի նկատմամբ ցարիզմի բռնած ուղեգծին, հուշում է արևմտահայերի ազատագրման իր մտորումները։ Ահա թե ինչու այդ շրջանում Բաֆֆու շուրջն է համախմբվում ժամանակի առաջադեմ դեմոկրատական երիտասարդությունը։

«Մշակի» հրատարակության ֆինանսական տագնապի պահին Բաֆֆին, Ն. Աբելյանը և Գ. Միրզոյանը որոշել էին Արծրունուց գնել նրա քվրթի հրատարակության իրավունքը և «Մշակին» ուղղությունը մոտեցնել «Հայրենասերների միության» ոգուն, այն դարձնել Թիֆլիսի հայ նարոդնիկների ձայնափողը։ 1884 թ. հունվարի 14-ին Ն. Աբելյանին հղած իր նամակում Բաֆֆին հաղորդում է, որ Արծրունու հետ իր «հարաբերություններն այժմ բավական լարված են, դիտավորություն ունի այս տարվա սկզբում մի քանի փոփոխություններ անել խմբագրական կազմակերպության մեջ նոր մարդիկ հրավիրել և հներին հեռացնել, որպեսզի «Մշակը» փորր ինչ կենդանանա»։ Ապա նա նշում է, որ այդ հնարավոր չեղավ և «Շատ կարելի է, որ բոլորովին դադարեմ «Մշակի» մեջ աշխատակցելուց, և ևն կարողացա հաջողացնել, պիտի նախապատրաստվեմ առաջիկա տարվանից իմ խմբագրությամբ մի ամսագիր հրատարակել»[61]։

Նույն տարվա մարտի 12-ին Ն. Աբելյանին հղած մի այլ նամակում Բաֆֆին գրում էր. «Ժամանակ է, որ ազատվենք բուրժուա-խմբագիրներից, որ իրանց կապիտալով խեղդում են մեզ։ Նոր երիտասարդությունը պիտի խմբվի մի նոր գործի շուրջը... Մեզ ուրիշ ոչինչ պետք չէ, բայց միայն մարդիկ։ Թարմ, հաստատամիտ և տոկուն մարդիկ»[62]։

Ճշմարտությունը բոլոր պարագաներում այն է, որ 80-ական ԹԹ. ընթացքում Բաֆֆու գաղափարների վտակը դուրս էր եկել լիթերալ «Մշակի» հունից և նորից մուտք գործել նախամշակյան շրջանում իրեն համակած դեմոկրատական ակտիվ գաղափարաբանության հուն։

Դեռևս ռուս-թուրքական պատերազմի տարիներին գրած իր երկերում Բաֆֆին հանգել էր այն մտքին, թե հայերը պետք է հույսը դնեն միայն իրենց բազկի վրա, պայքարեն իրենց իրավունքների համար և նվաճեն ազատություն։ Ցավոքսանց արդարավոր էր Բաֆֆու երկերում արծարծվող այն միտքը, որ հարկավոր է հատուկ աշխատանք ծավալել արևելահայ գավառ-

---

60 Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 484։

61 Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 583։

62 Նույն տեղում, էջ 608 և հան.։

ներում և մանավանդ ծովամերձ քաղաքներում բանող արևմտահայ պանդուխտ մշակների մեջ։ Ակտիվ դեր վերապահելով մշակ դասին, Րաֆֆին հանդիպումներ է ունենում նրա ներկայացուցիչների հետ և ինչպես իր «Կյանքի բովում» գրում էր Շիրվանզադեն, սիրով էր ընդունում ցնցոտիներում կծկված մշեցի մշակներին, խրախուսում նրանց։

Հետագայում Գ. Միրզոյանը հիշում էր այն աշխատանքները, որ Րաֆֆու հետ միասին նրանք կատարում էին արևմտահայ մշակների շրջանում։ «Մենք աշխատում ենք այստեղ (Թիֆլիսում) մշեցի, ալաշկերտցի և այլ Բուրքահայ համալների մեջ՝ որոշ քաղաքական պրոպագանդ անել, նրանց պատրաստել, երիտասարդ ուժեր ուղարկել երկիրը, ապստամբացնել բրոշյուրներ և գնենք փոխադրել»[63], մշակների այդ խմբակից դուրս եկան հետագայում իրենց հայդուկային գործունեությամբ նշանավոր դարձած Մարգար վարժապետը, վարդևնիացի Քալոր Պետրոսը և ուրիշներ։

Ազգային-ազատագրական շարժման գլխավոր շարժիչ ուժը տեսնելով հայ ժողովրդի դեմոկրատական խավերի մեջ, Րաֆֆին չանում էր այդ շարժման ոլորտը ներգրավել նաև համալսարանական երիտասարդության առավել «հայրդ» մասը, նախապատրաստել նրանց ազատագրական պայքարի հետագա գոտեմարտներին։ Սակայն Րաֆֆին, ինչպես և իր ժամանակի շատ գործիչները, չհասան այն գիտակցությանը, որ ընդհանուր հեղափոխական-ազատագրական շարժումներից մեկուսացած ազգային պայքարն ինքնյան չէր կարող ունենալ հաղթանակի ստույգ երաշխիք։

4. ՀԱՅ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հայ ժողովրդի հասարակական մտքի զարգացումն ու ազատագրական շարժումների ծավալումը հրատապ խնդիր էին առաջադրում գաղափարական ուժերի խմբավորման ու քաղաքական կազմակերպությունների ձևավորման համար։ Կենսական պահանջ էր դառնում տարերայնորեն բարձրացող ժողովրդական հուզումները մեկ ընդհանուր ընթացքի մեջ դնել ու գլխավորել։

1880-ական թվականներին ազատագրական պայքարի գաղափարը առավել հստակ բնույթ ստացավ շնորհիվ Խրիմյանի և Մկրտիչ Փորթուգալյանի ծավալած հասարակական-քաղաքական գործունեության։

Մկրտիչ Փորթուգալյանը 1870-ական թվականների Կ. Պոլսի առաջադեմ երիտասարդների մտավորական շարժումների ակտիվ մասնակիցներից էր. Մինաս Ձերազի, Արփիար Արփիարյանի գործակիցը։ Կ. Պոլսի հայրենասերների միացյալ ընկերությունը հաշվի առնելով Փորթուգալյանի ունակությունները նրան ուղարկեց Վասպուրական՝ դպրոցական գործը գլխավորելու համար։ Վանում Փորթուգալյանը լուսավորական լայն աշխատանք ծավալեց. իր շուրջը համախմբելով երիտասարդությանը, ստեղծեց «Առաջադիմական միությունը», որը քաղաքին ընտրությունների ժամանակ պայքարում էր «Ազատական» կոչվող թևկնծուների համար, դաստիարակում հետադիմական ուժերին։ Վանի հասարակական կյանքում կարևոր նշանակություն էր «Ազգային սահմանադրության տարեդարձի» նշումը 1879 թ., որի ժամանակ «Առաջադիմական միությունը» առաջադրեց գավառներում տարվելիք լուսավորական և ազգային

63 ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 4047, գ. 219ա, թ. 62 և հետ.։

ազատագրական աշխատանքների իր ծրագիրը։ Այդ գաղափարների ազդեցության տակ Վանում ստեղծվեց նաև «Զինակիր» ընկերությունը, որի նպատակն էր զենք հայթայթել և Վարագա լեռան բարձունքներում զինավարժությամբ զբաղվել։

Այդ ժամանակ Կ. Պոլսից Վան էր եկել նաև ուսուցիչ Տաճատ Պեյլերյանը և Անդրկովկասի Նուխի քաղաքից ռուս-թուրքական պատերազմի մասնակից, ռուսական բանակի սպա Սողոմոնյանը, որոնց օգնությամբ Փորթուգալյանը կազմակերպեց «Քաղաքական ակումբ»։ Շուտով, սակայն, սկսվեցին թուրքական կառավարության հետապնդումներն ու ձերբակալությունները, «Քաղաքական ակումբը» փակվեց, Տ. Պեյլերյանն ու Սողոմոնյանը, խուսափելով հետապնդումից, կարողացան անցնել Կովկաս։ Կովկասից Վան ժամանած ազատամիտ երիտասարդներից էին նաև Հովհաննես Շիրվանյանը, Թովմաս Կինոյանը, Մկրտիչ Սեֆիլյանը և ուրիշներ, որոնք զգալի թափ հաղորդեցին մտավորական շարժմանը։ Սակայն սրանք ձերբակալվեցին ու բանտ նետվեցին։

Րաֆֆու ազատագրական գաղափարները լայն արձագանք էին գտնում երիտասարդության շրջանում։ Այդ գաղափարների ազդեցության տակ ձևավորված Փորթուգալյանի «Հայրենասիրաց ընկերությունը» իր լոզունգը դարձրեց. «զենքով կռվել և ձեռք բերել ազգային փրկությունը»։ 1885 թ. հալածանքները ավելի սուր բնույթ ստացան։ Խրիմյանը աքսորվեց Կ. Պոլիս, Փորթուգալյանը ևս հեռացվեց Վանից։ Սակայն նրանք շարունակեցին գործել, հայ ժողովրդի ազատագրման ուղիներ որոնել։

Վանից անցնելով արտասահման, Մկրտիչ Փորթուգալյանը 1885 թ. Մարսելում սկսում է հրատարակել «Արմենիա» հայերեն թերթը, որի էջերում մերկացվում էին թուրք փաշաների, քուրդ բեյերի ու սուլթանական կառավարության հալածանքները հայ ժողովրդի նկատմամբ։ Թերթը բողոքի ձայն էր բարձրացնում այդ անիրավությունների դեմ և եվրոպական տերությունների ուշադրությունը հրավիրում Հայկական հարցի վրա։ «Արմենիան» ժամանակի մամուլի այատ օրգաններից մեկն էր, որ կարողանում էր անկաշկանդ մերկացնել բռնակալներին։ Նա միաժամանակ նշում էր հայ շինականի պայքարի և ազատության ուղիները։ Դա բուլղար ժողովրդի ազատագրական պայքարի ուղին էր, որը պետք է ընդօրինակեին հայերը։ Այդ նպատակով էլ Մ. Փորթուգալյանը հաջորդաբար հրատարակում է բուլղարական շարժման և նրա ղեկավարների հերոսական պատմության դրվագները։ Հատկապես ազդեցիկ նշանակություն ուներ այն փաստը, որ 1885 թ. բուլղարները զինված ուժով կարողացան Բեռլինի կոնգրեսի որոշմամբ Թուրքիային թողնված Արևելյան Ռումինիան գրավել և միացնել Բուլղարիային։ Դա ոգևորում էր շատերին և նրանք ձգտում էին նույն ձևով ազատագրել Հայաստանը։

«Արմենիա» թերթի մի խումբ համախոհներ 1887 թ. Լոնդոնում Կարապետ Հակոբյանի նախագահությամբ հիմնադրեցին «Հայկական հայրենասիրաց ընկերությունը» (1891 թ. սկսում է կոչվել «Անգլո-հայկական կոմիտե»)։ Ընկերությունը 1888 թ. հոկտեմբերից սկսեց հայերեն և ֆրանսերեն հրատարակել «Հայաստան» երկշաբաթաթերթը՝ Հովհաննես Պրուսալյանի (Ժան Պրուսալի) տնօրինությամբ և Միհրան Սվազլյանի ու Ջեմս Մալցոմի խմբագրությամբ։

«Հայաստան» թերթը, գտնվելով անգլիական դիվանագիտության ազդեցության տակ, ձգտում էր շարժել եվրոպական տերությունների և դիվանագետ-

ների գումը հայերին օգնելու տրամադրություն ստեղծել։ Թերթը դիմումներ էր ուղղում պետական գործիչներին և տպագրում նրանց կարծիքները Հայկական հարցի վերաբերյալ։ Անգլիական պառլամենտում արծարծած խնդիրները և «Կապույտ» գրքի նյութերը լայն արձագանք էին գտնում «Հայաստանի» էջերում։ Գլադստոնը, որն այդ ժամանակ արդեն պաշտոնանկ էր, շարունակում էր հանդես գալ մարդասիրական և ազգերի ազատության մասին իր կնճռ հայտարարություններով։ Անգլիական դիվանագիտությունը, որ Բեռլինի վեհաժողովում Հայկական հարցի ձախողման գործում այնքան խարդախ դեր կատարեց, «Հայաստան» թերթի պատկերմամբ հանդես էր գալիս որպես հայ ժողովրդի միակ բարեկամն ու ազատարարը։

«Արմենիայի» շուրջը համախմբված գործիչները 1889 թ. կազմակերպեցին «Հայոց հայրենասիրական միությունը», որի ծրագրային հիմքը Ռ. Պատկանյանի «Վարդապետարան Հայաստանի ազատության» գրքույկն էր։ Միությունը կազմեց նաև 23 կետից բաղկացած կանոնադրություն։ Սակայն մինչև վերջն էլ չհրավիրվեց նախատեսված պատգամավորական ժողովը, չստեղծվեց հատուկ կենտրոնական ղեկավար օրգան։ Կազմակերպության գաղափարական ղեկավարը «Արմենիա» թերթն էր, իսկ Արևմտյան Հայաստանում գործնական կենտրոնը՝ Վանի մասնաճյուղը, որի ղեկավարն էր Փորթուգալյանի աշակերտ Մկրտիչ Ավետիսյանը։ 1894 թ. կազմված այդ մասնաճյուղի ծրագիր-կանոնագիրը պահանջ էր դնում պայքարի միջոցով «իրավունք ձեռք բերել, ինքգինք ազատորեն կառավարվելու»։

1896 թ. Վանի ազատագրական մարտերի ժամանակ Ավետիսյանը մոտ 1000 հոգուց բաղկացած խմբի գլուխ անցած հերոսական մարտեր էր մղում թուրք չարդարարների դեմ։ «Արմենիա» թերթը և նրա ստեղծած «Հայոց հայրենասիրական միությունը» պրոպագանդում էր անկախ Հայաստան ստեղծելու գաղափարը։ Այդ նպատակին հասնելու համար «Միությունը» ազատագրական պայքարի համար ընդունելի էր համարում բոլոր հնարավոր միջոցները. «Երբեմն զենքով, երբեմն փողով, երբեմն օտարի օգնությամբ»[64], Այդ հողի վրա էլ ստեղծվում է այն կազմակերպությունը, որի անդամները թերթի անունով կոչվեցին արմենականներ։ Նրանք հայրենասիրական կոչեր էին հռչակում, խնդիր դնում, պատրաստվել ընդհանուր ապստամբության և ազատագրվել սուլթանական լծից։

Արմենականները մերժում էին թուրքական լծի տակ գտնվող ժողովուրդների համատեղ ազատագրական պայքարի հնարավորությունը, Հայ ժողովրդի պայքարի հիմնական նպատակը համարում նրա անկախություն ձեռք բերելը։

Հանդես գալով հայ ազգային-ազատագրական պայքարի ջատագով, արմենականները չդարձան կազմակերպված, կուռ կուսակցություն։ Այնուհանդերձ նրանք զգալի դեր կատարեցին հայ ազատագրական պայքարի գաղափարախոսության և հասարակական մտքի զարգացման ասպարեզում։

* * *

XIX դարի 70—80-ական թվականներին ռուսական քաղաքներում և Եվրոպայում ուսում ստացած Անդրկովկասի երիտասարդության լավագույն ներ-

64 «Վարդապետարան Հայաստանի ազատության», Մարսել 1891, էջ 5։

հայացուցիչները բուռն կերպով ներգրավվում էին հեղափոխական շարժման մեջ։ Հեղափոխական նարոդնիկների շարքերում, օրինակ, ցարիզմի դեմ ակտիվ պայքար էին մղում Կ. Մամիկոնյանը, Ս. Կարդաշյանը, Գ. Աբազյանը, Հ. Մանուչարյանը, Թամարա Ադամյանը և ուրիշներ։ Սակայն 80-ական թվականների ռևակցիայի պայմաններում նարոդնիկությունը կազմալուծվում, դադարում է գոյություն ունենալ որպես հեղափոխական կազմակերպություն։ Նարոդնիկական ինտերնացիոնալիստական կազմակերպությունները թայթայվեցին, առաջացան ազգային խմբեր, որոնք կանգնած էին բուրժուական լիբերալիզմի դիրքերում։

Արևմտյան Հայաստանում ծայր առած ազգային-ազատագրական շարժումներն իրենց սոցիալ-դասակարգային բովանդակությամբ լինելով հակասուլթանական և հակաֆեոդալական, դեմոկրատական բնույթ էին կրում, ունեին առաջադիմական նշանակություն։ Այդ հողի վրա էլ Արևմտյան Հայաստանում առաջացան ազգային-ազատագրական գաղափարներ պրոպագանդող մի շարք խմբակներ, կազմակերպվեցին նաև ինքնապաշտպանական զինված ջոկատներ, որոնց մեջ ընդգրկվեցին մտավորականներ, գյուղացիներ, արհեստավորներ, մշակներ։

Արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարը մեծ արձագանք գտավ կովկասահայության մեջ։ Թուրքիայում տեղի ունեցող վայրագությունները մեծապես հուզում էին հայ զանգվածներին։ Կովկասում, չնայած ցարական կառավարության հետապնդումներին հայերը ոչ միայն նյութական օգնություն էին կազմակերպում իրենց եղբայրներին, այլև զինված խմբերով հասնում անցնում էին սահմանը և օգնում արևմտահայությանը։ Այդ գործում ակտիվ դեր էին խաղում արտասահմանում և Թուրքիայում կազմակերպված մի շարք քաղաքական գաղտնի խմբակները, ընկերություններն ու միությունները, որոնցից հայտնի են «Ուժ», «Հայրենասերների միություն», «Բերիտասարդ Հայաստան» և այլն։

Այդ շրջանում էլ սկսում են ձևավորվել հայ քաղաքական կուսակցությունները։ Առաջինը «Հնչակ» քնքի շուրջը համախմբված հայ ուսանողների ջանքերով 1887 թ. Ժնևում կազմակերպված «Հայ սոցիալիստ հեղափոխականների կուսակցությունն» էր, որն իր տպագիր օրգանի անունով կոչվեց Հնչակյան։ Նրա հիմնադիրները՝ Ավետիս Նազարբեկյանը (Նազարբեկ) և Մարո Վարդանյանը (Նազարբեկ), 80-ական թվականների սկզբներին Պետերբուրգի նարոդովոլյան կազմակերպությանն անդամակցած ուսանողներից էին, որոնք 1883 թ. սկզբներին Փարիզ էին մեկնել սովորելու Սորբոնի համալսարանում։ Փարիզում նարոդովոլցի Հովհաննես Լորիս-Մելիքյանի հետ միասին նրանք հանդիպեցին ռուս նշանավոր նարոդնիկ Պյոտր Լավրովին։ 1886 թ. ամռանը Ավետիս Նազարբեկյան և Մարո Վարդանյանը տեղափոխվել էին Շվեյցարիա՝ ուսանելու Ժնևի համալսարանում։ Այստեղ էլ նրանք Թուբեռն Խանազատյանի, Ֆաբրիել Կաֆյանի, Սաքո Ադամիրյանի, Հակոբ Մելոյանի և Համայակ Նուշպալյանի հետ հիմնադրում են Հնչակյան կուսակցությունը։

Ավ. Նազարբեկյանը քրիստոնեություն էր մարսելում հրատարակվող «Արմենիայինը», սակայն չհամատեղելով ռուս նարոդնիկներից ժառանգած գյուղացիական սոցիալիզմի գաղափարները «Արմենիայի» խմբագիր Մկրտիչ Փորթուգալյանի լիբերալ հայացքների հետ, խզում է կապերը այդ պարբերականից։

«Հնչակը» իր անդրանիկ խոսքն ուղղեց հայ ժողովրդի «կրթված ու հասկացող դասակարգի երիտասարդությանը», ելնելով այն հայացքից, թե լոկ նրա եռանդը, նրա խոսքը, նրա ուժը կարող է բարձրացնել թուրքահայ ընդհանրության խեղդված ոգին և ժողովրդի ոտների տակ պատրաստել հաստատ հող հեղափոխական գործի հաջողության համար»[65]։

1888 թ. «Հնչակ» թերթում հրատարակված հնչակյանների առաջին ծրագրում նշված էր. «Մարդկության ներկա հասարակական կազմակերպությունն ունի իրեն հենարան՝ անարդարությունը, բռնությունն ու ստրկությունը»։ Տնտեսական անհավասարության հողի վրա առաջացած ճնշողները ստեղծում են «մարդկային հարաբերությունների մեջ անհավասարության անարդարությունը», որ «Իրերու այդ կնճռոտ ու անիրավ վիճակը կարող է բարեկարգել միմիայն սոցիալիստական կազմակերպությունը... Սոցիալիստական կազմակերպությունն իրապես կպահպանե մարդկային բնական ու անհերքելի իրավունքները»[66]։ Սակայն այդ բոլորը համարվում էր նրա հեռավոր նպատակը։ Իսկ մոտակա նպատակն էր Արևմտյան Հայաստանում «ձեռք բերել ընդարձակ ռամկապետական, քաղաքական ազատություն և ազգային անկախություն»[67]։ Ըստ որում պետք է ստեղծվեր օրենսդիր ժողով ընդհանուր և ուղղակի քվեարկությամբ, ապա ապահովվում էր մամուլի, խոսքի, խղճի, ընկերությունների լիակատար ազատություն։ Այդ նպատակին հասնելու համար պետք էր ժողովրդական ապստամբության միջոցով «բռնի կերպով կերպարանափոխել, հեղաշրջել» գոյություն ունեցող թուրքական բռնապետությունը[68]։ Հնչակյանները ռուս նարոդնիկներից որդեգրել էին տեռորը և պայքարի անարխիստական ձևերը։

«Հնչակը» մանր բուրժուական սոցիալիզմի գաղափարներ պրոպագանդող թերթ էր, նա մերժում էր 61-րդ հոդվածի դերը, ձգտում էր հետևել ռուս վտարանդիական (էմիգրանտական) մամուլին, որը Ռուսաստանում ղեկավարում և ուղղություն էր տալիս հակացարական հասարակական մտքին։ «Հնչակի» նպատակն էր այդ նույն դերը կատարել Արևմտյան Հայաստանում։

Հնչակյան կազմակերպություններ են ստեղծվում Տրապիզոնում, Կ. Պոլսում, Բուլղարիայում և այլ վայրերում։ Ռուբեն Խանազատը, Շմավոնը (Գաբրիել Կաֆյան) և ուրիշներ այդ կազմակերպության ճանաչված պրոպագանդիստներն էին։ «Հնչակը» մայրենի լեզվով պրոպագանդում էր սոցիալիզմի գաղափարները, տեղեկություններ հաղորդում շահագործվող և շահագործող դասակարգերի, կապիտալիստական հասարակարգի տնտեսական ու քաղաքական կառուցվածքի և այլ հարցերի մասին։ Հնչակյանները ձգտում էին սոցիալիզմը կապել, ավելի շուտ հարմարեցնել արևմտահայ գյուղացիական շարժմանը, ազգային-ազատագրական պայքարին։ Ըստ էության, հնչակյանների հասկացողությամբ սոցիալիզմը ռուս նարոդնիկական սոցիալիզմի ձևափոխված տարբերակն էր, որ նրանք ցանկանում էին վերակենդանացնել և հարմարեցնել Թուրքիայի պայմաններին։

Սակայն, սոցիալիստական գաղափարները, ինչ ձևով էլ հանդես գային,

---

65 «Հնչակ», 1887, № 1։

66 «Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության», հ. Ա, Բեյրութ, 1962, էջ 32։

67 Նույն տեղում, էջ 33։

68 Տե՛ս նույն տեղում, էջ 34։

լայն արձագանք էին գտնում երիտասարդության մեջ. Ջերնիշևսկին, Դերցենը, Նալբանդյանը շարունակում էին մնալ երիտասարդությանը գաղափարական անունդ տվող առաջնորդներ, ծնևի հայ ուսանողները՝ «Հնչակի» հիմնադիրներն ամբողջովին տարված էին ռուս վտարանդիների գաղափարներով։

Կա նամանավանդ «Հնչակի» առաջին համարների նյութերի և Դերցենի «Կոլոկոլի» միջև. Քերթը չերմ էջեր է նվիրել Ջերնիշևսկու, Պ. Լավրովի և ուրիշ ռուս սոցիալիստների հիշատակին։ Ջերնիշևսկու մահվան առիթով տպագրված հոդվածում գրված էր. «Նիկոլայ Գավրիլովիչը կրթել է ևս բավականաթիվ ռուսահայ երիտասարդներ, որոնք միշտ կրելով իրենց սրտում մեծ մարտիրոսի վեհ կերպարանքը և տոգորված խորին երախտագիտությամբ դեպի նա, ողբում են իրենց մեծ ուսուցչի անփոխարինելի կորուստը»[69]։ Հետևելով նարոդնիկների օրինակին, Քերթը նշում էր, որ Եվրոպայի ժողովուրդները, տեսնելով կապիտալիզմի բերած ամեծամեծ չարիքները, աշխատում և դործում են այսօր կործանել նրանց անհրավ ռնժիմի կարգերը՝ հանուն սոցիալիզմի, աշակցել... կապիտալիզմի մուտք գործելուն մեր ժողովրդի մեջ,—հանցանք է»[70]։

Կուսակցության ղեկավար Ա. Նազարբեկը, հանդես գալով հնչակյանների ծրագրային դրույթների մեկնաբանությամբ, ցանկանում էր համոզել, թե «սոցիալիզմը դրսեկ հոսանք չէ հայ կյանքում, այլ ուսմունք, որը դրական հիմքեր ունի հայ իրականության մեջ, որտեղ անհատական արտադրության կից գոյություն ունեն ինչպես արհեստավորների, այնպես և գյուղացիների «համայնքներ»[71], «Հնչակը» կարևոր է համարում, մանավանդ, գյուղական համայնքների առկայությունը. դրանց մեջ նա տեսնում էր «հայ գյուղական համայնական, կոմունական կարգերի, հողատիրական կոմունական կերպերի հիմքերը։ Հայաստանում հարատևող գյուղահամայնքների մեջ ծրագրի մեկնաբանողը նշմարում էր գյուղացիական սոցիալիզմի հաղթության գլխավոր նրաչխիքը։ «Մեր, սոցիալիստներիս, ամենագլխավոր հոգսերից մեկն է... նախազգուշացնել հայ ժողովրդին կապիտալիզմի ախտից,— գրում էր Նազարբեկը,—առաջն առնել Հայաստանում այդ ախտի մուտք գործելուն, կուսակցության «մուտավոր նպատակի», «ռամկավարական-քաղաքական ազատությունների իրականացումն այն պատնեշն է, որ պիտի արգելք դառնա Հայաստանում կապիտալիզմի ներմուտին և պատվանդան լինի «հեռավոր նպատակի»—սոցիալիզմի կառուցման համար»։

Նարոդնիկ-հնչակյանները, կտրված հայ իրականությունից, չէին ցանկանում տեսնել, որ կապիտալիզմը դեռևս XIX դ. առաջին կեսից մուտք էր գործել հայ իրականության մեջ և 80-ական թվականներին բուրժուական հարաբերությունները թե՛ տնտեսական և թե՛ հասարակական-քաղաքական կյանքում լուրջ փոփոխություններ էին մտցրել։ Ինչպես ռուս նարոդնիկները, հնչակյանները էլ ջանում էին «ապացուցել», որ սոցիալիզմը կարելի է իրականացնել առանց կապիտալիստական արդյունաբերության։ Նրանք գտնում էին, որ «Սոցիալիզմն իր իրականացման համար ունի և ուրիշ դրական հիմք հայ ժողովրդի մեջ։ Հայտնի են հայ գյուղական համայնական կարգերը, հողատիրության կոմունական կերպերը...»։ Ապա «Հնչակը» այն միտքն էր քարոզում, որ

---

69 «Հնչակ», 1889, № 4։
70 «Հնչակ», 1888, № 1։
71 «Հնչակ», 1889, № 1—2։

անհատ գյուղացին չկարողանալով դիմանալ կառավարության ճնշումներին, «միանում է գոյություն ունեցող գյուղական համայնքի հետ, իր հողը դարձնելով սեփականություն այդ համայնքի... ավելի դիմացկուն լինելով իբրև հավաքական ուժ»։ Այս ուղիով, ըստ «Հնչակի», անհատական սեփականությունը դառնում է «սեփականություն համայնքի, հայտնվում է ամենահաստատ հիմք սոցիալիզմի ամենագլխավոր պահանջի աջողակ իրագործման—դարձնել հաերական, հավասական, հաերաժողովրդային սեփականության արդյունագործության ամենանշանավոր գործիքներից մեկը—հողը»։ Եվ, վերջապես, «Հնչակի» նարոդնիկական ուտոպիստական սոցիալիզմի գաղափարն այնպիսի բացարձակ աստիճանի էր հասցվում, որ համոզմունք էր հայտնվում, թե Հայաստանում այդ հիմքի վրա «սոցիալիզմը ներկայանում է մեզ իր ամենակատարելագործված կերպարանքով»[72]։ Ահա թե ինչ աստիճանի էր աղավաղվում սոցիալիզմի ուսմունքը հնչակյանների մոտ։ Միանգամայն ակնհայտ է, որ հնչակյանների նարոդնիկական սոցիալիզմը ոչինչ ընդհանուր բան չուներ մարքսիզմի հետ։

Հնչակյաններն ամբողջովին ընդունում էին նարոդնիկ-անարխիստների բակունինյան պայքարի մեթոդները, բունտարություն, տեռոր։ Հնչակյանները Հայկական հարցի լուծման հնարավորությունն անխուսափելիորեն կապում էին ցուցարարությունների և դինված ելույթների հետ։ «Միայն այդ դեպքում է, որ հակառակ իր կամքի, դողդ եվրոպան, տեսնելով իր խաղաղությունը խախտված, պարտավորված կլինի վավերացնել հայ ժողովրդի պահանջները»[73]։

Սակայն, եթե նարոդնիկությունը 70-ական թվականներին հեղափոխական և առաջադեմ ուժ էր, ապա «Հնչակի» ասպարեզ գալու ժամանակ այն քայքայվել էր և վերածվել տեռորիստական խմբի, որը հեղափոխական շարժման մեջ հետադիմական դեր էր կատարում։ Գ. Պլեխանովի «Մեր տարաձայնությունները» աշխատությունը, «Աշխատանքի ազատագրության» խմբակը, հսկայական անդունդ էին առաջացրել հեղափոխական պայքարի նոր ուժերի և նարոդնիկության միջև։ Հանդես էր եկել հեղափոխական բանվոր դասակարգը, որը սոցիալական պայքարը դնում էր մարքսիստական, գիտական սոցիալիզմի հիմքի վրա։

Եվ սկսած 1891 թ. կյանքի ակնառու փաստերն ստիպեցին հնչակյաններին ընդունել բուրժուական հարաբերությունների զարգացման անհրաժեշտությունը հայ իրականության մեջ։ «Հնչակը» մինչև անգամ այն միտքն էր հայտնում, որ հայ ժողովուրդը միայն կապիտալիզմի զարգացման մեջ կարող էր գտնել իր տնտեսական ուժը[74]։

Եթե մինչ այդ հնչակյանները Թուրքիան համարում էին հետամնաց ֆեոդալական երկիր, ապա այժմ այն դիտում էին որպես կապիտալիզմի ոլորտը ընկճված մի պետություն, որտեղ կատարվում էր «գյուղատնտեսական և համքարական հին եղանակներին» քայքայում։ Մինչև 90-ական թվականները «գյուղացիական սոցիալիզմ» դավանող «Հնչակը» եկավ նույնիսկ այն եզրա-

72 «Հնչակ», 1888, № 1։
73 «Հնչակ», 1888, № 2 և 3։
74 Տե՛ս «Հնչակ», 1891, № 15։

կացության, թե դյուղացիությունն իր տնտեսական պայմանների բերումով «ընդունակ չէր յուրացնելու սոցիալիզմի գաղափարները»[75]։

1897 թ. նոր ծրագրով Հնչակյան կուսակցությունն արդեն հավատացնում էր, թե Թուրքիայի արդյունաբերական քաղաքներում հայ գործարանային բանվորների թիվը «աճանչակ հաղարների է հասնում»[76]։ Հնչակյաններն սկսում են նույնիսկ պնդել, թե արևմտահայ ժողովուրդն այժմ արդեն թևակոխել է այն շրջափուլը, երբ կարող է և պետք է առաջ շարժվի եվրոպական պրոլետարիատի հետ համաքայլ։ Ինչպես գերմանական սոցիալ-դեմոկրատների տեսական օրգան «Դի նոյե ցայտ» ամսագրում գրում էր Ավ. Նազարբեկյանը, հնչակյանները տարված էին այն մտքով, թե «սոցիալիստական կուսակցությունները կարող են իրենց բարձրացրած ձայնով ազդեցություն գործել եվրոպացի հասարակական կարծիքի և եվրոպական պետությունների վրա՝ օգնության հասնելու արյան մեջ խեղդվող հայ ժողովրդին՝ Հայկական հարցի լուծման համար»[77]։

Հնչակյաններն ընդունում էին երկու հակադիր դասակարգերի՝ հայ բուրժուազիայի և բանվոր դասակարգի հանդես գալը[78]։ Նրանք համոզվել էին նաև գյուղական համայնքի մասին ռուս նարոդնիկներից որդեգրած տեսության անհաստատ լինելու մեջ։ Եվ, վերջապես, նրանք ընդունում էին, որ հեղափոխականները պետք է հետևեն Մարքսի տեսությանը և այն դիտեն որպես միակ ճշմարիտ գիտություն։ Այս բոլորը, սակայն, ընդունում էին ձևականորեն. մարքսիզմի ոգին ըստ էության նրանց համար մնում էր խորթ ու անհասկանալի։

Հայ ժողովրդի ազատագրման գործում հնչակյանությունը կանգնում է երկիլության առջև. նրա մոտակա նպատակն էր, ազգայնական-նարոդնիկական գործելակերպով, բունատարարական, տեռորիստական մեթոդներով ազատագրել հայ ժողովրդին թուրքական լծից, իսկ հեռավոր նպատակը՝ սոցիալիզմի կառուցումը։ Նման մոտեցումն, ըստ էության, ընդհանուր ոչինչ չուներ մարքսիզմի հետ։ Հնչակյանների ծրագրում որպես նպատակ նշվում էր «Հեղափոխել և ոչնչացնել միապետական կարգերը, փրկել հայ ժողովուրդն իր ընդհանուր ստրկական դրությունից... ստեղծել քաղաքական պայմաններ, որոնք աշխատավոր դասակարգին միջոց տան ազատ կերպով արտահայտելու իր ձգտումներն ու պահանջները... դյուրացնելու նրա այն բոլոր հասարակական ջանքերը, որոնք պետք է ամեն տյամադրելի հասարակական պայմանների միջոցով նպաստեն նրա առաջխաղացությանը դեպի հեռավոր նպատակը»[79]։

Հնչակյանները փաստորեն ձգտում էին Թուրքիայի, Պարսկաստանի և Ռուսաստանի հայկական շրջաններից ստեղծել մի պատմամնտական պետություն, որի մեջ պետք է մտնեին նահանգական ինքնավար մարզերն ընդհանուր բնորական իրավունքով։ Այս գաղափարը համահնչուն էր լիբերալ-բուրժուական տեսակետին։ Նման կարգեր ստեղծելուց հետո հասկանալի չէր, թե «հեռավոր» կոչվող նպատակը՝ սոցիալիզմը, ինչ ձևով պետք է իրականացվեր։

---

75 «Հնչակ», 1891, № 14, էջ 6։

76 «Մրագիր Ս. Դ. Հնչակյան կուսակցության», Լոնդոն, 1897, էջ 32 և հան.

77 «Die Neue Zeit», 1895—1896, էջ 501։

78 Տե՛ս «Հնչակ», 1891, № 16։

79 «Մրագիր Ս. Դ. Հնչակյան կուսակցության», էջ 5։

Թեև հայկական որոշ շրջաններ մեծ հույսեր էին կապում 61-րդ հոդվածի հետ և սոհասարակ քարոզում էին եվրոպամոլություն, ապա «Հնչակը» մերկացնում էր եվրոպական դիվանագիտության շահամոլությունն ու գաղութարարական քաղաքականությունը։ Բայց այդ երկար չտևեց։ Իրեն հատուկ երկվությամբ «Հնչակը» շուտով կառչեց 61-րդ հոդվածին և սկսեց գովաբանել այն։ Իրեն սոցիալիստ կոչող Ռուբեն Խանազատյանը կուսակցության հանձնարարությամբ 1891 թ. Ժնևից մեկնում է Երուսաղեմ, սույնի կողմից այնտեղ աքսորված Մկրտիչ Խրիմյանին եվրոպա փոխադրելու և ապա Հայաստանում նրան հեղափոխական շարժման գլուխ կանգնեցնելու նպատակով[80]։ Խրիմյանը, սակայն, ընդառաջ չգնաց նրանց՝ ըստ էության արկածախնդրական ծրագրին։ Խանազատը, որ իր հիշողությունները գրել է Հնչակյան կուսակցությունից հեռանալուց հետո, իրենց գործունեությունը «երբեմնապարտ մոլորություններ է համարում։

(Հնչակյանները արևմտահայերի ազատության միակ ելքը համարում էին ապստամբությունը, որը, սակայն, ըստ նրանց, իրականացվելու էր ազգայնական սկզբունքներով, հաշվի չէր առնվում այն իրավիճակը, որ հայերն ամենուր ապրում էին մեջ ընդ մեջ, շրջապատված թուրք, քուրդ և այլ ազգերով։ Հայկական շարժումները մյուս ճնշված ժողովուրդների պայքարից անջատելը և հայերի համար առանձին բարենորոգումներ պահանջելը, ինքնըստինքյան ֆշնամական տրամադրություն էին ստեղծում հարևանների շրջանում։ Անտեսելով այդ ամենը, հնչակյանները կոչ էին անում մտնել ժողովրդի մեջ, կազմակերպել նրան և ապստամբություն բարձրացնել։ Նրանք ելնում էին բակուներյան այն սկզբունքից, թե ժողովրդին պետք է ապստամբելու ազդանշան տալ և նա ինքը գիտի, թե հետո ինչ պետք է անի։ Հնչակյանների ապստամբական ծրագիրն անարխիստական սկզբունքի վրա էր կառուցված։)

Բնորոշ է և այն, որ սկզբում հնչակյանները, դեմ լինելով եվրոպական տերությունների միջամտությանը, հնազանդում իրենք էին որոնում այդ միջամտության հնարավորություններ։ Երբ 1890 թ. հունիսի 18-ին տեղի ունեցած էրզրումի հայերի և քուրդական զորքերի բնդհարումը եվրոպական դիվանագետներն անտարբերությամբ ընդունեցին, հնչակյանները Ռ. Խանազատին ուղարկեցին Կ. Պոլիս այնտեղ ցույց կազմակերպելու «հենց սուլթանի մայրաքաղաքում, դեսպանների քիթ տակ»։ Դում-Քափուի ցույցը տեղի ունեցավ 1890 թ. հուլիսի 15-ին, բայց Խանազատը, կազմակերպելով ցույցը, դրա նախօրյակին հեռացել էր Կ. Պոլսից, և այն սկսվեց նրա բացակայությամբ։ Ցույցը վերջացավ անհաջողությամբ և Աբդուլ Համիդ II-ին նոր առիթ տվեց ուժեղացնելու հալածանքներն ու չարդերը հայ աշխատավորների նկատմամբ։

Ստեղծված ներքին և արտաքին պայմանները գնալով ծանր վիճակ էին ստեղծում հայ ժողովրդի համար։ 90-ական թվականներին սույնի կողմից կազմակերպված հայկական չարդերը շուրջ 300000 մարդկային զոհեր խլեցին արևմտահայերից, միաժամանակ պատճառ դառնալով նրանց զանգվածային արտագաղթի դեպի Բալկանյան երկրներ, Եգիպտոս ու Ամերիկա։ Այդ ամենը խոր պատկերում առաջացրեց հնչակյան կուսակցության շարքերում։ 1896 թ. Լոնդոնում կայացած հնչակյանների առաջին ընդհանուր ժողովում արևմտահայ պատգամավորների մեծ մասը լքեց կուսակցության շարքերը։ Անցնելով

80 Տե՛ս Ռ. Խանազատ, Հիշողություններ Երիմյանի մասին, Թիֆլիս, 1903, էջ 30։

լիբերալ ռեֆորմիզմի կողմը, հնչակյան այդ պատգամավորներն անջատվեցին Ավ. Նազարբեկյանի գլխավորած հին հնչակյաններից՝ հանդես գալով հետագայում որպես «վերակազմյալ» հնչակյանների կուսակցություն։ Իրենց գործունեության կայան դարձնելով Եգիպտոսը, 1897 թ. «վերակազմյալները» հրատարակեցին «Մարտ» օրգանը, իսկ 1898 թ. Լոնդոնում՝ «Նոր կյանք» պարբերականը։

Հին հնչակյանների և «վերակազմյալներին» ներկուսակցական տարաձայնությունները թեպետ սրվել էին կուսակցության ծրագրի սոցիալիզմին վեր և դեմ ուղղությունների շուրջը, սակայն իրապես պայքարը տեղի էր ունենում կուսակցության լիբերալ և դեմոկրատական կողմնորոշում ունեցող հատվածների միջև։ Փաստորեն պատգամավորական ժողովի մեծամասնությունը դժգոհ էր կուսակցական կենտրոնի ղեկավարությունից, աչքի առաջ ունենալով զբլխավորապես Հայկական հարցի լուծման առաջ ստեղծված քաղաքական փակուղին։ Հնչակյանները քարկանեցին և հրապարակեցին Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի մի շարք աշխատություններ։ Նրանք իրենց հայտարարում էին սոցիալիստներ, սակայն սոցիալիզմը նրանց համար հեռավոր նպատակ էր։ Դասակարգային պայքարի խնդիրը նրանք շրջանցում էին և առաջնությունը տալիս ազգային հարցին։ Ըստ էության մանր-բուրժուական հնչակյան կուսակցությունն իր ծրագրային խնդիրն էր համարում «Հայկական հեղափոխության» միջոցով և եվրոպական տերությունների օգնությամբ Արևմտյան Հայաստանի ազատագրումը։ Այդ նպատակով նրանք կազմակերպում էին հակակառավարական ելույթներ ու ցույցեր, որպեսզի եվրոպական դիվանագիտության ուշադրությունը բևեռվի Հայկական հարցի վրա։ Միևնույն հակասությունական ընդհանուր շարժումից կտրված այդ ելույթները կառավարության կողմից հեշտությամբ ճնշվում, չախչախվում էին, իսկ եվրոպական դիվանագետները մնում էին դիտողի դերում։

Միաժամանակ հնչակյանների գործունեությունը կովկասում խանգարում էր բանվոր դասակարգի և աշխատավորության շրջանում ինտերնացիոնալիստական գաղափարների կոփմանը և սոցիալական ու ազգային-ազատագրական պայքարի միասնական ճակատ ստեղծելուն։

Անդրկովկասում կապիտալիստական հարաբերությունների զարգացումն ու դասակարգային պայքարի սրումն առաջացրին նոր հակամարտություններ։ Պրոլետարական-աշխատավորական մասսաների ելույթներն ու պայքարն աճող ճնշումների ու շահագործման դեմ գնալով ուժեղացավ և հանգեցրեց բոլոր ճնշվածների միավորմանը ինտերնացիոնալիզմի դրոշի տակ։ Շահագործող դասակարգերի և հայ բուրժուազիայի համար նացիոնալիզմը դարձավ դասակարգային պայքարը քուլացնելու, աճող պրոլետարական շարժումները կասեցնելու զենք։ Այդ նպատակի համար նա օգտագործում էր մամուլը, հասարակական ու քաղաքական կազմակերպությունները։

* * *

1890 թ. Կովկասում կազմակերպվեց «Հայ հեղափոխականների դաշնակցությունը» բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունը, որը հանդես եկավ որպես բուրժուազիայի ազգային շահերի պաշտպան։ Հայ բուրժուազիան և նրա կուսակցությունը ժողովրդական լայն մասսաների աջակցությունն ստանալու համար իրենց հռչակեցին համազգային շահերի արտահայտիչներ։ Դաշնակ-

ցությունը որդեգրեց լիբերալ նարոդնիկության գործելակերպը և հատկապես անարխիստական ամբոխավարությունն ու տեռորը։ Նրա հիմնադիրները նարոդնիկությանը հարող Պետերբուրգի և Մոսկվայի ուսումնական հաստատություններում սովորող հայ ուսանողներից էին։ Ուսանողներ Ստեփան (Ռոստոմ) Զորյանը և Մարտին Շաքրյանը մտադիր էին հիմնել մի կազմակերպություն, որը պետք է զբաղվեր Արևմտյան Հայաստանի ազատագրման խնդրով։ Մինչ այդ հայ ուսանողների մեջ տարածված էին արմենականների և հնչակյանների գաղափարները, սակայն հայ ուսանող երիտասարդությունն առավելապես ոգևորված էր բուլղարական ազգային-ազատագրական շարժումներով։ Բալկանյան ժողովուրդների հայդուկային շարժումը լայն արձագանք էր գտնում հայ ուսանողության շրջանում։ Այդ օրինակով հայ ուսանողներն իրենց հավաքույթներում քննարկում և ծրագրեր էին կազմում Արևմտյան Հայաստանում հայդուկային շարժում առաջացնելու և հայերին սուլթանի լծից ազատագրելու համար։

Սակայն ուսանողների մյուս խումբը, որ սերտ կապեր ուներ ռուսական հեղափոխական շարժման հետ, դիմադրում էր այդ ծրագրին և մերժում անջատ հայկական շարժում սկսելու պահանջը։ Նրանք գտնում էին, որ հայերը թվով քիչ են և «անջատվել Ռուսաստանի հեղափոխական մեծ շարժումից, նշանակում է շեղվել հեղափոխական ճանապարհից և կորստյան մատնվել»[81]։

Այդ կարծիքին չէր, սակայն, հայ երիտասարդների նարոդնիկական այն խումբը, որ գործում էր Թիֆլիսում։ Խմբի մեջ էր Ք. Միքայելյանը, որը Ս. Զավարյանի, Ս. Զորյանի, Մ. Շաքրյանի և ուրիշների հետ Թիֆլիսում հիմնադրեց «Հայ հեղափոխական դաշնակցություն» կուսակցությունը։ Այդ կազմակերպության համար նացիոնալիստական ամբոխավարական շարժումը, որի ոգին տեռորն էր, դարձավ կարևոր խնդիր։

Վ. Ի. Լենինը «Ռուսական սոցիալ-դեմոկրատների խնդիրները» աշխատության մեջ նշել է, որ «նարոդովոլականի համար քաղաքական պայքարի հասկացողությունը նույնական է քաղաքական դավադրության հասկացողության հետ... Բլանկիզմի, դավադրականության ավանդույթները նարոդովոլականների մոտ սարսափելի ուժեղ են, այնքան ուժեղ, որ նրանք քաղաքական պայքարը չեն կարող պատկերացնել այլ կերպ, քան քաղաքական դավադրության ձևով»[82]։ Նա դեռևս 1897 թ. նշում էր «որ դավադրությունների ժամանակը վաղուց անցել է, որ քաղաքական պայքարը դավադրության հանգեցնել՝ նշանակում է մի կողմից այն անչափ նեղացնել, իսկ մյուս կողմից ընտրել պայքարի ամենաանհաղթ ձևերը»[83]։ Այդ հարցին Վ. Ի. Լենինն անդրադարձավ նաև ՌՍԴԲԿ II համագումարի բանաձևերի նախագծում։ Նա գրում էր, որ տեռորը «որպես քաղաքական պայքարի եղանակ, որը վերին աստիճանի աննպատակահարմար է ներկայումս, լավագույն ուժերին կտրում է կազմակերպական և ագիտացիոն... աշխատանքից, թալքայում է հեղափոխականների կապը բնակչության հեղափոխական դասակարգերի մասսաների հետ, թե՛ իրենց իսկ հեղափոխականների և թե՛ ընդհանրապես բնակչության մեջ ամենաթույլ պատ-

---

81 Ան. Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ, էջ 9։

82 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 2, էջ 573—574։

83 Նույն տեղում։

կերացումներ է տարածում ինքնակալության դեմ պայքարի խնդիրների ու եղանակների մասին»[84]։

1891 թ. մայիսից սկսեց լույս տեսնել դաշնակցության օրգան «Դրոշակ» թերթը։ Նրա ընդարձակ առաջնորդողում բացատրվում էր այդ կուսակցության նպատակը՝ ազատագրել հայ ժողովրդին թուրքական լծից։ Դատողություններ էին արվում այն մասին, թե հայ ժողովրդի ազատագրությունը հնարավոր չէ ապահովել սոսկ դիվանագիտական ճանապարհով։ Գտնում էին, որ անհրաժեշտ է դիմել նաև ապստամբության։ Միաժամանակ թերթը հանդես էր գալիս որպես սոցիալիստական գաղափարների կատաղի թշնամի և մերժում Արևմտյան Հայաստանում այդ գաղափարների տարածման հնարավորությունը։ Եթե հնչակյանները սոցիալիզմն ընդունում էին որպես հեռավոր նպատակ, ապա դաշնակցականները ի սկզբանե հանդես էին գալիս մարքսիզմի և սոցիալիստական ուսմունքի դեմ։ Հայ կապիտալիստներ Ա. Ծատուրյանը, Ա. Մանթաշյանը և ուրիշներ դաշնակցությանը նյութապես սատարելու իրենց խոստումը պայմանավորում էին այն պահանջով, որ այդ կուսակցությունը հետամուտ չլինի սոցիալական խտրականության[85]։

Կուսակցության ղեկավարությունը պաշտպանում էր այն հայացքը, թե ազգության դասակարգային շահերը նահանջում են նրա ընդհանուր շահերի առաջ։ Եվ պատահական չէ, որ «Մանիֆեստ» կոչված իր կոչը դաշնակցությունն ուղղում էր հայ հասարակության բոլոր խավերին, հորդորելով նրանց կանգնել մի միասնական դրոշի տակ։ Կապեր որոնելով հայ բուրժուազիայի հետ և նյութական ակնկալություններ ունենալով նրանից, դաշնակցականները համագործակցության հրավեր էին հղել նաև հայկական լիբերալիզմի հեղինակավոր պարագլուխ Գր. Արծրունուն։ Թիֆլիսում հնչակյաններ Ռ. Խանազատյանը և Հ. Մեղավորյանը ոչ միայն միացան նորաստեղծ դաշնակցությանը, այլև Օդեսայում ու Բուլղարիայում գործելիս հանդես եկան որպես դաշնակցության անդամներ, մինչև որ 1891 թ. հնչակյան կենտրոնը չեղյալ հայտարարեց կուսակցությունների միավորման մասին դաշնակցությանը տված նրանց համաձայնությունը։

«Հայ հեղափոխականների դաշնակցությունը» կազմակերպվեց ոչ միայն վերասերված նարոդնիկների և լիբերալների համագործակցությամբ, այլև պահպանողականների աջակցությամբ՝ ինչպիսիք էին Ս. Թարխանյանը, Ս. Հախումյանը և ուրիշներ։ 1892 թ. ամռանը՝ Թիֆլիսում կայացած կուսակցության ընդհանուր անդրանիկ համագումարում նախագահ ընտրված Լ. Սարգըսյանը, հանդես գալով հաշվետու զեկուցմամբ, պահանջում էր առաջիկայում ևս մնալ ազգայնական քաղաքականության դիրքերում։ Համագումարը խրախուսելի համարեց տեղական կազմակերպության մարտական նախաձեռնությունը, այն չկաշկանդելով կենտրոնի մշակած պլաններով և հրահանգներով։ Դրանով սանձազերծվում էին տեղական խմբերի անարխիստական գործողությունները, խրախուսելով նրանց կազմակերպած ահաբեկումները։ Անհրաժեշտ համարվեց ընդունել զինապահեստներ պայթեցնելու, կամուրջներ ավերելու, իշխանության ապարատը կազմալուծելու տակտիկան՝ թուրք կառավարությանը զիջումների հարկադրելու նպատակով։ Որբեմնի նարոդովոլցի Հ. Լորիս-Մե-

84 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 7, էջ 316։

85 Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1927, № 2, էջ 116։

լիքյանն առաջարկում էր սուլթանի ապարանքը կործանելու նպատակով պատրաստել ռումբերով լի մի օդապարիկ։ Ենթադրվում էր, որ նման ակտը կարող էր Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածն իրագործելու հարկադրանք դառնալ մեծ տերությունների համար։

Անշարժկական գործունեության գաղափարը նոանդուն պաշտպանություն գտավ, մանավանդ, Տիգրան Օրմանյանի և Արամ Արամյանի կողմից։ Արամ Արամյանը, նույնպես մերժելով ընդհանուր ապստամբության գաղափարը, շեշտում էր պարտիզանական կռիվների և անհատական տեռորի անհրաժեշտությունը։ Միաժամանակ համագումարը գտնում էր, որ ծրագրում խոսք չպետք է լինի «սոցիալիզմի» մասին, քանի որ «Հայաստանի քաղաքական ու տնտեսական ազատության» պահանջը բավական է հնչակյանների հետ միություն ստեղծելու համար։

Դաշնակցության ծրագրային սկզբունքները մշակվեցին 1890—1894 թվականների ընթացքում։ Նախապես ծրագրային իրենց նպատակը համարելով ապստամբության միջոցով «Տաճկահայաստանում ձևոք բերել քաղաքական և տնտեսական ազատություն», հետագայում դաշնակցությունը նահանջեց այդ դիրքերից և սահմանափակվեց սահմանադրական Թուրքիայի կազմում արևմտահայերի համար տեղական ինքնավարության պահանջով միայն։ Գալով ապագա Հայաստանի քաղաքական կարգերին՝ ծրագիրը շեշտում էր «ռամկավարական կառավարություն» ունենալու պահանջ։

Ծրագրի անորոշ դարձվածքների հեղեղատում սոցիալիզմի խնդիրը բոլորովին անտեսված էր։ Ծրագիրն անտեսում էր Արևմտյան Հայաստանում սաղմնավորվող բուրժուական հարաբերությունները։ Նա տարբերություն չէր տեսնում «փողատիրոջ», «վաճառականի» և «վաշխառուի» միջև։ Դրամատերերից նպաստներ ակնկալող ծրագիրը կուսակցության դռները լայնորեն բացում էր ունևորների առջև, խոստումներ չդնելով հարուստի ու աղքատի, ունեզորի և ընչազուրկի միջև։ Թեև խոսվում էր հայ գյուղացիության, «համայնական սեփականության» և «համայնական աշխատանքի» պահպանման ավանդները պահպանելու մասին, այնուամենայնիվ, հանուն Արևմտյան Հայաստանի քաղաքական ազատության, ծրագիրը քրտնաջան գյուղացուն չէր տարբերանշում ազգակից հարստահարիչից։ Տիրող կարգերին դիմադրելու համար Թուրքիայում կարևոր էր համադեմոկրատական ճակատ կազմելու խնդիրը, սակայն դաշնակցության ազգայնամոլությունը հանգեցնում էր հայկական մեկուսացած պայքարի գաղափարախոսության։ Հրաժարվելով դասակարգային պայքարի գաղափարից և հորջորջելով իրեն ժողովրդական կուսակցություն, դաշնակցությունը դառնում էր դասակարգային տարբերությունը մերժող, ուղտ ազգայնական գաղափարախոսություն քարոզող կուսակցություն։

Ավելի լայն գործունեություն ծավալելու նպատակով, «Դրոշակը» Թիֆլիսից փոխադրվեց Ժնև։ Նթե Թիֆլիսի «Դրոշակը» բացարձակապես մերժում էր սոցիալիզմի գաղափարը, ապա Ժնևյան «Դրոշակը» սկսում է փետրավորվել սոցիալիստական ֆրազներով։ Սակայն այդ չէր փոխում դաշնակցության բուրժուանացիոնալիստական էությունը, ոչ էլ այն, որ նրա մեջ էին մտնում բանվորներ, գյուղացիներ և արհեստավորներ։ Վ. Ի. Լենինը Կոմինտեռնի II կոնգրեսում խոսելով բրիտանական բանվորական կուսակցության մասին, նշել է. «Իհարկե, բանվորական կուսակցությունը մեծ մասամբ կազմված է բանվորներից։ Սակայն կուսակցությունն իսկապես քաղաքական բանվորական

կուսակցություն է, թե ոչ—դա կախված է ոչ միայն այն բանից, թե կազմված է արդյոք կուսակցությունը բանվորներից, այլ նաև այն բանից, թե ո՞վ է ղեկավարում նրան, և ո՞րն է նրա գործողությունների ու նրա քաղաքական տակտիկայի բովանդակությունը։ Միայն այս վերջինն էլ որոշում է, թե արդյոք մենք մեր առաջ ունենք պրոլետարիատի իսկական քաղաքական կուսակցություն։ Այս միակ ճիշտ տեսակետից Բանվորական կուսակցությունը ամբողջովին բուրժուական կուսակցություն է, որովհետև թեև նա կազմված է բանվորներից, բայց նրան ղեկավարում են ռեակցիոներները և այն էլ ամենավատ ռեակցիոներները, որոնք գործում են միանգամայն բուրժուազիայի օգտին. դա բուրժուական կազմակերպություն է, որը գոյություն ունի՝ անգլիական նոսկենների և Շայդեմանների օգնությամբ բանվորներին սիստեմատիկաբար խաբելու համար»[86]։

Լենինյան այս բնորոշումն առավելապես վերաբերում է դաշնակցության, որպես քաղաքական կուսակցության։

Դաշնակցությունը ժխտելով դասակարգային պայքարը, ազգային-ազատագրման խնդիրը դիտում էր սոցիալական հեղափոխությունից անկախ։ Հայ ժողովրդի ազատագրման հարցը կապելով իմպերիալիստական տերություններ-ի չարաբաստիկ միջամտության հետ, կիրառելով գործունեության արկածախնդրային ձևեր ու միջոցներ, հայերի պայքարն անջատելով ճնշված ժողովուրդների համընդհանուր պայքարից, դաշնակցությունը հայ ժողովրդին կանգնեցնում էր փակուղու առջև։ Նրա հրահրած անջատ ելույթները, եվրոպայի հայանպաստ միջամտության ապարդյուն ակնկալությունները, հայկական ինքնավարություն ստեղծելու անհիմն հույսերը ոչ մի արդյունք չտվեցին, կազմալուծեցին հայ ժողովրդի ազատագրական պայքարը։ Իր գործունեությամբ դաշնակցությունը հայ բանվորներին և գյուղացիությանը շեղում էր հեղափոխական պայքարի ուղուց, ձախողում նրանց սոցիալական և ազգային-ազատագրական պայքարը, ամբողջովին արտահայտում բուրժուազիայի շահերը։ «Վռովկասի հայ բուրժուազիան,— գրել է Ստ. Շահումյանը,—քնականերեն «Դաշնակցություն» կուսակցության մեջ տեսնում էր իր հարազատ զավակին, իր լավագույն դաշնակցին, իր շահերի լավագույն արտահայտիչն ու պաշտպանին, և այդ պատճառով բոլոր ուժերով, նյութապես և բարոյապես, աջակցում էր այդ կուսակցությանը»[87]։

Սակայն դաշնակցությունն այդ շրջանում կարողացավ օգտագործել հայ ժողովրդի ազգային զգացումները, թուրքական բիրտ լծից ազատագրվելու նրա բուռն ցանկությունը և իր կողմը գրավել բավական թվով աշխատավորական տարրեր։ Դրանց մի մասը, հետո համոզվելով դաշնակցության բուրժուա-նացիոնալիստական քաղաքականության մեջ, երես թևքից նրանից և կանգնեց հեղափոխական պայքարի ուղու վրա։ Ուշագրավ է, որ ազատագրության պայքարի շարքային անդամները նշանակություն չտալով այս կամ այն կուսակցության գործունեությանը, մտահոգված էին միայն և միայն հայ ժողովրդի ազատագրման խնդրով։

Ինչ խոսք, որ արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը հայ ժողովրդի ընդերքից էր առնում մարտական իր եռանդն ու թափը։ Շարժման

86 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 313։
87 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, էջ 369։

առաջմղիչ ուժերը հայ գյուղացիական զանգվածներն էին և արհեստավորությունը, որոնց ծոցից դուրս եկած ֆեդայիները ազատագրական շարժման մարտական ուժն էին։ Ազգային-ազատագրական շարժման բուն նպատակը հողային հարցի լուծումն ու սոցիալական ազատագրումն էր։

Անշուշտ Թուրքիայի տնտեսական-քաղաքական հետամնացությունը, երկրում բնակվող ժողովուրդների կուլտուրական մակարդակի խիստ տարբերությունները, տիրող բռնապետական կարգերի դեմ համադեմոկրատական շարժման բացակայությունը այն օբյեկտիվ պատճառներն էին, որ արևմտահայերի ազատամարտը դնում էին ծանր կացության մեջ։ Իհարկե, կուսակցությունները չեն մեղավոր «որ հայ ժողովրդի պատմական վիճակը այդքան անագորույն է, ոչ մի կուսակցություն չի կարող դժողքը դրախտ դարձնել,— ասում է Ստ. Շահումյանը,— բայց կուսակցությունները ստեղծվում են հենց նրա համար, որ ըստ կարելույն լավացնեն ժողովրդի դրությունը, որ խելացի կերպով առաջնորդեն մասսաներին և տանեն նրանց ազատության ճանապարհով»[88]։ XIX դարի վերջին XX դարի սկզբներին արևմտահայերի ազատագրական շարժման դրոշը պարզած կուսակցությունները, այդ թվում մասնավորապես դաշնակցությունը, իրոք, չկարողացան խելացիորեն առաջնորդել ժողովրդական զանգվածներին ազատության ճանապարհով։

88 Ստ. Շահումյան, Երկ, հ. 3, Երևան, 1978, էջ 48։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ. ՄԱՐՔՍԻԶՄԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

1. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XIX Դ. 70—90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման, տնտեսական կյանքի ընդհանուր վերելքի և դրա հետ բանվոր դասակարգի դրության ծանրացմանը զուգընթաց, աստիճանաբար բարձրանում էր բանվորների դասակարգային գիտակցությունը, սկիզբ էին առնում բանվորական հեղափոխական շարժումները։

1895 թ. նոյեմբերին Պետերբուրգի Տորնտոնի ֆաբրիկայում «Պայքարի միության» զեկավարությամբ 500 ջուլհակների կազմակերպած գործադուլը մայրաքաղաքում գործադուլային շարժման նոր վերելքի ազդանշան ծառայեց։ «1895—1896 թվականներից,— գրել է Վ. Ի. Լենինը,—Պետերբուրգի հուշակավոր գործադուլների ժամանակից, սկսվում է բանվորական մասսայական շարժումը սոցիալ-դեմոկրատիայի մասնակցությամբ»[1]։

Ռուսաստանի արդյունաբերական կենտրոններում բարձրացող գործադուլային շարժումներն ու բանվորների հեղափոխական ելույթները իրենց ազդեցությունը թողնեցին նաև երկրի ծայրամասերի վրա։ Ռուսաստանի օրինակով Անդրկովկասի պրոլետարիատն անցյալ դարի 60—70-ական թվականներից ծավալում է գործադուլային շարժումներ։

1868—1869 թթ. վերացվում են Կողբի աղահանների 1829 և 1836 թթ. արտոնված իրավունքները, սահմանվում են նոր օրենքներ։ Այդ ամենն առաջացնում է ընդվզումներ։ Աղահանքերի բանվորների առաջին գործադուլը տեղի ունեցավ 1868 թ. հունվարի 29-ին։ Գործադուլ արեցին 1190 աղահատներ՝ հանքատերերին ներկայացնելով տնտեսական մի շարք պահանջներ, որոնք լուրջ անհանգստություն առաջացրին։ Այսուհանդերձ, աղահանների պայքարը հաջողությամբ չպսակվեց[2]։

1875 թ. մայիս-հունիս ամիսներին Կողբի աղահատները նորից են ընդհարվում կապալառուների հետ։ Տնտեսական պոռթկումը ավարտվում է նրանց միջև կնքված երկկողմանի համաձայնությամբ։ Կողբի աղահատների անդրանիկ ելույթները տարերային բնույթ էին կրում և տնտեսական պահանջներից

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 300—301։

2 Տե՛ս Ն. Հարությունյան, Կողբի աղահատների կյանքի ու պայքարի պատմությունից (1860—1870), «Բանբեր Հայաստանի արխիվների», 1966, № 3, էջ 77—94։

այն կողմ չէին անցնում։ Սակայն դրանք Հայաստանի բանվորական առաջին գործադուլներից էին[3] և այդ տեսակետից էլ կարևոր նշանակություն ունեին։

Կարևոր է նաև Ալեքսանդրապոլում Մալխասյանի տպարանի բանվորների գործադուլը 1895 թ.։ Բանվորները չնչին աշխատավարձ էին ստանում՝ 3—12 ռուբլի և այն էլ ժամանակին չէին վճարում։ Օրական աշխատում էին 14—16 ժամ։ Գործադուլի պատճառը ռոճիկի քչությունը և անկանոն վճարելն է, «ինչպես ասում են բանվորներն ուր հարկն է բողոք են տալու, որպեսզի իրենց հասանելիք օրավարձը ստանան»[4]։ Այդ ժամանակ տարերայնորեն գործադուլի ելան ոչ միայն Ալեքսանդրապոլի տպարանների, այլև մյուս ձեռնարկությունների բանվորները։

Բանվորական տարերային տնտեսական առաջին ելույթներին ու բողոքներին արձագանքում են առանձնապես Թիֆլիս—Կարս, Ալեքսանդրապոլ—Երևան երկաթուղային շինարարության աշխատողները։ Ախթալայի տեղամասի բանվորներն առաջինը բարձրացրին իրենց դժգոհության ձայնը։ 1896 թ. ապրիլին 200 բանվորներ, որ երկար ժամանակ աշխատավարձ չէին ստացել, գործադուլ արին։ Նրանք հավաքվեցին Ախթալայում գտնվող գրասենյակի մոտ և պահանջեցին անմիջապես վճարել իրենց հասանելիքը։ Երբ կապալառուն հայտարարեց, թե ինքը փող չի ստացել Թիֆլիսից, բանվորները մտան գրասենյակ և ստիպեցին նրան իրենց հետ միասին գնալ Թիֆլիս՝ հաշիվները փակելու։ Թիֆլիս-Կարս երկաթուղու շինարարության պետի օգնականն այդ մասին հայտնում է Բորչալուի գավառապետին և օգնություն խնդրում։ Գավառապետի կարգադրությամբ պրիստավը մեկնում է Ախթալա և ոստիկանական միջոցներով «կարգը վերականգնում»[5]։ Բանվորները զգալով, որ իրենց նորից են խաբված, ապրիլի 15-ին, այս անգամ արդեն 400 հոգով, աշխատանքը կրկին դադարեցնում են։ Գործադուլավորների արդարացի պահանջները բավարարելու փոխարեն, լրացուցիչ ոստիկաններ են ուղարկվում և զենքի ուժով ճնշում նրանց դիմադրությունը։

Ախթալայի տեղամասի բանվորներին արձագանքեցին երկաթուղու շինարարության մյուս տեղամասերի աշխատողները, որոնք նույնպես անլուր կերպով շահագործվում էին։ Օգոստոսի 11-ին բանվորական ընդվզումներ եղան 3-րդ տեղամասում, իսկ դեկտեմբերի սկզբներին՝ Ջամանլուի կամրջի շինարարությունում։ Ոստիկանությունը զենքի դիմեց, վիրավորվեց երկու բանվոր։ Մեկ տարի անց, 1897 թ. հոկտեմբերին, բանվորական նոր ելույթներ տեղի ունեցան երկաթուղու շինարարության Կարսի տեղամասում։

Հայաստանի բանվորների առաջին ելույթները տարերային բնույթ ունեին, առաջանում էին տնտեսական հողի վրա, հաճախ նման էին գյուղացիական բունտերի։ Սակայն ժամանակի առումով, դրանք հեղափոխականացնող նշանակություն ունեին, արձագանքում էին Ռուսաստանի և Անդրկովկասի բանվորական շարժումներին, իրենց վրա էին կրում Թիֆլիսի երկաթուղային գլխավոր արհեստանոցների և դեպոյի բանվորների ազդեցությունը։

Պետերբուրգի բանվորների 1895—1896 թթ. նշանավոր գործադուլների օրինակով, Թիֆլիսի երկաթուղային արհեստանոցներում 1898 թ. տեղի ունե-

---

3 Տե՛ս նույն տեղում, էջ 77—74։

4 «Մշակ», 1895, օգոստոսի 5։

5 ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 39, գ. 126, թ. 1։

ցավ առաջին խոշոր գործադուլը, որն աչքի ընկավ իր կազմակերպվածությամբ։ Գործադուլավորներից 41 հոգի բանտարկվեցին, իսկ շատերը, որպես «վտանգավոր» և «անբարեհույս», հեռացվեցին աշխատանքից։ Նրանց մեջ էր հայ առաջին բանվոր-հեղափոխական, սոցիալ-դեմոկրատ Գ. Մկրտումյանը։ Նույն թվականի փետրվարի 18-ից մինչև մարտի 11-ը գործադուլ արեցին Թիֆլիսի Էնֆիաջյանցի ֆաբրիկայի բանվորները։ 1898 թ. Թիֆլիսի բանվորները նշեցին մայիսմեկյան տոնը, հետագայում (1899—1901) մայիսյան տոնախմբություններ կազմակերպեցին Թիֆլիսի, Բաթումի, Բաքվի, Երևանի, Ալեքսանդրապոլի և այլ քաղաքների բանվորները։

1870-ական և 1890-ական թվականներին Անդրկովկասում տեղի ունեցող բանվորական շարժումների մեջ էական տարբերություններ կային։ Դա ամենից առաջ պայմանավորված էր բանվորության կազմով։ Եթե 1870-ական թվականներին բանվորական կորիզը թույլ էր, արտագնացների զգալի մասը կապված էր գյուղի հետ, ապա 1890-ական թվականներին բանվորական բանակն ավելի է ստվարանում, արտագնացների ճնշող մասն ընդմիշտ կապվում է արդյունաբերության հետ, դառնում արդյունաբերական բանվոր։ Տեղի է ունենում բանվոր դասակարգի համակենտրոնացում։ Մանր արհեստանոցներին փոխարինում են ֆաբրիկագործարանները, խոշոր միավորումները։ Կապիտալիստական շահագործման գիշատիչ ձևերը բարձրացնում են բանվորների դասակարգային գիտակցությունը, ավելի են սրում հակասությունները, ուժեղանում է նրանց հետաքրքրությունը դեպի սոցիալիստական գաղափարները։ Երկրամասի բանվորների քաղաքական դաստիարակությանը նպաստում են Ռուսաստանի կենտրոնական քաղաքներից եկած բանվորները՝ հեղափոխական պայքարի բովով անցած, քաղաքական մկրտություն ստացած բանվորները։ Աստիճանաբար սոցիալիստական գաղափարներն ուղի են հարթում և թափանցում բանվորների մեջ, «բանվորներն իրենց մեջ» վիճակից դառնում են «բանվորներն իրենց համար» դասակարգ։

Անդրկովկասի մարքսիստական անդրանիկ խմբերը, որոնց մեջ համատեղ գործում էին ինչպես Ռուսաստանից արտաքսված հեղափոխականները, այնպես էլ հայ, վրացի, ադրբեջանցի և այլ ազգությունների ներկայացուցիչները, հաջողությամբ գլխավորում էին բանվորական առաջին ցույցերն ու ելույթները։

2. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

Գյուղացիական ռեֆորմը Ռուսաստանում չլուծեց հողային հարցը։ Այդ պատճառով դասակարգային հակամարտությունները գյուղում ետռեֆորմյան շրջանում ավելի սրվեցին։ 70-ական թվականների վերջերին գյուղացիական շարժումները Ռուսաստանում ծավալվեցին նոր ուժով։ Սակայն այդ շարժումների ամենամեծ ալիքը բարձրացավ 1881—1884 թթ., երբ երկրում մոլեգնում էր ռեակցիան և անասելի վատթարացել էր աշխատավոր զանգվածների կացությունը։

XIX դարի 70—90-ական թվականներին գյուղացիական շարժումները ծավալվեցին նաև Ռուսաստանի ծայրամասերում՝ Մերձբալթիկայում, Անդրկովկասում, Միջին Ասիայում ու Սիբիրում։

Արևելյան Հայաստանում, ինչպես և կայսրության բազմաթիվ այլ շրջաններում, գյուղացիները պայքարում էին ամենից առաջ հողի համար։ Այդ պայ-

քարում աչքի ընկան հատկապես կալվածատիրական գյուղացիները, որոնք ուզում էին դառնալ իրենց հողաբաժինների լիիրավ տերերը։ Նրանք հայտարարում էին, որ իրենց հողաբաժինները պետական են և, հետևաբար, 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությունը չի կարելի տարածել նրանց վրա։ Երևանի նահանգում մուլքադարական գյուղացիության 42,6%-ը հրաժարվեց կանոնագրերի կնքումից։ Այդպիսի գյուղացիների տոկոսը մեծ էր հատկապես էջմիածնի գավառում (75,6%)[6], կալվածատիրական գյուղացիները համառորեն դիմադրում ու բողոքում էին իշխանություններին, երբ մուլքադարները, օգտագործելով 1870 թ. մայիսի 14-ի կանոնադրությունը, կտրում էին նրանց հողերը[7]։

Երկրի մի շարք շրջաններում գյուղացիները վկայակոչելով 1870 թ. կանոնադրությունը, ըստ որի յուրաքանչյուր արական շունչ պետք է ստանա 5 դես. հող, պահանջում էին պակասը լրացնել կալվածատիրական հողերի հաշվին։ 1878 թ. ապրիլին Երևանի գավառի Շենգավիթ գյուղի բնակիչները հաշտարար միջնորդին բողոքեցին, որ կանոնադրությամբ իրենք պետք է ունենան 180 դես. հող, բայց իրականում ունեն ընդամենը 80 դես. վարելահող և պահանջեցին վերցնել մուլքադարներից 100 դես. վարելահող ու տալ իրենց։ Գյուղացիների բողոքը հասավ մինչև մայրաքաղաք։ Սակայն սենատը 1888 թ. մարտի 3-ի որոշումով այն թողեց անհետևանք[8]։

XIX դարի վերջին տասնամյակներում լրացուցիչ հողաբաժնի համար պայքարում էին նաև պետական գյուղացիները։ Նման խնդրով 1890 թ. դեկտեմբերի 31-ին պետական ունեցվածքների մինիստրությանը դիմեցին Նոր Բայազետի գավառի Աղփարա գյուղի բնակիչները և պատասխան չստանալով, 1891 թ. օգոստոսին հեռագրեցին Պետերբուրգ. «Աղփարա գյուղը քայքայվում է։ Գյուղացիները ցրվում են, խնդրում ենք արագացնել... աղփարացիների խնդրի լուծումը»[9]։ Լրացուցիչ հողաբաժին էին պահանջում նաև 1894—1896 թթ. Ալեքսանդրապոլի գավառի Մեծ Քյափանակ, 1894—1896 թթ. Նոր Բայազետի գավառի Քյասմա, 1895 թ. Երևանի գավառի Մամադ-Աբադ, Նորդուզ, Թոփրախ-Կալա, Սարջալար և այլ գյուղերի բնակիչները։

Պետական գյուղացիները պահանջում էին նաև վերադարձնել այն հողերը, որոնք տարբեր առիթներով բռնագրավվել էին իշխանությունների կողմից։ Այդպիսի պահանջով հանդես եկան 1895 թ. Սուրմալուի գավառի Արալըխ-Բաշքենդ, 1897 թ.՝ Ալեքսանդրապոլի գավառի Յաղուբլի, 1898 թ.՝ Նոր Բայազետի գավառի Ներքին Ալուչալու գյուղերի բնակիչները, որոնք, սակայն, գոհացում չստացան[10]։

Բացի կալվածատիրական ու պետական գյուղացիներից, հողի համար պայքարում էին նաև վանքապատկան գյուղացիները։ Այսպես, Վաղարշապատի բնակիչները 1892 թ. մարտի 19-ին գրում էին սինոդին, որ իրենց «ևս

---

6 Տե՛ս Р. А. Мелик-Саркисян, Проведение в жизнь крестьянской реформы 1870 г. в Армении, Ереван, 1969, стр. 244 (рукопись диссертации).

7 Տե՛ս «Крестьянское движение в Армении в XIX веке», составил В. А. Ршгуни, при участии К. Степаняна, Ереван, 1949, стр. 214—216.

8 Տե՛ս նույն տեղում, էջ 254—256։

9 ՍՍՀՄ ՀՀՇԱ, ֆ. 381, գ. 17313, թ. 8։

10 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 94, ց. 5, գ. 454, թ. 3, գ. 648, թ. 3—4, գ. 852, թ. 3—7։

տրվի վարելահող», որ կարողանան պահել իրենց «ընտանիքը և երեխաները»[11]։ Իսկ 1896 թ. նրանք չանում էին ապացուցել, որ իրենց գյուղի հողերի իսկական տերերը իրենք են և ոչ թե սինոդը։ Վաղաշրջապատցիները գրում էին գավառապետին. «Ինչպես պետական, այնպես էլ վանական ու տերունական գյուղերում հասարակական հողերի տնօրինման իրավունքը, առանց որևէ բացառության, պատկանում է գյուղական ժողովին»[12]։ Գոհացում չստանալով, նրանք դիմեցին Նահանգապետին, որը, սակայն, պաշտպանեց սինոդի շահերը։

Հողաբակավիության պատճառով գյուղացիները հաճախ ստիպված էին թողնել իրենց հին բնակավայրերը և տեղափոխվել նոր շրջաններ։ Նրանցից շատերը ձգտում էին հաստատվել Կարսի մարզում։ Այդպիսի դիմում ներկայացրին Նահանգապետին 1895 թ. Ալեքսանդրապոլի գավառի Մեծ Ջամուշլու, 1896 թ.՝ նույն գավառի Հոթամ, Միրաք, 1897 թ. Նոր Բայազետի գավառի Ցամաքաբերդ գյուղերի բնակիչները[13]։ Գյուղացիների մի մասն էլ ցանկանում էին տեղափոխվել Երևանի գավառի ցածրադիր շրջանները, մասնավորապես Սարդարապատի տափաստանը և Ելիսավետպոլի Նահանգը (օրինակ՝ 1895 թ. Նոր Բայազետի գավառի Վերին Ախտալի, 1896 թ. Ալեքսանդրապոլի գավառի Բոռաղբյուր և այլ գյուղերի բնակիչները)։ Սակայն պաշտոնյաները նրանց մերժեցին պատճառաբանելով, որ չկան աղատ ու հարմար տարածություններ[14]։

Բավարարություն չստանալով պայքարի պասսիվ ձևերից, գյուղացիներն անցնում էին ավելի ակտիվ գործողությունների և բռնագրավում ինչպես պետական, այնպես էլ կալվածատիրական ու վանքապատկան հողերը։ Երբեմն գյուղացիները հաստատվում էին պետական հողերի վրա և կազմում նոր գյուղեր։ Այդպես վարվեցին 1896 թ. Էջմիածնի գավառի Կիրաշլու գյուղի բնակիչները։ Ցարական պաշտոնյաները փորձեցին նրանց վերադարձնել իրենց հին բնակավայրերը, սակայն հանդիպելով համառ դիմադրության։ Հետագա տարիներին նրանք արգելեցին գյուղացիներին դուրս գալ դաշտային աշխատանքի, անգամ կնքեցին նրանց դռները, բայց գյուղացիները չարդեցին կնիքները և մնացին գրաված հողերի վրա։ Խուսափելով իրադրության բարդացումից, նահանգապետը հաշտվեց ստեղծված վիճակի հետ[15]։

Ավելի հաճախ գյուղացիները բռնագրավում էին պետական հողերը և միացնում իրենց տարածություններին։ 80-ական թվականների վերջերին և 90-ական թվականների սկզբներին այդ երևույթը զգալի չափերի հասավ։ 1896 թ. Երևանի Նահանգի ու Կարսի մարզի պետական ունեցվածքների վարչության ներկայացուցիչն իր զեկուցագրում նշում էր, որ «պետական ձմեռային արոտավայրերի օգտագործման մեջ ոչ մի կարգ չկա»[16] և հափշտակումները հասնում են մեծ չափերի, որ Նահանգի 55 կոտր պետական ձմեռային արոտավայրերից, որոնց տարածությունը հասնում է 36041—դես., 1895 թ. մանանավոր անձինք ու գյուղական համայնքները զավթել են 5098 դես. կամ 14%-ը[17]։

---

11 Նույն տեղում, ֆ. 56, ց. 6, գ. 114, թ. 32—33։
12 Նույն տեղում, ֆ. 94, ց. 5, գ. 402, թ. 10։
13 Տե՛ս նույն տեղում, գ. 340, թ. 8, գ. 525, թ. 9, գ. 458, թ. 5, գ. 613, թ. 1։
14 Տե՛ս նույն տեղում, գ. 223, թ. 31, գ. 613, թ. 1, գ. 440, թ. 13, գ. 453, թ. 5։
15 Տե՛ս նույն տեղում, գ. 473, թ. 93։
16 Նույն տեղում, ֆ. 133, գ. 1922, թ. 42։
17 Տե՛ս նույն տեղում, թ. 43։

Հողեր զավթում էին նաև կալվածատիրական գյուղացիները։ Որոշ դեպքերում նրանք տերունական հողերն ուղղակի մտցնում էին կանոնագրերի մեջ՝ որպես իրենցը, երբեմն ընդարձակում էին իրենց ցանքատարածությունները կալվածատիրական արոտավայրերի հաշվին և խուսափում նոր տարածության մուլքի վճարումից։ Հաճախ նրանք ըմբոստանում և վռնդում էին աղաներին ու տիրում նրանց հողերին։ Այդպես վարվեցին, օրինակ, Ղազախի գավառի Կարաբուլախ գյուղի բնակիչները 1888 թ.։ Ցարական իշխանությունները ստիպված եղան օրինականացնել նրանց բռնագրավումները[18]*։*

Գյուղացիները պայքարում էին նաև ոռոգելի ջրի համար, որը երկրի մի շարք շրջաններում կենսական նշանակություն ուներ։ 1899 թ. ապրիլին Էջմիածնի գավառի Արգաշար գյուղի բնակիչները բողոքեցին նահանգապետին, որ մուլքադարը, որը միաժամանակ միրաբ էր, հափշտակում է գյուղի ոռոգող ջուրը, որի հետևանքով նրանց ցանքերն ու այգիները երաշտից չորացել են և նրանք զրկվել են «գոյության միակ աղբյուրից»[19]*։*

Ցարական պաշտոնյաները հաճախ հողային ու ջրային վեճերը սուր դարձնելով, բորբոքում էին ազգամիջյան թշնամություն։ 1887 թ. նրանք ցանկացան Նոր Բայազետի գավառի Ծաղկունք գյուղի հայերին հակադրել Ղազախի ադրբեջանցիներին[20]*։ Բայց պաշտոնյաներին ընդհանուր առմամբ չէր հաջողվում շեղել գյուղացիներին դասակարգային պայքարի ճիշտ ուղուց։ Հայ ու ադրբեջանցի գյուղացիները համաձայնության էին գալիս և վիճելի տարածություններն ու ջրերը բարեկամաբար բաժանում միմյանց միջև։ Ավելին, երբեմն նրանց հաջողվում էր պատժել իրենց մեջ ատելություն սերմանող պաշտոնյաներին։ Այսպես, 1888 թ. գարնանը, երբ Նախիջևանի գավառի պետական ունեցվածքների կառավարիչը մեկնեց Բիստ գյուղը և փորձեց բնակիչներին ոտքի հանել հարևան գյուղերի դեմ, այդ գյուղերի ինչպես հայ, այնպես էլ ադրբեջանցի բնակիչները, կռահելով պաշտոնյայի նենգ մտադրությունը, նրան ծեծեցին և վռնդեցին*[21]*։*

Արևելյան Հայաստանի գյուղացիները ըմբոստանում էին նաև ցարական կառավարության հարկային հարստահարությունների, տեղական կալվածատերերի ու սինոդի ֆեոդալական կեղեքումների դեմ։ Կալվածատիրական գյուղացիները հրաժարվում էին «իրենց» տերերի օգտին կատարվելիք վճարումներից ու պարտույթներից։ Այսպես, Էջմիածնի գավառի Ջանֆիդա գյուղի բնակիչները 1872 թ. ոչ միայն մերժեցին կալվածատերերին մուլք տալ, այլև վռնդեցին նրանց օգնության եկած կազակներին։ Երբ կալվածատերերը պահանջեցին դադարեցնել հացահատիկի մաքրումը և ներկայացուցիչներ ուղարկել հաշտարար միջնորդի մոտ՝ վեճը լուծելու համար, ջանֆիդացիները պատասխանեցին, որ մուլք չեն վճարի, չեն գնա հաշտարար միջնորդի մոտ և շարունակեցին հացահատիկի կալսումն ու մաքրումը[22]*։*

---

18 Տե՛ս *Ц. П. Агаян*, Из истории борьбы азербайджанских и армянских крестьян против феодально-крепостнических отношений после реформы 1870 г. («Известия» АН Арм. ССР, 1952, № 9, стр. 85).

19 *ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 94, ց. 5, գ. 1030, թթ. 1—2։*

20 *Տե՛ս ՍՍՀՄ ՀՀՍԾ ԿՊԱ, ֆ. 381, գ. 16937, թ. 5։*

21 *Տե՛ս նույն տեղում, ֆ. Ոստիկանության դեպարտամենտ, III գործավարություն, գ. 89, մ. 53, թ. 7—8։*

22 Տե՛ս «Крестьянское движение в Армении...», стр. 179—180.

Երևանի գավառի Պողնի գյուղի բնակիչները տարիներ շարունակ հրաժարվելով մուլթադարական վճարումներից, 1881 թ. որոշեցին ոչ միայն հողատիրոջը բաժին չտալ, այլև վռնդել նրան գյուղից։ Գործին միջամտեց ոստիկանությունը, գյուղում մի քանի անգամ հայտնվեցին զինված կազակներ, բայց գյուղացիների դիմադրությունը մինչև վերջ հնարավոր չեղավ ընկճել։ Ցարական կառավարությունը 1899 թ. Պողնին ստիպված համարեց պետական գյուղ[23]։ Դա, իհարկե, գյուղացիներին չազատեց հարստահարումից, բայց որոշ չափով թեթևացրեց նրանց դրությունը։ Կալվածատիրական բահրայից հրաժարվելու և համառ դիմադրության դեպքեր եղան նաև Երևանի գավառի Նեչրլու, Գյոդաքլու, Զոհրաբլու, Դվին և մի շարք այլ գյուղերում[24]։

Արևելյան Հայաստանի գյուղացիները հրաժարվում էին նաև իշխանությունների հարկերի վճարումներից, հաճախ ծեծում ու քշում էին պաշտոնյաներին, փորձում ազատվել անտանելի կեղեքմաններից։ Նրանց ելույթները բռնկվում էին այս կամ այն առիթով և ընդունում սուր բնույթ։ Այդ տեսակետից բնորոշ են 1886—1887 թթ. դեպքերը։ Գյուղացիների այդ ելույթների իսկական պատճառը, անշուշտ, ինքնակալության կողմից հայ բնակչության նկատմամբ 80-ական թվականների առաջին կեսերին իրագործվող ազգային ու սոցիալական ճնշումների ուժեղացումն էր, բայց առիթը՝ համընդհանուր զինվորական պարհակի տարածումն էր Անդրկովկասի քրիստոնյա բնակչության վրա։ Երբ ցարական պաշտոնյաները սկսեցին կազմել զինկոչիկների ցուցակները, կատարելով զանազան խարդախություններ, մի շարք գյուղերում բնակիչները ոչ միայն համառորեն դիմադրեցին, այլև ջարդելով վռնդեցին նրանց. օրինակ, 1886 թ. հուլիսին Կարսի մարզի Կաղզվան ու Նախիջևան տեղամասերի բազմաթիվ գյուղերում։ Կարսի նահանգապետը նշում էր, որ զինկոչիկների ցուցակները կազմելիս այդ երկու տեղամասերում «տեղի ունեցան մեծ անկարգություններ»[25]։ Ուշագրավ է, որ հայ ու քուրդ գյուղացիները համատեղ էին գործում ցարական իշխանությունների դեմ։ Մարզային իշխանությունները միայն զորքի օգնությամբ կարողացան ճնշել գյուղացիների ելույթը։ 1887 թ. ցարական զորակոչի առիթով ընդվզումներ տեղի ունեցան նաև Նոր Բայազետի գավառի Գյոզալդարա, Ալեքսանդրապոլի գավառի Ջաջուռ, էջմիածնի գավառի Սարդարապատ և մի շարք այլ գավառների գյուղերում։ Իշխանությունները կարողացան ճնշել այդ ելույթները միայն զորքի օգնությամբ[26]։

Ցարիզմի կողմից գործադրվող բռնությունները, սակայն, չընկճեցին գյուղացիների կամքը։ Նրանք պայքարը շարունակեցին նաև հետագա տարիներին։ 1894 թ. դեկտեմբերին, երբ ցարական պաշտոնյան էջմիածնի գավառի Խաթունարխ գյուղում պահանջեց պետական հարկերն ու ապառքները, բնակիչները հրաժարվեցին վճարումներից, մերձիմահ ծեծեցին նրան և ուղեկցող գյուղապետին, իսկ պրիստավը հազիվ ազատեց գլուխը։ Ցարական իշխանությու-

---

23 Տե՛ս նույն տեղում, էջ 300—301։

24 Տե՛ս նույն տեղում, էջ 331—354։

25 «Всеподданнейший отчет о состоянии Карсской области за 1886 год», стр. 48.

26 Տե՛ս ՍՍՀՄ ԼՂՍՀ ԿՊԱ, ֆ. «Ոստիկանության դեպարտամենտ», III գործավարություն, ֆ. 89, մ. 53, թ. 4—9։

ները դաժան հաշվեհարդար տեսան կազմակերպիչների ու ղեկավարների հետ[27]։

Գյուղացիների պայքարը ցարիզմի հարկային հարստահարությունների դեմ ծավալվեց նաև 90-ական թվականների վերջերին։ 1899 թ. ապրիլին Սուրմալուի գավառի Ղզիկիշլակ գյուղի բնակիչները նահանգապետին հասցեագրած խնդրագրում նշում էին, որ իրենք մինչ այդ վճարում էին 987 ռուբ. 86 կոպ. հողահարկ ու երկրային հարկ, իսկ այժմ իշխանությունները դրանից զատ պահանջում են նաև 837 ռուբ. 26 կոպ.։ Նրանք պահանջում էին չեղյալ հայտարարել ավելացված գումարը։ Սակայն նահանգապետը մերժեց[28]։ 1899 թ. ապրիլին նույն խնդրով նահանգապետին դիմեցին նաև այդ գավառի Գյուլիջա գյուղի բնակիչները։ Նրանք հաստատում էին, որ անցյալում վճարել են տարեկան 382 ռուբ. 76 կոպ., իսկ այժմ իշխանությունները պահանջում են 763 ռուբ. 68 կոպ., որը վեր է իրենց ուժերից։ Սակայն նահանգապետը հաշվի չառավ գյուղացիների խնդիրը և կարգադրեց հավաքել սահմանված ամբողջ գումարը[29]։ Կառավարության հարկային քաղաքականության սաստկացման դեմ բողոքեցին նաև Ալեքսանդրապոլի գավառի Մոլլագեոկչա (1899), Սուրմալուի գավառի Փարնաուտ (1900), Երևանի գավառի Գյոյքիլիսա (1900) և այլ գյուղերի բնակիչները։ Բայց իշխանությունները ստիպեցին նրանց վճարել[30]։

Գյուղացիները հրաժարվում էին նաև վանքերի ու եկեղեցիների օգտին սահմանված տուրքերից։ Այդպես վարվեցին 1898—1899 թթ. Մեհրաբ-Քյուրդքենդ, Մեհրաբ-Բանաբաշ, Մեհրաբլու, Գոմաձոր ու Ցամաքաբերդ գյուղերի բնակիչները։ Հարկահավաք-հոգևորականներն ստիպված հայցում էին նահանգական իշխանությունների կամ սինոդի օգնությունը։ 1900 թ. օգոստոսի 24-ին Մաստարայից նրանք դիմեցին սինոդին. «Խնդրում ենք շուտափույթ օգնություն, գոնե ժամանակավոր մի ոստիկան, քանի դեռ կալերը վերջացած չեն, իսկ եթե հոգևոր բարձրագույն իշխանությունը վերահաս օգնությունը չանի երկու օրից հետո՝ կորած է մեր հույսը և սուրբ աթոռի արդյունքը»[31]։ Սինոդը իր գործը հեշտացնելու համար բահրայի հավաքման իրավունքը հաճախ տալիս էր վարձակալությամբ։ Սակայն գյուղացիները հրաժարվում էին նաև կապալառուներին վճարելուց։

Կալվածատերերն ու սինոդը դիմում էին տեղական իշխանություններին, որ նրանք պարտադրեն գյուղացիներին վճարելու տուրքերը։ Այսպես, 1884 թ. Դվին և Դվին-Քյուրդիքենդ գյուղերի մուլքադարները պահանջում էին գավառական պաշտոնյաներից՝ բահրայի վճարումից հրաժարվող գյուղացիների դեմ գործադրել ավելի լուրջ միջոցներ, քանի որ նրանք գտնվում են «այնպիսի գրգռված վիճակում, որ գյուղապետը միայն իր իշխանությամբ չի կարող կատարել իր վրա դրված պարտավորությունները»[32]։

Նույն թվականին Երևանի նահանգի 45 մուլքադարներ, չբավարարվելով տեղական իշխանությունների միջոցառումներով, դիմեցին կովկասյան կառա-

27 Տե՛ս նույն տեղում, գ. 26, մ. 22, թ. 2։

28 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 94, գ. 1013, թ. 3—4։

29 Տե՛ս նույն տեղում, գ. 1015, թթ. 1—4։

30 Տե՛ս նույն տեղում, գ. 1102, թ. 1—3, գ. 1198, թ. 2—5, գ. 1208, թ. 1։

31 Մատենադարան, էջմիածնի սինոդի տնտեսական մաս, թղթ. 130, վավ. 18, թ. 12։

32 «Крестьянское движение в Армении...», стр. 350.

վարչապետին և ահազանգեցին, որ նահանգում հաճախ ոչ միայն առանձին գյուղացիներ, այլև ամբողջ համայնքներ տարիներ շարունակ չեն վճարում մուլքը, որ գյուղացիներն սկսել են չհարգել օրենքները, հրաժարվել իշխանությունների կարգադրությունները կատարելուց և վռնդել մուլքադարներին իրենց կալվածքներից։ Հողատերերն առաջարկում էին դիմել խիստ միջոցների «որպեսզի գյուղացիների կամայական հրաժարումն իրենց պարտավորություններից չհասնի նահանգական ընդհանուր ապստամբության, ագրարային հանցագործությունների»[33]։

Արտահայտելով կալվածատերերի կամքը, ցարական կառավարությունը մի կողմից միջոցներ էր ձեռնարկում նրանց շահերի պաշտպանության համար, իսկ մյուս կողմից՝ խստացնում էր գյուղացիների ճնշումներն ու բռնությունները։ Այդ քաղաքականությունն ավելի սուր բնույթ ընդունեց 1880—1890-ական թվականներին։

Սակայն ցարական իշխանությունների սպառնալիքներն ու պատիժներն ի վիճակի չեղան խեղդելու գյուղացիական ելույթները, ընդհակառակը, դրանք երբեմն առիթ էին ծառայում նոր հուզումների ու ընդվզումների համար։

XIX դ. 70—90-ական թվականներին արևելահայ գյուղում կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով ծավալվեց նաև սոցիալական՝ երկրորդ պատերազմը՝ կուլակության և պրոլետարական ու կիսապրոլետարական զանգվածների միջև։ Պայքարը գնում էր ամենից առաջ և ամենից հաճախ հողի համար։ Կուլակային տնտեսությունները դեմ էին դուրս գալիս համայնական հողերի վերաբաժանումներին։ Սակայն գյուղացիները համառ պայքարի շնորհիվ հաճախ հասնում էին իրենց նպատակին։ Բայց հողաբաժանարարները, ընտրված լինելով հարուստներից, չարաշահում էին իրենց իրավունքները։ Այսպես, Շարուր-Դարալագյազի գավառի Խաչիկ գյուղի բնակիչները դեռևս 1888 թ. պահանջեցին հողերի վերաբաժանում։ Սակայն գավառապետը մերժեց։ 1892 թ. կրկին բարձրացրին այդ հարցը և, վերջապես, 1894 թ. հասան իրենց նպատակին։ Բայց հողաբաժանարարները կեղծիքներ կատարեցին, որի համար էլ 1895 թ. գյուղացիները դիմեցին Կովկասի կառավարչապետին և խնդրեցին նոր վերաբաժանում։ Բավարարում չստանալով, 1896 թ. նրանք կրկին պահանջեցին իրենց խնդրի արդարացի լուծում։ Սակայն այս անգամ ևս նրանց բողոքը մնաց անհետևանք։

90-ական թվականների վերջերին վարելահողերի վերաբաժանման համար պայքարը գրեթե նույնպիսի վախճան ունեցավ նաև Ալեքսանդրապոլի գավառի Թոմարթաշ (1895—1896), Ուչքիլիսա (1895), Ավդիբեկ (1898), Հաջինազար-ղուլի (1898), Ջգխլար (1898), Արմուտլի (1899—1900), Սվանվերդի (1897), Իլխիարի (1898), Երևանի գավառի Ավան (1899), Արդաշար (1895—1896), Էջմիածնի գավառի Շիրադլա (1898), Վաղարշապատ (1896—1897), Շարուր-Դարալագյազի գավառի Մալիշկա—Քեշիշքենդ (1895), Սուրմալուի գավառի Կողբ (1895) և բազմաթիվ այլ գյուղերում։

Անելանելիությունից ու հուսահատությունից մղված գյուղացիները հաճախ հրկիզում էին կալվածատերերի ու կուլակների ունեցվածքը, սպանում էին նրանց և հեռանալով գյուղից, դառնում ժողովրդական վրիժառուներ։ Նրանք հաշվեհարդար էին տեսնում կեղեքիչների հետ, դարանակալում էին

33 ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 12, ց. 10, գ. 38/50, թ. 3—4։

Հանապարհներին կամ գիշերով ներխուժում գյուղերը, բռնագրավում հարուստների ունեցվածքը և բաժանում աղքատներին։ Բնակչությունը ոչ միայն չէր օգնում պաշտոնյաներին ու զորամասերին՝ «հանցագործներին» գտնելու համար, այլև թաքցնում էր նրանց, իշխանություններին հաղորդելով սխալ տեղեկություններ[34]։ Սակայն գյուղացիական պայքարի այդ «ղաշաղային» ձևն Արևելյան Հայաստանում անհամեմատ քիչ էր տարածված, քան հարևան Վրաստանում ու Ադրբեջանում։

Արևելյան Հայաստանի գյուղացիները պայքարում էին նաև ցարական կառավարության ազգային ու գաղութային քաղաքականության դեմ՝ երբ իշխանությունները կտրում էին նրանց հողերն ու տալիս ռուս վերաբնակիչներին, փակում էին հայկական դպրոցները և այլն։

XIX դարի վերջին տասնամյակներում գյուղացիական շարժումները Արևելյան Հայաստանում գնալով ծավալվում էին, ընդգրկում նորանոր զանգվածներ և ընդունում համառ բնույթ։ Պայքարի մեջ էին մտնում ոչ միայն առանձին գյուղեր, այլև գյուղախմբեր, իսկ առանձին դեպքերում՝ նաև տեղամասեր։ Երբեմն նրանց պայքարը տևում էր տարիներ ու տասնամյակներ։ Որոշ գյուղերում բնակիչները համեմատում էին տեղի հարստահարիչների կամայականությունները թագավորի բռնությունների հետ և դրանով արտահայտում իրենց հակացարական տրամադրությունները։ Այսպես. Ալեքսանդրապոլի գավառի Թոմարտաշ գյուղի բնակիչները 1896 թ. գրում էին, թե գյուղապետ Ն. Գասպարյանը չի ենթարկվում նրանց որոշումներին, «ամբողջ գյուղը խառնում է իրար» և խնդիր էին դնում ազատել իրենց «նիկոլայ Գասպարովի ավերիչ ճիրաններից, որը մեր գյուղի բնակչությանն այնպես է տիրում, ինչպես նորին կայսերական մեծությունը ամբողջ Ռուսաստանում»։ Գյուղացիների դասակարգային պայքարի ամեն նպաստում էր արտագնացությունը, երբ նրանք ապրուստ հայթայթելու համար մեկնում էին արդյունաբերական կենտրոններ և շփվելով պրոլետարական զանգվածների հետ, ազդվում էին նրանց հեղափոխական տրամադրություններից ու վերադառնալով գյուղ՝ տարածում դրանք իրենց համագյուղացիների մեջ։ Գյուղացիները դիմադրում էին իշխանության ներկայացուցիչներին և ընդհարվում նրանց հետ։ Ոչ լրիվ տրվյալներով[35] հետռեֆորմյան երեսուն տարվա ընթացքում (1871—1900) Երևանի նահանգում ու Կարսի մարզում գյուղացիների ընդհարումներն իշխանության ներկայացուցիչների կամ կալվածատերերի հետ ավելի քան կրկնապատկվել են, հրկիզումների թիվը մեծացել է 11 անգամ, իսկ իշխանություններին դիմագրավելու և հասարակական «հանգիստը» խանգարելու համար դատապարտվածների քանակը 15 տարվա ընթացքում աճել է շուրջ երկու անգամ։ Ուշագրավ է, որ 80-ական թվականներին գյուղացիական շարժումներն ավելի

---

34 Տե՛ս «Всеподданнейший отчет о состоянии Карсской области за 1892 г.», стр. 88.

35 Տե՛ս «Обзор Эриванской губернии», նշված տարեթվերը, ցուցակ № 5, 6, 7, 9; «Всеподданнейший отчет о состоянии Карсской области за 1886 г.»; «Сборник сведений о Кавказе», т. IV, Тифлис, 1878, стр. 48—49, 94—97, 158—159, 218—219, 284—285, 346—347; «Сборник статистических сведений по Закавказскому краю», ч. I, Тифлис, 1902, стр. 88—93; «Крестьянское движение в Армении в XIX в.»; ՍՍՀՄ ՀՀԱԿ, ֆ. «Ոստիկանության դեպարտամենտ», III գործավարություն, գ. 89, մ. 53։ Р. А. Мелик-Саркисян, նշվ. աշխ.։

ակտիվ էին դրսևորվում, քան 90-ական թվականներին։ Ըստ երևույթին 90-ական թվականներին արևելահայ գյուղացիական շարժումների վրա բացասաբար էին ներգործում ոչ միայն ցարական կառավարության ռեակցիոն քաղաքականության սաստկացումը, այլև համիդյան կառավարության կողմից Թուրքիայում իրագործվող արևմտահայերի մասսայական կոտորածները։ Այնուամենայնիվ 90-ական թվականներին արևելահայ գյուղացիական շարժումները չիջան 70-ական թվականների մակարդակին, ընդհակառակը, 90-ական թվականների առաջին կեսին ապրելով որոշ վայրէջք, այդ տասնամյակի երկրորդ կեսից նրանք կրկին բռնեցին վերելքի ուղին։

Գյուղացիական շարժումները համեմատաբար ակտիվ էին կալվածատիրական հողատիրության շրջաններում, հատկապես Երևանի ու Էջմիածնի գավառներում։ 1870—1900 թթ. մեզ հայտնի 50—55 ընդհարումներից ավելի քան $^1/_3$-ը տեղի էր ունեցել այդ գավառներում։ 1898 թ. Երևանի նահանգում 106 հրկիզումներից 65-ը եղել էր նույնպես Երևանի ու Էջմիածնի գավառներում[36]։ Դա ցույց է տալիս, որ ֆեոդալական հարաբերությունները գյուղացիության համար դարձել էին խիստ անտանելի։

Գյուղացիական շարժումներն Արևելյան Հայաստանում Եվրոպական Ռուսաստանի համեմատությամբ ունեին որոշ առանձնահատկություններ։ Եթե ռուսական գյուղում նրանք բովանդակում էին միայն սոցիալական, ապա հայկական գյուղում՝ դրա հետ միասին նաև ազգային-ազատագրական խնդիրներ։ Եվրոպական Ռուսաստանում զգալիորեն տարածված էր ռուս գյուղացիության արտագաղթը դեպի կայսրության ծայրամասերը։ Արևելյան Հայաստանում գյուղացիական շարժումների այդ պասսիվ ձևը անհամեմատ քիչ էր տարածված։ Դա պայմանավորված էր ոչ այնքան Արևելյան Հայաստանում ազատ հողերի սահմանափակությամբ, որքան ցարիզմի վարած գաղութային քաղաքականությամբ։ Ի տարբերություն Եվրոպական Ռուսաստանի, որտեղ գյուղացիները պայքարում էին նաև հողաբաժինների պարտադիր փրկագնման վճարումների դեմ, Արևելյան Հայաստանում չկար պայքարի այդ ձևը։ Եվրոպական Ռուսաստանի մի շարք շրջաններում բատրակները հաճախ ինքնուրույն էին հանդես գալիս կալվածատերերի ու կուլակների դեմ, Արևելյան Հայաստանում նրանք, կապիտալիստական հարաբերությունների համեմատաբար թույլ զարգացման հետևանքով, միանում էին գյուղի աշխատավորության այլ շերտերին։ Եթե Եվրոպական Ռուսաստանում գյուղացիական շարժումները համեմատաբար բարձր մակարդակի են հասնում 80-ական թվականների առաջին կեսին[37], ապա Արևելյան Հայաստանում՝ այդ տասնամյակի երկրորդ կեսին։

Չնայած այդ տարբերություններին, Արևելյան Հայաստանում գյուղացիական ընդվզումները լինելով համառուսական գյուղացիական շարժումների բաղկացուցիչ մասը, ունեին այն ընդհանրությունները, ինչ Եվրոպական Ռուսաստանում։ Այդ շարժումներն ուղղված էին ամենից առաջ ֆեոդալական մնացորդների և այնուհետև բուրժուական շահագործման դեմ, հանդես էին գալիս գերազանցապես իրենց պասսիվ ձևերով, բռնկվում էին տարերայնորեն, ունեին

---

36 Տե՛ս «Сборник статистических сведений по Закавказскому краю, составлен по постановлению Закавказского Статистического комитета, состоящим при нем отделом», под ред. старшего редактора отдела Е. Кондратенко, ч. I, Тифлис, 1902, стр. 88—93.

37 Տե՛ս «История СССР», т. 5, М., 1968, стр. 477.

տեղական նշանակություն, կտրված էին իրարից, անջատված էին բանվորական շարժումներից, չէին հետապնդում քաղաքական նպատակներ և իբրև կանոն ավարտվում էին պարտությամբ։

XIX դարի վերջին տասնամյակներում սոցիալական շարժումներ ծավալվեցին նաև Արևմտյան Հայաստանում, ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղերում։

Նշանավոր ելույթներից մեկը 1870 թ. Վանի, Բիթլիսի, Քղիի ու այլ քաղաքների արհեստավորների ու առևտրականների դիմադրությունն էր հարկային պաշտոնյաների չարաշահումներին։ Փակելով արհեստանոցները նրանք բողոքեցին կուսակալին, պահանջելով կալվածահարկն ու եկամտահարկը վերցնել սահմանված օրենքով[38]։

Կառավարական հարկերի չարաշահումների դեմ 1872 թ. ընդվզեցին նաև Դիարբեքիրի կուսակալության Սևերեկ գյուղաքաղաքի հայերը[39]։

Արևմտյան Հայաստանի քաղաքային բնակչության ելույթները նոր թափով ծավալվեցին 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո։

1879 թ. գարնանը Կարինի մոտ 2000 բնակիչներ թղթադրամի արժեզրկման պատճառով շարժվեցին կառավարչատուն և սպառնալիքներով պահանջեցին կուսակալից՝ բարձրացնել նրա արժեքը[40]։

Նույն առիթով 1879 թ. ելույթներ եղան նաև Արաբկիրում։ Աչքի ընկան հատկապես մանածագործական ձեռնարկությունների բանվորները, որոնց մասին Գ. Սրվանձտյանցը գրում էր. ջուլհակագործները «իմ հոն եղած օրերը բանթող (գործադուլ) ըրած էին, իրենց օրականը թղթադրամով վճարելուն առթիւ. գործատէրեր՝ որ վաճառականներն են, մեծ յուզմունքի մեջ էին. գործողներ երդմամբ կապուած էին իրարու մինչև իրանց ուզած գինը տրուեր, անեծք և տուգանք սպառնացած էին իրենց ուխտէն բաժնուողին ինքզինքս Լոնտոնի մեջ կը կարծէի»[41]։

Համառ պայքարի շնորհիվ բանվորները հասան հաղթանակի։ 1888 թ. Վ. Փափազյանը այդ մասին գրում էր. «Պատմում են, որ Արաբկիրում... 1879 թվականին գործավորները մի այնպիսի գործադուլ արին, որ բոլոր գործարանատերերը հուսահատվել էին. պատճառն այն էր, որ օսմանյան 100 ղուրուշանոց թղթադրամի գինը իջել էր 40 ղուրուշի և գործավորներին 100 ղուրուշ հաշվելով էին վճարում։ Մինչև որ չգոհացան, գործ չսկսեցին»[42]։

Մի շարք քաղաքներում տնտեսապես քայքայված ու ընչազուրկ զանգվածները հաճախ հարձակվում էին պետական ու մասնավոր շտեմարանների վրա, բռնագրավում պարենամթերքը և բաժանում իրար միջև։ Ուշագրավ է, որ քրիստոնյաներն ու մահմեդականները հաճախ գործում էին համատեղ, և երբ իշխանությունները փորձում էին օգտագործել առիթը, գրգռել ազգամիջյան կռիվներ, ստանում էին պատշաճ հակահարված։ 1880 թ. մայիսի 31-ին Մուշում սովահար հայերը և թուրքերը միանալով, գրավեցին հացի պետական

---

38 Տե՛ս «Դիվան հայոց պատմութեան», գիրք ԺԳ, էջ 184։

39 Տե՛ս «Տեղեկագիրք գավառական հարստահարութեանց», Կ. Պոլիս, 1876, էջ 13։

40 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Գլխավոր արխիվ, 5—Ա$_2$», 1879, գ. 1093, թ. 10—11։

41 Գ. Սրվանձտյանց. Թորոս աղբար..., մասն Ա, էջ 281։

42 Վ. Փափազյան. Երկեր, հ. 5, էջ 513։

ամբարները, երբ կառավարությունը փորձեց բանտարկել հայերին, մահմեդականները հայտարարեցին, թե իրենք թույլ չեն տա, որ հայերին ձեռք տան։ «Հայերը մեր եղբայրներն են... մենք ամենքս նեղացած տանջվում ենք կառավարության ձեռքից»[43]։ Նույն թվականին նման դեպք տեղի ունեցավ նաև Դիարբեքիրում։

XIX դարի վերջին տասնամյակներում Արևմտյան Հայաստանում ավելի շատ տարածված էին գյուղացիական շարժումները, որոնք ուղղված էին հիմնականում անձի ու գույքի անապահովության, հողային հափշտակումների և պետական ու ֆեոդալական հարկային հարստահարությունների դեմ։

Գյուղացիական հուզումներ տեղի ունեցան Մուշի դաշտում, ուր 1871—1872 թթ. Մորննինկում բնակիչները հանդես եկան իրենց հողերը բռնագրավող աղայի դեմ և մինչև Կ. Պոլիս պատվիրակներ ուղարկեցին, որոնք, սակայն, արդյունքի չհասնելով «հուսահատ ետ դարձան»[44]։ Արտերտում նրանք դիմագրավեցին իշխանությունների կողմից իրենց հողերի վրա չնչինների բնակեցման դեմ և տարիներ շարունակ բախեցին թուրքական պաշտոնյաների դռները, բայց ապարդյուն։ Ապարդյուն անցան նաև Բուլանըխի մի շարք գյուղերի գյուղացիների պայքարը և նրանցից շատերը ստիպված գաղթեցին[45]։

Բիթլիսի գավառում 32 հայկական և քրդական գյուղեր 1874 թ. բողոքեցին տեղական իշխանություններին աղայական հարստահարումների դեմ և արդյունքի չհասնելով դիմեցին «ի պատրիարքարան հայոց»[46]։ Աղայական բռնություններ դեմ 1871 թ. ըմբոստացան նաև Մոտկանի 15 գյուղեր։ Իշխանությունները բնակիչների «պաշտպանության» համար ոստիկաններ ու զինվորներ ուղարկեցին, սակայն դրանով ավելի վատթարացրին նրանց դրությունը[47]։ Վանի գավառի մի շարք գյուղեր 1879—1883 թթ. իշխանություններից պահանջեցին զսպել պաշտոնյաներին ու աղաներին, այլապես հարկադրված կլինեն արտագաղթել. անպատասխան մնալով, շատերը գաղթեցին։

Գյուղացիների հուզումները համառ բնույթ կրեցին Շատախում, ուր նրանք սկսած 1872 թ. ըմբոստացան քուրդ աղաների դեմ և բազմաթիվ բողոքագրեր ուղարկեցին թուրքական իշխանություններին։ Գյուղացիների հանդգնությունից զայրացած, աղաները սպառնացին, թե «Ձեր արյունը պիտի խառնենք Տիգրիսի ջրի հետ»[48]։ Բայց այս սպառնալիքը չընկճեց շատախցիներին։ Ընդհակառակը, նրանք ավելի համախմբվեցին և հայտարարեցին, որ եթե վանի պաշտոնյաները չհարգեն իրենց պահանջները, կդիմեն Կարինի կուսակալին, իսկ «եթե հոն ալ չեղավ (կգնան) մինչև Կ. Պոլիս»[49]։ Համառ պայքարի շնորհիվ գյուղացիները կարողացան պահել իրենց հողերը և ձեռակերպել դրանք թափուով։

Գյուղացիների էլույթները գրական արդյունքով ավարտվեցին նաև Քղզիում, ուր նրանք ևս կարողացան պահպանել իրենց հողատարածությունները աղաների հափշտակություններից[50]։

---

43 «Մշակ», 1880, հունիսի 12 (№ 90)։

44 «Տեղեկագիրք գավառական հարստահարութեանց», էջ 11—12։

45 Տե՛ս «Մշակ» 1886, հոկտեմբերի 16 (№ 116)։

46 «Ամենագործիւնք ազգային ժողովոյ», 1876, էջ 218։

47 Տե՛ս «Մասիս», 1871, ապրիլի 3։

48 «Դիվան Հայոց պատմութեան», գիրք ԺԹ, էջ 254։

49 Նույն տեղում, էջ 255։

50 Տե՛ս «Մասիս», 1883, օգոստոսի 11։

Երզնկայի գավառի Ղուզիջան գավառամասի Ալթուն-Հյուսեին գյուղի բնակիչները 1871 թ. հանդես եկան կայմակամ-հողատիրոջ դեմ, բազմաթիվ բողոքագրեր հղեցին Բուրքական իշխանություններին ու Կ. Պոլսի հայոց պատրիարքին, պատվիրակներ ուղարկեցին մայրաքաղաք՝ նկարագրելով գործադրվող հարստահարումները։ Նրանք իրենց պայքարը շարունակեցին նաև 1872—1873 թթ.։ Կառավարությունը թեև խոստացավ սանձահարել կայմակամ-հողատիրոջը, սակայն ապարդյուն[51]։

Աղայական բռնությունների դեմ տևական պայքար վարեցին նաև Ջարսանջակի գյուղացիները։ 70-ական թվականների սկզբներին նրանք կրկին ոտքի կանգնեցին և պահանջեցին դեռ 60-ական թվականներին բեկերի կողմից հափշտակված իրենց հողերը։ Գյուղացիների համառ բողոքով Կ. Պոլսից հատուկ հանձնաժողով եկավ և ստիպված հարցը լուծեց նրանց օգտին։ Սակայն աղաները, կաշառելով թուրքական պաշտոնյաներին, բեկանեցին հանձնաժողովի որոշումը և վերստին տիրացան գյուղացիական տարածություններին[52]։ Ռուս-թուրքական պատերազմից հետո Ջարսանջակի գյուղացիները նոր փորձ կատարեցին աղայական բռնություններից ազատվելու և իրենց հողերը ետ ստանալու ուղղությամբ։ Այդ նպատակով նրանք մի քանի բողոքագրեր ուղարկեցին Կ. Պոլիս, որոնցից մեկում նկարագրելով իրենց ծանր կացությունը, գրում էին. «Աշխարհիս երեսը թռչունն ու մրջիւնն իրենց բոյն մը ունին, շարսանճագցի ժողովուրդն տուն ու հող չունի»[53]։ Սակայն գյուղացիների այդ փորձը նույնպես անարդյունք անցավ։

1878 թ. Բալու գավառի մի շարք գյուղեր ըմբոստացան աղաների ու թուրքական պաշտոնյաների բռնությունների դեմ և բազմաթիվ բողոքագրեր ուղարկեցին մայրաքաղաք։ Սակայն ապարդյուն[54]։

Արևմտյան Հայաստանում գյուղացիական շարժումները թե՛ 70-ական թվականներին և թե՛ 80-ական թվականների սկզբներին գերազանցապես պասսիվ բնույթ ունեին։ Եթե 1873—1877 թթ. Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը թուրքական կառավարությանն է ներկայացրել 18, ապա 1878—1882 թթ.՝ 49 բողոքագիր (կամ թագրիր)[55]։ Սակայն 80-ական թվականների կեսերից գյուղացիական պասսիվ շարժումները նվազում են։ 1878—1884 թթ. պատրիարքարանի կողմից թուրքական կառավարությանն է ներկայացվել 70, իսկ 1885—1891 թթ.՝ 37 բողոքագիր[56]։ Բայց դրա փոխարեն ծավալվում են գյուղացիական ակտիվ շարժումները։ Ահա մի քանի դեպքեր այդ շարժումներից. 1890 թ. Մուշի դաշտի Խրզլաղաճի բնակիչները պայքար սկսեցին իրենց արոտավայրերն ու վարելահողերը բռնագրաված լաջկանցի քուրդ աղաների դեմ և հասան հաղթանակի։

1891—1893 թթ. Հերկևրտում բնակիչները դուրս վռնդեցին իրենց գյուղը ներխուժած քրդական հրոսակներին և սպանեցին սրբությունները ոտնահա-

---

51 Տե՛ս «Տեղեկագիրք...», էջ 18—23։

52 Տե՛ս նույն տեղում, էջ 12—13։

53 Գ. Սուվանճյանց, Թորոս աղբար..., մասն Բ, էջ 128։

54 Տե՛ս «Դիվան Հայոց պատմության», գիրք ԺԳ, էջ 290—334։

55 «Частичный перечень такриров, представленных армянской патриархией в Константинополе турецкому правительству (с 1869 по 1895 гг.) (Տե՛ս Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թյուրքական բռնապետության դեմ (1850—1870 թթ.), հավելված № 72, էջ 483—503։

56 Տե՛ս նույն տեղում։

բողներին։ Գրվարսում գյուղացիները պայքարի ելան չիբրանցի ցեղապետերի դեմ և սպանելով 16 հոգու, պահպանեցին իրենց անկախությունը։ Բալլուսում բնակիչները «գենքի կը դիմեն ու ետ կը մղեն թրդերը, մերժելով այնուհետև ճանչնալ անոնց աշիրեթական իրավունքները»։ Անձնատուր հայերը ապստամբվեցին աղայական լծի դեմ և թոթափեցին այն։ Ավզուտում քրիստոնյաներն ու մահմեդականները սպանեցին թշնամություն սերմանող բուրթ ոստիկանին։ Տոմ և Մեզոտի գյուղերում բնակիչները ետ շպրտեցին աղայական բանդաներին և սպանեցին մի բանիսին։ Սրանց օրինակին հետևեցին նաև Ջիարեթ, Սորդար, Գոմս և այլ գյուղեր։ Սակայն Մուշի դաշտի գյուղացիները նաև պարտվում էին իրենց ազատությանն համար մղած կռիվներում և ընկնում աղայական լծի տակ։ Այդպիսի ճակատագիր վիճակվեց Ալվառինջին։ 150 տնտեսություն ունեցող այս գյուղը երկար ժամանակ դիմագրավեց Մուշի զաբիլաթներին (բուրթացած քուրդ ցեղապետներին)։ Բայց վերջիններս, տեսնելով անթարկելով Ալվառինջի ինքնապաշտպանությունը կազմակերպող գյուղապետին, ի վերջո նվաճեցին այն։

Դարի 90-ական թվականների սկզբներին գյուղացիական ակտիվ շարժումներ ծավալվեցին նաև Բուլանըխում։ Խարապալարում բնակիչները ոտքի կանգնեցին իրենց ոչխարները հափշտակող ավազակների դեմ և սպանելով մի քանիսին, մյուսներին վռնդեցին։ Շիրվանշեյխում գյուղացիները դիմագրեցին իրենցից հարկ պահանջող աղայական հրոսակներին և քշեցին նրանց։

Գյուղացիական ակտիվ ելույթներով հատկանշվեց նաև Երզնկայի գավառը։ 80-ական թվականների կեսերին Ուսումասեռա գյուղի մարաբաները որոշեցին թոթափել բեյի լուծը և խլել նրա հողերը։ Տևական ու համառ պայքարով 1888 թ. ի վերջո նրանք հասան իրենց նպատակին։ Աղայական լծի թոթափման փորձ կատարեցին նաև Երզնկայի Դերջան կաղայի Ագարակ գյուղի բնակիչները, «կռիվ ծագեցավ աղային ու մարապաներուն միջև, երկու տարի տևվեց կռիվը»[57]։ Ի վերջո այդ կռիվը ևս ավարտվեց գյուղացիների հաղթանակով։ Դերջանի Պաշքեո գյուղի հայ և քուրդ բնակիչները հրաժարվեցին հարկերի վճարումներից ու պարտավորների կատարումներից, որի հետևանքով առաջացավ լուրջ ընդհարում։ «Վտակի» թղթակիցը նշում էր. «Ինքս ականատես եղայ արիվնոտ կռվին»[58]։ Չկարողանալով սեփական ուժերով ճնշել մարաբաների ելույթը, աղան օգնության կանչեց հարևան կալվածատերերին։ Սակայն գյուղացիները չնահանջեցին, ընդհակառակը, նրանք «խոսք մևկ ըրած, կին քե այր բահով, բրիչով տեկէնէկներով (մահակներով—խմբ.) ու քարերով յարձակեցան թշնամու վրա. գիւղացիք քիչ քանակով գէնք ալ ունէին»[59]։ Այնուամենայնիվ աղաները հաղթեցին և ավելի սաստկացրին մարաբաների ճնշումը[60]։

XIX դարի 80-ական թվականների կեսերին Արևմտյան Հայաստանում հանդես եկավ գյուղացիական շարժումների նաև հայրուկային կամ ֆեդայական ձևը, որը 90-ական թվականներին միաձուլվեց արևմտահայերի ինքնապաշտպանական մարտերին։

Այսպիսով, XIX դարի 70—90-ական թվականների սկզբներին Արևմտյա-

57 «Վտակ», 1908, հունիսի 24 (№ 134)։
58 Նույն տեղում։
59 Նույն տեղում։
60 Տե՛ս նույն տեղում։

յան Հայաստանում սոցիալական շարժումները ծավալվում էին համարյա ամենուրեք։ Նրանք բռնկվում էին տարերայնորեն՝ տնտեսական ու ազգային հալածանքների պատճառով։ Այդ պայքարում հայերի հետ հաճախ հանդես էին գալիս նաև հարևան թուրդ ու թուրք աշխատավորները, քանի որ նրանց դասակարգային շահերը համընկնում էին։ Թուրքիայում ու Արևմտյան Հայաստանում արտադրողական ուժերի թույլ զարգացման և հասարակության անբավարար սոցիալական շերտավորման հետևանքով դեռևս չկար այն ուժը, որ համախմբեր ու կազմակերպեր բոլոր կեղեքվողներին ու գրոհի տաներ տիրող բռնակալության դեմ։

3. ՄԱՐՔՍԻԶՄԻ ՏԱՐԱԾՄԱՆ ՆԱԽԱՔԱՅԼԵՐԸ

Մարքսիզմի տարածումը Ռուսաստանում և Անդրկովկասում արդյունք էր կապիտալիզմի զարգացման, սոցիալ-տնտեսական կյանքի առաջընթացի, բանվոր դասակարգի քաղաքական պայքարի սրման ու հասարակական առաջավոր մտքի ինքնուրույն որոնումների։

Ռուսաստանում առաջադեմ միտքը, Վ. Ի. Լենինի արտահայտությամբ, ցարիզմի դաժան հալածանքների և վայրագ կամայականության պայմաններում, տենդագին որոնում էր հեղափոխական տեսության ստույգ կողմնացույց. Նա այդ գտավ «...շարչարանքով, անլուր տանջանքների ու զոհերի, չտեսնված հեղափոխական հերոսության, անհավատալի եռանդի ու անձնվեր որոնումների, ուսման, պրակտիկայում փորձելու, հիասթափումների, ստուգման, Եվրոպայի փորձի զուգադրման կեսդարյա պատմությամբ»[61]։

Ռուսաստանում, Վ. Ի. Լենինի բնութագրությամբ, ազատագրական շարժումն անցել է երեք գլխավոր էտապներ, համապատասխան ռուսական հասարակության այն երեք գլխավոր դասակարգերի, որոնք իրենց կնիքն են դրել շարժման վրա. 1. ազնվականական ժամանակաշրջանը, մոտավորապես 1825-ից մինչև 1861 թ., 2. ռազնոչինական կամ բուրժուա-դեմոկրատական, մոտավորապես 1861-ից մինչև 1895 թ., 3. պրոլետարականը՝ 1895 թվականից սկսած[62]։ Ազնվականական ժամանակաշրջանի ամենաականավոր գործիչները դեկաբրիստներն ու Գերցենն էին։ Ինչպես դեկաբրիստներն արթնացրին Գերցենին, այնպես էլ Գերցենն ու «Կոլոկոլը» օգնեցին արթնացնելու ռազնոչինցիներին։ Ռուսաստանի ազատագրական շարժման երկրորդ փուլի նշանավոր գեմքը Ն. Չերնիշևսկին էր, որին Կ. Մարքսը համարել է «ռուս մեծ գիտնական և քննադատ»[63]։

Ֆ. Էնգելսը գոհունակությամբ է նշել, որ Ռուսաստանում հասարակական միտքը աչքի՛ է ընկել ավելի շատ իր «հեղափոխական ավյունով»։ Այնուհետև Նա գրել է. «Ես խոսում եմ ոչ միայն ակտիվ հեղափոխական սոցիալիստների մասին, այլև ռուս գրականության պատմական քննադատական այն դպրոցի մասին, որն անսահման շատ բարձր է այն բոլորից, ինչ Գերմանիայում ու Ֆրանսիայում ստեղծել է պաշտոնական պատմական գիտությունը»[64]։

---

61 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 11։

62 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 297։

63 Կ. Մարքս, Կապիտալ, հ. առաջին, Երևան, 1954, էջ 13։

64 Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ, Երևան, 1954, էջ 306։

Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը նամակագրական կապեր էին պահպանում ռուս առաջավոր քաղաքական գործիչների հետ, որը և վկայում է մարքսիստական գրականության՝ Ռուսաստան թափանցելու մասին։ «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» ռուսերեն առաջին անգամ հրատարակվել է Ժնևում 1869 թ., Ա. Գերցենի «Կոլոկոլ» ամսագրի տպարանում, իսկ Կ. Մարքսի «Կապիտալի» առաջին հատորը Պետերբուրգում՝ 1872 թ.։ Ռուսաստանում մարքսիստական գրականության տարածման և պրոպագանդման գործում զգալի դեր է կատարել Առաջին ինտերնացիոնալի ռուսական սեկցիան։ Ռուսական սեկցիան առաջադիր խնդիր ուներ՝ բոլոր հնարավոր միջոցներով Ռուսաստանում պրոպագանդել ինտերնացիոնալի սկզբունքները, նպաստել ինտերնացիոնալի սեկցիաների կազմակերպմանը ռուս բանվորների մեջ, օգնել Ռուսաստանի և Արևմտյան Եվրոպայի աշխատավոր դասակարգերի միջև կայուն, համերաշխ կապ հաստատելուն և փոխադարձ օգնության միջոցով նպաստել առավել հաջողությամբ հասնելու նրանց ընդհանուր նպատակին՝ ազատագրմանը։ Սեկցիայի անդամներն ունեին իրենց տպագիր օրգանը՝ «Նարոդնոյե դելո»։ Նրանք, ակտիվ մասնակցություն ունենալով ինտերնացիոնալի աշխատանքներին, օգնում էին Կ. Մարքսին և Ֆ. Էնգելսին՝ Մ. Բակունինի և նրա համախոհների անարխիստական, պառակտողական գործունեության դեմ մղվող պայքարում։ Կ. Մարքսը գոհունակությամբ նշել է, որ «Կապիտալը» Ռուսաստանում ընթերցում և գնահատում են ավելի, քան որևէ մեկ ուրիշ տեղ»[65]։

Մարքսիստական գրականության հրատարակման գործում կարևոր դեր խաղաց 1883 թ. Ժնևում Գ. Վ. Պլեխանովի և ռուս վտարանդի հեղափոխականների ստեղծած «Աշխատանքի ազատագրություն» խումբը՝ Ռուսաստանի մարքսիստական առաջին կազմակերպությունը։ 1882 թ. Ժնևում, Գ. Պլեխանովի թարգմանությամբ, լույս է տեսնում Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը»։ Հենց այդ ժամանակ էլ Գ. Պլեխանովը, իր իսկ խոստովանությամբ «դառնում է մարքսիստ»[66]։ «Աշխատանքի ազատագրություն» խումբը կապ հաստատելով Մոսկվայի հեղափոխական ուսանողության՝ «Թարգմանիչների և հրատարակիչների ընկերության» հետ, զգալի աշխատանք ծավալեց մարքսիստական գրականության տարածման գործում։

«Աշխատանքի ազատագրություն» խմբի գործունեության մեջ արժանի տեղ են գրավում Գ. Պլեխանովի «Սոցիալիզմը և քաղաքական պայքարը», «Մեր տարաձայնությունները», «Պատմության նկատմամբ մոնիստական հայացքի զարգացման հարցի շուրջը», «Մատերիալիզմի պատմության ուրվագծեր» և այլ աշխատությունները։ Վ. Ի. Լենինը «Սոցիալիզմը և քաղաքական պայքարը» գիրքն անվանել է ռուսական սոցիալիզմի հավատո հանգանակը։ «Չի կարելի գիտակից, իսկական կոմունիստ դառնալ՝ առանց ուսումնասիրելու-հատկապես ուսումնասիրելու այն բոլորը, ինչ որ Պլեխանովը գրել է փիլիսոփայության վերաբերյալ, որովհետև դա լավագույնն է մարքսիզմի ամբողջ միջազգային գրականության մեջ»[67]։

---

65 «Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ», էջ 343։

66 «Литературное наследие Г. В. Плеханова», т. VIII, ч. I (1883—1894), М., 1940, стр. 17, 22—23.

67 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 103։

Գ. Պլեխանովի աշխատությունները հարստացրին ռուսական կուլտուրան, նպաստեցին ռուս մարքսիստների գիտական, մատերիալիստական աշխարհայացքի ձևավորմանը։

80-ական թվականների վերջերին արդեն մարքսիստական խմբակներ են երևան գալիս Պետերբուրգում, Մոսկվայում, Կազանում, Սամարայում, Նիժնի Նովգորոդում, Կիևում, Խարկովում, Օդեսայում, Եկատերինոսլավում և այլուր։ Ռուս հեղափոխական մտքի ազդեցությամբ այդ ժամանակ Անդրկովկասում ևս սկիզբ է դրվում մարքսիզմի տարածմանը և մարքսիստական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ստեղծմանը։

Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի գործի մեծ շարունակողը Վ. Ի. Լենինն էր։ Նա քաղաքական պայքարի ասպարեզ եկավ XIX դարի վերջին, երբ համաշխարհային բանվորական ազատագրական շարժման կենտրոնը Արևմտյան Եվրոպայից սկսել էր տեղափոխվել Ռուսաստան։ Ցարիզմի, ամեն տեսակ ճնշման, կամայականության, հալածանքների նկատմամբ ունեցած անհուն ատելությունը, աշխատավոր մարդու ազատագրման ջերմ սերը, մարքսիզմի հզոր ու լուսատու գաղափարները Վ. Ի. Լենինին դարձրին պրոֆեսիոնալ հեղափոխական։ Խորապես ուսումնասիրելով մարքսիզմը, նա 1892 թ. կազմակերպում է Սամարայի մարքսիստական առաջին խմբակը, որի մեջ մտնում էին Ա. Սկլյարենկոն, Ի. Լալայանցը և ուրիշներ։ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ հեղափոխական գործիչները այդ ժամանակից սկսած զգալի աշխատանք են ծավալում Ռուսաստանում մարքսիզմի տարածման ու արմատավորման ուղղությամբ։

1890-ական թվականներից բուրժուական պետական ապարատի՝ ոստիկանության և գրաքննության խստագույն սահմանափակումների պայմաններում մարքսիստական ուսմունքի կայծերը թափանցում են նաև հայ իրականություն։

Առաջավոր գաղափարներով տարված հայ ուսանողների օգնությամբ Առաջին ինտերնացիոնալի և Փարիզի կոմունայի գործունեությունը ժամանակին արձագանք է գտել հայ պարբերական մամուլում։ Առաջին ինտերնացիոնալի մասին հոդվածներ են հրապարակվել «Մշակ» թերթում, իսկ Փարիզի կոմունայի մասին՝ «Մեղու Հայաստանիում»։ «Եվրոպայի աշխատողների ընկերությունը» խորագրով ծավալուն հոդվածաշարում «Մշակում» հանգամանորեն խոսվում է Առաջին ինտերնացիոնալի հիմնադրման, նրա գործունեության, «Հիմնադիր մանիֆեստի», Կանոնադրության, ինտերնացիոնալի խնդիրների մասին[68]։ Այդ հոդվածաշարն անստորագիր է, բայց նրա բովանդակությունը, քաղաքական նպատակասլացությունը հիմք են տալիս եզրակացնելու, որ նրա հեղինակը, ամենայն հավանականությամբ, դեմոկրատական հոսանքի ներկայացուցիչներից էր։

Մարքսիստական, սոցիալ-դեմոկրատական գրականության հայերեն հրատարակության առաջին փորձերը կատարեցին Ռուսաստանի կենտրոնական քաղաքներում և Եվրոպայում սովորող հայ ուսանողները, ինչպես նաև հնչակյան կուսակցության և քաղաքական այլ հոսանքների ներկայացուցիչները։

1886 թ. Ժնևում ուսանողներ Գ. Ղարաջյանը (Ա. Տ. Արկոմեդ) ծանոթանում է Գ. Պլեխանովի հետ և մինչև 1889 թ. հանդիպումներ ունենում նրա և

68 ՏԵ՛ս «Մշակ», 30 մարտի և 13 ապրիլի 1872 թ.

Վ. Զասուլիչի հետ «Գ. Պլեխանովին և նրա ընկերներին մենք տեսնում էինք այն ժամանակ մտքի և գործի հերոսական դերի մեջ,— պատմում է Գ. Զարաֆյանը,— նրանք հերոսներ էին և՛ բարոյական, և՛ քաղաքական մտքով»[69]։ Հենց այդ ժամանակ էլ փորձեր են արվում «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» հայերեն թարգմանելու ուղղությամբ։ 1887 թ. Գ. Զարաֆյանը ֆրանսերենից՝ ռուսերենի հետ համեմատելով, հայերեն է թարգմանում «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», իսկ ռուսերենից՝ Դիկշտեյնի «Ով ինչով է ապրում» գրքույկը։ «Մանիֆեստի» թարգմանությունը Գ. Զարաֆյանը մի հոդվածի հետ ուղարկում է Մարսել՝ «Արմենիա» թերթի խմբագիր Մկրտիչ Փորթուգալյանին՝ թերթում հրատարակելու համար։ Նյութի ընդարձակության պատճառով թարգմանությունը չի հրատարակվում և ձեռագիրն էլ կորչում է[70]։

«Մանիֆեստի» հայերեն մի այլ թարգմանությանը Ֆ. Էնգելսն անդրադարձել է 1888 թ. հունվարի 30-ին գրած առաջաբանում։ «Հայերեն թարգմանությունը,— գրել է Ֆ. Էնգելսը,— որ մի քանի ամիս առաջ պետք է տպագրվեր Կոստանդնուպոլսում, ինչպես ինձ հաղորդել են, լույս չտեսավ այն պատճառով միայն, որ հրատարակիչը վախեցել է լույս ընծայել Մարքսի անունով, իսկ թարգմանիչը չի համաձայնել «Մանիֆեստը» ներկայացնել որպես իր աշխատությունը»[71]։

«Մանիֆեստի» գերմաներեն նոր հրատարակության առաջաբանում Ֆ. Էնգելսը նորից է հիշատակում հայերեն թարգմանության մասին, իսկ մի քանի տարի անց, 1894 թ. դեկտեմբերի 29-ին Կ. Մարքսի դստեր՝ Լաուրա Լաֆարգին ուղղված նամակում գրում է. «Ես հենց նոր ստացա («Մանիֆեստի») հայերեն թարգմանությունը»[72]։

1890-ական թվականներին Գ. Զարաֆյանը արտասահմանից գալով Կովկաս, իր հետ բերում է մարքսիստական գրականություն, այդ թվում՝ «Կապիտալի» առաջին հրատարակությունը, «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը», Գ. Պլեխանովի գրքերը, «Աշխատանքի ազատագրություն» խմբի հրատարակություններից[73]։ *Սոցիալիստական գաղափարների նկատմամբ հետաքրքրություն էին հանդես բերում Պետերբուրգի, Մոսկվայի, Կիևի, Տոմսկի և այլ քաղաքների բարձրագույն դպրոցներում սովորող հայ երիտասարդները։ «Մուրճ», «Տարազ» և այլ պարբերականներում 90-ական թվականներից սկսած առանձին հոդվածներում մեջբերումներ են արվում Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի աշխատություններից, ամբողջական պարբերություններ թարգմանաբար՝ «Մանիֆեստից», «Կապիտալից» և այլ երկերից։*

---

69 *Տե՛ս «Հեղափոխականի հիշատակարանը», ձեռագիր աշխատություն, մաս 2, էջ 43 (ՍՄԿԿ կկ-ին կից Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվ, Գ. Զարաֆյանի ֆոնդի նյութերը)։*

70 *«Արմենիա», № 23, 19 դեկտեմբերի 1888 թ.։*

71 *Կ. Մարքս, Ֆ. Էնգելս, Կոմունիստական պարտիայի մանիֆեստը, Երևան, 1952, էջ 18։*

72 *К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 39, II изд., стр. 294.*

73 *Հետագայում, 1910 թ., Գ. Պլեխանովը գրեց Գ. Զարաֆյանի «Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում» գրքի առաջաբանը։ Բարձր գնահատելով այդ աշխատությունը, Գ. Պլեխանովը գրել է, թե այն «...ընթերցողի հիշողության մեջ վերակենդանում է ռուսական սոցիալ-դեմոկրատիայի ամենալավ տարեգրություններ...»։ Նույն թվականին ՌՍԴԲԿ Կենտկոմը Վ. Ի. Լենինի միջնորդությամբ նյութական օգնություն ցույց տվեց հեղինակին՝ տպարանից վերցնելու աշխատության 2000 օրինակը։*

1893—1894 թթ. «Մուրճի» մի շարք համարներում զետեղվում են Գ. Ղաբրաջյանի «Քաղաքակրթության աստիճանները», «Բանվորների ապահովագրության հարցը» հոդվածները։ Դրանք հայ իրականության մեջ սոցիալիստական գաղափարների տարածման երախայրիքն էին։

Ֆ. Էնգելսի մահվան առթիվ «Մուրճը» և «Մշակը» հրապարակեցին նրա կենսագրությունը, որտեղ դրվատվում էին Ֆ. Էնգելսի արժանիքները, հիշատակվում նրա «Աշխատավոր դասակարգի դրությունը Անգլիայում» («Բանվոր դասակարգի դրությունը Անգլիայում») աշխատությունը, նշվում, որ Մարքսը իր ձեռագրերը կտակել է Էնգելսին, որը նախապատրաստել ու հրատարակել է «Կապիտալի» 2-րդ և 3-րդ մասերը[74]։

Մարքսիստական աշխատությունների հայերեն առաջին թարգմանությունների գործում երախտիք ունի նարոդնիկ սոցիալիստ Հովսեփ Աթաբեկյանցը (1870—1916)։ Երկու տարի Պետերբուրգի համալսարանում ուսանելուց հետո, նա մեկնում է Գերմանիա, սովորում Հոհենհայմի գյուղատնտեսական ակադեմիայում, որն ավարտելուց հետո գնում է Շտուտգարդ։ Այստեղ Աթաբեկյանցը 90-ական թվականներին հաղորդակից է դառնում մարքսիզմին։ Հ. Աթաբեկյանցի մասնակցությամբ Կաուցկին և Պարվուսը Թուրքիայում տեղի ունեցող հայկական կոտորածների առթիվ Բռուցիկ են հրատարակում գերմանական և ավստրիական մամուլում։ 1893—1894 թթ. Աթաբեկյանցը Շտուտգարդում գերմաններենից հայերեն է թարգմանում «Կոմունիստական մանիֆեստը» և Ֆ. Էնգելսի «Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն» (Մ. Հովհաննիսյանի հետ) աշխատությունը։ «Մանիֆեստի» հայերեն թարգմանության հրատարակության համար համառոտ առաջաբան ստանալու ակնկալությամբ 1894 թ. նոյեմբերի 1-ին Հ. Աթաբեկյանցը նամակով դիմում է Ֆ. Էնգելսին, որտեղ նա համառոտակի ծանոթացնում է Հայաստանի, հատկապես հայ ազգային-ազատագրական շարժման, կովկասահայերի խնդրի և այլ հարցերի հետ։ Հ. Աթաբեկյանցը նկատում է, որ կովկասահայերի «...պատմությունը, ինչպես նաև նրանց հեղափոխական շարժումը զուգընթաց է Ռուսաստանի պատմությանը։ Կռիվ միահեծանության դեմ,— ահա այն անկյունաքարը, որին դեմ են առնում Ռուսաստանի կայսրության-եվրոպական ռեակցիայի հակայական պահեստագնդի բոլոր ժողովուրդները»[75]։

Ֆ. Էնգելսը 1894 թ. նոյեմբերի 23-ին Հ. Աթաբեկյանցին շնորհակալություն է հայտնում «Մանիֆեստի» հայերեն թարգմանության համար և նշում, որ հայերեն լեզուն չիմանալու պատճառով էլ չի կարող առաջաբան գրել, բայց օգտվելով առիթից արտահայտում է իր դրական վերաբերմունքը հայ ժողովրդի ազգային-քաղաքական ազատագրման պաղափարին, որը և ուղենիշ դարձավ հայ մարքսիստների սկզբունքային վարքագծի մշակման համար[76]։

---

74 Տե՛ս «Մուրճ», № 7, 1895։

75 «Պատմա-բանասիրական հանդես», 1959, № 2—3, էջ 325։

76 Ֆ. Էնգելսի Հ. Աթաբեկյանցին գրած նամակը տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, II изд., том 39. стр. 270—271. Ֆ. Էնգելսի նամակը առաջին անգամ տպագրվել է Շտուտգարդում հրատարակվող "Dokumentus der Sozialismus" («Սոցիալիզմի փաստաթղթերը») ժողովածուում։ Այնուհետև «Պրոլետարիատի կռիվը» թերթի 1903 թ. № 2—3-ում։ Ահա Ֆ. Էնգելսի պատասխանը Հ. Աթաբեկյանցին. «Հովսեփ Աթաբեկյանցին-Շտուտգարդ Լոնդոն, 1894, նոյեմբերի 23, 41.

1890-ական թվականներին արտասահմանում սովորող հայ ուսանողներից մի քանիսի աշխատությունների վրա դգացվում է Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի ուսմունքի ազդեցությունը։ Այսպես, 1894 թ. Լոզանում լույս տեսավ Հակոբ Մեղավորյանի ֆրանսերեն «Հայկական ընտանիքի և ամուսնության իրավաբանական ուսումնասիրություն» դոկտորական դիսերտացիան։ Այն հագեցված է մարքսիստական, մասնավորապես Ֆ. Էնգելսի «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը» աշխատության դրույթներով։ 1894 թ. Ժնևում (հրատարակության վայրը ցույց է տրված Աթենքը) հնչակյան եռամսյա «Դաղափար» հանդեսի հուլիս-սեպտեմբերի համարներում առաջին անգամ հայերեն տպագրվեցին «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» երկու գլուխները[77]։

Եթե 70—90-ական թվականներին Եվրոպայում սովորող հայ ուսանողները «լուսավորության նվիրակներն էին», մեծ մասամբ նարոդնիկական ուտոպիական սոցիալիզմի, ազգայնական գաղափարների կրողները, ապա 90-ական թվականների վերջերից հաղթահարելով այդ, նրանք արահետներ էին որոնում մարքսիստական ուսմունքի մայրուղի դուրս գալու համար։ Այդ տարիներին Եվրոպայում ձևավորվեցին և գործեցին «Հայ սոցիալ-դեմոկրատական կուսակցության մանիֆեստի» երկու գլուխները[77]։

Եթե 70—90-ական թվականներին Եվրոպայում սովորող հայ ուսանողները «լուսավորության նվիրակներն էին», մեծ մասամբ նարոդնիկական ուտոպիական սոցիալիզմի, ազգայնական գաղափարների կրողները, ապա 90-ական թվականների վերջերից հաղթահարելով այդ, նրանք արահետներ էին որոնում մարքսիստական ուսմունքի մայրուղի դուրս գալու համար։ Այդ տարիներին Եվրոպայում ձևավորվեցին և գործեցին «Հայ սոցիալ-դեմոկրատական ընկերությունը», «Փարիզի հայ ուսանողական միությունը», «Բեռլինի ուսանողական մատերիալիստական ընկերությունը» և այլն։ 1897 թ. ապրիլին հիմք դրվեց «Եվրոպայի հայ ուսանողների միությանը»։ 1898 թ. Արշ. Զու-

---

Rogenos Park Road, N W

Հարգելի ընկեր.

Շատ շնորհակալ եմ, որ Դուք թարգմանեցիք ձեր հարազատ հայերենով իմ «Սոցիալիզմի զարգացումը», իսկ վերջերս նաև՝ «Կոմունիստական մանիֆեստը»։ Դժբախտաբար, ես ի վիճակի չեմ կատարել Ձեր խնդիրքը և վերջինիս համար մի քանի տող ներածություն գրել։ Ինձ համար դժվար է գրել որևէ բան, որ նախատեսված է հրատարակել այն լեզվով, որ ես չեմ հասկանում։ Եթե այդ ես կատարեի Ձեր նկատմամբ տածած սիրալիրությունից ելնելով, ապա չէի կարող մերժել այդ բանում նաև ուրիշներին, իսկ այն ժամանակ կարող էր պատահել, որ իմ խոսքերը լույս կտեսնեին ոչ-դիտավորյալ, կամ նույնիսկ դիտավորյալ կերպով աղավաղված ձևով, իսկ ես այդ մասին միայն շատ տարիներ անց կիմանայի, իսկ քերևս և բոլորովին չիմանայի։

Բացի դրանից, ինչքան էլ, որ շնորհակալ եմ Հայաստանի դրության Ձեր հետաքրքիր նկարագրման համար, այնուամենայնիվ չեմ կարող ճիշտ և խելամիտ համարել դատողություններ արտահայտելու այն մասին, ինչ որ ես չեմ իմացել սեփական հետազոտության շնորհիվ։ Առավել ևս տվյալ դեպքում, երբ խոսքը ճնշված ժողովրդի մասին է, որը դժբախտություն ունի գտնվելու Թուրքական դեսպոտիզմի Սցիլլայի և ռուսական դեսպոտիզմի Խարիբդայի միջև, ընդ որում ռուսական ցարիզմը շահարկում է՝ հանդես գալով ազատարարի դերում, իսկ լակեական ռուսական մամուլը, ելնելով ագրեսիվ ցարիզմի նպատակներից, բաց չի թողնում առիթը, օգտագործելու հայերի ազատագրության վերաբերյալ արտահայտած համակրական յուրաքանչյուր խոսքը։

Բայց, եթե անկեղծորեն ասենք, իմ անձնական կարծիքն է, որ Հայաստանի ազատագրումը Թուրքերից, ինչպես նաև ռուսներից, հնարավոր կլինի միայն այն օրը, երբ կտապալվի ռուսական ցարիզմը։ Լավագույն ցանկություններս և Ձեր ժողովրդին։

Ձեզ անձնվեր՝ Ֆ. Էնգելս։

77 Տե՛ս «Դաղափար», 1, 1894, էջ 15—32, էջ 107—117։ Թարգմանությունը կատարել են Մարո և Ավետիս Նազարբեկյանները։

բարյանը «Մուրճում» հանդես եկավ «Տնտեսական պրոգրեսը XIX դարում» հոդվածաշարով։

1900—1902 թթ. «Մանիֆեստի» հայերեն թարգմանության փորձեր են կատարվում նաև Թիֆլիսում, ժնևում և այլ տեղերում։ 1901 թ. Թիֆլիսում «Մանիֆեստը» ռուսերեն երկրորդ հրատարակությունից թարգմանվում է հայերեն, ժնևում կատարվում է «Մանիֆեստի» նոր թարգմանություն արևմտահայերենով (Պոլ Լաֆարգի ֆրանսերեն տեքստից), սակայն դրանք ևս չհրատարակվեցին։ Թարգմանվում և հրատարակվում են Ս. Դիկշտեյնի «Ով ինչո՞վ է ապրում», Պ. Լաֆարգի «Իրավունք ծուլանալու», «Կոմունիզմը և տնտեսական էվոլյուցիան», Լիբկնեխտի «Սարդեր և ճանճեր», Լասսալի «Սահմանադրության էությունը» և սոցիալիստական բովանդակությամբ այլ գործեր։ Այս ամենը տակավին հայ իրականության մեջ մարքսիզմի գաղափարների տարածման նախաքայլերն էին[78]։

4. «ՀԱՅ ԲԱՆՎՈՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱՆ»

XIX դարի 90-ական թվականներին հայ իրականության մեջ գնալով ուժեղանում են քաղաքական խմորումները, ծավալվում ազգային-ազատագրական շարժումները, ստեղծվում հեղափոխական տարբեր կազմակերպություններ, բանվորական և երիտասարդական խմբակներ, կանանց միություններ։ 1891 թ. Թիֆլիսում գործող հայ աշակերտական խմբակներից մեկի շուրջը համախմբվում են բանվորներ, արհեստավորներ, մտավորականներ, որոնք մեկ տարի անց, 1892 թ. վերջերին, հիմք են դնում «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիային»[79], «Ասոցիացիայի» կազմում էին Ա. Խումարյանը, Ս. Խանոյանը, Մ. Տեր-Ստեփանյանը, Մ. Տեր-Սիմոնյանը, Ա. Խաժակյանը, Պ. Մնացականյանը (Պիւր), Հ. Միրզոյանը, Ս. Մարտիկյանը, Գ. Մադաթյանը, Տ. Պարոնիկյանը, Ա. Մելհրաբյանը, Հ. Մուրադյանը և ուրիշներ։ Նրանց մեծ մասը երիտասարդներ էին, զուրկ հեղափոխական պայքարի փորձից։ Նրանցից միայն մեկը՝ Պետերբուրգի ուսուցչական սեմինարիան ավարտած ուսուցիչ Ստեփան Տեր-Ստեփանյանն էր, որ ծանոթ էր Ռուսաստանի բանվորական առաջին կազմակերպություններին, «Նարոդնայա վոլյայի» գործունեությանը, գիտեր նրանց գրականությունն ու ծրագիրը։ 1882 թ. Թավրիզից գալով Թիֆլիս, նա իր հետ բերել էր նարոդնիկական և «Աշխատանքի ազատագրություն» խմբի հրատարակություններից՝ ռուս նշանավոր բանվոր հեղափոխական Պյոտր Ալեքսեևի ճառերը, Ստեփան Խալտուրինի, Սոֆիա Պերովսկայայի և ուրիշ գործիչների մասին հանրամատչելի բրոշյուրներ, «Նա-

---

78 Տե՛ս Խ. Բարսեղյան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք առաջին, 1967։ Ք. Ավդալբեգյան, Կոմունիստական մանիֆեստի հայերեն թարգմանությունները 1887-ից մինչև 1924 թթ., «Վէմ», 1924, № 4—5։ Ս. Տ. Արկոմեդ. Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում, Երևան, 1922։

79 Տե՛ս Վ. Ավետիսյան, Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիայի մասին, «Լենինյան ուղիով», 1957, № 4, Երևան, էջ 71—86։ Ա. Խումարյան, Հայ բանվոր հեղափոխական ասոցիացիան, «Մարտակոչ», հունվար, 1924։ Աս. Մնացականյան, Առաջին հայ բանվորական ռևոլյուցիոն կազմակերպությունը, «Պարտիական կյանք», 1956, № 10։ Խ. Բարսեղյան, Հայաստանի կոմունիստական պարտիայի կազմավորումը, Երևան, 1965, էջ 35—43։ Նույնի, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք առաջին, Երևան, 1967, էջ 259—269։

րոդնայա վոլյային» համարներըւ «Ասոցիացիայի» անդամների վրա ուժեղ տպավորություն են գործում Պյոտր Ալեքսեևի նշանավոր խոսքերը՝ «...կբարձրանան միլիոնավոր բանվոր ժողովրդի մկանոտ ձեռքերը և հօդս կցնդի զինվորների սվիններով շրջապատված ինքնակալության լուծը»։

Իր գաղափարական ազդեցությունը տարածելու նպատակով «Ասոցիացիան» ստեղծել էր ընդհատակյա տպարան, հիմնել «Ազատ Հայաստան» թերթը, որի առաջին համարը լույս տեսավ 1893 թ. հունիսի 23-ին։ Այդ համարում տպագրված էր հայ հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի կենսագրությունը։ «Ասոցիացիայի» անդամները ծանոթանում էին մարքսիստական առանձին երկերի, մասնավորապես Գ. Պլեխանովի «Սոցիալիզմը և քաղաքական պայքարը», «Մեր տարաձայնությունները», «Նամակներ Ռուսաստանի սովի մասին» աշխատություններին, իրենց թերթում քաղվածքներ բերում «Սոցիալիզմը և քաղաքական պայքարը» գրքից[80]։ Պատմելով Կ. Մարքսի տնտեսական ուսմունքի մասին, «Ասոցիացիայի» ղեկավարները պարզաբանում էին, որ Մարքսը պայքարում էր ընդդեմ Պրուդոնի, որը «չի ընդունում քաղաքական հեղափոխությունը», իսկ ոչ մի քաղաքական հեղափոխություն չի եղել, որ միևնույն ժամանակ չլիներ և սոցիալական»[81]։

1894 թ. «Ասոցիացիան» հատուկ երեկույթով նշեց միջազգային պրոլետարիատի ուժերի մարտական ստուգատեսի օրը՝ Մայիսի մեկը, իսկ «Ազատ Հայաստանը» հատուկ համար նվիրեց մայիսմեկյան տոնին։ «Ազատ Հայաստանի» հետագա համարներում լույս տեսան «Կարլ Մարքսի թեորիաներից մեկը» թարգմանական հոդվածը, «Ի՞նչ է բանվորը», «Հրավեր Հ. Ռ. Հ. Ասոցիացիայի», «Հ. Ռ. Հ. Ասոցիացիայի մարշրը», «Մեր համոզմունքը և ծրագիրը» և այլ նյութեր։ Բայց ինչպես առանձին հոդվածներում, այնպես էլ «Ասոցիացիայի» ծրագրում, որը առանձին գրքույկով հրատարակվեց 1893 թ. հոկտեմբերին, զգացվում էր «Նարոդնայա վոլյայի» և «Հնչակյան» կուսակցության գաղափարական-քաղաքական ազդեցությունը։ «Ասոցիացիայի» ծրագիրը հետու էր հետևողական մարքսիզմից։ Նրա գլխավոր բովանդակությունը ոչ թե դասակարգային պայքարի պահանջն էր, այլ «հայկական հեղափոխության» միջոցով «հայրենիքի» ազատագրման ձգտումը և դրա իրագործման համար ազգայնական կուսակցությունների քարոզած հայացքների դրոշմն էր կրում իր վրա։

Ծրագրի նախագծի առաջին «Մեր պահանջները» բաժնում ասված է. 1. Բոլոր հասարակական գործերում համաժողովրդական քվեարկություն։ 2. Բոլոր գործքաններըը հանձնել բանվորներին։ 3. Հողը դարձնել հանրային սեփականություն։ 4. Վերջ տալ ազգային խտրականությանը։ 5. Խոսքի, մամուլի, խղճի, ասոցիացիաների, ագիտացիայի և այլնի լիակատար ազատություն։ 6. Բոլոր միջոցները ձեռք առնել ժողովրդի քաղաքակրթության համար և պարտադիր դարձնել բոլոր երեխաների տարրական կրթությունը։ 7. Ապահովել մարզերի լայն անկախություն, որն ապահովի ընդհանուր ձայնատվությամբ ընտրված կառավարչությամբ և նրա դաշնակցային կապերով ուրիշ մարզերի հետ։ 8. Ընդմիշտ ոչնչացնել պարտադիր զինվորական ծառայությունը, նրա

---

80 Տե՛ս «Ազատ Հայաստան», № 2, 1893։

81 Նույն տեղում։

փոխարեն ունենալ ազգային միլիցիա տվյալ վայրի պահանջներին համապատասխան։

Այնուհետև հաջորդում են ինքնուրույն պահանջները՝ ապագա ազատ Հայաստանում ստեղծել դեմոկրատական հանրապետություն, օրենսդիր (ազգային) ժողով, բոլոր գործարանները հանձնել բանվորներին, հողը գարձնել հանրային սեփականություն, հասնել քաղաքական ազատությունների ապահովման։

Դեմոկրատական և սոցիալական այս պահանջները, որ ժառանգված էին նարոդնիկներից, ժամանակին հայ իրականության մեջ որոշակի հետաքրքրություն էին ներկայացնում։ Բայց նրանցում ի մի էին խառնված բուրժուա-դեմոկրատական և սոցիալիստական միջոցառումները, անտեսված էին դասակարգային պայքարը, պրոլետարիատի կողմից քաղաքական իշխանության նվաճման վերաբերյալ մարքսիստական հայեցակետը։ «Հայ բանվոր հեղափոխականներին» հասկացած սոցիալիզմը, ինչ խոսք, հեռու էր Մարքսի գիտական սոցիալիզմից։ Սոցիալիզմը «Ասոցիացիայի» համար «քեքե նրանգ էր»[82],— գրել է նրա ղեկավար գործիչներից Ս. Խանոյանը։

«Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան» լինելով դեմոկրատական, ազգային-ազատագրական պայքարի ոգով տոգորված առաջադիմական կազմակերպություն, բնավ զերծ չէր հնչակյանների ազդեցությունից։ Ի տարբերություն հնչակյանների, նրանք ավելի որոշակիորեն էին շոշափում բանվորների սոցիալական ազատագրության հարցերը, պրոպագանդում՝ հօգուտ սոցիալիզմի։ Բայց նրանց ևս հատուկ էին մանրբուրժուական սահմանափակումները, հայ ազգային շարժման և նրա նպատակադրումների ազգային մեկուսացումը։ «Ասոցիացիայի» հայացքները ձևավորվում էին այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ բանվորական շարժման ազդեցությունը և մարքսիզմը տակավին նոր էին թափանցում Անդրկովկաս և խորապես չէին ընկալվել «Ասոցիացիայի» անդամների կողմից։

«Ազատ Հայաստանը» հաճախ էր «Հնչակից» նյութեր արտատպում և տարածում։ «Հնչակն» էլ իր հերթին աջակցում էր «Ասոցիացիային»։ 1893 թ. նոյեմբերին «Հնչակը», ողջունելով «Ազատ Հայաստանին», այն դիտում էր որպես իր ձայնակիցը, իր կրտսեր եղբայրը[83]։ «Ասոցիացան, իր գաղափարական սնունդն առնելով նարոդովոլցիներից և հնչակյաններից, հայ բանվորներին կոչ էր անում համախմբվել իր դրոշի տակ «...քե այժմ և քե ընդհանուր հեղափոխության ժամանակ, գործել միասին եաճուն իրենց շահի, եաճուն եացի խնդրի, եաճուն եայ ժողովրդի երջանկության...»։ «Աշխատավոր եղբայրներ, մոտենում է օրը, ժամը սոսկալի,— գրել էր «Ազատ Հայաստանը», «Ձեղք արի և գիտցեք ձեր սուրբ դատը պաշտպանել... հավաքվեցեք ի մի և կազմեցեք մի մարմին, մի ամբողջություն... դեն ձգիք սուլթանի կաշկանդող լուծը և հին կարգերը»[84]։

---

82 ՍՄԿԿ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի կենտրոնական պետական արխիվ, ֆ. 124, ց. 1, գ. 2041։

83 Ակե-նանց (Ավ. Նազարբեկ), «Ազատ Հայաստանն», օրգան «հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիայի (ընկերության)», «Հնչակ», 11 և 12, նոյեմբեր-դեկտեմբեր, 1893, էջ 96։

84 «Ազատ Հայաստան», № 3, 1893, «Հրավեր ՀՔՀ ասոցիացիայի»։

«Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան» միաժամանակ պայքարում էր դաշնակցության դեմ, մերկացնում եվրոպական դիվանագետների որոգայթները Հայկական հարցում։ «Ազատ Հայաստանը» դաշնակցության գործիչներին անվանում էր «հոգով ազքատներ», որոնք կուրորեն ընթանում են դեպի եվրոպական դիվանագետները. «Գնացեք, մաշեցեք օտարների շեմքերը, որոնք ձեզ միայն ծաղրում են»,—գրել է Թերթը[85]։

«Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան» ծրագրել էր կազմակերպել դասախոսություններ, միտինգներ, տարածել հեղափոխական գրականություն, իր պրոպագանդիստներին ուղարկել գյուղերն ու քաղաքները, տեղերում ստեղծել խմբակներ։ Դեգերումների ժամանակ «Ասոցիացիայի», շարքերում 1894 թ. կեսերից բացահայտ են դառնում ներքին պառակտումները։ Ա. Խումարյանի ղեկավարությամբ պառակտված թևը 1894 թ. դեկտեմբերի 1-ին հրատարակում է միության նոր օրգան «Կռիվ» թերթը, որը ընդմիջումներով շարունակում է լույս տեսնել մինչև 1895 թ. աշունը։ «Կռիվի» առաջին համարի նյութերը նվիրված են 1894 թ. Սասունի ապստամբությանը։ Առաջնորդող հոդվածը, որ խորագրված է «Ազատության արշալույս», վերջանում է «Կեցցե հայկական հեղափոխությունը... Կեցցե Սասունը» կոչերով։

«Մեր թշնամին—դա հին աշխարհն է,— գրել է «Կռիվը»,— իր հասարակական կարգերով... Մեր եղբայրները բոլոր երկրների բանվորներն ու ժողովուրդներն են, որոնք շահագործվում են այդ կարգերում»[86]։ «Կռվի» երկրորդ համարում տպագրվել են «Կախաղանի տակ հեղափոխական պատգամ», «Կոլ Պեարոպավլովյան բերդից» ուշագրավ նյութերը։ Վերջինս ուղղված էր Ռուսաստանի միապետական կարգերի դեմ։ Չնայած այս կարգի կոչերին, «Ասոցիացիայի» անդամները գործում էին Ռուսաստանի մյուս ազգերի բանվորներից, մանավանդ ռուս պրոլետարիատից, սոցիալ-դեմոկրատական մարքսիստական խմբակներից մեկուսացած։

1894—1895 թթ. «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան» զգալի աշխատանք կատարեց իր խմբակներն ստեղծելու Ալեքսանդրապոլում, Կարսում, Բաքվում, Ելիսավետպոլում։ Այդ նպատակով 1895 թ. Սիսակ Տեր-Սիմոնյանը, Սերգո Մարտիկյանը և ուրիշներ մեկնեցին Թուրքիա։ Բայց այդ նրանց չհաջողվեց։

1895 թ. կեսից Կովկասում ավելի է ուժեղացվում ոստիկանական հսկողությունը «Ասոցիացիայի» գործունեության նկատմամբ։ Մեկը մյուսի ետևից ձերբակալվում և բանտ են նետվում նրա անդամները՝ Ա. Խումարյանը, Ս. Տեր-Սիմոնյանը, Ս. Սարգսյանը, Կ. Սեպելյանը, Հ. Միրզոյանը և ուրիշներ։ Այդ ժամանակ էլ դադարում է «Ասոցիացիայի» գործունեությունը։ 1898—1900 թթ. Վյատկայի նահանգի աքսորավայրում Ա. Խումարյանը մոտիկից շփվելով աքսորում գտնվող Ն. Բաումանի, Ֆ. Ձերժինսկու, Պ. Ստուչկայի (Լատվիայի կոմկուսի հիմնադիրներից), լատիշ գրող Յան Ռայնիսի, «Պայքարի միության» առանձին անդամների հետ, հեղափոխական մկրտություն է ստանում և 1898 թ. մտնում ՌՍԴԲԿ շարքերը։ Յան Ռայնիսին պատմում է հայ ժողովրդի տառապանքների մասին, որը գրում է «Աշխարհի ամենադժբախտ երկիրը և ամենադժբախտ ժողովուրդը»՝ հայերին նվիրված հոդվածը։ Պետրոս Մնացականյա-

85 «Ազատ Հայաստան», № 1893։

86 Տե՛ս ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 7, գ. 23, թ. 107—108։

Նին և Արշալույս համակյանին, որոնք կարողացել էին խույս տալ ձերբակալությունից չի հաջողվում վերակենդանացնել «Ասոցիացիայի» ընդհատված գործունեությունը։ Ա. Համակյանը, մեկնելով Պարսկաստան, մեծ դժվարությամբ հրատարակում է «Կովկաս» միայն մեկ համար։

Յարիզմի կողմից չախջախվում է «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան»՝ Կովկասի բանվորական առաջին կազմակերպություններից մեկը։ Նրա ղեկավար անդամների մի մասը՝ Պ. Մնացականյան, Գ. Մադաթյան, Ս. Տեր-Սիմոնյան և ուրիշներ, աշխատում էին հնչակյան կուսակցության շարքերում։ Հետագայում, ռուսական առաջին հեղափոխության տարիներին, նրանց մի մասը վերջնականապես խզում է կապերը հնչակյաններից և մտնում ՌՍԴԲԿ շարքերը։

«Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան» թեև հայ իրականության մեջ 1890-ական թվականներին սկզբնավորվող հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններից չէր, բայց իր գործունեությամբ որոշ հող նախապատրաստեց սոցիալ-դեմոկրատական խմբակների առաջացման համար։

5. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՄԱՐՔՍԻՍՏԱԿԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԸ ՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

XIX դարի վերջին և XX դարի սկզբին հայ հասարակական-քաղաքական կյանքում առաջացած տեղաշարժերը, կապիտալիստական հարաբերությունների զարգացումը, բանվորական շարժման վերելքը, ռուսական առաջավոր պրոլետարիատի հեղափոխական ելույթները նպաստավոր պայմաններ են ստեղծում հայ իրականության մեջ մարքսիզմի տարածման և բանվորական առաջին մարքսիստական խմբակների գաղափարական դաստիարակության համար։ Հայ իրականության մեջ մարքսիզմի տարածմամբ հայ հասարակական մտքի զարգացումը թևակոխում է նոր փուլ, որն իր ակունքներում ուներ մեծ հեղափոխական դեմոկրատ Միքայել Նալբանդյանի և նրա հետևորդների հեղափոխական-ազատագրական գաղափարները։

90-ական թվականներից Անդրկովկասում երևան են գալիս մարքսիստական առաջին խմբերն ու խմբակները, որոնք ունեին ինտերնացիոնալ կազմ։ Վրաստանում առաջին հեղափոխական խմբի գործունեության հետ է կապված Ա. Մ. Գորկու (Պեշկով) անունը։ 1891 թ. երիտասարդ Գորկին, գալով Թիֆլիս, կապվում է Ֆ. Աֆանասևի ղեկավարությամբ գործող գաղտնի խմբակի՝ «Կրասնոգորսկայա կոմունայի» հետ։ 1892 թ. հիմնվում է վրացական առաջին մարքսիստական խումբը, որը հետագայում կոչվեց «Մեսամե դասի» (երրորդ խումբ)։ Նրա ղեկավար կազմում, բացի վրացիներից, կային նաև ռուսներ և հայեր, այդ թվում՝ Ֆ. Աֆանասևը, Ֆ. Մայորովը, Ի. Լուչինը, Մտ. Դանդուրովը (Դանդուրյան), Ն. Ջիբորովը։ «Մեսամե դասին» համախոհ մարքսիստների միասնական կազմակերպություն չէր։ Նրա մեծամասնությունը, Ն. Ժորդանիայի ղեկավարությամբ, լեզալ մարքսիստներ էին և ունեին նացիոնալիստական ուղեգիծ, իսկ փոքրամասնությունը հեղափոխական մարքսիստներ Լ. Կեցխովելու, Մ. Ծուլուկիձեի, Մ. Ցխակայայի, Ֆիլիպ Մախարաձեի, Ա. Ջա-

փարիձեի ղեկավարությամբ (հետագայում նրանց միացավ Ի. Ջուղաշվիլին՝ Ստալինը) 1898 թ. հիմնադրեց ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն։

1896 թ. Թիֆլիսում կար մոտ քսան բանվորական, մարքսիստական խմբակ։ Անդրկովկասում մարքսիստական խմբակները կազմակերպում էին «Պայքարի միությունը» և այլ հեղափոխական կազմակերպություններին պատկանելու համար Ռուսաստանից արտաքսված սոցիալ-դեմոկրատները։ 1897թ. Ֆ. Աֆանասևի, Ա. Ենուկիձեի և ուրիշների եռանդուն ջանքերով Բաքվում հիմնադրվում են բանվորական առաջին հեղափոխական խմբակները։ 1898—1899 թթ. Բաքվում արդեն կային բանվորների մի քանի մարքսիստական խմբեր, որոնցից մեկը, փականագործ Ի. Վացեկի և խառատ Պոպովի ղեկավարությամբ, գործում էր Սև քաղաքում։ Բալախանիի մարքսիստական խմբակներից մեկը ղեկավարում էր առաջավոր բանվոր Հ. Զարդարյանը (Զարգարով)։



Մաքսիմ Գորկի

Հայ իրականության մեջ բանվորական, մարքսիստական առաջին խմբերը ստեղծվել են Թիֆլիսում, Բաքվում, Ալեքսանդրապոլում, Ալավերդում։ Դարասկզբին հայ բանվորների զգալի մասին հուզում էր արևմտահայերին սուլթանական լծից ազատելու խնդիրը։ «Կովկասն այն գլխավոր թատերաբեմն է,— գրել է Բ. Կնունյանցը ՌՍԴԲԿ II համագումարին ներկայացրած Բաքվի կոմիտեի զեկուցման մեջ,— որտեղ այդ կազմակերպությունները քաղում են իրենց մտավորական մարտական ուժերը, հավաքագրում են բանվոր և գյուղացի երիտասարդությանը, հեղափոխական խմբեր (հայդուկներ) կազմակերպելու համար։ Հենց այստեղ էլ՝ բանվորների, ինտելիգենցիայի և սովորողների շրջանում հայթայթվում էին հիմնական միջոցները։ Նրանք ունեին խմբակներ, կազմակերպված ձևով մղվում էր պրոպագանդա։ Հայերեն ամբողջ լավագույն լեգալ գրականությունը գովերգում էր Թուրքահայերի քաղաքական ազատագրման գաղափարը։ Ռուսաստանի սահմաններում պայքարի գաղափարը ջանասիրությամբ լուսության էր տրվում, քանի որ վախենում էին դրանով ուժերը շեղել գլխավոր պայքարից»[87]։

Կային և այնպիսի հայ բանվորներ, որոնք գիտակցում էին իրենց դասակարգային շահերը, բայց հայերեն մարքսիստական գրականության պակասի պատճառով երբեմն մեկուսացած էին մնում բանվորական ընդհանուր շար-

[87] «Второй съезд РСДРП. Протоколы», М., 1959, стр. 530.

ժումներից։ Բանվորական առաջին ցույցերն ու ելույթները սթափեցրին, ակտիվացրին նրանց։

Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան, բացի ինտերնացիոնալ, մարքսիստական խմբերի ստեղծումից, մտահոգված էր մայրենի լեզվով սոցիալիստական գրականության հրատարակությամբ, հայ բանվորների մարքսիստական խմբակների ստեղծմամբ։ 1898 թ. Թիֆլիսում կազմակերպվում է հայ բանվորների առաջին սոցիալ-դեմոկրատական, մարքսիստական խումբը, որի ստեղծման գործում խոշոր դեր խաղացին բանվորական ինտերնացիոնալ ընտանիքում իրենց առաջին մկրտությունն ստացած առաջավոր բանվորներն Մելիք Մելիքյանը (Դեդուշկա), Ադելխանովի կոշիկի գործարանի բանվոր Աստուր Կախոյանը (բանվոր Խեչո), էնֆիաջյանցի ծխախոտի գործարանի բանվոր Հայկ Փիլոսյանը[88] և ուրիշներ։ Խմբի կազմում էին նաև սոցիալ-դեմոկրատ պրոպագանդիստ Գևորգ Ղարաջյանը (Ս. Տ. Արկոմեդ), Թիֆլիսի երկաթուղային դեպոյի բանվորներ՝ Ա. Քեշիշյանը, Գ. Մկրտումյանը, Արտեմ Տեր-Հարությունյանը, Բազարջյանի ծխախոտի ֆաբրիկայի բանվորներ Ալեքսանդր Վարդանյանը, Պետրոս Թավիշիյանը, Կովկասի հայոց բարեգործական ընկերության գրադարան-ընթերցարանի աշխատող Գարեգին Կոզիկյանը (Եսայեմ)[89] և ուրիշներ։ Խմբի անդամները որոշակի ծրագրով պարապմունքներ էին ունենում, որոնց ղեկավարում էին Մ. Մելիքյանը և Գ. Ղարաջյանը։ Խումբն ստեղծում է բանվորական դրամարկղ, ձեռք է բերում հեկտոգրաֆ, մասնակցում Թիֆլիսի բանվորների քաղաքական ելույթներին։

Հայ բանվորների առաջին մարքսիստական խումբը, որ գործեց մինչև 1901 թ. գարունը՝ «Թիֆլիսի բանվորների միությունն» անունով, իր ճյուղերը տարածեց ոչ միայն Թիֆլիսում, այլև Բաքվի, Բաթումի և այլ քաղաքների բանվորների մեջ։ Խմբի ղեկավարները 1900-ական թվականներին հայերեն թարգմանեցին և ձեռագիր ու խմորատիպ բրոշյուրներով բաժանեցրին «Մայիսի մեկը», «Բանվորական միություններ» գրքույկները, Կ. Մարքսի, և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» և այլ աշխատություններ։ Այդ խմբում մեծ դեր էին խաղում Մելիք Մելիքյանը և Հայկ Փիլոսյանը։ Մ. Մելիքյանը դառնում է հայ իրականության լավագույն բանվոր հեղափոխականներից մեկը, կրակոտ ու սրամիտ ագիտատոր ու պրոպագանդիստ։ Բազմաթիվ բանվորներ, աշխատավոր գյուղացիներ իրենց քաղաքական դաստիարակության համար երախտապարտ են Մելիքյանին՝ Դեդուշկային։ Հայկ Փիլոսյանը նույնպես լինելով կրթված բանվոր, պրոպագանդիստական աշխատանք էր կատարում Ադելխանովի կաշեգործարանում և այլ ձեռնարկություններում։ Նրա և Մելիքյանի օգնությամբ բանվորներից շատերն ազատվեցին հնչակյանների ազդեցությունից և անցան սոցիալ-դեմոկրատիայի կողմը։

Թիֆլիսի էնֆիաջյանի, Բազարջյանի, Սաֆարովի ծխախոտի ֆաբրիկանտի, Ադելխանովի և Փարսադանովի կաշվի գործարանների, մանր արհեստանոցների բանվորները սերտորեն կապված էին Մ. Մելիքյանի և միության մյուս

---

88 Հայկ Փիլոսյանը հայտնի է նաև Հայկ Ագամյան, Պողոս Փիլոսյան, Հայկ Պողոսյան ծածկանուններով։

89 Գ. Կոզիկյանը հետագայում զարձավ հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպության անդամ-սպեցիֆիկ։

անդամների հետ։ Միությունը գաղտնի հավաքույթներ և ժողովներ էր անցկացնում, որոնց մասնակցում էին նաև վրացի բանվորները, այդ թվում Մանդրո Բաջիաշվիլին, Ի. Մանջավիձեն, ռուս հեղափոխական Ի. Սուխանովը և ուրիշներ։ Հավաքույթները մեծ մասամբ գումարվում էին Թիֆլիսի Խոջեվանքի հայկական գերեզմանատանը, երբեմն էլ Արծրունու բարվանսարայում, Տեր-Հարությունյանի կոշկակարանոցում, Դանիելովի թեյարանում և այլ վայրերում։ «Ամեն օր Տեր-Հարությունյանի կոշկակարանոցն են գալիս հայ բանվորներ,— ասված է ժանդարմական մի զեկուցագրում,— այնտեղ կարդում են ինչ-որ թերթեր և նամակներ, «Բանվոր դասակարգ» թեյարանում ևս ամեն օր զրույցի են հավաքվում բանվորները..., իսկ փետրվարի 3-ին (1901 թ.— խմբ.) երեկոյան ժամը 8-ին, Դանիելովի թեյարանում տեղի ունեցավ Բոգոբոյանի ծխախոտի ֆաբրիկայի բանվորների հավաք։ Այդ հավաքին ներկա էին Բաջիևը, Մանջավիձեն, Փիլոսյանը և Կոզիկյանը»[90]։

1900 թ. Մ. Մելիքյանը, Հ. Փիլոսյանը և մի քանի հեղափոխական բանվորներ Թիֆլիսում հիմնում են «Բանվոր» ձեռագիր թերթը, որն իր ճակատին կրում էր «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» մարքսիստական կոչը, իսկ վերնագրի տակ գրված էր՝ «Հայկական սոցիալիստական բանվորական օրգան»։ Թերթը բազմացվում էր 60—100 օրինակով։ Սա առաջին հայերեն թերթն էր, որի շուրջը հիմնականում համախմբված էին բանվորները։

Հանգամանորեն վերլուծելով Կովկասի պրոլետարիատի քաղաքական խնդիրները, «Բանվոր» թերթը պարզաբանում էր, որ սերտորեն համագործակցելով ռուս պրոլետարիատին, իրրև մերձավորագույն նպատակ պետք է գրոհել և տապալել միապետությունը և ձեռք բերել մամուլի, ժողովների, ընտրելու և ընտրվելու ազատություն։ «Նամակ հայ բանվորներին», «Խորհուրդներ» և այլ հոդվածներում խոսվում էր Անդրկովկասի բազմազգ բանվորների ինտերնացիոնալ համերաշխության, հեղափոխության մեջ բանվոր դասակարգի դերի, նրա պայքարի նպատակների, հատկապես զինված ապստամբության կազմակերպման մասին։ Հայ բանվոր սոցիալ-դեմոկրատների անդրանիկ խումբը և նրա օրգան «Բանվորը» համոզված էին, որ XX դարում վերջնականապես կիրագործվեն աշխատավորների ցանկությունները ու ձգտումները և վերջնականապես կհաստատի բաղձալի ու երազած աշխարհ[91]։ Անժխտելի են «Բանվորի» ծառայությունները հայ աշխատավորների հեղափոխական զարթոնքի ազդանշման, սոցիալիստական գաղափարների տարածման գործում։

Ռուս և եղբայրական այլ ազգերի սոցիալ-դեմոկրատների օգնությամբ ստեղծելով իրենց անդրանիկ մարքսիստական խումբը, հայ բանվորները որոշ քայլեր են կատարում տարերային-տնտեսական ընդվզումներից հեղափոխական-գիտակցական պայքարին անցնելու ուղղությամբ։ Բաքվում, Թիֆլիսում, Բաթումում և երկրամասի այլ քաղաքներում ստեղծված մարքսիստական խմբակներն իրենց ազդեցությունը տարածում էին նաև Հայաստանի աշխատավորների վրա։ Այդ խմբակներում ընդգրկվածներից շատերը կապված էին Հայաստանի քաղաքների ու գյուղերի հետ և տարածում էին սոցիալիզմի սերմերը։ Այդ գործում պակաս դեր չէին խաղում Ռուսաստանի, ինչպես նաև

90 Մ[ԼԻ]-ի Վրացական մասնաճյուղի արխիվ, ֆ. 31, գ. 170, թ. 9։
91 Տե՛ս նույն տեղում։

արտասահմանյան բարձրագույն դպրոցներում սովորող հայ երիտասարդներ-րը, որոնք գալով հայրենիք իրենց հետ բերում և տարածում էին մարքսիստական գրականություն։

Հայ իրականության մեջ ձևավորված բանվորական անդրանիկ խմբակներ-րը, թեև քաղաքականապես չէին հասունացել և դեռևս չէին ազատվել տնտեսական սյալքարի մտայնությունից, այնուամենայնիվ որոշակի դրական դեր խաղացին։



ԳԼՈՒԽ ՅՈՒԹԵՐՈՐԴ

ԱԶԳԱՑԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XIX ԴԱՐԻ 90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՀԱՂԱՑ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵԼՈՒՅԹԵՐԸ 90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

XIX դարի 90-ական թվականներին հայ ժողովրդի տնտեսական ու քաղաքական ազատագրման նշանաբանով ծավալված պայքարը շարունակում էր դրսևորվել որպես առաջին հերթին թուրքական բռնակալական լծից արևմտահայ ժողովրդի ազատագրման համար մղվող շարժում։ Պետական քաղաքականությունն դարձած զանգվածային ջարդերը, որպես սարսափելի մի ուրվական, դամոկլյան սրի նման կախված էին արևմտահայության գլխին։ Ջնայած 1878 թ. Բեռլինի կոնգրեսից հետո Հայկական հարցը դադարել էր Թուրքիայի ներքին հարցը լինելուց, սակայն ազգայնական մոլուցքով բռնված թուրք կառավարողների համար նման խնդիր ընդհանրապես գոյություն չուներ։ Հայկական հարցը համարելով Թուրքիայի ներքին գործը և կամենալով խուսափել ինչպես Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածով, այնպես էլ 80-ական և 90-ական թվականներին խոստացած կամ ստորագրած բարենորոգումների ծրագրերով կատարվելիք բարեփոխումների կենսագործումից, սուլթանը փորձեց մեկընդմիշտ լուծել այդ հարց-հանգույցը հայերին բնաջնջելու մեթոդով։ Սկսվեց «զուլումի» ժամանակաշրջանը։

Այդ շրջանում պանիսլամիզմն արդեն պարարտ հող էր ստեղծել մի առավել հետադիմական գաղափարախոսության՝ պանթուրքիզմի համար, որը 80 ական թվականներից սկսած ձևավորվեց որպես համաթուրանական մարմնորող տեսություն։ Պանթուրքիզմի առաջին քարոզիչներից մեկը Իսմայիլ բեյ Գասպիրալին էր՝ (Գասպրինսկի) Բախչիսարայի բաթար քաղաքագետը, «Ռուսաստանի մահմեդականները» գրքի հեղինակն ու «Թերջումանին» խմբագիրը։ Նրա հետևորդներն էին՝ Ռուսաստանից Կ. Պոլիս տարագրված Յուսուֆ օղլի Ակչուրան, XIX դարի 90-ական թվականներին Փարիզում հանգրվանած Ահմեդ Ռիզան, Ա. Աղաևը ու Եգիպտոսի գաղափարական մյուս առաջնորդները։ Նրանց ստեղծած ազգայնական-շովինիստական տեսությունը նպատակ էր դնում ստեղծել համաթուրանական մի պետություն՝ Ղրիմից մինչև Ալթայ, Կազանից Միջերկրական ծով, Կովկասյան լեռնաշղթայից Պարսից ծոց, իսկ այդ տարածքում ապրող մյուս ժողովուրդները դատապարտվում էին բռնի Ձուլման կամ ոչնչացման։

Թուրքական իշխանությունները թուրք և քուրդ ժողովուրդներին լարում էին հայերի դեմ, բորբոքում նրանց կրոնական մոլեռանդությունը և կազմակեր-

պում ազգամիջյան ջարդեր։ Արևմտահայության համար պատուհաս դարձան կայսրության ռազմական հզորության ամրապնդման և Ռուսաստանի դեմ պատերազմ ծագելու դեպքում դրանց օգտագործելու համար երկրի տարբեր մասերում և հատկապես հայկական նահանգներում 1891 թ. ստեղծված ու արյունոտ սուլթանի պատվին «Համիդիե» կոչված քրդական հեծելազորային գնդերը։ Սրանք իրականում պետք է օգտագործվեին հայ ժողովրդին բնաջնջելու, ինչպես նաև կառավարության դեմ ուղղված կայսրության տարբեր ժողովուրդների ազատագրական շարժումները ճնշելու համար[1]։ Համիդիե գնդերի կազմակերպումն իրականացրեց Զևքի փաշան։

Կառավարության գաղտնի ցուցումով մշտապես կատարվող ոճրագործությունների իսկական հեղինակները քուրդ բեյերն էին ու քուրք աղաները, նրանց թիկունքին կանգնած տեղական իշխանությունները։ Քուրդ ցեղապետները բացահայտորեն հայտարարում էին, թե իրենց հանձնարարված է ոչնչացնել հայերին[2]։ Հայկական գյուղերը քրդական հրոսակախմբերի կողմից բարբարոսաբար կողոպտվելուց ու կիսավեր դառնալուց հետո, չէին կարողանում վճարել նույնիսկ իրենց հարկերը և հաջորդ տարվա համար անգամ սերմացու չէին ունենում[3]։

Աղգահալած քաղաքականության իրականացման գործում քուրքական իշխանությունները զգալի տեղ էին հատկացնում նաև խոշոր քաղաքներում կուտակված ապաստասկարգային տարրերին։ Հատկապես օգտագործելով ու բորբոքելով այդ տարրերի կրոնական մոլեռանդությունը, կաշառելով ու շոյելով «այդ խուժանին»[4] կազմակերպում են խժդժություններ ու ազգային ջարդեր։

Եվրոպական և ռուսական մի խումբ առաջադեմ հասարակական գործիչներ, ուսումնասիրողներ ու ականատեսներ իրենց աշխատություններում ու ճառերում հրապարակեցին քուրքական իշխանությունների գազանությունները մերկացնող բազմաթիվ փաստեր, ապացուցելով, որ հայկական ջարդերը կազմակերպվում են սոսկ այն պատճառով, որ հայերը փորձում են պաշտպանել իրենց անձն ու ունեցվածքը։ Նրանք վերստին հաստատում էին այն իրողությունը, որ այդ ջարդերը Օսմանյան կայսրությունում կատարվում էին պարբերաբար՝ «որպես քաղաքական ակտ, կապված հայտնի վարչակարգի հետ և մշտապես կիրառվելով սուլթանի ու նրա խորհրդականների հրամանով կամ ներշնչմամբ»[5]։ Այդ հաստատում էր նաև ֆրանսիական դիվանագետ Ժյուլ Կամբոնը. «Դիարբեքիրում, Էրզրումում, Սվազում, Տրապիզոնում և նույնիսկ Կ. Պոլսում տեղական քրիստոնյաներն ապրում էին մշտապես սարսափի տակ,— գրում էր նա,—...կայսրության ամբողջ տարածքով մեկ մոլեռանդ հրոսակախմբերը հարձակվում էին հայ բնակչության վրա, սպանում, թալանում էին, գողանում կանանց և վաճառում շուկայում՝ որպես ստրկուհիներ»։ Իսկ քուրքական ոստիկանության միջամտությունը կատարվում էր այնպիսի ձևերով, «որ հարց էր ծագում, արդյո՞ք այդ մարդասպաններն ու կառավարու-

---

1 Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1971, № 1 (28), էջ 81—98։

2 Տե՛ս «Положение армян...», стр. 169.

3 Տե՛ս նույն տեղում, էջ 133։

4 К. Маркс и Ф. Энгельс, Соч., том 9, М., 1957, стр. 7.

5 «Положение армян...», стр. 173.

թյունը չէին գործում միասնական և արդյո՞ք չէին համաձայնվել լիովին ոչընչացնել հայ ազգը»[6]։

90-ական թվականների սկզբներից հայկական ջարդերն սկսեցին կրել հաջորդական բնույթ, իսկ 1893—1894 թթ. մինչև 1896 թ. ներառյալ դար-



Ոտնաձարված արքայություն: Գործ Վ. Սուրենյանցի

ձան առավել զանգվածային ու ահավոր և տարածվեցին հայաբնակ բոլոր վայրերում։

Սուլթանական բռնապետության կողմից կատարվող համատարած այս

---

[6] Жюль Камбон, Дипломат, 1946, стр. 49.

ջարդերին դիմադիր ծավալվեց ու նոր թափ ստացավ արևմտահայերի ազատագրական պայքարը։ Ազատագրական ընդվզումներն առաջին հերթին բռնկվեցին թուրքական իշխանությունների կողմից ջարդերի կազմակերպման առաջնեկներ դարձած այն վայրերում, որոնք հայտնի էին թուրքական բռնակալության դեմ մղած ազատագրական երկարատև պայքարի իրենց ավանդույթներով։

1890 թ. ամռան սկզբներին Կ. Պոլիս հասավ տագնապի մի կեղծ ահազանգ, թե իբր Կարինի (Էրզրում) հայերը քաղաքում զինապահեստներ ունեն և ապստամբության են պատրաստվում։ Բ. Դռնից ստացած հրամանի համաձայն, տեղական իշխանությունները խուզարկեցին Սանասարյան վարժարանը, ս. Աստվածածնի հայոց եկեղեցին, առաջնորդարանը և նրա շրջակայքը։ Խուզարկությունն անցավ անարդյունք, սակայն ունեցավ արյունոտ ավարտ։ Հունիսի 18-ին եկեղեցու բակը խուժած թուրք ոստիկանների ջոկատը հանդիպեց պատարագի եկած բազմության դիմադրությանը։ «Պաշտպան հայրենյաց» ղեկավարներ Խ. Կերեքցյանը, Գ. Չիլինկիրյանը, հնչակյան գաղափարներով նոր-նոր ոգևորված Հ. Իշղալացյանը, իրենց մի խումբ ընկերների հետ, երիտասարդության գլուխ անցած դիմադրեցին ոստիկաններին։ Միջադեպը վերածվեց զինված ընդհարման։ Համարյա անզեն ժողովրդի վրա հարձակված ոստիկանները սպանեցին ու վիրավորեցին երկու տասնյակից ավելի հայերի։ Խուզարկություններն ու ձերբակալությունները շարունակվեցին։ Խ. Կերեքցյանին, Հ. Իշղալացյանին ու Հ. Նշկյանին հաջողվեց թաքնվել, իսկ դպրոցի տեսուչ Գևորգ Չիլինկիրյանը խույս տվեց հետապնդումից և անցավ Կովկաս Երկու օր անց՝ հունիսի 20-ին իշխանությունների հրահանգով ջարդեր կազմակերպվեցին քաղաքի հայկական թաղամասերում։

Այս դեպքերն արձագանք գտան ինչպես արևմտահայության, այնպես էլ արևելահայության մեջ։ Գնահատվելով որպես իր ազատության համար ոտքի ելած բողոքի արդարացի պոռթկում, Կարինի ցույցը ոգեշնչման աղբյուր հանդիսացավ հայ մշակույթի բազմաթիվ խոշոր ներկայացուցիչների ու ժողովրդական գուսանների ստեղծագործություններում։

Համոզվելով, որ թուրքական բռնապետության դեմ միայնակ հանդես գալն ու հաղթանակի հասնելը մեծ դժվարությունների հետ է կապված, հայ ազատագրական շարժման գործիչները ժողովրդի պայքարի ու հաղթանակի հեռանկարները կապում էին մեծ տերությունների օգնության հետ։ Այս մտայնությամբ էլ Կարինի դեպքերից անմիջապես հետո նրանք ձեռնամուխ եղան ցույցերի ու բողոքագրերի կազմակերպմանը։ Հնչակյանները որոշեցին որպես բողոք Կարինում կատարված խուզարկությունների ու խժդժության, ինչպես և հայ ժողովրդի նկատմամբ տարվող մշտական հալածանքների քաղաքականության դեմ խաղաղ ցույց կազմակերպել Կ. Պոլսում։ Նրանք նպատակ ունեին դրանով նաև բարձրացնել գավառահայության հոգեկան կորովը և հայերի հարստահարության նկատմամբ անտարբերություն ցուցաբերող մեծ տերությունների ուշադրությունը նորից սևեռել Հայկական հարցի վրա։ Պատրաստվեց նաև մի բողոք-պահանջագիր, որը հնչակյան կուսակցության կողմից պետք է ներկայացվեր սուլթանական կառավարությանը։

Սկսվեց ցույցի տենդագին նախապատրաստումը։ Հնչակյան գործիչներ Ռ. Խանազատն ու Գ. Կաֆյանը (Շմավոն) շրջում էին Կ. Պոլսում ցրված բազմաթիվ իջևանատները, ոգևորում հայրենակցական խմբերով այնտեղ հանգր-

վանած գավառացի հայ պանդուխտներին, նրանց բացատրում ցույցի նշանակությունը։ 1890 թ. հուլիսի 15-ին Կ. Պոլսում տեղի ունեցավ հայոց մայր եկեղեցու և առաջնորդարանի քաղամասի՝ Գում-Գափուի անունը կրող հանրահայտ ցույցը։

Եկեղեցում պատարագի էր հավաքվել հոծ մի բազմություն։ Հանկարծ լսելի է դառնում ժամասացությունը և լսվում է հայ ժողովրդին ուղղված հնչակյանների կազմած կոչը, որը որպես պահանջագիր պետք է ուղարկվեր սուլթանին։ Այն բարձրաձայն կարդում էր Հ. Ճանկուլյանը, ժողովրդին ոգևորելով պայքարել հանուն ազատության։ Ապա ցուցարարները ներս խուժեցին պատրիարքարան, որտեղ բազմության ցնծագին աղաղակների ներքո Հ. Ճանկուլյանը պատից պոկեց ու պատառոտեց Աբդուլ Համիդ II-ի նկարն ու թուրքական պետական զինանշանը[7]։ Ցուցարարները ստիպեցին Աշգյան պատրիարքին իրենց հետ գալ պալատ՝ սուլթանին հանձնելու բողոքագիրը։ Սակայն հանապարհին զինված ոստիկանության կրակի տարափի տակ ցուցարարները ստիպված նահանջեցին։ Նրանցից մի քանիսը զոհվեցին, իսկ Հ. Ճանկուլյանը ձերբակալվեց և դատապարտվեց մահվան, որը հետագայում փոխարինվեց ցմահ բանտարկության։ Բանտարկության ու աքսորի դատապարտվեցին նաև մի խումբ այլ գործիչներ։ Նոանդուն ցուցարարներից մեկը՝ ուսահպատակ Հակոբ Վարդ-Պատրիկյանը, որը դատարանում հանդես եկավ օսմանյան վարչակարգի մերկացմամբ և պաշտպանեց հայ ժողովրդի արդարացի պահանջները, հանձնվեց ռուսական իշխանություններին։ Կ. Պոլսից երուսաղեմ աքսորվեց նաև Մ. Խրիմյանը։

1890 թ. այդ բուռն օրերին Թիֆլիս ժամանեցին արդեն ճանաչված արևմտահայ հայդուկ-գործիչներ Հ. Չագրյանը՝ Հայոնի «Զևյթունի իշխան» մականվամբ, Հ. Սարկավագը և Հունոն (Հարություն ազա), որոնք պրոպագանդում էին Արևմտյան Հայաստանում ազատագրական շարժման ու համբնդհանուր ապստամբության գաղափարը։ Արևմտահայերին շուտափույթ օգնության կոչ անելով, նրանք դրամ, զենք ձեռք բերելու և կամավորներ պատրաստելու նպատակով հանդիպումներ ունեցան «Մշակի» խմբագիր Գր. Արծրունու և Թիֆլիսի այլ մտավորականների հետ։

Այդ օրերի նշանակալի իրագործություններից մեկը, այսպես կոչված, «Կուկունյանի արշավանքն» էր։

Պետերբուրգի բարձրագույն ուսումնական հաստատությունների մի խումբ ուսանողներ, որոնք 80-ական թվականների վերջերին թարգմանում ու հայ ընթերցողին էին հասցնում բուլղարական ազատագրական շարժումներին նվիրված մարտաշունչ գրքույկներ և կոչ անում բուլղարների օրինակով պայքարի դրոշ պարզել թուրքական բռնապետության դեմ, որոշեցին զինվել և անցնել Արևմտյան Հայաստան և ցուցաբերել գործնական քայլեր։ Այս խմբի ոգին Սարգիս Կուկունյանն էր, 27-ամյա մի երիտասարդ, որ դեռ պատանի թողել էր իր հեռավոր Նուխին ու նիժը, տվորել Գևորգյան ճեմարանում, ապա ավարտել Ներսիսյան դպրոցը և 1885 թ. հաստատվել Պետերբուրգում։

Ս. Կուկունյանի ու նրա համախոհների գործունեության նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերեց և չանաց զորավիգ լինել Կարապետ Եպլանը։ Նրան, անշուշտ, հուզում էր Հայաստանի անկախության վերականգնման հն-

7 Տե՛ս Հ. Ճանկուլյան, Հիշատակներ հայկական հզնաժամին, մասն Գ, էջ 31։

ռանկարը։ Մի հույս, որին փորձում էր ապավինել ռուսական ծառայության մեջ գտնվող հայ պահպանողական ավագանին։

Կ. Եզյանը ծրագրային առաջադրանք էր տալիս Ս. Կուկունյանին. և համոզում էր վերջինիս նախ մեկնել Իրան, պարսից ծառայության մեջ խանի տիտղոս ստանալ, ապա անցնել Վասպուրական և այնտեղից ծավալել հայ ազատագրական շարժումը։ Այդ նպատակով Եզյանը պարսկական արքունիքում գտնվող բարձրաստիճան հայերի վրա նույնիսկ որոշ հանձնարարականներ է տալիս Կուկունյանին։

Սակայն «Մշակի» խմբագիր Գ. Արծրունին խելամիտ չհամարեց Եզյանի «ձգձգված» ծրագիրը։ 1890 թ. ամռան սկզբներին իր զինակիցների հետ Պետերբուրգից Թիֆլիս ժամանած Ս. Կուկունյանն այցելեց Գ. Արծրունուն, որը և նրան հորդորեց զինված խմբով անհապաղ անցնել Արևմտյան Հայաստան։ Նա Կուկունյանին ու նրա համախոհներին օգնեց նաև զենք ձեռք բերելու գործում։ Թիֆլիսում ցնծությամբ ընդունեցին ու ճանապարհեցին Ս. Կուկունյանին ու նրա մարտական ընկերներին։ Խումբը ժամանեց Շիրակ։ Ալեքսանդրապոլում ու Կարսում աշխատանքներ ծավալվեցին «Երկիր» անցնելու պատրաստվող ջոկատը համալրելու և զինելու համար։ Ոգևորությունն այնտեղ էր հասել, որ մայրերն իրենց որդիներին բերում և օրհնանքով հանձնում էին Կուկունյանին, իսկ երբեմն էլ զինվորագրվելու ցանկություն էին հայտնում անգամ կանայք։ Կարսում վերջնականապես ձևավորված խումբը հասավ ավելի քան հարյուր մարդու, որից շուրջ քսանը՝ ձիավոր։ Խմբի անդամներն իրենց ուսերին կրում էին «Մ. Հ.» («Միություն հայրենասերների») տարբերանշանը։

1890 թ. սեպտեմբերի 24-ին Սարգիս Կուկունյանի, նրա օգնականներ Սարդար Ավետիսյանի ու Աբրահամ Ադամյանի ղեկավարությամբ խումբը մոտեցավ թուրքական սահմանին։ Խմբի անդամները կրում էին ռուս կոզակների ու լազերի տարազ ու ձեռքներին տանում էին Գր. Լուսավորչի ու այլոց պատկերներով դրոշներ։ Նրանք Արևմտյան Հայաստան էին անցնում քաջ գիտակցելով, որ այլևս վերադարձ չկա, նրանք գնում էին կռվելու, հաղթություն չհասնելու դեպքում, գեթ կռվով մեռնելու։

Թուրքական սահմանն անցած խումբը հանդիպեց ու մարտի բռնվեց քրդական մի քանի հեծյալ ջոկատների հետ։ Շուտով երևացին նաև թուրքական կանոնավոր զորամասեր և հայ ռազմիկները ստիպված նահանջեցին դեպի ռուսական սահմանը։ Դեպի Կաղզվան նահանջող խումբը ստիպված էր հանձնվել ռուսական սահմանապահ զորքերի հրամանատարությանը։ Խմբի գործելակերպը դիտվեց որպես քրեական հանցագործություն և նրա անդամները կանգնեցին ցարական դատարանի առջև։ Երևանի օկրուգային դատարանի 1892 թ. ապրիլ-մայիսին Կարսում հրավիրված նստաշրջանում պաշտոնական փայլուն ճառով հանդես եկավ Օդեսայի համալսարանի իրավաբանական բաժնի շրջանավարտ, Երևանի թեմական դպրոցի հոգաբարձու Գաբրիել Մնացականյանը, ապագայի գյուղագիր Գ. Բարխուդարը։ Նա համարձակորեն հերքեց ցարական իշխանությունների հորինած մեղադրանքները, մատնանշեց քաղաքական նշանակություն ունեցող այն գործոնները, որոնք ստիպել էին հայրենասերների խմբին զենք վերցնել հանուն հայրենիքի փրկության։ Ձերբակալվածներից 27-ը դատապարտվեցին 3-ից մինչև 20 տարվա տաժանակրության։ 1895 թ. մարտի 1-ին Ս. Կուկունյանն ու նրա ընկերները բռնեցին Սիբիր-Սախալինի տառապալից ուղին։ Աքսորի դատապարտվածներից ոմանց հա-

ջողվեց ճանապարհից փախչել[8]։ Ս. Կուկունյանը աքսորից վերադարձավ 1906 թ.։ Սակայն շուտով գյուղացիներին իշխանության ու վաշխառուների դեմ տրամադրելու և այլ մեղադրանքներով նա նորից մի քանի անգամ ձերբակալվեց և 1913 թ. մահացավ Օրյոլի տաժանակիրների բանտում։

Ռուսաստանում ծայր առած հեղափոխական հուժկու շարժումներից ահաբեկված, ցարական կառավարությունը սարսափով էր դիտում նաև նվաճված ժողովուրդների ազգային-ազատագրական ընդվզումները։ Ցարիզմի համար վտանգավոր էր հայկական շարժումը, որն սկզբնապես հետապնդելով արևմըտահայերի ազատագրման նպատակը, հետագայում իր մյուս ծայրով կարող էր ուղղվել նաև ցարական բռնատիրության դեմ։ Կայսրության բազմազգ ու բազմալեզու ժողովուրդների սոցիալական ճնշումը ծայրամասերում զուգակցվում էր ազգային ճնշման հետ։ Ուշնշացվում, խեղդվում էր ազգային ինքնագիտակցության, քաղաքական ինքնուրույնության ձգտման նվազագույն դրսևորումն անգամ[9]։

Արևմտահայերի և արևելահայերի ազատագրական պայքարը շաղկապելու հայ գործիչների բոլոր ջանքերն իրենց վրա էին բևեռում ցարական իշխանությունների ուշադրությունը։ Այդ ժամանակաշրջանի իրադարձությունները վերլուծող մի փաստաթղթում ցարական չինովնիկներն անհանգստացած ահազանգում էին, որ հեղափոխական-ազատագրական գաղափարները տարածվել են հայ հասարակայնության զանազան խավերի մեջ՝ աղքատ քե ունևոր, արհեստավոր, գյուղացի քե մտավորական[10]։

Հայ ժողովրդի դարավոր բաղձանքը հասկանալի և ընդունելի էր միայն այն Ռուսաստանի համար, որը մահու և կենաց կռիվ էր հայտարարել ցարական նենգված վարչակարգին, մարտահրավեր նետել ռուս բյուրոկրատիային՝ հանուն համայն Ռուսաստանի աշխատավոր զանգվածների վերջնական ու լիակատար ազատագրման։ Պատմական զարգացման պրոցեսը տանում էր դեպի ճնշված ազգերի ազատագրում և ազգային ինքնուրույն պետությունների ստեղծում։

Վ. Ի. Լենինը գտնում էր, որ կապիտալիզմի զարգացման հեռանկարի, տնտեսական առաջընթացի տեսակետից իսկ, նոր, անկախ պետությունների ստեղծումը առաջադիմական նշանակություն ունի. «...Բալկաններում,—գրում էր նա,—կապիտալիզմի զարգացման լավագույն պայմաններն ստեղծվում են հենց այդ թերակղզում, այն չափով, ինչ չափով ինքնուրույն ազգային պետություններ են ստեղծվում»[11]։

Կարևորը ճնշված ազգերի ինքնորոշման իրավունքի ապահովումն էր։ Ուստի Վ. Ի. Լենինը պնդում էր, որ «եթե մենք չառաջադրենք անջատման իրավունքի լոզունգը, մենք ոչ միայն ճնշող ազգի բուրժուազիայի ջրաղացին ջուր լցրած կլինենք, այլև այդ ազգի ֆեոդալների ու աբսոլյուտիզմի ջրաղացին»[12]։ Նա մերկացնում ու խարազանում էր ամեն կարգի կադետների ու անգամ սո-

---

8 Սրանց մեջ էր Սիրեմ Դավթյանը՝ 1905—1911 ԹԹ. իրանական հեղափոխության առաջնորդներից մեկը։

9 Տե՛ս Г. А. Галоян, Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900—1922, Ереван, 1969, стр. 3.

10 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 51, թ. 6։

11 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 20, էջ 497։

12 Նույն տեղում, էջ 513։

ցիալիզմի փնտրումներով զարդարված այլ կուսակցությունների մեծապետական շովինիզմը, սոցիալիզմի գործի նկատմամբ դավաճանություն համարում նրանց վարքագիծը, եթե նրանք չեն պաշտպանում Ռուսաստանի ճնշված ժողովուրդների անջատման, նրանց «սեպարատիզմի» իրավունքը։

Երկկողմանի խոցվող հայկական շարժումը ցարական ռեակցիայի առջև նույնպես տեղի չտվեց։ Այն բզկտվում, բայց և ծավալվում, հզորանում էր անընդհատ, հարկավ առաջին հերթին դրսևորվելով որպես արևմտահայ ժողովրդի ազատագրման նպատակին ուղղված մի հերոսամարտ։

1891 թ. հոգևորական Մինաս Տեր-Պետրոսյանը Թուրքիային սահմանակից Կարսի եկեղեցում առավոտյան աղոթքն ավարտելով վարդանանց հերոսներին նվիրված ճառով, հավաքվածներին կոչ էր անում. «Հասել է Հայաստան ստեղծելու ժամանակը, ուշադրություն միք դարձնի ձեր ընտանիքներին, թողեք նրանց և գնացեք օգնելու ձեր եղբայրներին, որոնք գտնվում են թուրքական լծի տակ և կռվեք մինչև ձեր արյան վերջին կաթիլը»[13]։ Այս ելույթի համար նա վտարվեց Կարսից։ Ավելի ուշ Թիֆլիսում արևմտահայերի օգտին պրոպագանդ մղելու մեջ էին մեղադրվում Լևոն Մանվելյանը, Կոմիտասը և ուրիշներ։ 1895 թ. հակաթուրքական տրամադրություններ սերմանելու համար Մետեխի բանտ նետվեց Ալ. Շիրվանզադեն, ապա (1898-ին) երկու տարով աքսորվեց Օդեսա։ Բանտարկվեցին և Թիֆլիսից աքսորվեցին Ղ. Աղայանը, Ավ. Իսահակյանը, Ատրպետը և շատ ուրիշներ։

Բռնությունները ուժեղացան մանավանդ 90-ական թվականների երկրորդ կեսից, երբ վերսկսվեց հայկական դպրոցները փակելու ու եկեղեցական գույքը բռնագրավելու հերթական փուլը, որը զուգակցվեց մամուլի, գրականության նկատմամբ սաստկացող հալածանքներով ու բարեգործական ընկերությունների գործունեության սահմանափակմամբ։

90-ական թվականներին մոլեգնած ռեակցիայի հետ մեկտեղ հզորանում էր նաև ազատագրական շարժման թափը, որը խթանում էր ազգային ինքնագիտակցության բարձրացմանը։ Թիֆլիսի ժանդարմական վարչության մի տեղեկագրից երևում է, որ տեղացի հայերը, որոնց ազգանունները վերջանում են ով-ով, այժմ դրանք գրում են հայկական վերջավորությամբ և պահանջում դատարանում մայրենի լեզվով երդվելու իրավունք։ Հայերեն լեզուն համարյա մոռացած մտավորականները, անգամ զինվորականները, սկսել էին իրենց երեխաներին հայկական կրթություն տալ՝ հատուկ տնային ուսուցիչներ վարձելով և այլն[14]։ Գր. Արծրունու թաղումը 1892 թ. վերածվեց գավառներից ժամանած հայության զանգվածային ըմբոստության։

Ժողովրդի փրկության ուղիներ էին որոնում Հ. Թումանյանն ու Ավ. Իսահակյանը։ Հայրենասիրական քնար էին հնչեցնում Հ. Հովհաննիսյանը, Ղ. Աղայանը, Ա. Ահարոնյանը, Շիրվանզադեն, Լեռենցը, Լեոն։ Երիտասարդ Ալ. Ծատուրյանը, հաղթահարելով 90-ական թվականների արևմտահայ դեպքերի առթիվ իրեն համակած հոգեկան մղձավանջը, հրաշքով դիմակայող իր ժողովրդին կոչ էր անում հույսը դնել սեփական ուժերի վրա և շարունակել հերոսական պայքարը։ Ժողովրդի ինքնաճանաչման ու ինքնապաշտպանության կազմակերպման ուշացած ծրագրով՝ «Սկիզբն երկնաց» վեպով 90-ական թվա-

13 ՀՍՍՀ ԿՊՊԱ, Լենինգրադի հավաքածու, № 1, ֆ. 1022, ց. 9, գ. 60, էջ 5։

14 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 114, ց. 2, գ. 51, էջ 3։

կանանների շեմից ներս մտավ նաև հայ գրականության «դեղձուկ նահապետը»՝ Պ. Պռոշյանը։

Հարկավ, այդ իրադարձությունները առավել ոգեցունց սիրտ լինեին արևմտահայ մտավորականության ներկայացուցիչների՝ Գ. Զոհրապի, Ե. Տևմիր-Հիպաշյանի, Ա. Արփիարյանի, Լ. Բաշալյանի, Տ. Կամսարականի, ապա և Միամանթոյի ու Ա. Զոպանյանի և հայ մշակույթի մյուս երախտավորների համար, որոնք թեպետ ստեղծագործում ու մարտնչում էին, բայց նրանց աչքերի առջև «սուգի երկիր» էր դարձել Հայաստանը, ուր «մոխրի համ մը» կար օդի մեջ, ու «ջարդերի հիվանդ» էին դարձել՝ համամատած։

* * *

Կարինի, Կ. Պոլսի ժողովրդական ցույցերի, Կուկունյանի ձախողված արշավանքի և մյուս ըմբոստությունների առիթով վերսկսված բռնություններն ու հալածանքները հետևանքով ժողովրդական հուզումներ ու զինված էյուլթներ տեղի ունեցան Թուրքիայի մյուս հայաշատ վայրերում։ 1890 թ. Տարոնի Վարդենիս գյուղը հարստահարիչների դեմ զինված դիմադրության առաջնեկներից մեկն էր, ուր Մարգար Ամբոյանի (Մարգար վարժապետ) ղեկավարությամբ ինքնապաշտպանության դիմեցին համարյա բոլոր դևնը ունեցող գյուղացիները։ 1891 թ. սկզբներին կուսակալի ապարանքի ու ռուսական հյուպատոսարանի առջև բողոքի խաղաղ ցույց կազմակերպեց Վանի հայ ազգաբնակչությունը։ Հրապարակային նման ցույցեր կազմակերպվում էին պարբերաբար և ամենուրեք։

Ժողովրդական այդ ընդվզումների հետ մեկտեղ, 90-ական թվականների սկզբներին շարունակում էին մարտնչել ու հարստահարություններից արևմտահայ խաղաղ ազգաբնակչությանը պաշտպանել հայ ֆեդայիները։ Մուշ-Սասունի իրենց մարտական դիրքերում էին Բերդակ գյուղը կենտրոն դարձրած սասունցի Արաբոն ու նրա զինակիցները։ Երզնկայի ու Սեբաստիայի տարածքում գործում էին Գալուստ Արխանյանի (Մնձուրիի առյուծ), Ռուբեն Շիշմանյանի, Հովհաննես Մինասյանի ղեկավարած հայդուկային խմբերը և ուրիշներ։ Ավելի ուշ աչքի ընկավ նաև Դանիել Չաուշի հայդուկային խումբը, որն առավել հայտնի դարձավ Շապին-Կարահիսարի 1895 թ. հերոսական ինքնապաշտպանությունով։

Հայդուկային շարժման մեջ նշանակալի դեր կատարեցին Արամ Աչըգպաշյանն ու Հ. Պոյաճյանի եղբայրը՝ Ժիրայրը (Մարտիրոս Պոյաճյան)։ Վերջինս Կհասարիայի Տերևանք գյուղի եկեղեցու վանահայր Դանիել վարդապետի հետ մեկտեղ ստանձնել էր Թորոս Տաղուկյանի և Կյուլբեկ Համալյանի գլխավորած մեծ, ինչպես և փոքր «Չելլե»-ներ կոչվող հայդուկային խմբերի ղեկավարի դերը[15]։ Սրանք նույնպես հիմնականում գործում էին Կեսարիա—Սեբաստիա—Կյուրին տարածքում։ Վասպուրականում գործում էին շատախցի հայդուկներ Չաթոն ու Ներոն։ 1892 թ. սկսած հունուսում աչքի ընկավ երիտասարդներից կազմված հայդուկային մի խումբ, որն արիաբար մարտնչում էր համիդիեականների դեմ, կազմակերպում գավառի աշխատավորության ինքնապաշտպանությունը։

---

15 Տե՛ս «Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության», հ. Ա, էջ 113—120։

90-ական թվականների առաջին կեսը նշանակալի էր նաև զինատար խմբերի գործունեությամբ, որոնք Ռուսաստանից և Անդրկովկասից տարբեր ճանապարհներով ու միջոցներով զենք էին տեղափոխում «Երկիր»։ Այդ ասպարեզում տարվող աշխատանքներն առավել գործուն դարձան, երբ 1891 թ. Բավրիդում հիմնադրվեց «Խարիսխ» զինագործական արհեստանոցը և Անդրկովկասից Պարսկաստան, իսկ հետագայում այնտեղից «Երկիր»՝ Արևմտյան Հայաստան անցան Վարդան Մհերբյանը (Վայրան), Ալեքսանդր Պետրոսյանը (Պետո) և ուրիշներ։ Գյուղացի Մինասի անվան տակ ծպտված Վանից Սալմաստ, ապա Բավրիդ անցավ և 1890—1893 թթ. զգալի աշխատանք կատարեց նաև Փանոս Թերլեմեզյանը։ Այդ գործին էին նվիրվել նաև երիտասարդ Արմենակ Եկարյանը, Բաֆֆու կրտսեր քույրը՝ Ջավահիրը և շատ ուրիշներ։ Եվրոպայից զենք տեղափոխելով էր զբաղված Զելթունի ապագա հերոսը՝ Ազատին (Կարապետ Բուր-Մարգոսյան)։

Նախապես Թիֆլիսում ու Երևանում գործելուց և Տուլայի զինագործարանում մասնագիտանալուց հետո Պարսկաստան անցավ ու Բավրիդի զինագործարանի ղեկավարությունն ստանձնեց Երևանցի Գալուստ Ալոյանը։ 90-ական թվականներին զինագործների էին վերածվել Արաքսի ափին գտնվող ս. Ստեփանոսի եկեղեցին և Մուշի ս. Կարապետի վանքը։ Այստեղ էր գործում Եռանդուն վարդապետ Վարդան Հակոբյանը։ Թուրք-պարսկական սահմանագլխին գտնվող և հայգյուղերի ու զինատար խմբերի համար 1891—1892 թթ. ապաստան ու հավաքատեղի դարձած Դերիկի ս. Աստվածածնի կիսավեր վանքի վանահայրությունն ստանձնեց հայ ազատագրական պայքարի մեջ իր նախկին գործունեությամբ արդեն հայտնի Բագրատ Քավարալյանը։

Սակայն XIX դարի 90-ական թվականների սկզբներին վերելք ապրող հայ ազգային-ազատագրական շարժումը բախվեց սուլթանական մոլեգնող ռեակցիային։ Հայ ժողովրդի հալածանքներն ավելի աստիճացան։ Արգելվեց եկեղեցական արարողություններում խոսել հայերի կամ Հայաստանի հետ կապված հարցերի մասին, անգամ անուններ տալ։ Գրաքննությունը արգելեց բնակավայրերի հայկական անվանումների օգտագործումը, օրինակ, Կարին, Բաղեշ, Տիգրանակերտ և այլն։ Հայ զինվորական բժիշկները հեռացվեցին ռազմական միավորումներից, հայ պաշտոնյաները՝ դատական և մյուս մարմիններից։ 1892 թ. սուլթանի հրամանով դադարեցվեց Միացյալ հայոց ընկերության գործունեությունը, իսկ 1893 թ. արգելվեցին Ազգային սահմանադրության մայիսյան տոնախմբությունները։ Ըստ էության արգելվեց նաև Ազգային սահմանադրությունն ընդհանրապես, և Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովը. մինչև լրիվ խափանումը (1896), մի քանի ոչ լիարժեք նիստեր գումարեց միայն։ 1897 թ. կառավարական որոշմամբ արգելվեց հայերին զրականության մուտքը Թուրքիա, նոր խստություններ սկսվեցին Թուրքիայում հրատարակվող հայ պարբերականների նկատմամբ։

Բայց առավել սարսափելի զանգվածային ջարդերն էին, որ ձեռնարկվեցին ազատագրական շարժումը խեղդելու և Հայաստանը հայաթափ անելու դիտավորությամբ։

90-ական թվականների սկզբների հայ ազատագրական շարժման համար ողբերգական էր հատկապես 1893 թ., երբ հայոց հինավուրց աշխարհը դեռ 1894—1896 թթ. ահասարսուռ ջարդերի նախօրեին դարձավ արյունալի իրա-

ղարձությունների թատերաբեմ[16]։ Մեկը մյուսի ետևից ղոհվեցին դեռևս 80-ական թվականներից թուրքական բռնապետության դեմ ըմբոստացած ու զինավառ պայքարի ելած բազմաթիվ հայդուկներ ու հասարակական գործիչներ, իսկ թուրքական բանտերը ծայրեծայր լցվեցին հայ «կասկածելիներով» ու նրանց համախոհներով։ Չերքեզակալվեցին այնքան անմեղ մարդիկ, որ թուրքական բանտերն այլևս հնարավորություն չունեին բոլորին պարփակելու իրենց մեջ և հաճախ իշխանությունները ստիպված էին լինում զորանոցներ տրամադրել այդ նպատակին։

Կովկասից «Երկիր» վերադարձի ճանապարհին, իր հայրենի լեռներին դեռ չհասած, Խնուսի ու Մուշի միջև ընկած քրդական մի գյուղի մոտակայքում հերոսաբար կռվեց ու յուրայինների հետ նահատակվեց Արաբոն։ 1894 թ. գարնանը Յոզղադում կախաղան հանվեց Միրայրը։ Օսմանյան զորքերի դեմ Մարզվանում տված անհավասար մարտում նահատակվեցին Բարսեղ Զաքարյանն (Լևոն) ու նրա ընկերները, կախաղան բարձրացվեց Տարոնի երիտասարդության ղեկավար, վարդենիսցի Մարգար վարժապետը։ Սակայն այդ դաժանությունները ոչ թե վհատեցրին, այլ պայքարի նոր ճանապարհ դուրս բերեցին հայ ազատամարտի աննկուն զինվորներին։

2. ՍԱՍՈՒՆԻ 1894 թ. ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Թուրքական կառավարության հալածական քաղաքականության դեմ ուղղված ժողովրդական հուզումները լայն թափ ստացան հատկապես Սասունում։

Օսմանյան կայսրության Բիթլիսի կուսակալության Մուշի գավառի, մասամբ նաև Բիթլիսի, Գենջի ու Սղերդի գավառների մեջ մտնող պատմական Սասունը XIX դարի վերջերին ընդգրկում էր շուրջ մեկ տասնյակի հասնող գյուղախմբեր (նահիե)՝ մոտ 35 հազար հայ ազգաբնակչությամբ։ Սասնո ամրոցի միջնադարյան լքված ավերակները հայտնի էին Դավթի բերդ անունով[17]։

XIX դարի 80-ական թվականներից սկսած քրդական հրոսակների և կառավարական զորքերի ու ոստիկանության կամայականությունների դեմ ինքնապաշտպանական մարտերով աչքի ընկան Շատախի, Ծովասարի գյուղախմբերի[18], Շենիկի, Սեմալի, Ալիանքի, Տալվորիկի, լեռնաշխարհի կենտրոն համարվող Գելիեգուզանի[19] և Սասունի մյուս շրջանների ու գյուղերի հայ աշխատավոր բնակիչները։ Ըմբոստ լեռնականների դժգոհությունը ծայրահեղ աստիճան սրվեց 90-ական թվականների սկզբներին, երբ կառավարությունը փորձեց կրկնակի գանձել պետական հարկերը, ապա և հաշվեհարդար տեսնել իրավացի բողոքող աշխատավոր գյուղացիների հետ։

---

16 Տե՛ս «Братская помощь пострадавшим в Турции армянам», М., 1897, ч. II, стр. 91—92.

17 *Բերդից քիչ հարավ պահպանվել էր հին Սասունի բնակավայրի փոքրիկ մի մասը՝ Քաղլիկը։*

18 *Սասունի գավառակի Շատախի շրջանը չպետք է շփոթել Վանի Շատախ գավառի հետ։*

19 *Տալվորիկն ու Գելիեգուզանը ոչ թե գավառակներ կամ գյուղախմբեր էին, ինչպես հաճախ շփոթում և գրում են ուսումնասիրողները, այլ գյուղեր՝ յուրաքանչյուրն իր շուրջ մեկուկես տասնյակի հասնող թաղերով, որոնք երբեմն հիշատակվում են որպես առանձին բնակավայրեր։*

1891—1892 թթ. ընթացքում քրդական վերնախավերը, իշխանությունների թելադրանքով[20], կանոնավոր զորամասերի և հատկապես «Համիդիե» հեծելազորային ջոկատների հետ արշավանքներ ձեռնարկեցին հայկական բնակավայրերի վրա։ Սակայն սասունցիներն այս անգամ արդեն համախմբված էին և ասպատակողները հանդիպեցին զինված ու համառ դիմադրության։

Մուշի և Սասունի միջև ընկած Տատրագոմ գյուղի գյուղացիները, հայդուկ Հովանի ու նրա ընկերների ղեկավարությամբ, ինքնապաշտպանական առաջին մարտերը մղեցին գյուղ ներխուժած ավազակախմբերի ու թուրքական ոստիկանների դեմ։ Ոստիկանական ջոկատներն ու համիդիեական զորախմբերն ուժեղ հակահարված ստացան հատկապես Սասունի «առաջապահ» գյուղերի՝ Շենիկի, Սեմալի, ինչպես նաև Տալվորիկ, Գելիեգուզան, Խոծոծվանք, Շուշնամերկ և մի շարք այլ գյուղերի բնակիչների կողմից։ Տալվորիկի Սպաղանքի թաղապետի հետագայում ճանաչված հայդուկ Մակարի գլխավորությամբ զինված գյուղացիները ետ շպրտեցին ոստիկանական ջոկատները և նրանց նահանջը կանխելու նպատակով քանդեցին հինավուրց ու նշանավոր «Սատանի կամուրջը»[21]։



Զինված հայուհին իր զավակի հետ

Միշտ չէր, որ թուրքական իշխանություններին ու քրդական ռազմատենչ ավագանուն հաջողվում էր հայ ազգաբնակչության դեմ հանել քուրդ աշխատավոր գյուղացիներին։ Երբեմն քուրդ ռամիկ ժողովուրդը միանում էր դրացի հայերին և կռվում գյուղ մտած հարստահարիչների դեմ։ 1893 թ. վերջերից սկսած աշխատավոր այդ քրդերից շատերը հայերին գաղտնի հայտնում էին իշխանությունների ու քուրդ ցեղապետերի կողմից նրանց դեմ նախապատրաստվող դավերի մասին[22]։

90-ական թվականների սկզբներին սասունցիների մղած ինքնապաշտպանական կռիվներում աչքի ընկան մի շարք գործիչներ, որոնք փաստորեն ստանձնել էին Սասունի դիմադրական շարժումների ինչպես գաղափարական, այնպես էլ գործնական առաջնորդների դերը։ Դրանցից էին Միացյալ ընկե-

---

20 Տե՛ս «Թուրքական աղբյուրներ», Դ, Երևան, 1972, էջ 174—175։

21 Տե՛ս Կ. Թառոյան, Ժողովրդական շարժումները Սասունում, Երևան, 1966, էջ 60—66։

22 Տե՛ս «Геноцид армян...», стр. 38.

րության Մուշի կենտրոնական վարժարանի պաշտոնական տեսուչ Միհրան Տամատյանը, Մուրադը (Համբարձում Պոյաճյան), Հրայրը (Արմենակ Ղազարյան), Շենիկի տանուտեր Գրգոն (Գրիգոր Մոսկյան), Քալոզը (Հովհաննես Կիրակոսյան), Գևորգ Չաուշը (Գևորգ Ադամյան) և շատ ուրիշներ։

1893 թ. սեպտեմբերին Հ. Պոյաճյանը մի փոքրիկ խմբով մեկնում է Բիթլիս, սասունցիներին զենքով օգնելու խնդրանքով դիմում մի շարք ճանաչված մտավորականների, այդ թվում Ղ. Ալիշանին, Ս. Չամչյանին և այլոց։ 1894 թ. սկզբներին Մուրադը վերադառնում է Սասուն։ Նույն օրերին արևելահայերից օգնություն ստանալու հույսով Խնուսի վրայով Կարս է անցնում Ա. Ղազարյանը։

1893 թ. մայիսին Բուրքական իշխանություններին հաջողվել էր ձերբակալել Մ. Տամատյանին և նետել Մուշի բանտը։ Նույն բախտին էին արժանացել նաև Տարոնի հոգևոր առաջնորդ Ն. Խարախանյանը, Սեմալի տանուտեր Գուրգենը և ուրիշներ, ինչպես նաև նշանավոր գերդաստանների մի քանի ներկայացուցիչներ, գյուղացիներ, հայդուկ-ֆեդայիներ։ Սակայն նրանք մի շարք վայրերում ուժեղ դիմադրության հանդիպեցին։ Մուշի ոստիկանապետի առաջին իսկ փորձը հանդիպեց շենիկցիների զինված դիմադրությանը և թուրք ոստիկանները չկարողացան մտնել գյուղ։ Նման դեպքեր տեղի ունեցան մի շարք այլ գյուղերում։ Ուժեղ դիմադրության հանդիպեցին նաև Գնձի ու Հազոյի կայմակամների գլխավորությամբ գյուղացիների դեմ գնաց բերված պատժիչ արշավախմբերը։

Տեսնելով, որ ոստիկանության ուժերով հնարավոր չէ ծնկի բերել սասունցիներին, Բիթլիսի կուսակալ Թահսին փաշան որոշեց Սասուն ուղարկել կառավարական կանոնավոր զորամասեր։ Մերժելով կուսակալին հնազանդվելու առաջարկությունը, գյուղացիներն ամենուր անցան ինքնապաշտպանության։ Առաջին հարվածն իրենց վրա ընդունեցին Գրիգոր Մոսկյանի զինակավորությամբ քաջաբար մարտնչող շենիկցիներին օգնության հասած հարևան ալիանքցի գյուղացիները՝ Մանե Պողոսի առաջնորդությամբ։

Նրանք էր հատկապես տեղական հումքով ու տնայնագործական եղանակով զենք արտադրող Սասունի ազատագրական շարժման կենտրոն Տալվորիկի վիճակը, որի շուրջն էր կենտրոնացվել կառավարական կանոնավոր զորամասերից, համիդիեականներից ու ոստիկանական ջոկատներից կազմված մոտ հինգ հազարանոց մի բանակ։ Սակայն հարևան գյուղերի, հատկապես Շենիկի ու Գելիեգուզանի օգնական ուժերի հետ մեկտեղ, հունիսի կեսերին, տալվորիկցիներին հաջողվեց մի քանի համարձակ ու հաղթական մարտեր տալ հայկական գյուղերի վրա խուժած թուրքական զորքերին։

Ամռան վերջում թուրքական զորախմբերը ետ քաշվեցին Մուշ՝ նախապատրաստվելու հաջորդ տարվա արշավանքին։ Անտոթի, Քեփի ու Մռվասարի բարձունքներում ապավինած հայերը առժամանակ վերադարձան հայրենի գյուղերը։ Ինքնապաշտպանության զեկավարները որոշեցին նախապատրաստվել և ընդունել Բշնամու մարտահրավերը։ Ուստի ինչպես զենք-զինամթերքի համալրման, այնպես էլ որոշ գյուղերի միջև եղած տարաձայնությունները հարթելու և Բշնամու դեմ միասնական ճակատ ստեղծելու նպատակով, 1893—1894 թթ. ձմռանը նախապատրաստական որոշ աշխատանքներ կատարվեցին։

1894 թ. գարնանը փոքրաթիվ իր խմբով Տալվորիկ ժամանած Հ. Պոյաճյանը ստանձնեց Սասունի ինքնապաշտպանության կազմակերպման ընդհա-

նուր զեկավարությունը։ Նրա նախագահությամբ Տալվորիկի ավազներից մեկի՝ Հարթքի քաղաքեպ Գասպար Խեչոյանի տանը գումարված արտակարգ նիստում, ուր հավաքվել էին կիրճերում ցրված այդ գյուղի ինը թաղերի ներկայացուցիչները, և Սասունի ինքնապաշտպանության մի քանի փորձառու գործիչներ, ընդունվեց առաջին կարևոր որոշումը՝ արգելել Տալվորիկի բանալի «Սասունի կամուրջի» նորոգումը, որի նպատակով իշխանությունների կողմից զինված պահակախումբ ու հատուկ արհեստավորներ էին ուղարկվել այնտեղ։ Սասունցիների համար ռազմական տեսակետից արտակարգ կարեվորություն ունեցող այս որոշումը չուտափույթ հաղորդվեց Գևլիեգուզանի, Շենիկի ու Սեմալի ժողովրդական առաջնորդներին, որոնք իրենց ջոկատներով շարժվեցին դեպի կամուրջը։ Այստեղ միանալով Տալվորիկից եկած խմբերին, անհապաղ հարձակվեցին կամուրջի վերականգնման աշխատանքները հսկող ոստիկանների վրա և ստիպեցին դադարեցնել շինարարությունն ու հեռանալ Սասունի սահմաններից[23]։

Լեռնցիների այս հանդգնությունից գաղազած Բիթլիսի կուսակալը Սասուն ուղարկեց մի քանի խոշոր հրոսակախմբեր, որոնք, սակայն, չախչախվեցին ու ետ շպրտվեցին։ Իսկ հայդուկային առանձին խմբերի հաջողվեց անակնկալ հարձակումներով որոշ վայրերում, այդ թվում Խիանքի Իշխանաձոր (Իշխձոր) գյուղում, բանտից ազատել մի խումբ պատանդ բանտարկյալներ։ Միաժամանակ Սասունի առաջնորդները օգնություն հայցող նամակներ հղեցին Մուշ և այլուր։

Շուտով Սասունի շուրջն ստեղծվեց ռազմական ուժեղ գոտի և հայտարարվեց պատերազմական վիճակ։ Սուլթանի հանձնարարությամբ Սասուն արշավող զորքերի զեկավարությունն ստանձնեց Անատոլիական 4-րդ բանակի հրամանատար, ջարդարար Զեքի փաշան։ Սասունի վրա շարժվեցին նրա տասներկուհազարանոց զորամիավորումը և լեռնային հրետանին, Դիարբեքիրից՝ Օսման փաշայի երեք հազարանոց հետևակային կորպուսը, Երզնկայից ու Մուշից՝ հեծելազորային երկու գնդեր, Էրզրումի 26-րդ հետևակային գունդը, 25-րդ գնդի առաջին և երկրորդ գումարտակները, հրետանային երկու մարտկոց և այլն[24]։ Այս զորամասերի հետ մեկտեղ ռազմական գործողություններին մասնակցում էին նաև համիդիեականների երեք հազարանոց զորախումբը, Բաղդադից ու Հալեպից տեղափոխված ռազմական միավորումներ, Բիթլիսի կուսակալության ոստիկանական ուժերը, ինչպես նաև մի քանի տասնյակ հազարի հասնող անկանոն ու ավարամոլ բաշիբոզուկներ։

Այսպիսով Սասունի դեմ դուրս բերվեց ժամանակի ռազմական տեխնիկայով զինված հսկա մի բանակ, որի դեմ-հանդիման կանգնած էր լոկ բարոյական իր ուժը գիտակցող և հիմնականում կայծքարե հրացաններով, դաշույններով, կացիններով ու եղաններով զինված, բայց հաստատակամ ու անկուն սասունցի գեղջուկը։

1894 թ. հուլիսին Շենիկում գյուղապետ Գ. Մոսեյանի տանը հրավիրվեց Սասունի ինքնապաշտպանության զեկավարների խորհուրդ, որտեղ համա-

---

23 «Պատմություն Ս. Գ. Հնչակյան կուսակցության 1887—1962», հ. Ա, Պեյրութ, 1962, էջ 144—145; Ս. Բյուրատ. Ծագքան Սասուն. Կ. Պոլիս, 1910, էջ 1116; Ա-դո. Վանի, Բիթլիսի ու Էրզրումի վիլայեթները, էջ 131. Նաև ՀՍՀ ԿԳԳԱ, ֆ. 56, ց. 4, գ. 145, թ. 79։

24 Տե՛ս Е. К. Саркисян, Политика османского правительства в Западной Армении, Ереван, 1972, стр. 110; «Геноцид армян...», стр. 20.

պատասխան հանձնարարականներ տրվեցին բոլոր մասնակիցներին և ճշտվեցին պաշտպանական գծերի հիմնական ուղղությունները։ Թիկունքում ունենալով Անտոքի ու նրա հարավում գտնվող Քեփի վիթխարի լեռնալանջերն ու խորխորատները, իսկ ավելի ետ՝ Սասունի հարավ-արևելքը երիզող Խուլփի ու Խիանքի մի քանի տասնյակի հասնող հայկական գյուղեր, նրանք պաշտպանական հիմնական ուղղություն ընտրեցին Գելիեգուզան-Տալվորիկ գիծը։ Թուրքական հարձակումը սպասվում էր մի քանի ուղղություններով, բայց հիմնական հարվածը նախատեսվում էր հյուսիսից՝ Շենիկ-Սեմալ հատվածում։

Մի շարք գյուղերում կանխավ կատարված ձերբակալություններից հետո սկսվեցին կառավարական զորախմբերի նախնական տեղաշարժերը։ Առաջապահ ջոկատները Շենիկի մատույցներում և Անտոքի սարահարթում անցան ուժեղ հարձակման։ Նրանք հանդիպեցին խարտսիկ տեղաշարժերով աներևույթ թաքստոցներից հանկարծ դուրս թռչող սասունցիների դիմադրությանն ու զգալի կորուստներ կրեցին։ Խուճապով նահանջող թշնամու ահաբեկված զինվորներն առասպելներ էին պատմում սասունցի ահարկու հսկաների, նրանց օգնության եկած «մոսկովյան գյավուրների» և հայերի արտասովոր հրանոթների մասին[25]։

Օգոստոսի սկզբներին հարձակման անցան թուրքական կանոնավոր զորամասերը։ Մուշում, հանդիսավոր արարողությամբ, ընթերցվեց ապստամբ անհավատներին բնաջնջելու մասին սուլթանական ուղերձը։

Սկսվեց գոյամարտի նոր, սասունցիների համար առավել ծանր փուլը։ Մոտ մեկ շաբաթ հերոսաբար մարտնչելով, նրանք աներեր մնացին իրենց դիրքերում։ Սակայն պայքարը խիստ անհավասար էր և առաջին գծի վրա գտնվող Շենիկի ու Սեմալի պաշտպաններն ստիպված էին մարտերով նահանջել դեպի Ալիանք և Անտոքի փեշերը։ Դատարկված Շենիկն ու Սեմալը հրի մատնըվեց։ Գելիեգուզանից շտապած աշխարհազորայիններին թեպետ հաջողվեց կասեցնել հակառակորդի անընդմեջ գրոհները, բայց ամբողջ ճակատով հարձակման անցան թուրքական զորախմբերն ու համիդեական գնդերը։ Մեծ զոհերի գնով թշնամուն հաջողվեց ներխուժել Գելիեգուզան։

Նոր համալրումներ ստացած թշնամու հարձակումը շարունակվում էր։ Արիաբար պաշտպանվող և արդեն միայն մասնակի հակագրոհների անցնող ապստամբները, իրենց հետ առած ավելի քան քսան հազար անզեն ազգաբնակչություն (զենք ունեցող հայերի ընդհանուր թիվը երկու հազարից չէր անցնում), ռազմամթերքի սպառման վտանգի տակ, նահանջեցին դեպի սարերի բարձրաբերձ գագաթներն ու անանցանելի լեռնակածանները։ Բարձունքներից քարաբեկորներ գլորելով, նրանք խառնաշփոթություն էին առեղծում հեղեղատներով դեպի վեր սողոսկող հակառակորդի մարտաշարքերում, իսկ երբեմն չեշտակի հակագրոհների անցնելով, նրան ետ էին շպրտում նոր գրավված դիրքերից։

Ճուրջ տասնհինգ օր ևս շարունակվեց անհավասար գոտեմարտը՝ հրանոթներով գրոհող թշնամու դեմ։ Իրենց քաջությամբ աչքի ընկան հատկապես Գ. Մոսեյանը, Հ. Նիկայանը, ալիանքցի Պողոսը և շատ ուրիշներ։

Սասունցիների ժողովրդական ինքնապաշտպանության այդ ռազմամարտին շինականի հետ մեկտեղ մասնակցում էին նաև բոլոր խավերը, մարտնչում

25 Տե՛ս Գլակ Տարոնցի. Ապստամբ Սասունը, Ժնև, 1903, էջ 23։

էին ծերերն ու պատանիները, դեռատի աղջիկներն ու կանայք։ Հայ գեղչկուհին, որը տարիներ շարունակ անցորդներից լուր էր հայցում հայդուկ դարձած իր հարազատների մասին, մանկանն օրորում և «զարթնիր լաո» կանչելով, սիրասուն զավակին հանձնում էր լեռը բարձրացած ֆեդայիներին, «նրանց հետ միասին կռվելու,— նրանց հետ միասին ապրելու, նրանց հետ մեռնելու» պատգամով, այժմ ինքն էր սուր ու հրացան առել և կանգնել հայրենի տունն ու հողը պաշտպանող յուր որդու և ամուսնու կողքին։ Ռազմամթերքի ու պարենի խիստ պակաս զգացող սասունցիների ուժերը չլատելու նպատակով Բուրքական հրամանատարությունը ներման խոստումով անձնատուր լինելու առաջարկություն արեց Անտոթի դարավանդում ամրացած հայկական ջոկատների առաջնորդներին։ Հավատ չընծայելով Բուրքերին, նրանք հրաժարվեցին առաջարկն ընդունելուց։ Սակայն ապստամբների դյուրահավատ մի մասն ընկավ Բուրքերի որոգայթը։ Հովհաննես քահանայի առաջնորդությամբ մոտ երկու հարյուրի հասնող այն խումբը, որը հավատաց Բուրքերի խոստումներին և դիրքերը լքելով շարժվեց դեպի նրանց բանակատեղին, շրջապատվեց Բուրքական դարանամուտ զինվորների կողմից և գազանաբար ոչնչացվեց։

Թշնամու զորամասերն անցան նոր հարձակման։ Ծանր մարտերից հետո Անտոթի լեռնածերպերին գամված ապստամբները թողնելով նախկին հենակետերը նահանջեցին դեպի Քևիի բարձունքներն ու Տալվորիկի ոլորապտույտ կիրճերը, ուր մարտերը դեկավարում էր Հ. Պոյաճյանը։ Սակայն այստեղ նույնպես սկսվել էր մահախուճապ նահանջը։ Դեպի Քևի ու Տալվորիկ նահանջող Գ. Մոսեյանը, իր մի խումբ զինակիցների հետ մեկտեղ, փորձեց անցնել Խուլը և Խանք՝ ռազմամթերք ու պարեն ձեռք բերելու հույսով։ Բայց նրանք շրջապատվեցին և ընկան հերոսի մահով։ Քաջի մահով ընկան նաև ամբողջ մեկ ամիս տղամարդկանց հետ կողք-կողքի հերոսաբար մարտնչող, կամքի բացառիկ ուժ ու տոկունություն դրսևորած սասունցի կանայք։ Շատերը մանուկներին գրկած, իրենց անդունդն էին նետում, խուսափելով հանձնվել ոսոխի անարգ քմահաճույքին։ Շատերն էլ ճաշակեցին գերության դառնությունը։ Մուրադը, Գևորդ Չաուշը և Ֆոֆոբար կոչվող ժայռաբլուրի քարայրներում ապաստանած մի շարք մարտիկներ շղթայակապ տարվեցին Մուշ։ Ավերվեց ու հրո ճարակ դարձավ շուրջ քառասուն գյուղ։ Ջոհվեցին ավելի քան տասը հազար հայեր։ Սրանց մեծագույն մասը նահատակվեց դիմադրությունը ճընշելուց հետո սկսված կոտորածի ժամանակ։ Օգոստոսի վերջին օրը, որը սուլթանի գահակալության օրն էր, մահմեդական մոլեռանդ զինվորականությունը նշանավորեց ջարդի առավել արյունռուշտ տեսարաններով[26]։ Բուրք զինվորները Սասունից իջան Մշո դաշտ և դաժան հաշվեհարդար տեսան անմեղ ու անզեն բնակչության հետ։

Սկսված ջարդը դադարեց միայն սեպտեմբերի սկզբներին։ Ժողովրդական արդարացի ընդվզումն արյան մեջ խեղդելու համար Զեքի փաշան սուլթանական շքանշան ստացավ, իսկ քրդական ղրս ցեղապետեր պարգևատրվեցին կառավարական մետաքսյա դրոշներով։

Սասունի հերոսամարտիկներն ստեղծված պայմանների հետևանքով չկարողացան ազատագրական պայքարը հասցնել հաղթական ավարտի։ Ջիրա-

---

26 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. Քաղաթխվ, գ. 3335, 1894—1895 քք., թ. 25—25։ «Геноцид армян...», стр. 32—33; «Положение армян...», стр. 236—240.

նանացան նրա ղեկավարների իղձերը՝ այն դարձնել համաժողովրդական ազգավածային պայքարի սկիզբ։ Սակայն ժողովրդական ինքնաբուխ այդ ընդվզումը հայ լեռնաբնակ աշխատավորության դժգոհության արդարացի պոռթկումն էր, նրա ցասումնալի բողոքը ոչ միայն տեղական հարստահարիչների, այլև նրանց հովանավորող ու գործակից պետական իշխանությունների ազգային ու սոցիալական բաղաքականության, նրանց բռնատիրության դեմ։

3. ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ՄԱՅԻՍՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Սասունի հերոսական մարտերը և դրանց հաջորդած կոտորածները լայն արձագանք գտան ոչ միայն երկրի ներսում, այլև միջազգային հասարակական շրջաններում։ Առաջավոր մարդկության բազմաթիվ ներկայացուցիչներ իրենց բողոքի ձայնը բարձրացրին սուլթանի բռնություններին ու ջարդարար քաղաքականության դեմ։ Նրանք պահանջում էին մեծ տերություններից միջամտել և զսպել սուլթանի կամայականությունները։

Անուշադրության մատնելով ինչպես հայկական շրջաններից եկող բողոքները, այնպես էլ եվրոպական ու ռուսական առաջադեմ մամուլում թուրքական գազանություններ դատապարտող մեղադրական հոդվածները և իր դեսպանների միջոցով փորձելով մոլորության մեջ գցել համաշխարհային հասարակական կարծիքը, սուլթանն արգելեց օտարերկրացիների մուտքը Սասուն։ Բայց Արդուլ Համիդը, սոսկալով, շուտով տեղի տվեց։ Մեծ տերությունների Կ. Պոլսի դեսպանները պահանջեցին թուրքական կառավարությունից քննիչ հանձնաժողով ուղարկել Սասուն։ 1895 թ. հունվարին Սասուն ժամանեց հայկական ջարդերի պատճառներն ու հանգամանքները քննող կառավարական հանձնաժողով, որի կազմում որպես դիտորդներ մասնակցում էին նաև Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի ներկայացուցիչները։ Հանձնաժողովի գումարած հարյուրից ավելի նիստերում հարցաքննվեցին տարբեր կարգ ու աստիճան ունեցող 190 հայ, թուրք, քուրդ վկաներ, որոնց ցուցումներն ամբողջովին մերկացնում էին օսմանյան վարչակարգը, նրա կատարած բարբարոսությունները։

1895 թ. մայիսի 11-ին Կ. Պոլսի անգլիական, ռուսական և ֆրանսիական դեսպանները համաշխարհային հասարակական կարծիքի ճնշման տակ հայկական նահանգներում բարենորոգումներ անցկացնելու ծրագիր ներկայացրին Բ. Դռանը։ Բարենորոգումների մայիսյան ծրագիրը բաղկացած էր 13 գլուխներից և 40 հոդվածներից։ Ըստ այդ ծրագրի վեց նահանգներում (Կարին, Բիթլիս, Վան, Դիարբեքիր, Խարբերդ, Սեբաստիա) կուսակալներ (վալի) պետք է նշանակվեին սուլթանի կողմից առանց կրոնի խտրության՝ հինգ տարի ժամկետով։ Նախատեսվում էր, որ նրանք որոնց նշանակումը ընդհանուր դժգոհության առիթ կտա, և կամ հասարակական ու քաղաքական պատճառներով անհարմար կհամարվի, չպետք է նշանակվեն վալիի պաշտոնում»[27]։ Նրա կուսակալը մահմեդական էր, տեղակալը (մուավին) պետք է քրիստոնյա նշանակվեր և ընդհակառակը։

Գավառների (սանջակների) պետերը (մյութեսարիֆները) ևս պետք է նշանակվեին սուլթանի կողմից։ Այն գավառներում, որտեղ քրիստոնյաները

---

27 «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923)», էջ 137։

մեծամասնություն էին կազմում, գավառապետերը ևս պետք է քրիստոնյա լինեին։ Իսկ այն նահանգում, որտեղ միայն մեկ գավառ կար, գավառապետը պետք է անպայման քրիստոնյա լիներ, եթե կուսակալը մահմեդական էր։ Կազաններում (գավառակ) կայմակամները նշանակվելու էին նահանգապետի առաջարկությամբ և սուլթանի հրամանով։ Սակայն ամեն մի նահանգի քրիստոնյա մյութեսարիֆների և կայմակամների թիվն ընդհանուրի մեկ երրորդից պակաս չպետք է լիներ։ Նահանգապետերին, գավառապետերին ու գավառակապետերին կից և նրանց նախագահությամբ գործելու էին չորս հոգուց բաղկացած ընտրովի խորհուրդներ, որոնց անդամներից երկուսը պետք է լինեին մահմեդական, երկուսը՝ քրիստոնյաներ։ Պաշտոնատար անձինք խորհրդի անդամ լինել չէին կարող[28]։

Կազաները բաժանվում էին նահիէների։ Ամեն մի նահիե իր մեջ ընդգրկում էր մի շարք գյուղեր և ուներ իր վարչական կենտրոնը։ Նահիեները կազմելիս պետք է հաշվի առնվեին մի դավանության պատկանող գյուղերը, ինչպես նաև ազգագրական պայմանները։ Նահիեն պետք է ունենար 2 հազարից ոչ պակաս, 10 հազարից ոչ ավել բնակիչ։ Բնակչության կողմից ընտրված 4—8 հոգուց բաղկացած խորհուրդը ընտրելու էր նահիեի ղեկավար՝ մյուդիր և նրա օգնական։ Մյուդիր ընտրվելու էր բնակչության մեծամասնություն կազմող ազգի ներկայացուցիչը, իսկ օգնական՝ մյուս ազգությունից։

Մյուդիրներն ընտրվում էին երկու տարին մեկ, իսկ խորհրդի անդամների կեսը՝ ամեն տարի։ Նրանք հաջորդաբար մեկ անգամից ավելի չէին կարող ընտրվել։ Նահիեի մեջ մտնող ամեն մի գյուղ ունենալու էր իր կառավարիչը՝ մուխթարը։ Եթե գյուղը տարբեր դավանանքի բնակչություն ունեցող բաղադասերի էր բաժանված, ապա ամեն մի խաղամաս ունենալու էր իր մուխթարը։

Ոստիկանները պետք է նշանակվեին տվյալ նահիեի խորհրդի կողմից, առանց կրոնի խտրության և իրենց շաուշներով կամ օնբաշիներով (տասնապետ) դրվելու էին մյուդիրների իրավասության տակ։ Ոստիկանական ծառայության մեջ գտնվող ոչ մահմեդականները ազատվում էին զինվորական («բեդել-ասկերի») հարկից։ Նահանգներում ստեղծվելու էր ժանդարմերիա՝ կազմված բոլոր ազգերից, առանց կրոնական խտրության և ենթարկվելու էր զինվորական օրգաններին։ Նախագիծը նախատեսում էր դատական գործերի արդարացի քննություն, ավազակախմբերի ասպատակությունների զսպում, քոչվոր ցեղերին նստակյաց կյանքի ընտելացում։

Անհրաժեշտության դեպքում համիդիե հեծելազորը կարող էր օգտագործվել միայն կանոնավոր զորքի հետ միասին, իսկ մյուս դեպքերում զրկվելու էր համազգեստ և զենք կրելու իրավունքից։ Հատուկ հանձնաժողովի միջոցով պետք է քննվեին սեփականության հափշտակումներին վերաբերող գործերը։ Հարկերի գանձումը պետք է կատարվեր ուղղակի՝ նահիեի խորհուրդների կողմից ընտրված և մյուդիրի իշխանության տակ եղող հարկահանների միջոցով։ Վերացվելու էին տասանորդի կապալով տալը և քոնի պարհակները։ Հավաքած հարկերից պետք է բաժին հատկացվեր տեղական վարչական, տնտեսական և կրթական ծախսերը հոգալու համար։ Ազգաբնակչությունն ազատվելու էր զորքին և պաշտոնյաներին ձրի բնակարան, ապրուստի միջոցներ տրամադրելու պարտավորությունից։ Այս կետը չափազանց կարևոր էր, քանի որ

28 Տե՛ս նույն տեղում, էջ 139։

ջորամասերի կամ սուլթանի պաշտոնյաների գյուղերում մնալը շատ ծանր էր նստում հայ շինականի վրա։ Բարենորոգումների նախագծում բավական տեղ էր հատկացված նաև դատական գործի կարգավորմանը, ընդ որում, նախատեսվում էր, որ գավառակների հաշտարար դատավորների մեկ երրորդը պետք է քրիստոնյաներից լիներ։

Նման ծրագրի իրագործումը, ինչ խոսք, որոշ օրինականություն կմտցներ և վերջ կտար ահավոր շափերի հասնող զանցառություններին ու կամայականություններին։

Մայիսյան բարենորոգումների առաջարկը մերժելու համար թուրքական կառավարությունը դիմեց խորամանկ քաղաքականության. ցույց տալով, որ մեծ տերությունների ներկայացրած նախագիծը իբր շատ կարևոր է և իր համար ընդունելի, 1895 թ. հունիսի 3-ին Բ. Դուռը Ֆրանսիայի, Ռուսաստանի և Անգլիայի դեսպաններին ուղղված գրությամբ հայտնում էր, որ սուլթանը «արզարադատ համարեց չսահմանափակել վարչական այս բարենորոգումների կիրառումը իր կայսրության միայն մի մասի մեջ, այլ բոլոր վիլայեթները նրանցով նպաստավորել»[29]։

Իսկ մեծ տերությունները բարենորոգումների մայիսյան ծրագիրը կազմեցին և մի կողմ քաշվեցին։ Նրանց ավելի շատ հետաքրքրում էր իրենց գաղութատիրական շահը, քան սրի մատնվող հայ ժողովուրդը։ Անգլիայի ազդեցությունը գնալով ուժեղանում էր հայկական շրջանների վրա, քանի որ նա ձեռնում էր, թե իբր Հայկական հարցի լուծումն իր ձեռքում է։ Նման վիճակը հանգստություն չէր տալիս մյուս տերություններին, և պատճառ դարձավ, որպեսզի Ֆրանսիան և Ռուսաստանը միասնական ճակատ կազմեն Անգլիայի դեմ և իրենց հովանավորության տակ վերցնեն Թուրքիան։ Սկսվեց դիվանագիտական կատաղի պայքար։

1895 թ. հունիսի 25-ին ռուսական դեսպան Նելիդովին ուղղած նամակում Շապին Կարահիսարի 475 բնակիչներ նշում էին, որ բարենորոգումները նրանց համար նորություն չեն և ամեն անգամ, երբ հույսեր են կապել նրանց իրականացման հետ, հիասթափություն են ապրել։ Հայտնի է բոլորին, որ թուրքական կառավարությունը, անտեսելով իր իսկ օրենքները, իր քաղաքականության մեջ միշտ էլ առաջնորդվել է բարբարոսական մեթոդներով։ «Նորից հայկական ռեֆորմների իրականացման ծրագիրը հանձնարարել նորին սուլթանական մեծությանը,— գրում էին նրանք,— դա ծաղր չէ՞ արդյոք մեր հանդեպ։ Մեզ համար սրդին պարզ է, որ մեր չքուժված վերքերից պիտի առավել արյուն հոսի. մի կողմից տնտեսական ճգնաժամը, մյուս կողմից հալածանքներն ու անհրեականելի տանջանքները մեզ վերջնական անկման կհասցնեն»[30]։

Առարկելով մեծ տերությունների պահանջին, Բ. Դուռը գտնում էր, որ վարչական փոփոխությունները կդժվարացնեն կառավարման գործը, նահանգապետեր նշանակելիս օտար պետությունների կարծիքն հաշվի առնելը կհակասի Օսմանյան կայսրության իրավունքներին, և որ անմեղ ձերբակալվածներն արդեն ազատված են, իսկ վտարանդիների գործերը քննելուց հետո կկարգավորվեն։ Առարկվում էր նաև Արևմտյան Հայաստանում առանձին կա-

---

29 «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», էջ 143։

30 «Геноцид армян...», стр. 64.

ռավարիչ նշանակելու, բռնի հավատափոխության հարցը կարգավորելու, Թուրքիայի մյուս շրջաններում հայերի շահերը պաշտպանելու դեմ և այլն։ Երաշխավորվում էր, որ իբր հատուկ քննիչների միջոցով կկարգավորվի հողային բռնագրավումների հարցը։ Այս բոլորը պատրվակ էին բարենորոգումների ծրագրի իրագործումը խափանելու համար, որի դեմ բողոքում էին հայ հասարակական խավերը, որը սկզբնապես արտահայտվում էր հաճախ խանութները չբանալու, աշխատանքի չներկայանալու և այլ ձևերով։

Անցան ամիսներ, բայց Թուրքական կառավարությունը որևէ գործնական քայլ չէր կատարում բարենորոգումները կիրառելու ուղղությամբ։ Հայ հասարակական շրջանների սպասողական վիճակը ծանր ու տագնապալից էր։ Ստեղծված ճգնաժամային դրությունը վերջ տալու համար նոր նյութեր կազմակերպելու տարբեր ծրագրեր էին կազմվում, քանի որ բոլորը զգում էին, որ նորից Հայկական հարցը գոհ է գնում իմպերիալիստական տերությունների շահերին։ Ակտիվ գործունեություն էին ծավալել այնպիսի հասարակական գործիչներ, ինչպիսիք էին Արփիար Արփիարյանը, Երվանդ Օտյանը, Արշակ Զոպանյանը և ուրիշներ։ 1895 թ. սեպտեմբերի 30-ին Կ. Պոլսում հայոց մայր եկեղեցու բակում հնչակյանները կազմակերպեցին բողոքի ցույց, որին մասնակցում էր մոտ չորս հազար մարդ։ «Մայիսյան ծրագրի» իրագործման պահանջով ցուցարարների բափորը՝ բաղկացած մշեցի, վանեցի, բաղեշցի պանդուխտներից, պոլսեցի արհեստավորներից, կանանցից և աղջիկներից, շարժվեց դեպի Բ. Դուռը։ Ցույցը կոչվեց Բաք Ալիի սուլթանի նստավայրը)։ ցույցի ցուցարարներն իրենց հետ տանում էին սուլթանին և եվրոպական տերություններին ուղղված հնչակյանների կազմած պահանջագիրը, որում նկարագրված էր հայ ժողովրդի ծանր կացությունը, հատկապես նշվում, որ Բ. Դուռը կառավարական սկզբունք է դարձրել «բնաջինջ ընել հայերը և պարպել իրենց հայրենիքը»[31]։ Պահանջագիրը բողոքում էր գոյություն ունեցող անարդարության դեմ և խնդիր դնում ապահովել հայ ժողովրդի խաղաղ կյանքը, վերջ տալ անօրինություններին։ Այդ պահանջները «անհրաժեշտ է թե՛ հայերուն ընդհանուր ապահովության ու բարեկեցության համար,— ասվում էր պահանջագրում,— և թե՛ այն տարբեր ժողովուրդներուն համար, որոնք մեր երկիրը կը բնակին և որոնց հետ մեր շահերը նույնն են»[32]։

Միաժամանակ հնչակյանները նախօրոք եվրոպական տերությունների դեսպաններին հայտնեցին ցույցի խաղաղ բնույթի մասին և զգուշացրին, որ զինվորական մարմինների միջամտությունը կարող է ծանր հետևանքներ ունենալ, որի ամբողջ պատասխանատվությունն ընկնում է օսմանյան կառավարության վրա։ Այդ հայտարարության թուրքերեն օրինակը ուղարկվեց գերագույն դատարանի նախագահին և դատախազին։

Ցույցից առաջ օրիորդ Մարի Պելլերյանը մի հուզիչ ճառով կոչ է անում պատրիարք Իզմիրլյանին և խնդրում դիմել եվրոպական տերություններին հայերին ծանր վիճակից փրկելու։ Եվ ապա ամբոխը՝ «Զայնը հնչեց Երզրումի հայոց լեռներեն» երգելով, շարժվում է դեպի սուլթանի պալատը։ Ոստիկանները կտրում են ցուցարարների ճանապարհը։ Ցուցարարները խնդրում են թույլատրել գնի երկու հոգու խնդրագիրն արքունիք հանձնելու։ Այդ պահին

31 «Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության, 1887—1962», հ. Ա, էջ 155։

32 Նույն տեղում, էջ 156։

արքունի Քիկնապահ Սերեվենք բեյը շտապ մոտենում է Բաբը Ալիի հազարապետին և հանձնում նրան ցուցարարներին գնդակահարելու հրամանը։ Սկսվում է ջարդը։ Դավառացի 18-ամյա Աբրահամը ատրճանակի կրակոցով ձիուց ցած է գլորում Սերեվենք բեյին։ Թուրքական կառավարությունը, տեղյակ լինելով իրադրությանը, վաղօրոք ռազմական պատրաստություն էր տեսել։ Շուտով զորքը և խուժանը փակում են ցուցարարների ու նրանց միացած խոշոր բազմության ճանապարհը և սկսվում է սոսկալի ջարդը։ Ցուցարարները պաշտպանվում և դիմադրում են։ Բերա և Ղալաթիա թաղամասերը տակն ու վրա են լինում։ Սպանվում է զորքի հրամանատարը։ Ամբողջ քաղաքում հայերի ընդհանուր ջարդ է սկսվում, որին ղոհ է գնում մոտ երկու հազար հայ։

Այս բոլորը հետևանք էր այն բանի, որ եվրոպական դիվանագիտությունը ոչ մի գործնական քայլ չարեց։ Թուրքական կառավարությունը համոզված, որ մեծ տերությունների միջամտությունը դիվանագիտական ձևականություններից այն կողմ չէր անցնելու, ահավոր ջարդեր կազմակերպեց հենց մայրաքաղաքում՝ բազմաթիվ երկրների դիվանագետների աչքերի առջև[33]։ Ջարդերից հետո մեծ տերությունների դեսպանները մի ողորմելի և ոչինչ չասող դիմում ուղարկեցին Թուրքիայի արտաքին գործերի մինիստրին։ Սուլթանը երկրում ծավալվող ընդհանուր գայրույթը կասեցնելու համար 1895 թ. հոկտեմբերի 18-ին համաձայնվեց ստորագրել մայիսի 11-ի ծրագիրը, մտցնելով նրա մեջ այնպիսի փոփոխություններ, որոնք տեղ էին թողնում բռնությունների համար։

Սուլթանը ձևի համար շաքիր փաշային նշանակեց նույնպես բարենորոգումներ անցկացնող կոմիսար, սակայն նա ոչ միայն չկատարեց իր խոստումը, այլև նոր, ահավոր ջարդեր կազմակերպեց։ Ժամանակին շատերը սուլթանի կողմից հրատարակած բարենորոգումների հրովարտակը որակեցին որպես ընդհանուր կոտորածի յուրատեսակ ազդանշան։ Իսկ բարենորոգումների գործն իրենց հսկողության տակ վերցրած պետությունները հայ ժողովրդին որևէ օգնություն ցույց չտվին։

4. ԶԵՅԹՈՒՆԻ 1895 Թ. ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Սուլթանական կառավարության ջարդարարական քաղաքականության դեմ ղեկը ձեռքներին՝ իրենց կյանքը, պատիվն ու հայրենի հողը պաշտպանելու էլան Զեյթունի քաջամարտիկները։

Տակավին 90-ական թվականների սկզբներից սաստկացած հարստահարություններն ու դրանց դեմ Զեյթունի ու հարևան բնակավայրերի հայության ընդվզումները լարված իրադրություն էին ստեղծել երկրամասում։

Հալածանքներն ավելի սաստկացան 1892—1895 թթ.՝ Զեյթունի կառավարիչ Քնֆիկ բեյի և 1893 թ. նրա պաշտոնանկ արվելուց հետո որոշ ժամանակ կառավարչի պարտականություններն ստանձնած Զեյթունի դատավոր (կադի) Սուլեյման բեյի կառավարման տարիներին։ Ահավոր կեղեքումները, բռնություններն ու զանգվածային բանտարկությունները ծայրահեղորեն սրել էին իրավիճակը։ Իշխանություններն ստիպված մի շարք թուրք պաշտոնյաների պաշտոնազրկեցին։ Զեյթունի նոր կառավարիչ նշանակվեց Ավնի բեյը, որը

---

33 Տե՛ս ԵՒս, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Ա, էջ 184։

նույնպես շարունակեց նախորդների վարքագիծը։ Շուտով սկսվեցին ցեղապետերի ու շեյխերի գաղտնի հրահանգավորումները, ապա նրանց ղեկավարությամբ հայերի դեմ ձեռնարկած ասպատակությունները ու դավերը[34]։

1895 թ. հուլիսին Մարաշի կառավարչի և հարկահավաքի պարտականություններով, բայց առավել «հայ հեղափոխականներ» որսալու նպատակով, զինված ջոկատով Զեյթունի Արեգին (Ալաբաշ) գյուղը ժամանեց Ասլան բեյը։ Հանդիպելով զինված գյուղացիների դիմադրությանը, պատժիչ այս ջոկատին չհաջողվեց անգամ ձերբակալել գյուղապետ (տանուտեր, քեհյա) Խաչեր Կարապետյանին՝ Զեյթունի 1862 թ. ապստամբության հերոսներից մեկի՝ Կարապետ քեհյայի որդուն։

1895 թ. ամռանը, ժողովրդին վերահաս աղետի՝ ամենուր մոլեգնող ջարդերի դեմ պայքարի պատրաստելու նպատակով Զեյթուն անցան հնչակյան ու նրան հարող մի խումբ գործիչներ, այդ թվում Աղասին (Կարապետ Թուր-Սարգիսյան), Ապահը (Պետրոս Գմգմյան), Ջելլաթը (Կարապետ Ղրփանոսյան), Հրաչյան (Հրաչյա Մարալ, Գրիգոր Ղարիբյան), Մլեհը (Ասատուր Տամղաճյան)։ Նրանց հետ էին նաև մարաշցի Ջին Թորոսը, Աբրայի բանտից փախած Մուշի նշանավոր հայդուկ Մխո Շահենը, Միհրան Գայանը, Ասլանը (Մինաս Էլմակյան), Կարապետ Սուքիասյանը, Նշան Ղազարոսյանը և ուրիշներ։

Ապստամբության նախապատրաստման ակտիվ գործունեություն ցուցաբերեցին զեյթունցի 74-ամյա իշխան Ղազար (Հազոր) Շորվայանը (Շովրոյան), Արեգին գյուղի տանուտեր Խաչեր Կարապետյանը, Ավագկալի գյուղապետ Հարություն Գոճայանը, ս. Կարապետ վանքի փոխվանահայր Բարդուղիմեոս վարդապետ Թագաճյանը և ուրիշներ։

1895 թ. հոկտեմբերի 12-ին Արեգին գյուղի մոտ, Մութ Զոր կոչված վայրում, հրավիրվեց ապստամբության ղեկավարների ժողով, որտեղ որոշվեց՝ տնտեսական ու քաղաքական ազատություն ձեռք բերելու նպատակով մահու և կենաց պայքար մղել թուրքական բռնակալության դեմ. երկու օր անց ապստամբական ուժերը շարժել դեպի Զեյթուն և պատրաստվել գրոհելու թուրքական զորանոցը[35]։

Իշխանությունները, տեղեկանալով ժողովի ու զեյթունցիների ընդհանուր տրամադրության մասին, փորձեցին կեղծ բանակցությունների միջոցով ժամանակ շահել և դեպի Զեյթուն շարժել նոր կանոնավոր զորամասեր։ Հապճեպ համալրվեց Զեյթունի զորանոցի կայազորը։ Զեյթունցիներն արդեն հոկտեմբերի 15-ին բախվեցին կառավարական զորքերի հետ։

Ջահան և Բերդուս (Բերդիս) գետերի միացման շրջանում տեղի ունեցած անհավասար կռվին, որը հետագայում կոչվեց Բերդուս Զայի ճակատամարտ, մասնակցում էին հայկական փոքրաթիվ ջոկատները՝ Փանոս Գամ-Բեյիլենի, Խաչեր Կարապետյանի և Ջելլաթի ղեկավարությամբ, որոնց օգնության հասան նաև Կարապետ Տեր-Հակոբյանի և Նազարեթ Զաուշի ջոկատները։ Սակայն թշնամին ուժեղ էր։ Չորս ժամ տևած կատաղի մարտերում, նրան զգալի կորուստներ պատճառելով, ջոկատներն անցան գետը և չտանելով Մարաշից

34 Աղասի, Զեյթուն և իր շրջականեր, Բեյրութ, 1968, էջ 136—137, 153—154։ Հ. Մ. Պողոսյան, Զեյթունի պատմությունը, էջ 334—335։ Ս. Բյուրատ, Զեյթունի վրեժը, Կ. Պոլիս, 1911, էջ 72—79։

35 Տե՛ս «Զեյթունի պատմագիրք», էջ 174—175։

ակնկալվող օգնությունը, ստիպված նահանջեցին դեպի Զեյթուն, իրենց հետ տանելով վիրավորված Նազարեթ Չաուշին։ Այդ առաջին զոհեմարտում հերոսի մահով ընկավ Զելլաթը։

Նույն օրերին Զեյթունից հարավ-արևմուտք ընկած Ֆոնուզ գյուղի ապրստամբները, թուրքական ոստիկանության հետ արյունալի մի ընդհարումից հետո, Բարդուղիմեոս վարդապետի առաջնորդությամբ, միացան հիմնական ուժերին և նրանց հետ միասին շարժվեցին դեպի զորանոցը։ Ճանապարհին տարբեր գյուղերից եկող բազմաթիվ նոր խմբեր ստվարացրին ապստամբների շարքերը և շուրջ յոթ հարյուրի հասնող ջոկատը հոկտեմբերի 15-ի լույս 16-ի գիշերը մոտեցավ զորանոցի պարիսպներին։

Հոկտեմբերի 15-ը խաղաղ չէր և Զեյթունի Նեթսում։ Բռնկված ապստամբության արագ ծավալումից խուճապահար Զեյթունի թուրքական իշխանությունները շտապ հեռագիր ուղարկեցին Մարաշ։ Նրանց ջանքերը՝ պատակտելու հայերի շարքերը և ապստամբների դեմ տրամադրելու Նազարեթ Չաուշի հորեղբորորդի Նշան իշխանին, անցան ապարդյուն։ Ընդհակառակը, Նշան Նորաշխարհյանը տեղեկանալով, որ ապստամբները շարժվում են դեպի Զեյթուն, իր փոքրիկ ջոկատով գրավեց կառավարչատունը և դերևց թուրքական բոլոր պաշտոնյաներին[36]։ Զինաթափվելին ու բանտարկվեցին նաև քաղաքապահ զինվորները։ Ապստամբության շտաբը հաստատվեց սբ. Աստվածածնի վանքում և սկսվեց զորանոցը գրոհելու եռանդագին նախապատրաստությունը։

Հոկտեմբերի 16-ի առավոտյան արդեն շուրջ երկու հազարի հասնող ապստամբներն իրենց դրոշներն էին ծածանում պաշարված զորանոցի շուրջը։ Ապստամբներն անմիջապես կտրեցին զորանոցի հաղորդակցության բոլոր կապերը դրսի հետ, խափանեցին ջրի մատակարարումը և պատրաստվեցին գրոհի։ Սկսվեց փոխադարձ հրաձգություն։ Հոկտեմբերի 16—17-ի ընթացքում ապստամբներին հաջողվեց գրավել զորանոցի շրջակայքի թուրքական փոքրիկ շինություններն ու մզկիթը։

Մարաշից թուրքական զորամասերը շարժվում էին դեպի Զեյթուն, ուստի զորանոցի գրավումը խիստ կարևոր էր, ինչպես դիմամբերը ձեռք բերելու, այնպես էլ ապստամբների մարտական ոգին բարձրացնելու առումով։ Զեյթունի փորձառու երկաթագործ-դարբիններ Ջոլագյան եղբայրների ու նրանց ընկերների պատրաստած յուրատեսակ բարանը՝ երկաթյա կիսաբոլոր անվավոր մեքենան, որի ետևից կարող էին անարգել զորանոցի պարիսպներին մոտենալ իրենց հետ հրդեհելու պարագաներ վերցրած մի քանի մարդ, շարժվեց դեպի զորանոց։ Իսկ փորձված նշանառու հայդուկ-որսորդները կրակի տակ էին պահում զորանոցի մուտքերն ու բովանդակը։

Պաշարված թշնամուն ահաբեկելու և խուճապի մատնելու նպատակով ապստամբները տարածեցին լուր, թե իբր մեծ տերությունների բանակները շարժվում են Թուրքիայի վրա, Կ. Պոլիսն արդեն գրավված է, անգլիական նավատորմը Մերմինում առափնել է ռազմարշավային բանակ, որն Ադանայի վրայով օգնության է շտապում զեյթունցիներին։ Ապա զորանոցի մոտ բարձրացվեց ֆրանսիական մի դրոշ (գուցե Կիլիկյան Ադգային եռագույն դրոշը, որ շատ նման էր ֆրանսիականին) և կրակի տակ պահեցին այն տարածությու-

36 Տե՛ս Ադաթի, Զեյթուն և իր շրջակաները, էջ 190։

նը, որով մոլեգնած թուրքական զինվորները փորձում էին մերձենալ դրան[37]։ Զորանոցի գրոհի ժամանակ իր արտակարգ քաջությամբ հատկապես աչքի ընկավ այնթապցի աշխարհազորային Հակոբջան Ավագյանը։

Գերված կայմակամն ու քաղաքապահ ջոկատի հրամանատարը ապստամբության ղեկավարների պահանջով նամակով դիմեցին զորանոցի պարեհին՝ անձնատուր լինելու, հակառակ դեպքում ապստամբներն սպառնում էին պայթեցնել զորանոցը և ոչնչացնել պահակազորը։ Զորանոցի կայազորի հրամանատար Իֆֆեթ բեյը հոկտեմբերի 17-ի երեկոյան դադարեցրեց դիմադրությունը, իսկ հաջորդ օրը՝ 60 ժամյա պաշարումից հետո, զորանոցն ամբողջությամբ հանձնվեց ապստամբներին։ Յոթ հարյուրի հասնող գերիները, Զեյթունի ոգևորված բնակիչների աչքի առաջ, գլխիկոր անցան ապստամբների սրի տակով։ Գերված սպաներին և մոտ հարյուրի հասնող կանանց ու երեխաներին հնարավորություն տրվեց հեռանալ Զեյթունի սահմաններից, զինվորները կապանավորվեցին կառավարչատանը, իսկ քաղաքում մնացած մի քանի բարձրաստիճան սպաները՝ առանձին անձանց բնակարաններում։

Զեյթունցիների ձեռքն անցան գերմանական երկու հրանոթ՝ 170 արկով, Հենրի-Մարտինի սիստեմի մոտ հինգ հարյուր հրացան, 120 հազար փամփուշտ, երկու տակառ վառոդ, մեծ քանակությամբ պարագաներ, հագուստեղեն և այլն, նաև զեյթունցիներից խարեությամբ հավաքված շուրջ երկու հազար կայծքարե հրացաններ[38]։ Զորանոցի վրա բարձրացվեց ապստամբների կարմիր դրոշը, որի վրա գրված էր՝ «Զեյթունի անկախ իշխանություն»[39]։

Հոկտեմբերի 19-ին ստեղծվեց Զեյթունի հեղափոխական ժամանակավոր կառավարություն՝ կազմված կառավարման գերագույն մարմնի իրավասություններն ստանձնած ընդհանուր ժողովից և վարչական մարմնից։ Ստեղծվեց նաև քսան մարդուց կազմված զինվորական խորհուրդ, որի մեջ մտան Զեյթունի ու շրջակա գյուղերի աշխարհազորային խմբերի ներկայացուցիչները։

Ապստամբության պատասխանական ղեկավարությունը ստանձնել էր Աղասին, որը փաստաթղթերի ու նամակների տակ ստորագրում էր «Գարուն Աղասի»՝ «Զեյթունի ապստամբության ընդհանուր հրամանատար», «Զեյթունի անկախ կառավարության նախագահ»։ Սակայն ապստամբության իրական ղեկավարը Նազարեթ Չաուշն էր, որ փայլեց ռազմավարական իր հմտությամբ և անվիճելի հեղինակությունն էր բոլոր ապստամբների համար։

Նազարեթ Չաուշի, Աղասու և նրա մարտական զինակիցներ Հրաչյայի, Ապահի և Մլեհի հետ միասին Զեյթունի ապստամբության օրերին կազմակերպական եռանդուն գործունեություն ծավալեցին ընդհանուր ժողովի փոխնախագահ Կոստան Մամճյանը, Հովհաննես Ահարոնյանը, Ավետիք Կեսխանյանը, Զեյթունի ճանաչված գործիչներ Կարապետ և Պապ Բասիլոսյանները (Սուրենյան), Նազարեթ Կուլվանեսյանը, Խաչեր Կարապետյանը, Սարգիս և Հակոբ Նորաշխարհյանները (Ենիտունյան), Ղազար Շորվալյանը, Պետրոս և Ավագ Չագրյանները, Կարապետ Տեր-Հակոբյանը, Աստատուր Անդրեասյանը, Սերովբե,

---

37 Տե՛ս «Զեյթունի պատմագիրք», էջ 534—536։

38 Տե՛ս Աղասի, Զեյթուն և իր շրջակաները, էջ 204—206, Համմ. «Զեյթունի պատմագիրք», էջ 539։ Սմբատ Բյուրատ, Զեյթունի վրիժը, էջ 375։ Զեյթունցի, Զեյթունի անցյալն և ներկյալն, Հ. Ա. Փարիզ, 1902, էջ 42։

39 «Զեյթունի պատմագիրք», էջ 553։

Լևոն և Թորոս Յաղուպյանները, Սարգիս Պալճյանը, Կարապետ քահանա Երկանյանը և ուրիշներ[40]։

Պատրաստվելով առաջիկա ահեղ մարտերին, զեյթունցիները օգնության դիմում հղեցին նաև Մերսինի անգլիական հյուպատոսին, նկարագրելով իրենց համար ստեղծված ծանր վիճակը[41]։ Նման գրություններ առաջին հերթին ուղղվեցին Կ. Պոլսի հայոց պատրիարքին։

Զեյթունի իրադարձությունները, հատկապես զորանոցի անկումը, որը մեծ անակնկալ էր թուրքական իշխանությունների համար, իրարանցում առաջացրեց Կ. Պոլսում, Հալեպում ու Մարաշում, ուր Զեյթուն անվան փոխարեն սկսեցին օգտագործել «Ապստամբ լեռ» արտահայտությունը։ Իշխանությունների գաղտնի թելադրանքով ու կառավարական զորաջոկատների անմիջական մասնակցությամբ ու առաջնորդությամբ նոյեմբերի 5-ի «արյունոտ երկուշաբթի» օրը դաժան հաշվեհարդար տեսան հայաշատ այդ քաղաքի խաղաղ բնակիչների հետ։ Խողխողվեցին հազարից ավելի հայեր, կողոպտվեցին ու ավերվեցին հարյուրավոր տներ ու խանութներ։

Զեյթունի գավառակի մահմեդական ազգաբնակչությունը հայերի հետ միմյանց դեմ չկռվելու համաձայնության էր եկել, սակայն թուրք ավազանին կառավարության հրահանգով ազգամիջյան ընդհարումներ էր պատրաստում։ Հարձակումներ սկսվեցին հայկական բնակավայրերի վրա։ Յուրփուզ, Արեգին և մի շարք այլ գյուղերում հաշվեհարդար տեղի ունեցավ հայ ազգաբնակչության հետ։ Հայ աշխարհազորային ջոկատները, Կիրակոս Ղրփանոսյանի ղեկավարությամբ, օգնության շտապեցին տասնվեց օր շարունակ հերոսաբար մարտնչող Շիվիլիկ գյուղի պաշտպաններին։

Տասն օրից ավելի քաջաբար պաշտպանվում էին նաև Թելեմելիք գյուղի բնակիչները, որոնց Զեյթունից օգնության հասան Ավետիք Տեր-Ղազարյանի փոքրիկ ջոկատը և Արեգինի ու Մավենքի 250 հոգուց կազմված գունդը՝ Խաչեր Կարապետյանի ու Մարտիրոս Շատալյաղյանի ղեկավարությամբ։ Հինգժամյա պայքարից հետո թուրքական հրոսակները ջարդվեցին ու ետ շպրտվեցին։ Ապստամբների դրոշը ծածանվեց նաև Ջահանի Քարե կամուրջի վրա։ Ապստամբներին հաջողվեց գրավել պատմական Կապան բերդի տեղում գտնվող նույնանուն գյուղը։ Կանչիի մոտ տեղի ունեցած արյունոտ ընդհարման ավարտով «Զեյթունի անկախ կառավարության նախագահ» Աղասու ստորագրությամբ ստեղծվեց ապստամբության առաջին ու հետաքրքիր փաստաթղթերից մեկը։ Այն Զեյթունի ու հարևան գավառակների մահմեդական ազգաբնակչությանն ուղղված թռուցիկ էր՝ ինտերնացիոնալ համերաշխության մի կոչ, որը դրացի հայերի հետ համագործակցելու սուլթանական կառավարության վարած բռնապետական քաղաքականության, իշխանությունների կամայականությունների դեմ միացյալ պայքարի էր կոչում նրան[42]։

Ապստամբներին հաջողվեց օգնության հասնել նաև իրենց հարավից սահմանակից Անդրուն գավառակի հայերին։ Զեյթունից եկած Նշան Նորաշխարհյանի հեծյալ խումբը և Բարդուղիմեոս վարդապետի աշխարհազորային ջոկատները նոյեմբերի 3-ին Անդրուն քաղաքի մերձակայքում՝ Ազատ բերդի ստո-

40 Տե՛ս Աղասի, Զեյթուն և իր շրջականեր, էջ 20։

41 Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», 1963, № 3, էջ 75—77։

42 Տե՛ս «Զեյթունի պատմագիրք», էջ 543—544։

բոտում, հանկարծակիի բերեցին թշնամուն և շեշտակի գրոհով ջախջախեցին ու քշեցին քաղաքից, որն ահաբեկված ճողոպրեց դեպի Կարս-Բազար ու Ադանա։ Հայ ռազմիկներն ազատեցին բանտարկված ու ոչնչացման վտանգի տակ գտնվող մի քանի հարյուր պատանդ-բանտարկյալների ու հրդեհեցին թուրքական կառավարչատունը։ Մի շարք այլ վայրերում, հատկապես Անդրունի մոտ գտնվող Ենիճեկյալեում, թուրքերը դարձյալ պարտություն կրեցին ու նահանջեցին։ Զեյթունի շրջակա գյուղերի համարյա ամբողջ հայ բնակչությունը, ինչպես նաև հարևան Անդրուն և Կոկիսոն գավառակների հայության զգալի մասը տեղափոխվեց Զեյթուն և Ֆռնուզ։ Ծանր վիճակ ստեղծվեց շուրջ երկու տասնյակ գյուղերի ու նրանց հարող ագարակների ավելի քան քսան հազար հայ ազգաբնակչության համար։

Այդ օրերին Զեյթունի վրա արշավող թուրքական զորքերի ընդհանուր հրամանատարությունն ստանձնած Ադանայի ապագա դահիճներից մեկի, չերքեզ գեներալ Ռեմզի փաշայի արևելյան կոչված բանակը Մարաշից շարժվեց դեպի Զեյթուն, իսկ Ադանայի կողմից Ալի բեկի գլխավորությամբ լեռնագավառ մտավ արևմտյան բանակը։ Թուրքական այս երկու բանակում կար երեսուն հազարից ավելի զինվոր։ Նրանց էին միացել համարյա նույնքան անկանոն զորամասեր։

Թշնամու գերակշռող ուժերի անդրանիկ գրոհներն իրենց վրա ընդունած Կապանում դիրքավորված ապստամբները, չորսժամյա կատաղի մարտերից հետո, տեղի տվեցին ու գյուղի բնակիչների հետ միասին նահանջեցին դեպի Ֆռնուզ։ Շուտով Ալի բեկի ութ հազարանոց բանակը և նրան միացած մի քանի հազար բաշիբոզուկներ մոտեցան Ֆռնուզին։ Կոտրելով գյուղի մատույցներում գտնվող ս. Կարապետի վանքի առաջապահ ջոկատների դիմադրությունը, դեկտեմբերի 2-ին թուրքական զորքերը խուժեցին Ֆռնուզ։ Եռօրյա մարտերից հետո, անհավասար այդ պայքարում մեծ զոհեր տալով, հինգ հազարի հասնող փախստական գյուղացիների շարասյունը Ապահի ու Բարդուղիմեոս վարդապետի առաջնորդությամբ կռվող աշխարհազորայինների հետևից ճեղքեց թշնամու շղթան և հասավ Զեյթուն։ Մի այլ ստվար զանգված, Հրաչյայի գլխավորությամբ քաշվեց մոտակա լեռները։ Շատերի հետ հերոսի մահով ընկավ Օհանավանքի գյուղապետ Մարտիրոս Շատալաղյանը։ Խոշոր մի հատված զոհ գնաց թուրք ասկյարների արյունոտ յաթաղանին։ Մեծ թվով գերիներ, առավելապես կանայք, սրահալած քշվեցին Մարաշ։ Սրանցից շատերը խուսափելով թուրքական գազանություններից ճանապարհին իրենց անդունդն էին նետում։ Հրկիզվեց ս. Կարապետի վանքը՝ իր հազվագյուտ ձեռագրերով։

Ալի բեկի զորաբանակի Ֆռնուզում տված մարտերի ժամանակ Ռեմզի փաշայի՝ Ջահան գետի ափին ծվարած քառասուն հազարից անցնող ահռելի բանակը, Կրուպպի տասներեք հրանոթներով շարժվեց Զեյթունի վրա։ Մինչ այդ Մարաշի կառավարիչն ու Ռեմզի փաշան դիմեցին սովորական խարդավանքի. նրանք Զեյթուն ուղարկեցին Մարաշից բռնությամբ բանակատեղի բերված հինգ ազդեցիկ հայերից կազմված մի պատվիրակություն, որոնք ներման երաշխիքով զեյթունցիներին պետք է համոզեին ցած դնել զենքը, թուրքերին հանձնել ապստամբության ղեկավարներին, թուրք գերիներին ու զորանոցը[43]։ Այս պահանջները մերժվեցին և թուրքական բանակն անցավ հարձակման։

43 Տե՛ս «Զեյթունի պատմագիրք», էջ 556—557։

Դեկտեմբերի 2-ին, կտրելով Ջերմուկի ձորը, ս. Փրկիչ մենաստանի ու նրան մերձակա Սվազենք ու Խալուատենք փոքրիկ գյուղերի մոտ Բշնամին բախվեց հայկական աշխարհազորային ջոկատներին։ Մարտը շարունակվեց մինչև ուշ երեկո։ Մի քանի անընդմեջ գրոհներից հետո, հրետանու կրակի տակ, թուրքերին հաջողվեց գրավել ս. Փրկիչ վանքը և հրդեհել։

Նույն գիշեր ապստամբության ղեկավարների Ջեյթունում հրավիրված արտակարգ ժողովում որոշվեց զինել 15—70 տարեկան զենք կրելու ընդունակ բոլոր բնակիչներին ու մինչև վերջ դիմադրել Բշնամուն։ Փոքրերն ու ծերերը, Ջեյթունի դիմադրության ոգին դարձած զեյթունցի խիզախ կանայք, ամենուր գրաված էին պաշտպանական հոգսերով։ Ովքեր կռվել չէին կարող, սննդամթերք ու վառոդ էին մատակարարում կռվողներին, նուռնդով օգնում նրանց։

Ջեյթունի մոտ վեց հազարի հասնող զինված ուժերը բաժանվեցին համապատասխան տեղամասերում։ Արեգնի և Ջեյթունի ենիտունյան ու Սուրենյան թաղերի աշխարհազորայիններին հանձնարարվեց երդկա լեռան առջևով ձգվող Սվազ-Կնտուկի անցքի, ինչպես նաև նրանից հարավ ընկած Սանդուխի (Սանտոխ) կիրճի պաշտպանությունը։ Պաշտպանական այս հատվածում աշխարհազորային ջոկատների հրամանատարությունն ստանձնել էին՝ առաջինում՝ Արեգնի գյուղապետ Խաչեր Կարապետյանը, Սարգիս, Եղյա, Նշան Ենիտունյանները, Խաչիկ և Կարապետ Սուրենյանները, երկրորդում՝ Նազարեթ Չաուշը, Պապ Սուրենյանը, Նազարեթ Կուլվանեսյանը։ Երեք առանձին խմբերի բաժանված Շորվալան և Ֆաուպյան թաղերի[44] ռազմիկները, Հարություն Ամինյանի, Աստուր Անդրեասյանի, Ավետիք Կիսխանյանի, Ավագ, Պետրոս, Փանոս Չագրյանների և Թորոս Յաղուպյանի ղեկավարությամբ, դիրքեր գրավեցին Խալուատենք գյուղում և գյուղից հարավ ընկած Ջերմուկի կիրճում, ինչպես նաև Սաղիր ու Անի-Ձոր կոչված վայրերում։ Փանոս Շամ-Քևշիշյանի հրանոթաձիգները Սարգիս Գալֆյանի հրամանատարությամբ ռազմիկների մի ջոկատի հետ իրենց վրա էին վերցրել Բշնամու հարձակման կենարոն Սանդուխ լեռան ու նրա հարավային կիրճի, ինչպես նաև լեռնանցքի պաշտպանությունը[45]։ Նոր կրականոցքեր բացվեցին զորանոցի պարիսպների վրա։ Մերկերյանն ու Ապահը ստանձնեցին զորքի հրամանատարությունը։ Սկսվեց Ջեյթունի քառասունինն օրյա հերոսամարտը։

Դեկտեմբերի 3-ի առավոտյան Բշնամին երեք հիմնական ուղղություններով շարժվեց Ջեյթուն։ Նախ, տիրելով քաղաքի վրա իշխող բարձունքներից մեկը, թուրքական զորքերը շեշտակի գրոհ սկսեցին կենտրոնում, ապստամբներին ստիպելով մարտերով նահանջել դեպի Ջեյթունի այգիներն ու զորանոցը։ Սրանցից ձախ՝ քարայրների մոտ կռվող հայ ռազմիկներին հաջողվեց կանգնեցնել Բշնամու առաջխաղացումը։ Պաշտպանների շարքերում խուճապ սկսվեց։ Այդ ժամանակ ճակատի առաջին գծում, նժույգի վրա երևաց Ջեյթունի

---

44 1865 թ., երբ Ջեյթուն մտավ առաջին թուրք կառավարիչը, պաշտոնապես փոխվեցին նաև քաղաքի չորս թաղերի անունները. Ենիտունյանը կոչվեց Յոթար (նաև Վերին թաղ), Սուրենյանը՝ Օրթա (նաև Միջին թաղ), Շորվալյանը՝ Գոզրայիր, Յաղուպյանը՝ Կարկաչար։ Սրանք հաճախ կոչվում էին նաև թաղերի եկեղեցիների անուններով. համապատասխանաբար՝ ս. Լուսավորչի, ս. Աստվածածնի, ս. Հովհաննեսի և ս. Մարգսի։

45 Տե՛ս Ադոնց. Ջեյթուն և իր շրջակաները, էջ 271։

ալեզարդ իշխան Կարապետ Բաբիկյանը։ Նախապես ապստամբության ընդդիմացած այս քաջակորով ծերունին մինչև արյան վերջին կաթիլը պայքարելու և հաղթելու կոչ անելով հայ ռազմիկներին, Նազարեթ Կուլվանեսյանի հետ միասին իր եռանդով մարտի տարավ նրանց։ Նոր համալրում ստացած և ոգևորված հայ ռազմիկները Սանդուխ լեռան վրա ու նրա կիրճերում տեղի ունեցած արյունալի մարտերում խափանեցին թշնամու առաջխաղացումը։ Սանդուխի ճակատամարտը, որտեղ թշնամին կորցրեց հազարից ավելի զինվոր, Զեյթունի ճանապարհին ընկած առաջին խոշոր արգելքն էր, որը հաղթահարել չկարողացավ Ռեմզի փաշան, իսկ զեյթունցիների համար այն դարձավ անփական ուժերի ստուգատես։

Նույն օրը երեկոյան Զեյթուն սկսեցին լցվել Ֆռնուզից հեռացած աշխարհազորայիններն ու գյուղացիների առաջին խմբերը։ Զեյթունի ավելի քան 15 հազար բնակչության ավելացան նույնքան փախստականներ[46]*, որոնց մեծ մասը կանայք, ծերեր ու երեխաներ էին։ Դրանով նոր դժվարություններ էին ստեղծվում քաղաքի պաշտպանների համար։ Սովի սպառնալիք էր առաջանում պարենի անհրաժեշտ պաշար չունեցող Զեյթունում։ Թեև եկածների մի մասը զինվեց և համալրեց ապստամբների շարքերը, բայց դրությունը մնում էր անմխիթար։ Ֆռնուզը բարբարոսաբար կողոպտելուց ու ավերելուց հետո, երկու օր անց, դեպի Զեյթուն շարժվեց նաև Ալի բեկի արևելյան բանակը։*

Սանդուխի ճակատամարտի օրը Զեյթունում գտնվող մոտ հինգ հարյուր թուրք գերի զինվորները խռովության փորձ կատարեցին։ Օգտվելով Զեյթունում ստեղծված տագնապալի վիճակից և որ հայերի հիմնական կռվող ուժերը գտնվում էին քաղաքից դուրս, թուրք գերիները հարձակվեցին պահակախմբի զինվորների վրա, զինաթափեցին նրանց ու փորձեցին հրդեհել քաղաքը։ Սակայն նրանց հաջողվեց հրդեհել միայն կառավարչատունը։ Քաղաքում մնացած զեյթունցի կանայք, կացիններով, դանակներով զինված, հարձակվեցին հրձիգների վրա, մեծ մասին կոտորեցին և հանգցրին սկսված հրդեհը։

Դեկտեմբերի 6-ի առավոտյան հորիզոնում երևաց այրվող Ավագկալի (Մխալ) երկինք հասնող ծուխը, որը գուժում էր Ֆռնուզն ավերած Ալի բեկի բանակի մոտալուտ ժամանումը։ Մի քանի ժամ անց նրա առաջապահ զորամասերը քաղաքը եզերող այգիների միջով ճեղքելով թանձր մշուշը, արդեն փորձում էին մտնել Զեյթուն։ Հանկարծ աղջամուղջի միջից, ընդամենը տաս-տասնհինգ մետր հեռավորության վրա որոտացին դիրքավորված ապստամբների հրացանները։

Հեռվից հնչեցին եկեղեցական կոչնակների տագնապալի ձայնը։ Քիչ անց թուրքական բանակի թիկունքից սկսվեց դարանամուտ հայ զինվորների անըսպասելի մի գրոհ։ Թշնամու վրա բշելով այծերի հսկա նախիրը, զեյթունցի մի բուռ քաջեր խարուխիկ այդ հնարքով խուճապի մատնեցին թուրք զինվորներին։ Նրանք մեծ կորուստներ տալով և ռազմադաշտում թողնելով մեկ հրանոթ, խուճապահար ետ քաշվեցին։ Զորանոցի ուղղությամբ հարձակվող արևելյան բանակի ջոկատները նույնպես ուժեղ հակահարված ստացան և նահանջեցին։ Հարձակման անցած զեյթունցիները գրավեցին մի շարք կարևոր ռազմական կետեր։

---

46 *Տե՛ս Դր. Հ. Պալուտյան, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու-Յորք,* **1934,** *էջ* **96։**

Հաջորդ օրերին զեյթունցիները, զգալի կորուստների գնով, այնուամենայնիվ կարողացան կանգնեցնել թշնամու ամենօրյա ու անընդմեջ գրոհները։ Սակայն Զեյթունի ներքին կացությունը օրըստօրե բարդանում էր։ Սաստկացող սառնամանիքների, աննդամթերքի, հատկապես աղի պակասը նեղում էին հազարավոր գաղթականներին, ինչպես նաև տեղացիներին ու կռվող զինվորներին։ Թուրքական բանակում սկսված հիվանդությունների համաճարակը մուտք գործեց նաև Զեյթուն։

Այլևս դրսից օգնություն ստանալու բոլոր հույսերը կտրած Զեյթունի ավագանու մի մասը հակված էր անձնատուր լինելու։ Այդ նպատակով բերդատեր իշխան Կարապետ Բասիլոսյանի և առաջնորդական տեղապահ Կարապետ Երկանյանի ղեկավարությամբ փորթաթիվ մի խումբ մեկնեց Ռեմզի փաշայի բանակատեղին։ Սակայն Ռեմզի փաշայի՝ հաջորդ օրն իսկ Զեյթունն ավերելու և հրկիզելու սպառնալիքից նրանք հասկացան, որ ներում չի լինելու, ուստի դժվարին արկածներից հետո վերադառնալով քաղաք, նորից միացան ապրուստամբերներին։

Հայ պատվիրակների վերադարձի հետ վերսկսվեց թուրքական երկու բանակների միաժամանակյա հարձակումը։ Արևելյան կողմից այն առավել կազմակերպված ու տևական էր հատկապես ս. Աստվածածնի վանքի ու զորանոցի ուղղությամբ։ Իսկ արևմտյան բանակը լայնակի հարձակում սկսեց Սոլակ-Տետևի ամբողջ գծով։ «Հրացանի ձայնը չէր որոշվեր, երկինք ու երկիր կորատար ու կփայլատակեր,—հետագայում վերհիշում էր դպրքերի ակտիվ մասնակից Հ. Ահարոնյանը,— Զեյթունի վճիռը պիտի տրվեր և կարծես վերջին դատաստանը պիտի բլլար, 18 ՔՆդանՈՔՆերու ռումբերը կարկուտի պես կթափեին քաղաքին, վանքին ու զորանոցին վրա»[47]։

Սակայն թուրքական զորքերի ներքին վիճակը նույնպես բարվոք չէր։ Մոլեգնող տարափոխիկ հիվանդություններին ավելացավ դեկտեմբերի երկրորդ տասնօրյակին սաստկացած ձնախառն մրրիկը։ Օգտվելով թշնամու ճամբարում տիրող իրավիճակից, այդ օրերին զեյթունցիները ձեռնարկեցին հանդուգն մի սխրանք։ Թուրքական համազգեստ հագած ապստամբների փոքրիկ մի ջոկատ Եղյա Նորաշխարհյանի ղեկավարությամբ գիշերով աննկատ բարձրացավ Պերզնկայի բարձունքները և այնտեղից գրոհով միրճվեց թուրքական դրաբանակի շարքերը։ Հարձակվողներին չտարբերելով յուրայիններից, թուրքերն սկսեցին անողոքաբար խողխողել միմյանց։ Ապստամբների ջոկատը մի քանի ղոհ տալով հասավ լեռան առորոտը, ապա միացավ քաղաքի պաշտպաններին։ Բայց հաջորդ երկու օրերին (23—24 դեկտեմբերի) թուրքական զորքերը ուժեղ ճնշում գործադրեցին զորանոցի ուղղությամբ, որի անկումն անխուսափելի էր դարձել։ Զորանոցի վերջին պաշտպանները՝ Մերկերյանի և Ապահի ղեկավարությամբ հրկիզեցին այն և գիշերով համար անհայտ նոր բացված երրորդ՝ գաղտնի ելքով հեռացան դեպի քաղաք։ Ամրացվեցին Զեյթուն տանող մյուս դիրքերը և արևելյան կողմից քաղաք մտնող Շորվայան (Պողպայիտ) քաղի երկու կամուրջները։

Հարավ-արևմուտքից հարձակվող ալի բեկը նույնպես անցավ վճռական գործողություններ, բայց էական հաջողություններ չհասավ։ Այդ օրերին Զեյթուն շտապող ֆոնուզցի աշխարհազորայինների մի ջոկատ Պետրոս Ճին-

---

47 «Զեյթունի պատմագիրք», էջ 600։

կոզյանի ղեկավարությամբ հարձակվելով Ալի բեկի բանակին պարեն բերող Թուրքական ջոկատի վրա, զրավեց ամբողջ պաշարը։ Ջոկատից կենդանի մնացած և բանակատեղի հասած զինվորները չափազանցված ներկայացնելով իրենց վրա թիկունքից հարձակված ապստամբների ուժը, ահաբեկեցին Ալի փաշային, որն զգուշացավ և իր զորամասերը հետ քաշեց քաղաքի սահմաններից[48]։

Դեկտեմբերյան կատաղի մարտերի ժամանակ հայ նշանառուներից մեկը խոցեց Ռեմզի փաշային։ Վիրավոր ու գաղազած փաշան, որ կորցրել էր իրեն, տենդի մեջ անխոհեմ մի հեռագիր հղեց Կ. Պոլիս՝ նոր համալրումներ ստանալու խնդրանքով։ Հեռագիրը տեղ հասնելուն պես, առանց այն էլ սուլթանի աչքում արդեն դանդաղոտ երևացող զորապետն անմիջապես պաշտոնանկ արվեց և զորքերի ղեկավարությունը հանձնվեց Թուրքական հինգերորդ բանակի հրամանատար էթհեմ փաշային։ Սրա առաջին գործը եղավ ցրել պարբերաբար դասալքող անկանոն միավորումները և միաժամանակ զեյթունցիների հետ համաձայնության գալու գործնական ուղիներ փնտրել։ Այն արտահայտվեց նախ Զեյթունը հիմնահատակ կործանելու մասին սարսափազդու հայտարարություններով, և որպես նախաքայլ՝ վերսկսվեց քաղաքի անընդմեջ հրետանակոծությունը։ Դրանով նա փորձում էր ահաբեկել պաշտպաններին և հանձնվելու մղել նրանց։ Սակայն այդ քայլերն ապարդյուն անցան։

Զեյթունի հարցը շտապ կարգավորելու խնդիրն անհետաձգելի էր դարձել Բ. Դուռն համար։ Ապստամբության ավելի քան չորս ամիսների ընթացքում հայերը կորցրել էին շուրջ երեքուկես հազար, իսկ Թուրքերը՝ մոտ քսան հազար զինվոր, որոնց մեծագույն մասը զոհվել էր ցրտից ու համաճարակից[49]։ Նախ սրվել էին հարաբերությունները Հունաստանի հետ. հունական խոշոր մի զորաբանակ արդեն կանգնած էր Թուրքիայի սահմանի մոտ։ Թուրքական հինգերորդ բանակը պետք է ձերբազատվեր, դեպի Հունաստան արշավելու համար։ Այս իրադրության մեջ Բ. Դուռը, անտեսելով Կ. Պոլսի եվրոպական դեսպանների ու հայոց պատրիարքարանի միջնորդությունը, իր համաձայնությունը հայտնեց, որպեսզի մեծ տերությունների Հալեպի հյուպատոսներն իրենց երկրների անունից միջնորդի դեր ստանձնեն Զեյթունի ապստամբների և Թուրքական կառավարության միջև։ Էթհեմ փաշան հրաման ստացավ դադարեցնել պատերազմական գործողությունները։

Դեկտեմբերի վերջերին զեյթունցիներին հանձնվեց Հալեպի հյուպատոսների հեռագիրը, որի առիթով փլուզվող օսմանյան բանակում արդեն ցնծություն էր տիրում։ Զեյթունցիները նույնպես այն ընդունեցին ոգևորությամբ, մանավանդ որ հյուպատոսների միջամտության փաստը նրանց կողմից դիտվեց որպես կառավարության դեմ տարած անվիճելի հաղթանակ։ Նույն օրն իսկ Հալեպ հղվեց պատասխան հեռագիր, որտեղ ապստամբներն իրենց համաձայնությունն էին հայտնում Բ. Դռան ու իրենց միջև հյուպատոսների միջնորդությունն ընդունելու մասին։ Սակայն Թուրքական իշխանությունների կամայականության հետևանքով, հյուպատոսներին հաջողվեց Զեյթուն ժամանել միայն 23 օր անց։

---

48 Տե՛ս *Ջեյթունի պատմագիրքը*, էջ 620—621։

49 Տե՛ս Մամիկոն Վարժապետյան, *Հուշիկք Զեյթունի*, Մարզվան, 1912, էջ 198։

Հունվարի վերջերին թուրքական բանակատեղի հասան ռուսական, անգլիական, ֆրանսիական ու իտալական հյուպատոսները՝ Յակիմանսկին, Պարնհայմը, Պարթելեմին և Հենրիկո Վիթթոն[50]։ Գերմանական ու ավստրիական հյուպատոսները չէին ժամանել և նրանց ներկայացնում էր իտալական հյուպատոսը։ Հ. Վիթթոյի նախագահությամբ սկսվեցին բանակցությունները։ Թուրքական կողմի ներկայացրած պայմանները, որոնք հանգում էին ապստամբության առաջնորդներին պատժելուն, իսկ մյուսներին ընդհանուր ներում խոստանալուն միայն, ընդունելի չէին և մերժվեցին զեյթունցիների կողմից։ Իրենց հայ ժողովրդի բարեկամ ու անշահախնդիր հաշտարարներ ձևացնող, բայց իրականում թուրքերի խնամակալությունն ստանձնած անգլիական ու ֆրանսիական հյուպատոսները, մանավանդ անգլիական հյուպատոս Պարնհայմը, համոզում, անգամ սպառնում էին անմիջապես հեռանալ, եթե հայ պատվիրակները չհրաժարվեին իրենց «անհեթեթ» առաջարկներից և չընդունեին թուրքերի թելադրած պայմանները։ Սակայն Զեյթունի պատվիրակները վրդովված մերժեցին այդ առաջարկները, հայտարարելով, որ իրենք սոսկ ներում ստանալու համար չեն ապստամբել, և որոշակի հայտնեցին ապստամբությունը շարունակելու իրենց վճռականության մասին։ Թուրքերն ու հյուպատոսները տեղի տվին և բանակցությունները շարունակվեցին։

Զեյթունի պատվիրակները պահանջեցին. հաշտություն և ընդհանուր ներում, առանց որևէ պահանջ-պայմանի, Զեյթունի համար քրիստոնյա կառավարիչ և բարենորոգումներ Թուրքիայի բոլոր հայկական կուսակալություններում։ Թուրքական կողմը ստիպված էր գնալ զիջումների։ Ինը օր տևած բանակցությունները վերջապես ավարտվեցին։ Հունվարի 30-ին Զեյթունի ապստամբների, թուրքական կառավարության և վեց տերությունների ներկայացուցիչների միջև ստորագրվեց մի համաձայնագիր, ըստ որի ընդհանուր ներում էր շնորհվում բոլոր ապստամբներին, իսկ հնչակյան դրսեկ գործիչներին արտոնվում էր պետական ծախքով հեռանալ արտասահման։ Աշխարհազորային ու փախստական գյուղացիներն անարգել ու անպատիժ պետք է վերադառնային իրենց բնակավայրերը։ Կառավարության միջոցներով պետք է վերականգնվեր զորանոցը։ Զեյթունում նշանակվելու էր քրիստոնյա կառավարիչ, ինչպես նաև ոստիկանական և այլ պաշտոններում նախապատվությունը տրվելու էր զեյթունցիներին։ Ապստամբները պետք է վերադարձնեին գրաված զենքերը։ Թուրքական բանակը պետք է հեռանար Զեյթունի գավառակից, այնտեղ թողնելով միայն մեկ զորամաս։ Չեղյալ էին հայտարարվում զեյթունցիներից նախկինից մնացած բոլոր պարտքերը։ Այս ամենի իրականացման հսկողությունը դրվում էր մեծ տերությունների հյուպատոսների վրա։ Այդ նպատակով Մարաշում պետք է ստեղծվեին նրանց հյուպատոսարանները[51]։ Նույն օրը Զեյթունի եկեղեցիների զանգերի երկարատև ղողանջով ազդարարվեց ապստամբության հաղթական ավարտը։ Սակայն ինչպես բարենորոգումների մյուս ծրագրերը, այնպես էլ այս համաձայնագիրը հետագայում մնաց թղթի վրա։ Թուրքական իշխանությունները, անգլիական հյուպատոսի մեղսակցությամբ, անգամ փորձեցին վիժեցնել հնչակյան գործիչների Եվրոպա անցնելու թույլ-

---

50 Հետագայում, 1897 թ. Հ. Վիթթոն Անատոլիո Լատինո ծածկանունով հրատարակեց „Cli Armenie Zeitun" ստվարածավալ աշխատությունը։

51 Աղասի. Զեյթուն և իր շրջականեր, էջ 348—356։ Նաև «Զեյթունի պատմագիրք», էջ 634։

տըվության մասին կետը։ Ուստի ծանր փորձություններից հետո միայն հնարավոր եղավ նրանց անվտանգ ժամանումը Մարաշ, ապա Ադանայի վրայով Մերսին, իսկ այնտեղից՝ Եվրոպա[52]։ Զեյթունը մեծ դժվարություններից հետո ստացավ քրիստոնյա կառավարիչ (ազգությամբ հույն՝ Յուվանակի)։

Զեյթունի 1895 թ. ապստամբությունը հայ ազատագրական շարժումների փառապսակն է, ժողովրդական-զանգվածային ըմբոստություններից համեմատաբար կազմակերպվածն ու ամենախոշորը։ Զեյթունի հերոսամարտիկները հասան ոչ միայն բարոյական, այլև գործնական հաղթանակի, ստիպելով օսմանյան դահճապետներին հաշտության սեղանի շուրջ նստել ռազմադաշտում հաղթանակած հայ ապստամբների հետ։ «Զեյթունցվոց այս խիզախ շարժման շնորհիվ,— հետագայում իրավացիորեն գրել է Պլոսահը՝ նշանավոր հասարակական գործիչ, դոկտ. Հ. Տաղավարյանը,— դեպի Փոքր Ասիա արևմտյան եղերքները առաջացող ջարդը կասեցվեցավ, և կարելի եղավ խնայել Կիլիկիո ամենաբարգավաճ քաղաքը՝ Ադանան»[53]։

Մեծ տերությունների միջամտությունն էլ կապված էր զեյթունցիների զենքի դիմելու հետ։ Դեպքերից մի քանի տարի անց Արշակ Չոպանյանն իրավացի խորհում էր, որ նման ժամանակաշրջանում «ամբողջ Հայաստանի ավերումը լուռ ու մունջ» դիտող Եվրոպան միջամտեց Զեյթունի գործերին. քանզի լեռնականները զենքով էին պաշտպանել ապրելու իրենց իրավունքը»[54]։ Զեյթունի ապստամբությունը հարստահարվող, բայց օտարի լուծը հեզությամբ չտանող, ըմբոստ ու ազատատենչ հայ գեղջուկի ինքնաբուխ բողոքն էր, ժողովրդական հզոր մի պոռթկում։

5. ՎԱՆԻ 1896 Թ. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1895 թ. վերջերին, 1896 թ. սկզբներին արդեն Վանի ու նրա շրջակա գավառների ոստիկանական ու զինվորական մասերում եռուզեռ էր տիրում։

Հենց այդ օրերին էլ, արտակարգ լիազորություններով, բարենորոգումների իրագործման անվան տակ, բայց իրականում հայկական կոտորածներ կազմակերպելու նպատակով, Վան ժամանեց սուլթանի հանձնակատար Սաադեդդին փաշան։ Նա անհապաղ չեզոքացրեց ինչպես ծայրահեղություններից խուսափող կուսակալ Նազիմ փաշային, այնպես էլ նրա օգնական Ստեփան Մելիքյանին, որը նոր էր միայն ստանձնել այդ պաշտոնը։

Դեռ Սաադեդդինի ժամանումից առաջ պարբերաբար Վան հասնող համատարած ջարդերի բոթը քաղաքի հայ ազգաբնակչությանը ստիպել էր լըրջորեն խորհել մոտալուտ արհավիրքը դիմագրավելու մասին։

Վասպուրականի, հատկապես Վանի ու նրա շրջակա հայության ինքնապաշտպանության կազմակերպման նպատակով դեռ 1895 թ. կեսերին Սալմաստից Վան էին անցել և քաղաքում ու մոտակա գյուղերում գործում էին հայդուկային մի քանի փոքրիկ ջոկատներ։ Նման ջոկատներ ստեղծվել էին նաև տեղերում։ Ավելի ուշ՝ 1895 թ. աշնանը, ծանր փորձությունների ենթարկվելով Սալմաստից Վան անցան Ներսեսի (Գ. Պեոզիկյան), Վազգենի (Տ. Տերո-

52 Տե՛ս Աղասի, Զեյթուն և իր շրջականեր, էջ 357—373։

53 «Զեյթունի պատմագիրք», էջ 775—776։

54 Տե՛ս «Անահիտ», 1899, № 10։

յան) և Նիկոլի (Ն. Տեր-Հակոբյան) ղեկավարած խմբերը, ինչպես նաև Մ. Ավետիսյանը, որն անմիջապես վերստանձնեց Վանի արմենական կազմակերպության ղեկավարությունը։

Պարկաստանից ժամանած զինված խմբերի հետ միասին Վանի ինքնապաշտպանությանը պատրաստվող հայ ազգաբնակչությունն ուներ ընդամենը հինգ հարյուրի չափ հին և նոր տիպի հրացան ու ատրճանակ։

Վանում և շրջակա գյուղերում ցրված պաշտպանական փոքրիկ ջոկատները, որոնցում մեծ մասամբ ընդգրկված էին 8—15 մարդ, ունեին ամեն խմբում մի քանի հրացան միայն։

1896 թ. գարնանը Վանում, համարյա ամեն օր, սպանության ու կողոպուտի բազմաթիվ դեպքեր էին տեղի ունենում։ Հունիսի 2-ի լույս 3-ի գիշերը թուրքական զինվորների և քուրդ մաքսանենգների միջև տեղի ունեցավ շինծու մի ընդհարում, որի մեջ ներքաշեցին նաև հայերին։ Իշխանությունների կողմից վաղօրոք դաված և նրբորեն կազմակերպած այս միջադեպը ազդանշան ծառայեց ընդհանուր ջարդերի։ Արդեն հունիսի 3—4-ի ընթացքում հրի ու սրի մատնվեցին ու կողոպտվեցին քաղաքի մի շարք, հատկապես խառը բնակչություն ունեցող, քաղամասեր։ Ապա հիմնական հարվածն ուղղվեց համարյա ամբողջապես հայաբնակ Այգեստան քաղամասի դեմ։ Շուտով Վան հասավ Բիթլիսի աղետի գուժը։ Վանում հայ բնակչության բնաջնջման նախապատրաստման գործում եռանդուն դեր ստանձնեց և քալանի ու կոտորածի առաջին հրամանը տվեց զորահրամանատար Հալիմ բեյը։ Սկզբում շփոթված ու խուճապահար հայ ազգաբնակչությունը զգալի կորուստներ տվեց։ Սակայն տագնապալի այդ օրերին Մ. Ավետիսյանի, Մարտիկի (Մարտիրոս Սարուխանյան) և Պետոյի (Ալեքսանդր Պետրոսյան) ղեկավարությամբ պայքարի միացյալ ճակատ ստեղծվեց հայկական քաղամասերը գրոհող թուրքական զորամասերի, համիդիեական գնդերի ու գավառներից քաղաք խուժած ռազմատենչ հրոսակների դեմ։

Այգեստան քաղամասում հրավիրված արտակարգ ժողովում որոշվեց միացյալ ուժերով դիմադրել մինչև արյան վերջին կաթիլը։ Որոշվեց նախապես ցուցակագրված հինգ հարյուր երիտասարդներին դիրքավորել թուրքական քաղամասերին սահմանակից երկհարկանի տների վերին հարկերում՝ ստեղծելով դիրք-պատնեշներ։

Ստեղծվեցին երեսունից ավելի նման դիրքեր։ Պաշտպանական միջոցառումներ ձեռնարկվեցին գրեթե բոլոր բնակարաններում, բակերում և պարտեզներում։ Դիրքերի միջև ստեղծված էր հաղորդակցություն։ Հրազեն ունեցողներից զատ, բոլորը զինվել էին ով ինչով կարող էր։ Ինքնապաշտպանության առաջին շարքերում համարձակ կռվում էին նաև կանայք։ Հայ մարտիկներից շատերը, հատկապես դիրքապահ ջոկատների հրամանատարները և մյուս ղեկավարները, կրում էին հատուկ համազգեստներ և կարմիր խաչերով մորքե գլխարկներ։ Մի շարք քաղամասերում թշնամու հնձելազորի առաջխաղացումը կասեցնելու և ընդհանրապես հարձակվող զորամասերի համար դժվարություններ ստեղծելու նպատակով կտրել ու ցած էին գցել Այգեստանի փողոցները երիզող հսկա ուռենիները, ինչպես նաև փակել էին առուների հունները և քաղամիջյան բոլոր ճանապարհները ողողել ջրով[55]։

55 Տե՛ս Հ. Աճառյան, Տաճկահայոց հարցի պատմությունը, Նոր Նախիջևան, 1915, էջ 40։

Մոլեգնած ավազակապետ Շաքիրը իր հորդաների գլուխ անցած, Նորդուզն ու Հայոց Ձորը հրի մատնելով, նույնպես ներխուժեց Վան[56], Բազմաթիվ հայ ընտանիքների հաջողվեց խույս տալ և պատսպարվել եկեղեցիներում, միաբնակարան հաստատություններում, օտարերկրյա հյուպատոսարաններում և իրենց հետ բարիդրացիական հարաբերությունների մեջ գտնվող թուրքերի բնակարաններում։

Տակավին Վանի դեպքերի նախօրյակին սկսեցին Վան լցվել շրջակա գյուղերի թալանված ու սրահարված բնակիչները, իսկ ինքնապաշտպանության օրերին՝ նաև հեռավոր գյուղերից։ Դրանք հիմնականում զառամյալ ծերեր էին, կանայք ու անպաշտպան երեխաներ, որոնք նոր հոգսերի ու դժվարություններ առջև կանգնեցրին սակավաթիվ հայ մարտիկներին։ Այդուհանդերձ քաղաքի հայ ազգաբնակչությունը, հատկապես երիտասարդությունը, զինված թե անզեն, մի քանի օր շարունակ, աններեր մնաց ինքնապաշտպանության դիրքերում։

Ինքնապաշտպանության առաջին փայլուն օրինակ տվողներից մեկը Արշակ Զիլյանն էր, որը կյոր Դար քաղում գտնվող մարտկոց զարձրած իր բնակարանից, նեռնես Ժամկոչյանի օգնությամբ, մի ամբողջ օր անվհատ գիմադրում էր ներխուժող թշնամուն, իսկ հետո միացավ Արարք քաղի դիրքերում կռվող իր ընկերներին[57]։

Ինքնապաշտպանության առաջին իսկ օրերին Միհրդատ Եսայանի հորինած «Կռվեք ազերք» երգի ղողանջները, հայրենաշունչ մյուս երգերի հետ, թևվածում էին դիրքից դիրք, ոգեշնչում բոլորին։ Դիմադրությունը շարունակվում էր։ Բայց ուժերը խիստ անհավասար էին։ Հայ մարտիկները, զուրկ զինամթերքի ու սննդի անհրաժեշտ պաշարից, որևէ տեղից օգնություն ստանալու ակնկալիք չունենալով, այնուամենայնիվ շարունակում էին հերոսաբար կռվել։

Անվստահությունը թուրքական իշխանությունների նկատմամբ ստիպեց հայկական ինքնապաշտպանության առաջնորդներին կտրականապես մերժել Վանի օտարերկրյա հյուպատոսների միջոցով Սաադեդդինի արված նախնական առաջարկությունը՝ զենքը վայր դնելու և դիմադրության կազմակերպման ղեկավարներին Պարսկաստան հեռանալու մասին։ Դրանից հետո երկուստեք հրացանաձգությունն առավել սաստկացավ։ Առանձին տեղամասերում հայ աշխարհազորայիններին հաջողվեց ետ շպրտել հակառակորդին, իսկ հունիսի 7-ին, հակատամարտերից մեկում անցնելով հակահարձակման, նրանք գրնդակների տարափի տակ մոտեցան թշնամու առաջապահ դիրքերին և խլեցին երկու հրանոթ։ Սակայն Վանի անգլիական հյուպատոս Ուլյամսի խորհրդով և Վանի թեմական առաջնորդ Սահակ վարդապետի հորդորանքով ինքնապաշտպանության ղեկավարները զենքը վայր դրին։

Անգլիական դիվանագիտությունը, հանձին Ուլյամսի, արտակարգ շահագրգռվածություն էր հանդես բերում կանխելու Ռուսաստանին սահմանակից Վասպուրականում բռնկվող նման միջադեպերը։ Եվ այդ հատկապես 90-ական թվականներին, երբ Թուրքիայում խախտվել էին Անգլիայի նախկին դիրքերը[58] ի հակակշիռ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Գերմանիայի։ Այդ էր պատճառը, որ 1896 թ. սկզբներին Թուրքիայի արևելյան նահանգների անգլիական բոլոր

56 Տե՛ս Հ. Թեմույան, Հուշամատյան Վան-Վասպուրականի, հ. 1, էջ 353—354։
57 Տե՛ս նույն տեղում, էջ 360։

հյուպատոսները ետ կանչվեցին և փոխարինվեցին նորերով։ Սրանք իրենց նստավայրերը ժամանեցին, ունենալով հայկական հուզումները կասեցնելու, դրանով իսկ Ռուսաստանի միջամտությունն ու աղդեցությունը Թուրքիայի արևելյան շրջաններում կանխելու կարուկ հրահանգ[58]։

Կրթուն վիճերից ու հապճեպ գումարված խորհրդակցություններից հետո, հստակ պատկերացնելով ստեղծված իրադրությունը, զինի, ռազմամթերքի և աննդի պաշարների սպառման վտանգը, ինքնապաշտպանության զեկավարները որոշեին ընդունել Սասադեդդինի պայմանները՝ դիմադրությունը գադարեցնելու և պաշտպանության կազմակերպիչներին Պարսկաստան հեռանալու մասին։ Թուրքական կողմը խոստանում էր չհետապնդել հեռացողներին և երաշխավորում նրանց ապահով նահանջը մինչև պարսից սահմանը։

Հունիսի 8-ի ընթացքում մեկուկես հազարանոց մի բազմություն, զինված ու անզեն, դուրս եկավ քաղաքից ու շարժվեց դեպի Վարագի լեռը։ Նենգամիտ-Սասադեդդինը անարգաբար խաբել էր հայ գործիչներին։ Մ. Ավետիսյանի զեկավարությամբ Բաշկալե-Աղբակ ուղղությամբ շարժվող խումբը և նրան միացած անզեն բնակչության մի զանգված, ավելի քան վեց-յոթ հարյուր մարդ, ս. Բարդուղիմեոսի վանքի մոտ շրջապատվեց Սասադեդդինի ուղարկած թուրքական զորաբանակի կողմից։ Տեղի ունեցած անհավասար մարտում նրանց մեծագույն մասը զոհվեց։ Երևում, երեսունհինգ մարդու միայն հաջողվեց խույս տալ հետապնդումից և անցնել Պարսկաստան։ Մարտիկի և Պետոյի զեկավարած շուրջ ութսուն հոգուց կազմված խումբը, մեկ շաբաթ Վարագի լեռներում պատսպարվելուց հետո, փորձեց նահանջել դեպի պարսից սահմանը, սակայն այս խումբը նույնպես ճանապարհին անակնկալի բերվեց և պաշարվեց. բոլորը նահատակվեցին։

Ինքնապաշտպանության մարտիկների քաղաքից հեռանալուց անմիջապես հետո թուրքական զինվորները, քրդական հրոսակները Հալիմ փաշայի առաջնորդությամբ խուժեցին հայկական թաղամասերը, թալանի և ավերի մատնեցին ամեն ինչ, սրի քաշեցին անզեն ու անմեղ մարդկանց։ Մոլեգնած բարբարոսները պատսպարաններից հանում և տեղն ու տեղը սրախողխող էին անում երեխաներին, կանանց ու ծերունիներին[59]։ Հայկական թաղի հարյուրի չափ ընտանիքներ, որոնք պատսպարվել էին քաղաքապետ Ղալիպ փաշայի տանը, դուրս բերվեցին իրենց թաքստոցներից ու մինչև վերջին մարդը խողխողվեցին։ Միայն չորեքշ զորահրամանատար էին բերին հաջողվեց կանխել Վանի Քաղաքամեջ կոչվող կենտրոնական մասում ջարդի մեծ չափերով ծավալումը[60]։ Հրո ճարակ դարձան Հայկավանքի, ս. Հակոբի, Հանկոյսների եկեղեցիները՝ իրենց կից շինություններով, վարժարաններով և Այգեստանի մեծագույն մասը։

Մեկ շաբաթ տևած հերոսամարտում զոհվից շուրջ հինգ հարյուր մարդ, որոնցից շատերն ընկան դիմադրության կազմակերպումից առաջ, իսկ մի զգալի մասը՝ զինված հրետաձգությունից հետո։

Առավել խոշոր էին Վասպուրականի զյուղական աղգաբնակչության կրած կորուստները։ Քանի շատերին հաջողվեց փրկվել ու պատսպարվել Վարագա

---

58 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղաքական», 1903, գ. 1013, թ. 503։

59 Տե՛ս «Արաքս», գիրք Բ, էջ 105։

60 Տե՛ս Հ. Նոեմյան, Հուշամատյան Վան-Վասպուրականի, հ. 1, էջ 368։

լեռներում, Նարեկի վանքում, Աղթամար, Լիմ, Կտուց կղզիներում և այլուր, բայց շուրջ քսան հազար անմեղ զոհ խլեց հունիսյան այդ աղետը Վանի շրջակա գավառներից։ Ահռելի ու սահմռկեցուցիչ էր մանավանդ պատմական Քաջբերունիքի՝ Արճեշի գանգվածային կոտորածը, որը ղեկավարում էին համիդիեական գնդերի հրոսակապետերը և որոնց անմիջական հրամաններով մի քանի գյուղերում հայ բնակիչներին կենդանի-կենդանի թաղեցին ցորենի հսկա հորերում։ Արճեշի միայն վեց գյուղերի 580 ընտանիքներից կոտորածներից հետո մնացել էին 39-ը[61]։ Ահավոր ջարդեր կազմակերպվեցին նաև Հայոց Ձորում, Գավաշում, Կարճկանում և այլուր։ Վայրենաբար կողոպտվեցին ու հրկիզվեցին Վասպուրականի համարյա բոլոր նշանավոր վանքերը։ Պատմական բազմաթիվ հուշարձանների հետ միասին ոչնչացվեցին մեծ թվով թանկարժեք ձեռագրեր։

Գավառներում, սակայն, եղան դեպքեր, երբ թուրք կամ քուրդ ավագանու առանձին ներկայացուցիչներ իրենց հովանու տակ առան և պատսպարեցին հայ ազգաբնակչությանը։ Նշանակալի է հատկապես Մոկս գավառը, որտեղ Մուրթուլլա բեյը թույլ չտվեց կոտորած կազմակերպել «իրեն պատկանող» տիրույթում և Մոկսը համարյա զերծ մնաց ջարդերից[62]։ Նույն ձևով փրկվեց նաև Բերկրին։ Ինքնապաշտպանության և զինված դիմադրության շնորհիվ, մի քանի շրջանների, հատկապես Շատախի, գյուղերը փրկվեցին կոտորածից։

Հունիսի 10-ին, ահավոր ջարդերից հետո, Սաադեդդինի թելադրանքով, Վանի անգլիական հյուպատոս Ուլյամսը համոզեց թեմական առաջնորդ Սահակ Բագրևանդցի վարդապետին՝ հավաքել մի խումբ հայ մեծատունների, որոնք և Վանի հայության անունից շնորհակալական մի հեռագիր հղեցին «ամենակարող ու ողորմած» սուլթանին. Սակայն նա անզոր եղավ կանխելու ոչ միայն այդ դեպքերից հետո սկսված ձերբակալություններն ու աքսորը, այլև փրկելու անգամ իր սեփական անձը։ Նա արտաքսվեց Կ. Պոլիս՝ «ապաշխարելու»։

Նահանգի հայ բնակիչներից շատերն այդ մահտարաժամի օրերին բռնի կրոնափոխվում էին[63]։ Սկսվեց նաև թալանված ու վշտաբեկ բազմությունների խելակորույս արտագաղթը դեպի հարևան երկրները՝ Ռուսաստան, Պարսկաստան և այլուր։

1896 թ. վերջերին Վանում վերստին իրարանցում սկսվեց։ Շատերը խուճապահար փորձեցին ապավինել օտարերկրյա հյուպատոսություններին։ Բայց շուտով արյունահեղությունը կանխվեց։ Վան հասած հայկական բարենորոգումների իրագործման բարձրագույն կոմիսար Շաքիր փաշան հեռագրեց Կ. Պոլիս՝ իրեն վերագրելով խաղաղության հաստատումը։ Այս վերջին միջադեպը Վասպուրականի տարեգրության մեջ մտավ «փոքր դեպք» անունով, ի տարբերություն հունիսյան իրադարձությունների, որ կոչվեց «Վանի մեծ դեպք»։

6. ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԴԵՐՆ ՈՒ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ

«Մայիսյան բարենորոգումների» շուրջը ծավալված աղմուկից հետո, թուրքական սուլթանը համոզվեց, որ եվրոպական տերությունները մտադիր

---

61 *Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. Կոստանդնուպոլսի դեսպանություն, 1898, գ. 1584։*

62 *Տե՛ս* «Геноцид армян...», стр. 105—106.

63 *Տե՛ս նույն տեղում։*

չին հետամուտ լինելու իրենց պահանջների իրականացմանը։ Նա որոշեց հայերի բողոքի արդար ձայները խլացնել նրանց արյան մեջ, միջազգային հասարակայնությանը կանգնեցնել հայերին կոտորելու փաստի առաջ։ 1895 թ. աշնանը Արևմտյան Հայաստանում սկսվեցին մինչ այդ Թուրքիայի պատմության մեջ իրենց նախորդը չունեցող հայերի զանգվածային կոտորածները։

Բարենորոգումներ անցկացնելու մասին լուրն ամենից շուտ ստացվեց Տրապիզոնում։ Այդտեղ էլ 1895 թ. հոկտեմբերի 5-ին սկսվեց սարսափելի կոտորածը։ Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան Կամբոնը հոկտեմբերի 15-ի հաղորդագրության մեջ հայտնում էր. «Ամահմեդականներն առանց որևէ ազդանշանի միասին և միաժամանակ հարձակվեցին հայերի վրա»[64]։ Մաքսատան մոտ հավաքված մեծ թվով հայ մշակներ դարձան առաջին զոհերը։ Նավահանգստի բազմաթիվ հայ գործավորներ նույն ճակատագրին արժանացան։ Փողոցներում պատահած ամեն մի հայի տեղն ու տեղն սպանում էին, իսկ խանութ-



Հայերի ջարդը Տրապիզոնում 1895 թ. Գործ Հ. Այվազովսկու

պաններին դուրս էին հանում և ջարդարարներին հանձնում։ Հետո սկսվում էր խանութների կողոպուտը։ Այդ բոլորը կատարվում էր զինվորների ու պետական պաշտոնյաների աջակցությամբ։ Շրջակա հայկական գյուղերն ավերվում են, դպրոցները, եկեղեցիներն ու բոլոր արքավայրերը ոչնչացվում, հայերի մի մասին բռնությամբ կրոնափոխ են անում։ Հայերին հասցված վնասը միայն Տրապիզոնում անցնում էր հինգ միլիոն ֆրանկից։ Նույն բախտին է արժանանում նաև Սամսոն քաղաքի հայ բնակչությունը։

Սեպտեմբերի 30-ին ահավոր ջարդ է սկսվում Բաբերդում։ Շատ կանայք մանուկներին գրկած իրենց նետում են քաղաքի մոտով հոսող Ճորոխ գետը։ 1895 թ. հոկտեմբերի 7-ին կոտորած է տեղի ունենում Դերջանի գավառում։ Այստեղ միայն նրանք են կենդանի մնում, ովքեր համաձայնվում են կրոնափոխ լինել։ Երզնկայի կոտորածի ժամանակ, հոկտեմբերի 9-ին, քաղաքը կողոպտվում է, նշանավոր վանքերը ավերվում, իսկ 70 այրի բնակող հայ գոր-

64 «Геноцид армян...», стр. 116.

ծիլներ բանտ են նետվում, որոնց մեծ մասը տանջամահ է արվում։ Նրանց հանցանքն այն էր, որ չէին համաձայնվել սուլթանին ուղղված շնորհակալական ուղերձն ստորագրել և երախտագիտություն հայտնել իրենց եղբայրներին կոտորելու համար[65]։ Կամախ գյուղաքաղաքում ևս կոտորածը ամենավայրենի տեսք է ընդունում, իսկ Քղիի գավառակում հոկտեմբերի 10-ին սկսված ջարդերի զոհ են դառնում հազարից ավելի հայեր, ավերում են բազմաթիվ գյուղեր և մոտ 25 վանքեր ու եկեղեցիներ։ Յաթաղանի զոհ դարձան նաև Բիթլիսի նահանգի հայ բնակիչները։ Ավազակախմբերը ոչնչացրին 102 հայկական գյուղ[66]։ Բնակիչների մի մասը միայն կարողացավ փախչել լեռները, բայց դաժան չփրկվեց սովից ու ցրտից և մեծ զրկանքների ենթարկվելով, ոչնչացավ։

Սարսափելի չափերի է հասնում կոտորածը Եդեսիայում (Ուրֆա)։ Հոկտեմբերի 16-ին թուրքական կանոնավոր զորքը և ամբոխը հարձակվում են հայերի խանութների վրա, կողոպտում, ավերում ու հրկիզում։ Կառավարությունը մոլեռանդ խուժանին զենք է բաժանում և կոչ անում՝ կոտորել հայերին և զավթել նրանց ունեցվածքը։ Սակայն հայերը, հիմնականում ապրելով մեկ թաղամասում, կարողանում են դիմադրություն կազմակերպել և թշնամուն ետ մղել։ Հաջորդ օրը կառավարության նոր զինված ուժերը, ցեղապետերն ու ավազակապետերը կատաղի հարձակում են սկսում։ Այս անգամ ևս հայերի հերոսական պաշտպանությունն անսասան է մնում։ Կառավարությունը հրաման է տալիս պաշարել հայկական թաղամասը և թնդանոթի հարվածներով ավերել այն։ Դա էլ չի օգնում։ Հայերն ուժեղացնում են պաշտպանական դիրքերը։ Պաշարումը շարունակվում է ևս հիսուն օր։ Համոզվելով, որ ոչ մի կերպ հնարավոր չի գրավել հայկական թաղամասը, կառավարությունը այս անգամ դիմում է նենգ քայլի, պաշարումը ձևականորեն վերացվում է և կարգադրություն է արվում խաղաղ աշխատանքի անցնել։

Դեկտեմբերի 16-ին քաղաքի հայերը իմանալով, որ նորից հարձակում է պատրաստվում, հատուկ պատգամավորություն են ուղարկում գավառապետի մոտ, խնդրելով, որ իրենց տրված ապահովության խոստումը կատարվի և հարձակումը կանխվի։ Գավառապետը հուսադրում է նրանց և իսկույն երեք հազար պահեստի զինվոր ու 1500 համիդիեական ուղարկում՝ իբր հայկական թաղամասը պաշտպանելու։ Կես ժամ չանցած սկսվում է անզեն հայերի կոտորածը։ Ավերածությունը, կողոպուտն ու կոտորածը ահավոր չափերի են հասնում։ Մեծ թվով կանայք և երեխաներ փակվում են եկեղեցում։ Սակայն դահիճները ջարդում են եկեղեցու դուռը, անպաշտպանների վրա նավթ լցնում և այրում։ Այդ ահավոր ջարդերին զոհ դարձավ յոթ հազարից ավելի հայ։ Ողջ մնացածներից էլ մեռնում էին օրական 10—15 հոգի՝ «իրենց վերքերից կամ սարսափելի տեսարանների սոսկումից»։ Եդեսիան ավերակների մի կույտ էր դարձել[67]։

1895 թ. հոկտեմբերի 16-ին սկսվում է կոտորածը Շապին Կարահիսարում։ Չնայած հերոսական ինքնապաշտպանությանը, համարյա ամբողջ հայ բնակչությունը սրի է քաշվում։ Հայերի ունեցվածքը կողոպտվում է, տները

---

65 Տե՛ս «Արարատ», գիրք Բ, 1894—1895, Ս. Պետերբուրգ, 1897, էջ 132։

66 Տե՛ս «Геноцид армян...», стр. 89—90.

67 Տե՛ս «Արարատ», գիրք Բ, էջ 135—136։

ավերվում։ Քաղաքում զոհվածների թիվը 2 հազարից ավելի էր։ Ավերվում են շրջակա 30 հայկական գյուղերը, սպանվում ավելի քան 3 հազար մարդ։

Կարինում, հոկտեմբերի 18-ին, զոհվում են 400 հոգի, ավերվում ու կողոպտվում է 1500 խանութ։ Չեն փրկվում նույնիսկ կառավարական ատյաններում որոշ պաշտոններ ունեցող հայերը։ Կարնո դաշտում նույնպես սարսափելի վիճակ էր տիրում։ Հայկական գյուղերից 40-ը կողոպտվում ու ավերվում է, իսկ 3-ը բոլոր մահմեդականությունն են ընդունում։ Հասան Կալեի վանքը կողոպտելուց հետո, բարբարոսները Տիմոթեոս վարդապետին իր 6 միաբանների հետ մորթում, ապա դիակները այրում են։ Հոկտեմբերի 21-ին ամբողջովին ավերվում են հայերին պատկանող տները և մոտ 20 եկեղեցիներ։ Սպանվում են ավելի քան 1500 հայեր։

Մեծ ավերածության է ենթարկվում Խարբերդը։ Հոկտեմբերի 26-ի կոտորածին զոհ է գնում ամբողջ քաղաքը՝ բացի մեկ թաղից։ Հայկական եկեղեցիներն ու դպրոցները ամբողջովին ավերվում են։ Մինչև անգամ չի փրկվում բողոքականների նշանավոր կոլեջը։ Խարբերդի մոտ 55 գյուղերից ոչ մեկի եկեղեցին կամ ուսումնարանն ազատ չէր մնացել ավերիչների հարձակներից[68]։ Այստեղ նախօրոք զինվորական պահեստներից ավազակախմբերին զենք էր բաժանվել։ Ստեղծվել էին նաև հատուկ ոստիկանական ջոկատներ, որոնց խնդիրն էր իբր ապահովել հայերի պաշտպանությունը։ Հենց այդ ջոկատներն էլ գիշերը գյուղացու հագուստով ուղարկվում էին հայերին կողոպտելու և կոտորելու։

Հոկտեմբերի 10-ին սկսվեցին Զարսանջակի շրջանի կոտորածները։ Գյուղացիները հերոսական մարտերով ետ մղեցին ջարդարարներին։ Սակայն նրանք, դժբախտաբար, հավատացին կառավարության ներկայացուցիչներին և հնարավորություն տվեցին օգնելու պատրվակով ժամանած ոստիկաններին գյուղ մտնելու։ Մուտք գործելով հայերի տները, նրանք անմիջապես սկսեցին կոտորածը, կողոպտան ու բնակարանների հրկիզումը։

Նույն օրը երեկոյան սկսվեց հարձակումը Բերդակ, Կուզուօվու, Հարսիկ, Տշորկուխ, Կորնե, Յարուկ, Բեզյուշեն, Կուլկուխ և այլ գյուղերի վրա։ Ամենուր ծավալվեց սարսափելի ջարդը, կողոպուտը, ավերումն ու հրկիզումը։ Այդ ահավոր կոտորածը գլխավորում էր վայրագ ցեղապետերից մեկը՝ Սուլեյման բեյը։ Մի օրում ավելի քան 300 հայ սպանվեց։ Ավերվեցին և հրկիզվեցին նաև Զիլմե և Ուլյու-Օվա գյուղերը։ Ջարդարարներից պաշտպանվելու համար գյուղացիները հավաքվել էին եկեղեցում, բայց այնտեղ էլ նրանք փրկություն չգտան։ Բարբարոսները շրջապատեցին եկեղեցին ու հրկիզեցին։ Մոլքի բնակիչները թողել էին գյուղը և հեռացել։ Բայց մի քանի օր հետո, հավատալով պետական պաշտոնյաներին, վերադարձան գյուղ և արժանացան նույն ճակատագրին։ Կոկուու գյուղի 2000 բնակիչներ կատաղի դիմադրություն ցույց տվեցին[69]։ Սակայն ի վերջո նրանք ստիպված էին թողնել հայրենի վայրերը և հեռանալ։ Գյուղը ամբողջովին ավերվեց։ Բալուում զոհված հայերի թիվը 1200-ից ավելի էր, իսկ 250 կանայք առևանգվել էին։ Արաբկիրում զոհվեցին 2800, Խորթումում՝ 500 հայեր[70]։

---

68 Նույն տեղում, էջ 139։

69 Տե՛ս «Геноцид армян...», стр. 83—84.

70 Տե՛ս «Վերաբեր», գիրք Բ, էջ 140։

Ջարդերը Մալաթիայում սկսվեցին 1895 թ. հոկտեմբերի 23-ին, որտեղ նույնպես նախօրոք զենք էր բաժանվել մոլեռանդ ամբոխին[71]։ Ջարդի հենց նախօրյակին, զգալով վերահաս վտանգը, հայերը փակել էին խանութները և աշխատանքը դադարեցրել։ Քաղաքի կառավարիչ Ալի Ռզա փաշան իր ներկայացուցիչներին ուղարկում է բոլոր թաղամասերը, առաջարկելով սկսել աշխատանքը, վստահեցնելով, որ ոչ մի վտանգ չկա։ Հավատալով, հայերը բացում են խանութները։ Կառավարիչը միաժամանակ խորհրդակցության է հրավիրում թաղաքի աչքի ընկնող մարդկանց՝ թվով 40 հոգի։ Դրիգոր աղա Ասլանյանը, կռահելով կազմակերպվող դավադրությունը, չի ներկայանում։ Նա շատերին է հորդորում չգնալ կառավարչատուն և խանութներն էլ չբանալ։ Կառավարչատունը հավաքված հայերին առաջարկում են կրոնափոխ լինել։ Նրանք մերժում են և տեղնուտեղը նահատակվում[72]։ Կառավարչի հրահանգով թուրք զինվորներից մեկը շուկայում սպանում է մի հայ վաճառականի, որից հետո սկսվում է ընդհանուր ջարդը։

Քահանա Եղիշե Խաչատրյանն անմիջապես կազմակերպում է Մալաթիայի շուկային մոտ գտնվող հայկական թաղամասերի պաշտպանությունը։ Հրդեհելով այդ թաղամասերը, թշնամին ստիպում է պաշտպաններին ետ նահանջել։ Կռիվներին հերոսաբար մասնակցում էին Գրիգոր Ասլանյանը, Գրիգոր Անանյանը, Գրիգոր Մարտիկյանը և ուրիշներ[73]։ Քաղաքի Չաթալբաշեղ կոչվող մասից սկսվում է թուրքական խուժանի հարձակումը, որը վտանգի տակ է դնում խարազայի թաղամասը։ Պետրոս Բոնապարտյանի կոչով բոլորը ոտքի են ելնում։ Այդ թաղամասում գտնվող ոստիկանական զորամասը փախուստի է դիմում, թողնելով բավականաչափ զենք ու փամփուշտ։ Սկսվում են պաշտպանական կատաղի մարտերը։ Թուրքերն ստիպված զինադադար են հայտարարում, որից հետո հանկարծակի հարձակվում են եկեղեցու վրա։ Այստեղ Եղիշե Խաչատրյանի և Թորոս Բեքմեզյանի ղեկավարած զրոհից թշնամին մեծ կորուստներ տալով ետ է քաշվում։ Այդ կռիվներում հատկապես աչքի է ընկնում Գևորգ Պողոսյանը։ Բազմաթիվ կանայք օգնում են կռվողներին, ջուր ու սնունդ մատակարարում նրանց[74]։

Այդ ընդհարումների ժամանակ գտնվեցին նաև բարեկամությանը հավատարիմ մահմեդականներ, որոնք անձնվիրաբար պաշտպանեցին հայերին։ Այդպիսիներից էին չարմուղեցի Մատոն, որն իր տան մեջ պատսպարեց և փրկեց 35 հայերի կյանքը, Հաջի Արդուլլան, Հաջի Հուսեյինը և ուրիշներ, որոնց շնորհիվ շատ հայեր փրկվեցին[75]։ Սակայն ջարդի հետևանքով Մալաթիայում սպանվեց 3 հազարից ավելի մարդ, և այրվեց մոտ հազար տուն։

1895 թ. նոյեմբերի 3-ին ջարդեր սկսվեցին Մալաթվանում։ Երբ այդ օրը հայերը բացեցին խանութները և սկսեցին առևտուրը, զինված ամբոխը, կանխավ նախապատրաստված զորամասերն ու մոտակա գյուղերից եկած ավազակախմբերը շարժվեցին դեպի շուկա և կողոպտեցին ու ոչնչացրին հայերի բոլոր խանութները։ Այնուհետև թուրքերը հարձակվեցին հայկական թաղամա-

71 Տե՛ս «Պատմություն Մալաթիոյ հայոց», էջ 885։
72 Տե՛ս նույն տեղում, էջ 886։
73 Տե՛ս նույն տեղում, էջ 887։
74 Տե՛ս նույն տեղում, էջ 890։
75 Տե՛ս նույն տեղում, էջ 892։

սերի վրա, բայց բնակչությունը վճռական դիմադրությամբ ետ մղեց նրանց։ Այդ օրը սպանվեց մոտ 100 և վիրավորվեց 500 մարդ։ Դաժանությունը հասավ այնտեղ, որ արգելվեց վիրավորներին օգնել և դեղորայք հասցնել։ Կողոպտվեցին և ավերվեցին 1500 խանութ, բազմաթիվ հայկական տներ։ Նյութական կորուստը մեծ չափերի հասավ[76]։

Այդ սարսափելի դեպքերից հետո դրությունը Մարզվանում շարունակում էր լարված մնալ։ Հայերը դեռևս պաշարված վիճակում էին։ Շատերը մահանում էին քաղցից և չրի պակասությունից։ Հայկական քաղամասերին ջուր չէր մատակարարվում։ «Կարգը վերահաստատելու» համար քաղաք է ժամանում Աբդուլլա փաշան։ Հայերի ներկայացուցիչները խնդրում են փրկել իրենց։ Փաշան լկտիաբար պատասխանում է. «Հայերին զսպելու նպատակով կառավարությունը մոբիլիզացրեց 150 հազար զինվոր ու կարգն ու հանգստությունը ապահովելու համար մտադիր է հայերին ամբողջովին ոչնչացնել»[77]։ Թուրք ջարդարարները ճգնում էին իրենց հանցագործությունն արդարացնել նրանով, թե իբր հայերը ցանկացել են ապստամբություն բարձրացնել, իսկ իրենք ճնշել են ապստամբներին։

Սղերդի շրջանի գյուղերում նրանք հայ բնակչության մի մասին կոտորեցին, իսկ կենդանի մնացածներին ստիպեցին մահմեդականություն ընդունել։ Եկեղեցիները ոչնչացվեցին կամ մզկիթների վերածվեցին։ Բասենի մոտ գտնվող սուրբ Աստվածածին վանքն ավերվեց, իսկ վանահայր Կարապետը բռնի կրոնափոխ արվեց։ Կեղտուտում սուրբ Կիրակոս վանքը նույնպես ավերվեց, իսկ վանահայրը՝ Պողոս Խաչատրյանը սպանվեց։ Ավերվեց նաև Սարիի սուրբ Աստվածածին վանքը։ Խիզանի շրջանի 40 հայկական գյուղերում սպանվեցին 400 մարդ։ Մամրտանքի շրջանի 20 հայկական գյուղերում սպանված հայերի թիվը հասավ 160-ի, կոտորածից ազատվածներն ստիպված հավատափոխ եղան։ Ավերվեցին Շատախի շրջանի հայկական բոլոր գյուղերը։ Շաքիրի բանդան ավերել էր Նորդուզի և Հայոց Ձորի հայկական գյուղերը։ Մեծ զոհեր տվեց սուրբ Վարդան գյուղը։ Կենդանի մնացածներին ոչինչ չէր մնում անել, քան դառնալ անօթևան մուրացկաններ։ Նույն վիճակին արժանացան նաև Արտամետը, Սրվստան և Կենրանց գյուղերը[78]։

Մուշում հարձակումը հայերի վրա սկսվեց շուկայից։ Սակայն բնակչությունն անմիջապես դիմադրություն կազմակերպեց։ Անգլիական հյուպատոս Հեմբսոնի միջամտությունը ևս նպաստեց հարձակումը կանխելուն, սակայն շրջանի գյուղերն ավերվեցին և բնակչությունը կոտորվեց։ Գյումուշխանեի շրջակայքում ավերվեց 11 գյուղ։ Զիլուսում կոտորածն սկսվեց նոյեմբերի 28-ին, որտեղ զոհվեցին 200 հայեր, Ամասիայում՝ 100, Հալեպում՝ 1000[79] և այլն։

Դիարբեքիրում ջարդը սկսվեց 1895 թ. նոյեմբերի 1-ի առավոտյան։ Սարսափելի կոտորածից հետո շուկայում կողոպտվեցին հայերի խանութները, ապա հրկիզվեցին։ Մի շարք հայկական թաղամասերում զենք ունեցողներն սկսեցին պաշտպանվել։ Նահանգապետը, զորքերի հրամանատարը, ոստիկանապետը ոչ միայն չէին փորձում արգելել ջարդը, այլև ոգևորում էին ու զբա-

76 Տե՛ս «Геноцид армян...», стр. 79—80.

77 Նույն տեղում, էջ 81։

78 Տե՛ս «Արարատ», 1896, մայիս, էջ 90։

79 Տե՛ս նույն տեղում, էջ 95։

խավորում։ «Ոստիկանությունը և զորքը միշամտում էին միայն նրա համար, որպեսզի հարվածեին զոհերին»[80]։

Դիարբեքիրի ահավոր կոտորածին զոհ դարձան հայերը, հույները, ասորիները և ուրիշ քրիստոնյաներ։ Հայերից սպանվեց ավելի քան 1000 մարդ, մոտ 300-ը վիրավորվեցին։ Կողոպտվեց և ավերվեց 1500 տուն, հրկիզվեց 2000 խանութ։ Դրանից բացի Դիարբեքիրի նահանգում ավերվեց 119 հայկական գյուղ՝ 6000 ընտանիքով։ Սպանված և անհայտացած բնակիչների թիվը հասնում էր 30 հազարի։

Կոտորածը մեծ չափերի հասավ նաև Սերաստիայում, որտեղ նոյեմբերի 12-ին սպանվեց մոտ 1000 մարդ[81]։

Երզնկայում ահաբեկված բնակչությունը դիմել էր տեղական իշխանության պաշտպանությանը, վերջինս պատվիրել էր հանգիստ լինել։ Սակայն քիչ անց տեղական իշխանության հրամանով ջարդ էր սկսվել։ Տրապիզոնի նահանգապետ Կադրի բեյը հավաստիացրել էր, որ հայերը միանգամայն ապահով են, որ «իր դիակի վրայով միայն կհարձակվեն հայերի վրա»։ Այդ նույն ժամանակ «Տեղական իշխանությունը թուրքերին խմբերի էր բաժանում, նրանց զենք ու փամփուշտ տալիս և նշանակում հարձակվելու օրը...»[82]։ Կոտորածը Կադրի բեյի պլանով էր սկսվել։ Նրա ցուցումով առաջին հերթին պետք է ոչնչացվեին աչքի ընկնող և ազդեցիկ հայերը։

Հայերին խաբելու համար տեղական իշխանությունները որոշ վայրերում ձևականորեն ձերբակալում էին ջարդարարներին, ապա նորից ազատում։ Արաբկիրում հրահանգված էր, որ թուրքերը ջարդը սկսեն իրենց հայ ծանոթի և ընկերոջ սպանությամբ[83]։ Թուրք ջարդարարներն ամեն կերպ հրահրում էին նաև ազգային ու կրոնական ընդհարումներ։ Իրենց արարքներն արդարացնելու, հայերին մեղադրելու նպատակով նրանք հորինում էին, որ իբր հայերը նախապատրաստվում են ապստամբության, ցանկանում են պետական հեղաշրջում կատարել և ոչնչացնել թուրք ու թուրդ բնակչությանը։ Սուտ լուրեր էին տարածում, մինչև անգամ հեռագիր ուղարկում Կ. Պոլիս, թե հայերը ոչնչացրել են մզկիթները, սպանել հազարավոր մահմեդականների։ Տեղական և կենտրոնական իշխանությունները բնակչությանը հրահանգներ էին տալիս շտապել հայերին ոչնչացնելու, քանի դեռ նրանք չէին սկսել մզկիթներն ավերել։ Մուշում մի պաշտոնական անձ լկտիաբար հայտարարել է. «ջարդարարները «գործում էին հիմարաբար. մենք նրանց հրաման էինք տվել ոչնչացնել հայերին, իսկ նրանք ավելի շուտ կողոպտում էին, քան թե սպանում»[84]։

Ուրֆայում Հասան փաշան դիմելով ամբոխին հայտարարեց. «Ոտքի կենք... ձեզ տրված է 48 ժամ, կոտորեցեք բոլոր գյավուրներին և նրանց հարստությունը ձեզ կպատկանի»[85]։ Հասան-Մանզարում ջարդարարները հայերի վրա հարձակվելով, գոչում էին. «Մահմեդականություն ընդունեք, եթե ոչ բոլորիդ էլ սրի կքաշենք», իսկ Այնթափում գոռում էին. «Կտեսնենք, որ ոչ մի գյավուրի կենդանի չենք թողնի»։

---

80 Նույն տեղում։
81 Տե՛ս նույն տեղում, էջ 123։
82 Նույն տեղում, էջ 124։
83 Տե՛ս նույն տեղում, էջ 125։
84 Նույն տեղում, էջ 126։
85 Նույն տեղում, էջ 127։

Վանից դրված մի նամակում նշված էր, որ միայն 8 շրջաններում ավերված եկեղեցիների ու վանքերի թիվը հասել է 120-ի։ Իսկ Մարաշում ավերվել և սրբապղծվել էր նույնիսկ հայկական գերեզմանատունը։ Բիթլիսում, Բաբերդում, Սղերդում և բազմաթիվ այլ վայրերում եկեղեցիները մզկիթների էին վերածվել։ Կենդանի մնացած հայերի մի մասը, ուրիշ ելք չունենալով, մահմեդականություն էր ընդունում։ Արաբկիրի բնակչությունը, որ հրաժարվեց մահմեդականություն ընդունելուց, հաջորդ օրը ենթարկվեց սարսափելի ջարդի[86]։

Կոտորածից հետո անօթևան և անօգնական բնակչությունն իր գոյությունը պահպանելու համար դիմում էր վերջին միջոցին՝ մուրացկանության։ Տրապիզոնից ուղարկված մի նամակում գրված է. «Մենք չունենք ոչ տուն, ոչ տեղաշոր, ոչ հաց»։ Աղքամարի կաթողիկոս Հաչատուրը, նկարագրելով հայերի աղբալի վիճակը, գրում էր. «Մեծ քանակությամբ երեխաներ որբացել են, ամենուր կարելի է հանդիպել իրենց տղաներին ու աղջիկներին որոնող ծնողներին»[87]։

Այս չարիքներից հետո վրա հասած 1895—1896 թթ. խիստ ցրտաշունչ ձմեռը, սովն ու համաճարակը եկան ջարդի պակասը լրացնելու։

Հայկական ջարդերի ահավոր ալիքը դավառներից անցավ Կոստանդնուպոլիս։ Կոտորած այստեղ տեղի ունեցավ 1896 թ. օգոստոսին։ Ցանկանալով մեծ տերությունների ուշադրությունը հրավիրել Հայկական հարցի վրա, 1896 թ. օգոստոսի 14-ին Կ. Պոլսում դաշնակցական մի խումբ գործիչներ, իրենց հետ ռումբեր վերցնելով, մտնում են օսմանյան բանկը, այն գրավում ու 12 ժամ պահում իրենց ձեռքում։ Միաժամանակ քաղաքի տարբեր մասերում դաշնակցականները ելույթներ են ունենում և տեղեր կռվակներում։ Քաղաքում մեծ իրարանցում է սկսվում։ Կառավարական զորքը շրջապատում է բանկը։ Սակայն այնտեղ փակվածները ռումբեր են նետում պատուհաններից և սպառնում հօդս ցնդեցնել բանկը[88]։ Կառավարությունը հարկադրված զորքը ետ է քաշում և դիմում մեծ տերությունների դիվանագիտական միջնորդությանը։ Դաշնակցության Կ. Պոլսի կոմիտեն մի հայտագիր է ներկայացնում վեց տերությունների դեսպաններին և պահանջում բարենորոգումների իրագործում Արևմտյան Հայաստանում։ Թուրքական դեսպանության ներկայացուցիչ Մաքսիմովին հաջողվում է համոզել բանկը դրավողներին թողնել այն և տեղափոխվել մոտակա նավահանգստում սպասող շոգենավը, խոստանալով, որ մեծ տերությունների դեսպանները կքավարարեն նրանց պահանջները և թույլ կտան անցնել Եվրոպա։ Հաջորդ օրը առավոտյան նրանց մոտ են գալիս ֆրանսիական և ռուսական դեսպանների ներկայացուցիչները և խոթված «Հերոսներին» հայտառարում, որ նրանց «ծրագիրը հիմարության և անհնազանդության արդյունք» է։ Ֆրանսիական նավը նրանց հետացնում է Թուրքիայի ափերից[89]։

Այդ դեպքից հետո կառավարության կողմից նախապատրաստված զինված ամբոխը՝ երեք օր և երեք գիշեր շարունակ անխնա կոտորեց անմեղ և անպաշտպան հայերին[90]։ Կոտորածին զոհ գնաց 10 հազար մարդ։

Ֆրանսիական «Միդոն» նավի անձնակազմի անդամներից մեկը վկայում

---

86 Տե՛ս նույն տեղում, էջ 131։

87 Նույն տեղում, էջ 133։

88 Տե՛ս Առ. Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ, էջ 26։

89 Տե՛ս նույն տեղում, էջ 27։

90 Տե՛ս «Արաքս», գիրք Բ, էջ 148—149։

էր, որ կոտորածն ակսվեց սարսափելի կատաղությամբ։ Կոստանդնուպոլսի փոխադրական և կապի միջոցները միանգամից կանգ առան։ Քաղաքի «տարբեր մասերում սկսվեց սարսափելի իրարանցում։ Մահակների և սրերի հարվածներից փողոցներում ու մայթերի վրա տեղն ու տեղը ընկնում էին սպանված հայերը։ Զբավարարվելով դրանով, թուրքերը խմբերով ներխուժում էին տները և շարունակում ջարդը»[91]։ Ոստիկանությունն իր կազմակերպած չարագործության հետքերը թաքցնելու համար դիակները հավաքում և նետում էր Բոսֆորից Մարմարա ծովն անցնող ուժեղ հոսանքի մեջ։ Հաջորդ օրը ջարդը շարունակվեց, իսկ քաղաքում իրենց շքախմբով հանգիստ անց ու դարձ էին անում ոստիկանապետերն ու թուրք փաշաները։ Կարծես թե ոչինչ չէր կատարվում ու նրանք ոչինչ չէին նկատում։ Ֆրանսիացի նավաստին զայրույթով նշում է. «Մի բան, որ շատ տարօրինակ տպավորություն թողեց, դա այն էր, որ այդտեղ՝ ծովափնյա նավահանգստում շարված բազմաթիվ նավերը, որ ներկայացնում էին բոլոր եվրոպական տերությունները, դարձան համատարած կոտորածի անտարբեր ականատեսներ»[92]։

Վեց տերություններն առաջարկել էին ջարդը դադարեցնել, «բայց և այնպես դեռ ամբողջ երկու ամիս սարսափը տիրում էր Կ. Պոլսում և ամենաչնչին առիթը բավական էր նոր իրարանցում առաջ բերելու»[93]։

Կ. Պոլսից հետո սեպտեմբեր ամսին սոսկալի կոտորած եղավ Ակնում։ Այստեղ հայերի 1100 տնից հաղիվ 150-ը մնացին, մյուսները հիմնահատակ ավերվեցին։ Ժամանակակիցների վկայությամբ. «Ակնից 40—50 մղոն հեռավորության վրա նկատել են եփրատ գետում լողացող բազմաթիվ դիակներ։ Բոլոր փաստերը ապացուցում են, որ կոտորածը կազմակերպվել է պաշտոնական շրջանների կողմից՝ առանց որևէ պատճառի... Զոհերը որևէ դիմադրություն ցույց չեն տվել և թուրքերից ոչ մեկը չի սպանվել, բացի նրանցից, որ սպանվել են հետո, ամենայն հավանականությամբ կողոպուտը բաժանելու ժամանակ։ Այդ մասերում քրդեր չեն եղել։ Ամբողջը կատարել են քաղաքացիները (թուրքերը—խմբ.) և զինվորները։ Կոտորածը տարածվել է նաև Ակնի շրջակա գյուղերում...»[94]։

Թուրքերն ամեն կերպ ձգտում էին իրենց չարագործություններն արդարացնող պատրվակներ հորինել, մինչև անգամ կեղծ փաստաթղթեր սարքել։ Թուրք հինովնիկներն ամեն առիթով ձերբակալում էին հայերին, նրանց տանջանքի ենթարկում, ստիպում ստորագրել կեղծ փաստաթղթեր, հորինում մարդկանց՝ հեղափոխական կազմակերպություններին պատկանելու ցուցակներ, ապա պետության դեմ ապստամբություն պատրաստելու մեղադրանքներ բարդում նրանց վրա։ Այդ նոր զոհերին ձերբակալելով, հաշվեհարդար էին տեսնում նրանց հետ։ Նրանք այդպես վարվեցին Բաբերդում, որտեղ 1896 թ. հոկտեմբերի 27-ին հայերի նկատմամբ կեղծ դատավարություն սարքեցին[95]։ Բոլոր մեղադրյալներն էլ աչքի ընկնող հայ գործիչներ էին, որոնց հետ թուրքական իշխանությունները վաղուց էին պատրաստվում հաշվեհարդար տեսնել։

1897 թ. մարտի 27-ի հաղորդագրությամբ Սեբաստիայում անգլիական

91 «Братская помощь пострадавшим в Турции армянам», стр. 75.

92 Նույն տեղում, էջ 78։

93 «Արարատ», գիրք Բ, էջ 149։

94 «Геноцид армян...», стр. 112—113.

95 Տե՛ս նույն տեղում, էջ 113—114։

Հյուպատոս Բյուլմանը հայտնում էր Կ. Պոլսի անգլիական դեսպան Քերրին, որ Թոքատում տեղի ունեցող հայկական ջարդը կազմակերպել էին պետական իշխանությունները[96]։ «Մաշալլահ» կրոնամոլ կազմակերպությունը, որ հիմնվել էր «իսլամի պաշտպանության և գյավուրներին բնաջինջ անելու համար»[97], սուլթանի անունից հրահանգ էր ուղարկել՝ տեղերում հայկական ջարդեր սկսելու մասին։ Եղած փաստաթղթերն անհերքելիորեն ապացուցում են, որ կոտորածի կազմակերպման գործում գլխավոր դերը «խաղացել են գավառապետը, զորքերի տեղական գլխավորը և ոստիկանապետը»[98]։ Թոքատի կոտորածը դեսպանական միջնորդության առիթ տվեց։ Ստեղծվեց քննող հանձնաժողով, որը բարի «ծառայությամբ» 130-ի չափ բանտարկված չարագործների այս կամ այն ձևով արդարացրեց և ազատ արձակեց, իսկ հայերին մեղադրեց իշխանության հրամանը չկատարելու և խանութները չբացելու մեջ։

Իշխանությունները խիստ պատժում էին բոլոր նրանց, ովքեր որևէ պաշտպանություն կամ աջակցություն էին ցույց տալիս հայերին։ Սակայն դրացի մահմեդականների մեջ կային այնպիսիները, որոնք, վտանգելով իրենց կյանքը, պաշտպան էին կանգնում տարաբախտ հայերին։ Ամասիայում տեղի ունեցած անկարգության ժամանակ մի շարք մահմեդականներ թաքցրել և պահպանել են հայերին։ 13 տարեկան մի թուրք աղջիկ, որի անունը հայտնի չէ, տան պատից անցք էր բացել և այնտեղից 15 հայերի ներս քողնելով՝ թաքցրել էր[99]։

Հայ ժողովրդի վիճակը ծանրանում էր նաև դաշնակցության գործունեության հետևանքով։ Արկածախնդրություն էր, անշուշտ, դաշնակցության կազմակերպած հանասորի արշավանքը։ 1897 թ. դաշնակցականների հրահանգով մոտ 100 ձիավոր և հետևակներ հանկարծակի հարձակվեցին Պարսկաստանի սահմանագլխին գտնվող Շարաֆ բելի գլխավորած մազրիկ քրդական ցեղախմբի վրա։ Նրան երկուստեք զոհեր։ Բելը կարողացավ փախուստի դիմել և հետագայում պատուհաս դարձավ Մուշի գյուղերի համար. ավերեց 7 հայկական գյուղ։ Հանասորի այս արկածախնդրությունը, սակայն, դաշնակցությունը համարեց իր կարևոր գործերից մեկը։ Հանասորի ձախողված արշավանքի հետևանքով թուրքական կառավարությունն ուժեղացրեց բռնությունները ոչ միայն երկրի ներսում, այլ նաև հարկադրեց պարսկական կառավարությանը այնտեղ ևս խուզարկություններ կատարել և հետապնդել հայ վտարանդիներին ու ազատագրական շարժման ակտիվ գործիչներին։ Կովկասից Թուրքիա եկող խմբերն անցնում էին Սալմաստի վրայով և այստեղ տանում զենք ու ամեն կարգի աջակցություն։ Թուրքական կառավարությունը Սալմաստ ուղարկեց Խոյի հյուպատոս Ռեա բեյին, որի մասնակցությամբ պարսկական կառավարությունը մասսայական խուզարկություններ կատարեց՝ հայ գործիչներին թուրքական կառավարությանը հանձնելու համար։ Հանկարծակի խուզարկություն սկսեցին Փայջուկում, սակայն տեղի իշխանության բարյացակամ վերաբերմունքի շնորհիվ Ռեա բեյը ձեռնունայն վերադարձավ[100]։

---

96 Տե՛ս նույն տեղում, էջ 135։

97 «Արաքս», գիրք Բ, էջ 153։

98 Նույն տեղում։

99 Տե՛ս «Геноцид армян...», стр. 136.

100 Տե՛ս «Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության, 1887—1962», հ. Ա, Պեյրութ, 1962, էջ 212։

Այդ ամենի հետևանքների գալով, հայ շինականը սկսեց երես թևքել իրեն հեղափոխական կոչող դաշնակցությունից։ «Դրոշակը» ստիպված էր 1901 թ. գրել. «Հեղափոխական փրկարար գաղափարը սոսկալի փոթձանքի էր ենթարկվել 1895—1896-ի աղետներից հետո։ Ընդհանուր հիասթափություն և հաշըրջման մի անմիտ, բայց իր անմտության մեջ ուժեղ տարերային մի հոսք էր տիրել մեր հասարակության բազմազան խավերին։ Սարսափահար մեծամասնությունը անեծքներ կարդաց մեր շարժման հասցեին...»[101]։

Ահավոր ջարդերից, աղքատությունից ու ավերածությունից հետո նոր ուժով ծայր առավ պանդխտությունը։ Պանդուխտների մեջ մեծ թիվ էին կազմում մշեցիները, որոնք գնում էին հեռավոր երկրներ, մշակություն անում՝ մի կտոր սև հաց վաստակելու։ «Ածուխի բեռնակիրներ են անոնք առհասարակ, որոնք իրենց հացը ճարելու համար դատապարտված են շարունակ սև փոշիներու մեջ պարուրվիլ, չարչարվիլ...»[102]։ *Իսկ նրանց ընտանիքները տարիներ շարունակ սպասում են «ծայր աստիճան նեղված չքավորության, տառապանքի և հազար ու մեկ մարդկային նեղություններու մեջ...»*[103]։ *Պանդուխտները իրենց ողջ կյանքը նվիրած են «իրենցներուն բարօրության, օր մը առաջ անոնց քով ժամանելուն կշանան...»*[104]։

Վասպուրականում և մի շարք վայրերում 1899 թ. երաշտի պատճառով բերքը փչացավ։ Սակայն դաժան հարկահավաքները ամենայն խստությամբ պահանջում էին տուրքերը։ Շատերը «բոնի պահանջներուն վախենալով, ձգեցին իրենց կինները և զավակները, լեռները փախան, մինակ Ավերակ գյուղեն հարյուր հոգի մեկ գիշերվան մեջ խուլա տվին դեպի պարսկաց և Ռուսիո սահմանագլուխը»[105]։ *Սովն ու աղքատությունը ծայր աստիճանի հասավ։ Վանից մեկը օգնություն խնդրելով իր նամակը ավարտում է հետևյալ տողերով. «Ողորմացեք մեզի, եղբայրներ, դուք որ օտար երկրի մեջ եք և քիչ-շատ կվաստակիք, գթացեք մեր վրա, դուք, որ գիշերները պատառ մը հաց ունիք ուտելու և անկողին մը քնանալու»*[106]։

Արյունոտ սուլթանի ջարդարարական մոլուցքը այդ ամենից հետո էլ դեռևս հագուրդ չէր տացել։

Էրզրումի ռուսական հյուպատոսի քարտուղար Շախովսկին 1900 թ. օդոստոսի 29-ի գրության մեջ հայտնում էր, որ սուլթանի պալատից ստացված հրամանով Բիթլիսի պարետ Ալի փաշան նոր ջարդ է կազմակերպել Սասունի շրջանի Սպաղանք գյուղում։ Այդ փաստը նորից է հաստատում, որ թուրքական կառավարությունը հետևողականորեն ստիպում էր Սասունի լեռնաբնակ հայերին թողնել իրենց բնակավայրերը և փոխադրվել Մուշի դաշտավայրը, կամ ընդհանրապես, հարկադրում նրանց հեռանալ Փոքր Ասիայից[107]։

Վանում, Մուշում և Սասունում տեղի ունեցող ջարդերի մասին խոսելով, ռուսական դեսպան Զինովևը 1901 թ. սեպտեմբերին հայտնում է Պետերբուրգ, որ թուրքական կառավարությունը անշափ ծանր հարկեր է նշանակել և շա-

---

101 «Դրոշակ», 1901, № 7։

102 «Շարժում», № 179, 1899, Վառնա, «Մշեցի պանդուխտները»։

103 Նույն տեղում։

104 «Շարժում», № 188, 1899, «Վասպուրականն»։

105 Նույն տեղում։

106 Նույն տեղում։

107 Տե՛ս «Геноцид армян...», стр. 142.

բռնակալով հայկական ջարդերը, անելանելի վիճակ է ստեղծել հայերի համար, որի նպատակն է «հայերին ստիպելու հեռանալ Սասունի լեռներից, որտեղ նրանք հնարավորություն ունեն պաշտպանվելու ավազակային հարձակումներից...»[108]։

Ջարդերի և ավերածությունների հրդեհը դեռևս մի տեղում չմարած, թուրքական իշխանությունները մեկ ուրիշ տեղ էին այն բորբոքում։ Ո՛չ հայ գանգրվածների ազիողորմ հառաչանքները, ո՛չ էլ համաշխարհային հասարակայնության մարդասիրական բողոքներն ու կարեկցանքը որևէ կերպ չէին թեթևացնում հայերի դժբախտ վիճակը։ Ավելին, եվրոպական տերությունների խոստումների սնանկությունն ու դիվանագիտական զանազան գործարքներն ուղղակի քի անուղղակի ազատություն էին տալիս սուլթանին, որը մարդասպաններին ոչ միայն չէր պատժում, այլև պարգևներ շնորհելով, նոր հանցագործությունների էր մղում։

1890-ական թվականների ջարդերը թուրքական դահիճների արևմտահայության առաջին զանգվածային ցեղասպանության փորձն էր։ Այդ ջարդերի հետևանքով զոհվեց շուրջ 300.000 հայ, համարյա այդքան էլ տարագրվեց, որից մոտ 100.000-ը անցավ Ռուսաստան, իսկ 150.000—200.000-ը՝ եվրոպայի, Աֆրիկայի ու Ամերիկայի զանազան երկրներ։ Արևմտահայության որոշ մասն էլ հարկադրված դավանափոխվեց, ընդունելով մահմեդականություն։ Դանիացի ճանապարհորդ Բենիգսենը 90-ական թվականների վերջերին շրջելով Արևմտյան Հայաստանում, գրում էր, որ Դիարբեքիրի, Խարբերդի կուսակալություններում և Արաբկիր գավառակում կոտորածներից հետո շուրջ երկու հարյուր հայկական գյուղեր մահմեդականություն են ընդունել։ Միայն Վասպուրականում դավանափոխված հայերի թիվը 1901 թ. կազմում էր «մոտավորապես 10—12 հազար»[109]։

Համիդյան կառավարությունը բնաջնջված և արտաքսված հայերի տեղում բնակեցնում էր մահմեդական տարրեր, գլխավորապես քրդեր ու մուհաջիրներ (Բալկաններից ու Կովկասից եկած թուրքեր, չերքեզներ ու չեչեններ)։ Ա-Դոն վկայում է, որ Հայոց Ձորում քրդերը հաստատվեցին գլխավորապես 1896 թ. կոտորածներից հետո։ Խոշոր ու ոստան գավառակներում «կես դար առաջ ապրում էին բավական թվով հայեր, այժմ... նրանց տեղը բռնել են... թուրք տարրերը»։ Մուշի դաշտի 21 գյուղերում 1889 թ. 117, իսկ XX դարի սկզբին՝ արդեն 554 քրդական տնտեսություն կար։ Բաղմաթիվ շրջաններ, որոնք մի ժամանակ բնակեցված էին հայերով, այժմ կամ ամայացել են, կամ դարձել քրդաբնակ ու թուրքաբնակ բնակավայրեր[110]։

90-ական թվականների ջարդերից հետո ավելի սաստկացան արևմտահայ բնակչության, հատկապես գյուղացիության ազգային ու սոցիալական ճնշումները։ Թուրքական կառավարությունն արևմտահայերի ազատագրական շարժումները բռնում խեղդելու համար երկրի մի շարք շրջաններում հիմնից զորանոցներ ու ստեղծեց ավազակային կազմակերպություններ։ Իսկ

---

108 Նույն տեղում, էջ 144—145։

109 «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, № 2, էջ 105 (Ա. Համբարյան, Արևմտահայերի թվաքանակի հարցի շուրջը)։

110 Տե՛ս Ա-Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, էջ 183։

քուրդ աղաները, օգտվելով սուլթանի հովանավորությունից ու պաշտպանությունից, ինչպես կոտորածների տարիներին, այնպես էլ դրանից հետո բռնագրավեցին հայկական հողերը և դարձան ընդարձակ կալվածքների տերեր։ Աղլըևազում հռչակվեց Քոռ Հյուսեին փաշան, Արճեշում՝ նրա ազգակից Էմին փաշան, Խիզանում՝ շեյխ Սեիդ Ալին, Կարճկանում՝ Մուսա բեյը, Խարզանում՝ Բշարե Չաթոն, Ճատախում՝ Շաքիր աղան, Չխուրում՝ Կասըմ (Ղասըմ) բեյը, Դիարբեքիրի հարավում՝ Իբրահիմ փաշան և շատ ուրիշներ[111]։ Այդ փաշաներն ու աղաները միաժամանակ իրենց իշխանությունը տարածեցին ֆեոդալական կախումից տակավին ազատ արևմտահայ գյուղացիների վրա և դարձրին նրանց իրենց ճորտերն ու կիսաճորտերը։ 1900 թ. վ. Տ. Մաևսկին նշում էր, որ Վանի նահանգում «Վերջին երկու տարվա իրադարձությունները բազմաթիվ հայկական գյուղեր, հատկապես առանձին օկրուգներում, դրեցին տեղական քրդերից (իմա՝ ցեղապետերից) ուղղակի ենթակա դրության մեջ»[112]։ Ա-Դոն ջարդերից հետո ընկած ժամանակաշրջանը բնութագրում է որպես «լուռ» ժամանակաշրջան, որի ընթացքում տեղի ունեցան այնպիսի բռնություններ և հարստահարումներ, որոնք «մինչգամայն մոռացնել տվին նախկինը... Այդ լուռ շրջանում... յուրաքանչյուր գյուղ, որ մինչ այդ ազատ էր մնացել աղայից կամ բեկից, եկավ այս կամ այն ազդեցիկ քուրդը... և իրեն հայտարարեց այդ գյուղի աղան կամ բեկը... տարրական պարտականություն դարձավ ձրի վարել, ցանել աղայի հողերը, հնձել արտը, ծեծել ցորենը, դաշտից տուն բերել խոտը...»[113]։

Թուրքական կառավարությունն ու աղաները բնաջնջելով ու արտաքսելով հայ գյուղացիներին, նրանց ծաղկող դաշտերը վեր էին ածում արոտավայրերի և այդպիսով երկրի գյուղատնտեսությունը ետ տանում դեպի հետամնաց ավատատիրության։

Այսպիսով, թուրքական կառավարության որդեգրած ցեղասպանության քաղաքականությունը, դաժան հալածանքներն ու ճնշումները երկիրը հասցրին քայքայման ու կանգնեցրին տնտեսական ու քաղաքական խորը ճգնաժամի առջև։

7. ՀԱՅԿԱԿԱՆ ՋԱՐԴԵՐԸ ԵՎ ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

90-ական թվականներին սուլթանական Թուրքիայում ստեղծված հայ ժողովրդի ֆիզիկական ոչնչացման վտանգը հետևանք էր մեծ տերությունների թողտվության պայմաններում թուրքական կառավարության շովինիստական քաղաքականության։ Սուլթանը առաջին հերթին խնդիր դրեց, մեծապետական քաղաքականություն վարելով, հայ ժողովրդին տնտեսապես քայքայել և ազգային խտրականության միջոցով նպաստել թուրք ու քուրդ ավագանու հզորացմանը։ Թուլացնելով, ունեզրկելով, զանգվածային ջարդեր կազմակերպելով, սուլթանական կառավարությունը հետապնդում էր միաժամա-

111 Տե՛ս Ա. Ս. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), էջ 200—216։

112 В. Т. Маевский, Ванский вилайет. Военно-статистическое описание, Тифлис, 1901, стр. 188.

113 Ա-Դո, նշված աշխ., էջ 320—321։

նակ հայկական հարցը միջազգային դիվանագիտությունից հանելու խնդիրը։

Մարքսիզմի կլասիկները դատապարտում էին թուրքական դեսպոտիզմը և ամբողջովին պաշտպանում հայ և ենշված այլ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները, մերկացնում անգլիական և մյուս գաղութարարներին։ Նրանք բացահայտում էին գաղութարարների հետևում գնացող զավթողական պլանները Եգիպտոսում և Մերձավոր Արևելքի այլ երկրներում, անվստահությամբ էին վերաբերվում հայ ժողովրդին ազատագրելու ցարիզմի «գործունեության» նկատմամբ և հայ ժողովրդի ազատագրումը կապում էին ռուսական հեղափոխության հաղթանակի հետ։

Մեծ տերությունները զինվարվում էին միմիայն իրենց շահագիտական նպատակներով։ Անգլիայի նպատակն էր, օգտվելով ստեղծված ճգնաժամային վիճակից, գրավել Եգիպտոսը։ Նա դժգոհ էր, որ այդ շրջանում Թուրքիայում ուժեղացել էր Ռուսաստանի, Ֆրանսիայի և հատկապես Գերմանիայի ազդեցությունը։ «Անգլիական կառավարությունը հայերի օգտին իր միջամտությամբ ցանկանում էր վախեցնել սուլթանին և ստիպել նրան հաշտվել Եգիպտոսի օկուպացման փաստի հետ, ցարական ու կայզերական բարեկամությունը փոխարինել բրիտանականով»[114]։ Այդ ժամանակաշրջանում սրվեցին անգլո-ամերիկյան հարաբերությունները և մեղմացան Անգլիայի և Ռուսաստանի փոխհարաբերությունները։ Անգլիան ցանկանում էր պայմանավորվել Ռուսաստանի հետ Թուրքիայի մասնակի բաժանման մասին, որպեսզի նա ճանաչի Անգլիայի տիրապետությունը Եգիպտոսում։ Դրա փոխարեն Անգլիան Ռուսաստանին և Թուրքիային իրար հետ գժտեցնելու նպատակով «համաձայնվում» էր Արևմտյան Հայաստանը Ռուսաստանի կողմից օկուպացնելուն։ Սակայն ռուս-թուրքական պատերազմից հետո ցարական Ռուսաստանի հիմնական նպատակը նեղուցներին տիրելն էր, դրանք իր ազդեցության տակ պահելը։ «Նա գերադասում էր օգնել սուլթանին, որպես Միջերկրականից Սև ծով տանող դարպասի պահակի»[115]։ Ահա թե ինչու «ցարական կառավարությունը այն ժամանակ այնքան էլ շահագրգռված չէր Հայաստանը գրավելուց»[116], իմանալով, որ Անգլիան ամեն կերպ ցանկանում է վատացնել Ռուսաստանի և Թուրքիայի հարաբերությունները։

1894 թ. օգոստոսին Սասունի կոտորածների կապակցությամբ անգլիական կառավարությունը առաջարկեց օտարերկրյա հյուպատոսների օգնությամբ իրավիճակն ստուգել տեղում, իսկ 1895 թ. փետրվարին բարենորոգումների ծրագիր ներկայացվեց, պահանջելով սուլթանից այն իրագործել։ Գերմանիան դեմ դուրս եկավ այդ առաջարկին, քանի որ նա ձգտում էր իր ազդեցությունն ուժեղացնել Թուրքիայում և այնտեղ իր կապիտալը ներդնել՝ երկաթուղային խոշոր շինարարություն կատարելու, արդյունաբերական այլ ձեռնարկություններ կառուցելու նպատակով։ Գերմանական ռազմական մասնագետները հրահանգավորում էին թուրքական բանակը և ամենուր ուժեղացնում իրենց ազդեցությունը։

Ցարական կառավարությունը և նրա ֆրանսիական դաշնակիցները ռեֆորմներ անցկացնելուն դեմ չէին, բայց չէին ցանկանում, որ Անգլիան հան-

114 «История дипломатии», т. II, стр. 334.
115 Նույն տեղում, էջ 334։
116 Նույն տեղում, էջ 335։

դես գար որպես նախաձեռնող։ Հատկապես Ֆրանսիային մտահոգում էր Անգլիայի ամրանալը Եգիպտոսում, ուստի նա ամեն կերպ ոգևորում և պաշտպանում էր Թուրքիայի դիմադրությունը Անգլիային։ Ահա թե ինչու «1894—1896 թթ. հայկական գործերին խառնվող երեք տերությունների միջև պայքար էր սկսվել. անգլիական կառավարությունը ձգտում էր ուժեղացնել ճնշումը սուլթանի նկատմամբ, իսկ ռուսներն ու ֆրանսիացիները պահանջները հասցնում էին նվազագույնի»[117], ցանկանալով ամեն կերպ թուլացնել Անգլիայի ազդեցությունը Թուրքիայում։

Հայկական կոտորածները և Թուրքիայում քրիստոնյաների դեմ մոլեգնած ընդհանուր պայքարը ոչ միայն թուրք ջարդարարների ավանդական քաղաքականության հետևանքն էին, այլ նաև XIX դարի վերջին Օսմանյան կայսրության, այդ «հիվանդ մարդու» ներքին ճգնաժամի և անկման արտահայտությունը։ Ազգային-ազատագրական պայքարը Բալկաններում, արաբական աշխարհում և Հայաստանում մեծ հոգսեր էին պատճառում առանց այն էլ տնտեսապես ու քաղաքականապես թուլացած պետական իշխանությանը։ Երկրում ստեղծված տնտեսական և քաղաքական ճգնաժամից դուրս գալու ելքն արյունոտ սուլթանը գտնում էր միապետության ամրապնդման, ազգային-ազատագրական շարժումներն արյան մեջ խեղդելու մեջ։ Նրա սրբագործած գենոցիդի պետական քաղաքականությունը և հայ ժողովրդի զանգվածային ջարդերը համընդհանուր վրդովմունք առաջացրին համաշխարհային հասարակայնության լայն շրջաններում։

Եվրոպական տերությունները բանակցություններ էին վարում Հայկական հարցի շուրջը, վեց վիլայեթներում ռեֆորմներ անցկացնելու վերաբերյալ, մինչդեռ հայ ժողովուրդը ոչնչանում էր «սրի, կրակի, կողոպտման միջոցով թուրք կառավարության իսկ ձեռքով...»[118]։

1896 թ. օգոստոսին Կ. Պոլսում կատարված ջարդերին ականատես եվրոպական դեսպանները Աբդուլ Համիդին մի «սպառնալից» հեռագիր հղեցին։ Արյունոտ սուլթանն իր գործը կատարելուց հետո նրանց պատասխանեց. «Կարգը վերականգնված է»։ Դրանով էլ դեսպանները բավարարվեցին, բայց հենց նույն ժամանակ երկրի տարբեր մասերում նոր ջարդեր սկսվեցին։

Չնայած այդ դառն փորձերին հայ քաղաքական կուսակցությունները հայ ժողովրդի հույսը դարձյալ կապում էին մեծ տերությունների օգնության հետ։ Այդ տեսակետից հատկապես վնասակար դեր էր խաղում դաշնակցությունը։

1898 թ. դաշնակցության առաջնորդներից Ք. Միքայելյանը Թիֆլիսից Ժնև է տեղափոխվում և դիվանատորական իրավունքներով ցանկանում է վերակենդանացնել անկման ուղին բռնած կուսակցությանը։ Նա որոշ քայլեր է անում ավելի ճկուն դարձնելու դաշնակցության և նրա օրգան «Դրոշակի» վարած քաղաքականությունը։ Առաջին հերթին նա վերջ է տալիս եվրոպական դիվանագիտության հասցեին արվող քննադատությանը և հայտարարում, որ մեծ տերությունները «իրենց որոշ դիտումները առաջ տանելու նպատակով կարող են շատ բան անել մեզ համար»[119]։

Աշխատանք է տարվում մեծ տերությունների պետական, ինչպես նաև

---

117 Նույն տեղում։

118 «Արաքս», գիրք Բ, էջ 155։

119 «Դրոշակ», 1899, № 2։

ականավոր հասարակական գործիչների հետ հանդիպումներ ունենալու, մտքեր փոխանակելու և նրանց կարծիքները Հայկական հարցի մասին ամփոփում տպագրելու ուղղությամբ։ Այդ բոլորի համար մեծ գումարներ էին հարկավոր և Ք. Միքայելյանն իր «Պատմական չարիքը հոդվածում դատապարտում է հայ հարուստներին, որոնք միջոցներ չեն հատկացնում Միջոցներ հայթայթելու համար դաշնակցությունն ստեղծում է հատուկ ահաբեկիչ «Փոթորիկ» խումբ, որի միջոցով հարկադրում է առանձին անհատների գումարներ հատկացնել իրեն։ Այդ միջոցներով հավաքված գումարներով Փարիզում սկսում է ֆրանսերեն լեզվով լույս տեսնել «Պրո Արմենիա» թերթը, որի էջերում, հօգուտ Հայկական հարցի, հանդես են գալիս Ժորեսը, Կլեմանսոն, Բրիանը, Պրեսանսեն և ուրիշներ։ Ֆրանսիական պառլամենտի սոցիալիստ անդամները խնդիր էին դնում հարցապնդումներ անել Հայկական հարցի վերաբերյալ և հարմար առիթով դիմումներ ուղարկել մյուս կառավարություններին։ Սոցիալիստներն իրոք որ նման կարգի հարցապնդում կատարեցին Ֆրանսիայի պառլամենտում, Գերմանիայի ռայխստագում, բայց որևէ հաջողության չհասան։ Բեբելը նշում էր, որ անհնարին է հայերի օգտին որևէ բան անել գերմանական ռայխստագում[120]։

Օգտվելով օսմանյան բանկի գրավման փորձից հետո ստեղծված խառը վիճակից, 1896 թ. օգոստոսին անգլիական նավատորմիզը Միջերկրական ծովից ուղղություն վերցրեց՝ նեղուցները մտնելու մտադրությամբ։ Օսմանյան կայսրության մայրաքաղաքում իրարանցում սկսվեց։ Սուլթանը, դիմելով Ռուսաստանի դեսպան Նելիդովին, խնդրեց օգնել պաշտպանելու Դարդանելը։ Ռուսական կառավարությունը, որ մեծ վտանգ էր տեսնում դրանում, հապճեպ միջոցների դիմեց, հայտարարելով Անգլիային, որ Բոլշ չի տա բրիտանական նավատորմիղին մտնելու նեղուցները[121]։ Հակառակ դեպքում նա սպառնում էր իր սեծովյան նավերը մտցնել Բոսֆոր։ Նման բարդ իրադրության պայմաններում Անգլիան զգուշացավ ուղղակի հարձակումից։ Ֆրանսիան նույնպես իր հետաքրքրություններն ուներ Թուրքիայում, որտեղ ներդրված էր 3 միլիարդ ֆրանկ, կամ նրա արտահանվող կապիտալի 10%-ը[122]։

Անգլիան տեսնելով, որ ուժի դիրքերից չկարողացավ հասնել իր նպատակին, 1896 թ. դեկտեմբերի 20-ին դիմեց մեծ տերություններին՝ մշակելու բարեփոխությունների ծրագրի նախագիծ ոչ միայն հայկական վիլայեթների, այլև ամբողջ Թուրքիայի համար։ Անգլիական դիվանագիտությունն այդ կերպ ցանկանում էր Թուրքիայի վրա ճնշում գործադրել և կարել նրան ռուս-ֆրանսիական և գերմանական ազդեցություններից։ Աբդուլ Համիդը շատ խորամանկորեն կարողանում էր օգտագործել մեծ տերությունների հակասություններըն։ Նա մի կողմից ընդունում էր ռուս-ֆրանսիական և մյուս կողմից գերմանական կողմնորոշում, միաժամանակ վախենում էր և մեկին և մյուսին Անգլիայի հետ մտերմանալու ստահալիբուլ։ Սուլթանն այդ ճկուն դիվանագիտությամբ կարողացավ Թուրքիան դուրս բերել ծանր դրությունից և պահպանել ծայրահեղ հետամնաց ֆեոդալական միապետական կարգը։

1896 թ. հետո Թուրքիայի արտաքին գործերի մինիստրի օգնական Հարու-

---

120 Տե՛ս Ալ., Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ, էջ 34։

121 Տե՛ս ՌԱՔԱ,ֆ. Դրասնիչակ (կանցելարիա), 1896 թ., գ. 29, թ. 240, գ. 28, թ. 571։

122 Տե՛ս «История дипломатии», т. II, стр. 339.

Քյուն փաշա Տատյանը փորձեր արեց սուլթանին համոզելու կարգավորել հարաբերությունները հայերի հետ, անցկացնել բարենորոգումներ առանց մեծ տերությունների միջամտության[123]։ Այդ նպատակով հատուկ ներկայացուցիչներ ուղարկվեցին Ժնև՝ բանակցելու դաշնակցության հետ. դրանք որևէ արդյունքի չհասցրին։

Անգլիան, Ֆրանսիան և նոր ասպարեզ եկած «իմպերիալիստական դիշատիչ» Գերմանիան, իրենց գաղութատիրական մրցավազքում ոչ մի բանի առջև կանգ չէին առնում և փորը ժողովուրդներին զոհաբերելու գնով հասնում էին իրենց նպատակին։ Այդպես վարվեցին նրանք արևմտահայության հետ։ Թուրքիան կարևոր կամուրջն էր դեպի արևելք տանող գաղութային երկրները և Ռուսաստանի դեմ մի պատնեշ, որը Բույլ չէր տալիս նրան առաջանալու դեպի եվրոպական տերությունների Ասիայի ու Աֆրիկայի գաղութները։ Գերմանիայի հեռուն գնացող ստրատեգիական պլաններում, հատկապես Բաղդադի երկաթուղու կառուցման գործում, Թուրքիան կարևոր դեր ուներ կատարելու։ Այդ նպատակով էլ Վիլհելմ II կայսրը Թուրքիա ժամանելով, արյունոտ սուլթանին Գերմանիայի բարեկամ հայտարարեց։ Այդ բխում էր նրանից, որ «Թուրքիան,— գրում է կայսերական պետական քարտուղար Բերնհարդ Բյուլովը,— մեզ համար ներկայացնում է տնտեսական, ռազմական, ինչպես նաև քաղաքական հետաքրքրություն»[124]։

Օրավուր խորացող անգլո-ռուսական և ավստրո-հունգարական հակամարտությունները ավելի էին ուժեղացնում գերմանա-թուրքական մտերմությունը։ Այդ մտերմությունն այնքան ուժեղացավ, որ սուլթանը իր զորքերը դրեց գերմանական զինվորական միսիայի հսկողության տակ, այն վերակառուցելու և վերազինելու նպատակով։ Գերմանիան սկսեց դենքով ապահովել սուլթանի բանակը և իր տնտեսական ու քաղաքական ազդեցությունն ամրապնդեց ամբողջ Թուրքիայում։ Այդ հանգամանքն անհանգստացնում էր ցարական Ռուսաստանին, որը Գերմանիային զսպելու համար դեռևս 1893 թ. կարողացավ ավստրո-ռուսական համաձայնագիր կնքել Բալկաններում գոյություն ունեցող վիճակը պահպանելու համար, իսկ 1900 թ. հատուկ համաձայնագիր կնքվեց Թուրքիայի և Ռուսաստանի միջև, որի համաձայն Կովկասին սահմանակից շրջաններում ուրիշ պետությունների արգելվում էր երկաթուղի և այլ ճանապարհներ կառուցել, ինչպես նաև կոնցեսիաներ վերցնել։

Ֆրանս-ռուսական 1892—1893 թթ. համաձայնագիրը ևս ուղղված էր եվրոպական մյուս տերությունների դեմ։ Նման վիճակը հայ ժողովրդին կանգնեցրեց ծանր կացության առջև։ Հայաբնակ վայրերի համարյա մեծ մասը ավերվել էր, բնակչությունը՝ անանկացել, արտադրությունը, արհեստներն ու առևտուրը՝ կանգ առել, գյուղատնտեսական գործիքները ոչնչացվել։ Փրկության միակ հույսը դրսից սպասվող օգնությունն էր, իսկ «օգնող» տերությունները միայն խարդախ խաղեր էին խաղում։

Կոստանդնուպոլսի ռուսական դեսպան Նելիդովը իր կառավարությանը հաղորդում էր հայերին օգնելու համար նյութական միջոցներ հավաքելու մասին։ Տարբեր երկրներից բարերարները օգնության ձեռ էին մեկնում մաւրա-

---

123 Տե՛ս Ան, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ, էջ 41։

124 Б. Бюлов, Внешняя политика Германии, Одесса, 1915, стр. 45.

ցիկ հայ մանուկներին ու այրիներին։ Կոտորածից հետո որբ երեխաների թիվն անցնում էր 50 հազարից։

Բեյրութի ռուսական հյուպատոսը 1898 թ. սեպտեմբերի 12-ին հաղորդում էր, որ թուրքական կառավարությունը Էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթների կոտորածի հետևանքով ազատված հայկական հողերը թուրքերով բնակեցնելու համար լայն աշխատանք է ձեռնարկում։ Այդ վիլայեթները տեղափոխվող թուրքերին արտոնություն էր տրվում. նրանք 10 տարով ազատվում էին զինվորական ծառայությունից, ստանում էին հայերի լավ մշակած հողամասերը, իրենց և ընտանիքների տեղափոխման համար պետությունը միջոցներ էր տրամադրում և այլն[125]։

Ռուսական կայսրության սահմանակից վիլայեթները թուրքերով բնակեցնելու, Ռուսաստանին անձնվիրաբար նվիրված հայկական տարրը ոչընչացնելու նման քաղաքականությունն օրինական անհանգստություն էր առաջացնում Ռուսաստանի պետական ու ռազմական շրջաններում։ Եվ դա, իրոք, մեծ կորուստ էր Ռուսաստանի համար. հայերը մի անգամ չէ, որ զորավիգ են եղել ռուսական զենքին։ Կոնստանդնուպոլսում ռուսական դեսպան Զինովևը 1899 թ. հոկտեմբերի 2-ին, նշելով, որ հայերի նկատմամբ ոստիկանական ճնշումներն ու հալածանքները շարունակվում են, կրկին ընդգծում է, որ հեղափոխական կոմիտեներին պատկանելու պատրվակով բազմաթիվ հայեր նետվում են բանտերը։ Երկրի ներսում հայերի տեղափոխումների և երթևեկությունների համար մեծ խոչընդոտներ են ստեղծվում։ Կոստանդնուպոլիս և այլ քաղաքներ այցելող ամեն մի հայ անմիջապես ոստիկանատուն է ընկնում և հալածվում։ Սամսունում և Տրապիզոնում ձերբակալվել են հարյուրի չափ երիտասարդներ, որոնք դպրոցական արձակուրդներն իրենց ծնողների մոտ անցկացնելուց հետո ցանկացել էին վերադառնալ Կոստանդնուպոլիս՝ ուսումը շարունակելու[126]։ Բազմաթիվ փաստաթղթերում և տարբեր երկրների պետական ու դիվանագիտական գրագրություններում շեշտվում է, որ հայկական կոտորածներն ու Թուրքիայի վարած ցեղասպանության քաղաքականությունը մեծ վնաս հասցրին երկրի տնտեսությանը, ներքին և միջազգային առևտրական հարաբերություններին։ «Նման դրությունը հայերի տնտեսական վիճակը քայքայելու հետ մեկտեղ,— գրում է Զինովևը,— ոչ պակաս բացասաբար է անդրադառնում նաև Թուրքիայի վրա, որտեղ հայերը հնուց ի վեր հանդես են գալիս որպես երկրի ամենագործունյա առևտրական մասը։ Չնայած դրան, սուլթանը համառորեն շարունակում էր իր ընտրած քաղաքականությունը»[127]։

Հայ ժողովրդի ազատագրման ուղիներն ու միջոցները լայնորեն քննարկվում էին թե՛ հայ քաղաքական կուսակցությունների, և թե՛ հասարակական մտքի ոլորտներում։

Դաշնակցականներն ու հնչակյաններն այն տեսակետին էին, թե Եվրոպան կզբաղվի հայերի հարցով, եթե ցույցերով ու ելույթներով նրանց ուշադրությունը հրավիրվի։ Նրանք հեռու էին համաժողովրդական ապստամբություն կազմակերպելու, հայ և մյուս ճնշված ժողովուրդների ուժերով թուրքական բռնապետությունը տապալելու միակ ռեալ ուղուց։ Դրա համար նրանց այս

---

125 Տե՛ս «Геноцид армян...», стр. 140.

126 Տե՛ս նույն տեղում, էջ 141։

127 Նույն տեղում։

կամ այն տեղում կազմակերպած պատահական ելույթները հանգեցնում էին արկածախնդրության և նորանոր չարիքներ բերում հայ աշխատավորների գլխին։

Ազգայնական կուսակցությունների ղեկավարները, գտնվելով Արևմտյան Հայաստանից դուրս, վատ պատկերացում ունեին նրա տնտեսական, քաղաքական և ազգագրական վիճակի մասին։ Ընչակյան գործիչ Խանազատը նշում է, որ անգլիական հյուպատոսների վիճակագրական տվյալներն իրենց միանգամայն անհնկալի բերեցին. «Չէ որ մեզնից և ոչ մեկը,— գրում է նա,— Հայաստանում չէր եղել և ոչ ոք չէր էլ զբաղվել այդ երկրի ժողովրդի մարդահամարով»[128]։

Ավ. Նազարբեկը հետին թվով հանդես եկավ «Ինչպես պիտի լուծել հայկական հարցը» գրքույկով։ Այստեղ նա առաջարկում է քրդերին ևս մտցնել հայկական ինքնավարության մեջ և ապա ենթադրություններ անում հայկական նահանգների վերաբաժանման մի նոր ձև ստեղծելու շուրջը, որտեղ իբր թե հայերի մեծամասնությունը ապահովված կլիներ։ Այդ բոլորը հնովից դիտողի ենթադրություններ էին միայն։ Իրականում, երբ ազգայնական կուսակցությունների ներկայացուցիչները ներթափանցում էին այս կամ այն վայրը, ապա բնակչության մեջ անխուսափ, անօգուտ կռիվներ էին հրահրում։

Հակասություններ կային ոչ միայն քաղաքական կուսակցությունների ու տարբեր խմբավորումների միջև, այլ նաև գավառահայության և քաղաքների միջև։ Գավառահայությունը բողոքում էր այն բանից, որ արտասահմանից ստացված զենքը, ռազմամթերքը և դրամը մնում են քաղաքներում։ Դեռ ավելին. արտասահմանից եկած գործիչների մեծ մասը մնում էր քաղաքներում՝ գաղափար չունենալով գավառահայության վիճակի ու պահանջների մասին։ Ամեն անգամ Անգլիան որպես հակադրելու միջոց, շատ վարպետորեն էր օգտագործում Հայկական հարցը, երբ նա նոր պլաններ էր կազմում Թուրքիայի հաշվին իր բռնագրավումները իրականացնելու։

1894—1896 թթ. անգլիական դիվանագիտությունը ցանկանալով թուլացնել Ռուսաստանի ազդեցության ուժեղացումը հայկական շրջաններում, նորից հանդես եկավ հայերի «պաշտպանի» դերում։ «Անգլիական կառավարությունը նպատակ էր դնում հայերի օգտին իր միջամտությամբ վախեցնել սուլթանին, որպեսզի ստիպի նրան հաշտվելու Եգիպտոսի օկուպացման փաստի հետ... Այսպիսով նա հույս էր դնում նորից Թուրքիային ենթարկել անգլիական ազդեցությանը»[129]։

Կիպրոսի և Եգիպտոսի բռնագրավումից հետո Անգլիան ապահովվեց իր հնդկական գաղութները տանող ծովային ճանապարհները և խնդիր դրեց իր ձեռքը գցել նաև Փոքր Ասիան, այդ թվում նաև Արևմտյան Հայաստանը[130]։ Սակայն այդ բոլորը անգլիական դիվանագիտությունը կատարում էր մեծ զգուշությամբ։ Իր նպատակները քաքցնելու համար խոսում էր Օսմանյան կայսրության անձեռնմխելիության մասին, իսկ իրականում առաջնորդվում էր Պալմերստոնի ցինիկ հայտարարությամբ, թե՝ Անգլիան չունի մշտական բարե-

---

128 «Հայրենիք», № 6, 1929, էջ 137։

129 «История дипломатии», т. II, стр. 119.

130 Տե՛ս Е. К. Саркисян, Политика Османского правительства в Западной Армении, стр. 157.

կամներ ու դաշնակիցներ, այլ ունի միայն մշտական շահ, որը պետք է բոլոր միջոցներով պաշտպանել[131]։ Երբ պետք էր, անգլիական դիվանագետները քուրք փաշաներին ներկայացնում էին որպես բարի բեհներ, «քրիստոնյաներին հովանավորողներ», չանքեր չէին խնայում Ռուսաստանի ազդեցությունը Արևմտյան Հայաստանում քուլացնելու համար[132]։ Իսկ Արևմտյան Հայաստանն իրոք կռվախնձոր էր դարձել։ Եթե Ռուսաստանն ուզում էր հայկական վիլայեթները միացնել իրեն, ապա մյուս տերությունները՝ Անգլիան, Գերմանիան, Ֆրանսիան ձգտում էին Արևմտյան Հայաստանը պահել Թուրքիայի կազմում, ուժեղացնելով այնտեղ իրենց ազդեցությունը։

Կոտորածներից տուժած հայերին օգնելու համար կազմակերպվեցին Շոտլանդիա-Հայկական ընկերություն և այլ բարեգործական կազմակերպություններ, որոնք հետապնդում էին հայկական շրջանակներում ուժեղացնել անգլիական ազդեցությունը։ Սակայն հայերի նվիրվածությունը Ռուսաստանին աներկբայելի էր և հետևողական։ Նրանք աղատության հույսը կապում էին միայն Ռուսաստանի հետ։ Հայ գործիչները հայտարարում էին, որ «հայերի վիճակը կփոխվի միայն այն ժամանակ, երբ նրանց երկրամասը կգրավվի ռուսական զորքերի կողմից»[133]։ Ռուսաստանի զինվորական գործակալ Ն. Երմոլովը 1895 թ. հոկտեմբերի 25-ին Լոնդոնից հաղորդել է հայ ականավոր գործիչներից մեկի հետևյալ խոսքերը. «Մենք Անգլիայի գործիքը չենք, այլ մեր դրժբախտության ու ցավերի գործիքն ենք։ Թուրքական առակն ասում է. «Խեղդվողը բռնում է օձից»։ Հայերը լավ էին հասկացել լորդ Դեֆֆերինի կոստանդնուպոլսում արտասանած խոսքերը. «Անգլիան կարող է միայն նավատորմիդով օգնել, իսկ նրա նավատորմիդը նոյի տապանը չէ, որ կարողանա կանգ առնել Արարատի վրա»[134], Ցարական կառավարությունը սարսափում էր հայերի ազատագրական պայքարից և այն վարակիչ օրինակ էր համարում Անդրկովկասի իր հպատակների համար։ Այնուհանդերձ հայ ժողովուրդը իր ազատագրության հույսը կապում էր Ռուսաստանի և ռուս ժողովրդի օգնության հետ։

Հայերը ամբողջովին նվիրված էին Ռուսաստանին, սակայն ցարիզմի երկդիմի քաղաքականությունը, այն ժամանակ Բ. Դուանը հովանավորելու գիծը հիասթափություն էր առաջացնում ազատության կարոտ հայ ժողովրդի մեջ։ Հայկական կոտորածների ժամանակ ցարական դիվանագիտության ամբողջ ուշադրությունն ուղղված էր Հեռավոր Արևելքի վրա, դրա համար էլ նրանք հայերի պատճառով չէին ցանկանում միջամտել Թուրքիայի գործերին։ Դեռ ավելին. ռուսական դիվանագիտությունը սուլթանի հայաջինջ քաղաքականության դեմ բարձրացող շարժումը որակեց որպես «միջազգային հեղափոխության մի մասը, որը պետք է ճնշել հենց սկզբում»[135], Ցարիզմը ձգտում էր Արևմտյան Հայաստանը դրավել, բայց վտանգ էր զգում, որ հայկական շարժումները կտարածվեին Անդրկովկասի ռուսական տիրակալության շրջաններում։ Դրանով է բացատրվում Լոռատովկու-Ռոստովսկու լկտի հայտարարությունը. «Մենք ուզում ենք Հայաստանը, առանց հայերի»։ Մեկ ուրիշ անգամ նա

131 Տե՛ս А. С. Ерусалимский, Внешняя политика и дипломатия германского империализма в конце XIX в., М.—Л., 1948, стр. 283.

132 Տե՛ս Е. К. Саркисян, Նշված աշխ., էջ 158։

133 Նույն տեղում, էջ 165։

134 Նույն տեղում, էջ 166։

135 А. С. Ерусалимский,, Նշված աշխ., էջ 303.

ասել է. «Մենք չենք ուզում հայկական Բուլղարիա», Ռուսական սահմանագրությունում ինքնավար Հայաստան ունենալը ևս հաճելի չէր ցարիզմին, բանի որ հայ ժողովրդի ազատատենչ ոգին սարսափ էր ազդում բոլոր բռնակալներին։ Ահա թե ինչու բոլշևիկները, մերկացնելով լորանով-ռոստովսկիներին, գրել են, որ ամբողջ Եվրոպան համոզվեց, «Աբդուլ Համիդի այսպես ասած բարեհոգության մեջ, որը մորթոտեց հայ ժողովրդից 300 հազ.»[136], ցարիզմը, սակայն, չէր հասկանում, որ «հոտոտելով հայերին, Աբդուլ Համիդը ոշնչացրեց ռուսական ուժերը, ռուսական համակրանքը»,— գրում է Ա. Ամֆիտեատրովը[137]։

Այսպիսով, ցարական դիվանագիտության այդ քաղաքականությունը շատ վտանգավոր էր ու հայ ժողովրդի համար ճակատագրական հետևանքներ ունեցավ։

Գերմանական իմպերիալիզմը, հատկապես Վիլհելմ երկրորդի Թուրքիա ժամանելուց հետո, բացե ի բաց պաշտպանում էր Աբդուլ Համիդի ջարդարարական քաղաքականությունը։ Թուրքիան մեծ տերությունների միջև աճող հակամարտությունների պայմաններում իր փրկության հույսը կապում էր կայզերական Գերմանիայի հետ։ Այդ հակասություններից Աբդուլ Համիդը խորամանկորեն սկսեց օգտվել, հատկապես Հայկական հարցի ձախողման գործում։

Սկսած 1882 թ. Թուրքական բանակի վերակառուցումն ու զինումը իր ձեռքը վերցնելով, կայզերական Գերմանիան մեծ քանակությամբ ռազմական պատվերներ ստացավ և Թուրքական շուկայում իշխող դիրք գրավեց։ Թուրքական բանակը զինելով Ռուսաստանի դեմ, Գերմանիան միաժամանակ ձգտում էր նրան սահմանակից Արևմտյան Հայաստանի էկոնոմիկայի և առևտրի բնագավառում ևս իր ազդեցությունը տարածել։ Սակայն թե՛ ամբողջ Փոքր Ասիայի տնտեսական կյանքում և թե՛ տպրանքափոխանակության ասպարեզում, հայերը կարևոր դեր էին խաղում։ Այստեղից էլ գերմանական իմպերիալիզմը չկարողանալով հանդուրժել իրեն դիմադրող և Ռուսաստանին նվիրված այդ ուժը, Թուրք ջարդարարների ձեռքով սկսեց ծրագրեր կազմել հայկական այդ ըմբոստ ու գործարար տարրից օր առաջ ազատվելու համար։ Կառուցելով Բաղդադի երկաթուղին, Գերմանիան նպատակ էր դնում Փոքր Ասիայի միահեծան տերը դառնալ։ Սկսեց սրվել մեծ տերությունների, հատկապես Անգլիայի և Գերմանիայի, ինչպես նաև Անգլիայի և Ռուսաստանի հակամարտությունը։ Բեռլին-Բաղդադ գիծը պատնեշ էր ստեղծում Ռուսաստանի առջև և սլաքը ուղղում էր դեպի Հնդկաստան։ Գերմանիան Եվրոպայից Ասիա մեկնվող կամրջի տեր ու տիրական էր դառնում, որը խոշոր հարված էր մեծ տերություններին։

Նման վիճակը, անկախ գոյություն ունեցող հակասություններից, ստիպեց Անգլիային և Ռուսաստանին, իրար հետ մերձենալու։ Բաղդադի երկաթուղու կառուցմանը Անգլիան բացե ի բաց հակադրվեց՝ 1903 թ. հրաժարվելով մասնակցել նրա ֆինանսավորմանը։ Ռուսաստանն ու Ֆրանսիան ևս կանգնեցին Անգլիայի դիրքերում։

Գերմանիան իր գավթողական պլաններն իրագործում էր Թուրքիային հովանավորելու և պաշտպանելու պատրվակի տակ և վճռականապես դեմ էր

---

136 «Рабочая правда», 27 июля 1913 г.

137 Ա. Վ. Ամֆիտեատրով, նշված աշխ., էջ 39։

հայերի վիճակը բարելավելու համար բարենորոգումներ անցկացնելուն, քանի որ նրանք ծրագրում էին իրենց տիրապետությունը հաստատել ամբողջ Օսմանյան կայսրության նկատմամբ։ Հայկական ջարդերի ժամանակ Գերմանիան ամեն կերպ հրահրում էր Անգլիայի և Ռուսաստանի ընդհարումը, ցանկանալով թուլացնել նրանց դիրքերը Թուրքիայում և ինքը տիրապետող դիրք գրավել։ Իսկ հայկական ջարդերը գերմանական դիվանագիտությունը համարում էր արյունոտ սուլթանի «իրավունքն ու սուվերեն պարտականությունը»[138]։

Այսպիսով, կայզերական Գերմանիան ոգեշնչում և պաշտպանում էր Աբդուլ Համիդի չարդարար քաղաքականությունը, հայերին ոչնչացնելու, կամ քե անապատները քշելու և Բաղդադի երկաթուղագծի վրա որպես աշխատող ուժ օգտագործելու, որպեսզի մեկընդմիշտ վերջ տրվի հայկական սեպին և Ռուսաստանի միջամտությանը։

Թուրքիայի անձևնմխելիությունը և սուլթանի գահը բոլոր միջոցներով պաշտպանում և Հայկական հարցը զոհաբերում էին իրենց շահերին ֆրանսիական իմպերիալիստները։ Թուրքական կառավարության 143,2 միլ. թուրքական լիր կազմող պարտքի 62,9 տոկոսը պատկանում էր ֆրանսիական բանկիրներին, դրա համար էլ նրանք չէին ուզում հայերի պատճառով սուլթանին պատերազմի մեջ քաշել[139]։ Նրանց ավելի շուտ հետաքրքրում էր այդ պարտքերի գանձումը, քան հարյուր հազարավոր հայերի բախտը, քանի որ Թուրքիան շատ հարմար էր ֆրանսիական կապիտալի տեղադրման համար, որտեղից նրանք կորզում էին հսկայական շահույթ։ Ֆրանկո-անգլիական կապիտալի վրա հիմնված Օսմանյան բանկը իր հսկողության տակ էր պահում Թուրքիայի պետական ֆինանսները։ Դրանով էր բացատրվում այն փաստը, որ ֆրանսիական հյուպատոսները Դամասկոսում, Հալեպում, Բեյրութում, Տրապիզոնում և փոխ-հյուպատոսները էրզրումում, Վանում, Սվասում և Դիարբեքիրում ընդհանուր ուշադրություն էին տալիս անտեսական ու քաղաքական գործերին։ Նրանց դերը մեծ էր նաև կուլտուրայի ու լուսավորության բնագավառում։

Այդ բոլորի նպատակն էր ուժեղ դիրքեր գրավել ամբողջ Թուրքիայում և հատկապես Արևմտյան Հայաստանում և թույլ չտալ Ռուսաստանի կողմից այն գրավելուն։ Ֆրանսիացիներն աշխատում էին իրենց կողմը գրավել հայերին Արևմտյան Հայաստանում և Կիլիկիայում։ Միսիոներական կազմակերպությունները հայերի մեջ կաթոլիկության տարածելու համար գործադրում էին բոլոր միջոցները։ 1894—1896 թթ. ջարդերի ժամանակ հայերին օգնելու նպատակով ֆրանսիայից մեծ չափով հանգանակություն էր ուղարկվում և այն օգտագործվում էր հայերին հավատափոխելու նպատակով։ Նրանք բացեիբաց հայտարարում էին, «միայն կաթոլիկները կարող են օգտվել մեր հովանավորությունից և պաշտպանությունից... Դարձեք կաթոլիկներ. ձեր բոլոր գրժբախտությունները կանհետանան»[140]։

Ֆրանսիական իմպերիալիստների Արևմտյան Հայաստանում կենցեհոն կարգով երկաթուղագիծ և խճուղային ճանապարհներ կառուցելու մտադրությա-

---

138 *А. С. Ерусалимский*, Նշված աշխ., էջ 238։

139 *А. Д. Новичев*, Очерки экономики Турции до мировой войны. М.—Л., 1937, стр. 228.

140 ՌԱՔԱ, Ֆ. «Կոստանդնուպոլսի դեսպանություն», գ. 235, թ. 43։

նը խանգարեց 1900 թ. Բ. Դռան և Պետերբուրգի միջև կնքված համաձայնագիրը, որով արգելվում էր Արևմտյան Հայաստանում երրորդ պետության կողմից ճանապարհների կառուցումը։ Ռուսաստանն իր կողմից պարտավորվում էր արգելել մասսայական ջարդերի ժամանակ Արևմտյան Հայաստանից անդրկովկաս փախած հայերի վերադարձը հայրենիք։

Ամերիկյան իմպերիալիստները ևս տեղի բնակչության մեջ իրենց տնտեսական և քաղաքական ազդեցությունն ուժեղացնելու նպատակով, սկսած XIX դարի առաջին կեսից միսիոներական գործունեություն ծավալեցին Թուրքիայում, հատկապես Արևմտյան Հայաստանում։ Ամերիկյան միսիոներների համար կենտրոններ էին ստեղծվել Էրզրումում, Վանում, Խարբերդում, Բիթլիսում, Այնթափում, Մարաշում և այլուր։ Հրապարակվում էին նաև մեծ քանակությամբ միսիոներական գրականություն, Թերթեր, ամսագրեր և այլն։ Միայն Վանում ստացվում էր 45 օրինակ նման հրատարակություն[141]։

Արևմտյան Հայաստանի նկատմամբ ԱՄՆ-ի իմպերիալիստների պլանների մասին Ջոն Ռիդը ասել է. «Ամերիկյան կապիտալիստները ցանկանում են հայերի վստահությունը գրավել, որպեսզի իրենց թաթը դնեն Հայաստանի վրա և շահագործեն հայ ժողովրդին։ Հենց այդ նպատակով էլ ամերիկյան միսիոներները դպրոցներ են հիմնել Մերձավոր Արևելքում»[142]։

ԱՄՆ-ը բազմիցս հանդես է եկել ի պաշտպանություն Օսմանյան կայսրության «անձեռնմխելիության», դատապարտել սուլթանական բռնապետության դեմ ուղղված ազգային-ազատագրական շարժումները, ամեն կերպ ձգտել այն դարձնել իր ազդեցության շրջան։ ԱՄՆ-ի միսիոներները բորբոքում էին կրոնական գժտություններ, կասեցնում ազատագրական շարժման ամեն մի փորձ։

1894—1896 թթ. հայկական կոտորածների ժամանակ ԱՄՆ-ի իմպերիալիստները շահարկում էին հայ աշխատավորի արյունը Թուրքիայում իրենց դիրքերը ամրապնդելու համար։ Այդ նպատակով ԱՄՆ-ի կառավարությունը պահանջեց Թուրքիայից հատուցել ջարդերի ժամանակ ամերիկյան միսիոներների կրած նյութական վնասները և անմիջապես Ոսկեղջյուր ծոցը ուղարկեց «Կենտուկի» զրահանավը։ Ռազմական ուժի ճնշման տակ սուլթանը համաձայնվեց վճարել 95 հազար դոլար տուգանք և տրամադրել երկաթուղիների կոնցեսիա։

Այսպիսով, մեծ տերությունները շահագրգռված էին Թուրքիայում ամրապնդել իրենց տնտեսական ու քաղաքական դիրքերը, որին հասնելու համար կանգ չէին առնում և ոչ մի միջոցի առջև։ Իմպերիալիստների այդ անհագուրդ շահերի զոհ դարձան հարյուր հազարավոր հայ աշխատավորներ։ Մեծ տերությունների քաղաքության պայմաններում անօգնական հայ ժողովրդի վիճակը գնալով ավելի վատացավ։

8. ՀԱՅԴՈՒԿԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ 90-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՎԵՐՋԵՐԻՆ։ ԱՆԴՐԱՆԻԿԻ «ՄԱՐՏԱԿԱՆ ՀՐԱՀԱՆԴՆԵՐԸ»

Հայդուկային շարժումը Թուրքական բռնակալության դեմ Բալկաններում (չետնիկների) և Արևմտյան Հայաստանում (ֆեդայիների) ազգային-ազատագրական ու գյուղացիության դասակարգային պայքարի յուրահատուկ ձև էր։

141 Տե՛ս E. K. Саркисян, նշված աշխ., էջ 196.

142 «Первый съезд народов Востока. Стенограф. отчет», Петроград, 1920, стр. 123.

Այն տիրող կարգերի դեմ ուղղված ժողովրդի բողոքն էր, նրա ընդվզումը։ Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումն իր բնույթով ժողովրդա-գյուղացիական, բուրժուա-դեմոկրատական էր։ Այն ուղղված էր ֆեոդալական-աբսոլյուտիստական հարաբերությունների վրա խարխլված սուլթանական բռնապետության հայահալած քաղաքականության և սոցիալական կեղեքումների դեմ։ Չնայած ազգային հալածանքների էր ենթարկվում Թուրքիայում բնակվող ողջ հայ ժողովուրդը, բայց աշխատավոր զանգվածների հարստահարությունն ավելի ուժեղ էր։ Եվ պատահական չէ, որ հայդուկային խմբերը կազմվում էին ազգաբնակչության աշխատավորական դասերից։ ՌՍԴԲԿ II համագումարին Բաքվի կոմիտեի ներկայացրած զեկուցագրի մեջ, որը կազմել էր Բ. Կնունյանցը, հայդուկային խմբերը համարվում էին արևմտահայ շարժման հեղափոխական ուժը[143]։

Հայդուկները պայքարում էին թուրքական պաշտոնյաների, բեկերի և աղաների դեմ, վրեժխնդիր լինում աշխատավորների տառապանքների համար։ Նրանց նպատակն էր ստիպել Բ. Դռանը բարենորոգումներ կատարել, վերջ տալ բռնություններին խաղաղ բնակչության նկատմամբ։ Նրանք ժողովրդի շահերի հերոս պաշտպաններն էին։

Հայդուկային շարժումը հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության մեջ կարևոր տեղ է գրավում։ Այն բարձր է պահել հայ ազատագրական պայքարի ոգին, ժողովրդին ներշնչել, որ նա կարող է ազատագրվել միմիայն պայքարի ճանապարհով։

Հայ ազատագրական պայքարում հայդուկային շարժման ականավոր դեմքերից էին Աղբյուր Սերոբը, Հրայրը, Անդրանիկը, Գևորգ Չավուշը և ժողովրդի ծոցից ելած քաջարի շատ այլ մարտիկներ։ Նրանք կոչ էին անում հայ ժողովրդին միասնական ուժերով պայքարի դուրս գալ թուրքական բռնապետության դեմ և ազատագրվել անգործուն լծից։ Այդ նպատակին հասնելու համար օգտագործում էին բոլոր հնարավոր միջոցները։

90-ական թվականների կեսերին կազմակերպելով Արևմտյան Հայաստանի մի շարք շրջանների բնակչության ինքնապաշտպանությունը, նրանք շարունակում էին կարևոր դեր խաղալ արևմտահայության ազատագրական պայքարում նաև 90-ական թվականների վերջերին։

Հրայրը (Արմենակ Ղազարյան) 90-ական թվականների վերջերին սկսում է խուսափել խմբակային կռիվներից և մեծ նշանակություն տալով ժողովրդական շարժումներին, աշխատում է պայքարի մեջ ներքաշել ավելի մեծ զանգվածներ։ Նա դատապարտում էր ազգային ուժերը ջլատելու բուրժուական կուսակցությունների վարքագիծը և պայքարի արկածախնդրական տակտիկան։

Հրայրը թուրքական բռնապետության դեմ ոչ միայն հայերին, այլև քրդերին ոտքի հանելու նպատակով շրջում էր Տարոնի քրդական գյուղերը։ Համիդյան իշխանությունները նկատել էին Հրայրի գործունեությունը և նրան վերցրել հսկողության տակ։ Խուսափելով հետապնդումից, Հրայրը առ ժամանակ իջավ սարերից և հաստատվեց Ղզլաղաջում, արտաքուստ ձևացնելով, թե հեռու է հայդուկային շարժումներից, մինչդեռ իրականում ղեկավարում էր այդ շարժումները։ Նա ուղղություն էր տալիս հայդուկների գործողություններին, լուծում նրանց վեճերը, կազմակերպում սպառազինումը և այլն։ Շնորհիվ Հրայ-

143 Տե՛ս «II съезд РСДРП. Протоколы», М., 1959, стр. 530.

րի ձեռնարկած միջոցառումներին, մի շարք տեղերում հայդուկները ետ շպրտեցին աղայական հրոսակախմբերին և ազատեցին գյուղացիների հոտերը։

Այս շրջանում սկսում է հայդուկային ակտիվ գործունեություն ծավալել նաև Անդրանիկը (Անդրանիկ Օզանյան)։ Դեռ փոքր հասակից ականատես լինելով թուրքական պաշտոնյաների վայրագություններին, որոնք գործադրվում էին հարստահարվող զանգվածների, հատկապես հայերի հանդեպ, Անդրանիկը կոփվեց, առնականացավ ու դարձավ հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի հերոսը։

Ծանոթանալով հայ ժողովրդի պատմությանն ու մշակույթին, նա լցվում է ատելությամբ դեպի բռնակալներն ու հարստահարողները և իր կյանքի նպատակը դարձնում նրանց դեմ պայքարը։

Հակառակ դաշնակցական գործիչների, որոնք հայ ազգային շարժումները համարում էին իրենց ծառայության արգասիքը, Անդրանիկը գրել է. «Այս երդումը եղավ՝ առանց մեզ ըսելու, թե ինչ կուսակցության կպատկանինք. մենք չգիտեինք ալ, թե կան զանազան կուսակցություններ»[145]։ Այդ տարիներին արևմտահայությունն, անկախ այս կամ այն կուսակցության գոյությունից, ելնելով իր ծանր վիճակից, ազատագրական պայքար էր ծավալում թուրքական բռնակալության դեմ[146]։ «Թե՛ մշեցին, և թե՛ սասունցին երբեք չհետաքրքրվեցան այդ կուսակցությանց ծրագիրներով... Մենք՝ մշեցի և սասունցիներս, միմիայն մեր ազգի փրկության սիրույն ամեն զոհողություն հանձն կառնեինք...»[147]։

Ազատության կարոտ ժողովուրդն իրոք պայքարի էր ելնում առանց գաղափար ունենալու այդ կուսակցությունների ծրագրի կամ նպատակների մասին, ըստ որում առանձին տեղերում ստեղծված կազմակերպություններն էլ աստիճանաբար դառնում էին տեղական հոգսերով զբաղվող ընկերություններ։ Այսպես, 1892 թ. Մալաթիայում ստեղծվել էր հնչակյաններին համակրող ու մեծ մի խումբ, որը, սակայն, իր կուսակցական աշխատանքով ոչնչով աչքի չի ընկել, իսկ դաշնակցականների առաջին ներկայացուցիչը Մալաթիա է այցելել միայն 1908 թ. և ստեղծել համակրողների խումբ՝ «Մասյաց ընկերություն»[148] անվան տակ։ Այդպես էր նաև Արևմտյան Հայաստանի շատ շրջաններում։

Աշխատելով Շապին Կարահիսարում որպես հյուսն, Անդրանիկը 1883 թ. ականատես է լինում, թե ինչպես թուրքական ոստիկանը ծեծում է անմեղ հայերից մեկին, ծաղր ու ծանակի ենթարկում նրա լեզուն ու հավատը։ Նա հարձակվում է ոստիկանի վրա և անմեղ զոհին ազատում նրա ձեռքից։ Թուրքական իշխանությունները ձերբակալում են հանդուգն երիտասարդին ու փակում բանտում։ Սակայն բարեկամների միջնորդությամբ Անդրանիկը ազատվում է բանտից և 1884 թ. մեկնում Կ. Պոլիս։ Այստեղ նա աշխատում է որպես հյուսն և մտերմանում հայրենասեր երիտասարդների հետ։

Կ. Պոլսում Անդրանիկը շփվում է հասարակական տարբեր շրջանների

---

145 «Անդրանիկի հուշերը», I մաս, «Հայրենիք», 1930, էջ 74—75։

146 Տե՛ս Ս. Պ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 118—127։

147 «Հարազատ պատմություն Տարոնո», Կահիրե, 1962, էջ 67, խմբագրությամբ Աղան Տարոնցի, հեղինակներ Սարգիս և Միսակ Բդեյան։

148 «Պատմութիւն Մալաթիոյ հայոց», էջ 875—878։

հետ, լայնացնում իր մտահորիզոնը և տեսնում գոյություն ունեցող ազգային հալածանքներն ու բռնություններ։ Չհանդուրժելով հայերի նկատմամբ կիրառվող վայրագությունները, Անդրանիկը 1892 թ. սպանում է մայրաքաղաքի հայատյաց ոստիկանապետին և իշխանությունների հետապնդումներից ազատվելու համար տեղափոխվում Ռոմինիա։

Ստեղծված վիճակից դուրս գալու ելքն Անդրանիկը տեսնում էր հայ ժողովրդի ուժերը միավորելու և դրանից նրան օգնություն կազմակերպելու մեջ։ Դրա համար էլ նա գնում է մի շարք հայ գաղթավայրեր և լայն աշխատանք ծավալում, ծանոթանում բալկանյան ժողովուրդների ազատագրական պայքարին։ Նա մի խումբ ընկերներով լինում է նաև հայրենիքում, շրջում Տարոնի, Սասունի, Վանի և մի շարք այլ շրջաններում։ 1895 թ. Անդրանիկն անցնում է Ռուսաստան, գնում Սևաստոպոլ, Յալթա և այլ տեղեր ու կազմելով 26 հոգուց բաղկացած մի զինված խումբ, 1895 թ. հուլիսին վերադառնում է Արևմտյան Հայաստան։ Բասենի գաշտով խումբը ծպտյալ հասնում է Գումաձոր, որտեղ նրանց տեղացի կտրիճներից միանում են Ալիքսանդրը և Սողոն։ Ամենուր հայ գյուղացիները պատսպարում, կերակրում և օգնություն էին ցույց տալիս նրանց։ Աննկատ մնալու համար օգոստոսին խումբը ցրվում է խնուսի գյուղերում։

Մոտ քսան օր Անդրանիկն ու նրա ընկերները մնում են Բերդակ, Ալվառինջ, Հավատորիկ գյուղերում և Առաքելոց վանքում։ Ապրոն (Մկրտիչ Սահակյան) մեկնում է Մուշ, որտեղ հավաքվել էին մի շարք երկրների հյուպատոսներ՝ Սասունի 1894 թ. դեպքերի հետ կապված հարցերը քննելու համար։ Նա հետևում էր այդ հարցերի քննարկման ընթացքին և տեղյակ պահում հայրենասիրական խմբերին։ Անդրանիկը գրում է. «Ապրոյից լուր եկավ, որ մենք նորեն Սասուն բարձրանանք»[149]։

Անդրանիկը վերհիշելով, որ այդ օրերին Սասունը ազատ շունչ էր քաշում, նշում է. «Հեղափոխականը տուրքի պես կպաշտնին»։

1896 թ. Սասունում իրարից անջատ գործում էին Անդրանիկի, Աղբյուր Սերոբի և Սպաղանցի Մակարի խմբերը։ «Այս երեք խմբերը շկարենալով իրար հետ համաձայնություն գոյացնել, ամեն մեկը իր խելքի փչածին համաձայն կշարժերը»[150]։ Բնակչությունը ցանկանում էր այդ խմբերը միավորել և ազատագրական շարժմանը մի միասնական ընթացք տալ։ Անդրանիկը ևս ջանքեր էր գործադրում ուժերը միավորելու և ավելի կազմակերպված ու մասսայական պայքար մղելու համար։ Նա մեկնում է Խլաթ, որտեղ գտնվում էր Աղբյուր Սերոբի խումբը։ Նրանք պայմանավորվում են միացնել իրենց խմբերը և գործել միասին։ Ծանոթանալով ազատագրական շարժման ընդհանուր վիճակին, Անդրանիկը համոզվում է, որ նորից պետք է Ռուսաստան վերադառնալ և անհրաժեշտ օգնություն կազմակերպել։ 1896 թ. մարտին Սասունից նա 16 հոգով անցնում է Սևաստոպոլ, ուր մնում է յոթ ամիս, լինում է Յալթայում, Ղրիմի մի շարք վայրերում։ Այստեղ Անդրանիկը եւս գործունեություն է ծավալում, հայ հասարակական շրջաններին ծանոթացնում Արևմտյան Հայաստանի վիճակին, քննարկում ազատագրական պայքարի ծրագիրը, կոչ անում օգնության ձեռք մեկնել թուրքական լծի տակ հեծող հայ ժողո-

149 «Անդրանիկի հուշերը», II մաս, «Հայրենիք» ամսագիր, 1930, էջ 107։
150 «Հարազատ պատմություն Տարոնի», էջ 103։

վրդին։ Ղրիմում, Հյուսիսային Կովկասում. Անդրկովկասում շրջագալելուց հետո, Անդրանիկը 1897 թ. վերադառնում է Արևմտյան Հայաստան։ «Խիզճս հանգիստ չէր,— գրում է Անդրանիկը,—գիշեր-ցերեկ մտածմունքս հրացանն ու Երկիրն էր»[151]։

Սևաստոպոլից վերադարձի ճանապարհին Կարսի մոտ մի թուրք ծերունի Նրանց հյուրասիրելով ասում է. «Բարեկամնե՛ր, այս երկու տարվան մեջ հարյուրավոր երիտասարդներ էս ճամփով կանցնեն։ Չեմ գիտեր պատճառն ի՞նչ է։ Ես կյանքս հոս եմ անցուցեր և երբեք էսչափ հայ չեմ տեսեր էս կողմն անցած։ Ում որ կհարցնես, կըսեն՝ վանեցի ենք, մշեցի ենք, բիթլիսցի ենք։ Բայց նրանց ճանապարհը Տրապիզոնով է, ինչո՞ւ այնտեղից չեն երթար։ Այն ճանապարհը շատ անապահով է, գող, ավազակներ շատ կան. նրա համար մենք այստեղից կերթանք։ Հը՛մ,— ըսավ քմծիծաղով,— ես ամեն բան գիտեմ. մեր սուլթանը և պաշտոնյաներն են ավազակ, իսկ ժողովուրդն անոթի կմընա»[152],



Աղբյուր Սերոբ (Սերոբ Վաղոաճյան)

1897 թ. հուլիսի 15-ին Անդրանիկը մի շարք ընկերների հետ մեկնեց Սանամերկ, Հաջորդ օրը նրանք հասան Խոյից ոչ հեռու ընկած հայկական գյուղերը։ Այստեղից էլ առաջ շարժվելով, անցան Թուրքիա։

1898 թ. ձմռանը Գուրգենը, Ազբյուր Սերոբը և մյուսները հաստատվել էին Գելիեզուանում։ 1898 թ. գարնանը Ցրոնք գյուղում դավաճանության զոհ են դառնում ականավոր հայդուկներ Գուրգենը, Ռուբենը, Փարսադանը, Տիգրանը, Վարդանը, վանեցի Կարապետը և ալաշկերտցի Մկրտն։ Նրանց թաղման սգահանդեսին Սերոբը հայտարարում է. «Ընկերնե՛ր մեռան, մենք մնացինք, սրանից վերջ մենք գործերը պիտի շարունակենք»[153],

Ազբյուր Սերոբը հայտնի էր իր քաջագործություններով։ Անդրանիկը և Սերոբը ջերմ մտերիմներ էին։ Այդ մասին Անդրանիկը գրել է. «Մինչև վերջին շունչը ինձ իրեն զավակն ալ ավելի կսիրեր։ Ես հոգով հավատացած էի այդ բանին։ Ինչ որ ալ հարցնեի իրենց բացակայության ըրած գործողություններ նա միշտ կըսեր. «Ինձնից մի հարցներ, ինչ որ խելքդ կտրեն էն ըրէ»[154], Սերոբը Անդրանիկի մասին հիացմունքով էր խոսում. «Այս տղան մեծ անուն պիտի ունենա»։

151 «Անդրանիկի հուշերը», III մաս, էջ 117։
152 Նույն տեղում։
153 Նույն տեղում, IV մաս, էջ 116։
154 Նույն տեղում, էջ 117։

90-ական թվականների վերջերին Աղբյուր Սերոբի անունը սարսափ էր ազդում թուրք աստիճանավորների ու ցեղապետերի շրջանում։ Նա մարտնչում էր համիդյան բռնապետության դեմ իր եղբայրների հետ միասին, իսկ կինը՝ Սոսեն, միշտ իր ամուսնու մոտ էր, ժողովրդի ազատագրության համար պայքարողների շարքերում։

Թուրքերի՝ Սերոբին որսալու ճիգերը ապարդյուն էին անցնում։ Սակայն Հյուսեին էֆենդին կաշառում և իր գործակիցն է դարձնում Սասունի Գեղաշեն գյուղի բնակիչ Ավոյին, որը 1899 թ. թունավորում է Սերոբին և հայտնում ցեղապետ Խալիլ աղային։ Խալիլը իր խմբով և թուրքական մի զորամասի օգնությամբ գիշերը գաղտագողի պաշարում է Սերոբի հանգրվանած Գելիեգուզան գյուղը և լույսը բացվելուն պես հարձակման անցնում։ Սերոբը իր ընտանիքի և ընկերների հետ կռվելով բարձրանում է Անդոք լեռը։ Խալիլ աղայի ավազակախումբը շրջապատում է հայդուկապետին, որը այդ անհավասար մարտում մինչև վերջին փամփուշտը կռվում ու նահատակվում է[155]։

Զոհվում են նաև Սերոբի եղբայրները՝ Մխոն և Զաքարը։ Սերոբի հետ էին նրա 12 ընկերները։ Կռվի թեժ պահին Սոսեն արտակարգ հերոսությամբ տղայի՝ Հակոբի հետ օգնում էր ամուսնուն։ Ծանրով զոհվում է նաև Հակոբը։ Դրանից հետո միայն թուրքերին հաջողվում է վիրավոր և գիտակցությունը կորցրած Սոսեին գերի վերցնել։ Աղբյուր Սերոբի գլուխը ավինի ծայրին հագցրած՝ Խալիլ աղան շրջել է տալիս Մուշի փողոցներում, ապա տանում Բիթլիս, ցանկանալով սարսափ տարածել հայերի մեջ։ Սակայն թուրքական կառավարությունը, զգալով ընդհանուր հուզումների վտանգը, Սերոբի գլուխը հանձնում է Բիթլիսի հոգևոր առաջնորդ Ջիլինկերյանին, որը հողին է հանձնում ս. Կարմրակ եկեղեցու բակում։ Այստեղ է թաղված նաև 1893 թ. թուրքական իշխանությունների կողմից կախաղան բարձրացված Մարգար վարժապետը[156]։ Հետագայում հայ հայրենասերները Սերոբի շիրիմի վրա հուշարձան կանգնեցրին։

Սերոբի կորուստը ցնցող տպավորություն գործեց ազատագրական պայքարի մարտիկների շրջանում։ Սերոբի մահից հետո խմբի ղեկավար է ընտրվում Անդրանիկը։

Անդրանիկը որոշում է Սերոբի և անհամար անմեղ զոհերի վրեժը լուծել և սանձահարել բռնակալներին։ 1900 թ. հոկտեմբերին տեղեկանալով, որ Խալիլը Խաս գյուղից պետք է մեկներ և անցներ ս. Աղբերիկի կիրճով, կարգադրում է հայդուկներին դարանակալել և սպանել նրան։ Կարգադրությունը կատարվում է։ Խալիլի մոտ Անդրանիկը գտավ նրա 13 հայ լրտեսների կնիքները։ Այդ դավաճանները նույնպես ստացան իրենց արժանի պատիժը։ Խալիլի սպանությունը թուրք աստիճանավորներին ու ցեղապետերին զսպելու գործում կարևոր նշանակություն ունեցավ[157]։ Անդրանիկի հանձնարարությամբ Մուշում լայն աշխատանք էր տարվում ազգային-ազատագրական պայքարը ծավալելու ուղղությամբ։

Խտանիում հայդուկների ընդհանուր ժողով գումարվեց, որի մասնակիցները հավատարմության երդում տվեցին Անդրանիկին։ Ազատասիրական պայ-

---

155 Տե՛ս «Հարազատ պատմություն Տարոնո», էջ 105։

156 Տե՛ս նույն տեղում, էջ 82։

157 Տե՛ս Ծ. Պ. Աղայան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, էջ 183—185։

քարի մարտիկները հայտարարում էին. «Հրամանատարության պաշտոնը տալու ենք այն ընկերոջ, որ Սերոբի մահվան հետո առաջնորդել է ֆեդայիներու շարքերը... Անդրանիկն է այդ առաջնորդը, և եթե անգամ նա մեռած լինի, անոր դիակը մեր դրոշակին հետ պետք է տարվի մեր առջևեն դեպի կռիվ ու ազատություն»:

Բազմաթիվ նյութեր ցույց են տալիս, որ Անդրանիկը երբեք նախահարձակ չի եղել, այլ պաշտպանել է անօգնականներին: Շինիկցի և սեմալցի հայ գյուղացիների հետ զրուցելիս, մի առիթով Անդրանիկը նկատել է. «Մինչև հիմա ինչ կռիվ է եղել, որ ես իմ կողմես հարձակում ընեի. կռիվ մը ցույց տվեք, որ ես իմ կողմես ուղիղ տված բլլամ»[158]:

Անդրանիկի մղած կռիվները, ինչպես նաև հայ ժողովրդի կենաց և մահու մյուս մարտերը, նպատակ ունեին թուրքական արյունոտ յաթաղանից պաշտպանել հայրենիքն ու ժողովուրդը:

* * *

Անդրանիկը սկզբից ևեթ կարևոր նշանակություն էր տալիս ազատագրական շարժումների ռազմական նախապատրաստմանը, նրա ղեկավարների ու մասնակիցների մարտական պատրաստականությանը: Հատկապես Արևմտյան Հայաստանի լեռնային պայմաններում թուրքական բռնակալության դեմ մարտեր վարելու գործը նա մեծ արվեստ էր համարում, հատուկ ուշադրություն էր դարձնում հայդուկների կոփվածությանը, նրանց ազնվությանն ու նվիրվածությանը: Այդ սկզբունքներից ելնելով, նա կազմեց հատուկ հրահանգներ, որոնք ուսումնասիրում և գործադրում էին նրա բոլոր մարտիկները: Այդ հրահանգներն սկզբում ձեռագիր էին, ապա 1907 թ. լույս տեսան ծնեվում՝ «Մարտական հրահանգներ» վերնագրով: Անդրանիկն այդ գրքույկը նվիրեց ազատագրական պայքարում ընկած իր ընկերների հիշատակին: «Մարտական հրահանգները» ռազմական գործողություններ վարելու մի ուշագրավ ձեռնարկ է, որտեղ, հաշվի առնելով Արևմտյան Հայաստանի առանձնահատուկ պայմանները, տրվում են հայ ժողովրդի ազատագրության համար պարտիզանական կռիվների տակտիկան ու կազմակերպական դրույթները:

«Մարտական հրահանգներ» գրքույկի 15 բաժինները պարունակում են ազատագրական մարտեր վարելու շատ հետաքրքիր խորհուրդներ՝ սկսած գինվորական խորհրդից, մինչև առանձին խմբերի ու անհատների գործունեությանը վերաբերող հրահանգները, ապա և երիտասարդությանն ուղղված պատգամները:

Անդրանիկի մշակած կանոնադրության համաձայն, ազատագրական պայքարի ղեկավար մարմինը «Գինվորական խորհուրդն» է, որն իր կազմում պետք է ունենա առնվազն 12 փորձված անդամ: Հաշվի առնելով Թուրքիայում տիրող դաժան պայմանները, այն կարող է գտնվել երկրից դուրս, մի որևէ հարմար վայրում, որտեղից հնարավոր կլինի սերտ կապեր պահպանել մարտական միավորումների հետ և ղեկավարել նրանց գործողությունները: Մարտական միավորումների մեջ ընդգրկված երիտասարդներից պահանջվում էր, որ նրանք երդում տան «Գինվորական խորհրդին» և «ուխտեն իրենց անձը

158 «Անդրանիկի հուշերը», VII մաս, էջ 81:

զոհել հայրենիքի ազատության և ինկած հազարավոր նահատակներու համար»[159]։

«Զինվորական խորհուրդը» հոգ է տանում հրամկազմի ու մարտիկների ռազմական պատրաստականության, զենքի ու զինամթերքների պաշարներ կուտակելու, մարտական խմբերի ձևավորման և նրանց կազմակերպման մասին։ Դրսից Արևմտյան Հայաստան անցնող խմբերը պետք է բաղկացած լինեին 35, 55, 75 կամ 95 մարտիկներից։ Հաշվի առնելով թշնամու ուժը, խորհուրդ չէր տրվում 35 մարդուց պակաս խմբեր ուղարկել։

Խմբի կազմում պետք է լինեին ռումբ ձուլողներ և պատրաստողներ, զինագործներ, բժիշկ կամ վիրաբույժ, ատաղձագործ, կոշկակար, դերձակ, լուսանկարիչ և այլն։ Նրա անդամները «բարոյապես բարձր պիտի պահեն ղիրենք և ապրելով ժողովուրդին մեջ՝ լավ տպավորություն պիտի թողնեն անոնց վրա»[160]։ Խումբը պետք է ունենա իր ընդհանուր դրոշը, նշանաբանը և այլն։ Խմբերից յուրաքանչյուրը պետք է բաժանվի տասնյակների՝ իրենց տասնապետով։

Անդրանիկն անհրաժեշտ ցուցումներ է տալիս՝ ելնելով կոնկրետ իրադրությունից և հանգամանքներից. առջևից գնացողները պետք է մշտապես պատրաստ լինեն կրակ վարելուն, կատարյալ տիրապետեն քրդերենին ու թուրքերենին, որպեսզի պատահողների մեջ կասկած չառաջացնեն։ Ճանապարհին կարելի է հանգիստ առնել 10—15 րոպե՝ միայն ուղևկցող-առաջնորդների ցույց տված հարմար տեղերում, համապատասխան տարածության վրա հերթապահներ նշանակելուց հետո, ծխել ծածուկ։ Ճանապարհ ընկնելիս պետք է ստուգել ընկերների ներկայությունը, քանի որ հոգնածությունից ոմանք կարող են քնել և խմբից անջատվել։ Իսկ եթե թշնամու դեմ մարտ մղելը դառնա անխուսափելի, ապա առաջին կրակողները պետք է հայդուկները լինեն, որպեսզի թշնամուն խուճապի մատնեն։

Նշվում են նաև, թե ինչպես դասավորել ուժերը, եթե թնդանոթով է գրոհում թշնամին, և ինչպես որոշել նրա հետապնդությունը, ինչպես դուրս գալ շրջապատումից և մարտ վարելու զանազան մանրամասներ։ Մասնավորապես ընդգծվում է, որ ապացուցված է, թե ետևը ֆեդայի ուրախությամբ կը կռվին 100—200 զինվորի դեմ» և հաղթանակի կհասնեն[161]։

Անդրանիկը այն միտքն էր զարգացնում, որ ռազմական արվեստին տիրապետելը և բարձր կարգապահությունը, համառությունն ու հետևողականությունը մարտիկին դարձնում են անպարտելի, պայմաններ ստեղծում, որ նա միայնակ պարտության մատնի տասնյակ բաշիբոզուկների։

«Խումբը երկրի մեջ» բաժնում նա անդրադառնում է այն բոլոր պայմաններին, որոնք անհրաժեշտ են ռազմական ուժերի համալրումն ապահովելու համար։ Եթե ռազմական գործողությունների հարկ չկա, ապա պետք է խումբը մասամբ ցրել, որովհետև դժվար է հարյուր հոգի կերակրելն ու թաքցնելը»[162]։ Տեղացիները պետք է ուղարկվեն իրենց գյուղերը, ապրեն այնտեղ և կապ պահպանեն խմբի ղեկավարի հետ։ Նրանք միաժամանակ պետք է տեղի երի-

159 Անդրանիկ, Մարտական հրահանգներ, Ժնև, 1907, էջ 7։
160 Նույն տեղում, էջ 8։
161 Նույն տեղում, էջ 24։
162 Նույն տեղում։

տասարդությունից խմբեր կազմեն ու զինավարժություններ անցկացնեն։ Անհրաժեշտ է համարվում զինը և զինամթերք ձեռք բերել, զինապահեստներ պատրաստել, ժողովրդին ինքնապաշտպանության համար զինել և այլն[163]։

Պետք է նաև նախապես մանրամասն ուսումնասիրել հնարավոր պատերազմական գործողությունների վայրը, լուրջ աշխատանք տանել բնակչության շրջանում և բոլորին գաղտնապահության սովորեցնել, վաղօրոք պաշտպանական միջոցներ ձեռնարկել։ Ռազմական գործողությունների ծրագիրը կազմելիս անհրաժեշտ է հաշվի առնել բոլոր հնարավորությունները, հատուկ մարդկանց միջոցով տեղեկություն ստանալ թշնամու ուժերի և նրա դասավորության մասին։ Պետք է ամենայն զգուշությամբ հայտնաբերել լրտեսներին ու դավաճաններին։ Բացի հիմնական խմբերից, պետք է ունենալ նաև մանր խմբեր, որոնք լավ են գործում լեռնային ու անտառային վայրերում, արագաշարժ են։ Այսպիսի խմբերը ժամանակ առ ժամանակ պետք է փոխեն իրենց տեղը, որպեսզի բնակիչները չիմանան նրանց գտնվելու վայրը։ Սակայն նրանք պետք է հատուկ ծածկագրով կամ նշանաբանի միջոցով կապ պահպանեն կենտրոնի ու հարևան խմբերի հետ։

Հետաքրքիր է «Ապստամբություն» բաժինը, որտեղ նախատեսվում է ընդհանուր և ամեն մի առանձին ելույթի համար հատուկ ծրագիր մշակել՝ հաշվի առնելով աշխարհագրական միջավայրը, թշնամու ուժերը։ Այդ ծրագիրը պետք է ներկայացվի «Զինվորական խորհրդի» քննության և մնա խիստ գաղտնի։ Գաղտնապահությունը համարվում էր հաղթանակն ապահովելու կարևոր պայմանը։

«Հրահանգներում» իր արտահայտությունն է գտել հանկարծակի և սրընթաց հարվածի տակտիկան։ Փորը խմբերով թշնամու բազմաքանակ զորաբանակին պարտության մատնելը հաղթանակի հասնելու կարևոր պայմաններից մեկն է։ Ընդգծվում է, որ պետք է նախահարձակ լինել։ Անդրանիկը զգուշացնում է, որ կառավարական զորքերը աքցանի մեջ ընկնելով, կդիմեն խորամանկության՝ առաջարկելով բանակցություններ, «անկե ետքը ալ մի ապասեր կառավարական էներիգներուն, անիկա կուզե քեզի հետ խաբեբայությամբ և շողոքորթությամբ բանակցիլ՝ ընդունիլ։ Ուր որ թշնամիին ուժը քիչ է և համոզվիս, թե քիչ ոհմ տալով կարող ես հաղթել՝ մի ապասեր, հարձակե, բայց միշտ իրիվկան դեմ»[164]։

Անդրանիկը նշում է, որ հայրենիքի ազատության համար մարտնչող «հայդուկային կյանքը... ամենաբարձր կյանքն է աշխարհիս մեջ...»[165], և միաժամանակ զգուշացնում, որ զինվորը, նվիրվելով իր ժողովրդի սրբազան գործին, պարտավոր է լինել խիստ գաղտնապահ ու կարգապահ, վարք ու բարքով մաքուր և անարատ, ունենա համեստ պահանջներ։ «Ուտելիքին պետք է հավասար նայիք։ Խնձոր մըն ալ ունենաք, բաժնելու եք... Տասնապետները՝ կերակուրի ժամանակ առանձին պետք չէ որ նստին... ոգելից ըմպելիները արգիլված է խումբերուն...»[166], կանոնների 13-րդ կետում մասնանշված է. «ժողովրդին հետ սիրով և քաղցրությամբ վարվելու անհրաժեշտությունը»։ Կարեվոր տեղ է հատկացված զինված խմբերի և ժողովրդի կապին, թշնամու դեմ

163 Տե՛ս նույն տեղում, էջ 27։
164 Նույն տեղում, էջ 39։
165 Նույն տեղում, էջ 40։
166 Նույն տեղում, էջ 42։

նրանց համատեղ հանդես գալուն։ Առանց ժողովրդի «քաջալերության և գործնական մասնակցության՝ ոչինչ չենք կրնար ընել»[167]։

«Հրահանգներում» նշվում է նաև, որ նեթե մեկը կառավարությունից փախստական է, պետք է նրան ընդունել։ Նեթե կարող է զինվոր լինել՝ վեց ամիս փորձելուց հետո ընդունել, իսկ նեթե ոչ՝ օգնել արտասահման անցնելու։ Նույն կարգով խումբը կարող է որոշ ժամանակ ստուգելուց հետո փախստական թուրք զինվորներին ևս ընդունել։ Սակայն բոլոր դեպքերում էլ պահանջվում է խիստ զգուշություն և լավ ստուգում, որպեսզի կանխվի դավաճանությունը։

Այս և բազմաթիվ այլ փաստեր հաստատում են Անդրանիկի դիրքորոշումը մյուս ժողովուրդների, ինչպես նաև թուրք ժողովրդի նկատմամբ։ Նա պաշտպանում էր թուրքական դաժան բռնապետության դեմ պայքարող բոլոր ճնշվածներին ազատագրելու սկզբունքը։

Ուշագրավ է նաև «Գյուղական դատեր» բաժինը։ Այստեղ նշվում է, որ նեթե գյուղերում դատական գործ է ծագում, ապա գյուղացիները պետք է խուսափեն կաշառակեր պետական պաշտոնյաների որոգայթին ընկնելուց և իրենցից ընտրված մարդկանց միջոցով վերջացնեն իրենց դատը[168], իսկ նեթե գյուղի ընտրյալները չկարողանան հարցը լուծել, ապա զինվորական խումբը պետք է գործը իր ձեռքը վերցնի և արդարադատ վճիռ կայացնի։

«Քրդերը և քրդական միությունը» բաժնում Անդրանիկը այն միտքն է զարգացնում, որ հայերի, քրդերի և բոլոր ժողովուրդների միասնական ճակատն ու բարեկամական միությունը հրատապ անհրաժեշտություն է սուլթանի հալածանքներին վերջ տալու համար։ Ընդգծելով, որ քրդական ցեղերը մեծ ուժ են թուրքական բռնապետության ձեռքին և կարող են մինչև 150.000 զինվոր հավաքագրել, նա նշում է, որ այդ բոլոր ցեղերը ի վերջո կմիանան հայերի հետ։

«Հրահանգները» ավարտվում են «Երիտասարդություն» բաժնով, որտեղ Անդրանիկը, հանրագումարի բերելով իր երկարամյա պայքարի փորձը, կյանքի դաժան դպրոցում ստացած գիտելիքները, համեստաբար գրում է. «Ես ոչ զինվորական վարժարանի ընթացքը ավարտած եմ, ոչ ալ մասնագիտական նյուտ մը մշակած, հետևաբար հավակնություն չունիմ երբեք մասնագիտական գործ մը ներկայացնելուն»[169]։ Նա նշում է, որ կյանքն է եղել իր դաստիարակը։ Հայրենի երկիրը բարբարոսների լծից ազատելու համար հրահանգում է հայ երիտասարդությանը կազմակերպվել և ռազմական գիտելիքներ ձեռք բերել։

«Մարտական հրահանգները» ավարտվում են հայ երիտասարդությանն ուղղված հայրենասիրական կոչով. «Ես չեմ, որ կ'երազիրեմ ձեզ, արտասահմանյան հայ երիտասարդներ, այլ դժբախտ հայրենիքին հողն ու քարը իրենց արյունով ներկած մեր նահատակներն ու պաշտելի հերոսներն են, որ կոչ կընեն ձեզի՝ զինքի, զինավարժության ու վրեժխնդրության։

Լսեցե՛ք անոնց ձայնը, որ մեր կյանքի ձայնն է»[170]։

«Մարտական հրահանգներում» Անդրանիկը կարողացել է մատչելի և հմտությամբ ներկայացնել հայդուկային կռիվների իր փորձն ու տեսությունը։ Այդ գիրքը հայ ժողովրդի ռազմական պատմության հետաքրքիր և ուշագրավ էջերից է։

167 Նույն տեղում, էջ 43։
168 Նույն տեղում, էջ 71։
169 Նույն տեղում, էջ 76։
170 Նույն տեղում, էջ 78։

ԲԱԺԻՆ Բ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

1. ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԹԵՎԱԿՈՌՈՒՄԸ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ՓՈՒԼԸ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՈՐ ՏԵՂԱՇԱՐԺԵՐ

XX դարի սկզբին ավարտվեց կապիտալիզմի անցումն իր զարգացման բարձրագույն ու վերջին աստիճանին՝ իմպերիալիզմին։ Վ. Ի. Լենինը գրում է. «Եվրոպայի համար բավական հշգրիտ կարելի է սահմանել այն ժամանակը, երբ հին կապիտալիզմին վերջնականապես փոխարինել է նորը. այս ժամանակը հենց XX դարի սկիզբն է»[1]։ Կապիտալիզմի թևակոխումն իմպերիալիզմի դարաշրջանը տնտեսության, արտադրողական ուժերի զարգացման, արտադրության ու իրացման մեջ մեծ տեղաշարժեր առաջացրեց։ Վ. Ի. Լենինը իմպերիալիզմը բնութագրում է հետևյալ հիմնական հատկանիշներով. «1) արտադրության և կապիտալի համակենտրոնացումը, որը հասել է զարգացման այնպիսի բարձր աստիճանի, որ առեղծել է մոնոպոլիաներ, որոնք վճռական դեր են կատարում տնտեսական կյանքում. 2) բանկային կապիտալի ձուլումն արդյունաբերական կապիտալի հետ և այդ «ֆինանսական կապիտալի» բազայի վրա հիմնված ֆինանսական օլիգարխիայի ստեղծում. 3) ի տարբերություն ապրանքների արտահանումից՝ կապիտալի արտահանումն առանձնապես կարևոր նշանակություն է ստանում. 4) առաջ են գալիս կապիտալիստների միջազգային մոնոպոլիստական միություններ, որոնք բաժանում են աշխարհը, և 5) խոշորագույն կապիտալիստական տերությունների կողմից ավարտված է աշխարհի տերիտորիալ բաժանումը»[2]։

Տալով իմպերիալիզմի ընդհանուր բնութագիրը, Վ. Ի. Լենինը միաժամանակ նշում էր նրա առանձնահատկություններն առանձին երկրներում։ Անգլիական իմպերիալիզմը նա անվանում է գաղութատիրական, ֆրանսիականը՝ վաշխառուական, իսկ ռուսականը՝ ռազմաֆեոդալական։ Վերջինիս էությունն այն էր, որ Ռուսաստանում իմպերիալիզմն իր մեջ զուգակցում էր կապիտալիստական զարգացման նորագույն ձևերը՝ մոնոպոլիաներն ու բանկերը, ցարիզմի ու կալվածատիրական հողատիրության պահպանման հետ մեկտեղ։ Այլ կերպ ասած՝ Ռուսաստանում մոնոպոլիստական կապիտալիզմն ամբողջապես միա-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 259։

2 Նույն տեղում, էջ 354։

հյուսված էր ճորտատիրության մնացուկների և ինքնակալության բռնապետական ու ասպիկանական սանձարձակությունների հետ։

Ցարիզմն ու կալվածատիրական կարգերը մեծապես խոչընդոտում էին երկրի զարգացմանը, կաշկանդում նրա արտադրողական ուժերի առաջընթացը և բացասաբար ներգործում հատկապես գյուղատնտեսության վրա։ Վ. Ի. Լենինը նշում էր. «ամենահետամնաց հողատիրություն, ամենավայրենի գյուղ՝ ամենաառաջավոր արդյունաբերական և ֆինանսական կապիտալիզմ»[3]։

XIX դ. 90-ական թվականների վերջին Ռուսաստանում արդյունաբերությունը վերելք ապրեց, բայց շուտով (1900—1903 թթ.) վրա հասավ ճգնաժամը, որի հետևանքով բազմաթիվ ձեռնարկություններ, չդիմանալով մրցությանը, փակվեցին։ 1900-ական թվականներին Ռուսաստանի ժողովրդական տնտեսության բազմաթիվ ճյուղերում երևան եկան նոր մոնոպոլիաներ, որոնք աճելով դարձան որոշակի ուժ։ 1906 թ. Ռուսաստանում արդեն կային 30 պաշտոնապես արձանագրված և համարյա այդքան էլ չգրանցված մոնոպոլիստական միավորումներ։ Ռուսական մոնոպոլիաների ամենատարածված ձևը սինդիկատներն էին, այսինքն՝ կապիտալիստական այնպիսի միությունները, որոնք ստեղծված էին ապրանքների համատեղ վաճառելու համար։

XX դարի սկզբին Ռուսաստանում աշխուժացան նաև բանկերը, որոնք ավելի ակտիվ գործունեություն ծավալեցին։ Նրանցից մի քանիսը միացան արդյունաբերական մոնոպոլիաներին, որի հետևանքով առաջ եկավ ֆինանսական կապիտալը։ Դրանցից էին Հյուսիսային, Ռուս-Չինական, Պետերբուրգի միջազգային, Ազով-Դոնի, Ռուսական առևտրաարդյունաբերական բանկերը և այլն։ Այդ բանկերը, միջոցներ տրամադրելով արդյունաբերական մոնոպոլիաներին, սկսեցին զեկավարել, հսկել ու հովանավորել դրանց գործունեությունը։ Ռուսական բանկերի առանձնահատկություններից մեկն այն էր, որ նրանց միջոցների մեծ մասը պատկանում էր անգլիական, ֆրանսիական, գերմանական և այլ երկրների բանկիրներին։ Դա պայմանավորված էր Ռուսաստանի տնտեսական հետամնացությամբ, որը երկիրը դնում էր կախյալ վիճակում օտարերկրյա կապիտալից։ Արտասահմանյան կապիտալիստներն օգտագործելով նրա հետամնացությունը, թափանցել էին ռուսական տնտեսության տարբեր բնագավառները և շահագործելով անմիջական արտադրողներին, հսկայական շափերի հասնող շահույթ էին ստանում։ Սեփական միջոցների պակասության պատճառով ռուսական կապիտալիստները շատ քիչ կապիտալ էին արտահանում ավելի հետամնաց երկրներ՝ Չինաստան, Պարսկաստան ու Թուրքիա։ Բայց, չնայած դրան, ռուսական մոնոպոլիստական միավորումները մասնակցում էին միջազգային կարտելների, սինդիկատների ու տրեստների կողմից իրագործվող աշխարհի բաժանմանը։

Վ. Ի. Լենինը ցույց է տալիս, որ իմպերիալիզմը մոնոպոլիստական, պարազիտային, փտող ու մեռնող կապիտալիզմն է, բայց միաժամանակ նշում է, որ այդ տեղի է ունենում առանձին երկրներում կամ տնտեսության առանձին ճյուղերում, իսկ «Ամբողջությամբ առած՝ կապիտալիզմն անչափ ավելի արագ է աճում, քան առաջ...»[4]։ Իմպերիալիզմի դարաշրջանում կապիտալիզմը Ռուսաստանում շարունակում էր զարգանալ և ըստ էության՝ խորանալով երկրի

3 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 16, էջ 515։

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 22, էջ 403։

կենտրոնական շրջաններում ֆեոդալական մնացորդները, և ըստ լայնության՝ ավելի ու ավելի իր հորձանուտի մեջ ներքաշելով կայսրության ծայրամասերը։ XX դարի սկզբին Ռուսաստանի գաղութները (Սիբիրը, Ղազախստանը, Միջին Ասիան, Կովկասն ու Անդրկովկասը) ունեին 17,4 մլ. քառ. կմ տարածություն, որը կազմում էր կայսրության ամբողջ տարածության 76,3%-ը և 33,2 մլ. բնակչություն՝ ամբողջ բնակչության 19,6 տոկոսը[5]։ Այդ շրջանների տնտեսական յուրացումն ընթանում էր երկաթուղիների կառուցումով։ 25 տարվա ընթացքում (1892—1917) Սիբիրում ու Միջին Ասիայում երկաթգծերի երկարությունն աճեց տասն անգամ (առանց Չին-Արևելյան երկաթուղու), իսկ բեռների տեղափոխումը (ներառյալ նաև Անդրկովկասը) 1902—1910 թթ. ավելացավ 81,7%-ով[6]։

Ցարական կառավարությունը երկաթուղային շինարարությունը նոանդով շարունակեց նաև Անդրկովկասում։ Արևելյան Հայաստանում 1899 թ. ավարտվեցին Թիֆլիս—Կարս, 1902 թ.՝ Ալեքսանդրապոլ—Երևան, 1908 թ.՝ Ուլուխանլու—Ջուլֆա, իսկ 1913 թ.՝ Կարս—Սարիղամիշ—Կարաուրգան գծերը։ Այդպիսով, շուրջ քառասուն տարվա ընթացքում (1871—1913), Անդրկովկասում կառուցվեց 2716 վերստ երկաթգիծ, որից 540-ը՝ Արևելյան Հայաստանում[7]։

XX դարի սկզբին երկրամասում ընդլայնվում էին նաև խճուղիները և բացվում նոր սայլուղիներ։ Առանձնապես մեծ նշանակություն ստացավ Երևան—Աղստաֆա խճուղին, որը Երևանի նահանգը կապում էր Անդրկովկասի երկաթուղային մայրուղու հետ։ Կովկասի փոխարքան իր հաշվետվություններից մեկում գրում էր. «Ճանապարհների օգնությամբ կատարվում է երկրամասի միանգամայն խաղաղ նվաճումը և նրա ներքաշումը համապետական կյանքի հունի մեջ»[8]։

Հաղորդակցության միջոցների բարեկարգումը զարկ տվեց Եվրոպական Ռուսաստանի ու Անդրկովկասի միջև տեղի ունեցող ապրանքային շրջանառության վերելքին։ Երեք տարվա ընթացքում (1907—1910) միայն մեծ արագության բեռների աճը Անդրկովկասից Եվրոպական Ռուսաստան 337 հազար փթից հասավ 394 հազար փթի, իսկ հակառակ ուղղությամբ՝ 433 հազարից 550 հազար փթի։ Ռուսաստանից Անդրկովկաս էին ներմուծվում առավելապես մետաղյա ապրանքներ, մեքենաներ ու զանազան գործվածքներ, իսկ Անդրկովկասից արտահանվում էին հանքային հանածոներ և գյուղատնտեսական մթերքներ։

Ելնելով ռուս կալվածատերերի ու կապիտալիստների շահերից և ձգտելով ավելի արդյունավետ օգտագործել Անդրկովկասի տնտեսական հնարավորությունները, ցարիզմը ձեռնարկեց նաև այլ միջոցառումներ։ 1900-ական թվականներին ստեղծվեցին երկրամասի արդյունաբերության ու գյուղատնտեսության կարիքներն ուսումնասիրող տեղական կոմիտեներ, հիմնվեցին գյուղատնտեսական գործիքների պահեստներ, բացվեցին զանազան ուսումնարաններ, գյուղատնտեսական տարբեր կուլտուրաների աճեցման ու արմատավորման

---

5 Տե՛ս «История СССР», т. VI, М., 1968, стр. 307.

6 Տե՛ս նույն տեղում, էջ 308։

7 Տե՛ս О. С. Балкян, Из истории формирования рабочего класса на строительстве дорог в Восточной Армении (*«Լրաբեր», 1975, № 3, էջ 89*).

8 «Всеподданнейший отчет за пятилетие управления Кавказом генерал-адъютанта графа Воронцова-Дашкова», СПб., 1910, стр. 39.

փորձակայաններ, կազմակերպվեցին վարկային ընկերություններ, օրինակելի տնտեսություններ և այլն։

Անդրկովկասի տնտեսական կապերի ամրապնդումը Եվրոպական Ռուսաստանի հետ նպաստեց երկրամասի առաջընթացին։ Ադրբեջանում շարունակվեց նավթարդյունաբերության վերելքը։ Միայն հինգ տարվա ընթացքում (1905—1909) նավթի արտադրությունը 409925 հազար փթից հասավ 490.967 հազար փթի, իսկ արտահանումն անցավ ընդհանուր արտադրության 75 տոկոսից[9]։ Վրաստանում աճեց մարգանեցի արտադրությունը և 1901 թ. 22904 հազար փթից դիմաց 1907 թ. կազմեց 40.833 հազ. փութ[10]։ Ռուսաստանը տալիս էր աշխարհի ամբողջ մարգանեցի 34,8%-ը, որի 26,4%-ը արտադրվում էր Վրաստանում։



Ջհամարշը Երևանում

XX դարի սկզբին արտասահմանյան ու տեղական դրամատերերը, օգտվելով ցարական կառավարության հովանավորությունից, ավելի շատ միջոցներ ներդրեցին Անդրկովկասի տնտեսության մեջ և ստացան մեծ եկամուտներ։ Բաքվի նավթարդյունաբերության մեջ հայտնի էին շվեդացի Նոբել եղբայրները, ֆրանսիացի Ռոտշիլդը, անգլիացի Վիշաուն, Գետաբեկի պղնձահանքերում՝ գերմանացի Սիմենս եղբայրները, Ալավերդում՝ ֆրանսիացիները, իսկ տեղացիներից՝ Բաքվում աչքի էին ընկնում հայ կապիտալիստներ Մանթաշովը, Միրզոյան եղբայրները, Ղազարյանը, ինչպես նաև Լիանոզովը, Ղուկասովը, Պիտոևը, Մայիլովը, Արամյանցը, Ավան-Յուզբաշևը, Թադևոսյանը, Դոլուխանովը, Մատուրյանը և ուրիշներ։ Վրաստանում ճանաչված էին արդյունաբերողներ Ադելխանովը, Էնֆիաջյանցը, Ալիխանովը, Խուրլարովը, Թայիրյանը, Բոզարջյանը, Կարապետյանը, Սողոմոնյանը և այլոք։ Էնֆիաջյանցը, Բոզարջյանը և

---

9 Տե՛ս «Краткий обзор коммерческой деятельности закавказских железных дорог по статистическим данным о перевозках пассажиров и грузов за 1910 г.», Тифлис, 1912, стр. 57, 62.

10 Տե՛ս նույն տեղում, էջ 70։

Սաֆարյանն ունեին ծխախոտի, Ադելխանովը՝ կաշվի, Տեր-Հարությունյանը՝ կոշիկի գործարաններ։

XIX դ. վերջերին—XX դ. սկզբներին Ռուսաստանում բուրժուազիայի որոշ ներկայացուցիչներ իրենց անբավ հարստությունից բաժին էին տրամադրում բարեգործական նպատակների համար[11]։ *Մեկնաբանությունը տարածված էր նաև կովկասյան բուրժուազիայի շրջանում. այսպես, հայ կապիտալիստներ Մանթաշովը, Ջուբալովը, Արամյանցը և ուրիշներ դրամազլուխ էին տրամադրել Ներսիսյան դպրոցի շինարարությանը, հիվանդանոց կառուցել Թիֆլիսում, նյութական օգնություն էին ցույց տալիս ազգային թատրոններին, դպրոցներին և մշակույթի որոշ գործիչների։*

Բացի հայ կապիտալիստներից, դարասկզբին երկրամասի բուրժուազիայի շարքերը համալրեցին նաև վրացական, ադրբեջանական և այլազգի դրամատերերը, որոնք արդյունաբերության մի շարք ճյուղերում առաջնակարգ տեղ գրավեցին։ Օրինակ՝ Ճիաթուրայի մարգանեցի արտադրության մեջ հայտնի էին Գ. Ջուբինաձեն, Ի. Սիխուրալիձեն, Կ. Գաշեչիլաձեն, Դ. Գափրինդաշվիլին, Դ. Աբաշիձեն, Ի. Մերեթելին, Հ. Դադիանին[12]։ *Բաքվում ադրբեջանական խոշոր կապիտալիստներ էին Մ. Նագիևը, Շ. Ասադուլաևը, Հ. Թաղիևը, Աշուրովը, Բունիաթովը և ուրիշներ*[13]։

2. ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

XX դարի սկզբին Արևելյան Հայաստանի տնտեսությունը զգալի առաջընթաց ապրեց։ Մեծ տեղաշարժեր կատարվեցին ամենից առաջ լեռնահանքային արդյունաբերության մեջ։ Դեռ 1897 թ. Փարիզում հիմնված ֆրանսիական կապիտալիստների «Կովկասի արդյունաբերական և մետաղագործական ընկերությունը», որը լուրջ դեր էր խաղում Ռուսաստանի մետալուրգիայի ու ածխարդյունաբերության մեջ, «Ախթալայի հանքերի ֆրանսիական ընկերություն»-ից վերցրեց պղնձահանքերի ու գործարանի շահագործման իրավունքը և հիմնովին վերակառուցեց պղնձի արտադրությունը։ Այդ ընկերությունը տեխնիկական կատարելագործումներ մտցրեց, կառուցեց նոր գործարաններ, հնոցներ, կոնվերտորներ, օդամուղ պոմպեր և այլն։ 1900 թ. մի հաղորդման մեջ ասվում էր. «Վերջին ժամանակներս օրինակելի է դառնում նաև Ալավերդու գործարանը, ուր հալումն այժմ կատարում են ոչ թե բուսական ածխով, այլ կոքսով և ամբողջ մեխանիզմները շարժման մեջ են դրվում նավթաշարժիչով... Վառարանների բոլոր մասերը բերված են մասամբ Ամերիկայից և մասամբ Եվրոպայից։ Դրանց մեջ կատարված հալումը տվեց շատ լավ արդյունք՝ ինչպես պղնձի քանակի ավելացման, այնպես էլ հատկապես վառելիքի ու ժամանակի կրճատման տեսակետից[14]։

Պղնձարտադրությունը բարելավվեց նաև Զանգեզուրում, ուր դեռ 1896 թ. Ա. Ա. Մելիք-Ազարյանցը կառուցեց «Սյունիք» պղնձաձուլական գործարանը, ներդնելով ամերիկյան ու ֆրանսիական սարքավորումներ և փայտի վառելանյութը փոխարինեց քարածխով։ Այդ վերակառուցումների շնորհիվ գործարանը

11 *Տե՛ս* «История СССР», т. II, М., 1965, стр. 204—205.

12 *Տե՛ս Э. В. Хоштария,* Очерки социально-экономической истории Грузии, Тбилиси, 1974, стр. 161.

13 *Տե՛ս* «История Азербайджана», т. 2, Баку, 1960, стр. 205, 435—436, 440.

14 «Кавказский календарь, на 1901 г.», отд. 3, стр. 80.

շուտով այդի ընկավ արտադրության բարձր տեմպերով և Զանգեզուրում գերիշխող դիրք գրավեց։ Արդեն 900-ական թվականներին մի շարք ձեռնարկատերեր հարկադրված եղան փակել իրենց գործարանները և հանքաքարը ձուլման ուղարկել «Սյունիք» գործարանը։ Զանգեզուրում նշանավոր էին նաև Բաղդասար Տեր-Մելիքյանի, Կոնդուրով եղբայրների և այլոց պղնձաձուլական գործարանները, որոնք նույնպես մտցրին տեխնիկական բարելավումներ։ 1902 թ. կապիտալիստների մի այլ բաժնետիրական միավորում՝ «Շահալի-էլյար լեռնարդյունաբերական ընկերություն» ձեռնամուխ եղավ Շահալիի ու Խաչիգեղի պղնձահանքերի մշակմանը։ Այդ բոլորի շնորհիվ Արևելյան Հայաստանում արագորեն աճեց պղնձի ձուլումը։ Եթե 1900 թ. ձուլվել էր 1124,8 տոննա, ապա 1910 թ. ձուլվեց 4556.6 տոննա պղինձ։ Դարասկզբին Արևելյան Հայաստանն արդեն տալիս էր Անդրկովկասում արտադրվող պղնձի 58,2 տոկոսը, իսկ ամբողջ Ռուսաստանում արտադրվող պղնձի՝ 23,35 տոկոսը[15]։ Մեծացավ նաև Արևելյան Հայաստանից պղնձի հանքանյութի արտահանումը և 1900 թ. 801,1 հազ. փթի դիմաց՝ 1910 թ. կազմեց 5123,4 հազ. փութ[16]։

Մոնոպոլիստական կապիտալիզմի զարգացման հետևանքով 1907 թ. Ռուսաստանում կազմակերպվեց պղնձի համառուսական սինդիկատը, ընդգրկելով իր մեջ Քե՛ Ուրալի ու Սիբիրի, և Քե՛ Անդրկովկասի պղնձագործական խոշոր ձեռնարկությունները։ Արևելյան Հայաստանից այդ սինդիկատի մեջ մտան «Կովկասի արդյունաբերական մետաղագործական ընկերության» և Ա. Ա. Մելիք-Ազարյանցի գործարանները։ Անդրկովկասի պղնձարդյունաբերողները՝ Վրաստանում՝ անգլիացի ու շվեդացի ձեռնարկատերերը, Ադրբեջանում՝ գերմանացիները, Արևելյան Հայաստանում՝ ֆրանսիացի ու տեղացի կապիտալիստները սինդիկատի կազմավորումից առաջ իրենց արտադրանքը իրացնում էին գերմանացի Ֆ. Մ. Վոգաուի առևտրական տան միջոցով, որը հիմնվել էր Մոսկվայում դեռ XIX դարի կեսերին և, ծավալվելով, հետագայում իր բաժանմունքներն էր հաստատել Պետերբուրգում ու Լոնդոնում։ Այդ առևտրական ընկերությունը զբաղվում էր մետաղների, քեյլի, ցեմենտի, աղի, շաքարի ու այլ ապրանքների վաճառքով։ Նա «Կովկասի արդյունաբերական մետաղագործական ընկերության» հետ առաջին առևտրական պայմանագիրը կնքեց 1900 թ., վճարելով մեկ փթին 10 ռուբլի 15 կոպ., պայմանով, որ ընկերությունը հինգ տարվա ընթացքում արտադրած պղինձը տրամադրի միայն իրեն։ Պղնձի համառուսական նորաստեղծ սինդիկատը Ֆ. Մ. Վոգաուի առևտրական տունը ծառայեցրեց իր նպատակներին։ 1908 թ. նրանց միջև կնքվեց պայմանագիր, որով սինդիկատը պարտավորվում էր իր պղինձը վաճառել միայն Վոգաուի տանը, իսկ վերջինս հանձն էր առնում զբաղվել սոսկ սինդիկատի մեջ համախմբված պղնձարդյունաբերողների արտադրանքի իրացումով[17]։ 1900—1901 թթ. «Կովկասի արդյունաբերական մետաղագործական ընկերության» եկամուտները կազմում էին 283 հազար, իսկ 1908—1909 թթ.՝ 501 հազար ֆրանկ[18]։ Եթե

---

15 Տե՛ս Բ. Գ. Մելիքսեթյան, Հայաստանի պղնձարդյունաբերության պատմություն (XVIII դարի երկրորդ կեսից մինչև 1920 թ.) Երևան, 1972, հավելված 7—8։

16 Տե՛ս Մ. Հ. Ադոնց, Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դ. սկզբին, Երևան, 1968, էջ 195—196։

17 Տե՛ս նույն տեղում, էջ 196—204։

18 Տե՛ս И. Г. Каспарова, Медноруднaя промышленность дореволюционной Армении и иностранный капитал, Ереван, 1961, стр. 116 и 121.

սկզբում ընկերությունն այդ եկամուտների մի մասը ներդնում էր Արևելյան Հայաստանի պղնձարդյունաբերության մեջ, ապա հետագայում համարյա ամբողջապես տեղափոխում էր Ֆրանսիա։

Արևելյան Հայաստանի լեռնային արդյունաբերության մյուս կարևոր ճյուղն աղի արտադրությունն էր, որի կենտրոններն էին Կողբը, Նախիջևանի գավառը, Կաղզվանը և Օլքին։ Դրանք բոլորը պետական սեփականություն էին, բացառությամբ Նախիջևանի գավառի Սուստինի աղահանքից։ Պետությունն այդ աղահանքերը տալիս էր կապալով, իսկ Սուստինի աղահանքը մինչև 1910 թ. մշակվում էր մասնավոր տիրոջ կողմից։ Ելնելով ռուս աղարդյունաբերողների շահերից, ցարական կառավարությունը ձգտում էր սահմանափակել Արևելյան Հայաստանի աղի արտադրությունը։ Դեռևս 1898 թ. Կողբի աղահանքը կապալով տալիս, նա պահանջեց վարձակալից՝ առաջին 6 տարում արտադրել, արտահանել ու վաճառել անսահմանափակ քանակությամբ աղ, իսկ վերջին երեք տարում արտադրել այնքան, որքան կթույլատրվի Կովկասի լեռնային վարչության կողմից, ընդ որում արտադրված աղը պետք է վաճառվեր սոսկ երկրամասում[19]։ Կառավարության այս քաղաքականությունը մի կողմից, հաղորդակցության միջոցների բարեկարգումը (հատկապես երկաթուղիների կառուցումը) մյուս կողմից, հեշտացրին ռուսական աղի ներմուծումն Անդրկովկաս և զգալիորեն խանգարեցին Արևելյան Հայաստանի աղի արտադրության աճին։ Այդուհանդերձ, դարասկզբին որոշ բարելավումներ կատարվեցին նաև աղի արտադրության բնագավառում։ Կողբի կապալառուներ Ջանփոլադյանները ներդրեցին անգլիական մեքենաներ, հանքահորերում տեղադրեցին ռելսեր և աղը դուրս էին բերում վագոնիկներով։ Այդ միջոցառումների շնորհիվ Կողբում աղի արտադրությունն աճեց և 1904 թ. 546.407 փթի դիմաց 1910 թ. հասավ 650849 փթի[20]։ Սակայն Կարսի մարզում և Նախիջևանի գավառում աղի հանույթը համարյա լճացում էր ապրում[21]։

Արևելյան Հայաստանում զարգանում էր սպիրտային խմիչքների՝ կոնյակի, օղու, ինչպես նաև գինու արտադրությունը։ Ռուս կապիտալիստ Ն. Լ. Շուստովը, տակավին 1865 թ. հիմք դնելով օղու և լիկյորների արտադրությանը, բաժանմունքներ ստեղծեց Վարշավայում, Սամարղանդում, Քիշինևում և այլ քաղաքներում, իսկ 1899 թ. Երևանում գնեց Թաիրովի կոնյակի ու գինու գործարանը և տեխնիկապես վերակառուցելով ու կատարելագործելով, նոր թափ հաղորդեց սպիրտային խմիչքների արտադրությանը։ Արդեն 1903 թ. նրա գործարանը տվեց 751 հազար աստիճան, այն դեպքում, երբ տեղական չորս ձեռնարկատերերի գործարանները միասին տվեցին 343 հազար աստիճան սպիրտ[22]։ 1900—1903 թթ. ընթացքում կոնյակի ու գինու գործարաններ կառուցեցին Չելաբովը, Աբրամովը, Այդինովը, Գոլովովը և ուրիշներ, իսկ 1904 թ. վերսկսեց գործել նաև Աֆրիկովի ձեռնարկությունը, որը փակվել էր 1903 թ.։ Նրանք միաժամանակ կատարելագործում էին իրենց գործարանները։

19 Տե՛ս «Памятная книжка Эриванской губернии на 1904 г.», отд. 3, стр. 40.

20 Տե՛ս «Обзор Эриванской губернии за 1904 г.», стр. 9. «Обзор Эриванской губернии за 1910 г.», стр. 12.

21 Տե՛ս А. М. Марголиус, Соленосные образования Карсской области и Эриванской губернии, Тифлис, 1909, стр. 57, 160, 167, 195; «Обзор Карсской области за 1910 г.», стр. 49.

22 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 124, ց. 1, գ. 11, թ. 9։

1902 թ. Սողոմոնովը հին սարքերը փոխարինեց նորերով, իսկ Նուստովն ավելացրեց սարքերի քիվը։ Հետագա տարիներին Ղամարլուում հիմնվեցին նաև «Արաքս», «Վստահություն» կոնյակի արտադրության ընկերությունները։ Միայն յոթ տարվա ընթացքում (1902—1909) Երևանի նահանգում կոնյակի գործարանների քիվը 2-ից հասավ 13-ի, իսկ արտադրությունը՝ 2833,7 հազարից 4776,3 հազար աստիճանի։ Վերելք էր ապրում նաև օղու և գինու, մասնավորապես քաղցրահամ գինիների արտադրությունը։ Բավական է նշել, որ 1902—1909 թթ. Երևանի նահանգում սպիրտի արտադրությունը 308,5 հազարից հասավ 12524,9 հազար աստիճանի, իսկ գինունը՝ 684,4 հազարից 1297,6 հազար դույլի[23]։



Նուստովի գինու և կոնյակի գործարանը Երևանում

Դարասկզբին արդեն կայունանում են խոշոր ձեռնարկությունները և համարյա ամենուրեք արտամղում մանրերին։ Միաժամանակ կատարվում է սպիրտային խմիչքների արտադրության տեղաբաշխման պրոցես. կոնյակի և օղու արտադրությունը կենտրոնանում է Երևանում, իսկ գինունը՝ գերազանցապես գավառներում։ 1910 թ. գինեգործության ամենախոշոր կենտրոնը համարվում էր Արտաշատ (Ղամարլու) գյուղը[24]։ Աճում էր նաև գարեջրի արտադրությունը, որի կենտրոններն էին Ալեքսանդրապոլն ու Կարսը։ Արևելյան Հայաստանը կոնյակի և օղու արտադրությամբ Անդրկովկասում առաջվա նման գրավում էր առաջին տեղը։ Հայկական օղին ու գինին իրացվում էին հիմնականում երկրամասում, իսկ կոնյակը արտահանվում էր Ռուսաստանի

---

23 Տե՛ս «Обзор Эриванской губернии за 1902 и 1909 гг.»; Մ. Հ. Ագոնց, նշված աշխ., էջ 209։

24 Տե՛ս «Краткий обзор коммерческой деятельности закавказской железной дороги за 1910 г.», стр. 127.

զանազան շրջաններըւ Պետերբուրգում այն մրցում էր ֆրանսիական կոնյակի հետ և արտամղում նրան մայրաքաղաքի շուկայից[25]։

Արևելյան Հայաստանում զարգացավ նաև կաթնամշակությունը։ Լոռիում 14 տարվա ընթացքում (1894—1908) հիմնվեցին քսանից ավելի ձեռնարկություններ, որոնցից յուրաքանչյուրը տարեկան միջին հաշվով արտադրում էր 29 հազար փութ պանիր։ Շնորհիվ անասնապահության և կաթնատրանքային տնտեսության զարգացման, ժամանակակիցները Լոռին անվանում էին «Հայկական Շվեյցարիա»[26]։ Կաթնամշակման ձեռնարկությունները բազմացան նաև Կարսի մարզում, ուր 1905—1910 թթ. դրանց թիվը 6-ից հասավ 24-ի, իսկ պանրի արտադրությունը՝ 2.730 փթից 13.664 փթի։ Բայց ձեռնարկությունների մեծ մասն առաջվա նման գտնվում էր օտարերկրացիների ձեռքում։ 1908 թ. դրանց 46,5%-ը պատկանում էր եվրոպացիներին, 31,5%-ը՝ ռուսներին, 5,4%-ը՝ հայերին, իսկ մնացածը՝ ուրիշներին[27]։



Կարս բազաի ընդհանուր տեսարանը

Կաթնամշակումը ծավալվեց նաև Նոր Բայազետի գավառում, հատկապես Ալեքսանդրովկա, Սեմյոնովկա, Շորժա և այլ գյուղերում։ «Պանրագործարանների և յուղագործարանների թիվը, որոնցում արդեն մտցված են կաթնային տնտեսության արդյունքների բարձր որակի պատրաստման եղանակները, տարեցտարի աճում է»[28]։

---

25 Տե՛ս «Обзор отраслей промышленности в Закавказском крае, служащих источником косвенных налогов и поступления акцизного по краю дохода за 1901 г.», Тифлис, 1902, стр. 164—165.

26 Տե՛ս «Գյուղատնտես», 1912, № 22, էջ 339։

27 Տե՛ս «Труды первого Кавказского съезда сельских хозяев 15—24 ноября 1909 г. в Тифлисе. Доклады», Тифлис, 1911, стр. 330.

28 «Очерки Карсской области, экономические и хозяйственные нужды», вып. 1, Тифлис, 1912, стр. 26.

Ձեռնարկատերերը մշակում էին ոչ այնքան սեփական, որքան գնովի կաթը, որով նրանք ավելի էին շահագործում աշխատավոր գյուղացիներին և ստանում մեծ եկամուտներ։ Վ. Ի. Լենինը մատնանշում էր, որ կապիտալիստը «առայժմ ավելի ձեռնտու է համարում թողնել» անասունը «մանր արտադրողի խնամքին. թող նա «ջանասիրությամբ» ու «եռանդով» խնամի «իր» անասունը... թող իր վրա վերցնի կաթ տվող մեքենան խնամելու ամենածանր, ամենաաշխատանքի գլխավոր բաժինը։ Կապիտալն ունի նորագույն բոլոր կատարելագործությունները և միջոցները ոչ միայն սերը կաթից անջատելու համար, այլև «սերն» այս «ջանասիրությունից» և կաթը չքավոր գյուղացիների երեխաներից անջատելու համար»[29]։ Լոռիում ձեռնարկատերերից հինգը մշակում էին սեփական, 16-ը՝ գնած, իսկ 12-ը՝ թե սեփական և թե գնած կաթը[30]։ Նրանք առաջվա նման պատրաստում էին տեղական, շվեյցարական ու հոլանդական պանրատեսակներ։ Ձեռնարկատերերը տեղականը իրացնում էին երկրամասում, իսկ շվեյցարական ու հոլանդական պանիրները՝ Եվրոպական Ռուսաստանի արդյունաբերական կենտրոններում։

Բամբակի նախնական մշակման գործում Արևելյան Հայաստանում նույնպես նկատելի բարեփոխումներ են կատարվում. ավելի շատ են կիրառվում ներքին այրման շարժիչներ, շոգեմեքենաներ և հզոր մամլիչներ։ Բամբակի ակցիոներական ընկերության Եղիազարովի, Աֆրիկովի, Տիգրան Տեր-Մարեվոսյանի, Աթաբեկովի, Սարգիս Սիմոնյանի և այլ գործարաններ, որոնք հիմնված էին Երևանի, Էջմիածնի ու Սուրմալուի գավառների գյուղերում, յուրաքանչյուրը տարեկան հակավորում էր մինչև 60 հազ. փութ բամբակ։ Նախկինում փայտյա «չագրիխների» փոխարեն, որոնք բամբակը մաքրում էին սերմից, այժմ գործում են «մի քանի հարյուր ամերիկական մեքենա՝ Ջին և տասնյակ արդեն խոշոր, լիակատար սարքավորված բամբակազտիչ գործարաններ...»[31]։ Այդ գործարանների բանվորների մեծ մասն արդեն մշտական աշխատողներ էին. ձեռնարկատերերը ռուսներ, հայեր ու մասամբ ադրբեջանցիներ էին։ Սկզբնական մշակումից հետո բամբակի մանրաթելը, ինչպես առաջ, ուղարկվում էր ռուսական արդյունաբերական կենտրոնները։

Դարասկզբին լուրջ տեղաշարժեր կատարվեցին մետաքսագործության մեջ։ Գոյություն ունեցող սակավաթիվ գործարանների կողքին 900-ական թվականներին հիմնվում են մի շարք նորերը, որոնք, արտամղելով մանր ու միջին արտադրողներին, գերիշխող դիրք են գրավում։ 1902 թ. Օրդուբադի գավառամասում կար 7, իսկ 1908 թ. Շուշու գավառում՝ 10 մետաքսափաթաթման գործարան, որոնք գտնվում էին Շուշի, Օրդուբադ և Նախիջևան քաղաքներում, Վերին Ագուլիս, Ջանանաբ, Ներքին Ագուլիս, Վանանդ, Ղազանչի, Շուռուտ, Թափակերտ և մի շարք այլ գյուղերում։ Ամենուրեք ձեռքի դազգահները փոխարինվում էին մեքենաներով, որոնք ներմուծվում էին թե՛ Եվրոպական Ռուսաստանից և թե՛ արտասահմանից, մասնավորապես՝ Ֆրանսիայից ու Իտալիայից։ 1900 թ. Երևանի նահանգապետը գրում էր, որ մետաքսագործությունը «տարեցտարի նշանակալիորեն առաջադիմում է։ Բոժոժների արագ արտա-

29 Վ. Ի. Լենին, *Երկ հ. 3, էջ 321։*

30 *Տե՛ս «Գյուղատնտես», 1910, 29, էջ 422։*

31 *Տե՛ս* «Весь Кавказ, промышленность, торговля и сельское хозяйство Северного Кавказа и Закавказья», составил и издал М. С. Шапсович, Баку, 1914. Приложение, стр. 127.

գրությունը հարկադրում է կառուցել մետաքսագործական նորանոր գործարաններ»[32], ի տարբերություն արդյունաբերության որոշ ճյուղերի, որտեղ գերիշխող դեր էին խաղում օտարերկրացի կամ ռուս կապիտալիստները, մետաքսագործությունը գտնվում էր բացառապես տեղացիների, հատկապես հայերի ձեռքին։ Ձեռնարկատերերից յուրաքանչյուրն ուներ 23—51 բանվոր, քացում էր 49—65 փութ մետաքս և տարեկան ստանում 10—14 հազար ռուբ-



Գորգագործուհին գորգագործական դազգահի առջև

լու եկամուտ[33]։ Եթե արդյունաբերության մյուս ճյուղերում գերակշռում էր տղամարդկանց, ապա մետաքսագործության մեջ՝ կանանց ու անչափահասների աշխատանքը։ Նախնական մշակումից հետո ձեռնարկատերերը մետաք-

32 «Обзор Эриванской губернии за 1900 г.», стр. 7.

33 Տե՛ս «Памятная книжка Эриванской губернии на 1904 г.», отд. 3, стр. 24.

սաքելն ուղարկում էին Մոսկվա, Լոձ, Վարշավա և երբեմն նաև Միլան ու Լիոն։

Զգալիորեն զարգանում է նաև գորգագործությունը։ Երևանի նահանգում 1902—1912 թթ. գորգագործական տնտեսությունների թիվը 583-ից հասնում է 6674-ի, իսկ արտադրած գորգերի արժեքը՝ 31.194 ռուբլուց 134.394 ռուբլու[34]։ Գորգագործների ճնշող մեծամասնությունն արդեն արտադրում էր ոչ թե սեփական կարիքների, այլ վաճառքի համար։ Բավական է նշել, որ Երևանի նահանգում 1902 թ. ուսումնասիրողների կողմից ընտրված 266 տնտեսություններից միայն վեցն էին գործում իրենց համար, իսկ մնացած 260-ը արտադրում էին վաճառելու նպատակով[35]։ Գնորդ-առևտրականները գորգագործ-տնայնագործներին պահելով կախվածության մեջ, երկրի մի շարք շրջաններում, մասնավորապես Ալեքսանդրապոլի, Սուրմալուի և Նոր Բայազետի գավառներում, դարձրել էին վարձու աշխատողներ և այդպիսով կազմակերպել ցրված մանուֆակտուրա։ Նրանք տալիս էին գործավորներին հումք, պատվիրում գորգերի չափերն ու նկարները, հետևում աշխատանքի ընթացքին և, վճարելով չնչին գումար, գնում արտադրանքը։ Որոշ տեղերում էլ (Նոր Բայազետում և Բասարգիչարում) գնորդ-առևտրականները կառուցել էին արհեստանոցներ և կազմակերպել կենտրոնացված մանուֆակտուրան[36]։ Նրանք հայկական գորգերը վաճառում էին Կովկասի զանազան քաղաքներում կամ արտահանում Ռուսաստան ու արտասահման, մասնավորապես Մարսել։ Միայն Նոր Բայազետի գավառում տարեկան գնում էին 15—17 հազար ռուբլու գորգ ու կարպետ և ուղարկում գերազանցապես Թիֆլիս։

Էական տեղաշարժեր կատարվեցին կաշեգործության մեջ։ Աչքի ընկան հատկապես Գաբրիելյանների ու Տեր-Սարգսյանի կաշեգործական գործարանները։ Գաբրիելյանները 1909 թ. Գերմանիայում ուսումնասիրեցին կաշեգործության առաջավոր եղանակները, նոր մեքենաներ ներդրեցին արտադրության մեջ և զգալի թափ հաղորդեցին կաշեգործության զարգացմանը։ Նրանց գործարանի արտադրանքը Կովկասի արդյունաբերական ու գյուղատնտեսական հոբելյանական ցուցահանդեսներում արժանացավ ոսկե մեդալի, այնուհետև ուղարկվեց Ռուսաստանի ու արտասահմանի համապատասխան ցուցահանդեսները, նվաճեց ոսկե և արծաթե մեդալներ։ Արևելյան Հայաստանի կաշեգործական ձեռնարկությունների արտադրանքը վաճառքի էր ուղարկվում նաև Թիֆլիս, Քութայիս, Եկատերինոդար, Դոնի-Ռոստով և այլ քաղաքներ։

Դարասկզբին առաջադիմեց մետաղամշակման արդյունաբերությունը։ Դեռևս 1892 թ. հիմնված Տեր-Ավետիքյանի արհեստանոցը ժամանակի ընթացքում բարեկարգվելով ու ընդլայնվելով, 1905 թ. վերածվեց գործարանի։ Այն ուներ կաղապարման, կաթսայագործական, մեքենաշինական, փականագործական բաժիններ, որտեղ աշխատում էր ավելի քան 50 բանվոր։ 1905 թ. Հեքիմյան եղբայրները Ալեքսանդրապոլում հիմնեցին մետաղամշակման նոր արհեստանոց, որը կարճ ժամանակամիջոցում (1908) դարձավ կիսամեքենայացված գործարան։ Տեր-Ավետիքյանի և Հեքիմյանների գործարաններն ար-

---

34 Տե՛ս «Памятная книжка Эриванской губернии на 1902», Эривань, 1912, отд. IV, стр. 130, 134; «Обзор Эриванской губернии за 1912», стр. 13.

35 Տե՛ս «Кустарная промышленность на Кавказе», вып. II, Тифлис, 1903, стр. 125—126.

36 Տե՛ս «Մշակ», 1901, հոկտեմբերի 13 (№ 227)։

տադրում էին մեքենաների մասեր, ատամնավոր անիվներ, պոմպեր, բամբակամաքրիչ և խաղողաճզմիչ մամլակներ, օդնեռման սարքեր, մահճակալներ, գյուղատնտեսական գանազան գործիքներ և այլն[37]:

Արդյունաբերության նշված ճյուղերից բացի, դարասկզբին նկատելի տեղաշարժեր են կատարվում նաև մյուս ճյուղերում: Երևանում աճում է բրնձամաքրիչ արհեստանոցների թիվը, որոնց միջ աչքի են ընկնում Աթաբեկյանի ու Ավետյանի ձեռնարկությունները, ստեղծվում են ու ընդարձակվում հանքային ջրերի, պահածոների, մրգերի չորացման, աղյուսի, գաչի ու կրի պատրաստ-



Կառի արհեստանոց Երևանում

ման ձեռնարկությունները, հանդես են գալիս արհեստի ու արդյունաբերության նոր ճյուղեր (էլեկտրատեխնիկական, հեռախոսի, օպտիկայի, էլեկտրամեխանիկայի արհեստանոցներ, էլեկտրաաղացը, եվրոպական հագուստների դերձակարաններն ու կոշկակարանոցները և այլն)[38]: Ծնեռնական այս տեղաշարժերի հետևանքով ավելի էին քայքայվում ու արտամղվում միջնադարյան արհեստանոցները իրենց համքարական կազմակերպություններով:

Չնայած այդ ամենին, XX դարի սկզբին Արևելյան Հայաստանի արդյունաբերությունը դեռ թույլ էր զարգացած: Խոշոր օջախներ առաջացան նրա առանձին ճյուղերում միայն, իսկ ընդհանուր առմամբ տիրապետում էր մանր ու միջին արտադրությունը: Կապիտալիզմի անհամաչափ զարգացման հետևանքով, երկրի արդյունաբերության որոշ ճյուղեր դեռ մնում էին տնային արդյունագործության մակարդակի վրա:

---

37 Տե՛ս ՍՍՀ պատմության պետական թանգարան, նոր դարի պատմության բաժնի ֆոնդ № 949:

38 Տե՛ս Բ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1879—1917), Երևան, 1963, էջ 96:

• • •

Լուրջ տեղաշարժեր կատարվեցին նաև Արևելյան Հայաստանի գյուղատնտեսության մեջ։ XIX դարի վերջերից առաջադիմած բամբակագործությունը դարասկզբին շարունակում էր զարգանալ և ավելի ու ավելի ներքաշվել շուկայական հարաբերությունների մեջ։ 1900—1911 թթ. բամբակի ցանքատարածությունները 15 հազար դեսյատինից հասան 36 հազար դեսյատինի, իսկ հավաքած բերքը՝ 382 հազ. փթից՝ 650 հազար փթի[39]։ Գյուղացիները աճեցնում էին բամբակենու բարձրորակ ու բերքատու ամերիկյան տեսակը, որի շնորհիվ տեղական ցածրորակ «Կարակոզ» տեսակը արագորեն արտամղվեց։ 1908 թ. Երևանի նահանգում ամերիկյան տեսակն արդեն կազմում էր բամբակենու 85—90 տոկոսը։

Չնայած դրան, XX դարի սկզբին Անդրկովկասի բամբակի արտադրության գլխավոր կենտրոնը Արևելյան Հայաստանից տեղափոխվում է Ադրբեջան։ Դա պայմանավորված էր նրանով, որ Ադրբեջանում բամբակի մշակությամբ սկսեցին զբաղվել գերազանցապես կալվածատերերը կամ խոշոր վարձակալները, մինչդեռ Արևելյան Հայաստանում նրա մշակությամբ շարունակում էին զբաղվել առավելապես մանր գյուղացիական տնտեսությունները[40]։

Արևելյան Հայաստանում նույնպես որոշ կալվածատերեր զբաղվում էին բամբակի մշակությամբ։ Անգամ դրամատերերից ոմանք այդ նպատակով հողամասեր գնեցին և բնակեցրին հողազուրկ գյուղացիներով։ Օրինակ, հայտնի կապիտալիստներ Մանթաշևն ու Արամյանցը Լոռիում 1909 թ. ստեղծեցին իրենց անունը կրող «Մանթաշևն» և «Արամյանն» գյուղերը։ Կապիտալիստական խոշոր տնտեսություններ կազմակերպելու նպատակով գեներալ Կախանովին ու Շան-Գիրեյին տրվեցին ընդարձակ հողամասեր։ Սակայն այդ կալվածատերերը, դրամատերերն ու վարձակալները նախ փորրաքիվ էին, երկրորդ՝ իրենց տնտեսությունը վարում էին կապալային եղանակներով, ցանում էին ոչ միայն բամբակ, այլև գյուղատնտեսական այլ կուլտուրաներ։ Այսպես, Շան-Գիրեյը «Կիր» հողամասը վարձակալությամբ էր տալիս սակավահող ու հողազուրկ գյուղացիներին, ստանալով բերքի կեսը, իսկ Կովկասի կառավարչապետ Շերեմետևի ժառանգները գեներալ Կախանովից գնելով «Արաղդայան» տափաստանը, վարձակալությամբ էին տալիս կարիքավոր գյուղացիներին, ստանալով բերքի $^1/_3$-ը։ 1909 թ. ցարական պաշտոնյաներից մեկը, ուսումնասիրելով այդ կալվածքների վիճակը, գրում էր, թե արքունիքը սխալվել է, տալով դրանք նշված անձանց, քանի որ նրանք ստեղծել են ոչ թե խոշոր կապիտալիստական բամբակագործական տնտեսություն, այլ շահագործում են գյուղացիներին այնպիսի ձևով, ինչպես չէին շահագործվում անգամ «Հուսաստանի ճորտատիրական իրավունքի ժամանակ... կոռապարտ գյուղացիները»[41]։

Դարասկզբին վերելք է ապրում խաղողագործությունը։ 1900—1910 թթ. խաղողի այգիների տարածությունները 8507 դեսյատինից հասան 9742 դես-

---

39 Տե՛ս «Обзор Эриванской губернии за 1900 г.», стр. 2; *С. Н. Тимофеев*, Статистика хлопководства в Закавказском крае за 1909—1911 гг., Тифлис, 1912, стр. 4.

40 Տե՛ս *П. Петрович*, Хлопководство в Закавказье, Тифлис, 1912, стр. 45, 49.

41 Տե՛ս «Аграрная политика царизма и крестьянское движение в Армении в начале XX века», Ереван, 1951, стр. 15.

յատինի, իսկ բերքը՝ 2664,6 հազ. փթից՝ 4759 հազ. փթ[42]։ Խաղողագործության հիմնական շրջանները Երևանի և Էջմիածնի գավառներն էին, բայց այն զգալիորեն տարածված էր նաև երկրի այլ վայրերում։ Խաղողն իրացնում էին հիմնականում Արևելյան Հայաստանի սպիրտային խմիչքներ արտադրողները։

Աճեց նաև պտուղների ու բանջարաբոստանային կուլտուրաների արտադրությունը։ 1906 թ. Երևանի նահանգապետը գրում էր, որ նահանգում այգիների ու պարտեզների տարածությունը 1905 թ. համեմատությամբ ընդարձակվել է 16%-ով, խաղողի բերքը աճել է 54%-ով, իսկ մրգերինը՝ համարյա 40%-ով[43]։ Այգեգործությունը լայն տարածում է ստանում հատկապես Երևանում, Վաղարշապատում, Աշտարակում, Դամարլուում, Փարպիում, Իդդիրում, ինչպես նաև Արարատյան դաշտի մի շարք այլ գյուղերում, իսկ բանջարաբոստանային կուլտուրաների արտադրությունը, Արարատյան դաշտից բացի, նաև՝ Կարսի մարզում, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Ջանգեզուրի գավառներում և այլուր։ Արևելյան Հայաստանի մրգերն ու բանջարաբոստանային կուլտուրաներն իրացվում էին երկրի ներսում, իսկ ճանապարհների բարեկարգումից, հատկապես երկաթուղիների կառուցումից հետո արտահանվում էին նաև հարևան երկրները, անգամ Եվրոպական Ռուսաստանի մի շարք նահանգներ։ Հռչակված էին Երևանի և Օրդուբադի դեղձն ու ծիրանը, Էջմիածնի ձմերուկը, սեխը, դդումն ու սոխը, Ալեքսանդրապոլի գազարն ու կաղամբը, Նոր Բայազետի կարտոֆիլը, Կարսի կանաչատեսակները և այլն։ XIX դարի վերջից սկսվեց պոմիդորի մշակումը, որից պատրաստում էին մածուկ և մեծ մասն ուղարկում վաճառքի։

Առաջադիմում է նաև ծխախոտագործությունը։ Ծխախոտը մշակում էին ոչ այնքան սեփական կարիքների, որքան շուկայի համար։ Նոր հողեր են հատկացվում ծխախոտին, բարելավվում են նրա մշակման եղանակները և բարձրացվում բերքատվությունը։ Միայն 1900—1906 թթ. ընթացքում ծխախոտի պլանտացիաները 192 դեսյատինից հասնում են 240 դեսյատինի, իսկ արտադրությունը՝ 6585 փթից 11660 փթ[44]։ Ծխախոտագործության հիմնական կենտրոններն էին Երևանի ու Սուրմալուի գավառները, ինչպես նաև Շարուր-Դարալագյազի ու Նախիջևանի որոշ վայրեր։ Բայց ծխախոտը դեռ ցածրորակ էր, իրացվում էր գերազանցապես երկրի ներսում։ Անդրկովկասում ծխախոտի արտադրությամբ Արևելյան Հայաստանը զբավում էր վերջին տեղը։

XX դարի սկզբին շերամապահությունն ավելի ու ավելի է ընդունում ապրանքային բնույթ։ Երևանի նահանգի Նախիջևանի գավառում 1902 թ. արտադրվում է 4300 փութ, իսկ 1909 թ.՝ 4990 փութ բոժոժ[45], նրա արտադրության գլխավոր կենտրոնները, ինչպես առաջ, Նախիջևանի ու Շուշիի գավառներն էին, սակայն որոշ նշանակություն են ստանում նաև Երևանի, Էջմիածնի ու Շարուր-Դարալագյազի գավառները, որտեղ մի շարք գյուղերի բնակիչներ ևս սկսում են զբաղվել շերամապահությամբ[46]։ Գյուղացիները բոժոժը վաճա-

---

42 Տե՛ս Մ. Հ. Ադոնց, նշված աշխ., էջ 166։

43 Տե՛ս «Обзор Эриванской губернии за 1906 г.», Эривань, 1907, стр. 5.

44 Տե՛ս «Обзор Эриванской губернии за 1900 г.», стр. 4—5; «Обзор Эриванской губернии за 1906 г.», стр. 7.

45 Տե՛ս «Обзор Эриванской губернии за 1909 г.», стр. 9; «Памятная книжка Эриванской губернии на 1904 г.», отд. III, стр. 22.

46 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊԱ, ֆ. 133, գ. 4993, թ. 39։

ռում են շրջիկ վաճառականներին, որոնք վերավաճառում էին դրանք մետաքսամշակման ձեռնարկություններին ու նրանց գործակալներին կամ ուղղակի արտահանում Ռուսաստանի արդյունաբերական կենտրոնները։

Արևելյան Հայաստանի հացահատիկային տնտեսությունն առաջադիմում էր հատկապես Կարսի մարզում, Ալեքսանդրապոլի ու մասամբ Նոր Բայազետի գավառներում։ Բավական է նշել, որ Կարսի մարզում 1900 թ. 5259 հազար փթի դիմաց 1910 թ. հավաքվել էր 7116 հազար փութ հացահատիկ, եթե 1900 թ. բնակչության մեկ շնչին ընկնում էր 18,8 փութ, ապա 1910 թ.՝ 19,3 փութ հացահատիկ[47]։ Սակայն երկրի ցածրադիր շրջաններում հացահատիկային տնտեսությունը շարունակում էր նվազել։ Երևանի նահանգում (նորաոյալ նաև նրա հացառատ Ալեքսանդրապոլի գավառը) ցորենի ու գարու արտադրությունը 1902 թ. կազմել էր 13.653.622 փութ, իսկ 1910 թ.՝ 12.008.416 փութ[48]։ Հացահատիկային տնտեսության կրճատումը պայմանավորված էր ռուսական հացի ներմուծումով և Հայաստանում շահաբեր տեխնիկական կուլտուրաների տարածումով։ Յուրաքանչյուր տարի Հայաստանը Ռուսաստանից 2—3 միլիոն փութ հացահատիկ էր ստանում։ Այնուամենայնիվ բնակչությանն անհրաժեշտ հացահատիկի մեծ մասը դեռ արտադրվում էր տեղում։

Ներքաշվելով շուկայական հարաբերությունների մեջ, Արևելյան Հայաստանի հացահատիկը XX դարի սկզբին դառնում է վաճառքի հիմնական առարկաներից մեկը։ Կարսի մարզը, Ալեքսանդրապոլի և Նոր Բայազետի գավառներն իրենց հացահատիկն ուղարկում էին վաճառքի Երևանի նահանգի հացասակավ շրջանները։ Միայն 1903 թ. Կարսի մարզից Երևանի նահանգ ներմուծվեց 334 հազար փութ հացահատիկ[49]։ Հետագա տարիներին, երբ ավարտվից Ալեքսանդրապոլ—Երևան—Ջուլֆա և Ալեքսանդրապոլ—Կարս—Սարիղամիշ երկաթուղիների կառուցումը, Կարսի հացահատիկի արտահանումը Երևանի նահանգի ցածրադիր շրջանները ավելի մեծացավ։ Միաժամանակ աճեց Ալեքսանդրապոլի հացահատիկի արտահանումը, 1903 թ. հասնելով 55 հազար փթի։ 1904 թ. «Մշակը» գրում էր. «Ահա երկու տարի է, որ նկատվում է մի հետաքրքիր երևույթ։ Երևանը Շիրակից է սկսում գնել իր ուտելու հացը, որովհետև ինքն այլևս հացահատիկներ չէ ցանում, այլ բամբակ, որն ավելի ձեռնտու է և շահաբեր»[50]։

Արևելյան Հայաստանում բնակչությունը շարունակում էր զբաղվել նաև բրնձի արտադրությամբ։ Երևանի նահանգում 1904 թ. հավաքվել էր 840.908 փութ բրինձ[51]։ Բրինձն արտադրվում էր գլխավորապես Երևանի ու Շարուր-Դարալագյազի գավառներում՝ հիմնականում մանր գյուղացիական տնտեսությունների կողմից։ Այն իրացվում էր գերազանցապես երկրի ներսում, արտահանվելով Ալեքսանդրապոլ ու Կարս, իսկ հաճախ ուղարկվում էր նաև Վրաստան ու Ադրբեջան, նույնիսկ Պարսկաստան ու Թուրքիա։

---

47 Տե՛ս А. С. Амбарян, Развитие капиталистических отношений в армянской деревне (1860—1920), Ереван, 1959, стр. 188.

48 Տե՛ս «Памятная книжка Эриванской губернии на 1904 г.», отд. II, вед. № 15; «Обзор Эриванской губерни за 1910 г.», стр. 3.

49 Տե՛ս «Краткий обзор... за 1904 г.», Тифлис, 1906, стр. 34—39, 46—48.

50 «Մշակ», 1904, նոյեմբերի 18 (№ 253)։

51 Տե՛ս «Обзор Эриванской губернии за 1904 г.», вед. № 1.

Ցուղատու բույսերի՝ դեղչակի, քունջութի, վուշի, կանեփի ցանքատարածությունները և արտադրությունը, XX դարի սկզբին ցարիզմի հարկային քաղաքականության և Բաքվի նավթի ներթափանցման հետևանքով, շարունակում էին կրճատվել։ Սակայն կտավատի արտադրությունն աճում էր և ընդունում ապրանքային բնույթ, կենտրոնանալով գերազանցապես Ալեքսանդրապոլի գավառում։ Բավական է նշել, որ 1912 թ. Երևանի նահանգում նրա ցանքատարածությունները կազմում էին 2868 դես., որից 2168 դես. գոնվում էր Ալեքսանդրապոլի գավառում[52]։

Դարասկզբին անասնապահությունը նույնպես զարգանում է։ Երևանի նահանգում 1901—1910 թթ. խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 446 հազարից հասնում է 464 հազարի, մանր եղջերավոր անասուններինը՝ 730



Տափանում

հազարից՝ 821 հազարի, իսկ ձիերինը՝ 38 հազարից 42 հազարի[53]։ Անասունների գլխաքանակն աճում էր նաև Կարսի մարզում, որը թեև տարածությամբ ու բնակչությամբ փոքր էր Երևանի նահանգից, բայց անասնապահության ցուցանիշներով գրեթե հասնում էր նրան (1900 թ. մարզն ուներ 1.090 հազար գլուխ անասուն)։ Առավելապես աճում էր խոշոր մեբերատու անասունների քանակը։ Այսպես, Ալեքսանդրապոլի գավառում 1890-ական թվականների սկզբներին խոշոր եղջերավոր անասունները կազմում էին բոլոր անասունների 31,1%-ը, իսկ մանր եղջերավոր անասունները՝ 63,1%-ը, մինչդեռ 1910 թ. առաջիններն արդեն կազմում էին 41,1%-ը, իսկ երկրորդները՝ 50,6%-ը[54]։ Այդ փոփոխությունները արդյունք էին այն բանի, որ անասնապահությունը դառնում էր ինտենսիվ և ավելի ու ավելի ներքաշվում շուկայական հարաբերությունների ոլորտը։

Առևտրային անասնապահության բնագավառում լուրջ դեր էր խաղում գյուղական բուրժուազիան, որը 1907 թ. Կարսի մարզից արտահանեց մոտ 35 հազար ոչխար ու այծ, իսկ Նոր Բայազետի ու Ալեքսանդրապոլի գավառներից՝

---

52 Տե՛ս «Памятная книжка Эриванской губернии на 1914», отд. III, стр. 8.

53 Տե՛ս «Обзор Эриванской губернии за 1901 г.», вед. № 1; «Обзор Эриванской губернии за 1910 г.», вед. № 3.

54 Տե՛ս ՀՍՀՍ ԿՊՊԱ, ֆ. 133, ց. 1, գ. 5116, թ. 35։

25-ական հազար անասուն[55]։ Գյուղական բուրժուազիան զբաղվում էր նաև անասնապահական մթերքների վաճառքով, իրացնելով դրանք ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս։ 1905 թ. Կարսի, Մեծ Ղարաքիլիսայի ու Ալեքսանդրապոլի կայարաններից արտահանվեց շուրջ 15 հազար փութ բուրդ և անգորական այծի մազ։

Արևելյան Հայաստանում զարգացավ նաև մեղվաբուծությունը։ Հայերը մեղվաբուծությամբ զբաղվել են դեռ վաղ անցյալում։ 1894 թ. Լոռիում առաջին անգամ մուտք գործեցին Դադան-բլատտի կամ շրջանակավոր արկղաձև փեթակները և կարճ ժամանակում տարածվեցին համարյա ամբողջ երկրում։ Միայն ութ տարվա ընթացքում (1902—1910) շրջանակավոր փեթակների թիվը Երևանի նահանգում 530-ից հասավ 5964-ի[56]։ Այդպիսի արագ զարգացումը պայմանավորված էր նոր փեթակների հարմարավետությամբ ու եկամտաբերությամբ։ Եթե հին փեթակը տալիս էր մինչև 12, ապա նորը՝ 60 գրվանքա մեղր[57]։ Կանոնավոր մեղվաբուծությունը զարգացավ հատկապես Ալեքսանդրապոլի գավառում, ուր գտնվում էր 1910 թ. Երևանի նահանգի բոլոր 5964 շրջանակավոր փեթակներից 3917-ը։ Համարյա ամենուրեք մեղվաբուծությունն ընդունել էր ապրանքային բնույթ։ 1910 թ. «Գյուղատնտեսի» թղթակիցը հաղորդում էր. «Այժմ մեղվապահությունը Լոռում արդյունաբերական բնավորություն է ստացել... կան... բավականաչափ մարդիկ, որոնք հատկապես դրանով են պարապում»[58]։ Երևանի նահանգը մեղվաբուծությամբ Անդրկովկասում գրավում էր առաջին տեղը։

Արևելյան Հայաստանի գյուղատնտեսությունը շարունակում էր զարգանալ անհամաչափ։ Համառուսական շուկայի պահանջներով՝ նրա որոշ ճյուղեր ավելի շատ էին ներքաշվում ապրանքադրամական հարաբերությունների ոլորտը, քան մյուսները։ Հացահատիկային տնտեսությունն ապրանքային բնույթ էր ստացել 10—15, անասնապահությունը՝ 50—60, խաղողագործությունը՝ 80, բամբակագործությունը՝ 92%-ով։

Ապրանքային արտադրության վերելքն ընթանում էր աշխատանքի հասարակական և երկրագործական բաժանման խորացումով։ Գնալով աւելի էր անջատվում գյուղատնտեսությունից և կենտրոնանում քաղաքներում, իսկ երկրի առանձին շրջաններ՝ համաձայն իրենց բնակլիմայական պայմանների, մասնագիտանում էին գյուղատնտեսական այս կամ այն բնագավառում։ Կարսի մարզը, Ալեքսանդրապոլի ու Նոր Բայազետի գավառները, Լոռիի գավառամասը, ինչպես և մասամբ Զանգեզուրի ու Ղազախի գավառները դառնում են հացահատիկային տնտեսության ու անասնապահության հիմնական օջախներ, իսկ Արարատյան դաշտը՝ խաղողի և այլ պտուղների, բամբակի, բրնձի և բանջարաբոստանային կուլտուրաների արտադրության կենտրոններ։

Ապրանքային արտադրության վերելքն ընթանում էր նոր հողերի յուրացումով և հատկապես ոռոգման ախտեմի ընդարձակումով։ XIX դարի վերջին

---

55 Տե՛ս «Труды первого кавказского съезда сельских хозяев...», стр. 351; ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 133, ց. 1, գ. 4993, թթ. 33—34։

56 Տե՛ս «Памятная книжка Эриванской губернии на 1904 г.», отд. III, стр. 28.

57 Տե՛ս «Памятная книжка Эриванской губернии на 1912 г.», отд. IV, стр. 10.

1 գրվանքան=է մոտ 400 գրամի։

58 «Գյուղատնտես», 1910, № 2, էջ 23։

Արևելյան Հայաստանում կառուցվեցին Խան-Աղովի, Շան-Գիրեյի ու գեներալ Կախանովի նշանավոր ջրանցքները, որոնց երկարությունը հասնում էր տասնյակ կիլոմետրերի, իսկ XX դարի սկզբին՝ մի քանի փոքր ջրանցքներ ու ջրհան կայաններ։ Սրանց մի մասը գտնվում էր Շարուրի, իսկ մյուսը՝ Ղամարլուի տեղամասերում։ 1913 թ. Երևանի նահանգի ջրարբի վարելահողերը կազմում էին 204368, իսկ մարգագետինները՝ 9627 դես., որոնք մեծ մասամբ ընկած էին Էջմիածնի, Սուրմալուի, Երևանի և Նախիջևանի գավառներում[59]։

Ապրանքային արտադրության վերելքի հետ միասին տեղի էր ունենում նաև գյուղատնտեսական գործիքների կատարելագործում։ Հատկապես դարասկզբին գյուղական բուրժուազիան համարյա ամենուրեք սկսեց կիրառել եվրոպական գութաններ, հնձիչներ, քամհարներ, փոցխեր, ֆուրգոններ և այլն։ Միայն 1904—1910 թթ. ընթացքում Կարսի մարզում ֆուրգոնների թիվը 2087-ից հասավ 4145-ի, սայլերինը՝ 2595-ից 5127-ի, հնձիչներինը՝ 150-ից 412-ի, իսկ քամհարներինը՝ 420-ից 1395-ի։ Տափաններ ու ցանիչ մեքենաներ 1904 թ. բոլորովին չկային, իսկ 1910 թ. հաշվվում էին 324 տափաններ, իսկ ցանիչ մեքենաներ՝ 27 հատ[60]։ 1911 թ. Արևելյան Հայաստանում՝ Մանթաշևի կալվածքում (Լոռի) առաջին անգամ սկսեց աշխատել տրակտորը[61]։ Այդ արդեն կարևոր երևույթ էր։

* * *

Ապրանքային արտադրության վերելքը խորացրեց գյուղացիության սոցիալական շերտավորումը։ Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Զանգեզուրի և Ղազախի գավառներում 1907 թ. ուսումնասիրված 42767 տնտեսություններից կամ 198.372 շնչից սննդի կարիք ունեցողները կազմում էին 81.774, սերմի կարիք ունեցողները՝ 79.012, իսկ ապահովվածները՝ 37.586 շունչ[62]։ Եթե առաջին խումբը չբավորներ էին, երկրորդը՝ միջակներ և երրորդը՝ ունևորներ, ապա գյուղացիության սոցիալական շերտավորումը տոկոսային հարաբերությամբ մոտավորապես կարտահայտվի հետևյալ կերպ. չբավորներ՝ 41,3, միջակներ՝ 39,8, ունևորներ՝ 18,9%։ Այդ հաշվումները կատարված են պաշտոնական տեղեկությունների հիման վրա։ Կասկածից վեր է, որ չբավորների տոկոսը իրականում ավելի մեծ էր։ Երկրի ցածրադիր շրջաններում, ուր ապրանքային տնտեսությունը համեմատաբար զարգացած էր, գյուղացիության սոցիալական շերտավորումն ավելի ուժեղ էր արտահայտվում։

Շնորհիվ գյուղացիության շերտավորման խորացման, կապիտալիստական հարաբերությունները լայն զարգացում էին ստանում։ Գյուղական բուրժուազիան տնտեսության համարյա բոլոր ճյուղերում ավելի հաճախ է կիրառում վարձու աշխատանք։ Բամբակագործության բնագավառում կուլակները վարձում էին մեծ թվով բատրակներ, որոնք գալիս էին Երևանի նահանգի լեռնային գյուղերից, Կարսի մարզից, Պարսկաստանից ու Թուրքիայից։ 1909 թ. մի հաղորդման մեջ ասվում էր. «Բամբակի շրջանները սպասարկվում են աշխատող ձեռքերով Երևանի, Էջմիածնի ու Նոր Բայազետի գավառների լեռնա-

---

59 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 133, ց. 1, մաս. 5, գ. 4993, թ. 1 և 8։

60 Տե՛ս «Обзор Карсской области за 1903», Карс, 1904, вед. № 3; «Обзор Карсской области за 1910», стр. 24, вед. № 13.

61 Տե՛ս «Весь Кавказ», стр. 128.

62 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 13, ց. 3, գ. 2291։

յին գոտիներից։ Աշնանը հենց որ ավարտվում են գյուղատնտեսական աշխատանքները, այդ վայրերի բնակիչները, ամբողջ խմբերով ուղղվում են դեպի Երևանի նահանգի ցածրադիր շրջանները, որ աշխատեն հատկապես բամբակի պլանտացիաներում և մնում են մինչև բերքի հավաքման ավարտումը»[63]։

Գյուղական բուրժուազիան բատրակներին վճարում էր բնավճարով (հավաքած բերքի $^1/_8$-ից—$^1/_{11}$-ը) և դրամով (հավաքած 1 փթին 70—75 կոպ.՝ նթե բատրակը ապրում էր իր ծախսերով, իսկ նթե սնվում էր տիրոջ հաշվին, ապա 25—40 կոպ)[64]։ Բատրակներից շատ-շատերը ծանր աշխատանքի հետևանքով հիվանդանում էին, «սառը հողի գիրկը նետվում. գիշերը անկողին չեն ունենում, սնունդը վատ, առատորեն ուտում են զանազան վնասակար պտուղներ»[65]։

Վարձու աշխատանքն զգալիորեն տարածված էր նաև խաղողագործական, հացահատիկային ու անասնապահական տնտեսություններում։ Աշխատավարձն անհամեմատ ցածր էր անասնապահության մեջ։ Լոռում ձեռնարկատիրոջ հովիվը 1900 թ. տարեկան ստանում էր 80 ռուբ., իսկ նրա կովկիթ կինը՝ ամսական 1,5 ռուբ., կամ օրական 5 կոպեկ[66]։ Պաշտոնական տվյալներով միայն Երևանի նահանգի ներսում ամեն տարի արտագնացության էին դիմում ավելի քան 17 հազ. մարդ և տեղավորվում ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում[67]։ Տղամարդկանց հետ միասին գնում էին նաև կանայք ու անչափահասները։ Նրանք անասելի շահագործման էին ենթարկվում կալվածատերերի ու կուլակների կողմից։ Օգտվելով այն բանից, որ կառավարությունը դեռ չէր սահմանել բատրակների շահագործման որոշակի նորմեր, գյուղական բուրժուազիան կամայականություններ ու բռնություններ էր գործադրում։ Չնայած, դարասկզբին հեղափոխական շարժումների ազդեցության տակ, կայսրության ինչպես բազմաթիվ այլ շրջաններում, այնպես էլ Արևելյան Հայաստանում, բարձրացավ բատրակների աշխատավարձը և 1900—1911 թթ. տղամարդու աշխատավարձը տարեկան 36 ռուբլուց հասավ 75,6 ռուբլու, կնոջը՝ 20 ռուբլուց՝ 61,2 ռուբլու, իսկ պատանունը՝ 15 ռուբլուց՝ 32,5 ռուբլու[68], սակայն դրա հետ միասին աճեցին նաև գյուղատնտեսական մթերքների գները։ Այսպես, 1905—1913 թթ. էջմիածնի գավառում 1 փութ ցորենի գինը 1 ռուբ. 20 կոպ.-ից հասավ 1 ռուբ. 46 կոպ.-ի, գարու գինը՝ 75 կոպ.-ից 95 կոպ.-ի, բրնձինը՝ 2 ռուբ. 20 կոպ. մինչև 2 ռուբ. 95 կոպ. և այլն[69]։ Այդպիսով գյուղական պրոլետարիատը շարունակում էր մնալ աղքատության ու թշվառության մեջ։

Արևելյան Հայաստանի գյուղացիները երկրի ներսում չգտնելով աշխատանք կամ չկարողանալով ապրել ցածր աշխատավարձով, հաճախ դիմում

---

63 Տե՛ս «Труды съезда хлопководов в гор. Тифлисе 1—6 ноября 1912 г.», т. II, ч. II, Тифлис, 1914, стр. 76.

64 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 398, ց. 75, գ. 420, թ. 12։

65 «Մշակ», 1911, մարտի 25 (№ 63)։

66 Տե՛ս «Кавказское сельское хозяйство», 1902, № 417.

67 Տե՛ս «Обзор Эриванской губернии за 1913 г.», Эривань, 1914, стр. 16.

68 Տե՛ս «Сельское хозяйство и аграрные отношения», т. 4, сост. проф. П. В. Гугушвили, Тбилиси, 1955, стр. 452—453.

69 Տե՛ս «Обзор Эриванской губернии за 1905 г.», стр. 4; «Итоги урожая и состояние скотоводства в Закавказье в 1913 г.», Тифлис, 1914, стр. 81.

էին արտագնացության։ Միայն Երևանի նահանգից յուրաքանչյուր տարի գնում էր 20.000—30.000 մարդ։ Նրանք մեկնում էին Բաքու, Թիֆլիս, Բաթում, Հյուսիսային Կովկաս, Եվրոպական Ռուսաստան, Միջին Ասիա, Հեռավոր Արևելք, նաև արտասահման՝ Ֆրանսիա, Գերմանիա, Ամերիկա։ Մեկնում էին «իրենց ընտանիքները մինչև գարուն մի կերպ կերակրելու համար»[70]։

Արտագնացների մեծ մասը երկրի լեռնային շրջաններից էին, մասնավորապես Նոր Բայազետի, Ալեքսանդրապոլի, Ղազախի, Զանգեզուրի գավառներից ու Կարսի մարզից։

1910 թ. Խարկովից հաղորդում էին. «Ոչ մի տարի այնպես չէր լցվել տեղս հայ պանդուխտներով, ինչպես այս տարի... քաղաքումս էլի նկատելի են խումբ-խումբ անգործ հայեր, որոնք... հոժար են ամսական 10 ռուբլով ծառայելու, որպեսզի գոնե... մի ճանապարհածախս ունենան հայրենիք վերադառնալու, բայց, դժբախտաբար, հենց այդ... ծառայությունն է, որ չը կա»[71]։

Հայ պանդուխտների մի մասը մնում էր այս կամ այն քաղաքում և համալրում արդյունաբերական պրոլետարիատի շարքերը, բայց մյուսները վերադառնում էին գյուղ՝ հաճախ հյուծված, «դեղնած, նիհարած և զանազան վարակիչ հիվանդություններով ծանրաբեռնված...»[72]։ Այդուհանդերձ նրանք շփվում էին առաջավոր պրոլետարիատի հետ, ներքաշվում դասակարգային պայքարի մեջ և մասնակցում հեղափոխական շարժումներին։

3. ՑԱՐԻԶՄԻ ՀՈՂԱՅԻՆ ՈՒ ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

XX դարի սկզբին Արևելյան Հայաստանում ագրարային հարցը ավելի սուր բնույթ էր ընդունել։ Պետությունը, կալվածատերերը և հոգևոր հաստատություններն առաջվա նման տիրում էին երկրի հողային ամբողջ տարածությանը, իսկ գյուղացիները չունեին կամ համարյա չունեին սեփական հող։ Ֆեոդալական այդ վերնաշերտերն իրենց հողային հարստության միայն մի մասն էին տվել գյուղացիներին իբրև հողաբաժին, իսկ մյուս մասը պահել էին իրենց ձեռքում, որ շահագործեն շինականներին նաև կապալային եղանակներով կամ օգտագործեն այլ նպատակներով։ 1894 թ. տվյալներով, Արևելյան Հայաստանում (բացառությամբ Կարսի մարզի, որի մասին տեղեկություններ չկան), հաշվվում էր 4.311.733 դես. պետական ու կալվածատիրական հող, որից 2.871.406 դես. (66,4%) գտնվում էր ցարական արքունիքի ու կալվածատերերի, իսկ 1.440.327 դես. (33,6%-ը)՝ գյուղացիության ձեռքին[73]։ Ի տարբերություն Եվրոպական Ռուսաստանի, որտեղ գերիշխում էր խոշոր կալվածատիրական հողատիրությունը (ազնվականական ամեն մի ընտանիք ուներ միջին հաշվով մոտ 2.300 դես.), Արևելյան Հայաստանում գերիշխում էր մանր կալվածատիրական հողատիրությունը։ Եթե Եվրոպական Ռուսաստանում յուրաքանչյուր գյուղացիական տնտեսություն ուներ միջին հաշվով

---

70 «Итоги урожая и состояние скотоводства в Закавказье в 1913 г.», Тифлис, 1914, стр. 23.

71 «Մշակ», 1910, մայիսի 21 (№ 108)։

72 «Մշակ», 1900, փետրվարի 9 (№ 25)։

73 Տե՛ս «Сборник статистических данных о землевладении и способах хозяйства в пяти губерниях Закавказского края», Тифлис, 1899, стр. III—VII, 87, 101.

11,1 դես.[74], ապա Արևելյան Հայաստանում՝ շուրջ 8 դես. Հողարաժին[75]։ Բնականաչական է, որ XX դարի սկզբին Արևելյան Հայաստանում, գլխավորապես գյուղական ազգաբնակչության բնական աճի պատճառով, գյուղացիների հողարաժիններն ավելի կրճատվեցին։ 1886—1906 թթ. նոր բաշխիտի գավառում յուրաքանչյուր անտեսության հողարաժինը 8 դեսյատինից իջավ 5 դեսյատինի, իսկ շնչին՝ 0,9—0,6 դեսյատինի[76]։ Նույնը տեղի ունեցավ նաև երկրի մյուս շրջաններում։ Ալեքսանդրապոլի գավառում 1909 թ. արդեն հազվագյուտ էին այն գյուղերը, որտեղ յուրաքանչյուր շնչի հողարաժինն անցներ միջին հաշվով 0,5 դեսյատինից, բայց շատ էին այն գյուղերը, ուր ամեն մի շունչ ուներ ¼ դեսյատինից պակաս հողարաժին[77]։ Դարասկզբին սակավահողությունն իրեն զգացնել տվեց նաև Կարսի մարզում, ուր գյուղացիները գանգատվում էին, որ չեն կարողանում ապրել ունեցած հողով։

1900 թ. մայիսի 1-ին ցարական կառավարությունը օրենք հրատարակեց «Անդրկովկասի պետական հողերում բնակվող գյուղացիների հողաշինարարության գլխավոր հիմունքների մասին»։ Այդ օրենքի համաձայն հողերի բաշխման նախկին վիճակն առանձին գյուղերի, համայնքների ու ազգությունների միջև մնում էր անփոփոխ, իսկ գյուղացիներին առաջարկվում էր տիրել իրենց հողարաժնին առաջվա նման մշտապես օգտվելու իրավունքով։ Օրենքը թույլ էր տալիս շինականներին հողի համայնական օգտագործումը փոխարինել ծխականով, եթե այդ որոշման օգտին քվեարկի գյուղի բնակչության ²/₃-ը։ Գյուղացիները իրենց հողարաժնից օգտվելու համար պարտավոր էին պետությանը վճարել հողահարկ կամ բահրա։ Պետական հողերը ենթակա չէին վերարաժանման առանձին գյուղերի կամ համայնքների միջև, իսկ հողարաժինները չէին կարող լինել վաճառքի կամ գրավ դնելու առարկա։ Գյուղացիների հողարաժնի մեջ մտցվում էին ոչ միայն պիտանի, այլև անբերրի, անպիտան հողերը։ Նպատակահարմարության դեպքում օրենքը կարելի էր տարածել նաև երկրամասի բոլոր գյուղերի վրա։ Թույլատրվում էր գյուղացիներին անտառային հողարաժին տալ միայն այն վայրերում, որտեղ անտառներ շատ կային։ Իսկ մյուս շրջաններում գյուղացիներն իրավունք ունեին օգտագործել անտառանյութը միայն տնային կարիքների համար։ Բայց երկու դեպքում էլ գյուղացիները պարտավոր էին պետությանն անտառահարկ վճարել[78]։

Այսպիսով, ցարական կառավարության հողային «նոր» օրենքը փաստորեն փոփոխություն չէր մտցնում Անդրկովկասի, այդ թվում նաև Արևելյան Հայաստանի գյուղում։ Այն իրավապես ձևակերպում էր հողատիրության և հողօգտագործման փաստական վիճակը, ամրապնդում պետության իրավունքները երկրամասի հողերի մեծ մասի նկատմամբ, պահպանում պետական ֆեոդալական հողատիրությունը, հնարավորություն ստեղծում ցարիզմի գաղութային քաղաքականության իրագործման համար, չէր կարգավորում գյուղերի միջև եղած վեճերն ու անհավասարությունները, չէր վերացնում նրանց

---

74 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկ., հ. 16, էջ 241։

75 Տե՛ս «Сборник статистических данных.», Приложение № IV, стр. 18—20.

76 Տե՛ս «Памятная книжка Эриванской губернии на 1908 г.», стр. 262.

77 Տե՛ս «Գյուղատնտես», 1909, № 1, էջ 12։

78 Տե՛ս «Полное собрание законов Российской империи», т. 20, СПб., 1902, стр. 389—390.

սակավահողությունը և գյուղացիներին առաջվա նման կարիքի մեջ էր թողնում։

1900 թ. մայիսի 1-ի օրենքի հրապարակումից անմիջապես հետո ցարական կառավարությունը նոր եռանդով ձեռնամուխ եղավ իր գաղութային քաղաքականության իրականացմանը Անդրկովկասում ու Արևելյան Հայաստանում։ Չգոհելով ռուս գյուղացիներին բնակեցնել կայսրության նաև այս երկրամասում, իշխանությունները երկրագործության ու պետական ունեցվածքների մինիստրության Անդրկովկասի լիազորին առընթեր ստեղծեցին բաժիններ, հանձնարարելով դրանց՝ եկվորներին հողատարածություններ առանձնացնել։ Այդ նպատակով Կովկաս գործուղվեց պետական խորհրդատու Մարկովը։ Կովկասյան իշխանությունները միայն 1900 թ. ընթացքում ռուս վերաբնակիչների համար առանձնացրին 258 հազար դես. պիտանի հող, որից 52 հազար դես. Երևանի նահանգում։ Ծրագրված էր ռուսացնել Վրաստանում՝ Սևծովյան ափերը, Ադրբեջանում՝ Մուղանի հարթավայրը, իսկ Արևելյան Հայաստանում՝ Սարդարապատի տափաստանը։

1900 թ. սկսելով աշխատանքները, կովկասյան իշխանությունները Սև ծովի ափերին ու Մուղանի դաշտավայրում յուրացրին որոշ տարածություններ և բնակեցրին ռուս վերաբնակիչներով։ Բայց տեսնելով, որ նոր հողերի նվաճումը կապված է մեծ ծախսերի հետ, նպատակահարմար գտան եկվորներին հող տրամադրել հողաշինարարության ժամանակ տեղացիների հողերը կտրելու ճանապարհով։ Դա հնարավոր էր դառնում հատկապես այն բանից հետո, երբ 1903 թ. ապրիլի 21-ին օրենք հրատարակվեց Անդրկովկասում հողաշինարարական աշխատանքների շարունակման և հողաբաժինների սահմանագծումների անցկացման մասին։ Օրենքը թույլատրում էր հարևան համայնքներին, գյուղացիների 2/3-ի համաձայնության դեպքում, միացնել նրանց արոտավայրերը և օգտվել համատեղ։ Կտրականապես արգելվում էր գյուղացիների հողաբաժիններին պետական հողեր կցելը, ինչպես և պետական անտառները վարելահողերի կամ արոտավայրերի վերածելը։ Այս օրենքով առիթ էր ստեղծվում գյուղացիների հողամասերը կրճատելու համար։ Երբ իշխանությունները, կենսագործելով օրենքը, սկսեցին կտրատել գյուղացիական հողերը, գյուղացիները համառ դիմադրություն ցույց տվեցին։ Երկրամասի բոլոր շրջաններից նրանք բազմաթիվ բողոքներ հղեցին կովկասյան իշխանություններին և մայրաքաղաք։ 1903 թ. ամռանը Նախիջևանի գավառի Մարալիկ գյուղի բնակիչները դիմել էին երկրագործության մինիստրին, որ Երևանի նահանգի պետական ունեցվածքների վարչությունը բռնագրավում է իրենց վարելահողերն ու արոտավայրերը[79]։ Իսկ 1905 թ. էջմիածնի գավառի Աշտարակ գյուղի գյուղացիները գրել էին փոխարքային, որ իրենք սպասում էին հողաշինարարությանը «հույս տածելով, որ ի վերջո կստանան լրացուցիչ հող... Եվ ահա այդ հողաշինարարությունը։ Երկրագործության երևանյան վարչությունն իր գործակալի միջոցով հայտարարեց աշտարակցիներին, որ իրենց դարավոր հողաբաժնի մի մասը... վերցվում է արքունիքի կողմից՝ կալվածային հողամաս դարձնելու համար»[80]։

Գյուղացիության բողոքների հետևանքով ցարիզմի ինչպես հողաշինարա-

79 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 396, ց. 3, գ. 565, թ. 10։

80 ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 13, ց. 7, գ. 68, թ. 8—12։

կան, այնպես էլ վերաբնակեցման քաղաքականությունը անհաջողության մատնվեց։ Բավական է նշել, որ հինգ տարվա ընթացքում (1903—1908) Անդրկովկասի մոտ 5000 պետական գյուղերից հողաշինարարությունն անցկացվեց միայն 135-ում։ Անդրկովկաս քշված ռուս գյուղացիները, տնտեսապես քայքայվելով, կամ ետ էին վերադառնում, կամ տեղափոխվում արդյունաբերական կենտրոններ։ 1907 թ. Վորոնցով-Դաշկովն իր հաշվետվության մեջ գրում էր, որ վերաբնակեցման պաշտոնյաները «մեծ եռանդ են գործադրում նրանց վերադարձը կանխելու համար։ Որոշ վայրերում գաղթականների կազմը մի քանի տարվա մեջ համարյա թարմացել է, բայց նոր բնակիչները ևս ձգտում են հեռանալ»[81]։

Ցարական իշխանությունները 1906 թ. Թիֆլիսում հիմնեցին գյուղացիական հողային բանկի բաժանմունքը, նաև ռուս վերաբնակիչների համար նոր հողերի ձեռք բերման նպատակով և 1906 թ. հոկտեմբերի 15-ին հատուկ օրենք հրատարակեցին հողաբաժինները գրավ դնելու պայմանով վարկ տալու մասին։ Սակայն այս միջոցառումը ևս չարդարացրեց կառավարության սպասումները։ Բանկի գոյության երկու տարվա ընթացքում (1906—1908) գյուղացիներն իրենց հողաբաժինները գրավ դնելու պայմանով ոչ մի վարկ չվերցրին[82]։

XX դարի սկզբին ցարական իշխանությունները Անդրկովկասում ու Արևելյան Հայաստանում փորձեցին վերացնել գյուղացիների «ժամանակավոր-պարտապան» հարաբերությունները։ 1904 թ. Կովկասի գլխավոր կառավարչապետի գրասենյակը խորհրդակցություն հրավիրեց այդ առթիվ, որին մասնակցում էին ցարական բյուրոկրատիայի և Անդրկովկասի ազնվականության ներկայացուցիչները։ Այդ խորհրդակցությունում կարծիք հայտնվեց գյուղացիների «ժամանակավոր-պարտապան» հարաբերությունները վերացնելու մասին՝ նրանց հողաբաժինները փրկագնելու ճանապարհով։ Անդրկովկասի բոլոր փրկագնվող հողերի արժեքը գնահատվեց 27.200 հազար, իսկ Երևանի նահանգինը՝ 5.537 հազար ռուբ.։ Չնայած այդքան բարձր փրկագնին, հողատերերը, այնուամենայնիվ, չհամաձայնվեցին։ Նրանք ավելին պահանջեցին և աշխատեցին պահպանել «ժամանակավոր-պարտապան» հրաբերությունները, որպեսզի իրենց տնտեսությունն ապահովեն էժան աշխատուժով։

Ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության տարիներին Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը կրկին անդրադարձավ այդ հարցին։ 1905 թ. վերջերին նա կառավարությանը նախագիծ ներկայացրեց Անդրկովկասում «ժամանակավոր-պարտապան» հարաբերությունները վերացնելու մասին։ Նա առաջարկում էր փրկագնումները տարածել նաև խիզանների վրա, իսկ պետական գյուղացիներին հնարավորություն տալ ետ գնելու իրենց հողաբաժինները որպես սեփականություն։ Փոխարքան գտնում էր, որ կալվածատերերը պետք է վարձատրվեն պետական գանձարանից, որը հետագայում կարող է իր միջոցները ետ ստանալ գյուղացիներից։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևանի նահանգի թիուլդարների իրավունքները վերջանում են նրանց մահով, նա առաջարկում էր նշանակել նրանց ցմահ դրամական

---

[81] «Всеподданнейшая записка по управлению Кавказским краем генерал-адъютанта граф. Воронцова-Дашкова», Тифлис, 1907, стр. 75.

[82] Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1278, ց. 2, գ. 215, թ. 20—21։

վարձատրություն 1906 թ. հունվարի 1-ից՝ յուրաքանչյուրին իրեն հասնող ընդհանուր գումարի 4,5%-ի չափով։ Սակայն մինիստրների խորհուրդը 1906 թ. սկզբներին, քննելով Վորոնցով-Դաշկովի այս նախագիծը, հավանություն չտվեց։

Կառավարությունը որքան էլ ձգտում էր պահպանել ու ամրապնդել կալվածատիրական հողատիրությունը, այնուամենայնիվ XX դարի սկզբին այն ապրանքա-կապիտալիստական հարաբերությունների զարգացման ու գյուղացիության դասակարգային պայքարի վերելքի պայմաններում, ինչպես Անդրկովկասի այլ շրջաններում, այնպես էլ Արևելյան Հայաստանում քայքայվում էր։ Կուլակներն ու զանազան դրամատերերն իրենց ձեռքն էին կենտրոնացնում կալվածատերերի հողերը և հողի ֆեոդալական սեփականությունը փոխարինում բուրժուական սեփականությամբ։ XIX դարի 90-ական թվականների վերջերին Թիֆլիսի ազնվականական բանկի բաժանմունքում գրավ էր դրված Երևանի նահանգի կալվածատերերի հողերի 15%-ը։ Միայն 1900 թ. Մելիք-Ազամալովը Նոր Բայազետի գավառում վաճառեց 4700 դես. հող։ 1905 թ. հեղափոխությունը նոր հարված հասցրեց կալվածատիրական հողատիրությանը։ Լոռու գավառամասում իրենց կալվածքները վաճառեցին Օրբելյանները, Մելիք-Բախտամյանցը, Միրզոյանը, Լոռիս-Մելիքովի ժառանգները, Շանշիևը, Բարաթովը և ուրիշներ։ 1894—1909 թթ. ընթացքում կալվածատիրական տիրույթների թիվը Երևանի նահանգում 654-ից իջավ 544-ի։

1906 թ. նոյեմբերի 9-ին ցարական կառավարությունը հողային օրենք հրատարակեց և իրավունք տվեց պետական գյուղացիներին դառնալու իրենց հողաբաժինների սեփականատերը։ Այդ օրենքով նա համայնքի պաշտպանությունից անցնում էր նրա քայքայմանը և 1861 թ. ռեֆորմից հետո երկրորդ կարևոր քայլն էր կատարում Ռուսաստանի ֆեոդալական միապետությունը բուրժուական միապետության վերածելու ճանապարհին։ Ստոլիպինյան ագրարային ռեֆորմը կանխատեսում էր, որ գյուղացիությունը և ամենից առաջ նրա կիսապրոլետարական շերտերը, վերջնականապես քայքայվեն ու իրենց հողերը կվաճառեն կուլակներին, որոնք, դառնալով մասնավոր սեփականատերեր, արդեն կհամագործակցեն կալվածատերերի հետ՝ գյուղացիական հեղափոխական շարժումների դեմ։ Այլ խոսքով՝ կառավարությունը ձգտում էր կուլակային տնտեսությունների ուժեղացման ճանապարհով ամրապնդել գյուղում բուլացած իր սոցիալական հենարանը, անխախտ պահելով կալվածատիրական հողատիրությունը։ Ստոլիպինյան այդ օրենքը տարածվեց միայն ռուսական, ուկրաինական և բելոռուսական նահանգների վրա, շրջանցելով կայսրության մի շարք ոչ ռուսական ծայրամասերը, այդ թվում նաև Անդրկովկասը։

Սակայն կառավարության այդ հույսերը նույնպես չարդարացան։ Ռուս, ուկրաինացի ու բելոռուս գյուղացիության հիմնական մասը դեմ դուրս եկավ համայնքի վերացման հորատատիրական եղանակներին և վճռականապես դիմագրավեց հողային նոր օրենքի կենսագործմանը։ Դրա հետևանքով սոսկ քչերը դարձան մասնավոր սեփականատերեր։ Բավական է նշել, որ տասը տարվա ընթացքում (1906—1916) 16 միլիոն գյուղացիական տնտեսություններից ցարիզմի ձեռնարկմանն արձագանքեց միայն 1,6—1,8 միլիոնը կամ բոլոր տնտեսությունների շուրջ 10%-ը։

• • •

Ցարական բյուրոկրատական-ոստիկանական ապարատի աճող պահանջները և Ռուսաստանում կապիտալիստական արդյունաբերության զարգացումը հրամայաբար թելադրում էին կառավարությանը վերափոխել կայսրության մեջ, այդ թվում նաև Անդրկովկասում գործող հարկային սիստեմը։

1899 թ. երկրորդ կեսին Գոլիցինը կազմեց հատուկ հանձնաժողով, որի նպատակն էր մշակել նախագիծ Կովկասի հարկային սիստեմի «կարգավորման» մասին՝ այն հաշվով, որ ծխահարկը փոխարինվի հողահարկով և բարձրացվին պետության եկամուտները։ Կառավարչապետը հայտարարեց՝ ինչ գնով էլ լինի, պետք է մեծացնել պետական «գանձումների ընդհանուր գումարը»[83]։ Հանձնաժողովը 1899 թ. հոկտեմբերին կազմեց հարկային ռեֆորմի նախագիծը, որը 1900 թ. հունիսի 12-ին հաստատվեց ցարի կողմից[84]։ Նոր օրենքի համաձայն, 1901 թ. հունվարի 1-ից Անդրկովկասում վերացվում էին ծխահարկն ու հողահարկը և մտցվում էին պետական բարձրային տուրքն ու հողային հարկը։ Առաջինը գանձվելու էր պետական այն հողերից, որոնք գտնվում էին գյուղացիների մշտական օգտագործման տակ (բացառությամբ կազակների), իսկ երկրորդը՝ մնացած այն բոլոր հողերից, որոնք իբրև մասնավոր սեփականություն պատկանում էին արքունիքին, կալվածատերերին, վանքերին, եկեղեցիներին, մզկիթներին և գյուղացիներին։ Հողային հարկը հավաքվելու էր նաև «ժամանակավոր-պարտական» գյուղացիների ու խիզանների օգտագործման տակ գտնվող մասնատիրական հողերից։ Պետական բարձրատուրքի և հողային հարկի ընդհանուր գումարը սահմանվում էր 1901 թ. հունվարի 1-ից օրենսդրական կարգով և նոամյա ժամկետով։ Երկրամասի յուրաքանչյուր նահանգի համար այն որոշվում էր առանձին-առանձին։ Նահանգական ատյանները հարկի ընդհանուր գումարը բաժանելու էին գավառների, իսկ գավառական ատյանները՝ համայնքների ու տնտեսությունների վրա, հաշվի առնելով յուրաքանչյուր գյուղի ու տնտեսության ունեցած հողի քանակը, որակը և եկամտաբերությունը։

1900 թ. հունիսի 12-ի օրենքն անդրադարձավ նաև երկրային (զեմսկի) գանձումներին և սահմանեց, որ այսուհետև նրանց գումարը պետք է որոշել ոչ թե ծխերի կամ տնտեսությունների քանակով, այլ հողամասերի տարածությունների ու եկամտաբերությամբ։ Նոր օրենքը երկրային հարկի տակ դրեց նաև կալվածատերերին, որոնք մինչ այդ ազատ էին դրանից[85]։

Օրենքի հրատարակումից հետո Անդրկովկասի գավառական հարկային ատյանները քմահաճորեն կազմեցին «Կովկասի հողերի քանակության և եկամտի ցուցակ»։ Այդ ցուցակի համաձայն, Կարսի մարզում մեկ դեսյատին հողը կրկնակի եկամտաբեր էր համարվում, քան Քութայիսի նահանգում, մինչդեռ ընդհակառակն, իրականում երկրորդում այն հինգ անգամ ավելի եկամտաբեր էր, քան առաջինում։

Կազմելով «Երևանի նահանգի 1901—1903 ԹԹ. արքունական հողային տուրքերի հաշվեցուցակը», նրանք յուրաքանչյուր դեսյատին այգու և բանջա-

---

83 ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 7. II, գ. 297, թ. 11։

84 Տե՛ս «Полный свод законов Российской империи в двух книгах», под ред. А. А. Добровольского, книга I, СПб., 1911, тома I—VIII, стр. 2039—2083, 2117—2120.

85 Տե՛ս И. Г. Ахтелава, Государственные крестьяне Грузии в XIX в., т. II. Тбилиси, 1962, стр. 182—183.

բանոցի գուտ եկամուտը որոշեցին՝ Ալեքսանդրապոլի գավառում 100 ռուբ., Նոր Բայազետի գավառում՝ 11 ռուբ., էջմիածնի գավառում՝ 100 ռուբ. 74 կոպ., իսկ Երևանի գավառում՝ 76 ռուբ. 33 կոպ.։ Բայց հայտնի է, որ Նոր Բայազետի բանջարանոցները ոչնչով չէին տարբերվում Ալեքսանդրապոլի բանջարանոցներից, իսկ Երևանի այգիները՝ էջմիածնի այգիներից[86]։ Պաշտոնյաների նպատակը ոչ թե հարկերի ու տուրքերի արդար բաշխումն էր, այլ պետական եկամուտների մեծացումը։ Եվ նրանք հասան այդ բանին։ Հարկային նոր ռեֆորմի հետևանքով գյուղացիների տուրքերն աճեցին Թիֆլիսի նահանգում՝ 105%-ով, Կարսի մարզում՝ 50%-ով, Երևանի նահանգում՝ 48,5%-ով, Ելիսավետպոլի նահանգում՝ 25%-ով և այլն[87]։

Նոր օրենքով հարկի տակ էին դրվում նաև կալվածատիրական հողերը։ Բայց Անդրկովկասի իշխանություններն այդ հողվածը կիրառելիս աշխատեցին որքան հնարավոր է զիջումներ կատարել ազնվականներին։ Ամենից առաջ նրանք ազատեցին կալվածատերերին պետական ապառքներից, ապա նրանց մի մասից (հատկապես Թիֆլիսի ու Քութայիսի նահանգներում) առաջին երեք տարում (1901—1904) հարկեր չպահանջեցին, վերջապես կալվածատիրական հողերն ավելի թեթև հարկման ենթարկեցին, քան գյուղացիականը, թեև առաչիններն ավելի բարերեր ու եկամտաբեր էին։ Ընդհանուր առմամբ գյուղացիները յուրաքանչյուր դեսյատին հողի համար վճարում էին 42 ռուբ. 50 կոպ., իսկ կալվածատերերը՝ 20 ռուբ. 40 կոպ.[88]։ Այսպիսով, նոր օրենքը հարկային հարաստահարության ամբողջ ծանրությունն առաջվա նման գցում էր գյուղի աշխատավորության վրա։

Կառավարության այս քաղաքականությունը բողոքներ առաջացրեց Արևելյան Հայաստանի գյուղերում։

«Մեր գյուղը,— գրում էին էջմիածնի գավառի Դուսատկան գյուղի բնակիչները,— 1908—1909 թթ. պետք է վճարի 581 ռուբ. պետական բահրայինև 331 ռուբ. երկրային հարկ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրը ունի 1903 դես. հող։ Այդպիսի հարկումը մենք համարում ենք անարդար, քանի որ իրականում ունի ընդամենը 1194 դես. հող.»[89]։ Նման բողոքագրեր ներկայացրին նաև Զանգեզուրի, Նոր Բայազետի, Ալեքսանդրապոլի, էջմիածնի գավառների բազմաթիվ գյուղեր։ Բայց դրանք անհետևանք մնացին։

Ցարական իշխանություններն Անդրկովկասի ինչպես այլ շրջաններում, այնպես էլ Արևելյան Հայաստանում շարունակում էին ծանրաբեռնել գյուղացիներին նաև զանազան պարհակներով։ Գյուղացիները առաջվա նման պարտավոր էին իրենց հաշվին պահել գյուղապետերին, գրագիրներին, հարկահավաքներին, միրաբներին, ջուվարիներին, հանդապահներին, հովիվներին, բնակարաններ ու փոխադրական միջոցներ տրամադրել զանազան պաշտոնյաների ու զինվորականների, մասնակցել ճանապարհների ու կամուրջների կառուցմանը, նրանց վերանորոգումներին և այլն։ Այդ պարհակները կազմում էին գյուղացիների վճարած պետական հարկերի $^1/_4$-ից մինչև $^1/_2$-ը և ավելի էին սաստկացնում նրանց կեղեքումը։ Հատկանշական է, որ ինչպես պետական հարկերը, այնպես էլ պարհակներն արագորեն աճում էին։

---

86 Տե՛ս «Մուրճ», 1901, № 5, էջ 274։

87 Տե՛ս նույն տեղում, էջ 273։

88 Տե՛ս «Сельское хозяйство и аграрные отношения», т. IV, стр. 100.

89 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 93, գ. 57, թ. 74։

Կառավարությունն ուղղակի հարկերի հետ միասին բարձրացրեց նաև անուղղակի հարկերը, որի հետևանքով միայն 1906 թ. սպիրտային խմիչքների, ծխախոտի և լուցկու վրա դրված գանձումներն ավելացան շուրջ 50%-ով։ Ամենածանրը կալվածատիրական գյուղացիների դրությունն էր։ Հարկային նոր օրենքով պետական գյուղացիներն արթունի գանձարանին և տեղական մարմիններին վճարում էին իրենց հողերից ստացած զուտ եկամտի 20,4%-ը՝ որպես բահրատուրք և երկրային գանձում, իսկ կալվածատիրական գյուղացիները՝ 10,4%-ը (որից 3%-ը որպես հողային հարկ և 7,4%-ը՝ երկրային տուրք)։ Սակայն նրանք պետական այդ հարկերից զատ կալվածատերերին վճարում էին նաև իրենց բերքի $^{2}/_{15}$ մասը, որը կազմում էր հողերից ստացած զուտ եկամտի շուրջ $^{1}/_{3}$-ը[90]։ Այլ կերպ ասած, նոր օրենքը խլում էր պետական գյուղացիների եկամտի 20,4%-ը, իսկ կալվածատիրական գյուղացիների՝ 43,7%-ը։ Կալվածատերերը բացի այդ «օրինական» գանձումներից, ստիպում էին «իրենց» գյուղացիներին կատարել նաև զանազան ապօրինի պարհակներ, որոնք չափազանց ծանր էին նստում նրանց վրա հատկապես գյուղատնտեսական աշխատանքների եռուզեռի ժամանակ։

Գյուղացիները շահագործվում էին նաև հոգևորականների կողմից, որոնք առաջվա նման տարբեր առիթներով շարունակում էին վերցնել զանազան հարկեր և ստիպում կատարել պարհակները։ Պետական, կալվածատիրական ու հոգևորականության հարկային այդ հարստահարումներն արագացնում էին աշխատավոր գյուղացիության տնտեսական բայքայումը և դատապարտում նրան աղքատության ու թշվառության։ Այդպիսի պայմաններում մի առանձին ծավալում ստացավ վաշխառուական կապիտալը։ Արարատյան դաշտում ու Նոր Բայազետի գավառում 1905—1910 թթ. պարտապանները կազմում էին բնակչության 95%-ը, Զանգեզուրում 80%-ը, Կարսի մարզում՝ 75%-ը և այլն[91]։ Եթե 1860—80-ական թվականներին վաշխառուները վերցնում էին մեկ ռուբլուն 20—40 կոպ., ապա XX դարի սկզբին՝ մինչև 80 կոպ.[92]։ Այժմ նրանք գյուղացիներին պարտք տալիս վերցնում էին ոչ այնքան դրամ, որքան գյուղատնտեսական մթերքներ, որովհետև դա իրենց համար ավելի շահաբեր էր։

Այսպիսով, ցարական կառավարության հողային «նոր» քաղաքականությունը ոչ միայն չթարեկավեց, այլև, պաշտպանելով կալվածատերերի ու կուլակների շահերը, ավելի վատթարացրեց աշխատավոր գյուղացիության դրությունը։ Վերլուծելով ցարական ինքնակալության հողային քաղաքականությունը XX դ. սկզբին, Վ. Ի. Լենինը ցույց էր տալիս, որ այն մատնվել լիակատար կրախի։ Նա գրում էր. «Հաջողություն ունեցա՞վ արդյոք կառավարությունը։ Կարողացա՞վ արդյոք նա որևէ կերպ հաճգստացնել գյուղացիությանը և բարելավել նրա դրությունը Ռուսաստանում և Սիբիրում։ Հենց ճիշտ հակառակը։ Կառավարությանը հաջողվեց միայն հորից սրել և վատթարացնել գյուղացիության դրությունը թե՛ Ռուսաստանում, և թե՛ Սիբիրում»[93]։ Լենինն ապա

---

90 Տե՛ս Մ. Հ. Ագեևց, նշված աշխ., էջ 96։

91 Տե՛ս «Кавказское сельское хозяйство», 1905, № 601; «Մշակ», 1909, հունիսի 16 (№ 132), 1910, № 150։

92 Տե՛ս «Մշակ», 1911, փետրվարի 17 (№ 34)։

93 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 19, էջ 214։

շարունակում էր. «Միացյալ ազնվականության խորհրդի «ՆՈՐ» հողային քաղաքականությունն անձեռնմխելի թողնց հին ճորտատերերին և նրանց հազարավոր ու տասնյակ-հազարավոր դեսյատին հսկայական կալվածքների ճնշումը։ «Նոր» հողային քաղաքականությունը հարստացրնց ճիշ կալվածատերերին և գյուղացիական մի բուռ բուրժուազիային, էլ ավելի քայքայելով գյուղացիական մասսաներին»[94]։

94 Նույն տեղում, էջ 222։



ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ, ԼԵՆԻՆՅԱՆ ԻՍԿՐԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ՄԱՐՔՍԻԶՄԻ ՁԱՐԳԱՑՄԱՆ ԼԵՆԻՆՅԱՆ ՓՈՒԼԻ ՍԿԻԶԲԸ. ԼԵՆԻՆՅԱՆ ԻՍԿՐԱՅԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1893 թ. աշնանը Վ. Ի. Լենինը փոխադրվում է Պետերբուրգ։ Այստեղ, պրոլետարական կենտրոնում, Վ. Ի. Լենինի գլխավորությամբ բեղմնավոր գործունեություն են ծավալում մարքսիստական խմբակները, որոնք հետագայում միավորվեցին մեկ միասնական սոցիալ-դեմոկրատական անլեգալ կազմակերպության մեջ և 1895 թ. վերջին ստացան «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միություն» անունը։ Ռուսական սոցիալ-դեմոկրատիան թևակոխեց իր պատմության նոր փուլը։ «Պայքարի միությունը» պրոլետարիատի դասակարգային պայքարը ղեկավարող կուսակցության առաջին սաղմն էր։ Վ. Ի. Լենինի հիմնադրած Պետերբուրգի «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» և ապա Լենինյան «Իսկրայի» միջոցով մարքսիստական շարժումը տարածվեց ամբողջ Ռուսաստանում և նրա ծայրամասերում։ Բանվորական շարժումը միացավ սոցիալիզմին և դարձավ անպարտելի ուժ։ Վ. Ի. Լենինի ծավալած քաղաքական-տեսական տիտանական գործունեությունը, համարձակորեն առաջ քաշած գաղափարներն ու կանխատեսումները, մարքսիզմը Ռուսաստանում տարածելն ու ստեղծագործաբար կիրառելը, Ռուսաստանի հեղափոխական շարժման հարուստ փորձի գիտական ընդհանրացումները նշանավորեցին մարքսիզմի զարգացման նոր՝ լենինյան փուլի սկիզբը։

Ռուսաստանում մարքսիստական միասնական կուսակցություն ստեղծելու համար անհրաժեշտ էր ջախջախել բանվորական շարժման քաղաքական խնդիրները մերժող «էկոնոմիստներին», սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններն ազատել նրանց ազդեցությունից, ամրմանազատվել օպորտունիստներից։ Միավորվելուց առաջ և միավորվելու համար հարկավոր էր սկզբից ևեթ վճռականորեն և որոշակի կերպով սահմանազատվել։

Վ. Ի. Լենինը կոմունիստական կուսակցության կառուցման ելակետը համարում էր համառուսական քաղաքական թերթի հիմնումը։ Այդպիսի թերթը լենինյան «Իսկրան» էր, որի առաջին համարը լույս տեսավ 1900 թ. դեկտեմ-



Վ. Ի. Լենին

բերի 24-ին (11-ին), Լայպցիգում՝ «Կայծից բոց կբռնկի» բնաբանով Վ. Ի. Լենինը «Իսկրայի» առաջին համարի «Մեր շարժման կենսական խնդիրները» առաջնորդող հոդվածով լուսավորեց պրոլետարիատի ազատագրական պայքարի ուղին, ցույց տվեց, որ ռուսական սոցիալ-դեմոկրատիայի մերձավորագույն քաղաքական խնդիրն է՝ հինքնակալության տապալումը, քաղաքական ազատության նվաճումը։ «Սոցիալ-դեմոկրատիան,— գրել է Վ. Ի. Լենինը,— բանվորական շարժման միացումն է սոցիալիզմի հետ»[1]։ Նրա խնդիրն է՝ լուսավին ծառայել պրոլետարիատի շահերին, ցույց տալ նրա ինքնուրույնությունը, հավատարիմ մնալ «Բանվորների ազատագրումը բանվորների իսկ գործը պետք է լինի»[2] մեծ ավանդին։ «Իսկրան», որ նախապատրաստեց ՌՍԴԲԿ II համագումարը, կուսակցության ծրագիրը և այլ փաստաթղթեր, կոլեկտիվ պրոպագանդիստի, կոլեկտիվ ագիտատորի և կազմակերպչի դեր կատարեց։

Անդրկովկասի հեղափոխական շարժումները, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ձևավորումն ու գործունեությունն առաջին իսկ օրից սերտորեն կապված են Վ. Ի. Լենինի անվան հետ։ Վ. Ի. Լենինի և նրա հավատարիմ աշակերտների՝ լենինյան իսկրայականների, պրոֆեսիոնալ հեղափոխականների միջոցով են ստեղծվել, աճել և ամրապնդվել երկրամասի, այդ թվում՝ հայ իրականության, մարքսիստական, բոլշևիկյան կազմակերպությունները։ Վ. Ի. Լենինը, տակավին 1893 թ. հայ ժողովրդի լավագույն զավակներից մեկի՝ Իսահակ Լալայանցի հետ միասին Սամարայի մարքսիստական խմբակում ուսումնասիրում և քննարկում էր «Կապիտալ», «Անտի-Դյուրինգ», «Բանվոր դասակարգի դրությունը Անգլիայում» և այլ աշխատություններ։ Ի. Լալայանցը և խմբակի մյուս անդամները Վ. Ի. Լենինի գլխավորությամբ մեծ եռանդով պրոպագանդում էին մարքսիզմը։ Իր համախոհների շրջանում Վ. Ի. Լենինը արտակարգ հեղինակություն էր վայելում։ «Այդ 23-ամյա մարդու մեջ,— հետագայում վերհիշում էր Ի. Լալայանցը,— ամենազարմանալի կերպով զուգակցում էին, մի կողմից պարզությունը, նրբազգացությունը, կենսուրախությունն ու կրքոտությունը և մյուս կողմից՝ մեծալրջությունը, գիտելիքների խորությունը, դատողությունը և սահմանումների պարզորոշությունն ու հստակությունը»[3]։ Պետերբուրգի «Պայքարի միության» հայ գործիչները (Բ. Կնունյանց, Ա. Ջուրաբյան, Հ. Մելիք-Հովսեփյան, Ս. Ավետիսյան) հայ իրականության մեջ ևս առաջիններից էին, որոնց բախտ վիճակվեց ղեկավարելու Վ. Ի. Լենինի բանակին։

Քաղաքական պայքարի հորիզոնում փայլատակում է հավատարիմ լենինյան Ստեփան Շահումյանի անունը։ 1899 թ. Շահումյանի ղեկավարությամբ Հայաստանի տարածքում առաջին անգամ՝ Ջալալօղլիում (Ստեփանավան), կազմակերպվում է մարքսիստական խմբակ, որի կազմում էին Աշոտ և Անուշավան Թումանյանները, Սերգո Իսրայելյանը, Միշա Անանյանը, Գերասիմ Մելիք-Գրիգորյանը, Արտուշ Հարությունյանը, Սեդրակ Հարությունյանը, Նիկոլայ Դադիվանյանը և ուրիշներ։ Շահումյանը խմբակի անդամներին ծանոթացնում

---

1 Վ. Ի. Լենին. Նշվ. հ. 4, էջ 469

2 Կ. Մարքսի գրած «Բանվորների միջազգային ընկերության ընդհանուր կանոնադրության» (Առաջին հնտերնացիոնալի) դրույթը։ Տե՛ս Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Երկեր, հ. 13, մաս 2, 1940, էջ 684։

3 «Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին», Երևան, 1957, մաս 1, էջ 135։

էր Կ. Մարքսի «Կապիտալին», բացատրում գիտական սոցիալիզմի էությունը։ Նրանք ձեռք էին բերել հեկտոգրաֆ և բազմացնում էին թռուցիկներ, կոչեր, պրոպագանդիստական աշխատանք էին կատարում Լոռու աշխատավորության շրջանում։ «Մտեփանը,— գրել է Անուշավան Թումանյանը,— կարողանում էր գունեղ գործել իր պատմածը։ Նա, դեռևս բոլորովին երիտասարդ, շատ շնորհալի հռետոր էր և չափազանց համոզիչ խոսք ուներ»[4]։ Ջալալօղլու մարքսիստական խմբակը Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների սաղմը հանդիսացավ։



Ի. Լալայանց

1900 թ. ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի անդամ Լ. Կեցխովելին փոխադրվում է Բաքու՝ կուսակցական անլեգալ աշխատանքի։ Այդ ժամանակ Վ. Ի. Լենինի ցուցումներով Բաքվի սոցիալ-դեմոկրատական խմբակները միավորվում են, ստեղծում միասնական դեկավար կենտրոն, որով և հիմք է դրվում ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեին։ Կոմիտեի կազմում ընտրվում են հավատարիմ իսկրայականներ Լ. Կեցխովելին, Բ. Կնունյանցը, Մելիք-Մելիքյանը, Ի. Ֆիոլետովը և ուրիշներ։ Բաքվի իսկրայականները սիստեմատիկ կապ էին պահպանում Վ. Ի. Լենինի հետ։ Նրանք ստեղծեցին Բաքվի «Նինա» ընդհատակյա տպարանը, որը ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին մեծ դեր խաղաց երկրամասում մարքսիստական գրականության հրատարակման, «Իսկրայի» առանձին համարները բազմացնելու գործում։ Այստեղ էին տպագրվում նաև Վ. Ի. Լենինի աշխատությունները, հայերեն «Պրոլետարիատի կռիվը», վրացերեն «Բրծոլաձ («Պայքարը») թերթերը և այլ գրականություն։

ՌՍԴԲԿ Թիֆլիսի, Բաքվի, Բաթումի կոմիտեների ստեղծումով Հայաստանում լենինյան գաղափարների տարածումը նկատելի թափ ստացավ։ Նրանց օգնությամբ 1901—1903 թթ. մարքսիստական խմբակներ, լենինյան իսկրայական կազմակերպություններ են ստեղծվում Ալավերդում, Հաղպատում, Երևանում, Սանահին, Ուլուխանլու կայարաններում, Ալեքսանդրապոլի կայազորում և Հայաստանում գտնվող այլ զորամասերում։

Հայաստանում լենինյան-իսկրայական առաջին կազմակերպություններից մեկը հիմնադրվեց 1901 թ. երկաթուղու Ուլուխանլու—Երևան տեղամասում։ Նրա անդամները հիմնականում երկաթուղայիններ էին, որոնք կապված էին

---

4 «Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք առաջին, Երևան 1958, էջ 39։

Անդրկովկասի երկաթուղու գլխավոր արհեստանոցների և Թիֆլիսի դեպոյի առաջավոր բանվորների, ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի հետ 1901 թ. վերջին սոցիալ-դեմոկրատական, լենինյան-իսկրայական խմբակ է ստեղծվում Երևանում։ Հետագայում սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ ստեղծվեցին քաղաքի արական գիմնազիայի և թեմական դպրոցի սովորողների, իգական գիմնազիայի ուսուցիչների շրջանում, փոստ-հեռագրական գրասենյակում։ Երևանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները կապված էին Բաքվի և Թիֆլիսի «իսկրայական կոմիտեների հետ, նրանց գրեթե բոլոր անդամները կանգնեցին «Իսկրայի» դիրքերում։ Երևանի սոցիալ-դեմոկրատները լենինյան «Իսկրան» և նրա հրատարակությունները ստանում էին ոչ միայն Ռուսաստանի քաղաքներից, Բաքվի «Նինա» տպարանից, այլև անմիջականորեն արտասահմանից։ Միայն 1903 թ. փետրվար-մայիս ամիսներին Ավբստրիայի վրայով Երևան են ուղարկվել «Իսկրայի» 28—37 համարները, բստ որում յուրաքանչյուր համարից մի քանի օրինակ։ Այս տեղեկությունները վերաբերում են «Իսկրայի» միայն այն համարներին, որոնք հայտնաբերվել ու գրավվել են իշխանությունների կողմից։ Երևանի նահանգային ժանդարմական վարչության պետն այդ օրերին հաղորդում էր Թիֆլիս՝ Քե Երևանի նահանգի և Կարսի մարզի բնակչության մեջ «...Հաճախակի են երևան գալիս սոցիալ-դեմոկրատական և հեղափոխական գաղափարներ պարունակող թերթեր և բրոշյուրներ[5]։



Վ. Կնգխովելի (Լադո)

Ալեքսանդրապոլում 1901—1902 թթ. կազմակերպված խմբակների անդամները մեծ մասամբ երկաթուղայիններ էին։ Մի կողմից՝ քաղաքի պրոլետարական կորիզը, մյուս կողմից՝ այնտեղ արտաքսված հեղափոխականները, որոնք գտնվում էին հիմնականում կայազորում, տարածում են մարքսիզմի գաղափարները, միավորվում սոցիալ-դեմոկրատական խմբակներում։ Բացի քաղաքում ստեղծված խմբակից, կար նաև երկաթուղայինների խմբակ։ 1902 թ. կազմակերպվում է կայազորի սոցիալ-դեմոկրատական խմբակը, որն իրեն անվանում էր «Սոցիալ-դեմոկրատական խմբի Ալեքսանդրապոլի բաժանմունք»։ Վերջինս ուներ գաղտնի գրադարան, որը գրքեր էր ստանում ՌՍԴԲԿ Թիֆլիսի և այլ կոմիտեներից։ Խմբակի անդամները հեղափոխական աշխա-

5 ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 25, ց. 20, գ. 34403։

տանք և քաղաքական ագիտացիա էին մղում զինվորների և կրտսեր հրամանատարների շրջանում[6]։

Ռուսաստանի և Եվրոպայի քաղաքների բարձրագույն դպրոցներում սովորող հայ ուսանողներից ստեղծված մարքսիստական խմբակները, մեծ մասամբ գործելով հայրենակցական միությունների շրջանակներում, ձգտում էին երիտասարդությանն ազատել բուրժուական կուսակցությունների ազդեցությունից, նրանց ջանքերը նպատակամղել ինտերնացիոնալիզմի գաղափարների պրոպագանդմանը, պրոլետարիատի ազատագրական պայքարի կազմակերպմանը։ Կիևում գործող հայ ուսանողների մարքսիստական խմբակը, որի կազմում էին Հյուդիճ Կնունյանցը, Ալեքսանդր Բեգզադյանը և Հևոն Ավետիսյանը, 1901—1902 թթ. կապված էր ոչ միայն Ուկրաինայի, այլև Անդրկովկասի բանվորական շարժումների հետ։ Կիևի հայ սոցիալ-դեմոկրատ ուսանողների խմբակի անդամների մի մասը արտաքսվելով Կովկաս, շարունակում է հեղափոխական աշխատանքը բանվորների մեջ։ 1902 թ. հոկտեմբերի 25-ին նրանք հրատարակեցին ծրագրային մի փաստաթուղթ՝ դեկլարացիա, որի մեջ ցույց էր տրված Կովկասի սոցիալիստական շարժման առաջին հաջողությունները և ընդգծված էր պրոլետարիատի ավանգարդային դերը հեղափոխության մեջ։ Հայ պրոլետարիատի գործունեության մասին դեկլարացիայում ասված էր, թե նա ևս դուրս է եկել հեղափոխական պայքարի ճանապարհը և հանդես է գալիս «դրոշակակրի դերում՝ ձեռք-ձեռքի տված ռուս, վրացի և հրեա պրոլետարիատի հետ»[7]։

Խարկովում 1899—1900 թթ. իրենց հեղափոխական գործունեությամբ աչքի էին ընկնում Արշավիր Մելիքյանը և Հակոբ Զարգարյանը։ 1899 թ. Խարկովի ուսանողական ցույցերին ակտիվորեն մասնակցելու համար Հակոբ Զարգարյանը հեռացվում է տեխնոլոգիական ինստիտուտի 5-րդ կուրսից, ձերբակալվում և ուղարկվում Մետեխի բանտը[8]։ ՌՍԴԲԿ անդամ Արշավիր Մելիքյանը 1902 թ. մասնակցում է առաջավոր ուսանողների համառուսաստանյան համագումարին, ինչպես նաև Խարկովի ուսանողական ցույցերին, որի համար հեռացվում է ինստիտուտից։ Կովկաս վերադառնալով, նա 1903 թ. մեկնում է Շվեյցարիա և շարունակում ուսումը։ Այստեղ նա հանդիպումներ է ունենում Վ. Ի. Լենինի հետ և ընդմիշտ դառնում նրա գինակիցը[9]։

1902 թ. Կիևի հայ ուսանող սոցիալ-դեմոկրատները միավորվում են լենինյան «Իսկրայի» դիրքերում կանգնած հայ ուսանողական մի այլ կազմակերպության՝ «Պրոլետարիատի» հետ, որի խնդիրն էր հայ իրականության մեջ տարածել սոցիալիստական գաղափարներ, Կովկասի պրոլետարիատին առաջնորդել քաղաքական պայքարի, այնպես անել, որպեսզի «մեր ժողովուրդն էլ պատրաստ լինի մեծ հեղափոխությանը»[10]։

---

6 Տե՛ս ՍՍՀՄ ԿԳԳԱ, ֆ. 23, գ. 19, թ. 12—13։ Ս. Ազոյան, Հայաստանը 1905—1907 թթ. ռևոլյուցիայի տարիներին, «Ռևոլյուցիան շարժումները Հայաստանում ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին (հոդվածների ժողովածու)», Երևան, 1955, էջ 42—43, Ս. Ազոյան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Երևան, 1955։

7 Հ. Բաբայան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք առաջին, Երևան, 1967, էջ 288։

8 Տե՛ս ՄԼԻ-ի վրացական մասնաճյուղի արխիվ, ֆ. 31, գ. 23 թ. 82։

9 Տե՛ս Ս. Գ. Ազոյան, Արշավիր Մելիքյան, Երևան, 1969։

10 Հ. Բաբայան, Մարքսիզմի տարածումը Հայաստանում, գիրք առաջին, էջ 289։

1901—1902 թթ. սոցիալ-դեմոկրատական խմբակներ են ստեղծվում Բաքվի, Թիֆլիսի և Կովկասի այլ քաղաքների սովորող երիտասարդների շրջանում։ Բաքվի աշակերտական խմբակների ակտիվ հեղափոխական Փառո Կնունյանցը 1902 թ. գործուղվում է Թիֆլիս, Ա. Զուրաբյանի և Ն. Աղաջանյանի (Ալաջալովա) օգնությամբ աշխատանք տանում երկրամասի հեղափոխական հայ ուսանող երիտասարդության միասնական կենտրոն ստեղծելու ուղղությամբ։ Վերջինիս մեջ մտնում էին Փ. Կնունյանցը, Տ. Տրդատյանը, Տ. Կնունյանցը, Մելիք Բաղդասարյանը և ուրիշներ[11]։

Մարքսիզմի զարգացման լենինյան փուլը հայ իրականության մեջ նշանավորվեց հասարակական կյանքի ու մտքի զարգացման մեծ շրջադարձով։ Հեղափոխական պայքարի հորձանուտը նետվեցին Բոգդան Կնունյանցը, Ստեփան Շահումյանը, Սուրեն Սպանդարյանը և ուրիշ հայ մարքսիստներ, որոնք հաստատ կանգնեցին համառուսական պրոլետարիատի հեղափոխական ինտերնացիոնալ պայքարի ուղու վրա, իրենց կյանքը նվիրեցին բանվոր դասակարգի ազատագրության մեծ գործին։

Լենինյան կուսակցության ակտիվ գործիչ Բ. Կնունյանցը[12] Ռուսաստանի առաջին կրթված մարքսիստներից էր, մարքսիզմի զարգացման նոր՝ լենինյան փուլի սկզբնական շրջանի ականավոր ներկայացուցիչներից մեկը։ «Նա դեռ 20 տարեկան էլ չկար, երբ հարեց մեր կուսակցությանը,— գրել է Ստ. Շահումյանը,— և այդ ժամանակվանից էլ նրա ամենահավատարիմ ու ամենաազնիվ անդամներից մեկն էր։ Նա չէր ապրում, այլ վառվում էր, իր գեղեցիկ կյանքի այդ տասը տարիների ընթացքում, որ նա ամբողջությամբ, առանց մնացորդի, նվիրեց սոցիալիզմի ու դեմոկրատիայի համար մղվող պայքարին»[13]։

Կնունյանցն ակտիվ մասնակցություն է ունեցել ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի հիմնադրմանը, հայ իրականության մեջ մարքսիզմի գաղափարների տարածմանը։ Մեծ են նրա ծառայությունները ՌՍԴԲԿ կովկասյան կազմակերպությունների ստեղծման, կուսակցության II համագումարի նախապատրաստման և անցկացման գործում։

Ստ. Շահումյանը պատկանում է պրոֆեսիոնալ հեղափոխականների լենինյան հին գվարդիային, Ռուսաստանի բանվորական շարժման այն առաջնորդների համաստեղությանը, որոնց մասին Վ. Ի. Լենինն ասել է. «Առանց «մի տասնյակ» տաղանդավոր (իսկ տաղանդները հարյուրներով չեն ծնվում), փորձված, պրոֆեսիոնալ կերպով պատրաստված և երկարատև դպրոցում սովորած առաջնորդների, հիանալի կերպով միմյանց համամիտ առաջնորդների, անհնարին է ժամանակակից հասարակության մեջ որևէ դասակարգի տոկուն պայքարը»[14]։ Ստ. Շահումյանը կոմունիստական կուսակցության և սովետական պետության ականավոր գործիչներից էր, խոշոր տեսաբան, «թեորետիկական մարքսիզմի ծանր հրետանին»[15]։ Նա Վ. Ի. Լենինի մյուս հավատարիմ աշակերտների հետ միասին, գլխավորել է Անդրկովկասի աշխատավոր մասսաների

---

11 Տե՛ս ՄԼԻ-ի վրացական մասնաճյուղի արխիվ, ֆ. 93, ց. 2, գ. 760, թ. 1—10։

12 Տե՛ս Հ. Ինճիկյան, Բոգդան Կնունյանց, Երևան, 1957։

13 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, 1976, էջ 210։

14 Վ. Ի. Լենին, Եժ, հ. 6, էջ 153

15 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան 1954 թ. էջ 98։

հեղափոխական պայքարը, կռել ու կոփել երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունները[16]։

Տակավին 1898 թ. Շահումյանը կապվում է Թիֆլիս աքսորված և այնտեղ ապրող ռուսական մարքսիստների հետ, ուսումնասիրում Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի երկերը, ռուս հեղափոխական դեմոկրատների աշխատությունները, զինվորագրվում լենինիզմին։

Սովորելով Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտում, Շահումյանը ակտիվորեն ներգրավվում է հեղափոխական պայքարի մեջ։ Ռիգայի պոլիտեխնիկական և այլ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող հայ ուսանողների «Սևան» հայրենակցական միության մեջ մինչև 1901 թ. իշխում էին ազգայնական տրամադրությունները։ 1901 թ. պոլիտեխնիկումում Ստ. Շահումյանը հիմնադրում է մարքսիստական «Թեորետիկ» խմբակը, որի կազմում էին Ազարիա Ադելյանը (Դանիելյանը), Գարեգին Ղազարյանը, Նիկոլայ Աթաբեկյանը, Նիկողայոս Փիրումյանը և ուրիշներ։ Կարճ ժամանակում խմբակն իր ազդեցությունը տարածեց Ռիգայի հայ ուսանողության վրա, լուրջ հարված հասցրեց «Սևան» միության ազգայնական դիրքերին։ «Ոչ միայն հայ,— գրել է Ն. Փիրումյանը,— այլև մյուս ազգություններին պատկանող ուսանողների շրջանում տարվող մարքսիստական աշխատանքի հոգին Ստեփան Շահումյանն էր»[17]։

Ստ. Շահումյանն ակտիվ մասնակցություն է ունեցել Ռուսաստանի հեղափոխական ուսանողների 1901—1902 թթ. շարժումներին ու համագումարներին։ 1902 թ. փետրվարին նա, որպես Ռիգայի ուսանողության պատգամավոր, մասնակցում է Ռիգայում գումարված Ուսանողության համառուսական առաջին համագումարին, ուր հանդես է գալիս փայլուն ճառով և հայտարարում, թե անիրագործելի են այն բոլոր վառ ձգտումներն ու համալսարանական ազատությունները «...մինչև որ չխորտակվի քաղաքական գլխավոր խոչընդոտը, այն է՝ ցարիզմը»[18]։ Համագումարից հետո, փետրվարի 11-ին մի քանի ուսանողների հետ միասին գլխավորում է Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտում բռնկված ուսանողական խոշոր դասադուլը, որի պատճառով էլ նրան և «Թեորետիկ» խմբի շատ անդամների հեռացնում են ինստիտուտից և վարչական կարգով արտաքսում Թիֆլիս։ Այստեղ նա անմիջապես ներգրավվում է Անդրկովկասի լենինյան-իսկրայական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեության մեջ, դառնում նրա աչքի ընկնող ղեկավարներից մեկը։

Ականավոր հեղափոխական Սուրեն Սպանդարյանը (Տիմոֆեյ) մասսաների տաղանդավոր կազմակերպիչ էր, մարքսիզմի նշանավոր պրոպագանդիստ, փայլուն լրագրող-հրապարակախոս։ Նա աչքի էր ընկնում իր նվիրվածությամբ, սկզբունքայնությամբ, մարքսիստական մտքի պայծառությամբ։ 1901 թ. Ս. Սպանդարյանը մտնում է ՌՍԴԲԿ շարքերը, դառնում Թիֆլիսի լենինյան, իսկրայական կոմիտեի ակտիվ գործիչներից մեկը[19]։ 1902 թ. ամառ-

---

16 Տե՛ս Խ. Բարսեղյան, Ստեփան Շահումյան, Երևան, 1968։

17 ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի արխիվ ֆ. 7։ (Ն. Փիրումյանի հուշերը)։

18 Ար. Մն-ն [Ա. Մնջիկյան]. Բեկումն հայ հասարակական կյանքի ու մտքի զարգացման մեջ, «Նոր աշխարհ», 1922, № 2, էջ 46—49։

19 Տե՛ս Վ. Ավետիսյան, Սուրեն Սպանդարյան, Երևան, 1957։

տելով գիմնազիան, քսանամյա Սուրենը մեկնում է Մոսկվա՝ ուսումը շարունակելու։ Այստեղ նա սերտ կապեր է հաստատում սոցիալ-դեմոկրատական գաղտնի խմբակների հետ, ուսումնասիրում Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի աշխատությունները, դառնում լենինյան-իսկրայական։

1902 թ. ամռանը Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի և Ա. Ջուրաբյանի նախաձեռնությամբ ձևավորվում է լենինյան իսկրայական ուղղության «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը»։ Միության մեջ մտնում էին նաև Մելիք Մելիքյանը, Աշոտ Խումարյանը, Սերգո Խանոյանը, Ռուբեն Դաշտոյանը, Դանուշ Շահվերդյանը, Արամայիս Երզնկյանը և ուրիշներ։ Նրանք հայ պրոլետարիատի շարքերում մայրենի լեզվով տարածում էին մարքսիստական-լենինյան գաղափարները, լուսավորում աշխատավորների ազատագրական պայքարի ուղին։ «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը» սերտորեն համագործակցում էր ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի հետ, իսկ 1902 թ. վերջերին այն կազմակերպորեն ձուլվում է նրա մեջ։ Միությունն իր կազմակերպական սկզբունքներով և գործունեությամբ հենվում էր պրոլետարական ինտերնացիոնալիզմի վրա և պրոպագանդում Ռուսաստանի բազմազգ պրոլետարիատի գաղափարական, քաղաքական և կազմակերպական միասնության անհրաժեշտությունը։

«Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը» ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի հետ միասին 1902 թ. երկրորդ կեսին հաջողությամբ գլխավորեց Թիֆլիսի բանվորների քաղաքական ելույթները։ Բանվորները տերերին առաջադրեցին տնտեսական մի շարք պահանջներ։ Քսան օր շարունակվող գործադուլի ընթացքում հայ, վրացի և այլազգի բանվորները ցուցաբերեցին միասնություն և համերաշխություն։ Ի վերջո տերերը տեղի տվեցին։ Գործադուլների գործադուլը ղեկավարում էին ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեն և նրա մեջ ավելի ուշ մտած հայ սոցիալ-դեմոկրատների խումբը[20]։

«Հայ սոցիալ-դեմոկրատների միության» գործունեության մեջ կարևոր տեղ է գրավում ընդհատակյա կուսակցական տպարանի ստեղծումը, հեղափոխական կոչերի, թռուցիկների տարածումը և, ամենակարևորը՝ լենինյան-իսկրայական ուղղության առաջին հայերեն թերթի՝ «Պրոլետարիատի» և նրա թերթիկների հրատարակումը։

«Պրոլետարիատը» պատմական ասպարեզ իջավ 1902 թ. հոկտեմբերին, լենինյան «Իսկրայի» գործունեության ժամանակաշրջանում և դարձավ նրա գինակիցն ու գաղափարների ակտիվ տարածողներից մեկը։ «Պրոլետարիատը», որ լույս է տեսել մեկ համար՝ 240 օրինակով, իր ճակատին կրում էր «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» մարտական կոչը և «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն» խոսքերը։ «Իսկրայի» օրինակով «Պրոլետարիատը» պայքարում էր «էկոնոմիստների», օպորտունիստների, բուրժուական նացիոնալիստների դեմ, պաշտպանում կուսակցության կազմակերպական լենինյան սկզբունքները, բացառիկ մեծ նշանակություն տալիս մարքսիստական տեսության հարցերին։ Նա սկզբից ևեթ հետևողական պայքար ծավալեց դաշնակցության դեմ։

«Պրոլետարիատի» առաջին համարում տպագրվեց «Մանիֆեստ «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» ծրագրային առաջնորդողը, որը «Միության» և նրա տպագիր օրգանի կրեդոն էր։ «Մեր «Միությունը»,— ասված է

20 Տե՛ս «Իսկրա», № 32, 15 հունվարի 1903 թ.։

մանիֆեստում»,— Ռուսիայի ամեն ծայրերում յուր ցանցերը լայն տարածող «Ռուսիայի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության» ճյուղերից մեկը լինելով, միանգամայն համերաշխ է նրա հետ և նրա հետ միասին կըռվելու է հանուն Ռուսիայի պրոլետարիատի շահերի ընդհանրապես և հայկականի՝ մասնավորապես»[21]։

Այնուհետև թերթը շարադրում է «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» ծրագրի հիմնական սկզբունքներն ու խնդիրները, պարզաբանում, որ բանվոր դասակարգը սոցիալիստական գիտակցության է գալիս, «սոցիալիզմը ներկայացնում է բանվոր դասակարգի իդեալների մարմնացումը»[22], որ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան կոչված է գլխավորելու բանվորական շարժումները, որոնք ուղղված են ցարիզմի դեմ։ Հակառակ բունդականների, որոնք դեմ էին մարքսիստական կուսակցության դեմոկրատական ցենտրալիզմի սկզբունքներին, պահանջում էին բանվորներին կազմակերպել ըստ ազգությունների և կուսակցությունն ստեղծել ֆեդերատիվ ձևով։ «Մանիֆեստը» հետևողականորեն պաշտպանում էր կուսակցության լենինյան, ինտերնացիոնալիստական սկզբունքները, դնում բոլոր բանվորներին, անկախ նրանց ազգային պատկանելիությունից, մեկ միասնական համառուսաստանյան մարքսիստական կուսակցության մեջ միավորելու պահանջը։

«Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստը», որն ավարտվում է «Պրոլետարներ ամբողջ աշխարհի, միացե՛ք» միջազգային պրոլետարիատի նշանաբանով, պարզաբանում է իր դիրքը միջազգային և մասնավորապես ռուսական սոցիալ-դեմոկրատիայի մեջ եղած ժամանակակից հոսանքների հանդեպ։ «Սոցիալիստական իդեալի իրականացումը,—ասված է «Մանիֆեստի» մեջ,—մեր կարծիքով անհնարին է բանվոր դասակարգի ո՛չ տնտեսական ինքնագործունեությամբ, ո՛չ էլ մասնակի քաղաքական և սոցիալական ռեֆորմներով, այն հնարավոր է միայն գոյություն ունեցող ամբողջ կարգի արմատական հեղաբեկման միջոցով, սոցիալական հեղափոխության միջոցով, որի անհրաժեշտ նախադրյալը պետք է ծառայի պրոլետարիատի քաղաքական իշխանության ձեռք բերելը»[23]։ Սա մարքսիզմի հիմնական բովանդակության՝ պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարի պաշտպանությունն է, որն այնքան հաջող կերպով «Մանիֆեստում» անց էին կացրել առաջին հայ լենինյանները։ Այնուհետև, մատնանշելով Ռուսաստանում գոյություն ունեցող քաղաքական կարգը, որ ինքնամի է ամեն մի հասարակական և մանավանդ բանվորական շարժման, «Միությունը» հայտարարում էր, որ իր մերձավորագույն խնդիրն է՝ հայ պրոլետարիատի քաղաքական դաստիարակությունը և նրան ամբողջ Ռուսաստանի պրոլետարիատի պայքարին մասնակից դարձնելը՝ ցարական ինքնակալությունը տապալելու համար։

Քննադատելով դաշնակցության ծրագիրը, «Պրոլետարիատը» ցույց էր տալիս, որ նրա մեջ «բուրժուական մտքերի ու պահանջների հետ միասին կան

---

21 «Պրոլետարիատ», № 1, 1902, հոկտեմբեր, Թիֆլիս, Ստ. Շաումյան, երկեր, հ. 1, էջ 41։

22 Նույն տեղում։

23 Նույն տեղում։ «Մանիֆեստի» հեղինակները «իշխանություն» բառը տակ հասկանում էին «դիկտատուրա»։ Վ. Ի. Լենինը «Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստի մասին» գրած հոդվածում հենց այդպես էլ վարվել է՝ «իշխանություն» բառը թարգմանել է «դիկտատուրա»։

նույնիսկ քաղվածքներ Մարքսի և Էնգելսի «Կոմունիստական մանիֆեստից», Ֆ. Էնգելսի «Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն» աշխատությունից, բայց դաշնակցության ծրագրի բովանդակությունը բուրժուական պահանջներն ու գաղափարախոսությունն է, նրա մեջ «սոցիալիզմը մրոտնելով դռնից, վռնդվեց պատուհանից»[24]։

Վ. Ի. Լենինը, որ նախապես իրազեկ էր «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» գործունեությանը, արտասահմանում ստանալով «Պրոլետարիատ» թերթը և նրա մասին ուսերեն գրած տեսությունը, որոշեց ունենալ թերթի հիմնական նյութերի լրիվ թարգմանությունը։ 1903 թ. հունվարի 23-ին Լոնդոնից նա գրել է Գ. Վ. Պլեխանովին. «Արդեն մի քանի օր է, որ ես այստեղ ստացա հայկական «Պրոլետարիատը», և որի վերնագրում նշված է. «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը» և մի ձեռագիր (հոդված նրա մասին)։ Դա արդեն, հավանորեն 33-ի համար է, իսկ ես դեռ չեմ ծանոթացել։ Համենայն դեպս չի խանգարի հետաքրքրական բան բերել այնտեղից։ Ես Ձեզ կգրեմ դեռ այդ մասին, կաշխատեմ զետեղել 33-ում։

Ուղարկում եմ Ձեզ նաև «Պրոլետարիատը»։ Բարի եղեք խնդրեցեք Լալայանցին կամ ուրիշ որևէ մեկին այդտեղից ամբողջապես թարգմանել ամեն ինչ նացիոնալիզմի ու ֆեդերալիզմի մասին և որքան կարելի է շուտափույթ ուղարկել ինձ։ Հարկավոր է դրանց մասին անպայման հոդված զետեղել (ուղարկված հոդվածը ուղղման կարիք է զգում, իսկ դրա համար հարկավոր է տեքստը)»[25]։ Փետրվարի սկզբին Գ. Պլեխանովը Վ. Ի. Լենինին հայտնում է, որ հայկական «Պրոլետարիատ» թերթի մասին եղած ուրվագիծն իրոք անհաջող է, նրա հեղինակը վստահություն չի ներշնչում, որ ինքը կգտնի որևէ մեկին, որը Վ. Ի. Լենինի համար ուրվագիծ կգրի «Պրոլետարիատի» մասին[26]։

Վ. Ի. Լենինը հատուկ հոդված է գրում «Պրոլետարիատի» մասին, որը տպագրվում է «Իսկրայի» 1903 թ. փետրվարի 1-ի 33-րդ համարում։ Վ. Ի. Լենինը նշում է. «կովկասում երևան է եկել մի նոր սոցիալ-դեմոկրատական կազմակերպություն՝ «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը»։ Այդ միությունը, ինչպես մեզ հայտնի է, ավելի քան կես տարի է, ինչ սկսել է իր պրակտիկ գործունեությունը և արդեն ունի իր օրգանը հայերեն լեզվով»[27]։

Վ. Ի. Լենինը քննարկելով «Պրոլետարիատի» առաջին համարի նյութերը և «Միության» «Մանիֆեստը», ընդգծում է, որ առանձնապես հետաքրքրական է միության վերաբերմունքն ազգային հարցի նկատմամբ։ «Մանիֆեստի» հեղինակները, հենվելով պատմական փաստերի վրա, անհրաժեշտ են համարում ֆեդերատիվ հանրապետության հիմնումն ապագա Ռուսաստանում, ընդունում են բոլոր ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը։ «Մենք ամբողջ հոգով ողջունում ենք «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» մանիֆեստը,— գրել է Վ. Ի. Լենինը,— և մանավանդ ազգային հարցի ճիշտ դրվածք տալու նրա հիանալի փորձը։ Խիստ ցանկալի կլիներ, որ այդ փորձը հասցվեր մինչև վերջը։ Երկու հիմնական սկզբունք, որոնցով պետք է ղեկավարվեն Ռուսաս-

---

24 «Պրոլետարիատ», № 1, 1902։
25 IV «Ленинский сборник», стр. 207—208.
26 Տե՛ս նույն տեղում, էջ 211—212։
27 Վ. Ի. Լենին. Երկ., հ. 7, էջ 129։

տանի բոլոր սոցիալ-դեմոկրատներն ազգային հարցում, միությունը միանգամայն ճիշտ է նշել»[28]։

«Իսկրայի» այն համարը, ուր զետեղվել էր Վ. Ի. Լենինի «Հայ սոցիալ-դեմոկրատների միության մանիֆեստի մասին» հոդվածը, 1903 թ. մարտ ամսին ստացվում է Երևանում[29]։ Այդ հոդվածը և ընդհանրապես «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» և նրա «Մանիֆեստի» լենինյան գնահատականը մեծ դեր խաղացին Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ամրապնդման, երկրամասի աշխատավորության ինտերնացիոնալ դաստիարակության գործում։ Միևնույն ժամանակ դա ակնառու կերպով ցույց է տալիս, որ Վ. Ի. Լենինն անխոնջ հոգատարությամբ հետևում էր Անդրկովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների ձևավորմանն ու ամրապնդմանը։

«Պրոլետարիատի» հրատարակությամբ հիմք դրվեց մարքսիստական-բոլշևիկյան հայ պարբերական մամուլին։ «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» և նրա տպագիր օրգանի «Պրոլետարիատի» ստեղծումով նշանավորվեց հայ հասարակական-քաղաքական կյանքի ու մտքի զարգացման շրջադարձը։

Անդրկովկասի հեղափոխական ուժերի ու սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների համախմբման և Ռուսաստանում մարքսիստական միասնական կուսակցության ստեղծման լենինյան պլանի իրականացման համար մղված պայքարում ազգի ընկնող դեր խաղաց ՌՍԴԲԿ Կովկասյան միությունը։ 1902 թ. վերջերից ՌՍԴԲԿ Թիֆլիսի, Բաքվի, Բաթումի կոմիտեների նախաձեռնությամբ բեղմնավոր աշխատանք ծավալվեց Կովկասի լենինյան-իսկրայականների համագումարը նախապատրաստելու ուղղությամբ։ 1903 թ. հունվարին Բաքվի և Թիֆլիսի կոմիտեների ներկայացուցիչները «Բրձոլային» և «Պրոլետարիատին» առընթեր հիմնում են Կովկասյան սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունների ներկայացուցիչների I համագումարի հրավիրման բյուրո[30]։

1903 թ. մարտի կեսերին Թիֆլիսում տեղի ունեցավ Կովկասի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջին համագումարը։ Համագումարին մասնակցում էր 15 պատգամավոր ՌՍԴԲԿ Թիֆլիսի, Բաքվի, Բաթումի կոմիտեներից, Քութայիսի, Դուրիայի, Ճիաթուրայի, Գորիի լենինյան-իսկրայական սոցիալ-դեմոկրատական խմբերից, «Բրձոլա» և «Պրոլետարիատ» թերթերի խմբագրություններից։ «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը» մասնակցում էր Թիֆլիսի կոմիտեի և «Պրոլետարիատի» միջոցով։ Համագումարը հավանություն տվեց «Իսկրայի» հրատարակած ՌՍԴԲԿ ծրագրի նախագծին, հիմք դրեց կովկասյան սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների միասնական ղեկավար օրգանին՝ ՌՍԴԲԿ Կովկասյան միությանը, ջախջախիչ հարվածներ հասցրեց վրաց սոցիալ-դեմոկրատիայի օպորտունիստական թևի պարագլուխ Ն. Ժորդանիային ու նրա կողմնակիցներին և դրանով իսկ ապահովեց մարքսիստական միասնական կուսակցության ստեղծ-

28 Վ. Ի. Լենին. Երկ., հ. 7, էջ 132։

29 Տե՛ս ՀՍՍՀ ԿԿԱ, ֆ. 122, գ. 3, թ. 69։

30 Տե՛ս «Третий съезд РСДРП. Протоколы», М., 1959, стр. 606—610. ՈՍԴԲԿ III համագումարին Մ. Յակոբյանի ներկայացրած զեկուցումը՝ Կովկասյան միության 1903—1905 թթ. գործունեության մասին։

ման լենինյան սկզբունքների հաղթանակը Կովկասում։ Ն. Ժորդանիան և նրա համախոհները հատկապես աղմուկ բարձրացրին Կովկասյան միության ստեղծման հարցում։ Նրանք պահանջում էին, որ տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններն աշխատեն մեկը մյուսից անկախ։ Համագումարը գլխավոր հարցը լուծեց լենինաբար, մերժեց օպորտունիստների պահանջը և ձայների բացարձակ մեծամասնությամբ որոշեց ստեղծել ՌՍԴԲԿ Կովկասյան միություն։ Համագումարը որոշեց նաև վրացական «Բրձոլա» և հայկական «Պրոլետարիատ» թերթերը միավորել և որպես ՌՍԴԲԿ Կովկասյան միության տպագիր օրգան հրատարակել երեք լեզվով. հայերեն՝ «Պրոլետարիատի կռիվը», վրացերեն՝ «Պրոլետարիատիս բրձոլա» և ռուսերեն՝ «Բորբա պրոլետարիատա»։

Համագումարը հավանություն տվեց Կովկասից ՌՍԴԲԿ II համագումարին պատգամավորներ ուղարկելուն։ Բաքվի կոմիտեից ընտրվել էր Բ. Կնունյանցը, Բաթումի կոմիտեից՝ Ա. Ջուրաբյանը, իսկ Թիֆլիսի կոմիտեից՝ Դ. Թոփուրիձեն, որոնք ունեին երկուական վճռական ձայն։ Պատգամավորների արտասահման մեկնելու գործի կազմակերպմանը միութենական կոմիտեի ցուցումներով օգնեց Կամոն՝ Սիմոն Տեր-Պետրոսյանը։ I համագումարը Կովկասի պատգամավորներին նակազ տվեց ՌՍԴԲԿ II համագումարում աջակցել և օգնել Վ. Ի. Լենինին՝ հետևողականորեն պաշտպանել մարքսիստական կուսակցության ստեղծման լենինյան պլանը, «Իսկրայիզմ» ծրագրային, տակտիկական և կազմակերպական սկզբունքները։

Կովկասի լենինյան-իսկրայականների հիմնադիր համագումարը ընտրեց ինը մարդուց բաղկացած ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտե, վճռեց ծավալել կուսակցական-հրատարակչական գործը, լայնորեն նախապատրաստվել 1903 թ. մայիսմեկյան տոնակատարությանը, ուժեղացնել քաղաքական-մասսայական աշխատանքը։ Համագումարի և ապա Կովկասյան միության ամբողջ աշխատանքն ընթանում էր պրոլետարական ինտերնացիոնալիզմի նշանաբանով։

ՌՍԴԲԿ Կովկասյան միությունը 1903 թ. ապրիլին նախապատրաստեց և հաստատեց Կովկասյան միության ծրագիրը, որի հիմքում դրված էր «Իսկրա» թերթում և «Զարյա» ամսագրում հրապարակված ՌՍԴԲԿ ծրագրի նախագիծը, հրատարակեց հեղափոխական բուռն գրականություն՝ ուղղված հատկապես Գուրիայի գյուղացիությանը։ 1903 թ. մայիսին Կովկասյան միությունը անցկացրեց ՌՍԴԲԿ Քութայիսի կազմակերպության կոնֆերանս, որն ընտրեց Քութայիսի կոմիտե, պատրաստեց պրոպագանդիստական կադրեր, որոնք քաղաքական աշխատանք էին կատարում երկրամասի բանվորական կենտրոններում։ Կովկասյան միությունն իր ղեկավարման ոլորտի մեջ առավ նաև Հայաստանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները, հեղափոխական շարժումների քաղաքական ղեկավարությունը։ 1903 թ. վերջերին Կովկասյան միությունը կազմակերպեց Հավլաբարի ընդհատակյա տպարանը, որը գործեց մինչև 1906 թ. ապրիլի 15-ը։

ՌՍԴԲԿ Կովկասյան միության III համագումարից հետո (1904 թ. մայիս) ավելի ուժեղացվեց հրատարակչական գործը։ «Պրոլետարիատի կռիվը» թերթի հետ միասին հրատարակվում էին նաև ինքնուրույն և թարգմանական բրոշյուրներ։ Հայերեն խմբագրությունը կատարում էին Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը, Գ. Ղարաչյանը, Ս. Խանյանը, տպագրական աշխատանքին

մասնակցում էր Տիգրան Վախթանգովը, իսկ հրատարակությունները ընդհատակյա պայմաններում տարածում էին Կամոն, Մարտիրոս Միրաքյանը (Շանթ, բանվոր Շանթ) և ուրիշներ։

ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեում տարբեր ժամանակ ընտրվել են Բ. Կնունյանցը, Ստ. Շահումյանը, Ա. Ջուրաբյանը, Ն. Աղաջանյանը, Ա. Խումարյանը, Ս. Խանոյանը և ուրիշներ։ Նրանց ջանքերով լայն թափ հաղորդվեց հայերեն մարքսիստական գրականության հրատարակությանը։ Միայն 1903 թ. նոյեմբերից մինչև 1904 թ. մայիսը միութենական կոմիտեն հրատարակել է «Պրոլետարիատի կռվի» թերթիկի» 3, 4, 5, 6, 7 և 8 համարները ոուսերեն, հայերեն և վրացերեն։ Այդ նույն ժամանակ լույս են տեսել 6000 օրինակ բրոշյուր և 149 հազար օրինակ թռուցիկներ, որոնց մեծ մասը տպագրվել է Հավլաբարի ընդհատակյա տպարանում[31]։

Հավլաբարի գաղտնի տպարանը հետագայում դարձավ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ընդհատակյա տարիների պոլիգրաֆիական հիմնական բազաներից մեկը, տալով կուսակցական կոնսպիրատիվ տեխնիկայի լավագույն օրինակ։ Այն հավասարապես սպասարկում էր Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կուսակցական կազմակերպություններին։

1903 թ. ապրիլ-մայիս ամիսներին Բաքվի «Նինա» տպարանում լույս տեսավ Կովկասյան միության գլխավոր օրգանի՝ «Պրոլետարիատի կռիվը» թերթի № 2—3 միացյալ համարը (վրացերեն «Պրոլետարիատիս բրձոլա», 5—6 համարը)։ Որպես թերթի հավելված սկսեց հրատարակվել նաև «Պրոլետարիատի կռվի» թերթիկը»։

«Պրոլետարիատի կռիվը» թերթի երևան գալը մեծ իրադարձություն էր Անդրկովկասի հեղափոխական շարժումների և սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների կյանքում, երկրամասի աշխատավորության ինտերնացիոնալ դաստիարակության և համախմբվածության համար մղված պայքարի պատմության մեջ։

«Պրոլետարիատի կռիվը» թերթի առաջին համարում զետեղված մի շարք հոդվածներում, հատկապես «Մեր պատասխանը» հոդվածում, որը գրված էր «Պրոլետարիատից» խմբագրությանն ուղղված մի նամակի առիթով[32], թերթը մերկացնում էր բուրժուանացիոնալիստական կուսակցություններին, առանձնապես դաշնակցությանը։

Իր «Նամակում» արծարծելով Արևմտյան Հայաստանում թուրքական լծի տակ հեծող հայ ժողովրդի ծավալած ազգային-ազատագրական շարժումները. հեղինակը նշում էր, որ «ոչ մի մարդասեր, ոչ մի իսկական սոցիալիստ երբեք չի կարող անտարբերությամբ տանել այն բոլոր գազանությունները, որոնք սոսկալի թափով տեղի են ունենում այն երկրում, որը Թուրքաց Հայաստան է կոչվում»։ Նա գտնում է, որ «չի կարող սոցիալիզմը գոյություն ունենալ այն երկրում, ուր մարդը հեծում է քաղաքական անհորմալ կարգերի տակ, ուր գոյություն չունի ոչ կայքի, ոչ գույքի, ոչ անհատականության քիչ թե շատ ապահովություն ու ազատություն»[33]։

Թերթը հրատարակելով այդ «նամակը», «Մեր պատասխանը» հոդված-

---

31 Տե՛ս «Второй съезд РСДРП», М., 1955.

32 Նամակի տակ ստորագրված է «Ալ»։ Դա Ա. Թուրենու ծածկանունն է։

33 «Պրոլետարիատի կռիվը», № 2—3, 1903։

ծում[34] բաժանում է վերոհիշյալ մտքերը և միաժամանակ ընդգծում, որ չի կարելի անգիտանալ արևմտահայերի ազատագրման գործում հայ բոլշևիկների բանած ճիշտ դիրքը։ Հոդվածում ցույց է տրվում, որ շինծու է այն միտքը, թե իբր մարքսիստները կռիվ են հայտարարում «բազմաշարչար տաճկահայ ժողովրդի ազատության համար մղվող կռվին»։

Հայ մարքսիստներն սկզբից ևեթ մտահոգվել են արևմտահայերի բախտով։ «Ուղարկելով Տաճկաստանում կռվող եղբայրներին մեր սոցիալիստական ողջույնը,— գրում էր Ե.— մենք բացարձակ կերպով հայտարարում ենք մեր համակրությունը բազմաշարշար տաճկահայ ժողովրդի ազատարար գործին և մեր անկեղծ ցանկությունն է, որ ազատությունը հասնի որքան կարելի է շուտ»[35]։

ՌՍԴԲԿ Թիֆլիսի, Բաքվի, Բաթումի կոմիտեների, Կովկասյան միության տեղական լենինյան-իսկրայական կազմակերպությունների և խմբերի կազմում գործում էին տարբեր ազգերի բանվորական շարժման ակտիվ գործիչներ, հավատարիմ լենինյաններ, որոնց հայացքներն ու գործունեությունը խարբսխված էին հեղափոխական մարքսիզմի հզոր տեսության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի վրա։ Նրանք իրենց ինտերնացիոնալ պրոպագանդայով և ագիտացիայով հաղթահարում էին ազգային մեկուսացման և օտարացման արգելքները, նպաստում դարեր ի վեր կողք-կողքի ապրող ժողովուրդների մերձեցմանը, աշխատավորների դասակարգային ինքնագիտակցության հաստատմանը։ Բոլոր հուզող հարցերի մասին ռուսերեն, հայերեն, վրացերեն, ադրբեջաներեն և այլ լեզուներով «Իսկրա» տարածում և փակցնում էր հայկական և վրացական պրոկլամացիաներ.— գրում էր լենինյան «Իսկրան»,— հայ բանվորն ագիտացիա էր մղում Բաքվի նավթարդյունաբերության մեջ, վրացի գրաշարը տպագրում էր ռուսական թռուցիկներ և նրանք բոլորը միասին, համատեղ, մշակում էին ցույցերի, գործադուլների, կազմակերպական ժողովների գործողությունների պլանը»[36]։ Այս բոլորի շնորհիվ կոփվում էր Անդրկովկասի ժողովուրդների բարեկամությունը, երկրամասի պրոլետարիատը հանդես էր գալիս որպես մի միասնական ուժ։ Դա միակ ճիշտ տակտիկան էր, որ վարում էին երկրամասի լենինյանները։ «Միայն կազմակերպվելով որպես միասնական, լրիվ ինքնուրույն կուսակցություն առանց ազգությունների խառնության,— 1903 թ. գրել է Բ. Կնունյանցը,— Ռուսաստանի պրոլետարիատը կարող է դառնալ այն հզոր քաղաքական ուժը, որն ընդունակ կլինի դառնալու երկրի բոլոր հեղափոխական ուժերի իսկական ավանգարդը և վերջնականապես ջախջախիչ հարված հասցնելու ինքնակալությանը»[37]։

2. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԵՎ ԴՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ

1900—1903 թթ. ծավալված համաշխարհային տնտեսական ճգնաժամն էլ ավելի սրեց հակասությունները երկրում։ Կապիտալիզմը իմպերիալիզմի դարաշրջանում դառնում էր ավելի գիշատիչ։ Աճում էին մոնոպոլիստական միավորումները։ Իրար հետևից անհետանում էին մանր ու միջին ձեռնարկու-

34 «Մեր պատասխանը» հոդվածի հեղինակը Բ. Կնունյանցն է։

35 «Պրոլետարիատի կռիվը», № 2—3, 1903։

36 «Искра», № 51, 22 октября 1903 г.

37 Նույն տեղում։

բյուններըը, փակվում հազարավոր ֆաբրիկաներ ու գործարաններ։ Փողոց էին նետվում տասնյակ հազարավոր բանվորներ։ Ստեղծված նոր իրադրության պայմաններում բանվորները տնտեսական գործադուլներից անցնում են քաղաքական ցույցերի։ Սկսվում է բանվորական շարժման վերելքը։ 1901 թ. գարնանը ՌՍԴԲԿ Պետերբուրգի, Մոսկվայի, Խարկովի, Կիևի, Թիֆլիսի, Բաքվի, Կազանի, Սարատովի, Եկատերինոսլավի և այլ քաղաքների լենինյան-իսկրայական կոմիտեների կոչով քաղաքական ցույցերի են ելնում հազարավոր բանվորներ՝ «Կորչի ինքնակալությունը» լոզունգով։

Անդրկովկասի բանվորական շարժումների փառահեղ էջերից է 1900 թ. Թիֆլիսի օգոստոսյան գործադուլը, որին մասակցում էին նաև բազմաթիվ հայ բանվորներ։ Թիֆլիսի երկաթուղային արհեստանոցների 4000 բանվորներ օգոստոսի 14-ին, աշխատանքը դադարեցնելով, պահանջեցին 8-ժամյա բանվորական օր, աշխատավարձի ավելացում, բանվորների տնտեսական պայմանների բարելավում։ Գործադուլը տևեց 15 օր։ Այդ օրերին Թիֆլիսում ռազմական դրություն հայտարարվեց. սկսվեցին մասսայական ձերբակալություններ։ Բանտարկված բանվորների կանայք ցույց կազմակերպեցին։ Դա Անդրկովկասում կանանց առաջին ցույցն էր։

1901 թ. նշանավորվեց մի շարք գործադուլներով։ Միայն հունվար և փետրվար ամիսներին, «Իսկրայի» տվյալներով, Թիֆլիսում տեղի է ունեցել 15 գործադուլ։ Մարտին ձերբակալվեցին Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության մի շարք ղեկավար աշխատողներ, այդ թվում՝ Վ. Կուռնատովսկին, Ի. Ֆրանչեսկին, Ֆ. Մախարաձեն, Հ. Զարգարյանը և ուրիշներ[38]։ Մայիսմեկյան տոնի նախօրյակին իշխանությունները Թիֆլիս կանչեցին լրացուցիչ զորքեր։ ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի կոչով քաղաքի կենտրոնում՝ Սալդատսկի բազարի, Ալեքսանդրովյան այգու շրջանում մոտ 3000 ցուցարարներ հավաքվում են «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» կոչով և Կ. Մարքսի ու Ֆ. Էնգելսի նկարներով զարդարված կարմիր դրոշի շուրջը։ Այստեղ արյունոտ ընդհարում է տեղի ունենում ոստիկանության և անզեն ցուցարարների միջև։ «Ահա ընկնում է վիրավոր բանվորը,— այդ օրերին «Իսկրայում» գրել է ցույցի ականատեսներից Մելիք Մելիքյանը,— նա ամբողջովին արյան մեջ է, ոստիկաններն սկսում են ոտքերով տրորել նրան, իսկ նա անդադար շարունակում է գոչել. «Կեցցե՛ սոցիալիզմը» կեցցե՛ ութժամյա աշխատանքը»։ Հաղթամարմին դրոշակակիր Առաքելը (հայ) մի ձեռքով բռնում է իր գլխին բարձրացրած սուրը, ջարդում, երկու մասի բաժանում...»[39]։ Այդ օրը վիրավորվեց 14 և ձերբակալվեց ավելի քան 50 ցուցարար։ Թիֆլիսի բանվորների այս ցույցի մասին «Իսկրան» գրել է. «Կիրակի, ապրիլի 22-ին (հին տոմարով) Թիֆլիսում տեղի ունեցած իրադարձությունը նշանակալի է ամբողջ Կովկասի համար։ Այդ օրվանից Կովկասում սկսվում է բացահայտ հեղափոխական շարժումը»[40]։

Դարասկզբին հեղափոխական պայքարի փառավոր էջեր գրեցին Բաքվի և Բաթումի բանվորները։ Բաքվում առաջին անգամ բանվորները 1901 թ. դուրս եկան մայիսմեկյան ցույցի։ Նույն թվականին գործադուլներ արեցին քաղաքի

---

38 Տե՛ս ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 7 գ. գ. 326, թ. 137—153, գ. 436, թ. 13, գ. 585, թ. 291, 1901։

39 «Искра», № 6, июль, 1901 г.։ Այս ցույցին բացի Մ. Մելիքյանից, Առաքել Օկուաշվիլուց, հայերից ալի են բռնել նաև Արմենակ Նալչաջյանը, Անուշավան Վարդանյանը և ուրիշներ։

40 Նույն տեղում։

Խատիսովի մեխանիկական գործարանի, ծխախոտի ֆաբրիկայի, Սաբունչիի մեխանիկական գործարանի բանվորները, նավթագործները, Բուռլ երկաթուղային կայարանի աշխատողները։ Գործադուլային ալիքը ծավալվում է Բաքվի ձեռնարկություններում՝ առանձապես Սմիրնովի ծխախոտի ֆաբրիկայում։

1902—1903 թվականները նշանավորվեցին քաղաքական ցույցերով և գործադուլներով։ Դրանք, հիրավի, բանվորական շարժման հետագա վերելքի տարիներ էին։ 1902 թ. Դոնի-Ռոստովում տեղի ունեցած խոշոր գործադուլ-ցույցը խոր ազդեցություն թողեց բանվորական շարժումների վրա։ 1902 թ. հունվար-փետրվար ամիսներին գործադուլներ արեցին Բաքվի ձեռնարկությունների բանվորները։ Սակայն ամենից նշանավոր մարտի 9-ի քաղաքական ցույցն էր, որին մասնակցում էին Ռոտշիլդի և Մանթաշևի գործարանների, նավահանգստի, երկաթուղու և այլ ձեռնարկությունների 6000 աշխատող։ Այն ընթանում էր ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի ղեկավարությամբ։ Ցարական գորքերն ու ոստիկանները արյունոտ դատաստան տեսան առաջին անգամ բացահայտորեն զինված գոտեմարտի ելած բանվորների հետ։ Ցույցի ընթացքում սպանվեց 15, վիրավորվեց 54 և ձերբակալվեց 500 մարդ, որոնցից 21 հոգի դատի տրվեցին, իսկ մնացածներն արտաքսվեցին քաղաքից։ Նրանց մեծ մասը գնաց Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի գյուղերը՝ իրենց հետ տանելով հեղափոխական տրամադրություններ։

1902 թ. Բաքվի բանվորների մայիսմեկյան ցույցին մասնակցում էր շուրջ 5000 մարդ։ Բաքվի բանվորներն այդ օրերին գրել են. «Մենք՝ Բաքվի բանվորներս մյուս քաղաքների բանվորներից ետ չմնալու համար, միասին որոշեցինք առաջին քայլը կատարել սուրբ գործի համար... Մենք հիշում ենք դեկաբրիստների պատասխանը Պուշկինին՝ «Կայծից բոց կբռնկի...»։ Սակայն ուժեղ բոց բորբոքելու համար պետք է մեր կայծերը տարածել ամբողջ քաղաքով մեկ, որպեսզի մեծ հրդեհ առաջանա»[41]։

Մայիսյան այս ցույցերից հետո Բաքվում ուժեղացան ոստիկանական հալածանքները, ձերբակալվեցին ցույցերի ակտիվ կազմակերպիչներից 34 հոգի, այդ թվում՝ Բոգդան, Լյուդվիգ, Տիգրան Կնունյանցները, նրանց քույրը՝ Փառո Կնունյանցը, Բ. Կնունյանցի կինը՝ Ելիզավետա Գոլիկովան, Հ. Մելիք-Հովսեփյանցը, գիմնազիստներ Նազարյանցը, Ճղնավորյանցը և ուրիշներ[42]։

Բաքվի պրոլետարիատի բորբոքած «մեծ հրդեհը» բռնկվեց 1903 թ. հուլիսի 2-ին։ Ավելի քան հիսուն հազար նավթագործ բանվորներ, մեխանիկական արհեստանոցների աշխատողներ, տպագրիչներ, նավաստիներ, ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեի գլխավորությամբ քաղաքական հուժկու գործադուլի դուռս եկան։ Գործադուլավորների առաջին շարքերում էին Բիբի-Հեյբաթի և Սև քաղաքի նավթարդյունաբերական ձեռնարկությունների բանվորները, քաղաքի երկաթուղային դեպոյի աշխատողները, տպագրիչները։ Գործադուլը, տարածվելով, դարձավ ընդհանուր և երկարատև։ Բոլոր նավթահանքերում աշխատանքը դադարեցվեց։ Բերքերը լույս չէին տեսնում, ձիաքարշը կանգ էր առել։

---

41 «Искра», № 22, июль, 1902 г.

42 «Искра», № 21, июль, 1902 г.։ ՄԼԻ-ի Վրացական մասնաճյուղի արխիվ, ֆ. 93, ց. 2, գ. 760, թ. 1—10։

Ամենուրեք տեղի էին ունենում բանվորական բազմամարդ ժողովներ։ «Իր շափով և ընդհանրությամբ գործադուլը չտեսնված է,— այդ օրերին գրել է «Իսկրան»[43]։ Բաքվի պրոլետարիատի վիճակին գործադուլին, որը տևեց գրեթե 20 օր, արձագանքեցին Թիֆլիսի, Կիևի, Օդեսայի, Բաթումի, Քութայիսի, Ելիսավետպոլի, Ալավերդու և այլ վայրերի բանվորները։

ՌՍԴԲԿ Կովկասյան միության կոչով, ի նշան Բաքվի պրոլետարիատի պայքարի համերաշխության, 1903 թ. հուլիսի 14-ին գործադուլ հայտարարեցին Թիֆլիսի բանվորները։ Երկրամասում մինչ այդ նմանօրինակ գիտակցական և համերաշխ պրոլետարական պայքար չէր եղել։ Այդ օրը նշանավոր է նրանով, որ «...Թիֆլիսի բանվորները գործադուլ հայտարարեցին գլխավորապես յուրյանց և Բաքվի ընկերներին պահպանելու, քիկունք տալու համար,— ասված է ՌՍԴԲԿ Թիֆլիսի կոմիտեի 1903 թ. հուլիսի 15-ի կոչում,—միացած ուժերով գրոհ տալու ընդհանուր թշնամու վրա...»[44]։

Անդրկովկասում հուլիսյան գործադուլներին մասնակցեց ավելի քան 100 հազար մարդ, այդ թվում՝ Բաքվում մոտ 50 հազար, Թիֆլիսում՝ 15 հազար, Բաթումիում և Փոթիում՝ 10 հազար, Անդրկովկասյան երկաթուղում՝ 5 հազար (Միխայլովո, Սամտրեդի և շրջակայքը), Ճիաթուրի լեռնային շրջանում մոտ 20 հազար և այլն[45]։

Հարավի բանվորների քաղաքական ցույցերն ու գործադուլները հակայական նշանակություն ունեցան Ռուսաստանի հեղափոխական շարժման համար։

Լենինյան «Իսկրան» լայնորեն լուսաբանում էր Անդրկովկասի բանվորների քաղաքական ցույցերի և գործադուլների ընթացքը։ Տասնյակ հոդվածներ, քղխակցություններ և ինֆորմացիաներ են զետեղվել «Իսկրայում» Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի հեղափոխական շարժումներին նվիրված։ Հատկապես արժեքավոր են Բ. Կնունյանցի հոդվածները՝ «Բաքվի բանվորների անընդհատ գործադուլների պատճառները», «Նոր կողոպուտ», «Մեր տակտիկայի և կազմակերպության որոշ հարցեր» և այլն։ Բոլշևիկյան կազմակերպությունների օգնությամբ հայ բանվորներն ու աշխատավոր դանգվածներն աստիճանաբար ներգրավվում էին պրոլետարական հեղափոխական շարժման մեջ։ «Դաշնակցականն» հիպնոզն անցավ,— գրել է Ստ. Շահումյանը,— հայ բանվորները ներգրավեցին հեղափոխական պայքարի մեջ։ Ընդամեն «դաշնակցականների» ամբողջ հակագործունեությունը, հայերի մեջ ծնունդ առած առաջին սոցիալ-դեմոկրատական խմբակները, որոնք հայ բանվորներին մի ընդհանուր բանակի մեջ կապեցին վրացի, ռուս և այլ բանվորների հետ և նրանց առաջ դրեցին լայն, հեղափոխական խնդիրներ»[46]։

1903 թ. նշանակալից եղավ կովկասահայերի կյանքում։ Քաղաքական ցույցերն ու գործադուլներն արդյունաբերական կենտրոններից թափանցում են հեռավոր վայրերը։ Քաղաքական պայքարի են դուրս գալիս Հայաստանի լեռնագործները, երկաթուղայինները և արդյունաբերական այլ ձեռնարկու-

---

43 «Искра», № 45, 1-го августа 1903 г.

44 «Ռեվոլյուցիոն կոչեր և թռուցիկներ», Ժողովածու, էջ 27—28։

45 «Искра», № 47, 1903. Ս. Տ. Առկոմեդ, Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում, մաս 1, Երևան, 1929, էջ 130։ Նույնի ռուսերենը, Ժնև, 1910, Ֆ. Ֆլեխանովի առաջաբանով։

46 Ստ. Շահումյան, երկ, հ. 1, էջ 369։

թյունների բանվորները։ 1903 թ. ապրիլի կեսերին գործադուլ են անում Շամլուղի պղնձահանքերի բանվորները՝ առաջադրելով մի շարք պահանջներ, այդ թվում՝ բարձրացնել իրենց աշխատավարձը, ստեղծել տանելի պայմաններ, վերջ տալ կապալառուների կամայականություններին[47]։ Ֆրանսիական ընկերության գործակալները և տեղական կապալառուները ճնշեցին հանքագործների գործադուլը։ Առաջավոր բանվորներից մի քանիսին իբրև «անբարեհույսների» և «ըմբոստարարների» հեռացրին աշխատանքից։

Ալավերդու հանքագործների քաղաքական հաջորդ ելույթը տեղի ունեցավ 1904 թ. գարնանը, որը նույնպես ճնշվեց իշխանությունների միջոցով։ Նրանք օգտագործում էին բանվորների անկազմակերպվածությունը, երկպառակություններ առաջացնելով նրանց մեջ։ Այնուամենայնիվ հանքագործների այդ անդրանիկ գործադուլներն զգալի նշանակություն ունեցան բանվորների համախմբման, քաղաքական դաստիարակության բարձրացման, դասակարգային ինքնագիտակցության ձևավորման համար։

1902—1903 թթ. տնտեսական հողի վրա գործադուլներ արեցին Ալեքսանդրապոլ և Ղարաքիլիսա կայարանների երկաթուղայինները։ 1904 թ. բռնկվեցին նոր գործադուլներ, որոնցից նշանավոր էին Ալեքսանդրապոլի բանվորների, սպասարկման ոլորտի աշխատողների և տնային ծառայողների, Ուլուխանլու-Ջուլֆա երկաթուղու բանվորների գործադուլները։ Ապրիլի 29-ին գործադուլ արեցին Ալեքսանդրապոլի արդյունաբերական ձեռնարկությունների և փռերի աշխատողները։ Նրանք պահանջում էին բարձրացնել աշխատավարձը, կրճատել բանվորական օրը, բանվորներին տալ բժշկական ձրի օգնություն, հանրակացարան, արձակուրդի ժամանակ պահպանել աշխատավարձը, հաստատել գիշերային հերթապահություն և այլն։ Ապրիլի 30-ի գործադուլը ճնշվեց դաշնակցականների ակտիվ օգնությամբ, իսկ առավել աչքի ընկնող ղեկավարները ենթարկվեցին հալածանքների։ Թեև Հայաստանում 1902—1904 թթ. տեղի ունեցած գործադուլները հիմնականում տնտեսական բնույթ ունեին և իրենց վրա կրում էին անկազմակերպվածության կնիք, բայց դրանք քաղաքական կարևոր նշանակություն ունեցան։ Հայաստանի պրոլետարիատի առաջամարտիկները դարասկզբին պարզելով գործադուլային դրոշը՝ աստիճանաբար թևակոխեցին դասակարգային պայքարի ուղին, Հայաստանի աշխատավոր մասսաների մեջ արդեն իր ծիլերն էր արձակել հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան։

* * *

Քաղաքին հետևեց գյուղը։ Բանվորական հեղափոխական շարժման հարաճուն վերելքն Անդրկովկասում ոտքի էր հանում ցարիզմի, կալվածատերերի և բեգերի ծանր լծի տակ տառապող և հարստահարվող աշխատավոր գյուղացիությանը։ Երկրամասում ագրարային շարժումներ են բռնկվում։ Առաջին գյուղացիական ընդվզումը տեղի ունեցավ 1902 թ. գարնանը Քութայիսի նահանգի Օզուրգեթի գավառում։ Նույն թվականի մայիսին մասսայական գյուղացիական շարժումներն ընդգրկեցին Գուրիան, Թիֆլիսի նահանգի Գորիի գավառի գյուղերը։ Ռուսաստանում ագրարային պայքարի ելած գյուղի աշխատավորության օրինակով գյուղացիները համոզվում էին, որ «Ոչ ոք մուժիկներին չի ազատի չինովնիկական տզրուկներից, եթե մուժիկներն իրենք իրենց

47 Տե՛ս ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 40, գ. 3, թ. 8։

չազատեն, եթե նրանք չմիավորվեն՝ իրենց բախտն իրենց սեփական ձեռքը վերցնելու համար»[48]։

Գյուղացիական ելույթներ եղան նաև Զուգդիդիի, Ախալքալաքի և այլ գավառներում, որոնց վրա մեծ ազդեցություն էին գործում 1903 թ. մարտի 9-ի բաքումի քաղաքական ցույցի պատճառով գյուղերն արտաքսված հազարավոր բանվորները։ Բաքվի պրոկուրատուրայի 1903 թ. ամառային քաղաքական ցույցերի ազդեցությամբ Բաքվի, Ելիսավետպոլի, Շամախիի, Նախիջևանի, Լեռնքորանի գավառներում, Զաքաթալայի օկրուգում և այլ վայրերում նույնպես ագրարային ելույթներ ծավալվեցին։ Հայկական գյուղը ևս շարժման մեջ է մտնում։ Երևանի, Սարդարապատի, Էջմիածնի, Կոտայքի, Նոր Բայազետի, Զանգեզուրի, Դարալագյազի և այլ շրջանների գյուղացիները, որ հողի, ջրի, արոտավայրերի համար մշտական դժգոհության մեջ էին ցարական կառավարությունից, մուլքադարներից և մյուս հողատերերից, ելնում են պայքարի։

1901 թ. փետրվարին Երևանի նահանգի էջմիածնի գավառի Փոքր Շահբիար, Մարգարա, Արզնի, Ելդովան և Ներքին Զույլասար (այժմ Դիմիտրով) գյուղերի 30 վերաբնակյալ ընտանիքներ, որ սկսել էին Արևմտյան Հայաստանից, դիմում են նահանգի պետական գույքերի կառավարչին՝ պատմում իրենց հողազրկության, տնտեսական ծանր վիճակի մասին և պահանջում Ջիրուխլիի (Վարդանաշեն) պետական կալվածքներից իրենց հող տրամադրել։ Նույն թվականի օգոստոսին Բուհամլուի (Երևանի նահանգ) գյուղացիները բողոքում են մուլքադար Մահմեդ Սուլթանովի դեմ, որն ապօրինաբար մուլք էր հավաքում։ Գյուղացիները պահանջում էին պաշտպանել իրենց իրավունքները։ 1902 թ. հուլիսին Ներքին Զույլասարի գյուղացիները դիմում են Երևանի նահանգապետին և պահանջում կատարել իրենց գյուղի պետական-մուլքադարական հողի նոր վերաբաժանում, պատճառաբանելով, թե գյուղի կուլակներն ու արտոնյալ դասերն անցյալ տարիների ընթացքում բռնագրավելով գյուղի հողերը, ծայր աղքատության են հասցրել գյուղացիների մեծ մասին։ 1902—1903 ԹԹ. էջմիածնի գավառի Սարդարապատի (Հոկտեմբերյան) գյուղացիները պայքարի մեջ էին և անընդմեջ բողոքում էին Երևանի նահանգապետին կալվածատեր Եղիազարովի ապօրինի արարքների դեմ։ Նա զավթել էր գյուղացիներին պատկանող հողն ու ջուրը։

Բեգերի և կուլակների դեմ ուղղված գյուղացիական լուրջ հուզումներ եղան Զանգեզուրում, որոնց վրա ազդեցություն էր գործել Բաքվի պրոկուրատուրիատի պայքարը։ Տաթև, Շինուհայր (Շնհր), Խնձորեսկ և այլ գյուղերի բնակիչները հաճախ հրաժարվում էին պետական ու կալվածատիրական հարկերը վճարելուց։ Շինուհայր գյուղի բնակիչների ելույթը ճնշելու համար այնտեղ է մեկնում Զանգեզուրի գավառապետը։ Գյուղացիները դիմադրում են և թույլ չեն տալիս, որ նա գյուղ մտնի։ Տեղի է ունենում ընդհարում։ Գավառապետը այնուհետև ճանապարհվում է Տաթև։ Այստեղ ևս նա հանդիպում է նույն վերաբերմունքին։ Ոգևորված շինուհայրցիների օրինակով, Տաթևի գյուղացիները ավելի ուժեղ դիմադրություն են ցույց տալիս, հարձակվում են կազակների վրա, դուրս քշում գյուղից և հետապնդում մինչև վանքը։ Խիզախ լեռնքրդների զրահներից սարսափած գավառապետը մշտական զորք է խնդրում։ «Շինուհայրցիների օրինակին կարող է հետևել ամբողջ բնակչությունը,— գրել

---

48 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 7, էջ 229։

է գավառապետը,— նրան գավառում չլինի դիվորական ուժ։ Այդ իսկ պատճառով խոնարհաբար խնդրում եմ ուղարկել կազակների երկու հարյուրյակ և բաժանելով, նրանցից մեկը տեղավորել Շինուհայրում, իսկ մյուսը՝ պատահական անհրաժեշտության համար պահել Գորիսում»[49]։

Ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին Հայաստանում բռնկված հակակալվածատիրական, ագրարային շարժումների մեջ նշանավորը Լոռու շրջանի Հաղպատ գյուղի գյուղացիների 1903 թ. ելույթն է։ Հաղպատի գյուղացիության առաջին ելույթը, ուր ուղղված էր կալվածատեր Բարաթովի և նրա հեծելապահնորդների դեմ, տեղի ունեցավ 1903 թ. մայիսին, իսկ երկրորդը՝ նույն թվականի նոյեմբերին։ Լինելով Ալավերդու և Թիֆլիսի բանվորական կենտրոններին մոտ, Հաղպատի գյուղացիներն իրենց վրա կրում էին սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունը։

Հաղպատում տիրակալում էր իշխան Բարաթովը, որն ուներ հազարավոր դեսյատին հող, մինչդեռ գյուղացիները սակավահող կամ հողազուրկ էին։ Կալվածատերն անգութ կերպով կնեղեցնում էր գյուղացիներին, ստիպում նրանց բարձր գներով վարձակալել իր հողը։ Նրանք իբրև ժամանակավոր պարտավորյալներ կալվածատիրոջը տարեկան վճարում էին բերքի $^1/_4$-ը, կամ 1400 փութ ցորեն՝ բահրա, 100 սայլ խոտի բահրա, որը հավասար է 400 ռուբլու, արոտավայրերի դիմաց 1300 ռուբլի, 8 փութ յուղ, 20 փութ պանիր, Դեբեդում որսվող ձկան կեսը (տարեկան մոտ 50 փութ ձուկ), այգիների բերքի $^1/_4$-ը, 2 ս. 50 կոպեկից մինչև 5 ռուբլի (նայած տնտեսությանը, միջինը կազմում է 4 ռուբլի) ծխի հարկ, տարեկան 20 փութ ընկույզ։ Բացի այս բոլորից, Բարաթովը հաղպատցիներից տարեկան լրացուցիչ գանձում էր նաև 1500 ռուբլու այլ հարկեր[50]։ Բարաթովի կալվածքները, որ տարածվում էին Հաղպատի շրջակայքում, առանձին տեղերում մխրճված էին գյուղացիներին պատկանող հողաբաժինների մեջ։ Կալվածքների նման մասնատված վիճակը կալվածատիրոջը ցանկալի չէր, քանի որ դրանից մասամբ շահում էին «հանդուգն» գյուղացիները, երբեմն օգտագործում նրա առանձին հողակտորները, առաջին հերթին «հաշի դուռ» արոտավայրը։ Բացի այդ, գյուղացիներին ընկճելու և կախման մեջ պահելու, իր կալվածքները հարևան գյուղերի կուլակներին կամ կալվածատերերին կապալով տալու համար հարկավոր էին ամբողջական հողամասեր։ Այդ նպատակով 1903 թ. գարնանը Բարաթովը առաջարկում է գյուղացիներին՝ «դիջել նրան իրենց հողերը և փոխել նույն քանակությամբ ուրիշ հողերի հետ»[51]։ Գյուղացիները գիտենալով հանդերձ, որ ուժը և ցարական օրենքը հովանի են Բարաթովին, բայց և այնպես վճռեցին մերժել նրա առաջարկությունը։ Դրանից հետո կալվածատերը որոշեց «...ինչ էլ որ լինի, նույնիսկ ուժով գյուղացիներին իր կողմը գրավի և իր մտադրությունն ի կատար ածի։ Այս նպատակով սկսեց զանազան որոգայթներ լարել և ճնշել գյուղացիներին։ Այս-

---

49 Ա. Մարտիրոսյան, Հայ գյուղացիության պայքարը հողի համար (1905—1907 թթ.), Հայկական ՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1955, № 5, էջ 69։

50 Տե՛ս Եր. Մելիք-Յոլչյան, Քառասուն տարի բանվորական շարժման պատմությունից, 1903—1907, Երևան, 1924։ Հ. Ս. Մելիքյան, Մարքսիստական կազմակերպությունները և ռևոլյուցիոն շարժումները Լոռում (1899—1908), Երևան, 1957։

51 «Պրոլետարիատի կովի» թերթիկ, № 5—6, 15(28) հունվարի 1904 թ., «Նամակ հազարապետից»։

պես օրինակ, նա բոլորովին արգելեց գյուղացիներին անցնել հենց իրենց՝ գյուղացիների ձեռքով շինած կամրջով...»[52]։ Սակայն չկարողացավ իրագործել այդ և որոշեց կամրջից անցնելու համար ամեն մի շնչից ու անասունից գանձել 40-ական կոպեկ հարկ, բայց նրա այդ կամքն էլ չկատարվեց։

Ագահ կալվածատերը տարեցտարի բարձրացնում էր կապալավարձը։ 1902 թ., երբ նա նորից բարձրացրեց այն, գյուղացիները հրաժարվեցին նրա կալվածքներից բարձրացված գներով հող վարձակալել և սկսեցին մշակել իրենց անորակ այն հողակտորները, որոնք ստացել էին ռեֆորմից հետո։ Այժմ էլ Բարաթովը պահանջեց կրկնակի տուրք վճարել անմշակ հողերի համար, արգելից օգտվել արոտավայրերից և այլն։

Գյուղացիների համբերության բաժակը լցվել էր։ Նրանք հրաժարվեցին կատարել կալվածատիրոջ նաև այս պահանջը։ Ստեղծվեց լարված դրություն։ «Վերջերս իշխան Բարաթովի... և գյուղացիների միջև հարաբերություններն այնքան սրվել էին,— Թիֆլիսի նահանգապետին գրել է Բորչալուի գավառապետը,— որ նկատվում էին բռնական բնույթի դեպքեր, ըստ որում, ակտիվ մասնակցություն էին ցույց տալիս հաղպատցիները, իսկ պասիվ դեր էին խաղում սեփականատերերը, որի փաստական իրավունքները կամաց-կամաց խախտվում էին հաղպատցիների կողմից»[53]։ Բարաթովը դիմում է իշխանության օգնությանը։ Մայիսին Հաղպատ են ժամանում հեծելապահնորդներն ու անտառապահները՝ 1902 թ. «պարտքի» և 1903 թ. կապալավարձի դիմաց գյուղացիների անասուններն ու գույքը բռնագրավելու համար։ Գյուղացիները, նույնիսկ կանայք ու երեխաները, գինվելով բահերով, մահակներով և ինչով հնարավոր էր, գյուղից դուրս են քշում նրանց։

Կալվածատերը դիմեց ցարական դատարանին։ Թիֆլիսի օկրուգային դատարանը հարցը լուծեց նրա օգտին։ Բորչալուի գավառի ոստիկանական պրիստավ իշխան Ավալովը, ստանալով վճիռը, Բարաթովի կալվածքի կառավարիչ Աբդուղալիշվիլու, Ալավերդու համայնքի ավագ Պետուկա Խարիտովի հետ միասին, հեծելապահնորդների ուղեկցությամբ, 1903 թ. նոյեմբերի 8-ին գալիս է Հաղպատ։ Ավալովը գյուղացիներին հավաքում է հաղպատի վանքի մոտ և պահանջում «ահմանված կարգով» կատարել դատարանի որոշումը, կամավոր կերպով ազատել արոտավայրերը, վերգրման ներկայացնել անասուններ։ Մինչ այդ նոյեմբեր 5-ին գյուղացիներն ընդհանուր ժողով էին գումարել և որոշել դիմադրել, ոչ մի հարկ չվճարել, բռնագրավել Բարաթովի հողերը և բաժանել իրենց մեջ։ Գյուղացիները Ավալովի պահանջները մերժեցին։ Դրանից հետո ավելի քան 60 պահնորդներ հավաքեցին գյուղի և ձմեռանոցի անասունները և ցուցակագրեցին՝ Բարաթովի պահանջած 5000 ռուբլի պարտքի և նրան հասցված «վնասի» դիմաց։ Ավալովը հրամայեց բոլոր անասունները քշել Հաղպատից 3 վերստ հեռավորության վրա գտնվող կալվածատեր Բարաթովի գրասենյակի մոտ։ Դեռ չէին հասցրել տեղից շարժվել, երբ ամբողջ գյուղը մեկ մարդու պես հարձակվեց նրանց վրա։ Կանայք և երեխաները առաջինը փակեցին ճանապարհը և անասունների եղջյուրներից կախված աղաղակում էին՝ «օգնեցեք, մեզ կողոպտում են»։ Պրիստավը հրամայեց ժողովրդին ծեծել մտրակներով։ Այդ էլ չօգնեց։ «Հենց այդ մոմենտին գյուղից միանգա-

52 Նույն տեղում։
53 ՎՍՍՀ ԿՊԿԱ, ֆ. 34 գ., գ. 431, թ. 13։

մից բացվեց հրացանային կրակ։ Իսկ անասունները մնալով բախտի քմահաճույքին, իսկույն թշվեցին հովիվների կողմից»[54]։ Պահնորդները, չդիմանալով գյուղացիների գրոհներին, կովով նահանջում են դեպի Ախթալա։ Ապրստամբները հետապնդում են նրանց և փորձում նորից շրջապատման մեջ գցել։ Բայց վերջիններիս հաջողվում է ազատվել հետապնդումից։



Հաղպատի գյուղացիների ապստամբությունը 1903 թ. Գործ էդ. Խաբենկյանի

Նոյեմբերի 8-ի գինված ելույթի ժամանակ սպանվեց 8 մարդ, որից 4-ը կին, շատերը մարմնական ծանր վնասվածքներ ստացան։ Ապստամբ գյուղացիների դիմադրությունը ճնշելու համար Թիֆլիսի նահանգապետի կարգադրությամբ 75 հոգուց բաղկացած կազակային մի ջոկատ ուղարկվեց Հաղպատ։ Նոյեմբերի 10-ին Հաղպատ լցվեցին մոտ 150 գինված կազակներ և պահնորդներ, բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաներ, այդ թվում՝ գավառապետը։ Գյուղի վրա բռնակատարում (էկզեկուցիա) դրվեց։ «Չի կարելի նկարագրել այն գազանությունները, որոնք տեղի ունեցան այնտեղ։ Կազակները թափվելով տները, կողոպտում էին այն բոլորը, ինչ որ ձեռքի տակ էր ընկնում... Կանանց գլխի զարդերը և գյուղացիների հավաքած մի քանի կո-

54 ՍՍՀ ԿՊԳԱ, ֆ. 34, գ. 431, թ. 14։

պեկները բոլորովին անհնազանդ։ Ամբողջ գյուղը կողոպտելուց հետո արդեն սկսեց տեղի ունենալ սարսափելի բռնակատարում։ Կազակները ծեծելով միմյանց էին հանձնում գյուղացիներին։ Խեղճ գյուղացին աղաչում էր այն ժամանակ, երբ բոլորն արդեն անխնա ծեծել էին։ Գյուղացիներն աղաչում էին հարևան գյուղերը փախչելով, ցարի գազանացած ծառաներից՝ զորքերից... Գավառական պրիստավը այս գազանություններից հետո ման էլ գալիս՝ ասելով. «Հաղպատը մենք հավասարեցրինք հողի հետ, այնտեղ այլևս խոտ չի բուսնի»[55]։ Ավելի քան տասն օր տևեց հաշվեհարդարը։ Գյուղացիները զրկվեցին ոչ միայն անասուններից, այլև արոտավայրերից։ Բռնագրաված միջոցներից 5000 ռուբլի տրվեց իշխան Բարաթովին։ Ջերբակալվեց 200 «անբարեհույս» գյուղացի, բանտարկվեց 60 մարդ, այդ թվում 18 հոգի նետվեց Թիֆլիսի Մետեխի բանտը։ Հաղպատի նոյեմբերի 8-ի գյուղացիական ելույթի կազմակերպիչներն էին գյուղացիներ Արզուման Սոխիկյանը, Սարգիս Աթանասյանը (Այնալով), Կամսար Մելքումյանը, Գրիգոր Երզնկյանը, Շաթար Երզնկյանը։ Նրանց ակտիվ աշակցում էր գյուղի քահանա Հարություն Երզնկյանը։

Չնայած համառ դիմադրությանը, Հաղպատի գյուղացիների 1903 թ. նոյեմբերյան ելույթը ճնշվեց։ Վ. Ի. Լենինը, խոսելով 1902—1903 թթ. գյուղացիական ապստամբությունների մասին, նշել է, որ «ցարական կառավարությունը նրանց հայտարարեց սովորական խռովարարներ ու կողոպտիչներ (նրա համար, որ նրանք կողոպտիչ կալվածատերերից խլում էին հենց գյուղացիների ցանած ու հնձած հացը), ցարական կառավարությունը նրանց դեմ զորք ուղարկեց, ինչպես թշնամիների դեմ, և գյուղացիները ջարդվեցին, գյուղացիների վրա կրակեցին, շատերին սպանեցին, գյուղացիներին գազանաբար ծեծի ենթարկեցին, ծեծելով մահվան դուռը հասցրին...»։ Հետո, Վ. Ի. Լենինը շարունակում է. «Գյուղացիները պայքարում էին արդար գործի համար։ Ռուսական բանվոր դասակարգը մշտապես կհարգի ցարական ծառաների ձեռքով գնդակահարված ու հոշոտված նահատակների հիշատակը։ Այդ նահատակներն աշխատավոր ժողովրդի ազատագրության ու երջանկության համար մարտնչողներ էին։ Գյուղացիները ջարդվեցին, բայց նրանք նորից ու նորից ոտքի կելնեն, նրանք հոգեպես չեն ընկճվի առաջին պարտությունից»[56]։

Վ. Ի. Լենինը կանխանշում էր հեղափոխության բուռն վերելքը, որտեղ աշխատավոր գյուղացիությունը բանվոր դասակարգի ղեկավարությամբ ու նրա հետ դաշնակցած ակտիվ դեր ուներ կատարելու։

3. ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐԻ ԲՌՆԱԳՐԱՎՈՒՄԸ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ 1903—1904 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1836 թ. մարտի 11-ի «Պոլոժենիե»-ով ցարական կառավարությունը ճանաչել էր հայ լուսավորչական եկեղեցու սեփականության իրավունքը։ Հայոց եկեղեցին ուներ զգալի հողատարածություններ, ջրաղացներ, առևտրական կրպակներ և այլ եկամտաբեր գույք[57]։ Հայ եկեղեցու ընդհանուր ունեցվածքի

55 «Պոլեևտարիատի կովի» թերթիկ, № 5—6, 1904։

56 Վ. Ի. Լենին, Նշվ., հ. 7, էջ 248։

57 Տե՛ս Մխիթար վարդապետ, Հայերը Ռուսաստանում, Վաղարշապատ, 1906, էջ 1—21, 39—40։

արժեքը կազմում էր մոտ 100 միլիոն ռուբլի, որից տարեկան ստացվում էր մոտ 300 հազար ռուբլու եկամուտ։ Եկամուտների մի մասը հատկացվում էր ծխական-եկեղեցական և քեմական դպրոցների պահպանմանը։

Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցինը հալածանքներ է սկսում հայ մշակույթի գործիչների նկատմամբ, փակում է հայկական դպրոցները, սահմանափակում Կովկասի բարեգործական և հրատարակչական ընկերությունների գործունեությունը, խստացնում գրաքննությունը։ Ցարիզմի նպատակն էր ոչնչացնել հայ եկեղեցու ինքնավարությունը, վերջ տալ հայկական մշակույթին ու կրթական հիմնարկներին։ 1903 թ. հունիսի 12-ին Նիկոլայ II-ը հաստատում է հայ եկեղեցապատական հոդերը և գույքը բռնագրավելու օրենքը։ Այդ օրենքի համաձայն, հայ-լուսավորչական եկեղեցու կալվածքներն ու եկամտաբեր գույքը հանձնվում էին համապատասխան մինիստրությունների տնօրինությանը, բռնագրավվում էին եկեղեցապատական այգիները, վարելահողը, մարգագետինները, արոտավայրերը, անտառները, առևտրական կրպակները, չրաղացները, արհեստավորական հաստատությունները, ձկնորսարանները, կանխիկ դրամը։ Բռնագրավման ենթակա չէին միայն անասուններն ու գյուղատնտեսական գործիքները, Պետերբուրգում և Մոսկվայում գտնվող հայոց եկեղեցու գույքը և այն տարածությունները, որոնք պատկանում էին հոգևորականներին, հոգևոր-կրթական հաստատություններին (բայց երեք դեսյատինից ոչ ավելի), որոնց վրա կառուցված էին վանքեր և եկեղեցիներ կամ որոնք հատկացված էին գերեզմանոցների։ Եկեղեցական գույքի բռնագրավումը հանձնարարվում էր հողագործության և պետական ունեցվածքի մինիստրությանը, Կովկասի կառավարչապետին և համապատասխան նահանգապետներին ու բաղաքագլուխներին[58]։

Հունիսի 12-ի օրենքը ոտնահարում էր ոչ միայն հայերի կրոնական զգացումները, այլև հայ ժողովրդի քաղաքական ու մշակութային շահերը։ Ցարիզմը փորձում էր նաև ինչ-որ կապ գտնել հայ եկեղեցու ունեցվածքի և հայ ազգային շարժումը ղեկավարող կազմակերպությունների միջև։ Դա անհիմն մի մեղադրանք էր, որ նպատակ ուներ հիմնավորելու և արդարացնելու ձեռնարկվող կողոպուտը։

Այդ պատճառով էլ հունիսի 12-ի օրենքի կիրառման դեմ լիոնացավ ժողովրդի ցասումը, որի համբերության բաժակը լցվել էր։ Երբ կառավարությունը և նրա տեղական մարմինները Գոլիցինի գլխավորությամբ փորձեցին կիրառել այդ օրենքը, հայ ժողովուրդը ոտքի ելավ։ Դա ըստ էության ցարիզմի դեմ ուղղված ազգային-ազատագրական շարժման արտահայտությունն էր։

Անդրկովկասի բոլոր հայաբնակ կենտրոններում գումարվում էին բազմամարդ միտինգներ, դիմումներ էին ուղարկվում կաթողիկոսին պահանջելով՝ ոչ մի զիջում չանել։ Բանաձևեր էին ընդունվում՝ «Ավելի շուտ կմեռնենք, քան քույլ կտանք մեր իրավունքների ոտնահարումը» նշանաբանով։

Շարժման ընթացքում որոշակի դարձավ տարբեր դասակարգերի ու բաղաքական կուսակցությունների վերաբերմունքը հունիսի 12-ի օրենքի նկատմամբ։

Հոգևորականությունն օրենքն ընկալեց որպես կառավարության ցանկություն՝ վերացնելու հայկական եկեղեցու ինքնավարությունը և այն ենթար-

58 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1276, ց. 19, գ. 2։ ՎՍՀՀ ԿՊՊԱ, ֆ. 7, գ. 329, ֆ. 34, գ. 432։

կելու ուղղափառ եկեղեցուն[59]։ 1903 թ. օգոստոսի 4-ին Խրիմյան կաթողիկոսը անոդին հրամայեց չհրապարակել հունիսի 12-ի օրենքը, իսկ օգոստոսի 21-ին կոնդակ ուղարկեց բոլոր թեմերը՝ ունեցվածքը բաղաքացիական իշխանություններին չհանձնելու կարգադրությամբ։

Կաթողիկոսն սկզբում կարծում էր, թե ցարը թյուրիմացության մեջ է, թե նրան առանձին մարդիկ մոլորեցրել են և իրեն կհաջողվի աղերսագրերով վերացնել այդ օրենքը։ Նա խնդրագիր խնդրագրի հետևից էր ուղարկում ցարին, իսկ վերջինս ներքին գործերի մինիստր Վ. Պլևեի միջոցով իր դայրույթն էր թափում «աստծո անհնազանդ ծառայի» գլխին՝ սպառնալով քննել հայ եկեղեցու ողջ կազմակերպությունը պետության շահերին անհամապատասխան լինելու հարցը։ Խրիմյանը աստիճանաբար սթափվելով, սկսում է ըմբռնացած ժողովրդին ինքնապաշտպանության կոչ անել։

Դաշնակցությունը, ժողովրդի համակրանքը շահելու միտումով, վերանայից իր տակտիկան, սկսեց խրախուսել տարերային կարգով հակացարական պայքարի ելած մասսաներին։ Նա հայտարարեց, թե «համազգային», «ընդհանուր հարցի» կողքին ճանաչում է նաև «առանձին հարցի» առկայությունը։

Դաշնակցությունը հարկադրված եղավ հաշվի առնել XX դարի սկզբին կովկասահայության կյանքում առաջացած խոր տեղաշարժերը։ Նա ջանում էր հայ աշխատավորության աչքում վերջնականապես չկորցնել վստահությունը և ստիպված էր այդ անել «...առավել ևս այն պատճառով, որ մանր ու միջին աշխատավորների հենց այն մասսան, որի վրա նա հենվում էր, տարերայնորեն ներգրավվել էր նոր շարժման մեջ և նրան ետ պահելու ոչ մի հնարավորություն»[60] չկար։ Դաշնակցությունն առաջադիր խնդիր ուներ՝ հայ պրոլետարիատին մեկուսացնել ռուս, վրացի, ադրբեջանցի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների բանվորներից, ինքնակալության դեմ մղվող համատեղ հեղափոխական պայքարից, պրոլետարական շարժումը գրկել դասակարգային բովանդակությունից, պայքարել հանուն «ընդհանուր հայրենիքի»։

Հեղափոխական շարժումների ազդեցության տակ սրվից հնչակյան կուսակցության ներքին հակասությունները։ Առանձին կազմակերպություններ, իսկ որոշ տեղերում՝ շատ անդամներ, համակրանք տածելով հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի նկատմամբ, տարածում էին նրա գրականությունը։ Բազմաթիվ հնչակյան բանվորներ ներգրավվելով հեղափոխական շարժման մեջ, շրջադարձ կատարեցին և մտան ՌՍԴԲԿ շարքերը, ակտիվորեն մասնակցեցին բանվորական շարժումներին։

Ինչ վերաբերում է հայ լիբերալ բուրժուազիայի օրգան «Մշակին», ապա այն քար լռություն պահպանեց հունիսի 12-ի օրենքի նկատմամբ, վախենալով իր վրա գրավել իշխանությունների զայրույթը։

Բոլորովին այլ դիրք բռնեց հայ իրականության մեջ նոր ծիլեր արձակած սոցիալ-դեմոկրատիան։ Մինչև 1903 թ. հունիսը, երկրամասում ծավալված բանվորական բազմաթիվ գաղաքական ցույցերը, գործադուլները և լայն ագիտացիան հեղափոխականացրել էին աշխատավոր զանգվածներին։ Այդ պայմաններում Անդրկովկասի մարքսիստներն աշխատանք էին ծավալում հայ

---

59 Տե՛ս Միխթար վարդապետ, Հայերը Ռուսաստանում, էջ 37։

60 Ստ. Շահումյան, երկ., հ. 1, էջ 370։

ժողովրդի տարերայնորեն բռնկված շարժումը դասակարգային պայքարի ինտերնացիոնալ հունի մեջ մտցնելու և ցարական ինքնակալության դեմ գրոհելու համար։ Նրանք իրենց մարքսիստական պրոպագանդայով «պայծառ ճառագայթի նման» թափանցում էին հայկական պրովինցիայի մթին թաղավորությունը»[61], պարզաբանում, որ չպետք է ցարիզմը շփոթել ռուս ժողովրդի հետ, մերկացնում էին դաշնակցական այն ազգայնականներին, որոնք 1903—1904 թթ. ակտիվացել էին հայկական գավառներում։

ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական, Բաքվի, Թիֆլիսի, Բաթումի կոմիտեները, լենինյան «Իսկրա», «Վպերյոդ», «Պրոլետարի», «Պրոլետարիատի կռիվը», «Պրոլետարիատի կռվի թերթիկը» և կուսակցական այլ օրգանները մերկացնում էին ցարիզմի բալանչիական քաղաքականությունը, ցույց տալիս հունիսի 12-ի օրենքի և նրա հետ կապված կողոպուտի էությունը։ Բոլշևիկյան կոմիտեները հեղափոխական քարոզիչներով ու կոչերով ոգեղեցին Կովկասը։ «Դիմակը պատռված է», «Բանվորներ և գյուղացիներ», «Ընկերներ» և այլ քարոզիչներում Կովկասյան միութենական կոմիտեն կոչ էր անում, համախմբվել պրոլետարիատի դրոշի տակ[62]։ «Մենք չենք կարող և չպետք է քուլլ տանք, որ մեր երկրի ամեն ծայրում տեղի ունեցող տարերային ընդհարումները կառավարության հետ լդառնան մի հուժկու փոթորիկ,— ասված էր «Ընկերներ» կոչում,— որը պետք է ջախջախի գազան միապետի արյունոտ գահը և վերջ տա նրա բազմաթիվ դահիճների գոյությանը։ Մենք չենք կարող քուլլ տալ, որ որևէ մի ուրիշ մարմին, վճռական րոպեին իր վրա վերցնի ղեկավարի դերը և իրավունք ունենա ասելու, թե նա ինքն է, որ կանգնած է կռվողների առաջին շարքերում և ոչ թե սոցիալ-դեմոկրատիան»[63]։

«Ինքնակալությունը և հայերը» քարոզիկում Միութենական կոմիտեն բոլոր հեղափոխական սոցիալ-դեմոկրատներին կոչ էր անում ամենուրեք և միշտ կրծքով պաշտպանել ճնշվածներին։ «Կամայականության դեմ հայերի մղած պայքարում մեր տեղը առաջին շարքերումն է։

Թող բոլոր դրոշներից բարձր ծածանի մեր դրոշը»,— ասված էր այդ քարոզիկում[64]։

ՌՍԴԲԿ Կովկասյան միության մի այլ կոչում ասված էր, թե երեկվա խաղաղ, ստրուկ հայ մարդն այսօր ազատության մարտիկ է դարձել։ «Ո՞վ է պատերազմողը և ո՞ւմ հետ է նա պատերազմում։ Մարկական դարավոր քնից արթնացած ժողովուրդն է այդ,— պարզաբանում էր Միութենական կոմիտեն,— որ կռիվ է հայտարարել բռնակալությանը։ Ժողովրդական բողոքի հակաչիքներն են, որ պետք է վերջնականապես ջնջեն, ջախջախեն միապետական ծանր շղթաները։ Ժողովրդի սրտում թաքնված զայրույթը երկար ժամանակ ելք չէր գտնում, մինչև որ կարմիր դրոշակը, պրոլետարիատի աներկյուղ կռի-

61 Ստ. Շահումյան. Երկեր, հ. 1, էջ 55։

62 Տե՛ս «Ռևոլյուցիոն կոչեր և քարոզիկներ (1902—1921)» ժողովածու, 1960, Երևան, էջ 661։ ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեն, որ սկզբից ևեթ բացեց հեղաշրջությունը, առանձին թերթիկով 1903 թ. օգոստոսին հրատարակեց «Դիմակը պատռված է» կոչը և Պլեխվի նամակը՝ համապատասխան մեկնաբանություններով։

63 ՄԼԻ-ի Վրաց. մասնաճյուղի արխիվ, ֆ. 33, գ. 466։

64 «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Երևան, 1958, էջ 89։

վը, արքունացրին մեր երկրի նիրհող ուժերին և ցույց տվեցին բոլորին, որ հարկավոր է կռվել»[65]։

Այս ամենի շնորհիվ մինչև այդ ամեն տեսակ բռնություններ տանող հայ ժողովուրդը,— 1903 թ. գրել է «Իսկրան»,— այժմ սուր կերպով բողոքեց թագակիր ավազակի նոր բարբարոսության դեմ և սկսեց զենքը ձեռքին պաշտպանել իր իրավունքները»։

«Իսկրան» նշել է, որ Կովկասի սոցիալ-դեմոկրատները «...բոլորովին ճիշտ գնահատեցին հայկական եկեղեցական ունեցվածքի վրա ցարական արշավանքի քաղաքական նշանակությունը և իրենց օրինակով ցույց տվեցին, թե ինչպես պետք է ընդհանրապես սոցիալ-դեմոկրատիան վերաբերվի ամեն մի նման երևույթի»[66], «Իսկրան» հավաստիացնում էր, թե մենք հայ պրոլետարիատին կմիավորենք իրար՝ ռուս բանվորների հետ, նրանց բոլոր էքսպրոպրիատորներին էքսպրոպրիացիայի համար մղվող պայքարի գործում, թե ոստիկանական բռնությունից մենք պետք է պաշտպանենք և կպաշտպանենք ոչ միայն պրոլետարներին, այլև հասարակության բոլոր ճնշվածներին։

Հունիսի 12-ի օրենքի դեմ առաջինն իր ձայնը հնչեցրեց Ալեքսանդրապոլը։ Հուլիսի 29-ին, երբ Խրիմյանը քաղաքի առաջնորդարանից մեկնում էր կայարան, բնակչությունը բազմահազարանոց ցույցի ելավ, պահանջելով՝ չհանձնել եկեղեցական ունեցվածքը։ Այնուհետև օգոստոս-սեպտեմբեր ամիսներին հակացարական ցույցեր և միտինգներ եղան Երևանում, Կարսում, Էջմիածնում, Ախալցխայում, Աշտարակում, Ղամարլուում, Բաքվում, Բաթումիում, Թիֆլիսում, Շուշիում, Նոր Նախիջևանում, Ելիսավետպոլում, Ղարաքիլիսայում, Ջալալօղլիում և այլ քաղաքներում ու վայրերում, որոնք հաճախ վեր էին ածվում զինված ընդհարումների։ Օգոստոսի 3-ին Երևանի հազարավոր բնակիչներ իրենց ձայնը բարձրացրին հունիսի 12-ի օրենքի դեմ, զինված կազակների և զորքի միջամտության պայմաններում վճռականություն հայտնեցին պայքարել մինչև արյան վերջին կաթիլը։ Շատ տեղերում շարժումներն առաջանում էին ինքնաբուխ, կովկասահայ զանգվածներին ներգրավում հեղափոխական շարժման ոլորտը։ Անդրկովկասը բռնկված էր հեղափոխական փոթորիկով[67]։

Բաքվի, Թիֆլիսի և Անդրկովկասի արդյունաբերական այլ քաղաքների ռուս, վրացի, ադրբեջանցի և այլ ազգերի բանվորներն ու աշխատավոր գյուղացիներն իրենց համերաշխությունն էին արտահայտում հայկական ազատագրական շարժման նկատմամբ։ Շատ տեղերում նրանք միանում էին հայ ցուցարարներին, աջակցում նրանց պայքարին։ 1903 թ. օգոստոսին Վաղարշապատում հայ ցուցարարներին միացան շրջակա գյուղերի ադրբեջանցիները։ «Բաքվի բոլոր ազգությունների բանվորները,— գրում էր «Պրոլետարիատի կովի» թերթիկը»,— ջերմորեն ողջունում են իրենց հայ եղբայրների քաջարի կռիվը։ Նրանց խորթ է ազգային ատելության ամեն մի զգացում։ Առանց ազգերի խտրության, բոլոր պրոլետարների համերաշխությունը նրանց համար սրբազան պատգամ է»[68]։ Ցարական կառավարության կողմից Անդրկովկասում

---

65 «Искра», № 49, 1 октября 1903 г.

66 Նույն տեղում։

67 Տե՛ս Բ. Կեռոլյանց, Ընտիր երկեր, Երևան, 1978, էջ 75։

68 «Листок «Борьбы пролетариата»», № 3, 1903.

հրահրվող ազգամիջյան ընդհարումները, որ նպատակ ունեին հանգցնել հեղափոխական շարժումների հրդեհը, կանխվեցին։

Ցարական գործակալների հետ գույքի բռնագրավման ժամանակ առաջին արյունալի ընդհարումը տեղի ունեցավ օգոստոսի 29-ին, Ելիսավետպոլում։ Այդ օրը փոխնահանգապետ Անդրեևը կազակների և զինվորների երկու վաշտի հետ միասին հարձակվեց Քեմական առաջնորդի փոխանորդի տան շուրջը հավաքված բանվորների, արհեստավորների, գործակատարների, սովորող երիտասարդության և աշխատավորական այլ խավերի վրա։ Զինվորները կրակ բացեցին։ Սպանվեցին տասնյակ անմեղ մարդիկ, շատերը ձերբակալվեցին։ Ելիսավետպոլի արյունոտ սպանդի մանրամասնությունները տարածվեցին Կովկասում։ Օգոստոսի 31-ին զինված ընդհարումներ եղան Թիֆլիսում, Վիճակն այնքան ծանր էր, որ քաղաքում ռազմական դրություն հայտարարվեց։

Բաքվում՝ Անդրկովկասի պրոլետարական այդ կենտրոնում, սեպտեմբերի 2-ին Պարապետի հրապարակում հայ ցուցարարներն ընդհարվեցին զորքի հետ՝ դարձյալ տալով բազմաթիվ զոհեր։ Կառավարության պահանջով այդ օրը կատպիական ռազմական նավերը մտցվեցին ափին։

Այնուամենայնիվ կառավարությունը, զորքի օգնությամբ կոտրելով ժողովրդի դիմադրությունը, սկսեց իրականացնել հունիսի 12-ի օրենքը։ «Ժողովուրդը, որ վաղօրոք անհավատալի չափով էլեկտրականացված էր գանազան ագիտատորների կողմից,— գրել է հողագործության և պետական ունեցվածքի մինիստր Ա. Սրմոլովը՝ մինիստրների կոմիտեի նախագահ Վիտտեին ուղղած զեկուցագրում,— հանդես է բերել այնպիսի հանդուգն, խիզախ դիմադրություն, որ ապավինել ենք զինված ուժի օգնության վրա, իչպես այդ տեղի է ունեցել էջմիածնում՝ կաթողիկոսի նստավայրում, Ալեքսանդրապոլ, Կարս քաղաքներում և այլ վայրերում՝ ունեցվածքի ընդունումն անհրաժեշտության դեպքում կատարվել է զինված ոստիկանական պահակախմբի հսկողությամբ»[69]։

Մինչև 1903 թ. վերջը հիմնականում ավարտվեց հայ եկեղեցական ունեցվածքի բռնագրավումը։ Ոչ լրիվ տվյալներով ցարիզմն այդ ժամանակ բռնագրավեց մոտ 2 միլիոն ռուբլի եկեղեցապատկան կանխիկ դրամ։ Հողագործության և պետական ունեցվածքի մինիստրության տվյալներով, Տավրիկյան, Ախալցխայի, Բեսարաբիայի, Դոնի, Բաթումի, Թերեքի, Կարսի մարզերում, Աստրախանի, Թիֆլիսի, Երևանի, Ելիսավետպոլի, Բաքվի, Սևծովյան նահանգներում և Զաքաթալայի օկրուգում բռնագրավվել էր 144.605 դեսյատին հող։ Միայն 1904 թ. ունեցվածքից ստացված եկամուտը կազմել է 205.595 ռուբլի[70]։

Ցարիզմն իր գաղութակալական քաղաքականությունն իրականացնելու նպատակով որոշել էր հայ եկեղեցուց բռնագրաված հողատարածություններից վրա ռուս գաղթականներ բնակեցնել։ Կովկասի կառավարչապետ Գոլիցինը 1904 թ. հուլիսի իր զեկուցագրերից մեկում նշում էր, որ հայ եկեղեցին միայն Կովկասում մոտ 170 հազար դեսյատին հող ունի, որը գերազանցապես լինելով մշակման համար պիտանի, հնարավոր է ծառայեցնել «...ռուսական գա-

---

69 ՍՍՀՄ ՀՔԿԱ, ֆ. 540, ց. 1, գ. 992, թ. 1—26։

70 ՍՍՀՄ ԿՊԳԱ, ֆ. 1276, ց. 19, գ. 2, թ. 35։ Ա. Ս. Համբարյան. Հայոց եկեղեցական բռնագրաված գույքի օգտագործումը ցարիզմի կողմից 1903—1905 թթ.։ «Տեղեկագիր», 1961 № 10։

զուրացման նպատակներին»[71]։ Ցարական կառավարությունը, սակայն, հեղափոխական շարժումների և զինված ըդհարումների աղդեցության տակ չկարողացավ իրականացնել իր այդ մտադրությունը։

Եկեղեցական ունեցվածքը զենքի ուժով գրավելուց հետո էլ հարցը չէր սպառվում։ Հայ գյուղացիները հրաժարվում էին նվաճված հողերը մշակել, արհեստավորական և այլ ձեռնարկությունները վարձակալել, փշացնում կամ քաքցնում էին հավաքված բերքը։ Այդ էր պատճառը, որ ցարական կառավարությունը միայն 1904 թ. գրաված հայ վանքապատկան հողերից 111.290 ռուբլով պակաս եկամուտ ստացավ։

Հակացարական ցույցերի ելած հայերը 1903—1905 թթ. եկեղեցական գույքը բռնագրավելու, հարկերն ու տուրքերը գանձելու ժամանակ, ցարական պաշտոնյաների հետ զինված ընդհարումների ընթացքում, բիչ զոհեր չտվեցին։ Նրանք միաժամանակ դատաստան տեսան իշխանության բազմաթիվ ներկայացուցիչների կամ այն վախկոտ հոգևորականների հետ, որոնք հաճոյանալով պաշտոնյաներին, հոժարակամ տրամադրում էին եկեղեցական ունեցվածքը։

Դաշնակցական և հնչակյան կոմիտեները դիմեցին տեռորիստական տակտիկայի։ 1903 թ. հոկտեմբերի 14-ին հնչակյան ահաբեկիչները Գոլիցինի դեմ անհաջող մահափորձ կատարեցին։ Լինելով Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր պետ և կովկասյան զինվորական օկրուգի հրամանատար (1897—1904), նա խիստ դաժան, ռեակցիոն քաղաքականություն էր վարում։ Ահաբեկման ենթարկվեցին նաև Ելիսավետպոլի փոխնահանգապետ Անդրեևը, Սուրմալուի գավառապետ Բոգուսլավսկին, սահմանային պահակախմբի գլխադասիկ Բիկովը, հարկային տեսուչ Շչերբակովը, Բաքվի նահանգապետ Իշխան Նակաշիձեն, Կարսի ժանդարմական վարչության քարտուղարի վասիլի Դրոզդովը և տասնյակ ուրիշներ։ Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան դատապարտելով հայ նացիոնալիստների անհատական ահաբեկման տակտիկան, աշխատավորներին պարզաբանում էր, որ ինքնակալության գահավիժման համար հարկավոր է ժողովրդական ապստամբություն, դասակարգային կռիվ։ «Գոլիցինները և նրա նմանները կանհետանան և ինչպես ծուխ կցրվեն միայն ինքնակալության անկմամբ»[72],— ասված է ՌՍԴԲԿ Կովկասյան մեութենական կոմիտեի «Գադանը վիրավորված է» կոչում։

Հայ ժողովրդի ծավալած հակացարական մասսայական շարժումը դասակարգային խոր արմատներ ուներ։ Դա ցարիզմի ռեակցիոն քաղաքականության դեմ հայ ժողովրդի դժգոհության պոռթկումն էր։ Այն իր բովանդակությամբ, իր բնույթով ազգային-ազատագրական շարժում էր ընդդեմ ցարիզմի քաղաքականության։ Համաժողովրդական այդ ելույթը կառավարության դեմ խոշոր նշանակություն ունեցավ հայ ժողովրդի հեղափոխական պայքարի հետագա ծավալման ու խորացման գործում։

4. ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

ՌՍԴԲԿ II համագումարը, որ տեղի ունեցավ 1903 թ. հուլիս-օգոստոս ամիսներին, սկզբում Բրյուսելում, ապա Լոնդոնում, կարևորագույն ուղենիշ

71 Նույն տեղում, թ. 51։

72 «Ռևոլյուցիոն կոչեր և քուռթիկներ (1902—1921)» ժողովածու, էջ 62—65։

հանդիսացավ Ռուսաստանի բանվոր դասակարգի պայքարի պատմության մեջ, շրջադարձային կետ՝ համաշխարհային հեղափոխական շարժման մեջ։ Համագումարի հիմնական արդյունքը Ռուսաստանի մարքսիստական-լենինյան կուսակցության ստեղծումն էր։ Համագումարն ընդունեց կուսակցության ծրագիրը և կանոնադրությունը, ընտրեց կենտրոնական կոմիտեի և կենտրոնական տպագիր օրգանի խմբագրության կազմը։

Վ. Ի. Լենինի կողմնակիցներին, որոնք կուսակցության ղեկավար մարմինների ընտրությունների ժամանակ ձայների մեծամասնություն ստացան, սկսեցին անվանել բոլշևիկներ, իսկ հակառակորդներին՝ մենշևիկներ, «Բոլշևիկ» բառը համալոր դարձավ «լենինյան» և «կոմունիստական» հասկացողությանը։ «Բոլշևիզմը,— գրել է Վ. Ի. Լենինը,— որպես քաղաքական մտքի հոսանք և որպես քաղաքական կուսակցություն, գոյություն ունի 1903 թվականից»[73]։

Վ. Ի. Լենինի ջանքերով ընդունված հեղափոխական ծրագրի մեջ որպես հիմնական խնդիր առաջ էր քաշվում պայքարը պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման համար։ ՌՍԴԲԿ ծրագիրը նախապատրաստելու և ընդունելու ժամանակ պայքար էր մղվում ծրագրային հիմնական հարցերի շուրջը՝ կապիտալիզմի ընդհանուր տենդենցի գնահատման, սոցիալիստական հեղափոխության, պրոլետարիատի դիկտատուրայի, բանվորների և գյուղացիների դաշինքի, ազգերի ինքնորոշման իրավունքի, տարերայնության ու գիտակցականության, բանվորական շարժման մեջ կուսակցության ղեկավար դերի, նրա նպատակների ու խնդիրների շուրջը։ Այս բոլոր հարցերում հաղթանակեցին Վ. Ի. Լենինը և նրա համախոհները։ Համագումարի որոշման համաձայն 1903 թ. սեպտեմբերին ՌՍԴԲԿ կենտկոմը Կովկասյան միությունը ճանաչեց որպես կուսակցության շրջանային կազմակերպություն, հաստատեց նրա կանոնադրությունը, «Պրոլետարիատի կռիվը» թերթը ընդունվեց որպես Միության պաշտոնական օրգան։

ՌՍԴԲԿ II համագումարում կովկասյան պատգամավորներից Բ. Կնունյանցը (նրա ծածկանունն էր Բակինեց, Ռուբեն, ըստ արձանագրությունների՝ Ռուսով) և Ա. Ջուրաբյանը (Աշխիդ-բեկ) կանգնած էին լենինյան դիրքերի վրա։ Իր քաղաքական ակտիվությամբ և հետևողականությամբ հատկապես աչքի ընկավ Բ. Կնունյանցը։ Նա բովանդակալից ճառ արտասանեց ՌՍԴԲԿ Բաքվի կազմակերպության կողմից, մի շարք ելույթներ ունեցավ և պաշտպանեց լենինյան գիծը։ Դատապարտելով օպորտունիզմը կազմակերպական հարցերում, Բ. Կնունյանցը գտնում էր, որ պրոլետարական կազմակերպությունները պետք է ստեղծել ոչ թե ըստ ազգային հատկանիշի, այլ տերիտորիալ սկզբունքով, քանի որ բոլոր ազգերի և ժողովուրդների պրոլետարիատի դասակարգային շահերը միասնական են և այդ շահերը պետք է պաշտպանի կենտրոնացված կուսակցական կազմակերպությունը։ «Ես գտնում եմ,— ասում էր Բ. Կնունյանցը,— որ կուսակցության յուրաքանչյուր անդամ հանդիսանում է ամբողջ Ռուսաստանի, ամբողջ պրոլետարիատի ներկայացուցիչը։ Իսկ եթե մենք մեր յուրաքանչյուր պատգամավորի ընդունենք որպես պրոլետարիատի ազգային խմբերի ներկայացուցիչ, ապա ես ստիպված կլինեմ ինձ համարել Անդրկովկասում ապրող ռուս, վրացի, հայ, թաթար և հրեա պրոլե-

73 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 9։

տարիատի աղգային խմբերի ներկայացուցիչ, բայց այդպիսի երկար տիտղոսից ես սիրով հրաժարվում եմ, որպեսզի ինձ վրա վերցնեմ Ռուսաստանի պրոլետարիատի ներկայացուցչի հաճելի անունը»[74]:



Բագրատ Կնունյանց

Վ. Ի. Լենինը իր «Մի քայլ առաջ, երկու քայլ հետ» գրքում անդրադառնալով Բ. Կնունյանցի-Ռուսովի ճառին, գրել է. «Մենք խորհուրդ կտայինք բոլորին, ովքեր ուզում են ինքնուրույնաբար վերլուծել կուսակցական պատճառների և գտնել նրա արմատները համագումարում, կարդալ և վերստին կարդալ ընկեր Ռուսովի ճառը, որի փաստարկումները փոքրամասնությունը ոչ միայն չհերքեց, այլև նույնիսկ չվիճարկեց»[75]:

ՌՍԴԲԿ II համագումարից հետո Բ. Կնունյանցը ակտիվ աշխատանք է կատարում «Իսկրայում»: Ծննից 1903 թ. վերջին, ՌՍԴԲԿ II համագումարի արդյունքների մասին նա ծավալուն նամակ ուղարկեց կուսակցության Բաքվի կոմիտեին[76], հանգամանորեն նկարագրելով համագումարի ողջ ընթացքը, ճիշտ կողմնորոշելով նրանց ստեղծված նոր իրադրության մեջ:

ՌՍԴԲԿ II համագումարում մենշևիկյան ճահիճը գլորվեցին Ն. Ժորդանիան, որը համագումարին մասնակցում էր խորհրդակցական ձայնով և Դ. Թոփուրիձեն (Իսարի, ըստ արձանագրության՝ Կարսկի), Սերտորեն համագործակցելով Տրոցկու, Մարտովի, Աքսելրոդի և նրանց կողմնակիցների հետ, նրանք խախտեցին Կովկասի սոցիալ-դեմոկրատների տված նակազը և օպորտունիստական, մենշևիկյան գիծ վարեցին համագումարում: Վերադառնալով համագումարից Ն. Ժորդանիան և Դ. Թոփուրիձեն իրենց համախոհների հետ միասին ֆրակցիոն-պառակտիչ գործունեություն ծավալեցին Կովկասում, հատկապես Կովկասյան միության կազմում:

ՌՍԴԲԿ Կովկասյան միությունը, Թիֆլիսի, Բաքվի, Բաթումի և այլ կոմիտեներն սկզբից ևեթ կանգնելով բոլշևիկյան դիրքերում, պայքարում են մենշևիկների դեմ: 1903 թ. հոկտեմբերի սկզբներին միութենական կոմիտեն Դ. Թոփուրիձեին քայքայիչ գործունեության համար հեռացնում է կուսակցական աշխատանքից՝ նրա հարցը դնելով կենտրոնական կոմիտեի առջև: Վ. Ի. Լենինը արտասահմանից ողջունեց միութենական կոմիտեի այդ որոշումը:

---

74 Второй съезд РСДРП, июль—август, 1903, Протоколы, М., 1932, стр. 58—59.
75 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 8, էջ 376:
76 Տե՛ս Բ. Կնունյանց, Ընտիր երկեր, Երևան, 1978, էջ 54—66:

Վ. Ի. Լենինը և Գ. Պլեխանովն իրենց նամակում, լիովին հավանություն տալով Կովկասի բոլշևիկների վարած հեղափոխական գծին, գրել են. «Թող Կովկասի ընկերները հաստատորեն ընթանան այն ուղիով, որի վրա նրանք կանգնել են։ Թող նրանք չլսեն բամբասանքները մեծամասնության դեմ... Թող նրանք շարունակեն համերաշխ աշխատանքը ընկերական վստահությամբ դեպի Կենտկոմը, և մենք համոզված ենք, որ այժմյան կուսակցական «խառնակությունը» արագորեն կվերանա»[77]։



Միխա Ցխակայա

Կովկասում բոլշևիզմի դիրքերի ամրապնդման գործում կարևոր դեր խաղաց 1903 թ. հոկտեմբերի երկրորդ կեսին Թիֆլիսում գումարված ՌՍԴԲԿ Կովկասյան միության II համագումարը, որին մասնակցում էին Բաքվի, Թիֆլիսի, Բաթումի, Իմերեթ-Մինգրելական կոմիտեների և «Պրոլետարիատի կոիվը» թերթի ներկայացուցիչները։ Քննարկված գլխավոր հարցերը, ՌՍԴԲԿ II համագումարի արդյունքները և միության հետագա գործունեության ծրագիրն էին։

Հակառակ մենշևիկների դիմադրությանը, Կովկասյան միության համագումարը ձայների լիակատար մեծամասնությամբ հավանություն տվեց ՌՍԴԲԿ II համագումարում Վ. Ի. Լենինի և նրա կողմնակիցների բռնած դիրքին, ընդունեց բոլշևիկյան բանաձևեր, միության կանոնադրության նախագիծը, դատապարտեց մենշևիկների քայքայիչ գործունեությունը, կոչ արեց պաշտպանել միասնական կուսակցության ստեղծման համար Կենտկոմի ձեռնարկումները[78]։

Համագումարից հետո Միութենական կոմիտեի ղեկավարները, հատկապես Մ. Ցխակայան, Ա. Ծուլուկիձեն, Ա. Ջուրաբյանը[79], Դ. Պոստոևսկին և ուրիշներ մեկնեցին Հայաստան, Վրաստան և Ադրբեջանի քաղաքներն ու գինվորական կայազորները՝ զեկուցումներ տալու, տեղական կուսակցական կազմակերպությունները Վ. Ի. Լենինի շուրջը համախմբելու համար։

Միութենական կոմիտեի օգնությամբ 1903—1904 թթ. իրենց աշխատանքն աշխուժացնում են Հայաստանի սոցիալ-դեմոկրատական խմբակները, ձևավորվում են նոր, բոլշևիկյան կազմակերպությունները։ 1903 թ. ամռանը Միութենական կոմիտեի ներկայացուցիչ Մելիք Մելիքյանի, Ասատուր Կախոյանի աջակցությամբ ձևավորվում է Հաղպատի լենինյան-իսկրայական բոլ-

---

77 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 34, էջ 198—199։

78 Տե՛ս «Второй съезд РСДРП», М., 1959.

79 Ա. Ջուրաբյանը Միութենական կոմիտեի կազմում կոոպտացիայի ենթարկվեց համագումարից հետո։

շևիկյան բջիջը՝ Հայաստանի բոլշևիկյան անդրանիկ կազմակերպություններից մեկը։ Նրա շարքերում ընդգրկված էին Հաղպատ կայարանի և գյուղի, Սանահինի և այլ վայրերի սոցիալ-դեմոկրատները, որոնք անգնահատելի ծառայություն մատուցեցին կուսակցության II համագումարի որոշումները տարածելու, մասսաների մեջ քաղաքական-բացատրական աշխատանք կատարե-



Ստեփան Շահումյան

լու, հակացարծական ելույթները գլխավորելու գործում։ Ռուսական առաջին հեղափոխության նախօրյակին բոլշևիկյան կազմակերպություններ են ստեղծվում նաև Ալավերդու գործարանում ու հանքերում, Երևանում, Ալիքսանդրապոլում, Կարսում, Սանահին, Ալեքսանդրապոլ կայարաններում և Հայաստանի այլ վայրերում։

1904 թ. ամռանը Միութենական կոմիտեի անդամ Ստ. Շահումյանը եղավ Լոռիում, Երևանում։ Նա անձամբ հետաքրքրվեց Երևանի արական գիմնազիայի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության աշխատանքով, որը ղեկավարում էին Տոմսկի տեխնոլոգիական ինստիտուտի ուսանող Ալիքսանդր Մալխասյանը, ինչպես նաև Մոսկվայի համալսարանից արտաքսված Գ. Սո-

կոլովսկին։ Մ. Շահումյանի այդ շրջագայությունն ունեցավ այն խոշոր նշանակությունը, որ տեղական բոլշևիկյան կազմակերպություններն ու խմբերը անմիջական կապ հաստատեցին ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեի հետ։

1904 թ. արդյունավետ աշխատանք կատարեցին Ալեքսանդրապոլ և Սահնին կայարանների սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները, Ալեքսանդրապոլի կայազորի սոցիալ-դեմոկրատական խմբակը։ ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի զինվորական սոցիալ-դեմոկրատական խմբակը, որ հիմնադրվել էր 1902 թ., հետզհետե իր շարքերը համալրեց, ստեղծեց ընդհատակյա գրադարան և տպարան, կապ հաստատեց ՌՍԴԲԿ Կովկասյան միության և, ապա՝ Կենտկոմի հետ։

1904 թ. Ալեքսանդրապոլի բոլշևիկները մայիսմեկյան տոնակատարության տվեցին քաղաքական ցույցի բնույթ։ Ապրիլին քաղաքի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարությամբ գործադուլ արեցին մի քանի ձեռնարկությունների բանվորներ։ Նրանք ընտրեցին գործադուլային կոմիտե, որը մշակեց գործադուլավորների տնտեսական պահանջները և ներկայացրեց ձեռնարկատեր Ջիքողյանին։ Երբ այդ պահանջները մերժվեցին, բոլշևիկները ապրիլի 30-ին գործարանի մոտ կազմակերպեցին մեծ միտինգ, որին մասնակցում էին քաղաքի շատ բանվորներ։ Միայն ոստիկանության միջամտությամբ հաջողվեց ցրել միտինգի մասնակիցներին։

ՌՍԴԲԿ II համագումարից հետո Կովկասյան միությունը նոր թափ է հաղորդում հեղափոխական գրականության, կոչերի, պրոկլամացիաների, թերթերի հրատարակությանը, հմտորեն օգտագործելով լեգալ և անլեգալ հնարավորությունները։ Արժեքավոր է «Պրոլետարիատի կռիվ» թերթիկի»—1904 թ. հոկտեմբերի 1-ի համարում հրապարակված Մ. Շահումյանի՝ «Երևանից (Հայ իրականությունից)» հոդվածը, ուր պատկերված է հայ իրականությունը, մերկացված բուրժուական նացիոնալիստները, հատկապես դաշնակցականները։ «Հայկական շատ գյուղերում,— գրել է Շահումյանը,— արդեն կան գյուղական երիտասարդության կազմակերպություններ, որոնք կապված են մեր կոմիտեների հետ, ատանում են մեր գրականությունը և լարված ուշադրությամբ հետևում են հայ և այլազգի բանվորների հերոսական պայքարին։ Այս պայքարը... բնակչությանը կսովորեցնի մտածել քաղաքականորեն և գործել քաղաքականորեն, իր դրոշի տակ կհավաքի նրա պրոլետարական և կիսապրոլետարական մասսաներին և վճռական րոպեին նրանց գրոհի կտանի ինքնակալության դեմ, եղբայրորեն միացած... ռուս ժողովրդի հետ»[80]։

«Պրոլետարիատի կռիվը» թերթում հայերեն տպագրվել են Վ. Ի. Լենինի մի շարք հոդվածները, այդ թվում՝ «Երրորդ համագումարը», «Հեղափոխական պրոլետարիատի դեմոկրատական խնդիրները» և այլն, որոնք քաղաքական-դաստիարակչական հսկայական նշանակություն ունեցան։

Կովկասում բոլշևիզմի դիրքերն ամրապնդելու, լենինյանների հաղթանակն ապահովելու և մենշևիկներին մերկացնելու գործում կարևոր դեր խաղացին Միութենական կոմիտեի III համագումարը (1904 թ. մայիս) և Կովկասյան բոլշևիկների առաջին կոնֆերանսը (1904 թ. նոյեմբեր)։

Միութենական կոմիտեի զեկուցման մեջ հանրագումարի էին բերվում

---

80 Մ. Շահումյան, երկ., հ. 1, էջ 55։

մենշևիկների դեմ մղված պայքարի արդյունքները, ՌՍԴԲԿ III համագումարի նախապատրաստման ուղղությամբ կատարված աշխատանքը։ Քննարկված 12 հարցերից կարևոր էին ապագա ցույցերի բնույթի, բանվորների, գյուղացիների, զորքի և սովորողների շրջանում տարվող ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքի և քաղաքական գրականության մասին զեկուցումները։ Պրոպագանդայի և ագիտացիայի ծավալման հարցի շուրջ ծրագրային նկույթ ունեցավ Ստ. Շահումյանը, որը Գերմանիայից վերադառնալուց հետո մոտիկից ուսումնասիրել էր Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը։ Համագումարը, վերլուծելով Հայաստանում տիրող քաղաքական դրությունը, խնդիր դրեց հայկական գյուղում ուժեղացնել բոլշևիկյան ագիտացիան, մասսաներին աստիճանաբար ազատել ազգայնականների ազդեցությունից, բանվորներին և աշխատավոր գյուղացիներին ներգրավել բոլշևիկյան կուսակցության կողմը։ Համագումարում սուր պայքար առաջացրեց կուսակցական գրականության, հատկապես «Պրոլետարիատի կռիվը» թերթի հրատարակությունն արտասահման փոխադրելու հարցը։ Մենշևիկները պատրվակ դարձնելով, թե «Պրոլետարիատի կռիվ» հրատարակությունն արտասահմանում ապահովված կլինի ձախողումներից, նպատակ ունեին զավթել միության օրգանը, այն վարել մենշևիկյան «Իսկրայի» ոգով։ Բայց նրանց այդ առաջարկը մերժվեց։

Հայաստանում լենինյան գաղափարների տարածմանը, բոլշևիկյան կազմակերպությունների ձևավորմանը և նրանց գործունեությանը մեծ չափով օգնեց Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ, ՌՍԴԲԿ II համագումարից հետո ժնևում, 1904 թ. փետրվարին, ՌՍԴԲԿ Կենտկոմի հրատարակչության կողմից ստեղծված վրացերեն և հայերեն լեզուներով սոցիալ-դեմոկրատական գրականություն հրատարակող հանձնաժողովը։ Անդրկովկասում այդ ժամանակ մարքսիստական գրականության, հանրամատչելի ագիտացիոն բրոշյուրների պահանջը չափազանց մեծ էր։ Բաքվի և Թիֆլիսի բնդհատակյա տպարանները հիմնականում զբաղված էին թերթերի, թռուցիկների հրատարակմամբ։ Մասնավոր տպարանատերերը հրաժարվում էին հեղափոխական գրականություն հրատարակել։ Եվ ահա հենց այդ պայմաններում էր, որ Կովկասի բոլշևիկները Վ. Ի. Լենինին գրած նամակներում խնդրում էին՝ որքան կարելի է արտասահմանից ավելի շատ հայերեն և վրացերեն գրականություն ուղարկել Կովկաս։ Միութենական կոմիտեին 1903 թ. հոկտեմբերի 20-ին ուղարկած նամակում Վ. Ի. Լենինը և Գ. Պլեխանովը գրել են. «Մենք այժմ հատկապես մտածում ենք այստեղ վրացական և հայկական գրականության հրատարակության կազմակերպման մասին։ Այդ գործին ձեռնամուխ են եղել ձեռնհաս ընկերներ, փող հույս ունենք ճարել։ Հարկավոր է օգնություն և՛ գրականությամբ, և՛ միջոցներով»[81]։

1904 թ. փետրվարի 22-ին ՌՍԴԲԿ Կենտկոմը հաստատում է վրացերեն և հայերեն սոցիալ-դեմոկրատական գրականության հրատարակման հանձնաժողովի կազմը, որը Կենտկոմի հաստատած կանոնադրության համաձայն, ձեռնամուխ է լինում հրատարակչական աշխատանքներին։ Հանձնաժողովի աշխատանքը Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ ղեկավարում էր Ստ. Շահումյանը։ Հանձնաժողովի մեջ էին նաև Ա. Երզնկյանը (Գուգարիան), Մ. Մա-

---

81 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 34, էջ 199։

նուշարյանը (Կարիան, Ջար)։ Նյութական և բարոյական օգնություն ստանալու նպատակով հանձնաժողովը Ժնևում, Բեռլինում և այլուր ստեղծում է առանձին խմբեր, իր շուրջն է համախմբում Եվրոպայի հայ ուսանողների միության որոշ անդամներին։ Հանձնաժողովի կանոնադրության մեջ ասված էր, թե սոցիալ-դեմոկրատական գրականության հրատարակման նպատակով խմբերը կազմակերպում են միջոցների հավաքում՝ բոլոր հնարավոր ձևերով՝ անդամավճարների, հանգանակության, գրական երեկույթների, գրականության տարածման, ինչպես և ցույց են տալիս գրական օգնություն, կատարում են թարգմանություններ և այլ գործեր։ Կարճ ժամանակամիջոցում Ժնևում կուսակցական տպարանը ձեռք է բերում հայկական տառեր և ձեռնամուխ լինում մարքսիստական գրականության հրատարակությանը։ Միայն 1904 թ. մարտին Ժնևի կուսակցական տպարանում լույս են տեսել ՌՍԴԲԿ կանոնադրությունը՝ 700 օրինակ, պատերազմի առթիվ Վ. Ի. Լենինի գրած «Ռուս պրոլետարիատին» պրոկլամացիան՝ 7000 օրինակ, «Սրագիր ռուս. սոց. դեմ. բանվ. կուսակցության (ընդունված երկրորդ հերթական համագումարում)»՝ 7000 օրինակ, «Ծանուցում Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության երկրորդ հերթական համագումարի մասին»՝ 2300 օրինակ, ՌՍԴԲԿ II համագումարի բանաձևերը՝ 2300 օրինակ։ Հրատարակվեցին Վ. Ի. Լենինի գրած ՌՍԴԲԿ կենտկոմի մի քանի թռուցիկներ, այդ թվում՝ «Մայիսի մեկը», տպագրության պատրաստվեց Վ. Ի. Լենինի «Գյուղական չքավորությանը» բրոշյուրը։

Ստ. Շահումյանը ձեռնարկում է մարքսիստական մի շարք գրքերի, այդ թվում Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» (լույս տեսավ 1904 թվականին), Կ. Մարքսի «Վարձու աշխատանք և կապիտալ» թարգմանությունը։ Ժնևում հրատարակչությանն օգնելու նպատակով Շահումյանը Բեռլինից Ժնև է հրավիրում Մ. Մանուչարյանին, որի հետ միասին իրականացնում է «Մանիֆեստի» թարգմանությունը։ Ժնևյան հրատարակությունները տպագրվում էին հազարավոր օրինակներով և գաղտնի ճանապարհներով ուղարկվում Կովկաս՝ տարածվում հայ աշխատավորների շրջանում։ Միաժամանակ Ստ. Շահումյանը լայն գործունեություն է ծավալում Եվրոպայի բարձրագույն դպրոցներում սովորող հայ ուսանողների շրջանում։ «Բեռլինում գտնվող կովկասցի սոցիալ-դեմոկրատների փոքրաթիվ խումբը,— գրել է Շահումյանի այդ տարիների դասընկերներից Մ. Մանուչարյանը,— ի դեմս Ստեփանի ճանաչեց իր առաջնորդին և լիդերին, ճանաչեց անձայն և անդարձ կերպով»[82]։ Շահումյանը Բեռլինի սոցիալ-դեմոկրատական կոմիտեի գործունյա անդամներից էր, գլխավորում էր «Եվրոպայի հայ ուսանողների միության» նացիոնալիստական տարրերի, հատկապես Բ. Իշխանյանի, Տ. Խաչանյանի և այլոց դեմ մղվող պայքարը։ Նրա ջանադիր աշխատանքի շնորհիվ «Միության» մեջ աստիճանաբար թափանցում են մարքսիստական տրամադրություններ, միության անդամների մի մասն անցնում է սոցիալ-դեմոկրատիայի կողմը։

1905 թ. ապրիլին Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ և օգնությամբ Շահումյանը Բեռլինում մասնակցում է «Եվրոպայի հայ ուսանողների միության» VI կոնգրեսին։ Համագումար գնալուց առաջ Շահումյանը Լենինին հայտնում

[82] «Бакинский рабочий», № 211, 20 сентября 1922, стр. 9—10.

է, քն «Միությունը» մինչև վերջերս գտնվում էր դաշնակցության ազդեցության տակ, որը մեծաշնորհ կերպով օգտագործում էր Եվրոպայի գրեթե ամբողջ հայ ուսանողությանը, որ սոցիալ-դեմոկրատական աշխատանքի շնորհիվ իրեն հաջողվել է ուսանողության գալի մասը քեզել մեր կողմը։ Այնուհետև նա պատմում է, որ կոնգրեսում հետամուտ է լինելու, «որ Միությունը ցրվի և հայ ուսանողության բոլոր սոցիալ-դեմոկրատ տարրերը համախմբվեն սոցիալ-դեմոկրատիայի դեկավարության ներքո»[83]։

Կոնգրեսում իր շուրջը համախմբելով «Միության» հեղափոխական պատգամավորներին, Շահումյանը տրոհում է Միությունը։ Ապրիլի 8-ին կոնգրեսում հրապարակվում է նրա կազմած «Մանիֆեստը»՝ ուղղված Եվրոպայում ապրող բոլոր սոցիալ-դեմոկրատներին որտեղ, հանգամանորեն վերլուծվում էր ստեղծված իրադրությունը, քննադատվում դաշնակցության դաշնափարատխոսությունը։ 1905 թ. ապրիլին այդ «Մանիֆեստը» հրատարակվեց բոլշևիկյան «Վպերյոդ» թերթում։

1903 թ. վերջերին Ժնևում հիմնվել էր, այսպես կոչված, «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը», որն իր գործունեությունը տեղափոխում է Կովկաս՝ Բաքու։ Թեև դրա հիմնադիրներն ու գաղափարախոսները (Բ. Իշխանյան, Ղ. և Ն. Տեր-Ղազարյաններ, Տ. Խաչատրյան, Ե. Պալյան, Ա. Ռուբենի (Մատուրյան)[84], Գ. Պիճիկյան, Գ. Կոզիկյան (Ծամլեմ), Դ. Անանուն և ուրիշներ կազմակերպությունը կոչել էին բանվորական անունով, բայց իրականում այն շատ հեռու էր այդպիսին լինելուց։ Նրա գաղափարախոսներն այնքան հաճախ էին խոսում հայ իրականության առանձնահատուկ (սպեցիֆիկ) պայմանների մասին, որ սոցիալ-դեմոկրատները նրանց անվանեցին «սպեցիֆիկներ»։ «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությանը» խորթ էր հեղափոխական մարքսիզմը, պրոլետարական ինտերնացիոնալիզմը, ժողովուրդների բարկամությունը, բանվոր դասակարգի ազատագրության գործը։ Դա հեղափոխությանը հարած, բայց ըստ էության հեղափոխությունից շատ հեռու կանգնած գրականագետ ինտելիգենտների խմբակցություն էր։

«Սպեցիֆիկների» առաջին և հիմնական սկզբունքը բանվորներին ըստ ազգությունների բաժանումն էր, պրոլետարիատի հեղափոխական ուժերի չլատումը։ Նրանց կարծիքով ամեն մի ազգություն ներկայացնում է յուրահատուկ «սպեցիֆիկ» միջավայր՝ տարբեր դասակարգային շերտավորումով։ Այդ պատճառով էլ հարկավոր է, որ ամեն մի ազգի մեջ ազատ և ինքնավար կերպով գործի այդ ազգի բանվորական կազմակերպությունը։ Բունդի օրգան «Վնստնիկ բունդա» թերթին շտապից աշխարհին ծանուցել, քե ինքը դաշնակից ունի Կովկասում, Հանձին «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության»։

«Սպեցիֆիկները» սկզբից ևեթ հակադրվեցին ՌՍԴԲԿ-ին, բոլոր միջոցներով աշխատում էին կազմալուծել բանվորական շարժումները, հայ բանվորներին մեկուսացնել ռուս, վրացի, ադրբեջանցի և այլ ազգերի բանվորնե-

---

83 Սա. Շահումյան, Նամակներ, Երևան, 1959, էջ 25—26։

84 Ալ. Ռուբենին 1912 թ. հեռացավ «սպեցիֆիկներից» և մտավ բոլշևիկյան կուսակցության շարքերը։

րից, աշխատավորների շարքերում նացիոնալիզմ սերմանել։ «Սպեցիֆիկները» վրացական ֆեդերալիստների, հրեական Բունդի օրինակով, հետևելով իրենց ավտորիական ուսուցիչներին, համարվում էին ինքնավար, «իբրև միակ ներկայացուցիչը հայ պրոլետարիատի»։ Նրանք նույնիսկ հանդգնեցին ասելու, թե ոմանք կողմնակից են ՌՍԴԲԿ «...կազմակերպական սիստեմին, թիչ արգելք չեն հանդիսանում, խանգարելով մեզ»[85]։

1905 թ. հոկտեմբերին գումարված համագումարում «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունն» իր կանոնադրության մեջ հարձակումներ կատարեց ՌՍԴԲԿ-ի վրա[86]։

Վ. Ի. Լենինը գտնում էր, որ «Անջատ անջատ բանվորները ոչինչ են։ Միավորված բանվորները՝ ամեն ինչ»[87], յուրաքանչյուր գիտակից բանվոր իրեն պետք է համարի մարքսիստների միջազգային ընտանիքի անդամ և չկտրվի բանվորների միջազգային կազմակերպությունից, որ կյանքում հարկավոր է կիրառել ս. դ. բանվորների ինտերնացիոնալ միասնության սկզբունքը, «...մի սկզբունք, որն այնքան փայլուն կերպով ստուգված է Կովկասում սկսած 1898 թվականից»[88]։ Մինչդեռ «սպեցիֆիկները» պահանջում էին բանվորներին ըստ ազգությունների բաժանող և նրանց նացիոնալիզմ քարոզող «կուլտուր-ազգային ավտոնոմիա», հայ բանվորներին կոչ էին անում՝ պարփակվել ազգային կեղևի մեջ։

Այդ է պատճառը, որ երբ 1904 թ. ազգային սոցիալ-դեմոկրատների միավորման հարցը կուսակցության խորհրդում քննարկվեց և որոշվեց միջկուսակցական կոնֆերանս հրավիրել, Վ. Ի. Լենինն արտահայտվեց «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության» ներկայացուցիչների մասնակցության դեմ։ 1905 թ. սեպտեմբերի 7-ին, Վ. Ի. Լենինը ՌՍԴԲԿ կենտկոմի անդամներին ուղարկած ծրագրային նամակում գրել է. «Խիստ նախազգուշացնում եմ «Հայկական ս.-դ. ֆեդերացիայի» վերաբերյալ։ Եթե դուք համաձայնել եք, որ նա մասնակցի կոնֆերենցիային, ապա ճակատագրական սխալ եք կատարել, որպիսին հարկավոր է ուղղել ինչ էլ որ լինի։ Դրանք—մի զույգ ժնևյան կազմալուծիչներ են, որոնք այստեղ հրատարակում են ամենադատարկ բաներ, առանց որևէ լուրջ կապերի Կովկասի հետ։ Դա բունդական կրետտուրա է, ուրիշ ոչինչ, որը հատկապես հորինված է Կովկասյան բունդիզմը սնելու համար... Կովկասի ընկերները բոլորն էլ դեմ են գրականագետ-կազմալուծիչների այդ շայկային (այդ բանը ես գիտեմ շատերից), և մենք շուտով կշշպրենք նրանց «Пролетарий»-ում։ Դուք կատաջացնեք միայն Կովկասի բողոքները և «հաշտության» ու «միավորման» փոխարեն՝ նոր զվրտոց։ Ասացեք, խնդրեմ, ինչպե՞ս կարելի է անտեսել Կովկասյան Միությունը, Ռուսաստանում բազմաթիվ աշխատողներին և մտերմանալ Ժնևյան ճահճի տականքների հետ։ Ազերսում եմ. մի՛ արեք այդ բանը»[89]։

85 «Կյանք», № 16, 1904, էջ 248։

86 «Սոց. դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ծրագրի նախագիծը, կազմակերպական սիստեմը և կանոնադրությունը», 1905, էջ 1, 26, 27 և այլն։ «Սպեցիֆիկները» մինչ այդ իրենց կոչում էին «Հայ (հայկական) սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպություն», հետագայում՝ «Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցություն»։ Նման բառախաղից Բունդի դաշնակցի էությունը չէր փոխվում։

87 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 24, էջ 237։

88 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 25, էջ 433։

89 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 34, էջ 383—384։

Վ. Ի. Լենինը և նրա մերձավոր գինակիցները Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը, Ս. Սպանդարյանը, Ս. Կասյանը, Ա. Մալիքյանը և ուրիշներ, մինչև վերջ մերկացրին «սոցիֆիկներին», ցույց տալով նրանց վնասակար, քայքայիչ գործունեությունը։

1904 թ. հունվարին սկսված ռուս-ճապոնական պատերազմն էլ ավելի սրեց հասարակական կյանքի հակասությունները և արագացրեց հեղափոխական իրադարձությունները։ Քաղաքական տարբեր կուսակցություններն ու դասակարգերը, հատկապես բոլշևիկները և մենշևիկները, սկզբից ևեթ տարբեր մոտեցում դրսևորեցին պատերազմի նկատմամբ։ Բոլշևիկները, Վ. Ի. Լենինի գլխավորությամբ, մարքսիստական ճիշտ դիրքերից, պատերազմը որակեցին որպես անարդարացի, քաղաքական, առաջադրեցին ցարական կառավարության պարտության լոզունգը։ «Ռուսական ազատության և սոցիալիզմի համար ռուսական (ու համաշխարհային) պրոլետարիատի մղած պայքարի գործը,— գրել է Վ. Ի. Լենինը,— շատ ուժեղ չափով կախված է ինքնակալության ռազմական պարտությունից։ ...Հեղափոխական պրոլետարիատը պետք է անխոնջ կերպով ագիտացիա մղի պատերազմի դեմ, ընդգծելով միշտ՝ հիշելով, որ պատերազմները չեն վերանա, քանի դեռ մնում է դասակարգային տիրապետությունն ընդհանրապես»[90]։



Սուրեն Սպանդարյան

Պատերազմի և հեղափոխության հարցերում այլ դիրք գրավեցին մենշևիկները։ Նրանք պաշտպանում էին լիբերալ բուրժուազիայի շովինիստական լոզունգը՝ «հաշտություն ինչ գնով լինի», այն չկապելով ինքնակալության դեմ մղվող հեղափոխական պայքարի հետ։

Անդրկովկասի բոլշևիկները հետևողականորեն վարում էին Լենինյան տակտիկական գիծ։ ՌՍԴԲԿ Կովկասյան միության ղեկավարությամբ Ալեքսանդրապոլի, Երևանի, Լոռու և այլ կազմակերպությունները ծավալում են հակապատերազմական պրոպագանդա, տարածում բոլշևիկյան կոչերն ու քրուցիկները։ Նրանք մերկացնում էին մենշևիկների պացիֆիստական լոզունգները, աշխատավորներին պարզաբանում՝ հրաժարվել ռազմական հարկեր վճարելուց, բոյկոտել զինակոչը, պատրաստվել հեղափոխական նոր պայքարի։

Երկրամասի բանվորական հեղափոխական շարժումների հերոսական էջերից է Բաքվի պրոլետարիատի 1904 թ. դեկտեմբերյան գործադուլը, որն էլ

---

90 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 9, էջ 158։

ավելի ամրապնդեց բանվորների հավատն իրենց ուժերի և հաղթանակի նկատմամբ։ Ռուսաստանի բանվորական շարժման պատմության մեջ առաջին անգամ այդ հուժկու գործադուլի շնորհիվ կնքվեց կոլեկտիվ պայմանագիր՝ նավթարդյունաբերողների և բանվորների միջև։ Բաքվի պրոլետարիատի դեկտեմբերյան գործադուլը, որ ավելի ամրապնդեց Անդրկովկասի բազմազգ աշխատավորների ինտերնացիոնալ միասնությունը և համախմբվածությունը, լայն արձագանք գտավ ողջ Ռուսաստանում, դարձավ հետագա հեղափոխական շարժումների բարի ավետաբեր։

1900—1904 թթ. հայ ժողովրդի կյանքում պատմական իրադարձություններով հարուստ ժամանակաշրջան էր։ Ծավալվում են բանվորական, ագրարային և ազգային-ազատագրական շարժումները, սկիզբ է դրվում մարքսիզմի տարածմանը, ձևավորվում են լենինյան-իսկրայական, բոլշևիկյան կազմակերպությունները, որոնք ամուր կերպով կանգնեցին լենինիզմի դրոշի տակ։

Ռուսական առաջին հեղափոխության նախօրեին, բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ, հայ աշխատավորության ազատագրական պայքարը միահյուսվում է համառուսական պրոլետարիատի հեղափոխական, դասակարգային պայքարին, որի ուղիները լուսավորվում էին մարքսիզմ-լենինիզմի հզոր լույսով։

ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1905—1907 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1905 Թ. ԳԱՐՆԱՆ–ԱՄՌԱՆ ԱՄԻՍՆԵՐԻՆ

1904 թ. սկսված ռուս-ճապոնական պատերազմն ավելի սրեց դարասկզբին բռնկված տնտեսական-քաղաքական ճգնաժամը՝ երկիրը կանգնեցնելով հեղափոխության շեմին։ Հասունացող հեղափոխությունը լինելով իր բնույթով բուրժուա-դեմոկրատական, հետամուտ էր վերացնելու կիսաճորտատիրական հարաբերությունների մնացորդները, տապալելու միապետությունը և երկրում հաստատելու դեմոկրատական հանրապետություն։ Այդ նպատակի իրագործումը Ռուսաստանի բոլոր ժողովուրդների պայքարի գլխավոր խնդիրն էր։ Սակայն տեղական ժողովուրդները սոցիալական կեղեքմանը զուգընթաց ենթարկվում էին նաև ազգային ճնշման։ Հայ ժողովուրդը ևս, որպես Ռուսական կայսրության ծայրամասերում ապրող ժողովուրդներից մեկը, 1905 թ. ոտքի ելնելով ցարական բռնապետության դեմ, սոցիալական և ազգային-ազատագրական պայքար ծավալեց։ Այդ պայքարը ժողովրդական զանգվածները մղում էին իրավահավասարության, դեմոկրատական ազատությունների, ազգային ինքնորոշման և այլ իրավունքների ճանաչման համար։ Ազգային այդ շարժումը, որ դեմոկրատական պայքարի ճակատ էր հարթարել ցարիզմի դեմ, տակավին դարի արշալույսին, հեղափոխության ընթացքում լծորդվելով տիրող հասարակական կարգերը սոցիալական հեղաշրջման ենթարկելու պահանջին, միաձուլվեց բուրժուա-դեմոկրատական հեղափոխության ընդհանուր խնդիրներին։

Հեղափոխությունն սկսվեց 1905 թ. հունվարի 9-ին՝ Պետերբուրգում խաղաղ ցույցի դուրս եկած բանվորների գնդակոծությամբ, ցարի այդ արյունահեղ դատաստանն ալեկոծեց ողջ երկիրը։ Պետերբուրգում սկսված ընդհանուր գործադուլին արձագանքեցին Մոսկվայում, երկրի արդյունաբերական շրջաններում, ինչպես նաև Լեհաստանում, Մերձբալթյան երկրներում, Անդրկովկասում։

Հունվարի 18-ին գործադուլ հայտարարեցին Թիֆլիսի երկաթուղային արհեստանոցների, ծխախոտի ֆաբրիկանների և տպարանների բանվորները։ Հունվար-փետրվար ամիսներին գործադուլներ ու ցույցեր տեղի ունեցան նաև Բաքվում։ Փետրվարի վերջին, մարտի սկզբներին գործադուլային շարժումների

մեջ ընդգրկվեց նաև Հայաստանը։ Մարտի 5-ին Ալավերդու արհեստանոցների մի խումբ բանվորներ աշխատանքի չներկայացան՝ պահանջելով բարելավել իրենց տնտեսական և կենցաղային պայմանները։ Սակայն բանվորների պահանջը հաշվի չառնվեց։

Մի քանի օր անց, բանվորների մի ստվար խումբ՝ հիմնականում հանքագործներ, գործադուլ հայտարարեցին։ Գործադուլը, որին հենց առաջին օրը մասնակցում էր մոտ 1000 մարդ, ընդհատումներով տևեց 12 օր։ Հանկարծակիի գալով հանքագործների միահամուռ ելույթներից, «Կովկասյան արդյունաբերական և մետաղագործական ընկերությանը» Ալավերդու հանքերի և գործարանների դիրեկտոր Պոլմարը նախ փորձեց խաբեությամբ չլսելու շարժումը, ապա ահաբեկման, սպառնալիքների ու բռնությունների միջոցով ձախողել այն[1]։ Պոլմարի հրավերով Ալավերդի ժամանեցին կազակային մեկ հարյուրակ, գավառական իշխանության ներկայացուցիչները և Թիֆլիսի պարսկական հյուպատոսի քարտուղարը։ Վերջինս եկել էր մշտական և սեզոնային աշխատանք կատարող պարսկահպատակ բանվորներին (որոնք մասնակցում էին գործադուլին) հորդորելու ետ կանգնել «իրենց երկրին չվերաբերող և ալլահին անհաճո գործերից»։ Սակայն ոչ նրա ջանքերը, ոչ էլ գավառապետի սպառնալիքներն ու կազակների ներկայությունը հանքագործներին չհամոզեցին և չվախեցրին։ Ընդհակառակը, դիմագրավելով նրանց՝ բանվորները մարտի 20-ի գործադուլն ավարտեցին իրենց օգտին[2]։

Ապրիլի սկզբներին Անդրկովկասում սկսվեց երկաթուղային բանվորների ընդհանուր գործադուլը, որին ակտիվ մասնակցություն ցույց տվեցին Ալեքսանդրապոլի երկաթուղայինները։ Ապրիլ ամսին գործադուլներ տեղի ունեցան նաև Երևանում, ուր կանգնեցին Սարաչլի կոնյակի, Շուստովի գինուկոնյակի գործարանների բանվորները և քաղաքի հյուրանոցների, ակումբների ու ճաշարանների ծառայողները։ Նրանց պահանջները հիմնականում աշխատավարձի ավելացման, բանվորական կայուն օր սահմանելու և բանվորներին աշխատանքի ընդունելու պայմանների մասին էին։ Գործադուլը, որ տեվեց երկու շաբաթ, վերջացավ առաջադրված պահանջների մասնակի բավարարմամբ[3]։

Մայիս ամսին և ամառվա ընթացքում ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում, հեղափոխական շարժումները գնալով խորանում էին։ Բաքվում մայիսի մեկը նշանավորվեց քաղաքական հզոր ցույցով։ Մայիսի հենց սկզբին Անդրկովկասում գործադուլ բռնկվեց, որը տարածվեց երկրամասի հիմնական հանգույցներում և ուղեմասերում։ Վրաստանում մայիս-հունիս ամիսներին տեղի ունեցան բազմաթիվ ցույցեր, ընդհարումներ ոստիկանության և զորքի հետ։

Հայաստանի աշխատավորությունը ևս այդ ամիսներին մի շարք ելույթներով արձագանքեց Ռուսաստանի, Ադրբեջանի և Վրաստանի պրոլետարիատի և գյուղացիության հեղափոխական պայքարին։ Ալավերդում բանվորները դուրս եկան մայիսմեկյան ցույցի, որը կազմակերպել էին բոլշևիկները՝ Ստ. Շա-

---

1 Տե՛ս «Революционное движение в Армении, 1905—1907. (Сборник материалов и документов)», Ереван, 1955, стр. 111—115; այսուհետև՝ «Революционное движение...» (Сборник).

2 Տե՛ս ՎՍՍՀ ԿՊԱ, ֆ. 34, գ. 1046, թ. 83—88։

3 Տե՛ս Մ.Ի-ի հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 53, գ. 167։

հումյանի գլխավորությամբ։ Նա ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեի հանձնարարությամբ շրջագայում էր Լոռիում, տեղերում կազմակերպում ու ամրապնդում էր բոլշևիկյան բջիջները և նշում հեղափոխական պայքարի այն խնդիրները, որ կուսակցությունը դնում էր բանվորների և գյուղացիների առջև[4]։

Բանվորական գործադուլներն իրենց ազդեցությունն ունեցան գյուղի վրա։ Դարձանը ծայր առան գյուղացիական շարժումները, որոնք ուժեղ էին հատկապես կայսրության կենտրոնական շրջաններում, ինչպես նաև Անդրկովկասում։ Սոցիալ-դեմոկրատական կոմիտեները գյուղացիներին ուղղեցին բազմաթիվ կոչեր։ Մի շարք գավառներում նրանց օգնությամբ ստեղծվեցին նաև գյուղացիական կոմիտեներ։ Ցարական կառավարությունը չհապաղեց պատժիչ զորամասեր ուղարկել գավառները։ Զորքն ու կաղակները գնդակահարում, ձերբակալում, ծեծում ու խոշտանգում էին պայքարի ելած գյուղացիներին։

ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեն, որ ղեկավարում էր գյուղացիական ելույթները, միջոցներ ձեռնարկեց հեղափոխական շարժումներն ամբողջ Անդրկովկասում տարածելու համար։ Մարտի 19-ին հրապարակվեց Կովկասյան միութենական կոմիտեի՝ «Հայ գյուղացիներին» կոչը, որը խնդիր էր դնում Հայաստանի աշխատավոր գյուղացիության առջև միանալ ռուս և վրացի բանվորների ու գյուղացիների պայքարին։ Կոչն առաջադրում էր նաև գյուղացիության շահերը պաշտպանող 12 պահանջ, այդ թվում հողակտորների վերադարձ, ձրի ուսուցում, 300 ռուբլուց պակաս եկամուտ ունեցող տնտեսությունների հարկերի վերացում և այլն։ Սակայն այդ բոլորին հասնելու համար, ասված էր կոչում, հարկավոր է ոտքի ելնել և ջախջախել ցարին ու նրա կառավարությանը[5]։

Գարնանը Հայաստանի մի շարք վայրերում և հատկապես Լոռիում, տեղի ունեցան գյուղացիական ելույթներ։ Մարտի 4-ին Կարակալայի արքունական կալվածքների կառավարիչը գրություն ուղարկեց Կովկասյան արքունական կալվածքների վարչությանը Ալեքսանդրապոլի գավառի Շորագյալ գյուղի բնակիչների՝ կալվածքի վրա հարձակվելու և այն բռնագրավելու մտադրության մասին[6]։ Ապրիլին զինված ընդհարում էր տեղի ունեցել Ղաշաղան գյուղի բնակիչների և Լոռիի կալվածատեր-վաշխառու Վասիլ Մոսինյանի պահնորդների միջև։ «Ողոմսի» կոչված հանդամասի համար։ Ապրիլ-հունիս ամիսներին գյուղացիական ելույթներ տեղի ունեցան նաև Հայաստանի այլ վայրերում։ Դրանք արտահայտվում էին պետական ու կալվածատիրական հարկերը չվճարելու, հողը բռնագրավելու, անտառները մասսայաբար կտրատելու և բազմաթիվ այլ ձևերով։

Սակայն, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում, գյուղացիական շարժումները դեռ նոր էին թավալվում։ Հայաստանում գյուղացիական շարժումները նոր թափով բռնկվեցին 1905 թ. ամռան-աշնան ամիսներին։ ՌՍԴԲԿ Կովկասյան միությունը կազմակերպչական աշխատանքներին զուգընթաց, Հայաստանում տարածում էր անլեգալ գրականություն՝ թերթեր, կո-

---

[4] Տե՛ս նույն տեղում, ֆ. 40, գ. 5։

[5] Տե՛ս «Листовки Кавказского Союза РСДРП 1903—1905», М., 1955, стр. 293—294. Հեր, պրոկլամացիաներ։ Հենց այդ ժամանակ էլ հրապարակվեց Թիֆլիսի կո-

[6] Տե՛ս «Революционное движение...» (Сборник), стр. 253—255

միտեի նշանավոր կոչը՝ «Բորչալուի գյուղացիներին»։ Այդ կոչում գյուղացիներին բացատրվում էր, որ նրանց բոլոր թշվառությունների պատճառը ցարիզմն է, որը իրեն փրկելու, ժողովրդի ուժերը չլատելու համար հրահրում էր ազգային ընդհարում և հրեական ջարդեր։ Կոչում նշվում էր, որ կառավարությանն օգնում են դաշնակցականները, որոք իրենց «կոմիտեներին» միջոցով ստիպում են վճարել պետական և կալվածատիրական հարկերը, իսկ քաղաքներում ճնշում են բանվորական գործադուլներըւ Դիմադրության, զինված պայքարի մղելով գյուղացիներին, Թիֆլիսի կոմիտեն առաջարկում էր երես դարձնել նաև «ազգի շահերի» կեղծ պաշտպաններից, միանալ բանվորներին և համախմբվելով սոցիալ-դեմոկրատիայի շուրջը, տապալել բոլոր շահագործողների լուծը[7]։

Մի շարք վայրերում գյուղացիական հուզումները վերածվեցին զինված ելույթների։ Լոռու գյուղերից Հաղպատը, որ տակավին երկու տարի առաջ էր ոտքի կանգնել, նորից պայքարի էր ելել։ 1905 թ. հուլիսի 16-ին Հաղպատի գյուղացիները զինված հարձակում կազմակերպեցին կալվածատեր Բարաթովի վրա։ Նա սարսափահար հեռագրեց Թիֆլիսի նահանգապետին, որն անմիջապես կարգադրեց Բորչալուի գավառապետին՝ երկու պահնորդ նշանակել Բարաթովին անվտանգությունն ապահովելու համար։ Մի շարաթ անց ելույթ ունեցան դուտնուկցիները, որոնց նույնպես Բարաթովը կապալով էր տալիս իր հողերը։ Կալվածատերը կրկին դիմեց նահանգապետին և ցարական իշխանությունները շտապեցին օգնության հասնել։

Հուզումներով էին բռնված Հայաստանի նաև ադրբեջանական գյուղերը։ 1905 թ. նոյեմբերին ադրբեջանցի կալվածատերերը ցարական իշխանություններին ուղղված դիմումներում նրանց ուշադրությունն էին հրավիրում իրենց «դժբախտ վիճակի» վրա և նշում, որ հայ կալվածատերերի հետ միասին հավասարապես տուժել են նաև իրենք։

1905 թ. նոյեմբերին Կովկասի ոստիկանության պետի՝ փոխարքային ուղղած զեկուցագրում նշվում էր, որ ագրարային շարժումը ծայր էր առել նաև Կարսի մարզում. դրա պատճառները շատ էին և բազմազան, բայց հիմնականը՝ գյուղացիների սակավահողությունն ու տարեցտարի ավելացող հարկերն էին։ Չնայած մարզում ընչազուրկ և սակավահող գյուղացիական տնտեսությունների մեծ քանակությանը, հողագործության և պետական գույքի վարչությունն իր տրամադրության տակ եղած հողերն ու արոտավայրերը վարձակալության էր տալիս ոչ թե տեղացիներին, այլ ուրիշ վայրերից եկող հարուստ անասնատերերին և կապալառուներին, որոնք իրենց հերթին հողերի մի մասը բարձր վարձագնով հանձնում էին տեղացիներին։ Ինչ վերաբերում էր պետական հարկերին, ապա դրանք, նշված էր զեկուցագրում, 1901 թ. համեմատությամբ ավելանալով երեք անգամ, «անելանելի դրության մեջ» էին դրել գյուղացիներին, քայքայման հասցնելով նրանց[8]։

Դժգոհությունն արտահայտվում էր նաև Հայաստանում բնակվող ռուս վերաբնակիչների մոտ։

Ընդհանուր հեղափոխական իրավիճակը շարժման մեջ դրեց կովկասյան տիրապետող դասակարգերին։ 1905 թ. գարնանից տեղական մամուլը սկսեց

---

7 Տե՛ս նույն տեղում, էջ 236—238։

8 Տե՛ս նույն տեղում, էջ 363—364։

աշխուժորեն քննարկել «Ռուսաստանի ներքին կյանքը նոր հիմքերի վրա վերականգնելու» հարցը։ Օգտագործելով ստեղծված իրադրությունը, իր իրավունքների ազդարարությամբ Կովկասում առաջինը հանդես եկավ վրաց ազնվականությունը։ 1905 թ. փետրվարի 19-ին Քութայիսի նահանգի ազնվականության պարագլուխ իշխան Ներսեսներին ներքին գործերի մինիստրին ներկայացրեց մի հուշագիր, որի բուն ոգին վրաց ազնվականության արտոնությունները ռուսական ավատական դասակարգի իրավունքներին հավասարեցնելու պահանջն էր[9]։ Հուշագիրը միաժամանակ պարունակում էր մի շարք «հատուկ ազգային պահանջներ», որոնց առաջնագրումը, հարկավ, չէր շոշափում իրենց դասակարգային տիրապետության հարցը։ Այսպիսի պահանջներից էին զեմստվոներ մտցնելու, մամուլի ազատության, տարրական դպրոցները վրացալեզու դարձնելու, քաղաքային ինքնավարության բարեկարգման և այլ հարցեր։

Հայ իրականության մեջ տիրապետող դասակարգը բուրժուազիան էր, որը լծորդված իր ավագ գործընկեր ռուսական բուրժուազիային և ընդօրինակելով նրան, պահանջում էր միայն տնտեսական գործունեության ավելի լայն հնարավորություններ և համապատասխանորեն՝ դեմոկրատական ազատություններ։ Ապազգայնացած իր հիմնական՝ տնտեսական-շուկայական շահերով և ըստ էության քաղաքականապես անտարբեր ողջակիզվող արևմտահայության ճակատագրի նկատմամբ, հայ խոշոր բուրժուազիան «ազգային» էր միայն իր ծագումով։ Մի փոքր այլ էր հայ բուրժուական մտավորականության վերաբերմունքը։ Հանդիսանալով իր հարազատ դասակարգի հոգեզավակը, արտահայտելով նրա շահերը և նրանք չհակադրվելով իրեն ծնող միջավայրին, այդ մտավորականությունը, այնուամենայնիվ, հարաբերական որոշ անկախություն ուներ և ազդվելով ժամանակի հասարակական-քաղաքական շարժումներից, նեթե ոչ գործով, գոնե խոսքով, «ազատամիտ» և «ազգային» գաղափարներ էր առաջադրում։

Այսպես, 1905 թ. մարտին Երևանի քաղաքային դումայի կողմից ընդհանուր տարածում գտած լիբերալ-բուրժուական տրամադրություններից բխող մի խնդրագիր կազմվեց՝ ուղղված մինիստրների խորհրդին և կովկասյան փոխարքային։

Ապրիլի սկզբներին Երևանի ադրբեջանական վերնախավերը ևս հանրագիր ներկայացրեցին կովկասյան իշխանություններին։ Շատ քիչ բան ասելով դեմոկրատական ընդհանուր բարեփոխություններ մտցնելու անհրաժեշտության մասին, հանրագրի հեղինակները ծանրանում էին ունևոր դասակարգերի արտոնությունների ընդարձակման և նոր իրավունքներ ձեռք բերելու հարցի վրա։ Նրանց հիմնական պահանջը, որ ուղղակի ազնվական հողատերերի շահերն էին արտահայտում, նախկին բնիկական հանձնաժողովի աշխատանքների վերաքննությունն էր՝ «մահմեդական բարձր դասի իրավունքները հաստատելու համար»[10]։

Համակովկասյան հայ բուրժուազիայի պահանջները ձևակերպվեցին 1905 թ. ապրիլի 3—15-ը Թիֆլիսում կայացած հայաբնակ բանչորս կենտրոնների

---

9 Տե՛ս «Революция 1905—1907 гг. в национальных районах России (Сборник статей)»; Г. В. Хачапуридзе, Революция 1905—1907 гг. в Грузии, М., 1955, стр. 492.

10 «Մշակ», 1905, № 64։

ներկայացուցիչների ժողովում, որը ժամանակին նույնիսկ համարվել է աշխարհական գործերի քննարկմանը նվիրված հայկական առաջին համագումար։

Այս համաժողովին մասնակցեցին կովկասահայ բուրժուական մտավորականության համարյա բոլոր խմբերի ներկայացուցիչները՝ Երևանի նահանգից՝ Ս. Տիգրանյանը, Հ. Սաղաթելյանը, Ալեքսանդրապոլից՝ Հ. Տեր-Միրաքյանը, Նախիջևանի գավառից՝ Լ. Սարգսյանը, Շուշուց՝ Ա. Մելիք-Ադամյանը, Թիֆլիսից՝ Ա. Բեյքոբյանը, Պ. Ղամբարյանը, Տ. Հովհաննիսյանը, Ա. Քալանթարը, Հ. Սպենդիարյանը, Կ. Ստեփանյանը, Ա. Խատիսյանը, Բաքվից՝ Մ. Հարությունյանը, Կ. Խատիսյանը և ուրիշներ[11]։

Ինչպես Երևանի հանրագրի, այնպես էլ Թիֆլիսի համաժողովի պահանջները հիմնականում շոշափում էին հետևյալ խումբ հարցերը.

Առաջին. ընդհանուր քաղաքական պահանջներ՝ սահմանադիր ժողովի գումարում, մամուլի, խոսքի, ժողովների, խղճի, դավանանքի ազատություն, զինվորական դրության ու զինվորական դատարանների և դասային առանձնաշնորհումների վերացում, Կովկասում զեմստվոյին հիմնարկությունների հաստատում, կանանց և տղամարդկանց իրավունքների հավասարեցում և այլն։

Երկրորդ՝ բանվորների և գյուղացիների դրության բարելավման պահանջներ՝ ութժամյա աշխատանքային օր, գործադուլների իրավունք, պետական ապահովագրություն, օրավարձի մինիմումի սահմանում, հողի ազգայնացում, արքունական տուրքի վերացում, մուլքադարական և ժամանակավոր-պարտավորյալ գյուղացիների հողաբաժինների նեղոում՝ զանձարանի աջակցությամբ, հողազուրկ ու սակավահող գյուղացիների բնակության հաստատումը արքունական հողերի վրա և այլն։

Երրորդ՝ հայկական բարեգործական ընկերությունների, եկեղեցականծխական դպրոցների, մշակութային-կրթական հիմնարկությունների վերաբացման պահանջ և հատկապես հայոց եկեղեցու ինքնավարության, և այն արտոնությունների վերահաստատումը, որ ունեցել էր նա Հայաստանը Ռուսաստանին միանալուց ի վեր։

Մի պահ այս պահանջները շատ արմատական, նույնիսկ հեղափոխական կարող են թվալ։ Իրականում դրանք արտահայտում էին հայ ունևոր դասակարգերի տնտեսական շահերը և նրանց մտավորականության լիբերալ բաղձանքները։

Չնչին տարբերությամբ վերոհիշյալ բոլոր հանրագրերն էլ հիմնական գծերով կրկնում էին միմյանց և ունեին միևնույն դեկլարատիվ բնույթը։ Առաջադրվող ընդհանուր դեմոկրատական պահանջները, այդ թվում ազգային-կրոնական խնդիրների հարցումը, տուրք էին միայն ժամանակի հեղափոխիչ ոգուն, բանզի դրանց իրականացման համար ոչ մի ռեալ միջոց չէր նախատեսվում։ Այդ բոլոր պահանջների իրագործումը ենթադրվում էր միապետության պահպանության պայմաններում։ Իսկ նրա բուրժուական որոշ շրջաններ էլ խոսում էին միապետության տապալման անհրաժեշտության մասին, ապա հաստատվելիք իշխանությունը պատկերացնում էին միայն և միայն որպես կապիտալի տիրապետություն՝ բուրժուական հասարակական հարաբերությունների հաղթանակ։

11 *Տե՛ս «Մշակ», 1905, № 109։*

2. ՓՈԽԱՐՔԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ ԿՈՎԿԱՍՈՒՄ: ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՀԵՏԱԴԱ ՎԵՐԵԼՔԸ: 1903 Թ. ՀՈՒՆԻՍԻ 12-Ի ՕՐԵՆՔԻ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Հեղափոխության առաջին ամիսներն իրենց հետ բերեցին նաև ցարական կառավարության «ծայրերկրային» քաղաքականության փոփոխություն։ Անսքող և կոպիտ բռնությունների, կովկասյան ազգերին իրար դեմ լարելու բռնի և բյուրոկրատական միջոցները, որ իրականացնում էր կառավարչապետ Գոլիցինը, այլևս նպատակահարմար չէին դիտվում Պետերբուրգի բարձր շրջաններում, և նա 1904 թ. ետ կանչվեց իր պաշտոնից։

1905 թ. փետրվարի 28-ին ցարը ստորագրեց բարձրագույն անվանական հրովարտակ՝ Կովկասում փոխարքայությունը վերականգնելու մասին։ Փոխարքային հատկացվեց իրեն հանձնված երկրի քաղաքացիական վարչության բոլոր մասերի բարձրագույն իշխանությունը։ Միաժամանակ փոխարքան նշանակվեց պետական խորհրդի, մինիստրների խորհրդի ու պետական կոմիտեի անդամ, Կովկասում գտնվող զորքերի գլխավոր հրամանատար և կազակների ատաման։ Իսկ կոմս Ի. Ի. Վորոնցով-Դաշկովի անունով տրված անձնական շնորհագրով ցարը փոխարքայի լայն իրավունքներն ու պաշտոնը արտոնելով նրան, հանձնարարում էր «իր բանկագին նախնիների» և «իր նպատակը» իրագործել, «...երկրում խաղաղություն, բարօրություն և կարգ զարգացնել»[12], Եվ իսկապես, ցարիզմն իր շահերը պաշտպանելու համար այս անգամ գտել էր վերին աստիճանի հարմար անձնավորություն։ Հմուտ, փորձված բյուրոկրատ էր Վորոնցով-Դաշկովը, որ կոչված էր հրով ու սրով «խաղաղեցնելու երկիրը»։ Փոխարքան անծանոթ չէր կովկասցիներին և Կովկասին, նա դեռևս Ղրիմի պատերազմի ժամանակ իբրև սպա մասնակցել էր Դաղստանում և Միջերկրածովում ծավալված ռազմական գործողություններին։ Սերված ռուսական հինավուրց ազնվականների այն տոհմից, որին պատկանում էր Կովկասի նախկին փոխարքա, իշխան Մ. Ս. Վորոնցովը, Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը մի շարք բարձր ռազմա-քաղաքացիական պաշտոններ էր վարել ռուսաց արքունիքում և մինչև փոխարքա նշանակվելն արդեն նահանգուն, նույնիսկ լիբերալ գործչի համբավ էր վաստակել։

1905 թ. մարտի 30-ին Վորոնցով-Դաշկովը մայրաքաղաքից գնացավ Թիֆլիսի անունով, որը ժամանակավորապես փոխարքունում էր կառավարչապետին, հատուկ հեռագիր ուղարկեց Կովկասի ազգաբնակչության՝ աջակցության հրավիրելով բոլոր խավերին իր ծրագրերի իրագործման համար։

Այդ ընդարձակ հեռագրում, որը փաստորեն մի կոչ էր, փոխարքան հայտարարում էր, որ ստեղծված խառնակ օրերում ինքն անհարմար է զգացել հրաժարվելու այդ ծանր պաշտոնից, ինչպես հին զինվորը՝ պատերազմ գնալուց, հույս ունենալով, որ կովկասցիների «բարեմիտ» մեծամասնությունը կդապի ազգաբնակչության «անհանգիստ մասի» դիմադրությունը։ Ազգաբնակչության անհանգիստ մասի տակ ակնարկելով պրոլետարիատին և աշխատավոր գյուղացիությունը, բացառելով նրանց մասնակցությունն իր ծրագրերի կատարման մեջ, փոխարքան պարզորոշ հայտարարում էր, որ հենվելու է ազնվականության, քաղաքային ու գյուղական բուրժուազիայի ու հոգևորականության վրա։ Հատարակական վերնախավի դասակարգերի ու դասերի շա-

12 «Մշակ», 1905, № 36, 43։

հերն էին ի նկատի առնվում, երբ սույն կոչում ակնարկվում էր գնմստվային հիմնարկություններ ներմուծելու, դատարանների վերակազմության, պետական հողերը գյուղական համայնքներին տրամադրելու և հայկական եկեղեցական կալվածքները պետական վարչության տակ առնելու գործը վերանայելու մասին[13]։

Այս հեռագիրը բավական եղավ, որպեսզի տեղական բուրժուական մամուլն անմիջապես «արդարացատ», «բարեմիտ», «խաղաղարար» հռչակեր փոխարքային։ Մինչ Ռուսաստանի պրոլետարիատի առաջին հարվածների տակ ցարիզմն ստիպված նահանջում ու խուսանավում էր՝ լիբերալ ժպիտներ շնորհելով բուրժուազիային, հայ բուրժուական մտավորականությունն, աչք փակելով այդ վերաբերմունքի բուն պատճառի վրա, «գահի բարձրությունից ելնող շնորհների» առանձին մարդկանց «լուսամիտ» գործունեությանն էր վերագրում։ Այսպես, դեռևս պաշտոնավարը չժամանած, Անդրկովկասում լուր էր տարածվել, թե փոխարքան ուսուցչական գործը վերակառուցելով և կենտրոնացնելով իր վարչության տակ, Թիֆլիսում տեխնիկական կրթության բարձրագույն դպրոց է բացելու։ Այդ ցանկությունը, որ ողջ կովկասյան բուրժուազիայի երազանքն էր, փոխարքան այնպես էլ չկատարեց իր կառավարման ամբողջ տասնամյակում։ Վորոնցով-Դաշկովի բերանից քացրած լուրեր էին շրջում կովկասյան բուրժուական մամուլում, թե նրա գլխավոր խնդիրը պետք է լինի նաև հողային հարցի 'կարգավորումը՝ վերացնելու համար «գրարային թյուրիմացությունները»[14]։

Վերջապես, 1905 թ. մայիսին փոխարքան Կովկասում էր։ Գործադրելով իր լիազորությունները, Վորոնցով-Դաշկովն ամբողջ ուշադրությունը նախ և առաջ սևեռեց երկրամասում ծավալվող հեղափոխական շարժումները ճնշելու գործին։ Իր այդ գլխավոր նպատակի իրականացման համար փոխարքան հենվում էր հիմնականում ռազմական ուժի, վարչական-ոստիկանական ապարատի վրա և գործողությունների ազատություն տալով զինվորական գծով իր տեղակալ գեներալ Մալամային, կովկասյան բանակի գլխավոր շտաբի պետ Գրյազնովին, ոստիկանության պետ Շիրինկինին, գեներալ-նահանգապետեր՝ Յացկևիչին, Ալիխանով-Ավարսկուն, Ալիխանին և մյուսներին, օժանդակություն էր կոչում նաև տեղական տիրող դասակարգերին, որոնք, իհարկե, չզլացնալով օգնությունը՝ պահանջում էին ունկնդրության արժանացնել նաև իրենց հարցերը։

Չնայած իր տկարությանը և գաղամյալ տարիքին, էջմիածնից փոխարքային տեսության շտապեց ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը։ Հայկական բուրժուազիան և բուրժուականացող ստվար քաղքենիական խավերն աշխատեցին շեշտված շուքով կազմակերպել կաթողիկոսի դիմավորումը, օրորվելով այն ցուցադրական անապարծությամբ, որ իրենք ռուսաց թագավորից և նրա փոխարքայից ոչ պակաս խոնարհվում են նաև հայոց հոգևոր պետի առջև, որպես քաղաքական ինքնուրույնությունը կորցրած հայերի համազգային շահերը մարմնավորողի։ Հարկավ, նրանց այս հավակնության համար ո՛չ նյութական-տնտեսական, և ո՛չ էլ մանավանդ, քաղաքական բավարար հիմքեր կային, այլ միայն բարոյական-հոգեբանական և օժտելով կաթո-

13 Տե՛ս «Մշակ», 1905 № 61։
14 «Մշակ», 1905, № 63։

ցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական հեղափոխության մեջ» գիրքը։ Ամփոփելով համագումարի և կոնֆերանսի արդյունքները, Վ. Ի. Լենինը տվեց մենշևիկների տակտիկայի ծավալուն քննադատությունը և բոլշևիկների տակտիկայի փայլուն պաշտպանությունը։ Զախջախելով մենշևիկներին, որոնք հեղափոխության հեգեմոնը համարում էին լիբերալ բուրժուազիային և բոլորովին անտեսում գյուղացիությանը, Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ պրոլետարիատը պետք է լինի հեղափոխության առաջնորդ, իսկ գյուղացիությունը՝ նրա դաշնակիցը։ Վ. Ի. Լենինի այս աշխատության պատմական մեծագույն նշանակությունն այն է, որ մարքսիզմի գանձարանը հարստացնելով նոր տեսությամբ ու տակտիկայով, պրոլետարիատին զինեց հեղափոխական ուսմունքով, կապիտալիզմի դեմ վճռական հաղթանակ տանելու համար։

Ամբողջ երկրում բարձրացող հեղափոխական ալիքը կառավարությանն ստիպում էր բռնություններին զուգահեռ դիմելու նաև որոշ զիջումների։ Այդպիսի քաղաքականության արդյունք էր խորհրդակցական դումա հրավիրելու նախագիծը, որը կազմել էր ներքին գործերի մինիստր Բուլիգինը։ Ըմբռնելով այդ տրամադրությունը, Վորոնցով-Դաշկովը կայսեր առջև հարց հարուցեց փութացնելու 1903 թ. բռնագրավված հայկական եկեղեցական գույքը վերադարձնելու և դպրոցները վերաբացելու հրովարտակի արձակումը, հուսալով դրանով վերջնականապես շահել հայկական բուրժուազիայի համակրանքը։ 1905 թ. օգոստոսի 1-ին Նիկոլայ II-ը, տեղի տալով փոխարքայի խորհուրդներին, մեծագույն դժգոհությամբ ստորագրեց այդ հրովարտակը, որով հայ եկեղեցուն էին վերադարձվում նրա գույքն ու կապիտալները և պետական տնօրինման ժամանակաշրջանում նրանից ստացված եկամուտները, ինչպես նաև կրթական գործով զբաղվելու իրավունքը[16]։

Հաջորդ օրը՝ օգոստոսի 2-ին, կաթողիկոսին պալատ հրավիրելով, Վորոնցով-Դաշկովը կնճռավոր հանդիսավորությամբ հայտնեց, որ թագավորը հարգելով իր միշնորդությունը, որոշեց վերացնել այն սուգը, որի մեջ իբր թե ընկղմված էր հայ ժողովուրդը և Հայաստանյաց եկեղեցին։ Խրիմյանը, որ ի տարբերություն իր դասի և ամբողջ միաբանության մեծամասնության, հնօրյա ժողովրդանվեր գործիչ էր և նրա անմիջական ու պարզ հոգին ծաոս էր լինում փոխարքայական շինծու մեծարանքներից, այնուամենայնիվ ստիպված էր հայտարարելու, որ «ինքը համոզված էր թագավոր կայսեր՝ առ հայոց ազգը և եկեղեցին ունեցած գութի մասին»։ Նա միաժամանակ բուլլետվություն խնդրեց այդ «արդարամիտ որոշումը» հայտնելու Կ. Պոլսի հայոց պատրիարքին և մյուս թեմերին։

Հաջորդ օրերի ընթացքում հայ բուրժուական բոլոր թերթերի էջերը լցվեցին օգոստոսի 1-ի հրամանագրի վերաբերյալ դատողություններով, ցանկություններով և բազում շնորհավորանքներով։

Հեռագրերի փոխանակություններ տեղի ունեցան կաթողիկոսի և Նիկոլայ II-ի, կաթողիկոսի և Վորոնցով-Դաշկովի, ինչպես նաև վերջինիս և, այսպես կոչված, «հայ հասարակությանն» ներկայացուցիչների միջև։

Փակված ուսումնական հաստատություններից առաջինը վերաբացվեց

---

16 Տե՛ս Վահե Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում, (1870—1905), Երևան, 1970, էջ 280։

Նուշիի քեմական դպրոցը։ Աստիճանաբար բացվեցին նաև մյուս վայրերի հայկական դպրոցները[17]։

Հոկտեմբերի 8-ին որոշվեց 1896 և 1897 թթ. գրավված եկեղեցական-ծխական դպրոցների շինություններն ու գույքը վերադարձնելու հարցը։ Մեկ ամիս անց, 1905 թ. նոյեմբերի 4-ին հաստատվեցին այն կանոնները, որոնց համաձայն վերադարձվելու էին հայ լուսավորչական եկեղեցապատկան արքունի վարչության մեջ և ներքին գործերի մինիստրության տրամադրության տակ գտնվող կալվածքները, եկեղեցական ու վանական եկամուտները, դրամական գումարները և տոկոսաբեր թղթերը[18]։

Հայ լիբերալները հայտարարում էին, որ վերանում է արդեն այն վիհը, որ ստեղծվել էր կովկասյան նախկին կառավարիչների և հայ ժողովրդի միջև։ Սակայն նրանք չարաչար սխալվում էին, հայ ժողովուրդն իր ապելիքն ուներ հեղափոխության մեջ Ռուսաստանի բոլոր ժողովուրդների հետ միասին։

3. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՐԶՐԱԳՈՒՅՆ ԱՍՏԻՃԱՆԸ։ 1905 Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐ–ԴԵԿՏԵՄԲԵՐՅԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1905 թ. հոկտեմբերին սկսվեց համառուսաստանյան քաղաքական գործադուլը, որով հեղափոխական շարժումը երկրում բնակոխեց իր զարգացման բարձրագույն աստիճանը։

Գործադուլն սկսեցին Մոսկվայի երկաթուղային բանվորները։ Հոկտեմբերի 7-ին դադարից աշխատանքը Մոսկվա-Կազան գծում։ Շուտով երկաթուղայիններին միացան քաղաքի ֆաբրիկաների և գործարանների բանվորները։ Մի քանի օր անց, Մոսկվայի օրինակով, Պետերբուրգում ևս երկաթուղայինները գործադուլ հայտարարեցին։ Հոկտեմբերի 13-ից գործադուլային շարժման մեջ ընդգրկվեց երկրի մեծ մասը։

Հոկտեմբերյան քաղաքական գործադուլների ալիքը հասավ նաև Անդրկովկաս և Հայաստան։ Շարժումներին ակտիվ մասնակցություն ունեցան հատկապես Ալեքսանդրապոլի երկաթուղայինները։ Հոկտեմբերի 15-ին, առավոտյան ժամը 6-ից դադարեցին աշխատանքները Ալեքսանդրապոլի հանգույցում։ Կանգ առավ գնացքների երթևեկությունը Ալեքսանդրապոլ — Կարս, Ալեքսանդրապոլ — Երևան գծամասերում։ Կազմակերպվեց գործադուլային կոմիտե, որը բանվորական վերահսկողություն հաստատեց Ալեքսանդրապոլի ամբողջ հանգույցի և երկաթուղային երթևեկության վրա։ Գնացքներն աշխատում էին բացառիկ դեպքերում, այն էլ միայն բանվորների թույլտվությամբ։ Հոկտեմբերի 16-ին հրապարակվեց գործադուլային կոմիտեի կոչը, որտեղ շարադրված էին բանվորների պահանջները։

Հայաստանի գործադուլային շարժումների պատմության մեջ առաջին անգամ առաջադրվում էին քաղաքական պահանջներ, որոնք արդեն բանվորական շարժման նոր փուլն էին սկզբնավորում։ Դիմումն սկսվում էր. «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք» կոչով։

«Ընկերներ.

Մենք՝ դեպոյի և Ալեքսանդրապոլ կայարանի ծառայողներս միանալով ռուսական երկաթուղայինների ընդհանուր գործադուլին, հայտարարում ենք,

17 Տե՛ս «Մշակ», 1905, № 162, 167։

18 Տե՛ս նույն տեղում։

որ մենք ընդունել ենք բոլոր գործադուլավորների ընդհանուր որոշումը՝ գործի չանցնել, մինչև չքավարարվեն ներքոհիշյալ մեր այն պահանջները, որոնք գրավական են հանդիսանում Ռուսաստանում բնակվող բոլոր ժողովուրդների բարեկեցության»։

Այդ պահանջները հիմնականում հետևյալներն էին.

1. Հրավիրել հիմնադիր ժողով՝ ընտրված ընդհանուր, հավասար, գաղտնի և ուղղակի ձայնատվությամբ։ 2. Ընտրական իրավունք հատկացնել 20 տարին լրացրած երկսեռ բոլոր հպատակներին։ 3. Ազատել քաղաքական և կրոնական համոզմունքների համար բոլոր բանտարկյալներին։ 4. Հավասարություն օրենքի առաջ, առանց ազգությունների ու դասակարգերի խորության։ 5. Խոսքի, մամուլի, ժողովների, միությունների և հավատի ազատություն։ 6. Մահվան պատժի վերացում։ 7. Փոխարինել մշտական և կանոնավոր զորքը ժողովրդական միլիցիայով։ 8. Ամբողջ ազգաբնակչության պարտադիր ուսուցում պետության հաշվին։ 9. Վերացնել ռազմական դրություններ և էկզեկուցիաները։ 10. Սահմանել ութժամյա բանվորական օր։ 11. Ապահովել բոլոր ծառայողներին անդամալուծության և ծերության դեպքում։ 12. Բավարարել բոլոր այն պահանջները, որոնք ներկայացված էին ծառայողների կողմից անցյալ գործադուլների ընթացքում և այլն[19]։

Հոկտեմբերյան գործադուլների ընթացքում բանվորների հեղափոխական նախաձեռնությունը Ռուսաստանի շատ կենտրոններում ստեղծում էր բանվորների դեպուտատների սովետներ, դրանք մասսայական-քաղաքական այնպիսի կազմակերպություններ էին, որ սկզբնավորվելով որպես գործադուլային պայքարի ղեկավարման մարմիններ, աստիճանաբար վերածվում էին զինված ապստամբության, ապա և հեղափոխական իշխանության մարմինների։ Հայաստանում, ինչպես և Վրաստանում, բանվորների դեպուտատների սովետներ չստեղծվեցին, նրանց ֆունկցիաները հոկտեմբերյան օրերին և հետագա ամիսների ընթացքում իրականացնում էին գործադուլային կոմիտեները։ Անդրկովկասում սովետներ ստեղծվեցին միայն Բաքվում։

Գործադուլները կանխելու, գյուղացիական հուզումների առաջն առնելու համար իշխանությունները շտապեցին այդ շարժումներով բռնկված վայրերը ղորքեր, հատկապես կազակային զորամասեր ուղարկել։ Պատժիչ զորամասերի փոխադրումները կանխելու համար հեղափոխականները մի շարք վայրերում կազմակերպեցին երկաթուղային գծերի խափանումներ։ Տեղի ունեցան զինվորական գնացքների խորտակման դեպքեր։ Այսպես, հոկտեմբերի 15-ին Դարաբլիխա և Շահալի կայարանների միջև խորտակվեց Թիֆլիս գնացող զինվորական գնացքը։ Հոկտեմբերի 16-ին Սանահին կայարանի մոտ խորտակվեց զինվորական մի այլ գնացք[20]։

Հոկտեմբերի 17-ին գործադուլները, տարածվելով ամբողջ երկրում, դարձան համառուսական։ Գնահատելով ստեղծված իրադրությունը Վ. Ի. Լենինը գրում էր. «Բարոմետրը փոթորիկ է ցույց տալիս... Եվ ոչ միայն բարոմետրն է փոթորիկ ցույց տալիս, այլև համերաշխ պրոլետարական զորհի վիթխարի փոթորիկը բացարձակապես ամեն ինչ արդեն պոկել է իր տեղից։ Հեղափո-

19 Տե՛ս Ս. Գ. Աղայան, *Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.*, Երևան, 1955, էջ 114—116։

20 Տե՛ս «Революция 1905 г. в Закавказье (хроника событий, документы и материалы)», I том, 1926, стр. 78.

խությունը առաջ է գնում ապշեցուցիչ արագությամբ... Մեր առջև են մեծագույն քաղաքացիական պատերազմներից մեկի, ազատության համար մղված պատերազմներից մեկի, որ երբևէ ապրել է մարդկությունը համակող տեսարանները...»[21]։

Այս պայմաններում էր, որ Նիկոլայ II-ըստիպված եղավ հրապարակել հոկտեմբերի 17-ի մանիֆեստը, որը հռչակում էր «քաղաքացիական ազատությունների անխախտ հիմունքներ՝ անձի իսկական անձեռնմխելիություն, խղճի, խոսքի, ժողովների և միությունների ազատություն»։ Մանիֆեստը խոստանում էր նաև օրենսդիր դումա և այդ դումայի ընտրություններին հասարակության բոլոր այն խավերի ներկայացուցիչների մասնակցությունը, որոնք մինչ այդ զրկված էին ընտրական իրավունքից։

Մանիֆեստը մեծ ոգևորություն առաջացրեց ռուսական բուրժուազիայի և նրա կուսակցությունների շրջանում։ Գոհունակությամբ ընդունեցին այն նաև մենշևիկներն ու էսեռները։ Ցարական կառավարությանն իրենց երախտագիտությունն շտապեցին հայտնել հայկական բուրժուազիան և բուրժուական մտավորականությունը։ Մանիֆեստի առթիվ բոլոր հայկական եկեղեցիներում ժամերգություններ և մաղթանքներ կազմակերպվեցին։ Հոկտեմբերի 24-ին Թիֆլիսում հայ բուրժուազիայի պատվիրակությունն այցելեց Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին, խնդրելով իրենց շնորհակալությունը հայտնել ցարին և կառավարությանը՝ շնորհված «ազատությունների» համար[22]։ Դաշնակցությունը նույնպես ողջունեց մանիֆեստը։

Միայն բոլշևիկներն էին, որ կոչ արեցին չհավատալ ցարին և նրա խոստումներին, զգուշացնելով, որ ցարը և մանիֆեստից լիովին բավարարություն ստացած բուրժուազիան խաբում են ժողովրդին։ Բոլշևիկները բացատրում էին, որ մանիֆեստը թակարդ է և կառավարությունը ցանկանում է դրանով հեղափոխության ուժերի ճնշումը թուլացնել, ուստի անհրաժեշտ է շարունակել պայքարը՝ այն զինված ապստամբության հասցնելու և հակառակորդին վերջնականապես ջախջախելու համար։

Արտահայտելով հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի տրամադրությունները, հայ պրոլետարական պոեզիայի հիմնադիր Հակոբ Հակոբյանը այդ օրերին գրեց ոգեշունչ պաթոսով առլեցուն «Մե՛կ էլ, մե՛կ էլ» հանրահայտ բանաստեղծությունը։

Հոկտեմբերի 26-ին ՌՍԴԲԿ Կարսի կազմակերպությունը մարտական բովանդակությամբ մի կոչ հրապարակեց՝ «Բոլոր քաղաքացիներին» վերնագրով։ Կոչը բացատրում էր, թե այն «իսկական ազատությունը», որ շնորհել էր թագավորը «դա մեծ և փոքր բռնակալների թալանի և ճնշումների ազատություն է, որ «ազատության» այս պայմաններում բանվորները շարունակում են քաղցից մեռնել և փտել բանտերում, գյուղացիները՝ խեղդվել վաշխառուների և կալվածատերերի ճանկերում, աղանդավորները՝ ենթարկվել հալածանքների իրենց հավատի համար, իսկ հրեաներին, հայերին, վրացիներին, լեհերին և ուրիշներին իրավունք է վերապահված մեռնել «զազազած ամբոխի, գնդակների և մահակների հարվածների տակ ուղղված կրուշևանիների, մահմեդբեկովների և «ցարի ու հայրենիքի» փառապանծ ծառաների կողմից։ «Այսպես

21 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 12, էջ 1։
22 Տե՛ս «Մշակ», 1905, № 211։

է հասկացվում ազատությունը նորին մեծության բոլոր պնակալեզների կողմից։ Այսպես էր մեկնաբանում ձեզ երեկ չէ մյուս օրը տեղական ադմինիստրացիան»,— գրված էր կոչում[23]։

Մոտավորապես նույնպիսի բովանդակություն ուներ նաև Ալեքսանդրապոլի կազմակերպության հոկտեմբերի 29-ի կոչը։

Մանիֆեստի հրապարակումից հետո էլ ամենուրեք շարունակվում էին ցույցերն ու քաղաքական ընդվզումները։ Ժողովուրդն առաջին անգամ ազատ խոսելու իրավունք էր նվաճել, և նա օգտագործում էր այդ իրավունքը, որքան որ հնարավորություն ուներ։ Նշանակալից էին Կարսի բանտից Բաքվի կազմակերպության 32 ակտիվ հեղափոխականների ազատելու կապակցությամբ կարսում, Ալեքսանդրապոլում հոկտեմբերի 22-ին, 23-ին և 28-ին տեղի ունեցած ցույցերը։

1905 թ. Հայաստանի պրոլետարիատի հեղափոխական պայքարի ամենափայլուն էջերից մեկը Ալավերդու բանվորների նոյեմբերյան քաղաքական գործադուլն էր։ Այստեղ գործադուլն սկսվեց ավելի ուշ և չնայած դրան, մեծ ծավալ ընդունեց։ Իր հուժկու թափով և համառությամբ այն առանձնահատուկ տեղ է բռնում Հայաստանի բանվորական շարժումների պատմության մեջ։ Այս գործադուլին ակտիվ մասնակցություն ցույց տվեցին Մանահինի երկաթուղայինները, որոնք համառուսաստանյան հոկտեմբերյան քաղաքական գործադուլի ժամանակ դեպոյի ու կայարանի վրա բանվորական վերահսկողություն էին հաստատել և այժմ, գործադուլի ավարտից հետո էլ տակավին գտնվում էին ալևկոծ վիճակում։ Գործադուլին աջակցում էին նաև շրջակա գյուղերի բնակիչները[24]։

Բանվորական շարժման և գյուղացիական ելույթների զուգակցման այս փաստը, որ եզակի էր Հայաստանում, ռուսական առաջին հեղափոխության տարիներին բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի մի արտահայտություն էր։ Նման երևույթը հնարավոր էր դառնում այնտեղ, ուր ուժեղ էր հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունը քաղաքային ու գյուղական պրոլետարիատի վրա։

Նոյեմբերի 20-ին Մանահինի գործադուլավոր երկաթուղայինները շրջակա գյուղերի զինված բնակիչների հետ միասին կարմիր դրոշներով և լոզունգներով զարդարված գնացքով, հանդիսավոր կերպով ժամանեցին Ալավերդի՝ աշխատանքները դադարեցնելու և գործադուլ հայտարարելու համար։ Այդ կապակցությամբ Ալավերդու հանքերի դիրեկտոր Պոլմարը գրում էր Թիֆլիսի ֆրանսիական հյուպատոսին. «Այսօր երկաթուղու բանվորները և ծառայողները, ուղեկցությամբ զինված անձնավորությունների, որոնք ինչպես ասում են՝ պատկանում են շրջակա գյուղերի քաղաքական կոմիտեներին, եկան Մանահին կայարանից Մանես՝ գործարանի աշխատանքները դադարեցնելու նպատակով։

Այդ մարդիկ զգուշացրին, որ նրանք կանգնեցնելու են մեր բոլոր աշխատանքներն ու ներկայացնելու ուժեժամյա բանվորական օրվա, աշխատավարձի հավելման և այլ պահանջներ»[25]։

---

23 «Հեղափոխության կոչեր և թռուցիկներ», էջ 166—167։

24 Տե՛ս Հ. Ս. Մելիքյան, Մարքսիստական կազմակերպությունները և հեղափոխության շարժումները Լոռիում (1899—1908), էջ 122։

25 ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, ֆ. 196։

Գործադուլն սկսեցին «Մանեա» և «Պերիտիկ» գործարանների բանվորները, ապա այն տարածվելով Ալավերդու ամբողջ հանքային շրջանի վրա, նոյեմբերի 21-ին դարձավ ընդհանուր, ընդգրկելով մոտ երեք հազար մարդ։ Կազմվեց գործադուլային կոմիտե տեղի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության անդամներից և առաջավոր բանվորներից։ Գործադուլային կոմիտեի կազմի մեջ մտնում էին Ս. Փիրուզյանը, Վ. Չիլիձեն, Ա. Դևդորիանին, Ա. Աղամյանը, Ա. Մուրադյանը, Ն. Ջաֆարովը, Ա. Խաչիևը և ուրիշներ։ Գործադուլի կազմակերպման մեջ ակտիվ դեր էին կատարում նաև Մելիք Մելիքյանը և Ասատուր Կախոյանը։

Գործադուլային կոմիտեն դիրեկցիային ներկայացրեց բանվորների պահանջները՝ 22 կետից։ Դիրեկտորը խոստացավ կատարել դրանց մի մասը։ Չհամաձայնվելով մասնակի բավարարմանը, բանվորները վճռականությամբ շարունակեցին գործադուլը։ Չնայած բանվորների պահանջների մեծ մասը տնտեսական էր, այնուամենայնիվ ամբողջ գործադուլը քաղաքական բնույթ ուներ։ «Կայսրանում բազմության մեջ ճառեր էին արտասանվում այժմյան իրենց սոցիալական ծանր վիճակի մասին,— գրում էր Բորչալուի գավառապետը Թիֆլիսի նահանգապետին։— Միտինգից հետո այս բանվորները որոշեցին գործադուլ հայտարարել և առաջարկեցին Վերին գործարանի բանվորներին, որոնց թիվը հասնում է երկու հազարի, միանալ իրենց և որը նրանք կատարեցին, նոյեմբերի 21-ից դադարեցնելով աշխատանքները։ Ժամանելով գործարան, նոյեմբերի 21-ին ես ականատես եղա բանվորների ընդհանուր գործադուլին, որն ուներ քաղաքական բնույթ»[26].

Ալավերդում այդ օրերին տեղի էին ունենում ցույցեր, միտինգներ, որոնց ժամանակ ելույթ ունեցող հռետորները կոչ էին անում համառորեն շարունակել գործադուլը՝ այն մինչև վերջ հասցնելու համար։ «Գործադուլի ժամանակ,— գրում էր կովկասյան բոլշևիկների օրգան «Կավկազսկի ռաբոչի լիստոկ» թերթը,— քաղաքական բնույթի միտինգներ էին կազմակերպվում։ Այստեղ բոլոր ազգերի բանվորները՝ հայերը, պարսկահպատակ թաթարները, վրացիները, ռուսները կարմիր հեղափոխական դրոշի ներքո լսում էին հռետորներին, որոնք խոսում էին բոլոր չորս լեզուներով։ Բացատրվում էր բանվորական հարցի էությունը... քննադատվում ժամանակակից պետական ռեժիմը...

Հետաքրքիր էր տեսնել, թե ինչպես միանման պայմանները միացրել էին տարբեր ազգերի բանվորներին, ինչպես այս խուլ անկյունում բանվորները վճռեցին ինչ էլ որ լինի դիմանալ մինչև նրանց պահանջների բավարարումը»[27].

Սակայն «Ընկերությունը» ձգձգում էր բանակցությունները բանվորական կոմիտեի հետ, սպառնալիքների ու շանտաժի էր դիմում։ Պոլմարը հայտնեց, թե ինքը ի վիճակի չէ կատարելու բանվորների պահանջները և նոյեմբերի 23-ից ստիպված պետք է լինի փակելու ձեռնարկությունը։ Սակայն բանվորները մնացին անդրդվելի։ Նրանց վճռականությունը վերջ ի վերջո հաղթեց. վարչությունը համաձայնվեց առաջադրված պահանջներին և աննշան փոփոխություններով ընդունեց դրանք։

Հոկտեմբերյան գործադուլները միայն բանվորական շարժումներով և

---

26 ՎՍՀՀ ԿԳԳԱ, ֆ. 34, գ. 1046, թ. 997։

27 «Кавказский рабочий листок», 1905, № 6.

գյուղացիական ելույթներով չսահմանափակվեցին, հեղափոխության բարձրացող ալիքը սասանեց նաև ցարիզմի հենարանը՝ բանակը։ Հայաստանում գտնվող զորամասերում ևս հուզումներ սկսվեցին։ Իր հեղափոխական տրամադրություններով աչքի էր ընկնում հատկապես Ալեքսանդրապոլի կայազորը, ուր դեռևս 1902 թվականից գործում էր զինվորական ընդհատակյա կազմակերպություն։

Զինվորական հուզումները, որոնց համար Ալեքսանդրապոլի կայազորում միշտ հող կար, սասսեցան հատկապես աշնանը։ Նոյեմբերի 20-ին Ալեքսանդրապոլի կայազորի մոտավորապես 300 զինվոր հրաժարվեց ներկայանալ պահակության և մի շարք պահանջներ ներկայացրին։ Նոյեմբերի 23-ին ելույթ ունեցան նույն կայազորի՝ Բաքվի 153-րդ և Կարարդինյան 80-րդ գնդերի զինվորները։ «ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի զինվորական կազմակերպությունը» անմիջապես արձագանքեց դրանց՝ կոչեր և թռուցիկներ հրապարակելով։ Այդ օրերին գրված «Ովսաֆինից՝ զինվորին», «Բոլոր տեսակի զենքը զինվորներ, միացե՛ք» կոչերում բոլշևիկները բացատրում ու պարզաբանում էին զինվորներին դրությունը, ցույց տալիս, որ ինչպես իրենք են կռվկատում ճնշում բանվորների ու գյուղացիների շարժումը, նույնը կատարվում է կառավարության կարգադրությամբ անում են կազակները Ռուսաստանում, քայլանում, ավերում ու սպրում են իրենց տները։ Զինվորներին կոչ էր արվում սվիններն ուղղել նրանց դեմ, ովքեր այդքան վիշտ են պատճառում ժողովրդին[28]։

Նոյեմբերին կազմվեց «Համառուսական զինվորական միության» Ալեքսանդրապոլի կայազորի սովետը, որը լայն գործունեություն ծավալեց Ալեքսանդրապոլի զինվորների շրջանում։ Սովետը հրապարակեց նաև իր որոշումը՝ պատրաստին հարցում կիրառվելիք միջոցառումների մասին։ Այդ որոշումը, որ բաղկացած էր 17 կետից, շատ սպարդ արտահայտում էր զինվորական շինել հասած գյուղացիական զանգվածների իղձը՝ հողը մշակելու ազատ իրավունք և դեմոկրատական բարեփոխություններ[29]։

Հայաստանում զինվորական ելույթների մյուս օջախը Կարսի կայազորն էր, ուր հուզումները սասսեցան հոկտեմբերի 17-ի մանիֆեստի հրապարակումից հետո։ Տեղի բոլշևիկների և զորամասերում աշխատող հեղափոխական գործիչների ջանքերով կազմակերպվեցին զինվորների մի շարք ելույթներ։ Հոկտեմբերի 25-ին 154-րդ գնդի արձակման ենթակա պահեստի զինվորները քաղաքում ցույց կազմակերպեցին, պահանջելով իրենց ազատել ծառայությունից և ներկայացրին մի շարք այլ պահանջներ[30]։ Զինվորական հուզումներ, ելույթներ տեղի ունեցան նաև Սարիղամիշում, Ջալալօղլում և այլ վայրերում։

Հեղափոխական շարժումներին արձագանքեց նաև սովորող երիտասարդությունը։ Տակավին 1905 թ. մարտ ամսին Հայաստանի գյուղերում և ուսումնարաններում խմորումներ էին սկսվել։ Այդ մասին Կովկասի փոխարքային ներկայացված զեկուցագրերից մեկում գրված է. «Ընդհանուր հուզումներն անդրադարձան նաև երկրամասի ուսումնական հաստատությունների՝ արական և իգական, աշխարհիկ և հոգևոր, միջնակարգ և տարրական դպրոց-

---

28 Տե՛ս «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ», էջ 177—178։ Տե՛ս նաև Մ.Լ-ի Հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 241։

29 Տե՛ս Մ.Լ-ի Հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 33, գ. 143։

30 Տե՛ս Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, գ. 161։

ների վրա, գլխավորապես այնտեղ, ուր գերակշռող է տեղական տարրը»[31]։ Սովորողների ելույթներն սկզբում միայն ուսումնական հարցերի շուրջն էին, բայց հետագայում, հատկապես հոկտեմբերից հետո, վերածվեցին բացահայտ դժգոհության, հեղափոխական պահանջների և դասադուլների, որոնք շատ հաճախ վերջանում էին տիրող կարգերի դեմ ղինված ապստամբության կոչով։ Նույնիսկ այնպիսի ուսումնական հաստատության մեջ, ինչպիսին էչմիածնի Գևորգյան ճեմարանն էր, որը գտնվում էր կաթողիկոսի անմիջական հսկողության տակ, տեղի ունեցան ուսանողական խլրտումներ։

Աշակերտները և ուսանողները դասադուլ էին հայտարարում, մասնակցում էին միտինգներին։ Մի շարք դպրոցներում և գիմնազիաներում դադարեցին պարապմունքները։ Հոկտեմբերի 15-ին և 27-ին դասադուլ հայտարարեցին Երևանի արական և իգական գիմնազիաների աշակերտներն ու աշակերտուհիները, որոնք պարապմունքները վերսկսեցին միայն պահանջների բավարարումից հետո։

Հայաստանի տովորող երիտասարդության հեղափոխական տրամադրությունների ձևավորման վրա զգալի ազդեցություն ունեին նաև Ռուսաստանի կենտրոններից եկած ուսանողները։ Մեծ հեղինակություն ուներ հատկապես Տոմսկի տեխնոլոգիական ինստիտուտի ուսանող, կրքված մարքսիստ Ալեքսանդր Մալխասյանը, որը ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության ամենաաջքի ընկնող անդամներից էր։ Երիտասարդության շրջանում հեղափոխական աշխատանք էին տանում նաև Գևորգ Սակոլովսկին և Ասքանազ Մռավյանը։ Վերջինս 1905 թ. աշնանը էչմիածնի Գևորգյան ճեմարանում տեղի ունեցած դասադուլին ակտիվ մասնակցելու համար վտարվել էր ճեմարանից և փոխադրվել Երևան։ Մռավյանը հետագայում Երևանի բոլշևիկյան կազմակերպության ղեկավար գործիչներից մեկը դարձավ։

Հեղափոխական իրադրության հասունացումը դեկտեմբերին երկիրն արդեն ընդհուպ մոտեցրել էր զինված ապստամբության։ Առաջինը զենքի դիմեցին Մոսկվայի բանվորները։ Ղեկավարվելով Մոսկվայի սովետի կոմից, քաղաքի պրոլետարիատը դեկտեմբերի 9-ին ապստամբություն բարձրացրեց, որը տևեց մինչև դեկտեմբերի 19-ը։

Մոսկվայի բանվորների ելույթն արձագանք գտավ երկրի մի շարք վայրերում, ինչպես և Անդրկովկասում։ Դեկտեմբերյան օրերին ապստամբության մեջ էր գյուղացիությունը Արևմտյան Վրաստանում։ Դեկտեմբերի 18-ին, 22-ին, 23-ին Թիֆլիսի Նախալովկա, Դիդուբե բանվորական արվարձաններում և Սոլոլաոսկի բազարի մոտակայքում զինված ընդհարումներ տեղի ունեցան բանվորների և կառավարական զորքերի միջև։ Նախալովկայի բանվորական ջոկատների հրամանատարը լեհենդար Կամոն էր, որը ծանր վիրավորվեց այդ մարտերում և ընկնելով իշխանությունների ձեռքը, բանտարկվեց Մետեխի բանտում։

Մոսկվայի ապստամբությանն արձագանքեցին առանձին ելույթներով նաև Ադրբեջանում։

Հայաստանում դեկտեմբերին զինված ընդհարումներ, գործադուլներ եղան Ալեքսանդրապոլում և մի շարք վայրերում։ Ինչպես հոկտեմբերյան

---

[31] «Начало первой русской революции, январь—март 1905 г. (Сборник документов и материалов)», М., 1955, стр. 592.

գործադուլների օրերին, այնպես էլ այժմ այս գործադուլին ամենաակտիվ մասնակցություն ունեցան Ալեքսանդրապոլի երկաթուղային հանգույցի բանվորներն ու ծառայողները։ Ալեքսանդրապոլը միաժամանակ Հայաստանի երկաթուղային բանվորների գլխավոր կենտրոնն էր։ Դեռևս հոկտեմբերյան համառուսական գործադուլի օրերին Ալեքսանդրապոլում ստեղծված գործադուլային կոմիտեն, որը ղեկավարվում էր բոլշևիկների կողմից, նորից ակտիվացրել էր իր աշխատանքները։ Կոմիտեն իր վերահսկողությունը հաստատեց ոչ միայն տեղի հանգույցի, այլև Ալեքսանդրապոլ—Կարս, Ալեքսանդրապոլ—Ուլուխանլու—Երևան գծամասերի վրա։


Կամո (Ս. Տեր-Պետրոսյան)

Բազմակողմանի էր Ալեքսանդրապոլի գործադուլային կոմիտեի ծավալած գործունեությունը։ Գործադուլային կոմիտեն կայարանում ու դեպոյում աշխատանքից ազատել էր ցարական պաշտոնյաներին և նրանց փոխարեն նշանակել բանվորներին։ Երկաթուղայինները կազմակերպել էին նաև զինված դրուժինաներ, դատարան, փոխօգնության դրամարկղ և այլն։ Ալեքսանդրապոլի գործադուլային կոմիտեն չեզոքացնելով պետական մարմիններին, վերածվել էր բանվորների հեղափոխական իշխանության մարմնի և փաստորեն իրականացնում էր բանվորների դեպուտատների սովետի ֆունկցիաները։

Ալեքսանդրապոլում բանվորներն անընդհատ կազմակերպում էին նաև միտինգներ, հավաքներ, որտեղ ելույթ ունեցողները կոչ էին անում զենքի դիմել՝ ցարական կարգերը տապալելու համար։ «Զսահմանափակվելով միտինգներով և ժողովներով, որոնք հրավիրվում էին հաճախ,— գրված է նրանց դատական գործերում,— ընկերության (կոմիտեի—խմբ.) անդամներն աշխատում էին օգտագործել ժողովրդի ամեն մի պատահական հավաք արհեստանոցներում, կայարաններում և այլ տեղերում հեղափոխական պրոպագանդա մղելու՝ թագավոր կայսեր, թագավորող տան և կառավարության հեղինակությունը խախտելու համար»[32]։

Դեկտեմբերյան օրերին Ալեքսանդրապոլում դրության տերը քաղաքի բանվոր դասակարգն էր, հատկապես նրա միջուկը՝ երկաթուղային բանվորությունը։ Բանվորական դրուժինաները երկաթուղային հանգույցում և քաղաքում օրինակելի կարգ էին սահմանել և հսկում էին նրա անթերի կատարմանը։

Գործադուլի ժամանակ երկաթուղային շարժումը, սակայն, լրիվ չէր դա-

32 Հայկական ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, գործ 196։

դարել։ Երթևեկում էին գնացքները, որոնք տեղափոխում էին գործադուլային կոմիտեի ներկայացուցիչներին, զորացրման ենթակա զինվորներին, երկաթուղային բեռներ, մթերքներ և որոշ, սահմանափակ թվով մարդկանց, որոնցից ստացվող գումարները դրվում էին գործադուլային կոմիտեի տրամադրության տակ։

Միայն Մոսկվայում սկսված զինված ապստամբության պարտությունից հետո ցարական կառավարությանը հաջողվեց ճնշել գործադուլային շարժումները երկրում։ Ճնշվեցին նաև երկաթուղային բանվորների գործադուլները։ Ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում ու Հայաստանում երկաթուղիները հայտարարվեցին ռազմական դրության մեջ։ Գործադուլավոր երկաթուղայինների զգալի մասն ազատվեց աշխատանքից և նրանց նկատմամբ բռնություններ ու հալածանքներ սկսվեցին։

4. ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏԵՂԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ։ ԳՈՐԾԱԴՈՒԼԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1906 Թ.։ ԲՈԼՇԵՎԻԿՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԻՆՏԵՐՆԱՑԻՈՆԱԼ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ։ ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՆ

1905 թ. դեկտեմբերյան զինված ապստամբության պարտությունից հետո, հեղափոխության տեղատվության շրջանում, բանվոր դասակարգը նահանջում էր, պահպանելով իր շարքերի կայունությունը և մարտունակությունը։ 1906 թ. ընթացքում եռ տեղի ունեցան մի շարք բանվորական ելույթներ, գյուղացիական մասսայական շարժումներ, զինվորական ապստամբություններ, ուսանողական ընդվզումներ։ 1906 թ. գարնան, ամռան ամիսներին Երևանում գործադուլ հայտարարեցին բանկային ծառայողները, քաղաքի տպարանների գրաշարները և մանր արդյունաբերական ձեռնարկությունների արհեստավորները, Ալեքսանդրապոլում՝ պայտառ, կոշկակար, դերձակ բանվորներն ու «Փոխադարձ վարկի ընկերության» աշխատակիցները։ Սակայն 1906 թ. Հայաստանում տեղի ունեցած գործադուլների մեջ ամենախոշորն Ալավերդու բանվորների օգոստոսյան ելույթն էր։

Արդեն հունվար ամսից Ալավերդում հուզումներ էին տեղի ունենում։ Բանվորները խիստ զայրացած էին կապիտալիստների ախտագործությունից, որոնք օգտվելով հեղափոխության նահանջից, ետ էին վերցրել իրենց արած զիջումները։ Տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարությամբ բանվորներն օգոստոսի 2-ին Ալավերդում ընդհանուր գործադուլ հայտարարեցին, Այդ գործադուլին մասնակցում էր մոտ 4500 մարդ։ Կազմվել էր գործադուլային կոմիտե, որի մեջ մտնում էին՝ Ս. Փիրուզյանը, Վ. Ջելիձեն, Հ. Մանթաշյանը, Մ. Աղամյանը, Ս. Վերմիշյանը, Ա. Խաչիեը և ուրիշներ։ Գործադուլային կոմիտեի աշխատանքներին ակտիվորեն մասնակցում էին նաև Սանահին կայարանի բոլշևիկյան կազմակերպության մի քանի անդամներ։

Կոմիտեն կազմեց բանվորների պահանջները՝ բաղկացած 18 կետից և ներկայացրեց «Կովկասյան արդյունաբերական ու մետաղագործական ընկերության» նոր դիրեկտոր Գրոյին։ Այդ պահանջների գլխավոր կետերն էին. 1. Սահմանել 8-ժամյա աշխատանքային օր՝ մեծահասակների համար և 6-ժամյա՝ երեխաների, 2. ապահովագրել բանվորներին՝ «Ընկերության» հաշվին, 3. վերացնել տուգանքները, 4. մի տարի աշխատելուց հետո բանվորն

իրավունք ունի մեկամսյա արձակուրդի՝ «Ընկերության» հաշվին, 5. բանվորներին աշխատանքի ընդունել և աշխատանքից արձակել իրենց համաձայնությամբ, 6. կիրակի օրերը հանգստանալ, 7. անցյալ տարի աշխատանքից արձակված բանվորներին ետ ընդունել, 8. բացել գրադարան և ընթերցարան, գրքերը դուրս գրել բանվորների ցանկությամբ, 9. գործադուլային օրերի համար լրիվ վճարել աշխատավարձը, 10. ավելացնել աշխատավարձը՝ 5—50 տոկոսով և այլն։

Գործադուլային կոմիտեի և ֆրանսիական «Ընկերության» միջև բանակցություններ սկսվեցին[33]։ Սակայն «Ընկերությունը» ձգձգում էր այն, փորձելով միաժամանակ պրովոկացիոն միջոցներով խափանել գործադուլը։ Այսպես, գործարանի վարչությունը հավաքագրեց Ալավերդու փայատեր-բանվորներից (բանվորական արիստոկրատիա) 147 մարդու և նրանց ստորագրությամբ խնդրագիր ներկայացրեց Ալավերդու պղնձահանքերի դիրեկտոր Գրոյին։ Հիշյալ խնդրագրով նրանք հանձն էին առնում՝ 1. ոչ մի պահանջ չդնել վարչության առաջ, 2. հրաժարվել առանց վարչության գիտության ժողովներին մասնակցելուց, 3. բանվորների մեջ մի որևէ երևույթ նկատելիս անմիջապես հայտնել վարչությանը, 4. ամեն կերպ պահպանել գործարանի շահերը, 5. անմիջապես անցնել աշխատանքի և նման այլ ստորացուցիչ պարտավորություններ։ Գործադուլը ձախողելու համար վարչությունը դիմեց նաև զանազան ազգայնական և անարխիստական տարրերի օգնությանը, որոնք պրովոկացիաների փորձեր արեցին՝ բանվորների մեջ անհամաձայնություն առաջացնելու համար։ Ալավերդի ժամանեցին նաև Թիֆլիսի պարսկական հյուպատոսարանի ներկայացուցիչները և նահանգապետի օգնական գնդապետ Զոլոտարյովը։

Ստ. Շահումյանի խմբագրությամբ լույս տեսնող բոլշևիկյան «Նոր խոսք» թերթը, որը լայնորեն մեկնաբանում էր գործադուլի ընթացքը, այդ կապակցությամբ գրում էր. «Հանքերի վարչությունը խոսք էր տվել բանվորների ներկայացուցիչներին, որ չի դիմի բռնի ուժի և ռևպրեսիաների, բայց տեսնելով բանվոր մասսայի տոկունությունը, համերաշխությունը և հաստատ կամքը՝ կռվել մինչև հաղթանակ տանելը, սկսեց դիմել պրովոկացիայի, սպառնալով սվիններով և կազակի մտրակով։ Այս օրերին այնտեղ են հավաքվել գավառային իշխանությունները, Զոլոտարյովը, պարսիկ կոնսուլի օգնականը և այլն[34]։

Չնայած այս բոլորին, գործադուլը շարունակվում էր։ Օգոստոսի 14-ին Թիֆլիսի նահանգապետին ուղարկած հեռագրում գնդապետ Զոլոտարյովը հայտնում էր, որ բանվորներն աշխատանքները չեն վերսկսում, միաժամանակ հրաժարվում են հաշիվները մաքրելուց և հեռանալուց, ուստի ինքը զորք է հրավիրում Ալավերդի[35]։

Գործադուլը ղեկավարելու համար Կովկասյան բոլշևիկյան բյուրոն Ալավերդի գործուղեց նախ Սուրեն Սպանդարյանին, ապա Ստեփան Շահումյանին։ Տեսնելով բանվորների վճռականությունը, իշխանությունները դիմեցին ռազմական ուժի օգնության։ Օգոստոսի վերջին գնդապետ Զոլոտարյովը Ջալալօղլիից ժամանած զինվորների վաշտով, կազակային հարյուրյակով, գնդացիրներով

---

33 Տե՛ս Վ. Ա. Պապասյան, Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Երևան, 1955, էջ 73—75։

34 «Նոր խոսք», 1906, № 3։

35 Տե՛ս ՄԼՒ-ի վրացական մասնաճյուղի արխիվ, ֆ. 2, գ. 112, թ. 91։

ու լեռնային երկու քնդանոթով պաշարեց Ալավերդին։ Շուլավերից նրանց օգնության եկավ գավառապետի օգնականը՝ ոստիկանների մի ջոկատով։ Զոլոտարյովը վերջնագիր ներկայացրեց բանվորներին՝ սպառնալով աշխատանքները չվերսկսելու դեպքում քարուքանդ անել Ալավերդին։ Զորքի ճնշման տակ բանվորներն ստիպված տեղի տվեցին և օգոստոսի 29-ին գործադուլը դադարեց։

Իշխանությունները և գործարանի վարչությունը հաշվեհարդար սկսեցին բանվորների հետ։ Կապիտալիստները գործադուլավորներից վրեժ լուծելու համար դիմեցին մասսայական լոկաուտի։ Դիրեկցիայի ներկայացուցիչները հայտարարեցին, թե «Ընկերությունը» անանկացել է, ուստի նրանք փակելու են ձեռնարկությունը։ Այդ պատրվակով նրանք աշխատանքից ազատեցին մոտ 2500 բանվորի՝ գլխավորապես պարակհպատակ տղրբեջանցիների։

1906 թ. օգոստոսի 10-ին Ալեքսանդրապոլում գործադուլ արեցին հացթուխ բանվորները, օգոստոսի 11-ին՝ գինեվաճառանոցների գործակատարները։ 1906 թ. Երևանում ծավալված շարժումների մեջ նշանակալից է Սարաջևի սպիրտի և կոնյակի գործարանների բանվորների նույնների սկզբներին հայտարարած գործադուլը։ ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության ղեկավարությամբ սկսելով պայքարը և չհամաձայնվելով ձեռնարկատիրոջ առաջարկած պայմաններին, բանվորները համերաշխությամբ շարունակեցին գործադուլը մինչև վերջ և 1907 թ. հունվարին հաղթանակի հասան։ Բանվորների և գործարանատիրոջ միջև կնքվեց համաձայնագիր, որի հիմնական կետերն էին.

1. Աշխատավարձի հավելում, որը 1907 թ. փետրվարի 1-ից տեղի պիտք է ունենար հետևյալ չափով. 20—30 ռուբլի ստացողներին՝ 15%-ով, 31—35 ռուբլի ստացողներին՝ 10%-ով, ավելի բարձր ստացողներին՝ 5%-ով, 2. բոլոր բանվորներն աշխատում են ութ ժամ, շաբաթ օրերը՝ յոթ ժամ, սպիրտի զտման բաժնում՝ երեք հերթափոխությամբ, 3. տարվա ընթացքում յուրաքանչյուր բանվոր օգտվում է երկշաբաթյա արձակուրդից, որի ընթացքում պահպանվում է նրա ռոճիկը, 4. մինչև 1906 թ. հոկտեմբեր աշխատած բանվորների ընդունելը և արձակելը կատարվում է միջնորդ դատարանի միջոցով, 5. հիվանդության ժամանակ բանվորը մինչև վեց ամիս ստանում է իր աշխատավարձը և պահպանվում է նրա տեղը, հաշմանդամության դեպքում տրվում է աշխատավարձի կեսը՝ մինչև մահ, 6. զինակոչի ենթարկվելու դեպքում բանվորին տրվում է երկամսյա աշխատավարձ և հասանելիք պարգևատրամբ, 7. այս պահանջները կորցնում են իրենց ուժը բանվորների վերաբերյալ հատուկ օրենք հրատարակելու դեպքում և այլն[36]։

Սարաջևի գործարանում բռնկված գործադուլը հաղթանակով ավարտվեց այն պատճառով, որ լավ էր նախապատրաստված։ Բանվորները մի շարք գործադուլներ էին արել և կազմակերպված պայքարի բավական փորձ ունեին։ Գործադուլի հաջող ավարտը միաժամանակ վկայում էր այն քաղաքական-կազմակերպական աշխատանքների մասին, որ ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունը ծավալել էր քաղաքի աշխատավորության և մանավանդ գործարանային բանվորների շրջանում։

Ցարիզմը, սակայն, հարկադրական դիջումներով ու խոստանալումով չէր բավարարվում։ Բռնկված հեղափոխական հրդեհը մարելու միտումով կառավարական ալրոտներում տակավին 1905 թ. առաջին ամիսներից, սկսեցին մի-

---

36 Տե՛ս «Революционное движение...» (Сборник), стр. 315.

ջոցներ որոնել խռովահույզ զանգվածների ուժերը ջլատելու համար։ Այդ նպատակով կազմակերպվեցին հրեական ջարդեր, ինչպես նաև ահաբեկիչների ձեռքով սպանվեցին մի շարք հեղափոխական ակտիվ գործիչներ։ Հասարակության տականքներից կազմակերպված և ոստիկանության կողմից ֆինանսավորվող ռուս միապետականների «հայրենասիրական» կուսակցությունները, որոնց ժողովուրդը «սև հարյուրյակայիններ» անունը տվեց, ամբողջ երկրում ջարդարարական, տեռորիստական և պրովոկատորական գործունեություն ծավալեցին։ Ջարդեր ու կոտորածներ տեղի ունեցան Տոմսկում, Օդեսայում, Սարատովում, Գոմելում, Կիևում, Լոձում, Բելաստոկում և տասնյակ այլ քաղաքներում ու գավառներում, Ջարդերի կազմակերպման մեջ ակտիվ դեր էին խաղում ցարական բարձրաստիճան չինովնիկները և հոգևորականները, ռեակցիոն կալվածատերերն ու վաճառականները։

Անդրկովկասում հեղափոխական շարժումները կասեցնելու, պրոլետարիատի համերաշխությունը խախտելու համար, արդեն 1905 թ. փետրվարին տեղական իշխանությունների և հատկապես Բաքվի նահանգապետ իշխան Նակաշիձեի հրահրումով մի քանի օր անընդհատ հայ-ադրբեջանական արյունալի ընդհարումներ տեղի ունեցան[37]։ Սակայն չարիքը միայն Բաքվով չսահմանափակվեց. ընդհակառակը, Բաքուն ազդանշան ծառայեց Անդրկովկասի քաղաքների և գավառների համար։ Իշխանությունների թողտվության պայմաններում սանձազերծված ազգայնական տարրերը ծրագրեր էին որոճում կոտորածների նոր օջախներ ստեղծելու համար։ Փետրվարի 18-ին ընդհարումներ սկսվեցին Երևանում, որին անմիջապես արձագանքեց Նախիջևանը, որոշ ընդհատումից հետո ընդհարումները կրկնվեցին Երևանում մայիսի վերջերին և ապա սեպտեմբերին։

Կատաղի ընդհարումներ սկսվեցին նաև Ելիսավետպոլի գավառում և ընդհանրապես այն վայրերում, ուր հայ և ադրբեջանական բնակչությունը շերտ ընդ մեջ էր բնակվում։ Օգոստոսի կեսերին սկսված Շուշիի կոտորածին արձագանքեց Բաքուն, ուր օգոստոսի 20—25-ը տևող ընդհարումներն ուղեկցվում էին նավթահանքերի և նավթագործարանների հրդեհներով։ Մոտավոր հաշիվներով հրդեհվել էր նավթարդյունաբերական ձեռնարկությունների 80 տոկոսը։ Հոկտեմբերի 17-ի մանիֆեստն առիթ դարձավ, որ ցարիզմն իր դիվային ուժերը նորից գործի դնի և հեղափոխության ձեռք բերած առաջին հաղթանակները, նրա համար ընկած մարտիկների արյունը խառնի անմտաբեր իրար հոշոտող հայ և ադրբեջանական հետամնաց խավերի արյան հետ։

Հոկտեմբերի 20-ին Բաքվում բարձրացավ և այնտեղից էլ Վրաստան ու Հայաստան տարածվեց ջարդերի ու կոտորածների նոր ալիք։ Նոյեմբերի 18—23-ը ընդհարումներ եղան Ելիսավետպոլում, դեկտեմբերին՝ Հայաստանի գավառներում։

«Կարմիր քրքիջը», ինչպես ժամանակին անվանում էին այդ արյունալի ողբերգությունը, շարունակվեց նաև 1906 թվականին։ Ընդհարումների կազմակերպման մեջ ցարական կառավարությունը և փոխարքան հենվում էին տեղական իշխանությունների առավել արգահատելի ներկայացուցիչների վրա։ Գործելով «Բաժանիր, որ տիրես» հայտնի սկզբունքով, Վորոնցով-Դաշկովը

---

[37] *Տե՛ս Г. А. Галоян,* Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900—1922, Ереван, 1969, стр. 71—75.

Երևանի նահանգում գեներալ-նահանգապետի արտոնություններով նշանակել էր Ալիխանով-Ավարսկուն, որը «հովանավորում» էր ադրբեջանցիներին, իսկ Ելիսավետպոլի նահանգում՝ «հայասեր» գեներալ Գոլաշշապովին։ Հարկավ, սրանց «հովանավորությունը» բանկ էր նստում երկու ժողովուրդների վրա։ Սպանությունները, բռնությունները, կողոպուտները և հրդեհները համակել էին Երևանի, Ելիսավետպոլի և Բաքվի նահանգները։ Հազարավոր ընտանիքներ մնացել էին անօթևան, մի քանի տասնյակ բնակավայրեր՝ կիսավեր. գյուղեր կային, որ իսպառ ավերվել էին։ Երևանի նահանգում հիմնահատակ կործանվեց Աշտարակի մոտ գտնվող Ուշի ադրբեջանական գյուղը, Զանգեզուրի գավառում՝ Մինքենդ հայկական գյուղը և այլն։

Դեռևս 1905 թ. փետրվարին տեղի ունեցած ընդհարումների ժամանակ Մոսկվայի բոլշևիկյան կոմիտեն թռուցիկներ հրապարակեց, որոնց մեջ մերկացվում էին այդ արյունալի կոտորածների իսկական հեղինակները[38]։ Եղբայրասպան պրովոկացիայի դեմ բողոքի իրենց ձայնը բարձրացրին Բաքվի բանվորները։ Սակայն պրոլետարիատը միայն բողոքներով չէր սահմանափակվում։ Հաճախ բանվորական ջոկատներն անձնական միջամտությամբ կանխում էին ընդհարումները և հաշտեցնում կռվող կողմերին։ Հայ-ադրբեջանական ընդհարումների ժամանակ վճռական նախաձեռնություն հանդես բերեց նաև ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպությունը՝ գծային ծառայության բանվոր-ծառայողներից պահպանություն կազմակերպելով կայարանում և հանգույցում։

Կովկասի պրոլետարիատին բողոքի իր ձայնը միացրեց ռուսական պրոլետարիատը. 1905 թ. սեպտեմբերին տեղի ունեցած սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների համառուսական կոնֆերանսը հատկապես անդրադառնալով կովկասյան դեպքերին, անարգանքի սյունին գամեց ցարական կառավարությանը՝ ժողովուրդներին իրար դեմ գրգռելու նրա դահճային գործում։ Ցարական բյուրոկրատիայի պրովոկատորական արարքները մերկացնող բազմաթիվ հոդվածներ, թղթակցություններ տպագրվեցին ինչպես սոցիալ-դեմոկրատական տեղական մամուլում, այնպես էլ «Վպերյոդ», «Պրոլետարի» կենտրոնական օրգաններում։

Ցարի կազմակերպած արյունոտ խրախճանքի դեմ իրենց ցասման ձայնը բարձրացրին նաև ռուս առաջավոր հասարակության ներկայացուցիչները և առաջին հերթին պրոլետարական մեծ գրող Մաքսիմ Գորկին, ինչպես նաև հայ և ադրբեջանական գրողներ Հովհաննես Թումանյանը, Սաբիրը և շատ ուրիշներ։

Կապիտալիստների դեմ կազմակերպված պայքար մղելու, պրոլետարիատի և աշխատավորական մյուս խավերի շահերը պաշտպանելու համար հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան ձեռնամուխ եղավ արհեստակցական միություններ կազմակերպելու աշխատանքներին։ Հայաստանի բոլշևիկները՝ ևս կազմակերպական-ագիտացիոն աշխատանք էին տանում բանվորների ու քաղաքային աշխատավորական այլ խավերին արհմիությունների մեջ համախմբելու համար։ Այսպես, ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպությունը 1906 թ. մարտին հրատարակեց մի կոչ՝ ուղղված քաղաքի գրասենյակների և

---

38 Տե՛ս «Листовки московских большевиков в период первой русской революции», М., 1955, стр. 110—113.

վաճառատների ծառայողներին։ Այդ կոչում համրամատչելի ձևով բացատրվում էր, թե ինչ նշանակություն ունեն արհեստակցական կազմակերպությունները աշխատավորների համար։ Առաջարկվում էր կազմակերպել միություն՝ տերերի դեմ համերաշխ պայքար մղելու համար։ Միաժամանակ նշվում էր, որ այդ միությունները պետք է ղեկավարվեն սոցիալ-դեմոկրատիայի կողմից, որը հանդիսանում է պրոլետարիատի և մյուս աշխատավոր խավերի միակ պաշտպանը[39]։

Սոցիալ-դեմոկրատիայի կատարած աշխատանքների շնորհիվ 1906 թ. սեպտեմբերին Երևանի գործակատարները կազմակերպեցին իրենց արհեստակցական միությունը[40]։ 1906 թ. ընթացքում արհեստակցական միություններ կազմակերպվեցին Հայաստանի նաև այլ քաղաքներում։

Այդ տարիներին Անդրկովկասում և Հայաստանում բանվորների իրավական և տնտեսական պահանջների «պաշտպանությամբ» սկսեցին հանդես գալ նաև ազգայնական կուսակցությունները, մասնավորապես դաշնակցությունը։ Եթե 1905 թ. և հեղափոխության նախորդած տարիներին դաշնակցականներն ուղղակի ճնշում էին գործադուլները, ազգի դավաճան համարելով ամեն մի հայ հեղափոխականի կամ գործադուլավորի, չնայած 1903 թ. վերջերից արդեն մերթ ընդ մերթ «արծարծում» էին բանվորական հարցը, ապա 1905 թ., երբ հանդես եկավ «Կովկասյան նախագիծը», նրանք փոխեցին իրենց տակտիկան։ Ջահմանափակվելով միայն «ազգային ինքնապաշտպանության» գործերով, դաշնակցականներն սկսեցին բացահայտորեն ընդունել ոչ միայն «Ռուսահայ դատի» գոյությունը, այլ նույնիսկ «աշխատավոր ժողովրդի», բանվոր դասակարգի անունից հանդես գալ որպես նրա շահերի պաշտպան «սոցիալիստական կուսակցություն»։ Սակայն արհմիությունները սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունից հեռու պահելու համար դաշնակցականները հռչակեցին նրանց կառուցման ոչ թե ինտերնացիոնալ ու անկուսակցական, այլ ազգային և կուսակցական սկզբունքը։

Դաշնակցական ղեկավարներն արհեստակցական միություններ կազմակերպելու համար հաճախակի իրենք էին հանդես գալիս աշխատավորների առաջ զեկուցումներով։ Այսպես, 1906 թ. հուլիսի 17-ին Ալեքսանդրապոլում կազմակերպվեց դասախոսություն արհեստակցական միությունների մասին, որտեղ զեկուցումով հանդես եկավ Թիֆլիսից ժամանած ոչ անհայտ Եղիշե Թոփչյանը։ Ժողովին ներկա գտնվող որոշ անձանց փորձերն՝ ընդդիմախոսելու ճառախոսին, վերջացավ դաշնակցական ամբոխի համար սովորական դարձած գոռում-գոչումով, հայհոյաբանությամբ և սպառնալիքներով[41]։

1906 թ. կեսերին արհեստակցական շարժման ուժեղացման հետ ավելի հաճախակի դարձան դաշնակցության պարագլուխների և «տեսաբանների» այցելությունները Հայաստան՝ տեղի բանվորական-արհեստավորական շրջաններն իրենց ազդեցությանը ենթարկելու համար։ Սակայն որպես կանոն գործարանային բանվորության վրա նրանք չկարողացան զգալի ազդեցություն ձեռք բերել։ Միայն Ալեքսանդրապոլի ու Կարսի մի քանի մանր ձեռնարկություննե-

39 Տե՛ս ՄԼԻ-ի Հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 33, գ. 364ա.։

40 Տե՛ս «Կայծ», 1906, № 19։

41 Տե՛ս «Մշակ», 1906, № 155։

րում դաշնակցականներին հաջողվեց արհմիություններ կազմակերպել և նրանց անունից էլ մի երկու գործադուլ ղեկավարել։

Դաշնակցականների այս «արհմիութենական» և «սոցիալիստական» մեամորֆոզն անմիջապես իր վրա գրավեց բոլշևիկների ուշադրությունը։ «Կայծում» Ս. Սպանդարյանը հանդես եկավ «Պրոֆեսիոնալ միությունները և Հ. Հ. Դաշնակցությունը» հոդվածով և բոլշևիկյան դիրքերից մերկացրեց նրանց փորձերը՝ սողոսկելու արհմիությունների մեջ։ Սպանդարյանը ցույց տվեց, որ կապիտալի դեմ կազմակերպված պայքար մղելու համար անհրաժեշտ է աշխատավորների միավորումն արհեստակցական սկզբունքով՝ անկախ ազգությունից ու քաղաքական համոզմունքներից։ Մինչդեռ «դաշնակցությունը,— գրում էր Սպանդարյանը,— ամենից ավելի երկյուղ է կրում անկուսակցականությունից. նա վախենում է, որ այդ անկուսակցական կազմակերպությունների մեջ երևան կգա իր բուրժուական և նեղ ազգայնական բնույթը, որը կարող է խորտակել այն չինական պարիսպը, որը նա այնքան ջանքով բարձրացրել է հայ և մյուս ազգերի միջև...»[42]։

1906 թ. «Կայծի» հաջորդ համարներում լույս տեսավ Ս. Սպանդարյանի մի այլ՝ «Սոցիալիստ» Դաշնակցությունը և ծուրք բանվորները» հոդվածը, որը մերկացնում էր դաշնակցության փորձերը՝ ազգային անտագոնիզմ սերմանել տարբեր ազգությունների միջև։ Բացահայտելով նրանց հակաժողովրդական, բուրժուական բնույթը, Սպանդարյանը հայտարարում էր, որ ընդհանրապես դաշնակցության նպատակն է «...անջատել բանվորությունը ուրիշ ազգերի պրոլետարիատից և, օգտվելով այդ բաժանումից, շահագործել այդ մասսան իր բուրժուական նպատակների համար»[43]։

Դաշնակցականների մարզանքները չվրիպեցին նաև Մ. Շահումյանի ուշադրությունից։ «Կայծի» հունիսյան վերջին համարում լույս տեսավ նրա հոդվածը «Դաշնակցությունը, «Պրոլետարիատի ղեկավար» վերնագրով։ Հոդվածում Շահումյանն անարգանքի սյունին էր գամում դաշնակցությանը և ցույց տալիս, որ քաղաքական սկզբունքներից զուրկ այդ կուսակցությունը, բանվորական շարժման հզոր վերելքի առաջ անկարող լինելով սահմանափակվել միայն «տաճկահայ» դատով, որի քարոզն էր 15 տարի նա անընդհատ անում, դառնում է նաև «բանվորական կուսակցություն», որպեսզի քողարկվելով այդ անվամբ, փորձի անջատել հայ պրոլետարիատին համառուսական շարժումից։ Այսպիսի նպատակ էր հետապնդում դաշնակցությունը, երբ նա միացավ 1906 թ. հունիսի 22-ին Թիֆլիսում տեղի ունեցած ընդհանուր գործադուլին, որը հայտարարված էր որպես բողոքի նշան՝ Մինգրելյան գնդի 27 զինվորներին մահապատժի ենթարկելու դեմ[44]։

Շահումյանը նշում էր, որ դաշնակցականների հանդգնությունը այն աստիճանի է հասնում, որ գործադուլի ավարտից հետո նրանք հայտարարում էին, թե «Պրոլետարիատի ղեկավար երկու խոշոր կազմակերպություններից Հ. Հ. Դաշնակցությունը և սոցիալ-դեմոկրատիան են ղեկավարել գործադուլը։ Այդ կապակցությամբ Շահումյանը մերկացնելով վերջիններիս, գրում էր. «Այո, պարոններ, հայտնում ենք, որ այդ միանգամայն սուտ է, թե՛ ինիցիատիվը և

---

42 Սպանդարյան, Երկեր, հ. 1, Երևան, 1959, էջ 49։

43 Նույն տեղում, էջ 53։

44 Մ. Շահումյան, Երկեր, հ. 1, էջ 183։

թե՛ ամբողջ գործադուլային կամպանիան պատկանում է միմիայն մեր կազմակերպությանը։ Դաշնակցությունը հարկադրված է եղել հետին թվով միանալ գործադուլին»[45]։

Դաշնակցականների նման նկրտումները Ստ. Շահումյանի ու Ս. Սպանդարյանի, ինչպես նաև անդրկովկասյան մյուս ականավոր բոլշևիկների կողմից մշտական և չափաչախիչ հակահարված էին ստանում։

Հեղափոխության տարիներին դաշնակցության ազգայնական քաղաքականության ցայտուն դրսևորումներից էր նաև էջմիածնում հրավիրված «Սահմանադիր ժողովը»։ Իրեն նախապատրաստելով ապագա պետական-քաղաքական գործունեության, դաշնակցությունը «սոցիալիստական» դառնալուց բացի, որոշեց «դեմոկրատացնել» հայկական եկեղեցին և հայ զանգվածներին շեղել հեղափոխական հանապազօրյա խնդիրներից։ Բարոյական և հազար ու մի ձևի ճնշում գործադրելով 86-ամյա կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի վրա, դաշնակցությունը 1906 թ. մայիսի 10-ին հրապարակել տվեց հատուկ կոնդակ, որով վերականգնվում էր հայկական եկեղեցու իբրև թե «ժողովրդապետական» սկզբունքը՝ «...Թեմական առաջնորդների, հաջորդների, գործակալների և հոգևոր վարչական հաստատությանց պաշտոնյաների ընտրությանց հարցում»։

Կաթողիկոսի այս կոնդակը հետագայում մասնակի լրացման ենթարկվեց, որով հայ կանանց ևս իրավունք էր տրվում մասնակցելու կրոնական հաստատությունների ընտրություններին։

«Մեր «մանիֆեստները» բոլորովին անսպասելի էին,— գրում էր Ս. Սպանդարյանը,— և հետևանք են այն «պալատական հեղափոխության», որ կատարեց դաշնակցությունը իր զինյալ ուժով էջմիածնում։ Դաշնակցականները նախ և առաջ մի salto mortale սարքեցին. կաթողիկոսին՝ որը հենց հայոց եկեղեցական օրենքներին նայած՝ երբեք չի եղել միապետ, դարձրին մի ինքնակալ և հետո նրանից ստացան «կոնդակներ-մանիֆեստներ»[46]*։ Այս կոնդակները վերաբերում էին միայն արևելահայ իրականությանը։*

1906 թ. հունիսին էջմիածինը հրահանգում էր՝ Ռուսաստանում ապրող հայ քնակչությունից օգոստոսի 15-ին հրավիրել Ազգային պատգամավորական կենտրոնական ժողով։ Ընտրական իրավունք էր վերապահվում 21 տարին լրացած բոլոր ծխականներին։ Նախատեսվում էր ընտրել ընդամենը 60 պատգամավոր։ Սրագրվում էր կենտրոնական ժողովի նստաշրջանի առաջիկա քննությանը դնել դպրոցական, տնտեսական և թեմական ժողովները կարգավորելու հարցերը։

Հայ բուրժուական մամուլն անսահման աղմուկ բարձրացրեց էջմիածնի կողմից հրավիրվող «համագումարիս» «Ազգային կենտրոնական ժողովի» առթիվ։ Եվ հայ բուրժուազիան իրավունք ուներ ուրախանալու, որովհետև «ազգային-օրենադրական» գործունեությունն ամենահարմար միջոցն էր ժողովրդական զանգվածներին ապակողմնորոշելու սոցիալական խնդիրներից։

1906 թ. հուլիս ամսին նշանակված էին «կենտրոնական ժողովի» ընտրությունները՝ տեղերում։ Ի տարբերություն դումայի ընտրությունների, «կենտ-

---

45 Նույն տեղում, էջ 226։

46 Սատևն Սպանդարյան. Երկեր, հ. 1, էջ 109—110։

բոնականի» ընտրությունները զուտ հայկական էին, ուստի և «զուտ հայկական» կուսակցությունն էլ՝ դաշնակցությունը, իրավունք էր վերապահել իրեն ընտրելու և ընտրվելու, և ընդհանրապես տնօրինելու այդ ամբողջ գործը իր հայեցողության համապատասխան։

Կենտրոնական ժողովի հրավիրումը, սակայն, դիմադրության հանդիպեց հայ կղերականության ամենապահպանողական մասի կողմից, որին ձայնակցեցին նաև Անդրկովկասի հայ բնակչության զանազան խավերը։ Էջմիածնի միաբաններից 14 հոգի Սուքիաս արքեպիսկոպոս Պարզյանցի և Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանի գլխավորությամբ դիմեցին Խրիմյանին և ի լուր հայ ժողովրդի, հատուկ հայտարարություն հրապարակեցին, որով կոչ էին անում ձեռնպահ մնալ եկեղեցու ավանդական կարգը խախտելու գայթակղություններից։ Նրանց անհանգստացնում էր այն, որ եկեղեցու «աշխարհականացման» և «դեմոկրատացման» մասին խոսակցություններն ընդհանրապես կարող են հեղափոխական տրամադրված զանգվածների մեջ կղերի հիմքերը խախտել և նրա վերացման անհրաժեշտության հարց առաջացնել։ Դա ենթադրվող, այսպես ասած, ներքին՝ հիմնական վտանգն էր։ Մյուսը, որի մասին ակնարկում էին պահպանողականները, ցարական կառավարության արտաքին ճնշումն էր։ Ըստ նրանց, արքունիքն ու կառավարությունը, որոնք առանց այդ էլ բարի աչքով չէին նայում այլազգիների ինքնուրույն գոյությանը, անմիջապես կօգտվեին այդ ազդակից և իրենց համաձայնարար քաղաքականությունն իրագործելու համար կարող էին վերջ տալ լուսավորչական եկեղեցու անկախ գոյությանը։ «Հովիվ» կղերական շաբաթաթերթը, որ սուրբ տրամադրություններն արտահայտող հիմնական օրգանն էր, շատ թափանցիկ ակնարկներ էր անում կառավարության՝ հայ եկեղեցին պետական ուղղափառ եկեղեցու մի ճյուղ դարձնելու հնարավոր փորձերի մասին[47]։

Բոլշևիկներն, այսպես կոչված, «կենտրոնական» կամ «սահմանադիր» ժողովի նկատմամբ սկզբից ևեթ բացասական դիրք բռնեցին և քննադատական կրակի տակ առան այդ ամբողջ կատակերգությունը։ Բոլշևիկյան մամուլը՝ «Կայծը», «Նոր խոսքը» ցույց էին տալիս, որ դաշնակցության կողմից քմբկահարվող «ժողովը» միայն նպատակ ունի հայ աշխատավորությանը շեղել հեղափոխության համընդհանուր խնդիրներից և ուշադրությունը «տնային» գործերի վրա, հասարակական ջանքերն ուղղել էջմիածնի և դաշնակցության ունիա ստեղծելու խնդրին։

«Էջմիածնից թափվում են կոնդակներ», «հայոց ազգը» իրավունքներ է ստանում,— գրում էր Ս. Սպանդարյանը սարկազմով։— Այո, թող ամբողջ երկիրը տանջվի, երկունքի մեջ լինի, թող մնացած ազգաբնակչությունը մահացու կոիվ մղի հին ռեժիմի դեմ, թող ուրիշ ազգերի բանվորությունը, գյուղացիությունը պատերազմի, եռանդուն կերպով մասնակցի ընդհանուր ազատագրական շարժմանը,— մենք հայերս, տերտերներ, առաջնորդներ կրնտրենք, ազգային ժողովներ կհրավիրենք և այնմեկ կձառենք, անվերջ կձառենք հայոց ազգի փրկության մասին...»։

Սակայն այլ է հայ գիտակից պրոլետարիատի վերաբերմունքը,— շարունակում էր Ս. Սպանդարյանը,— նա «...անտարբեր է դեպի այդ «հեղափոխու-

---

47 *Տե՛ս Դ. Ա. Մատոյան, Հայաստանը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին (1905—1907), Երևան, 1964, էջ 183—184։*

թյունը», նրա առաջ դրված է մեծ և պատասխանատու պարտականություն՝ միացյալ ուժերով Ռուսաստանի պրոլետարիատի հետ՝ անողոք կռիվ մղելու բռնակալության դեմ։ Այդ այնպիսի ահագին պատմական դեր է, որ հայ բանվորի համար զուտ հայկական «հեղափոխությունը» հավասարվում է զերոյի»[48]։

Օգոստոսի 17-ին բացվեց «համագումարը»՝ 46 պատգամավորների ներկայությամբ, որոնցից 36-ը դաշնակցական էին։ Հետագայում նրանց թիվն ավելացավ դարձյալ մի քանի հոգով։ «Համագումարը» բացվեց կաթողիկոսի գահական ճառով։ Կարճառոտ իր ելույթում Խրիմյանը խոհեմության կոչ արեց պատգամավորներին և նախօրոք հայտարարեց, որ եթե փող են ուզելու, ապա ինքը փող չունի, այլ տալիս է միայն իր օրհնությունը և հեռացավ[49]։

Առաջին նիստերում արծարծվեց ժողովի ձեռնահասության հարցը։ Որո՞նք էին նրա իրավասության սահմանները։ Արդյոք այն կենտրոնական ժողով էր՝ հրավիրված միայն դպրոցական, տնտեսական և վարչական հարցերով զբաղվելու, թե «սահմանադիր» իրավունքներով օժտված «համագումար» էր, որ կոչված էր արևելահայ իրականության՝ վճռահատության սպասող գլխավոր հարցերը լուծելու։ Այս տեսակետը հատկապես պաշտպանում էր դաշնակցության երիտասարդ, աղմկախոս և «ձախ» թևը։ Դաշնակցության տարեց, հետևապես առավել «հասուն» ու խորամանկ շեֆերը «ավելի բարձր հայեցակետ» էին պաշտպանում։ Բարբառելով ժողովի «սահմանադիր» լինելու մասին, նրանք բնավ չէին բացառում եկեղեցու դերը, այլ գտնում էին, որ եկեղեցին անհրաժեշտ է, սակայն այն պետք է դառնա կաթողիկոսի գլխավորությամբ ժողովի կամքն իրականացնող յուրատեսակ գործադիր մարմին[50]։

Այս հարցերի շուրջն էլ տեղի ունեցավ պառակտում և ժողովին մասնակցող լիբերալները՝ Ս. Հարությունյանի, Ա. Քալանթարի, Հ. Առաքելյանի գլխավորությամբ, նեղացած դաշնակցականների մենաշնորհ գերիշխանությունից, օգոստոսի 21-ին գրավոր հայտարարություն արեցին և, բողոքելով դաշնակցականների դեմ, հեռացան էջմիածնից։ Նրանց հետևեցին ոչ դաշնակցական այլ պատգամավորներ։ Ստ. Շահումյանը «Նոր խոսքում» տպագրված «Դաշնակցական համագումարը էջմիածնում» հոդվածում ցույց է տալիս, թե ինչպես, «հիմնադիր» ժողովը իր օրինաչափ էվոլյուցիան ապրելով, դարձել էր արդեն դաշնակցության կուսակցական համագումար։

Սակայն որքան էլ կառավարության համար անվնաս էին էջմիածնի պատերի մեջ արտասանվող «հեղափոխական» ճառերը և որքան էլ դրանք ունեին զուտ տեղական բնույթ, այնուամենայնիվ կովկասյան իշխանությունները «սեպարատիստական» տրամադրություններ նկատելով պատգամավորների մոտ, որոշեցին փակել նաև նրանց բերանը։

Նախօրոք սինոդի դատախազի միջոցով, որը կառավարության աչքն ու ականջն էր էջմիածնում, զգուշացում էր եղել, թե ժողովականները դուրս են գալիս իրենց իրավասության սահմաններից։ Օգոստոսի 30-ին փոխարքան, ժողովատեղի ուղարկելով էջմիածնի գավառապետին, պատգամավորներից ստորագրություններ վերցնել տվեց, որով նրանք պարտավորվում էին 24 ժամվա ընթացքում թողնել էջմիածնի սահմանները։ «Մենք հավատացած ենք,—

---

48 Սուրեն Սպանդարյան, Երկեր, հ. 1, էջ 89—90։

49 Տե՛ս «Մշակ», 1906, № 180։

50 Տե՛ս «Մշակ», 1906, № 185։

գրում էր մինչև «համագումարին» ցրումը Ս. Սպանդարյանը,— որ այս «հայկական հեղափոխությունը», «ազգային հիմնադիր ժողովը» սոսկ վրիպակներ են, և Մեծ հեղափոխության գալիք նոր և հուժկու ալիքը միանգամայն կոչընչացնեն նրանց՝ հայկական կյանքից»[51]։

1906 թ. տեղի ունեցան նաև Առաջին պետական դումայի ընտրությունները, որոնք ոչ միայն անուղղակի էին ու բազմաստիճան, այլև դասակարգային-գույքային տարբերությունների ու անհավասարության վրա էին խարսխվում։

Հեղափոխության վերընթաց զծով զարգանալու ժամանակ բոլշևիկները հաջողությամբ կիրառեցին բուլիգինյան դուման բոյկոտի ենթարկելու տակտիկան, որովհետև դումայական կամպանիայով ցարիզմը փորձում էր շեղել զանգվածներին հեղափոխությունից։ Շարունակելով այդ տակտիկան, բոլշևիկները բոյկոտի ենթարկեցին նաև առաջին (վիտտեյան) դումայի ընտրությունները։

Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները ևս մասնայական-ագիտացիոն աշխատանքներ ծավալեցին առաջին դուման բոյկոտի ենթարկելու համար։ ՌՍԴԲԿ Ալեքսանդրապոլի կազմակերպությունը տպագրում և քաղաքի բնակչության մեջ տարածում էր հայերեն, ռուսերեն, վրացերեն լեզուներով գրված «Բոյկոտեցեք պետական դուման» վերնագրով թռուցիկներ։ Այդ թռուցիկներում բոլշևիկները բացատրում էին կառավարության ձեռնարկած «ընտրական կամպանիայի» նշանակությունը և առաջարկում՝ չմասնակցել դումային, որտեղ տնօրինելու էին տերտերներն ու ոստիկանները[52]։ Եվ երբ 1906 թ. մայիս 16-ին Երևանում մեծ հապաղումով նշանակվեց քաղաքի և նահանգի ազգաբնակչության նախընտրական ժողովը, ապա ո՛չ բոլշևիկները և ո՛չ էլ նրանց ետևից գնացող բանվորներն ու գյուղացիները չմասնակցեցին այդ ժողովին։

Սահմանված կարգի համաձայն, նահանգի քրիստոնյա բնակչության մեծամասնությունը կազմող հայերը պետք է ընտրեին երկու պատգամավոր, իսկ մահմեդական բնակչությունը, այսինքն ադրբեջանցիները՝ մեկ։ Ադրբեջանական պատվիրակներն առանց ձգձգումների ընտրեցին կալվածատեր Աղախան Էրիվանսկուն։ Հայերի և քրիստոնյա մյուս բնակչության ներկայացուցիչների կողմից դումայի պատգամավորներ ընտրվեցին Ալեքսանդրապոլի նախկին քաղաքագլուխ Գ. Տեր-Պետրոսյանցը և իրավաբան Լ. Թումանյանը։ Նույն օրը Կարսում տեղի ունեցած ընտրություններում դումայի պատգամավոր ընտրվեց կալվածատեր Զաքարիա-բեկ Աֆարսկին, Թիֆլիսի նահանգի հայ բնակչության կողմից՝ բժիշկ Ա. Այվազյանցը, իսկ Ելիսավետպոլի կողմից՝ բժիշկ Ք. Բահաթրյանցը։

Մասնակցելով դումայի աշխատանքներին, Բեր ու դեմ կարծիքներ հայտնելով երկրի դրությանը վերաբերող ընդհանուր հարցերին, Անդրկովկասի հայ պատգամավորները 1906 թ. հունիսի 12-ին հատուկ հարցապնդում արեցին մինիստրների խորհրդի նախագահին հայ-ադրբեջանական ընդհարումների ժամանակ կովկասյան իշխանությունների բռնած դիրքի, նրանց օրինազանցությունների, պրովոկացիոն գործունեության և ապիկարության վերաբերյալ։ Այս հարցապնդումը պաշտպանություն գտավ ադրբեջանական, վրացական և լեռնային տրամադրություններ արտահայտող ռուս պատգամավորների մոտ։

---

51 Սասնե Սպանդարյան, Երկեր, հ. 1, էջ 110։

52 Տե՛ս «Ռեակցիոն կոչեր և թռուցիկներ», էջ 211—212։

Թե՛ հարցապնդման հեղինակները, թե՛ նրանց համակիր ռուս պատգամավորները կովկասյան իշխանությունների հանցավոր անտարբերությունը մերկացնող ելույթներ ունեցան։

Դումայում ընթերցվում էին չարդերով բռնված վայրերից պատգամավորների հասցեով ստացված բազմաթիվ նամակներ, հեռագրեր, բողոքագրություններ, միջնորդություններ ու աղերսագրեր։ Կառավարության կենտրոնական և տեղական ներկայացուցիչների դատրացուցիչ վարքի մասին բավական պերճախոս փաստեր հրապարակ հանվեցին։ Հարցապնդման մասնակիցները բազմաթիվ փաստեր բերելուց հետո պահանջում էին ընդամենը՝ դումայի մեծամասնության կողմից ընտրված և նրա առաջ պատասխանատու կառավարություն[53]։

Հիրավի, որքան էլ խիստ ճառեր արտասանվեցին Տավրիկյան պալատում, այնուամենայնիվ ինչպես հայ, այնպես էլ նրանց համակիր մյուս պատգամավորները չէին կարող ժողովրդի իսկական ցավերի, նրա իղձերի բարգմանը հանդիսանալ։ Նրանց հիմնական պահանջը ոչ թե իշխանության տապալումն էր, հասարակական-քաղաքական իրավակարգի վերացումը, այլ նրա մեղմացումը, քաղաքականության փոփոխումը՝ հեղափոխական շարժումները թուլացնելու և ռեֆորմների իրականացումն ապահովելու համար։

Սակայն Դումայում դրսևորվում էին նաև իսկական օպոզիցիոն տրամադրություններ։ Դրանց արտահայտիչները համառուսական գյուղացիության շահերի պաշտպանությամբ հանդես եկող գյուղացիական պատգամավորներն էին, որոնց ելույթները հողի և ազատության համար խիստ վախեցրին ցարին և հուլիս ամսին արդեն կառավարությունը որոշեց խլացնել նրանց ձայնը՝ կարգադրելով ցրել Պետական դուման։

5. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐՆ ՈՒ ՋԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈՒԶՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1906—1907 ԹԹ.։ ԳՈՐԾԱԴՈՒԼԱՑԻՆ ՊԱՅՔԱՐԸ 1907 ԹՎԱԿԱՆԻՆ

1906—1907 ԹԹ. Հայաստանում տեղի ունեցան մի շարք գյուղացիական ելույթներ, որոնք, ինչպես և նախորդ տարիներին, ամենից ուժեղ արտահայտվեցին Լոռիում։

Հաղպատը, որ Հայաստանի ամենահեղափոխական գյուղն էր, շարունակում էր օրինակ ծառայել մյուս գյուղերի համար։ Այդ «գլխացավանքից» ազատվելու նպատակով իշխան Բարաթովը 1906 թ. սկզբներին Հաղպատում ունեցած իր հողերը մոտ 200000 ռուբլով վաճառեց Հայտնի կապիտալիստ միլիոնատեր Արամյանցին[54]։ Գյուղացիների ելույթները կանխելու և ընդհանրապես նրանց «հողային անկարգություններին» վերջ տալու համար Արամյանցը Հաղպատում ավելացրեց ոստիկանական պահնորդների թիվը։

Սակայն հեշտ չէր ընկճել հաղպատցիներին, որոնք անցել էին պայքարի

---

53 Տե՛ս «Государственная дума первого созыва. Стенографические отчеты». Сессия I, т. II, СПб., 1906, стр. 1231—1236.

54 Տե՛ս «Մշակ», 1906, № 58։

երկարատև ուղի։ Ի պատասխան կալվածատիրոջ բռնություններին, գյուղացիները տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության ղեկավարությամբ հուլիսի սկզբներին հավաքվեցին միտինգի և միահամուռ կերպով որոշեցին. 1. Հաղպատից անմիջապես հեռացնել Արամյանցի պահնորդներին, նրանց փոխարեն ընտրելով իրենց միջից երկու մարդու, գյուղում կարգը պահպանելու համար; 2. Անտառից շինափայտ և վառելափայտ կտրել անվճար; 3. Կարկուտի հետևանքով առաջացած վնասի պատճառով հրաժարվել կալվածատիրոջը վճարելու արտի բերքի նախատեսված մասը։ Տեսնելով գյուղացիների վճռականությունը, Արամյանցի կառավարիչը ստիպված համաձայնվեց առաջադրված պայմաններին։

Գյուղացիները կազմակերպված միջոցների դիմեցին նաև Ալգհետ գյուղում։ 1906 թ. օգոստոսի 19-ին նրանք Բորչալուի սոցիալ-դեմոկրատական բոլշևիկյան կազմակերպության ղեկավարությամբ որոշեցին վերջ դնել կալվածատիրոջ չարաշահումներին։ Դրա համար այգեհատցիները համագյուղական ժողովում վճռեցին բռնի կերպով վերցնել այն արոտավայրերը, որոնց համար վճարված էր կալվածատիրոջը, և այնտեղ արածացնել իրենց անասունները։ Որոշում հանելուց հետո գյուղացիները անցան դրա կենսագործմանը։

Լոռու գյուղերում դաշնակցության ազդեցությունը շատ քիչ էր։ Դաշնակցականներն իրենց «դաշտային դատարաններով», «ինքնապաշտպանության» չկատներով, ահաբեկումով, տուգանքներով և հազար ու մի այլ արարքներով վերջնականապես զզվեցրել էին գյուղացիներին։ Նրանք ամեն մի գյուղի վրա 3—4 հազար ռուբլու հարկ էին նշանակել «ազգի կարիքների» համար և բացի կալվածատիրական ու պետական ճնշումից, գյուղացիությանը հնարկում էին նաև «ազգային բարեգործական» շահագործման։ Այդ պատճառով էլ գյուղում գնալով քուլանում էր դաշնակցականների և ուժեղանում՝ բոլշևիկների ազդեցությունը։ 1906 թ. «Նոր խոսքը» գրում էր. «Հայ գյուղացին միայն մոտենալով սոցիալ-դեմոկրատներին,— այժմ հասկացավ, որ միմիայն իր և բոլոր ճնշվածների պաշտպանը սոցիալ-դեմոկրատիան է»[55]։

Գյուղում սոցիալ-դեմոկրատների ազդեցության ուժեղացման և դաշնակցականների դիրքերի քուլացման փաստերը նկատել էին նույնիսկ ցարական պաշտոնյանները. «...Թիֆլիսի նահանգի գյուղացիությունը (Լոռու տեղամաս) խիստ հուզված է պրոպագանդիստների ազդեցության տակ, որոնք աշխատում են ներշնչել, որ իրենք թագավորի կարիք չունեն, իսկ բոլոր կալվածատիրական հողերը հարկավոր է բռնագրավել...

Այդին հիմա բնակչությունը դժգոհում է «դաշնակցությունն» կազմակերպության ղեկավարությունից»[56],— գրված էր ոստիկանական խուզարկուի զեկուցման մեջ։

Ինչպես այլ վայրերում, այնպես էլ Լոռիում, կար դաշնակցության «լիագոր», որն իր իշխանությունը գյուղացիների վրա պահպանում էր բռնի ուժով ու զենքով։ Հատկապես կատաղի պայքար էին մղում դաշնակցականները սոցիալ-դեմոկրատների դեմ, որոնք ամեն քայլափոխում մերկացնում էին նրանց։

Գյուղացիական ելույթները ճնշելու համար ցարական իշխանությունները

---

55 «Նոր խոսք», 1906, № 21։

56 ՎՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 7, գ. 8, թ. 4։

բռնությունների հին մեթոդներին ավելացրին նոր ձևեր՝ սկսեցին անխնա տուգանքներ նշանակել գյուղացիների վրա։ 1906 թ. սկզբներին Կովկասի փոխարքային ներկայացված հաշվետվության մեջ մեծագույն զոհաստով էր խոսվում գեներալ-լեյտենանտ Յացկևիչի մասին, որը նրանից նահանգի կառավարման չորս ամիսների ընթացքում 31.718 ռուբլու տուգանք էր նշանակել «հանցապարտ» համայնքների վրա՝ չհաշված անհատ անձնավորությունների տուգանքը»[57]։ Գյուղացիների զրկանքների ու տառապանքների վրա ավելացող այս նոր ճնշումը կատարյալ քայքայման էր հասցնում նրանց։

Գյուղացիական ելույթները շարունակվեցին նաև 1907 թ.։ Ուժգնորեն արտահայտվեցին դրանք դարձյալ Լոռիում և ուղղված էին շահագործման ինչպես ֆեոդալական, այնպես էլ կապիտալիստական ձևերի դեմ։ 1907 թ. փետրվարին Թիֆլիսի նահանգապետի գրասենյակից Բորշալուի գավառապետին կարգադրություն արվեց միջոցներ ձեռնարկել Դարբազ գյուղի բնակիչների դեմ, որոնք բռնի կերպով խլել էին Ջալալօղլիի հայտնի հարուստ եզր Ջալաբովի զոմեշները և օղեթորման սարքերը։ 1907 թ. մարտին Գյուլագարակ գյուղի բնակիչները հրաժեշտ իրենց համագյուղացի խաչատուր Շահինյանցի խանութը և ավերեցին նրա այգիները։ 1907 թ. մարտին իշխանուհի Բարաթովան նրից բողոքեց Գոլովինոյի գյուղացիներից, որոնք ինքնակամ կտրում էին նրա անտառները և օգտագործում իրենց կարիքների համար։ Այդ կապակցությամբ նահանգապետի անունից գավառապետին առաջարկվում էր. «...ամեն նախազգուշական միջոցների դիմել, փայտի հափշտակումն անտառից դադարեցնելու համար»[58]։

Այդ տարիներին հայկական գյուղերում ծավալված հեղափոխական շարժումները ի նկատի ուներ Ս. Սպանդարյանը, երբ գրում էր. «Որքան մենք կարողացանք ծանոթանալ հայկական գյուղերի և նրա դրության հետ, մենք եկանք այն եզրակացության, և հաստատ համոզման, որ ագրարային շարժման համար հարուստ հող կա և իսկապես հեղափոխական և իսկապես սոցիալիստ կուսակցությունը շատ գործ կարող է կատարել այնտեղ»[59]։

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Հայաստանում ագրարային ակտիվ ելույթներին զուգահեռ, գյուղացիները շարունակում էին պայքարը նաև պասիվ եղանակներով, որն արտահայտվում էր գլխավորապես խնդրագրեր ու գանգատներ ներկայացնելու մեջ։ Այդ խնդրագրերի հիմնական միտքը՝ հողաբաժնի ավելացման, հարկերի պակասեցման, կալվածատերերի բռնություններին վերջ տալու պահանջներ էին։ Այդպիսի բովանդակությամբ բազմաթիվ դիմումներ էին անում Ալեքսանդրապոլի, Շարուր-Դարալագյազի, Էջմիածնի գավառների, Կարսի մարզի և այլ վայրերի գյուղացիները[60]։

1906—1907 թթ. ընթացքում հեղափոխական ելույթներ տեղի ունեցան նաև զինվորների շրջանում։ 1906 թ. մարտին Թիֆլիսի կայազորի մինգրելյան գնդի զինվորներն ապստամբություն բարձրացրին, որը ճնշվեց, իսկ նրա զենավարներից 27-ին զինվորական իշխանությունները մահվան դատապարտեցին։ Այդ լուրը մեծագույն վրդովմունք առաջացրեց Թիֆլիսում։ Ի պաշտպա-

57 Նույն տեղում, ֆ. 1, գ. 83, թ. 12—13։

58 Նույն տեղում, ֆ. 34, գ. 570, թ. 12, 15, 63։

59 Սպանդարյան, երկեր, հ. 1, էջ 129։

60 Տե՛ս А. С. Амбарян, Развитие капиталистических отношений в армянской деревне (1860—1920), Ереван, 1959, стр. 336.

նությունն հեղափոխական զինվորների, քաղաքում տեղի ունեցան գործադուլներ և բողոքի ցույցեր, բոլշևիկյան կազմակերպությունները բազմաթիվ թռուցիկներ տարածեցին, որոնց մեջ կոչ էր արվում պաշտպանել զինվորներին ցարական վայրագ դատաստանից։

Մինգրելիների դատավորության լուրը ալեկոծեց նաև Հայաստանում գտնվող զորամասերին։ Հունիսի 25-ին ուժեղ հուզումներ տեղի ունեցան Հատկապես Ալեքսանդրապոլի մոտ գտնվող սակրային բրիգադի ճամբարում։ Զինվորները որոշել էին ամեն գնով պաշտպանել իրենց եղբայր-զինվորներին։ Ջնայած սպաների արգելքներին և սպառնալիքներին, նրանք հավաքվեցին միտինգի, որից հետո առաջին գումարտակը, հեղափոխական երգեր երգելով և «ուռա» բացականչություններով գնաց երկրորդ գումարտակի զինվորների մոտ, նրանց էլ համակելով իրենց տրամադրությամբ։

«Երբ մենք մոտեցանք, մեր բազմությունից, կամ գուցե առաջին գումարտակից,— գրված է հետագայում հարցաքննության ենթարկված զինվորներից մեկի ցուցմունքներում,— լսվեցին ձայներ «Կորչեն սպաները»։ Բազմության թիվը հասնում էր 500—600 հոգու, միայն մեր գումարտակից, չհաշված առաջին գումարտակի մարդկանց, որոնք գտնվում էին գծամասում։

Երբ բազմությանը մոտեցավ երկրորդ գումարտակի հրամանատարը, զինվորները դադարեցրին աղմուկը և հետ քաշվեցին, այն ժամանակ լսվեց ինձ անծանոթ զինվորներից մեկի ձայնը, որը ասում էր. «Ընկերներ, ինչու լռեցիք, ինչու հետ քաշվեցիք, չէ որ մենք ոչինչ վատ բան չենք անում, մենք որոշեցինք միայն խոսել «մինգրելցիների» մասին»։ Հրամանատարը հարձակվեց նրա վրա և բռնեց, սակայն զինվորներն ազատեցին նրան հրամանատարի ձեռքից։ Բարձրացավ աղմուկ-աղաղակ, հրմշտոց։ Սպաները գոռում էին՝ «ցրվեցեք, հիմա մյուս գորամասերից կգան զինվորները և ձեզ բոլորիդ կգնդակահարեն»։ Զինվորների շարքերից լսվում էին բացականչություններ՝ «ի զեն»։ Երկրորդ գումարտակը շտապեց իր մոտ, ճամբար և գնաց դեպի կինապահեստը։ 15—30 րոպեի ընթացքում բոլոր հրացանները վերցվեցին... Մի ժամ հետո մարդիկ, արդեն զինված, շարժվեցին դեպի առաջին գումարտակը...»[61]։

Սակայն ապստամբած զինվորները չձերբակալեցին իրենց պետերին, դուրս չեկան ճամբարից՝ Ալեքսանդրապոլի կայազորի այլ զորամասերի հետ միանալու համար, այլ զենքերը ձեռներին անգործության էին մատնվել։ Զինվորների բարեհոգությունից և անկազմակերպվածությունից անմիջապես օգտվեց հրամանատարությունը, որը գիշերը պաշարել տվեց ճամբարը զորական այլ միավորումներով։ Հաջորդ օրը արթնանալով, սակրավորներն իրենց տեսան շրջապատված և այլևս ոչինչ չկարողացան ձեռնարկել, ուստի և հանձնվեցին։ Իշխանությունները մոտ երեսուն զինվորի՝ որպես այդ ելույթների «գրդռիչների», ձերբակալեցին։ Սկսվեց դատական հետաքննությունների մի երկարատև շրջան։ Ալեքսանդրապոլում տեղի ունեցած դեպքերի մասին անմիջապես տեղեկացրին ոչ միայն Կովկասի փոխարքային ու ռազմական մինիստրին, այլև զեկուցագիր գրվեց Նիկոլայ II-ին։

1906 թ. հունիսին Կոռու գյուղում տեղավորված հրետանավորներն անհնազանդության ցույց արեցին՝ հրաժարվելով հնձել պետական խո-

[61] «Революционное движение... (Сборник)», стр. 359, 362

տատեղերը։ Նույն թվականի հուլիսին հուզումներ սկսվեցին Ալեքսանդրապոլում գտնվող Բաքվի 153-րդ գնդի հետևակայինների մեջ, որոնք պահանջում էին դադարեցնել կազակների բռնություններն իրենց ընտանիքների նկատմամբ։

Այդ տարիներին Երևանի զորամասերում ևս հեղափոխական աշխատանքներ էին տարվում։ Այսպես, 1906 թ. հուլիսին զինվորներին պրոկլամացիաներ բաժանելու համար ձերբակալվեց ՌՍԴԲԿ Երևանի բոլշևիկյան կազմակերպության անդամ Վ. Բաղդասարյանը և հանձնվեց դատական իշխանությունների[62]։ 1906 թ. օգոստոսին Երևանի փոստում ստացվեց գաղտնի գրականություն, որը նախատեսված էր զինվորների մեջ տարածելու համար։ Այդ կապոցը, որ ընկավ ոստիկանության ձեռքը, պարունակում էր համառուսական զինվորական միության «Ընկերներ», Թիֆլիսի կայազորի «Զինվորներ» կոչերը, բանակին ու նավատորմին ուղղված «Մանիֆեստը» և բազմաթիվ այլ թռուցիկներ[63]։

1907 թ. հեղափոխությունը* թևակոխ և գնում էր դեպի անկում, բայց ինչպես Ռուսաստանի այլ շրջաններում, այնպես էլ Հայաստանում տեղի ունեցան մի շարք գործադուլներ։ Հունվար և մարտ ամիսներին համեմատաբար մանր գործադուլներ եղան Երևանի ու Ալեքսանդրապոլի ձեռնարկություններում, տպարաններում և այլն։ 1907 թ. Հայաստանում ծավալված գործադուլներից ամենահուժորը մարտի վերջին Ղափանում բռնկված հանքագործների գործադուլն էր։

Ղափանի պղնձի հանքերի և գործարանների բանվորներն ամենատմարդի շահագործման էին ենթարկվում։ «Բանվորների կենցաղային և վարձելու պայմաններին մոտիկից ծանոթանալով, ակնհայտ է դառնում,— ասիպված էր խոստովանել նույնիսկ բուրժուական «Բաքու» թերթի թղթակիցը,— վերջիններիս ծանր դրության պատկերը։ Կան բանվորներ, որոնք օրական ստանում են 15 կոպեկ»[64]։ Ապահովված չէր նաև բանվորների կյանքը հանքերում տեղի ունեցող հաճախակի փլուզումներից։ Մինչև 1907 թ. Ղափանում բանվորները մի քանի անգամ ելույթների փորձեր էին արել։

1907 թ. սկզբներին Բաքվից Ղափան տեղափոխվեց մոտ 50 բանվոր, վերջիններս էլ հենց կազմակերպված բնույթ տվեցին Ղափանի հանքագործների մեջ տեղի ունեցող խմորումներին։ Դրանց մեծ մասը տեղացիներ էին, տարիներ առաջ ապրուստի միջոց հայթայթելու համար արտագնացության դիմած գյուղացիներ, որոնք անցնելով հեղափոխական պայքարի բովով, վերադառնում էին հայրենի վայրերն արդեն որպես կազմակերպված բոլշևիկներ։ Բանվորները, որոնց գործուղել էր Բաքվի բոլշևիկյան կոմիտեն, իրենց հետ բերել էին անլեգալ գրականություն՝ գրքեր, թերթեր, պրոկլամացիաներ։

Նախապատրաստական որոշ աշխատանքներից հետո, մարտի 26-ին՝ երկուշաբթի օրը Ղափանի բոլոր հանքերի ու պղնձագործարանների բանվորներն ընդհանուր գործադուլ հայտարարեցին։ Մոտ 2500 բանվոր գադարեցրին աշխատանքները։ «Զանգեզուրի գավառում, պղնձի հանքերի և գործարանների շրջանում սկսվեց բանվորների գործադուլը,— գրում էր ապրիլի 1-ին «Բաքու»

62 Տե՛ս ՎՍՍՀ ԿԳԳԱ, ֆ. 27, գ. 430, թ. 61։
63 Տե՛ս նույն տեղում, ֆ. 76, գ. 802, թ. 119։
64 «Баку», 1907, № 74.

քերը,— հանքերն ամայացան, հեռախոսային կապը հանքերի և գործարանների միջև կտրված է։ Բանվորները ներկայացրել էին տնտեսական պահանջներ[65]։

Կազմվեց գործադուլային կոմիտե, որը ձեռնարկատերերին ներկայացրեց բանվորների պահանջները՝ բաղկացած 27 կետից։ Այդ պահանջները հիմնականում հանգում էին հետևյալին. 1. Սահմանել 8-ժամյա բանվորական օր, 2. վերացնել տուգանքները, 3. ավելացնել աշխատավարձը, այն վճարել յուրաքանչյուր շաբաթվա վերջում, 4. դադարեցնել աշխատանքները տոն օրերին, 5. ապահովել բանվորներին հիվանդանոցով և բժիշկով, 6. բացել երեկոյան դասընթացներ հայերի և ադրբեջանցիների համար, 7. աշխատանքից ազատել միայն բանվորական ներկայացուցչության միջոցով, վճարելով երեք ամսվա աշխատավարձը, 8. հիվանդության ժամանակ բանվորներին բուժել հանքատիրոջ հաշվին, 9. որպես պարգև աշխատավարձն ավելացնել յուրաքանչյուր տարի 20 տոկոսով, 10. գործադուլի օրերը հաշվել լիովին, 11. հանքերում էլեկտրական լուսավորություն անցկացնել, իսկ որտեղ այդ հնարավոր չէ. նավթի փոխարեն գործածել մոմ, 12. հանքերում սահմանել 6-ժամյա բանվորական օր և այլն։

Գործադուլի օրերին բանվորներն անընդհատ միտինգներ, ժողովներ էին անում, որտեղ ելույթ ունեցողները քաղաքական ճառեր էին արտասանում։ Լուր ստանալով գործադուլի մասին, կազակների ուղեկցությամբ այնտեղ շտապեցին հանքատերերը և գավառական վարչության ներկայացուցիչները։ Սկսվեցին բանակցությունները գործադուլային կոմիտեի հետ, սակայն դրանք ոչ մի արդյունքի չհասցրին։ Չկարողանալով ընկճել բանվորների դիմադրությունը, գործարանատերերը վերջ ի վերջո զիջեցին և ընդունեցին նրանց պահանջների գլխավոր կետերը։ Մարտի 29-ին գործադուլավորներն անցան աշխատանքի։

1907 թ. ապրիլին Ալեքսանդրապոլում և Երևանում տնտեսական հողի վրա գործադուլ հայտարարեցին քաղաքի հրուշակարանների վարպետներն ու բանվորները։ Հուլիսի 3-ին Երևանում գործադուլ արեցին Հակոբյանի, Այվազյանի տպարանների, Տեր-Նիկողոսյանի և Առաքելյանի կազմատների բանվորները։ Նրանք ներկայացրին 15 կետից բաղկացած պահանջներ, որոնցից գլխավորները՝ 9-ժամյա աշխատանքային օր սահմանելու և աշխատավարձն ավելացնելու հարցերն էին։ 1907 թ. օգոստոսի 22-ին Երևանում գործադուլ հայտարարեցին նաև ինժեներ Միրզոևին պատկանող ձիաքարշի բանվորներն ու ծառայողները։ 1907 թ. նոյեմբերին հուզումներ սկսեցին Ալավերդու հանքարդյունաբերական բանվորների շրջանում։

Այսպիսով, 1906—1907 թվականներին ևս, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում ու Հայաստանում շարունակվում էին հեղափոխական գոտեմարտերը։

6. ՌՍԴԲԿ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ։ ԵՐԿՐՈՐԴ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՆ։ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Տակավին XX դարի սկզբներին Հայաստանի քաղաքներում և գյուղական վայրերում հիմնադրված մարքսիստական խմբակներն ու կազմակերպություն-

65 Նույն տեղում։

ները զգալի աշխատանք էին կատարել։ Արդեն 1902—1904 թթ. բանվորական շարժման առաջին թայլերին համընթաց ստեղծվեցին Լոռիի, Երևանի, Ալեքսանդրապոլի և այլ վայրերի ՌՍԴԲԿ կազմակերպությունները, որոնց ընդհանուր ղեկավարությունն իրականացնում էր ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեն։ Սկսված հեղափոխությունն անհետաձգելի պահանջ էր ներկայացնում ընդլայնել այդ կազմակերպությունների գործունեության շրջանակները, կազմակերպորեն և գաղափարապես ամրապնդել դրանք։

1905 թ. մայիսի սկզբներին Հաղպատ, Ջալալօղլի, Ուզունլար, Ուռնակ գյուղերի, Ալավերդու գործարանների և Հաղպատ կիսակայարանի սոցիալ-դեմոկրատական բջիջների ներկայացուցիչների ժողովում Ստ. Շահումյանի ղեկավարությամբ ստեղծվեց ՌՍԴԲԿ Բորչալուի (Լոռիի) գավառական կոմիտեն։ Լոռիի կազմակերպության մեջ աշխատում էին Ս. Էվոյանը, Ա. Կախոյանը, Աշոտ և Անուշավան Թումանյանները, Ս. Փիրուզյանը, Ս. Խրայելյանը և ուրիշներ։ ՌՍԴԲԿ Լոռիի կոմիտեն հեղափոխության տարիներին դարձավ Հայաստանի ամենաակնառուն և ամենամարտական կազմակերպություններից մեկը։

Հայաստանում գործող մյուս խոշոր կազմակերպությունը՝ ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունն էր։ Ստ. Շահումյանը Կովկասյան միութենական կոմիտեի հանձնարարությամբ շրջագայելով Հայաստանում, Լոռիից հետո այցելում է Երևան և 1905 թ. մայիսին հիմնադրում ՌՍԴԲԿ Երևանի կոմիտեն[66]։ ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության ակտիվ անդամներից էին Գ. Սոկոլովսկին, Ա. Մալխասյանը, Կ. Ալավերդովը, Բարժանսկին, Նինիաշվիլին, Վ. Բաղդասարյանը և ուրիշներ։ Հետագայում կազմակերպությունը համալրվեց նոր ուժերով, Երևան փոխադրվեցին Մարտիրոս Միքայելյանը (բանվոր Շանթ ծածկանունով), Ասքանազ Մռավյանը, Լևոն Տեր-Հովսեփյանը, Լևոն Յաղուբյանը։

Ինչպես 1905 թ., այնպես էլ 1906—1907 թթ. Հայաստանում տեղի ունեցող գործադուլային շարժումները, գյուղացիական հուլիսները, զինվորական ընդվզումները, աշակերտական հուզումները ղեկավարելու և ուղղություն տալու, դաշնակցականների, ասպեցիֆիկների, հնչակյանների և օպորտունիստական հոսանքների ու կուսակցությունների, մասնավորապես մենշևիկների դեմ պայքարելու գործում ՌՍԴԲԿ տեղական կազմակերպությունները մեծ աշխատանք կատարեցին։

Հայաստանի բոլշևիկներն ակտիվ մասնակցություն ունեցան նաև համառուսական կուսակցական-քաղաքական իրադարձություններին։ Նախապատրաստվելով կուսակցության IV համագումարին, բոլշևիկյան կազմակերպությունները քաղաքական-բացատրական լայն աշխատանք ծավալեցին բանվորների շրջանում։ Տպագրվում և տարածվում էին բազմաթիվ կոչեր և բռուցիկներ, որոնց մեջ բացատրվում էր առաջիկա համագումարի նշանակությունը՝ կուսակցության միասնությունը վերականգնելու և հեղափոխական ուժերը համախմբելու գործում։

Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների կողմից կուսակցության IV համագումարի աշխատանքներին որպես ՌՍԴԲԿ Երևանի բոլշևիկյան

---

66 Տե՛ս «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», էջ 78—80։

կազմակերպության պատգամավոր մասնակցում էր Ստ. Շահումյանը՝ «Սուրենին» ծածկանունով, Վերադառնալով Ստոկհոլմից, Շահումյանը մայիսի վերջերին այցելեց Երևան և տեղի կոմիտեի նիստում զեկուցում տվեց IV համագումարի մասին։ Հաջորդ օրը նա հանդես եկավ ավելի ընդարձակ լսարանի առաջ։ Այդ զեկուցմանը մասնակցում էին քաղաքի ոչ միայն բոլշևիկյան կազմակերպության անդամներն ու առաջավոր բանվորները, այլև ՌՍԴԲԿ Երևանի կոմիտեի հետ կապված շրջակա գյուղերի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության անդամները։

Զեկուցումից հետո Շահումյանը զրույցներ ունեցավ կազմակերպության առանձին ղեկավարների հետ և խորհուրդ տվեց աշխատանքներին ավելի լայնորեն մասնակից դարձնել բանվորներին։ Այդ կապակցությամբ Շահումյանը նրանց ուշադրությունը հրավիրեց Երևան—Ալեքսանդրապոլ երկաթուղային ուղեմասի և քաղաքի արդյունաբերական ձեռնարկություններում աշխատող բանվորների վրա։ Շահումյանն այցելեց նաև Դարբիներյան եղբայրների կաշեգործարանը, ծանոթացավ բանվորների դրությանը և նրանց աշխատանքային պայմաններին։ Նրա հետ կաշեգործարան այցելեցին ՌՍԴԲԿ Երևանի կոմիտեի ղեկավարներից Մարտիրոս Միրաքյանը, Ասքանազ Մռավյանը, Արամ Շուշանյանը։

ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունը 1906—1907 թթ. ավելի ակտիվացրեց քաղաքական-կազմակերպական աշխատանքները քաղաքի հիմնարկ-ձեռնարկություններում և Երևանի ու Ալեքսանդրապոլի երկաթուղայինների շրջանում։ ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության անդամներից Ալեքսանդրապոլի երկաթուղային բանվորների մոտ հատկապես հաճախ էին լինում Մարտիրոս Միրաքյանը և Լևոն Յաղուբյանը։ Նրանց այցելությունները կապվածներ հարուցեցին երկաթուղային ժանդարմերիայի մոտ։ Միրաքյանի և Յաղուբյանի վրա հսկողություն սահմանվեց և 1906 թ. հունիսի 23-ին նրանք ձերբակալվեցին։ Ազատվելով կալանքից, Միրաքյանը և Յաղուբյանը շարունակեցին իրենց հեղափոխական գործունեությունը։ 1906 թ. սեպտեմբերին Միրաքյանը նորից ձերբակալվեց, այս անգամ՝ Ալեքսանդրապոլի կայարանում։ Խուզարկության ժամանակ նրա մոտ հայտնաբերվեց անլեգալ գրականություն, այդ թվում Վ. Ի. Լենինի «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական հեղափոխության մեջ» աշխատությունը՝ հեղինակի առաջաբանով, երեք օրինակ։ Բացի դրանից, ոստիկանության ձեռքն ընկան լեգալ և անլեգալ բոլշևիկյան թերթերի մի քանի օրինակներ, մասնավորապես «Վպերյոդ», «Պրոլետարի», «Սոցիալ դեմոկրատ», «Կավկազսկի ռաբոչի լիստոկ» թերթերը, «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության II համագումարի ընդունած ծրագիրը», «Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության երկրորդ համագումարի մասին» հայտարարությունը՝ հրատարակված ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական և Բաքվի կոմիտեների կողմից և հեղափոխական, կուսակցական այլ գրականություն։

1907 թ. մայիսին Լոնդոնում գումարվեց կուսակցության V համագումարը, որը հանդիսացավ բոլշևիկների խոշոր հաղթանակը բանվորական շարժման մեջ։ Այս անգամ ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության կողմից համագումարին մասնակցում էր Գ. Սոկոլովսկին։ Թիֆլիսի մարզային կոմիտեի մենշևիկներին երբ հայտնի դարձավ, որ Երևանի կազմակերպությունը որպես V համագումարի պատգամավոր պատրաստվում է առաջադրել Սոկոլովսկուն, դի-

մեցին ամեն տեսակի միջոցների՝ նրա թեկնածությունը ձախողելու համար։ Սակայն այդ փորձերն անհաջողությամբ վերջացան։

1906—1907 թթ. ընթացքում լայն գործունեություն էր ծավալել նաև ՌՍԴԲԿ Բորչալուի (Լոռիի) կազմակերպությունը։ Տակավին 1906 թ. աշնանը, հոկտեմբերի 15-ին, Հաղպատում տեղի ունեցավ ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպության առաջին կոնֆերանսը, որը քննեց մի շարք հարցեր, այդ թվում՝ գավառական կոմիտեի հաշվետվությունը։ Կոնֆերանսում ընդարձակ զեկուցումով հանդես եկավ Ստ. Շահումյանը։ 1906 թ. դեկտեմբերի 25-ին Հաղպատում տեղի ունեցավ Բորչալուի կազմակերպության երկրորդ կոնֆերանսը՝ դարձյալ Շահումյանի ղեկավարությամբ։ Կոնֆերանսը քննության առավ դումայական կամպանիայի անցկացման, բուրժուական կուսակցությունների՝ դաշնակցության դեմ տարվող պայքարն ուժեղացնելու հարցերը և այլն։ Կոնֆերանսը միաժամանակ կուսակցության V համագումարի պատգամավորներ ընտրեց։ ՌՍԴԲԿ Բորչալուի (Լոռիի) կազմակերպության կողմից պատգամավորները՝ընտրվեցին Ստեփան Շահումյանը և Աստուր Կախոյանը («Բորչալինսկի» ծածկանունով)՝ վճռական ձայնով և Միխա Յախակյան՝ խորհրդակցական ձայնով։ Սակայն զանազան մեքենայությունների միջոցով Թիֆլիսում մենշևիկներին հաջողվեց չեղյալ հայտարարել նրանց մանդատները։ Շահումյանն ստիպված եղավ վերադառնալ Լոռի և նոր կոնֆերանս հրավիրել, որը վերընտրեց նրանց և նոր մանդատներ տվեց։ Ջկարոզանալով տեղում տապալել կովկասյան բոլշևիկների մանդատները, մենշևիկները, ինչպես նախորդ համագումարում, այնպես էլ V համագումարում սկսեցին վիճարկել նրանց մանդատների իսկությունը, հանձնելով դրանք մանդատային հանձնաժողովի կրկնակի քննության։ Մենշևիկներն իրենց առարկությունները, մասնավորապես Բորչալուի կազմակերպության պատգամավորների դեմ, պատճառաբանում էին նրանով, որ այնտեղ իբր թե կազմակերպություն չկա, որը սոցիալ-դեմոկրատական աշխատանք տարած լինի։ Շահումյանը համագումարում հանդես եկավ մարտական մի ճառով և, մերկացնելով մենշևիկների արարքները, խոսեց կուսակցական-քաղաքական այն աշխատանքի մասին, որ կատարել էր ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպությունը։

1907 թ. մարտին Լեջանում տեղի ունեցավ ՌՍԴԲԿ Բորչալուի կազմակերպության III կոնֆերանսը, որին մասնակցում էին 13 կազմակերպությունների ներկայացուցիչներ։ Կոնֆերանսը քննարկեց կուսակցական մի շարք հարցեր և ընդունեց առանձին գյուղերի հողային հարցերին վերաբերող կոնկրետ որոշումներ։ Կոնֆերանսից հետո հրապարակվեց «Ընկերներդ» կոչը, որի մեջ հաղորդվում էր տեղի ունեցած կոնֆերանսի մասին և մասնավորանացվում այն որոշումները, որ ընդունվել էին Լեջանում։ ՌՍԴԲԿ Բորչալուի (Լոռիի) կազմակերպությունը որպես ղեկավար կենտրոն գոյություն ունեցավ մինչև 1909 թ.։ Հետագայում, երբ ռեակցիան ուժեղացավ, գավառային կոմիտեի աշխատանքները դադարեցին. գործում էին միայն տեղական առանձին կազմակերպություններ։

1906—1907 թթ. հեղափոխական շարժումների աստիճանական անկման տարիներին, երբ սկսվել էր հակահեղափոխական հարձակումը բանվոր դասակարգի և նրա հեղափոխական կուսակցության վրա, երբ գյուղերն էին ուղարկվում պատժիչ արշավախմբեր՝ ապստամբած գյուղացիների հետ դա-

տաստան տեսնելու համար, կուսակցության խնդիրն էր պաշտպանել 1905 թ. ընթացքում ձեռք բերած նվաճումները։ Այդ նպատակով կուսակցությունն աշխատում էր օգտագործել բոլոր լեգալ հնարավորությունները։ Դուման այդպիսի լավագույն հնարավորություն էր ստեղծում, ուստի բոլշևիկները որոշեցին մասնակցել և նրա ամբիոնն օգտագործել իրենց հեղափոխական նպատակների համար։

1907 թ. հունվարին սկսվեց Երկրորդ պետական դումայի ընտրությունների կամպանիան։ Հայաստանի բոլշևիկները, որ դեռևս 1906 թ. աշնանը որոշել էին ակտիվորեն մասնակցել ընտրություններին, Երևանի նահանգի կողմից պատգամավոր էին նախատեսել Գ. Սոկոլովսկուն։ Այս կապակցությամբ ստանալով Կովկասյան մարզային կոմիտեի համաձայնությունը, ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության անդամները լայն աշխատանք ծավալեցին քաղաքի և նահանգի աշխատավորության շրջանում, նրանց բոլշևիկյան քաղաքական լոզունգների շուրջը համախմբելու համար։ Սակայն նահանգական իշխանությունները, պատրվակ բռնելով բնակարան վարձելու համար պայմանագիր չունենալը, ցուցակներից հանել տվեցին Սոկոլովսկուն, դրանով իսկ ձախողելով նրա թեկնածությունը։

Հետևելով իրենց հետ բավական սերտ կապված էսեռական կուսակցության օրինակին, Երկրորդ դումայի ընտրություններին մասնակցելու հայտ ներկայացրեց դաշնակցությունը։ 1907 թ. սկզբներին դաշնակցական մամուլն ու նրա քաղաքական գործիչները նետվեցին պայքարի հրապարակ։ Նրանք կոչ էին անում ամենուրեք վստահության քվե տալ «Տաճկահայերի արտասուքը սրբող, ռուսահայերի եկեղեցական գույքը պահանջող և հայ-թուրքական ընդհարումների ժամանակ ժողովրդին պաշտպանող ու փրկող» կուսակցության ներկայացուցիչներին[67]։ Այս ազգայնական պլատֆորմը դաշնակցականները դյուրությամբ զուգակցում էին իրենց նոր դիմափոխությանը՝ «սոցիալիստական» և «աշխատավորական» կուսակցություն դառնալու հանգամանքին։

Հունվարի վերջերին, փետրվարի սկզբներին Անդրկովկասում ավարտվեցին Երկրորդ դումայի ընտրությունները։ Մասնակցելով ընտրություններին, դաշնակցականներին հաջողվեց մի շարք վայրերում անցկացնել իրեց թեկնածուներին՝ դուրս վանելով գլխավորապես հայ լիբերալ բուրժուազիայի ներկայացուցիչներին։ Երևանի նահանգի կողմից Երկրորդ դումայի պատգամավորներ ընտրվեցին դաշնակցականներ Հ. Սաղաթելյանն ու Ս. Տիգրանյանը, ադրբեջանական բնակչության կողմից՝ Մահմեդ աղա Շախտախտինսկին։ Ուժեղ աթոռակռիվ եղավ դաշնակցականների և հայ լիբերալների միջև Ելիսավետպոլի նահանգում։ Այստեղ 1907 թ. փետրվարի 6-ին, ընտրությունների առաջին ատիճանով անցավ Սամսոն Հարությունյանը, որի թեկնածության վրա սլընդում էր հայ լիբերալ մտավորականությունը։ Սակայն դաշնակցականներին հաջողվեց Հարությունյանի փոխարեն պատգամավոր ընտրել Ս. Տեր-Ավետիքյանին։

Հետղհետե սաստկացող դասակարգային հակասությունների մթնոլորտում հասարակական շահերի բախումներն ավելի որոշակի և վճռական էին դարձնում ընտրական պայքարը դումայի շուրջը։ Զննյած լիբերալների և դաշնակցության ներհակություններին ու նրանց ընդհանուր հակապրոլետարական

67 «Մշակ», 1907, № 18։

դիրքավորմանը, հայ բուրժուազիան գերադասում էր իր ձայնը տալ ավելի որոշակի և անսքող ծրագրերով հանդես եկող դաշնակցությանը, քան անատամ հայկական լիբերալիզմին։ Կարսի մարզում անկուսակցական պատգամավոր ընտրվեց Հ. Աթաբեկյանցը, որին հայ լիբերալներն անմիջապես կագետ մկրտեցին։

Անդրկովկասում, ամբողջությամբ վերցրած, ուժերի հարաբերակցությունը վճռականորեն փոխվում էր, երբ ցարիզմին քննադատելով հանդերձ, հայ բուրժուական և մանրբուրժուական կուսակցությունները հանդես էին գալիս պրոլետարիատի և նրա կուսակցության դեմ։ Միայն Թիֆլիսում, ուր դաշնակցականները բավական ուժեղ էին և ընտրական մոլեգին կամպանիա էին տանում, նրանք կարողացան դումայի պատվիրակ ընտրել 24 մարդու, իսկ սոցիալ-դեմոկրատիայի կողմից ընտրվեց 52 մարդ[68]։ Փետրվարի 6-ին համաքաղաքային ընդհանուր ժողովում դաշնակցականների, բոլշևիկների և մենշևիկների կողմից դումայի պատվիրակության թեկնածուներ առաջադրվեցին Սիմոն Զավարյանը, Ստեփան Շահումյանը և Արշակ Զուրաբյանը։

Խուռներամ բազմության, թղթակիցների և քաղաքային վարչության անդամների ներկայությամբ իրենց ընտրական պլատֆորմների պաշտպանությամբ հանդես եկան դաշնակցության կողմից Ս. Զավարյանն ու Գ. Խաժակյանը, մենշևիկների կողմից՝ Նոյ Ռամիշվիլին և բոլշևիկների կողմից՝ Ստ. Շահումյանը։ Իր ելույթում Ստ. Շահումյանը, մերկացնելով դաշնակցությանը, սուր քննադատության ենթարկեց նաև մենշևիկներին։ Մասնավորելով իր խոսքը մենշևիկների կողմից ներկայացվող ընտրական «նակազի» մասին, Ստ. Շահումյանը ցույց էր տալիս, որ հրավիրվելիք դուման չի կարող դառնալ օրգանական գործունեության ասպարեզ։ Սակայն փետրվարի 6-ի ժողովում մենշևիկների բազմաթիվ մեքենայությունների հետևանքով դումայի պատգամավոր ընտրվեց Արշակ Զուրաբյանը։

Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ Պետական դումայի քննարկման գլխավոր հարցերից էր ագրարային-գյուղացիական հարցը։

Երկրորդ պետական դումայի նիստերում արծարծված կովկասյան իրականության ցավոտ հարցերից էր երկրամասում զեմստվո մտցնելու խնդիրը, որը դումայից առաջ էր ծագել։ Տակավին դարասկզբին, հայկական, վրացական, ադրբեջանական մամուլը բարձրացնում էր այդ հարցը, որը, սակայն, Գոլիցինի ժամանակ կառավարական բարձր ոլորտները չհասավ։ Փոխարքա Վորոնցով-Դաշկովի խոստումներով քաջալերված և ռուսական լիբերալ մամուլի համակրական վերաբերմունքից սրտապնդված բուրժուական մամուլի տեղական օրգաններն այդ հարցը նոր ուժով բարձրացրին։ Եվ իրոք, Երկրորդ դումայի առաջին քննության առարկաներից մեկը զեմստվոյի հարցն էր, որի նախաձեռնությունն իրենց վրա վերցրին կադետները։

Երկրորդ պետական դումայում Հ. Աթաբեկյանցը, ունենալով կադետ պատգամավորների աջակցությունը, բարձրացրեց Կարս քաղաքում տեղական ինքնավարություն մտցնելու խնդիրը։ Հատուկ գրությամբ Աթաբեկյանցը բացատրեց, որ չնայած իր աշխարհագրական, ռազմական և տնտեսական նշանակությանը, որպես Ռուսաստանի և Թուրքիայի մերձեցուցիչ օղակ, և բազան հազար բնակչությանը, Կարսը շարունակում է կառավարվել ոստիկանական

---

68 Տե՛ս Հ. Հակոբյան, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1958, էջ 214—215։

վարչության կողմից։ Նա հիշեցնում էր, որ տակավին XIX դարի վերջերից սկսած այս հարցը մի քանի անգամ դրվել էր Կովկասի կառավարչապետների առջև։ Նույնիսկ 1905 թ. մարտի 10-ին մարզի զինվորական նահանգապետը փոխարքային ներկայացրել էր այդ խնդիրը և մատնանշել դրա լուծման անհրաժեշտությունը։ Սակայն փոխարքայի և պետական խորհրդի միջև տեղի ունեցած քաշքշուկի պատճառով հարցը առկախ էր մնացել, և այժմ Աթաբեկյանցը դումայի միջոցով պահանջում էր շտապել «մինչև ինքնավարության վերաբերյալ նոր և կատարելագործված օրենսդրություն մշակելը, մըտցընել Կարս քաղաքում ինքնավարություն՝ համաձայն 1892 թ. հունիսի 11-ի օրենքի»։

Աթաբեկյանցի առաջարկը նախապես քննվել էր կադետական կուսակցության օրենսդրական հանձնաժողովում և ստորագրված էր 37 մեծ ու փոքր կադետների կողմից, որոնցից նշանավոր էին Ռոդիչչևը, Մուրոմվեն, Կիզևետրերը, Մակլակովը, Տեսլենկոն, Դոլգորուկովը, Աճեմյանը և ուրիշներ[69]։

1907 թ. ապրիլին Աթաբեկյանցը դումային ներկայացրեց մանրամասնորեն շարադրված մի այլ զեկուցագիր, որով մինիստրների խորհրդի նախագահից պահանջում էր Կովկասում կիրառելու համար շտապ կերպով քննարկման դնել մի շարք հարցեր, այդ թվում. 1. փոխարքայի խորհուրդը փոխարինել ժողովրդից ընտրված խորհրդակցական մարմնով, 2. բարեփոխել Կովկասում գոյություն ունեցող դավառական ոստիկանական հաստատությունները, 3. բարեփոխել գյուղական դատարանները և մայրենի լեզու մտցնել տեղական գյուղական դատարաններում, 4. Կարսի և Բաթումի զինվորական-ժողովրդական դատարանները վերացնել, 5. մայրենի լեզվով դասավանդություն՝ տարրական և ժողովրդական ուսումնարաններում և տեղական լեզուների դասավանդման կանոնավորումը՝ միջնակարգ ուսումնարաններում, 6. վերանայել գոյություն ունեցող չրարաշխական օրենքները, 7. դադարեցնել Ռուսաստանի ներքին նահանգներից վերաբնակիչների հոսանքը Կովկաս, 8. վերացնել գյուղացիների և կալվածատերերի միջև գոյություն ունեցող ժամանակավոր պարտավորյալ վիճակը և այլն։

Դումայի նիստերում, նրա առանձին հանձնաժողովներում ելույթներ ունեցան նաև Հ. Սաղաթելյանը, Ս. Տիգրանյանը, Մ. Շախտախտինսկին, Ս. Տեր-Ավետիքյանը՝ տնտեսական, մասնակարգային, ազգային-մշակութային խնդիրների, ռազմադաշտային դատարանների վերացման ու պարտադիր ուսուցում մտցնելու, բյուջեի, ագրարային և այլ հարցերի շուրջը՝ համապատասխան իրենց դասակարգային ըմբռնումների։

Վ. Ի. Լենինը ռուսական առաջին հեղափոխության տարիներին հանդես եկած կուսակցությունների ագրարային ծրագրի քննադատությանը նվիրված աշխատության մեջ անդրադարձել է նաև Հ. Սաղաթելյանի և Ս. Տեր-Ավետիքյանի ելույթներին։ Նա ցույց է տվել, որ հիշյալ պատգամավորները, մասնավորապես Հ. Սաղաթելյանը, բառացիորեն կրկնել են էսեռական կուսակցության ագրարային ծրագրի ուտոպիստական և ըստ էության ռեակցիոն մրցքերը՝ համաձայնեցնելու անհրաժեշտության մասին՝ մանր

---

69 Տե՛ս «Государственная Дума, второй созыв, стенографические отчеты», т. 1, СПб., 1907, стр. 985.

տնտեսությունները կապիտալիզմի ավերիչ ներգործությունից պահպանելու համար[70]։

Անդրկովկասյան պատգամավորներից անհամեմատ ավելի հաջող ելույթներ ունեցավ Ա. Զուրաբյանը։ Առաջին անգամ նա դումայում հանդես եկավ մարտի 27-ին՝ բյուջեի հոդվածների քննարկման հարցերի կապակցությամբ։ Հենվելով կադետական ճառախոսներին, Զուրաբյանը հայտարարեց, որ խոսք կարող է լինել ոչ թե դումայի ունեցած մեծագույն ֆինանսական իրավունքների, այլ այդպիսիք բոլորովին չունենալու մասին։ Անցնելով բյուջեի եկամուտների աղբյուրների հարցին, նա բացահայտեց այն կեղծիքը, որին ենթարկվում էին ժողովրդական մասսաներն ուղղակի և անուղղակի հարկման հետևանքով։ Երկրում բռնկված սովի և աղքատության պայմաններում, երբ միլիոնավոր գյուղացիներ անոթությունից ուռչում էին, իսկ բանվորների մեջ համատարած գործազրկություն էր տիրում, կառավարության փորձը՝ դումայի հավանությամբ ավելացնել պետական հարկերը, Զուրաբյանը համեմատեց անտիկ ժամանակաշրջանին բնորոշ՝ ստրկատերերի վերաբերմունքին՝ ստրուկների նկատմամբ[71]։

Ապրիլի 16-ի դումայի փակ նիստում, երբ զինվորական մինիստր Ռեդիգերի ներկայությամբ քննարկվում էր նորակոչիկների հարցը, Ա. Զուրաբյանը վեր հանեց ռազմաճակատներում միապետական զորքի պարտությունների բուն պատճառները և պերճախոս փաստերով ցույց տվեց սպաների դաժանությունը զինվորների նկատմամբ։ Զուրաբյանի ելույթը բուռն ոգևորություն առաջացրեց դումայում, ձախերն ուժգնորեն ծափահարեցին, աջերը բողոքեցին և աղաղակեցին, նախագահը «կարգի հրավիրեց» դահլիճը և երեք անգամ դիտողություն արեց ճառախոսին՝ բանակին ապստամբության կոչեր ուղղելու համար։ Չնայած դումայի նիստը փակ էր, այնուամենայնիվ այնտեղ տեղի ունեցած աղմկահարույց վիճաբանությունների լուրերը թափանցեցին մամուլի էջերը և Ա. Զուրաբյանի ելույթը առիթ դարձավ, որ սահմանադրական-քաղաքները «հայ պատգամավորի կողմից բանակի արժանապատվությունը վիրավորելու համար» հակահայկական նոր արշավանք սկսեն[72]։

1907 թ. մայիսի 24-ին դումայում Կովկասի կապակցությամբ առաջացած հարցապնդման ժամանակ, Զուրաբյանն ունեցավ իր վերջին ելույթը։ Մերկացնելով Արևմտյան Վրաստանի գյուղերում կազակային արշավախմբերի բռնությունները, Զուրաբյանը ցույց տվեց, որ փոխարքայի ներկայացուցչի՝ դումային տված բացատրությունները, թե պատժախմբերը ետ են կանչված, հիմքից զուրկ են և իրականությանը չեն համապատասխանում։ Հետո էլ անցնելով Հայաստանի գյուղերին, սկսեց ընթերցել Ելիսավետպոլի նահանգում գործող կազակային զորամասերի կատարած բազմաթիվ վայրագությունների և բռնությունների դեպքերի նկարագրություններով լի հեռագրերը[73]։

---

70 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկ., հ. 16, էջ 471—472։

71 Տե՛ս «Государственная Дума, второй созыв, стенографические отчеты», т. I, стр. 1161.

72 Տե՛ս «Государственная Дума, указатель к стенографическим отчетам, второй созыв», 1907, СПб., стр. 81; նաև տե՛ս «Մշակ», 1907, № 86։

73 Տե՛ս «Государственная Дума, второй созыв, стенографические отчеты», т. II, СПб., 1907, стр. 1079—1084.

Երկրորդ դուման ևս չարդարացրեց Նիկոլայ II-ի հույսերը, ուստի ցարը որոշեց ցրել նաև այս դուման։ 1907 թ. հունիսի 1-ին կառավարության ղեկավար Ստոլիպինը փակ նիստում պահանջեց դումայից անմիջապես արտաքսել սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի բոլոր 65 անդամներին և ստահոդ մեղադրանք ներկայացնելով պետական դավաճանության մեջ, նրանց բանտարկել տվեց։

1907 թ. հունիսի 3-ին օրենք հրատարակվեց պետական դուման ցրելու և Երրորդ դուման հրավիրելու մասին։ Այդ նոր օրենքով բանվորների և գյուղացիների ընտրական իրավունքներն ավելի սահմանափակվեցին։ Դրանով իսկ Ստոլիպինը պետական հեղաշրջում կատարեց, որովհետև կառավարությունը, խախտելով դումայի օրենսդիր իրավունքը, օրենք հրատարակեց առանց նրա գիտության։

1907 թ. հունիս-երեքյան հեղաշրջումով ավարտվեց Ռուսաստանի առաջին ժողովրդական հեղափոխությունը։ Հեղափոխությունը պարտվեց. ռեակցիան ժամանակավոր հաղթանակ տարավ, մինչև որ սկսվեց հեղափոխական շարժումների նոր վերելքը։

Հեղափոխության պարտության հիմնական պատճառն այն էր, որ չհաջողվեց միասնական հեղափոխական հոսանքի մեջ միավորել բանվորների, գյուղացիների և զինվորների ելույթները։

1905—1907 թվականների ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխությունը հերոսական գոտեմարտերի մի ամբողջ շրջան էր։ Հեղափոխությունը, խարխլելով ցարիզմի հիմքերը, լուրջ հարվածներ հասցրեց նաև համաշխարհային իմպերիալիզմի օիստեմին։ Նրա ազդեցությամբ բանվորական շարժումներ ծավալվեցին եվրոպական մի շարք երկրներում։ 1905 թ. հեղափոխությունը ուժեղ քափ հաղորդեց նաև Ասիայում տեղի ունեցող ազգային-ազատագրական և դեմոկրատական շարժումներին։

1905 թ. հեղափոխությունը մեծագույն իրադարձություն լինելով Ռուսաստանի ժողովուրդների կյանքում, միաժամանակ 1917 թ. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության գլխավոր փորձը հանդիսացավ։

1905—1907 թթ. հեղափոխությունը սկսվելով Ռուսաստանի կենտրոնում, լայն արձագանք գտավ նաև ազգային ծայրամասերում, այդ թվում՝ Հայաստանում։ Հեղափոխությունը ինչպես Ռուսաստանի, այնպես էլ հայ ժողովրդի պատմության մեջ նոր կարևոր էջ բացեց։ Այն սթափեցրեց և ոտքի հանեց ազգային սահմանափակ կյանքով ապրող փոքր ժողովուրդներին, ցույց տվեց, որ նրանց, ինչպես և հայ ժողովրդի ազատագրումը, հնարավոր է միայն Ռուսաստանի բոլոր ճնշված ժողովուրդների համատեղ պայքարով։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1907—1910 ԹԹ.)

1. ՍՏՈԼԻՊԻՆՅԱՆ ՌԵԱԿՑԻԱՆ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ռուսաստանում առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության պարտությունից հետո՝ 1907 թ. հունիսերեքյան հեղաշրջումով, սկսվեց դաժան ռեակցիայի ժամանակաշրջանը։ Ահարեկված ցարիզմն անցավ կատաղի հարձակման բանվորների, գյուղացիների, երկրի դեմոկրատական ու առաջադիմական բոլոր ուժերի դեմ։ Ցարական կառավարության գլուխ էր կանգնել արյունռուշտ Ստոլիպինը, որը երկիրը պատեց կախաղաններով։ Ամենուրեք մոլեգնում էին ռազմադաշտային· դատարանները, սևհարյուրակայիններն ու պատժիչ արշավախմբերը, որոնք գնդակահարում, աքսորում և անասելի հալածանքների էին ենթարկում բազմահազար մարդկանց։ Ստոլիպինականությունը՝ դա գազանային հաշվեհարդար էր աշխատավոր զանգվածների հետ։ Վ. Ի. Լենինը 1908 թ. նշում էր. «Մենք ապրում ենք ոչ թե «սովորական ընթացք», այլ քաղաքացիական պատերազմ. որ կառավարությունը ոչ թե կառավարում, այլ պատերազմում է, որ Ռուսաստանի դրությունը դժվարությամբ զսպվող ապստամբության դրություն է»[1]։

Դաժան ռեակցիան համակեց ինչպես Ռուսաստանը, այնպես էլ Անդրկովկասն ու Հայաստանը։ Ցարական կառավարությունը երկրամասը հայտարարեց ռազմական դրության մեջ և ոստիկանական հսկողությունն ուժեղացնելու համար ստեղծեց հատուկ մարմին՝ «Կովկասյան շրջանային պահնորդական բաժանմունք», ավելացրեց ոստիկանների քանակը։ Կովկասի փոխարքան 1907 թ. հունիսի 4-ին կարգադրում է նահանգապետերին՝ բոլոր հնարավոր միջոցներով պաշտպանել հունիսերեքյան ռեժիմը և ոչ մի դեպքում «չթույլատրել անկարգություններ-ցույցեր»։ Ստանալով այդ հրամանը, Երևանի նահանգապետը նույնպիսի կարգադրություն է անում գավառապետերին, իսկ նրանք էլ իրենց ենթականերին։ Այսպես, Էջմիածնի գավառապետը երրորդ տեղամասի պրիստավին գրում էր. «Սահմանել ամենախիստ ու զգոն հսկողություն և չթուլացող զննում տեղամասում հայտնաբերվող ագիտատորների ու այլ անձերի վրա, որոնք կարող են ազդեցություն ունենալ բնակչության վրա։ Այդպիսի անձնավորությունների երևան գալու դեպքում նրանց անմիջապես ձերբակալել և... արտակարգ կերպով ներկայացնել ինձ»։ Մանրամասն հրահանգավորումից հետո, ցարական աստիճանավորը պահանջում է ստեղծված

[1] Վ. Ի. Լենին, Երկ., հ. 16, էջ 557։

«կարգի խախտման փորձերը... անմիջապես կանխել ու ճնշել ամենավճռական միջոցներով...»[2]։

Ռեակցիան ծավալվում էր մեծապետական շովինիզմի սանձարձակ քաղաքականության պայմաններում։ Ավելի ուժեղացան ազգային ճնշումները և աստիճանաբար հայ ժողովրդի նկատմամբ կիրառվող հալածանքները։ Սահարյուրչակային Պուրիշկևիչը հայերին մեղադրում էր, այսպես կոչված, «սեպարատիզմի» ու «անհիշխանության» մեջ և պահանջում վարել ավելի խստություն հայահալած քաղաքականություն։ Իրականում ցարական կառավարողներին կատաղեցնում էր այն փաստը, որ Անդրկովկասի ժողովուրդները, այդ թվում նաև հայ ժողովուրդը, ակտիվ դեր էին կատարում համառուսական հեղափոխական շարժման մեջ։

Ցարական իշխանությունները անողոք դատաստան էին տեսնում աշխատավորների հետ Երևանում, Ալեքսանդրապոլում, Ալավերդում, Ղափանում և այլ վայրերում։ Բանտերը լցվեցին ցարիզմի համար «կասկածելի» մարդկանցով։ Նույնիսկ պաշտոնական նվազեցված տվյալներով միայն Երևանի նահանգում 1908 թ. բանտարկված էր 5351 մարդ, 1910 թ.՝ 6909 մարդ[3]։ Աշխատավորության դեմ հալածանքներն ուժեղացնելու նպատակով Կովկասի փոխարքան պահանջում էր «ընդարձակել Փոթիի, Բաքումի, Սուխումի, Ալեքսանդրապոլի, Երևանի, Շուշու և Կարսի բանտերը»։ Բանտային ծանր ռեժիմը գերեզման էր իջեցնում կամ խեղանդամ դարձնում շատերին։ Արյունալի կամայականությունները սովորական երևույթ էին։ Միայն այդ ճանապարհով, և այն էլ ոչ լրիվ տվյալներով, Երևանի նահանգում 1908 թ. զոհվել է 370 մարդ։ Ոստիկանական հետապնդումները հատկապես ուժգին էին բանվորական կենտրոններում։ Անդրկովկասյան երկաթուղու միայն Ալեքսանդրապոլի բաժանմունքի ավելի քան 126 աշխատողներ մղված էին քաղաքականապես անվըստահելի մարդկանց ցուցակում[4]։

Ցարական կառավարությունն սկսեց նաև դատավարական մի մեծ պրոցես, որը վարում էր հատուկ գործերի գծով արտակարգ լիազորություններով օժտված Նովոչերկասկի քննիչ Լրժինը։ Ձերբակալվել էին բազմաթիվ հայեր, այդ թվում մտավորականներ, աշխատավորներ և այլն։ Կալանավորվածների մի մասը դաշնակցականներ էին և դա առիթ տվեց պրոցեսն անվանելու «դաշնակցության դատավարության պրոցես» կամ «դատական պրոցես դաշնակցության գործի առիթով»։ Իրականում այն դուրս եկավ դաշնակցության շրջանակներից և վերածվեց հայ ժողովրդի դեմ ուղղված հալածանքի։ Պատահական չէ, որ ժամանակի մամուլը գրում էր ոչ թե սոսկ դաշնակցականների, այլ «հայերի դատավարության» մասին։ «Նովոյե վրեմյա» ռեակցիոն թերթի խմբագիր Մ. Մեննշիկովը «Հայերի դատավարությունը» հոդվածում նշում էր, թե «հայերը ընդհանուր անիշխանության ամենից վտանգավոր» տարրերն են, և «քայքայում են բովանդակ Կովկասը»[5]։ Չնայած դրան, նա հարկադրված էր խոստովանելու, որ «դատապարտյալների մեջ հանցավոր են ոչ բոլորը» և որ ինքը, օրինակ, ճանաչում է «քյուրիմացաբար ձերբակալված քիմիայի մի խա-

---

2 Մ. Վ. Ազգումանյան, *Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907—1917 թվականներին*, Երևան, 1959, էջ 23։

3 *Տե՛ս* «Обзор Эриванской губернии», за 1908—1910 гг.

4 *Տե՛ս* Մ. Վ. Ազգումանյան, նշված աշխ., էջ 26։

5 «Новое время», 19 января 1912 г.

ղաղասեր պրոֆեսորի»։ Այդպիսի վերապահումը բոլորովին դուր չեկավ «Ռուսկոյե զնամյա» թերթին, որը պահանջում էր մեղադրական աքտոի վրա նստեցնել ոչ թե 159, այլ առնվազն 3000 հոգի և անպայման ձերբակալել բոլոր հայ պրոֆեսորներին, բժիշկներին, գյուղատնտեսներին, արվեստագետներին, զինվորականներին և այլն[6]։

Այն ժամանակ ցարական չինովնիկ Ա. Խատիսյանն ասաց, որ «դաշնակցությունը ծագեց երկգլխանի արծվի հովանու տակ»[7] իսկ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը Ստոլիպինին 1908 թ. ուղղած իր նամակներից մեկում գոհունակությամբ էր նշում, որ դաշնակցականները բռնությամբ ու սպառնալիքով ճնշում են հեղափոխական շարժումները։ Ստոլիպին-կախաղը ևս հիացած էր, որ «դաշնակցությունն իր վրա է վերցրել ոստիկանական ֆունկցիաներ»[8]։ Ա. Մռավյանը, մերկացնելով դաշնակցականների կեղծ սոցիալիզմը, նրանց անվանել է «ոստիկանական սոցիալիստներ», որոնց կնախանձեր «ինքը՝ Ստոլիպինը»[9]։

Այնուամենայնիվ ցարիզմին դուր չէր գալիս դաշնակցության այսպես կոչված «սոցիալիստական» փետրավորումը։ Իրականում այդ կուսակցությունն ընդհանուր ոչ մի կապ չուներ իսկական սոցիալիզմի հետ և նրա ծրագրի «սոցիալիստական» գունազարդման նպատակն էր խարեության ճանապարհով մասսաներ նվաճել։ Հենց նույն դիրքերից էլ դաշնակցությունը մտավ II Ինտերնացիոնալի մեջ։ Բնորոշ է, որ երբ 1907 թ. օգոստոսին՝ Շտուտգարտի կոնգրեսում քննվում էր այդ հարցը, բոլշևիկները (այդ թվում Բոգդան Կնունյանցը) վճռականորեն դեմ դուրս եկան դաշնակցությանը II Ինտերնացիոնալի մեջ ընդունելուն։ Դաշնակցականները հարկադրված էին խոստովանելու, որ իրենց կուսակցությունը Ինտերնացիոնալի մեջ մտավ հակառակ «ռուս ու հայ սոցիալ-դեմոկրատների ճիգերին, բողոքներին»[10]։ Դա կատարվեց II Ինտերնացիոնալի օպորտունիստների աջակցությամբ և ռուսական էսեռների անմիջական երաշխավորությամբ (դաշնակցությունը, ինչպես նաև վրացական սոցիալ-ֆեդերալիստները, մտնում էին Ինտերնացիոնալի ռուսական սեկցիայի էսեռական ենթասեկցիայի մեջ)։

Դաշնակցությունը, մտնելով II ինտերնացիոնալի մեջ սերտ կապեր հաստատեց միջազգային օպորտունիզմի պարագլուխների հետ։ Ինչ մնում է սոցիալիստական գործունեությանը, ապա դա շատ հեռու էր դաշնակցությունից և նույնիսկ նրա պատմագիր Մ. Վարանդյանը նշել է. «Դաշնակցության սոցիալիզմը... մնացել է առհասարակ տեսական մարզանքների աշխարհում, ծրագրի ու գրականության մեջ»[11]։

Ցարական իշխանությունները նկատի ունենալով դաշնակցության «սոցիալիստական», «հեղափոխական» ֆրազոլոգիան ու տեռորիստական ակտերը, նրա դեմ դատական գործ սկսեցին։ Իրեն հեղափոխական համարող կուսակցությունը կօգտագործեր այդ առիթը և նման պրոցեսը կվերածվեր հակացարական քաղաքական ցույցի։ Բայց այդ չէր կարելի սպասել հակահեղափոխա-

6 Տե՛ս «Русское знамя», 29 января 1912 г.

7 «Ծիրիտասարդ Հայաստան», 25 ապրիլի 1906 թ.։

8 «Красный архив», 1929, № 3 (34), стр. 192, 206.

9 «Նոր խոսք», № 7, 3 սեպտեմբերի 1906 թ.։

10 «Դրոշակ», 1907, № 8, էջ 110։

11 Մ. Վարանդյան, Հ. Յ. Դաշնակցության պատմություն, հ. 1, Փարիզ, 1932, էջ 477։

կան դաշնակցությունից։ Այդ են հաստատում նաև աշխատավորների ցույցումները, որոնց մեջ փաստերի ուժով մերկացվում են դաշնակցության բռնություններն ու կամայականությունները։ Օրինակ, Երևանի գավառի Բիրալի գյուղի բնակիչ Խ. Տեր-Սարգսյանը 1909 թ. օգոստոսի 10-ի հարցաքննության ժամանակ ասաց, որ Կարազաբսի համայնքում ստեղծվել է դաշնակցական կոմիտե՝ իր նախագահով, գանձապահով և զինվորներով. «Կոմիտեի գործունեությունն արտահայտվել է նրանով, որ նրանք գյուղացիներից փող են հավաքել... գյուղացիների մեջ ծագած քրեական ու քաղաքացիական գործերն են քննել, և ընդհանրապես նրանք եղել են գյուղական համայնքի լիակատար տերերը»[12]։ Ահա մի ուրիշ վկայություն. Ալեքսանդրապոլի գավառի Դյոզալդարա գյուղի բնակիչ Ա. Խաչոյանցը 1910 թ. փետրվարի 18-ի հարցաքննության ժամանակ նշեց, որ տեղական դաշնակցականները՝ իրենց զինվորներով բռնանում են գյուղացիների վրա, ամեն տնից ամիսը մեկ անգամ փող հավաքում, արգելում նրանց բողոքներ գրելու, չենթարկվողներին պատժում, ծեծում ու բանտարկում։ Այդ ցուցումը հաստատեցին նույն գյուղի բնակիչներ Ստ. Գինոսյանը և Ի. Հարությունյանցը, որոնք ասացին, թե դաշնակցական կոմիտեի անդամները (Հ. Աղաբաթով, Ս. Ավետով և ուրիշներ) «տնօրինում են գյուղի բոլոր գործերը», «փող հավաքում իրենց կուսակցության օգտին», իսկ «չլսանկացողներին ծեծում ու տանջում»[13]։ Ալեքսանդրապոլի գավառի Սրվանձոտ գյուղի բնակիչ Ե. Շահինյանցը նշում էր, որ իրենց գյուղի դաշնակցական կոմիտեն (Գ. Գասպարով, Ա. Այվազով և ուրիշներ) զբաղված է գյուղացիների ճնշմամբ ու կեղեքմամբ։ Հատկապես շատ ծանր էր դրամական տուրքերի գանձումը, որը կատարվում էր դաշնակցական զինվորների ուղեկցությամբ։ «Դրամների գանձումը տեղի է ունենում մահվան սպառնալիքի տակ»[14]։

Անհերքելի փաստերը վկայում են, որ, իրոք, դաշնակցությունը մի նոր բռնակալություն էր հայ իրականության մեջ և որքան շուտ կատարվեր նրա մերկացումը, այնքան կարագանար աշխատավոր մասսաների քաղաքական լուսավորումն ու հեղափոխական պայքարը։ Ս. Սպանդարյանը, անարգանքի սյունին գամելով դաշնակցականներին, նրանց համարել է «հայ կյանքի ցեցեր», «հայ բանվոր դասակարգի գիտակցությունը բթացնողներ և հայ գյուղացիությանը ամենաանամոթ կերպով հարստահարողներ ու կեղեքողներ»[15]։

* * *

Ցարիզմն իր դաժան քաղաքականությունն Անդրկովկասում իրականացնում էր հենվելով հայկական, վրացական ու ադրբեջանական կապիտալիստների և կալվածատերերի վրա. «Ռուսաստանը,— գրել է Վ. Ի. Լենինը,— ժողովուրդների բանտ է ոչ միայն ցարիզմի ռազմա-ֆեոդալական բնույթի շնորհիվ, ոչ միայն այն պատճառով, որ վելիկոռուսական բուրժուազիան պաշտպանում է ցարիզմը, այլև այն պատճառով, որ լեհական և այլ բուրժուազիան կապիտալիստական էքսպանսիայի շահերին զոհաբերել է ազգերի ազատությունը, ինչպես դեմոկրատիզմը ընդհանրապես»[16]։

---

12 «Дело партии дашнакцутюн», т. 5. стр. 3575.
13 Նույն տեղում, հ. 3, էջ 1797—1798։
14 Նույն տեղում, էջ 1939։
15 Սաւրեն Սպանդարյան, Երկեր, հ. 1, էջ 68։
16 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 524։

Ցարական ռեակցիան ոչ միայն ուժեղացրեց աշխատավորների քաղաքական իրավազրկությունը, այլև վատթարացրեց նրանց տնտեսական դրությունը։

Հայաստանի բանվորությունը ենթարկվում էր ամենադաժան շահագործման։ «Բակինակի ոսկորչի» բոլշևիկյան թերթը, նկարագրելով Ալավերդու բանվորների տաժանակիր վիճակը, ցույց էր տալիս, որ ֆրանսիական կապիտալիստները տառացիորեն քամում էին բանվորների վերջին հյութերը և «առատ հունձ կատարում»։ Աշխատանքային օրը տևում էր 12—18 ժամ, բանվորները ստանում էին չնչին աշխատավարձ և վարում կիսաքաղց կյանք։ «Խավարը, կեղտոտությունը, դատարկությունը և աղքատ կյանքի ֆիզիկական տանջանքները խեղդում են մեր մեջ մարդկային բոլոր զգացումները, մեզ դարձնում են բանող անասուններ,— գրում էին բանվորները։ Բայց այդպես չէր կարող երկար շարունակվել։ Թերթը վերջում հիշտում էր, որ «միայն համախմբվածությունը, կազմակերպվածությունը կարող է փոխել այդ բոլորը»[17]։

Անտանելի ծանր էր բանվորների դրությունը Ղափանի պղնձահանքերում, ուր, ինչպես վկայում են ժամանակի փաստաթղթերը, բանվորը մի «մոռացված արարած է, նրա համար մտածող ոչ ոք չկա։ Նա աշխատող եզան պես պիտի... ձիգ տա, որտեղ և ինչում նրան լծում են»[18]։ Դրությունն աննախանձելի էր նաև արտադրության մյուս ճյուղերում։ Ամենուրեք բանվորները, մշակները, արհեստավորները չարքաշ կյանք էին վարում։

Ծանր էր նաև Հայաստանի գյուղացիության դրությունը։ Համատարած սովի տարիները կրկնվում էին հաճախակի և լափում հազարավոր մարդկանց։ Հայաստանի աշխատավորը մի կերպ քարշ էր տալիս իր կիսաքաղց գոյությունը և կանգնում սովամահության կամ այլ ահավոր վտանգի առաջ։ Ժամանակակիցներից մեկը, նկարագրելով Զանգեզուրում տիրող անասելի ծանր դրությունը, 1908 թ. գրել է. «Սովը արդեն սկսել է իր համաճարակ կոտորածի նշանները ցույց տալ։ Այս բոպիս Մողես գյուղում, որը բաղկացած է 30—40 աղքատ տնից և որը ենթարկվել է քալանի ու կողոպտուի... մի յոթ տարեկան երեխա է մեռել քաղցից։ Այդ դեպքը դեռ սովի ահ նախանշանն է, իսկ թե ինչ է լինելու մոտիկ ապագայում այդ մասին մտածելն անգամ սոսկալի է»[19]։ Մոլեգնում էին և տարափոխիկ հիվանդությունները, որոնք մասսայաբար «հնձում էին» աշխատավորներին։

Հայաստանի աշխատավոր զանգվածների քաղաքական իրավազրկությունը, տնտեսական ճնշմանն ու ազգային հալածանքներին ավելացավ ռեակցիայի հարձակումը նաև գաղափարական ճակատում։ Սկսվեց հետադիմական ուժերի կատաղի արշավ, որին մասնակցում էին ոչ միայն սևհարյուրակային միապետականները, եկեղեցականներն ու բուրժուական մտավորականները, այլև մանրբուրժուական գրչակներն ու ամեն կարգի օպորտունիստներ, ռևիզիոնիստներ։ Նրանք տարբեր ձևերով փորձում էին վարկաբեկել հեղափոխությունն ու մարքսիզմը, քարոզել խավարամտություն, իդեալիզմ, ժողովրդական մասսաների սարկամտություն ու հպատակություն։

Գաղափարական ճակատում ռեակցիայի հարձակմանն ըստ էության տոն էր տալիս բուրժուազիան, որը ցարիզմի հովանավորությամբ սանձարձակ

---

17 «Бакинский рабочий», 24 октября 1908 г.

18 Մ.Ի-ի Հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 34, գ. 6, թ. 34—35։

19 «Ժամանակ», 1908, № 2։

կամպանիա էր մղում ժողովրդի ազատագրական պայքարի դեմ։ Հատկապես հոխորտում էին կադետները, որոնց Վ. Ի. Լենինն անվանել է «հեղափոխության գերեզմանային որդեր»[20]։ Նրանք 1909 թ. հրատարակեցին «Вехи» ժողովածուն, որն օրհնում էր ցարական իշխանությանը՝ «ժողովրդական ցասումը» սվիններով խեղդելու համար։ Պատահական չէ, որ «լիբերալ ինտելիգենտության այդ հանրագիտարանը» դարձավ հակահեղափոխության գաղափարական դրոշը։

Ռեակցիայի հարձակումը գաղափարական ճակատում նմանօրինակ արտահայտություն ունեցավ նաև Անդրկովկասում, այդ թվում՝ Հայաստանում։

Բուրժուական «Մշակ» թերթը, դաշնակցական «Հորիզոնը», տիրապետական «Հովվերգում էին ցարական ռեժիմը և ժողովրդից պահանջում հաշտվել նրան։ Ակտիվ էր գործում եկեղեցին, որի սպասավորները, ինչպես նշել է Ս. Սպանդարյանը, քարոզում էին, թե հայ ժողովուրդը «քրիստոնյա ժողովուրդ է, իսկ քրիստոնյաներին վայել չէ խառնվել քաղաքականության մեջ, որ իրենց այդ բնական հատկությանը չդավաճանելով՝ հայերը միայն ու միայն պետք է հավատարիմ մնան իրենց պատմական պալլադիումէջմիածնին։ Իսկ այն ամենը, ինչ որ դրանից ավելի է և դրանից անկախ,-ի չարին է»[21]։ Ինչպես ամենուրեք, այնպես էլ Հայաստանում եկեղեցին, կրոնը կոչված էին ամրապնդելու տիրող կարգերը։ Վ. Ի. Լենինն ընդգծել է, որ շահագործողներն իրենց իշխանությունը պահպանելու ու ամրապնդելու համար կարիք ունեն երկու զենքի՝ մտրակի, որով հարվածում են աշխատավորներին, և տիրտերի, որը սրբագործում է այն։

Ռեակցիայի տարիներին Անդրկովկասում ու Հայաստանում ավելի ուժեղացավ բուրժուական նացիոնալիզմը, որի ջատագովները զրպարտում էին հեղափոխական պայքարը, մարքսիզմը, բոլշևիզմը և քարոզում ազգայնականություն, իդեալիզմ, մախիզմ։ Դաշնակցականները և այլ նացիոնալիստներ (Ե. Ֆրանգյան, Ս. Հովհաննիսյան, Արշ. Հովհաննիսյան, Ե. Կուզիչյան և ուրիշներ) 1910 թ. Երևանում հրատարակեցին «Մխիթար» ժողովածուն, որը չնայած կոչվում էր «զուտ գիտական ու փիլիսոփայական», բայց ըստ էության ոչ մի ընդհանուր բան չուներ գիտության ու փիլիսոփայության հետ։ Այն մախիզմի արտահայտություններից մեկն էր, որը միայն խավարամտություն էր սերմանում։ Հայ մախիստները քարոզում էին սուբյեկտիվ իդեալիզմ և աշխարհը պատկերում որպես առանձին անհատի զգայություն։ Ֆրանգյանը գրում էր, որ «գոյը պետք է մտածել որպես զգայություն»[22]։ Ուրեմն, չկա մատերիա, մարդու գիտակցությունից անկախ օբյեկտիվ ռեալականություն։ Ահա ինչպիսին էր մախիզմը, Լենինի արտահայտությամբ այդ «անուղեղ» փիլիսոփայությունը։

Աշխատավոր զանգվածների շահը պահանջում էր դիմակայել ցարական ռեակցիային, հակահարված տալ բուրժուական ու մանրբուրժուական հարձակումներին, ռևիզիոնիստներին, հետևողականորեն պաշտպանել պրոլետարիատի գաղափարախոսությունը, մարքսիզմը, բոլշևիզմը։

---

20 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 12, էջ 349։

21 Սուրեն Սպանդարյան, Երկեր, հ. 1, էջ 239

22 «Դարձ», 4 նոյեմբերի 1908 թ.։

2. ՊԱՅՔԱՐ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՀԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԻ ԴԵՄ

Ստոլիպինյան դաժան ռեակցիան անտանելի պայմաններ ստեղծեց հեղափոխական աշխատանքի համար։ Բայց դա միաժամանակ յուրահատուկ փորձաքար դարձավ ժողովրդի և կուսակցությունների կյանքում։ Այն ժամանակ Հայաստանում ու հայ իրականության մեջ գործում էին բուրժուական ու մանրբուրժուական մի շարք կուսակցություններ ու հոսանքներ՝ դաշնակցականներ, հնչակյաններ, «սպեցիֆիկներ», մենշևիկներ, էսէռներ, լիբերալներ, կադետներ և այլն, որոնք իրենց ազգայնական, արկածախնդրական քաղաքականությամբ միայն վնասում էին հայ ժողովրդի ազատագրության գործին։ Հատկապես կործանարար դեր էր կատարում բուրժուա-նացիոնալիստական դաշնակցությունը։

Դաշնակցությունը միատարր չէր և նրա շարքերում խմորումներն ու երկպառակությունները, անջատողական հոսանքները կրել են մշտական բնույթ։ Այդ պայքարն ավելի ուժեղացավ ռուսական առաջին հեղափոխության տարիներին, երբ մեծ իրադարձությունների ազդեցության տակ ոմանք սթափվեցին, իսկ մյուսները դարձան ավելի հետադիմական։ Ընդհանուր առմամբ դաշնակցությունն աստիճանաբար հեղինակազրկվում էր աշխատավորների աչքում և, ինչպես նշել է Ստ. Շահումյանը 1907 թ., «այդ կուսակցությունը քայքայվում ու կորցնում է իր ոտքի տակի հողը։ Հասունացած բանվորները փախչում են այդ կուսակցությունից, որպես այնպիսի կուսակցությունից, որը վնաս է բերում նրանց»[23]։ Դաշնակցության վարկաբեկման փաստն ակներև է դառնում նաև աշխատավորական մյուս խավերի մեջ։ Նույնիսկ Երևանի նահանգապետը 1907 թ. իր զեկուցագրում մատնանշում էր, որ «ներկայումս «դաշնակցության» վարկը բնակչության աչքում... բավականաչափ նսեմացել է։ Խաղաղ... հայ բնակչությունը մի շարք դառն փորձերով հավատացած է նրանում, որ իր շահերի ինքնակոչ պաշտպանները և նրանց ինքնուրույնության համար պայքարողները հետապնդում են միայն իրենց անձնական, նեղ-էգոիստական, նույնիսկ ոչ-ազգային շահերը և ներկայացնում են իրենցից ոչ այլ ինչ, եթե ոչ հիվանդագին ուռուցք կենդանի ժողովրդական օրգանիզմի վրա»[24]։ Նույն նահանգապետը 1908 թ. հունիսի 9-ի ոստիկանության դեպարտամենտին դաշնակցության մասին գրել է. «Վերջին ժամանակներս նրա գործունեությունը Երևանի նահանգում զգալիորեն կրճատվել է և նրա շարքերում առաջ է եկել պառակտում»[25]։

Այդ ժամանակ, իրոք, դաշնակցության ներսում բավականաչափ ուժեղացան պառակտիչ ու անջատողական հոսանքները, որոնք հանդես էին գալիս աջից ու «ձախից»։ Աջ, մոլի խմբապետական շարժում էր միհրանականությունը, որն այդպես էր կոչվում իր ղեկավար Միհրանի (Գաբրիել Քեշիշյանի) անունով։ Նա վճռականորեն դեմ էր դաշնակցության սոցիալիստական գունաղարդմանը և կոչ էր անում պայքարել միայն «Թուրքահայ դատի» համար. «Դաշնակցությունը,— ասում էր Միհրանը,— հիմնված է ոչ թե սոցիալիզմի համար, այլ Թուրքահայերի դատը պաշտպանելու համար։ Եթե ես նրա շար-

23 Ստ. Շահումյան, նվԺ, հ. 1, էջ 395։

24 ՍՍՀՄ ԿԳԳԱ ֆ. 94, գ. 38, 1908 թ. 9։

25 ՍՍՀՄ ՀՀՇԿԳԱ, ֆ. «Ոստիկանության դեպարտամենտ», IV գործավարություն, № 108, մ. 108, 1907, թ. 31։

քերի մեջ եմ, այս պարզապես այն պատճառով, որ ուխտել եմ վրեժ հանել թուրքերից, որոնք սպանել են իմ քույրերին և եղբայրներին։ Այսպես է և ամեն մի ուրիշ թուրքահայ»[26]։

Այդ ոգով խմբապետ Միհրանը 1906 թ. «Մշակի» էջերում (թերթի խմբագրության) և հատկապես Հ. Առաքելյանի աջակցությամբ, հանդես եկավ մի շարք հոդվածներով, որոնց մեջ կոչ էր անում դաշնակցության անդամներին՝ մերժել «Կովկասյան նախագիծը», ճանաչել միայն թուրքահայ դատը, վերացնել «կուսակցության բյուրոկրատիկ կազմը» և կռվել նախկին նահատակների նման, որոնց նշանաբանն էր «Կեցցե ֆիդային, որի մահը կյանք է ծնելու»։

Խմբապետ Միհրանը կարողացավ համախոհներ գտնել, կազմեց իր խումբը ու «Ժամանակավոր զինվորական խորհուրդ», որպեսզի դաշնակցության մեջ հաստատի իր «ռազմական դիկտատուրան»։ Շուտով նա անցավ ակտիվ գործողությունների՝ սկզբում Թիֆլիսում և ապա ուրիշ վայրերում։ Միհրանը իր ընկեր Շխալու (սալմաստեցի Ստեփան Մելիք-Մկրտչյանցի) հետ միասին 1906 թ. հասավ նաև Էջմիածին, որպեսզի ձերբակալի այնտեղ գումարված, այսպես կոչված, ազգային «Հիմնադիր ժողովի» դաշնակցական անդամներին ու դատի նրանց։ Սակայն դա նրան չհաջողվեց, որովհետև մի կողմից՝ դաշնակցականներն զգուշացվեցին Միհրանի մտադրությունների մասին, իսկ մյուս կողմից, որը և գլխավորն էր, շուտով Էջմիածնի «Հիմնադիր ժողովը» ցրվեց ցարական իշխանության կողմից։

Միհրանի արարքները դուր չեկան դաշնակցական շեֆերին, որոնք և որոշեցին հաշվեհարդար տեսնել նրա հետ։ Այդ հարցով զբաղվեց նաև դաշնակցականների 4-րդ ընդհանուր ժողովը (1907 թ.)։ Դաշնակցականներն սկզբում՝ 1906 թ. սպանեցին Շխալուն, ապա 1907 թ. վիրավորեցին Միհրանին, որը և ցարական իշխանություններին մատնեց իր դաշնակցական նախկին ընկերներին[27]*։ Միհրանի եղբայր Հաբեթը սպանեց դաշնակցական ղեկավարներից Ե. Թոփչյանին։ Վրեժխնդիր դաշնակցականներն ուժեղացրին իրենց հետապնդումները և 1910 թ. սպանեցին Միհրանին, ինչպես նաև շարքից հանեցին նրա համախոհներին։*

Դաշնակցության երկպառակտություններն ու գզվռտոցները օգտագործում էին ցարական ու թուրքական իշխանությունները և ավելի ուժեղացնում հալածանքները հայ ժողովրդի նկատմամբ։

Միհրանականությունը դաշնակցության հերթական արկածախնդրությունն էր, նրա օրինավոր ծնունդն ու ժառանգը։ Ըստ էության ամբողջ դաշնակցությունը ներծծված էր միհրանականությամբ, որը, սակայն, տարբեր ժամանակ հանդես էր գալիս տարբեր ձևերով։

Դաշնակցության կազմալուծումը դրսևորվեց նաև «ձախից»։ 1906 թ. այդ կուսակցությունից անջատվեց «երիտասարդ դաշնակցականների» խումբը, որը գլխավորում էին Արսեն Ամիրյանը և Լևոն Աթաբեկյանը։ Այդ խմբի անունից 1907 թ. Բաքվում լույս տեսավ Լ. Աթաբեկյանի (Րիխարդ) «Ինչո՞ւ ենք անջատվում դաշնակցությունից» բրոշյուրը, որտեղ նշված է, որ «դաշնակցությունը երբեք էլ չի եղել համախոհների մի կազմակերպություն»[28]*։ Լ. Աթաբեկ-*

---

26 Լեո, *Անցյալից*. Թիֆլիս, 1925, էջ 197։

27 *Տե՛ս* «Дело партии дашнакцутюн», т. 1, стр. 101—106, 144—154.

28 Րիխարդ, *Ինչո՞ւ ենք անջատվում դաշնակցությունից*, Բաքու, 1907, էջ 14—15։

յանը դա բացատրում էր նրանով, որ դաշնակցության մեջ հյուրընկալվում են ամեն կարգի մարդիկ՝ շահագործողն ու աշխատավորը, կղերն ու անաստվածը և այլն։

Ավելի հեռուն գնաց «երիտասարդ դաշնակցականների» մյուս ղեկավար Ա. Ամիրյանը (Մրավյան), որը 1906 թ. հրատարակեց «Ժամանակ է սթափվելու» բրոշյուրը։ Այստեղ նա մերկացնում էր դաշնակցության բյուրոկրատիային և կոչ անում պայքար մղել շահագործողների դեմ. «Պետք է կռվել հայ բուրժուազիայի դեմ։ Իսկ կռվել բուրժուազիայի դեմ ներկա պայմաններում կարելի է միայն մի ճանապարհով՝ այն, որ ցույց է տվել Մարքսը»[29]։

Ամիրյանը 1907 թ. հանդես եկավ նոր աշխատությամբ՝ «Դաշնակցության կրիզիսը» վերնագրով, որտեղ նա դաշնակցությանն անվանում էր «հայ բուրժուազիայի դասակարգային կուսակցություն» և գտնում, որ «որքան շուտ ազատվի աշխատավոր դեմոկրատիան բուրժուական մտածողությունից, որքան շուտ հարե նա սոցիալիզմին, այնքան հեշտ և այնքան շուտ նա կգտնի իր փրկությունը։ Որովհետև աշխատավոր ժողովրդի փրկությունը միայն կապիտալիստական կարգերի վերացման և սոցիալիզմի հաղթանակի մեջ է»[30]։

Ամիրյանը մերկացնում էր դաշնակցության փորձերը գունազարդվելու «սոցիալիզմի» անվան տակ և ցույց էր տալիս, որ «դաշնակցության մեջ սոցիալիզմի հյուրն անգամ չկա»։ Ջանգվածներ շահելու նրա փորձերը սոսկ «դուբատովյան միտումներ» էին։ Ամիրյանը մատնանշում էր, որ «դաշնակցական պսպղուն գործիչները», թեև զուրկ են մտավոր ու բարոյական արժանիքներից, բայց օժտված են «դեմագոգիական տաղանդով» և նրանց «լեքսիկոնի մեջ ամեն բան կարելի է գտնել, և՛ ազգ, և՛ դասակարգ, և՛ լիբերալիզմ, և՛ կրոն, և՛ անաստվածություն, և՛ համազգային համերաշխություն, և՛ դասակարգային պայքար... Տեղը եկավ նրանք ազգային են, տեղը եկավ՝ սոցիալիստ, տեղը եկավ՝ նույնիսկ կղերական»[31]։

Ամիրյանը շեշտում էր ռուսական հեղափոխության ազատարար նշանակությունը հայ ժողովրդի համար։ Նա, դիմելով հատկապես դաշնակցության ազդեցության տակ գտնվող մասսաներին, գրել է. «Եթե դուք ձգտում եք ազատության, ապա կտրեցեք ձեր կապը հավիտենապես դավաճան բուրժուազիայի հետ... կտրեցեք ձեր կապը դաշնակցական բյուրոկրատիայի հետ... կտրեցեք ձեր կապը ժողովրդի բոլոր թշնամիների հետ և միացած Ռուսաստանի բոլոր ազատասեր ժողովուրդների հետ, նետվեցեք Ռուսաստանի մեծ հեղափոխության գոռ հորձանքների մեջ, որտեղ կգտնեք դուք ազատություն ձեր դժբախտ երկրի»[32]։

Ռուսական հեղափոխությունը համարելով հայ ժողովրդի փրկության ուղին, Ամիրյանը մերկացնում է դաշնակցության կործանարար արևմտյան դիրքորոշումը. «Մենք գնում ենք ուղիղ և անսայթաք ճանապարհով, այն ճանապարհով, որին մենք ինքներս ենք հարել, այն ճանապարհով, որ տանում է մեզ դեպ ազատություն, բայց մենք չենք կամենում գնալ այն ճանապարհով,

---

29 Մրավյան. Ժամանակ է սթափվելու, 1906, էջ 9։
30 Մրավյան. Դաշնակցության կրիզիսը, 1907, էջ 14։
31 Նույն տեղում, էջ 13։
32 Նույն տեղում, էջ 49։

որ տանում է մեզ դեպ ողորմություն՝ եվրոպական գծուծ ու ագահ բուրժուազիայից»[33]։

Այս բոլորով հանդերձ «երիտասարդ դաշնակցականները» կարծում էին, թե կարելի է դաշնակցությունը բարեհորոգել, դարձնել հեղափոխական, սոցիալիստական։ Չնայած այդ պատրանքին, Լ. Աթաբեկյանի և հատկապես Ա. Ամիրյանի քննադատությունը սթափեցնող նշանակություն ունեցավ բազմաթիվ շարքային դաշնակցականների համար։ Մինչդեռ դաշնակցության ղեկավարները ատելությամբ ու թշնամաբար ընդունեցին այն և փորձեցին ամեն կերպ վարկաբեկել նրա հեղինակներին, որպես «ուրացողների» ու «սրբապիղծների»։ Ե. Թոփչյանը (Վահան) 1907 թ. հրատարակեց «Անջատվածները» պատասխան-գրքույկը, որտեղ նա մեղադրում էր «անջատվածներին», իսկ Ա. Ամիրյանին էլ անվանում «ամենաթունդ հակադաշնակցական»։

«Երիտասարդ դաշնակցականները» հրատարակեցին նաև մի շարք թռուցիկներ, որոնց մեջ դատապարտում էին հայ-ադրբեջանական կոտորածները, ինչպես նաև 1907 թ. փետրվարի 4-ի ու 7-ի Բաքվի ընդհարումները, որոնց ժամանակ իրար դեմ կռվում էին անարխիստ-ունեզրկիչներն ու հայ բուրժուազիայի գույքի պաշտպան դաշնակցական զինվորները։ Թռուցիկներից մեկում մերկացվում էին ինչպես անարխիստները, որոնք «հեղափոխության սուրբ գործը վեր են ածել անընդհատ կողոպուտի, հափշտակությունների և արյունահեղության», այնպես էլ դաշնակցական զինվորները, որոնք «դարձել են բուրժուազիայի վարձկանները և հաշտություն կնքել ոստիկանության հետ»։ Այնուհետև «երիտասարդ դաշնակցականները» գրում էին. «Մենք դիմում ենք բոլոր նավթային շրջանների բոլոր աշխատավորներին և կոչ ենք անում նրանց, որպեսզի նրանք բարձրաձայն հայտարարեն բուրժուազիայի ու կառավարության յուրաքանչյուր ոխտադրժության մասին, որպեսզի խուսափեն դրանցից և անարգանքի սյունին գամեն ամեն մի բանվորի, ով հանդես կգա որպես վարձու մարդասպան»[34]։ Ստ. Շահումյանը գրեց հատուկ հոդված «Երիտասարդ դաշնակցականների պրոկլամացիան» վերնագրով, որտեղ ողջունեց «անջատականների» խմբի ելույթը, այն դիտելով որպես դաշնակցության կազմալուծման նշան. «Մենք ուրախությամբ ողջունում ենք այդ համարձակ և բացահայտ պայքարը դաշնակցականների կուսակցության մեջ տիրող բուրժուական ոխտադրժության ու անխղճության դեմ։ Մեզ վաղուց հայտնի է, որ խայտաբղետ տարրերից արհեստականորեն կազմված դաշնակցական կուսակցությունում և, մասնավորապես, մի կողմից, բանվորական ու հեղափոխական երիտասարդության և, մյուս կողմից, այդ կուսակցության բուրժուա-նացիոնալիստական մասի միջև արդեն վաղուց կատաղի պայքար է մղվում... «Երիտասարդ դաշնակցականների» խմբի ելույթը կուսակցության պրոլետարական և բուրժուական մասի ընդհարման նշան է»[35]։ Ստ. Շահումյանը կոչ էր անում գիտակցության եկած հայ բանվորներին բոլշևիկների ղեկավարությամբ և մյուս ազգերի աշխատավորների հետ միասին համատեղ պայքար մղել տիրող կարգերի դեմ. «Ձեր պայքարը՝ հայ բուրժուազիայի հետ կապերը խզե-

33 Նույն տեղում, էջ 50։
34 Ստ. Շահումյան, երկ., հ. 1, 1975, էջ 395—396։
35 Նույն տեղում, էջ 396—397։

յու և սոցիալ-դեմոկրատական կուսակցության դրոշի ներքո հայ, թուրք և վրացի բանվորների հետ միասնորելու լավագույն դրամականն էր[36]։

Բոլշևիկների ազդեցությամբ ու սեփական փորձով համոզված նախկին մոլորված աշխատավորներից շատերն աստիճանաբար հեռանում էին դաշնակցությունից և կանգնում հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի դրոշի տակ։ Այսպես վարվեցին նաև մի քանի «երիտասարդ դաշնակցականներ», ինչպես, օրինակ, Ա. Ամիրյանը, որը 1910 թ. դինվորագրվեց լենինյան կուսակցությանը և դարձավ Անդրկովկասի ականավոր բոլշևիկներից ու Բաքվի 26 կոմիսարներից մեկը։ Բայց «երիտասարդ դաշնակցականների» հիմնական մասը 1907 թ. հունիսին ձևավորվեց որպես ռուսական էսեռական կուսակցության ջոկատ՝ «Սոց.—հեղ. կուսակցության հայ կազմակերպություն» անունով, որը գլխավորում էր Լևոն Աբաբեկյանը։ Նրա ակտիվ գործիչներից էին Վ. Մինախորյանը, Գ. Մելիք-Շահնազարյանը, Մ. Խաչատրյանը, Ա. Տեր-Մարգարյանը, Վ. Խորխորունին և ուրիշներ։ Հայ էսեռները հրատարակեցին իրենց տպագիր օրգանը («Անիվ» շաբաթաթերթը) և մի քանի գրքույկներ, բայց երբեք չկարողացան մասսաներ նվաճել։

Դաշնակցականների և էսեռների միջև կային ընդհանրության եզրեր, հատկապես պայքարի ձևերի, ագրարային ու այլ հարցերում։ Վ. Ի. Լենինը գրել է «Դաշնակցությունը... շատ մոտիկ է էսեռներին, իսկ «երիտասարդները» նույնիսկ մտնում են ս. հ. կուսակցության մեջ»[37]։ Ընդհանուր առմամբ էսեռների կուսակցությունը հայ իրականության մեջ լայն տարածում չգտավ, որովհետև նրա ֆունկցիաները ևս կատարում էր դաշնակցությունը։ Վերջինս, տարված հայ կյանքն իրեն ենթարկելու մոլուցքով, միայն դժգոհում էր, որ հայ էսեռները ոչ քե լրիվ ձուլվեցին ռուսական էսեռական կուսակցության մեջ, այլ կազմեցին նրա ինքնուրույն հայ կազմակերպությունը։ Նրանց կարծիքով դա «անպայման բշնամական հարաբերություններ կառաջացնի բարեկամների միջև»[38]։

Ռևակցիայի տարիներին ուժեղացավ նաև մանրբուրժուական ազգայնական «Հնչակյան» կուսակցության կազմալուծման պրոցեսը։ Երևանի նահանգի ժանդարմական վարչության պետը 1908 թ. սեպտեմբերի 9-ի իր զեկուցագրում նշում է, որ «Հնչակ» կազմակերպությունը «բոլորովին կորցրել է իր ազդեցությունը տեղական բնակչության վրա և գտնվում է բայքայման աստիճանում»[39]։ Հնչակյանները ևս վնաս էին հասցնում բանվորական շարժման միասնությանը։ Բաքվի հնչակյանները 1908 թ. նպաստեցին Միրզոևի գործարանի բանվորների գործադուլի ձախողմանը, և Ստ. Շահումյանը մերկացրեց նրանց գործնելակերպը[40]։

Դրությունն ավելի վատ էր հայկական գյուղական շրջաններում, որտեղ հնչակյանները զանազան առիթներով փող էին կորզում գյուղացիներից, բռնություններ գործադրում նրանց նկատմամբ։ 1907 թ. Կողբ գյուղից (այժմյան նոյեմբերյանի շրջանում) գրում էին, որ ինչպես դաշնակցականները, այնպես էլ հնչակյանները «իրենց գոյությունը պահպանելու համար գործի են դնում

---

36 Նույն տեղում, էջ 398։

37 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 16, էջ 471։

38 «Дело партии дашнакцутюн», т. 4, стр. 3184.

39 ՎՍՍՀ ԿՊԳԱ, ֆ. 3, գ. 22, թ. 194։

40 Տե՛ս Ստ. Շահումյան, Երկ., հ. 2, էջ 419։

բռնի միջոցներ», Երևանից Կողբ են գնում հնչակյան երկու գինվորներ և գյուղացիներից փող պահանջում։ Գյուղի հասարակությունը նրանց դուրս է վռնդում։ Հոդվածագիրը, նկարագրելով այդ դեպքը, գայրույթով եզրափակում է. «Մեր քշված գյուղացին չկե՞տ է դադարի մտրակվել ու հարստահարվել «հանուն ազգի»։ Մի կուսակցություն հոգնում է ժողովրդի վրա բռնություններ գործ դնելուց, մնկ ուրիշն է բռնում նրա տեղը»[41]։



Մ. Ագիբեկով

Հնչակյան կուսակցությունը նույնպես կազմալուծվում էր աջից և ձախից»։ «Ձախերն» աստիճանաբար հեռանում էին նրանից և հարում ՌՍԴԲԿ-ին։ Հնչակյան կուսակցության առանձին կազմակերպություններ կամ խմբեր պատմական որոշակի պայմաններում, այնուամենայնիվ, կատարել են այս կամ այն չափի դրական դեր։ Կ. Պոլսում 1910 թ. ստեղծված հնչակյան ուսանողական միությունը, իր սխալներով հանդերձ, սուլթանական բռնակալության պայմաններում, երբ Թուրքիայում բացակայում էր հեղափոխական սոցիալ-դեմոկրատական շարժումը, իր ուժերի չափ ու իր ձևով ծավալում էր սոցիալիզմի գաղափարների պրոպագանդա։ Այդ միությունը կրում էր Անդրկովկասի հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ազդեցությունը և իր հրատարակած «Կայծ» ամսագրում (1911—1914 թթ.) շոշափում էր սոցիալիստական մտքի ու շարժման մի շարք կարևոր հարցեր։ Այդ բոլորով հանդերձ, ո՛չ նշված միությունը և ո՛չ էլ նրա օրգանները չին եղել մարքսիստական, բայց առաջադիմական դեր են կատարել Թուրքիայում տիրող հետամնաց պայմաններում։

Անշուշտ, այս և նման մասնակի երևույթներն ամենևին էլ չէին փոխում հնչակյան կուսակցության մանրբուրժուական բնույթը։

Բավարական շարժման միասնության համար վտանգավոր էին նաև «սպեցիֆիկները», որոնք, ի հակադրություն կենտրոնացված մարքսիստական կուսակցության լենինյան ինտերնացիոնալիստական սկզբունքի, առաջ էին քաշում ազգային սկզբունքը։ Բունդի լիդերներից Վ. Մեդեմն ուղղակի նշում էր, որ «Բունդի և ուկրաինացիների հետ միասին հայկական ս.-դ. կազմակերպությունը կանգնած է ազգային կազմակերպությունների տեսակետի վրա»[42]։

«Սպեցիֆիկները» հակադրվում էին բոլշևիկներին ոչ միայն կազմակերպական, այլև գաղափարական ու տակտիկական հարցերում։ Նրանց պարա-

41 ՄԼՒ-ի Հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 5, գ. 51, թ. 64։

42 «Формы национального движения в современных государствах», СПб., 1910, стр. 787.

գլուխ Դ. Անանունը, ժխտելով դասակարգային պայքարի մարքսյան տեսությունը, գրում էր. «Հին ճշմարտություն է, թե բանվորների ազատագրումը հանդիսանում է բանվորների գործը, բայց այն գոյություն չունի հայ բանվորների համար»[43]։ Դա նշանակում էր հայ բանվորներին հեռացնել համառուսական հեղափոխական շարժումից և թարոզել նրանց համագործակցություն հայ բուրժուազիայի հետ։ Դրան էր հանգում նաև «սպեցիֆիկների» ազգային ծրագիրը՝ կուլտուր-ազգային ավտոնոմիան, որն իր էությամբ բուրժուանացիոնալիստական ծրագիր էր և մերկացվեց բոլշևիկների կողմից։



Ս. Օրջոնիկիձե

«Սպեցիֆիկները» նացիոնալ-սոցիալիստներ էին, մարքսիզմի ռևիզիոնիստներ, մենշևիզմի յուրահատուկ արտահայտություններից մեկը հայ իրականության մեջ, որոնք երբեք չհամառևէ յուրջ աղդեցության մասսաների վրա։ Լավագույն դեպքում նրանց կոչում էին «առանց բանակի գեներալներ»[44], որոնք ռևակցիայի տարիներին առավել ևս վարկաբեկվեցին։ Նրանք իրրև քիչ ամրացել էին» Բարվում, բայց այնտեղ էլ հող չգտան։

Շրջահայաց բանվորները և առանձին մտավորականներ երես թևեցին «սպեցիֆիկներից» և մտան ՌՍԴԲԿ-ի մեջ։ «Սպեցիֆիկյանը» կազմակերպության մեջ մնացին միայն նացիոնալիստինտելիգենտները։ «Սպեցիֆիկները» համակերպվել էին տիրող կարգերի հետ, ուստի և չէին ենթարկվում հալածանքների։ Զարմանալի չէ, որ «՛չ ժամդարմները և ո՛չ պրոկուրատուրան չեն կարողացել խոշորադիտակի մեջ նույնիսկ նկատել «հայ ս.-դ. կազմակերպության» գոյությունը, որպեսզի գոնե մի հատիկ ձերբակալություն տեղի ունեցած լիներ այդ «կազմակերպության» պատկանելու մեջ»[45]։

* * *

Ինչպես միշտ, այնպես էլ ռևակցիայի տարիներին հայ աշխատավոր ժողովրդի արմատական շահերն արտահայտում էին բոլշևիկները։ Նրանք, ղեկավարվելով լենինյան տեսությամբ ու տակտիկայով և անհաշտ պայքար մղելով օպորտունիզմի դեմ երկու ճակատով՝ մենշևիկ-լիկվիդատորների և օտզովիստների դեմ, ռևակցիայի հարձակումը դիտում էին որպես սոսկ հեղափոխության ժամանակավոր պարտության հետևանք և ընդգծում, որ անխու-

---

43 «Промысловый вестник», 1907. № 9, стр. 3.

44 «Կայծ», 1906, № 71։

45 Սա. Տաճատյան, նշվ. հ. 3 էջ 44։

սափելի է նոր հեղափոխություն, քանի որ շարունակում են մնալ ու գործել այն ծնող պատճառները։ Հետևաբար, նոր պայմաններում փոխվում է կուսակցության միայն գործելակերպը և ոչ թե քաղաքական-ստրատեգիական գիծը։ Բոլշևիկները պահպանում էին իրենց ծրագրային պահանջները և ժողովրդական մասսաներին համախմբում ու նախապատրաստում վճռական մարտերի՝ ընդդեմ տիրող կարգերի։ Նրանք ցույց էին տալիս, որ միայն շահագործողական կարգերի տապալմամբ կարելի է հասնել Ռուսաստանի բոլոր ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի ազատագրմանը։

Ռեակցիայի տարիներին բոլշևիկները ոչ միայն մշակեցին անլեգալ ու լեգալ աշխատանքի զուգակցման ճիշտ տակտիկա, այլև, հաղթահարելով անբռնակալելի դժվարություններ, համառությամբ կիրառեցին այն և իրենց դրանորեցին որպես «կարծրաբաբախ հեղափոխականներ»։ Ցարական ռեակցիային չհաջողվեց ընկճել նրանց և ոչ էլ ընդհանրապես աշխատավոր մասսաների մեջ վերացնել հեղափոխական պայքարի կամքը։ Ահա թե ինչու նույնիսկ դաժան ռեակցիայի պայմաններում բանվորները տերերին ասում էին. «Սպասեցե՛ք, նորից կգա 1905 թվականը»։ Ռուսաստանի պրոլետարիատը ղեկավարվում էր ոչ թե «աղոտ հույսով», այլ հեղափոխության կրկնության մասին գիտական հիմնավորված համոզում։

Ռեակցիայի հարձակումը լուրջ կորուստներ պատճառեց նաև Անդրկովկասի ու Հայաստանի բոլշևիկներին։ Բայց նրանք դիմացան ահեղ փորձությանը և հավատարիմ մնալով լենինյան գծին՝ շարունակեցին իրենց անխոնջ աշխատանքը։ Անդրկովկասի բոլշևիկները՝ Ստ. Շահումյանի անմիջական ղեկավարությամբ նամակագրական կապի մեջ էին Վ. Ի. Լենինի, արտասահմանում գտնվող բոլշևիկյան կենտրոնի հետ, նրանց իրազեկ էին պահում կատարվող իրադարձությունների և ստանում համապատասխան ցուցումներ. «Կովկասյան բոլշևիկների խմբի հետ,— գրել է Ն. Կ. Կրուպսկայան,— մենք միշտ էլ ունեցել ենք հատուկ բարեկամական նամակագրություն»[46]։

Երկրամասի հեղափոխական կյանքում որոշիչ դեր էր խաղում պրոլետարական Բաքուն, ուր աշխատում էին Ստ. Շահումյանը, Գ. Օրջոնիկիձեն, Ի. Ստալինը, Ս. Սպանդարյանը, Պ. Ջափարիձեն, Մ. Ազիզբեկովը, Ն. Նարիմանովը, Բ. Կնունյանցը, Ի. Ֆիոլետովը, Ալ. Մյասնիկյանը և ուրիշներ։ Նրանք հետևողականորեն պայքարում էին լենինիզմի տեսության ու տակտիկայի համար։ Ստ. Շահումյանը 1908 թ. արտասահմանում գտնվող Միխա Ցխակայային գրել է. «Մենք... առույգ կերպով կանգնած ենք մեր պոստերում և աշխատում ենք, կանգ չառնելով ոչ մի բանի առաջ։ Աշխատանքի պայմանները, թանկագին Միխա, սոսկալի դժվարացել են. մեզ տառացիորեն խաչում են, ամեն կողմից թքակոծում են... Բայց մենք չենք վհատվում։ Հավատը դեպի ապագան և սերը դեպի մեր գործը անսպառ եռանդ են ներշնչում մեզ»։ Ապա նա, հարցնելով Վ. Ի. Լենինի որպիսությունը, նշում է. «Մենք ամբողջովին Իլյիչի կողմն էինք» և Համառուսաստանյան կուսակցական կոնֆերանսի Բաբլվի ամանդատը մենք որոշեցինք... հանձնել Իլյիչին»[47]։

Հայաստանի բոլշևիկները կազմում էին Անդրկովկասի բոլշևիկների մարտական ջոկատի մի մասը։ Նրանց գործունեությանն ուղղություն էին տալիս

---

[46] *Н. К. Крупская*, Воспоминание о Ленине, М., 1975, стр. 177.

[47] Ստ. Շահումյան, *նշվ. հ. 2, էջ 108, 109։*

Ստ. Շահումյանն ու Ս. Սպանդարյանը՝ Ջնյած ծանր պայմաններին, ընդհատակյա կուսակցական կազմակերպություններ ու խմբակներ կային Երևանում, Ալավերդում, Ղափանում, Ալիքսանդրապոլում, Նոր Բայազետում, Կարսում, Իգդիրում և այլուր։ Այդ ժամանակաշրջանում Հայաստանում գործող բոլշևիկներից հատկապես պետք է նշել Հ. Մարուխանյանին, Գ. Սոկոլովսկուն, Գ. Աթաբեկյանին, Լ. Տեր-Հովհաննիսյանին, Ս. Էվոյանին, Ա. Թումանյանին, Պ. Քանդիլյանին, Շ. Բեժանյանին, Ա. Շահինյանին, Վ. Խաչատրյանին, Ա. Վարդանյանին, Ա. Մարտիրոսյանին, Մ. Մանուչարյանին և ուրիշներին։ Նրանք ագիտացիոն-պրոպագանդիստական և քաղաքական-կազմակերպական աշխատանք էին տանում բանվորների ու գյուղացիների մեջ, բացատրում նրանց, որ հայ ժողովրդի բախտն անխզելիորեն կապված է ռուս ժողովրդի հետ, որ միայն Ռուսաստանի բոլոր ժողովուրդների համատեղ հեղափոխական պայքարով կարելի է հասնել ցարիզմի ու կապիտալիզմի խորտակման և սոցիալական ու ազգային ազատության։

Հունիսերեքյան հեղաշրջման առթիվ ՌՍԴԲԿ Բորչալուի կոմիտեն հրատարակեց հատուկ կոչ-թռուցիկ՝ «Երկրորդ Պետական դուման արձակված է» վերնագրով, որտեղ ասված էր. «Պայքարի համար մեզ անհրաժեշտ է կազմակերպվել և իտացնել հեղափոխական շարքերը. միայն հեղափոխության միջոցով մենք կարող ենք բավարարել մեր պահանջները։ Հետևաբար, եկե՛ք ընկերներ, կազմակերպվենք»[48]։

1908 թ. ամռանը Ջալալօղլի եկան Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Հ. Հակոբյանը, Դ. Շահվերդյանը և անմիջականորեն կապվելով Լոռու ու Հայաստանի այլ վայրերի բոլշևիկների հետ, նոր թափ հաղորդեցին նրանց գործունեությանը։

1908 թ. Անդրկովկասի աչքի ընկնող բոլշևիկներից Վահան Հովսեփյանը կուսակցական հատուկ առաջադրանքով Թիֆլիսից՝ Ալեքսանդրապոլի և Երևանի վրայով մեկնում է Նախիջևան։ Բայց Նախիջևանի կայարանում նա ձերբակալվում է և տեղափոխվում Երևանի բանտը։ Վ. Հովսեփյանի մոտ հայտնաբերվեց բավականաչափ անլեգալ հեղափոխական գրականություն՝ 81 բրոշյուր հայերեն և ռուսերեն, Թիֆլիսում հրատարակվող բոլշևիկների օրգան «Բորբա» թերթը։ Անլեգալ գրականության մեջ կար նաև «Զինվորներին» բանաստեղծությունը, որը զորքին կոչ էր անում չկրակել յուրայինների վրա։ Ջնյած ձաժան ռեժիմին, բոլշևիկ Վ. Հովսեփյանը Երևանի բանտում էլ շարունակում է հեղափոխական աշխատանք և կապ հաստատում քաղաքի բոլշևիկների հետ. «Կյանքը,— գրել է Վ. Հովսեփյանը,— Երևանի բանտում անցնում էր ծանր պայմաններում, այնուամենայնիվ մեր խմբին հաջողվում է տանել հեղափոխական աշխատանք կալանավորների մեջ, այդ թվում նաև շարքային դաշնակցականների մեջ և հետաքրքրություն ու համակրանք առաջացնել դեպի սոցիալ-դեմոկրատները (բոլշևիկները)»[49]։

Անդրկովկասի ու Հայաստանի աշխատավորության մեջ բացառիկ եռանդով էր գործում ականավոր բոլշևիկ Մ.Լիք Մ.Լիքյանը՝ Դեդուշկան, որին կոչում էին «կոմունիզմի քարոզիչ»։ Նա հիմնականում աշխատում էր Բաքվում ու Թիֆլիսում, բայց անընդհատ շրջագայում էր Անդրկովկասի տարբեր վայրերում, հաճախակի լինում Հայաստանում։

---

48 ՀՍՍՀ ԿԳԳԱ, ֆ. 115, ց. 1, գ. 15, թ. 7։

49 ՀՍՍՀ ԿԳԳԱ, ֆ. 115, գ. 15, թ. 5—7։

* * *

Ինակցիայի հարձակումը երկրի քաղաքական կյանքում իր ցայտուն մարմնացումը գտավ Երրորդ պետական դումայի մեջ, որը Լենինն անվանել է «Սև դումա»։ 1907 թ. հունիսի 3-ին ցարական կառավարությունը ոչ միայն ցրեց Երկրորդ պետական դուման և հալածեց նրա սոցիալ-դեմոկրատական ֆրակցիային, այլև հրատարակեց ընտրական նոր օրենք, որով ընդլայնվեցին կալվածատերերի ու բուրժուազիայի իրավունքները։ Է՛լ ավելի վատթարացավ ազգային ծայրամասերի վիճակը։ Միջին Ասիան բոլորովին զրկվեց ընտրական իրավունքից, իսկ Լեհաստանի և Կովկասի դեպուտատների թիվը կրճատվեց մոտ երեք անգամ։ Բնութագրելով ստեղծված վիճակը, Վ. Վորովսկին գրել է. «Ծայրամասերը մասնակցում էին ոնց որ խորհրդակցական ձայնով՝ դառնալով ազգագրական գեղեցիկ դեկորացիա սահմանադրական կալվածատիրական մեծամասնության ցանկալի դումայի համար»[50]։

1907 թ. աշնանը տեղի ունեցան Երրորդ պետական դումայի ընտրությունները, ընդ որում հունիսերեքյան ռեակցիոն ընտրական օրենքն ու նրա ոստիկանական կիրառումը ցայտուն կերպով արտահայտվեցին նաև հայ ժողովրդի նկատմամբ։ Անդրկովկասում կազմվել էր վեց ընտրական օկրուգ, որոնք պետք է առաջադրեին պատգամավորներ. երկրամասի ռուս բնակչությունից՝ մեկ, Թիֆլիսի նահանգից՝ մեկ, Քութայիսի նահանգից՝ մեկ, Կարսի, Բաթումի մարզերից և Սուխումի օկրուգից՝ մեկ, Բաքվի, Ելիսավետպոլի (Գանձակի) և Երևանի նահանգներից՝ երկու մարդ, ընդ որում դրանցից մեկը պետք է անպայման ընտրվեր ադրբեջանցիներից, իսկ մյուսը՝ հայերից և մնացած ազգերից։ Այսպիսով, Հայաստանին առանձին ընտրական օկրուգ չէր տրվում և այնտեղից թեկնածուներ պետք է առաջադրվեր երեք նահանգների ընդհանուր օկրուգում՝ մնացած բնակչության (վրացի, հրեա և այլն) հետ միասին, ընտրվողն էլ պետք է տիրապետեր առնվազն լեզվին։

Ընդհանուր առմամբ Անդրկովկասից դեպուտատների թիվը՝ համեմատած Երկրորդ պետական դումայում ունեցած դեպուտատների հետ, կրճատվում էր 14 տեղով, ընդ որում, եթե Երևանի նահանգից Երկրորդ պետական դումայի համար ընտրվել էին երեք դեպուտատ (երկուսը՝ հայ, մեկը՝ ադրբեջանցի), ապա այժմ, Երրորդ պետական դումայի համար, կարող էին առաջադրվել միայն երկու դեպուտատ, այն էլ երեք նահանգներից (Երևանի, Բաքվի, Ելիսավետպոլի) միասին վերցրած։ Բնորոշ է նաև այն, որ հայ ընտրողները և Բաքվի բանվորները պետք է առաջադրեին մեկ դեպուտատ։ Դա կատարվում էր շատ որոշակի նկատառումներով։ Անդրկովկասի ժողովուրդների մեջ ազգային թշնամանք ու երկպառակություն բորբոքելու և Բաքվի բանվորների հուժկու ձայնը խլացնելու համար ցարական կառավարությունը Բաքվի, Երևանի և Ելիսավետպոլի նահանգները միավորել էր մի ընտրական տեղամասի մեջ և կրճատել նրա իրավունքները։

Ընտրությունները բազմաստիճան էին, ընդ որում գյուղացիների համար՝ քառաստիճան, իսկ բանվորների համար՝ եռաստիճան, Ինչպես ամենուրեք, այնպես էլ Հայաստանում ընտրություններն անցան ահաբեկման ու կամայականությունների պայմաններում։ Աշխատավորության մեծ մասը, ոչ մի լավ

---

[50] *В. В. Воровский*, Избранные произведения о первой русской революции, М., 1955, стр. 248.

բան չսպասելով դումայից, անտարբերություն էր ցուցաբերում դեպի ընտրությունները, իսկ մնացած մասին շահագործողներն ու նրանց կուսակցությունները ոստիկանական ուժով կամ խաբեբայությամբ փորձում էին օգտագործել՝ իրենց թեկնածուներն անցկացնելու համար։

Այնուամենայնիվ ընտրական պայքարը հենց սկզբից սուր բնույթ կրեց։ Բոլշևիկների համար դրությունը շատ ծանր էր, քանի որ նրանք ամեն քայլափոխում ենթարկվում էին դաժան հալածանքների։ Բայց և այնպես տեղական սոցիալ-դեմոկրատները եռանդուն գործունեություն ծավալեցին, որպեսզի պատվիրակներ առաջադրվեն դեմոկրատական խավերից։ Ուժեղ պայքար ծավալվեց Նոր Բայազետում, որտեղ մոլեգնում էին տեղական հարուստներն ու դաշնակցականները։ Բայց և այնպես նահանգական ժողովի պատվիրակ ընտրվեց սոցիալ-դեմոկրատ, ուսուցիչ Ալեքսանդր Աբրահամյանը։ Երևանի նահանգի պատվիրակների կազմում ընտրվեցին նաև մի քանի աշխատավոր գյուղացիներ, որոնք գնացին բոլշևիկների ետևից։

Երեք նահանգներից ընտրած պատվիրակները մեկնեցին Ելիսավետպոլ՝ նահանգական ժողովի։ Այսպիսով, հանգամանքների բերումով բոլշևիկների ընտրական կամպանիան, որ ծավալվել էր Բաքվում ու այլ վայրերում, պետք է շարունակվեր Ելիսավետպոլում, ուր Բաքվի բոլշևիկյան կոմիտեի կողմից գործուղվեցին Ստ. Շահումյանը և Ասք. Մռավյանը։ Պատվիրակների կազմը (25 հոգի) աչքի էր ընկնում սոցիալական ու քաղաքական խայտաբղետությամբ, ուստի դեպուտատի ընտրության շուրջը ծավալվեց սուր պայքար։ Ճիշտ է, հինգ սոցիալ-դեմոկրատների կողքին կային ինը գյուղացիներ, բայց վերջիններիս մեջ էին նաև կուլակներ, որոնք հակված էին դեպի կադետներն ու դաշնակցականները։

Հոկտեմբերի 13-ին տեղի ունեցավ նախընտրական խորհրդակցություն, որտեղ տարբեր խմբավորումներ հանդես եկան իրենց պլատֆորմներով։ Բանվորների ներկայացուցիչ բոլշևիկ Ի. Վ. Բոկովը, մերկացնելով բուրժուական նացիոնալիստներին և անցկացնելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի հստակ գիծ, շեշտում էր, որ «հարկավոր է խոսել... ընդհանուր առմամբ Ռուսաստանի բանվոր և գյուղացի հալածված ժողովրդի շահերի մասին, ոչ թե ազգերի բաժանման և առելության, այլ համերաշխության և ընդհանուր կռվի մասին»[51]։ Այդ է ճնշված ժողովուրդների ազատագրման ուղին։ Բոկովը, անարգանքի սյունին գամելով կադետներին ու դաշնակցականներին, ասաց. «Դուք, պարոննե՛ր, Պետական դումա եք գնում, որպեսզի ամրապնդեք ցարի երբեմն գահը, իսկ մենք գնում ենք այնտեղ նրա համար, որպեսզի վերջնականապես կործանենք մեզ համար ատելի այդ գահը, իսկ ձեր ցարին կնետենք կեղտաջրի մեջ։ Բայց պարոններ, երկյուղ ունեմ, որ դուք էլ ձեր ցարի հետ կընկնեք այնտեղ»[52]։

Հոկտեմբերի 14-ին տեղի ունեցավ դեպուտատի ընտրություն։ Միայն մի քանի անգամ քվեարկություն անցկացնելուց հետո դաշնակցականներին ու կադետներին հաջողվեց, զանազան մեքենայությունների միջոցով, հակառակ բանվոր բոլշևիկ Արշակ Արկերյանի թեկնածության, անցկացնել դաշնակցական Հ. Սաղաթելյանին։

51 Ստ. Շահումյան, Երկ, հ. 2, էջ 248։

52 ՄԼԻ-ի Հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 7, գ. 102, թ. 3։

Ստեփան Շահումյանը, մերկացնելով հայ կադետ-մշակականների գործունեությունները Արշակ Արկերյանի հասցեին, ընդգծեց, որ կադետները տվին իրենց քվեները պ. Սաղաթելյանին «ոչ թե այն պատճառով, որ Արշակ Արկերյանը «անգրագետ» է, իսկ Սաղաթելյանը՝ «գրագետ...»։ Նրանք այդ արին, որովհետև Արշակ Արկերյանը սոցիալ-դեմոկրատ է և այն էլ «բոլշևիկ» սոցիալ դեմոկրատ, իսկ պ. Սաղաթելյանը, չնայած իր դաշնակցական-էսեռական յաուլիկին, մի պարզ կադետ է, եթե ոչ հոկտեմբերյան»[53]։

Դաշնակցական Սաղաթելյանը դեպուտատ էր նաև Երկրորդ պետական դումայում և փորձում էր գյուղացիությանը փրկել գյուղական համայնքի միջոցով։ Վ. Ի. Լենինը Սաղաթելյանի այդ վարքագիծը համարեց «անկասկած ռեակցիոն»[54]։ Երրորդ պետական դումայում Սաղաթելյանը հավատարմությամբ էր ծառայում ցարիզմին և խոնարհությամբ կատարում օկտյաբրիստ Գուչկովի հրահանգները։ Նրա դեմքը լավ է պատկերել «Խաթաբալա» երգիծական շաբաթաթերթը։ Այնտեղ ցույց է տրվում, թե ինչպես Սաղաթելյանը խոսելով ինքն իր հետ, ասում է. «Ազգային հարցում ձայն տվի աշխատավորականների հետ, դատաստանական խնդրում՝ կադետների, ծովային հարցում միացա հոկտեմբերյաններին, բանվորական հարցում՝ կադետներին, իսկ երեկ, երբ քննվում էր եկեղեցական հարցը, քվեարկեցի եպիսկոպոս Եվլոգի Միտրոֆանի և «համամշի» Չելիշովի հետ... Իսկ թե իրոք ի՞նչ եմ ես, աստված գիտի։

Իսկ և իսկ դաշնակցական»[55]։

Երրորդ պետական դումայում միայն բոլշևիկ դեպուտատներն էին, որ վճռականորեն մերկացնում էին ցարական ինքնակալությունը և հանդես գալիս բոլոր՝ մեծ ու փոքր ժողովուրդների պաշտպանության դերում։

* * *

Ռեակցիայի հարձակումը գաղափարական ճակատում նպատակ ուներ ամրապնդել ցարիզմի դիրքերը և մասսաների մեջ վերացնել նույնիսկ ամեն մի հիշողություն հեղափոխության մասին։ Դրությունն ավելի ծանրացավ նրանով, որ այդ ժամանակ գաղափարական տարրնթացությունն ընդգրկեց նաև հեղափոխական միջավայրը։ Սոցիալ-դեմոկրատիան ապրում էր լուրջ ճգնաժամ ոչ միայն կազմակերպական, այլև գաղափարական առումով։ Հեղափոխության վաղեմի ուղեկիցներն անձնատուր եղան բուրժուական գաղափարախոսությանը և կանգնեցին մարքսիզմի փիլիսոփայությունը ռևիզիայի ենթարկելու դիրքերի վրա։ Մենշևիկ-լիկվիդատորները, օտզովիստները, տրոցկիստները և այլ գույնի օպորտունիստներ հանդես էին գալիս որպես բուրժուազիայի գործակալներ բանվորական շարժման մեջ և փորձում էին դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմին հակադրել իդեալիզմը, նեոկանտականությունը, մախիզմը, էմպիրիոկրիտիցիզմը, կրոնը, միստիցիզմը, «աստվածաշինարարությունն» ու «աստվածարոնումը»։

Այդ ամենը լուրջ վտանգ էր ստեղծում աշխատավորների զանգվածների համախմբման և հեղափոխության հետագա հաղթանակի կազմակերպման

53 Ստ. Շահումյան, ԵԼԺ, հ. 2, էջ 19։

54 Վ. Ի. Լենին, ԵԼԺ, հ. 16, էջ 472։

55 «Խաթաբալա», 1908, № 25։

գործում։ Ահա թե ինչու ռևակցիայի տարիներին, երբ զանգվածները պետք է յուրացնեին 1905—1907 թթ. հեղափոխության փորձն ու դասերը, առաջին պլան մղվեցին բոլշևիկյան կուսակցության աշխարհայացքի, մարքսիստական փիլիսոփայության պաշտպանության հարցերը. «Երբ մասսաները մարտում են անմիջական հեղափոխական պայքարի նոր ու չտեսնված հարուստ փորձը,—գրել է Վ. Ի. Լենինը,—այն ժամանակ հետևրիական պայքարը հեղափոխական աշխարհայացքի, այսինքն՝ հեղափոխական մարքսիզմի համար դառնում է օրվա լոզունգ»[56]։

Անհրաժեշտ էր վճռական հակահարված տալ բուրժուական հարձակումներին, մերկացնել ու ջախջախել ռևիզիոնիզմը, պաշտպանել ու զարգացնել մարքսիզմի փիլիսոփայությունը։

Պատմական այդ մեծ խնդիրը կատարեցին բոլշևիկները՝ Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ։ Հատկապես վճռական նշանակություն ունեցավ կուսակցության առաջնորդի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» հռչակավոր աշխատությունը, որը լույս տեսավ 1909 թ.։ Այն կոմունիստական գաղափարախոսության մնայուն կոթող է, մարքսիստական փիլիսոփայության զարգացման մի նոր, ավելի բարձր աստիճան։

Լենինյան դրույթները գործողության ուղեցույց բոլշևիկյան կուսակցության, այդ թվում նրա անդրկովկասյան ջոկատի համար։ Երկրամասի բոլշևիկները՝ Ստ. Շահումյանի անմիջական ղեկավարությամբ հանդես էին գալիս որպես մարտնչող մատերիալիստներ և, պայքար մղելով մարքսիզմի ռևիզիայի փորձերի դեմ, անց էին կացնում լենինյան գիծ։ Ստ. Շահումյանը 1908 թ. գրած իր նամակներից մեկում նշում էր, որ «մենք ևս այստեղ սկսում ենք խիստ հետաքրքրվել փիլիսոփայությամբ, ընթերցում և վերընթերցում ենք Դիցգենին, Պլեխանովին, Բոգդանովին և այլն», ընդ որում նա հաստատ հույս էր հայտնում, որ գաղափարական պայքարը կունենա դրական հետևանք՝ «ավելի լավ ծանոթություն մարքսիզմի փիլիսոփայության հիմունքների հետ և... մարքսիզմի լրացումը լինել ցանկացող նոր «իզմերից» մաքրվելը»[57]։

Կովկասի բոլշևիկները, դատապարտելով ամեն մի շեղում մարքսիզմից, լիովին պաշտպանում էին լենինյան գիծը. «Մենք,— գրել է Ստ. Շահումյանը,— հաստատ համոզված ենք Իլյիչի դիրքորոշման ճշտությանը, և... մեծ անվստահությամբ ենք վերաբերվում էմպիրիոմոնիզմին և այլն»[58]։ Կրկին անդրադառնալով այդ հարցին, Ստ. Շահումյանը նշում էր, որ իրենք ծանոթացել են Բոգդանովի «էմպիրիոմոնիզմի» երեք հատորներին, «Հասարակության հոգեբանությունից» գրքին և ունեն ծայր աստիճան բացասական կարծիք։ Ստ. Շահումյանը ցույց է տալիս, որ Բոգդանովի թեզը՝ հասարակական կեցության ու գիտակցության նույնության մասին հանդիսանում է մարքսիստական փիլիսոփայության ռևիզիա, փիլիսոփայություն, որն առաջնայինը համարում է մատերիան, իսկ երկրորդայինը՝ գիտակցությունը, որ մարդկանց

---

56 Վ. Ի. Լենին. Նշվ., հ. 17, էջ 358։

57 Ստ. Շահումյան. Նշվ., հ. 2, էջ 49։

58 Նույն տեղում, էջ 50։

գիտակցությունը պայմանավորվում է նրանց կեցությամբ։ Քննադատելով ու մերժելով Բոգդանովի հակագիտական տեսակետը և բացահայտելով նրա վնասակարությունը, Ստ. Շահումյանը գրել է. «Կեցության ու գիտակցության նույնության նրա դրույթը, ըստ իս, կործանում է Մարքսի ամբողջ սիստեմը»[59]։

Անդրկովկասի ու Հայաստանի բոլշևիկներն անդուլ պայքար են մղել «Մարքսի սիստեմի» համար, դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի համար։ Ստ. Շահումյանը ցույց է տվել, որ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի «ուժն ու հպարտությունը կազմող» մարքսիստական փիլիսոփայությունը միայն կարող է և, իրոք, տալիս է բնության ու հասարակության զարգացման օրինաչափությունների ճիշտ ըմբռնում։ Ինչ վերաբերում է բուրժուական փիլիսոփայությանը՝ իր զանազան նորագույն «ուղղություններով», ապա այն ապրում է խոր ճգնաժամ և դրա արտահայտությունն է նաև էմպիրիոկրիտիցիզմը։ Բացահայտելով այդ «նոր» հոսանքի ռեակցիոն էությունը, Ստ. Շահումյանը գրել է. «Ով ծանոթ է բուրժուական փիլիսոփայության և հասարակական գիտությունների մեջ իշխող «էմպիրիոկրիտիցիզմ» կոչվող «նոր» ուղղության հետ, նրա համար հասկանալի կլինի, որ այդ երևույթը մի բացառիկ և պատահական երևույթ չէ։ Նույնացնել իրականությունը «գիտակցության» հետ, «գաղափարի» հետ և ապա ժխտել այդ իրականությունը հանուն վերացական «գաղափարի», հետո միստիկական ու ֆանտաստիկական կերպարանքով ներկայացնել կենդանի հասարակական պրոբլեմները և միամիտ ընթերցողների աչքերին թոզ փչել, շփոթություն առաջացնել անգիտակից մասսաների ուղեղներում, ահա ինչ է տալիս հասարակական գիտությունների «կրիտիցիզմը», բուրժուական փիլիսոփայության այդ վերջին խոսքը»[60]։

Ստ. Շահումյանը նշում էր, որ ժամանակակից բուրժուական սոցիոլոգիային խորթ է զարգացման գաղափարը և այն ներծծված է կեղծիքով։

Անդրկովկասի բոլշևիկները, հակահարված տալով հակակոմունիստական հոսանքներին ու շեղումներին, կազմակերպեցին Վ. Ի. Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» գրքի և ընդհանրապես մարքսիստական փիլիսոփայության ուսումնասիրությունը։ Տեսականորեն պատրաստված այնպիսի գործիչներ, ինչպիսիք էին Ստ. Շահումյանը, Գ. Օրջոնիկիձեն, Պ. Ջափարիձեն, Ս.-Սալանդարյանը, Մ. Ազիզբեկովը, Ն. Ստասովան, Ա. Ենուկիձեն, Ն. Նարիմանովը, Ս. Կասյանը և ուրիշներ, հանդես էին գալիս զեկուցումներով ու զրույցներով, գիտահանրամատչելի հոդվածներով, որոնց մեջ պարզաբանում էին դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի հիմնական դրույթները։

Հայաստանի բոլշևիկներն իրենց հերթին ամեն կերպ աշխուժացնում էին գաղափարական աշխատանքը։ Առանձնապես պետք է նշել Երևանի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության գործունեությունը, որտեղ ակտիվ դեր էին կատարում Գ. Սոկոլովսկին, Գ. Աթաբեկյանը, Արշ. Մելիքյանը և ուրիշ բոլշևիկներ։ Խորագիտակ մարքսիստ Արշ. Մելիքյանը հաճախ էր հանդես գալիս փիլիսոփայական թեմաներով ու պաշտպանելով դիալեկտիկական մատերիալիզմը, ուժգին հարվածներ էր հասցնում իդեալիզմի կողմնակիցներին։ 1911 թ. Երևանում «Նոր ձայն» թերթի № 8-ում լույս տեսավ նրա փիլիսոփայական հոդված-գրախոսականը, որտեղ նա խիստ քննադատության ենթար-

59 Նույն տեղում, էջ 109։
60 Նույն տեղում, էջ 291։

կից դաշնակցական «Քնորետիկ» ն. Ֆրանգյանի «ն. Կ. Միխայլովսկին որպես փիլիսոփա-սոցիոլոգ» գիրքը։ Մելիքյանը ցույց էր տալիս, որ ն. Ֆրանգյանի ողջ «փիլիսոփայությունը» հանգում է Մախի, Ավենարիուսի, Նիցշեի, Շուպենհաուերի, Միխայլովսկու և այլոց հետադիմական գաղափարների խառնաշփոթ քարոզին։ Նա մերկացնում է նաև «սպեցիֆիկ» Բաշինի Իշխանյանին, այդ «սուտ մարքսիստին», «ռևիզիոնիստին» և մատնանշում, որ նրան պետք է «դուրս վանել մարքսիստների շրջանից»։ Իհարկե, դա չի նշանակում, թե Բ. Իշխանյանը երբևիցե եղել է մարքսիստ։ Խոսքն այն մասին է, որ նա հավակնում է այդպիսին լինելու և, ինչպես նշել է Ստ. Շահումյանը, նույնիսկ փորձում էր «հավատացնել միամիտ հայ ընթերցողին, թե նրա բերանով խոսում է ինքը՝ Կարլ Մարքսը»[61]։ Իրականում նա հանդես էր գալիս որպես մարքսիզմի թշնամի, և բոլշևիկները անարգանքի սյուներին են գամել նրան ու նմաններին։ Ստ. Շահումյանն ընդգծել է, որ «հարկավոր է անխնա հարվածել ու հալածել մարքսիզմը շահագործող ու ապականող այդ բախշիներին»[62]։

Այդպիսի հարվածողներից էր նաև Սարգիս Կասյանը՝ Անդրկովկասի հեղափոխական շարժման ու բոլշևիկյան կազմակերպության ականավոր գործիչներից մեկը։ Տեսականորեն պատրաստված Կասյանն իր աշխատություններում («Գողության, տգիտության և տհասության արդյունքները», «Թերուսը գրական ասպարեզում և գիտության մեջ») մերկացրեց Բ. Իշխանյանին և մասնավորապես նրա «Տնտեսական զարգացման ֆազերը» գրվածքը, որը Կ. Բյուխերի ու բուրժուական այլ տնտեսագետների հակագիտական, իդեալիստական հայացքների վերարտադրումն էր։ Դրանով հանդերձ Իշխանյանն իրեն համարում էր «դուստ մարքսիստ», իսկ իր կողմնակիցները՝ «մարքսիստական»։ Ս. Կասյանը հիմնովին մերկացնում է այդ ինքնառևկլամն ու փառամոլությունը և ցույց տալիս, որ պետք է «պաշտպանենք բանվորության գիտակցությունը» «սպեցիֆիկյան» այլասերումից։ Ս. Կասյանը հանդես է գալիս որպես մարքսիստ-տնտեսագետ, գիտական սոցիալիզմի գաղափարների անխոնջ պրոպագանդիստ։ Նա գրել է. «Մարքսի և Էնգելսի անզուգական ծառայությունը մարդկության պատմության ըմբռնողության վերաբերյալ կայանում է նրանում, որ տվել են մեզ մարդկային պատմությունը՝ իր բոլոր ասպարեզներով, մոնիզմ-մատերիալիստականորեն ըմբռնելու անհաղթելի թեորիան, հետևապես և այն «գիտական հետազոտության հատուկ դիտակոցը», որի համաձայն ուսումնասիրում ենք տնտեսական կյանքի զարգացումը»[63]։

Ռևակցայի տարիներին Էջմիածնի Գևորգյան ճեմարանում գործում էր մարքսիստական խմբակ՝ բոլշևիկներ Երեմիա Բակունցի և Երվանդ Գարագաշյանի ղեկավարությամբ։ Նրա գործունեության մասին ն. Բակունցը պատմում է. «Չնայած նրան, որ շատ ընկերներ ռևակցիայի հետևանքով, տարվելով կանտով և բերդյաևականությամբ («Վեխի»), լքեցին մեր շարքերը, բայց մարքսիստական խմբակը հաստատակամ շարունակից իր աշխատանքն ուսանողական ու հասարակական շարժումների ղեկավարության բնագավառում, կապ էր պահպանում Բաքվի ու Երևանի հետ, գրականություն ստանում Բաքվից ու Մոսկվայից»[64]։

---

61 Նույն տեղում էջ 374։

62 Նույն տեղում։

63 «Լուսանթ», 1 դեկտեմբերի 1906 թ.։

64 Մ.Լ.-ի Հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 1, ց. 33, գ. 25, թ. 10։

Չնայած կղերականների հալածանքներին, Ճեմարանի մի շարք ուսանողներ համարձակորեն պրոպագանդում էին մատերիալիստական, մարքսիստական գաղափարներ։ Նրանց գիտական շարադրությունների մեջ կարելի է հանդիպել այնպիսի թեմաների, ինչպիսին էին «Պատմության փիլիսոփայությունը և պատմական մատերիալիզմը», «Մատերիալիստական փիլիսոփայությունը XIX և XX դարերում» և այլն, որոնց մեջ արծարծվում էին առաջադիմական հեղափոխական գաղափարներ։ «Մատերիալիստական փիլիսոփայությունը XIX և XX դարերում» թեմայով հանդես եկավ Ճեմարանի շրջանավարտ, հետագայում բոլշևիկ Ալեքսանդր Մելիք-Ազաջանյանը։ Մախիստական «Միտք» ժողովածուի հրատարակությունից հետո նա գրեց մի շարք հոդվածներ՝ ընդդեմ հայ մախիստների և հատկապես Ե. Ֆրանգյանի։ Վերջինիս «պատմափիլիսոփայության» սնանկության մերկացմանն էր նվիրված նրա «Հակասություններ և չմարսված մտքեր» ծավալուն հոդվածը։

Ճեմարանի առաջադեմ ուսանողներից էր նաև Էդուարդ Ամատունին, որը սկզբում հարել է ձախ հնչակյաններին, իսկ հետո դարձել բոլշևիկ ու զոհվել սովետական իշխանության համար մղված պայքարում։ Ճեմարանում նա գիտական շարադրություն գրեց, որտեղ օգտագործելով Մարքսի, Էնգելսի, Պլեխանովի, Ջերնիշևսկու աշխատությունները, մատերիալիստական դիրքերից քննարկեց XIX դարի գրական ուղղությունների հարցը։ Անցյալի լավագույն ավանդույթներն իրենց հետագա զարգացման էին ստանում պրոլետարական գրականության մեջ։ Ամատունին արդարացիորեն նշում է, որ այդ «գրականության ամենահանճարեղ ներկայացուցիչը Մ. Գորկին է»[65]։ Պրոլետարական գրականությունը կոչված է նպաստելու աշխատավոր մարդկության աղատագրման գործին, այն ժամանակ, երբ բուրժուական գրականությունն ամեն կերպ ղովերգում ու հավերժացնում է կապիտալիզմը։ Ամատունին մերկացնում է գրականության մեջ տեղ գտած ռեակցիոն ուղղություններ։ Նա հատկապես խարազանում է նիցշեականությունը և այն համարում «մեռնող արիստոկրատիայի վերջին, ջղային, զորեղ ցնցումն ու արյունոտ հուսահատական հառաչը»[66]։ Նա քննադատում է նաև դեկադենտներին և ընդգծում, որ նրանց «պոեզիան բուրժուազիայի անկման նշանն է», հասարակության ծաղրուծանակը[67]։

Ռեակցիայի տարիներին, երբ ուժեղացան անկումային տրամադրությունները, անդրդվելի մնաց հայ պրոլետարական գրականության ականավոր ներկայացուցիչ Հակոբ Հակոբյանը, որը բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ ու Մ. Գորկու անմիջական ազդեցությամբ դարձավ հեղափոխության իսկական մարտիկ-բանաստեղծ. «1904—1909 թվականները,— հետագայում պատմել է Հակոբյանը,— եղել են իմ ամենաեռանդուն գործունեության տարիները, թե՛ կուսակցական և թե՛ լեգալ-անլեգալ պրոլետարական գրողի հետաքրքիր շրջանը...»[68]։

Հ. Հակոբյանը ծավալում է եռանդուն հեղափոխական գործունեություն։ Նրա մասին Թիֆլիսի ժանդարմական գրագրություններից մեկում ասված է. «Հակոբ Մնացականի Հակոբյանը, գործակալության 1909 թվականին վերա-

65 Մ. Վ. Ամատունյան. նշված աշխ., էջ 137։
66 Նույն տեղում, էջ 209։
67 Նույն տեղում, էջ 222։
68 Հ. Հակոբյան. Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1951, էջ 353։

բերող տվյալների համաձայն, մտել է տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպության (բոլշևիկյան) մեջ, նրանում գրավել է աչքի ընկնող դիրք, եղել է հիշյալ կազմակերպության գրական բյուրոյի անդամ, մասնակցել է նրա բոլոր ժողովներին։ Կազմակերպության մեջ Հակոբյանը հայտնի է «Պրոլետար» ծածկանունով[69]։

Հ. Հակոբյանը անմիջականորեն աշխատակցում է կուսակցության կենտրոնական օրգան «Պրոլետարի» թերթին։ Ոստիկանության մի հաղորդագրությունից երևում է, որ «Պրոլետարի» թերթը 1908 թ. Թիֆլիսում ստացվում էր Հակոբյանի անունով[70]։

Իր հեղափոխական գործունեության համար Հակոբյանը սիստեմատիկաբար ենթարկվում էր հալածանքների։ Առանձնապես հաճախակի էին խուզարկությունները։ 1909 թ. սեպտեմբերի 15-ի գիշերը տեղի է ունենում նոր խուզարկություն, որի առիթը նրա «Նահատակներ» բանաստեղծության հրատարակությունն էր՝ «Պրոլետար» ստորագրությամբ, ժանդարմական գրագրության մեջ նշված է, որ այդ բանաստեղծությունն ուներ «սոցիալ-դեմոկրատական ոգի»։

Հակոբյանը հմուտ կոնսպիրատոր էր և հաճախ նրան հաջողվում էր դուրս պրծնել ոստիկանական ծուղակից։ Նա 1909 թ. ամռանը ձերբակալվում է, սակայն ազատվելուց հետո նորից ծավալում եռանդուն գործունեություն. «Ազատ կացուցվելուց հետո էլի հանգիստ չմնացի, սկսեցի գրել արտասահման՝ Միխայլին [Միխա Ցխակայային] գլխիս եկած օյինի մասին և ուղարկեցի մի ընդարձակ բղթակցություն ժնևի «Պրոլետարի» թերթին, որ խմբագրում էր ընկեր Լենինը, «Նամակներ Մետեխից» վերնագրով։ Ստացա թերթի համարը, բղթակցությունս տպագրված էր. ուղարկեցի երկրորդը, որ նույնպես տպագրվեց։ Ու մի օր էլ «Պրոլետարին» հերթական համարը ստանալով՝ տեսնում եմ փոստարկղում հասցեիս հարց.

«Ընկեր Պրոլետարին. Թիֆլիս. Ինչո՞ւ եք լռել... շարունակեցեք, սպասում ենք»[71]։

Երգելով հեղափոխության մարտիկների հիշատակը, բոլշևիկ-բանաստեղծը մասսաներին կոչ է անում լցվել նոր ուժով և պատրաստվել հաղթական պայքարի.

Սովոր բանտերի բիրտ տառապանքի,
Շատ ես դիմացել, դիմացիր էլի,
Եղբայր սիբելի,
Հավատ ունեցիր հաղթիդ վերջնական,
Այսօր չէ վաղը քոնն է ապագան...

1909 թ. նա գրեց իր նշանավոր «Նոր առավոտ» պոեմը, որտեղ, խուրա-գանելով սուբյեկտիվիզմն ու ինդիվիդուալիզմը, ընդգծում է պրոլետարիատի դասակարգային պայքարի վերընթաց դիծը և հանգում այն խորհրդաստ եզրակացության, որ չնայած ճանապարհն «անձուկ է ու փշոտ», բայց նա անշեղորեն տանում է դեպի վառ ապագան, «Ոսկե առավոտ», «Նոր առավոտ»,

69 ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 3, գ. 525, թ. 13։
70 ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 3 գ. 22, թ. 88։
71 Հ. Հակոբյան, Երկեր—հ. 1, էջ 353։

այսինքն՝ պրոլետարիատի ու աշխատավոր զանգվածների ազատագրումը։

Բոլշևիկ-բանաստեղծը չանք չէր խնայում, որ, ի հակադրություն անկումային գրականության, ժողովրդական զանգվածներին հրամցվի ոգեշունչ հեղափոխական գրականություն։ Նա նշում է, որ պետք է «անգիտակից ու կիսագիտակից զանգվածներին դուրս բերել սիմվոլիստների, դեկադենտների, այդ նվիացող ու արտասվող հիվանդ մարդկանց» աղդեցության տակից. «Չէ որ այդ պարոնները մասսաների վզին են փաթաթում իրենց անձնական-անհատական ապրումները և իրենց սուբյեկտիվ բոթովանքները ձգտում են վերածել պաշտամունքի։ Ահա թե ում և ինչի դեմ պետք է պայքարել»[72]։ Պրոլետարական գրող Հ. Հակոբյանը հեղափոխության տեղատվության ժամանակ էլ մնաց բարիկադների վրա և ցուցաբերեց բոլշևիկյան հետևողականություն։ Հ. Հակոբյանին դիպուկ է գնահատել Ա. Լունաչարսկին. «Հակոբ Հակոբյանի ստեղծագործության մեջ հենց սկզբից ամենաօրիգինալն, իհարկե, այն էր, որ նա ոչ միայն հեղափոխական պոետ էր, հեղափոխական պոետներ եղել են և ռուսական, և եվրոպական գրականության մեջ, այլև, որ նա սոցիալ-դեմոկրատ պոետ էր, այդ բառի այն ժամանակվա ամենալավագույն իմաստով, բոլշևիկ-պոետ, պրոլետարական պոետ»[73]։

Հ. Հակոբյանի բարերար ազդեցությունը հայ գրականության վրա մեծ էր։ Նրա հեղափոխական ուղիով գնաց հայ պրոլետարական դրամատուրգիայի հիմնադիր Անուշավան Վարդանյանը, որը դուրս էր եկել բանվորական միջավայրից և 1907 թ. մտել բոլշևիկյան կուսակցության մեջ։ Հեղափոխական պաթոսով էր համակված տաղանդավոր բանաստեղծուհի Շ. Կուրղինյանի պոեզիան։

Ռեակցիայի տարիներին դաղափարական սուր պայքար ծավալվեց նաև գրաքննադատության ու պատմագիտության ասպարեզում։ Բոլշևիկները, մերկացնելով կղերաֆեոդալական ու բուրժուանացիոնալիստական մտահայեցողությունը, պայքարում էին մշակույթի բոլոր բնագավառներում և մասնավորապես հասարակագիտության մեջ մարքսիստական սկզբունքների կիրառման համար։

3. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀՈՒՅԶՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Չնայած ռեակցիայի տարիներին հեղափոխական պայքարը ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում ու Հայաստանում ընդհանուր առմամբ անկում ապրեց, բայց և այնպես այն բոլորովին չդադարեց։ Այդ առթիվ Ստ. Շահումյանը 1908 թ. գրել է. «Որքան էլ ուժեղ լինի ռեակցիան, նա չի կարող կանգնեցնել կյանքը և ժամանակակից կյանքի գլխավոր ներվը՝ դասակարգային պայքարը։ Եվ այդ պայքարը երկաթյա անհրաժեշտությամբ պրոլետարիատին թելադրում է համախմբվել, կազմակերպվել»[74]։

Ռեակցիայի տարիներին Հայաստանի աշխատավոր զանգվածների ելույթները հիմնականում ունեին տնտեսական բնույթ, բայց ըստ էության ուղղված

---

72 *Մէի-ի կկա, ֆ. 157, ց. 2, գ. 57, թ. 45։*

73 *Акоп Акопян*, Новое утро, с предисловием А. Луначарского. М.—Л., 1928, стр. 5.

74 *Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 91։*

էին հունիսերեքյան ռեժիմի դեմ և հաճախ վերածվում էին զինված ընդհարումների։

1907 թ. երկրորդ կեսին դեռ շարունակվում էին ռուսական առաջին հեղափոխության արիներգարդային մարտերը, որից անմասս չմնաց նաև Հայաստանի բանվորությունը։ 1907 թ. հուլիսի 3-ին գործադուլ սկսվեց Երևանի տպարաններում ու կազմատներում։ Գործադուլավոր բանվորները ներկայացրին 15 կետից բաղկացած պահանջներ և ցուցաբերեցին այնպիսի հաստատակամություն, որ տերերը հարկադրված եղան դնալ զիջումների և որոշ տեղեր սահմանել 9-ժամյա բանվորական օր ու աշխատավարձը բարձրացնել 20%-ով[75]։ Կովկասի փոխարքայության հատուկ բաժինը, այդ մասին զեկուցելով ոստիկանության դեպարտամենտին, գրում է. «Որպես այդ գործադուլի առանձնահատկություն պետք է նշել այն, որ գործադուլ անող ձեռնարկությունների տերերը ոչ միայն համառ կերպով չէին ուզում ցույց տալ գործադուլի նախաձեռնողներին կամ ագիտատորներին, այլև նույնիսկ նրանք մտադիր էին իշխանությունից թաքցնել գործադուլի բուն փաստը, վախենալով գործադուլավորների վրեժխնդրությունից»[76]։

1907 թ. օգոստոսի 22-ից գործադուլ արին Երևանի ձիաքարշի ծառայողները[77]։ 1907 թ. սեպտեմբերի 17-ին Կարսում տեղի ունեցավ մասսայական ելույթ[78]։ 1908 թ. ապրիլի 29-ին գործադուլ արին Կարսի բերդի բանվորները (մոտ 200 մարդ)։ Նրանք, հավաքվելով կայազորի պետի շենքի մոտ, պատվիրակների միջոցով պահանջեցին բարձրացնել աշխատավարձը։ Երեքօրյա պայքարից հետո օրավարձը 50 կոպեկից բարձրացվեց 80 կոպեկի։ 1908 թ. հունիսի 11—13-ին գործադուլ արին բերդի 40 բանվորներ, որոնք պահանջում էին չխախտել պայմանագիրը և պահպանել նախատեսված աշխատաժամանակը[79]։

Տնտեսական գործադուլներ տեղի ունեցան նաև Ալեքսանդրապոլում։ Կապալառու Խան-Անուշյանների կարի արհեստանոցի բանվորների 1908 թ. գործադուլ-բողոքը տևեց տասն օր։ Նույն թվականին գործադուլ հայտարարեցին Կարապետ Ափինյանի տպարանի բանվորներն ու ծառայողները՝ պահանջելով ավելացնել աշխատավարձը։ Նրանց համառությունը տպարանատիրոջը ստիպեց ավելացնել բանվորների վարձը։

Բանվորների հեղափոխական պայքարի ձևերից մեկը մայովկաներն էին, որոնք ռևակցիայի տարիներին կազմակերպվում էին անլեգալ, Բաքվից եկած բանվոր-բոլշևիկների անմիջական նախաձեռնությամբ 1909 թ. Ղափանի մայովկայում արտասանվեցին քաղաքական-հեղափոխական ճառեր։

Բանվորական շարժումներին հետևում էին գյուղացիական ելույթները։ 1908 թ. Երևանի նահանգապետը գավառապետերից պահանջեց վճռական միջոցներ ձեռք առնել՝ «արգելելու ամեն մի գրավոր ու բանավոր ագիտացիա, որը նպատակ ունի բնակչությանը մղել դեպի ազրարային շարժում»[80]։

---

75 Տե՛ս ՍՍՀՄ ՀՀՄԿԿԱ, ֆ. «Ոստիկանության դեպարտամենտ», IV գործավարություն, 1907, գ. 87, մ. 2, թ. 13։

76 Նույն տեղում, թ. 14։

77 Տե՛ս Նույն տեղում, թ. 15։

78 Տե՛ս Նույն տեղում, գ. 27, մ. 2, թ. 2։

79 Տե՛ս ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 3, գ. 123, թ. 1, 5։

80 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 102, գ. 83, թ. 46։

Ռևակցիայի տարիներին Հայաստանում տեղի ունեցած ագրարային շարժումներից հատկապես նշանակալից էր Զանգեզուրի գյուղացիների զինված ելույթը, Ագբաթության ու Քշվառության ձիրաններում գտնվող գյուղացիները ոտքի ելան 1908 թ. ամռանը։ Նրանց ղեկավարում էին Ղափանի պղնձահանքերի բանվորները, որոնց մեջ աչքի ընկան նաև Բաշքենդ գյուղի բնակիչներ. հուլն բանվորներ Ֆրանկոպուլոներն ու Լոլոպուլոները։ Նրանք հայ ու ադրբեջանցի բանվորների հետ միասին գյուղում ծավալեցին լայն ագիտացիա ու պրոպագանդա՝ կալվածատիրական հողերը բռնագրավելու համար։ Նրանք ասում էին. «Եթե կառավարությունը չի ուզում կալվածատերերից հողը խլել և մեզ՝ գյուղացիներիս հանձնել, ապա մենք պետք է ինքներս ուժով վերցնենք այն, «Եկեք միանանք և դուրս քշենք ինչպես կալվածատերերին, այնպես էլ ոստիկանական չինովնիկներին»[81]։

Գյուղացիները համախմբվում էին և հող պահանջում։ Մինչդեռ կապիտալիստ-կալվածատեր Կոնդուրովը ոստիկանության օգնությամբ 1908 թ. հուլիսի 30-ին հարձակվում է Բաշքենդ գյուղի վրա և փորձում շարժումը խեղդել բնում։ Այդ ժամանակ ոչ միայն ոտքի է ելնում ողջ Բաշքենդը, այլև շրջակա հանքերից ու գյուղերից դեպքի վայրն են շարժվում հարյուրավոր գյուղացիներ՝ զինված դաշույններով, մահակներով, երկաթե ձողերով։ Միայն ոստիկանական լրացուցիչ ուժերի օգնությամբ է հաջողվում մի կերպ «հանգստացնել» նրանց և ձերբակալել շարժման ղեկավարներին։ Այդ առթիվ պրիստավ Խանխոյսկին Զանգեզուրի գավառապետին գրած իր զեկուցագրում հայտնում էր. «Ինձ հաղիվ հաջողվեց հանդարտացնել խռովարար գյուղացիներին և եթե վերոհիշյալ անձնավորությունները նորից երևան գան ինձ վստահված տեղում, ապա ես ի վիճակի չեմ լինի պատասխանատու լինել տեղամասի համար քաղաքական տեսակետից, ուստի և խնդրում եմ կարգադրություն՝ նրանց արտաքսելու ինձ վստահված տեղամասից կամ Անդրկովկասի երկրամասից և նրանց ենթարկել օրինական պատասխանատվության»[82]։

Ապստամբության ձերբակալված ղեկավարները երկար ժամանակ գանգատվում էին Գորիսի ու Գանձակի բանտերում, իսկ վերջն էլ մահ գտնում Թիֆլիսի Մետեխի բանտում։

Ղափանում ծավալված ագրարային այս շարժումը բնորոշ է թե՛ իր մասսայական բնույթով և թե՛ բանվորների ու գյուղացիների համագործակցությամբ։

Գյուղացիական հուզումներն ուժեղ էին նաև Երևանի, Էջմիածնի, Նոր Բայազետի գավառներում։ 1907—1909 թթ. Զառ գյուղի մուլթագարներն անընդհատ բողոքում էին ցարական իշխանություններին, որ գյուղացիները կամայականորեն և նույնիսկ ուժով հրաժարվում են իրենց պարտականությունները կատարելուց, հատկապես մուլք տալուց։ Ավելին, Էջմիածնի և Թալինի շրջանների մի քանի գյուղերում եղել են կալվածատիրական հողերի բռնագրավումներ[83]։

Հեղափոխական հուզումներ տեղի ունեցան Հայաստանի քաղաքների կա-

---

81 Մ[illegible]-ի Հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 34, գ. 6, թ. 76։

82 ՎՍՍՀ ԿՊՊԱ, Թիֆլիսի գաւառային պալատ. 1908—1909., ֆ. 23, գ. 758, թ. 22։

83 Տե՛ս ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 2, գ. 404, թ. 75—77։

յազորների ու զանազան վայրերում տեղավորված զորքերի մեջ, հատկապես 1907 թ. Կարսի կայազորում[84]։

Ռեակցիայի տարիներին եղան նաև աշակերտական-ուսանողական ելույթներ։ Առանձնապես հաճախակի էին հուզումները էջմիածնի Գևորգյան ճեմարանում։ Դրանք բռնկվում էին ամենատարբեր առիթներով, բայց բոլոր դեպքերում ուղղված էին տիրող դաժան ռեժիմի, ուսուցման սխոլաստիկ սիստեմի և կրոնական գաղափարախոսության դեմ։ Ճեմարանի մանկավարժական խորհրդի 1909 թ. ապրիլի 14-ի նիստի արձանագրության մեջ մատնանշվում է 15 աշակերտների հանդուգն ելույթի և անհնազանդության մասին[85]։ էջմիածնում տիրող հեղձուցիչ միջավայրի մասին է վկայում Կոմիտասի 1909 թ. սեպտեմբերի 5-ի նամակը. «Քսան տարվա ընթացքում շրջապատն ինձ թույլ չի տվել այն անելու, ինչ կարող էի, որովհետև տեսա միայն որոգայթ և ոչ արդարություն, նյարդերս թուլացել են, այլևս տոկալու ճար ու հնար չունեմ։ Որոնում եմ հանգիստ, չեմ գտնում, ծարավի եմ ազնիվ աշխատանքի, խանդավառվում եմ, փափագում եմ հեռու մնալ, խցել ականջներս չլսելու համար, գոցել աչքերս չտեսնելու համար, բայց գի մարդ եմ, չեմ կարողանում»[86]։

Կոմիտասը հարկադրված 1910 թ. աշնանը թողեց էջմիածինը ու մեկնեց Պոլիս։

Աշակերտական հուզումներ տեղի ունեցան Երևանի թեմական դպրոցում ու արական գիմնազիայում։ Առանձնապես լայն չափեր ընդունեց Երևանի թեմական դպրոցում 1908 թ. նոյեմբերին բորբոքված աշակերտական շարժումը, որը շարունակվեց մինչև 1909 թ. հունվարը։ Աշակերտները մասսայաբար դուրս եկան դպրոցում հաստատված ռեժիմի դեմ և պահանջեցին հեռացնել դպրոցի դաշնակցական տեսուչ Տիգրան Աղամալյանին։ Դպրոցի հոգաբարձությանն ուղղված բողոքում գրված էր. «Աշակերտությունը վճռեց այլևս չհաճախել պ. Աղամալյանի դասերին և դիմել Ձեզ հեռացնել նրան ուսուցչության և տեսչության պաշտոնավարությունից մինչև դեկտեմբերի մեկը։ Հակառակ դեպքում ստիպված կլինենք դասադուլով պաշտպանել մեր իրավունքները»[87]։ Դպրոցի հոգաբարձությունն ամեն կերպ պաշտպանում էր տեսչին և փորձում «խաղաղեցնել» աշակերտներին։ Տեսնելով, որ դեպքերն այլ ընթացք են ստանում, որոշվում է դիմել պատժիչ միջոցների և դպրոցից արձակվում են բարձր դասարանների աշակերտները։ Դա առաջ է բերում հասարակության դժգոհությունը։ Դպրոցի ղեկավարությունը ստիպված ետ է ընդունում աշակերտներին և հարկադրված աշխատանքից ազատում Տ. Աղամալյանին։

Աշակերտական-ուսանողական ելույթներն ավելի ուժեղ էին Բաքվում ու Թիֆլիսում։ Կովկասում ծավալված այդ շարժումը հասավ այնպիսի աստիճանի, որ Երրորդ պետական դումայի աջ դեպուտատները ցարական կառավարության առաջ հարցադրում արին, թե ինչ միջոցներ են ձեռք առնվում Կովկասի ուսումնական հաստատություններում բորբոքված հեղափոխական ելույթները ճնշելու համար[88]։

---

84 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՌՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 687, թ. 9—11։

85 Մատենադարան, Գևորգյան ճեմարանի ֆոնդ, թղթ. 27, վավ. 8, թ. 32։

86 Մ. Վ. Արզումանյան, նշված աշխ., էջ 249։

87 Լեո, Պատմություն Երևանի Հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 535։

88 «Հայրենիք», 18 մայիսի 1908 թ.։

Անդրկովկասի և Հայաստանի աշխատավորությունը ռեակցիայի տարիներին հսկայական օգնություն կազմակերպեց պարսկական հեղափոխությանը։ Պարսիկ բանվորները, որոնք ապրուստ հայթայթելու համար եկել էին Անդրկովկաս, ձեռք էին բերում հեղափոխական պայքարի փորձ և դաստիարակվում պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով։ Նրանց թիվը բավականաչափ զգալի էր Ալավերդու, Ղափանի պղնձահանքերում, ինչպես նաև Հայաստանի արդյունաբերական մյուս ձեռնարկություններում։ Պարսկական հեղափոխության ականավոր գործիչ, ժողովրդական հերոս Սաթար խանը մի շարք տարիներ աշխատել էր Անդրկովկասում՝ Երևանի երկաթգծի շինարարությունում, Բաքվի նավթահանքերում և ձեռք բերել քաղաքական կոփվածություն։

Անդրկովկասի աշխատավորության օգնությունը ծավալվում է պարսկական հեղափոխության համարյա հենց սկզբից։ Դեռ 1906 թ. հոկտեմբերին Թեհրանի ցարական դեսպան Հարտվիգը Կովկասի Ռազմական օկրուգին տված իր հեռագրում նշում է. «Շահական կառավարության կողմից ստացվել են չափազանց տագնապալից լուրեր այն դերի մասին, որ ադրբեջանական իրադարձություններում խաղում են Կովկասի հեղափոխականները, որոնք մշտական հարաբերությունների մեջ են թավրիզեցիների հետ, այցելում են Սաթար խանին, մատակարարելով նրան բոլոր միջոցները՝ կառավարության դեմ պայքարը շարունակելու համար»[89]։

Բոլշևիկյան մամուլը լայնորեն լուսաբանել է պարսկական հեղափոխության հարցերը և մասսաներին մղել հետագա պայքարի։ Հեղափոխության նպատակների մասին ճշմարիտ խոսքի տարածումն ուներ կարևոր նշանակություն ինչպես Կովկասում, այնպես էլ Պարսկաստանում։ Այդ բանը լավ հասկացան նաև Պարսկաստանի սոցիալ-դեմոկրատները, որոնք օգնության դիմեցին Անդրկովկասի բոլշևիկներին։ Կովկասի փոխարքայի պաշտոնակատարը 1908 թ. սեպտեմբերի 14-ի իր շրջաբերականում՝ ուղղված նահանգապետներին, գրում է. «Ինձ հասած տեղեկությունների համաձայն պարսկական հեղափոխական կուսակցությունը Կովկաս է ուղարկել մի քանի էմիսարներ՝ ագիտատոր-մարտիկներ հավաքագրելու համար, որոնք պետք է գնան քաղ. Թավրիզ, որպեսզի աջակցեն հեղափոխական պրոպագանդային՝ պարսկական կառավարության դեմ ապստամբությունն ուժեղացնելու համար»։ Ստանալով այդ շրջաբերականը, Երևանի նահանգապետն այն ուղարկում է գավառապետներին և զգուշացնում. «Ձեռք առնել ամենաեռանդուն միջոցառումներն այդ բանը թույլ չտալու համար»[90]։

Անդրկովկասի բոլշևիկները Պարսկաստան ուղարկեցին հմուտ ու քաջարի հեղափոխականներ, անլեգալ գրականություն, թռուցիկներ, տպագրական սարքավորում և այլն։ Առանձնապես մեծ աշխատանք կատարեցին Գ. Օրջոնիկիձեն, Մ. Ազիզբեկովը, Պ. Ջափարիձեն, Ն. Նարիմանովը և ուրիշներ։ Բոլշևիկները լայնորեն աջակցում էին պարսկական հեղափոխականներին՝ ստեղծելու իրենց մասսայական կազմակերպությունները (մուջահիդներ), որոնք տարածում գտան նաև Անդրկովկասում։ Կովկասում մուջահիդները համախմբում էին պարսկական հեղափոխականներին, զբաղվում միջոցների ու զենքի հայթայթմամբ ու առաքմամբ, գրականության տարածմամբ, կամավորների ջոկատների ստեղծմամբ։

---

89 Ադրբեջանական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 132, գ. 13, թ. 18։
90 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 102, գ. 83, թ. 120։

Այդպիսի կազմակերպություններ ստեղծվեցին նաև Հայաստանում։ 1908 թ. հունիսին Երևանի նահանգական ժանդարմական վարչության պետը իր զեկուցագրում հաղորդում է, որ մուջահիդների կազմակերպություններ կան Երևանում ու Կարսում[91]։ Բորչալուի բոլշևիկյան կազմակերպության ջանքերով Ախթալա կայարանում կազմակերպվեց ռումբերի գաղտնի արտադրություն։ Այդ մասին հին բոլշևիկ Ա. Կախոյանը գրել է։ «Ընդհատակի աշխատանքներից մեկն էլ այն էր, որ Պարսկաստանի հեղափոխականներին օգնելու համար Ախթալա կայարանի դիմաց մի գինեվաճառի խանութի գլխի սենյակում ռումբեր էինք պատրաստում։ Արդեն մի քանի տասնյակ պատրաստել էինք ու հետզհետե փոխադրել Թիֆլիս, Առաքել Օկոյաշվիլու մոտ»[92]։ Ալեքսանդրապոլի գավառապետը Երևանի նահանգապետին 1909 թ. փետրվարի 6-ին գրում էր, որ մի քանի պարսկահպատակներ, ինչպես նաև տեղական բնակիչներ, կապվել են հրետանային դիվիզիայի շտաբի շարքային զինվորների հետ, որպեսզի զենք գնեն պարսկական հեղափոխականների համար[93]։ Երևանի նահանգական ժանդարմական վարչության պետը 1908 թ. սեպտեմբերի 2-ին Թիֆլիս ուղարկած իր զեկուցագրում նշում էր, որ Բաքվից Երևան է ուղարկվել չորս պարկ բրինձ, որի մեջ հայտնաբերվել է 2800 մարտական փամփուշտ՝ Պարսկաստան ուղարկելու նպատակով[94]։

Զենքի փոխադրումը կատարվում էր ռուս-պարսկական սահմանագծի տարբեր կետերով, բայց առավել մեծ չափերով Ջուղայի վրայով։ Կովկասյան պահնորդական բաժանմունքը 1911 թ. փետրվարին փոխարքայի գրասենյակից զեկուցում էր, որ Ջուղայում լաստից (գետանցից) կես վերստ բարձր գիշերները ռուսական կողմից պարսկական կողմն են փոխադրվում հեղափոխականներ՝ առանց անձնագրերի, ինչպես նաև՝ զենք ու փամփուշտներ։ Զինամթերքները հետագա փոխադրման համար կենտրոնացվում են հայկական Դարաշի գյուղում՝ եկեղեցում[95]։

Անդրկովկասի բոլշևիկները Պարսկաստան ուղարկեցին նաև զինված ջոկատներ՝ կազմված տարբեր ազգերի բանվորներից ու գյուղացիներից։ Հեղափոխական մարտերի անմիջական մասնակից Մուխտար Աղիմ Ջաղեն պատմում էր, որ իրենց ջոկատում կային պարսիկներ, ադրբեջանցիներ, վրացիներ ու հայեր, ընդամենը 300—350 մարդ։ Նույնիսկ կազմակերպվում էին առանձին հայկական ջոկատներ, որոնք, անցնելով սահմանագիծը, կռվում էին պարսկական հեղափոխականների հետ միասին։ Երևանի նահանգապետը 1909 թ. ապրիլի 6-ին Սուրմալուի գավառապետին գրում էր. «Եղած տեղեկությունների համաձայն տեղերում կազմակերպվում են հայերի ջոկատներ, որոնք ուզում են անցնել սահմանը, որպեսզի մտնեն պարսկական հեղափոխականների շարքերը» և կարգադրում է ամենախիստ միջոցներ ձեռք առնել նման դեպքերը տեղնուտեղը կանխելու համար[96]։

Անդրկովկասի բոլշևիկները պարսկական հեղափոխությանն օգնելու համար հաղթահարում էին ցարական իշխանությունների հարուցած դժվարու-

---

91 Տե՛ս ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 3, գ. 78, թ. 50։
92 Ա. Կախոյան, Հոդվածներ և հուշեր, Երևան, 1963, էջ 72—73։
93 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 101, ց. 1, գ. 81, թ. 8։
94 Տե՛ս ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 3, գ. 100, 1908 թ., 248։
95 Տե՛ս նույն տեղում, ֆ. 3, գ. 519, թ. 33։
96 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 115, գ. 2, թ. 28։

թյուններըւ Միաժամանակ նրանք ժողովրդական ղանգվածներին պարզաբանում էին պարսկական հեղափոխության բնույթը։ 1911 թ. բոլշևիկյան «Նոր խոսքում» տպագրվեց Հ. Կարախանյանի «Պարսկաստան» հոդվածը, որտեղ նա մերկացնում է օտարերկրյա իմպերիալիզմի գաղութատիրական քաղաքականությունն այդ երկրում և ցույց տալիս, որ պարսկական ժողովուրդը ապրում է զարթոնք, պայքարում իր անկախության համար։

Պարսկական հեղափոխության մասին դասախոսություններ ու զրույցներ են կազմակերպվում Հայաստանի տարբեր վայրերում։ Այդպիսի մի զեկուցում կարդացվեց էջմիածնի ճեմարանի աշակերտների նախաձեռնությամբ, որտեղ «դասախոսը (աշակերտներից մեկը) կանգնած էր մատերիալիստական հայեցակետի վրա» և աշխատում էր ցույց տալ, որ ավատականության դեմ ուղղված պարսկական հեղափոխությունը երկրում տիրող սոցիալ-տնտեսական ու քաղաքական պայմանների արդյունք է։

Ռուսական առաջին հեղափոխության ազդեցության տակ բորբոքված պարսկական հեղափոխությունն իր հերթին նպաստեց Անդրկովկասի ու Պարսկաստանի աշխատավոր ժողովուրդների ինտերնացիոնալ կապերին՝ բռնակալության դեմ մղվող պայքարում։

Ռեակցիայի տարիներին Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, դեմոկրատական խավերը, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, գնում էին դեպի նոր գոտեմարտեր։ Պատահական չէ, որ դեռ 1908 թ. աջերը Երրորդ պետական դումայում բողոքում էին, որ Կովկասում. «անկարգությունները» ոչ միայն չեն դադարել, այլև ծավալվել են ու «ստացել բացառապես հեղափոխական բնույթ»[97]։ Ցարական պաշտոնական քներից մեկն ուղղակի ազդարարում էր, որ Կովկասը՝ Ռուսաստանի այդ բանկագին ադամանդը, ձեռքից գնում է, որովհետև այնտեղ չի դադարել հեղափոխական շարժումը, և «նա ապստամբության նախօրյակին է»[98]։

---

[97] «Слово», 2 апреля 1908 г.

[98] «Новое время», 20 марта 1908 г.

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՆՈՐ ՎԵՐԵԼՔԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1910—1914)

1. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

XX դարի սկզբին ճգնաժամ ապրող Ռուսաստանի տնտեսության մեջ 1909—1910 թվականներից նկատելի աշխուժություն սկսվեց։ Առանձնապես արագ զարգացավ երկրի ծանր արդյունաբերությունը։ 1909—1913 թթ. չուգունի արտադրությունն աճեց 66 տոկոսով, պողպատինը՝ 68, քարածխինը՝ 40, իսկ ամբողջ արդյունաբերության արտադրանքը՝ 50 տոկոսով։ Ընդարձակվեց նաև երկաթուղային ցանցը։ Միայն երեք տարվա ընթացքում (1910—1913) կառուցվեց 3200 կմ երկաթուղային ճանապարհ, որը նոր թափ հաղորդեց ապրանքաշրջանառությանը։ Երկրի արդյունաբերության մեջ գնալով աճեց մոնոպոլիստական միավորումների թիվը և 1905 թ. 30-ից նրանց քանակը 1913 թ. հասավ 230-ի։

Զարգացում ապրեց գյուղատնտեսությունը, ավելի ներթաշվելով շուկայական հարաբերությունների մեջ։ 1909—1913 թթ. ընթացքում Ռուսաստանից միջին հաշվով տարեկան արտահանվում էր 12 միլիոն տոննա հացահատիկ։ Գյուղատնտեսության մեջ գգալիորեն ավելացավ նաև օգտագործվող մեքենաների քանակը։

Տնտեսական առաջընթացն ակնբախ էր նաև Անդրկովկասում։ Վրաստանում ու Ադրբեջանում զարգացավ լեռնահանքային արդյունաբերությունը, բացվեցին մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, որի շնորհիվ աճեց պրոլետարիատի թվաքանակը. առաջադիմեց նաև գյուղատնտեսությունը և ավելի խորը ներթաշվեց շուկայական հարաբերությունների ոլորտը։

Նկատելի տեղաշարժեր կատարվեցին նաև Արևելյան Հայաստանի տնտեսության մեջ։ 1910—1913 թթ. պղնձի արտադրությունը 278271 փթից հասավ 371411 փթի[1]։ Պղնձից բացի, հանքանյութի մշակության ժամանակ ստացվում էր արծաթ, կապար, ծծմբաթթու և նույնիսկ ոսկի. վերջինս ստանում էին բացառապես ֆրանսիացիները՝ էլեկտրոլիզի միջոցով։

Հայաստանում լեռնարդյունաբերության կարևոր ճյուղերից էր ագի արդյունաբերությունը։ Ագը առաքվում էր ոչ միայն Վրաստան ու Ադրբեջան, այլև Թուրքիա։ Բացառությամբ Մուստինի ագահանքի, մյուսները պետական

---

[1] *Տե՛ս* «Кавказский календарь на 1910 г.», ч. IV, стр. 561—562, 1913 г., ч. IV, стр. 388—390.

էին՝ վարձակալության տրված կապիտալիստ Ջանփոլադյաններին։ Հետագայում նրանց կողքին երևացին նոր վարձակալներ՝ հանձին Սելյանովի, Փրիդոնյանի և Բրոդսկու։ 1910 թ. Երևանի նահանգի և Կարսի մարզի հանքերից արտադրվել է 1436881 փութ աղ[2]։ 1912—1913 թվականներին արտադրանքը որոշ չափով նվազում է։ Շուկայի սահմանափակ պահանջները խոչընդոտում էին աղի արտադրության արագ զարգացմանը։ «Կովկասյան օրացույցի» տվյալների համաձայն 1910 թ. Հայաստանում աղի արդյունաբերության մեջ աշխատում էր 126 մարդ[3], 1914 թ. արդյունաբերության այդ ճյուղում զգալի աշխուժացում է նկատվում։

Հանքային արդյունաբերությունից հետո իր տեսակարար կշռով երկրորդ տեղն էր բռնում ապիրտի, կոնյակի արդյունաբերությունը, որը կենտրոնացած էր գլխավորապես Երևանում և մասամբ էլ նահանգում։ Արտադրության այս ճյուղի զարգացումը կապված էր խաղողագործության հետ։ 1910 թ. Երևանի նահանգում եղած 9742 դեսյատին այգուց խաղողի բերքը եղել է 4.759.970 փ., որից ստացվել է 2.725.5 հազար դույլ գինի և 9.979,7 հազար աստիճան խաղողի ապիրտ։ Կոնյակային ապիրտ, որ արտադրվում էր նահանգում գտնվող մեծ ու փոքր 13 գործարանում, ստացվել է 4.166.663 աստիճան։ Ամբողջ Անդրկովկասում նույն տարում արտադրվել է 4.799.463 աստիճան կոնյակային ապիրտ[4]։

1913 թ. կոնյակային ապիրտի արտադրությունը Անդրկովկասում գործող 24 գործարաններից կազմել է 8.517.248 աստիճան, որից Երևանի նահանգում միայն ստացվել է 6.738.626 աստիճան, նույն տարում Անդրկովկասում գործող 11 ռեկտիֆիկացիոն (կրկնաթորիչ) գործարաններում ստացվել է 24.945 աստիճան անջուր (մաքուր) ապիրտ, որից Հայաստանի երեք գործարաններում՝ 6.145.6-ը աստիճան[5]։

1913 թ. Հայաստանում ստացվեց 5.336.700 փութ խաղող, մեկ դեսյատինից՝ 350 փութ։ Նախապատերազմյան տարիներին մեկ դեսյատինից բերքատվությունը միջին հաշվով հասնում էր 270—280 փթի։

Արևելյան Հայաստանի կոնյակի արտադրությունը շարունակում էր մնալ հիմնականում Շուստովի ձեռքին։ Նրա գործարանների կոնյակը, որ երբեմն «Արարատ» մակնիշով էր վաճառահանվում, մրցությունից դուրս էր։

Հայաստանի ապիրտը և կոնյակը արտահանվում էին Պետերբուրգ, Մոսկվա, Վարշավա, Կուրսկ, Ռիգա, Բաքում, Թիֆլիս, Բաքու, Ելիսավետպոլ, ինչպես նաև Միացյալ Նահանգներ։ Ապիրտի և կոնյակի արտադրությամբ Հայաստանը ամեն դիրքեր գրավելով ռուսական շուկաներում, մասնակցում էր համաշխարհային ապրանքաշրջանառությանը։ Կոնյակը, կոնյակային ապիրտը ստացվում էր միայն բարձրորակ գինուց՝ բացառապես գործարանային մշակության եղանակներով։

Շարունակվում էր նաև բամբակագործության զարգացումը։ 1910 թ. Երևանի նահանգում ստացվել է ամերիկյան տեսակի 325.854 փ., կարակոզ տե-

---

2 Տե՛ս «Кавказский календарь на 1910 г.», ч. IV, стр. 567—562, 1912 г., ч. IV, стр. 296, 1913 г., ч. IV, стр. 401, 1914 г., ч. IV, стр. 217—219, 1915 г., ч. IV, стр. 236.

3 Տե՛ս «Кавказский календарь на 1912 г.», ч. IV, стр. 296, 1913 г., ч. IV, стр. 401.

4 Տե՛ս «Кавказский календарь на 1912 г.», ч. IV, стр. 261—262.

5 Տե՛ս «Кавказский календарь на 1913 г.», ч. IV, стр. 317—318.

սակի՝ 35.740 փ., ընդամենը 361.594 փ. բամբակ[6]։ Մեկ դեսյատինից ստացվում էր մոտավորապես 16 փութ ամերիկյան տեսակի բամբակ, որի մեկ փթի արժեքը 14 ռուբլի էր, կարակոզ տեսակի մեկ փթինը՝ 10—12 ռուբլի։ 1912 թ. Երևանի նահանգում ցանվել է 23.145 դեսյատին բամբակ, որից ստացվել է ամերիկյան տեսակի 426.249 փ., կարակոզ տեսակի՝ 41.403 փ., ընդամենը 467.652 փ.[7]։ 1913 թ. հավաքվել է 613.000 փ.։ Ամբողջ Անդրկովկասում բամբակ ստացվել էր 1.793.000 փ.։ 1914 թ. Երևանի նահանգում բամբակ մթերվել է 700.000 փ.։ Անդրկովկասյան բամբակի հիմնական սպառողը դարձյալ ռուսական շուկան էր։

Պատերազմի նախօրյակին Երևանի նահանգում կար բամբակի մամլման 19 սարք(պրես), յուրաքանչյուրը 10—60 հազար փութ արտադրողականությամբ։ Այդ տարիներին Երևանի նահանգի բամբակագործական կարևոր ձեռնարկությունները պատկանում էին Եղիազարովին, Գևորգյան և Աֆրիկով եղբայրներին, Հաջի Իրզա Կյալամովին և այլոց։

Ինչպես ողջ Անդրկովկասում, այնպես էլ Երևանի նահանգում գործող բամբակազտիչ ձեռնարկություններից ոչ բոլորն էին գործարանային բնույթի։ Նրանց մեծ մասը աշխատում էր նավթի այրման, ջրի, ձիու ուժով։ Իրենց պարզունակ կառուցվածքով, ցածր արտադրողականությամբ, սպասարկող փոքր անձնակազմով դրանք մանրապրանքային տիպի ձեռնարկություններ էին։ Անհամեմատ մոտ էին գործարանային ձեռնարկություններին գոլորշու ուժով աշխատող բամբակազտիչ ձեռնարկությունները։

1912 թ. Երևանի նահանգում կար նավթով աշխատող 108, գոլորշիով՝ 33, ջրով՝ 153, ձիու ուժով՝ 24, ընդամենը 328 բամբակազտիչ ձեռնարկություն, որոնց արտադրանքը կազմում էր 429.789 փութ[8]։

XX դարի սկզբներին Հայաստանում կային տասնյակ մետաքսափաթաթման և մետաքսագործական ֆաբրիկաներ ու տնայնագործական արհեստանոցներ։ Ղափանի մետաքսափաթաթման ձեռնարկությունում սեզոնային աշխատանքի էր ընդունվում մինչև 170 մարդ։ Այդ ֆաբրիկայի կոկոն փաթաթող 40 գազգահներն արտադրում էին օրեկան մեկ փութ մետաքս։ Այստեղ վերամշակվում էր նաև Պարսկաստանից բերված հումքը[9]։

Հայաստանի բաղաքներում և գյուղերում կային հարյուրավոր մանր ու միջին արհեստանոցներ ու տնայնագործական ձեռնարկություններ։ 1908 թ. Երևանի նահանգում եղել է այդպիսի 3183 «ֆաբրիկա-գործարան» 1.749.951 ռ. դրամական շրջանառությամբ և 6632 բանվորներով, իսկ 1910 թ.՝ 3642 ձեռնարկություն, 2.224.367 ռ. շրջանառությամբ, 10.306 բանվորով[10]։

Ֆեոդալական հարաբերությունների բայքայման, գյուղացիության հողագործությունից կտրվելու ու արդյունաբերությանը հարելու պրոցեսները նպաստում էին քաղաքների զարգացմանը և քաղաքային բնակչության աճին, որն արտահայտվում է հետևյալ թվերով[11]։

---

6 Տե՛ս «Памятная книжка Эриванской губернии на 1912 г.», ч. IV, стр. 4.

7 Տե՛ս նույն տեղում, 1914 г., ч. IV, стр. 5, 6, 189.

8 Տե՛ս «Памятная книжка Эриванской губернии на 1914 г.», ч. III, стр. 186—190.

9 Տե՛ս *В. А. Дарьян*, Шелковая промышленность Армянской ССР, Ереван, 1956, стр. 159.

10 Տե՛ս «Памятная книжка Эриванской губернии на 1912 г.», ч. IV, список № 4.

11 Տե՛ս «Кавказский календарь на 1899 г.», отд. стат., стр. 35, 36, 39, на 1912 г., отд. стат., стр. 237, 243, 244, на 1915 г., отд. стат., стр. 253, 257.

Վայրերը	1886 թ.	1897 թ.	1910 թ.	1914 թ.
Երևան	14.738 մարդ	29.033	32.369	29.366
Ալեքսանդրապոլ .	24.230 »	32.018	34.603	51.316
Կարս	3.939 »	20.891	35.732	30.086
Նոր Բայազետ . .	7.488 »	8.507	10.421	13.290

XX դ. սկզբներից սաստկացող սակավահողության պատճառով գյուղացիության արտահոսքը ընդունեց մասսայական բնույթ։ Գյուղացիները գնում էին թե՛ ժամանակավորապես, թե՛ ընդհանրապես, կտրվելով հողագործությունից ընդմիշտ։ Ընդ որում վերջիններիս թիվը հետզհետե ավելանում էր։

1912 թ. Երևանի նահանգի միայն չորս՝ Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Էջմիածնի և Երևանի գավառներից արտագնացության էր մեկնել 14.830 մարդ, որից 890-ը՝ արտասահման, 1913 թ. նույն վայրերից մեկնել էր 23.492 մարդ, որից 1927-ը՝ արտասահման[12]։ Ժամանակի հայկական մամուլը ողբ էր բարձրացնում՝ նահապետական գյուղի քայքայումը տեսնելով։

«Ո՞ւր բարով այդպես,— գյուղացիներին է դիմում վշտահար հայ մտավորականը,— ո՞ւր ես թողել հողդ ու ջուրդ, հանդդ ու արտդ, բախտդ ու այգիդ և պանդուխտի մախաղը մեջքիդ կապած, գավազանը ձեռքիդ՝ վազում հայ գյուղացի...

Միթե դու կարծում ես, թե հեռուն, այնտեղ սարերի և ծովերի եռևում մեծ-մեծ քաղաքների ու գործարանների մեջ ոսկին ու արծաթը փռած են ու դու գնալով այնտեղ փեշով պիտի հավաքես...

Դարձեք այդ կորստաբեր ճանապարհից»[13]։

Սակայն որքան էլ «կորստաբեր» լիներ արտագնացությունը, ֆեոդալական մնացուկների վրա հանգչող գյուղացիական տնտեսությունների քայքայումը, հասարակության զարգացման ճանապարհին, առաջադիմական քայլ էր։ «Բնակչությանը հողագործությունից դեպի քաղաքները գրավելու նման՝ ոչ-հողագործական արտագնացությունը պրոգրեսիվ երևույթ է ներկայացնում իրենից,— գրում է Վ. Ի. Լենինը,— Նա պոկում է բնակչությանը հեռավոր, հետամնաց պատմության կողմից մոռացված խուլ անկյուններից և ներգրավում է նրան արդի հասարակական կյանքի հորձանուտի մեջ»[14]։

Գյուղացիների քայքայման ցուցանիշ էր նաև նրանց անասունների գլխաքանակի անկումը։ Իսկ ծանր հարկերը, որոնք հաճախ կլանում էին տնտեսության ընդհանուր եկամուտների մեծ մասը և բնական պատահարները՝ սովը, երաշտը, անբերրիությունը՝ որպես պատուհաս, մշտապես կախված լինելով գյուղացիների գլխին, աղքատության դուռն էին հասցնում նրանց։

Հայաստանում ոռոգելի հողերը մեծ տարածություններ չէին գրավում, որի հետևանքով և գյուղատնտեսական մթերքների արտադրությունը խիստ ցածր էր։ Տնտեսության ինտենսիվ զարգացմանն զգալիորեն խոչընդոտում էր նաև հողի շատ բարձր վարձագինը, որի պատճառով էլ հողամշակությունը տար-

---

12 Տե՛ս П. Абелян, Население Армении, народное хозяйство Закавказья, № 17—18, Тифлис, 1929, стр. 106.

13 «Մշակ», 1912, № 80։

14 Վ. Ի. Լենին, նշվ. հ. 3, էջ 731։

վում էր գերազանցապես պապենական եղանակներով, ուստի բնորոշ է, որ Հայաստանում երկրագործության մեջ XX դարի սկզբին կատարելագործված գործիքներն իրենց քանակով բացարձակապես զիջում էին պարզունակ արտադրողական միջոցներին։ Այսպես, 1909 թ. Կարսի մարզում օգտագործվում էր 18500 արոր և ընդամենը՝ 2472 երկաթե գութան, իսկ Երևանի նահանգում 1912 թ.՝ 62800 արոր և 6532 երկաթե գութան[15]։

Կովկասում, այդ թվում և Հայաստանում, հարկային լուծն ու ֆեոդալական պարտույթներն ավելի ծանր էին, քան ռուսական նահանգներում։ Երևանի նահանգում պետական հողային հարկը, բահրա-տուրքը, զեմստվային տուրքը 1910 թ. կազմել է 977.9 հազար ռուբլի, 1913 թ.՝ 1177,0 հազար ռուբլի։ Երևանի նահանգի բնակչությունից գանձվող բոլոր տեսակի հարկերի ու տուրքերի գումարը 1913 թ. մոտ երկու միլիոն ռուբլու է հասել, Կարսի մարզից գանձվող գումարը՝ մեկ միլիոն ռուբլու։

Ցարական կառավարությունը ողջ Կովկասից գանձում էր տարեկան 14—15 միլիոն ռուբլու հարկ, իսկ տեղում կատարվող ծախսերը պետական գանձարանին նստում էր մոտավորապես 28—30 միլիոն ռուբլի։ Այս թվացող տարբերությունը ցարական կառավարության ռեակցիոն գործիչներին առիթ էր տալիս ամենուրեք հայտարարելու և աղմկելու Կովկասյան երկրամասը՝ Ռուսաստանի վրա թանկ նստելու մասին։ Իրականում Կովկասից ստացվող եկամուտները մի քանի անգամ գերազանցում էին տեղում կատարված ծախսերը։ Երկրամասից ստացվող ուղղակի և անուղղակի հարկերը և պետական այլ հասույթները, այդ թվում նավթահանքերից, պղնձի, մարգանեցի հանույթից ստացվածը կազմում էր տարեկան 120—125 միլիոն ռուբլի[16]։

Ռուսական առաջին հեղափոխությունից հետո Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովը, ելնելով երկրամասի տնտեսական և հասարակական զարգացման հասունացած պահանջներից, հարց հարուցեց Անդրկովկասում տեղական ինքնավարության մարմիններ՝ զեմստվոներ մտցնելու մասին, 1907 թ. փոխարքան Նիկոլայ II-ին ներկայացրած իր ամենահպատակ զեկուցագրում առաջարկում էր Անդրկովկասի համար հաստատել տալ ինքնավարության քառաստիճան սիստեմ՝ հիմնված ընտրական սկզբունքի վրա։ Ըստ որում ինքնավարության առաջին և ստորին օղակը գյուղական հասարակության ժողովն էր լինելու, որին հաջորդելու էր տեղամասային զեմստվոն։ Հաջորդ օղակը գավառային զեմստվոն էր, որից հետո գալիս էր Անդրկովկասյան ընդհանուր զեմստվոն։ Սակայն Պետական խորհուրդը, որին ներկայացվեց Վորոնցով-Դաշկովի նախագիծը՝ սարսափած անդրկովկասյան ժողովուրդների սեպարատիստական տենդենցների խրտվիլակից, մերժեց այն։ Հետագայում ևս Անդրկովկասում զեմստվո մտցնելու մի շարք պահանջներ և նախագծեր ներկայացվեցին պետական դումաներում, սակայն դրանք այնպես էլ կառավարական հաստատման չհասան[17]։

Ինչպես XIX դ. վերջին, այնպես էլ XX դ. սկզբին Հայաստանում շարունակում էր գերիշխել համայնական հողատիրությունը, որը, հարկավ, չէր կան-

15 Տե՛ս Մ. Հ. Ադոնց, Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դ. սկզբին, էջ 145։

16 Տե՛ս նույն տեղում, էջ 100։

17 Տե՛ս նույն տեղում, էջ 16—18։

խում գյուղացիության հետագա հողազրկության պրոցեսը։ Հայաստանի գյուղացիության ավելի քան 4 տոկոսը բոլորովին հող չուներ։

Ցարական կառավարությունը, ելնելով իր գաղութատիրական շահերից, շարունակում էր Ռուսաստանի կենտրոնական նահանգներից Անդրկովկաս, այդ թվում և Հայաստան, վերաբնակիչների փոխադրելու քաղաքականությունը։ Կառավարությունն անտեսում էր այն փաստը, որ տեղական բնակչությունը տառապում էր սակավահողությունից։ Այս քաղաքականության հետևանքով արդեն 1914 թ. Կարսի մարզում հաստատվեցին 3112, Ղազախի և Ջանգեզուրի գավառներում՝ 236 շունչ վերաբնակիչներ։ Նույն թվականին իշխանությունները մտադրվում էին Ռուսաստանի ներքին նահանգներից Երևանի նահանգ տեղափոխել ևս 2496 մարդ[18]։

Գյուղացիների բայքայմանն զգալի չափով նպաստում էր նաև կառավարության ագրարային քաղաքականությունը, որը հիմնականում ստոլիպինյան ռեֆորմների ուղղությամբ էր զարգանում։ Կովկասյան վարչությունն ընդառաջելով ստոլիպինյան ագրարային քաղաքականությանը, ամեն կերպ աջակցում էր կուլակության զարգացմանը։ «Ժամանակավոր բնակվողներ» մեջ փոքր տոկոս կազմող կուլակային ուռճացած տարրերին արտոնություններ շնորհելով փոխարքայության հողագործական մարմինները նրանց դարձնում էին հողատերեր և ճանաչում վերջիններիս իրավասությունը զանազան ճանապարհներով ձեռք բերած հողերի նկատմամբ։ Կուլակության հետագա տնտեսական հզորացման, գյուղատնտեսությունը կապիտալիստական ուղիով տանելու նպատակին էր ծառայում նաև պետական գյուղացիական հողային բանկի մասը վարկի հիմնարկությունների ստեղծումն Անդրկովկասում և Հայաստանում։

1909 թ. փետրվարին Կովկասի փոխարքայությունն օրենքի նախագիծ մշակեց Անդրկովկասի կալվածատիրական, ինչպես նաև էջմիածնապատկան գյուղացիների «ժամանակավոր» պարտավորյալ, կախյալ հարաբերությունների վերացման մասին։ Մինչև 1912 թ. դեկտեմբերի 20-ը ցարի կողմից որպես օրենք հաստատվելը, այն քննարկման ենթարկվեց պետական ատենաբանների ու կալվածատիրության ներկայացուցիչների կողմից, սակայն հաստատվեց այն շատ աննշան փոփոխություններով, հիմնականում սկզբնական ձևով, որ 1909 թ. նախատեսել էր փոխարքան[19]։

1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքով, որը կոչվում էր «Թիֆլիսի, Քութայիսի, Երևանի, Ելիսավետպոլի, Բաքվի նահանգների ժամանակավոր պարտավորյալ, կախյալ գյուղացիների՝ կալվածատերերի նկատմամբ ունեցած հարաբերությունները դադարեցնելու և պետության օժանդակությամբ հողաբաժինները պարտադիր կերպով ետ գնելու մասին», որոշվում էր 1913 թ. հունվարի 1-ից գյուղացիներին պարտադրել ետ գնելու իրենց հողերը որպես մասնավոր սեփականություն։ Օրենքը վերաբերվում էր նաև էջմիածնի վանքապատկան հինգ գյուղերին (Վաղարշապատ, Օշական, Մաստարա, Եղվարդ և Մուղնի) և նրանց բնակիչներին ազատում վանքին տրվող գանձումներից։ Անշուշտ պետությունն առաջին հերթին շահագրգռված էր կալվածատերերի շա-

---

18 Տե՛ս А. С. Амбарян. Նշված աշխ., էջ 139—141։

19 Տե՛ս Մ. Ա. Խանդկարյան. Արևելյան Հայաստանի ագրարային հարաբերությունների պատմությունից XIX դ. վերջ և XX դ. սկիզբ, Երևան, 1974, էջ 151—153։

հերի պաշտպանությամբ, ուստի և գանձարանից հողի գինը տրվում էր միանվագ, իսկ էջմիածնի վանքին՝ տասը տարվա ընթացքում՝ տարեկան 21 հազար ռուբլի[20]։ Նոր օրենքով, 1913 թ. հունվարի 1-ից մինչև գյուղի հողաբաժինների նոգնման արձանագրության վերջնական հաստատումը, կալվածատերերը պետական գանձարանից պետք է ստանային իրենց հասանելիք գումարի $4^1/_2$ տոկոսը, իսկ հետագայում՝ ամբողջ գումարը։

1913 թ. հունվարի 1-ից գյուղացիները դադարեցնելու էին դրամով կամ բնամթերքով բահրայի վճարումը կալվածատիրոջը և հաշտարար միջնորդի կողմից կազմված նախնական հաշիվների հիման վրա վճարելու էին նոգնման գումարը պետությանը[21]։ Պետական այդ «օժանդակությունը» գյուղացիները փոխհատուցելու էին 56, 41 և 28 տարիների ընթացքում, նայած թե որ գյուղի համար ինչպիսի ժամկետ էր սահմանվում համայնքի կողմից պարտքերը մարելու համար։ 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքով Երևանի նահանգում փրկագնման ենթակա հողերը կազմում էին 131121 դեսյատին և գնահատվում էին 5384336 ռուբլի, իսկ էջմիածնապատկան գյուղերում, ինչպես նաև Լոռու, Ջանգեզուրի ու Ղազախի հայկական շրջաններում եղածի հետ միասին փրկագրվող ընդհանուր հողատարածությունը Հայաստանում կազմում էր 184202 դեսյատին, որի դրամական արժեքը հաշվվում էր 6993922 ռուբլի[22]։ Սակայն պետությունը կալվածատերերին վճարած փրկադրամարի դիմաց գյուղացիներից ստանալու էր ոչ միայն հողի գինը, այլև բաց թողած վարկի յուրաքանչյուր ռուբլու դիմաց տոկոսներ՝ 56 տարվա ժամկետի համար 4,5 կոպեկ, 41 տարվա համար՝ 5 կոպեկ և 26 տարվա համար՝ 6 կոպեկ, որը տասնյակ տարիների ընթացքում աստիճանաբար ավելանալով կազմելու էր հսկայական մի գումար։

Այս բոլորից բխում է, որ 1912 թ. դեկտեմբերի 20-ի ռեֆորմը պետության կողմից՝ հօգուտ կալվածատերերի, գյուղացիության օրինականացված անխիղճ կողոպուտ էր և միաժամանակ շատ ծանր բեռ բուրժուական բարենորոգում, որը նպատակ ուներ մշտապես դժգոհ և ալեկոծվող գյուղական բնակչության մեջ, հանձին ունևոր շերտերի, սոցիալական հենարան գտնել։

1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքը, չնայած իր խիստ կալվածատիրական սահմանափակվածությանը, որոշ չափով օժանդակեց գյուղատնտեսության մեջ կապիտալիզմի զարգացմանը։ Այս տեսակետից կարևոր նշանակություն ուներ այն հանգամանքը, որ պարտադիր նատուրալ բահրայի վերացման հետևանքով մեծանում էր գյուղացիության շահագրգռվածությունը գյուղատնտեսության արտադրողականությունը բարձրացնելու գործում։ Այժմ նախկինում ձևականորեն կախյալ հարաբերությունների մեջ գտնվող անհատական կուլակային տնտեսությունների համար ավելի մեծ հնարավորություններ էին ստեղծվում գյուղատնտեսության մեջ միջոցներ ներդնելու, ռացիոնալ-ապրանքային տնտեսություն վարելու։ Կալվածատերերին տրվող նատուրալ բահրայից պետությանը տրվող դրամական վճարումներին անցնելը ևս զարկ էր տալիս ապրանքադրամական հարաբերությունների հետագա զարգացմանը գյուղում։

---

20 Տե՛ս Ս. Մ. Հովհաննիսյան, Ագրարային հարցը Երևանի նախկին նահանգում, XIX դարի վերջին, XX դարի սկզբին, Երևան, 1949, էջ 115—117։

21 Տե՛ս Մ. Ա. Ռոնդկարյան, նշված աշխ., էջ 160—161։

22 Տե՛ս Մ. Հ. Ադոնց, նշված աշխ., էջ 86—89։

Ինչպես ստոլիպինյան ագրարային քաղաքականության այլ միջոցառումները, այնպես էլ 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքը չտվեց այն արդյունքները, ինչ նախատեսել էր ցարիզմը։ Նախ շատ սահմանափակ տարածում ուներ օրենքը և հետո գյուղացիների տնտեսական ուժերից վեր էր հետգնման բարձր վճարումներ կատարելը։ Արտադրողական ուժերի զարգացմանը շատ էին խանգարում նաև պետական գյուղացիներին հողի սեփականատեր չճանաչելը, պետական ծանր հարկերը և, որ ամենագլխավորն է՝ պահպանվում էր ճորտատիրության և աշխատավճարումների ամենահիմնական բազան՝ կալվածատիրական հողատիրությունը[23]։

2. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ։ ՉՈՐՐՈՐԴ ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՆ

Ռուսական առաջին հեղափոխության, նրան հաջորդած ռեակցիայի, ապա հեղափոխական նոր վերելքի տարիները քննության ժամանակաշրջան հանդիսացան ոչ միայն համառուսաստանյան պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության ու նրանց շահերն արտահայտող բոլշևիկների կուսակցության, այլև բուրժուական, մանր-բուրժուական կուսակցությունների և կազմակերպությունների համար։

Ցարական իշխանությունները Նովոշերկասկ քաղաքում դաշնակցականների դեմ սկսած դատական նախաքննությունը փորձեցին օգտագործել ողջ հայ մտավորականությանը «սևպարատիզմի» մեջ մեղադրելու համար։ Դաշնակցականների «գործի» կապակցությամբ ծագած աղմուկը, որ տևեց մի քանի տարի, հարմար առիթ էր ժողովուրդների ուշադրությունը սոցիալական խընդիրներից շեղելու համար։

«Դաշնակցության գործի» բուն քննությունն սկսվեց Պետերբուրգում Սենատի դատական ատյանում 1912 թ. հունվարի 17-ին։ Մեղադրանքը՝ «հեղափոխական» գործունեության և իշխանության մի շարք ներկայացուցիչների սպանության համար ներկայացվում էր քրեական օրենսգրքի 102 հոդվածով։ Մեղադրվող 159 մարդուց 9-ը բացակայում էին, 2-ը մահացել էին բանտում։ Մեղադրյալների մեջ կային մի խումբ աչքի ընկնող դաշնակցական գործիչներ, շարքային դաշնակցականներ և անկուսակցական մարդիկ, ի շարս որոնց հայտնի հայ կապիտալիստներ Ա. Մելիք-Ազարյանը, Շահպունիկյանը, Գենչոզյանը և ուրիշներ։

Դաշնակցականների հետ մեղադրյալի աթոռին նստած անկուսակցականների, այդ թվում մի երկու հայ կապիտալիստի առկայությունը պետք է բացատրել մի կողմից կեղծ փաստարկների հիման վրա կազմված դատական նախաքննությամբ, մյուս կողմից ցարական իշխանությունների միտումով՝ համամոլական բնույթ տալու դատավարությանը։ Այդ չի նշանակում, իհարկե, որ կապիտալիստների մեջ չեն կարող լինել ահի կամ շահի նկատառումներով դաշնակցականներին գումարներ տրամադրող, կամ նրանց համակրող հայ հարուստներ։ Հենց այդ հարուստների ահաբեկված ազգականներն էին, որ իրենց քաղաքների բերանները լայն բաց էին արել և պաշտպանությանը հրավիրել ռուսական իրավաբանության ամենանշանավոր դեմքերին,

23 Տե՛ս Մ. Ա. Ասեդկարյան, նշված աշխ., էջ 169—171։

այդ թվում՝ Ա. Կերենսկուն, Ծ. Դրուզենբերգին, Կարաբչևսկուն, Զարուդնուն, Տեսլենկոյին, Սոկոլովին, Բերանշտամին, Կազարինովին, Խամետովսկուն և այլոց[24]։

Դատավարությունը դեռ նոր էր սկսվել, երբ դատապաշտպաններին հաջողվում է հայտնաբերել նախաքննական ակտի մեջ մի շարք փաստաթղթերի կորուստ և կեղծիքներ։ Արդարադատության մինիստրն ստիպված է լինում նոր քննություն նշանակել, որն իրոք բացահայտում է բազմաթիվ կեղծումներ։ Պարզվում է, որ լրժինը իր նախաքննության ժամանակ ոչ միայն միտումնավոր կերպով հախուռն մեղադրանքներ էր ներկայացրել դաշնակցության հետ առնչություն չունեցող որոշ անձնավորությունների[25], այլև 23 մեծ կեղծում և 20-ից ավելի ուղղումներ էր կատարել։

Ռուսական լիբերալ մամուլը և պետական դումայի կադետական պատգամավորները, դժգոհ ցարիզմի ոչ ճկուն քաղաքականությունից, քննադատության տակ առան այդ պրոցեսը։ Ահա թե ինչ էր գրում միլյուկովյան «Ռեչը» 1912 թ. փետրվարի 14-ի առաջնորդողում. «Դաշնակցության գործը, որ երկու շաբաթից ի վեր քննվում է կառավարիչ սենատի մեջ դռնփակ, շարունակում է գրավել մամուլի ուշադրությունը։ Երեկվա երեկոյան լրագրերը հաղորդեցին նոր տեղեկություններ մի կողմից գոկումենտների հանցավոր անհետացման մասին, մյուս կողմից անհավատալի կեղծիքների մասին»[26]։

Պետերբուրգյան դատավարությունը տևեց ավելի քան երկու ամիս։ Դատավարության ընթացքում չհաջողվեց ապացուցել հայ ժողովրդի «սեպարատիզմը», իսկ ցարական դատարանի այլանդակ էությունը դգալիորեն մերկացվեց։ Կառավարությունը կամա թե ակամա պետք է հաշվի առներ բարձրացող քննադատությունը։ Եվ որքան էլ ատամները սեղմին ցարական պաշտոնյաները, նախատեսվող խստագույն պատիժներից պետք է հրաժարվեին։ Եվ երբ 1912 թ. մարտի 19-ին հայտարարվեց դատավճիռը, ապա անմեղ ճանաչվեցին 94 մարդ, այդ թվում մի ոմն Դոդոջին, որը չորս տարի տառապել էր բանտերում։ Տաժանակիր աշխատանքի դատապարտվեցին՝ 4—6 տարի ժամկետով 4 մարդ, մյուսները՝ ավելի փոքր ժամկետներով[27]։ Ակսորի և բանտարկության դատապարտված որոշ մեղադրյալներ բողոքեցին և նորից գործ հարուցեցին իրենց նկատմամբ եղած դատավճիռները փոխել տալու համար։

Այսպես, համեմատաբար «խաղաղ» վերջացավ դաշնակցության մեծադղորդ դատավարությունը։ Սակայն այդ «մեղմությունն» ուներ նաև այլ պատճառներ։ Դա 1912 թ. սկսած Ռուսաստանի արտաքին քաղաքականության աշխուժացումն էր Բալկանյան երկրներում, որից և բխում էր Թուրքիայի դեմ գործող ընդդիմադիր ուժերին հավանավորելու անհրաժեշտությունը։ Բալկանյան հարցի հետ Հայկական հարցի վերաբացումը, որի մեջ ցարիզմը որոշակի շահագրգռություն էր հանդես բերում, ուղղակի թե անուղղակի չէր կարող չանդրադառնալ հայկական ազգային շարժմանը և կուսակցություններին ցույց տրվելիք վերաբերմունքի վրա։ Այս մթնոլորտում էր, որ նույնիսկ այնպիսի անհաղթահարելի թերի, ինչպիսին «նովոյե վրեմյան» էր, տպագրում էր երեմն «հայասիրական» հոդվածներ, որոնցից մեկը ավարտվում էր վաղնմի

24 Տե՛ս «Մշակ», 1912, № 9, 10, 19, 32։
25 Տե՛ս «Մշակ», 1912, № 49։
26 «Մշակ», 1912, № 37։
27 Տե՛ս «Մշակ» 1912, № 64։

«երանելի» ժամանակները վերապատմող և շատ բնորոշ հետևյալ տողերով. «բայց այդ բոլորը այժմ անցած են և աստիճանաբար սկսվել է վերադարձը դեպի անցյալը, Երմոլովի և Պասկևիչի ժամանակները, երբ եպիսկոպոս Ներսեսը, ապագա կաթողիկոսը և Անդրեևյան կավալերը—ռուս գինվորների հետ կանգնած էր որպես հայ կամավորների գլուխ»[28]. Սա արդեն հայ ժողովրդին ուղղված գինական համագործակցության պատվեր էր, ապագա պատերազմին ակտիվորեն մասնակցելու կոչ։

* * *

Հեղափոխության նոր վերելքի տարիներին, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում ու Հայաստանում, հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի ու հակառնչա կուսակցությունների և կազմակերպությունների բախումն արտահայտվում էր նաև Պետական դումայի ընտրությունների շուրջը։

Երրորդ պետական դումայի անփառունակ գործունեությունը լավ բան չէր խոստանում նաև հաջորդ՝ Չորրորդ դումային։ Արտաքին տպավորությամբ այս նոր դումայի գումարումը ևս հաղթանակ էր բերելու աջ տարրերին, միապետական մեծամասնության։

Սակայն ծայր առած բանվորական շարժումներն ու գյուղացիական հուզումներն իրենց կնիքն էին դնում հասարակական-քաղաքական կյանքի վրա։ Երկիրը թևակոխում էր հեղափոխական նոր վերելքի ժամանակաշրջան։ Այս պայմաններում էր, որ 1912 թ. օգոստոսին հրամանագիր եղավ Երրորդ պետական դուման արձակելու և նոր դումա գումարելու մասին։ Սեպտեմբերին ամբողջ երկրում սկսվեցին պատվիրակների ընտրությունները, որոնք ընտրելու էին դումայի պատգամավորներ։

1907 թ. հունիսերեքյան ընտրական օրենքի սահմանափակիչ պայմաններում խիստ դժվարացել էր ազգային ծայրամասերի կողմից պատգամավորներ, առավել ևս բոլշևիկ պատգամավորներ առաջադրելու հնարավորությունը։ Արևմտահայ իրականության մեջ ինչպես նախորդ, այնպես էլ այս ընտրությունների ժամանակ Երևանի, Ելիսավետպոլի և Բաքվի նահանգների քրիստոնյա և մահմեդական բնակչության, այսպես կոչված, հայկական և ադրբեջանական կուրիաների կողմից առաջադրվում էին ընդամենը երկու պատգամավորներ մեկը՝ հայ, մյուսը՝ ադրբեջանցի։

Բոլշևիկները, մասնակցելով ընտրություններին և հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, այնուամենայնիվ կարողանում են մի շարք վայրերում պատվիրակներ անցկացնել հեղափոխական սոցիալ-դեմոկրատներին ցանկալի անձնավորությունների, իսկ Կազվանի 4-րդ ընտրական օկրուգում՝ բոլշևիկ Հովհաննես Սարուխանյանին[29]։

Սակայն ընտրական սուղ և անհավասար պայմաններում հիմնական ապարեզն այնուամենայնիվ մնում էր մանրբուրժուական ու բուրժուական կուսակցությունների պատգամավորներին, որոնց պաշտպանությամբ էլ հանդես էին գալիս մամուլի տեղական օրգանները։ Հայկական մամուլը որպես հնա-

---

28 «Մշակ», 1912, № 145։

29 Տե՛ս «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967, էջ 157։

րավոր թեկնածուներ մատնանշում էր «Մշակի» խմբագիրներից Ա. Քալանթարին, Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսյանին, հասարակական, ազգային գործիչներ Կ. Խատիսյանին, Ս. Հարությունյանին և Մ. Պապաջանյանին[30]։

Դաշնակցական մամուլը վերստին անդրադառնալով 2-րդ և 3-րդ պետական դումաների պատգամավոր Հ. Սաղաթելյանին, առաջադրում էր նաև Բաքվի «հասարակական գործիչներ» Պ. Կարա-Մուրզայի և Տ. Բեկզադյանի թեկնածությունները։ 1912 թ. հոկտեմբեր ամսվա ընթացքում պատվիրակների ընտրության ժամանակ մամուլն սկսում է գրել այլ «արժանավոր» թեկնածուների մասին, որոնցից հատկապես ծանրանում է «Մշակի» խմբագիրներից Հ. Առաքելյանի, Երևանի քաղաքագլուխ Հ. Մելիք-Աղամալյանի, Ալեքսանդրապոլի նախկին քաղաքագլուխ Հ. Տիգրանյանի և իրավաբան Պ. Դոլուխանյանի վրա։ Այս նոր թեկնածուների շուրջն էլ կարծիքներ են փոխանակվում թերթերում։

Վերջապես հոկտեմբերի 20-ին Ելիսավետպոլ քաղաքում (Գանձակ) տեղի է ունենում 4-րդ պետական դումայի հայ պատգամավորի ընտրությունը։ Վերջնական համաձայնությամբ քվեները կենտրոնանում են երեք անձնավորությունների շուրջը՝ Մ. Պապաջանյանի, Հ. Սաղաթելյանի և Տ. Բեկզադյանի։ Ընտրվում է իրավաբան Մ. Պապաջանյանը։ Դա լիբերալների հաղթանակն էր։ 4-րդ պետական դումայի անդրկովկասյան մյուս պատգամավորներն էին Ն. Չխեիձեն, Ա. Չխենկելին (մենշևիկներ), Մ. Սկոբելևը (երկրամասի ռուս բնակչության կողմից՝ նույնպես մենշևիկ), Վ. Գելովանին (ֆեդերալիստ) և Մ. Ջաֆարովը (մուսուլմանական լիգա)։

Դումայի բացումը տեղի ունեցավ 1912 թ. նոյեմբերի 15-ին, դեռևս մեկ շաբաթ առաջ սկսված բողոքի հուժկու գործադուլների ուղեկցությամբ՝ ընդդեմ Սևծովյան նավատորմիղի ապստամբ նավաստիների նկատմամբ որոշված մահապատժի։

Պետական դումայում Մ. Պապաջանյանը հարում է կադետներին և սրանց համակիր խմբակցություններին, սերտ հարաբերություններ ստեղծելով նրանց ղեկավարների՝ Պ. Միլյուկովի, Ա. Շինգարևի, Վ. Մակլակովի, Ֆ. Ռոդիչևի, Մ. Աճեմյանի և այլոց հետ։ 1913 թ. նոյեմբերի 26-ի պետական դումայի նիստում նա հանդես է գալիս Անդրկովկասում անբերրիությունից տուժած բնակչությանն օգնություն ցույց տալու հարցի կապակցությամբ և ընդգծում, որ կառավարական նպաստամատույց հանձնաժողովի տրամադրած նույնիսկ սուղ միջոցները չեն հասնում բնակչությանը։ Մ. Պապաջանյանը ուշադրություն է հրավիրում այն բնորոշ երևույթի վրա, որ գյուղացիությունը, հատկապես լեռնային և նախալեռնային շրջանների սովյալ հայ և ադրբեջանցի բնակչությունը, հրաժարվում է դրամական փոխօգնությունից, շատ լավ ըմբռնելով, որ հետագայում դրա բռնագանձումը իրենց աղքատացած տնտեսությունները վերջնական քայքայման կհասցնեն[31]։

1913 թ. հունիսի 6-ի նիստում, երբ քննարկվում է արտաքին գործերի մինիստրության բյուջեն, վիճաբանությունները բացում է Պ. Միլյուկովը։ Անդրադառնալով բալկանյան ճգնաժամի կապակցությամբ նաև Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ մտցնելու հարցին, նա կոչ է անում ռուսական

30 Տե՛ս «Մշակ», 1912, № 209։

31 Տե՛ս «Стенографический отчет Государственной Думы», четвертый созыв, сессия вторая, стр. 1403—1404.

կառավարությանը զբաղվել այդ խնդրով։ Այդ առիթով հանդես եկած Մ. Պապաջանյանի ելույթը նվիրված էր Հայկական հարցին։

Չմոռանալով հաճոյախոսություններ ասել ցարական Ռուսաստանի՝ «Արևելքի քրիստոնյաների այդ դարավոր պաշտպանի» հասցեին, նա շնորհակալություն է հայտնում նաև կոմս Վ. Բոբրինսկուն, 4-րդ դումայում աջերի պարագլուխներից մեկին, վերջինիս այն հայտարարության համար, թե արևելահայերի մոտ հակառուսական, սեպարատիստական ձգտումներ չկան։ Խոսելով Արևմտյան Հայաստանում կիրառվող ջարդերի և հայահալած քաղաքականության մասին, Մ. Պապաջանյանը հակադրվում է մենշևիկ Ա. Չխենկելուն, որը պահանջում էր ձեռնպահ մնալ Թուրքիայում հայերի վիճակի վերաբերյալ բարենորոգումներ անցկացնելուց։ Բազմաթիվ ակնառու փաստեր բերելով, նա ցույց է տալիս, որ նույնիսկ արևմտահայերը Թուրքիայից քաղաքականորեն անջատվելու մտադրություն չունեն, այլ պահանջում են միմիայն կյանքի, գույքի, պատվի և կուլտուրական զարգացման ապահովություն[32]։ Մ. Պապաջանյանի այս ելույթը լայն արձագանք է գտնում ինչպես հայկական մամուլում, այնպես էլ ռուսական լիբերալ թերթերում։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ 1914 թ. մայիսի 10-ին, դումայում, երբ կրկին հարց է լինում Թուրքիայի մասին, Մ. Պապաջանյանի հերթական ելույթից հետո դարձյալ հանդես է գալիս Ա. Չխենկելին և առարկում Արևմտյան Հայաստանի ինքնավարության՝ «Հայկական Մակեդոնիա» ստեղծելու դեմ[33]։

Այս տրամադրությունը արտահայտեց նաև ամենաաջ պատգամավոր, կատաղի միապետական և սևհարյուրյակայինների առաջնորդ Ն. Մարկով II-ը, հայտարարելով. «Ես հարցնում եմ ի՞նչ կարիք ունի Ռուսաստանը Կովկասի սահմաններին կից ստեղծելու Հայաստան, որը բնականորեն կձգտի իրեն միացնել Ռուսական Հայաստանը...»[34]։

Թուրքիայի կազմում հայկական ինքնավարություն ստեղծելու մասին հարցի արծարծումը չնայած իմպերիալիստական երկրների խաբկանք էր, այնուամենայնիվ դիմադրություն էր առաջացնում բուրժուակալվածատիրական, ազգայնական շրջաններում։ Եվ այդ դիմադրությունը, բացահայտ թե քողարկված ձևով, շարունակվեց նաև հետագա տարիներին։

Ավելի մեծ՝ դումայական և արտադումայական գործունեություն է ծավալում Մ. Պապաջանյանը առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Հայկական հարցը թևակոխում էր իր պատմության ամենամռայլ ժամանակաշրջանը։ Հայ ժողովրդի «շահերի» լիբերալ-բուրժուական պաշտպանությունը, հայ ժողովրդի «շահերի» և ռուսական իմպերիալիստական բուրժուազիայի քաղաքականության «համաձայնեցումը», ավելի ճիշտ առաջինի ենթարկումը երկրորդին, ահա սա է եղել 4-րդ պետական դումայի հայ պատգամավոր Մ. Պապաջանյանի գործունեության գլխավոր նպատակը։

Սակայն դումայում լսվում էր նաև Ռուսաստանի աշխատավորական զանգվածների ձայնը։ Նրանց շահերի արտահայտիչները հեղափոխական սոցիալ-դեմոկրատներն էին, բոլշևիկ պատգամավորները։ Սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի կողմից 1912 թ. դեկտեմբերի 14-ին կատարած հենց առաջին

---

32 Տե՛ս «Մշակ», 1913, № 146—147։

33 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 713, թ. 12—14։

34 Նույն տեղում։

հարցապնդման կապակցությամբ, որը վերաբերում էր արհեստակցական միությունների նկատմամբ կառավարության վարած հալածանքներին, հանդես եկավ բոլշևիկ Ա. Բադաևը։ Նա ցույց տվեց, որ խախտելով 1906 թ. մարտի 4-ի օրենքը, կառավարությունը վեց տարվա ընթացքում փակել է մի քանի հարյուր միություններ և մերժել է գրանցել 700 նոր միություն։ Դրանց թվում «Մեհեաղամշակման բանվորների միությունը» Պետերբուրգում, որն ընդգրկում էր ավելի քան 4000 բանվոր։ Բադաևի համարձակ ճառը, որ ուղեկցվում էր դումայի ձախակողմյան ֆրակցիաների բուռն ծափահարություններով ընդհատվում է նախագահի կարգադրությամբ[35]։

Ձեռնարկատերերի մասսայական լոկաուտների դեմ սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի կողմից կատարած հարցապնդումը 1913 թ. մարտի 1-ին պաշտպանեցին պատգամավորներ՝ Ն. Շագովը և Ֆ. Սամոյլովը։

Բոլշևիկ պատգամավորների վեցյակը հնարավոր բոլոր առիթներն օգտագործում էր մերկացնելու ցարական կառավարության քաղաքականությունը։ Նրանք հանդես էին գալիս՝ մամուլի առիթով առաջացած հարցապնդման, երկրորդ դումայի պատգամավորների ձերբակալության ժամանակ կատարված պրովոկացիայի, գործադուլների, ապահովագրական ժողովների, հանքերում եղած փլուզումների, բանվորական լիազորների ձերբակալության, գործարաններում բանվորների մասսայական քունավորումների և բազմաթիվ այլ հարցերի կապակցությամբ։

Բոլշևիկյան ֆրակցիայի գործունեությունը ղեկավարում և ուղղություն էր տալիս Վ. Ի. Լենինը արտասահմանից[36]։

3. ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲՈԼՇԵՎԻԶՄԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1910—1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1905—1907 թվականների հեղափոխության պարտությունից հետո սկսված ռեակցիայի տիրապետությունը երկարատև չեղավ։ Արդեն 1910 թ. բանվորական շարժման աշխուժացումն աղդարարեց հեղափոխական շարժման նոր վերելքը։ Արդարացավ բոլշևիկների կանխատեսումը երկիրը հեղափոխական գոտեմարտերի նոր փուլ թևակոխելու մասին։ Վ. Ի. Լենինը 1910 թ. գրում էր. «Սևհարյուրյակային ռեակցիայի լիակատար տիրապետության շրջանը վերջացավ։ Սկսվում է նոր վերելքի շրջանը»[37]։

Չնայած 1905—1907 թթ. գոտեմարտերից հետո ռեակցիայի տարիներին հեղափոխական շարժումները խիստ թուլացել էին, բայց լրիվ չէին մարել։ Աշխատավորական զանգվածների մեջ հատունացած խուլ դժգոհությունը մերթ ընդ մերթ արտահայտվում էր գործադուլների, գյուղացիական հուզումների, զինվորական ելույթների, սովորողների բողոքների ձևով։ Անկումայնության, հուսահատության հաղթահարման հետ միաժամանակ տիրող իրավակարգի դեմ ընդվզումը վերածվում է կազմակերպված շարժման։ 1910 թ. բացվում է Ռուսաստանի բանվորական շարժման նոր էջ։

---

35 Տե՛ս «Стенографические отчеты Государственной Думы», четвертый созыв, 1912—1913 гг., сессия первая, часть первая, Петербург, 1913, стр. 776.

36 Տե՛ս А. Бадаев, Большевики в Государственной Думе, М., 1954, стр. 206, 233, 243, 257.

37 Վ. Ի. Լենին, Նշվ., հ. 20, էջ 90։

Հայաստանում հեղափոխական շարժման նոր վերելքը նշանավորվում է բանվորական և գյուղացիական մի շարք ելույթներով։ 1910 թ. հուլիսին գործադուլ են հայտարարում Ալավերդու հանքարդյունաբերական շրջանի Սիսիմադանի պղնձաձուլական գործարանի մոտ 200 բանվորներ։ Գործադուլավորների պահանջները տնտեսական բնույթ ունեին և հիմնականում վերաբերում էին աշխատավարձի բարձրացման ու բնակարանային պայմանների բարելավման հարցերին։ 1910 թ. ամռանը գործադուլ են հայտարարում նաև Երևանի և Ալեքսանդրապոլի կայարանների երկաթուղայինները, որոնք ստեղծում են գործադուլային կոմիտե, որը բանվորների պահանջները ներկայացնում է երկաթուղու վարչությանը։ 1911 թ. փետրվարին գործադուլ է բռնկվում Կողբի ածխահանքերում, ածխահանքերի վարձակալությունը վերցրած կապալառուներից պահանջում են բարձրացնել արդյունահանվող ածխի վճարը։ Գործադուլը, որ տևում է մոտ մեկ շաբաթ, վերջանում է անհաջողությամբ։ Բանվորները, ստիպված, վերսկսում են աշխատանքները նախկին պայմաններով[38]։

Չնայած բանվորների պահանջները տնտեսական բնույթ ունեին, բայց հեղափոխական շարժման ընդհանուր վերելքը նպաստակամդում էր ժողովրդական զանգվածների ընդվզումը դեպի քաղաքական պայքարի ուղին, եվ պատահական չէ, որ հեռավոր Սիբիրում՝ Լենայի ոսկու հանքերի բանվորների գլխադործումն ալեկոծեց ամբողջ Ռուսաստանը։ Բողոքի գործադուլներ հայտարարվեցին ողջ երկրով մեկ, այդ թվում և Անդրկովկասում։ Ցարական կառավարության նոր ոճրագործությունը վրդովեց առաջավոր Ռուսաստանի հասարակական միտքը։ Գործադուլների, բողոքի միտինգների, ցույցերի, մասուլի կողմից արվող զայրույից մերկացումների նկատմամբ քար անտարբերություն էր պահպանում միայն ցարական կառավարությունը։ Ընդհակառակը, կառավարությունը պատրաստվում էր շարունակելու բռնություններ քաղաքական նուիրյունը և շատ բնորոշ է, որ երբ 3-րդ պետական դումայում սոցիալ-դեմոկրատական ֆրակցիայի կողմից հարցապնդում արվեց Լենայի դեպքերի կապակցությամբ, ներքին գործերի մինիստր, արխիեպիսկոպոս Ա. Մակարովը լկտիորեն պատասխանեց. «Այդպես եղել է, այդպես էլ կլինի»[39]։

Հայաստանում ևս, որպես բողոք ցարիզմի ոճրագործության դեմ՝ ցույցեր, միտինգներ տեղի ունեցան Ալեքսանդրապոլում, Կարսում, Ղափանում, Ալավերդում, Ջալալօղլիում և այլուր։ Ցարիզմի եղեռնագործությունը մերկացնող զայրացուցիչ հոդվածներ տպագրեց Ալեքսանդրապոլում հրատարակվող «Արագած» թերթը։ Ղափանում բանվորները 1912 թ. մայիսին բոլշևիկներ Մ. Մանուչարյանի ու Ա. Մարտիրոսյանի գեկավարությամբ, որոնք մինչ այդ աշխատել էին Բաքվում և հեղափոխական շարժումներին մասնակցելու համար արտաքսվել էին Հայաստան, բողոքի միտինգ են կազմակերպում Լենայի բանվորների գեղակոծության դեմ և մայիսմեկյան տոնակատարությունը վերածում են պրոլետարիատի համերաշխության հզոր ցույցի[40]։ Ընդհանրապես Հայաստանում հեղափոխական նոր վերելքի տարիներին քաղաքական ցույցեր անց են կացվում մայիսմեկյան տոնակատարության, բանվորների միջազգա-

---

38 Տե՛ս «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», էջ 134—135։

39 «История СССР», т. 2, М., 1965, стр. 527.

40 Տե՛ս «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», էջ 145։

յին համերաշխության օրը նշելու լոզունգներով։ Ղափանում բանվորները քաղաքական բարձր տրամադրությամբ անցկացրեցին 1913 թ. մայիսմեկյան տոնակատարությունը և հատկապես 1914 թ. մայովկան։

1913 թ. խմորումներ են սկսվում Ալավերդում, ուր օտարերկրյա կապիտալիստների դաժան շահագործումից և քաղաքական ընդհանուր իրավազուրկ վիճակից խիստ դժգոհ բանվորական հոծ զանգվածի համար գործադուլի առիթներ միշտ կային։ 1913 թ. օգոստոսին Թիֆլիսի ժանդարմական վարչության պետին տեղեկացնում են, որ Ալավերդու բանվորները պատրաստվում են գործադուլի։ Նախապատրաստվող գործադուլի պատճառը, ըստ հաղորդագրության, Ալավերդու հանքատերերի՝ ֆրանսիական կոնցեսիոներների դաժան և անմարդկային վերաբերմունքն էր։ Ալավերդու առաջավոր բանվորներն աշխատում էին կազմակերպված բնույթ տալ բանվորական ելույթներին։ 1914 թ. մարտին Ալավերդում բռնկվում է գործադուլ։ Առիթը՝ տեխնիկական անվտանգության կանոնների խպառ բացակայության պատճառով, գործարանի բանվորներից մեկի հետ տեղի ունեցած դժբախտ, բայց սովորական պատահարներից մեկն էր։ Հանքերի և գործարանների վարչությունը փորձեց անուշադրության մատնել պատահարը։ Նման վերաբերմունքը լցրեց բանվորների համբերության բաժակը, և մարտի 18-ին նրանք գործադուլ հայտարարեցին, պահանջելով տնտեսական դրության բարելավում՝ 8-ժամյա աշխատանքային օր, աշխատավարձի բարձրացում 20 տոկոսով և բանվորական տեսչության նշանակում։ Հանքերի և գործարանների վարչությունը դիմում է իշխանությունների օգնությանը։ Անմիջապես Ալավերդի են ժամանում ոստիկաններ, ինչպես նաև Կովկասյան լեռնային վարչության կողմից (որն իրականացնում էր լեռնահանքային արդյունաբերության վրա պետական վերահսկողությունը)՝ օկրուգային ինժեներ Ցեյտլինը։ Վերջինիս հաջողվում է, գործակցելով ոստիկանության հետ, սպառնալիքներով, խոստումներով ու խաբեությամբ համոզել բանվորներին՝ բավարարվել պահանջների մասնակի կատարումով և վերսկսել աշխատանքները[41]։

Հեղափոխական շարժման նոր վերելքի տարիներին ուժեղացավ նաև ագրարային շարժումը։ Ռուսաստանում և Անդրկովկասում, այդ թվում և Հայաստանում, հեղափոխական ալիքի տեղատվության և նույնիսկ ռեակցիայի տարիներին, ցարիզմը գյուղում երբեք ցանկալի «հանգստություն» չունեցավ։ Գյուղացիական պայքարը շարունակվում էր, իսկ 1910 թվականից սկսեց ավելի կազմակերպված բնույթ ստանալ։

Ծանր էր Հայաստանի թե՛ պետական և թե՛ մանավանդ աշխարհիկ ու հոգևոր կալվածատիրական հողերի վրա բնակվող գյուղացիների դրությունը։ Գյուղացիները հրաժարվում էին հարկերը վճարելուց, պարհակներ կատարելուց, մուլքի, թիուլի հատուցումից, պահանջում էին հողերի վերաբաժանում, կատարում էին ինքնակամ անտառահատումներ։ Հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններն աշխատում էին կազմակերպված բնույթ տալ գյուղացիական շարժումներին։

1910 թ. և հետագա տարիներին շարունակվում էր դեռ 1907 թվականից բռնկված Երևանի գավառի Եղզովան և Գյոյքիլիսա գյուղերի բնակիչների պայքարն իրենց կալվածատերերի դեմ։ Գյուղացիները հրաժարվել էին ոչ

---

41 *Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 195, գ. 4/17, թ. 56։*

միայն մուլք և թիուլ վճարելուց, այլև կազմակերպվելով, վանդել էին կալվածատիրոջ հարկահավաքներին և մերժել իշխանությունների կարգադրությունը՝ հացահատիկը բնդհանուր կալատեղում կալսելու վերաբերյալ։ Գյուրիվիսայի կալվածատեր Կ. Գեղամովը դիմում է գավառական իշխանություններին, խնդրելով պատժել «զանցառուն» գյուղացիներին։ Իր հերթին Երևանի առաջին գավառամասի հաշտարար միջնորդն էլ շտապում է 1910 թ. հուլիսի 17-ին կալվածատիրոջ բողոքը հայտնել գավառական ոստիկանությանը։

1911 թ. ընդվզում են Բջնի գյուղի բնակիչները, հրաժարվելով վճարել վանքի օգտին գանձվող մուլքը։ Բջնի են գալիս գավառական իշխանության ներկայացուցիչները՝ հաշտարար միջնորդի գլխավորությամբ, սակայն հանդիպելով բնակիչների կատաղի դիմադրությանը, ձեռնունայն են վերադառնում։ Ահա ինչ է գրում հաշտարար միջնորդը իր զեկուցագրում. «Ձենց որ տեսցի մեկից պահանջել պարակը և նա արդեն համաձայնվում էր տալ իրեն հասանելիք խոտը, մատ հարյուրհիսուն հոգուց բաղկացած ամբոխը հարձակվեց ինձ հետ եկած երեք ստրաժնիկների, Արզաքյենդի տանուտերի և իմ թարգմանի վրա ու սկսեց ծեծել նրանց...»[42]։

Էջմիածնի գավառում 1910 թ. կալվածատերերի դեմ ընդվզեցին Հախս, Ագարակ, Նաղիրվան և Քաւին գյուղերը։ Հախս գյուղում բնակիչները հրդեհել էին կալվածատիրոջ դիզերը, կտրատել ծառերը և որոշել՝ բռնագրավել վերջինիս հողը, իսկ իրեն՝ սպանել։ Ագարակ գյուղում նույնպես շարժում էր սկսվել կալվածատիրոջ դեմ, իսկ Նաղիրվանում հողը գրաված գյուղացիների և կալվածատիրոջ ու նրա մարդկանց միջև հրազգուքյուն էր տեղի ունեցել։

Գյուղացիների ըմբոստացման նման փաստեր շատ էին արձանագրվում թե՛ տեղական գավառական իշխանությունների, թե՛ կովկասյան ժանդարմական վարչության կողմից։ Ժամանակին մամուլի էջերում հաղորդագրություններ են տպագրվում 1910 թ. Նոր Բայազետում կալվածատեր Տեր-Մահակյանի հողերը գյուղացիների կողմից բռնագրավելու և միմյանց միջև բաժանելու մասին։ 1911 թ հուլիս ունեցան Նոր Բայազետի գավառի Զոգ գյուղի բնակիչները, Նրանք գրավեցին կալվածատիրոջ արոտավայրերը և միայն գավառական իշխանությունների կողմից հրավիրված ոստիկանական ուժերով հաջողվեց «կարգ հաստատել». բանտարկվեց 14 մարդ[43]։

1911 թ. Երևանի գավառի Յուվա և Ղարադաղլու գյուղերի բնակիչները հրաժարվում են կալվածատիրոջ օգտին մուլք վճարել։ 1912 թ. նույն գյուղի բնակիչները մերժում են հաշտարար միջնորդի պահանջը՝ կալվածատիրոջ մուլքը վճարելու մասին։ Վերջինս դիմում է գավառական իշխանություններին, խնդրելով ոստիկանական միջամտություն՝ վերոհիշյալ գյուղերի երկու տարվա «պարտքը» բռնագանձելու համար[44]։ 1912 թ. ոստիկանական իշխանություններին տեղեկացնում են, որ Ղազախի գավառի Աչաջուր գյուղի բնակիչները կտրել են կալվածատեր Մելիք-Ստեփանովին պատկանող անտառամասի ծառերը։

Այդ տարիներին գյուղացիական շարժման մեջ նկատվում է մի ուշագրավ երևույթ ևս։ Գյուղացիները պետական կալվածատիրական հողերի ինքնակամ վարումը և ընդհանուր արոտավայրերից կալվածատերերին բշելը համարում

42 Մ. Ա. Խանզադյան, նշված աշխ., էջ 198—203։
43 Տե՛ս А. С. Амбарян, նշված աշխ., էջ 245—246։
44 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 70/70, գ. 254, թ. 6—7։

էին օրինական, քանի որ իրենց մեկնաբանությամբ 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքը գյուղացիների շահերի պաշտպանությանն էր ուղղված։ Այսպես, էջմիածնի գավառի Խոջայալուի գյուղի բնակիչները արգելել էին կալվածատիրոջն օգտվելու ընդհանուր արոտատեղերից, լուր ստանալով այդ մասին, Երևանի նահանգապետը 1913 թ. սեպտեմբերին կարգադրում է կտրուկ միջոցների դիմել խոջայալուցիների «ինքնագործունեությանը» վերջ տալու համար, չկանգնելով անգամ տանուտերին պաշտոնազրկելու և ձերբակալելու առաջ, նրա վերջինս հարկավոր եռանդ չցուցաբերի գյուղացիներին «զսպելու» գործում։

1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքը հօգուտ իրենց մեկնաբանելու փորձեն կատարում նաև Ելիսավետպոլի նահանգի մի շարք հայկական գյուղերի բնակիչները, ձգտելով իրենց հողաբաժինները ընդարձակել ի հաշիվ կալվածատիրական հողերի։ «Մի քանի գյուղերում գյուղացիներն այս կամայական գործողություններին դիմեցին տեղական պարագլուխների սադրանքով, որոնք ետդնման վերոհիշյալ օրենքի՝ իրենց խեղաթյուրված մեկնաբանությամբ կարողացել էին համոզել գյուղացիներին, որ նրանց ձգտումը ճիշտ է և խմբովին ելույթը՝ անվտանգ»— 1914 թ. հունիսին զեկուցում էր Ելիսավետպոլի նահանգապետը Կովկասի փոխարքայությանը[45]։

Ցարիզմի ագրարային քաղաքականությունը, գյուղական բնակչության շահերը ոտնահարող հողաշինարարական աշխատանքները, ինչպես նաև համայնական հողերի վերաբաժանման ձգձգումները շատ հաճախ պատճառ էին դառնում գյուղացիների բուռն ելույթների, նահանգական իշխանություններին և ոստիկանությանը ցույց տրվող զինված դիմադրության։

Արխիվային փաստաթղթերն արձանագրում են 1910 թ. հունիսին հողաշինարարական աշխատանքների պատճառով էջմիածնի գավառի Գյուլիջա, Սամուդարվիշ, Հաջի Բաղիր գյուղերի բնակիչների՝ միջգյուղական բնդհարումների և գավառական իշխանություններին ցույց տրված դիմադրության մասին։ 1913 թ. հունիսին, նույնպես հողաշինարարական աշխատանքների պատճառով, առաջացած դժգոհության հետևանքով Ախալքալաքցոլի գավառի Փոքր Ղարաքիլիսա, Փամբ և Ղաչաղան գյուղերի բնակիչների և գավառական ոստիկանության միջև բնդհարումներ են սկսվում։ Երևանի հողագործության վարչության երկրաչափ Մարուշևիչին առաջադրանք է ստանում «Տալիբ» անունով արոտավայրը, որից տարիներ շարունակ օգտվում էին ղաչաղանցիները, հանձնել Փոքր Ղարաքիլիսային։ Ղաչաղան գյուղի 200—300 բնակիչներ, զինված մահակներով և բահերով, հարձակվում են հողաչափական աշխատանքներ կատարող պաշտոնյաների ու նրանց պաշտպանող ոստիկանների վրա և քարկոծում վերջիններիս։ Այս դեպքերի կապակցությամբ ոստիկանական պրիստավը զեկուցում է. գյուղացիները «...պատրաստ էին սպանվել, միայն թե թույլ չտալ, որ ակոսները անցկացվեն նոր սահմաններով։ Նրանց հաշվումների համաձայն ղաչաղանցիներից բռնագրավվելու էր 100—130 դեսյատին հողաբաժին, որից նրանք անվճռելի օգտվում էին ավելի քան քսան տարի»[46]։

---

45 Մ. Ա. Խոնդկարյան, նշված աշխ., էջ 171, 202—203։

46 Պ. Պ. Հարությունյան. Հայաստանի հեղափոխական շարժումների պատմությունից, «Բանբեր Հայաստանի արխիվներիս», 1975, Երևան, էջ 115—116։

XX դարի սկզբներին հուզված էին նաև Երևանի գավառի՝ գեներալ Շերեմետևի ժառանգների կողմից վարձակալությամբ վերցված «Արազդայան» պետական կալվածքի գյուղացիները, որոնք դաժան շահագործման էին ենթարկվում վարձակալների կողմից։ Տակավին 1908 թ. գյուղացիները, բացահայտ ընդվզեցին իրենց շահագործողների դեմ։ 1913 թ. գյուղացիական դժգոհության նոր բռնկում է լինում «Արազդայան-Շերեմետևյան գյուղատնտեսական և առևտրաարդյունաբերական ակցիոներական ընկերության» «Արազդայան» կալվածքում։

Այս նորակազմ «ընկերության» վարձակալության սկզբունքներն անհամեմատ ավելի ծանր էին, որից հրաժարվում էին գյուղացիները։ «Ընկերության» վարչությունը մտադրվում է հողերը տալ այլ վարձակալների, սպառնալով զրկել գյուղացիներին և նրանց ընտանիքները այրուձեի միակ միջոցից։

Գյուղացիները միահամուռ ոտքի են կանգնում։ Սարսափած գյուղացիների «անհնազանդությունից» Երևանի նահանգապետը 1913 թ. դեկտեմբերի 21-ին կարգադրում է Երևանի գավառապետին 16 ոստիկաններով մեկնել «Արազդայան», միաժամանակ ցուցում տալիս նաև Շարուր-Դարալագյազի գավառապետին, 20 հոգուց կազմված ոստիկանական ջոկատով շտապել դեպքերի վայրը, լուր ստանալով պատժաջոկատների «Արազդայան» մեկնելու մասին, գյուղացիները ընկրկում են[47]։

Չնայած գյուղացիական շարժումները տակավին անկազմակերպ էին, և հեշտությամբ ճնշվում էին, այնուամենայնիվ, հանդիսանալով պրոլետարական շարժման ամենահուսալի դաշնակիցը, մոտեցնում էին աշխատավորական զանգվածների սոցիալական ազատագրության ժամը։

Բանվորական և գյուղացիական ելույթներն արձագանք գտան բանակում։ Հայաստանի քաղաքներում և բնակավայրերում տեղավորված ռազմական միավորումներում նորից խմորումներ սկսվեցին։ Դեռ ռուսական առաջին հեղափոխության տարիներին Հայաստանի քաղաքների և առաջին հերթին Ալեքսանդրապոլի ու Կարսի զինվորական կազմակերպությունները գտնվում էին գերազանցապես բոլշևիկների ազդեցության տակ։ Հեղափոխության տևողության ժամանակաշրջանում և հետագա տարիներին այդ կազմակերպությունները խոր ընդհատակում աշխատում էին պահպանել իրենց շարքերի միասնությունը։ Հեղափոխական շարժման վերելքը նորից աշխուժացրեց զինվորական շարժումները։ Ի պատասխան դրան, իշխանություններն ուժեղացնում էին բռնությունները։ 1911 թ. փետրվարին Երևանի օկրուգային դատարանը հեղափոխական գործունեության համար վեց տարով տաժանակրության է դատապարտում Իվան Վեդենևին, Անտոն Սուշչենկոյին և Ալեքսեյ Սորովկինին, որոնք «Կարսի զինվորական կազմակերպության» ակտիվ անդամներ լինելով, բանտարկված էին և փախուստի փորձ էին կատարել կայազորի գլխավոր կալանատնից։

Հուզումներ բռնկվեցին նաև Երևանի, Ալեքսանդրապոլի, Կաղզվանի, Սարիղամիշի, Օլթիի զինվորական մասերում։ 1912 թ. հոկտեմբերին Կաղզվանի զորամասի զինվորները բողոքեցին բանակում տիրող կամայականություններ

---

47 Տե՛ս «Аграрная политика царизма и крестьянское движение в Армении в начале XX в.», Ереван, 1951, стр. 310—325.

դեմ[48]։ 1913 թ. հունվարին խլրտումներ սկսվեցին Ալեքսանդրապոլում, մասնավորապես անհանգիստ էին Բաքվի 153-րդ հետևակային գնդի զինվորները։ 1913 թ. դարձյալ հունվարին դժգոհություն է սկսվում Կարսի 80-րդ կաբարդինյան հետևակային գնդի զինվորների մեջ[49]։ Սակայն ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում և Հայաստանում զինվորական հուզումները բացահայտ ապստամբության չվերաճեցին, որովհետև վրա հասած համաշխարհային պատերազմը փոխեց իրադրությունն ամբողջ երկրում։

Հեղափոխության վերելքի տարիներին բոլշևիկների գործունեությունը նպատակամղվում էր ծավալվող բանվորական, գյուղացիական ելույթները, զինվորական խլրտումները, դեմոկրատական խավերի շարժումները պրոլետական պայքարի դրոշի ներքո համախմբելու ուղղությամբ։ Այդ տարիներին աշխուժանում է Երևանի, Ալեքսանդրապոլի, Ալավերդու, Կարսի, Զանգեզուրի, Նոր Բայազետի, Իգդիրի և այլ վայրերի բոլշևիկյան խմբակների գործունեությունը։

1910—1914 թթ. Երևանում ծառայողների, ուսանողների, աշակերտների մեջ քաղաքական-կազմակերպական աշխատանք էին տանում բոլշևիկներ Արշ. Մելիքյանը, Վ. Բաղդասարյանը, Լ. Տեր-Հովսեփյանը և ուրիշներ։ Մինչև 1910 թ. կեսերը Երևանում էր աշխատում նաև Գ. Սոկոլովսկին։ 1913—1914 թթ. Երևանի բոլշևիկները հրատարակում են «Խոսք» թերթը, որը մատչելի լեզվով ընթերցողներին բացատրում էր հասարակական հարաբերությունների էությունը և ցույց տալիս ժողովրդական զանգվածների թշվառությունը։ «Խոսքը» լայն տեղ էր հատկացնում հատկապես գավառների աշխատավորության դրության նկարագրությանը, լուսաբանում էր համառուսական քաղաքական կարևոր իրադարձությունները, անդրադառնում դասակարգային պայքարի խնդիրներին[50]։ Թերթն իր վերաբերմունքն էր արտահայտել նաև Հայկական հարցի, մասնավորապես արևմտահայության ճակատագրի նկատմամբ[51], «Խոսք» թերթին աշխատակցում էին Ա. Կարինյանը, Վ. Բարայանը, Մ. Ենգիբարյանը, Բ. Բորյանը և ուրիշներ։

Կուսակցական-քաղաքական աշխատանքներն աշխուժացան նաև Ալեքսանդրապոլում, որտեղ ակտիվությամբ աչքի էր ընկնում երկաթուղային հանգույցի բոլշևիկյան բջիջը, որը ղեկավարում էր 1906 թ. կուսակցության անդամ Նոյ Լեժավան։ Խուսափելով ոստիկանական հետապնդումներից, նա Թիֆլիսից փոխադրվել էր Ալեքսանդրապոլ և, աշխատելով որպես մեքենավարի օգնական, լեգալ գործունեությունը հեշտությամբ զուգակցում էր անլեգալ գործունեության հետ[52]։ Ալեքսանդրապոլի կազմակերպությունը հրավիրում էր գաղտնի ժողովներ, տանում արգելված գրականություն, կապ հաստատում քաղաքի կայազորի զինվորական կազմակերպության հետ։ Ալեքսանդրապոլի բոլշևիկները ձգտում էին կազմակերպված բնույթ տալ զինվորների մեջ տեղի ունեցող խմորումներին, ապահովել նրանց նկատմամբ բոլշևիկյան ղեկավարությունը։

Հեղափոխության վերելքն զգալիորեն խթանում է նաև Բորչալուի բոլշևիկ-

48 Տե՛ս «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», էջ 148։
49 Տե՛ս նույն տեղում, էջ 145։
50 Տե՛ս նույն տեղում, էջ 154—156։
51 Տե՛ս Ս. Աղայան, Արշավիր Մելիքյան, Երևան, 1969, էջ 15—23։
52 Տե՛ս Մ. Վ. Արզումանյան, նշված աշխ., էջ 273—274, 336—337։

յան խմբերի գործունեությանը։ Այդ տարիներին Բորչալուի կազմակերպության Ալավերդու հանքարդյունաբերական շրջանում և գյուղական վայրերում, մասնավորապես Հաղպատի, Քալալօղլու, Շնողի խմբերում աշքի ընկնող դեր էին կատարում բոլշևիկներ Ս. Էվոյանը, Ֆ. Գարգալաջևը, Հ. Շահնազարյանը, Ի. Խաչիևը, Մ. Քանդիլյանը, Շ. Բեժանյանը, Ա. Թումանյանը, Ս. Հարությունյանը։ Թիֆլիսի բոլշևիկյան կենտրոնից մշտական աջակցություն էին ցույց տալիս և սիստեմատիկաբար Բորչալու էին գալիս Ս. Կասյանը, Ա. Կախոյանը և ուրիշներ, իրենց հետ բերելով մարքսիստական գրականություն, թերթեր և թռուցիկներ[53]։

1910—1914 թթ. կուսակցական-կազմակերպական աշխատանքներն աշխուժանում են նաև Կարսում, Կաղզվանում, Իգդիրում։ Կարսում ստացվում էին բոլշևիկյան պարբերականներ, մասնավորապես «Ջվեզդա» թերթը։ Կարսի բոլշևիկյան խումբը, որտեղ աշքի ընկնող դեր էին կատարում Վահան Հովսեփյանը և Բենո Սահակյանը, Ս. Կասյանի ու Դ. Շահվերդյանի միջոցով մշտական կապ էր պահպանում Թիֆլիսի բոլշևիկների հետ։ Կաղզվանում գործող մարքսիստական խումբը գլխավորում էր Հ. Սարուխանյանը, Նա միաժամանակ Իգդիրում կազմակերպում է մարքսիստական խումբ, որի աշխատանքներին գործուն մասնակցություն էին ցույց տալիս Բ. Զարիբջանյանը, Գ. Ղայչյանը և ուրիշներ[54]։

Այդ տարիներին Զանգեզուրի բոլշևիկյան խմբերը ևս ակտիվացրին իրենց գործունեությունը։ Զանգեզուրում և մասնավորապես Զափանի պղնձահանքերում էին աշխատում դեռևս առաջին ռուսական հեղափոխության բովում թրծված բոլշևիկներ Ա. Մարտիրոսյանը, Մ. Մանուչարյանը, Ա. Առաքելյանը, Ա. Վարդանյանը և ուրիշներ։ Զանգեզուրի գյուղատում գյուղական բնակչության մեջ հեղափոխական գործունեություն էին ծավալել Ա. Բաղդասարովը, Լ. Առուստամյանը, Ք. Մկրտչյանը և ուրիշներ։ Զանգեզուրի բոլշևիկները դեկավար ցույցումներ և աջակցություն էին ստանում Բաքվի բոլշևիկյան կենտրոնից[55]։

Այսպիսով, հեղափոխական նոր վերելքի տարիներին Հայաստանի բազաքներում և գյուղական շրջաններում հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունները զգալիորեն աշխուժացրին իրենց աշխատանքները։

Հեղափոխական շարժման նոր վերելքը կուսակցության առջև նոր խնդիրներ էր դնում։ Բանվորական և գյուղացիական հոլյթինները, զինվորական հուզումները, հեղափոխական շարժման մեջ նոր շերտերի մխրճվելը այնպիսի մասսայական բնույթ էին ընդունել, որ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայից պահանջում էր նոր դիրքորոշում։ Հեղափոխական կուսակցությունը չէր կարող օպորտունիստական և լիկվիդատորական տարրերի ղեկավարել այդ շարժումները։ Դրա համար անհրաժեշտ էր մաքրել կուսակցությունն այդպիսի տարրերից։ Այդ հարցերը քննելու համար բոլշևիկները Վ. Ի. Լենինի դեկավարությամբ առաջարկեցին հրավիրել կուսակցության կոնֆերանս։

Անդրկովկասի բոլշևիկները չերմորեն ողջունեցին կոնֆերանս հրավիրե-

---

53 Տե՛ս «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության նյութագծեր», էջ 158—159։

54 Տե՛ս նույն տեղում, էջ 156։

55 Տե՛ս Մ. Վ. Ազատամեյան, նշված աշխ., էջ 275։

յու առաջարկությունը։ Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ կոնֆերանսի նախապատրաստման Ռուսաստանյան կազմակերպչական հանձնաժողովի աշխատանքները ղեկավարելու համար 1911 թ. ամռանն արտասահմանից անլեգալ Անդրկովկաս ժամանեց Ս. Օրջոնիկիձեն։ Սեպտեմբերի 29-ին Բաքվի, Թիֆլիսի, Կիևի, Եկատերինոսլավի ու Եկատերինբուրգի կուսակցական կազմակերպությունների ներկայացուցիչների համատեղ նիստում ստեղծվեց կոնֆերանսի նախապատրաստման Ռուսաստանյան կազմակերպչական հանձնաժողով, որի մեջ անդրկովկասյան բոլշևիկներից մտան Ս. Օրջոնիկիձեն, Ս. Սպանդարյանը, Ստ. Շահումյանը[56]։ Սակայն Ստ. Շահումյանը Բաքվի ՌՍԴԲԿ կոմիտեի անդամների մեծ մասի հետ հաջորդ օրը ձերբակալվեց, որի հետևանքով հանձնաժողովն իր աշխատավայրը Բաքվից տեղափոխեց Թիֆլիս։ Ռուսաստանյան կազմակերպչական հանձնաժողովի ներկայացուցիչները տեղերում քաղաքական-կազմակերպական լայն գործունեություն ծավալեցին, բանվորներին ուղղված դիմումներ, պրոկլամացիաներ հրատարակեցին։ Ս. Սպանդարյանը ՌԿՀ-ի հանձնարարությամբ եղավ Պետերբուրգում, Մոսկվայում, Ռիգայում։

1912 թ. հունվարի 5-ին Պրագայում բացվեց ՌՍԴԲԿ համառուսաստանյան VI կոնֆերանսը, որտեղ ներկայացված էին ավելի քան քսան տեղական կազմակերպություններ։ Բաքվի և Թիֆլիսի կազմակերպությունների պատգամավորներն էին Ս. Սպանդարյանը և Ս. Օրջոնիկիձեն։

Կոնֆերանսը կուսակցության շարքերից վտարեց մենշևիկ-լիկվիդատորներին և այլ օպորտունիստների, որոնք վերասերվելով դարձել էին բուրժուազիայի գործակալներ բանվորական շարժման մեջ[57], ելնելով ՌՍԴԲԿ մինիմում-ծրագրի էլակետային սկզբունքներից, կոնֆերանսը կուսակցական կազմակերպություններին առաջադրեց հեղափոխական շարժման նոր վերելքին համապատասխան տակտիկա։

Անդրադառնալով ազգային հարցին, կոնֆերանսը դարձյալ ընդգծեց ազատագրական պայքարի մեջ Ռուսաստանի բոլոր ազգությունների նպատակների միասնությունը[58]։ Կոնֆերանսում Անդրկովկասի բոլշևիկների գործունեության մասին զեկուցումով հանդես եկավ Ս. Սպանդարյանը, որն արժանացավ Վ. Ի. Լենինի ուշադրությանը։ Ընտրվեց կենտրոնական կոմիտե, որի կազմի մեջ մտան Վ. Ի. Լենինը, Գ. Կ. Օրջոնիկիձեն, Ս. Ս. Սպանդարյանը, Ֆ. Ի. Գոլոշչեկինը[59]։

Անդրկովկասի այդ թվում Հայաստանի բոլշևիկները գոհունակությամբ ընդունեցին Պրագայի կոնֆերանսի որոշումները և իրենց ամենօրյա գործունեության ուղեցույց դարձրին։

---

56 Տե՛ս Г. Б. Гарибджанян, В. И. Ленин и большевистские организации Закавказья (1893—1924), Ереван, 1967, стр. 158.

57 Տե՛ս Մ. Վ. Ալգոմանյան, նշված աշխ., էջ 268—269։

58 Տե՛ս Г. А. Галоян, նշված աշխ., էջ 156—157։

59 Տե՛ս «Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», էջ 153—154։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1900—1908 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ 1900—1908 ԹԹ.

XIX դարի վերջերից կապիտալիզմը թևակոխել էր իր զարգացման բարձրագույն՝ իմպերիալիզմի փուլը։ 1900—1903 թթ. Ռուսաստանում սկսված տնտեսական ճգնաժամը շուտով ընդգրկեց նաև կապիտալիստական մյուս խոշոր երկրները։ Ճգնաժամն ավելի սրեց Անգլիայի, Գերմանիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Ճապոնիայի, ԱՄՆ-ի, Իտալիայի, Ավստրո-Հունգարիայի միջև եղած հակասությունները և մրցավազքը՝ սպառազինման, հումքի և սպառման նոր շուկաների համար մղվող պայքարում։ Երկրագնդի վրա այլևս ազատ տերիտորիաներ չկային. աշխարհը բաժանված էր իմպերիալիստական տերությունների միջև։ Պայքարը մղվում էր աշխարհի վերաբաժանման համար, որը տանում էր դեպի համաշխարհային զավթողական (իմպերիալիստական) պատերազմի սանձազերծում։ Ուժգին թափ ստացավ պատերազմի գաղափարական նախապատրաստությունը, որը տարածվում էր մեծապետական շովինիզմի՝ պանգերմանիզմի, անգլո-սաքսոնական ռասայի գերազանցության մոլեգին պրոպագանդայի պայմաններում, Թուրքիայում՝ պանիսլամիզմի ու պանթուրքիզմի քարոզներով։ Այս մթնոլորտը ճնշված և իրավազուրկ, ազգային զարթոնք ապրող ժողովուրդների վրա ազդում էր հակառակ ուղղությամբ՝ մղելով նրանց ինքնապաշտպանության և ազգային-ազատագրական պայքարի ուղին։ Միջազգային ասպարեզում պայքարի գլխավոր առանցքը Անգլիայի և Գերմանիայի իմպերիալիստական հակասություններն էին. այդ առանցքի շուրջն էլ համախմբվում էին իմպերիալիստական ուժերը՝ նախապատրաստվող զավթողական պատերազմում կազմելով երկու հակառակ խմբավորումներ՝ «եռյակ միությունը» (Ավստրո-Հունգարիա, Իտալիա, Գերմանիա), և Անտանտան («եռյակ համաձայնությունը»), որի մեջ մտնում էին Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը։ Հետագայում այս խմբավորումներին միացան Թուրքիան, Բուլղարիան (առաջին խմբին), Բելգիան, Հունաստանը, Սերբիան, ԱՄՆ-ը (երկրորդ խմբին)։

Պատմականորեն ավելի ուշ ասպարեզ իջած գերմանական «երիտասարդ իմպերիալիստական գիշատիչը»[1], համաշխարհային գերիշխանության հասնելու իր անզուսպ ձգտման մեջ, առաջնակարգ տեղ էր հատկացնում Թուրքիային, որի աշխարհագրական դիրքը բացառիկ նշանակություն ուներ երեք մերթ-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 515։

ցակիցներին՝ Անգլիային, Ռուսաստանին և Ֆրանսիային հարվածելու համար՝ Մերձավոր ու Միջին Արևելքի հարուստ շուկաներից նրանց դուրս մղելու և Անդրկովկասի, Իրանի, արաբական Արևելքի և հենց բուն Թուրքիայի բնական հարստությունները շահագործելու տեսակետից։

1901—1903 թթ. Մակեդոնիայում բռնկված ազգային-ազատագրական ապստամբական ելույթներն իրենց վրա էին կենտրոնացրել եվրոպական դիվանագիտության ուշադրությունը։ Մակեդոնիայում բարենորոգումների ծրագիրն իրագործելու անվան տակ տեղի ունեցավ ռուսական կայսր Նիկոլայ II-ի և ավստրիական կայսր Ֆրանց Իոսիֆի հանդիպումը, որը վերջացավ ավստրո-ռուսական Մյուրցշտեգի համաձայնագրի ստորագրումով՝ 1903 թ. օգոստոսին։ Համաձայնագիրը նախատեսում էր սուլթանի կառավարության հսկողության տակ Մակեդոնիայում իրականացնել բարենորոգումների ծրագիրը։ Միաժամանակ պահանջվում էր դադարեցնել խաղաղ բնակչության նկատմամբ թուրքական բռնություններն։ Մեծ տերությունների նախորդ համաձայնագրերի նման, սա էլ մնաց թղթի վրա։ Մակեդոնիայում թուրքական զորքերը մահ և ավերածություն էին սփռում, առաջ բերելով եվրոպայի հասարակական կարծիքի բողոքն ու զայրույթը։ Գոյություն ուներ ֆրանս-ռուսական համաձայնագիրը (1892—1893 թթ.) և Անգլո-ֆրանսիական «Սրտագին դաշնակցությունը» (1904)։ Մնում էր Ռուսաստանի հետ համաձայնության հասնել Մերձավոր ու Միջին Արևելքում տակավին չկարգավորված հարցերի վերաբերյալ։

1907 թ. Պարսկաստանի, Աֆղանստանի և Տիբեթի տարածքում ազդեցության գոտիների վերաբերյալ անգլո-ռուսական համաձայնագրի ստորագրումով կարգավորվեցին եղած տարաձայնությունները։ Այդպիսով ավարտվեց Անտանտայի փաստական ձևավորումը։ Իմպերիալիստական երկու ռազմական խմբակցությունների միջև պատերազմի սանձազերծումը սոսկ ժամանակի խնդիր էր։

* * *

Միջազգային քաղաքական այսպիսի իրադրության մեջ, Օսմանյան կայսրությունում XX դարի սկզբին տիրապետող էին դեռևս ամենահետամնաց ռազմաֆեոդալական հարաբերությունները։ Իմպերիալիստական պետությունների հակասությունների ու մրցակցության խառնարանում Թուրքիան ավելի ու ավելի էր տնտեսական կախման մեջ ընկնում և վերածվում կիսագաղութի։

Արդյունագործական և արհեստագործական մանր ձեռնարկություններն ստեղծվում էին հիմնականում ներքին շուկայի պահանջների հողի վրա։ Պայմաններ չկային դրանք ընդարձակելու և խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների վերածելու համար։ Սակայն այդ աննպաստ պայմաններում էլ կապիտալիստական արտադրանքն քիչ դանդաղ, տառապալից չղաձգումներով արմատավորվում էր երկրում։ Կապիտալիզմի առաջացման բնապատմական օբյեկտիվ պրոցեսն էր դա, որի հետ էին կապված նաև հասարակական մտքի ոլորտում առաջացած հեղաբեկումները, քաղաքական ու ազատագրական շարժումները։

Արհեստագործական և արտադրական միջին և մանր կարողության ձեռնարկություններում կիրառվում էր վարձու բանվորական ուժը։ Տեքստիլ, մանածագործական, մետաքսի ու բամբակի գործվածքների, պղնձագործական, ոսկերչական ձեռնարկություններ գոյություն ունեին Կ. Պոլսում, Իզմիրում

(Զմյուռնիա), Տրապիզոնում, Կարինում, Վանում, Դիարբեքիրում (Տիգրանակերտ), Թոքատում և այլ քաղաքներում։

Այդ ձեռնարկություններում կենտրոնացած էին որակյալ բանվորներ։ Նրանք իրենց իրավունքները պաշտպանելու համար համախմբվում էին արհեստակցական միությունների և համքարական կազմակերպությունների մեջ, հիմնում փոխօգնության ֆոնդեր։

Դարասկզբին միայն Դիարբեքիրում գոյություն ունեին անագա-պղնձաձուլողների (15 վարպետ և 20 բանվոր), երկաթագործների (50 վարպետ և 100 բանվոր), հյուսների (նաջարների) (70 վարպետ և 30 աշակերտ), սև մետաքսյա գործվածք արտադրողների (փուշիճիների, ջուլհակների՝ բամբակե թելից կտոր գործողներ), գունզգույն մետաքսե քաշկինակներ (գլխաթող) գործողների և մի շարք այլ միություններ[2]։ Նման միություններ գոյություն ունեին նաև Կ. Պոլսում, Իզմիրում, Վանում, Խարբերդում, Թոքատում և այլ հայաբնակ քաղաքներում։ Սակայն այդ արհեստագործական միությունները անմխիթար վիճակում էին։ Օտարերկրյա ապրանքների մուտքը ներքին շուկա քայքայում և դուրս էր մղում տեղական մանր ձեռնարկատերերին, որոնք չէին դիմանում մրցակցությանը։

Շուկայական հարաբերությունները քայքայում, շերտավորում էին առաջացնում արհեստավորների և մանր ապրանքարտադրողների մեջ, նրանց մղում կապիտալիստական արտադրահարաբերությունների ոլորտը։ Որոշ տեղերում հաջողվում էր արհեստանոցների ընդլայնման և ժամանակակից սարքավորումների գործադրման ճանապարհով հիմնել մանուֆակտուրային ձեռնարկություններ։

Կարինում, Սեբաստիայում, Շատախում, Վանում, Բիթլիսում, Կեսարիայում, Թոքատում շալագործական, կտավագործական, պղնձագործական և այլ ձեռնարկությունների արտադրանքն սպառվում էր ոչ միայն ներքին, այլև արտաքին շուկայում։ Բանվորները հաճախ աշխատում էին առևտրականների մատակարարած հումքով և վարկով։ Աստիճանաբար տեղի էր ունենում արտադրության կապիտալիստական եղանակին անցնելու պրոցես, երբ տնայնագործն իր տանը կամ ձեռնարկությանն մեջ փաստորեն աշխատում էր կապիտալիստի համար որպես վարձու բանվոր։ Փոխվում էր նաև կապիտալի բնույթը. առևտրական կապիտալը փոխակերպվում էր արդյունաբերականի, XX դարի սկզբներին Արաբկիրում, որտեղ կտավագործությունը հայ ազգաբնակչության հիմնական զբաղմունքն էր, արդեն գոյություն ունեին մանուածային 15, մանածաթելի 9, սավանի և սփռոցի պատրաստման 18 ձեռնարկություններ[3]։

Խարբերդում դարասկզբին կտավագործական երկու ձեռնարկություն կար, որոնք տարեկան 1000 ոսկու արտադրանք էին տալիս։ Հռչակված էր նաև Պենեհյանի գորգագործական ձեռնարկությունը, որը 1910—1912 թթ. արդեն ուներ իր մասնաճյուղերը Խարբերդում և այլ վայրերում։ Նրա արտադրած գորգերը հասնում էին նաև Ամերիկա։ Նյու-Յորքում Պենեհյանը ուներ իր գորգավաճառման խանութը[4]։ Դարասկզբին միայն Վանում կար 100 կտավագործական արհեստանոց՝ 300 դազգահով, որոնք հազարավոր մետրերով

---

2 «Վտակ», № 47 (մարտի 1), 1908։

3 Տե՛ս Ս. Էփրիկյան. Բնաշխարհիկ բառարան, հ. 1, գիրք Ա, Վենետիկ, ս. Ղազար, 1903, էջ 280։

4 Տե՛ս Մ. Ձիզմենյան, Խարբերդը և իր զավակները, Կալիֆորնիա, 1955, էջ 376—377։

կտավ էին վաճառում։ Վանում հայ վարպետները պատրաստում էին բարձրորակ կահույք։

Արդյունագործության որոշ ճյուղերում (կտավագործության, մանածագործության, մետաքսագործության, պղնձագործության և այլն) նկատվում էր անցում մանուֆակտուրային արտադրությունից դեպի գործարանային արտադրություն (Խարբերդ, Վան, Դիարբեքիր և այլն)։ Այդ քաղաքներում արտադրության մի շարք ճյուղերում արդեն ընդգրկված էին տասնյակ ու հարյուրավոր վարձու բանվորներ, որոնք աշխատում էին ոչ թե ձեռքով, այլ մեքենաների վրա[5]*։*



Կլայեկագործի արհեստանոց

Արհեստների և արդյունաբերության հռչակված կենտրոններից էր Թոքատը։ 1906 թ. Թոքատի պղնձագործական արհեստանոցներում աշխատում էր շուրջ 1000 մարդ։ Եվրոպական ցինկե իրերի մուտքն զգալի հարված հասցրեց պղնձագործությանը ոչ միայն Թոքատում, այլև Ուրֆայում, Սեբաստիայում, Մարզվանում, Խարբերդում, Ամասիայում, Կարինում, Վանում և այլ վայրերում[6]*։ Բիթլիսում կտավագործությունը կորցնում էր իր վաղեմի դիրքը։ Դրի-*

5 Տե՛ս «Բյուզանդիոն», 22 հունվարի 1907 թ.։ Ա. Ալպոյաճյան, Պատմություն Եվդոկիո հայոց, Կահիրե, 1952, էջ 1276։

6 Տե՛ս Ա. Ալպոյաճյան, նշված աշխ., էջ 1277։

թե անհետանալու վրա էր նրա հռչակավոր «շիլան» (կարմիր գույնի կտավը)։

Տիրող կամայականության պայմաններում դանդաղում էր երկրի տնտեսական առաջադիմությունը։ Կողոպուտները և նախամտածված հրդեհներն ավերածության էին ենթարկում Վանի, Խարբերդի, Ագնայի, Ուրֆայի և այլ կենտրոնների շուկաները։ 1908 թ. իշխանությունները Խարբերդում բռնագրավեցին երկրագործական գործիքների ձեռնարկությունները[7]։ Վանում և այլ վայրերում աշխատավորների մի մասն ստիպված թողնում էր իր զբաղմունքը, կամ հեռանում երկրից։ Միայն Կ. Պոլսում վանեցի սարագնացների թիվը դարասկզբին հասնում էր 3000-ի։

Առևտրի զարգացման համար անհամեմատ բարենպաստ պայմաններ կային ծովեզրյա քաղաքներում։ Արևմտյան Հայաստանում տնտեսական ու առևտրական կարևոր կենտրոնները կանոնավոր հաղորդակցության միջոցների բացակայության պատճառով սերտորեն չէին կապված արտաքին շուկայի հետ։ Տրապիզոնից ապրանքը Վան էր հասնում 40—50, իսկ Պարսկաստանից՝ Խոյ և Սալմաստի վրայով՝ 8—15 օրում։ Արտասահմանի հետ Արևմտյան Հայաստանի քաղաքներն առևտուր էին անում Կ. Պոլսի վրայով՝ Տրապիզոն-Մարսել, իսկ Ռուսաստանի հետ՝ Տրապիզոն-Բաթում գծով։ Այդ քաղաքների առևտրական հաշվեկշռում գերիշխում էին ավստրիական, գերմանական, անգլիական, ֆրանսիական և իտալական ապրանքները։ Ռուսաստանից Արևմտյան Հայաստան էր ներմուծվում նավթ, բրինձ, մանուֆակտուրա, մանավանդ չիթ։ Իսկ Արևմտյան Հայաստանի քաղաքներից արտահանվում էր Այնթափից՝ մանուա, Դիարբեքիրից՝ մետաքսե գործվածքեղեն, Կարինից՝ կաշվեղեն ու ապուխտ, Խարբերդից՝ խմիչքներ ու բամբակ, Թոքատից՝ յաղմա, Բիթլիսից՝ գոշար, չամիչ, Սղերդից՝ կաշվեղեն, բրդյա գործվածքեղեն, Վանից՝ անասուններ, ձուկ, բորակ, Շատախից՝ շալ և այլն։

Վանում խոշոր վաճառականների թիվը հասնում էր 35-ի, իսկ մանր խանութպաններինը՝ 3000-ի։ Խոշոր առևտրականներից յուրաքանչյուրը տարեկան ներմուծում և իրացնում էր մոտ 30.000 լիրայի ապրանք։ Սպառողների 80%-ը գյուղական ազգաբնակչությունն էր։

XX դարի սկզբին Թուրքիայի տնտեսական կյանքում ավելի որոշակի են դառնում հայ բուրժուազիայի տարբեր շերտերի գրաված տեղն ու դերը։ Հայ կոմպրադորները (միջնորդ վաճառականները), որոնք կենտրոնացված էին գլխավորապես Կ. Պոլսում և Իզմիրում, շարունակում էին իրենց տնտեսական սերտ կապերը ֆրանսիական, անգլիական և ընդհանրապես արևմտաեվրոպական կապիտալի հետ։ Նրանք իրենց ձեռքում էին կենտրոնացրել ոչխատանդնուպոլսի առևտրի և ֆինանսների զգալի մասը և տնտեսական շահերով կապված էին Թուրքական վերնախավի հետ։ Օգտվելով պետական հովանավորությունից, երկրի տնտեսական կյանքում ամբիճանաբար տիրապետող էին դառնում Թուրք իշխող տարրերը։ Նույն ևկամուտն ունեցող Թուրք վաճառականից պետությունը երեք անգամ պակաս էր հարկ վերցնում, քան հայ վաճառականից[8]։

Այսպիսով, Թուրքական բռնապետական կարգերը և եվրոպական խոշոր տերությունների գաղութային քաղաքականությունն արգելակում էին Թուրքիայի և

---

7 Տե՛ս Վահե Հայկ, Խարբերդը և անոր ոսկեղեն դաշտը, Նյու-Յորք, 1959, էջ 649։

8 Տե՛ս «Վտակ», № 57, 1908։

հատկապես Արևմտյան Հայաստանի արտադրողական ուժերի զարգացումը, վաճառաշրջանում արևմտահայության կացությունը, վտանգում նրանց ֆիզիկական գոյությունը։

* * *

Սուլթանական բռնապետության կեղեքիչ ու դաժան կարգերը կործանարար ազդեցություն ունեին հատկապես աշխատավոր գյուղացիության վրա։ Գյուղացիական բազմաթիվ տնտեսություններ հարկերի ծանրությունից սնանկանում էին։

Հողազուրկ գյուղացին կամ ստիպված էր հեռանալ իր բնակավայրից, կամ հարկադրված էր դառնալ զավթիչ բեգի «մարաբան» և նույնիսկ «խաֆիրը» (ճորտը)։ Հայ գյուղացին «ազատ» վարձակալից վերածվում էր փաստական ճորտի։ Մինչև սահմանադրության վերահաստատումը (1908) հայ գյուղացիների մեծամասնությունը Տարոնի գավառներում արդեն «մարապա էին Թուրքերուն և քուրտերուն. հայերու հողերուն մեծ մասը պաշտոնապես անոնց անունին արձանագրված էր»[9]։

Խոշոր հողատերերը չնչին վարձատրությամբ կեղեքում էին գյուղացիներին։ Տնտեսական հարստահարման այս եղանակի մասին Վ. Ի. Լենինը գրում էր. «Դա ճիճ չինական է։ Դա քուրեերեն է։ Դա ճորտատիրականորեն է»[10]։ Սուլթանական կառավարությունը օգտագործվող հողի վրա հայ գյուղացու իրավունքը հաճախ կախման մեջ էր դնում դավանափոխությունից։

Արևմտյան Հայաստանի որոշ գավառներում՝ Խարբերդի կազայում հայ գյուղացիական տնտեսությունների 74,1%-ը, Բուլանըխում՝ 60, Տարոնում՝ 80%-ը, Աբաղայի դաշտում՝ 77 գյուղերից 62-ը[11], հողազրկվել և բնակիչները մարաբա էին դարձել։

Մարաբա դարձած գյուղացին առանց գավառական իշխանությունների թույլտվության հաճախ չէր կարող այլ տեղ գնալ։ Ագրարային հարաբերությունների մեջ տեղի էր ունենում մի երևույթ տեղաշարժ՝ ճորտատիրության հաստատում սուլթանական կառավարության կողմից, կալվածատիրությունը խրախուսելու և հովանավորելու, հողային հափշտակումներն օրինականացնելու ճանապարհով։ Ավազակային հարձակումներից ու ասպատակություններից պաշտպանվելու համար հաճախ ամբողջ գյուղեր ստիպված էին ապավինել այս կամ այն աղայի ու բեգի հովանավորությանը, որովհետև գյուղացիները զուրկ էին պաշտպանության միջոցներից, իսկ աղաներն ու բեգերը զինված բանդաներ ունեին։

Աղաները, բռնագրավելով գյուղացիների հողերը, համարյա ամենուրեք նրանց բաժինը հասցրել էին չնչին չափերի։ 1909—1910 թթ. տվյալներով Արևմտյան Հայաստանում յուրաքանչյուր գյուղական տնտեսություն ուներ միջին հաշվով 3,5 հեկտար վարելահող[12]։ Ամենաապակավահողը հայ գյուղա-

---

9 Մ. Բդեյան, Հարաղատ պատմություն Տարոնոյ, Կահիրե, 1962, էջ 262։

10 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 23, էջ 339։

11 Տե՛ս Ա–Դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912, էջ 278։ Ա. Ս. Համբարյան, Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), էջ 216։

12 Տե՛ս А. Д. Новичев, Очерки экономики Турции до мировой войны, М., 1937, стр. 268.

ցին էր։ Գյուղացիներին հողաբաժիններ էին հատկացվում միայն նրանց հողին ամրացնելու և ոչ թե տնտեսությունը ապահովելու նկատառումով։

Գյուղացին տնտեսությունը վարում էր նախնադարյան եղանակով. նա տակավին գաղափար չուներ, գութանի մասին։ Միայն որոշ գավառներում հարուստ գյուղացիների ագարակներում երբեմն երևում էին ժամանակակից գյուղատնտեսական գործիքներ։ Թուրքիայում մշակվում էր օգտագործման համար պիտանի հողերի 40—45%-ը, որի երեք-քառորդը վակուֆային (կրոնական հաստատություններին պատկանող) հողեր էին, իսկ գյուղացիներին պատկանում էր մշակելի տարածության հազիվ 10 տոկոսը[13]։

Արևմտահայ շինականը շարունակում էր վճարել պետական նախկին տասանորդն ու ոչխարահարկը, նկամտահարկը և գինվորական հարկը, շարունակում էր կատարել աղայական զանազան տարապարհներ, վճարել կրոնական հաստատությունների բազմաթիվ տուրքերը։ Ֆեոդալական շահագործող վերնախավը և կառավարությունը, չբավարարվելով հին հարկերով, նոր պարտավորություններ էին դնում գյուղացիների վրա։

Տասանորդի և մյուս գլխավոր հարկերի գանձումը Թուրքական կառավարությունն աճուրդով տալիս էր կապալառուներին։ Գավառի կամ շրջանի հարկահավաքման իրավունքը գնորդներն իրենց հերթին վաճառում էին ավելի փոքր տեղամասերի գնորդներին, սրանք էլ՝ ավելի մանրերին։ Տասանորդի գանձումը սովորաբար անցնում էր 4—5 ձեռքից մինչև հասնում էր վերջին հարկահավաքին։ Յուրաքանչյուրն իր համար պահում էր գանձված հարկի մի մասը, բացի աճուրդով գնած իրավունքի համար վճարած գումարից։ Հետևանքը լինում էր այն, որ իրականում հարկահավաքը գյուղացուց վերցնում էր ոչ թե բերքի սահմանված 12,5%-ը, այլ 30—40 տոկոսը։ Գյուղացին իրավունք չուներ բերքը կալից ամբար փոխադրել՝ առանց հարկահավաքի (թահսիլդարի) թույլտվության։ Իսկ հարկահավաքը չէր շտապում։ Նրա կամեցությանն էր թողնված հարկը գանձել դրամով կամ բնամթերքով։

Այդ պահին էլ հրապարակ էր իջնում վաշխառուն և իր ցանցի մեջ առնում գյուղացուն։ Այսպիսով, աշխատավոր գյուղացուն կողոպտում էր ֆեոդալը՝ աղան, շեյխը, բեգը, փաշան, կրոնավորը, կողոպտում էր պետությունն իր տեղական պաշտոնյաներով, հարկահաններով, դատավորներով, կայմակամներով ու ոստիկանապետներով։ Բերի մնացածը լրացնում էին «համիդիե» գնդերի զինված բանդաները, որոնք ասպատակում էին հայ գյուղերը՝ հայդուկներ «հայտնաբերելուց» և «խռովարարներին» պատժելու պատրվակով։ Ծանկացած փաշան կարող էր ուզած չափով գավառը «փետրահան անել»,— գրում էր Ռ. Լյուքսեմբուրգը և ավելացնում, որ Թուրքիայում «գրեթե բոլոր պաշտոնները վաճառվում են, պաշտոնյաները ոճիրով չեն ստանում, ապրում են տեղաբնակ ժողովրդի հաշվին»։ Ուրեմն, «պաշտոնեությունը Թուրքիայում ազգաբնակչության բազմամարդ մի հատուկ դասակարգ է, որն անմիջականորեն ներկայացնում է տնտեսական մի գործոն և իր գոյությունը պահպանում է ժողովրդին պրոֆեսիոնալ կարգով կողոպտելով»[14]։

---

13 Տե՛ս «Մուրճ», № 8, էջ 122։

14 Ռ. Լյուքսեմբուրգ. Ազգային պայքարը Թուրքիայում և սոցիալ-դեմոկրատիան («Յառաջ Օրևանի Համալսարանին», № 2, 1971, էջ 140)։

Հարկային այսպիսի դաժան հարստահարումը հնարավորություն չէր տալիս գյուղացիներին բարելավելու իրենց տնտեսությունը։ Եվ, չնայած Արևմտյան Հայաստանն ուներ տնտեսական զարգացման մեծ հնարավորություններ, բայց տիրապետող սոցիալ-տնտեսական կարգերի հետևանքով օգտագործվում էր դրանց փոքր մասը միայն։ Սաստկացող ճնշումները, անընդհատ ավելացող հարկերն ու պարհակները գյուղացու մեջ խեղդում էին տնտեսությունը զարգացնելու և ընդարձակելու նախաձեռնությունը։

2. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ XX ԴԱՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ

Օգտվելով մեծ տերությունների միջև եղած հակասություններից, սուլթանի կառավարությունը շարունակում էր հայահալած իր քաղաքականությունը։ Շատերն էին այն կարծիքին, որ սուլթանին հաջողվեց 1895—1896 թթ. ղանգվածային կոտորածներով հայերի մեջ մեռցնել ազատաբաղձ ոգին, կաթվածահար անել հայ ազգային-ազատագրական շարժումները և հայ ժողովրդին պարտադրել ստրկական գոյավիճակ։ Սակայն Տարոնի և Սասունի հերոս Սերոբի (Տարոնի Սոխորթ գյուղից) եղերական վախճանից հետո, այդ շրջանի ազատագրական շարժման քաղաքական ղեկավար Հրայրին (1866—1904) և Սասունում հայդուկային խմբերի ղեկավարությունն ստանձնած Անդրանիկ Օզանյանին (չապինկարահիսարցի, 1865—1927) հաջողվեց համախմբել ցաքուցրիվ ուժերը և գլխավորել ազատագրական պայքարը։ Անդրանիկն իր ուշադրությունը դարձրեց Տարոնի միջնաբերդ Սասունի վրա, ուր թուրքական կառավարությունը 1901 թ. մայիսից ձեռնարկել էր զորանոցներ կառուցելու գործը։ Նա կոչ էր անում սասունցիներին՝ բոլոր միջոցներով խափանել այն։ Եվ ամբողջ Սասունը ոտքի կանգնեց. «կամ բոլորս ալ կմեռնինք, կամ չենք ընդունիր, որ զորանոցներ շինվին»[15] նշանաբանով։

Բացի Մուշ քաղաքից, Տարոնի 28 կարևոր կետերում կառավարությունը կենտրոնացրել էր կանոնավոր զորքերի ստորաբաժանումներ։ Հայկական գյուղերում նշանակված էին թուրդ պահապաններ, իբր թե դիշերային ավազակային հարձակումներից գյուղերը պաշտպանելու համար։ Հայ գյուղացին պարտավոր էր վճարել իր այդ «պաշտպաններին» և կերակրել։ Իրականում կառավարությունը նրանց միջոցով հետևում էր հայկական գյուղերում կատարվող ներքին անցուդարձին, հայդուկների գործունեությանը։ Հայդուկների սպառնալիքներից ահաբեկված, նրանցից շատերը հրաժարվում էին ծառայությունից։

Այդ օրերին էր, որ Անդրանիկն իր զինակիցներով որոշեց պատժել Սերոբին դավադրաբար սպանած ավազակապետ Բշարե Խալիլին։ Զարագործ վարձկանին պատժելուց հետո, Անդրանիկը որոշում է հայդուկների մի փոքրաթիվ ջոկատով Սասունից իջնել և ամրանալ Մուշից ոչ հեռու գտնվող Առաքելոց վանքում և հերոսական պայքարի օրինակով սթափեցնել հուսահատության մատնված ժողովրդին, նրա մեջ բորբոքել ազատագրական պայքարի

---

15 «Անդրանիկի հուշերը», Գեյրոթ, 1935, էջ 266—267։

ոգին։ 1901 թ. Նոյեմբերի սկզբին Առաքելոց վանք իջան սպառազինված 37 հայդուկներ՝ Անդրանիկի գլխավորությամբ։ Նրանց միացան նաև երկու տասնյակի հասնող գյուղացիներ։ Վանքը վերածվեց ինքնապաշտպանության ամրոցի։ Նոյեմբերի 2-ին իշխանություններին արդեն հայտնի էր, որ Անդրանիկն իր զինակիցներով վանքում է գտնվում։ Վանքի միաբանությունը ցանկանում էր այնտեղ պատսպարված 80 որբերին և նրանց ուսուցիչներին փոխադրել Մուշ, բայց Անդրանիկը վտանգավոր է համարում այդ և թույլ չի տալիս։ Մուշից և այլ վայրերից թուրք-քրդական զինված մեծաքանակ ուժերը շարժվում են դեպի Առաքելոց վանքը։ Սրբ Բերդակից հայդուկների համար այլուր և աննդամբերք բերող գյուղացիները վանքի պարիսպներից ներս են մտնում, փակվում են դարպասները։ Վանքը պաշարվում է ինչպես կողմից։

Վանքից 200—250 մետր հեռավորության վրա խրամատավորվել էին թուրք ասկյարները և նրանցից անբաժան՝ զինված բաշիբոզուկները։ 50—60 հայդուկների դեմ կառավարությունը դուրս էր բերել մի քանի հազարի հասնող կանոնավոր զորամասեր ու ոստիկանական ուժեր։

Մինչև նոյեմբերի 17-ը ինչպես հաջողվել էր բավականին մոտենալ վանքի պարիսպներին և սպառնալիքներ կարդալ պաշարվածներին։ Անդրանիկի հետ էին նրա զինակիցներ, հանրաճանաչ հայդուկներ՝ Գևորգ Չավուշը, Սեքաստացի Մուրադը, Առաքելը (Տիգրան Աբաջյան, բաբերդցի), Սմբատ Բորոյանը (մշեցի), Հակոբ Կոտոյանը (մշեցի), Սպաղանցի Մակարը և ուրիշներ։ Հայդուկների դիպուկ համազարկերը բազմաքանակ զոհեր էին պատճառում ինչպես թուրքական զորքերի հրամանատարությունն ստանձնած Բիթլիսի նահանգապետը դիմում է Անդրանիկին՝ նրա պահանջներն իմանալու համար։ Սկսվում են բանակցությունները։ Վանք են թողնվում թուրքական պատվիրակները՝ Մուշի քաղաքապետը, զինվորական կոմիսար Մուհամմեդ էֆենդին, Խոսրով վարդապետ Բերդիկյանը և նրանց հետ նաև ս. Կարապետ վանքի վանահայրը։

Նրանք Անդրանիկին հայտնում են, որ սուլթանը հրամայել է վայր դնել զենքերը և հանձնվել, խոստանալով ներման արժանացնել «խռովարարներին»։ Անդրանիկը ներկայացնում է հետևյալ պահանջները. ներում շնորհել բոլոր քաղաքական բանտարկյալներին, գյուղերում տասանորդ տուրքը հավաքել գյուղացիների միջոցով, զինաթափ անել հայկական գյուղերն ասպատակող քրդական զինված բանդաները, բեգերի կողմից զավթված հայկական հողերը վերադարձնել տերերին, վերացնել ցեղապետների հայերից ապօրինի տուրք գանձելու իրավունքը[16]։

Անդրանիկի ներկայացրած պահանջներից հետագայում միայն բանտարկյալներին վերաբերող կետը մասամբ իրագործվեց. 31 հայ բանտարկյալների ներում շնորհվեց։

Մնացած պահանջները մերժվում են, և վերսկսվում են կատաղի մարտերը։ Վանքը պաշարող թշնամու բանակում բռնկվել էր համաճարակ, որն ապառնում էր թափանցել վանքից ներս։ Բացի այդ, պաշարվածները երկար ժամանակ կռվելու համար անհրաժեշտ զինամթերք չունեին։ Ուստի Անդրանիկը մտածում էր ելք գտնել պաշարման օղակից դուրս գալու համար։

Մարտական գործողությունները շարունակվում են մինչև նոյեմբերի 27-ը,

16 Տե՛ս «Առաքելոց վանքի կռիվը...», Պոստըն, 1924, էջ 45։

երբ նախապես մշակված պլանով, պաշարված հայդուկները սպիտակ սավանների մեջ փաթաթված, որպեսզի ձյան վրա աննկատ մնան, գիշերով դուրս են գալիս վանքի պարիսպներից և հեռանում։

Հայդուկների ազատվելը պաշարումից հրաշք էր թվում, ուստի պաշտոնական շրջաններում կեղծ լուրերով փորձում էին քողարկել թուրքական արշավանքի ձախողման փաստը։ Առաքելոց վանքի կռիվը հայ ազատագրական պայքարի աշխուժացման վկայությունն էր[17]։

Արևմտյան Հայաստանում ստեղծվել էր ինքնապաշտպանության գործը կազմակերպող ղեկավար կենտրոն։ Այդ կենտրոնի մեջ մտնում էին Վարդգեսը (Հովհաննես Սերենկյուլյանը)՝ Վասպուրականի շրջանում, Ռուբեն Շիշմանյանը (Քեռին)՝ Կարինի շրջանում և Վահան Տողրամաճյանը (Մանվելյանը)՝ Տարոն-Սասունի շրջանում։ Սակայն շարժման փաստական ղեկավարը փորձառու հայդուկ Արմենակ Ղազարյանն (Հրայր, Դժոխք) էր։ Նրա գործունեությունն ընդգրկում էր Տարոնի հայ հասարակական կյանքի բոլոր ոլորտները՝ ժողովրդական կրթության, ինքնապաշտպանության, տնտեսական-հասարակական նախաձեռնության կազմակերպման և այլն։ Հրայրի կարծիքով համբերելն ու տոկալը նույնքան անհրաժեշտ զենքեր են, որքան հարկ եղած պարագային զենքով կռվելը և արյուն թափելը, Նա գտնում էր. որ անհրաժեշտ է նախապատրաստվել հանդարտ ու համառ աշխատանքով, ըստ կարելվույն խուսափել ընդհարումներից և առիթ չտալ պրովոկացիաների։

Սուլթանը գերադասեց առժամանակ խաղաղասեր ձևանալ, հետաձգելով արշավանքը Սասունի դեմ։ Նա տակավին դատաստան չէր տեսել Մակեդոնիայում բռնկված ժողովրդական ապստամբության հետ և սպասում էր ավելի հարմար առիթի։

1903 թ. վերջերին Կովկասից Սասուն էր հասել Թորգոմի (Թուման Թումանյան) 27 հոգուց բաղկացած զինված խումբը։ Այդ առիթով Տարոնի ինքնապաշտպանության ղեկավարությունը Գելիեգուզանում ժողով էր հրավիրել զինված խմբերի ղեկավարներին և Սասունի գյուղերի ավագներին։ Ժողովը որոշեց եղած փոքրաքանակ զենքերը բաժանել գյուղերի վրա։ Միայն Գելիեգուզանն ստացավ 70 հրացան, իսկ մյուս գյուղերն ավելի քիչ։ Ընտրվեց ինքնապաշտպանության զինվորական խորհուրդ՝ Անդրանիկի գլխավորությամբ։

Հրայրը շարունակում էր կազմակերպական աշխատանքը Մուշի դաշտի գյուղերում։ Անդրանիկը և Սմբատ Բորոյանը պաշարներ ստեղծելու և դիրքեր պատրաստելու գործով էին զբաղված։ Նպատակահարմար համարվեց պահել միայն փոքրաթիվ զինված խմբեր, իսկ մնացած մարտիկներին ցրել գյուղերը, որտեղ նրանք կարող էին օգտակար լինել և մնալ աննկատ։ Հաջողվեց նաև մի քանի քուրդ ցեղապետների բարեկամությունը շահել, ինչպես, օրինակ, Խճուղ գյուղից Դերվիշի և նրա յոթ եղբայրների համերաշխությունը։ Համերաշխության ուղղությամբ աշխատանք էր տարվում նաև թուրքերի միջավայրում։ Թերևս դրա հետևանքն էր, որ Արաղ գյուղում թուրք զինվորներից երկուսը դիմել էին տեղական պաշտպանության ղեկավարներին, խնդրելով իրենց ընդունել ինքնապաշտպանության խմբի մեջ։ Նրանք հայտնել էին, թե ատում են Համիդի բռնակալությունը, որից քիչ չի տուժում նաև թուրք ժողո-

---

17 Տե՛ս Ս. Գ. Ազայան, *Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից*, էջ 195։

վուրդը, ուստի ցանկանում են հայերի հետ կռվել բռնակալության դեմ[18]։ Ինքնապաշտպանության ղեկավարները քաջալերում են նրանց ազնիվ մղումները, խորհուրդ տալիս այդ ոգով աշխատանք տանել թուրք զինվորների շրջանում։

Սուլթանական բռնապետության դեմ ուղղված հայ ազգային-ազատագրական պայքարը զրկված էր ընդհանուր ճակատ ստեղծելու հնարավորությունից և բացի այդ, չուներ համազգային միասնական ղեկավարություն, ինքնապաշտպանության զորեղ միջոցներ։ Քաղաքական կուսակցությունների և հոսանքների միջև համագործակցության ընդհանուր ծրագիր գոյություն չուներ։

1894—1896 թթ. ջարդերից ահաբեկված պատրիարքությունը, Օսմանյանի գլխավորությամբ, բացասական դիրք էր բռնել թուրքական բռնակալության դեմ ուղղված հայ ազգային-ազատագրական շարժման նկատմամբ և վարում էր համակերպության քաղաքականություն։ Հնչակյան կուսակցության երկու թևերը միմյանց դեմ կազմալուծիչ պայքար էին մղում, որի հետևանքով էլ նրանք չկարողացան շատ թե քիչ նշանակալից գործունեություն ծավալել Արևմտյան Հայաստանում։

Իր գործելակերպով դաշնակցությունը ևս չէր նպաստում ազատագրական շարժման բնականոն զարգացմանը, նրա ցուցադրական ու արկածախնդրական տակտիկան, երկրի ներսում և երկրից դուրս ստեղծված քաղաքական իրավիճակի հաշվի չառնելը խիստ բացասական հետևանքների էին հանգեցնում։ Այդ կուսակցությունն իր տակտիկական ուղեգիծն էր համարում կազմակերպել, ըստ կարելվույն, երկար տևողությամբ կռիվ սուլթանական բռնակալության դեմ երկրի ներսում, միշտ նկատի ունենալով միաժամանակ եվրոպական երկրների միջամտությունը, չհասկանալով, որ այդ միջամտությունը շահագրգռական էր և նոր դժբախտությունների դուռ էր բացում հայ ժողովրդի համար։

Հաշվի էր առնվում բալկանյան ժողովուրդների ազատագրության փորձը, այդ գործում առաջին հերթին Ռուսաստանի խաղացած դիվանագիտական և ռազմական դերը, բայց մոռանում էին, որ XX դ. սկզբին փոխվել էր միջազգային դրությունը, և կատարվել էին քաղաքական ուժերի նոր տեղաշարժեր։

Արևմտահայերի քաղաքացիական իրավահավասարության և ապահովության հասնելու համար, հայ ազգային ղեկավար շրջանների գործունեությունը ծավալվում էր երեք ուղղությամբ. ա) Արևմտյան Հայաստանի ազատագրական շարժումների մասին տեղեկագրերի կազմում և առաքում գրաղաքական աշխարհին՝ Եվրոպայի հասարակական կարծիքի առաջ հայ ազատագրական շարժման նպատակների, պահանջների մասին ճշմարտությունը պարզելու, տարածված կեղծ պատկերացումները և սուլթանի կառավարության զրպարտությունները հերքելու նպատակով, բ) դրամական միջոցների, զենքի ու ռազմամթերքի հայթայթում՝ զինված խմբեր կազմակերպելու և Արևմտյան Հայաստան մտցնելու նպատակով, գ) Ամենայն Հայոց կաթողիկոսի անունից պաշտոնական դիմումների և աղերսագրերի հղում մեծ պետություններ կառավարություններին՝ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածով խոստացված բարենորոգումների ծրագիրն իրագործելու խնդրանքով։

---

18 Աճեմյանին, Նյանքը, պատերազմները և հուշերը, Փեյրութ, 1932, էջ 319։

Հայ բուրժուազիայից նյութական օգնություն կորզելու նպատակով դաշնակցությունը դիմեց բռնի հանգանակության միջոցին։ Այդ նպատակով 1901 թ. Բուլղարիայի Ֆիլիպպե (այժմ Պլովդիվ) քաղաքում ստեղծվեց դաշնակցության կամքն իրագործող «Փոթորիկ» ահաբեկչական խումբը, որի առաջին զոհը դարձավ մոսկովյան բանկիր-միլիոնատեր Խաչակ ժամհարյանը։

Արևմտյան Հայաստանից գուժող լուրերը, ցարիզմի հայահալած քաղաքականությունը արևելահայ երիտասարդությանը նույնպես մղում էին ազատագրական պայքարի ակտիվ գործողությունների ասպարեզ։ Այդ երիտասարդության շարքերից կազմակերպվում էին հայդուկային մարտական և զինատար խմբեր՝ «Ջոկիր» (Արևմտյան Հայաստան) մտցնելու համար։ Բաքվում, Կարսում և Դիլմանում (Սալմաստի գավառում) ստեղծվել էին զենքի ու զինամթերքի պահեստներ ու նոր արհեստանոցներ։ Այս ձեռնարկները կապված էին բազմաթիվ վտանգների հետ, որոնք հաճախ ծանր զոհեր էին խլում՝ ոստիկանական հալածանքների ու հետապնդումների պատճառներում։

Դարասկզբին զինատար և հայդուկային խմբերը Արևմտյան Հայաստան էին անցնում Օլթի—Բասեն—Խնուս—Մասուն, Երևան—Տաք-Ադրյուր (կամ Միրզաջան)—Արճեշ—Ախլաթ—Վասպուրական—Տարոն, Խոյ—ս. Թադեոսի վանք—Աբաղայի դաշտի Նպարավան և Խաշան գյուղեր, Սալմաստ—Բաշկալե—Հայոց Ձոր—Վան, Երևան—Դավալու—Մակու—Խոյ—Վան ուղղություններով։ Պետական սահմանն անցան Խանի (Բարսեղ Բիրաքյան), Թեքիրդաղցի Նովրուզի, Բորգոմի, Աշոտի և ուրիշների խմբերը (1903—1904 ԹԹ. ընթացքում)։

Սակայն մինչև 1904 թ., բացի Բորգոմի 27 հոգուց բաղկացած ջոկատից, մյուսները եղերական վախճան ունեցան. հենց սահմանագիծին նրանք նկատվում էին թուրքերի կողմից, ընդհարվում նրանց գերակշիռ ռազմական ուժերի հետ կամ բռնվում ցարական սահմանապահ զորքերի կողմից։ Առանձնապես ծանր վախճան ունեցավ Նովրուզի 150 հոգուց բաղկացած ջոկատը, որը Բասենում (1903) կռվի բռնվելով թուրքական գերակշիռ ուժերի հետ, մեծ զոհեր պատճառելով նրան, ի վերջո ջախջախվեց նույնպիսի վախճան ունեցավ Որսորդ Գևորգի և Բորգոմի 61 հոգուց բաղկացած երկրորդ խումբը 1904 թ. Օլթիի շրջանում, սահմանն անցնելուց հետո, խումբը մարտի բռնվեց թուրքական զորամասի հետ և երկու ժամ տևող անհավասար կռվում ջախջախվեց։

1904 թ. հունիսի 26-ին սահմանն անցնում է հնչակյանների «Արծիվ» հայդուկային խումբը՝ Բաքենի (Պողոս Գրիգորյան-Ավագյան) զինավարությամբ։ Երկու օր անց տեղի ունեցավ առաջին ընդհարումը թուրք-քրդական ուժերի հետ՝ Մոզկա սարի մոտ։ Խմբին հաջողվեց գրոհով ոչնչացնել թուրքական զորանոցում եղած ինդանոթները, գրավել զենքը և զինել տեղի երիտասարդներին[19]։

Սուլթանական կառավարության ուշադրությունը Մասունից հեռացնելու հույսով, Երևանի դաշնակցական կազմակերպությունը ձեռնարկում է ռուսական սահմանի մոտ գտնվող Ձորի և Մոսունի թուրքական զորանոցները ոչնչացնելու գործը։ Կազմակերպվում է երկու խումբ՝ «Արտավազդ» և «Մասիս»

---

19 Տե՛ս «Հիսնամյակ. 1887—1937 սոց. դեմ. Հնչակյան կուսակցության», Փրովիդենս, 1938, էջ 177—178։

անուններով, որոնց մեջ ընդգրկված էր 102 հոգի։ Առաջին խումբը Մինաս Տոլպաշյանի (Դալլ Վահան) և երկրորդը՝ բաբերդցի Միհրանի գլխավորությամբ հաջողությամբ իրագործում են այդ խնդիրը։ Իշխանությունների վրեժխնդրությունից խուսափելու համար, իրենց հետ վերցնելով մոտակա գյուղերի հայ բնակիչներին, խմբերը փորձում են վերադառնալ Արևելյան Հայաստան։ Սակայն կես ճանապարհին նրանք հանդիպում են համիդիեական գնդերին, և ընդհարման ժամանակ զոհվում են երեսուն հոգի, այդ թվում նաև՝ Դալլ Վահանը։

Սուլթանական բռնակալության դեմ պայքարի այս ձևը հատկանշում էր քաղաքական ռոմանտիզմի խոր ազդեցությունը հայ ազգային-ազատագրական շարժման վրա և ընդգծում միաժամանակ նրա ժողովրդական բնույթը։ Բայց ապստղություն փորձերը, մարտիկների եղերական նահատակությունը, ի վերջո, պետք է սթափեցնեին և ստիպեին հայդուկային գինատար և զինված խմբերի անմիջական կազմակերպիչներին՝ հրաժարվելու զինված խմբեր Արևմտյան Հայաստան մտցնելու մտքից։

3. 1904 Թ. ՍԱՍՈՒՆԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Սուլթանի կառավարությունը Սասունի դեմ նախապատրաստվող արշավանքն իրագործեց 1904 թ. գարնանամուտին, երբ սովորաբար դեպի սարերն էին շարժվում բրդական թռչվոր ցեղերը։ Թուրքական իշխանությունները լրտեսների և գործակալների միջոցով հրահրում էին միջազգեր, սրում դրությունը։ Այդ օրերին բացահայտվեց Տափրկ գյուղում իշխանությունների կողմից Անդրանիկի դեմ կազմակերպված մահափորձը։

Սրագրվող կոտորածները Սասունում թղարկելու կամ արդարացնելու նպատակով, կառավարությունը կեղծ լուրեր էր տարածում, որ իբր հայ ֆիդայիները պատրաստվում են գարնանը իջնել լեռներից և հարձակվել թուրքական զորամասերի վրա[20]։ Սասունի դեմ զինված արշավանքի առաջին զոհը դարձավ Հունան գյուղը։ Դաժան հարկահանությունն ստիպել էր գյուղի բնակչությանը դիմադրելու իշխանության ներկայացուցիչներին։ Իշխանությունները բանակային կորպուսի մեկ դիվիզիա են ուղարկում «Մասուն փախած» հայերի դեմ[21]։ 1904 թ. փետրվարի 5-ին առավոտյան ժամը 4-ին թուրք ջարդարարները խուժեցին Հունան գյուղը, կողոպտեցին ու այրեցին 120 տուն, երեխաներին ու կանանց կենդանի թաղեցին ձյան մեջ կամ նետեցին ջրհորները[22]։

Թուրքական իշխանությունները տեղեկանալով, որ Անդրանիկը Սասունում է և նախապատրաստվում է պաշտպանության, Սասունի շուրջը կենտրոնացրին կառավարական զորքեր ու քրդական ջոկատներ։ Նվ բանի որ հայերը ոչ մի առիթ չէին տալիս, թուրքերը դրդեցին մի քանի քուրդ ցեղապետների հարձակվել հայկական բնակավայրերի վրա։ Նույն՝ 1904 թ. մարտի վերջին, Սեբաստացի Մուրադը բանակցություններ էր վարում լաճկանցի քուրդ ցեղապետների հետ, նրանց բարեկամությունը շահելու հույսով։

---

20 Տե՛ս «Геноцид...», стр. 148.

21 Տե՛ս նույն տեղում։

22 Տե՛ս նույն տեղում, էջ 149։

Կառավարությունը պատրաստվում էր ռազմական գործողություններին։ Սասունի վրա երեք ուղղությամբ շարժվող 10 հազարանոց թուրքական բանակը զինակարում էր ռուս-թուրքական պատերազմի ժամանակ հռչակված Քեոսե բինբաշին։ Նրա հետ էին Սալիհ փաշան և Բիթլիսի կուսակալը՝ 7 գումարտակներով։ Այդ հսկայական ուժերի դեմ կանգնած էին երկու հարյուր չափ փորձված հայդուկներ և կայծքարե հրացաններով ու այլ զենքերով զինված մոտ հազար հայ գյուղացի։



Անդրանիկ Ղազարյան (Հայր)։

Անդրանիկն իր ջոկատով հենակետ էր ընտրել Տափրկ գյուղը՝ Չայից (Բաթման գետի վերին հոսանքը) դեպի Գելիեզուզան շարժվող թշնամու ուժերը կասեցնելու համար։ Պաշտպանական մյուս գլխավոր հենակետերն էին՝ Գելիեզուզանը, Շենիկը, Իշխանձորը և Տալվորիկը։ Կենտրոնական ինքնապաշտպանական ճակատի զինակարությունն ստանձնել էր Հրայրը։ Չայի շրջանում գործում էին Սպազանցի Մակարի, Հաճի Հակոբ Կոտոյանի, Սերաստացի Մուրադի, Ալիքանի հովտում՝ Մանուկի, Ղազարի, Իշխանձորի հատվածում՝ Գևորգ Չավուշի և Մշեցի Սմբատի ջոկատները։

Ապրիլի 11-ին թշնամին վճռական գործողություններ սկսեց Շենիկի ճակատում։ Կատաղի մարտերը շարունակվեցին մինչև կեսօր, երբ թուրքական հեծելազորը, չդիմանալով ժողովրդական ինքնապաշտպանության փոքրաթիվ ուժերի համառ դիմադրությանը, ստիպված նահանջեց։ Թարմ ուժեր ստանալով, թուրքերը գրոհեցին Մերկեր գյուղի դիրքերի վրա։ Այստեղ էլ նրանք հանդիպեցին Գևորգ Չավուշի մարտիկների համառ դիմադրությանը և արդյունքի չհասան։

Առաջին անհաջող գրոհներից հետո թուրքական հրամանատարությունը առաջարկեց հայերին՝ զենքը վայր դնել։ Ի պատասխան այդ առաջարկության, Անդրանիկն ու Հրայրը հայտարարեցին, թե զենքը վայր կդրվի, եթե իրագործվեն 1895 թ. Մայիսյան ծրագրով խոստացված բարենորոգումները։ Թուրքական հրամանատարությունը հայերից դեռ վերջնական պատասխան չստացած, իր զորքերը բաժանեց վեց մասի և սկսեց ամբակոծել Սեմալի ու Ալիքանի հայկական դիրքերը և դեպի Գելիեզուզան հետացող խաղաղ բնակչություն։ Կռվի թեժ պահին Հրայրը նկատեց, որ թշնամին ձգտում է գրավել Բարբարայի հովիտը փակող կիրճը, որը միակ ուղին էր դեպի Գելիեզուզան։ Նա իր զինակիցներով շտապեց կիրճը պաշտպանող հայդուկներին օգնության և կիրճից ոչ հետու գտնվեց թշնամու գնդակից։ Հրայրի մահը խորապես ազդեց ոչ միայն հայդուկների, այլև Տարոնի ողջ հայության վրա։ Աչնուամենայնիվ թուրք-քրդական զորախմբերին չհաջողվեց մարտը շահել։ Անդրանիկի, Գևորգ Չավուշի, Մուրադի մարտիկների անձնուրաց գրոհներն ի վերջո ստի-

պեցին Բշնամուն կատաղի կռվից հետո, ծանր կորուստներ տալով, լքել մարտադաշտը։

Անդրանիկի հրամանով Սմբատը ժողովրդի հետ քաշվում է Փշփուշ սարը և այնտեղից հարձակվում Բշնամու վրա, ստիպելով տպավորություն, թե հայդուկները թարմ ուժեր են ստացել։

Ապրիլի 20-ին համառ մարտեր տեղի ունեցան Քեփի մոտ, ուր ճակատում էին Սմբատի և Գևորգ Չավուշի ուժերը, իսկ Տափրկ գյուղի կողմից եկող թուրքական ուժերի դեմ հարձակողական մարտեր էր մղում Սեբաստացի Մուրադը։

Կենտրոնական ճակատում, Գելիեզուզանի դեմ թուրքական հրամանատարությունը դուրս էր բերել 12—14 Բնդանոթ։ Այդ հատվածում էին հայերի ինքնապաշտպանական ուժերի մի մասը և 20.000-ից ավելի տեղահան եղած անզեն ժողովուրդը։ Թուրքական ուժերի մարտական գործողություններն անձամբ ղեկավարում էր Բիթլիսի կուսակալը։ Ապրիլի 19-ին անհավասար մարտը տևեց մինչև ուշ երեկո. թուրքական ուժերին չհաջողվեց կոտրել հայերի դիմադրությունը։ Դիմադրության ղեկավարների համար պարզ էր, որ Բշնամու գերակշիռ ուժերի հարձակման կասեցումը տևական չի կարող լինել, քանի որ ինքնապաշտպանության ուժերը բավարար չափով զենք ու զինամթերք չունեն։ Պետք էր մտածել անզեն ժողովուրդը կոտորածից փրկելու, Բշնամու վրեժխնդրությունից զերծ պահելու մասին։

Անդրանիկն այս մարտերի ընթացքում համարձակ շրջանց կատարելով, կասեցնում էր թուրքերի առաջխաղացումը, հնարավորություն տալով ժողովրդին հեռանալ Գելիեզուզանից։ Ինքնապաշտպանության մարտական ուժերը երեք խմբի բաժանելով, շրջանցելով Բշնամու դիրքերը, լեռնածերպերով ժողովրդին իջեցնում են Մուշի դաշտի գյուղերը, շարունակելով պայքարը մինչև վերջին հնարավորությունը։

Հետապնդող Բշնամին կրակի մատնելով դատարկված Գելիեզուզանը և հայկական մյուս գյուղերը, գաժան դատաստան տեսավ տեղերում մնացած խաղաղ բնակչության բնակորների հետ։ Անտոր և Քեփի բարձունքներում սասունցիները 8—10 օր տևող անհավասար կատաղի մարտերում հերոսաբար պաշտպանվում էին թուրքական ղորքերի հարձակումներից։ Ինքնապաշտպանական կռիվները Սասունի լեռներում շարունակվեցին մինչև մայիսի 14-ը։ Սասունի գոյամարտի ժամանակ սուլթանական հրոսակները կոտորեցին մոտ 8 հազար հայ և ավերեցին ու կողոպտեցին ավելի քան 2 հազար տուն։

Ջանգվածային այդ կոտորածներից հետո սուլթանը ցանկանում էր Սասունի բմբոստ բնակիչներին մշտապես բնակեցնել Մուշի դաշտավայրում։ Հետագայում նրանց հետ հաշվեհարդար տեսնելու համար։ Սասունցիները պահանջում էին իրենց պապենական հողերը։ Այդ համառությանը և օտարերկրյա հյուպատոսների միջամտություններին տեղի տալով, սուլթանական կառավարությունը ի վերջո առժամանակ հրաժարվեց Սասունը հայերից դատարկելու մտքից։

Սասունի պարտությունից հետո հայդուկները շարունակեցին պարտիզանական պայքարը։ 1904 թ. գարնան ու ամռան ամիսներին Անդրանիկը, Գևորգ Չավուշը, Սեբաստացի Մուրադը, Սպաղանցի Մակարը, Շենիկցի Մանուկը, Մշեցի Սմբատը, կայծակ Վաղարշակը (Բաղդասարյան) և նրանց մարտական զինակիցները Սեմալում, Իշխանձորում, Գելիեզուզանում և այլուր մի շարք հերոսական կռիվներ մղեցին թուրքերի դեմ։

Այդ ժամանակ Սասունի և Տարոնի տեղացի հայդուկների մեծ մասը պահանջում էր կրկին բարձրանալ Սասունի լեռները և շարունակել պայքարը։ Անդրանիկը պաշտպանում էր այդ տեսակետը։ Իսկ հայդուկների մի մասն էլ պահանջում էր առժամանակ հեռանալ երկրից, մտածելով, որ գուցե իշխանություններն դադարեցնեն համիդիեական ու ոստիկանական զինված ավազակախմբերի ապստամբությունները Տարոնի և Սասունի շրջաններում։ Որոշվում է նահանջել Վան և այնտեղ դիմադրական շարժման դեկավարության հետ վերջնական եզրակացության հանգել։ Շուրջ 130 հոգուց բաղկացած հայդուկային ջոկատն Անդրանիկի դեկավարությամբ բռնում են Վանի ճանապարհը, իսկ մյուսները՝ Սպաղանցի Մակարի, Շենիկցի Մանուկի գլխավորությամբ վերադառնում են լեռները։

Թուրք-քրդական զինված կանոնավոր և անկանոն զորամասերը հետապնդում են դեպի Վան գնացող հայդուկներին, որոնք հարկադրված ինքնապաշտպանական մարտեր էին մղում։ Այդ կռիվները բշնամու գերազանց ուժերի դեմ ժողովրդական ազատագրական պայքարի հերոսամարտերի դրվագներ են։ Առանձնապես հիշարժան են Անդրանիկի ջոկատների մղած կռիվները 1904 թ. մայիս-հուլիս ամիսների ընթացքում Փեթարի, ս. Հովհաննես և ս. Կարապետ վանքերի, Գոմերի, Տերգևանքի, Կուրավուի մոտերքում։ Հուլիսի 16-ին Կուրավու գյուղում էին Անդրանիկը, Գևորգ Չավուշը, Մուրադը, Կորյունը և ուրիշ 40 հայդուկներ։ Կարճինց ժամանել էր 200 զինվորից բաղկացած Բուրքական սուորաբաժանումը։ Հայդուկներն արդեն դիրքերում էին, երբ սկսվում է ընդհարումը։ Ընդամենը կես ժամվա ընթացքում բշնամին կորցրեց ուժերի կեսը, մյուսները լքեցին մարտադաշտը և փախան։ Գյուղը ցնծության մեջ էր։ Սակայն շուտով Սուլուխից դեպի Կուրավու է շարժվում Բուրքական նոր զորաբաժին։ Հայդուկները գյուղացիների օգնությամբ կատեցնում են նրա առաջխաղացումը։ Բշնամուց խլում են 40 հրացան։ Մութն ընկնելուն պես, գյուղի բնակչությունը հայդուկների հետ բաշվում է մոտակա լեռները։ Այս կռիվներում հայդուկները տալիս են 14 զոհ, մի քանի անգամ ավելի զոհեր պատճառելով բշնամուն։

Ընդհարումները տևում են մինչև հուլիսի երկրորդ կեսը։ Երբ Բերդակի ժողովից հետո Անդրանիկը 80 հայդուկներով անցնում է Վան, հաղթական մի նոր կռիվ է տալիս Բուրքական բազմաքանակ զինված ուժերի դեմ Շամիրամում, ապա անցնում Աղթամար, որտեղ Վանի ինքնապաշտպանության դեկավարների հետ խորհրդակցելուց հետո որոշվում է, որ ցանկացողները կարող են վերադառնալ Տարոն և Սասուն, իսկ Անդրանիկը և մյուսները կանցնեն Կովկաս։ Գևորգ Չավուշը և Կորյունը 23 հայդուկների հետ բաժանվելով ընկերներից, վերադառնում են Սասուն։ Անդրանիկի ջոկատն անցնում է Պարսկաստան, իսկ ինքը՝ Կովկաս, որտեղից մեկնում է արտասահման՝ Ժնև, ապա հաստատվում Բուլղարիայում։

1905—1907 ԹԹ. Գևորգ Չավուշի հեծյալ հայդուկային խումբը անսպասելի հայտնվում էր տարբեր վայրերում և կանխում Բուրք ու քուրդ հարստահարիչների թալանն ու կողոպուտը։ Իշխանությունները ձգտում են ինչ գնով էլ լինի գտնել ու ոչնչացնել Գևորգ Չավուշի ջոկատը։ Սակայն Գևորգը շարունակում էր մնալ Տարոնում և Սասունում, չղադարեցնելով պայքարը կեղեքիչների դեմ։ 1907 թ. մայիսի 26-ին Սուլուխի կռվում Գևորգ Չավուշը վիրավորվում է և մահանում։ Նրան թաղում են Մուշի հայոց գերեզմանատանը։

Այդ շրջանում հայ ազատագրական շարժմանն զգալի հարված հասցրեց Դավոյի (Դհերցի Դավիթ) մատնությունը, որը անձնական նկատառումներով զժտվելով դաշնակցության Վանի տեղական կոմիտեի հետ, թուրքական ոստիկանությանը հայտնեց ինքնապաշտպանության զինապահեստներից 10-ի տեղը, 1908 թ. փետրվարին զինապահեստները բռնագրավվեցին և սկսվեցին խուզարկություններն ու հաշվեհարդարը։ Ինքնապաշտպանության մարմինները ժողովրդի օժանդակությամբ կարողացան մյուս զինապահեստների զինամթերքը տեղափոխել այլ թաքստոցներ։ Մատնիչը ստացավ իր արժանի պատիժը։ Նա սպանվեց վանեցի երիտասարդ հյուսն Տաճատ Թերլեմեզյանի ձեռքով։

Հայ ազատագրական շարժումների պատմության մեջ սուլթանական բռնատիրության հոռի կարգերի դեմ հայդուկային կռիվները և ապստամբական բռնկումները, ինքնապաշտպանական մարտերը թեև չհանգեցրին ժողովրդի ազատագրությանը օսմանյան լծից, բայց և այնպես այդ այն պայքարն էր, առանց որի որևէ ժողովուրդ չի հասել իր ազատագրությանն օտար լծից։ Այդ շարժումների պատմական նշանակությունը նախ և առաջ այն է, որ դրանք թույլ չտվեցին, որ հայերի իրավազուրկ վիճակը հանգեցնի ստրկամիտ հնազանդության և ժողովրդի մեջ միշտ վառ պահեցին ազատասրաձգ ոգին։

«Մարքսիստը չի կարող առհասարակ անհորմալ և բարոյալքող համարել քաղաքացիական պատերազմը կամ պարտիզանական պատերազմը՝ որպես նրա ձևերից մեկը»[23]։

Անդրադառնալով 1906 թ. Լեհաստանում տեղի ունեցող պարտիզանական կռիվներին ու ընդհարումներին, Ստեփան Շահումյանը գրում էր. «Ժողովրդի համբերության բաժակը լցվել է։ Դարերով կուտակված ատելությունը գուրս է ժայթքում մի սոսկալի կատաղությամբ, մի ահարկու ցասումով»[24]։ Այնուհետև. «Ամենից կարևորը և ուշագրավը, այդ բոլորի մեջ այն է, որ հեղափոխական այդ ակտերը կատարվում են ոչ թե տարերային կերպով, անմիջական զգացմունքի ազդեցության տակ, այլ մտածված, նախաչափված, պլանոմեր եղանակով։ Եվ նրանց այդ տեսակ բնավորությունն է, որ ահ ու սարսափ է ազդում բռնակալության վրա... Այդպիսի ակտերով հեղափոխական կուսակցությունները փորձեր, վարժություններ են անում...»[25]։

Հայ ազատագրական շարժման մասնակիցները հիմնականում աշխատավոր գյուղացիներ, արհեստավորներ էին, որոնք իրենց կյանքն առանց մնացորդի նվիրեցին ժողովրդի ազատագրության պայքարին։

Եվ պատահական չէ, որ ազատագրական պայքարի սրբազան գործին իրենց կյանքը նվիրաբերած մարտիկների՝ հայ ֆիդայիների մասին հորինած բազմաթիվ երգերում ժողովուրդն արտահայտել է իր ջերմ սերը, ակնածանքը, պատրաստակամությունը նրանց օգնելու և նվիրաբերելու ամենաթանկագինը՝ իր որդիներին։ Հայրենասիրական այդ վեհ զգացմունքներն արտահայտել են ոչ միայն հայ ականավոր դրողներն ու բանաստեղծները, այլև

23 Վ. Ի. Լենին, հտի, հ. 14, էջ 9։
24 Ստ. Շահումյան, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 313։
25 Նույն տեղում։

աշխատավոր դյուղացին ու արհեստավորը։ Ահա ժողովրդական երգերից մի հատված.

«Թիփի-բորան մուք գիշերին,
Կը պըտրտեր ֆիդային.
Պատրոնատաշը խաչկապ թալուկ
Վիդն ի հրացան Մոսինի։

Հայ ֆիդային, ջան ֆիդային,
Ձեզ խետ տարեք զ'իմ բալին,
Ձեզ խետ կուվի, ձեզ խետ մեռնի
Աղգին զուրպան զ'իմ բալենն»... և այլն։

Սասունի հայերի ինքնապաշտպանական կռիվներին անդրադառնալով, ֆրանսիական պառլամենտի 1904 թ. հունիսի 9-ի նիստում դեպուտատ Ֆր. Պրեսանսեն իրավացիորեն նշում էր, որ հայերը զրեթե անզեն էին։ «Բայց դրանք այն կռիվներն են, առանց որոնց ոչ մի ժողովուրդ չի կարող նվաճել իր գոյության իրավունքը։ Նրանք կռվեցին մի ամբողջ ամիս, առանց տանելու հաղթանակը, որն անհնարին էր»[26]։ Նրանք զգում էին իրենց և կառավարության ուժերի ահռելի տարբերությունը, բայց հարազատ ժողովրդի հանդեպ ունեցած սերը, որ «բնական աղբյուրի մը նման վճիտ ու անխարդախ կժայթքեր իրենց պարզ մարդու սրտեն», մղում էր նրանց՝ մեկով դուրս գալու քըշնամու հարյուրի դեմ[27]։

Զարիքի դեմ ըմբոստանալու պատմական անխուսափելիության մասին Ստ. Շահումյանը գրում էր. «Ոչ չասեն... որ լինում են պայմաններ, երբ կռիվը անհնարին է, կամ անմիտ բան է։ Չկա այն զորեղ քշնամին, որի դեմ կռիվը անհնարին լինի, չկա այն բռնությունը, անարդարությունը, որի դեմ բողոքը անմիտ բան լինի։ Կռվողն այն դեպքում չի կռվում միայն, երբ նա համոզված է, որ ինքը կհաղթի, նա չի կռվում միայն հաղթելու համար։ Նա կռվում է, որովհետև չի կարող չկռվել։ Նա կռվում է երբեմն մեռնելու համար»[28]։

4. ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Միջազգային հասարակական կարծիքը համակրանքով էր վերաբերվում հայկական ազատագրական շարժմանը։

Խազազության միջազգային բյուրոն Բեռնում (Շվեյցարիա) դեռևս 1901 թ. սկզբին հասարակայնության և քաղաքական շրջանների ուշադրությունը հրավիրեց Հայկական հարցի վրա։ Դիմելով Բեռլինի պայմանագիրն ստորագրած վեց պետությունների կառավարիչներին, Բյուրոն հիշեցնում էր 61-րդ հոդվածով նախատեսված բարենորոգումները Հայաստանում կենսագործելու անհրաժեշտության մասին։ Սոցիալիստական կուսակցությունների կենտրոնական օրգաններն իրենց հերթին կոչ էին անում բոլոր երկրների բանվորնե-

26 «Դրոշակ», № 6, 1904։
27 «Զորավար Սմբատի հուշերը», հ. Ա, Փարիզ, 1936, էջ 223։
28 Ստ. Շահումյան, երկ., հ. 1, էջ 37—38։

րին և աշխատավորության՝ «հարց բարձրացնել իրենց երկրների պառլամենտների առջև ի նպաստ բազմաչարչար հայ ժողովրդի»[29]։

Որոշակի դեր խաղացին սոցիալիստական ինտերնացիոնալի միջազգային Բյուրոյի հրատարակած շրջաբերականները, որոնց մեջ մերկացվում էր սուլթանական կառավարության ջարդարարական քաղաքականությունը։

Փարիզում, Լոնդոնում, Բրյուսելում, Հռոմում և այլ կենտրոններում, մամուլի էջերում և պառլամենտական ամբիոններից կրկին լսվում էին ճառեր, ելույթներ, հարցապնդումներ կառավարություններին՝ սուլթանական Թուրքիայի լծի տակ տառապող և իր մարդկային իրավունքների համար պայքարող հայ ժողովրդի պաշտպանության օգտին։ Իրենց բողոքի ձայնն էին բարձրացնում ֆրանսիական ականավոր սոցիալիստներ Ժան Ժորեսը, Ֆրենսիս դը Պրեսանսեն, Անատոլ Ֆրանսը, Պիեռ Քիյարը, Վիկտոր Բերարը և մի շարք պետական գործիչներ։

Հայանպաստ միտինգներ կազմակերպվեցին Լոնդոնում, ինչպես և Փարիզում, Բրյուսելում, Վիեննայում, Բեռլինում, Բեռնում, Հռոմում։

1902 թ. հուլիսի 4—7-ը Բրյուսելում կայացավ միջազգային կոնֆերանս, որը հրավիրվել էր հայկական և մակեդոնական հարցերի պաշտպանությամբ Եվրոպայում հանդես եկող առաջադեմ հասարակական, քաղաքական ու գիտական գործիչների նախաձեռնությամբ։ Առաջին անգամ տարբեր ազգերի 150 ներկայացուցիչներ ընդհանուր ջանքերով փորձում էին միջազգային հասարակական կարծիքը կազմակերպված շարժման վերածել՝ ի պաշտպանություն Հայկական հարցի արդարացի լուծման, պահանջելով սեփական կառավարություններից՝ հարգել միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունները, ստիպել սուլթանին՝ կատարելու բարենորոգումները կենսագործելու մասին տված խոստումները։ Կոնֆերանսին մասնակցում էին՝ Ժան Ժորեսը, Ֆրենսիս դը Պրեսանսեն, Պիեռ Քիյարը և ուրիշներ։

«Մենք բոլորս հանցապարտ ենք հայերի առաջ,— ասել է Ժորեսը իր ելույթում։— Ամոթ է կառավարությունների անգործությունը պատրվակ բերել... Եթե եվրոպական ազգերն անկեղծ ոգևորվեին հայերին օգնելու գաղափարով, կառավարությունները չէին համարձակվի նրանց հետևելու»[30]։ Կոնֆերանսն ընդունեց Ժորեսի առաջարկած բանաձևը։ Կազմվեց միջազգային մի հանձնաժողով՝ Հայկական հարցը պաշտպանելու համար, որի մեջ մտան՝ Ֆր. Պրեսանսեն, Սամբան, Բերնլը, Ջ. Բրայսը, Էնրիկո Ֆերրին և ուրիշներ։

Սասունի իրադարձությունների նախօրյակին Ժնևում «Վիկտորիա հոլ» խոշոր հանդիսասրահում մեծ բազմության առաջ հրապարակային դասախոսությամբ հանդես եկավ Պրեսանսեն, դրվատելով հայ ազգային-ազատագրական շարժման ազնիվ նպատակները և հերոսական էջերը, ընդգծելով նրա ինտերնացիոնալ բնույթն ու նշանակությունը, վկայակոչելով Ադրիանապոլսի մահապարտների օրինակը[31]։

---

[29] «Геноцид...», стр. 146; *Տես նաև* Մ. Ներսիսյան, *Մեր պայքարը...*, էջ 194։

[30] «Մուրճ», № 7, 1902, էջ 238։

[31] *1901 թ. ամռանը, Ադրիանապոլսից ոչ հեռու, մակեդոնական և հայ հայդուկների փոքրաթիվ մի ջոկատ Բուլղարիայի տերիտորիայից անցնելով Մակեդոնիա, հերոսաբար մարտնչել էր թուրքական մի զունդ հեծելազորի և երկու վաշտ հետևակային զորամասերի դեմ։ Կռվում քաջի մահով ընկել էին հայդուկներից վեց հոգի։ Սադրազամ Քյուչուկ Սայիդ փաշան գազանաբար դատաստան էր տեսել գերի ընկած չորս հայրենասերների հետ, ձգտելով սաղմի մեջ խեղ-*

Հայ ազատագրական շարժման հերոսական դրվագները նկատի ունենալով, Հայկական հարցի պաշտպանությանը նվիրված Բրյուսելի համերաշխության միտինգում արտասանած իր ճառում Ժան Ժորեսը հույս էր հայտնում, որ Ֆրանսիան գործնական քայլեր կանի «Եվրոպայի հանրային կարծիքը հավաքական գործունեության հրավիրելու» ուղղությամբ, որ տվյալ պահին «Ֆրանսիայի դիրքից է կախված նաև Ռուսաստանի դիրքը»։ Ֆրանսիական կառավարության գործելակերպում նկատելի էր հակատուրքանական որոշակի շեշտ այն օրերից ի վեր, երբ ֆրանսիական բանկիրների շահերի թելադրանքով 1901 թ. իբրև հակաթուրքական ցույց ռազմանավեր ուղարկվեցին Էգեյան ծովի Լեսբոս և Մելիտինե կղզիները։

Սասունի իրադարձությունների օրերին ֆրանսիական պառլամենտի ամբիոնից Պրեսանսեն պահանջում էր կառավարությունից վճռական քայլեր անել ստիպելու սուլթանին՝ հարգել միջազգային պարտավորությունները։ «Ֆրանսիական ռազմական նավատորմը,— ասում էր նա,— միայն բանկիրների շահերի պաշտպանության համար չէ, այլ ավելի լուրջ գործերի համար»։ Հայերին պաշտպանելու անհրաժեշտության մասին իր ճառում նշեց նաև Ֆրանսիայի նախկին արտաքին գործերի մինիստր, նշանավոր բիմիկոս Բերտոլեն։

Հայկական հարցի համաեվրոպական պրոպագանդան գալի չափով ցրեց մինչ այդ Եվրոպայում հայ ժողովրդի մասին տարածված թյուր պատկերացումները։ Այդ պրոպագանդան դեր խաղաց նաև հայ-մակեդոնական համերաշխությունը ամրապնդելու գործում։ Ժնևում, Փարիզում, Լոնդոնում, Միլանում, Բեռլինում և այլ կենտրոններում հայ, բուլղար և մակեդոնացի ուսանողները միացյալ ուժերով կազմակերպում էին երեկոներ, դասախոսություններ, ժողովներ՝ նվիրված հայ-մակեդոնական պայքարի պաշտպանությանը։ Համերաշխությանը և ինտերնացիոնալ համագործակցությանը նպաստում էր Պիյեռ Քիյարի հրատարակած «Pro Armenia» լրագիրը։ 1901—1903 թթ. մակեդոնական շարժման բուռն վերելքի տարիներին նրա ղեկավարներ Սարաֆովը, Լիապովը, Դարվանովը, Քյուֆիկչիևը, Չակալարովը և ուրիշներ սերտ համագործակցության մեջ էին հայ ազատագրական շարժման ղեկավար գործիչների հետ, ձեռնարկում էին համատեղ գործողություններ։

1904 թ. ամռանը Ամենայն Հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի հանձնարարությամբ արքեպիսկոպոս Հովսեփ Սարաճյանը (Ամերիկայի թեմական առաջնորդ) և Սահակ արքեպ. Այվազյանը (Պարսկաստանի և Հնդկաստանի թեմական առաջնորդ) դիմումներ են ներկայացնում մեծ տերությունների կառավարություններին՝ հիշեցնելով հայկական բարենորոգումների խոստում-

---

դել հայ-մակեդոնական համերաշխ պայքարը թուրքական բռնակալության դեմ։ Ազրիանապոլսի շուրջ հրապարակներում Սայիդ փաշան կանգնեցրել էր մահվան «անարգանքի սյուներ»։ Մահապարտներն էին Պետրոս Սերեձյանը (Ֆիլիպպե քաղաքից), Օնիկ Թորոսյանը (Ռոդոստո քաղաքից), մակեդոնացի Սվետոսյավ Միրիջանովը (ժնևի համալսարանական) և Քրիստո Հաջի Իլիև։ Մահապատժից առաջ Պետրոսը դիմելով թուրք դահիճներին, ասել էր. «Այո, ես հեղափոխական եմ, մի մոռանաք, որ ես այստեղ ներկայանում եմ իբրև գաղափարի ներկայացուցիչ, ինձ կկախեք, բայց գաղափարը կախել չեք կարող»։ Ապա՝ ինքն իր պարանոցն էր հագցրել մահվան օղակը և հրել աթոռը («Մուրճ» № 9, 1903, էջ 243)։

ված ծրագրի իրագործման անհրաժեշտության մասին[32]։ Հուլիսի 16-ին կաթողիկոսի այդ պատվիրակներին ընդունում է Ֆրանսիայի պրեզիդենտ Լուբեն և նշում, թե Ֆրանսիան համակրանքով է վերաբերվում հայերի պահանջին, միաժամանակ հայտնում, որ իր երկիրը մենակ չի ստորագրել Բեռլինի պայմանագիրը։ Անտարբերություն են դրսևորում հայկական պատվիրակության դիմումների նկատմամբ նաև Անգլիայի և մյուս երկրների կառավարությունները։

1906 թ. հուլիսի 25-ին Բելգիայի պառլամենտի անդամ Ժորժ Լորանը, պետություններին զբաղեցնող խնդիրները քննարկելու նպատակով, Լոնդոնում գումարված միջպառլամենտական միջազգային կոնֆերանսում բարձրացրեց հայկական խնդիրը, առաջարկելով հարց հարուցել, որպեսզի Բեռլինի պայմանագիրն ստորագրած պետությունների Դեսպանական մշտական խորհուրդը միջոցներ ձեռք առնի 61-րդ հոդվածը կենսագործելու համար[33]։ Լորանը հիշեցնում էր, որ մի շարք միջազգային պայմանագրեր, որոնց տակ դրված են մեծ տերությունների և Թուրքիայի ստորագրությունները, տակավին մնում են «անգործության մատնված», մինչդեռ Թուրքիայի քրիստոնյա հպատակ ժողովուրդները, որոնց մասին խոսում են այդ պայմանագրերը, չեն վայելում «քաղաքակիրթ կյանքի տարրական պայմանները» և մատնված են ամեն տեսակի զազրելի կամայականությունների ու սարսափների։ Լորանի առաջարկությունը կոնֆերանսի կողմից ընդունվեց միաձայն, բայց որոշումը գործնական նշանակություն չունեցավ, քանի որ մեծ պետությունների շահերի միասնություն չկար 61-րդ հոդվածն իրականացնելու խնդրում։

Պիեռ Քիյարի և Վիկտոր Բերարի դիմումները նույնպես ուշադրության չարժանացան դեսպանաժողովի կողմից։ Մեծ պետությունների ներկայացուցիչները բավարարվեցին միայն ոչ պաշտոնական հանդիպումներ ունենալով հայ պատվիրակների հետ։

Հայ պատվիրակները Լոնդոնից վերադարձան ձեռնունայն։ Մ. Խրիմյանը, սակայն, հույսը չէր կտրում «քաղաքակիրթ Եվրոպայից», մանավանդ Անգլիայից։ Նա հատուկ դիմում է հասցեագրում Անգլիայի թագավորին, վարչապետին և արտաքին գործերի մինիստրին, խնդրելով իրենց ձեռքը վերցնել հայկական բարենորոգումների իրագործման նախաձեռնությունը։ 1907 թ. նոյեմբերի 11-ին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Գրեյը բացասական պատասխան է տալիս։

Հայկական հարցը մեծ տերությունների համար սոսկ մի միջոց էր՝ սուլթանից արտոնություններ կորզելու համար։ Այս ճշմարտությունը քաջ հայտնի էր ոչ միայն «երկաթե շերեփի» քաղաքականության բանաձևողին՝ Խրիմյանին, այլև հայ ազգային-ազատագրական շարժման մյուս ղեկավար գործիչներից շատերին։ Եվ, այնուամենայնիվ, նրանք առիթը բաց չէին թողնում նորանոր դիմումներ հղելու իմպերիալիստական մեծ պետությունների կառավարություններին։ Նման իրադրության պայմաններում հազիվ թե հնարավոր էր արհամարհել մեծ տերությունների ազդեցության նշանակությունը

[32] Տե՛ս, ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 1, գ. 387, թթ. 23—26, 27—28, 32—33, գ. 338, թթ. 2—3, թ. 15, 37։

[33] Տե՛ս «Երկրի ձայն», № 2, 1906, էջ 2։

Թուրքիայի վրա, ճիշտ այնպես, ինչպես որ չէր կարելի չպայքարել սուլթանական բռնատիրության դեմ, որքան էլ անհավասար լիներն ուժերը։ Դա պայքար էր հայ ժողովրդի ազատագրության համար, մի անհավասար պայքար, որ հայերին պարտադրել էր թուրքական արյունռտ տիրապետությունը։

* * *

Դաշնակցության ղեկավարությունը, կառչած մնալով ազատագրական շարժման գործում եվրոպական պետությունների օժանդակությունը հայցելու և այդ նպատակով ցուցաբարական գործողություններ կատարելու իր տակտիկային, ձեռնարկում է նաև սուլթան Աբդուլ Համիդ II-ի դեմ մահափորձի գործը։ Ահաբեկչական գործելակերպը նորություն չէր այդ կուսակցության գործունեության զինանոցում։ Քրիստափոր Միքայելյանի կարծիքով նախատեսված ակտն էական դեր էր խաղալու, և նա անձամբ ստանձնեց ահաբեկչական այդ գործողության կազմակերպման պատասխանատվությունն ու ղեկավարությունը։ Այդ մասին հատուկ որոշում էր ընդունել դաշնակցության Սոֆիայի (երրորդ) համագումարը 1904 թ.։

Ձեռնարկվում էր մի գործ, որին մասնակցում էին ոչ միայն հայերը, այլև հայկական գաղթի համակրությամբ վերաբերվող տարբեր ազգությունների ներկայացուցիչներ՝ բելգիացի Ժոռիսը, Միլվիո-Ռիշչին, գերմանացի Սոֆի Ռիպսը և ուրիշներ։ Հատկապես տոնական օրերի համար ուսումնասիրվել էին սուլթանի պալատական շքախմբի երթուղին, կրոնական արարողությունների տևողությունը և այլն։ Միքայելյանը Սամուել Ֆայն անվան տակ ծպտված ղեկավարում էր այդ ահաբեկման նախապատրաստումը, ազատ մուտք գործելով պալատի պարիսպներից ներս և դիտելով տոնական արարողությունները։ Սակայն նա ստանվեց 1905 թ. մարտի 17-ին, Սոֆիայից ոչ հեռու, Վիտոշ լեռան լանջին ռումբի փորձարկման ժամանակ։

Այնուամենայնիվ Աբդուլ Համիդի կյանքի դեմ նախապատրաստված այդ մահափորձը կատարվեց 1905 թ. հուլիսի 21-ին, սուլթանական պալատի պարիսպների ներսում։ Դժոխային մեքենայի պայթյունը հարմարեցված էր մզկիթից սուլթանի դուրս գալու և կառք նստելու պահի հետ։ Պայթյունից սպանվեց և վիրավորվեց շուրջ 100 մարդ։ Բայց կույր պատահականությունը փրկել էր սուլթանի կյանքը. մզկիթից դուրս գալու պահին նա հապաղել էր՝ զրույցի բռնվելով շեյխ-ուլ իսլամի հետ։

Մահափորձը լայն արձագանք գտավ եվրոպական հասարակայնության շրջաններում և մամուլի էջերում։ Համենայն դեպս սուլթանի փրկվելը միայն ափսոսանք հարուցեց։ Եվ երբ Բելգիայի պառլամենտում արտաքին գործերի մինիստրը փորձեց դատապարտել դավադիրներին, հիշելով ասացվածքը, թե «մարդկային անձը սուրբ է, անբռնաբարելի...», պատասխան ճառով հանդես եկավ սոցիալիստ Վանդերվելդեն, հայտարարելով, թե մարդկային անձի սրբության հավատամքը կապ չունի Աբդուլ Համիդի անձի հետ, քանի որ նա «բռնակալ է և իրեն դուրս է գրել մարդկության շրջանակներից»։

Մահափորձից հետո Աբդուլ Համիդն ավելի սաստկացրեց բռնություններ, հրամայեց բանտարկել նույնիսկ գահաժառանգ Ռեշադին։ Ձերբակալվե-

ցին պալատականներ, ոստիկաններ։ Մասսայական հետապնդման ենթարկվեցին հայերը, բուլղարները, մակեդոնացիները, արաբները, եվրոպացի անարխիստները, անգամ երիտթուրքերը։ Համիդյան ոստիկանության ձեռքն ընկած «Զինդեր» ընկերության ծառայող Ժոռիսը հրաժարվեց տալ իր հայ գործակիցների անունները և հայտնեց միայն գոհվածների անունները։ Նա դատապարտվեց մահվան, բայց բելգիական կառավարության միջամտությամբ ազատվեց և վերադարձավ հայրենիքը։

1905 թ. բուրժուադեմոկրատական առաջին հեղափոխությունը Ռուսաստանում խորապես ազդեց միջազգային հասարակական ու քաղաքական մտքի վրա, խթանելով ազատագրական-հեղափոխական շարժումները մասնավորապես Արևելքի գաղութային և կախյալ երկրներում, հեղաբեկում առաջացրեց նաև հայ հասարակական-քաղաքական կյանքում։ Դա փոթորկալից մի շրջան էր, մտքերի ու հայացքների բախման, բյուրեղացման ժամանակաշրջան։

Դաշնակցությունն և հնչակյան կուսակցություններն ապրեցին ներքին խոր ճգնաժամ։ Դաշնակցության առանձին անդամներ և խմբեր հրապարակորեն հայտարարում էին կուսակցությունից հեռանալու մասին, հարելով ռուսական սոցիալ-դեմոկրատիայի երկու թևերին կամ համալրելով էսեռական կուսակցության շարքերը, շարժման ներսում հանդես եկան «զուտ սոցիալական» պլատֆորմի կողմնակիցներ՝ գտնելով, որ կուսակցությունը մի դեկավար կենտրոն չպիտի ունենա, այլ միմյանցից անկախ և ինքնուրույն գործող կենտրոններ՝ Թուրքիայում և Ռուսաստանում, աշխատելով համաթուրքական և համառուսական սոցիալական հեղափոխությունների հաղթանակի համար։ Կուսակցության ներսում հանդես եկան նաև «զուտ ազգային» հողի վրա պայքար մղելու ջատագովներ՝ միհրանականներ։

Պառակտման խորացման փաստի առջև էր կանգնած նաև հնչակյան կուսակցությունը։ 1905 թ. սեպտեմբերին Փարիզում կայացած 5-րդ համագումարը անվավեր հայտարարեց դեկավարության՝ նազարբեկի, Խանազատի, Աչըպաշյանի, Տաշիրի (Ս. Հովյանի), Եփրեմ Կաճարյանի կողմից ուղարկված շրջաբերականը, որով տարբեր երկրներում կուսակցության գործունեության համար նախատեսվում էր տարբեր տակտիկա։ Շրջաբերականում առաջարկվում էր կուսակցությունը բաժանել երկու հատվածի՝ զուտ սոցիալ-դեմոկրատական՝ Ռուսաստանում գործելու համար և ազգային՝ Թուրքիայում գործելու համար։ Սրանք իրենց անկախ դեկավար կենտրոններում պետք է միմյանց հետ կապված լինեին միայն նյութական փոխադարձ օգնությամբ։ Հնչակյան կուսակցությունն ամբողջովին նվիրված պետք է լիներ արևմտահայության դատին, գործունեության միակ ասպարեզ ունենալով Արևմտյան Հայաստանը, չմասնակցելով Ռուսաստանի շարժումներին, իսկ Ռուսաստանում և Կովկասում հնչակյան կազմակերպությունները պետք է դադարեին «հնչակյան» կոչվելուց, ձուլվելով տեղական սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների հետ[34]։

Համագումարը հիշյալ շրջաբերականի մեջ նշմարեց կուսակցությունը կազմալուծելու վտանգ և որոշեց մերժել այդ ուղեգիծը, հավատարիմ մնալով նախկին ծրագրին՝ այսինքն Կովկասում վարել «միջազգային հեղափոխական»

---

34 Տե՛ս «Հինամյակ...», էջ 203 (Փարիզ, 1928)։

գործունեություն, իսկ Թուրքիայում՝ պայքարել քաղաքական ազատագրման համար, հիմնավորված «մարքսիստական սկզբունքներով»[35]։ Թե ինչ էր հասկացվում «մարքսիստական սկզբունքներ» ասելով, երևում է 1910 թ. Կ. Պոլսում կայացած կուսակցության 6-րդ համագումարի հաստատած «վերանորոգված ծրագրից»։ Կուսակցության նպատակը համարվում էր սոցիալիզմը։ Քաղաքական այլ ուժերի հետ միությունը հնարավոր էր համարվում, եթե հնչակյան կուսակցության հետ միանալ ցանկացող կազմակերպությունն ընդուներ «նաև ազգերի պատմա-անհատական գոյության իրավունքը, հնչակյան կուսակցության ամբողջությունն ու անունը»։ Անհրաժեշտ էր համարվում մասնակցել Կոպենհագենում հրավիրվելիք միջազգային սոցիալիստական կոնգրեսին։ Համագումարը մերժեց անհատական ահաբեկումը և էքսպրոպրիացիաները, որպես պայքարի միջոց։ Հողային հարցում պաշտպանում էր հողի մունիցիպալիզացիայի սկզբունքը։ Թուրքիայի սահմանադրական պետության նկատմամբ մերժվում էր նախկին անջատողական ծրագիրը։ Մերժվում էր նաև օսմանացման քաղաքականությունը և պաշտպանվում էր ազգերի ինքնավարության իրավունքը[36]։

Հինգերորդ համագումարից հետո Նազարբեկը, Խանազատը և ուրիշ ղեկավար գործիչներ հեռացան կուսակցությունից։ Կովկասում նրանք իրենց կողմնակիցներով ի վերջո որոշեցին առայժմ չմիանալ ոչ մի կուսակցության, ընդունել ՌՍԴԲԿ-ի ծրագիրն ամբողջությամբ և մնալ «ինքնուրույն», մինչև որ կհարթվեին բոլշևիկների և մենշևիկների տարաձայնությունները[37]։

Իսկ ի՞նչ ուղղությամբ էին գործում սուլթանական միահեծանության դեմ պայքարող թուրքական ընդդիմադիր ուժերը։ Այդ երևում է երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» կազմակերպության օրգան «Մեշվերեթի» խմբագիր Ահմեդ Ռիզա բեյի «Հայկական կոչը» վերնագրով հոդվածից, որը հրապարակվել էր թերթի 1906 թ. հոկտեմբերի 1-ի համարում։ Ըստ էության, տարակարծիք չլինելով սուլթանի հետ, «հեղափոխական» թուրք մտավորականը նույնպես հայկական ամեն մի ընդվզում, հայ կոմիտեների յուրաքանչյուր քայլ որակում էր որպես «հարված երկրին», ամեն մի քննադատական խոսք տիրող բարբարոսական կարգերի հասցեին՝ որպես «անարդար ատելություն դեպի թուրքերը»[38]։ Ահմեդ Ռիզան փաստորեն դատապարտում էր հայերի ազատագրական ձգտումները։ Եվ երբ մեկ տարի անց՝ 1907 թ. դեկտեմբերին դաշնակցությունը երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» կուսակցության հետ գնաց Թուրքիայի ընդդիմադիր կուսակցությունների Փարիզի համագումար[39], մասնակցեց 1908 թ. հեղաշրջմանը, այնուամենայնիվ, «համաթուրքական ընդհանուր հեղափոխությունը» չարդարացրեց նրանից մեծ ակնկալություններ սպասող գործիչների հույսերը։

35 Նույն տեղում։

36 Տե՛ս նույն տեղում, էջ 247։

37 Տե՛ս նույն տեղում։

38 «Երկրի ձայն», № 2, 1906, էջ 13։

39 Համագումարին, բացի երիտթուրքերից ու դաշնակցությունից, մասնակցում էին նաև «Ապակենտրոնացման և նախաձեռնության օսմանյան լիգա» կազմակերպությունը՝ իշխան Սաբահեդդինի գլխավորությամբ, Եգիպտոսից՝ հրեական «Լավերա» և արաբական «Հայֆեթ» կազմակերպությունները, հայկական «Արմենիա», «Հայրենիք» և «Ռազմիկ» թերթերի խմբագրությունները և այլ կուսակցություններ (շուրջ 10 կազմակերպություն)։

Եվրոպական և ռուսական համալսարաններում սովորող հայ երիտասարդության միջավայրից ասպարեզ իջան նաև այնպիսիները, որոնք ազատագրական-հեղափոխական շարժմանը հարելով, սկսեցին քարոզել խեղաթյուրված սոցիալիստական գաղափարներ։ Սրանք եղան, այսպես կոչված, «Նոր սերընդականների» շարժման սկզբնավորողները և՛ արևելահայության, և՛ արևմտահայության աշակերտական-ուսանողական միջավայրում։ Վանի երկու դպրոցների (Նաժարյան և Կենտրոնական վարժարանների) շրջանավարտներից՝ Մանվել և Բարունակ Կապուտիկյանները, Գալուստ Էյնաթյանը, Արամ Սաֆրաստյանը, Խոսրով Խանջյանը և ավելի կրտսերներից Պարգև Պանիրյանը, Մանուկ Ասլանյանը, Տիգրան Ջրբաշյանը և ուրիշներ հրապարակեցին «Երկունք» խմորատիպ ամսագիրը, բուռնիկներ ու «Տեղեկատուներ»։ 1906 թ. աշնանից սկսեցին հրատարակել «Նոր սերունդ» անունով ամսաթերթը, իսկ մոտ մեկուկես տարի անց՝ «Հայացք» թերթը։ Նրանք ներմուծում էին արդելված գրականություն, սոցիալիստական արմատական և մանրբուրժուական բովանդակությամբ։ «Նոր սերունդ» թերթը մեծ շփոթ և իրարանցում սերմանեց այսպես կոչված «ձախ» սոցիալիստական իր գաղափարաբանությամբ։ «Նոր սերնդական» ուղղության ծայրահեղությունները խիստ քննադատում և մերժում էր «Հայացքի» շափավոր ուղղությունը, որը գլխավորում էին՝ Խլաթյանը, Մկրտիչ Մենշյանը, Դավիթ Փափազյանը, Նազարեթը (Ալյուր գյուղից, գրական կեղծանունը՝ Կարեն-Սուրեն), Մաղաքյան Արմենակը, Աշշյանը, Արաեն Հացագործյանը, Օնիկ Վարդանյանը և ուրիշներ։ Մի երրորդ ուղղություն էլ՝ Մելիքսեդեկ Էյնաթյանի գլխավորությամբ փորձում էր հաշտեցնել առաջին երկու հոսանքները։

Հնչակյան երիտասարդության միջավայրում «Նոր սերնդականների» շարժման ակտիվ ներկայացուցիչներից էին Արսեն Կիտուրը, Զեյթունյանը, Գալիկյանը, Վեսպերը (Վանից), Արտաշես Տիրացյանը, Էդուարդ Զոփուրյանը, որոնք գործում էին Փոքր Հայքի կենտրոններում, Կ. Պոլսում, Պարսկաստանի հայաբնակ վայրերում։ Սրանք էլ ունեցել են իրենց տպագիր օրգանները՝ «Կայծ», «Պայքար» (Թավրիզում), «Մեղու» (Պարտիզակում) և այլն։

Գաղափարական այդ հոսվերը թափանցում էին նաև Վասպուրականի, Էրզրումի, Բիթլիսի, Կիլիկիայի հայ գավառները։ Աղթամարի աշակերտությունն էլ ունեցավ իր թերթը՝ «Կոհիվը», որն ավելի մոտ էր «Հայացքի» ուղղությանը, իսկ Շատախի «Տիգրիսը» և «Ծովակը» մասնակիորեն ընդունում էին «Նոր սերընդի» հայացքները։

Ստեղծված իրադրությունում առավել գործնական և հուսալի ուղեգիծը հայկական շարժման համար, անշուշտ, հայ ժողովրդի ինքնապաշտպանության գործի լավ կազմակերպման, ազգային երկպառակությունններին վերջ տալու, ազգային ուժերի համախմբման և համագործակցության ուղեգիծն էր։ Այդ բանը դեռ իր ժամանակին գիտակցում էին հայ ազատագրական շարժման առանձին գործիչներ։ Տրիպոլիսի արաորավայրից փախած և Փարիզ անցած Համբարձում Պոյաճյանը (Մեծն Մուրադր, ծնվ. 1860, զոհվ. 1915 թ.) 1906 թ. մայիսին հրապարակեց իր հայտնի կոչը, որով դիմում էր հնչակյան և դաշնակցական բոլոր կազմակերպություններին, առաջարկելով վերջ տալ ներկուսակցական շահերը համազգային շահերից վեր դասելու արատավոր գործելակերպին, հրավիրել միջկուսակցական համագումար, միավորել բոլոր

ուժերը՝ միասնական ճակատով պայքարելու ժողովրդի ազատության մեծ գործի համար։ Բայց գաղափարական ու քաղաքական հայացքների չփոթը, կազմակերպական տարանջատության արգելքը հաղթահարելու ուժ չունեցան հայ ազգային քաղաքական կուսակցությունները։ Ներազգային համերաշխության միասնական ճակատ ստեղծելու հարցում դրսևորվում էր այդ կուսակցությունների սահմանափակ մտայնությունը։

1908 թ. արևմտահայության միջավայրում արմենական կազմակերպության հիմքի վրա ձևավորվեց մի նոր քաղաքական կուսակցություն, որը հանդես եկավ «Հայ սահմանադրական ռամկավար կուսակցություն» անունով։ Կուսակցությունն իր ծրագրային պահանջները ձևակերպելիս ելակետ էր ընդունել արևմտաեվրոպական սահմանադրական բուրժուական պառլամենտարիզմի սկզբունքները, նպատակ ունենալով դրանք «պատշաճել Թուրքիո իրականությանը»[40]։

Կուսակցությունն իր հիմնադրման մասին պաշտոնական հայտարարության մեջ նշել էր, որ թեկուզ և զիջումների գնով, պետք է «ձգտել գլուխ բերելու անցյալ գործող քաղաքական կուսակցությունների ջանքերի միավորումը՝ Արևմտյան Հայաստանում վարչական բարենորոգումներ մտցնելու համար, հիմնված եվրոպական պետությունների կողմից ճանաչված միջազգային դաշնագրերի վրա»[41]։ Բայց շուտով փորձը ցույց տվեց, որ այդ կուսակցություններից ոչ մեկն ի վիճակի չէր հայ ժողովրդի ազատագրության գործը ղեկավարելու և արդյունավետ վախճանի հասցնելու համար։

5. ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԵԼՔՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1905—1908 ԹԹ.

1905—1907 թթ. ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխությունը խոր ազդեցություն թողեց Եվրոպայի ու Ասիայի մի շարք երկրների հեղափոխական-ազատագրական պայքարի զարգացման վրա։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ «1905 թ. ռուսական շարժումից հետո դեմոկրատական հեղափոխությունն ընդգրկել է ողջ Ասիան՝ Թուրքիան, Պարսկաստանը, Չինաստանը։ Աճում է իմպորտմն անգլիական Հնդկաստանում»[42]։

Իմանալով Պետերբուրգի իրադարձությունների մասին, Աբդուլ Համիդը ձեռնարկեց մի շարք միջոցառումներ, որպեսզի հեղափոխական տրամադրությունները Ռուսաստանից չթափանցեն Թուրքիա։ Նրա անձնական քարտուղարի վկայությամբ, սուլթանը կորցրեց քունը, երբ իմացավ, որ «Իշխան Պոտյոմկին» զրահանավը կարմիր դրոշակ պարզած, լողում է Սև ծովում։ Համիդը կարգադրեց թույլ չտալ, որ «խռովարարները» մտնեն թուրքական ափերին, մանավանդ անցնեն Բոսֆոր-Դարդանելով»[43]։ Բայց հակառակ նրա ցանկության, ռուսական հեղափոխությունը ներթափանցում էր Թուրքիա ու բռնակալության դեմ ոտքի հանում ճնշված ու կեղեքված զանգվածներին։ Այն

---

40 Արտակ Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերին, Փարիզ, 1942, էջ 192։

41 Նույն տեղում, էջ 186։

42 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 23, էջ 177։

43 Ю. А. Петросян, Младотурецкое движение, М., 1971, стр. 271.

տրագացրեց ու ակտիվացրեց ազատագրական շարժումներն ինչպես կայսրության այլ շրջաններում, այնպես էլ Արևմտյան Հայաստանում։

Դեռ 1905 թ. մարտին Բիթլիսի հայերն ըմբոստացան կառավարության հարկային քաղաքականության, իսկ մեկ ամիս անց՝ սննդամթերքների թանկության դեմ[44]։ Ամբոխը շարժվեց կառավարչություն և պահանջեց անհապաղ իջեցնել գները։ Կուսակալը դրությունից դուրս գալու համարստիպեց հայ վաճառականներից մեկին վաճառել իր ամբարած 4000 կոտ ցորենը ցածր գնով։ Բայց դա չմեղմեց վիճակը։ Քաղաքացիների դժգոհությունը գնալով աճեց։ Փողոցներում, անգամ կուսակալի գրասենյակի պատերին երևացին թռուցիկներ, որոնք բացատրում էին, որ ներկա սովը հայ գյուղացիության աննախադեպ քայքայման արդյունք է՝ առաջացած կառավարության հայահալած քաղաքականությունից։ Այնուհետև կոչ էր արվում քաղաքի բոլոր բնակիչներին միասնաբար պայքարել կառավարության դեմ։

Շուտով ոտքի կանգնեց նաև քաղաքի մահմեդական բնակչությունը։ 1905 թ. մայիսի 1-ին կանանց բազմությունը շարժվեց դեպի կառավարչատուն և պահանջեց կարգավորել պարենամթերքների գները։ Կուսակալը կամենալով շարժումը վերածել ազգամիջյան կռիվների, կարգադրեց բռնագրավել հայերի հացն ու բաժանեց մահմեդականներին[45]։ Բայց նրա փորձն ապարդյուն անցավ։

Բիթլիսցիների հաջորդ ելույթը տեղի ունեցավ 1905 թ. հուլիսի 26-ին, երբ կառավարության պահանջով կուսակալը փորձեց հավաքել նոր հարկը[46], որը պետք է գանձեր դեռ մարտին, բայց վախենալով քաղաքացիների ընդվզումներից, առժամանակ հետաձգել էր։ Բիթլիսի հայ և մահմեդական բնակիչները հրաժարվեցին նոր հարկից և բազմաթիվ բողոքի հեռագրեր ուղարկեցին մայրաքաղաք։ Սակայն կուսակալը այդ հեռագրերը կալանքի տակ դրեց[47]։

Ժողովրդական ընդվզումները Բիթլիսում ավելի մեծ չափով ծավալվեցին 1907 թ. ամռանը և կրկին ուղղված էին կառավարության հարկային քաղաքականության ու սննդամթերքների թանկացման դեմ։ Հունիսի 9-ին 500 մահմեդականներ՝ զինված փայտերով ու երկաթներով, շարժվեցին պաշտոնի չարաշահումների և կաշառակերության մեջ մեղադրվող կուսակալի բնակարանը, դուրս քաշեցին նրան փողոց և ծեծելով տարան կառավարչատուն։ Ապա հեռագրով պահանջեցին կառավարությունից հեռացնել կուսակալին իր պաշտոնից[48]։ Ապստամբները երեք օր քաղաքը պահեցին իրենց ձեռքում։ Հետադեմ տարրերն այդ ժամանակամիջոցում կրկին փորձեցին շարժումը վերածել հայկական կոտորածների, բայց նրանք վերստին անհաջողություն կրեցին։

---

44 Տե՛ս Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ, ֆ. «Քաղարխիվ», 1905, ց. 482, գ. 539, թ. 49։

45 Տե՛ս նույն տեղում։

46 1905 թ. կառավարությունը սահմանել էր, որ յուրաքանչյուր աշխատող, ներառյալ նաև պաշտոնյաններն ու զինվորականները, պարտավոր են ամեն ամիս պետությանը վճարել իրենց երեք օրվա աշխատավարձը։

47 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1905, ց. 482, գ. 539, թ. 138—140։

48 Տե՛ս նույն տեղում, գ. 541, թ. 113։

Վերջապես սուլթանը 1907 թ. հունիսի 12-ին ստիպված եղավ պաշտոնազրկել Բիթլիսի կուսակալին։

Հեղափոխական ընդվզումներ բռնկվեցին նաև Դիարբեքիրում։ Ամբոխն այստեղ սկզբում ծառացավ տիրող անապահովության դեմ, պահանջելով պատժել ոճրագործ Իբրահիմ փաշային։ 1907 թ. նոյեմբերին դիարբեքիրցիները խնդիր դրին նաև կուսակալի պաշտոնից հեռացնել Աթա բեյին։ Կառավարությունն ստիպված կատարեց այդ պահանջը։

1908 թ. սկզբներին Դիարբեքիրում ծայր առավ ժողովրդական նոր շարժում՝ ուղղված կառավարության հարկային քաղաքականության դեմ։ Շարժման մասնակիցները համարյա բացառապես մահմեդականներ էին։ Բազմությունը հեռագիր ուղարկեց մայրաքաղաք, պահանջելով՝ իջեցնել հարկերի չափը[49]։

Հեղափոխական դեպքերն ավելի ցայտուն արտահայտվեցին Էրզրումում։ Սուլթանի քաղաքականությունից դժգոհ մահմեդական վաճառականներն ու կալվածատերերը դեռևս 1906 թ. սկզբներին ստեղծեցին «Ջանվերիր» («Հոգի տվող») կազմակերպությունը և իրենց ձեռքը վերցրին քաղաքի բնակչության տարբերային հուզումների ղեկավարությունը։ Շուտով սրանց հարեցին նաև թուրքական մի շարք պաշտոնյաներ, անգամ ժանդարմներ, որոնք երկար ժամանակ աշխատավարձ չէին ստացել։ Մարտի 5-ին ջանվերիրները Էրզրումում ցույց կազմակերպեցին կուսակալ Նազիմ փաշայի տան առաջ։ Դրությունից դուրս գալու համար կուսակալը խոստացավ կատարել նրանց պահանջը[50]։ Բայց մարտի 8-ին, երբ լուր ստացվեց, որ Նազիմ փաշան խաբել է ժողովրդին, ամբոխը կրկին ոտքի կանգնեց։ Ջանվերիրներն այս անգամ պահանջեցին նաև կուսակալի վտարումը։

Բազմությունը մարտի 15-ին գրավեց հեռագրատունը, կտրեց կուսակալի կապը հեռագրատան հետ և նոր հեռագիր ուղարկեց մայրաքաղաք։ Մարտի 16-ին Նազիմ փաշան զորք հանեց ամբոխի դեմ, բայց զինվորները չկրակեցին։ Ջանվերիրները քաղաքը վերցրին իրենց ձեռքը և բնակչության պաշտպանությունն ստանալու համար կոչ արեցին չվճարել նոր հարկը[51]։ Սուլթանն ստիպված եղավ Էրզրումի կուսակալին տեղափոխել Դիարբեքիր, իսկ այնտեղի կուսակալին՝ Էրզրում։

1906 թ. ապրիլի 16-ին մայրաքաղաքից հանձնաժողով եկավ Էրզրում՝ մարտյան դեպքերը քննելու համար։ Այն քննությունն այնպես էր վարում, որ քաղաքի շարժումները կապվեին հայերի հետ ու այդ հիման վրա ստեղծվեր հայկական նոր սպանդ[52]։ Սակայն մահմեդականները հայտարարեցին, որ իրենք գործել են բոլորովին ինքնուրույն, իսկ հայերը հեռու են եղել։ Մայիսի 3-ին հանձնաժողովը չհասնելով իր նպատակին, մեկնեց Կ. Պոլիս։

Էրզրումցիների համառ ու համերաշխ պայքարը տվեց իր արդյունքը. կառավարությունը պաշտոնազրկեց կուսակալ Շևքեթ փաշային և նրա փոխարեն նշանակեց Նուրի բեյին։ Ապա վերացրեց մահմեդականների անձնական հարկը

---

49 *Տե՛ս «Վտակ», 1908, № 47, 73։*

50 *Տե՛ս ԹԱՔԱ, ֆ. «Բաղարխիվ», 1906, գ. 1642, թ. 25—28։*

51 *Տե՛ս ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 7, թ. 51—53։*

52 *Տե՛ս նույն տեղում, թ. 106—108։*

ու անասնահարկը, իսկ քրիստոնյաների՝ զինվորական հարկը[53]։ Ներքնախավերը պահանջեցին նաև դեմոկրատական այլ միջոցառումներ։ Սակայն ապրստամբների միասնական ճակատը աստիճանաբար ճեղքվեց և այդ ճեղքվածքն ավելի խորացավ, երբ ռանևոր մահմեդականները փորձեցին ավելի սեղմել քրիստոնյաների իրավունքները, պահանջելով նրանց դատարանների փոխարինումը մահմեդական ընդհանուր դատարանով՝ շարիաթով[54]։

1907 թ. օգոստոսին ընդվզումները էրզրումում կրկին բռնկվեցին, որոնք ուղղված էին գների բարձրացման դեմ։ Հացավաճառները օգտվելով տիրող սովից, մեկ կոտ ցորենի գինը 25-ից հասցրել էին 50 փարայի։ Ամբոխը հաշվեհարդար տեսավ հացավաճառների հետ։ Զինվորներն ու ոստիկանները չհամարձակվեցին միջամտել։ Ժողովրդական ցասումից սարսափած հացավաճառները ստիպված հացի գինն իջեցրին 30 փարայի[55]։

1907 թ. աշնանը քաղաքում հուզումները դադարեցին։ Աբդուլ-Համիդը ակսեց հաշվեհարդար տեսնել ըմբոստացողների հետ։ Կիրառվեցին մասսայական ձերբակալություններ ու հետապնդումներ։ Բանտ նետվեցին շարժման բազմաթիվ մասնակիցներ։ 1908 թ. հունվարի 28-ին քաղաքի քրեական դատարանը լսեց 99 ձերբակալվածների գործը. դրանցից 8-ին դատապարտեց մահապատժի, 68-ին՝ տարբեր ժամանակվա բանտարկության[56]։

Վանում ընդվզումները ծավալվեցին 1906 թ. գարնանը։ Քաղաքի փողոցներում ու հրապարակներում երևացին թռուցիկներ, որոնք կոչ էին անում մահմեդականներին պայքարի սլաքն ուղղել ընդդեմ կառավարության։ Թռուցիկներից մեկում ասվում էր. «Մենք մինչև այժմ կուրորեն ենթարկված լինելով կառավարության հարստահարությանց ու ճնշումներուն, կը կարծեինք, թե արդեն այս էր մեր ճակատագիրը՝ որուն մինչև վերջ պարտավոր ենք հնազանդիլ։ Իսկ այժմ բացված են մեր մտքերն ու աչքերը, և մենք ալ ենթարկվելով հայերու վիճակին ու բախտին, կը ձայնակցենք անոնց բողոքներուն... Անուղղակի տուրքերը, դատարանական զնդծումները, կաշառակերությունները ու ամբողջ պաշտոնական խայտառակությունները մեր ժողովուրդը ծայր աստիճան թշվառության ու հետամնացության մատնեցին՝ որոնց այլևս չենք կարող դիմանալ»[57]։

Ոստիկանները պոկում էին թռուցիկները, հավաքում ու ոչնչացնում էին դրանք, ձերբակալում կասկածելիներին ու բանտ նետում։ Այնուհետև, ցանկանալով ողջակիզել «խռովարարներին» ու դրանով արմատախիլ անել այդ բողոքները, իշխանությունները 1906 թ. հուլիսի 1-ին հրդեհեցին բանտը։ Դա ավելի բորբոքեց զանգվածների ցասումը և նոր ընդվզումների առիթ ծառայեց։ 1907 թ. հունվարի 29-ին Վանի հայ բնակչությունը դիմեց Կ. Պոլսի պատրիարքին, խնդրելով միջնորդել կառավարության առաջ մեղմելու հարկային ճնշումները։ Բ. դուռը մերժեց պատրիարքարանի միջնորդությունը,

---

53 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղաքական», գ. 1643, թ. 56։
54 Տե՛ս նույն տեղում, թ. 86։
55 Տե՛ս ՎՍՍՀ ԿԳԳԱ, ֆ. 521, ց. 9, գ. 8, թ. 22—25, «Մշակ», 1907, № 134—135։
56 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Կ. Պոլսի դեսպանություն», 1908, գ. 2676, թ. 16—17։
57 «Հնչակ», 1906, № 6, էջ 54։

սակայն փորձելով խուսափել դեպքերի բարդացումից, 1907 թ. սեպտեմբերին պաշտոնազրկեց կուսակալին։

Դեռ չէին վերջացել հակակառավարական այդ ընդվզումները, երբ Վանի մի շարք արհեստանոցներում բռնկվեց բանվորների ու աշակերտների շարժումներն իրենց տերերի դեմ։ 1907 թ. հոկտեմբերին կահույքագործները գործադուլ հայտարարելով՝ պահանջեցին աշխատավարձի բարձրացում և դրժբախտ դեպքերի կամ պատահարների փոխհատուցում[58]։ Համարյա նույն ժամանակ Վանում գործադուլ հայտարարեցին նաև կոշկակարները։ Համառության շնորհիվ նրանք հասան մի շարք նվաճումների (կրկնապատկվեց աշխատավարձը, կրճատվեց աշխատանքի տևողությունը, նշանակվեց վարձատրություն նաև այն դեպքում, երբ գործավորները պարապ էին մնում տերերի մեղքով)։

1905—1908 թթ. հեղափոխական տրամադրությունները թափանցեցին Արևմտյան Հայաստանի նաև մյուս քաղաքները։ Սվազում նրանք ստիպեցին կառավարությանը վերացնել նոր հարկը[59], իսկ Խարբերդում հարկադրեցին ձեռնարկատերերին բարձրացնել բանվորների աշխատավարձը[60]։ Կյուրինում 1907 թ. գործադուլ հայտարարեցին շուրջ 2000 կտավագործներ և պահանջեցին տնտեսական վիճակի բարելավում։ Երբ պայքարն ընդունեց համառ բնույթ, ձեռնարկատեր-վաճառականները որոշ զիջումներ կատարեցին[61]։

Քաղաքների հետ միաժամանակ մասսայական շարժումներ ծավալվեցին նաև Արևմտյան Հայաստանի գյուղերում։ Կարճկանում գյուղացիները 1905 թ. գարնանը բողոքելով Մուսա բեյի ոտնձգությունների դեմ, պահանջեցին հեռացնել նրան իրենց գավառից։ Սակայն իշխանությունները զանց առան նրանց պահանջը, իսկ Մուսա բեյը վրեժխնդիր եղավ բողոքողներից։ Վանի սանջակի Կուռաբաշ գյուղի բնակիչները 1907 թ. սկզբներին ծառացան պետական հարկերի ծանրության դեմ[62]։

Թիմարի գավառի Ալյուր գյուղի հայերը նույն թվականի փետրվար-մարտ ամիսներին ներկայացան Վան և, գանգատվելով հարկահանների վայրագություններից, պահանջեցին պատժել նրանց։

Խնուսում 1907 թ. մայիսին ըմբոստացան հայաբնակ մի շարք գյուղեր և պահանջեցին դադարեցնել մուհաջիրների բնակեցումը իրենց գավառում։ Նույն ժամանակ կառավարության հարկային հարստահարումների դեմ դուրս եկան նաև Արաղայի Նոր գյուղի բնակիչները։ Սակայն իշխանությունները ճնշեցին նրանց շարժումը, իսկ ղեկավարներին բանտարկեցին։

1907 թ. մայիսին թուրքական ռեժիմի դեմ ըմբոստացան Բուլանըխի հայաբնակ գյուղերը։ Նրանց գյուղապետներն ու քահանաները մեկնեցին Բիթլիս և պահանջեցին կուսակալից՝ կամ սանձահարել պաշտոնյաներին, զինվորներին, աղաներին ու նրանց հրոսակներին և թեթևացնել իրենց վիճակը, կամ

58 Տե՛ս «Մշակ», 1907, № 148։
59 Տե՛ս ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 7, թ. 60։
60 Տե՛ս Վահե Հայկ, Խարբերդը և անոր ոսկեղեն դաշտը, էջ 616—617։
61 Տե՛ս «Երկրի ձայն», 1907, № 70, էջ 4—5։
62 Տե՛ս «Հնչակ», 1907, № 2, էջ 19։

Բույլ տալ գաղթելու. Կովկաս։ Սակայն կուսակալը կարգադրեց բողոքողներին ծեծելով քշել իրենց գյուղերը[63]։

1907 թ. ամռանը Բուրքական ոստիկանությունը զենք փնտրելու պատրվակով ներխուժեց Մուշի սանջակի Հերկերտ գյուղը և գյուղապետ Սլոյից պահանջեց հանձնել զենքերը։ Մերժում ստանալով ոստիկանները ծեծեցին նրան։ Ազատվելով ոճրագործների ձեռքից, Սլոն իր համախոհներով բաթձրացավ լեռը և կռիվ սկսեց նրանց դեմ։ Մի քանի անգամ նա ետ շպրտեց թշնամու գերազանց ուժերը, սակայն չկարողանալով դուրս գալ պաշարումից, իր զինվորների հետ միասին ընկավ քաջի մահով։

1908 թ. փետրվարին Սասունի, Բուլանըխի, Վարդոյի, Ախլաթի և Մոտկանի բազմաթիվ գյուղերի ներկայացուցիչներ գնացին Բիթլիս, բողոքելու պաշտոնյանների ու աղաների վայրագությունների դեմ։

Քղիում մի շարք գյուղերի բնակիչներ Հագատան գյուղի հայերի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ 1908 թ. ընդվզեցին իրենց աղայի դեմ[64]։

1908 թ. ձմռանը ոտքի էլան նաև Ապլչևաղի Առնե գյուղի հայերը։ Նրանք պահանջեցին Հյուսեին փաշայից պետական տասանորդը հավաքելիս սահմանվածից ավելին չվերցնել։ Սակայն փաշան, ի պատասխան այդ «հանդգնության», սպանեց բողոքողներից երեքին։ Այն ժամանակ գյուղացիները դնացին Վան և պահանջեցին պատժել հանցագործին։ Առնեցիները 6—8 ամիս բախեցին իշխանությունների դռները և արդյունքի չհասան[65]։

Գենջում 1908 թ. ապրիլին գյուղացիներն ըմբոստացան համիդեական դեղերի վայրագությունների դեմ։ Գենջեցիներին հանգստացնելու համար կուսակալը կարգադրեց կազմել հատուկ հանձնաժողով և ուսումնասիրել նրանց բողոքը։ Սակայն հանձնաժողովի նախագահը, մեծ գումար ստանալով համիդեականներից, հայերի բողոքներն անհիմն համարեց և մի քանիսին էլ հանձնեց ոստիկանությանը[66]։

Բացի նշված շրջաններից, արևմտահայ գյուղացիական ելույթներ տեղի ունեցան նաև երկրի այլ վայրերում։ Հատկանշական է, որ մի շարք տեղերում հայ գյուղացիներին միանում էին նրանց հարևան թուրքերն ու քրդերը և համատեղ պայքարում համիդյան բռնապետության դեմ։ Այսպես, Չմշկածորում 1907 թ. սեպտեմբերին հայ ու թուրք գյուղացիները հարձակվեցին զինվորապետի վրա և վռնդեցին կառավարչատնից։ Վանի գավառում նրանք ցույցի դուրս գալով, բողոքեցին կառավարության հարկային հարստահարությունների և պաշտոնյաների կամայականությունների դեմ։ Նման պայքար հայ ու թուրք գյուղացիները ծավալեցին նաև Մուշի դաշտում, Բաբերդի գավառակում և այլ վայրերում[67], *իսկ Դիարբեքիրի շրջակայքում 1907 թ. աշնանը նրանք միասնաբար ոտքի էլան տիրահռչակ Իբրահիմ փաշայի ասպատակությունների դեմ*[68]։

---

63 *Տե՛ս «Դրոշակ», 1907, № 6—7, էջ 91։*

64 *Տե՛ս «Վտակ», 1908, № 28։*

65 *Տե՛ս «Մշակ», 1908, փետրվարի 2։*

66 *Տե՛ս ԹԱՔԱ, ֆ. «Քաղաքախվ», 1908, ց. 482, թ. 46, 52։*

67 *Տե՛ս ԹԱՔԱ, ֆ. «Կ. Պոլսի դեսպանությունը», 1907, ց. 517, գ. 1400 բ, թ. 3, «Վտակ», 1908, № 70։*

68 *Տե՛ս ԹԱՔԱ, ֆ. «Քաղաքախվ», 1907, ց. 482, գ. 541, թ. 276։*

Այդուհանդերձ, 1905—1908 ԹԹ. Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող ժողովրդական ընդվզումների ժամանակ քաղաքի աշխատավորության պայքարը իրրև կանոն կտրված էր գյուղացիական ու զինվորական հուզումներից։ Երկրի պրոլետարիատը դեռ չէր կազմակերպվել որպես քաղաքական ուժ։ Գյուղացիական ելույթները կրում էին տարերային բնույթ, ունեին տեղական նշանակություն և հանդես էին գալիս իրարից անջատ-անջատ։ Չնայած այդ բոլորին Արևմտյան Հայաստանի աշխատավորները հասան որոշ արդյունքի, ստիպելով կառավարությանը որոշ չափով թեթևացնել հարկային բեռը, փոփոխել ատելի կուսակալներին և այլ պաշտոնյաներին, իջեցնել պարենամթերքների գները և այլն։

Արևմտյան Հայաստանի աշխատավորության ելույթները, հանդիսանալով XX դարի սկզբին Թուրքիայում ծավալված սոցիալական ու ազգային-ազատագրական պայքարի բաղկացուցիչ մասը, նպաստեցին արյունարբու Աբդուլ Համիդ II տապալմանը։

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՑԱՍՏԱՆԸ 1908—1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1. 1908 Թ. ԵՐԻՏԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ

Սուլթան Աբդուլ Համիդ II-ի բռնակալության դեմ ուղղված իրավազուրկ ժողովուրդների ազատագրական շարժումները, մասնավորապես Մակեդոնիայում, ավելի ուժեղացան ռուսական առաջին հեղափոխության ազդեցության տակ։ Հասունանում էր Բալկանյան նոր ճգնաժամը, սրվում Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքական իրադրությունը։ 1907 Թ. դեկտեմբերին Փարիզում կայացած թուրքական և այլազգի քաղաքական ընդդիմադիր կուսակցությունների ու կազմակերպությունների համագումարը և ստեղծված իրավիճակը երիտթուրքերն օգտագործեցին երկրում քաղաքական իշխանությունը զավթելու համար։ Թեև Փարիզի համագումարում որոշվել էր ընդհանուր զինված ապստամբություն համիդյան բռնատիրության դեմ սկսել 1909 Թ., սակայն երիտթուրքերի Սալոնիկում գտնվող կենտրոնը, մակեդոնական հարցի սրման հետևանքով մեծ տերությունների միջամտությունը կանխելու նպատակով, որոշեց ապստամբության դրոշ պարզել հենց 1908 Թ. ամռանը։ 1908 Թ. հունիսի 28-ին Մակեդոնիայի Ռեսնա քաղաքում տեղակայված թուրքական զորամասերը երիտթուրք սպաների գլխավորությամբ, միանալով ապստամբ մակեդոնացիներին, սկսեցին պայքարը սահմանադրական կարգերի համար։ Շուտով շարժման գլուխ անցավ Սալոնիկում գտնվող «Միություն և առաջադիմություն» երիտթուրքական կոմիտեն։

1908 Թ. հուլիսի 23-ին ապստամբած զնդերը հանդիսավոր մուտք գործեցին Սալոնիկ, Մոնաստր և Մակեդոնիայի ուրիշ քաղաքներ։ Ամենուրեք հրավիրվում էին 1876 Թ. սահմանադրության սկզբունքները և օսմանյան «հեղափոխական» հաղթանակի օրը։ Ահաբեկված սուլթանը հուլիսի 24-ին հատուկ հրամանագրով ազդարարեց 1876 Թ. սահմանադրությունը վերահաստատելու և մեջլիսի (պառլամենտի) առաջիկա ընտրությունների մասին։

XX դարի հեղափոխություններին անդրադառնալով, Վ. Ի. Լենինը երիտթուրքական 1908 Թ. հեղաշրջումը բնութագրել է որպես բուրժուական հեղափոխություն։ Ինչպես պորտուգալական, նույնպես և թուրքական այդ հեղափոխությունը ժողովրդական չէին որովհետև ժողովրդի մասսան, նրա վիճակի մեծամասնությունը ակտիվ, ինքնուրույնորեն, իր սեփական տնտեսական ու քաղաքական պահանջներով նկատելի կերպով հանդես չի եկել այդ հեղափոխություններից և ոչ մեկի մեջ[1]։

---

1 Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 25, էջ 537։

Սակայն վերնախավային այդ հեղաշրջումը մեծ հույսեր արթնացրեց ճնշված և իրավազուրկ ազգաբնակչության, մասնավորապես քրիստոնյա հպատակների մեջ։ Երկրում սկսվեցին հանդիսավոր ցույցեր՝ ազատություն, հավասարություն, եղբայրություն լոզունգներով։ Բանտերից արձակվեցին հազարավոր քաղաքական կալանավորներ, վերադարձան տարագիրները, վերացվեց գրաքննությունը, աշխուժացավ մամուլը, ամենուրեք հիմնվեցին լուսավորական օջախներ՝ ակումբներ, միություններ, ստեղծվեցին արհմիություններ։ Իրավազուրկ, դարերով կեղեքված, հալածական հայ մարդը մի պահ մոռացավ անցյալի մղձավանջը, կարծեց, թե իրոք վերագտել է իր մարդկային ազատությունը, դարձել քաղաքացի, իրավահավասար մարդ երկրում։ Այդ իրադարձությունը լայն արձագանք գտավ Եվրոպայում. ոմանք օսմանյան բանապետության ժողովուրդների կյանքում նոր դարագլխի սկիզբ էին նշմարում, թեև զգաստ մտածողները հենց սկզբից էլ զուշակում էին այդ հեղաշրջման ոչ արմատական բնույթը։

Աշխատասեր և ստեղծագործ հայ ժողովուրդն անմիջապես ձեռնամուխ եղավ իր ավերված, թալանված տնտեսությունը վերաշինելու գործին։ «Ջուլումի» տարիներին Կովկասում ապաստան գտած արևմտահայերն շտապեցին վերադառնալ հայրենի օջախները՝ հարազատ բնակավայրերը շենացնելու։

Թիֆլիսում 1908 թ. սեպտեմբերին կայացավ հայերի ներկայացուցչական ժողով, արևմտահայերի վերադարձի խնդրով։ Կազմվեց մի հանձնաժողով՝ հայրենադարձներին օգնելու նպատակով միջոցներ հանգանակելու համար։ Հանձնաժողովի կազմի մեջ մտնում էին՝ Ս. Դյուլբենկյանը, Հ. Սոլովյանը, Ղ. Ազատյանը, Վ. Փափազյանը, Ճերմակյանը, Գ. Տեր-Հովհաննիսյանը, Գ. Կաֆյանը, Հմ. Վահանյանը և ուրիշներ[2]։ Հազարավոր արևմտահայեր Կովկասից վերադարձան Արևմտյան Հայաստան։

Սահմանադրության հռչակման առաջին մեկ-երկու տարում որոշակի աշխուժություն ապրեց հայ կրթական-լուսավորական, ինչպես նաև տնտեսական-քաղաքական կյանքը, և մարդիկ կարոտացան շատ թե քիչ բարելավել իրենց տնտեսությունը։ 1912 թ. մեծ շուքով հայ ժողովուրդը տոնեց իր գրերի 1500-ամյակը։ Հայերի ազգային ոգևորությունն ու խանդավառության զգացմունքները մի աննախադեպ պոռթկումով դրսևորվեցին տոնական այդ հանդիսությունների օրերին։

Խանդավառ ցույցերի մթնոլորտում, իրավահավասարության և քաղաքական ազատությունների մասին վերամբարձ ճառերի ու ազդարարությունների տպավորության տակ, հայերի միջավայրում որոշ մարդիկ էլ, կորցնելով չափի զգացումը և դրսևորելով քաղաքական կարճատեսություն, տալիս էին ազգային պատոտախտության, բերանբացության օրինակներ։

Մինչդեռ օսմանյան Թուրքիայի քաղաքական բնի վրա նույն դերակատարներն էին՝ ավանդական ռազմաֆեոդալական վերնախավը՝ սուլթանի գլխավորությամբ և շափավոր, պոչատ սահմանադրության ջատագովներ՝ թուրքական շովինիստական տարրերի՝ երիտթուրքերի կուսակցությունը, որը ձգտում էր կիսել իշխանությունը սուլթանի հետ և ոչ թե վերացնել միապետությունը։ Ահա թե ինչու սահմանադրությունը վերահաստատելուց հետո, երիտթուրքերը բավարարվեցին Սալոնիկից 500 հոգի ուղարկելով սուլթանին

---

2 Տե՛ս «Ձանգակ», № 24, 1908։

շնորհակալություն հայտնելու և պաշտոնազուրկ չարեցին նրա կողմնակիցներին ոչ միայն մայրաքաղաքում, այլև նահանգներում։ Ժողովրդական խանդավառությունը չափազանց կարճատև եղավ և շուտով փոխարինվեց լիակատար հիասթափությամբ։ Օսմանյան «հեղափոխության» գլուխն էր անցել թուրք բուրժուակալվածատիրական և ռազմական խմբավորման մեծապետական շովինիզմի գաղափարախոսությամբ զինված քաղաքական մի կուսակցություն։ Երիտթուրքերը ձգտում էին իրենց տիրապետության տակ պահել ազատագրական շարժման ուղին թևակոխած ճնշված ազգություններին, կրկին օսմանյան լծի տակ առնել Բալկանների արդեն ազատագրված ժողովուրդներին, ետ նվաճել Ղրիմը, զավթել Անդրկովկասը և այլն։ Նրանք ցանկանում էին գերիշխող դիրք ապահովել ազգային նորաթուխ բուրժուազիայի համար, երկրի տնտեսական կյանքից դուրս մղել այլազգի բուրժուազիային և մրցակիցներին, ամրապնդել թուրքական ֆեոդալիզմի տիրապետությունն աշխատավորական զանգվածների նկատմամբ։

1908 թ. սեպտեմբերին երիտթուրքերը հրապարակեցին իրենց քաղաքական ծրագիրը, ուր գործնական ոչինչ չէր ասվում աշխատավորների սոցիալական պահանջները բավարարելու մասին։ Գյուղացիներին հող տրամադրելու առթիվ ծրագրում ասված էր. «միջոցներ ձեռք առնել գյուղացիների կողմից հող ձեռք բերելու գործը հեշտացնելու համար, այն պայմանով, որ չխախտվեն ներկա սեփականատերերի օրենքով պաշտպանվող իրավունքները»[3]։ Դրանով, փաստորեն, ճանաչվում էին մինչ այդ կատարված հողային զավթումները, օրինականացվում Արևմտյան Հայաստանում քուրդ բեգերի ու թուրք փաշաների, ինչպես և մուհաջիրների (Բալկաններից ու Կովկասից եկած մահմեդական գաղթականներ) ապօրինի զավթումները, հարստահարությունները ու կողոպուտները։

Չափազանց մշուշապատ ձևակերպում էր ստացել բանվորական հարցը։ Այդ կապակցությամբ ասված էր. «Բանվորների և ձեռնարկատերերի իրավունքներն ու պարտականությունները կարգավորվելու են հատուկ օրենքներով»։

Կայսրության մեջ պաշտոնական լեզուն ճանաչվում էր միայն թուրքերենը, իսկ ընտրությունները փաստորեն կրում էին ձևական բնույթ։ 1908 թ. հոկտեմբերին պառլամենտական ընտրություններին շատ տեղերում ազգային փոքրամասնությունները բոլորովին զրկվեցին մասնակցելու հնարավորությունից։ Երիտթուրքերի ազգային քաղաքականությունը ձևակերպված էր «օսմանացման» բանաձևի մեջ, որը թեև բոլոր հպատակներին հավասար էր ճանաչում օրենքի առաջ, բայց ժխտում էր ազգային հարցի գոյությունը Թուրքիայում, հետապնդելով բոլոր այլազգիների բռնի թուրքացման նպատակ։ 1910 թ. Սալոնիկի կոմիտեի նիստում երիտթուրքերի առաջնորդներից մեկը՝ Թալեաթը, հայտարարել էր. «Թուրքիո մեջ հավասարության մասին այն ատեն միայն կարելի է խոսել, երբ բոլոր տարրերն ալ կը ձուլվին, օսմանցի կը դառնան»[4]։

Արդյուլ Համիդ II-ը չէր կարող հաշտվել միահեծանությունը սահմանափակելու փաստի հետ, ուստի գաղտնի նախապատրաստվում էր հաշվեհար-

---

[3] «Красный архив», М.—Л., т. 44, 1931, стр. 17.

[4] Մ. Սերոբյան, Հայկական մղձավանջը, Բոստոն, 1916, էջ 42։

դար տեսնել սահմանադրության ջատագովների հետ։ Այդ փորձը կատարվեց 1909 թ. մարտի 31-ին, երբ մայրաքաղաքում մոտ տասը օր վերականգնվեց սուլթանի միահեծանությունը։ Մակեդոնիայից բերված զորամասերը և սահմանադրականների զինված ջոկատները միացյալ ուժերով ճնշեցին խռովությունը։ Աբդուլ Համիդը վերջնականապես գահազրկվեց, նրա փոխարեն երիտթուրքերն օսմանյան գահին բազմեցրին կամազուրկ Մեհմեդ V-ին, որը պետք է «թագավորեր, բայց ոչ թե կառավարեր»։ Նոր կառավարության մեջ մտան «Միություն և առաջադիմություն» կոմիտեի ղեկավարները, որոնք երկրում հաստատեցին արյունոտ դիկտատուրա։ Երիտթուրքերի կառավարությունը օրենքով արգելեց բանվորական գործադուլները, արհմիությունները։

Իշխանությունը գավթելուց հետո երիտթուրքերը սաստկացրին ազգային ճնշման և հալածանքի քաղաքականությունը հատկապես հայ ժողովրդի նկատմամբ։ Սահմանադրության հռչակումից մեկ տարի չանցած, 1909 թ. գարնանը տեղի ունեցավ Ադանայի հայկական կոտորածը, որը լիովին բացահայտեց հին վարչակարգի ջատագովների և «սահմանադրական» կառավարության քաղաքականության նույնությունը։ Սահմանադրության վերահաստատումից դժգոհ միապետական ուժերն Ադանայի մահմեդական բնակչության մեջ լուրեր էին տարածում, թե սահմանադրությունը, իբր, հայերի կազմակերպած գործն է, որը նրանց մեծամեծ արտոնություններ է բերելու՝ ի վնաս թուրքերի։

1909 թ. մարտի վերջերին Կ. Պոլսից Ադանա էին ուղարկվել հատուկ գործակալներ, որոնք հակահայկական կրքեր էին բորբոքում։ Այդ տագնապալի օրերին Ադանայի «Մասնաճյուղի կենտրոնին ստացած հրահանգի համաձայն կիլիկիոյ, մասնավորապես Ադանայի մեջ, ընդհանուր ջարդ մը պատրաստելու սկսած էր»[5]։ Լուրեր էին պտտվում, թե հայերը, իբր, ձգտում են Կիլիկիայում հայկական անկախ «օջախ հիմնելու»։ Ադանայի վալի Ջևադ բեյը և զորահրամանատար Ռեմզի փաշան հայերի այդ «մտադրության դեմ» նախապես զինված ուժեր էին պահանջել[6]։ Հայերը տագնապի մեջ էին։ Մթնոլորտը շիկացած էր։

1909 թ. ապրիլի 1-ին զինված խուժանը Ադանայի վալի Ջևադ բեյի և զորահրամանատար Մուստաֆա Ռեմզի փաշայի ցուցումով խուժում է բազաքի հայկական թաղերը, կոտորելով ոչ միայն դիմադրող այրերին, այլև կանանց ու երեխաներին և կողոպտելուց հետո հրդեհի ճարակ դարձնում տները, պանդոկները, խանութները, արհեստանոցները։ Ջարդեր տեղի ունեցան նաև Ադանայի ու Հալեպի վիլայեթների հայաբնակ վայրերում։ Ջարդերը տևեցին երեք օր, ապա վերսկսվեցին ավելի կատաղի ուժով ապրիլի 12-ին, երբ Ադանա ժամանեցին, այսպես կոչված, «Ազատության բանակի» զորամասերը, որոնք ևս մասնակցեցին կոտորածներին։

Եղեռնագործությունը նախապես ծրագրված ու քննարկված էր կենտրոնից։

Կ. Պոլսի Հայոց պատրիարքության Ազգային վարչության հանձնաժողովը, ինչպես նաև օսմանյան պառլամենտի կողմից ուղարկված հատուկ հանձնաժողովը (Հակոբ Պապիկյան, Հարություն Մոստիճյան, Յուսուֆ Քեմալ և

---

5 Մավլան Զադե Րիֆաթ, Օսմանյան հեղափոխության մութ էջերը և իթթիհատի հայաջինջ ծրագիրները, Պեյրութ-Լիբանան, 1968, էջ 104։

6 Նույն տեղում։

Ֆաիզ բեյերը, հետաքննելով Ադանայի եղեռնի պատճառները և հետևանքները, կազմեցին պաշտոնական տեղեկագրեր, որոնց տվյալներից երևում էր, որ եղեռնի գլխավոր հանցավորները եղել են կուսակալ Ջևադ բեյը, զորահրամանատար Մուստաֆա Ռեմզի փաշան և նրանց հրահանգները տեղերում կենսագործող պաշտոնյաները[7], Ռազմական ատյանին ներկայացված տեղեկագրում հետաքննող հանձնաժողովները որոշակիորեն ընդգծում էին այն միտքը, որ ջարդերի գաղափարական ու քաղաքական կազմակերպիչներն այն ուժերն են եղել, որոնք սահմանադրությունը հռչակելուց հետո շարունակում էին ղեկավարվել այն մտայնությամբ, թե՝ «Սահմանադրությունը իսլամության հակառակ է, մեր շարիաթով իսլամներու և քրիստոնյաներու մեջ եղբայրություն չկար», ուստի համակված էին սահմանադրական կարգը վարկաբեկելու ոգով։ Ռազմական դատարանը ամեն կերպ աշխատում էր պատասխանատվությունից փրկել իսկական հանցավորներին՝ հենվելով կեղծ վկայությունների վրա։



Ադանա քաղաքի տեսարանը

Օսմանյան պառլամենտի 1909 թ. ապրիլի 19-ի նիստում, Ադանայի եղեռնի հարցը քննելիս, մերկացնող ելույթներով հանդես եկան դեպուտատներ Վարդգես (Հովհաննես) Սերենկյուլյանը, Գրիգոր Զոհրապը, դ-ր Տաղավարյանը, Համբարձում Պոյաճյանը (Մուրադը), թուրք դեպուտատներից Ռիզա Թեֆիկ բեյը, որն ասաց. «Ֆեդայի ըսելով ի· զուր չենք կրնար ամբաստանել հայերը, այո, հայերը ֆեդայի են, բայց ազատությունը վերստանալու համար մեզ օգնող ֆեդայիներ են և մեր կողմե ալ այս տեսակ վարմունք մը տեսնելով հանդերձ, հայերը աշխատում են, որպեսզի մեզմե չբաժանվին։ Նմանօրինակ ժողովուրդ մը որևէ կերպով չենք կրնար ամբաստանել...»[8]։

7 Տե՛ս Յ. Թերզյան, Կիլիկիո աղետը. հ. II, Կ. Պոլիս, 1912, էջ 292, 294։

8 Նույն տեղում, էջ 416։

Կ. Պոլսի Հայոց ազգային ժողովի հատուկ հանձնախումբը հետաքննությունից հետո հայտարարեց, որ Ադանայի եղեռնին զոհ է գնացել ավելի քան 30.000 հայ։ Ադանայի վիլայեթում հայ ազգաբնակչությանը հասցրած վնասը կազմում էր շուրջ 20 միլիոն թուրքական լիրա[9]։ Ջարդարարները հրդեհել էին հայկական 24 եկեղեցի, 16 դպրոց, 232 տուն, 30 հյուրանոց, երկու ֆաբրիկա, 1429 ամառանոց, 253 ագարակ, 523 խանութ, 23 չրաղաց և բազմաթիվ այլ կառույցներ[10]։

Հետաքննության ուղարկված կառավարական հանձնաժողովի անդամներից մեկն էր Հակոբ Էֆենդի Պապիկյանը։ Հետաքննության արդյունքի մասին նրա կազմած զեկուցագիրը պարունակում էր բազմաթիվ մերկացնող փաստեր։ Այդ էր պատճառը, որ Կ. Պոլիս վերադառնալուց երկու օր հետո Հակոբ Պապիկյանը խորհրդավոր պայմաններում մահացավ, իսկ նրա զեկուցագիրը «անհայտացավ»։ Մի քանի տարի անց միայն հայերի ձեռքն ընկավ նրա զեկուցագրի սևագիր օրինակը, որը և հրապարակվեց[11]։

Երիտթուրքերի հայահալած քաղաքականությունը որոշակի դրսևորվեց նաև ազգաբնակչության հարցում։ Աբդուլ Համիդ II-ի գահակալության վերջին տարիներին մահմեդական իշխող վերնախավերը հայ գյուղացիներից բռնությամբ հափշտակել էին 26.185 կոտր վարելահող, 2501 տուն, 1190 այգի, 1066 շինություն, 460 մարգագետին, բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ և այլն[12]։

1912 թ. նոյեմբերին լիբերալների իթթիլաֆական կառավարությունը (օգտվելով երիտթուրքերի համար ստեղծված դժվարություններից, իթթիլաֆիստները 1912 թ. ամռանը գրավել էին իշխանությունը) հատուկ որոշում ընդունեց հողային հարցը հայկական նահանգներում «կարգավորելու» մասին, ապա վարչապետ Քյամիլ փաշան հրահանգ իջեցրեց բոլոր կուսակալներին, պետության կողմից դրամական միջոցներ տրամադրել նահանգներում հողային վեճերը լուծելու նպատակով[13]։ Բայց այս բոլոր հայտարարություններն արվեցին միայն բղթի վրա բողնելու համար։ Իրականում գյուղացին շարունակում էր ենթարկվել կաշառակեր պաշտոնյաների, վաշխառուների, բեգերի, աղաների ու դատավորների կամայականություններին ու բռնություններին։

Գյուղացիները պահանջում էին վերադարձնել իրենցից հափշտակած հողերը։ Նրանք միայն 1911 թ. այդ խնդրով Արևմտյան Հայաստանի գավառներից Հայոց պատրիարքարան ուղարկեցին շուրջ 700 գանգատ ու խնդրագիր։ Պատրիարքարանի միջնորդություններին իշխանությունները ցույց էին տալիս դատարաններին դիմելու ուղին։ Բայց, ինչպես նշում էր «Բյուզանդիոնը», հողային հարցը լուծել դատարանի միջոցով, կնշանակի վերջին հարվածը հասցնել հայ գյուղացուն, որովհետև առանց կաշառքի գյուղացին չի կարող գործը շահել, կշահի նրան կեղեքողն ու բանտարկողը, որը կապված է դատավորի հետ[14]։

---

9 Տե՛ս «Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների ժողովուրդները», հ. 5, Երևան, 1970, էջ 301։ Նաև՝ В. А. Гурко-Кряжин, История революции в Турции, М., 1923, стр. 60.

10 Տե՛ս Գր. Գալայան. Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու-Յորք, 1934, էջ 758—759։ Նաև՝ Г. А. Гиббонс, Последние избиения в Армении, СПб., 1916, стр. 8, 20.

11 Տե՛ս Հ. Պապիկյան, Ադանայի եղեռնը, Կ. Պոլիս, 1919, էջ 21։

12 Տե՛ս «Վավերագրերի ժողովածու». „La situation des Arméniens en Turquie, exposée par des documents...", t. 2, 1913, p. 30—31.

13 Տե՛ս «Ազատամարտ», 14 (27) դեկտեմբերի 1912։

14 Տե՛ս «Բյուզանդիոն», № 4643, 1912։

1913 թ. փետրվարի 5-ի դեկրետով անցկացվեց գյուղացիական գույքի հաշվառում, իսկ փետրվարի 21-ին հրապարակվեց անշարժ գույքի օտաբացման կամ փոխանցման մասին օրենքը, որն ընդարձակում էր խոշոր սեփականատերերի իրավունքները և հիմնականում անձեռնմխելի թողնում գյուղացիության ֆեոդալական հարատահարման սիստեմը։ Երիտթուրքերը պահպանեցին երկրագործական բանկերը, որոնք առաջվա նման նպաստում էին գյուղացիական հողերի կենտրոնացմանը աղաների ու բեգերի ձեռքում։ Այդ բանկերի գործարքների հետևանքը եղավ այն, որ, օրինակ, 1913 թ. մայիսին Ալաթի շրջանի հայ գյուղացիական հողերի 92%-ը և Մալաթիայի շրջանի գյուղացիների հողերի 27%-ը բռնագրավվեցին հիշյալ բանկերի կողմից՝ վարկերը ժամանակին չվերադարձնելու պատրվակով[15]։

1911 թ. փետրվարի 14-ին արդարադատության մինիստրին ուղղած բողոքագրում Կ. Պոլսի Հայոց պատրիարքը մատնացույց էր անում այն փաստը, որ հողագործական բանկերի կողմից բռնագրավված հայ գյուղացիների հողերը չնչին գներով հանձնվել էին «ժողովրդի կեղեքիչներին ու շահագործողներին»։ Երիտթուրքերը, շարունակելով ու աստիճանացնելով հին կարգերի հարկային քաղաքականությունը, գյուղացիներից բռնագանձում էին կրթական և ճանապարհաշինության տուրք, բայց ո՛չ դպրոցներ էին կառուցում, և ո՛չ էլ ճանապարհներ։ Նրանք նախապես հավաստում էին, որ սուլթան Աբդուլ Համիդի միահեծանության փոխարեն Թուրքիայում կհաստատվեն սահմանադրական-դեմոկրատական կարգեր։ Բայց ի՜նչ էր հասկացվում այդ «դեմոկրատականը»-ի տակ, որոշակի չէր։ Այդ անորոշությունն ինքնըստինքյան անվրդովություն էր սերմանում ազգային փոքրամասնությունների քաղաքական շրջաններում, որոնք պահանջում էին հռչակած ազատության, հավասարության և եղբայրության սկզբունքների իրականացման կայուն երաշխիքներ։ Համիդյան հին վարչակարգը քննադատող «Ազատություն և համաձայնություն» («Հուրիյե վե իթիլաֆ») կուսակցությունն օգտագործում էր ազգային փոքրամասնությունների այդ անվստահությունն ու տարակուսանքը, շահելու նրանց համակրանքը օսմանյան պետության դեկը իր ձեռքը դցելու համար։

Սակայն Թուրք «ազատականները» ու «առաջադիմականները» սոցիալական վստահելի այն ուժերը չէին, որոնք ընդունակ լինեին Թուրքիան դուրս բերելու դեմոկրատական ազատությունների և առաջադիմության ուղին։ Ապակենտրոնացման և կենտրոնացման կողմնակիցները, իշխող Թուրք ազգի նույն ռազմաֆեոդալական վերնախավերի և նրանց հետ մերված թուրքական ազգային բուրժուազիայի դասակարգային շահերի արտահայտիչները լինելով, սարսափի էին գցում ավանդական խորականության վերացման և իրավահավասարության, դեմոկրատական ազատությունների պահանջներից։ Այդ պատճառով էլ սահմանադրության հռչակումից հետո հաջորդաբար իշխանության գլուխ անցնելով, ո՛չ երիտթուրքերը, և ո՛չ էլ ապակենտրոնացման կողմնակից համարվող «ազատականները» ոչ մի վճռական քայլ չկատարեցին իրենց խոստացած դեմոկրատական ազատությունները կենսագործելու ուղղությամբ։ Այդ հողի վրա էլ տարաձայնությունները գնալով ավելի էին խորանում ընդդիմադիր թուրքական կառավարող կուսակցությունների և այլազգի ժողովուրդների քաղաքական շրջանների, հատկապես երիտթուրքերի ու

15 Տե՛ս «Մշակ», № 116, 1913։

դաշնակցություն կուսակցության միջև, որոնց համագործակցությունն սկսվել էր Փարիզի համագումարից։ Անվստահության ու հիասթափության մթնոլորտը ծանրանում էր նաև թուրքական կառավարող կուսակցությունների արտաքին քաղաքականության ընթացքով, որի հիմքում ընկած էր ուրիշ ժողովուրդների վրա թուրքական լծի հավերժացման ավանդական շովինիստական մտայնությունը, օսմանյան տիրապետությունը նաև Կովկասի և Ռուսաստանի մահմեդական ժողովուրդների վրա տարածելու ագրեսիվ-ազդատենչ պլանները, որոնք խրախուսվում էին գերմանական իմպերիալիզմի կողմից։

1908 թ. հեղաշրջումից հետո երիտթուրքերը շարունակում էին Պարսկաստանի հարավ-արևմտյան շրջանների (Ուրմիա լճի շրջանում) օկուպացումը, որը իրագործել էր գեներալ Արդուլ Համիդը 1905 թ. Պարսկաստանում ծավալվող սահմանադրական հեղափոխական շարժման օրերին։ Դրա հետ հաշտվել չէին կարող ո՛չ Ռուսաստանը և ո՛չ էլ Անգլիան։ 1908 թ. հոկտեմբերի 8-ին Ավստրիան հայտարարեց Բոսնիան և Հերցոգովինան գրավելու մասին։ Սրվում էին իտալա-թուրքական հարաբերությունները, որը հանգեցրեց 1911—1912 թթ. իտալա-թուրքական պատերազմին։ Թուրքիան ընդմիշտ կորցրեց Տրիպոլիտանիան և Կիրենաիկան (Աֆրիկայում)։

Ավելին, Իրագործությունների զարգացումը հանգեցրեց Բալկանյան երկրների ազգական դաշնակցության ձևավորմանը 1912 թ. աշնանը, որի նպատակն էր Թուրքիային դուրս մղել Բալկաններից, Մակեդոնիան, Թրակիան և Ալբանիան ազատել օսմանյան լծից։ Թուրքական կառավարությունը հրաժարվեց ինքնավարություն շնորհել Մակեդոնիային և Ալբանիային, եվ տեղի ունեցավ այն, ինչից այնքան վախենում էին երիտթուրքերը՝ Օսմանյան կայսրության նոր անդամահատումը։ 1912 թ. հոկտեմբերից մինչև 1913 թ. օգոստոս ամիսը Թուրքիան ստիպված եղավ ճաշակել Բալկանյան երկու պատերազմների դառնությունը։

Առաջին պատերազմն սկսվեց 1912 թ. հոկտեմբերի 9-ին, երբ Չերնոգորիան սկսեց ռազմական գործողությունները, ապա նրան հետևեցին դաշնակիցները՝ Հունաստանը, Բուլղարիան, Սերբիան։ Թուրքական 412.000-նոց բանակը կարճ ժամանակամիջոցում ջախջախվեց, եվ նոյեմբերի 3-ին թուրքական կառավարությունն ստիպված էր արդեն հայցել մեծ տերությունների հաշտարար միջնորդությունը։ Դեկտեմբերին զինադադար ստորագրելով Սերբիայի և Բուլղարիայի հետ, Թուրքիան հաշտության բանակցություններ սկսեց Լոնդոնում, 1912 թ. դեկտեմբերի 27-ին դեսպանաժողովը որոշեց ստեղծել Ալբանիայի ինքնավար պետություն, որով Սերբիան զրկվում էր դեպի ծով ելք ունենալու հնարավորությունից։ Հաղթողները պահանջում էին, որ Թուրքիայի սահմանը կազմի Միդիա-Ռոդոսթո գիծը, Թուրքիան հրաժարվի Ադրիանապոլսից, Էգեյան ծովի կղզիներից։

Օգտվելով պատերազմում կրած ծանր պարտությունից, և դրա մեղքը բարդելով իթթիհադական կուսակցության ղեկավարության վրա, երիտթուրքերը 1913 թ. հունվարի 10-ին (23-ին) պետական հեղաշրջում կատարեցին մայրաքաղաքում և նորից իրենց ձեռքը վերցրին կառավարության ղեկը։ Քյամիլ փաշայի կառավարությանը փոխարինեց «իթթիհատական» (երիտթուրքական) կառավարությունը՝ Մահմուդ Շևքեթ փաշայի գլխավորությամբ, որը մերժեց հաղթող դաշնակիցների առաջադրած պայմանները հաշտության վերաբերյալ։ Այդ հողի վրա վերսկսվեցին ռազմական գործողությունները

1913 թ. փետրվարի 3-ին։ Թուրքական բանակը դարձյալ ծանր պարտություն կրեց, և Թուրքիան ստիպված էր հաշտվել Ադրիանապոլսի և Յանինի կորստի հետ։ Լոնդոնում վերսկսվեցին հաշտության բանակցությունները, որոնք վերջացան հաշտության պայմանագրի ստորագրումով՝ 1913 թ. մայիսի 30-ին։ Թուրքիային էին մնում Կ. Պոլիսը և նեղուցների ափերը՝ Էնոս-Միդիա նեղ շերտով։ Իր չեզոքության համար որպես փոխհատուցում Ռումինիան պահանջում էր Բուլղարիայից Հարավային Դոբրուջան։

Դաշնակիցների մեջ վեճ բորբոքվեց Մակեդոնիայի և Թրակիայի տերիտորիայի վրա գերիշխանության հասնելու հարցում։ Տարաձայնությունները հասցրին Բալկանյան երկրորդ պատերազմի սանձազերծմանը, Թուրքիան օգտվեց այդ բանից ու Բուլղարիայից ետ նվաճեց Ադրիանապոլիսը։ Բուլղարիան կորցրեց Մակեդոնիայի և Թրակիայի մեծ մասը, Ռումինիան տիրացավ Հարավային Դոբրուջային։

Առանց Ռուսաստանի աջակցության՝ Բուլղարիայի կորուստներն ավելի մեծ կլինեին։ Պատերազմն ավարտվեց 1913 թ. օգոստոսի 10-ին Բուխարեստում կնքված հաշտության պայմանագրով։

Տալով Բալկանյան պատերազմների ընդհանուր գնահատականը, Վ. Ի. Լենինը նշում է, որ դրանք հանդիսանում են «Ասիայում և Արևելյան Եվրոպայում միջնադարի փլուզումը նշանավորող համաշխարհային իրադարձությունների շղթայի օղակներից մեկը»[16]։

Պատերազմից հետո Բալկաններում ստեղծվեց ուժերի նոր հարաբերակցություն. Ռումինիան դուրս եկավ Եռյակ միությունից և հարեց Անտանտային, ավելի ուժեղացան կապերը Ռուսաստանի և Սերբիայի միջև, Բուլղարիան հակվեց Եռյակ միության կողմը։ Բուխարեստի հաշտության նախօրյակին Ավստրո-Հունգարիայի հրահրած պրովոկացիայով՝ նոր ուժով բորբոքվեց վեճը Սերբիայի հետ, որը քիչ էր մնում հենց 1913 թ. վերաճեր համաեվրոպական պատերազմի։ Ավստրիան ձգտում էր զավթել Սերբիան։ Նրա պահանջի ոգով լուծվեց Սկյուտարիի հարցը. մեծ պետությունների ռազմական նավատորմիղի ճնշման տակ՝ Չերնոգորիան հարկադրված էր վերացնել Սկյուտարիի պաշարումը, որը տրվեց Ալբանիային։

Բալկանյան իրադարձությունների նախօրյակին արդեն հայ ազգային ղեկավար շրջանները կորցրել էին հավատը Թուրք կառավարող կուսակցությունների հայտարարությունների ու խոստումների նկատմամբ։ Հայերի համար ստեղծված ծանր կացությունը հանգամանորեն բնութագրված է Թուրքական պառլամենտի դեպուտատ Գրիգոր Զոհրապի կազմած հուշագրում, որ նա ներկայացրել էր մեծ վեզիր (վարչապետ) Սաիդ Հիլմի փաշային, 1911 թ. նոյեմբերի 18-ին։ Այնտեղ նշված է, որ սահմանադրության վերահաստատումից հետո անցած տարիների ընթացքում հայկական նահանգներում ոչ մի բարեփոխություն չի կատարվել, որ ջարդերի սպառնալիքը ժողովրդին պահում է մշտական սարսափի մթնոլորտում, որ կառավարության որոշումը դրությունը կարգավորելու մասին չի իրագործվել։ Հայերի ծանր կացությունը Զոհրապը բացատրում էր երկու հանգամանքով՝ ա) հայերը, կողմնակից լինելով սահմանադրությանը, միապետական կարգերի կողմնակիցների միջավայրում դիտվել են իբրև թշնամիներ։ Տեղերում այս մտայնությունը քա-

[16] Վ. Ի. Լենին, Երկ., հ. 23, էջ 44։

բողոքները մի հատուկ խավ են կազմում, որոնցից արդարամտություն ակնկալելը դառնում է անհնարին, բ) Կենտրոնական կառավարությունը հայերով բնակեցված վիլայեթները «վտանգավոր է համարում», ուստի և դիմել է հայերի թվական կազմը նվազեցնելու միջոցներին։ «Անկասելի է, որ համիդյան շրջանի վտանգավոր քաղաքականությունը գլուխ է բարձրացնում նաև սահմանադրության շրջանի կենտրոնական իշխանության քաղաքականության մեջ»։

Հուշագրում բերված են փաստեր հողային հարցում տիրող ապօրինությունների, հայկական շրջաններում ապօրինի հարկահանությունների մասին և այլն։ Հայերի իրավազրկման ու ճնշման փաստերի քննությունը ցույց է տալիս, որ «ամբողջ իրավիճակը հետևանք է ոչ թե դատական, զինվորական և վարչական առանձին պաշտոնյաների հոռի վարմունքի, այլ պետության կողմից նախապես վճռված քաղաքականության»։ Ապա արված է ընդհանուր եզրակացություն, թե «այս բոլորն անհնարին է դարձնում նորմալ կյանքը և կասկածի տակ դնում սահմանադրական վարչակարգը»։ Ուստի առաջարկվում էր, որ կառավարությունն անհապաղ ձեռնամուխ լինի հայկական նահանգներում բարենորոգումների ծրագրի կենսագործմանը։

Դաշնակցության ղեկավարությունը, կառչած մնալով փարիզյան համաձայնագրին, 1909 թ. օգոստոսին երիտթուրքերի կոմիտեի հետ ստորագրեց մի այլ համաձայնագիր, որով կողմերը պարտավորվում էին պահպանել պետության տերիտորիալ ու քաղաքական ամբողջությունը, պայքարել սահմանադրությունն անշեղորեն իրագործելու համար և այլն։ Համաձայնագիրը եղբայախվում էր հայտարարությամբ, թե երկու կուսակցություններն, իբրև խրատական նախազգուշացում են ընդունում մարտի 31-ի հեղաշրջման փորձը և Ադանայի ազետը, որոշում են «ձեռք-ձեռքի տված» աշխատել ստանձնած պարտավորությունների իրագործման համար[17]։ Համաձայնագիրն ստորագրելուց հետո դաշնակցությունը 1909 թ. սեպտեմբերի 1-ին պաշտոնական հայտարարություն հրապարակեց, թե ճանաչում է օսմանյան պետության անկախությունը և ամբողջականությունը, Արևմտյան Հայաստանը նկատելով որպես կայսրության անբաժան մասը[18]։

2. ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1908 թ. հեղաշրջումից հետո էլ Օսմանյան կայսրության բոլոր մասերում պահպանվեցին անձի և գույքի անապահովությունը, ազգային հալածանքները, հարկային հարստահարումներն ու ճնշումները։ Աշխատավոր զանգվածները կրկին բռնեցին ազատագրական պայքարի ուղին։ 1908—1914 թթ. արաբական երկրներում տեղի ունեցան բանվորական և գյուղացիական մի շարք ելույթներ, որոնց նպատակն էր ազգային հարցի հետ միասին լուծել նաև սոցիալական խնդիրներ։ Նման շարժումներ բռնկվեցին Բալկաններում, Կրետե կղզում և Թուրքիայի այլ մասերում։

---

17 Տե՛ս «Ազատամարտ», 1909, 24 օգոստոսի։

18 Նույն տեղում։

Ազատագրական պայքար ծավալվեց նաև Արևմտյան Հայաստանում, որի ակտիվ մասնակիցները քաղաքի ու գյուղի աշխատավորներն էին։ Դեռ 1909 թ. գարնանը, երբ գահընկեց արված Աբդուլ Համիդ II-ի փոխարեն սուլթան հռչակվեց Մեհմեդ V-ը, Վանի հայերը մայիսի 1-ին դուրս եկան ցույցի և բացականչեցին. «Մենք չենք գոհանալ Համիդի փոխվելով ու Մուհամմեդի նստելով, մենք պիտի ձգտենք թագերի կործանման»[19]։

1909 թ. հունիսի առաջին կեսին ըմբոստացան Վանի հացթուխների աշակերտները, պահանջելով սահմանել հանգստի օր։ Իշխանությունները դատարան քշեցին աշակերտներին, սակայն հանդիպելով վերջիններիս համառ դիմադրությանը,ստիպված բավարարեցին նրանց պահանջները[20]։

1911 թ. գարնանը Երզնկայում մանուսայագործները գործադուլ հայտարարեցին և պահանջեցին աշխատավարձի բարձրացում։ Բայց ձեռնարկատերերը կարողացան խաբել անփորձ բանվորներին, բարձրացրին նրանց միայն մի փոքր մասի աշխատավարձը և դրանով պառակտեցին շարժումը[21]։ 1914 թ. գարնանը երզնկացիները դիմագրավեցին կառավարության հարկային հարստահարությանը և բողոք հղեցին մայրաքաղաք[22]։

1912 թ. հունիսին Բիթլիսի ըմբոստացած կաշեգործները Կ. Պոլիս ուղարկած բողոքագրում նշում էին, որ կառավարությունը, փակելով կաշեգործական ձեռնարկությունները, անտեսապես քայքայում է իրենց և դատապարտում աղքատության[23]։

1912 թ. հունիսին Սվազի «Շարք» ընկերության գորգագործական ձեռնարկությունների բանվորները գործադուլ հայտարարեցին և պահանջեցին վերացնել անտեսական կեղեքումը, քաղաքական իրավազրկությունն ու բռնությունները[24]։ Նույն թվականի օգոստոսին Ավանցում բռնկվեց 250 բանվորների գործադուլը, որոնք պահանջեցին բարելավել իրենց նյութական դրությունը[25]։ 1913 թ. սեպտեմբերին Կարինում բնակչությունը պայքար ծավալեց կառավարության հարկային հարստահարության դեմ։ Քաղաքի արհեստավորներն ու բանվորները, իմանալով, որ ֆինանսների մինիստրությունը կարգադրել է հարկերը հավաքելիս նիկոլաևյան 100 ռուբլին ընդունել 95 ռուբլի, փակեցին իրենց կրպակները և ցույցի դուրս եկան։ Նրանք ներկայացուցիչներ ուղարկեցին կուսակալի մոտ և պահանջեցին վերացնել այդ կարգադրությունը։ Երկյուղ կրելով դեպքերի բարդացումից, կուսակալը կապվեց մեծ վեզիրի հետ և միջնորդեց վերոհիշյալ կարգադրության վերացման մասին[26]։ Չանցած երեք ամիս կարինցիներն ընդդիմացան կառավարության այն նոր օրենքին, որով անշարժ ունեցվածքից գանձվող հարկերը մեծացվում էին երեք անգամ։ Համառ պայքարից հետո կառավարությունը ստիպված եղավ առժամանակ հետաձգել նոր օրենքի կիրառումը։

---

19 «Մշակ», 1909, 6 հունիսի, № 119։

20 Տե՛ս «Ազատամարտ», 1909, 15 հուլիսի, № 20, 19 հուլիսի, № 23։

21 Տե՛ս «Ազատամարտ», 1911, 21 հունիսի, № 608։

22 Տե՛ս «Մշակ», 1914, 25 մարտի (№ 64)։ «Հորիզոն», 1914, № 65։

23 Տե՛ս «Բյուզանդիոն», 1912, 9 հուլիսի, № 4774։

24 Տե՛ս Ս. Սապահ-Գյուլյան, Փոքր Հայքի հիշատակները, Չիկագո, 1917, մաս Ա, հ. 1, էջ 331—332։

25 Տե՛ս «Աշխատանք», 1912, № 39—86, էջ 4։

26 Տե՛ս ԽԱՔԱ, ֆ. «Քաղաքիփի», 1912—1914, ց. 482, գ. 1648, թ. 163։

Երբեմն քաղաքային աշխատավորների ելույթները միահյուսվում էին գավառների գյուղացիական շարժումների հետ և ուղղվում տիրապետող բռնությունների ու վայրագությունների դեմ։ Այդ տեսակետից բնորոշ էր Վանի ու նրա հարևան գավառների բնակիչների համատեղ ցույցը, որի առիթը Աղթամարի դպրոցների ֆինանսական տեսուչ Ռաֆայել Երիցյանի սպանությունն էր։ Իթթիհատի կառավարման տարիներին նա ժողովրդանպաստ գործունեություն էր ծավալում, աջակցում էր գյուղական վարժարանների հիմնադրմանը, հոգում էր հայ ու քուրդ ազգաբնակչության կրթության ու լուսավորման մասին։ Խիզանում, Կարկառում, Սպարկերտում և դրանց շրջաններում կատարվող ոճրագործությունների կազմակերպիչ շեյխ Սեիդ Ալիին Երիցյանը առաջարկում է վերջ տալ «այդքան գոլում ավերածությանց»[27]։ Մոլեկնած շեյխը հրամայում է վերացնել նրան։ 1912 թ. հոկտեմբերի 11-ին, երբ Ռաֆայելն իր վեց ընկերներով այցելության էր գնում Բեմի դպրոցները, Սեիդ Ալիի հրոսակները հարձակվում են նրա վրա և սպանում։ Այդ եղեռնագործության լուրն արագորեն տարածվում է Վասպուրականում։ Ալեկոծված գյուղացիությունը գավառներից լցվեց Վան և պահանջեց կուսակալ Իզզեթ բեյից պատժել հանցագործներին։ Ականատեսը գրում է. «Ջորս օրից ավելի է, ինչ քաղաքումս խուժել են հազարից ավելի գյուղացիներ շրջակա գավառներից. սրանք եկել են 2—4 օրվա հեռու ճանապարհից՝ Կավաշից, Կարեկանից, Կարկառից, Խիզանից և Սպարկերտից և օրեցօր զարձյալ գալիս, ստվարանում էն։ Վանում պանդոկներ, հյուրանոցներ չկան, ուստի այս հազարավոր անձերի բազմությունը հյուրասիրվել է քաղաքի հայերի տներում, ամեն մի տուն ունի 1—5 հյուրեր»[28]։ Երիցյանի թաղումը վերածվեց բողոքի հզոր ցույցի, որին մասնակցում էր 10 հազարից ավելի մարդ։ Ամբոխը պահանջում էր անհապաղ ձերբակալել Սեիդ Ալիին, հայկական գյուղերում նշանակել պահակներ, ազատել Կարկառում գտնվող բանտարկյալներին։ Սակայն իշխանությունները անտարբերություն մատնեցին այդ պահանջները։ Ավելին, երբ գյուղացիները փորձեցին սեփական ուժերով վրեժ լուծել, իշխանությունները դաժան դատաստան տեսան նրանց հետ. ձերբակալեցին ու բանտ նետեցին տասնյակ մարդկանց։

Բացի Արևմտյան Հայաստանից, ազգային-ազատագրական ու սոցիալական ակտիվ պայքարով հանդես էին գալիս նաև կայսրության մյուս քաղաքներն, հատկապես Կ. Պոլսի հայերը։ Ապրելով մայրաքաղաքում, նրանք սերտորեն կապված էին գավառի հետ և արևմտահայության կացության բարելավման համար հաճախ կազմակերպում էին զանգվածային ցույցեր։ Այդպիսի մի ցույց Կ. Պոլսի հայերը կազմակերպեցին 1912 թ. օգոստոսին, որի մասին «Մշակը» գրում էր. «մայրաքաղաքի ամեն թաղերէն հաւաքուած խուռն բազմութիւն մը, մեծ մասամբ գաւառացիներէ բաղկացած, եկած էր ազգային ժողովին նիստին ներկայ ըլլալու և անկէ պահանջելու համար, որ գործուն տարուի գաւառացի ազգայնոց դժբախտ վիճակին... ժողովրդային յուզման այս նշանը խաղաղ ցոյցի մը հանգամանքը առաւ, և կը յուսացուի, որ իր ազդեցութիւնը պիտի ունենայ... օսմ. կառավարութեան վրայ»[29]։ Յուցարար-

27 «Աշխատանք», 1912, № 48—95, էջ 10։
28 «Մշակ», 1912, 4 նոյեմբերի, № 246։
29 «Մշակ», 1912, 2 սեպտեմբերի, № 194։

ների ճնշման տակ պատրիարքարանը դիմեց Թուրքական կառավարության ներքին գործերի մինիստրին և երբ մերժում ստացավ, Կ. Պոլսի հայերը նոր ցույցեր կազմակերպեցին։

Մայրաքաղաքի հայության ելույթներն արձագանք էին գտնում ոչ միայն Թուրքիայի, այլև արտասահմանի մի շարք հայաբնակ քաղաքներում։ 1912 թ. օգոստոսի 30-ին «Մշակը» գրում էր. «...Արտասահմանի և գաւառի հայերը աւելի սրտապնդող երևոյթի մը ականատես լրին զմեզ Սոֆիայի և Ալեքսանդրիոյ, Զմիւռնայի, Պարտիզակի, Օվաջըկի, Բոդոստոյի միտինգները պատրիարքարանի դիմումներուն մեծապէս ուժ կուտային և կը միտէին ապացուցանելու, թե պատրիարքարանին աղմուկը արուեստական չէր, այլ բուն ժողովրդային պահանջման հետևանք»[30]։

Երիտթուրքերի կառավարման տարիներին ծավալվեցին նաև արևմտահայ գյուղացիական շարժումները, որոնք նախորդ տարիների համեմատությամբ որոշ չափով այլ բնույթի էին։ Եթե Աբդուլ Համիդի տիրապետության ժամանակ հայդուկային շարժումները համեմատաբար ուժեղ էին արտահայտվում, ապա 1908 թ. հեղաշրջումից հետո նրանք թուլացան։ Հայդուկներից շատերը դուրս եկան թաքստոցներից, իջան սարերից և հույս ունենալով, որ ստեղծվելու են կյանքի նորմալ պայմաններ, զենքը վայր դրին ու անցան խաղաղ աշխատանքի. ոմանք բռնեցին մաճը, մյուսները՝ քաղաքի ճամփան, մի մասն էլ թողեց երկիրն ու անցավ արտասահման։ Քչերը մնացին սարերում և շարունակեցին մաքառել թուրքական բռնությունների դեմ։

Սակայն երիտթուրքերի կառավարման տարիներին Արևմտյան Հայաստանում նոր թափ առան գյուղացիական շարժման մյուս ձևերը՝ բողոքներն ու գանգատները, հարկերից խուսափելն ու հրաժարվելը, ակտիվ ընդվզումներն ու ելույթները։ Գյուղացիական այդպիսի շարժումներ բռնկվեցին երկրի գրեթե բոլոր շրջաններում, բայց առավել ակտիվ արտահայտվեցին Մուշի ու Սղերդի, Շատախի, Կարճկանի, Զարսանջակի, Բասենի, Կարկառի ու Ադըջևազի շրջաններում։

Մուշի դաշտում տարագրությունից տուն վերադարձած հայերը պահանջեցին իրենց հողերը, բայց մերժում ստանալով, դիմեցին երիտթուրքական իշխանություններին։ 1912 թ. «Բյուզանդիոնը» գրում էր, որ գյուղացիների կողմից «կալվածական խնդիրներու համար սայլերով աղերսագրեր մատուցված է կառավարութեանը», «ամէն օր հողային խնդիրներու համար 30—40 խնդրագիր կը տրուի»[31]։

Մուշի դաշտում առավել նշանավորը Ջխուրի նահիեի 33 գյուղերի բնակիչների ելույթն էր։ 1908 թ. հեղաշրջումից անմիջապես հետո նրանք փորձեցին թոթափել աղալական լուծը, սակայն անհաջողության մատնվեցին։ 1910 թ. գյուղացիները վերսկսեցին իրենց պայքարը և բազմաթիվ բողոքագրեր ուղարկեցին մայրաքաղաք, բայց կրկին անօգուտ։ 1913 թ. օգոստոսին նրանք նորից ըմբոստացան, ներկայացուցիչներ ուղարկեցին Բիթլիս և պահանջեցին կամ գործնական օգնություն կամ արտագաղթի հնարավորություն։ Կուսակալը գյուղացիների «պաշտպանության» պատրվակով զինվորներ ուղարկեց Ջխուր և կարգադրեց ձերբակալել մի քանի «հանցագործներ»։

---

30 «Մշակ», 1912, 11 սեպտեմբերի, № 209։

31 «Բյուզանդիոն», 1912, 24 հունիսի, № 4761 և 3 հունիսի, № 4769։

Նրա զինվորները ձերբակալեցին անմեղ մարդկանց և շարիք գործան չիուրցիների համար։ Դրանից հետո մշեցիները որոշեցին իրենց ուժերով լուծել հարցը։ Որոշ տեղերում նրանք վռնդեցին աղաներին ու մուհաջիրներին և ետ գրավեցին իրենց հողամասերը։

Սղերդի սանջակում գյուղացիական շարժումը ցայտուն արտահայտվեց Ոզմում։ Այս գյուղն ուներ 100 տնտեսություն և շրջապատված էր բազմաթիվ քրդական բնակավայրերով։ Սկսած XV դարից Ոզմը մաքառում էր իր անկախության համար։ Աբդուլ Համիդի կառավարման տարիներին Բարվարի ու Տննիսի (կամ Տինիսի) աղաները կարողացան իրենց լուծը դնել ոզմցիների վրա[32]։ 1908 թ. հեղափոխությունից հետո գյուղացիները ոտքի կանգնեցին և վերականգնեցին իրենց ազատությունը։ Նրանք հրաժարվեցին աղաներին հարկեր վճարելուց կամ պարտուլքներ կատարելուց և բշեցին իրենց հողերից։ Սակայն վերջիններս չուզենալով զրկվել Ոզմից, նրա դեմ երկու արշավանք կազմակերպեցին՝ 1908 թ. հուլիսին և 1909 թ. մայիսին։ Առաջին անգամ սպանվեց յոթ մարդ, իսկ երկրորդ անգամ՝ արժանի հակահարված ստացան ու ետ շպրտվեցին։ Ոզմը պահպանեց իր անկախ դրությունը[33]։

1909 թ. մայիսին Շատախի հայտնի ավերիչ Միր Մհենն նոր հարձակում կազմակերպեց Ոզմի վրա։ Ջնայած համառ դիմադրությանը, գյուղացիները պարտվեցին և բռնակալի վրեժխնդրությունից խուսափելու համար պատրաստվեցին Մոկսի գյուղերում։ Որոշ ժամանակից հետո վերադարձան Ոզմ։ Սակայն 1912 թ. ամռանը նրանք ենթարկվեցին Խիզանի տիրակալ շեյխ Սեիդ Ալիի հարձակմանը։ Գյուղացիները ստիպված կանանց ու երեխաներին ուղարկեցին Բարվարի բաբեկամ քրդական գյուղերը, բարձրացան սարերը և պատրաստականական կռիվ սկսեցին նրա դեմ։ Նահանգական իշխանություններն ի վերջո տեսնելով, որ շեյխն արդեն քաշանել ու ավերել է Ոզմը, հեռացրին նրան այնտեղից, իսկ գյուղացիներին ետ վերադարձրին։ 1913 թ. մայիսի կեսերին շեյխ Սեիդ Ալին նոր հարձակում ձեռնարկեց Ոզմի վրա։ Գյուղացիները հերոսաբար դիմադրեցին և մեծ զոհերի գնով պահեցին իրենց անկախությունը[34]։

Կարճկանում գյուղացիական նշանավոր շարժում տեղի ունեցավ Ուրանց գյուղում։ Առիթն այն էր, որ ուրանցիները 1913 թ. հունիսին սպանեցին համիդյան տարիներին իրենց կեղեքող աղաներից մեկին։ Սպանվածի հարազատներն ու ցեղակիցները հարձակվեցին Ուրանցի վրա։ 1913 թ. հունիսին կողմերի միջև տեղի ունեցան քեժ կռիվներ։ Հունիսի 15-ին քրդերը նոր հարձակման անցան։ Բայց ուրանցիները ոչ միայն ետ շպրտեցին, այլև սպանեցին նրանց աղաներին[35]։

Ագլջազում գյուղացիները համառ պայքար ծավալեցին Քյոռ Հյուսեին փաշայի դեմ։ Սահմանադրության հռչակումից մինչև 1911 թ. նրանք շուրջ 270 բողոքագիր ուղարկեցին մայրաքաղաք և հասան այն բանին, որ ստա-

---

32 Տե՛ս «Հայրենիք», 1923, № 11, էջ 129։

33 Տե՛ս «Մշակ», 1909, 6 հունիսի, № 119։

34 Տե՛ս «Վան-Տոսպ», 1913, № 21, էջ 250։ «Բյուզանդիոն», 1913, № 5083։ «Հայրենիք», 1923, № 11, էջ 129։ «Մշակ» 1913, 26 մայիսի, № 113։

35 Տե՛ս Մալխաս, Ճամբուս վրա, հ. Ա, Նյու-Յորք, 1950, էջ 160—162։ Ուրանցի դեպքերի մասին տե՛ս նաև «Մշակ», 1913, № 136, 147, 1914, № 148, «Բյուզանդիոն», 1913, 18 հուլիսի, № 5088, 30 հուլիսի, № 5098։

ցան իրենց հողերի մի մասն ու հարկադրեցին իշխանություններին ձերբակալել նրան։ Սակայն չանցած երկու ամիս Քյոռ Հյուսեինն ազատվեց և, հովանավորվելով իթթիհատական պաշտոնյաներից, սկսեց կրկին խլել գյուղացիների հողաբաժինները։ Բնակիչները դիմագրավեցին, որի շնորհիվ մի շարք տեղերում կարողացան պահել իրենց հողերը[36]։

Շատախի Միհանց գյուղի բնակիչները դեռ 1908 թ. ամռանը ոգևորվելով սահմանադրության հռչակումից, հրաժարվեցին գրավճի աղաների հարկերի վճարումից։ Աղաները հարձակվեցին նրանց վրա և փորձեցին ուժով հավաքել հարկերը։ Գյուղացիները դիմեցին կառավարության օգնությանը, որը, սակայն, պաշտպանեց հարստահարիչներին[37]։ Դա չընկճեց շատախցիներին։ 1909, 1910, 1911 թթ. նրանք բազմաթիվ բողոքագրեր ուղարկեցին երիտթուրքական իշխանություններին և պահանջեցին հեռացնել բռնակալներին իրենց բնակավայրերից, պայմաններ ստեղծել հանգիստ ապրելու և աշխատելու համար։ Սակայն իթթիհատի պարագլուխները պատասխանեցին, թե գյուղացիների «բողոքներն անհիմն են ու քշնամական դիտավորության արդիւնք»[38]։ Զայրանալով կառավարության այդ պատասխանից, շատախցիները 1911 թ. գարնանը մեծ բազմությամբ լցվեցին Վան և պահանջեցին աղայական բռնությունների վերացում։ Նրանց ճնշման տակ կառավարությունը նույն թվականի մայիսին ձերբակալեց Շաքիր աղային, սակայն մեկ տարի անց՝ 1912 թ. գարնանը ազատ արձակեց։ Շաքիր աղան սկսեց հաշվեհարդար տեսնել գյուղացիների հետ։ Գավառի բնակիչները նորից բմրոստացան նրա դեմ։ Մեծ բազմությունով նրանք գնացին Շատախի կենտրոն Քաղ գյուղը, բազմաթիվ բողոքագրեր գրեցին Վան, Կ. Պոլիս և իրենց համար պայքարով ստիպեցին իշխանություններին՝ զսպել Շաքիր աղային։ Թուրքական պաշտոնյաները նրան կանչեցին Վան, Շաքիրը չներկայացավ և երբ 1913 թ. սեպտեմբերին պաշտոնյաները ցանկացան բերման ենթարկել նրան, ոճրագործը դիմադրեց ու սպանվեց։

Զարսանջակում աղաները զրկել էին հայ գյուղացիներին հողից և գարձրել մարաբաներ։ Երիտթուրքական հեղաշրջումից հետո Զարսանջակի 60 հայաբնակ գյուղեր իշխանություններից պահանջեցին վերջ դնել անցյալում կատարված անարդարություններ։ Նրանք ներկայացուցիչներ ուղարկեցին մայրաքաղաք և բազմաթիվ բողոքագրեր հանձնեցին նոր կառավարիչներին։ Իրենց հայրենակիցների գործին լծվեցին նաև պանդուխտ Չարսանջակցիները։ Բոստոնում նրանք դիմեցին թուրքական հյուպատոսին, իսկ Ուստրում հանգանակեցին 50 ոսկի, ուղարկեցին Կ. Պոլսի պատրիարքին, որ սա այդ գումարը ծախսի Զարսանջակի հողային գործի վրա։ Սակայն արդյունքն չեղավ։

1910 թ. չարսանջակցիները նորից բարձրացրին հողային հարցը։ Երիտթուրքական կառավարությունն առաջարկեց նրանց ստանալ 1000 ոսկի և այդ գումարով հող գնել մի այլ տեղում։ Սակայն գյուղացիները վճռականապես մերժեցին։ Այն ժամանակ իթթիհատը հայտարարեց, որ չարսանջակցիների հողային հարցը կլուծվի բռնությամբ երկրի հողային հարցի հետ միասին։ Այդ հայտարարությունն, իհարկե, չէր կարող բավարարել գյուղացիներին։ Եվ

---

36 Տե՛ս «Բյուզանդիոն», 1909, 24 մարտի, № 3787, 1911, № 4577, 1912, 20 մարտի, № 4683, 4904; «Աշխատանք», 1911, № 33, էջ 3։ «Վան-Տոսպ», 1913, № 15, էջ 174։

37 Տե՛ս ՆԱՔԱ, ֆ. «Կ. Պոլսի դեսպանություն», 1908, գ. 1595, թ. 150—156։

38 «Բյուզանդիոն», 1911, 8 հունիսի, № 4443։

Նրանք 1911 թ. գարնանը սկսեցին ինքնակամ վարել ու ցանել ազանների կողմից հափշտակված իրենց պապենական հողերը։ Ազաները գնացին դաշտ և վիրավորեցին չորս հոգու։ Չարսանջակի բնակիչները 1911 թ. մայիսին բողոքեցին Մեղրիի կուսակալին։ Լարված միջավայր Չարսանջակում շարունակվեց նաև հետագա ամիսներին։ Հովանավորվելով երիտթուրքերից, 1912 թ. հունիսին ազաները սկսեցին դուրս քշել հայ գյուղացիներին հարազատ վայրերից։ Արտաբսված գյուղացիները 1913 թ. նորից բողոքեցին կուսակալին, բայց կուսակալը զանազան խոստումներով ցրեց նրանց։

Արևմտահայ գյուղացիները պայքարում էին նաև կառավարության հարկային հարստահարության դեմ։ Նրանք հրաժարվում էին գինվորական տուրքից և պահանջում, որ նոր կառավարիչներն իրենց էլ զորակոչին բանակ։ Հայտարարելով, թե «պատրաստ են զինվոր տալու, բայց տուրք չեն կրնար վճարել»[39]։ Համառ պայքարի հետևանքն այն եղավ, որ թուրքական կառավարությունը 1910 թ. օրենք հրատարակեց հայերին զորակոչելու մասին։

1908 թ. հետո Արևմտյան Հայաստանում ծավալվում են նաև քրդական գյուղացիական շարժումները։ Քրդերը նույնպես ձգտում էին ազատվել ազաների կեղեքումներից, հրաժարվում էին պետական հարկերից ու վռնդում պաշտոնյաներին։ 1908 թ. ամռանը Վանի սանջակում շեմսկցի քրդերը պահանջեցին իրենց հողերը և, միևժամ ստանալով, հարձակվեցին ազայի վրա ու ջարդեցին նրա ղոլամներին։ Ազան դաժանորեն ճնշեց նրանց ելույթը։ Պայքարը վերսկսվեց 1910 թ. և վերջացավ գյուղացիների պարտությամբ։

Ագլեզազում քուրդ գյուղացիները Քյոռ Հյուսեինից պահանջեցին իրենց հողերը։ Երբ փաշան սպառնաց արտաբսումով, նրանք ներկայացուցիչներ ուղարկեցին Վան ու բողոքեցին կուսակալին։ 1910 թ. «Ազատամարտը», խոսելով քուրդ գյուղացիության ելույթների մասին, գրում էր. «Այսպիսի երևույթներ մեկով-երկուսով չեն որ Վասպուրականի մեջ երևան կուգան, տասնյակներով, հարյուրներով կը համրվին»[40]։

Երիտթուրքերի կառավարության դեմ ըմբոստանում էին նաև թուրք գյուղացիները։ Բասենում 1911 թ. սկզբներին նրանք բողոքեցին պետական հարկային հարստահարման դեմ, հետագիր ուղարկեցին մայրաքաղաք և պահանջեցին հարկերի ներկացում ու ապաոքների վերացում։ Համառ պայքարով նրանք հասան իրենց նպատակին։ Բասենցիների օրինակին հետևեցին Թորթումի ու Նամրվանի թուրքերը, որոնք նույնպես հասան որոշ հաջողության։ 1912 թ. Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններում թուրք գյուղացիները զանգվածաբար դիմագրավեցին, երբ կառավարությունը փորձեց 25%-ով բարձրացնել կալվածատիրական տուրքը[41]։

Կառավարության հարկային հարստահարման դեմ ընդվզեցին նաև ասորիները։ Ջուլամերկում նրանք հայտարարեցին, որ իրենք չեն վճարի պետական հարկերն այնքան ժամանակ, քանի դեռ չեն բավարարված անհրաժեշտ հողակտորներով։ 1910 թ. գարնանը գավառապետը պահանջում էր երկու գումարտակ ու երկու թնդանոթ ասորիների դիմադրությունը ճնշելու և տուրքերը հավաքելու համար[42]։

---

39 «Բյուզանդիոն», 1909, 11 մարտի, № 3776։

40 «Ազատամարտ», 1911, 18 օգոստոսի, № 658։

41 Տե՛ս «Մշակ», 1912, 13 հունիսի, № 127։

42 Տե՛ս ՎՈՍՀ ԿԳԳԱ, ֆ. 521, ց. 2, գ. 492, թ. 196, 198։

Իթթիհատի կառավարման տարիներին Արևմտյան Հայաստանում շարունակվեցին նաև զինվորական հուզումները։ Անցնելով իշխանության գլուխ, նոր կառավարիչներն առաջվա նման թողեցին զինվորներին իրավազուրկ և շարքայ պայմաններում։ Երիտթուրքական բանակում ավելի անտանելի էր հայերի դրությունը։ Զորակոչվելով ծառայության, հայերն օրենքով պետք է օգտվեին այն իրավունքներից, ինչ մահմեդականները։ Բայց իրականում նրանք ստորացվում էին, արհամարհվում որպես գյավուրներ, ենթարկվում ծաղրուծանակի։ Մահմեդականները հաշտվել չէին կարողանում այն մտքի հետ, որ երեկվա ստրկական վիճակում գտնվող ռայաներն իրենց հավասար զենք կրեն և համարվեն օսմանյան Թուրքիայի լիիրավ ռազմիկներ։ Թուրք սպաները վիրավորում էին հայերի ազգային ու կրոնական զգացմունքները, ստիպում կատարել ամենածանր ու ստորացուցիչ աշխատանքները, իսկ չենթարկվելու դեպքում ծեծում ու բանտարկում էին նրանց։

Եվ հայերը դիմագրավում էին այդ բռնություններն։ Շատերն ազատվում էին զորակոչից փողի օգնությամբ։ Կառավարությունը խրախուսում էր այդ, քանի որ յուրաքանչյուր զինակոչիկի դիմաց ստանում էր 50 լիրա։ 1910 թ. միայն մեկ շաբաթվա ընթացքում Կարինի պետական գանձարան այդ ճանապարհով մուտք գործեց 1500 լիրա[43]։ Հայ երիտասարդների մի մասն էլ լքում էր Թուրքական բանակն ու փախչում, արհամարհելով փախստականների համար սահմանված պատիժները կամ գերադասելով դրանք բանակի սարսափելի պայմաններից։ Իսկ բանակում ծառայողները միտինգներ էին գումարում, պահանջում իրենց վիճակի բարելավում, գավառներում հարազատների նկատմամբ գործադրվող վայրագությունների վերացում, հղում էին իրենց բողոքները մայրաքաղաք, սպառնալով, որ հարցի բացասական լուծման դեպքում իրենք ակտցեն զենքերը[44]։

Ըմբոստանում էին նաև Թուրք զինվորները։ 1909 թ. մայիսի սկզբներին էրզրումում, ինչպես նշում էր ռուսական գլխավոր հյուպատոս Սկրյաբինը, նրանք ուղղակի ապստամբություն բարձրացրին և համարյա մեկ ամիս քաղաքը պահեցին իրենց ձեռքում։ Զինվորական հրամանատարությունը մեծ դժվարությամբ ճնշեց նրանց ելույթը, ձերբակալեց ղեկավարներին ու դատի տվեց։ Շարժման պատճառն այն էր, որ զինվորները վատ էին սնվում և երկար ժամանակ վարձ չէին ստանում[45]։ Նույն հողի վրա 1913 թ. աշնանը զինվորական ընդվզումներ տեղի ունեցան նաև Ծրղնկայում, Սղերդում, Վանում։ Իշխանությունները դժվարությամբ կարողացան ճնշել դրանք։

Այսպիսով, Արևմտյան Հայաստանի ինչպես քաղաքների բնակիչների, այնպես էլ գյուղացիների ու զինվորների շարժումներն առաջանում էին տարերայնորեն և տարբեր ժամանակներում։ Նրանք չունեին ընդհանուր ղեկավարություն և իրրև կանոն կտրված էին միմյանցից։ Արհեստավորների ու բանվորների ելույթները համեմատաբար ակտիվ էին դրսևորվում արդյունաբերական կենտրոններում, իսկ գյուղացիական շարժումներն այն շրջաններում, որտեղ ֆեոդալական բռնություններն ու շահագործումն արտահայտվում էին ամենավայրագ ձևերով (Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի ու մասամբ Խարբերդի

---

43 Տե՛ս ԻԱՔԱ, ֆ. «Քաղաքախվ», 1910, ց. 482, գ. 1646, թ. 20։

44 «Մշակ», 1912, 26 դեկտեմբերի, № 285։

45 Տե՛ս ԻԱՔԱ, ֆ. «Քաղաքախվ», 1904, ց. 482, գ. 1645, թ. 116։

կուսակցություններում)։ Ի տարբերություն Համիդյան կառավարության տարիների, երիտթուրքերի իշխանության ժամանակ դասակարգային պայքարի մեջ ներգրավվեցին ավելի շատ գավառներ ու գյուղացիական ավելի լայն զանգվածներ։ Կարծելով, որ հեղաշրջումը կատարվել է արդարությունը վերականգնելու և չարը պատժելու համար, գյուղացիներն այժմ հանդես էին գալիս ավելի համարձակ ելույթներով։ Սակայն նրանց ելույթները իթթիհատական իշխանությունների ռեակցիոն քաղաքականության հետևանքով առաջվա նման ավարտվում էին պարտությամբ։

3. ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃՆՇՎԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ

Համիդյան բռնապետությունը գնալով անտանելի էր դառնում ոչ միայն նրա տիրապետության տակ ընկած այլազգի ժողովուրդների, այլև իրենց՝ թուրքերի համար։ Թուրքական նորելուկ բուրժուազիան ձգտում էր որոշ բարենորոգումներ մտցնելու ճանապարհով թուլացնել սուլթանի միահեծանությունը և ամրապնդել իր դիրքերը երկրի տնտեսական ու քաղաքական կյանքում։ Այդ նպատակին հասնելու համար «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարները փորձեցին օգտագործել նաև ոչ թուրք ժողովուրդների ընդդիմադիր ուժերը։ Այդ կուսակցության պարագլուխները՝ Ահմեդ Ռիզա բեյը, Հիլմի Թունալը և Շեֆիկ բեյը 1895—1897 թթ. այցելեցին «Դրոշակի» խմբագրություն, ծանոթացրին դաշնակցության ղեկավարներին Միդհատյան սահմանադրությանը, առաջարկեցին միացյալ ուժերով Թուրքիայում հաստատել սահմանադրական միապետություն։ 1902 թ. փետրվարին Փարիզում երիտթուրքերը գումարեցին իրենց առաջին կոնգրեսը և ի թիվս այլ ընդդիմադիր ուժերի, հրավիրեցին նաև հայ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներին։ Հնչակյանները հրաժարվեցին մասնակցել, իսկ դաշնակցականներն ընդունեցին այդ հրավերը։

Շարունակելով համագործակցության փորձերը, երիտթուրքերն ու դաշնակցականներն Արևմտյան Հայաստանում ստեղծեցին երիտթուրքական կոմիտեներ, իսկ 1906—1908 թթ. սկսեցին հրատարակել Վանում «Արշալույս» («Սաբահ յուլ խայր»), իսկ Մուշի սանջակի Առինջ գյուղում՝ «Ազատություն» («Հուրիեթ») խմորատիպ թերթերը։ Այդ թերթերում քննադատվում էին կառավարության հարկային հարստահարումները, պաշտոնյաների չարաշահումները, խրախուսվում էին ժողովրդական ըմբոստացումները և այլն։

1907 թ. Վիեննայում դաշնակցության 4-րդ համագումարում որոշվեց հրավիրել թուրքական ընդդիմադիր տարրերի համաժողով և լուծել նրանց միավորման հարցը։ Շուտով «Դրոշակի» խմբագրությունը դիմեց Ահմեդ Ռիզա բեյին ու Սաբահեդդինին, առաջարկելով հավաքվել կոնգրեսի ու մշակել համատեղ գործողությունների պլան։ Նրանց համաձայնությունը ստանալուց հետո ստեղծվեց կոնգրեսի նախապատրաստման հատուկ հանձնաժողով։ Ի վերջո 1907 թ. դեկտեմբերի 27-ին Փարիզում հրավիրվեց Թուրքիայի ընդդիմադիր կուսակցությունների ու խմբերի կոնգրես։ Կոնգրեսն ընդունեց դեկլարացիա, որի մեջ շեշտվում էր համիդյան ռեժիմի տապալման անհրաժեշտությունը։ Դեկլարացիայում ազդարարվում էր. 1. գահընկեց անել Աբդուլ Համիդին, 2. արմատապես փոխել գոյություն ունեցող կարգերը, 3. հաստատել

ներկայացուցչական կարգ (պառլամենտ)։ Այդ նպատակների իրագործման համար իրրև գործելաեղանակներ առաջարկվում էր՝ 1. զինված դիմադրություն իշխանություններին, 2. տնտեսական ու քաղաքական գործադուլների հայտարարում, 3. հրաժարվել հարկերի ու տուրքերի վճարումից, 4. բանակում մղել հակահամիդյան պրոպագանդա, կոչ անելով զինվորներին՝ դուրս չգալ բնակչության ու հեղափոխականների դեմ, 5. բարձրացնել համընդհանուր ապստամբություն, 6. ստեղծել գաղտնի խառն կոմիտե Թուրքիայում գործող կազմակերպությունների ներկայացուցիչներից, 7. զարկ տալ հակակառավարական հեղափոխական պրոպագանդային, հրատարակելով գրականություն թուրքերեն, հայերեն, հունարեն, բուլղարերեն, ալբաներեն, արաբերեն[46]։

XIX դարի վերջերից համագործակցության որոշ փորձեր կատարեցին նաև երիտթուրքերն ու հնչակյանները։ Դեռ 1890 թ. Ահմեդ Ռիզա բեյը դրական վերաբերվեց հնչակյանների կողմից Կ. Պոլսում կազմակերպված Գում Գափուի նշանավոր ցույցին, «կը փնտռեր հնչակյան դեկավարները, համերաշխ գործողություն մը ապահովելու առաջադրութեամբ»[47]։ Սակայն նա 1895 թ. Բարը-Ալիի ցույցին բացասական վերաբերվեց, պատճառաբանելով, թե այն առիթ կտա եվրոպական տերություններին միջամտելու Թուրքիայի ներքին գործերին։ 90-ական թվականների երկրորդ կեսերին հնչակյանները երիտթուրքերին համագործակցության նոր առաջարկություն արեցին, բայց Ահմեդ Ռիզա բեյը պատասխանեց, թե այդ համագործակցությունը կարող է լինել միայն այն դեպքում, երբ հնչակյաններն ընդունեն Թուրքիայի վերակառուցման միդհատյան սահմանադրությունը։ Այդ պայմանը մերժվեց հնչակյանների կողմից։ «Հնչակը» գրում էր, որ եթե երիտթուրքերը կամենում են վերականգնել 1876 թ. սահմանադրությունը, պահպանելով Թուրքիայի ամբողջականությունը, ապա հնչակյաններն ուզում են «բոթափել այն տարեկան լուծը, որի տակ հեծում է, տնքում է, ճնշվում է, չարչարվում է հայ ժողովուրդը դարերից հետե, խորտակել այն ամուր շղթաները, որոնցով կապված են նրանց ոտքերը, և վերջապես, ազատել բռնի ուժով Հայրենիքը օսմանյան քաղաքական իշխանությունից և կազմել, ստեղծել մի նոր երիտասարդ Հայաստան—սեփական կառավարությամբ, սեփական օրենքներով, սեփական կարգերով ու կանոններով»[48]։

1904 թ. Սասունի ապստամբությունից հետո Ահմեդ Ռիզա բեյը Փարիզում առաջարկեց Ս. Սապահ-Գյուլյանին հրաժարվել եվրոպայի ու Ռուսաստանի օգնության ակնկալություններից ու մերձենալ երիտթուրքերին, ձեռք բաշել «անկախ Հայաստանի» գաղափարից և բավարարվել 1876 թ. սահմանադրությամբ։ Բայց Ս. Սապահ-Գյուլյանը մերժեց նրա առաջարկությունները[49]։ Հնչակյանները վճռականապես հայտարարում էին, որ 1876 թ. սահմանադրությունը չի կարող բավարարել Թուրքիայի ժողովուրդների կենսական պահանջները։ Նրանք ասում էին. «Մենք միդհատյան սահմանադրու-

---

46 Տե՛ս Ю. А. Петросян, Младотурецкое движение (вторая половина XIX—начало XX в.), стр. 250.

47 «Պատմութիւն սոցիալ դեմոկրատական Հնչակեան կուսակցութեան» (1887—1962), հ. Ա, Պէյրութ, 1962, էջ 306։

48 «Հնչակ», 1902, № 2, էջ 13։

49 Տե՛ս «Պատմութիւն սոց. դեմ. Հնչակեան կուսակցութեան», հ. Ա, էջ 308։

թյան համար ոչ բերան կը հոգնեցնենք և ոչ էլ գրիչ։ Հազար ավելորդ կյանք եթե ունենայինք, մեկն էլ չէինք տալ այդ «սահմանադրության» համար»[50]։

Հնչակյաններն անիմաստ էին համարում երիտթուրքերի հայացքները նաև Թուրքիայի ամբողջականությունը պահպանելու մասին։ Նրանք գտնում էին, որ Օսմանյան կայսրության մեջ տառապող ժողովուրդները՝ հայերը, արաբները, հույները, մակեդոնացիները և մյուսները չեն ուզում մնալ այդ ամբողջականության մեջ, պայքարում են վերականգնել իրենց ազգային անկախությունը, սեփական պետականությունը։ Այդպիսի պայմաններում, եզրափակում էին նրանք, առնվազն տարօրինակ է մտածել Թուրքիայի ամբողջականության պահպանման մասին[51]։

Հնչակյանները մերժեցին դաշնակցականների և երիտթուրքերի կոչը բոլոր ընդդիմադիր ուժերի համագործակցության մասին և դատապարտեցին հայ քաղաքական այն կազմակերպություններին, որոնք իրենց ստորագրությունները դրեցին 1907 թ. Փարիզի կոնգրեսի որոշումների տակ։ Նրանք գտնում էին, որ այդ կոնգրեսով երիտթուրքերը կամենում են վերականգնել 1876 թ. սահմանադրությունը, օսմանացնել կամ թուրքացնել ոչ թուրք ժողովուրդներին և օրակարգից հանել հայկական դատը։

Հնչակյանները որոշ փորձեր կատարեցին թուրք բնակչության հետ համագործակցելու ուղղությամբ։ 1894 թ. դեկտեմբերի 23-ին նրանք կոչ հղեցին թուրք գյուղացիությանը[52]։ Բայց 1907 թ. Ս. Սապահ-Գյուլյանը թուրքերի մասին արդեն գրում էր. «Մենք նրանց հետ որևէ գործ ունենալ չենք կարող. ժամանակը այլևս անցած է հասկացողության գալու։ Մեր ճակատագիրը, մեր բախտը նրանցից պիտի բաժանենք, վճռականապես, առանց տատանվելու»[53]։

Որոշ չափով այլ էր վերակազմյալ հնչակյանների տեսակետը։ Նրանք առաջարկում էին երիտթուրքերին այնպիսի համագործակցություն և միավորում, որն ապահովեր Հայաստանի ինքնավարությունն ապագա Թուրքիայում։ Սակայն երիտթուրքերը չընդունեցին նրանց առաջարկությունը, պատճառաբանելով, թե ամեն մի ինքնավարություն վերջին հաշվով կարող է հանգեցնել Թուրքիայի մասնատմանը[54]։

Ինչ վերաբերում է արմենականներին, ապա նրանք գտնում էին, թե իրենք գործելու են միայն հայ իրականության սահմաններում և հայտարարեցին, որ չեն կամենում ցրել ուժերը։ «Դրացի ազգերի մեջ հեղափոխական շարժումներ յառաջ բերելու, նկատելով, որ հայ ազգի և մյուս ցեղերի մեջ զգացման, աշխարհայեցողության, պահանջների և զարգացման մեծ տարբերություններ կան, որով հայ ազգի հեղափոխական շարժումը կարող է դանդաղել և կըննառտել»[55]։ Սակայն 1904—1906 թթ. արմենականների ղեկավար Սեպուհը (Երվանդ Քեռսյանը) վերանայեց իր կուսակցության այդ դրույթը և հայտարարեց, որ հայերը կարող են համագործակցել դրացի մահմեդականների հետ միայն այն ժամանակ, եթե այդ համագործակցությունն օգնի նրանց ազգային խնդրի լուծմանը։ Նա գրում էր. «Եթէ դրացի ժողովուրդները, թուրքերը,

---

50 «Հնչակ», 1907, № 2, էջ 14։

51 Տե՛ս «Հնչակ», 1908, № 1, էջ 10։

52 Տե՛ս Սմբատ Բիւրատ, Սասունէն ետքը, մասն Ա, Կ. Պոլիս, 1911, էջ 260։

53 Ս. Սապահ-Գիւլեան, Ինքնավար Հայաստան, Գահիրէ, էջ 85—86։

54 Տե՛ս «Հնչակ», 1908, № 6—7, էջ 54։

55 Արտակ Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերէն, Փարիզ, 1947, էջ 126։

քուրդերը և այլ ազգեր այն աստիճան անկեղծ գիտակցության հասած և հեղափոխված լինեին, որ հայ հեղափոխության և ժողովուրդին առաջարկեն համաօսմանեան հեղափոխության գործակցիլ—այս ապացույց է ինքնին, թէ հայերին հավասար իրավատեր են ճանաչում իրրև երկրի զավակ և որու համար գործնական նրաշխիքներ պետք է տուած լինին անշուշտ։ Այն ժամանակ անջատ հայկական հարցը իրականության մեջ լուծված կը համարվի և իրքա հայ ժողովուրդը ուրախությամբ կաջակցի ընդհանուր ազատագրական գործին՝ ռամկավարական սկզբունքների հեռանկարով»[56]։ Ընթագրելով, որ արդեն հասել է իրենց ցանկացած պահը, արմենականները մասնակցեցին 1907 թ. Փարիզի կոնգրեսին և ստորագրեցին նրա դեկլարացիան։

Սակեֆիֆիկների որոշ ներկայացուցիչներ դեմ էին Արևմտյան Հայաստանում հայ ազգային կուսակցությունների խմբակային ու ցուցարարական կոիվներին, գտնելով, որ դրանք անօգուտ են և հանգեցնում են խիստ բացասական հետևանքների։ Բ. Իշխանյանը ժխտում էր կուսակցությունների դեկավար դերը արևմտահայության ազատագրական պայքարում, մերժում էր արեվելահայերի միջամտությունը և խորհուրդ տալիս արևմտահայությանը գործադրել «կոլի պասսիվ միջոցներ», այսինքն՝ հրաժարվել կազմակերպված պայքարից և բռնակալության դեմ կիրառել տարերային շարժումներ։ Նա Հայկական հարցի լուծումը կապում էր համաթուրքական շարժումների հետ։ Բ. Իշխանյանը գրում էր. «Թուրքահայերի ապագան որոնել համաթուրքական ապագայի ծոցում, առանց խաբվելու ուտոպիական ծրագրերից և անքովանդակ պատրանքներից։ Ահա մեր ասելիքը»[57]։

Հայ-թուրքական համագործակցության մասին հանդես եկան նաև դեմոկրատական որոշ գործիչներ։ Նրանցից հիշատակելի է Տիգրան Զավենը, որը 1906 թ. հոկտեմբերից Թիֆլիսում հրատարակելով «Երկրի ձայն» շաբաթաթերթը, պրոպագանդում էր երկու ժողովուրդների համագործակցության և համատեղ պայքարի գաղափարը։ Նա քարշմանաբար տպագրում էր թուրք հեղինակների հոդվածներն իրենց ժողովրդի անցյալի ու ներկայի մասին, ծանոթացնում հայ ընթերցողներին թուրքերի տնտեսական ու քաղաքական կյանքին։ Մերժելով Եվրոպայի միջամտության ու օգնության տեսակետը, Տիգրան Զավենն արևմտահայության ազատագրումը կապում էր համաթուրքական հեղափոխության հետ։ Իր շաբաթաթերթի առաջին համարի առաջնորդողում նա գրում էր. «...մենք ընդունում ենք միմիայն մի դատ Թուրքիայում—ընդհանուր հեղափոխության դատը։ Նվ բնականաբար չենք կարող ընդունել այն՝ ինչ երկպառակության, բաժանման առիթ է ծառայում մեր բախտակից ժողովուրդների միջև։ Մենք վճռապես դեմ ենք ազգային առանձին հեղափոխության, առանձին շարժումներին»[58]։

Տիգրան Զավենը առաջ էր քաշում Թուրքիայում սոցիալիստական կուսակցության ստեղծման գաղափարը։ Նա գրում էր, թե այդ երկրում «անհրաժեշտ է, որ առաջ գար միջազգային սոցիալիստական կուսակցություն, որն իր դրշակի տակ համախմբեր բոլոր ցեղերի և կրոնների ներկայացուցիչներին, հակակշռելու սուլթանական դավերը և կռվելու ավելի ազատ կարգերի

56 Նույն տեղում, էջ 172—173։
57 «Երկրի ձայնը», 1907, № 25, էջ 13։
58 «Երկրի ձայնը», 1906, № 1, էջ 2։

համար»[59]։ Նրա կարծիքով այդ կուսակցությունը պետք է լինի «ոչ թե ազգային, այլ միջազգային» և իր գործունեությունը պետք է «ամփոփե ոչ թե Թուրքահայաստանի սահմաններում, այլ տարածե կայսրության բոլոր մասերի և անխտիր բոլոր ցեղերի վրա»[60]։ Պաշտպանելով համաթուրքական հեղափոխության գաղափարը, Տիգրան Զավենը անտեսում էր այդ հեղափոխության մեջ տարբեր դասակարգերի շահերն ու խնդիրները։

Համիդյան բռնապետության դեմ համատեղ ուժերով պայքարելու համագործակցության որոշ փորձեր կատարեցին նաև հայ ու քուրդ հասարակական ուժերը։ Որոշ առաջադեմ քուրդ մտավորականներ առանձին կոչերով դիմեցին իրենց հայրենակիցներին։ Այդ կոչերը թարգմանաբար հրատարակվեցին նաև հայերեն։ Դրանցից մեկում ասվում էր, որ արդեն անցել են լեռների մեջ կատարվող հերոսությունների ու խիզախությունները գովերգելու ժամանակները, և սկսվել է գիտության ու լուսավորության դարը։ Այժմ պետք է զինվել դրանցով, ծառանալ կառավարության դեմ և պայքարել ազատության համար։ Այդ ճանապարհին պետք է մերժել սուլթանի հակահայկական պրոպագանդան, բարեկամանալ հայերի հետ և հանդես գալ մեկտեղ։ Հայերը «ձեր բարեկամներն ու դրացիներն են... Միացեք, ձեր միակ փրկությունը զենքի ուժով միայն պիտի ըլլա, այսինքն ապստամբությունով»[61]։

Մի այլ կոչում ավելի էր շեշտվում սուլթանական կարգերի անտանելի վիճակը և ընդգծվում հայ-քրդական համատեղ գործունեության անհրաժեշտությունը։ Վերջում նշում էր, որ հայ-քրդական համերաշխության ծիլերը «այսօր դեռ թույլ են և նորաբողբոջ, բայց պիտի հուսանք, որ ատոնք իրենց պտուղները կունենան և անշուշտ կարող կըլլան ստեղծել երկրի մեջ զգալի հակասուլթանական ուժ մը»[62]։

XIX դարի վերջին և XX դարի սկզբին արևմտահայ որոշ գործիչներ նույնպես փորձեցին գործնական կապեր ստեղծել քրդերի հետ։ 1896 թ. նրանք երզնկացի Քեռիին (Ռուբեն Շիշմանյանին) ուղարկեցին Դերսիմ, իսկ 1903—1904 թթ. Մալխասին ու Երվանդին՝ Շամդինան հանձնարարելով՝ կնքել համագործակցության դաշինք այդ վայրերի քուրդ ցեղապետների հետ։ Սակայն նրանց փորձերն ապարդյուն անցան։ Հայ գործիչների փորձերն արդյունքի չհասան նաև քուրդ գյուղացիության մեջ։ Նրանք կամեցան համագործակցության դաշն կնքել նաև ասորիների հետ և 90-ական թվականների վերջերին ու 1906—1908 թթ. ներկայացուցիչներ ուղարկեցին ասորական մարշիմոնի ու մելիքների մոտ։ Բայց դարձյալ ապարդյուն։

1908 թ. հեղափոխությունից հետո Արևմտյան Հայաստանի ճնշված ժողովուրդների հասարակական տարբեր խավերը համագործակցության նոր փորձեր արեցին։ Դժգոհելով երիտթուրքական կարգերից, նրանք պատեհ առիթով պատգամավորներ էին ուղարկում իրար մոտ և բանակցություններ վարում։ 1913 թ. հայ որոշ գործիչներ առաջարկեցին Խիզանի շեյխ Սեիդ Ալիին թուրքական տիրապետության դեմ ստեղծել հայ-քրդական միություն։ Այդ նպատակով կնքված պայմանագրում ասվում էր. «Քյուրդերու ու հայերու միացյալ ուժերով արևելյան նահանգները հռչակել անկախ, որ պիտի կառավարվի երկ-

59 «Երկրի ձայնը», 1907, № 28, էջ 1։
60 Նույն տեղում, էջ 4։
61 «Դրոշակ», 1898, № 6, էջ 52։
62 «Դրոշակ», 1900, № 1, էջ 6։

րի երկու բնիկ ազգերուն կողմե[63]։ Հայ գործիչները 1909 թ. Կարինում քրդերի համար ստեղծեցին հայատառ այբբենարան և կուրմանճի բարբառով ընթերցարան։ Այնուհետև «Ազատամարտում» տեղ հատկացրին քրդալեզու հոդվածներին ու հաղորդումներին և մի շարք գյուղերում փորձեցին հիմնել քրդական դպրոցներ[64]։

Հայ-քրդական համագործակցության որոշ փորձեր կատարեցին նաև քրդերը։ Շամգինանի շեյխ Ութեյդ-Ուլլայի որդի Աբդուլ Կադերը վերադառնալով աքսորից, լինելով քուրքական սենատի անդամ, 1909 թ. աշնանը նա մեկնեց Վան, հրավիրեց հայերի ու քրդերի խորհրդակցություն և փորձեց համոզել քուրդ աղաներին, որ վերադարձնեն հայ շինականներից բռնագրավված հողերը[65]։ Բայց երբ 1912 թ. Հայկական հարցը կրկին դարձավ միջազգային դիվանագիտության քննարկման առարկա, Աբդուլ Կադերը մշակեց Քրդստանի ինքնավարության նախագիծ, ներկայացրեց այն օսմանյան պառլամենտին և փորձեց «հիմնավորել», որ հայերի հողերը քրդերի ձեռքն են անցել «կանոնավոր գնումների ճամբով»[66]։

Հայ-քրդական համագործակցության հարցով հանդես եկավ նաև քրդական շարժման մի այլ ներկայացուցիչ՝ Արդուր Ռեզաբը։ Համարելով հայերին մի կողմից իր բարեկամներն ու դաշնակիցները քուրքական կառավարության դեմ, մյուս կողմից նա ցանկանում էր հայկական շարժումները ծառայեցնել իր աղայական դասակարգի շահերին[67]։

Հայերի անկեղծ բարեկամն էր Մոկսի մյուդիր Մուրթուլլա բեյը։ Նա կրթված մարդ էր, գիտեր հայերեն և բարձր էր գնահատում հայերի նյութական ու հոգևոր արժեքները։ Մուրթուլլա բեյը քուլլ չէր տալիս, որ պաշտոնյաները թշնամություն սերմաներն Մոկսի հայերի ու քրդերի միջև, հետևում էր նրանց բարի-դրացիական կապերի պահպանմանը և մերժում սուլթանի հայկական քաղաքականությունը։ Նրա ջանքերով Մոկսը զերծ մնաց հայկական ջարդերից։ Մուրթուլլա բեյն իր հայասիրական վարքագիծը շարունակեց նաև սահմանադրությունից հետո, 1909 թ. Աբդուլ Կադերի Վանում անցկացրած խորհրդակցությունում նա դատապարտեց քուրդ աղաների դաժանությունները հայերի նկատմամբ և հայտարարեց, որ նրանք եղել են Համիդի «որսի շները»[68]։ Մուրթուլլա բեյի հայասիրական գործունեության արտահայտություններից մեկն էլ նրա օգնությունն ու օժանդակությունն է Հովսեփ Օրբելուն։ 1912 թ. ամռանը, երբ Օրբելին ժամանեց Մոկս, տեղի բարբառը, ժողովրդական բանահյուսությունը, ազգագրությունը և պատմական հուշարձաններն ուսումնասիրելու համար, Մուրթուլլա բեյը նրան ընդունեց մեծ սիրով և ավելի քան մեկ տարի պահեց իր մոտ։ Շնորհիվ նրա օգնության, Օրբելին կապվեց Մոկսի քրդերի հետ, կազմեց նրանց լեզվի քերականությունն ու բառարանը[69]։

---

63 Կ. Սասունի, Քիւրտ ազգային շարժումները և հայ-քրդական յարաբերութիւնները, Պէյրութ, 1969, էջ 212—213։ Նաև ՒԱՔԱ, ֆ. «Քաղաքական», 1913, ց. 482, գ. 719, թ. 328։

64 Տե՛ս «Ազատամարտ», 1909, № 51։ «Աշխատանք», 1911, № 1—48, էջ 12։

65 Տե՛ս «Մշակ», 1909, № 251։ «Բյուզանդիոն», 1909, 17 նոյեմբերի, № 3973։

66 «Մշակ», 1913, 28 մայիսի, № 114։

67 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 2000, գ. 7413, թ. 290—291։

68 Տե՛ս «Մշակ», 1909, 12 նոյեմբերի, № 251։

69 Տե՛ս ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 71, գ. 76, թ. 195—196, 200, 215—217։

* * *

Անկախ աղաների ու կուսակցական և այլ գործիչների ցանկություններից, թե՛ սուլթան Աբդուլ Համիդի և թե՛ երիտթուրքերի կառավարման տարիներին հայերի ու նրանց հարևան ժողովուրդների միջև բազմաթիվ էին համագործակցության դեպքերը։ Ապրելով կողք-կողքի, նրանք մշակել էին բարի-դրացիական հարաբերություններ և միասնաբար դիմագրավելով բռնություններին ու կեղեքումներին, փոխադարձաբար պաշտպանում էին միմյանց։

Ժամանակի մամուլն արձանագրում էր, որ «տաճիկ գյուղացի երկրագործ դասը... պաշտպանել է իր դարավոր հարևան հայ ազգաբնակչությունը և սաստիկ ընդդիմադրություն է ցույց տվել հարձակվող խուժանին»[70]։

Որոշ թուրքեր նույնիսկ մտել էին հայ ֆիդայիների շարքերը և կռվում էին Համիդյան բռնապետության դեմ։ Իսկ 1904 թ. Սասունի ինքնապաշտպանության նախօրյակին Բիթլիսի վիլայեթի Արաղ գյուղում կանգնած թուրքական զորամասի ենթասպաներից մեկը՝ Զեքերիան, կամ ինչպես հայերն էին նրան անվանում, Զաքարիան, իր մի քանի զինվորներով դիմեց Անդրանիկին, խնդրելով թույլ տալ միանալ հայդուկներին և կռվել սուլթանի հրոսակների դեմ։ Ստանալով թույլտվություն, նա «Սասնոյ կռիվներուն քաջաբար կռվեցավ... թուրք զորքին դեմ»[71]։

Հայ ֆիդայական շարժումը հաճախ համակրանք էր գտնում քուրդ աշխատավոր գյուղացիության մեջ։ Դա պայմանավորված էր նրանով, որ հայդուկները պաշտպանում էին նաև հասարակ քրդերի շահերը և հանդես գալիս նրանց հարստահարողների դեմ։ Այսպես, 1907 թ. Շատախի Սիծանց գյուղի մոտ նրանք 48 ժամ կռվեցին ավազակների դեմ և պաշտպանեցին քուրդ գյուղացիների հոտը։ Ականատեսը նշում էր, որ «Վերջին 15 տարվա ընթացքում այդպիսի օրինակներ քիչ չեն եղել»[72]։

Շնորհիվ հայդուկների այդ վերաբերմունքի, քրդերը հաճախ օգնում և օժանդակում էին նրանց, թաքցնում թուրքական իշխանություններից, հյուրասիրում էին, ուղեկցում, տանում գրագրությունները և այլն։ 1905 թ. մարտի 14-ին Բիթլիսի ռուսական հյուպատոս Վ. Շիրկովը գրում էր. «Չի կարելի լռությամբ անցնել այն փաստի կողքով, որ քրդերը բարեկամաբար էին վերաբերվում հայ հեղափոխականներին։ Դա արտահայտվում էր նրանում, որ քրդերը... հյուրասիրում են հայ ֆիդայիններին, ցույց են տալիս նրանց ճանապարհներ, մթերք մատակարարում»։ Ապա բերելով կոնկրետ փաստեր, եզրափակում էր. «Քրդերը սկսել են նույնիսկ օգնել հեղափոխականներին, որ սրանք ձեռք բերեն զենք ու հանդերձանք»[73].

Քրդերը հաճախ գովերգում էին հայդուկներին և փառաբանում նրանց սխրագործությունները։ Քրդական ժողովրդական երգերից մեկում Աղբյուր Սերոբի մասին ասվում էր.

«Քաֆըր է այն մարդը,
Որ ուզենայ Սերոբ փաշան սպանել»[74]։

---

70 «Դրոշակ», 1896, № 6, էջ 41։

71 Մկրտիչ Երիցանց, Զորավար Սմբատի հուշերը, Փարիզ, 1936, էջ 197։

72 ՍՍՀՄ ԿՊՌՊԱ, ֆ. 2000, ց. 7716, թ. 557։

73 ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1905, ց. 482, գ. 539, թթ. 41—42։

74 Յակոբ Շահպազեան, Քիւրդօ-հայ պատմութիւն, Կ. Պոլիս, 1911, էջ 169։

Երկրի որոշ մասերում քրդերը դիմում էին ֆիդայիների օգնությանը, երբ նեղվում էին ազաներից, իսկ երբեմն էլ մտնում էին նրանց շարքերը և կրում իրենց ճնշողների դեմ։

1904 թ. նոյեմբերի 16-ին Կարինի ռուսական գլխավոր հյուպատոսը գրում էր Կ. Պոլսի իր դեսպանին. «Ես նոր գիծ է մուտք գործել ընդհանուր դրության մեջ վերջին ամիսների ընթացքում,— դա քրդերի համագործակցությունն է հայերի հետ»[75]։ Այդ էր հաստատում նաև Վանի ռուսական փոխհյուպատոսը 1906 թ.[76]։

Արևմտյան Հայաստանում եզակի չէին նաև հայ-ասորական համագործակցության դեպքերը։ Երբեմն ասորի գյուղացիները մտնում էին հայդուկների շարքերը և պայքարում տիրող անիրավության դեմ։ Այսպես, Վանի ռուսական փոխհյուպատոս Ռ. Խ. Տերմենը 1907 թ. գրում էր, թե մի ասորուհի բարձրացավ Սասուն, միացավ հայդուկներին, որ լուծի թուրք դահիճների կողմից սպանված իր եղբայրների վրեժը[77]։

Արևմտյան Հայաստանում ժողովուրդների տարերային համագործակցության դեպքերը երիտթուրքերի կառավարության տարիներին ավելի հաճախակի դարձան։ 1908 թ. հոկտեմբերին, երբ Վանի հարուստները կրկնապատկեցին ցորենի գները, հայերն ու թուրքերը միասնաբար պահանջեցին վերականգնել նախկին գները[78]։ 1909 թ. հունիսին Դիարբեքիրի հայ ու թուրք բնակիչներն ըմբոստացան պարենամթերքների, հատկապես հացահատիկի բանկացման դեմ։ Երբ վաճառականները փորձեցին իրենց ցորենն արտահանել այլ վայրեր, հայուհիներն ու թրքուհիները գնացին կուսակալի մոտ և պահանջեցին՝ բացել վաճառականների հացի հորերը և մատչելի գներով վաճառել հացահատիկը[79]։ Խարբերդում հայերն ու թուրքերը 1909 թ. փետրվարին ըմբոստացան կուսակալի դեմ և պահանջեցին կառավարությունից՝ վերջ դնել նրա «ապօրինի արարքներուն»[80]։ Նման ելույթներ եղան նաև Բիթլիսում, Ակնում, Քրդիում (1909), Բաբերդում (1910), Արճեշում (1914)։

Արևմտյան Հայաստանի ժողովուրդների տարերային համագործակցությունը համեմատաբար ավելի լայն դրսևորումներ ունեցավ գյուղում։ Իրենց ճնշողների ու հարստահարողների դեմ համատեղ հանդես էին գալիս համարյա բոլոր ազգերի գյուղացիները։ 1910 թ. մայրաքաղաք ուղարկած բողոքագրում Բաբերդի հայ և թուրք գյուղացիները նշում էին, որ իրենք իրենց տարբեր ազգությունների պատկանող շինականներ, «որևէ հակառակություն չունին իրարու հանդեպ և քէ ինչ որկին կը միանան իրարու հետ՝ բողոք բառնալու համար հասարակաց թշնամիին՝ ազա-պեկերուն դեմ»[81]։

Երկրի մի շարք շրջաններում հայ գյուղացիների հետ միասին թուրքական ու քրդական կեղեքիչների դեմ համառորեն պայքարում էին նաև քրդերը։

---

75 «Դրոշակ», 1904, № 11, էջ 173։

76 Տե՛ս Р. И. Термен, Отчет о поездке в санджак Хекиари Ванского вилает в 1906 г., Тифлис, 1910, стр. 146.

77 Տե՛ս Р. И. Термен, Отчет о полевой поездке 1907 г. в Ванском, Битлисском и Диарбекирском вилайетах, Тифлис, 1909, стр. 77.

78 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1903, գ. 482, գ. 716, թ. 122։

79 Տե՛ս «Ազատամարտ», 1909, 5 հուլիսի, № 11. «Բյուզանդիոն», 1909, 5 հուլիսի։

80 «Բյուզանդիոն», 1909, 5 մարտի, № 3765։

81 «Ազատամարտ», 1910, 13 հուլիսի, № 321։

Մուշի դաշտում 1910 թ. սկզբներին հայկական Մուշաղեն ու Գյոլբաշ և քրդական Միզոկ, Ջերկիսե ու Պավե գյուղերի բնակիչները համատեղ դիմեցին Բիթլիսի իշխանություններին, որպեսզի նա ետ վերադարձնեն աղաների կողմից բռնագրավված իրենց հողերը[82]։ 1911 թ. հունիսին Մուշի դաշտի բազմաթիվ հայ ու քուրդ գյուղացիներ ընդհանուր բողոքագիր պատրաստեցին, կենտրոնական իշխանությունների միջամտությամբ իրենց հողերը ետ ստանալու, հարկային բեռը թեթևացնելու և բռնություններին վերջ տալու համար։ Սակայն տեղական իշխանությունները ուշնջացրին նրանց բողոքագիրը և պատժեցին կազմակերպիչներին[83]։ Քրդերի դավառում քրդերը 1913 թ. խմբով լցվեցին կառավարչատուն և պահանջեցին ետ վերադարձնել իրենց հարևան հայերի հողը, որը տարել էին ավազակները, միաժամանակ հարց հարուցեցին արժանվույնը հատուցել հայերի արյունը թափող մարդասպաններին[84]։ Հայ և քուրդ գյուղացիների համատեղ պայքարը դրսևորվեց նաև Չխուրում, Մանազկերտում, Գևավաշում (1910—1913 թթ.), Երզնկայի գավառում (1910—1912 թթ.) և այլ տեղերում։ Մայրաքաղաք ուղարկած իրենց բողոքագրերում նրանք նշում էին, որ իրենք իրենց մեջ որևէ հակասություն չունեն և պայքարում են միայն իրենց հշնամիների դեմ[85]։

Ուշագրավ է, որ հայերն ու քրդերը համախ ծառանում էին թուրքական պաշտոնյաների, և քուրդ աղաների՝ ժողովուրդներին միմյանց հակադրող նայիոնալիստական մոլի քարոզների դեմ։ Այսպես, երբ 1912 թ. իթթիհատական պաշտոնյաները փորձեցին իրար դեմ գրգռել Բայազետի գավառի էրզոպ գյուղի հայ ու քուրդ բնակիչներին, հանդիպեցին լուրջ հակահարվածի։ Գյուղացիները բողոք ուղարկեցին մայրաքաղաք և պահանջեցին պաշտոնազրկել ազգամիջյան կռիվներ հրահրող տեղական կառավարիչներին։ Իրենց բողոքագրում նրանք նշում էին. «Մինչև հիմա եղբայրաբար ապրող տեղվույս հայ և իսլամ բնակչությունը իրարու ձգող մեր կառավարիչը եթե շուտով փոխվի, հավանական ծանրակշիռ դեպքերը կարգելվինք»[86]։

Երիթթուրքական ռեժիմի դեմ համատեղ պայքարեցին նաև քրդերն ու ասորիները։ 1911 թ. Վանի նահանգի Տոսկան գյուղից նրանք դիմեցին կուսակալին, որ պակասեցնի իրենց հարկերը։ Սակայն կուսակալը ոչ միայն մերժեց, այլև ուղարկեց հարկահաններ ու ոստիկաններ, որ անհապաղ հավաքեն սահմանված հարկերը։ Գյուղացիները միաձնաբար դիմադրեցին, խլեցին զենքերը և վտարեցին գյուղից։ Վանի իշխանությունները 1911 թ. դեկտեմբերի 28-ին նոր ուժեր ուղարկեցին Տոսկան շարժումը ճնշելու և կազմակերպիչներին պատժելու նպատակով։

Ասորիներն ու քրդերը համատեղ պայքարի օրինակ ցուցաբերեցին նաև Ջուլամերկի գավառի Արճի գյուղում, ուր 1912 թ. սեպտեմբերի 29-ին հրոսակներին ետևրկար դիմադրություն հետո կը կարողանան վերջապես իրենց ավարը ետ բերել[87]։

---

82 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղաքական», 1910, ց. 482, գ. 544, թ. 56։

83 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՄՊԱ, ֆ. 2000, գ. 7716, թ. 249։

84 Տե՛ս «Բյուզանդիոն», 1913, 30 մարտի, № 5046։

85 Տե՛ս «Բյուզանդիոն», 1911, 10 հունվարի, № 4625։

86 «Բյուզանդիոն», 1913, № 5167։

87 «Աշխատանք», 1912, № 47—94, էջ 7։

Սակայն Արևմտյան Հայաստանի ճնշված ժողովուրդները ինչպես անցյալում, այնպես էլ երիտթուրքերի կառավարման տարիներին չկարողացան համընդհանուր պայքարի միասնական ճակատ ստեղծել։

4 ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳԻՄՆԵՐԻ ՆԴՐԻՐԸ 1912—1914 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Բալկանյան իրադարձությունների կապակցությամբ հայկական ազգային շրջաններում ընդհանուր տրամադրությունն այն էր, որ հարկավոր է դիմել մեծ տերությունների դեսպանաժողովին և մասնավորապես ռուսական կառավարությանը, որպեսզի Մակեդոնիայի ու Ալբանիայի հարցերի հետ միասին քննության առնվի նաև ծրագրված բարենորոգումները հայկական նահանգներում իրականացնելու խնդիրը։

Դավառներից ստացված բազմաթիվ բողոքների հիման վրա 1912 թ. հուլիսի 7-ին Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը կազմում է ընդարձակ մի հուշագիր և ներկայացնում արտգործատության մինիստրությանը, գոյություն ունեցող բռնություններին վերջ տալու պահանջով[88]։

Արևմտյան Հայաստանի արյունոտ մղձավանջի փաստերը հրապարակվում էին հայկական և օտար մամուլի էջերում։ «Մշակը», «Բազմաչարչար Հայաստանը» խմբագրականով կոչ էր անում «քաղաքակիրթ աշխարհին», մանավանդ Ռուսաստանին, իրենց ձեռքը վերցնել արևմտահայության ազատագրության գործը[89]։

1912 թ. սեպտեմբերի 19-ին Թիֆլիսում հրավիրվում է մի ժողով, որին մասնակցում էին հայ հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչները։ Ժողովը հարց է հարուցում դիմել ռուսական կառավարությանը։ Համանման ժողովներ են տեղի ունենում նաև Բաքվում, Վանում, Բաթումում և այլ կենտրոններում։

Գևորգ V կաթողիկոսը դիմում է փոխարքային՝ խնդրելու ցարի օգնությունը արևմտահայության։ Վորոնցով-Դաշկովը Նիկոլայ II-ին հասցեագրած նամակում հարկ է համարում ընդգծել հայերի նկատմամբ Ռուսաստանի «ավանդական բաղաքականության ճշտությունը»[90]։ Փոխարքան հիշեցնում էր ցարին, որ Ռուսաստանը հանձին հայերի միշտ էլ ունեցել է իր «հավատարիմ բարեկամները», որոնք Պետրոս Մեծի ժամանակներից ի վեր «ակտիվ աջակցություն են ցույց տվել ռուսական բանակին պատերազմների ժամանակ»։ Նկատի ունենալով, որ Հայկական հարցում եվրոպական միջամտությունը, հավանաբար, «դառնում է անխուսափելի», ուստի նա խորհուրդ էր տալիս թագավորին՝ շտապել, «որպեսզի նախաձեռնությունը ձեռքից դուրս չընկնի», այլապես Ռուսաստանի հեղինակությանը մեծ հարված կհասնի, և հայերին դա կմղի այն համոզմանը, թե պետք է «մեկընդմիշտ ձեռք քաշել ցարի հետ հույսերը կապելուց» և պաշտպանություն «որոնել Ռուսաստանից դուրս»։ Ուստի, փոխարքայի կարծիքով, անհրաժեշտ էր, որպեսզի Ռուսաստանն ունենար «մի համակիր ժողովուրդ այն մարզերում, որոնք իրերի ներ-

88 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1912, գ. 3727, թ. 5—9։

89 Տե՛ս «Մշակ», 1912, № 195։

90 ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1912, գ. 3727, թ. 16։

կա պայմաններում կամա թե ակամա հեշտությամբ կարող են գտնվել մեր ռազմական գործողությունների թատերաբեմում»[91]։ Վորոնցով-Դաշկովի այս միջնորդությունը Պետերբուրգում սկզբունքային հավանության արժանացավ։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և հայկական բարենորոգումների հարցի նոր արծարծման ընթացքում առավել որոշակի դարձավ արևմտահայության կողմնորոշումը դեպի Ռուսաստան։ Հայ մտավորականության առաջադեմ ներկայացուցիչներն արևմտահայության փրկության հույսը շարունակում էին կապել Ռուսաստանի հետ։ Վ. Տերյանը գրում էր, որ արևմտահայության ճակատագրի հարցը հայ հասարակական-քաղաքական կյանքում ստեղծել է մթնոլորտ, հոգևոր և ֆիզիկական ուժերի արտակարգ լարում։ Տերյանի կարծիքով հարցի լավագույն լուծումը Արևմտյան Հայաստանի միացումն էր Ռուսաստանին։ Եվ իր լավագույն հույսերը կապելով ռուս առաջավոր դեմոկրատիայի հետ, չէր տարակուսում, որ հուսախաբ չէր լինելու[92]։ Նույն բաղաքական ձգտումներից էր ելնում Հովհ. Թումանյանը, երբ գրում էր, թե ինչպես 1828 թ. վճռվեց Արևելյան Հայաստանի, այնպես էլ այժմ պետք է լուծվի Արևմտյան Հայաստանի հարցը[93]։

Արևմտահայ ազգային դեմոկրատիայի տրամադրություններն էր արտահայտում Գր. Զոհրապը, հայտարարելով, թե «Ռուսաստանի և հայերի շահերը միևնույն կետում համընկնում են»[94]։ Մի այլ առիթով, Զոհրապը գրում էր. որ Ռուսաստանի կազմում «Ինչպես էլ որ լինի, նույնիսկ ճնշման ռեժիմի տակ, մենք այնուամենայնիվ չէինք զրկվի զարգացման հնարավորություններից... Ընդ որում Ռուսաստանը երիտասարդ երկիր է, ապագա խոստացող պետություն, իսկ այն ճնշումը, որի մասին այդքան շատ են խոսում, միշտ չէ, որ պիտի տիրապետի Ռուսաստանում»[95]։

1912 թ. դեկտեմբերի 21-ին Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովը որոշում է ընդունում Հայկական հարցը բարձրացնել Լոնդոնում հրավիրվելիք դեսպանների կոնֆերանսում, որը պետք է քննարկեր Բալկանյան առաջին պատերազմի հարցը։ Ժողովն ընտրում է «Ապահովության հանձնաժողով», որի կազմի մեջ մտնում էին արքեպիսկոպոս Ե. Դուրյանը, Գր. վ. Պալաքյանը, Լ. Տեմիրճիպաշյանը և Մ. Ոսկանյանը։ Հանձնաժողովը լիազորվում էր հետամուտ լինել Հայկական հարցի լուծմանը, պահանջելով ինքնավարություն հայկական վեց վիլայեթների համար՝ եվրոպական երաշխավորությամբ[96]։

Սակայն հարաբերությունները Թուրքական կառավարության հետ ջլվատանգելու նկատառումով որոշվում է հարցի միջազգային արծարծման նախաձեռնությունը վերապահել Ամենայն Հայոց կաթողիկոսին։ Նոյեմբերի 10-ից կաթողիկոսը Եվրոպայում իբրև իր լիազոր ներկայացուցիչ նշանակել էր Պողոս Նուբարին, որը հանձնարարություն ուներ հուշագիր պատրաստելու Լոնդոնի կոնֆերանսին ներկայացնելու համար։

Ռուսական դիվանագիտության և Նուբարի ցուցաբերած ակտիվությունն

---

91 Նույն տեղում, թ. 17։

92 Տե՛ս Վ. Տերյան, Երկեր, հ. 2, Երևան, 1961, էջ 292։

93 Տե՛ս «Հորիզոն», 1913, № 7, 1912, № 223։

94 ՄԼԻ-ի Հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 8, գ. 47, թ. 15։

95 Մատենադարան, Կաթ. դիվան, թղթ. 258, վավ. 8, թ. 25։ Նաև Հայկական ՍՍՀ ԳԿՊ, ֆ. 57, ց. 2, գ. 685, թ. 16։

96 Տե՛ս Մ. Սևեոբյան, Մեր պայքարը... էջ 223։

սկսեց մտահոգել Թուրքական կառավարությանը, ուստի և վերջինս պահանջեց պատրիարքից՝ հասկացնելու Պողոս Նուբարին, որ նա ուղղակի դիմի Թուրքական կառավարությանը։ Տակավին 1912 թ. հոկտեմբերի 24-ին պատրիարքական տեղապահ Արշարունին և Ազգային ժողովի ատենապետ Ստեփան Կարայանը ներկայացել էին Կ. Պոլսի ռուսական դեսպան Գիրսին և շարադրել հայերի պահանջները։ Կարայանը հիշեցրել էր, որ եթե այս անգամ էլ եվրոպական մեծ պետությունները հրաժարվեն գործնական քայլերից, ապա հայերին մնում է դիմել «զինված պայքարի», ավելացնելով, որ նրանք իրենց ձախատագիրը կապում են ոչ թե Թուրքիայի, այլ Ռուսաստանի հետ[97]։

Մինիստրին գրած իր նամակում ռուսական դեսպանը հայտնում էր, որ Վանի, Բիթլիսի, Բայազետի, Էրզրումի և Տրապիզոնի ռուսական հյուպատոսների ներկայացրած տեղեկագրերում բերված փաստերը լիովին հաստատում են, որ հայերի համակրանքն անվերապահորեն Ռուսաստանի կողմն էր։ Դեսպանը հայտնում էր, որ հայերի պահանջներն արժանի են ամենաուշադիր վերաքերմունքի», այլապես նրանք ստիպված կլինեն դիմել եվրոպական պետություններին։ Եթե հնարավոր չէ վճռական խոստումներ տալ, ապա պետք է թեկուզ «ընդհանուր բնույթի հավաստիացումներ» անել։ Գիրսն անժամանակ էր համարում հայկական նահանգների գրավումը[98] և գտնում էր, որ միայն հայկական հուզումներն անխուսափելի դառնալու դեպքում «Ռուսական զորքերի մուտքը Հայաստան պետք է անհրաժեշտություն նկատվի»[99]։

1912 թ. դեկտեմբերի 1-ին Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Սազոնովը գրում էր Գիրսին, թե ինքը Թուրքական դեսպանին արդեն հայտնել է, որ հայերի գանգատները լուրջ հիմքեր ունեն, ուստի լավ կլիներ, որ Թուրքական կառավարությունն իր սեփական նախաձեռնությամբ լրջորեն զբաղվեր հայկական բարենորոգումների խնդրով։ Նա հանձնարարում էր Գիրսին նույն ոգով զրուցել Թուրքական արտաքին գործերի մինիստրի հետ, զգուշացնելով, որ այդ հարցն անուշադրության մատնելու դեպքում, Թուրքական կառավարությունն ստիպված կլինի գործ ունենալ Հայկական հարցի հետ այնպիսի բորբոքված վիճակում, որն անխուսափելի կդարձնի եվրոպական պետությունների միջամտությունը[100]։

1912 թ. նոյեմբերի վերջերին Գիրսն ընդունում է պատրիարքարանի ներկայացուցիչներ՝ Գր. Զոհրապին և Մարտիկյանին, որոնք հայտնում են, որ հայերի պահանջները դուրս չեն գալիս «անձի և ինքնվածքի անձեռնմխելիության» սահմաններից, բայց Թուրքական կառավարությունը մերժում է անգամ դրանց ապահովումը։ Այնուհետև Գիրսն ընդունում է Արևմտյան Հայաստանում կատարած շրջագայությունից նոր վերադարձած բժիշկ Զավրիևին, որի կարծիքով միայն Ռուսաստանն է ընդունակ լուծելու Հայկական հարցը՝ կամ «ուղղակի միջամտությամբ» կամ «ճնշում գործադրելով օսմանյան կառավարության վրա»[101]։

Թուրքական կառավարությունը փորձեց կանխել պետությունների միջամտությունը և հայճնշորեն հրապարակ հանեց հայկական վիլայեթներում

---

97 Տե՛ս ՌԱՔԻ, ֆ. «Քաղարխիվ», գ. 1044, թ. 274։

98 Տե՛ս «Реформы в Армении», СПб., 1915, стр. 3.

99 Նույն տեղում, էջ 45։

100 Տե՛ս նույն տեղում, էջ 6։

101 Նույն տեղում, էջ 294։

բարենորոգումներ մտցնելու իր նախագիծը[102]։ «Նախագծի» տեքստը չէր հաղորդվել պատրիարքին։ Ներքին գործերի մինիստրն ընդհանուր գծերով նրա բովանդակությունը ծանոթացրել էր Թուրքական կառավարության հետ բանակցող Ապահովության հանձնաժողովի երկու անդամներին։ Նման «ծանոթացումից» հետո մինիստրը պահանջել էր, որ Հայոց Ազգային ժողովի ներկայացուցիչները արտահայտեն իրենց կարծիքը կառավարական «նախագծի» վերաբերյալ։ 1912 թ. դեկտեմբերի 8-ին կառավարական հանձնաժողովի նիստին հրավիրվեցին մի քանի հայ գործիչներ, որոնք ճանաչված էին որպես ոտար միջամտության հակառակորդներ և պատրիարքարանում պաշտոնական դիրքեր չէին զբաղեցնում, ինչպես, օրինակ, նախկին պատրիարք Մ. Օրմանյանը, Թուրքական «Սաբահ» թերթի խմբագիր Տիրան Քելեկյանը և բանկիր Գ. Կյուլպենկյանը։

Թուրքական «նախագիծը» մի կատարյալ աշքակապություն էր։ Այն նկատի ուներ բարենորոգումներ մտցնել միայն Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի և Տրապիզոնի նահանգներում, բացառելով Սեբաստիայի ու Էրզրումի նահանգները։ «Նախագծի» սահմանափակ և ձևական բնույթը զարմանք պատճառեց նույնիսկ կառավարության վստահությունը վայելող մարդկանց, որոնք չքաշվեցին պարզ ու որոշակի հայտնել, թե «նախագիծը» միանգամայն անբավարար է իրրև բարենորոգումների ծրագիր, միաժամանակ հիշեցնելով, որ այն պետք է տարածել բոլոր հայկական նահանգների վրա։ Օրմանյանը և մյուս հրավիրվածները ցանկալի էին համարում դատական, ժանդարմական և ոստիկանական տնօրենների պաշտոններում նշանակել օտարերկրացիներին, ընդունել հայերեն և թուրքերեն լեզուների հավասարությունը դատավարական գործերում և անհապաղ լուծել հողային հարցը[103]։

Մի քանի օր անց՝ թուրքական մամուլում պաշտոնական հաղորդագրություն երևաց, թե բարենորոգումների նախագիծը վերամշակվել է «հայերի արտահայտած ցանկությունների ոգով»։ 1912 թ. դեկտեմբերի կեսին պատրիարքարանում հրավիրվեց Ազգային ժողովի հանձնաժողովների միացյալ նիստ, որն, անդրադառնալով այդ հաղորդագրությանը, նշեց, թե մասնավոր անձանց հետ վարած բանակցությունները չեն կարող հետինակություն համարվել և այդ պատճառով էլ պատրիարքությունը հնարավորություն չունի կարծիք հայտնելու նախագծի բովանդակության մասին, և չգիտե, թե «բարձր դուռն ինչ ձևով է մտադիր ապահովելու բարենորոգումների իրագործումը»[104]։

Միաժամանակ Պողոս Նուբարը շարունակում էր բանակցությունները Եվրոպայում։ Նրան օգնում էին Փարիզում և Լոնդոնում ստեղծված հայկական կոմիտեները, որոնց մեջ մտնում էին ոչ միայն հայեր, այլև անգլիացիներ, ֆրանսիացիներ, բելգիացիներ, ռուսներ։ Ցարական կառավարությունը Ամենայն Հայոց կաթողիկոսի միջոցով Պողոս Նուբարի գործունեությունը կասման մեջ դրեց ռուսական դիվանագիտության միջոցով[105]։

1913 թ. ապրիլի սկզբներին արևմտահայերը ռուսական դեսպան Խրսին

---

102 Տե՛ս նույն տեղում, էջ 17—18։

103 Տե՛ս ՕԱՔԱ, ֆ. «Բազարխիվ», 1912, գ. 1044, թ. 320։

104 «Реформы в Армении», стр. 20.

105 Տե՛ս նույն տեղում, էջ 23։

ներկայացրին բարենորոգումների իրենց նախագծերը, որոնց հիմնական դրույթները հանգում էին հետևյալին.

Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Սեբաստիայի, Խարբերդի և Դիարբեքիրի նահանգներից կազմվում է մի երկրամաս՝ գեներալ-նահանգապետի կամ գերագույն կոմիսարի կառավարման ներքո, որին առաջադրում են պետությունները, և հաստատում է սուլթանը։ Կոմիսարն անպայման պետք է լինի օտարերկրացի և մարմնավորի երկրամասի գործադիր բարձրագույն իշխանությունը։ Վարչական օկրուգների սահմանները որոշելիս պետք է հնարկետ ունենալ ազգագրական սկզբունքը։ Երկրամասային բարձրագույն ժողովի անդամների կեսը պետք է լիներն մահմեդականներ, իսկ մյուս կեսը՝ քրիստոնյաներ։ Գերագույն կոմիսարին առընթեր ստեղծվում է վարչական խորհուրդ, որի կազմի մեջ մտնելու էին օտարերկրացիները՝ որպես բաժինների պետեր և խորհրդականներ։ Ոստիկանական և ժանդարմական պաշտոնյանները պետք է նշանակվեն հավասար քանակությամբ քրիստոնյաներից ու մահմեդականներից, իսկ բարձր հրամանատարությունը հանձնվում է եվրոպացի սպաներին։ Զինապարտները զինվորական ծառայությունն անցում են իրենց երկրամասի սահմաններում։ Հայերից բռնագրավված հողերը պետք է վերադարձվեն վարչական կարգով, և դադարեցվի մուհաջիրների մուտքը Հայաստան։ Պետք է պաշտոնապես ճանաչվեն հայերի եկեղեցական, ազգային, կրթական և վարչական իրավունքները։ Վարչական ու դատական մարմիններում հայերինը դնել թուրքերենին հավասար գործածության մեջ[106]։

Հայերը պահանջում էին, որ բարենորոգումների գործը դրվեր բոլոր պետությունների վերահսկողության տակ, իսկ իրագործման ընթացքի հսկողությունը հանձնվեր Ռուսաստանին։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին խիստ սրվել էին իմպերիալիստական գլխավոր պետությունների տնտեսական ու քաղաքական շահերը Մերձավոր ու Միջին Արևելքում, մասնավորապես Թուրքիայում։ Եթե Ջրանսիան ձգտում էր ապահովել իր գերիշխանությունը Լիբանանում ու Սիրիայում, Անգլիան՝ Միջագետքում (Իրաք, Պաղեստին, Հորդանան), Ռուսաստանը՝ Արևմտյան Հայաստանում, ապա Ավստրիան ու Գերմանիան՝ բուն Թուրքիայում (Փոքր Ասիայում) և նրա միջոցով նաև ամբողջ Մերձավոր Արևելքում։ Ասպարեզ էր իջել նաև ամերիկյան իմպերիալիզմը, որը ձգտում էր նավթի և այլ հանույթի կոնցեսիաներ ձեռք բերել Միջագետքում ու Արևմտյան Հայաստանում։

Իրենց ձգտումներն իրագործելու նպատակով իմպերիալիստներն օգտագործում էին արտաքին առևտուրը, երկաթուղիների շինարարությունը, զանազան կոնցեսիաները, վարկերը և այլն։ Թուրքական կառավարությունն ընդառաջում էր գերմանական իմպերիալիզմին, որը խոստանում էր ոչ միայն ապահովել Օսմանյան կայսրության ամբողջականությունը, այլև ստեղծել Գերմանիայի հովանավորությամբ Օսմանյան մեծ կայսրություն՝ Բոսֆորից մինչև Վոլգա ու Պամիր։ Իմպերիալիստական պետություններից յուրաքանչյուրը չէր ցանկանում ո՛չ Ռուսաստանի, և ո՛չ էլ Գերմանիայի գերիշխանությունը Թուրքիայում, Հայաստանում, Իրանում, Մերձավոր Արևելքում ընդհան-

106 Տե՛ս նույն տեղում, էջ 24։

բապես՝ Անգլիան ու Ֆրանսիան շարունակ ձգտել են որքան հնարավոր է հեռու պահել Ռուսաստանին Մերձավոր Արևելքի դարպասներից։

Ահա թե ինչու, նթե Գերմանիան բացահայտորեն հանդես էր գալիս ռուսական առաջարկություններուն դեմ հայկական բարենորոգումների հարցում, ապա Անգլիան ու Ֆրանսիան անհրաժեշտ եուանդ չէին ցուցաբերում Ռուսաստանի նախաձեռնությունը պաշտպանելու գործում։ Այդուհանդերձ, բոլոր իմպերիալիստական տերություններն էլ ձգտում էին իրավազուրկ ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները ծառայեցնել իրենց զավթողական նպատակներին։

Համաշխարհային տիրապետության հասնելու ձգտման ճանապարհին գերմանական միլիտարիզմի քաղաքական պլաններում Թուրքիան դիտվում էր իբրև տնտեսական ու քաղաքական ներթափանցման գլխավոր կայան՝ Մերձավոր Արևելքում և իբրև դաշնակից՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեմ ծրագրվող պատերազմում։

Պանթուրքիզմի նվաճողական պլաններով տարված երիտթուրքական ազգամետներ պետական գործիչները ոգևորվում էին գերմանական միլիտարիզմի նախագծած հեռանկարներով։ Գերմանական դիվանագիտական և զինվորական բարձր շրջաններում իրենց հերթին անհանգստանում էին, թե «ամեն ինչ կարծես ճակատագրորեն հակվում է դեպի այն, որ Ռուսաստանը փորձի ի վերջո իր ձեռքը վերցնել Արևմտյան Հայաստանը՝ Փոքր Ասիայի և Միջագետքի բանալին»[107]։ Ուստի նրանք որոշեցին Թուրքիան ենթարկել Գերմանիայի հովանավորությանը, այնտեղ թույլ չտալ որևէ այլ պետության մուտքը։

Թուրքիային տիրելու համար գերմանական միլիտարիստները որոշում են իրենց ձեռքը վերցնել Կոստանդնուպոլիսը և բանակը։ Հենց այդ նպատակով էլ 1913 թ. դեկտեմբերի 14-ին Կ. Պոլիս ժամանեց գերմանական զինվորական միսիան՝ լիման ֆոն Սանդերսի գլխավորությամբ, որը պետք է զբաղվեր Բալկանյան պատերազմում չախչախված թուրքական բանակի վերակազմությամբ։ Գերմանական զեկավար շրջանների կարծիքով այդ պլանի իրագործմանը գլխավորապես պետք է արգելք հանդիսանային Ռուսաստանը և Անգլիան։ Բայց նրանք միաժամանակ հույս ունեին, որ Անգլիային կարող են հակադրել Ռուսաստանին, քանի որ Անգլիան չէր կարող անտարբեր նայել Ռուսաստանի առաջխաղացմանը դեպի հարավ։ Հիշյալ նկատառումներից ելնելով գերմանական դեսպան Վանգենհայմը համառ դիմադրություն էր ցույց տալիս ռուսական կառավարության փորձերին՝ շատ թե քիչ արմատական բնույթի բարենորոգումներ մտցնել Արևմտյան Հայաստանում։

Ցարական Ռուսաստանի արևելյան քաղաքականության մեջ Արևմտյան Հայաստանը որոշակի կարևոր տեղ էր զբավել։ Այն Ռուսաստանի համար ոչ միայն բանալի էր դեպի Մերձավոր Արևելք, այլև զրահ՝ կովկասյան սահմանների պաշտպանության տեսակետից։

Նշանակալից էին նաև ցարիզմի քաղաքական ու տնտեսական շահերը Արևմտյան Հայաստանում։ 1911 թ. վերջին առևտրի և արդյունաբերության մինիստրությանը կից խորհրդակցություն է գումարվում, որը ստեղծում է հանձնաժողով՝ Մերձավոր Արևելքի երկրների հետ ռուս ձեռնարկատերերի

---

107 ՌԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1913, գ. 3470, թ. 44։

առևտրաարդյունաբերական գործունեությունն ուսումնասիրելու և ծավալելու համար։ Այդ նպատակով հատուկ պատվիրակություն է գործուղվում Թուրքիա։ Ռուս կապիտալիստների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ռուսական ապրանքների ներմուծումը Թուրքիա աճել էր ավելի քան երկու անգամ, 1911 թ. 14,5 միլիոն ռուբլուց, 1914 թ. հասնելով 32 միլ. ռուբլու[108]։

Ռուսաստանից Արևմտյան Հայաստան էին ուղարկվում գլխավորապես շաքար, սպիրտ, երկաթ, նավթ և այլն։ Արևմտյան Հայաստանից ստացվում էին անասուններ, չմշակված կաշի և ուրիշ ապրանքներ։ Ռուսաստանի առևտրական կապերի ամրապնդմանը Արևմտյան Հայաստանի հետ նպաստում էին արևմտահայ վաճառականները, որոնք 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո արագորեն թողնում էին արևմտաեվրոպական արդյունաբերական կենտրոնները և կապվում ռուսական քաղաքների հետ։

Նոր իրադրությունից բխող ցարական կառավարության արտաքին քաղաքականությունը, արտահայտելով խոշոր կալվածատերերի և առևտրաարդյունաբերական բուրժուազիայի իմպերիալիստական ձգտումները, օբյեկտիվորեն ընդառաջում էր նաև արևմտահայ ազգային-ազատագրական շարժման պահանջներին։ Այդ է պատճառը, որ ռուսական բուրժուական մամուլը կադետական «Ռեչից» սկսած մինչև տասնյակ տարիներով ամենակատաղի հակահայկական պրոպագանդան փողհարող հետադիմական «Նովոյե վրեմյա» թերթը, սկսեց համակրական տոնով խոսել հայերի ազատագրական ձգտումների մասին, իսկ «Ռուսսկոյե սլովո» կոչ էր անում՝ «ղեկը ձեռքին միջամտել ի պաշտպանություն Հայաստանի»[109]։ 1913 թ. սկզբներին նույն թերթն ավելի ընդարձակ հոդվածով հանդես եկավ Հայկական հարցի օգտին։ «Մենք պետք է պաշտպանենք հայերին ամենավճռական ձևով»։ Այդ «ոչ միայն օգտավետ է Ռուսաստանին, այլև անհրաժեշտ՝ սեփական անվտանգության տեսակետից»[110]։

Ռուսական լիբերալ բուրժուազիայի դիրքն առավել որոշակի էր արտահայտվում կադետների պարագլուխ Միլյուկովի՝ Հայկական հարցի վերաբերյալ ելույթներում ու հոդվածներում։ «Ես խոսում եմ Թուրքահայաստանի մասին,— ասում էր նա։— Այդ վայրերը մեզ անհրաժեշտ են տնտեսական տեսակետից, որպես վաճառահանման շուկա, և ռազմավարտեգիական առումով»։ Նա հարց էր տալիս՝ «ինչո՞ւ Ռուսաստանը, որ Յապոնիայի հետ միասին ստորագրել էր Լիբանանին ինքնավարություն տալու մասին համաձայնագիրը, չպահանջեց պետություններից, որպեսզի նման արձանագրություն ստորագրեն Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածն իրագործելու մասին»[111]։

Ցարական կառավարության կողմից Հայկական հարցի նոր արծարծման նախաձեռնությունը հայերի կողմից ընկալվում էր որպես իրական ուղի՝ ստեղծված պատմական իրադրության մեջ պաշտպանվելու համար։ Այդ է պատճառը, որ հայ ժողովրդի գրեթե բոլոր խավերը պատրաստակամությամբ ընդառաջում էին ռուսական կառավարության նախաձեռնությանը և իրենց

---

108 Տե՛ս В. К. Лисенко, Ближний Восток как рынок сбыта русских товаров, СПб., 1913, стр. 292.

109 «Русское слово», 1912, *10 նոյեմբերի*։

110 «Русское слово», 1913, *22/9 հունվարի, № 7*։

111 «Речь», 14 декабря 1912 г.

ցանկալի ինքնավարությունը չիրականանալու դեպքում նույնիսկ դեմ չէին, որ Ռուսաստանը պարզապես գրավի Արևմտյան Հայաստանը։

• • •

1912 թ. դեկտեմբերի 13-ին Սազոնովը հրահանգում է Լոնդոնի և Փարիզի ռուսական դեսպաններին՝ սկսել պաշտոնական բանակցությունները ֆրանսիական և անգլիական կառավարությունների հետ՝ Հայկական հարցի շուրջը։ Ռուսական կառավարությունն առաջարկում էր հանձնարարել երեք երկրների դեսպաններին՝ Կ. Պոլսում համատեղ մշակելու հայկական բարենորոգումների կոնկրետ նախագիծ[112]։ 1913 թ. հունվարի սկզբներին Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները հայտնեցին, որ իրենք պաշտպանում են ռուսական կառավարության տեսակետը Հայկական հարցում և համապատասխան հրահանգ են տվել Կ. Պոլսի իրենց դեսպաններին։

1913 թ. հունվարի 10-ին վերստին իշխանության գլուխ անցած երիտթուրքերը մի կողմ նետեցին «Իթիլաֆի» պարագլուխ Քյամիլ փաշայի նախագիծը և դադարեցրին բարենորոգումների հարցի մասին հայերի հետ տարվող բանակցությունները։ Նոր կառավարությունը հրապարակ հանեց ամբողջ կայսրության մեջ բարենորոգումներ մտցնելու վերաբերյալ իր սեփական նախագիծը և հանձնարարեց Լոնդոնի թուրքական դեսպանին հայտնելու անգլիական կառավարությանը, որ թուրքական կառավարության համար ցանկալի չեն առանձին բարենորոգումները Հայաստանում, այլ գերադասելի են ընդհանուր բարենորոգումներն ամբողջ կայսրության մեջ։

1913 թ. մայիսին Ազգային ժողովի հատուկ հանձնաժողովը կազմում է մի հուշագիր՝ հայկական նահանգներում տիրող դրության վերաբերյալ և ներկայացնում թուրքական կառավարությանը։ Հուշագրին կից ներկայացված էր 1913 թ. ապրիլի 29-ից մինչև մայիսի 18-ը գավառներում հայերի նկատմամբ տեղի ունեցած հանցագործությունների ցուցակը։ Հուշագիրը թուրքական կառավարության ուշադրությունն էր հրավիրում այն փաստերի վրա, որ Ադանայի վիլայեթում կրկին երևացել են հայկական ջարդերի կազմակերպիչները և որ իշխանությունները «բծախնդրությամբ հավաքում են հայերից ամեն տեսակ զենք այն ժամանակ, երբ նրանց թշնամիները բացահայտորեն զինվում են»[113]։

1913 թ. մայիսի 23-ին Սազոնովը հանձնարարում է Բեռլինի ռուսական դեսպան Սվերբեևին հայտնելու գերմանական կառավարությանը, որ Ռուսաստանը ցանկանում է արագացնել Արևմտյան Հայաստանում մտցվելիք բարենորոգումների հարցի քննարկումը։ Դրան հետևում է արտաքին գործերի մինիստրի տեղակալ Ներատովի հեռագիրը Փարիզի, Լոնդոնի, Բեռլինի, Վիեննայի և Հռոմի ռուսական դեսպաններին՝ խնդրել այդ երկրների կառավարություններին՝ Հայկական հարցի քննարկումը հանձնարարել Կ. Պոլսի իրենց դեսպաններին[114]։

Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները ցուցում տվեցին Կ. Պոլսի իրենց դեսպաններին անհապաղ կապվել ռուսական դեսպանի հետ, իսկ

---

112 Տե՛ս «Реформы в Армении», стр. 9.

113 ԹԱՔԱ, ֆ. «Քաղարխիվ», 1913, գ. 1047, թ. 198։

114 Տե՛ս «Реформы в Армении», стр. 41.

«Եռյակ միություն» պետությունները (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա և Իտալիա) վերապահություն արեցին, որ կմասնակցեն հարցի քննարկմանը, եթե պահպանվի կայսրության անձեռնմխելիությունն ու սուլթանի սուվերեն իրավունքները, և եթե թուրքական պատվիրակությունը մասնակցի նիստերին։ Ռուսական դեսպանի հետ ունեցած հանդիպման ժամանակ, Գերմանիայի արտաքին գործերի մինիստր Ֆոն Յագովը, կասկած հայտնեց, որ հազիվ թե դեսպանների աշխատանքը շոշափելի արդյունքի հանգի։ Սվերբեևը գրում էր Սազոնովին, թե զգացվում էր Ֆոն Յագովի զժգոհությունը ռուսական նախաձեռնության նկատմամբ, և որ Գերմանիան մտադիր է հանդես գալ բանակցությունները ձախողելու միտումով[115]։

1913 թ. հունիսին Փրկը հանձնարարում է դեսպանատան առաջին քարտուղար և խորհրդական Մանդելշտամին՝ մշակելու Հայաստանում բարենորոգումների ռուսական նախագիծը, ղեկավարվելով 1880 և 1895 թթ. ծրագրերով։ Նույն թվականի հունիսի 4-ին մշակված նախագիծը քննության է առնվում «Եռյակ համաձայնության» (Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի) պետությունների դեսպանների կողմից և ընդունվում աննշան փոփոխություններով։ Հունիսի 17-ին խորհրդակցության են նստում բոլոր վեց պետությունների դեսպանները։ Փրկը քննության է դնում «Եռյակ համաձայնության» կողմից ընդունված ռուսական նախագիծը։ Գերմանական և ավստրիական դեսպաններն առաջարկում են միաժամանակ քննարկել բարենորոգումների թուրքական նախագիծը։ Փրկը պատասխանում է, որ առայժմ իրեն հայտնի չէ նման նախագծի գոյությունը, ուստի և ռուսական նախագծի քննարկումը չպիտի ձգձգվի այդ պատճառով։ Դեսպանաժողովը միանում է Փրկի առաջարկությանը, միաժամանակ անհրաժեշտ համարելով հանձնաժողովի քննությանը հանձնել թուրքական նախագիծը, հենց որ այն ստացվի։ Այդ ժամանակ Ֆրանսիայի ներկայացուցիչը հրապարակում է թուրքական կառավարության հուշագիրը, որով ազդարարվում էր, թե շուտով կներկայացվի թուրքական նախագիծը։ Փրկի առաջարկությամբ դեսպանների խորհրդակցությունը սկսվելու էր փակ նիստով, որպեսզի թուրքական ներկայացուցիչը չկարողանար մասնակցել ռուսական նախագծի քննարկմանը։

Ըստ Մանդելշտամի նախագծի, հայկական վեց վիլայեթներից ստեղծվելու էր մի ամբողջական «Պրովինցիա» երկրամաս (Նահանգ), բացառյալ մի քանի սահմանային շրջանների, ուր գերակշռում էր քրդական ազգաբնակչությունը[116], «Պրովինցիայի» գերագույն կառավարիչը պետք է լիներ թուրքահպատակ քրիստոնյա կամ եվրոպացի, որին նշանակելու էր սուլթանը՝ պետությունների առաջարկությամբ։

Այդ գեներալ-նահանգապետի կամ կոմիսարի ձեռքում էր կենտրոնացվելու երկրամասի գերագույն գործադիր իշխանությունը։ Նա էր նշանակելու և արձակելու բոլոր պաշտոնյաներին առանց բացառության, այդ թվում նաև դատավորներին։ Նրան էին ենթարկվելու ոստիկանությունը և ժանդարմական կորպուսը, ինչպես և զինվորական համապատասխան ուժեր՝ երկրամասում կարգը պահպանելու համար։ «Պրովինցիայի» ներկայացուցչական ժողովը կազմվելու էր հավասարապես մահմեդականներից ու քրիստոնյաներից, որոնք

115 Տե՛ս նույն տեղում, էջ 43։

116 Տե՛ս նույն տեղում, էջ 52—69։

պետք է ընտրվեին կազմներում (շրջաններում)՝ գաղտնի քվեարկությամբ։ Ժողովը հրապարակելու էր օրենքներ, որոնց օրինագծերը պետք է հաստատվեին սուլթանի կողմից։ Վիլայեթների և սանջակների (գավառների) վարչական խորհուրդները բաղկացած էին լինելու 6-ական հոգուց՝ երեք մահմեդականից և երեք քրիստոնյայից, իսկ պաշտոնական որոշումները, հնարավորության դեպքում, հրապարակվելու էին «Պրովինցիալիա» ազգությունների լեզուներով։ Նահիճում (համաշխարհում) ընտրական օկրուգները պետք է այնպես սահմանվեին, որ յուրաքանչյուր օկրուգում ընդգրկված լիներն տվյալ համայնքի բնակիչներն ըստ ազգային կազմի։ Խաղաղ պայմաններում զինապարտները ծառայությունն անց էին կացնելու «Պրովինցիալիա» տերիտորիայում։ Վերացվելու էր «համիդիեհ հնձելազորը, ընտրական իրավունքից օգտվելու էր միայն նստակյաց ազգաբնակչությունը։ Երեք գլխավոր լեզուները (թուրքերենը, հայերենը և քրդերենը) ճանաչվելու էին որպես պաշտոնական լեզուներ՝ օրենքներ հրատարակելու, ծառայությունը վարելու, վկաների ցուցմունքների ժամանակ։

Յուրաքանչյուր ազգություն իրավունք էր ունենալու իր միջոցներով դպրոցներ բացելու, իսկ դասավանդումը տանելու մայրենի լեզվով։ Միաժամանակ թուրքերենի ուսուցումը պարտադիր էր լինելու։ Դպրոցական գործը պետք է գտնվեր գիներալ-նահանգապետի ընդհանուր հսկողության տակ։ Նրա գլխավորությամբ հատուկ հանձնաժողովը սահմանելու էր այն պայմանները, որոնց համաձայն հայերը կարող էին փոխհատուցում ստանալ իրենցից բռնանգրավված հողերի դիմաց։ Պետությունների և թուրքական կառավարության ներկայացուցիչներից բաղկացած հատուկ հանձնաժողովը պետք է մշակեր «Պրովինցիալիա» օրգանական statutum-ը, ինչպես նաև նախագծեր՝ «Պրովինցիալիա» սահմաններից դուրս (մասնավորապես Կիլիկիայում) ապրող հայերի վիճակը բարելավելու նպատակով։ Պետություններն իրենց հսկողության տակ էին վերցնելու այս բարենորոգումների կենսագործումը։

Ռուսական նախագծին զուգահեռ կազմվեց նաև թուրքական նախագիծը, որը փաստորեն բարենորոգումների ծրագիր չէր, այլ գոյություն ունեցող վարչական բյուրոկրատական սիստեմն ամրապնդելու մի նոր փորձ, հետապնդելով միայն մի նպատակ՝ խափանել հայկական վիլայեթներում հատուկ բարենորոգումներ մտցնելու գործը։

1913 թ. հուլիսի 3-ին Կ. Պոլսի Ննի-Քյոյ արվարձանում, ավստրո-հունգարական դեսպանատան շենքում իր աշխատանքներն սկսեց «Հայկական բարենորոգումների հանձնաժողովը»։ Անտանտի ներկայացուցիչները վճռականապես մերժեցին «Ռուսկ միությանն» պետությունների պահանջը՝ ռուսական նախագծի հետ հավասարապես քննության առնել նաև թուրքական նախագիծը։ Գերմանական բլոկի ներկայացուցիչներն ամեն կերպ ձգտում էին արժեզրկել ռուսական նախագիծը։ Ի պատասխան գերմանական պրոպագանդայի, ցարական կառավարությունը Պետերբուրգի գերմանական, ավստրիականն և իտալական դեսպաններին հանձնեց արտաքսհամանի ռուսական դիվանագիտական ներկայացուցիչներին ուղարկված հրահանգների պատճենը, որտեղ որոշակիորեն ասված էր, որ Ռուսաստանը, ինչպես և մյուս պետությունները, բացառաբար է վերաբերվում Օսմանյան կայսրությունը բաժանելու մտքին և որ Թուրքիայի ամբողջականության պահպանումն զգալի չափով կախում ունի հայերի վիճակի բարելավումից, քանի որ նրանք ամենից շատ են

տուժել վատ կառավարչաձևից[117]։ Ապա ընդգծվում էր, որ Թուրքիան չի կարող հանդուրժել երկարատև ֆրոնտիկական գործած անարխիան Հարեվան Թուրքիայում, որը կործանարար ազդեցություն է թողնում նաև Կովկասում։

Գերմանական կառավարությունը չհապաղեց հատուկ հուշագրով Պետերբուրգին հայտնել, որ ռուսական նախագծի իրականացման դեպքում կտեղծվի Թուրքիայի մասնատման վտանգ։ Ուստի անհրաժեշտ է հաշվի առնել նաև Թուրքիայի պահանջները[118]։

Հետևելով Գերմանիայի արտաքին գործերի մինիստր Ֆոն Յագովին, Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստր Գրեյը նույնպես հայտարարեց, որ Մանդելշտամի նախագիծը «անխուսափելիորեն հանգեցնելու է Թուրքիայի բաժանմանը»[119]։ Անգլիական դիվանագիտությունն իր դիրքը պատճառաբանում էր այն «փաստարկումով», որ իբր Ին դկաստանի մահմեդականությունը կարող է մեղադրել Անգլիային Թուրքիայի բաժանման ակտին մասնակցելու համար[120]։

Նվ այդպես էլ Կ. Պոլսում գործող հանձնաժողովն իր ութ նիստերում չկարողացավ հանգել միահամուռ եզրակացության ռուսական նախագծի վերաբերյալ։ Դեսպանները վճռականապես դեմ էին հայկական վեց վիլայեթները մեկ գեներալ-նահանգապետի իշխանությանը հանձնելու առաջարկին, պահանջում էին դրանք բաժանել երկու սեկտորի, ինչպես ավստրո-գերմանական բլոկն էր առաջարկում, նահանջ կատարել նույնիսկ 1895 թ. սուլթանական հրահանգից, որը մեկ գեներալ-նահանգապետ էր նախատեսում հայկական նահանգների համար[121]։ Դեսպաններն առարկում էին նաև մյուս կարևոր դրույթների դեմ, համաձայնության գալով սոսկ առանձին կետերում։

Բնութագրելով ավստրո-գերմանական ներկայացուցիչների բռնած դիրքը, Մանդելշտամը նրանց անվանեց սուլթանի և քարդերի կազմակերպիչների փաստաբաններ[122]։ Ավստրո-գերմանական բլոկի ջանքերով ռուսական նախագծից ջնջվեցին ամենակարևոր դրույթները, որոնք կենսական նշանակություն կարող էին ունենալ արևմտահայության կյանքի ու գույքի ապահովության տեսակետից։

Հայկական հարցի քննարկման այս առաջին փուլում ռուսական դիվանագիտության ջանքերը փաստորեն ձախողվեցին։ Պետությունների ներկայացուցիչները չկարողացան լուծել հայկական միասնական «Պրովինցիա» ստեղծելու և տերությունների համաձայնությամբ սուլթանի կողմից գերագույն կառավարիչ նշանակելու հարցերը։ Հատկապես վերջին դիջումը, ինչպես նշում

---

117 *Տե՛ս* նույն տեղում, էջ 74—75։

118 *Տե՛ս* նույն տեղում, էջ 76—77։ Նաև՝ „Die Große Politik...", t. XXXVIII, № 15, 337, 15, 347 և այլն։

119 „Die Große Politik...", t. XXXVIII, № 15, 359։ Նաև „British Documents...", t. X, pt. I, № 546, 554։

120 *Տե՛ս* „British Documents...", t. X, pt. I, № 532, 533։ Նաև՝ „Documents diplomatiques Français...", 3me Series, t. VIII, № 331, 345։

121 *Տե՛ս* «Реформы в Армении», էջ 192, նաև հանձնաժողովի արձանագրությունը, նույն տեղում, էջ 192—200։

122 *Տե՛ս* A. N. Mandelstam, Le sort de l'Empire Ottoman, Paris, 1917, p. 229.

է Գիրքը, «Հավասարազոր է Հայաստանում ամեն տեսակի բարենորոգումներից ընդհանրապես հրաժարվելուն»[123]։

Միասնական «Պրովինցիա» ստեղծելու կապակցությամբ պետությունների կանակծներն ու երկուղները ցրելու նպատակով, Սազոնովը հնարավոր էր համարում հայկական նահանգները երկու սեկտորի բաժանել՝ յուրաքանչյուրի համար առանձին կառավարիչ նշանակելով, բայց պարտադիր կերպով պահպանելով հետևյալ պայմանները. ա) որպեսզի սեկտորների բաժանման ենթարկվեն միայն այն տերիտորիաները, որոնց նկատի ունի ռուսական նախագիծը, բացառված լինի ուրիշ տերիտորիաների միացումը սեկտորներին։ Մինչդեռ Թուրքական «նախագիծը» նախատեսում էր սեկտորների մեջ մտցնել մահմեդական շրջանները, որպեսզի այսպիսով Հայաստանում ստեղծվեր մահմեդական մեծամասնություն. բ) որպեսզի երկու կառավարիչներն էլ նշանակվեն պետությունների համաձայնությամբ և լինեն լիովին ինքնուրույն իրենց ենթակա սեկտորներում պաշտոնյաներին արձակելու և նշանակելու իրավում[124]։

Ձախողելով Կ. Պոլսի բանակցությունները, գերմանական կառավարությունը ձգտում էր Թուրքիային ձեռնտու ընթացք տալ գործին։ Այդ նպատակով Լեփսիուսը հանձնարարություն է ստանում հայերին ներկայացնել հետևյալ առաջարկությունները. Հայաստանը բաժանվում է երկու սեկտորի, ընդ որում առաջինի մեջ մտնում են Տրապիզոնը, Սվազը, Էրզրումը, իսկ երկրորդի մեջ՝ Խարբերդը, Վանը, Բիթլիսը և Դիարբեքիրը։ Գերմանիան այլևս չէր դիմադրելու պետությունների կողմից գլխավոր կառավարիչներ առաջադրելու սկզբունքին և համաձայնվում էր գերագույն ժողովում ու վիլայեթների վարչական խորհուրդներում, դատական ու վարչական պաշտոնյաների նշանակման հարցում քրիստոնյաների ու մահմեդականների հավասարության սկզբունքին, բացառությամբ զուտ մահմեդական բնակչություն ունեցող շրջանների։

Գոտեպնդված գերմանական պաշտպանությունից, Թալեաթը հրավիրեց օսմանյան պառլամենտի հայ դեպուտատներին և առաջարկեց օգնել Թուրքերին վերջացնելու Հայկական հարցի քաշքշուկը»[125], հայտարարելով, որ ավելի լավ է հարցը լուծել հայերի և Թուրքերի անմիջական բանակցությունների ճանապարհով։ Նա չթաքցրեց նաև, որ ինքը գերմանական դեսպանից իմացել է, որ պետությունները մերժել են ռուսական նախագիծը։ Ինչ վերաբերում էր պետությունների կողմից վերահսկողության խնդրին, ապա, Թալեաթի կարծիքով, այն փաստորեն գոյություն ուներ, քանի որ դեսպաններն անմիջապես բողոք էին ներկայացնում, հենց որ մի հայ էր սպանվում թրծոբի կողմից։ Ինչպես Գերմանիան, նույնպես և Թուրքիան պահանջում էին հայերից՝ ետ կանչել Պողոս Նուբարին և դադարեցնել նրա բանակցությունները Եվրոպայում։

1913 թ. օգոստոսի 6-ին Սազոնովը հանձնարարեց Բրոնևսկուն՝ հրավիրել Յիմմերմանի ուշադրությունը այն բանի վրա, որ Ռուսաստանը «չի կարող գործը ձգձգել, Թուրքական կառավարությանը վարժեցնելով այն մտքին, թե

---

123 «Реформы в Армении», стр. 77.

124 Տե՛ս նույն տեղում, էջ 78։

125 Նույն տեղում, էջ 80։

ամեն բան կվերջանա խոսակցություններով և Թե Ռուսաստանը չի պնդելու իր պահանջների վրա»[126]։

Անգլիան և Ֆրանսիան շարունակում էին իրենց պասսիվ դիրքը Հայկական հարցի նկատմամբ, որը ցարական կառավարության շրջաններում առաջ էր բերում ոչ միայն անբավականություն, այլև կասկած, թե որքանով նպատակահարմար էր առհասարակ համագործակցությունը նրանց հետ։ Եվ ռուսական դիվանագիտությունը չհապաղեց զգացնել տալ այդ մասին, անգամ փորձելով վախեցնել նրանց ռուս-գերմանական մերձեցման հեռանկարով։

Համաձայնաբար այս տրամադրությունները որոշակի դեր խաղացին, քանի որ անգլիական դիվանագիտությունն սկսեց աշխուժություն ցուցաբերել Հայկական հարցի նկատմամբ։ 1913 թ. օգոստոսի կեսերին Մեծ Բրիտանիայի արտաքին գործերի մինիստրը թուրքական դեսպանին հանձնեց թղթերի և թուրքերի կողմից Հայաստանում կատարած հանցագործությունների վերաբերյալ մի տեղեկագիր, զգուշացնելով, որ նման երևույթների կրկնությունը կարող է առաջ բերել դրսի միջամտություն[127]։

Գերմանական կողմը ձգտում էր մեկուսացնել ռուսական դիվանագիտությանը Հայկական հարցում։ 1913 թ. սեպտեմբերի 12-ին Ֆոն Յագովը Բրոնևսկուն է հանձնում իր կառավարության հուշագիրը Հայկական հարցի վերաբերյալ, որի մեջ ասված էր, որ «Եռյակ միության» պետությունների ներկայացուցիչներն առարկել են ռուսական նախագծի այն կետերի դեմ, որոնք անընդունելի են թուրքական կառավարության համար[128]։

Գերմանիան առարկում էր ռուսական դիվանագիտության այն առաջարկի դեմ, որը հայկական նահանգները երկու սեկտորի էր բաժանում ուղղահայաց գծով (հյուսիսից հարավ) և գտնում էր, որ սեկտորներն իրարից բաժանող գիծը պետք է անցնի հորիզոնական (արևմուտքից արևելք) ուղղությամբ, ինչպես որ նախատեսում էր թուրքական նախագիծը[129]։ Ֆոն Յագովը ավելացրել էր, որ պետք է մշակվի մի այնպիսի նախագիծ, որն ընդունելի լինի Թուրքիայի համար, քանի որ պետությունները «վերջին հաշվով... տրամադիր չեն հայկական բարենորոգումների իրագործման համար ուժի դիմելու։ Բրոնևսկին նկատում է, որ Թուրքիան երբեք չէր առարկի ռուսական նախագծին, եթե պետությունների միջև տարաձայնություններ չլինեին, ինչի մեջ և կայանում է «թուրքական դիմադրության ամբողջական ուժը»[130]։

Ռուս-գերմանական երկկողմանի բանակցությունների արդյունքը եղավ վեց կետից կազմված մի նախագիծ, որը և ներկայացվեց թուրքական կառավարությանը[131]։ 1913 թ. հոկտեմբերի 10-ին ռուսական դեսպանությունն ստացավ թուրքական կառավարության պատասխանը, որով հայտնվում էր, թե նա մտադիր է իրագործել բարենորոգումների ծրագիրը[132]։ Սակայն Բ. դուռը անհրաժեշտ էր համարում պետությունների համաձայնությունը ոչ թե գե-

126 Նույն տեղում։
127 Տե՛ս նույն տեղում, էջ 81։
128 Տե՛ս նույն տեղում, էջ 85։
129 Տե՛ս նույն տեղում։
130 Նույն տեղում։
131 Տե՛ս նույն տեղում, էջ 93—94։
132 Տե՛ս նույն տեղում, էջ 99։

րագույն կոմիսարների, այլ միայն նրանց խորհրդականների նշանակման հարցում։ Սազոնովի համաձայնությամբ Գիրսը հայտնեց մեծ վեզիրին, որ զիջումների մեջ Ռուսաստանը հասել է վերջնական սահմանին և որ հարցի ձգձգումը կարող է լուրջ բարդություններ առաջացնել[133]։ Այդ օրերին Թուրքիան ծանր կացության մեջ էր Բալկանյան նոր պատերազմի կապակցությամբ և բացառված չէր, որ Ռուսաստանի որոշ քայլերը կարող էին իրոք առավել բարդացնել նրա վիճակը։ Հավանաբար այդ էր պատճառը, որ գերմանական կառավարությունը որոշեց վերջ տալ բանակցությունների քաշքշուկին, անհրաժեշտ համարելով համաձայնության եզր գտնել Ռուսաստանի հետ։

1913 թ. դեկտեմբերի 12-ին Գիրսը և գերմանական դեսպան Վանգենհայմը միասին այցելեցին թուրքական վարչապետին և առաջարկեցին ընդունել ռուսական ուղղումները։ Նման քայլի շարժառիթը նաև այն էր, որ Գերմանիան ձգտում էր մյուս պետությունների համաձայնությունն ստանալ՝ Թուրքիա զինվորական պատվիրակություն ուղարկելու համար։ Լեփսիուսի վկայությամբ Վանգենհայմը Կ. Պոլսից մեկնելուց առաջ, թուրքական արտաքին գործերի մինիստրին ասել էր, թե անհապաղ պետք է ընդունել բարենորոգումների նախագիծը, հակառակ դեպքում Ռուսաստանը կարող է գրավել Հայաստանը։ «Եթե դուք ընդունեք նախագիծը,— նշել էր նա,— ապա ես կարող եմ լռեցնել պետությունների բողոքի ձայնը՝ գերմանական ռազմական պատվիրակության առաքման դեմ»[134]։

1913 թ. դեկտեմբերի 16-ին Բ. դուռը դեսպաններին է ներկայացնում հայկական նահանգների գերագույն կառավարիչների նշանակման ու նրանց իրավահավասարությունների մասին հուշագիրը[135]։ Չնայած դրան, թուրքական կառավարությունը շարունակում էր իր մեքենայությունները։ Պետերբուրգում թուրքական հավատարմատար Ֆահրեդդին բեյը հայտնել էր Սազոնովին, թե իր կառավարությունը պատրաստ է անհապաղ ստորագրել պայմանագիրը, եթե ռուսական կողմը համաձայնվի, որ գլխավոր խորհուրդներն իրավունք չունենան հարկեր սահմանելու կրոնական և կրթական հիմնարկների օգտին, հրաժարվի խորհուրդներում և վարչական մարմիններում քրիստոնյաների և մահմեդականների թվի հավասարության և «համիդիե» գնդերը, որոնք 1910 թ. վերանվանվել էին «հաֆֆի սուվարի» (թեթև հեծելազոր) ցրելու պահանջից։ Սազոնովը վճռականապես մերժում է թուրքական կողմի առարկությունները։ Կ. Պոլսում Թալեաթը, Ջեմալը և ուրիշ մինիստրներ երկար սակարկում էին խորհուրդներում մահմեդականների ու քրիստոնյաների ներկայացուցիչների թվաքանակի հարցի շուրջը։ Ի վերջո համաձայնություն է կայացվում, որ Վանի, Բիթլիսի և էրզրումի վիլայեթների խորհուրդներում կիրառվի հավասարության սկզբունքը, իսկ Դիարբեքիրի, Խարբերդի, Սեբաստիայի և Տրապիզոնի վիլայեթներում մահմեդականները կազմեն $^{2}/_{3}$, իսկ քրիստոնյաները $^{1}/_{3}$ մասը։

1914 թ. հունվարի 26-ին Կ. Պոլսում վերջապես ստորագրվեց ռուս-թուր-

---

133 Տե՛ս նույն տեղում, էջ 113։

134 ՌԱՔԱ, ֆ. Քաղարխիվ, 1913, գ. 3470, թ. 40։

135 Տե՛ս «Реформы в Армении», стр. 127.

քական համաձայնագիրը[136] հայկական բարենորոգումների վերաբերյալ։ Ռուսաստանի կողմից այն ստորագրեց դիվանագիտական հավատարմատար Գուլկևիչը, իսկ Թուրքիայի կառավարության կողմից մեծ վեզիրը՝ Սայիդ-Հալիմ փաշան։

Հունվարի 28-ին ավստրիական և իտալական դեսպանները հաղորդեցին իրենց կառավարություններին մեծ վեզիրի խնդրանքը՝ գերագույն կառավարիչների թեկնածուներ առաջադրելու վերաբերյալ։ Թուրքական կառավարությունը խնդրել էր յուրաքանչյուր սեկտորի համար երկու թեկնածություն առաջադրել, որպեսզի ինքն ազատ լինի ընտրություն կատարելու մեջ։ Նույն բովանդակությամբ դիմում էր արված նաև Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի ներկայացուցիչներին։ 1914 թ. ապրիլին Թուրքական կառավարությանը հանձնվեց հինգ թեկնածություն։ Ապրիլի 15-ին Բ. դուռը նրանցից ընտրեց երկու հոգու՝ հոլանդացի գիվանագետ Վեստեննենկին (Կանգրայի նախկին նահանգապետը) և նորվեգացի գնդապետ Հոֆին։ 1914 թ. մայիսի 10-ին Վեստեննենկն ու Հոֆը Թուրքիայի ներքին գործերի մինիստր Թալեաթի հետ ստորագրեցին իրենց համաձայնագրերը, որոնք, սակայն, մնացին չիրականացված վերահաս պատերազմի պատճառով։

Այսպիսով, թևպետ և չընդունվեց ռուսական առաջին ծրագիրը, այնուամենայնիվ փաստն այն է, որ հունվարի 26-ի համաձայնագիրը հայկական վիլայեթների կառավարման մասին մի քայլ առաջ էր Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի համեմատությամբ։ Հայաստանի գերագույն կառավարիչներն իրավունք էին ունենալու նշանակել կամ ազատել պետական բոլոր ստորին ծառայողներին, առաջարկություններ անել բարձր պաշտոնների համար (բացի կուսակալներից)։ Նրանց էին ենթարկվելու ոստիկանությունը, ժանդարմական ապարատը և դատավորները։ Կուսակալների հետ ունեցած տարաձայնությունների դեպքում կառավարիչները հեռագրով հայտնելու էին Բ. դռանը, որը պարտավոր էր չորս օրվա ընթացքում որոշում ընդունել։ Այդ որոշումը չպետք է հակառակ լիներ գերագույն կառավարիչների կարծիքին, եթե թուրքական կառավարությունը չէր ցանկանում նրանց հրաժարականը և պետությունների նոր միջամտությունը, որն անխուսափելի էր լինելու կառավարիչների հրաժարականի դեպքում։

Գերագույն կառավարիչներն իրենց տրամադրության տակ ունենալու էին ռազմական ուժեր՝ ներքին կարգը պահպանելու համար։ Ջենք կրելու խնդրում հայերի իրավունքները հավասարեցվում էին մահմեդականների իրավունքներին։ Համաձայնագրով թևև «համիդիե» գնդերը չէին լրվում, բայց ընդհանուր զորակոչից և զորաշարժերից դուրս, խաղաղ ժամանակ, նրանք զբաղվում էին զենք կրելու իրավունքից։ Հայկական դպրոցները պետք է ֆինանսավորվեին պետական բյուջեից։ Պաշտոնական հարաբերություններում բավական տեղ էր տրվում մայրենի լեզվին։

Վանի և Բիթլիսի վիլայեթներում քրիստոնյաների համար ապահովվում էր հավասարության սկզբունքը՝ գլխավոր խորհուրդներում։ Էրզրումի վիլայեթում այդ սկզբունքն իրագործվելու էր մեկ տարվա ընթացքում՝ մարզահա-

---

136 Տե՛ս «Реформы в Армении», стр. 162—165 (Текст русско-турецкого соглашения по армянским реформам). Նաև «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923)», էջ 339—342։

մարն անցկացնելու պայմանով։ Իսկ մնացած վիլայեթներում կիրառվելու էր $^2/_3$-ը մահմեդականներ և $^1/_3$-ը քրիստոնյաներ համամասնության սկզբունքը։

Բարենորոգումների մասին ռուս-թուրքական համաձայնագիրը խանդավառությամբ չընդունվեց հայ հասարակական-քաղաքական շրջանների և սոցիալական տարբեր խավերի կողմից։

Հայկական հարցի դիվանագիտական քաշքշուկի մեջ որոշակի դրսևորվեցին իմպերիալիստական մեծ պետությունների շահերի բախումները և նրանց պայքարը Մերձավոր ու Միջին Արևելքում ստրատեգիական դիրքեր, ազդեցության գոտիներ, սպառման շուկաներ և հումքի աղբյուրներ զավթելու համար։ Հայաստանն ընկած էր մրցակցության և շահերի բախման խաչուղիներում։ Հայ ժողովրդի համար ստեղծվել էր մի զարհուրելի գոյավիճակ, որը թիշ էր հետաքրքրում և չէր մտահոգում աշխարհի վերաբաժանման համար պայքարի ելած իմպերիալիստական պետություններին։

Թուրքիան որոշակիորեն գործակցում էր գերմանական իմպերիալիզմի հետ։ Ցարական կառավարությունը փորձեց Թուրքիայի վրա ճնշում գործադրելու նպատակով որպես լծակ օգտագործել Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրագործման պահանջը։ Ռուս-թուրքական 1914 թ. հունվարի 26-ի համաձայնագրի արդյունքը կլիներ Արևմտյան Հայաստանում Ռուսաստանի հովանավորության հաստատումը։ Սակայն Գերմանիայի պաշտպանությամբ Թուրքիան մտադիր չէր իրագործել համաձայնագիրը։ Նվ լծակը «թեև գործի դրվեց, բայց և այնպես չգործեց»[137]. վրա հասավ առաջին աշխարհամարտը։

137 «История дипломатии», 2-ое издание, т. 2, М., 1963, стр. 761.

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՑԱՍՏԱՆՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

1. ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՈՒՄ

Առաջին համաշխարհային պատերազմն սկսվեց 1914 թ. օգոստոսի 1-ին (հուլիսի 19-ին) իմպերիալիստական պետությունների երկու խմբավորումների՝ Անտանտայի (Անգլիա, Ֆրանսիա, Ռուսաստան) և գերմանո-ավստրիական բլոկի (Գերմանիա, Ավստրո-Հունգարիա, Թուրքիա, որոնց 1915 թ. միացավ և Բուլղարիան) միջև։ Անտանտային հետագայում միացան նաև Իտալիան, Ճապոնիան, Ռումինիան և Ամերիկայի Միացյալ Նահանգները։ Կայզերական Գերմանիան օգոստոսի 1-ին պատերազմ հայտարարեց Ռուսաստանին, օգոստոսի 3-ին՝ Ֆրանսիային, իսկ 4-ին Անգլիան՝ Գերմանիային։ Պատերազմական գործողություններն սկսվեցին Եվրոպայի, Աֆրիկայի և Ասիայի մայրցամաքներում։ Եվրոպայի Արևմտյան և Արևելյան ռազմական թատերաբեմերն առաջին համաշխարհային պատերազմի գլխավոր ճակատներն էին, իսկ երկրորդական ճակատներ էին Բալկանյան, Իտալական, Հյուսիս-Աֆրիկյան, Հեռավոր արևելյան, Կովկասյան, Գալիպոլյան և այլն։ Պատերազմող պետությունների երկու խմբավորումներն իրենց հիմնական ուժերը կենտրոնացրել էին Եվրոպայի ճակատներում։ Պատերազմը տևեց չորս տարուց ավելի և ընդգրկեց 33 պետություն՝ 1,5 միլիարդ բնակչությամբ, որը կազմում էր երկրագնդի ամբողջ բնակչության 75 տոկոսը։ Պատերազմի ընթացքում զորակոչվեց 74 միլիոն մարդ, որից մոտ 10 միլիոն սպանվեց։ Վիրավորների թիվը հասնում էր 20 միլիոնի, համաճարակներից և սովից մահացավ 10 միլիոն մարդ։

Պատերազմի բուն պատճառն իմպերիալիստական պետությունների միջև գոյություն ունեցող սուր հակասություններն էին, որոնք արտահայտվում էին աշխարհը վերաբաժանելու, նոր գաղութներ, հումքի աղբյուրներ և կապիտալի ներդրման նոր շրջաններ ձեռք բերելու հարցերում։ Իմպերիալիստական պետությունները զավթողական, կողոպտչական, անարդարացի պատերազմը ներկայացնում էին որպես ճնշված ժողովուրդների «ազատագրման» համար մղվող պատերազմ։

Վ. Ի. Լենինը, վերլուծելով առաջին համաշխարհային պատերազմի բնույթը, նշել է. «Պատերազմող երկրների երկու խումբն էլ ամենևին մենք մյուսին չեն գիջում կողոպուտի, գաղանությունների և պատերազմի անվերջ դաժանությունների մեջ... յուրաքանչյուր երկրի բուրժուազիան հայրենասիրության մասին կեղծ ֆրազով ջանում է մեծարել «իր» ազգային պատերազ-

մի նշանակություններ և հավատացնել, թե ինքը ձգտում է հակառակորդին հաղթել ոչ թե բալանսելու և երկրներ գրավելու համար, այլ, իր սեփական ժողովրդից բացի, բոլոր մյուս ժողովուրդների «ազատագրության» համար[1]։

Անգլիական միլիտարիզմի պարագլուխներից Լլոյդ Ջորջը Անտանտայի մեջ մտնող պետությունների պատերազմի նպատակը ջանում էր ներկայացնել որպես թուլլ պետությունների փրկության համար մղվող պատերազմ, «ժողովուրդների ազատագրման պատերազմ»[2]։ Իսկ լորդ Քերզոնը նշում էր. «Երբ դաշնակիցները ներգրավվեցին պատերազմի մեջ, նրանց նպատակներից մեկը Փոքր Ասիայում զգալի քիվ կազմող քրիստոնեական փորրամասնությունների պաշտպանությունը և, հնարավորության դեպքում, նրանց ազատագրումն էր։ Դա առանձնապես վերաբերում է Հայաստանին...»[3]։

Պատերազմին մասնակցող իմպերիալիստական բոլոր պետություններն ունեին իրենց նվաճողական պլանները։ Գերմանիայի նպատակն էր գերիշխանություն հաստատել Եվրոպայում, լիակատար պայտության մատնել Անգլիային ու զրկել նրան գաղութներից, չախչախել Ֆրանսիային ու Բելգիային և տիրանալ նրանց գաղութներին, թուլացնել ցարական Ռուսաստանին, զավթելով նրանից Ուկրաինան, Լեհաստանը, Մերձբալթյան երկրները և ամրապնալ Բալկաններում ու Մերձավոր Արևելքում։ Կայզերական Գերմանիայի զինակից Ավստրո-Հունգարիայի ձգտումն էր գերիշխանություն հաստատել ողջ Բալկաններում։

Անգլիան, մտնելով պատերազմի մեջ, ձգտում էր պահպանել իր հակայական գաղութները, չախչախել գլխավոր հակառակորդին՝ Գերմանիային, տիրանալ Միջագետքին, Պաղեստինին և ամրանալ Եգիպտոսում։ Ֆրանսիայի նպատակն էր Գերմանիայից ետ գրավել 1871 թ. նրա կողմից նվաճված Էլզաս-Լոթարինգիան և զավթել Սաարի ավազանը։ Ցարական Ռուսաստանը ձգտում էր տիրանալ Սև ծովի նեղուցներին, Արևմտյան Հայաստանին և Գալիցիային։ Իտալիան նվաճողական նպատակներ էր հետապնդում Բալկաններում և Ավստրո-Հունգարիայում։ Ամերիկայի Միացյալ Նահանգները, որոնք պատերազմի մեջ մտան միայն 1917 թ. ապրիլին, ջանկանում էին օգտագործել պատերազմող կողմերի թուլացումը և իրենց կամքը թելադրել նրանց։

Օսմանյան կայսրության պատերազմի մեջ մտնելու հիմնական նպատակն էր Գերմանիայի օգնությամբ իրագործել պանթուրքական զավթողական պլանները Անդրկովկասի, Հյուսիսային Կովկասի, Ղրիմի, Իրանական Ադրբեջանի և Միջին Ասիայի նկատմամբ։ Պատահական չէ, որ «ընդառաջելով» երիտթուրքերի կառավարության դիմումին, 1913 թ. դեկտեմբերի 14-ին Գերմանիան Թուրքիա ուղարկեց գեներալ Լիման ֆոն Մանդերսի գլխավորած ռազմական միսիան, թուրքական բանակը ընդդեմ Ռուսաստանի պատրաստելու նպատակով։ Գերմանական ռազմամոլները հույս ունեին, որ թուրքական բանակի միջամտությամբ ռուսական ուժերի մի զգալի մասը կմնա կովկասյան ճակատում և, դրանով իսկ, կդյուրանա իրենց հարձակումն Արևմտյան ճակատում։

---

1 Վ. Ի. Լենին, նշ. աշխ., հ. 26, էջ 19։

2 Տե՛ս Լ. Ջորջ, Правда о мирных договорах, т. 2, пер. с англ., М., 1957, стр. 6, 12.

3 «Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923)», էջ 736։

Նրանք հույս ունեին նաև դաշնակցելով Օսմանյան կայսրության հետ շահել անգլիական ու ֆրանսիական գաղութների մահմեդականների համակրանքը։

Պատերազմի հայտարարման առաջին օրերին՝ օգոստոսի 2-ին և 6-ին կ. Պոլսում, խիստ գաղտնի իրադրության մեջ, Թուրքիայի և Գերմանիայի միջև կնքվեցին ռազմական պայմանագրեր՝ ուղղված Ռուսաստանի դեմ։ Օգոստոսի 6-ի պայմանագրի հինգերորդ հոդվածում ասված էր. «Գերմանիան կօգնի Օսմանյան կայսրության արևելյան սահմանները շտկել այնպես, որ Թուրքիայի համար ապահովի անմիջական շփում Ռուսաստանում բնակվող մահմեդական ազգաբնակչության հետ»[4]։ Դա նշանակում էր, որ Թուրքիան Գերմանիայի օգնությամբ պետք է նվաճեր նաև Արևելյան Հայաստանը և անմիջապես սահմանակից դառնար Ադրբեջանին ու Հյուսիսային Կովկասին։

Գերմանո-ավստրիական խմբավորմանն իր մասնակցությունը բողարկելու նպատակով Թուրքական կառավարությունը օգոստոսի 3-ին հայտարարեց Օսմանյան կայսրության չեզոքության մասին։ Թուրքիայում իշխանության գլուխ անցած երիտթուրքական հոյակի (Թալեաթ, Էնվեր, Ջեմալ) անդամներից՝ Ջեմալ փաշան հետագայում խոստովանել է. «...մենք մեզ չեզոք հայտարարեցինք միայն ժամանակ շահելու համար. մենք սպասում էինք այն պահին, որ մեր զորահավաքն ավարտվի և մենք կարողանանք մասնակցություն ունենալ պատերազմին»[5]։

1914 թ. հոկտեմբերի 29—30-ին գերմանական ծովակալ Սուշոնի գլխավորությամբ գերմանո-թուրքական նավատորմն ուխտադրուժ հարձակում գործեց Ռուսաստանի սևծովյան նավահանգիստների՝ Թեոդոսիայի, Սևաստոպոլի, Օդեսայի, Նովորոսիյսկի վրա։ Դրանից հետո Ռուսաստանը նոյեմբերի 2-ին պատերազմ հայտարարեց Թուրքիային։

Համաշխարհային պատերազմի մեջ մտնելով, Օսմանյան կայսրությունը բացահայտում էր իր պանթուրքական նպատակները։ «Մեր մասնակցությունը համաշխարհային պատերազմին,— ասված է երիտթուրքական կառավարության կոչում,— արդարացվում է մեր ազգային իդեալով։ Մեր ազգի իդեալն առաջնորդում է մեզ դեպի մեր մոսկովյան բշնամու ոչնչացումը, որպեսզի դրա հետևանքով ստեղծվեն մեր կայսրության բնական սահմանները, որոնք իրենց կազմում կունենան և կմիավորեն մեր ռասսայի բոլոր հյուղավորումները»[6]։

Թուրքական գլխավոր շտաբի կողմից մշակված ստրատեգիական պլանի համաձայն, գլխավոր ուժերը պետք է արագորեն գրավեին Անդրկովկասը և դրանով ապահովեին թուրքական զորքերի հետագա առաջխաղացումը դեպի Ռուսաստանի մահմեդականներով բնակեցված մյուս շրջանները, ինչպես նաև հարևան երկրները։ Ընդ որում թուրքական զորքերն իրենց առաջխաղացման ընթացքում մահմեդական ժողովուրդներին պետք է հրահրեին ապստամբություններին։

Թուրքիայի համար ռազմական գործողությունների կարևորագույն թատերաբեմը Կովկասյան ճակատն էր։ Թուրքական 800 հազարանոց բանակի

---

[4] *Ю. Ключников и А. Сабинин*, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. II, М., 1926, док. № 10.

[5] «Джемаль-паша, Записки 1913—1919 гг.», пер. с англ., Тифлис, 1923, стр. 101—102 (այսուհետև՝ «Записки...»).

[6] ՍՍՀՄ ԳԿՊՄԱ, ֆ. 2000, ց. 1, գ. 752, թ. 343—345։

300 հազար զինվորը կենտրոնացված էր Անդրկովկասյան ճակատում[7]։ Դա Թուրքական երրորդ բանակն էր, որն ուներ երեք կորպուս՝ 9-րդ (Կարին), 10-րդ (Ծղնկա) և 11-րդ (Վան)։ Թուրքիայի մնացած բանակներն իրենց հզորությամբ զգալիորեն զիջում էին 3-րդ բանակին։ Մյուս ճակատներում զորքերը տեղաբաշխված էին հետևյալ կերպ. Գալիպոլիի ճակատում՝ 200 հազար, Սիրիական ճակատում՝ 100 հազար, Արևելյան Թրակիայում և Ստամբուլի շրջանում՝ 100 հազար, Փոքր Ասիայում՝ 50 հազար և Միջագետքի ճակատում՝ 50 հազար զինվոր[8]։

Անդրկովկասի արշավանքի կազմակերպիչ, գլխավոր նախաձեռնող ու ոգեշնչող էնվերը, գտնում էր, որ Անդրկովկասի մահմեդական ժողովուրդների ապստամբության դեպքում 300—350 հազարանոց բանակը կարող է ռուսներին դուրս քշել Կովկասից։

Ռուսական զորքերի հրամանատարությանը քաջ հայտնի էր Անդրկովկասի սահմանակից շրջաններում թուրքական խոշոր ուժերի կենտրոնացումը, ուստի և ձեռնարկվեցին համապատասխան միջոցներ։ 1914 թ. օգոստոսին երկրամասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի հրամանատարությամբ կազմվեց կովկասյան բանակը։ Նոյեմբերի սկզբին այդ բանակի զինվորների ընդհանուր թիվը հասնում էր 200 հազարի։ Չնայած ռուսական բանակը թվաքանակով գգալիորեն զիջում էր թուրքականին, բայց դրա փոխարեն գերազանցում էր հրամանատարական կազմի պատրաստվածությամբ, զինվորների մարտունակությամբ ու ռազմական տեխնիկայով։

Կովկասյան ռազմաճակատում պատերազմական գործողություններն սկսվեցին 1914 թ. աշնանը։ Ռազմաճակատն ուներ 720 կիլոմետր երկարություն՝ ձգվում էր Սև ծովից մինչև Ուրմիա լիճը։ Այս ռազմաճակատում զորքերի հրամանատարն էր Հասան Իզզեթ փաշան։ Նոյեմբերի 2-ին թուրքական զորքերն անցան հարձակման և խոշոր ուժերով ներխուժեցին Բաթումի մարզը։ Թուրքական հրամանատարությունը պատերազմի հենց սկզբից բացառիկ ուշադրություն էր դարձնում Աջարիայի վրա։ Այնտեղ ուղարկված լրտեսներն ու գործակալները ջանում էին ազդել վրացի-մահմեդականների կրոնական զգացմունքների վրա՝ նրանց մեջ Թուրքիայի նկատմամբ համակրանք առաջ բերելու նպատակով։ Նրանք բնակչությանը զենք էին բաժանում և փորձում հրահրել զինված ելույթների՝ ռուսական զորքերի թիկունքում։ Պատերազմի սկզբին հակառակորդի գերակշռող ուժերի ճնշման տակ ռուսական զորքերն ստիպված էին նահանջել, և թուրքերը նոյեմբերի սկզբին գրավեցին Արդվինն ու Արդանուշը։ Ռուսական զորքերը նահանջեցին դեպի Աջարիս-Ծղալի գետ՝ Բաթումից ոչ հեռու։

Թուրքական զորքերի կողմից գավթված շրջանների քրիստոնյա ազգաբնակչությունը՝ հայերը, հույները և ասորիները ենթարկվեցին թալանի ու բնաջնջման։ Արդանուշի ու Արդվինի գրավման առաջին իսկ օրից թուրքական

---

7 Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՌԳԱ, ֆ. 418, ց. 1, գ. 4348, թ. 123։

8 Տե՛ս ՍՍՀՄ ԿԳԱԳԱ, ֆ. 2000, ց. 1, գ. 3891, թ. 1։ Այլ ավյալներով, թուրքական բանակը պատերազմի սկզբներին բաղկացած էր մեկ միլիոն զինվորից (նույն տեղում, ֆ. 2000, ց. 1, գ. 824, թ. 192)։ Մի ուրիշ աղբյուրում թուրքական բանակի ընդհանուր թիվը հասնում է մեկ և կես միլիոնի, ներառյալ պահեստի զորքը (200 հազար), բանվորական գումարտակները (300 հազար), թնդանոթները և զրոնից կազմված անկանոն զորամիավորումները (100 հազար) (նույն տեղում, գ. 804, թ. 369)։

զորքերը գազանաբար հաշվեհարդար տեսան հայ բնակչության հետ։ Արդվինի քաղաքի բնակչության միայն կեսին հաջողվեց փախչել Անդրկովկասի խորքը։ «Արդվինի գավառն այլևս գոյություն չունի,— գրում էր ականատեսներից մեկը,— ամեն ինչ թալանված է, բնակչության մեծամասնությունը սրի է քաշված... Դուք կարող եք շրջել տասնյակ գյուղեր և ոչ մի տեղ կենդանի արարած... չհանդիպել, դիակներ ու դիակներ... անասունները թշվել են, տները՝ քարուքանդ արվել»[9]։

Շարունակելով հարձակումը, թուրքական զորքերը գտնում էին Սարիղամիշի շրջանում դուրս գալ ռուսական բանակի գլխավոր ուժերի թիկունքը։

1914 թ. դեկտեմբերի 22-ից մինչև 1915 թ. հունվարի 18-ը թուրքական երրորդ բանակի և ռուսական բանակի միջև տեղի ունեցած համառ մարտերը պատմության մեջ կոչվեցին Սարիղամիշի օպերացիա։

Այդ օպերացիային մասնակցող թուրքական բանակում կար 90 հազար զինվոր, մինչդեռ ռուսական բանակը 64 հազարից չէր անցնում։ Սարիղամիշի ճակատում էնվերը հույսը դրել էր իր զորքերի թվական գերակշռության վրա։ Երկու կողմերն էլ կռվում էին համառորեն դաժան ձմռան և լեռնային ծանր պայմաններում։ Արյունահեղ մարտերից հետո թուրքական զորքերը ներխուժեցին Սարիղամիշ։ Սակայն նախաձեռնությունը շուտով անցավ ռուսական բանակի ձեռքը։ Բշնամին Սարիղամիշից դուրս շպրտվեց։ Ռուսական զորքերը հակահարձակման անցան և թուրքական 9-րդ կորպուսը կտրեցին նրա հիմնական ուժերից։ 40 հազարանոց այդ կորպուսը ամբողջովին ոչնչացվեց։ Նրա հրամանատար գեներալ Այբխ Ալի Իսհան փաշան շտաբի հետ միասին գերի հանձնվեց։ Թուրքերի կորուստները չափազանց մեծ էին. շատ դիվիզիաներից ու գնդերից գրեթե ոչինչ չէր մնացել։ «Սարիղամիշի ողբերգությունը,— գրել է թուրքական 29-րդ դիվիզիայի հրամանատար Արիֆ Բավտինը,— ավարտվեց 3-րդ բանակի երկու ընտիր կորպուսների լրիվ ոչնչացումով»[10]։

Սարիղամիշի ուղղությամբ ճակատ պահող 10-րդ և 11-րդ կորպուսներից մնացած զորքերը համախմբելով, էնվերը վերջին ջանքերը գործադրեց Բարդիզի շրջանում (Սարիղամիշից հյուսիս-արևմուտք) հակահարձակման անցնելու համար։ Սակայն ռուսական զորամասերի ճնշման տակ թուրքական զորքերը, մեծ կորուստներ կրելով, ետ շպրտվեցին։ Համոզվելով, որ Սարիղամիշի մարտը վերջնականապես տանուլ է տրված, էնվերը 3-րդ բանակի մնացորդները (մոտ 13 հազար մարդ) հանձնեց գնդապետ Հաֆիս Հաքքըբեյին և ինքը գաղտագողի լքելով բանակատեղը, հազիվ խուսափեց գերի ընկնելուց։

Հունվարի 11-ին ռուսական զորքերը գրավեցին Բարդիզը և շարունակեցին չախչախված 10-րդ կորպուսի մնացորդների հետապնդումը։ 11-րդ կորպուսի զորքերը փորձում էին կասեցնել ռուսների բուռն հարձակումը։ Հունվարի 17-ից սկսած Կարակուրգանի շրջանում եռօրյա համառ մարտերը ավարտվեցին 11-րդ կորպուսի չախչախումով և նրա անկանոն փախուստով դեպի Կարին։ Սարիղամիշի և Կարակուրգանի տակ տեղի ունեցած մարտերից հետո թուր-

---

[9] «Кавказское слово», 1914, 31 դեկտեմբերի։

[10] *Arif Baftin*, Ilk Dünya harbinde Kafkas cephesi 29 tümen ve 3 alay sancagı (Hatıraları), Istanbul, 1946, s. 121.

քերը ոչ քի նահանջում, այլ փախչում էին՝ նետելով այն ամենը, ինչ խանգարում էր փախուստին[11]։ Սարիղամիշի մարտերում թուրքական 90 հազար զինվորներից սպանվեցին, ցրտահարվեցին ու գերի ընկան շուրջ 78 հազար մարդ։ Կ. Պոլսում արգելված էր խոսել կամ գրել այդ ազետի մասին։

Սարիղամիշի ճակատամարտում թուրքերի կրած պարտությունը մեծ ազդեցություն ունեցավ Կովկասյան ճակատում ռազմական գործողությունների հետագա ողջ ընթացքի վրա։ Սարիղամիշի ճակատամարտը թուրքական հրամանատարությանը ստիպեց մյուս ճակատներից Կովկաս փոխադրել զգալի քանակությամբ զորք, որը հեշտացրեց անգլիացիների գործողությունները Միջագետքում և Սուեզի ջրանցքի գոտում։

Ռուսաստանի դեմ պատերազմի հենց սկզբից թուրքական հրամանատարությունը նախատեսել էր Կովկաս ներխուժել ոչ միայն հիմնական՝ Սարիղամիշ—Կարս ուղղությամբ, այլև Իրանական Ադրբեջանի կողմից։ Մարտավարական պլանի համաձայն, թուրքական զորքերը պետք է գրավեին Ուրմիայի ջավառը և այնտեղ բազաներ ստեղծեին հետագայում Խոյ—Ջուլֆա—Բաքու և Սուլդուզ—Սուջ—Բուլաղ ուղղություններով հարձակողական գործողություններ ծավալելու համար։ Թուրքական հրամանատարությունը համոզված էր, որ կատանա իրանական իշխանությունների ու տեղական քուրդ շեյխերի աջակցությունը և նրանց օգնությամբ կհաջողվի հարավային Ադրբեջանի բնակչությանը ոտքի հանել այնտեղ գտնվող ռուսական զորքերի դեմ և կկարողանա իրագործել Իրանի տերիտորիայից Անդրկովկաս ներխուժելու իր պլանը։

Սակայն Թուրքերը շատ անհաշտ ուժեր կարողացան առանձնացնել դեպի Իրան արշավելու համար, քանի որ զորքերի մեծ մասը նետված էր Բաքումի մարզի և Սարիղամիշի վրա։ Թուրքերին հաջողվեց փոքրաթիվ ուժերով գրավել Թավրիզը, Ուրմիան և Դիլմանը, որովհետև Սարիղամիշի օպերացիայի ամենադժվարին պահին Ջևդեթ-բեյի հրամանատարությամբ գործող ռուսական ջոկատը Հյուսիսային Իրանից փոխադրվեց Կովկասյան ճակատ։ Օսմանյան զորամասերի մուտքն Իրանական Ադրբեջան ուղեկցվում էր խաղաղ բնակիչների՝ պարսիկների, ասորիների, քրդերի, հայերի կողոպուտով ու կոտորածներով։

Կովկասյան բանակի հրամանատարությունը, թուրքերի առաջխաղացումը կանխելու նպատակով, Սարիղամիշի տակ նրանց ջախջախելուց հետո, Իրան փոխադրեց զգալի ուժեր և 1915 թ. գարնանը թուրքական զորքերին ջախջախեց ու դուրս շպրտեց Իրանական Ադրբեջանից։ Այդ գործում ռուսական բանակին էական օգնություն ցույց տվեցին հայկական կամավորական ջոկատները։

Իրենց նվաճողական պլանները իրականացնելու գործում երիտթուրքական գաղթիշները մեծ հույսեր էին կապում սուլթանի կողմից 1914 թ. նոյեմբերի 11-ին հայտարարած սրբազան պատերազմի՝ ջիհադի հետ։ Տակավին նախքան Թուրքիայի պատերազմի մեջ մտնելը, Կ. Պոլսում կազմվել, օտար լեզուներով թարգմանվել ու տպագրվել էր «Սրբազան պատերազմը պարտադիր է» կոչը[12]։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուր-

11 Տե՛ս ՎՍՍՀ ԿԳԳԱ, ֆ. 2, ց. 1, գ. 3599, թ. 24։

12 Տե՛ս ՍՍՀՄ ԿԳՊԳԱ, ֆ. 2000, ց. 1, գ. 3386, թ. 16։

քերը մեծ ջանքեր էին գործադրում, որպեսզի իրենց կողմը թեքեն թուրքական սահմանների մոտ գտնվող շրջանների, հատկապես Կովկասի, մահմեդական ազգաբնակչության։ Սակայն թուրքական կառավարության բոլոր ջանքերը՝ ծավալելու «ջիհադը»— մահմեդական աշխարհի «սրբազան պատերազմը» Ռուսաստանի դեմ, ձախողվեց։ Էնվերի մերձավորագույն զինակիցներից մեկը՝ Քյազըմ Կարաբեքիր փաշան նշում էր. «Չնայած մեր կողմից սրբազան պատերազմի հայտարարմանը, ապստամբությունը, որի վրա մենք հույս էինք դրել, չէր բռնկվում»[13]։

Մահմեդական զանգվածները չհետևեցին երիտթուրքական ագրեսորներին, որոնք ամեն կերպ փորձում էին ազդել նրանց կրոնական զգացումների վրա։ Դրանում թուրքական ներխուժողները շատ շուտով համոզվեցին գրավված բաթումի ու Կարսի մարզերում։ Կովկասի ժողովուրդները, որոնք լավ էին հիշում ենիչերիների արյունոտ բռնակալությունը, քաջ գիտակցում էին, որ թուրքական զավթիչներից ոչինչ չի կարելի սպասել, բացի թալանչումից ու վերադարձից դեպի միջնադարյան բարբարոսություն։ Ուստի միանգամայն բնական էր, որ թուրք ագրեսորների կոչերն ու խոստումները ազդեցություն չունեցան Կովկասի մահմեդական ազգաբնակչության լայն խավերի վրա։

1915 թ. սկզբներին Կովկասյան ճակատի ռազմական գործողություններն արդեն ընթանում էին Արևմտյան Հայաստանի տարածքում։ Կովկասյան բանակի չորրորդ կորպուսի զորամասերը, որոնք գործում էին Երևանի ուղղությամբ և տակավին պատերազմի սկզբներին մտել էին Բայազետի ու Ալաշկերտի հովիտները՝ ռուսական զորքերի ձախ թևն ապահովելու նպատակով, Մարիդամիշի տակ թուրքական զորքերի շախշախումից ու ռուսական բանակի հաջող հարձակումից հետո, ավելի աշխուժացրին իրենց գործողությունները։ Նրանց անընդմեջ հարվածների տակ թուրքական զորքերն անկանոն ձևով նահանջում էին դեպի Մուշ և Բիթլիս, թալանելով հայկական գյուղերը, ոչնչացնելով նրանց բնակիչներին։ Հետապնդելով հակառակորդին, ռուսական զորքերը 1915 թ. փետրվար-մայիս ամիսներին գրավեցին Մանազկերտը, Բաշկալեն, Շատախը, Կոթուրը, Արճեշը, Վանը։ Արդուլ-Քերիմ փաշայի հրամանատարության ներքո խոշոր ուժեր կենտրոնացնելով (89 գումարտակ) թուրքական հրամանատարությունը չորրորդ կորպուսի զորամասերի դեմ հակահարձակման կարգադրություն արեց։

Թուրքական զորքերի թվական զգալի գերազանցության պատճառով չորրորդ կորպուսն ստիպված էր նահանջել դեպի Ալաշկերտի հովիտը։ Հուլիսի վերջին օժանդակ ուժեր ստանալով, կորպուսի զորամասերն իրենց հերթին անցան հակահարձակման և, թուրքերին հետ շպրտելով, նորից գրավեցին Վանա լճի ափը։ Շուտով Արևմտյան Հայաստանի ամբողջ հարավ-արևելյան մասը ազատագրվեց թուրքական զորքերից։ Այժմ արդեն Կարս-Կարինի ուղղությամբ գործող զորքերի ձախ թևը, որտեղից նախապատրաստվում էր հարձակում Կարինի վրա, լիովին ապահովված էր։

Սկզբում այդ հարձակումը ծրագրվում էր ձեռնարկել 1916 թ. գարնանը։ Սակայն Գալիպոլիի թերակղզում դեսանտ իջեցնելու գործողությունը, որը կազմակերպել էր Մեծ Բրիտանիայի ռազմածովային մինիստր Չերչիլը,

---

[13] *Kazım Karabekir*, Cihan harbine neden girdik, nasıl idare ettik? kit. I, İstanbul, 1938, s. 490.

կատարելապես ձախողվեց և անգլիական հրամանատարությունը ստիպված իր զորքերը 1916 թ. հունվարին փոխադրեց Սալոնիկի ճակատը։ Այդ պատճառով էլ Կովկասյան բանակի հրամանատարությունը որոշում ընդունեց արագացնել Կարինի վրա նախապատրաստվող հարձակումը։ Հարկավոր էր կանխել Գալիպոլիի թերակղզուց Թուրքական V բանակի զորամասերի ժամանումն Արևելյան Անատոլիա։ Սև ծովում ռուսական նավատորմի գերակշռությունը հեշտացնում էր ծովային ճանապարհով նոր ուժերի տեղափոխումը Կովկասյան ճակատ։

1916 թ. հունվարի 11-ին Կովկասյան բանակը հարձակման անցավ ամբողջ ճակատով։ Ռուսական զորքերը շարժվում էին երեք ուղղությամբ. Օլթիի՝ Թուրքական 11-րդ կորպուսի ձախ թևը շրջանցելու նպատակով, Կարս—Կարինի և Ալաշկերտի, Ալաշկերտի ուղղությամբ շարժվող զորքերի առջև խնդիր էր դրված Վանա լճի շրջանում գործող հակառակորդի ուժերը կտրել Կարինը պաշտպանող զորամասերից։ Ռուսական զորքերի ճնշմամբ Թուրքերը ստիպված եղան նահանջել դեպի Մուշ։ Կարս—Կարինի ուղղությամբ առաջացող զորամասերի հանկարծակի հարվածով Թուրքական ուժերը շպրտվեցին դեպի Թորթում լիճը։

Ռուսական զորքերը հունվարի 16-ին հասան մինչև Քյոփրի-քյոյ, ուր համառ կռիվներից հետո ջախջախեցին Թուրքական երեք դիվիզիա, որոնց մնացորդները ետ շպրտվեցին դեպի Կարին։ Այնուհետև երեք կողմից շրջապատեցին Կարինը։ Հարյուր-հազարանոց Թուրքական բանակը չկարողացավ այն իր ձեռքում պահել։ Ընդօրյա գրոհից հետո, փետրվարի 16-ին, ռուսական զորքերը մտան Կարին և գրավեցին բերդը։ Կարինի համար մղած ամբողջ մարտերի ընթացքում՝ հունվարի 11-ից մինչև փետրվարի 17-ը Թուրքերը կորցրին 60 հազար մարդ, իսկ ռուսները՝ 16.735[14]։

Կարինի գրավումը ռազմաստրատեգիական մեծ նշանակություն ուներ, քանի որ այն Արևմտյան Հայաստանի բանալին էր և կարևոր դիրք էր գրավում Անդրկովկասից դեպի կենտրոնական Անատոլիա գնացող գլխավոր գծի վրա։ Ռուսական բանակի գլխավոր շտաբի բնութագրումով՝ «Կարինի բերդը միակ կետն է ամբողջ ասիական Թուրքիայում, որը միաժամանակ պաշտպանում է և՛ Անատոլիան, և՛ Սիրիան, և կարգավորում ստրատեգիական շարժումը դեպի Միջագետք։ Ընդհուպ մինչև Բոսֆորը այդպիսի մի ուրիշ կետ չկա»[15]։

Թուրքական կառավարությունն ամեն կերպ աշխատում էր բնակչությունից քաջքշել Կարինի անկումը։ Թերթերին արգելված էր որևէ բան գրել այդ մասին։ Սակայն ճակատից ստացված նամակներից շուտով իմացվեց իրողությունը, որը մեծ խուճապ առաջ բերեց։ Բնակչությանը հանգստացնելու համար երիտթուրքերը փորձեցին նսեմացնել այդ կորստի նշանակությունը։ Կառավարական մամուլը պնդում էր, որ Թուրքական զորքերը նահանջել են «ստրատեգիական նկատառումներով», «ավելի նպաստավոր դիրքերը գրավելու համար»։

Հուլիսի 16-ին ռուսական զորքերը մտան Բայբուրթ (Բաբերդ)։ Հարձակ-

---

[14] *Տե՛ս Н. Г. Корсун*, Эрзерумская операция на Кавказском фронте мировой войны в 1915—1916 гг., М., 1938, стр. 126.

[15] *ՍՍՀՄ ԿԳՄՊԱ, ֆ. 2000, ց. 1, գ. 3885, թ. 21։*

վելով ամբողջ ճակատով, Կովկասյան բանակի զորամասերը մոտենում էին Երզնկային։ Այդ առաջխաղացմանը մեծ օգնություն ցույց տվեց Առափնյա շոկատը, Այն իր հարձակումն սկսելով Բաթումի մարզից և առաջանալով Սև ծովի ափի երկայնքով, Բիզե քաղաքի մոտ դեսանտ հանած ռուսական նավատորմի գործուն աջակցությամբ ապրիլի 16-ին գրավեց Տրապիզոնը։ Առափնյա շոկատի առաջխաղացումը խանգարեց Թուրքական 3-րդ բանակին ետ մղելու ռուսական զորամասերի գրոհը Երզնկայի վրա։ Համագործակցված հարվածներով Կովկասյան 5-րդ և Թուրքեստանյան 2-րդ կորպուսների զորամասերը հուլիսի 25-ին գրավեցին Երզնկան։ Թուրքական 3-րդ բանակը նոր, ծանր պարտություն կրեց [16]։

Այսպիսով, 1915 թ. նոյեմբեր-դեկտեմբերին և ամբողջ 1916 թ. ընթացքում տեղի ունեցած մարտերի շնորհիվ Կովկասյան բանակը, ապահովելով Անդրկովկասը Թուրքական զորքերի ներխուժումից և նվաճելով Արևմտյան Հայաստանի մեծ մասը, կատարեց իր հիմնական առաջադրանքը։

Երկարատև ու քայքայիչ պատերազմն զգալիորեն թուլացրեց ինչպես Թուրքական զորքերի, այնպես էլ ռուսական Կովկասյան բանակի մարտունակությունը, սակայն պատերազմող կողմերը ոշնչի առջև կանգ չէին առնում իրենց ռազմական նպատակներին հասնելու համար։

Պատերազմի չորրորդ տարում տնտեսական անկումն ու քայքայումը Ռուսաստանում այն աստիճան խորացան, որ ռուսական զորքերը բոլոր ճակատներում սկսեցին մեծ զրկանքներ կրել։ Արևմտյան ճակատում ռուսական զորքերի կրած պարտությունները նպաստում էին հեղափոխական շարժումների ուժեղացմանը, որոնք ի վերջո հանգեցրին փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխությանն ու ինքնակալության տապալմանը։ Ցարիզմի անկումից հետո իշխանության գլուխ անցած բուրժուակալվածատիրական ժամանակավոր կառավարությունը, ժողովրդական զանգվածների ցանկությանը հակառակ, հայտարարեց, որ ինքը հավատարիմ է մնում դաշնակիցներին և շարունակեց իմպերիալիստական պատերազմը։ 1917 թ. հունիսին Արևմտյան ճակատում Կերենսկու ձեռնարկած հարձակումը կատարյալ ձախողում կրեց։

Միջագետքում անգլիացիների ռազմական գործողություններին աջակցելու նպատակով Կովկասյան բանակի հրամանատարությունը հարձակման ենթեց Բարաթովի էքսպեդիցիոն կորպուսը։ Այդ կորպուսի զորքերը, հաջող մարտերից հետո, 1917 թ. փետրվարի վերջին—մարտի սկզբին գրավեցին Համադանը, Քերմանշահը, Բիջարը, իսկ մարտի 23-ին՝ Սպահանը։ Անգլիական զորքերը, շարժվելով Բաղդադի ուղղությամբ, փետրվարի 23-ին գրավեցին Կուտ-էլ-Ամարան։ Քանի հազար թուրքական զինվորներ ու սպաներ գերի հանձնվեցին անգլիացիներին։ Կուտ-էլ-Ամարայի տակ կրած պարտությունից հետո թուրքական զորքերը փախուստի դիմեցին։ Մարտի 11-ին անգլիացիները մտան Բաղդադ։ 1917 թ. ապրիլի 2-ին անգլիական զորքերը գեներալ Բարաթովի զորամասերի հետ հանդիպեցին Կզլ-Ռաբաթում [17]։

Միջագետքի ճակատում անգլիացիների տարած հաղթանակները, ինչպես և Պաղեստինի ու Սիրիայի արագ գրավումը 1918 թ. աշնանը բացատրե-

---

16 Պատերազմական գործողությունների մասին տե՛ս Н. Г. Корсун, Эрзерумская операция...

17 Տե՛ս А. Е. Адамов, Раздел Азиатской Турции, М., 1924, стр. 83.

վում է գլխավորապես նրանով, որ նախապատրաստելով Անդրկովկասի նվաճումը, թուրքական հրամանատարությունը խոշոր ուժեր էր պահում Արևմտյան Հայաստանում։

Կովկասյան բանակը 1917 թ. կեսերից արդեն ի վիճակի չէր հարձակում զարգացնել։ Պատերազմի մի քանի տարիների ընթացքում զինվորները հրաժարական զրկանքներ ու դժվարություններ էին կրել, կազմալուծվել էր թիկունքը, գլուխ էր բարձրացրել անիշխանությունը, զգացվում էր զինամթերքի սուր պակաս։ Ճակատի պահեստային գնդերը միայն 55%-ով էին զինված անհրաժեշտ զենքով[18]։ Ջափազանց վատ վիճակում էր նաև ճակատը պարենով մատակարարելու գործը։

1917 թ. հունիսին Ալեքսանդրապոլի կայազորի պետն իր զորամասերից մեկից ստացավ հետևյալ հեռագիրը. «Բրիգադային կոմիտեն առաջարկում է ձեռք առնել վճռական միջոցներ... որպեսզի Ջիբրայլան ջոկատի զինվորները քաղցից չմահանան»[19]։ Կարինում գտնվող զինվորները գրում էին. «Կովկասյան ճակատը և, մասնավորապես մենք, մոռացված ենք աստծո և մարդկանց կողմից։ Հաց, պաքսիմատ, հագուստ չկա։ Մարդիկ տառացիորեն սովահար են լինում։ Մեզ առաջ են քշում, զրկելով ամենաանհրաժեշտ բաներից»[20]։

Կովկասյան ճակատի զինվորները տրտունջից անցնում էին ակտիվ բողոքի։ Աճում էր դասալքությունը։ Զորամասերից մեկի զինվորական պատգամավորների սովետի նախագահ Անիսիմովը 1917 թ. մարտին ժամանակավոր կառավարության կոմիսարին խնդրում էր ձեռք առնել արտակարգ միջոցներ՝ դասալքության դեմ պայքարելու համար[21]։ Տեղական իշխանությունների զեկուցագրերից մեկում ասված էր որ Երևանը լեփ-լեցուն է դասալիքներով[22]։

Ինչ վերաբերում է թուրքական բանակին, ապա վերջինս երկրում տիրող տնտեսական ու ֆինանսական քայքայման ու ռազմաճակատում կրած պարտությունների հետևանքով 1917 թ. էլ ավելի մեծ դժվարություններ էր կրում։ Բանակը կազմալուծվում էր։ Պատերազմի դեմ տարերային բողոքն արտահայտվում էր զանգվածային դասալքության ու զինվորական ծառայությունից ուղղակի խուսափելու ձևով։

1916 թ. նոյեմբերին Թուրքիայից ստացված մի նամակում ասվում է, որ դասալքությունը թուրքական բանակի շարքերում տարածված է ոչ միայն զինվորների, այլև սպաների մեջ՝ ընդհուպ մինչև գումարտակների ու գնդի հրամանատարները[23]։ 1916 թ. ամռանը այդ բանակի բիկունքում գտնվում էին 50 հազարից ավելի դասալիքներ[24]։ 1917 թ. գարնանը Թուրքիայում հաշվվում էր հարյուր հազարից ոչ պակաս դասալիք, որոնց մեծ մասը թալանով էր զբաղված[25]։

---

18 Տե՛ս ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 1, ց. 5, գ. 430, թ. 41։

19 Նույն տեղում, գ. 6, թ. 211։

20 Նույն տեղում, թ. 41։

21 Տե՛ս նույն տեղում, ֆ. 41, գ. 169, թ. 1։

22 Տե՛ս Մ.Ի-ի Հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 33, գ. 517, թ. 14—15։

23 Տե՛ս ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 2, ց. 1, գ. 670, թ. 22։

24 Pomiankowski Joseph, Der Zusammenbruch des ottomanischen Reiches. Erinnerungen an die Türkei aus der Zeit des Weltkrieges. Zürich-Leipzig-Wien, 1928, S. 225.

25 Տե՛ս ՆԱՔԱՌ ֆ. «Քաղարխիվ», գ. 3891, թ. 460։

Երկրի աղետալի վիճակը, որը վեր էր ածվել գերմանական իմպերիալիզմի մի կիսագաղութի, ճակատներում կրած պարտությունները և բանակի արագ քայքայումը՝ այս բոլորը չէր մտահոգում իթթիհատական կլիկին։ Երիտթուրքերը շարունակում էին հուսադրել իրենց, որ գերմանական զենքն ի վերջո հաղթանակ կտանի Եվրոպայում և որ կայզերական Գերմանիայի օգնությամբ հնարավոր կլինի հասնել իրենց զավթողական նպատակների իրականացմանը։ Ուստի և, ոտնահարելով երկրի ազգային շահերը, նրանք չէին ուզում պատերազմից դուրս գալ և նույնիսկ փորձում էին՝ աշխուժացնել ռազմական գործողությունները։

2. ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ԵՎ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Կովկասյան ռազմաճակատում ծավալված պատերազմական գործողություններին հայ ժողովրդի ակտիվ մասնակցությունը պայմանավորված էր Արևմտյան Հայաստանն ազատագրելու նրա վաղեմի բաղձանքով։ Ուստի պատերազմի սկզբից լայն թափ ստացած հայկական կամավորական շարժումը ժողովրդական զանգվածների ինքնաբուխ պոռթկումն էր, ազգային ազատագրության համար նրա մղած պայքարի տրամաբանական շարունակությունը։ Ցարական իշխանությունները, օգտվելով ժողովրդական այդ ոգևորությունից, խրախուսեցին կամավորական շարժումը, նույնիսկ չզլացան հրապարակ խոստումներ տալ հայ ժողովրդին։

Հայկական ազգայնական կուսակցությունները, հավատալով Արևմտյան Հայաստանի «ազատագրման» մասին ցարական կառավարության հավաստիացումներին, ակտիվ գործունեություն ծավալեցին այդ պատրանքներով անելու ժողովրդական լայն զանգվածներին[26]։

«Մշակը», «Հորիզոնը» և այլ թերթեր կոչ էին անում օգնել ռուսական բանակին։ «Մշակին» այն կարծիքն էր հայտնում, որ «հայերը կարող են և պետք է արտահայտեն իրանց ցանկությունը, որ ազատվող Թուրքաց Հայաստանին տրվի վարչական կազմակերպություն՝ ավտոնոմիայի հիման վրա, Ռուսաստանի հովանավորության ներքո»[27]։

Ռուսաստանի նկատմամբ եղած հավատը համահել էր հայ հասարակական լայն շերտերին, հատկապես երիտասարդությանը, որը հանդես էր գալիս ռուսական զորքերի օգնությամբ Արևմտյան Հայաստանն ազատագրելու կոչերով։ «Հասել է այն պահը, երբ մենք պետք է ռուսական հաղթական բանակի շարքերում մարտնչենք ոխերիմ թշնամու դեմ։ Մեր արյունաքամ եղած եղբայրներն անհամբեր սպասում են մեզ։ Գնանք այնտեղ, ուր մեզ կանչում է մեր հայրենիքը, դա մեր սրբազան պարտքն է»,— ասված էր այդ կոչերից մեկում[28]։

Անտանտայի օգտին լայն պրոպագանդա էր տարվում նաև արտասահմանյան հայկական գաղթօջախներում։ Հայ մտավորականները հանդես էին

---

26 Ц. П. Агаян, Армянские политические партии и первая мировая война (в сб. «Первая мировая война», М., 1968, стр. 335—346).

27 «Մշակ», 1914, № 245։

28 ՎՍՍՀ ԿՊԱ, ֆ. 13/2, գ. 3162, թ. 12։

գալիս դասախոսություններով, հոդվածներով, որոնցում ողջ հայությանը կոչ էին անում օգնել դաշնակիցների մղած «սրբազան» պատերազմին։ «Ընենք, ինչ որ կրնանք,— գրել է Արշակ Ջոպանյանն իր «Ազատարար պատերազմ» հոդվածում,— որպեսզի մենք ալ, վաղը, աշխարհիս վիրև ծագելիք արդարության արևին տակ, ազատամարտիկ ազգերուն շարքին մեջ ազատության արժանի ազգերուն, քովը բարձրաճակատ կարհինանք երևալ»[29]։

Ռուսական կայսրության մեջ բնակվող երկու միլիոն 54 հազար հայերը[30] ցարական բանակին տվեցին մոտ 250 հազար զինվոր, որը կազմում էր արևելահայերի 13%-ը։ Ֆրանսիայի, Անգլիայի և ԱՄՆ-ի բանակներում զորակոչված հայ մարտիկների թիվը անցնում էր 50 հազարից։ Հայ քաղաքական շրջանները, ինչպես հայկական գաղթօջախներում, այնպես էլ Անդրկովկասում լայներեն պրոպագանդա էին մղում արևմտահայությանը թուրքական լծից ազատելու համար օգնել դաշնակիցների բանակներին նաև կամավորներով։ Օգտվելով ցարական կառավարության 1914 թ. հուլիսի 23-ի՝ ռուսական բանակը կամավորներով համալրելու մասին հայտարարությունից, նրանք սկսեցին բանակցություններ վարել Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի հետ կազմելու հայ կամավորական ջոկատներ, երբ դեռևս չէր պայթել պատերազմը։ Բանակցությունները վարում էր Հայկական Ազգային բյուրոն, որը կազմակերպվել էր Թիֆլիսում դեռ 1912 թ. վերջերին և կոչված էր օգնելու Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ Հայկական հարցի շուրջը դիվանագիտական բանակցություններ վարելու մեծ պետությունների հետ։

Ազգային բյուրոյի կազմում էին՝ Ա. Բաբախանյանը (Լևոն), Ս. Հարությունյանը, Հ. Թումանյանը, Կ. Ստեփանյանը, Ա. Սահակյանը, Հ. Ամիրխանյանը, Հ. Սպենդիարյանը, Խ. Աֆրիկյանը, Հ. Արզումյանը, Հ. Մելիքյանը, Ս. Կյուլպենկյանը, Ավ. Պողոսյանը, Գ. Խատիսյանը, Ստ. Լիսիցյանը, Ա. Պապովյանը, Ա. Արեղյանը, Հ. Քոչարյանը։ Բյուրոյի պատվավոր նախագահն էր Վրաստանի և Իմերեթիայի հայկական թեմի առաջնորդ Մեսրոպ եպիսկոպոսը։ Երկար բանակցություններից հետո Հայկական Ազգային բյուրոն 1914 թ. սեպտեմբերի կեսերին ցարական կառավարությունից թույլտվություն ստացավ կազմակերպելու հայկական կամավորական ջոկատներ։

Իշխանությունների խրախուսանքով կամավորական շարժման մեջ ներգրավվեցին նաև այլ ժողովուրդներ։ Այսպես, Ռուսաստանում բնակվող մահմեդականները, հատկապես ադրբեջանցիները, կազմեցին «Մուսուլմանական վայրենի դիվիզիան»։

Արևմտյան Հայաստանի ազատագրումը թուրքական տիրապետությունից հուզում էր ողջ հայությանը, և պատահական չէր, որ կամավորական շարժումը լայն արձագանք գտավ ոչ միայն Ռուսական կայսրության հայության մեջ, այլև ամբողջ աշխարհի հայաբնակ վայրերում։ Արտասահմանյան շատ երկրներից հայերը թողնում էին իրենց օջախը, ընտանիքը, մեկնում Թիֆլիս՝ ցուցակագրվելու կամավորական խմբերում։ Ռուսաստանից, արտասահմանից, մինչև անգամ Ամերիկայից այնքան հայեր եկան Թիֆլիս, որ հարկ եղավ հատուկ հայտարարությամբ նրանց հոսքը դադարեցնել։

Հայ կամավորները զինվորագրվում էին Անտանտայի պետություններին

---

29 «Մշակ», 1914, № 234։

30 Տե՛ս «Հայկական ՍՍՀ Ատլաս», Երևան-Մոսկվա, 1961, էջ 58։

ոչ թե նպաստելու նրանց իմպերիալիստական նպատակների կենսագործմանը, այլ այն հույսով ու հավատով, որ այդ պետությունների օգնությամբ կկարողանան Արևմտյան Հայաստանն ազատագրել թուրքական բիրտ լծից։

Ստեղծվել էր այսպես կոչված «Հազգային խորհուրդ», որը հավաքագրում էր կամավորներին, կազմում ջոկատներ և ապահովում զենքով։ Այն իր ներկայացուցիչներն ուներ կայսրության համարյա բոլոր հայաբնակ վայրերում։ Ազգային բյուրոյի ենթաբաժիններ կային Մոսկվայում, Պետրոգրադում, Նոր Նախիջևանում, Մարիուպոլում, Բաքվում և այլուր, որոնք լայն պրոպագանդա էին մղում և նյութական ու զրամական հանգանակության կոչ անում՝ հօգուտ կամավորական շարժման։ Նշանավելի օգնություն ցույց տվեցին հատկապես Մոսկվայի, Պետրոգրադի, Բաքվի, Թիֆլիսի, ինչպես նաև Նյու-Յորքի, Փարիզի և Լոնդոնի կոմիտեները։ Կամավորական գնդեր կազմակերպելու գործին հիմնական նյութական օգնությունը տրվում էր ցարական կառավարության կողմից։ Սակայն հայերը ևս միջոցներ էին տրամադրում։ Միայն 1915 թ. հանգանակած գումարը կազմում էր 1.444.000 ռուբլի, որի 1.020.000 ռուբլին հավաքել էին ռուսական կայսրությունում բնակվող հայերը[31]։

Սկզբնական շրջանում կազմակերպվեցին կամավորական չորս՝ 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ ջոկատները, տարբեր ժամանակներում այդ ջոկատների հրամանատարներ են եղել Անդրանիկը (Օզանյան), Հայդուկներ Քեռին (Գավաֆյան Արշակ), Խանասորցի Վարդանը (Մեհրաբյան), Համազասպը (Սբրվանձտյան) և ուրիշներ։ Ավելի ուշ ստեղծվեցին 5-րդ, 6-րդ և 7-րդ ջոկատները և կամավորների ընդհանուր թիվը 1915-ի վերջին հասավ 6.000-ի[32]։

Հնչակյան 6-րդ կամավորական ջոկատի հրամանատարն էր Գրիգոր Ավշարյանը, որը հերոսաբար զոհվեց 1915 թ. հունվարին, էրզրումի տակ։ Նրանից հետո այդ ջոկատի հրամանատար նշանակվեց Հայկ Բժշկյանը (Գյոլը)՝ հետագայում Սովետական Ռուսաստանում քաղաքացիական կռիվների լեգենդար հերոս, կարմիր բանակի ականավոր զորավար, ռազմական ակադեմիայի պրոֆեսոր։ 7-րդ ջոկատը կազմակերպվեց 1915-ի աշնանը՝ Հովսեփ Արղությանի հրամանատարությամբ։

Կամավորական առաջին ջոկատը, որի հրամանատարն էր Անդրանիկը և որն ամենախոշորն էր՝ բաղկացած 1200 հոգուց, ճակատ մեկնեց 1914 թ. նոյեմբերի 16-ին և գործում էր Սալմաստ-Վան ուղղությամբ՝ գեներալ Զոլոտոգուրովի զորաբաժնում։ Երկրորդ ջոկատը ճակատ մեկնեց նոյեմբերի 7-ին՝ Իգդիր—Բայազետ—Բերկրի—Վան, երրորդը՝ նոյեմբերի 13-ին՝ Կաղզվան—Ալաշկերտ—Մանազկերտ—Բիթլիս, չորրորդը՝ նոյեմբերի 19-ին՝ Սարիղամիշ—Օրզան—Քյոփրի-քյոյ—Էրզրում ուղղությամբ։

Անդրանիկի կամավորական ջոկատը նոյեմբերի երկրորդ կեսից մինչև դեկտեմբերի 18-ը մասնակցեց Կոթուրի շրջանի գրավմանը՝ փախուստի մատնելով թուրքական զորքերին։ Ջոկատը գրավեց Վանից ոչ հեռու գտնվող Սաբրայ գյուղաքաղաքը, որով ճախողվեց թուրքական զորքերի առաջխաղացումը Վանի ուղղությամբ։

---

31 *Տե՛ս* А. О. Арутюнян, Кавказский фронт 1914—1917 гг., Ереван, 1971, стр. 298.

32 Գ. Ղազարյան, *Հայերի մասնակցությունը համաշխարհային պատերազմին*, Փարիզ, 1931, էջ 12 (թարգմ. ֆրանսերենից)։

Ամենաարյունահեղ մարտերը տեղի ունեցան 1915 թ. ապրիլի 2-րդ կեսին Սալմաստի գավառի կենտրոն՝ Դիլման քաղաքի մատույցներում։ Այդ ճակատամարտով, գեներալ Չերնոզուբովի խոսքերով, իրականում որոշվում էր ամբողջ Կովկասի բախտը։ Ռուսական զորքերն Անդրանիկի ջոկատի հետ միասին ետ շպրտեցին Խալիլ-Բեյի գերազանց ուժերի մի քանի կատաղի գրոհները։ Հայ կամավորները մեծ խիզախությամբ ու անձնվիրությամբ ավինամարտի էին բռնվում թշնամու հետ։



Անդրանիկ (Անդրանիկ Օզանյան)

Նույն գեներալ Չերնոզուբովն Անդրանիկի ջոկատի մասին գրել է. «Ես ջոկատի մասին կարող եմ խոսել միայն հիացմունքով... Մեր հաջողություններն Աշնակի մոտ, Վրուշ-Խոբանում, Խանիքայում, Կոթուրում, Մոլլա-Հասանում, Բելիջիկում և Դաբաքիլիում զգալի չափով կապված են առաջին հայկական ջոկատի մարտական գործողությունների հետ, որի հրամանատարը Անդրանիկն էր, փորձված զինվորական պետ, մարտի պայմաններր հիանալի կերպով ըմբռնող, հաստատակամ, հնարամտական... ջոկատն Անդրանիկի հրամանատարությամբ 1915 թ. ապրիլի 15—28-ին մասնակցել է Մուխանեիկի (Դիլմանի) հայտնի ճակատամարտին, որի շնորհիվ Կովկասը փրկվել է թշնամու արշավանքից... Ես ի դեմս Անդրանիկի, միշտ տեսնում էի եռանդուն հայրենասերի, Հայաստանի ազատության համար մարտնչող մարտիկի, խոր կերպով իր հայրենիքը սիրողի»[33]։

Անդրանիկի ջոկատը հերոսական մարտեր մղեց նաև Դուզ-Դաղի շրջանում, մասնակցեց Բաշկալայի և Ասուրլիի գրավմանը։ Թուրքական զորքերը նահանջեցին Ջուլամերկի ուղղությամբ. նրանց հետապնդում էր Անդրանիկի ջոկատը։ Վերջինս ռուսական զորքերի կազմում անցավ պարսկա-թուրքական սահմանը, թշնամուն նոր հարված հասցրեց Խանասորի լեռնանցքում, ապա մտավ Բաշկալե[34]։

Անդրանիկի ջոկատի կողմից Խալիլ-բեյի զորքերին հասցրած ծանր հարվածները խափանեցին Վանի վրա գրոհող Ջևդեթ-բեյի զորամասին օգնություն հասցնելը։ Եթե Անդրանիկը «չի կտրեր Խալիլ փաշայի առաջ և չի վերցներ Բաշկալեն, Խալիլի նպատակն էր Վան երթալ և կոտորել Վանը։ Զորս թուրք գերի զինվորներ նույն բանը խոստովանեցան, ըսելով, թե «դուք մեզ կանխեցիք և մեր առաջքը կտրեցիք»[35]։

---

33 ՀՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 370, ց. 1, գ. 76, թ. 1—2։

34 Տե՛ս Մ. Արզումանյան, Հայաստան 1914—1917, Երևան, 1969, էջ 261։

35 «Զորավար Անդրանիկի Կովկասյան ճակատի պատմական օրագրությունը», էջ 21։

Անդրանիկի ջոկատի տարած փայլուն հաղթանակն արագացրեց ռուսական զորքերի առաջընթացը Վանի ուղղությամբ։ 1915 թ. մայիսի 17-ին (Ն. տ.) Վարդանի Արարատյան գունդը՝ կազմված 2-րդ, 3-րդ և 4-րդ կամավորական ջոկատներից, մտավ Վան. քաղաքի հերոսական պաշտպանները ցնծությամբ դիմավորեցին կամավորներին։ Այնուհետև Վան մտան գեներալ Նիկոլաևի զորքերը։ Արարատյան գունդը, որը ենթարկվում էր Բայազետի ուղղությամբ գործող ռուսական զորքերի հրամանատար գեներալ Նիկոլաևին, Բայազետից մինչև Վան, 20 աստիճան սառնամանիքի ծանր պայմաններում, կատաղի մարտեր մղեց և հետ շպրտեց թուրքական զավթիչներին, ազատագրելով Բերկրին, Զևյան, Ջանիկը և այլն։ Ջանիկում 8.000-ից ավելի հայեր, ամբողջ երկու ամիս հերոսաբար դիմադրում էին թուրքական հորդաներին և ի վերջո օրհասական պահին օգնության հասած Արարատյան գնդի կամավորները նրանց փրկեցին բնաջնջումից։

Հայ կամավորներն իրենց մարտական գործողությունների ճանապարհին ամենուրեք հանդիպում էին թուրք ջարդարարների թողած արյունոտ հետքերին. հազարավոր հայ կանանց, աղջիկների, ծերերի, երեխաների այլանդակված, հոշոտված դիակներ, ավերված, հրդեհված քաղաքներ, գյուղեր, ավաններ։

Վանի ազատագրումից հետո հայկական կամավորական ջոկատները գեներալ Տրուխինի զորաբանակի կազմում համառ մարտեր մղեցին Վանա լճի հարավային մասում և պարսկական մասնելով հակառակորդին, շարժվեցին Մուշի և Բաղեշի (Բիթլիսի) ուղղությամբ։ Մարտերի թեժ պահին, հուլիսի 16-ին տակտիկական նկատառումներով Կովկասյան բանակի շտաբից ստացվեց հրաման՝ նահանջել, թողնելով գրավված տերիտորիաները և Վանը։ Ընդհանուր ջնջոցից կենդանի մնացած արևմտահայերը կանգնեցին նոր վտանգի առջև։ Նրանց օգնության եկան հայ կամավորական ջոկատները, որոնք կազմակերպեցին հայերի գաղթը և նրանց ուղեկցեցին մինչև ռուս-թուրքական սահմանը։

Սակայն շուտով ռուսական Կովկասյան բանակը նորից անցավ հակահարձակման, որին մասնակցեցին նաև հայկական կամավորական ջոկատները, որոնք գտնվում էին ռուսական զորքերի ավանգարդում։ 1915 թ. աշնանը և 1916 թ. ձմռան ու գարնան ամիսներին նրանք Արևմտյան Հայաստանի ազատագրման գործում զգալի օժանդակություն ցույց տվեցին ռուսական զորքերին։

Անդրանիկի ջոկատը ռուսական 4-րդ կորպուսի կազմում 1916 թ. հունվարի սկզբներին Վանից շարժվելով Մուշի, Բիթլիսի ուղղությամբ, համառ, արյունահեղ մարտեր մղեց Բշնամու գերազանց ուժերի դեմ և մասնակցեց բազմաթիվ հայկական գյուղերի, քաղաքների ազատագրմանը։

Առջևում էր Բիթլիսը, որի գրավումը գեներալ Աբացիևը (վերջինիս հրամանատարության տակ էր գտնվում Անդրանիկի ջոկատը), սաստիկ սառնամանիքի և պարենի պակասության պատճառով, գտնում էր անհնարին։ Անդրանիկը, խիստ զայրացած գեներալի անվճռականությունից, հեռագրում է կորպուսի հրամանատարին. «Գլխովս կերաշխավորեմ, որ կարելի է Բիթլիսը գրավել անմիջապես»[36]։ Կորպուսի հրամանատարը, Աբացիևի կամքին հա-

[36] «Զորավար Անդրանիկի Կովկասյան հակատի պատմական օրագրությունը», էջ 40։

կառակ, համաձայնվեց Անդրանիկի առաջարկին։ Վերջինս իր 1500 մարտիկներով և 200 հեծյալ կազակներով փետրվարի 20-ին գրոհեց Բիթլիսի վրա։ Գրոհը սկսվեց գիշերը։ «Առանց գնդակ մը արձակելու,— գրել է Գ. Ղորղանյանը,— կամավորական խումբը մոտեցավ Բուրքական դիրքերի կանխավ որոշած հատվածին, ավինայիին հարվածով վար նետեց հոն գտնվող զորքը, դրավեց 2 լեռնային թնդանոթ և փախչող թշնամիի ուսերի վրա ներս խուժեց քաղաքը»[37]։ Այնպիսի արագությամբ կատարվեց այդ բոլորը, որ թշնամու զորահրամանատարները չհասցրին մինչև անգամ հագնվել ու փախուստի դիմել։ Անդրանիկը գերեց թշնամու 1300 զինվոր, 35 հրամանատար, գրա-



Դաբալազյազի կամավորները

վեց բավականաչափ զենք ու զինամթերք, 24 թնդանոթ, մի քանի միլիոն փամփուշտ, 1400 ձի ու ջորի և այլն։ Փրկվեցին 300 հայ կանայք ու երեխաներ և ուղարկվեցին Վան[38]։

Այսպիսով, հայ կամավորները տոգորված արևմտահայության ազատագրման վեհ ցանկությամբ, հերոսաբար գրոհում էին թշնամու դիրքերը և նպաստում կովկասյան բանակների տարած հաղթանակներին։ Նրանք աչքի ընկան մասնավորապես Սարիղամիշի, Դիլմանի, Խոյի, Վանի, Մուշի, Բիթլիսի, Էրզրումի, Երզնկայի և այլ ճակատամարտերում, մեծ դեր խաղալով արևմտահայ գաղթականության կյանքը փրկելու գործում։ Հայ կամավորները պատերազմական ամենադժվարին պայմաններում կարողացան Բուրքական լծքաղանից ազատել տասնյակ հազարավոր հայերի և այսհովել նրանց

37 «Հայրենիք», 1927, № 11, էջ 82։

38 Տե՛ս Ս. Գ. Ազոյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, էջ 434—435։

գաղթը դեպի Կովկաս։ Քաջ ծանոթ լինելով Արևմտյան Հայաստանի բնական պայմաններին, ճանապարհներին, տիրապետելով տեղի բնակչության լեզվին, նրանք ռուսական հրամանատարության կողմից օգտագործվում էին որպես հետախույզներ և առաջապահներ։ Կամավորական չոկատները թեև զինամթերքով, հանդերձանքով ավելի վատ էին ապահովված, քան ռուսական բանակի հիմնական զորամասերը և չունեին ռազմական պատրաստություն, այնուամենայնիվ բացառիկ անձնվիրությամբ էին մարտնչում թշնամու դեմ։

Որքան էլ ռուսական առանձին զորամասերում բարձր էին գնահատում հայ կամավորների քաջագործությունները, այնուամենայնիվ ցարական կառավարությունն անվստահությամբ էր վերաբերվում Կովկասյան ռազմաճակատում գործող հայկական կամավորական զորամասերին, երկյուղելով, որ դրանք հետագայում կարող են դառնալ ազգային բանակի հիմք։ Այդ իսկ պատճառով ցարական իշխանությունները 1915 թ. վերջին որոշեցին վերակազմման անվան տակ ցրել հայկական կամավորական չոկատները և նրանցից առանձին ռուսական զորաբաժիններում գործող հրաձգային գումարտակներ։

Հայկական հարցում ցարիզմի հետապնդած քաղաքականությունը շատ հստակ արտահայտված է Կովկասյան 4-րդ կորպուսի հրամանատար գեներալ Օգանովսկու հետևյալ հաղորդման մեջ. «Հայկական կամավորական չոկատները բաժանել են 4 մասի՝ նպատակ ունենալով նրանց զրկել ինքնուրույնությունից և չեզոքացնել հայերի զինված ուժերը։ Մտադրություն կա մոտ ժամանակներս բոլորովին վերացնել հայկական կամավորական զորամասերի ինքնուրույն գոյությունը և նրանց միացնել համառուսական զինվորական ուժերին։ Դա ունի իր պատճառները։ Մենք հետապնդում ենք այնպիսի նպատակ, որ պատերազմը վերջանալուն պես հնարավորություն ունենանք անմիջապես և արագ զինաթափել հայերին։ Ռուսական կառավարությունը չի մոռացել իր պատմական քաղաքականությունը ու միսիան Արևելքում (այսինքն՝ քաղաքականությունը Հայկական հարցում). Նա հետապնդում է ռուսական պետության շահերը, այլ ոչ թե Հայաստանի ինքնավարության հայերի երազանքը։ Ռուսական կառավարության համար ցանկալի է, որպեսզի հայերը Թուրքահայաստանում կազմեն ցածր տոկոս։ Հայերը պետք է փոխեն իրենց մտածողությունն ու աշխարհայեցողությունը։ Նրանք պետք է հրապարակայնորեն հայտարարեն և գործով ապացուցեն, որ կովում են ոչ թե ինքնավար Հայաստանի համար, այլ որպես ռուսական կայսրության քաղաքացիներ, այլապես հայերի նպատակադրումները իրենց վրա թանկ կնստեն»[39]։

1916 թ. ամռանը ցարական հրամանատարությունը կամավորական չոկատներից կազմեց 5 գումարտակ։ Դրանից մեկը միացվեց գեներալ Դևիտեի զորամասին, իսկ մնացած 4-ը՝ գեներալ Ջևրնոզուբովի Կովկասյան հեծելազորային կորպուսին։

Ցարական հրամանատարության վարած քաղաքականությունը խիստ դժգոհություն առաջացրեց կամավորների շարքերում, որոնց մեծամասնությունը, տեսնելով իրենց հույսերի ի դերև լինելը Արևմտյան Հայաստանի ազատագրության վերաբերյալ, հեռացան ռազմաճակատից, չցանկանալով մասնակից լինել իմպերիալիստական սպանդին։ Այդ մեկ անգամ ևս վկայում է

---

39 Տե՛ս Б. А. Борян, Армения, международная дипломатия и СССР, ч. I, М.—Л., 1928, стр. 361—362.

այն իրողությունը, որ հայ կամավորները մտահոգված էին միայն իրենց հայրենիքի ազատագրման և ոչ թե ցարիզմի նվաճողական պլանների իրագործման հարցով։

3. ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ՋԱՐԴԵՐՆ ՈՒ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արևմտահայության ֆիզիկական բնաջնջման իր հրեշավոր ծրագրերը թուրքական բռնակալությունը մշակել էր դեռևս անցյալ դարի վերջերին։ Սակայն այդ քաղաքականությունն ավելի լայն չափերով իրագործվեց երիտթուրքերի կառավարման տարիներին։

Դեռ 1914 թ. աշնանը և 1915 թ. սկզբներին թուրքական իշխանությունները սկսեցին հատվածաբար ոչնչացնել բանակ զորակոչված հայերին, ապա նաև ճանապարհների վրա աշխատեցնելու պատրվակով զորահավաքի ենթարկված 15—20 և 45—60 տարեկան տղամարդկանց։

Օգտագործելով պատերազմական իրադրությունը, իթթիհատականները 1915 թ. սկզբներին կայացած իրենց կուսակցության կենտկոմի գաղտնի նիստում որոշեցին արևմտահայության բնաջնջման և տեղահանության կոնկրետ նպատակները։

Թալեաթի նախագահությամբ գումարված գաղտնի նիստում, որին մասնակցում էին Էնվերը, Նազըմը, Բեհաեդդին Շաքիրը և ուրիշներ, հանդես գալով որպես հիմնական զեկուցող, կոմիտեի քարտուղար Նազըմը կոչ էր անում չբավարարվել Ադանայի կոտորածի նման մասնակի ջարդերով, ապետք է հայ ազգը արմատախիլ բլլա, մեր հողին վրա անհատ մը անգամ չմնա, հայ անունը մոռցվի։ Հիմա պատերազմի մեջ ենք, ասկե հարմար առիթ չի գտնվիր, մեծ պետությանց միջամտությունը և բերդերու բողոքի ձայնը նկատելի իսկ չի կրնար բլլալ, բլլալու պարագային խնդիրը կատարված իրողություն մը կդառնա և կփակվի. այս անկամվան գործողությունը բնաջնջումի գործողություն մը պիտի բլլա, հայերին անհատ մը իսկ չմնալու պայմանավ բնաջընջումը անհրաժեշտ է»[40]։

Ղեկավարվելով վերոհիշյալ նիստի որոշմամբ, ապրիլի 15-ին տեղական իշխանություններին Թալեաթի, Էնվերի և Նազըմի ստորագրությամբ գաղտնի հրաման ուղարկվեց, որտեղ ասված էր, թե օգտվելով պատերազմի ընձեռած հնարավորություններից, անհրաժեշտ է վերջնականապես բնաջնջել հայերին՝ նրանց քշելով դեպի Արաբիայի անապատները։

Դահիճներն առաջին հերթին հաշվեհարդար տեսան հայ ականավոր գործիչների ու մտավորականների, այդ թվում մեջլիսի հայ պատգամավորների հետ։ Միայն Կ. Պոլսում ապրիլի 24-ի լույս 25-ի գիշերը ոստիկանությունը ձերբակալեց 235 անվանի հայ մտավորականների։ Շուտով ձերբակալվածնե-

---

40 Մելվաե-զատե Ռիֆաթ. Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը, Պեյրութ, 1968, էջ 97, 98։ Տե՛ս նաև „Deutschland und Armenien 1914—1918. Sammlung diplomatischer aktenstücke". Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius. Potsdam, 1919, S. 94, 113, 142.

րի թիվը հասավ շուրջ 800-ի, որոնք քշվեցին դեպի Անատոլիայի խորքերը և գազանաբար սպանվեցին աքսորի ճանապարհին։

Կ. Պոլսի նահատակված հայ մտավորականների թվում էին ականավոր գրող, հրապարակախոս, իրավաբան ու հասարակական գործիչ Գրիգոր Զոհրապը, մեծատաղանդ բանաստեղծներ Դանիել Վարուժանը, Սիամանթոն, գրողներ Ռուբեն Զարդարյանը, Ռուբեն Սևակը, Հովհաննես Թլկատինցին, Հրանդը (Մկրտիչ Կյուրճյան), Երուխանը (Սրվանդ Սրմաքեշխանլյանը), Միհրան Իսպիրյանը, Սմբատ Բյուրատը, Տիգրան Չոկկյուրյանը, Արտաշես Հարությունյանը և շատ ուրիշներ։ Հանճարեղ Կոմիտասը պատահաբար փրկվելով մահից և ականատես լինելով հայ ժողովրդի մեծագույն այդ ողբերգությանը,



Մուշի Ալի-Ջոնա գյուղի մի գոմում այրված մարդկանց ոսկորներ։

կորցրեց բանականությունը։ Թուրքական յաթաղանի զոհ դարձան «Երկիր» Բերթի խմբագիր Տիգրան Օտյանը (Ասո), «Մարտհ» Բերթի խմբագիր Տիրան Քելեկյանը, տաղանդավոր դերասան Ենովք Շահենը, բազմաթիվ գիտնականներ, իրավաբաններ, դասախոսներ, ուսուցիչներ, մշակութային գործիչներ։ Նույն ճակատագրին արժանացան հայ մտավորականները նաև երկրի այլ բաղաքներում։

Երիտթուրքերի կառավարությունը 1915 թ. հունիսի 15-ին Կ. Պոլսի սուլթան Բայազիտի հրապարակում կախաղան բարձրացրեց հնչակյան կուսակցության 20 ղեկավարների (Փարամազ, դոկտ. Պենե, Վանիկ, Ա. Աչըգյաշյան և այլն)։

Երիտթուրքերի կառավարությունը Թալեաթի սոսրագրությամբ մի գաղտնի կարգադրություն հղեց վիլայեթների իշխանություններին, ուր ասվում էր, որ անհրաժեշտ է ոչնչացնել Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի ողջ հայ ազգաբնակչությանը։ «Կառավարությունը,— նշվում էր կարգադրու-

թյան մեջ,— իր վրա է վերցնում ամբողջ պատասխանատվությունը և հրամայում է չխնայել անգամ օրորոցի երեխաներին»[41]։

Տեղական իշխանությունները մեծագույն ճշտությամբ էին կատարում Թալեաթի բոլոր կարգադրություններն։ Այսպես, 1915 թ. ապրիլ-մայիսին տեղահան արվեցին Կիլիկիայի հայերը, հունիս-հուլիսին՝ Կարինի, Տրապիզոնի, Վանի, Բիթլիսի, Խարբերդի և Սվազի, օգոստոս-սեպտեմբերին՝ Անկարայի, Ադաբազարի, Բրուսայի, Զեթել-Մուսայի, Ուրֆայի և Այնթափի հայերը։ Ադրիանապոլսից հայերն աքսորվեցին հոկտեմբերին, Կնսարիայից՝ նոյեմբերին։ Երկրի «ամաքրագործումը» հայ ազգաբնակչությունից տևեց 1915 թ. ապրիլից մինչև նոյեմբեր[42]։

Հայերի աքսորը դեպի Դեյր-էզ-Զոր (աղավաղված՝ Տեր Զոր) քաղաքի շրջակա տոթակեզ անապատը և զանգվածային ջարդը միևնույն եղանակով և միաժամանակ իրականացվեց Թուրքիայի ավելի քան 50 վայրերում։

1915 թ. ապրիլ-մայիս ամիսներին սկսվեց հայերի աքսորը Կիլիկիայից դեպի Միջագետքի շրջանները՝ Բաղդադի երկաթուղուց հարավ։ «Մայիսից մինչև հոկտեմբեր,— գրում է Հերբերտ Ադամս Գիբոնսը,— օսմանյան կառավարությունը սիստեմատիկորեն կենսագործում էր մի պլան, որն ավելի դժոխային էր, քան ամենասարսափելի ջարդը։ Ամբողջ Փոքր Ասիայով մեկ հրամաններ էին ուղարկվում հայ ազգաբնակչությանը Միջագետք աքսորելու մասին։ Հրամանները միանգամայն որոշակի էին ու մանրամասն։ Բացառություն չէր արվում ոչ հիվանդներին, ոչ ծերերին, ոչ էլ հղի կանանց»։ «Ճանապարհ ընկնելու համար,— շարունակում է Գիբոնսը,— տրվում էր երկու օրից մինչև վեց ժամ ժամանակ։ Արգելվում էր իրենց հետ վերցնել որևէ իր, տնային կենդանիներ և նույնիսկ անձնական հագուստ»[43]։ Անգամ ճանապարհին հայերը չէին կարող որևէ բան ձեռք բերել, քանի որ արգելված էր մահմեդական բնակչությանը նրանց հետ առևտուր անել։ Հայերին աքսորելուց հետո նրանց տներն ու ամբողջ ունեցվածքը բռնագրավվում էին[44]։

Աքսորից առաջ տղամարդկանց բաժանում էին ընտանիքներից ու ոչընչացնում։ Դեղեցիկ կանանց ու աղջիկներին բռնի կերպով առանձնացնում էին՝ մեծահարուստ թուրքերի հարեմներն ուղարկելու համար։ Ապա սովահար հոծ զանգվածներին քշում էին Անատոլիայի լեռնանցքներով, կիզիչ արևի ճառագայթների տակ՝ դեպի Միջագետքի անապատները։ Հազարավոր հայեր ճանապարհին մահանում էին սովից, ծարավից, ուժասպառությունից։ Նրանք, ովքեր այլևս անկարող էին առաջ շարժվել, անմիջապես սվինահարվում կամ գնդակահարվում էին։ Քեմախ-Բողազի մոտ՝ Եփրատի ափին և Երզնկայի ու Խարբերդի միջև ընկած տարածության վրա զանգվածային գնդակահարություններ տեղի ունեցան։ Աքսորավայր հասավ տարագրված հայերի չնչին տոկոսը միայն։

---

41 The memoirs of Naim Bey. Turkish Official Dokuments relating to the Deportations and Massacres of Armenians, London, 1920, p. 16, *Հայկական ջարդերի մասին տե՛ս նաև* «Геноцид армян в Османской империи».

42 *A. Mandelstam*, Le sort de l'Empir Ottoman. Paris, 1917, p. 283—284.

43 *Гиббонс Герберт-Адамс*, Последние избиения в Армении. Факты ответственности, пер. с англ., Пг., 1916, стр. 13—14.

44 *Այդ մասին մանրամասն տե՛ս* Վահե Վարդան, *Հայկական տասնհինգը և հայերու լքյալ գույքերը (քննական ակնարկ բուռ քրքական վավերագրերու)*, Պեյրութ, 1970։

Սեբաստիայից և Խարբերդից աքսորված 18.000 հայերից աքսորավայրն են հասել 150 կին և երեխա[45]։ Հալեպից Բես-յուլ Այն և Մեսենի ճանապարհով աքսորված 200.000 հայերից կենդանի մնացին միայն 5.000 հոգի[46]։ Կարինի վիլայեթի 215 հազար հայ ազգաբնակչությունից կենդանի մնաց ընդամենը 2.000, իսկ Կարին քաղաքի 18.000 հայերից՝ 120 մարդ։

Եթե Սեբաստիայի ու Կարինի վիլայեթների և Կիլիկիայի հայերը մեծ մասամբ աքսորվեցին ու ոչնչացվեցին դեպի Մոսուլ ընկած ճանապարհին, ապա զինվորական իշխանություններին ենթակա Բիթլիսի ու Դիարբեքիրի վիլայեթների հայերը, կառավարության հատուկ հրամանով, սրի բաշվեցին տեղում։



Կախաղան բարձրացված հայեր

Թուրքական զորամասերը 1915 թ. հունիսին անսպասելիորեն շրջապատեցին Բիթլիսը և նրա հայաբնակ մասը վերածեցին սպանդանոցի, կենդանի մնացած կանանց ու երեխաներին դուրս բերեցին քաղաքից և քշեցին դեպի Սղերդ։ Ճանապարհին նրանց բոլորին կոտորեցին։ Բիթլիսը գրաված ռուսական զորքերի և հայ կամավորների առջև սարսափելի մի տեսարան բացվեց. վիլայեթի շուրջ 180 հազար հայ բնակիչներից կենդանի էին մնացել միայն մահմեդականություն ընդունած 300—400 կանայք ու երեխաներ։ Նույն ճակատագրին արժանացան նաև Մուշը, Սղերդը, Դիարբեքիրը, երբ ռուսական զորքերը հայ կամավորների հետ միասին 1915—1916 թթ. ազատագրում էին

45 Տե՛ս Հենրի Մարկենթաու, Դեպքեր Մարկենթաուի պատմածները, Քսանվեց ամիս Թուրքիոյ մեջ գտնված Հենրի Մարկենթաուի պատմածները տիեզերական պատերազմին առջև և պատերազմի միջոցին։ Թարգմ. Շամտաճյան, Կ. Պոլիս, 1919, էջ 268։

46 Տե՛ս Ա. Անտոնյան, Մեծ ոճիրը։ Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ պաշա։ Պաշտոնական հեռագիրներ, բնագիրներու ատորագրությամբ և բազմաթիվ պատկերներով, Բոստոն, 1921, էջ 105։

հայկական վիլայեթները, ամենուրեք հանդիպում էին այրված ու խոշտանգված դիակների, ամայի դաշտերի ու ավերակների[47]։ Մինչև 1915 թ. օգոստոսի 14-ը սպանվել էին ավելի քան 500 հազար հայեր։ Եփրատի ջրերն այնպիսի քանակությամբ դիակներ էին տանում, որ դրանք տեղ-տեղ կուտակվելով, պատնեշ էին ստեղծում՝ խանգարելով գետի ազատ ընթացքը։

Թուրքական իշխանություններն արյունոտ դատաստան տեսան ոչ միայն հայկական վիլայեթներում, այլև Փոքր Ասիայի արևմտյան շրջաններում ու Թրակիայում բնակվող հայերի նկատմամբ։ Այսպես, Անկարայում ապրող 800 հայեր աքսորվեցին Կեսարիա։ Ճանապարհին, ձորում, նրանց վրա հարձակվեցին դարան մտած ժանդարմները և բոլորին կոտորեցին։ Հազարավոր հայ կանայք երեխաների հետ միասին Թրակիայից ու Արևմտյան Անատոլիայից աքսորվեցին Կոնիա, ուր նրանք մնալով անապաստան, բաց երկնքի տակ, ամեն օր հարյուրներով մահանում էին սովից ու համաճարակից[48]։

Հայերին գլխովին չաքսորեցին միայն երկու քաղաքներից՝ Կ. Պոլսից ու Զմյուռնիայից։ Դա բացատրվում էր մի կողմից նրանով, որ այդ քաղաքներում էին գտնվում չեզոք տերությունների դիվանագիտական ներկայացուցիչները և թղթակիցներ, որոնք կտարածեին աշխարհով մեկ թուրք ջարդարարների ոճրագործությունները, իսկ մյուս կողմից թուրքական կառավարությունը վախենում էր այդ քաղաքների տնտեսական կյանքի խափանումից, որտեղ հայերը վճռական դեր էին խաղում։ Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և այլ տեղերի հայերին ոչնչացնելու ծրագիրը մինչև վերջ իրականացնելու համար երիտթուրքերը ձգտում էին համաշխարհային հասարակական կարծիքից թաքցնել իրենց չարագործությունները, որպեսզի կանխեն օտարերկրյա պետությունների միջամտությունը։ Հայերի բնաջնջման քաղաքականությունը թուրքական ռազմական իշխանությունները շարունակեցին նաև 1918 թ. ապրիլ-հոկտեմբեր ամիսներին՝ Արևելյան Հայաստանի և Անդրկովկասի գրավված մյուս շրջաններում։

Այսպիսով, 1915—1918 թթ. ընթացքում երիտթուրքական կառավարության կողմից ձեռնարկված հայաջինջ գործողությունների հետևանքով մոտ երկու միլիոն հայեր աքսորվեցին, որոնցից մեկ ու կես միլիոնից ավելին սպանվեց կամ զոհ գնաց սովին ու համաճարակին Միջագետքի անապատներում։ Բռնի թուրքացման ենթարկվեցին շուրջ երկու հարյուր հազար հայեր, գերազանցապես կանայք ու երեխաներ։

Երիտթուրքերի կողմից կազմակերպված հայերի ցեղասպանության մասին գերմանացի նշանավոր հասարակական գործիչ Լեպսիուսը իր հայտնի «Գերմանիան և Հայաստանը» ժողովածուում գրում էր. «Ոչ մի կասկած չկա, որ խոսքը ոչ թե կայսրության անվտանգության նպատակին ուղղված ռազմական միջոցառումների, այլ հայ ժողովրդի ծրագրված ոչնչացման մասին էր»[49]։

Երիտթուրքերը գազանային եղանակով «լուծեցին» Հայկական հարցը։ Մեծ եղեռնից հետո արյունարբու Թալեաթ փաշան պաշտոնապես հայտարարեց՝ «Չկա այլևս Հայկական հարց, քանի որ չկան նաև հայեր»։ Բնաջնջելով և

---

[47] Մանրամասն տե՛ս *Arnold Toynbee*, Armenian atrocitices. The murder of a nation. London-New-York, 1915.

[48] Տե՛ս „The memoirs of Naim Bey", p. 49.

[49] *J. Lepsius*, Deutchland und Armenien 1914—1918, Potsdam, 1919, S. XXIV—XXV.

տեղահան անելով արևմտահայությանը, երիտթուրքական կառավարող շրջանները, իրենց կարծիքով, «վերացրին այդ խոշընդոտը», որը խանգարում էր իրենց պանթուրքական, զավթողական ծրագրերի իրականացմանը։

Առաջին համաշխարհային պատերազմում երկրագնդի տարբեր մասերում իրագործված ոճիրներից և ոչ մեկը չի կարող համեմատվել այս ողբերգության հետ։ Ինչպես զոհերի քանակությամբ, այնպես էլ նրանց հանդեպ գործադրված միջոցներով, հայերի այս սպանդ-գենոցիդը պատմության մեջ հիշատակված բոլոր ջարդերից ամենասոսկալին էր։ Երիտթուրքերին հաջողվեց Հայկական հարցն իրենց ցանկացած ձևով վճռել եվրոպական մեծ տերությունների ցուցաբերած հանցագործ վարքագծի ու քողտվության պատճառով։



Կոտորածներից փրկված հայ երեխա (1915)

Արևմտահայերի գազանային ոչնչացման լուրը արագությամբ տարածվեց ամբողջ աշխարհով մեկ՝ ամենուրեք առաջ բերելով բուռն զայրույթ և բողոք։ Գերմանական կառավարությունը Թուրքիայի հեղինակությունը պաշտպանելու համար ամեն կերպ աշխատում էր թաքցնել իր ժողովրդից երիտթուրքերի կողմից կազմակերպված հայ ազգաբնակչության ոչնչացման ու տեղահանման իրողությունը[50]։ Բայց, չնայած ձեռնարկած միջոցառումներին, հայ ազգաբնակչության ոչնչացման լուրը հասավ նաև Գերմանիա։ Գերմանական մի խումբ առաջադեմ գործիչներ դիմեցին կայզերական կառավարությանը առաջարկելով ներգործել երիտթուրքական դեկավարների վրա՝ հայկական կոտորածները դադարեցնելու համար։ Վիլհելմի կառավարության վարքագիծը դատապարտեցին հատկապես գերմանական սոցիալ-դեմոկրատների ձախ թևի ներկայացուցիչները։ 1916 թ. հունվարի 11-ին հարցապնդումով հանդես գալով ռեյխստագում թուրքական գազանությունների մասին, Կարլ Լիբկնեխտը շեշտեց, որ դրանց պատասխանատվությունն ընկնում է նաև կայզերական կառավարության վրա՝ որպես Թուրքիայի դաշնակցի[51]։

Գերմանիայի պաշտոնական շրջաններն այլևս անկարող էին թաքցնել կամ հերքել հայերի դեմ թուրքական իշխանությունների գործադրած բռնությու-

---

[50] Տե՛ս Ст. Е. Степанян, Армения в политике империалистической Германии, Ереван, 1975.

[51] Տե՛ս „Verhandlungen des Reidstage". XII Zegislaturperiode, Bd. 306, Berlin, 1916, S. 512—513; „Spartakusbriefe", Berlin, 1958, S. 97.

ները։ Ուստի նրանք փոխեցին իրենց գործելակերպը և փորձեցին նվազեցնել այդ ոճրագործությունների չափերը։ Գերմանական մամուլը, հակառակ իրականությանը, պնդում էր, որ Օսմանյան կայսրության արևելյան վիլայեթներում «սպանվել են միայն խռովարարները»[52]։ Անգլիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի կառավարությունները, համաշխարհային հասարակական կարծիքի Ընշման տակ, 1915 թ. մայիսի 11-ին հրապարակայնորեն հայտարարեցին Բ. դռանը, որ այդ հանցագործությունների պատասխանատվությունն ընկնում է թուրքական կաբինետի բոլոր անդամների, ինչպես նաև տեղական իշխանությունների ներկայացուցիչների վրա[53]։ Ամբողջ աշխարհի առաջադեմ հասարակայնությունն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին անարգանքի սյունին էր գամում երիտթուրքական մարդասպաններին և իրենց կառավարություններից պահանջում վճռական քայլի դիմել արևմտահայերին պաշտպանելու համար։

Ռուսաստանի, ինչպես նաև եվրոպական ու ամերիկյան երկրների պարբերական մամուլում բազմաթիվ հոդվածներ ու հաղորդումներ զետեղվեցին արևմտահայերի վիճակի մասին, որոնցում մերկացվում էին թուրքական իշխանությունների չարագործությունները։ Տեղի էին ունենում նաև բողոքի բազմամարդ ցույցեր, ուր հասարակական ու պետական գործիչները զայրույթով դատապարտում էին Թուրքիայի կառավարողներին ու նրանց գերմանական գործակիցներին։

Ռուս առաջադեմ հասարակայնությունն իր սրտին մոտ ընդունեց հայ ժողովրդի մեծագույն ողբերգությունը։ Մ. Գորկին, Վ. Բրյուսովը, Յու. Վասիլովսկին, Ն. Մառը, Մ. Կովալևսկին, Ա. Կրիմսկին, Ֆ. Սոլոգուբը, Ի. Բունինը և շատ ուրիշներ իրենց բողոքի ձայնը բարձրացրին Թուրքիայում հայերի նկատմամբ գործադրվող անլուր գազանություններ դեմ։

Բոլշևիկյան կուսակցության ականավոր գործիչները ժամանակին անարգանքի սյունին գամեցին թուրք ջարդարարներին։ Ս. Մ. Կիրովը ուշի-ուշով հետևելով իթթիհատականների հայաջինջ քաղաքականությանը, գրել է. «Թուրքերը ձգտում են իրագործել իրենց վաղեմի երազանքը՝ ամբողջովին բնաջնջել Թուրքիայի հայ բնակչությանը»[54]։ Կիրովը Հյուսիսային Կովկասում ականատես լինելով արևմտահայ գաղթականների թշվառ վիճակին, նշում էր, որ դժվար է պատկերացնել թուրք ջարդարարների ոճրագործությունները, որ «...այդ մասին չեն կարող պատմել հայ կանանց ու երեխաների արցունքները, իսկ աներևակայելի սարսափներ ու տառապանքներ ապրած հայ խաղաղ բնակչության արյունը, որ թափել են բարբարոսները, միայն կարող է տալ որոշ հեռավոր պատկերացում հայկական Golgotha-յի մասին»[55]։

Սուրեն Սպանդարյանը, սիբիրյան աքսորավայրում, իմանալով թուրք բարբարոսների վայրագության մասին, գրում էր. «Սիրտս կսկծում է, արյունոտվում, երբ կարդում եմ այն հազարավոր փախստականների մասին, այն

---

52 Տե՛ս Гиббонс Герберт-Адамс, стр. 13.

53 Տե՛ս «Международные отношения в эпоху империализма», Документы из архивов царского и Времен. правительства», сер. III, т. 8, ч. II, стр. 400; նաև E. B. Тарле, Европа в эпоху империализма 1871—1919 гг., М.—Л., 1928, стр 393.

54 «Терек», թիֆլիս, 14/2—1916։

55 Նույն տեղում։

խեղճ ու տառապյալ, անլուր տանջվող ժողովրդի, բռնաբարված կանանց ու մորթված երեխաների մասին»[56]։

Հայ ժողովրդի պաշտպանությամբ ակտիվորեն հանդես եկավ նաև Ֆրանսիայի ու Անգլիայի հասարակայնությունը։ 1916 թ. ապրիլի 9-ին Սորբոնի համալսարանի մեծ դահլիճում հրավիրված բազմամարդ նիստում, որը ղեկավարում էր Ֆրանսիայի Ներկայացուցիչների պալատի նախագահ Պոլ Դեշանելը, հանդես գալով հայ ժողովրդի պաշտպանությամբ, լուսավորության մինիստր Պենլըվեն և գրող Անատոլ Ֆրանսն անարգանքի սյունին գամեցին երիտթուրքական դահիճներին ու կայզերական Գերմանիային։

1916 թ. մայիսին Փարիզում կազմակերպվեց «Ֆրանսիա-Հայաստան» կոմիտեն, որի կազմի մեջ մտան ականավոր գիտնականներ ու քաղաքական գործիչներ՝ էտյեն Լամին, Ռաֆայել Ժորժ Լեվին, Շլյումբերգը և ականավոր լեզվաբան Մեյեն։ Կոմիտեի գլխավոր քարտուղար ընտրվեց Ռենեդե Շավանը—„Revue France-Etrangère", *ամսագրի դիրեկտորը*[57]։

Անգլիական պառլամենտի նիստերում հաճախ ելույթներ էր ունենում պետական գործիչ ու գիտնական, լորդ Ջեմս Բրայսը, հրապարակելով Արևմտյան Հայաստանում թուրքական գազանությունները մերկացնող բազմաթիվ փաստաթղթեր։ Հենց այդ ժամանակ էլ Անգլիայում լույս տեսավ «Կապույտ գրքի» մեծ հատորը, որն ամփոփում էր Բրայսի կողմից հավաքած ու պառլամենտին ներկայացրած փաստաթղթերը։

Անտանտայի երկրների կառավարությունները հասարակայնության արտահայտած զայրույթն ու նրա բազմաթիվ բողոքներն օգտագործեցին որպես պրոպագանդայի միջոց՝ ընդդեմ Թուրքիայի ու Գերմանիայի։ «Հայ արյան գետերը, մինչև աստղերը բարձրացած հայ տառապանքի հեծեծանքները,— ընդգծել է պատմաբան Լեոն,— շահագործվում էին՝ Գերմանիայի դեմ կռվելու համար։ Քանի դեռ կանգուն էր ուժեղ ու հաղթական Գերմանիան, հայկական սարսափները նրա հակառակորդներին հարկավոր էին՝ նրան վարկաբեկելու, նրան բարոյապես ստորացնելու, նրան բարբարոսության կողմնակից և հովանավոր ցույց տալու, իսկ իրենց՝ նահատակ ազգերի պաշտպան և ազատարար հայտարարելու համար։ Բայց հենց որ Գերմանիան ջարդվեց և այլևս ոչ ոքի երկյուղ ներշնչել չէր կարող՝ իսկույն մոռացվեց հայն էլ, իր տառապանքն ու արյունն էլ»[58]։

Արևմտահայության ողբերգական ճակատագիրը հետևանք էր ոչ միայն Թուրքիայի հասարակական-քաղաքական հետամնացության և նրա կառավարողների պանթուրքական նկրտումների, այլև մեծ տերությունների իմպերիալիստական ներհակությունների։

Մեծ տերություններն այդ քաղաքականությունը իրագործեցին նաև Կիլիկիայի հայության նկատմամբ։

Օսմանյան կայսրության բաժանման վերաբերյալ 1916 թ. անգլո-ֆրանսիական գաղտնի համաձայնագրով պատերազմի հաղթական ավարտի դեպքում Կիլիկիան մտնելու էր Ֆրանսիայի ազդեցության գոտու մեջ և նրա-

---

56 «Կոմունիստ», Բաքու, 1926, № 220։ Ջ. Կիրակոսյան, Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914—1916), Երևան, 1965, էջ 418։

57 «Армяне и война», 1916, № 6, էջ 89։

58 Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1926, էջ 347։

նում ոչ մի խոսք չէր ասված Կիլիկիայում հայերի ինքնավարության մասին։ Ֆրանսիական պաշտոնական քերթերն սկսեցին հրատարակել հոդվածներ, որոնցում ձգտում էին ցույց տալ, որ Ֆրանսիան Կիլիկիայում «պատմական իրավունքներ» ունի։ «Իրողությունն այն է,— գրում էր հայ ազգային պատվիրակության Կիլիկիայի լիազոր ներկայացուցիչ Մ. Տամատյանը Կ. Պոլսի Զավեն պատրիարքին,— որ ֆրանսիացիք որևէ տրամադրություն չունեն հրաժարվելու այդ հարուստ, արգավանդ ու գեղեցիկ երկրից»[59]։

Ֆրանսիական իմպերիալիստներն իրենց գաղութատիրական քաղաքականությունը Կիլիկիայի նկատմամբ թողարկում էին տեղի հայերին ինքնավարություն շնորհելու խոստումով, որպեսզի տարագրված հայերին ներգրավեին Մերձավոր Արևելքում գործող իրենց բանակը, որը Կիլիկիայում ֆրանսիական վարչական վերահսկողության ղեկավար գեներալ է. Բրեմոնի խոստովանությամբ «շատ բույլ էր և նրան Ֆրանսիայից որևէ համալրում չէր սպասում»[60]։ Դրանով է բացատրվում, որ 1916 թ. Լոնդոնում Հայկական հարցի կապակցությամբ տեղի ունեցած բանակցություններին հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշայի առաջարկը՝ կոտորածներից ազատված հայ տարագիրներից Արևելյան լեգեոն ստեղծելու մասին, հավանություն գտավ Ֆրանսիայի և Անգլիայի ներկայացուցիչների՝ Ժորժ Պիկոյի և Մայլզ Սայքսի կողմից։

Բանակցություններում որոշվեց, որ երկու պետություններ երաշխավորելու են հայերի ինքնորոշման իրավունքը Կիլիկիայում՝ ֆրանսիական հովանավորության ներքո։ Ըստ այդ որոշման ստեղծվելու էր կամավորական Արևելյան լեգեոն, որը կռվելու էր Թուրքիայի դեմ։ Այն դառնալու էր ապագա հայկական բանակի կորիզը Կիլիկիայում[61]։

1916 թ. նոյեմբերի 28-ին Ֆրանսիայի կառավարությունը որոշեց հայ տարագիրներից կազմավորել այդ լեգեոնը։ Որոշման առաջին հոդվածում ասված էր. Կհարուսում պիտի ստեղծել Արևելյան լեգեոն, կազմված արևմտահայերից «որոնք հանձն պիտի առնեն իբրև օժանդակ ուժ, ծառայել Ֆրանսիական դրոշի տակ, պատերազմի ընթացքին օգտագործելու համար Ասիական Թուրքիո մեջ»[62]։

Պողոս Նուբարը ֆրանսիական կառավարության այդ որոշման առթիվ հեռագրեց բոլոր հայ գաղթավայրերի ու Կովկասի հայությանը որի մեջ ասված էր. «Դաշնակիցներու հաղթանակն վերջ, մեր ազգային բաղձանքները պիտի գոհացուին, կը հանձնարարեմ ձեղի ձեռք առնել տալ բոլոր միջոցները բացատրելու և դյուրացնելու համար կարելի ամենամեծ թվով կամավորներու գինվորագրությունը»[63]։

Արևելյան լեգեոնի կորիզը կազմեցին գինք կրելու ընդունակ 600 մուսալեռցիներ, որոնք ժամանակավոր ապաստան էին գտել Պորտ-Սաիդում։ Մեծ թվով հայ կամավորներ եկան Սիրիայից, Եգիպտոսից, Ֆրանսիայից, Ամերի-

---

59 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 190, Բ 507, գ. 129, թ. 245—261։

60 Տե՛ս Ռ. Գ. Սահակյան, Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919—1921 թթ., Երևան, 1970, էջ 113։

61 Տե՛ս նույն տեղում, էջ 115։

62 Ա. Գաբամաճեանցյան, Հայկական լեգեոնը պատմական, իրավական ու քաղաքական հարցերու լույսի տակ և վավերագրեր, Պէյրութ, 1974, էջ 42։

63 Նույն տեղում, էջ 53։

կայից և այլ գաղթավայրերից, ամիջագետքի և Սիրիայի ճակատներեն անգլիացիներու կողմեն բրքական բանակեն առնուած հայ ռազմագերիները ևս կամավոր արձանագրեցան»[64]։ Արևելյան լեգեոնի ընդհանուր թիվը 1918 թ. մայիսին կազմում էր 5.662 զինվոր, որից միայն 400-ն էին սիրիացիներ, մնացածը հայեր էին։

Անգլո-ֆրանսիական նիրքին հակասությունների պատճառով Արևելյան լեգեոնը (1918 թ. դեկտեմբերին այն վերանվանվեց Հայկական լեգեոն) առաջին անգամ պատերազմական գործողություններին մասնակցեց միայն 1918 թ. սեպտեմբերի 19-ին, Պաղեստինի ճակատում։

Հայկական լեգեոնը Պաղեստինի ճակատի հրամանատար անգլիացի գեներալ Ալենբիի զորքերի կազմում 1918 թ. սեպտեմբերի 19-ին զրոհեց Թուրքական դիրքերը Արաբայի ճակատամարտում, որտեղ հայ կամավորները քաջարի մարտնչեցին թշնամու դեմ և նպաստեցին Թուրքական բանակի վերջնական ջախջախմանը։ Ալենբին իր օրագրում գրել է. «Արևելյան լեգեոնը կամ Հայկական լեգեոնը 1918 թ. սեպտեմբերի 19-ին Պաղեստինի մեծ ճակատամարտի հաղթանակում կարևոր բաժին ունեցավ։ Ես գրանով հպարտ եմ»[65]։

Դեներալ Ալենբիի բանակը, Հայկական լեգեոնի հետ միասին, հետապնդելով թշնամուն, 1918 թ. հոկտեմբերի 20-ին գրավեց Լիբանանը։

Դաշնակիցների և Թուրքիայի միջև Մուդրոսում 1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված զինադադարի 16-րդ հոդվածի համաձայն Թուրքական զորքերը պետք է դուրս բերվեին Կիլիկիայից։ Թուրքական զորքերը նահանջելիս իրենց գենքը և ռազմամթերքը թողնում էին մահմեդական ազգաբնակչությանը[66]։

Այդպիսին էր դրությունը Կիլիկիայում, երբ արհավիրքներից ողջ մնացած մոտ 150 հազար տարագիր կիլիկիահայ գաղթականներ, հույս կապելով «մեծ» դաշնակիցների խոստումներին, Միջագետքի, Սիրիայի ավազուտներից վերադարձան իրենց ավերված օջախները։ Այդ պահին Կիլիկիան մաքրված էր Թուրքական զորքերից և գրավված Հայկական լեգեոնի կողմից։ Սակայն Կիլիկիայի վարչությունը մինչև 1919 թ. փետրվարի 7-ը գտնվում էր Թուրք պաշտոնյաների ձեռքին, որոնք ունեին 3 հազար նախկին զինվորներից կազմված ժանդարմական զինված գունդ։

Դեղապետ Բրեմոնը Ֆրանսիական կառավարության կողմից նշանակվել էր Կիլիկիայի գլխավոր կառավարիչ, որն իր պաշտոնին անցավ 1919 թ. փետրվարին։ Նա առաջին իսկ օրը հայերին սիրաշահելու համար արեց հետևյալ հայտարարությունը. «Մեր ցանկությունն է, որ հայերը տեր դառնան իրենց երկրին... մենք պիտի առաջնորդենք զիրենք, մինչև որ անոնք աճին, մեծանան ու երբ սկսին ինքնզինքնին կառավարելու գործին մեջ հաջողիլ, այնատեն մնաք բարով պիտի ըսենք ու հեռանանք»։ Իր խոստումներով Բրեմոնից նա չէր մնում զրաված Գուրոն, որը շեշտել է. «Կիլիկիան հայուն գարավոր հայրենիքն է, Կիլիկիան ազատագրվեցավ հայ կամավորներու թափած արյամբ և ուստի Կիլիկիան հայուն պիտի ըլլա»[67]։

---

64 Սարգիս Գազոյան. *Բրքահայ սպայի մը օրագիրը. Բ հատ., Փարիզ, 1947, էջ 133։*

65 *Colonel L'Hospitalier*, Historique des Anciens Combattants Armeniens, 1914—1918, Paris, 1956, p. 41.

66 *Տե՛ս Հայկական ՍՍՀ ԿԳԳԱ, ֆ. 190/բ, 507, գ. 129, թ. 245—261։*

67 *Տե՛ս Ա. Կենջյան, Սոցիալ-դեմոկրատ-Հնչակյան կուսակցությունը և Կիլիկյան ինքնավարության ակոբ, Գեյրութ, 1958, էջ 280։*

Ֆրանսիական սենատի արտաքին գործերի հանձնաժողովը քննելով Փոքր Ասիայի դրությունը, ընդունեց, որ «Ֆրանսիան դաշնակիցների համաձայնությամբ պետք է ապահովի ճնշված ժողովուրդների ազատությունը և ամենից առաջ Հայաստանի ու Ասորիքի ազատությունը»[68]։

Կիլիկիա վերադարձած հայերը, մեծ հույսեր կապելով ֆրանսիացիների հետ, կուրորեն հավատալով Ֆրանսիայի հովանավորության տակ ինքնավարություն ստեղծելու նրանց կեղծ խոստումներին, կարճ ժամանակում այդ քայքայված, ավերված երկրամասում վերակենդանացրին կյանքը։ Ադանայում սկսեցին լույս տեսնել «Կիլիկիա», «Հայ ձայն», «Պահակ» թերթերը։ Հայ ազգային կուսակցությունները շատ շուտ մոռանալով Հայկական հարցում մեծ պետությունների խաղացած նողկալի դերը, նորից հուսադրվեցին, այս անգամ Կիլիկիայում հայկական պետություն ստեղծելու մասին 1919 թ. առաջին կեսին Ֆրանսիայի ու Անգլիայի տված խոստումներից։

Սակայն հայերի այդ ոգևորությունը երկար չտևեց։ Ֆրանսիայի վարչապետ Բրիանը 1920 թ. մարտի 27-ին կառավարության նիստին նշեց, որ «Կիլիկիան շատ հարուստ երկիր մըն է։ Վաղը եթե մենք չլլանք, ո՞վ պիտի ըլլա մեր տեղը։ Եթե տեսնենք, որ մեր տեղը ուրիշն եկած է, այնատեն պիտի հասկանանք մեր սխալը և պիտի զղջանք... Կիլիկիա կը նշանակե բամբակ, որ կը պակսի մեզի, ինչպես նաև շատ մը հարստություններ»[69]։

Հնչակյանների, ռամկավարների և դաշնակցականների դեկավարները հուսադրվելով իմպերիալիստական Ֆրանսիայի պետական գործիչների «հայանպաստ» ճառերից, միամտորեն հավատացած էին, որ «ազատարար» Ֆրանսիան իրոք պատրաստ է Կիլիկիան վերադարձնելու հայերին։ Այդ հովերով տարված, 1920 թ. օգոստոսի 3-ին Ադանայից արևելք գտնվող Սիհան և Ճիհան գետերի միջև ընկած տարածքում հայկական կուսակցությունները յուրաքանչյուրն առանձին-առանձին «Միջազգերի հանրապետության» հրազակեցին, իսկ Ադանայում օգոստոսի 4-ին Միհրան Տամատյանի նախագահած Ազգային գերագույն խորհուրդը «Ֆրանսիական հովանավորության տակ ինքնավար Հայաստան հռչակեց։ Այդ հանրապետություններից երկուսը առաջին իսկ օրը վերացվեցին ֆրանսիական զորամասերի կողմից։ Իսկ Ադանայինն իր գոյության մասին հասցրեց հեռագրով հաղորդել Փարիզ՝ խաղաղության գերագույն խորհրդին, 3-րդ ինտերնացիոնալին, Սովետական Ռուսաստանի կառավարությանը և չեզոք պետություններին։ Ադանայի հանրապետությունն իր գոյության երրորդ օրը՝ օգոստոսի 6-ին, գնդապետ Բրիմոնի զորախմբի կողմից ցրվեց։ Այդ գործողության համար Բրիմոնը Բուրքերի կողմից գովեստի արժանացավ։ Սկսված անգլո-ֆրանսիական սուր հակասությունների պայմաններում Ֆրանսիան հակվեց դեպի Թուրքիան, և Տամատյանի «կառավարությունը» ֆրանսիական իշխանությունների համար պատրվակ դարձավ հայերի դեմ գործելու բացահայտ։

Քեմալականները, որոնք տակավին էրզրումի (1919 թ. հուլիս-օգոստոս) և Սվազի (1919 թ. սեպտեմբեր) իրենց կոնգրեսներում հռչակել էին ազգային պատերազմ՝ Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու

---

68 «Կայծ», 1918, 14 նոյեմբերի, № 3։

69 Տե՛ս Կարապետ Իզմիրլյան, Հայ ժողովրդի քաղաքական հակառակորդը, անցյալին և ներկայիս (Քննական տեսություն), Գեյրութ, 1964, էջ 210։

համար, պայքարն սկսեցին Կիլիկիայի ճակատից։ Քեմալականները, շարունակելով երիտթուրքերի ազգայնամոլ, շովինիստական քաղաքականությունը, նշված կոնգրեսներում ծրագրեցին «վճռական պայքար մղել այն բոլոր շարժումների դեմ, որոնց նպատակը կլինի անկախ Հայաստանի ստեղծումը»[70]։

Այդ կոնգրեսներից անմիջապես հետո քեմալականները Կիլիկիայում ակտիվ գործողություններ ծավալեցին։ Այստեղ նրանք իթթիհատականների հետ միասին մահմեդական ազգաբնակչությանը բորբոքում էին հայերի դեմ, նրանց գաղտնի կերպով զինում և ապահովում էին ռազմամթերքով։ «Օրը ցերեկով,— գրել է ականատեսներից մեկը,— քեմալականները զենք ու ռազմամթերք էին բաժանում քաղաքի ու շրջակայքի բնակիչներին, գնդացիրներ առաջում քաղաք, տների պատերի մեջ հրանոթներ պատրաստում և, վերջապես, բարիկադներ կառուցում»[71]։ Հայերն այդ մասին ահազանգում էին Ֆրանսիական զինվորական ղեկավարներին, սակայն վերջիններս ոչ մի հակազդեցություններ չէին դիմում։ Դա պատահական չէր, Ֆրանսիան ձգտում էր Կիլիկիայի նկատմամբ իրականացնել 1916 թ. Սայքս-Պիկո-Սազոնով համաձայնագրով և 1920 թ. օգոստոսի 10-ին Սևրի պայմանագրով նախատեսված իրավունքները։

Այդ բոլորը վկայում են այն մասին, որ Ֆրանսիան մտել էր Կիլիկիա ոչ թե որպես հայերի իրավունքների պաշտպան, այլ իր տիրապետությունը հաստատելու նպատակով։ Հայկական լեգեոնի թիվը աստիճանաբար և գաղտնորեն սկսեցին նվազեցնել՝ շուրս գումարտակից մնաց միայն մեկը։ Ի վերջո Հայկական լեգեոնը 1920 թ. սեպտեմբերի 27-ին լուծարքի ենթարկվեց։ Այդ կատարվեց այն ժամանակ, երբ քեմալականները գերազանց ուժերով սկսեցին գրոհել հայերի դիրքերը։ Հայերին ոչինչ չէր մնում անելու, քան քեմալականներին դիմադրել մեն-մենակ։

Հայերի հերոսական դիմադրության փայլուն օրինակներից է քեմալական զորքերի կողմից շրջապատված Հաճըն քաղաքի 8 ամսվա համառ պայքարը։ Հաճընցիները քեմալականների գերազանց ուժերի դեմ, փորձելով ճեղքել պաշարման օղակը, մի քանի անգամ հակահարձակման անցան և շարդ տվեցին թշնամուն, գրավելով մեծ քանակությամբ պարեն ու ռազմամթերք։ Ութ ամսվա անընդհատ հերոսական պայքարի ընթացքում Հաճընը դրսից ոչ մի օգնություն չստացավ։ Միակ օգնությունը, որ ուզում էին ցույց տալ, դա հայ կամավորներն էին, նրանց էլ ֆրանսիական իշխանությունները դինաթափ արին և երկրից դուրս հանեցին։ Ի վերջո քեմալականների գերազանց ուժերը երկար, արյունահեղ մարտերից հետո գրավեցին քաղաքը և այն վերածեցին ավանդատեղի։ 10 հազար բնակիչներից կենդանի մնաց ընդամենը 400 մարդ։ Հաճընը ամայացավ։

Այդպիսի վախճան ունեցավ նաև Մարաշը, որի հայ բնակչությունը կազմում էր 22 հազար մարդ, որից չարդերից փրկվեցին միայն 8 հազարը։ Երբ քաղաքի ևկեղեցիներում պատսպարված հայերից մոտ 1500 հոգի, ճեղքելով թշնամու օղակը, շարժվեցին դեպի ֆրանսիական զորքերի դիրքերը՝ փրկու-

---

70 Տե՛ս Ն. Սարգսյան, Ռ. Սաճակյան, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963, էջ 44։

71 Տե՛ս Ռ. Գ. Սաճակյան, նշված աշխ., էջ 138—139։

թյուն տրոնելու համար, վերջիններս նրանց դիմավորեցին հրացանների համազարկերով, որը հայերից խլեց 400 կյանք[72]։

Հայերը քեմալական զորքերի դեմ հերոսաբար մարտնչում էին պաշարված Ադանայում, Զեյթունում, Սիսում, Քեսաբում և այլ հայաբնակ քաղաքներում և գյուղերում։ Բոլորն էլ ունեցան նույն վախճանը, ինչ որ Հաճընը և Մարաշը։

Կիլիկիահայերի այդ օրհասական պայքարը շարունակվեց մինչև 1921 թ. աշունը։ Հոկտեմբերի 20-ին Անկարայում Ֆրանսիայի և քեմալական Թուրքիայի միջև կնքվեց պայմանագիր, որով վերջ տրվեց պատերազմական գործողություններին Կիլիկիայում և Ֆրանսիան իր զորքերը հեռացրեց Կիլիկիայից։ Անկարայի կառավարությունը դարձավ Կիլիկիայի տեր ու տիրականը։ Ֆրանսիական մոնոպոլիստները, որոնք շահագրգռված էին վերականգնել իրենց նախկին դիրքերը Թուրքիայում և որոնց թելադրանքով էլ ֆրանսիական կառավարությունը Կիլիկիան զիջեց Թուրքիային, փոխարենը քեմալական կառավարությունից ստացավ մի շարք կոնցեսիաներ։

Այսպիսով, այն, ինչ որ իթթիհատականներին չհաջողվեց անել Մեծ եղեռնի օրերին կիլիկիահայության նկատմամբ, հինգ տարուց հետո հաջողվեց կատարել նրանց հայաջինջ քաղաքականության հետևողական շարունակողներին՝ քեմալականներին։ Այդ երկրորդ գենոցիդը, որին զոհ գնացին 30 հազարից ավելի կիլիկիահայեր, այս անգամ կատարվեց մեծ պետություններից՝ Ֆրանսիայի թողտվությամբ։ Կիլիկիան ևս դատարկվեց հայությունից։

Քեմալական կառավարությունն իր հայաջինջ քաղաքականությունը շարունակեց թե՛ Անդրկովկասի և թե՛ հունական ճակատներում։ Երբ 1922 թ. սեպտեմբերի 9-ին քեմալական զորքերը ներխուժեցին Զմյուռնիա և ծովափնյա վայրերը, սրի քաշեցին ինչպես հույն, այնպես էլ հայ խաղաղ բնակիչներին։ Նրանցից շատերը՝ կանայք, երեխաներ, ծերեր նետվեցին Զմյուռնիայի նավահանգիստը, որպեսզի մի կերպ ազատվեն։ Հույներով և հայերով լեփլեցուն տասնյակ նավեր քեմալականների թնդանոթների համազարկով ջրասույզ եղան։ Ծովը ներկվեց անմեղ զոհերի արյունով։

4. ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԸ

Երիտթուրքերի կողմից կազմակերպված համատարած սպանդի պայմաններում արևմտահայերը, այնուամենայնիվ, երկրի մի շարք շրջաններում անհավասար կռիվ մղեցին թշնամու գերազանց ուժերի դեմ։ Նրանց ինքնապաշտպանության մարտերը մղվում էին առանց ծրագրի, տարերայնորեն, մեկը մյուսից անջատ։ Հերոսական պայքարի շնորհիվ Վանում, Շատախում, Մուշում, Սասունում, Մուսա լեռան (Ջեբել Մուսա) վրա, Շապին-Կարահիսարում, Ուրֆայում տասնյակ հազարավոր կյանքեր փրկվեցին թուրքական յաթաղանից։

Հայերի ինքնապաշտպանության ամենանշանակալի դրվագը Վանի հերոսամարտն էր։ Տակավին 1915 թ. փետրվարին Վանի նահանգապետ՝ Ջևդեթ փաշան հայտարարել էր. «Հայերի ու ասորիների հետ մենք հաշիվ տեսանք Ադրբեջանում (խոսքը Իրանական Ադրբեջանի մասին է — խմբ.), Վանի հա-

72 Տե՛ս «Պահակ», Լրագիր, Բոստոն, 1920, № 54։

յերի հետ պետք է նույն ձևով վարվել»[73]։ Այդ նպատակով նա կարինից լրացուցիչ զորքեր ստացավ։

Ապրիլի կեսերին Արճեշում, Շատախում, Հայոց Ձորի շրջանի գյուղերում և Վանի վիլայեթի այլ հայաբնակ վայրերում թուրքական զորքերն ու ոստիկանությունը սկսեցին զանգվածային կոտորածներ։ Միայն Վանա լճի հյուսիսային շրջանում նրանք երեք օրվա ընթացքում սրի քաշեցին 24 հազար հայ։ Հարյուրավոր գյուղացիներ, համառ կռիվներ մղելով, նահանջեցին Վան և քաղաքի բնակիչների հետ միասին սկսեցին եռանդուն կերպով նախապատրաստվել ինքնապաշտպանության։ Վանի Այգեստան թաղամասում տեղի բնակիչներից կազմված ինքնապաշտպանության խորհուրդը Արմենակ Եկարյանի, Նկարիչ Փանոս Թերլեմեզյանի, Արամ Մանուկյանի, Գրիգոր Բուլղարացու ու Հրանտ Գալիկյանի գլխավորությամբ կազմակերպեց քաղաքի պաշտպանության գործը։ Այդ նույն ժամանակամիջոցում զինվորական մարմին ստեղծվեց նաև Վանի կենտրոնում՝ ուսուցիչ Հայկ Քոսյանի ղեկավարությամբ։ Ապրիլի 20-ին թուրքական կանոնավոր զորամասերը հարձակվեցին քաղաքի վրա, սակայն հայերի զինված չոկատները նոր մղեցին նրանց գրոհը։ Մի քանի օրից հետո բշնամին վերստին անցավ հարձակման։ Համառ մարտեր տեղի ունեցան թուրքերի գերակշռող ուժերի և քաղաքի պաշտպանների միջև։



Փանոս Թերլեմեզյանը հայդուկի հագուստով

Հայերի ռազմամթերքն անբավարար էր։ Նրանք լիովին մեկուսացված էին արտաքին աշխարհից և ոչ մի օգնություն չէին ստանում։ Սակայն Վանի պաշտպաններն իրենց կազմակերպվածության ու հնարամտության շնորհիվ կարողացան սեփական միջոցներով զենք ու ռազմամթերք պատրաստել։ Նրանք ստեղծեցին հատուկ արհեստանոցներ, ուր ոչ միայն վերանորոգում էին փչացած զենքերը, այլև արտադրում նորերը։ Համառ զինագործների զեկավարությամբ վանեցիները պատրաստեցին փամփուշտներ, վառոդ, նռնակներ և նույնիսկ ձուլեցին սղնձե երեք հրանոթ[74]։ Կազմակերպվեցին բանվորական հատուկ չոկատներ՝ պաշտպանական կառույցներ ստեղծելու նպատակով, ինչպես նաև պարենի ու մատակարարման և բժշկա-սանիտարական

---

73 Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտի արխիվ, գ. «Հայերի ոչնչացման թուրքական քաղաքականությունը» (փաստաթղթեր), թ. 178։ Ինքնապաշտպանության մարտերի մասին մանրամասն տե՛ս նաև Ե. Ղ. Սաոգսյան, Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում 1914—1918, Երևան, 1964, էջ 278—289։

74 Առտակ Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերէն (հուշեր, 1900-էն 1940), Փարիզ, 1947, էջ 275—277։

բաժիններ։ Հիմնվեց հատուկ բյուրո, որն արձանագրում էր դեպքերը, կազմում և տարածում ամենօրյա հաղորդագրություններ։

Ինքնապաշտպանական գործողությունները ծավալվեցին հիմնականում Այգեստանում, որը շրջապատված լինելով կառավարական զորքերի կողմից, կտրված էր քաղաքի կենտրոնից։ Այգեստանի պաշտպանության շտաբը կազմակերպեց հրաձգային գումարտակներ, ոստիկանական ջոկատ՝ քաղամասի ներսում կարգ ու կանոնին հետևելու համար, վիրակապության կայան և հիվանդանոց։ Քաղաքի պաշտպանների մեջ իշխում էր խստագույն կարգապահություն ու կազմակերպվածություն։ Կատաղի կռիվների ժամանակ մարտիկներին ոգևորելու համար զորեցականներից կազմված «Ծանֆառա փողային նվագախումբը «Մարսելյոզ» և հայկական ժողովրդական երգեր էր նվագում[75]։ Վանի բոլոր բնակիչները համակված էին մի գաղափարով՝ լավ է մեռնել, քան թե անձնատուր լինել թուրք դահիճներին։ Նրանք, ովքեր զենք ունեին, գնում էին կռվելու թշնամու դեմ, իսկ մնացածները ամրություններ էին կառուցում։ Մարտերին մասնակցում էին աղջիկներ, անշափահաս պատանիներ։ Կանայք խնամում էին հիվանդներին ու վիրավորներին, պահում երեխաներին և մարտիկների համար հագուստ կարում։

Չնայած քաղաքի համարյա չդադարող հրետանային գնդակոծմանը (Վանի վրա արձակվեց մոտ 16 հազար արկ), թուրքերին չհաջողվեց ընկճել նրա պաշտպանների ոգին։ Թուրքական հրետանու կողմից քանդված ամրությունները գիշերները վերստին վերականգնվում էին։ Ռազմական գործողությունները կատաղի բնույթ ընդունեցին։ Դիրքերը հաճախ ձեռքից-ձեռք էին անցնում։ Թուրքերին այդպես էլ չհաջողվեց կտրել հայերի դիմադրությունը։ Վանի պաշտպանությունը տևեց 27 օր։ Փանոս Թերլեմեզյանը բնութագրելով Վանի հերոսամարտը, նշում էր, որ այն «բացարձակապես ժողովրդական պատերազմ էր և որը այս ու այն կուսակցության և անհատներու վերագրելը հիմնովին բյուրեմացություն մ'է»[76]։

Մայիսի 16-ին թուրքերը լուր առնելով, որ մոտենում են ռուսական զորամասերն ու հայ կամավորները, վերջին անգամ գնդակոծեցին քաղաքն ու հեռացան։ Հաջորդ օրը երեք հայ կամավորական ջոկատները Վարդանի հրամանատարությամբ մտան Վան։ Մայիսի 19-ին Վան մտավ նաև ռուսական բանակը՝ գեներալ Նիկոլաևի հրամանատարությամբ։ Ժողովրդի ցնծությունը չափ ու սահման չկար։

Ռուսական բանակի հրամանատարությունը Վանի ժամանակավոր նահանգապետ նշանակեց Ա. Մանուկյանին։ Վանում արագ կերպով կյանքն իր հունի մեջ էր մտնում։ Սակայն այդ կանոնավոր ընթացքը շուտով խաթարվեց, երբ ռուսական զորամասերը 1915 թ. հուլիսի 16-ին հեռացան քաղաքից։ Անակնկալ նահանջի հրամանը տեղական բնակչությանը զժվարին կացության մեջ դրեց։ Հայերն ստիպված էին թողնել քաղաքը։ Սկսվեց խուճապ։ Փոխադրական միջոցները չէին բավարարում, ուստի և բնակիչների հոծ զանգվածներն ստիպված էին մեծ մասամբ ոտքով շարժվել դեպի հյուսիս՝ ռուսական սահմանը։ Հեռանալով քաղաքից, հայերը հրկիզում էին տներն ու գույքը։

---

75 Աբսեն Հայազուրյան. Ապրիլյան հերոսամարտը (ականատեսի հուշերը). «Սովետական Հայաստան», 1965, № 4, էջ 33։

76 «Վան-Տոսպ», 1916, ապրիլ, № 22—23, էջ 11։

«Ոչ մեկ արգելք,— գրում է Ա. Նկարյանը,— կրնար հետ կեցնել ժողովուրդը։ Վանեն մինչև Խդիր երկարող ճամփան ծածկված էր խուճապահար ժողովրդին անվերջ բազմությամբ... Մայրը կոլսունցուցած էր իր տղան, հայրը՝ իր ընտանիքը, լաց ու աղաղակ ամեն կողմ։ Սրտաճմլիկ տեսարան մը, զոր ոչ մի գրիչ կարող է նկարագրել։ Բազմությունը կը հառաջանա դանդաղ, հուսահատ, ինչպես մահվան թափորը»[77]։ Վանի գաղթականներին ճանապարհին միացավ նաև շրջակա գյուղերի բազմահազար բնակչությունը։ Թուրքական զորամասերը, օգտվելով ստեղծված կացությունից, անցան հարձակման և արագորեն գրավեցին Ալճեհը։ Վանից դեպի հյուսիս տանող ճանապարհը կտրվեց և գաղթականների մի մասը ստիպված էր շարժվել դեպի արևելք՝ Հարավային Ադրբեջան։ Նրանց մեծ մասին, այնուամենայնիվ, հաջողվեց լեռնային կածաններով անցնել Անդրկովկաս։

Ռուսական զորքերի ետ քաշվելուց հետո Թուրքերը, Ջևդեթ փաշայի գլխավորությամբ, մտան Վան, բայց մի քանի օր հետո Կովկասյան բանակը նորից հարձակման անցնելով, Թուրքերին վռնդեց Վանից ու վերստին տիրացավ քաղաքին։ Վանում գտնվելու այդ կարճատև ժամանակամիջոցում արյունարբու Ջևդեթ փաշան սրի քաշից այն մի քանի հարյուր հայ երևելիներին ու կանանց, որոնք չէին հասցրել հեռանալ քաղաքից։ Նա այրեց կանգուն մնացած տները և քաղաքը հիմնովին կողոպտեց։ Վան մտած ռուսական զորքերը հայտնաբերեցին Թուրքական գաղանությունների քարմ հետքեր։

Վանից բացի հերոսական ինքնապաշտպանության դիմեցին նաև Շատախի շրջանի Վարպդ, Դարմուն, Շուշանց գյուղերի հայերը։ Շուրջ երկու շաբաթ թշնամու գերազանց ուժերի դեմ մարտնչելուց հետո շատախցիները մեծ զոհերի գնով, ճեղքեցին Թուրք հրոսակների օղակը, հասան Վան և միացան Վանի պաշտպաններին։

1915 թ. մայիսին Թուրքական զորքերին համառ դիմադրություն ցույց տվեցին նաև Տարոնի հայերը։ Սակայն թշնամու գերազանց ուժերի դեմ նրանք ի վիճակի չեղան երկար պահել իրենց դիրքերը։ Տարոնի դաշտի բնակչության դիմադրությունը կոտրելով, Թուրքական զորքերը մոտեցան Մուշին և պաշարեցին քաղաքը։ Մուշի հայ բնակչությունը համառ դիմադրություն ցույց տվեց։ Պատսպարվելով եկեղեցիներում և քարե տներում, քաղաքի հայերը չորս օր (հուլիսի 11-ից մինչև 14-ը) մարտնչում էին Թուրքերի դեմ, սակայն, ինչպես նկարագրում է Բրայսը, գերմանական սպաների հրամանատարությամբ գործող Թուրքական թնդանոթները խարխլեցին հայերի դիրքերը։ Հայ մարտիկները պաշտպանվում էին մինչև վերջին շունչը։ Մուշի սանջակի 59 հազար հայերից փրկվեց միայն 9 հազար մարդ, որոնց հաջողվեց ապաստանել Սասնա լեռներում և շարունակել իրենց հերոսական պայքարը[78]։

Թուրքական զորքերը, կոտորելով դաշտավայրի բնակչությանը, շարժվեցին դեպի Սասուն։ Բայց սասունցիները տեղեկանալով, որ Արևմտյան Հայաստանի շրջաններում Թուրքերը բնաջնջում են հայ բնակչությանը, համա-

---

77 Ա. Նկարյան. Հուշեր, էջ 249։

78 Տե՛ս Bryce Viscount, The Treatment of Armenians in the Ottoman Empire. Documents presented to Viscount Grey of Follodon. London, 1916, p. 82.

խմբվեցին և երդվեցին դիմակայել մինչև վերջին ուժերը։ Նրանք մի քանի ամիս շարունակ հերոսաբար պայքարեցին մոտ 30 հազարանոց թուրքական բանակի դեմ։ Ինքնապաշտպանությունն ստացավ օրհասական բնույթ։ Կովին մասնակցեցին նաև կանայք ու երեխաները, զենք չունեցողները պաշտպանվում էին քարերով, քարերով։ Համոզվելով, որ ուղղակի օրհները նպատակին չեն հասնում, թուրքական հրամանատարությունը որոշեց պաշարել Սասունը, կտրել արտաքին աշխարհից և սովամահ անելով վերջնել այն։ Թուրքական հրետանին անդադար գնդակոծում էր սասունցիների դիրքերը։ Պաշտպաններն ուժասպառ էին լինում։ Ամեն օր տասնյակ մարդիկ մահանում էին քաղցից։ Հուլիսի 22-ին թուրքական հրոսակները ձեռնարկեցին իրենց վերջին դրոհը և գրավեցին Անտոթ ու Քեփին լեռները։ Այլևս չունենալով դիմադրելու ոչ մի հնարավորություն, կենդանի մնացածները բաժանվեցին առաձին խմբերի, բարձրացան լեռները և թաքնվեցին կիբեներում ու անտառներում։ Երբ ռուսական զորքերը մոտեցան Մուշին ու Սասունին, նրանք՝ թվով 5000 մարդ, դուրս եկան թաքստոցներից։

Զեյթունի հայ ազգաբնակչությունն ունկնդրելով Կիլիկիայի կաթողիկոս Սահակի հորդորներին, որը հավատացել էր թուրքական իշխանությունների կեղծ խոստումներին, այս անգամ չկարողացավ կազմակերպել իր ինքնապաշտպանությունը։ Թուրք դահիճները նախօրոք գլխատել էին հերոս Զեյթունի ռազմական ուժը. դեռ 1914 թ. բանտարկվել էին 42 այրի ընկնող զեյթունցիներ, այդ թվում 1895 թ. հերոսական ինքնապաշտպանության զեկավար, 1908 թ. Զեյթունի քաղաքագլուխ Նազարեթ Չուուշին, որին բանտում թունավորեցին և սպանեցին։ Սակայն երիտասարդության մի մասը մերժեց լրիմադրելու յաուզարկությունները և միանալով թուրքական բանակից խուսափած և Զեյթունի լեռներում ապաստանած հայ զինվորներին, սկսեց փոքրիկ խմբերով հարձակումներ գործել թշնամու զորամասերի վրա։ Հաճախակի իջնելով լեռներից, նրանք ազատում էին տեղահանված ու դեպի Միջագետք քշվող զեյթունցիներին։ Ինքնապաշտպանական մարտերը Զեյթունում շարունակվեցին շուրջ երեք ամիս։ Չնայած դրան, 1915 թ. մայիսին թուրքական զորքերին ի վերջո հաջողվեց գրավել Զեյթունը և ոչնչացնել տեղում մնացած հայ բնակչությանը։

Հայ ժողովրդի հերոսական պայքարի փառահեղ էջերից էր նաև Մուսա լեռան ինքնապաշտպանությունը, որին նվիրված է ավստրիական հայտնի գրող Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» նշանավոր վեպը, որը թարգմանվել է շուրջ 30 լեզուներով։

1915 թ. հուլիսի 13-ին թուրքական իշխանություններն Անտիոքի ծովախորշի մերձակայքում գտնվող Սուետացի հայկական վեց գյուղերի (Յողունօլուք, Խդրբեգ, Քեբուսին, Բիթիաս, Հաջի-Հաբիբլի, Վագըֆ) բնակիչներին հրամայեցին՝ վաճառել իրենց ամբողջ ունեցվածքը և պատրաստվել ճանապարհ ընկնելու դեպի Միջագետք։ Ի պատասխան դրան հայերը որոշեցին դիմադրել մինչև արյան վերջին կաթիլը։ Մոտ հինգ հազար տղամարդիկ, կանայք ու երեխաներ իրենց անասունների հետ բարձրացան ծովափից վեր խոյացող անառիկ ու ժայռոտ Մուսա լեռը։ Սուետահայերից շատ քչերը զենք ունեին՝ շուրջ 350 հրացան, 50 ատրճանակ և 200 դաշույն։ Նրանք բնտրեցին պաշտպանության կոմիտե՝ Եսայի Յազուբյանի զեկավարությամբ։ Յազուբյանի մարտական դինակիցներն էին Պետրոս Տմյաբյանը, Զեյթունի ող-

բերդության մասնակցած, հրաշքով տարագրությունից փախած ու իր ծննդավայրը՝ Յողուն-օլուք հասած Տիգրան Անդրեասյանը, Հակոբ Քարակյողյանը և ուրիշներ։ Մուսալեռցիներն ստեղծեցին յուրահատուկ ռազմական ճամբար՝ խրամատներ փորեցին, ճանապարհներն ու արահետները փակեցին, լեռան մատույցները շրջապատեցին փշալարերով և ժայռաբեկորներից պատնեշներ կանգնեցրին։

Հուլիսի 21-ին թուրքական մոտ յոթ հազար զինվորներ սկսեցին հարձակումը Մուսա լեռան վրա։ Վաղ առավոտից մինչև ուշ գիշեր նրանք ամեն կողմից գրոհում էին, փորձելով ճեղքել հայերի պաշտպանությունը և ներխուժել ճամբարը։ Սակայն նրանց գրոհները ետ մղվեցին։ Կանգ չառնելով գոհերի առաջ, թուրքական զորամասերը դիմում էին նորանոր հարձակումների։

Այդ անօրինակ պաշտպանության մասնակիցներից մեկը պատմում է. «Թուրքական հրանոթն իր կրակով մեծ վնասներ էր պատճառում հայերին։ Պաշտպանության ղեկավարները որոշեցին լռեցնել այն։ Եվ նրանց հանձնարարությամբ լավագույն հրաձիգներից մեկն աննկատելի մոտենալով թուրքական դիրքերին, դիպուկ կրակոցներով սպանեց չորս հրետանավորների ու գերի վերցրեց մարտկոցի հրամանատարին»[79]։

Առաջին անհաջող գրոհներից հետո թուրքական զորքերը Մուսա լեռան գագաթը տանող բոլոր արահետներով ձեռնարկեցին նոր հարձակում։ Պաշտպանության կոմիտեն, փորձելով կանխել թշնամու առաջխաղացումը, իր ուժերը ցրեց բոլոր ուղղություններով և դրանով թույլ տվեց տակտիկական լուրջ սխալ։ Թուրքերն օգտվեցին դրանից, իրենց հիմնական հարվածը կենտրոնացրին գլխավոր անցման տեղում և առաջանալով, գրավեցին մի շարք կարևոր բարձունքներ։ Վատահ իրենց հաղթանակին, նրանք գիշերն անցկացրին անտառում, մտադրվելով լույսը բացվելուն պես անցնել նոր հարձակման և վերջնական հաշվեհարդար տեսնել ինքնապաշտպանների հետ։ Թուրքերի այդ վրիպումը փրկեց մուսալեռցիներին։ Գիշերը նրանք շրջապատեցին թուրքական զորքերին և կրակ բացելով, ամեն կողմից գրոհի նետվեցին։ Այդ անսպասելի հարձակումից հանկարծակիի եկած թուրքերը խուճապահար փախուստի դիմեցին, թողնելով ռազմադաշտում 200 սպանված։ Լուսադեմին ամբողջ անտառը մաքրված էր թշնամու զինվորներից[80]։

Այդ պարտությունից հետո թուրքական հրամանատարությունը նոր ուժեր կենտրոնացրեց, հասցնելով իր զինվորների թիվը քսան հազարի։ Մուսա լեռը ցամաքից դարձյալ շրջապատվից խիտ օղակով։ Ինքնապաշտպանների գլխին կախվեց սովահարության վտանգը։ Դրությունը օրհասական էր դառնում։ Մնում էր փրկության միակ ուղին՝ միջերկրական ծովը, որի ժայռապատ ափը թշնամին չէր կարողացել պաշարել։ Ինքնապաշտպանության ղեկավարները կազմեցին երեք օրինակից մի նամակ և տվեցին երեք լավագույն լողորդների։ Սրանք պետք է հասցնեին այդ նամակները Անտիոքի ծովախորշով անցնող Անտանտային երկրների նավերին։ Այդ նամակներում մուսալեռցիները խնդրում էին՝ փրկել իրենց ընտանիքներին և զենք ու պարեն տալ՝ հակառակորդի դեմ պայքարը շարունակելու համար։

Սակայն օրերն անցնում էին, իսկ հորիզոնի վրա և ոչ մի նավ չէր երե-

---

79 Տե՛ս Անրի Барби. В стране ужаса. Мученица Армения. Тифлис, 1919, стр. 64.
80 Տե՛ս նույն տեղում։

վում։ Այդ ժամանակամիջոցում կանայք պատրաստեցին երկու դրոշակ, մեկի վրա անգլերեն գրված էր «Քրիստոնյաներն ազատ են ապրում, փրկեցեք մեզ», իսկ մյուսի վրա նկարված էր մի կարմիր խաչ։ Դրոշակները ամրացվեցին երկու բարձր ծառերի կատարներին։

Պաշտպանության 53-րդ օրը Մուսա լեռան ափին մոտեցավ ֆրանսիական «Cuichen» (Կիշեն) ռազմանավը։ Մի քանի կտրիճ մուսալեռցիներ լողալով հասան նավին և իրենց խնդրանքը հաղորդեցին նավապետին։ Վերջինս այդ մասին տեղեկացրեց էսկադրայի հրամանատարին, որը հանձն առավ հայերին դուրս բերել շրջապատումից։ Այդ գործում քիչ դեր չխաղաց ֆրանսիական նավի սպա Տիրան Թեքիյանը։ Շուտով ափին մոտեցան ֆրանսիական «Ժաննա դ'Արկ» շոգենավը և անգլիական մեկ նավ՝ ռազմանավերի ուղեկցությամբ։ Ռազմանավերի հրետանային կրակի պաշտպանության տակ մուսալեռցիներն իրենց ընտանիքներով (ավելի քան 4 հազար մարդ) հաջողությամբ տեղափոխվեցին նշված նավերը։ Սեպտեմբերի 14-ին նրանք հասան Պորտ-Սաիդ, ուր և բնակություն հաստատեցին։

Այսպես, չենթարկվելով Միջագետք աքսորվելու թուրքական կառավարության հրամանին, ուր նրանց տանջալից մահ էր սպասում, Մուսա լեռան հայերը փրկվեցին՝ շնորհիվ իրենց խիզախության ու տոկունության։

Հայ ազգաբնակչությունը թուրք բռնակալներին զինված դիմադրություն ցույց տվեց Անատոլիայի նաև այլ շրջաններում։

Շապին-Կարահիսարում շուրջ 5000 հայեր, հրաժարվելով դենքը հանձնել իշխանություններին և տեղաշարժվել Միջագետք, 1915 թ. հունիսի 3-ից մինչև նույն ամսի վերջը համառ մարտեր մղեցին թուրքական 10-րդ կորպուսի զորամասերի դեմ։ Նրանք գրավեցին քաղաքի միջնաբերդը, որտեղ նստ էին մղում թշնամու անընդհատ հարձակումները։ Շապինկարահիսարցիների հերոսամարտերում աչքի ընկան Ավագ Տյուրիկյանը, Գարեգին Կարմիրյանը, Շապուհ Օգանյանը, Գասպար Ղուկասյանը, Իսրայել Օգանը, Վահան Հյուսիսյանը և Համյակ Գարակյոզյանը[81]։

Թուրքական հրամանատարությունը երզնկայից ու Սվազից օժանդակ զորամասեր փոխադրելով, ուժեղացրեց գրոհները և թնդանոթներով ամբակոծեց միջնաբերդը։ Հայերը արիաբար ետ էին մղում թշնամու բոլոր գրոհները։ Սակայն պարենի և զինամթերքի խիստ պահանջ էր զգացվում։ Հայերը ստիպված մարտերով նահանջում են դեպի Շապին-Կարահիսարին կից հինավուրց բերդը, որը գտնվում էր լեռան գագաթին։ Ինքնապաշտպանության դեկավարելու համար կազմվեց զինվորական խորհուրդ՝ Ղուկաս Տեովլաթյանի գլխավորությամբ։ Կազմվեցին նաև մարտական խմբեր։ Թուրքական զորքերը չկարողացան ընկճել հայերի համառ դիմադրությունը, նրանք արիաբար ետ էին մղում թշնամու բոլոր գրոհները։ Թուրք կուսակալը ստիպված բանագնաց ուղարկեց հայերի մոտ՝ հանձնվելու առաջարկով, որին հայերը պատասխանեցին. «Մեռնելու երկու ձև կա. պատվավոր և անպատիվ մահ. Ոը աշխարհը բան, թե շապինկարահիսարցիք պատվով մեռան»[82]։

---

81 «Ժուչամատյան մեծ եղեռնի, 1915—1916», Բեյրութ, 1965, էջ 774։ Տե՛ս նաև Ասատ Հայկազ, Շապին-Կարահիսար ու իր հերոսամարտը, Նյու-Յորք, 1957, էջ 115—116։

82 «Ժուչամատյան...», էջ 777։

Հայերը շարունակեցին իրենց հերոսական ինքնապաշտպանությունը։ Գնալով հայերի դրությունը բարդանում էր. սպառվում էին պարենը ու զինամթերքը, չրի խիստ պահանջ էր զգացվում, դեղորայք չկար։ Այլևս պաշտպանվելու հնարավորություն չմնաց։ Որոշվեց, որ կռվող մարտիկները գիշերվա խավարում ճեղքեն թուրքական շղթան և դուրս գան հարևան շրջանները, որտեղից գուցե կարողանան օգնություն կազմակերպել բերդում մնացածներին։ Որոշման համաձայն Շապին-Կարահիսարի հերոսները բավականին զոհեր տալով, ճեղքեցին թշնամու մահաբեր օղակը։ Հունիսի վերջին թուրքական հրոսակները ներխուժեցին բերդը և սրախողխող արին մինչև վերջին մարդը։ Շապին-Կարահիսարի հերոսական ինքնապաշտպանությունը տևեց 27 օր։

Պակաս հերոսական չէր հայերի պայքարը նաև Ուրֆա (Ուռհա, Եդեսիա) քաղաքում։ Ուրֆայի հայերը, որոնց թիվը կազմում էր 35 հազար (ընդհանուր բնակչությունը՝ 100.000 էր), ականատես լինելով Ուրֆայի վրայով բազմաթիվ հայերի աքսորին դեպի Միջագետքի ավազուտները, մերժեցին զենքը հանձնելու և իրենց հայրենի բնակավայրերը թողնելու թուրքական իշխանությունների պահանջը։ Նրանք որոշեցին դիմել ինքնապաշտպանության։ Մարտերը ղեկավարում էր երեսնամյա Մկրտիչ Յոթնեղբայրյանը, որի զինակիցներն էին Հարություն Ռասթիկելենյանը, Հովհաննես Խիրզյանը, Խորեն Քյափելյանը, Հարություն Սիմյանը, Լևոն Եղբերլերյանը, Արմենակ Արթուրյանը։ Կազմակերպված մարտական ջոկատները 1915 թ. սեպտեմբերի վերջին ջախջախիչ հարված հասցրին Ուրֆայի հայկական թաղի վրա հարձակված թուրք հրոսակներին և ստիպեցին նրանց խուճապահար հետ նահանջել։

Չնմայլ փաշայի հրամանով Ուրֆայի դեմ 5 հազարանոց զորամաս և քրնդանոններ բերվեցին Հալեպից՝ Ջահրի փաշայի հրամանատարությամբ, որի տեղակալն էր գերմանացի սպա Քոռնտ Վոլֆ Ֆոն Վոլֆհակհերը։ Քնդանոթաձգությունը ղեկավարում էր գերմանացի գնդապետ Ֆոն էկսֆիլը։ Ուրֆացիների հերոսական ինքնապաշտպանությունը տևեց 26 օր՝ սեպտեմբերի 29-ից մինչև հոկտեմբերի 24-ը։ Քաղաքի հայոց թաղի վրա անընդհատ շարունակվում էր քնդանոթաձգությունը, քարուքանդ էին արվում ինքնապաշտպանների դիրքերը։ Սակայն հայկական ջոկատները չէին ընկճվում, շարունակում էին ետ մղել թշնամու գերազանց ուժերի գրոհները։ Ջահրի փաշայի հրոսակները, մեծ զոհեր տալով, շրջապատեցին հայկական թաղը և նորից անցան գրոհի։ Ուրֆայի հայ հերոսները որոշել էին չզիջել իրենց դիրքերը, պայքարել վայրագ թշնամու դեմ մինչև վերջին շունչը։ Տղամարդկանց հետ միասին հերոսաբար կռվում էր նաև կանանց երեք ջոկատ։ Վիրավոր, զերի ընկած թուրք սպա Յուսուֆը վկայում է, որ աքա հագած ու զինված հայ կանայք կռվում էին «առասպելական հերոսների նման, որ երբ միտքս կիյնան, ոսկրներս իսկ կսարսռան»[83]։

Ի վերջո, թուրք հրոսակներին, բավական զոհեր տալուց հետո, հաջողվեց ներխուժել հայկական թաղը և հաշվեհարդար տեսնել ողջ մնացածների հետ։ Նրանք սրի քաշեցին գրեթե բոլորին, իսկ 120 զենկավարների հետ կախաղան բարձրացրին։ Ինքնապաշտպանության ընդհանուր ղեկավար Մկրտիչ Յոթնեղբար-

---

83 Տե՛ս Ս. Ավետյան. Հայ ազատագրական ազգային հիսնամյա (1870—1920) հուշամատյան և զոր. Անդրանիկ, Փարիզ, 1954, էջ 330։

յանը, որը ծանր վիրավոր էր, վերջին րոպեին թշնամու ձեռքը չնկնելու համար ինքնասպանություն գործեց։

Ուրֆացիների դահիճ Ջահիդ փաշան, որը մեծ զոհերի գնով միայն կարողացավ կոտրել հայերի հերոսական ինքնապաշտպանությունը, ստիպված էր խոստովանել. «Ինչ կլինի մեր վիճակը, եթե այս ծանր օրերին մի քանի Ուրֆաներ մեր դեմ այսպես ծառանային»[84]։

Ընդհանուր առմամբ այն վայրերում, ուր հայերն իրենց կյանքը փրկելու համար զենքի դիմեցին, զգալիորեն ավելի քիչ տուժեցին, քան երբ անտերտուն կատարում էին թուրքական իշխանությունների կարգադրությունները։

Թուրքիայի պաշտոնական պատմագրությունը այդ բոլորից հետո հանդրգնում է արդարացնել 1915—1916 թթ. երիտթուրքերի հայաջինջ քաղաքականությունը։ Թուրք բուրժուական պատմաբանների կարծիքով ոչ-մահմեդական ժողովուրդները, այդ թվում և հայերը, չպետք է պայքարեին իրենց աղատության համար։ Արհամարհելով պատմական հայտնի փաստերը, որոնք անհերքելիորեն վկայում են թուրքական սուլթանների վարած հարստահարիչ ու ջարդարարական քաղաքականության մասին, նրանք պնդում են, որ թուրքերը երբեք ամբողջ մի ազգի նկատմամբ բռնություն չեն գործադրել, որ իրենց դրոնը բռնի չեն պարտադրել Օսմանյան կայսրության տիրապետության տակ ընկած ժողովուրդներին[85]։

Թուրք պատմաբան Էսատ Ուրասը, անդրադառնալով 1915—1916 թթ. դեպքերին, գրում է, որ թուրքերի կողմից 600—800 հազար կամ նույնիսկ մեկ միլիոն հայ ոչնչացնելու մասին հղած տեղեկություններն ընդհանուր ոչինչ չունեն իրականության հետ։ Ընդհակառակը, պնդում է պատմության այս կեղծարարը, հայերի կողմից սպանված մահմեդականների թիվն ավելի մեծ է[86]։ Հեղինակը ջանք չի խնայում ապացուցելու, որ իբր հայ ազգաբնակչության ոչնչացման վերաբերյալ թուրքական կառավարության կողմից նախապես մշակված ծրագիր չի եղել։

Պատմաբաններ Հիքմեթ Բայուրը, Ահմեդ Էմին Յալմանը և ուրիշներ երիտթուրքական կլիկին հայկական գենոցիդի հարցում արդարացնելու նպատակով դիմում են սուլթանական կառավարության և երիտթուրքական կուսակցության դեկավարների կողմից 1916 թ. Կ. Պոլսում հրատարակած կեղծ փաստաթղթերից կազմած «Հայկական կոմիտեների նպատակներն ու ապստամբական շարժումը սահմանադրության հռչակումից առաջ և հետո» ժողովածուին։ Մասնավորապես նրանք վկայակոչում են Թալեաթի պատասխանն Անտանտայի տերությունների նոտային՝ հայկական կոտորածների վերաբերյալ։ Հիշյալ պատասխանում թուրքական կառավարությունը փորձում էր համաշխարհային հասարակական կարծիքից թաքցնել հայ ժողովրդի մեծագույն ողբերգությունը։

Հիքմեթ Բայուրն իր աշխատության մեջ, հետևանքը որպես պատճառ ներկայացնելով, գրում է, որ երիտթուրքերի կիրառած պատժիչ միջոցառումները թելադրվում էին հայերի ապստամբությամբ Վանում, Բիթլիսում ու Շա-

---

[84] Տե՛ս «Ուրֆայի հերոսամարտը» («Գրական թերթ», № 16, 1965, ապրիլի 16)։

[85] *Sadri Maksudi Arsal*, Ikinci Türk Tarih Kongresi, s. 1062, 1074, 1092.

[86] *Esat Uras*, Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi, Ankara, 1950, s. 617.

տախում[87]։ Այնուամենայնիվ Բայուրը ստիպված խոստովանում է, որ «հայկական ապստամբության «ճնշման ձևը» պատմության շատ տխուր էջերից է»։ Երիտթուրքերի գործադրած վայրագ միջոցառումները Հիքմեթ Բայուրը բնութագրում է որպես հարկադրական քայլեր, որոնց նրանք ստիպված էին դիմել պետությունը փրկելու համար[88]։

Թուրք մյուս պատմաբանը՝ Թեֆիք Բըյիքլըօղլուն նույնպես ննգափոխում է պատմական փաստերը։ Ամերիկյան պատմաբան Ֆիշերի «Մերձավոր Արևելքի պատմություն»[89] գրքի մասին գրած իր գրախոսականում նա պաշտպանում է հեղինակի այն կարծիքը, որ Վանի ու Կարինի վիլայեթներում բնակվող հայերը 1915 թ. զենքի դիմեցին ռուսական զորքերին օգնելու համար[90]։

Ահմեդ Էմինը, փորձելով հերքել Մանդելշտամի այն պնդումը, որ հայերի մտքում անգամ չի եղել ապստամբություն բարձրացնել թուրքական կառավարության դեմ և որ նրանք զենքի դիմեցին միայն այն ժամանակ, երբ նրանց անխուսափելի մահ էր սպառնում, գրում է. «Հայերի վարքագիծը լիովին արդարացնում էր նրանց աքսորելը»[91]։ Սակայն իր գրքի մի այլ տեղում նա ակամայից բացահայտում է Հայկական հարցում երիտթուրքերի հետապնդած իսկական նպատակները։ «Հայերին արտաքսելը, նշանակում էր հայկական փոքրամասնության վերացումը Թուրքիայում։ Ֆիզիկական լրիվ բնաջնջման կողմնակիցները մատնանշում էին, որ հայկական խիտ ազգաբնակչությունն արևելյան շրջաններում վտանգ է ներկայացնում Թուրքիայի բուն գոյությանը, ուստի և հարկավոր է վերացնել այդ վտանգը...»[92]։

Օսմանյան կայսրության պարտությունից և Անտանտայի պետությունների հետ 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսում զինադադար կնքելուց անմիջապես հետո, երիտթուրքական պարագլուխները փախան արտասահման։ Մի շարք երկրների առաջադեմ շրջանները պահանջեցին հայ ժողովրդի սպանդի կազմակերպիչներին պատասխանատվության ենթարկել։ 1919 թ. փետրվար ամսին Ստամբուլում ռազմական տրիբունալը լսեց նրանց գործը։ Դատավարությունը տևեց շուրջ 6 ամիս։ Ռազմական տրիբունալը 1919 թ. հուլիսի 6-ին որոշեց Թուրքիան պատերազմի մեջ ներքաշելու և հայերի տեղահանման ու ջարդերի համար հեռակա կարգով մահվան դատապարտել գլխավոր հանցագործներին՝ մեծ վեզիր և ներքին գործերի մինիստր Թալեաթին, ռազմական մինիստր Էնվերին, ծովային մինիստր Ջեմալին, լուսավորության մինիստր, երիտթուրքերի կուսակցության գլխավոր քարտուղար դոկտոր Նազիմին[93]։

Ժողովրդական վրիժառուները դատաստան տեսան արևմտահայերի աքսորի և ջարդերի կազմակերպիչների հետ։ 1921 թ. մարտի 15-ին Սողոմոն Թեհլերյանը Բեռլինում արքենակի կրակոցով սպանեց Թալեաթ փաշային։

---

87 *Bayur Yusuf Hikmet*, Türkiye Devletinin Dış Siyasası, İstanbul, 1938, s. 37.

88 Նույն տեղում, էջ 6։

89 *S. N. Fisher*, The Middle East. A. History, New-York, 1959.

90 „Belleten“ (Türk Tarih Kurumu), c. XXIV, s. 94, Ankara, 1960, s. 326–327.

91 *Emin Ahmet*, Turkey in the World War, London, 1930, p. 215.

92 Նույն տեղում, էջ 152։

93 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 237, թ. 51—61, Տե՛ս նաև «Геноцид...», стр. 470, 518.

1921 թ. հունիսին Բեռլինում տեղի ունեցավ Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը, որը լայն արձագանք գտավ ամբողջ աշխարհում։ Դատական նիստերին հրավիրված վկաների ցուցմունքները և բերված փաստաթղթերը լիովին հաստատեցին, որ երիտթուրքերի պարապուխները, և հատկապես Թալեաթ փաշան, հանդիսացել են արևմտահայության բնաջնջման կազմակերպիչները։ Դատարանը Սողոմոն Թեհլերյանին լրիվ արդարացրեց[94]։

1921 թ. Թիֆլիսում տեռորի ենթարկվեց նաև Ջեմալ փաշան։ 1921 թ. Էնվեր փաշան Միջին Ասիայում, գլխավորելով բասմաչների պայքարը Կարմիր բանակի դեմ, երազում էր իրագործել իր ցնորամիտ պանիսլամական, պանթուրքական՝ մեծ Թուրան ստեղծելու պլանները։ Կարմիր բանակը ջախջախեց բասմաչներին, իսկ նրանց պարագլուխ Էնվերը Աֆղանստան փախուստի դիմելու պահին սպանվեց։ 1922 թ. ապրիլի 17-ին Բեռլինում Արամ Երկանյանը, Արշավիր Շիրակյանի հետ տեռորի է ենթարկում Բհնձդդին Շաքիրին և Ջեմալ Ազմիին։ Թուրքիայի վարչապետ Սաիդ Հալիմ փաշան սպանվեց Հռոմում 1921 թ. դեկտեմբերի 6-ին Արշավիր Շիրակյանի կողմից։

5. ՀԱՅ ԴԱՂԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքական լաթաղանից փրկված արևմտահայության բեկորները սփրռվեցին աշխարհով մեկ։ Օսմանյան կայսրության մեջ բնակվող 2,5 միլիոն հայ ազգաբնակչությունից կենդանի էր մնացել ընդամենը 850 հազար մարդ։ Դրանից 200 հազարը կարողացել էր մի կերպ պահպանել իր գոյությունը Թուրքիայում, մոտ 200 հազարը՝ գերազանցապես կանայք ու երեխաներ, բռնի կերպով մահմեդականացվել էին, 250 հազարը՝ ապաստանել էր Ռուսաստանում ու Անդրկովկասում, իսկ 200 հազարը՝ տառապում էր Միջագետքի ու Սիրիայի ճամբարներում[95]։ 1916—1917 թթ. տարագիր հայերի մեծ մասը Միջագետքից ու Սիրիայից հանգրվանեց Լիբանանում, Եգիպտոսում, Ֆրանսիայում, ինչպես նաև Հարավային ու Հյուսիսային Ամերիկայում և այլուր։ Այդպես ստեղծվեց հայկական սփյուռքը։

Կովկաս ու Ռուսաստան գաղթեցին ալաշկերտցիները, հին բայազետցիները, վանեցիները, մշեցիները և ուրիշներ, որոնց թիվը ի հաշիվ նաև Կարսի, Արդահանի ու Արդվինի շրջաններից փախած հայերի, աստիճանաբար տեղաբանալով, 1918 թ. հասավ կես միլիոնի։ Ռուսաստանում ապաստանած արևմտահայ գաղթականների մեծ մասը տեղավորվել էր Արևելյան Հայաստանում։ Սովը և համաճարակն օրեցօր նոսրացնում էին գաղթականների շարքերը։ 1915 թ. միայն օգոստոս ամսին էջմիածնում քաղցի ու համաճարակի զոհ գարձան 4597 մարդ։ «Մեր գոյությանը սպառնացող թշնամու արհիվիրքներեն հետո,— գրում էին Երևանի գաղթականները,— այսօր ապրուստի ու եղանակի պահանջներն ավելի քան վտանգավոր կերպարանք ստացած են... Անոթի ու մերկ, անտուն ու անտեր ժողովուրդը, ներկա եղանակի խստություններու մեջ, ձգած է իր բախտին ու ասոր քմահաճույքին»[96]։

---

94 Դատական պրոցեսի մասին մանրամասն տե՛ս «Դատավարություն Թալեաթ փաշայի». Սղագրական զեկուցում, Վիեննա, 1921։

95 J. Lepsius, Deutschland und Armenien... S. LXV.

96 «Մշակ», 1916, 27 դեկտեմբերի, № 289։

Անդրկովկասի և Հյուսիսային Կովկասի գրեթե բոլոր քաղաքներում քաշտառում էին հազարավոր արևմտահայ գաղթականներ։ Ռուսական կառավարությունն Անդրկովկասում հիվանդությունները կանխելու, հատկապես գործող բանակը համաճարակից ղերծ պահելու նպատակով դիմեց մի շարք միջոցառումների, ի թիվս որոնց բաց Թողից նաև 25 միլիոն ռուբլի՝ գաղթականներին օգնություն ցույց տալու համար։

Հանգանակություն կազմակերպեցին Ռուսաստանի ու Կովկասի հայաբնակ քաղաքներում գործող և նոր ստեղծված բարեգործական ընկերությունները՝ «Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը», «Երևանի եղբայրական օգնության կոմիտեն», «Բաքվի հայկական ընկերությունը», «Մոսկվայի կոմիտեն» և այլն։

Տառապյալ գաղթականությանն օգնություն ցույց տալու ուղղությամբ մեծ գործունեություն ծավալեցին հայ բոլշևիկները։ 1915 թ. Ստեփան Շահումյանի նախաձեռնությամբ Բաքվում ստեղծվեց «Նպաստամատույց կոմիտե», որը Կովկասի աշխատավորների շրջաններում գաղթականների օգտին հանգանակություններ կազմակերպեց։

Սակայն գաղթականների թիվն այնքան մեծ էր, որ ընկերությունների և կոմիտեների միջոցները չէին կարող բավարարել նրանց կարիքները։

Կովկասյան բանակի հրամանատար Յուդենիչը 1915 թ. ապրիլի 5-ի իր զեկուցագրում փոխարքա Վորոնցով-Դաշկովին խորհուրդ էր տալիս կանխել հայերի վերադարձը դեպի Ալաշկերտի, Դիադինի, Բայազետի շրջանները, առաջարկելով այդ վայրերը բնակեցնել Կուբանից և Դոնից բերած կազակներով։ Յարական բանակի գլխավոր շտաբը Արևմտյան Հայաստանի գրաված մարզերում ստեղծեց օկուպացիոն ռեժիմ ու զինվորական հրամանատարություններ նշանակ ռազմավարչական օկրուգներ։ 1916 թ. հաստատվեց «Թուրքիայի՝ պատերազմի իրավունքներով գրավված մարզերի կառավարման ժամանակավոր կանոնադրությունը», որի համաձայն գրավված տերիտորիան հայտարարվում էր Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարության անմիջականորեն ենթակա ժամանակավոր զինվորական նահանգապետություն[97], Այդ քաղաքականության հետևանքը եղավ այն, որ արևմտահայ գաղթականների մոտ կրկին մասին հաջողվեց վերադառնալ իրենց ավերված օջախները։

1918 թ. սկզբին ռուսական զորքերը հեռացան Թուրքական ռազմաճակատից, որից հետո Թուրք զավթիչները նորից տիրացան Արևմտյան Հայաստանին։ Ջարդերից փրկված 150 հազար արևմտահայերը, որոնք վերադարձել էին իրենց հայրենիքը, ստիպված եղան կրկին բռնել գաղթի ճանապարհը։

1918 թ., երբ Թուրք զավթիչները ներխուժեցին Անդրկովկաս, արևելահայերի մի մասը, իր մոտ ապաստանած արևմտահայ գանգվածների հետ միասին, Թողից հարազատ քաղաքներն ու գյուղերը, անցավ դեպի Անդրկովկաս և Ռուսաստանի զանազան վայրերը։ Այսպես՝ Բաթումի շրջանից արտագաղթեց մոտ 20 հազար, Կարսի՝ 120 հազար, Ախալցխայի՝ 30 հազար, Ախալքալաքի՝ 80 հազար, Ալեքսանդրապոլի՝ 60 հազար, Էջմիածնի և Սուրմալուի գա-

---

97 Մանրամասն տե՛ս A. O. Արտյունյան, Кавказский фронт 1914—1917 гг., Ереван, 1971, стр. 336—375; տե՛ս նաև «Հայ ժողովրդի պատմություն։ Հնագույն ժամանակաշրջաններից մինչև մեր օրերը» խմբագրությամբ պրոֆ. Մ. Գ. Ներսիսյանի, Երևան, 1972, էջ 429—430։

վառներից՝ մոտ 80 հազար, Երևանի, Շարուրի և Նախիջևանի գավառներից՝ մոտ 100 հազար մարդ[98]։

Սովետական Ռուսաստանը թեև գտնվում էր չափազանց ծանր պայմաններում այնուամենայնիվ, բավական խոշոր գումար էր հատկացրել հայ գաղթականներին։ Միայն 1918 թ. հունվարին Սովետական կառավարությունը տվեց 6.194.783 ռուբլի, իսկ 1918—1919 թթ. տասը ամսվա ընթացքում՝ 10 միլիոն ռուբլի, 350 հազար արշին գործվածք, 30 հազար կտոր պատրաստի հագուստ և մեծ քանակությամբ կոշկեղեն[99]։ Միաժամանակ հայ որբերի համար Սովետական Ռուսաստանի հարավային շրջաններում բացվեցին մանկատներ ու դպրոցներ։ Իսկ աշխատունակ գաղթականներն ապահովվեցին գյուղերում՝ հողով, քաղաքներում՝ աշխատանքով։



Հայ որբերը Աստրախանում

Արևմտահայ գաղթականների սովետական իշխանություններին հղած բազմաթիվ նամակներից մեկում ասված էր. «Մենք Տաճկահայաստանի վրա իշխող բռնակալների երկաթյա ճնշման տակ դարեր շարունակ արյուն արցունք թափող ժողովրդի բեկորներս... չգտանք աջակցող ձեռք, որը ի պատասխան մեր ողբերին, օգներ մեզ մեր կարիքի և վշտի մեջ, տանջանքների մատնված՝ մենք քարշ էինք տալիս մեր կյանքը՝ թափառելով սար ու ձոր, քաղցած և մերկ, մինչև ոտք չդրինք այն հողը, որին հովանի է հեղափոխական կարմիր դրոշը — Սովետական ռեսպուբլիկայի տերիտորիան»[100]։

Աշխարհով մեկ սփռված արևմտահայ տարագիրներին օգնության հասան նաև հայկական գաղթօջախներն ու մի շարք երկրների հասարակական կազմակերպությունները։ Ամերիկայի Միացյալ Նահանգներում «Ազգային

98 Տե՛ս «Կոմունիստ» շաբաթաթերթ, 1918, № 8։

99 Տե՛ս «Жизнь национальностей», 1919, № 34 (42).

100 ՍՍՀՄ ՀՀՕՇԿԴԱ, ֆ. 1318, գ. 40, թ. 104։

շահերի պաշտպանության միությունը», որը ստեղծվել էր 1915 թ. աշնանը, ամերիկահայ համայնքներում ձեռնարկեց հանգանակություն և հավաքած գումարը՝ 350 հազար դոլար, հատկացրեց Կովկասի, Պաղեստինի, Բազդադի, Լիբանանի և Կ. Պոլսի արևմտահայ գաղթականությանը։ Ամերիկայում հայ գաղթականության օգտին մեծ գործունեություն ծավալեց նաև «Հայկական բարեգործական ընդհանուր միությունը», որն ուներ 90 մասնաճյուղ։ Այդ մասնաճյուղերում ընդգրկված էին ոչ միայն հայ համայնքների ներկայացուցիչները, այլև Ամերիկայի առաջադեմ գործիչները։

Տարագրված հայերին ընդունում, աշխատանքի էին տեղավորում և նրանց օգտին հանգանակություն կատարում Ֆրանսիայի, Եգիպտոսի, Հաբեշստանի, Հնդկաստանի, Բիրմայի, Ինդոնեզիայի հասարակական կազմակերպությունները և հայկական համայնքները։ Անատոլ Ֆրանսը, Վիկտոր Բերարը, Ֆերդինանդ Բյուիսոն, Գուստավ Էրվին, պրոֆ. Սիլվեն և մի շարք այլ նշանավոր գործիչներ դիմեցին աշխարհի ժողովուրդներին նշելով, որ հայերի բնաջնջումը Թուրքիայում կատարվում է կառավարության հրամանով և ըստ ծրագրի պլանով, որ սուլթան Աբդուլ Համիդի սկսած գործն այժմ շարունակում են երիտթուրքերը, ավելի անխնա ու շարանենգ միջոցներով։ Նրանք կոչ էին անում օգնություն ցույց տալ արևմտահայության բեկորներին, որոնց հաջողվել է փրկվել «մեթոդիկ ոչնչացումից»[101]։

1915 թ. նոյեմբերի 16-ին Անգլիայի համայնքների պալատի անգամ Ա. Ուիլյամսը կառավարությունից պահանջեց միջոցներ ձեռնարկել հայ գաղթականներին օգնություն ցույց տալու համար։ Այդ պահանջը պաշտպանեց Իռլանդիայի ազգային կուսակցության առաջնորդ Ջ. Կոննորը[102], 1915 թ. նոյեմբերին Լոնդոնում, քաղաքագլխի նախագահությամբ տեղի ունեցավ բազմամարդ միտինգ, որտեղ որոշում ընդունվեց հայ գաղթականների օգտին հանգանակություն անցկացնել։ Միտինգում ելույթ ունեցան Անգլիայի պառլամենտի անգամ Բրայսը, արքեպիսկոպոս Բյորը, պառլամենտի անգամ Ջ. Կոննորը[103]։

«Հայկական միությունը», որն ստեղծվել էր Լոնդոնում տակավին 1913 թ.՝ հայ ժողովրդի պատմությունը, գրականությունն ու արվեստն ուսումնասիրելու նպատակով, կազմակերպեց Անգլո-հայկական կարմիր խաչի ընկերություն և արևմտահայ գաղթականներին օգնելու ֆոնդ։ Այդ միության նախագահ էմիլա Բոբինգոսը 1915 թ. հրատարակեց մի գիրք, որտեղ, բողոքելով երիտթուրքերի կողմից Արևմտյան Հայաստանում կատարվող գազանություններ դեմ, կոչ էր անում Անգլիային միջամտելու նրա հայրը՝ Ջոն Բոբինգոնը, որը «Դեյլի նյուս» թերթի խմբագիրն էր, անգլիական մամուլում նույնպես հանդես էր գալիս հայ գաղթականներին օգնություն ցույց տալու կոչերով։ 1916 թ. Լոնդոնում, Բրայսի առաջաբանով, լույս տեսավ հայ գրականության դասականների մի ժողովածու, որի վաճառքից ստացված ամբողջ գումարը հանձնվեց հայ գաղթականների օգնության ֆոնդին[104]։

1915 թ. Ադիս-Աբեբայի հայ գաղթօջախը ստեղծեց «Հայրենակցական

---

101 ՎՍՀՀ ԿԳԳԱ, ֆ. 2, գ. 3196, թ. 102։
102 Տե՛ս նույն տեղում, գ. 3198, թ. 9։
103 Տե՛ս նույն տեղում, թ. 98։
104 Տե՛ս «Армяне и война». 1916. № 6. стр. 89.

միությունը, որը Հաբեշստան հասած գաղթականներին ընդունում և ապահովում էր աշխատանքով։ Հայ տարագիր բնակորների օգտին հանգանակություն կատարեցին նաև Ինդոնեզիայի և Բիրմայի հայկական համայնքները։ Միայն Ռանգունի «Հայ բարեգործական միությունը» 1915 թ. հունիսին հավաքեց 18 հազար ռուպի։ Բիրմայի հայ համայնքները մեծ օգնություն ցույց տվին Հեռավոր Արևելքի երկրները հասած հազարավոր աղետյալներին Ամերիկա տեղափոխելու գործում։ Ավստրալիայի հայկական գաղութը միայն առաջին հանգանակության ժամանակ հավաքեց 25 հազար անգլիական ոսկի։

Սակայն հավաքված ընդհանուր գումարը շատ քիչ էր աշխարով մեկ ոտքած հարյուր-հազարավոր հայերի ծանր վիճակը բեթևացնելու համար։

6. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Անտանտայի պետություններն թեպետև բազմիցս հայտարարել էին, որ կօգնեն հայերին իրականացնելու նրանց ազգային ձգտումները, սակայն, ինչպես միշտ, այս անգամ ևս օգտագործեցին հայերի թափած արյունը իրենց նվաճողական նպատակներին հասնելու համար։ Նրանք ամենևին էլ մտադիր չէին պատերազմի հաղթական ավարտից հետո անկախություն կամ ինքնավարություն տալ Արևմտյան Հայաստանին, ինչպես նաև Թուրքիայի լծի տակ հեծող մյուս ժողովուրդներին։ Այդ մասին են վկայում Անգլիայի ու Ֆրանսիայի, իսկ այնուհետև Ռուսաստանի միջև տեղի ունեցած գաղտնի բանակցություններն Օսմանյան կայսրության և, մասնավորապես, նրա արաբական տերիտորիաների, Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի ետպատերազմյան բաժանման մասին։

Բանակցություններն սկսվեցին 1915 թ. դեկտեմբերին՝ Լոնդոնում։ Անգլիայի ներկայացուցիչն էր մերձավոր արևելյան հարցերի գծով փորձագետ Մայլզ Սայքսը, Ֆրանսիայինը՝ Բեյրութի նախկին գլխավոր հյուպատոս Ժորժ Պիկոն։ Բանակցություններ վեր հանեցին այն խոր հակասությունները, որոնք առկա էին Անգլիայի ու Ֆրանսիայի միջև՝ արաբական տերիտորիաների բաժանման հարցում։ Երկար սակարկություններից հետո, 1916 թ. փետրվարին կնքվեց մի համաձայնագիր, որով դաշնակիցների կողմից պատերազմը շահելու դեպքում ներքին և հարավային Միջագետքում (Բաղդադի հետ միասին) հաստատվելու էր անգլիական տիրապետություն, իսկ արևմտյան Սիրիան, Լիբանանը, Կիլիկիան, Այնթափը, Ուրֆան, Մարդինը, Դիարբեքիրը և Հեքյարիի սանջակը հանձնվելու էին Ֆրանսիային։ Արևելյան Սիրիան ու Մոսուլի վիլայեթը կազմելու էին Ֆրանսիայի ազդեցության գոտին, իսկ Պաղեստինը հանձնվելու էր դաշնակիցների համատեղ կառավարմանը[105]։

1916 թ. փետրվարին ռուսական Կովկասյան բանակն արագ թափով առաջ շարժվելով, մոտեցավ Միջագետքի ու Սիրիայի սահմաններին։ Երկյուղ կրելով, որ ռուսական զորքերը հեշտությամբ կարող են թափանցել արաբական երկրները, Անգլիան ու Ֆրանսիան որոշեցին այդ երկրների բաժանման մասին ընդունած իրենց որոշումները համաձայնեցնել Ռուսաստանի հետ։ 1916 թ.

---

[105] «Раздел Азиатской Турции по секретным документам бывшего министерства иностранных дел». Под ред. Е. А. Адамова, М., 1924, док. № XXV.

գարնանը Սայքսը և Պիկոն Պետրոգրադում բանակցությունների մեջ մտան ցարական կառավարության ներկայացուցիչների հետ։ Արդյունքն այն եղավ, որ Ռուսաստանը, ստանալով Անգլիայի ու Ֆրանսիայի ներկայացուցիչների համաձայնությունը՝ պատերազմի հաղթական ավարտից հետո կարող էր կայսրությանը միացնել Էրզրումի, Տրապիզոնի, Վանի, Բիթլիսի վիլայեթները, ապրիլի 26-ին իր ստորագրությունը դրեց Սայքս-Պիկոյի պայմանագրի տակ[106]։ Այդ պայմանագրում ոչ մի տեղ «Հայաստան» անունը չէր երևում։

1916 թ. օգոստոսից անգլո-ֆրանս-ռուսական պայմանագրին միացավ և Իտալիան, որը Թուրքիայի դեմ պատերազմի մեջ էր մտել Անտանտայի պետությունների կազմում։ Նախքան այդ պայմանագրին միանալը, բանակցությունների ժամանակ Իտալիան պահանջում էր, որ պատերազմի հաղթական ավարտից հետո իրեն անցնի Փոքրասիական թերակղզու հարավային մասը՝ Կիլիկիայի Ադանա և Մերսին քաղաքներով։ Բայց քանի որ Կիլիկիան անցնելու էր Ֆրանսիային, ապա Անտանտայի պետությունները Իտալիային խոստացան Անատոլիայի հարավ-արևմտյան մասը՝ Զմյուռնիա, Այդին, Կոնիա և Ադալիա քաղաքներով։

Նշված պայմանագիրը կնքվեց արաբ և հայ ժողովուրդներից գաղտնի. այն լրիվ չեղյալ էր հայտարարում արաբական երկրների, Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի անկախության մասին Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի արած բոլոր հայտարարություններ։ Անտանտայի գաղութարարներին ձեռնտու էր, որ Բուրբ ջարդարարներն Արևմտյան Հայաստանը և Կիլիկիան մարքադրծել էին հայերից և դրանով իսկ դյուրացրել «Հայաստանն առանց հայերի» իրար մեջ բաժանելու և ուղղակի իրենց տիրապետություններին կցելու խնդիրը։ «Փաստը այն է,— գրել է «Բանվորի խոսքը» թերթը,— որ փոքր ազգությունների ազատության նշանաբանի իմպերիալիստական ջատագովներից և ոչ մեկը չի կամեցել փոքր ազգություններից և ոչ մեկի ցանկությունը հաշվի առնել՝ յուր գաղտագողի պայմանագրերը շարադրելիս»[107]։

Չնայած այդ անդրկուլիսյան գործարքներին, Անտանտայի պետությունները շարունակում էին խաբել հայերին, թե կիրականացնեն նրանց ազգային ձգտումները։ «Հայանպաստ» պլատոնական ճառերով ու հայտարարություններով շարունակում էին հանդես գալ ֆրանսիական իմպերիալիստների պարագլուխները Կլեմանսոն, Բրիանը, անգլիական գաղութակալական քաղաքականության կենսագործողներ Լլոյդ Ջորջը, Բալֆուրը, Քերզոնը, ռուսական կայսր Նիկոլայ II-ն ու նրա արտաքին գործերի մինիստր Սազոնովը և շատ ուրիշներ։ Նրանք բոլորն էլ խոսքով հանդես էին գալիս «ինքնավար Հայաստանի» ստեղծման օգտին, հայերի «պաշտպանների» դերում, մինչդեռ իրականում հետամուտ էին միայն իրենց իմպերիալիստական նպատակներին։ Այսպես, Սազոնովը բացեիբաց հայտարարում էր. «Մեր ուղղակի շահն է պաշտպանել հայերին։ Մենք դա անում ենք, իհարկե, ոչ թե ձեր (դիմելով հայերին) գեղեցիկ աչքերի համար, այլ ունենք մեր քաղաքական շահերը»[108]։ Մի այլ առիթով նա գրում էր Կովկասի փոխարքա Նիկոլայ Նիկոլաևիչին. «Ինչ վերաբերում է հայերին լայն ինքնավարություն տալուն, ապա պետք չէ մո-

106 Տե՛ս նույն տեղում, փաստ. №№ XCII, XCVII, XCVIII.

107 «Բանվորի խոսք», 1918, № 1։

108 ՀՍՈՀ ԿԳՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 685, թ. 106։

ռանալ, որ Մեծ Հայաստանի մեջ, որն այժմ նվաճել է Ռուսաստանը, հայերը երբեք մեծամասնություն չեն կազմել, իսկ այն պատժիչ միջոցներից հետո, որ թուրքերը գործադրեցին նրանց վերաբերմամբ պատերազմի ժամանակ... թվական այս հարաբերությունն է՛լ ավելի փոխվեց ի վնաս հայերի, որոնք ներկայումս դժվար թե կազմեն բնակչության նույնիսկ $^1/_4$ մասը»։ Այնուհետև արդարության այդ «պաշտպանը» գրում էր, որ «այդպիսի պայմաններում հայերի ինքնավարությունն իրապես այն անարդար հետևանքը կունենա, որ փոքրամասնությունը կատրկացնի մեծամասնություն կազմող տարրը»[109]։ Փոխարքան 1916 թ. հուլիսի իր պատասխանում լիովին համամիտ էր Սազոնովի հետ, գտնելով, որ Արևմտյան Հայաստանի հարցը լուծված է հայերի բնաջնջումով։

Հայկական հարցը լուծված էին համարում նաև Ֆրանսիայի ու Անգլիայի պետական ու դիվանագիտական գործիչները, չնայած շարունակում էին շահարկել այդ խնդիրը։ Արևմտյան Հայաստանը և Կիլիկիան բաժանելուց հետո Բրիանը երեսպաշտորեն հայտարարում էր. «Երբ հնչի արդար հատուցման ժամը, Ֆրանսիան չպիտի մոռանա հայ ժողովրդի ցավագին փորձություններն ու, իր դաշնակիցների հետ համախորհուրդ, ձեռք կառնի հարկ եղած միջոցները՝ ապահովելու համար նրան խաղաղություն և բարգավաճ կյանք»[110]։ Նույն Բրիանը 1916 թ. մարտի 12-ին Ամենայն Հայոց կաթողիկոսին ուղղած նամակում հավատիացնում էր. «Ձերդ սրբությունը կարող է վստահ լինել և հավատացած, որ դաշնակից պետությունների համահաճությամբ այս միևնույն զգացումներով կձեռնարկե նա հայ ժողովրդին ընձեռելու օրինական հատուցումներ, երբ հանգամանքներն այդ ներելու լինեն»[111]։ Կլեմանսոն հայտարարում էր, թե Ֆրանսիան շարունակում է «հայ ազգը հաշվել այն ժողովուրդների շարքում, որոնց բախտը դաշնակիցները մտադիր են վճռել մարդկայնության և արդարության բարձրագույն կանոնների համեմատ»։

Անգլիայի վարչապետ Ասքվիթը 1916 թ. նոյեմբերին հայտարարում էր, թե իր Անգլիայի նպատակն է վերջ տալ թուրքական տիրապետությանը, ստեղծելով հայերի համար «ազատ երկիր»։ Իսկ Լլոյդ Ջորջը հուսադրում էր հայերին, ասելով թե «Մեծ Բրիտանիայի կառավարությունը չի մոռանա իր պատասխանատվությունը Ձեր մարտիրոս ցեղի հանդեպ»[112]։

Հայ ազգային կուսակցությունները և տարբեր հասարակական կազմակերպությունները շարունակում էին կուրորեն հավատալ Անտանտայի պետությունների պետական և դիվանագիտական գործիչների հայասիրական կեղծ ճառերին և խոստումներին։ Այսպես. Ազգային պատվիրակությունը, որն ստեղծվել էր տակավին Բալկանյան պատերազմի տարիներին Հայկական հարցը բարձրացնելու նպատակով՝ Պողոս Նուբար փաշայի նախագահությամբ ու Արշակ Չոպանյանի, Վահան Թեքեյանի, Գաբրիել Նորատունկյանի, Միհրան Տամատյանի և ուրիշների անդամակցությամբ, պատերազմի տարիներին բախում էին Անտանտայի երկրների դռները և աղերսում, որ նրանք Արևմըտ-

---

109 «Раздел Азиатской Турции...». стр. 209.

110 ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, 1962, № 6, էջ 50—51։

111 Տե՛ս Ա. Կարինյան, Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը, Երևան, 1926, Հավելված, էջ 43։

112 ՀՍՍՀ ԿՊԿԱ, ֆ. 2, ց. 3195, թ. 61։

յան Հայաստանի ու Կիլիկիայի տարածքից ստեղծեն Հայկական ինքնավարություն իրենց հովանավորության ներքո։

Պողոս Նուբար փաշան 1915 թ. հուլիսին անգլիական մի քանի գործիչների հետ ունեցած հանդիպումներից ոգևորված գրում էր. «Մեր դատը Ռուսիո, Ֆրանսիայի և Անգլիո համակրությունը կվայելե»[113]։

Պողոս Նուբարը 1916 թ. դեկտեմբերի 14-ին Չորրորդ պետական դումայի անդամ Պապաջանյանին հղած իր նամակում գրում էր. «Ես Հանրապետության (Ֆրանսիայի—խմբ) կառավարությունից ստացել եմ պաշտոնական հավաստիներ, թե հաղթանակից հետո մեր ազգային ձգտումները կստանան լիակատար բավարարություն»[114], և վերջում ավելացնում, որ նրան հայտնի է դաշնակիցների միջև կնքված համաձայնագիրը, որով վեց վիլայեթները և Կիլիկիան չեն կազմելու մի ամբողջություն, նրանց մի մասը տրվելու է Ռուսաստանին, իսկ մյուս մասը (Կիլիկիա)՝ Ֆրանսիային։ «Մենք կարող ենք հուսալ,— եզրակացնում էր Պողոս Նուբարը,— որ Ֆրանսիայի հովանավորության տակ տրված տեղական լայն ինքնավարության շնորհումով այնտեղ կիրագործվեն մեր բաղձանքները»[115]։

Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում դաշնակիցների արած խոստումնալից հայտարարությունները և հետագայում միջազգային տարբեր կոնֆերանսներում Հայկական հարցի մասին ընդունած մի շարք բանաձևերը ցույց տվեցին, որ մեծ տերությունները երբեք միտք չեն ունեցել իրապես օգնել արևմտահայերին՝ ազատագրվելու թուրքական բռնակալությունից։ Նրանք մշտապես օգտագործում էին Հայկական հարցը միայն Օսմանյան կայսրության նկատմամբ հեռուն միտող իրենց նվաճողական պլաններն իրագործելու նպատակով։ Հայկական հարցի մեջ կատարված այդ խաղը հանգեցրեց ոչ թե Արևմտյան Հայաստանի ազատագրմանը, այլ վերջին հաշվով օգնեց թուրքերին՝ բարբարոսաբար բնաջնջելու հայ ժողովրդի արևմտյան հատվածը։

7. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԴԵՊԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Առաջին համաշխարհային պատերազմի հենց սկզբից Երկրորդ ինտերնացիոնալի կուսակցությունների առաջնորդները բացահայտորեն անցան իմպերիալիստական բուրժուազիայի լագերը։ Գերմանիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության պարագլուխները 1914 թ. օգոստոսի 4-ին Ռայխստագում քվեարկեցին հօգուտ ռազմական վարկերի։ Գերմանական և ավստրո-հունգարական սոցիալ-դեմոկրատների վերնախավը փորձում էր ցույց տալ, որ Գերմանիան և Ավստրո-Հունգարիան «արդար» պատերազմ են մղում հանուն հայրենիքի ազատության և կուլտուրայի պահպանման, հանուն Անգլիայի ու Ռուսաստանի տիրապետության տակ գտնվող ժողովուրդների «ազատագրման»։

Ֆրանսիայի և Բելգիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունների ղեկավարները, հավանություն տալով իրենց կառավարությունների մասնակցությանը պատերազմին, «արժանացան» մինիստրական աթոռների։ Անգլիա-

113 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 669, թ. 42։

114 Տե՛ս Լեո, Անցյալից հուշեր, Թիֆլիս, 1925, էջ 349։

115 Նույն տեղում, էջ 350։

յի սոցիալիստական կուսակցության առաջնորդները նույնպես դավաճանեցին բանվոր դասակարգին և հայրենիքի պաշտպանության անվան տակ կոչ էին անում աջակցել իրենց կառավարության քաղաքականությանը պատերազմում՝ ընդդեմ «գերմանական միլիտարիզմի, բռնապետության և ագրեսիայի»։

Նույն դավաճանական դիրքը բռնեցին ռուսական մենշևիկներն ու էսէռները, որոնք ամբողջ պատերազմի ընթացքում պաշտպանում ու արդարացնում էին ցարական կառավարության զավթողական քաղաքականությունը։ Անդրկովկասում գործող բուրժուական ու մանրբուրժուական կուսակցությունները՝ կադետները, դաշնակցականները, հնչակյանները, մենշևիկները և մյուսները պատերազմի առաջին իսկ օրից նույնպես պատրաստակամություն հայտնեցին օժանդակելու Ռուսաստանի, Անգլիայի ու Ֆրանսիայի բանակների հաղթանակին, որի հետ նրանք կապում էին իրենց նպատակների իրականացումը[116]։

«...Հաղթել թշնամուն՝ ահա սա է կառավարության, ինչպես նաև ժողովրդի մեջ բարոյական մեծ ազդեցություն ունեցող հասարակական կազմակերպությունների ձգտումն ու ցանկությունը։ Օգտվել դասակարգերին համակած հայրենասիրական զգացմունքից և միավորել նրանց հայրենիքի պաշտպանության գործում՝ հայրենիքի համար անպարտելի ուժ ստեղծելու նպատակով—ահա սա է ժողովրդի ներկայացուցիչների կողմից փայփայվող մեծ նպատակը»։ Այսպես էր գրում «Ազդ սոզ»-ի 1916 թ. հունվարի 26-ի համարում «Մուսավաթ» կուսակցության պարագլուխ Ռասուլ-զադեն[117]։

Վրացական ֆեդերալիստների օրգան «Սախալխո փուրցելի» («Ժողովրդական թերթիկ») թերթը, ազնվական մտավորականության «Կլդե» («Ժայռ») շաբաթաթերթը, հանդիսանալով պատերազմում Ռուսաստանի հաղթանակի ջերմ պաշտպանները, պահանջում էին վերջ տալ դասակարգային տարաձայնություններին և գործադրել բոլոր ջանքերը թշնամուն հաղթելու համար[118]։ 1915 թ. հունիսի 20-ին վրացական բուրժուա-նացիոնալիստական սոցիալիստ-ֆեդերալիստների կուսակցության օրգան «Սաքարթվելո» («Վրաստան») թերթը գրում էր. «Պետությունը վտանգի մեջ է, մոռացեք ներքին տարաձայնությունների, անձնական անախորժությունների, կուսակցական պայքարի մասին և ոգևորվեցնք մի մտքով ու կամքով»[119]։

Հայկական բուրժուա-նացիոնալիստական դաշնակցություն կուսակցության օրգան «Հորիզոն» թերթն իր 1915 թ. հուլիսի 3-ի համարի «Մենք էլ լարենք մեր ուժերը» խմբագրական հոդվածում գրում էր. «Ժամանակը չէ՞, որ մենք էլ հետևենք ուժեղների օրինակին և ընդհանուր սպառազինման դիմելով համախմբենք գործի ընդունակ բոլոր տարրերը, առանց դասակարգային խտրության»[120]։

---

116 *Տե՛ս Ц. П. Агаян*, Вековая дружба народов Закавказья, Ереван, 1970, стр. 313—314; *его же* «Армянские политические партии и первая мировая война», в сборнике «Первая мировая война». М., 1968, стр. 335—346.

117 *Տե՛ս Мирза-Давуд Гуссейнов*, Мусават в прошлом и настоящем, Закгнига, 1927, стр. 57.

118 *Տե՛ս М. В. Церцвадзе*, Революционное движение в Грузии в 1914—1917 годах, част I (1914—1916 гг.), М., 1957, стр. 137, 140.

119 *«Սաքարթվելո», 1915, № 24։*

120 *«Հորիզոն», 1915, № 146։*

Հայկական լիբերալ բուրժուազիայի օրգան «Մշակ» թերթը, ողջունելով աթոյունաքերության և առևտրի ներկայացուցիչների համառուսաստանյան IX համագումարի որոշումը ռազմաարդյունաբերական կոմիտեներ ստեղծելու մասին, «նշանավոր դեպքեր» առաջնորդողում գրում էր. «նշանակալից երեվույթ է, որ բոլոր հոսանքները, ուղղություննները, խավերը և դասակարգերը միացել են մի հարցի նկատմամբ, այն է՝ ստեղծելու ազգային պաշտպանության գործը միացնող մի ընդհանուր համազգային օրգան»[121]։

Ահա թե ինչու ռուսական բուրժուական ու մանրբուրժուական կուսակցությունների օրինակով նրանք ևս լայն գործունեություն ծավալեցին ռազմաարդյունաբերական կոմիտեների և դրանց կից «բանվորական խմբեր» ստեղծելու ուղղությամբ։ 1915—1916 թթ. ռազմաարդյունաբերական կոմիտեներ ստեղծվեցին Բաքվում, Թիֆլիսում, Երևանում, Բաթումում, Ալեքսանդրապոլում, Փոթիում, Ելիսավետպոլում, Նախիջևանում, Շուշիում, Ախալցխայում և այլուր։

Երևանի նահանգական ռազմաարդյունաբերական կոմիտեն ստեղծվել է 1915 թ. վերջին, իսկ Ալեքսանդրապոլինը՝ նույն թվականի օգոստոսի 27-ին։ Ինչպես երկրամասի մյուս, այնպես էլ Երևանի և Ալեքսանդրապոլի ռազմաարդյունաբերական կոմիտեները զբաղվում էին կովկասյան ռազմաճակատի զորքերին զինք, ռազմամթերք, հանդերձանք, պարեն, դեղորայք և այլն մատակարարելու գործով։

Միակ կուսակցությունը, որ պատերազմի տարիներին մշակեց հետևողական մարքսիստական ծրագիր պատերազմի, խաղաղության ու հեղափոխության հարցերի վերաբերյալ և անձնուրաց պայքար ծավալեց այն կենսագործելու համար, բոլշևիկների կուսակցությունն էր։

Վ. Ի. Լենինը պատերազմի հենց սկզբում գրեց. «Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի խնդիրները եվրոպական պատերազմում» թեզիսները և կուսակցության Կենտկոմի «Պատերազմը և Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան» մանիֆեստը։ Այս փաստաթղթերում Վ. Ի. Լենինը բացահայտեց պատերազմի իմպերիալիստական էությունը, նրա իսկական պատճառներն ու նպատակները և հիմնավորեց մարքսիստական կուսակցության ու միջազգային բանվորական շարժման խնդիրները։

Վ. Ի. Լենինը, բոլշևիկների կուսակցությունն առաջադրեցին իմպերիալիստական պատերազմը քաղաքացիականի վերածելու, պատերազմում բուրժուական կառավարությունների պարտությանն աջակցելու, սոցիալ-շովինիզմից ու ցենտրիզմից կապիրը լիակատար խզելու և Երրորդ ինտերնացիոնալ ստեղծելու լոզունգները։

«Եվրոպայի Միացյալ Նահանգների լոզունգի մասին», «Իմպերիալիզմը որպես կապիտալիզմի բարձրագույն ստադիա», «Պրոլետարական հեղափոխության ռազմական ծրագիրը» և այլ աշխատություններում Վ. Ի. Լենինը բազմակողմանիորեն բնութագրեց կապիտալիզմի մոնոպոլիստական ստադիան, բացահայտեց նրա առանձնահատկությունները և որոշեց պատմական տեղը, որպես փտող, նեխող կապիտալիզմ, որպես ռեակցիա հասարակական կյանքի բոլոր բնագավառներում։ «Կապիտալիզմն առաջադիմականից դարձել է ռեակցիոն,— գրում էր Վ. Ի. Լենինը 1915 թ.,—նա այնքան է զարգացրել

121 «Մշակ», 1915, № 133։

արտադրողական ուժերը, որ մարդկությանը վիճակված է կամ անցնել սոցիալիզմին, կամ տարիներ ու նույնիսկ տասնամյակներ դիմանալ «մեծ տերությունների զինված պայքարին՝ գաղութների, մենաշնորհների, արտոնությունների և ամեն տեսակի ազգային ճնշումների միջոցով կապիտալիզմն արհեստականորեն պահպանելու համար»[122]։

Հայտնագործելով կապիտալիստական երկրների տնտեսական ու քաղաքական անհամաչափ զարգացման օրենքը, Վ. Ի. Լենինը հանգեց այն եզրակացության, որ իմպերիալիզմի պայմաններում սոցիալիզմը չի կարող հաղթանակել միաժամանակ կապիտալիստական բոլոր երկրներում, կամ երկրների մեծ մասում, այլ կհաղթանակի սկզբում «մի քանի կամ նույնիսկ մեկ, առանձին վերցրած, կապիտալիստական երկրում»[123]։

Մեկ երկրում սոցիալիզմի հաղթանակի հիմնավորմամբ Վ. Ի. Լենինը հեղափոխության մարքսիստական տեսությունը զարգացման մի այնպիսի նոր աստիճանի բարձրացրեց և այնքան մեծ էր այդ ասպարեզում նրա ներդրումը, որ այն, ամենայն իրավամբ, կոչվում է սոցիալիստական հեղափոխության նոր, լենինյան տեսություն։

Պատերազմի տարիներին Վ. Ի. Լենինը, բոլշևիկները բացահայտեցին իմպերիալիստական տերությունների զավթողական պլանները նաև Հայաստանի նկատմամբ։ Վ. Ի. Լենինը ցույց տվեց, որ պատերազմի կոնֆլիկտներից մեկը հյուսվել է «Հայաստանի և Կոստանդնուպոլսի համար՝ Ռուսաստանի ու Թուրքիայի և այլոց միջև»[124], որ ցարական Ռուսաստանը ձգտում է «նվաճել Գալիցիան, Կոնստանդնուպոլիսը, Հայաստանը, Պարսկաստանը և այլն»[125], որ այդ նպատակին հասնելու համար նա «վաղուց ինտրիգներ է սարքում և՛ Գալիցիայում, և՛ Հայաստանում և այլուր... հանուն «վերամիավորման» վեհ նպատակի կանգ չառնելով ոչ մի տեսակ հանցագործության առաջ»[126]։

Իմպերիալիստական տերությունների զավթողական քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ դատապարտեց նաև Վ. Ի. Լենինի ղեկավարությամբ տեղի ունեցած բոլշևիկների արտասահմանյան սեկցիաների Բեռնի կոնֆերանսը (1915 թ. փետրվար-մարտ), ինչպես նաև Ցիմմերվալդյան միջազգային սոցիալիստական կոնֆերանսը (1915 թ. օգոստոս)։ Ցիմմերվալդյան կոնֆերանսը խոր ցավակցություն հայտնեց «պատերազմի բազմաթիվ զոհերին, լեհական ու բելգիական ժողովուրդներին, հրեական ու հայ հալածված ազգերին, բոլոր այն միլիոնավոր մարդկանց, որոնք տառապում են անօտարման աղքատության ու ճնշման մեջ և ստիպված են տանել քամահրանքներ ու չլսված սարսափներ»[127]։ Կոնֆերանսի բանաձևում մատնանշվում էր, որ «ամբողջ ժողովուրդների, երկրների, ինչպիսին են Բելգիան, Լեհաստանը, Բալկանյան պետությունները, Հայաստանը,— սպառնում է փոխհատուցում-

---

122 Վ. Ի. Լենին, նշվ. հ. 26, էջ 381—382։

123 Նույն տեղում, հ. 26, էջ 434։

124 Նույն տեղում, էջ 257։

125 Նույն տեղում, էջ 143։

126 Նույն տեղում, էջ 333։

127 «Циммервальдская и Кинтальская конференции (официальные документы)», М.—Л., 1924, стр. 25.

ների խաղում առևտրի առարկա դառնալու բախտը և ենթարկվելու անեքսիայի՝ լրիվին կամ մաս-մաս»[128]։

1916 թ. գարնանը Շվեյցարիայի Կինտալ գյուղում կայացած միջազգային սոցիալիստական 2-րդ կոնֆերանսը ընդգծեց, որ «ինչպես ցույց է տալիս Բալկանյան պետությունների փորձը և առանձնապես Սերբիայի ու Հայաստանի ողբերգական ճակատագիրը, փոքր պետությունները և ճնշված ազգերը հանդիսանում են միայն շախմատային ֆիգուրներ մեծ տերությունների իմպերիալիստական խաղի մեջ»[129]։

Հայ ժողովրդի և Հայկական հարցի մասին գրել է նաև համակուսակցական բոլշևիկյան մամուլը՝ «Սոցիալ-դեմոկրատ» թերթը և «Կոմունիստ» ժողովածուն։ 1915 թ. մայիսին «Կոմունիստ» տեսական ժողովածուն նշել է, որ «Ռուսաստանում հատուկ ուժով է արտահայտվում պատերազմի հակահեղափոխական բնույթը», որովհետև պատերազմն այստեղ «ցարիզմին ծառայում էր» ոչ միայն բանվորական շարժումը ճնշելու, ռեակցիոն ազնվականական կուսակցությունն ուժեղացնելու համար, այլև՝ «Գալիցիայի, Հայաստանի և այլոց վրա» իր տիրապետությունն ու ճնշումը «ընդլայնելու» համար[130]։

1914 թ. հոկտեմբերի վերջին Պետական դումայի բոլշևիկյան ֆրակցիայի հանձնարարությամբ Բաքու եկավ բոլշևիկ Ն. Ն. Յակովլևը, որն Անդրկովկասի բոլշևիկների համար բերեց Վ. Ի. Լենինի «Հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի խնդիրները եվրոպական պատերազմում» թեզիսները։ 1914 թ. նոյեմբերի սկզբին Վ. Ի. Լենինի հանձնարարությամբ գաղտնի Շվեյցարիայից Ռուսաստան վերադարձավ Ա. Ա. Բեկզադյանը, իր հետ բերելով բոլշևիկյան կուսակցության Կենտկոմի «Պատերազմը և Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատիան» մանիֆեստը։ Պետրոգրադի բոլշևիկներին մանիֆեստը հանձնելուց և նրանց աշխատանքներին ծանոթանալուց հետո Ա. Ա. Բեկզադյանը 1914 թ. նոյեմբերի կեսերին եկավ Բաքու և մանիֆեստը բերեց նաև Անդրկովկասի բոլշևիկներին[131]։

1915 թ. ամռանը վերականգնվեցին Վ. Ի. Լենինի և Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների ճանաչված ղեկավար Ս. Գ. Շահումյանի նամակագրական կապերը։ 1915 թ. հոկտեմբերի 1-ի ծածկագիր նամակում, Ստ. Շահումյանը Վ. Ի. Լենինին հայտնում էր. «Ընդհանրապես ասած թույլ եմ տալիս կարծելու, որ ես և մեր բոլոր ազգականները (բոլշևիկները) բարձր ենք պահում մեր ընտանեկան (բոլշևիկյան կուսակցության) դրոշակը, և որ Դուք կարող եք մեր ռեպուտացիայի համար հանգիստ լինել... ես ունեմ բոլոր հիմունքները կարծելու, որ մենք կունենանք փայլուն հաջողություն...»[132]։

Պատերազմի, խաղաղության և հեղափոխության հարցերի վերաբերյալ լենինյան դրույթները դարձան նաև Անդրկովկասի ու Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության ուղեցույցը։

Կովկասի և Հայաստանի բոլշևիկների կյանքում մեծ նշանակություն ունե-

---

128 ՍՍՀՄ ՀՀՍՇԿԴԱ, ֆ. 102, Ոստիկանության դեպարտամենտ, հատուկ բաժին, 1916, գ. 5, մ. 92, թ. 4։

129 «Циммервальдская и Кинтальская конференции...», стр. 53—54.

130 «Коммунист», 1915, № 1—2, стр. 3.

131 Տե՛ս ՄԼԻ-ի ԿԿԱ, ֆ. 124, ց. 1, գ. 153, թ. 5 և ՍՍՀՄ ԿՊԴԱ, ֆ. 153, ց. 1, գ. 2859 թ. 20։

132 Ստ. Շահումյան, Նամակներ, 1896—1918, Երևան, 1959, էջ 52—53։

ցավ Ստ. Շահումյանի գլխավորությամբ 1915 թ. հոկտեմբերի սկզբին Բաքվում հրավիրված ՌՍԴԲԿ Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունների անդրկովկասյան խորհրդակցությունը։ Այն քննարկեց և համապատասխան բանաձևեր ընդունեց ընթացիկ մոմենտի, ազգային հարցի, Կովկասում ազգությունների փոխհարաբերությունների և կազմակերպական հարցի մասին։

Խորհրդակցության «Ընթացիկ մոմենտի մասին» բանաձևում նշվում էր, որ երկրորդ տարին շարունակվող համաշխարհային պատերազմը կապիտալիստական մեծ տերությունների իմպերիալիստական քաղաքականության արդյունքն է և նրա մեղավորները հենց այդ տերություններն են։ Պարզաբանելով, որ «միայն կապիտալիստական կարգի ոչնչացումը... և այդ կարգը սոցիալիստական կարգով փոխարինելը ժողովուրդներին կարող է փրկել հետագա գազանացումից ու ինքնաքանդումից և մարդկությանը դուրս բերել հետագա պրոգրեսի ուղին», խորհրդակցությունը սոցիալիստական կուսակցությունների հիմնական խնդիրն էր համարում «սոցիալիստական հեղափոխության ուժգին պրոպագանդան»[133]։

Նշավակելով Կովկասի բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների հակաժողովրդական գործունեությունը, խորհրդակցությունը պահանջում էր էլ ավելի ուժեղացնել պայքարը բուրժուական նացիոնալիզմի և նրա բոլոր դրսևորումների դեմ։

ՌՍԴԲԿ բոլշևիկների Կովկասյան խորհրդակցության բանաձևերը, որ գրել էր Ստ. Շահումյանը, տպագրվեցին և տարածվեցին ամբողջ երկրամասում։ Դրանք արժանացան Վ. Ի. Լենինի բարձր գնահատականին։ Կուսակցության կենտրոնական օրգան «Սոցիալ-դեմոկրատը» 1916 թ. փետրվարի 29-ի համարում նշում էր. «Ս. դ. բոլշևիկները՝ Կովկասի ինտերնացիոնալիստների՝ ռուսների, վրացիների, հայերի և թաթարների անունից հրատարակել են մանիֆեստ, որը շարադրում է նրանց տեսակետը պատերազմի մասին։ Այդ փաստաթուղթն ամբողջովին կանգնած է ՌՍԴԲԿ ԿԿ-ի մանիֆեստի դիրքերի վրա...»։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Կովկասի բանվորների, աշխատավոր գյուղացիների և սովորող երիտասարդության քաղաքական լուսավորման ու կազմակերպման գործում կարևոր դեր է կատարել նաև 1915 թ. դեկտեմբերի 6-ից Թիֆլիսում լույս տեսնող և մինչև հարյուրերորդ համարը հնեղափոխական-դեմոկրատական, ինտերնացիոնալիստական ուղղություն ունեցող «Պայքար» գրական, հասարակական, քաղաքական և տեսական հայերեն լրագիր շաբաթաթերթը։ «Պայքարին» ակտիվորեն աշխատակցում էին Ստ. Շահումյանը, Ա. Միկոյանը, Ասք. Մռավյանը Ս. Խանոյանը, Ա. Երզնկյանը, Հ. Ազատյանը, Ա. Ամիրյանը, Ա. Կարինյանը, Մ. Մելիքյանը, Հ. Կամարին, Կ. Հայկունին, Հ. Հակոբյանը, Հ. Պողոսյանը, Գ. Ղազարյանը, Հ. Հովսեփյանը, Հ. Սոլովյանը, Սիմակ Սահակյանը, Արտին և ուրիշներ։

«Պայքարից» էջերից բոլշևիկներն անհաշտ կռիվ հայտարարեցին նացիոնալիզմին, որը մեծ խոչընդոտ էր Կովկասի բազմազգ պրոլետարիատի և աշխատավորության ինտերնացիոնալ միասնության ճանապարհին։ «Ինտելիգենցիան և նացիոնալիզմը» հոդվածում Ստ. Շահումյանը ցույց էր տալիս, որ բուրժուական նացիոնալիզմը և պրոլետարական ինտերնացիոնալիզմն իրար լիովին հակադիր գաղափարախոսություններ են, նացիոնալիզմը բուրժուա-

133 Ստ. Շահումյան, նշվ. հ. 3, էջ 17։

զինյալ այն զենքերից մեկն է, որով նա ամրապնդում է իր տիրապետությունը։ Իմպերիալիզմի օրոք նացիոնալիզմը հանանում է իր «գագաթնակետին», վեր է ածվում «նացիոնալ-իմպերիալիզմի», որը ստրկացնում ու կեղեքում է հեռավոր երկրների, գաղութների ազգաբնակությունը, ճնշում ու բռնի ուժով խեղդում է ամեն մի դիմադրություն բանվորական մասսաների կողմից—հանուն «հայրենիքի» շահերին և բերում է վերջապես դեպի այն զարհուրելի ընդհարումները ազգերի միջև, որոնց մենք ականատես ենք այսօր»[134]։

«Պայքարը», ինչպես նշել է Ակ. Մռավյանը, պատերազմական շրջանի չափազանց խիստ գրաքննության պայմաններում, եզոպոսյան լեզվով, հաճախ աներևակայելի, ոլորապտույտ ուղիներով կարողանում էր քարոզել նաև հակապատերազմական մտքեր, մերկացնել պատերազմի իմպերիալիստական բնույթը, ցույց տալով պատերազմից դուրս գալու ուղին, աշխատավոր մասսաների սոցիալական և ազգային ազատագրության ուղին։ Չնայած թերթը հրատարակվում էր հայերեն լեզվով, այնուամենայնիվ, նրա էջերից պրոպագանդվող գաղափարները լայն տարածում գտան ոչ միայն հայ, այլև՝ երկրամասի մյուս ազգերի բանվորների և աշխատավորների միջև։ Ահա թե ինչու «Պայքարին» օգնում և օժանդակում, նրա համար հանգանակություններ էին կազմակերպում ինչպես հայ, այնպես էլ վրացի, ռուս, հրեա, օս, ադրբեջանցի և լեզգի բանվորներն ու առաջադեմ մտավորականները[135]։

1917 թ. Ստ. Շահումյանի խմբագրությամբ Բաքվում լույս տեսնող բոլշևիկյան «Սոցիալ-դեմոկրատ» թերթը, խոսելով կովկասյան իրականության մեջ «Պայքարի» կատարած բացառիկ դերի մասին, նշել է, որ նա հրապարակ եկավ այն ժամանակ, երբ ազգամիջյան վեճերը Կովկասում հասել էին իրենց եռման աստիճանին։ Եվ ահա «պատմական այդ պատասխանատու մոմենտին «Պայքարը» միանգամ բարձրացրեց միջազգայնության դրոշը, և այդ հանդամանքն ունեցավ ահագին անդրադարձում հարևան ազգությունների մեջ»[136]։

Պատերազմական դրության ծանր պայմաններում Հայաստանի բոլշևիկներին հաջողվեց ԻՍԴԲԿ Կովկասյան բյուրոյի ղեկավարությամբ և Բաքվի ու Թիֆլիսի բոլշևիկյան կազմակերպությունների օգնությամբ, զգալի աշխատանք կատարել ցարիզմի կողմից չախչախված կուսակցական կազմակերպությունները, խմբերն ու բջիջները վերականգնելու, նորերը ստեղծելու, ինչպես նաև աշխատավոր մասսաներին և Կովկասյան բանակի զինվորներին կուսակցության լենինյան լոզունգների շուրջը համախմբելու և նրանց պայքարը ցարիզմի ու իմպերիալիստական պատերազմի դեմ կազմակերպելու ուղղությամբ։

Այս գործում հատկապես նշանակալից էր էչմիածնի (Գ. Աթաբեկյան, Ա. Հովհաննիսյան, Ա. Միկոյան), Ալեքսանդրապոլի (Պ. Արվելաձե, Ա. Շահինյան, Ա. Վարդանյան, Բ. Ղարիբջանյան), Սարիղամիշի (Ստ. Ալավերդյան, Ս. Թավդիդվիլի, Ն. Լեժավա, Գ. Հայկունի, Տ. Մուսիև, Վ. Կիսաշվիլի), Երևանի (Ա. Միլիքյան), Կարսի (Հ. Սարուխանյան), Ղարաքիլիսայի (Վ. Մռավյան, Վ. Մխիթարյան), Զանգեզուրի (Բ. Հարությունյան, Ք. Միքոյան, Մ. Մաշուրյան) և այլ վայրերի բոլշևիկյան կազմակերպությունների, խմբերի ու բջիջների գործունեությունը։

---

134 Ստ. Շահումյան, նշվ. հ. 3, էջ 75։

135 Տե՛ս «Պայքար», 1916, № 49։

136 «Սոցիալ-դեմոկրատ», 1917, № 3։

Այսպիսով, առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Անդրկովկասի և Հայաստանի բոլշևիկները ոչ միայն լիովին պաշտպանեցին կուսակցության լենինյան քաղաքականությունը պատերազմի, խաղաղության և հեղափոխության հարցերի վերաբերյալ, այլև ընդհատակի ծանր պայմաններում հերոսական պայքար ծավալեցին այդ քաղաքականությունը կենսագործելու համար։ Խոսելով այդ մասին, լենինյան «Սոցիալ-դեմոկրատը» նշել է, որ Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունը «...լավ ու հաջողությամբ է պաշտպանում հեղափոխական մարքսիզմի դրոշը Կովկասում նաև այժմյան ծանր օրերին... կուսակցական անլեգալ աշխատանքն ուժեղ կերպով ծավալվում է Կովկասի բոլոր վայրերում։ Շարժումն ստեղծվում և առաջ է գնում բացառապես հեղափոխական սոցիալ-դեմոկրատ ինտերնացիոնալիստների լոզունգներով...»[137]։

8. ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՔԱՅՔԱՅՈՒՄԸ։ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՎԱՏԹԱՐԱՑՈՒՄԸ

Առաջին համաշխարհային պատերազմը ծանր ներդարձավ երկրի տնտեսության վրա։ Արդյունաբերությունը, գյուղատնտեսությունն ու տրանսպորտը խոր ճգնաժամ ապրեցին։ Մասսայական զորահավաքների հետևանքով երկրի աշխատունակ տղամարդկանց 40—50 %-ը՝ մոտ 15 միլիոն մարդ բանակ զորակոչվեց։ Պատերազմի հենց առաջին տարում ժողովրդական տնտեսությունից զորակոչվեց 7 միլիոն 400 հազար մարդ[138]։ Ռուսաստանի բազմաթիվ նահանգներում գյուղացիական տնտեսությունների ընդհանուր թվի մեկ երրորդը, իսկ որոշ նահանգներում նույնիսկ կեսը մնաց առանց աշխատող ձեռքերի։ Մոբիլիզացվեցին նաև ժողովրդի նյութական միջոցներն ու բանող անասունները։ Մինչև 1917 թ. երկրորդ կեսն ամբողջ երկրում հավաքագրվեցին 2 միլիոն 600 հազար ձի և 18 միլիոն եզ ու բանող այլ խոշոր անասուններ[139]։ Գյուղացիական տնտեսությունների հսկայական մասը մնաց առանց ձիու։ Արդյունաբերության ռազմականացման հետևանքով Ռուսաստանի 3 միլիոն 300 հազար ֆաբրիկագործարանային բանվորներից մեկ միլիոն 900 հազարը (57,6%) 1916 թ. վերջին արդեն պատերազմի համար էին աշխատում[140]։ Աննկում ապրեցին արդյունաբերության և գյուղատնտեսության համարյա բոլոր ճյուղերը։ 1917 թ. քարածխի հանույթը, 1913 թ. համեմատությամբ, կրճատվեց ավելի քան 21%-ով, նավթինը՝ 23%-ով, սև մետաղի ձուլումը (առանց Լեհաստանի) ավելի քան 10%-ով (1916 թ.), պղնձինը՝ 50,6%-ով և այլն[141]։

Պատերազմը ծանր հարված հասցրեց նաև գյուղատնտեսությանը։ 1917 թ.

---

137 «Социал-демократ», 1916, № 51.

138 Տե՛ս Պ. Ի. Լյաշչենկո, *ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության պատմություն, հատ. 2, Կապիտալիզմ, Երևան, 1950, էջ 579։*

139 Տե՛ս «История СССР», т. VI, М., 1968, стр. 584; Պ. Ի. Լյաշչենկո, *նշված աշխ., էջ 579։*

140 Տե՛ս *И. И. Минц*, История Великого Октября, т. I, М., 1967, стр. 125.

141 Տե՛ս «Труды ЦСУ», т. VII, вып. I, «Статистический сборник за 1913—1917 г.», М., 1921, стр. 78; Պ. Ի. Լյաշչենկո, *նշված աշխ., էջ 576։ А. Д. Брейтерман*, Медная промышленность России и мировой рынок, ч. III, М., 1930, стр. 250.

հացահատիկային գլխավոր կուլտուրաների ցանքատարածությունները Ռուսաստանում, 1914 թ. համեմատությամբ, կրճատվեցին 12,4%-ով, իսկ հացահատիկի ու կարտոֆիլի համախառն բերքը՝ 28,5%[142]։ Պատերազմի միայն առաջին 19 ամիսների ընթացքում անասունների ընդհանուր կորուստը Ռուսաստանում կազմեց մոտ 26 միլիոն գլուխ։

Քայքայվեց ցարական Ռուսաստանի առանց այն էլ թույլ երկաթուղային տրանսպորտը։ Նախքան պատերազմը բեռների նորմալ փոխադրումների համար պակասում էր 2 հազար շոգեքարշ և 80 հազար վագոն։ Բացի դրանից, շոգեքարշերի 1/4-ը հնացել էր և անհրաժեշտ էր փոխել[143]։ Երկրի մեքենաշինական, շոգեքարշաշինական և մետաղագործական գործարանները, գլխավորապես զենքի և ռազմամթերքի արտադրության անցնելու պատճառով, գրեթե դադարեցին շոգեքարշեր, վագոններ և ռելսեր արտադրելուց։ Տրանսպորտի լարված աշխատանքի հետևանքով մաշված շոգեքարշերն ու վագոնները շուտով շարքից դուրս եկան։ Երկաթուղային տրանսպորտում դրությունն էլ ավելի վատացավ։ Երկաթուղիները չէին ապահովում փոխադրումների անընդհատ մեծացող պահանջները։ 1915—1916 թթ. չտեղափոխված բեռները կազմեցին բոլոր բեռների 20—30%-ը։ Միայն 1916 թ. բեռների կուտակումները երկաթուղիներում հասան 150 հազար վագոնի[144]։ Տնտեսական փլուզումն էլ ավելի ուժեղ էր Անդրկովկասում և Հայաստանում, որոնք առաջին համաշխարհային պատերազմի ռազմաճակատային և մերձճակատային շրջաններից էին։

Արևելյան Հայաստանից բանակ զորակոչվեց մոտ 120 հազար մարդ։ Եթե ռուսական կայսրությունում զորակոչվածները կազմում էին երկրի ամբողջ բնակչության 8 տոկոսը, ապա Արևելյան Հայաստանում՝ 10 տոկոսը[145]։ Բանակի կարիքների համար ձիերի և բանող այլ անասունների հավաքագրման հետևանքով դրանց թիվը կրճատվեց ինչպես ամբողջ երկրամասում, այնպես էլ Արևելյան Հայաստանում։ Պատերազմի առաջին երկու տարվա ընթացքում ձիերի և ավանակների քանակը միայն Երևանի նահանգում պակասեց ավելի քան 18 հազար գլխով[146]։

Արդյունաբերության ռազմականացման ասպարեզում Անդրկովկասի բուրժուազիան ետ չմնաց ռուսականից։ Նրա համար պատերազմը նույնպես շահույթի անսպառ աղբյուր էր։ Պատերազմն սկսվելուց անմիջապես հետո նա երկրամասի արդյունաբերությունն աստիճանաբար ռազմական ռելսերի վրա դրեց։ Գործարանները, ֆաբրիկաները և հաճախ նույնիսկ արհեստանոցներն սկսեցին աշխատել բանակի համար։ Ըստ 1917 թ. մայիսի 1-ի տվյալների, ամբողջովին կամ մասնակիորեն, պատերազմի համար Կովկասում աշխատում էր 839 արդյունաբերական ձեռնարկություն՝ 92.086 բանվոր-ծառայողներով[147]։ Կովկասի երկրամասի արդյունաբերական ամբողջ արտադրանքի

142 Տե՛ս Պ. Ի. Լյաշչենկո, նշված աշխ., էջ 581։

143 Տե՛ս «История СССР», т. VI, стр. 576.

144 Տե՛ս Պ. Ի. Լյաշչենկո, նշված աշխ., էջ 583։

145 Տե՛ս Մ. Հ. Ազոնց, Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դարի սկզբին, Երևան, 1968, էջ 448։

146 Տե՛ս «Кавказский календарь на 1915 год», Отдел статистический, стр. 332—334; Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 94, ց. 6, գ. 1694, թ. 4։

147 Տե՛ս «Россия в первой мировой войне 1914—1918 гг. (в цифрах), М., 1925, стр. 80.

89%-ը ռազմական նպատակներին էր հատկացվում[148], Հայաստանի արդյունաբերության գլխավոր ճյուղը՝ պղնձարդյունաբերությունը միայն պատերազմի համար էր աշխատում։

Արդյունաբերության ռազմականացման, որակյալ բանվորների պակասի, տրանսպորտի աշխատանքի խափանումների, երկրամասի տարածքում ծավալված պատերազմական գործողությունների և բազմաթիվ այլ պատճառներով Անդրկովկասի և Հայաստանի տնտեսությունը ճգնաժամ ապրեց։ Քարածխի արդյունահանումն կրճատվեց մոտ երկու անգամ։ Եթե 1913 թ. Անդրկովկասում արդյունահանվել էր 4 միլիոն 192 հազար 886 փութ քարածուխ, ապա 1917 թ.՝ ընդամենը 2 միլիոն 102 հազար 828 փութ[149]։

Հայաստանում քարածխի արդյունահանումը դադարեցվեց 1915 թ., երբ Կարսի մարզի Օլթիի շրջանը, որտեղ 1914 թ. արդյունահանվել էր 4.600 փութ քարածուխ, ժամանակավորապես օկուպացվեց թուրքական զորքերի կողմից[150]։ 1917 թ. նավթի արդյունահանումն Անդրկովկասում 1913 թ. համեմատությամբ կրճատվեց մոտ 15%-ով։ Ռուսաստանում նավթի հանույթի կրճատման կեսից ավելին՝ 70 միլիոն 800 հազար փութն ընկնում էր Բաքվին[151]։

Նախքան պատերազմն Անդրկովկասը տալիս էր Ռուսաստանում ձուլվող պղնձի 30,5%, իսկ միայն Հայաստանը՝ 16,7%[152]։ Պատերազմի տարիներին պղնձի ձուլումը Անդրկովկասում կրճատվեց 2,7 անգամ։ Հայաստանի պղնձարդյունաբերության քայքայման մասին են վկայում հետևյալ թվերը։ Եթե 1913 թ. Ալավերդու, Սիսիմադանի և Զանգեզուրի պղնձաձուլական գործարաններում ձուլվել էր 343.098 փութ, ապա 1917 թ.՝ 105.233 փութ պղինձ, այսինքն պղնձի ձուլումը Արևելյան Հայաստանում կրճատվել էր ավելի քան երեք անգամ[153]։ Պատերազմը Հայաստանի պղնձարդյունաբերությանն այնպիսի ծանր հարված հասցրեց, որ 1916 թ. Սիսիմադանի, իսկ 1918 թ. սկզբից նաև Ալավերդու և Զանգեզուրի պղնձաձուլական գործարանները դադարեցին գործելուց։

1913 թ. Հայաստանը տալիս էր Կովկասում արտադրվող քարաղի հարյուր տոկոսը (1.125.708 փութ) և ամբողջ աղի (1.456.028 փութ) 77,3 տոկոսը[154]։ Պատերազմի հետևանքով աղի արտադրությունը Հայաստանի մի քանի հանքավայրերում զգալիորեն կրճատվեց։ Այսպես, եթե 1913 թ. երկրորդ կեսում Կարսի մարզի Օլթիի շրջանի աղահանքերում արտադրվել էր 52.335 փութ աղ, իսկ Կաղզվանի աղահանքերում՝ 282.962 փութ, ապա 1914 թ. երկրորդ կեսում Օլթիի աղահանքերում արտադրվել էր ընդամենը 9.619 փութ, իսկ Կաղզվանի աղահանքերում աշխատանքները դադարեցվել էին և աղ չէր արտադրվել[155]։ Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ 1913 թ. հա-

---

148 Տե՛ս նույն տեղում, էջ 71։

149 Տե՛ս «Закавказье...», стр. 116.

150 Տե՛ս Ш. П. Басилая, Закавказье в годы первой мировой войны, Сухуми, 1968, стр. 281.

151 Տե՛ս «Труды ЦСУ», т. VII, вып. I, стр. 78.

152 Տե՛ս И. Г. Каспарова, Меднорудная промышленность дореволюционной Армении и иностранный капитал, Ереван, 1961, Приложение, таблица 3^6.

153 Տե՛ս «Закавказье...», стр. 112.

153 Տե՛ս «Кавказский календарь на 1915 г.». Отдел статистический, стр. 364.

155 Տե՛ս «Кавказский календарь на 1916 г.». Отдел статистический, стр. 93.

մեմատությամբ, 1915 թ. ածի արտադրությունը Հայաստանում կրճատվել էր 113.691 փթով կամ ավելի քան 10%-ով[156]։

Անդրկովկասի և Հայաստանի տնտեսության քայքայման կարևոր պատճառներից մեկը տրանսպորտի ճգնաժամն էր։ 1916 թ. սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին Անդրկովկասի երկաթուղին անհրաժեշտ բեռների փոխադրման պլանը կարողացավ կատարել միայն 50%-ով[157]։ Անդրկովկասը Ռուսաստանի հետ կապող միակ երկաթգիծը, ինչպես նաև ջրային տրանսպորտը պատերազմի առաջին իսկ օրերից գրեթե ամբողջովին անցան ռազմական բեռների փոխադրմանը։ Ռուսաստանից ստացվող հացի, վառելանյութի, գյուղատնտեսական մեքենաների, հանքային պարարտանյութերի և բազմաթիվ այլ ապրանքների քանակը խիստ նվազեց։ 1915 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կրճատվեց Հայաստանի պղնձաձուլական գործարանների արտադրանքը։ 1916 թ. փետրվարին Ալավերդու պղնձաձուլական գործարանում արտադրված 9.000 փութ պղնձից սպառողներին ուղարկվել էր ընդամենը 2.532 փութը, այսինքն՝ արտադրված պղնձի միայն 27 տոկոսը։ Առավել վատ էր Զանգեզուրի պղնձաձուլական գործարանների վիճակը, որոնք գտնվում էին Անդրկովկասի երկաթուղուց 250 վերստ հեռավորության վրա։ Կոքսը Եվլախ կայարանից մինչև Ղափան և պղինձը՝ Ղափանից Եվլախ փոխադրվում էին գրաստներով ու սայլերով։

Հայաստանի պղնձարդյունաբերության քայքայման պատճառներից մեկը էլ բանվորական ուժի պակասն էր։ Բանվորներին բանակ զորակոչելու և պարսկահպատակ բանվորների հայրենիք վերադառնալու հետևանքով, աշխատուժի պակասը սուր բնույթ ստացավ։ Կապիտալիստները պղնձի արտադրությունը կրճատելու և նրա պահանջարկը մեծացնելու միջոցով ձգտում էին արհեստականորեն բարձրացնել պղնձի գինը, ավելի մեծ շահույթ կորզելու համար[158]։

Կրճատվեց նաև գինու և կոնյակի արտադրությունը։ 1913 թ. Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում արտադրվել էր 16 միլիոն 936 հազար դույլ գինի և ստացվել 43 միլիոն 625 հազար աստիճան սպիրտ, իսկ 1915 թ.՝ 1 միլիոն 868 հազար դույլ գինի և 4 միլիոն 308 հազար աստիճան սպիրտ, այսինքն գինու արտադրությունը կրճատվել էր 9 անգամ, իսկ սպիրտինը՝ ավելի քան 10 անգամ[159]։ Պատերազմից առաջ Հայաստանից Ռուսաստան էր արտահանվում տարեկան 4 միլիոն աստիճան կոնյակ և ավելի քան 600 հազար դույլ գինի։ Պատերազմի հետևանքով Անդրկովկասից և Հայաստանից Ռուսաստան, ինչպես նաև միջազգային շուկա արտահանվող գինու և կոնյակի քանակը խիստ կրճատվեց։ 1914 թ. օրենքով արգելվեց օղու և սպիրտի ազատ վաճառքը բնակչության։ Գործարանատերերը պարտավոր էին արտադրված ամբողջ սպիրտը կայուն գներով հանձնել պետությանը։ Երևանի նահանգում 1916 թ. գինու, կոնյակի, օղու և սպիրտի արտադրությունը 1913 թ. համեմա-

---

156 Տե՛ս «Кавказский календарь на 1915 г.», Отдел статистический, стр. 364 и на 1917 г., Отдел статистический, стр. 368.

157 ՍՍՀՄ ԿՊՄՊԱ, ֆ. 369, ց. 13, գ. 87, թ. 13։

158 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՄՊԱ, ֆ. 369, ց. 21, 1916 թ., գ. 29, թ. 57։

159 Տե՛ս «Кавказский календарь на 1915 г.», Отдел статистический, стр. 336—337 и на 1917 г., Отдел статистический, стр. 354—357.

տուբյամբ կրճատվեց ավելի քան 15 անգամ[160]։ Նվազեց գարեջրի, ինչպես նաև արդյունաբերության այլ ճյուղերի արտադրանքը։

Պատերազմի հետևանքով առաջացած դժվարությունները, ինչպես ամբողջ երկրում, այնպես էլ Անդրկովկասում ու Հայաստանում նպաստեցին օտարերկրյա կապիտալի դիրքերի ուժեղացմանը և արագացրին ավելի քույլ ձեռնարկությունների անհետացման ու արդյունաբերության հետագա մոնոպոլիզացման պրոցեսը։

Պատերազմի տարիներին օտարերկրյա կապիտալի ներթափանցման ուժեղացման հետևանքով Ռուսաստանի, ինչպես նաև Անդրկովկասի ու Հայաստանի տնտեսության կախվածությունը միջազգային իմպերիալիզմից է՛լ ավելի մեծացավ։ Դեռ պատերազմից առաջ անգլիական, ֆրանսիական և գերմանական կապիտալիստներն իրենց ձեռքն էին կենտրոնացրել Անդրկովկասի հանքային հարստությունները։ 1914 թ. նրանց ձեռքում էր գտնվում Անդրկովկասի նավթի արդյունահանման 56%-ը, նավթամթերքների առևտրի 75%-ը, նավթամշակման գործարանների և նավթից նավատորմի հիմնական մասը, պղնձարդյունաբերության 91,2%-ը և այլն։ Այդ նույն թվականին օտարերկրյա կապիտալի ձեռքում էր կենտրոնացված Հայաստանի պղնձարդյունաբերության 90,3%-ը[161]։ Պատերազմի տարիներին (մինչև 1917 թ. սկիզբը) օտարերկրյա կապիտալիստներն Անդրկովկասի ձեռնարկություններում ներդրեցին ավելի քան 213 միլիոն ռուբլի ոսկի (որի 43%-ը պատկանում էր անգլիական կապիտալին, 30,5%-ը՝ ֆրանսիական և այլն)[162] և է՛լ ավելի մեծացրին իրենց ազդեցությունն ու դերը երկրամասում։ Անդրկովկասի և Հայաստանի պղնձարդյունաբերությունն ամբողջությամբ ընկավ օտարերկրյա կապիտալիստների ձեռքը։ Տեղական բուրժուազիայի մանր ձեռնարկությունները չդիմացան մրցակիցներին և կուլ գնացին նրանց։ 1917 թ. Անդրկովկասում պղնձի ձուլման 44,5%-ը պատկանում էր ֆրանսիական, 43,5%-ը՝ գերմանական և 12%-ը՝ անգլիական կապիտալին[163]։ Այդ նույն թվականին ֆրանսիական ԿԱՄԸ մոնոպոլիստական ընկերության ձեռքում էր գտնվում Հայաստանի ողջ պղնձարդյունաբերությունը։

Պատերազմի վերջում Անդրկովկասի նկատմամբ մեծ հետաքրքրություն հանդես բերեցին նաև ամերիկյան մոնոպոլիաները։ Թիֆլիսի ամերիկյան հյուպատոս Սմիթը 1917 թ. խոստովանում էր, որ Հարուստ Կովկասը «ամերիկացիների համար առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում»[164], Ահա թե ինչու ԱՄՆ-ի առևտրական ներկայացուցիչ Հոնթինգտոնը 1916 թ. ամռանը Պետրոգրադ ժամանելուց անմիջապես հետո մեկնեց Թիֆլիս ու այնտեղ հրավիրեց ամերիկյան գործակալների և տեղի արդյունաբերական շրջանների խորհրդակցություն։ Խորհրդակցությունը քննարկեց Ռուսաստանի հարավային շրջանների ձեռնարկություններում ամերիկյան կապիտալի ներ-

160 Տե՛ս «Труды ЦСУ...», т. VII, вып. I, стр. 52 и 85.

161 Տե՛ս «Советский Союз. Азербайджан», М., 1971, стр. 105—106; *И. Г. Каспарова*, Նշված աշխ., էջ 34։

162 Տե՛ս «Справочная книга. Все торгово-промышленное Закавказье», Тифлис, 1925, стр. 23.

163 Տե՛ս *И. Г. Каспарова*, Նշված աշխ., էջ 129։

164 Տե՛ս *И. И. Минц*, Նշված աշխ., էջ 195։

դրման հարցը և որոշեց հետագա պրակտիկ բանակցությունները հանձնարարել Թիֆլիսի ամերիկյան հյուպատոսությանը[165]։

1914—1916 թթ. ընդմիշտ կամ ժամանակավորապես փակվեցին կապիտալիստական մրցակցությանը չդիմացող հազարավոր ձեռնարկություններ։ Ըստ ֆաբրիկագործարանային տեսչության տվյալների 1914 թ. Ռուսաստանում հաշվառված 13.858 ձեռնարկություններից 1915 թ. աշնանը 1699 ձեռնարկություն կամ փակվել էին, կամ կրճատել արտադրությունը և 264.905 բանվոր զրկվել էր աշխատանքից։ Մինչդեռ 364 խոշոր ձեռնարկություններ մեծացրել էին իրենց արտադրությունը և ավելացրել բանվորների քանակը 50,7%-ով[166], 1913 թ. 500 և ավելի բանվոր ունեցող ձեռնարկությունները Ռուսաստանում կազմում էին բոլոր ձեռնարկությունների 5%, ուր կենտրոնացված էր երկրի բոլոր բանվորների 54%, իսկ 1915 թ.՝ 60%-ը[167]։

Պատերազմի հետևանքով քայքայվեց նաև Անդրկովկասի ու Հայաստանի գյուղատնտեսությունը։ Նախքան պատերազմն ամեն տարի Հյուսիսային Կովկասից և Վոլգայի շրջաններից Անդրկովկաս էր բերվում 23—24 միլիոն փութ հացահատիկ[168]։ Պատերազմի տարիներին զգալիորեն կրճատվեց այդ քանակը։ Հացի պակասը և գների աճն ստիպեցին գյուղացիներին կրճատել տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունները և ցանել հացահատիկային կուլտուրաներ[169]։ Նույն բանը տեղի էր ունեցել նաև Երևանի նահանգում։ Կայսրության պետական բանկի ավագ տեսուչ Ա. Է. Կնորրը 1917 թ. նշել է, որ նահանգում բամբակենու ցանքատարածությունները կրճատվել են ավելի քան կիսով չափ, քանի որ հացի գինն այնքան է բարձրացել և նրա կարիքն այնքան է մեծացել, որ մինչև պատերազմը բամբակագործությամբ զբաղվող գյուղացիների մեծ մասը բամբակենու փոխարեն հացահատիկ է ցանում[170]։ Սակայն հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունների և բերքի ավելացումն, ինչպես ամբողջ Անդրկովկասում, այնպես էլ Հայաստանում, այնքան քիչ էր, որ չէր կարող բավարարել եղած պահանջը։ Ահա թե ինչու Անդրկովկասի աշխատավոր մասսաներն արդեն 1915 թ. կանգնեցին պարենային լուրջ ճգնաժամի առաջ։

Կրճատվեց նաև բամբակի արտադրությունը։ 1913 թ. բամբակենու ցանքատարածություններն Անդրկովկասում կազմում էին 127.500, իսկ 1917 թ.՝ 52.200 դեսյատին[171]։ Երևանի նահանգում 1913 թ. նրա ցանքատարածությունները կազմում էին 38 հազար, իսկ 1917 թ.՝ 18 հազար դեսյատին[172]։

Պատերազմը մեծ վնաս հասցրեց նաև խաղողագործությանը։ 1914 թ. Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում եղել է 78.669 դեսյատին խաղողի այգի և հավաքվել է 13 միլիոն 966 հազար փութ խաղող։ 1915 թ. խաղողի

---

165 Տե՛ս նույն տեղում։

166 Տե՛ս նույն տեղում, էջ 154։

167 Տե՛ս И. И. Минц, նշված աշխ., էջ 33 և 154։

168 Տե՛ս П. В. Гугушвили, Зерновое хозяйство Грузии и Закавказья, Тбилиси, 1955, стр. 161.

169 Տե՛ս «Кавказский календарь на 1915 г.», Отдел статистический, стр. 276—281, на 1916 г., Отдел статистический, стр. 56—61 и на 1917 г., Отдел статистический, стр. 276—281.

170 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 587, ց. 33, գ. 1148, թ. 1։

171 Տե՛ս «Закавказье...», էջ 236։

172 Տե՛ս նույն տեղում։

այգիների տարածությունը կրճատվել էր 20 հազար 102 դեսյատինով, իսկ բերքը՝ 10 միլիոն 992 հազար փթով[173]։ 1913 թ. Երևանի նահանգում հավաքվել էր 5 միլիոն 337 հազար փութ խաղող, իսկ 1915 թ.՝ 774.444 փութ, այսինքն՝ 2 տարվա ընթացքում խաղողի բերքը կրճատվել էր 6,8 անգամ[174]։

Պատերազմը լուրջ հարված հասցրեց երկրամասի անասնապահությանը։ 1914 թ. Անդրկովկասում կար 10 միլիոն 422 հազար 474 գլուխ խոշոր ու մանր անասուն, 1915 թ.՝ 8 միլիոն 607 հազար 493, իսկ 1916 թ. մոտավոր հաշվումներով՝ 6 միլիոն 709 հազար 503 գլուխ անասուն[175]։ 1914 թ. Երևանի նահանգում և Կարսի մարզում եղել է 2 միլիոն 661 հազար 700, իսկ 1915 թ. 1 միլիոն 818 հազար 600 գլուխ անասուն[176]։

Գյուղացիական շատ տնտեսություններ զրկվել էին ոչ միայն բանող, այլև մերատու անասուններից։ Այսպես, 1917 թ. Երևանի նահանգում և Կարսի մարզում ուսումնասիրված 20 հազար 418 գյուղացիական տնտեսություններից 3 հազար 468 տնտեսություն ոչ մի անասուն չուներ, 5 հազար 83 տնտեսություն եզ չուներ, 4 հազար 536 տնտեսություն կովազուրկ էր, իսկ 15 հազար 681 տնտեսություն ձի չուներ[177]։

* * *

Գյուղատնտեսական արտադրության անկման, տրանսպորտի քայքայման, տնտեսական ողջ կյանքի խանգարման հետևանքով երկիրը շուտով կանգնեց պարենային լուրջ ճգնաժամի առաջ։ 1915 թ. բանակը ստանում էր անհրաժեշտ պարենի միայն 50%-ը։ Բազմաթիվ քաղաքներ և գյուղեր սովի էին մատնված։ «Մեր շրջանի գյուղացիները այսօր բառիս բուն նշանակությամբ ուտելու հաց չունեն...,— գրում էին Լոռուց,— գյուղերը ամայացված են, աշխատող ձեռքեր չունենք, տնտեսությունները հիմնովին կործանված են, այգիներն ավերված, գյուղական ճանապարհները հողին հավասարված, սովի ուրվականն ու խարջ-բեգարը առաջներս չոքած...»[178]։

Գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների գները բարձրացել էին միջին հաշվով 4—5 անգամ, իսկ երբեմն էլ ավելի շատ։ Թանկությունը հատկապես մեծ չափերի էր հասել արդյունաբերական և քաղաքային խոշոր կենտրոններում։ Բաքվում տավարի մսի գինը բարձրացել էր 327%-ով, կարտոֆիլինը՝ 246%-ով, բրնձինը՝ 356, ձվինը՝ 392, կաթինը՝ 305, ձեթինը՝ 450, կարագինը՝ 520%-ով[179]։ 1916 թ., 1913 թ. համեմատությամբ, ցորենի գինը Երևանում բարձրացել էր 484,7%-ով, գարունը՝ 394,5%, բրնձինը՝ 595,

---

173 Տե՛ս «Кавказский календарь на 1916 г.», стр. 84, на 1917 г., стр. 354.

174 Տե՛ս «Кавказский календарь на 1915 г.», стр. 336—337 и на 1917 г., стр. 226—269.

175 Տե՛ս «Труды ЦСУ», т. VII, вып. I, стр. 201, «Кавказский календарь на 1915 г.», Отдел статистический, стр. 332—334 и «Кавказский календарь на 1917 г.», Отдел статистический, стр. 266—269.

176 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ ֆ. 94, ց. 6, գ. 1604, թ. 13 գ. 1654 թ. 31—32։

177 Տե՛ս Մ. Հ. Ադոնց, նշված աշխ., էջ 452—453։

178 «Պայքար», 1916, 26 փետրվարի, № 9։

179 Տե՛ս В. В. Покшишевский, Положение бакинского пролетариата накануне революции (1914—1917 гг.), Баку, 1927, стр. 31.

կարտոֆիլինը՝ 626, սոխինը՝ 772, պոմիդորինը՝ 215, մսինը՝ 206,6, կարագինը՝ 377,8, շաքարինը՝ 442,3, ձվինը՝ 300%-ով[180]։

Արդյունաբերական ապրանքների և մթերքների գների անընդհատ աճը ծանր վիճակ ստեղծեց աշխատավորության համար։ Խիստ ընկավ բանվորների ռեալ աշխատավարձը։ 1915 թ. նոյեմբերին Բաքվի նավթարդյունաբերողների համագումարին ուղղված իրենց հայտարարության մեջ Բաքվի բանվորները գրում էին. «Նախքան պատերազմը մենք գտնվում էինք ծանր դրության մեջ, իսկ պատերազմն սկսվելուց հետո մեր դրությունը միանգամայն անտանելի է դարձել։ Եվ որքան շատ է երկարաձգվում պատերազմը, այնքան ավելի ու ավելի է աճում թանկությունը, որն արդեն հրեշավոր չափեր է ընդունել և շարունակում է օրըստօրե աճել»[181]։ 1916 թ. կեսերին Ալավերդու պղնձարդյունաբերական բանվորների միջին աշխատավարձն ավելացել էր ընդամենը 20%-ով, այն դեպքում, երբ պարենային ապրանքների գները բարձրացել էին 4—5 անգամ։ «Ալավերդու պղնձագործարանի բանվորները մի քանի օրից ի վեր մնացել են առանց հացի,— հաղորդում է թղթակիցը։— Ավելի քան 3000 աշխատավորներ կերակրվում են միայն կարտոֆիլով և բրնձով։ Հացի պատճառով բանվորները գյուղից-գյուղ են ընկել և մի մասը չի աշխատում»[182]։

Պատերազմի տարիներին ավելի ծանրացան բանվորների աշխատանքի պայմանները, կրճատվեցին անգամ հանգստի և տոն օրերը։ Ռազմական պատվերները կատարելու համար արտաժամյա պարտադիր աշխատանքի կիրառման միջոցով ձեռնարկատերերն ամենուրեք ավելի երկարացրին բանվորական օրը։ Անդրկովկասի բանվորների աշխատանքային օրվա ընդհանուր տևողությունը, որպես կանոն, հասնում էր 12—14 ժամի։

Պատերազմի տարիներին ցարական կառավարությունը վերացրեց արդյունաբերական աշխատանքի կանոնադրության 64, 65, 74, 75 և 194—200 հոդվածները[183], որոնցով արգելված էր կանանց և դեռահասների (15—17 տարեկան) գիշերային աշխատանքը մանածագործական ֆաբրիկաններում, կանանց աշխատանքը հանքահորերում, նրանց գիշերային աշխատանքը լեռնահանքային արդյունաբերության գործարաններում ու արհեստանոցներում, երեխաների (12—15 տարեկան) աշխատանքը գիշերային հերթափոխություններում, հանգստյան ու տոն օրերին և այլն։ Աշխատանքի պաշտպանության վերաբերյալ մինչև պատերազմը գոյություն ունեցող այն կիսատ-պռատ օրենքները, որոնք Ռուսաստանի բանվոր դասակարգը ձեռք էր բերել ցարական ինքնակալության և բուրժուազիայի դեմ մղած երկարատև ու համառ պայքարում և որոնք այս կամ այն չափով ամրագրված էին նրա անդուլ շահագործումը, պատերազմի տարիներին աստիճանաբար վերացվեցին։

Այնուհետև, ռազմականացվեց երկրի բանվորների զբաղի մասի աշխատանքը։ «Պետական գործարաններին բանվորների անհրաժեշտ կոնտիգենտ ամրացնելու»[184] նպատակով, 1915 թ. հուլիսի 14-ին ցարական կառավարությունը օրենք ընդունեց «պաշտպանության» համար աշխատող պետական գոր-

---

180 Տե՛ս Մ. Հ. Ագռնց, նշված աշխ., էջ 453։

181 ՍՍՀՄ ԿԳՊԱ, ֆ. 132, 51 ց. 11, գ. 42, թ. 46։

182 «Հորիզոն», 1917, 5 փետրվարի, № 27։

183 Տե՛ս «Свод Законов», т. XI, ч. 2, СПб., 1913

184 ՍՍՀՄ ԿԳՊԱ, ֆ. 1276, ց. 11, գ. 350, թ. 2։

ծարաններում ու ֆաբրիկաներում պատերազմական դրություն մտցնելու մասին[185]։ Այս գործարաններին ու ֆաբրիկաներին ամրացված բանվորներն ու ծառայողները իրավունք չունեին փոխելու իրենց աշխատավայրը, մասնակցելու գործադուլներին, թերանալու իրենց աշխատանքային պարտականություններում, հակառակ դեպքում պատժվում էին տուգանքով կամ էլ տարբեր ժամկետների բանտարկությամբ։

Պատերազմի համար աշխատող մասնավոր ձեռնարկությունների զինապարտ բանվորներին ու ծառայողներին որոշվեց տարկետում տալ։ Այդ նպատակով 1915 թ. հոկտեմբերի 8-ին ցարական բանակի գլխավոր շտաբին կից ստեղծվեց տարկետումների գործերի գլխավոր կոմիտե, ինչպես նաև նահանգային, օկրուգային և գավառային (քաղաքային) կոմիտեներ[186]։ Մինչև 1916 թ. փետրվարի 1-ը Անդրկովկասում ստեղծվեցին այդպիսի 29 կոմիտեներ, այդ թվում Երևանի, Ալեքսանդրապոլի, Բորչալուի, Նախիջևանի, Նոր Բայազետի, Էջմիածնի գավառային կոմիտեները և Կարսի օկրուգային կոմիտեն[187]։

Տարկետումների գործերի գլխավոր կոմիտեի որոշմամբ, տարկետման ժամանակաշրջանում միայն մեկ անգամ և այն էլ փաստորեն ձեռնարկներն, մասնավոր ձեռնարկությունների բանվորներին իրավուք էր վերապահված տեղափոխվելու մի այլ, բայց նույնպես պատերազմի համար աշխատող ձեռնարկություն։ Ընդ որում, մի գործարանից մյուսը տեղափոխվելիս, բանվորները պարտավոր էին այդ մասին տեղեկացնել իրենց զինվորական պետերին։ Սակայն 1915 թ. նոյեմբերին տեղափոխման կարգը փոխվեց։ Այսուհետև դրա համար պահանջվում էր նոր ձեռնարկության միջնորդությունը և հին ձեռնարկության գրավոր համաձայնությունը։ Տեղափոխման հարցը վերջնականապես իրավասու էր լուծելու միայն տարկետումների գործերի գլխավոր վարչությունը։

Ցարական կառավարությունն ու բուրժուազիան բանվորներին զրկեցին տարրական իրավունքներից և, արդյունաբերությունը ռազմականացնելու միջոցով, նրանց դարձրին դաժան մոտ կանգնած «շարքային զինվոր»[188]։ Ահա թե ինչու Վ. Ի. Լենինը մատնանշում էր, որ ցարական կառավարությունն ու բուրժուազիան պատերազմի տարիներին ամբողջ Ռուսաստանը վերածեցին «բանվորների համար զինվորական-տաժանակիր» բանտի[189]։

Ցարական կառավարությունը սովի ու ծայրահեղ աղքատության եզրին հասած աշխատավոր գյուղացիության վրա դրեց նոր հարկեր ու տուրքեր և ստիպեց կատարել պատերազմական ժամանակաշրջանի զանազան ծանր պարհակներ։ 1914 թ. դեկտեմբերի 24-ի օրենքով հողային հարկն ավելացավ 50%-ով, 1915 թ. 114%-ով ավելացավ գյուղացիներին մշտական օգտագործման տրված պետական հողերի ռենտան։ 1916 թ. Երևանի նահանգի բնակչությունից գանձվել է մոտ 12 տեսակի հարկ[190]։

Արևելյան Հայաստանի աշխատավոր զանգվածների նյութական վիճակն էլ ավելի վատթարացավ Արևմտյան Հայաստանի գաղթականության ներհոսից

185 Տե՛ս նույն տեղում, թ. 3—7։
186 Տե՛ս ՍՍՀՄ ՊԿՖՊԱ 3251, ց. 10, գ. 22, թ. 20—24։
187 Տե՛ս նույն տեղում, ց. 2, գ. 25, թ. 7—15։
188 «Социал-демократ», 12 декабря 1914 г., № 35.
189 Վ. Ի. Լենին, Երկերի, հ. 25, էջ 491։
190 Տե՛ս Մ. Վ. Ազամանյան, Հայաստանը 1914—1917 թթ., էջ 705։

հետո, ազատվելով թուրքական բարբարոսների կոտորածներից, հայ գաղթականները Ռուսաստան հասան առանց ունեցվածքի, քաղցած և հյուծված։ Նրանցից շատերը կորցրել էին իրենց հարազատներին։ Գաղթականների մի մասը ապաստան գտավ տեղացիների տներում, որոնք կիսեցին նրանց հետ իրենց ապրուստի սուղ միջոցները։

Պատերազմն սկսվելուց հետո ցարական կառավարությունն էլ ավելի ուժեղացրեց աշխատավորների և մասնավորապես հեղափոխական ուժերի ճնշման իր քաղաքականությունը, որը բոլշևիկյան կուսակցության կենտրոնական օրգան «Սոցիալ-դեմոկրատը» բնորոշեց որպես «ռազմական տեռորի վայրագ քաղաքականություն»։ 1914 թ. օգոստոսի 12-ին Նիկոլայ II-ի հրամանով պատերազմական դրություն հայտարարվեց Կովկասի բոլոր շրջաններում։ Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի 1914 թ. օգոստոսի 21-ի հայտարարության մեջ նշվում էր, որ Կովկասում պատերազմական դրություն է մացվել, որպեսզի «Կարելի լինի կանխել չարամիտ մարդկանց այնպիսի գործողությունները, որոնք կարող են սպառնալ պետական կարգերին»[191]։ Արգելվեցին գործադուլները և աշխատանքի ամեն տեսակի ընդհատումները, ցույցերը և հանդուգն վերաբերմունքը դեպի կառավարության ու ոստիկանության պաշտոնյաները, առանց ոստիկանության գիտության ժողովներ, հավաքներ, համագումարներ հրավիրելը, հակակառավարական բնույթ կրող և «անկարգությունների» տեղիք տվող երգեր երգելը, ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր ու տպագիր խոսքի միջոցով գործադուլների, ցույցերի, հասարակական ընկերությունների մասին լուրեր մասսայականացնելը, կառավարության ու նրա մարմինների կարգադրությունների ու գործողությունների քննադատությունը, ոստիկանական և զինվորական աստիճանավորների գործողությունների ու կարգադրություններին խառնվելը և այլն։

Երկրամասի բոլոր տնատերերը, տների կապալառուները, հյուրանոցներ, կահավորված սենյակներ, իջևանատներ պահողները, տնային կառավարիչները պարտավոր էին 15 տարեկան և ավելի բարձր տարիք ունեցող երկսեռ բոլոր բնակիչների ցուցակագրություն անցկացնել և յուրաքանչյուր նորընակի մասին անհապաղ զեկուցել համապատասխան մարմիններին։ Յուրաքանչյուր քաղաքացի պետք է հսկեր, որ գաղտնի տպարաններ, զենքի, պայթուցիկ նյութերի, հակակառավարական հրատարակությունների պահեստներ չստեղծվեն, իսկ ստեղծվելու դեպքում պետք է այդ մասին անհապաղ տեղեկացներ իշխանություններին։ Սահմանված կանոնները խախտող և իրենց այդ «պարտականությունները» չկատարող քաղաքացիները ենթակա էին 3.000 ռուբլի տուգանքի կամ բանտարկության[192]։

Պրոլետարիատի կազմակերպված կամքի դրսևորման ամեն մի հնարավորություն բացառելու համար ցարական կառավարությունն սկսեց ոչնչացնել բանվոր դասակարգի՝ իրենց գոյությունը դեռևս պահպանած կազմակերպությունները, մամուլի օրգանները, կուլտուր-լուսավորական ընկերությունները։ Ջեռնված չափերի հասան հալածանքները ընդհատակ անցած բոլշևիկյան կուսակցության նկատմամբ։ Սկսվեց բոլշևիկների և առաջավոր բանվորների մասսայական ձերբակալությունների և աքսորի մի նոր շրջան։ Ինչ-

191 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 102, ց. 1, գ. 96, թ. 204։

192 Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 958, թ. 1—52։ «Հարիզոն», 1914, № 165։ «Известия Бакинской городской думы», 1914, № 3, стр. 174—181.

պես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում հաստատվեց սիսկական բռնապետական ռեակցիա»[193]։

Սակայն բոլշևիկների կուսակցությունը չընկրկեց դժվարությունների առաջ։ Նա պատերազմական դրության անասելի ծանր ու բարդ պայմաններում, երբ, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, «մեր կուսակցության աշխատանքն հարյուր անգամ ավելի դժվար» էր դարձել»[194], շարունակեց իր աշխատանքը բանվորագյուղացիական ու զինվորական մասսաներին քաղաքականապես լուսավորելու, ցարիզմի ու բուրժուազիայի դեմ նրանց համախմբելու և կազմակերպելու ուղղությամբ։

9. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԻ ՍՐՈՒՄԸ ԵՎ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԱՐՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ցարական կառավարությունը պատերազմի մեջ էր մտել ոչ միայն իր գավթողական պլաններն իրականացնելու, այլև՝ հեղափոխական շարժումը ճնշելու կամ թուլացնելու, հասունացող ժողովրդական հեղափոխությունը խեղդելու համար։ Սակայն ռուսական կալվածատերերի ու կապիտալիստների հույսերը չարդարացան։ Պատերազմը խորացրեց ցարական ինքնակալության նկատմամբ ժողովրդական զանգվածների ատելությունը, սրեց դասակարգային հակասությունները և արագացրեց դեպքերի ընթացքը։

1915—1916 թթ. հեղափոխական շարժումը Ռուսաստանում նոր վերելք ապրեց։ Միայն գործարանային և հանքային տեսչություններին ենթակա ձեռնարկություններում 1915 թ. գործադուլ արեցին 571 հազար բանվոր, 1916 թ.՝ 1.172 հազար և 1917 թ. հունվար-փետրվար ամիսներին՝ 676 հազար բանվոր[195]։ Ավելացավ նաև քաղաքական գործադուլների և դրանց մասնակիցների թիվը[196]։

Բանվորական շարժման վերելքն Անդրկովկասում սկսվեց 1915 թ. կեսերին և էլ ավելի ուժեղացավ 1916 թ.։ Եթե 1915 թ., ըստ պաշտոնական նվաղեցված տվյալների, Անդրկովկասում տեղի էր ունեցել 90 գործադուլ՝ ավելի քան 6000 մասնակիցներով, ապա 1916 թ. տեղի ունեցավ մոտ 160 գործադուլ, ավելի քան 40.000 մասնակիցներով[197]։

Պատերազմի համար աշխատող ձեռնարկությունների զինապարտ բանվորները դադարել էին ազատ վարձու բանվորներ լինելուց և փաստորեն տրկացվել էին ձեռնարկատարերի կողմից[198]։ Սակայն նրանք ոչ միայն պաշտպանեցին բանվորների գործադուլներն ու հեղափոխական ելույթները, այլև դարձան հեղափոխական պայքարի առաջամարտիկներ։ Ցարական կառավարության այն հույսերը, թե զինապարտ բանվորները, վախենալով աշխատանքից զրկվելու և ռազմաճակատ ուղարկվելու վտանգից, հետ կմնան հեղափոխական պայքարից՝ չարդարացան։

---

193 Սա. Շաումյան, *Երկ*, հ. 3, էջ 21։

194 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հ. 35, էջ 179։

195 *Տե՛ս* «Краткая история рабочего движения в России (1861—1917 гг.)», М., 1962, стр. 526 и 538.

196 *Տե՛ս նույն տեղում*, էջ 538։

197 Հ. Ա. Պետրոսյան, *Անդրկովկասի բանվոր դասակարգը և բոլշևիկյան կազմակերպությունները առաջին համաշխարհային պատերազմի տարիներին*, Երևան, 1977, էջ 301։

198 *Տե՛ս* ՍՍՀՄ ԿԳԲԳԱ ֆ. 1300, ց. 1 գ, 152, թ. 7։

Ցարական կառավարության ներքին գործերի մինիստրության ոստիկանության դեպարտամենտի բավական նվազեցված տվյալներով 1916 թ. Անդրկովկասի 144 գործադուլներից 62-ը (41,6%) տեղի ունեցան պատերազմի կարիքների համար աշխատող ձեռնարկություններում, որին մասնակցեց ավելի քան 10.735 բանվոր, այսինքն՝ գործադուլ արած բոլոր բանվորների մոտ $^1/_3$ մասը։ 1916 թ. գործադուլներ տեղի ունեցան Անդրկովկասի արդյունաբերական բազմաթիվ ձեռնարկություններում։

Գործադուլները հաճախ ընթանում էին «կորչի՛ ինքնակալությունը», «կեցցե՛ դեմոկրատական հանրապետություն» բոլշևիկյան լոզունգներով։ 1917 թ. հունվարի 9-ը, բոլշևիկյան կուսակցության կոչով, բանվորները նշեցին քաղաքական հզոր գործադուլներով ու ցույցերով։ Այդ օրը Պետրոգրադում գործադուլ արին 300 հազար բանվոր, Մոսկվայում՝ 45 հազար, Բաքվում՝ 14 հազար բանվոր[199]։ 1917 թ. հունվարի 9-ին բոլշևիկների կոչով և նրանց գլխավորությամբ Բաքվում քաղաքական մեծ ցույց տեղի ունեցավ։ Բաքվի բանվորների պայքարը նկատելի վերելք ապրեց հետագա օրերին և հունվարի 17-ից վերածվեց քաղաքական խոշոր գործադուլի։ Միայն պատերազմի համար աշխատող ձեռնարկություններում 1917 թ. հունվարին տեղի ունեցավ 87 գործադուլ, որոնց մասնակցեց ավելի քան 22.293 բանվոր[200]։ 1917 թ. հունվարի 19-ին և 20-ին Բաքվում բոլշևիկների կազմակերպած միտինգներին յուրաքանչյուր օր մասնակցում էին 15—20 հազար բանվոր։ 1917 թ. հունվարի 20-ի միտինգը ցրելու համար տեղական իշխանությունները կազակային զոկատներ ուղարկեցին, սակայն բոլշևիկների ազդեցության շնորհիվ, կազակները հրաժարվեցին կատարել նրանց կամքը[201]։

Ցարական ինքնակալության և իմպերիալիստական պատերազմի դեմ Ռուսաստանում և Անդրկովկասում հեղափոխական ուժեղացող բանվորական շարժումներն ընդգրկեցին նաև Արևելյան Հայաստանի արդյունաբերական կենտրոնները՝ Ալավերդին և Ղափանը։

1916 թ. Ալավերդու և Ղափանի պղնձահանքերի և պղնձաձուլական գործարանների բանվորները գործադուլներ կազմակերպեցին ու մի շարք պահանջներ ներկայացրին գործարանատերերին։ Այսպես, 1916 թ. նոյեմբերի 14-ին հուզումներ բռնկվեցին Ղափանի Ուղուրլայի պղնձաձուլական գործարանի բանվորների և ծառայողների շրջանում։ Պետության պաշտպանության միջոցառումների քննարկման և միավորման հատուկ խորհրդակցության նախագահի կովկասյան լիազորին հասցեագրված հեռագրում կոնդուրովներին պատկանող պղնձաձուլական գործարանի բանվորների և ծառայողների ներկայացուցիչներն իրենց զայրույթն արտահայտեցին այն բանի դեմ, որ գործարանի վարչությունն ամիսներով ուշացնում է բանվորների և ծառայողների աշխատավարձի վճարումը, որ ապահովված չեն ամենաանհրաժեշտ կենսամթերքներով և սովի են մատնված։ Կովկասի փոխարքայությունը շտապ կարգով միջոցներ ձեռնարկեց, որպեսզի Ուղուրլայի պղնձաձուլական գործարանի բանվորների և ծառայողների հուզումները դադարեցվեն և չսարսափեն Ջանգեզուրի պղնձարդյունաբերական մյուս ձեռնարկությունների բանվորների մեջ։

---

199 Տե՛ս «КПСС Справочник», М., 1963, стр. 102.

200 Տե՛ս, ՍՍՀՄ ԼՀՄԿ կԳԱ ֆ. 102, Բ. Դ., Հ. Բ, գ. 341, 1917 թ., թ. 1Ա։

201 Տե՛ս «Правда», № 1, 5 (№ 8) марта, 1917.

Սակայն հուզումները վերածվեցին Ղափանի պղնձահանքերի և պղնձաձուլական գործարանների 1200 բանվորների կազմակերպված գործադուլի։ Գործադուլավորները պահանջում էին աշխատավարձի բարձրացում 40%-ով, աշխատաժամերի կրճատում և այլն։ Գործադուլը տևեց 3 օր և վերջացավ բանվորների պահանջների մասնակի բավարարումով[202]։

Իմպերիալիստական պատերազմի տարիներին, ինչպես Ռուսաստանի այլ շրջանների, այնպես էլ Անդրկովկասի ու Արևելյան Հայաստանի քաղաքներում ու արդյունաբերական կենտրոններում բանվորական շարժումների հետ միասին ծավալվում էին նաև աշխատավոր լայն զանգվածների հուզումներն ու խռովությունները։ Եթե սկզբում դրանք ուղղված էին վաճառականների, քաղաքային կառավարողների և այլ պաշտոնյաների դեմ, ապա հետագայում ստացան քաղաքական բնույթ և ուղղվեցին կառավարության դեմ։ 1916 թ. հուլիսին Նոր Բայազետից հաղորդում էին, որ «պահեստայինների մի խումբ կանայք ոտաբոբիկ թափվել էին ոստիկանության դուռը» և բողոքում էին «թանկության դեմ»[203]. 1916 թ. ամռանը թանկության դեմ խռովություն բարձրացրին նաև Ելենովկայի (Սևան) կանայք։ Նրանք պահանջում էին իջեցնել ալյուրի, շաքարի, թեյի, օճառի և այլ ապրանքների գները և տուն վերադարձնել բանակ զորակոչված իրենց ամուսիններին։ Թեև խռովությունը ճնշվեց ոստիկանության օգնությամբ, սակայն որոշ ապրանքների գները իջեցվեցին[204]։

1916 թ. հուլիսի 8-ին Երևանում հայտնաբերվել էին հայերեն թռուցիկներ, որոնցում ասված էր, որ կավերվեն խանութները, եթե չիջեցվեն ապրանքների գները[205]։ Հուլիսի 9-ին Կովկասի փոխարքայի օգնական Օլովը Երևանի նահանգապետին հրամայում է անմիջապես քաղաքը բաժանել տեղամասերի և ուժեղացնել ոստիկանական ու պահակային կետերը, որպեսզի հնարավոր լինի կանխել խանութների ջարդերը և թույլ չտալ փողոցներում մարդկանց կուտակումներ։ Միաժամանակ նա պահանջում էր անհապաղ պատժել ավերածություն առաջացնողներին, հայտնաբերել թռուցիկ փակցնողներին[206]։

Վ. Ի. Լենինն անհրաժեշտ էր համարում պարենավորման դժվարությունները օգտագործել զանգվածների լուսավորման ու հեղափոխականացման համար, որպեսզի նրանք գիտակցեն, որ երկրում խորացող ճգնաժամը, թանկությունն ու սովը, պատերազմի բերած անհաշիվ աղետները իշխող կարգերի և իմպերիալիստական պատերազմի հետևանք են։ Վ. Ի. Լենինը անարգանքի սյունին գամեց 4-րդ Պետական դումայի դեպուտատ մենշևիկ Չխեիձեին այն բանի համար, որ Կովկասում ծավալված «պարենային խռովությունների» օրերին նա տեղական իշխանությունների թույլտվությամբ և ցարական գնդապետ իշխան Միկելաձեի ու քահանա Խունդաձեի ուղեկցությամբ, շրջում էր Կովկասի քաղաքներում և հասարակական ժողովներում հանդես էր գալիս «հուզումները» չարքելու, քաղաքային դումաների վրա ճնշում գոր-

202 Տե՛ս Մ. Վ. Արզումանյան, Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907—1917 թթ., էջ 527։ ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 264, գ. 5437, թթ. 107, 117։

203 «Մշակ», 6 հուլիսի, 1916 թ.։

204 Տե՛ս ՄԼԻ-ի հայկական մասնաճյուղի արխիվ ֆ. 33, գ. 696, փ. 7, թ. 4։

205 Տե՛ս ՎՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 13, գ. 431, թ. 3։

206 Տե՛ս նույն տեղում, գ. 4331 թ. 4—5։

ծագրելու և կոոպերատիվներ կազմակերպելու լիբերալ կոչերով։ Մինչդեռ, ինչպես ընդգծում էր Վ. Ի. Լենինը, հեղափոխական սոցիալ-դեմոկրատը պետք է ասեր. «Խանութ չարդելը աննպատակահարմար է, եկեք ավելի լուրջ ցուլեր կազմակերպենք. Քեկուզ և Բաքվի, Թիֆլիսի, Պիտերի բանվորների հետ միաժամանակ մեր ատելությունն ուղղենք դեպի կառավարությունը, դեպի մեկ գրավենք զորքի այն մասը, որը խաղաղություն է ցանկանում։ Այսպե՞ս էր ասում արդյոք պ. Չխենկելն, ՈՀ, նա լիբերալների համար ընդունելի «պայքարի» կոչ էր անում»[207]։

Իմպերիալիստական պատերազմի հետևանքով ուժեղացան նաև գյուղացիական շարժումները։ Եթե 1915 թ. Ռուսաստանում տեղի էր ունեցել ընդամենը 177 գյուղացիական հուզում, ապա 1916 թ. դրանց քանակը հասավ 233-ի[208]։

Գյուղացիական շարժումներն Անդրկովկասում առավել մեծ չափեր ընդունեցին Գուրիայում։ 1916 թ. աշնանը այստեղ բազմաթիվ զինված ընդհարումներ տեղի ունեցան գյուղացիների և ցարական ոստիկանների միջև։ Ադրբեջանում մի շարք գավառների գյուղացիներ հրաժարվում էին հարկեր վճարելուց և պարհակներ կատարելուց, զավթում էին պետական և կալվածատիրական հողերը, այրում էին կալվածատերերի ունեցվածքը, զինված դիմադրություն ցույց տալիս ցարական պաշտոնյաներին ու ոստիկաններին։ Գյուղացիական շարժումներն ուժեղացան նաև Արևելյան Հայաստանում։

Մինչև հեղափոխությունը հայկական գյուղերում մշտապես պայքար է մղվել գյուղի սոցիալական տարբեր շերտերի միջև՝ հողի վերաբաժանման շուրջը։ Եթե պատերազմի տարիներին գյուղական չքավորությանը հազվադեպ էր հաջողվում հողի վերաբաժանում անցկացնել, ապա հարուստներին՝ գրեթե միշտ։ Օգտվելով այն հանգամանքից, որ գյուղացիության զգալի մասը զորակոչվել էր բանակ, կալվածատերերն ու կուլակները, տեղական իշխանությունների օգնությամբ, վերաբաժանման միջոցով շատ գյուղերում զավթեցին աշխատավոր գյուղացիների հողերը։

Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառի Դմբաշեն գյուղի 81 բնակիչներ, որոնք այդ ժամանակ աշխատում էին Բաքվում, 1915 թ. փետրվարի 26-ին Երևանի նահանգական վարչությանն ուղղած իրենց բողոքում հայտնում էին, որ գյուղից ստացվող տեղեկությունների համաձայն դմբաշենցիների մի խումբ, տանուտերի գլխավորությամբ, փորձում են նոր հողաբաժանություն կատարել «ոչ թե արդարության սկզբունքներին համապատասխան, ոչ թե չքավոր, առավել վատ ապրող գյուղացիներին օգնելու, այլ, ընդհակառակը, որոշակի խմբի պատկանող անձնավորությունների ձեռքում ավելի շատ հողեր կենտրոնացնելու նպատակով»։ Ապա նշելով, որ «այժմ իրենց գյուղի տղամարդկանց 80%-ը գյուղից բացակայում է, որովհետև մի մասը պատերազմի դաշտում է, իսկ մի մասն էլ՝ աշխատանքի է մեկնել Բաքու և այլ քաղաքներ,— ու այս պայմաններում հողաբաժանությունը ոչ միայն անօրինական է, այլև՝ հանցագործություն», խնդրում էին կարգադրել հաշտարար դատավորին, որպեսզի նա կանխի հողաբաժանման ամեն տեսակի փորձերը[209]։

---

207 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 217—218։

208 Տե՛ս «История СССР», т. VI, стр. 608 и 617.

209 Տե՛ս ՄԼԻ-ի Հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 33, ց. 5, գ. 418, թ. 4—5։

Երևանի գավառի Ախջաբերդ գյուղի մուլքադար Իվան Կորգանովը, դեռ պատերազմից առաջ, գավթել էր ախջաբերդցիների 24 դեսյատին վարելահողերն ու արոտավայրերը և չերքակալել տվել դիմադրություն ցուցաբերած երեք գյուղացիների։ Գյուղացիների բազմաթիվ դիմումներն՝ ուղղված Երևանի նահանգապետին, հաշտարար դատարանին և Կովկասի փոխարքային այդպես էլ մնացին անհետևանք[210]։

Նոր Բայազետի գավառի Բաբաքեշի գյուղի չքավորները մինչև պատերազմը բազմիցս հարց էին բարձրացրել հողաբաժանության մասին, բայց որևէ արդյունքի չէին հասել։ Իսկ երբ սկսվեց պատերազմը և գյուղացիների մեծ մասը զորակոչվեց բանակ, կուլակները որոշեցին գավթել նրանց հողերը։ Այդ նպատակով նրանք ժողով գումարեցին, լիազորներ ընտրեցին հողի վերաբաժանում կատարեցին և, ինչպես ասված է 1915 թ. մարտի սկզբին Երևանի նահանգի գյուղացիական գործերի ատյանին ուղղված չքավոր բաբաքեշցիների դիմումում, «ամենահայհոյմամբ հողերը գյուղացիներից խլեցին և բաշխեցին իրենց և իրենց ամենամոտիկ ազգականների միջև, իսկ մեզ հատկացրին բոլորովին անպետք և չմշակված հողը» և բացի դրանից, գյուղի չքավորներից թաքցրին յոթը դեսյատին լավ հող[211]։ Գյուղացիները պահանջում էին անօրինական ճանաչել այդպիսի պայմաններում կատարված հողաբաժանությունը և յուրաքանչյուր ընտանիք շարունակի օգտվել իր նախկին հողերից մինչև ավելի նորմալ պայմանների ստեղծումը։ Սակայն «ի պատասխան գյուղացիների այս լիովին արդարացի խնդրի, Երևանի նահանգական գյուղացիական գործերի ատյանը... մի կողմ է կանգնում, գյուղացիներին հայտնելով, որ հողաբաժանության հետաձգումը կամ վերացումը տվյալ գյուղի բնակիչների գործն է»[212]։

Ալեքսանդրապոլի գավառի Գոգորան պետական գյուղի չքավորների պայքարը հողի վերաբաժանման համար տևեց մեկ տարի (1914 թ. մարտից մինչև 1915 թ. մարտ), բայց հարցն այդպես էլ չլուծվեց, քանի գործին միջամտեց նույնիսկ Երևանի նահանգի գյուղացիական գործերի ատյանը։ Գոգորանի հարուստները դիմադրում էին հողաբաժանմանը, որովհետև մինչ այդ իրենց ձեռն էին գցել մեծ քանակությամբ հող[213]։

Պատերազմի տարիներին Արևելյան Հայաստանում եղան գյուղացիների կողմից պետական ու կալվածատիրական հողերի գրավման բազմաթիվ դեպքեր, որոնք լուրջ անհանգստություն պատճառեցին իշխանություններին։ Երևանի նահանգի հինգերորդ շրջանի վերակացուին ուղղած իր 1915 թ. շրջաբերականներից մեկում Երևանի նահանգի ժանդարմական վարչությունը նշել է, որ Երևանի նահանգում և Կարսի մարզում տեղի են ունեցել պետական հողերի մասսայական գավթումներ, և առաջարկել «աչալուրջ հսկողություն սահմանել, որպեսզի այդպիսի գավթումներ տեղի չունենան»[214]։

---

210 *Տե՛ս* «Аграрная политика царизма и крестьянское движение в Армении в начале XX века». Составил проф. В. Рштуни, Ереван, 1951, стр. 303—308; *ՀՈՒԱ ԿՊՊԱ, ֆ. 70, ց. 1, գ. 86։*

211 *Վ. Հ. Ռշտունի, Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության (1828—1917 թթ.), մաս Բ (1870—1917), Երևան, 1968, էջ 240—241։*

212 *Նույն տեղում։*

213 *Տե՛ս նույն տեղում, էջ 242—243։*

214 *А. С. Амбарян*, Развитие капиталистических отношений в армянской деревне (1860—1920), стр. 28.

Ցարական կարգերի դեմ գյուղացիության հետզհետե ուժեղացող վրդովմունքի մասին են վկայում նաև գյուղացիների կողմից իշխանության ներկայացուցիչներին ցույց տված դիմադրության բազմաթիվ փաստերը։ 1915 թ. հուլիսի 14-ին Կարսի մարզի Բերբերկ գյուղի բնակիչները զինված դիմադրություն են ցույց տվել ոստիկաններին, որի հետևանքով գյուղացիներից 46 հոգի մեղադրվել և ձերբակալվել էր։ 1915 թ. հուլիսի 14-ին նույն մարզի Մուզարիթ գյուղի բնակիչ Շուկալովը, նրա կինն ու տղան դիմադրել և այնուհետև ծեծել են իրենց սայլը զորքի կարիքների համար բռնագրավող երկու ոստիկանի, որի պատճառով Շուկալովը ձերբակալվել և բանտ է նետվել։ Նույն թվականի հուլիսի 28-ին Սողանլուի տեղամասի Բայբուրթ գյուղի բնակիչները սկզբում դիմադրել են իրենց գյուղ եկած հարկահավաքին և ոստիկանական պահնորդին, իսկ հետո ծեծել են նրանց, որի համար բոլորն էլ ձերբակալվել են[215]։

Առաջին համաշխարհային պատերազմի իմպերիալիստական, հակաժողովրդական բնույթը և նրա ծանր հետևանքները, ցարական բանակի հրամանատարության կամայականությունները, հետզհետե խորացող տնտեսական ու քաղաքական ճգնաժամը տիրող կարգերի դեմ ոտքի հանեցին նաև զինվորներին։

Կովկասյան բանակում բոլշևիկների ծավալած հեղափոխական եռանդուն աշխատանքի շնորհիվ զինվորների տարերային բողոքներն ու հուզումները գնալով մասսայական և ավելի ակտիվ բնույթ ստացան։ Զինվորական մասսաների վրդովմունքն ու ատելությունը արտահայտվեց կյանքի անտանելի պայմաններից դժգոհելու, հրամանատարներին չենթարկվելու, նրանց կամայականությունները քննադատելու, դասալքության, ռազմաճակատ մեկնելուց հրաժարվելու կամ այն լքելու և այլ միջոցներով։ Դասալքությունը մեծ չափեր ընդունեց ինչպես ամբողջ Կովկասյան բանակում, այնպես էլ Հայաստանում տեղակայված զորամասերում։ 1916 թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին դասալիքների թիվը միայն Երևանի գավառի զորամասերում հասավ 1696 հոգու[216]։ 1915 թ. օգոստոսի 30-ին Քանաքեռի ճամբարում գտնվող պահեստային զորամասի 8000 զինվորներից ավելի քան 1000-ը իրենց բողոքի ձայները բարձրացրին հացադուլով, խմելու ջրով չապահովելու և տարափոխիկ հիվանդությունների դեմ միջոցներ չձեռնարկելու կապակցությամբ։ Հրամանատարությունը և Երևանի կայազորի պարետը զինվորների հուզումները ճնշելու համար ոտիկված եղան դիմելու 82-րդ կազակային հարյուրակի օգնությանը[217]։

1915 թ. դեկտեմբերին Կաղզվանում գտնվող 66-րդ դիվիզիայի 261-րդ Ախուլգինյան գնդում տարածված մի թռուցիկում մերկացվում էին գնդի հրամանատարության կամայականությունները, զինվորների նկատմամբ նրանց բիրտ և անհոգի վերաբերմունքը։ Թռուցիկում գրված էր. Ախուլգինյան պետերը

«Թրև են գալիս, խմում ու լափում
Եվ զինվորների փողն են գրպանում»[218]։

---

215 Տե՛ս ՍՍՀՄ ՀՀՍՇԿԳԱ, ֆ. 102, Ոստիկանության դեպարտամենտ, IV գործավարություն, գ. 27, մ. 10/1915, թ. 53—55։

216 Տե՛ս ՎՍՍՀ ԿԳԳԱ, ֆ. 1082, ց. 5, գ. 738, թ. 8։

217 Տե՛ս նույն տեղում, գ. 531, թ. 1, 2, 5, ֆ. 17, գ. 3614, թ. 10—11։

218 Նույն տեղում, ֆ. 13, ց. 1, գ. 3614, թ. 27։

Երևանի նահանգի ժանդարմական վարչության պետ գնդապետ Վասիլևը այս թուղթի կապակցությամբ Կովկասի փոխարքայի գրասենյակի հատուկ բաժնին ներկայացրած իր զեկուցագրում նշում էր, որ նոյեմբերի վերջերին ռազմաճակատից Կարսի մարզի կաղզվան քաղաքը հանգստի եկած Ախուլգինյան հետևակային գնդում «մեծ դժգոհություն կա»[219]։ Լուրջ դժգոհություն և խմորումներ կային նաև Կարսի բերդի, Ալեքսանդրապոլի, Երևանի և այլ կայազորների զինվորների մեջ։

Համախակի էին դարձել ռազմաճակատ մեկնելուց հրաժարվելու կամ այն լքելու դեպքերը։ 1916 թ. մայիսին հրաժարվեց կովի գնալ Թուրքեստանյան գնդի 4-րդ վաշտը, իսկ հունիսին՝ նույն գնդի 9-րդ վաշտը։ 1916 թ. վերջին հրաժարվեցին ռազմաճակատ մեկնել Ալեքսանդրապոլի կայազորի մի խումբ զինվորներ և այլն։ Այսպիսով, գնալով մեծանում էր զինվորական շինել հազած ժողովրդական մասսաների վրդովմունքն ու ատելությունը դեպի թալանչիական պատերազմն ու նրա հանցավոր կազմակերպիչները[220]։

Հեղափոխական խմորումներ տեղի ունեցան նաև Արևելյան Հայաստանի սովորող երիտասարդության մեջ։ Բարձր դասարանների սովորողները դատապարտում էին թալանչիական պատերազմը, բողոքի ցույցեր և դասադուլներ կազմակերպում օրըստօրե աճող կամայականությունների դեմ։ 1914—1916 թթ. այդպիսի հուզումներ եղան Էջմիածնի Գևորգյան ճեմարանում։

Գևորգյան ճեմարանի մանկավարժական խորհուրդն իր 1916 թ. զեկտեմբերի 20-ի նիստում նշել է, որ աշակերտական հուզումների պատճառն ամենից առաջ պետք է փնտրել «ամբողջ հասարակական կյանքի աննորմալ և հուզված դրության մեջ»[221]։

Այսպիսով, ցարական ինքնակալության և իմպերիալիստական պատերազմի դեմ Ռուսաստանում աճող տնտեսական ու քաղաքական ճգնաժամը իր ոլորտի մեջ էր առել նաև Արևելյան Հայաստանը։ Հայաստանի բանվորների ու գյուղացիների, զինվորական մասսաների ու սովորող երիտասարդության հակապատերազմական, հակացարական հուզումներն ու շարժումները հենց այդ ճգնաժամի արտահայտությունն էին։

---

219 ՎՍՍՀ, ԿԳԳԱ ֆ. 13/2, ց. 1, գ. 3641, թ. 26։

220 Տե՛ս Հ. Ս. Մելիքյան, Հեղափոխական շարժումները Կովկասյան բանակում (1914—1917), Երևան, 1975։

221 Ե. Ս. Սահակյան, Սովորող երիտասարդության շարժումները Հայաստանում 1900—1917 թթ. (Թեկնածուական դիսերտացիա), 1967, էջ 229։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՕՐԵՐԻՆ։ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ։ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ։

Առաջին համաշխարհային պատերազմը երկիրը կանգնեցրեց տնտեսական փլուզման եզրին։ Օր օրի աճում էր մասսաների դժգոհությունը ձգձգվող պատերազմից և տիրող կարգերից։ Վ. Ի. Լենինի խոսքերով՝ պատերազմը հեղափոխության հզոր արագացուցիչը հանդիսացավ։ 1916 թ. աշնանը Ռուսաստանում արդեն ստեղծվել էր հեղափոխական իրադրություն։

Ճգնաժամից դուրս գալու համար բուրժուազիան, որը վախենում էր, թե ցարական կառավարությունն ի վիճակի չի լինի պատերազմը հասցնել հաղթական վախճանին և ճնշել գալիք հեղափոխությունը, մտադիր էր կատարել պալատական հեղաշրջում՝ ցարին փոխարինել այլ ցարով, կազմակերպել, այսպես կոչված, «պատասխանատու կառավարություն» բուրժուազիայի ներկայացուցիչներից։ Անգլիական և ֆրանսիական իմպերիալիստները հրահրում էին բուրժուազիային կատարելու այդ քայլը, վախենալով, թե ցարական կառավարությունը կարող է անջատ հաշտություն կնքել Գերմանիայի ու նրա դաշնակիցների հետ և այդպիսով զրկել Անտանտային ռուսական բանակի օգնությունից։ Ցարական կառավարությունն իր հերթին պատրաստվում էր ցրել Պետական դուման, փակել ընդդիմադիր թերթերը և բանակցություններ սկսել Գերմանիայի հետ՝ անջատ հաշտություն կնքելու համար։ Սակայն, ինչպես բուրժուական, այնպես էլ պալատական շրջանների ծրագրերը շուտով վիժեցրեց ժողովրդական հեղափոխությունը։

Բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ հեղափոխական շարժումը Ռուսաստանում շարունակվում էր և պատերազմի տարիներին։ Չնայած ցարական կառավարության դաժան հալածանքներին, բոլշևիկները անդուլ կերպով պատրաստում էին զանգվածներին՝ տապալելու իշխանությունը։

1917 թ. սկիզբը նշանավորվեց գործադուլային շարժման ուժեղ վերելքով Պետրոգրադում, Մոսկվայում, Բաքվում և մի շարք խոշոր քաղաքներում։ Հատկապես լարված դրություն ստեղծվեց Պետրոգրադում։ Փետրվարի 9-ին և 10-ին մայրաքաղաքի գործարաններում տեղի ունեցած միտինգները վերածվեցին գործադուլների։ Փետրվարի 14-ին իր աշխատանքը պետք է վերսկսեր IV Պետական դուման։ Բոլշևիկների կոչով այդ օրը Պետրոգրադի

բանվորները մասսայական ցույցեր կազմակերպեցին՝ «Կորչի կառավարությունը», «Կորչի պատերազմը», «Կեցցե հանրապետությունը» լոզունգներով։

Փետրվարի 25-ը նշանավորվեց ընդհանուր գործադուլով. ցուցարարները ընդհարում ունեցան ոստիկանության հետ։ Ցուցարարների դեմ ուղարկված զինվորների համակրանքը բանվորների կողմն էր։ Փետրվարի 26-ին քաղաքական գործադուլը և ցույցերը բոլշևիկների ղեկավարությամբ վերածվեցին ապստամբության։

Պետրոգրադի ծայրամասերից դեպի քաղաքի կենտրոնը շարժվող բանվորների շարասյուները գնդակոծվեցին շենքերի տանիքներին թաքնված ոստիկանների կողմից։ Զինվորներին նույնպես հրամայված էր գնդակոծել ապստամբներին, բայց նրանք հրաժարվեցին կատարել հրամանը։ 27-ին ապստամբ բանվորներին միացան մայրաքաղաքի կայազորի զինվորները։ Նրանց օգնությամբ ապստամբներին հաջողվեց գրավել զինանոցը և զինվել։ Օրվա վերջին մայրաքաղաքը գրեթե գտնվում էր բանվորների և զինվորների ձեռքում։ Ապստամբները ձերբակալեցին ցարական կառավարության մի շարք մինիստրների, գեներալների։ Ցարիզմը տապալվեց։

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխության շարժիչ ուժերը էին բանվոր դասակարգը և նրա հետ դաշնակցած գյուղացիությունը։ Խոսելով այդ դաշինքի մասին, Վ. Ի. Լենինը գրել է. «Պետերբուրգի ու Մոսկվայի կայազորների զինվորների մեծամասնությունը անցել է ապստամբած բանվորների կողմը։ Զինվորական համազգեստով բանվորներն ու գյուղացիները եղբայրաբար ձեռք մեկնեցին զինվորական համազգեստ չունեցող բանվորներին և գյուղացիներին[1]։ Այդ մարտական դաշինքի գլուխն էր կանգնած բոլշևիկյան կուսակցությունը։

Ցարիզմի տապալումը պատմական խոշոր իրագործություն էր։ Հեղափոխական ժողովրդի հարվածների տակ ընկավ ինքնակալությունը, որը դարերի ընթացքում սոցիալական և ազգային ստրկացման մեջ էր պահում Ռուսաստանի ժողովրդական զանգվածներին։ Ռուսաստանը փետրվարյան հեղափոխությունից հետո դարձավ ամենաազատ, ամենադեմոկրատական երկիրը պատերազմող պետությունների մեջ։ Հեղափոխությունից հետո միլիոնավոր մարդիկ հաղորդակից դարձան քաղաքական կյանքին, քանի նրանք դեռ վատ էին հասկանում տարբեր կուսակցությունների իսկական էությունը։ Պատերազմի տարիներին փոխվեց պրոլետարիատի սոցիալական կազմը։ Կադրային բանվորները գտնվում էին բանակում։ Գործարաններ նկան գյուղի և քաղաքի մանրբուրժուական խավերից նոր մարդիկ։ Այդ պատճառով փետրվարյան հեղափոխության օրերին պրոլետարիատի որոշ մասը դեռևս բավականաչափ գիտակից և կազմակերպված չէր։ Կուսակցության առաջնորդ Վ. Ի. Լենինը ստիպված էր ասպրել արտասահմանում, իսկ մյուս ղեկավարները մեծ մասամբ գտնվում էին բանտերում, աքսորում կամ էմիգրացիայում։

Դեռ երկչոտ ցարիզմի դաժան լծի տակ հեծող աշխատավորական մասսաները հարթած էին ինքնակալության դեմ տարած հաղթանակով, որը ստեղծեց հաշտեցման և ընդհանուր եղբայրացման տրամադրություն։ Այդ տրամադրությունը վարակեց ոչ միայն մանր բուրժուազիային, այլև պրոլետարիատի լայն շրջաններին։ Ամանրբուրժուական վիթխարի ալիքը հեղեղել է

1 Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 23, էջ 461։

ամեն ինչ,— գրում էր Վ. Ի. Լենինը,— ճնշել է դիտակից պրոլետարիատին ոչ միայն իր թվական մեծամասնությամբ, այլև գաղափարապես այսինքն՝ բանվորական նկատմամբ ունեցած մանրբուրժուական հայացքներով վարակել, ընդգրկել է բանվորների խոշոր լայն շրջաններ»[2]։

Քաղաքական այսպիսի իրադրության պայմաններում ստեղծված բանվորների ու գինվորների դեպուտատների սովետներում, ինչպես Պետրոգրադում, այնպես էլ Թուրքստանի գրեթե բոլոր քաղաքներում մեծամասնություն կազմեցին համաձայնողական կուսակցությունների՝ մենշևիկների և Էսեռների ներկայացուցիչները։

Ցարիզմի տապալման առաջին օրերին իրական իշխանությունը գտնվում էր Պետրոգրադի սովետի ձեռքում, որը հենվում էր գինված ժողովրդի վրա։ Բայց սովետի գործադիր կոմիտեի էսեռա-մենշևիկյան լիդերները բոլշևիկներից թաքուն անդրկուլիսյան բանակցություններ մեջ մտան 1917 թ. փետրվարի 27-ին Մ. Վ. Ռոձյանկոյի նախագահությամբ ստեղծված Պետական դումայի ժամանակավոր կոմիտեի հետ՝ կառավարություն ստեղծելու համար։ Մարտի 2-ին իշխան Գ. Ե. Լվովի գլխավորությամբ կազմվեց առաջին ժամանակավոր կառավարությունը, որի կազմի մեջ մտան բուրժուազիայի և բուրժուականացած կալվածատերերի ներկայացուցիչները։ Չնայած բոլշևիկների բողոքին, սովետը համաձայնություն տվեց էսեռա-մենշևիկյան լիդերների գործողություններին։

Սակայն ժամանակավոր կառավարության կողքին գոյություն ուներ մի ուրիշ իշխանություն եա՝ բանվորների և գինվորների դեպուտատների սովետները։ Այսպիսով, հեղափոխությունից հետո երկրում հաստատվեց երկիշխանություն, երկու դիկտատուրաների յուրահատուկ միահյուսում՝ բուրժուազիայի դիկտատուրան՝ հանձին ժամանակավոր կառավարության և պրոլետարիատի ու գյուղացիության դեմոկրատական դիկտատուրան՝ հանձին Սովետների։

Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովին փոխարինած Ն. Ռոմանովը և նրա շրջապատը տեղյակ էին Պետրոգրադի պրոլետարիատի հեղափոխական ելույթներին ընդդեմ ցարիզմի։ Փոխարքան հուսով էր, որ ցարական կառավարություն դատաստան կտեսնի ապստամբ ժողովրդի հետ։ Սակայն փետրվարի 28-ին, ստանալով հեղափոխության հաղթանակի լուրը, նա մարտի 2-ին իր մոտ կանչեց Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսյանին, հոգնորականության ու մամուլի ներկայացուցիչներին և հայտնեց, որ ճանաչում է Պետական դումայի ժամանակավոր կոմիտեին։ Նա միաժամանակ շնշտեց պատերազմը շարունակելու ու թշնամու նկատմամբ հաղթանակ տանելու անհրաժեշտությունը։ Փոխարքան հույս հայտնեց, որ Թիֆլիսի, ինչպես և Անդրկովկասի բնակչությունը հանգստություն կպահպանի։ Նույն օրը Թիֆլիսի քաղաքային դումայի արտակարգ նիստում Ա. Խատիսյանը հայտարարեց, որ Կովկասի ցարական վարչությունը հանձնին փոխարքայի, ճանաչում է Պետական դումայի ժամանակավոր կոմիտեն որպես օրինական կառավարություն, նշեց նաև, որ տեղական ու ցարական վարչության միջև հակասություն չկա[3]։ Դուման համաձայնվեց Խատիսյանի կարծիքին, պահանջելով

---

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 55։

3 Տե՛ս «Кавказское слово», 1917, 5 մարտի, № 51։

միայն քաղաքական բանտարկյալների ազատում, խոսքի, մամուլի, ժողովների ազատություն և նման մի քանի լիբերալ միջոցառումներ, որոնք արդեն իրագործվել էին հեղափոխության կողմից[4]։ Մարտի 3-ին «Кавказ» թերթը պաշտոնական հաղորդում հրապարակեց իշխանությունը ժամանակավոր կառավարության ձեռքն անցնելու մասին։

Այդ օրերին երկյոտ դիրք բռնեցին Անդրկովկասի մենշևիկների լիդերները։ Ստանալով ծածկագիր հեռագիր ցարական կառավարության տապալման մասին, նրանք այդ հեռագիրն սկզբում խիստ գաղտնի պահեցին, թաքցրին երկրամասի աշխատավորներից, իսկ հետո, համոզվելով, որ իրոք ցարական կառավարությունը տապալված է, Ն. Ժորդանիային և Ն. Բամիշվիլուն ուղարկեցին փոխարքայի մոտ՝ իրենց հետագա վարքագիծը որոշելու համար։ Մենշևիկների լիդերների հետ դրուցելիս փոխարքան իր դոհունակությունը հայտնեց, որ Կովկասի բնակչությունը հանգիստ է վերաբերվում Պետրոգրադի դեպքերին։ Փոխարքան այդ երևույթը բացատրում էր նրանով, որ սոցիալ-դեմոկրատիան, որը մեծ ազդեցություն ունի Կովկասում, «կարգ ու կանոնի» պահպանման կողմնակից է[5]։ Փոխարքան դիմեց երկրամասի բնակչությանը՝ խորհուրդ տալով հանգստություն պահպանել և կատարել ժամանակավոր կառավարության կարգադրություններըն[6]։ Բայց հակառակ փոխարքայի «խորհրդի», երկրամասում տեղի ունեցան բազմամարդ ցույցեր ու միտինգներ։

Հայաստանի ժողովրդական զանգվածները բուռն խանդավառությամբ ընդունեցին ցարիզմի տապալման լուրը։ Երկրի մի շարք քաղաքներում տեղի ունեցան ցույցեր ու միտինգներ։ Մարտի 8-ին Ալեքսանդրապոլում կայացավ կայազորի ներկայացուցիչների բազմամարդ ժողով, որն ընտրեց կայազորի զինվորական դեպուտատների սովետ։ Սովետի գործադիր կոմիտեն զինաթափ արեց ոստիկանությանը և իր ձեռքն առավ կարգ ու կանոնի պահպանման գործը քաղաքում և գավառում։ Մարտի 10-ին տեղի ունեցավ քաղաքացիների և զինվորների մեծ միտինգ, որը ողջունեց ցարիզմի տապալումը։ Միտինգում հանդես եկող դաշնակցականները և համաձայնողականները կոչ էին անում համախմբվել ժամանակավոր կառավարության շուրջը, պատերազմը «հաղթական վախճանի» հասցնելու համար։

Մարտի 12-ի Երևանի բազմամարդ միտինգին մասնակցում էին Թիֆլիսի գործադիր կոմիտեի (Նոր կազմակերպված քաղաքային բուրժուական իշխանության մարմին—խմբ.) ներկայացուցիչները։ Այստեղ ևս հռետորները կոչ արեցին միտինգի մասնակիցներին պաշտպանել ժամանակավոր կառավարությանը և շարունակել պատերազմը։

Ցույցեր և միտինգներ տեղի ունեցան նաև Ղափանում ու Ալավերդում, ուր բանվորները, ողջունելով ցարիզմի տապալումը, միաժամանակ առաջ էին քաշում իրենց տնտեսական դրության բարելավման հարցը։

Մարտի 6-ին ապստամբեց Կարսի կայազորը, որից հետո տեղի ունեցավ բազմամարդ միտինգ զինվորների և քաղաքացիների մասնակցությամբ։ Մի-

---

4 Տե՛ս նույն տեղում։

5 Տե՛ս Г. Хачапуридзе, Борьба грузинского народа за установление Советской власти, Тбилиси, 1956, стр. 45.

6 Տե՛ս «Революция 1917 г. в исторических документах», стр. 51—52.

տինգից հետո բանտարկվեցին՝ Կարսի մարզի նահանգապետ գեներալ Սուշինսկին, փոխնահանգապետ Շմիրլինգը, բերդի պարետ գեներալ Լինդենբաումը և ուրիշներ[7]։ Զինվորներն ընտրեցին բերդի նոր պարետ և երկու օգնականներ։

Մարտի սկզբներին ապստամբեց էջմիածնում կանգնած 25-րդ հրաձգային գունդը[8]։ Միտինգից հետո բանտարկվեց գավառապետ Լիմերմանը։ Մարտի 8-ին և 11-ին միտինգներ ու ցույցեր տեղի ունեցան նաև Ղարաքիլիսայում ու Նոր Բայազետում։

Փետրվարյան հեղափոխությունից հետո բոլշևիկյան կուսակցությունը ձեռնամուխ եղավ նոր քաղաքական գծի մշակման, որը համապատասխանելու էր հեղափոխության զարգացման նոր պայմաններին։ Այդ գծի հիմքերը Վ. Ի. Լենինը նշել էր իր նշանավոր «Նամակներ հեռվից» հոդվածաշարում՝ գրված Շվեյցարիայում, 1917 թ. մարտին։

1917 թ. ապրիլի 3-ին Վ. Ի. Լենինը վերադարձավ Ռուսաստան։ Առաջնորդի վերադարձը վճռական նշանակություն ունեցավ կուսակցության տակտիկայի մշակման խնդրում։ Ապրիլի 4-ին Պետրոգրադում Վ. Ի. Լենինը հանդես եկավ «Պրոլետարիատի խնդիրների մասին տվյալ հեղափոխությունում» զեկուցումով, որի թեզիսները ապրիլի 7-ին հրապարակվեցին «Պրավդայում»։

Վ. Ի. Լենինի Ապրիլյան թեզիսները ստեղծագործական մարքսիզմի կրևոր, համաշխարհային-պատմական նշանակություն ունեցող փաստաթուղթ են։ Փետրվարյան հեղափոխությունից հետո Ռուսաստանում ստեղծված իրադրության, երկրում դասակարգային ուժերի փոխհարաբերության և միջազգային դրության խոր գիտական վերլուծման հիման վրա Վ. Ի. Լենինը առաջ քաշեց բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից սոցիալիստական հեղափոխության անցման պլանը։

Որպես կուսակցության ամենահրատապ խնդիր Վ. Ի. Լենինն առաջադրեց «Ամբողջ իշխանությունը սովետներին» լոզունգը։ Բայց դա չէր նշանակում, որ բոլշևիկները կոչ են անում անմիջապես տապալել ժամանակավոր կառավարությունը։ Քանի որ այդ կառավարությունը դեռ օգտվում էր սովետների աջակցությունից, անհրաժեշտ էր բացատրական աշխատանք տանել մասսաների մեջ, ցույց տալ, որ ժամանակավոր կառավարությունը հակաժողովրդական կառավարություն է, որ նա խաբում է ժողովրդին, որ այդ կառավարության քաղաքականությունը պաշտպանում են մենշևիկները և էսէռները։ Կուսակցությունը խնդիր էր դնում բացատրական աշխատանքի միջոցով իր կողմը գրավել մասսաներին, նվաճել սովետներում մեծամասնություն, փոխել նրանց կազմը, ապա սովետների միջոցով՝ նաև կառավարության կազմը և իշխանությունը հանձնել աշխատավորների շահերի իսկական պաշտպան բոլշևիկյան կուսակցությանը, որով և վերջ կտրվեր երկիշխանությանը։ Այդ պլանը նախատեսում էր հեղափոխության խաղաղ զարգացում։

Լենինյան թեզիսներում ասված էր, որ փետրվարյան հեղափոխությունից հետո չէր փոխվել պատերազմի իմպերիալիստական բնույթը, ուստի պետք էր վերջ տալ թալանչիկական պատերազմին և պայքարել հանուն իսկական դեմոկրատական հաշտության, առանց անեքսիաների ու ռազմական տու-

---

7 Տե՛ս «Революция 1917 г. в исторических документах», стр. 56.

8 Տե՛ս նույն տեղում, էջ 61։

գանքների։ Ագրարային հարցում Վ. Ի. Լենինն առաջարկում էր կոնֆիսկացիայի ենթարկել բոլոր կալվածատիրական, արքունական, եկեղեցական հողերը և ազգայնացնել դրանք։ Տնտեսական բնագավառում Թեզիսները նախատեսում էին բոլոր բանկերի միաձուլումը մեկ համազգային բանկում և բանվորական հսկողության սահմանում հասարակական արտադրության և բաշխման վրա։ Վ. Ի. Լենինն անհրաժեշտ էր համարում անմիջապես կուսակցության համագումարի հրավիրումը, կուսակցության հին ծրագրի և անվանման փոփոխումն ու նոր Ինտերնացիոնալի ստեղծումը։

Անդրկովկասի բոլշևիկները մասսայականացրին Լենինյան Թեզիսները հրապարակելով դրաք «Բակինսկի ռաբոչի» թերթում։

1917 թ. ապրիլին կայացավ բոլշևիկյան կուսակցության առաջին լեգալ կոնֆերանսը Ռուսաստանում—յոթերորդ (Ապրիլյան) կոնֆերանսը, որն իր նշանակությամբ հավասար էր կուսակցության համագումարի։ Կոնֆերանսի որոշումների հիմքը կազմեցին Վ. Ի. Լենինի Ապրիլյան Թեզիսները։ Ելնելով կոնֆերանսի որոշումներից, բոլշևիկները մեծ աշխատանք ծավալեցին մասսաների մեջ, կազմակերպելով ու համախմբելով նրանց իրենց շուրջը՝ պայքարելու հանուն սոցիալիստական հեղափոխության հաղթանակի։

* * *

Փետրվարյան հեղափոխությունից հետո ստեղծվեցին բանվորական, զինվորական և գյուղացիական դեպուտատների սովետներ, որոնք պրոլետարիատի ու գյուղացիության հեղափոխական-դեմոկրատական դիկտատուրայի օրգաններն էին։

Սովետներ ստեղծվեցին նաև Անդրկովկասում ու Հայաստանում, 1917 թ. մարտ-ապրիլ ամիսներին՝ Ալեքսանդրապոլում, Ղափանում, Երևանում, Ալավերդում, Կարսում, Սարիղամիշում, Կաղզվանում։ Հայաստանի սովետներում մեծամասնություն կազմեցին դաշնակցականները, էսեռները, մենշևիկները, բացի Ղափանի և Ալավերդու բանվորական սովետներից, որոնցում ուժեղ էր բոլշևիկյան ազդեցությունը։ Սովետներում համաձայնողականների և դաշնակցականների մեծամասնության առաջացման պատճառն այն էր, որ աշխատավորները դեռևս վստահում էին այդ կուսակցություններին և հավատում նրանց խոստումներին։ Փետրվարյան հեղափոխությունից հետո ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Հայաստանում բանվորները, սովետների նախաձեռնությամբ, սկսեցին կազմակերպել իրենց արհեստակցական միությունները։ Չնայած Հայաստանում սովետներում ևս մեծամասնություն կազմեցին համաձայնողականները և դաշնակցականները, բայց և այնպես դրանք հանդիսանում էին նոր դեմոկրատական իշխանության մարմինները։

Մենշևիկների առաջարկով Թիֆլիսի սովետը ժամանակավոր կառավարության առջև հարց հարուցեց Անդրկովկաս ուղարկել կոմիսարներ՝ երկրամասի կառավարման համար[9]։ 1917 թ. մարտի 9-ին ժամանակավոր կառավարությունը որոշեց վերացնել Կովկասի փոխարքայությունը և Անդրկովկասը կառավարելու համար ստեղծել Անդրկովկասի Հատուկ կոմիտե (ՕԶԱԿՈՄ), կազմված պետական դումայի անդամներ Վ. Խոլոմովից (կադետ), Մ. Պա-

---

9 Տե՛ս «Революция 1917 г. в Закавказье. Документы и материалы». 1927, стр. 78—80.

պաշտպանից (կադետ), Մ. Ջաֆարովից (կադետ), Կ. Աբաշիձեից (սոցիալ-ֆեդերալիստ) և Պ. Պերևերզևից (կադետ)[10]։ ՕԶԱԿՈՄ-ի նախագահ նշանակվեց Վ. Խալամովը։ Մենշևիկները դժգոհ մնացին ՕԶԱԿՈՄ-ի կազմից, պատճառաբանելով, թե անդրկովկասյան «դեմոկրատիան» չունի իր ներկայացուցիչը այդ օրգանում։ Բայց երբ ժամանակավոր կառավարությունը Պ. Պերեվերզևի փոխարեն ՕԶԱԿՈՄ-ի կազմի մեջ մտցրեց մենշևիկ Ա. Ջիբենկելյան, մենշևիկները, ՕԶԱԿՈՄ-ը ճանաչելով որպես օրինական մարմին, սկսեցին նրան ամեն կարգի աջակցություն ցույց տալ։ ՕԶԱԿՈՄ-ում Ա. Ջիբենկելին գեկավարում էր ներքին գործերը։

Բնութագրելով ՕԶԱԿՈՄ-ի անդամներին և խոսելով նրա գործունեության մասին, Ստ. Շահումյանը գրում էր, որ ժամանակավոր կառավարությունը Կովկաս է ուղարկել «Կովկասյան ամենաղեկավոր ազգությունների դիտավորյալ կերպով ընտրած ներկայացուցիչներին»—Պապաջանովին, Ջիբենկելյան և Ջաֆարովին։ Նրանց ամբողջ քաղաքականությունը տարվում էր ազգերը առավելագույն անջատելու ոգով։ Յուրաքանչյուրն աշխատում էր ազգային խորհուրդներ կազմակերպել, որպեսզի նրանց մեջ գտներ իր հենարանը։ Ինտերնացիոնալ հեղինակավոր իշխանության չկար[11]։

Ժամանակավոր կառավարությունը ՕԶԱԿՈՄ-ի վրա էր դրել նաև Արևմտյան Հայաստանի այն մասի կառավարումը, որը գրավված էր ռուսական բանակի կողմից։

Անցնելով իր պարտականությունների կատարմանը, ՕԶԱԿՈՄ-ը 1917 թ. մարտի 18-ին դիմեց Անդրկովկասի բնակչությանը մի կոչով, որով խոստանում էր ստեղծել «նոր» իրավակարգ՝ համաձայն տեղական պայմանների և կարիքների։ Սակայն այնպիսի հարցերի լուծումը, ինչպիսիք էին բանվորական, ագրարային, ազգային հարցերը, թողնվում էր Սահմանադիր ժողովին։ Տուրքերը և հարկերն առայժմ պետք է հավաքվեին։ Խիստ պատիժների սպառնալիքով արգելվում էր վերնաշերտերի հողերի բռնագրավումը, բանակում քաղաքական կազմակերպությունների ստեղծումը և այլն[12]։ Հանդիսանալով ժամանակավոր կառավարության օրգանը, ՕԶԱԿՈՄ-ն իր գործունեության ամբողջ ընթացքում Անդրկովկասում կիրառում էր նրա հակաժողովրդական քաղաքականությունը։

ՕԶԱԿՈՄ-ն իր խնդիրներից մեկն էր համարում ինքնավարության մարմինների կազմակերպումը երկրամասում։ Ժամանակավորապես, մինչև Սահմանադիր ժողովի հրավիրումը, գյուղերում, շրջաններում, գավառներում, նահանգներում և մարզերում ընտրությունների միջոցով պետք է կազմակերպվեին գործադիր կոմիտեներ, որոնք հանդիսանալու էին ՕԶԱԿՈՄ-ի, ուրեմն և ժամանակավոր կառավարության մարմիններ։

Այն ժամանակ, երբ բոլշևիկները պայքարում էին հանուն սոցիալիստական հեղափոխության, մենշևիկների, էսեռների համար ցարիզմի տապալումից հետո հեղափոխությունը վերջացել էր։ Հեղափոխության գեկավար ուժը նրանք համարում էին բուրժուազիային, որին և հանձնեցին իշխանությունը։ Դրանից հետո նրանք հանգստությամբ սպասում էին Սահմանադիր ժողովի

---

10 «Революция 1917 г. в исторических документах», стр. 62.

11 **Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 115։**

12 *Տե՛ս* «Кавказское слово», 1917, 12 апреля, № 80.

գումարման։ Մենշևիկներն ու էսեռները, իսկ Հայաստանում դրանցից բացի նաև դաշնակցականները, հայ կադետները, հնչակյանները ժողովրդական զանգվածներին Սահմանադիր ժողովի մասին այն միտքն էին ներշնչում, որ իբր թե դա վերդասակարգային մարմին է, և որ այն բոլորը, ինչ արվում է մինչև այդ ժողովի հրավիրումը, անցողակի բնույթ է կրում։

Փետրվարյան հեղափոխությունից հետո Հայաստանում իշխանությունն իրենց ձեռքը վերցրին Երևանի նահանգային և Կարսի մարզային գործադիր կոմիտեները։ Երևանի նահանգային գործադիր կոմիտեն կազմված էր քաղաքային դումայի անդամներից, Երևանի բանվորական դեպուտատների Սովետի, զինվորական դեպուտատների Սովետի, առևտրականների, մշակույթի և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներից։ Գործադիր կոմիտեն իր կողմից առանձնացրել էր նահանգային կոմիսարիատ, որն անմիջապես կառավարում էր նահանգը։ Կոմիսարիատի գլուխն էր կանգնած Երևանի քաղաքագլուխ, դաշնակցական Ս. Խաչատրյանը, որին հետագայում փոխարինեց դաշնակցական Ս. Քորոսյանը։ Կոմիսարիատի անդամներն էին 1917 թ. տարբեր ժամանակներում Խալիլ Կասումբեկովը, Ի. Տեր-Միքայելյանը և ուրիշներ։ Նույն հիմունքներով էր կազմակերպված նաև Կարսի մարզային գործադիր կոմիտեն։ Ժողովրդական զանգվածների ճնշման տակ Երևանի նահանգի ու Կարսի մարզի գործադիր կոմիտեներն սկսեցին պաշտոններից հեռացնել գավառապետներին, իսկ Կարսի մարզում՝ շրջանային պետերին, պրիստավներին, հաշտարար միջնորդներին ու հին վարչության մյուս ներկայացուցիչներին։ Հեռացված գավառապետների փոխարեն նշանակվեցին գավառային կոմիսարներ, իսկ վերջիններիս կից՝ գավառային գործադիր կոմիտեներ։ Գավառային կոմիսարներ և գործադիր կոմիտեի անդամներ նշանակվեցին այնպիսի մարդիկ, որոնք պակաս հավատարիմ չէին շահագործող դասակարգերի շահերին, քան նախկին գավառապետները։

Հայաստանի գյուղերում մինչև մարտի վերջը գյուղական տանուտերերը շարունակում էին մնալ իրենց պաշտոններում։ Սակայն ապրիլից գյուղացիների նախաձեռնությամբ սկսվում է գործադիր կոմիտեների կազմակերպումը։ Այդ ժամանակաշրջանում գյուղացիական զանգվածների հեղափոխական ինքնագործունեության ձևերից մեկը կարող էին դառնալ, և տեղ-տեղ դարձան, գյուղական գործադիր կոմիտեների ընտրություններ, որոնք տեղի էին ունենում գասակարգային պայքարի պայմաններում։ Կուլակները ձգտում էին գյուղական գործադիր կոմիտեների մեջ, ինչպես և գյուղական կոմիսարների պաշտոնում անցկացնել յուրայիններին։ Այսպես, Քեշիշքենդ (Նեղնեձոր) գյուղում ընտրությունները կայացան գյուղի տանուտերի և կուլակների հընշման տակ, որոնց հաջողվեց գործադիր կոմիտեի մեջ անցկացնել գյուղի հարուստների դրածոներին[13]։ Ղամարլուի (Արտաշատ) շրջանի Սաթունչի գյուղի բնակիչները գյուղական կոմիսարի ընտրությունների ժամանակ դուրս եկան հարուստների քննադատի դեմ։ Որպեսզի ստաբակեն գյուղացիներին և կոմիսար անցկացնեն իրենց մարդուն, կուլակները գործի դրին իրենց կամակատարներին։ Տեղի ունեցավ ընդհարում, որի ժամանակ կատարվեց սպանություն[14]։ Սակայն շատ գյուղերում գործադիր կոմիտեների մեջ մտան հեղա-

13 Տե՛ս ՀՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 103, ց. 1, գ. 56, թ. 52։

14 Տե՛ս «Кавказское слово», 1917, 1 июня, № 119.

փոխականորեն տրամադրված տարրեր (Սանահինում, Հաղպատում, Ղուկասիում (Կարմիր գյուղ), Արզաքենդում (Արզական).

ՕԶԱԿՈՄ-ի նախաձեռնությամբ Երևանի նահանգային և Կարսի մարզային գործադիր կոմիտեները 1917 թ. ամռանը ձեռնամուխ եղան գյուղական գործադիր կոմիտեների ընտրություններին։ Այդ ընտրություններն ընդհանուր ոչինչ չունեին գյուղացիների նախաձեռնությամբ կատարվող վերոհիշյալ ընտրությունների հետ։ Դրանք ձևական բնույթ էին կրում, անց էին կացվում առանց լուրջ նախապատրաստման։ Գյուղացիները դեռ հավատում էին դաշնակցականների, էսեռների, մենշևիկների խոստումներին, այդ պատճառով էլ ընտրությունների ժամանակ գյուղական գործադիր կոմիտեների կազմում անցնում էին գլխավորապես կուլակները և ցարական ռեժիմի նախկին ծառայողները։ Այսպես, ՕԶԱԿՈՄ-ի ներկայացուցչի կողմից Ջալալօղլու շրջանում անցկացված ընտրությունների ժամանակ նույնանուն գյուղի կոմիսար ընտրվեց նախկին տանուտերը, շրջանային գործադիր կոմիտեի անդամ դարձավ տեղական կուլակը, իսկ շրջանային կոմիսար՝ նախկին ոստիկանական պահնորդը[15]։

Անդրկովկասում և Հայաստանում փետրվարյան հեղափոխությունից հետո առաջացան մի կողմից՝ բանվորների և զինվորների դեպուտատների սովետներ, իսկ մյուս կողմից՝ բուրժուական իշխանության մարմինները՝ հանձինս նահանգային և մարզային գործադիր կոմիտեների։ Մենշևիկների, էսեռների և դաշնակցականների կողմից ղեկավարվող սովետները Հայաստանում ակսեցին պաշտպանել բուրժուական իշխանության այդ մարմինները, ինչպես պաշտպանում էին ժամանակավոր կառավարությանը համաձայնողական կուսակցությունների կողմից ղեկավարվող սովետները Կենտրոնական Ռուսաստանում։ Այսպիսով, Ռուսաստանում հաստատված երկիշխանությունն ավելի թույլ ձևով արտահայտվեց նաև Հայաստանում։

Պատերազմի տարիներին թուրքական յաթաղանից ազատվելու համար Արևմտյան Հայաստանից Անդրկովկաս գաղթեց մոտ 300 հազար հայ[16]։ Հետագայում երկրամասում ստեղծված պարենավորման ծանր պայմանների հետևանքով գաղթականության մի մասն ստիպված եղավ անցնել Հյուսիսային Կովկաս և Ռուսաստանի հարավային շրջանները։

Չնայած իրենց արևելահայ եղբայրների, հատկապես հայ գյուղացիության, անկեղծ, սրտաբաց օգնության, ինչպես և արտասահմանի հայկական գաղութներից ստացվող միջոցներին, գաղթականությունը դեռևս խիստ ծանր դրության մեջ էր։ Սովը և հիվանդությունները նոսրացնում էին նրա շարքերը։ 1917 թ. մայիսի 2-ին զորավար Անդրանիկի նախագահությամբ Երևանում բացվեց արևմտահայերի համագումարը, որին մասնակցում էր 59 պատգամավոր։ Համագումարն զբաղվեց գաղթականության ֆիզիկական գոյության պահպանման, նրա հայրենադարձության և վերադարձողների տնտեսությունը հայրենիքում վերականգնելու, ինչպես և որբերի ու կիտասարդ սերնդի դաստիարակությունը կազմակերպելու հարցերով։

---

15 Տե՛ս «Кавказский рабочий», 1917, 8 сентября, № 145.

16 «Отчет деятельности состоящего при Кавказском армянском благотворительном обществе армянского центрального комитета помощи пострадавшим от войны», Тифлис, 1917, стр. 5.

Որոշվեց գաղթականությանը ցույց տրվող օգնությունը կենտրոնացնել մեկ մարմնի ձեռքում։ Այդ նպատակով ընտրվեց 15 հոգուց կազմված Արևմտահայ ազգային խորհուրդ, որի մեջ մտան Անդրանիկը, Շանթը, Զապել Եսայանը, Գ. Հայկունին և ուրիշներ։ Խորհրդին կից գործելու էին մի շարք հանձնաժողովներ՝ կրթական, որբանոցային, առողջապահական, պարենավորման և այլն։ Խորհուրդն առանձնացրեց իր բյուրոն, որը պետք է անմիջապես ղեկավարեր հանձնաժողովների աշխատանքները[17]։ Համագումարն իր շնորհակալությունը հայտնեց արևելահայ եղբայրներին, ինչպես նաև ռուս մեծ ժողովրդին այն օգնության համար, որ ցույց էին տալիս նրանք արևմտահայ գաղթականությանը[18]։

Երբ 1917 թ. դեկտեմբերին ռուսական զորքերի հեռանալու հետևանքով մերկացավ Կովկասյան ռազմաճակատը, և անհրաժեշտություն զգացվեց կազմակերպել նոր զորամասեր, Արևմտահայ բյուրոն վերակառուցվեց Ազահովության խորհրդի, ընդունելով ռազմական բնույթ։ Այդ խորհրդի կազմի մեջ մտան Վ. Փափազյանը, Հ. Ամատունին, Ա. Թերզիբաշյանը, Հ. Տեր-Զաքարյանը, Հ. Հակոբյանը, Ժ. Միրզախանյանը և ուրիշներ։

2. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ։ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՈՒԼԻՍՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԵՎ ԿՈՆՆԻԼՈՎՅԱՆ ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՕՐԵՐԻՆ։

Փետրվարյան հեղափոխությունից հետո ինչպես Ռուսաստանում և Անդրկովկասում, այնպես էլ Հայաստանում բանվորները, հողագործ և սակավահող գյուղացիները հանգես եկան իրենց տնտեսական ու քաղաքական պահանջներով։ Նրանց պայքարը կազմում էր համառուսաստանյան հեղափոխական շարժման բաղկացուցիչ մասը և ուղղված էր ժամանակավոր կառավարության ու նրա տեղական մարմինների հակաժողովրդական քաղաքականության դեմ։

Փետրվարյան հեղափոխությունից հետո Ռուսաստանում բանվորներն առաջ քաշեցին ութժամյա բանվորական օր մտցնելու, աշխատավարձը բարձրացնելու և այլ պահանջներ։ Նման պահանջներով հանդես եկան նաև Հայաստանի բանվորները։ Համառուսաստանյան ակցիոներական «Պղինձ» ընկերության վարչությանը 1917 թ. հուլիսի 17-ին հղված զեկուցագրում ասվում էր. «Բանվորների տնտեսական պահանջները ոչ միայն չեն դադարում, այլև կարճատև համաձայնություններից հետո առաջադրվում են առավել ուժգնորեն, խոսելով գործերի դրության մասին Ալավերդում, նշվում էր. «Գործարանում սբ մայիսի 4—6 կայացած գործարանային խորհրդակցության հատուկ հանձնաժողովը հավաստիացնում էր, որ բանվորների պահանջներն, առանց բացառության, բավարարված են և նրանց ու ձեռնարկության վարչության միջև լիակատար համաձայնություն է կայացել։ Սակայն 2—3 շաբաթ անց բանվորները ներկայացրին արդեն նոր պահանջներ՝ մեկ ժամ պղնձի համար աշխատավարձը մոտ 5—6 ռուբլու չափով բարձրացնելու մասինը[19]։

17 Տե՛ս «Հայաստան», 1917, 27 մայիսի, № 32

18 Տե՛ս «Հայաստան», 1917, 21 մայիսի, № 27։

19 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 195, ց. 1, գ. 655, թ. 190։

Աշխատավարձի բարձրացումը չնչին էր։ Իրականում Ալավերդու բանվորների դրությունը բանի գնում վատթարանում էր։ Լրագրային մի քրքակցության մեջ նշվում էր, որ բանվորներն անտանելի բշվառության մեջ են արագ կերպով աճող թանկության պատճառով[20]։ Նախազգալով, որ նոր պահանջներ են առաջադրվելու, Ալավերդու ձեռնարկությունների վարչությունն ապառնում էր փակել արտադրությունը[21]։ Չնայած դրան, 1917 թ. օգոստոսին բանվորները գործադուլ հայտարարեցին, պահանջելով աշխատավարձի բարձրացում, աշխատանքային օրվա կրճատում։ Բայց վարչությունը հրաժարվեց կատարել բանվորների արդարացի պահանջները[22]։ Բանվորական հուզումներն Ալավերդում շարունակվեցին մինչև 1917 թ. վերջը։

1917 թ. հունվարի սկզբներին գործադուլ արեցին Ղափանի լեռնագործները, պահանջելով ավելացնել աշխատավարձը և կրճատել աշխատանքային օրը։ Ծակային ձեռք առնված ոստիկանական միջոցառումները հնարավորություն չընձեռեցին նրանց հասնելու իրենց պահանջների իրագործմանը[23]։ Ղափանում նույնպես բանվորական հուզումները շարունակվեցին ամբողջ 1917 թ. ընթացքում։

1917 թ. մայիս-հունիս ամիսներին ութժամյա բանվորական օրվա սահմանման և աշխատավարձի բարձրացման պահանջներով հանդես եկան Երևանի Շուստովի կոնյակի և գինու գործարանի, էլեկտրական «Ամպեր» ընկերության, «Լույս» տպարանի, «Էկոնոմիա» սպառողական ընկերության բանվորները և ծառայողները։ Ութժամյա բանվորական օր սահմանվեց միայն հայտին կարգով, իսկ աշխատավարձի բարձրացման պահանջը մասամբ բավարարվեց։

Հուլիսին գործադուլ հայտարարեցին Ալեքսանդրապոլի առևտրական ձեռնարկությունների ծառայողները, պահանջելով ութժամյա բանվորական օր, առևտրական հիմնարկությունների տերերի կողմից առևտրի աշխատողների աննդի արժեքի վճարում դրամով, աշխատավարձի բարձրացում։ Այնուհետև գործադուլավորները պահանջ ներկայացրին՝ ծառայողին աշխատանքից ազատելու դեպքում որոշ ժամանակամիջոցի համար աշխատավարձ վճարելու մասին, հաշվի առնելով տվյալ ձեռնարկության մեջ նրա աշխատանքի տևողը։ Շնորհիվ գործադուլավորների համերաշխության, ծառայողների պահանջները բավարարվեցին։ Միաժամանակ գործադուլ արեցին նաև Ալեքսանդրապոլի տպարանների բանվորները, պահանջելով աշխատավարձի բարձրացում և դրա պահպանումը հիվանդության դեպքում, վճար արտաժամյա աշխատանքի համար։ Տպարանատերերի կողմից այդ պահանջները հիմնականում ընդունվեցին։

1917 թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին Երևանում գործադուլ արեցին բաղաքային ջրմուղի բանվորները և ծառայողները։ Նոյեմբեր ամսին գործադուլ հայտարարեցին կալվածատիրուհի Կ. Դեդովայի կողմից վարձակալված Շան-Գիրևի «Կիր» կալվածքի բանվորները և ծառայողները։ Փետրվարյան հեղափոխությունից հետո այստեղ կազմակերպված բանվորա-

20 Տե՛ս «Գալթար», 1917, 11 օգոստոսի, № 95։

21 Տե՛ս նույն տեղում։

22 Տե՛ս «Коммунист» (Ереван), 1957, 28 августа, № 202.

23 Տե՛ս Լ. Ղազարյանի հոդվածը «Հին բոլշևիկների հուշերը» ժողովածուում, գիրք 2, Երևան, 1961, էջ 599։

կան կոմիտեն պահանջեց վարձակալությունը բարձրացնել աշխատավարձը, հավելում տալ հիվանդության դեպքում, չազատել բանվորներին աշխատանքից առանց բանվորական կոմիտեի գիտության, աշխատանքից ազատվածներին տալ հատուցում, իջեցված գներով հացահատիկ վաճառել բանվորներին և ծառայողներին։ Բանվորների պահանջները բավարարվեցին[24]։ 1917 թ. գործադուլ արեցին նաև Կողբի ադահանքի բանվորները և պահանջեցին կարգավորել ադահանքերի պարենավորման գործը[25]։

Պատերազմը վատթարացրեց Հայաստանի աշխատավոր գյուղացիության առանց այն էլ ծանր դրությունը։ Փետրվարյան հեղափոխությունից հետո, բանվորական շարժման և հողի վերաբերյալ բոլշևիկյան լոզունգների անմիջական ազդեցության տակ այստեղ ծավալվեց գյուղացիական շարժումը։ Հաղազուրկ և սակավահող գյուղացիությունը հող էր պահանջում։ Բնորոշ է Նոր Բայազետի գավառի չորս գյուղերի՝ Շահրիզի (Գեղամավան), Ծաղկունքի, Դգմաշենի և Ջուղի (Վարսեր) լիազորների դիմումն անդրկովկասյան գյուղատնտեսական համագումարին։ Նկարագրելով այդ գյուղերի բնակիչների ծանր վիճակը, լիազորները միաժամանակ նշում էին, որ դրա պատճառը սակավահողությունն է[26]։ Վարդաբլուր գյուղից ուղարկված մի բողոքագրության մեջ ասված էր, որ ազատություն ասելով գյուղացին հասկանում է հողի հատկացում իրեն. «Մենք հող և միայն հող ուզենք, ասում է գյուղացին և դիտում շուրջը, տեսնելու, թե որտեղ կարելի է մի կտոր ազատ հող ճարել, որպեսզի վարի ու ցանի»[27]։ Ուզունլար գյուղից հաղորդում էին, թե գյուղացիներն հարցնում են. «Ե՞րբ հողը կբաժանվի գյուղացիների մեջ»[28]։ 1917 թ. ապրիլի սկզբին Թիֆլիսի «Կավկազսկոյե սլովո» թերթի թղթակիցը գրում էր, որ Երևանի նահանգում ծավալվում է գյուղացիական շարժում, տագնապած հոգատարերն ավելի ու ավելի հաճախ են դիմում իշխանություններին, նրանցից օգնություն խնդրելով հողը բռնագրավողների դեմ[29]։

1917 թ. մայիսին դաշնակցականները գումարեցին Երևանի նահանգի և Կարսի մարզի գյուղացիական պատգամավորների համագումար։ Քանի որ գյուղացիությունը գեռևս հավատ էր ընծայում դաշնակցականների և էսեռների կեղծ խոստումներին, ուստի համագումարում պատգամավորների մեծամասնությունը գնում էր նրանց հետևից։ Համագումարը բննության առավ ժամանակավոր կառավարության նկատմամբ ունենալիք վերաբերմունքը և հողային հարցը։ Առաջին հարցի վերաբերյալ համագումարը որոշում ընդունեց օժանդակել ժամանակավոր կառավարության, իսկ երկրորդ հարցի մասին ընդունված բանաձևում ասվում էր, որ հողը, անտառները, ջուրը պետք է անվճար հատկացվեն գյուղական համայնքներին և ինքնավար միավորներին։ Սակայն այդ խնդիրները պետք է լուծվեին միայն Սահմանադիր ժողովի կողմից։ Այդ իսկ պատճառով համագումարը որոշեց արգելել գյուղացիներին գրավելու մասնատիրական հողերը։ Մինչև հողային հարցի լուծումը համագումարը գտնում էր, որ պետք է հարց հարուցել համապետական իշխանու-

---

24 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 119, ց. 1, գ. 15։ «Страж свободы», 1917, 22 сентября, № 524.
25 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 541, ց. 1, գ. 45, թ. 53։
26 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 24, ց. 2, գ. 14, թ. 35—36։
27 «Պայքար», 1917, 17 մայիսի № 27։
28 «Պայքար», 1917, 23 սեպտեմբերի, № 128։
29 Տե՛ս «Кавказское слово», 1917, 15 апреля, № 83.

բյուններ առջև՝ պետական և կապալավարձային հողամասերը վարձակալության տալու ոչ թե մասնավոր անձանց, այլ գյուղական համայնքներին, խնդրել ժամանակավոր կառավարությանը և ՕԶԱԿՈՄ-ին, որ դադարեցնեն 1912 թ. դեկտեմբերի 20-ի օրենքով սահմանված հողերի նոգնման վճարի գանձումը[30]։ Համագումարն ընտրեց գյուղացիական դեպուտատների նահանգական սովետ։

Երևանի սոցիալ-դեմոկրատական միացյալ կազմակերպության ներկայացուցիչ բոլշևիկ Պ. Մակինցյանը կազմակերպության հանձնարարությամբ ելույթ ունեցավ Երևանի նահանգի գյուղացիական դեպուտատների համագումարում՝ դաշնակցականների ագրարային քաղաքականության քննադատությամբ և հողի անհապաղ բռնագրավման պահանջով[31]։

Թեև համագումարը դեմ էր արտահայտվել մասնատիրական հողերի բռնագրավմանը, սակայն աշխատավոր գյուղացիությունը զանց առավ այդ որոշումը և սկսեց տեղ-տեղ իր ցանկությամբ լուծել հողային հարցը։ Անհանգստացած Անդրկովկասում և Հայաստանում ծավալվող ագրարային շարժումից, ՕԶԱԿՈՄ-ը 1917 թ. ամռանը դիմեց գյուղացիներին, հորդորելով նրանց չգրավել կալվածատիրական հողերը, այլ սպասել Սահմանադիր ժողովի կողմից հողային հարցի լուծմանը։ Դիմումն ավարտվում էր գյուղացիների հասցեին ուղղված սպառնալիքներով։

1917 թ. ապրիլի 22-ին Երևանի նահանգական գործադիր կոմիտեն ընդունեց ագրարային հարցի վերաբերյալ անորոշ մի բանաձև, որպեսզի հանգըստացնի գյուղացիներին։ Բանաձևում ասվում էր, որ «Անարխիստական ելույթները կանխելու և նոր կարգը պաշտպանելու նպատակով գործադիր կոմիտեներն ակտիվորեն միջամտելու են ջրային և ագրարային վեճերի քննարկմանը, պահպանելով դեմոկրատական զանգվածների շահերը»[32]։ Սակայն ոչ նահանգական գործադիր կոմիտեն, ոչ տեղական գործադիր կոմիտեները և ոչ մի վեճի ժամանակ հանդես չեկան հօգուտ գյուղացիների, այլ անփոփոխ պաշտպանում էին հողատերերի և կուլակների շահերը։ Երևանի նահանգական կոմիսարիատի օրգանը գրում էր, որ «Երևանի նահանգի գործադիր կոմիտեն ագրարային հարցում իր ձեռնարկած միջոցառումներով ընդհանուր առմամբ կանգնած էր ժամանակավոր կառավարության տեսակետի վրա»[33]։

Դեռևս 1917 թ. մարտի վերջերին Երևանի գավառի իշխանությունները տեղեկացնում էին նահանգական կոմիսարիատին այն մասին, որ «Գավառի որոշ գյուղերում հայտնվել են ագիտատորներ, որոնք հուզում են բնակչությանը։ Այդ անձնավորությունները հորդորում են բնակչությանը, որպեսզի նա. չվճարի պետական հարկերը, հարկաբաշխում չկատարի և չհանձնի դատական իրերին և այլն, որը վնասակար հետևանք կարող է ունենալ պետական կարգի վրա և սրել ագրարային ու այլ հարցեր»[34]։

Գյուղացիական ակտիվ ելույթներ տեղի ունեցան Երևանի նահանգի Նոր

---

30 Տե՛ս «Кавказское слово», 1917, 8 и 14 июня, № 125, 130.

31 Տե՛ս նույն տեղում։

32 ՀՍՍՀ ԿԳԳԱ, ֆ. 103, ց. 1, գ. 74, թ. 71։

33 «Известия Эриванского губернского комиссариата», 1917, 16 октября, № 55.

34 ՀՍՍՀ ԿԳԳԱ, ֆ. 103, ց. 1, գ. 70, թ. 12։

Բայազետի գավառում՝ Արզաքենդ-Դալլար կալվածքի տեր Մատուրովները 1917 թ. հունիսի սկզբներին դիմեցին Երևանի նահանգի գործադիր կոմիտեին և ՕԶԱԿՈՄ-ին, բողոքելով Արզաքենդի գյուղացիների անօրինական գործողություններից։ Հողատերերն իրենց հեռագրում հաղորդում էին, որ Արզաքենդի բնակիչները սխալ ըմբռնելով պետական հեղաշրջումը (Փետրվարյան հեղափոխությունը—խմբ.) անօրինաբար պահանջում են, որ լիովին իրենց սեռամագրության տակ դրվի Արզաքենդ-Դալլար կալվածքը[35]։ Նահանգական գործադիր կոմիտեն գյուղ ուղարկեց իր ներկայացուցիչներին, բայց գյուղացիները չդադարեցրին պայքարը։ Օգոստոսի 13-ին կալվածքի կառավարիչ Ռ. Փարվանյանցը դիմեց ՕԶԱԿՈՄ-ին, գանգատվելով Արզաքենդի գյուղացիների դեմ ևս շարունակվող ինքնագլուխ գործողություններից։ Կառավարիչը զինված ուժեր էր պահանջում կալվածքը պաշտպանելու համար։

Օգոստոսի 19-ին Ախտալայի շրջանային գործադիր կոմիտեի նախագահը հեռագրում էր նահանգական կոմիսարիատ այն մասին, որ արզաքենդցիները բշում տանում են անասունները, ոչնչացնում են անտառը։ «Խնդրում եմ ուժեղ ուղարկել,— գրում էր նա,— անպայման կազակների, այլապես անարխիան կտարածվի ողջ գավառում»[36]։ Երևանի նահանգական կոմիսարիատն առաջարկեց Երևանում կանգնած բրիգադի հրամանատար փոխգնդապետ Վոլնիցկուն, կալվածքը պաշտպանելու համար չոկատ ուղարկել Արզաքենդ։ Սակայն Վոլնիցկին հրաժարվեց կատարել այդ որոշումը, քանի որ անհույս և վտանգավոր էր համարում զինվորական շինել հազած գյուղացիներին ուղարկել իրենց եղբայրների դեմ։

Գյուղացիական ելույթներ էին տեղի ունենում նաև Երևանի գավառում։ 1917 թ. օգոստոսի վերջերին «Արագդայան» կալվածքի կառավարիչը դիմեց նահանգական գործադիր կոմիտեին՝ բողոքելով գյուղացի վարձակալների ինքնագլուխ գործողություններից։ Նա գրում էր, որ Փետրվարյան հեղափոխությունից հետո գյուղացի վարձակալներն սկսել են գրավել կալվածքի հողերը և խոտհարքները։ Հարևան Դավալու (Արարատ) գյուղի գյուղացիներն սկսել էին կամայականորեն վարել հողերը և հավաքել խոտը։ Կառավարիչը խնդրում էր նահանգական գործադիր կոմիտեին՝ պաշտպանել կալվածատերերի շահերը[37]։

Գյուղացիական ելույթներ էին տեղի ունենում նաև Զանգեզուրի գավառում և Հայաստանի մյուս շրջաններում, մասնավորապես Լոռիում։ Այստեղ գյուղացիները վճռեցին ընդհանրապես ոչինչ չվճարել կալվածատերերին և ձեռնամուխ եղան կապալային հարաբերությունների բոլոր լիկվիդացմանը։ Նրանք բռնագրավում էին նաև անասնապահությամբ զբաղվող ձեռնարկատերերի կալվածքները։ 1917 թ. օգոստոսի սկզբներին ՕԶԱԿՈՄ-ը հեռագրով նախազգուշացնում էր Լոռու կոմիսարին. «Անհապաղ եռանդուն միջոցներ ձեռք առեք ձեր շրջանում գտնվող պալրի և յուղի գործարանները, նրանց պատկանող արտադրությունները և խոտհարքներն ամեն տեսակի ինքնակամ

---

35 Տե՛ս «Великая Октябрьская социалистическая революция и победа советской власти в Армении», (Сборник документов и материалов), Ереван, 1957, стр. 30։

36 ՀՍՍՀ ԿՊՊԱ ֆ. 103, ց. 1, գ. 73 թ. 23—24։

37 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 103, ց. 1, գ. 90, թ. 102։

գործադուլյուններից, ապօրինի արածեցումներից, խոտի հրդեհումներից պաշտպանելու համար»[38]։

Սոցիալիստական հեղափոխության նախապատրաստման ժամանակաշրջանում բոլշևիկյան կուսակցությունը մեծ ուշադրություն էր դարձնում պրոլետարիատի և չքավոր գյուղացիության դաշինքի ամրապնդմանը։ Բոլշևիկները բացատրում էին գյուղացիական զանգվածներին, որ նրանք իրենց պահանջների լուծմանը կհասնեն կալվածատերերի և բուրժուազիայի դեմ մղած անհաշտ պայքարով, սերտորեն դաշնակցած պրոլետարիատի հետ և ընթանալով սոցիալիստական հեղափոխության ուղիով։

Հայաստանի աշխատավորության մեջ լենինյան գաղափարների տարածման գործում մեծ դեր խաղաց բոլշևիկյան մամուլը։ Հայաստանում տարածվում էին «Պրավդա», ՌՍԴԲ(բ)Կ երկրային ու Թիֆլիսի կոմիտեների օրգան «Կավկազսկի ռաբոչի» և Բաքվում լույս տեսնող բոլշևիկյան «Սոցիալ-դեմոկրատ» թերթերը։ Վերջինում բազմաթիվ ղեկավար բնույթի հոդվածներ էին գրված Ստ. Շահումյանի և Ա. Մյասնիկյանի կողմից։ 1917 թ. ամռանը Թիֆլիսում հայերեն սկսեցին լույս տեսնել ՌՍԴԲ(բ)Կ Թիֆլիսի կոմիտեի օրգան «Բանվորի կռիվ», իսկ Ալեքսանդրապոլում՝ հայերեն «Նոր կյանք» և ռուսերեն «Պրավդա ժիզնի» թերթերը։

Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Հայաստանում բոլշևիկները իրենց շուրջն էին համախմբում բանվորներին, գյուղացիներին, զինվորներին, պայքարում էին սոցիալիստական հեղափոխության թաղաքական բանակ ստեղծելու համար։ Նրանք մերկացնում էին բուրժուանացիոնալիստական կուսակցությունների և համաձայնողականների հակաժողովրդական քաղաքականությունը, պայքարում աշխատավոր զանգվածներին դաշնակցականների և համաձայնողական կուսակցությունների ազդեցությունից ազատագրելու համար։

* * *

Երկիշխանությունը երկրում երկար շարունակվել չէր կարող։ Բուրժուազիան ձգտում էր մենիշխանության, բայց պրոլետարիատն էլ պահանջում էր սովետների մենիշխանություն։ Պետրոգրադի բանվորների և կայազորի զինվորների 1917 թ. հուլիսի 3—4-ի ցույցը վերջին փորձն էր դրդելու մենշևիկների և էսեռների կողմից ղեկավարվող սովետներին իրենց ձեռքը վերցնելու իշխանությունը։

Հուլիսյան ցույցի ջախջախումից հետո երկիշխանությունը վերջացավ, ավարտվեց նաև հեղափոխության խաղաղ շրջանը։ Եթե մինչև հուլիսյան դեպքերը ժամանակավոր կառավարությունն իշխանությունն իր ձեռքում էր պահում մասսաներին խաբելու միջոցով, ապա դրանից հետո նա անցավ բացահայտ բռնության։ Բուրժուական մամուլը զրպարտանքի կատաղի արշավանք ծավալեց բոլշևիկների դեմ։ Ժամանակավոր կառավարությունն սկսեց հետապնդել բոլշևիկներին և փակել բոլշևիկյան թերթերը։ Կուսակցության պահանջով Վ. Ի. Լենինն անցավ ընդհատակ։ Հուլիսյան դեպքերից հետո մենշևիկներն ու էսեռները բացեիբաց անցան բուրժուազիայի լագերը։ Նրանց

---

38 «Великая Октябрьская социалистическая революция...», стр. 33.

կողմից ղեկավարվող սովետները վերածվեցին ժամանակավոր կառավարության սոսկական կցորդի։

Ստեղծված քաղաքական իրադրության պայմաններում բոլշևիկյան կուսակցությունն անցավ Վ. Ի. Լենինի կողմից մշակված տակտիկական նոր ուղեգծի։ Կուսակցությունը ժամանակավորապես օրակարգից հանեց «Ամբողջ իշխանությունը սովետներին» լոզունգը, որը համապատասխանում էր հեղափոխության խաղաղ զարգացման ժամանակաշրջանին։ Բայց այդ չէր նշանակում հրաժարումն այդ կարգախոսի իշխանության։ Այդ լոզունգի հանումը կապված էր մենշևիկների և էսեռների կողմից ղեկավարվող սովետների դավաճանության հետ։ Մնալով սովետներում, բոլշևիկները ձգտում էին օգտագործել դրանք համաձայնողականների դավաճանական քաղաքականությունը մերկացնելու համար։ Նրանք պահանջում էին սովետների վերընտրություններ անցկացնել և հրավիրել սովետների Համառուսաստանյան երկրորդ համագումար։

Հուլիսի 26-ին Պետրոգրադում, կիսալեգալ պայմաններում, իր աշխատանքն սկսեց ՌՍԴԲ(բ)Կ VI համագումարը, որն ընդհատակից ղեկավարում էր Վ. Ի. Լենինը։ Համագումարը նպատակադրեց կուսակցությանը դինված ապստամբության, սոցիալիստական հեղափոխության։

Հուլիսյան դեպքերն արձագանք գտան նաև Հայաստանում։ Ալեքսանդրապոլի կայազորի պահանջով այստեղ հուլիսի 9-ին բանվորների և զինվորների մասնակցությամբ միտինգ կայացավ, որը ղեկավարում էին բոլշևիկները։ Միտինգում ելույթ ունեցան բոլշևիկ-հեռատորներ Արվելյանն, Բ. Ղարիբջանյանը և ուրիշներ[39]։ Միտինգում ընդունված բանաձևում ասվում էր, որ հուլիսյան դեպքերը հետևանք են ժամանակավոր կառավարության հակաժողովրդական քաղաքականության, որն անցկացվում է ինչպես ներքին կյանքում, այնպես էլ արտաքին քաղաքականության բնագավառում։ Միտինգը որոշեց իր ընդունած բանաձևն ուղարկել Համառուսաստանյան Կենտգործկոմին, ինչպես և «Պրավդա»-ն և «Կավկազսկի ռաբոչի» թերթերի խմբագրություններին։ Սակայն Ալեքսանդրապոլի սովետի համաձայնողական ղեկավարությունը մերժեց այդ առաջարկությունը, պատճառաբանելով, որ իբր թե բանաձևը չի արտահայտում ողջ կայազորի կարծիքը[40]։ Չբավարարվելով դրանով, գործադիր կոմիտեի պաշտպանողականները հայտարարեցին, որ հետագայում միտինգներն անպայման պետք է հրավիրվեն միմիայն գործադիր կոմիտեի գիտությամբ[41]։

Հուլիսյան ցույցի գնդակոծումից հետո բուրժուազիան փորձեց վերջնականապես ջախջախել հեղափոխության ուժերը և Ռուսաստանում ռազմական դիկտատուրա հաստատել։ Օգոստոսի վերջին պայթեց կոռնիլովյան հակահեղափոխական խռովությունը։ Ժամանակավոր կառավարության գերագույն գլխավոր հրամանատար գեներալ Կոռնիլովը պատրաստվում էր հաշվհարդար տեսնել բոլշևիկյան կուսակցության, սովետների, բանակի զինվորական կոմիտեների ու մյուս հեղափոխական մարմինների հետ։ Սակայն ժողովրդական մասսաները բոլշևիկների ղեկավարությամբ ոտքի ելան ու ջախջախեցին հակահեղափոխական այդ խռովությունը։

---

39 Տե՛ս «Кавказский рабочий», 1917, 19 июля, № 103.

40 Տե՛ս «Рабочий и солдат», 1917, 14 июля, № 28.

41 Տե՛ս նույն տեղում։

Կոռնիլովն իր կողմնակիցներն ունեցավ նաև Անդրկովկասում, մասնավորապես Կովկասյան բանակում[42]։ Հեղափոխական զինվորների և աշխատավորների պնդմամբ Ալեքսանդրապոլի սովետը կազմեց տեղական կայազորում Կոռնիլովի կողմնակիցների հնարավոր ելույթի դեմ պայքարող արտակարգ հանձնաժողով, ուր մտան քաղաքական կուսակցությունների, այդ թվում բոլշևիկների ներկայացուցիչները։ Սեպտեմբերի 7-ին սովետը լսեց իր նախագահ Ն. Աարիբեկովի զեկուցումը հանձնաժողովի աշխատանքների մասին և արձանագրեց, որ հանձնաժողովը «անհրաժեշտ միջոցառումներ է ձեռք առել, որոնք բացառում են հակահեղափոխական ելույթների հնարավորությունը»[43]։

Երևանում զինվորական մասսանների պահանջով զինվորական դեպուտատների սովետի համաձայնողականներն ստիպված եղան նույնպես վերաբերմունք ցույց տալ կոռնիլովյան խռովության նկատմամբ։ Սովետը կազմակերպեց հակահեղափոխության դեմ պայքարի շտաբ և իր կոմիսարները նշանակեց Երևան և Ուլուխանլու կայարաններում[44]։ Գեներալ Կոռնիլովի հակահեղափոխական խռովությունն արագացրեց բանակի, այդ թվում նաև Կովկասյան բանակի զինվորների հեղափոխականացումը։

Կոռնիլովյան խռովության ճնշումից հետո սովետները Ռուսաստանում վերակենդանացան, ազատվեցին համաձայնողական քաղաքականության գերությունից։ Հակահեղափոխության հետ ունեցած կենաց ու մահու գոտեմարտից նրանք դուրս եկան շատ ավելի ամրապնդված։ 1917 թ. սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին բոլշևիկների կողմն անցավ երկրի սովետների մեծ մասը։ Հաշվի առնելով ստեղծված պայմանները, բոլշևիկյան կուսակցությունը նորից առաջ քաշեց «Ամբողջ իշխանությունը սովետներին» լոզունգը։ Սակայն սովետների բոլշևիկացման պայմաններում դա այլևս հեղափոխության խաղաղ ժամանակաշրջանի լոզունգ չէր։ Այժմ այն արդեն նշանակում էր զինված ճանապարհով ժամանակավոր կառավարության տապալումը և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումը։

3. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

Կորցնելով մեծամասնությունը սովետներում, էսեռներն ու մենշևիկները խախտեցին իրենց պարտավորությունը սեպտեմբերին սովետների համառուսաստանյան II համագումար հրավիրելու վերաբերյալ։ Համոզված լինելով, որ համագումարում փոքրամասնություն կկազմեն, համաձայնողականները փորձում էին ձախողել համագումարի հրավիրումը և «ապացուցում» էին, որ շատ շուտով կգումարվի Սահմանադիր ժողովը, որը և կլուծի բոլոր ցավոտ հարցերը։ Բոլշևիկներն օգտագործեցին էսեռամենշևիկյան կամպանիան համագումարի հրավիրման դեմ, որ մերկացնեն նրանց որպես սովետների հակառակորդներին։

Սոցիալիստական հեղափոխության համար մղվող պայքարում Կովկասի բոլշևիկների ընդհանուր տակտիկայի մշակման համար կարևոր նշանակու-

---

42 Տե՛ս «Кавказский рабочий», 1917, 5 сентября, № 142.

43 ՎՍՍՀ ԿԳՊԱ, ֆ. 1, ց. 2, գ. 128, թ. 34։

44 Տե՛ս նույն տեղում, գ. 117, թ. 53։

Քյուն ունեցավ նրանց առաջին համագումարը, որը բացվեց Թիֆլիսում 1917 թ. հոկտեմբերի 2-ին։ Համագումարը քննարկեց ընթացիկ մոմենտի, ազգային, ագրարային և այլ հարցեր ու ընդունեց դրանց վերաբերյալ բանաձև։ Օրակարգի հիմնական հարցը Ստ. Շահումյանի զեկուցումն էր ընթացիկ մոմենտի մասին։ Զեկուցման շուրջն ընդունված բանաձևում ասված էր, որ երկրամասի աշխատավորները, կանգ չառնելով դժվարությունների և զոհողությունների առջև, պետք է համարձակորեն ընթանան դեպի իշխանության նվաճումը։

Հանդես գալով ազգային հարցի մասին զեկուցման շուրջ ծավալված մտքերի փոխանակությունում, Ստ. Շահումյանը գտավ, որ Անդրկովկասում պետք է ստեղծել երեք ազգային ավտոնոմ մարզ։ Ստ. Շահումյանի կողմից առաջարկած Անդրկովկասի տարածքային բաժանումը հիմնականում ելնում էր երկրամասի տերիտորիալ-պատմական և ազգագրական սկզբունքից։

Համագումարը լսեց հաղորդումներ տեղերում տարվող կուսակցական աշխատանքի մասին։ Պատգամավոր Ա. Միկոյանը հաղորդեց, որ Ալավերդու շրջանում շնորհիվ տարվող աշխատանքի, հանքագործները և շրջանի լքված գյուղացիությունն անցնում են բոլշևիկների կողմը։ Համագումարը ողջույն հղեց կուսակցության առաջնորդ Վ. Ի. Լենինին և ընտրեց ՌՍԴԲ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեն։ Կովկասի բոլշևիկյան կազմակերպությունները համագումարից հետո մեծ աշխատանք ծավալեցին երկրամասի բանվորներին և աշխատավոր գյուղացիությանը համախմբելու սովետական իշխանության համար մղվող պայքարում։

Նախապատրաստվելով սովետների համառուսաստանյան II համագումարին, բոլշևիկյան կուսակցության Կենտկոմը տեղական կուսակցական կազմակերպություններին հանձնարարեց անցկացնել սովետների վերընտրություններ։

1917 թ. հոկտեմբերի սկզբներին, ինչպես այլ վայրերում, այնպես էլ Հայաստանում բոլշևիկների աշխատանքներն ընթանում էին Սովետների համառուսաստանյան համագումար հրավիրելու և տեղական սովետները վերընտրելու ուղղությամբ։

Կովկասում առաջինը Բաքվում կատարվեց սովետների բոլշևիկացում ապա՝ Գրոզնիում, Ալեքսանդրապոլում և աստիճանաբար այլ վայրերում։

Ալեքսանդրապոլի բոլշևիկների և սովետում նրանց ֆրակցիայի աշխատանքի ուժեղացման համար մեծ նշանակություն ունեցավ Ստ. Շահումյանի ժամանումը այնտեղ։ Հոկտեմբերի 8-ին և 9-ին Շահումյանը մի շարք ելույթներ ունեցավ աշխատավորության և զինվորների առջև, որտեղ մերկացրեց համաձայնողական կուսակցությունների հակաժողովրդական քաղաքականությունը և կոչ արեց աշխատավորներին ու զինվորներին համախմբվել բոլշևիկյան կուսակցության շուրջը։

Ալեքսանդրապոլի սովետի նիստի մասնակիցները ձայների ճնշող մեծամասնությամբ արտահայտվում են սովետների համառուսաստանյան երկրորդ համագումարի գումարման օգտին, որի մասին մանրամասն ելույթ է ունենում Բ. Ղարիբջանյանը[45]։

---

45 Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 1960, էջ 96—97։

Ալեքսանդրապոլի սովետը սովետների համառուսաստանյան երկրորդ համագումարի աշխատանքներին մասնակցելու համար Պետրոգրադ է գործուղում Ալեքսանդրապոլի բոլշևիկյան բյուրոյի անդամ զինվոր Կորոստիլենկոյին[46]։

Ղեկավարվելով Կովկասյան երկրային կոմիտեի ցուցումներով, Ալեքսանդրապոլի բոլշևիկներն իրենց առջև խնդիր դրեցին վերընտրել տեղական սովետը և մասնակցել սովետների համառուսաստանյան II համագումարին։ Սովետների գործադիր կոմիտեի հոկտեմբերի 14-ի նիստում բոլշևիկ դեպուտատներն առաջարկ մտցրին նրա վերընտրության մասին։ Այդ առաջարկությունը մերժվեց։ Հոկտեմբերի 15-ին Ալեքսանդրապոլի սովետի ընդլայնված նիստում Պ. Արվելաձեն պահանջում է վերընտրություն և հակառակ համաձայնողական կուսակցությունների մեքենայությունների, անցնում է բոլշևիկների առաջարկը։ Սովետի և նրա գործադիր կոմիտեի ղեկավարությունը ժամանակավորապես հանձնարարվեց ավագների խորհրդին, որի նախագահն էր բոլշևիկների կողմից ընտրված Պ. Արվելաձեն[47]։

Անդրկովկասյան աշխատավորների համախմբման համար մեծ նշանակություն ուներ ազգային հարցը։ Հեղափոխությունից անմիջապես հետո երկրամասի շահագործող վերնախավերը ձգտում էին իրենց դասակարգային շահերին տալ «համազգային» բնույթ։ Նրանք սկսեցին հանդես գալ «իրենց» ժողովուրդների անունից և կազմակերպել, այսպես կոչված, ազգային խորհուրդներ, որոնք իբր թե պաշտպանելու էին ազգի բոլոր դասակարգերի շահերը և, հետևաբար, ունենալու էին «վերադասակարգային» բնույթ։

Անդրկովկասում առաջինն ազգային խորհուրդ կազմակերպեցին Ադրբեջանի կալվածատերերը և կապիտալիստները։ 1917 թ. ապրիլին Բաքվում կայացավ Կովկասի մահմեդականների համագումարը, որը ընտրեց երկու բյուրո՝ մեկը Անդրկովկասի, իսկ մյուսը՝ Հյուսիսային Կովկասի մահմեդականների գործերը վարելու համար։

Հայկական ազգային համախորհրդակցությունը բացվեց սեպտեմբերի 29-ին՝ Թիֆլիսում, որը և փաստորեն համագումարի դեր խաղաց։ Համախորհրդակցությանը իրենց ներկայացուցիչները պետք է ուղարկեին հայ իրականության մեջ գործող կուսակցությունները, Ազգային բյուրոն, արևմտահայերը, կուլտուր-կրթական հիմնարկները, արդյունաբերողները, վաճառականները, բոլոր կամավորական խմբերի հրամանատարները և այլն[48]։ Համախորհրդակցությանը հրավիրված էին և հայ բոլշևիկները, սակայն նրանք բոյկոտի ենթարկեցին այն։

Խոսելով ընթացիկ քաղաքական մոմենտի մասին, համախորհրդակցությունը որոշեց պաշտպանել ժամանակավոր կառավարությանը[49]։ Կադետ Ք. Վերմիշյանը իր ելույթում բացահայտեց համախորհրդակցության գլխավոր խնդիրը՝ պայքար մոտեցող սոցիալիստական հեղափոխության դեմ։ Նա հայտարարեց, որ համախորհրդակցությունը գտնվում է բոլշևիկների հակառակորդների բանակում և որ «Այդ հանդամանքը պիտի լինի այն պատվան-

46 Տե՛ս Գ. Բ. Ղարիբջանյան. Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում, Երևան, 1955, էջ 134—136։

47 Տե՛ս «Рабочий и солдат», 1917, 19 октября, № 52.

48 Տե՛ս Մշակ», 1917, 16 սեպտեմբերի, № 196։

49 Տե՛ս «Մշակ», 1917, 4 հոկտեմբերի, № 210։

դանը, որի վրա մենք բոլորս միասնում ենք, գիտակցելով, որ ներկա պայմաններում բոլորս մի ճակատ կազմելով պետք է կռվենք բոլշևիկների դեմ»[50]։

Քննարկելով ազգային բյուրոյի զեկուցումը, համախորհրդակցության մի շարք պատգամավորներ քննադատության ենթարկեցին նրա գործունեությունը։ Զեկուցման շուրջ ելույթ ունեցողները նշում էին, որ ազգային բյուրոն փաստորեն գործից էր դարձել դաշնակցականների ձեռքում։

Համախորհրդակցությունում որոշվեց, որ հայ ժողովրդի ուժերը պետք է գործադրվեն Կովկասյան ռազմաճակատի պաշտպանության համար[51]։ Այս որոշման հիման վրա սկսվեցին կազմակերպվել ազգային զորամասեր։

Անդրադառնալով Ռուսաստանի ապագա պետական կառուցվածքին, համախորհրդակցությունը գտնում էր, որ այն պետք է լիներ ֆեդերատիվ հանրապետություն։ Անդրկովկասը նոր վարչական բաժանման էր ենթարկվելու և մտցվելու էր դեմստվո։ Այնուհետև երկրամասում կազմակերպվելու էին երեք ազգային (հայկական, վրացական, ադրբեջանական) ինքնավար կենտրոններ, որոնք պետք է կապվեին Ռուսաստանի հետ։

Համախորհրդակցությունը ընտրեց Ազգային ժողով՝ կազմված քաղաքական կուսակցությունների, խոշոր քաղաքների ազգաբնակչության, արևմտահայերի, ինչպես նաև զանազան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներից և Ազգային խորհուրդ՝ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներից։ Ազգային ժողովը քննելու էր հայ կյանքի առաջադրած խնդիրները և ունենալու էր օրենսդրական իրավունքներ։ Նրա գործադիր մարմինը Ազգային խորհուրդն էր, որն անմիջապես զբաղվելու էր ընթացիկ աշխատանքով։ Այսպիսով, փաստորեն գործնական ամբողջ աշխատանքը կենտրոնանալու էր Ազգային խորհրդում, որի նախագահ ընտրվեց դաշնակցական Ա. Ահարոնյանը։

Ադրբեջանական, հայկական, վրացական Ազգային խորհուրդները անդրկովկասյան ապագա բուրժուական կառավարությունների սաղմերը հանդիսացան։

Անդրկովկասի բոլշևիկները երկրամասի աշխատավորներին բացատրում էին ազգային խորհուրդների կազմակերպման իմաստը և կոչ էին անում առանց ազգային խտրության համախմբվել մի եղբայրական, ինտերնացիոնալ բանակում և ուսս հեղափոխական պրոլետարիատի հետ միասին գրոհի գնալ կապիտալիզմի դեմ։

Կոռնիլովյան խռովության ջախջախումից հետո հեղափոխության զարգացման ընթացքի մեջ Ռուսաստանում խոշոր բեկում կատարվեց։ Ժողովրդական լայն զանգվածների քաղաքական ակտիվությունն առավել ևս ուժեղացավ։

Ժամանակավոր կառավարությունը համաձայնողականների օգնությամբ զանազան մեքենայություններով էր դիմում, որպեսզի իշխանությունը պահի իր ձեռքում։ Սեպտեմբերին Ռուսաստանը հռչակվեց հանրապետություն։ Միաժամանակ սովետների էսեռա-մենշևիկյան Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեն այդ նույն ամսին հրավիրեց լայն խորհրդակցություն

50 «Մշակ», 1917, 7 հոկտեմբերի, № 213։
51 «Մշակ», 1917, 11 հոկտեմբերի, № 21։

իրը թե իշխանությունը դեմոկրատական հիմունքներով վերակառուցելու համար։ Իրականում համաձայնողականները փորձում էին հեռացնել մասսաներին արագ կերպով հասունացող սոցիալիստական հեղափոխությունից, շրջել երկիրը դեպի բուրժուական պառլամենտարիզմի ուղին։ Խորհրդակցությունն իր կողմից առանձնացրեց հանրապետության ժամանակավոր խորհուրդ (նախապառլամենտ)։ Բոլշևիկները որոշեցին բոյկոտի ենթարկել այն և պահանջեցին անհապաղ հրավիրել սովետների II համառուսաստանյան համագումարը։

Հեղափոխությունը ճնշելու համար ժամանակավոր կառավարությունը և համաձայնողականները պատրաստվում էին հեղափոխական Պետրոգրադը հանձնել գերմանացիներին։ Բանակի հակահեղափոխական հրամանատարությունը օգոստոսի 21-ին Ռիգան հանձնեց գերմանացիներին։ Երկիրը համազգային ճգնաժամ էր ապրում։ Միայն սոցիալիստական հեղափոխությունը կարող էր Ռուսաստանը հանել փակուղուց և փրկել այն օտարերկրյա իմպերիալիստների կիսագաղութ դառնալու սպառնալիքից։

1917 թ. աշնանը Վ. Ի. Լենինը գրեց իր ծրագրային աշխատությունները՝ «Սպառնացող աղետը և ինչպես պայքարել նրա դեմ», «Հեղափոխության խրնդիրները», «Ճգնաժամը հասունացել է», «Կպահե՞ն արդյոք բոլշևիկները պետական իշխանությունը», որոնց մեջ ուղենշում էր պրոլետարիատի դիկտատուրայի հիմնումը և անցումը սոցիալիստական վերափոխումների։ Օգոստոս-սեպտեմբեր ամիսներին Վ. Ի. Լենինը գրեց իր «Պետություն և հեղափոխություն» նշանավոր աշխատությունը, որտեղ զարգացրեց պետության մասին մարքսիստական ուսմունքը։

Երկրի ներքին և միջազգային դրության գիտական վերլուծման հիման վրա Վ. Ի. Լենինը 1917 թ. սեպտեմբերի կեսերին նպատակադրեց բոլշևիկներին դեպի զինված ապստամբություն։ Սեպտեմբերի 12—14-ին Լենինը գրեց «Բոլշևիկները պետք է վերցնեն իշխանությունը», «Մարքսիզմը և ապստամբություն» իր պատմական նամակները, ուղղված ՌՍԴԲ(բ)Կ Կենտրոնական կոմիտեին, Պետրոգրադի և Մոսկվայի կոմիտեներին։ Դրանցում Լենինը նշում էր, որ հաղթական զինված ապստամբության բոլոր օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանները հասունացել են, որ բոլշևիկների կողմն է հեղափոխության ավանգարդի՝ բանվոր դասակարգի մեծամասնությունը, ինչպես և ժողովրդի մեծամասնությունը։ Հոկտեմբերի 10-ին Լենինի ղեկավարությամբ կայացած բոլշևիկների Կենտրոնական կոմիտեի նիստը քննարկեց զինված ապստամբության հարցը և ընդունեց Լենինի առաջարկած բանաձևը ապստամբության հասունանալու և անխուսափելի դառնալու մասին։ Լենինյան այդ ծրագիրն արժանացավ ողջ կուսակցության հավանությանը։

Զինված ապստամբությունը նախապատրաստելու համար կուսակցությունը Պետրոգրադի սովետին կից ստեղծվեց ռազմահեղափոխական կոմիտե, որը հեղափոխության ուժերի համախմբման լուրջ շտաբն էր։ Նրա կազմի մեջ մտավ Կենտրոնական կոմիտեի կողմից ընտրված Ռազմահեղափոխական կենտրոնը, որպես ապստամբության ղեկավար կորիզ։

Վ. Ի. Լենինի անմիջական ղեկավարությամբ 1917 թ. հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7-ին ն. ս.) հաղթանակեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, որը նոր էջ բացեց մարդկային հասարակության պատմության մեջ և սոցիալիզմի կառուցման հիմքը դրեց։

ԲԱԺԻՆ Գ



ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ 1870—1917 ԹԹ.

XIX դարի վերջին երեսնամյակում և XX դարի սկզբներին բուրժուական հարաբերությունների առաջընթացը, արդյունաբերական և ապա մոնոպոլիստական կապիտալիզմի տիրապետությունը իր դրոշմը դրեց տարբեր երկրների ու ժողովուրդների սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի զարգացման վրա։

Խոշոր արդյունաբերության հարվածների տակ քայքայվում և հետին պլան էր մղվում հայկական գաղթավայրերի տնտեսության կարևոր ճյուղը՝ արհեստագործությունը։ Արհեստները տակավին շարունակում էին մնալ բնակչության անմիջական պահանջները հոգացող արտադրության անհրաժեշտ բնագավառներից մեկը, սակայն տնտեսական կյանքում այլևս նախկինի նման էական դեր չէին կատարում։ Կապիտալիզմի զարգացման հետևանքով ուժեղացավ, ավատական կարգերին այնքան հատուկ փակ, նատուրալ տնտեսության քայքայումը, որն իր ազդեցությունն ունեցավ հայկական գաղթավայրերի ինքնարավ կյանքի, նրանց ինքնավարությունների վերացման գործում։

Խորացան ու սրվեցին սոցիալ-դասակարգային հարաբերությունները, հայկական զանգվածները ներգրավվեցին հյուրընկալող երկրների դասակարգային պայքարի, հեղափոխական շարժումների ալորտի մեջ։ Բուրժուական հարաբերությունների վերընթաց զարգացմամբ պայմանավորված հասարակական-մշակութային կյանքի ընդհանուր զարթոնքը համակեց և իր հորձանուտի մեջ առավ հայկական գաղթաշխարհը։

Նշված հանգամանքների, ինչպես և սոցիալական շերտավորման ուժեղացմամբ պայմանավորված մանր տնտեսությունների քայքայման, պանգրխտության, անցյալ դարի 90-ական ԹԹ. և դրանից հետո Թուրքիայում սկսված կոտորածների ու արևմտահայության արտագաղթի հետևանքով ստվարացան մի շարք հայկական գաղթօջախներ և, ընդհակառակը, քայքայվեցին կամ թուլացան ու հետին պլան մղվեցին մյուսները։

Շարունակեցին աշխույժ ու լիաթոք կյանքով զբաղեցնել հատկապես Նոր Նախիջևանի, Մոսկվայի, Պետերբուրգի, Հյուսիսային Կովկասի, Աստրախանի, Ղրիմի և Ռուսաստանի այլ վայրերի հայկական գաղթօջախները։ 1860-ական թվականներին վերացվեցին ռուսահայ գաղթավայրերի առանձնաշնորհումները, նրանց ինքնավարությունը մարմնավորող մագիստրատը կամ

ռաբհաուզը։ Սակայն, ավելի քան մեկ-մեկուկես դար հարատևող ինքնավար ու ինտենսիվ կյանքով ապրող համայնքները ավանդական ուժով շարունակում էին իրենց գոյությունը։ Դրանից բացի հայկական գաղութներում հիմնվում են ազգային-բարեգործական այնպիսի հաստատություններ ու կազմակերպություններ, որոնք, փոփոխված նոր իրավիճակում, փաստորեն իրականացնում էին հայ համայնքների ինքնավարությունը։

Անշուշտ, ռուսահայ գաղութները իրենց սահմանափակ հնարավորություններով չէին կարող խթանել խոշոր արդյունաբերության զարգացմանը։ Այդ պատճառով էլ հայ խոշոր առևտրաարդյունաբերողներն իրենց կապիտալները ներդնում էին տնտեսական ավելի լայն պայմաններ ընձեռող Ռուսաստանի արդյունաբերական խոշոր կենտրոններում։ Հայկական գաղթավայրերում զարգանում է գերազանցապես գյուղատնտեսական արտադրանքը վերամշակող մանր արտադրությունը, գյուղատնտեսությունը ավելի ու ավելի ապրանքային բնույթ է ստանում, և զարգանում են ապրանքադրամական հարաբերությունները։

Տնտեսական կյանքի զարգացումը խորացնում է սոցիալական անհավասարությունը, որում գասակարգային պայքարը։ Հայ երիտասարդության առաջադեմ ներկայացուցիչները ընդգրկվում են 1870—80-ական թվականների հեղափոխական նարոդնիկական շարժման մեջ։ Հայկական զանգվածները և նրանց գործիչները մասնակցում են ռուսական առաջին հեղափոխությունը և առհասարակ ցարիզմի դեմ ծավալված հեղափոխական-քաղաքական պայքարին։

Այս գարաշրջանում ռուսահայ գաղութները ապրում էին հասարակական, մշակութային արգասավոր կյանքով։ Հիմնվում են բազմաթիվ նոր ուսումնարաններ, ընդարձակվում է ազգային տարրական դպրոցների ցանցը։ Բավական է ասել, որ միայն Հյուսիսային Կովկասում, առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, գործում էին 34-ից ավելի հայկական տարրական դպրոցներ։ Մտավոր-լուսավորական կարևոր դեր էին կատարում Նոր Նախիջևանի քեմական, Աստրախանի Աղաբաբյան և, հատկապես, Մոսկվայի Լազարյան ճեմարանը։ Ռուսահայ գաղութներում հիմնվում են տպարաններ, թատրոններ, հրատարակվում բազմաթիվ գրքեր, թերթեր, հանդեսներ, կազմակերպվում են ազգային մշակութային ընկերություններ ու միություններ։

Նշանակալից էր հատկապես Ռուսաստանի երկու կարևոր կենտրոնների՝ Մոսկվայի և Պետերբուրգի դերը։ Թեպետ և խոշոր ու ստվարաթվով չէին այդ քաղաքների հայկական համայնքները, սակայն մեծ էր նրանց հասարակական-քաղաքական և կուլտուր-կրթական դերը։ Մոսկվայում և Պետերբուրգում էին ուսանում, բարձրագույն կրթություն ու մասնագիտություն ստանում, այստեղ ռուսական առաջադեմ, դեմոկրատական հասարակական կյանքի միջավայրում ձևավորվում հայ մտավորականության ներկայացուցիչները, որոնք հայ իրականության մեջ լուսավորական-մշակութային առաջատար դեր էին ստանձնում։ Մոսկվան և Պետերբուրգը դառնում են հայագիտության զարգացման առաջավոր կենտրոններ։

Ռուսահայ զանգվածները ակտիվորեն մասնակցում էին ռուսական հասարակական-քաղաքական կյանքի կարևոր իրադարձություններին, նրանք միաժամանակ կապված էին մայր հայրենիքի հետ, մշտապես ձգտում էին աջակցել հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ազատագրությանը թուրքական լծից։

Բուրժուական հարաբերությունների զարգացման վերջին փուլում խոշոր փոփոխություններ են կատարվում նաև Եվրոպայի հայկական գաղթավայրերի կյանքում. նոր ժամանակների պահանջների և ոգուն համապատասխան աշխուժանում է՝ տակավին միջին դարերում սկզբնավորված Արևելյան Եվրոպայի՝ Բուլղարիայի, Ռումինիայի, մասամբ և Հունգարիայի երկրակյաց հայկական գաղթավայրերի հասարակական-մշակութային կյանքը։

Հասարակական-քաղաքական և մշակութային իրենց կարևոր գործունեությամբ հայկական գաղութներ են ձևավորվում Արևմտյան Եվրոպայի խոշոր կապիտալիստական երկրներում՝ Ֆրանսիայում, Անգլիայում և Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ստեղծվում են բազմաթիվ հայկական ընկերություններ ու միություններ, հիմնվում տպարաններ, հրատարակվում գրքեր ու պարբերականներ։ Միայն Ֆրանսիայում հրատարակվում էին երեք տասնյակի հասնող հայկական թերթեր ու ամսագրեր։ Հասարակական մշակութային այդ շարժման քաղաքական բովանդակությունը ազգային-ազատագրական պայքարի գաղափարախոսության պրոպագանդան էր, եվրոպական ժողովուրդներին հայ իրականությանը, Հայկական հարցին ծանոթացնելն էր։ Հայկական այս գաղթավայրերը միաժամանակ դառնում են հայ ազգային կուսակցությունների սկզբնավորման և ներկուսակցական հակամարտերի ոլորտ։

Ասիայի և Աֆրիկայի գաղթավայրերից շարունակում էին գոյատևել Հընդկաստանի, Բիրմայի, Ինդոնեզիայի, Եթովպիայի և այլ հայկական համայնքները, սակայն նրանք որևէ նշանակալից դեր չէին կատարում։ Աննշան էր նաև Ավստրալիայի հայկական համայնքի դերը։

Դրան հակառակ Իրանի, Սիրիայի, Լիբանանի և Եգիպտոսի հայկական գաղութները, որոնք ստվարացան գերազանցապես արևմտահայ զանգվածների արտագաղթի հաշվին, ապրում էին լիաթոք կյանքով։ Հայկական այս գաղութներում ևս հիմնվում են բազմաթիվ ու բազմազան միություններ, ընկերություններ, որոնք բարեգործական և կուլտուր-լուսավորական բնույթ գործունեություն են ունենում։ Այս երկրների, Ռուսաստանի, Եվրոպայի և Ամերիկայի կենտրոնական ու արգասավոր հայ գաղթավայրերը դարձան այն հիմնական հանգրվանները, որտեղ ապաստան գտավ, առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ օսմանյան Թուրքիայում սկսված մեծ եղեռնի հետևանքով աշխարհով մեկ սփռված, Արևմտյան Հայաստանի տարագաղթ հայությունը։

1. ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆ

XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին նոր Նախիջևանի հայկական գաղութը ավելի ակտիվորեն ներգրավվեց համամասսայական կյանքի հասարակական-քաղաքական ոլորտը։

1860-կան թվականներին վերացվեցին նոր Նախիջևանի և ռուսահայ մյուս գաղութների առանձնաշնորհումները։ Նրանք իրավապես հավասարեցվեցին կայսրության մյուս քաղաքներին ու այլ բնակավայրերին և սկսեցին առաջնորդվել երկրում գործող համընդհանուր օրենքներով։ Ժամանակին կայսերական հրովարտակով նոր Նախիջևանին արտոնված և միայն նրա հայ հասարակությանը պատկանող 20.000 դես. հողատարածությունն այժմ արդեն ըրդվեց քաղաքի ամբողջ բնակչության տնօրինության տակ։

Սակայն շուրջ մեկ դար հարատևած Դոնի հայկական գաղութի ինքնա-

վարությունը, որն արմատավորվել էր կյանքում և ավանդական ուժ ձեռք բերել, չէր կարող միանգամից ու ամբողջովին դադարեցնել իր գոյությունը։ Ճիշտ է, վերացվեց մագիստրատի ոստիկանական և դատական իրավասությունը, բայց պահպանվեց նրա տնտեսական մասը, որը միացվեց Նոր Նախիջևանի քաղաքային վարչությանը։ Վերջինս բաղկացած էր 24 քաղաքային խնամակալներից և ղեկավարվում էր Նախիջևանի քաղաքագլխի կողմից։ Այն վերահսկում էր քաղաքի եկամուտներին ու ծախսերին, զանազան հարկերի ու տուրքերի գանձմանը և այլն։ 1866 թ. ստեղծվեց քաղաքային խորհրդարան կամ դումա՝ 60 ընտրովի ձայնավորներով։

Փոփոխված պայմանների թելադրանքով շուտով Նոր Նախիջևանում հիմնվեցին ազգային-բարեգործական այնպիսի հաստատություններ, որոնք կոչված էին վարելու Դոնի հայ զանգվածի գործերը և որոնք նոր իրավիճակում փաստորեն իրականացնում էին գաղութի ներքին ինքնավարության ֆունկցիաները։ Դոնի հայ համայնքն ուներ մի շարք կառավարման դումարներ, որոնց մեջ կարևոր էր հատկապես հնդկահայ հարուստ Մ. Բաթաջանյանի կտակը։ Նախկինում կտակների գործը տնօրինում էր մագիստրատը, իսկ նրա վերացումից հետո չկար այդ խնդրով զբաղվող որևէ հաստատություն։ 1889 թ. հիմնվեց Նոր Նախիջևանի հայոց Ադրատախնամ եկեղեցական հոգաբարձությունը, որն իր ձեռքն առավ զուտ ազգային կտակների գործի տնօրինությունը։ Ստեղծվեցին նաև Նոր Նախիջևանի հայոց Մարդասիրական (1868), Բարեգործական (1860) և մի շարք այլ ընկերություններ։

1880-ական թվականներին Հարավային Ռուսաստանում կատարվում են նաև վարչական վերափոխություններ։ 1887 թ. եկատերինոսլավի նահանգի Տագանրոգի քաղաքայնությունը (որի կազմում էր գտնվում նաև Նոր Նախիջևանի օկրուգը) և Ռոստովի գավառը միացվում են Դոնի զորքի մարզին (область войска донского), որտեղ Ռոստով և Նոր Նախիջևան քաղաքները մտնում են Ռոստովի նորաստեղծ օկրուգի մեջ։ Այդ քաղաքների նախկին կարգն ու հասարակական կազմակերպությունները պահպանվում են անփոփոխ, միայն նրանք անցնում են ռազմական մինիստրության իրավասության տակ և ուժեղացվում է ոստիկանական վերահսկողությունը։

Բուրժուական հարաբերությունների զարգացման վերջին փուլում գաղութի բնակչությունը ավելի արագորեն է աճում, փոփոխվում է նրա ազգային կազմը։ Նոր Նախիջևան քաղաքի բնակչությունը 1866 թ. եղել է 16,550, 1900 թ.՝ 30,883, իսկ 1912 թ.՝ 46,626 մարդ[1]։ Այսպիսով, մոտ հիսուն տարվա ընթացքում քաղաքի բնակչությունն աճել էր համարյա երեք անգամ, այն դեպքում, երբ այդ նույն ժամանակում Հարևան Ռոստով քաղաքի բնակչությունը (1866 թ. 38992 մարդուց, 1912 թ. հասել էր շուրջ 200.000-ի) ավելացել էր ավելի քան հինգ անգամ։ Դրա հիմնական պատճառը Նոր Նախիջևանի բնակչության արտահոսքն էր։ Ընդամենը տասներեք տարվա ընթացքում՝ 1897—1910 թթ. Ռոստով քաղաքում բնակվող հայերի թիվը, որոնք վերաբնակվել էին հայկական գաղութից, ավելացել էր չորս անգամ, կլորացված թվերով 2000-ից հասել էր 8000-ի[2]։

---

1 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՎԱ, ֆ. 1281, ց. 7, 1867 թ., գ. 32, թ. 107, ֆ. 1284, ց. 223, 1887 թ., գ. 175, թ. 26, ֆ. 1282, ց. 3, 1901 թ., գ. 458, թ. 5, ֆ. 1284, ց. 134, գ. 31, թ. 3։

2 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1288, ց. 25, գ. 17, թ. 2։

Այս երկու քաղաքների բնակչությունը աճում էր նաև արհեստական եղանակով՝ դրսեկ բնակչության հաշվին։ Հատկապես Ռուստամանի կենտրոնական նահանգներից հողազուրկ շատ գյուղացիներ աշխատանք էին գտնում և հաստատվում հողային տարածություններով հարուստ Դոնի ավազանում։ Հայկական գաղութի ինքնավարության որոշ տարրերի գոյությունը դյուրորեն խոչընդոտում էր այլ բնակչության հաստատվելուն և այդ պատճառով էլ նոր Նախիջևանում դրսեկ բնակչության աճն արտահոսքի համեմատությամբ դանդաղ էր կատարվում։ Տասը տարում՝ 1884—1893 թթ. նոր Նախիջևանում հաստատված մարդկանց քանակը 4170-ից հասել էր 8383-ի[3]։

Արագորեն փոխվում էր նաև Նոր Նախիջևանի բնակչության ազգային կազմը։ Եթե գաղութի հիմնադրումից սկսած մինչև XIX դ. կեսերը այլազգի բնակչությունը շատ աննշան էր, ապա դարավերջին դրությունը նկատելիորեն փոխվել էր։ 1904 թ. հայերը կազմում էին բնակչության 63, ռուսները՝ 33 տոկոսը, իսկ մյուս ազգությունները աննշան թիվ էին կազմում։ Այդ ժամանակ քաղաքն ուներ 32709 բնակիչ, որից հայեր՝ 20868, ռուսներ՝ 10827, հրեաներ՝ 654, լեհեր՝ 131, թուրք-թաթարներ՝ 131 և գերմանացիներ՝ 65 հոգի[4]։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին հայերն արդեն չէին կազմում անգամ քաղաքի բնակչության 50 տոկոսը։

Նոր Նախիջևանի բնակչության սոցիալական կազմում, հարևան քաղաքների համեմատությամբ, բավական մեծ էր առևտրական և հոգևորական շերտերի տեսակարար կշիռը։ XX դարի սկզբին Նոր Նախիջևանի հայ բնակչության սոցիալական կազմը հետևյալ պատկերն ուներ. ազնվականներ՝ 92 հոգի, պատվավոր քաղաքացիներ՝ 367, հոգևորականներ՝ 218, վաճառականներ՝ 645, արհեստավորներ և տարբեր զբաղմունքի այլ քաղաքացիներ՝ 20005 հոգի։

Մոտավորապես նույնպիսի աճ էր ունեցել նաև քաղաքի մոտակայքի՝ Ջալդր, Քոփրի, Մեծ Սալա, Սուլթան Սալա և Նևսվիտա հայկական գյուղերի բնակչությունը։ Նրանց բնակչությունը 1860 թվականների վերջերին հասած 8000-ից 1910—11 թվականներին հասել էր 20 հազարի[5]։

Քաղաքի եկամուտներն աստիճանաբար ավելանում և պատկառելի գումար էին կազմում[6]։ Դրանք գոյանում էին անշարժ ու շարժական գույքից՝ քաղաքի հողերից, գործարաններից, առևտրական կրպակներից, շուկայից, սպանդանոցից, նավակայանից, շտեմարաններից ստացվող հարկերից։ Այդ եկամուտները ծախսվում էին հիմնականում քաղաքի բարեկարգման նպատակով և քաղաքային վարչության, դատարանի, առողջապահական հիմնարկների պահպանման համար։

XIX դարի երկրորդ կեսին Նոր Նախիջևանը դեռ շարունակում էր համարվել Եկատերինոսլավի նահանգի և Դոնի մարզի բարեկարգ քաղաքներից մեկը։ Նա առաջնությունը զիջում էր միայն Ռոստովին և Եկատերինոսլավին։ Այս շրջանում Նոր Նախիջևանը առաջիններից մեկն էր, որտեղ փողոցները սալահատակվեցին, մայթեր գցվեցին, էլեկտրական լուսավորություն և շրմուղ

3 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1152, ց. 12, 1896, գ. 88, թ. 8։

4 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1288, ց. 25, գ. 17, թ. 17։

5 Տե՛ս նույն տեղում, ֆ. 821, ց. 7, գ. 232, թ. 26։

6 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1284, ց. 67, 1871, գ. 169, թ. 87, ց. 223, 1885, գ. 174, թ. 36, ց. 194, գ. 31, թ. 3։

անցկացվեց, Ձիաքարշ և ապա էլեկտրական տրամվայ երթևեկեց։ Ցակավին 1863 թ. քաղաքում բացվել էր ակումբ, մեկ տասնամյակ անց՝ հիմնադրվեց գրադարան-ընթերցարան, կառուցվեցին թատրոնի հարմարավետ շենք և հասարակական այլ հաստատություններ։ XIX դարի վերջին տասնամյակը և XX դարի սկիզբը նոր նախիջևանի համար տնտեսական աշխույժ կյանքի տասնամյակներ էին։

Հարավային Ռուսաստանը, հատկապես Դոնի ավազանը, շեշտված ագրարային բնույթ ուներ։ Այդ տնտեսակիցից յուրահատուկ պայմանների մեջ էր գտնվում հայկական գաղութը։ Այնտեղ հողային տարածությունների առատություն կար անգամ շրջակա գավառների համեմատությամբ։ Գաղութի հիմնադրման ժամանակ Եկատերինա II կայսրուհու 1779 թ. նոյեմբերի 14-ի հրովարտակով Դոնի հայերին հատկացվել էր 87085 դես. տարածություն։ Դրանից 20.000 դես. տրվել էր քաղաքին, իսկ հիմնական մասը՝ հայկական հինգ գյուղերի տնօրինմանը։ Ժամանակի ընթացքում գյուղապատական հողերից 5000 դես. յուրացրել էին մեծահարուստները և այնտեղ իրենց խուտորները հիմնել։ 1873 թ. հայկական գյուղերն ունեին 62819 դես. տարածություն։ Գյուղական ազգաբնակչության յուրաքանչյուր շնչին ընկնում էր 8 դես., այն դեպքում, երբ Ռուսաստանի կենտրոնական նահանգներում բնակչության յուրաքանչյուր շնչին ընկնում էր միջին հաշվով 2 դես., Սևծովյան առափնյա նահանգներում՝ 3—4, իսկ Դոնում՝ 7 դես.[7], Դոնի հայերը չկարողանալով սեփական միջոցներով մշակել իրենց հողատարածությունները, դրանց մի զգալի մասը տալիս էին վարձակալության։

Գյուղերի բնակիչները հողից օգտվում էին համայնական կարգով։ Յուրաքանչյուր համայնք սահմանում էր հողերի ժամանակավոր բաշխման ու մշակման կանոններ։ Հողը պատկանում էր համայնքին և ոչ ոք իրավունք չուներ օտարելու այն։ Դրսեկ բնակիչները հայ համայնքի անդամ չէին համարվում և չէին օգտվում հողօգտագործման նրա իրավունքներից։

1906 թ. նոյեմբերի 9-ի հրամանագրով գյուղացիներին իրավունք տրվեց ընտանիքի անդամների քանակի համեմատ հող ստանալ և վարվել նրա հետ որպես լիիրավ սեփականատեր։ Դա ուժեղացրեց գյուղի շերտավորումը։ Հողատարածությունները սկսեցին կենտրոնանալ հարուստների ձեռքում։ Այսպես, մի քանի տարվա ընթացքում Մեծ Սալա գյուղի հողերից 560, իսկ Նեսվիտայից 500 դես. անցան աղաների ձեռքը[8]։ Գյուղական համայնքների քայքայման հետևանքով 1914 թ. արդեն հայկական գյուղերին պատկանող ամբողջ հողատարածությունը իջել էր 51.000 դես.։ Քանի որ ժամանակի ընթացքում, բնականաբար, աճել էր նաև գյուղերի բնակչությունը, ուստի նախկին 8 դես. փոխարեն գյուղական ամեն մի բնակչի ընկնում էր արդեն միջին հաշվով հազիվ 3—4 դես. հողաբաժին[9]։

Գյուղատնտեսական կուլտուրաներից հայերը մշակում էին հիմնականում ցորեն, որը վաղուց արդեն ապրանքային բնույթ էր ստացել։ Նոր Նախիջևանի հայկական գաղութում բավական զարգացած էր նաև անասնապահությունը։

---

7 Տե՛ս «Очерки экономического развития Дона», Ростов-на-Дону, 1960, стр. 9.

8 Տե՛ս «Գաղութ», 1914, № 4։

9 Տե՛ս նույն տեղում։

Հայերն զբաղվում էին խոշոր եղջերավոր անասունների բուծմամբ, ինչպես նաև ոչխարաբուծությամբ, ձիաբուծությամբ[10]։

Հարավային Ռուսաստանում, այդ թվում և Դոնի մարզում, թեև համեմատաբար թույլ էր զարգացած արդյունաբերությունը, սակայն խիստ բարձր էին նրա աճման տեմպերը։

Նոր Նախիջևանում արմատավորվել և զարգանում էր գերազանցապես գյուղատնտեսական արտադրանքը վերամշակող մանր արտադրություն։ Շատ տունակում էին առաջադիմել Դոնի հայ գանգվածի համար ավանդական դարձած, արհեստագործական հիմքի վրա ստեղծված ճարպի մշակումը, բրդի լվացումը, կաշվի, ծխախոտի, մոմի, ալյուրի արտադրությունը։ Իսկ Ռոստովն աստիճանաբար դառնում էր ծխախոտի, ջուղ, գարեջրի, ալրաղաց, մետաղաձուլական, քիմիական և զարգացման առավել մեծ հեռանկարներ ունեցող արտադրության այլ ճյուղերի կենտրոն։

1870 թ. Նոր Նախիջևանում կար 35 փոքրածավալ ձեռնարկություն, որոնցում աշխատում էր 500 բանվոր։ Դրանք տարեկան տալիս էին 412000 ռ. արտադրանք։ Ռոստովի 48 գործարանները, որտեղ զբաղված էր 922 բանվոր, տալիս էին ավելի քան 1.800.000 ռ. արտադրանք[11]։ Տասը տարի անց, 1880 թ. Նոր Նախիջևանում կար 49 գործարան, որոնցում աշխատում էր 948 բանվոր, որոնք տարեկան տալիս էին 868.000 ռ. արտադրանք։ Նոր Նախիջևանը իր արտադրանքով եկատերինոսլավի նահանգի երկրորդ կարևոր քաղաքն էր։ Պատահական չէ, որ Վ. Ի. Լենինը Եվրոպական Ռուսաստանի ֆաբրիկագործարանային արդյունաբերության կարևորագույն կենտրոնների շարքում նշում է նաև Դոնի Նախիջևան, Նովոչերկասկ և Ռոստով քաղաքների անունները[12]։

1903 թ. Նոր Նախիջևանում արդեն գործում էին 73 ֆաբրիկագործարաններ, որոնցում աշխատում էր ավելի քան 3500 բանվոր և տարեկան ստացվում էր 3 մլն ռուբլուց ավելի արտադրանք[13]։

XIX դարի կեսերից կենդանական ճարպի մշակման մենաշնորհը գտնվում էր հայերի ձեռքին։ Ճարպ հալող գործարանները, որոնց թիվը հասնում էր տասի, քաղաքի հյուսիսային մասում տեղավորված ընդարձակ բակերով փայտյա շինություններ էին։ Այնտեղ ոչխարը մորթում էին, ճարպը հարում ու տակառները լցնում, մորթին մաքրում և չորացնում, միսը սկրտում, նախնական մշակման ենթարկում և ապա հանձնում տիրոջը։ Ձեռնարկատերը մորթած յուրաքանչյուր ոչխարի համար ստանում էր 20—30 կ. վարձ։ Գործարանատերերը հաճախ իրենք էլ էին հոտեր պահում, սակայն նրանք մեծ մասամբ մորթում ու մշակում էին Հյուսիսային Կովկասից ու Դոնի տափաստաններից բերվող ոչխարի հոտերը։ Գործարաններում տարեկան մորթվում էր մինչև 500.000 ոչխար։ 1882 թ. Նոր Նախիջևանի ճարպահալ գործարանները տվել են 200.000 փութ ճարպ[14], իսկ 1903 թ. 570 աշխատող ունեցող 9 ճարպահալ գործարանները տվել են 715.000 ռ. արտադրանք։

Բուրդ լվացող գործարանների թիվը չէր անցնում հինգից. Հայտնի էր,

---

10 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1281, ց. 7, 1867, գ. 52, թ. 112։

11 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1284, 1871, գ. 169, թ. 62։

12 Տե՛ս Վ. Ի. Լենին, երկ, հ. 3, էջ 771։

13 Տե՛ս Ռոստովի մարզի պետական արխիվ (ՌՄՊԱ), ֆ. 91, ց. 4, գ. 78, թ. 1։

14 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1152, ց. 10, գ. 20 թ. 2։

մասնավորապես, Մելքոնով-Եզոկովի արտադրական-առևտրական հնագույն ֆիրման։ Սրա արտադրանքի որակն այնքան բարձր էր և Ամերիկայում այն աստիճան հայտնի, որ այնտեղ պատվերներ էին տալիս ուղղակի ըստ տնտեսավորման նիշերի, առանց արտադրանքի նմուշները պահանջելու[15]։ Բրդի լվացման աշխատանքները կատարվում էին ձեռքով։ Մելքոնով-Եզոկովի գործարանն անցել էր շոգեմեքենայական մաքրման։ Նոր Նախիջևանի բուրդ լվացող ձեռնարկություններում բանվորների թիվը 150-ից հասնում էր մինչև 200-ի։ Հիմնականում աշխատում էին կանայք։ Աշխատանքային օրը տասը ժամից ավելի էր, պայմանները բավականին ծանր էին, բանվորները անլուր շահագործման էին ենթարկվում։ Այդ գործարաններում տարեկան մաքրվում էր 250.000 փթից ավելի բուրդ։ 1903 թ. հինգ գործարանները տվեցին 900 հազար ռուբլու արտադրանք[16]։

Դոնի հայկական գաղութն իր համեստ կարողություններով ու հնարավորություններով չէր խթանում խոշոր արդյունաբերության զարգացմամբ։ Այդ պատճառով էլ գաղութի խոշոր առևտրաարդյունաբերողներն իրենց կապիտալները ներդնում և ձեռնարկություններն ու գրասենյակները հիմնում էին տնտեսական-արդյունաբերական անհամեմատ ավելի լայն պայմաններ ընձեռող Ռոստովում։ Դեռևս 1850-ական թթ. Ռոստովում հիմնադրվել էր Հակոբ Քուշնարյանի ծխախոտի ֆաբրիկան։ Այն արժանացել էր 1882 թ. Մոսկվայի համառուսական ցուցահանդեսի, 1883 թ. Փարիզի եվրոպական գիտական ընկերության ոսկի մեդալների, Չիկագոյի՝ 1893 թ., Անտվերպենի՝ 1894 թ. համաշխարհային ցուցահանդեսների բարձրագույն պարգևներին։

Քուշնարյանի ֆաբրիկան ծխախոտի հումքը ստանում էր Հյուսիսային Կովկասից, Բեսարաբիայից, Ղրիմից, Թուրքիայից։ Արտադրանքը լայն սպառում էր գտնում ինչպես Ռուսաստանում, այնպես էլ արտասահմանում՝ Գերմանիայում, Բելգիայում, Շվեյցարիայում, Անգլիայում, անգամ Հյուսիսային Ամերիկայում և այլ երկրներում։ 1899 թ. ֆաբրիկանտը ստեղծում է «Հ. Ս. Քուշնարյանի ընկերություն»։ Այդ ժամանակ արդեն ֆաբրիկայում աշխատում էր 1400 բանվոր, հիմնական կապիտալը հասնում էր 1,5 միլ. ռուբլու[17]։

XIX դարի վերջին և XX դարի սկզբներին խոշոր արդյունաբերությունը զարգացավ հատկապես Ռոստովում։ Այդ տարիներին Ռոստովը Նոր Նախիջևանի հետ առևտրաարդյունաբերական առումով միավորվել և տնտեսական մի ամբողջական շրջան էր կազմել։ Երկու քաղաքների 16 աղյուսի գործարանները միավորվել էին աղյուսի վաճառքի մեկ գրասենյակի մեջ։ Արտադրության մյուս ճյուղերը ևս սկսում են միավորվել առանձին սինդիկատների ու այլ մոնոպոլիաների մեջ։

Այնուհանդերձ Դոնի տնտեսական կյանքում գերակշռում էր մանր արտադրությունը։ Այս տեսակետից աչքի էր ընկնում հայկական գաղութը։ Այնտեղ տիրապետում էր մանրաարդանքային արտադրությունը և արհեստագործությունը։ Արհեստավորական արհեստանոցներից շատերը, ընդարձակվելով և որոշ չափով կիրառելով մեքենայական աշխատանքը, վերածվել էին ֆաբ-

---

15 Տե՛ս «Сборник областного войска донского статистического комитета», вып. II, Новочеркасск, 1901, стр. 27.

16 Տե՛ս ՌՄՊԱ, ֆ. 91, ց. 4, գ. 78, թ. 1։

17 Տե՛ս «Записки Ростовского общества истории и древних памятников», т. II, Ростов-на-Дону, стр. 261—264.

րիկագործարանային ձեռնարկություններ։ Կազմակերպվել էին նաև արհեստի նոր տեսակներ (տակառագործություն, ժամագործություն և այլն)։

1877 թ. Նոր Նախիջևանի մի խումբ արհեստավորներ, պատճառաբանելով, որ քաղաքում իրենց թիվն աճել ու հասել է 300 հոգու, խնդրում են թույլատրել, մյուս քաղաքների օրինակով, արհեստավորական վարչություն ստեղծել[18]։ XX դարի սկզբներին Նոր Նախիջևանում հաշվվում էր շուրջ հիսուն արհեստ, 450—500 արհեստավորներով[19]։

Նոր Նախիջևանի հայկական գաղութը առևտրի համար ուներ աշխարհագրական հարմար դիրք։ Նա գտնվում էր ցամաքային ու ջրային ուղիների հանգույցում և մի կողմից կապված էր Հյուսիսային Կովկասի ու Կենտրոնական Ռուսաստանի հարուստ նահանգների, մյուս կողմից՝ Դոն գետի և Ազովի ու Սև ծովերի միջոցով՝ արտասահմանյան երկրների հետ։ Բնականաբար, ինչպես Դոնի ավազանում, այնպես էլ առանձնապես հայկական գաղութում զարգացած էր ներքին ու արտաքին առևտուրը։

Արտաքին առևտրի գլխավոր առարկաներից էր հացահատիկը, հատկապես ցորենը։ Քաղաքի հյուսիսային կողմի ընդարձակ տարածքի վրա հայերը երկու տասնյակի չափ խոշոր ամբարներ ու հարակից այլ շինություններ ունեին, ուր կուտակում էին տեղում ձեռք բերված, Կուբանից և Ռուսաստանի հացառատ նահանգներից գնված ցորենը։ Նրանք ամբարած հացահատիկը մեծ մասամբ հանձնում էին առևտրական գրասենյակներին, որոնք էլ իրենց հերթին առաքում էին Եվրոպա։

Արտաքին առևտրի կարևոր ապրանքներից էին նաև ոչխարի ճարպը, բուրդը և այլն։ Եկատերինոսլավի նահանգապետի 1882 թ. զեկուցագրում Նոր Նախիջևանի առևտրի մասին կարդում ենք հետևյալը. «Հացահատիկի առևտրում Նախիջևանը խոշոր շուկա է հանդիսանում Հարավային Ռուսաստանում։ Նրա տարեկան շրջանառությունը անցնում է մեկ միլիոն չեմվերտից։ Նախիջևանում գործող ճարպ հալող 15 գործարաններում տարեկան արտադրվում է 200.000 փութ ճարպ, իսկ բուրդ լվացող 8 ձեռնարկություններում լվացվում և տեսակավորվում է 300.000 փութ ռուսական բուրդ»[20]։ Ապա նշելով, որ այդ ապրանքներն առաքվում են արտասահման, նահանգապետը առաջարկում էր վերակառուցել Նախիջևանի նավամատույցը և դարձնել համապատասխան նրա խոշոր առևտրին։ Հայ վաճառականներն առևտրական գործառնությամբ կապված էին Մոսկվայի, Խարկովի, Պոլտավայի, Աստրախանի, Իրբիտի, Նիժնի Նովգորոդի, Տագանրոգի և այլ քաղաքների հետ և չի ու այլ տեսակ կտորեղենի, արդուզարդի, նպարեղենի, մորթու, կաշվեղենի, սիբիրյան կովի յուղի, սերմերի և այլ ապրանքների աշխույժ առևտուր էին անում[21]։

Այսպիսով, ապրանքադրամական հարաբերությունների բուռն զարդացումը, որը հատուկ էր Նոր Նախիջևանին և Հարավային Ռուսաստանի շատ

---

18 Տե՛ս ՌՄՁԱ, ֆ. 91, ց. 1, գ. 161, թ. 1։
19 Տե՛ս նույն տեղում, գ. 1608, թ. 3։
20 ՍՍՀՄ ԿՊՁԱ, ֆ. 1152, ց. 10, գ. 20, թ. 2։
21 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՁԱ, ֆ. 139, ց. 1, գ. 662, թ. 5։

շրջաններին, խթանում էր կապիտալիստական հարաբերությունների զարգացումը և սրում սոցիալական անհավասարությունը։

Դոնում, այդ թվում նաև հայկական գաղութում, բավական ակնառու կերպով էր դրսևորվում դասակարգային պայքարը։ Այդ իմաստով հատկանշական է Մ. Նալբանդյանի գործունեությունը, որը մեծ ազդեցություն թողեց և գաղափարական հիմք հանդիսացավ Նոր Նախիջևանում ու առհասարակ Դոնի ավազանում 1870—80-ական թթ. հեղափոխական նարոդնիկական շարժման համար։ Ռոստով-Նախիջևանյան նարոդնիկական խմբակներում ընդգրկված էին ինչպես Պետերբուրգում և այլ կենտրոններում սովորող, այնպես էլ տեղում աշխատող բազմաթիվ հայ երիտասարդներ։ Նրանց մեջ աչքի էին ընկնում Ս. Փեշեքերովը, Պ. Փեշեքերովը, Մ. Կալալովը, Մ. Պոպովը, Հ. Մանուչարովը և ուրիշներ, որոնց գործունեությունը նկատելի հետք է թողել Հարավային Ռուսաստանի նարոդնիկական շարժումների պատմության մեջ։ 1880-ական թվականների կեսերին նրանք գրեթե իրենց բոլոր ընկերների հետ բանտարկվում են, և նարոդնիկական խմբակները փաստորեն դադարում են գոյություն ունենալուց[22]։

XIX դարի վերջին բանվորական շարժումների աշխուժացման հետ Դոնում ստեղծվում են սոցիալ-դեմոկրատական մարքսիստական խմբակներ, որոնք միավորվում և 1901 թ. ստեղծում են դեկավար կենտրոն, ՌՍԴԲԿ Դոնի կոմիտե՝ քաղաքային, Թեմերնիկի և Նոր Նախիջևանի երեք շրջաններով։ «Իսկրա» թերթը 1902 թ. գրում էր, որ Դոնի կոմիտեի պրոկլամացիաները լավ ընդունելություն են գտել և Ռոստովից, Նախիջևանից բացի, տարածվել Տագանրոգում, Նովոչերկասկում և այլուր[23]։

Հեղափոխական շարժումների ընթացքում Նոր Նախիջևանը Ռոստովի հետ գտնվում էր սոցիալ-դեմոկրատական միևնույն կազմակերպության մեջ և հեղափոխական պայքարի բոլոր փուլերում հանդես էր գալիս Ռոստովի հետ համատեղ, որպես մի ամբողջություն։

Ռուսական առաջին հեղափոխության տարիներին Ռոստովի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության բոլշևիկյան դիրքերում կանգնած նշանավոր գործիչների շարքերում էր Բ. Կ. Նալբանդովը, իսկ դեկտեմբերյան զինված ապստամբության ժամանակ դրուժիննիկների մարտական ջոկատների ղեկավարների մեջ էր նրա եղբայր Ի. Կ. Նալբանդովը։

Ուսանող երիտասարդության հեղափոխական շարժումը լայն արձագանք է գտնում Նոր Նախիջևանի թեմական դպրոցի աշակերտության մեջ։ Թեմական դպրոցը, որտեղ ուսանում էին ապագա հայտնի գործիչներ Ալ. Մյասնիկյանը և Ս. Սրապիոնյանը (Լուկաշին), տոգորված էր ազատամտական, դեմոկրատական տրամադրություններով։ Դպրոցի վարչության դեմ հրապարակով ելույթ ունենալու համար 1906 թ. նոյեմբերին հեռացվում են 28 աշակերտներ։ Ի պաշտպանություն հեռացվածների, աշակերտությունն ընդհանուր բողոք է բարձրացնում և պահանջ է դնում առանձին կազմակերպություն

---

22 Տե՛ս А. Г. Терещенко, Новонахичеванцы в революционном народническом движении (ՊՊՀ, 1975, № 4, стр. 85—102).

23 Տե՛ս «Очерки истории большевистских организаций Дона», Ростов-на-Дону, 1965, стр. 53—65.

ստեղծելու և տպագիր օրգան հիմնելու մասին։ Գեներալ-նահանգապետի անմիջական միջամտությամբ ճնշվում են աշակերտական հուզումները[24]։

Ռևակցիայի տարիներին (1908 թ.) բանտարկվում է Նոր Նախիջևանի շրջանային կոմիտեի կազմը։ 1910 թվականից Դոնում արդեն գործում էին Ռոստովի միացյալ և Նոր Նախիջևանի սոցիալ-դեմոկրատական խմբերը, որոնցում կարևոր դեր էր կատարում նշանավոր հեղափոխական Պ. Ջափարիձեն։ Ռուսաստանի բանվոր դասակարգը միջոցներ էր հայթայթում ամենօրյա բանվորական թերթ ստեղծելու համար, որին մեծապես օգնում էին, բացի մայրաքաղաքից, 49 քաղաքներ, որոնց թվում Ռոստովը և Նախիջևանը[25]։

1912 թ. Ռոստովի բոլշևիկներին հաջողվում է ստեղծել ղեկավար խումբ «Կենտրոնական» անունով, ուր ակտիվ աշխատանք էր տանում Բաքվից Ռոստով աքսորված նշանավոր բոլշևիկ Վ. Կասպարովը[26]։ 1916 թ. Ռոստովում ստեղծվում է Ռոստով-Նախիջևանյան բոլշևիկյան կոմիտեն, որը շարունակում է գլխավորել ցարիզմի դեմ աշխատավորության հեղափոխական պայքարը։

XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբներին Նոր Նախիջևանը ապրում էր հասարակական, մշակութային աշխույժ կյանքով։ Նա ուներ Մոսկվայում, Պետերբուրգում և ուրիշ քաղաքներում կրթություն ստացած և հասարակական կյանքի առաջադեմ միջավայրում դաստիարակված ստվար մտավորականություն։ Թերևս հենց այդ մտավորականության ակտիվ գործունեության շնորհիվ Նոր Նախիջևանի հայ հասարակությունը ջերմորեն արձագանքում և իր վերաբերմունքն էր դրսևորում Ռուսաստանի հասարակական-մշակութային կյանքի կարևոր իրադարձություններին։ 1899 թ., երբ նշվում էր Ա. Ս. Պուշկինի ծննդյան 100-ամյակը, Նոր Նախիջևանի հասարակայնության և աշակերտության մասնակցությամբ տեղի է ունենում հանդիսավոր հավաք։ Պոետի հիշատակը հավերժացնելու նպատակով քաղաքային գրադարանը կոչվում է նրա անունով[27]։

1909 թ., Լև Տոլստոյի ծննդյան 80-ամյակի օրերին, քաղաքային դուման վճռում է լայն ձևով նշել նրա հոբելյանը։ Ողջույնի հեռագիր է ուղարկվում Յասնայա Պոլյանա և որոշվում հաջորդ տարվանից Նախիջևանում բացել մեծ գրողի անունը կրող երկսեռ ուսումնարան[28]։

Համաշխարհային պատերազմն սկսվելուց անմիջապես հետո, Դոնի հայ հասարակությունը, իր ներդրումը կատարելու հայրենասիրական ձգտումով համակված, ընդհանուր հավաք է կազմակերպում։ Ժողովը որոշում է պատերազմի վիրավոր զինվորների համար սեփական միջոցներով հիմնել հիվանդանոց և այդ գործը կազմակերպելու համար ընտրում է հատուկ հանձնաժողով։ Հայկական մի շարք խանութների ծառայողներ որոշում են վիրավոր զինվորների և պատերազմի զոհ կանչվածների ընտանիքների օգտին հատկացնել իրենց աշխատավարձի 1—5 տոկոսը[29]։

Դոնի հայկական գաղութը սերտ կապերի մեջ էր Հայաստանի հետ, ակ-

---

24 Տե՛ս «Մշակ», 1906, № 265, 27։

25 Տե՛ս Վ. Ի. Աննին, նշվ. հատ. 21, էջ 529, 536։

26 Տե՛ս «История Донского края», Ростов-на-Дону, 1971, стр. 135.

27 Տե՛ս ՌՄՊԱ, ֆ. 91, ց. 1, գ. 940։

28 Տե՛ս նույն տեղում, ց. 3, գ. 405, թ. 9—12։

29 Տե՛ս «Գաղութ», 1914, № 25։

տիվորեն արձագանքում էր հայ իրականության հրատապ խնդիրներին, ապրում հայ ժողովրդի, մասնավորապես, նրա արևմտահայ հատվածի պատմական ճակատագրով։

Պատերազմների, բնական աղետների և այլ արհավիրքների պատճառով տուժած հայերին մշտապես օգնության ձեռք են մեկնել նախիջևանահայերը։ 1879 թ., երբ հայկական գաղութը նշում էր իր հիմնադրման 100-ամյակը[30], տոնախմբությանը հրավիրվում և հայերի ուրախությանը ակտիվ մասնակցում են Ռոստով քաղաքի քաղաքագլուխը, գեմստվոյի նախագահը, բանակի կառավարիչը, զինվորական մասի կառավարիչը և ուրիշներ։ Ուշագրավ է Բաքվի 1905 թ. փետրվարի հայ-ադրբեջանական ընդհարումների առիթով Դոնի հայության վերաբերմունքը։ Բաքվի քաղաքագլխի անունով ուղած հեռագրում Նոր Նախիջևանի քաղաքային դուման, անկեղծ ցավակցություն հայտնելով, նշում է ազգամիջյան չարդերը կանխելու գործում տեղական իշխանությունների կասկածելի դիրքը։ Դուման միաժամանակ քաղաքի միջոցներից 1000 ռ. գումար է ուղարկում Բաքու՝ ընդհարումների ժամանակ տուժած հայ և ադրբեջանցի բնակիչներին հավասարապես բաժանելու համար[31]։

Արևմտահայության վիճակը, նրա ազատագրության հարցը, ինչպիսի հանգամանքով էլ որ այն արտահայտվեր, արձագանք էր գտնում Նախիջևանում։ Երբ հայ ազգային-ազատագրական շարժման նշանավոր գործիչ Սարգիս Կուկունյանը 1906 թ. ազատվում է աքսորավայրից և Սիբիրից վերադառնում Անդրկովկաս, Նոր Նախիջևանում նրան արժանավայել ընդունելություն են կազմակերպում և մի քանի ամիս պահում իրենց մոտ։ Կազմակերպվում են հավաքույթներ Ս. Ալաչ վանքում, Մ. Նալբանդյանի և Ռ. Պատկանյանի շիրիմների վրա։ Չեկուցումով հանդես է գալիս նաև Կուկունյանը[32]։

Մայր հայրենիքի նկատմամբ ունեցած չերմ հետաքրքրությունը դրսևորվեց հատկապես առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։ Պատերազմը հայկական գաղթաշխարհում հայրենասիրական-ազատագրական շարժման լայն ալիք բարձրացրեց։ Հայկական շրջաններում, մասնավորապես, Դոնի հայության մեջ, տիրապետում էր այն ընդհանուր կարծիքը, որ ինչպես ժամանակին Արևելյան Հայաստանը, այնպես էլ այժմ Արևմտյան Հայաստանը, ռուսական զենքի հաջողության շնորհիվ ազատագրվելու է սուլթանական լծից և իր ճակատագիրն ընդմիշտ կապելու է Ռուսաստանի և ռուս ժողովրդի հետ։ Նախիջևանի դումայի դահլիճում կայանում է առաջին հասարակական հավաքը, որ հանդես է գալիս Քեմալական դպրոցի ուսուցիչ, ապագա ականավոր լեզվաբան Հր. Աճառյանը, արևմտահայ ազատագրական շարժումների և, մասնավորապես, Զեյթունի ապստամբության մասին զեկուցումով։ Իրավաբան Ս. Փորթուգալյանի ելույթը նվիրված էր արևմտահայ սահմանադրությանը։ Գր. Չալխուշյանը, խոսելով պատերազմի հետևանքով բացվող հեռանկարների մասին, Դոնի հայ հասարակությանը կոչ է անում ամեն կերպ նպաստել արևմտահայերի ազատագրմանը։

Նախիջևանի հոգևոր կառավարությունը որոշում է ժողովրդական հերոս Անդրանիկի նկարը 500 օրինակ տպագրել և տարածել տեղի հայության մեջ[33]։

---

30 Տե՛ս «Մշակ», 1879, № 214։

31 Տե՛ս ԲՄՊԱ, ֆ. 91, ց. 1, գ. 1268, թ. 3, 9—12։

32 Տե՛ս «Հայրենիք», 1955, № 4, էջ 83։

33 Տե՛ս «Դաղութ», 1914, № 33, 36։

Թուրքիայի դեմ պատերազմի մեջ գտնվող ռուսական զորքերի հաղթանակին նպաստելու համար սկսվում է կամավորական լայն շարժում։ Կովկասի նախադռներում գտնվող, աշխարհագրական հարմար դիրք և նյութական պայմաններ ունեցող Նոր Նախիջևանի հայաշատ գաղութը դառնում է հայկական գաղթաշխարհից կամավորների ընդունման, հանդերձավորման ու Կովկասյան ճակատ ուղարկելու կենտրոնավայրը։ 1914 թ. աշնանից Դոնի հայ համայնքից, Աստրախանից, Սիմֆերոպոլից, Յալթայից, Մարիուպոլից, Խարկովից, Մոսկվայից, Պետերբուրգից ժամանած բազմաթիվ կամավորական խմբեր են ձևավորվում Նախիջևանում և ուղարկվում Անդրկովկաս։ Հայկական կամավորական խմբեր են ժամանում արտասահմանյան հայ գաղութներից՝ Բուլղարիայից, Ռումինիայից, իսկ Արխանգելսկի վրայով՝ անգամ ԱՄՆ-ից և ճանապարհվում Կովկաս[34]։


Մ. Նալբանդյանի հուշարձանը Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքի բակում

Նոր Նախիջևանի հայկական գաղութը լայն գործունեություն ծավալեց արևմտահայ գաղթականությանն օգնելու համար։ Նա այդ նպատակով ստեղծել էր «Փախստականներին խնամող հատուկ հանձնաժողով», որը ոչ միայն հոգում էր գաղթականների ապրուստը, նրանց տեղավորում աշխատանքի, կազմակերպում երեխաների ուսուցումը, այլև սնունդ, հագուստեղեն ու դրամ էր հայթայթում Կովկասի տարբեր վայրերում պատսպարված գաղթականության համար։ Գաղթականությանն օգնելու շարժումը մեծ ծավալ էր ընդունել և համակել Դոնի հայկական զանգվածը. միայն Մեծ Սալա գյուղն այդ ժամանակ հանգանակում է 5.600 ռ.[35]։

Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքը դարձել էր ազգային նշանավոր գործիչների մի յուրատեսակ պանթեոն։ Նրա բակում են հանգչում Մ. Նալբանդյանի, Ռ. Պատկանյանի, Հ. Ալամդարյանի աճյունները[36]։ Նախիջևանի հասարակության միջոցներով մահարձաններ են դրվում և 1901 թ. կատարվում է Ռ. Պատկանյանի, իսկ հաջորդ տարին՝ Մ. Նալբանդյանի կիսանդրիների բացումը (երկուսի քանդակագործն էլ Ա. Տեր-Մարտիրյանն է)։

Ռ. Պատկանյանի մահարձանի բացման հանդեսին Ռուսաստանի հայաշատ տարբեր վայրերից ժամանած ներկայացուցիչների ելույթներից հետո հրապարակվում են նշանավոր գրողների, հասարակական գործիչների, «Մշակի» և «Մուրճի» խմբագրությունների, թեմական դպրոցների ուսուցչական կոլեկտիվների, Պետերբուրգի, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի, Էջմիածնի Գևորգ-

---

34 Տե՛ս նույն տեղում, № 19, 30, 32։

35 Տե՛ս ՀԱՍՀ ԿՊՊԱ, ֆ. 5, ց. 1, գ. 134, թ. 35։

36 Վերջերս վերականգնվեց, բարեկարգվեց Ս. Խաչ վանքն ու նրա բակը, և այստեղ բացվեց հայ և ռուս ժողովուրդների բարեկամության նվիրված թանգարան։

յան ճեմարանի ուսանողության հեռագրերը։ Մոսկվայի պատգամավոր Ալ. Մատուրյանը հայ ուսանողության ուղերձը հրապարակելուց հետո ընթերցում է գեոևս անտիպ իր «Ուր ես հայ բլբուլ» հայտնի բանաստեղծությունը, որը մեծ տպավորություն է գործում ներկաների վրա[37]։ Հայ մեծ գործիչների մահարձանների բացումը վերածվում է հայ գրականության ու մշակույթի ազգային հանդեսների։

1912 թ. Նոր Նախիջևանում ամբողջ աշակերտության մասնակցությամբ նշվում են հայ գրերի գյուտի 1500 և տպագրական գործի 400-ամյա տարելիցները։ Քաղաքի հասարակության անունից Հայաստան ուղարկած ուղերձում շեշտված էր, որ իրենք գլուխ են խոնարհում «Մեր սրբի աճյունի առաջ, սրբի, որը տվեց մեզ այրուբեն...»[38]։ Նախիջևանի քաղաքային թատրոնի շենքում կազմակերպվում է Գ. Հովսեփյանի հրապարակային դասախոսությունը հայ միջնադարյան արվեստի և մանրանկարչության մասին։ Զ. Եսայանը զեկուցում է կարդում «XIX դ. վերջի և XX դ. սկզբի ռանկահայ գրականությունը» թեմայով։ Քաղաքի գրական-գեղարվեստական ընկերությունը բավական ընդլայնված նշում է Մ. Նալբանդյանի մահվան 50-ամյակը։ Կատարվում են գաղութի և մայր ժողովրդի հոգևոր-մշակութային առնչությունները ու սերտ կապերը հատկանշող բազմաթիվ այլ միջոցառումներ։



Ռ. Պատկանյանի հուշարձանը Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքի բակում

Նոր Նախիջևանում ժամանակի պահանջներին համապատասխան ուսումնական հաստատություն ունենալու հարցը տեղի մտավորականությունը մտահոգել է տակավին XIX դարի սկզբներից, սակայն տարբեր հանգամանքների բերումով այն մնացել էր անիրագործելի։ Դոնի հայ հասարակությունը, լսելով Թեոդոսիայի Խալիբյան ուսումնարանի փակման լուրը, 1871 թ. դիմում է կաթողիկոսին՝ այն Նոր Նախիջևան փոխադրելու և թեմական դպրոցի վերափոխելու խնդրանքով։ Ուսումնարանը նախատեսվում էր բացել 1875 թ., սակայն կանոնադրություն չունենալու պատճառով կառավարությունը արգելում է։ Երկարատև նախապատրաստություններից հետո 1880 թ. բացվում, և հաջորդ տարվանից պարապմունքներն սկսվում են Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի թեմական դպրոցներում։ Թեմական դպրոցը միջնակարգ ուսումնարանների ծրագրի համապատասխան գիտելիքներ էր տալիս։ Այնտեղ ընդունվում էին ժողովրդի բոլոր խավերի զավակները։ Դպրոցը պահվում էր Նախիջևանի քաղաքային գումարների, հատկապես Մոսկվայի, Պետերբուրգի, Ղրիմի, Գրիգորիոպոլի և Դոնի ավազանի հայկական եկեղեցիներից ստացվող հասույթների հաշվին։

37 Տե՛ս Գ. Չալխուշյան, Մտքեր, խոհեր, դեմքեր, Թիֆլիս, 1914, էջ 66—73։
38 Նույն տեղում, էջ 145։

Նույն տարում Ռ. Պատկանյանի և նրա համակիրների ջանքերով բացվում է արհեստավորական դպրոցը։ Դպրոցի շենքի մուտքի վրա գրված էր «Բանուկ ձեռքը չի մուրալ» բանաստեղծի սիրած խոսքերը։ Մատնագիտացված այդ ուսումնարանը տալիս էր տարրականից բարձր հանրակրթական գիտելիքներ և ուներ փականագործական, ատաղձագործական ու կոշկակարական բաժիններ։ Վաճառական Մ. Գոգոյանը իր ողջ ունեցվածքը կտակել էր (1865 թ.) Նոր Նախիջևանում իգական դպրոց հիմնելու համար։ 1882 թ. հանդիսավոր արարողությամբ բացվում է Գոգոյան օրիորդաց դպրոցը, ուր ուսման տևողությունը վեց տարի էր։ Հանրակրթական առարկաներից զատ տրվում էին նաև ձեռագործի դասեր։ Դպրոցը մտնում էր կայսրուհու տնօրինության ներքո գտնվող գիմնազիաների շարքը և իրավունքներով հավասարեցվում նրանց[39]։ Այս դպրոցը կարևոր դեր կատարեց գաղութի իգական սեռի կրթության գործում։ Ուսումնական հաստատություններից կարևոր էր նաև 1860-ական թվականների վերջերից ս. Խաչ վանքում գործող Մատանագործաց դպրոցը, որը պահվում էր Մարդասիրական ընկերության միջոցներով։ Հիմնական այս չորս ուսումնարաններից բացի բաղաքում և գյուղերում կային եկեղեցական-ծխական այլ դպրոցներ։

Դոնի հայկական գաղութում հիմնավորվեց և բավական զարգացում ապրեց թատերական գործը։ Տեղի մտավորականությունը հատուկ սեր ուներ դեպի թատրոնը և ամեն կերպ ջանում էր պայմաններ ստեղծել մշակույթի այդ ճյուղի համար։ Թատերական արվեստի առաջադիմությանը նպաստում էին անվանի հայ դերասանների հյուրախաղերը։ Այդ տեսակետից մեծ է հատկապես Պ. Ադամյանի դերը։ 1880-ական թվականների ձմռան ամիսներին երեք անգամ նոր Նախիջևան է գալիս հռչակավոր դերասանը, ներկայացումներ կազմակերպում, մտերմանում Ռ. Պատկանյանի հետ, աշխույժ մտցնում տեղի թատերական կյանքում և առհասարակ դեպարվեստական կրթության բնագավառում։ Պատահական չէ, որ Ադամյանի մահվան 10-ամյակը հատուկ նշվում է նոր Նախիջևանում, թատրոնի շենքում դրվում է նրա կիսանդրին։ Հետագայում Նախիջևան են այցելում և Ադամյանի գործը շարունակում Սիլանուշյը, Արմենյանը, Արեյյանը։

Նոր Նախիջևանում կազմակերպվում է «Թատերական արվեստ սիրողների ընկերություն», որի ակտիվ գործիչներ Գ. Զութարի, Ա. Խաղամյանի ջանքերով տեղում մշտական ներկայացումներ են տրվում։ 1890-ական թվականների վերջերին կառուցվում է թատրոնի հարմարավետ շենք, որը սկսք է կոչվեր Մ. Նալբանդյանի անունով, սակայն, կառավարական արգելքներից խուսափելով, անվանվում է «Հայրապետյան թատրոն»։ Այդ թատրոնում հայերեն և ռուսերեն լիզուներով տարեկան 5—10 ներկայացումներ էին կազմակերպվում[40]։

Գաղութի մշակութային կյանքին մեծապես նպաստում էին բարեգործական հաստատությունները։ Նրանց միջոցներով XX դարի սկզբներին Թուրաստանի կենտրոնական քաղաքներում և արտասահմանում ուսանում էին հարյուրից ավելի ուսանողներ։ Նոր Նախիջևանի բարեգործական ընկերությունը,

39 Տե՛ս ՀՍՍՀ ԿԳԱԿ, ֆ. 11, գ. 13, թ. 20—23։
40 Տե՛ս «Մշակ», 1904, № 122։

որի կանոնադրությունը կազմել էր Ս. Նազարյանը, հրատարակեց Մ. Նալբանդյանի երկերի երկհատորյակը, Ռ. Պատկանյանի եռահատորը։

Գաղութում հայկական թերթ ստեղծելու գաղափարը հասունացել էր դեռևս 1870-ական թվականներից։ Սակայն միայն ռուսական առաջին հեղափոխության շնորհիվ երկրում ստեղծված իրավիճակը հնարավոր դարձրեց իրականացնել այդ մտահղացումը։ 1905 թ. Ս. Սրապիոնյանը հրատարակում է «Նոր խոսք» ամսագիրը, հաջորդ տարին մի խումբ երիտասարդների նախաձեռնությամբ տպագրվում է «Նոր կյանք» շաբաթաթերթը։ Ապա հրատարակվում են «Մեր ձայները», «Լույս», «Գրիչ», «Գաղութ» և տարբեր ուղղություններ շուրջ մեկ տասնյակ պարբերականներ։ Բացի այդ Ռոստովում հրատարակվող կարևոր մի շարք թերթերի խմբագիրներ նոր նախիջևանցիներ էին («Приазовский край»—Ս. Հարությունյան «Донская речь»—Մ. Բերբերյան և այլն)։ Այդ թերթերում ևս տպագրվում էին հայ գաղութի, հատկապես նրա հասարակական ու մշակութային կյանքին վերաբերող նյութեր։

2. ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Հյուսիսային Կովկասի՝ Կուբանի, Թերեքի, Դաղստանի մարզերում, Ստավրոպոլի և Սևծովյան նահանգներում զգալի թվով հայեր էին ապրում։ Դաղստանի, Թերեքի և Ստավրոպոլի շրջանների հայերը տարբեր վայրերից այստեղ էին եկել գլխավորապես XVIII դարի երկրորդ և XIX դարի առաջին կեսերին, իսկ Կուբանի և Սևծովյան շրջանների հայերը՝ հիմնականում XIX դարի երկրորդ կեսին։ Վերջիններս Թուրքիայում կիրառվող բռնություններից փախած արևմտահայեր էին, որոնք բնակվում էին գլխավորապես գյուղերում։ Բացառություն էր կազմում Արմավիրը, ուր հայերը եկել էին Չերքեզիայից։

Հյուսիսային Կովկասի արևելյան շրջաններում բնակվող հայերի հիմնական մասը կենտրոնացած էր Ղզլար, Մոզդոկ և Սուրբ Խաչ (Պրիկումսկ) քաղաքներում։ 1880-ական թվականներին Մոզդոկում և նրան կից խուտորներում ու գյուղերում հաշվվում էր 3900, Ղզլարում և նրա մերձակայքում՝ 3800, իսկ Սուրբ Խաչում՝ 3600 հայ[41]։

1897 թ. մարդահամարի տվյալների համաձայն Հյուսիսային Կովկասի հայ բնակչության թիվը կազմում էր 42.636, այդ թվում Կուբանի մարզում՝ 14.793, Թերեքի մարզում՝ 14.544, Սևծովյան նահանգում՝ 6.283, Ստավրոպոլի նահանգում 5.364 և Դաղստանի մարզում՝ 1752[42]։ Հայերի քաղաքային բնակչության թիվը կազմել է 33.676 կամ 79,1%[43], Սևծովյան նահանգում, ի տարբերություն մյուս շրջանների, քաղաքային բնակչությունը շնչին տոկոս է կազմել (8%-ից պակաս)։

Հյուսիսային Կովկասի արևմտյան մասերում բնակեցումը այլ կերպ էր ընթանում։ 1862 թ. Հյուսիսային Կովկասի Սևծովյան ափերին երեսց արևմտահայ գաղթականների առաջին խումբը, որը հաստատվեց Անապայում։ 1864 թ. մի քանի հայ ընտանիք հանգրվանեցին Շափսուղո գետի ափին, հիմ-

41 Տե՛ս «Кавказский календарь на 1903 г.», Тифлис, 1902, отд. 3, стр. 44—45.

42 Տե՛ս «Первая всеобщая перепись Российской империи 1897 г.— Общий свод по империи», СПб., 1905, кн. 1, табл. XII, стр. 256.

43 Տե՛ս նույն տեղում, էջ 264։

նադրելով հայկական անդրանիկ բնակավայրը Սևծովյան նահանգում՝ Արմյանսկայա գյուղը[44]։

Արևմտահայերի բնակեցումն այս շրջաններում կատարվեց երկու փուլով. նախ, հայերը տեղավորվեցին Սևծովյան ափերի երկայնքով, և ապա, (1877-ից) նրանք աստիճանաբար տեղափոխվեցին Անդրկուբանյան գոտի, որն ամայացել էր Հյուսիսային Կովկասի չերքեզների Թուրքիա հեռանալուց հետո։ Հետագայում նրանց միացան արևմտահայերի նոր խմբեր։

1860-ական թվականներին ցարական կառավարությունը ձգտում էր Կովկասի Սևծովյան ափերը բնակեցնել ռուսներով, ինչպես նաև Թուրքիայից դեպի Սևծովյան ափերը ձգտող հայ և հույն փախստականներով։ Բնակեցման նոր կանոնների համաձայն այդ օտարահպատակներին տրվում էին նույն իրավունքները, ինչ ռուս վերաբնակներին։ 1885 թ. Կուբանի մարզում բնակվում էին 8715 հայեր, որոնց ճնշող մեծամասնությունը (7237 մարդ)՝ գյուղերում[45]։

XIX դարի երկրորդ կեսից սկսած Կովկասի նախալեռների էռանդուն բնակեցման, երկաթուղիների կառուցման, առևտրական նոր ուղիների բացման հետևանքով ծայր է առնում հայ բնակչության հոսքը հին գաղթավայրերից դեպի տնտեսական նոր կենտրոնները և աճող քաղաքները։ Այսպես, 1889 թ. Վլադիկավկազում արդեն բնակվում էր 1730, կովկասյան հանքային ջրերի քաղաքներում (Պյատիգորսկ, Կիսլովոդսկ)՝ 3000, Ստավրոպոլում՝ 1400 հայ։ 1890-ական թվականների արևմտահայերի զանգվածային կոտորածներից հետո ուժեղացավ նրանց բնակեցումը Հյուսիսային Կովկասում։ Սև ծովի ափերին հայերի բնակության հիմնական վայրը Սոչիի շրջանն էր։ 1890-ական թվականներին Հյուսիսային Կովկասի ողջ հայ բնակչության թիվը հաշվվում էր 33.575 մարդ, որոնց մեծ մասը՝ 17.722-ը, ապրում էր Թերեքի մարզում։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Սևծովյան նահանգում ապրում էր ավելի քան 15 հազար, իսկ Կուբանի մարզում՝ 21 հազար հայ[46]։ 1915 թ. արևմտահայության ցեղասպանությունը պատճառ դարձավ հայ փախստականների նոր զանգվածային հոսքի դեպի Սևծովյան նահանգ և Կուբանի մարզ։ 1916 թ. սկզբին նոր եկած փախստականների քանակը Կուբանի մարզում կազմում էր 10 հազար, իսկ Սևծովյան նահանգում՝ 2300 մարդ։ 1920 թ. հայերի թիվը այդ նույն շրջաններում արդեն հասել էր 58.338-ի[47]։

Հյուսիսային Կովկասի հայ գաղթականները նշանակալի դեր խաղացին երկրամասի տնտեսական և մշակութային կյանքում, մասնավորապես ներքին և արտաքին առևտրի զարգացման գործում։ Նրանք նպաստեցին լեռնականների նահապետական տնտեսությունը ապրանքադրամական շրջանառության մեջ ներքաշվելուն։

Ղզլարի, Մոզդոկի, Սուրբ Խաչի շրջանների հայկական գյուղերի բնակչության մեծ մասը զբաղվում էր գլխավորապես այգեգործությամբ, խաղողա-

44 Տե՛ս Կրասնոդարի երկրամասի պետական արխիվի նավրոսիյսկի մասնաճյուղ, ֆ. ո—9, ց. 1, գ. 685, թ. 87։

45 Տե՛ս «Кавказский календарь на 1893 год», Тифлис, 1892, отд. 3, стр. 48.

46 Տե՛ս Կրասնոդարի երկրամասի պետական արխիվ, ֆ. 454, ր. 2, գ. 96, թ. 199։

47 Տե՛ս Н. Г. Волкова, О расселении армян на Северном Кавказе до начала XX в., ИФЖ, 1966, № 3, стр. 267; В. Л. Адобашян, Из истории армянского населения на территории Краснодарского края, «Вестник общ. наук» АН АрмССР, 1968, № 7, стр. 53—54.

գործությամբ, անասնապահությամբ, գինեգործությամբ, բանջարաբուծությամբ ու մեղվաբուծությամբ։ Քաղաքային բնակչության հիմնական մասն արհեստավորներ էին ու մասամբ առևտրականներ, որոնք առավելապես զբաղվում էին կաշեգործությամբ, գինեգործությամբ և դրանց արտադրանքի վաճառքով։

Կուբանում և Մերձսևծովյան գյուղերում հաստատված բնակչության հիմնական զբաղմունքը այգեգործությունը և ծխախոտագործությունն էր։ Ի դեպ, այդ վայրերում ծխախոտի մշակության զարգացումը գերազանցապես կապված է Արևմտյան Հայաստանից գաղթած հայ բնակչության գործունեության հետ։ Սևծովյան նահանգի հայկական գյուղերի տնտեսական կյանքում մեծ տեղ ուներ նաև եգիպտացորենի ու արևածաղկի մշակությունը։ 1861 թ. գյուղացիական ռեֆորմից հետո հողեր հատկացվեցին միայն բնիկ, տեղացի հաստատվող հայերին։ Նրանցից ունևորներն սկսեցին հող գնել և սեփականատեր դառնալ մասնատիրական իրավունքով[48]։

Արմավիրում և Նկատերինոդարում հաստատված լեռնաբնակ հայերի մոտ զարգանում է գյուղատնտեսական մթերքների նախնական մշակման արդյունաբերությունը։ 1875 թ. Հովհաննես Տարասովը բամբակի մշակման ֆաբրիկա է բացում Արմավիրում։ XX դարի սկզբներին հայկական փոքր գաղթավայր Արմավիրը դառնում է բավական խոշոր առևտրաարդյունաբերական կենտրոն։ Կուբանի մարզում իրենց հարստությամբ աչքի էին ընկնում Ավետով եղբայրները, որոնք Արմավիրում ունեին ձիթհան գործարաններ և շուրջ 1,5 միլիոն ռուբլու դրամագլուխ։

Հյուսիսային Կովկասի մյուս առևտրական կենտրոնը, որը նկատելիորեն առանձնացավ XIX դ. վերջին և XX դ. սկզբին, Գրոզնին էր։ Հայ վաճառականներ Ռոստանովը, Կաֆյանցը, Դեմիդովը և ուրիշներ առևտուր էին անում լեռնականների հետ։ Հայ վաճառականներն իրենց ձեռքում էին կենտրոնացրել «կարմիր» ապրանքների (այսինքն՝ գործվածքեղենի) առևտուրը։ Գրոզնում և նրա շրջակայքում նավթային արդյունաբերության զարգացման գործում կարևոր դեր խաղացին հայ արդյունաբերողներ Մայիլովը, Տեր-Գրիգորյանը, Պարոնյանը, Խոյեցյանը, Տեր-Միքայելովը, Ավակիմովը, Խաչատուրովը, Ավագովները, Ծատուրովների ու Ախվերդովների ընկերությունները։ «Ախվերդով և ընկ.» ֆիրման նավթի հանույթի գծով ժամանակի ամենախոշոր ընկերություններից էր[49]։

XX դարի սկզբին Նկատերինոդարում գործում էին Պետրոսովի ծխախոտի ֆաբրիկան, Մայկոպում՝ Թերլիևի և Մակուսանովի ծխախոտի ու խարատանովի ձիթհան գործարանները[50]։ 1912 թ. միայն Արմավիրում հայ ձեռնարկատերերի տնօրինության տակ էին գտնվում 40 մեծ ու փոքր ձեռնարկություններ։ Հայերի առևտրաարդյունաբերական գործունեությունն զգալի էր Կուբանի մարզի տնտեսության զարգացման գործում։

Հյուսիսային Կովկասի հայերի իրավական վիճակը միանման չէր։ Ղզլարում, Մոզդոկում և Սուրբ Խաչում հայերի ունեցած երբեմնի արտոնությունները գրեթե վերացել էին։ Այս քաղաքներում 1840-ական թվականներին,

---

48 Տե՛ս Ф. Щербина, История Армавира и черкезогаев, Екатеринодар.

49 Տե՛ս В. Л. Айрапетян, Из истории поселения армян на Северном Кавказе и их торгово-экономической деятельности. «Բանբեր Հայաստանի արխիվների», 1974, № 1, էջ 175։

50 Տե՛ս «Кубанский календарь на 1902 год», Екатеринодар, 1901.

հայկական դատարանի վերացումից հետո, որպես համայնքների ղեկավարներ ընտրվեցին ընտրովի ավագները, որոնք վարում էին հարկերի բաշխման գործը և հետևում նրանց կատարման ընթացքին։ Հայերի միջև ծագած վեճերի լուծման համար գործում էին բանավոր դատարաններ։

Արմավիրում հաստատված լեռնաբնակ հայերի մոտ ևս գոյություն ուներ որոշ ինքնավարություն։ Նրանք գումարում էին ժողովներ և իրենք էին տնօրինում իրենց վարչական, դատական ու կուլտուրական գործերը։ Ի տարբերություն բնիկ արմավիրցիների Արևմտյան Հայաստանից գաղթած հայերի մեծամասնությունը ռուսական հպատակություն չուներ և գրկված էր քաղաքական ու քաղաքացիական իրավունքներից։ Վերաբնակման հենց առաջին տարիներին հայերը հարց էին հարուցել ռուսահպատակություն ընդունելու մասին, սակայն այդ խնդիրը այդպես էլ չլուծվեց։ Հայերին թույլատրվում էր ապրել իրենց ընտրած վայրերում և հողից օգտվել միայն վարձակալական իրավունքով, մնալով թուրքահպատակ։ 1913 թ. տվյալներով Սևծովյան նահանգում ապրող հայերի միայն 11 տոկոսն էր համարվում տեղական բնակիչ, իսկ մնացած 89 տոկոսը՝ «ժամանակավոր բնակիչներ» էին։ Կուբանի մարզում «ժամանակավոր բնակիչները» (հայեր և հույներ) կազմում էին 57,6 տոկոսը, Դաղստանում՝ 90 տոկոսը, Թերեքի մարզում՝ 32,4 տոկոսը[51]։

Կուբանում (Արմավիրում) առաջին հայկական դպրոցը բացվել է 1846, իսկ երկրորդը՝ 1865 թ.։ Ուսուցումը հայերեն էր. ավանդվում էին ռուսաց լեզու, թվաբանություն, երդեցողություն, գեղագրություն և կրոն։ 1869 թ. Արմավիրում բացվեց նաև հայկական իգական ուսումնարան։

Հայ գաղթականները, հաստատվելով Հյուսիսային Կովկասում, հոգ են տանում ազգային դպրոցներ հիմնելու մասին։ Հին հայկական գաղթավայրերում՝ Ղզլարում, Մոզդոկում, Սուրբ Խաչում· Արմավիրում, Ստավրոպոլում ազգային դպրոցներ հիմնվել էին դեռևս 1840-ական թվականներին, որոնք աստիճանաբար բարեկարգվելով, որոշակի մակարդակ էին ձեռք բերել։ 1870-ական թվականներից ծխական դպրոցներ են երևան գալիս մի շարք գյուղական վայրերում, հիմնվում են նաև իգական դպրոցներ։ 1912 թ. Հյուսիսային Կովկասի հայաբնակ վայրերում գործող ազգային տարրական դպրոցների թիվը հասնում է 34-ի (որից 13-ը Սևծովյան նահանգում, իսկ 10-ը Թերեքի մարզում)։ Այդ բոլոր դպրոցներում սովորում էր մոտ 2300 երեխա[52], ընդ որում, տղաների և աղջիկների ուսուցումը մեծ մասամբ կատարվում էր համատեղ։ Բազմաթիվ հայ պատանիներ ու աղջիկներ, գլխավորապես ունևոր ընտանիքներից, սովորում էին պետական և մասնավոր ռուսական դպրոցներում։

Հյուսիսային Կովկասի հայ բնակչության շրջանում միշտ հետաքրքրություն կար ազգային մշակույթի նկատմամբ. տեղերում գործում էին թատերական խմբակներ, դպրոցներին առընթեր՝ ազգային գրադարաններ և այլն։ Հյուսիսային Կովկասում իրենց ստեղծագործական առաջին քայլերն արեցին սովետական նշանավոր թատերական գործիչ Ե. Բ. Վախտանգովը (Վլադիկավկազ), սովետահայ բեմի նշանավոր վարպետ Վ. Բ. Վաղարշյանը (Նեալեքսինոդար), կոմպոզիտոր Ռ. Մելիքյանը (Ղզլար)։

51 Տե՛ս «Кавказский календарь на 1914 год», Тифлис, 1913, отд. 2, стр. 115, 131, 135, 139.

52 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊԳԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1905, թ. 21—22։

Ազգային հալածանքներն ու սոցիալական ճնշումները հայ աշխատավոր զանգվածներին մղում էին դաշնակիցներ փնտրելու ինչպես ազգային փոքրամասնությունների, այնպես էլ ռուս դեմոկրատական-հեղափոխական խավերի մեջ, որոնք XIX դարի վերջին տասնամյակներին սկսել էին ստեղծել իրենց կազմակերպությունները։ 1880-ական թվականներին Ռոստովում կազմակերպված Պետերբուրգի եղբայրների նարոդնիկական խմբակը կապ ուներ Հյուսիսային Կովկասի քաղաքներում բնակվող հեղափոխականորեն տրամադրված հայերի հետ։

XX դարի սկզբին Ռուսաստանում ծավալված հեղափոխական շարժումն իր ոլորտի մեջ առավ նաև Հյուսիսային Կովկասի ժողովուրդներին։ Հյուսիսային Կովկասի հայերը 1905—1907 թթ. ակտիվ մասնակցություն ունեցան երկրամասում ծավալված հեղափոխական շարժումներին։ Մոչիի հայերն ընդգրկվել էին ՌՍԴԲԿ տեղական կազմակերպության ստեղծած մարտական դրուժինայի՝ ժողովրդական միլիցիայի կազմում[53]։ Բոլշևիկյան կուսակցության ակտիվ գործիչ Վաղրամ Ավանեսովը 1905—1907 թթ. հեղափոխական գործունեություն էր ծավալել Ստավրոպոլում։

Հյուսիսային Կովկասից էին բոլշևիկյան կուսակցության մի շարք նշանավոր գործիչներ՝ Վ. Ի. Լենինի զինակից Իսահակ Լալայանցը (Ղզլարից), կին հեղափոխական Նինա Ալաջալովան (Եկատերինոդարից) և ուրիշներ։

3. ԱՍՏՐԱԽԱՆ

Աստրախանի հայերը XIX դարի վերջին և XX դարի սկզբներին կարևոր դեր էին խաղում քաղաքի տնտեսական և մշակութային կյանքում։ Նրանց թիվը XIX դարի կեսերին հասնում էր մոտավորապես հինգ հազարի։ 1894—1896 թթ. Թուրքիայում տեղի ունեցած հայերի մասսայական կոտորածների հետևանքով Ռուսաստան ապաստանած գաղթականությունը ներթափանցում է նաև Աստրախան և XX դարի սկզբներին տեղի հայ ազգաբնակչության թիվը հասնում է 7,5—8 հազարի[54]։

Հայ ազգաբնակչության քանակը Աստրախանում կրկնապատկվեց Թուրքիայում 1915 թ. հայկական կոտորածներից և առանձնապես 1918 թ. աշնանը Բաքվի կոմունայի անկումից հետո, հասնելով շուրջ 15 հազար մարդու։

XIX դարի կեսին կապիտալիստական հարաբերությունների աշխուժացման շնորհիվ Աստրախանը դարձավ նավահանգստային խոշոր քաղաք։ Բուռն զարգացում ապրեցին հատկապես ձկնարդյունաբերությունը, նավաշինությունը, նավագնացությունը։ Մեծ չափերի հասան նաև նավթամթերքների փոխադրումները։ Աստրախանի նշանակությունն ավելի մեծացավ, երբ կառավարության հաստատած նոր օրենքով 1883-ից տարանցիկ առևտուրը թույլատրվեց ոչ թե Անդրկովկասի, այլ միայն Աստրախանի վրայով։ Առևտրական գործառնություններին և մասնավորապես նիժնի-նովգորոդում կազմակերպվող տոնավաճառներին գործուն մասնակցություն էին ունենում նաև հայ վաճառականները։

---

53 Տե՛ս Л. С. Тулумджян, Из истории революционного движения в Сочинском округе (1905—1907). Сухуми, 1958, стр. 104.

54 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊԱ, ֆ. 1281, ց. 6, գ. 59, թ. 98, 102, ֆ. 821, ց. 140, գ. 135, հավելված։

Աստրախանի հայկական բնակչության մեծ մասը կազմում էին արհեստավորությունը և աշխատավոր այլ խավերը. բնակչության փոքր և ունևոր մասը հիմնականում ծավալել էր առևտրաարդյունաբերական գործունեություն։ 1904 թ. տվյալներով, քաղաքի 1230 ձեռնարկություններից ու խանութներից 197-ը պատկանում էր հայերին[55]։

Հայերը մեծ դեր էին խաղում մրգեղենի, ծխախոտի, ինչպես և անասունների ու ձկնեղենի առևտրի մեջ։ Մի քանի խանութ ու ձեռնարկություն ունեին ձկնարդյունաբերողներ և անասնավաճառներ՝ Դ. Գ. Ազաքաբովը։ Միզանդրոնցև եղբայրները և ուրիշներ։ XIX դարի կեսերին կենտրոնական Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերության զարգացման, ինչպես նաև արտասահմանյան գործվածքեղենի ներմուծման հետևանքով նվազում և վերջնականապես անկում են ապրում Աստրախանի բամբակագործական ձեռնարկությունները, որոնց տերերը և կամակատարները ավանդաբար տեղի հայերն էին։

XIX դարի վերջին Աստրախանի հայերը ակտիվորեն մասնակցում են Բաքվից Աստրախան և Վոլգայով դեպի հյուսիս նավթափոխադրման գործում։ Այդ ասպարեզում հատկապես նշանակալից էր ատրախանցի Արտեմով եղբայրների կողմից 1873 թ. նավթամուղ սիստեմի կիրառումը։

Դարավերջին Աստրախանի հայերն ատիճանաբար կորցնում են իրենց հատուկ ինքնավարությունը։ Նրանք պահպանեցին միայն բանավոր դատավարությունը, աշխատելով հնարավորին չափ խուսափել պետական դատարանին դիմելու անհրաժեշտությունից։ Ամեն տարի հայկական համայնքն ընտրում էր ավագ (ստարոստա), որը պատասխանատու էր քաղաքային դումայի առաջ՝ հայերից գանձվող հարկերի համար։ Նրանք, ովքեր անցնում էին ռուսական վաճառականության, ազնվականության շարքերը և կամ մտնում պետական ծառայության մեջ, հայկական համայնքից դուրս էին համարվում։ 1870 թ. քաղաքային ռեֆորմից հետո պահպանվեցին հայկական համայնքի ոչ մեծ արտոնությունները, որոնց համաձայն Աստրախանում բնակվող հայերն ու նրանց ժառանգներն ազատվում էին զինվորական պարտակից, իսկ պետական հարկը վճարում էին 50 տոկոսով։

Աստրախանի հայերի հասարակական կյանքում մեծ դեր էին խաղում ազգային դպրոցները։ Ամենախոշոր ուսումնական հաստատությունը Ազաքաբյան դպրոցն էր։ Ընդհանուր դպրոցի սովորողների մեծ մասը հայեր էին, սակայն առարկաների դասավանդումը հիմնականում տարվում էր ռուսերեն։ XIX դարի երկրորդ կեսին սկսում են գործել մի քանի հայկական ծխական դպրոցներ, իսկ XX դարի սկզբին բացվում է հայկական օրիորդաց չորսդասյա դպրոցը։ XIX դարի սկզբից հայկական կոնսիստորիային կից Աստրախանի հոգևոր թեմը հիմնականում ընդգրկում էր ողջ Հյուսիսային Կովկասի և Միջին Ասիայի հայաբնակ վայրերը. գոյություն ուներ նաև հոգևոր դպրոց։ Հայերը Աստրախանում ստեղծել էին ռուսական մասնավոր ուսումնական հաստատություններ, որոնցից աչքի էին ընկնում Ն. Ս. Շավերդովայի օրիորդաց գիմնազիան և Գ. Ս. Սորոլևի ռեալական ուսումնարանը։ Հայերը ուսանում էին նաև պետական դպրոցներում։

Աստրախանի հայության կյանքում աչքի ընկնող դեր էին խաղում բարե-

---

55 Տե՛ս «Вся Астрахань и весь Астраханский край. Памятная книжка Астраханской губернии на 1905 г.», Астрахань, 1904.

գործական ընկերությունները։ XX դարի սկզբին հոգևոր հոգաբարձությունը կազմակերպել էր անկելանոց և արհեստագործական դպրոց, իսկ կանանց բարեգործական ընկերությունը՝ կարի ու ձևի դպրոց և նպաստամատույց հանձնաժողով։ 1910—1911 թթ. աստրախանաբնակ հասարակական գործիչ Թումանոս Աստվածատուրյանի ղեկավարությամբ ստեղծվեց հայ արվեստասերների ընկերություն, իսկ 1917 թ.՝ հայկական թատերական ընկերություն։ Մեծ ժողովրդականություն էին վայելում հյուրախաղերի եկած հայ բեմի նշանավոր վարպետներ Պետրոս Ադամյանը, Սիրանույշը, Հովհաննես Աբելյանը և ուրիշներ։ Աստրախանում է ծնվել նշանավոր օպերային երգչուհի Նադեժդա Պապայանը։

Աստրախանի հայկական գաղութի հասարակական կյանքի ճանաչված դեմքերից է հայտնի բժիշկ-համաճարակագետ շուշեցի Մարգար Առուստամյանը, որը մասնակցել է 1892 թ. Աստրախանում տարածված խոլերայի և 1899 թ. Աստրախանի ու Ղազախստանի տափաստաններում բռնկված ժանտախտի համաճարակների դեմ տարվող պայքարին։ Նրա գործունեությունը նկարագրված է նշանավոր ռուս գրող Վ. Գ. Կորոլենկոյի «Ինը ֆունտանոց ռեյգի կարանտին» պատմվածքում։

Ռուսաստանի և Կովկասի հասարակական-քաղաքական տարբեր հոսանքների ու կուսակցությունների գործունեությունն իրենց արձագանքն էին գտնում նաև Աստրախանում։ Սիբիրյան աքսորից Աստրախան եկած Ն. Գ. Չերնիշևսկին հաստատվում է հայկական թաղամասում (1883—1889 թթ.) և բնակարան վարձում հայերի (նախ Խաչիկովների, իսկ հետո Ջանումովների) տանը, ծանոթություն հաստատում Ավետովների, Մելքումովների, Սուքիասովների և ուրիշ հայ ընտանիքների հետ։ Այդ տարիներին Չերնիշևսկու քարտուղար Կ. Մ. Ֆեդորովը վկայում է, որ «այն մարդիկ, որոնք առաջինը եկան ու բարոյական և մասամբ դրամական օգնություն ցույց տվին բազմաչարչար Չերնիշևսկուն և նրա ընտանիքին, որը համարյա հուսահատության էր հասել դրամի ապարդյուն որոնումների մեջ՝ Աստրախան գալու առաջին ամիսներին, որտեղ նա չուներ բարեկամներ, ոչ ծանոթներ, Աստրախանի հայերն էին»[56]։

Աստրախանի հասարակական կյանքն զգալի վերելք ապրեց ռուսական առաջին հեղափոխության տարիներին։ 1907—1908 թթ. այստեղ հրատարակվում է «Լրաբեր», իսկ 1909—1910 թթ. «Մեր կյանքը» թերթը։ 1912—1914 թթ. Աստրախանում բուռն գործունեություն էր ծավալել Ստ. Շահումյանը։ Աստրախանում ապրող հեղափոխական գործիչներ Ն. Նարիմանովի, Ա. Խումարյանի և ուրիշների հետ Ստ. Շահումյանը նոր շունչ տվեց քաղաքի ու երկրամասի հեղափոխական կազմակերպություններին։ Փետրվարյան հեղափոխության հաղթանակից հետո, 1917 թ. օգոստոսին, լույս է տեսնում «Աստրախանսկի րաբոչիյ» (այժմ՝ «Վոլգա») բոլշևիկյան թերթը, որի խմբագիրն էր Աշոտ Խումարյանը, որը 1918 թ. փետրվարին՝ Աստրախանում սովետական կարգերի հաստատումից հետո նշանակվում է ժողկոմխորհի առաջին նախագահ։

56 Գ. Ն. Հովհան, Ռուս-հայ գրական կապերը 19—20-րդ դարերում, գիրք առաջին, Երևան, 1960, էջ 211։

Մարզային կուսակցական կոմիտեի ցուցումով և կոմունիստների նախաձեռնությամբ 1919 թ. ստեղծվում է ՌԿ(բ)Կ Աստրախանի կազմակերպության հայկական սեկցիան։ Այդ սեկցիան փաստորեն գործում էր դեռևս 1918 թ.՝ «Հայ կոմունիստների խումբ» անվամբ, որի կազմում էին հայտնի հեղափոխականներ Ա. Խումարյանը, Հ. Գյուլիքևխյանը, Մ. Ջալաբյանը, Հ. Սոլովյանը, Ի. Լազյանը և ուրիշներ։ Խումբը 1919 թ. հունվարից լույս է ընծայում «Կարմիր բանվոր» թերթը։ Հայ կոմունիստների ջանքերով աշխատավորների համար բացվեցին դպրոցներ, հանրակացարաններ, ճաշարաններ, հիվանդանոց, կազմակերպվեցին դասախոսություններ, դրույցներ, գեղարվեստական ինքնագործունեության ցուցադրումներ։

Հայաստանում սովետական իշխանության հաղթանակից հետո շատ կոմունիստներ կուսակցական աշխատանքի եկան նաև Աստրախանից։

4. ՂՐԻՄ

XIX դարի երկրորդ կեսին և XX դարի առաջին տասնամյակներին Ղրիմի բնակվող շատ քաղաքներում՝ Սիմֆերոպոլում, Հին Ղրիմում, Ղարասուբազարում, Յալթայում, Թեոդոսիայում, Եվպատորիայում, Սևաստոպոլում ինչպես նաև գյուղական բազմաթիվ վայրերում շարունակվում էին հարատևել հայկական գաղթօջախներ։ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և 1895—96 թթ. հայկական ջարդերը Թուրքիայում նոր խթան հանդիսացան հայերի տեղաշարժին դեպի Ղրիմ։ Այն շարունակվեց նաև առաջին համաշխարհային պատերազմի շրջանում։

Թուրքական ճնշումներից ու հարատահարումներից բացի հայերը Ղրիմ էին անցնում և ռուսահպատակություն էին ընդունում մասամբ նաև տնտեսական շարժառիթների բերումով։ Այս շրջանում ղրիմահայության մեջ սկսում են նկատելի թիվ կազմել մանավանդ Տրապիզոնից և նրան հարակից շրջաններից եկած բնակիչները։ Եթե XIX դարի 60-ական թվականներին ղրիմահայության թիվը հավասար էր 7000-ի[57], ապա դարավերջին այն հասավ մոտ 9000-ի[58], իսկ 1913—1914 թթ. համեմատական տվյալներով՝ 14—15 հազար հոգու։ Սրանք լոկ այն ղրիմահայերն էին, որոնք համարվում էին Ռուսաստանի քաղաքացիներ։ Շոշափելի թիվ էին կազմում նրանք, ովքեր թեև բնաանիքներով վաղուց բնակվում էին Ղրիմում, բայց, ձևականորեն ռուսահպատակություն չընդունելով, դուրս էին մնացել հաշվեհամարներից և մարդահամարներից։ Այդ պատճառով էլ ղրիմահայերի իրական թիվը շատ ավելի էր, քան նշված տվյալներն են։

Մինչև 1870 թ. ղրիմահայ գաղթօջախներից երկուսը՝ Ղարասուբազար և Հին Ղրիմ քաղաքների հայ համայնքները, վարչակառավարչական տեսակետից նահանգական և տեղական իշխանություններին ենթարկվելով հանդերձ, ունեին իրենց ինքնավար օրգաններ։ Ղարասուբազարում գործում էր հայ կաթոլիկական դատարանը, իսկ Հին Ղրիմում՝ հայկական քաղաքային ռատու-

---

57 Տե՛ս А. К. Заводовский-Краснопольский. Крым, природа, население и особенности края, СПб., 1874, стр. 6.

58 Տե՛ս «Первая всеобщая перепись населения Российской империи, 1897 г., Таврическая губерния», СПб., 1904, стр. 5.

շան։ Երկուսն էլ իրենց բնույթով բուրժուական ինքնավարական ատյաններ էին և վարում էին նշված հայ համայնքների վարչատնտեսական, մասամբ նաև դատական գործերը։ 70-ական թվականներից սկսած ամբողջ Ղրիմահայության նման այդ քաղաքների հայ համայնքները ևս անցան նահանգական իշխանությունների և դրանց տեղական ներկայացուցիչների լիակատար ենթակայության տակ։

Գաղութահայ առևտրավաշխառուական դասի ամենից ավելի ունևոր շերտի ներկայացուցիչները, որոնք տնտեսական շահերով և քաղաքական նկրտումներով միահյուսվել էին ցարական իշխանությունների և տեղական շահագործողների հետ, քայլ առ քայլ տեղեր են գրաղեցնում նաև զանազան բյուրոկրատական ատյաններում։ Տավրիկյան նահանգի մի շարք քաղաքներում (Արմյանսկ, Մելիտոպոլ, Ղարասուբազար) առանձին հայ մեծահարուստներ դարձել էին անգամ քաղաքագլուխներ[59]։

Ղրիմահայերի տնտեսական կյանքում շարունակվում էին մեծ դեր խաղալ առևտուրը, արհեստները և երկրագործությունը։ Տավրիկիայի տնտեսական կյանքում նշանակալից էր ղրիմահայ առևտրական դասի մասնակցությունը։ Հատկապես աշխույժ էին առևտրական գործառնությունները Սիմֆերոպոլ, Եվպատորիա, Արմյանսկ, Ղարասուբազար և Թեոդոսիա քաղաքներում։ Ստոլիպինյան շրջանում կապիտալիստական ուղիով ընթացող ռուսական տնտեսության զարգացմանը համապատասխան ղրիմահայ առևտրական դասն ընդլայնում էր կապիտալի շրջանառության ոլորտը թե՛ Ղրիմի և թե՛ կայսրության քաղաքներում ու արտասահմանում։ Ղրիմահայ առևտրական կապիտալն աստիճանաբար թափանցում էր նաև արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ։ Դարավերջին Ղրիմում գիլդիաների մեջ ընդգրկված 4936 վաճառականների 10,6 տոկոսը[60], այսինքն 523 հոգի հայեր էին։ Առևտրի մեջ ներդրած նրանց կապիտալը, միջին հաշվով, հավասար էր 5 միլիոն ռուբլու։ Սա ղրիմահայ առևտրական կապիտալի միայն մի մասն էր, քանի որ դրա զգալի բաժինը կազմում էր գիլդիաներից դուրս առևտրական տարատեսակ վկայագրերով և արտոնագրերով առևտուր անող հայերի դրամագլուխը։

Հայ աշխատավորության մի զգալի մասն իր ապրուստը հայթայթում էր գյուղատնտեսությունից ստացած եկամուտներով։ Դրանք հիմնականում Արևմտյան Հայաստանից գաղթած այն գյուղացիներն էին, որոնք օրնիբուն աշխատում էին իրենց փոքրիկ հողակտորների և հողատեր մեծահարուստների ու կապալառուների կալվածքների վրա։

Ղրիմում գոյություն ուներ նաև հայ խոշոր հողատերերի բավական բազմանդամ մի խումբ, որն առաջացել էր հողագործության մեջ առևտրական կապիտալի ներթափանցման հետևանքով։ Ունևոր հայ առևտրականներն առիթը բաց չէին թողնում ըստ կարողության ձեռք բերել նոր հողամասեր։ Այդ պրոցեսը, որն սկսվել էր XIX դարում, շարունակվեց մինչև առաջին համաշխարհային պատերազմը։ Հողից ստացված եկամուտների մի մասը նրանք դնում էին շրջանառության մեջ և տարեցտարի ընդլայնում առևտրի ոլորտը։ Ժամանակի ընթացքում խոշոր հողատերեր էին դարձել Ստեփանյանները

---

59 Տե՛ս Ղրիմի մարզային պետական արխիվ (այսուհետև՝ ՂՄԱ), ֆ. 63, ց. 1, գ. 422, թ. 2—4։ Տե՛ս նաև «Հայոց հանդես», Թիֆլիս, 1905, էջ 165։

60 Տե՛ս П. Н. Надинский, Очерки истории Крыма, Симферополь, 1951, стр. 204.

(2044 դեսյատին), Օբերովները (1440 դ.), Սպենդիարովները (6128 դ.), Սեբերբրյակովները (շուրջ 7000 դ.), Թոփալովները (1167 դ.), Բենկլիևները (1054 դ.), Նալբանդովները (835 դ.) և ուրիշներ[61]։ Որպես կանոն, սրանց մեծամասնությունը հողը տալիս էր կիսաբերությամբ կամ կապալով։

Մինչև սովետական իշխանության հաստատումը հայ եկեղեցին Ղրիմում մեծ քանակությամբ հողեր և անտառներ ուներ՝ 1215 դեսյատին հող ս. Խաչ վանքի մոտ, 2767 դ. հող «Ադի-Ղայշաղ» անունով Պերեկոպի գավառում[62], ինչպես նաև բազմաթիվ այգիներ՝ Սուդակ, Հին Ղրիմ, Թեոդոսիա քաղաքներում և գյուղատիպ վայրերի հայկական եկեղեցիներին կից։ Բացառությամբ մի քանի այգիների, որ եկեղեցին մշակում էր հայ «իրզաբներ» (վարձու օրամշակների) միջոցով, մնացած հողերը տրվում էին կապալով։ XIX դարի երկրորդ կեսին ս. Խաչ վանքի եկամուտը հողերից կազմում էր տարեկան 5000 ռուբլի։ 1906 թ. «Ադի-Ղայշաղը» տրվում է կապալով, տարեկան 10.000 ռուբլով[63], եկեղեցական հողերը մշակող գյուղացիները, որոնք սովորաբար արևմտահայ աշխատավորներ էին, օրըստօրե սուղ պայմանների մեջ էին ընկնում նաև կապալառուների, հոգաբարձուների ու կառավարիչների անօրինական գործարքների ու կողոպուտի պատճառով։ Այսուհանդերձ հողին կապված ղրիմահայ աշխատավորը թերակղզու վրա հմուտ այգեպանի, բանջարագործի և ծխախոտագործի համբավ էր վայելում։

Ղրիմահայության կյանքում կարևոր դեր էր խաղում արհեստագործությունը։ Հայերը ճանաչված արհեստավորներ էին Հին Ղրիմում, Ղարասուբազար, Թեոդոսիա, Սիմֆերոպոլ և Արմյանսկ քաղաքներում։ Նրանք աչքի էին ընկնում ոսկերչության, դերձակության, կոշկակարության, հացագործության, ներկարարության, որմնադրության, գինեգործության և այլ արհեստների մեջ։

Ղրիմահայության ունևոր խավի որոշ ներկայացուցիչներ իրենց կապիտալը ներ էին դրել նաև նահանգում սկիզբ առնող գործարանային արտադրության ոլորտում։ Հայ գործարանատերեր կային Սիմֆերոպոլում, Հին Ղրիմում, Թեոդոսիայում, Ղարասուբազարում, Արմյանսկում, Սևաստոպոլում։ Նրանք ունեին կաշեձուկման, պահածոների, կղմինդրի և աղյուսի ձեռնարկություններ՝ արտադրության այնպիսի ճյուղեր, որոնք XIX դարում բնորոշ էին Ղրիմի արդյունաբերության համար։ Օճառի, մոմի, կաշվի, կոշիկի ձեռնարկություններ ունեին, օրինակ, Ղարասուբազարի և Սիմֆերոպոլի մեծահարուստներ Մոմջյանը, Ռաֆայելյանը և ուրիշներ[64]։ Սևաստոպոլում XX դարի սկզբներին հայտնի գործարանատեր էր Գևորգյանը (Կևորկովը). նրա մակարոնի ֆաբրիկան գործում էր շոգեմեքենայով[65]։ Տավրիկիայում, Նկատերինոսլավի նահանգում և Կովկասում մեծ պահանջարկ ունեին Սրապիոնյանի արհեստանոց-ֆաբրիկայում արտադրված կովկասյան կոշիկները։ Սրապիոնյանը իր

---

61 Տե՛ս «Статистический сборник Таврической губернии». Симферополь, 1915, вып. IV—VIII, Նաև ՍՍՀՄ Ռազմա-ծովային նավատորմի կենտրոնական պետական արխիվ, ֆ. 406, ց. 3, գ. 443, թ. 47։

62 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 73 ա/ե, թ. 31բ և 175ա., «Крым» լրագիր, 1893, № 37։

63 Տե՛ս Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 2110, թ. 4։

64 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 73, 5/5, թ. 49։ ՂՄԱ, ֆ. 169, ց. 1, գ. 96, թ. 16—23։

65 Տե՛ս Մատենադարան, անհատական անձանց ֆոնդ, թղթ. 132, վավ. 221, I։

ձեռնարկությունը հիմնել էր 1906 թ. Սիմֆերոպոլում։ Հումքը ստանում էր Պետերբուրգից և Կովկասից[66]։

Հայերն ակտիվորեն մասնակցում էին թերակղզու երկաթուղային շինարարությանը, առևտրական զանազան գործարքներին, ջրաշինարարությանը և այլն։ Նկարիչ Հ. Այվազովսկին իրեն պատկանող Սուրաշի լճից 1887 թ. Թեոդոսիա քաղաքին նվիրաբերեց օրական 50 հազար դույլ ջուր, որը հնարավորություն տվեց հաջորդ տարում անցկացնել 30 կմ երկարությամբ ջրմուղ և քաղաքն ապահովել խմելու ջրով[67]։



Տալթայի հայկական եկեղեցին

«Էլեկտրիչեստվո» ընկերության մեխանիկ-ինժեներ Ն. Կ. Շահվերդյանի նախագծով 1901 թ. Նահանգական կենտրոն Սիմֆերոպոլն առաջին անգամ ստացավ արտաքին էլեկտրական լուսավորություն[68]։

Ղրիմահայությունը միատարր մի զանգված չէր։ Նրա գերակշիռ մեծամասնությունը աղքատ օրամշակներ, միջակ ու չքավոր գյուղացիներ, բայթայված արհեստավորներ ու մանր առևտրականներ, վարձու բանվորներ էին, որոնք իրենց ընտանիքի գոյությունը պահպանում էին հայ և օտարազգի հարուստների մոտ անդադրում աշխատելով։ Բարձր խավին էին պատկանում մեծահարուստ առևտրականներն ու խոշոր հողատերերը։

60-ական թվականներից սկսած հայ հարուստ դասից հանդես են գալիս նաև առանձին ֆաբրիկանտ-կապիտալիստներ։ Սրան զուգընթաց նկատելի է դառնում հայ վարձու բանվորների քանակի աճը, մանավանդ Սեվաստոպոլ, Թեոդոսիա և Նովոռոսիյսկ նավահանգստային քաղաքներում։

Աշխատավոր դասի գրությունը վատթարանում էր հարկերի և պարհակների պատճառով։ Ղրիմահայության այն մասը ևս, որ նախկինում օգտվում էր արտոնություններից, XIX դարի 70-ական թվականներից սրտեն զրկվել էր դրանից և իր վրա էր կրում պետական, եկեղեցական հարկերի ու տուրքերի, ինչպես նաև առևտրական մաքսերի ծանրությունը։

Կապիտալիզմի զարգացումը ղրիմահայերին ավելի ու ավելի էր հաղորդակից դարձնում թերակղզու և համառուսական անցուդարձերին, ընդլայնում նրանց հասարակական կյանքի շրջանակները։ Սոցիալ-դեմոկրատական շարժումներն ու ռուսական առաջին հեղափոխությունը իրենց կնիքն են դնում

66 Տե՛ս ՂՄԱ, ֆ. 706, ց. 1, գ. 416, թ. 77։
67 Տե՛ս «Крым» լրագիր, 1889, № 39։
68 Տե՛ս ՂՄԱ, ֆ. 63, ց. 1, գ. 455, թ. 1—2։

զրիմահայության հասարակական-քաղաքական կյանքի վրա։ Նրա լավագույն ներկայացուցիչները, որոնք բարձրացել էին սոցիալ-դեմոկրատական շարժման պատմական անխուսափելիությունն ըմբռնելու մակարդակին, դիվերսիոն-զրվեցին հեղափոխական պայքարին։ Ղրիմահայ Արմեն Առաքելի Բահաթրյանցը 1905—1907 թթ. հեղափոխական լայն գործունեություն է ծավալում և Տավրիկիայի նահանգական ժանդարմական վարչության պետի վկայությամբ «սոցիալ-դեմոկրատական կուսակցության պարագլուխն էր» Ղրիմում։ Հեղափոխության անկման սկզբում, 1907 թ. Ա. Բահաթրյանը անընդհատ աշխատանք է ծավալում և փորձում Ղրիմում վերականգնել կուսակցական աշխատանքը, որի համար ենթարկվում է ոստիկանական հետապնդումների ու հալածանքի[69]։

Սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունը վերականգնելու նպատակով Ա. Բահաթրյանը կապ էր հաստատել Խարկովի և Կիևի սոցիալ-դեմոկրատական գործիչների հետ։ 1907 թ. հունիսի 1-ին № 597 շրջաբերականով Օդեսայի պահեստրդական բաժնի պետը Տավրիկյան նահանգի ժանդարմական վարչության պետին իրազեկ է դարձնում, թե «անհայտ մի անձնավորություն «Ավերը» ստորագրությամբ, զրագրություն է պահպանում, ինչպես այդ երևում է իմ մոտ եղած գաղտնի տեղեկություններից, հենց նման հանցագործ կազմակերպությունների (սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների—խմբ.) հետ, ինչպես օրինակ, ինչ-որ «Մարուսյայի» հետ՝ Կիևում... Նշված «Ավերը» գտնվում է Սիմֆերոպոլում և «Ավգուստի» հետ ունեցած իր գրությունների մեջ խոսում է մարդկանց (գործիչների—խմբ.) նկատմամբ եղած կարիքի, մասնավորական գործագրության, Ռոստովից ինչ-որ մի հայտնի գործչի ժամանման մասին... Այնուհետև («Ավերը») հիշատակում է իր անդամակիցների (կազմակերպության անդամների—խմբ.) մասին, բացատրելով, որ Մարսիմը գտնվում է համագումարում (ՌՍԴԲԿ 5-րդ համագումարը—խմբ.), Ղրիմից, Պավելը Սևաստոպոլում էր, իսկ այժմ Պետերբուրգում է»[70]։ Տավրիկիայի ժանդարմական վարչության պետը հուլիսի 11-ին պատասխանում է, որ «Ավեր» ստորագրյալը Արմեն Առաքելի Բահաթրյանցն է, ինժեներ-տեխնոլոգ։ Ժանդարմական վարչության պետի բնորոշմամբ՝ Ա. Բահաթրյանցը Ղրիմում սոցիալ-դեմոկրատների խմբի ղեկավարներից էր[71]։

Հեղափոխական շարժման ակտիվ գործիչներից էր Արմենի քույրը՝ Վարդանուշ Բահաթրյանը (Լաուրա)։ 1909 թ. մտնելով բոլշևիկյան կուսակցության շարքերը, նա 1919—1920 թթ. դարձավ Ղրիմում սովետական իշխանության համար մղված պայքարի աչքի ընկնող կազմակերպիչներից և ղեկավարներից մեկը։ 1917 թ. հոկտեմբերի 26-ից, այսինքն՝ հեղափոխության հաջորդ օրվանից, նա Սմոլնիում Յա. Մ. Սվերդլովի ղեկավարությամբ աշխատում է որպես ռազմահեղափոխական կոմիտեի բարտուղար։ Շուտով կուսակցությունը նրան ուղարկում է Ղրիմ, որտեղ նա ընդհատակյա մարզկոմի անդամ էր։ 1919 թ. ապրիլին Լաուրան գլխավորում է Ղրիմի հեղկոմը[72]։ Հեղկոմի նախագահի պաշտոնում վճռական միջոցառումներ է ձեռնարկում քաղաքական, տնտեսական և մշակութային բնագավառներում։ Լաուրա ընդհատակյա հե-

---

69 Տե՛ս ՂՄԱ, ֆ. 706, ց. 1, գ. 203, թ. 22—25։

70 Նույն տեղում, թ. 22ա։

71 Տե՛ս նույն տեղում, թ. 23ա։

72 Տե՛ս «Огонек», 1958, № 10, стр. 25.

զափտխական անվան տակ նա մի շարք հրահանգներ է ստորագրում բանկերի, ֆաբրիկաների, երկաթգծի, նավահանգիստների, կալվածատիրական հողերի, ցարական պալատների ազգայնացման մասին։ Նրա անմիջական ղեկավարությամբ անհրաժեշտ պայքար է մղվում գործարդողների և սպեկուլյանտների դեմ, ոչնչացվում են բանդիտական խմբեր, կազմակերպվում են պարենային ջոկատներ, հեղկոմի պահպանության տակ են վերցվում կուլտուրական արժեքները[73]։

1919 թ. աշնանը Դենիկինի սպիտակգվարդիական զորքերը գրավում են Ղրիմը։ Վ. Բահաքրյանն ու հեղկոմի անդամներն անցնում են ընդհատակյա մեվաստոպոլում սպիտակգվարդիականները ձերբակալում են Հաուրային։ Սակայն հեղափոխական ընկերների և բարեկամների ջանքերի շնորհիվ նա ազատվում է բանտից և նորից անցնում ընդհատակյա։ 1920 թ. նոյեմբերին գլխավորում էր այն հանձնաժողովը, որ պետք է կազմակերպեր հանդիպումը Ղրիմն ազատագրող սովետական զորամասերի հետ։ Այս առիթով Հաուրայի անունով տրված մանդատում ասված էր. «Մանդատ 56։ Սույնը ներկայացնող ընկ. Հաուրան հանդիսանում է սովետական կանոնավոր զորքերի հանդիպման կազմակերպման գծով նախագահ։ 13 նոյեմբերի, 1920 թ.»[74]։

Ռուսական առաջին հեղափոխությանը հաջորդած տարիներին և մանավանդ Բալկանյան պատերազմների շրջանում ղրիմահայության մեջ գործունեություն են ծավալում հնչակյան կուսակցության ներկայացուցիչները։ Կովկասից և Թուրքիայից նրանք գալիս են Ղրիմ պրոպագանդիստական և կուսակցության համար նյութական միջոցներ հավաքելու նպատակով։ 1909 թ. ոստիկանությունը կալանավորում և Թեոդոսիայի բանտն է նետում Թուրքահպատակ Դառնիկ Մուսայանին՝ Սուրաշի գյուղի հայկական դպրոցի ուսուցիչ Հովսեփյանի հետ միասին։ Թուրքիայից ու Կովկասից գրականություն ստանալու և երիտասարդության շրջանում պրոպագանդա մղելու համար[75]։ 1912 թ. Ղրիմ է գալիս հնչակյան գործիչ Սյունիքը։ Սա կապ է հաստատում տեղի հայ երիտասարդության առանձին ներկայացուցիչների հետ։ Ղրիմում հավաքված դրամը ուղարկում է Փարիզ Վարազդատին՝ «Երիտասարդ Հայաստանի» նախկին խմբագրապետ Հակոբ Թուրաբյանին։ Հնչակյանները Սիմֆերոպոլում ստեղծում են իրենց կուսակցության տեղական բաժանմունքը[76]։ Սյունիքը Ղրիմում գործում էր Միհրան Մանուկյանի, Պողոս Զաքյանի (Զակիև) և սրանց համախոհների միջոցով։ 1913 թ. ապրիլին տեղական ոստիկանությունը նրանց բոլորին ձերբակալում է։

Հնչակյանների գործունեությունը Ղրիմում հանդիպում է ցարական իշխանությունների և գաղութահայ բուրժուազիայի դիմադրությանը։ Նախշումյանը, Կայսլով եղբայրները, Կարապովը և ուրիշներ, բոլորն էլ մեծահարուստ ղրիմահայեր, դիմադիր են կանգնում հնչակյաններին, իսկ նրանցից առաջինը դիմում է բացահայտ մատնության[77]։ Տարված շահույթի ընդլայնման մոլուցքով՝ գաղութահայ կոմոպոլիտ բուրժուազիան իր շահագործական նպատակները իրականացնելիս ոչ մի հավատ ու հույս չէր տածում ազգային կու-

73 Տե՛ս նույն տեղում։

74 Նույն տեղում։

75 Տե՛ս ՂՄԱ, ֆ. 706, ց. 1, գ. 411, թ. 84—366, գ. 416, թ. 1—114։

76 Տե՛ս նույն տեղում, գ. 416, թ. 44։

77 Տե՛ս նույն տեղում, թ. 2։

սակցությունների քարոզած ապագա Հայաստանի «վարդագույն» հեռանկարի հանդեպ։ Հայ ազգային-ազատագրական բաղձանքների ողբերգական վախճանի պատճառներից մեկն էլ հայրենիքից հեռու և նրա հոգսերին անտարբեր կովկասահայ և գաղութահայ բուրժուազիայի վերաբերմունքն էր։

XIX դ. վերջին քառորդում-XX դ. սկզբին ղրիմահայ հասարակական-մշակութային կյանքում փորձում են ուրույն դեր ստանձնել ռուսական ծխական հոգաբարձությունների օրինակով ստեղծված հայկական եկեղեցական հոգաբարձությունները։ Սրանց միջոցով ոտքի ելնող գաղութահայ նորաթուխ բուրժուազիան և եկեղեցին պարզապես գործակցում էին՝ աղքատախնամ նպատակների իրագործման միջոցով աշխատավոր զանգվածներին պահելու իրենց հնազանդության և աղղեցության ներքո։ Հայկական եկեղեցական հոգաբարձություններ էին գործում Թեոդոսիայում, Սիմֆերոպոլում, Ղարասուբազարում, Աբդյանակում, Կերչում և Եվպատորիայում[78]։

Ղրիմահայերը սերտ կապերի մեջ էին Կովկասի, Արևմտյան Հայաստանի, ինչպես նաև Թուրքիայի տարբեր վայրերի հայկական շրջանների հետ։ Հայ ժողովրդին կամ նրա առանձին հատվածներին հուղող հարցերը անմիջական արձագանք էին գտնում ղրիմահայության շրջանում։ 1915 թ. կոտորածներից հետո Ղրիմում հիմնվեցին հայկական կոմիտեներ, որոնք կազմակերպեցին դրամական և նյութական միջոցների հավաքում։ 1915 թ. հունիսի 1-ին Էջմիածնի սինոդի անունով ղրիմահայերը ուղարկեցին 16.160 ռ.[79]։ Հաջորդ ամիսներին հավաքված գումարներն ավելի մեծ էին։ Տիկին Յու. Ի. Սպենդիարյանի գլխավորությամբ գործող Սիմֆերոպոլի հայ կանանց կոմիտեն, Ղրիմի մյուս քաղաքների կոմիտեների հանձնարարությամբ, 1915 թ. աշնանը որոշում է Սիմֆերոպոլում բացել որբանոց։ «Ղրիմի հայուհիները Սիմֆերոպոլում բաց են անում որբանոց թուրքահպատակ որբերի համար,— նշում էր կոմիտեն 1915 թ. դեկտեմբերի 25-ին Էջմիածին ուղարկված հեռագրում։ Միանվագ ժողովված է 3500 ռ., իսկ ամսական 700 ռ., երեք տարի ժամանակով»[80]։ Սակայն կոմիտեին որբեր չեն տրամադրում, քանի որ որոշված էր նրանց Կովկասի սահմաններից դուրս չուղարկել։ Կանանց կոմիտեն հավաքված գումարը տրամադրում է հայ գաղթականների համար սերմացու գնելու նպատակին։

* * *

Ղրիմի հայկական գաղութի մշակույթն այս շրջանում ամենից առաջ բնորոշվում է ծխական դպրոցների առկայությամբ։ 1870—1917 թթ., կարճատև ընդհատումներով, ծխական դպրոցներ էին գործում Ղրիմի գրեթե բոլոր հայաբնակ վայրերում։ Ղրիմի հայկական դպրոցները ևս ենթարկվեցին Ռուսաստանի արևելահայ բոլոր դպրոցների նկատմամբ ցարիզմի վարած հալածանքներին։ 1884 թ. այդ դպրոցները մեկ տարով փակվեցին, իսկ 1897 թ., երբ ցարական կառավարությունը փակեց կայսրությունում եղած հայկական տարրական դպրոցները, Ղրիմում (և ընդհանրապես Նոր Նախիջևանի ու Բեսարաբիայի ողջ թեմում) հայկական դպրոցները պահպանվեցին և մեծ լուսավո-

78 Տե՛ս, ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 60։

79 Տե՛ս «Արարատ» ամսագիր, 1915, էջ 505—511։

80 «Մշակ», 1916, № 54։

բության մինիստրության տնօրինության տակ։ Այժմ նրանցում դասավանդումը տարվում էր ռուսերենով, բացի հայոց լեզվից և կրոնից։ Հայ հոգևորականությանն իրավունք էր վերապահվում միայն վերսկսելու աշակերտների կրոնական դաստիարակությունը։ 1905 թ. օգոստոսի 1-ի ցարի հրամանով հայկական դպրոցների վերաբացումից հետո էլ Ղրիմի դպրոցների այդ վիճակը մնաց անփոփոխ։ Պետական մարմինները չանում էին հայկական դպրոցներից դուրս մղել ազգային դաստիարակության ամեն մի փորձ։ Այդ պատճառով էլ, օրինակ, Սիմֆերոպոլի հայկական դպրոցում 1913 թ. ստիպված էին հայոց պատմությունը դասավանդել վայելչագրության քողի տակ, իսկ Հայաստանի քարտեզը դասասենյակ էին տանում միայն կրոնի դասերին[81]։

Այս պայմաններում հայկական դպրոցները շարունակում են իրենց գոյությունը մինչև առաջին համաշխարհային պատերազմը։ 1905 թ. տվյալներով, Տավրիկյան նահանգում գործում էր ինը հայկական տարրական դպրոց, 250-ից ավելի աշակերտով[82]։ Հայ աշակերտության մեծ մասը հաճախում էր մասնավոր ու պետական ռուսական դպրոցներ։

Ղրիմահայ գաղութի մշակութային կյանքում նկատելի երևույթ էր «Դաստիարակ» պարբերականը, որը լույս էր տեսնում 1873—1874 թթ. Թեոդոսիայում։ Ամսագրի խմբագիր Գ. Տեովլեթյանը իր նպատակներից դուրս էր համարում «կրոնական խնդիրներ կամ վիճաբանություններ և քաղաքական կառավարության վրա խորհրդածություններ» անելը[83]։ «Դաստիարակը» հոդվածներ էր զետեղում գյուղատնտեսության, մանկավարժության, առողջապահության մասին, հաղորդում պատմական և աշխարհագրական տեղեկություններ, տպագրում բանասիրական նյութեր և այլն։

Գաղութում գործող դպրոցները և կազմակերպված կուլտուր-կրթական միջոցառումները զգալապես նպաստում էին հայ բնակչության ընդհանուր մակարդակի բարձրացմանը, գրագիտության տարածման գործին։ 1915 թ. ղրիմահայությունը գրագիտության մակարդակով նահանգի բնակչության մեջ գրավում էր առաջին տեղերից մեկը։ Գրագետ էր հայ տղամարդկանց 54,98, իսկ կանանց՝ 47,71 տոկոսը[84]։

XIX դարում ու XX դարի սկզբներին ղրիմահայերը ավեցին համազգային, անգամ համաշխարհային հռչակի արվեստագետներ, դրանց թվում՝ նկարիչ Հ. Կ. Այվազովսկին (1817—1900), նրա տաղանդավոր աշակերտ Ի. Մահտեսյանը (1857—1908), հայ դասական և ազգային երաժշտության խոշոր ներկայացուցիչներ Ա. Սպենդիարյանն (1871—1928) ու Քր. Կարա-Մուրզան (1854—1902), հայ առաջին կոմպոզիտորներից մեկը՝ Ա. Քաղցկյանը (1809—1856), ջութակահար ու մանկավարժ Հ. Նալբանդյանը (1871—1942) և ուրիշներ։

Նոր շրջանի ղրիմահայ մշակույթի նկատելի դրսևորումներից մեկը ճարտարապետությունն էր, հայերի շինարարական գործունեությունը բնութագրում։ Հոյակապ մի կոթող է հայկական դասական ճարտարապետական ոճով

---

81 Տե՛ս Մատենադարան, Ձեռագ. անձն. ֆոնդ, թղթ. 182, վավ. 1ա, թ։

82 Տե՛ս «Հայոց աշխարհ», Թիֆլիս, 1905, էջ 166։

83 «Դաստիարակ», Թեոդոսիա, 1873, № 1։

84 Տե՛ս «Статистический сборник Таврической губернии», стр. 47.

Յալթայում 1905—1909 թթ. կառուցված հայկական եկեղեցին ճարտարապետական գեղեցիկ մի հուշարձան է Հովհ. Այվազովսկու պատկերասրահը, որը կառուցվել է նրա իսկ նախաձեռնությամբ և միջոցներով անցյալ դարի 80-ական թվականներին։ Այս շրջանում կառուցվում են նաև մի շարք հայկական եկեղեցիներ Եվպատորիայում, Հին Ղրիմում, Արմյանսկում, Սիմֆերոպոլում։ Նորակառույց այդ եկեղեցիներից մի քանիսը չեն պահպանվել։ Ժամանակին Թեոդոսիայի ամենամեծ և գեղեցիկ շինությունը Խալիպյան ուսումնարանի եռահարկ շենքն էր, որը Հայրենական պատերազմի ժամանակ ֆաշիստների ռմբակոծության հետևանքով լրիվ ավերվել է։ Քաղաքացիական բազմաթիվ շենքեր էին կառուցել Սպենդիարյանները, Թոփալյանները, Սեֆերովները և մեծահարուստ այլ ղրիմահայեր։

3. ՄԻՋԻՆ ԱՍԻԱ

XIX դարի երկրորդ կեսին Միջին Ասիան միացվեց Ռուսական կայսրությանը։ 1867 թ. կազմվեց Թուրքեստանյան գեներալ-նահանգապետությունը, որը 1886 թ. վերածվեց Թուրքեստանյան երկրամասի։ Վարչական այդ նոր կազմավորումն ընդգրկում էր գրեթե ողջ Միջին Ասիան և Ղազախստանի հարավային շրջանները։ Միայն Խիվայի խանությունն ու Բուխարայի էմիրությունը, ընդունելով Ռուսաստանի հովանավորությունը, որոշ ինքնավարություն պահպանեցին։ Միջին Ասիայի արևելյան շրջանները (ներկայիս Թուրքմենական ՍՍՀ-ի տարածքը), որոնք Ռուսաստանին միացվեցին 1870—80-ական թվականներին, սկզբում կազմեցին առանձին վարչական միավոր՝ Անդրկասպյան մարզը, որ մտնում էր Կովկասի փոխարքայության մեջ։ Հետագայում (1899 թ.) այդ մարզը ևս միացվեց Թուրքեստանյան երկրամասին։

1869 թ. Կասպից ծովի արևելյան ափին ռուսական Կովկասյան բանակի զորքերը հիմնեցին Կրասնովոդսկ քաղաքը, որից հետո սկսվեց նրանց առաջխաղացումը դեպի երկրի արևելյան մասերը, որի ընթացքում հիմնվեցին նաև Կզըլ-Արվաթ, Ասխաբադ (Աշխաբադ), Մերվ (Մառի) և մի շարք այլ հենակետային քաղաքներ։ 1880 թ. սկսվեց Անդրկասպյան երկաթուղու շինարարությունը, որը խոշոր դեր կատարեց երկրամասի տնտեսական զարգացման գործում։

Դեռևս նախորդ տասնամյակներում գլխավորապես Աստրախանի հայերն արդեն առևտրական կապեր էին հաստատել Միջին Ասիայի և Հարևան երկրների (Աֆղանստան, Իրան) հետ։ Բաքվի, Ջանգեզուրի, Ղարաբաղի հայերը, տնտեսական գործունեության բավական լայն հնարավորություններ գտնելով և արժանանալով ռուսական զինվորական ու վարչական մարմինների աջակցությանը, սկսեցին նախ հիմնավորվել նորաստեղծ քաղաքներում և ապա աստիճանաբար թափանցել երկրի խորքերը։ Դեպի հայերի հոսքն ուժեղացավ, այն առավել լայն չափերի հասավ հատկապես Թուրքիայում հայկական կոտորածների տարիներին (1890-ական և 1915—16 թթ.)։ Բնականաբար է, սակայն, որ Միջին Ասիայում հայերը չկարողացան ամփոփ համայնքային կյանք ստեղծել։

Հիմնական հայաբնակ քաղաքներն էին Աշխաբադը, Կրասնովոդսկը, Կզըլ-Արվաթը, Մերվը, Տաշքենդը, Սամարղանդը, Ջարջուն, Կոկանդը, Անդիջանը, Քերքին, Թերմեզը։ Հայերին զուգընթաց Միջին Ասիա էին թափան-

ցում նաև ռուս վերաբնակ գյուղացիները, առևտրականներն ու արդյունաբերողները։ 1881 թ. Անդրկասպյան մարզում արդեն կար 2003 նկվոր, որից 114-ը ռուսներ էին, 363-ը՝ հայեր, 443-ը՝ պարսիկներ։ Մի տարի անց նկվորների թիվը մարզում կրկնապատկվեց (որից 391-ը՝ ռուսներ, 1042-ը՝ հայեր)։ 1890 թ. նկվորների թիվը քսան հազարից անցավ, որից մոտ չորս հազարը հայեր էին[85]։ Սկզբնական տարիներին հայերը մեծամասնություն էին կազմում Կրասնովոդսկ, Աշխաբադ և Մերվ քաղաքներում։ Այսպես, 1890 թ. Աշխաբադում կային 1713 ռուս և 2025 հայ, Մերվում՝ համապատասխանաբար 464 և 669։ 1897 թ. մարդահամարի տվյալներով Միջին Ասիայում ապրում էր 4838 հայ[86], իսկ 1913 թ. հայերի ընդհանուր թիվը Թուրքեստանյան երկրամասում կազմում էր 15541 մարդ[87]։ 1912 թ. Կրասնովոդսկում կար 192, Աշխաբադում և մոտակա շրջաններում՝ 585, Մերվում և մոտակայքում՝ 433, Կզըլ-Արվաթում՝ 110, Չարջուում՝ 134, Սամարղանդում՝ 197, Կոկանդում՝ 136, Անդիջանում՝ 116 հայկական ընտանիք[88], իսկ 1917 թ. Տաշքենդի հայ համայնքում հաշվվում էր 215 ընտանիք[89]։

Սկզբնական շրջանում հայերը հիմնականում զբաղվում էին առևտրական գործարքներով ու շինարարական աշխատանքներով։ Հատուկ պայմանագրերով նրանք ռուսական բանակը մատակարարում էին սննդամթերքով, վառելիքով, անասնակերով։ Կային բազմաթիվ որակյալ շինարարներ, որոնց աշխատանքը բարձր էր գնահատվում։ Երկրամասի տնտեսական յուրացման, երկաթուղու շահագործման, հանքային հարստությունների հայտնաբերման (նավթ, քարածուխ, աղ, լեռնամոմ՝ օզոկերիտ), գյուղատնտեսության և հատկապես բամբակագործության զարգացման հետ միասին զգալիորեն ընդարձակվեցին հայերի տնտեսական գործունեության շրջանակները։

Երկրամասի առևտրի մեջ հայերն զգալի դեր էին խաղում։ Նրանք Անդրկովկաս, Իրան, Աֆղանստան և Կենտրոնական Ռուսաստան էին արտահանում աղ, չոր մրգեր, բուրդ, գորգեր, բամբակ, բուսական յուղ, լեռնամոմ, իսկ ներմուծում էին նավթամթերքներ, անտառանյութ, գործարանային արտադրանքի ապրանքներ։ Հայ առևտրականներն իրենց գրասենյակներն ունեին Ֆերգանայի, Սիրդարյան և այլ մարզերում։ Մերվի հայ վաճառական Մ. Աստվածատուրովը, որ առևտրական լայն կապերի մեջ էր Իրանի և Աֆղանստանի հետ, 1901 թ., ռազմական իշխանությունների համաձայնությամբ, իր հաշվին առևտրագիտական արշավախումբ է կազմակերպում դեպի Սեյստան (Իրանի ու Աֆղանստանի միջև ընկած երկրամաս)։ Այդ նպատակով Աստվածատուրովը կարճ բարավանային ճանապարհ է բացում և նոր հնարավորություններ ստեղծում ռուսական ապրանքների վաճառահանման համար[90]։

Երկրամասի տնտեսական կյանքում նկատելի տեղ ունեին նաև հայ արհեստավորները՝ կաշեգործները, ներկարարները, կոշկակարները, հյուսները, ոսկերիչներն ու արծաթագործները։ Նկատելի էր հայերի գործունեությունը գորգագործության ասպարեզում։ 1907 թ. նրանք Մերվում առաջին անգամ կազ-

---

85 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1284, ց. 223, գ. 131, թ. 17։

86 Տե՛ս «Азиатская Россия», т. I, СПб., 1914, стр. 235.

87 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1396, ց. 1, գ. 172, թ. 45։

88 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1905, թ. 17։

89 Տե՛ս նույն տեղում, գ. 1834, թ. 22։

90 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 1396, ց. 1, գ. 34, թ. 28։

մակերպեցին գործերի ցուցահանդես և բարձրորակ բրդի ու ներկերի վաճառք, որը խոշոր դեր խաղաց թուրքմենական գործերի որակի բարձրացման և արտադրանքի ավելացման գործում։ Եթե 1908 թ. պատրաստվել էր 1750 գորգ և 1240 կարպետ, ապա մի տարի անց դրանց քանակը զգալի չափով ավելացավ[91]։ Մեծ համբավ էին ստացել հայ շինարար-վարպետները, հատկապես զանգեզուրցի ու ղարաբաղցի քարագործ-որմնադիրները։ Սամարղանդի մարզում, օրինակ, 1895 թ. կամուրջների ու ճանապարհների շինարարության վրա ուսանների կողքին աշխատում էին 75 հայ վարպետներ։ Լայն ճանաչում ունեին հայ կապալառուները շինարարության մեջ։ Նրանք շենքեր, ճանապարհներ, բաղնիքներ, երկաթուղային կայարաններ էին կառուցում։ Ֆերգանայի մարզում խոշոր կապալառու Կ. Ա. Մկրտիչը կազմակերպել էր աղյուսի, կրի և շինարարական այլ նյութերի արտադրություն։ Նրա միջոցով կառուցվում են Կոկանդի երկաթուղային կայարանի դեպոյի և արհեստանոցների, ինչպես նաև դպրոցի շենքերը։

Ռուսաստանին միանալուց հետո Միջին Ասիայում որոշակի առաջընթաց ապրեցին կապիտալիստական հարաբերությունները։ Աշխատելով երկրամասի տնտեսությունը հարմարեցնել Կենտրոնական Ռուսաստանի արդյունաբերական պահանջներին, ցարիզմն, այնուամենայնիվ, որոշ չափով զարկ էր տալիս արդյունաբերության զարգացմանը, գերազանցապես տեղական հումքի նախնական մշակմանը։ 1913 թ. երկրամասում գործում էր 702 արդյունաբերական ձեռնարկություն, որից 223-ը բամբակազտիչ և 30-ը բուսական յուղի գործարաններ էին[92]։ Միայն Անդրկասպյան մարզում 1909 թ. եղած 14 բամբակազտիչ գործարաններից 5-ը պատկանում էր հայերին։ Նրանք ունեին նաև 2 ձեթի գործարան։ Այս ուղղությամբ բավական լայն գործունեություն էր ծավալել Նիկ. և Ավ. Տեր-Մկրտչյանների առևտրական տունը, որի գլխավոր գրասենյակը գտնվում էր Մոսկվայում։ 1880-ական թվականներից գործելով Թուրքեստանյան երկրամասում և խոշոր առևտուր ծավալելով Իրանի ու Աֆղանստանի հետ, առևտրական այդ տունն առաջիններից էր, որ բամբակազտիչ և բուսական յուղի գործարաններ կառուցեց։ Հայերն ունեին նաև դինու, կաշվի, աղյուսի, ալեբաստրի գործարաններ, շոգեշարժիչով աշխատող ալրաղացներ, էլեկտրակայաններ, տպարաններ։

1890-ական թվականներին Անդրկասպյան մարզում նավթի հայտնաբերման հետևանքով սկսված «նավթային տենդը» վարակից նաև հայերին։ Սակայն Չելեկեն կղզում նավթ և լեռնամոմ արդյունաբերող հայերից շատերը չդիմացան ուժեղ մրցակցությանը և դուրս մղվեցին ասպարեզից։ Հայ արդյունաբերողներ կային նաև Մանգիշլակի ու Կոխ-Պուլլարի աղահանքերում։

Հայերը մասնակցություն ունեցան նաև երկրամասի բամբակագործության զարգացմանը։ Նրանք տարեկան արտադրում էին 25 հազար փութ բարձրորակ բամբակի հումք։ Հայկական բամբակագործական տնտեսություններում կիրառություն էին գտնում ժամանակակից մեքենաներ, բարձրորակ սերմեր։ Նրանք յուրաքանչյուր դեսյատինից ստանում էին 100—120 փութ բամ-

---

91 Տե՛ս Ուզբ. ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 33, ց. 1, գ. 122, թ. 128։

92 Տե՛ս С. Н. Гулишамбаров, Экономический обзор Туркестанского района, обслуживаемого Среднеазиатской железной дорогой, Асхабад, 1913, стр. 79.

րակ[93]։ Տեր-Մկրտչյանների առևտրական տունը առաջիններից էր, որ սկսեց կատարելագործել բամբակի հողատարածությունների ոռոգումը ինչպես Անդրկասպյան մարզում, այնպես էլ Թերգանայի հովտում[94]։ Թուրքեստանյան երկրամասում հայերը զբաղվում էին նաև մետաքսագործությամբ, անասնապահությամբ, այգեգործությամբ և խաղողի մշակությամբ։

Աշխարհագրում, Մերվում, Կզըլ-Արվաթում, Կրասնովոդսկում, Սամարղանդում, Տաշքենդում և Կոկանդում գործում էին եկեղեցիներ, որոնք ենթարկվում էին Շամախիի թեմին, սակայն XIX դարի վերջին Միջին Ասիայի հայությունը մտավ Աստրախանի հայկական թեմի մեջ։ Թեև խոշոր բարեգործական և մշակութային ընկերություններ հնարավոր չէր ստեղծել, սակայն հազած փոքր ու ոչ հարատև ընկերությունները որոշ աշխատանք տանում էին տեղի հայերի բարեգործությունը կազմակերպելու ու մշակութային միջոցառումներ անցկացնելու ուղղությամբ։ Դրանք հատկապես ակտիվ գործունեություն են ծավալել հայ գաղթականների նյութական օգնության համար։

Այդ ընկերություններից աչքի է ընկել «Ախալքաղի հայ-լուսավորչական կանանց բարեգործական ընկերությունը», որի ակտիվ գործիչներից էր Սուսաննա Մամիկոնյանը։ 1901 թ. ընկերությունը բացել է մանկապարտեզ և հայկական պրոգիմնազիա, որտեղ ավանդվում էին հայոց լեզու, պատմություն, Հայաստանի աշխարհագրություն և այլն[95]։

Գաղթօջախի հոգացողության առաջնակարգ հարցերից մեկը դպրոցների կազմակերպումն էր, թեև տեղական իշխանություններն աշխատել են խոչընդոտել դրան։ Այդ մասին է վկայում Անդրկասպյան մարզի գեներալ-նահանգապետի հրամաններից մեկը, որտեղ ասվում էր, որ հայերը եկվորներ են և իմաստ չունի նրանց լեզվով ուսուցում կազմակերպել[96]։ Քսաներորդ դարի սկզբներին Միջին Ասիայում գործել է 8 հայկական եկեղեցական-ծխական դպրոց։ Զգալի թվով հայ երեխաներ են սովորել նաև մասնավոր ու պետական դպրոցներում։ 1908 թ. Աշխարհագրի հայկական եկեղեցական-ծխական դպրոցն ունեցել է 200, Մերվի դպրոցը՝ 115 աշակերտ։ Աշխարհագրի Ագամովայի մասնավոր ուսումնարանում սովորել են 90 հայեր[97]։ Աշխարհագրի բոլոր 14 դպրոցներում սովորող 1437 աշակերտից 290-ը հայեր էին։ Տաշքենդի հայկական դպրոցը 1916 թ. ունեցել է 50 աշակերտ, բացի այդ 230-ի չափ հայ երեխաներ են սովորել քաղաքի պետական ու մասնավոր դպրոցներում[98]։

Աշխարհագրի «Արուսյակ և ընկ.» առևտրական տան հաշվապահ Գ. Ագաթյանը 1913 թ. կազմակերպում է հաշվապահական դասընթացներ հայերեն և ռուսերեն լեզուներով, որոնք առաջին մասնագիտական դասընթացներն էին Թուրքեստանում։ 1896 թ. շուշեցի Ս. Ավանեսովն Աշխարհագրում կազմակերպեց առաջին գրագրաան-ընթերցարանը, որտեղ կային ինչպես ռուսերեն, այնպես էլ հայերեն, վրացերեն, թուրքերեն թերթեր, ամսագրեր և գրականու-

---

93 Տե՛ս Թուրքմ. ՍՍՀ ԳԿԱ, ֆ. 1, ց. 2, գ. 4238, թ. 3։
94 Տե՛ս ՍՍՀՄ ԿԳԳԱ, ֆ. 396, ց. 7, գ. 401, թ. 12։
95 Տե՛ս ՀՍՍՀ ԿԳԳԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1246, թ. 107—108։
96 Տե՛ս Թուրքմ. ՍՍՀ ԳԿԱ, ֆ. 1, ց. 1, գ. 2638, թ. 2։
97 Տե՛ս ՍՍՀՄ ԿԳԳԱ, ֆ. 1284, ց. 194, գ. 99, թ. 6։
98 Տե՛ս ՀՍՍՀ ԿԳԳԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1534, թ. 22։

Թյուն[99], 900-ական թվականների սկզբին Ս. Կոլյանցը հրատարակում էր «Асхабадский листок» թերթը, իսկ 1919 թ. լույս տեսան նաև հայերեն թերթեր՝ «Ժողովրդական թերթը», «Շեփորը», «Կռունկը»։

Հայ մտավորականության մի շարք ներկայացուցիչներ իրենց մասնակցությամբ նպաստել են երկրամասի ընդհանուր առաջընթացին։ Մոսկվայի համալսարանն ավարտած Սամարղանդի գավառական բժիշկ Ա. Իշխանովը պայքար է կազմակերպել վարակիչ հիվանդությունների դեմ[100], նրա ջանքերով ստեղծվել են փոքրիկ հիվանդանոցներ, կատարվել բարդ վիրահատություններ։ Նա վայելել է տեղական բնակչության ջերմ սերն ու հարգանքը։

Տարբեր տարիներ Միջին Ասիայի քաղաքներում առողջապահության ասպարեզում աշխատել են հայ բժիշկներ Ա. Մնացականովը, Ա. Նահապետեկյանը, Սոֆյա Մալխասյանը, Ա. Փաթրադյանցը և ուրիշներ։

Գյուղատնտես Ս. Մելիք-Սարգսյանը[101] լույրջ ներդրում է կատարել ջրային պաշարների ռացիոնալ օգտագործումը հիմնավորելու և ոռոգման կառույցների նախագծեր մշակելու գործում։ Նա այդ հարցերի վերաբերյալ մի քանի գրքեր է գրել, որոնք հրատարակվել են Մոսկվայում։ Սիրդարյան մարզում հիդրոտեխնիկական կառույցների աշխատանքը ղեկավարել է ինժեներ Գ. Բաբալյանցը[102], Թուրքեստանի գյուղատնտեսության վիճակի ուսումնասիրությամբ է զբաղվել Ա.Շահնազարովը[103]։

Մի քանի տարի Աշխաբադում է ապրել նշանավոր գիտնական Ս. Գուլիշամբարովը։ Նա ուսումնասիրել է երկրամասի տնտեսական կյանքը և աշխատություններ գրել այդ մասին։ Նա միաժամանակ զբաղվել է Աշխաբադի, Կզըլ-Արվաթի և Կաղանջիկի հանքային ջրերի քիմիական բաղադրության ուսումնասիրությամբ։ Հայ ինժեներներ ու տեխնիկներ Գ. Հակոբջանովը, Հ. Սարգիսեկովը, Ա. Աարիևը և ուրիշներ նպաստել են արտադրության տեխնիկական առաջընթացին։

Գաղթօջախի հայերը հետաքրքրություն են հանդես բերել նաև բատերական արվեստի նկատմամբ։ 1900 թ. Աշխաբադում, տեղական ուժերի մասնակցությամբ, Ադնիվ և Անդրանիկ Սողոմյանները կազմակերպել են հայերեն ներկայացումներ[104], 1902 թ. Ս. Վրույրը նույնպես Աշխաբադում ներկայացում է կազմակերպել։ Սամարղանդում և Կոկանդում հյուրախաղերով հանդես են եկել հայկական դրամատիկական խմբերը (1915 և 1916 թթ.)։

Միջին Ասիայում բնակություն հաստատած աշխատավոր հայերը ակտիվ մասնակցություն են ունեցել երկրամասում ծավալվող հեղափոխական շարժումներին։ Ռուսների և տեղական ժողովուրդների հետ միասին նրանք պայքարի են ելել ցարական ինքնակալության և շահագործողների դեմ։ «Асхабадский вестник» թերթը 1906 թ. հունվարի 11-ի համարում գրել է. «...Տաշքենդի մեծ իրադարձություններն ալեկոծեցին հասարակական խիղճը։ Կապի ու հեռագրական պաշտոնյաները գործադուլ արեցին, գործադուլ արեցին նաև երկաթուղայիններն ու զինվորները՝ նրանց միացած հայերի հետ միասին։

---

99 Տե՛ս Թուրքմ. ՍՍՀ ՊԿՄ, ֆ. 1, ց. 2, գ. 7154, թ. 14։

100 Տե՛ս Ուզբ. ՍՍՀ ՊԿՄ, ֆ. 1, ց. 20, գ. 1438, թ. 1։

101 Տե՛ս նույն տեղում, ց. 3, գ. 564, թ. 17։

102 Տե՛ս նույն տեղում, թ. 41։

103 Տե՛ս նույն տեղում, թ. 1։

104 Տե՛ս «Асхабад», газета, 15 и 20 авг., 1900.

Տեղի ունեցավ ժողով, որտեղ կային արհեստավորներ, զինվորներ, հայեր, տեղական մտավորականության ներկայացուցիչներ»։ 1907 թ. ոստիկանական մի զեկուցագրում նշվում էր, որ հեղափոխական շարժումների մեջ ակտիվ դեր է խաղացել Աշխաբադի գիմնազիայի նախկին սան Ա. Զուրաբովը[105]։ Աշխաբադից աքսորման ենթակա 23 հեղափոխականների մեջ հատուկ շեշտված են սոցիալ-դեմոկրատներ Ալ. Ասրիեը, Ա. Խաչիկյանցը և ուրիշներ, որոնք «զորքերի մեջ ակտիվորեն թռուցիկներ են տարածել»[106]։

Ավելի գործուն մասնակցություն ունեցան հայերը Միջին Ասիայում սովետական իշխանության համար ծավալված պայքարին ու քաղաքացիական կռիվներին[107]։ Թուրքեստանյան երկրամասի բոլշևիկյան կենտրոնի ակտիվ գործիչներից էր Ահարոն Ահարոնյանը։ Մինչ այդ նա մասնակցել էր 1890-ական թվականների արևմտահայ ազգային-ազատագրական շարժումներին, հեղափոխական գործունեություն էր ծավալել Անդրկովկասում և Իրանում, մասնակցել էր Կովկասի կառավարչապետ Գոլիցինի դեմ մահափորձին։ Անցնելով Միջին Ասիա, 1917 թ. վերջերին Ահարոնյանը հայերից և այլ ազգությունների ներկայացուցիչներից հավաքում է 40 հոգուց կազմված մի զինված ջոկատ՝ հակահեղափոխական ուժերի դեմ կռվելու համար։ Հետագայում ջոկատի մարտիկների թիվը հասնում է մի քանի հարյուրի։ Մարտերում ծանր վիրավորվելուց և ապաքինվելուց հետո, Ահարոնյանը ընտրվում է կուսակցության Չարջոուի քաղկոմի նախագահ, հետագայում ևս վարում է մի շարք պատասխանատու պաշտոններ։

Տաշքենդի ռազմահեղափոխական կոմիտեի տրամադրության տակ է գործել Սարգիս Վելունցի 100 հայ մարտիկներից կազմված ջոկատը։ Հիմնականում հայերից կազմված մեկ ուրիշ ջոկատ (մոտ 300 հոգի) 1918 թ. գործել է Սամարղանդում, որի կազմակերպիչներն են եղել Ա. Ահարոնյանը և Հայկ Բժշկյանը (Գայը)։ Բազմաթիվ մարտերում աչքի են ընկել ջոկատի մարտիկներից Հ. Թորոսյանը, Գ. Ծատուրյանը, Հ. Մանուկյանը և ուրիշներ։ Միջին Ասիայում հեղափոխական աշխատանք է տարել նաև Գ. Հայկունին։ 1920—22 թթ. բասմաչների և տխրահռչակ Էնվեր փաշայի «Իսլամի բանակի» հրոսակների դեմ մղված կռիվներում հատկապես աչքի է ընկնում հեծյալ բրիգադի հրամանատար Հակոբ Մելքումյանը։ Այս մարտերում, այլ ժողովուրդների ներկայացուցիչների կողքին, իրենց սխրագործություններով աչքի ընկան նաև բազմաթիվ հայ զինվորներ ու հրամանատարներ. Թուրքեստանյան հեծյալ դիվիզիայի հատուկ բաժնի պետ, նշանավոր հետախույզ Գ. Սարուխանյանը, ջոկատի հրամանատար ղարաբաղցի Ալ. Տոնիյանը և շատ ուրիշներ։

---

105 Տե՛ս Թուրքմ. ՍՍՀ ՊԿԱ, ֆ. 1, ց. 2, գ. 274, թ. 8։

106 Նույն տեղում, գ. 227, թ. 12։

107 Տե՛ս Ա. Մնացականյան, Հոկտեմբերի բարիկադների վրա, Երևան, 1967, էջ 174—178, 202—209։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ

1. ԲՈՒԼՂԱՐԻԱ

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում Ռուսաստանի տարած հաղթանակի շնորհիվ Բուլղարիան ազատագրվեց Թուրքիայի լծից և բռնեց տնտեսական-քաղաքական ինքնուրույն զարգացման ուղին։ Պատմական այդ մեծ ակտը, ինչպես նաև դրան հաջորդող Բուլղարիայի հյուսիսային և հարավային հատվածների միավորումը (1885 թ.) շրջադարձային նշանակություն ունեցան նաև բուլղարահայերի համար։ Բուլղարահայերը, որպես ազատագրված քաղաքացիներ, օգտվում էին երկրում հաստատված սահմանադրական և օրենսդրական իրավունքներից ու ազատություններից, ինքնուրույն կերպով լուծում իրենց համայնքի ներքին կյանքի հարցերը[1]։

Ահա թե ինչու Արևմտահայաստանից արտագաղթողները ազատագրված Բուլղարիան դարձրին իրենց հիմնական հանգրվաններից մեկը, սկսեցին մեծ ու փոքր խմբերով գաղթել այնտեղ՝ հնամենի ու խամրած գաղթօջախները համալրելով ազգային թարմ ուժերով։ 1877—1878 թթ. պատերազմի ընթացքում Բալկանյան թերակղզու և Փոքր Ասիայի տարբեր վայրերից Բուլղարիա են գաղթել շուրջ երկու հազար հայեր և բուլղարահայության թիվը հասցրել հինգ հազարի։ 80-ական թվականներին այդ հոսանքն ուժեղանում է։ 1880—1885 թթ. Բուլղարիա են գաղթել շուրջ 1200 հայ, իսկ 1886—1890 թթ.՝ մոտ վեց հազար։ Բուլղարահայության թիվը 1890 թ. հասնում է 13 հազարի։ 90-ական թվականների հայկական ջարդերի ժամանակ Բուլղարիայում ապաստան են գտնում շուրջ 50 հազար հայ, որոնց մի մասը սփռվում է տարբեր երկրներ կամ ավելի ուշ վերադառնում Թուրքիա, իսկ 20 հազարը հաստատվում է Բուլղարիայում։ Դարավերջին բուլղարահայերի թիվը հասնում է շուրջ 33 հազարի։

Հայերը հիմնականում կենտրոնացած էին քաղաքներում։ XIX դարի վերջին քառորդում մեծ ու փոքր հայկական համայնքներ կային Ֆիլիպոպոլսում (Պլովդիվ), Ռուսչուկում (Ռուսե), Սոֆիայում, Շումենում, Բուրգասում, Թաթար-Բազարջիկում (Բազարջիկ), Սիլիստրայում, Հաջի-օղլու-Բազարջիկում (Դոբրիչ, Տոլբուխին), Սլիվենում, Ստարա-Զագորայում, Խասկովոյում, Բալչիկում, Կավառնայում, Թութրականում, Յամբոլում, Ավիշտովում (Սվիշտով),

---

1 Տե՛ս *С. В. Овнанян*, Армяно-болгарские исторические связи и армянские колонии в Болгарии во II половине XIX в., Ереван, 1968.

Լոմիում, Վիդինում, Թորնովոյում և մի շարք այլ քաղաքներում ու ավաններում։

Բուլղարահայության դասակարգային կազմը որոշվում էր երկրի սոցիալ-տնտեսական հարաբերություններով և դրանց զարգացման օրինաչափություններով։ Բուլղարահայության կեսից ավելին վարձու բանվորներ էին, բեռնակիրներ և ընչազուրկ այլ խավեր, որոնք ցրված էին երկրի տարբեր քաղաքներում։

Բուլղարահայերի մեջ նկատելի թիվ էին կազմում մանր ու խոշոր առևտրականներն ու վաճառականները։ XIX դարի վերջին քառորդում նշանավոր էին Հայրապետյան, Գուլումճյան, Բեզազյան, Փափազյան, Համբարձումյան և թաղմաթիվ այլ բուլղարահայ առևտրական տները, որոնք երկրի մի շարք քաղաքներում ունեին տարատեսակ ապրանքների խանութներ։ Նրանց գործունեությունը, որպես կանոն, դուրս էր գալիս ներքին առևտրի շրջանակներից և հասնում մինչև Թուրքիա, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Ֆրանսիա, Ռուսաստան և այլուր։ Բուլղարահայ վաճառականները իրենց գործունեությամբ նպաստում էին առևտրական կյանքի աշխուժացմանը և կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը[2]։

Բուլղարահայության մեջ մեծ կշիռ ունեին արհեստավորները։ Ֆիլիպոպոլիսը, Վառնան, Ռուսչուկը, Շումենը, Սիլիստրան, Թաբար-Բազարջիկը, Բուրգասը, Սլիվենը և մի շարք այլ քաղաքներ հայտնի էին որպես հայ արհեստագործության, մասնավորապես՝ ոսկերչության, պղնձագործության, դերձակության, կաշեգործության, մանածագործության, կոշկակարության և ասեղնագործության կենտրոններ։ Սակայն հայերն ավելի մեծ դեր էին խաղում առևտրի, քան արհեստագործության ասպարեզում։ Այդ պայմանավորված էր արհեստագործության ճգնաժամով, որն սկսվել էր Բուլղարիայում՝ արևմտաեվրոպական արդյունաբերողների անկաշկանդ մրցակցության հետևանքով։ Չդիմանալով նրանց հարվածներին, շատ արհեստավորներ փլչում էին՝ համալրելով վարձու բանվորների և քաղաքային չքավորության շարքերը։

Իրենց գոյությունը պահպանելու նպատակով հայ արհեստավորները հաճախ միանում էին, կազմակերպում յուրատեսակ արհեստագործական միություններ, որոնք հաջողությամբ մրցակցում էին արևմտաեվրոպական արդյունաբերողների հետ։ Այս առումով նշանավոր է «Զուրուկչյան և այլք» ոսկերչական-ասեղնագործական ընկերությունը, որի արտադրանքը ներկայացվել է 1892 թ. Ֆիլիպոպոլսի ցուցահանդեսում[3]։

Պարսկական գորգերի արտադրությամբ հիշատակության է արժանի Վանի վարպետներից մեկը՝ Հովհաննես Պողոսյանը, որը 1891 թ. գաղթել էր Բուլղարիա և դարձել այնտեղ պարսկական գորգերի արտադրության առաջին կազմակերպողը[4]։

Երկրում փոքր թիվ էին կազմում հողագործները, որոնք բնակվում էին Վառնայի և Հաջի-օղլու-Բազարջիկի շրջակա, ինչպես նաև Աչեմլեր, Կոզլուջա,

---

2 *Տե՛ս* Ե. Հակոբյան, Պուլկարահայ վաճառականներ, «Վիթոշ-Արարատ», Պլովդիվ, 1935, էջ 154—180։

3 *Տե՛ս* «Արմենիա», Մարսել, 1892, № 13։

4 *Տե՛ս* «Поход», София, 1941, № 59—63, стр. 14.

Ախի-Օրման, Կերմենլի, Ջամբազի, Մխսլիմի ու մի շարք այլ գյուղերում։ Նրանք զբաղվում էին հիմնականում այգեգործությամբ և որոշ չափով անասնապահությամբ։ Գյուղական բնակչության սոցիալական խոր շերտավորությամբ, որ գոյություն ուներ Բուլղարիայում, իր կնիքն էր դրել նաև հայ երկրագործների վրա։ Խոշոր կալվածատերերի և ուներ ու միջակ գյուղացիների կողքին կային նաև սակավահող ու հողազուրկ շինականներ, որոնք զբաղվում էին բատրակությամբ և գյուղատնտեսական այլ աշխատանքներով։

Որոշակի կշիռ ուներ նաև մտավորականությունը։ Այն հիմնականում բաղկացած էր հայկական դպրոցների ուսուցիչներից, լրագրողներից, հոգևոր ու աշխարհիկ ծառայողներից, որոնք մեծ դեր կատարելիս ինչպես հայկական գաղութների, այնպես էլ Բուլղարիայի հասարակական-քաղաքական և կուլտուր-լուսավորական կյանքում։

Ազատագրվելով թուրքական լծից, բուլղարահայերն սկսեցին ապրել ազգային ինքնատիպ կյանքով։ Նշանակալից էր լուսավորչական եկեղեցու, հայկական քաղաքական խորհուրդների, ազգային դպրոցների, կուլտուր-լուսավորական հիմնարկների ու հասարակական մյուս կազմակերպությունների դերը։

Հայկական յուրաքանչյուր համայնքի քաղաքական խորհուրդը, որի նախագահն ի պաշտոնե դառնում էր հոգևոր առաջնորդը, ինքնուրույն լուծում էր համայնքի հոգևոր և ներքին հարցերը, կարգավորում «ազգային սնդուկի» (դրամարկղի) մուտքն ու ելքը։ Բուլղարահայ եկեղեցիները քևմական կենտրոն չունեին. նրանցից յուրաքանչյուրը ենթարկվում էր Կ. Պոլսի պատրիարքությանը, իսկ վերջինս միջոցով՝ էջմիածնի կաթողիկոսությանը։

Թուրքական լծից ազատագրված Բուլղարիայում վերացել էին հայերի, որպես քրիստոնյաների, հալածանքները։ Օգտվելով ազգային փոքրամասնությունների համար նախատեսված իրավական վիճակից, բուլղարահայերը դեմոկրատական հիմունքներով ընտրում էին համայնքային խորհուրդներ, որոնք աստիճանաբար իրենց ձեռքն էին վերցնում համայնքի ազգային գործերի կարգավորումը։

Բուլղարիայի ազատագրումը նպաստեց բուլղարահայ գաղութի կուլտուր-լուսավորական կյանքի զարգացմանը։ 80—90-ական թվականներին կրկնապատկվեց բուլղարահայ այն համայնքների թիվը, որտեղում գոյություն ունեին ազգային դպրոցներ։ Աշխույժ գործունեություն ծավալեցին Ֆիլիպպոլսի, Վառնայի, Ռուսչուկի, Շումենի, Քաթար-Բազարջիկի, Սիլիստրայի, Հաջիօղլու-Բազարջիկի և Սոֆիայի հայկական դպրոցները։ Համայնքներում անցկացվեցին հոգաբարձությունների ընտրություններ, որոնք իրենց ձեռքը վերցրին դպրոցների ղեկավարման գործը, ղպրոցներին առընթեր կազմակերպեցին երգեցիկ, պարային, թատերական և այլ ինքնագործ խմբեր։

XIX դարի 80-ական թվականներին բուլղարահայության ազգային կյանքի համընդհանուր վերելքում նշանակալից դեր խաղացին բազմաթիվ ուսուցիչներ ու հասարակական գործիչներ, որոնցից հիշատակության արժանի են Գարեգին և Նշան Շիշմանյան եղբայրները (Ֆիլիպպոլիս), Տաճատ Գևլերյանը և Խորեն Քյուշուքյանը (Շումեն), Գևորգ Օվաճգյանը, Մկրտիչ Քյուշկյանճյանը (Ռուսչուկ), Կարապետ Սահակյանը (Սլիվեն) և ուրիշներ։ Հայ մանկավարժները չանում էին կենտրոնացնել բուլղարահայ դպրոցական գործը և դպրոցներն ապահովել կայուն ուսումնական ծրագրերով ու ձեռնարկներով,

բարձրացնել բուլղարահայ դպրոցների մակարդակը և պաշտոնապես իրավահավասարեցնել բուլղարական տարրական դպրոցներին։

Նշանակալից դեր խաղացին նաև նորաստեղծ հասարակական կազմակերպություններն ու հայրենակցական միություններըւ 1883 թ. Ֆիլիպպոպոլսի Վարդանյան դպրոցի տեսուչ-դաստատու Տաճատ Լութֆյանի նախաձեռնությամբ հիմնադրված «Դրասիրաց եղբայրությունը» բացեց հայկական գրադարան-ընթերցարան, որը նպաստեց տեղի հայերի մտավոր զարգացմանը։ Նույնատիպ հասարակական կազմակերպություններ հիմնադրվեցին նաև Վառնայում («Սիսակյան ընկերություն»), Ռուսչուկում («Երիտասարդ ընթերցասերների ընկերություն»), Սիլիստրայում («Խնամակալ ընկերություն»), Շումլենում («Ընթերցասիրաց ընկերություն»), Թաթար-Բազարջիկում («Խորենյան ընկերություն») և Սլիվլենում («Երիտասարդ ընթերցասերների ընկերություն»)։ Այդ ընկերությունները կարճ ժամանակամիջոցում կազմակերպեցին հայկական գրադարան-ընթերցարաններ, որոնք, կապվելով հայ կյանքի կենտրոններ Կոստանդնուպոլսի ու Թիֆլիսի, Մարսելի ու Մոսկվայի հետ, աստիճանաբար վերածվեցին մշակութային օջախների։

Ազգային կյանքի աշխուժացումը բուլղարահայ իրականության մեջ պայմանավորված էր ոչ միայն նրա ներքին զարգացմամբ, այլև Արևմտյան Հայաստանում ազգային-ազատագրական շարժման բուռն վերելքով։ 1882 թ. սեպտեմբերի 1-ին Վառնայում, արևմտահայ բաղաքական վտարանդիների արտասահմանյան խոշոր կենտրոններից մեկում, հիմնադրվեց «Հայրենասիրաց ընկերություն»։ 80-ական թվականների կեսերին նույնատիպ կազմակերպություններ հիմնադրվեցին նաև Պլովդիվում, Ռուսչուկում, Սիլիստրայում և Շումլենում։ Սկզբնական շրջանում համեմատաբար աշխույժ գործունեություն ծավալեց Վառնայի «Հայրենասիրացը», որն ուներ իր տպագիր օրգանը՝ «Իրավունք» (հայերեն և ֆրանսերեն) շաբաթաթերթը։ Հետագայում ակտիվություն ցուցաբերեց Սիլիստրայի «Հայրենասիրաց ընկերությունը», որը գլխավորում էր արևմտահայ ազգային շարժման հին գործիչներից մեկը՝ Տաճատ Պեյլերյանը։ Այն պայքարում էր հանուն բուլղարահայ մեծ համայնքներում հայրենասիրական կազմակերպությունների հիմնադրման, նրանց գործունեության համախմբման և կազմակերպչական միավորման։ Կապված լինելով Մկրտիչ Փորթուգալյանի «Արմենիայի»ի հետ, որը, ի դեպ, մեծ ազդեցություն ուներ բուլղարահայության շրջանում, Սիլիստրայի «Հայրենասիրացը» ջանում էր համախմբել նաև եվրոպական տարբեր երկրների հայկական գաղթօջախներում ծագած հայրենասիրական խմբերն ու կազմակերպությունները և հիմնադրել «Եվրոպայի հայոց հայրենասիրական միությունը»։ Այդ պայքարը, որի նախաձեռնությունն ու ղեկավարությունը Վառնայի «Իրավունք»ին փակվելուց հետո անցավ Մարսելի «Արմենիայի»ն ձեռքը, տվեց դրական արդյունքներ։

Վառնայի «Հուլս» (1884—1885 թթ.) և «Իրավունք» (1885 թ.), Ռուսչուկի «Դանուբ» (1892 թ.), Մարսելի «Արմենիա» թերթերի, ինչպես նաև Վառնայի, Պլովդիվի, Սիլիստրայի ու Ռուսչուկի հայրենասիրաց կազմակերպությունների գործունեությունը նպաստեց բուլղարահայ գաղթօջախում ազգային-դեմոկրատական շարժման տարածմանը։ Այդ զանգվածային մի շարժում էր, որին մասնակցում էին բուլղարահայության ամենալայն դեմոկրատական խավերը և իր սուր ծայրով ուղղված լինելով Թուրքական տիրապետության դեմ,

մղվում էր հանուն Արևմտյան Հայաստանի ազատագրության։ Սկիզբ առնելով 80-ական թվականներին, այդ շարժումն ապրեց վերընթաց զարգացում և ընդունեց ավելի կատարյալ ձևեր՝ ի դեմս մասսայական միտինգների և ցույցերի։ Ցուցարարները, որոնց առաջին շարքերում ընթանում էին բուլղարահայ աշխատավորական զանգվածները, քարկոծում էին բուլղարական քաղաքներում գտնվող թուրքական դիվանագիտական ու առևտրական ներկայացուցչությունների շենքերը, բողոքագրերով դիմում էին մեծ տերությունների հյուպատոսներին՝ պահանջելով ճնշում գործադրել թուրքական կառավարության վրա՝ Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածը կենսագործելու համար։

Սկսված շարժումն իր կնիքը դրեց բուլղարահայ մշակութային կյանքի և, առաջին հերթին, գեղարվեստական գրականության վրա։ «Դանուբ» թերթի տնօրեն-խմբագիր Մկրտիչ Թյությունճյանը իր «Դատապարտյալն Շուշան», «Երկու ասպատակ հայեր», «Հայաստանի Բշվառները», «Իմ հայրասպան ընկերը» և այլ ստեղծագործություններում, նկարագրելով արևմտահայերի ոգեբերգական վիճակը, կոչ էր անում, մահապարտ Շուշանի օրինակով, դիմել զինված ինքնապաշտպանության։ «Փառք այն հային,— գրում էր նա,— որը պաշտպանում է իր ազգի պատիվը և ընկնում սուրը ձեռքին»[5]։ Թյությունճյանի «Մուսա պեյ և իր սարսափելի եղեռնագործություները» ողբերգությունը հաստատապես մտավ բուլղարահայ թատերախմբերի խաղացանկի մեջ։ «Ազատութիւն Պուլկարիո և կենսագրութիւնք պուլկար ապստամբաց» ակնարկում, որը լույս տեսավ 1888 թ., Թյությունճյանը չերմ համակրանքով է կերտել բուլղար ազգային-ազատագրական գործիչներ Գեորգի Ռակովսկու, Լյուբեն Կարավելովի, Վասիլ Լևսկու, հեղափոխական-դեմոկրատ Քրիստո Բոտևի և այլոց կերպարները։ Նա մեծ կրքոտությամբ է նկարագրել բուլղարների ազատագրական շարժման հերոսական դրվագները, կոչ է արել արևմտահայերին օրինակ վերցնել նրանցից, երկրում հիմնադրել անկախ կազմակերպություններ, նախապատրաստվել զինված ապստամբության, զենքի դիմել, «Բուրքերի հետ խոսել բուլղարերեն» և արյան գնով թոթափել սուլթանի լուծը։

Ազգային-ազատագրական շարժումն իր արտահայտությունը գտավ նաև կերպարվեստի, նկարչության, երաժշտության և ժողովրդական բանահյուսության մեջ։ Այդ տարիներին ռուսչուկահայերի մեջ ծնվեց և բուլղարահայ շրջաններում լայն տարածում ստացավ ժողովրդական-հայրենասիրական մի երգ, ուր կոչ էր արվում.

Հայաստանի մեջ մեր եղբայրք կողբան,
Ա՛լ բավ է, հայե՛ր, դիմել առ սուլթան,
Մեկզի դնենք լաց, գրիչն ու փետուր,
Ձեռքերնիս առնենք ազատարար սուր,
Օրինակ առնենք պուլկարի ազգեն,
Մենք ալ կազատվենք թուրքերի ձեռքեն[6]։

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Բուլղարիայում ծավալված հակաթուրքական շարժմանը ակտիվորեն մասնակցում էին նաև բուլղարահայերը։ Հայ-բուլղարական համատեղ միտինգներն ու ցույցերը, որոնք ուղղված էին

---

5 Մկրտիչ Ս. Թիւթիւնճեանէ, Դատապարտեալն Շուշան, Ազնքսանդրիա, 1888, էջ 9։
6 «Արմենիա», Մարսել, 1889, № 47։

Մակեդոնիայում և Արևմտյան Հայաստանում թուրքական իշխանությունների կատարած բարբարոսությունների դեմ, գարձան պարբերական։ Թուրք պաշտոնյաների դեմ կազմակերպված ահաբեկումները հաճորդում էին միմյանց, իսկ հայդուկային չոկատները թափանցում էին թուրքական տիրապետության սահմանները և մարտական գործողություններ ծավալում։ Սվետոսլավ (Սլավի) Մերջանովի հայդուկային խումբը, որի կազմում կային նաև հայեր, 1901 թ. հուլիսի 18-ին Հասքովոյի շրջանի Սլադուն գյուղի մերձակայքում գտնվող Քարահանքեր վայրում պաշարվեց թուրքական զորաչոկատի կողմից։ Անհավասար կռվում քաջարար զոհվեցին հայդուկներ Պետրո Սոկոլովը, Իվան Քոքակովը և Հովհաննես Զարմանյանը (Քաքուլ)։ Թուրք զինվորներին հաջողվեց գերի վերցնել խմբապետ Քրիստո Իլևին, Պետրոս (Պետո) Սերենյանին (Բուլղարիայից) և Օնիկ Թորոսյանին, որոնք դեկտեմբերի 9-ին Ադրիանապոլսում կախաղան բարձրացվեցին[7]։ Ժողովրդական Բուլղարիայի կառավարությունը հետագայում բուլղար և հայ հայդուկների մարտի վայրը հավերժացրեց նրանց նվիրյալ հուշատախտակով։

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՌՏԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՏԵՐԻՆ

1912 թ. հոկտեմբերին սկսված բալկանյան պատերազմը՝ մի կողմից Թուրքիայի և մյուս կողմից Բուլղարիայի, Սերբիայի, Հունաստանի և Չեռնոգորիայի միջև, բայն արձագանք գտավ թուրքական լծի տակ տառապող ժողովուրդների շրջանում։ Ազատագրական գործուն պայքարի ուղին բռնած բալկանյան ժողովուրդների օրինակը ոգեշնչման ու ընդօրինակման նոր աղբյուր դարձավ նաև հայ ժողովրդի համար։ Բուլղարիայում, ինչպես նաև այլ երկրներում ու Հայաստանում բնակվող բազմաթիվ հայեր մասնակցեցին թուրքական լծի տապալմանը Բալկանյան երկրներում, համոզված, որ դրանով նպաստում են նաև Արևմտյան Հայաստանի ազգային ազատագրության գործին։

Արևմտյան Հայաստանում ծավալված հայդուկային կռիվներում արդեն հռչակված Անդրանիկը, որն այդ տարիներին բնակություն էր հաստատել Բուլղարիայում, վաղուց ոչ հեռու՝ Գալատցիում, եռանդով մասնակցում էր բուլղարների և մակեդոնացիների ազատագրական գործունեությանը։ Նա մտերիմ բարեկամություն ուներ մակեդոնական հայտնի հեղափոխական գործիչներ Բորիս Սարաֆովի և Գարվանովի հետ։ Անդրանիկին հարազատ էր բոլոր ճնշված ազգերի ազատագրության գործը։ «Ես նացիոնալիստ չեմ,— ասել է նա,— ես ճանաչում եմ միայն մի ազգ, դա բոլոր ճնշվածների ազգությունն է»[8]։ Իր տանը ունեցած զեղչն ու փամփուշտները Անդրանիկը աշխատում էր հնարավոր միջոցներով տեղափոխել Արևմտյան Հայաստան։

Պատերազմի նախօրյակին Բուլղարիայում ծայր առավ կամավորական շարժումը. կազմավորված առանձին կամավորական զորամիավորումները բուլղարական բանակի կազմում պետք է մասնակցեին պատերազմական գործողություններին։ Ժամանելով Սոֆիա, Անդրանիկը ձեռնամուխ եղավ հայ-

---

7 Տե՛ս «Շարժում» (Վառնա), 5, 8, 15 և 19 դեկտեմբերի, 1901։

8 «Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը», Բեյրութ, 1932, էջ 160։

կական կամավորական ջոկատ ստեղծելու գործին։ Բազմաթիվ անձնվեր հայ երիտասարդներ խմբվեցին նրա շուրջը։ Հայ կամավորները տեղավորվել էին Սոֆիայի իգական գիմնազիայի շենքում և զբաղվում էին զինավարժությամբ։ Նրանց նյութապես օգնելու համար ստեղծվեց հայկական հատուկ մի կոմիտե, որը զբաղվում էր դրամական միջոցներ, հանդերձանք և մթերք հայթայթելու գործով։ Բուլղարահայ կանայք հայկական կամավորական ջոկատի համար գործեցին ազգային զրոշակ, պատրաստեցին անհրաժեշտ սպիտակեղեն։

Կամավորների ընդհանուր հրամանատար գնդապետ Գենովի հրամանով հայ կամավորական ջոկատը պաշտոնապես մտցվեց 12-րդ Հոլենզորդյան դրուժինայի կազմում, որպես նրա երկրորդ վաշտ, որի հրամանատար հաստատվեց Գարեգին Նժդեհը, իսկ մոյավոդ՝ Անդրանիկը։ Սահմանված կարգի համաձայն, նման վաշտերը կարող էին ունենալ 150—160 մարդ, սակայն, որպես բացառություն, հայերին թույլ տրվեց հավաքագրել 230 հոգի։ Բացի վաշտում ընդգրկվածներից, բազմաթիվ հայեր մտան կամավորական բրիգադի այլ զրահամասերի մեջ։ Նրանցից էին 12-րդ դրուժինայի մակեդոնական 3-րդ վաշտի հրամանատարի փոխտեղակալ Թորգոմը, բժիշկ Արմեն Սյունին, բուժակ Արամը և ուրիշներ։

1912 թ. հոկտեմբերի 8-ին վաշտը հայկական ս. Աստվածածին եկեղեցում հանդիսավոր պայմաններում երդում տվեց, իսկ հոկտեմբերի 23-ին Սոֆիայի հայերը դեպի ռազմի դաշտ ճանապարհեցին կամավորներին։ Ֆիլիպոպոլիս քաղաքում նրանք ընդունեցին Բադունու գործած կամավորների դրոշը։

Նոյեմբերի 6-ին վաշտը, կամավորական բրիգադի մյուս զորամասերի հետ, Արևելյան Թրակիայում մտավ ռազմական գործողությունների մեջ և այդ ընկավ Ուզուն-Չամիդլար լեռնաշղթայի շրջանում ծավալված կռիվներում։ Վաշտը միշտ գտնվում էր հարձակման ամենակարևոր հատվածներում և Անդրանիկի ղեկավարությամբ հերոսության վառ օրինակներ տալիս մյուսներին։ Այդ օրերին 12-րդ դրուժինայի հրամանատար Գեներ հայկական վաշտի մասին գրել է. «Օ՜, առյուծներ, կատաղյալ առյուծներ... Այսօր մեզ բոլորիս նրանք փրկեցին, եթե նրանք չլինեին, մենք բոլորս էլ ջարդվելու, գոհվելու էինք, բոլորս էլ... Ինչպիսի բաց տղերք կան, մարդ ուղղակի զարմանում է»[3]։

Այնուհետև վաշտը մասնակցեց Գյումուրջինա քաղաքի ազատագրմանը և հետապնդելով նահանջող թշնամուն, Մարիցա գետի շրջանում կատաղի կռիվների բռնվեց նրա հետ։ Մերհամլա գյուղի մոտ Անդրանիկը, թշնամու ինքնաթռիչին ուժեղ կրակի տակ, կարողացավ հմուտ շրջանց կատարել. խուճապի մատնված թուրքական զորամասերն սկսեցին անձնատուր լինել։ Գերի հանձնվեց նաև թուրքական կորպուսի հրամանատար Մահմեդ Յավեր փաշան։ Այս կռիվներում շատ հայ կամավորներ ալբի ընկան, հատկապես Պողոս անունով մի 16-ամյա պատանի, որը 15 ժամ տևած կռվի ընթացքում միշտ գտնվում էր առաջին շարքերում։

Անցնելով Դիմոտիկա, Ուզուն-Քյոպրի, Քեշան, Մալգարա քաղաքներով, հայկական վաշտը դեկտեմբերին հանգիստ առավ Մարմարայի ծովափի Պանադաս գյուղում։ Օգտվելով ժամանակավոր զինադադարից, վաշտը այցելեց մոտակա Ռոդոստո քաղաքի հայկական գաղութը, որտեղ նրան հուզմունքալի

[3] «Հայկական վաշտը», Բաքու, 1914, էջ 77։

ու խանդավառ ընդունելություն ցույց տրվեց։ Հանդիսավոր պայմաններում՝ Ծննդյան տոնի օրը, բրիգադի հրամանատար փոխգնդապետ Ալ. Պրոտոգենովը հայ կամավորներին «Քաջության խաչեր» հանձնեց, իսկ Անդրանիկի կրծքին ամրացնելով «Զինվորական քաջության ոսկե խաչ» բարձր պարգևը, ասաց. «Ռուսերդ էլ կռվում էիր որպես առյուծներ, սակայն քաջության խաչը հազվագյուտ բան է և տրվում է միայն քաջերից քաջին»[10]։

Շուտով պատերազմական գործողությունները վերսկսվեցին. Թուրքերը փորձեցին դնանտ հանել Մարմարայի ծովափին, Շար-Քյոյի մոտ կամավորական բրիգադի կազմում հայկական վաշտը կրկին մասնակցեց կատաղի կռիվների և Թուրքերի նահանջից հետո, տեղավորվելով Պլատանոս գյուղում, պաշտպանական դիրք գրավեց։

1913 թ. մարտի 13-ին լուր ստացվեց Ադրիանապոլսի անկման մասին։ Դա հաղթանակի երաշխիք էր, բայց պատերազմը դեռ շարունակվում էր, իսկ հայկական վաշտը շարունակում էր պաշտպանել Մարմարայի ծովափնյա իր դիրքերը։ Փոխգնդապետ Բուռևը հայկական վաշտի մասին գրել է. «Ուրախությամբ եմ նայում ես այս վաշտին, որքան առողջ, զվարթ ու խոշոր տղամարդիկ են։ Հերոսական վաշտ է»[11]։

Բալկանների ազատագրման համար մղված կռիվներում, բացի հայկական վաշտից, աչքի ընկան նաև մի շարք քաջարի հայ զորականներ։ Նրանցից հատկապես հայտնի է դեղեաղաջցի Հովհաննես Ջավուշը։ Նա մասնակցել էր Մակեդոնիայում ծավալված պարտիզանական կռիվներին, իսկ պատերազմի ժամանակ հռչակվել էր որպես քաջ ու անձնազոհ մարտիկ։ Մակեդոնիայում, Սուլթան-Թեփեի կատաղի կռիվների ժամանակ, Հովհաննես Ջավուշն իր վրա է վերցնում խումբ մտնված դրուժինայի հրամանատարությունը, գրոհի տանում նրան ու ետ շպրտում հարձակվող թշնամուն։ Այդ կռվում էլ նա հերոսի մահով զոհվում է։

Բալկանյան առաջին պատերազմը ավարտվեց մի շարք ժողովուրդների՝ Թուրքիայի դարավոր լծից ազատագրվելով։ Դա ունեցավ իր առաջադիմական նշանակությունը։ Վ. Ի. Լենինը Բալկանյան ժողովուրդների այդ հաղթանակը գնահատեց որպես միջնադարի փլուզում Ասիայում և Արևելյան Եվրոպայում։

Պատերազմի հաղթական ավարտից հետո, սարդ է, հայկական վաշտը աննկիլ չուներ։

Շտիպ քաղաքից հայկական վաշտը զինվորական կարգով անցավ Սուլթան-Թեփե լեռան մոտ գտնվող Կոչանի քաղաքը, որտեղ և մայիսի 27-ին հանձնեց բոլոր պետական իրերը և պաշտոնապես կազմալուծվեց։ Մյուս օրը, սակայն, քաջ մարտիկները ընդհանուր հրամանով նորից շարք կանգնեցին, այս անգամ ոչ թե մարտի գնալու, այլ հրաժեշտի համար, հիշեցին հերոսաբար զոհվածներին, փառք ու պատիվ տվեցին իրենց անվանի հրամանատար Անդրանիկին, երդվեցին հավատարիմ լինել հայրենիքի ազատության վեհ գաղափարին և մեկնեցին Սոֆիա։

Հայկական վաշտը արժանացավ բուլղար ժողովրդի խորին հարգանքին և նրախտագիտության։ «Կիևսկայա միսլ» թերթը Անդրանիկի մասին 1913 թ. գրել է, որ նա հանրաճանաչ ժողովրդական հերոս է, որ նրա անունը «հայտ-

10 «Բանբեր Հայաստանի արխիվների», 1965, № 1, էջ 11։
11 «Հայկական վաշտը», էջ 131։

նի է Տաճկաստանում, Անդրկովկասում, նույնիսկ Եվրոպայում։ Անդրանիկը այդ ժամանակներում մի ժողովրդական հերոս էր, ազատության մարտիկ, բողոքի մարմնացում Թուրքական ճնշումների դեմ...» Իրենք՝ բուլղար ռազմիկները, բարձր գնահատելով Անդրանիկի ծառայությունները, գրում էին. «Սիրելի Անդրանիկ, վստահ եղեք որ՝ երբ առիթը ներկայանա ձեր հայրենիքն ալ փրկելու Թուրքին ճիրաններեն, մենք ալ փոխադարձաբար ձեր կողքին կգտնվինք»[12]։

Բուլղարահայերն ակտիվորեն մասնակցում էին նաև երկրում տեղի ունեցող հասարակական-քաղաքական պայքարին։ XX դարի սկզբին Բուլղարիայում, բանվորական ու սոցիալ-դեմոկրատական շարժումների համընդհանուր առաջընթացի հետ, ձևավորվեց բուլղարահայ սոցիալ-դեմոկրատական կոմունիստական ուղղությունը, որի ներկայացուցիչներն էին Ստեփան Շահբազյանը և Տիգրան Խմիրյանը։ Բուլղարական սոցիալ-դեմոկրատական (տեսնյակների) կուսակցության առաջնորդներ Դիմիտր Բլագոևի և Վասիլ Կոլարովի ցուցումով նրանք 1909 թ. հիմնադրեցին «Նոր հոսանք» հայ աշխատավորական սոցիալ-դեմոկրատական խմբակը, որի ակտիվ գործիչներից էին Արտաշես Մուրադյանը, Հրանտ Մոմջյանը, Գրիգոր Շիշմանյանը և ուրիշներ։ Հանդիսանալով բուլղարական սոցիալ-դեմոկրատական կուսակցության օրգանական մասը, բուլղարահայ կոմունիստական անդրանիկ խմբակը պայքար ծավալեց հայ ազգային կուսակցությունների դեմ, հանուն աշխատավորական զանգվածների ինտերնացիոնալ դաստիարակության։

Բուլղարահայ կոմունիստական ուժերն առնականացան առաջին համաշխարհային պատերազմի տարիներին և ձնռք-ձեռքի տված բուլղարական «տեսնյակների» հետ, համառ ու հետևողական պայքար ծավալեցին մոլեգնող շովինիզմի և իմպերիալիստական պատերազմի դեմ։ Մի շարք կուսակցական գործիչների հերոսական աշխատանքի արդյունք էր բուլղարական 28-րդ հետևակային գնդի հակապատերազմական ելույթը։

Բուլղարահայ կոմունիստների գործունեությունը տվեց շոշափելի արդյունքներ հատկապես մեծ Հոկտեմբերի հաղթանակի և նրա ազդեցության տակ հեղափոխական շարժման համընդհանուր վերելքի տարիներին։

2. ՌՈՒՄԻՆԻԱ

Ռումինիայում հայերն ապրում էին Մոլդովայում, Դոբրուջայում և Վալաքիայում։ Նրանց ճնշող մեծամասնությունը (մոտ 76 տոկոսը) հաստատված էր քաղաքներում։ Հայաշատ քաղաքներից էին Բուխարեստը, Բոտոշանը, Գալացը, Կոստանցան, Ռոմանը, Տըրգու-Օկնան, Սիլիստրան[13] և այլն։

XIX դարի 60-ական թվականներին Ռումինիայում բնակվում էին շուրջ 9000 հայեր։ Նրանց թիվն ավելի մեծացավ 1872 և 1913 թվականներին Դոբրուջայի դանազան մասերը Ռումինիային միացնելուց հետո։ Ռումինիայի հայկական գաղթավայրը ստվարացավ մանավանդ 1890-ական թվականների հայկական կոտորածների ու մեծ եղեռնի տարիներին, 1915 թ. հասնելով մոտ 15.000-ի։ Սակայն, երբ 1916 թ. գերմանական բանակը ներխուժեց Ռումինիա, հայերի

12 «Հուշամատյան», Փարիզ, 1954, էջ 138։

13 1913—1940 թթ. այս քաղաքը կա գտնվում էր Ռումինիայի կազմում։

որոշ մասը ստիպված եղավ հեռանալ երկրից։ Նրանք գաղթեցին Ռուսաստանի Սևծովյան ափերը։ 1916 թ. վերջերին միայն Օդեսայում ռումինահայ գաղթականների թիվը անցնում էր 4000-ից[14]։

Սոցիալական կազմով ռումինահայությունը միատարր չէր։ Նրանց մեջ կային պաշտոնյաներ, կալվածատերեր, առևտրականներ, արհեստավորներ ու օրավարձու բանվորներ, մշակույթի գործիչներ, ծառայողներ և այլն։

1858 թ. հետո, երբ Ռումինիայում հայերին տրվեց կալվածք գնելու իրավունք, ստեղծվեց հայ կալվածատերերի խավ։ Դրանցից ոմանք հողը կապալով տալիս էին վարձակալների, իսկ իրենք բնակվում էին Արևմտյան Եվրոպայի տարբեր քաղաքներում։

Հայ մեծահարուստ առևտրականներից նշանավոր էին Պ. Ճապուրոֆը, Աճեմօղլու-Փոփովիչը (Բուխարեստում), Գ. Ջունդ եղբայրները (Գալացում), Ֆրենքյան ու Թովմասյան եղբայրները (Կոստանցայում), Մանիսալյան եղբայրները (Կոստանցայում և Բուխարեստում) և ուրիշներ։ Վերջիններիս առևտրական տունը խոշորագույնն էր ողջ Ռումինիայում։ Արմենակ Մանիսալյանի ջանքերով էր, որ հիմնադրվեց Ռումինիայի «Արմտիքի վաճառականների ու արտադողների ընդհանուր ընկերությունը»։ Գալաց և Բրըիլա նավահանգստային քաղաքներում կային հայ նավատերեր։

Ռումինահայ բնակչության մեծ զանգվածը կազմում էր արհեստավորությունը։ Բուխարեստում հայ արհեստավորներն զբաղվում էին կոշկակարությամբ, Բոտոշանում՝ մսագործությամբ և երշիկեղենի արտադրությամբ։ Մեծ թիվ էին կազմում նաև նավահանգիստներում բեռնակրությամբ զբաղվող պանդուխտները։

Հայերն իրենց հոգևոր գործերը տնօրինելու մեջ անկախ էին Ռումինիայի կրոնական իշխանություններից, մինչդեռ հայկական դպրոցները ենթակա էին պետության ուսումնական դեկավարությանը։ Հայկական բոլոր կրթական և հոգևոր հաստատությունները պահվում էին հայ ազգաբնակչության նյութական միջոցներով։ Դպրոցների պահպանման գործում կարևոր դեր էին խաղում տարբեր քաղաքներում հիմնված ընկերությունները։ Բուխարեստում հայտնի էին «Լուսումնասիրաց» (1871), «Հայաստան» (1879), «Արարատյան» (1883) և այլ ընկերությունները։

1872 թ. Ֆոկշանում կազմակերպվում է «Հայաստան» կամ «Ազգանպաստյան» ընկերությունը, որը ծրագրում էր քաղաքում բացել հայկական գիշերօթիկ բարձրագույն վարժարան։ 1870—1894 թթ. Բոտոշանում գործում է «Բարեգործական» ու «Հայ երիտասարդների ընկերությունը» և այլն, 1911—1916 թթ. «Հայ բարեգործական ընդհանուր միությունը» իր մասնաճյուղերն է ստեղծում Կոստանցայում, Բուխարեստում, Բալչիկում, Ֆոկշանում, Բազարջիքում, Սիլիստրայում, Ցաշում, Ռոմանում և այլ վայրերում։

Ռումինահայերը 1880 թ. Հայաստանում սկսված մեծ սովի ժամանակ հանգանակություն կազմակերպեցին և օգնեցին իրենց կարոտյալ հայրենակիցներին[15]։ Նրանք առավել կազմակերպված օգնություն ցուցաբերեցին մեծ հեղեղի օրերին. ստեղծեցին օգնության մարմին, որը հիմնականում բաղկա-

14. Տե՛ս «Մշակ», 1916, № 289։

15. Տե՛ս «Մասիս», Կ. Պոլիս, 1880, № 260/2718. «Արարատ», Վաղարշապատ, 1915, էջ 798 և այլն։

ցած էր արհեստավորներից և առևտրականներից։ Այդ մարմինը էջմիածնի «Եղբայրական օգնության կոմիտեին» ուղարկեց 8.000 ռ.։ Ռումինահայերը նյութական օգնություն ցույց տվեցին նաև կամավորական շարժմանը, ռազմաճակատ ուղարկեցին բազմաթիվ կամավորներ։

Ռումին ժողովուրդը և նրա առաջավոր մտավորականությունն անտարբեր չմնացին հայերին վիճակված ողբերգության օրերին։ 1895—1896 թթ. ջարդերի ժամանակ նրանք բողոքեցին Ստուրզայի լիբերալ-բուրժուական կառավարության դեմ, երբ վերջինս արգելում էր հայ գաղթականների մուտքը Ռումինիա։ Գալաց քաղաքում հրատարակվող «Գալացի» թերթը գրում էր. «Պարոն Ստուրզա, կանգ առ»։ Բուխարեստում հրատարակվող ռումինական սոցիալ-դեմոկրատական կուսակցության պաշտոնաթերթ «Լումեա Նոուա» («Նոր աշխարհ») «Բարբարոսություն» և «Հայ գաղթականներն ու ռումինական կառավարությունը» առաջնորդողներում մերկացնում էր Ստուրզայի կառավարությանը և կոչ անում օգնության ձեռք մեկնել հայ տարագիրներին։

Հայկական ջարդերի օրերին խոր տպավորություն է թողնում ռումին գրող Պետրու Վուլկանի (1869—1921) «Հայուհին» բանաստեղծությունը։ Այդ բանաստեղծության մեջ մայրը ողբում է իր ամուսնու, որդու և եղբոր նահատակությունը թուրք ջարդարարների կողմից, սակայն վերջում հայտնում է իր անխորտակելի հավատը հայության անմահության և վերջնական հաղթանակի մասին.

Անգութ ոսոխ,
Ինձ տանջեցիր, թալանեցիր
Որքան ագահ սիրտդ ուզեց.
Աչքերիս մեջ արցունքն հոսող՝
Այս աշխարհի ճամփաներում
Դու դարձրիր ինձ մուրացիկ,
Եվ սակայն դու
Մոռացար, որ իմ արգանդում
Կրում եմ ես հաղթանակն իմ՝
Այն հայորդուն,
Որ սև մահն է քո բերելու...[16]։

Ռումին մեծանուն գիտնական և հայագետ Նիկոլա Յորգան 1915 թ. մեծ եղեռնի առթիվ «Թուրքիայի հայերի բնաջնջումը» խորագրով ցասումնալից առաջնորդող տպագրեց իր խմբագրությամբ հրատարակվող «Նեամուլ ռոմընեսկ» («Ռումինական ժողովուրդ») թերթում[17]։ Նա, ամփոփելով Հ. Ա. Գիբոնսի «Հայաստանի վերջին ջարդերը» աշխատությունը, եզրակացնում է, որ փաստերը անառարկելիորեն ապացուցում են, թե հայերի բնաջնջումը 1915 թ. տեղի է ունեցել մշակված հատուկ մի նախագծի համաձայն, որն իր նախընթացը չունի ժամանակակից պատմության մեջ։

Ռումինական առաջադեմ հասարակայնության այդպիսի ջերմ վերա-

16 «Հայկական տարեցույց» (Գալաց), 1898, էջ 278։ Տողացի թարգմանությունը չափածոյի է վերածել բանաստեղծ Միքայել Հարությունյանը։

17 Տե՛ս N. Iorga, Distrugerea armenilor din Turcia, „Neamul Românesc", 1916, № 79.

բերմունքի շնորհիվ էր, որ, կառավարության բռնած դիրքին հակառակ, հայ գաղթականները սիրով ընդունվեցին Ռումինիայում։ Այստեղ ապրող հայերը երկրի տնտեսական, հասարակական ու մշակութային կյանքում խաղացած իրենց նպաստավոր դերով վարձահատույց եղան ռումին ժողովրդին։ Ականավոր գիտնական Ն. Յորգայի խոսքերով ասած. «Ռումինիայի հայերը կարողացան մեծ հմտությամբ զուգակցել երկու դժվարին և նրբին պարտականություններ՝ մեկը հավատարմությունը դեպի իրենց հայրենի ավանդություններն ու իրենց ազգությունը, որոնք բնավ մոռացած չեն և մյուսը՝ դեպի այն երկիրը, ուր իրենք և իրենց նախնիները հաստատվել են շատ հին ժամանակներից ի վեր։ Մեզ համար նրանք եղբայրներ են, ազնիվ եղբայրներ, միաժամանակ մնալով իրենց հնագույն հայրենիքի ընտրյալ որդիները»[18]։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ռումինական բանակի կազմում ընդդեմ թուրքերի կռվում էին նաև հայերը։ Նրանք հայաշատ բոլոր քաղաքներում հիմնեցին ռազմաճակատին օգնող ընկերություններ և գործող բանակին ցույց տվին նյութական օժանդակություն։ Պատերազմի ելքը որոշող Պլևնայի ու Սմըրդանի ճակատամարտերում աչքի ընկավ հայազգի Միքայել Չերքեզը (1839—1894), որը ստացավ գեներալի աստիճան[19]*. Առաջին համաշխարհային պատերազմում Մըրըշեշտի ճակատամարտում հռչակվեց Հակոբ Ջատիկը (1867—1970), որը հետագայում ստացավ գեներալլեյտենանտի աստիճան։ Ժամանակի ռումինական մամուլն ու հասարակայնությունը մեծ երախտագիտությամբ նշեցին Բուլղարիայում բազմաթիվ ռումինացի գերիների կյանքը փրկող Խաչիկ Զաքարյանի մասին։ 1916 թ. ռումինահայերն իրենց միջոցներով հիմնեցին զինվորական մի հիվանդանոց*[20]։

Ռումինահայերը մասնակցել են նաև 1890-ական թվականներին երկրում տեղի ունեցող բանվորական-հեղափոխական շարժումներին։ Հիշատակելի է իրավաբան Դեոդատ Ա. Ցըրանուն (Ցարանյան), որը հեղափոխական պրոպագանդայի և ռումին զինվորների ծանր վիճակը նկարագրելու համար հեռացվեց պետական ատենակալների շարքից և ձերբակալվեց։ Սակայն աշխատավորների բուռն բողոքի ազդեցության տակ իշխանություններն ստիպված եղան շուտով նրան ազատ արձակել։ Հետագայում Ցըրանուն հիմնադրում է «Մոլդովա» տպարանը և աջակցում սոցիալիստական մամուլի հրատարակությանը[21]*։ XX դարի սկզբին ռումինական առաջադեմ սոցիալիստական գրականության ստեղծման մեջ իր ավանդն ունի բանաստեղծ Վիկտոր Կողմինը (Բոգդան Սըրմաբըյըկ, 1877—1903)։ Նա իր գրիչը ի սպաս դրեց ռումին աշխատավորների շահերին, չմոռանալով միաժամանակ իր ժողովրդին, որին 90-ական թվականների ջարդերի առիթով նվիրեց բանաստեղծություններ։ Վիկտոր Կողմինը, ինչպես նաև Դ. Ա. Ցըրանուն աշխատակցել են ռումինական հայտնի «Լումեա Նոուա» («Նոր աշխարհ») սոցիալիստական հանդեսին։*

Մինչև 1870-ական թվականները հայկական դպրոցներն ապրեցին իրենց

---

[18] *N. Iorga*, Les Arméniens de Roumanie *(լույս է տեսել* „Patru conferinţi despre Armenia" *աշխատության հետ)*, Bucureşti, 1929, p. 94.

[19] *Տե՛ս Lucian Predescu*, Enciclopedia Cugetarea, Bucureşti, 1940, p. 183.

[20] *Տե՛ս* «Армянский вестник», М., 1916, стр. 22.

[21] *Տե՛ս* „Preša muncitorească şi socialistă din Romănia", vol. I. 1865—1900, Bucureşti, 1964, p. 631.

ծաղկումը։ Հայտնի էին Ցաշի Հայկազյան վարժարանը, Բոտոշանի դպրոցը, Բակրուի, Գալացի, Ռոմանի, Ֆոկշանի, Բուխարեստի և այլ հայաշատ քաղաքների դպրոցները։ Ճմուռ մանկավարժներից էին մի քանի աշխատությունների հեղինակ Լուսիկ Սրմագաշյանը (Ցաշ), Պողոս ք. Հակոբյանը (Բոտոշան), Գևորգ ծ. վ. Ութուճյանը, Մանուել Միրախորյանը, Վ. Մամիկոնյանը (Ֆոկշան), Գևորգ Մնշուճյանը, անվանի գրող Վրթանես Փափազյանը, Լիպարիտ և Անահիտ Ավետիսյանները (Բուխարեստ) և ուրիշներ։

Դպրոցներում դասավանդում էին մի շարք հանրակրթական առարկաներ, ինչպես նաև հայերեն, ռումիներեն, ֆրանսերեն, գերմաներեն լեզուներ։ Հայկական դպրոց էին հաճախում նաև օտարազգի երեխաներ։ Ռումինիայում մեծ հռչակ էր վայելում 1866 թ. Ցաշում հիմնադրված Խաչերես Գարագաշյանի (1827—1892) գիշերօթիկ դպրոցը, որը հայտնի էր «Գարագաշի դպրոց» անունով։ Իրենց նախնական կրթությունն այդ դպրոցում էին ստացել ռումինական ակադեմիայի պատվավոր անդամ (ռեգենտ) Գևորգ Բուզդուգանը (1867—1929), Ռումինիայի գյուղատնտեսության, ներքին գործերի և արդարադատության մինիստր Գեորգե Մըրզեսկուն (1876—1926), արվեստի ու մշակույթի մինիստր, սոցիոլոգ և ակադեմիայի անդամ Դիմիտրիե Գուստին, Ռումինիայի աշխատանքային մինիստրության հիմնադիր ու նրա առաջին մինիստր, հայազգի պրոֆեսոր Գրիգոր Տրանկու-Ցաշը (1873—1940), գիտնականներ, դիվոորական ու քաղաքական գործիչներ։

Սակայն սկսած 1870 թ. հայկական դպրոցները սկսում են անշքանալ և թուլանալ։ Ցաշի Հայկազյան վարժարանը 1878—79 ուսումնական տարում ընդամենը 13 աշակերտ ուներ, իսկ 1886—87 ուս. տարում այն փակվեց։ Փակվում են նաև Բոտոշանի (1890), Գալացի (1897), Ռոմանի (1897), Բուխարեստի (1904) և մի շարք այլ քաղաքների դպրոցներ։ Մի քանի դպրոցներ՝ Ֆոկշանի Ղևոնդյանց ու Հոփփսիմյանց վարժարաններին միայն հաջողվում է պահպանել իրենց գոյությունը։ 1908 թ. Ռումինիայում հաստատված նոր գաղթականների միջոցներով վերականգնվում է Բուխարեստի դպրոցը, ուր 1912—13 թթ. տեսուչ էր հայտնի գրող Վրթանես Փափազյանը և փորձում էր այդ նախակրթարանը վերածել միջնակարգ դպրոցի։ Հայկական դպրոցներ կային նաև Սուլինայում, Բազարջիկում, Սիլիստրայում, Բաբադաղում, Տուլչայում։ Դպրոցական կյանքը զարգանում է հատկապես Կոստանցայում, ուր դասավանդում էին ազգային գործիչ Խաչատուր Ոստանիկյանը, Ղազարոս Կոնիկյանը, հայտնի գրող Սմբատ Բյուրատը, Ս. Հայկունին և ուրիշներ։

Հայ պատանիներից շատերը հաճախում էին ռումինական դպրոցներ ու բարձրագույն հաստատություններ։ Միայն Ցաշի Ակադեմիա Սիհրիլյանը կամ Լիշեուլ նացիոնալ դպրոցը 1870—1917 թթ. ընթացքում տվել է 51 հայ շրջանավարտ։

Մեզ են հասել ռումիներեն գործիչների ձեռագիր մի շարք աշխատություններ։ Դրանցից են բոտոշանցի Նիկողայոս Ջեննեյանի (գրված 1870—1882 թթ.), Մարտիրոս վարժապետ Ջերքեզյանի (Ֆոկշան), Հարություն ք. Անդրեասյանի (Բուխարեստ), Ղևոնդ ք. Փափազյանի (Տուլչա, 1917) և ուրիշների ձեռագիր մատյաններ, ուր կան բառարաններ, ձայնագրված երգեր, ռումին գրականությունից թարգմանություններ և այլն։ Անտիպ են Սիլիստրայում ստեղծագործող սերաստացի Մինրան Տերտերյանի (Տերյան-տեր 1888—

—1929) չափածո գործերը, այդ թվում 1915 թ. գրված «Մուղսի Սահակի անդենական անեծքը» պոեմը՝ նվիրված մեծ եղեռնին։

XIX դարի վերջին և XX դարի սկզբին ռումինահայերը զարկ են տալիս նաև տպագրական-հրատարակչական աշխատանքներին։ 1895—1921 թթ. Ղևոնդ Փափազյանը Գալաց և Տուլչա քաղաքներում ուներ տպարաններ։ 1912—1913 թթ. Բուխարեստում գործում էին Լանիսի (Լևոն Շահազիզյան), իսկ 1914—1916 թթ. Արիս Լազարի հայկական տպարանները, ուր լույս են ընծայվում հայերեն և ռումիներեն հայագիտական մի շարք աշխատություններ[22]։

Նորաբաց տպարանները նպաստում են հայկական պարբերական մամուլի ծավալմանը։ Ռումինիայում հայկական թերթ հրատարակելու առաջին փորձն անում է Ղևոնդ քահանա Փափազյանը 1892 թ.։ 1895—1898 թթ. Փափազյանը հրատարակում է «Հայկական տարեցույցներիս» շարքը։ 1906 թ. Վարդան Մեշոուճյանի (1869—1942) ջանքերով Բուխարեստում սկսվեց ռումիներեն հրատարակվել «Ասւրորա» («Արշալույս») հանդեսը, որը թեև կարճ կյանք ունեցավ (տպագրվեց ընդամենը 12 համար), սակայն կարևոր դեր խաղաց հայագիտության զարգացման ու հայ-ռումինական բարեկամության ամրապնդման գործում։

Հայերեն լեզվով առաջին հանդեսները լույս տեսան Կոստանցայում «Մառո» (1906) և «Արարատ» (1907) անուններով, խմորատիպ, առաջինը՝ կիսամսյա, իսկ մյուսը շաբաթական։ Այս պարբերականների խմբագիրն էր Մուրատ Գևորգյան Վանիկօղլուն. նա հիմնադրել է նաև նույն քաղաքի հայոց եկեղեցին ու դպրոցը (1878)[23]։

1912—1913 թթ. Լևոն Շահազիզյանի խմբագրությամբ Բուխարեստում հրատարակվեց տպագիր առաջին հայերեն հանդեսը՝ «Շևէփոր» խորագրով, որին թղթակցել են Ռումինիայի ու արտասահմանի անվանի գրողներ, լրագրողներ՝ Վ. Փափազյանը, Կ. Բասմաջյանը, Մ. Պոտուրյանը, Շ. Նաթալին, Վ. Բորգոմյանը և ուրիշներ։ Միամյա (1913—1914) կյանք ունեցավ Լ. Շահազիզյանի երկլեզվյան մի այլ թերթ՝ «Էկոուլ Արմենիէյ» («Հայաստանի արձագանք»)։

1915 թ. Վ. Մեշոուճյանի, ապա Ա. Նավարյանի խմբագրությամբ Բուխարեստում սկսեց հրատարակվել «Արաքս» շաբաթաթերթը, իսկ 1916 թ. հրն-

---

22 Հրատարակվում են Պ. ք. Մամիկոնյանի «Ռումանահայը ներկայն ու ապագայն» (Գալաց, 1895), Հայազգի Գրիգոր Կոլյավի ռումիներեն «Հայերը որպես քաղաքների հիմնադիրներ Արևելյան Եվրոպայում» (Բուխարեստ, 1909), «Ռումինական երկրների հայկական եկեղեցիները» (Բուխարեստ, 1912)։ Հայագետ Գրիգոր Գլըջգյանը ռումինացիներին է ծանոթացնում Մինաս Թոխաթեցու 1551 թ. Մոլդովայի հայերի մասին գրած ոդրը և Կամենիցայու տարեգրությունը (Բուխարեստ, 1895 և 1906), ուսուցիչ Լուսիկ Սրմագաշյանը լույս է ընծայում հայկական ավանդույթների և հայ եկեղեցու դավանաբանական հարցերին նվիրված գործեր (Յաշ, 1891, 1895), դարձյալ ռումիներենով հրատարակվում են Էժեն Բորեի և Էմիլիո Կաստելարի երկերը՝ նվիրված Հայաստանին և Հայկական հարցին (Յաշ, 1880 և Ֆոկշան, 1889), ռումիներենի է վերածվում Խրիմյան Հայրիկի «Հայ գույժը» (Բուխարեստ, 1880). 1916 թ. լույս է տեսնում Նահատակ գրող Սմբատ Բյուրատի «Տեմիր Մուշլուն» և այլն։ Ղևոնդ ք. Փափազյանը իր տպարանում հրատարակում է հայ ժողովրդի պատմությունից վերցված բազմաթիվ նկարներ, որոնք նպաստում են ռումինահայ երիտասարդությանը հայրենասիրական ոգով դաստիարակելու գործին։

23 Տե՛ս Սաւրեն Գալանջյան, Քոնսթանցայի մեջ լույս տեսած առաջին հայկական թերթի մասին, «Նոր կյանք», Բուխարեստ, 1976, փետրվարի 20։

չակյանների «Ինքնավար Հայաստան» կիսաշաբաթաթերթը (խմբագիր՝ Ս. Սապահ-Գյուլյան), որը դադարեց ռումինահայերի Ռուսաստան գաղթելու պատճառով։ 1914—1916 թթ. Արիս Լազարը Բուխարեստի իր տպարանում հրատարակեց «Ռումանահայ տարեցույցի» երեք գրքերը։

Ռումինահայ կյանքում կարևոր իրադարձություն էր նաև 1906 թ. Ռումինիայի Ազգային ընդհանուր ցուցահանդեսի հայկական բաժնի բացումը, ուր ցուցադրված հայկական արվեստի ու մշակույթի ընտիր նմուշները մեծ տպավորություն թողեցին։

Ռումինահայ մշակույթի կյանքում իր տեղն է ունեցել նաև թատրոնը, որը գերազանցապես կազմակերպվում էր պոլսահայ կամ կովկասահայ դերասանական խմբերի հյուրախաղերի շնորհիվ։ 1888 թ. Ռումինիա է ժամանել մեծանուն դերասան Պետրոս Ադամյանը։ 1883, 1885, 1907 թթ. Ռումինիայում հյուրախաղերով հանդես են եկել Սիրանույշը, Պահլավունին, Կարապետ Գալֆայանը, Արմեն Արմենյանը, Պենկլյանը, Անդրանիկը (Սողոմոնյան), Արտեմ Բերոյանը, Հ. Ղազարյանը և ուրիշներ։ Միաժամանակ տեղական սիրողներից թատերախմբեր են կազմակերպվում Ռումինիայի հայաշատ քաղաքներում։ 1913 թ. նոյեմբերին Բուխարեստի Օվիդիուս սրահում Լիպարիտ Ավետիսյանի նախաձեռնությամբ բեմադրվում է Վ. Փափազյանի «Ժայռը», իսկ 1915 թ. «Զեփյուռ» կանանց խումբը ներկայացնում է Շիրվանզադեի «Կործանվածը»։ Ռումինահայ հասարակության վրա խոր տպավորություն է թողնում հայուհի Օլգա Յոնեսկուի «Սեր և ատելություն» (1900) պիեսը, որը նա գրել էր 90-ական թվականների ջարդերի ազդեցության տակ։

Ռումինահայ գաղթօջախում կառուցվել են նաև ճարտարապետական աչքի ընկնող շինություններ, որոնցից ամենանշանավորը Բուխարեստում 1911—1912 թթ. էջմիածնի վանքի ոճով կառուցված ս. Հրեշտակապետաց եկեղեցին է։ Ուշագրավ եկեղեցիներ ու դպրոցական շենքեր են կառուցվել նաև Տուլչայում (Պեշիկթաշի եկեղեցու նմանությամբ, նախագիծ ճրտ. Հ. Պալյանի), Սուլինայում, Բաբադաղում, Կոստանցայում, Պիտեշտում, Բոտոշանում և այլուր։ Կոստանցայում ստեղծվել է նաև «Արաքս» թատերասրահը (1907) և այլն։

Ռումինահայությունը որոշակի դեր էր կատարում երկրի ոչ միայն տնտեսական ու քաղաքական, այլև մշակութային կյանքում։ Այսպես, հայազգի գիտնական Սպիրու Հարետը (1851—1912) Ռումինիայի առաջին քաղաքացին էր, որ Փարիզում մաթեմատիկայի գծով պաշտպանեց դոկտորական դիսերտացիա։ Նա գիտական բազմաթիվ ուսումնասիրությունների հեղինակ էր, Ռումինիայի ակադեմիայի անդամ։ 1897—1899, 1901—1904 և 1907—1910 թվականներին նա եղել է Ռումինիայի մշակույթի և լուսավորության մինիստրը։ Նրա ծրագրով կառուցվեց 2000 նոր դպրոց և 1700 ուսուցիչ ապահովվեց աշխատանքով։ Ռումին ժողովուրդը բարձր գնահատեց Հարետի կատարած աշխատանքը և նրա մարմարյա արձանը կանգնեցրեց Բուխարեստի պետական համալսարանի հրապարակում։ Վերջերս լուսնի վրա անուններ անվանակոչող միջազգային հանձնաժողովը, նկատի ունենալով Հարետին իբրև մեծանուն աստղագետ գիտնականներից մեկի, նրա անունով կոչեց լուսնի հրաբխարաններից մեկը։

Ռումինական փիլիսոփայության հիմնադիր, ծագումով հայ Վասիլե Կոնտան (1845—1882), որ 1880—1881 թթ. մշակույթի և լուսավորության մի-

նիստերն էր, գրեց մի շարք փիլիսոփայական երկեր, որոնք հագեցված էին մատերիալիստական աշխարհայացքով։ Նա նամակագրական կապեր ուներ Դարվինի, Բյուխների և նշանավոր այլ գիտնականների հետ։

Գրական աշխարհում իր հոդվածներով հայտնի էր գրաքննադատ, գրող գեղագետ և հրապարակախոս Կարապետ Իրրլիեանուն (1871—1936), որը 1906 թ. հրատարակվող ռումինական «Վիացա Ռոմրնեասկը» («Ռումինական կյանք») գրական ամսագրի հիմնադիրներից էր և նրա խմբագիրը մինչև 1927 թ.։



Բուխարեստի հայոց եկեղեցին

Գիտական ու մանկավարժական գործունեությամբ աշքի էր ընկնում Յաշի համալսարանի մաթեմատիկայի պրոֆեսոր Յոն Մելիքը (1840—1889), որը հիմնադիրներից մեկը եղավ մաթեմատիկական առաջին «Ռևերքացի Շտիինցիֆիչե» («Գիտական զրոսանքներ») պարբերականի (1883—1888)։

Իրավունքի միջազգային համագումարներում Ռումինիայի ներկայացուցչությունը բազմիցս ապահովել է միջազգային իրավունքի հայազգի պրոֆեսոր Պետրե Թ. Միսիրը (1856—1929)։ Նա Յաշում լույս տեսնող «Էրա Նոուա» («Նոր դարաշրջան») թերթի հիմնադիր-խմբագիրներից էր, ռումինական ակադեմիայի պատվավոր անդամը և Ռումինիայի ծերակույտի (սենատ) նախագահի տեղակալը։

Բժշկության ասպարեզում գիտական ու պրակտիկ գործունեությամբ աշքի էր ընկնում Բուխարեստի բժշկական ֆակուլտետի պրոֆեսոր Քրիստեա

Բուիկլիուն (Բըյըկլյան 1857—1916)։ Նրա անունով է կոչվում Բուխարեստի փողոցներից մեկը։ Ռումինիայի գեղագործական միության նախագահի տեղակալն էր հայազգի Անտոն Ալթընը (1852—1906), որը հայտնի է որպես «Բուլետինուլ ֆարմաչեուտիկ» («Դեղագործական տեղեկագիր») պարբերականի հիմնադիրներից մեկը և բազում դեղագործական գրքերի հեղինակ։

Ճանաչված գեղանկարիչներ էին Թեոդոր Աստվածատուր Պըյըգլյանը (Բույուկլիու 1837—1897)[24] և Արգար Բալթազարը (1880—1909)։ Իր կարճ կյանքի ընթացքում Բալթազարը ստեղծել է 300-ից ավելի կտավ և գրել մի քանի հատոր արվեստաբանական ուսումնասիրություններ։ Քննադատելով ֆրանսիացի Մուրերի հայ արվեստին տված սխալ գնահատականը, Բալթազարը վեր հանեց հայ արվեստի ինքնուրույնությունն ու մյուս երկրների արվեստների վրա նրա թողած ազդեցությունը։

Ռումինական թատրոնի պատմության մեջ խոր հետք թողեց դիմախաղի դերասան Ակոբը (Հակոբ Քյոլյանը)։ Նա էր ռումինական զավեշտական արվեստի առաջատարներ Վ. Մաքսիմիլյանի և Կոստանտին Թընասեի ոգեշընչողը։ Վաթսուն տարի շարունակ ռումինական բեմում փայլում էր Յանկու Պետրեսկուի (Յոն Պետրոսյան 1851—1932) տաղանդը։ Նրա կերտած կերպարներին ռումինական մամուլը բազմիցս է անդրադարձել։ Պետրեսկուն Բուխարեստի «Հայաստան» ընկերության գործուն անդամներից մեկն էր։

Արևելագիտության և մանավանդ հայագիտության զարգացման գործում ցուցաբերած իր ծառայություններով հայտնի է Ռումինիայի բարձրագույն վճռաբեկ ատյանի խորհրդական, հայագետ Գրիգոր Պըյըգլյանը (Բույուկլիու 1840—1912), որը հայագիտության և արևելագիտության հետագա զարգացման նպատակով իր ողջ կարողությունն ու հայագիտական հարուստ գրադարանը նվիրեց ռումինական ակադեմիային[25]։ Նրա կրտսեր եղբայր Արտաշեսը (1842—1908) գյուտարար էր և երգահան։

Ռումինական մամուլի պատմության մեջ հետք են թողել լրագրողներ Թեոդոր (Աստվածատուր) Պալասանը (մահ. 1897) և Վարդան Գ. Մեշտուճյանը (1869—1942)։ «Ժունիմիա» տպարանի տնօրեն Պալասանը 23 տարիներ անընդմեջ եղել է «Կուրիերուլ դե Յասսիի» հրատարակիչ-խմբագիրը[26], որը մեծ սիրով լուսաբանում էր նաև հայ կյանքը։ Այդ թերթը հայտնի էր նաև «Պալասանի կուրիեր» անունով։ Վարդան Մեշտուճյանն իր գործունեությունն սկսեց հայկական մամուլում, աշխատակցում էր բուլղարահայ «Իրաւունքին», ապա Երուխանի հետ հիմնադրեց «Շարժումը»։ Փայլուն ոճով են գրված Մեշտուճյանի արտասահմանյան ճանապարհորդություններից ստացած տպավորությունները, որոնք հետագայում ամփոփվեցին ռումիներեն հրատարակված հատորներում։ 1914—1916 թթ. Մեշտուճյանը Ռումինիայի ամենամեծ օրաթերթի՝ «Ունիվերսուլի»— («Տիեզերք») տնօրենի տեղակալն էր և միաժամանակ «Ունիվերսուլ լիտերար» գրական հանդեսի տնօրենը։ Մեշտուճյանի անվան հետ է կապված ռումիներեն հայագիտական պարբերական ստեղծելու պա-

---

24 Տե՛ս Ս. Ն. Քոլանջյան, Ռումինահայ տաղանդավոր բնանկարիչ Թեոդոր Մ. Աստվածատուր Բըյըկլյան (1837—1897), ՊԲՀ, 1958, № 2։

25 Տե՛ս „Academia Română", Grigorie M. Buiucliu 1840—1912, Testament-Biografie, Familia Buiucliu, Catalogul bibliotecei armeneşti... Bucureşti, 1914.

26 Տե՛ս „Rudolf Şuţu, Iaşii de odinioară", Iaşi, 1923.

տիվը։ Եթե նրա «Աուրորան» (Արշալույս) համեմատաբար կարճ կյանք ունեցավ (1906), ապա «Արարատը» տպագրվեց 18 տարի (1924—1942)։ Նա գրել և հրատարակել է նաև հայագիտական գործեր։

Ռումինիայի ակադեմիայի անդամ Մելիքսեդեկ Շաեֆքնեսկուն (1822—1907) 1882 թ. հրատարակեց «Մոլդովայի հայկական եկեղեցիների արձանագրությունները»[27] աշխատությունը և ընդհանրապես բարձր գնահատեց Ռումինիայում հայերի կատարած գործունեությունը։

Ռումինահայերի մասին դրվատանքով է խոսել նշանավոր ակադեմիկոս Բոգդան Պետրիչեյկու Հաժդեուն (1838—1907), 1860 թ. ռուսերեն գրած «Հայերը» բանաստեղծության հեղինակը։ Իր ուսումնասիրություններում Հաժդեուն ցույց տվեց, որ Ռումինիայի հռչակավոր Արճեշ վանքը հիմնադրվել է Վանա լճի մոտակա Արճեշից եկող հայերի կողմից[28]։

Ռումինիայում հայերի խաղացած դերը, սակայն ոչ ոք այնպես չի գնահատել, ինչպես մեծանուն գիտնական, ակադեմիկոս Նիկոլա Յորգան (1871—1940)։ Իր բազմահատոր ուսումնասիրություններում Յորգան ոչ միայն առատ նյութ է ամբարել հայերի մասին, այլև առանձին ուսումնասիրություններ նվիրել Հայաստանի ու ռումինահայերի պատմության ու հայ ժողովրդի մշակույթին։ 1913 և 1914 թթ. երկու անգամ ռումիներեն և մեկ անգամ ֆրանսերեն, ռումինական ակադեմիայի հրատարակությամբ լույս տեսավ Յորգայի «Հայերը և ռումինացիները պատմական մի զուգակշիռ» արժեքավոր աշխատությունը[29]։

1916 թ. ընթացքում առաջին համաշխարհային պատերազմի հետևանքով ռումինահայ գաղութը ապրեց իր ժամանակավոր քայքայումը։ Հատկապես Դոբրուջայի նահանգը դատարկվեց հայերից։ Բուխարեստում և հայաշատ այլ կենտրոններում սակավաթիվ հայեր մնացին։ Ռումինահայերի մեծ մասը ստիպված էր արտագաղթել Ռուսաստան՝ Օդեսա, Ռոստով և այլ քաղաքներ։ Օդեսայում նրանք մեծ զարկ տվեցին արհեստագործությանը, հատկապես կոշկակարությանը։ Այստեղ ռումինահայ անվանի լրագրող և հեղինակ Վարդան Մեշտուճյանը ռումինացի գաղթականների համար հրատարակում է «Դեպեշա» (1917—1919) ռումիներեն օրաթերթը։

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Ռուսաստան գաղթած հայերի մեծ մասը վերադարձավ իրենց բնակավայրերը։ Քեմալական շարժումների հետևանքով Թուրքիայից մեծ թվով հայեր սկսեցին գաղթել Ռումինիա, որոնք նպաստեցին հայկական կյանքի աշխուժացմանը։

3. ԲՈՒԿՈՎԻՆԱ[30]

Բուկովինայում հայերը վաղուց էին բնակվում։ 1869 թ. տվյալներով նրանց թիվը հասնում էր 1710 մարդու։ Պատմական մի շարք հանգամանք-

---

[27] Տե՛ս *Episcopul Melchisedec*, Inscripțiunile bisericelor armenesci din Moldova. București, 1882.

[28] Տե՛ս „*Revista Nouă*", 1888, № 4, 15 martie, București.

[29] Տե՛ս *N. Iorga*, Armenii și Românii: O paralelă istorică. București, 1913.

[30] Բուկովինան և Տրանսիլվանիան, որ 1775 թ. գտնվում էին Ավստրիայի, ապա Ավստրո-Հունգարիայի կազմում, Ռումինիային միացվեցին միայն առաջին համաշխարհային պատերազմից հետո։

ների բերումով (տնտեսական ճգնաժամը, հարկային հարստահարումը, մաքսային խոչընդոտները, արտագաղթը և այլն) Բուկովինայի հայ բնակչության թիվը աստիճանաբար նվազել էր և 1910 թ. հասել 757-ի[31]։ Հայերը նոսրացան նաև Սուչավայում, որը Բուկովինայի հայկական գաղթավայրի կենտրոնն էր։ Միայն 1880—1913 թթ. նրանց թիվը նվազեց և 400-ից հասավ 196-ի[32]։

Հայ բնակչությունը նվազում էր նաև Բուկովինայի այլ վայրերում։ Այսպես, Չերնովիցում 1909 թ. մնացել էին շուրջ 950 մարդ (50 ընտանիք), Գուրա Հումորուլույում՝ 15 ընտանիք, Ռըդըուցում՝ 6 ընտանիք, Վատրա Դորնեյում՝ 2 ընտանիք և այլն։ Հայերի միջնադարյան կարևոր կենտրոն Սիրետում, ուր դեռևս 1876 թ. 10 տուն հայ էր ապրում, XX դարի սկզբին այլևս ոչ մի հայ չէր մնացել։

Բուկովինայի հայերի սոցիալական կազմը խայտաբղետ էր։ Կային հարուստ կալվածատերեր, առևտրականներ, կապալառուներ, պետական խոշոր պաշտոնյաներ, հոգևորականներ, ինչպես և մանր ու միջին ծառայողներ, օրավարձու մշակներ։ Կալվածատերերը կազմում էին Սուչավայի հայ բնակչության 1/4 մասը. իսկ մի ժամանակ նրանց ձեռքումն էր կենտրոնացված նահանգի հողային տարածությունների 1/3-ը։ Խոշոր կալվածատեր Պրունկուլյանը (Բրունգուլյանը) XX-րդ դարի սկզբում տիրում էր Լիտեն, Ստեժերոայա, Բրըեշտ, Տոլովա, Կոըլցելի և Մըղընըեշտ մեծ գյուղերին, իսկ Սուչավայում ուներ շքեղ առանձնատուն (վիլլա)։

Հայ խոշոր կալվածատերերից էին Ժորժ Կապրին (Գարրի), Անդրեաս և Քրիստոֆ Աբիթոնովիչ եղբայրները և ուրիշներ։ Չերնովիցի հայ խոշոր կալվածատերեր էին ասպետ Ֆոն Խրիստոֆ Աբրահամովիչը, Ստեփան Վարդերեսովիչը և ուրիշներ։ Կալվածատերերից բացի, ընդարձակ հողային տարածություններ ունեին նաև Սուչավայի հայկական Զամկա և Հաճկատար վանքերը, որոնք իրենց տիրույթները (260—200 հեկտար) տալիս էին կապալով[33]։

Բուկովինայի հայ առևտրականները սերտ կապի մեջ էին Վիեննայի, Յաշի և այլ քաղաքների հետ, ուր արտահանում էին մսեղեն և բամբակեղեն։ Սակայն հայ առևտրականների գործունեությունը գնալով սահմանափակվում էր՝ արգելող օրենքների և հրեա առևտրականների հետղհետե աճող մրցության պատճառով։

Նահանգի հայ արհեստավոր վարպետները պատրաստում էին մի քանի տեսակ ապխտած երշիկեղեն, մոմ և օճառ, պանրի զանազան տեսակներ[34]։

Բուկովինայի հայկական համայնքը ազգային ներքին կյանքում ղեկավարվում էր կառավարության կողմից վավերացված կանոնադրությամբ[35], որով ապահովված էր նրա ինքնավար գոյությունը։ Որպես ղեկավար մարմիններ Սուչավայում գործում էին Մեծաժողովը (12 անդամով) և հոգաբար-

---

31 *Dr. Johann Polek*, Die Armenier in der Bukowina. Czernowitz, 1906, S. 30.

32 Տե՛ս Գեորգ ծ. վ. Ուրուճյան. *Վիճակագիր Հայոց Ռումանիոյ*, «Մասիս», Կ. Պոլիս, 1881, № 2881 և «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, № 4939։

33 Տե՛ս Լ. Բաբայան. *Հայերը Մոլդաւիայում և Բուկովինայում*, Թիֆլիս, 1911, էջ 153, 163, 177, 190—200։

34 Տե՛ս Դեմետրիոս Տան (Դան), *Արևելյան Հայք ի Պուքովինա (թարգմ. Գրիգորիս Գալէմքէրեան)*, Վիեննա, 1891, էջ 65։

35 Տե՛ս «Արարատ», Վաղարշապատ, 1899, էջ 71։

ձուքյունը (7 անդամով)։ Մեծաժողովը գումարվում էր տարին մեկ անգամ՝ հոգաբարձուքյան հաշվետվուքյունը լսելու և նոր բյուջեն հաստատելու համար։ Հոգաբարձուքյան նախագահը միաժամանակ Մեծաժողովի նախագահն էր։ Բուկովինայի հայերն այս ժամանակաշրջանում չեն ունեցել իրենց քեմական առաջնորդը։ Հոգևոր ղեկավարուքյուն նրանք ստացել են Կ. Պոլսի պատրիարքուքյունից։

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Սուչավայում շարունակում էր գործել հայկական գպրոցը, որտեղ սովորում էր 1881 թ.՝ 36, 1910—1913 թթ. 48 աշակերտ։ Դպրոցում դասավանդում էին հանրակրթական առարկաներ, ձեռագործ, հայերեն, ռումիներեն և գերմաներեն լեզուներ։ Աշակերտների մեծամասնուքյունը չքավոր էր։ Դասագրքերը Կ. Պոլսից էին ստացվում, իսկ ուսուցիչները պատրաստվում էին էջմիածնում և այլ վայրերում։ Վաստակավոր ուսուցիչներից էին Աստվածատուր Խոմաշկանը, Կարապետ Կրինան (Գրինա), Գրիգոր Ութուճյանը և ուրիշներ։ Հայկական գպրոց կար նաև Ջերնովիցում, որը հիմնադրվել էր 1879 թ.։ Դպրոցը նախատեսվում էր որբ երեխաների համար, ուր սովորելու էին գալիս ոչ միայն Բուկովինայից, այլև Գալիցիայից ու Բեսարաբիայից։

Բուկովինայի հայկական համայնքում գործում էին ազգային ընկերուքյուններ։ Սուչավայում 1885 թ. հիմնադրվում է «Անի» բարեգործական ընկերուքյունը, իսկ 1913 թ.՝ «Հայ բարեգործական ընդհանուր միուքյան» մասնաճյուղը։ Նույն քաղաքում էր գործում «Հայ տիկնանց միուքյունը» և այլն։ Շուտով «Հայ բարեգործական ընդհանուր միուքյունն» իր մասնաճյուղը ստեղծեց նաև Ջերնովիցում։ Կային նաև հայկական մշակույթի մասնավոր կենտրոններ։ Հայտնի է, օրինակ, Յակուբեշտի բարոն Կապրի ընտանիքի հնագիտական քանգարանը, Վատրա Դորնեյի (Դորնա) Փոփովիչների հրատարակչարանը և այլն։

Բուկովինայի հայերից մի քանիսը հասել էին պետական ու հասարակական կարևոր պաշտոնների։ Սուչավայի հայկական համայնքի ղեկավար ասպետ Վարդերես Յոն Պրունկուլը (1859—1919) եղել է քաղաքապետի տեղակալ և քաղաքային վարչուքյան անդամ, հայազգի Պետրովիչը՝ Ջերնովիցի առաջին քաղաքագլուխը։ Նրա անունով է կոչվել քաղաքի փողոցներից մեկը։ Հովհաննես Կոժոկարը եղել է Գուրա Հումորուլուլի գավառապետ։ Հայազգի Մոսյա Թոսակրատսկին և Ջայկովսկին ավստրիական պառլամենտի անդամներ էին[36]։

Ասպետ Վարդերես Յոն Պրունկուլը 1896 թ. դիմեց ավստրիական կայսրին, խնդրելով նրա միջամտուքյունը՝ կոտորածներից տուժած հայերին օգնելու համար։

Հայկական դատը օտար հասարակուքյանը հայտնի դարձնելու գործում զգալի աշխատանք է կատարել Սուչավայի հայկական գերդաստաններից մեկի ներկայացուցիչ Մանուել Կապրին։ Իր երկու զեկուցումներում, որոնք նվիրված էին Հայկական հարցին և հրատարակվել էին գերմաներեն, 1913 թ. Վիեննայի հասարակական կոմիտեի հրատարակչուքյամբ, նա վեր էր հանում հայ ժողովրդի պատմական անցյալը և կոչ անում առաջավոր մարդկուքյա-

36 Տե՛ս Լ. Բաբայան, Հայերը Մոլդավայում և Բուկովինայում։

նը՝ պաշտպան կանգնել նրան։ Բերելով Հայաստանի վերաբերյալ ընդարձակ վիճակագրական տեղեկություններ և Հայաստանի քարտեզը, Կապրին միաժամանակ մերկացնում էր ֆրանսիական բրքասեր գրողներ Պիեր Լոտիի և Կլոդ Ֆարեռի հրատարակած հակահայկական հերյուրանքները։ Երիտասարդ Կապրիի գործունեությունը բարձր գնահատվեց ինչպես օտար, այնպես էլ հայ հասարակայնության կողմից[37]։

Բուկովինայում ապրող հայերը որոշակի դեր են կատարել նաև երկրի մշակութային կյանքում։ Շոպենի և Շումանի ստեղծագործությունների տարածման գործում իրենց ավանդն են մուծել հայազգի նշանավոր երգահան և դաշնակահար Կարլ Միկուլին (1821—1897), կատարողներ Սևերին Վարդերեսովիչը, տիկին Մարիա Ֆլոնդորը (Ջունդ ընտանիքից) և ուրիշներ։ Գնահատելով հայերի կատարած այդ դերը, Սուչավայի և Չերնովիցի առանձին փողոցներ տեղացիները կոչել են նրանց անունով, որոնցից մի քանիսը մինչև այժմ պահպանվում են։

Չնայած բուկովինահայերի հետզհետե նվազմանը, նրանց մշակութային կյանքն այնուամենայնիվ հարատևում էր։ Չերնովիցի հայ կաթոլիկները 1875 թ. կառուցեցին գեղեցիկ մի եկեղեցի։ 1896 թ. Սուչավայի ավանդապահ հայերը հիմնովին վերանորոգեցին իրենց հնագույն հուշարձաններից մեկը՝ Հաճկատարի վանքը, որը կառուցվել էր 1512 թ. Սուչավայից դուրս գտնվող մի գեղատեսիլ բլրակի վրա և դարեր շարունակ Արևելյան Եվրոպայի հայերի համար դարձել սիրված ուխտատեղի։ 1912 թ. տոնվեց հիշյալ վանքի հիմնադրման 400-ամյակը, որին ներկա եղան ոչ միայն Բուկովինայից և Ռումինիայից, այլև Բուլղարիայից և Ռուսաստանից ժամանած հայեր ու օտարազգիներ։ Պրունկուլյան գերդաստանը 1904 թ. Սուչավայում կառուցեց հայկական ոճով ս. Հարություն մատուռը, որի գմբեթը պատված է գունավոր քարերով։

Ռումին հայտնի գիտնական, Ռումինիայի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ Դիմիտրիե Դանը (1856—1927) ռումիներեն և գերմաներեն հրատարակել է հայագիտական մի շարք ուսումնասիրություններ՝ նվիրված Մինաս Թոխատեցու «Ողբին», հայ մատենագրությանը, ազգագրությանն ու եկեղեցու պատմությանը[38]։ Դ. Դանի «Արևելյան Հայք ի Պուքովինա» աշխատությունը Գր. Գալեմքերյանի հայերեն թարգմանությամբ լույս է տեսել 1891 թ. Վիեննայում։ Հայագիտությամբ զբաղվեց նաև ռումին գիտնական՝ Օկտավիան Իսոպեսկուլը։ Նա առաջին ռումինացին էր, որ Վիեննայի Մխիթարյանների մոտ համատանալով հայոց լեզվի մեջ, իր «Մաղաքիա մարգարեի երբայերեն բնագիրը» աշխատության մեջ օգտագործեց նաև նրա հայերեն հին թարգմանությունը[39]։ Չերնովիցի համալսարանի գրադարանապետ Յոհան Պոլեկը (ազգությամբ գերմանացի) ուսումնասիրություններ գրեց Բուկովինայի հայերի և Սուչավայի հայկական Ջամկա վանքի պատմության մա-

---

37 Տե՛ս «Արարատ», Վաղարշապատ, 1914, էջ 753—756։

38 *Dimitrie Dan*, Die Orientalischen Armenier in der Bukowina, Czernowitz, 1890, նույնի Minas din Tokat, Persecutarea armenilor din Moldova in anul 1551, Cernăuți, 1895, նույնի Obiceiuri si credințe armene la naștere, nuntă și inmormântare, Cernăuți, 1904, և այլն։

39 *Dr. Octavian Isopescul*, Der prophet Malachias Einleitung übersetzung und Auslegung, Czernowitz, 1908.

սին[40], Հենրիկոս Ֆոն Վլիսլոցկին հրատարակելով «Բուկովինայի և Տրանսիլվանիայի հայերի առասպելներն ու զրույցները»[41] աշխատությունը, կորըստից փրկեց հայկական 69 առասպելներ ու 93 առածներ։

4. ՏՐԱՍԻԼՎԱՆԻԱ ԵՎ ՀՈՒՆԳԱՐԻԱ

XIX դարի վերջերին Տրանսիլվանիայում և Հունգարիայում ապրում էին 16—20 հազար հայեր։ Նրանք մեծ մասամբ կենտրոնացած էին Գեռլա, Բուդապեշտ, Կոլոժվար (Կլուժ), Մարոշ Վաշարհեյ (Տըրգու-Մուրեշ), Ջուրջով (Գեորգեն), Եղիսաբեթուպոլիս (Դումբրվեն), Չիկ-Սեպվիղ (Ֆրումոասա), Տուրդա, Բրաշով և այլ քաղաքներում ու բնակավայրերում։

Տրանսիլվանիայի հայերի կենտրոնը Գեռլա հայաքաղաքն էր (Արմենոպոլիս), որի տնտեսական ու հասարակական կյանքում հայերը մեծ դեր էին խաղում։ 1873 թ. Գեռլայի թագավորական ատյանի նախագահն էր արքունի խորհրդական Գերգեյի Շիմային (Գրիգոր Շիմայան), որը հայ բանաստեղծների բազմաթիվ գործեր թարգմանել էր հունգարերեն, իսկ քաղաքագլուխը՝ Դավիթ Պլըշինտարը։ Գեռլայի հայերը հիմնել էին բարեգործական ընկերություններ, որբանոցներ, ծերանոց և այլն։ Գեռլան հայտնի էր իր բուժիչ ջրերով և առողջարաններով։ Այստեղ աշխատում էին նշանավոր հայ բժիշկներ, որոնցից հիշատակության են արժանի բժիշկ Հովսեփ Զաքարյաշը, քիմիկոս Կ. Հանքոն։ Վերջինս հրատարակել է մի աշխատություն Գեռլայի հանքային ջրերի մասին։

Գեռլան Տրանսիլվանիայի հայերի նաև զարթոնքի կենտրոնն էր։ Այստեղ հատուկ ուշադրություն էր դարձվում հայկական հոգևոր ու աշխարհիկ հուշարձանների վրա, պահպանվում էին շենքերի հայերեն արձանագրությունները, իսկ փողոցների անունները վերանվանվում էին Գեռլայում ծնված նշանավոր հայերի անուններով։ Արտաքնապես ևս քաղաքը հրապուրիչ էր, քաղաքն ուներ ամառային թատրոն, զբոսայգի, ակումբ, պարահանդեսների և խնջույքների սրահներ, 1896 թ. Գեռլայում կառուցվեց գիմնազիայի նոր շենք։ Քաղաքային վարչության շենքում զետեղված էր Արարատի համայնապատկերը։ Գեռլայի հեղինակությունն այնքան մեծ էր, որ 1889 թ. այնտեղ գումարվեց «Տրանսիլվանիայի համակրթության ընկերության» ընդհանուր ժողովը, որի մասնակիցները Գեռլան, ի միջի այլոց, համարեցին նաև Հունգարիայի փոքրագույն քաղաքներից ամենագեղեցիկը։

Տրանսիլվանիայի հայաշատ երկրորդ քաղաքը Եղիսաբեթուպոլիսն էր։ XIX դարի վերջին այստեղ կար հայկական չորս եկեղեցի և մեկ վանք։ Սակայն Եղիսաբեթուպոլսում, ինչպես և Ջուրջովոյում հայ բնակչությունը գնալով նվազում էր։ Միայն Չիկ-Սեպվիզի հայերն էին, որ դեռևս շարունակում էին պահպանել 1730 թ. հիմնված «Կտրիճների եղբայրությունը»։ 1906 թ. այստեղ հայերը կառուցեցին ընդարձակ մի շենք՝ կազինո, որն ուներ գրադարան, ճաշասրահ, կինոյի, թատրոնի և զանազան խաղերի սրահներ։

Հայերի դրությունը մխիթարական չէր նաև երկրի մյուս վայրերում։

---

[40] Տե՛ս Dr. Johann Polek, Die Armenier in der Bukowina, Czernowitz 1906; նույնի Das armenische Kloster Zamka bei Suczawa in der Bukowina, Czernowitz, 1901.

[41] Տե՛ս Heinrich won Wlislocki, Märchen und Sagen der Bukowinaer und Siebenbürger Armenien... Hamburg, 1891.

Նրանցից շատերը ենթարկվել էին ազգային դիմահեղման և մոռացել մայրենի լեզուն։ Այդ երևույթի առաջն առնելու համար Տրանսիլվանիայի մի շարք նշանավոր հայ գործիչներ՝ Խաչիկ Սոնգոտյանը (1843—1907), Հուլիոս Միրզայանը (1862—1943), Գրիգոր վ. Գովրիկյանը (1841—1931) և ուրիշներ, հայերին ձուլումից փրկելու մտահոգությամբ եռանդուն գործունեություն ծավալեցին։ Նրանք իրենց աշխատություններում ու հոդվածներում ցույց էին տալիս հայերի կատարած դերն ու նշանակությունը երկրի կյանքում և հունգարական կառավարության ուշադրությունն էին հրավիրում հայապահպանմանն օժանդակելու գործին։

Տեղի հայերը որոշ աշխուժացում ապրեցին, երբ Վիեննայի Մխիթարյանների աբբահայր ընտրվեց գեղեցի Գրիգոր Գովրիկյանը։ Տրանսիլվանիայի Բեմի առաջնորդ Օքսենտ Վրզարյանի մահից հետո 1715 թ. սկսած հայերը ենթարկվում էին Նահանգի լատին եպիսկոպոսի իրավասությանը։ Տրանսիլվանիայի հայերն արդեն 200 տարի շարունակ համառորեն պայքարում էին իրենց ազգային առաջնորդության վերականգնման համար, որն իրականում ազգային ինքնավարության, հայ դպրոցների և ազգային սովորույթների պահպանման պայքար էր։ Այդ նպատակով 1910 թ. Տրանսիլվանիայի և Հունգարիայի հայերի 39 մարդուց բաղկացած պատվիրակությունը Գր. Գովրիկյանի գլխավորությամբ ներկայանում է պետության կրոնական գործերի և կրթության մինիստր Հ. Զիչիին, սակայն պատվիրակության ջանքերը ցանկալի արդյունք չեն տալիս։

Գեղեցում Խ. Սոնգոտյանի, Ա. Հերմանի, Գ. Գովրիկյանի, Հ. Միրզայանի և Գուստավ Պապպի ջանքերով 1909 թ. հայկական թանգարան է ստեղծվում։ Նրա առաջին պատվավոր տեսուչը դարձավ Հունգարիայի հայագետ դոկտոր Անտոն Հերմանը։ Թանգարանն ուներ մատենադարան-դիվանատուն, հնագիտական-ազգագրական և արվեստի բաժիններ։ Սրագրվել էր թանգարանին առընթեր կազմակերպել գիտական արշավախումբ և ուղարկել Անի։ Սակայն Սոնգոտյանի անսպասելի մահը խափանեց այդ ծրագիրը[42]։

Տրանսիլվանիայի հայերը միշտ ակտիվորեն արձագանքում էին հայրենիքում կատարվող դեպքերին։ Նրանք 1880 թ. Հայաստանում սկսված սովի, ապա 1890-ական թվականների հայկական ջարդերի օրերին նյութական օժանդակություն կազմակերպեցին սովյալներին և գաղթականներին։ Վենետիկի միաբան, հայտնի բանասեր Մ. վ. Պոտուրյանի նախաձեռնությամբ, 1912 թ. Եղիսաբեթուպոլսում կազմակերպված հայրենասիրական երեկույթի հասույթը նվիրվեց Ադանայի հայ որբերին։

Հայ ժողովրդի ողբերգությունը խնդրո առարկա դարձավ նաև հունգարական պառլամենտում։ 1902 թ. Բուդապեշտ ժամանած ֆրանսիական «L'oeuvre» թերթի խմբագիր, գրող Պիեր Քիյաբը, Ասիայի հետազոտող կոմս է. Զիչիի հրավերով պառլամենտի դահլիճում զեկուցում է կարդում Հայկական հարցի մասին և ներկաներին կոչ անում Հունգարիայում ևս հայերի պաշտպանության կոմիտե ստեղծել։ է. Զիչին ու կոմս Ապոնին ջերմորեն պաշտպանեցին այդ առաջարկը և զայրույթով դատապարտեցին թուրք ջարդարարներին[43]։

---

42 Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1908, էջ 29—32. „Ararat". Bucureşti, 1926, 26.

43 Տե՛ս Ս. Քալանթյան, Տրանսիլվանիայի հայերի պայքարը ազգային ինքնուրույնության պահպանման համար (Ժէ դարի վերջից մինչև Ի դարի սկիզբը), «Էջմիածին», 1964, № 12, 1965, № 1, 7, 1966 № 2—6։

Տրանսիլվանիայի հայկական գաղթօջախում նշանակալից դեր է կատարել Գեղայում հունգարերեն լույս տեսնող «Արմենիա» ամսագիրը (1887—1907), որի հրատարակիչ-խմբագիրն էր Խաչիկ Սոնգոտյանը։ Հանդեսի հիմնադրմանը մասնակցել է նաև Գր. Գովրիկյանը։ Ամսագիրը հայագիտական բնույթ ուներ և հետապնդում էր օտարներին հայոց պատմության ու մշակույթի հետ ծանոթացնելու գաղափարը։ «Արմենիային» բղթակցում էին Տրանսիլվանիայի ու Հունգարիայի հայերն ու օտարերկրյա գիտնականները։ 170 աշխատակիցներ համախմբելով ամսագրի շուրջը, Սոնգոտյանը մեծապես օժանդակեց հայապահպանման և հայ-հունգարական բարեկամության զարգացման գործին։ Սոնգոտյանի մահից հետո հունգարացի գիտնական Անտոն Հերմանի, հայազգի հնագետ Գուստավ Պապպի (1907 և 1913) և Մ. վ. Պոտուրյանի (1912) ջանքերով «Արմենիայի» մի քանի համար է լույս տեսնում, որից հետո դադարում է նրա հրատարակությունը։

Տրանսիլվանահայ մշակույթի մեջ ուրույն տեղ էր գրավում պատմագիտությունը։ Ամենանշանավոր պատմաբանը Խաչիկ Սոնգոտյանն էր (Կրիշտոֆ Սոնգոտը), որը միաժամանակ ազգագրագետ, լեզվաբան ու հրապարակախոս էր։ Նա արխիվային հարուստ նյութերի հիման վրա վեր է հանել ոչ միայն հունգարահայերի, այլև հունգարացիների պատմության մի շարք կարևոր հարցեր։ Գեղայի պատմությանը նվիրված երեք ստվարածավալ հատորներից[44] բացի, Սոնգոտյանը հեղինակել է նաև «Հունգարահայ գերդաստանների տոհմանունները», «Հունգարահայերի ազգագրությունը» և այլ մենագրություններ։ Նա հունգարերեն է թարգմանել Մ. Խորենացու «Պատմություն Հայոցը» և գրել մեծ քվով հայագիտական հոդվածներ։

Պատմաբաններից հայտնի են նաև Խաչիկ Լուքաչյանը (1804—1876), Եփսաբեթուպոլսի պատմության հեղինակ Լուքաչ Ավետիքը (Ղուկաս Ավետիքյանը 1847—1909)[45], Դյուլա Մերզան (Հուլիոս Միրզայանը)։ Գրիգոր վ. Գովրիկյանը միայն Եղիսաբեթուպոլսի հայերի պատմությանը երեք հատոր է նվիրել (գրել է հայերեն), իսկ մեկ հատոր էլ՝ Գեղային, ինչպես նաև բազմաթիվ հոդվածներ է գրել «Հանդես ամսօրյայում»։ Հունգարահայոց պատմությանն է անդրադարձել նաև տրանսիլվանահայ Վարդան վ. Ըստկարյանը (1843—1886)։ Ազգագրական նյութեր են հավաքել ու գրքեր հրապարակել գերմանացի Հ. Վլիսլոցկին և պետական պաշտոնյա, հայազգի Լայոշ Գոպչան (Գոպչյանը 1865—1933)։

Հայագիտության զարգացմանը նպաստել են հայազգի Մարտոն Կասպոտանը (1914), որը հունգարերեն է թարգմանել Հակոբ Պարոնյանի ստեղծագործությունների ժողովածուն և Ղուկաս Բաղրեպանյանը (Պատրեպանյան)։ Վերջինիս 1897—1900 թթ. Բուդապեշտում հրատարակած „Sprachwis senschaftliche Abhandlungen“ (*«Լեզվաբանական քննություններ»*) գերմաններեն հայագիտական պարբերականին բղթակցում էին մեծանուն հայագետ Հ. Հյուբշմանը, Հ. Օստոֆը, Լ. Մսերյանը (Մոսկվայից) և ուրիշներ։ Բուդապեշ-

---

[44] *Szongott Kristo'f*, Szamosújvar, a magyar örmény metropolis, viasaban es Karekben, Szamosújvart 1893, նույնի Szamosújvár szab. kir. város monográfiája (1700—1900), Szamosújvárt, 1—2, 1901.

[45] *Avedik Lukács*, Szabat Király Erzsébetváros monográfiája, Szamosújvaartt, 1895.

տի համալսարանում հայոց լեզու և գրականություն դասավանդող Բադրուպանյանը գաղթօջախի հայերեն գրող վերջին բանաստեղծն էր։

Հայերը մի շարք ականավոր պետական ու մշակութային գործիչներ են տվել իրենց հյուրընկալած երկրին։ Դրանցից է Լուկաչյան (Ղուկասյան) գերդաստանից Լասլո Լուկաչը (1850—1932), որը երկրի ֆինանսների մինիստրն էր, իսկ 1912 թ. դարձավ նաև Հունգարիայի պրեմիեր մինիստրը։ Նա իր նախնական կրթությունն ստացել էր հայկական դպրոցում։ Ղուկասյան գերդաստանից էին նաև 1889—1895 թթ. առևտրի մինիստր Բելա Լուկաչը (1847—1901) և մշակույթի մինիստր Գեորգ Լուկաչը (1865—1950)։ Վերջինս եղել է նաև Հունգարահայերի միության նախագահ։ Էրնեո Դանիելը (1843—1923) առևտրի մինիստր էր (1895—1899) և նրա օրոք՝ 1896 թ. Բուդապեշտում կազմակերպվեց համաշխարհային ցուցահանդես։ Դանիելը Հունգարահայերի միության նախագահն էր։

Հունգարական մշակույթի պատմության մեջ հիշատակվում է Սոֆոկլեսի և Շեքսպիրի հունգարերենի թարգմանիչ, հունգարական գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, նշանավոր բառերագիր՝ Գրիգոր Չիքիի (Չիքիյան 1843—1891) անունը։ Նրա երկերը ամփոփված են 18 հատորներում։ Այժմ էլ նրա անունով է կոչվում Բուդապեշտի փողոցներից մեկը։ Հունգարիայում հայտնի է լեզվաբան-քաղաքագետ ու գրող Մորից Լուկաչի (1812—1881) անունը, որը բացի ինքնուրույն ստեղծագործություններից, հունգարերեն է թարգմանել Սերվանտեսին ու Բայրոնին։ Մ. Լուկաչը հունգարական գիտությունների ակադեմիայի անդամ էր։ Հայտնի է նաև Բուդապեշտի համալսարանի դասախոս, պատմաբան, Գեղայի դեպուտատ դոկտոր Անտոն Մոլնարը (Մոլնարյան 1847—1902)։ Նա «Արմենիա» հանդեսի գլխավոր աշխատակիցներից էր, որտեղ հրատարակել է մեծ թվով հայագիտական հոդվածներ։

«Հունգարիայի սոխակ» են անվանել օպերային հայտնի երգչուհի Հայազգի Կորնելիա Հոլոշիին (1827—1918)։ Նույն գերդաստանից է սերվել Բալա Մարեի նկարչական դպրոցի հիմնադիր, նկարիչ Սիմոն Հոլոշին (1857—1918), որի անունով փողոց կա Բուդապեշտում։ Ճանաչված բժշկապետներից էր Ստեփան Մալիյանը (1830—1908), որը միաժամանակ «Արմենիայի» հուվանավորողներից և աշխատակիցներից մեկն էր։

5. ՖՐԱՆՍԻԱ

Հայ-ֆրանսիական առնչությունները բազմադարյան պատմություն ունեն։ Ֆրանսիա հասած առաջին հայերի մասին հիշատակություններ կան դեռևս V—VI դարերից։ Բյուզանդագետ Շառլ Դիլը հավաստում է, որ հայ վաճառականները VI—VII դարերում հասնում էին մինչև Ֆրանսիա, Իսպանիա[46], XI դ. Անիի կործանումից հետո զգալի թվով հայեր տեղափոխվեցին Ֆրանսիա։

Հայ-ֆրանսիական երկարատև տնտեսական-քաղաքական հարաբերությունները ստեղծվեցին խաչակրաց արշավանքների շրջանում, սկսած XI դարի վերջերից։ Կիլիկյան իշխանություններն ամեն կերպ նպաստում էին Ֆրանսիայի հետ առևտրական հարաբերությունների զարգացմանը։ Պահպանվել են

46 Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմություն հայ գաղթականության, հ. Ա, էջ 176։

Օշին թագավորի և նրա հաջորդ՝ Լևոն IV-ի հրովարտակները Ֆրանսիայի (մասնավորապես Մոնպելիեի) վաճառականներին մաքսային արտոնություններ տալու վերաբերյալ։ Հայ առևտրականները Ֆրանսիա էին ներմուծում մետաքս, բամբակ, համեմունքներ, հայկական գորգեր ու կարպետներ։ Այդ շրջանից է, որ հայկական կարպետ բառը մտել է ֆրանսերենի և եվրոպական մի շարք այլ լեզուների մեջ[47]։

XIII դարում զգալի թվով հայեր էին ապրում Ֆրանսիայի հարավային մի շարք քաղաքներում[48]։ Պրովանսի, Լանգեդոկի նահանգներում, մասնավորապես Մարսել, Մոնպելիե, Նարբոն, Նիմ քաղաքներում ստեղծվում են հայկական գաղթօջախներ։ Ֆրանսիացի պատմաբան Հ. Ռիմոնդելը գրում է, թե «Անոնց (հայերի—խմբ.) շենքերը բավական կարևոր եղած պիտի ըլլան, որ Ռոն գետի մեկ ճյուղը, այսօր ցամքած, կանվանվեր հայերու անունով, անոտարակույս այն պատճառով, որ այս վերջիններս այս եզերքին վրա բազմաթիվ վաճառատեղիներ ունեին»[49]։

Պատմաբան Ֆ. Մակլերը հաղորդում է, որ Պյուի դը Դոմ նահանգում գոյություն է ունեցել Դեզարմենիեն դյուղը։ Թերևս հայ վաճառականներն են եղել դրա հիմնադիրները, ավելացնում է նա[50]։ «Մարսելում եղել է «Հայոց» կամ «Հայկական փողոց»։ Մարսելի հին թաղերի մեջ կառուցված «Հայոց աղբյուրը» ու հայկական տապանագրերը ցույց են տալիս, որ հայ վաճառականները առևտրական այդ քաղաքում մեծ դեր են կատարել անցյալում»[51]։

Հայկական գաղթօջախի հետքեր են մնացել Տարասկոն քաղաքում։ Տեղի Սենթ Մարթ եկեղեցում պահպանվել է 1226 թ. կրող տապանաքար՝ հայկական արձանագրությամբ։ Ֆրանսիացի կառուցողները ծանոթ էին հայկական առանձին կոթողների, ինչպես օրինակ, «Չվարթնոցին»։ XIV դարում Ֆրանսիայի Փիլիպոս Գ Հանդուգն թագավորը հայ որմնադիրներ է բերել տվել իր դղյակը կառուցելու և եկեղեցիներ շինելու համար, և հայ գիտնականներ՝ Բուրգունդիայում գիտնագործությունը զարգացնելու նպատակով։ Մինչև այժմ էլ Դիժոնի գիտու թանգարանում պահպանվում են նրանց գործածած հնձաններըը[52]։ «Հայաստանի և Նիմի վաճառականական հարաբերությունները այնքան հաճախ էին,— գրում է Ժ. Մաթորեզը,— որ համեմատական ցուցակներ հորինված էին Ասիո և Գաղիո շափուց ու կշռոց փոխադարձ հարաբերությանց»[53]։ Մեկ ուրիշ ֆրանսիացի, Ռընեն Մարսիալը, հաղորդում է, որ հայերը «Միջին դարուն այնքան բազմաթիվ էին Մոնփելիեի մեջ, որ համալսարանի դռան վրա փակցված էր հայկական դրամի և Ֆրանսիայի թագավորին դրամի փոխանակության ցուցակը»[54]։

Հայ վաճառականների առևտրական գործառնությունները Ֆրանսիայի ծովեզրյա քաղաքների հետ շարունակվում էին և հաջորդ դարերում։ Դրանք բավական լայն բնույթ էին կրում XVII դարում։ Պարսկաստանից և Արևելքի

---

47 Տե՛ս Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973, էջ 524։
48 Տե՛ս Ա. Այպոյանյան, Նշված աշխ., հ. Բ, էջ 618։
49 Նույն տեղում, էջ 612։
50 «Ֆրանսահայ տարեգիրք», Փարիզ, 1927, էջ 136—138։
51 Ա. Կարինյան, Ակնարկներ հայ մամուլի պատմության, հ. 2, Երևան, 1960, էջ 489։
52 Տե՛ս Ա. Այպոյանյան, Նշված աշխ., հ. Բ, էջ 618։
53 «Բազմավեպ», 1919, էջ 245։
54 «Հայկազն», գիրք երկրորդ, Փարիզ, 1843, էջ 74։

մյուս երկրներից (ներառյալ և Հնդկաստանը) նրանք Ֆրանսիա էին ներմուծում մեծ քանակությամբ մետաքսեղեն, ադամանդներ և այլ թանկագին քարեր։ Ներմուծվող ապրանքների թվում նշվում են նաև մետաքսե և բամբակե ոսկեթել ու արծաթաթել բանված կերպասներ[55]։ Գրականության մեջ հիշատակվում են և Հայաստանից բերվող գունավոր կաշիներ (կարմիր, դեղին, կանաչ), «որոնք իրենց հատկություններով գերազանցում էին Եվրոպայում պատրաստվածները»[56]։

Կարդինալ Ռիշելյեն, առևտրին զարկ տալու համար, նպաստում էր հայերի բնակեցմանը Ֆրանսիայում, իսկ նրբ Կոլբերի 1669 թ. հրամանագրով Մարսելը հայտարարվեց ազատ նավահանգիստ, Լիվոռնոյի և Ջենովայի հայ վաճառականներից շատերը փոխադրվեցին Մարսել[57]։

Զարկ տրվեց նաև հայ մշակութային կյանքին և տպագրության գործին։ Դեռևս 1633 թ. Փարիզում, կարդինալ Ռիշելյեի օժանդակությամբ լույս է տեսնում Ֆրանչեսկո Ռիվոլայի «Բառգիրք հայոցը» (հայ-լատիներեն բառարանը), ապա նաև մի քանի այլ գրքեր։ Ավելի ուշ, 1673-ին, Մարսելում բացվում է Ոսկան Երևանցու (Ղլըջենց) տպարանը[58]։ Մարսելի այդ տպարանը իր գոյությունը պահպանեց մինչև 1910 թ.։ XVIII դարի կեսերին ժան Ալբենը (Հովհաննես Ալբունյան) խոշոր նպաստ բերեց Ֆրանսիայի գյուղատնտեսությանը։ 1759 թ. Պարսկաստանից (Նոր Ջուղա) գալով և հաստատվելով Ավինյոնում, նա առաջին անգամ Ֆրանսիայում (Վոքլյուզի նահանգ) սկսում է մշակել տնդացիներին անծանոթ տորոնի (Garance) կուլտուրան։ Այն շուտով տարածվում և տնտեսական մեծ եկամուտ է բերում։ Հետագայում վոքլյուզցիները, ի նշան երախտագիտության, նախ մարմարե հուշատախտակ են տեղադրում Ավինյոնի թանգարանում, իսկ ավելի ուշ, 1846 թ., բրոնզե արձան կանգնեցնում Նոթր Դամ դը Դոմի մեջ[59]։

Այս նոր ժամանակներում հայ-ֆրանսիական մշակութային կապերի առավել նշանավոր երևույթներից մեկը Փարիզի Արևելյան կենդանի լեզուների վարժարանում ստեղծված հայերենի դասընթացներն էին։ Դրանց հիմքը դեռևս 1798 թ. դրել էր Հակոբ Շահան Ջրպետյանը։ 1811 թ. այն վերածվեց հայագիտական ամբիոնի՝ նույն Շ. Ջրպետյանի ղեկավարությամբ։ 1870-ական թվականներին հիշյալ ամբիոնը գլխավորում էր հայտնի հայագետ էդ. Դյուլորիեն, որին հաջորդեցին Ա. Կարիերը, ապա նշանավոր լեզվաբան Անթ. Մեյեն, հայագետ Ֆր. Մակլերը և ուրիշներ։ Այդ դպրոցից ելած ֆրանսիացի հայագետները նշանակալից աշխատանք են տարել հայ մշակույթը օտարներին ծանոթացնելու գործում։

Ուշագրավ է նաև Փարիզի Արքունի մատենադարանի ցուցաբերած հետաքրքրությունը հայկական հին ձեռագրերի նկատմամբ։ 1834 թ. հիշյալ մատենադարանում հավաքված էր հայկական 128 ձեռագիր, որոնց ցուցակը կազմել էր Դիյոմ դը Վիլֆրուան[60]։

---

55 «Ֆրանսահայ տարեգիրք», 1927, էջ 70։

56 Լեո, Խոջայական կապիտալ, Երևան, 1934, էջ 105։

57 Տե՛ս «Ֆրանսահայ տարեգիրք», 1927, էջ 78։

58 Տե՛ս նույն տեղում, էջ 89։

59 Տե՛ս Վ. Զարդարյան, Հիշատակարան, 1512—1933, հ. Բ, «Հայ գաղութը և մամուլը Եվրոպայի մեջ», էջ 18—19 (հմմտ. «Ֆրանսահայ տարեգիրք», 1926, էջ 93)։

60 Տե՛ս Գ. Ալբազյան, Հայագիտությունը Ֆրանսիայում («Հայրենիքի ձայն», 1973, № 31)։

XVIII դարի վերջին և XIX դարի առաջին կեսին հայ-ֆրանսիական առևտրաշրջանառության մեջ մեծագույն իրադարձությունները Ֆրանսիայում (1789-ի, 1830-ի և 1848-ի հեղափոխությունները) լայն արձագանք գտան արևմտահայ առաջադեմ շրջաններում։ Կ. Պոլսում և Զմյուռնիայում բավական նշանակալից էր ֆրանսիական մշակույթի ազդեցությունը։ Ֆրանսիայում ժամանակի բաղաքական ընդհանուր իրադրության բերումով զգալիորեն աճեց հայկական գաղթօջախի հասարակական-մշակութային դերը։ Ա. Ալպոյաճյանի բնորոշմամբ 1840 թ. սկսած Ֆրանսիան հայերի համար դառնում է հայ մշակույթի զարգացման օջախներից մեկը[61]։ Այստեղ բարձրագույն կրթություն ստանալու են գալիս բազմաթիվ հայ երիտասարդներ։ 1846 թ. Փարիզ տեղափոխվեց Սամվել Մուրադյան վարժարանը[62]։ Նրա գոյությունը ֆրանսահայ գաղթօջախում կարևոր երևույթ էր։ Այնտեղ դասավանդում էին Գ. Այվազովսկին, Ամբրոսիոս (Դվիդոն Լուսինյան) և Խորեն Գալֆայան (Նար-Պեյ) եղբայրները, Սարգիս Թեոդորյանը և ուրիշներ։ Այդ վարժարանն են ավարտել Մաթեոս Մամուրյանը, Մարկոս Ազարեկյանը, Ստ. Պալասանյանը և շատ ուրիշ ականավոր հայ գործիչներ։ Սամվել Մուրադյան վարժարանը Փարիզում գործել է մինչև 1870 թ., որից հետո տեղափոխվեց Վենետիկ[63]։

1850-ական թվականների կեսից հիմնադրվեցին գաղթօջախի առաջին հայ պարբերականները՝ Ստ. Ոսկանի (Ոսկանյան) «Արևելքը» (1855—1856) և «Արևմուտքը» (1859, 1864—1865), Գ. Այվազովսկու «Մասյաց աղավնին» (1855—1858), որ հետագայում շարունակվեց Թեոդոսիայում (1860—1865), Ա. Մուրադյանի «Փարիզը» (1860—1863)։ Պարբերական մամուլի սկզբնավորումը և ապա նոր տպարանների հաստատումը Փարիզում (Կ. Շահնազարյանի և հատկապես Ճ. Արամյանի) նշանավորում էր նոր փուլ ֆրանսահայ գաղթօջախի կյանքում։ Առանձնապես նշանակալից էր Ստ. Ոսկանի պարբերականների երևան գալը։ Թե՛ «Արևելքը» և թե՛ «Արևմուտքը» իրենց դեմոկրատական գաղափարներով ու մարտաշունչ հրապարակախոսությամբ լայն արձագանք գտան ոչ միայն գաղթօջախի, այլև ամբողջ հայ հասարակական կյանքում։

Զգալի աշխուժություն են ցուցաբերում այդ շրջանում Մարսելի հայ վաճառականները։ Նրանց կազմակերպած հայկական ընկերությունն ուներ իր սեփական նավը, որ երթևեկում էր Միջերկրական ու Սև ծովերով, հասնելով մինչև Փոթի[64]։ Սերտ կապեր ունեին նրանք Թուրքիայի հետ, որտեղից Ֆրանսիա էին ներմուծում բամբակ, դարի, եգիպտացորեն, մորթիներ, չամիչ և այլ ապրանքներ։

Մարսելի հետ լայն կապեր ունեին նաև արևելահայ առևտրականները։ «Ռուսաստանի հայք ընդարձակ վաճառատեղիներ ունին, և մանավանդ Ին-

---

61 Տե՛ս Ա. Ալպոյաճյան, «Ազգային սահմանադրությունը... («Ընդհանուր օրացույց ազգային հիվանդանոցի», 1910, էջ 231)։

62 Այն հիմնադրվել էր Պադուայում (Իտալիա) 1834-ին, հնդկահայ Սամվել Մուրադի կտակով 1870 թ. միանալով 1836 թ. Վենետիկում բացված Ռափայելյան վարժարանին, իր գոյությունը շարունակում է Մուրադ-Ռափայելյան վարժարան անունով։

63 1854-ին Գ. Այվազովսկին և Գալֆայան եղբայրները, հեռանալով վենետիկյան միաբաններից, Փարիզում հիմնեցին իրենց նոր «Հայկազյան վարժարանը», սակայն այն երկար կյանք չունեցավ։

64 Տե՛ս «Արարատ», 1877, էջ 193։

լիսի հետ հարաբերություն ունեցողներն անչափ ապրանք կընդունին և զգալի շարժում մը կտան Ֆրանսիայի վաճառականության մեկ ճյուղին... Բուրդի, շերամի (cocon) և գանգրաթավի (frison) հակեր ահագին քանակությամբ կընդունին, և ֆրանսացիք անգամ կզարմանան և կխոստովանին թե՝ անկարող են շահամրցիլ Ռուսաստանի հայոց հետ տուրևառի այդ ճյուղին մեջ։ Հակայապայլ կհառաջեն անոնք, մեծ հոչակ հանելով՝ արդեն հոչակավոր շահաստանի մը մեջ, որ հարավային Ֆրանսայի վաճառականության ամենե բանուկ դուռն է»[65]։

Գաղթօջախի մի զգալի մասն էլ կազմում էին ուսանողները, որոնք սովորում էին Փարիզի, Մարսելի, Լիոնի, Մոնպելիեի և այլ համալսարաններում։ Նրանք հետևում էին գիտության ու արվեստի տարբեր ճյուղերին, բայց ամենից ավելի նրանց գրավում էր բժշկությունը։ 1843—1915 թթ. ընթացքում միայն Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետն ավարտել են 122 հայ երիտասարդներ, այդ թվում՝ Նահ. Ռուսինյանը, Մանվ. Ութուճյանը, Վահան Արծրունին։

Փարիզում սովորող հայ ուսանողները 1849 թ. հիմնում են «Արարատյան» անունով ընկերությունը Ն. Ռուսինյանի, Ծերենցի, Հ. Արզումանի, Ն. և Հ. Պալյանների և ուրիշների նախաձեռնությամբ։ «Արարատյան» ընկերության գոյությունը կարճատև եղավ, սակայն ուսանողական այդ շրջապատում հղացվեց հայկական սահմանադրության գաղափարը, որը, հետագայում, 1860 թ., իր մարմնավորումն ստացավ պոլսահայ իրականության մեջ՝ որպես Ազգային սահմանադրություն։

1879 թ. Փարիզում հիմնվեց «Հայկազյան ուսումնասիրաց ընկերությունը», որի նպատակն էր նյութական օգնություն ցույց տալ անապահով հայ պատանիներին՝ բարձրագույն կրթություն ստանալու և հայրենիքում գիտությունը ժողովրդի մեջ տարածելու համար, իսկ 1888 թ.՝ «Փարիզի հայ ուսանողական միությունը»։ 1894—1896 թթ. «Հայ ուսանողական միությունը» Փարիզում կազմակերպեց բողոքի միտինգներ, հրատարակեց սուլթանական բռնությունները դատապարտող գրքույկներ և այլն։ 1894 թ. Փարիզում ստեղծվեց «Հայ ուսանողաց բնակատեղվո խնամակալությունը», որը պետք է ձրի բնակարան հայթայթեր ու օգներ հայ չքավոր ուսանողներին։

Ֆրանսիան դեպի իրեն էր ձգում նաև հայ մտավորականներին։ Դարավերջից սկսեցին Ֆրանսիա գալ հայերի ավելի մեծ խմբեր։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, հայերի թիվն ամբողջ Ֆրանսիայում հասնում էր 4.000-ի[66]։

Ֆրանսիա գաղթող հայերից շատերը արհեստավորներ ու գյուղացի երիտասարդներ էին։ Նրանք մեծ մասամբ աշխատանքի էին անցնում գործարաններում կամ մանր ձեռնարկատերերի մոտ և, սովորաբար, որպես օտարներ ավելի ցածր էին վարձատրվում, քան տեղացիները։ 1892 թ. կազմակերպվում է «Փարիզի հայոց բարեգործական ընկերությունը», որ հետագայում սկսեց կոչվել «Աղքատախնամ ընկերություն Փարիզի հայոց» կամ ուղղակի «Աղքատախնամ»[67]։ Այն շուտով վավերացվեց ֆրանսիական իշխանությունների կող-

65 «Արևելյան մամուլ», 1883, էջ 43—44։

66 Տե՛ս «Ֆրանսահայ տարեգիրք», 1926, էջ 113—114։

67 Անվան այդ փոփոխությունը տեղի ունեցավ շփոթությունից խուսափելու համար, 1922-ին, երբ Հայկական բարեգործական ընդհանուր միության (ՀԲԸՄ) կենտրոնը Կահիրեից փոխադրվեց Փարիզ։

մից և երկար տարիներ նույնիսկ նպաստ էր ստանում կառավարությունից։ Ընկերությունը տանում էր մարդասիրական, բարեգործական աշխատանքներ, օգնում Թուրքիայից եկող գաղթականներին, ուսանողներին և ընդհանրապես կարիքավոր հայերին։

1904 թ. Փարիզում ստեղծվում է «Հայ աշխատավորաց միություն» կազմակերպությունը, բաղկացած արհեստավորներից և վարձով աշխատող բանվորներից։ Միության գլխավոր նպատակն էր «օգտակար ըլլալ յուր անդամներուն բարոյապես ու նյութապես՝ սատարել հայ ազգային ավանդության պահպանումին ու բարձրացումին, աշխատանք գտնել գործազուրկների համար և օգնել՝ կարոտյալներին ու հիվանդներին»[68]։

1906 թ. կազմակերպվում է «Փարիզի հայկական միությունը», որի նախագահն էր Ներսես խան Ներսիսյանը (Պարսկաստանի նախկին հյուպատոսը Լոնդոնում և Փարիզում), քարտուղարը՝ Արշ. Չոպանյանը, անդամների թվում էր նաև Ալ. Շիրվանզադեն։ Փարիզի հայկական միության նպատակն էր պաշտպանել հայ ժողովրդի բարոյական ու նյութական շահերը, ծանոթացնել քաղաքակիրթ աշխարհին Հայաստանի անցյալ և ներկա կյանքին ու մտավոր գործունեությանը, ինչպես նաև «տարածել հայ ժողովուրդին մեջ արևմտյան քաղաքակրթությունը»[69]։ Միությունը գոյատևեց մի քանի տարի։

1913 թ. փարիզաբնակ մի խումբ կանանց նախաձեռնությամբ ստեղծվեց «Փարիզի հայ տիկնանց միությունը», որբերին, ուսանողներին, գաղթական հայերին օգնող և Կարմիր խաչի մասնաճյուղերով։ Միության գործունեությունն ընդլայնվեց հատկապես պատերազմի տարիներին։ 1917 թ. ֆրանսիական կառավարությունը պաշտոնապես ճանաչեց Տիկնանց միությունը որպես «Պատերազմի թշվառության օգնող բարեկամական կազմակերպություն»։ Տիկնանց միությունը միջոցներ հավաքելու համար կազմակերպում էր պարահանդեսներ, վաճառահանդեսներ, զանազան հանգանակություններ, մասնակցում հայկական կազմակերպությունների մյուս միջոցառումներին։

Ֆրանսահայ գաղութում տարբեր ժամանակներում կազմակերպվեցին նաև այլ միություններ ու ընկերություններ, ինչպես «Փարիզի հայ մտավորական միությունը», «Ազգային միությունը», «Երիտասարդաց միությունը», «Որբասիրաց միությունը», «Երաժշտասիրաց միությունը», «Պարտիզակցիների հայրենակցական միությունը» և այլն։

Ֆրանսահայ գաղթօջախի կյանքի բնորոշ կողմերից մեկն այդ շրջանում հայ-ֆրանսիական մշակութային կապերի խորացումն էր։ Նշանակալից էր այդ գործում գեղարվեստական գրականության փոխադարձ թարգմանությունների դերը։ Հայերենից ֆրանսերեն կատարվող թարգմանությունների բնագավառում լայն աշխատանք ծավալեց հատկապես Արշակ Չոպանյանը։ Քուչակի, Նարեկացու, միջնադարյան տաղերգուների, ժողովրդական երգերի նրա թարգմանությունները մեծ ընդունելություն գտան Ֆրանսիայի հասարակայնության կողմից։

Ֆրանսահայ գաղթօջախում աճեցին հայ արվեստագետներ, որոնք կարևոր նպաստ բերեցին նաև ֆրանսիական արվեստին։ Ոչ միայն Ֆրանսիայում, այլ նաև նրա սահմաններից դուրս մեծ համբավ ուներ թավջութակահար Տիրան Ալիքսանյանը՝ «Էկոլ նորմա դը մուզիկի» պրոֆեսորը, «Թավջութակի ուսուցու-

68 «Կանոնագիր հայ աշխատավորաց միության Բարիզի», Փարիզ, 1905։

69 «Փարիզի հայկական միություն», Փարիզ, 1906։

մը» նշանավոր աշխատության հեղինակը, որին շատ բարձր է գնահատել Պաբլո Կազալսը։ Համանվողական հռչակ էին վայելում քանդակագործ Հակոբ Գյուրջյանը և նկարիչ Էդգար Շահինը։

Սակայն քաղաքական իրադարձությունների բերումով Ֆրանսահայ գաղթօջախին վիճակված էր ավելի լայն ու կարևոր դեր կատարել հայ հասարակական-քաղաքական կյանքում։ Այդ դերը նրան տվեց Հայկական հարցի քննարկումը Եվրոպայի դիվանագիտական կենտրոններում և, առաջին հերթին, Փարիզում։

Ֆրանսահայ գաղթօջախի քաղաքական մշնոլորտն աշխուժացավ մանավանդ այն պահից, երբ Հայկական հարցի դիվանագիտական քննարկումներին զուգահեռ սկսեց ծավալվել դրա պրոպագանդը մի շարք թերթերի միջոցով։ Այդ թերթերից առաջինը «Արմենիան» էր, որ հիմնադրեց Մկրտիչ Փորթուգալյանը Մարսելում՝ 1885-ին։

Ֆրանսիայում «Արմենիայից» հետո՝ 1855-ից մինչև 1917 թ., լույս են տեսել մոտ երեք տասնյակ տարբեր բովանդակության և ուղղության թերթ ու ամսագիր, որը ապացույց է հայկական այդ օջախի հասարակական ակտիվության աճի։ Դրանցից ամենից ավելի աչքառուն «Անահիտ» գրական, գեղարվեստական ամսագիրն էր, որը սկսեց հրատարակվել 1898 թ. և շարունակվեց մինչև 1911 թ. (առաջին շրջան)[70], «Անահիտը» գործակ ժամանակի լավագույն հայկական հանդեսներից մեկը և ուներ հայրենասիրական-առաջադիմական ուղղություն։ Նրան բոլորակցում էին ժամանակի թե՛ արևմտահայ և թե՛ արևելահայ անվանի գրողներն ու արվեստագետները, սերտ կապ ստեղծելով ֆրանսահայ գաղութի և հայ բնաշխարհի միջև։ Այդ գործում, ինչպես և առհասարակ գաղթօջախի հասարակական-մշակութային կյանքում, խոշոր էր հանդեսի խմբագրի՝ Արշակ Չոպանյանի դերը։ Նա ընդարձակ կապեր էր պահպանում ֆրանսիական գրողների, պետական ու հասարակական գործիչների, առաջադեմ շատ մտածողների հետ ու իր քարգմանություններով Եվրոպայի լայն հասարակայնությանը ծանոթացնում հայ ժողովրդի պատմության և մշակույթի հետ։

Հայանպատակ պրոպագանդի նպատակով ստեղծվեցին նաև օտարլեզվա հայկական պարբերականներ, ինչպես «Լ՛ Արմենի» (L՛ Armenie) և «Պրո Արմենիա» (Pro Armenia) թերթերը։ Ֆրանսերեն «Լ՛ Արմենի» երկշաբաթաթերթը սկսել էր լույս տեսնել 1889 թ. Լոնդոնում։ Այն պարբերաբար տպագրում էր նաև հոդվածներ անգլերեն լեզվով։ «Լ՛Արմենին» 1898 թ. փոխադրվեց Փարիզ և շարունակեց լույս տեսնել որպես ամսաթերթ։ Նրա նյութերի մեծ մասը նվիրված էր Հայկական հարցին։ Դրանց շարքին են պատկանում թերթի խմբագիր Մինաս Չերազի և ներսես Վարժապետյան պատրիարքի դիվանագիտական գործունեության բազմաթիվ փաստաթղթեր, Ֆրանսիայի և Անգլիայի մի շարք պետական գործիչների հայասիրական ելույթները, Արևելյան հարցին վերաբերող զանազան նյութեր և այլն։

Ֆրանսերեն հրատարակվող «Պրո Արմենիան» կիսամսյա էր, հրատարակվեց Փարիզում 1900 թ. մինչև 1914 թ.։ Նրա հրատարակչական-խմբագրական կազմում էին Ֆրանսիայի անվանի գրողներ ու հասարակական գործիչներ Անատոլ Ֆրանսը, Ժան Ժորեսը, Վ. Բերարը, Պրեսանսեն և ուրիշներ։ Խմբագիրն էր Պիեր Քիլարը։ «Պրո Արմենիայի» հավատամքը նույնն էր՝ ծանոթացնել Եվրո-

---

70 «Անահիտը» վերսկսեց հրատարակվել 1929-ին և ընդհատվելով երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, շարունակվեց մինչև 1949-ի վերջը։

պային հայ ժողովրդի ծանր վիճակին և այդ եղանակով ազդել ֆրանսիական դիվանագիտության վրա՝ ի նպաստ Հայկական հարցի։

Ֆրանսահայ գաղութն ավելի աշխուժացավ, երբ 1912 թ. Փարիզ ժամանեց Պողոս Նուբար փաշայի գլխավորած Ազգային պատվիրակությունը, որի կազմի մեջ մտնում էին Արթին Ցաղուք փաշան, Հար. Մոսդիճյանը, Մինաս Չերազը, Գևորգ եպ. Ութուճյանը։ Պատվիրակության նպատակն էր ներգործել եվրոպական պետությունների վրա Հայկական հարցի լուծմանը նպաստելու համար։ Թուրքիայի պարտությունը համաշխարհային պատերազմում որոշ հույսեր ներշնչեց արևմտահայության բեկորներին, ինչպես և Ազգային պատվիրակությանը։ Դրանք, սակայն, սին հույսեր էին միայն։ Այնուհետև Ազգային պատվիրակությունը մեկ-երկու տարի զբաղվեց հայ գաղթականների տեղավորման դժվարին հարցով, չհասնելով որևէ շոշափելի արդյունքի, ապա 1925-ի հունվարին, Գ. Նորատունկյանի նախագահության օրոք, հանձնելով այդ գործը Փարիզում ստեղծված «Հայ գաղթականաց կենտրոնական հանձնաժողովին», լուծարքի ենթարկեց իրեն[71]։ 1917 թ., Փարիզում փորձ կատարվեց ստեղծելու մի նոր կազմակերպություն ևս «Ազգային միություն» անունով, որ պետք է միավորեր գաղութի հասարակական, ազգային, կուսակցական կազմակերպությունների ուժերը՝ «Հայ ազգային դատը վարելու» համար, սակայն այն կենսունակ չեղավ։

Մեծ տերությունների խոստումները մնացին թղթի վրա և հայ ժողովուրդն իր փրկության միակ հույսը կապեց Ռուսաստանի հետ, այս անգամ արդեն հաղթանակած Սովետների երկրի հետ։

6. ԱՆԳԼԻԱ

Հայերը Բրիտանական կղզիները մուտք են գործել շատ վաղուց[72]։ Սակայն հայկական գաղթավայրն Անգլիայում սկսել է կազմավորվել 1830-ական թվականներից, երբ Պոլսի, Զմյուռնիայի և այլ վայրերի հայ վաճառականները բնակություն հաստատեցին Լոնդոնում, Լիվերպուլում և, հատկապես՝ Մանչեստրում։

Առաջին վաճառականներին հետևում են ուրիշները, և հետզհետե ստվարացող գաղութն արդեն սկսում է կազմակերպել իր ներքին կյանքը. Մանչեստրում հիմնվում է «Արարատյան» առևտրական ընկերությունը (կարճատև գոյությամբ), 1863 թ. բացվում է ս. Խաչ մատուռը, 1870 թ. ավարտվում է Մանչեստրի ս. Երրորդություն եկեղեցու կառուցումը, 1866 թ. Մանչեստրում ընտրվում է հոգաբարձություն, որը ղեկավարվում է համայնքի կողմից ընդունված և ինքնավարության որոշ սկզբունքներով գործող կանոնադրությամբ[73]։

XIX դ. կեսերին գաղթօջախը բաղկացած էր ընդամենը մի քանի տասնյակ հայերից, որոնցից ավելի քան երեսունը ապրում էր Մանչեստրում և Լիվերպուլում[74]։ Սակայն հետագա տասնամյակներում, հատկապես սուլթանական

---

71 Տե՛ս «Ազգային պատվիրակության նախագահի 1925-ի հունվարի նամակը Ֆրանսիայի արտաքին գործոց նախարարին» («Արարատ», 1937, № 10)։

72 Տե՛ս Հակոբ Գրիգորենց. Գովք Բրիտանիո (1675), Վենետիկ, 1875։ «Հովսեփ Էմին, Կյանքն ու արկածները» (1792), Բեյրութ, 1958։

73 Տե՛ս Մ. Սերովբյան, Մանչեստրի հայ գաղութը, Բոստոն, 1911, էջ 186—195։

74 Տե՛ս Հ. Մրմրյան, Թուրքահայոց հին վաճառականությունը և վաճառականք, Պոլիս, 1909, էջ 47—50։

Թուրքիայում պարբերաբար կրկնվող կոտորածների պատճառով, զգալի թվով հայեր ապաստանեցին Անգլիայում։ Արդեն 1914 թ. Լոնդոնում հաշվվում էր մշտական բնակություն հաստատած 400 հայ, որոնք եկել էին Թուրքիայից, Պարսկաստանից, Ճավայից և Հնդկաստանից[75]։ Մանչեստրի հայությունը 1910-ին հասել էր 500—550 մարդու[76]։ Հայեր կային նաև Լիվերպուլում ու Լանկաշիրում։

Գաղութի հայությունը հիմնականում բաղկացած էր վաճառականներից, մտավորականներից, ուսանողներից և արհեստավորներից։

Մանչեստրում, Լիվերպուլում և Լոնդոնում հայ վաճառականներն ունեին իրենց վաճառատները, որոնց միջոցով մի կողմից կազմակերպվում էր անգլիական ապրանքների վաճառքը Թուրքիայի շուկաներում և, մյուս կողմից՝ Անգլիայի շուկա էր հասցվում բուրքական, պարսկական, կովկասյան տնայնագործական ու բնամթերային արտադրանքը։ Միայն Մանչեստրում կար հայկական 75—80 վաճառատուն, որոնցից տասը Թուրքիայում ունեին իրենց ճյուղերը, իսկ մյուսները սոսկ առևտրական հանձնակատարներ էին կամ գրազվում էին տեղական առևտրով։ Մանչեստրում ու Լոնդոնում հայտնի էին Գասիամաճյան, Կարագյոզյան եղբայրների, Մարտիրոս Թոքատյանի, Սարգիս Գույումճյանի, Գառնիկ Ֆնտզյանի, Պողոս Սինանյանի, Կյուլպենկյանի և այլոց առևտրական տները։

Գաղթօջախի հայ մտավորականությունը հիմնականում սուլթանական հալածանքներից փախած գրողներ և հասարակական գործիչներ էին (Մինաս Չերազ, Արփիար Արփիարյան, Լևոն Բաշալյան, Երվանդ Օտյան, Սուրեն Պարթևյան և ուրիշներ)։ Նրանք, թեև ժամանակավոր բնակություն էին հաստատել Անգլիայում, բայց գործուն մասնակցություն էին բերում գաղութի կյանքին։ Հայ մտավորականները հանդես էին գալիս անգլիական մշակութային, գիտական կյանքի տարբեր ասպարիզներում և հայության հետ առնչվող բազմազան գործունեությամբ, մասնավորապես Հայկական հարցի արծարծմամբ ու պաշտպանությամբ։ Տարեցտարի նշանակալից գործառ նաև ուսանող երիտասարդության դերը գաղթօջախի կյանքում։

Անգլիայի հայկական համայնքում զգալի տեղ ունեին արհեստավորներն ու բանվորները, որոնց թիվն ավելանում էր սուլթանական կոտորածներից փախչող նորանոր գաղթականների հաշվին։ Նոր միջավայրում նրանք կա՛մ շարունակում էին իրենց արհեստը՝ կոշկակարությունը, դերձակությունը, կա՛մ դառնում էին մանրավաճառ առևտրականներ, սպասարկող ծառայողներ, աշխատում էին նաև գործարաններում ու գյուղատնտեսության մեջ[77]։ Ապրուստի հոգսը տանում էին նաև հայ կանայք, որոնց ձեռագործները մեծ հարգ ունեին անգլիացիների մոտ։

Մանչեստրի համայնքի ներքին կյանքը կազմակերպվում էր իր ընդունած կանոնադրության պահանջներով, իսկ Լոնդոնում ազգային ընդհանրական կյանքին սատարում էին հասարակական ընկերություններ։ Գաղթօջախում

---

75 „Ararat". London, *1914, № 8, p. 264.* (Արամ Բաֆֆու հարցազրույցը «Իվինեգ Նյուզ» թղթակցի հետ) «Ararat», *1913, № 2, p. 39—40* (Ն. Հակոբյանի հարցազրույցը «Դեյլի աթըֆ» թղթակցի հետ)։

76 *Տե՛ս* «Մանչեստրի հայ գաղութը», էջ *253.*

77 *Տե՛ս* Ե. Օտյան, *Տասներիս տարի Պոլսեն դուրս, Կ. Պոլիս, 1922, էջ 303։*

գործել են տարբեր նպատակներով կազմակերպված բազմաթիվ ընկերություններ, միություններ ու հանձնախմբեր։

Այդպիսի հանձնախմբերից էր 1876-ին ստեղծված Սովելոց հանձնաժողովը Մանչեստրում՝ Լոնդոնի իր մասնաճյուղով։ 1880-ին, Լեդի Ստրանգֆորդի հովանավորությամբ նույնպիսի հանձնաժողով ստեղծվեց Լոնդոնում՝ Մանչեստրի իր հանձնախմբով։ 1890-ական թվականների ջարդերից փախչողներին օգնելու համար կազմակերպված Գաղթականաց հանձնաժողովի և նույն ժամանակ ստեղծված Որբախնամի նպատակն էր օժանդակել Կիպրոսի, Զմյուռնիայի և Այնթապի որբանոցներին։

1876 թ. Լոնդոնում գործող հայկական կոմիտեի նախագահն էր Սեթ Արգարը (կարճ ժամանակով նախագահ եղավ լորդ Դերբին), որին գործակցում էր Գարեգին Փափազյանը։ Կոմիտեի նպատակն էր վերարծարծվող Արևելյան հարցի առիթով դրական լուծում ապահովել Հայկական հարցի համար։ 1878 թ. Մանչեստրում, Հովհ. Անդրեասյանի ջանքերով, կազմակերպվեց «Հայաստանի շահերը պաշտպանող ընկերությունը», որի գոյությունը, սակայն, կարճատև եղավ։

Ընդառաջելով Մ. Փորթուգալյանի՝ Եվրոպայի հայկական գաղութների համաեվրոպական հանձնախումբ ստեղծելու նախաձեռնությանը, որի գործադիր մարմնի կենտրոնը լինելու էր Լոնդոնում, պրոֆ. Կ. Հակոբյանը 1885 թ. Լոնդոնում կազմակերպեց մի ընկերություն՝ «Հայրենասիրաց ընկերություն հայոց Եվրոպա» անունով, որի նպատակն էր «շարունակ հուզել Հայկական խնդիրը Եվրոպիո առաջնակարգ լրագրաց միջոցավ, տալով ճիշտ տեղեկություններ Հայաստանի վիճակին»[78]։

Կ. Հակոբյանը գործուն մասնակցություն ունեցավ նաև «Լոնդոնի հայ գործավորաց և ուսանողների միության» (1898 թ.) կազմակերպմանը։ Միությունը համախմբում էր Լոնդոնի հայությանը, ուներ իր հավաքատեղին և ծրագրված կանոնավոր գործունեությունը[79]։ Հետագայում, 1913 թ., միությունը վերակառուցվելով կոչվեց «Լոնդոնի հայոց միացյալ ընկերություն», որի նպատակն էր «ուշադրությունը կենտրոնացնել այն բազմաթիվ հարցերի վրա՝ և՛ սոցիալական, և՛ ազգային, որոնք վերաբերում են Հայաստանին և հայերին»[80]։ Ընկերությունն ուներ կազմակերպական իր մարմիններն ու հանձնախմբերը՝ սոցիալական և քաղաքական խնդիրների, վարչության ու դրամարանի, բարեգործական ու կրթական, ֆինանսական, եկեղեցական և հրատարակչական։ Ընկերությունը կազմակերպում էր դասախոսություններ ու երեկույթներ, օգնում էր հայ որբերի պահպանության ու կրթության գործին (հիմնել էր երեք տարրական դպրոց Արևմտյան Հայաստանում)։ Ընկերությանը կից գործում էր նաև «Լոնդոնի հայ կանանց միությունը», որը, բացի հրապարակային միջոցառումներից, դրամով ու հագուստեղենով օգնում էր հայ որբերին։ Ընկերության ջանքերով այլ գաղութներ ևս, հատկապես Ճավայի հայկական գաղութը, նյութական նպաստներ էր տալիս հայկական ֆոնդի համար։

Այդպիսի ֆոնդերը մի քանիսն էին. ա) Լոնդոնի քաղաքապետարանին կից

78 Ա. Ալպոյաճյան. Մինաս Չերազ, Կահիրե, 1927, էջ 249—250։

79 Տե՛ս Ե. Օտյան, Տասներկու տարի Պոլսեն դուրս, էջ 194։ Մ. Նաճարյանց. Րաֆֆու և իր ընտանիքի կյանքից, «Գարուն», Երևան, 1970, № 5, էջ 80—81։

80 «Ararat», Լոնդոն, 1913—1920 (ընկերության մասին հաղորդագրությունները)։

Հայ գաղթականների ֆոնդ. բ) Լոնդոնի Հայոց միացյալ ընկերության Հայ գաղթականներին օժանդակող ֆոնդ և գ) Հայկական կարմիր խաչի և գաղթականների ֆոնդ, որը լիովին անօրինում էին հայասեր անգլիացիները։

Հայկական դատի պաշտպանության գործին նշանակալի մասնակցություն են ունեցել անգլիական հասարակության որոշ ներկայացուցիչներ։ Նրանց ջանքերով 1878 թ. ստեղծվեց «Անգլո-Հայկական կոմիտեն», որի կազմում կային նաև պառլամենտի անդամներ, որոնք համայնքների պալատում կամ արտաքին գործերի մինիստրության առաջ արծարծում էին Հայկական հարցը և նույնիսկ կառավարությանը մոտ հարյուր հոգու ստորագրությամբ հուշագիր ներկայացրին՝ «Հայաստանում ռեֆորմներ անցկացնելու վերաբերյալ»[81]։

Անգլիացիներից էր կազմված նաև «Հայաստանի բարեկամներ» ընկերությունը (1897-ին), որը հատկապես գրաղվում էր հայ որբերին ու այրիներին նպաստներ կազմակերպելով, նրանց կյանքն ապահովելու բարեգործական ձեռնարկումներով։

Գաղթօջախի ներքին կյանքի հետ անմիջականորեն առնչվող կազմակերպություններից էին «Հառաջադիմական միությունը» (1909 թ.) և «Հայ երիտասարդաց ակումբը» (1914 թ.) Մանչեստրում։ Վերջինս ազգային բեմականով զեկուցումներ ու բանավեճեր էր անցկացնում, ուներ և իր ֆուտբոլի թիմը։ Լոնդոնի «Հայկական թատերական նոր ընկերությունը» (1914 թ.) հայ սիրող դերասանների ուժերով բեմադրում էր հայկական թատերգություններ (Ն. Կյուլխանյանի «Ծայթքումը» և այլն)։

Ընդհանրապես մշակութային կյանքն իր բազմազանության մեջ խարսխվում էր Հայկական հարցի շահագրգռությունների վրա։ Ե՛վ մամուլի, և՛ հասարակական ու մշակութային գործիչների հիմնական ուշադրությունը բևեռվել էր դրան։

Գաղթօջախում առաջին պարբերականը հրատարակվել է Մանչեստրում («Երկրագունդ», 1863—1864), մի խումբ հայ վաճառականների նախաձեռնությամբ։ Խմբագիրն էր Կարապետ Շահնազարյանը, որ արծարծել է տնտեսական ու քաղաքական խնդիրներ[82]։

Հետագայում Լոնդոնում և Մանչեստրում լույս տեսան մեկ տասնյակից ավելի պարբերականներ՝ հայերեն, անգլերեն, ֆրանսերեն և երկլեզվյան։ Դրանց մի մասը կուսակցական հրատարակություն էր (հնչակյանների, որոնց զեկավարության կենտրոններից մեկը, ինչպես և «վերակազմյալ հնչակյան» ֆրակցիան, գտնվում էր Լոնդոնում)։ «Համայնք» երկամսյա հանդեսը (1894) և «Հնչակ» ամսագիրը (որ լույս է ընծայվել տարբեր վայրերում, իսկ Լոնդոնում՝ 1894 և 1901—1903 թթ.) ունեին հասարակական-քաղաքական բովանդակություն, «Ակտակ» ամսաթերթը (1894—1897)՝ երգիծական, «Գաղափար» հանդեսը (1894)՝ տեսական-քաղաքական, իսկ «Մարտ» ամսաթերթը (1897—1901) և «Նոր կյանք» հանդեսը (1898—1902), ազգային ու քաղաքական խնդիրների արծարծման հետ, մեծ տեղ են հատկացրել գեղարվեստական գրականությանը (խմբագիրներն էին Լ. Բաշալյանն ու Ա. Արփիարյանը, որոնց մի որոշ

---

81 *Տե՛ս «Ararat», Լոնդոն, 1913, № 3, էջ 81—83։*

82 *Տե՛ս Ա. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 2, Երեվան, 1960, էջ 322—387։*

ժամանակ ընկերակցել է նաև Ե. Օտյանը)[83]։ Նույնպիսի ազգային և գրական բովանդակություն ուներ նաև «Վաղվան ձայները» (1898), որը լույս է տեսնել Մանչեստրում՝ Սուրեն Պարթևյանի խմբագրությամբ։

Անգլիահայ մամուլի մի քանի այլ օրգաններ կրոնական բովանդակություն ունեին։ Մանչեստրում էր հրատարակվում «Եկեղեցի Հայաստանյաց» հանդեսը (1900), որը հետագայում վերանվանվեց «Հայ եկեղեցի» (1901), իսկ «Լապտեր» հանդեսը (1907) լույս էր տեսնում Լոնդոնում։ «Պատանի» (Լոնդոն, 1902—1907) մանկապատանեկան հանդեսը հրատարակվում էր Հայկական որբանոցի սպարանում։ Ամսագիրը հետագայում դարձավ պատկերազարդ։

Հայ կյանքն ու նրա հոգսերը Եվրոպային ծանոթացնելու նպատակով ծրնվեց օտարալեզու հայ մամուլն Անգլիայում, որի առաջնեկը «Հայաստանն» էր (Լոնդոն, 1888—1892), հայերեն ու ֆրանսերեն, խմբագրությամբ Ժան Պուրսալրի, Միհրան Սվաղլրի և Ճեմս Մայգոմի[84]։ Մ. Սվաղլրն հետագայում Լոնդոնում հրատարակեց նաև անգլերեն «Անգլո-արմինլրն գազեթը» (1893—1894)։

Բևռլինի վեհաժողովի հայկական պատվիրակության քարտուղար և թարգմանիչ Մինաս Չերազը Լոնդոնում հրատարակեց «Ալմանախ» ամսաթերթը (1898—1906), որը, բացի ֆրանսերենից, մի որոշ ժամանակ զուգահեռաբար լույս տեսավ նաև անգլերեն (ամսաթերթի հրատարակությունը շարունակվեց Փարիզում՝ 1898 թ. Չերազի այնտեղ տեղափոխվելով)։ Քաղաքական խնդիրներին զուգահեռ, որոնք առնչվում էին Արևմտյան Հայաստանում Բևռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի իրագործման հարցերին, ամսաթերթը լայն տեղ էր տալիս հայոց նորագույն պատմության, գրականության և բանահյուսության նյութերին, ընթացիկ լուրերին։ Չերազի ամսաթերթը խթան է հանդիսացել, որ ամերիկուհի Ալիս Բլեքուելը իրեն նվիրի հայ գրականությունն անգլերեն ներկայացնելու գործին[85]։

Անգլերեն է լույս տեսել «Լոնդոնի հայոց Միացյալ ընկերության» պաշտոնական հանդես «Արարատը» (1913—1920)։ Հանդեսը բացառապես անդրադառնում էր հայ ժողովրդի կյանքին ու դրա հետ առնչվող միջազգային իրադարձություններին։ Հանդեսը բազմազան նյութեր է տպել նաև անգլիահայ գաղթօջախի, ինչպես և այլ գաղթօջախների (Ֆրանսիայի, Ամերիկայի, Հնդկաստանի) ներքին կյանքի մասին, նմուշներ հայ գրականությունից և բանահյուսությունից, հայ գրականության և իրականության ուղեցույցով ստեղծվող անգլիագիր գրականություններ։

Անգլիացիների՝ «Հայաստանի բարեկամները» ընկերության «Դր Ֆրենդ օֆ Արմենիա» («Հայաստանի բարեկամը») հանդեսը (1913—1917) նյութեր էր հրատարակում բարեգործական ու միսիոներական որբանոցների, հիվանդանոցների, դպրոցների, կազմակերպվող դրամական օգնության մասին։ Հանդեսը ունկնդում էր նաև հայ այրիների ու որբերի ասեղնագործությունները, որոնք աճուրդով վաճառվում էին Լոնդոնում։

---

83 Տե՛ս Դ. Ստեփանյան, Արփիար Արփիարյան, Երևան, 1955, էջ 225—230։ Ս. Մանուկյան, Լևոն Բաշալյան, Երևան, 1965, էջ 22—23։ «Արևմտահայ գրողների նամականի», Երևան, 1965, էջ 127—148։

84 Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Մինաս Չերազ, Կահիրե, 1927, էջ 260—261։

85 „Armenia", London, 1894, № 65, 1896, № 93.

Գաղթօջախի մշակութային և հասարակական կյանքում հայտնի են դառնում այնպիսի դեմքեր, որոնց գործունեությունը չի ներփակվել սոսկ գաղութի սահմաններում (Գ. Փափազյան, որը հավաքել է Հայկական հարցի հետ առնչվող վավերաթղթեր[86], Գ. Ցնոգլյան՝ թարգմանություններ է կատարել Շեքսպիրից և այլ հեղինակներից[87], Կ. Հակոբյան, Հովհ. Անդրեասյան, Կ. Թումայան, Մ. Սվաղլյան, Սեթ Աբգար և ուրիշներ)։

Նշանակալի է Րաֆֆու ընտանիքի ծավալած գործունեությունը։ Մեծ վիպասանի մահից հետո, նրա կինը՝ Աննա Րաֆֆին և Արամ ու Արշակ որդիները հաստատվեցին Լոնդոնում։ Րաֆֆիների տունը այն հյուրընկալ հարկն էր, ուր մշտական այցելուներ էին մշակութային գործիչն ու բանվորը, ուսանողն ու գաղթականը։ Համալսարանական կրթություն ստացած Արամն ու Արշակը ռուսաց լեզու էին դասավանդում Անգլիայի համալսարաններում, միաժամանակ արդյունավետ աշխատանքներ էին տանում լոնդոնահայության համախմբման համար[88]։ Արամ Րաֆֆու խնդրանքով, լոնդոնահայության հետ հանդիպում է ունեցել ՌՍԴԲԿ հինգերորդ համագումարի (1907) պատգամավոր Ստեփան Շահումյանը, որը պատասխանել է ներկաների հուզող հարցերին, մասնավորապես՝ Արևմտյան Հայաստանի ազատագրման, հայ ժողովրդի իրավիճակի վերաբերյալ[89]։

Լոնդոնում է ապրել և ստեղծագործել գրող ու թարգմանիչ, նկարիչ ու գրականագետ Զաբել Բոյաջյանը։ Նա Թուրքիայում անգլիական փոխհյուպատոս Թովմաս Բոյաջյանի դուստրն էր, իսկ մայրը անգլուհի էր, բանաստեղծ Ռոջըրսի գերդաստանից։ Հոր մահից հետո, որ զոհ գնաց 1895 թ. կոտորածներին, մայր ու աղջիկ վերջնականորեն հաստատվեցին Լոնդոնում (1896 թ.)։ Զաբել Բոյաջյանը բազմաշնորհ արվեստագետ էր։ Հանդես է եկել ինքնուրույն ստեղծագործություններով («Եսթեր» վեպը 1901 թ., «Գիլգամեշ» դյուցազներգությունը 1924 թ. և հետազոտական բնույթի ուղեգրություններ Հունաստանի ու Իտալիայի մասին)։ Փայլել է նկարչության ասպարեզում և Անգլիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Եգիպտոսում և այլուր կազմակերպված նրա անհատական ցուցահանդեսները բարձր գնահատականի են արժանացել։ Նա բազմաթիվ թարգմանություններ է կատարել, որոնց պսակն է «Հայկական լեգենդներ և բանաստեղծություններ» ժողովածուն (1916), ուր ամփոփված է V—XX դարերի հայ գրականության ընտրանին՝ թարգմանչուհու թեմատիկ նկարազարդումներով հանդերձ։ Նա թարգմանել է Ավ. Իսահակյանի «Աբու-լալա-Մահարին» (1948), որը բազմիցս վերահրատարակվել է։ Զ. Բոյաջյանը հայ գրականության դասական արժեքներն անգլերեն ընթերցողին է ներկայացրել նաև հետաքրքիր հետազոտություններով[90]։

Անգլիացի ընթերցողին հայկական կյանքին ծանոթացրել են նաև անգլիացիները՝ Ջեյմս Բրայսը՝ բազմաթիվ գրքերի առաջաբաններով ու հոդվածներով, գրքույկներով («Հայաստանի ապագան», «Անդրկովկաս և Արարատ»), Առնոլդ Թոյնբին («Հայկական սարսափներ», 1915), Բաքստոն եղբայրները

---

86 Տե՛ս Մ. Սեռովբյան, Մանչեստրի հայ գաղութը, Բոստոն, 1911, էջ 2։

87 Տե՛ս «Շեքսպիրական», հ. 1, Երևան, 1966, էջ 277—278։

88 Տե՛ս «Գարուն», Երևան, 1970, № 5, էջ 72—82։

89 Տե՛ս Խ. Բարսեղյան, Ստեփան Շահումյան, Երևան, 1968, էջ 195։

90 Տե՛ս Տրդատ Խուրշիդյան, Զաբել Բոյաջյան, «Հայրենիքի ձայն», Երևան, 1972, № 47։

(«Ճամփորդություն և քաղաքականություն Հայաստանում»), Էմիլի Ռոբինզոնը («Ճշմարտությունը Հայաստանի մասին»), Ու. Ուիլյամը («Հայաստան. Անցյալն ու ներկան»), Լինչը («Հայաստան») և շատ ուրիշներ։

Բազմազան էին գաղթօջախի մշակութային միջոցառումները, որոնք մի կողմից նպաստել են հայ հասարակության համախմբմանը և, մյուս կողմից, տեղի անգլիացիներին ծանոթացրել հայ արվեստին ու գրականությանը, հայոց պատմության նորագույն անցքերին։ Երեկոներ են կազմակերպվել Րաֆֆու մահվան 25-ամյակի[91], հայ գրերի գյուտի 1500-ամյակի և հայ տպագրության 400-ամյակի առթիվ[92], Հայկական հարցն արծարծելու ծրագրված գործողություն մշակելու համար[93] և այլն։ Տեղի էին ունենում նաև ասուլիսի երեկոներ, համերգներ, ուր հնչում էին հայկական, ինչպես և եվրոպական դասական երգն ու երաժշտությունը։

Մանչեստրի հայերն ունեին գեղատեսիլ ս. Երրորդություն եկեղեցին, հայ երիտասարդաց ակումբը, լոնդոնցիներն՝ իրենց ընկերության երկսենյականոց հավաքատեղին, բայց գաղութն իր հայկական դպրոցը չուներ։ Հայեցի դաստիարակությունը հիմնականում տարվում էր տանը, ինչպես և կանանց ու երիտասարդաց միությունների ջանքերով։ Հետզհետե մեծանում էր ձուլման վտանգը[94]։ Սակայն պարբերաբար կրկնվող գաղթականության հոսքը թարմ ուժեր էր ներարկում գաղթօջախին, որն իր ապրած տագնապների հետ գտնում էր նաև գոյատևման կռվաններ։

7. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ

Թե երբ են հայերը սկսել գաղթել Ամերիկա, հավաստի տեղեկություններ չկան։ Առաջին հայը, որի անունը 1618 թ. պաշտոնապես արձանագրվել է Ամերիկայի Վիրջինիա նահանգի գաղթականության ցուցակներում և նշվել նրա ազգային պատկանելությունը Ջոն Մարտինն է (Jon Martin the Armenian)։ Ենթադրվում է, որ Ջոն Մարտինը Ամերիկա է հրավիրվել մեծահարուստ մի ամերիկացու կողմից՝ ծխախոտագործությունը զարգացնելու նպատակով[95]։

Ամերիկա եկած հայերի մասին հաջորդ տեղեկությունը վերաբերում է պոլսահայ շերամապահներին, որոնց 1653—1654 թթ. Ամերիկա է հրավիրել Վիրջինիայի կառավարիչ Էդվարդ Դիգսը՝ տեղում շերամապահությունը զարգացնելու նպատակով[96]։ Պոլսահայ շերամապահներին հետևել և Ամերիկա են եկել շերամի փորձառու հայ մասնագետների այլ խմբեր, որոնք ակտիվ մասնակցություն են ունեցել Վիրջինիայի նահանգում շերամապահությունը հիմնավորելու և զարգացնելու գործում[97]։ Ամերիկացիները սիրով են ընդունել հայ գաղ-

---

91 Տե՛ս „Ararat", London, 1913, № 2, p. 35—38.

92 Տե՛ս նույն տեղում, № 5, p. 155—162։

93 Տե՛ս նույն տեղում, № 4, p. 123—129։

94 Տե՛ս Մ. Սեռվքյան, Մանչեստրի հայ գաղութը, էջ 252։

95 „The Record of Vergiuia Company of London", t. III, p. 86.

96 Ն. Լ. Մանկունի, Ամերիկահայ գաղութի պատմությունից (տե՛ս ՊԲՀ, 1962, № 1, էջ 95)։

97 Տե՛ս Մ. Սեռվքյան, Ամերիկահայ գաղութի ծագումը (տե՛ս «Ամերիկահայ տարեցույց», 1912, էջ 15)։

թականության առաջնեկներին։ Իր ժամանակին բանաստեղծ Ձերբերը, Վիրջինիային նվիրած իր մի բանաստեղծության մեջ, ողջունել է հայերի գալուստը Ամերիկա՝ որպես աշխատասեր և ստեղծագործող ժողովրդի[98]։

XVII—XVIII դարերում Ամերիկա ներգաղթող հայերն ազգային հավաքական համայնքներ դեռ չէին ստեղծել (նրանք բնակություն են հաստատել ցրված՝ ում գործը որտեղ հաջողվել է)։ Առաջին ամերիկահայ հասարակական գործիչը, որ փորձել է համախմբել Ամերիկայի հայ բնակչությանը և ծանոթացնել տեղացիներին հայերի հետ, եղել է Կ. Պոլսի «Արարատ Բյուզանդյան» թերթի նախկին հրատարակիչ Խաչատուր Ոսկանյանը։ Նա «Նյու-Յորք Տրիբյուն» թերթում անգլերեն բազմաթիվ հոդվածներ է հրատարակել հայ ժողովրդի պատմության, մշակույթի և գրականության մասին։ Ոսկանյանը միաժամանակ «Հայու տղա» ծածկանունով աշխատակցել է Կ. Պոլսի «Մասիս» շաբաթաթերթին։

XIX դ. 70—80-ական թվականներին որոշ ամերիկահայ մտավորականներ փորձեր են արել Ամերիկայում հիմնել հայկական քաղաք։ Այդ ուղղությամբ առանձնապես եռանդուն աշխատանք է տարել Մ. Թոփհանելյանը՝ իր ժամանակի աչքի ընկնող ամերիկահայ հրապարակախոսներից մեկը, որը բազմաթիվ հոդվածներով հանդես է եկել Կ. Պոլսում հրատարակվող «Մանզումեի» մեջ և խրախուսել հայ բնակչության գաղթը Ամերիկա։ Ամերիկահայերը դեմ և կառավարության հաստատմանն են ներկայացրել հայկական քաղաքի նախագիծը։ Քաղաքն անվանվելու էր Նոր Անի, իսկ փողոցների անունները՝ Վան, Մուշ, Կարին և այլն։ Ամերիկյան կառավարությունը, սակայն, հավանություն չի տվել այդ նախագծին և այդպես էլ Ոսկանյանի և մյուս հայ հայրենասերների նախաձեռնությունը մնացել է անկատար։

XIX դարի 60-ական թվականներին, չնայած իր փոքրաթիվ լինելուն, Ամերիկայում հայ գաղթականությունը անտարբեր չի գտնվել 1860—1865 թթ. երկրում տեղի ունեցող քաղաքացիական պատերազմին։ Հայտնի են մի շարք հայ բժիշկների և զինվորականների անուններ, որոնք ծառայել են Լինկոլնի բանակում և կռվել հարավի ստրկատերերի դեմ (բժիշկներ Սիմեոն Մինասյան, Կարապետ Գալստյան, Պարոնիկ Մաթևոսյան, դեղագործ Խաչատրյան և ուրիշներ)։ Սիմեոն Մինասյանը քաղաքացիական կռիվների շրջանում եղել է Ֆիլադելֆիայի հիվանդանոցի գլխավոր բժիշկը։ Հյուսիսային բանակում հայ զինվորականներից աչքի են ընկել Կ. Պոլսին մոտ Խաս գյուղացի Արմենակ անունով մեկը, որը հասել է զինվորական բարձր աստիճանի, գմյուռնահայ Նարինյանը, Զորա Թադևոսյանը և ուրիշներ[99]։

Քաղաքացիական պատերազմի ավարտից հետո թեև Արևելքում գործող ամերիկացի միսիոներները եռանդուն ջանքեր գործադրեցին մեծ թվով հայեր տեղափոխել Ամերիկա, սակայն առանձին հաջողություն չունեցան։ Մինչև 1870 թ. Ամերիկայում բնակություն հաստատած հայերի թիվը 300 հոգուց չէր անցնում[100]։

Հայ գաղթականության մասսայական հոսքը դեպի Ամերիկա մեծ չափերի

---

98 *Տե՛ս նույն տեղում։*

99 *Տե՛ս Ն. Լ. Մանկունի, նշված հոդվածը ՊԲՀ-ում, էջ 97։*

100 *Տե՛ս Ա. Արարատյան, Հայ գաղթականությունը Ամերիկայի մեջ (տե՛ս «Արշալույս» տարեգիրք, 1922, էջ 45)։*

է հասնում XIX դարի 70—80-ական թվականներից։ Ըստ որում, նախկին գաղթականության համեմատությամբ, նոր գաղթականությունը տարբերվում էր իր սոցիալական կազմով։ Այլ էին նաև գաղթի պատճառները։ Եթե նախկինում Ամերիկա էին գաղթում հիմնականում ուսանողներ և առևտրականներ, ապա այժմ եկողներն արևմտահայ աշխատավորներ էին, որոնք պանդխտության էին դիմել թուրքական բռնությունների և հարստահարությունների հետևանքով։

Ամերիկայի հայ գաղթականության առաջին համախմբումը և առաջին հայ գաղթօջախի հիմնումը տեղի ունեցավ Ուսթրում, ուր մեծ թվով հայ բանվորություն էր աշխատում տեղի երկաթալարի գործարանում։ 1888 թ. այստեղ կազմակերպվեց այսպես կոչված «Կաճառ հայկականը», որի նպատակն էր հայ բանվորների շրջանում կազմակերպել դասախոսություններ հայ ժողովրդի պատմության, Հայկական հարցի և այլ խնդիրների մասին։

Ուսթրի հայկական համայնքն առաջինն էր, որ նախաձեռնեց և 1891 թ. կառուցեց հայկական եկեղեցի (ս. Փրկիչ)։ Հետագայում ուսթրաբնակ հայերին հետևել են Ամերիկայի այլ վայրերի հայկական գաղթօջախները։

XIX դարի 70-ական թվականներին գաղթօջախներ են ստեղծվում նաև Նյու Յորքում, Փրովիդենսում, Բոստոնում և Նյու Ջերսիում։ 90-ական թվականներից հայերը վերջնականապես հաստատվում են Կալիֆորնիայի նահանգում։ Այստեղ նրանք գալիս էին սկզբում իբրև հողի մշակներ, իսկ հետագայում, ընդարձակելով իրենց հողամասերը, նրանց մի մասը դառնում է խոշոր հողատերեր, ագարակատերեր։

XIX դարի 80—90-ական թվականներին հայերի թիվը Միացյալ Նահանգներում այնքան է մեծանում, որ անհրաժեշտություն է զգացվում հոգևոր թեմ ստեղծել։ Ամերիկահայ համայնքների ներկայացուցիչները պաշտոնապես դիմում են Կ. Պոլսի պատրիարքությանը, որն ընդառաջում է նրանց խնդրանքին և 1889 թ. հոգևոր առաջնորդ ուղարկում Հովսեփ վարդապետ Սարաջյանին։

Հայ բնակչության զանգվածային գաղթն Ամերիկա սկսվում է փաստորեն 1894—1896 թթ., երբ Թուրքիայում սկսվում են հայկական ջարդերը։ Հայ գաղթականության հոսանքն ավելի է մեծանում 1908 թ.՝ սահմանադրության հռչակումից հետո, երբ վերացվում է գաղթի առջև սուլթանի արգելքները։ Մեծ թվով հայեր են գալիս Ամերիկա հատկապես 1909 թ. Ադանայի ջարդից հետո։ Կալիֆորնիայում հրատարակվող «Արշալույս» տարեգրքում հրապարակված է 1899—1914 թթ. Ամերիկա գաղթած հայ բնակչության մասին հետևյալ տվյալները. 1899-ին՝ 674, 1901-ին՝ 1855, 1906-ին՝ 1895, 1907-ին՝ 2644, 1908-ին՝ 3299, 1910-ին՝ 5508, 1913-ին՝ 9353, 1914-ին՝ 7785 մարդ[101]։

Ամերիկահայության թիվն ըստ 1910 թ. փետրվարի 22-ի ամերիկահայ երեսփոխանական ժողովիատենագրության տվյալների ունեցել է հետևյալ պատկերը։ 1. Կալիֆորնիայում՝ 2000 մարդ, գլխավորապես խարբերդցիներ և բիթլիսցիներ, 2. Ուոտ-Հոպըրընում՝ 1000, գլխավորապես տիգրանակերտցիներ, 3. Նյու Յորքում, իր շրջանով՝ 5000, խառը՝ տարբեր վայրերից, 4. Ֆիլադելֆիայում, շրջակայքի հետ՝ 650, գլխավորապես արաբկիրցիներ և մալաթիացիներ, 5. Թրոյ-Նյու-Յորքում՝ 600, խառը, 6. Չիկագոյում՝ շրջակայքով՝ 1000, խառը՝ տարբեր վայրերից, 7. Կանադայում՝ 600, գլխավորապես քղեցիներ, 8. Սեն-Լուիզայում՝ շրջակայքով՝ 800, գլխավորապես քղեցիներ, 9. Դետրոյ-

---

101 Տե՛ս «Արշալույս» տարեգիրք, 1922, էջ 46։

դում՝ 400, խառը՝ տարբեր վայրերից, 10. Լորենսում՝ շրջակայքով՝ 900, գլխավորապես չմշկածագցիներ և խարբերդցիներ, 11. Փրովինդենսում՝ 2500, գլխավորապես խարբերդցիներ, բալուցիներ և մշեցիներ, 12. Ուսթրում՝ շրջակայքով՝ 2500, գլխավորապես խարբերդցիներ և մալաթիացիներ, 13. Բոստոնում շրջակայքով՝ 2500, գլխավորապես խարբերդցիներ[102]։ Ըստ այս տվյալների, 1910 թ. Ամերիկայում ապրել են ավելի քան 20.450 հայ։

Մինչև 1902 թ. Ամերիկայի թեմը ենթարկվել է Կ. Պոլսի պատրիարքությանը, ապա անցել է էջմիածնի իրավասությանը։ Ամերիկահայ առաջնորդարանի կենտրոնն էր Ուսթր քաղաքը, որն ուներ հայ ստվար բնակչություն և հարմարավետ շենք՝ առաջնորդարանի համար։

Ամերիկա հայեր գաղթեցին առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։ Խորեն արքեպ. Մուրադբեգյանը 1919 թ. էջմիածնին ներկայացրած իր պաշտոնական զեկուցագրում հայտնում էր, որ Ամերիկայում կենտրոնացել է 120.000-ի հասնող հայ բնակչություն։ Իսկ 1921 թ. Գ. Ծովյանի՝ Սովետական Հայաստանի կառավարությանը ներկայացրած զեկուցագրում ամերիկահայ բնակչության թիվը հաշվվում էր 130.000[103]։

Համաձայն Ծովյանի զեկուցագրի, դրամատերերը բնակչության միայն կես տոկոսն են կազմել։ Նրանք արևելյան գորգերի առևտրականներ էին, գործարանատերեր և խոշոր ագարակատերեր։ Ամերիկահայ բնակչության չորս կամ չորս ու կես տոկոսը մանր առևտրականներ էին, արհեստավորներ և փոքր ագարակատերեր, իսկ մնացած 95%-ը՝ աշխատավորներ։ Եթե սրանցից, գրում էր Ծովյանը, երեքից հինգ տոկոսը հաշվենք ժամանակի ընթացքում սեփական տուն կամ այլ կալվածք ունեցող, ապա մյուս 90%-ը մնում են պարզ պրոլետարներ՝ գործարանատիրոջ կամ ագարակատիրոջ քմահաճույքից կախված բանվորներ։

Ամերիկա եկած հայ աշխատավորն անծանոթ է եղել տեղական լեզվին, սովորույթներին, վարք ու բարքին, գործարանային կյանքին և մեքենաներին։ Նյութական միջոցներից զուրկ, որևէ գործ ձեռնարկելու անընդունակ, նա հարկադրված էր դռնեդուռ ընկնել՝ աշխատանք գտնելու, թեկուզ ամենացածր աշխատավարձով։ Նյութական միջոցների պակասությունն ստիպել է հայ բանվորներից շատերին բնակվելու մի տան մեջ, հաճախ՝ տաս-քսան հոգով մի բնակարանում, դիմելով ծայրահեղ խնայողության։ Ամերիկայում հայ գաղթականներին հաջողվել է աշխատանքի անցնել մեծ մասամբ այն գործարաններում ու ֆաբրիկաներում, ուր աշխատանքը ավելի ծանր է եղել, գլխավորապես՝ երկաթի ձուլարաններում, հանքերում և այլն[104]։

Ամերիկայի հայ բանվորության վիճակի մասին պատկերացում է տալիս Ամերիկա գաղթած արևելահայ մի խումբ բանվորների էջմիածին ուղարկված նամակը՝ գրված 1914 թ. փետրվարի 12-ին. «Վերջին տասը տարվա ընթացքում,— գրում են նրանք,— կովկասահայ գաղթականների թիվը չափազանց սկսել է աճել Կալիֆորնիայում, մանավորապես՝ Լոս-Անջելես քաղաքում և նրա շրջակայքում։ Հազարավոր վերստերով մեր հայրենի օջախից հեռու նետ-

102 Տե՛ս Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, գ. 1844, թ. 30բ—31ա։

103 Տե՛ս նույն տեղում, գ. 1942, թ. 8ա—9ա։

104 Տե՛ս Սակրատ խան Դեյրմենջյան, Հայ գործավորը Ամերիկայի մեջ, «Ամերիկահայ տարեցույց», 1912, էջ 194։

ված կովկասահայերս՝ օտար երկնքի տակ, օտար ժողովրդի մեջ մի քշվառ, անպատմելի կյանք ենք վարում... Անգործությունը, որին մատնված ենք հարյուրավոր կովկասահայերս, ամիսներով դատապարտված լինելով փողոցներում քարշ գալու, Ամերիկայի բոլոր գործարաններում տեղաշարժության և տնտեսական դրության ընդհանուր վատթարացման պատճառով մեզ արդեն քայքայում է և ծայրահեղ թշվառության մղում, և հասկանալի է, մի անհույս վիճակ ստեղծում մեր սիրելիների, մեր մայրերի, քույրերի և եղբայրների համար, որոնք այնտեղ՝ Ղարսի, Երևանի և Թիֆլիսի գյուղերում, աչքը ճանապարհին ուղղած, սպասում են, որ մենք այստեղից մի քանի կոպեկ ղրկենք իրենց ապրուստի համար»[105]:

Ամերիկա գաղթած հայ առևտրականները, զբաղվել են արևելյան ապրանքների առևտրով: Նրանք Թուրքիայից և արևելյան այլ երկրներից ապրանքներ, հատկապես գորգեր են փոխադրել Ամերիկա, իսկ ամերիկյան արդյունաբերական ապրանքները՝ Թուրքիա: Հայ առևտրականներն սկզբում երթևեկ են եղել, իսկ XIX դարի 80-ական թվականներից նրանց մեծ մասը մշտական բնակություն է հաստատել Ամերիկայում: XX դարի սկզբներից նկատվում է հայ ուսանողության զանգվածային հոսք դեպի Ամերիկայի բարձրագույն ուսումնական հաստատություններ:

Այս շրջանում Ամերիկայի հայկական գաղթօջախներում հանդես են գալիս ոչ քիչ թվով բժիշկներ, ինժեներներ, փաստաբաններ, լրագրողներ, արվեստագետներ, դասախոսներ, գիտնականներ և այլ մասնագետներ, որոնց մի մասը կապված էր հայկական գաղթօջախների հետ: Ամերիկահայ հնագույն հասարակական կազմակերպություններ[106] համարվում է «Հայկական միությունը», որը հիմնվել էր 1886 թ. Նյու Յորքում: Կանոնադրությունից երևում է, որ այն իր առջև խնդիր էր դրել «ազգային ոգին, անմոռաց պահել մայրենի լեզուն և նպաստել հայերի «դաստիարակության ծավալմանը»:

XIX դարի 90-ական թվականներին նմանօրինակ մի շարք կազմակերպություններ են ստեղծվում Ամերիկայի այլ գաղթօջախներում ևս: Հիմնվում են երիտասարդության մտավոր և ֆիզիկական զարգացմանը նպաստող կազմակերպություններ՝ «Հայոց գրադարանի միությունը» (1892 թ. Թրեզնոյում), «Արարատյան գունդը» (1890 թ. Նյու-Յորքում), «Հայոց առաջադիմական ընկերություն» (1899 թ. Ֆիլադելֆիայում), «Ամերիկյան կրթասիրաց ընկերություն» (1906 թ. Չիկագոյում) և այլն:

XX դարի սկզբներից սկսում են հանդես գալ նաև բառերական և երաժշտական խմբեր, որոնք հայկական երաժշտությամբ և հայկական կյանքից վերցրած ներկայացումներով խանդավառում են պանդխտահայությունը: Կազմակերպվում են կրթասիրաց, ուսումնասիրաց և դպրոցասիրաց կոչվող բազմաթիվ հայրենակցական միություններ, որոնց նպատակն էր օգնել ուսումնական գործին:

Կրթասիրաց միությունների մեջ առանձնապես աչքի ընկնող գործունեություն է ծավալել «Ընդհանուր կրթասիրաց ընկերությունը», որը նպատակ էր

---

105 Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, գ. 1950, թ. 51ա—51բ:

106 Ամերիկահայ հասարակական կազմակերպությունների մասին արժեքավոր է Ա. Այվազյանի «Ամերիկահայ ընկերական կազմակերպությունները» հոդվածը («Ամերիկահայ տարեցույց», 1912, էջ 168—184):

դրել նյութապես օգնել ամերիկահայ երիտասարդներին՝ բարձրագույն կրթություն ստանալու։ Կրթասիրացի ակտիվ կազմակերպություններից էր «Հառաջադիմական ընդհանուր միությունը», որի խնդիրն էր ընկերական ոգի և ողջամիտ ըմբռնումներ զարգացնել հայ երիտասարդության մեջ և ցույց տալ տնտեսական ու ընկերական փոխադարձ օգնություն։

Երիտասարդական խոշոր կազմակերպություններից էր «Ամերիկահայ ուսանողական միությունը», որը նպատակադրվել էր միավորել Ամերիկայի համալսարաններում և կոլեջներում սովորող ուսանողությանը և հայ մտավորականներին։ Այն կազմակերպվել էր 1910 թ.[107]։

Կարևոր դեր են կատարել նաև բարեգործական միությունները։ Սկզբնական շրջանում դրանց հիմնական խնդիրն էր առաջին հերթին օգնել նորեկ հայ պանդուխտներին գտնելու աշխատանք, բնակարան, աղետի դեպքում օգնություն ցույց տալ և այլն։ Ամերիկահայության մեջ կազմակերպվում են «Հայ բարեգործական ընդհանուր միության» մասնաճյուղեր, որոնց թիվը 1909 թ. հասնում է 20-ի։ 1940 թ. «Հայ բարեգործական ընդհանուր միության» վարչությունը հաստատվում է Նյու Յորքում։ Ամերիկայի գաղթօջախներում կազմակերպվել են նաև հայ կանանց, Կարմիր խաչի և այլ միություններ ու կազմակերպություններ։ Չիկագոյի և Նյու Յորքի Կարմիր խաչի միությունների 1910 թ. դեկտեմբերի 24-ին Էջմիածնին ուղարկած գրությունից երևում է, որ նրանք նույնիսկ դրամ են հավաքել և ուղարկել Անդրկովկաս՝ «Հօգուտ հայ քաղաքական բանտարկյալների»[108]։

Ամերիկահայ գաղթավայրում առաջին քաղաքական կուսակցությունը եղել է հնչակյանը, որի մասնաճյուղը կազմակերպվել է Ուսթրում՝ 1890 թ.։ Վերակազմյալ հնչակյանները 1898 թ. իրենց մասնաճյուղերն են ստեղծում և ԱՄՆ-ում[109]։ 1896 թ. Ամերիկայի հայկական գաղթավայրում սկսում է գործել նաև դաշնակցական կուսակցությունը։

Ամերիկայի հայ բանվորությունն իր առաջին կազմակերպությունն է ստեղծել 1906 թ. «ԱՄՆ-ի սոցիալիստական հայ կազմակերպություն» անունով՝ հարելով ԱՄՆ-ի սոցիալիստական կուսակցության ձախ թևին։ Հայ մարքսիստների խմբի նախաձեռնությամբ կազմակերպվում է ԱՄՆ-ի բանվորական կուսակցության հայկական հատվածը, որը 1916 թ. հրատարակում է «Գործավոր» թերթը։ 1921 թ. ամռանից հայ կոմունիստները հանդես են գալիս «Հայ բանվորական միություն» անվան տակ։ 1922 թ. որոշ ընդհատումով, հրատարակվում է «Բանվոր» թերթը։

Ամերիկահայ գաղթավայրը մեծ նվիրումով ու զոհաբերությամբ հանդես եկավ առաջին համաշխարհային պատերազմի դաժան տարիներին։ Ամերիկահայության մեծ մասը շատ ժամանակ չէր, որ հեռացել էր իր ծննդավայրից, շատերը թողել էին իրենց ընտանիքն ու հարազատներին և նրանց խորապես հուզում էին այն իրադարձությունները, որոնք տեղի էին ունենում հայրենի երկրում։ 1914 թ. նոյեմբերի 12-ին տարբեր քաղաքական կուսակցություններ համաձայնության եկան և ստեղծեցին «Միջկուսակցական հանձնա-

107 Տե՛ս Հայկական ՍՍՀ, ԿՊՊԱ, ֆ. 57, գ. 1889, թ. 1ա։

108 Գ. Ճիզմեճյան, Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցության, Ֆրեզնո, 1930, էջ 25։

109 Տե՛ս Հայաստանի ԿՊՊԱ, ֆ. 57, գ. 1228, էջ 1ա—3ա։

խումբ» անունով մի մարմին։ Հետագայում անհրաժեշտ համարվեց վերակազմել այդ հանձնախումբը, որը վերանվանվեց «Ազգային պաշտպանության Ամերիկայի հանձնախումբ»։ Հանձնախումբը կարողացավ հանգանակել 160 հազար դոլլար դրամ, որը օգտագործվեց առաջադրված նպատակով։ 1915 թ. սեպտեմբերին Եգիպտոսում կազմակերպվում է «Ազգային շահերի պաշտպանության կոմիտե», որը շրջաբերականներ է հղում բոլոր հայկական գաղթավայրերին և առաջարկում համախմբվել կոմիտեի շուրջը՝ համագործակցելու հօգուտ «Հայ ժողովրդի կենսական շահերի»։ Ամերիկահայությունն ընդառաջում է այդ կոչին և կազմակերպում «Ազգային շահերի պաշտպանության միությունը»։ Նրա մեջ մտնում են բոլոր հոսանքների ներկայացուցիչները, բացառությամբ դաշնակցականների։

1915—1916 թթ. հայերի նկատմամբ Թուրքիայում տեղի ունեցող վայրագությունների լուրերն ամերիկյան առաջադեմ հասարակայնության շրջանում բողոքի շարժում են առաջացնում, և կազմակերպվում է հանգանակություն՝ հօգուտ տուժածների։ 1916 թ. հոկտեմբերի 21—22-ը հայտարարվում է «Հայոց օր» և կատարվում հանգանակություն։ Հավաքվում է ավելի քան երեսուն միլիոն դոլլար։

Ամերիկահայերի շրջանում լայն արձագանք գտավ «Արևելյան լեգեոնի» համար հայ կամավորներ հավաքագրելու գործը։ 1917 թ. ապրիլի 2-ին ԱՄՆ-ում ստեղծվում է «Հայ ազգային միությունը»։ «Միությունն» առաջին հերթին հրապարակում է կոչ՝ կազմելու կամավորական խմբեր։ Ամերիկահայության մեջ մեծ ոգևորություն է առաջացնում մասնավորապես 800 սվետիացիների կոչը։ Կարճ ժամանակում ցուցակագրվում են 15 հազար հոգի։ Մեկնում են առաջին խմբերը, սակայն շուտով ֆրանսիական կառավարությունը սահմանափակում է Ամերիկայից հայ կամավորների ընդունումը, որի պատճառով տեղ են հասնում միայն 1172 հոգի։ Այս կամավորները մտնում են «Արևելյան լեգեոնի» մեջ և քաջաբար կռվում Արարայի նշանավոր ճակատամարտում։

«Ազգային շահերի պաշտպանության միությունը» հայ գաղթականությանն օգնելու և դիվանագիտական հարցերով զբաղվող կազմակերպությունների համար նյութական միջոցներ հայթայթելու նպատակով 1918 թ. կազմակերպում է հանգանակություն՝ ամերիկահայ համայնքներում։ Հավաքվում է 705 հազ. դոլլար, որը հատկացվում է կամավորական շարժմանը՝ Պաղեստինի, Բաղդադի, Կովկասի և Կ. Պոլսի գաղթականությանը, որոշ գումար դրվում է Փարիզում գործող ազգային պատվիրակության տրամադրության տակ և փոքրիկ մի գումար թողնվում տեղում՝ Ամերիկայում պրոպագանդիստական աշխատանքի վրա ծախսելու համար։

1916—1918 թթ. ամերիկահայ շրջանները մեծ աշխատանք էին տանում Թուրքիայում կոտորածների մասին ստացված լուրերն ամերիկահայ լայն շրջաններին ներկայացնելու և նրանց հայ ժողովրդի պատմության ու մշակույթի հետ ծանոթացնելու ուղղությամբ։ Զգալի դեր է կատարում նաև անգլերեն լույս տեսնող ազգային միության պաշտոնական օրգան «The Armenian Herald» ամսագիրը (Բոստոն, 1917—1919, խմբ. Միհրան Սվազլը), որը տպագրվում է հազարավոր օրինակներով և տարածվում Ամերիկայում։ Այս գործում մեծ էր Արշակ Մահտեսյանի խմբագրությամբ լույս տեսնող «The

new Armenia" պարբերականի դերը։ Ազգային կոմիտեն պաշտոնապես ճանաչվել է ամերիկյան կառավարության կողմից։

1919 թ. Ամերիկա է ժամանում զորավար Անդրանիկը՝ նպատակ ունենալով կազմակերպել համաժողովրդական ընդհանուր հանգանակություն՝ հօգուտ բազմահազար հայ գաղթականության և որբերի։ Ամերիկահայերն ընդառաջում են Անդրանիկին և աջակցություն ցույց տալիս։ Երեք-չորս ամսվա ընթացքում հավաքվում է 700 հազար դոլար։ Կենտրոնական հանգանակիչ մարմինը դրամի 40%-ը ուղարկում է Հայաստանի հայ գաղթականությանը և որբանոցներին, 30%-ը կ. Պոլիս՝ հանձնելու խնամատարության մարմնին, 20%-ը՝ հայ գաղթականության կարիքները հոգալու, իսկ 10%-ը հատկացվում է «Հայ բարեգործական ընդհանուր միությանը»։

Այդ ծանր օրերին բավական ակտիվ գործունեություն է ծավալում նաև «Հայ բարեգործական ընդհանուր միությունը», որն Ամերիկայում ուներ 90 մասնաճյուղ՝ 8000 անդամով։

1917 թ. Ամերիկայում ստեղծվում է երկու հայրենանպաստ կազմակերպություն՝ «Հայերի ազատագրության ամերիկյան կոմիտե» («American Committee for the independence of Armenia") և «Հայ-ամերիկյան միություն» „Armenian-American society"։ Այդ կազմակերպություններին մասնակցել կամ աջակցել են ամերիկացի այբի ընկնող պետական և հասարակական գործիչներ, գրողներ, արվեստի աշխատողներ։ «Հայերի ազատագրության կոմիտեն» կազմակերպել է մամուլի հատուկ բյուրո, որը հայկական կոտորածների մասին ստացված բոլոր տեղեկությունները հաղորդել է կարևոր քերթերին և ամսագրերին։ Նրա նախաձեռնությամբ հրատարակվել են Հայկական հարցին նվիրված 21 գրքույկ։ Կոմիտեն կատարել է հայանպաստ այլ աշխատանքներ ևս[110]։

Գաղթավայրի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում խոշոր դեր է ունեցել ամերիկահայ մամուլը։ Ամերիկայում հրատարակված առաջին հայկական պարբերականը «Արեգակ» ամսաթերթն է, որը լույս է տեսել Զերզի Սիթիում, 1888 թ. Հ. Էկինյանի խմբագրությամբ։ Քերթը հետագայում վերանվանվել է «Սուրհանդակ», ապա՝ «Ազատություն»։ Հաջորդ հայկական պարբերականը «Արարատն» էր (1891—1902)։

1891—1898 թթ. Նյու Յորքում լույս է տեսել «Հայք» պարբերականը՝ բժիշկ Մ. Ս. Գաբրիելյանի խմբագրությամբ։ 1899 թ. Նյու-Յորքում լույս է տեսնում «Հայրենիք» պարբերականը՝ դաշնակցության պաշտոնական օրգանը։ Հետագայում պարբերականի խմբագրությունը տեղափոխվում է Բոստոն։ 1904 թ. լույս է տեսնում «Armenia» անգլերեն ամսագիրը՝ նպատակ ունենալով ամերիկացիներին ծանոթացնել հայ հին և նոր գրականության հետ։ Ամսագրի հրատարակության գործում եռանդուն գործունեություն է ցուցաբերել Ա. Մահտեսյանը։ 1903 թ. Բոստոն քաղաքում սկսում է լույս տեսնել հնչակյան կուսակցության «Երիտասարդ Հայաստան» քերթը, որ շարունակվում է մինչև այժմ։ ԱՄՆ-ում լույս են տեսել նաև մի շարք այլ հայկական պարբերականներ։

---

110 Տե՛ս Հայկական ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 57, գ. 837, էջ 8ա—8բ։

Ամերիկահայ դպրոցական կյանքը մշտապես գտնվել է անմխիթար վիճակում։ Ամերիկահայ երեխաները հիմնականում սովորում են տեղական դպրոցներում՝ անգլերեն լեզվով։ Երիտասարդներից շատերն իրենց մասնագիտական կրթությունն են ստանում Ամերիկայի կոլեջներում և համալսարաններում։ Հայ գիտնականները և դասախոսները Ամերիկայի բարձրագույն ուսումնական հաստատություններում և գիտահետազոտական ինստիտուտներում զգալի թիվ են կազմում։



ԱՍԻԱՅԻ ԵՎ ԱՖՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ

1. ԻՐԱՆ

XIX դարի վերջին և XX դարի սկզբին Իրանը շարունակում էր մնալ որպես ֆեոդալական միապետություն, որտեղ հիմնական արտադրամիջոցը՝ հողը շահի, խանների, հոգևորականության և առևտրականների սեփականությունն էր։ Սակայն այդ շրջանում այլևս ամուր չէին ավանդական ֆեոդալական կարգերը։ Եվրոպական կապիտալիզմը ներխուժել էր նաև Իրան, և երկիրը փաստորեն վեր էր ածվել կիսագաղութի։ Ֆեոդալական ճնշումը և կայուն օրենքների բացակայությունը մի կողմից, օտար կապիտալի մուտքն Իրան մյուս կողմից, ավելի էին վատթարացնում աշխատավոր ժողովրդի վիճակը։

Հայերը Իրանում հիմնականում բնակվում էին Ատրպատականի, Գիլանի, Մազանդարանի և Սպահանի նահանգներում, իսկ որոշ հայ ընտանիքներ էլ հաստատվել էին երկրի տարբեր մասերում։ Նրանց թիվը 1870—1917 թթ. տատանվել է 150—200 հազարի միջև[1]։

Իրանահայերի հոգևոր հասարակական կյանքը կենտրոնացված էր երկու թեմերում՝ Ատրպատականի (Թավրիզ կենտրոնով) և Սպահանի (Նոր Ջուղա կենտրոնով)։ Ատրպատականի թեմն ընդգրկում էր երկրի հյուսիս-արևմտյան մասը՝ Իրանի ամենամեծ նահանգով, որտեղ բնակվող հայերի ճնշող մեծամասնությունը գյուղի աշխատավորներ էին։ Իսկ Սպահանի թեմն ընդգրկում էր երկրի մնացած մասի հայ համայնքները և Հնդկաստանում, Աֆղանըստանում ու Հեռավոր Արևելքում գտնվող հայկական գաղթօջախները։ Այդ պատճառով էլ Սպահանի թեմը կոչվում էր Իրանա-Հնդկական թեմ։ Սակայն Սպահանի, Նոր Ջուղայի, Հնդկաստանի հայ առևտրականների ու արհեստավորների հետզհետե թուլանալու և քրվելու հետևանքով թեմն աստիճանաբար կորցնում էր իր նախկին կարևորությունը[2]։

Ատրպատականի գրեթե բոլոր գավառները հայաբնակ էին։ Հայ գյուղացիությունը մեծ տոկոս էր կազմում Սալմաստի, Խոյի, Մակուի, Ուրմիայի, Բարանդուզի, Սուլդուզի, Սոուջբուլաղի, Մարագայի, Արդեբիլի, Ղարադաղի գավառներում։ Ատրպատականի հայաշատ քաղաքը Թավրիզն էր, ուր հայերը

---

1 Տե՛ս Նազար Տ. Գեորգյանց, Պարսկաստանի հայերը, Թեհրան, 1968։ «Հայերը Իրանում», «Բիբլեաաթ», Թեհրան, № 13202, 28 մայիսի 1970 թ. (պարսկերեն)։ Ա. Գասպարյան, Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր, Երևան, 1962։

2 Ավելի ուշ՝ 1944 թ. կազմավորվեց իրանահայության երրորդ՝ Թեհրանի թեմը։

զգալի դեր էին խաղում արհեստագործությանն, առևտրի, պետական ծառայության ու մշակույթի մարզերում։ Նրանք հիմնականում կենտրոնացած էին քաղաքի երկու թաղերում՝ Ներքին կամ Ղալա և Դրսի կամ Լիլավայի թաղերում։

Իրանի տարածքում Սպահանի բեմին ենթակա հայությունը կենտրոնացած էր գլխավորապես Նոր Ջուղայում, Սպահանում, Թեհրանում և մասամբ էլ ցրված էր Գիլանի, Մազանդարանի և Խորասանի նահանգների գյուղերում։ Քաղաքաբնակ հայերն զբաղված էին առևտրով, արհեստներով, գինեգործությամբ, իսկ մերձկասպյան վայրերում՝ ձկնորսությամբ ու ձկնարդյունաբերությամբ։ Հայ գինեգործների պատրաստած Շիրազի գինիները Իրանում համարվում էին լավագույնները և մեծ քանակությամբ արտահանվում էին երկրից դուրս։ Սպահանի բեմի հայերի ամենազարգացած առևտրական, արհեստավորական, հոգևոր ու մշակութային կենտրոնը Նոր Ջուղան էր։ Այն առևտրական մեծ կապեր ուներ Արևելքի ու Արևմուտքի հետ, որը նպաստում էր քաղաքի տնտեսական ու մշակութային վերելքին։

Իրանում կային հայազգի մեծահարուստ արդյունաբերողներ ու առևտրականներ։ Դրանցից էին Լիանոզովները (Լիանոսյանները), որոնք իրենց ձեռքում էին պահում Կասպից ծովի ամբողջ հարավային մասի ձկնարդյունաբերությունը և արտահանում էին մեծ քանակությամբ ձկնեղեն։ Լիանոզով ընտանիքը կապիտալներ ուներ նաև Ռուսաստանում՝ Մոսկվայում և Պետերբուրգում։ Պարսկահայ դրամատերերից հայտնի էին նաև Թումանյան եղբայրները, որոնք ունեին իրենց սեփական բանկը։ Եղել են նաև հայ-ռուսական կապիտալի համագործակցության դեպքեր։ Օրինակ՝ «Պչելյա», «Միր» և այլ ընկերություններ, որոնք գործում էին Թավրիզում ու Թեհրանում։

Ավելի մեծ թիվ էին կազմում հայ մանր առևտրականները, արհեստավորները և քաղաքային բնակչության միջին խավերը։ Ատրպատականի հայերը աչքի էին ընկնում հատկապես կտորեղենի արտադրության, ասպակեգործության, ոսկերչության ու արծաթագործության և հարակից արհեստների բնագավառում։ Նրանց արտադրանքը բավարարում էր ոչ միայն հյուսիսային Իրանին, այլև արտահանվում էր Անդրկովկաս։ Նուրբ արհեստների մեջ առաջատար դեր էին կատարում Թավրիզի, Սպահանի և Թեհրանի արհեստավորները։ Երկրի նշանավոր ոսկերիչների ճնշող մեծամասնությունը հայեր էին։ Նրանց պատրաստած զեղեցիկ, նրբաճաշակ և որակով գործերը իրացվում էին ինչ՛ սեփական շուկայում, և ինչ՛ լայն ապառում գոնում Արևելքի ու Եվրոպայի երկրներում։

Իրանահայության զգալի մասը գյուղացիներ էին ու հաստատված էին գերազանցապես Ատրպատականում ու Նոր Ջուղայի դավառում։ Նրանք մշակում էին շահի, խաների, կալվածատերերի ու վաշխառուների հողատարածությունները և վճարում զանազան հարկեր։ Գյուղացիները հողատերերին էին տալիս ստացած բերքի $^1/_4$-ը, իսկ երբեմն՝ $^1/_3$-ը։ Հաճախ հողատերը և գյուղացիների միջև հանդես էին գալիս վարձակալ-վաշխառուները և ավելի սաստկացնում նրանց հարստահարումը։ Նրանք վճարում էին նաև անասնահարկ՝ հետևյալ չափով՝ մեկ կովի համար 10 ռիալ, ոչխարի կամ այծի համար՝ 5 ռիալ, ձիու կամ մատակի համար՝ 10 ռիալ։ Գյուղացիները հարկադրված էին նաև տարվա հիրակիների մեծ մասը ձրիաբար աշխատել տիրոջ համար։ Բա-

ցի «օրինավոր հարկերից», հողատերերը հաճախ հողագործից իբրև նվեր էին ստանում ոչխար, հավ, ձու, յուղ և այլն։

Իրանահայերի, մասնավորապես գյուղացիության վիճակն ավելի վատթարացավ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին։ Նրանք հարկադրված եղան նորից բռնել գաղթի ճանապարհը։ Սպահանի շրջանից բազմաթիվ ընտանիքներ մեկնեցին Հնդկաստան, իսկ Ատրպատականից՝ Ռուսաստան։

XIX դարի վերջից իրանահայ գաղութում հասարակական ու քաղաքական կյանքն սկսեց աշխուժանալ։ Հրապարակ եկան քաղաքական կուսակցություններ։ 1890-ից դաշնակցության կուսակցության տեղական կոմիտեներն սկսեցին գործել սկզբում Ատրպատականում (Թավրիզ, Սալմաստ, Խոյ, Ուրմիա, Ղարադաղ), ապա նաև՝ Գիլանում (Էնզելի, Ռեշտ, Աստարա), իսկ հետո Թեհրանում ու Նոր Ջուղայում։ Թավրիզում, Ռեշտում, Թեհրանում և այլուր կազմրվեցին նաև հնչակյան կուսակցության կոմիտեներ, որոնք հակադրվեցին դաշնակցական կազմակերպություններին։ Պայքարը այդ երկու կուսակցությունների միջև հատկապես ցայտուն էր Թավրիզում։ Քաղաքի Լիլավա թաղամասում գերիշխում էին դաշնակցականները, իսկ Ղալան մեծ մասամբ հնչակյան էր։ Հնչակյան կուսակցության հիմնադիրներից ու աչքի ընկնող գործիչներից էին Գևորգ Չիլինգարյանը, Եղիկյանը, Բժշկյանցը (լեգենդար Գալի հայրը) և ուրիշներ։

Ավելի ուշ 1908—1909 թթ. ստեղծվեց նաև Իրանի սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը (սկզբում Թավրիզում)։ Ռուսաստանի օրինակով Հայերն ակտիվ մասնակցեցին պարսկական սոցիալ-դեմոկրատիայի կազմավորման աշխատանքներին։ Արշավիր Չիլինգարյանը, Դավիթ Նազարբեկյանը, Սեդրակ Բանվորյանցը, Հովսեփ Կարապանյանը, Տիգրան Դերվիշը (Հակոբյան) և շատ ուրիշներ եղան Թավրիզի կազմակերպության հիմնադիրները։

Հայ ազգային-ազատագրական շարժումների տարիներին Իրանի հայաբնակ վայրերը դարձան հայդուկային և զինատար խմբերի կենտրոնատեղիներ։ Վան—Վասպուրական տանող ճանապարհը գնում էր Իրանի վրայով և հայդուկները, ինչպես նաև կոտորածներից փրկված հայերը հանգրվան ու ապաստան էին գտնում երկրի հայաշատ քաղաքներում, գյուղերում ու սրբավայրերում։ Այդ տեսակետից կարևոր դեր խաղաց հատկապես ս. Թադեի վանքը։

XX դարի սկզբի ամենախոշոր իրադարձությունը Իրանի պատմության մեջ 1905—1911 թթ. հեղափոխությունն էր, որի վրա մեծ էր ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության ազդեցությունը։ Իրանական հեղափոխության ընթացքում ստեղծվեցին ժողովրդադեմոկրատական կազմակերպություններ, ընտրովի մարմիններ (էնջումեններ-միություններ), ֆեդայիների զորախմբեր ու մոջահեդների (հեղափոխականների) ընկերություններ և հիմնվեց պարսկական պառլամենտը (մեջլիսը), որն առաջինն էր Արևելքում։ Հեղափոխության բոցերում ծնվեցին ժողովրդական հերոսներ Սաթթար խանը, Բաղիր խանը, Հայազդի Եփրեմ խանն (Դավթյան) ու Քոհնի (Արշակ Գաֆավյան), Ալի Մուսյոն, Հեյդար Ամաօղլին, Մուհամմեդ Խիաբանին և շատ ուրիշներ։

---

3 Տե՛ս Ավ. Եղիազարյան, Իրանի Ջհարմհալ գավառը, Թեհրան, 1963, էջ 42—43։

1909 թ. հուլիսին ապստամբ ժողովուրդը հյուսիսից և հարավից արշավեց Թեհրանի վրա, գրավեց մայրաքաղաքն ու գահընկեց արեց Մահմեդ Ալի շահին, Վարշավսկու ու ռազմական մինիստրի պաշտոնը ստանձնեց հեղափոխության կողմն անցած Ռեշտի նահանգապետ Սիփահդարը, ներքին գործերի մինիստր դարձավ բախտիարների առաջնորդ Սարդար Ասադը, իսկ Եփրեմ խանը նշանակվեց սահմանադրական կարգերի նորաստեղծ զինված ուժերի հրամանատար։

Հեղափոխությունն իր բնույթով բուրժուական, հակաֆեոդալական, հակաիմպերիալիստական էր՝ բուրժուադեմոկրատական շարժման նրանգներով (Ատրպատական, Գիլան, Մազանդարա) և այդ պատճառով էլ այն պաշտ-



1905—1911 թթ. իրանական հեղափոխության մասնակից մի խումբ հայ կամավորներ (Թեհրանում)

պանություն գտավ Ռուսաստանի հեղափոխական սոցիալ-դեմոկրատական կուսակցության կողմից։ Անդրկովկասի բոլշևիկները Բաքվի և Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններին կից հատուկ կոմիտեներ ստեղծեցին, որոնք կազմակերպում էին զենքի, զինամթերքի, դրականության և հատկապես կամավորների տեղափոխումը Իրան[1]։

Բոլշևիկներն առաջինն օգնություն հասցրին ապստամբ Թավրիզին, որը շրջապատված էր շահի զորքերով և Իրհիմ խանի ավազակային խմբերով։ Բաքվի կոմիտեի հանձնարարությամբ, 1909 թ. աշնանը մի մեծ խումբ՝ թվով 140 հայ, ադրբեջանցի և վրացի հեղափոխականներ, Սերգո Օրջոնիկիձեի ղեկավարությամբ անցավ Իրան։ Ս. Օրջոնիկիձեի նախաձեռնությամբ Գիլանի քաղաքներում (Ռեշտ, Էնզելի, Արդեբիլ) ստեղծվեցին ինտերնացիոնալ

---

1 Տե՛ս Ադրբեջանական ՍՍՀ, ՊԿՊԱ, ֆ. 132, գ. 13, էջ 10։

ակումբներ, որոնք համախմբեցին նահանգի արհեստավորներին և գյուղացիներին՝ ընդդեմ շահի, խաների և օտար նվաճողների[5]։

Կովկասի բոլշևիկները կազմակերպում էին նաև Եվրոպայից (հատկապես Փարիզից) եկող սոցիալ-դեմոկրատական գրականության առաքումը Իրանի-Բաքվի վրայով դեպի Ռուսաստան։ Այս գործում մեծ աջակցություն էին ցուցաբերում Կասպից ծովի առափնյա քաղաքներում բնակվող իրանահայ հեղափոխականները։

Իրանական հեղափոխության հաջողությանը նպաստեց նրա շարժիչ ուժերի ինտերնացիոնալ կազմը։ Բացի պարսիկներից, հեղափոխությանը մասնակցեցին հայ, վրաց, ռուս, արաբ, բուլղար և այլ ժողովուրդների ներկայացուցիչներ։ Հեղափոխության մեջ զգալի դեր կատարեցին իրանահայերն ու կովկասահայերը, որոնցից շատերն աշքի ընկան իրենց սխրագործություններով՝ զոհաբերելով իրենց կյանքը իրանական բարիկադների վրա։ Պարսից պատմաբաններ Ահմեդ Քեսրավին, Մալեք Զադեն, Քյարիմ Բհզադը, Էբրահիմ Սաֆային, Աբբաս-Ալի Սալեհին, Էսմաիլ Ռահիմը և ուրիշներ բարձր են գնահատել հայ ժողովրդի մասնակցությունը իրանական հեղափոխությանը։ «Սահմանադրության առաջնորդները» գրքում խոսվում է 24 նշանավոր գործիչների մասին, որոնցից 16-ը հայեր են[6]։ Հիշատակության արժանի է հատկապես Եփրեմ խանը, որի մասին պարսիկ հեղինակներից մեկը գրում է. «Իրանի պատմության փայլուն դեմքերից մեկն է Եփրեմ խանը... մեր երկրում քիչ մարդ կգտնվի, որ գրքի ու պատմության հետ գործ ունեցած լինի ու լսած չլինի նրա անունը։ Նրանք, ովքեր գիտեն Իրանի սահմանադրության պատմությունը, ավելի քան ճանաչում են Եփրեմ խանին»[7]։

Իրանական հեղափոխության օրերին Եփրեմը[8] ներգրավվեց սահմանադրական շարժման մեջ, և ցուցաբերելով վարչական ու ռազմական կարողություններ, Սաթթար խանի, Բաղիր խանի հետ միասին դարձավ բռնակալու-

---

5 Տե՛ս Г. С. Арутюнян, Иранская революция 1905—1911 гг. и большевики Закавказья, Ереван, 1956, стр. 135—138.

6 Տե՛ս Էբրահիմ Սաֆայի, *Սահմանադրության առաջնորդները*, Թեհրան, 1965, էջ 567 (պարսկերեն)։

7 Աբաս-Ալի Սալեհի, *Հայ գործիչները պարսից իրականության մեջ*, Թեհրան, 1968, էջ 21 (պարսկերեն)։

8 Եփրեմ Դավթյանը ծնվել է Շամխորի շրջանի Բարսում գյուղում, որտեղ և ստացել է սկզբնական կրթություն։ 19—20 տարեկանից մասնակցել է հայ ազգային-ազատագրական շարժումներին, Սարգիս Կուկունյանի խմբի արշավանքին մասնակցելու պատճառով 1892 թ. աքսորվել է Սախալին, 1896 թ. փախել է աքսորից և Կովկասի վրայով անցել Պարսկաստան։ 1899—1902 թթ. ուսուցչություն է արել Ղարադաղի Աղաղան գյուղում, շրջել է Ատրպատականի բոլոր հայաբնակ վայրերը և գրեթե ամբողջ Հյուսիսային Իրանը։ Նա գիտեր պարսկերեն, քուրքերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներ։ Եփրեմը ակտիվ մասնակցել է հայ հասարակական կյանքին, 1906—1907 թթ. ընտրվում է Ռեշտի ուսումնական հեղաբարձության անդամ ու մի շարք բարեփոխումներ է մտցնում հայ դպրոցում։ Եփրեմը սպանվեց 1912 թ. մայիսի 6-ին Համադանի մատուցներում՝ Սալար-էդ Դովլեի զորքերի դեմ տարած հաղթական ճակատամարտերում։ Նրա մահից հետո գլխավոր հրամանատարի պաշտոն ստանձնեց Քեռին։ Տ. Էլմար, Եփրեմ (1868—1912), Թեհրան, 1964։ Գիրքը նվիրված է Եփրեմի ծննդյան 100-ամյակին։ 1971 թ. Թեհրանում պարսկերեն լույս տեսավ Էսմաիլ Ռահիմի «Եփրեմ խան Սարդար» մեծածավալ աշխատությունը, որը նոր տվյալներով ու փաստաթղթերով՝ հայ-իրանական հեղափոխական համագործակցության, Եփրեմի և այլ հերոսների մասին, լրացնում է «Եփրեմ» գրքի հայկական հրատարակությունը։

բյան դեմ մաքառող ժողովրդի առաջնորդներից մեկը։ Սահմանադրության կողմնակիցների հաղթանակից հետո ժամանակավոր կառավարությունը Եփրեմ խանին նշանակելով զորքերի հրամանատար, հանձնարարում է նրան՝ հաստատել նոր կարգեր երկրի ծայրամասերում, ուր դեռ կային կենտրոնախույս ու միապետական ուժեր։

1909 թ. նոյեմբերին Թեհրանից շարժվելով դեպի Ատրպատական, Եփրեմն իր սահմանադրական զորքերով, որոնց մեջ զգալի քանակ էին կազմում հայ ու պարսիկ կամավորներն ու ֆեդայիները, Ղարադաղում չախչախիչ հարված հասցրեց Ռահիմ խանի ավազակային խմբերին, պարտության մատնեց Շուջա-էդ Դովլեի Ատրպատականում ամրացած միապետական ուժերին։

Կառավարությունը և մեջլիսը բարձր գնահատեցին Եփրեմի մատուցած ծառայությունները և նրան շնորհեցին «սարդարի» (գերագույն զորավար հրամանատարի) աստիճան, նվիրելով նրան ադամանդապատ ոսկյա սուր։

Իրանական հեղափոխությունը պատմական կարևոր նշանակություն ունեցավ թե՛ պարսիկների, և թե՛ Իրանում բնակվող այլ ժողովուրդների, այդ թվում նաև հայերի համար։ Հեղափոխությունից հետո տեղի ունեցավ հասարակական-քաղաքական կյանքի որոշ դեմոկրատացում։ Հայերն ընտրվեցին տեղական ինքնավարության օրգաններում՝ էնջումեններում։ Հայ ազգաբնակչությունից պատգամավորներ կային Թեհրանի, Թավրիզի, Սպահանի, Արդաբիլի, Ռեշտի և այլ քաղաքների ու մի շարք մեծ գյուղերի էնջումեններում։ Որ առաջին գումարման մեջլիսը քննարկում էր սահմանադրության նախագիծը, Թավրիզի էնջումենը հեռագրեց Թեհրան և օրենսդիր մարմնից պահանջեց իրանահայերի համար սահմանել նույն իրավունքները, ինչ նախատեսվում էին պարսիկների համար[9]։ Արդեն երկրորդ գումարման մեջլիսում իրանահայությունը պաշտոնական իրավունք ստացավ երկու պատգամավոր ունենալու երկրի բարձրագույն օրգանում։ Այդ իրավունքից հայերը օգտվում են առաջօր։

Իրանական հեղափոխության ճնշման դեմ իրենց բողոքի ձայները բարձրացրին բոլշևիկները։ Նրանք Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ հատուկ բանաձև ընդունեցին Համառուսաստանյան (Պրագայի) 1912 թ. կոնֆերանսում և նշավակեցին ցարական ու բրիտանական նվաճողներին[10]։

Ինչպես հեղափոխության տարիներին, այնպես էլ հետագայում իրանահայության մեջ չդադարեց հասարակական-քաղաքական կյանքը։ 1908 թ. փետրվարի 17-ին վերջնականապես կազմակերպվեց Թեհրանի հայոց ազգային խորհուրդը, որի նպատակն էր, իբրև տեղի հայոց բարձրագույն իշխանություն, միջնորդ հանդիսանալ հայ համայնքի և միապետության ու մեջլիսի միջև։ 1911 թ. ազգային խորհուրդը պաշտոնապես ճանաչվեց պետության կողմից և կոչվեց «Թեհրանի հայոց համայնական վարչություն»։ Այդ վարչության ընդունած օրենքով 1917 թ. կազմվեցին Համադանի, Սուլթանաբադի և այլ հայաշատ վայրերի համայնական կազմակերպությունները, որոնց ներկայացուցիչներից էլ ստեղծվեց «Իրանահայ ընդհանուր խորհուրդը»[11]։

Պարսկահայ գաղթօջախում գործում էին մի շարք հասարակական ընկերություններ ու միություններ՝ «Թատերասիրաց ընկերությունը» (հիմնված

---

9 Տե՛ս ՌԱՔԱ, Պարսկական դիվան, գ. 874, էջ 18։

10 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկ., հ. 21, էջ 193։

11 «Պարսկահայ տարեցույց», 1927, էջ 11։

1890 թ.), որը իր եկամուտների մեծ մասը տրամադրում էր հայոց դպրոցներին, «Կանանց բարեգործական ընկերությունը» (հիմնված 1905 թ.), որի միջոցներով 1918 թ. բացվեց Թեհրանի հայոց մանկապարտեզը, «Օրիորդաց խնամատար ընկերությունը» (հիմնված 1910 թ.), որի նպատակն էր ստեղծել կարուձևի արհեստանոցներ ու որբանոց հայ մանուկների համար։ 1913 թ. հիմնվեց «Թեհրանի հայ երիտասարդների գրական միությունը», որն զբաղվում էր իր պատանի անդամների գրական ու գեղագիտական ինքնազարգացմամբ։ 1914—1915 թթ. հիմնվեցին «Աղքատախնամ վարչության» և «Եղբայրական օգնության» ընկերությունները։ Վերջինիս հիմնական նպատակն էր օգնության ձեռք մեկնել Մեծ եղեռնից փրկված և պարսկական հողում ապաստան գտած հայրենակիցներին։ 1917 թ. հիմնվեց «Միացյալ ընկերությունը», որը կոչված էր կազմակերպելու աշակերտական հավաքներ, հասարակական հանդեսներ և այլ միջոցառումներ։

Իրանահայերը, որպես ազգապահպանման կարևոր պայման, խոշոր նշանակություն էին տալիս դպրոցներին, լուսավորությանը։ Հիրավի, Իրանում չէր կարելի գտնել հայաշատ որևէ վայր, որը չունենար իր դպրոցը։ Առաջին հայկական դպրոցը հիմնադրվել է Նոր Ջուղայում 1833 թ., մադրասցի բարեգործ, վաճառական Գրիգոր Սամյանի ջանքերով ու միջոցներով։ Հետագայում ստեղծվեցին ևս մի քանի այլ դպրոցներ, որոնք 1880 թ. միացան, ստանալով «Ազգային կենտրոնական դպրոց» անվանումը։ 1892 թ. օրիորդաց առաջին դպրոցը (հիմնադրվել էր 1858 թ.) միացվեց տղաների դպրոցների հետ և կազմվեց կրթական մեկ հաստատություն՝ «Նոր Ջուղայի Ազգային երկսեռ դպրոցներ» անունով։ Կրթական նոր հաստատություններ ստեղծվեցին նաև 1901—1910 թթ.։ Նոր Ջուղան ունեցավ իր գրադարանները, որոնք հիմնադրվեցին 1886—1910 թթ. ու կոչվեցին «Քանանյան», «Իզմիրլյան», «Երկունք» և այլն։

Ատրպատականում առաջին հայկական դպրոցը հիմնադրվել է 1835 թ. Թավրիզում, որը հայտնի է Արամյան անունով։ XIX դարի երկրորդ կեսին Թավրիզում բացվեցին նաև «Աննայան», «Հայկազյան», «Թամարյան» և այլ դպրոցներ։ 1909 թ. Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի ծրագրով Թավրիզում բացվեց թեմական երկսեռ միջնակարգ դպրոց։ 1874 թ., Թավրիզի մի խումբ մտավորականների ջանքերով և դրսի հայերի օժանդակությամբ, քաղաքի Ներքին թաղում հիմնադրվեց Իրանում առաջին հայկական գրադարան-ընթերցարանը։ Թեհրանում անդրանիկ հայ դպրոցը բացվեց 1870 թ., որից հետո, հինգ տասնամյակների ընթացքում, ստեղծվեցին բազմաթիվ այլ կրթական օջախներ։

Ուսումնական գործը հետ չէր մնում նաև գավառներում, ուր սկսած XIX դարի վերջից բացվեցին տասնյակ դպրոցներ։ 1903 թ. Րաֆֆու ծննդավայրում՝ Սալմաստի Փայաջուկ գյուղում, կառուցվեց դպրոցի երկհարկանի շենք։ 1904—1905 թթ. միայն Սալմաստի գավառի 11 դպրոցներում սովորում էր 800 աշակերտ[12]։

Իրանի հայկական դպրոցներն իրենց վրա կրում էին Կովկասի հայկական մշակութային կենտրոնների ազդեցությունը։ Իրան էին գալիս ուսուցիչներ և

12 «Մշակ», Թիֆլիս, № 23, 26 օգոստոսի և 12, 25 սեպտեմբերի 1906 թ., «Պարսկահայ դպրոցը» հոդվածաշարից։

ուսուցում Կովկասի հայկական դպրոցների ծրագրով։ Իրանահայ դպրոցներում մանկավարժական մեծ աշխատանք են կատարել Մեսրոպ Թաղիադյանը, Րաֆֆին, Հրաչյա Աճառյանը և հայ մտավորականության այլ երախտավորներ։

Տպագրության ասպարեզում իրանահայերն առաջին քայլերը կատարեցին տակավին XVII դարում։ Նոր Ջուղայի տպարանը մեծ թափով սկսեց գործել XIX դարի կեսերից, հատկապես 1880 թ., երբ Ճավայում ապրող ջուղայեցի վաճառական Մանուկ Հորդանանյանը ձեռք բերեց մի ամբողջ տպարան և ուղարկեց Նոր Ջուղա՝ ս. Ամենափրկիչ վանքին նվեր։ 1880-ական թվականներին հայկական տպարաններ են բացվում նաև Ռեշտում, Թավրիզում, Թեհրանում և այլուր։ Նոր Ջուղայի տպարանը (հիմնադրված 1636—1638 թթ.) առաջինն էր ամբողջ Միջին Արևելքում։ Վերջերս, 1968 թ. Օքսֆորդի համալսարանի գրադարանի հայկական բաժնում հայտնաբերվել է այդ տպարանի հրատարակած առաջին գիրքը՝ «Սաղմոս ի Դավիթ» (տպագրված 1638 թ.), որն անհայտ էր հայագիտությանը և համարվում է Միջին Արևելքի առաջին տպագիր գիրքը[13]։

Ջուղայեցիք հիմնում են նաև մատենադարան-թանգարան վերոհիշյալ վանքում, ուր պահվում են 16 հազար հին ու նոր գրքեր, շուրջ 800 ձեռագիր[14], փաստաթղթեր, շահերից ստացած ֆերմաններ ու պարբերականներ[15]։ Թանգարանի շենքը կառուցվել է 1907 թ.՝ Թադեոս Հարությունյանի նվիրատվությամբ։ Այնտեղ ցուցադրվում են իտալական նկարիչների գործեր, Ջուղայի մանրանկարչական դպրոցի աչքի ընկնող ստեղծագործություններ, հայ ասեղնագործության ընտիր նմուշներ, քանդակագործական աշխատանքներ, ազգային տարազներ, հարսանեկան զգեստներ, գորգեր, թանկարժեք և ազնիվ մետաղներից իրեր։ Թանգարանում պահվում են նաև նշանավոր հայերի անձնական իրեր ու հազվագյուտ դիմանկարներ[16]։

Հայերը Նոր Ջուղայում կառուցել են ճարտարապետական որոշակի արժեք ներկայացնող 24 եկեղեցի, այդ թվում և ուշ միջնադարի հուշարձան ս. Ամենափրկիչը։ Իրանի հնագույն հայկական վանքը համարվում է ս. Թադեի (Մակուի գավառ) տաճարը, որը դասվում է հազվագյուտ կոթողների շարքում։

XIX դարի վերջին և XX-ի սկզբին ծնունդ առան իրանահայ պարբերականները։ Թեհրանում, Թավրիզում ու Նոր Ջուղայում հրատարակվեցին շուրջ երկու տասնյակ թերթեր ու ամսագրեր՝ «Շավիղ» (1894—1897), «Աստղ Արևելյան» (1896), «Գործ» (1903), «Նոր Ջուղայի լրաբեր» (1904—1908), «Ազդարար առաջնորդարանի» (1904—1905), «Առավոտ» (1909—1911), «Զանգ» (1910—1911), «Թավրիզի հայտարարություններ» (1910—1912), «Արշալույս» (1912), «Ղարադաղ» (1912—1914), «Միտք» (1912—1914), «Խոսք» (1913),

---

13 Տե՛ս Լ. Գ. Մինասյան, Նոր Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը (1636—1972), Նոր Ջուղա, 1972, էջ 14—15։ «Էթթելաաթ», Թեհրան, 30 մայիսի 1970 թ. (պարսկերեն)։

14 Տե՛ս «Ցուցակ հայերեն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի», հ. Ա, կազմեց Սմբատ Տեր-Ավետիսյան, Վիեննա, 1970։ «Ցուցակ ձեռագրաց Նոր Ջուղայի ս. Ամենափրկչեան վանաց թանգարանի», հ. Բ, կազմեց Լ. Գ. Մինասյան, խմբ. Օ. Ս. Եգանյանի, Վիեննա, 1972։

15 Տե՛ս Լ. Գ. Մինասյան, Նոր Ջուղայի ս. Ամենափրկիչ վանքի թանգարանը (համառոտ ակնարկ), Նոր Ջուղա, 1968, էջ 46—56։

16 Տաճատ Պողոսյան, Րաֆֆի տարեգիրք, Ա տարի, Թեհրան, 1968, էջ 232 և 301։

«Ծաղիկ փնջեր» (1914), իսկ 1916—1920 թթ. լույս տեսան «Արշալույս», «Իրանի աշխատավոր», «Նոր գաղափար», «Ինչքար Իրանին» և այլն։

Իրանի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում մեծ թվով հայեր աչքի ընկան իրենց գործունեությամբ՝ Ջհանգիր էնիկոլոփ Մամիկոնյանը (1825—1891), Նարիման Մամիկոնյան-Էնիկոլոփյանը[17] (1836—1906), Միրզա Մելքոնը (1831—1908), Հովհաննես Մասեհյանը (1864—1932) և ուրիշներ, որոնք խանի պատվավոր տիտղոսի էին արժանացել հասարակական-համապետական նշանակություն ունեցող գործունեության համար։ Տաղանդավոր նկարիչ Հակոբ Հովնաթանյանը, գրականագետ-բարգմանիչ Հովսեփ Միրզոյանը, երաժիշտ-խմբավարներ՝ Լևոն Գրիգորյանը և Նիկոլ Գալանտերյանը, գրող-խմբագիր Վրթանես Փափազյանը, կրթական գործիչ, Բաֆֆու կենսագիր՝ Ավագ խան Ավետանդիլյանը, դերասան Մկրտիչ Թաշչյանը, բանաստեղծ, նկարիչ Դևը (Մարգար Ղարաբեգյանը) այն նախատավորներից են, որոնք բերել են իրենց նպաստը իրանահայության մշակույթի զարգացմանը։



Հովհաննես Մասեհյան

Ջհանգիր խանը զգալի ծառայություններ ունի Իրանի ռազմական գործում և արվեստագիտության մարզում։ Իր աչքի ընկնող գործունեության համար նա արժանացել է ոչ միայն Իրանի, այլև եվրոպական պետությունների շքանշանների։ Իրանում նա վարել է մի շարք բարձրաստիճան զինվորական և քաղաքացիական պաշտոններ, իսկ կյանքի վերջին տասնամյակում Իրանի գեղարվեստի նախարարն էր և պարսից զորանոցների գլխավոր կառավարիչը։ Ջհանգիր խանի կրտսեր եղբայրը՝ Նարիման խանը տիրապետում էր մի քանի արևելյան ու եվրոպական լեզուների, վարում էր պետական բարձր պաշտոններ։ Նա եղել է պարսից դեսպան Կ. Պոլսում և Վիեննայում։ Մելքոն խանը Իրանի լիազոր դեսպանն էր Լոնդոնում և Բեռլինում։ Լոնդոնում նա հրապարակում էր «Ղանուն» պարբերաթերթը։

Իրանահայության ականավոր դեմքերից էր Հովհաննես խան Մասեհյանը (Մոսաեղը), Եեքսպիրի հայերեն լավագույն բարգմանիչը։ Նա եվրոպական

---

17 Էնիկոլոփյանների պապերը Հայաստանից Վրաստան տեղափոխվելով, արժանացել են մեծամեծ պաշտոնների։ Նրանցից մեկը բազմաթիվ լիգուներ տիրապետելու համար վրաց թագավորից ստացել է «Էնիկոլոփ» մականունը, որը վրացերեն նշանակում է «լեզվի շտեմարան»։ Այստեղից էլ առաջացել է Էնիկոլոփյան (Էնիկոլոպով) ազգանունը։ («Տարազ», Թիֆլիս, 3, 35, էջ 17, 517)։

գրականությունից պարակերեն է թարգմանել նաև բազմաթիվ արժեքավոր ստեղծագործություններ։ Մասեհյանը հիմնադրել և խմբագրել է իրանահայ անդրանիկ պարբերականը՝ «Շավիղը», կապված լինելով գաղթօջախի հասարակական, քաղաքական կյանքի հետ, նա տնօրինել է Թեհրանի Հայկազյան դպրոցը ու տարիներ շարունակ դասավանդել այնտեղ։ Մասեհյանը բազմիցս ընտրվել է հոգաբարձությունների անդամ և եղել է մեջլիսի պատգամավոր Հարավային Իրանի հայերի կողմից։ 1884 թ. մինչև իր կյանքի վերջը նա գտնվել է պետական ծառայության մեջ, լինելով Իրանի արտաքին գործերի նախարարության թարգմանիչ, լիազոր ներկայացուցիչ, ապա հյուպատոս և դեսպան Բեռլինում, Լոնդոնում ու Տոկիոյում։ 1916 թ. ճանաչված շնքսպիրագետ Մասեհյանը մասնակցել է հանճարեղ անգլիացու մահվան 300-ամյակի առթիվ Լոնդոնում կազմակերպված հանդիսություններին ու ելույթ ունեցել այնտեղ[18]։

2. ԱՖՂԱՆՍՏԱՆ

Աֆղանստանի հայ գաղթօջախը XIX դարի 70-ական թվականների վերջին դեռևս պահպանում էր իր գոյությունը։ Տեղական իշխանությունների առանձին ներկայացուցիչներ աշխատում էին հարևան երկրներից հայեր հրավիրել Աֆղանստան։ Փորձ էր արվում եկեղեցիներ կառուցել և այլն։

Հայերը հիմնականում ապրում էին Քաբուլ և Ղանդահար քաղաքներում։ Նրանց հիմնական զբաղմունքը արհեստագործությունն էր։ Պետական ծառայության մեջ կային մի շարք ճանաչված հայ գործիչներ։

1876 թ. էմիրի հատուկ հրամանով հայերը, որոնք մինչ այդ ազատված էին զինվորական ծառայություններից, զինակոչվեցին և հայությունն առաջին անգամ հարկատու դարձավ։

Աբդուր-Ռահման խանի մի ֆարմանում՝ ուղղված Կալկաթայի հայերին, կարևոր տեղեկություններ կան Աֆղանստանի հայ գաղութի պատմության վերաբերյալ։ Նա գրում է, որ Նադիր շահի գահակալության տարիներին «շատ մեծ թվով ընտանիքներ, որոնց մեջ հաշվվում էին մոտ հինգ հարյուր հայազգի մարդիկ, եկան այս երկիրը և իրենց կյանքը անցկացրին բարեկեցության մեջ։ Այժմ նրանցից մնացել է մի ընտանիք միայն 21 հոգի՝ փորրեր և ծերեր, տղամարդիկ և աղջիկներ։ Չնայած այն բանին, որ ինչպես մեր նախորդների, այնպես էլ այժմ մեր գահակալության տարիներին, նրանք չեն զգացել և չեն զգա որևէ անհանգստություն և վնաս։ Ընդհակառակը, նրանք բոլորը, մեծ և փոքր զբաղեցրել են և զբաղեցնում են նշանակալից պաշտոններ և աֆղանական կառավարությունից ստանում են աշխատավարձ, այնպես որ նրանք գեղեցիկ բարեհաջողություններ են հասել կյանքում, այնուամենայնիվ նրանք իրենց դժբախտ են զգում սեփական ազգի հասարակության պակասի պատճառով...»[19]։ Այնուհետև խանը շարունակում է, որ՝ հետևյալ ազգային և կրոնական զգացմունքներից ու համակրանքից, տաս-տասներկու կրթված կամ արհեստի գիտակ հայ ընտանիքներ տեղափոխվեն Աֆղանստանի

---

18 Տե՛ս «Ararat», Լոնդոն, 1916, հունիս (անգլերեն հայագիտական ամսագիր)։

19 Աֆղանստանի էմիրի նամակի թարգմանությունը հրատարակվել է «Մուրճ» ամսագրում, 1896, № 6, «Արձագանքում», 1897, էջ 253—256 և այլն։ Մենք տալիս ենք բնագրի մեր թարգմանությունը (Ի. Ա.)։

տերության սահմանները և այդպիսով միխիթարեն տեղի իրենց հայրենակիցներին մենակության մեջ և իրենց կյանքն անցկացնեն բարեկեցության մեջ։

Նա իր այդ նամակում խոստանում է Հնդկաստանից Աֆղանստան տեղափոխել ցանկացող հայերին, ճանապարհին ապահովել աննեղամիջոցներով ու գիշերելու տեղով, և տեղ հասնելուց հետո նրանց տալ աշխատանք համապատասխան մասնագիտությամբ։ Էմիրը հավատացնում էր, որ հայերն իր երկրում կապրեն «ապահով ու խաղաղ կյանքով»։

Աբդուր-Ռահման խանն իր հրավերն ավելի հեղինակավոր դարձնելու համար նամակը կալկաթա է ուղարկում իր վստահագիտ ազգությամբ հայ Սերվուրդին խանի (Ղուկաս Հովսեփյանի) միջոցով։

1896 թ. մայիսի 25-ին Կալկաթայի հայերն իրենց պատասխան նամակում գրում են. «Մենք շատ ենք ցավում, որ հիմա որևէ ընտանիք հազիվ թե ցանկություն հայտնի հեռանալ այստեղից, քանի որ նրանք բարեհաջող գործում են զանազան ասպարեզներում, և գրեթե բոլորը կապված են բարեկամական կապերով, որը հազիվ թե ցանկանան կտրել...»[20]։ Նրանք խնդրում են էմիրին ավելի բարելավել տեղի հայերի վիճակը, «հայ մանուկներին ուսման ուղարկել Հնդկաստան...՝ ընդհանուր կրթության և մասնագիտական ուսուցման համար։ Ավարտելուց հետո նրանք կվերադառնան տուն, որպեսզի հաստուցեն հարազատ կառավարությանը աղնիվ և հավատարիմ ծառայությամբ...»[21]։

1897 թ. էմիրի վերաբերմունքը հայերի նկատմամբ փոխվեց և տեղի հայերը տեղափոխվեցին Հյուսիսային Հնդկաստան ու բնակություն հաստատեցին Փեշևարում[22]։ Փեշևարում հաստատված հայերն իրենց հետ Քաբուլից բերել էին հին ձեռագրերի մի մեծ ժողովածու։

1907 թ. Փեշևար մեկնեց Սահակ արքեպիսկոպոս Այվազյանը, որն այնտեղից Կալկաթա բերեց և Հայոց եկեղեցու գրադարանին հանձնեց մի քանի հայերեն ձեռագրեր։

1846 թ. քաբուլաբնակ հայազգի Յուսուպ խան Հովսեփը Աֆղանստանից բերած բազմաթիվ հայերեն ձեռագրեր փորձել է վաճառել Կալկաթայում, սակայն շատ բարձր գին առաջարկելու պատճառով (բացի մեկից) չի կարողացել վաճառել և վերադարձրել է Քաբուլ։ Ըստ Հենրի Ռավլինսոնի, «Անգլիացիները և ռուսները Արևելքում» գրքում բերված տվյալների, Չինաստանին սահմանամերձ աֆղանական Ղաշխա քաղաքում բնակվում էին նաև 300 հայեր, Ղաշխան Չինաստանի հետ կատարվող հատկապես մետաքսի առևտրի կարևոր հենակետ էր։ Մետաքսի առևտուրը, ինչպես հայտնի է, գտնվել է հայ վաճառականների ձեռքում։ Ղաշխայի վրայով դեպի Ասիա և Եվրոպա էին անցնում մետաքսի գլխավոր արտահանողները։

3. ՍԻԲԻԱ ԵՎ ԼԻԲԱՆԱՆ

XIX դարի կեսերից Սիբիան և Լիբանանը ներգրավվեցին համաշխարհային կապիտալիստական շուկայի ոլորտը, դարձան վաճառահանման շուկա և

[20] *M. J. Seth.* Armenians in india, p. 189.

[21] Նույն տեղում, էջ 188։

[22] Տե՛ս նույն տեղում։

հումքի աղբյուր եվրոպական արդյունաբերության համար։ Դրանով էական տեղաշարժեր կատարվեցին այդ երկրների բազմազգ բնակչության սոցիալական, տնտեսական և քաղաքական կյանքում։

Օսմանյան տիրապետության ներքո գտնվող Սիրիայում և Լիբանանում (Հալեպի, Սիրիայի, Բեյրութի նահանգները, Լեռնային Լիբանանը և Դեյր-էզ-Զորի մութեսարիֆաքը) ապրում էին տարբեր ժողովուրդներ և ցեղեր։ 1860 թ. Սիրիայում բնակվում էին 1325 հազար մուսուլման և 410 հազար քրիստոնյա[23]։ Լեռնային Լիբանանում մահմեդականները հաշվվում էին 32.700, քրիստոնյաները՝ 160.000 շունչ[24]։

Հայեր կային Սիրիայի և Լիբանանի գրեթե բոլոր նահանգներում, սակայն նրանց հիմնական զանգվածը հաստատված էր Հալեպի նահանգի համանուն սանջակի տարբեր կազաներում, առանձնապես Ալեքսանդրետում, Բեյլանում, Անտիոքում և Հալեպ քաղաքում։ Սիրիայի նահանգի հայերը տեղաբաշխված էին Դամասկոսում, Ջեբել-Հաուրանում, Հոմսում, Համայում և այլ վայրերում։ Փոքրաթիվ հայեր կային Բեյրութի նահանգի համանուն քաղաքում, Լաթակիայում և նրա շրջակա գյուղերում, ինչպես նաև Դեյր ալ-Զորի և Լեռնային Լիբանանի մի շարք քաղաքներում ու գյուղերում։

1880-1890-ական ԹԹ. Հալեպի նահանգում ապրում էին 68.794, Սիրիայի նահանգում՝ 7.500, Բեյրութի նահանգում՝ 4.500, Դեյր ալ-Զորում՝ 450, Լեռնային Լիբանանում՝ 60, ընդամենը 81.304 հայ, որոնցից ավելի քան 50 հազարը՝ գյուղական վայրերում[25]։

Սիրիայում և Լիբանանում գերիշխում էր ֆեոդալական արտադրաեղանակը։ Հողը համարվում էր օսմանյան սուլթանի սեփականությունը, իսկ իրականում այն գտնվում էր աշխարհիկ և հոգևոր ֆեոդալների ձեռքում։ Հալեպի, Սիրիայի և Բեյրութի նահանգներում կային և հայ ֆեոդալներ։ Հալեպ քաղաքի մերձակայքում գտնվում էր Հակոբոս Ոսկանի տնտեսությունը, որի ընդարձակ կալվածքներում զբաղվում էին հացահատիկային կուլտուրաների մշակությամբ, այգեգործությամբ, անասնապահությամբ և, որ ուշագրավ է, այնտեղ հաստատված էր նաև մի «տիպար ագարակ», որի մասին դրվատանքով են պատմում ժամանակակիցները։ Նրանցից մեկը գրել է. «Երբ անոր սահմանները կմտնենք, որոշ կտեսնվի թե գիտական մեթոդն ինչեր գրած է...։ Ամեն գործիք եվրոպական է»[26]։ Ընդարձակ տիրույթներ ունեին նաև Երուսաղեմի հայոց վանքը, Հալեպի Հայոց առաջնորդարանը և Զմմառի հայ կաթոլիկական միաբանությունը։

Ֆեոդալական խոշոր հողատիրության կողքին տակա էր մանր գյուղացիական մասնավոր ու համայնական հողատիրությունը, որը, սակայն, ապ-

---

[23] Տե՛ս F. Lenormant. Histoire des massacres de Syrie en 1860, Paris, 1861, p. XV.

[24] Տե՛ս К. Петковичъ, Ливанъ и ливанцы. «Сборникъ Азии», XIX, СПб., 1885, стр. 130—131.

[25] Հայվումներն ըստ ԴԱՔ-ի (Ագաթանի ֆոնդ, վ. 46), Ա. Սյուրմեյանի (Պատմություն Հալեպի հայոց, հ. 3, էջ 894), Մ. Վ. Թերզյանի (Զմմառու հայ վանքը, էջ 70), Ս Վարժապետյանի (Հայերը Լիբանանի մեջ, էջ 431—432, 445, 449, 451—452), Ա. Թեմիրյանի (Քնասպ, էջ 30, 73), «Մասիս» լրագրի (22 նոյեմբերի 1879, 15 հունվարի 1880) «Բյուզանդիոն» լրագրի (19 հունիսի 1905), E. Chartre-ի (De Beyrouth à Tiflis, pp. 11, 32), V. Cuinet-ի (Syrie, Liban et Palestine, pp. 82, 162, 307, 394) տվյալների։

[26] «Բյուզանդիոն», 28 ապրիլի 1908 թ.։

բանքադրամական հարաբերությունների զարգացմանն զուգընթաց քայքայում էր ապրում։ Բացի այդ, օսմանյան հողային օրենքները կալվածատերերին հնարավորություն էին ընձեռում հափշտակելու գյուղացիների սեփականությունը։ Պատմելով հայաբնակ Արամո գյուղի մասին, «Սիոնի» թղթակիցը հաղորդում է, որ մուգատեմ ֆեոդալական գերդաստանի մարդիկ «գյուղացի հայոց վերա քիչ-քիչ ազդեցություննին մեծցնելով, սկսած են բռնանալ, և անոնց ձեռքը գտնված բոլոր հայրենական կալվածքները և անշարժ սեփականությունները խլելով տիրած են»[27]։

Հայաբնակ գյուղերում ապրուստի հիմնական միջոց էին այգեգործությունը, ծխախոտագործությունը և շերամապահությունը։

Հալեպում, Դամասկոսում և մյուս քաղաքներում հայերն ավելի աշքի էին ընկնում չուլհակության, գորգագործության, ներկարարության, ոսկերչության, պղնձագործության, կաշեգործության, կոշկակարության, դեռձակության, ասեղնագործության և մի շարք այլ արհեստներում։ Հալեպի Քեհյան գորգագործական մանուֆակտուրայում ընդգրկված էին շուրջ 600 բանվոր, որոնց գործած գորգերը արտահանվում էին Եվրոպայի և ԱՄՆ-ի շուկաները[28]։

Բեյրութի հայ «Հանձնակատար-գործակատար» առևտրականներից ոմանք Բուրքիայի տարբեր քաղաքներում գործող առևտրական ձեռնարկությունների ներկայացուցիչներ էին, և միջնորդ օղակ էին հանդիսանում Եվրոպայի ու Սիրիայի միջև։ 1875 թ. Մարաշի հոլագյան առևտրական հիմնարկը սեփական գործակալներ ուներ միաժամանակ Մանչեստրում և Բեյրութում։ Բեյրութի Գալուստ Կյուլպենկյան հիմնարկությունը հանդես էր գալիս ոչ միայն որպես Ծովյանովի և Մանթաշևի Բաքվի նավթարդյունաբերական ընկերությունների արտադրանքի ներմուծողի, այլև Հաուրանի, Հոմսի, Համայի հացահատիկային կուլտուրաների արտահանողի դերում։ Դամասկոսում և Լաթակիայում հայ առևտրականները գործարար կապեր էին պահպանում եվրոպական ներմուծող-արտահանող հիմնարկների հետ[29]։

Հայերը որոշ դեր էին կատարում նահանգային պետական-վարչական ապարատում։ Լեռնային Լիբանանի ինքնավար մարզի ընդհանուր կառավարիչներից երկուսը եղել են Կ. Պոլսից գործուղված հայեր՝ Կարապետ Ալբինի Դաուդ փաշան (1861—1868) և Հովհաննես Գուլումյանի փաշան (1912—1915)։ Հայերը կարևոր պաշտոններ էին զբաղեցնում փոստ-հեռագրական, դրամաշրջության, մաքսատների և այլ վարչություններում։

Սիրիայում և Լիբանանում դեռևս հարատևում էին շահագործման ֆեոդալական ձևերը։ Հողատերերը գյուղացիներից ստանում էին թե՛ աշխատավճար, թե՛ արդյունավճար և թե՛ դրամավճար ռենտաս։ Սիրիայի ներքին գավառներում տիրապետում էր արդյունավճար ռենտան, իսկ ծովամերձ, հատկապես քաղաքներին հարող շրջաններում, որտեղ և տեղաբաշխված էր հայ գյուղացիների ճնշող մեծամասնությունը, գերիշխում էր դրամավճար ռենտան։ Դրամավճար ռենտայի առկայությունը, սրելով ֆեոդալ-կալվածատերերի և պետական

---

27 «Սիոն», 1866, էջ 100։

28 Տե՛ս «Բյուզանդիոն», 18 մարտի 1912 թ.։

29 Տե՛ս «Բյուզանդիոն», 12 դեկտեմբերի 1913 թ.։

աստիճանավորների ընչաքաղցածությունը, անմարդկային չափերի էր հասցնում գյուղացիության կեղեքումը։

Կային շուրջ մեկ տասնյակ ուղղակի և անուղղակի հարկեր, որոնք ծանրանում էին քաղաքային և գյուղական բնակչության վրա։ Գլխավորներն էին տասանորդը կամ աշարը, կալվածահարկը կամ էմլաք-ռեսմին, անասնահարկը կամ ագնամ-ռեսմին, եկամտահարկը կամ թեմեթթուն և ճանապարհահարկը կամ թոփրակ-բասանը[30]։ Հարկերի ծանրությունը պայմանավորված էր ոչ այնքան նրանց նոմինալ չափերով, որքան գանձման գիշատիչ ձևերով։ Հաթթը-հումայունից հետո էլ (1856 թ.) Սիրիայում և Լիբանանում շարունակվեց հարկային թասը, հարկերը տրվում էին աճուրդով։

Հարկահանները պատուհաս էին առհասարակ գյուղացիության գլխին։ Բայց նրանք առանձնապես սանձարձակ էին գործում քրիստոնյաներով բնակված գյուղերում։ Հյուսիսային Սիրիայի հայաբնակ գյուղերի վերաբերյալ մի հաղորդումում ասված է, որ հարկահանները որպես տասանորդ «չորսին մեկ կառնուն», իսկ ֆեոդալ-կալվածատերերը, «ըստ առաջին սովորության, խեղճ գեղացի հայոց ոսկորները կծծեն և բուրդին հետ մորթն ալ վիրավորելով կխուզեն»[31]։

Սիրիայի և Լիբանանի հայկական գաղութների հասարակական ներքին կյանքն ալեկոծվում էր դասակարգային բավական սուր պայքարով։ Հայ աղաների դասը, ինչպես գյուղում, այնպես էլ քաղաքում, սնվում էր հարկագանձման կապալներով և վաշխառուական գործարքներով, միահեծան տնօրինում էր ազգապատկան կալվածքները, հասարակական գումարները, համայնական գործերը և փորձում էր հավերժացնել դասային ժամանակավրեպ հարաբերությունները։ Սակայն եվրոպական պետությունների գաղութային էքսպանսիան, նրանց բերած տնտեսական ստրկացման ձևերը (կոնցեսիաներ, բանկեր, պարտքեր և այլն) խախտեցին դասակարգային ավանդական հարաբերությունները։ Առևտրադրամական հարաբերությունների և քաղաքային կյանքի զարգացման, աշխատավորների շահագործման ուժեղացման և սոցիալական շերտավորման հետևանքով քայքայվում էր հայ նահապետական ընտանիքը։ Ամենազոր աղաներին փոխարինելու էին գալիս բուրժուաառևտրականները։

Սահմանադրական-դեմոկրատական պայքարի մշտաբորբոք օջախ էր Հալեպ քաղաքը։ Էսնաֆները, Սասունից, Դիարբեքիրից և այլ գավառներից գաղթական պանդուխտ աշխատավորները բախման մեջ էին մտնում աղայական դասի հետ։

Ազգային սահմանադրության հռչակումից հետո նոր մղում ստացավ էսնաֆների և պանդուխտների պայքարը՝ կղերաաղայական դասի դեմ, որը խոչընդոտում էր Սահմանադրության իրագործումը Սիրիայում։ Այդ պայքարի գլուխ կանգնած էր բուրժուադեմոկրատական հայացքների տեր հրապարակախոս Հովհաննես Քյուրքճյանը։ Լինելով ժամանակի զարգացած մարդկանցից և գործուն պայքարի կողմնակից Քյուրքճյանը ոչ միայն կազմակերպում էր ստորին խավերի սահմանադրական-դեմոկրատական պայքարը,

---

[30] Տե՛ս E. Gannagé, La Reforme des Impôts directs au Liban et en Syrie, Beyrouth, 1947, p. 269—270.

[31] «Սիոն», 1866, էջ 100։

այլև կղերաաղայական դասի շահատակությունները մերկացնող հոդվածներ էր լույս ընծայում Կ. Պոլսի և Զմյուռնիայի հայկական մամուլում։ 1876 թ. Սահմանադրության կողմնակիցների պայքարը պսակվեց հաջողությամբ՝ Հալեպի, Անտիոքի, Բեյլանի, Քեսաբի և Քիլիսի թեմերը վերակազմվեցին Ազգային սահմանադրության սկզբունքներով։

Թուրքիայի «անհավատների» նման՝ Սիրիայի քրիստոնյաները, այդ թվում և հայերը, զրկված էին այնպիսի տարրական իրավունքներից, ինչպես դատարանում վկայություն տալը, եկեղեցու կոչնակ հնչեցնելը և այլն։ Թուրքական կառավարության և տեղական ֆեոդալների ճնշմանը, Սիրիայի և Լիբանանի աշխատավորական զանգվածները պատասխանում էին ազատագրական ակտիվ պայքարով։ 1876 թ. օսմանյան տիրապետության դեմ ելույթներ եղան Բեյրութում, Դամասկոսում, Սաիդայում, Տրիպոլիում և այլ վայրերում։

Ազգային-ազատագրական խմորումներ էին տեղի ունենում նաև Սիրիայի և Լիբանանի հայության շրջանում։ 1879 թ. հալեպաբնակ 2000 հայեր գրավոր դիմում հղեցին մեծ պետությունների Կ. Պոլսի դեսպաններին, պահանջելով Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի կենսագործումը[32]։ 1895—1896 թթ. կոտորածների ասպարեզ դարձավ նաև Հալեպի նահանգը։

1909 թ. Ադանայի կոտորածների հետ համարյա միաժամանակ հայերի կոտորած սկսվեց Հալեպի նահանգի տարբեր քաղաքներում ու գյուղերում[33]։ Անտիոքի ասպատակությունից հետո բաշիբոզուկների 30 հազարանոց ամբոխն ուղղություն է վերցնում դեպի Քեսաբ, որտեղ, սակայն, հանդիպում է հայ գյուղացիների դիմադրությանը։ Թշնամու գերակշռող ուժերի ճնշման ներքո Քեսաբի պաշտպանները, իրենց հետ վերցնելով ավանի բնակչությունը, ամրանում են ծովեզրյա Կարադուրան գյուղի մերձակայքում։ Թուրքերը կոտորում են տեղում մնացած ծերերին ու հիվանդներին, թալանում ու այրում տները, եկեղեցիներն ու դպրոցները[34]։ Այնուհետև բաշիբոզուկների խուժանը թեքվում է դեպի հյուսիս, Մուսա լեռան շրջանը և ավերի ենթարկում անպաշտպան գյուղերը։ Զգալի թվով հայեր կոտորվեցին նաև Կրըկ-Խանում, Բեյլանում, Մարաշում և Կիլիսում, Օսմանիեում, Համիդիեում և նրանց շրջակա գյուղերում։ Հալեպի «Աթ-Թաղադդում» արաբական թերթը նույնպես կոտորածների կազմակերպիչ էր համարում երիտթուրքական կառավարությանը[35]։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Սիրիայի և Լիբանանի հայությանը վիճակվեց միևնույն դառն ճակատագիրը, ինչ բովանդակ արևմտահայությանը։ Դամասկոսում մի խումբ հայեր մահապատժի ենթարկվեցին, Բեյրութում հայ առևտրականների ունեցվածքը և ազգապատկան կալվածները բռնագրավվեցին, իսկ ս. Նշան վանքը հիմնահատակ կործանվեց[36]։ Տարբեր շրջաններից հայ ազգաբնակչությանը քշում էին Հալեպ, այնտեղից էլ՝ Դեյր-էզ-Զորի անապատը։ Զանգվածային սպանդից փրկվեցին աննշան թվով հայեր[37]։

32 Տե՛ս «Մասիս», 22 նոյեմբերի 1879 թ.։

33 P. Gacguot. Antioche. Beyrouth, 1931, t. II, p. 313–314.

34 Տե՛ս Ա. Թեմիրյան, Քեսապ (1909—1946), Բեյրութ, 1956, էջ 56—57։

35 Տե՛ս «Բյուզանդիոն», 25 օգոստոսի 1909 թ.։

36 Տե՛ս Ս. Հ. Վարժապետյան, Հայերը Լիբանանի մեջ, Բեյրութ, 1951, էջ 434—435։

37 Տե՛ս «Геноцид армян...», стр. 426, 431—432.

Կիլիկիայում ֆրանսիական մանդատի ներքո հայկական ինքնավար պետություն ստեղծելու վերաբերյալ խոստումները 1918 թ. վառ հույսեր բորբոքեցին ցեղասպանությունից փրկված հայերի շրջանում։ Սիրիայի և Միջագետքի անապատներից նրանք դիմում էին Հալեպ, սակայն տեղափոխման միջոցների պակասը դանդաղեցնում էր նրանց հոսքը դեպի հյուսիս՝ Կիլիկիա։ 1918 թ. վերջերին Հալեպում կուտակվել էր հայ գաղթականների հսկայական բազմություն, որը հաճախ հանդես էր գալիս քաղաքական ելույթներով։ Դեկտեմբերի 4-ի ժողովրդական միտինգի մասնակիցները, թվով ավելի քան հիսուն հազար մարդ, պահանջում են հռչակել Կիլիկիայի անկախությունը, կազմել հայկական ժամանակավոր կառավարություն և այլն[38], Սակայն ֆրանսիական կառավարությունը, գործարքի մեջ մտնելով Թուրքիայի հետ, ի դերև հանեց հայերի հույսերը։ Կիլիկիան հանձնվեց թուրքերին և հայերի գաղթ սկսվեց Սիրիա, Լիբանան ու արաբական մյուս երկրները։

Սիրիայի և Լիբանանի հայկական գաղութներն ստեղծել են ազգային մշակույթի արժեքներ, որոնք սակայն, բնականոն զարգացման հնարավորություն չեն ունեցել տիրող սոցիալ-քաղաքական անբարենպաստ պայմաններում։ Համեմատաբար խոշոր առաջընթաց քայլ է կատարվել մատաղ սերնդի ուսման ու դաստիարակության ասպարեզում։ Տարբեր քաղաքներում և գյուղական վայրերում գործում էին տարրական դպրոցներ, որոնք որոշակի դեր էին կատարում ժողովրդի լուսավորության գործում։ Ուսումնադաստիարակչական մակարդակով բավական բարձր էին կանգնած Հալեպի Ներսիսյան վարժարանը և Զմմառի հայ կաթոլիկական վանքի դպրոցը։ Գործում էին նաև մի շարք մշակութային միություններ, որոնցից հիշատակության արժանի են Հալեպի «Ռուբինյան միությունը» (հմդր. 1840-ական թթ.) «Ուսումնասիրաց ընկերությունը» (1880), «Տիկնանց Մարիամյան ընկերությունը», «Դպրոցասեր միությունը» (1894), Դամասկոսի «Ներսիսյան ընկերությունը» (1849), Քեսաբի «Ուսումնասիրաց Միությունը» (1910) և այլն։

1913 թ. Հալեպում և մյուս քաղաքներում տոնվեց հայ գրերի գյուտի 1500-ամյակը։ Վերսկսվեց հայ պարբերական մամուլի կյանքը, որը 1867 թ. «Յռաթ» լրագրի խափանումից հետո ընդհատվել էր։ Հալեպում լույս տեսան «Աղբյուր» (1913), «Հայ ձայն» և «Տարագիր» (1918) պարբերականները։ Ասպարեզ իջան նաև թատերախմբեր, երգչախմբեր և այլն։

4. ԵԳԻՊՏՈՍ

Եգիպտահայ գաղութը զգալի չափով ստվարացավ XIX դարի վերջին և XX դարի սկզբին, հատկապես հայկական ցեղասպանությունից հետո՝ 1915, 1917 թթ. զգալի թվով գաղթականներ ընդունելով Արևմտյան Հայաստանից, Կիլիկիայից և Թուրքիայի այլ շրջաններից։ 1894 թ. Եգիպտոսում հաշվվում էր 9200[39], իսկ 1917 թ.՝ 17.225 հայ[40], որոնց ճնշող մեծամասնությունը տեղաբաշխված էր Կահիրեում և Ալեքսանդրիայում։ Փոքրաթիվ համայնքներ կային նաև Զագազիգում, Գիզեում, Թանթայում, Բենի Սուեֆում, Ֆայումում, Մինեայում, Դակահլիեում և այլ վայրերում։

---

38 Տե՛ս «Պայքար», 11 ապրիլի 1953 թ.։

39 Տե՛ս «Եգիպտահայ տարեցույց», Կահիրե, 1914, էջ 220։

40 Տե՛ս Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. ԳԽՀԷ, ԾԲ «Տեղեկագիր», 1924, էջ 5—6։

Հայերը բավական կարևոր դեր էին խաղում Եգիպտոսի տնտեսության տարբեր բնագավառներում։ Նախաձեռնողական «Մաթոսյան անանուն ընկերությունը» համարվում էր եգիպտական սիգարետի խոշորագույն արտադրողներից մեկը։ Նրա հիմնադիրներն էին Եվդոկիայից գաղթած ծխախոտի առևտրական Հովհաննես և Կարապետ Մաթոսյանները։ 1900 թ. ընկերության կապիտալը կազմում էր 100.000, իսկ 1901—1902 թթ.՝ 150.000 եգիպտական ֆունտ։ Ընկերությունը ուներ չորս խոշոր գործարաններ, առաջինը Գիզեում, երկրորդը՝ Ալեքսանդրիայում, երրորդը՝ Քանթայում և չորրորդը, որը հայտնի էր «Գևորգ Սարգսյան և ընկ.» անվամբ, Ասիութում[41]։ Եգիպտոսում սիգարետի արդյունաբերության զարգացման գործում ճանաչված էին նաև Գ. և Կ. Մելքոնյան, Կամսարական, Իփեքյան, Մանոսյան, Փեմբեջյան, Տուտյան-Ասլան և ուրիշ ձեռնարկատերեր։

Հայերը կարևոր դեր էին խաղում նաև մետաղամշակման մեջ։ Նրանք արտադրում էին մետաղյա զանազան առարկաներ, որոնք գործածվում էին ինչպես կենցաղում, այնպես էլ արտադրության մեջ։ Բավական լայն հնարավորություններ ունեին Բաղջյանի, Կոկալյանի, Հակոբյանի ձուլարանները։ Վերջինս կառուցում էր գյուղատնտեսական գործիքների պատրաստման և վերանորոգման, ինչպես նաև արտեզյան ջրհորներ փորելու սարքերի պատվերներ։ Մինչև անգամ նա հնարել և պատենտավորել էր արտեզյան հորեր փորելու մի նոր սիստեմ, որն արժանացել էր պետական խրախուսանքի[42]։

Արհեստագործության ասպարեզում աչքի էին ընկնում հայ ոսկերիչները։ Հռչակավոր Խան-ալ Խալիլ շուկայի հայ ոսկերիչներն արտադրում էին ոչ միայն տեղական, այլև եվրոպական շուկայի համար։ Հայ վարպետները բարձր զարգացման էին հասցրել փորագրության արհեստը փայտի, քարի, ցինկի և պողպատի վրա։

Եգիպտոսում հայերն ունեին մի քանի հարյուր առևտրական հիմնարկներ, որոնցից խոշորագույնները՝ «Գևորգ Թոփալյան», «Սարգիս Մանուկյան և որդիք», «Պաքրդջյան եղբայրք», «Ա. Իփլիկջյան», «Գևորգ Մուրադյան և ուրիշներ Կ. Պոլսի և Զմյուռնիայի համանուն առևտրական հիմնարկների մասնաճյուղերն էին։ Եգիպտահայ առևտրականները գործարար կապեր պահպանելով Անգլիայի, Ֆրանսիայի, Թուրքիայի շուկաների հետ, ներմուծում էին բազմատեսակ ապրանքներ։ 1913 թ. տվյալներով Եգիպտոսի ընդհանուր ներմուծումների շուրջ $^1/_5$-ը բաժին էր ընկնում հայ առևտրականներին[43]։

Եգիպտոսի տարբեր նահանգներում կային ավելի քան քառասուն հայաբնակ էզբեներ կամ գյուղեր, որտեղ մշակվում էր բամբակ։ Հայ խոշոր կալվածատերերի մեջ աչքի էին ընկնում Յագուբ Արթինը, Անտուան Աշրգյանը, Պողոս Սաֆարյանը, Խալիլ Խայյաթը, Պողոս Կարապետը, Նուբարյան գերդաստանի անդամները և ուրիշներ։ Նուբար փաշայի միայն Թամիեի պլանտացիաները զբաղեցնում էին 12.000 ֆեդդան (1 ֆեդդան=0.42 հեկտ.) տարածություն, որտեղ աշխատում էին ավելի քան 1000 ֆելլահներ և որոշ թվով հայ

---

41 Տե՛ս Ա. Դաբաղյան, Հայ տարրը Եգիպտոսի պետական, տնտեսական և առևտրական ասպարեզներուն մէջ («Եգիպտահայ տարեցույց», 1914, էջ 180)։

42 Տե՛ս նույն տեղում, էջ 227։

43 Տե՛ս նույն տեղում, էջ 222։

ծառայողներ։ Ֆայումի երկաթուղին հատկապես երկարաձգված էր մինչև Թամին՝ հայ կալվածատիրոջ բամբակի բերքը տեղափոխելու համար[44]։

Բազմաթիվ հայեր ծառայում էին պետական և մասնավոր հիմնարկներում։ Կահիրեում, Ալեքսանդրիայում և մյուս քաղաքներում գործում էին զգալի թվով հայ բժիշկներ, դեղագործներ, իրավաբաններ, ճարտարապետներ և ուրիշ մասնագետներ։

Եգիպտոսի բնակչության նման եգիպտահայ հասարակությունը բաժանված էր երկու հակադիր բևեռների՝ շահագործողների և շահագործվողների, որոնցից յուրաքանչյուրն իր հերթին մասնատված էր սոցիալական և տնտեսական տարբեր դրություն ունեցող խավերի։

XIX դարի վերջերից մինչև առաջին համաշխարհային պատերազմի տարիները, եգիպտահայ աշխատավորների մեծագույն մասը կազմում էին Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի մյուս շրջաններում պարբերաբար կրկնվող զանգվածային կոտորածներից խուսափած «ավուր հացի» կարոտ բազմահազար գաղթականներն ու պանդուխտները։ Նրանք ենթարկվում էին ինչպես պետական զանազան աստիճանավորների, այնպես էլ հայ մեծատունների կամայականություններին։

Կահիրեի մի խումբ հայ աշխատավորների կողմից Կ. Պոլսի Հայոց պատրիարքին հղած բողոքագրում ասված էր. «Միապետական նենգավոր դրության մը լուծին տակ կճնշվինք։ Ավելի ցավալին այն է, որ այս դրության ոգվույն հակառակ արդարություն և իրավունք պահանջելու համար ձայն չի կրնար հանել որևէ մեկը, վասնզի աքսորանաց և դավադրության սպառնալիքներ կարկըտորեն կտեղան այդպիսվույն գլխույն»[45]։

Եգիպտահայ մեծատունները կառչած էին համայնական գործերի կառավարման մյութվելլիական կամ «ազգապետական» դրությանը։ Թեև գաղութը օգտվում էր Ազգային սահմանադրության իրավունքներից, սակայն այնտեղ տիրապետում էին ոչ թե դեմոկրատիայի սկզբունքները, այլ մյութեվելլիական բռնությունն ու կամայականությունները։ Մյութեվելլի փաշաները ձգտում էին միահեծան վարել ազգային գործերը[46], սոցիալական հարաբերություններում պահպանելով դասային արտոնությունները։ Կար ենթեղեցուց և գերեզմանատնից օգտվելու հատուկ կարգ, որով արհեստականորեն ընդգծվում էր տիտղոսավոր մեծատունների «ազնվազարմությունը»[47]։

1890-ական թվականներից, երբ եգիպտահայ գաղութը շարունակ աճում էր նոր գաղթականների հոսքից, Սահմանադրության կողմնակիցների պայքարը վերելք ապրեց։ Եր. Օտյանը նշել է, որ Եգիպտոսում հաստատվեց «Հայություն մը, որ ոչ ճանաչեր զԻսրայել։ Ասոնք սահմանադրությամբ սնած ու մեծցած՝ կուզեին նույն կարգ ու կանոնը գործադրված տեսնել Եգիպտոսի մեջ ալ»[48]։ Թուրքական հալածանքներից Եգիպտոսում ապաստանած մտավորականները՝ Արփիար Արփիարյանը, Վահան Թեքեյանը, Սմբատ Բյուրատը, Հարություն Ալփիարը և ուրիշներ, մերկացնում էին եգիպտահայ մեծատունների հակասահմանադրական ընթացքը և հաճախ ընկնում նրանց գործակալների հար-

44 Տե՛ս «Մուրճ», 1907, № 1, էջ 60—61։
45 «Մայիս», 21 հոկտեմբերի 1967 թ.։
46 Տե՛ս «Օրենք», Ալեքսանդրիա, 1905, № 2, էջ 1։
47 Տե՛ս ԳԱԲ արխիվ, Ազատյանի ֆոնդ, բ. 12, վ. 9416, 9439, 9444։
48 Եր. Օտյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 284։

վածների տակ։ Այսպես, 1905 թ. մարտի 9-ին հարձակում է կատարվել սահմանադրական պայքարի օրգան «Օրենքի» տպարանի վրա, մարտի 11-ին բռնության է ենթարկվել Երվանդ Օտյանը[49]։

Եգիպտահայերն առավել աշխուժությամբ հանդես էին գալիս Բեռլինի պայմանագրի 61-րդ հոդվածի կենսագործման օգտին։ Այդ գործում առաջատար դեր էր կատարում «Հառաջդիմասեր» ընկերությունը, որի դրոշի ներքո համախմբված երիտասարդները, ոգեշնչվելով Մ. Նալբանդյանի, Հ. Սվաճյանի գաղափարներով, պայքարում էին սուլթանական բռնակալության դեմ և Ռուսաստանից էին ակնկալում հայ ժողովրդի ազատությունն ու անկախությունը։ 1888 թ. օգտվելով մի շարք ռուս բարձրաստիճան գործիչների Կահիրեում գտնվելու պատեհությունից, նրա ղեկավարները հրապարակային ուղերձով բացահայտեցին հայ ժողովրդի ակնկալությունները Ռուսաստանից[50]։ 1890 թ., երբ ռուսական մեծ իշխան Նիկոլայը Եգիպտոս այցելեց, ընկերությունը մի հանրագիր մատուցեց նրան, խնդրելով միջնորդել ցարի առջև, որպեսզի նա «իր հզոր ձայնը» բարձրացնի 61-րդ հոդվածի գործադրության օգտին[51]. «Հառաջդիմասերի» ռուսասիրական ելույթները զայրույթ էին պատճառում եգիպտահայ մեծատուններին։ Նրանց հայցով եգիպտական ոստիկանությունը ընկերության ղեկավարներին կալանավորեց և դատարան հանձնեց։ Այնուհետև ընկերությունը ոստիկանության ճնշման ներքո, դնալով թուլացավ, պառակտվեց և ի վերջո կազմալուծվեց։

1897 թ., հնչակյան կուսակցության պառակտումից հետո, վերակազմյալ հնչակյանները, իրենց կենտրոնը հաստատելով Կահիրեում, սկսեցին տոն տալ եգիպտահայ քաղաքական կյանքին։ 1899 թ. մայիսին Լահեի «զենքընկեցության վեհաժողովի» օրերին, Կահիրեում և Ալեքսանդրիայում գումարվեցին միտինգներ, որտեղ ճառերով հանդես եկան Սմբատ Բյուրատը և ուրիշներ, քվեարկվեց վեհաժողովին ուղղված բանաձև, որով պահանջվում էր «Հայաստանի մեջ իրական բարենորոգումներ ապահովել եվրոպական տերության հսկողության տակ»[52]։

Բալկանյան պատերազմով նոր իրադրություն ստեղծվեց Հայկական հարցի համար։ Եգիպտահայ հասարակական գործիչները 1912 թ. դեկտեմբերի 13-ին Եգիպտոսից հեռագիր-դիմումներ ուղարկեցին ռուսական ցարին և Արևմուտքի տերություններին՝ խնդրելով պաշտպանել Թուրքիայի հայերի կյանքը, ունեցվածքը և պատիվը[53]։

Երբ բալկանյան առաջին պատերազմը մոտենում էր ավարտին, եգիպտահայերը կազմեցին «Միջկուսակցային խառն մարմինը», որը կազմակերպեց մի շարք միտինգներ, նպաստելով Հայկական հարցի պրոպագանդմանը և բավական սերտ կապեր ստեղծեց արաբական ազգային-ազատագրական շարժման գործիչների հետ։ 1913 թ. հունիսի 8-ին Կահիրեի Պրենտանիա թատրոնում կազմակերպված միտինգում ճառով հանդես գալով, Միկսիայի

---

49 Տե՛ս նույն տեղում, էջ 369։
50 Տե՛ս «Արմենիա», 3 նոյեմբերի 1888 թ.։
51 Տե՛ս «Արմենիա» 17 դեկտեմբերի 1890 թ.։
52 Տե՛ս «Փյունիկ», Կահիրե, 1899, էջ 74։
53 Տե՛ս Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 680, թ. 6։

ազգային-ազատագրական կոմիտեի ներկայացուցիչը՝ շեյխ Ռաշիդ Ռիդան ընդգծեց հայ-արաբական համագործակցության անհրաժեշտությունը[54]։

Համաշխարհային պատերազմի տարիներին եգիպտահայ գաղութը օգնության ձեռք մեկնեց ցեղասպանությունից հողոպրած բազմահազար հայ գաղթականներին։ Այդ նպատակով 1915 թ. վերջերին ստեղծվեց «Եգիպտահայ նպաստամատույց մարմինը», որը գործեց մինչև 1920 թ., հանգանակելով շուրջ 5 միլիոն եգիպտական դահեկան՝ Կովկասում, Պորտ Սաիդում, Բաղդադում, Դերաայում և այլ վայրերում ապաստանած հայ գաղթականների համար[55]։

Եգիպտահայ գաղութը զգալի դեր կատարեց նաև Պաղեստինում և Սիրիայում ֆրանսիական դրոշի ներքո թուրքերի դեմ մարտնչող Արևելյան լեգեոնի ստեղծման գործում։ 1917 թ. նոյեմբերի 11-ին Կահիրեում կազմվեց «Հայ ազգային միությունը», որը և ստանձնեց հայ կամավորական շարժման դեկավարությունը։

Եգիպտահայերն աչքի էին ընկնում նաև պետությանը մատուցած ծառայություններով։ Այդ ասպարեզում առանձնապես հիշատակության արժանի են Նուբար փաշան, Առաքել Ապրոյանը, Տիգրան դ'Ապրո Բաղրատունին, Յակուբ Արթինը, Պողոս Նուբարը և ուրիշներ։ Անկասկած այդ գործիչներից ամենանշանավորը Նուբար փաշան էր (1825—1899)։

Նուբար փաշան եգիպտոսում անցկացրեց մի շարք բարենորոգումներ։

Եգիպտական բուրժուազիայի շահերից էր բխում Նուբարի[56] անվան հետ առնչվող դատական ռեֆորմը։ Ժամանակի ռեալ պայմաններում միջազգային կամ խառն դատարանների ստեղծումն առաջադիմական քայլ էր։ Դրանցով որոշ չափով սահմանափակվեց եվրոպացիների միջամտությունը եգիպտոսի ներքին գործերին։

Եգիպտահայ հասարակական-բարեգործական կյանքում աչքի ընկնող դեր է կատարել նաև Նուբար փաշայի որդին՝ Պողոս Նուբարը։ Նա գլխավորել է հայ ազգային պատվիրակությունը Փարիզում և նրա ջանքերով հիմնադրվել է «Հայ բարեգործական ընդհանուր միությունը»։

Եգիպտահայ գաղութում բավական աշխույժ էր մշակութային կյանքը։ Եգիպտահայերը ստեղծել են դպրոցներ, մշակութային ընկերություններ, գրադարաններ, ակումբ-ընթերցարաններ, մամուլի օրգաններ, տպարաններ, թատերական և երաժշտական խմբեր, ճարտարապետական հուշարձաններ և մշակութային այլ արժեքներ։

Մինչև 1880-ական թվականները Եգիպտոսում գործում էր երեք հայկական դպրոց՝ շուրջ 120 աշակերտով։ 1917 թ. նրանց թիվը հասավ 11-ի, որոնցում սովորում էր 1590 աշակերտ։ Հատկապես աչքի էր ընկնում Կահիրեի Ներսիսյան դպրոցը, որը 1897 թ. վերանվանվեց Գալուստյան վարժարան։ 1914—1917 թթ. նրա մանկապարտեզի և ութնամյա նախակրթարանի արական ու իգական բաժիններում սովորում էր ավելի քան վեց հարյուր երեխա։ Ալեքսանդրիայի Պողոսյան կամ Նախկին Պողոս-Բեյլյան դպրոցը ևս ուներ ման-

---

54 Տե՛ս նույն տեղում, գ. 703, թ. 4—5։

55 Տե՛ս «Ազատ», 12 և 13 մայիսի, 1926 թ.։

56 Եգիպտացիները բարձր են գնահատել Նուբարի ծառայությունները։ Կահիրեի փողոցներից մեկը նրա անունով կոչվել է Շարա Նուբար, իսկ Ալեքսանդրիայում կանգնեցվել է նրա արձանը։

կապարտեզ՝ երկամյա շրջանով և ութնամյա նախակրթարանի արական ու իգական բաժիններ։ Երկամյա, երբեմն էլ եռամյա դպրոցներ գործում էին Զագազիգում, Հելիոպոլսում, Բանհայում և այլ վայրերում։ Գործում էին նաև կաթոլիկական, հայ ավետարանական համայնքների և մասնավոր անձանց կողմից հաստատված մի շարք դպրոցներ։

Եգիպտահայ գաղութի կրթական և կուլտուր-կենցաղային մակարդակի բարձրացմանն զգալի չափով նպաստում էին մշակութային ընկերություններ։ Դրանք խիստ բազմաթիվ էին և նրանց ակումբ-ընթերցարանների ու գրադարանների ցանցը տարածվում էր Կահիրեից Ալեքսանդրիա, Զագազիգ, Բանհա և այլ քաղաքներ։ Նրն շատերը կարճատև կյանք են ունեցել, ապա մի քանիսը գոյատևում են մինչև այսօր։ Վերջիններից են Հայ բարեգործական ընդհանուր միությունը (հիմնդ. 1906) և Տիգրան Երկաթի անվան միությունը (1904)։ Եգիպտահայերը ստեղծել են նաև երկու հրատարակչական ընկերություն՝ «Հրատարակչական ընկերություն Եգիպտոսի հայոց» (1908) և «Հայկական մամլո ընկերություն» (1911), որոնք, սակայն, երկար չեն գործել։

Եգիպտահայ պարբերական մամուլի կյանքը վերսկսվեց «Արմավենի» լրագրի դադարելուց շուրջ քառորդ դար հետո՝ 1889 թ., երբ Ալեքսանդրիայում լույս ընծայվեց «Նեղոս» շաբաթաթերթը և այնուհետև զարգացավ բավական ուժեղ թափով։ Մինչև 1917 թ. եգիպտահայերը լույս են ընծայել շուրջ 60 անուն հայերեն, հայատառ թուրքերեն, թուրքերեն, ֆրանսերեն և անգլերեն պարբերականներ, որոնք հրատարակչական բնույթով խիստ այլազան էին, ընդ որում մի քանիսը օրաթերթ էին, մնացյալները՝ երկօրյա, շաբաթաթերթ, կիսամսյա, ամսագիր, տարեգիրք և այլն։ Եգիպտահայ լավագույն պարբերականները՝ «Փյունիկը» (Սմբատ Բյուրատ), «Ազատ խոսքը» (Երվ. Օտյան), «Շիրակը» (Արփիար Արփիարյան, Վահան Թեքեյան) և այլն, պայքարում էին հայկական կյանքում առաջադեմ, դեմոկրատական գաղափարների արմատավորման համար։

Կահիրեում և Ալեքսանդրիայում գործում էին ավելի քան քսան հայկական տպարաններ։ Դրանցից առանձնապես աչքի էին ընկնում «Արարատ», «Մխիթարյան», «Պերպերյան», «Հայկական» և «Նաղաշեթյան» տպարանները, որոնք հագեցված էին կատարելագործված մեքենաներով։

Վերնիք տպրեց նաև եգիպտահայ թատերական և երաժշտական կյանքը։ Կահիրեում և Ալեքսանդրիայում, բացի տեղական թատերախմբերից, հանդես էին գալիս նաև հյուրնկ դերասաններ (Սիրանույշը, Արմեն Արմենյանը, Վահրամ Փափազյանը և ուրիշներ)։ Եգիպտահայ երաժշտական կյանքում խոշորագույն իրադարձություն էին Կոմիտասի (1911) և Արմենակ Շահմուրադյանի (1912) համերգները։

5. ԵԹՈՎՊԻԱ

Մինչև XIX դարը բավականին սերտ հարաբերություններ են եղել հայերի և եթովպացիների միջև։ Հայ վաճառականներն իրենց ձեռքն էին վերցրել երկրի ներքին և արտաքին առևտրի մի մասը։ Բազմաթիվ եթովպահայեր գրավել են պետական պաշտոններ։ Այնպիսի կարևոր օղակ, ինչպիսին արքունի գանձարանի վարչությունն էր XIX դարի առաջին կեսից գտնվում էր հայերի ձեռքում։ Գանձապետների պաշտոնում իրար են հաջորդել Սելիֆ Ուտաան,

Հովհաննես Թովմաճյանը, Պողոս Թովմաճյանը և ուրիշներ։ XIX դարում եթովպական արքունիքում մեծ հեղինակություն են վայելել Եղիա Ենովքը՝ արքունիքի թարգմանիչը և կայսեր խորհրդականը, Պետրոսը՝ Եթովպիայի դեսպանը մի քանի երկրներում և ուրիշներ։

Եթովպիայի հայ բնակչությունը սկսում է ստվարանալ XIX դարի երկրորդ կեսից, երբ Թուրքիայում հայ ժողովրդի համար ստեղծված ծանր պայմանների հետևանքով գաղթականների նոր հոսանքներ են գալիս Եթովպիա և աշխուժություն մտցնում գաղթօջախում։

Նոր գաղթող հայերի մեծ մասը արհեստավորներ և գյուղացիներ էին, առանձնապես մեծ թիվ էին կազմում ոսկերիչները, զինագործները և երկաթագործները։ Հայ արհեստավորները Եթովպիայում զբաղվում էին նաև փղոսկրի մշակությամբ։

Հայ արհեստավորները աշակերտ էին վերցնում նաև եթովպացիներին և արհեստ սովորեցնում[57]։ Նշելի է հատկապես Տիգրան Հեպեյանի գործունեությունը, որի ջանքերով տասնյակ եթովպացիներ սովորել են ոսկերչություն և այդ արհեստը տարածել երկրում։

Ավելի քան քսան տարի Եթովպիայի գլխավոր ճարտարապետն էր Գրիգոր Հովեյանը, որը հայտնի էր նաև Ֆրանսիայում, Բրազիլիայում և այլուր։ Նրա կառուցած բազմաթիվ շենքերը, հատկապես առողջապահական հիմնարկները, մինչև օրս աչքի են ընկնում Եթովպիայի զանազան քաղաքներում։ Ճանաչված ճարտարապետներից էր Մինաս Խերպիկյանը։ Նրա հատակագծերով կառուցվել են բազմաթիվ ճանապարհներ, կամուրջներ և այլ կառույցներ։

Հայ առևտրականները ներմուծում էին երկաթեղեն, զենք, զինամթերք, մետաքս, կապար, բամբակեղեն, ապակեղեն, ներկեր, զանազան մեքենաներ, գործիքներ և արտահանում էին կաշի, մորթեղեն, սուրճ և այլն։ Հատկապես մեծ էր հայ առևտրականների դերը զենքի և ռազմամթերքի մատակարարման ասպարեզում։ Սկսած XIX դարի վերջից, տարիներ շարունակ, հայերի ձեռքում էր գտնվում եթովպական բանակի զենքի մատակարարման գործը։

Երբ հիմնվեց նոր մայրաքաղաքը՝ Ադիս-Աբեբան (1885) և առաջացան որոշ դժվարություններ հաղորդակցության ու մատակարարման գործում, հայ վաճառականներն առաջիններից էին, որ հմտորեն կազմակերպեցին ապրանքների փոխադրումը Ադիս-Աբեբա Դերեդավա-Ջիբութի գծով՝ ստեղծելով անխափան կապ երկրի կենտրոնի, Կարմիր ծովի և Ադենի ծոցի միջև[58]։ Այդ գործունեությունը է՛լ ավելի բարձրացրեց նրանց հեղինակությունը տեղացիների ու կառավարության առջև։

Անձնվեր և հավատարիմ ծառայության համար բազմաթիվ հայեր արժանացել են եթովպական կառավարության բարձր շքանշանների և պարգևների՝ «Սողոմոնյան» շքանշանի, որը շնորհվում էր միայն թագավորական ընտանիքի անդամներին։

Եթովպիայի անկախության համար մղած պայքարի պատմության մեջ մեծ համբավ ուներ Սարգիս Թերզյանը, որը հայտնի է Սարգիս Թըլլը («մեծ») մականունով։ Նա Եթովպիա էր եկել 1882 թ. սկզբում, հաստատվել Հարարում և զինվորական ծառայության մտել Մենելիք թագավորի բանակում։ Պա-

---

57 Տե՛ս Հայկ Պատապան, Արդի Եթովպիա և հայ գաղութը, Վենետիկ, 1930, էջ 268—269։

58 Տե՛ս Գ. Արաբեան, Աբեսինիայի հայ գաղթականութիւնը, «Մուրճ», 1904, № 7, էջ 66։

տերազմներում ցուցաբերած քաջության և ձեռներեցության համար նշանակվել է Կելեսայի և Բեյոկարոպայի կարևոր շրջանների կառավարիչ։

Եթովպիայի արևելյան շրջանները միավորելու նպատակով Մենելիք կայսր կատարած արշավանքների ժամանակ նորից է դրսևորվել Թերգյանի ռազմական տաղանդը և սոմալիների հակաեթովպական ելույթները զսպելուց հետո, Մենելիք II-ը նրան է հանձնարարում Հարար քաղաքի գրավումը, որն այն ժամանակ գտնվում էր էմիր Աբդուլլայի գերիշխանության տակ։ Թերգյանը, մի խումբ երիտասարդներով գիշերը հարձակվում և գրավն առանց կռվի դինաթափում է քաղաքը պաշտպանող կայազորը և հնարավորություն ստեղծում Մենելիք կայսերը իր զորքերով մտնելու քաղաք։ Այս հաղթանակից հետո, տարիներ շարունակ Թերգյանը վարել է նախկին, Կասուլայի, ապա Կելեսայի կառավարչի պաշտոնները՝ հակելով երկրի ապահովությանն ու անկախությանը սոմալիների անդադար արշավանքներից։

Թերգյանն օժտված էր նաև դիվանագիտական մեծ շնորհով։ Նա մշտապես վարել է Լոնդոն, Բեռլին, Վիեննա, Հռոմ, Բրյուսել և այլուր ուղարկվող եթովպական դիվանագիտական, առևտրական պատվիրակությունների դեկավարությունը։ Նա է առաջին անգամ կազմակերպել Եվրոպայից մեքենաների ներմուծումը, երկաթգծի կառուցումը Ջիբութի—Ադիս-Աբեբա գծով և ապրանքների տեղափոխումը երկաթուղով։

Եթովպիայում հաստատված հայ գաղթականները միշտ կապ են պահպանել հայրենիքի հետ։ Սկսած 1913 թ., եթովպահայերը բազմիցս հանդանակություն են հավաքել և ուղարկել հայ սովյալներին։

1915 թ. եթովպիայի մի շարք քաղաքներում հայ աղետյալներին օգնելու նպատակով կազմակերպվել են «Հայրենակցական միություններ», որոնք հավաքել են հայ գաղթականության բնդունման, աշխատանքի տեղավորման հոգսը[59]։ Եթովպիայի կայսրը 1917 թ. Երուսաղեմում եղած ժամանակ որդեգրել և իր հետ Ադիս-Աբեբա է տարել 40 հայ որբեր։ Այս խումբը հայանի դարձավ «Քառասուն մանկունք» անունով և կազմից կայսերական նվագախմբի կորիզը։ Խմբի դեկավար Գ. Նալբանդյանի գրչին է պատկանում Եթովպիայի պետական հիմնի երաժշտությունը։ Հետագայում այս «մանկանց» մի մասը պետական բարձր պաշտոնների հասավ։

XX դարի 10—20-ական ԹԹ. հայկական գաղթօջախներ կային Եթովպիայի Դերե-Դավա, Հարար, Ջիբութի և այլ քաղաքներում։ Դերե-Դավայում հայերը ակտիվորեն մասնակցում էին տեղի երկաթուղու կառուցմանը։ Հայ հարմունքն այստեղ ստվարացել է 1915—16 ԹԹ.։ Այդ թվականներին էլ կազմվել է վարչական մարմին, կառուցվել փոքրիկ մի մատուռ[60]։ Հարարում հայերը հիմնավորվել են համեմատաբար ավելի վաղ՝ 1895 թվականից։ Այստեղ թուրքական ջարդերից ազատված հայերը դարձան այն կորիզը, որի շուրջ հետագայում համախմբվեց հայ գաղթօջախը։ 1916 թ. Հարար ներգաղթեցին 200 հայ նոր բնակիչներ։

Այս գաղթօջախների հայերի մեծ մասը արհեստագործներ էին։ Հետագայում եթովպահայ համայնքները հիմնեցին իրենց դեկավար մարմինը՝ «Եթով-

---

59 Տե՛ս Հայկ Բաբաբան. նշված աշխ., էջ 270։
60 Տե՛ս նույն տեղում։

պահայ գաղութին ժողովը», որն ընտրվում էր եթովպահայ ընդհանուր ազգային ժողովի կողմից՝ 4 տարին մեկ անգամ և բաղկացած էր 7 հոգուց։

6. ՍՈՒԴԱՆ

Զնայած հայերը դարեր շարունակ ապրել են Սուդանի հարևան Եգիպտոսում և Եթովպիայում, սակայն մինչև XIX դ. 70-ական թվականները մշտական բնակություն չեն հաստատել այնտեղ։ Գաղթավայրի կյանքն սկսել է աշխուժանալ անգլո-եգիպտական նվաճումներից հետո։ Սուդանում հաստատվող հայերը մեծ մասամբ եկել են Եգիպտոսից և հարևան երկրներից։ Այս է պատճառը, որ սուդանահայ գաղթօջախը երբեմն համարվում է նաև եգիպտահայ գաղթօջախի մի ճյուղը։

Հայերն սկզբում բնակվում էին Խարթումում և Օմդուրմանում, ապա ցրվում են երկրով մեկ։ Հայկական փոքրիկ գաղթօջախներ կային նաև Գեդեբեֆ, Սինար, էլ-Օբեյդ և այլ քաղաքներում։ Տարբեր երկրներից գաղթած հայերը ներգրավվում էին երկրի առևտրական-արհեստագործական կյանքի մեջ։ Կային նաև փոքր թվով բժիշկներ, գյուղատնտեսներ, զինվորականներ, շինարարներ, պաշտոնյաներ և այլն։ XIX դ. 70-ական թվականներին Սուդանում գործող «Սարգիս Իզմիրյան», «Ա. և Ա. Վանյան», «Քյուրքչյան եղբայրը»[61] առևտրական ընկերությունների կողքին առաջանում էին նորերը։ Նրանք իրենց մասնաճյուղերն ունեին ոչ միայն Սուդանի էլ-Օբեյդ, Գեդերեֆ, Շալճա, Պորտ-Սուդան, Կասսալա, Ուեթ, Սեդանի, Ռեջաֆ և այլ քաղաքներում, այլև Եվրոպայի, Արևելքի և Աֆրիկայի մի շարք երկրներում[62]։

Հայերը վաճառահանում էին բամբակ, կաշի, ծխախոտ, համեմունք և այլն։ Նրանք ձեռք էին բերում հող և ստացած արդյունքը հանում վաճառքի. ունեին բամբակազտիչ, կաշի մշակող գործարաններ։ Սակայն հայ վաճառականները մեծամասնություն չէին կազմում Սուդանում։

Սուդանահայերը, շնորհիվ իրենց հավատարիմ և անձնվեր աշխատանքի, երկրում ճանաչվել են որպես «վստահելի նկարագրի տեր մարդիկ»՝ զանազան քաղաքներում գրավել են պետական բարձր պաշտոններ։ Տեղական իշխանությունները հայ գյուղատնտեսներին էին հանձնարարում ագարակներ ստեղծելու և տեղացիներին ագարակագործություն սովորեցնելու գործը։ Նրանց ուսուցման եղանակների և բամբակի տեսակներ մշակելու մասին գրել են անգամ եվրոպական թերթերը։ Հայ գյուղատնտեսներից Գրիգոր Բոզաջյանը Սուդանի կառավարության կողմից արժանացել է արծաթե մեդալի[63]։

1917 թ. ստեղծվում է սուդանահայության վարչական մարմինը՝ բաղկացած հինգ հոգուց։ Համաձայն վարչության «Կանոնադրության», այդ մարմինը պարտավոր էր հսկել Սուդանի հայկական բոլոր ազգային կազմակերպություններին, կազմակերպել ազգային բնույթի միջոցառումներ, տնօրինել կտակների, ամուսնությունների, ամուսնալուծության և զանազան այլ հարցեր։ Հետաքրքիր է, որ սուդանահայությունն առաջնորդվում էր Մխիթար Գոշի «Դատաստանագրքով»։

---

61 Տե՛ս Հ. Սեճանբյան. Սուդանահայ գաղութը. «Ամենույն տարեցույց», 1912, էջ 14։
62 Դ. Փոլատյան. Սուդանի հայ գաղութը. «Պայքար», 24 հուլիսի, 1959։
63 Տե՛ս «Պայքար», 24 հուլիսի 1960։

7. ՀՆԴԿԱՍՏԱՆ

XIX դարի 60—70-ական թվականներից Հնդկաստանի հայ գաղթօջախների քայքայումն ավելի խորացավ։ Դա սերտորեն կապված էր երկրի տնտեսական կյանքի անկման, Հնդկաստանում անգլիական գաղութարարների քաղաքականության հետ։ «Անգլիան,— գրում է Կ. Մարքսը,— քանդեց Հնդկաստանի հասարակության անմիջական հիմքը՝ ցուցաբերելով մինչև այժմ ոչ մի փորձ վերակառուցելու այն։ Հին աշխարհի կորուստն առանց նորը ձեռք բերելու, հնդիկ բնակչի արդի դժբախտությանը տալիս է ավելի ճնշող բնույթ»[64]։ Հնդկաստանի տնտեսության փլուզումը մահացու հարված էր հայկական գաղթօջախների համար։ 70-ական թվականներին հայկական համայնքներ պահպանվել էին Կալկաթա, Մադրաս, Բոմբեյ, Չիչրա, Սեյդաբադ, Գվալիոր, Դաքքա քաղաքներում։ Հնդկահայ միակ գաղթօջախը, որը 70-ական թվականներից հետո էլ հարատևեց և ունեցավ ազգային կյանք, Կալկաթան էր։ Հայերի հասարակական և մշակութային կյանքը փաստորեն Մադրասից և մյուս քաղաքներից տեղափոխվել էր այստեղ։ Եթե առաջներում գաղթօջախների բնակչության մի զգալի մասը բաղկացած էր խոշոր առևտրականներից և նրանց հետ կապված տարրերից, ապա այժմ հայերի մեծ մասն արհեստավորներ էին, նավահանգիստներում աշխատող գործավորներ, զանազան հիմնարկության ծառայողներ, մանր առևտրականներ, իրավաբաններ, բժիշկներ, ճարտարապետներ և այլն։ Զգալի թիվ էին կազմում Պարսկաստանից եկած նոր գաղթականները։ Նրանց մի մասը մասնագիտություն չունենալու պատճառով դառնում էր օրավարձով աշխատող բանվորներ։

Հնդկաստանի մեծահարուստ հայ վաճառականներից շատերն արդեն չկային։ Նրանք ամբողջությամբ կուլ էին գնացել անգլիական մրցակցությանը։ Միայն քչերին էր հաջողվել վերակառուցվել և իրենց կապիտալը տեղափոխել արդյունաբերության մեջ։ 70—80-ական թվականներին դեռևս շարունակում էին գործել 40—50-ական թվականներին հիմնադրված հայկական «Արևելյան ապահովչաց», «Միացյալ շոգենավաձիգ», «Բասսարաթ լեղակի», «Հուգլիի գետանավային» և այլ ընկերություններ, մի քանի գործարաններ։ Այս ընկերություններից մի մասն իրենց բաժանմունքներն ունեին անգամ Լոնդոնում, Սինգապուրում, Հոնկոնգում, ինչպես նաև Հնդկաստանի մի շարք խոշոր քաղաքներում։

Չկարողանալով ամբողջությամբ ձերբազատվել անգլիական հսկողությունից և ազդեցությունից, հնդկահայ դրամատերերից ոմանք փրկության և գործունեության հեռանկարը տեսնում էին հայրենի երկրում և ծրագրեր էին մշակում Հայաստան տեղափոխվելու, հայրենի երկրում արհեստագործություն և արդյունաբերություն զարգացնելու համար։

Հնդկաստանի հայ գաղթօջախների արհեստավորները՝ ոսկերիչներ, ներկագործներ, կաշեգործներ, քարտաշ վարպետներ և այլք երբեմն միանում և կազմում էին համքարություն։ Կալկաթայի հայ ոսկերիչները այնպիսի համբավ ունեին, որ նրանք պատվերներ էին ստանում ոչ միայն Հնդկաստանից, այլ նաև Եվրոպայի և Ասիայի զանազան երկրներից[65]։ Հայ վարպետների պատրաստած ներկերը իրենց որակով մրցում էին մեծ հռչակ վայելող

---

64 К. Марс и Ф. Энгельс, Сочинения, т. IX, стр. 181—182.

65 Տե՛ս Վ. Աբրահամյան, Արհեստները Հայաստանում, Երևան, 1956, էջ 139։

«մարտինե» կոչվող և այլ ներկատեսակների հետ։ Հնդկահայերի մեջ մեծ համարում ունեին իրավաբաններ Գրիգոր Հ. Առաքելը, Ս. Սարգիսը, Գրիգոր Պողը և ուրիշներ։ Ի դեպ, Գրիգոր Պողը աջակցել է Միքայել Նալբանդյանին՝ Մ. Բաբաջանի կտակի կապակցությամբ Կալկաթայի դատարանում հարուցած հայցում և շահել այն։

Գաղթօջախներում, սոցիալական տարբեր խավերի մեջ, եղել է որոշակի ձևավորված դասակարգային խմբավորում, ներքին սուր պայքար. աշխատավոր մասը կոչվել է «ռամիկներիթ դաս։ Հնդկահայ համայնքներն իրենց աղքատ և նոր ներգաղթած հայրենակիցներին անօգնական չեն թողել։ Դեռևս 1820 թ. Կալկաթայում կառուցված աղքատանոցի միջոցները տարբերաբար համալրվել են զանազան հանգանակությունների, նվիրատվությունների, մի-ջոցով, աղքատանոցին կից կառուցվել է «հյուրանոցը», ուր նոր ցաղթած հայերը բնակվել են ձրի՝ երեք ամիս, փորձեր արվեցին հիմնելու ազգային բժշկական հիմնարկ և այլն։ 1870—80-ական թվականներին սկսվեց գաղթականների մի նոր հոսք, որոնք մեծամասամբ գյուղացիներ էին։ Այս նոր գաղթականությունը բավական դժվարացրեց հնդկահայ աղքատանոցների վիճակը, շատ թաղաթներում համայնքները և աղքատանոցներն անկարող էին լինում ընդունելու բոլոր հայերին։

XIX դարում հայերի թիվը Հնդկաստանում հայտնի չէ. միայն Կալկաթայում նրանց թիվն անցնում էր 1000-ից[66]։ *XX* դարի սկզբներին հնդկահայության և հատկապես կալկաթահայության թիվը, շնորհիվ Պարսկաստանից նկող նոր գաղթականների, զրեթե կրկնապատկվեց։ Կալկաթայում նրանց թիվը հասավ մոտ 2000-ի։

Հնդկահայ համայնքներն ունեին իրենց ղեկավար մարմինը՝ ևկեղեցական վարչությունը։ Համայնքներն առաջնորդվում էին կալկաթահայերի վարչական մարմնի կողմից մշակված ինքնուրույն կանոնադրությամբ, որը հաստատված էր տեղի պայմաններին, համաձայնեցված տեղական կառավարման մարմինների հետ և ենթակա էին նրանց։ Համայնքների եկեղեցական վարչության կամ ժողովի անդամները ընտրվում էին չորս տարին մեկ անգամ։ Այդ ժողովի անդամները կոչվում էին «կոմիսարներ», սրանցից բացի կային նաև «ավանդապահներ» և մեկ «եկեղեցապան»[67]։ Ընտրությունների ժամանակ սուր բախումներ էին տեղի ունենում աշխատավորների և վերնախավի մյջև։ Կոմիսարները հիմնականում հարուստներից էին ընտրվում։

1892 թ. Հովսեփ Մելիք-Բեգլարյանը Կալկաթայում հիմնադրեց անգլերեն հրատարակվող «Արև» ամսագիրը, Հայրենասիրական ուղղություն ունեցող այս պարբերականի նպատակն էր թաղաթակիրթ մարդկության ուշադրությունը հրավիրել հայկական մշակույթի և Հայկական հարցի վրա։

Մշակութային և հասարակական այլ կազմակերպությունները հնդկահայ գաղթօջախներում քիչ էին. հայտնի է միայն «Մարզական ակումբը», որը հիմնադրվել էր *XX* դ. սկզբին։ Ակումբն ունեցել է ֆուտբոլի, խոտի հոկեյի, ռեգբիի, բասկետբոլի և այլ խմբեր։ Կալկաթայի հայ «Մարզական ակումբը» երկար ժամանակ ճանաչվել է որպես երկրի լավագույն ակումբներից

---

66 Տե՛ս «Արև», 1946, հունիսի 26։

67 Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, հ. 2, էջ 270։

մեկը։ 1909-ից գործում է Մեսրովբ Սեթյանի ջանքերով հիմնադրված «Մարդասիրական ճեմարանի» շրջանավարտների միությունը։ 1910 թ. հիմնադրվում է «Կանանց միությունը», ավելի ուշ՝ «Հայկազյան մշակութային միությունը» և այլն։

8. ԲԻՐՄԱ

XVI դարի առաջին կեսերից հայերը Բիրմայում առևտրական գործարքներ էին կատարում տեղացիների հետ[68]։ Հաջորդ դարում Բիրմայի Պեգու Սիրամ, Մանդալայ, Ավա և Ամարապուրա քաղաքներում գործող հայկական գաղթօջախների փաստը հաստատում են ինչպես հայկական, այնպես էլ օտար և տեղական սկզբնաղբյուրները[69]։ Հայերն այստեղ ամուր հաստատված և կալվածքներ ունեցող օտարերկրացիներ էին և մրցում էին եվրոպացիների, մանավանդ անգլիացիների հետ[70]։

Բիրմահայերը հիմնականում ջուղայեցիներ էին, որոնք զբաղվում էին վաճառականությամբ և արհեստագործությամբ, իսկ զինվորական ծառայության մեջ գտնվող հայերը առանձին խավ էին կազմում։

XVIII դարի 50—60-ական թվականներից հետո Բիրմայի հայկական գաղթօջախներն աշխուժացում ապրեցին՝ կապված Նոր Ջուղայից և Հնդկաստանից գաղթականության նոր հոսանքի հետ։ Բիրմացիների հակաանգլիական պայքարի առաջին իսկ օրերից հայերը զենքը ձեռքներին կռվել են ընդհանուր թշնամու դեմ։ XVIII դ. 30—40-ական թվականներին, երբ անգլիացիները ամրացել էին Բևսլեյն գետի գետաբերանում, բիրմական զորքերը հայերի հետ միասին, Խոջա Գրիգոր Այվազյանի հրամանատարությամբ պարտության մատնեցին անգլիացիներին և կործանեցին նրանց ռազմական շինություններ[71]։ Գրիգոր Այվազյանի զորախումբը կարճ ժամանակում Բևսլեյնի ամբողջ շրջանը մաքրեց անգլիացիներից[72]։ Այս հաղթանակից հետո նա նշանակվեց Սիրիամի կառավարչի պաշտոնում, որն առաջին և վերջին անգամ պրաղեցրեց օտարերկրացին։ Հաշվի առնելով բիրմահայերի մատուցած ծառայությունները, նոր մայրաքաղաք Ռանգունում հողամաս հատկացվեց նրանց մատուռ և այլ շինություններ կառուցելու համար, երբ Ռանգունի հայկական գաղթօջախը բազմամարդ դարձավ. 1763 թ. Ռանգունում կառուցվեց եկեղեցի։

XIX դարում բիրմահայերի գործունեության շրջանակները ավելի էին ընդարձակվել։ Օրավարձով ապրող գաղթականների, արհեստավորների, մանր ծառայողների, մանր և խոշոր առևտրականների կողքին երևան են գալիս հայ պլանտատորները, որոնց արտադրած հումքը մշակվում էր երկրի ներսում։ Մեծ համարում ունեին հայ նավաշինարար վարպետները, որոնք նավեր էին կառուցում նաև հայ մեծահարուստների պատվերով։ Այդ նավերը հիմնականում կրում էին հայկական անուններ («Արա», «Հայկ», «Տիգրան», «Ջուղա» և այլն)։ Սեփական նավեր ունենալու պահանջը հայերին թելադրում էր մըր-

68 Տե՛ս «Միհան», Երևան, 1959, էջ 170։

69 Տե՛ս Дж. Холл, История Юго-Восточной Азии, М., 1958, стр. 264.

70 Տե՛ս Л. Х. Мкртчян, Я. К. Мкртчян, Из истории армянских общин Бирмы, см. «Народы Азии и Африки», М., 1961, № 3, стр. 135.

71 Տե՛ս ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի արխիվ, գ. 64, Բիրմա, էջ 3։

72 Տե՛ս Ք. Ավետումյան, Արամայիս, Կալկաթա, 1846, էջ 133—132։

ցակցություններ եվրոպական առևտրական ընկերությունների հետ։ 1870-ական թվականներին Բիրմայում արդեն կար հայերի առևտրական նավատորմիղ։ Առանձնապես հայտնի էր Նավավար Հովսեփ Մանուկյանի անունը։

80—90-ական թվականներից, անգլիական գաղութարարների ներխուժման հետևանքով, հայերի վիճակը սկսեց վատթարանալ։ Նրանք զրկվեցին նախկին արտոնյալ պայմաններից։ XIX դարի 60—70-ական թվականներին արդեն գաղութացված էր Բիրմայի հարավը և անգլիական գաղութարարները սկսում են հետաքրքրվել Հյուսիսային Բիրմայով։ Վերին Բիրմայի նկատմամբ այդ նույն ժամանակ հետաքրքրություն ցուցաբերեցին նաև ԱՄՆ-ը և Իտալիան, ինչպես ֆրանսիական և գերմանական գաղութարարները։

Բիրմայի թագավոր Մինդոն, իսկ հետագայում նաև նրա հաջորդ Թիբաուն, օգտագործելով նրանց հակամարտություններր, դիվանագիտական ճարպիկ քաղաքականություն էին վարում եվրոպական երկրների հետ՝ աշխատելով փրկել Վերին Բիրման գաղութացումից։ Մինդոն փնտրում էր նոր հզոր դաշնակիցներ հակագաղութային անհավասար պայքարում։ Այդպիսի դաշնակից Մինդոն տեսնում էր Հանձին Ռուսաստանի։ Իր նպատակին հասնելու համար Բիրմայի գահակալը դիմում է տեղի հայ համայնքի օգնությանը, խնդրելով իր անունից դիմել Ամենայն Հայոց կաթողիկոսին՝ միջնորդելու ռուսական կառավարության առաջ՝ ստեղծելու ռուս-բիրմական դաշինք։

ՀՍՍՀ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է Բիրմայի արտաքին գործերի մինիստրի բիրմերեն և հայերեն նամակը[73] և նրա պատասխանը[74]։ Դեռևս 1874 թ. Մինդոն հատուկ նամակով դիմել էր Հայոց կաթողիկոսին, ուր մանրամասն տեղեկություններ էր հաղորդել տեղի հայերի մասին և խնդրել հոգևոր հովիվ ուղարկել։ Բիրմայի թագավորի և էջմիածնի դահակալի գրագրություններր կատարվել են բիրմահայ համայնքի ներկայացուցիչ Մինաս Գրիգորյան Տեր-Ներսեսյանի միջոցով։

Հայոց կաթողիկոսին Բիրմայի արտաքին գործերի մինիստրի ստորագրած նամակում ասված է. «Ընդին վեհափառութիւն, ամենայն նախարարք մեր և ես, ինքնին, մեծաւ փափագանօք բաղձամք երդմնի կամինք դաշնաւոր լինել ընդ ռուսս և երջանիկ զանձինն համարինք դիտացեալ դի Ձերդ Մեծութեան Ռուսաց յաճեցէ ծանուցանել մեզ յօժարութենէ ատ այս կցորդութիւն»[75]։

Նույն նամակում մինիստրը գրում էր, որ դեռևս 1873 թ. ռուս հպատակ Ուպարինի (այդ տարիներին Բիրմա այցելած ռուս ճանապարհորդ-աշխարհագրագետ Ուպարին-Ուշարովը) միջոցով հատուկ նամակ է ուղարկվել վեհափառությանը, ուր թագավորի անունից խնդրվել է Բիրմա ուղարկել բարձրաստիճան մի հայ հոգևորական։

1876 թ. մարտի 11-ին մայրաքաղաք է ժամանում կաթողիկոսական նվիրակ Գրիգոր արքեպիսկոպոսը, որին թագավորի հրամանով շքեղ ընդունելություն է կազմակերպվում և հատուկ շքախմբով առաջնորդվում դեպի հայկական եկեղեցի, որը մինչ այդ վերակառուցվել էր թագավորական միջոցներով։ Մարտի 15-ին նա ընդունվում է թագավորի կողմից։ Այս ընդունելության ժա-

---

73 Տե՛ս Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվ, Կարող. դիվան, թղթ. 227 վավ. 244, էջ 2—4։

74 Տե՛ս նույն տեղում, վավ. 222։

75 Տե՛ս նույն տեղում, վավ. 244։

մանակ Մինդոն հայերի ներկայացուցիչներին նորից է ակնարկում այն միջնորդության մասին, որ նա ակնկալում էր հայերից ռուս-բիրմական դաշնակցության ստեղծելու գործում[76]։ Ռուսական արքունիքին հայ նվիրակի միջոցով նամակներ ուղարկելու փաստը հաստատում է 1876 թ. Ռանգունում գտնված ռուս ճանապարհորդ Դ. Ա. Պաշինոն։ Նվիրակի մեկնումից երկու ամիս անց թագավորը նույն բովանդակությամբ նամակներ է հանձնում նաև Պաշինոյին, որը հետագայում Պեկինից ուղարկում է Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրությունը[77]։

Հայ մամուլը լայնորեն լուսաբանում էր այդ իրազարձությունը։ Բիրմայի թագավորին էին ուղարկվում շնորհակալական նամակներ և հրատարակված հոդվածներ, որոնք տեղարնակ հայերի թարգմանությամբ հասցվում էին արքունիք։ 1877 թվականին Մինդոն բաժանորդագրվում է Կոստանդնուպոլսի հայերեն «Մասիս» թերթին և նույն թվականին թերթի խմբագրին պարգևատրում է հատուկ շքանշանով[78]։

XIX դարի կեսերից, երբ սկսեց վերելք ապրել Մանդալայը, Մինդոն, վախենալով անգլիական առավել սահմանափակումներից, մայրաքաղաքը 1867 թ. տեղափոխեց Մանդալայ։ Մայրաքաղաք դառնալուց հետո առևտրական այս կենտրոնում հայերի թիվը գնալով ավելացավ։ Ռանգունից Մանդալայ տեղափոխված արքունիքի հետ այստեղ եկան նաև արքունիքի հետ կապված և այնտեղ ծառայող հայերն իրենց ընտանիքներով։ Հայերին սիրաշահելու համար թագավորը այստեղ ևս հող նվիրեց եկեղեցի կառուցելու համար։ Մինչև այժմ քաղաքի խոշոր հրապարակներից մեկը կոչվում է «Արմենիան վին» («Հայկական հրապարակ»)[79]։

Որոշ հայեր պետական կարևոր պաշտոններ էին գրավում։ 1885 թ. առևտրական պայմանագրով Ամարապատ ժամանած անգլիական պատվիրակության ղեկավար գործավար Ֆեյրին ընդունում է տեղի կառավարիչ Հարություն Մկրտումյանը և բանակցություններ վարում։

Այս շրջանի ամենահայտնի դեմքը ոչ միայն հայկական համայնքում, այլ նաև բիրմական արքունիքում իշխան Սարգիս Մանուկյանն էր, որ Բիրմայի երկու թագավորների՝ Մինդուի (1853—1878) և նրա հաջորդ Թզիբաուի (1879—1885) ժամանակ վարել է Բիրմայի քալավունի (արտաքին գործերի մինիստրի) պաշտոնը։ XVIII դարի երկրորդ կեսից այս պաշտոնը գրեթե միշտ հայերն են զբաղեցրել[80]։ Սակայն Մինդուի որդու՝ Թզիբաուի հիվանդանալուց հետո երկրի փաստական տերը դարձավ վերջինիս կինը՝ Սուվալաթը, որը սկսեց խիստ անվստահությամբ վերաբերվել իր նախորդների համախոհների հետ. նրա կասկածամտության զոհ դարձան շատ հայեր, որոնց թվում և Թզիբաուի արտաքին գործերի մինիստր Ալեքսի Տեր-Գևորգյանը[81]։

Մանդալայում ստեղծված տնտեսական և քաղաքական ծանր վիճակը ստիպեց հայերին թողնել այն և տեափոխվել կա՛մ Ռանգուն, կա՛մ Միմեո։

---

76 Տե՛ս «Արարատ», 1876, էջ 226։

77 Տե՛ս «Արձագանք», Բիֆլիս, 1882, օգոստոս, էջ 15, 16, 415—416։

78 Տե՛ս «Մասիս», Կ. Պոլիս, 1877, 1963, էջ 2։

79 Տե՛ս «Պայքար», 11 նոյեմբերի 1955։

80 Տե՛ս Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվ, Ա. Այպոյաճյանի ֆոնդ, թղթ. 43, էջ 22։

81 Տե՛ս նույն տեղում, էջ 26։

Մանդալայից հետո հայերի հիմնական կայատեղին դարձավ Ռանգունը։ Ռանգուն վերադարձած հայերը սկսեցին եռանդուն գործունեություն ծավալել։ Այդ շրջանում հիմնադրվում է «Բաղդասարյան» վաճառատունը, որը հետագայում վերածվեց «Ընկերություն»ի։ Երկար տարիներ երկրի ներքին և արտաքին առևտրի մի շարք ճյուղեր գտնվում էին «Բաղդասարյան ընկերություն»ի ձեռքում։ «Ադաբեկյան ընկերություն»ը ձեռքում էր Բիրմայից ասաղձի արտահանման մենաշնորհը և այլն։

XIX դարի վերջում արդեն շատ աննշան էր Բիրմա ներգաղթող հայերի քիվը։ Նրանց ընդունելու համար, գաղութի որոշմամբ, 1877 թ. Ռանգունի նկեղեցու մոտ հատուկ շենք է կառուցվում «պանդուխտների առժամանակնա բնակության համար»[82]։

Բիրմահայ գաղութը XX դարի սկզբին շարունակում էր գոյատևել։ 1905 թ. Ռանգունում ապրում էր 250 հայ, նույնքան հայեր ապրում էին Պեգու, Տրանգուա, Մանդալայ, Մոուլմեյն և այլ քաղաքներում[83]։

1915 թ. հունիսի 27-ին Ռանգունում գումարված բիրմահայ համայնքների հավաքում, որին մասնակցեցին այնտեղ ապրող գրեթե բոլոր հայերը, Մեծ եղեռնի ազնությունների օգնելու համար «Բարեգործականի» կազմակերպած հանգանակության ժամանակ հավաքվեց 15 հզար ռուպի։ «Բարեգործականի» ջանքերով ազատվել և խնամվում էին Թուրքական բանակի 130 հայազգի ռազմագերիներ։

Այդ ժամանակ ռանգունաբնակ Մարիամ Վրթանեսյանի և էքել Առաքել Մարտինի կազմակերպած «Տիկնանց միությունը» խնամում էր հայ որբերին։ Նրանց անմիջական օգնությամբ և հավաքած գումարներով հնարավոր եղավ Դիանա Աղաբեկ Արզարյանի միջոցով Խուլյամայի վրայով 1914—1918 թթ. Արևելք հասած հազարավոր հայ գաղթականների տեղափոխել Ամերիկա և այլուր։

Դարի սկզբին հիմնադրվեց «Մարտին և ընկ.» շինարարական ընկերությունը, որն իր գոյության ավելի քան հիսուն տարիների ընթացքում շինարարական և բարեգործական աշխատանք տարավ ոչ Բիրմայում։ Մարտինը հիմնադրեց շինարարական մեկ այլ ընկերություն, «Առաքել Մարտինյան և նահապետյան ընկերությունները»։ Այս նոր միացյալ «Ընկերությունը» ունեցավ սեփական «Արարատ» և «Հայաստան» նավերը, կառուցեց Բիրմայի անկախության հուշարձանը Ռանգունի կենտրոնում, Ռանգունի օդանավակայանը, բազմաթիվ շրամբարներ, շրանցքներ, շենքեր, կամուրջներ և այլն[84]։

Չնայած բարեկեցիկ վիճակին, բիրմայահայ գաղթօջախներում ազգային-մշակութային կյանքի տևական վերելք չկար։ 1884 թ. ռանգունաբնակ հայերը կազմակերպեցին «Թանգարան հայոց» ընկերությունը, որի նպատակն էր կոլտուրական կապեր ստեղծել Ընդհայաստանի, Նոր Ջուղայի և Հայաստանի հետ, ստանալ գրականություն, թերթեր, կազմակերպել ընթերցարան, կանխել հայերին օտարացումից։ Սակայն «Թանգարան հայոց»ը շուտով փակվեց[85]։

Այս շրջանում «Ագգասեր»ն ու «Ագգասեր Արարատեան»ը զանազան քըղ-

---

82 Ազանյան, Օրացույց. Նոր Ջուղա, 1915, էջ 17։

83 Տե՛ս «Մուրճ», 1905, էջ 77։

84 Տե՛ս «Գալստյան», 2 նոյեմբերի 1958 թ.։

85 Տե՛ս ՀՍՍՀ ՊԱ պատմության ինստիտուտի արխիվ, ֆ. 63, Բիրմա, էջ 4։

քակցություններից բացի հրատարակել են ռանգունաբնակ Եսայի Մանուկյանի բանաստեղծությունները։

Ռանգունում, «Քանգարան հայոցի» նման մի այլ կազմակերպություն հիմնադրվեց 1902 թ., որը գրեթե չգործեց։ Կարճատև կյանք է ունեցել նաև «Մահակ Մեսրոպյան ընթերցարանը»[86], 1915 թ. Ռանգունում բացվում է «Հայկական ակումբը»։ Հինգ տարի գոյատևած այս կազմակերպությունը որոշ աշխատանք է տանում վառ պահելու տեղի հայերի հայրենասիրական ոգին։ 1915 թ. ռանգունաբնակ մի խումբ երիտասարդներ դիմեցին Թիֆլիս, ստացան հայկական նոտաներ և ստեղծեցին «Եկմալյան» քառաձայն խումբը, որը բաղկացած էր 60—70 հոգուց։ Խումբը Ա. Աբոյանի, Ա. Գերասիմյանի ղեկավարությամբ գործեց մոտ 30 տարի։

9. Ա Վ Ս Տ Ր Ա Լ Ի Ա

XIX դարի երկրորդ կեսից Հնդկաստանում, Ինդոնեզիայում, Սինգապուրում և այլուր բնակվող շատ հայերի համար նոր բարձրացող Ավստրալիան և հատկապես այնտեղ հաստնաբերված ոսկու հարուստ հանքավայրերը հույսի և բախտի խարուսիկ փարոս դարձան։ Բազմաթիվ հայեր սկսեցին մեկնել Ավստրալիա և բնակություն հաստատել նրա քաղաքներում ու գյուղերում։

Ավստրալիայում հաստատված շատ հայեր դեռ դարձան «դեղին սատանայի տենդին»։ Ավստրալիա գնացած չուղայեցի առաջին ճամփորդներին հետևեցին արևմտահայերի, արևելահայերի նոր խմբեր և ստեղծեցին առաջին գաղթօջախները Ավստրալիայում։

Արևելքից և հատկապես Հնդկաստանից ու նրա հարևան երկրներից հայերի դեպի Ավստրալիա գաղթի ջատագովն էր Սինգապուրի «Ուսումնասերի» խմբագիր Գ. Դ. Գալստյանը։ Այդ նպատակով նա հոդվածներ էր տպում նոր «Ավետյաց երկրի» մասին։ Նա հրատարակում է Պորտ Ֆիլիպպից ստացված իր մի հայրենակցի նամակը, որը հարստացել էր կարճ ժամանակում։ Նամակի հեղինակը Ջուղայի և այլ վայրերի հայրենակիցներին կոչ է անում անհապաղ մեկնել Ավստրալիա, չհավատալ թերահավատներին։ Նա իր կոչն ուղղում է նաև մեծահարուստներին։ Գալստյանը Կալկաթայի հայերին խորհուրդ է տալիս միանալ և բնակություն ստեղծել, հավատացնելով, որ Ավստրալիայում նրանք մեծ հաջողության կհասնեն։

Դեպի Ավստրալիա գնալու հորդորանքը անշուշտ ուներ իր սոցիալ-տրնտեսական արմատները, որը ելնում էր հայ վաճառականության տնտեսական քայքայումից։ Գալստյանը մի կողմից ուզում էր իր հայրենակից մեծահարուստներին տնտեսական նոր շուկաներ գտնելու ուղիներ ցույց տալ, մյուս կողմից աշխատանքով ապահովել նոր Ջուղայից և Պարսկաստանից հեղկական քաղաքները լցված բազմաթիվ հայրենակիցներին։ Ի վերջո նա փակում է իր վիմագրարան, դադարեցնում թերթի հրատարակումը և «ի սէր ազգի և յառաջադիմութեան նորին»[87] գնում Ավստրալիա։ «Ուսումնասերի» խմբագրի վերջին հոդվածը ավարտվում է հետևյալ խոսքերով. «...սիրեմք մեք զազգ մեր և սրտէ ցանկանամք զբարօրութիւն նորին... սակս մեծամեծ օգտից վասն մերոցս սիրեցեալ ազգին փութամք ելանել աստի առ Մելբուռն»[88]։

86 Տե՛ս «Լրաբեր», 6 հունվարի 1960 թ.

87 «Ուսումնասեր», 1853, թիւ 90, էջ 359։

88 Նույն տեղում։

Վիմադարանը Գալստյանն իր հետ Ավստրալիա չտարավ, նպատակ ունենալով հարստանալուց հետո վերադառնալ և շարունակել իր գործը։

Դա էր Ավստրալիա մեկնող հայերի մեծամասնության նպատակը։ Եթե որոշ մարդկանց, իրոք, բախտը ժպտաց և որոշ դրամ ձեռք բերելով վերադարձան, բայց մեծ մասին այլ բախտ վիճակվեց։ Անցյալ դարի 90-ական թվականներին Ավստրալիա այցելած և հայ գաղթականության վիճակն ուսումնասիրած գրասեր Երվանդը գրում է. «Բայց ցավ ի սրտէ ըսել է թէ կարծես դժբախտութիւնները իւրեանց անքաժանելի ընկերը կ'ինի և բաց ի փոքրամասնութենէ մը անյաջող կեղծէ հանքագործն, որ բահը զարնի ոսկիի փոխարէն հող ու մոխիր և առևտրականն ալ իր գործունեութեան մէջ վնաս և սնանկութիւն գտանալով»[89]։

Հայերը բնակվում էին Մելբուռն, Բրիսբեն, Սիդնեյ, Բրոկել-հիլլ և այլ քաղաքներում[90]։

Հայ գաղթականների մի մասը ապրել է գյուղերում, զբաղվել հողագործությամբ։ Դեպի Ավստրալիա եկող գաղթականության նոր խմբերը չէին կարողանում կայունացնել և ստուգաբացնել գաղթօջախները, որովհետև նրանց մի մասը վերադառնում էր և բնակչություն հաստատում տարբեր երկրներում[91]։ Հայերը սկսեցին հաստատվել խոշոր քաղաքներում, առաջին հերթին Մելբուռնում, Ադելաիդայում։ Նրանց հիմնական զբաղմունքը մանր առևտուրն ու արհեստն էր, կային նաև նավաստիներ, նավերի վրա աշխատող հնոցապաններ և այլն[92]։

Այսպես շարունակվեց վիճակը Ավստրալիայի հայ գաղթօջախներում մինչև առաջին համաշխարհային պատերազմը։ Մեծ եղեռնի լուրը ստանալով, նրանք աշխատեցին օգնության ձեռք պարզել չարդերից փրկված փախստականներին։

Հայկական համայնքի խնդրանքով, գաղութի ներկայացուցիչ Տ. Պալաքյանը համայնքի անունից դիմում է կառավարությանը, խնդրելով անարգել ընդունել հայ աղետյալների օգնության կանչին։ Տեղական իշխանությունները, որոնք կարող էին աշխատանքային ձեռքերի, Պալաքյանի միջոցով փոխանցին հայերին հրավիրել Ավստրալիա։

Մելբուռնի տեղական իշխանությունները, նրա լորդ-քաղաքապետի հովանավորությամբ և հանրային գործերի նախարար էկարտի գլխավորությամբ, ի նպաստ հայ աղետյալների, կազմեցին օգնության կոմիտե։ Կոմիտեն առաջին իսկ օրը հավաքեց 2500 անգլիական ոսկի։

Երկրագնդի հինգերորդ աշխարհամասն էլ հասան հայ գաղթականների խմբերը։ Նրանց ընդունեցին ավստրալահայերը և տեղավորեցին Ադելաիդայում, Մելբուռնում, Սիդնեյում և մյուս, հատկապես հայաշատ քաղաքներում։ Գաղթականների նոր խմբերը մեծ մասամբ զբաղվում էին արհեստներով, կային նաև ոչ մեծ թվով վաճառականներ, երկրագործներ։ Հայերից ոմանք կարողացան տեղծել ոչ միայն բարեկեցիկ կյանք, այլև ակնառու դեր խաղացին հատկապես արհեստի և առևտրի բնագավառում։ Այսպես, քանա-

89 «Արեւելք», 1895, 29 հունիսի 1895 թ.։
90 Տե՛ս ՀԱԱ պատմության ինստիտուտի արխիվ, ֆ. 63, Ավստրալիա, էչ 2։
91 Տե՛ս «Արեւելք», 29 հուլիսի 1895 թ.։
92 Տե՛ս «Արեւելք», 18 օգոստոսի 1895 թ.։

կան թվականներին արդեն հայերի ձեռքում էր շինական ապրանքների առևտուրը և մորթեղենի պատրաստման ու վաճառքի մենաշնորհը։

10. ԻՆԴՈՆԵԶԻԱ

Հայերն Ինդոնեզիայում սկսել են հաստատվել առևտրական գործառնությունների շնորհիվ, հոլանդական նվաճումներից հետո։ XVII դարում հայկական գաղթօջախների առկայության փաստը Ինդոնեզիայում հաստատում է Կոսաանդ Ջուղայեցին իր նշանավոր «Աշխարհաժողովում»[93]։ Տարիներ շարունակ Ինդոնեզիայում ապրած ռուս գիտնական Ի. Բակունինը, որն ուսումնասիրել է հայկական գաղթօջախների պատմությունը. միայն Ջավայում ապրող հայերի թիվը XVII դարում հաշվվում էր ավելի քան 2000[94]։

Իրենց տիրապետության առաջին շրջանում հոլանդացիները հայերի նկատմամբ վարում էին «հովանավորելու» քաղաքականություն։ Հոլանդական ընկերությունները հայերին իրենց կողմը գրավելով, աշխատում էին նրանց ուղղել հզոր մրցակիցների, բրիտանական «ընկերություններին» դեմ։ 1841 թ. մարտի 21-ի հրովարտակով հայերին շնորհվում է հոլանդացիներին հավասար «ազատ քաղաքացու» իրավունք[95]։

XVII դարից մինչև XIX դարի 30-ական թվականները Ինդոնեզիայում հայերը հիմնականում ապրում էին Ջավայի մայրաքաղաք Բաթավիայում, Սուրաբայա, Սեմարանգ և այլ քաղաքներում. 1855 թ. ինդոնեզահայերն ունեին 10-ից ավելի առևտրական ընկերություններ։ Մեծ էր նաև արհեստավորների թիվը։

1870-ական թվականներից սկսվում է ինդոնեզահայ գաղթօջախների երկրորդ շրջանը։ Ինդոնեզահայ գաղթօջախների բնակչությունն ավելանում է պարսկական իշխանությունների բռնությունների ու հարստահարությունների հետևանքով հայրենիքից հեռացած, ասպա նաև անգլիական գաղութային իշխանությունների հալածանքներից Հնդկաստանից ու նրա հարևան երկրներից դուրս մղված հայերի հաշվին։ Վերջիններիս թվում, աշխատավորության հետ կային նաև խոշոր, միջին վաճառականներ։ Գաղթականների այս նոր խմբերը մեծ մասամբ հաստատվում էին Բաթավիայում, իսկ մի մասն էլ՝ Ջավա կղզու ծովեզրյա Սեմարանգ, Ջոկյակարտա, Սուրաբայա, Բանդունգ, Մակասար և այլ քաղաքներում։

Մեծահարուստ հայ վաճառականների կողքին, որոնք գործում էին առանձին-առանձին և ընկերություններով, երկրում կային մեծ համարում ունեցող արհեստավորներ և բավական թվով օրավարձով ապրող բանվորներ։

Ինդոնեզահայ աշքառու գաղթօջախներից էր Սուրաբայայի հայ համայնքը։ Այնտեղ այնքան հայեր էին կենտրոնացել, որ XIX դարի 70—80-ական թվականներին հոգևոր առաջնորդության իրավունք ստացան։ 1875 թ. Հընդկաստանից, Բիրմայից և մյուս վայրերից գաղթականական նոր խմբեր են գալիս Սուրաբայա և ստվարացնում գաղթօջախը։ 1875 թ. նրանք այստեղ գոր-

---

93 Տե՛ս Մատենադարան, ձեռ. № 5994։

94 Տե՛ս Н. Бакунин, Тропическая Голландия, СПб., 1902, стр. 193.

95 Տե՛ս G. Pauls, Short history of the armenian comuniti in Nederlands India, 1935, Batavie, p. 7.

ծել են ջուղայեցիների մի քանի առևտրական ընկերություններ միայն, ապա 1880-ական թվականներին նրանց թիվն անցել է մեկուկես տասնյակից։ Արհեստավոր հայերն աշխատանքի էին անցնում գլխավորապես այստեղ գործող «Ազատ որմնադիր» ընկերությունում։ Նորեկները կամաց-կամաց բնավորվում էին և շատ չանցած եռանդուն մասնակցում երկրի և հայկական համայնքի կյանքին։

Հայկական համայնքներ են եղել հարևան Տուլունգ-Ագունգում, Մոջոկերտոյում, Ջերբոնում և այլ քաղաքներում[96]։ XIX դարի 70-ական թվականներից մինչև դարի վերջը հայեր էին ապրում նաև Մալանգ, Սինգարաջա (Բալի կղզում), Ջապարա, Թգալ, Մեդան, Սեմարանգ, Մանադո և մի շարք այլ քաղաքներում[97]։

Ինդոնեզիայում էլ, հայրենի հողից կտրված, հայոց դպրոցից զուրկ հայությունը մասամբ կուլ է գնացել ձուլմանը։ Ինդոնեզահայ թղթակիցներից մեկը ցավով նշել է, որ կան շատ հայեր, որոնք «հայերեն լեզուն այլևս անօգուտ են համարում[98] և գերադասում են խոսել հոլանդերեն ու անգլերեն»։

Հակառակ մյուս գաղթօջախների, Ինդոնեզիայում գրեթե չեն եղել հայ քաղաքական աչքի ընկնող գործիչներ։ Պատճառն այն է, որ Ինդոնեզիայում հայերը հաստատվել են այն ժամանակ, երբ հոլանդական գաղութարարներն իրենց ձեռքն էին առել կյանքի բոլոր ասպարեզները և օրենքի ուժով զրկել մյուսներին այդ իրավունքից։ Միայն առանձին դեպքերում գաղութային իշխանությունները հայերին վստահել են զանազան բարձր պաշտոններ։ XIX դարի կեսերին հայ համայնքների երեք ներկայացուցիչներ՝ Հովհաննես Պետրոսյանը, նրա եղբայր Հարությունը և Էմիլ Ծատուրյանը նահանգներում վարել են փոխնահանգապետի պաշտոններ, արևելյան և եվրոպական մի շարք լեզուների քաջահմուտ Ա. Աղանուրը նշանակվել է պետական թարգման, Մ. Հովհաննիսյանը՝ երկրի կրոնի և կրթության պետական քարտուղար։

Ինդոնեզահայերը միշտ էլ ակտիվ մասնակցություն են ունեցել ինդոնեզիական ժողովրդի գաղութարարների դեմ մղած ազատագրական պայքարում։ Ինդոնեզահայ մտավորականներն իրենց աշխատություններում դատապարտել են գաղութարարների կատարած հարստահարությունները։ Գաղութի աչքի ընկնող ներկայացուցիչներից Գևորգ Ավետ Զաքարյանցը իր «Ջաւա կամ ընդհանուր ծանօթութիւն բազմակղզի ծովու Արեւելեան հնդկաց...» ուսումնասիրության մեջ սրտի ցավով է նկարագրում գաղութային շահագործման հետևանքով տնտեսական ծանր պայմանների մեջ ընկած տեղացիների վիճակը։ «Մշակք անթիւ են ի Ճաւայ... վարձ հաշիվ աղի ու բրնձի բաւական տանէ... զոչինչ աւելի աշխատեն, քան զառօրյա հաց իւրեանց...»[99]։

XIX դարի վերջին ինդոնեզահայ գաղթօջախների կյանքում հետաքրքիր երևույթներից մեկը սահմանադրության ընդունումն էր, որը կրում է «Սահմանադրութիւն և կարգաւորութիւն ժողովրդական Հայոց ի Ճաւա» վերնագիրը և կառավարության կողմից հաստատվել է 1880 թ. հունվարի 6-ին։

Այդ կանոնադրությունը համընդհանուր բնույթ է ունեցել։ Սահմանա-

---

96 Տե՛ս «Գաղթականութիւն հայոց ի Ջաւայ» («Բազմավէպ», 1869, էջ 461)։

97 Տե՛ս «Պայքար», 17 մարտի, 1958 թ.։

98 Տե՛ս «Բազմավէպ», 1899, էջ 464։

99 Ա. Բ. Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հատ. 2, էջ 471։

դրության 5-րդ կետն ասում է, որ ազգային ժողովին կարող է մասնակցել թե՛ Բաթավիայի և թե՛ կղզու մյուս քաղաքների հայությունը[100]։

Թեև հայկական մյուս գաղթօջախների ներքին կանոնադրություններում «...ընտրութեանց և ձևի տեսակներով տակաւ է ժողովրդական սկզբունքը...», ապա այստեղ այդպես չէ. «Գործերուն վերին հսկողությունը ինքը հասարակությունս ստանձնած է ուղղակի առանց ներկայացուցչական կամ երեսփոխանական ժողովի»[101]։ Մյուս բոլոր հայկական սահմանադրություններին համեմատությամբ ինդոնեզահայերինն ուներ մի շատ կարևոր կետ «Անկումն ժողովրդանաւ վերնադրով։ Ըստ որի, գաղութի վերացումից հետո մնացած հարստությունն անցնելու էր էջմիածնի կաթողիկոսի տնօրինությանը, որը պետք է զուտ եկամուտների կեսը օգտագործեր հայրենիքում զարդացնիր կառուցելու, երեք քառորդը՝ հայ մանուկների ուսման համար։ Հայրենասեր ջուղայեցիները չէին մոռացել նաև հայրենի Ջուղան. եկամուտների մյուս քառորդը պետք է օգտագործվեր «Ջուղայի մանկանց ուսման համար»։

Ըստ սահմանադրության, երեք տարին մեկ ինդոնեզահայերը Բաթավիայում գումարում էին «Հանրական ժողով»։

«Հանրական ժողովը» ձայների մեծամասնությամբ ընտրում էր ինդոնեզաբնակ հինգ հոգուց բաղկացած վարչություն՝ «Ատյան հանձանձանց ժողովրդյան հայոց ի Ջավայ», երեք տարի ժամանակով։ 1880 թ. Բաթավիայում տեղի է ունենում Ինդոնեզիայի հայ համայնքների անդրանիկ ժողովը։

Համայնքի աշքի ընկնող գործիչ Մ. Հորդանանյանի ջանքերով Մանուչարյան քույրերը 1855 թ. Բաթավիայում հայկական գպրոց են բացում, որը գործում է մինչև 1870 թ.։ Ինդոնեզիայի հայ մտավորականներին հուզել է իրենց գաղթօջախների անհայտացող պատմությունը։ Այդ պատմությունը կորստից փրկելու համար մեղվաջան գործ է կատարել Վ. Ք. Աղայանը, որի հրատարակած օրացույցները հարուստ ու հետաքրքիր նյութեր են պարունակում Ինդոնեզիայի հայ գաղթօջախների պատմության վերաբերյալ։

Արևմտյան Հայաստանի ազատագրական շարժումներին գործնական օգնություն ցույց տալու նպատակով ինդոնեզահայերը 1891 թ. օգոստոսի կեսերին կազմակերպել են «Հայոց խրախուսական միությունը»։ «Միության» կազմակերպիչն էր Օհաննես Քյուրքչյանը (Կարնեցի), որն արտաքսվել էր ցարական կառավարության կողմից որպես հեղափոխական։ «Հայոց խրախուսական միությունը» մարսելում, 1892 թ. տպագրել է իր «Կանոնադրությունը»։ 1894 թ., երբ հայտնի դարձավ թուրքական իշխանությունների կողմից Սասունում կազմակերպված արյունահեղ կոտորածը, ինդոնեզահայերն անմիջապես ստեղծեցին հանձնաժողով՝ Սասունի աղետյալների օգտին հանգանակություն հավաքելու համար։ 1905—1906 թթ. Կովկասի հայ սովյալները ևս ստացան ինդոնեզահայերի օգնությունը, որին մասնակցել էին նաև Բալի կղզու հայերը։ 1908 թ. արևմտահայությանն օգնելու նպատակով Բաթավիայի, Սուրաբայայի և նրա մոտակա վայրերից՝ Բալի և Լոմբոկ կղզիների հայերի օգնությամբ Կ. Պոլիս ուղարկվեց 1660 գուլդեն գումար։

---

100 Ք. Գալշակեան, Հեղհեղայք, էջ 251։

101 Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Բ, էջ 301։

Հայոց մեծ եղեռնի լուրը ցնցեց նաև ինդոնեզահայ հատվածին. անկարող անձնական մասնակցության, նրանք անմիջապես ձեռնամուխ եղան գեթ նյութական օգնությամբ հասնելու թուրքական յաթաղանից հրաշքով փրկված սովալլուկ և օգնակարոտ որբուկներին։

1915—1917 թթ. զանազան ճանապարհներով նրանց ուղարկած օգնության չափը անհաշիվ է։ 1917 թ. Թ. Գուշակյանը եղել է Ինդոնեզիայի հայ գաղթօջախներում և հանգանակություն կազմակերպել։ Նա այցելել է Բաթավիայի, Բանդունգի, Կալուանի, Սուրաբայի, Մակասարի, Սամիրանգի և մյուս ինդոնեզահայ գաղթօջախները։ Բոլոր տեղերում, առանց բացառության, ինդոնեզահայությունը բերել է իր առատ նվերը ի նպաստ հայ գաղթականության։ Հավաքված գումարի չափը հասել է հարյուր հազար գիլդենի[102]։

Այդպիսով, պատմական հանգամանքների բերումով հայ ժողովրդի առանձին բեկորները, ցրվելով աշխարհով մեկ, շարունակել են գոյատևել ու ստեղծագործել նաև օտար երկրներում, հարստացնելով նրանց նյութական և հոգևոր արժեքները։ Հայ համայնքները միշտ հաղորդակից են եղել մայր հայրենիքի ու ժողովրդի հետ, սնունդ են առել հարազատ հողից, օգնել օտար տիրապետությունների տակ տառապող իրենց հայրենակիցներին և սատար կանգնել նրանց ազգային-ազատագրական շարժումներին։

---

102 Նույն տեղում, էջ 302—303։

ԲԱԺԻՆ Դ

ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

ԴՊՐՈՑԸ. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ԱՐՎԵՍՏԸ ԵՎ ՄԱՄՈՒԼԸ

1. ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

XIX դարի վերջին երեսնամյակը և XX դարի առաջին երկու տասնամյակները կարևոր շրջան են հայ մշակույթի բազմադարյան պատմության ընթացքում։ Թեև նախկինում բուրժուական հարաբերությունները հայ իրականության մեջ առավել նկատելի դրսևորումներ ունեին հայկական աշխարհասփյուռ գաղթօջախներում, ապա XIX դարի կեսերից այդ հարաբերություններն ըսկըսում են թափանցել Հայաստան և անմիջական ազդեցություն գործել հայկական մշակույթի զարգացման վրա։ Նախորդ տասնամյակներում ծայր առած պայքարը կղերաֆեոդալական մշակույթի ու գաղափարախոսության դեմ այս շրջանում առավել գործնական բնույթ է ստանում և լայնորեն արտացոլվում հոգևոր մշակույթի ամենատարբեր ճյուղերում։ Այս գործում կարևոր դեր են խաղում XIX դարակեսի եվրոպական բուրժուական հեղափոխությունների, Ռուսաստանում 1850—60-ական թվականներին ծավալված ազատագրական պայքարի գաղափարները, արևմտահայության ազատագրական շարժումը։ Հայ ժողովրդի ազգային համախմբման պրոցեսի ուժեղացումը, ազգային-ազատագրական շարժումների ծավալումը, Հայկական հարցի արծարծումները նոր խնդիրներ են առաջադրում մշակույթի գործիչներին։ Նրանք առաջնորդվում են այն գաղափարով, որ ժողովրդին հարկավոր է լուսավորել, հաղորդակից դարձնել ժամանակի առաջավոր երկրների ձեռք բերած գիտական ու մշակութային արժեքներին, նպաստել նրա ազգային ինքնագիտակցությանը, նրանք աշխատում էին գիտությունը, արվեստը, գրականությունը, մամուլը կապել ժամանակի առաջադրած խնդիրներին և աջակցել ժողովրդի ազատագրման գործին։

Այս շրջանի հայկական մշակույթի զարգացումն ուներ մի շարք առանձնահատկություններ։ Դարեր շարունակ պետականությունից զուրկ հայ ժողովրդի գիտության ու մշակույթի գործիչները հիմնականում գործում էին կրոնական հաստատությունների շրջանակներում, իրենք ևս մեծ մասամբ հանդիսանալով եկեղեցու սպասավորներ։ Սակայն նոր ժամանակներում կյանքի ընդհանուր առաջընթացը, Ռուսաստանում և եվրոպայում կրթության ստացած նոր երիտասարդ մտավորականության ջանքերը, առաջադիմական գաղափարների տարածումը, կղերաֆեոդալական մտայնության դեմ ծավալված պայքարը մեծապես նպաստեցին հասարակական նախաձեռնության զարգացմանը։ Հրապարակ եկան բնկերություններ ու միություններ, որոնք

կարևոր դեր խաղացին լուսավորության տարածման, գրականության ու արվեստի զարգացման գործում։ Ու թեև պետականության բացակայության պայմաններում, թուրքական տիրապետության վայրագ ճնշումների ու ցարիզմի գաղութային քաղաքականության առկայությամբ եկեղեցին որոշ դեպքերում պահպանեց իր դերը ժողովրդի հոգևոր մշակույթի դեկավարման գործում, բայց այդ ասպարեզում հիմնական նախաձեռնությունն անցավ հասարակական կազմակերպությունների ու առաջադեմ մտավորականության ձեռքը, և դա կանխորոշեց հայկական մշակույթի վերելքը, նրա ընթացքի նոր ուղիները, դրսևորման ձևերն ու բովանդակությունը։

Պատմության ճակատագրի բերումով բաժանված լինելով երկու հիմնական հատվածի, հայ ժողովուրդն ստիպված էր իր մշակույթը զարգացնել հասարակական-քաղաքական տարբեր պայմաններում։ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և հայ-ռուսական կապերի ուժեղացումը հնարավորություններ ստեղծեցին, որպեսզի հայկական մշակույթն ավելի սերտորեն առնչվի ռուսական առաջավոր մշակույթի հետ և նրա բարերար ազդեցությամբ զարգացման նոր հեռանկարներ ձեռք բերի։ Արևմտահայ հատվածն ավելի շատ կապված էր եվրոպական մշակույթի հետ և կրում էր հատկապես ֆրանսիական ազդեցությունը։ Միաժամանակ հայ ժողովրդի մի այլ խոշոր հատված, ապրելով աշխարհի զանազան երկրներում և գտնվելով տարբեր ազդեցությունների տակ, այնուամենայնիվ, կարողացել էր ստեղծել մշակութային նշանակալի արժեքներ։

Սոցիալ-տնտեսական ու քաղաքական այսպիսի պայմաններում զարգացող հայկական մշակույթը, բնականաբար, ուներ արտահայտման տարբեր ձևեր ու դրսևորումներ։ Սակայն նրա համար առավել բնորոշ էին ընդգծված ընդհանրությունները։ Այդ միասնականության, համընդհանրության ամենաէական հիմքերն էին՝ ողջ հայ ժողովրդի տարերով պահպանած հոգևոր ընդհանրությունը, բազմազարյա մշակույթի հարազատ ավանդույթների պահպանումն ու փոխանցումը նոր սերունդներին, միասնական հայրենիքից զրկված ժողովրդի սոցիալական ու ազգային ազատագրության, գոյատևման ու միավորման անմար ձգտումը։ Նվ որքան էլ ուժեղ ու խորն էին օտար ազդեցությունները, հայ մշակույթը նոր ժամանակներում պահպանեց իր ուրույն դեմքը, կարողացավ նոր պայմաններին, կյանքի նոր պահանջներին համապատասխան յուրօրինակ ազգային արտահայտություններ ստանալ։ Մշակույթի ամենատարբեր ճյուղերում եղել է մի ընդհանուր գիծ, մի միասնական ընդհանրություն. դա հայ ժողովրդի պատմական դառը ճակատագրից բխեցրված ազատագրվելու հարատև ոգին էր, որ ստեղծագործելու և խրոխտելու մշտական լիցք էր տալիս նրա մշակույթի գործիչներին։

Նախորդ տարիներին նոր շրջանի հայկական մշակույթը հիմնականում զարգանում էր Հայաստանից դուրս, գաղթօջախներում։ Արևելահայ մշակույթի առաջատար գործիչներն ապրում ու ստեղծագործում էին մեծ մասամբ Մոսկվայում, Պետերբուրգում, Թիֆլիսում, Նոր Նախիջևանում, Ղրիմում, Աստրախանում, Կալկաթայում։ Այդ կենտրոններում գործում էին մշակույթի բազմաթիվ օջախներ՝ դպրոցներ, տպարաններ, թատրոններ, լույս էին տեսնում թերթեր ու պարբերականներ։ Արևմտահայ մշակույթի ամենակարևոր կենտրոնը Կ. Պոլիսն էր, որտեղ գործում էր գրողների, հրատարակիչների, արվեստագետների, մանկավարժների մեծ մասը։ Նշանակալի կենտ-

րոններ էին նաև Ջմյուռնիան, Փարիզը, Երուսաղեմը, Կահիրեն, Վենետիկն ու Վիեննան։

Սակայն կապիտալիզմի զարգացման և հայկական լուսավորական շարժման ձեռք բերած հաջողությունների համեմատ հայ մտավորականությունը սկսեց իր գործունեությունն ավելի տարածել մայր Հայրենիքում, կապվել նրա առօրյա հոգսերի ու կարիքների հետ, աշխատելով մշակույթն ու գիտությունն առավել հիմնավոր կերպով ծառայեցնել ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրության խնդիրներին։ Դարագլխից, իսկ ավելի լայնորեն 1870-ական թվականներից կրթական ու մշակութային շարժումը թափանցեց հայկական գավառները, Հայաստանից դուրս եղած մշակութային օջախներին զուգահեռ ու նրանց օժանդակությամբ ստեղծվեցին ու աշխուժացան նոր օջախներ (Երևան, Ալեքսանդրապոլ, Շուշի, Վան, Կարին)։ Գևորգյան ճեմարանի հիմնադրմամբ (1874) էջմիածինը դարձավ հայագիտության և հայ մշակույթի նշանակալի կենտրոն։ Հայկական գավառներում բացվեցին մի շարք բարեկարգ դպրոցներ, հիմնվեցին տպարաններ, լույս տեսան թերթեր ու ամսագրեր, բարեգործական ընկերությունների և կրթական գործիչների ջանքերով ստեղծվեցին բազմաթիվ գրադարաններ։ Այս պրոցեսն ավելի ուժեղացավ XX դարի սկզբին։

Հայկական մշակույթի զարգացումը նոր ժամանակներում տեղի էր ունենում հին՝ կղերաֆեոդալական գաղափարախոսության և նորի՝ ժամանակի համար առաջադիմական, բուրժուական գաղափարախոսության միջև ծավալվող պայքարում։ Մերժվում ու քննադատվում էին մշակութային հին պատկերացումներն ու արժեքավորումները, գրականության, արվեստի և գիտության մեջ առաջ էին բաշխում համամարդկային մշակույթի նվաճումների ու գաղափարների ոգուն համապատասխան նոր սկզբունքներ։

Սոցիալ-տնտեսական նոր պայմաններում հայ գրականությունը կլասիցիզմից կարևոր շրջադարձ կատարեց դեպի ռոմանտիզմ և ապա ռեալիզմ։ Գրականության մեջ տիրապետող դարձավ արձակը, նոր որակ ձեռք բերեց դրամատուրգիան։ Հայ գրականությունը պատմության էջերը վերակենդանացնելուց և անցյալի փառքը երգելուց անցավ դեպի առօրյա կյանքը, արձագանքեց ազգային ազատագրության հրատապ հարցերին, արտացոլեց սոցիալական շարիքի առկայությունը կյանքում։ Կազմավորվող պրոֆեսիոնալ թատրոնը, մանավանդ արևելահայը, մեծապես կրելով ռուսական առաջադիմական թատերական արվեստի ազդեցությունը, զարգացավ ռեալիզմի ուղիով, ծնունդ առավ նաև երաժշտական թատրոնը (Կ. Պոլսում)։ Հսկայական թռիչք կատարվեց երաժշտության ասպարեզում. հայկական երաժշտությունը բարձր մակարդակի հասած միաձայնությունից անցավ բազմաձայնության, ծնվից հայկական առաջին օպերան, ստեղծվեցին ազգային ռոմանսի, գործիքային երաժշտության, սիմֆոնիկ ստեղծագործությունների բարձրարվեստ գործեր, որոնք նորություն էին հայկական երաժշտական կյանքում։ Հանճարեղ Կոմիտասը, ժողովրդական երգարվեստը գտնելով օտար նատվածքներից, ապացուցեց հայկական երաժշտության ինքնուրույնությունը։ Կերպարվեստը վերջնականապես հրաժարվեց միջնադարյան միօրինակությունից և ժանրային բազմապիսի արտահայտություններ ստացավ։ Երևան եկան դիմանկարի, բնանկարի, ժանրային ու պատմական նկարչության, օֆորտի, քանդակագործության խոշոր վարպետներ, հատուցային նկարչությունը դարձավ տիրապետող

Որոշ հաջողություններ ձեռք բերվեցին ազգային ճարտարապետության լավագույն ավանդույթները նոր ժամանակների ոգով վերակենդանացնելու, ինչպես նաև քաղաքաշինության նոր սկզբունքներ կիրառելու ուղղությամբ։ Խոստ մեծապես մասնի դերը՝ որպես հասարակական կարծիքի և ժամանակի մտայնությունների ու գաղափարական պայքարի արտահայտիչ։ Ժամանակի համար բավական լայն ծավալ ստացավ գրաքննության։ Հայերեն գրքի տպագրության հին կենտրոնների կողքին հանդես եկան նորերը (Երևան, Շուշի, Բաքու, Վան և այլն)։

Ժողովրդական լուսավորության ասպարեզում ևս զգալի առաջընթաց կատարվեց։ Ազգային դպրոցները ստացան կանոնադրություններ, մշակվեցին ուսումնական նոր ծրագրեր, բացվեցին ու տարածում ստացան իգական դպրոցները, մի շարք առաջատար դպրոցներ (Թիֆլիսի Ներսիսյան և Հովնանյան, Երևանի և Շուշիի թեմական, Կ. Պոլսի Կենտրոնական, Կարինի Սանասարյան և այլն) դարձան մտավորականներ պատրաստող և կրթական շարժմանն ուղղություն տվող կենտրոններ։ Լայն ծավալ ստացավ նախորդ տարիներին սկսված հասարակական պայքարը՝ հանուն ժողովրդին մատչելի աշխարհաբար լեզվի՝ ընդդեմ կղերաֆեոդալական վերնախավի մենաշնորհը դարձած գրաբարի։ Այն պայմաններում, երբ գրագիտությունն ու կրթությունն այդ վերնախավի արտոնությունն էին, գրապայքարն ստանում էր սոցիալ-քաղաքական հնչեղություն և դասակարգային ուղղվածություն։ Գրապայքարում աշխարհաբարն աստիճանաբար հաղթող դարձավ։ Դա միաժամանակ նշանակում էր մտածողության աշխարհականացում, դեմոկրատացում, ինչպես նաև գրականության ժողովրդայնացում։

Առաջընթաց ապրեց նաև գիտությունը։ Սակայն այս ասպարեզում ևս բացակայում էր պետական աջակցությունը, մտնավանդ բուն Հայաստանում. այստեղ չկային գիտական հաստատություններ, և շատ բան արվում էր հասարակական նախաձեռնության ու անձնական անձնազոհության շնորհիվ։ Եվրոպայում ու Ռուսաստանում բարձրագույն կրթություն ստացած հրիտասարդ գիտական կադրերն ստիպված էին մեծ մասամբ գործել օտար երկրներում. Համախ հաղորդակից չլինելով մայր ժողովրդի պահանջմունքներին, իսկ նրանք, ովքեր վերադառնում էին հայրենիք, հիմնականում զբաղվում էին մանկավարժությամբ և գիտության նորագույն նվաճումների (բժշկություն, դյուզատնտեսություն, բնագիտություն՝ դարվինիզմ) մասսայականացմամբ։ Այնուամենայնիվ, բնական գիտությունների ասպարեզում հայ իրականությունից դուրս եկան մի շարք գիտնականներ (Ա. Արծրունի, Զ. Ջամչյան, Հովհ. Ադամյան, Մ. Առաքսամյան), որոնք միջազգային հռչակ ձեռք բերեցին։

Առավել ակնառու էին հայագիտության նվաճումները։ Հայագիտությունը, որը գրավել էր նաև եվրոպական ու ռուս գիտնականների ուշադրությունը, հին արժեքները հրապարակ հանելուն զուգընթաց անցավ դրանց մանրազնին ուսումնասիրությանն ու արժեքավորմանը՝ քննական մոտեցում հանդես բերելով երևույթների միջնադարյան, կրոնական նեղ մեկնաբանությունների նկատմամբ։ Լուրջ ուսումնասիրություններ արվեցին հայ մատենագիտության, աղբյուրագիտության, տեքստաբանության ուղղությամբ։ Լեզվաբանության ասպարեզում կարևոր հայտնագործություններ կատարվեցին հնդեվրոպական լեզվաընտանիքում հայերենի տեղն ու նշանակությունը որոշելու հարցում, մշակվեց աշխարհաբար լեզվի քերականությունը։ Հրապարակ եկան

պատմագիտական արժեքավոր հետազոտություններ, ձևավորվեցին գրականագիտական միտքը և գրական քննադատությունը։ Հայագիտության խոշոր նվաճումներից էր ազգային «Սասնա ծռեր» էպոսի հայտնագործումը (1872) և հայկական էպոսագիտության սկզբնավորումը։ Հայ գիտնականների ջանքերով գիտական ինքնուրույն բնագավառների իրավունք ձեռք բերեցին բանագիտությունը, ազգագրությունը, հնագիտությունը։ Որոշ հաջողությունների հասավ բուրժուական տնտեսագիտական և փիլիսոփայական միտքը։

XX դարի սկզբին, իմպերիալիզմի և պրոլետարիատի հեղափոխական շարժումների ծավալման դարաշրջանում հայկական մշակույթի զարգացման գործում նկատելի տեղաշարժեր կատարվեցին։ Դասակարգային պայքարի ուժեղացումը, առաջին հեղափոխության հզոր ալիքները, մարքսլենինյան գաղափարների տարածումը մեծապես խթանեցին ժողովրդական զանգվածների քաղաքական ակտիվացումը և նպաստեցին ազգային մշակույթի մեջ դեմոկրատական ու սոցիալիստական տարրերի զարգացմանը, որոնք նախորդ շրջանում ավելի քիչ էին արտահայտված։ Բուրժուական մտայնությունը, որ նախորդ շրջանում առաջադիմական դեր էր խաղում մշակույթի զարգացման գործում, այժմ արդեն, դասակարգային հակադիր ուժերի խիստ բևեռացման պայմաններում, սկսում է հետադիմական, արգելակող դեր կատարել, ընդգծված ձևով հակադրվելով ժամանակի ամենաառաջադիմական, մարքսիստական աշխարհայացքին, մշակույթի դեմոկրատական արտահայտություններին։

Հայ մարքսիստ-լենինյանները (Ստ. Շահումյան, Ս. Սպանդարյան, Բ. Կնունյանց, Ալ. Մյասնիկյան և ուրիշներ) անգնահատելի ծառայություն մատուցեցին հայ մշակույթին, իրենց բազմաթիվ ելույթներով ու գիտողություններով օգնեցին մշակույթի գործիչներին՝ առաջնորդվելու դասակարգային պայքարի ու պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարներով, մշակույթը դարձնելու ժողովրդական զանգվածների գաղափարական ու գեղագիտական դաստիարակության լավագույն միջոց։

XX դարասկզբի նոր պայմաններում, հակառակ բուրժուական անկումայնության ու նացիոնալիստական տրամադրությունների տարածմանը, հայկական արվեստն ու գրականությունը գնացին նոր, դեմոկրատական վերելքի ուղիով։ Ուժեղացան ռեալիզմի գրսևորումները, մշակույթի արտահայտություններում կենտրոնական տեղ գրավեց մարդն իր բազմակողմանի ապրումներով ու հակասություններով։ Չերմ հայրենասիրությունն ու խորապես գիտակցված քաղաքացիականությունը դարձան մշակույթի արժեքների գնահատման կարևորագույն չափանիշներ։ Մնումնդ առավ հայ պրոլետարական գրականությունը։ Մնվեց նաև հայ մարքսիստական մարտական մամուլը։ Արվեստի ու գիտության ասպարեզում շարունակվեց նախորդ տարիներին ձեռք բերված նվաճումների հետագա զարգացումը։

Սակայն պատմական դաժան ճակատագիրը մեկ անգամ ևս կասեցրեց հայ մշակույթի զարգացման ընթացքը։ 1915 թ. թուրքական կառավարությունը կազմակերպեց արևմտահայության բնաջնջումը և արտաքսումը, որի հետևանքով փաստորեն դադարեց հայ ժողովրդի այդ խոշոր հատվածի մշակութային կյանքը։ Հազարավոր հայ ուսուցիչներն աշխարհի տարբեր մասերում նոր գաղթօջախներ հիմնեցին ու սկիզբ դրեցին հայկական սփյուռքին։ Համառ ջանքերի շնորհիվ արևմտահայ մշակույթը ինչ-որ չափով վերածվե-

վից, սկսեց զարգանալ օտար երկրներում ու այդպես սկզբնավորվեց հայկական մշակույթի մի նոր ճյուղավորումը՝ սփյուռքահայ մշակույթը։ Իսկ հայ ժողովրդի արևելյան հատվածը Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի շնորհիվ, 1920 թ. կանգնելով զարգացման նոր ուղու վրա և իր վիրկն ընդունելով հազարավոր տարագիր արևմտահայերի, տեր դարձավ նախորդ ժամանակաշրջաններում ստեղծված հայկական ողջ մշակույթին ու հենվելով նրա լավագույն արժեքների վրա, հայրենի հողում ստեղծեց իր նոր, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական մշակույթը։

Հայկական մշակույթի զրսևորումները դնահատելիս, միաժամանակ, երբեք չպետք է աչքաթող անել դասակարգային պայքարի առկայությունը այդ մշակույթի զարգացման ընթացքում, դասակարգային ուղղվածությունը՝ մշակույթի գործիչների ստեղծագործություններում։ Ազգերի բուրժուական զարգացման պայմաններում Վ. Ի. Լենինը հետևյալ կերպ է բնորոշել ազգային մշակույթի դասակարգային բովանդակությունը. «Յուրաքանչյուր ազգային կուլտուրայում կան, թեև չզարգացած, դեմոկրատական և սոցիալիստական կուլտուրայի տարրեր, որովհետև յուրաքանչյուր ազգի մեջ կա աշխատավոր և շահագործվող մասսա, որի կյանքի պայմաններն անխուսափելիորեն ծնում են դեմոկրատական և սոցիալիստական գաղափարախոսություն։ Բայց յուրաքանչյուր ազգի մեջ կա նաև բուրժուական (իսկ մեծ մասամբ նաև սևհարյուրյակային ու կղերական) կուլտուրա—և այն էլ ոչ թե «տարրերի» ձևով միայն, այլ տիրապետող կուլտուրայի ձևով»[1]։ Վ. Ի. Լենինը նշում է նաև, որ ազգային կուլտուրայից պետք է վերցնել «միայն նրա դեմոկրատական և նրա սոցիալիստական տարրերը»[2]։

Հայ ժողովրդի մշակույթի բոլոր կոնկրետ արտահայտություններն արժեքավորելիս պետք է մշտապես առաջնորդվել լենինյան այս ընդհանուր մեթոդոլոգիական դրույթներով։

1. ԴՊՐՈՑ

1870-ական թվականներից հայ ժողովրդի և՛ արևելյան, և՛ արևմտյան հատվածներում դպրոցական գործը նկատելի առաջընթաց ապրեց։ Դարի առաջին կեսի և հատկապես 50—60-ական թվականների ազգային զարթոնքն ու կյանքի սոցիալ-տնտեսական տեղաշարժերը որոշակի պայմաններ էին ստեղծել դրա համար։ Թեև դպրոցական գործի տեմպերը շարունակում էր մնալ եկեղեցին, բայց այժմ ավելի մեծ դեր էր խաղում հասարակական նախաձեռնությունը։

Այս շրջանի բնորոշ առանձնահատկություններն այն էր, որ, ի տարբերություն նախորդ տարիների, երբ դպրոցը հիմնականում զարգանում էր հայաշատ գաղթօջախներում, մասնավորապես Կ. Պոլսում, Զմյուռնիայում, Թիֆլիսում, Նոր Նախիջևանում և այլուր, ապա այժմ այն սկսել էր տարածվել նաև բուն Հայաստանում։ Սակայն կյանքի ընդհանուր հետամնացությունը, պետական աջակցության բացակայությունը, ժողովրդի չքավորությունը, կրթող ուժերի խիստ պակասը և այլ պատճառներ բացասաբար էին անդրադառնում նրա կանոնավոր ու արդյունավետ ընթացքի վրա։

---

1 Վ. Ի. Լենին, Երկ., հ. 24, էջ 151—152։

2 Նույն տեղում, էջ 152։

Արևելահայ դպրոցը, շնորհիվ ռուսական առաջավոր մանկավարժական մտքի բարերար ազդեցության, կարողացավ համեմատաբար ավելի կազմակերպված ու որոշակի ընթացք ստանալ։ Մինչդեռ արևմտահայ դպրոցը, որ զարգանում էր առավելապես ֆրանսիական ազդեցության տակ, թուրքական իրականության հետամնացության ու բիրտ բռնության պայմաններում, ավելի երերուն էր ու ոչ միասնական։

Արևելահայ դպրոցը։ *1870-ական թվականների նախօրյակին, ինչպես ողջ Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում, կրթական գործը որոշակի բարեփոխությունների ենթարկվեց։ 60-ական թվականների բուրժուական ռեֆորմներն ընդգրկեցին նաև դպրոցական ասպարեզը*[3]*։ 1864 թ. կանոնադրություններով Ռուսաստանում ստեղծվեցին յոթնամյա դասական և ռեալական արական գիմնազիաներ։ 1871 թ. բոլոր գիմնազիաները դարձան 8-ամյա և վերածվեցին դասականի՝ լատիներեն և հունարեն լեզուների ընդգծված ուսուցումով, իսկ 1872 թ. ստեղծվեցին ռեալական 6—7-ամյա ուսումնարաններ՝ տեխնիկական մասնագիտացմամբ, որոնք 1888 թ. վերածվեցին հանրակրթական միջնակարգ դպրոցների՝ բնագիտական թեքումով։ Սակայն այս երկու տիպի դպրոցներից առավելությունը տրվում էր դասական գիմնազիաներին, որոնց շրջանավարտները միայն իրավունք ունեին առանց քննության համալսարան ընդունվելու։ Սրանք պաշտոնապես հայտարարվում էին ոչ-դասային դպրոցներ, սակայն ուսման բարձր վարձի և զանազան արգելքների պատճառով շարունակում էին մատչելի լինել գերազանցապես ունևորներին։ 1860 թ. ընդունվեց նաև օրիորդաց ուսումնարանների կանոնադրությունը, իսկ 1870-ից այդ ուսումնարանները վերածվեցին իգական 8-ամյա գիմնազիաների։*

Զգալի փոփոխությունների ենթարկվեց նաև միջնակարգ դպրոցից անջրպետված տարրական կրթությունը, որը նախատեսված էր հասարակ ժողովրդի համար։ 1864 թ. կանոնադրությամբ տարրական միդասյա դպրոցի նպատակը համարվեց կրոնաբարոյական դաստիարակության ուժեղացումը։ Տարրական դպրոցները 2—3-ամյա էին, դրանք բացելու իրավունք էր վերապահվում նաև տեղական ինքնավարության մարմիններին, ընկերություններին և մասնավոր անձանց։ Սակայն բոլոր այդ դպրոցները գտնվելու էին լուսավորության մինիստրության տնօրինության տակ։ Կանանց ևս տրվում էր դասավանդման իրավունք։ Նորաստեղծ զեմստվոներն զգալի աշխատանք կատարեցին գյուղական վայրերում տարրական դպրոցներ բացելու ուղղությամբ։ Զեմստվոյական դպրոցներն աչքի էին ընկնում կազմակերպվածությամբ, համեմատական բարձր մակարդակով և աշխարհիկ բնույթով։ Սրանց հակառակ եկեղեցական-ծխական դպրոցները, որոնց տնօրենն ուղղափառ եկեղեցու սինոդն էր, ունեին խիստ ցածր մակարդակ և նրանցում գերիշխում էր կրոնական սխոլաստիկան։ Կառավարությունը բոլոր միջոցներով նպաստում էր այս դպրոցների տարածմանը՝ ի հակակշիռ ժողովրդի մեջ լավ համարում ունեցող զեմստվոյական դպրոցների։ Գործում էին նաև մինիստրական տարրական դպրոցներ։

Հետագա տարիներին ստեղծվեցին երկդասյա տարրական դպրոցներ, որտեղ ուսուցման առաջին երեք տարիները համապատասխանում էին ժողո-

---

3 Տե՛ս Ն. Ա. Կոնստանտինով, Ե. Ն. Մեդինսկի, Մ. Ֆ. Շաբաևա, *Մանկավարժության պատմություն*, Երևան, 1972, էջ 347—355, 359—372։

վրրդական միդասյա դպրոցի դասընթացին, իսկ հաջորդ երկու տարիները համարվում էին երկրորդ դասարան և ավելի խորացված գիտելիքներ էին տրվում քվաբանությունից ու բնագիտության տարրերից։ Տարրական ավելի բարձր դպրոցներ էին 1872 թ. կանոնադրությամբ նախկին դավառական դպրոցների փոխարեն ստեղծված բազարային ուսումնարանները՝ վեցամյա դասընթացով, որոնք որոշ կիրառական գիտելիքներ էին տալիս աշակերտներին։ Այս և երկդասյա դպրոցները կտրված էին միջնակարգ դպրոցներից, որովհետև նրանց միջև չկար հաջորդական կապ. միջնակարգ դպրոցներն ունեին իրենց հատուկ նախապատրաստական 1—2 դասարանները։ Տարրական դպրոցների վրա վարչական հսկողությունն ուժեղացնելու նպատակով 1869 թ. ստեղծվեցին նահանգական վերատեսչի, իսկ 1874 թ. նաև՝ ժողովրդական ուսումնարանների գիրեկտորի պաշտոններ։ Տարրական դպրոցների համար ուսուցիչներ պատրաստելու նպատակով 1870-ական թվականներին բացվեցին հատուկ նոամյա ուսուցչական սեմինարիաներ, իսկ բազարային ուսումնարանների ուսուցիչներ պատրաստելու համար՝ նոամյա ուսուցչական ինստիտուտներ։

1867 թ. Անդրկովկասի համար ևս հաստատվեցին ուսումնական գործի վերաբերյալ կանոններ, որոնց հիմնական նպատակն էր կովկասյան դպրոցը համապատասխանեցնել ընդհանուր կայսերական դպրոցական համակարգին, տարրական կրթությունն անջրպետել միջնակարգից և դասավանդման լեզուն դարձնել ռուսերենը։ Վերականգնվեց Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձությունը, որին ենթարկվեցին երկրամասի բոլոր դպրոցները, բացի հայկական և ուղղափառ եկեղեցիների անօրինության տակ եղածները։ Հոգաբարձությունն սկսեց միջոցներ ձեռնարկել պետական դպրոցների տարածման համար։

Նույն, 1867 թ. Գևորգ IV կաթողիկոսը էջմիածնում ստեղծեց ուսումնական հանձնաժողով, որը կազմագրեց յուրաքանչյուր գյուղում դպրոց բանալ, իսկ 1868 թ. հրապարակեց հայկական ծխական դպրոցների առաջին ընդհանուր կանոնները[1], որոնց համաձայն դրանց կառավարումը հանձնվում էր դպրոցական ընտրովի հոգաբարձություններին։ Ժողովրդի կրթության հիմնական օջախը դարձավ տարրական եկեղեցական-ծխական դպրոցը։ Այդ դպրոցներում ուսուցումը հիմնականում 2—3 տարի էր։ Ավանդվում էին՝ կրոն, հայոց և ռուսաց լեզուներ, վարչագրություն, թվաբանություն, երգեցողություն, իսկ ավելի առաջադիմած դպրոցներում նաև՝ նախնական գիտելիքներ աշխարհագրությունից, պատմությունից, բնագիտությունից, ինչպես նաև գործնական առարկաներ՝ ձեռագործ, կալմայարություն։

Եկեղեցական-ծխական դպրոցները նշանավորում էին կրթության զարգացման նոր ուղիներ։ Դրանով դպրոցը հանձնվում էր որոշ մասնագիտական մակարդակ ունեցող ուսուցիչների, վերացվում էին հին խալֆայական դպրոցներում տիրող կամայականությունն ու մարմնական պատիժները, ձեվավորվում էր ուսուցման դաս-դասարանային համակարգը։ Հայկական եկեղեցական-ծխական դպրոցը, իր հետագա զարգացման մեջ, ի տարբերություն ուղղափառ եկեղեցական-ծխական դպրոցների, մոտեցավ Լուսավորչականում լայն տարածում գտած ժողովրդական-գեմստվոյական դպրոցին։

---

[1] Տե՛ս «Արարատ», 1868, հ. 2, էջ 70։

1870-ական թվականներին հրապարակ եկավ դպրոցական մի այլ տիպ ևս՝ այսպես կոչված հոգևոր կամ վիճակային դպրոց։ Այս դպրոցներում, որոնք ընդգրկում էին նաև ծխական դպրոցների ծրագիրը, որպես նախակրթարան, ուսուցումը 6—8 տարի էր։ Սրանցում ավանդվում էին նաև Հայաստանի, Ռուսաստանի և ընդհանուր պատմություն ու աշխարհագրություն, բնագիտություն, գծագրություն, երբեմն՝ հանրահաշիվ, ֆիզիկա, մարդակազմություն, երկրաչափություն։ Ցարական կառավարությունն ընդունել էր հայկական դպրոցի ինքնավարությունը եկեղեցու հովանու տակ՝ պայմանով, որ այն ահմանափակվի միայն տարրական կրթության սահմաններում։ Սակայն, երբ ծխական դպրոցներից սկսեցին առանձնանալ ավելի բարձր մակարդակ ունեցողները, հոգևոր իշխանություններն ու հայկական մամուլն այդ դպրոցներին սվեցին «հոգևոր» անվանումը, որը դրանց կրոնական ուղղվածության պատրանք էր ստեղծելու և շեղելու էր կառավարության ուշադրությունը։ Կառավարության աչքից քողարկված հոգևոր դպրոցները դիտավորյալ զրկված էին հրապարակային կանոններ ունենալուց և գործում էին նրանց շուրջը համախմբված մանկավարժների անձնական նախաձեռնությամբ։ Այդպիսի դպրոցներից էին՝ Ալեքսանդրապոլի ս. Փրկիչ եկեղեցուն կից Վիճակային, Ախալցխայի Կարապետյան, Ախալքալակի Մեսրոպյան, Բաքվի և Ադուլիսի հոգևոր դպրոցները։

Հոգևոր դպրոցների շարքում առանձնահատուկ տեղ էին գրավում իգական ուսումնարանները։ 1870-ական թվականներին լայն տարածում է ստանում աղջիկների կրթության գործը։ 1866 թ. Պ. Պռոշյանի ջանքերով Երևանում հիմնված Գայանյան իգական դպրոցը 1883 թ. վեր էր ածվել միջնակարգի։ Ավելի նշանավոր էին Թիֆլիսի Գայանյան (հիմնադրված 1869 թ.) և Մարիամյան-Հովնանյան (հիմնադրված 1877 թ.) դպրոցները, որոնց ավարտական դասարանները նկատելիորեն մանկավարժական բնույթ էին ստանում։ Ճանաչված դպրոցներից էին նաև Ալեքսանդրապոլի Արղության (1871-ից), Շուշիի Մարիամյան (1864-ից), Ախալցխայի Եղիսաբեթյան (1870-ից) և մի շարք այլ դպրոցներ։

Դպրոցի մյուս, բարձր տիպը միջնակարգ թեմական դպրոցն էր (դպրանոց, հոգևոր սեմինարիա)։ Այն ստեղծվել էր 1836 թ. «Պոլոժենիեի» հիման վրա՝ յուրաքանչյուր թեմի համար հոգևորականներ պատրաստելու նպատակով։ Սակայն մինչև 1870-ականները Ռուսաստանի հայկական վեց թեմերից նման դպրոցներ կային միայն Թիֆլիսում (Ներսիսյան դպրոց), Երևանում և Շուշիում։ Թեմականի անուն էր կրում նաև Շամախիի դպրոցը, որը, սակայն, աննպաստ պայմանների պատճառով երբեք չհասավ թեմականի մակարդակի, իսկ 1886 թ. դասվեց ծխական դպրոցների շարքը։ 1875 թ. նոր Նախիջևանում բացվեց հոգևոր դպրոց, որը և 1881 թ. վերածվեց թեմականի[5]։ Թեմականների շարքին էր դասվում նաև էջմիածնի հինավուրց ժառանգավորաց դպրոցը, որը 1882 թ. ձուլվեց Գևորգյան ճեմարանի հետ։

Թեմական դպրոցները դարձել էին արևելահայերի կրթական կյանքի կենսարաններ։ Այդ դպրոցները հիմնականում աշխարհիկ բովանդակություն էին ստացել։ Դրանք ավարտողների ճնշող մեծամասնությունը նվիրվում էր

---

5 Տե՛ս «Կանոնադրություն թեմական հոգևոր դպրանոցի վիճակին հայոց Նոր Նախիջևանի և Բեսարաբիո», Նոր Նախիջևան, 1882։

ուսուցչական կամ այլ աշխարհիկ զբաղմունքի։ Ներսիսյան դպրոցն իր ողջ գոյության ընթացքում տվել է 2000-ից ավելի շրջանավարտ, որից միայն 60-ն են ընդունել հոգևոր կոչում, իսկ մյուսները դարձել են մշակույթի ու լուսավորության գործիչներ[6]։

1874 թ. բացվեց Էջմիածնի Գևորգյան ճեմարանը։ Ճեմարանն ուներ երկու բաժին՝ դասարանական, որը նույն թեմական դպրոցի ծավալն ուներ, և լսարանական, որը բարձրագույն դասընթաց էր երեք տարվա ուսուցմամբ հրոնական առարկաներից բացի, որոնք հիմնականում ավանդվում էին լսարանական բաժնում, ճեմարանը բազմակողմանի ընդհանուր կրթություն էր տալիս։



Էջմիածնի Գևորգյան ճեմարանը

Այսպիսով, 1870-ական թվականներին ընդհանուր առմամբ ուրվագծվեց արևելահայ կրթական համակարգը չորս տիպի դպրոցներով՝ ծխական, հոգևոր, թեմական և ճեմարան։

Այս շրջանում զգալի փոփոխություններ կատարվեցին նաև Մոսկվայի Լազարյան ճեմարանում[7]։ Ճեմարանի հոգաբարձու Ն. Լազարյանի մահից հետո, նրա ցանկության համաձայն, 1871 Ջ. Լազարյան ճեմարանն ամբողջությամբ անցավ լուսավորության մինիստրության տնօրինությանը, թեև նրա տնտեսական գործերը դարձյալ պետք է հոգար նոր պատվավոր հոգաբարձուն՝ Ս. Ս. Աբամելիք-Լազարյանը։ 1872 թ. դեկտեմբերի 16-ին հրապարակվեց ճեմարանի նոր կանոնադրությունը։ Հայերի համար ստեղծված նախա-

6 Տե՛ս «Հայ մշակույթի օրրանը», Երևան, 1971, էջ 5։

7 Տե՛ս Ա. Հ. Իգնատյան, Լազարյան ճեմարան, Երևան, 1969, էջ 96—132։

պատրաստական բաժինը պահպանեց իր գոյությունը, գիմնազիական բաժինը վերակառուցվեց դասականի, իսկ նախկին լիցեյական երկու դասարանները վերածվեցին եռամյա ուսուցմամբ արևելյան լեզուների ֆակուլտետի՝ մասնագիտական դասարանների, որտեղ պատրաստվելու էին թարգմանիչներ ու դիվանագիտական պաշտոնյաներ։ Որոշ չափով ավելացան գիմնազիական բաժինում հայ աշակերտներին ավանդվող հայագիտական առարկաների ժամերը, որը ճեմարանի հայ ուսուցիչների և հասարակության պայքարի արդյունք էր։

Հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացումը և կրթական շարժման լայն ծավալն ամբողջ Ռուսաստանում դրդեցին ցարական կառավարությանն ուժեղացնել վարչական հսկողությունը ժողովրդական դպրոցների վրա։ Կովկասյան իշխանություններն իրենց հերթին խիստ անհանգստանում էին հայկական դպրոցների աճից։ 1873 թ. հաստատվեցին Կովկասի ուսումնական մասի վերաբերյալ նոր կանոններ, որոնցով երկրամասի բոլոր դպրոցները (պետական, մասնավոր, հասարակական) ենթարկվեցին ուսումնական շրջանի հոգաբարձության տնօրինությանը, իսկ ոչ ուղղափառ եկեղեցական-ծխական դպրոցները՝ հսկողության։ Կանոններում պարզորոշություն չկար հսկողության իրականացման վերաբերյալ, և դա առիթ դարձավ սուր վեճերի հայ հոգևոր իշխանության ու պետական մարմինների միջև։ Ի վերջո կառավարությունը 1874 թ. հուլիսի 19-ին լրացուցիչ կանոններ[8] հրապարակեց հայկական դպրոցների համար։ Ըստ այդ կանոնների, հայկական դպրոցները մնում էին եկեղեցու տնօրինության տակ, իսկ պետական վերատեսուչները պետք է միայն հսկեին, որպեսզի բոլոր դպրոցներում դասավանդվեր ռուսաց լեզուն, իսկ ավելի բարձր տիպի դպրոցներում՝ նաև Ռուսաստանի աշխարհագրությունն ու պատմությունը՝ ռուսաց լեզվով։ Թեմական դպրոցներն ազատ էին հսկողությունից։ Պետական այս կանոնների մեղմությունը բացատրվում էր այն բանով, որ ցարական կառավարությունը վարում էր ակտիվ արևելյան քաղաքականություն և չէր ցանկանում սրել հարաբերությունները էջմիածնի կաթողիկոսության հետ, որին նա որոշակի տեղ էր հատկացնում այդ քաղաքականության մեջ։

Գևորգ IV կաթողիկոսը, դպրոցների ընթացքը կարգավորելու նպատակով, 1873 թ. յուրաքանչյուր թեմում ստեղծեց թեմական դպրոցական տեսչի պաշտոն[9]։

Ժողովրդական կրթության ծավալմանը որոշակի օժանդակություն էին ցույց տալիս հասարակական կազմակերպությունները։ Դեռևս 1864 թ. բժիշկ Դ. Ռոստոմյանի ջանքերով ստեղծված Բաքվի «Մարդասիրական ընկերությունը»[10] 1870-ից լայն գործունեություն ծավալեց դպրոցներին նյութապես օգնելու համար։ 1880 թ. ստեղծվում է Թիֆլիսի «Հայոց հրատարակչական ընկերությունը», որը նպատակ է դնում հրատարակել ու ժողովրդի մեջ մատչելի գներով տարածել հայ գրողների և Մաշտոցյան գործեր։ 1882 թ. հրա-

---

8 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 821, ց. 147, գ. 20, բաժ. II, թ. 5։

9 Տե՛ս «Արարատ», 1873, № 12, էջ 459—460։

10 Տե՛ս «Краткий исторический очерк состояния и деятельности Бакинского человеколюбивого общества во имя св. Григория просветителя Армении с 1854 по 1896 гг.», Баку, 1896.

ստարակ եկավ «Թիֆլիսի հայուհյաց բարեգործական ընկերությունը»[11], որը հատուկ ուշադրություն դարձրեց աղջիկների կրթության կազմակերպմանը։ Կրթասիրական նոր ընկերություններ կազմակերպվեցին Ալեքսանդրապոլում (1869), Նոր Նախիջևանում (1882), Նոր Բայազետում (1879) և այլուր։ Առավել լայն գործունեություն ծավալեց բժիշկ Բ. Նավասարդյանի նախաձեռնությամբ և դրամատուրգ Գ. Սունդուկյանի ակտիվ աջակցությամբ 1881 թ. Թիֆլիսում ստեղծված «Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը»[12], որի հիմնական նպատակն էր լուսավորության տարածումը Կովկասի հայության շրջանում։

Արևելահայ դպրոցի վերելքի շրջանում սկզբնավորվեց նաև երեխաների նախադպրոցական կրթության գործը։ 1879 թ. Ռ. Պատկանյանը Նոր Նախիջևանում բացեց մանկապարտեզ, որը, սակայն, մեկ տարվա կյանք ունեցավ։ Եվրոպայում մասնագիտական կրթություն ստացած Սոֆյա Բաբայանն ու Գայանե Հովհաննիսյանը (Մատակյան) Թիֆլիսում կազմակերպեցին Ֆրեոբելյան ընկերություն, նպատակ ունենալով հասարակության մեջ տարածել գիմնական նշանավոր մանկավարժ Ֆ. Ֆրեոբելի նախադպրոցական դաստիարակության գաղափարները։ 1882 թ. այդ ընկերությունը Զրկիններց եկեղեցուն կից բացեց առաջին ժողովրդական մանկապարտեզը։ Երևանը, Ալեքսանդրապոլը, Ախալցխան, Կարսը, Բաքուն ևս ունեցան մանկապարտեզներ։

Այս շրջանում արևելահայ կրթական շարժման բարձրակետը եղավ 1882 թ. օգոստոսին Թիֆլիսում կայացած առաջին ընդհանուր ուսուցչական ժողովը[13], որին ներկա էին ժամանակի գրեթե բոլոր նշանավոր հայ մանկավարժները և 200-ի չափ ուսուցիչներ Անդրկովկասի տարբեր ծայրերից։ Ժողովը մշակեց դպրոցական առարկայական ծրագրեր, մի շարք գործնական որոշումներ կայացրեց, նրա մասնակիցներն ունկնդրեցին ականավոր մանկավարժների զեկուցումներն ու փորձնական դասերը։

Այսպիսով, արևելահայերի կրթական գործը հասարակական ընդհանուր վերելքի պայմաններում հասել էր որոշակի հաջողությունների։ Եթե էջմիածնի սինոդի տվյալներով 1871 թ. Անդրկովկասում հայկական դպրոցների թիվը հասնում էր 90-ի (ներառյալ և թեմական դպրոցները), 4000-ից ավելի աշակերտով (որից 46 դպրոցը՝ ավելի քան 1700 աշակերտով, գտնվում էր Երևանի թեմում)[14], ապա 1885 թ. այդ թիվը հասել էր 270-ի (41-ը իգական), ընդ որում, միայն Երևանի թեմում կար 103 դպրոց[15], եթե սրան ավելացնենք Ռուսաստանի մյուս վայրերում գործող հայկական դպրոցները, ապա կստացվի 310—330 դպրոց։ Այս տարիներին աշակերտների թիվն ավելի քան եռապատկվեց։ Զգալի թվով հայ աշակերտներ էին սովորում նաև պետական ու մասնավոր դպրոցներում։

1880-ական թվականների կեսերի համար կատարվել է նաև զանազան բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող հայ ուսանող-

---

11 Տե՛ս «Թիֆլիզի հայուհյաց բարեգործական ընկերության 25-ամյակը, 1882—1907», Թիֆլիս, 1907։

12 Տե՛ս Աո, Երևանյան հայոց բարեգործական ընկերության կովկասում, Թիֆլիս, 1911։

13 Տե՛ս Հ. Նազարյանց, Հայոց առաջին ընդհանուր ուսուցչական ժողովի պատմությունը, Թիֆլիս, 1883։

14 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 32։

15 Տե՛ս նույն տեղում, գ. 5, թ. 5, 11 և հետ.։

ների հաշվարկ։ Ըստ դրա Ռուսաստանի բարձրագույն դպրոցներում սովորում էր 300-ի չափ հայ ուսանող, իսկ եվրոպական երկրներում՝ մոտ 200[16]։

1880-ական թվականների սկզբից Ռուսաստանում ծայր առած տոլստոյ-պրեդոնոսցևյան ռեակցիան իրեն զգացնել տվեց նաև ազգային ծայրամասերում։ Այդ ժամանակ Ռուսաստանում «խիստ ուժեղացավ ազգային ճնշումը։ Մայրենի լեզուներով հրատարակությունների արգելումը, ազգային մշակույթի գործիչների հալածանքը զուգակցվում էին բռնի ռուսացմամբ, ուղղափառության ստիպողական տարածմամբ։ Մարտնչող նացիոնալիզմի գաղափարախոսությունն ստացավ կառավարության ամենայն աջակցությունը»[17]։ Անդրկովկասում այդ արշավանքի գլուխ կանգնեց Կովկասի ուսումնական շրջանի նոր հոգաբարձու, մոլի ռեակցիոներ Կ. Պ. Յանովսկին։ Ցարական բյուրոկրատները հայկական դպրոցները դիտում էին որպես ծավալվող ազգային-ազատագրական խմորումների օջախներ։

1883 թ. գարնանը Երևանում «Հայասեր-ազգասեր» խմբակի բացահայտման կապակցությամբ տեղի ունեցած դեպքերն ու դատական գործը հարմար առիթ եղան արագացնելու կառավարության միջամտությունը հայկական դպրոցների ընթացքին, որովհետև այդ խմբակը սերտորեն կապված էր բազաթի դպրոցների հետ և նրա անդամները գերազանցապես ուսուցիչներ էին։

1884 թ. հունվարին Պետերբուրգում կայացած պետական խորհրդակցությունը լուսավորության մինիստր Ի. Դ. Դելյանովի առաջարկով ընդունեց հայկական եկեղեցական դպրոցների նոր կանոններ, որոնք փետրվարի 16-ին հաստատվեցին ցարի կողմից[18]։ Կանոններն անկաշկանդ միջամտության իրավունք էին տալիս պետական մարմիններին, սահմանում էին, որ թեմական տեսուչն անպայման հոգևորական լինի, բայց ամենակարևորը, բացառում էին տարրականից ավելի բարձր դպրոցների ինքնուրույն գոյությունը, որոնք պետք է անհապաղ դասվեին մասնավորների շարքը և անցնեին ուսումնական վարչության հսկողության տակ։

Սակայն էջմիածնի սինոդը, պատճառաբանելով, որ դպրոցական գործը կաթողիկոսի տնօրինության հարց է, հրաժարվեց նոր կանոններն ընդունելուց։ Կառավարությունն անտեսեց սինոդի բոլոր միջնորդությունները և 1885 թ. սկզբին փակեց նոր կանոններին չենթարկվող հայկական բոլոր (մոտ 300) դպրոցները[19], բացի թեմականներից, որոնց այդ կանոնները չէին վերաբերվում։

Դպրոցների փակումը խոր դժգոհություն առաջացրեց արևելահայերի մեջ։ Թիֆլիսի նարոդնիկական խմբակը բողոքի կոչ-թռուցիկ տարածեց Անդրկովկասում, ազգային գաղտնի դպրոցներ պահելու փորձեր արվեցին։ Ընդհանուր դժգոհությունն ընդգրկեց նաև արևմտահայությանը։ Հոգվածներ տպվեցին եվրոպական մամուլում։ Զգուշանալով անցանկալի բարդություններից, ցարիզմը որոշից առժամանակ նահանջել։ 1885 թ. մայիսին ցարը կաթողիկոս հաստատեց երկրորդ թեկնածու արքեպիսկոպոս Մակարին։ Ընդառաջելով նոր կաթողիկոսի բազմաթիվ դիմումներին, բայց ըստ էության ոչ

16 Տե՛ս «Արձագանք», 1888, № 11, էջ 139։

17 Տե՛ս «История Коммунистической партии Советского Союза», т. I, М., 1964, стр. 93.

18 Տե՛ս «Записка об армянских школах», СПб., 1911, стр. XVI—XVIII.

19 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 821, ց. 140, գ. 53, մ. I, թ. 203։ Նաև Հայկական ՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 50։

մի փոփոխություն չկատարելով 1884 թ. կանոններում, կառավարությունը թույլ տվեց 1886 թ. վերաբացել դպրոցները։ Սակայն այժմ դրությունը հիմնավորապես փոխվել էր։ Դպրոցները կորցրել էին աճի ու զարգացման հնարավորությունները, նրանք պարտավոր էին սահմանափակվել միայն տարրական կրթության շրջանակներում։

1886 թ. հուլիսին հրապարակ եկան եկեղեցական-ծխական դպրոցների նոր կանոնները[20], որոնք մշակվել էին 1884 թ. կանոնների պահանջներով։ Հայկական տարրական դպրոցները լինելու էին միդասյա՝ երեք տարվա և երկդասյա՝ հինգ տարվա ուսուցմամբ։

Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձու Յանովսկին պահանջեց, որ այդ դպրոցների ուսուցիչներն անպայման ունենան պետական վկայական։ Նույնիսկ ներքին գործերի մինիստր Դ. Տոլստոյը, ծանոթանալով նրա այդ պահանջին, մակագրել էր. «Եթե նույնը պահանջվեր մեր ռուսական դպրոցներից, ապա գրեթե բոլորը սուիցված կփակվեին»[21]։ 1889 թ. մարտին կայացած կառավարական նոր խորհրդակցությունը[22] հինգ տարվա ժամկետ սահմանեց, որպեսզի հայ ուսուցիչները պետական ուսուցչական վկայական ձեռք բերեն։ Միաժամանակ արգելվեց Հայաստանի պատմության ու աշխարհագրության դասավանդումը հայկական դպրոցներում, որովհետև այդ առարկաները իբր «հայկական պետության վերականգնման ցնորային հույսեր» էին առաջացնում։

1894—95 ուստարում Թուրքաստանում գործող հայկական ծխական դպրոցների թիվը հասել էր 253-ի, քան հազարից ավելի աշակերտով[23]։ Այդ դպրոցներից 212-ը Անդրկովկասում էր, որից 76-ը՝ Երևանի թեմում։ Հաջորդ տարում բացվեց ևս 30—40 դպրոց։ Զգալիորեն աճել էր պետական և մասնավոր դպրոցներում սովորող հայ երեխաների թիվը։ 1896 թ. տվյալներով Կովկասի ուսումնական շրջանին ենթակա պետական դպրոցներում սովորում էր մոտ 16 հազար հայ, որից ավելի քան 6500-ը՝ տարրականից բարձր դպրոցներում։ Ընդհանուր առմամբ, 1890-ական թվականների կեսերին Անդրկովկասի բոլոր դպրոցներում (նաև հայկական) սովորում էր մոտ քառասուն հազար հայ աշակերտ։

1891 թ. փետրվարի 12-ին կայացած կառավարական խորհրդակցությունը, որին մասնակցում էին ներքին գործերի մինիստր Ի. Դուրնովոն, լուսավորության մինիստր Ի. Դելյանովը, արտաքին գործերի մինիստր Ն. Գիրսը և Կովկասի կառավարչապետ Ս. Շերեմետևը, մշակեց էջմիածնի և առհասարակ հայ ժողովրդի նկատմամբ վարվելիք նոր քաղաքականության սկզբունքները։ Խորհրդակցությունը որոշեց. «Դպրոցական հարցում ձգտել եկեղեցական-ծխական ուսումնարաններն աստիճանաբար լրիվ կերպով ուսումնական վարչությանը ենթարկելուն»[24]։ Այնքանդեր III-ը մարտի 2-ին հաստատեց խորհրդակցության որոշումները։

Սկսվեցին նոր հալածանքներ։ Երբ մոտեցավ հայ ուսուցիչների պետական վկայական ձեռք բերելու ժամկետը, Անդրկովկասի հայ հասարակու-

---

20 Տե՛ս «Արարատ», 1886, № 7։

21 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 821, ց. 138, գ. 103, թ. 38, հ. կ.։

22 Տե՛ս «Записка об армянских школах», стр. XXXIV—XLVI.

23 Տե՛ս ԼՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 314։

24 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 84, թ. 12։

թյունը եռանդով դասընթացներ կազմակերպեց (Թիֆլիսում, Ախալցխայում), սակայն վարչական խոչընդոտները խափանեցին գործը։ Մկրտիչ կաթողիկոսը փորձեց միջնորդել Պետերբուրգ, որպեսզի կանխի դպրոցների վրա կախված սպառնալիքը։ Սակայն այս անգամ ցարական բյուրոկրատիան առաջ քաշեց հայկական դպրոցների պահպանության միջոցների հարցը. պատճառաբանելով, որ այդ դպրոցների մեծ մասը հիմնականում պահվում է ժողովրդի միջոցներով և իրավունք չունի եկեղեցական կոչվելու, կառավարությունը պահանջեց դրանք հանձնել պետական գերատեսչությանը։ Պետերբուրգում միաժամանակ հասկացնել տվեցին, որ այդ միջոցառումը պատիժ է հայերի անհնազանդ ու հեղափոխական ընթացքի համար[25]։ Սակայն, երբ իշխանության ներկայացուցիչները 1896 թ. հունվարին հատուկ ցուցակներով ձեռնամուխ եղան դպրոցների ընդունմանը, պարզվեց, որ ոչ մի դպրոց չէր ցանկանում անցնել պետության տնօրինության տակ, և կառավարության կարգադրությամբ 230-ի չափ դպրոցներ փակվեցին[26]։

1897 թ. հունիսի 2-ի Պետական խորհրդի որոշմամբ[27] հայկական եկեղեցական-ծխական բոլոր դպրոցները ենթարկվեցին լուսավորության մինիստրությանը, անկախ արդեն պահպանության միջոցներից։ Սա նշանակում էր, որ հայ աշակերտությունը զրկվելու էր մայրենի լեզվով կրթվելու հնարավորությունից, որովհետև անցնելով պետական գերատեսչության տնօրինության տակ, այդ դպրոցներում, ինչպես պարզաբանել էր Յանովսկին, բացի կրոնից ու հայոց լեզվից, «մնացած բոլոր առարկաները դասավանդվում են ռուսաց լեզվով»[28]։ Այդ պատճառով էլ դեռևս չփակված երեսունի չափ դպրոցները ևս հրաժարվեցին ենթարկվել կառավարության պահանջին և նրանք էլ փակվեցին (բացի թեմական դպրոցներից)։ Միայն Նոր Նախիջևանի ու Բեսարաբիայի թեմում այդ դպրոցներն ընդունեցին պետական տնօրինությունը և չփակվեցին։ Միաժամանակ կառավարությունը խափանեց Աստրախանում և Բաքվում թեմական նոր դպրոցներ բացելու ձեռնարկումները[29]։

Դպրոցների փակումից հետո կովկասյան իշխանությունները որոշեցին յուրացնել դրանց շենքերն ու գույքը և նոր հիմունքներով դպրոցներ բացել։ Բայց կաթողիկոսը կարգադրեց փակի տակ դնել դպրոցական ողջ ունեցվածքը՝ որպես եկեղեցական սեփականություն։ Եվ այս անգամ էլ, 1898 թ. մարտի 17-ին Մինիստրների կոմիտեն հատուկ որոշում կայացրեց հայկական դպրոցներին պատկանող գույքը պետական իշխանությունների տնօրինությանը հանձնելու մասին, իրավունք վերապահելով անհամաձայն կողմին առանձին դեպքերում դիմելու դատարանին[30]։

XX դարի նախօրյակին ու սկզբին Ռուսաստանում ցարական ռեակցիան հասավ չտեսնված չափերի։ 1900 թ. փակվեց Թիֆլիսի Հայոց հրատարակչական ընկերությունը, որն իր գոյության քսան տարիների ընթացքում հրատարակել էր 174 անուն գիրք (108-ը թարգմանական)։ Խիստ ուժեղացվեց գրա-

---

25 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 56, ց. 3, գ. 199, թթ. 38—39։

26 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 272, թ. 83։

27 Տե՛ս նույն տեղում, ց. 140, գ. 53, մ. III, թ. 133։

28 ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 35, ց. 1, գ. 99, թ. 128

29 Տե՛ս Վ. Երկանյան, Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870—1905), Երևան, 1970, էջ 212—214։

30 Տե՛ս ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 821, ց. 150, գ. 272, թ. 103։

քննությունը։ Հայկական բարեգործական ընկերություններին 1899 թ. ատյարկվեց անառարկելիորեն փոխել իրենց լուսավորական բնույթը և ներքին գործերի մինիստրի հաստատած նոր կանոնադրություններով զբաղվել միայն տեղական աղքատախնամ գործերով[31]։

Փակված հայկական դպրոցների փոխարեն բացվելիք պետական նոր դպրոցները նյութապես ապահովելու, հայերին մշակութային որոշ ինքնավարություն գրկելու նպատակով Կովկասի կառավարչապետ իշխան Գոլիցինը պահանջեց բռնագրավել հայ եկեղեցու գույքը։ Նիկոլայ II-ը 1903 թ. հունիսի 12-ին ստորագրեց հայկական եկեղեցու ունեցվածքի և կապիտալների բռնագրավման մասին հրամանագրի օրենքը[32], որն ամբողջությամբ ուղղված էր հայ ժողովրդի ու նրա մշակույթի դեմ։ Ժողովուրդն այդպես էլ գնահատեց այն ու սարի նման պաշտպանելու իր իրավունքները։

Հասունացող հեղափոխությունն ու հայ ժողովրդի բուռն ելույթները ստիպեցին ցարիզմին առժամանակ քուլացնել կապանքները։ Կովկասի նոր փոխարքա Վորոնցով-Դաշկովն այդ օրերին գրում էր. «Անհրաժեշտ է ժամանակին միջոցներ ձեռնարկելով կանխել բնակչության կողմից սպասվող հնարավոր բռնկումները, որպեսզի հնարավորություն չտրվի անբարեհույս տարրերին հավատացնել նրան, որ բոլոր ռեֆորմներն ընդունվում են միայն անկարգությունների ճնշման տակ»[33]։

1905 թ. օգոստոսի 1-ին Նիկոլայ II-ը ստորագրեց հրամանագիր[34], որով հայ եկեղեցուն էին վերադարձվում նրան պատկանող ունեցվածքը, կրթական գործերով զբաղվելու իրավունքը և թույլատրվում էր եկեղեցիներին կից բացել եկեղեցական-ծխական դպրոցներ՝ 1874 թ. հուլիսի 19-ի կանոնների համաձայն, մինչև նոր կանոնների մշակումը։ Հայկական դպրոցներն սկսեցին արագորեն վերաբացվել։ Մինչև 1906 թ. ամառը մշակվից դպրոցական կանոնադրության ու ծրագրերի նախագիծը[35]։

1905 թ. հետո դպրոցական կյանքում նկատելի ձախացում կատարվեց, ծրագրերում կրճատվեցին կրոնի դասաժամերը՝ հօգուտ բնագիտական առարկաների ու լեզուների։ Տարրական միդասյա դպրոցի տեւողությունը հասցվեց 4 տարվա, իսկ երկդասյաները՝ 6 տարվա։ Այդ դպրոցներում երկու սեռի երեխաները մեծ մասամբ սկսեցին միասին սովորել։ Նախկին հոգևոր դպրոցները դարձյալ բռնեցին դեպի միջնակարգ կրթություն տանող ուղին։ Սակայն դպրոցական ծրագրերը գրեթե երբեք ամբողջությամբ հնարավոր չեղավ կիրառել, գյուղերում դպրոցները հազվադեպ էին լրացնում 4 կամ 6-ամյա ուսուցման ժամկետը, ուսման մակարդակը հաճախ շատ ցածր էր, միայն երկրորդ տարվա վերջում աշակերտը տիրապետում էր գրագիտությանը։

Հայկական դպրոցների վերաբացումից հետո դարձյալ նկատելի հասարակական աշխուժություն սկսվեց նրանց շուրջը։ Լուսավորական ակտիվ գործունեություն ծավալեցին բարեգործական ընկերությունները, որոնց հեղափոխությունից հետո վերադարձվել էր կրթական գործերով զբաղվելու իրա-

---

31 Տե՛ս ՀՆՄՀ ԿՊՊԱ, ֆ. 113, ց. 1, գ. 92ա, թ. 38։

32 Տե՛ս նույն տեղում, ֆ. 101, ց. 1, գ. 50, թթ. 3—4։

33 ՍՍՀՄ ԿՊՊԱ, ֆ. 821, ց. 139, գ. 84, թ. 61։

34 Տե՛ս նույն տեղում, գ. 54, թ. 56։

35 «Կանոնադրություն և ծրագիր հայ եկեղեցական-ծխական դպրոցների», Նախագիծ, Բիլիս, 1906։

վուներ։ 1909 թ. վերաբացվեց Հայոց հրատարակչական ընկերությունը։ 1906 թ. հիմնադրվեց «Բաքվի հայոց կուլտուրական միությունը»[36], որն ուներ հողային, բժշկական, հրատարակչական, գեղարվեստական, թատերական և կրթական բաժիններ։ Միությունն ուներ իր արհեստանոց-ուսումնարանը և նյութական օժանդակություն էր ցույց տալիս հայկական դպրոցներին, հատկապես Երևանի թեմում։ Ընկերությունների մեջ ամենից շոշափելի աշխատանք էր կատարում Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը, որն ուներ գրադարան-ընթերցարաններ, աշակերտական ճաշարան, հրատարակչական ու գրական ֆոնդ, կարոտյալ ուսուցիչների օգնության ֆոնդ։ 1914 թ. ընկերությունից նյութական օժանդակություն ստանում էր 110-ից ավելի դպրոց[37]։ Անդրկովկասի տարբեր վայրերում գործող ընկերության ճյուղերի թիվը 1917 թ. հասնում էր 80-ի։ Երբ սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը, բարեգործական ընկերություններն զգալի աշխատանք կատարեցին զաղթականների երեխաների համար դպրոցներ ու որբանոցներ բացելու գործում։ 1916—17 թթ. միայն Կովկասի հայոց բարեգործական ընկերությունն ուներ այդպիսի 147 դպրոց, ավելի քան 11 հազար աշակերտով[38]։

Հայ գրերի գյուտի 1500 և տպագրության 400-ամյակների կապակցությամբ էջմիածինը 1912 թ. հայտարարել էր դպրոցական ֆոնդի հանգանակություն՝ «Մեսրոպյան լումա»։ Մինչև 1915 թ. հունիս ամիսը հավաքվել էր մոտ 200 հազար ռուբլի[39], որի տոկոսները տրամադրվում էին առանձին դպրոցների։

1914—15 ուստարում Անդրկովկասում եկեղեցական-ծխական դպրոցների թիվն անցել էր 400-ից և դրանք ունեին 31 հազարից ավելի աշակերտ (մեկ երրորդը աղջիկներ) ու մոտ 1100 ուսուցիչ։ Այս դպրոցներից ավելի քան 185-ը՝ մոտ 14 հազ. աշակերտով, բաժին էր ընկնում Երևանի թեմին։ Վրաստանի և Իմերեթիայի թեմում կար 130 դպրոց, Ղարաբաղի թեմում՝ 64, Շամախիի՝ 23[40]։ Բացի այդ, հայկական դպրոցներ էին գործում Ռուսաստանի մյուս հայաբնակ վայրերում։ Մի քանի տասնյակ դպրոցներ կային Ղրիմում, Նոր Նախիջևանում ու շրջակա գյուղերում։ Աստրախանի թեմը, որը հիմնականում ընդգրկում էր Հյուսիսային Կովկասը և Միջին Ասիան, ուներ 40-ից ավելի հայկական դպրոց՝ 2800 աշակերտով[41]։ Ծխական դպրոցներ կային Միջին Ասիայի Սամարղանդ, Կոկանդ, Մերվ, Աշխաբադ, Կրասնովոդսկ, Անդիջան, Չարջոու, Կըզըլ-Արվաթ քաղաքներում։

Հայ երեխաների մի զգալի մասը սովորում էր պետական դպրոցներում, որոնց թիվը 1905 թ. հետո նկատելիորեն աճել էր։ Անդրկովկասի նման դպրոցներում սովորող հայերի թիվը 1915 թ. անցնում էր 38 հազարից։ Միայն Երևանի նահանգում և Կարսի մարզում կար 389 պետական տարրական դպրո-

---

36 Տե՛ս «Տեղեկագիր և հաշիվ Բագվա հայոց կուլտուրական միության 1906—1907 տարեշրջանի գործունեության», Բագու, 1907։

37 «Տեղեկագիր Կովկասի հայոց բարեգործական ընկերության 1914» Թիֆլիս, 1915, էջ 5։

38 Տե՛ս «Տեղեկագիր Կովկասի հայոց բարեգործական ընկերության և նրան կից հիմնարկությունների 1917 և 1918 թթ.», Թիֆլիս, 1919, էջ 36։

39 Տե՛ս «Արարատ», 1915, № 7—8, էջ 664։

40 Ըստ «Отчет о состоянии учебных заведений Кавк. уч. округа за 1914 г.», ч. I, Тифлис, 1915, գրքի տվյալների, էջ 143—144։

41 Տե՛ս ՀՍՍՀ ԿՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 1905, թ. 21—22։

րոց, ուր սովորում էր ավելի քան 25 հազար աշակերտ (որից 16,6 հազ. հայ)[42]։ Այսպիսով, Երևանի նահանգում և Կարսի մարզում պետական ու ազգային տարրական 574 դպրոցում սովորում էր ավելի քան 30 հազ. հայ աշակերտ։ Ամբողջ Անդրկովկասի համար այդ թիվը հասնում էր 70 հազարի։ Բացի այդ, Արևելյան Հայաստանի տարածքում գործում էին մահմեդական մզկիթներին կից փոքր դպրոցներ։ Երևանի նահանգում կար 22 այդպիսի դպրոց՝ մոտ 400 աշակերտով, իսկ Կարսի մարզում՝ 120-ից ավելի դպրոց՝ 4000 աշակերտով[43]։

Զգալի դեր էին կատարում պետական միջնակարգ դպրոցները։ Հիշատակելի են՝ Երևանում արական գիմնազիան (1881-ից), իգական գիմնազիանե-



Երևանի ս. Հռիփսիմեի իգական գիմնազիան

րը (մեկը՝ Հռիփսիմյան, 1898-ից, մյուսը՝ Ալեքսանդրյան, 1912-ից), Ալեքսանդրապոլում՝ Օլգինյան գիմնազիան (1906-ից), ռեալական ուսումնարանները՝ Շուշիում (1881-ից) և Կարսում (1906-ից)։ Երևանի ուսուցչական սեմինարիան (1881-ից), որն ուսուցիչներ էր պատրաստում տարրական դպրոցների համար, նույնպես միջնակարգ էր համարվում։ Կարևոր դեր էր խաղում նոր Նախիջևանում 1882 թ. բացված և 1913 թ. գիմնազիայի վերածված հայ աղջիկների Գոգոյան ուսումնարանը, որը գտնվում էր կայսրուհի Մարիայի գերատեսչության տնօրինության տակ։ Պրոգիմնազիա կար Ախալցխայում (1914-ից), Մարիամյան իգական ուսումնարաններ՝ Կարսում (1890-ից) և Շուշիում (1894-ից)։ Զգալի թվով հայ աշակերտներ էին սովորում նաև Թիֆլիսի, Բաքվի, Ելիսավետպոլի, Նոր Նախիջևանի և այլ քաղաքների միջնակարգ դպրոցներում։ Ընդհանուր առմամբ Անդրկովկասի տարրականից բարձր պե-

42 Տե՛ս «Отчет о состоянии учебных заведений Кавказского учебного округа за 1914 г.», ч. II, стр. 682—683.

43 Տե՛ս նույն տեղում, մ. I, էջ 144։

տական դպրոցներում 1915 թ. սովորում էր ութ հազարից ավելի հայ աշակերտ։ Հիշատակելի է նաև Կ. և Ս. Լիսիցյանների՝ դարասկզբից Թիֆլիսում գործող դպրոցը, որը 1915-ին վեր էր ածվել մասնավոր գիմնազիայի։ Այստեղ որոշ առարկաներ դասավանդվել են հայերենով և իրականացվել է տղաների ու աղջիկների համատեղ ուսուցում միջնակարգ դպրոցում, որը եզակի երևույթ էր։ 1906-ից Երևանում գործում էր Ն. Գ. Շչերբանինայի մասնավոր արական պրոգիմնազիան։

1905 թ. հետո հայկական իգական դպրոցներից առաջինը Թիֆլիսի Մարիամյան-Հովնանյան դպրոցն էր, որ 1908 թ. հասավ միջնակարգի աստիճանի։ Ոչ պակաս ճանաչման էր հասել Թիֆլիսի Գայանյան իգական միջնակարգ



Երևանի ուսուցչական սեմինարիան

դպրոցը։ 1910—11 թթ. միջնակարգ դպրոցների շարքն անցան Երևանի Գայանյան և Ալեքսանդրապոլի Արղության իգական դպրոցները։ 1914 թ. Շուշիում հիմնադրվեց Մարիամ Ղուկասյան միջնակարգ իգական դպրոցը։

1905 թ. օգոստոսին վերաբացվեց 1903 թ. փակված Շուշիի թեմական դպրոցը։ 1915 թ. միջնակարգի վերածվեց Ելիսավետպոլի ս. Հովհաննես եկեղեցուն կից ծխական դպրոցը, որտեղ տղաներն ու աղջիկները սովորում էին համատեղ, որպես այդպիսին սա միակն էր հայկական դպրոցների մեջ։ Այդ նույն ժամանակ միջնակարգի մակարդակի էին հասել նաև Բաքվի Հռիփսիմյան և Մեսրոպյան եկեղեցական-ծխական դպրոցները։ Աստրախանում ժամանակին հռչակված Աղաբաբյան ուսումնարանը 1917 թ. վերածվեց Աստրախանի հայկական Աղաբաբյան գիմնազիայի։

1914 թ. հայ նշանավոր գիտնական-մանկավարժներ Մ. Աբեղյանը, Գ. Էդիլյանը և Գ. Հովսեփյանը ներկայացրին Էջմիածնի Գևորգյան հեմարանը բարձրագույն դպրոց դարձնելու ծրագիրը, սակայն պայմանները խանգարեցին դրա իրագործմանը և 1917 թ. դեկտեմբերի 21-ին այն փակվեց։ Իր գոյության ընթացքում հեմարանը եղել է հայագիտությամբ զբաղվող մտավորականության կենտրոն։

Լազարյան ճեմարանում նշանավոր գիտնական Մկրտիչ Էմինի ջանքերի շնորհիվ Մոսկվայում հիմնվեց հայագիտական կենտրոն։ Ճեմարանը միաժամանակ Ռուսաստանի արևելագիտական խոշոր կենտրոններից էր։ Այստեղ են աշխատել նշանավոր արևելագետներ, ակադեմիկոսներ Վ. Ֆ. Միլլերը, Ա. Ե. Կրիմսկին, Ֆ. Ե. Կորշը, Ա. Ն. Վեսելովսկին, Վ. Ա. Գորդլևսկին և ուրիշներ։ Ճեմարանում դասավանդել են նաև հայ մշակույթի ականավոր ներկայացուցիչներ Ս. Նազարյանը, Մ. Էմինը, Ս. Շահազիզը, Գ. Խալաթյանցը, Կ. Կուսիկյանը և ուրիշներ։

1870-ական թվականներից հետո արևելահայ իրականությունում որոշակի աշխուժացում է նկատվում նաև մասնագիտական-արհեստագիտական ուսուցման գործում. դա թելադրված էր արհեստների ու գյուղատնտեսական գիտելիքների պահանջով։ Պետական դպրոցներին կից բացվում են մասնագիտական բաժիններ, ստեղծվում են առանձին արհեստագործական դպրոցներ, հաշվապահական, հեռագրիչների, կարուձևի և այլ դասընթացներ։ Հիշատակելի են Իգդիրի դպրոցի գյուղատնտեսական, այգեգործական, պահածոյագործական, Քեշիշքենդի (այժմ՝ Ազիզբեկով) դպրոցի մեղվաբուծական, Նախիջևանի դպրոցի հյուսնախառատային, փականագործական, գյուղատնտեսական բաժինները։ 1903 թ. Կարսում բացվել էր տարրական արհեստագործական դպրոց, Նոր Նախիջևանում 1905 թ.՝ Մ. Պոպովի անվան գեղարվեստաարհեստագիտական ուսումնարան-արհեստանոցը։ 1880 թ. բացված Թիֆլիսի քաղաքային վարչության արհեստագործական ուսումնարանը մայրենի լեզվով տարրական կրթություն էր տալիս աշակերտներին, որոնք միաժամանակ սովորում էին հյուսնի, խառատի, դարբնի, փականագործի մասնագիտություն։ Այս դպրոցի յոթ բաժիններից 3-ը հայկական էին։ Զգալի թվով հայ աշակերտներ էին սովորում նաև Բաքվի 1905 թ. բացված տեխնիկական ուսումնարանում։ Պետական այս դպրոցների շարքում առավել կարևորություն ուներ Ալեքսանդրապոլի առևտրական 8-ամյա ուսումնարանը, որը հիմնադրվել էր 1902 թ.։

Նման դպրոցներ ու բաժիններ էին ստեղծում նաև հայկական ազգային դպրոցներն ու բարեգործական ընկերությունները։ Առանձնապես նշանավոր էր Ռ. Պատկանյանի ջանքերով Նոր Նախիջևանի ս. Աստվածածին եկեղեցու ծխական դպրոցին կից 1880 թ. բացված արհեստագիտական ուսումնարանը, որտեղ տարրական կրթության հետ աշակերտները մասնագիտանում էին փականագործության, ատաղձագործության և կոշկակարության մեջ։ 1909 թ. Երևանի Գայանյան դպրոցին կից բացվում է դպրոց-արհեստանոց՝ որտեղ չքավոր երեխաներին տրվում էր տարրական կրթություն և դերձակի, ջուլհակի, գորգագործի մասնագիտություն։ Թիֆլիսի Հայուհյաց բարեգործական ընկերությունը 1888 թ. բացեց կարուձևի ու ձեռագործի հնգամյա դպրոց։ 1892—97 թթ. գործել է ընկերության խոհարարական դասընթացը։ 1906 թ. Բաքվի հայոց կուլտուրական միությունը կազմակերպեց կանանց արհեստագիտական դպրոց, որը տաս տարվա ընթացքում տվեց 100-ից ավելի շրջանավարտ։

Չնայած կրթական գործում տեղի ունեցած զգալի տեղաշարժերին, դպրոցը դեռևս շատ հեռու էր ժողովրդի հիմնական զանգվածներին բավարարելուց։ Ցարական բուրժուակալվածատիրական կարգերը հնարավորություն չէին տալիս հասարակ ժողովրդի զավակներին լիարժեք կրթություն ստանալու և նրանց բաժին էին ընկնում հիմնականում տարրական ու արհեստագործական

դպրոցները։ Պետական միջնակարգ դպրոցներում, չնայած դրանք հայտարարված էին ոչ-դասային, սովորողների մեծամասնությունը՝ ուսման բարձր վարձի պատճառով, ունևորների զավակներ էին։ Թեև ազնվականները բնակչության ընդհանուր տոկոսն էին, միջնակարգ դպրոցներում նրանց զավակները կազմում էին սովորողների 25—30%-ը, իսկ ճնշող մեծամասնություն կազմող գյուղացիությունն այդ դպրոցներում ներկայացնում էր ընդամենը 15—20%։ Օրինակ, Երևանի արական գիմնազիայում 1914 թ. եղած 684 աշակերտից մոտ 30%-ը ազնվականների ու պաշտոնյաների, 4%-ը՝ հոգևորականների, 9%-ը՝ պատվավոր քաղաքացիների ու առևտրականների, 27,5%-ը՝ քաղաքային մանր բուրժուազիայի և միայն 22%-ը՝ գյուղացիների զավակներ էին[44]։

Սրան հակառակ, հայկական միջնակարգ դպրոցներում սովորողների հիմնական կազմը հասարակ ժողովրդից էր, որովհետև ունևորները գերադասում էին իրենց զավակներին կրթություն տալ պետական դպրոցներում։ Այսպես, Երևանի թեմական դպրոցում 1912 թ. սովորող 386 աշակերտի մոտ 85%-ը գյուղացիների, մանրավաճառների, արհեստավորների, բանվորների, իսկ մնացածը՝ հոգևորականների ու մանր պաշտոնյաների զավակներ էին[45]։

Ինչ վերաբերում է պետական ու աղգային տարրական դպրոցներին, ապա այստեղ սովորողների 80—90%-ը երկրագործների, արհեստավորների, բնակչության ստորին խավերի երեխաներ էին։ Հայկական դպրոցների աշակերտների մոտ մեկ երրորդը չքավորության պատճառով հաճախ սովորում էր հասարակական միջոցների հաշվին։

Ժողովրդական կրթությանը հատկացվող պետական միջոցների խիստ պակասության, դպրոցների անբավարար քանակի և բուն ժողովրդի չքավորության պատճառով, բնակչության գրագիտությունը չափազանց ցածր էր և դա հատկապես նկատելի էր Երևանի նահանգում։ Եթե ողջ Ռուսաստանում 1897 թ. մարդահամարի տվյալներով գրագետ էր բնակչության 21,1%-ը, իսկ Կովկասի բնակչության՝ 12,4%-ը, ապա Երևանի նահանգում այդ թիվը կազմում էր ընդամենը 6,4%։ Ընդ որում, նահանգի քաղաքային բնակչության մեջ տղամարդկանց գրագիտության տոկոսը 37,3 էր, իսկ կանանցը՝ 12,7, իսկ գյուղական վայրերում համապատասխանաբար՝ 6,5 և 0,6%. Ըստ ազգությունների նահանգի բնակչության գրագիտության աստիճանը հետևյալ պատկերն ուներ՝ ռուս բնակչության տղամարդկանցից գրագետ էր 56,7%-ը, կանանցից՝ 18,4%-ը, հայ բնակչության՝ համապատասխանաբար՝ 11,4 և 2,1%-ը, ադրբեջանցիների մեջ՝ 3,9 և 0,3%-ը, քրդերի մեջ՝ 0,5 և 0,04%-ը[46]։

Անտարակույս, հայերի գրագիտության աստիճանն անհամեմատ ավելի բարձր էր Անդրկովկասի մյուս հայաշատ կենտրոններում, որտեղ սովորելու հնարավորություններն ավելի մեծ էին։ Կովկասյան փոխարքայության սահմաններում 1908 թ. դպրոցներում սովորում էր դպրոցահասակ երեխաների

---

44 Ըստ «Отчет о состоянии учебных заведений Кавказского учеб. округа за 1914 г.», ч. II, գրքի տվյալներին։

45 Տե՛ս Վեո, Պատմություն Երևանի հայոց թեմական հոգևոր դպրոցի (1837—1912), Թիֆլիս, 1914, էջ 568։

46 Տե՛ս «Первая всеобщая перепись населения Рос. империи 1897 г.», т. LXXI, Эриванская губерния, СПб., 1905, стр. XXI.

38,4%-ը, ընդ որում ռուսների մոտ դա կազմում էր 52,5%, հայերի՝ 46%, վրացիների՝ 37%, մահմեդականների՝ 12%[47]։

Արևմտահայ դպրոցը: Արևմտահայության, ինչպես և ողջ Օսմանյան կայսրության համար, 1860—70-ական թվականները շրջադարձային տարիներ էին կրթության ասպարեզում։ Կյանքի բոլոր բնագավառներում հետամնաց Թուրքիան, բուրժուական եվրոպայի ազդեցության տակ, փորձեր էր անում կարգավորելու լուսավորության գործը, մանավանդ, որ կայսրության ազգային փոքրամասնությունները, օգտվելով իրենց դպրոցները ղեկավարելու պատմականորեն ստեղծված ինքնավար իրավունքից, «դպրոցական կրթության մեջ անհամեմատ ավելի մեծ հաջողությունների էին հասել, քան թուրքերը»[48]։

1869 թ. հրապարակվեց Թուրքիայի կրթական նոր օրենքը, որը կազմված էր ֆրանսիական լուսավորական օրենսդրության օրինակով։ Այդ օրենքով կայսրության դպրոցները բաժանվում էին երկու կարգի՝ հանրային (պետական) և մասնավոր (որոնց տակ հասկացվում էին մյուս բոլոր դպրոցները, այդ թվում և հայկական)։ Պետական տարրական դպրոցն ուներ երկու աստիճան՝ սիբյան ու ռյուշտիյե։ Սիբյանում ընդունվում էին 7—11 տարեկան տղաները և 6—10 տարեկան աղջիկները, ուսուցումը տևում էր 4 տարի։ Սրանք բաղաքների թաղային և գյուղական ստորին կարգի դպրոցներ էին, որոնց ծախսերը հոգում էր բնակչությունը։ Ռյուշտիյենները, որոնք գործում էին ավելի խոշոր բնակավայրերում, տարրական դպրոցի երկրորդ աստիճանն էին, նույնպես չորս տարվա ուսուցմամբ։ Նախատեսվում էր աղջիկների ու տղաների, ինչպես նաև մահմեդականների և ոչ-մահմեդականների անջատ ուսուցում։ Բայց իրականում քիչ բան էր փոխվում. պետական դպրոցներում շնչին տոկոս էին կազմում աղջիկները, ռյուշտիյենների թիվը չափազանց քիչ էր, այլադիների համար գրեթե ոչ մի դպրոց չէր կազմակերպվում, իսկ հոգևորականության դիմադրության պատճառով նրանցում շարունակում էր պահպանել միջնադարյան կրոնական ոգին։ Ձեռնարկվող միջոցառումները մակերեսային բնույթ էին կրում. երկրի բնակչության ճնշող մեծամասնությունը դեռևս անգրագետ էր։ Օրենքը նախատեսում էր նաև միջնակարգ դպրոցների կազմակերպում (իդադիյե՝ ոչ լրիվ միջնակարգ և սուլթանիյե-լիցեյ՝ լրիվ միջնակարգ), որը, սակայն, երկար ժամանակ գրեթե չիրագործվեց։ Միջնակարգ դպրոցներ էին 1868 թ. Ֆրանսիայի օժանդակությամբ Կ. Պոլսում բացված Ղալաթասարայի հայտնի լիցեյը, որտեղ սովորում էին նաև ղզալի թվով հայեր, և 1873 թ. մահմեդական լուսավորական ընկերության բացած Դարյուշշեֆակա լիցեյը։ 1860-ական թվականներին փորձեր արվեցին հիմնելու Թուրքական համալսարան, որոնք, սակայն, անհաջողության մատնվեցին։

Թուրքիայի կրթական կյանքի սկսված դանդաղ առաջընթացը արգելակվից սահմանադրական շարժման պարտությամբ և Աբդուլ Համիդ II-ի բռնապետության հաստատմամբ։ Միայն 1900 թ. վերջնականապես բացվեց կայսերական համալսարանը։ Վիլայեթների կենտրոններում երևան եկան իդա-

---

[47] Տե՛ս Н. Ф. Рудольф, Обзор деятельности Кавказского учебного округа. 1908—1912 гг., Тифлис, 1914, стр. 8.

[48] А. Д. Желтяков, Ю. А. Петросян, История просвещения в Турции (конец XVIII—начало XX века), М., 1965, стр. 37.

դիյեներ, ուր ձևականորեն իրավունք ունեին սովորելու նաև ոչ-մահմեդականների երեխաները։ 1900 թ. պետական բոլոր ուսումնական հաստատություններում սովորում էր ընդամենը 300 հայ[49]։

Արևմտահայերի կրթական գործում բեկումն սկսվեց քիչ ավելի վաղ, քան պետական հատվածում։ Ազգային առհասնադրության հաստատումից հետո, 1863 թ. Կ. Պոլսում ընտրված ուսումնական խորհուրդը մեկ տարի անց ընդունեց Ստ. Փափազյանի մշակած ազգային վարժարանների բարեկարգության ընդհանուր կանոնադրությունը[50], ըստ որի ազգային դպրոցները լինելու էին երկու կարգի՝ նախակրթարան (տարրական) և երկրորդական (միջնակարգ)։ Նախակրթարաններ բաժանվում էր երկու սրահի (դասարան)։ Առաջինում (մեկ տարվա ուսուցմամբ) ավանդվելու էին ընթերցանություն, գիր, թվաբանություն և կրոն, երկրորդում (չորս տարվա ուսուցմամբ)՝ տարրական դպրոցի հիմնական ծրագիրը։ Նախակրթարանն ավարտողը կարող էր անցնել երկրորդական վարժարան, որի ուսման տևողությունը հինգ տարի էր և մեկ տարի էլ տրվում էր ավարտական քննություններին պատրաստվելու համար։ Դպրոցների կառավարումը հանձնարարվում էր թաղական խորհուրդների ընտրած հոգաբարձություններին։

1873 թ., ուսումնական խորհրդի մշակած դպրոցական հրահանգի[51] ընդգրկեց նաև գավառները։ Նախակրթարանն ունենալու էր երեք տարվա ուսման տևողություն, նրան կից կարող էր լինել ընտելարան կամ ծաղկոց՝ 5—6 տարեկան երեխաների համար։ Երկրորդական վարժարանի ուսման տևողությունը վեց տարի էր։

1870-ականների կեսերից ժողովրդին, մանավանդ Արևմտյան Հայաստանի գավառներում խավարի ու տգիտության մեջ ընկղմված աշխատավորություններ, լուսավորելու խնդիրն առաջնակարգ նշանակություն ստացավ։ Թուրքական իրականության մեջ ազգային դպրոցներին սատարելու լավագույն միջոց ճանաչվեց հասարակական ընկերությունների գործունեությունը։ Կրթասիրական ընկերությունների կազմակերպման նախադրյալներ դարձան Մինաս Չևրազ, Ա. Արփիարյանը, Հր. Ասատուրը, Մ. Փորթուգալյանը, Ն. Վարժապետյանը։

1871 թ. Կ. Պոլսում սկսեց գործել «Վարդանյան ընկերությունը», որի հիմնադիրները Նուպար-Շահնազարյան դպրոցի սաներն էին։ 1879 թ. այս ընկերությունը վերակազմվեց «Կիլիկյան ընկերության» և լայն գործունեություն ծավալեց Կիլիկիայում։ 1870-ին Ղալաթիասարայի լիցեյի հայ ուսանողների նախաձեռնությամբ կազմվեց «Դպրոցասիրաց ընկերությունը», որի գործունեության ասպարեզը Տուրուբերան գավառն էր։ Ութ տարի անց այս ընկերությունը միավորվեց 1876 թ. հիմնված «Արևելյան ընկերության» հետ և նպաստեց Մուշի շրջանում դպրոցների ծավալմանը։ 1876 թ. կազմակերպվեց «Արարատյան ընկերությունը», որը Մ. Փորթուգալյանին ուղարկեց Վան՝ տեղում դպրոցներ հիմնելու։ 1878—1881 թթ. Վանում գործեց նաև վարժապետանոցը։

---

49 Տե՛ս նույն տեղում, էջ 77։

50 «Կանոնադրություն ընդհանուր բարեկարգության ազգային վարժարանաց», Կ. Պոլիս, 1864։

51 Տե՛ս «Հրահանգ բարեկարգության ազգային վարժարանաց», Կ. Պոլիս, 1873։

1880-ին Կ. Պոլսի այդ երեք խոշոր ընկերությունները, միավորվելով, կազմեցին «Միացյալ ընկերություն հայոցը», որի ղեկավարներն էին Մ. Չեբաչը և Ա. Արփիարյանը։ «Միացյալն» ստեղծեց իր 16 ճյուղերը գավառներում և 1884 թ. արդեն ուներ 46 դպրոց, մոտ երեք հազար աշակերտով[52]։ Մուշում գործում էր «Միացյալի» դպրոցական տեսուչ Մկրտիչ Սարըյանը, որն ուներ նաև երեք տեղակալ Տավրոսի, Տուրուբերանի և Վասպուրականի շրջանների համար։

1879 թ. Զապել Խանճյանի (հետագայում Զապել Ասատուր, Սիպիլ) նախաձեռնությամբ ստեղծվեց «Ազգանվեր հայուհյաց ընկերությունը», որը դպրոցներ բացեց գավառներում։ Նույն թվականին Արթուհի Տյուսաբի ջանքերով կազմակերպվեց նաև «Դպրոցասեր հայուհյաց ընկերությունը», որն ուսուցիչներ պատրաստելու նպատակով Կ. Պոլսում բացեց հատուկ վարժուհինոց։ Գործում էին նաև բազմաթիվ այլ կրթասիրական ընկերություններ, որոնցից «Անձնվեր ընկերությունը», որը ճյուղեր ուներ և գավառներում, կիրակնօրյա դպրոցների միջոցով գրագիտություն էր տարածում գավառացի պանդուխտների մեջ։ Ընկերությունը միայն Կ. Պոլսում ուներ 700 մեծահասակ ունկնդիր։ Նման նպատակ էր հետապնդում և «Ասիական ընկերությունը» (1877-ից), որը միաժամանակ անվճար դասագրքեր էր տրամադրում դպրոցներին։ Կ. Պոլսի «Լսարանի ընկերությունը» հանրամատչելի դասախոսություններ էր կազմակերպում գիտության ու մշակույթի տարբեր հարցերի վերաբերյալ։ Գավառներում, նույնիսկ հեռավոր գյուղերում, ստեղծվում էին տեղական դպրոցներին օժանդակող ընկերություններ։ Աչքդյունավետ էին գործում նաև առանձին դպրոցների սանների միությունները։

Չնայած աբդուլ-Համիդյան վարչակարգի դաժանություններին ու խոչընդոտներին, արևմտահայերի կրթական գործը, մեծամեծ դժվարություններով, շարունակում էր իր ընթացքը։ 1893 թ. հաստատվեց Ռ. Պերպերյանի կազմած և ուսումնական խորհրդի ընդունած ազգային նախնական կրթության կանոնագիրը[53]։ Կանոնագիրը չեղյալ էր հայտարարում տարրական կրթության վերաբերյալ մինչ այդ եղած բոլոր հրահանգները։ Ընդունվեցին նաև նոր ուսումնական ծրագրեր։ Ըստ կանոնագրի, հայկական տարրական դպրոցն ունենալու էր երկու աստիճան։ Առաջինը տարրական նախակրթարանն էր երեք դասարանով՝ յուրաքանչյուրը երկուական տարվա ուսուցմամբ։ Այստեղ կարող էին սովորել 7—13 տարեկան երեխաները։ Տարրական նախակրթարանը պետք է ունենար 3—7 տարեկանների համար մանկապարտեզ։ Երկրորդ աստիճանը եռամյա բարձրագույն նախակրթարանն էր։ Սակայն ինչպես նախորդ, այնպես էլ այս կանոնները հնարավոր չեղավ լրիվ կիրառել։

1890-ական թվականների հայկական կոտորածները և ռեակցիայի սաստկացումն էլ ավելի ծանր պայմաններ ստեղծեցին արևմտահայ դպրոցի համար։ Դադարեցին գործելուց կրթասիրական ընկերությունները, «Միացյալն» արգելվեց։ Սակայն արևմտահայությունը տոկաց և կարողացավ կորստից փրկել իր դպրոցը։ 1897 թ. հայոց պատրիարք Օրմանյանի ջանքերով ստեղծվեց կոտորածներից տուժածներին օգնող «Նպաստից հանձնաժողովը», որին

---

52 Տե՛ս «Միացյալ ընկերություն հայոց։ Նոամյա տեղեկագիր 1908—1911», Կ. Պոլիս, 1911, էջ 11։

53 «Կազմական կանոնագիր ազգային նախնական կրթության», Կ. Պոլիս, 1893։

անցավ նաև «Միացյալի» գործերի տնօրինությունը։ Այս հանձնաժողովին մեծապես օգնեցին արևելահայերը, որոնց նյութական ներդրումը կազմում էր հանձնաժողովի բոլոր միջոցների 45 տոկոսը։ Ստեղծվեց 35 որբանոց, որոնք ունեին նաև իրենց դպրոցները։ Երբ որբանոցների կարիքը նվազեց, հանձնաժողովն իր միջոցներն ավելի տրամադրեց կրթական գործին։ 1903 թ. հանձնաժողովից նպաստ ստացող դպրոցների թիվը հասնում էր 80-ի[54]։

1870-ականների սկզբին, ոչ լրիվ տվյալներով, Թուրքիայում գործում էր 450-ից ավելի հայկական դպրոց, ավելի քան 24 հազար աշակերտով (3000-ը աղջիկներ)[55], իսկ XX դարի սկզբին Թուրքիայում գործող ազգային դպրոցների թիվը անցնում էր 800-ից (առանց Կ. Պոլսի դպրոցների), ուր սովորում էր 82 հազարից ավելի աշակերտ (ավելի քան 22 հազարը աղջիկներ)[56]։ Այդ դպրոցների ուսուցիչների թիվն անցնում էր 2150-ից։ Մոտ 16 հազար հայ երեխաներ էին սովորում մանավոր և օտար դպրոցներում։

Արևմտահայերի կրթական կյանքին ուղղություն տվող կենտրոնը շաբռնակում էր մնալ Կ. Պոլիսը։ XIX դարի սկզբից այստեղ հիմնված էին եկեղեցիներին կից քաղաքային դպրոցներ, որոնց թիվը մշտապես տատանվում էր 40-ի շուրջը, որտեղ սովորում էր 5—6 հազար աշակերտ[57]։ Տարբեր տարիներին Կ. Պոլսում գործել են նաև 50-ի չափ հայկական մասնավոր դպրոցներ։ XX դարի սկզբներին այդ դպրոցների թիվը 15 էր։ 1889 թ. Կ. Պոլիս տեղափոխված Գ. Հովհաննիսյան-Մատակյանը հիմք է դնում նոր սկզբունքներով գործող մանկապարտեզների։ Դրանից հետո քաղաքի քաղաքային շատ դպրոցներին կից արագորեն բացվում են մանկապարտեզներ, որոնք դառնում են արևմտահայ դպրոցի անբաժան ուղեկիցները։

Քաղաքին դպրոցները մեծ մասամբ 2—4 տարվա ուսուցմամբ տարրական վարժարաններ էին, իսկ որոշ դպրոցներ մոտենում էին միջնակարգի աստիճանի։ Այդպիսի դպրոցներից էին՝ Գում-Գափուի Լուսավորչյան և Պեզճյան մայր վարժարանները, Սամաթիայի Սահակյան, Խասգյուղի Ներսիսյան, Բեբեքի Նարեկյան վարժարանները։ Գ. Սրվանձտյանցի հորդորներով մեծահարուստ Էսայան եղբայրները Նարեկյան վարժարանի փոխարեն հիմնադրում են քաղաքին մի նոր դպրոցի քառահարկ շենք։ Դպրոցը բացվում է 1895 թ. և կոչվում նրանց անունով։ Էսայան դպրոցն արագ բարգավաճում է և դառնում արևմտահայ խոշոր դպրոցներից մեկը։ 1903 թ. Էսայանի աղջիկների բաժանմունքը վեր է ածվում միջնակարգի և նշանակալի դեր խաղում ուսուցչուհիներ պատրաստելու գործում։

Ընդհանրապես արևմտահայ ազգային դպրոցի մեծագույն մտահոգություններից է եղել միջնակարգ կրթության կազմակերպման հարցը։ Հատուկենտ միջնակարգ դպրոցներ եղել են մասնավոր և կարճ կյանք են ունեցել։ Դրանցից աչքի էին ընկնում Մեզպուրյան իգական (1879—1896), Նուպար-

---

54 Տե՛ս «Նպաստից հանձնաժողով։ Հաշվետուցակ և տեղեկագիր. 1897—1908», Կ. Պոլիս, էջ 42։

55 Տե՛ս «Համարատվություն ազգային կեդրոնական վարչության 1872—1908», մասն Դ, էջ 39—74։

56 Տե՛ս «Վիճակացույց գավառական ազգային վարժարանաց Թուրքիոյ, տեսր Բ, Կ. Պոլիս, 1903։

57 Տե՛ս Մաշտոցի անվան Մատենադարան, Ա. Ալպոյաճյանի արխիվ, թղթ. 11, վավ. 273/ք. 278։

Շահնազարյան արական (1866—1876), Կ. Փանոսյանի Ագապյան իգական (1869—1876), Հակոբ Գուրգենի Հայկական կրթարան արական (1876—1888) վարժարանները։ Ավելի արդյունավոր եղավ հայտնի մանկավարժ Ռ. Պերպերյանի 1876 թ. բացած երկրորդական վարժարանը, որը շարունակեց իր գոյությունը մինչև 1927 թ.։ Երկարատև կյանք ունեցավ նաև «Դպրոցասեր հայուհյացի» վարժուհինոցը (1879-ից), որը 1896-ին փակվեց, ապա վերաբացվեց 1908-ին, իսկ 1922-ից տեղափոխվեց արտասահման (Մալոնիկ, ապա Փարիզ)։

Սակայն առաջնահերթ խնդիր էր ազգային կանոնավոր միջնակարգ դրպրոց ունենալու հարցը։ Ն. Վարժապետյան պատրիարքն այդ նպատակով միջոցներ հավաքեց, բայց նա շուտով մահացավ։ Ստեղծվեց «Ներսես Վարժապետյան ուսումնարանի ընկերություն», որի ջանքերով էլ 1886 թ. սեպտեմբերին Ղալաթիայում, Մ. Չերազի տեսչությամբ, բացվեց Կենտրոնական վարժարանը, որը կարճ ժամանակում մեծ հռչակ ստացավ։ Ղալաթիայի Կենտրոնական վարժարանը միջնակարգից էլ բարձր աստիճանի հասավ և փաստորեն ուներ պետական լիցեյի մակարդակ։ Այն յուրատեսակ վարժապետանոց էր նաև։

Կարևոր իրադարձություն էր Կ. Պոլսի մոտ գտնվող Արմաշի վանքում եկեղեցական բարձրագույն ուսումնարանի բացումը[58], որը պետք է նույն դերը կատարեր, ինչ որ Գևորգյան ճեմարանը Արևելյան Հայաստանում։ Արմաշում մինչ այդ գործել էին մի շարք հոգևոր դպրոցներ, որոնց արդյունքը, սակայն, մեծ չէր եղել։ Խորեն Աշըգյան պատրիարքը, Մ. Օրմանյանի և մեծահարուստ Աբիգ Ունճյանի աջակցությամբ, 1889 թ. հիմնում է Արմաշի դպրեվանքը։ Այստեղ ուսուցման առաջին երեք տարին հավասարեցված էր լրիվ միջնակարգ դպրոցի ծրագրին, և այն ավարտողները կարող էին ուսուցչություն անել։ Հաջորդ երեք տարին նախատեսված էր կրոնական բարձրագույն կրթության համար։ Բարձր հիմքերի վրա էր դրված հայագիտական և լեզվական առարկաների դասավանդումը։ Մինչև 1914 թ. դպրեվանքի 221 շրջանավարտից միայն 39-ն էր հոգևոր կոչում ընդունել, մնացածները գերազանցապես նվիրվել էին մանկավարժական գործունեության։

Արևմտահայերի կրթական աշքի ընկնող կենտրոն էր Զմյուռնիայի 1799 թ. հիմնված Մեսրոպյան միջնակարգ վարժարանը։ Մեսրոպյան վարժարանին զուգահեռ գործել է Հռիփսիմյան իգական դպրոցը Բերի միջնակարգի մակարդակով։

Արևմտյան Հայաստանում կրթական կյանքին տոն տվող օջախներ էին Կարինն ու Վանը։ Կարինում գործում էին Արծնյան և Հռիփսիմյան վարժարանները, որոնք տարրականից բարձր կրթություն էին տալիս։ Սրանցից բացի կային և թաղային վարժարաններ։ XX դ. սկզբին Կարինի հայկական տասը և օտար ու պետական վեց դպրոցներում սովորում էր ավելի քան 2600 հայ աշակերտ[59]։

---

58 Տե՛ս «Արմաշու դպրեվանքի 25 ամեայ յոբելյանին առթիվ. 1889—1914», Կ. Պոլիս, 1914։

59 Տե՛ս Զարեհ Վազար, Յուշամատեան Բարձր Հայքի։ Կարինապատում, Բեյրութ, 1957, էջ 254։

Սակայն Կարինի և ողջ արևմտահայ կրթական կյանքում բացառիկ երեվույթ էր Սանասարյան վարժարանը[60], Արևելահայ հասարակական ու կրթական գործիչ Կ. Եզյանի մտահղացմամբ և Մ. Օրմանյանի եռանդուն աջակցությամբ վարժարանը 1881 թ. հիմնադրել էր Պետերբուրգի մեծահարուստ Մ. Սանասարյանը։ Վարժարանը կառուցված էր գերմանական ռեալական ուսումնարանի սկզբունքով։ Այստեղ կային բոլոր հնարավորությունները յուրաքանչյուր միջնակարգ կրթություն ապահովելու համար՝ ուսումնական սարքեր, բնագիտական հավաքածուներ, հարուստ գրադարան, մարզարան և, ամենակարևորը՝ կարող մանկավարժներ։ Դպրոցն անմիջականորեն ղեկավարում էր տնօրենական եռանդամ խորհուրդը, որի կազմում հատկապես աչքի էր ընկնում հմուտ մանկավարժ Գ. Աբուլյանը։ Վարժարանն ուներ նաև արհեստագիտական բաժանմունք։ Վարժարանում կազմակերպված էր դաշնամուրի և ջութակի ուսուցում, իսկ 1903-ին՝ նաև փողային նվագախումբ, որի ղեկավարներից է եղել կոմպոզիտոր Գ. Սյունին։ Հետաքրքիր է, որ Սանասարյան վարժարանն ունեցել է դրամների, հայկական հին ձեռագրերի, դեղանկարչական գործվածների (Պուսենի 1, Ռուբենսի 2 և Այվազովսկու 4 ստեղծագործություն) հավաքածուներ։ 1900 թ. թուրքական կառավարությունը պաշտոնապես իրավունք տվեց «Սանասարյանի» շրջանավարտներին առանց քննության ընդունվելու նորաբաց համալսարանը։

Աշխուժորեն էր ընթանում Վանի դպրոցական կյանքը։ 1870 թ. այստեղ գործող ազգային մյուս դպրոցների շարքն է անցնում առաջին իգական Սանդրխտյան դպրոցը, որը հետագայում բարձր մակարդակի հասավ։ Նույն թվականին հիմնվում է Հայկազնյան վարժարանը։ Վարժապետանոցի փակումից հետո, Մ. Փորթուգալյանի ջանքերով 1883 թ. ստեղծվում է Կենտրոնական վարժարանը, որը, սակայն, թուրքական կառավարության հալածանքների պատճառով երկու տարի անց նույնպես փակվում է։ Այդ ժամանակ Վանում լայն ծավալ էին ստացել կիրակնօրյա լսարանները։ Վարագա վանքի վարժարանը, որ առժամանակ անշքացել էր, Մ. Խրիմյանը 1880 թ. վերածեց «Երկրագործականի» և Կովկասից աշխատելու հրավիրեց գյուղատնտես Ն. Մադաթյանին։ Այս վարժարանը որոշ ժամանակ լավ արդյունքներ ունեցավ, բայց Խրիմյանի մեկնելուց հետո (1885) կրկին անշքացավ։ 90-ականների կոտորածներից հետո Վանի դպրոցները դարձյալ աշխուժանում են և կարճ ժամանակում այնտեղ սովորողների թիվն անցնում է 4000-ից (3000-ը ազգային դպրոցներում)։ Վարագա վանքում կազմակերպվում է դպրոց-որբանոց։ Այդ նույն շրջանում Վանի ծխական դպրոցների ուսուցիչները կազմակերպում են երկամյա բարձր տիպի վարժարան, որը 1904 թ. վեր է ածվում կենտրոնականի և դառնում միջնակարգ դպրոց։

Սակայն Վանում ամենանշանավորը համարվում էր հմուտ մանկավարժ ու եռանդուն կազմակերպիչ Համբարձում Երամյանի մասնավոր դպրոցը[61]։ Ռուս-թուրքական պատերազմից հետո Երամյանը Տ. Ամիրճանյանի հետ 1878 թ. կազմակերպում է «Խնամատար ընկերություն» և արևելահայերի նյութական աջակցությամբ 1880 թ. բացում Վանի առաջին որբանոցը՝ նրան կից դպրոցով։ Երկու տարի անց ընկերությունը լուծարքի է ենթարկվում և դպրոցը

60 Տե՛ս «Քսանամյա տեղեկագիր Սանասարյան վարժարանի, 1881—1901», Կ. Պոլիս, 1903։
61 Տե՛ս «Վանի Երամյան վարժարանը», Կ. Պոլիս, 1914։

լրիվ մնում է Երամյանի տնօրինության տակ ու շուտով վերածվում միջնակարգի։ 1903 թ. դպրոցը վերանվանվում է «Երամյան» վարժարան։ Այստեղ ավանդվում էր նաև ռուսաց լեզուն։

Վանի հարևանությամբ ու նրա աղդեցության տակ էր ընթանում կրթական կյանքը Մուշում։ Ս. Կարապետի վանքին կից 1880 թ. ստեղծվում է երկդասրանոցական վարժարան, որը, սակայն, երկար կյանք չի ունենում։ Ավելի կարևոր էր 1878 թ. Մուշում բացված կենտրոնական վարժարանը, որը «Միացյալի» դպրոցական տեսուչ Սարգյանի ջանքերով դարձել էր մի յուրօրինակ վարժապետանոց։ 1890-ականների կեսերին այս վարժարանը փակվեց։ Կրթական նշանակալի կենտրոն էր և Խարբերդը։ «Ամբատյան ընկերության» ջանքերով 1875-ին այստեղ բացվում է բարձր տիպի մի վարժարան,



Վանի Երամյան վարժարանը

որը նույնիսկ «ճեմարան» անունն էր ստացել։ 1887 թ. վարժարանի տնօրեն է դառնում Թլկատինցին (Հովհ. Հարությունյան), որը դպրոցը վեր է ածում ազգային կենտրոնական վարժարանի։

Կիլիկիայի կենտրոնները բավական աշխույժ կրթական կյանք են ունեցել։ Ամենանշանավորն Այնթապն էր, որտեղ գործում էին և՛ ազգային, և՛ միսիոներական բազմաթիվ դպրոցներ։ 1871—75 թթ. այստեղ եղել է Կիլիկյան ճեմարան կոչված դիշերօթիկ վարժարանը, գործել են Ներսիսյան ու Հայկանուշյան ազգային դպրոցները, 1874-ին հիմնադրվել է Վարդանյան, իսկ 1885-ին՝ Ադենական մասնավոր վարժարանները, որոնք լավ կազմակերպված էին և հասել էին միջնակարգի աստիճանի։ 1910 թ. Այնթապում կային 14 հայկական ազգային ու մասնավոր, ինչպես նաև 10 այլ դպրոցներ, որոնցում սովորում էր մոտ 3500 աշակերտ[62]։

---

62 Տե՛ս Լ. Զարմիյան, Համապատկեր արևմտահայ մեկ դարու պատմության, հ. Ա, Բեյրութ, 1972, էջ 470։

Կեսարիայի ս. Կարապետ վանքի վարժարանը, որ բացվել էր 1830-ական թվականներին, 1888 թ. վերակառուցվում է և լավ համարում ձեռք բերում։ Նշանավոր մյուս դպրոցը 1901 թ. ձևավորված Միացյալ ուսումնարանն էր՝ 1200 աշակերտով։ Համեմատաբար բարձր մակարդակի դպրոցներ են եղել նաև Մարաշում, Նիկոմիդիայի շրջանում, Բրուսայում, Երզնկայում, Սեբաստիայում, Հաճընում, Զեյթունում, Թոգատում։

1908 թ. հեղաշրջումից հետո, առաջնորդվելով «օսմանիզմի» ազգայնական գաղափարախոսությամբ և ձգտելով վերջ դնել այլազգիների կրթական ինքնավարությանը, երիտթուրքերն աշխատեցին երկրի բոլոր դպրոցները միավորել պետական միասնական ղեկավարության տակ։ Սակայն հանդիպելով ազգային փոքրամասնությունների ուժեղ դիմադրությանը, կառավարությունը հրաժարվեց իր մտադրությունից, թուրքերենի ուսուցումը պարտադիր համարվեց, բայց մյուս առարկաների դասավանդումը թույլատրվեց շարունակել մայրենի լեզվով։ Միայն 1913 թ. կառավարությունը, առանց մեջլիսի հաստատման, գործադրության մեջ մտցրեց տարրական կրթության ժամանակավոր օրենքը, որով նախատեսվում էր ազգային դպրոցները մտցնել «միասնական տարրական դպրոցի» շրջանակների մեջ[63]։ Սակայն վրա հասած համաշխարհային պատերազմը խանգարեց այդ շովինիստական ծրագրի իրագործմանը, իսկ 1915 թ. կառավարական հրահանգով ոչ պետական բոլոր դպրոցների ինքնավարությունը լրիվ ոչնչացվեց։

Կրթական ասպարեզում որոշ առաջընթաց տեղի ունեցավ։ Նախկին երկուսի փոխարեն բացվեցին 11 սուլթանիյե-լիցեյներ, այդ թվում՝ Ադանայում (1912) և Կարինում (1913)։ Ղալաթասարայի լիցեյում այլ լեզուների հետ մտցվեց նաև հայերենի ոչ պարտադիր ուսուցում։ Կ. Պոլսի համալսարանում ավելացավ հայ ուսանողների թիվը։ 1912 թ. համալսարանի 2200 ուսանողների մոտ հինգերորդ մասը հայեր էին[64]։

Հայկական դպրոցները ևս աշխուժացան։ 28 գավառներում կազմակերպվեցին ուսումնական խորհուրդներ։ Վերականգնված «Միացյալ» ընկերությունը, օգտվելով 1906 թ. եգիպտոսում հիմնված «Հայոց բարեգործական ընդհանուր միության» նյութական օժանդակությունից, ստեղծեց դպրոցների բավական լայն ցանց։ 1911 թ. «Միացյալն» ուներ 84 դպրոց, որից 30-ը Կիլիկիայում, իսկ 33-ը՝ Կարինի շրջանում։ Այդ դպրոցներում սովորում էր մոտ 6500 երեխա[65]։ Ընկերությունն ուսուցչական կադրեր պատրաստելու նպատակով ամառային դասընթացներ կազմակերպեց Կարինում, Քղիում, Մերսինում, իսկ 1910 թ. վարժապետանոց բացեց Վանում։ «Ազգանվեր հայոց ընկերության» ջանքերով Կարինի Հռիփսիմյան վարժարանին կից 1910 թ. բացվեց վարժուհինոց։ 1909 թ. Կ. Պոլսում ծնունդ առավ հայանի մանկավարժ Հ. Հինդյանի և Գ. Մալաթյանի մասնավոր միջնակարգ դպրոցը։ Միջնակարգ նոր դպրոցներ էին նաև Պայծառ Տայլանի Սկյուտարի օրիորդաց հմմարանը (1910-ից) և Պյուլպյուլյանի Սան-Ստեֆանոյի վարժարանը (1911-ից)։ 1909 թ. Ադապազարում հիմնվեց կենտրոնական վարժարանը։

---

63 Տե՛ս А. Д. Желтяков, Ю. А. Петросян, История просвещения в Турции. стр. 107—109.

64 Տե՛ս «Նոր դպրոց», 1912, № 17—18, էջ 55։

65 Տե՛ս «Միացյալ ընկերությունք հայոց։ Նամայ տեղեկագիր 1908—1911», էջ 140—142։

Միջնակարգի աստիճանի հասան նախորդ տարիներին ստեղծված Կեսարիայի ս. Կարապետ վանքի վարժարանը (ամերիկյան կոլեջների ծրագրով) և Միացյալ ուսումնարանը, Խարբերդի «Նոր Սմբատյան ընկերությունը» 1909-ին բացեց օրիորդաց ճեմարան։ Այնթապի Վարդանյան վարժարանի սաների ջանքերով հիմնվում է Կիլիկյան ճեմարանը, որն ուներ երեք բաժանմունք՝ ուսուցչական ու առևտրական կոլեջներ և հոգևոր սեմինարիա։ Կարինի Հռիփսիմյան վարժարանը 1912 թ. վերածվեց միջնակարգի՝ իր արհեստանոցով ու մանկավարժական դասընթացներով։ Կարինի Կարմիր վանքում գործող վարժարանը այս շրջանում մանկավարժական թևթում ստացավ և ուսուցիչներ էր պատրաստում։ Սանասարյան վարժարանին կից «Միացյալի» բացած մանկավարժական դասընթացները վերածվեցին մշտական երկամյա վարժապետանոցի։ Սանասարյան վարժարանում տեղի ունեցած աշակերտական հուզումների պատճառով Կ. Պոլսի խնամակալությունը, չնայած ժողովրդի համառ դիմադրությանը, 1912 թ. վարժարանի հիմնական մասը տեղափոխեց Սերաստիա[66]։

Արևմտահայության շրջանում բավական լայն տարածում ունեին հայ կաթոլիկական համայնքի դպրոցները, որոնք գործում էին եկեղեցիներին կից։ Նման դպրոցներ կային Կարինում, Մուշում, Այնթապում, Մարաշում, Սեբաստիայում, Կյուրինում և այլ վայրերում։ Համայնքից անկախ էին Մխիթարյան միաբանության դպրոցները։

Արևմտահայերի լուսավորության գործում ընդհանրապես մեծ դեր խաղացած Մխիթարյանների Փարիզի Մուրադյան և Վենետիկի Ռաֆայելյան վարժարանները 1870 թ. միավորվեցին Վենետիկում՝ որպես միացյալ Մուրադ-Ռաֆայելյան վարժարան (հետագայում, 1928 թ. Փարիզի Մուրադյան վարժարանը վերականգնվեց)։ Իտալական կառավարությունը 1897 թ. Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան վարժարանին ավեց պետական միջնակարգ դպրոցի իրավունք։ Մխիթարյանների այս վարժարանների սաների մեծ մասը ժամանակին դարձան գրողներ, ուսուցիչներ, արվեստագետներ, գիտնականներ և այլն։ 1870 թ. Կ. Պոլսի Գատը-Դյուղում բացվում է Մխիթարյանների գիշերօթիկ միջնակարգ վարժարանը, որն ավարտողներն ընդունվում էին Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան հաստատությունը։ Հայտնի էր Վիեննայի Մխիթարյանների Կ. Պոլսի բանկալթի թաղի լիցեյը։ Մխիթարյան դպրոցներ կային նաև Զմյուռնիայում, Կարինում, Տրապիզոնում, Մուշում, Նիկոմիդիայում և մի շարք այլ քաղաքներում։

XIX դ. երկրորդ կեսից բավական աշխուժացավ հայ բողոքական համայնքը, որն ամերիկյան միսիոներների աշակցությամբ բացեց իր դպրոցները երկրի մի շարք քաղաքներում, մասնավորապես Խարբերդի շրջանում և Կիլիկիայում։ Սակայն ավելի լայն տարածում էին ստացել ամերիկյան բողոքական միսիոներական դպրոցները։ Ամերիկյան միսիոներներն ամենից առաջ հետապնդում էին քաղաքական նպատակներ և ամեն կերպ ջանում էին ամերիկյան ազդեցությունը տարածել Արևելքում, հատկապես հայաբնակ վայրերում։ 1871 թ. Թուրքիայում գործում էր ամերիկյան միսիոներների 222 դպրոց՝ մոտ 6400 աշակերտով[67]։ 1914 թ. բողոքականների զանազան դպրոց-

---

66 Տե՛ս Հայկական կՊՊԱ, ֆ. 57, ց. 2, գ. 973, թ. 3—55։

67 Տե՛ս Saraflan K., History of Education in Armenia, Los Angeles, 1930, p. 170.

ների թիվը հասել էր 675-ի, որոնցում սովորում էր մոտ 35 հազար աշակերտ[68]։ Այդ դպրոցներում սովորողների մեծամասնությունը հայեր էին, զգալի թիվ էին կազմում և հայ ուսուցիչները։ Ավանդվում էին նաև հայոց լեզու, հայ գրականություն ու պատմություն։ Ուսուցումը միայն բարձր դասարաններում էր տարվում անգլերենով։

Միսիոներական դպրոցների մեջ մեծ համբավ ուներ Կ. Պոլսի «Ռոբերտ կոլեջը», որը 1869 թ. հիմնել էր միսիոներ Համլինը։ Մյուս աչքի ընկնող հաստատությունը Խարբերդի՝ 1878 թ. հիմնված «Եփրատ կոլեջն» էր, որն սկզբում կոչվում էր «Արմենիա կոլեջ»։ 1909—14 թթ. կոլեջն ունեցել էր իր «Եփրատ» հայերեն տպագիր հանդեսը։ Լայն ճանաչում ուներին Կոնիայի «Ճեմարանյան կոլեջը» (1892-ից), Այնթապի «Կենտրոնական Թուրքիայի կոլեջը» (1874-ից), Թոգատի «Անատոլիա կոլեջը» (1886-ից), որը հետո փոխադրվեց Մարզվան։ Միսիոներական բարձրագույն վարժարաններ կային նաև Զմյուռնիայում, Տարսոնում, Սեբաստիայում, Հաճընում, Վանում, Դիարբեքիրում։

Հայերն զգալի թիվ են կազմել նաև Թուրքիայում գործող ֆրանսիական կաթոլիկ միսիոներների դպրոցներում, որոնց քանակը 1914 թ. հասնում էր 500-ի։ Հատկապես մեծ ճանաչում էր ստացել Կ. Պոլսի Սեն-Ժոզեֆ կոլեջը։ Հայաբնակ վայրերից հայտնի էին Կարինի, Վանի, Մեզիրեհի, Խարբերդի, Հյուսնիկի, Մալաթիայի, Թոգատի, Քեսապի, Այնթապի և մի շարք այլ տեղերի ֆրանսիական դպրոցները։

Օտարերկրացիների այս դպրոցները 1914 թ. հետո մեծ մասամբ կամ դադարեցին գործելուց, կամ տեղափոխվեցին արտասահման։

Մանկավարժությունը։ Կյանքի ընդհանուր վերելքի և ազգային ինքնագիտակցության խորացման պայմաններում առաջադիմող ժողովրդական կրթության գործը XIX դարի երկրորդ կեսին կենսական անհրաժեշտություն էր դարձրել հայ մանկավարժական մտքի զարգացումը։ Հայ առաջադեմ մանկավարժներն ու կրթական գործիչներն անդուլ պայքար ծավալեցին հին դպրոցի արատավոր կողմերի, ուսուցման սխոլաստիկ մեթոդների, դեռևս կիրառվող մարմնական պատիժների, խավֆայականության դեմ։

Հայ մանկավարժների գործունեության ու աշխատությունների մեջ կարմիր թելի պես անցնում էր դասավանդումը մայրենի լեզվով տանելու գաղափարը. մայրենի լեզուն նրանք ևս համարում էին «ժողովրդի մեծագույն դաստիարակը» (Կ. Ուշինսկի)։ Դրա հետ միասին նրանք ամեն կերպ պայքարում էին ուսուցման ազգային բովանդակությունն ուժեղացնելու համար, որպեսզի «Ուսումն ազգային լինի և մանուկի կյանքին ընտանի, ոչ թառով, այլ հոգով» (Ս. Մանդինյան), որպեսզի աշակերտը դպրոցում հաղորդակից դառնա հայրենի ավանդույթներին, գրականությանը, պատմությանը, տոգորվի իսկական հայրենասիրությամբ և դերծ մնա ազգային դիմագրկությունից։

Մի շարք լավագույն մանկավարժների ջանքերով դպրոցական դասագրքերում և ծրագրերում հաստատուն տեղ գրավեցին ազգային էպոսն ու մատենագրությունը, ժամանակակից նշանավոր գրողները։ Սակայն, դրա հետ միասին, հայ մանկավարժական միտքը մշտապես շեշտում էր այլ ժողովուրդների լեզուն ու մշակույթը յուրացնելու մեծ կարևորությունը, առանձնահատուկ նշանակություն էր տրվում ռուսաց լեզվի ուսուցման բարելավմանը՝ որ-

---

[68] Տե՛ս А. Д. Желтяков, Ю. А. Петросян, История просвещения в Турции, стр. 137

այնս ժամանակի առաջավոր մտքի նվաճումներին հաղորդակցվելու և այլ ժողովուրդների հետ շփվելու հնարավոր միջոցի։

Զգալով դպրոցը մոտեցնել բուն ժողովրդին ու մատչելի դարձնել ուսուցումը, հայ առաջադեմ մտավորականությունն ու կրթական գործիչներն ապահովեցին աշխարհաբարի հաղթանակը դպրոցում, միաժամանակ գրաուցման նախկին տանջալի ու բթացնող տառահնչական մեթոդը փոխարինվեց դյուրըմբռնելի հնչական մեթոդով։ Մեծ նշանակություն էր տրվում կնոջը կրթելու գործին, քանի որ «կինն առաջին դաստիարակչուհին է մանկան» (Ի. Պերպերյան) և խոշոր դեր ունի կատարելու ընտանիքում ու հասարակության մեջ։

Առաջնորդվելով համաշխարհային մանկավարժական մտքի նվաճումներով և հենվելով ազգային լավագույն ավանդույթների վրա, հայ կրթական գործիչները հսկայական աշխատանք կատարեցին դպրոցական միասնական ծրագրերի ու կանոնադրությունների մշակման և կատարելագործման, ուսուցման դաս-դասարանային համակարգի արմատավորման, կրթության տարբեր աստիճանների միջև հաջորդականություն ու կապ ստեղծելու, ժամանակակից պահանջներին համապատասխանող դասագրքեր պատրաստելու, ուսուցման պրոցեսը բարելավելու ուղղությամբ։ Հնարավորության սահմաններում դպրոցից դուրս մղելով կրոնական ոգին, կրճատելով կրոնական առարկաներին հատկացվող ժամերը, զգալի տեղ տալով բնագիտության ու մյուս գործնական գիտություններին, հայ մանկավարժներն ու կրթական գործիչներն աստիճանաբար հասան այն բանին, որ դպրոցը հիմնականում ստացավ աշխարհիկ բնույթ։

Հայ մանկավարժական մտքի զարգացմանը մեծապես նպաստեց մասնագիտական մանկավարժական մամուլի ծնունդը։ Տարբեր տարիների լույս էին տեսնում Վ. Բաստամյանի «Դպրոց» (Էջմիածին, 1874—1876), Հ. Տեր-Հովհաննիսյանի «Մանկավարժական թերթ» (Թիֆլիս, 1878—1879), Ն. Խոսրովյանի «Վարժարան» (Թիֆլիս, 1882—1884), Ա. Ստեփանեի «Մանկավարժանոց» (Թիֆլիս, Պետերբուրգ, 1884—1887), Մ. Ասքանազի «Մանուկ մանկանց» (Կ. Պոլիս, 1889—1893) պարբերականները։

Մանկավարժական թերթում ունեին Ա. Ստեփանեի «Հայկական աշխարհը» (1874 թ. հետո), Կ. Պոլսում երկարատև կյանք ապրած «Մասիսը» (հատկապես 1894 թ.)։ Կրթական հրատապ հարցերին նվիրված իրենց հոդվածներով հայ մանկավարժները հաճախ էին հանդես գալիս նաև Մ. Մամուրյանի «Արևելյան մամուլ», Ե. Տեմիրճիպաշյանի «Կրական և իմաստասիրական շարժում», Ն. Տաղավարյանի «Գիտական շարժում», Ա. Հովհաննիսյանի «Փորձ» և «Արձագանք» ու բազմաթիվ այլ պարբերականներում։

XX դարի սկզբին, երբ հայկական դպրոցների կյանքում նկատելի աշխուժություն սկսվեց, մանկավարժության ասպարեզում ևս տեղաշարժեր կատարվեցին։ 1907 թ. արևելահայ ուսուցչությունը կազմակերպվեց և ստեղծեց «Կովկասահայ դպրոցների ուսուցիչների ու վարժուհիների միությունը», որը 1908—1914 թթ. հրատարակեց իր օրգանը՝ «Նոր դպրոց»։ Նախորդների համեմատությամբ մանկավարժական այս ամսագիրն աչքի էր ընկնում առաջադրած հարցերի առավել խորությամբ ու նպատակամղվածությամբ։ Արևմտահայ իրականությունում ևս երևան եկան մանկավարժական նոր օրգաններ՝ «Ուսումնարան» (Կ. Պոլիս, 1911—1915), «Հայ ուսանող» (Կ. Պոլիս, 1910—1911), «Լույս» (Վան, 1913—1914), «Հայ դպրոց» (Կ. Պոլիս, 1914)։

Ուշագրավ է, որ կրթական շարժման վերելքի տարիներին հայ մանկավարժների ու մանկագիրների ջանքերով որոշակի ձևավորում ստացավ մանուկների համար հրատարակվող մամուլը։ Առանձնապես աչքի ընկան Կ. Պոլսում Հ. Պարոնյանի ու Յազմաճյանի խմբագրությամբ 1876—78 թթ. լույս տեսնող «Թատրոն։ Բարեկամ մանկանց» հանդեսը, Թիֆլիսում 1883—1918 թթ. հրատարակվող արևելահայ առաջին մանկական ամսագիր «Աղբյուրը» (խմբ. Տ. Նազարյան) և Կատարինե ու Ստեփան Լիսիցյանների հռչակավոր «Հասկերը» (1905—1917)։ Վերջին երկուսն ունեին նաև մանկավարժական հատուկ բաժիններ։ Արևմտահայության շրջանում միաժամանակ երևան եկան խոշոր դպրոցների սաների հրատարակած աշակերտական մի շարք թերթեր։

Հայ մանկավարժներն զգալի եռանդ ներդրեցին ազգային դպրոցները ժամանակակից դասագրքերով ապահովելու գործում։ Եթե նախորդ տարիներին դասագրքերի ստեղծման հիմնական օջախներն արևելահայերի համար Մոսկվան ու Պետերբուրգն էին, ապա 1870-ականներից այդ գործը հիմնականում կենտրոնացավ Թիֆլիսում, Էջմիածնում, Շուշիում։ Դեռ 1869 թ. Պետերբուրգի հայ ուսանողական շրջանակի հանձնարարությամբ Ս. Մանդինյանը հրապարակ էր հանել «Հայերն կարդալ և գրել ուսուցանելու հրահանգը»՝ նվիրված գրուսուցման հնչական մեթոդի պարզաբանմանը։ Արդեն 1871 թ. դրա հիման վրա և ռուս նշանավոր մանկավարժ Կ. Դ. Ուշինսկու հետևությամբ Ն. Տեր-Ղևոնդյանը Թիֆլիսում հրատարակեց «Մայրենի լեզու» այբբենարանը, որին հետևեցին նաև ընթերցարանները։ Այս դասագրքերն իրենց պարզ, պատկերավոր լեզվով ու հասկանալի բովանդակությամբ նորություն էին հայ դպրոցի կյանքում։ Դրանք տարածում գտան նաև արևմտահայ իրականությունում և գրեթե 40 տարի հավատարիմ ծառայեցին հայ աշակերտությանը։

Խոշոր իրադարձություն էին Ղ. Աղայանի 1875 թ. հրատարակած «Ուսումըն մայրենի լեզվի» դասագրքերը, որոնք համապատասխանում էին ժամանակի ոգուն և կրում ժողովրդայնության վառ կնիք։ 1872 թ. Մ. Միանսարյանն առաջին անգամ արևելահայ դպրոցներում ներմուծեց գծված տետրը և Լայպցիգում հրատարակեց ու տարածեց իր կազմած հայերեն վայելչագրության օրինակները։ Կազմվեցին քերականության դասագրքեր, որոնցից աչքի ընկավ Ս. Պալասանյանի աշխարհաբարի քերականության առաջին դասագիրքը (1874)։ Լայն ճանաչում ստացավ Պալասանյանի «Պատմություն հայոց» (1890)։ Ստեղծվեցին նաև ռուսաց լեզվի, թվաբանության, պատմության, աշխարհագրության, երգ-երաժշտության դասագրքեր։ Հայ ուսուցչության համար երկար ժամանակ օգտակար ձեռնարկներ էին Ս. Մանդինյանի «Համառոտ մանկավարժությունը» (1878) և Առ. Բահաթրյանի «Համառոտ գործնական հոգեբանությունը» (1882)։

1905 թ. հետո զգալի աշխատանք կատարվեց դպրոցական դասագրքերը թարմացնելու և նորերն ստեղծելու ուղղությամբ։ Գործածության մեջ մտան Ստ. Լիսիցյանի, Հովհ. Թումանյանի և Լ. Շանթի կազմած «Լուսաբեր» (1907—1910) ու Տ. Ռաշմաճյանի, Ավ. Իսահակյանի և Ա. Ջիլինկարյանի «Դասընկեր» (1909—1912) այբբենարան-ընթերցարանները, որոնք համապատասխանում էին դպրոցի աճող պահանջներին։ «Լուսաբերը» 1911 թ. հրատարակվեց նաև Կ. Պոլսում։ Հրատարակվեցին գրականության քրեստոմատիաներ, Վ. Փափազյանի, Լ. Մանվելյանի, Լեոյի գրքերը՝ նվիրված հայ գրա-

կանությանը, Մ. Աբեղյանի կազմած աշխարհաբարի քերականությունը, Ա. Օլիեցյանի և Գ. Էդիլյանի՝ մանկավարժության, Իս. Հարությունյանի՝ հոգեբանության դասագրքերը, երևան եկան պատմության, աշխարհագրության, քիմիայի, բնագիտության նոր դասագրքեր ու փոխադրություններ։

Արևմտահայ իրականությունում դասագրքերի պատրաստման գործը, որ հիմնականում կենտրոնացված էր Կ. Պոլսում ու Զմյուռնիայում, ինչպես նաև Վենետիկում, ծավալվել էր ավելի վաղ շրջանում, իսկ 1870-ականներից սկսած զգալի աշխատանք կատարվեց դրանց բարելավման ուղղությամբ։ Լայն ճանաչում ստացան Մ. Մամուրյանի «Գիտելիք ու պարտիք տղոց» (1879) և մի շարք այլ ընթերցարանները։ Զապել և Հրանդ Ասատուրների «Թանգարան» ընթերցարանների շարքը երեք տասնամյակ եղել է հայ աշակերտի ուղեկիցը։ Դպրոցական ընթերցարաններ են կազմել նաև Գ. Սրվանձտյանցը, Ա. Անտոնյանը, Ռ. Զարդարյանը, Ս. Դավթյանը, Ա. Գարագաշյանը։ Հայոց լեզվի քերականության դասագրքեր ստեղծեցին Ա. Այտընյանը, Ս. Դավթյանը, Հ. Գազանճյանը, սակայն 1890-ականների վերջերից լայն ճանաչում ստացան Զ. և Հ. Ասատուրների քերականության դասագրքերը, որոնք երկար ժամանակ եղան ամենագործածականը։

Մ. Մամուրյանը հսկայական աշխատանք կատարեց նաև ընդհանուր և հայոց պատմության, առողջաբանության, տնտեսագիտության նոր դասագրքեր ստեղծելու ուղղությամբ։ Այս գործում նրանից հետ չմնաց և Ա. Գարագաշյանը, որի կազմած մոտ 30 անուն դասագրքերը (հայոց և ֆրանսերեն լեզուների քերականություն, աշխարհագրություն, հայոց պատմություն, տրամաբանություն, փիլիսոփայության պատմություն) բազմիցս վերահրատարակվեցին։ Հայոց լեզվի մոտ երեք տասնյակ դասագրքերի ու մեթոդական ուղեցույցների հեղինակ էր և երկարամյա մանկավարժ Ս. Դավթյանը։ Հրապարակ եկան հայոց պատմության (Կ. Բամամճյան), մատենագրության պատմության (Գ. Զարպհանալյան), փիլիսոփայության պատմության (Ե. Տեմիրճիպաշյան), գրականության տեսության (Մ. Ասքանազ), կենդանաբանության, բուսաբանության, հանքաբանության, մարդակազմության (Գ. Մենևիշյան, Ս. Երեմյան) և մի շարք այլ դասագրքեր։

Հայ դպրոցին անգնահատելի ծառայություն է մատուցել գրող ու մանկավարժ Ղազարոս Աղայանը (1840—1911)։ Իր ողջ կյանքը կապելով դպրոցի հետ, Աղայանն աշխատել հետևողականորեն արմատավորել է ժողովրդայնության սկզբունքները, եղել է աշակերտի մտերիմ բարեկամն ու հոգատար դաստիարակը։ Նա իր բազմաթիվ մանկավարժական գործերով, դասագրքերով ու գործնական աշխատանքով (Աղայանը 1880-ական թթ. եղել է Վրաստանի Քեմի դպրոցական տեսուչը) պրոպագանդել է ուսուցման նոր, առաջավոր մեթոդներ, աճեցրել է ուսուցիչների մի ամբողջ սերունդ։

Ագգային մանկավարժական գիտության զարգացման գործում խոշոր ավանդ ունի անվանի մանկավարժ Սեդրակ Մանդինյանը (1844—1915)։ Նա առաջիններից էր, որ դպրոցական դասագրքերում մտցրեց ազգային ոգի, հիմնավորեց գրաուցման հնչական մեթոդը, եղավ քիմական դպրոցներում և Գևորգյան ճեմարանում մանկավարժական ուսուցման կազմակերպիչը, նպաստեց դպրոցական ծրագրերի մշակմանը։

Կարճատև կյանք ունեցավ շնորհալի մանկավարժ-գիտնական Աոաքել Բանաբրյանը (1848—1883), սակայն կարողացավ զգալի հետք թողնել հայ

մանկավարժության պատմության մեջ իր հոդվածներով, դասագրքերով և հատկապես առաջին անգամ մշակած հայոց լեզվի գիտական մեթոդիկայով։ Արևմտահայ իրականության մեջ **Մատթեոս Մամուրյանի** (1830—1901) ղեկավարությամբ Զմյուռնիայի հայկական դպրոցները համահայկական նշանակություն էին ստացել։ Մամուրյանը ձգտել է, որ գիտելիքներ տալուց բացի, դպրոցը ձևավորի երեխայի բնավորությունը, պատրաստի ազնիվ ու ժողովրդին նվիրված քաղաքացիներ։

Դպրոցի միասնական ծրագրերի ու սկզբունքների մշակման գործում խոշոր ավանդ ունի հմուտ մանկավարժ **Ռեթեոս Պերպերյանը** (1848—1907)։ Նա կրթության հիմնական նպատակը համարում էր անհատի բարոյական դաստիարակությունը։ Պերպերյանը դաստիարակել է պիտանի ու կրթված մարդկանց մի քանի սերունդ։ **Մինաս Չերազը** (1852—1929) իր եռանդով մեծապես օժանդակել է դպրոցների կազմակերպմանն ու նրանցում հայրենասիրական ոգին վառ պահելու գործին։ Նա միաժամանակ աշխարհաբարի ջերմ պաշտպաններից էր։ Խոշոր մանկավարժ էր **Խաչիկ Հարությունյանը** (1863—1928), որն առաջին անգամ հիմնավորեց աշակերտական ճանապարհորդությունների կրթադաստիարակիչ նշանակությունը, գրեց բազմաթիվ աշխատություններ, եղավ դպրոցների անխոնջ կազմակերպիչ։ **Հովհաննես Տեր-Միրաքյանը** (1859—1938) նպաստեց արևելահայ ու արևմտահայ դպրոցների ծաղկմանը, գրեց մի շարք մեթոդական ուղեցույցներ ու մանկավարժական այլ գործեր, հիմնավորեց ու զարգացրեց աշակերտական ընթերցանության կարևորության հարցը։ **Հովհաննես Հինգլյանը** (1866—1950) առաջիններից էր արևմտահայության մեջ, որ մեծ հետաքրքրություն հանդես բերեց ռուսական առաջավոր մանկավարժության (Կ. Դ. Ուշինսկի, Լ. Ն. Տոլստոյ) նկատմամբ, առանձնահատուկ տեղ հատկացրեց դպրոցում աշխատանքային դաստիարակության հարցերին։ Անվանի հայագետ **Անտոն Գարագաշյանի** (1818—1903) մանկավարժական բազմամյա գործունեությունը, առաջադեմ գաղափարները և ստեղծած դասագրքերը նրան դնում են հայ դպրոցի լավագույն գործիչների շարքը։ Ժամանակի անվանի մանկավարժներից էին նաև արհեստագիտական և նախադպրոցական կրթության ջատագով, բանաստեղծ **Ռափայել Պատկանյանը** (1830—1892), իգական դպրոցների հիմնադիր, արձակագիր **Պերճ Պռոշյանը** (1837—1907), Երևանի թեմի դպրոցական տեսուչ **Տիգրան Ուշմանյանը** (1862—1946), բեղմնավոր գիտնական **Գուրգեն Էդիլյանը** (1885—1942), մանկագիր ու գիտնական **Ստեփան Լիսիցյանը** (1865—1947) և հայ մշակույթի շատ այլ գործիչներ։

XX դարի սկզբներից սկսեց ձևավորվել նաև հայ մարքսիստական մանկավարժական միտքը, որի առաջամարտիկներն էին **Ստեփան Շահումյանն** ու **Սուրեն Սպանդարյանը**։ Հենվելով նախորդ շրջանի առաջադիմական մանկավարժության սկզբունքների վրա և առաջնորդվելով մարքսիզմի գաղափարներով, նրանք բազմակողմանի քննության ենթարկեցին ժողովրդական կրթության հարցերը, քննադատեցին ու մերկացրին բուրժուական կրթական համակարգն ու մանկավարժությունը։ Իրենց բազմաթիվ հոդվածներով Ս. Շահումյանն ու Ս. Սպանդարյանը ցույց տվեցին, որ դասակարգային անհավասարության պայմաններում չի կարող ժողովրդի կրթության արմատական բարելավում լինել։ Նրանք զարգացնում էին այն միտքը, որ պայքարով նվաճված նոր դպրոցը լրիվ կհամապատասխանի ժողովրդի շահերին և մատաղ

սերնդին կտա բազմակողմանի ու ինտերնացիոնալ կրթություն, նրան կդաստիարակի կոմունիստական աշխարհայացքի ոգով։ Ս. Շահումյանի և Ս. Սպանդարյանի մանկավարժական հայացքները հետագա զարգացում ստացան Սովետական Հայաստանում։

2. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

XIX դարի 70—80-ական թվականներին հայ գրականությունը զարգացման մի նոր, բարձր շրջան է թևակոխում։ Ի տարբերություն նախորդ 50—60-ական թվականների գրական վերելքի տարիների, այդ շրջանում իշխող գրական ժանրերը դառնում են արձակը և դրամատուրգիան, որոնք հասարակական մեծ կշիռ են ստանում՝ կյանքի ավելի լայն ու խոր արտացոլման, ժամանակի հուզող հարցերն ավելի բազմակողմանիորեն արծարծելու իրենց հնարավորություններով։ Լավագույն երկերով հանդես են գալիս Րաֆֆին ու Պարոնյանը, Պռոշյանն ու Սունդուկյանը, Ալայանն ու Մերկենցը, Սրբուհի Տյուսաբը և ուրիշներ։ Գրականությունը գնալով ավելի է հարստանում գեղարվեստական մեծարժեք գործերով։ Հայ գրողներն իրենց ստեղծագործությամբ հսկայական դեր են կատարում ժողովրդի հասարակական միտքն ու գեղագիտական զարգացումն առաջ տանելու գործում։

Այդ տարիներին հասարակական ավելի մեծ ազդեցության ու նշանակության հասավ առաջավոր ռոմանտիկական գրականությունը։ Ռոմանտիկական գրական մեթոդի բուն էությունը հիանալի սահմանել է ինքը՝ Րաֆֆին։ «Կայծեր» վեպի վերջին գրվածներից մեկում նա գրում է. «...բանաստեղծը (այսինքն՝ գրողը—խմբ.) ստեղծում է ժողովրդի համար իդեաներ, բարձր համամարդկային իդեաներ։ Եթե ներկայի մեջ չէ գտնում իր իդեաների տիպարները, նա մտնում է պատմության խորքը՝ և ժամանակների հնությունից դուրս է կորզում իր ցանկացած հերոսներին և նրանց պատկերները իրենց վսեմ գործերի նկարագիրներով՝ դնում է ներկա սերունդի առջև, որ նրանցից օրինակ առնեն։ Նա ստեղծում է այնպիսի տիպարներ, որոնք ներկայի մեջ դեռ գտնված չէին, այլ ապագայում պիտի հայտնվեին»[69]։

Րաֆֆին և մյուս առաջավոր ռոմանտիկները մեծ նշանակություն էին տալիս նաև գեղարվեստական խոսքի ներգործության ուժին։ Րաֆֆին այն կարծիքն ուներ, որ «մի լավ գիրք կարող է փրկել մի ամբողջ ազգ»[70], այդ հասկանալի է 70—80-ական թվականների ազգային-ազատագրական շարժման իրական հանգամանքներում։ Առաջավոր ռոմանտիզմը ունեցավ իր դրական նշանակությունը։

Թեպետ հայ ժողովուրդը ապրում էր տնտեսական ու քաղաքական զարգացման տարբեր աստիճանների վրա գտնվող պետություններին տիրապետության տակ, բայց նրա երկու հատվածներում գրականության հիմնական խնդիրները զուգադիպում էին։ Արևելահայության և արևմտահայության միջև գոյություն ունեին հասարակական սերտ կապեր։ Թուրքիան ամեն տեսակետից հետամնաց երկիր էր, բայց արևմտահայ հասարակական և մտավոր կյանքն անհամեմատ բարձր էր թուրքականից։ Այս երևույթի հիմքում ընկած

---

69 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. V, Երևան, 1956, էջ 471։ (Ընդգծումը խմբ.)։

70 Նույն տեղում։

մի շարք հիմնավոր պատճառների. Քվում առանձնապես պետք է նկատի ունենալ ռուս, ինչպես և արևմտաեվրոպական առաջավոր կուլտուրայի ու գրականության հետ հայ մտավորականության ունեցած սերտ կապերը։ Ճիշտ է, արևելահայ գրողների շփումը և ուսումնասիրությունն ավելի ռուս գրականությունից էր, իսկ արևմտահայ գրողներինը՝ ավելի արևմտաեվրոպական, առանձնապես ֆրանսիական գրականությունից, բայց այս հանգամանքը չպետք է բացարձակության վերածել, որովհետև ռուս գրականությունը և հասարակական միտքը մեծ տեղ և հետաքրքրություն ունեին նաև արևմտահայ իրականության մեջ, ինչպես և արևմտաեվրոպականը՝ արևելահայ իրականության մեջ։ XIX դարի ռուս գրականությունը ձեռք էր բերել համաշխարհային նշանակություն։ Ռուս գրականությունը գրական հետք թողեց հայ գրականության (երկու հատվածների) զարգացման ընթացքի վրա։

70—80-ական թվականների հայ գրականության կենտրոնական դեմքերն են Րաֆֆին ու Պարոնյանը, որոնք խորապես արձագանքեցին այդ տարիներին արծարծված Հայկական հարցի, արևմտահայության ազատագրման կապակցությամբ հայ հասարակության մեջ առաջացած պահանջներին։

Հայ մեծ վիպասան Րաֆֆին (Հակոբ Մելիք-Հակոբյան, 1835—1888) իր ստեղծագործության մեջ արտացոլել է Թուրքիայի ֆեոդալական բռնապետական կարգերի դեմ ուղղված ազգային-ազատագրական շարժումների համադեմոկրատական բովանդակությունը։ Այս է ամենից առաջ պայմանավորել նրա ստեղծագործության պատմական ու գեղարվեստական մեծությունը։

Րաֆֆու մոտ միշտ ուժեղ է եղել արդիականության զգացումը։ Նա ժողովրդի կյանքի իրական-պատմական դեպքերի ընթացքի հետ սերտորեն կապված ապրել է աշխարհայացքի և ստեղծագործական զարգացման երեք շրջան։ Րաֆֆին այս շրջանում գրում է գերազանցապես պարսկահայերի և Անդրկովկասի հայ բուրժուազիայի կյանքի քննաներով։ Նա դեռ իր գործունեության սկզբնական շրջանում գտնում էր, որ գեղարվեստական գրականությունը, հատկապես վեպը, ունի հասարակական ներգործուն մեծ նշանակություն։ Իր առաջին՝ «Սալբի» վեպի առաջաբանում նա գրել է. «Ռոմաններն են այն կախարդական հայելիքը, որոնց մեջ ազգերը տեսնելով յուրյանց կյանքի ագեղ ու ավերված պատկերքը... ուսանում են շինել և բարեկարգել յուրյանց դրությունը։ Մասնավորապես հայ կյանքի «ավերված պատկերքի» մասին խոսելով, Րաֆֆին նկատի ուներ ֆեոդալական հարաբերությունները և օտար լծի՝ աշխատավորության կյանքի համար ունեցած ծանր հետևանքները։ Ոչ միայն Րաֆֆու, այլև ընդհանրապես հայ լուսավորական շարժման համար բնորոշ էր օտար լծից ազատագրվելու գաղափարը, մի բան, որ մեծ վիպասանի ստեղծագործական կյանքի երկրորդ շրջանում՝ 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմի ու հետագա տարիներին նրա երկերում գտնում է էական նշանակություն։ Հանգես է գալիս որպես հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոս, որը մեծապես պայմանավորում է նրա առաջավոր ռոմանտիզմը։

Րաֆֆին գրականությունը սերտորեն կապեց իրական կյանքի, ժողովրդի սոցիալական ու քաղաքական ազատագրական պայքարի հետ։ Ժողովրդի կյանքի լայն ընդգրկմամբ, ժողովրդի շահերի բուռն պաշտպանությամբ, պարսիկ խանների ֆեոդալական կեղեքման և Թուրքիայի վայրագ ջարդարարական քաղաքականության մերկացմամբ, իր ազնիվ հայրենասիրությամբ և

կերտած դրական կերպարներով Րաֆֆին բարձրացրեց հայ գրականության հեղինակությունն ու լայն ճանաչման հասավ։ Մեծ է նաև նրա դերը գրական լեզվի զարգացման մեջ։

Հայ նոր գրականության հիմնադիրներին, սկսած Խաչատուր Աբովյանից, մտահոգել է ազգության պահպանման հարցը։ Ըստ Աբովյանի, ազգին պահողը մայրենի լեզուն է ու հավատը, Րաֆֆին «Մայրիի» վեպի առաջաբանում գտնում է, որ «կրոնի մեջ մարդն ազատ է», իսկ ազգության պահպանման համար կարևորը «ազգային սերը», «ազգության գաղափարն է», ուստի ով չի ճանաչում և չի սիրում իր ազգը, «նա վերջանում է մարդ լիներ»։ Այսպիսով, Րաֆֆին որոշակիորեն արծարծում է հայրենասիրության գաղափարի ծավալման անհրաժեշտությունը։



Րաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան)

Րաֆֆու՝ իբրև գեղագետի և հասարակական գործչի խառնվածքի այս բնորոշ գիծը լավագույն կերպով զրսևորվեց նրա ստեղծագործական զարգացման երկրորդ շրջանում, երբ նա գրեց իր ծրագրային-քաղաքական վեպերը և երրորդ շրջանում, երբ նա անցավ պատմավիպասանության։ «Ջալալեդդին», «Խենթը», «Կայծեր» գործերում, որոնք նվիրված են արևմտահայության ազատագրման հարցին և հրապարակ եկան մոտ մի հնգամյակի ընթացքում, հեղինակն ապրում է որոշակի զարգացում։ 1878 թ. «Մշակում» տպագրված «Ջալալեդդին» վիպակում դեռ նկատելի է Արծրունու հրապարակախոսության ազդեցությունը, որից հետզհետե նա ազատվում է։ Այդ երկում Րաֆֆին գտնում է, որ Հայաստանի նման լեռնային մի երկրում բռնության դեմ պայքարն այլ ձև չի կարող ունենալ, քան Սարհատի փոքրաթիվ խմբի պայքարի ձևը։ Սակայն արդեն «Խենթում» (1880) և մանավանդ «Կայծերում» (առաջին հատորը՝ 1883 թ., երկրորդ հատորը՝ 1887 թ.) նա գալիս է այն եզրակացության, որ օտարի լուծը թոթափելու համար առանձին հերոսների պայքարը չի կարող ցանկալի արդյունքի հասցնել, անհրաժեշտ է, որ ժողովուրդը ոտքի կանգնի, իսկ դրա համար պետք է նրան նախապատրաստել։

Սկզբում Րաֆֆին այն կարծիքին էր, որ օտարի դարավոր լուծը և շարին հակառակելու հայ եկեղեցու բարոզը ժողովրդի մեջ մեռցրել են ազատության ձգտման ոգին, բայց հետո նա հանգում է այն տեսակետին, որ այդ ոգին իսպառ չի ոչնչացել, պահպանվել են կայծերը, որոնք պետք է բորբոքել։ «Խենթը» վեպում նա հանձնարարում է նոր դպրոց ստեղծելու գաղափարը, մի բան, որ «Կայծեր» վեպում արդեն շատ որոշակի գեղարվեստական մարմնավորում է ստանում, երբ ժողովրդին վնասակար դաստիարակություն

տվող Տեր-Թոդիկի դպրոցին հակադրվում է Ուշտունիքում՝ ժողովրդի մեջ բնականից գոյություն ունեցող, ազատասիրական ձգտումի հրահրող Կարոյի դպրոցը։

«Խննիում» Խաչոյի ընտանիքը գեղարվեստական ընդհանրացում է, որը ներկայացնում է արևմտահայ աշխատավոր գյուղացիությունը և նրա ողբերգական ճակատագիրը։ Դերազանցապես այս ընտանիքի շրջանում ցուցադրվում են Վարդանն ու Դուդուկչյանը, Ֆաքքահ բեկն ու Թոմաս էֆենդին։ Իռւս-Թուրքական պատերազմի շրջանում հայության համար գոյություն ունեցող ծանր իրադրությունը հեղինակը միանգամայն ճշմարտացիորեն է արտացոլում՝ ստեղծելով երկու բացասական կերպար, Ֆաքքահ բեկը և Թոմաս էֆենդին։ «—Մենք,— ասում է Դուդուկչյանը,— մինչև հիմա միամտաբար կարծում էինք, որ Արևմտահայաստանում կատարվող զեղծումները, անկարգություններ, բարբարոսություններն ու կողոպտումները առօրյա պատահականություններ են, չգիտեինք, թե դրանց տակին դժոխային մեքենայություն կա թաքնված, որ դրանք ծածուկ ելևէջվում և խրախուսվում են բարձր աստիճանավորների կողմից։ Մենք մեղադրում էինք կառավարությանը, որ նա թույլ է և չի կարողանում բարբարոս հարստահարիչներին զսպել, բայց պարզվեց, որ կառավարությունն ինքն է նրանց հրահրում՝ քրիստոնյա տարրը ոչնչացնելու համար»[71]։

Տանուտեր Խաչոյի ընտանիքում Ֆաքքահ բեկից հետո՝ երևում է Թոմաս էֆենդին։ Սա ազգությամբ հայ, բայց թուրքական պաշտոնյա է և քուրդ ցեղապետներից ոչ պակաս չարիք՝ գյուղացիության համար։ Հանձին Թոմաս էֆենդու, Րաֆֆին պատմականորեն ճիշտ է ներկայացնում ապստամբության գաղափարից սարսափող մարդու էությունը։ Թոմաս էֆենդին գտնում է, որ թուրքերը «բարերար» ազգ են, ուստի նրանց դեմ ընդվզողներին համարում է «խննիներ»։ Հեղինակը, զարգացնելով իր քննադատությունը, ասում է, որ գյուղական մյուլլեզմիից սկսած մինչև Բարձր դռան ամիրաները Թոմաս էֆենդիներ են, որոնք պետական անկարգությունների մեջ հնարավորություն են ստանում ծծել հայ աշխատավորների արյունը և դրա համար էլ գոհ են սուլթանական տիրապետությունից։ Նրանք «խավար են սիրում, որովհետև ձողերը ատում են լույսը»։

Այսպես է արևմտահայության ծանր կյանքի պատկերը։ Իսկ ինչպե՞ս փոխել այն։ Վեպում այս հարցին Րաֆֆին պատասխանում է իր գլխավոր դրական հերոսների միջոցով՝ Վարդանի և Հեռն Դուդուկչյանի (Սալման)։ Ինչպես հաջորդ՝ «Կայծեր» վեպում Կարոն և Ասլանը, այնպես էլ այստեղ հերոսներից մեկը մարմնավորում է ազատագրական պայքարի սիրտը, բնությունից տրված մղումը (Վարդան, Կարո), մյուսը՝ միտքը և գաղափարը (Դուդուկչյան և Ասլան)։

«Կայծերում» Րաֆֆին մի նոր խնդիր է առաջ քաշում։ Նա արծարծում է հայրենագիտության զարգացման և պատմության օրինակով դաստիարակելու անհրաժեշտությունը։ Պարզ է, որ ինքը՝ Րաֆֆին շուտով պետք է անցներ պատմավիպասանությանը։ Նա գրում է «Դավիթ Բեկը» և այդ ժանրի՝ հայ գրականության գլուխգործոցներից մեկը՝ «Սամվել» վեպը։

Րաֆֆու համար մարդու մեջ գեղեցիկը ժողովրդի ու հայրենիքի շահերին

---

71 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1955, էջ 200—201։

անձնական երջանկությունը գոհաբերելու կարողությունն է։ Նրա այս գեղագիտական իդեալը գեղարվեստորեն հոյակապ մարմնավորում է ստացել մանավանդ իր վերջին գործում՝ «Սամվել» պատմավեպում։ Սամվելը հանուն հայրենիքի սպանում է իր հարազատ հորը և մորը։ Բաֆֆին ստեղծագործական չափի խորագույն զգացումով հերոսի այդ քայլերը հոգեբանորեն հիանալի պատճառաբանել է։ Նա, առհասարակ, մեծ ուշադրություն է դարձնում իր հերոսներին առանձնահատուկ դիծերով օժտելուն, իսկ «Սամվել» վեպում արդեն, բազմաթիվ ուրիշներով խոր և համոզիչ հոգեբանական գիտողություններ է անում։ Բաֆֆու պատմավեպի գեղարվեստական մեծ արժանիքի հիմքում այս բոլորի հետ ընդամենը պատմականության պահպանումը։ Նա ամեն կերպ խուսափել է հերոսներին արդիականացնելու և իր խոսափողը դարձնելու շիլլերյան ռոմանտիզմին բնորոշ ձերբազատություններից։ Բաֆֆին հայ ժողովրդի ֆեոդալական անցյալի պատմության ընթացքի ներքին պատճառաբանությունն ավելի լավ է ըմբռնել, քան իր ժամանակի հրապարակախոսները ու պատմաբանները։ Այդ հանգամանքն էլ պայմանավորել է հեղինակի վերջին գործում ռեալիզմի ուժեղ երանգների առկայությունը։

Հայ վիպասանության նշանավոր դեմքերից է Սերենցը (Հովսեփ Շիշմանյան, 1822—1888)։ Արդեն հայտնի հրապարակախոս և հասարակական գործիչ լինելով, նա իրրև վիպասան հրապարակ եկավ 1877 թ. իր «Թորոս Լևոնի» վեպով։ Նրա առաջին պատմափնյը լույս տեսավ այն օրերին, երբ հայ հասարակությանը հուզում էր Հայկական հարցը։ Իրրև պատմավիպասան, ինչպես իր առաջին, այնպես էլ 1879 թ. լույս տեսած երկրորդ «Երկունք Ի դարու» վեպի համար, հայ ժողովրդի պատմական անցյալից Սերենցը վերցնում է այնպիսի դրվագներ, երբ հայրենիքը ընկած է օտար լծի տակ, որի վերացման համար բռնկվում է ազատագրական պայքար և այդ պայքարը հաջողում է երկրի անկախության վերականգնմանը։ Թեմայի այսպիսի ընտրությունը ցույց է տալիս, որ Սերենցը իր երկերը գրելիս լավատեսորեն էր տրամադրված դեպի ազգային-ազատագրական շարժումը և այդ լավատեսությունն աշխատում էր ներշնչել հասարակությանը։ Բնորոշ է հենց նրա երկրորդ վեպի վերնագիրը՝ «Երկունք Ի դարու»։ Շատ դարեր առաջ վերացել էր հայ պետականությունը։ Ժողովուրդը հեծում էր արաբ զավթիչների անլուր կեղեքումներից ու բռնություններից, և վերջապես, խալիֆայի դեմ մղվող երկարատև պայքարը տալիս է իր արդյունքը, ծնվում է Բագրատունիների թագավորությունը։

«Երկունքը» ոչ միայն քաղաքական լավատեսությամբ, այլև իր գեղարվեստական արժանիքներով հայ պատմավիպասանության ամենափայլուն նմուշներից է։ Հեղինակի առողջ պատմահայեցողությունը՝ իրադարձությունների մեջ ժողովրդի դերի ըմբռնումը, նրան հասցրել է ստեղծագործական այնպիսի արդյունքի, որպիսին ժողովրդական մարդու՝ Խութեցի Հովհաննի հերոսական կերպարի կերտումն է։

Բելինի կոնգրեսից հետո Հայկական հարցի վերաբերմամբ առաջացած հիասթափությունը շատերի թվում համակում է նաև Սերենցին։ Նրա երրորդ և վերջին պատմավեպը՝ «Թեոդորոս Ռշտունին», դրա արտահայտությունն է։ Այս վեպում արդեն բացակայում են պայքարի նկատմամբ Սերենցի հավատը և լավատեսությունը։ Բնորոշ է այն, որ այս անգամ նա պատմությունից ընտրել է այնպիսի դրվագ, երբ Թեոդորոս Ռշտունու իշխանության տա-

բիններին քիչ քիչ շատ ազատություն վայելող երկրին տիրում են օտար նվաճողները։

Մեծ երգիծաբան Հակոբ Պարոնյանը (1843—1891) անցյալ դարի 70—80-ական ԹԹ. հայ դասական գրականության կենտրոնական դեմքերից է։ Նա զարկ տվեց ոչ միայն ժամանակաշրջանի գրական շարժմանը, այլև հայ հասարակական մտքի զարգացմանը՝ իբրև դեմոկրատական հոսանքի ամենահետևողական արտահայտիչներից և գլխավորողներից մեկը։ Թե՛ երգիծական արձակի և թե՛ դրամատուրգիայի ժանրերում նա ստեղծել է գեղարվեստական այնպիսի գործեր, որոնք հսկայական ճանաչողական արժեք ունեն։ Պարոնյանի ստեղծագործության գեղարվեստական մեծությունն այն է, որ նրա երկերը 70—80-ական ԹԹ. ոչ միայն հայ հասարակական-քաղաքական կյանքի, այլև ժամանակի միջազգային քաղաքական կյանքի բնորոշ երևույթներն արտացոլում են ամենաբազմակողմանի կերպով։



Հակոբ Պարոնյան

«Պարզություն ու ճշմարտություններ այնպիսի գեղեցկություններ են, որ ամեն բանի մեջ կփնտռվին ամեն բանեն առաջ»,— գրում է Նա։ Պարոնյանն իր ողջ գրական կյանքում հավատարիմ է դտնվել իր սահմանած այս գեղագիտական-ստեղծագործական առաջավոր սկզբունքին։ Նա մի զարմանալի ուժով կարողացել է թափանցել սոցիալական ու քաղաքական երևույթների էության մեջ և վեր հանել, բացահայտել այն, ինչն իրոք ծիծաղելի է։

Պարոնյանի երգիծանքի հիմնական տեսակը սատիրան է, որի բովանդակությունն են կազմում ժամանակի սոցիալական և քաղաքական կյանքի՝ հայ հասարակությանը հուզող անցքերն ու երևույթները։ Նրա ստեղծագործության գաղափարական հարուստ բովանդակությունն ուղղված էր աշխատավորությանը ճնշող ու կեղեքող դասակարգերի, քաղքենիական ճահճի դեմ։ սուլթանական ջարդարարների վայրագ կարգերի և արևմտաեվրոպական տերությունների խարդախ քաղաքականության դեմ։ Նա գրական ասպարեզ էր իջել գեղարվեստական խոսքի հասարակական ներգործուն ուժի ամենաբարձր գիտակցությամբ։

Իր ժողովրդասիրությամբ և հայրենասիրությամբ Պարոնյանն առանձնապես փայլեց 70-ական ԹԹ. վերջերից, երբ հրապարակ եկավ Հայկական հարցը։ Այդ թվականներին նրա երգիծանքի հիմնական թիրախներն են դառնում ժամանակի հուզող քաղաքական հարցերը։ Պարոնյանն ամբողջ հոգով տենչում է հայ ժողովրդին ազատագրված տեսնել սուլթանական Թուրքիայի բարբարոսական լծից։ Նրա երգիծանքն ընթերցողին ճշմարտացիորեն ներ-

կայացնում էր իրերի և իրադարձությունների իրական պատկերը, բացահայտում դրանց իսկական էությունը՝ ամեն կերպ ձգտելով սթափեցնել մտքերը, որպեսզի ժողովրդի ազատագրման հույսերը չկապվեն ո՛չ «ազգային ջոջերի» գործունեության, և ո՛չ էլ սուլթանական չարդարարների ու եվրոպական դիվանագետների խոստումների հետ։ Պարոնյանը հիանալի էր ըմբռնել պատմական այն ճշմարտությունը, որ «ազգային ջոջերը», խոսքով ժողովրդի շահերի պաշտպաններ ներկայացնելով իրենց, իրականում, փաստացի գործունեությամբ, դավաճանում էին ժողովրդին և ստորաքարշությամբ աշխատում հաճոյանալ տիրողներին։

Ջնայած իր անձին սպառնացող լուրջ վտանգներին, սուլթանական գրաքննության խիստ հետապնդումներին, իր հրատարակած պարբերականների խափանումներին, Պարոնյանը հայրենասերի խոր վշտով ցույց է տալիս արևմտահայության արտակարգ ծանր վիճակը, Արևմտյան Հայաստանում տիրող ազգային խտրականությունը, պետական պաշտոնյաների գործած խժդժությունները ու անարդարությունները և սուլթանական վայրագ քաղաքականության հետևանքները։ Պարոնյանը երբեք չտարվեց պատրանքներով և միշտ էլ երգիծանքով էր արտահայտվում պատերազմից հետո սուլթանական կառավարության ու եվրոպական պետությունների՝ հայերի վիճակը բարելավելու համար տված խոստումների վերաբերմամբ։ Նա շատ լավ տեսնում էր, որ Թուրքիան յուրովի է գործադրում Արևմտյան Հայաստանում «բարենորոգումները», կատարելու իր խոստումը, իրականում է՛լ ավելի սանձազերծելով բռնության ու ջարդերի իր քաղաքականությունը։

Պարոնյանի քաղաքական սատիրայի բովանդակության էական գծերից մեկը եվրոպական պետությունների դիվանագիտության և առհասարակ նրանց վարած ուժի քաղաքականության մերկացումն է։ Այստեղ դարձյալ փայլում է Պարոնյանի խորաթափանց միտքը։ Հատկապես 70-ական թթ. վերջերին և 80-ական թթ. հասարակության անչափ գրավող Հայկական հարցի կապակցությամբ Պարոնյանը հաճախ է արտահայտվել մեծ պետությունների վարած երկերեսանի քաղաքականության մասին։

Քաղաքական հարցերի հետ միաժամանակ Պարոնյանը լայնորեն արծարծել է սոցիալական կյանքի և կենցաղի բազմաթիվ խնդիրներ, կերտել ժամանակի հասարակության համարյա բոլոր խավերի ներկայացուցիչների գեղարվեստական դիմանկարները։ Պարոնյանի սատիրական քննադատությունն առանձնապես ուղղված էր բուրժուազիայի ու հոգևորականության դեմ։ Երգիծաբանն այստեղ ևս վերին աստիճանի հետևողական է.

«Հայրիկ, ի՞նչ են հարուստները.
— Մեծ գողեր են, տղաս»։

Առհասարակ Պարոնյանի ստեղծագործության մեջ էական տեղ է բռնում ժամանակի հասարակության բարոյական կյանքի ու կենցաղի բացասական երևույթների սուր քննադատությունը։ Պարոնյանը խստորեն դատապարտում է հարուստ վերնախավում և նրան ընդօրինակող բաղքենիական շրջաններում գոյություն ունեցող ընտանեկան բարքերը, կենցաղի այնպիսի հոռի արտահայտություններ, որպիսիք էին կեղծ քաղաքավարության ձևերը, մոդայամոլությունը և պճնասիրությունը։

Պարոնյանի սոցիալական սատիրայի, և առհասարակ հայ երգիծաբանության գլուխգործոցներից են նրա «Մեծապատիվ մուրացկաններ» վեպը և

«Պատասար աղբար» կատակերգությունը։ Նա քննադատական ռեալիզմի սկզբնավորողներից է հայ գրականության մեջ։ Նրա այդ երկու գործերը ժամանակի ամենանշանավոր գրական երևույթներից են։ Պարոնյանի մոտ շատ ուժեղ է այժմեականության զգացումը։ Նա սովորաբար առաջինն է նկատել հասարակական կյանքում առաջացած նոր երևույթները և արտացոլել դրանք իր ստեղծագործության մեջ՝ տալով ճիշտ գնահատականներ։ Պարոնյանը 60-ական թվականներին Սունդուկյանի հետ միասին մի նոր ժանրի՝ կատակերգության սկիզբը դրեց հայ գրականության մեջ և ուժգին հարված հասցրեց կես կլասիցիզմի, կես պահպանողական ռոմանտիզմի ոճով գրված պատմական ողբերգություններին։

Պարոնյանն անտարբեր, անկյանք դրամատուրգիայի փոխարեն բերում էր մի հարուստ և բուրմ շունչ ոչ միայն ժանրով, այլև բովանդակությամբ ու արծարծած հարցերով։ Նրա արժեքային հայացքն արդեն նկատել էր սոցիալական զարգացման հետևանքով մարդկային հարաբերությունների մեջ ծագնացած այնպիսի երևույթներ, որոնք հետագայում իրենց արտահայտությունը գտան Շիրվանզադեի, Նար-Դոսի և հայ մյուս արձակագիրներից շատերի գործերում։

Պարոնյանը նշանավոր է նաև իբրև քննադատ ու մամուլի գործիչ։ Նրա հրատարակած ու խմբագրած պարբերականները («Մեղու», «Թատրոն», «Ախկար») իրենց կարևոր տեղն ունեն հայ առաջադիմական մամուլի պատմության մեջ։ Գրողի լավագույն երկերն իրենց արժանիքներով դուրս են եկել ազգային շրջանակներից։ Նրա երգիծաբանությունը հայ ժողովրդի ստեղծագործական հանճարի ու ազնիվ ոգու լավագույն արտահայտություններից է։

Ուքսունական թվականների հայ արձակի նշանավոր դեմքերից է Սրբուճի Տյուսաբը (Վահանյան, 1841—1901)։ Նրա երեք վեպերն էլ («Մայտաս», «Սիրանույշ», «Ակրաքսյա կամ Վարժուհի») նվիրված են կանանց ազատագրման, սիրո և ընտանիքի հարցերին։ Պարոնյանից հետո Տյուսաբն առաջիններից էր, որ քննադատեց «առավել փառասիրության ու վաճառականության խնդիր դարձած բուրժուական ընտանիքը»։ Տյուսաբը, ներշնչված ժուրժ Սանդից, հանդես եկավ իր ժամանակի համար առաջավոր հայացքներով։ Նա իր վեպերում դատապարտում է անսեր, բռնի ու հաշվենկատ ամուսնությունը, որը բարոյազրկում է ընտանիքն ու այն կանդնեցնում քայքայման եզրին։

Իր վեպերի առաջաբաններում կանանց ազատագրման հարցի վերաբերյալ Տյուսաբի սոցիալական խորհրդածություններ համարձակ են ու բովանդակալից։ Կնոջը նա համարում է հասարակական անիրավություններն ու նախապաշարումների զոհը։ Իր վերջին վեպի՝ աղջկան ուղղված «Զոնում» գրում է. «Կոխն աներկյուղ ընկերական նախապաշարմանց վրա»։ Սակայն իր գաղափարների գեղարվեստական մարմնավորման հարցում Տյուսաբն ունի թույլ կողմեր։ Նրա վեպերը, կյանքի ճշմարտացի պատկերներ պարունակելով հանդերձ, ռոմանտիկ-սենտիմենտալ բնույթ ունեն։

70—80-ական թվականների արևելահայ գյուղի կյանքին նվիրված գործերով ժողովրդականություն ձեռք բերեց Պերճ Պռոշյանը (Հովհաննես Տեր-Առաքելյան, 1837—1907)։ Նա հայ գեղարվեստական արձակի մեջ ռեալիզմի սկզբնավորողներից և զարգացնողներից է։ Պռոշյանի ստեղծագործական արժանիքը հայ գյուղական կյանքի խոր և ճշմարտացի արտացոլման՝ մի ամբողջ կոլեկտիվի սոցիալական կյանքը պատկերելու կարողության մեջ է։

Այս բանն առաջին անգամ բացահայտել է հայ մեծ հեղափոխական-դեմոկրատ Նալբանդյանը նրա «Մուս և Վարդիթեր» վեպի կապակցությամբ։ Հետագայում իր մի շարք գործերում Պռոշյանը հանդես բերից նաև առանձին տիպեր կերտելու բարձր կարողություն։

Պռոշյանի գրական հասունության առաջին արգասիքը «Հացի խնդիր» վեպն է, որը ոչ միայն հեղինակի լավագույն ու ամենից շատ ժողովրդականություն ստացած ստեղծագործությունն է, այլև առհասարակ հայ անցյալի արձակ գրականության փայլուն նմուշներից մեկը։ «Հացի խնդիր» գեղարվեստական արժանիքների հետ միասին ուշադրություն է գրավում նաև նրանով, որ բացահայտում է 70—80-ական թվականներին դեմոկրատների և լիբերալների միջև եղած պայքարը, իր մեջ արտացոլում ոչ միայն ժամանակի գյուղական իրականությունը, այլև գյուղացիական դեմոկրատների քաղաքական և սոցիալական տրամադրությունները։



Պետե Պռոշյան

Այն ժամանակ, երբ լիբերալները, զարգացող բուրժուազիայի շահերը նկատի ունենալով, մասնակիորեն էին անդրադառնում Անդրկովկասի հայ գյուղում տիրող սոցիալական անարդարությանը և ցարական ճնշումներին, աշխատավորության տնտեսական վիճակին, Պռոշյանը առաջին հերթին ուշադրության է առնում տնտեսական հարցը՝ «Հացի խնդիրը» և ցույց տալիս թե ինչպես ցարական չինովնիկները գյուղական ցեցերի հետ համերաշխ, կեղեքում են աշխատավոր գյուղացիներին։

Բնորոշ է, որ Պռոշյանի այս և հետագա մի քանի այլ վեպերում գործողությունը տեղի է ունենում Ղրիմի պատերազմի ժամանակաշրջանում։ Պռոշյանը ցնցող պատկերներով ցույց է տալիս պատերազմի ծանր հետևանքներն արևելահայ գյուղում. նա միանգամայն ճիշտ կերպով բացահայտում է այն իրողությունը, որ պատերազմն ավելի է աշխուժացնում ցեցերի և ցարական պաշտոնյաների խժդժություններ։

«Հացի խնդիրից» հետո Պռոշյանը գրեց մի շարք վեպեր, որոնցից լավագույններն են «Ցեցերը», «Բդդեն» և «Հունոն»։ Դրանք իրենց շատ կողմերով նորություն էին բերում և ամբողջացնում ժամանակաշրջանի գյուղի կյանքի պատկերը։

Պռոշյանն ընդհանրապես չի տարվել լիբերալ-նարոդնիկական «գյուղափրկիչ» պատրանքներով։ Գյուղական իրականությունը պատկերելիս նա երբեք գյուղի հասարակությանը չի ներկայացրել սոցիալապես միատարր մի զանգված։ Նա ոչ միայն արտացոլել է դասակարգային շերտավորման պրոցես-

սը գյուղում և հավաստել է ցեցերի-կուլակների բուրժուական էությունը, այլև առաջ է քաշել նրանց վերացման ու ոչնչացման հարցը։ Պռոշյանը նայել է առաջ, դեպի ապագան և գյուղացու կյանքի բարելավումն անջատ չի պատկերացրել հասարակական ընդհանուր զարգացումից։

«Մեր Խեչոն» պատմվածքի (գրված 1892 թ.) հերոսը հեղինակի որակումով, մի «իդեալական ավազակ» է։ Ահա թե ինչպես է Պռոշյանը բնութագրում և ներկայացնում իր հերոսին և նրա գործունեությունը. «Այո, այո, մեր Խեչոն արյուն թափել է, բայց ոչ թե աստվածասեր ու խաղաղասեր ժողովրդի արյունն է թափել. նա ուրիշ տեսակ մարդկանց հոգևառն ու քշնամին էր. ընդհակառակը, աշխատասեր գյուղացիք ու բարի քաղաքացիք միշտ նրան կյանք ու արևշատություն էին խնդրում...



Ղազարոս Աղայան

Որտեղ աղքատի բևեռանից պատառ խլող, շահի շահ առնող ժլատ հայ և թուրք կային, ինչտեղ իրենց ոտհաքին զրկող, նեղացնող կալվածատերեր լինեին... կյանքները լորի պոչի պես կարճանում էր... Մեր Խեչոն իր ձեռքով էր էդպեսներին գնդակախորով անում»[72]։

Պռոշյանի աշխարհայացքի բնորոշ գծերից է «ցեցերի» դեմ ակտիվ պայքարի առաջադրումը, նրանց ֆիզիկապես ոչնչացնելու խրախուսանքը։ Նրա այս հայացքներն իրենց լավագույն արտահայտությունն են գտել «Հունոն» վեպում։

Գյուղացիական դեմոկրատիզմի աչքի ընկնող ներկայացուցիչներից է Ղազարոս Աղայանը *(1840—1911)*։ Աղայանը բազմաժանր գրող է։ Նա խոր հետք թողեց հայ գրականության պատմության մեջ իբրև մանկական գրող։ Նրա տրձակ գործերից նշանավոր է «Ներկու քույր» վեպը, որը լույս է տեսել 1872 թ.։ Սունդուկյանի «Պեպոյի» հետ միասին, Աղայանի այս երկը հայ գրականության այն առաջին նմուշներից է, որոնց մեջ արտացոլվել է պայքարը հասարակության շահագործող և շահագործվող խավերի միջև։ Աղայանի դեմոկրատիզմն իր բարձր դրսևորումն է գտել «Քյոռ-օղլի» ժողովրդական էպոսի առանձին հատվածների մշակումներում արտահայտված տրամադրություններում։ Նա գրում է, որ «Քյոռ-օղլին» գյուղացիներին ոտքի է կանգնեցնում իրենց խաների ու բեգերի դեմ, կոտորում ու կոտորել է տալիս կալվածատերերին ու տերության կապալառուներին և այսպիսով իր կողմն է գրավում

72 Պ. Պռոշյան, Երկերի ժողովածու, հ. 6, Երևան, 1964, էջ 118, 120։

Երկրագործ ժողովրդին։ Կոտորում է հարկահաններին ու հավաքած հարկը բաժանում է չքավոր գյուղացիներին»[73]։

Ազայանի գրական ու հասարակական գործունեությունը ճիշտ է գնահատել Ստ. Շահումյանը։ Ազայանը, գրել է նա, «կյանքում փնտրել է միշտ ճշմարտությունը, և ցանկացել է օգտակար լինել ժողովրդի համար»[74], *«զգալ է տվել մեզ հայրենի բաղդրությունը» և ընթերցողներին տրամադրել է դեպի գործ։*



Դաբրիել Սունդուկյան

70—80-ական թվականների գրականության ամենանշանավոր դեմքերից է Դաբրիել Սունդուկյանը (1825—1912)։ Մեծ է նրա դերը հայ նոր գրականության, առանձնապես դրամատուրգիայի և թատերական արվեստի զարգացման պատմության մեջ։ Սունդուկյանն ստեղծագործական կյանքը սկսել է 1863 թ. «Գիշերվան սաբրը խեր է» մեկ գործողությամբ կատակերգությամբ, երբ արդեն երեսունութ տարեկան էր։ 1871 թ. առաջին անգամ բեմադրվեց նրա գլուխգործոցը՝ «Պեպոն»։ Այդ տարիներին հայ գրականության մեջ դժվար է ցույց տալ մի այնպիսի գործ, որում սոցիալական բախումները և հերոսների կերպարները պատկերված լինեին այդպիսի խորությամբ ու գեղարվեստական կատարելությամբ։

Սունդուկյանի ստեղծագործության հարուստ բովանդակությունը, կյանքի երևույթների ընդգրկման լայնությունն ամենից առաջ պայմանավորում են նրա ճանաչողական ու գեղարվեստական մնայուն արժեքը։ Նա ունեցել է աշխարհայացքի ու գեղարվեստական զարգացման որոշակի ընթացք։ Սկզբում, 60-ական թվականներին, երբ գրում էր մեկ կամ երկու գործողությամբ կատակներ (կոմեդիաներ), նրա կերտած կերպարները դեռ սոցիալական խորություն և մեծ ընդհանրացումներ չունեին։ Բայց շատ չանցած, արդեն 70—80-ական թվականներին նրա ռեալիզմը հասնում է այն բարձրակետին, որ սովորաբար անվանվում է քննադատական ռեալիզմ։ Այդ թվականներին Սունդուկյանը գրում է իր լավագույն երկերը՝ «Պեպո», «Քանդած օջախ» կատակերգությունները, «Վարիճկի վիշտը» պատմվածքը և վերջապես, գեղարվեստական նոր որակի է հասցնում «Էլի մեկ գոհը», «Խաբեբալանը»։ Սունդուկյանի հասարակական ընդգրկումներն առաջին հայացքից կարող են թվալ ոչ այնքան բազմակողմանի, քանի որ նա իր գործերում արծարծում է առօրյա կյանքի հետ կապված հարցեր։ Բայց իրականում ընդանիքի թեման Սունդուկյանի ստեղծագործության մեջ այն կիզակետն է, որը ճշմարտացիորեն

---

73 Ղ. Ազայան. Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1962, էջ 96։

74 Ստ. Շահումյան. Նշվ. հ. 1, էջ 39։

արտացոլում է ժամանակաշրջանի բուրժուական իրականությունը՝ ամբողջության մեջ։

Սունդուկյանի կատակերգությունների խոշորագույն արժանիքներից է և այն, որ իրականության հանդեպ հեղինակի քննադատական վերաբերմունքն արտահայտված է ոչ միայն բացասական, այլև դրական հերոսների կերպարների միջոցով։ Այս հանգամանքը նրա կատակերգությունների մեջ մտցնում է երբեմն հույժ դրամատիկ պահեր («Քանդած օջախ», «Պեպո» և այլն)։ Սունդուկյանի հումանիզմը և նրա քննադատական վերաբերմունքը կյանքի նկատմամբ իրենց ամենացայտուն արտահայտությունն են գտել «Խաթաբալա» և «Պեպո» կատակերգություններում։ Այս պիեսներն իրենց ճանաչողական արժեքով և դրամատիկական արվեստի կատարելությամբ ներկայումս էլ զարդարում են հայ, վրաց և ադրբեջանական թատրոնների բեմերը։ «Պեպոյում» Սունդուկյանի դեմոկրատիզմը հասնում է իր ամենամեծ խորությանը։ Գրիգորի հերոսն ընտրված է բուն աշխատավորությունից։ Չկնորա Պեպոյի կերպարը հայ դասական գրականության ստեղծած ամենահաջողված, ամենաժողովրդական դրական կերպարներից է։

Սունդուկյանն ունի իր գեղագիտական իդեալը. դրամատուրգի առելությունը վատի դեմ և լավի տենչանքը նրա ողջ ստեղծագործության ոգին է։ Թումանյանը ճիշտ է բնութագրել Սունդուկյանին, երբ նրան անվանել է Մեծ Պեպո, որը վարում է «իր ազնիվ կոիվը ոչ թե մուրհակի համար, այլ ճշմարտության համար, արդարության համար»։ Անշուշտ, Սունդուկյանն ինքն էլ իրեն այդպես է հասկացել ու գնահատել, երբ «Իմ մահն ու թաղումը» վերնագրված կտակում գրել է. «Թե սրտով վրես արձան իք ուզում ու արժանի կաս համարիք, էդ արձանը Պեպոյի համա կանգնեցրեք, վուրդի որ կու սազ գա»։

Հայ գրականությունը XIX դարի 90-ական թվականներին։ *1880-ական* թվականների կեսերից հայ իրականության մեջ բուն թափով սկսում է զարգանալ ռեալիստական արձակը, որն արդեն 90-ական թվականներին հասարակական մեծ կշիռ է ստանում։ Արևելահայ գրականության մեջ խոշոր նորարարներ Շիրվանզադեի, Վ. Փափազյանի ու Նար-Դոսի ստեղծագործական բեղմնավոր կյանքը շարունակվեց և 900-ական թվականներին, նույն ժամանակամիջոցում իր ստեղծագործության ծաղկման շրջանն ապրեց նաև ռոմանտիկ Մուրացանը։ Արևմտահայ հատվածում ռեալիստական արձակի նշանավոր դեմքերից էին Արփիար Արփիարյանը, Տիգրան Կամսարականը, Գրիգոր Զոհրապը, Թլկատինցին, Ռուբեն Զարդարյանը, Լևոն Բաշալյանը, Երուխանը, Երվանդ Օտյանը և ուրիշներ։ Արևմտահայ արձակի համար բնորոշ է այն, որ այնուամենայնիվ վեպն այստեղ առաջատար տեղ չբռնեց։ Ժամանային իմաստով առաջնությունը հաստատապես նվաճեցին նովելը և պատմվածքը։ Բավական մեծ քիվ կազմող արևմտահայ նովելիստների շարքում առանձնապես վեր բարձրացավ Գրիգոր Զոհրապը։

Բանվորական շարժման սկզբնավորումը ու գիտական սոցիալիզմի գաղափարների տարածումը հայ իրականության մեջ առաջ բերեցին հասարակական կյանքի այնպիսի հրատապ հարցեր, որոնք պայմանավորեցին ռեալիստական գրականության զարգացումը և կարևորությունը։ Իր ժամանակին Բալշակը, հենվելով բնագիտության նվաճումների վրա, եկավ այն եզրակացության, որ «Հասարակությունը մարդուն ստեղծում է համաձայն նրա միջա-

վայրի, ուր նա գործում է...» և որ «ոչ միայն մարդիկ, այլև գլխավորապես իրադարձությունները ձուլվում են տիպական կերպարներում, գոյություն ունեն դրությյուններ, որոնք հանդիպում են ամեն մի մարդու կյանքում, դրանք կյանքի տիպական փուլերն են. հենց դրանց ուրվագծման մեջ ես ձգտել եմ, որքան կարելի է, ավելի ճշգրիտ լինել»[75]։ Հայտնի է Էնգելսի՝ ռեալիզմի դասականի սահմանումը, թե «ռեալիզմը ենթադրում է բացի մանրամասների ճշմարտությունից, տիպական խարակտերները տիպական հանգամանքների մեջ տալու ճշտությունը»[76]։

Հայ ռեալիստական գրականության առաջատար դեմքերը, սկսած Միքայել Նալբանդյանից, մեծ ուշադրություն էին դարձնում սոցիալական միջավայրի ու մարդու փոխհարաբերության վրա։ Այժմ՝ 90-ական թվականներին «կյանքի տիպական փուլերն» ավելի ու ավելի խոր արտացոլում են գտնում գրականության մեջ։ Գրողներին մեծապես հուզում են հասարակության սոցիալական բախումները և դրա հետ կապված՝ հասարակության առաջընթացի ու ապագայի հարցերը։

Հայ գրականության մեջ ռեալիզմի խոշորագույն դեմքը հանդիսացավ Ալիքսանդր Շիրվանզադեն։ 90-ական թվականներին և հետո, բուրժուական հարաբերությունների ու դասակարգային պայքարի խորացման պայմաններում հայ առաջավոր գրողներին առանձնապես գրաղեցնում են սոցիալական թեմաները։ Նրանց դեմոկրատիզմից բխող քննադատությունն իր բովանդակության տարբեր երանգներով, բնականաբար, պետք է ուղղվեր շահագործողների դեմ. բնորոշ են դառնում այնպիսի սյուժեներ, որոնց մեջ հակադրվում են հասարակական տարբեր խավեր ներկայացնող հերոսները։

Ավելի է ուժեղանում գյուղացիական տնտեսությունների քայքայումը։ Դրա հետ կապված առաջանում է ռոմանտիզմի մի նոր ուղղություն, որի խոշորագույն ներկայացուցիչը Հանդիսացավ Մուրացանը։ Նա իրավացիորեն քննադատելով բուրժուական հասարակության հոռի կողմերը, ընդհանրապես ժխտում էր խոշոր քաղաքային կենտրոններում առաջացած լուսավորության նշանակությունը։ Մինչդեռ Շիրվանզադեն, որն ամենից ավելի բազմակողմանիորեն է մերկացրել ու քննադատել կապիտալիզմի արատները, դրա հետ միասին ճշմարտացիորեն ընկալել և գեղարվեստորեն արտացոլել է այն, որ բուրժուական հարաբերությունների պայմաններում քաղաքային խոշոր արդյունաբերական կենտրոններում է կուտակվում հասարակական առաջընթացի պատմական ուժը։ Դա է Շիրվանզադեի ռեալիզմի հիմքերի հիմքը։

Մեծ է Շիրվանզադեի (Ալեքսանդր Մովսիսյան, 1856—1935) ավելի քան կես դարյա ստեղծագործության դերը հայ գրականության զարգացման գործում։ Շիրվանզադեն շարունակեց ու զարգացրեց Րաֆֆու և Սունդուկյանի լավագույն ավանդույթները։ Նա, յուրացնելով Տոլստոյի ու Բալզակի ստեղծագործական փորձը, իր ինքնատիպ գործերով հարստացրեց հայ գրականությունը։ Շիրվանզադեի ստեղծագործության գեղարվեստական ու հասարակական մեծ արժանիքը պայմանավորված է նրանով, որ հավատարիմ իր

---

75 Բալզակ. Երկեր, հ. 1, Երևան 1956, էջ 64։

76 «Մարքսը և Էնգելսը արվեստի մասին», Երևան, 1934, էջ 259։

սկզբունքին, քե գեղեցկությունը չի կարելի կյանքից դուրս փնտրել, նա կապվեց ժողովրդի հետ, ձգտեց թափանցել կյանքի խորքերը։ «Միայն այն երկերն են դիմացել ժամանակի կործանիչ ազդեցությանը, որոնք կարելուն չափ խորն են թափանցել կյանքը»,— ճիշտ կերպով նկատել է նա մի առիթով, աչքի առաջ ունենալով հայ և համաշխարհային գրականության պատմությունը։ Շիրվանզադեի լավագույն ստեղծագործությունները՝ «Նամուսը», «Արտիստը», «Քառասը», «Պատվի համարը», անշուշտ, պատկանում են այդպիսի երկերի թվին։



Ալեքսանդր Շիրվանզադե

Առանձնապես գնահատելի է, որ Շիրվանզադեն հետևողականորեն պաշտպանեց քննադատական ռեալիզմի մեթոդը մի այնպիսի ժամանակաշրջանում, երբ արևմտաեվրոպական իրականության մեջ մեկը մյուսի հետևից հրապարակ էին գալիս և մոդայական դառնում սիմվոլիզմի ու ֆուտուրիզմի նման անկումային գրական հոսանքները։ Նա չտարվեց դրանցից և ոչ մեկով, ցույց տալով, որ միայն ճշմարտությունից և կյանքից վախեցող, անհեռանկար գրողներն ու արվեստագետներն են մերժում ռեալիզմը։ Ռեալիզմը պաշտպանելով, Շիրվանզադեն համարձակորեն գնաց գլուխ կյանք, բազմակողմանիորեն արտացոլեց բուրժուական հասարակության մեջ տեղի ունեցող երևույթները և արտահայտեց դրանց նկատմամբ աշխատավորական զանգվածներում առաջացած խիստ քննադատական տրամադրությունները։ Սա էլ պայմանավորում է նրա ստեղծագործության ճանաչողական ու գեղարվեստական խոշոր արժեքը։

Շիրվանզադեն առհասարակ նորարար հանդիսացավ ժամանակի հուզող սոցիալական խնդիրների լայն ընդգրկումով։ Կոնկրետ գրվագներում խոր ընդհանրացումներ կատարելով, նա կյանքի ավյալ բնագավառը պատկերելիս միշտ գտնում և ցույց էր տալիս էականն ու հատկանշականը, հերոսների գործունեությունը պայմանավորող ուժը։

Գրողի ստեղծագործության լավագույն կողմերն իրենց ցայտուն արտահայտությունը գտան նրա առաջին իսկ գործերից մեկում՝ «Նամուս» վեպում։ Հասարակական զարգացման դիրքերում կանգնած հեղինակն իր այս, ինչպես և «Ֆաթման ու Ասադը» և «Ջար ոգին» երկերում քննադատության է ենթարկում գավառական կյանքի հետամնացությունը, ցույց տալով, թե ինչպես հոգեկան գեղեցիկ գծերով օժտված շատ անմեղ ու ազնիվ մարդիկ զոհ են գնում դրան։

Հեղինակի գլուխգործոցներն են «Քառաս» վեպը և «Պատվի համար» դրա-

ման, որոնց մեջ պատկերված է մեծ քաղաքի կյանքը։ «Քաոսն» իր բովանդակության հարստությամբ, կյանքի բազմակողմանի ընդգրկումով գեղարվեստական ամբողջական մի գործ է, որտեղ ամենաբնորոշ և էական գծերով պատկերված է բուրժուական աշխարհի քաոսը։

Շիրվանզադեի ստեղծագործությունների գեղարվեստական և ճանաչողական արժեքի ցուցանիշն այն է, որ նրա լավագույն երկերը մարմնավորում են հայ հասարակության անցյալի մի ամբողջ ժամանակաշրջան։ Դա այն ժամանակաշրջանն է, երբ կապիտալիստները ոչ մի միջոցի առաջ կանգ չառնելով և անլուր շահագործման ենթարկելով բանվորությանը, ձգտում էին դառնալ «նավթային թագավորներ» կամ «հզոր ֆինանսական սյուներ», երբ նրանց դեմ կուտակվում էր աշխատավորության զայրույթն ու դասակարգային ատելությունը։

Շիրվանզադեն հասարակական կյանքի երևույթները հաճախ մարմնավորել է ժամանակի բուրժուական ընտանիքի հարաբերությունների նկարագրի մեջ։ Այս իմաստով նրա «Արամբին», «Մեյանիա» արձակ գործերը կամ «Եվգինեն», «Ուներ իրավունք», «Արմենուհի» դրամաները միայն կենցաղին ու բարոյականությանը վերաբերող ստեղծագործություններ չեն։ Դրանց սյուժեները յուրահատուկ ձևով նույնպես արտացոլում են սոցիալական իրականության արատավոր կողմերն ու դրանց հակառակ՝ հեղինակի դրական պատկերացումները։ Շիրվանզադեի ստեղծագործության մեջ կարևոր տեղ է գրավում կանանց ազատագրման հարցը։ Հակառակ լիբերալ քննադատության դատարկ շաղակրատանքներին ու հարձակումներին, նա երբեք չսքողեց բուրժուական ընտանիքի բարոյական անկման փաստը, որը կնոջ ու տղամարդու նյութական և իրավական անհավասար վիճակի հետևանքն էր։

Հեղինակի ստեղծագործության նշանավոր գծերից մեկն էլ լիբերալիզմի դեմ ուղղված պայքարն է։ «Արսեն Դիմաքսյան» վեպում, «Կրակը», «Ընկերներ» և այլ պատմվածքներում հանձինս բացասական հերոսների հայրենասեր գրողը մերկացնում է բուրժուական մտավորականության կոսմոպոլիտիզմը և խոսքի ու գործի հակասությունը, անձնական շահերի համար ամենաստոր գործարքների դիմելը։ Հեղինակը սովորաբար նրանց անվանում է «կրթված բարբարոսներ», որոնք պատրաստ են «ուտելու իրենց հակառակորդների ոչ միայն միսը, այլև հոգին»։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից և Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո Շիրվանզադեն լիովին ըմբռնեց կապիտալիստական աշխարհի դատապարտվածությունը և գրեց «Մորգանի խնամին» կատակերգությունը։ 1926 թ. նա արտասահմանից վերադարձավ հայրենիք և եռանդուն մասնակցություն ցուցաբերեց Հայաստանի գրական-հասարակական կյանքին։

1890-ական թվականներին հրապարակախոսության և գեղարվեստական գրականության մեջ աննախընթաց չափերով արծարծվում է գյուղի թեման։ Հանդես են գալիս մի շարք գրողներ, որոնք բացառապես պատկերում են գյուղի և գյուղացիության ծանր վիճակը։ Նրանց մեջ առավել հայտնի դեմքեր դարձան Արշակ Ագայանը, Ազարյա Աղելյանը, Բաբկենցը, Հարություն Ճուղուրյանը։ Այս գրողները, որոնց հայ գրականագիտության մեջ ընդունված է անվանել գյուղագիրներ, իրենց հայացքներով բավական տարբերվում են։ Եթե մի կողմից հանդիպում են իրականության սենտիմենտալ քննադատու-

թյան՝ առավելապես նարոդնիկական հակումների ներկայացուցիչներ (Աղեյան), ապա մյուս կողմից երևան են գալիս նարոդնիկական պատկերացումների հակառակորդներ (Բաբկենց)։ Գյուղագիրները գյուղացիության կյանքը պատկերելիս մնացին ավելի կոնկրետի (առանձնակիի) շրջանակներում և չկարողացան խոր ընդհանրացումներ կատարել և ստեղծել հասարակականորեն բնորոշ տիպական կերպարներ։



Մուրացան (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան)

Սակայն մանրբուրժուական «գյուղափրկիչ» ուտոպիական պատկերացումների առաջին և ամենահետևողական ներկայացուցիչը հայ արձակի խոշորագույն դասականներից մեկը՝ **Մուրացանն** է (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան, 1851—1908)։ Նրա ուտոպիան հանրածանոթ է «Խորհրդավոր միանձնուհի» և «Առաքյալ» վեպերից։ Գյուղում լուսավորության տարածում, գյուղական հասարակության իրավունքների պաշտպանություն, փոխատու գանձարան, հասարակաց շտեմարան, հասարակաց նախիր. ահա այն հիմնական հարցերը, որոնց իրականացումով պետք է երկնային արքայությունն իջներ երկիր։

Թեպետ Մուրացանի երկերը հարուստ են գյուղի հետամնացության և գյուղացիության ծանր վիճակի ճըշմարտացի պատկերներով, որոնք և պայմանավորում են նրանց գեղարվեստական արժեքը, բայց միևնույն է. Մուրացանը ռոմանտիկ է, որովհետև գտնում է ու այդպես էլ պատկերում է, թե բոլոր գյուղացիները բարի և աշխատասեր մարդիկ են, ու ոչ որի չեն շահագործում, այլ անուսում ու տգետ լինելու հետևանքով անզոր են չարիքների հանդեպ ու կեղեքման են ենթարկվում դրսից եկած չար և խարդախ մարդկանց կողմից։ Այսպիսով, Մուրացանը, ըստ էության, նարոդնիկների նման տարվում է այն պատրանքով, որ գյուղացիությունը միատարր աշխատավորների մի զանգված է, դասակարգային շերտավորում չկա նրանց մեջ, ուստի նրանց գժբախտությունը գալիս է դրսից, հետևաբար բարի մարդկանց օգնությամբ, առանձին անձնազոհ գործիչների ջանքերով հեշտությամբ կարելի է չարը հալածել գյուղից։ Գյուղի առավել ճշմարտացի պատկերը գծող երկերում անգամ գոյություն չունեն բղեներ, միկիտան սաքոներ և բալասան աղաներ, այսինքն՝ այնպիսի ցեցեր, որոնք առաջացել են հենց իրենց գյուղացիների միջից։ Ամենացայտուն ցեցի կերպարը, որ ստեղծել է Մուրացանը, խոջա Միրզան է, բայց նա հենց դրսից գյուղացիների կյանքին կառչած խարդախ մարդկանցից է։

Գյուղի քայքայումը կանխելու խնդիրը մտահոգել է Մուրացանին ո՛չ միայն սոցիալական առումով։ Դա կապված է նաև նրա քաղաքական համոզ-

մունքների, նրա հայրենասիրության հետ։ Նշանավոր արձակագիրն այն տեսակետն ուներ, որ ժողովրդի, ազգության, ինչպես և հայրենիքի պահպանման հիմքը կազմում է գյուղացիությունը։ Գյուղացիության տնտեսական քայքայման ու գյուղից հեռանալու մեջ նա տեսնում էր ազգության վերացման վտանգ։ Նա, ներքին սուր բանավեճի մեջ գտնվելով Շիրվանզադեի հետ, այդպիսի վտանգ տեսնում էր նաև ընտանիքի քայքայման երևույթի մեջ, ուստի իր հռչակավոր «Գևորգ Մարզպետունի» վեպի բովանդակության հիմնական կողմերից մեկը դարձրեց ընտանիքն ամուր պահելու անհրաժեշտության գաղափարը։

Այս բոլորից բխում է Մուրացանի սուր քննադատական վերաբերմունքը դեպի բուրժուական մեծ քաղաքը, նրա, իբրև «լուսավորության կենտրոնի» Ճիտումը։ Քաղաքի կյանքի պատկերը նույնպես կարևոր տեղ է բռնում Մուրացանի ստեղծագործության մեջ, որը նա սովորաբար ներկայացնում է երգիծաբանորեն։ Առհասարակ հեղինակն օժտված էր երգիծաբանի խոշոր տաղանդով։ Նա իր գործերում օգտագործել է և՛ հումորը՝ մեծ մասամբ անզարգացած հոգևորականության նկատմամբ, և՛ ոչնչացնող սատիրան՝ մեծ մասամբ «լուսավորության կենտրոնի», ինչպես և գավառական կենտրոնների լիբերալ մտավորականության ու բուրժուազիայի ներկայացուցիչների վերաբերմամբ։

Մուրացանն ընդհանրապես լայն ընդգրկումների խոշոր գեղագետ է։ Իբրև պատմավիպասան նա հիացմունք է պատճառում իր հերոսների ներքնաշխարհի հարուստ բովանդակավորմամբ, հոգեբանական խոր դիտողություններով, պատմականության զգացողությամբ և գործողության ուժգին ծավալումով։ Նա մեծ վարպետ է գեղարվեստական զանազան հնարանքների կուտակման մեջ և այդ տեսակետից առանձնապես ցնցող տպավորություն են թողնում հայ գյուղի հետամնացության և գյուղացիության անօգնական վիճակի պատկերները։

Գյուղի և գյուղացիության դրության բարվոքման հարցում Մուրացանին հակառակ դիրքերում էր կանգնած **Վրթանես Փափազյանը** *(1866—1920)*։ Փափազյանի ստեղծագործության առանձնահատուկ տեղը հայ գրականության պատմության մեջ բնորոշվում է նրանով, որ նա արտացոլում է գյուղացիության մեջ, մանավանդ 1905 թ. նախօրյակին, առաջացած հեղափոխական տրամադրությունները։

Դեռ իր «Պատկերներ Թուրքահայերի կյանքից» պատմվածքների շարքում, Փափազյանն առավել ուշադրություն է առնում արևմտահայ գյուղի ներքին կյանքում առաջացած սոցիալական պայքարի երևույթները։ «Ենիչերի», «Լալո», «Ճգնավոր Եղոն», «Շահնա» և այլ պատմվածքներում նա ներկայացնում է սուլթանական տիրապետության տակ հայության ապրած սարսափները և տեղական ցեցերի անմարդկային, դաժան վերաբերմունքն իրենց ցանցն ընկած աշխատավոր մարդկանց նկատմամբ։ Փափազյանն այդ գործերում խրախուսում է կեղեքիչների դեմ ուղղված անհատական ըմբոստացումները և արտահայտում նրանց ֆիզիկապես ոչնչացնելու գաղափարը։ Բայց արդեն 1905 թ. հեղափոխության շրջանում նրա աշխարհայացքը զարգանում է ապրում։ Փափազյանն ուղղակիորեն գալիս է այն համոզման, որ առանձին անհատների գործունեությունը չի կարող վերացնել բռնությունն ու շահագործումը. դրա համար պետք է գյուղացիական զանգվածները ոտքի ելնեն։

1904—1906 ԹԹ. գրված «Պատկերներ գյուղից» գեղարվեստական ակնարկներում, որոնք առանձին գրքով լույս տեսան 1913 թ., Փափազյանը պատկերում է արդեն արևելահայ գյուղի կյանքը՝ հիմնովին հակադրվելով նարոդնիկական հայացքների տեր գրողներին։ Այս ակնարկաշարում միանգամայն ռեալիստորեն է արտացոլված հայ գյուղի կյանքը։ Հեղինակը, առանց որևէ հովվերգականության, վեր է հանում ցարական կարգերում և կապիտալիզմի ներթափանցման պայմաններում գյուղում առաջացած հոռի երևույթները։ Փափազյանի նկարագրած բոլոր գյուղացիները միանման անմեղ հրեշտակներ չեն, ինչպես Մուրացանի մոտ, նրանց մեջ սահմանադատվել են արդեն վատերը և լավերը։

Ինչպես այս գործում, այնպես էլ «Զրույցներ» ընդհանուր վերնագրով լույս տեսած ստեղծագործություններում որոշակի են Փափազյանի հակացարական հայացքները։ Ցարիզմը, որը նա ոչ միայն «ժայռը» դրամայում, այլև ուրիշ գնդերում էլ սովորաբար ներկայացնում է «ժայռի» սիմվոլով, համարում է հիմնական չարիքը։ Ցարական պաշտոնյաները հովանավորում են ցեցերին, ուստի առանձին, թեկուզև լիովին անձնազոհ անհատներ չեն կարող գյուղը վերափոխել։ Նրա կարծիքով, կարևորը ցարիզմի վերացման հարցը է, իսկ այդ հնարավոր է միայն ընդհանուրի պայքարով։ Այս տեսակետը պարզորոշ արտահայտված է «Մերմնացան», «Հողի աշխատավորը», «Զորագլխին» պատկերներում, «Սիրն ու ապառաժը», «Առվակը» ու շատ այլ գրույցներում։

Փափազյանը հատկորեն չհասավ սոցիալիստական հեղափոխության գիտակցականության և լիովին չըմբռնեց բանվոր դասակարգի դերը հեղափոխության մեջ, թեպետ դրա որոշ նշաններ երևում են, օրինակ, «Վիշապը» գրույցում, բայց փաստ է այն, որ 1905—1907 ԹԹ. հեղափոխության պարտությունից հետո, ունակցիայի տարիներին, նա չկորցրեց հավատար դեպի ապագան, որը նա գեղարվեստորեն մարմնավորել է իր լավագույն գործերից մեկում՝ «Ծովափին» պատմվածքում։

Փափազյանը հայ գրականության պատմության մեջ աչքի ընկնող դեր է կատարել ոչ միայն իր երկերի գաղափարական բովանդակությամբ, այլև նրանց գեղարվեստական արժանիքներով։ Փափազյանի ծառայություններից է և այն, որ նա գրականության մեջ ներմուծեց գեղարվեստական ակնարկի և գրույցի ժանրերը։

Իր հայացքների մի քանի կողմերով Մուրացանին հոգեկից է ռեալիստ Նար-Դոսը (Միքայել Հովհաննիսյան, 1867—1933)։ Նա մերժել է Զոլայի նատուրալիստական ուղղությունը, պաշտպանելով այն առողջ տեսակետը, որ գրականությունը ոչ միայն կյանքի հայելին է, այլև կյանքի դպրոցը։ Նար-Դոսը նատուրալիզմը քննադատում է նրան հատուկ օբյեկտիվիզմի համար, գտնելով, որ այդ գրական մեթոդը ցույց է տալիս միայն մարդկանց ճակատին քրտած մուրը, բայց ցույց չի տալիս այդ մուրը սրբելու միջոցները, մինչդեռ դա գրականության հիմնական հարցերից մեկն է։ Այնուհետև Նար-Դոսը հանգես է գալիս գրականության նշանակությունն ըմբռնման այն լավագույն կողմով, որ առաջադրում է ընթերցողին բուրժուական եսականությունից ու ապականությունից վեր պահելու և հասարակականորեն դրական ոգով դաստիարակելու նպատակով՝ դրական հերոսներ ստեղծելու պահանջը։

Հեղինակի ողջ ստեղծագործության համար բնորոշ է քննադատական վե-

բարերմունքը դեպի բուրժուական իրականությունը։ Նա մեծ մասամբ իր գրվածքների հերոսներ ընտրելով մտավորականության տարբեր խավերին պատկանող մարդկանց, ստեղծել է բացասական կերպարների մի շարք, որով մերկացրել և քննադատել է անկումայնությունը, բուրժուական բարոյախոսության անբավականությունը։

«Մահը» վեպը, երբ 1894 թ. սկսեց մաս-մաս տպագրվել «Նոր դարում», ուներ «Մեծ գործի սկզբում» խորագիրը։ «Մեծ գործ» խորագրի մեջ Նար-Դոսը բովանդակավորում էր և՛ սոցիալական, և՛ քաղաքական իմաստ։ Սոցիալականն այն էր, որ նա առաջ էր բաշխում գյուղացու տնտեսական գրության բարվոքման հարցը և դրա համար մտավորականությանը, իբրև գործունեության ասպարեզի, Մուրացանի նման մատնացույց էր անում գյուղական աշխարհը։ Սրա հետ էլ կապվում է հերոսների գրականության նրա չափանիշը՝ «Սեփական ես ուրիշի բարիքին զոհաբերելու» կարողությունը, որը և նա համարում է «մարդու գոյության բուն նպատակը և նրա իսկական երջանկության գրավականը»։ Իսկ «Մեծ գործի» մյուս՝ քաղաքական կողմը, արևմտահայության ազատագրման հարցն էր։

Նար-Դոսը պատկանում է անցյալի հայ այն գրողների թվին, որոնք իրենց ստեղծագործություններ համակել են հայրենասիրական ազնիվ ոգով և չերմ սիրով դեպի աշխատավորություններ։ Մա գրողի իշխող արժանիքներից էր խոստ հակաճակատը հենվելով հոռետեսական աշխարհայեցողությանը, նա սիրում է գործունեության հանդեպ լեցուն, լավատես հերոսներին հակադրել հոռետեսներին, վերջիններիս ժխտելու իմաստով։ Բայց միաժամանակ չի կարելի չնշել, որ նա չկարողացավ «Մեծ գործին» նվիրված գրական հերոսի դիալեկտիկան հաջողված կերպարներ ստեղծել։ Այս հանգամանքը, սակայն, քիչ է անդրադառնում հեղինակի ստեղծագործության գեղարվեստական բարձր արժանիքների վրա։ Նար-Դոսի ռեալիզմը բնորոշող, նրա ստեղծագործության մեջ հիմնականը բուրժուական իրականության քննադատությունն է, այդ իրականության ծնած սոցիալական երևույթների՝ այլանդակ բարքերի ու մարդկային բացասական բնավորությունների քննադատությունը։ Այստեղ էլ գրսևորվել է նրա մեծ տաղանդը, նրա ստեղծագործական ինքնատիպությունը։ Նար-Դոսը հոգեբանական խոր դիտողություններ կատարելու իր կարողության շնորհիվ կերտել է բուրժուական անկումայնության դրոշմը մի շարք այնպիսի կերպարներում (Քուշյան, Բաղեշյան, Շահյան և այլն), որոնք բարձրանում են տիպականության աստիճանին։

«Մեր Բաղը» պատմվածաշարքում գրողը իր ստեղծագործություններին նյութ է դարձրել նաև մեծ քաղաքի ծայրամասերի կյանքը, այնտեղ ապրող մի ամբողջ խավի ծանր վիճակը, ծուռումուռ կեղտոտ փողոցները, փլչելու ենթակա՝ խոնավ ու ցուրտ խրճիթները։ Բաղի մարդկի աղքատության ու կյանքի զրկանքների պայմաններում դարձել են սնահավատներ, հարբեցողներ, խաղամոլներ։ Թշվառությունն առանձնապես ծանրացած է կանանց ուսին, անասնական բթության հասած ամուսիններ նրանց, ինչպես և իրենց երեխաներին ոչնչով չեն օգնում։ Պատմվածքների այս շարքի գեղարվեստական արժեքը պայմանավորում է այն, որ հեղինակը հոգեբանական ընդհանրացումներով ստեղծել է «Բաղի» մարդկանց տիպական կերպարները։ Նրանց բարոյական աշխարհի աղճատման ու աղքատացման պատճառը նա տեսնում է ժամանակի հասարակական պայմանների մեջ։ Ուստի շատ բնական է, որ

Հեղինակը իր նշանավոր վեպերում («Պայքար», «Մահը») երգիծում և սուր քննադատության է ենթարկում բուրժուական կարգերը սրբագործող լիբերալներին, բացահայտելով նրանց խոսքի ու գործի հակասությունը։

Նար-Դոսը առանձին մասնակցություն ցուցաբերից սովետական գրական կյանքին։ Նա գրեց մի քանի արժեքավոր պատմվածքներ («Անհետ կորածը», «Վերջին մոհիկաններ»), բայց «Նոր մարդը» վեպը մնաց անավարտ։

Արևմտահայ արձակի զարգացումը շատ բանով կապված է Ահրիար Ահրիարյանի (1862—1908) անվան հետ։ Նա ռեալիզմի համոզված ջատագովն էր և իր քննադատական հոդվածներով ու գեղարվեստական ստեղծագործությամբ, ինչպես և մամուլում վարած գրական քաղաքականությամբ մեծապես խթանում էր ռեալիզմի հետևորդներին։ Նրա «Կյանքի պատկերներ» ընդհանուր վերնագրի տակ հրապարակված պատմվածքները, որոշ իմաստով կրում էին ուսուցողական բնույթ, այսինքն նրանց հեղինակը դրանց միջոցով ցուցադրում էր ռեալիզմի իր ըմբռնման սկզբունքները։ Հեղինակի այդ շարքի գործերից շատերն ժամանակի գեղարվեստական բարձր արժանիքներով։ Առանձնապես հիշատակելի են «Ապուշը», «Հաճույքի համար», «Դեղատանուհին», «Դատապարտյալը» պատմվածքները։

Ահրիարյանի «Կյանքի պատկերներ» շարքի, ինչպես և դրանից դուրս՝ «Մինչև երբ» և «Ոսկի ապարանջան» պատմվածքների սյուժեների համար բնորոշ է այն, որ նրանց զարգացման հիմքում ընկած է սոցիալական կոնֆլիկտը։ Նա սիրում է ընտրել հերոսներ հասարակության հարուստ և աշխատավոր խավերից ու հակադրել նրանց։ Ահրիարյանի համակրանքն աշխատավոր մարդկանց կողմն է։ Գրողը մերկացնում է ժամանակի հասարակության մեջ տիրող դասակարգային խտրականությունը, հարուստների վայրի բարքերն ու հոգեբանության դաժան գծերը, արհամարհական վերաբերմունքն աշխատավոր ազնիվ մարդկանց նկատմամբ։ Հեղինակը քնկետ իր վերջին գրվածքներում ակնարկում է, որ հասարակության չարիքների պատճառը «կապիտալի իշխանությունն» է ու երազում է նրա վերացման մասին, բայց ժամանակաշրջանի կյանքի բացասական երևույթների դեմ ուղղված նրա քննադատությունը, այնուամենայնիվ, հիմնականում սենտիմենտալ բնույթ ունի, որովհետև նա պատկերում է կապիտալի զոհերին, քշվառներին ու կործանվածներին, բայց կապիտալիզմի դեմ պայքարող հերոսներ չեն երևում նրա ստեղծագործություններում։

Իբրև ստեղծագործող Ահրիարյանը ժամանակին լայն ճանաչում գտավ իր «Կարմիր ժամուց» վիպակով, որում արծարծում էր արևմտահայության ազատագրման հարցը։

Արևմտահայ արձակի նշանավոր դեմքերից է և Տիգրան Կամսարականը (1866—1941)։ Նրա «Վարժապետին աղջիկը» վիպը ժամանակին բարձր է գնահատել Շիրվանզադեն։

Կյանքի արտացոլման ճշմարտացի պատկերներ հաճախ հանդիպում են նաև արևմտահայ այն նովելիստների մոտ, որոնք իբրև նորություն գրականության մեջ մտցրին գյուղական կամ, ինչպես իրենք են անվանում, գավառական թեման։ Այս թեմայով ստեղծագործող գրողների թվում առավել նշանավորներն են Թլկատինցին (Հովհաննես Հարությունյան, 1863—1915) և Ռուբեն Զարդարյանը (1874—1915)։

Գավառի կյանքը պատկերող նովելիստները, անշուշտ, քարմ հոսանք

մտցրին գրականության մեջ, սակայն գյուղի հետ կապված սոցիալական հարցերն այնքան էլ չեն գրաղեցրել նրանց։ Կարևորը նրանց համար ավելի հայրենի աշխարհի գաղափարն է, ուշադրությունը այն մարդկանց նկատմամբ, որոնք ներկայացնում են այդ աշխարհը։ Այսպես, Թլկատինցու նովելներում և պատմվածքներում շատ քիչ են հանդիպում գյուղացիության ներսում սոցիալական նույնիսկ թեթև բախումների պատկերներ։ Նրան ավելի հուզում են գյուղի կենցաղի հովվերգական կողմերը («Փշուր մը հինէն», «Տանիքին աղչիկը», «Պիծակներուն ձայները» և այլն)։ Դրա համար էլ նրա գործերը սովորաբար քիչ քի շատ կարևոր սյուժեներից զուրկ են և գերազանցապես նկարագրական բնույթ ունեն։ Հեղինակը ձգտում է մոռացումից փրկել ու հետագա սերունդներին թողնել կենցաղի ու սովորույթների վերացող, ափսոսանքի արժանի երևույթները։ Թլկատինցին թողել է նաև մի քանի դրամատիկական գործեր, որոնց վրա նկատելի է Սունդուկյանի ազդեցությունը։

Ռուբեն Զարդարյանի ստեղծագործությունները խորհրդատ են, պատկերներն ավելի հուզական ու տպավորիչ։ «Ճեղին զավակը» նովելի հերոսը, կյանքից մերժված գյուղացի մի պատանի, անտերունչ մնալով հեռացել է գյուղից, գնացել Խարբերդ հաց մուրալու, սակայն պահպանել է հայ մարդու արժանապատվությունը։ Երբ 1895 թ. ջարդերի ժամանակ քաղաքի բնակիչներն իրենց կյանքը փրկելու համար զանգվածաբար մահմեդականություն են ընդունում, միայն այդ պատանին է հրաժարվում կրոնափոխ լինել և գնդակահարվում է։ Առհասարակ Զարդարյանի գործերը հարուստ են դրամատիկ, հոգեբանորեն հարուստ դրվագներով։ Այդպիսիներից են «Տան սերը» և «Սև հավը կանչեց» պատմվածքները։

Հայ նովելի ժանրի մեծագույն վարպետի՝ Գրիգոր Զոհրապի *(1861—1915)* ստեղծագործության գեղարվեստական մեծությունը պայմանավորված է հինգերկ կատարած քե՛ սոցիալական ընդհանրացումներով, քե՛ հերոսների հոգեբանական ինքնատիպ, նուրբ ու գեղեցիկ վիճակների հարատությամբ։ Զոհրապն իր ոչ մեծաքանակ նովելների գրալի մասը հրատարակել է երեք ժողովածուներով՝ «Խղճմտանքի ձայներ», «Կյանքն ինչպես որ է» և «Լուռ ցավեր»։ Այս խոսուն վերնագրերն արդեն հուշում են այդ ժողովածուներում ամփոփված նովելների բովանդակության ընդհանուր գծերը։ Երկրորդ ժողովածուի վերնագրով հեղինակը ցանկացել է ընդգծել իր ուսուիզմը։ Իրարկե, կյանքն ինչպես որ կա իր բոլոր կողմերով ու երևույթներով նա չի ընդգրկել։ Նա ունի իր նախընտրելի սյուժեները և հերոսների աշխարհը։ Նրա հաջողված գործերից են «Թեֆարիկ» և «Փոստալ» նովելները, որոնց հերոսուհիները հարուստների կամայականություններին զոհ գնացող ազախիններն են։ Իրենց սոցիալական շեշտվածությամբ սրանք ակնհայտ են դարձնում հեղինակի համակրանքներն ու հակակրանքները։ Բայց Զոհրապի մեծությունը և նրա բերած նորությունները ի հայտ են գալիս առավելապես սիրո թեմային ու հոգեբանությանը նվիրված նովելներում, որոնց մեջ էլ հիմնականում դրսևորվել են նրա գեղագիտական իդեալը և հասարակական առաջավոր տրամադրությունները։

Ժամանակի հասարակության մեջ բաղձալիության վարքն ու բարքը, մարդկանց հարաբերության մեջ «պայմանագրական կնճիռը» Զոհրապը համեմատում է բորոտության նման սարսափելի հիվանդության հետ։ Այդ պատճառով էլ նրա նովելներում դրական կերպարներ են այն հերոսուհիները,

«որոնք առանց հաշվի կթերանան», իսկ բացասական՝ նրանք, որ «հաշիվներու շնորհիվ անթերի կհանդիսանան», որոնց վարքագծի մեջ «տրամաբանություն կա, բայց սիրտ չկա»։ Զոհրապը բուռն ատելություն տածելով դեպի բուրժուական հաշվենկատությունը, հոգեկան ճղճիմությունն ու սահմանափակությունը, դրականը, լավը փնտրում է զգացմունքների ազնիվ, անմիջական, անկաշառ ու ազատ դրսևորումների մեջ։ Նրա դրական իդեալ կինը նա է, որի ժպտուն աչքերը «տիեզերքին երանությունը իրենց ծոցին մեջ կպահեն», որը կյանքի ծիծաղն է և գարնան բույր է շնչում ձմռան մեջ։


Գրիգոր Զոհրապ

Սիրո հոգեբանության՝ արտահայտված տարբեր իրադրությունների մեջ, մշտապես հուզող ու ինքնատիպ գծերով հարուստ ստեղծագործություններ են «Ճեյրան», «Արմենիսա», «Իսեհան», «Այինկա» «Երջանիկ մահը», «Դիմակը», «Մյուսը», «Զաբուղոն» և շատ ուրիշ նովելներ։ Զոհրապն ատում է խասեր, հետամնաց ավանդույթներով կաշկանդված, գոհաբերության անընդունակ անձնավորություններին։ Ըզգացմունքների ազատության և ուժի պաշտամունքը, որով հագեցված է նրա ստեղծագործությունը, հենց այն լավագույնն է, որ հիանալի արտացոլում է սոցիալական ու քաղաքական դաժան իրականության դեմ ուղղված հեղինակի մարտնչող հումանիզմը։

Ռեալիստական արձակի ծաղկման նույն այս շրջանում հանդես են գալիս երգիծաբանության մի շարք փայլուն դեմքեր։ Պարոնյանից հետո, եթե մի կողմից առաջանում է հիմնականում բուրժուական մամուլի հետ կապված զգայապաշտական, հասարակական արժեքից զուրկ, բուլվարային երգիծանքը, որի բնորոշ ներկայացուցիչներից էր **Հարություն Ալփիարը** («ֆանտազիո» ժողովածուն), ապա մյուս կողմից դեմոկրատական հոսանքի տաղանդավոր դեմքերը շարունակում են իրենց մեծ նախորդի՝ Պարոնյանի լավագույն ավանդույթները։ Երգիծաբանական արժեքավոր նմուշների թվում է **Առանձարի** «Վշտի ծիծաղ» ժողովածուն, որը սուր քաղաքական բնույթ ուներ և ուղղված էր սուլթանական վայրագ կարգերի դեմ ու **Օնիկ Չիֆթե Սարաֆի** «Միամիտի մը արկածները» վեպը։ Այս վեպում հաջողությամբ երգիծվում են արևմտաեվրոպական մեծ քաղաքների կյանքի ու կենցաղի որոշ կողմերը՝ հետապնդելով նրանց հրապույրների երևութականությունը ցույց տալու նպատակը։

Սոցիալական ու քաղաքական երգիծանքի ամենափայլուն ներկայացուցիչը դարձավ **Երվանդ Օտյանը** (1869—1926)։ Օտյանը օժտված էր երգիծաբանի մեծ տաղանդով։ Նա աչքի ընկավ նաև իր արտակարգ բեղմնավորությամբ․

Օտյանը գրել է բավական թվով ստվարածավալ վեպեր, պատմվածքներ, վիպակներ, ուղեգրություններ և այլ ժանրի գործեր։ Նրա քաղաքական սատիրայի հասարակական ու գեղարվեստական խոշոր արժեքն այն է, որ հայրենասերի գիրքերից մերկացրել է ազգայնական կուսակցությունների արկածախնդրական քաղաքականությունը։ Օտյանի քաղաքական երգիծանքի փայլուն նմուշներ են «Հեղափոխության մակաբույծներ» պատկերաշարը և միաժամանակ մի քանի վիպակների գլխավոր գործող անձ Փանջունու կերպարը։

Երգիծաբանության մեջ Օտյանը քննադատական ռեալիզմի ներկայացուցիչներից է։ Նա ստեղծագործական հսկայական ու արդյունավետ ջանքեր է գործադրել պատկերելու իր ժամանակաշրջանի արևմտահայ հասարակական կյանքի երևույթները։ «Ընտանիք, պատիվ, բարոյական», «Միջնորդ տեր պապան», «Թաղականին կնիկը», «Վաճառականի մը նամակները» և շատ այլ գործերում նա ցուցաբերել է իրականության լայն շրջանակներն ընդգրկելու բարձր կարողություն և բացահայտել է բուրժուական ու քաղքենիական խավերի բարքերի այլասերումը։

Չնայած 70-ական թվականներից մինչև 90-ական թվականների վերջերի հայ գրականության մեջ իշխող դիրքեր էր գրավել արձակը, դա, իհարկե, չէր նշանակում, որ պոեզիան դադարել էր հրապարակ բերել աչքի ընկնող դեմքեր։

Հովհաննես Հովհաննիսյանը (1864—1929) ստեղծագործական կյանքն սկսել է 80-ական թվականների սկզբներից։ 1887 թ. լույս տեսած նրա բանաստեղծությունների ժողովածուն շատ նորություններ էր բերում հայ քնարերգության զարգացման մեջ։ Նա իր նախորդների համեմատությամբ շատ ավելի ուշադրություն է դարձնում բանաստեղծական ձևի կատարելության, պատկերավորության ու լեզվի մաքրության հարցերին։ Հովհաննիսյանի համար բնորոշ է և այն, որ հասարակական կյանքի վերափոխման համար գրականության նշանակության և բանաստեղծի քաղաքացիական պարտքի գեղագիտական սկզբունքներն արտահայտվել են ոչ այնքան ռոմանտիկ հռետորականությամբ, որքան զգացմունքով հագեցված խորունկ խորհրդածությունների ոճով։ Բնորոշ է նրա «Երկու ճանապարհ» բանաստեղծությունը։ Նոր սապարեզ մտած պոետի առաջ բացվում է երկու ճանապարհ, որոնցից մեկը տանում է «շքեղ, բախտավոր նվիրական աշխարհ», ուր ծաղկում է սիրո գարունը և պարգևում վայելքի անձկալի ժամեր, մյուսը դուրս է բերում «փշոտ անապատ», որը կարոտում է մշակող բազկի, որտեղ լսվում է լքյալների հառաչանքը և ավարի մատնվում արդար քրտինքով մշակված հողը։ «Կյանք, ինձ երկուսից ո՞րն ես պատրաստում»,— հարցնում է բանաստեղծը։ Բանաստեղծի ստեղծագործությունը ցույց է տալիս, որ նա ընթացել է երկրորդ ճանապարհով։

Հովհաննիսյանը գրել է նաև այսպես կոչված «վայելչանքի երգեր», բայց նրա ստեղծագործության համար բնորոշ են սոցիալական և քաղաքական մոտիվները։ Նա առաջիններից մեկն էր, որ պատկերեց գյուղի ու քաղաքի աշխատավորության ծանր վիճակը և բողոքի ձայն բարձրացրեց ոսկու իշխանության ու կեղեքիչների դեմ։ Բայց «չարի» վերացման և աշխատավորության դեպի երջանիկ ապագա տանելու հարցում նա մնաց մանրբուրժուական ուտոպիական պատկերացումների շրջանակներում։

Հովհաննիսյանի ստեղծագործության մեջ առավել արժեքավորը նրա հայրենասիրական քնարն է։ 1895—1896 թթ. հայկական ջարդերի շրջա-

նում գրած բանաստեղծությունները («Սարն ի վեր», «Հավատում եմ ճնճղուկ չի սուրբ գաղափար», «Մենք միասին գնում էինք ճանապարհ», «Գարուն», «Հեգիկ կարկաչով») մեծ ժողովրդականություն բերեցին Նրան։ Հորունկ վշտով արտահայտելով հայ ժողովրդի առավել խոշոր հատվածի ապրած ողբերգությունը, բանաստեղծը ապագային նկատմամբ այն հաստատ համոզմունքն է հայտնում, որ անմահ է հայրենիքը և որքան էլ արհավիրքների ենթարկվի, «իրեն փշունիկ նա կհառնի անշուշտ մի օր»։

Հովհաննիսյանն իր ստեղծագործության մի շարք կողմերով ուսումնասիրության աղբյուր հանդիսացավ։ Այս կապակցությամբ առանձնապես հարկ է նշել հայրենասիրական թախիծով համակված ժողովրդական բանահյուսության գեղեցիկ նմուշների մշակումների նրա արվեստը, որը խոր հետք թողեց հայ քնարերգության պատմության մեջ։

Հովհաննես Հովհաննիսյանի հետ միասին XIX դարի 90-ական թվականների պոեզիայի վերելքը նախապատրաստեց նաև Ալեքսանդր Ծատուրյանը (1865—1917), որի ստեղծագործություններում բարձրացված են սոցիալական ու քաղաքական հուզող հարցեր ու խնդիրներ։ 1891 թ. լույս է տեսնում բանաստեղծի առաջին գիրքը, 1898-ին՝ երկրորդը, իսկ 1901 թ.՝ «Գրչի հանաքներ» երգիծաբանական ժողովածուն։ Իր բանաստեղծություններում Ծատուրյանն ստեղծում է աշխատավոր մարդու, երկրի իսկական տիրոջ քնարական կերպարը։ «Սերմնացանն», «Երկրի մշակները», «Նավավարը», «Այ սև ամպերը» բանաստեղծություններում գովերգված է ժողովրդի մարդկանց ազնիվ աշխատանքն ու վաստակը։ Ծատուրյանի դրական հերոսը երկրի մշակն է, հողի աշխատավորը, նավավարը, իսկ հետագայում նաև բարիկադների վրա կռվող բանվորը։ Դեմոկրատական պոեզիայի փայլուն էջերից է Ծատուրյանի «Բանվորուհու օրորը» բանաստեղծությունը, որը լույս տեսավ 1910 թ.։ Բանաստեղծը գովերգում է բանվոր գնդերի կռիվը և նոր սերնդի ականջին հյուսում «Մեծ կռվի» երգը, պատրաստում նրան բազմաթիվ մարտերի։

Այնտեղ գնդեր խառն ու ցրիվ
Բանվոր գնդեր ահարկու
Քաջ մղում են մի մեծ կռիվ
Աշխատանքի և ոսկու...

Այնքանդեր Ծատուրյանը առաջ մղեց հայ բանաստեղծությունը ռեալիզմի ճանապարհով, ստեղծելով ժողովրդական պոեզիայի գեղեցիկ նմուշներ։

Հայ գրականությունը XX դարի սկզբներին։ Դարասկզբին դեռ շարունակում էին ստեղծագործել 90-ական թվականների մեր դասական արձակագիրները։ Հրապարակ եկան նոր արձակագիրներ Դեմիրճյանը և Զորյանը, պոեզիան դարձավ հասարակականորեն առավել կարևոր և իշխող ժանրը։ Նոր ժամանակների հայ մեծագույն բանաստեղծներ՝ Թումանյանն ու Իսահակյանը, Տերյանն ու Մեծարենցը, Վարուժանն ու Սիամանթոն, Ռուբեն Որբերյանը և Ռուբեն Սևակը. Վահան Թեքեյանը և ուրիշներ մեծ ժողովրդականության հասան և իրենց ստեղծագործություններով հարստացրին հայ գրականությունը։ Նույն շրջանին բնորոշ է նաև գրական զանազան անկումային հոսանքների երևան գալը, ինչպես օրինակ, միստիկ-սիմվոլիստական (Արամ

Զարըգ և ուրիշներ) և սենտիմենտալ-ազգայնական (Ավետիս Ահարոնյան և ուրիշներ) հոսանքները։

Իրոք, դարասկզբի հայ առաջատար բանաստեղծների (և ոչ միայն բանաստեղծների) ստեղծագործության էական կողմերից մեկը քաղքենիական ճահճից ծնված մտայնության ու կենսահայեցողության բնադատությունն ու ժխտումն էր, որն իր հիմքում ուներ թե՛ սոցիալական չարիքի և թե՛ ազգային ճնշման դեմ ուղղված ժողովրդական պայքարի ոգի։ Կյանքի և գրականության զարգացման ընթացքը հրապարակ բերեց մարդու հարցն իր ամբողջ հասարակական ու փիլիսոփայական մեծությամբ, էսթետիկական իդեալը մարմնավորող դրական հերոսի հարցը։



Հովհաննես Թումանյան

Այս էր նորը, որի գեղարվեստական մարմնավորման ուղին գլխավորեց **Հովհաննես Թումանյանը** (1869—1923)։ Նա գնաց դեպի ժողովուրդը և դարձավ ժամանակաշրջանի ոգու ամենամեծ արտահայտիչը։ Նույնիսկ հայ նշանավոր բանաստեղծներից նրանք, որոնք մաքուր և ուժեղ զգացմունքներով օժտված մարդու պատկերը յուրովի բովանդակավորելով երգում էին հեթանոսականը կամ թեածում իրենց անուրջների աշխարհում, ի վերջո ընթացան Թումանյանի նախընտրած ուղիով կամ մոտեցան նրան։ Բնորոշ է Վարուժանի անցումը «Հեթանոս երգերից» դեպի «Հացին երգը»։ Գրականությունը, գրել է Թումանյանը, ոչ միայն արտացոլում է ժամանակը և իր դեպքերն ու դեմքերը, այլև տալիս է իր լույսն ու ջերմությունը կյանքին և ձգտում է կյանքում ստեղծել մարդու վեհ ու վսեմ, մաքուր ու անաղարտ պատկերը, կազմըված ու հյուսված բնության ամենամաքուր տարրերից։ Թումանյանի գործերի աննախադեպ ժողովրդայնությունը պայմանավորված է ամենից առաջ նրանով, որ նա իր հերոսների մեջ մարմնավորեց հայ ժողովրդի ազնիվ ու հերոսական ոգին, նրա իմաստուն խոհերն ու լավատեսությունը, կենսական առողջ ձգտումներն ու երազանքները, որով և խոր համամարդկայնություն հաղորդեց նրանց։

«Թմկաբերդի առումը» հոյակապ պոեմում նա երգում է լավ գործով անմահանալու՝ «Ախ երանի ով մարդ կգա ու մարդ կերթա անարատ» վեհ մոտիվը, իսկ արդեն իր վերջին՝ անավարտ «Հազարան բլբուլ» պոեմում, որը պետք է նրա ստեղծագործությունների գլուխգործոցը լիներ, շատ ավելի մեծ ընդհանրացումներով է պատկերում մարդկային կյանքի ընթացքն ու գեղեցիկ գալիքը։

Հայ գրականության փայլուն գոհարները՝ «Մարո», «Լոռեցի Սաքոն»,

«Անուշ», «Փարվանա», «Թմկաբերդի առումը» պոեմները, «Դիքորը» պատմվածքը և էլի ուրիշ գործեր հարուստ են ամենամաքուր բնավորություններով, մարդկային բարձր առաքինություններով օժտված կերպարներով։ Թեպետ այդ գործերի հերոսներից շատերը հենց իրենց բնական-մարդկային էության պատճառով բախվում են իրականության, հնին ու անցողիկին և կործանվում, բայց նրանք մարդու նկատմամբ Թումանյանի հավատի ու լավատեսության ամենափայլուն արտահայտություններն են։ Բանաստեղծի ստեղծագործության գեղարվեստական մշտապես մնայուն և մեծ արժեքը դաղտնիքներից մեկը ժողովրդի մարդկանց, ժողովրդական լեգենդների հերոսների ներքնաշխարհում ազգայինի հետ միաժամանակ հավերժ մարդկային զգացմունքների ու ապրումների բացահայտումն է։

Թումանյանի էպիկական հզոր արվեստի լավագույն արտահայտություններից են նաև նրա արձակ գործերից շատերը։ «Դիքորը» մեր գրականության պատմվածքի ժանրի լավագույն նմուշներից է, նույնը և «Ծղրերուն», «Անտի քարաքաղնիսը», «Գելը», «Արջառորսը» նովելները, ինչպես և մի շարք հեքիաթներ, որոնց մեջ այնպիսի մի գլուխգործոց, որպիսին է «Քաջ Նազարը»։

Թևակոտ Թումանյանն իր ստեղծագործական խառնվածքով գերազանցապես էպիկ է, բայց նրա մի ծիծաղաշարժ ոճ ունի նաև նրա քնարերգական բանաստեղծություններ։ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին բռնկված կենսական հուզող հարցերն այլևս չէին կարող բնդգրկվել սուբյեկտիվ քնարերգության շրջանակներում, որը չէր կարող լիովին բավարարել հասարակական պահանջմունքները։ Թումանյանը հաղթահարեց քնարերգության այդ սահմանափակությունները և բարձր զարգացման հասցրեց քաղաքական պոեզիան։ Ազնիվ հայրենասիրությամբ ոգեշնչված «Հայոց լեռներում» և այլ բանաստեղծություններում հայոց վիշտն անչափ ծանր ապրող բանաստեղծը ձգտում էր սուլթանական վայրագ բռնակալության դեմ վառ պահել ժողովրդի պայքարի հերոսական ոգին ու ցասումը և ազատագրման հավատը։ Նա իրականության խորքերը թափանցելու, կյանքի ամենաբարդ իրադարձությունների մեջ ճիշտ կողմնորոշվելու իր բարձր կարողության շնորհիվ ստեղծեց «Հայրենիքիս հետ» մեծիմաստ բանաստեղծությունը, որով ժողովրդին ոգևորում էր քաղաքական հստակ ու լավատեսական հեռանկարով։

Թումանյանը հսկայական դեր է կատարել հայ նոր գրականության զարգացման պատմության մեջ նաև իբրև հրապարակախոս և եռանդուն գրական-հասարակական գործիչ ու քննադատ։ 1905—1907 թթ. հեղափոխության տարիներին Թումանյանը ինքնակալության դեմ պայքարող ժողովրդի կողմն էր։ Նա այդ ժամանակ և հետագայում մեծ աշխատանք կատարեց ցարիզմի կողմից հրահրվող ազգամիջյան ընդհարումները կանխելու ուղղությամբ։ Ինչպես այդ ժամանակաշրջանում, այնպես էլ առաջին համաշխարհային պատերազմի արհավիրքի շրջանում Թումանյանը մնաց իր ժողովրդի հետ ու ամենածանր փորձությունների պահին պայքարեց հանուն նրա բարօրության։ Նա այն հաստատ համոզումն ուներ, որ վերջ ի վերջո բոլոր տեսակի բռնակալները կկորչեն ու կոչնչանան՝ աղքատության, խաղաղության ու արդար աշխատանքի դրոշը տանող ժողովուրդների ոտքերի տակ։

Բանաստեղծի քաղաքական առողջ համոզմունքներն իրենց ամբողջ փայլով դրսևորվեցին Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության շրջանում։ Հայ-ռուս բարեկամության դաղափարը հետագա զարգացման հասցը-

յից Թումանյանը։ Նա ուրախությամբ ողջունեց 1920 թ. Հայաստանում հաստատված սովետական կարգերը։

Թումանյանը գրական այն հսկաներից է, որոնց ստեղծագործությունը ոչ միայն հավերժ պահպանում է իր գեղարվեստական հմայքն ու թարմությունը, այլև հասարակության առաջընթացի հետ է՛լ ավելի մեծ փայլ է ստանում, հետզհետե ճառագայթելով իր խորության գաղտնիքները։


Ավետիք Իսահակյան

Հայ ժողովրդի իղձերի լավագույն արտահայտիչը դարձավ նաև նոր ժամանակների խոշորագույն քնարերգու բանաստեղծներից՝ **Ավետիք Իսահակյանը** (1875—1957)։ Նրա ստեղծագործության գեղարվեստական մեծության հիմքը ջերմ սերն է դեպի հայրենիքը և աշխատավոր ժողովուրդը։ Նրա բանաստեղծություններն ու պոեմները, արձակ բանաստեղծություններին մոտեցող նովելները մի զարմանալի հարուստ աշխարհ են ներկայացնում։ Իսահակյանը հայ նոր գրականության սիրո խոշորագույն երգիչն է։

Բանաստեղծությունների առաջին՝ «Երգեր և վերքեր» գիրքը նշանավորեց հայ քնարերգության զարգացման մի նոր աստիճան։ «Երգեր և վերքերի» բուն էությունը կյանքի սերն է ու լավ կյանքի կարոտը։ Իսահակյանի ստեղծագործական աշխարհը հագեցած է ուժգին ու փոթորկալից խոհերով ու ապրումներով։ Բուրժուական իրականության մեջ գոյություն ունեցող սոցիալական անհավասարության ու խտրականության հանգամանքը, կեղեքվող աշխատավորության կյանքի ծանր պայմանները խորապես հուզել են նրան։ Բանաստեղծը երգում է ազատությունը («Ազատության զանգ») և պայքարը։ Մանավանդ 1905—1907 թթ. հեղափոխության շրջանում գրած նրա բանաստեղծություններից շատերի ոգին է «ահեղ ճշմարտի սուրը» դնել զրկվածի ձեռքին՝ զրկողների դեմ մարտի ելնելու համար։

1905—1907 թթ. հեղափոխության պարտությունից հետո, ռեակցիայի տարիներին, Իսահակյանը գրեց իր աշխարհահռչակ լիրիկական պոեմը՝ «Աբու-Լալա-Մահարին», որի մեջ իրականությունից նրա դժգոհությունն ու ցասումը համապարփակ տեսք է ստանում և «ինքնիշխան անհատի» ելակետից տարածվում ամեն ինչի վրա։ Բայց դա բնավ հոռետեսության արտահայտություն չէր։ Իսահակյանի փախուստը իրականությունից բնավ էլ կյանքի ժխտման արտահայտությունը չէր, իրականում դա փախուստ էր ռեակցիայից, որովհետև նա ուներ դրական, մարդասիրական ելակետներ ու իդեալներ, մի բան, որ հիանալի մարմնավորված է հենց այդ պոեմում և այլ գործերում։ Բանաստեղծի ողջ ստեղծագործության համար էական խոհն այն է, որ

Աշխարհն էլ ասես մի հեքիաթ լինի՝ անսկիզբ, անվերջ
հրաշք դյութական։

Ազգեր են եկել, ազգեր գնացել, բայց նրա իմաստը չեն հասկացել և մարդիկ իրենց կարճատև ու երազի նման վաղանցուկ կյանքում փոխանակ վայելելու հրաշք աշխարհի գեղեցկությունները, իրենք իրենց համար այն դժոխքի են վերածում։

Կույր ու գուլ մարդիկ, առանց երազի, առանց լսելու
հեքիաթն այս վսեմ,
Իրար կոկորդից պատառ եք հանում և դարձնում աշխարհն՝
ահավոր չհնչեմ[77]։

Միանգամայն բնական է, որ աշխարհի գեղեցկության այսպիսի խոր զգացման տեր բանաստեղծն արտահայտեր աշխատավորական զանգվածների սոցիալական ու քաղաքական ազատագրման գաղափարը։ Իրականում ներքին ուժեղ կապ կա «Աբու-Լալա-Մահարի» պոեմի և «Սասնա Մհեր» վիպերգի միջև, ինչպես և «Գարիբալդիականը» և «Համբերանքի չիրուխը» պատմվածքների միջև։ Խահակյանի իդեալ հերոսները այն անձնավորություններն են, որոնք անձնազոհ պայքարել են ժողովրդի ազատագրման համար, բայց նրանց պայքարը չի գնահատվել, չի ըմբռնվել, ուստի նրանք մնացել են մենակ ու տիպալված են եղել առժամանակ մեկուսանալ, սպասելով մինչև «գանակը հասնի ոսկորին», ժողովուրդը ոտքի նյնի ու իրենց կանչի։

Խահակյանի հասարակական տրամադրությունները, նրա ապրած որոշ հակասություններն իրենց պոետիկական լավագույն արտահայտությունն են գտել նաև նրա սիրո երգերում։ Նրա «սիրո հրդեհով» բռնված սրտում միաժամանակ աղմկում է «վշտի ծովը»։ Նա երգում է սիրո զգացման գեղեցկությունները, ինչպես և անպատասխան մնացած սիրո տանջանքները։ Խահակյանի այս թեմային նվիրված արձակ թե չափածո գործերի գեղարվեստական արժեքի մեծության հիմքում ընկած է մանավանդ այն, որ նա կատարում է բազմաթիվ հոգեբանական գյուտեր, իր ապրումների մեջ բացահայտում սիրո հոգեբանության հավերժ մարդկային գծեր։ Նրա «Վիլիքը», «Հավերժական սերը» և այլ չափածո ու արձակ լիգենդները, «Ալագյազի մանիներ» սքանչելի քնարական պոեմը դրա լավագույն արտահայտություններից են։

Խահակյանի համար բնորոշ է նաև բուրժուական կեղծավոր աշխարհին հակադրվելը մոր սերը երգելով, որը նա համարում է մարդկային սրտի անկեղծ և սրբազան զգացմունքը։

Խահակյանը մեծ ժողովրդականություն էր վայելում ոչ միայն իբրև հանճարեղ բանաստեղծ, այլև որպես խոշոր հասարակական ու գրական-քաղաքական գործիչ։

Սոցիալական չարիքին ու քաղաքական ռեակցիային նորովի հակադրվում են Վահան Տեր-Յանը (1885—1920) ու Միսաք Մեծարենցը (1886—1908)։ Տեր-Յանն առանձնանում է իր գեղեցիկ ու թախծագին անուրջների աշխարհում, իսկ Մեծարենցը ապավինում է բնությանը, գնում «բաբախելու բնու-

77 Ավ. Իսահակյան, Երկեր, հ. 2, Երևան, 1958, էջ 58։

թյան սիրով։ Այսպիսով, նրանց քնարերգության նմանությունը երևութական է, էությամբ նրանք միանգամայն ինքնատիպ ստեղծագործողներ են։

Տերյանի առաջին ժողովածուն՝ «Մթնշաղի անուրջները», «Ոսկի հեքիաթ», «Ոսկե շղթա» բանաստեղծությունների շարքը, անահնման նրբագեղ հոգեվիճակների ու ապրումների արտահայտություններ են։ Թե՛ բովանդակության և թե՛ ձևի գեղեցկության ձգտումը բանաստեղծի՝ բուրժուական աշխարհի գեղեցկությունների հակադրվելու արտահայտություններից մեկն է։ Տերյանի սիրած պահը մթնշաղն է, երբ լռում են աղմուկները, երբ ամեն ինչ երազում է հոգու հետ։ Մանավանդ սիրած էակի կերպարում նա մարմնավորում է իր վեհացնող ու վերացնող անուրջները, իր ոսկի հեքիաթը։



Վահան Տերյան

Երբեմն այնքան վերացական ու մշուշապատ է «ամրոցների տիրուհին», «Լուսե աղջիկը», որ պատկերում ստանում է սիմվոլի բնույթ։ Իրոք, Տերյանի ստեղծագործության վրա որոշ չափով նկատվում է սիմվոլիզմի ազդեցությունը, թեպետ նա, իհարկե, սիմվոլիստ չէ։ Տերյանի քնարերգությանը բնորոշ են մեղմ թախիծն ու տխրությունը, որոնք արտահայտվում են սովորաբար զուգակցվելով աշնանային մաղվող անձրևի տխուր նկարագրության հետ։ Այդպիսի տրամանուշ հոգեվիճակներին միայն բացառիկ դեպքերում է հաջորդում հուսահատությունը, երբ մահվան գաղափարը նրան դառը չի թվում։ Առավել բնորոշն այն է, որ նրա մոտ աշնան թախծոտ բնանկարին հաճախ հաջորդում է պայծառ գարունը, գարնան արևի կենսատու շողերի պատկերը։ Բոլոր դեպքերում բանաստեղծն ամուր կապերով կապված է կյանքի հետ և շնչում է իր ժողովրդի առօրյայով։

Տերյանը նաև գրական-հասարակական գործիչ էր, որին մեծապես հուղել է հայ գրականության զարգացման ընթացքն ու հետագա ճակատագիրը։ Նրա գործունեությանը բնորոշ է պայքարն ազգային սահմանափակության, այսպես կոչված՝ «ծխականության» դեմ, այն ձգտմամբ, որ հայ գրականությունն իր էությամբ մտներ համաշխարհային գրականության շրջանակները։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, մեծ եղեռնի՝ արևմտահայության բնաջնջման ժամանակ Տերյանի մեջ վեր է բարձրանում մեծ քաղաքացին։ Նա իր «Երկիր Նաիրի» բանաստեղծությունների շարքում հայրենասերի խոր վշտով խորհրդածում է հայության դառը ճակատագրի մասին և արտահայտում հայրենի աշխարհի գեղեցկության ու ժողովրդի անմահության գաղափարը։ Իսկ երբ ծագեց փրկարար Հոկտեմբերը, նա հեղափոխա-

կան գործիչների շարքում էր և առաջիններից մեկն էր, որ երգեց ազատության կարմիր դրոշը։

Գեղեցիկի մի նոր աշխարհ է բերում Միսաք Մեծարենցի ստեղծագործությունը։ Նա չի ընդունում այն բանաստեղծներին, որոնք տարված են իրենց «ես»-ի տաղտկալի ողնչաբանություններով և գտնում է, որ բանաստեղծը «բնության ցոլացումը պիտի ըլլա», նրա ձայնը «տիեզերական հավերժության լար մը պըտի ըլլա, բոլոր գոյություններուն համադրական թրթռումով տրոփուն»։ Մեծարենցը փաստորեն մերժում է սիմվոլիզմը և առհասարակ ժխտում անկումայնության բնորոշ անձնականությունն ու եսապաշտությունը։

Մեծարենցի ողջ պոեզիան հագեցված է բնության խոր զգացողությամբ, բնություն, որը մաքուր է ու անչար, որը կյանքի հավերժական վերածնումն է ու շարժումը։ Բնության ամեն մի երևույթի մեջ քաղցր արբեցումն է տեսնում բանաստեղծը, և ինքն էլ այդ արբեցումով լիովին համակված ապրում է բոլոր գոյությունների կյանքով, ուստի մարդու համար գերագույն երջանկությունն է համարում «ուրախությունն անանձնական»։

Տո՛ւր ինծի, Տե՛ր, ուրախությունն անանձնական.
Ծրագներու պես գայն բոցեմ բազմաստեղնյան՝
խավարին մեջ ամեն երդ ու խրճիթներու[78]*։*

Մեծարենցի պոեզիան թաթախված է լույսով։ Այն իր բուն էությամբ արևի մի պայծառ ճառագայթ էր սուլթանական մղձավանջային իրականության մեջ։ Եվ եթե նա հաճախ երգում է գիշերը, ապա այդ նրա համար, որ օրհներգի ցայգը և լուսաբացը։

Ոչ միայն Մեծարենցի, այլև Տերյանի, Թումանյանի, Իսահակյանի և մյուս խոշոր գրողների ստեղծագործությունները հիացմունքի արժանի են իրենց բանաստեղծական չափի զգացումով, ինքնատիպ պատկերավորությամբ ու երաժշտականությամբ։

Բնության արբեցության ու գյուղական անդորրության մեծարենցյան մեղմանուշ պոեզիայից շատ տարբեր է արևմտահայ մեծ եղբորդության մյուս ներկայացուցիչների՝ Սիամանթոյի *(Ատոմ Յարճանյան, 1878—1915) և* Դանիել Վարուժանի *(Դանիել Չըպուքքարյան, 1884—1915) ստեղծագործությունը։ Բռնության ժխտման ու ազատատենչության ոգին, ինչպես և ժողովրդի ուժի փառաբանումը նրանց բանաստեղծություններին հաղորդում է հզոր էպիկական շունչ։ Որքան էլ այս երկու բանաստեղծներն իրենց ժամանակի քնարերգության մյուս խոշորագույն դեմքերի նման միանգամայն ինքնատիպ են և մեծ նորարարներ, բայց և նրանց բնորոշ է զգացմունքների ու մտքի մի այնպիսի հախուռն թափ, որի շնորհիվ նրանց մոտ բանաստեղծությունը հաճախ ընդարձակվում է ու փաստորեն վերածվում քնարական պոեմի։*

Սիամանթոյի ողջ ստեղծագործության համար լավագույն բնաբան կարող է հանդիսանալ իր իսկ առաջին բանաստեղծություններից մեկը՝ «Հույսին ճամփան»։

Եթե կուզես, Տառապանքը, դարերուն համար, քանդակե,
Բայց մի մոռնար, անոր աչվըներն ու բերանը ու հոգին
տարփորեն,
Ընդվզումի սարինքներուն կարկառելու...։

78 Մ. Մեծարենց. *Երկերի ժողովածու, Երևան, 1956, էջ 133։*

1894—96 թթ. հայկական ջարդերը, 1909 թ. Ադանայի հայերի կոտորածը, և առհասարակ օսմանյան կառավարության հայ ժողովրդին բնաջնջելու քաղաքականությունը չէին կարող ժողովրդի հոգում մեծ չափերով չկուտակել մի կողմից՝ ծանր ողբերգական վիշտը, մյուս կողմից՝ արդար ցասումն ու ատելությունը, չարիքի դեմ պայքարելու կամքը և հաղթանակի ու ազատության հույսը։ Սիամանթոն, ինչպես և Վարուժանը այս ամենը գեղարվեստական խոսքի ուժով պատկերելով, ժողովրդի տրամադրությունների հարազատ արտահայտիչներն էին։



Սիամանթո (Ատոմ Յարճանյան)

Սիամանթոյի հերոսները՝ «հսկայաձև ռահվիրանները», որոնք կարող էին իրենց «փշրող ակռաների տակ» «հրաշեկ դաշույններ տրորել», պահանջում են բանաստեղծից ոչ միայն տառապանքը երգել իբրև ապագա դարերի հիշատակ, այլև դարերի վրեժը, պայքարի փոթորկանման երիվարներն ու հաղթանակը։

Հաղթանակը բանաստեղծի երազանքն է, ընդվզումը և պայքարը՝ նրա բուռն ցանկությունը, որոնց երգելը նա համարում է ավելի կարևոր, բայց նա, այնուամենայնիվ, շատ ավելի նկարագրում է ահավոր իրականությունը, ջարդերի սոսկալի պատկերները։ Մանավանդ «Հոգևարքի և հույսի ջահեր» և «Կարմիր լուրեր բարեկամես» բանաստեղծությունների շարքում Սիամանթոն արտակարգ ուժեղ պոետիկական միջոցներով ներկայացնում է կոտորածների քստմնեցուցիչ մղձավանջը, ջարդարարների գարշուրելի գազանությունները։ «Մահվան տեսիլք», «Հոգեվարքի իրիկուն», «Անդրշիրիմյան աղաղակ», «Ափ մը մոխիր հայրենի տունէ» և «Պարը», «Լոգանքը», «Դաշույն» սյուժետային բանաստեղծությունները թողնում են այնպիսի տպավորություն, որ թվում է, թե Սիամանթոն նախազգացել էր վրա հասնող մեծ եղեռնը, և իբրև հայրենասեր ապրել հայ ժողովրդի մեծագույն ողբերգությունը։

Որքան էլ բանաստեղծը ժողովրդի կյանքի դժոխային ծանրության հանդեպ համակված է արտակարգ մռայլ ապրումներով, բայց նա, այնուամենայնիվ, լալկան եղերամայր չէ և չի ընկնում հոռետեսության գիրկը, որովհետև նա հավատում է իր ժողովրդի ուժերին ու ապագային, և այս հավատը, որը նրա պոեզիայի հասարակական պատմական ընդհանրացման էական գծերից է, իր լավագույն պոետիկական արտահայտությունն է գտել նրա «Հայրենի հրավեր» շարքի բանաստեղծություններում։ Այդ շարքի այնպիսի բանաստեղծություններ, որպիսիք են «Հարսին երազը», «Մայրը իր զավակին», «Հայ դաշտերուն պաղատանքը», «Որդին իր հորը» միշտ կմնան հայ պոեզիայի գոհարների շարքում։ Սիամանթոն այն սեռուն գաղափարն է արծար-

ծում, որ հայ ժողովուրդը որպեսզի հարատևի, պետք է կապվի հայրենիքի ու հողի հետ և ամի ու բազմանա։ Այս վավատնական գաղափարը փայլուն մարմնավորում է ստացել նրա «Որդին իր հորը» բանաստեղծության մեջ.

Հայր իմ, ես այն ճյուղն եմ գորավոր,
դալարագեղ այն ծառին,
Որ հոգնությանդ օրերուն, քու ննջուկդ
պիտի ըլլա...
Ես էությունդ եմ և սկիզբն եմ քու վախճանիդ,
Իմ մեջն է, որ դուն ինքդ՝ կյանքիդ հետո՝
պիտի ապրիս...[79]

Սիամանթոյի վերջին գործերից է «Նավասարդյան աղոթք առ դիցուհին Անահիտ» բանաստեղծությունը, որտեղ դատապարտվում է չարին չհակառակելու քրիստոնեական բարոյախոսությունը, որը ժողովրդի մեջ մեղցնում էր ազատագրական պայքարի ոգին ու փառաբանում կյանքի հեթանոսական զգացումը, բովանդակավորելով որպես կենսահիրություն, հետևաբար և գեղի պայքարը մղող մի գաղափարախոսություն։

Հայ գրականության մեջ այս կենսահաստնցողությունը իր դասական արտահայտությունն է գտել Դանիել Վարուժանի ստեղծագործություններում։ Վարուժանը XX դարի սկզբների արևմտահայ պոեզիայի խոշորագույն դեմքն է. նրա ստեղծագործությունը բացառիկ տեղ է գրավում իր հուժկու պոետիկական մշակույթի հետ միասին նաև մոտիվների ու թեմաների հարստությամբ, կյանքի երևույթների ընդգրկման լայն շրջանակներով, որոնք և պայմանավորում են նրա ստեղծագործության գեղարվեստական մեծ արժեքը։

1906 թ. առանձին գրքով հրատարակված «Մարմնուներ» վերնագրով բանաստեղծությունների ժողովածուից հետո, 1909 թ. Վարուժանը հրատարակեց «Ցեղին սիրտը» ժողովածուն «Ընդ երեքան փող բոց ելաներ» ընդհանուր «Ցեղին սիրտը», նախորդի հետ համեմատած, ստեղծագործական նոր թռիչքի արդյունք էր ու լիովին հաստատված բանաստեղծի գործ։ Վառ հայրենասիրական շնչով ու ժողովրդին ազատ տեսնելու բաղձանքով է համակված ամբողջ ժողովածուն, որի ոգին մարմնավորված է հայրենիքին նվիրված «Զոհ» մեջ։

Օսմանյան սահմանադրությունից հետո կազմակերպված Ազանայի ջարդերը նորից հուզումներ պատճառեցին ինչպես Սիամանթոյին, այնպես էլ Վարուժանին, որոնք իրենց ստեղծագործություններում իմպերիալիստական պետականներին դատապարտելու հետ մեկտեղ, հետևողականորեն զարգացրին ինքնամոռ դեմ պայքարելու և գործած չարիքների համար նրանից վրեժ լուծելու գաղափարը, խոշտանգված ժողովրդին մղելու երկրպագել իր քանդակած վրիժառության աստվածուհու՝ Նեմիսիսի արձանին։ «Հայրենի ոգին» բանաստեղծության մեջ նա խոր վշտով արձանագրում է այն փաստը, որ ժողովրդի որդիները կա՛մ հեռանում են հայրենի երկրից, կա՛մ նույն երկրի ծոցում մեռնում են բռնության լծի տակ, կա՛մ հայությունից խորթանում։

«Ցեղին սիրտը» ժողովածուում զգալի տեղ է բռնում «հեթանոսական»

---

79 Սիամանթո. Ընտիր երկեր. Երևան, 1957, էջ 211—212։

մոտիվը։ «Վահագն» վերնագրով լիրիկական պոեմում բանաստեղծը, ինչպես ինքն է ասում, «ուժին համար» աղոթում է նրա բագնի առաջ։ Բայց այս մոտիվը արդեն շատ ավելի լայն, քաղաքականի հետ միասին համամարդկային բնույթի սոցիալական թեմաների ընդգրկումներով՝ արտահայտություն է գտել նրա գլուխգործոց «Հեթանոս երգեր» ժողովածուում։



Դանիել Վարուժան

Վարուժանի «Հեթանոս երգերը» հայ գրականության կոթողներից է, որն իր գեղարվեստական մեծությամբ, բովանդակությամբ դուրս է գալիս ազգային շրջանակներից։ Այս առումով, այն նորը, որ բերում էր այդ ժողովածուն, կապիտալիստական աշխարհի, բուրժուական իրականության խոր քննադատությունն է ու հեթանոսականի իր ըմբռնած իդեալը։

Վարուժանն իր գրքի վերջաբանը ներկայացնող «Մատյանն ահա» բանաստեղծության մեջ գովերգում է «սրբացած երազը» ճանաչած մարդուն։ Բանաստեղծի երազած կատարյալ մարդն է նրա ստեղծագործության առարկան, որի վսեմ կերպարն էլ նա ձգտել է քանդակել իր «Հեթանոս երգերում»։ Վարուժանի մոտ իդեալ մարդու պատկերը վերացական մի բան չէ, այն սերտորեն կապված է հասարակության ապագան տնօրինող ժողովուրդների սոցիալական ու քաղաքական պայքարի հետ։ Վարուժանի մոտ հեթանոսականը միաժամանակ բուրժուաքաղքենիական իրականության մեջ աղճատված գաղափարազուրկ ու դրամին ծախված ճղճիմ հոգիների ժխտումն է։

«Հեթանոս երգերում» նույնիսկ բանաստեղծի պոետիկական կուլտուրան, նրա պատկերավորման միջոցները (որոնք հիանալի արտահայտում են բովանդակությունը) իրենց բնույթի շատ կողմերով հակադրվում են քաղքենիության ճաշակին ու հոգեբանությանը։ Վարուժանի մոտ հաճախ հանդիպում են, այսպես կոչված, «բաց» նկարագրություններ, այնպիսի համարձակ արտահայտություններ (օրինակ, «Ո, Տալիթա», «Արևելյան բաղնիք», «Հեթանոսական», «Սադուանական» և ուրիշ գործերում), որոնք կարող են թվալ էրոտիկական-նատուրալիստական։ Բայց իրականում այդպես չէ։ Նրա թե՛ պատկերները, և թե՛ լեզվական երանգները, ընդհանրապես, իրենց տենդենցով ոգու ազատության յուրահատուկ դրսևորումներ են և ուղղված են բուրժուական իրականության մեջ իշխող բարոյական կեղծիքի ու երեսպաշտության դեմ։

Վարուժանի բերած նորություններից մեկն էլ բանվորական թեման էր։

Նրա «Մայիսի մեկը», «Դագաղ», «Մեքենաները», «Մեռնող բանվորը» և ուրիշ բանաստեղծություններ հայ գրականության մեջ բանվորական շարժմանը նվիրված լավագույն գործերից են։ Բանաստեղծը ջերմ սիրով է համակված բանվոր դասակարգի նկատմամբ ու խոր վշտով երգում է նրա ծանր վիճակը, զայրույթով դատապարտում կապիտալիստական անարդար կարգերը։ Թեև Վարուժանը որոշակիորեն չարտահայտեց պրոլետարական հեղափոխության գաղափարը, բայց և այնպես նրա մոտ ակնհայտ է հասարակական կյանքում բանվոր դասակարգի պատմական դերի ըմբռնումը։

Վարուժանի վերջին ստեղծագործությունը «Հացին երգը» ժողովածուն է։ Այս անգամ բանաստեղծը մարդկայնորեն գեղեցիկը փնտրելու ճանապարհին՝ գնում է դեպի գյուղական աշխարհը։ «Հացին երգը» փաստորեն մի սքանչելի քնարական պոեմ է։ Ժողովածուն կազմող բանաստեղծությունների մեջ կա մի ներքին կապ, նրանք արտացոլում են հայրենի դաշտերը մշակող սերմնացանի ազնիվ աշխատանքի բոլոր դրվագները մինչև վաստակի խաղաղ վայելումը։ Գյուղական կյանքի և գյուղացու աշխատանքի պոետիկ պատկերների իմաստը կապված էր բանաստեղծի ժողովրդասիրության ու հայրենասիրության հետ։

Արևմտահայ բանաստեղծների մեջ թե՛ խառնվածքով, և թե՛ ստեղծագործության բովանդակության գծերով Վարուժանին շատ մոտ է Ռուբեն Սևակը (1885—1915), «Տրուբադուրներ» դասական բանաստեղծության նշանավոր հեղինակը։ Սևակի ստեղծագործությունն առանձնապես աչքի է ընկնում նրանով, որ լայնորեն արտացոլում է ժամանակի հասարակության սոցիալական անարդարությունները, շահագործողների և շահագործվողների կյանքի հակադրությունները։ Սևակն էլ բանվորական շարժման երգիչներից է, և ամբողջ մարդկությանը հուզող այս մոտիվը արտահայտված է բավական արմատական գաղափարական իմաստավորմամբ և հուզական խոր հագեցվածությամբ։ Բնորոշ է նրա «Կարմիր դրոշակը» բանաստեղծությունը, որտեղ նա ֆրիկյան ոգով խորհրդածում է մարդկանց միջև եղած նյութականիրավական անհավասարության մասին։

Ինչպես Վարուժանի, Սիամանթոյի, այնպես էլ Սևակի աշխարհայացքի համար շատ բնորոշ է մարտնչող աթեիզմը։ Սևակը զինված պայքարի կոչ է անում և որոշակի բողոքում, թե ինչու են այդքան տաճարներ շինվում, իսկ որբերը գիշերելու տեղ չունեն։

Սևակին մեծապես հուզել է նաև օտար լծի տակ գտնվող հայ ժողովրդի քաղաքական ծանր վիճակը. նա այդ թեմայով բանաստեղծությունների մեջ, մարդկայնության դեմ ուղղված անլուր խժդժությունները դատապարտելու հետ միաժամանակ, աշխատում է ժողովրդին դաստիարակել ազգային արժանապատվության, չարին պայքարով դիմագրավելու ոգով։

1900-ական թվականներին հայ իրականության մեջ առաջացած սիմվոլիստական գրականության առավել բնորոշ ներկայացուցիչը դարձավ Լևոն Շանթը (Սեղբոսյան, 1869—1951)։ Նա գրական գործունեությունն սկսել էր 90-ական թվականներից, բանաստեղծություններով ու «Լեռան աղջիկ» պոեմով և իմպրեսիոնիստական հակումով գրված մի շարք արձակ գործերով («Երազ օրեր», «Դարձ», «Դուրսեցիներ» և այլն)։ Նրա գեղարվեստական արժեքավոր գործերն են «Հին աստվածներ» և «Կայսր» դրամաները։

«Հին աստվածները» հայ դրամատիկական արվեստի արժեքավոր նմուշ-

ներից է։ Այն աչքի է ընկնում թե՛ գրական ձևի կատարելությամբ, թե՛ բարձր բեմականությամբ։ Դրամայում արծարծված է մի կողմից «հեքիաթական» բեմայի և մոտիվի հետ կապված «կյանքի կովի» մարդկային երազանքները պայքարով իրականացնելու գաղափարը, որը պետք է լինի անհատի երջանկության ակունքը, մյուս կողմից՝ սրան հակառակ, կյանքից դուրս, միայնակ, ներքին ինքնակատարելագործման միջոցով երանավետության հասնելու գաղափարը։ «Գայլար» պատմական դրամայում նա լիովին անցնում է բուն սիմվոլիզմը բնորոշող միստիկականությանը։ Շանթը գրել է դարձյալ մի քանի պատմական դրամաներ, որոնցից առավել հաջողված է «Ոշին Պայլը»։ Այս դրամայում իր որոշակի արտահայտությունն է գտել նրա մի շարք գործերում շոշափված՝ մարդու մենակության ու դատապարտվածության անկումային գաղափարը։



Հակոբ Հակոբյան

900-ական թվականների հայ գրականության զարգացումն առանձնապես նշանավորվում է պրոլետարական պոեզիայի, սոցիալիստական ռեալիզմի մեթոդի թևարերգության սկզբնավորմամբ, որը կապված է նշանավոր բանաստեղծ Հակոբ Հակոբյանի անվան հետ։ Հակոբ Հակոբյանը *(1866—1937)*, որն իր գրական գործունեությունն սկսել էր XIX դարի 90-ական թվականների վերջերից, երկար տարիներ աշխատելով Բաքվում, կապվում է բանվոր դասակարգի հետ և եռանդուն մասնակցություն ցույց տալիս բուրժուադիայի դեմ մղած նրա հեղափոխական պայքարին։

1905—1907 թթ. հեղափոխության շրջանում և հաջորդ տարիներին Հակոբյանը գրում է իր լավագույն բանաստեղծությունները, որոնք լույս տեսան «Աշխատանքի երգեր» *(1906)*, «Հեղափոխական երգեր» *(1907)* ժողովածուներում։ Մաք. Շահումյանը բարձր գնահատեց Հակոբյանի ստեղծագործությունը, որը հայ քաղաքական թևարերգության նոր, բարձր արտահայտությունն էր։ Հակոբյանի համար բնորոշ է գաղափարական ամրությունը և հետևողականությունը, որը պայմանավորել է նրա՝ բաղաքական իրադարձությունների ճիշտ բմբռնումը և արտացոլումն ու դրանց նկատմամբ հեղափոխականի վերաբերմունքը։ Նրա «Հեղափոխություն» և մյուս բանաստեղծությունները ոգեշնչող նշանակություն ունեցան ցարիզմի ու կապիտալիզմի դեմ մղվող պայքարում։

Հոկտեմբերյան առաջին հեղափոխության պարտությունից հետո Հակոբ Հակոբյանը մնաց անսասան իր հավատքի և համոզմունքի մեջ։ Այն ժամանակ, երբ թե՛ ռուս, թե՛ հայ գրականության մեջ լայն ծավալ էին ստացել գռնադան անկումային հոսանքները, Հակոբ Հակոբյանը գրեց իր «Նոր առավոտ»

(1909) նշանավոր պոեմը՝ Պոեմն ուղղված էր բուրժուական և մանրբուրժուական եսամոլության ու սուբյեկտիվիզմի դեմ և փառաբանում էր գործառնային բանվորությանը՝ մարդկության երջանիկ ապագայի համար նրա պայքարի հաղթանակի լի հավատով։ Այնուհետև նա գրեց «Կարմիր ալիքներ» և «Հավասարություն» պոեմները, որոնք «Նոր աստվածի» հետ փաստորեն գեղարվեստական մի ամբողջություն են կազմում։

Հոկտեմբերյան մեծ հեղափոխության հաղթանակից և Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո, նոր կյանքի գեղեցկությունը երգող բանաստեղծը՝ Հակոբ Հակոբյանը դարձավ սովետահայ գրականության հիմնադիրներից մեկը։ Նորի հանդեպ միշտ զգայուն, նա ստեղծեց մի շարք արժեքավոր գործեր («Վոլխովստրոյ», «Բոլշևիկ է Շիր կանալը», «Ջորագնում» և այլն), որոնց մեջ արտահայտեց սոցիալիստական շինարարության պաթոսը։ Հակոբյանից շատ բան սովորեց սովետահայ բանաստեղծների նոր սերունդը։



Նաւշանիկ Կուրղինյան

Հակոբ Հակոբյանից հետո հայ պրոլետարական-հեղափոխական պոեզիայի սկզբնավորողներից է Նաւշանիկ Կուրղինյանը (1876—1926), որի պոեզիան 1905—1907 ԹԹ. ռուսական առաջին հեղափոխության ծնունդն է. նրա գերիշխող մոտիվը բանվոր դասակարգի կյանքն ու պայքարն է։ Կուրղինյանը այն բանաստեղծներից էր, որ ոչ միայն տեսավ բանվոր դասակարգի անտանելի վիճակը կապիտալիզմի պայմաններում, պատկերեց այն սուր հակասությունը, որ գոյություն ուներ բուրժուազիայի և պրոլետարիատի միջև, այլև արձագանքեց պրոլետարիատի հեղափոխական կռվին։ 1905—1907 ԹԹ. գրված նրա բանաստեղծությունները՝ «Աշնան երգերից», «Բլբուլին», «Անմեղ գնացեք», «Ազատության դողանչը», «Ես տար քո խաչը» պայքարի կոչի ու հաղթանակի ներշնչանքի երգեր են և մեծ ազդեցություն են թողել հեղափոխական զանգվածների վրա։ Ալ. Մյասնիկյանի ջանքերով 1907 թ. հրատարակվում է Կուրղինյանի բանաստեղծությունների մի փունջ՝ «Արշալույսի դողանջներ» ընդհանուր խորագրով։ Հայ դեմոկրատական միտքը ջերմությամբ ընդունեց Կուրղինյանի մուտքը գրականության ասպարեզ։ Մարքսիստական քննադատությունը ևս բարձր գնահատական տվեց նրա տաղանդին ու ստեղծագործությանը։

Կուրղինյանը խանդավառությամբ ընդունեց Հոկտեմբերյան մեծ հեղափոխության հաղթանակը և սովետական կարգերի հաստատումը Հայաստանում։ «Բանվորական քայլերգ», «Նոր օրեր», «Մաղթանք», «Քայլերգ» բա-

նաստեղծություններն այդ պատմական իրադարձությունների հետ կապված հուշերի արտահայտություններն են։

Անշուշտ, Հակոբ Հակոբյանը և Շուշանիկ Կուրղինյանը միայնակներ չէին։ 1905—1907 թթ. հեղափոխության շրջանում առաջացավ բավական ուժեղ պրոլետարական գրական շարժում։ Թե՛ պոեզիայի և թե՛ արձակի ու դրամատուրգիայի բնագավառում հանդես եկան բուրժուական անկումային հոսանքների դեմ պայքարող, բոլշևիկյան մամուլի հետ կապված մի շարք աշքի ընկնող գրողներ, որոնց թվում Արագին (Մովսես Հարությունյան), Մաքսիս Դարբինյանը, Մադաք Պետրոսյանք, Անուշավան Վարդանյանը, որի, մանավանդ, «Գործադուլ» պիեսը (1905) իր ժամանակին բավական ուժեղ տպավորություն թողեց։

Հայ նոր գրականության դասականների ստեղծագործությունը կուլտուրական հարուստ ժառանգություն է։ Այն մեծ նշանակություն է ունեցել սովետական շրջանի գրականության զարգացման համար։

3. ԹԱՏՐՈՆ

Անցած դարի 70-ական թվականների հայ թատրոնի վիճակը, մանավանդ արևմտահայ իրականությունում, ընդհանուր առումով տարբերվում էր նախորդ տասնամյակից։ Այժմ գործի թափը նվազել էր։ Դրա հիմնական պատճառը քաղաքական աննպաստ պայմաններն և սուլթանական վարչակարգի հալածանքների սաստկացումն էին։ Արդեն հրապարակ եկած հայ թատերական գործիչները մեծ զրկանքներով ու համառությամբ չանում էին հաղթահարել դժվարությունները թատերական գործը վերակենդանացնելու համար։

Հայ թատերական կյանքում այդ տարիներին ակտիվ գործունեություն ծավալեց հայ բեմի մեծ վարպետ Պետրոս Ադամյանը (1849—1891)։ 1869 թ. Թովմաս Թաթուլաճյանի հետ նա Կ. Պոլսից մեկնեց Ռուսաստան՝ մասնակցելու նոր Նախիջևանի նորակազմ թատերական խմբին։ Կ. Պոլսում 60-ական թվականներին հայտնի դարձած «Արևելյան թատրոնի» փորձով, 1872—75 թթ. Պետրոս Մադաֆյանը (1826—1891) կազմեց թատերախումբ։ Նրա ընկերակիցներն էին Պետրոս Ադամյանը, Ագնիվ Հրայրյան, Դավիթ Թրյանը, Խաչիկ Փափազյանը և ուրիշներ։ Խումբը բեմադրեց Ռ. Սեւոեֆյանի «Վարդան Մամիկոնյանը», «Մեծն Տիգրանը», Ս. Հեքիմյանի «Սմբատ Բ-ն», Ն. Փուշմանյանի «Դալալ Ղազոն», Գ. Սունդուկյանի «Պեպոն» (վերջին երկուսն այդ ժամանակ Կ. Պոլսում գտնվող արևելահայ դերասան Մ. Ամրիկյանի մասնակցությամբ), Շիլլերի «Ավազակները» և մի շարք այլ պիեսներ, հատկապես մելոդրամաներ։ Չնայած թատերախմբի կարճատև գոյությանը, նրա գործունեությունը դիտվեց որպես հայ թատրոնի պատմության լավագույն դրվագներից մեկը։ Մեկ այլ թատերախումբ գործեց 1876—78 թթ. Պետրոս Ադամյանի, Ագնիվ Հրայլայի, Մանուկ Միսակի, Անտոն Ռշտունու և ուրիշների մասնակցությամբ, որից հետո հայ պրոֆեսիոնալ թատրոնի աշխատանքները Կ. Պոլսում ընդհատվեցին։

Դեռևս 1868 թ. Կ. Պոլսում Հակոբ Վաղդովյանի (1830—1898) հիմնադրած թատերախումբը, որը հետագայում կոչվեց «Օսմանյան թատրոն», իր գործունեությունը շարունակեց նաև 1870-ական թվականներին, բեմադրելով հայերեն և թուրքերեն ներկայացումներ։ Նրա խաղացանկում տեղ են գտել Ս. Հեքիմյանի, Խ. Գալֆայանի, Պ. Դուրյանի, Մ. Պեշիկթաշլյանի,

Ի. Թերզյանի, Ռ. Սետեֆյանի և այլոց պատմական ողբերգություններ։ Հ. Վարդովյանը հայ ազգային դրամատուրգիայի զարգացման, ինչպես նաև թատրոնի խաղացանկը քարգմանական երկերով հարստացնելու գործում աչքի ընկնող դեր է կատարել։ Նա մեծապես նպաստել է նաև թուրքական դրամատուրգիայի ստեղծմանը (օրինակ, Նամըկ Քեմալի, էպու Ջիայի շատ պիեսներ գրվել են նրա դրդումով)։ Թուրքական թատրոնում են աճել տաղանդավոր դերասան-դերասանուհիներ Գ. Ռշտունին, Դ. Քրյանը, Ս. Պենկլյանը, Մարի-Նվարդը, Տրանուհի ու Վերգինե Գարագաշյան քույրերը և ուրիշներ։ Ճիշտ է, քաղաքական պայմանների բերումով Վարդովյանի թատրոնն ըստ կրնսց գերազանցապես թուրքերեն ներկայացումներ տալ, բայց նա, այնուամենայնիվ, խոշոր դեր կատարեց արևմտահայ թատերական արվեստի զարգացման գործում։



Գեւոբաս Ազամյան

Հայ նշանավոր կոմպոզիտոր Տ. Չուխաջյանը հայ դրամատիկական թատրոնների բեմադրությունների համար գրում էր հատուկ երգեր։ Չուխաջյանը իր «Արշակ Բ» օպերայով և «Արիֆ», «Քյոսե Քեհյա», «Էլբեքիչի» արևելյան օպերաներով դարձավ այդ ժանրերի սկզբնավորողը հայ երաժշտության մեջ։ Նրա օպերետների կատարման համար հեղինակի դեկավարությամբ ստեղծվեց մի նոր թատերախումբ, մասնակցությամբ տաղանդավոր դերասաններ Շազիկի, Հովհաննես Աճեմյանի, Տրդատ Չիլեքճյանի և ուրիշների։ 1874-ից թատերախումբն սկսում է ներկայացումներ տալ Կ. Պոլսում։ Հետագայում թատերախմբի դեկավարությունը Չուխաջյանը հանձնում է Սերովբե Պենկլյանին, իսկ ինքը վարում է միայն դիրիժորի պարտականությունը։

Այդ տարիներին (մինչև 1877 թ.) Թիֆլիսում շարունակում էր գործել Գևորգ Ջմշկյանի (1837—1915) թատերախումբը, որի խաղացանկում էին Գ. Սունդուկյանի նշանավոր պիեսները՝ «Պեպոն», «Էլի մեկ գոհ», «Քանդած օջախ», ինչպես և վերամշակված «Խաբեբալանս»։

1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո հայ ազատագրական մտքի աշխուժացման շնորհիվ մշակութային կյանքը, ինչպես և հայ թատերական գործը նոր վերընթաց ասպեցին։ Թատերական կյանքին նոր շունչ տալու կոչերով ու հորդորներով հանդես եկան Գաբրիել Սունդուկյանն ու Գևորգ Ջմշկյանը։ Թիֆլիսում կազմակերպվեց նախաձեռնող խումբ՝ «Թատրոնական կոմիտետ», որն ընտրեց դեկավարող մասնաժողով՝ Նապոլեոն Ամատունու դեկավարությամբ։ Թատերախումբը ոչ միայն տեղացի, այլև արևմտահայ տաղանդավոր դերասաններով համալրելու նպատակով Գևորգ

Ջմշկյանը գործուղվեց Կ. Պոլիս և իր հետ բերից Պետրոս Ադամյանին, Աստղիկ և Սիրանույշ քույրերին, Թիֆլիս հրավիրվեցին նաև Մարտիրոս Մնակյանը, Ազնիվ Հրաչյան, Երանուհի ու Վերգինե Գարագաշյանները, Մարիենվարդը և ուրիշներ։ Տեղի ուժերից տարբեր թատերաշրջաններում խմբի կազմի մեջ մտան Գևորգ և Սաթենիկ Ջմշկյանները, Գևորգ Տեր-Դավթյանը, Ամիրան Մանդինյանը, Վարդուհին (Նամուրազյան), Գևորգ Պետրոսյանը (բեմական կեղծանունը՝ Օրդուբաթյան) և ուրիշներ։

Իր տաղանդով և կատարման արվեստով առանձնապես փայլեց Պետրոս Ադամյանը։ Վերջինս, ինչպես և արևմտահայ նշանավոր մյուս դերասանները, բարերար ազդեցություն ունեցան տեղական ուժերի վրա։ Արևելահայ դերասաններն էլ իրենց հերթին ազդեցին նրանց վրա՝ ռեալիստական խաղակերպի ընկալման ու ընդգրկման առումով։



Գևորգ Ջմշկյան

Թատերախմբի խաղացանկը մեծ ընդունելության գտավ հասարակայնության կողմից։ Ռուսական դասական գործերի մեծ մասը նորություն էր հայ հանդիսատեսի համար (Ա. Սուխովո-Կոբիլինի «Կրելչինսկու հարսանիքը», Ա. Օստրովսկու «Արդյունավոր պաշտոն», Ա. Գրիբոյեդովի «Խելքից պատուհասը», Մ. Լերմոնտովի «Դիմակահանդես» և «Դև» պոեմի բեմական հարմարեցումը, Գոգոլի «Վերաբննիչը»)։ «Թատրոնական կոմիտետ» գործունեության տարիներին հայ դրամատուրգիայի գործերի հետ միասին բեմ բարձրացան նաև արևմտաեվրոպական դասականների՝ Շեքսպիրի, Շիլլերի, Մոլիերի, Հյուգոյի և այլոց թատերգություններ։ Բեմադրվում էին նաև մելոդրամաներ։

«Թատրոնական կոմիտետի» գործունեությունն ընթանում էր մեծամեծ դժվարությունների հաղթահարումով։ Ֆինանսավորող մեծահարուստները հաճախ հրաժարվում էին իրենց խոստումներից, արգելքներ էր հարուցում նաև ցարական գրաքննությունը։ Երեք տարի գործելուց հետո, «Կոմիտետը» 1882 թ. լուծարքի ենթարկվեց։ Չնայած դրան, այդ տարիները համարվեցին արևելահայ թատրոնի զարգացման շրջան, որը կապված էր հանճարեղ Պետրոս Ադամյանի ու նրա տաղանդավոր արվեստակիցների հետ։ Թատերախումբը մեծ ժողովրդականություն ձեռք բերից Թիֆլիսում և Կովկասի հայաբնակ վայրերում։ Նա ոչ միայն հարուստ խաղացանկ ստեղծեց, այլև հայ ազգային ապագա թատերագրության համար հող նախապատրաստեց։ Բարձրացավ հայ դերասանների կատարողական վարպետությունը։

«Թատրոնական կոմիտետի» խմբի գոյությունը դադարելուց հետո իր

ջանքերով նորից հրապարակ եկավ Գ. Չմշկյանը, որն առանց հասարակական կազմակերպությունների օգնության, իր նախաձեռնությամբ և պատասխանատվությամբ կազմեց դերասանական խումբ և էժան մուտքագներով սկսեց ներկայացումներ տալ։ Բայց որովհետև խմբի անդամներից շատերը նյութական ապահովության համար հաճախ շրջագայության էին գնում գավառները, իսկ ոմանք էլ կողմնակի ծառայության պատճառով հաճախ բացակայում էին ներկայացումներից, մի թատերաշրջան բոլորելուց հետո՝ 1883 թ. աշնանից Գ. Չմշկյանը հարկադրված եղավ ներկայացումներ կազմակերպել միայն առանձին դեպքերում։ Թատերական կյանքն այսպիսի ընթացք ուներ Թիֆլիսում մինչև 1886 թ., մինչև «Հայկական դրամատիկական ակումբի» հիմնադրումը։

Թիֆլիսի օրինակով Բաքվի հայերը 1885 թ. ստեղծեցին մի նոր «Թատրոնական կոմիտետ», որի դերասանական խմբի գործունեությունը շատ կարճատև եղավ։ Այդ տարիների ամենակարևոր իրադարձությունը Պետրոս Ադամյանի վերադարձն էր Ռուսաստանից, ուր նա մեկնել էր 1882 թ. հետո։ Նա հանդես էր եկել Մոսկվայում, Պետերբուրգում, Ռոստովում, Աստրախանում, Խարկովում, Կիևում և այլ քաղաքներում ու մեծ հռչակ ձեռք բերել։ Ռուսական մամուլը հիացմունքով էր արձագանքել նրա ելույթներին։ Ռուս դերասանների հետ նա ելույթներ էր ունեցել ֆրանսերեն, երբեմն հայերեն, Շեքսպիրի «Համլետի», Ա. Դյումայի, «Քինի», Ջիակոմետիի «Ոճրագործի ընտանիքի», Մ. Լերմոնտովի «Դիմակահանդեսի» հերոսների դերերում։ Անդրկովկասում Ադամյանին հրավիրելու առաջին փորձը կատարեց Բաքվի «Թատրոնական կոմիտետը», որից հետո, 1886 թ. սկզբներին, հատուկ հրավեր հղեց նաև Թիֆլիսի «Հայ դրամատիկական ակումբի» վարչությունը։ Ե՛վ Բաքվում, և՛ Թիֆլիսում Ադամյանի ելույթները մեծ հաջողություն ունեցան։

Ադամյանի հռչակի շնորհիվ Թիֆլիսի «Դրամատիկական ակումբի» ղեկավարությունը 1886—1887 թթ. կազմակերպեց կանոնավոր թատերաշրջան, սակայն նյութական կարիքների պատճառով չշարունակվեց։ Ադամյանը նորից ուղևորվեց Ռուսաստան, իսկ այնտեղից՝ Կ. Պոլիս, ուր առանձին հանդիսավորությամբ 1888 թ. նշվեց նրա բեմական գործունեության 25-ամյակը։ Մեծ ողբերգակը, ծանր հիվանդությունից հետո, 1891 թ., 42 տարեկան հասակում, վախճանվեց։

1887 թ. ապրիլին Թիֆլիսում տոնվեց Գ. Չմշկյանի բեմական ու հասարակական-թատերական գործունեության 25-ամյա հոբելյանը, որից հետո, 1901 թ. նա վերջին անգամ մասնակցեց «Պեպոյի» 30-ամյակին նվիրված ներկայացմանը, այնուհետև բոլորովին հեռացավ թատերական ասպարեզից։

Մինչև 1890-ական թվականների սկզբները Թիֆլիսի և Բաքվի թատերական կյանքն ընթանում էր պատահական ներկայացումներով։ Թիֆլիսում այդ ներկայացումների կազմակերպիչներն էին Գ. Տեր-Դավթյանը, Վարդուհին, Գ. Միրաղյանը, Պ. Քալանթարյանը (բեմական կեղծանունը՝ Արաքսյան), Ա. Սարգարյան-Արեշատյանը, իսկ Բաքվում՝ Հովհաննես Աբելյանը, Ստեփանոս և Ալմա Սաֆրազյանները, Փառանձեմը և ուրիշներ։ Անդրկովկասի մյուս հայաշատ կենտրոններում այդ տարիներին ներկայացումներ էին տրվում տեղական սիրողների նախաձեռնությամբ ու մասնակցությամբ (Շուշի, Ելիսավետպոլ, Երևան, Ալեքսանդրապոլ, Բաթում, Ախալցխա և այլն)։

Հայ մամուլը կրկին բարձրացրեց թատերական կանոնավոր կյանքը վե-

բակննդանացնելու հարցը։ Այս անգամ գործի նախաձեռնողը եղավ Գևորգ Պետրոսյանը (1859—1906), Նա 1890—1891 թթ. կարողացավ նոր շունչ հաղորդել Թիֆլիսի «Դրամատիկական ակումբին»։ Ակումբի անդամներն ընտրեցին հատուկ հանձնաժողով՝ անդամակցությամբ Շիրվանզադեի, Մանուկ Աբեղյանի, Ստեփանոս Մալխասյանի, Ստեփան Լիսիցյանի, բժիշկ Վահան Արծրունու, պարտավորեցնելով նրանց զբաղվել պիեսների ընտրության, քննության, նոր հեղինակներ առաջ քաշելու, որակյալ թարգմանիչներ հրավիրելու հարցերով։ Թարգմանական պիեսների լեզվի խմբագիրներ են ընտրվում Գ. Մուրացանը, Ալիքսանդր Երիցյանը և Ալիքսանդր Թարխանյանը (վերջինս հետագայում «Թատրոն» հանդեսի (1893—1905) հիմնադիրն ու խմբագիր-հրատարակիչը դարձավ)։

Թատրոնի ստեղծագործական նոր կազմը համալրելիս նորից նպատակահարմար համարվեց Կ. Պոլսից հրավիրել կարող ուժեր, Թիֆլիս նկան Սիրանույշը և դերասան Դավիթ Թրյանը։ Դերասանական խմբի մյուս անդամներն էին Գ. Պետրոսյանը, Հ. Աբելյանը, Գ. Աբրահամյանը, Գ. Տեր-Դավթյանը, Ա. Վրույրը, Մ. Աղայանը, Ա. Հարությունյանը, Պ. Արաքսյանը, Ա. Արմենյանը, Ս. Զմշկյանը, Զաբելը, Վ. Մելիքյանը, Փառանձեմը, Ս. Սաֆարովան և ուրիշներ։

«Դրամատիկական ակումբ» թատերախումբն իր գոյությունը պահպանում է մինչև 1894 թ. թատերաշրջանի վերջը, որից հետո, դարձյալ նյութական ծանր պայմանների պատճառով, դադարում է գործելուց։ Այդ խումբը երեք թատերաշրջանի ընթացքում խաղաց հայկական, ռուսական և արևմտաեվրոպական մի շարք պիեսներ։ Հայ թատրոնի համար նորություն էին Բոմարշեի «Սևիլյան սափրիչը», Բյորոնսոնի «Մանկությունը», Հ. Իբսենի «Դոկտոր Շտոկմանը», «Ուրվականները», Հ. Զուդերմանի «Պատիվը», Մոպասանի «Մյուղոտը», Վիլդեններուխի «Արտուտը» և մի քանի մելոդրամներ։ Հայկական պիեսներում ազգային-ազատագրական տրամադրությունները յուրօրինակ ցոլացում էին գտնում սոսկ հին դարերին վերաբերող պատմական, այն էլ ոչ բոլոր դեպքերում հաջող ողբերգություններում։ Միաժամանակ այս պիեսները, որոնք քննադատական ռեալիզմի արգասիք էին, արդեն իննսունական թվականների սկզբներից սկսում են հայ թատրոնի խաղացանկում իրենց զգալ տալ։ Բուրժուական կյանքի ապականությունների խիստ բողոքարկման միջոցով հայ թատրոնը սկսում է մշակութային կյանքում առավել առաջադիմական դեր խաղալ։

Հայ դերասանների կատարողական արվեստի մեջ բնական ռեալիզմի տենդենցներն աստիճանաբար ուժեղանում են։ Ուշագրավ է, որ նեն նախորդ տասնամյակում թատերախմբերի շրջագայությունը հայաշատ գավառներում լուրջ մտահոգության խնդիր չէր դարձել, այսա 90-ական թվականների սկզբներից թատերապուսյանները դառնում են սովորական երևույթ՝ Գևորգ Պետրոսյանի և Հովհաննես Աբելյանի ջանքերի շնորհիվ։

1894 թ. դերասանական նոր խումբ կազմելու պարտականությունն իր վրա է վերցնում Աբելյանը։ Նա առաջարկում է դերասաններին ապավինել իրենց ուժերին և աշխատանքի ասպարեզ ընտրել ոչ միայն Թիֆլիսը, այլև հայաբնակ մյուս վայրերը։ Խումբը կոչվում էր «Դերասանական ընկերություն»։ Ահա այդ նոր կազմակերպությունը դառնում է 1895—1896 թթ. Թիֆլիսյան թատերաշրջանի կազմակերպիչը։ Այդ թատերաշրջանի խաղացանկ

են մտնում՝ հայկական դրամատուրգիայի կրկնվող պիեսներից բացի՝ Ա. Սարգարյան-Արևշատյանի և Ա. Վրույրի «Ղարաբաղի աստղագետը», Ա. Սարգարյան-Արևշատյանի «Ասլան-Բալասին» (ըստ Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի), Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբարը», Է. Տեր-Գրիգորյանի «Բարեգործության դիմակի տակ» և Ա. Երիցյանի «Սխալ հաշիվը» (փոխադրություն) պիեսները, արևմտաեվրոպական դրամատուրգիայից՝ Շիլլերի «Ավազակները», Շեքսպիրի «Օթելլոն», Մոլիերի «Ագահը» և «Ակամա բժիշկը», Իբսենի «Դոկտոր Շտոկմանը», Օգյուստ Վաքրի «Ժան Բոդրի» պիեսը։

1897 թ. սկզբներին Աբելյանի և Գ. Ավետյանի ղեկավարությամբ գործող խումբը երկար շրջագայությունից հետո հասնում է Բաքու։ Այդտեղ նրանց մեծ հաջողությունը պատճառ է դառնում, որ Բաքվի հայերը իրականացնեն արդեն վաղուց հասունացած իրենց ցանկությունը. Աբելյանի ջանքերով հրավիրվում է մի խորհրդակցություն, որը որոշում է հայ դերասանական մշտական խումբ պահել և սպասարկել ոչ միայն քաղաքի կենտրոնական մասերում ապրող հայերին, այլև արվարձաններն ու մոտակա գավառները։ Հանգանակած նյութական միջոցներով պահվող դերասանական մշտական խմբի անդամներ են հրավիրվում Սիրանույշը, Գ. Պետրոսյանը, Հ. Աբելյանը, Դ. Թրյանը, Պ. Արաքսյանը, Ա. Վրույրը, Ի. Ալիխանյանը, Հովհ. Զարիֆյանը, Գր. Ավետյանը և ուրիշներ։



Հովհաննես Աբելյան

Բաքվի դերասանական մշտական խումբը գործում է 1897—1902 թթ.։ Խմբի խաղացանկից մեծ մասամբ դուրս են մղվում նվազարժեք մելոդրամաները և թույլ ու անարվեստ պատմական ողբերգությունները, լայն տեղ տալով դասական դրամատուրգիային։ Ազգային ժամանակակից դրամատուրգիայի գծով խաղացանկը հարստացավ միայն երկու պիեսով՝ Ա. Շիրվանզադեի «Ունե՞ր իրավունք» և «Եվգինե» դրամաներով։

Բաքվի այդ թատերաշրջանները նշանավորվեցին նաև հայ դերասանների տեխնիկական վարպետության զարգացմամբ և բեմական ռեալիստական խաղաոճի տիրապետումով։ Հանդես եկան դերասանական տաղանդավոր նոր ուժեր, որոնց վիճակված էր հայ թատրոնի հետագա կյանքում մեծ դեր խաղալու (Սաթենիկ Ադամյան, Օլգա Մայսուրյան, Հովհ. Զարիֆյան, Իսահակ Ալիխանյան, Հովհ. Ստեփանյան, Ամո Խարազյան, Արշակ Մամիկոնյան, Միքայել Մանվելյան և ուրիշներ)։

Անդրկովկասի մյուս հայաբնակ քաղաքներում թատերական կյանքը գերազանցապես տնօրինում էին տեղական սիրողները։ Շատերը Շուշիի թատրոնի հիմնադիր Նիկիտա Խանդամիրյանի նման ինքնամոռացումով լծվել էին այդ դժվարին գործին։ Երևանում թատերական կյանքում առանձին դեր են կա-

տարել հասարակական գործիչներ և դրամատուրգներ Էմին Տեր-Գրիգորյանը, Մակար Տեր-Սարգսյանը, հասարակական գործիչ Աշխեն Տեր-Սարգսյանը, բժիշկ Արմենակ Մելիքյանը և ուրիշներ։ Սիրողների ջանքերով է պահվել թատրոնը նաև Ալեքսանդրապոլում։

Երբ Բաքվում կազմակերպվից դերասանական մշտական խումբ, Թիֆլիսում մնացած դերասանները «Դերասանական ընկերություն» անունով շարունակեցին ներկայացումներ տալ։ Թիֆլիսում առաջ եկավ նոր կազմակերպության ստեղծելու անհրաժեշտությունը, որին ձեռնարկեցին Գաբրիել Սունդուկյանը և նրա համախոհները։ Այդ գործում իր եռանդով ու համառությամբ աչքի ընկավ հասարակական գործիչ Մարիամ Թումանյանը։ 1902 թ. հիմնադրվից «Թիֆլիսի դրամատիկական ընկերությունը», որն իր գոյության գրեթե տասնութ տարվա ընթացքում խոշոր դեր կատարեց։

Նյութական դժվարություններով պայմանավորված դերասանական խումբը, «Թիֆլիսի դրամատիկական ընկերությունը» լայն պայքար ծավալեց ռեալիստական ուղղության համար։ Դերասանները գնում էին ազատագրվել կեղծ-դասական խաղակերպի մնացորդներից, ինչպես և պաթետիկ-ռոմանտիկ խաղաոճի ազդեցություններից, դառնալով գործող անձի ներքին հոգեկան աշխարհն իրական ու ճշմարտացի զգացումներով ու հույզերով հարստացնող դեղարվեստական մեթոդի կողմնակիցներ։ Այդ տեսակետից աչքի ընկան Սիրանույշը (1857—1932) և Հովհ. Աբելյանը (1865—1936)՝ հայ թատերական աշխարհի անմար աստղերը։ Նրանց ստեղծագործական մեծ քանքարն ու բազմաբեղուն գործունեությունը հարստացրել են հայ ազգային թատերական անգնահատելի։

Այդ տարիներին հանդես եկան նոր ուժեր՝ Օլգա Գուլազյանը, եկատերինա Թուրյան-Արմենյանը, Հասմիկը, Մարի Բերոյանը, Եղիա Խաժակը, Լիզիկ Հարությունյանը, Արուս Ոսկանյանը, Լյուսի Սևումյանը, Վանչիրը, Իսահակ Ալիխանյանը, Հովհաննես Զարիֆյանը, Վահրամ Փափազյանը և ուրիշներ։

Լուրջ հոգատարության առարկա դարձավ խաղացանկը։ Այն նախորդ տասնամյակների համեմատությամբ արմատական փոփոխություն կրեց։ Նոր ու արժեքավոր պիեսներ թարգմանվեցին և ինքնուրույն այնպիսի պիեսներ ստեղծվեցին, որոնք իրենց գրական արժանիքներով ու սոցիալական հնչեղությամբ ուշագրավ երևույթ դարձան (Շիրվանզադեի «Պատվի համար», «Արմենուհի», «Ավերակների վրա», «Կործանվածը», «Նամուսը», «Չար ոգին», Վրթ. Փափազյանի «Ժայռը», Լևոն Շանթի «Ճամփու վրան», «Հին աստվածները» և «Կայսրը», Նար-Դոսի «Սպանված աղավնին», «Ուխտավածները», Դ. Դեմիրճյանի «Դատաստանը», Ալեքսանդր Արելյանի «Մարվող ճրագները», «Նշանվածները», Լևոն Մանվելյանի «Նկարիչ Քաշճյանը», Միքայել Մանվելյանի «Հնքիաքը» և այլն)։

«Դրամատիկական ընկերության» գործունեությունը չպետք է սահմանափակվեր միայն Թիֆլիս քաղաքով. դրա համար էլ այն կոչվից նաև «Հայոց դրամատիկական ընկերություն»։ «Ընկերությունը» չկարողացավ կազմակերպչորեն իր ազդեցությունը տարածել այլ քաղաքների վրա։ «Ընկերության» համար շատ կարևոր էր նաև սեփական թատերական շենքի հարցը։ Դեռևս 70-ական թվականներից այդ հարցը, մանավանդ հայ վաճառական Գաբրիել Թամամշյանի՝ Թիֆլիսում 1851 թ. կառուցած թատրոնի գեղեցիկ շենքի հրդեհից հետո (1874), միշտ քննության է առնվել մամուլում և հասարակական դանադան հավաքույթներում։ Նույնիսկ հատուկ հանձնաժողովներ շենքի համար

հարմար տեղեր են փնտրել, ճարտարապետական նախագծեր կազմել, նյութական միջոցներ հավաքել, բայց գործը գլուխ չի եկել։ Եվ ստիպված թատերախումբը շարունակել է խաղալ «Արբունական» թատրոնում, որը կոչվում էր նաև «Ամառային թատրոն» (Քուռ գետի ափին ձգված մի ծառաշատ պարտեզում) կամ «Բանկի» թատրոնում (Արծրունու նախկին շենքում)։

Պակաս հետաքրքրություն չի առաջացրել դերասանական կադրեր պատրաստելու նպատակով դրամատիկական մասնագիտական ստուդիա ստեղծելու հարցը։ «Ընկերության» դեկավարներից ոմանք չէին հավատում նման ստուդիայի ապագային։ Եվ կարճատև կյանք ունեցած ստուդիաների գոյությունը հիմնականում կապված է եղել մասնավոր անձերի (Սոֆյա Դոլուխանյան, Ստեփան Քափանակյան, Օվի Սևումյան, Լևոն Քալանթար, Սուրբեն Խաչատրյան) նախաձեռնության ու եռանդի հետ։



Սիրանույշ

Թիֆլիսի թատերական կյանքը չի սահմանափակվել միայն «Դրամատիկական ընկերության» գործունեության շրջանակներով։ 1900-ից մինչև 1917 թթ. քաղաքի տարբեր թաղամասերում եղել են թատերական խմբեր, որոնց իրենց մասնակցությունն են բերել ոչ միայն սիրողներ, այլև պրոֆեսիոնալ դերասաններ։ Այդ գործին առանձին ուշադրություն էին դարձնում մանավանդ հեղափոխականորեն տրամադրված գիտակից բանվորները (տպագրիչներ, գրաշարներ, կաշեգործներ, ծխախոտագործներ, երկաթուղայիններ) և մտավորականները։ Հատկապես մեծ դեր խաղաց Հավլաբարի թատրոնը, որը 1903 թ. կազմակերպել էր տաղանդավոր դերասան-երգահան և հասարակական գործիչ Պողոս Արաքսյանը, իսկ այնուհետև՝ Զուբալովի անվան «Ժողովրդական տան» հայկական դրամատիկ խումբը (Ներկայիս Կ. Մարջանաշվիլու անվան թատրոնի շենքում)։ Վերջինս կառուցվել էր հայ մեծահարուստ Ստեփան Զուբալովի բարեգործական նպատակով հատկացված գումարի հաշվին։ Այն բացվել էր 1909 թ.։ Գործի նպատակահարմար դրված, գների չափազանց մատչելիության և սիրողների անձնուրաց ու անվարձահատույց աշխատանքի շնորհիվ մի քանի ազգերի դրամատիկական սենյակներ ունեցող «Զուբալովի անվան ժողովրդական տան» թատրոնի հայկական սենյակն շատ կարճ ժամանակամիջոցում ձեռք է բերում մեծ համբավ։ Նրա դեկավարությունը հիմնականում գտնվում էր հեղափոխականորեն տրամադրված գործիչների ձեռքում, որը առանձին խնամատ էր տալիս թատրոնի գործունեությանը։ Թատերասրահը միշտ լիքն էր աշխատավոր հանդիսականներով։ Սիրողներից շատերը հետագայում ամբողջությամբ նվիրվեցին բեմին։ Այդ թատրոնում որպես ռեժիսոր-դերասաններ մեծ դեր են կատարել

Պողոս Արաքսյանը, Արմեն Արմենյանը, Օվի Սևումյանը, Ամո Խարազյանը և Լևոն Քալանթարը։

Բաքվում «Մարդասիրական ընկերության» և «Թատրոնական կոմիտեի» թատերախմբերի լուծարքից հետո ներկայացումների կազմակերպման գործը տնօրինեցին Գևորգ Պետրոսյանը, Հովհաննես Աբելյանը, Արմեն Արմենյանը և Սիրանույշը։ 1907 թ. հիմնադրվում է «Հայոց կուլտուրական միության» թատերական սեկցիան, որը նույն տարին կազմակերպում է դերասանական խումբ։ Այդ թատրոնն իր գոյությունը պահպանում է գրեթե մի տասնամյակ և աչքի ընկնող դեր խաղում Բաքվի հայ հասարակության մեջ։ Առաջին անգամ բեմ են բարձրանում Շիրվանզադեի «Պատվի համար», Ա. Օստրովսկու «Անժիտը», Ա. Չեխովի «Ճայը» և այլ պիեսներ։

Բաքվի թատերական կյանքում ուշագրավ էին նաև բանվորական արվարձաններում գործող ժողովրդական թատրոնները, որոնք ստեղծվել էին 1900-ական թվականների սկզբներից։ Այդ շրջանում հայտնի էր «Քնարիկ» թատերախումբը, որի գեկավարն էր տաղանդավոր դերասանուհի Քնարիկը (Մարգարիտ Բաբայան)։ Այդպիսի օջախներից էին Բալախանիում, Սև քաղաքում, Բայիլովում և այլ արվարձաններում գործող բանվորական լսարանները, որտեղ թե՛ սիրողները և թե՛ դերասանները շատ հաճախ մատչելի գներով ներկայացումներ էին կազմակերպում։ Սուրեն Սպանդարյանը գրում էր. «Ժողովրդական տան» դահլիճը բառացի լեփ-լեցուն էր լինում, այնպես որ «ասեղ գցելու տեղ չէր մնում» և բանվորական հասարակությունը լարված հետաքրքրությամբ հետևում էր, թե ինչ է արվում ու խոսվում բեմի վրա։ Սիրած հերոսի «ամեն մի հաջող խոսքը» հավանության էր առաջացնում հասարակության մեջ, իսկ «բացասական» տիպի ամեն մի նյութ ուղեկցվում էր զայրացին քնդյունով... Այնտեղ խաղացող դերասաններն զգում էին, որ իրենց առջև գտնվում է մի հատուկ աուդիտորիա, որ այստեղ կարևորը մանրամասնությունները չեն, ուժիսորական հրաշքները չեն, այլ իր դերով համակվելը, հանդիսականի հոգին շոշափել կարողանալը, իսկ այդ հոգին հեշտ էր ալեկոծել։ Հարկավոր էր միայն լավ խոսքեր ասել ազնիվ, անկեղծ ձայնով։ Իսկ անտրակտներին տեղի ունեցող վեճերը, խոսակցությունները տեսածի ու զգացածի առթիվ, իսկ այն ջերմ, բուռն շնորհակալությունը ժողովրդական բեմի գործիչներին, իսկ այն լուրջ, ներհուն վերաբերմունքը դեպի ռեպերտուարը—այս բոլոր փաստերը ոգևորում ու ամրապնդում էին կուլտուր-լուսավորական գործի աշխատողներին, հոգեկան ամուր կապ էին հաստատում դերասանների ու հանդիսականների միջև»[80]։

1905 թ. աշնանը թատերասեր և իրավաբան Գևորգ Ջուբարի նախաձեռնությամբ Նոր Նախիջևանում կազմակերպվում է «Դրամատիկական արվեստի սիրողների ընկերությունը», որը ներկայացումներ էր տալիս և՛ հայերեն, և՛ ռուսերեն։ Թեև ընկերության գոյությունը տևական չեղավ, բայց կարևոր դեր խաղաց Նոր Նախիջևանի հայ հասարակայնության մեջ։

1900—1917 թթ. թատերական հյուրախաղերի կազմակերպումը անհամեմատ լայն ծավալ ընդունեց։ Ամեն մի թատերաշրջանից հետո Թիֆլիսից և Բաքվից դերասանական խմբեր էին գնում Շուշի, Ելիսավետպոլ, Նուխի, Ախալցխա, Երևան, Ալեքսանդրապոլ, Կարս, Բաթում, Մուխամի, Ղզլար,

80 Ս. Սպանդարյան. Հոդվածներ գրականության, արվեստի, կուլտուրայի և կրթության մասին, Երևան, 1949, էջ 102։

Գրոզնի, Դերենդ, Մոզդոկ, Նոր Նախիջևան, Ռոստով, Միջին Ասիայի քաղաքները։ Շրջագայությունների այդ շղթայում նշանավոր են այն թատերախաղերը, որոնք 1911 և 1912 թթ. տեղի ունեցան Մոսկվայում և Պետերբուրգում։ Ուղևորությունները գլխավորում էր Հովհաննես Աբելյանը։ Երկրորդ շրջագայության ժամանակ խմբի մեջ էին Սիրանույշը, Օլգա Մայսուրյանը, Ժասմենը, Օլգա Գուլազյանը, Հովհաննես Զարիֆյանը, Խաչակ Ալիխանյանը, Գրիգոր Ավետյանը, Արշակ Հարությունյանը և ուրիշներ։ Խումբը 1912 թ. մարտի 8-ից սկսած հանդես եկավ «Նամուս», «Դավաճանություն», «Մեդեա», «Հայրենական տուն» ներկայացումներով։ Հայ արվեստագետների նկարները բուռն հետաքրքրություն առաջացրին ռուս հասարակության լայն շրջաններում։ Բազմաթիվ հյուրերի հետ միասին ներկայացումները դիտել են Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի ղեկավար Վլ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոն, Փոքր թատրոնի դերասանուհի Մ. Ն. Երմոլովան, ռեժիսոր Կոնստանտին Մարջանովը, դերասան և դրամատուրգ Ա. Ի. Յուժին-Սումբատովը և ուրիշներ, որոնք շատ բարձր են գնահատել հայ դերասանների խաղը, մասնավորապես Սիրանույշի դերակատարումները։ Ուշագրավ էր նաև Հ. Աբելյանի գլխավորությամբ գործող դերասանական խմբի 1913 թ. ուղևորությունը Իրան՝ Էնզելի, Ռեշտ, Ղազվին, Թեհրան, Թավրիզ։

1910-ական թվականներին Կովկասում հայ դրամայի կողքին սկսեց զարգանալ օպերետային արվեստը, որը որակվում էր որպես «արևելյան օպերետա», որովհետև օպերետների թեմաները գլխավորապես արևելյան էին, արևելքի ավանդավեպերի, սիրերգությունների և կենցաղի հետ առնչված, իսկ նրանց երաժշտությունն էլ ուներ արևելյան խիստ երանգավորում («Աշուղ Ղարիբ», «Շահ-Իսմայիլ», «Լեյլի Մեջնուն», «Ասլի Քյարամ», «Սոս և Վարդիթեր», «Ուշ լինի, նուշ լինի» «Արշին մալալան», «Մաշտի Իբաթ», «Մոլլա Նասրեդդին», «Պըլը-Պուդի» և այլն)։ Հայկական «արևելյան օպերետա», որպես թատերական արվեստի մի տեսակ, վերընթաց ապրեց մանավանդ առաջին համաշխարհային պատերազմի օրերին և իր ժողովրդականությամբ նույնիսկ սկսեց մրցել հայկական դրամայի հետ։ Օպերետի ներկայացուցիչներից էին Գևորգ Փիրումյանը, Սամսոն Կարապետյանը, Սեդրակ Մաղալյանը, Հովհ. Ղազարյանը, Սեդրակ Սուրաբյանը և ուրիշներ։ Պատերազմի դժվարին տարիներին հանդիսատեսների լայն խավերը՝ իրենց մոայլ տրամադրությունները ցրելու համար, ավելի շատ գնում էին տեսնելու և լսելու երաժշտական ու երգախառն ներկայացումներ։

Այլ ուղի անցավ արևմտահայ թատրոնը։ 1870-ական թվականների վերջերից Կ. Պոլսում բռնակալ սուլթանի հրամանով հայերի, ինչպես նաև որոշ ժամանակով թուրքերի թատերական կյանքը խափանվեց։ Տակավին այդ տարիներից առաջ Թուրքիայի մայրաքաղաքում թուրքերեն խաղացվող օպերետային ներկայացումները մեծ հարգ ունեին։ Այդ հետաքրքրությունն ու ճաշակը թուրք հանդիսատեսների մեջ արմատացրել էին Հակոբ Վարդովյանը, Տիգրան Ջուխաջյանը և Սերովբե Պենկլյանը։ Ներկայացումների հիմնական ուժերը հայ դերասաններն էին, որոնց վարպետ կատարումները թատրոն էին բերում տարբեր խավերի մարդկանց։ Սուլթան Աբդուլ Համիդը չհանդուրժեց այդ և կարգադրեց քարոզանդ անել «Կնտիկ փաշայի» թատերական շենքը։ Դրանից հետո Վարդովյանը փորձեց վերականգնել իր գործը, սակայն ան-

հաջողության հանդիպեց։ Հետագայում կառավարությունը Վարդովյանին հարկադրեց ընդմիշտ թողնել հայկական թատերական ասպարեզը։

Օպերետային խմբի ղեկավարությունը նորից իր ձեռքն է վերցնում Ս. Պենկլյանը։ Բայց Թուրքիայի մայրաքաղաքում սկսված հայահալած քաղաքականության պատճառով հարկադրված է լինում դիմել թափառումների։ Նա իր խումբն է հրավիրում Սիրանույշին, Աստղիկին, Գարագաշյան քույրերին, Մարտիրոս Մնակյանին, որոնց մասնակցությունը մեծ շուք է տալիս երաժշտական թատրոնին։ Մնակյանը ոչ միայն այդ խմբի դերասան էր, այլև հմուտ ռեժիսոր։ Տ. Չուխաջյանի, Մնակյանի, Պենկլյանի և մյուսների ջանքերով խումբը դառնում է եվրոպական իմաստով աչքի ընկնող պրոֆեսիոնալ օպերետային կոլեկտիվ։ Թատերախումբը մեկնում է Կավալլա, Արշիպելագի կղզիները, ապա Զմյուռնիա, որտեղ մնում է գրեթե կես տարի, այնուհետև անցնում է Հունաստան՝ Աթենք և Պիրեյ։ Աթենքում հույները խոր հրճվանքով են ընդունում հյուրախաղերը։ 1885 թ. օպերետային խումբը այցելում է Եգիպտոս՝ Կահիրե, Դա Եգիպտոս այցելող առաջին հայկական թատերախումբն էր։ Չուխաջյանի օպերետները, մանավանդ «Լեբլեբիջին», աննկարագրելի տպավորություն են թողնում. Խաղացանկում էին նաև թարգմանական «Ժիրոֆլե-Ժիրոֆլյա», «Գեղեցկուհի Հեղինեն», «Բամելյան», «Օրֆեյ», «Կառնավալի հարսը», «Անգոն» և այլ գործեր։

1880—1885 թթ. Թուրքիայում գործել է (գլխավորապես Բուրսայում) Ֆասուլաճյանի թատերախումբը, որը հիմնականում խաղում էր թուրքերեն լեզվով։

1885 թ. աշնանը **Մարտիրոս Մնակյանը** (1837—1920) թողնում է Պենկլյանի թատերախումբը, իր շուրջը հավաքում մի քանի փորձված դերասան-դերասանուհիների (Մարի-Նվարդ, Պայծառ Ֆասուլաճյան, Դավիթ Թրյան) և հիմք դնում «Օսմանյան դրամատիկ ընկերությանը»։ «Ընկերությունը» մեծ դեր է կատարում թուրքական դրամատիկ թատրոնի ստեղծման և զարգացման գործում, որի վաստակը առանձին երախտագիտությամբ նշել է թուրք քննադատությունը։ Մնակյանը համարվել է «Օսմանյան թատրոնի» մեծ երախտավոր-ուսուցիչը։ Մնակյանի և նրան աջակցող գործիչների միջոցով արևմտաեվրոպական դասական դրամատուրգիայի բազմաթիվ գործեր առաջին անգամ թարգմանվեցին թուրքերեն և հարստացրին խաղացանկը։ Նրանց միջոցով զարկ տրվեց օսմանյան թատերագրությանը, մեծապես նպաստելով թուրք թատերագիրների աճին։ Երկար ժամանակ «Ընկերությունը» Թուրքիայի միակ դրամատիկական կանոնավոր թատրոնն էր, որը որոշ ընդհատումներով գործեց մինչև 1900-ական թվականները։

Այդ ժամանակամիջոցում Թուրքիայում հնարավոր չեղավ հայկական պրոֆեսիոնալ խումբ կազմել և հայերեն ներկայացումներ տալ, բացառությամբ Թ. Ֆասուլաճյանի և Մ. Մնակյանի հազվադեպ փորձերի։ Հայկական ներկայացումներ երբեմն կազմակերպվում էին միայն դպրոցներում, որոնք խիստ տեղական բնույթ ունեին։

Դրությունը փոխվեց թուրքական սահմանադրության հռչակումից հետո։ Մի խումբ դերասաններ (Մկրտիչ Ջանան, Վահրամ Փափազյան և ուրիշներ) սկսեցին հայերեն ներկայացումներ տալ Կ. Պոլսի արվարձաններում, հասնելով մինչև Ադաբազար, Պարտիզակ, Ռոդոստո, նույնիսկ Զմյուռնիա։

Արևմտյան Հայաստանի քաղաքներում՝ Սեբաստիայում, Երզնկայում, Կարինում, Ակնում, Վանում, Աբարկիրում ևս թատերական կյանքը վերակենդանացավ։

Այսպիսին էր դրությունը, երբ Աբելյանի և Արմենյանի գլխավորությամբ գործող դերասանական խումբը մեկնեց Թուրքիա (1908) և հայերեն ներկայացումներ տվեց Բոթակում, Կարինում, Բաբերդում, Տրապիզոնում և այլ քաղաքներում ու Կ. Պոլսում, որոնք բեղունվեցին մեծ խանդավառությամբ։ Հայկական մամուլը փայլուն գնահատական տվեց «Պատվի համար», «Եվդոկիան», «Դոկտոր Շտոկման», «Օթելլո», «Ավազակները», «Անագնիվ չեն ծրնվում», «Մարվող էրագներ», «Հրեաներ» և այլ պիեսների բեմադրություններ։ Դա կոլկասահայ դերասանների առաջին կազմակերպված այցելությունն էր Արևմտյան Հայաստան։

«Արելյան-Արմենյան» ընկերակցությունը 1909 թ. երկրորդ անգամ է մեկնում Թուրքիա։ Կ. Պոլսում նրան միանում են Հավհաննես Զարիֆյանի ղեկավարությամբ գործող խմբից մի քանի դերասաններ։ Խումբը բաժանվում է երեք մասի, որոնցից մեկը՝ Արմենյանի ղեկավարությամբ գնում է Զմյուռնիա, մյուսը՝ Արտեմ Բերոյանի ղեկավարությամբ՝ Անատոլիա, իսկ երրորդը՝ Աբելյանի և Զարիֆյանի ղեկավարությամբ՝ Պարտիզակ, Ադաբազար, Էսքիշեհիր և Ռոդոստո։



Տիգրան Զոհրապյան

Կ. Պոլսում գործել են նաև երկու այլ խմբեր։ Մեկը՝ Գրիգոր Ավետյանի ղեկավարությամբ (Օվի Սևումյան, Աբրամ Վրույր, Սաթենիկ Ադամյան և այլոք), որը խաղացել էր նաև Բուլղարիայում, մյուսը՝ Սիրանույշի ղեկավարությամբ, որի ներկայացումներին մասնակցում էր Վահրամ Փափազյանը։

4. ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ

Աբդուլհամիդյան ռեակցիան խիստ բացասաբար անդրադարձավ արևմտահայ երաժշտական կյանքի վրա։ Արգելքներն ու բռնություններ հետզհետե էին ամեն մի առաջընթաց։ Հայ նշանավոր երաժշտագետ-կոմպոզիտոր և երաժշտական-հասարակական գործիչ Եղիա Տնտեսյանը բանտ նետվեց իր հրատարակած «Նոր երգարան հայոցի» (1880) համար, որտեղ էլ գտավ իր վախճանը։ Երաժշտական գործիչներից շատերը ցրվեցին տարբեր կողմեր և միայն Տ. Չուխաջյանն էր, որ մնաց Կ. Պոլսում՝ հույս ունենալով, որ հանգամանքները կփոխվեն և ինքը դարձյալ կկարողանա շարունակել իր գործունեությունը։ Սակայն նրա հույսերը չարդարացան։ 1890 թ. Փարիզում իր «Զեմիրե» օպերայի ներկայացման անհաջող փորձերից հուսահատված նա վերադարձավ Կ. Պոլիս, ապա անցավ Զմյուռնիա և այնտեղ ծայր աղքատության մեջ կնքեց իր մահկանացուն (1898)։

1908 թվականից հետո Կ. Պոլսի արվարձաններում կազմակերպվեցին երգչախմբեր ու փողային նվագախմբեր։ 1910 թ. Կոմիտասը էջմիածնից փոխադրվեց Կ. Պոլիս և ստեղծեց 300 հոգուց բաղկացած «Գուսան» երգչախումբը։ Նրա հզոր տաղանդի շնորհիվ ամենուրեք տարածվեց հայկական երգը և այն դուրս բերվեց նաև միջազգային ասպարեզ։ Կոմիտասը կարճ ժամանակում



Կոմիտաս

պատրաստեց աշակերտներ, որոնք հետագայում շարունակեցին նրա գործը (Բ. Կանաչյան, Վ. Սարգսյան, Մ. Թումաճան, Վ. Սրվանձտյան, Հ. Սեմերճյան)։

Բոլորովին այլ ուղիով ընթացավ արևելահայ երաժշտական կյանքը։ 1885 թ. մարտի 15-ին Թիֆլիսում տեղի ունեցավ Ք. Կարա-Մուրզայի քառաձայն երգչախմբի անդրանիկ համերգը, որով և հայ իրականության մեջ

սկիզբ դրվեց քառաձայն երգեցողությանը։ Հայ երաժշտությունը զարկերի ընթացքում զարգացել էր որպես մոնոդիկ (միաձայն) երաժշտություն։ Բերև այդպիսին նա հասել էր զարգացման բարձր աստիճանի։ Ստեղծվել էին հայ ժողովրդական, գուսանական և հոգևոր երաժշտության բարձրարվեստ գործեր։ Սակայն ազգային ինքնագիտակցության արթնացման և ազգային-ազատագրական շարժումների ծավալման շրջանում դրանք այլևս չէին կարող բավարարել հասարակության պահանջները։ Հաստնացել էր ժողովրդական զանգվածների պահանջները բավարարող երաժշտական նոր ձևերի օգտագործման հարցը։ Այդ իմաստով բացառիկ նշանակություն է ստանում խմբական երգեցողությունը և ընդհանրապես բազմաձայնության ընդունումն ու տարածումը։ Այդ ուղղությամբ արդեն զգալի գործ էր կատարված Տ. Չուխաջյանի կողմից, որի ստեղծագործություններում բազմաձայնությունն առաջնակարգ տեղ էր գրավում։ Սակայն բազմաձայն երգեցողության տարածման գործում առանձին ևռանդ ցուցաբերեցին Ք. Կարա-Մուրզան, Մ. Եկմալյանը, Կոմիտասը և այլ գործիչներ։ Դարավերջին բազմաձայն երգեցողությունը մուտք գործեց նաև հայ եկեղեցական երաժշտության մեջ։ 1896 թ. եվրոպական նոտաներով լայլցիգում հրատարակվեց Մ. Եկմալյանի «Երգեցողությունք սբրբոյ պատարագի» ծավալուն ու մեծարժեք խմբերգային պարտիտուրան։ Հատկապես Կարա-Մուրզայի սիստեմատիկ ու հետևողական ջանքերի շնորհիվ հայ իրականության մեջ համերգային գործունեության ավանդույթ ստեղծվեց։ Շրջելով Կովկասի հայաբնակ քաղաքներն ու ավաններըե նա սիրողներից երգչախմբեր էր կազմակերպում, քառաձայն երգի համերգներ տալիս։ Անհատական պարապմունքների և Թիֆլիսում կազմակերպած հատուկ դասընթացների միջոցով նա պատրաստում էր նաև խմբավարներ։



Քրիստափոր Կարա-Մուրզա

Բավական սուր պայքար ծավալվեց նոտագրության հարցի շուրջը։ 1873—1874 թթ. Գևորգ IV կաթողիկոսը Կ. Պոլսից էջմիածին հրավիրեց ձայնագրագետ-կոմպոզիտոր Նիկողայոս Թաշճյանին (1841—1885) և նրա օգնությամբ լիմոնջյանական ձայնանիշերով[81] ձայնագրել տվեց շարականներ, պատարա-

81 Լիմոնջյանական ձայնանիշերը կամ հայ նոր ձայնագրության սիստեմը ստեղծվել է 1815 թ. Կ. Պոլսում, Բաբա Համբարձում Լիմոնջյանի կողմից, հայ մոնոդիկ (միաձայն) երաժշտության ձայնագրման համար, սակայն այն որդեգրվեց եկեղեցու կողմից, ստեղծվեցին դասագրքեր և ուսուցումը դարձավ պարտադիր հայ դպրոցներում։

դի երգեցողությունը, ժամագիրքը և հոգևոր այլ երգեր, որոնք առանձին գրքերով լույս ընծայվեցին հաջորդ տարիներին։ Դրա շնորհիվ կորստից փրկվեցին հայ հոգևոր երաժշտության բազմաթիվ նմուշներ։ Բացի այդ, Թաշճյանը պարապեց 25 երիտասարդների հետ, որոնք դարձան Լիմոնջյանի սիստեմի ձայնագրության ուսուցիչներ։ Դրանց թվում էր նաև Մ. Եկմալյանը։



Մակար Եկմալյան

Այդ նույն՝ 1874 թ. էջմիածնում հիմնադրվեց Գևորգյան Հոգևոր Ճեմարանը, որը նպաստեց նաև հայ երաժշտական կադրերի պատրաստմանը։ Ն. Թաշճյանը (1874), Եղնիկ քահ. Երզնկյանը (1876) և Ա. Բրուտյանը (1890) կազմեցին և հրատարակեցին ձայնագրության դասագրքեր։

Լիմոնջյանի սիստեմը վոկալ երաժշտության ձայնագրման միջոց էր։ Մինչդեռ XIX դարի վերջին քառորդում առաջ է գալիս գործիքային երաժշտության ձայնագրման անհրաժեշտությունը, ուր անզոր էր Լիմոնջյանի սիստեմը։ Երկար ժամանակ, և հատկապես Մ. Եկմալյանի պատարագի տպագրության առիթով, հայ մամուլում բանավեճ էր գնում այս հարցերի շուրջը, մինչև որ Եկմալյանը գործնականորեն լուծեց այն՝ իր պատարագը տպագրելով եվրոպական նոտաներով։ Նույնիսկ հետագա տարիներին Կոմիտասը, որպես աղագրության միջոց, օգտագործում էր Լիմոնջյանի ձայնանիշերը, բայց իր ստեղծագործությունները հրատարակում էր եվրոպական ընդհանրացած նոտագրությամբ։

Ձարգացման նոր շրջան թևակոխեց նաև հայ գուսանաստեղծական ստեղծությունը։ Հանդես եկան բազմաթիվ հայ աշուղներ, որոնցից ամենանշանավորներն են՝ Ջիվանին (Սերովբե Բենկոյան-Լևոնյան, 1846—1909) Ջամալին, Մազային, Խայաթը, Մահուրի Գևորգը, Աշխուժը, Պայծառեն և Շերամը (Գրիգոր Տալյան, 1857—1938)։

Ջիվանին առաջիններից մեկն էր, որ իր երգերն ու բանաստեղծությունները հորինեց գրական հայերենով, աշուղական ավանդական հղանակներն օգտագործելու հետ միաժամանակ հատուկ ուշադրություն դարձրեց նոր հղանակների ստեղծմանը, առատորեն օգտագործելով ասերգային բնույթի հընչերանգները և ընդհանրապես հայ ժողովրդական ու քաղաքային երաժշտության տարրերը։ Մեծ ժողովրդականության արժանացան նրա ստեղծած՝ «Մայրիկ», «Լինկեր», «Ձախորդ օրերը», «Այծյամ», «Սպիտակ մազեր», «Քո փափագով», «Պաղ աղբյուրի մոտ», «Ով սիրուն, սիրուն», «Խելքի աշեցեք», «Ես մեկ ծառ եմ ծիրանի» և բազմաթիվ այլ երգեր։

Բացառիկ ժողովրդականության հասավ նաև Շերամը։ Նրա երգերից

հատկապես հայտնի են՝ «Նա մի նազ ունի», «Սարեր կաղաչեմ», «Թառը դոշիս», «Դուն իմ մուսան ես», «Ճորորա», «Էլի երկինքն ամպել է» և շատ ուրիշներ։

XIX դ. վերջին և XX դ. սկզբին զգալի աշխատանք տարվեց հայ ժողովրդական և գուսանական ստեղծագործության նմուշները ձայնագրելու ուղղությամբ, որով երկար տարիներ զբաղվեցին հատկապես Ք. Կարա-Մուրզան, Մ. Եկմալյանը, Ն. Տիգրանյանը և ձայնագրած երգերի, պարեղանակների ու գործիքային այլ ստեղծագործությունների մի զգալի մասը ներդաշնակելով որպես մեներգեր, խմբերգեր ու դաշնամուրային ստեղծագործություններ, հարստացրին հայ երաժշտական գրականությունը։ Երաժշտական ազգագրության տեսակետից նշանակալից գործ կատարեց երաժշտության ուսուցիչ Արշակ Բրուտյանը, որի «Թամկական մրմունջներ» ժողովածուն լայն ընդունելություն գտավ և արժանացավ մի քանի տպագրության։ Նրա ջանքերի շնորհիվ կորստից փրկվեցին բազմաթիվ ժողովրդական ու աշուղական երգերի մեղեդիներ, որոնք նա ձայնագրեց թե հայկական ձայնանիշերով, և թե եվրոպական նոտագրությամբ։ Թեև նրա ձայնագրությունները չտպագրվեցին, սակայն ձեռագիր վիճակում էլ հնարավորություն են տալիս լիակատար գաղափար կազմելու ավելի քան 300 երգի մասին։ Ա. Բրուտյանի հավաքածուի մեջ բազմաթիվ են աշուղ Ջիվանու երգերը, որոնք նա ձայնագրել է հեղինակի անմիջական կատարմամբ։



Ջիվանի (Սերովբե Բեճկոյան-Լևոնյան)

Հայ երաժշտական ազգագրության իսկական հիմնադիրը հանդիսացավ Կոմիտասը (Սողոմոն Սողոմոնյան), որը տարիներ շարունակ զբաղվեց ժողովրդական ու հոգևոր երգերի ձայնագրությամբ և այն դարձրեց գիտական մանրակրկիտ ուսումնասիրության նյութ։ Նրա առաջին ձեռագիր ժողովածուն կազմվել է 1891 թ. և պարունակում է 37 երգ[82]։ Հայկական ձայնանիշերով ձայնագրված այդ երգերը ցույց են տալիս, թե որքան մեծ ուշադրությամբ, խնամքով ու սիրով է նա վերաբերվել այդ գործին։ Ճմարանն ավարտելուց հետո ձայնագրեց «Շար Ակնա երգերի» և որպես հավելված հրատարակեց Հ. Ճանիկյանի «Հնութիւնք Ակնայ» արժեքավոր գրքի հետ (1895)։ Երգերի այս շարքը հայ մոնոդիկ (միաձայն) երաժշտության բարձրարժեք նմուշներ

82 Այս ժողովածուի երգերը 1913 թ. ծոցատետրի երգերի հետ միասին Մ. Աղայանը փոխադրել է եվրոպական նոտագրության և 1949 թ. հրատարակել որպես Կոմիտասի «Ազգագրական ժողովածուի» երկրորդ հատոր։

են և սերտորեն առնչվում են միջնադարյան գուսանական ստեղծագործության հետ։ Այստեղ ամփոփված են հարսանեկան, օրորոցային, պանդխտության, ողբի և այլ երգեր ու պարերգեր։

1904 թ. Սպ. Մելիքյանը արտագրեց և 1931 թ. հրատարակեց Կոմիտասի ամենախոշոր ժողովածուն, որը պարունակում է 255 երգ։ Ըստ երևույթին 1904 թ. հետո Կոմիտասը շարունակել է լրացնել ժողովածուն, որովհետև նոր գտնված բնագրում երգերի թիվը հասնում է 368-ի։ Այս ժողովածուն ոչ միայն Կոմիտասի ազգագրական ժառանգության, այլև ընդհանրապես հայ ժողովրդական երաժշտության ամենահարուստ ու մեծարժեք գործն է և իրավամբ համարվում է հայ ժողովրդական երգի հանրագիտարան։ Նրա մեջ ամփոփված են հայ գեղչկական երգի համարյա բոլոր ժանրերի ամենագեղարվեստական նմուշները։ Բարձր է նաև այդ ժողովածուի գիտական արժեքը, որովհետև այն պարունակում է հարուստ նյութ հայ ժողովրդի երգի ուսումնասիրության համար։ Ինչպես ինքը, Կոմիտասը, նույնպես և նրանից հետո հանդես եկած նշանավոր հայ երաժշտագետները (Ք. Ս. Քուշնարյան, Ալ. Ի. Շահվերդյան) իրենց ուսումնասիրությունների համար հարուստ նյութ են քաղել այս ժողովածուից։

Կոմիտասը թողել է ևս մի ժողովածու, որը պարունակում է 236 երգ, գրված նույնպես հայկական ձայնանիշերով։ Բացի այդ, Կոմիտասից մեզ է հասել մի քանի անտիպ ժողովածուներ։ Եթե այս ժողովածուներին ավելացնենք 1913 թ. ծոցատետրի 60 երգերը (որոնք նա ձայնագրել է Հայաստանի շրջաններում՝ իր վերջին այցելության ժամանակ), պոլաբնակ կոմպոզիտոր-դաշնակահարուհի օր. Գոհարիկ Զազարոսյանի մոտ գտնվող 70 երգից բաղկացած ժողովածուն, հարսանեկան երգերի երկու փոքրիկ ձեռագիր ժողովածուները և այլ ձայնագրություններ, որոնք ցրված են նրա երաժշտագիտական ուսումնասիրություններում, ապա կարելի է պատկերացում կազմել Կոմիտասի ազգագրական հսկայական ժառանգության մասին։

Կոմիտասը մեծ ավանդ ունի հայ հոգևոր երգերի՝ պատարագի երգեր, շարականներ, տաղեր, մեղեդիներ և այլուրիաներ., ձայնագրության ասպարեզում։ Հիշատակելի են «Տիրամայրը», «Աչքն ծով», «Հավիկ», «Սայլն այն իջաներ» և այլ չքնաղ տաղերը, որոնց կատարմամբ Կոմիտասը փայլել է Միջազգային երաժշտական ընկերության կոնգրեսներում և համերգներում։

Այս բոլորի հետ միասին Կոմիտասը ձայնագրել է նաև հարևան ժողովուրդների՝ քրդերի, թուրքերի, պարսիկների և հույների ժողովրդական երգերը, որոնց ուսումնասիրությամբ և համադրությամբ նա բացահայտում էր հայ ժողովրդական երաժշտության առանձնահատկություններ։ Կոմիտասի ազգագրական ժառանգությունն ունի գիտական ու գեղարվեստական մեծ արժեք և հայ երաժշտական ազգագրության հիմքն է։

Կոմիտասից բացի, ուրիշներն էլ են կազմել ու հրատարակել տարբեր ժողովածուներ ու երգարաններ (Լ. Եղիազարյանի «Հավաքածո հայոց ժողովրդական երգերի», Փարիզ, 1900, Գ. Բոյաջյանի «Հայ ժողովրդական երգեր», Փարիզ, 1900, Ս. Դևմուրյանի «Քնար» երգարանը, Թիֆլիս, 1907 և այլն), բայց սրանք ազգագրական ժողովածուներ չեն և հետապնդում են ոչ թե գիտական, այլ գործնական նպատակ՝ նպաստել հրատարակված երգերի տարածմանը։

Կոմիտասի գիտահետազոտական աշխատանքներից կարևոր են նրա երաժշտագիտական այն գործերը, որոնք ընդգրկում են հայ ժողովրդական և հոգևոր երաժշտությունը, խազագիտությունը, հայ երաժշտության պատմությունն ու տեսությունը, քրդական երաժշտությունը, հարևան ժողովուրդների երաժշտական կուլտուրաների համեմատական ուսումնասիրությունը և բազմաթիվ այլ հարցեր։ Դժբախտաբար, նրա սկսած ուսումնասիրություններից շատերը կրում են էսքիզային բնույթ, սևագիր նշումներ են, բայց մի մասն էլ, թեև ավարտված է եղել ու կազմել հատորներ (ինչպիսին խազերի[83] խնդրին նվիրված աշխատությունն է), սակայն նրա հիվանդության տարիներին անհետ կորել է։ Քիչ բան է նա հասցրել հրատարակել հոդվածների ձևով և կամ կարդացել որպես դասախոսություններ Միջազգային երաժշտական ընկերության կոնգրեսներում, բայց այդ քիչն էլ իր խորությամբ ու ընդգրկման բազմակողմանիությամբ բացառիկ նշանակություն ունի։

Առանձնապես կարևոր են Կոմիտասի այն ուսումնասիրությունները, որոնք նվիրված են հայ ժողովրդական երաժշտությանը և բացահայտում են նրա տեսական հիմունքները։ Նա մանրազնին ուսումնասիրության է ենթարկել ժողովրդական երգաստեղծության բոլոր պրոցեսները, տարբեր ժանրերն ու տարատեսակները։ «Հայն ունի ինքնուրույն երաժշտություն» հոդվածով (1913 թ.) նա խորտակիչ հարված հասցրեց ամեն տեսակի կոսմոպոլիտական տարրերին, որոնք պնդում էին, թե իբր հայ ժողովուրդը չունի իր ինքնատիպ երաժշտությունը։ Կոմիտասն իր ազգագրական, երաժշտագիտական, երաժշտական-կատարողական և ստեղծագործական աշխատանքով ոչ միայն ամբողջ աշխարհին ցույց տվեց հայ ժողովրդի ինքնատիպ հարուստ երաժշտությունը, այլև ամուր հիմքեր ստեղծեց հայ ազգային կոմպոզիտորական դպրոցի ձևավորման համար, մշակեց հայ երաժշտության ազգային ոճը և դրանով իսկ բացառիկ ծառայություն մատուցեց հայ երաժշտական մշակույթի զարգացմանը։

Հայ երաժշտագիտության զարգացման գործում զգալի ներդրում է կատարել **Եղիա Տնտեսյանը** *(1834—1881)*։ Նրա «Նկարագիր երգոց Հայաստանեայց եկեղեցւոյ» գրքում (1876) ամփոփված հոդվածներում և ուսումնասիրություններում արծարծված են շատ կարևոր հարցեր, որոնք վերաբերում են թե՛ անցյալի ժառանգությանը, և թե՛ ժամանակակից, նոր զարգացող հայկական ազգային երաժշտությանը։ Արևմտահայ իրականության մեջ նա միակ երաժշտագետն է, որի երաժշտագիտությանը նվիրված հոդվածներում ձևակերպված մտքերը հետագայում խորացրեց ու հարստացրեց Կոմիտասը իր ուսումնասիրություններում։

1890-ական թվականներից հանդես եկավ մի այլ խոշոր երաժշտագետ՝ **Վ. Դ. Կորղանյանը** *(Կորգանով, 1865—1934)*։ Նա իր գործունեությունը ծավալեց Թիֆլիսում և դարձավ Ռուսական երաժշտական ընկերության Թիֆլիսի բաժանմունքի ղեկավարներից մեկը։ Կորղանյանը գրել է ծավալուն ու մեծ-

---

83 Խազերը միջին դարերում հայ իրականության մեջ ստեղծված նշաններ են։ Դրանց օգնությամբ ձայնագրվել են հայ երաժշտության բազմաթիվ նմուշներ, որոնք արձանագրված են խազգրքերում։ Խազերի բարդ սիստեմի բանալին եկեղեցականների գաղտնապահության պատճառով կորել է և խազերը մնում են անընթեռնելի։ Խազագիտության նպատակն է թափանցել այդ սիստեմի գաղտնարանը։

արժեք ուսումնասիրություններ՝ նվիրված Մոցարտին, Բեթհովենին և Վերդիին, բայց աւատարբեռ լմնաց նաև հայկական ու անդրկովկասյան մյուս ժողովուրդների երաժշտական մշակույթների նկատմամբ։ Նա հրատարակեց հոդվածներ, որոնք 1901 թ. ամփոփվեցին «Կովկասյան երաժշտություն» ժողովածուի մեջ և իրեն տեսան առանձին գրքով։ Այդ ժողովածուն հարուստ փաստական նյութ է պարունակում Անդրկովկասի և հատկապես Թիֆլիսի երաժշտական կյանքի մասին։

Արևելահայերի երաժշտական կյանքում մեծ դեր էր կատարում Թիֆլիսը։ Այստեղ ծավալված թատերական աշխուժը, 1851 թ. բացված Անդրկովկասի առաջին օպերային թատրոնը և 1884 թ. ստեղծված առաջին երաժշտական ուսումնարանը զգալիորեն նպաստեցին դրան։ Թիֆլիսում կազմակերպվեցին նաև հայկական երաժշտական ընկերություններ՝ «Արևելյան երաժիշտների ընկերությունը» (1907), «Երաժշտական լիգան» (1908), «Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերությունը» (1912), «Հայկական երգչախմբային ընկերությունը» (1919) և «Հայ երաժիշտ-տեսաբանների ընկերությունը» (1919)։ Սրանցից «Երաժշտական լիգան» (որի ստեղծողներն էին Ռ. Մելիքյանն ու Ա. Մանուկյանը) կարևոր գործ կատարեց հայկական դպրոցներում երգ-երաժշտության դասավանդումը կարգավորելու ուղղությամբ։

Թիֆլիսի հայոց երաժշտական ընկերության ստեղծումից հետո «Երաժշտական լիգան» ձուլվեց նրա հետ։ Այս ընկերությունն ամենախոշորն էր և միավորում էր հայ կոմպոզիտորներին, երաժշտագետներին, երաժիշտ-կատարողներին ու մանկավարժներին։ Ընկերության կազմակերպիչներից և ղեկավարներից էր Սպ. Մելիքյանը։ 1916 թ. Թիֆլիս հրավիրվեց Ալեքսանդր Սպենդիարյանը, ուր կազմակերպվեց նրա հեղինակային համերգը։ Այստեղ էլ տեղի ունեցավ մեծ կոմպոզիտորի հանդիպումը ժողովրդական բանաստեղծ Հովհաննես Թումանյանի հետ և հիմք դրվեց «Ալմաստ» օպերայի ստեղծմանը։ 1914 թ. ընկերությունը կազմակերպեց գիտական արշավախումբ (մասնակցությամբ Սպ. Մելիքյանի և Ա. Տիգր-Ղևոնդյանի) դեպի Շիրակի գավառը և 1917 թ. հրատարակեց «Շիրակի երգեր» ժողովածուն, որի մեջ մտած երգերը ֆոնոգրաֆի օգնությամբ ձայնագրված առաջին երգերն էին հայ իրականության մեջ։

Տեղաշարժեր եղան երաժշտական-կատարողական արվեստի ուղղությամբ նաև Կ. Պոլսում, ուր այդի ընկավ երաժիշտ-կատարողների մինչևյան ընտանիքը։ Ընտանիքի գլխավորը՝ Գրիգոր Սինանյանը (1836—1914), որ սերում էր նշանավոր ճարտարապետ Սինանի տոհմից, իր մասնավոր դասընթացներով նպաստել է հայ երաժիշտների պատրաստմանը, ստեղծել և ղեկավարել է նվագախումբ և համախումբ։ Նրա որդիները՝ Հարությունը, Անտոնն ու Հովսեփը և դուստրերը՝ Թագուհին և Վերոնիկը, հմուտ երաժիշտներ էին։ Հատկապես այդի ընկավ Հարություն Սինանյանը (1872—1939), որին հայրը պատրաստել էր ոչ միայն որպես ջութակահար, այլև նվագախմբի ղեկավար ու ստեղծագործող։ Լինելով Տիգրան Չուխաջյանի աշակերտը, զգալի գործ կատարեց ազգային-հայրենասիրական երգերի մշակման ու կատարման ուղղությամբ։ Առանձնապես փայլեց Անտոնի որդին՝ Գևորգ Սինանյանը (ծնվ. 1906 թ.), որը ձեռք բերեց վիրտուոզ ջութակահարի համբավ և համերգներով հանդես եկավ նաև եվրոպական երկրներում։ 1920-ական թվականներին այդ ընտանիքի անդամները կազմեցին յա-

բային կվարտետ, որի մեջ մտնում էին Հարություն Սինանյանը (դաշնամուր), Գևորգ Սինանյանը (առաջին ջութակ), նրա հայր Անտոն Սինանյանը (երկրորդ ջութակ) և Հորեղբայր Հովսեփ Սինանյանը (թավջութակ)։ Այս կվարտետն իր երկացանկում ունենալով համաշխարհային երաժշտության դասականների լավագույն գործերը, փայլել է իր կատարողական արվեստի բարձր վարպետությամբ։

Թիֆլիսի երաժշտական կյանքում աչքի է ընկել Ղորղանյան ընտանիքը, որի հայրը՝ ռուսական բանակի գեներալ Հովսեփ Ղորղանյանը, իր բոլոր որդիներին ու դուստրերին տվել էր երաժշտական կրթություն։ Գեներալիս Ղորղանյանը աչքի ընկնող դաշնակահար էր և կոմպոզիտոր, համերգներով հանդես է եկել Թիֆլիսում և Ռուսաստանի այլ քաղաքներում։ Նրա եղբայրներ Հովհաննեսն ու Կոնստանդինը Պետերբուրգում հռչակվել են որպես երգիչներ։ Քույրերից Նունեն (հայտնի է Նինա Դարիալի անունով, 1852—1896), Հեղինեն (հայտնի է Տերյան-Ղորղանյան ազգանունով) և Մարիան (Մարիա Սվետագոր) հանդես են եկել որպես օպերային երգչուհիներ և մեծ ճանաչում ու հռչակ ձեռք բերել եվրոպական օպերային թատրոններում։ Իսկ բեմից հեռանալուց հետո բացել են վոկալ դասընթացներ Մոսկվայում, Օդեսայում ու Թիֆլիսում։

Համաեվրոպական ճանաչման արժանացավ նաև երգչուհի Նադեժդա Պապայանը (1863—1906), որն իր երաժշտական կրթությունն ստացել է Պետերբուրգում, ապա կատարելագործվել Նեապոլում և Միլանում։ Վերադառնալով Կովկաս, նա իր արտիստական ուղին սկսել է Թիֆլիսում տված համերգներով, ապա տարբեր քաղաքների օպերային թատրոններում հանդես է եկել տարբեր դերերգերի կատարումով։ Երեք տարի նա աշխատել է Պետերբուրգի Մարիինյան թատրոնում որպես առաջնակարգ դերերգերի կատարող, երգել ռուսական ու եվրոպական շատ քաղաքների օպերային թատրոններում՝ աչքի ընկնելով իր ընդարձակ օպերային երկացանկով, վոկալ-կատարողական անզուգական արվեստով և դրամատիկական խաղով։ Իր համերգներում նա մշտապես կատարել է նաև հայ ժողովրդական երգեր ու romanսներ։

Այս նույն ժամանակաշրջանում հայկական միջավայրը տվից մի շարք այլ նշանավոր երգիչ-երգչուհիներ, որոնցից են Ներսես Շահմամյանը, Բեզլար Ամիրջանյանը, Արշակ Կոստանյանը, Մակար Վարդիկյանը, Արմենակ Շահմուրադյանը, Մարգարիտ Բաբայանը, Տիգրան Նալբանդյանը, դաշնակահարներ Եվգինե և Հեղինե Ադամյան քույրերը, Հովսեփ Տեր-Դավթյանը, Ստեփան Սուրենյանը, Վահրամ Սվաճյանը, Ստեփան Էմմասը, ջութակահարներ՝ Հովհաննես Նալբանդյանը և Դավիթ Դավթյանը, դիրիժորներ՝ Ալեքսանդրը Ասլանովը (Ասլանյան), Կոնստանտին Սարաջևը (Սարաջյան) և ուրիշներ։ Ժողովրդական երաժշտական գործիքների հռչակված վարպետ-կատարողներ էին Ներսես Ղորղանյանը (Քառահար), Սաշա Օգանեզաշվիլին (բամանշահար), Բալա Մելիքյանը (քառահար) և ուրիշներ։

XIX դարի երկրորդ կեսին, հատկապես վերջին քառորդում, հանդես եկան հայ կոմպոզիտորներ, որոնք իրենց ստեղծագործությամբ հիմք դրեցին հայ ազգային երաժշտության նոր շրջանին։ Դրանց նշանավոր ներկայացուցիչներն էին Տիգրան Չուխաջյանը (1837—1898), Ք. Կարա-Մուրզան (1853—1902), Գևորգ Ղորղանյանը (1858—1890), Նիկողայոս Տիգրանյանը (1856—1951). Մակար Եկմալյանը (1856—1905), Կոմիտասը (1869—1935), Ալեք-

սանդր Սպենդիարյանը (1871—1928), Ռոմանոս Մելիքյանը (1883—1935), Արմեն Տիգրանյանը (1879—1950) և ուրիշներ, որոնցից յուրաքանչյուրը զգալի գործ կատարեց հայ ազգային երաժշտության զարգացման ուղղությամբ։ Նրանց շնորհիվ հայ երաժշտությունը հարստացավ նոր ժանրերով ու արտահայտչամիջոցներով։



Նադեժդա Պապյան

Վակալ երաժշտության բնագավառում շարունակվեցին նախորդ շրջանում ձեռք բերված նվաճումները մենների ու խմբերգի զարգացման ուղղությամբ, հիմք դրվեց ժողովրդական երգերի մշակմանը։ Այս շրջանում հանդես եկած կոմպոզիտորները, հատկապես Ք. Կարա-Մուրզան, Մ. Եկմալյանը, Գ. Սյունին մեծ թափ հաղորդեցին խմբերգային ստեղծագործությանը։ Սակայն առավել նշանակալից էր Կոմիտասի կատարած աշխատանքը։ Իր ստեղծագործության մեջ նա հասավ պոլիֆոնիկ արվեստի բարձունքներին՝ կերտելով ոչ միայն քառաձայն, այլև վեց և ութ ձայնից բաղկացած բազմաձայն խմբերգային պարտիտուրաներ։ Եվ ամենաարժեքավորն այն էր, որ նա հարմոնիայի ու պոլիֆոնիայի հնարանքները մեխանայորեն չէր կիրառում ժողովրդական երգերի իր մշակումներում, այլ դրանք բխեցնում էր յուրաքանչյուր երգի էությունից։ Նրա մենների ու խմբերգերն աչքի են ընկնում ռճական ավարտվածությամբ ու մաքրությամբ, գեղարվեստական կերպարի լիակատար բացահայտմամբ, ձևի ու բովանդակության կատարյալ ներդաշնակությամբ։ Դյուրական անպաճուճ երգերից նա վերաճելով և ստեղծել է մենների ու խմբերգերի անկրկնելի օրինակներ, որոնք վաղուց ի վեր մուտք են գործել հայ դասական երաժշտության ոսկե ֆոնդը։

Վերջնականապես ձևավորվեց նաև գեղարվեստական ռոմանսը։ Կոմպոզիտորներ Ա. Սպենդիարյանը, Ռ. Մելիքյանը, Ա. Տիգրանյանը, Ա. Մայիլյանը, Ե. Բաղդասարյանը և ուրիշներ, յուրաքանչյուրն ունենալով իր ուրույն մոտեցումը և ռճական արտահայտությունը, կերտեցին բազմաթիվ ռոմանսներ։ Ա. Սպենդիարյանի «Ալ վարդ», Ա. Տիգրանյանի «Սև աչերնեն», Ա. Մայիլյանի «Ծովի երգը», Ե. Բաղդասարյանի «Մի լար բլբուլ», Ռ. Մելիքյանի «Աշնան տոզեր» և «Ձմրուխտիս» ռոմանսները հայ ռոմանսային գրականության զարգացման այս շրջանի լավագույն արտահայտություններն են։

Ստեղծվեցին նաև վոկալ բալլադներ, կանտատներ, տարբեր անսամբլներ (զուգերգ, եռերգ, քառերգ և այլն)։ Դրանք նորույթներ էին հայ երաժշ-

ության մեջ և գերազանցապես կապված էին Ա. Սպենդիարյանի և Ռ. Մելիքյանի անվան հետ։

Շարունակվեց նաև ազգային-հայրենասիրական երգերի ստեղծման ու տարածման պրոցեսը։ Հանդես եկան բազմաթիվ նոր երգեր, որոնցից շատերի հեղինակները մոռացության են մատնվել և այդ երգերը դարձել են ժողովրդական։ Դրանցից են «Մայր Արաքսի ափերով», «Երազ», «Հույս» («Փող փչի բամին»), «Արշալույսը նորեն բացվավ», «Զարթիր որդյակ», «Զայն տուր ով ծովակ», «Ողջույն տվեք» երգերը և այլն։

Վոկալ երաժշտության բնագավառում կարևոր նորույթ էր նաև միջազգային հեղափոխական երգերի՝ «Մարսելիոզի», «Ինտերնացիոնալի», «Վարշավյանկայի», «Անվախ ընկերք», «Մահվան թալիզրդի» և այլ երգերի մուտքը, երգեր, որոնք օգտագործվել են հայ կոմպոզիտորների կողմից ու տարածվել հայկական միջավայրում։ Այս նույն երգերի օրինակով ստեղծվում էին նաև ինքնուրույն երգեր։ Իբրև օրինակ կարելի է բերել Ալ. Սպենդիարյանի «Փառավորվիր, մայիսյան առաջին օր» խմբերգը, որի խոսքերն ու երաժշտությունը հեղինակինն են և նվիրված են 1917 թ. մայիսմեկյան տոնին։

Գործիքային երաժշտության բնագավառում զգալի աշխատանք կատարեցին Տ. Չուխաջյանը, Գ. Ղորղանյանը և հատկապես Ն. Տիգրանյանը։ Նույնիսկ այնպիսի կոմպոզիտորներ, ինչպիսիք են Ք. Կարա-Մուրզան և Մ. Եկմալյանը, որոնք գերազանցապես աշխատել են վոկալ երաժշտության ասպարեզում, ստեղծել են նաև դաշնամուրային հետաքրքիր պիեսներ։ Ն. Տիգրանյանն առաջինն էր Միջին և Մերձավոր Արևելքում, որ ձայնագրեց ու դաշնամուրի համար մշակեց դասական մուղամներ, որոնց հարստացման ու տարածման գործում մեծ վաստակ ունեին Աղամալ Մելիք-Աղամալյանի նման նշանավոր երաժիշտ-կատարողները։ Մավալուն այդ ստեղծագործությունների հետ միաժամանակ Ն. Տիգրանյանը դաշնամուրի համար մշակեց նաև հայ ժողովրդական երգեր ու պարեր, ինչպես և անդրկովկասյան պարեղանակներ։ Իբրև առաջին փորձեր դրանք, անկասկած, արժեքավոր են, բայց առավել բարձր էին Կոմիտասի դաշնամուրային պարերը, որոնք աչքի էին ընկնում ազգային ոճի անաղարտությամբ, հնչերանգային ու ռիթմական առանձնահատկությունների պահպանմամբ ու զարգացմամբ։

Գործիքային երաժշտության զարգացման գործում նշանակալից վաստակ ունեն նաև Ալ. Սպենդիարյանը և Ս. Բարխուդարյանը։ Ալ. Սպենդիարյանը գրել է պիեսներ դաշնամուրի, չոլթակի ու քավջութակի համար և գործիքային անսամբլներ, Ս. Բարխուդարյանը ստեղծել է դաշնամուրային բազմաթիվ պիեսներ, որոնք ներթափանցված են ժողովրդայնությամբ, աչքի են ընկնում ազգային ոճի անաղարտությամբ։ Արևմտահայ իրականության մեջ այս ուղղությամբ աշխատել են Ստեփան Էլմասը, Վահրամ Սվաճյանը, Ստեփան Սուրենյանը և ուրիշներ։

XIX դարի վերջերից հայ իրականության մեջ հիմք դրվեց նաև սիմֆոնիկ ստեղծագործությանը։ Այս ուղղությամբ առաջին փորձերը կատարեց Տ. Չուխաջյանը։ Նրա «Արշակ Բ» օպերայի սիմֆոնիկ նախերգանքը, «Արևելյան ֆանտազիան» («Զեմիրե» օպերայի թեմաներով), օպերետների երաժշտության հիման վրա ստեղծված պոպուրիները և պարերը փաստորեն հանդիսանում են հայ սիմֆոնիկ երաժշտության առաջին գործերը։ Առավել նշանակալից է Ա. Սպենդիարյանի ներդրումը։ Նա է, որ սիստեմատիկորեն ստեղ-

ծել է սիմֆոնիկ գործեր, հաստատել այդ բնագավառի ինքնուրույնությունը և իրավամբ համարվում է հայ սիմֆոնիկ երաժշտության հիմնադիրը։ Սկսած նրա սիմֆոնիկ առաջին գործերից («Մենուետ», «Օրորոցային», «Կոնցերտային նախերգանք», «Հինավուրց պար» և այլն) և ավարտած ավելի հասուն ստեղծագործություններով («Ղրիմի էսքիզների» առաջին և երկրորդ շարքերը, «Երեք արմավենի» սիմֆոնիկ պատկերը, վոկալ-սիմֆոնիկ գործերը և այլն), Ա. Սպենդիարյանը հաստատուն քայլերով ընթացել է այդ ուղղությամբ և ձեռք բերել նշանավոր սիմֆոնիստի համբավ։ Իր ստեղծագործությամբ նա զգալիորեն ազդեց թե՛ ժամանակակից, և թե՛ հետագա հայ կոմպոզիտորներից շատերի վրա։

XX դարասկզբի առաջին տասնամյակների հայ սիմֆոնիկ ստեղծագործության մեջ կարևոր տեղ են գրավում նաև Ս. Բարխուդարյանի «Անուշ» սիմֆոնիկ պոեմը, Ան. Տեր-Ղևոնդյանի «Շիրակի էտյուդները», Սպ. Մելիքյանի «Ախթամար» լեգենդը և այլ գործեր։

Զգալի գործ կատարվեց ազգային օպերայի բնագավառում։ Հայ ազգային օպերայի ստեղծման գիտակցությունը հասունացել էր դեռևս 1860-ական թվականներին և այդ շրջանում էլ ստեղծվեց առաջին հայկական օպերան՝ Տ. Չուխաջյանի «Արշակ Բ»-ն։

Հանձին «Արշակ Բ» օպերայի (լիբրետո՝ Թ. Թերզյանի) Տ. Չուխաջյանը, հետևելով իտալական պատմառոմանտիկական (հատկապես Վերդիի) օպերային ստեղծագործությանը, ստեղծել է բարձրարժեք մի գործ, որն այսօր էլ զարդարում է հայկական օպերային թատրոնի երգացանկը։

Չուխաջյանը միաժամանակ հայկական երաժշտական կատակերգության հիմնադիրն է։ «Լեբլեբիջի Հոր-հոր աղա», «Արիֆի խարդախությունը», «Քյոսա-Քեհիա» և այլ օպերետներ մշտապես բեմադրվել են տարբեր երկրներում։ Դրանք առաջիններն էին ոչ միայն արևմտահայ իրականության, այլև Մերձավոր և Միջին Արևելքի երաժշտական թատրոնի պատմության մեջ։

Այս ուղղությամբ աշխատեց նաև Ք. Կարա-Մուրզան։ Նա գրեց «Շուշան» օպերան ըստ Ատրպետի համանուն դրամայի։ Դա առաջին օպերան էր, որի հիմքում դրված էին Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած իրական դեպքեր (մշեցի գեղեցկուհի Գյուլիզարի առևանգումը քուրդ բեգի կողմից) և որի մեջ արտացոլվում էին ժամանակակից տրամադրությունները։ Սակայն օպերան մնաց անավարտ, գրվեց միայն վոկալ նախերգանքը («Հե՜յ, բեգ») և առաջին գործողությունը։ «Հե՜յ, բեգը» բազմիցս կատարվեց հեղինակի և այլոց ղեկավարությամբ և նրա հատվածները տարածվեցին ժողովրդի մեջ։

Անավարտ մնացին նաև Կոմիտասի օպերային մտահղացումները՝ «Անուշի», «Վարդան» պատմահայրենասիրական օպերայի և «Սասնա ծռեր» էպոսի երաժշտականացման ուղղությամբ։ Անավարտ մնաց նաև նրա երաժշտական կոմեդիան, որն սկսել էր գրել Հ. Պարոնյանի «Քաղաքավարության վնասները» հիման վրա։

Հայկական ազգային օպերայի ստեղծման ճանապարհին կարևոր առաջընթաց քայլ էր Ա. Տիգրանյանի «Անուշ» օպերան, որն իր առաջին բեմադրությունից սկսած (1912 թ., Ալեքսանդրապոլ) նվաճեց լայն ժողովրդականություն, խորապես մտավ ժողովրդի կենցաղի մեջ։

Այս նույն շրջանում հայկական օպերայի զարգացման գործում քիչ ջան-

քեր չեն գործադրել Ե. Բաղդասարյանը (որի «Անուշիցն, դժբախտաբար, մի երկու հատված է միայն հայտնի), Գ. Սյունին գրել ու բեմադրել է «Արեգնազան» օպերան (ըստ Ղ. Աղայանի համանուն հեքիաթի, բայց որի երաժշտությունը մնացել է անհայտ), Ա. Մալիշյանը, Ա. Մանուկյանը և Մ. Միրզոյանը, որոնք գրել են մանկական օպերաներ ու երաժշտական պատկերներ։ Բայց առավել նշանակալից էր Ալ. Սպենդիարյանի աշխատանքը Հ. Թումանյանի «Քմկաբերդի առումը» պոեմի վրա (1916—1920 և հետագա տարիներին) և որի արդյունքը եղավ հանրահայտ «Ալմաստ» օպերան։

Այդպիսով հայկական երաժշտությունը, դուրս գալով զարգացման լայն հանապարհ և առաջնորդվելով երաժշտական արվեստի առաջավոր սկզբունքներով՝ ժողովրդայնությամբ, ռեալիզմով և դեմոկրատական բովանդակությամբ, հասավ նշանակալից արդյունքների։

5. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի արևելյան և արևմտյան հատվածների սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի տարբեր իրավիճակները պայմանավորում էին քաղաքաշինության և ճարտարապետության զարգացման տարբեր ընթացքը մեկ հատվածում (արևելյան) համեմատական առաջընթաց, մյուսում՝ դադար ու ավերածություն։

Արևելյան Հայաստանի քաղաքները՝ Երևանը, Ալեքսանդրապոլը, Կարսը, ինչպես նաև քաղաքատիպ բնակավայրեր Նոր Բայազետը, Գորիսը, Մանեսը (Ալավերդին), Ղափանը, Վաղարշապատը (Էջմիածինը) և այլն, ապրել են կառուցապատման ու բարեկարգման համեմատաբար արգասավոր մի շրջան։

Երևանում, XIX դարի վերջին երեք տասնամյակներում, ավելի մեծ չափով իրականացվեցին քաղաքի գլխավոր հատակագծերում (1856—1865 թթ.)՝ նախատեսված քաղաքաշինական մտահղացումներու։ Մեկը մյուսի հետևից բացվում ու մասնակիորեն կառուցապատվում են Աստաֆյան (այժմ Աբովյանի), Նազարովյան (Ամիրյանի), Բեհբուդովի (Սվերդլովի), Յարսկայա (Սպանդարյանի), Թարխանովի (Պուշկինի և Կնունյանցի), Դոկտորսկայա (Թումանյանի), ինչպես նաև սրանք հատող Արմյանսկայա (Լենինի պողոտա), Տեր Ղուկասովի (Նալբանդյանի) և Գուբերնսկայա (Ալավերդյանի) փողոցները, որոնցով քաղաքի կենտրոնական մասում ստեղծվում են փողոցների կանոնավոր ցանց և ուղղանկյունաձև բաղամասեր։

Քաղաքի բարեկարգմանը և կոմունալ տնտեսության զարգացմանը խթանում է արդյունաբերական որոշ ձեռնարկությունների ստեղծումը։ 1898—1903 թթ. կարգի է բերվում «Անգլիական» (26 կոմիսարների անվան) այգին, 1906 թ. գործարկվում է քաղաքային ձիաքարշը (կոնկա), 1907 թ. շարք են մտնում երկու փոքր հիդրոկայաններ Հրազդանի կիրճում, 1911 թ. ավարտվում է ջրամատակարարման գծի կառուցումը Կրախ-Բուլաղի աղբյուրներից, 1913 թ. ստեղծվում է ոչ մեծ հեռախոսային ցանց ու կազմակերպվում փողոցների մի մասի էլեկտրալուսավորումը և այլն։ Ավելանում են կոմունալ սպասարկման շենքերի թիվը, կառուցվում են նոր բաղնիքներ ու հյուրանոցներ[84]։

---

84 Տե՛ս Թ. Հակոբյան, Երևանի պատմություն (1879—1917 թթ.), Երևան, 1963, էջ 268—282։

Զարկ է տրվում նաև քաղաքացիական բազմաբնույթ (վարչական, ուսումնական, հանդիսատեսային, առևտրական, ֆինանսական, բուժական և այլ) շենքերի շինարարությանը, որն իր հետ որակական փոփոխություններ է բերում ճարտարապետության մեջ։ Ռուսական և եվրոպական քաղաքների ազդեցությամբ Երևանի նշված շենքերի ճարտարապետության մեջ արմատավորվում է կլասիցիզմի ոճը, որը Երևանի պալմաններում յուրօրինակ արտահայտություն է ստանում ավանդական տուֆ քարի (գիրագանցապահս սև նրանդի) կիրառության շնորհիվ։

Անդրկովկասի քաղաքային կենտրոններին (Թիֆլիս, Բաքու) բնորոշ ճարտարապետության օրինակները Երևանում հանդիսացան նահանգապետարանի, քաղաքապետարանի, ուսուցչական սեմինարիայի (1898—1900 թթ., հեղ. Բ. Մեհրաբյան), պետական դանձարանի, քաղաքային ակումբի, Ջանփուդյանների թատրոնի (1907 թ., հեղ. Բ. Արազյան), «Ապոլլո» կինոթատրոնի, «Օրիանո» և «Գրանդ հոթել» հյուրանոցների, արական գիմնազիայի (1911—15 թթ., հեղ. Վ. Սիմոնսոն) և այլ շենքեր։ Կառուցվում են նաև պաշտամունքային նոր շենքեր՝ ս. Լուսավորիչ (1868—1900 թթ.) և ռուսական Նիկոլաևյան (1901 թ.) եկեղեցիները։

Բնակարանային ճարտարապետությունն ի հայտ է բերում զարգացման երկու հիմնական տենդենց։ Թթե մեծահարուստներին (Տեր-Ավետիքյաններ, Խորասանյաններ, Հովհաննիսյաններ, Աֆրիկյաններ և ուրիշներ) պատկանող մենատներում հետևում են կլասիցիզմի ճարտարապետության ոճին, ապա ժողովրդական բնակելի տներում ավելի կենսունակ են մնում ավանդական ձևերն ու լուծումները։

Երևանի զարգացման կապակցությամբ անհրաժեշտություն առաջացավ վերամշակել քաղաքի գլխավոր հատակագիծը՝ ընդգրկելու համար կառուցապատման նոր տարածություններ։ Դրա նախապատրաստական կարևոր միջոցառումներից մեկը քաղաքի մանրամասն տեղահանությունն էր, որը 1906—1911 թթ. ընթացքում իրականացվեց քաղաքային տեխնիկ Բ. Մեհրաբյանի կողմից։ Շուրջ 1300 հեկտար ընդգրկող այս տեղահանությունը, որ առավել ճշգրիտ էր մինչ այդ կատարվածների համեմատությամբ, հետագայում հիմք ծառայեց Ալ. Թամանյանի համար Երևանի գլխավոր հատակագիծը կազմելիս[85]։

Ալեքսանդրապոլում քաղաքաշինական աշխատանքների հիմքում ընկած էր 1868 թ. կազմված և կովկասյան փոխարքայի կողմից հաստատված (1872 թ. սեպտեմբերի 9-ին) հատակագիծը, ուր պահպանելով նախկին հատակագծի (1841 թ.)[86] կանոնավոր սկզբունքը, ընդարձակված էր կառուցապատման ենթակա հողատարածությունը, ավելացված միմյանց զուգահեռ և ուղղահայաց փողոցների համամասն կանոնավոր ցանցը[87]։ Առանձնապես ինտենսիվ են կառուցապատվում կենտրոնի փողոցները, կազմավորելով այս մասի ճարտարապետական դեմքը։ Արևելքից արևմուտք ձգվող Ալեքսանդրյան (Աբովյանի), Կարսսկայա (Սվերդլովի), Գեներալսկայա (Շահումյան) և Ելիզավետինսկայա (Տիգրան Մեծի) փողոցները հատվում են Նիկոլաևյան (Ազատության) և Ռիբնայա (Նալբանդյան) փողոցներով։ Ալեքսանդրապոլի ամենաերկար փողոցը՝ Ռիբնայան, ձգվում է Ելիզավետինսկայայից մինչև Ալեքսանդրյան։ Նրա ուղղությամբ էլ ձգվում է քաղաքի գլխավոր առևտրական թաղամասը։ Ռիբնայա փողոցի հարավային կողմում գտնվում է Ալեքսանդրապոլի ամենամեծ հրապարակը՝ Ալեքսանդրյան (Ազատության)։ Հրապարակի հարավային կողմում կառուցվել է Ալեքսանդրապոլի ամենամեծ շենքը՝ Ալեքսանդրապոլի գավառական վարչության շենքը։ Հրապարակի արևելյան կողմում կառուցվել է Ալեքսանդրապոլի ամենամեծ եկեղեցին՝ Ս. Աստվածածին տաճարը։ Հրապարակի հյուսիսային կողմում կառուցվել է Ալեքսանդրապոլի ամենամեծ հասարակական շենքը՝ Ալեքսանդրապոլի գավառական վարչության շենքը։ Հրապարակի արևմտյան կողմում կառուցվել է Ալեքսանդրապոլի ամենամեծ հասարակական շենքը՝ Ալեքսանդրապոլի գավառական վարչության շենքը։

---

85 Տե՛ս В. М. Арутюнян, М. М. Асратян, А. А. Меликян, Ереван, М., 1968, стр. 49.

86 Տե՛ս ЦГВИА, ф. 349, оп. III, ед. хр. 1013 (I, II).

87 Տե՛ս Վ. Մ. Հարությունյան, Արևելյան Հայաստանի քաղաքների հատակագծումն ու կառուցապատումը XIX դարում և XX դարի սկզբին, ՊԲՀ, 1977, 3(78), էջ 82—87։

յանի), Երևանյան ու սրանց ուղղահայաց՝ Պուշկինի, Լորիս-Մելիքովի, Բեհբուտովի (Մաքսիմ Գորկու), Բիֆլիսյան (Ռուսթավելու), Գրուզինսկայա (Տերյանի) և այլ փողոցներ բարեկարգվում և լուսավորվում են գազային լապտերներով։ XX դարի սկզբին կառուցված զորանոցային թաղամասերը ավելի են ընդարձակում Ալեքսանդրապոլը։ Քաղաքատարածությունը տարբեր կողմերից (հարավից՝ Կաղաշիյ պոստ, հյուսիսից՝ Սևվերսկիյ և Պոլիգոններ) կառուցապատվում էր սև երանգի տուֆաշարով շինված միատիպ տներով։

1878 թ. ջրհեղեղից հետո, որը մեծ վնասներ հասցրեց քաղաքին, Մուռատալայ կոչվող գետակի քաղաքի կենտրոնական մասով հոսող հատվածը վերցվեց գետնուղու մեջ, որով բարելավվեց այս մասի սանիտարական վիճակը։ Որոշ աշխատանքներ տարվեցին կանաչապատման ուղղությամբ։ 1878 թ. քաղաքային գերեզմանոցը փոխադրվում է հարավային ծայրամասը։ Ազատված բարձունքն աստիճանաբար ծառապատվում է և դարձվում զբոսավայր (այժմ Մաքսիմ Գորկու անվան զբոսայգի)։ Բարձունքի հարավային շարունակության վրա 1872 թ. հիմնադրված Խոլմ չեստի (Պատվո բլուր) զինվորական պանթեոնում կառուցվում է ռուսական պլպլան ժամը։ Կանաչ տարածության մի շերտ էլ ստեղծվում է կայարանամերձ տարածությունում։ 1873 թ. ավարտվում է ս. Փրկիչ եկեղեցու կառուցումը, իսկ զորանոցային Սևվերսկիյ և Կաղաշիյ պոստ թաղամասերում 1901 և 1903 թթ. կառուցվում են ռուսական ոճի երկու զինվորական եկեղեցիներ։

Ալեքսանդրապոլում ևս վարչական ու հասարակական շենքերում տարածում է ստանում կլասիցիզմի ճարտարապետական ոճը։ Այդ շենքերից են առևտրական ուսումնարանը (1907 թ.), Օլգինյան իգական գիմնազիան (1912 թ.) և այլ շենքեր։ Նույն ոճով են մասամբ կառուցված Կոստանովների (1890 թ.), Զիլողցենց և «Հակոնների» բաղնիքները։

Բնակարանային ճարտարապետության ասպարեզում մեծահարուստներ Մուխսի Ավագի (1870 թ.), Զիլողցենց (1872 թ.), Յուզբաշյանների (1879 թ.), Արամ Պալյանի (1879 թթ), Տեր-Պողոսյանների ու Գրիգորյանների (1883 թ.), Վանեցյանների (1886 թ.) և այլ մենատներում արտահայտվել է քաղաքաթիպ բնակելի տուն ստեղծելու ձգտումը[88]։

Կարսում քաղաքաշինությունը առանձնապես զարգացավ Ռուսաստանի գավառում գտնվելու տարիներին՝ հիմնականում միջնադարյան Կարսի (պարիսպներով շրջապատված միջնաբերդի ու նրա հարավային փեշերին սփռված բուն քաղաքի կամ բերդի) սահմաններից դուրս գտնվող Օրթա-Կապու արվարձանում[89], 1880 թ. կազմված հատակագծի[90] համաձայն քաղաքը կառուցապատվեց վարչական, հասարակական, առևտրական, ուսումնական, բնակելի և այլ բնույթի շենքերով, տեղադրված փողոցների կանոնավոր ցանցերի ուղղությամբ։

Ռուսիա կոչվող շուկան տեղավորված էր Կարսի հյուսիսային մասում։ Այս ընդարձակ, խանութներով ու արհեստանոցներով շրջապատված հրապարակում էր կատարվում հացահատիկի, այլուրի ու ուտեստեղենի վաճառքը։ Եր-

---

88 Տե՛ս С. Г. Матевосян, Народная архитектура жилых домов города Ленинакана XVIII—XIX вв. (автореферат), Ереван, 1973.

89 Տե՛ս Վ. Մ. Հարությունյան, Նշված հոդվածը, ՊԲՀ, 1977, 4(79), էջ 44—49։

90 Տե՛ս Генеральный план крепости Карс, ЦГВИА, ф. 349, оп. 17, ед. хр. 1041.

կաթուղային կայարանը գտնվում էր քաղաքի հյուսիս-արևելյան մասում։ Քաղաքային բաղնիքները հիմնականում տեղաբաշխված էին Կարուց գետի աջ ափին, Սու-Կապու քաղամասում։ Կարսում կար չորս եկեղեցի, իսկ 1915 թ. սկսեց գործել նաև հինգերորդ եկեղեցին։ Հույները և ռուսները ունեին իրենց եկեղեցիները։

Ռուսական տիրապետության ժամանակ Կարսում զգալիորեն ընդարձակվում է դպրոցական ցանցը։ Ուսումնական հաստատություններից հիշատակելի են իգական և մարինսկայա գիմնազիաները, ռեալական դպրոցը, քաղաքային չորսդասյա դպրոցը, հայոց տարրական դպրոցը (որոնց մեծ մասն ունեին հատուկ կառուցված շենքեր), ինչպես նաև ռուսական ծխական դպրոցը՝ Առաքելոց եկեղեցու բակում։ Քաղաքն ուներ մի քանի հանդիսասրահ՝ «Իլյուզիոն», «Տրիումֆ» կինոթատրոնները, քաղաքային ակումբը։

Կարսի երկրորդ գրավման ժամանակ զոհված մարտիկների հիշատակին նվիրված հուշարձանը կանգնեցվեց 1910 թ.։ Կարսի անառիկ բերդը՝ թառած բարձր ու արևելքից-արևմուտք ձգված ժայռազանգվածի վրա, որը նախքան ռուսների գրավումը պայքեցրել էին թուրքերը, վերստին կառուցվում է ամրոցաշինության նոր սկզբունքներով, Հիմնովին վերակառուցվում են նաև Կարս բերող ճանապարհներին տեղաբաշխված ամրոցակները (ֆորտերը)։

Գորիսը Արևելյան Հայաստանի նոր քաղաքներից է։ Նրա կառուցապատումը հիմնականում սկսվում է XIX դ. 70-ական ԹԹ. և Հին Գորիսի (Կյորեսի) բնակիչները աստիճանաբար տեղափոխվում են այստեղ։ Գորիսը տեղադրված է համեմատաբար հարթ տարածքի վրա, մշակված ու հաստատված գլխավոր հատակագծով։ Քաղաքի հենքը ուղիղ անկյան տակ փոխադարձաբար հատվող հնգական փողոցներն են, որոնցով կազմավորվել է կանոնավոր ցանց։ Ուղղանկյուն և քառակուսի քաղամասերի պարագծերով կառուցված քարաշեն, երկլանջ կարմիր թիթեղապատ տանիքներով ծածկված գեղեցիկ տները հարկայնությամբ, մանրամասներով ու շինանյութով միասնական են ու ստեղծում են փոքր քաղաքի մի ինքնատիպ կառուցապատում[91]։ Նոր Գորիսի հասարակական կենտրոնը բնակավայրի հարավ-արևելակողմում էր։ Այստեղ էր գտնվում քաղաքային ոչ մեծ այգին, նրա կողքին «Պասաժ» կոչված առևտրական տունը, դրա արևելյան կողմում ոչ մեծ հրապարակ, շուրջը կառուցված տների առաջին հարկերում տեղավորված խանութներով։ Հրապարակից դեպի հարավ ձգվող փողոցում գտնվում էր միահարկ խանութների ու արհեստանոցների շարքը։ Քաղաքի աչքի ընկնող կառույցներն էին նոր եկեղեցին, «Պասաժ» առևտրական տունը, դպրոցը, հյուրանոցը, բանկը։ Բնակավայրի խմելու ջուրը բերված է Ակներ կամ Վարարակն կոչվող ջրառատ ու սառնորակ աղբյուրներից։

Նոր Բայազետ (Կամո) քաղաքը, որպես համանուն գավառի վարչական կենտրոն, առավել զարգացում ապրեց Նելնովկայից (Սևանից) Նոր-Բայազետ խճուղային ճանապարհի շինարարության ավարտից հետո (1880 թ.)։ Բնակավայրի հասարակական կենտրոնը կազմակերպվեց XIX դ. վերջին և XX դ. սկզբին, եկեղեցու շինարարության ավարտից հետո (1903 թ.)։ Այս-

---

91 Տե՛ս Վ. Մ. Հառությունյան, նշված հոդվածը, ՊԲՀ, 1977, 4(79), էջ 52—54։

տեղ ստեղծվում է զբոսայգի և կառուցվում են նոր՝ ռուսական եկեղեցին ու մի շարք այլ շինություններ[92]։

Վաղարշապատի (Էջմիածին) կենտրոնական մասի ճարտարապետական նկարագրի փոփոխումը սկսած XIX դ. վերջից հետևանք էր ինչպես բնակարանային շինարարության ծավալման, այնպես էլ Էջմիածնի Մայր աթոռի շինարարական գործունեության ակտիվացման[93]։ 1869—1874 թթ. կառուցվում է Գևորգյան ճեմարանի ուսումնական մասնաշենքը, իսկ 1879 թ.՝ սաների ննջարանային մասնաշենքը։ Ավելի ուշ՝ 1892 թ., մշակվում է նոր շենքերի տեղադրության գլխավոր հատակագիծ։ Ըստ որի կառուցվում են Երեմյան խցերի երկհարկանի (1895 թ.) և տպարանի միահարկ (1889 թ.) շենքերը, որոնցով կազմավորվում է Մայր տաճարի բակի արևելյան կողմը։

Վանքի բակի սահմաններից դուրս, հարավ-արևմտյան կողմում 1896 թ. կառուցվում է թանգարանի միահարկ շենքը, որը կաթողիկոսի անունով կոչվում է Հայրիկյան։ Ճեմարանի սաների ննջարանային մասնաշենքի դիմաց 1902 թ. կառուցվում է վանքի հիվանդանոցի միահարկ շենքը, իսկ սրանից փոքր ինչ հեռու, արևելյան կողմից՝ 1911 թ. հիմնադրվում է սերտարան, վարժոց կամ մանկավարժական թանգարան կոչվող շենքը[94]։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին են կառուցվել վանքապատկան երեք կարևոր շենքեր՝ Նոր Վեհարանի (1910—1914 թթ., ճարտ. Պ. Զոհրաբյան), Մատենադարանի կամ այժմյան ճեմարանի (1910—1911 թթ., ճարտ. Պ. Զոհրաբյան), Աստղադիտարանի (1911—1914 թթ., ճարտ. Ա. Վ. Կալգին) մասնաշենքերը[95]։

XIX դարի 80-ական թթ. տարվել են որոշ նախապատրաստական աշխատանքներ Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգման ուղղությամբ։ Ճարտ. Պ. Շտերնի վերանորոգման նախագիծը չի իրականացել հավանության չարժանանալու պատճառով։ Ճարտ. Ն. Մադաթյանը 1909—1910 թթ. կատարել է Մայր տաճարի մանրամասն չափագրությունը, որից հետո հայտարարվել է վերանորոգման նախագծի մրցույթ։ Թիֆլիսում ստեղծվել է ճարտարապետներից ու նկարիչներից բաղկացած հատուկ հանձնաժողով։ Ջուգաշենաբար շինարարություն է կատարվել Վաղարշապատի մյուս տաճարների՝ Հռիփսիմեի և Գայանեի շրջակայքում։

Օշական գյուղում հին եկեղեցու տեղում 1879 թ. վերստին կառուցվել է ս. Մեսրոպ Մաշտոցի անգմբեթ, բազիլիկատիպ եկեղեցին, իսկ նրա հարավային կողմում՝ դպրոցի շենքը։

XIX դ. վերջին քառորդում և XX դ. երկու տասնամյակներում Թիֆլիսում և Բաքվում, ինչպես նաև Ախալցխա, Ախալքալաք, Գորի, Թելավ, Գանձակ, Նախիջևան, Շուշի, Նուխի, Ագուլիս և այլ քաղաքներում ու բնակավայրերում շինարարական աշխույժ գործունեություն ծավալվեց։

Թիֆլիսում 1909 թ. հիմնադրվում և 1912 թ. ավարտվում է Ներսիսյան

---

92 Տե՛ս Մեսրովբ արեևպիսկոպոս Սմբատեանց, Տեղեկագիր Գեղարքունի ծովազարդ գաւառի, որ այժմ նոր Բայազեդ գաւառ, Վաղարշապատ, 1895 էջ 25—108, 447—454։ Վ. Մ. Հառությունյան, նշված հոդվածը, ՊԲՀ, 1977, № 4(79)։

93 Տե՛ս Վ. Մ. Հառությունյան, նշված հոդվածը, 1974, № 4(79), էջ 54—58։

94 Տե՛ս Էդիլյան Գուրգեն, Մանկավարժական մուզեյ, «Արարատ», 1911, էջ 147—154։

95 Տե՛ս Գ. Վ. Շիրմազանյան, Նոր վեհարանը, «Էջմիածին», 1963, Ա, էջ 43—46։

դպրոցի նոր շենքի կառուցումը (հեղ. ճարտ. Ս. Մուրավեցկի, իրականացնողներ՝ ճարտարապետներ Պ. Զոհրաբյան և Մ. Նեպրինցև)։ Քաղաքի կենտրոնում, Երևանյան հրապարակի վրա գտնվող թատերական շենքը 1874 թ. այրվելուց հետո, վերակառուցվել ու հարմարեցվել է Թամամշյան քարվանսարա կոչվող առևտրական տանը[96]։ Նույն ժամանակաշրջանում են կառուցվել արտիստական ընկերության թատրոնի (այժմ Ռուսթավելու անվան թատրոնի), Վրաց ազնվականական ակումբի (Դվորցովայա փողոցում) շենքերը, Թամամշյանի, Բեհբուդովի, Միրզոևի բաղնիքները և այլն։ Եքեղ մահարձաններով ու դամբարանային մատուռներով հարուստում է և ընդարձակվում հայկական հոգե-վանքի գերեզմանատունը, ինչպես նաև վանքի բակը։

Ախալքալաքը գավառական երկրորդ կարգի քաղաք հռչակվելուց հետո (1890 թ.) նույնպես հարստանում է մի շարք շենքերով, որոնց թվին են պատկանում Սանդխյան դպրոցի (1870 թ.) և դրան կից գրադարան-ընթերցարանի (1880 թ.), քաղաքային (1889 թ.) և գյուղատնտեսական ուսումնարանի շենքերը, ս. Խաչի եկեղեցին (1856 թ.)։ Բարեկարգվում է բնակավայրի կենտրոնը, ստեղծվում է ցանկապատված քաղաքային այգի (1880 թ.)[97], Նույն ժամանակաշրջանում շինարարական որոշ գործունեություն են կատարում նաև Ախալցխայի հայերը։

Բավականաչափ բեղմնավոր է եղել Շուշի քաղաքի հայկական քաղամասի շինարարական գործունեությունը։ Բնակավայրի ջրամատակարարումը բարելավելու նպատակով բերվել է երկու ջրատար գիծ՝ մեկը 1871 թ., իսկ մյուսը՝ 1896 թ.։ Մոնումենտալ շենքերից նշանավոր է Ղազանչոց ս. Ամենափրկիչ եկեղեցին (1866—1878 թթ.), որի հատակագծային հորինվածքը վերարտադրում է էջմիածնի Մայր տաճարի ձևերը։ Հասարակական ու ուսումնական շենքերից աչքի էին ընկնում ակումբի շենքը (որում 1880 թ. կազմակերպվում է գրադարան-ընթերցարան), Մ. Խանդամիրյանի թատրոնի շենքը՝ Թոփխանա հրապարակում (1891 թ.), ինչպես նաև քաղաքային (1875 թ.), ռեալական (1881 թ.) և Օրիորդաց մարիամյան (1894 թ.) ուսումնարանների շենքերը։ Առանձին հետաքրքրություն էին ներկայացնում Շուշիի հայկական քաղամասերի ժողովրդական բնակելի տներն իրենց ինքնատիպ ճարտարապետությամբ։

Արևելահայ նշանավոր ճարտարապետների գործունեությունն ընթացել է բուն Հայաստանից դուրս՝ մեծամասամբ Պետերբուրգում, Մոսկվայում, Թիֆլիսում և Բաքվում։ Նրանցից հիշատակելի է Գաբրիել Տեր-Միքելովը (1874—1949)։ 1898 թ. ավարտելով Պետերբուրգի քաղաքացիական ինժեներների ինստիտուտի ճարտարապետական ֆակուլտետն ու վերադառնալով Անդրկովկաս, նա հիմնականում աշխատել է Թիֆլիս և Բաքու քաղաքներում, ուր նրա նախագծերով կառուցվել է տարբեր բնույթի շուրջ 40 շենք։ Տեր-Միքելովի աչքի ընկնող գործերից են Ցալթայի հայկական եկեղեցին՝ կառուցված 1905—1909 թթ.։ Սա իր ծավալային ու ճարտարապետական ձևերի հարստությամբ ու բարձրարժեք տեղադրությամբ դարասկզբի հայկական եկեղեցական ճարտարապետության լավագույն կոթողներից մեկն է։ Հարուստ է մշակված նաև եկեղեցու ներսը, պատերը ծածկված են որմնանկարներով (հեղ. Վ. Սուրեն-

96 Տե՛ս «Тифлис и его окрестности», Тифлис, 1913, стр. 11.

97 Տե՛ս Հ. Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1903, էջ 63։

յանց)։ Հիշատակելի են նաև նրա նախագծած Բաքվի հասարակական ժողովների շենքը (1910 թ., այժմ Ադրբեջանի ֆիլհարմոնիայի շենքը), Թաղիև եղբայրների մենատունը (1909 թ.), Միլովի բնակելի տունը (1913 թ.) և «Մաժեստիկ» հյուրանոցի շենքը (1914 թ.) Թիֆլիսում (կոչվել է նաև Արամյանցի տուն, այժմ «Քրիլիսի» հյուրանոցի շենքը Ռուսթավելու պողոտայում)։ Գ. Տեր-Միքելովը, մասնակցելով Բաքվի հայկական եկեղեցու նախագծման համար 1907 թ. հայտարարված մրցույթին, արժանացել է առաջին մրցանակի։ Նրա ստեղծագործությանը բնորոշ է երկու հիմնական գիծ. մի կողմից հավատարմությունը կլասիցիզմի ճարտարապետական սկզբունքներին («Մաժեստիկ» հյուրանոցը Թիֆլիսում, հասարակական ժողովի շենքը Բաքվում), մյուս կողմից՝ համարձակ և հաջողված փորձերը հայկական (Յալթայի եկեղեցին) և ադրբեջանական (Թաղիև եղբայրների մենատունը Բաքվում) ազգային ճարտարապետության ավանդույթները շարունակելու և նորովի մեկնաբանելու ուղղությամբ[98]։

Ճարտարապետ Քրիստափոր Բոգդանի Տեր-Սարկիսովի (Սաթունց) ոչ երկարատև կյանքը (1875—1917 թթ.) նույնպես նշանավորվել է բեղմնավոր ստեղծագործությամբ։ 1903 թ. ավարտելով Պետերբուրգի կայսերական գեղարվեստական ակադեմիայի ճարտարապետական ֆակուլտետը, մշտական աշխատանքի է փոխադրվել Թիֆլիս։ Նրա նախագծերով իրականացված շենքերից են վրաց ազնվականական ակումբը Թիֆլիսում (1905—1908 թթ.) և Ալոիզի քաւորները Սուխումում (1906—1907 թթ.)։ 1908—13 թթ. ընթացքում Բ. Տեր-Սարկիսովի նախագծերով իրականացվել են Ռևազովի մենատունը (Սապյորնայա, այժմ Բորիս Ջնելաձեի փողոցում), բնակելի մեծ տունը (Բորժոմսկայա փողոցում), վերակառուցվել է Բլիթխանի հայկական ս. Ստեփաննոս եկեղեցին և փոստի կենտրոնական շենքը (Միխայլովսկայա փողոցում, այժմ Պլեխանովի պողոտա)։ Ճարտարապետի վերջին աշխատանքը փոխարքայի դրասենյակի շենքի նախագիծն ու կառուցումն էր (այժմ Վրաց. ՍՍՀ ԳԽ նախագահության շենքը)։

Նույն ժամանակամիջոցում Թիֆլիսում ապրել և ստեղծագործել է ճարտարապետ Պողոս Ալեքսանդրի Զոհրաբյանը (Զուրաբովը, 1874—1942)։ 1898 թ. ավարտելով Պետերբուրգի քաղաքացիական ինժեներների ինստիտուտը, մեկ տարի աշխատել է Կուրսկի երկաթուղային վարչությունում, որից հետո փոխադրվել Թիֆլիս։ Թիֆլիսում և Վրաստանի այլ բնակավայրերում (Աբաստուման, Բորժոմ, Բակուրիանի, Գագրա) նրա նախագծերով կառուցվել է տարբեր բնույթի ու ծավալի 36 շենք։ Զուրաբովի նախագծած ու կառուցած շենքերից հիշատակելի են նոր վեհարանի և մատենադարանի շենքերը Էջմիածնում և առաջին հիվանդանոցի մասնաշենքերը Երևանում[99]։

Մի քանի շնորհալի ճարտարապետներ աշխատել են Բաքվում։ Դրանցից առավել բեղմնավորներից է Վարդան Ստեփանի Սարկիսովը (1875—1955)։ Պետերբուրգի քաղաքացիական ինժեներների ինստիտուտն ավարտելուց հետո (1899) նախապես աշխատել է Մոսկվայում և մասնակցել մի շարք խոշոր շենքերի («Մետրոպոլ» հյուրանոցի, պոլիտեխնիկական թանգարանի) նախագծմանն ու կառուցմանը, իսկ 1907 թ. փոխադրվել է Բաքու։ Որպես կա-

98 Տե՛ս է. Ա. Տիգրանյան, Ճարտարապետ Գարբիել Տեր-Միքելյան, ՊԲՀ, 1962, № 1 (16), էջ 82—83։

99 Տե՛ս Գ. Վ. Եիրմազեյան, Նոր վեհարանը, «Էջմիածին», 1963, Ա, էջ 43—46։

սիցիզմի ճարտարապետության հետևորդ, Բաքվում նա լայն ճանաչման է հասնում բարձր վարպետությամբ նախագծած իր բնակելի և հասարակական շենքերով (այժմյան մինիստրությունների տունը Կոմունիստական փողոցում, Կասպարի-Կասպից նավագնացության վարչության շենքը Ջափարիձեի փողոցում, երկաթուղային վարչության շենքը և այլն)։

Բաքվում ստեղծագործող ճարտարապետներից էր նաև Հովհաննես Մաքենոսի Տեր-Հովհաննիսյանը (Քաջազնունին, 1863—1937)։ 1892 թ. Պետերբուրգում քաղաքացիական ինժեներների ինստիտուտն ավարտելուց հետո նա երկու տարի աշխատել է Բաքումում, ապա փոխադրվել Բաքու, ուր դեկավարել է նավթարդյունաբերողների խորհրդի շինարարական վարչությունը։ Նրա նախագծերով ու դեկավարությամբ բազմախնամ կառուցվել են բնակելի տներ, հիվանդանոց, դպրոց, վարչագրասենյակային և այլ շենքեր, իսկ 1910—1911 թթ.՝ ս. Թադևոս և ս. Բարդուղիմեոս կաթողիկե եկեղեցին։

Հեղինակի հարկադրյալ բացակայության պատճառով եկեղեցու շինարարությունը շարունակել է աստրախանահայ հանրածանոթ ինժեներ Նիկոլայ Գևորգի Բաևը (1878—1946), որը նույնպես ավարտել էր Պետերբուրգի քաղաքացիական ինժեներների ինստիտուտը։ Նա կառուցված մեծ թվով տարբեր բնույթի շենքերի (շահութաբեր բնակելի տների, դպրոցների, հիվանդանոցների և այլն), այդ թվում նաև Բաքվի թատրոնի (1910 թ., այժմ Ռ. Հաջիբեկովի անվան օպերայի ու բալետի թատրոնի) նախագծողն ու կառուցողն էր։

Ռուսաստանում (Պետերբուրգում, Մոսկվայում) ստեղծագործող ճարտարապետներից առավել լայն ճանաչման է արժանացել Ալեքսանդր Հովհաննեսի Թամանյանը (Թամանով, 1878—1936)։ Նա 1904 թ. Պետերբուրգի գեղարվեստական ակադեմիայի ճարտարապետական ֆակուլտետն ավարտելուց անմիջապես հետո վերադառնալով է Պետերբուրգի հայկական եկեղեցին (Նեվրկի պողոտայում)։ Նախասովետական շրջանի իր բոլոր գործերում Ալ. Թամանյանը հետևողականորեն կանգնած էր ռուսական կլասիցիզմի ճարտարապետության դիրքերի վրա։ Նրա հաջողված գործերից են Յարոսլավլի Հոբելյանական ցուցահանդեսի համալիրը (1913), որի տաղավարները մշակված են ռուսական փայտի ճարտարապետության մոտիվներով և իշխան Շչերբատովի մենատունը Մոսկվայում (1914)։ Վերջինս այդ տարվա լավագույն շենքերի մրցույթում արժանացել է ոսկե մեդալի։ Ալ. Թամանյանը միակն է եղել հայ ճարտարապետներից, որն իր ստեղծագործության փայլուն արդյունքների համար երիտասարդ տարիքում ընտրվել է ճարտարապետության ակադեմիկոս (1914 թ.)[100],

Ճարտարապետական նույն դպրոցի սաներից է Նիկողայոս Գաբրիելի Բունիաթովը (Բունիաթյանը, 1884—1943), որը ստեղծագործական կյանք է մտել 1914 թ.։ Դեռևս ուսանողական տարիներին, ցուցաբերելով բացառիկ հետաքրքրություն ռուսական հնությունների նկատմամբ, նա 1911—1913 թթ. չափագրել է Նովո-Լադոժսկի գավառի և Մոսկվայի մի քանի հուշարձանները։ Սերը դեպի հնությունները նրան բերել է Հայաստան։ 1914—16 թթ. որպես ճարտարապետ նա մասնակցել է Անիի հնագիտական արշավախմբի աշխատանքներին, չափագրելով ու նկարելով մի շարք հուշարձաններ (պալատա-

[100] Տե՛ս Ю. С. Яралов, Таманян, М., 1950, стр. 7—21.

կան և Արուղամրենց եկեղեցիները, Երերույքի և Շիրակավանի տաճարները)։ Ն. Մառի առաջաբանով 1916 թ. Պետերբուրգում լույս է տեսել Ն. Գ. Բունիաթյանի «Հայ արվեստի հուշարձաններ. Անիի պալատական եկեղեցին» չափագրությունների ալբոմը։ Այնուհետև նորից փոխադրվելով Մոսկվա, որոշ տարիներ նա ղեկավարել է Մոսկովյան-Կազանյան երկաթուղագծի (Ալ. Թամանյանի կողմից նախագծված Կրատովո կայարանամերձ ավանի) շինարարությունը[101]։

Ճարտարապետության զարգացման համար պակաս նպաստավոր էին պայմանները Արևմտյան Հայաստանի քաղաքներում։ Այնուհանդերձ այստեղ ևս XIX դարի վերջին քառորդում և XX դարի սկզբին որոշ տեղաշարժեր են առաջանում։ Վանը Արևմտյան Հայաստանի խոշոր քաղաքներից էր, ուներ շուրջ 50 հազ. բնակիչ, այդ թվում 32 հազ. հայեր։ Բուն քաղաքը, կամ ինչպես վանեցիներն էին անվանում՝ Քաղաքամեջը, գտնվում էր Վանա բերդի հարավկողմյան հարթավայրի վրա։ Նրա տարածությունը կազմում էր 64 հեկտար։ Բոլոր կողմերից (բացի հյուսիսային, որտեղ բերդի բարձրաբերձ ժայռերն են) Քաղաքամեջը շրջապատված է եղել երկտակ պարիսպներով, որոնք արդեն կիսավեր էին։ Դրանցում կային քաղաքադարպասներ լճի (արևմտյան), հարավային (երկու) և արևելյան կողմերից։

Քաղաքամիջում կային քարաշեն պատերով ու գլխավորապես փայտածածկ յոթ եկեղեցիներ, որոնցից հինգը (ս. Նշանը, Պողոս-Պետրոսը, Տիրամորը, ս. Վարդանը և ս. Ծիրանավորը) գործող, իսկ երկուսը՝ ս. Սահակը և ս. Առաքելոցը կիսավեր էին։ Կար նաև բողոքականների եկեղեցի։ Քաղաքամեջի Թոփչի-մեյդանում էր գտնվում Վանի առաջնորդարանը։ Շուկայական հրապարակն իր առևտրական ու արհեստավորական շարքերով տեղավորված էր հարավային պարիսպների մոտ։

Վանի բաղկացուցիչ մասն էին կազմում արվարձանները, որոնց զբաղեցրած տարածությունը մոտավորապես 12—15 անգամ գերազանցում էր Քաղաքամեջի տարածությանը։ Արվարձանները հարուստ էին պտղատու այգիներով, որոնք ոռոգվում էին թաղամասերով հոսող ջրանցքների («Շամիրամի») առուների, ինչպես նաև ավազանների ջրերով։ Դրանք առաջանում էին գլխավորապես քահրեզային ընդարձակ ու լավ կազմակերպված ցանցից[102], ինչպես նաև Հանկույսներ գետակից։ Քաղաքի տարածքի վրա տեղաբաշխված էին մեծ թվով հասարակական աղբյուրներ։ Արվարձանները տարածվում էին Քաղաքամեջից դեպի հարավ և արևելք ընկած ընդարձակ հարթավայրը։ Քաղաքամեջի մոտ, նրա արևելյան կողմում, Թավրիզյան դարպասներին անմիջապես կից Հայկավանք թաղն էր (որը 1896 թ. դեպքերի ժամանակ ավերակ էր դարձել ու այլևս չէր վերականգնվել)։ Քաղաքամեջի հարավային կողմում Թուրքաբնակ Շամիրամի թաղն էր։

Քաղաքամեջը Այգեստանի հետ կապված էր Թավրիզյան դարպասից սկսվող 6 կմ ընդհանուր երկարությամբ գլխավոր մայրուղու՝ Սխգյաի Ջաղդայի (խճուղու) միջոցով։ Խաչ փողան խաչմերուկում այն հատվում էր արևելքից արևմուտք տանող մեկ ուրիշ մայրուղու հետ։

---

101 Տե՛ս М. И. Ильина, Н. Г. Буниатов, М., 1944, стр. 5—20.

102 Տե՛ս Հար. Թուրշյան, Ջրօգտագործման սիստեմը Վասպուրականում, ՊԲՀ, 1967, № 2—3, էջ 246—253։

Խիտ այգիներով ծածկված հայկական քաղաքում, մեկ-երկու հարկանի, հում աղյուսով կառուցված բնակելի տների պատշգամբները նայում էին դեպի բակ։ Նույն սկզբունքով էին կառուցված նաև մեծահարուստներ Գյուլումյանների, Գափամաջյանների, Թերզիբաշյանների, Ջիդեչյանների, Հյուսյանների, Թյութունջյանների ու այլոց մեծատները, այն տարբերությամբ, որ սրանք 2—3 հարկանի էին, ավելի ընդարձակ ու գեղեցիկ։

Դարեվերջին տեղի ունեցած երկու աղետների (1876 թ. հրդեհի և 1896 թ. դեպքերի) հետևանքով Վանի մոնումենտալ շենքերի մի մասը, հատկապես եկեղեցիները, ավերվել ու հրկիզվել են և հետագայում վերաշինվել։ Արարուց ս. Աստվածածին եկեղեցին, որ Վանի քաղաքային մեծ եկեղեցիներից էր (հատակագծում ուներ 40,5×16,8 մ չափեր), պատերը ստորին մասում քարաշեն էին, վերին մասում աղյուսաշեն, վերաշինվել է 1884 թ.։ Արևելյան կողմից եկեղեցուն հարում էր բակը և ընդարձակ գերեզմանատունը՝ ուր թաղված էին Վասպուրականի ազգային-ազատագրական շարժման ականավոր գործիչները և Վանի հերոսամարտում զոհվածները։

Հայկավանքի ս. Հակոբա և Հանկուսների քաղաքային եկեղեցիները վերաշինվել են 1898 թ.։ Հայկավանքի եկեղեցին իր ինքնատիպությամբ նախօրինակը չուներ հայկական ճարտարապետության մեջ։ Նրա ծածկի ձևերում վերարտադրված էր հայկական ժողովրդական բնակարանի «հազարաշեն» կոչված համակարգը։

Վան քաղաքի այս ժամանակաշրջանում կառուցված շենքերից հիշատակության արժանի են Երամյան գպրոցի երկհարկանի շենքը (1888), այսպես կոչված Աշխատանքի տունը (1911—1912, ճարտ. Հ. Քաջազնունի) և վարժարանացոյի երկհարկանի շենքը (1912)։

Էրզրումի (Կարին) առանցքն էր բարձունքի վրա տեղադրված և բազմաթիվ անգամներ ավերված ու վերաշինված միջնաբերդը, ինչպես նաև սրա շուրջը 600 հեկտար տարածության վրա սփռված բուն քաղաքը (որին կարինցիները Բերդ էին կոչում)։ Արվարձանները տարածվում էին Բերդի բոլոր կողմերում։

Կարինի հայ բնակչությունը, որ արտագաղթի (դեպի Անդրկովկաս՝ մասնավորապես Ախալցխա, Ախալքալաք, Կարս, Ալեքսանդրապոլ) հետևանքով զգալիորեն պակասել էր ու 1913 թ. տվյալներով 14 հազար էր կազմում, գերազանցապես տեղավորված էր արվարձաններում, որոշ չափով նաև Բերդում[103]։

Կարինի հասարակական կենտրոնները Իչ-մեյդան, Սառայի դուռ, Թավրիզի դուռ և Աբ մեյդան կոչվող շուկաներն էին՝ իրենց վաճառատներով, խանութների ու արհեստանոցների տեսակ շարքերով։ Առևտրական աշխույժ կյանքով ապրող քաղաքի այցելուներին սպասարկում էին մոտ 150 մեծ ու փոքր իջևանատներ։

Հանքային ջրերով ու սառնորակ աղբյուրներով հարուստ Կարնո գաշտը ապահովում էր քաղաքի ջրամատակարարումը, ուր միայն հանրային օգտագործման ծորակների թիվը հասնում էր 600-ի։ Քաղաքն ուներ նաև բաղնիքների ու ջրաղացների ընդարձակ ցանց։

Կարինում կային դպրոցական բազմաթիվ շենքեր, որոնցից առավել հի-

103 Տե՛ս Ղազար Ջարբհ. Տուշամատեան Բարձր Հայքի, Կարինապատում, Պեյրութ, 1957։

շատակելի են ս. Թարգմանչաց իգական վարժարանի շենքը, որը 1883 թ. հատկացվում է Կարնո Սանասարյան միջնակարգ վարժարանին։ Հատուկ կառուցված շենքերում էին տեղավորված նաև Մորյան թաղային վարժարանը։ 1884 թ. վերանորոգվեց Հ. Օձնեցու մատուռը (գտնվում էր քաղաքից դուրս)։

Տեղանքի բարձրության (ծովի մակերևույթից մոտ 2000 մ) պատճառով ցրտաշունչ ձմեռներով ու զով ամառներով, ինչպես նաև հաճախակի երկրաշարժերով բնորոշ այս քաղաքում բնակելի տները հարմարեցված էին կլիմայական և սեյսմիկ պայմաններին։ Նրանք աչքի էին ընկնում կուռ և հավաք հորինվածքով, երկհարկանի էին, քարաշեն, պատերը հաստ, հյուսված կրաշաղախով, ունեին հակաերկրաշարժային (խաթիլ կոչված) փայտյա գոտիներ։ Սենյակների հատակը և առաստաղի ծածկը դրվում էին փայտյա գերանների վրա։

Խարբերդ քաղաքում XIX դ. վերջին և XX դ. սկզբին հայերն ապրում էին Սինամուտ (կամ Շենմուտ), Վերի և Վարի թաղերում, որոնք ունեին եկեղեցիներ ու նրանց կից վարժարաններ կամ նախակրթարաններ։ Սինամուտ թաղամասում էին գտնվում ս. Նշան եկեղեցին, Վերին թաղում՝ ս. Հակոբ (կենտրոնական վարժարանով) և ս. Կարապետ եկեղեցիները, Վարի թաղում՝ ս. Ստեփանոս եկեղեցին (նախակրթարանով) ու կաթոլիկների եկեղեցին՝ կից վարժարանով, իսկ ասորոց թաղում՝ ս. Աստվածածին եկեղեցին[104]։

Թաղերը հիմնականում տեղավորված էին մինչև հովիտ իջնող մեծ թեքության սարալանջի ու բնականորեն միմյանցից անջատ տարածությունների վրա, կառուցապատված էին խիտ, 2—3 հարկանի բնակելի տներով, որոնք կարծես ծեփված էին ժայռերին, լեռնային բնակավայրերին հատուկ՝ աստիճանաձև։ Խարբերդը բավականին տուժել է 1874 թ. ուժեղ երկրաշարժի և 1895 թ. դեպքերի հետևանքով։ Սրանց հաջորդում են հին (գերազանցապես եկեղեցական) շենքերի վերաշինությունն ու նորերի կառուցումը։ Ս. Հակոբ եկեղեցին, որ քանդվել էր 1895 թ. դեպքերի ժամանակ, վերստին վերաշինվում է։

Խարբերդի ուսումնական ու բուժական շենքերից առանձնապես հիշատակության են արժանի իգական ճեմարանը (1869), Եփրատ կոլեջի եռահարկ շենքը (1880) և Աննա Թրեյզի Րիկզ հիվանդանոցը (1909)։ Բնակարանային ճարտարապետության արդիական ուշագրավ օրինակ կարելի է համարել Խարբերդի դաշտավայրի Մեզիրե քաղաքում կառուցված Ֆարրիկաթորյան մեծահարուստ եղբայրների կոտեջատիպ մենատունը՝ բաղկացած կցաշար և երկու հարթությունների վրա տեղավորված հինգ բնակարաններից։

Հաճընը XIX դ. վերջին տեղի ունեցած մի քանի աղետալի դեպքերից (1893, 1894 և 1898 թթ. հրդեհներից և 1887 թ. սովի համաճարակից) հետո, որոնք զգալի վնաս հասցրին քաղաքին, XX դ. սկզբին աչքի ընկավ տնտեսական բարգավաճմամբ ու տարբեր բնույթի շենքերի կառուցմամբ[105]։ Քաղաքի շուրջ 25—30 հազ. բնակչությունն ապրում էր Կելեկ, Վերին թաղ, Գոփուչների թաղ, Գալե ալթը, Վարի թաղ, Ձորնենց թաղ ու այլ թաղերում։ Սրանք տեղավորված էին սարահարթի գագաթին, լանջերին ու փեշերին։ Վերի ու Վարի թաղերն ունեին շուկաներ։ Առանձին թաղեր (Կելեկը, Վերին ու Վա-

104 Տե՛ս Վահե Հայկ, Խարբերդը և անոր ոսկեղեն դաշտը, Նյու-Յորք, 1959։
105 Տե՛ս Յ. Պ. Պողոսեան, Հաճընի ընդհանուր պատմութիւն, Լոս Անճելըս, 1942։

բին) ունեին դյխավոր և երկրորդական ուղիղ փողոցների կանոնավոր ցանց, մի բան, որ հազվադեպ է հանդիպում Արևմտյան Հայաստանի քաղաքներում։ Հաճընի կառուցապատումն իրականացվել է մասնագիտական հսկողության ներքո։ Քաղաքապետարանն ուներ իր ճարտարապետ-ինժեները (Թորոս վարպետ Պապահեքյանը, 1860—1917)։ Նրա նախագծերով են կառուցվել Հաճընի եկեղեցական, ուսումնական շենքերը և մեծահարուստներ՝ Քերոբյանների, Բեզեճյանների, Շախրամյանների, Թումանյանների և այլոց 4—7 հարկանի մենատները՝ ազգային ներքին հարդարանքով ու արդիական արտաքին ճարտարապետությամբ։

Բարդ ռելիեֆի ու բնակտարածության սղության պատճառով Հաճընը կառուցապատված էր չափազանց խիտ ու աստիճանաձև։ Քաղաքը ուներ 6 եկեղեցի, որից 3-ը լուսավորչական էին, 2-ը՝ հայ բողոքական, 1-ը՝ հայ կաթոլիկական։ Կային բազմաթիվ դպրոցներ, որոնց մի մասը կից էին եկեղեցիներին։

Սահակ-Մեսրոպյան վարժարանի քարաշեն հինգ հարկանի շենքը (1912—14) տեղադրված էր ս. Աստվածածին եկեղեցու դիմաց, ժայռի վրա, հին բերդի տեղում ու իր դիրքով այնքան անառիկ էր, որ 1920 թ. ծառայեց հաճընցիների ինքնապաշտպանությանը։ Շենքի առաջին հարկը հատկացված էր մանկապարտեզին, 2-րդ—3-րդ հարկերը՝ վարժարանին, 4-րդ հարկում տեղավորված էր Հաճընի առաջնորդարանը, իսկ 5-րդ հարկում՝ թատերասրահը։ Հաճընի մյուս շենքերից հիշատակելի են բաղնիքի (1887), քաղաքապետարանի (1902), մանկապարտեզի (1912), Տեր-Ազարյան արական և Անաբատ հղիացման իգական վարժարանների շենքերը։

Այս նույն ժամանակաշրջանում Կ. Պոլսում շարունակվում էր Պալյանների ճարտարապետական տոհմի ներկայացուցիչների՝ Հակոբ և Սարգիս Պալյանների գործունեությունը, որոնք միասին ավարտում են Զրաղանի պալատի շինարարությունը։ Նրանց մահից հետո (1875) Սարգիս Պալյանն աշխատելով Լևոն Պալյանի համագործակցությամբ, նախագծում և կառուցում է բազմաթիվ ու բազմաբնույթ շենքեր, պալատներ, քյոշկեր, մզկիթներ, գինվորական տարբեր շինություններ, հիացնելով ժամանակակիցներին իր մասնագիտական բացառիկ փորձով ու վարպետությամբ[106]։

Միևնույն ժամանակ ճարտարապետ Սարգիս Պալյանը հայտնի է ազգօգուտ գործունեությամբ։ Նրա միջոցներով է հիմնվել Վասպուրականի Մարմեր գյուղի դպրոցը և Պեշիկթաշի Մաքրուհյան ազգային օրիորդաց վարժարանը։ Նրա նախաձեռնությամբ 1873 թ. կազմակերպվում է հասարակական աշխատանքների մի ընկերություն։

Եգիպտահայ գաղթօջախում ապրել ու ստեղծագործել են նշանավոր հայ ճարտարապետներ Կ. Պալյանը, Հ. Ագնավուրյանը, Լ. Նաֆիլյանը, Ա. Կարինյանը և ուրիշներ, որոնք նախագծել են բազմաթիվ շենքեր նաև գաղթավայրի համայնքի համար։ Կարո Պալյանը (1878—1961) սերվում էր Կ. Պոլսի Պալյան ճարտարապետների տոհմից և թուրքական արքունիքի ճարտարապետ ու քանդակագործ Պալի Պալյանի (սա էլ որդին էր Կարապետ Պալյանի եղբայր Նիկողոս Պալյանի) որդին էր։ Կարո Պալյանը ուսանել է Կ. Պոլսի գեղարվեստաց վարժարանում։ 1896 թ. դեպքերի բերումով փախագրվելով Բուլ-

106 Տե՛ս «Հիշատակարան», պրակ Ժ, Կ. Պոլիս, 1910, էջ 180—187։

զարիա, աշխատել է Բորիս Քագավորի ճարտարապետական գրասենյակում։ Այստեղ նա ստանձնել է պալատի սնարների շինարարությունը, մասնակցել անհայտ դինվորի հուշարձանի նախագծման մրցույթին ու շահել մրցանակ։

1903 թ. մինչև իր կյանքի վերջը Կարո Պալյանն ստեղծագործել է Կահիրեում, ուր նրա նախագծերով կառուցվել են մի քանի տասնյակ հոգևոր շենքեր և քաղաքացիական վաճառատներ, հյուրանոցներ, գործատներ և այլն։ Նրա գրչին են պատկանում «Դեպի լույս» խորագիրը կրող դպրոցական շենքերին նվիրված գիրքը, ինչպես և «Եգիպտոսը և արաբական ճարտարապետությունը» (Կահիրե, 1917) ծանրակշիռ հետազոտությունը։

Պոլսահայ ճարտարապետ Լևոն Նաֆիլյանը (1877—1937) կրթություն ստացել էր Փարիզի գեղարվեստաց բարձրագույն դպրոցում։ Նա 1910—22 թթ. համագործակցելով ճարտ. Մարտ. Գալունճյանի հետ, նախագծել և կառուցել է բազմաթիվ շենքեր Կահիրեում։ Այնուհետև փոխադրվել է Փարիզ, ուր անց է կացրել իր կյանքի երկրորդ, առավել հասուն ու բեղմնավոր ստեղծագործական փուլը։

Հայ նշանավոր ճարտարապետ և գիտնական Թորոս Թորամանյանը (1864—1934 թթ.) իր ստեղծագործական կյանքի առաջին տարիներն անց է կացրել սկզբում Սոֆիա, ապա Վառնա քաղաքներում, նախագծել և կառուցել է բազմաթիվ շենքեր, գլխավորապես մենատներ մեծահարուստ և մտավորական բուլղարահայերի համար (Ս. Քյուրդյանի, Բ. Մանուկյանի, Հ. Մազիյանի և այլն) և Վառնայում՝ հայկական ազգային վարժարանի շենքը[107]։

Այս ժամանակաշրջանը բեղմնավոր եղավ հայկական ճարտարապետության գիտական ուսումնասիրության տեսակետից։ Առաջինը Վենետիկի Մխիթարյան ուխտի վաստակաշատ միաբան Ղ. Ալիշանն էր, որ հաջորդաբար հրատարակեց իր «Արարատ» (1890 թ.), «Շիրակ» (1891 թ.), «Սիսական» (1893 թ.) և «Սիսուան» (1895 թ.), ինչպես նաև «Նշխարք հայկականք» պրակները, ուր գիտական մեծ բարեխղճությամբ հավաքված են մատենագրական ու նկարագրական նյութեր հին և միջնադարյան Հայաստանի պատմական բնակավայրերի ու հուշարձանների վերաբերյալ։

Հայաստանի հնագիտական վայրերում՝ Անիում, Զվարթնոցում, Դվինում և այլուր կազմակերպվեցին պեղումներ, որոնք ընձեռեցին նոր նյութեր հայկական ճարտարապետության ուսումնասիրության համար։

Առանձնապես հարուստ նյութեր ստացվեցին միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի պեղումներից։ Արշավախմբի ղեկավար պրոֆ. Ն. Մառը Հ. Օրբելին, Բ. Թորամանյանը, Ն. Բունիաթյանը և ուրիշներ նախասովետական տարիներին որոշակի ավանդ մտցրին հայ ճարտարապետության ուսումնասիրության գործում[108]։ Հատկապես մեծ է Թորոս Թորամանյանի վաստակը։ 1903 թ. Հայաստան գալով, նա մասնակից է դառնում Զվարթնոցի և Անիի պեղումներին, ապա ընդարձակելով իր ուսումնասիրության շրջանակները, պեղում է Շիրակի բարձրավանդակի, Արագածոտնի, Արարատյան դաշ-

---

107 Տե՛ս Հ. Հաճեթյան, Բ. Թորամանյանը Բուլղարիայում, «Սովետական արվեստ», 1965 թ., № 9, էջ 47—51։

108 Պեղումների արդյունքներն ամփոփված են Ն. Մառի «Ани, книжная история города и раскопки на месте городища», Л.—М., 1934.

տի ու Հայաստանի այլ մասերի հուշարձանները։ Դրանց ուսումնասիրության հարուստ նյութերով նա գիտական լայն ընդհանրացումներ է կատարում հայկական ճարտարապետության առանձնահատկությունների, զարգացման տարբեր փուլերի ու նրանց հատկանիշների, շինարվեստի և այլ հարցերի մասին, ստեղծելով հայ ճարտարապետության պատմության մի կուռ տեսություն։ Նրա աշխատություններից են առանձին գրքերով և պարբերականներում հրատարակած «Տեկորի տաճարը» (1911), «Զվարթնոցի տաճարը» (1905), «Էջմիածնի տաճարը» (1909), «Հայ ճարտարապետության շրջանները» (1912), «Նորագույն կարծիքներ հայ ճարտարապետության մասին» և բազմաթիվ այլ հոդվածներ ու գործեր։ Դրանք հեղաշրջող նշանակություն ունեցան, էապես նպաստեցին վերանայելու եվրոպական որոշ գիտնականների թյուր կարծիքները հայկական ճարտարապետության մասին։

Առաջիներ եվրոպական գիտնականներից Թ. Թորամանյանի գրույթների պաշտպանությամբ հանդես եկավ ու դրանք գիտական աշխարհին ներկայացրեց Վիեննայի համալսարանի պրոֆ. Ժոզեֆ Ստրժիգովսկին (1862—1942) իր «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» երկհատոր ստվարածավալ աշխատությամբ[109]։ Նա ոչ միայն վճռականապես հերքեց բյուզանդագետ Շարլ Դիլի և ուրիշների կարծիքները հայկական քրիստոնեական ճարտարապետությունը բյուզանդականից սերված լինելու դրույթը, այլև կոնկրետ փաստերով ցույց տվեց հայկական ճարտարապետության կազմավորման տեղական ակունքներն ու նրա ազդեցությունը եվրոպական որոշ երկրների ճարտարապետության վրա։

Այսպիսով, հնագիտական պեղումների ծավալման, հայ ժողովրդի պատմության և մշակութային ժառանգության նկատմամբ ծայր առած ընդհանուր հետաքրքրության պայմաններում հետզհետե ձևավորվող հայ ճարտարապետության վերաբերյալ գիտական տեսակետը լայն ճանաչում է գտնում։

6. ԿԵՐՊԱՐՎԵՍՏ

XIX դարի վերջին և XX դարի սկզբին աննախընթաց զարգացում է ապրում հայ կերպարվեստը։ Հանդես է գալիս մասնագիտական կրթություն ունեցող արվեստագետների մի ամբողջ սերունդ։ Հայ շնորհալի երիտասարդների զգալի մասը մասնագիտական կրթություն է ստանում Պետերբուրգի, Մոսկվայի, Փարիզի, Մյունխենի գեղարվեստական հաստատություններում։ Գեղարվեստական կյանքի աշխուժացմանը մեծապես նպաստում է «Արվեստները խթանուող կովկասյան ընկերության» կազմակերպումը (1873), որտեղ ընդգրկված էին հայ, վրացի, ռուս արվեստագետներ։ Հայկական գեղարվեստական կյանքի վերելքը հիմք հանդիսացավ, որպեսզի 1915 թ. Թիֆլիսում կազմակերպվի «Հայ արվեստագետների միությունը», որի հիմնադիրներից էին Վ. Սուրենյանցը, Հովհ. Թումանյանը, Ա. Շիրվանզադեն, Ե. Թադևոսյանը և ուրիշներ։

Ստեղծագործելով տարբեր երկրներում, հայ արվեստագետները մերձենում էին տարբեր ժողովուրդների մշակույթներին, վերցնելով նրանցից այն, ինչը մոտ էր ու հոգեհարազատ նրանց մտահղացումներին։ Հայ կերպարվես-

[109] *J. Strzygowski*, Die Baukunst der Armenier und Eouropa, B. I, II, Wien, 1918

տագետների ստեղծագործության բազմակողմանի զարգացման համար հատկապես նպաստավոր միջավայր էր ռուսական գեղարվեստական կյանքը։ Պեդեվիժնիկների ռեալիստական արվեստը, ռուսական մշակույթի հետ նկարիչների ունեցած շփումները որոշակի դեր խաղացին հայ արվեստում նոր ժանրերի ու թեմաների, գեղարվեստական նոր լուծումների առաջացման համար։

Ուշագրավ զարգացում են ապրում հատկապես գեղանկարչությունը, քանդակագործությունն ու գրաֆիկան։ Գրվում են արվեստաբանական առաջին հոդվածներն ու ուսումնասիրությունները, որոնց հեղինակներն էին Ալ. Շիրվանզադեն[110], Վ. Սուրենյանցը[111], Գ. Հովսեփյանը[112], Ա. Զոպանյանը[113], Գ. Բաշինջաղյանը[114], Գ. Լևոնյանը[115]։ Նրանց աշխատությունները հայ արվեստաբանական մտքի առաջին հիմնաքարերն էին։

Հայ արվեստի աշխուժացումը խթանեց նաև արվեստաբանական ամսագրերի հանդես գալուն։ «Անահիտ» ամսագրում (առաջին համարը լույս է տեսել 1898 թ., Փարիզում, խմբագիր-հրատարակիչ Ա. Զոպանյան) որոշակի տեղ էին գրավում նաև հայ կերպարվեստը լուսաբանող նյութերը։ «Գեղարվեստ» ամսագիրը (1908—1921 թթ., լույս է տեսել 6 համար, խմբագիր Գ. Լևոնյան) լուսաբանում էր նաև կերպարավեստի հարցերը, դրանք դիտելով ժողովրդի գեղագիտական դաստիարակության, արվեստի պատմական երևույթների առաջադեմ գաղափարների մեկնաբանման տեսանկյունից։ Ամսագիրը ձգտում էր գտնել արվեստի և ժամանակի առաջավոր հոսանքների կապը, պրոպագանդում էր հայ և օտար նկարիչների ստեղծագործությունները։ Կերպարվեստի պրոպագանդման տեսակետից որոշ աշխատանք էր կատարում նաև «Գեղունի» պատմաբանասիրական և գրական-գեղարվեստական պատկերազարդ հանդեսը (հիմնադրվել է 1901 թ. Վենետիկում)։

XIX դարի կեսերից հանդես են գալիս առանձին ստեղծագործողներ, որոնց արվեստը ստանում է հասարակական լայն հնչեղություն։ Այս տեսակետից առանձնահատուկ տեղ է գրավում Հովհաննես Այվազովսկին։

Հ. Այվազովսկու *(1817—1900)* ստեղծագործական կյանքն սկիզբ առավ 1830-ական թթ.։ Նա ծովանկարչության մեջ բերեց բնությունն զգալու և այն գեղարվեստորեն վերարտադրելու մեծագույն կարողություն։ Դաստիարակված լինելով Պետերբուրգի գեղարվեստից ակադեմիայի ավանդներով և կյանքի մեծ մասն ապրելով Ռուսաստանում, կրելով ժամանակի առաջավոր գաղափարների ազդեցությունը, նա կարողացավ ծովանկարչության ժանրը

110 Ա. Շիրվանզադե, «Կովկասյան պատկերահանդես», «Մուրճ», 1897, № 10, «Կովկասյան ցուցահանդես», «Արձագանք», 1899, № 35։

111 Վ. Սուրենյանց, «Մի քանի խոսք եվրոպական նկարչության մասին», «Արձագանք», 1883, № 40, «Հայկական Տարտարապետության տեղը գեղարվեստի պատմության մեջ», «Վեմ» ժողովածու, 1901։

112 Գ. Հովսեփյան, Մանրանկարչության արվեստը Հայոց մեջ, Բիֆլիա, 1902, «Ոսկերչական արվեստի մի նմուշ ԺԴ դարում», «Գեղարվեստ», 1911, № 4։

113 Ա. Զոպանյան, Նազաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը, Փարիզ, 1910։

114 Գ. Բաշինջաղյան, «Հովհաննես Այվազովսկի», «Տարազ», 1897, № 36, «Դիգո Տատիշվիլու հիշատակին», «Մշակ», 1911, № 171, «Երջանկահիշատակ Տրետյակովը և իր պատկերասրահը Մոսկվայում», «Մշակ», 1913, № 30։

115 Գ. Լևոնյան, «Երկու խոսք հայ մանրանկարչության մասին», «Հուշարար», 1907, № 6, 7, «Ներածություն հայոց գեղարվեստի պատմության», «Գեղարվեստ», 1914, № 5։

դուրս բերել գեղեցիկ լինելու ինքնանպատակությունից, գեղեցկացման ու իդեալականացման ավանդական ձգտումից: Միայն իրեն հատուկ վարպետությամբ, իր բարձրարվեստ ստեղծագործություններով Հ. Այվազովսկին համաշխարհային ծովանկարչությունը հասցրեց կատարելության: Դրա լավագույն ապացույցներն են «Նեապոլի ծոցը լուսնկա գիշերով», «Սև ծովը»,



Հովհաննես Այվազովսկի

«Ալիքների մեջ», «Նեապոլի ծովածոցը միգապատ առավոտ», «Անդորը» և այլ կտավները: Նրա ստեղծագործության մեջ առանձնակի տեղ է գրավում «Իններորդ ալիքը» կտավը: Այն նվիրված է բնության դեմ մղված մարդու պայքարին, որտեղ հաղթանակում է մարդկային բանականությունն ու նրա ամենակարող ուժը: Անգնահատելի է Հ. Այվազովսկու ավանդը համաշխարհային կերպարվեստում նաև որպես ծովային մարտանկարչության ժանրի վարպետ:

Իր արվեստում Այվազովսկին առանձնակի տեղ է հատկացրել նաև հայկական թեմաներին։ Նա առաջինն անդրադարձավ հայկական բնաշխարհի պատկերմանը («Արարատ», «Արարատյան հովիտը», «Սևանա լիճը»), ինչպես նաև ստեղծեց հայկական թեմաներով մի շարք աշխատանքներ («Երիմյան Հայրիկը էջմիածնի շրջակայքում», «Հայ ժողովրդի մկրտությունը», «Հայ զորավարի երդումը» և այլն)։

Հ. Այվազովսկին մտերիմ էր բազմաթիվ հայ գործիչների հետ, մասնակցած էր «Հայ արվեստագետների միությունն» ստեղծելու հարցով։ 1890-ական ԹԹ. հայկական կոտորածների ծանր տպավորության տակ նա հայ գաղթականների օգտին յուցահանդեսներ էր կազմակերպում, նրանց ապաստան էր տալիս և իրեն համակած զայրույթն ու բողոքը հանձնում էր կտավին («Հայերի ջարդը Տրապիզոնում 1895 թ.», «Հայերին լցնում են նավերը», «Կենդանի հայերին թուրքերը թափում են Մարմարա ծովը» և այլն)։

Հ. Այվազովսկու արվեստը մեծապես նպաստեց ծովանկարչության ժանրի զարգացմանը։ Նրա արվեստի ազդեցության տակ ստեղծագործել ու անմիջական խորհուրդներից օգտվել են Մկրտիչ Ճիվանյանը (Կ. Պոլիս, 1858—1906), Արսեն Շապանյանը (Փարիզ, 1964—1949), էմանուել Մահտեսյանը (Ղրիմ, 1957—1908) և Վարդան Մախոխյանը (Բեռլին, 1869—1937)։

Զգալի էր Հ. Այվազովսկու ազդեցությունը նաև հայ ռեալիստական բնանկարչության խոշորագույն դեմքերից մեկի՝ Գևորգ Բաշինջաղյանի (1857—1925) ստեղծագործության վրա։ Պետերբուրգի գեղարվեստից ակադեմիայում երեք տարի սովորելով ռուս նշանավոր նկարիչ Մ. Կլոդտի արվեստանոցում, Բաշինջաղյանն յուրացրեց բնանկարչության ռուսական ավանդներն ու հայ իրականության մեջ դարձավ դրանց արմատավորողը։

Նրա ստեղծագործության մեջ մեծ տեղ են գրավում Կովկասում, Ռուսաստանում և Փարիզում արված բնանկարները։ «Ձնհալը Կովկասում», «Կազբեկ» և նույնանման այլ կտավներում նկարիչը ձգտել է վերարտադրել բնության տրամադրությունը, նրան «խոսեցնել» գույների լեզվով։

Հայաստանի բնությանը նվիրված իր գործերում նա հանդես է եկել որպես բնության ընկալումն ու նրա գեղարվեստական վերարտադրումը հմտորեն զուգակցող վարպետ արվեստագետ («Դիլիջանի ճանապարհը», «Խաչատուր Աբովյանի տունը Քանաքեռում», Անի բաղաքի հուշարձաններին նվիրած նկարաշարը և այլն)։

Գ. Բաշինջաղյանի ստեղծագործության մեջ հատուկ տեղ է գրավում նաև Սևանը, որը նկարել է արշալույսին, արևամուտին, գիշերը։ Արտաքնապես հանգիստ թվացող Բաշինջաղյանի այս բնանկարներում կյանքի ռիթմը կա։ Նրանք ակտիվ են, հուզական։ Այդպիսիք են նաև նկարչի Արարատների տեսարանները՝ ներքին դրամատիզմով, լարվածությամբ հագեցված («Արարատ» և այլն)։

Փարիզի շրջակայքը պատկերող գողտրիկ տեսարաններում Բաշինջաղյանը լուծել է օդի և լույսի վերարտադրման հետ կապված գեղանկարչական որոշակի խնդիրներ։

Ապրելով և ստեղծագործելով Թիֆլիսում, Բաշինջաղյանը առաջիններից մեկն էր, որ բարձրացրեց Սայաթ-Նովայի գերեզմանի վրա չիմքաքար դնելու հարցը, ջերմ ու հարգանքով լցված հոդվածներ գրեց Պ. Ադամյանի,

Ա. Ծատուրյանի և Ա. Շիրվանզադեի մասին։ Բազմաթիվ արժեքավոր կտավների հետ սերունդներին թողեց մի շարք պատմվածքներ, որոնցում բնության բանաստեղծական նկարագրությունների կողքին կերտեց նաև կյանքի դառնությունները կրող աշխատավոր մարդկանց կերպարներ։ Լինելով իր ժամանակի գեղարվեստական կյանքի ակտիվ մասնակիցներից մեկը, Գ. Բաշինջաղյանը տեսնում էր առաջընթաց ապրող հայ կերպարվեստի մեջ տեղի ունեցող խմորումները և իր հոդվածներով կոչ էր անում երիտասարդ ստեղծագործողներին՝ հեռու մնալ օտարամոլությունից, ռեալիստական արվեստի սկզբունքները խախտող ազդեցություններից։



Գևորգ Բաշինջաղյան

Հայ կերպարվեստի բացառիկ երևույթներից էր Վարդգես Սուրենյանցի (1860—1921) արվեստը։ Նա գեղանկարիչ էր, գրաֆիկ, թատերական նկարիչ, թարգմանիչ, արվեստի տեսաբան։ Վ. Սուրենյանցն իր մասնագիտական կրթությունն ստացել էր Մոսկվայում և Մյունխենում, հետագայում ապրել Պետերբուրգում, դարձել Պերեդվիժնիկների ընկերության անդամ։

Սուրենյանցի լավագույն կտավները, որոնք կատարված են նրա ստեղծագործական վերելքի տարիներին՝ անցյալ դարի 90-ական թվականներին, հայ ժողովրդի ճակատագրի հետ կապված մտորումներ են, հագեցված ջերմ հայրենասիրությամբ, մարդասիրությամբ և հասարակական խոր բովանդակությամբ։ «Լքյալը», «Ոտնակոխ արված սրբություն», «Հռիփսիմեի եկեղեցին», «Շամիրամը Արա Գեղեցիկի դիակի մոտ» կտավները թելադրված էին 90-ական թվականների հայկական կոտորածներից և ունեին հասարակական մեծ հնչեղություն։ Նկարիչը ժամանակի հուզող գաղափարների գեղարվեստական մարմնավորման համար հայ ժողովրդի պատմության էջերից գտնում էր համահնչուն թեմաներ և կատարողական պարզ ու պատկերավոր լեզվով գեղարվեստական մարմնավորում տալիս դրանց։ Զուննելով իր նախորդը պատմական նկարչության մեջ, Վ. Սուրենյանցը կարողացավ օգտվել համաշխարհային կերպարվեստի հարուստ ժառանգությունից և դարձավ այդ ժանրի հիմնադիրը հայ գեղանկարչության մեջ։ Վ. Սուրենյանցը միաժամանակ ստեղծեց գրքային գրաֆիկայի առաջին բարձր պրոֆեսիոնալ օրինակները (Ա. Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը», Սմբատ Շահազիզի «Հորեյանի տարեդարձը», Ա. Ծատուրյանի, Ալ. Սպենդիարյանի երգերը, «Հայկական ժողովրդական հեքիաթները» և այլն)։ Սուրենյանցն իր ավանդը մուծեց ռուսական թատերական արվեստում, բեմադրություններ ձևավորելով Մոսկվայի գեղարվեստական, Պետերբուրգի Վ. Կոմիսարժևսկայայի թատրոնն-

րում, համահեղինակ լինելով Կ. Ստանիսլավսկու, Վ. Նեմիրովիչ-Դանչենկոյի և Վ. Մեյերհոլդի բեմադրություններին.

Կերպարվեստի հարցերը բազմիցս հուզել են Սուրենյանցին, որոնց նկարիչը նվիրել է մի շարք հոդվածներ: Նա հայ իրականության մեջ առաջին արվեստագետն էր, որ արվեստի պատմություն էր դասավանդում էջմիածնի Գևորգյան ճեմարանում, կազմելով այդ առարկայի առաջին ծրագիրը: Սուրենյանցը տիրապետում էր մի շարք լեզուների և բնագրից թարգմանել էր Շեքսպիր, Ուայլդ, Հայնե, Գյոթե: Միաժամանակ իր ուժերն է փորձել ճարտարապետության և քանդակագործության բնագավառներում:



Վ. Սուրենյանց, Ալ. Սպենդիարյան, Ակ. Մատուրյան

Ժամանակի գեղարվեստական կյանքը թելադրում էր իր պահանջները, որոնք խթան հանդիսացան հայ իրականության մեջ կենցաղային ժանրի առաջացմանը: Ժանրային նկարչության առաջին ներկայացուցիչներից էր Հարություն Շամշինյանը (1856—1914): Կյանքի մեծ մասը նվիրելով մանկավարժությանը, նա չկարողացավ իր կարողությունները լրիվ դրսևորել գեղանկարչության մեջ: Սակայն նրա «Ղևինորա», «Հին Թիֆլիս», «Շեյթան բազար» կտավներն ինքնատիպ ավանդ են հայկական կենցաղային նկարչության բնագավառում: Շամշինյանի ստեղծագործության մեջ զգալի տեղ է գրավում նաև բնանկարը («Սանահնի կամուրջը», «Քյոռ Օղլու բերդը»), ինչպես նաև դիմանկարը («Սերունու դիմանկար», «Ուկրաինուհի»): Ժամանակի կենցաղագիրների շարքում պատվավոր տեղ են գրավում Գ. Գաբրիելյանը (1862—1898), Խ. Տեր-Մինասյանը (1870—1906), Հմ. Արծաթպանյանը (1876—1919), որոնց ստեղծագործությունները նպաստեցին հայ կերպարվեստի դեմոկրատական էության հաստատմանը:

Կենցաղային նկարչության զարգացմանն էր նվիրված Հմայակ Հակոբյանի (1871—1939) արվեստը: Մյունխենում մասնագիտական կրթություն ստացած և դասական նկարչությանը քաջատեղյակ նկարիչն իր ստեղծագործությունը նվիրեց Թիֆլիսի կենցաղին («Հարազատ Քոի վրայով», «Իոր

չալվեցին», «Հանգստացող գյուղացին») և առաջիններից մեկը եղավ հայ գեղանկարչության մեջ, որ անդրադարձավ գյուղացու կյանքին, ստեղծելով ռեալիստական արվեստի այնպիսի հետաքրքիր օրինակ, ինչպիսին է «Վարը Արագածի լանջերում» կտավը։

Կենցաղագիրների շարքում առանձնակի տեղ է գրավում Վանո Խոջաբեկյանը (1875—1925)։ Նրա ստեղծագործությունների շնորհիվ այսօր հնարավոր է պատկերացնել հին Թիֆլիսն իր ազգագրական ու սոցիալական ինքնատիպությամբ։ Վ. Խոջաբեկյանը, Թիֆլիսի համեստ մաշիկ կարողի որդին, կյանքի դառնությունները կրեց մանկությունից մինչև մահ, աշխատելով որպես խանութպանի աշակերտ, սևագործ բանվոր, դռնապահ։ Նրա կյանքի միակ ուրախությունը նկարչությունն էր։ Նկարում էր թղթի վրա մատիտով, մի գծով, սակայն այնքան սահուն նրբագեղությամբ, որ դժվար է հավատալ, թե դրանց հեղինակը գեղարվեստական կրթություն չի ստացել։ Վ. Խոջաբեկյանը, գրաֆիկական թերթերի արտաքին գրտեսկի տակ («Կուշտեր և քաղցածներ», «Քելլեխից հետո», «Հարսի օժիտը», «Ղոշերի կռիվը» և այլն), խորհում է կյանքի երևույթների վրա, խորհում է ու ծիծաղում, ծիծաղ, որը նրա ստեղծագործության մեջ ստանում է սոցիալական երանգ։

Հայկական գրաֆիկայի զարգացումը կապված է նաև Էդգար Շահինի անվան հետ (1874—1947)։ Նրա կյանքն անցել է Փարիզում (մասնագիտական կրթությունը ստացել է Վենետիկում և Փարիզում), որտեղ ականատես է եղել աշխատավորական բազմամասնի բնակչության ամենօրյա հետաքրքրություններին, նրանց չարքաշ կյանքին։ Շահինն իր բարձրարվեստ օֆորտները նվիրեց այդ մարդկանց կյանքի պատկերմանը։ Նա միշտ նշում էր, որ իր ուսուցիչը «փողոցն է եղել»։ Մի կողմից գործազուրկներ, թափառաշրջիկ դերասաններ, հնավաճառներ, որոնց պատկերման ժամանակ զգացվում է ստեղծագործողի համակրանքը, իսկ մյուս կողմից՝ բուրժուական շքեղ ու զեխ կյանքի նկարագրությունն է։ Շահինի լավագույն գործերից են Անատոլ Ֆրանսի, Բոդլերի, Վերլենի դիմանկարները։ Վարպետությամբ օգտագործելով օֆորտին հատուկ բոլոր հնարները, Շահինը կարողանում է նրբագեղ գծի, սևի ու սպիտակի հարաբերություններով հաղորդել բարձր արտահայտչականություն։

Օֆորտի անվանի վարպետ էր նաև Տիգրան Փալատը (1874—1950), որի ստեղծագործության մեջ հատկապես առանձնանում են լաֆոնտենի «Առակների» նկարազարդումները։ Փարիզում էր ապրում և ստեղծագործում նաև գեղանկարիչ ու գրաֆիկ Կարապետ Ադամյանը (1872—1947), որի աշխատանքների թվում նշանակալից են Անատոլ Ֆրանսի, Բելվիր Լիտոնի և Մոպասանի գրքերի համար կատարված նկարազարդումները։

Հետաքրքիր զարգացում է ապրում քանդակագործությունը։ Այդ բնագավառում առաջնակարգ դերը պատկանում է Անդրեաս Տեր-Մարուքյանին (1871—1919), որը հայ իրականության մեջ պրոֆեսիոնալ բարձր մակարդակով ստեղծված առաջին դիմաքանդակների հեղինակն է («Վահդ Ալիշան», «Պետրոս Ադամյան», «Ն. Թումանյան»)։ Հատկապես մեծ է նրա վաստակը որպես առաջին հուշարձանների հեղինակ։ Միքայել Նալբանդյանի ու Ռափայել Պատկանյանի կիսանդրի հուշարձանները նոր նախիջևանում նշանավորեցին հայ քանդակագործության նոր զարգացումը։ Խաչատուր Աբովյանի հուշարձանը, որը Ա. Տեր-Մարուքյանը կատարեց Երևանի համար (այժմ՝ Ս. Աբովյանի տուն-թանգարանի բակում) հանդես բերեց քանդակագործի հուշարձա-

նային արվեստի բնագավառում ունեցած կարողությունները, որոնք և այդ ստեղծագործությունը դարձրին դասական։

Սկզբնավորվեց նաև ժանրային քանդակագործությունը, որի լավագույն ներկայացուցիչներն էին Երվանդ Ոսկանը (Կ. Պոլիս, 1855—1914) և Միքայել Միքայելյանը (Թիֆլիս, 1881—1944)։

Նույն այդ ժամանակ ձևավորվեց հայ ականավոր քանդակագործ Հակոբ Գյուրջյանի (1881—1948) արվեստը։ Նրա ստեղծագործական կյանքում նշանակալից երևույթ էր Ռոդենի արվեստանոցում աշխատելը։ Մ. Գորկու, Լ. Տոլստոյի, Ա. Շիրվանզադեի, Ֆ. Շալյապինի, Մ. Շիրվանզադեի, Վ. Բորրովկինի, Վ. Տերյանի դիմաքանդակները այդ ժանրի ինքնատիպ օրինակներ են հայ կերպարվեստում, կատարված բարձր վարպետությամբ, նյութի կատարյալ գգացողությամբ, պլաստիկայի հստակ արտահայտչականությամբ, հոգեբանական բնութագրումներով։ Հ. Գյուրջյանի դիմաքանդակները մոնումենտալ են, մի առանձնահատկություն, որը կանխորոշում է նրա հետաքրքրությունը դեպի հուշարձանային քանդակագործությունը։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը դիմավորելով Մոսկվայում, Հ. Գյուրջյանը գործակից լինելով Լենինյան մոնումենտալ պրոպագանդայի ծրագրի իրագործման ակտիվ մասնակիցներից, նա Կ. Մարքսի հուշարձանի համահեղինակ էր, մասնակցել է Կրեմլի պատին տեղադրվող հուշարձանի մրցանակաբաշխությանը, հուշարձան, որը պետք է արտահայտեր Հանուն հեղափոխության ընկածների հերոսությունը։ Հայ քանդակագործը ձեռնամուխ եղավ նաև ռուս նկարիչ Մ. Վրուբելի հուշարձանի կառուցմանը։

XX դարի սկզբներին հայ կերպարվեստի ասպարեզ մուտք գործեցին Ս. Աղաջանյանը, Ն. Թագևոսյանը և Փ. Թերլեմեզյանը։

Ստեփան Աղաջանյանը (1863—1940) իր առաջին իսկ աշխատանքներով («Հոր դիմանկարը», «Մոր դիմանկարը») իրեն դրսևորեց որպես խոշոր ռեալիստ դիմանկարիչ։ Մարդկային բնավորության, տիպական կերպարի ստեղծման առաջնահերթ նպատակ է Ս. Աղաջանյանի համար։ Այդպիսիք են նրա «Քրոջ դիմանկարը», «Մտորումները», «Մարիետա Շահինյանը» և այլ գործեր։ Աղաջանյանի ստեղծագործության մեջ մուտք գործեց նաև աշխատավորի կերպարը՝ «Զկնորսի դիմանկարը», «Ռուստովցի հյուսները», որոնցում հանդես է գալիս նկարչի դեմոկրատիզմը, նրա համակրանքը դեպի պարզ ու հասարակ մարդիկ։ Ստեփան Աղաջանյանի ռեալիստական արվեստը նոր վերելք ապրեց հատկապես Սովետական Հայաստանում։

Նկարիչ Փանոս Թերլեմեզյանը (1865—1941) գիտակցական կյանքի առաջին տասնամյակները նվիրեց արևմտահայ ազգային-ազատագրական պայքարին (Վանում), թուրքական կառավարության կողմից դատապարտվեց երկարամյա բանտարկության, թափառական կյանք վարեց Պարսկաստանում, ապա նոր միայն մասնագիտական կրթություն ստացավ Պետերբուրգում և Փարիզում։ 1905 թ. Հայաստան կատարած ճանապարհորդության արդյունքը եղան «Մանահնի վանքի գավիթը» և «Լուսեցի հովիվը» կտավները, որոնցում երևան եկավ հայ աշխատավորի և հայկական մշակույթի հանդեպ ունեցած Թերլեմեզյանական հետաքրքրությունը։ Փ. Թերլեմեզյանը 1915 թ. ստեղծեց իր լավագույն բնանկարներից մեկը՝ «Սիփան սարը Կաուց կզզուց» աշխատանքը։ Սիփանի պլաստիկ ուրվագիծը, Կաուց կզզու չոր, ամայի ու քարքարոտ ափերը դիտվում են որպես անօգնական մնացած Հայրենիքի, որպես այդ

օրերին կատարվող ողբերգական դեպքերի գեղարվեստական խորհրդանիշ։ Փ. Թերլեմեզյանի ստեղծագործության մեջ առանձնակի տեղ է գրավում «Կոմիտասի դիմանկարը» (1912)։ Նկարչի համար առաջնահերթ էր Մարդ-Կոմիտասը։ Եվ այդպես էլ նկարիչը պատկերեց նրան. բնության գրկում, ստեղծագործելիս, ինքնամփոփ, սևազգեստ, բայց աշխարհիկ և կյանքով լի։

1890-ական թվականներին Մոսկվայում գեղարվեստական ցուցահանդեսներում ցուցադրվեցին Եղիշե Թադևոսյանի (1870—1936) կտավները, որոնք անմիջապես գրավեցին արվեստասերների ուշադրությունը։ Նրա առաջին ստեղծագործությունների մեջ հանդիպում են դիմանկարներ («Ռոզինա Սուրենյանցի դիմանկարը»), որտեղ պարզորոշ զգացվում է Վ. Սուրենյանցի արվեստի աղդեցությունը, հանդիպում են նաև բնանկարներ, որտեղ առկա է նրա լավագույն բարեկամի՝ Վ. Պոլենովի գեղանկարչության հմայքը։ Սակայն նրա բոլոր ստեղծագործություններին բնորոշ է մի զգացում. գունային միասնության հարաբերությունների միջոցով երևույթի բանաստեղծական էության բացահայտումը։ Այդպիսին է նրա «Կոմիտասը էջմիածնի լճափին», «Դեպի պանդրխտություն», «Արարատը էջմիածնից», «Արագած», «Ժ. Թադևոսյանի դիմանկարը», «Ջանգյուլում» և այլն։ Նկարների այս շարքի կողքին առանձնակի տեղ են գրավում Ե. Թադևոսյանի էսքիզները, որոնք իրենց գեղանկարչական կառուցվածքով հանում են ավարտուն ստեղծագործությունների մակարդակին։

Ս. Աղաջանյանը, Փ. Թերլեմեզյանը և Ե. Թադևոսյանը զարգացրին աղգային կերպարվեստի դասական ավանդները։ Նրանց արվեստը յուրատիպ օղակ հանդիսացավ XX դարի սկզբի և սովետական շրջանի հայ կերպարվեստի շաղկապման համար։

Դարասկզբին անվանի արվեստագետի համարում ունեին Մարգիս Ղազարյանը (Փարիզ, 1886—1947), Արշակ Ջեքվաճյանը (ԱՄՆ, 1864—1947), Հովհաննես Ալխասյանը (Փարիզ, 1881—1958), Տիգրան Նալյանը (Փարիզ, 1874—1921), տարբեր խառնվածքների ու հետաքրքրությունների արվեստագետներ, որոնց մոտ ընդհանուրը ձգտումն էր դեպի հայկականն ու ազգայինը։

1910-ական թվականներին արվեստասեր հասարակության ուշադրությանն արժանացավ Գեորգի Յակալովը (1884—1928), որի հախուռն ստեղծագործական կյանքը վառ ձևով դրսևորվեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո։

Տասնամյակի ուշագրավ երևույթներից էր ապագայում համաշխարհային հռչակ ստացած Մարտիրոս Սարյանի (1880—1972) արվեստը։ Մ. Սարյանի ստեղծագործական կյանքի առաջին տարիներին ռեալիստական մեծ շնչով են արված մի շարք դիմանկարներ, որոնց թվում տաղանդի յուրատիպ հմայքով պարուրված «Ալեքսանդր Մյասնիկյանի դիմանկարը»։ Նկարչի այդ տարիների ստեղծագործության մեջ գերակշռողն Արևելքն է՝ Եգիպտոսն ու Կ. Պոլիսը, որտեղից ստացած տպավորությունների հիման վրա ստեղծվում է գեղանկարչական մեծ ընդհանրացումներով կատարված աշխատանքների շարքը («Եգիպտական դիմանկարներ», «Քայլող ֆելլահ կինը», «Փյունիկյան արմավենիք», «Կ. Պոլիս. կեսօր, փողոց», «Շենքերը Կ. Պոլսի փողոցներում» և այլն)։ Գույնի դեկորատիվ զգացողությունը, բնության, միջավայրի տրամադրության

վերհանման կարողությունը, գունապլաստիկական խնդիրների ինքնատիպ լուծումները, որոնք բնորոշ են նկարների այս շարքին, դարձան Սարյան-արվեստագետի վարպետության հիմքը։

1914—15 թթ. ստեղծագործական առաջին քայլերն էր անում սովետահայ կերպարվեստի դասականներից մեկը՝ Սեդրակ Առաքելյանը *(1884—1942)։ Նրա «Հաց են թխում», «Ծորեն են ձեծում», «Ծորեն են լորացնում» և այլ գործեր կանխորոշեցին արվեստագետի հետաքրքրությունները՝ աննշան թվացող թեմայի քնարական մեկնաբանման շնորհիվ հասնել հայրենի բնաշխարհի, հայկական գյուղի, նրա կենցաղի ընդհանրացման, որտեղ ակտիվ ու էմոցիոնալ գործոն է գույնը։*

Ընդհանուր գծերով, նախասովետական ժամանակաշրջանի հայ կերպարվեստը դեմոկրատական էր, ինտերնացիոնալ, ժամանակին համահնչուն, ժողովրդի կյանքին ու ճակատագրին սերտորեն շաղկապված, քաղաքացիական հնչեղությամբ օժտված, առանձնահատկություններ, որոնք բարձրացրին նրա դերն ու նշանակությունը հասարակական կյանքում։

7. ՄԱՄՈՒԼ

Հայ մշակույթի ընդհանուր վերելքի հետ միասին աճում է պարբերական մամուլը։ Երևան են գալիս տասնյակ նոր թերթեր և հանդեսներ, որոնք որոշակի դեր են կատարում հայ հասարակական մտքի զարգացման, հասարակական հոսանքների և քաղաքական կուսակցությունների գործունեության լուսաբանման գործում։ Հայ անդրանիկ պարբերականի՝ «Ազդարարի» հիմնադրումից (1794) մինչև 1980 թ. Հայաստանում և աշխարհի տարբեր երկրներում հրատարակվել է ավելի քան 3000 անուն հայերեն պարբերական։ Միայն 250-ը հիմնադրվել է XIX դարի երկրորդ կեսին, իսկ ավելի քան 600-ը՝ 1901—1920 թվականներին։ Սակայն դրանց մի մասը լույս է տեսել աննշան տպաքանակով և կարճատև կյանք է ունեցել։

Հայ պարբերական մամուլի արագ աճն արդյունք էր կյանքի ընդհանուր զարգացման, հայ ժողովրդի բուռն զարթոնքի, հայկական գաղթօջախների ուժեղացման, քաղաքական կուսակցությունների առաջացման, դասակարգային պայքարի ծավալման։ Կոտորակված հայ զանգվածը օտար երկնակամարների տակ վերսկսելով մշակութային կյանքը, ազատագրական պայքարի նոր ուղիներ է որոնում։ Պարբերական մամուլը շաղկապող օղակ է դառնում ազգահավաքման գործում, կամրջում պատմական բախտով կիսված երկու հատվածների քաղաքական և մշակութային կյանքը, առանձին անհատներին կապում միմյանց հետ, հուսադրում նրանց, անշեջ պահելով ազգային-ազատագրական պայքարի կրակը։

XIX դ. երկրորդ կեսին որոշակիորեն ձևավորվում են թերթերի և հանդեսների քաղաքական ուղղությունները, ավելի է ընդգծվում նրանց դասակարգային բնույթը։ Հանդես են գալիս քաղաքական կուսակցությունների տպագիր օրգանները։

Արևելահայ իրականությունում լիբերալ-բուրժուական ճոսանքի հիմնական տպագիր օրգաններն էին՝ «Մշակը» (Հունվար, 1872—փետրվար, 1921) և «Մուրճը» (1889—1907)։ 1872 թ. ականավոր հրապարակախոս Գր. Արծրունու (1845—1892) Թիֆլիսում հիմնադրած արևելահայ լիբերալ բուրժուա-

գիայի օրգան «Մշակ» թերթը 1892 թ. անցնելով Ալ. Քալանթարի, իսկ 1913 թ. Համբարձում Առաքելյանի ձեռքը, ընթանում է զիգզագներով, աստիճանաբար հեռանում իր վաղեմի բուրժուադեմոկրատական առաջադիմական ավանդույթներից և ի վերջո դառնում հայ կադետների օրգանը։ «Մշակը» ապրել է երկու հիմնական փուլ։ Առաջին շրջանում նա պաշտպանում էր կապիտալիզմի զարգացումը, արևմտահայերի ազատագրական շարժումները, մտահոգված էր Հայկական հարցի լուծմամբ, ուներ ռուսական դիրքորոշում։ Թերթը քննադատում էր ֆեոդալիզմի մնացուկները, կրոնն ու եկեղեցին։ Նա իր շուրջն էր համախմբել ժամանակի արմատական ուղղության հասարակական գործիչներին, հրապարակախոսներին, գրողներին, որի շնորհիվ էլ մեծ ազդեցություն էր գործում հասարակական կյանքի վրա։ Գ. Արծրունու «Մշակը» զգայուն կերպով ունկնդրում էր հասարակական երևույթներին,— 1903 թ. գրել է Բ. Կնունյանցը,— հայկական կյանքին, արտահայտելով ազատամտության մի ամբողջ դրական ծրագիր, ընդդիմադրված պահպանողականությանը և հետադիմականին[116]։ «Մշակը» հովանի էր մայրենի գրականությանը։ Հայ դեմոկրատ գրողներից և հրապարակախոսներից շատերը՝ Րաֆֆի, Գ. Սունդուկյան, Ղ. Աղայան, Ա. Շիրվանզադե, Լեո և ուրիշներ իրենց ստեղծագործություններն առաջին անգամ հրապարակել են «Մշակում»։ «Մշակում», ինչպես նկատել է Րաֆֆին, «պուբլիցիստական և բելլետրիստական» ձեռք-ձեռքի տված էին ընթանում։



Գրիգոր Արծրունի

«Մշակը» քննադատում էր դպրոցներում թագավորող սխոլաստիկան և տիրացուականությունը, ցույց էր տալիս կնոջ ստրկական, չարքաշ վիճակը, ուղիներ որոնում վերջինիս տեղը հասարակական կյանքում որոշելու համար։ «Մշակը» պահանջում էր դպրոցն անջատել եկեղեցուց, որպեսզի կրթության բախտը տնօրինի ժողովուրդը։ Սակայն թերթը բացասական դիրք ուներ բանվորական շարժումների և սոցիալիստական գաղափարների նկատմամբ։ Երբ իր կազմավորման առաջին տարում այն, հակառակ իր ուղղության, առանձին նյութեր էր հրատարակում առաջին ինտերնացիոնալի կոնգրեսի և Փարիզի կոմունայի մասին, ապա հետագայում այդ ճանապարհով չգնաց։ Ավելին, 1879 թ. «Ուր ենք գնում» առաջնորդող հոդվածում, Գր. Արծրունին ասում էր՝ «Սոցիալիզմը հակառակ է մեր բնավորության»[117]։

116 *Տե՛ս* Б. К., Несколько слов о Мшаке, «Бакинские известия», № 44, 1903.
117 *«Մշակ», 1879, № 48։*

Գր. Արծրունու մահից հետո նրա հաջորդները նահանջեցին Քերթի առաջադիմական սկզբունքներից։ Քերթն իր էջերը լայնորեն բացեց բուրժուական նացիոնալիստների, կեղծ մարքսիստների առջև։ Ստ. Շահումյանը հենց այդ է նկատի ունեցել, երբ 1914 թ. գրել է. «Մշակի» երգը, մեր կարծիքով, առհասարակ երգված է»[118]։



Ավետիք Ահարոնյան

Լիբերալ-բուրժուական օրգաններից էր «Մուրճը», որը 1889 թ. Թիֆլիսում հիմնադրել էր հայ առաջին տնտեսագետներից Ավետիք Ահարոնյանը (1857—1912) և խմբագրել մինչև 1900 թ.։ «Մուրճը» ժամանակի հայ առաջավոր պարբերականներից էր, բուրժուական մտավորականության ձախ թևի օրգանը, որն իր էջերում մեծ տեղ էր տալիս տնտեսագիտական ուսումնասիրություններին, հասարակական-քաղաքական հետազոտություններին, երկրամասի կյանքն արտացոլող հայ մշակույթի զարգացման հարցերին։ Նրա էջերում լուսաբանվել են Անդրկովկասի, այդ թվում՝ Հայաստանի արդյունաբերության զարգացման, բանվոր դասակարգի դրության, գյուղի և գյուղացիության հարցերը։ Հաղթահարելով ցարական գրաքննության արգելքները, «Մուրճը» երբեմն դրվատում էր ռուս հեղափոխական-դեմոկրատների ծառայությունները։ Ջերնիշևսկու հիշատակին նվիրված հոդվածում ամսագիրը գրել է. «Գրական կրիտիկոսները, նույնիսկ ամենահանճարները նոցանցից, բնավ այն դերը չեն կատարում ազդ սերնդի և ժամանակակից կյանքի համար առհասարակ, ինչ կատարել են Բուսխայում մի Բելինսկի, մի Դոբրոլյուբով, մի Պիսարև, որոնք ժամանակի մտավոր հոսանքի խոսքատարներն են եղած (Portes Pnrale)»[119]։

«Մուրճը» առանձին հոդվածներում քաղվածքներ էր բերում Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի աշխատություններից, հատկապես «Կոմունիստական կուսակցության մանիֆեստից» և «Կապիտալից»։

Մեծ է պարբերականի դերը հայ նոր գրականության և գրաքննադատության մտքի զարգացման գործում։ Այդ ամսագրի էջերում են տպագրվել ժամանակի գրեթե բոլոր առաջադեմ հայ գրողները։ Խմբագրությունը թարգմանական գրականության բաժնի միջոցով հայ ընթերցողներին ծանոթացրել է Եվրոպական և ռուս դասական գրականության ընտիր օրինակների հետ։

1901 թ. «Մուրճի» խմբագիր-հրատարակչի իրավունքներն անցնում են

118 Ստ. Շահումյան. Երկեր, հ. 2, էջ 376։

119 «Մուրճ», 1897, № 10։

Ա. Կրասիլնիկյանի, իսկ մեկ տարի անց՝ Լևոն Սարգսյանի ձեռքը, որը և շարունակում է ամսագրի խմբագրումը մինչև 1907 թ.։ Ամսագիրը իր գոյությամբ հարստացրեց հայ պարբերական մամուլի պատմությունը, նպաստեց հասարակական մտքի զարգացմանը։

Արևելահայ ազգային-պահպանողական հոսանքի գլխավոր օրգաններն էին Պետրոս Սիմեոնյանի «Մեղու Հայաստանի» (1858—1886), Սպանդար Սպանդարյանի «Նոր դար» (1883—1906), Աբգար Հովհաննիսյանի «Փորձ» (1876—1881) և «Արձագանք» (1882—1898) պարբերականները։

«Նոր դարը» հիմնադրել է Սպանդար Սպանդարյանը (1849—1922)։ 24 տարի շարունակ «Նոր դարը» ներգործել է հայ հասարակական մտքի վրա, հանդես է բերել հակացարական տրամադրություններ և միաժամանակ հավատարիմ մնալով ազգային-պահպանողական ուղեգծին, գրել է. «Մեր նպատակը ազգությունն է. կրոնը, լեզուն, ցեղը... միջոցներ են, որոնց օգնությամբ մենք մեր նպատակին հասնել ենք ձգտում»[120]։

Պահպանելով ազգային շահախնդրությունները, «Նոր դարի» խմբագրությունը հաճախ հակադրվում էր ցարական կառավարության ազգային քաղաքականությանը։ «Ոչ իմ հայրս և ոչ էլ նրա ուղղությունը,— իր նամակներից մեկում գրել է Սուրեն Սպանդարյանը,— հասարակական-քաղաքական տեսակետից ոչ միայն չէին վայելում կառավարության աջակցությունը, այլ միշտ հալածվում էին ամենադաժան կերպով...։ Կառավարությունը հալածում էր «պահպանողականությունը» («կոնսերվատիզմը») և հովանավորում հայկական «լիբերալիզմը», որովհետև այն ժամանակները իր տեսակետից նա տեսնում էր «թշնամուն» պահպանողականության և ոչ թե լիբերալիզմի մեջ։ Լիբերալիզմը ժխտում էր հայկական կյանքի «հիմունքները», իսկ կոնսերվատիզմը պաշտպանում էր այն՝ կառավարության ճնշման և ռուսիֆիկացիայի դեմ։ Բավական է միայն կարդալ «Նովոյե վրեմյայի»՝ հորս թերթի վրա արած հարձակումները, բավական է միայն բրբրել գրաքննչական կոմիտեի արխիվները, բավական է միայն հիշել, որ հայկական եկեղեցական գույքի գրավման ժամանակ ակտիվ կռիվ էր մղում իմ հայրս իր թերթով, իսկ լիբերալները համակրությամբ արտագրում էին «Կավկազ»-ից օֆիցիոզ հոդվածը իրենց թերթում և այլն, և այլն,— որպեսզի միանգամից հասկանալի դառնար հակառուսական պնդումների ամբողջ ստությունը»[121]։

«Հյուսիսափայլի» դադարումից հետո, 1876 թ. հրապարակ է իջնում արևելահայ երկրորդ գրական-հասարակական «Փորձ» հանդեսը (նախ նոամսյա, ապա ամսագիր)։ «Փորձ», ապա «Արձագանք» պարբերականները հրատարակում էր Աբգար Հովհաննիսյանը (1849—1904)։ Նա նույնպես պաշտպանում էր ազգային-պահպանողական հոսանքի գաղափարական դիծը և, ինչպես Սպանդարյանը, պետականություն չունեցող հայ ժողովրդի գոյատևման հիմնական գործոններն էր համարում մայրենի լեզուն և եկեղեցին։ Միաժամանակ Աբ. Հովհաննիսյանի պարբերականները, հակառակ նախորդ շրջանի հայ պահպանողականության, լայնորեն ողջունում էին կապիտալիզմի մուտքը Անդրկովկաս։

---

120 «Մեղու Հայաստանի», 1882, № 74։

121 ՍՄԿԿ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի արխիվի Ս. Ս. Սպանդարյանի ֆոնդի նյութերը։

«Փորձ» և «Արձագանք» պարբերականները մեծապես նպաստել են հայ գրականության ու բանասիրության զարգացմանը, հայկական դպրոցների գործունեության աշխուժացմանը, արևմտահայության ծանր վիճակի հանգամանորեն քննարկմանը։

Կղերա-ֆեոդալական ուղղություն ունեցող օրգաններից էին «Հովիվը» (1906—1910, Թիֆլիս, խմբագիր-հրատարակիչ եզնիկ ավագ քահանա Երզնկյան), «Բարի լուրը» (1906—1907, Բաքու, հրատ. Պատվական Թառայան), «Հովիտը» (1910—1917, Թիֆլիս, խմբագիր-հրատարակիչ եզնիկ ավագ քահանա Երզնկյան) և այլն։ Դրանք բոլորն էլ հետադիմության ջատագով էին, մասնավորապես «Հովիվն» ու «Հովիտը»։



Նմուշներ հայ պարբերական մամուլից. XIX դ. II կես

Բուրժուանացիոնալիստական դաշնակցության և մանրբուրժուական կուսակցությունների ձևավորման հետ հանդես են գալիս նրանց տպագիր օրգանները։ Դաշնակցության պաշտոնական օրգանը «Դրոշակն» էր, որը 1890 թ. հիմնադրվել է Թիֆլիսում։ Դաշնակցությունն այնուհետև իր տպագիր օրգաններն է ստեղծում Թիֆլիսում, Բաքվում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Շուշիում, Ախալցխայում, Հայաստանի գավառներում, արտասահմանում և այլուր[122]։

122 Դաշնակցության տպագիր օրգաններից էին «Ալիք» (1906, Թիֆլիս), «Զանգ» (1906, Թիֆլիս), «Ժամանակ» (1906—1907, Թիֆլիս), «Հառաչ» (1906, Թիֆլիս), «Նարեխոս» (1907, Թիֆլիս), «Կովկասի առավոտ» (1907, Թիֆլիս), «Փայլակ» (1907, Թիֆլիս), «Անիվ» (1908, Բաքու), «Գործ» (1908—1909, Թիֆլիս), «Հորիզոն» (1909—1918, Թիֆլիս), «Նոր հոսանք» (1913—1915, Թիֆլիս), «Հայաստանի աշխատավոր» (1917—1919, Երևան), «Ապառաժ» (1917—1919, Շուշի), «Ծայռ» (1917—1919, Ալեքսանդրապոլ), «Շարժում» (1917—1918, Ախալցխա), «Որոտան» (1918—1919, Գորիս), «Սյունիք» (1918—1920, Գորիս), «Հառաչ» (1919—1920, Երևան) և այլ պարբերականներ։

Դաշնակցական մամուլը ազգայնական դիրքերից չանում էր հայ ժողովրդի ազատագրական պայքարը շեղել հեղափոխական ճանապարհից, խանգարում էր աշխատավորական զանգվածների դասակարգային ինքնագիտակցության գալուն։

Հնչակյանները իրենց մամուլում հիմնական շեշտը դնում էին արևմտահայերի ազգային-ազատագրական պայքարի վրա, տարածում մանրբուրժուական սոցիալիստական գաղափարներ։

Հնչակյանները հրատարակել են ավելի քան 180 պարբերական, այդ թվում «Հնչակ» (1887—1896), «Գաղափար» (1894), «Ծերհատասարդ Հայաստան» (1903 թ. մինչև այժմ, ԱՄՆ), «Պայքար» (1907 թ., Թիֆլիս), «Հայկազեան» (1917—1918, Թիֆլիս), «Շեփոր» (1918, Բաքու), «Գործավոր» (1919, Թիֆլիս) և այլն։ Հնչակյան մամուլը լուսաբանել է հայ ժողովրդի երկու հատվածների՝ արևելահայերի և արևմտահայերի կյանքը, մասսայականացրել հայ հայդուկային շարժումը, խրախուսել ազգային-ազատագրական շարժումները։

Ռամկավար-ազատականների հոսանքն իր գաղափարական սկունքներում ունենալով Մկրտիչ Փորթուգալյանի «Արմենիան» (1885—1925), հետագայում աշխարհի տարբեր մասերում հրատարակեց «Հայաստանի Ձայն» (1919—1920, Երևան, խմբագրությամբ Արտակ Դարբինյանի), «Նոր կյանք» (1919, Ալեքսանդրապոլ, խմբագրությամբ Տ. Հախումյանի) և այլ թերթեր, որոնք պրոպագանդել են ռամկավարական գաղափարներ։

1905—1920 թթ. Կովկասում լույս էին տեսնում ՌՍԴԲԿ փոքրամասնականների՝ հայ մենշևիկների, մի քանի թերթեր, այդ թվում՝ «Սոցիալ-դեմոկրատ» (1905, Թիֆլիս), «Հոսանք» (1906—1907, Թիֆլիս, Ա. Ջուրաբյանի և Ար. Երզնկյանի փաստական խմբագրությամբ), «Կայծ» (1918—1919, Երևան, խմբագրությամբ՝ Բ. Ավդալբեգյանի) և այլն։

Հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունը՝ «Սպեցիֆիկները» հրատարակել են «Սոցիալիստ» (1904, Բաքու, 1905—1906, ժնև), «Սոցիալ-դեմոկրատ» (1905, Բաքու, խմբագրությամբ Ներ. Պալլանի), «Կյանք» (1906, Թիֆլիս), «Ձայն» (1906—1907, Թիֆլիս), «Բանվոր» (1907, Բաքու), «Կռիվ» (1911, Բաքու, խմբագրությամբ Դ. Տեր-Դանիելյանի—Դ. Անանունի), «Նոր կյանք» (1911—1912, խմբագիր՝ Դ. Անանուն), «Մեր ուղին» (1912, Բաքու) և այլ թերթեր, որոնք տոգորված էին ազգայնական մանրբուրժուական գաղափարախոսությամբ։ Նրանք ազգային հարցում պաշտպանում էին հրեական բունդի անշատողական հայացքները։

Արևելահայ պարբերական մամուլի առաջավոր ավանդները XX դարի սկզբից սկսեց զարգացնել դեմոկրատական մամուլը։ «Հասկեր» (1905—1916, Թիֆլիս), «Աշխատանք», «Նոր աշխատանք» (1906—1907, Թիֆլիս, խմբագրությամբ՝ Ազոտ Աթանասյանի), «Երկրի Ձայնը» (1906—1908, Թիֆլիս, խմբագրությամբ՝ Տիգրան Չավենի), «Գեղարվեստ» (1908—1921, Թիֆլիս, խմբագիր-հրատարակիչ՝ Դարեգին Վռնեան. 5-րդ գիրքը 1913 թ. տպագրվել է Վիեննայում՝ խմբագրի այնտեղ լինելու պատճառով), «Գյուղատնտես» (1909—1917, Թիֆլիս), «Նոր դարոց» (1908—1913, Թիֆլիս), «Նոր ուղի» (1912—1916, Ալեքսանդրապոլ), «Արագած». (1912, Ալեքսանդրապոլ), «Թատրոն և երաժշտություն» (1910—1917, Բաքու, խմբագիր-հրատարակիչ՝ Անտոն Մայիլյան), «Նոր մամուլ» (1913, Երևան), «Մեր կյանքը» (1910—1912, Աստրախան), «Նոր սերունդ» (1917, Թիֆլիս, օրգան ընդհանուր աշա-

կերտական միության Հայկական սեկցիայի՝ իրականում հայ երիտասարդ սպարտակիններին), «Առողջապահիկ» (1920, Երևան, խմբագիր՝ բժ. Վահան Արծրունի) և այլն նախասովետական շրջանի դեմոկրատական մամուլի այն օրգաններից են, որոնք շատ բան են արել հայ ժողովրդի մշակութային և հասարակական զարգացման գործում։

Հայ պարբերական մամուլի պատմության մեջ նոր էջ է կազմում բոլշևիկյան մամուլը։ Լենինյան հրատարակությունների բնմնավոր գործունեության շնորհիվ և Վ. Ի. Լենինի օգնությամբ XX դարի սկզբին հիմք է դրվում բոլշևիկյան հայ պարբերական մամուլին։ Առաջին լուրջ քայլը մարքսիզմ-լենինիզմի կլասիկների աշխատությունների հայերեն հրատարակությունների կազմակերպումն էր, հեղափոխական կուսերի և բոլշևիկների լայն տարածումը։ Հայաստանի լենինյան-իսկրայական կազմակերպություններն իրենց գործունեության սկզբից ևեթ կապված էին Վ. Ի. Լենինի և լենինյան հրատարակությունների խմբագրությունների, ՌՍԴԲԿ կենտկոմի հետ։

Բոլշևիկյան հայ պարբերական մամուլի պատմությունը բացվում է մարքսիստական «Պրոլետարիատ» թերթով, որը Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի և այլոց ղեկավարությամբ լույս տեսավ 1902 թ. հոկտեմբերին, Թիֆլիսում։ «Պրոլետարիատը» հետևում էր լենինյան իսկրայական ուղղությանը։ 1903 թ. ապրիլ-մայիս ամիսներին նրան փոխարինելու եկան ՌՍԴԲԿ Կովկասյան միութենական կոմիտեի օրգան՝ «Պրոլետարիատի կռիվը» (1903—1905) և «Պրոլետարիատի կռիվ» թերթիկը» (1903—1904), որոնք խմբագրում էին Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը և ուրիշներ։ «Պրոլետարիատի կռիվ» երևան գալը նշանավոր իրադարձություն էր Կովկասի հեղափոխական շարժումների պատմության և կոմունիստական կազմակերպությունների կյանքում։ Նրա էջերում առաջին անգամ հիմք դրվեց Վ. Ի. Լենինի աշխատությունների հայերեն հրատարակություններ։ «Իսկրայից» թարգմանվեցին և տպագրվեցին Վ. Ի. Լենինի «Միապետությունը տատանվում է», «Երրորդ համագումարը» և այլ երկեր։ Հայերեն, վրացերեն և ռուսերեն լույս տեսնող «Պրոլետարիատի կռիվը» և նրա «Թերթիկները» մեծ աշխատանք կատարեցին երկրամասում բանվորական շարժումը ծավալելու, պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքները ամրապնդելու ուղղությամբ։

Բոլշևիկյան հայ պարբերական մամուլն աճեց մասնավորապես ռուսական առաջին հեղափոխության և նրան հաջորդած տարիներին։ 1906—1907 թթ. Ստ. Շահումյանի, Ս. Սպանդարյանի, Ս. Կասյանի ղեկավարությամբ Թիֆլիսում և Բաքվում լույս են տեսնում բոլշևիկյան մի շարք թերթեր, այդ թվում՝ «Բանվորի ձայները», «Կայծ», «Նոր խոսք», «Օրեր» և այլն, որոնք իրենց էջերում պրոպագանդում են բոլշևիկյան կուսակցության գաղափարական, կազմակերպական, տակտիկական և տեսական հիմունքները, կոմունիզմի գաղափարները։ Դա բանվորական մամուլի երևան գալու վերելքի և համեմատական «աղատության» ժամանակաշրջանն էր։

1906 թ. մարտ-ապրիլ ամիսներին Բաքվում հրատարակված «Բանվորի ձայները» մերկացնում էր ցարական կառավարությանը, ցույց էր տալիս, որ ցարի հոկտեմբերի 17-ի մանիֆեստը քակարդ է ժողովրդի համար։ Ձինված Վ. Ի. Լենինի «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական հեղափոխությունում» և այլ աշխատություններով, «Բանվորի ձայները» մեր-

կացնում էր ցարիզմի անուժ հավելուկի՝ Պետական դումայի խոցերը ծածկող քողը։

Բոլշևիկյան հայ լեգալ պարբերական մամուլի պատմությունը բացվում է «Կայծ» թերթով, որի առաջին համարը լույս է տեսել 1906 թ. ապրիլին Թիֆլիսում։ «Կայծը» խմբագրել են Ստ. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ս. Կասյանը։ Թերթին ակտիվորեն աշխատակցել են Մ. Մելիքյանը, Հ. Հակոբյանը, Մ. Միրաքյանը, Ա. Մռավյանը և ուրիշներ։ «Կայծի» առաջին համարի «Մեր օրգանը» խորագրով առաջնորդողում վարպետորեն շարադրված էր բոլշևիկյան հայ պարբերական մամուլի ծրագիրը։ Շահումյանը, տալով բոլշևիկյան տպագիր օրգանի խնդիրները, նշել է. «Կատարվեց այն, ինչ որ պետք է կատարվեր։ Հայ ժողովուրդն էլ դուրս եկավ իր սահմանափակ «ազգային» կյանքի շրջանակներից և կապվեց բազաբակիրթ աշխարհի հետ, որ մեզանում էլ արդեն երևան է եկել այն աշխարհայացքը, որը կոչվում է սոցիալիզմ։ Մեր օրգանը պետք է լինի բերան հայ բանվորության, պրոլետարական համաշխարհային բանակի այդ փոքրիկ անբաժան գնդերից մեկի։ Նա պաշտպան ու արտահայտիչ պետք է լինի պրոլետարիատի վեհ միջազգային իդեալի։ Նա ընկեր և ուսուցիչ պետք է լինի բուրժուական-ազգասիրական իդեոլոգիային ստրուկ և այդ ստրկությունից այժմ ազատվող հայ բանվորներինն[123]։

«Կայծը» և ապա «Նոր խոսք» և «Օրեր» թերթերը խոշոր դեր խաղացին հայ աշխատավորության գաղափարական դաստիարակության, ցարիզմի մերկացման գործում։ Նրանք աճեցրին առաջին հայ բանվոր և գյուղացի ընդբակիցներին, մշակեցին պրոլետարական հեղափոխական հրապարակախոսության սկզբունքները, հոգևոր հայելի դարձան ժողովրդի ինքնաճանաչման համար, լուսատու ջահի պես թափանցեցին հայ աշխատավոր մասսաների խըճիթները, ջերմացրին նրանց սրտերը։

Հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամության ամրապնդման և ազգամիջյան կոտորածների հանցավորներին մերկացնելու գործում մեծ են «Նոյ-դեվեթ» թերթի ծառայությունները, որը 1906 թ. ամռանը հրատարակում էր ՌՍԴԲԿ Բաքվի կոմիտեն։

1911 թ. նոյեմբերից մինչև 1912 թ. հունվարը Բաքվում Ստ. Շահումյանի խմբագրությամբ լույս էր տեսնում մարքսիստական հայերեն առաջին լեգալ հանդեսը՝ «Նոր խոսքը», որին գործուն մասնակցություն են ունեցել նաև Ա. Կարինյանը, Ա. Ստոպանին, Հ. Հակոբյանը, Վ. Տերյանը, Ռ. Դաշտոյանը, Ա. Խումարյանը, Աշ. Քումանյանը, Հովսեփ Կարախանյանը և ուրիշներ։ Արժեքավոր են «Նոր խոսքում» հրապարակված Շահումյանի «Տիեզերական թութակը», «Իրականություն և հեռանկարներ», Ա. Կարինյանի «Գյուղացին հայ գրականության մեջ», Ա. Ստոպանիի՝ «Հայ բանվորի բյուջեն», «Ինչպես են հաշմանդամվում նավթարդյունաբերության բանվորները», Ա. Խումարյանի՝ «Գործադուլները 1911 թվականին» և այլ հոդվածներ։

1914 թ. հունվարին Թիֆլիսում լենինյան «Պրավդայի» ազդեցությամբ Ս. Կասյանի խմբագրությամբ լույս է տեսնում մարքսիստական «Մեր խոսքը» շաբաթաթերթը, լինելով հեղափոխական նոր վերելքի ծնունդ, այն իր

---

123 Տե՛ս «Կայծ», № 1, 1 ապրիլի 1906 թ.։ Տե՛ս նաև Ս. Շահումյան, Երկ., հ. 1, Երևան, 1975, էջ 154։

առջև խնդիր ուներ՝ տարածել և խորացնել մարքսիզմը, հավաքել ու համախմբել հայ մարքսիստներին, սոցիալիստական գաղափարախոսությունը տարածել բանվորների մեջ, լինել պրոլետարական ինտերնացիոնալիզմի պրոպագանդիստ։ Բոլշևիկյան «Պուտ պրավդի» («Պրավդա») թերթը չափազանց բարձր է գնահատել «մեր խոսքը» շաբաթաթերթը, նրան ցանկանալով «հաջողություն և երկարատև գոյություն»[124]։

Այդ ժամանակ Ստ. Շահումյանը, Ս. Հովսեփյանը (Ն. Սուրին), Ա. Մռավյանը, Ա. Կարինյանը, Բ. Բորյանը, Ս. Կասյանը, Ա. Շահսուվարյանը, Հ. Հակոբյանը և շատ ուրիշներ, բացի հայկական մամուլից, ակտիվորեն աշխատակցում են Կովկասի և համառուսական բոլշևիկյան թերթերին, հատկապես «Պրավդայինն»։ «Պրավդան» լայնորեն լուսաբանել է հայկական իրականության հարցերը, հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների գործունեությունը։ Ուշագրավ են «Քուրքական իրադարձությունները», «Երազում էին...», «Մարգարեի հետնորդների կայսրությունը» (1912), «Փորր Ասիան և Հայկական հարցը», «Կովկասյան մարքսիստները», «Հայկական հարցի շուրջը», «Հայկական բանվորական հրատարակությունները», «Բաքվի գործադուլը և Հայկական հարցը» (1914) և այլ հոդվածներ, որոնց մեջ բացի երկրամասի բանվորական հեղափոխական շարժումների և ազգարարչին ընդվզումների նկարագրությունից, մերկացնում էին դաշնակցության բուրժուազգայնական մտայնությունները, ինչպես նաև օտարերկրյա իմպերիալիստների զավթողական քաղաքականությունը Հայաստանում։ «Փորր Ասիան և Հայկական հարցը» հոդվածում բացահայտված են գերմանական իմպերիալիզմի քալանչիական քաղաքականությունը և նրա պլանները։ «Պրավդան» զգուշացնում էր այն խոշոր վտանգի և աղետի մասին, որ գերմանական իմպերիալիստները և նրանց օսմանյան գործակալները նենգորեն նախապատրաստում էին հայ ժողովրդի համար։ «...Ինչ տեղի կունենա այդ ժողովրդի հետ,— գրել է «Պրավդան»,— որ ամբողջ առաջավոր Ասիայում հանդիսանում է միակ կուլտուրտրեգերը։ Ինչ տեղի կունենա այդ ժողովրդի հետ, որն առանց այդ էլ ստրուկ է դարձել քուրքական բռնակալներին, որոնք պետության և քաղաքների օգնությամբ հայկական հողի ամբողջ հարստությունը բաժանել են իրենց միջև։ Ինչ տեղի կունենա իրավազուրկ, սովահար ու ցրտահար հայ գյուղացիության հետ, որ շահագործվում է Հայաստանի նահանգներում նահանգապետերի, պաշտոններ ունեցող քրդական ֆեոդալների կողմից... Այն ժողովրդի հետ, որի 85 տոկոսը գյուղացիներն է, որից քուրդ ֆեոդալները հարկերը գանձում էին հրետանու և հեծելազորի օգնությամբ։ Հայ գյուղացիությունը հարկ է վճարում ընտանիքի ամեն մի անդամի համար, անասունների համար, հողի համար, բույսերի համար, այն ամենի համար, ինչ ծնում է հողը...»[125]։

Դա հայ ժողովրդի ծանր դրության ճշմարտացի բնութագրումն էր։

1915—1916 թթ. բոլշևիկները լայնորեն տարածում են հակապատերազմական, հեղափոխական կոչեր և թռուցիկներ, սոցիալ-դեմոկրատական «Պայ-

---

124 «Պուտ Պրավդի», 14, 6 փետրվարի 1914 թ.։

125 «Рабочая правда», № 13, 27 июля 1913 г.

քար» (դեկտեմբեր 1915—հունիս 1917) թերթի[126] էջերում մերկացնում են պատերազմի հանցագործներին։ 1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո «Պայքարը» մերկացնում էր ժամանակավոր կառավարության վարած ռնակցիոն քաղաքականությունը, հայ աշխատավորներին կոչ էր անում պատրաստվել հեղափոխության առաջին էտապից երկրորդին անցնելու համար։

«Պայքարի» գործունեության մեջ հատուկ տեղ է գրավում բուրժուական նացիոնալիզմի դեմ մղած անհաշտ պայքարը։ Արժեքավոր են Ա. Միկոյանի, Ա. Ամիրյանի, Մ. Մելիքյանի, Հ. Կամարու, Հ. Պողոսյանի և այլոց հոդվածները։ «Պայքարի» յուրաքանչյուր համարը, Ստ. Շահումյանի բնութագրությամբ, մի կենդանի բողոք էր նացիոնալիզմի դեմ։ «Պայքարը» մեծ տեղ է տվել գրականության և արվեստի հարցերին։ Նրանում զետեղված գրաքննադատական հոդվածներից հատկապես արժեքավոր է Ստ. Շահումյանի գրախոսությունը՝ Մ. Գորկու խմբագրությամբ հրատարակված «Հայ գրականության ժողովածուի» մասին։ Նրանում Շահումյանը խոր համակրանք է արտահայտում «միջազգայնության մասուր զգացմունքների և ձգտումների դրոշակակիր» Մաքսիմ Գորկուն։ «Պայքարը» 1916 թ. մարտի 27-ին հատուկ համար է նվիրել հայ մեծ հեղափոխական-դեմոկրատ Միքայել Նալբանդյանի հիշատակին։ Մարքսիստ գրականագետ Հ. Սուրխաթյանը իր «Ազատության գրված զինվորը» առաջնորդող հոդվածում բարձր է գնահատել Մ. Նալբանդյանին։

Թերթը ձգտում էր զարգացնել հայ ժողովրդի քննադատական միտքը, ըստ արժանվույն վերագնահատել պատմական անցյալի արժեքները։ «Հրապարակ գալով Ադամամուրին,— 1917 թ. գրել է Ստ. Շահումյանը,— Քերթը եղավ այն կանքեղը, որ լույսի շող ձգեց հայկական համատարած խավարի մեջ։ Հայ բանվորությունը և բոլոր նրանք, որ շնչել են բանվորական օդը, չեն կարող մոռանալ այն բացառիկ պատմական դերը, որ կատարել է «Պայքար»-ը կովկասյան իրականության մեջ»[127]։

1917 թ. փետրվարյան բուրժուադեմոկրատական հեղափոխության հաղթանակից հետո Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները նոր թափ են հաղորդում կուսակցական-հրատարակչական գործին։ Անգնահատելի է «Սոցիալ-դեմոկրատ» (մայիս-օգոստոս 1917, Բաքու), «Բանվորի կռիվը» (հունիս 1917—փետրվար 1918, Թիֆլիս), «Նոր կյանք» (հունիս-հուլիս 1917, Ալեքսանդրապոլ), «Ընդունակ» (1917, Շուշի) և բոլշևիկյան այլ թերթերի կատարած դերը սոցիալիստական հեղափոխության նախապատրաստման և իրագործման, սովետական իշխանության գաղափարների տարածման տարբեղում։ Ստ. Շահումյանի խմբագրությամբ Բաքվում հրատարակվող «Սոցիալ-դեմոկրատը» մերկացնում էր ժամանակավոր կառավարության ռնակցիոն քաղաքականությունը, աշխատավոր մասսաներին նախապատրաստում սոցիալիստական հեղափոխության հաղթանակն ապահովելու։

Բեղմնավոր աշխատանք ծավալեց ՌՍԴԲ(բ)Կ Երկրային կոմիտեի օրգան «Բանվորի կռիվը»։ Նրանում հրապարակվել են Լենինյան տասնյակ

---

126 1915 թ. լույս է տեսել «Պայքարի» 4 համար, 1916 թ.՝ 55, իսկ 1917 թ. մինչև հունիսի 10-ը՝ 41։ Այսպիսով, 18 ամսվա ընթացքում հրատարակվել է 100 համար։ «Պայքարը» խմբագրել են Ա. Մռավյանը և Ս. Ասանյանը։

127 «Սոցիալ-դեմոկրատ», № 3, 14 մայիսի 1917 թ.։

հոդվածներ, պրոպագանդվել են սովետական իշխանության առաջին դեկրետները՝ հաշտության և խաղաղության մասին։

«Նոր կյանքը» նախասովետական շրջանում բուն Հայաստանի տարածքի վրա հրատարակված առաջին բոլշևիկյան հայերեն թերթն էր։ Նրանից հետո Երևանում Արշ. Մելիքյանի խմբագրությամբ 1918—1919 թթ. լույս տեսավ մարքսիստական «Խոսք», իսկ 1919 թ.՝ երիտասարդական «Սպարտակ» թերթը, որը խմբագրել են Ղ. Ղուկասյանը, Ա. Խանջյանը և Ա. Բուդաղյանը։

Նախասովետական բոլշևիկյան հայ պարբերական մամուլը հայ ժողովրդի և նրա մարտական ավանգարդի՝ Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների սոցիալիստական հեղափոխության համար մղած պայքարի հերոսական տարեգրությունն է։

Արևմտահայության հասարակական-մշակութային կյանքի զարգացման մեջ ևս խոշոր դեր է կատարել պարբերական մամուլը, որն զգալի զարգացում է ապրել XIX դ. երկրորդ կեսին։ Ջնայած պարբերականների մեծ մասը լույս էր տեսնում Կ. Պոլսում և Զմյուռնիայում, սակայն սերտորեն կապված լինելով հայկական բնաշխարհի հետ, արտացոլում էր նրա քաղաքական վիճակը, ողջ արևմտահայության տրամադրություններն ու ձգտումները։

Ասպարեզի վրա եղած թերթերից ամենահինը լիբերալ-պահպանողական հրապարակախոս Կարապետ Ութուջյանի խմբագրությամբ Կ. Պոլսում լույս տեսնող «Մասիսն» էր (1852—1908)։ «Մասիսը» նպատակ էր դրել լուսավորել ժողովրդին, պահպանել և զարգացնել հայ ժողովրդին ազգային սահմանադրությամբ տրված իրավունքները, միևնույն ժամանակ չընդդիմանալ Բ. դռան միջոցառումներին։ «Մասիսի» էջերում հանդես էին գալիս ժամանակի նշանավոր գործիչներ Նահապետ Ռուսինյանը, Գրիգոր Օտյանը, Հովսեփ Շիշմանյանը (Մերենց), Հակոբ Պարոնյանը, Մինաս Գափամաճյանը և ուրիշներ։

1860-ական թվականներին հրատարակվող պարբերականներից աչքի էր ընկնում Հարություն Սվաճյանի «Մեղուն» (1856—1874), որն իր սկզբնավորության օրից ուներ ընդդեմ դեմոկրատական ուղղություն։ Հենց այս պատճառով էլ 1865 թ. այն փակվեց։ Սակայն հինգ տարի անց վերահրատարակվելով, թերթն իր առաջին համարներից մեկում հայտարարում էր, որ հակառակ բշնամիների ջանքերի, նա պիտի շարունակի իր ժողովրդանվեր ծրագիրը. «միշտ ազգին օգտին աշխատելու համար, խայտառակելով այն ամեն մոլություններ, որ միշտ վնասակար ճանչցված են ազգի մը հառաջադիմություններ»[128]։ Թերթը սուր քննադատության էր ենթարկում ամիրայության և կղերի ներկայացուցիչներին, մերկացնում «ազգին բարեկամ ձևացող մարդերուն խայտառակություններ»։ Միևնույն ժամանակ նա հանդես էր գալիս հայ ժողովրդի նկատմամբ թուրքական իշխանությունների գործադրած կամայականություններների դեմ։

1872 թ. վերջերին թերթի խմբագրությունն անցնում է Հակոբ Պարոնյանին, որը շարունակելով թերթի դեմոկրատական ավանդները, քննադատություն է ծավալում կղերաամիրայական հոսանքի և հասարակական կյանքում

128 «Մեղու», 1870, № 16։

հաստատուն դիրքեր գրավող հայ կոմպրադորների դեմ։ Այդ բուռն գործունեությունը նրա դեմ հանեց բոլոր մութ ուժերին, որոնց և հաջողվեց 1874 թ. սկզբին արգելել «Մեղուն»։ Դրանից հետո Պարոնյանը սկսում է հրատարակել «Թատրոն» (1874—1877) երգիծաթերթերը, որտեղ ավելի է ընդլայնում իր քննադատության շրջանակները։ Ամենայն ուժգնությամբ նա բարձրացնում է նաև հայ ժողովրդի գույքի, կյանքի ու պատվի ապահովության հարցը։

Իր գաղափարական ուղղվածությամբ «Մեղուին» և «Թատրոնին» մոտ էր կանգնած 1873 թ. դեկտեմբերից լույս տեսնող Մկրտիչ Փորթուգալյանի «Ասիա-Ձայն Հայաստանի» թերթը, որն անձնվիրաբար պաշտպանում էր աշխատավորական խավերի շահերը։ Խմբագիրը հայտարարում էր. «...Խեղճ ժողովուրդը բաց հրապարակի վրա մնացած՝ տիրապետներու և խաբեբաներու ոտքի կոխան է դարձեր անխնա, զոհ է եղեր քաղաքական և կրոնական տզրուկներու։ Ահա այդ խեղճ ու անօգնական ժողովուրդին համար պետք է խոսել ու գրել. դրա իրավունքին պաշտպանությանը նվիրած ենք մեր գրիչը»[129]։ Թերթը հրատարակվեց ընդամենը 11 ամիս։

Առաջադիմական դիրքերից էր գործում Կ. Պոլսում Կարապետ Փանոսյանի «Մանզումեի էֆքյար» («Շար մտածմանց» հայատառ թուրքերեն օրաթերթը (1866—1919), որը մեծ տեղ էր հատկացնում գավառաբնակ հայության կյանքի նկարագրությանը, բողոքում հայության նկատմամբ գործադրվող ապօրինությունների դեմ, անդրադառնում ժողովրդի լուսավորության, դպրոցի, թատրոնի հարցերին, ակտիվորեն մասնակցում պատրիարքարանի և Ազգային ժողովի գործունեությանը վերաբերող վիճաբանություններին։ Ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին նա խստորեն քննադատում էր պոլսահայ բուրժուազիայի՝ «Օրագիր» և «Լրագիր» թերթերի վարքագիծը, որոնք ձայնակցելով թուրք ազգայնամոլ մամուլին, հակառուսական տրամադրություններ էին տարածում ժողովրդի մեջ։ «Մանզումեն» հանդես էր գալիս հայ-ռուսական քաղաքական կապերի զարգացման պաշտպանությամբ։ Իր մի շարք առաջնորդող հոդվածներում Փանոսյանը բանավիճում է թուրքական և եվրոպական պաշտոնաթերթերի հետ, որոնք խեղաթյուրված ձևով էին ներկայացնում հայ ժողովրդի կյանքն ու քաղաքական ձգտումները։ «Մանզումեի էֆքյարը» 1875 թ. դարձել էր շաբաթաթերթ և հրատարակվել հայերեն, մեկ տարի անց վերածվել էր օրաթերթի և լույս տեսել հայատառ թուրքերենով, իսկ 1901 թ. սկսած տպագրվել հայերեն։

Նախորդ տասնամյակում հրապարակ եկած և 70-ական թվականներին գործող հայերեն ու հայատառ թուրքերեն մյուս թերթերը հասարակական նույն նշանակությունը չունեցան։ Դրանց մեծ մասը լուրջ խնդիրներ չէր բարձրացնում և բավարարվում էր այլ թերթերից քաղված առօրյա լրատվությամբ, լավագույն դեպքում բավական ընդարձակ կերպով լուսաբանում էր Կ. Պոլսի առօրյան՝ քաղաքական խորհուրդների, եկեղեցիների, դպրոցների գործունեությունը, ընտանեկան բարքերը։

1870-ական թվականներին երևան են գալիս երկու տասնյակից ավելի նոր պարբերականներ, զգալի թվով օրաթերթեր, որոնց մի մասը կարճ կյանք ունեցավ։ Այդ թերթերից անհամեմատ տևական եղավ Մինաս Գափամաճյա-

129 «Ասիա-Ձայն Հայաստանի», 1874, № 87։

նի տեօրեն-խմբագրությամբ լույս տեսնող «Հայրենիք» (1870—1909) օրաթերթը, որը լիբերալ-պահպանողական ուղղություն ուներ։

1871 թ. հունվարից Զմյուռնիայում Մատթեոս Մամուրյանը լույս է ընծայում «Արևելյան մամուլ» ամսագրի անդրանիկ համարը։ Արձագանքելով հայ հասարակության ներքին կյանքի բոլոր հարցերին, ամսագիրը միևնույն ժամանակ լուսավորական լայն աշխատանք էր ծավալում, տպագրում էր հոդվածներ դպրոցի, մանկավարժության և գիտության այլևայլ խնդիրների մասին։ Մամուրյանի ամսագիրն իր արծարծած խնդիրների բազմազանությամբ ու խորությամբ կարևոր ավանդ էր հայ ժողովրդի հասարակական-քաղաքական-մշակութային զարգացման գործում։ «Արևելյան մամուլը» ակտիվորեն միջամտում էր համազգային գործերին, ուներ լայն տարածում և ժամանակի ազդեցիկ պարբերականներից էր (հրատարակվեց մինչև 1909 թ.)։

1870-ական թվականներին են լույս տեսնում նաև առաջին մանկական պարբերականները։ 1872—1907 թթ. բողոքական միսիոներները Կ. Պոլսում իրենց «Ավետաբեր» թերթին կից սկսում են հրատարակել «Ավետաբեր տղայոց համար» ամսաթերթը։ Առավել կարևոր էր Հ. Պարոնյանի «Թատրոն՝ բարեկամ մանկանց» պատկերազարդ երկշաբաթաթերթը (1876), որն իսկ էության հայ մանկական գրականության զարգացման հիմք հանդիսացավ։ Այստեղ տպագրվում էին գեղեցիկ պատմվածքներ, բանաստեղծություններ, որոնց նպատակն էր, ինչպես խմբագիրն էր նշում՝ «պատվավոր մարդ և ներհուն քաղաքացիներ» դաստիարակել։

Այդ ժամանակ Արևմտյան Հայաստանում դպրոցների թիվը քիչ էր, բնակչության մեծագույն մասն անգրագետ էր, ավելին. Թուրքիայի արևմտյան մասերում ապրող հայերի որոշ մասի խոսակցական լեզուն թուրքերենն էր։ Այդ էր պատճառը, որ շարունակում էին դեռևս տպագրվել հայատառ թուրքերեն պարբերականները։ Դա իրքախոս հայերին ազգային և մշակութային կյանքին մասնակից դարձնելու, ազգային ինքնաճանաչության զարգացման միջոց էր, որին հայ մտավորականությունը դիմում էր ծայր անհրաժեշտությունից մղված։

Դեռևս 1876-ին, ռուս-թուրքական պատերազմից առաջ, բուլղարական ապստամբության շրջանում, մամուլի նկատմամբ գրաքննչական սահմանափակումները խստանում են։ Սկսվում է ճգնաժամային վիճակ։ «Մասիսը», որ լույս էր տեսնում շաբաթական երեք անգամ, շատ ճկուն գտնվեց. «Հայերեն մաս թերթերու դժբախտաբար խափանման» հետևանքով «ժողովրդյան ընթև գնով առօրյա լուրեր կարդալու դյուրություն տալու համար»[130] եկանց հրատարակել նաև «Օրաթերթ Մասիս լրագրո» («Ամենամեծ Մասիս») հայատառ թուրքերեն թերթիկը, որը, սակայն, շուտով խափանվեց, ամբաստանվելով, թե «կչգնա հայոց ազգն անարդար և բռնավոր կառավարության մը լուծին ներքև ճնշյալ ներկայացնել... անտես կրնե տերության կողմե հայոց ազգին տրված այն ամեն շնորհներն ու արտոնություններն, որք այդ հասարակության համար ազատամիտ և հայրական վարչություն մը սահմանած է... այս կերպ կչգնա ժողովրդյան կիրքերը գրգռել և յուր հայրենակցաց սրտին մեջ քշնամական զգացում մը զարգացնել»[131]։

Արդուլ Համիդի գահակալության շրջանում խստացավ հսկողությունը

130 «Մասիս», 1876, № 1859։
131 «Մասիս», 1876, № 1875։

հայ քերթերի նկատմամբ։ Նրա առաջներում գրաքննական վերատեսուչ էին նշանակվում մեծ մասամբ հայերը, ինչպես օրինակ՝ Սագրը Հովհաննեսը, Ստեփան Արզումանը և այլն, ապա նոր սուլթանի օրով այդ պաշտոնը միայն մահմեդականներին էր վստահվում[132]։ Արգելվեց ծաղրանկարների օգտագործումը, քաղաքական սատիրական գրվածքների հրատարակումը։ Խափանվից Հ. Պարոնյանի «Թատրոն» երգիծաթերթը, որն իր քառամյա գոյության ընթացքում «օրինազանցության» և պետության դեմ խիստ հյուքերների համար 7 անգամ փակվել էր։

1880-ական թվականներին արևմտահայ մամուլի ցանկն ավելանում է նոր անուններով։ Այդ փաստը վկայում է, որ մամուլն արդեն հաստատուն կիրառով մուտք էր գործում արևմտահայության մեջ, թերթ ընթերցելը դարձել էր պահանջ, ժողովրդի մշակութային առաջադիմության խթան։ Այդ տասնամյակի նոր պարբերականներից հարատևում են հինգը՝ «Արևելք», «Ճերիտիեի շարգիե», «Բյուրակն», «Բուրաստան մանկանց» և «Ծաղիկ»։ «Արևելքը» (1884—1912) առաջին պոլսահայ թերթն էր, ուր հաճախ տպագրվում էին Դ. Արծրունու, Րաֆֆու, Հ. Առաքելյանի, Լեոի և այլոց գործերը։

Իր գոյության առաջին վեց տարիներին պարբերականին աշխատակցում էին նաև Գր. Զոհրապը, Տ. Կամսարականը։ Թերթն ալբի էր ընկնում ընդարձակ քաղաքական լրատվությամբ և տեսություններով, գիտական, գրական-քաոտերական-արվեստաբանական հոդվածներով։ 1908-ից նրա արտոնագիրն անցնում է դաշնակցության ձեռքը։

Հայատառ թուրքերեն «Ճերիտիեի շարիգենն» («Արևելքի տումարը», 1885—1913) առաջին երեկոյան թերթն էր։ Տիգրան Ճիվելեկյանը 1885 թ. ձեռք է բերում «Թերճիմանը էֆքյար» («Թարգման մտածմանց», 1877—1884) թերթի արտոնագիրը, փոխում անունը և մեծ տպաքանակով հրատարակում իր «Ճերիտիեի շարգիե» նոր թերթը։ Այստեղ ընդհանուր լրատվությունը կատարվում էր թուրքերեն, սակայն թերթոնի ձևով հայերեն լույս էին տեսնում նաև գեղարվեստական գործեր։ «Ճերիտիենն» իր շուրջն էր համախմբել ընդունակ երիտասարդություն։ Իր կյանքի վերջին շրջանում այս թերթին է աշխատակցել Հ. Պարոնյանը։

1882-ից հրատարակվող «Բյուրակն» ամսագիրն առաջին երկու տասնամյակում զգալի տեղ էր հատկացնում ազգագրական, բանասիրական բնույթի աշխատություններին, ինչպես և հարուստ նյութ տալիս հայ բարբառների և բանահյուսության վերաբերյալ։ 900-ական թվականներից այն վերածվում է առևտրական թերթի և հարատևում մինչև 1908 թ.։

Արփիար Արփիարյանի վկայությամբ, 80-ական թվականների վերջերին հայ պարբերականները «Հայտնի, գաղտնի, պաշտոնական և անպաշտոն գրաքննությունների ներքև կգտնվեին... Միշտ պարանի մը վրա կարծես կքալեինք. չիմնալու և չսխալվելու համար լարախաղացի մը ճարպկությամբը պետք էր ցատկռտիլ»[133]։ Գրաքննիչները մտնում էին տպարանները և հոդվածներից ջնջում «Հայաստան», «հայ ժողովուրդ» բառերը, առաջարկելով առաջինի փոխարեն գրել «Անատոլուն», երկրորդի՝ «հայ հասարակությունն»։ Արգելված էր թերթերում գործածել նաև «աստղ» «աստղագիտու-

---

132 Տե՛ս «Նոր կյանք» 1900, № 14, էջ 220։

133 «Նոր կյանք», 1900, № 21, էջ 328։

թյուն» բառերը, կասկածելով, որ հայ խմբագիրները այդ բառերով ակնարկում են սուլթանի «Աստղի պալատը» (Յըլդըզ քյոշկ)։ Խմբագրությունները համոզվելով օգտագործում էին թուրքական պաշտոնաթերթերի հոդվածները կամ եվրոպական թերթերից արտատպում Հայկական հարցին վերաբերող առանձին նյութեր, որոնց մասին ինքնուրույն հոդվածներ գրելն արգելված էր։

1890-ական թվականներից ասպարեզ են իջնում «Բյուզանդիոնը», «Լույսը», «Հանրագիտակը» և «Մուրհանդակը»։ Նախորդ տասնամյակների պարբերականներից «Հայրենիքը» 1891 թ. հունիսի 13-ից սկսեց լույս տեսնել Արփ. Արփիարյանի խմբագրությամբ։ Նախկին լիբերալ-պահպանողական այս թերթը որդեգրեց գերազանցապես դեմոկրատական ուղեգիծ։ Թերթի անդրանիկ համարում պարզելով իր գործունեության ծրագիրը, խմբագիրն ընդգծում էր, որ «Հայրենիքը» առաջին հերթին լինելու է «խրճիթին թերթը, մտքով հետամնացին թերթը»։ «Հայրենիք» թերթին աշխատակցում էին Գրիգոր Զոհրապը, Վահան Թաշյանը, Արշակ Չոպանյանը, Տիգրան Կամսարականը, Մելքոն Կյուրճյանը, Հրանտ Ասատուրը, Երվանդ Օտյանը, որոնց շնորհիվ պարբերականը ստացավ գրական ուղղություն, հրապարակեց նաև քաղաքական ու գիտական հոդվածներ։ «Հայրենիքը» համագործակցում էր «Մշակի» հետ, պարբերաբար արտատպություններ կատարում նրանից։ 1892 թ. արգելվեց «Մշակի» մուտքը Թուրքիա։ Արփիարյանն ստիպված էր այլևս չհոլովել «Մշակի» անունը, սակայն շարունակեց նրա ավանդները մինչև թերթի փակվելը (1896)։

1896 թ. Բյուզանդ Քէշյանը հիմնադրում է «Բյուզադիոն» օրաթերթը, որը դառնում է ժամանակի ամենալայն տարածում ունեցող լրագիրը։ Նա իր ուսուցիչ Ութուճյանի նման մերթ հանդես էր գալիս լիբերալ քարոզներով, մերթ պահպանողական հոդվածներով։ Թերթի հենց առաջին համարում շարադրելով իր դավանանքը, գրում էր. «ողջամիտ լուսավորություն մը, լուսամիտ պահպանողականություն մը, թե՛ հանրային գործերու, թե՛ ընկերային և իմաստասիրական հարցերու և թե՛ գրական խնդիրներու մեջ՝ մեր առաջնորդն եղած են և ասկե ետքն ալ պիտի ըլլան»։ «Բյուզանդիոնը» կարողացավ իր շուրջը համախմբել հրապարակախոսների, գրողների մի տաղավար խումբ՝ Արշակ Ալպոյաճյան, Միքայել Կյուրճյան, Վահան Թեքեյան, Արշակ Չոպանյան, Միսաք Գոչունյան, Գեղամ Բարսեղյան և այլն։

XIX դարի վերջին և XX դարի սկզբին որոշ աշխուժություն են ցուցաբերում գրական շաբաթաթերթերն ու ամսագրերը։ Առաջին զուտ գրական շաբաթաթերթերն ու ամսագրերն սկսել են հրատարակվել դեռևս 80-ական թվականներից, որոնց մի մասը կարճ կյանք է ունեցել։ Դրանցից էին Հ. Պարոնյանի «Խիկարը» (1884—1888), Եղիա Տեմիրճիպաշյանի «Գրական և իմաստասիրական շարժում» (1883—1885)։ Համեմատաբար երկար կյանք ունեցավ Անտոն Սագայանի «Մեղիկ» հանդեսը (1886—1911), որն առավել լուրջ գրական-գրականագիտական դեր խաղաց Ա. Չոպանյանի խմբագրության շրջանում (1895)։ Այդ ժամանակ էր, որ տպագրվեցին հայ և եվրոպական գրականության մասին մի շարք մեծարժեք հետազոտություններ։

1884 թ., երբ «Մասիսը» որպես ազգային, քաղաքական, տնտեսական և բանասիրական թերթ ձուլվեց «Արևելքի» հետ, Կ. Ութուճյանը սկսեց հրատարակել «Մասիս» բանասիրական շաբաթաթերթը։ Այստեղ տպագրվում էին ժամանակակից հեղինակների արձակ և չափածո գործերը, ժողովրդական

բանահյուսության նմուշներ և միջնադարյան բանաստեղծների տաղերը։ 1892 թ. «Մասիսը» սկսում է լույս տեսնել երեք շաբաթը մեկ անգամ, հետագայում նորից է դառնում շաբաթաթերթ և հարատևում մինչև 1908 թ.։ Հատկապես Գր. Զոհրապի, Հր. Ասատուրի և Տիգրան Արփիարյանի խմբագրության շրջանում այն դարձել էր առաջատար հանդեսներից մեկը։

1908 թ. հետո սկսեցին հրապարակվել Միսաք Գոչունյանի «Ժամանակ» օրաթերթը, հաջորդ տարում՝ Ռ. Զարդարյանի «Ազատամարտը» և այլն։ Ընդհանուր առմամբ 1908—1915 թթ. Թուրքիայում լույս է տեսել մոտ երկու հարյուր հայերեն պարբերական։

Ավելանում է նաև գրական պարբերականների թիվը։ 1911 թ. հունվարից Կ. Պոլսում լույս է տեսնում գրական-գեղարվեստական «Ուստան» հանդեսը՝ Միքայել Շամտանճյանի և Տիգրան Չյոկյուրյանի խմբագրությամբ, որին աշխատակցում էին Երվանդ Օտյանն ու Սիամանթոն, Զապել Եսայանն ու Վահրամ Թումանյանը, Շիրվանզադեն և Հովհ. Թումանյանը։ Այստեղ տպագրվեցին Վ. Տոլստոյի, Հաուպտմանի, Չյուգոյի և այլ դասականների երկերի թարգմանությունները։ Հանդեսը լույս տեսավ երկու տարի, ընդամենը 6 համար և դադարեց։

Նույն տարվա հունիսից Սուրեն Պարթևյանի խմբագրությամբ սկսեց հրատարակվել «Շանթ» կիսամսյա գրական-գեղարվեստական պատկերազարդ հանդեսը, որի նպատակն էր նպաստել մայրենի գրականության ու արվեստի զարգացմանը։ Գրականության, գրական քննադատության, թատրոնի, գեղանկարչության, երաժշտության բազմապիսի հարցեր իրենց լայն արտացոլումն էին գտնում այդ հանդեսում։ Արևմտահայ գրողներից բացի հանդեսին մասնակցում էին նաև Շ. Կուրդինյանը, Ալ. Շատուրյանը, Կ. Միքայելյանը։ Մեծ տեղ էր տրվում գեղարվեստական թարգմանություններին. թարգմանվում են Մ. Գորկու, Թեոֆիլ Գոթիեի, Պոլ Բուրժեի և այլոց երկերը։

Մշակութային կարևոր դեր կատարեց 1911—1914 թթ. Ջմյուռնիայում Զարեհ Գազազյանի հրատարակած «Հայ գրականություն» գրական-գեղարվեստական ամսագիրը, որին աշխատակցում էին Դ. Վարուժանը, Օ. Չիֆթե-Սարաֆը, Ս. Պարթևյանը, Արտ. Հարությունյանը, Սիամանթոն, Ռ. Սևակը, ինչպես նաև՝ Ավ. Իսահակյանը, Շ. Կուրդինյանը, Վրթ. Փափազյանը։

Վահան Թեքեյանը և Միքայել Կյուրճյանը դեռ 1905 թ. Եգիպտոսում հիմնել էին «Շիրակ» գրական-հասարակական ամսաթերթը, որը ձգտում էր համախմբել ցրված ուժերը։ Հանդեսն իր շուրջն էր համախմբել տաղանդավոր աշխատակիցներ (Օտյան, Սիամանթո, Խտրա, Արփիարյան, Շարաման)։ 1909 թ. տեղափոխվելով Կ. Պոլիս, «Շիրակը» հրատարակվում է որպես շաբաթաթերթ, բայց 26 համար լույս տեսնելուց հետո դադարում է։

Արևմտահայ մամուլի անբաժանելի մասն էին կազմում տարեգրքերը։ Եթե նախորդ 40 տարում լույս է տեսել ընդամենը մեկ տասնյակ տարեգիրք, ապա 1908—1915 թթ. հրատարակվել է 15 անուն։ Դրանցից լավագույնը Թեոդիկի (Թեոդորոս Լաբճինյան) «Ամենուն տարեցույցն» է, որի 19 հատորները (1907—1928) հայ մշակույթի պատմության վերաբերյալ հարուստ փաստական նյութ են տալիս և հանրագիտարանի արժեք ունեն։

Բացի Կ. Պոլսում, Ջմյուռնիայում և բուն Արևմտյան Հայաստանում լույս տեսնող պարբերականներից, 1870—1917 թթ. Ամերիկայում, Անգլիայում, Ֆրանսիայում, Հունաստանում, Եգիպտոսում, Բուլղարիայում և այլուր

հրատարակվել են ավելի քան 200 մեծ ու փոքր պարբերականներ, որոնք արտացոլել են արևմտահայության և գաղութահայության կյանքը։ Հատկապես Ա. Չոպանյանի «Անահիտ» հանդեսը (Փարիզ), որն իր գոյության առաջին շրջանում (1898—1911) որոշակի ազդեցություն ունեցավ հայ մշակույթի զարգացման վրա, անգնահատելի դեր խաղաց հայ-ֆրանսիական մշակութային կապերի զարգացման և օտար հեղինակների հայագիտական աշխատությունները հայ ընթերցողին մատուցելու գործում։



Աշոտ Չոպանյան

Մխիթարյանների «Բազմավեպ» և «Հանդես ամսօրյա» պարբերականները, թեպետև հեռու էին մնացել հայ կյանքի քաղաքական-հասարակական հարցերի արծարծումից, այնուամենայնիվ նրանց մուտքը Թուրքիա արգելվել էր։

Սահմանադրության հռչակումից հետո հայ մամուլի նկատմամբ եղած սահմանափակումները մի պահ վերանում են։ Բայց չանցած մի տարի իթթիհատականները, մոռանալով իրենց հանդիսավոր հայտարարությունը, ըստ կրնսեցին հետապնդել և պատժել հայ թերթերի խմբագիրներին, որոնք իրենց ձայնը բարձրացրին Ադանայում, Մուշում, Մարաշում և այլուր կատարված կոտորածների դեմ։ 1914 թ. սկզբից փակվեցին Արևմտյան Հայաստանի քաղաքներում, ինչպես և Կ. Պոլսում ու Զմյուռնիայում լույս տեսնող բոլոր հայ թերթերը։ Միայն շարունակվեց «Բյուզանդիոն», «Ճերիտիե», «Ժամանակ», «Վերջին լուր» պարբերականների հրատարակումը՝ իրենց նախկին ծավալի կեսի չափով. դրանք բովանդակում էին միայն պատերազմական ու պաշտոնական լուրեր։ Արևմտահայության ողբերգության մասին այդ թերթերում ոչ մի հիշատակություն չկար։ Միայն 1916 թ. օգոստոսի 11-ին այդ թերթերը տպագրել են կառավարության որոշումը՝ «Հայոց ազգային սահմանադրությունը» իբրև «ավելորդ և վնասակար» վերացնելու, Ազգային ժողովը լուծարքի ենթարկելու և Հայոց պատրիարքարանը, հակառակ դարերով գոյություն ունեցող կարգի, էջմիածնի իրավասությունից հանելու և Կիլիկյան կաթողիկոսարանին ենթարկելու մասին։

Կենդանի լրագրական ավանդները մոռացության էին տրվում. թերթերը դառնում էին երիտթուրքերի ազգայնամոլ կառավարության կամակատարները։

Արևմտահայ պարբերական մամուլը մեծ դեր է կատարել հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքը լուսաբանելու և քաղաքական-հասարակական միտքը զարգացնելու ու կազմակերպելու գործում։

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. ՊԱՏՄԱԴԻՏՈՒԹՅՈՒՆ

XIX դարի երկրորդ կեսին և XX դարի սկզբին հայ պատմագիտությունը նշանակալի առաջընթաց ապրեց։ Բուրժուական պատմագիտության զարգացումը Եվրոպայում և Ռուսաստանում, 1850—60-ական թվականների հասարակական կյանքի վերելքը, բուրժուական հարաբերությունների մուտքը հայ իրականություն մեծապես նպաստեցին նախորդ շրջանում իշխող կղերա-ֆեոդալական պատմագիտության տիրապետությունը հաղթահարելուն։ Մինչ այդ հրապարակի վրա մեծ ազդեցություն ուներ Մ. Չամչյանի պատմահայեցողությունը, ըստ որի ժողովրդի պատմությունը գերազանցապես եկեղեցու, թագավորների ու երևելի մարդկանց գործունեության արգասիք էր։ Առաջինը Խ. Աբովյանը և ապա Մ. Նալբանդյանն էին, որ ըմբոստացան եկեղեցական պատմահայեցողության սահմանափակության դեմ և ազդարարեցին գիտական պատմություն ստեղծելու պահանջը, որտեղ առաջին պլանի վրա պետք է հանդես գար ժողովրդական զանգվածը։

Պատմագիտության զարգացմանը նպաստեցին հարակից գիտությունների (աղբյուրագիտության, մատենագիտության, ազգագրության, հնագիտության և այլն) ասպարեզում ձեռք բերված նվաճումները։ Միջնադարյան հայ պատմիչների ստեղծագործությունների քննական ուսումնասիրությունը և դրանց բազմաթիվ հրատարակություններն ինչպես հայերեն, այնպես էլ ռուսերեն ու եվրոպական լեզուներով կարևոր դեր խաղացին այդ գործում։ Հրապարակ եկան մասնագիտական կրթություն ստացած և ժամանակի առաջադիմական գաղափարներով տոգորված երիտասարդ ուժեր, որոնք աստիճանաբար խլելով առաջնությունը եկեղեցական պատմագետների ձեռքից, պայքարեցին ժամանակի համար առաջադեմ բուրժուական պատմագիտության սկզբունքները հայոց պատմության վրա տարածելու համար։ Բուրժուական պատմագիտական միտքը աստիճանաբար տիրապետող դարձավ և նշանակալի առաջադիմական դեր խաղաց հայ ժողովրդի պատմության կղերաֆեոդալական մեկնաբանումները հաղթահարելու գործում։ Նույնիսկ կղերական պատմաբաններն ստիպված էին ընդառաջ գնալ բուրժուական մտայնությանը՝ վերանայելով հին գնահատությունները։

Հայ բուրժուական պատմագիտությունը վաղ շրջանում, այսինքն 1860—70-ական թվականներին, ավելի շատ պահպանողական ուղղություն ուներ և ինչ-որ չափով արձագանքում էր հին պատմագիտությանը։ Պահպանողական

պատմաբանները մեծ մասամբ զբաղվում էին Հայաստանի հին և միջնադարյան պատմության ուսումնասիրությամբ, հատկապես ուշադրության կենտրոնում պահելով Հայաստանի պետականության գոյության շրջանները և նեղեցու պատմությունը։ Դրանով այդ պատմագիտությունը ձգտում էր ազգային ինքնագիտակցության նկող հայ ժողովրդի մեջ հետաքրքրություն առաջացնել վաղ անցյալի փառավոր էջերի նկատմամբ և բորբոքել հայրենասիրության ոգին։ Այդ պատճառով էլ հատուկ ուշադրություն էր դարձվում ակնառվոր պատմական դեմքերի՝ թագավորների, զորավարների, կաթողիկոսների գործունեության լուսաբանմանը և անտեսվում էին սոցիալ-տնտեսական հարցերը։

Հաջորդ տասնամյակներում ավելի ակնառու դարձավ լիբերալ-բուրժուական պատմագիտությունը։ Արձագանքելով ժամանակի առաջադրած պահանջներին, հայ ժողովրդի ծավալվող ազգային-ազատագրական շարժումներին, լիբերալ-բուրժուական պատմաբաններն սկսեցին քննադատական մոտեցում հանդես բերել հին հայկական աղբյուրների նկատմամբ և աշխատեցին վերլուծել պատմական փաստերն ու երևույթները։ Նրանք ուշադրություն դարձրեցին նաև սոցիալական հարաբերությունների ու ազատագրական շարժումների, հասարակական մտքի և մշակույթի զարգացման հարցերի վրա։ Փորձեր արվեցին ստեղծելու հայ ժողովրդի ամբողջական քննական պատմությունը։

Թեև բուրժուական պատմագիտությունն զգալի գործ կատարեց նյութի կուտակման, հայ ժողովրդի պատմության առանձին պրոբլեմների մշակման ու լուսաբանման ուղղությամբ, այնուամենայնիվ, այդ պատմագիտությունը չկարողացավ գիտական բացատրություն տալ հասարակական զարգացման ընթացքին, չտեսավ կամ չցանկացավ տեսնել պատմության հիմնական շարժիչ ուժի՝ ժողովրդական զանգվածների դերը, անտեսեց տնտեսական զարգացումը, դասակարգերի գոյությունն ու նրանց միջև տեղի ունեցող պայքարը։ Նույնիսկ այն պատմաբանները, ովքեր այս կամ այն ձևով նկատեցին դասակարգերի գոյությունն ու նրանց հակամարտությունը, այդ երևույթը տարածեցին միայն ֆեոդալական հասարակության վրա։ Նրանք կապիտալիզմը համարում էին պատմության զարգացման բարձրակետ, ներդաշնակ հասարակություն։

Հայ մարքսիստները հսկայական աշխատանք կատարեցին պատմագիտության մեջ մարքս-լենինյան գաղափարախոսությունն արմատավորելու ուղղությամբ։ Նրանք դրեցին գիտական պատմագրության հիմքերը։

Բուրժուականացող կղերական պատմագիտության խոշոր ներկայացուցիչն էր անվանի գիտնական ու բանաստեղծ, Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ Ղևոնդ Ալիշանը (1820—1901)։ Կյանքի վերջին տասնամյակները գիտությանը նվիրած հայագետը, որ երբեք չէր եղել Հայաստանում, ստեղծեց կապիտալ աշխատություններ («Շիրակ», 1881, «Սիսուան», 1885, «Այրարատ», 1890, «Սիսական», 1893), որոնցում ամենայն մանրակրկիտությամբ ու հայրենասիրական կրքով նկարագրեց պատմական Հայաստանի աշխարհագրական միջավայրը, նյութական մշակույթի բազմաթիվ հուշարձանները, «աշխարհագրական ուղղությանն սկզբունքներով ներկայացրեց հին Հայաստանի պատմությունը։ Եթե անընդունելի էր Ալիշանի պատմահայեցողությունը, որպես Հայաստանի անցյալը իդեալականացնողի և նրա ապա-

գան լուսավոր միապետության ձևով պատկերացնողի, ապա նրա ժողոված ու լույս աշխարհ հանած հայկական նյութն այսօր էլ չի կորցրել իր գիտական-ճանաչողական մեծ արժեքը։ Եվրոպական մի շարք գիտական ընկերությունների անդամ, միջազգային ճանաչման արժանացած Ալիշանը թողել է նաև բազմաթիվ այլ հայագիտական գործեր (ավելի քան 45 հատոր)՝ նվիրված հին Հայաստանի պատմության ու մշակույթի այլևայլ հարցերին, հրատարակել է միջնադարյան պատմիչների մի շարք ստեղծագործություններ։



Վահեղ Ալիշան

Իր պատմահայեցողությամբ Ալիշանին արձագանքում էր Մաղաքիա Օրմանյանը (1841—1918), նրա եռահատոր «Ազգապատում» (1912—1927) ուսումնասիրությունը նվիրված է հայ եկեղեցու պատմությանը՝ սկզբից մինչև XX դարը։ Սակայն այնտեղ մեծ տեղ է հատկացված քաղաքագիտական պատմության, քաղաքական ու տնտեսական անցուդարձի, աղանդավորական շարժումների բազմաթիվ հարցերին Օրմանյանը եկեղեցու պատմությունը ներկայացնում է որպես ժողովրդի պատմության առանցք, խուսափում սոցիալական հարցերի մեջ խորանալուց։

Ռուսաստանում հայագիտության զարգացմանը մեծապես խթանել է անվանի գիտնական, Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Մկրտիչ Էմինը (1815—1890)։ Մեծ է եղել Էմինի գիտական հետաքրքրությունների շրջանակը։ Նա հսկայական աշխատանք է կատարել միջնադարյան հայ պատմիչների գործերը (մոտ 25 գործ և մասնավորապես Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը») ռուսերեն ու ֆրանսերեն թարգմանելու և դրանց նկատմամբ գիտական հետաքրքրություն առաջացնելու ուղղությամբ, արժանանալով հայտնի հայագետներ է. Դյուլորիեի, Վ. Լանգլուայի, Մ. Բրոսսեի բարձր գնահատականին։ Նշանակալի տեղ են գրավել Հեթանոս հայերի հավատքին նվիրված ուսումնասիրությունները («Очерк религии и верований языческих армян». 1864), որոնց մեջ նա այդ հարցի ուշագրավ պարզաբանումներ է կատարել և ցույց տվել հայկական պանթեոնի աստվածությունների կապը հարևան ժողովուրդների կրոնական պատկերացումների հետ։ Անդրադառնալով Հայկազյան դինաստիայի ժամանակագրության հարցերին, Էմինն առաջինն էր, որ քննական մոտեցում հանդես բերեց Մ. Չամչյանի ժամանակագրության նկատմամբ (1884)։ Էմինը հայագետներից առաջինն էր նաև, որ զբաղվեց հայկական ապոկրիֆների (պարականոն գրվածքների) ուսումնասիրությամբ ու հրատարակությամբ։

Էմինի ստեղծած հայագիտական դպրոցի ականավոր ներկայացուցիչն

էր նրա աշակերտը՝ հայագետ ու արևելագետ, Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Քերովբե Պատկանյանը (1833—1889)։ Նրա գրչին են պատկանում հայ և Արևելքի ժողովուրդների հին շրջանի պատմության, լեզվի ու գրականության վերաբերյալ բազմաթիվ արժեքավոր աշխատություններ («Опыт истории династии Сасанидов по сведениям, сообщаемым армянскими писателями», СПб., 1879, «Драгоценные камни, их названия и свойства по понятиям армян в XVII в.», СПб., 1873). Հայ պատմիչների գործերի թարգմանություններ։ Նրա «Армянская география VII в. р. х., приписывавшаяся Моисею Хоренскому» (1877) ուսումնասիրությունն արժանացավ Ռուսական հնագիտական ընկերության արծաթե մեծ մեդալի։ Պատկանյանի «Ванские надписи и значение их для истории Передней Азии» (1881), «О клинообразных надписях Ванской системы, открытых в пределах России» (1883) աշխատությունները կարևոր դեր խաղացին ուրարտագիտության զարգացման գործում։ Պատկանյանի աշխատություններից թարգմանվել են նաև ֆրանսերեն ու գերմաներեն։ Նա եղել է միջազգային մի շարք գիտական ընկերությունների անդամ, 1885 թ. ընտրվել Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ։ Պատկանյանը խոշոր ներդրում է կատարել հայ ժողովրդի քիչ ուսումնասիրված մշակույթի վրա գիտական աշխարհի հետաքրքրությունը հրավիրելու և հնդեվրոպական ժողովուրդների սիստեմում հայերի զբաղած տեղի հարցը լուծելու ուղղությամբ։

Ռուսաստանում հայագիտության տարածման գործում մեծ է նաև Մ. Էմինի մյուս աշակերտի՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանի պրոֆեսոր Գրիգոր Խալաթյանի (1858—1912) դերը։ Նա ուսումնասիրել է հայոց պատմության հին շրջանը, հատուկ ուշադրություն է դարձրել Մովսես Խորենացու «Հայոց պատմության» աղբյուրների քննությանը («Армянский эпос в «Истории Армении» Моисея Хоренского. Опыт критики источников», 1896, «Армянские Аршакиды в «Истории Армении» Моисея Хоренского». Опыт критики источников», 1903). Խալաթյանն առաջիններից էր, որ լուրջ փորձ կատարեց հայ ժողովրդի պատմության դասընթաց ստեղծելու ուղղությամբ («Очерк истории Армении в связи с общим ходом событий в Передней Азии», 1910), որտեղ այդ պատմությունը շարադրված էր հարևան ժողովուրդների պատմության հետ սերտ առնչության մեջ։ Կարևոր նշանակություն ունեցան նաև Խալաթյանի ջանքերը հայ ազգագրության զարգացման գործում։

Հայաստանի հին և միջին դարերի պատմության բազմապիսի հարցեր քննության ենթարկվեցին մի շարք այլ հայագետների աշխատություններում ևս։ Այդ աշխատությունները թեև ելնում էին մեթոդոլոգիական սխալ դիրքերից, բայց արժեքավոր էին նյութի ուսումնասիրության և վերհանման տեսակետից։ Բազմավաստակ բանասեր Կարապետ **Կոստանյանը** (1853—1920) միջնադարի հայ բանաստեղծների գործերը լույս աշխարհ հանելու և լեզվաբանական ուսումնասիրությունների հետ զգալի ուշադրություն է դարձրել հին հայկական մշակույթի պատմության հարցերին («Հայոց հեթանոսական կրոնը», 1879, «Հայոց վանքերը», 1886 և այլն)։ Մշակույթի պատմությանը բազմիցս անդրադարձել է նաև անվանի հայագետ Գարեգին Հովսեփյանը (1867—1952), որը քննության է ենթարկել հայ գրչության և մանրանկարչության հարցերը, հետագա տարիներին գրել և հրատարակել է հայ նախարարական տնե-

րի պատմությունը, ձեռագրերի քառահատոր հիշատակարանների առաջին հատորը։ Փարիզում հրատարակվող «Բանասեր» հայագիտական հանդեսի (1899—1907) խմբագիր Կարապետ Բասմաջյանը (1864—1942) հայ դրամագիտությանը, բևեռագիր արձանագրություններին նվիրված մի շարք աշխատություններ և հայոց պատմության դասագրքեր ստեղծելուց բացի արժեքավոր ներդրում կատարեց հայ մշակույթի պատմության մեջ՝ առաջին անգամ գիտական քննությամբ և արաբական աղբյուրների բաղդատությամբ հրատարակելով XV դարի հայ գիտնական Ամիրդովլաթ Ամասիացու «Անգիտաց անպետ» դեղագիտական հռչակավոր գործը։ Պատմաբանասիրական և դրամագիտական ուշագրավ հետազոտություններ է կատարել Հակոբոս Տաշյանը (1866—1933)։ Բաբկեն Կյուլպեերյանը (1868—1936) հեղինակ է պատմատեղագրական և եկեղեցու պատմությանը նվիրված աշխատությունների։ Հայկական աղանդավորական շարժումներին, հայ պատմիչներին, Վենետիկի Մխիթարյանների գործունեությանը նվիրված աշխատություններ է գրել Բարսեղ Սարգիսյանը։ Պավլիկյան և Թոնդրակյան շարժումներին նվիրված գերմաներեն լեզվով աշխատություններ է հրատարակել բանասեր Կարապետ Տեր-Մկրտչյանը (1866—1915)։ Հայկական միջնադարի պատմության ու մշակույթի բազմազան հարցերին է անդրադարձել անվանի բանասեր Գալուստ Տեր-Մկրտչյանը («Մխիթարյան», 1860—1918)։ Բանասեր և ձեռագրագետ Ներսես Ակինյանը (1883—1963), որ երկար տարիներ եղել է «Հանդես ամսօրյա» խմբագիր (1909—1963), գրել է մոտ 500 աշխատություն և մեծապես նպաստել հայագիտության զարգացմանը Եվրոպայում, թողել է նաև պատմագիտական աշխատություններ, մասնավորապես հայ-վրացական հարաբերությունների վերաբերյալ։

Նախասովետական շրջանում հայկական միջնադարի լավագույն ուսումնասիրողներից էր պատմաբան Նիկողայոս Ադոնցը (1871—1942)։ Ն. Մառի աշակերտ, Պետերբուրգի (1916-ից), իսկ հետագայում Բրյուսելի համալսարանների պրոֆեսոր Ադոնցն առաջինն էր հայ իրականության մեջ, որ լրջորեն զբաղվեց միջնադարյան Հայաստանի տնտեսական ու հասարակական-քաղաքական կյանքի, հայ-բյուզանդական հարաբերությունների ուսումնասիրությամբ։ Ռուսերեն հրատարակված նրա «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» (1908) կապիտալ աշխատությունը համարվում է հայագիտության խոշոր նվաճումներից։ Պատմական հարուստ նյութի խորազնին քննությամբ այս աշխատությունում Ադոնցը ճշտեց Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև բաժանված Հայաստանի սահմանները, վերլուծեց Հուստինիանոս կայսեր ռեֆորմները Հայաստանում, հայկական ֆեոդալիզմի ձևավորման ու զարգացման, գյուղացիության իրավական վիճակի հարցերը, բացահայտեց ֆեոդալական տների հետ կապված բազմաթիվ խնդիրներ։ Սակայն, լինելով բուրժուական պատմաբան, նա, թեև շատ հարցերում հաղթահարեց կղերաֆեոդալական պատմագրության սահմանափակությունը, բայց մինչև վերջ չկարողացավ ըմբռնել ֆեոդալիզմի բուն էությունը որպես հասարակական-տնտեսական ֆորմացիա և այն ներկայացրեց որպես քաղաքական սիստեմ, չտեսավ դասակարգային պայքարի առկայությունն այդ դարաշրջաններում։ Հետագա տարիներին Ադոնցն ստեղծեց հայերեն, ուսերեն և ֆրանսերեն բազմաթիվ փոքրածավալ մենագրություններ, որոնցում անդրադարձավ հայ ժողովրդի միջնադարյան պատմության ու գրականության, հայ-հունական բանասիրության,

առասպելաբանության, տոհմաբանության և շատ այլ կարևոր հարցերի։ Նա գրեց նաև հայ ժողովրդի ամբողջական պատմության առաջին հատորը (Ֆրանսերեն, հրատ. 1946-ին)։

Հայաստանի հին և միջնադարյան շրջանի պատմության հարցերը եղել են նաև օտարազգի մի շարք գիտնականների ուսումնասիրության առարկան։ Նրանց հատկապես հետաքրքրել է պատմական սկզբնաղբյուրների բրնությունն ու հրատարակումը։ Այդ ուղղությամբ զգալի աշխատանք են կատարել Ֆրանսիացի է. Դյուլորիեն, անգլիացի Ֆ. Կոնիբերը, գերմանացիները Հ. Գելցերը, Ա. Գուտշմիդը, Հ. Մարկվարտը և ուրիշներ։ Ֆրանսիացի նշանավոր արևելագետ, ռուսական գիտությունների ակադեմիայի անդամ Մարի Բրոսսեն (1802—1880) հսկայական ներդրում կատարեց Սիրուպայում հայ-վրացական բանասիրության սկզբնավորման և զարգացման ուղղությամբ, Ն. Մառի արտահայտությամբ եղավ «հայ-վրացական բանասիրության պիոները»։ Նա կապեր ուներ Մխիթարյան գիտնականների հետ, այցելել էր Անդրկովկաս և գրել մի շարք գրավոր արժեքավոր հուշարձանների թարգմանիչ և գիտական հրատարակիչ ու մեկնարան։ Բրոսսեն բազմաթիվ աշխատություններ է նվիրել նաև հայկական ու վրացական հնագիտական հուշարձաններին, դրամագիտությանը, մատենագրությանը։



Նիկողայոս Ադոնց

Ռուսաստանում կովկասագիտության մեծ երախտավորը եղավ Նիկողայոս Մառը (1864—1935)։ Իր ուսուցիչ Ք. Պատկանյանից հետո ղեկավարելով Պետերբուրգի համալսարանի հայագիտության ամբիոնը, Ն. Մառը անսպառ եռանդով ձեռնամուխ եղավ հայ-վրացական բանասիրության զարգացմանը։ Անշափ մեծ է եղել Մառի գիտական հետաքրքրությունների շրջանակը։ Նա բազմաթիվ մեծարժեք ուսումնասիրություններ է կատարել կովկասյան ժողովուրդների լեզվի, պատմության, գրականության, ազգագրագիտության, արվեստի, հնագիտության, արձանագրագիտության, ազգագրության, բանահյուսության և այլ բնագավառներում։ Հայ ժողովրդի պատմության հարցերը ևս խորապես հետաքրքրել են մեծ գիտնականին։ Նա առաջիններից էր, որ ուշադրություն դարձրեց միջնադարյան Հայաստանի պատմության սոցիալ-տնտեսական հարցերին, նկատեց Բագրատունյաց թագավորության ապրած սոցիալական խոր ճգնաժամը XI դարում, այդ տեսանկյունից մոտեցավ Անիի հնագիտական պեղումների արդյունքները մշակելիս, բացահայտեց պավլիկյան և թոնդրակյան շարժումների ժողովրդական ու սոցիալական բովանդակությանը, իր եռուն գործունեությամբ և հետևողական հոգատարու-

Բյամբ Մառը պատրաստեց ու աճեցրեց հայագետ-կովկասագետների մի ամբողջ սերունդ (Հ. Օրբելի, Գ. Ղափանցյան, Ն. Ադոնց, Ի. Ջավախիշվիլի, Աշխ. Քալանթար, Ա. Շանիձե, Լ. Մելիքսեթ-Բեկ և ուրիշներ), որը խոշոր ներդրում կատարեց գիտության ասպարեզում։

Մառի աշակերտներից ակադեմիկոս Իվանե Ջավախիշվիլին (1876—1940) դարձավ վրացական հայագիտության դպրոցի հիմնադիրը։ Պետերբուրգի համալսարանում նրա մշակած ու կարդացած փայլուն դասախոսությունները միջնադարյան Հայաստանի պատմության հարցերի շուրջը հիմք դարձան նրա մենագրական «Государственный строй древней Грузии и древней Армении» աշխատության (1905) համար։ Ջավախիշվիլին առաջիններից էր, որ ուսումնասիրեց հայ-վրացական եկեղեցական բաժանման պատճառները, բացահայտեց X դարում Սյունիքի գյուղացիական շարժումների սոցիալական բնույթը։ Վրաստանի պատմությունը նվիրված իր հետագայի մեծարժեք աշխատություններում ևս նա բազմիցս անդրադարձել է հայ ժողովրդի պատմության կարևոր հարցերին։

Աշխարհի տարբեր երկրներում ցրված հայկական գաղթավայրերի պատմությունը նույնպես դարձավ հայ պատմաբանների ուսումնասիրության առարկա։ Առանձին մենագրություններ ու հոդվածներ նվիրվեցին Ղեղկաստանի, Եգիպտոսի, Ռումինիայի, Հունգարիայի, Լեհաստանի և այլ երկրների, ինչպես նաև Ռուսական կայսրության սահմաններում եղած հայկական գաղթօջախների առաջացման ու պատմության հարցերին։ Առանձնապես ուշադրության էին արժանի Ղ. Ալիշանի «Կամենից» (1896) և «Հայ-Վենետ» (1896), աշխատությունները, Գ. Գովրիկյանի՝ Եղիսաբեթուպոլիս և Գևոլա հայաքաղաքներին նվիրված ուսումնասիրությունները (1893—1896), Հ. Տեր-Հովհաննյանցի «Պատմություն Նոր Ջուղայու» (Հ. Ա, Բ, 1880, 1881), Հ. Քոսյանի «Հայք ի Զմիւռնիա և ի շրջակայս» (1899), Ք. Քուշներյանի «Պատմություն գաղթականության Խրիմու հայոց» (1895) և մի շարք այլ հեղինակների գործերը։ Ուկրաինացի նշանավոր պատմաբան Ի. Լ.ինևիչենկոն Լեհաստանում և Հարավ-արևմտյան Ռուսաստանում բնակվող հայության կյանքին նվիրեց առանձին մի ուսումնասիրություն (1894)։

Այս շրջանում հայ պատմաբանների ուշադրությունը գրավեց հայ-ռուսական հարաբերությունների զարգացման խնդիրը։ Առաջին քայլը կատարեց Կարապետ Ծզյանը (1835—1905), հրատարակելով «Сношения Петра Великого с армянским народом» (1898) աշխատությունը, որտեղ արխիվային փաստաթղթերի հրապարակումով և առանձին ուսումնասիրությամբ ցույց տվեց Պետրոս Մեծի ժամանակ հայ-ռուսական հարաբերությունների պատկերը և հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ Իսրայել Օրու գործունեությունը։ Այս գործին հաջորդեց Ծզյանի «Начало сношений Эчмиадзинского патриаршего престола с русским правительством» (1901) աշխատությունը։

Հայ պատմիչների գործերի հրատարակումը և դրանց գիտական մեկնաբանումը, պատմական այլ բազմազան աղբյուրների վերհանումը ռևալ պայմաններ ստեղծեցին հայ ժողովրդի ամբողջական պատմություն կերտելու համար։ Այդ գործում առաջին խոշոր քայլը կատարեց Անտոն Գարագաշյանը (1818—1903)։ Լինելով բազմակողմանի հետաքրքրություններ ունեցող գիտնական՝ փիլիսոփա, լեզվաբան, մանկավարժ, նա կյանքի վերջին տարինե-

րին հրապարակ հանեց «Քննական պատմություն հայոց, ըստ նորագույն պատմական, լեզվաբանական և բանասիրական տեղեկությանց» (1880—1895) քառահատոր աշխատությունը։ Առաջնորդվելով պատմական երևույթների պատճառական կապը և դրանց հետևանքը վեր հանելու, հայ ժողովրդի պատմությունը հարևան երկրների պատմության հետ սերտորեն շաղկապելու ձգտումով, Գարագաշյանն առաջիններից էր, որ հրաժարվեց կրոնական դոգմաներով ու անապարձության մղումով պատմությունը լուսաբանելու կղերա-ֆեոդալական պատմագրության սկզբունքից։ Հենվելով մատենագիտական հարուստ փաստերի վրա, նա քննական վերլուծության ենթարկեց հայոց պատմությունն սկզբից մինչև V դարի վերջը, դառնալով հայ քննական պատմագրության հիմնադիրը։ Սակայն Գարագաշյանը, լինելով բուրժուական պատմագրության ներկայացուցիչ, պատմության հիմնական երևույթների ըմբռնման մեջ մնաց իդեալիստական դիրքերում։ Առաջնակարգ տեղ հատկացնելով արտաքին գործոնին, նա հայ ժողովրդի պատմությունը բաժանեց երկու շրջանի՝ նախնական և պատմական, ընդ որում վերջին շրջանն սկսվում էր Տիգրան II-ից և շարունակվում մինչև իր ապրած ժամանակները։ Նա չկարողացավ ըմբռնել նաև ֆեոդալիզմի պատմական դերը մարդկության առաջընթացի գործում։ Ընդհանրապես քննադատական մոտեցում ունենալով միջնադարյան հայ պատմիչների հաղորդած տեղեկությունների նկատմամբ, նա անհիմն կերպով թերագնահատեց շատերի, և առաջին հերթին Մովսես Խորենացու, գործերի նշանակությունը։ Այնուամենայնիվ, Գարագաշյանի աշխատությունը հայ պատմագրության խոշոր նվաճումներից էր և հսկայական պատմագիտական նյութ էր պարունակում։

Ուշագրավ երևույթ էր նաև Ստեփանոս Պալասանյանի (1837—1889) «Պատմություն հայոց։ Սկզբից մինչև մեր օրերը» (1890) աշխատությունը։ Իր նախորդներից Պալասանյանը դրականորեն տարբերվեց նրանով, որ կանգնեց պատմականության դիրքերում և պատմությունը դիտեց դինամիկայի, էվոլյուցիոն զարգացման մեջ։ Մեծ տեղ հատկացնելով բնական գործոններին, Պալասանյանը նշում էր նաև արտադրողական ուժերի դերը։ Նա նշմարեց նաև հասարակական-տնտեսական ֆորմացիաները, սակայն կանգ առավ կապիտալիզմի սահմանագծի վրա, չնկատեց դասակարգային պայքարը նույնիսկ XIX դարում և գտավ, որ սեփականատիրական հարաբերությունները հավերժական երևույթ են։

Հայաստանի պատմության ամբողջական պատկերը ներկայացնելու հետաքրքիր փորձ արեց նաև ռուս նշանավոր գիտնական ու բանաստեղծ Վալերի Բրյուսովը (1873—1924)։ «Летопись исторических судеб армянского народа» (1918) աշխատությունը եղավ նրա գիտական հետազոտության արդյունքը, որտեղ, գլխավորապես արտաքին քաղաքական իրադարձությունների հիման վրա, շարադրեց հայ ժողովրդի պատմության փաստական կողմը, միաժամանակ մեծ տեղ հատկացնելով հայ մշակույթի կարևորագույն երևույթների գնահատմանը։ Իր այս և հայ ժողովրդի մշակույթին նվիրված գործերով Բրյուսովը մեծ դեր խաղաց ռուս հասարակությանը Հայաստանի բազմազարյա պատմությանը և մշակույթին ծանոթացնելու գործում։

XIX դարի վերջերից հայ պատմագրության մեջ որոշակի հետաքրքրություն է նկատվում գեպի նոր շրջանի պատմության հարցերը։ Դա բնորոշվում էր մոտիկ անցյալի և առօրյա կյանքի առաջադրած խնդիրների կարևո-

րությամբ՝ կապված հայ ժողովրդի ազգային-ազատագրական և սոցիալական շարժումների հետ։ Կյանքը պահանջում էր պատմաբաններից որոշակի վերաբերմունք ցուցաբերել այդ հարցերին։

Այս գործին մեծապես նպաստեցին նոր շրջանին վերաբերող պատմական փաստաթղթերի և վավերագրերի հրապարակումները։ Առանձնապես նշանակալի երևույթ էր Կովկասի փոխարքայության գլխավոր վարչության արխիվային նյութերի 12 հատորանոց «Акты, собранные Кавказской Археографической комиссией» *ժողովածուն (1866—1904), որը թեև կազմված էր ցարիզմի գաղութային քաղաքականությունը Կովկասում հիմնավորելու միտումով, սակայն բազմաթիվ հավելվածում արխիվային նյութեր էր պարունակում հատկապես հայ ժողովրդի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացության վերաբերյալ։ Նույնպիսի բնույթ ունեին նաև հրատարակվող բազմազան պաշտոնական վիճակագրական ու փաստագրական ժողովածուները։ Անդրկովկասի սոցիալ-տնտեսական կյանքի վերաբերյալ հարուստ նյութեր էր պարունակում* «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края» *յոթ հատորանոց ժողովածուն (1885—1887)։ Լույս տեսան նաև 1877—78 թթ. ռուս-թուրքական պատերազմին վերաբերող փաստաթղթերի ժողովածուներ։ 1893—1915 թթ. Գ. Ազանյանը հրատարակեց «Դիվան հայոց պատմության» տասներեք հատորները, որտեղ ամփոփված էին հայ ժողովրդի XVIII—XIX դարերի պատմության ամենաբազմազան հարցերին նվիրված հարուստ վավերագրեր՝ քաղված Կ. Պոլսի պատրիարքարանի, կաթողիկոսական դիվանի և մասնավոր անձանց արխիվներից։ Հուշագրությունների և ճանապարհորդական նոթերի հրապարակումները ևս կարևոր դեր խաղացին պատմագրության զարգացումը խթանելու գործում։ Հատկապես ուշագրավ էին անգլիացի ճանապարհորդ Հ. Լինչի «Armenia» երկհատորանոց ստվարածավալ ուղեգրությունները (1901), որոնք թարգմանվեցին հայերեն (1913—1914) և ռուսերեն (1910)։*



Վալերի Բրյուսով

Արևմտահայության սոցիալական ու քաղաքական կացությունն արտացոլող հարուստ նյութեր էին պարունակում Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանի հրատարակած «Ատենագրություն Ազգային ընդհանուր ժողով» ժողովածուները (1860—1896), գավառական հարստահարությունների մասին «Տեղեկագիրը» (1876) և ռուս պատմաբանների ու գիտվորական դի-

տորդների (Ա. Մ. Կոլյուբակին, Ա. Մ. Պրժեվալսկի, Յա. Դ. Մալամա, Ա. Դ. Դիսիուս և ուրիշներ) նկարագրական ուսումնասիրությունները։

Արխիվային վավերագրերի ու փաստական նյութի լայն օգտագործմամբ հայ ժողովրդի նոր շրջանի պատմության ամենաբազմազան հարցերին առաջին անգամ անդրադարձավ բուրժուական պատմագրության ականավոր ներկայացուցիչ **Ալեքսանդր Երիցյանը** *(1841—1902)*։ Լինելով Կովկասյան վարչության պետական պաշտոնյա, նա ուղևորություններ է կատարել Արևմտյան Հայաստանում ու Անդրկովկասի մի շարք վայրերում և ռուսերեն լեզվով հրատարակել Ղազախի ու Բորչալուի գավառների պետական գյուղացիների տնտեսական վիճակի *(1886, 1889)*, ինչպես նաև արևմտահայության կացության վերաբերյալ ուսումնասիրություններ *(1884)*։ Երիցյանը հայ նշանավոր քաղաքական ու մշակութային գործիչների *(Խ. Աբովյան, Ս. Նազարյան Ն. Աշտարակեցի, Գր. Արծրունի, Դ. Պատկանյան և ուրիշներ)* մասին գրել է մի շարք հետաքրքրություններ և հրատարակել նրանց գործունեությունը լուսաբանող բազմաթիվ փաստաթղթեր։ Ուշագրավ են Երիցյանի վիճակագրական հրապարակումները հայերի թվաքանակի, դպրոցների և այլ հարցերի վերաբերյալ։ Պատմաբանն առանձին ուսումնասիրության առարկա է դարձրել *Մխիթարյանների* գործունեությունը ևս *(«Վենետիկի Մխիթարյանք», 1883)*։ Սակայն Երիցյանի ամենակարևոր գործը «Ամենայն Հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք XIX դարում» երկհատորանոց ուսումնասիրությունն է *(1894—1895)*, գրված արխիվային հարուստ և մեծ մասամբ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող նյութերի հիման վրա։ Այստեղ նա մանրամասնորեն կանգ է առել XIX դարի առաջին կեսի քաղաքական անցուդարձի, Էջմիածնի կաթողիկոսության գործունեության, Թուրք-պարսկական լծի դեմ հայերի մղած ազատագրական պայքարի հարցերին։ Նա լայն տեղ է տվել նաև հայ-ռուսական հարաբերությունների լուսաբանմանը և Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին «նոր դարագլուխ» համարել հայ ժողովրդի կյանքում։ Սակայն Երիցյանը ևս զերծ չմնաց բուրժուական պատմագրությանը հատուկ կոնցեպցիոն սխալներից և անտեսեց պատմության զարգացման մեջ ժողովրդական զանգվածների դերը։

Նոր պատմության ուսումնասիրության Երիցյանի սկսած գործը եռանդով շարունակեց բազմավաստակ գիտնական Լեոն *(Առաքել Բաբախանյան, 1860—1932)*։ Կանգնած լինելով բուրժուական լիբերալիզմի դիրքերում, Լեոն քննադատական վերաբերմունք ուներ կղերական պատմագրության նկատմամբ։ Սակայն, ազդվելով բուրժուական պատմագրության զանազան տեսություններից, բազմաթիվ սխալ գնահատումներ տվեց պատմական երևույթներին։ Չնայած դրան, Լեոյի փաստառատ աշխատությունները, որ գրված են հայրենասիրական շնչով ու գրական բարձր մակարդակով, ունեն ճանաչողական մեծ արժեք։ 1917 թ. լույս տեսավ Լեոյի «Հայոց պատմություն» կապիտալ աշխատության առաջին հատորը՝ նվիրված հին շրջանին։ Լեոն հատուկ ուսումնասիրության առարկա դարձրեց նոր շրջանի հասարակական կյանքի պատմությունը, գրելով «Մտեփանոս Նազարյանց» *(հ. 1—2, 1902)*, «Գրիգոր Արծրունի» *(հ. 1—3, 1902—1905)* մենագրությունները, որտեղ, սակայն, բազմաթիվ ուշագրավ մեկնությունների հետ, չկարողացավ բացահայտել հայ հասարակական մտքի աշքի ընկնող գործիչների էությունը և «ազգային» միասնության դիրքերից տվեց սխալ գնահատականներ։ Լեոյին մեծապես հե-

տաքրքրում էին նաև Հայկական հարցի հետ կապված խնդիրները, որոնց նա բազմիցս անդրադարձել է իր հետազոտություններով։ Մեծ էր պատմաբանի հետաքրքրությունը հայ մշակույթի ամենատարբեր դրսևորումների նկատմամբ։ Նրա ծավալուն աշխատությունները («Հայկական տպագրություն», հ. 1—3, 1901—1902, «Ս. Մեսրոպ», 1906, «Երեսնամյակ Հայոց բարեգործական ընկերության Կովկասում», 1911, Երևանի և Ղարաբաղի թեմական դպրոցների պատմությանը նվիրված մենագրությունները՝ 1914 և այլն) կարևոր տեղեկություններ են պարունակում հայ մշակույթի պատմության բազմազան հարցերի վերաբերյալ։



Լեո (Առաքել Բաբախանյան)

Ընդհանրապես հայ մշակույթի պատմության հարցերը դարձել էին պատմաբանների ուսումնասիրության առարկա։ Հայ դպրոցների պատմությանը նվիրված առանձին աշխատություններ գրեցին Ալ. Երիցյանը, Ստ. Մալխասյանցը, Գ. Այվազյանը, Եր. Շահազիզը, Ա. Փարեմուզովը, Պ. Գիրուլյանովը, Ա. Ալպոյաճյանը և ուրիշներ։

Նոր պատմության հարցերին բազմակողմանիորեն անդրադարձել է նաև արևմտահայ պատմաբան Ավետիս Պերպերյանը *(1802—1870)։ Լինելով Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի դիվանապետը, նա հավաքել է բազմազան փաստաթղթեր, կոնդակներ, սուլթանական բերաթներ և շարադրել իր «Պատմություն հայոց» աշխատությունը, որը լույս տեսավ 1871 թ.։ Այն ընդգրկում է 1772—1860 թթ. և փաստորեն հանդիսանում է Մ. Չամչյանի պատմության շարունակությունը։ Աշխատության մեջ շոշափված է եկեղեցու դեկավարների, ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների պատմությունը, սակայն զգալի տեղ է հատկացված նաև Կ. Պոլսում տեղի ունեցած հասարակական անցուդարձին, սահմանադրական պայքարին։ Թեև Պերպերյանի մենագրության մեջ անտեսված է արևելահայության պատմությունը, այն բացառիկ սկզբնաղբյուրի նշանակություն է ստացել, քանի որ նրանում հեղինակը հանդես է գալիս որպես բազմաթիվ դեպքերի ականատես, իսկ բերված շատ փաստաթղթերի մեծ մասի բնագիրը չի պահպանվել։*

Նոր շրջանի հայ ժողովրդի պատմության հարցերին է անդրադարձել Դավիթ Անանունը *(1879—1943) իր «Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում» եռահատոր աշխատության մեջ (1916—1926)։ Այստեղ նա «տնտեսական մատերիալիզմի» և ազգահավարման բուրժուանացիոնալիստական դիրքերից անդրադարձել է արևելահայերի հողային հարաբերությունների, գյուղական համայնքի, առևտրի ու արդյունաբերության զարգացման, քաղաքական կուսակցությունների, հասարակական հարաբերությունների և մշակույթի պատմության հետ կապված ամենաբազմազան խնդիրներին, օգ-*

տագործելով մեծ քանակությամբ փաստական նյութեր ու վիճակագրական տվյալներ՝ լինելով «Կուլտուր-ազգային ավտոնոմիայի» հակամարքսիստական ծրագրի պաշտպան, Անանունը («Ազգային հարցը և դեմոկրատիան» հոդվածաշարը, 1913), բացառելով ազգերի ազատագրման տնտեսական ու տերիտորիալ գործոնները, ժխտում էր դասակարգային գիտակցության դերը պատմության մեջ և առաջնակարգ նշանակություն տալիս ազգային պատկանելության գիտակցությանը։ Անանունի նացիոնալիստական այս հայացքների դեմ անհաշտ պայքար են մղել հայ մարքսիստները, մասնավորապես Ստ. Շահումյանը։

Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի հարցերին առաջին անգամ անդրադարձողներից էր Կազանի և Կիևի համալսարանների պրոֆեսոր Սողոմոն Եղիազարյանը (1852—1935)։ Նա մի շարք հետաքրքիր ուսումնասիրություններ է հրատարակել Անդրկովկասի հողատիրության, ջրատիրության, իրավունքի, համքարական միությունների, քրդերի ազգագրության և այլ հարցերի վերաբերյալ։ Հատկապես մեծ արժեք է ներկայացնում «Исследования по истории учреждений в Закавказье» երկու մասից կազմված աշխատությունը։ Առաջին մասում՝ «Գյուղական համայնքը» (1889), Եղիազարյանն իր հավաքած հարուստ նյութերի հիման վրա մանրամասնորեն վերլուծում է Անդրկովկասի, ինչպես նաև Հայաստանի գյուղատնտեսության վիճակի, գյուղական համայնքի, նրա դասային կազմի, հողատիրության հետ կապված հարցը։ Երկրորդ մասում՝ «Քաղաքային համքարություններ» (1891), հեղինակն անդրադարձել է արհեստավորական միությունների ծագման, կազմակերպման ու ներքին կառուցվածքի հարցերին։ Սակայն, չըմբռնելով կապիտալիզմի զարգացման օրինաչափությունները, Եղիազարյանը չի կարողացել մինչև վերջ գիտական վերլուծության ենթարկել իր ուսումնասիրած երևույթները և կանգնել է իրենց դարն ապրած գյուղական համայնքի ու արհեստավորական համքարությունների պաշտպանի դիրքերում։ Այնուամենայնիվ Եղիազարյանի ուսումնասիրությունները սոցիալ-տնտեսական խնդիրներին նվիրված լավագույն գործերից են նախասովետական հայ պատմագրության մեջ։

Հայաստանի սոցիալ-տնտեսական պատմության հարցերին է նվիրված նաև Ս. Զավարյանի «Опыт исследования сельского хозяйства хлебородного района Эриванской губернии и Карсской области» (1899) աշխատությունը, որտեղ նա ցույց է տվել նաև գյուղացիության սոցիալական շերտավորման պրոցեսը։ Հետաքրքիր է, որ իտալական վերածննդի արվեստի լավագույն գիտակ և ուսումնասիրող Ալեքսեյ Յիվիլեգյանը (1875—1952) իր գիտական գործունեության առաջին շրջանում զբաղվել է հիմնականում պատմության հարցերով և արժեքավոր գործեր է ստեղծել Արևմտյան Եվրոպայի սոցիալ-տնտեսական կացության վերաբերյալ («Городская община в средние века», 1901, «Средневековые города в Западной Европе», 1902, «Торговля на Западе в средние века», 1904 և այլն)։ Յիվիլեգյանն ուսումնասիրել է նաև Ռուսաստանում հայերի կացությունը («Армяне в России», 1906).

Նոր շրջանի պատմագրությունը բավական տեղ է հատկացրել XIX դարում տեղի ունեցած կովկասյան պատերազմների լուսաբանմանը։ Այդ գործում կարևոր ներդրում ունեն ռուս պատմաբանները։ Հատկապես հիշատա-

կելի է Ն. Դուբրովինի «История войны и владычества русских на Кавказе» վեցհատորանոց աշխատությունը (1871—1888), որտեղ բավական տեղեկություններ կան նաև Հայաստանի մասին։ Վ. Պոտտոն առաջիններից էր ռուս պատմաբանների մեջ, որ իր «Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях» հինգհատորանոց աշխատությունում (1885—1891) հանգամանորեն կանգ առավ հայերի և Հայաստանի վրա, ցույց տվեց հայ գործիչների և աշխարհազորայինների ակտիվ մասնակցությունը Թուրքիայի և Պարսկաստանի դեմ Ռուսաստանի մղած պատերազմներում։ Այս հարցին Պոտտոն ավելի մանրամասնորեն անդրադարձավ «Первые добровольцы Карабага в эпоху водворения русского владычества» (1902) աշխատության մեջ, որտեղ նա հատուկ ուշադրություն դարձրեց Ռուսաստանի նկատմամբ հայ ժողովրդի ունեցած հավատարմության վրա։ Նույն ձևով հայ ժողովրդի մասին տեղեկություններ են հաղորդում Ն. Մուրավյովը («Война за Кавказом в 1855 году», 1877), Ս. Քիշմիշևը («Война в Турецкой Армении, 1877—78 гг.», 1884) և մի շարք այլ պատմաբաններ։

Սակայն նոր շրջանի պատմության հարցերով զբաղվող գիտնականներին ամենից ավելի հետաքրքրել են արևմտահայության նկատմամբ Թուրքիայում կիրառված ջարդերի քաղաքականությունը, Հայկական հարցի արծարծումները և հայերի ազգային-ազատագրական շարժումների հետ կապված ամենաբազմապիսի խնդիրները։ Ժամանակին լույս տեսան ռուս և եվրոպական լրագրողների, դիվանագետների ու գիտնականների, հաճախ նաև ականատեսների (Լ. Օշերովսկի, Ա. Ամֆիտեատրով, Ի. Գոլոբորոդկո, Է. Դիլոն, Մ. Ռոլեն-Ժեկմեն, Ռեկլյու Էլիզե, Գ. Բրանդես, Գ. Գիբբոնս, Ա. Բոյնբի, Ա. Մանդելշտամ, Յ. Լեփսիուս, Է. Տրիո, Ա. Վանդալ, Ջ. Բրայս, Լ. Դե Կոնտանսոն և ուրիշներ) փաստագրական ու վերլուծական ուսումնասիրությունները կապված այդ հարցերի հետ։ Նշանակալի երևույթ էր Մոսկվայում 1896 թ. լույս ընծայված «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году» ժողովածուն՝ նվիրված արևմտահայության ծանր կացությանը և Հայկական հարցին։ Արևմտահայության 1890-ական թվականների կոտորածներից տուժածներին օգնելու նպատակով 1897 թ. դարձյալ Մոսկվայում հրապարակվեց «Братская помощь пострадавшим в Турции армянам» ծավալուն ժողովածուն, որին մասնակցում էին բազմաթիվ մշակութային գործիչներ ու գիտնականներ։ Նրանց հոդվածներն ու ուսումնասիրությունները, որ նվիրված էին հայ ժողովրդի հին ու նոր պատմության և մշակույթի բազմազան հարցերին, մեծ դեր խաղացին հայ ժողովրդի մասին ճշմարտությունը տարածելու գործում։

1915 թ. Լեոն հրատարակեց «Հայոց հարցի վավերագրերը» ժողովածուն, որում տեղ գտած փաստաթղթերը ընդգրկում էին 1878—1914 թթ. ընկած ժամանակաշրջանը։ Հայ հեղինակները Հայկական հարցի արծարծմանը և արևմտահայության ծանր կացության լուսաբանմանը նվիրեցին մի շարք աշխատություններ և փաստագրություններ։ Դրանցից հիշատակելի են Մ. Մխիթարյանի «Նկարագրական ուղևորության ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի» երեք մասից կազմված աշխատությունը (1884—1885), Զեյթունցու (Մ. Սեմերճյան) «Զեյթունի անցյալն ու ներկայեն» երկհատորանոց գիրքը (1901—1903) և այլն։ Կ. Բումայանը 1905 թ. Լոնդոնում հրատարակեց

«Պատմություն Արևելյան խնդրո և առաջնորդ հայկական հարցի» երկհատորանոց ուսումնասիրությունը, որում շարադրված էր հայ ժողովրդի արտաքին հարաբերությունների պատմությունը օտար երկրների հետ՝ սկսած հին ժամանակներից մինչև XIX դարի վերջը։ Քննադատելով մեծ տերությունների շահադիտական քաղաքականությունը Հայկական հարցում, Թումանյանը, սակայն, չկարողացավ քափանցել այդ հարցի էության մեջ և միամտորեն հույսեր էր կապում Անգլիայի հետ։

Ա. Սարուխանի «Հայկական խնդիրը և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում (1860—1910)» աշխատությունը (հ. 1, 1912), որը հեղինակի քրտնաջան աշխատանքի արդյունքն էր ու բնև հետու էր երևույթների գիտական վերլուծությունը կատարելու մակարդակից, արժեքավոր փաստական նյութ էր պարունակում արևմտահայերի կացության, հասարակական շարժումների ու Հայկական հարցի արծարծումների վերաբերյալ։ Նույնպես արևմտահայության վիճակին էր նվիրված Ա.-Դոյի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան) «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» աշխատությունը (1912)։ «Մեծ դեպքերը Վասպուրականում» (1917) գործում Ա.-Դոն ականատեսի հավաստիությամբ նկարագրեց Վանում 1914—15 ԲԲ. կատարված դեպքերը։ Մի շարք այլ աշխատություններում նա անդրադարձել է հայ և ռուս ազատագրական շարժման, Մ. Նալբանդյանի և Խ. Աբովյանի կյանքի հետ կապված հարցերին։ Կղերապահպանողական դիրքերից XVIII—XX դարերի հայ ազատագրական շարժումների պատմությանն է անդրադարձել Եղիշե Դեղամյանը, իր «Հայերի ազատագրական շարժումները» ծավալուն գործում (1915—1916)։

Հայկական հարցի և ազգային-ազատագրական շարժումների առաջադրած խնդիրներին ուրույն արձագանք տվեց հայ պատմավիպասանության ականավոր ներկայացուցիչ Րաֆֆին։ Իր փայլուն պատմական վեպերով, բազմաբիվ պատմագիտական հոդվածներով ու «Խամսայի մելիքությունները (1600—1827)» ուսումնասիրությամբ նա հանդես եկավ որպես հայոց պատմությանը քաջ գիտակ։ Ժողովելով ժամանակի հայ պատմագիտությունից, որը նա էր մնում դարաշրջանի պահանջներից և որը սահմանափակվել է միայն քաղվածների ու իշխանավորների գործերի նկարագրությամբ, Րաֆֆին պահանջում էր պատկերել ամբոխի կյանքը, նիստ ու կացը, արտադրությունը։ Հորացիոս ուսումնասիրելով այդ ամենը, Րաֆֆին իր վեպերի մեջ քննախույզ գիտնականին միահյուսեց գեղարվեստագետին և ի հակակշիռ պատմական Հայաստանի վերացական հասկացության, կերտեց իրական հայրենիքի կերպարը՝ մարդկային ոսկի հարաբերություններով, կոնկրետ իրադրության մեջ, բացահայտեց բուն ժողովրդի խոհերն ու ապրումները։ Առաջադրելով արևմտահայության ազգային ազատագրության հիմնավոր կերպով նախապատրաստվելու գաղափարը, Րաֆֆին գտավ, որ այդ ազատագրությունը կարելի է ձեռք բերել միայն սրով, արյուն գնով։ Նա այդ գործում մեծ տեղ էր հատկացնում նաև ռուսական զենքի օգնությանը և Ռուսաստանը համարում էր հարստահարված ազգերի պաշտպան։ Րաֆֆու առաջադիմական, դեմոկրատական հարցադրումներն ու լուծումները հայոց պատմության բազմազան խնդիրների վերաբերյալ մեծ ազդեցություն ունեցան հասարակական մտքի և մասնավորապես պատմագիտության զարգացման վրա։

Հայոց պատմությունը վերաիմաստավորելու, իրական հայրենիքի պատ-

կերն ստեղծելու և ազգային ազատագրությանը խթանելու տեսակետից կարևոր դեր խաղացին նաև պատմավիպասաններ Մերենցն ու Մուրացանը:

Պատմությունը որպես զարգացման պրոցես էր դիտում նաև արևմտահայ ականավոր հասարակական գործիչ ու գիտնական Մատթեոս Մամուրյանը: Նա հեղինակ էր հին և միջին դարերի ընդհանուր և հայ ժողովրդի պատմության մի շարք դասագրքերի, պատմության հարցերին նվիրված հոդվածների: Մամուրյանը դեմոկրատական դիրքերից քննադատել է ֆեոդալական հասարակարգը, միապետական կարգերը, բուրժուական հարաբերությունները: Նա առաջիններից էր հայ իրականության մեջ, որ ողջունեց Փարիզի կոմունան:

Այս ամենով հանդերձ, նախասովետական հայ պատմագրությունն ի վիճակի չեղավ մինչև վերջ լուծելու պատմության առաջադրած կարևորագույն հարցերը. դրա համար նրան հարկավոր էր ունենալ «ելույզ պատմական աշխարհայացք, պատմական տեսակետ» (Ստ. Շահումյան), որը տվեց մարքսիստական ուսմունքը, պատմական մատերիալիզմը: Հայ սոցիալ-դեմոկրատ Կևորգ Վարաժյանը (Ս. Տ. Արկոմեդ, 1861—1936) առաջինն էր հայ իրականության մեջ, որ փորձեց մարքսիստական դիրքերից լուսաբանել Անդրկովկասի բանվորական շարժման ու սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների պատմությունը: 1910 թ. Ժնևում Գ. վ. Պլեխանովի դրվատական առաջաբանով լույս տեսավ նրա «Рабочее движение и социал-демократия на Кавказе (с 80-х гг. по 1903 г.)» աշխատությունը: Գրքում Վարաժյանն անդրադառնում էր բանվոր դասակարգի դրության, բանվորական շարժման ծագման և առաջին քայլերի, սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների գործունեության, գյուղացիական շարժումների հարցերին: Թեև այս աշխատությունը կրում էր մենշևիկյան գաղափարների որոշ ազդեցությունը, այն որոշակի դեր խաղաց Կովկասում պատմական գիտության հետագա զարգացման ուղղությամբ:

Հայ մարքսիստ-լենինյաններն էին (Ստ. Շահումյան, Ս. Սպանդարյան, Բ. Կնունյանց, Ալ. Մյասնիկյան, Ս. Կասյան, Ա. Մելիքյան և ուրիշներ), որ հայ իրականության մեջ դրեցին մարքսիստական գիտական պատմագրության հիմքերը, իրենց փայլուն ելույթներով ու հոդվածներով ցույց տվեցին այդ գիտության զարգացման գլխավոր ուղղությունը, հիմնավորեցին պատմական մատերիալիզմի դրույթները հայոց պատմության նկատմամբ կիրառելու սկզբունքները: Զինված դասակարգային պայքարի մասին մարքսիստական ուսմունքով և պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարներով, նրանք անդուլ պայքար ծավալեցին բուրժուական պատմագրության, նացիոնալիստական գաղափարախոսության դեմ, գիտական վերլուծության ենթարկեցին Անդրկովկասի տնտեսական ու քաղաքական կյանքի երևույթները, պաշտպանեցին ու զարգացրին ազգային հարցի լուծման լենինյան դրույթները, նշեցին արտադրողական ուժերի որոշիչ դերը հասարակության առաջընթացի գործում, հասարակական-տնտեսական ֆորմացիաների փոփոխության բուն պատճառները, հիմնավորեցին բուրժուական կարգերը սոցիալիստականով փոխարինելու պատմական անհրաժեշտությունը: Այս ամենով նրանք նոր դարագլուխ բացեցին հայ պատմագիտության մեջ:

Հատկապես մեծ է ականավոր լենինյան Ստեփան Շահումյանի ներդրումը հայ մարքսիստական պատմագիտության սկզբնավորման գործում: Լինելով մարքսիզմի գաղափարների փայլուն պրոպագանդիստ, Շահումյանը մի

շարք աշխատություններում անդրադարձավ նաև պատմության հարցերին։ «Էվոլյուցիոնիզմն ու ռևոլյուցիոնիզմը հասարակական գիտության մեջ» (1905) աշխատությունում, հանդես գալով Բեռնշտեյնի ու Զոմբարտի ռևիզիոնիստական, հակամարքսիստական հայացքների դեմ, նա հիմնավորեց հասարակության էվոլյուցիոն և ռևոլյուցիոն զարգացման դիալեկտիկական կապը, ցույց տվեց արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների փոխներգործությունը։ Նա գրում էր. «Հեղափոխություններն այսպիսով ավարտում են հասարակության էվոլյուցիոն զարգացման որոշ ցիկլ և ճանապարհ են հարթում նրա հետագա՝ դարձյալ էվոլյուցիոն զարգացման համար»[1]։ Իր մեկ այլ աշխատությունում («Դասակարգերը ժամանակակից Եվրոպական հասարակության մեջ», 1905) Շահումյանն առաջին անգամ հայ իրականությունում մարքսիստական դիրքերից սպառիչ կերպով ցույց տվեց դասակարգերի ծագման, նրանց փոխադարձ ազդեցությունների և դասակարգային պայքարի էությունը։

Հատկապես մեծ է Ս. Շահումյանի ավանդը կովկասյան իրականության մեջ ազգային հարցի լենինյան դրույթների հիմնավորման ուղղությամբ։ «Ազգային հարցը և սոցիալ-դեմոկրատիան» (1906) և «Ազգային-կուլտուրական ավտոնոմիայի մասին» (1913, հրատ. 1914) աշխատություններում նա հանդես եկավ որպես ազգային հարցի փայլուն գաղափարախոս և ջախջախիչ հարված հասցրեց այդ հարցի հակամարքսիստական ենթագիտումներին, մերկացրեց ազգային միության տերիտորիալ սկզբունքը ազգային պատկանելության գիտակցությամբ փոխարինելու, բանվորներին ըստ ազգությունների սահմանազատելու Դ. Անանունի ազգայնական մտայնությունը։ Շահումյանը ցույց տվեց, որ «...ազգային կռիվը դասակարգային կռվի արտահայտություններից մեկն է, որ նա տնտեսական և քաղաքական բնույթ ունի թե՛ իր ծագումով և թե՛ իր նպատակներով»[2]։

Ս. Շահումյանի պատմագիտական հայացքներն առավել հանգամանորեն շարադրված են «Վ. Փափազյանը պատմագետի դերում» աշխատության մեջ, որը գրվել է 1912 թ. (առաջին անգամ հրատարակվել է 1941 թ.)։ Աշխատությունը գրելու առիթ է ծառայել հայ ժողովրդի պատմության վերաբերյալ մի քանի հանրամատչելի գրքույկների հրատարակումը, որոնց մեծ մասի հեղինակը հայ գրող Վրթ. Փափազյանն էր։ Այս գործում Շահումյանը առաջադրում էր մի շարք արմատական պահանջներ, որոնք սկզբունքային նշանակություն ունեին գիտական պատմագրության զարգացման համար։ Շահումյանը կրքով բողոքում էր հայոց պատմությունը իբրև բարեգործ ու ազգասեր և ազգուրաց ու դավաճան թագավորների ու իշխանների միջև տեղի ունեցող կռիվների պատմություն ներկայացնելու, այդ պատմությունը հերքանքի վերածելու դեմ։ Նա պահանջում էր ցույց տալ երևույթների ներքին պատճառական կապը, ժողովրդի կյանքի իսկական պայմանները։ «Պատմությունն այն ժամանակ դադարում է լինել հեքիաթ, հասարակ պատմվածք,— գրում էր Շահումյանը,— և դառնում է իսկական պատմություն, երբ նրա մեջ հայտնի անցքերի, դեպքերի, պատմական անձնավորությունների գործունեությունը ենթարկվում են լուրջ քննական լուսաբանության, երբ ցույց է տրվում

1 Ստ. Շահումյան, Երկ, հ. 1, էջ 127։

2 Ստ. Շահումյան, Երկ, հ. 2, Երևան, 1976, էջ 406։

անցքերի ու մարդկային գործողությունների պատճառական կապը և օրինաչափությունը»[3]: Այնուհետև նա շարունակում էր. «Ժողովուրդների կյանքը, նրանց պատմության ընթացքը պայմանավորողն ու որոշողը ոչ թե այդ արտաքին դեպքերն են, որքան էլ աղմկահույզ ու էֆեկտավոր լինեն նրանք, այլ ժողովրդական մասսաների առօրյա, ընթացիկ, «խաղաղ» տնտեսական կյանքը, նրանց արդյունաբերական պրոցեսը, նրանց ներքին դասակարգային հարաբերությունները»[4]: Շահումյանը պահանջում էր պատմաբաններից անցյալի իդեալականացման փոխարեն խորապես լուսաբանել դասակարգերի, պետության առաջացման ու զարգացման ընթացքը, հրաժարվել Հայաստանը «որպես մի ամբողջական պետական-հասարակական» մարմին ներկայացնելուց և տալ նրա առանձին ինքնուրույն մասերի ներքին դասակարգային կազմի ու դասակարգային կռիվների պատկերը:

Մարքսիստական մարտական բնույթ էին կրում նաև Սուրեն Սպանդարյանի ու Բոգդան Կնունյանցի պատմագիտական հայացքները: Նրանք անխնա քննադատում էին բուրժուական օբյեկտիվիզմը, նացիոնալիզմը, իրենց հոդվածներում վերլուծում էին գործազրկության ու գործադուլների պատճառները, տնտեսական կյանքի երևույթները, մերկացնում հեղափոխության գործում սահմանադրական իլյուզիաների վտանգավորությունը, ազգային նացիոնալիզմը, անդրադառնում բանվորական շարժման հրատապ հարցերին: Ս. Սպանդարյանը «Ուրվագրեր հայկական կյանքից» հոդվածում (1910), խոսելով հայ ժողովրդի կյանքի երևույթների գնահատման հարցերի մասին, պահանջ էր դնում «Հաշվի առնել նաև յուրաքանչյուր ազգության զարգացման պատմական առանձնահատկությունները», մասնավորապես հասարակական հոսանքների գնահատման ժամանակ: Նա գտնում էր, որ այդ հոսանքները սահմանող տերմինները գործածելիս պետք է պատմական մոտեցում հանդես բերել և զգուշանալ տարբեր ժողովուրդների մոտ միևնույն տերմինով հանդես եկող հոսանքները նույնացնելուց[5]: «19 փետրվարի—9 նոյեմբերի» հոդվածում (1911) Սպանդարյանը բացահայտում էր Ռուսաստանում ճորտատիրական իրավունքի վերացման բուն պատճառները և մերկացնում ստոլիպինյան ագրարային քաղաքականությունը, որպես գյուղացիներին հողազրկելու միջոց: Ալեքսանդր Մյասնիկյանը անդրադարձել է Մ. Նալբանդյանի գնահատմանը, ազգային հարցին, իսկ «Արդի տնտեսական կյանքը» (1912) ծավալուն հոդվածում տվել է Ռուսաստանի և Անդրկովկասի տնտեսական զարգացման հետաքրքիր վերլուծություն:

Հայ մարքսիստները, զինված ամենաառաջավոր գաղափարախոսությամբ, բազմիցս անդրադարձել են նաև հայ մշակույթի անցյալի ու ժամանակակից վիճակի հարցերին, տվել ուշագրավ գնահատականներ, մշտապես առաջնորդվելով տվյալ ժողովրդի մշակույթի մեջ երկու մշակույթների առկայության մասին Լենինյան դրույթներով:

2. ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

XIX դարի երկրորդ կեսին զգալի առաջընթաց է ապրում հայագիտությունը: Մի կողմից հայ ժողովրդի հասարակական-քաղաքական կյանքի ընդհանուր վերելքը, մյուս կողմից միջազգային բանասիրության ու պատմագի-

3 Նույն տեղում, էջ 273:
4 Նույն տեղում, էջ 274:
5 Տե՛ս Ս. Սպանդարյան, Երկեր, հ. 1, Երևան, 1959, էջ 233—234:

տության մեջ գիտական նոր դպրոցների և ուղղությունների հիմնադրումը լուրջ տեղաշարժեր են առաջ բերում հայագիտության տարբեր բնագավառներում։ Հայագիտական միտքը ավելի քան երբևէ կենտրոնանում է հայկական կրթամշակութային կարևոր օջախներում՝ Վիեննայում ու Վենետիկում, Լազարյան և Գևորգյան ճեմարաններում, մասամբ նաև Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում և կ. Պոլսի ազգային կեդրոնական վարժարանում։ Հայագիտական մտքի կազմակերպմանն ու համախմբմանը մեծապես նպաստում է էջմիածնում «Արարատ» (1868) և Վիեննայում «Հանդես ամսօրյա» (1886) ամսագրերի հիմնադրումը։ Միևնույն ժամանակ հայոց պատմությունն ու ազգային մշակույթը ավելի ու ավելի են իրենց վրա բևեռում օտար հայագետների ուշադրությունը, և հայագիտության առանձին ճյուղեր զարգացման նոր թափ ու որակ են ստանում ժամանակի եվրոպական ու ռուսական գիտական կենտրոններում։ Հայագիտությունը տակավ առ տակավ դուրս է գալիս իր ազգային պարփակվածությունից միջազգային ասպարեզ, որակափոխվում և համաքայլ ընթանում ժամանակի առաջավոր գիտության զարգացմանը։ Ժամանակի միջազգային գիտության քննական ոգին, մշակութային ժառանգության հետազոտման ու գնահատման պատմահամեմատական և կուլտուրպատմական մոտեցումը թափանցում է հայ բանասիրության տարբեր ոլորտները և գալիք տասնամյակներում դառնում հիմնական մեթոդ և ուղղություն։ Այդ տեղի է ունենում ոչ թե հանդարտ ու ուղղագիծ զարգացումով, այլ գիտական անհաշտ պայքարով, նորի ու հնի, տարբեր ուղղությունների ու մեթոդների սուր բախումներով։ Հայ բանասիրության մեջ հիմնադրվում կամ վերջնականորեն ձևավորվում են նոր գիտություններ, առանձին մասնաճյուղեր, գիտական տարբեր դպրոցներ ու ուղղություններ։ Բանասիրությունն ազատագրվում է միջնադարյան մեկնաբանություններից ու կղերական նեղ մտայնությունից և դրվում գիտական նոր ուղիների վրա։

Լեզվաբանություն։ Հայոց լեզվի ուսումնասիրության գործում խոշոր դեր են խաղում տակավին նախորդ շրջանում ընդհանուր լեզվաբանության մեջ կատարված պատմական հեղաբեկումները։ Ընդհանուր լեզվաբանության մեջ արմատավորված և արդեն XIX դարի կեսերին մեծ արդյունքների հասած լեզուների ուսումնասիրության համեմատական մեթոդը Հայնրիխ Պետերմանի, Յոհան Հայնրիխ Վինդիշմանի, Ֆրանց Բոպպի աշխատություններով հիմնավորապես ապացուցել էր հայոց լեզվի հնդեվրոպական բնույթը։ Մնում էր պարզել հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների նկատմամբ։ Այդ ուղղությամբ փորձեր էին կատարվել թե՛ հիշյալ լեզվաբանների և թե՛ նրանց մյուս ժամանակակիցներ Ռիխարդ Դոզեի, Ֆրիդրիխ Մյուլլերի և Պոլ դը Լագարդի կողմից։ Այդ խնդրի վերջնական լուծումը վիճակված էր գերմանացի նշանավոր արևելագետ ու հայագետ Հայնրիխ Հյուբշմանին[6] (1848—1908) և նրա դասանած Էրիտքերականների լեզվաբանական նոր դպրոցին։ Եթե անցյալում հայոց լեզուն հնդեվրոպաբանության մեջ հետազոտվում էր հիմնականում համեմատական մեթոդով, ապա Հյուբշմանը համեմատականին ավելացնում է նաև պատմական մեթոդը և հայերենը հետազոտում պատմահամեմատական մոտեցումով։ 1875-ին հրատարակած իր „Ueber die Stellung des Armenischen im Kreise der indogermanischen Sprachen“ (*«Հնդեվրոպական լեզուների մեջ

[6] Տե՛ս Էդ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հ. I, Երևան, 1958, էջ 191։

հայերենի տեղի մասին») հոդվածում, նա հանգում է այն հետևության, որ հայերենը իրանական և սլավո-լետտական լեզուների միջև մի անկախ ինքնուրույն ճյուղ է կազմում։ Հետագայում այդ տեսությունը նա ավելի է հիմնավորում ու հարստացնում նորանոր փաստերով ու դրույթներով, որոնց արդյունքներն ամփոփված են «Armenische Studien» («Հայկական ուսումնասիրություններ», 1883) գրքում։ «Armenische Grammatik», մեծարժույն երկհատոր աշխատությամբ (1895, 1897 թթ.) Հյուբշմանը քննում և ստուգաբանում է հայոց լեզվի պարսկերենից, արաբերենից, ասորերենից և հունարենից փոխառյալ բառերը, պատմականորեն պարբերացնելով այդ բառերի փոխառման առույգ ժամանակաշրջանները։ Այդ կերպ նա տվել է հայերենի մոտ երկու հազար բառի և երկու հարյուրից ավելի հատուկ անունների ստուգաբանությունը։

Հյուբշմանը հայերենի պատմական ուսումնասիրությունը դնում է գիտական նոր հիմքերի վրա, ճիշտ որոշում հայոց լեզվի բնույթը, սահմանում նրա հնչյունական օրենքները և բուն հայկականը փոխառյալից տարբերակելու որինաչափությունները։ Նա հայերենի իր նոր ուսմունքով դառնում է մի նոր դպրոցի հիմնադիր հայ լեզվաբանության մեջ։ Հայ լեզվաբանություն Հյուբշմանի աշխատությունների շնորհիվ թևակոխում է զարգացման իր նոր՝ բարձր փուլը։

Հայերենի ուսումնասիրության բնագավառում Հյուբշմանին հետևում են թե՛ եվրոպացի, թե՛ հայ լեզվաբանները։ Հայ լեզվաբաններից Հյուբշմանի ժամանակակիցն է Սերովբե Տերվիշյանը (1846—1892)։ Եվրոպական լեզվաբանության նոր հիմունքները կիրառելով հայոց լեզվի նկատմամբ, նա միաժամանակ դրանք մատչելի է դարձրել հայ հասարակայնությանը։ Պատմական կարևոր արժեք ունի նրա «Հնդեվրոպական նախալեզու» (1885) գիրքը, ուր ամփոփված են հնդեվրոպական լեզվաբանության տեսությունն ու պատմությունը։ Տերվիշյանը հիմնադիրն է «Լեզու» խորագրով առաջին հայ լեզվաբանական հանդեսի (1887), որը թեպետ ընդամենը մեկ տարվա կյանք է ունենում, բայց և կարևոր կուլտուր-պատմական երևույթ էր հայ լեզվաբանության բնագավառում։ Նա, իր լեզվաբանական հոդվածներում, եվրոպացի լեզվաբաններից շատ առաջ, տվել է հայերեն մի շարք բառերի ճիշտ ստուգաբանություններ։

Հյուբշմանի կողմնակիցներից ու հետևորդներից էր նորվեգացի նշանավոր լեզվաբան Սոֆուս Բուգեն (1833—1907), որի ծառայությունը հայ լեզվաբանությանը կայանում է հայերեն բազմաթիվ բառերի գիտական ստուգաբանության մեջ[1]։

XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին ընդհանուր լեզվաբանության մեջ երևան են գալիս նոր դպրոցներ ու ուղղություններ։ Դրանցից ամենանշանավորն էր շվեյցարացի լեզվաբան Ֆերդինանդ դը Սոսյուրի հիմնադրած սոցիոլոգիական դպրոցը, որի ամենամեծ ներկայացուցիչը դարձավ Սոսյուրի աշակերտ ու հետևորդ Անտուան Մեյեն (1866—1936)։ Նա 1890 թ. Վիեննայի Մխիթարյանների մոտ խորացնում է հայերենի իր ուսումը, աշակերտելով Հյուբշմանի Հակովբոս Տաշյանին։ 1891-ին գալիս է Հայաստան, էջմիածնում ուսումնասիրում հին ձեռագիր ավետարանների լեզվական հատկանիշները, ծանոթանում արևելահայերենի արտասանությանը։ Իր ուսուցչի՝ Սոսյուրի մահից

[1] „Beiträge zur etymologischen Erläuterung der armenischen Sprache", 1889.

հետո ստանձնում է Սորբոնի համալսարանի նրա զբաղեցրած ամբիոնը, դասավանդելով համեմատական քերականություն, հետագայում նաև հայերեն և արևելյան այլ լեզուներ։

Տակավին 1896-ին հրատարակած „Position dialectal de l'arménien" («Հայերենի բարբառային դիրքը») փորձածավալ, բայց արժեքավոր հետազոտության մեջ Մեյեն ավելի է խորացնում Հյուբշմանի տեսությունը և գտնում, որ հայերենը նման է հնդիրանական, լետտո-սլավոնական և հունարեն լեզուներին, բայց և դրանց չի միանում, այլ կազմում է առանձին ճյուղ։ Իր „Esguisse d'une grammaire comparée de lármenien Classigue" («Դասական հայերենի համեմատական քերականության ուրվագիծ», 1903) մնծարժեք աշխատության մեջ Մեյեն, հնդեվրոպական լեզուների համեմատությամբ, ուսումնասիրության է ենթարկում դասական գրաբարի քերականությունն ու քերականական ձևերի ծագումն ու զարգացումը, բացահայտում է հայերենի հնդեվրոպական լեզուների հետ ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները և գտնում, որ «Հայերենի հնչյունաբանական և ձևաբանական համակարգը խորապես տարբեր է հնդեվրոպականից»։

„Recherches sur la syntax comparée de l'armenien" («Հայերենի համեմատական շարահյուսության հետազոտություն», 1898—1911) աշխատությամբ, Մեյեն քննության ենթարկելով հայերենի քերականական ձևերի կիրառությունները ցեղակից լեզուների համեմատությամբ, բացահայտել է հայերենի շարահյուսության շատ առանձնահատկություններ։

Հայերենագիտության բնագավառում, Մեյեից հետո, նշանակալից ավանդ է ներդրել դանիացի պրոֆեսոր, հմուտ հնդեվրոպաբան Հոլգեր Պեդերսենը (1867—1953)։ 1904-ին հրատարակած „Zur armenische Sprachgeschichte" («Հայոց լեզվի պատմության վերաբերյալ») և „Armenisch und Nachbarsprachen" («Հայերենն ու դրացի լեզուները») աշխատությունների մեջ հանգամանորեն քննության առնելով հայերենի հնչյունական օրենքները ցեղակից լեզուների համեմատությամբ, Պեդերսենը գտնում է, որ հնդեվրոպական հնչյունական համակարգի պատմական զարգացումը «հայերենի մեջ ավելի արագությամբ ու ավելի շուտ է կատարվել, քան ուրիշ ցեղակից լեզուների մեջ»[8]։ Իր հաջորդ՝ 1905 թ. հրատարակած „Les pronoms démonstrativs de l' ancien arménien» («Հին հայերենի ցուցական դերանունները») ուսումնասիրության մեջ նա բացահայտում է հայերենի խիստ մերձավորությունը բալթիկ-սլավոնական լեզուների ցուցական դերանունների նկատմամբ։ Պեդերսենի հայագիտական բոլոր կարևոր աշխատությունները ժամանակին թարգմանվել են հայերեն և հրատարակվել Մխիթարյանների կողմից։

Հիշյալ ժամանակաշրջանում արևմտաեվրոպական լեզվաբաններից հայերենով, բացառապես հայերեն բառերի ու մասնիկների ստուգաբանություններով են զբաղվել էվալդ Լիդենը („Armenische Studien" 1906), Շեֆթելովիցը, Հերման Օսթհոֆը և ուրիշներ։ Նրանցից առանձնանում է Հյուբշմանի աշակերտ Յոզեֆ Կարստը, որի հայագիտական մեծարժեք աշխատությունը հանդիսացավ 1901 թ. հրատարակված „Historische Grammatik des Kilikisch—Armenischen"-ը («Կիլիկիայի հայերենի պատմական քերականություն»)։ Այդ աշխատության մեջ պատմական մեթոդով, մեծ համու-

8 Տե՛ս Եղ. Ադայան, նշված աշխ., էջ 354։

բյամբ ու մանրամասնորեն քննված են միջին հայերենի հնչյունաբանությունը, ձևաբանությունը, մասամբ նաև շարահյուսությունը։ Հեղինակը հետագայում կազմում է նաև միջին հայերենի ամբողջական բառարանը, որը մինչև այժմ մնում է անտիպ։

Եթե արևմտաեվրոպական լեզվաբան-հայագետները գերազանցապես զբաղվում են ցեղակից լեզուների համեմատությամբ՝ հայոց լեզվի տարբեր կողմերի ուսումնասիրություններով, ապա հայ լեզվաբանները զբաղվում են հիմնականում հայերենի ներքին հատկանիշների, նրա քերականական համակարգի, լեզվական տարբեր վիճակների ու իրողությունների հետազոտությամբ։ XIX դարի երկրորդ կեսի հայ լեզվաբանական միտքը բնորոշվում է հատկապես աշխարհաբար հայերենի քերականագիտական համակարգի ու հիմունքների մշակմամբ և գործադրմամբ։ Երևույթն ինքը հետևանք էր դարակեսին արևելահայ ու արևմտահայ հատվածներում հասարակական տարբեր հոսանքների միջև գրեթե համաժամանակյա բորբոքված գրապայքարի։ Գրաբարի և աշխարհաբարի կողմնակիցների միջև մղվող այդ պայքարում առաջին լուրջ հաղթանակն արևմտահայ իրականության մեջ տանում է Մխիթարյան միաբան Արսեն Այտընյանը, 1866-ին հրատարակած «Քննական քերականություն արդի հայերեն լեզվի» դարակազմիկ աշխատությամբ։ Այդ աշխատության շնորհիվ «աշխարհաբարը բարձր ի գլուխ կելլե ճակատեն հաղթանակավ»[9]։

Արևելահայ իրականության մեջ Այտընյանին հաջորդում է ժամանակի նշանավոր հայկաբան Ստեփանոս Պալասանյանը (1832—1889)։ Շարունակելով 50—60-ական ԹԹ. Ստ. Նազարյանի և Մ. Նալբանդյանի ծավալած գրապայքարի մեծ գործը, Ստ. Պալասանյանը 1870 թ. հրատարակած «Ընդհանուր տեսություն արևելյան նոր գրավոր լեզվի հայոց» աշխատությամբ գիտականորեն մշակում է արևելահայ գրական աշխարհաբարի քերականական հիմունքները և ժամանակի լեզվաբանական ուսմունքների, հատկապես Ա. Այտընյանի «Քննական քերականության» փորձի հիման վրա ստեղծում արևելահայ գրական աշխարհաբարի քերականագիտական համակարգը։ Վերջինս առավել կուռ ու ամբողջական ներկայացված է Պալասանյանի «Քերականություն մայրենի լեզվի» գրքում (1874)։ Իր տեսական հայացքներով հետևելով ժամանակի ռուս նշանավոր լեզվաբան-բանասեր Ֆ. Բուսլաևի տրամաբանական քերականագիտության սկզբունքներին, Ստ. Պալասանյանը նշված աշխատություններով փաստորեն հիմք է դնում արևելյան աշխարհաբարի գիտական ուսումնասիրության։ Այտընյանի և Պալասանյանի քերականագիտական աշխատություններից հետո, աշխարհաբարի գիտությունն իրրև լեզվաբանական դիսցիպլին, բևեռոխում է իր զարգացման նոր շրջափուլը։

XX դարի սկզբին աշխարհաբարի խոշորագույն հետազոտողն է դառնում Այտընյանի ու Պալասանյանի աշակերտն ու հաջորդը՝ Մանուկ Աբեղյանը (1865—1944)։

1906 թ. հրատարակած «Աշխարհաբարի քերականությամբ» Աբեղյանը հակադրվելով հայ ավանդական քերականագիտության մեջ արմատացած հին սխեմաներին, զգալի նորամուծություններ է կատարում։

Աբեղյանի քերականագիտական նորամուծությունները, որոնք ինքնակի էին շոշափված «Աշխարհաբարի քերականության» մեջ, համակողմանի

---

[9] «Յուշարձան՝ առիթվ հարիւրամեայ յոբելյանի հրատարակման Մխիթարեան միաբանութեան ի Վիեննա. 1811—1911», էջ 33։

քննության են ենթարկվում նրա «Աշխարհաբարի հոլովները» (1908), «Հայոց կան հոլովը մեր աշխարհաբարում» (1909), «Բայի եղանակներն արևելյան աշխարհաբարում» (1912) ուսումնասիրություններում։

1912-ին հրատարակած «Աշխարհաբարի շարահյուսությունը» ուսումնասիրությամբ Աբեղյանը սիստեմավորում և մանրակրկիտ հետազոտում է արևմտահայ աշխարհաբարի շարահյուսական բոլոր իրողությունները, սկսած բայ-նախադասությունից մինչև պարբերությո և հայ քերականագիտության մեջ ստեղծում աշխարհաբարի շարահյուսության գիտական ուսմունքը։

1910-ական ԹԹ. Աբեղյանը «Աշխարհաբարի քերականության» հիման վրա գրում է աշխարհաբարի հնչյունաբանությանը և բառագիտությանը (իմաստաբանություն, բառակազմություն, ձևաբանություն) նվիրված գիտական ընդարձակ քերականությունը, որը «Աշխարհաբարի շարահյուսության» հետ մեկտեղ գալու էր ամբողջացնելու Աբեղյանի աշխարհաբար հայերենի գիտական ուսմունքը։ Այդ աշխատությունը հետագայում վերամշակվում է և 1931 թ. լույս տեսնում «Հայոց լեզվի տեսություն» խորագրով։

Աշխարհաբար հայերենին նվիրված իր այս աշխատություններով Աբեղյանը վերակարգում է հայ քերականագիտության ավանդական համակարգը և ստեղծում հայերենի ներքին օրինաչափություններից բխող բուն հայերենի քերականագիտական մի կուռ ու միասնական համակարգ։ Նա առաջինն է գիտականորեն մշակում հայերենի հնչյունաբանությունը, բառագիտությունը (իմաստաբանությամբ և բառակազմությամբ), շարահյուսությունը և դնում տեսական-լեզվագիտական բարձր մակարդակի վրա։

Աբեղյանը զբաղվել է նաև գրաբարի ուսումնասիրությամբ։ 1907-ին հրատարակած «Գրաբարի համառոտ քերականությամբ» նա ստեղծում է գրաբարի ձևաբանության ու շարահյուսության մի կուռ համակարգ, որի տակ համակենտրոնացվել են ու խտացվել գրաբարի բոլոր լեզվական ձևերը։ Նա զբաղվել է հայոց լեզվի ուղղագրության բարեփոխման խնդիրներով։ Իր մի քանի ուսումնասիրություններում («Ուղղագրական նկատողություններ», «Գրաբարի երկբարբառներն», 1890, «Մեր ուղղագրության մասին», 1913), նկատի առնելով ժամանակակից գրական հայերենում իշխող ուղղագրական տարընթացությունները, նա առաջ է քաշում ուղղագրական միասնություն ստեղծելու և արմատական բարեփոխումներ կատարելու հարցը։

Աբեղյանը նաև խոշորագույն տերմինաշինարար էր և բառարանագիր։ Նա արդի հայերենում արմատավորված հազարավոր նոր բառերի ու տերմինների հեղինակ է։

Հայ լեզվաբանությունը, քննարկվող ժամանակաշրջանում, աշխարհաբար հայերենի գիտական ուսումնասիրությունից բացի, զբաղվում է նաև հայոց լեզվի տարբեր վիճակների հետազոտությամբ։ Եթե մեզ հետ հայկաբան-գրաբարագետ Ստեփանոս Մալխասյանը (1857—1947) գրաբարի ուսումնասիրությանը նվիրած իր աշխատություններով («Գրաբարի հոլովումը, խոնարհումը և նախդիրները», 1891, «Գրաբարի համաձայնությունը», 1892) քննում է գրաբարի ձևաբանությունն ու մանավանդ գիտական-դասական մակարդակով շարահյուսությունը, ապա հայ ականավոր լեզվաբան Հրաչյա Աճառյանի (1876—1953) հիշյալ շրջանի գիտական գործունեությունը հատկանշվում է գերազանցապես բարբառագիտական հետազոտություններով, որոնք դարագլուխ էին կազմելու հայ լեզվաբանության պատմության մեջ։

Մինչև Հր. Աճառյանի հանդես գալը, հայ բարբառագիտության մեջ իր նշանակալից ավանդն էր ներդրել հայտնի հայագետ-արևելագետ Քերովբե Պատկանյանը, մասնավորապես իր «Исследование о диалектах армянского языка» աշխատությամբ (1869)։ Նա հայերենի մի շարք բարբառների հակիրճ ուսումնասիրություններով, գրաբարի ու ժամանակակից բարբառների փոխհարաբերության գիտական հարցադրումով իրավամբ արժանացել էր բարբառագիտության «հայր» հորջորջմանը (Հ. Տաշյան)։ Աճառյանն ստեղծագործաբար յուրացնելով Ք. Պատկանյանի և նախորդ այլ բարբառագետների գիտական ձեռքբերումները և իր տարիների տքնաջան աշխատանքով կուտակելով բարբառագիտական հարուստ ու բազմազան նյութեր, ձեռնարկում է հայ բազմաթիվ բարբառների գիտական նոր մակարդակով հետազոտությանը։ Հայ նոր բարբառագիտության հիմնադիր երկն է դառնում Հր. Աճառյանի 1909 թ. ֆրանսերեն հրատարակած „Classification des dialectes arméniens" («Հայ բարբառների դասակարգումը») աշխատությունը, որը ներկայացված էր Սորբոնի համալսարան իբրև դոկտորական դիսերտացիա։ Վերջինս ընդարձակված ու վերամշակված լույս է տեսել 1911 թ. «Հայ բարբառագիտություն» խորագրով։ Այստեղ նա, առաջինը հայ լեզվաբանության պատմության մեջ, տալիս է հայ բարբառների գիտական դասակարգումը։

Իր կուտակած բարբառագիտական հարուստ նյութերի հիման վրա Հր. Աճառյանը 1913-ին հրատարակում է «Հայերեն գավառական բառարանը», որն ընդգրկում է հայոց լեզվի բարբառների երեսուն հազարից ավելի բառային ու դարձվածային միավոր։ Այն, Ս. Ամատունու «Հայոց բառ ու բանից» հետո (1912), երկրորդ լավագույն բարբառագիտական բառարանն է, որով կորստից ընդմիշտ փրկվել են հայ բարբառների հազարավոր բառեր ու դարձվածներ։

Այդպիսով, 1870—1917 թթ., շուրջ կեսդարյա ժամանակամիջոցում, հայոց լեզվի գիտական ուսումնասիրությունը թե՛ ընդհանուր և թե՛ հայ լեզվաբանության մեջ դրվում է մի նոր բարձր աստիճանի վրա։ Վերջնականապես ճշգրտվում է հայոց լեզվի դիրքը հնդեվրոպական լեզվաընտանիքում, հմուտ հնդեվրոպաբանների կողմից պատմահամեմատական հետազոտության են ենթարկվում հայերենի բառապաշարն ու քերականական կազմը, նրա տարբեր կողմերն ու հատկանիշները։ Մյուս կողմից՝ հայ լեզվաբանների ձեռքով գիտական լուրջ ուսումնասիրությունների են ենթարկվում ժամանակակից հայերենը, նրա տարբեր ու բազմազան բարբառները, միջին հայերենն ու գրաբարը, հայ լեզվաբանության մեջ հիմնադրվում են ու զարգանում լեզվաբանական նոր ճյուղեր ու մասնագիտություններ։

Մատենագիտություն և աղբյուրագիտություն։ *XIX* դարի 70-ական թվականներից սկսած, մեծ առաջադիմություն է ապրում տպագիր և ձեռագիր գրքերի ու գրվածքների նկարագրության գիտությունը՝ մատենագիտությունը, որն իբրև բանասիրության ինքնուրույն ճյուղ, իր վերջնական ձևավորումն ստանում է դարի վերջերին։ Այս շրջանում է սկսվում հայերեն գրքերի, գրվածքների, պարբերական մամուլի և ձեռագրերի դարաշրջաններ ընդգրկող համակարգված մատենագիտությունների կազմումն ու հրատարակումը։ 1883 թ. լույս է տեսնում Գարեգին Զարպհանալյանի «Հայկական մատենագիտությունը», որն ընդգրկում էր *XVI* դարի կեսերից մինչև 1883 թ. եղած հա-

յերեն հրատարակությունների ցուցակը։ Այն աշխույժ հետաքրքրություն է առաջացնում հայկական հին տպագրությունների նկատմամբ[10] և, անկախ իր մի շարք թերություններից, սկիզբ է դնում գիտական մատենագիտության։ Իր հաջորդ՝ «Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց» (1889) աշխատությամբ, Գ. Զարպհանալյանը ներկայացնում է սկզբից մինչև XIII դարի հայերեն թարգմանությունները, մի արժեքավոր գործ, որ մինչև այժմ այդ բնագավառում փոխարինող չի ունեցել։

Հայ մատենագիտության պատմության մեջ զարկազմիկ նշանակություն է ունենում Աբրեն Ղազիկյանի (1870—1932) «Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի» (1909) մեծածավալ աշխատությունը, որը հանգամանքների բերումով թեպետ մնում է անավարտ, բայց իր ընդգրկմամբ (1512 թ.—XX դար) ու գիտական արժանիքներով հայ տպագիր հրատարակությունների ցարդ չգերազանցված մատենագիտությունն է։

Նույն այս ժամանակներում գիտական մեծ հետաքրքրություն է առաջացնում նաև հայ տպագրության պատմության և պարբերական մամուլի համակարգված մատենագիտություն ստեղծելու ուղղությամբ։ 1895-ին լույս է տեսնում Գ. Զարբհանալյանի «Պատմություն հայկական տպագրության», Լեոյի «Հայկական տպագրություն» (հ. Ա-Բ, 1901—1902), Թեոդիկի «Տիպ ու տառ» (1912) և այլ աշխատություններ։ Հայ պարբերական մամուլի պատմության, հետևաբար և մատենագիտության ստեղծման առաջին լուրջ փորձը պատկանում է Գրիգորիս Գալեմքյարյանին (1862—1917), որի «Պատմություն հայ լրագրության» աշխատությունը (1893 և 1897) ընդգրկում է հայ մամուլն սկզբից (1794) մինչև XIX դարի վերջերը։ Գիտական որոշակի արժեք են ներկայացնում Գարեգին Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը» (1895), Մկրտիչ Պոտուրյանի «Հայ մամուլը տասնհինգ տարուն մեջ, 1894—1909» (1909) աշխատությունները։

1870-ական թվականներից աշխուժանում է հետաքրքրությունը նաև հայերեն ձեռագրերի հավաքածուների նկատմամբ։ Հանդես են գալիս տարբեր տեղերի ձեռագրերի նկարագրություններ և ձեռագրացուցակներ։ Հայագետների առջև ծառանում է հայերեն բոլոր ձեռագրերի բազմահատոր ցուցակը կազմելու խնդիրը։ Հայ ձեռագրագիտության հիմնադիր երկն է դառնում Հակոբոս Տաշյանի (1866—1933) 1895-ին հրատարակած «Ծուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա» մեծածավալ աշխատությունը։ Դա իր գիտական համակարգով և մանրակրկիտ ստուգությամբ մի բացառիկ երևույթ է հայ մատենագիտության պատմության մեջ, որին ապագայում հետևեցին բոլոր հայ ձեռագրագետները։ Նրանց մեջ հատկապես աչքի է ընկնում Բարսեղ Սարգիսյանի կազմած «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննայի» (I հատ., 1914), որը Տաշյանի դասական աշխատությունից հետո, լավագույն ձեռագրացուցակն է։

Մատենագիտության, մասնավորապես ձեռագրագիտության արդյունքների հիման վրա և դրանց զուգահեռ, մեծ զարգացում է ապրում ճենական աղբյուրագիտությունն ու բնագրագիտությունը։

---

10 Տե՛ս Հ. Աճառյան, Հայկական մատենագիտություն, Ա, Երևան, 1959, էջ XXIII։

Քննական աղբյուրագիտությունը զարգացման մեծ թափ ու ծավալ է ստանում 80—90-ական թվականներին, նախ եվրոպացի, ապա նրանց հետևությամբ նաև հայ գիտնականների կողմից, մասնավորապես Մովսես Խորենացու Հայոց պատմության, հետագայում նաև Ագաթանգեղոսի, Փավստոս Բուզանդի և այլ մատենագիրների ու մատենագրական հին հուշարձանների աղբյուրագիտական քննությունների առնչությամբ։

1870-ական թվականներից ի վեր հայ և օտար հայագետների կողմից կասկածի տակ են առնվում Խորենացու Հայոց պատմության աղբյուրների, մասնավորապես Մար-Աբասյան աղբյուրների ժամանակն ու արժանավստահությունը[11]։ Հայտնաբերվում են մատենագրական նոր աղբյուրներ, որոնց, կամ հայտնի աղբյուրների և Խորենացու երկի համեմատական քննությունների հիման վրա, Խորենացուն V դարից տեղաշարժելով, համարում են VI, VII, VIII և անգամ IX դարի հեղինակ։ Գրվում են բազմաթիվ նոր բանավիճային աշխատություններ՝ թեր և դեմ տեսակետներով, փաստերի նորոգ և ուշագրավ մեկնաբանություններով[12]։

Շուրջ երկու տասնամյակի ընթացքում, բազմաթիվ հայ և օտար բանասերների մտքերի աշխույժ բախումներով, Խորենացու Պատմության շուրջը ստեղծվում է քննական-աղբյուրագիտական գրականության վիթխարի ժառանգություն, իսկ Խորենացին ինքը դառնում է հայ բանասիրական-քննադատական մտքի զարգացման ամենազորեղ ազդակը։ Խորենացու Պատմության վիճահարույց աղբյուրների, հետևաբար և հեղինակի ապրած ժամանակի խնդիրը բանասիրական լուրջ վերաքննության է արժանանում անգլիացի հայագետ Ֆրեդերիկ Կոնիբերի 1901—1903 թթ. հրատարակած «Մ. Խորենացու ժամանակի մասին», «Մ. Խորենացու Պատմության ժամանակի մասին», «Մ. Խորենացու Պատմության աղբյուրների խնդիրը» հոդվածաշարում։ Ֆր. Կոնիբերը բանասիրական հիմնավոր ապացույցներով հերքում է Ա. Կարիերի և Գր. Խալաթյանի տեսակետները և Խորենացուն թողնում իր ապրած ու գործած բուն ժամանակաշրջանում՝ V դարում։

Բանասիրական միտքը իր քննադատական հայացքն է ուղղում նաև հայ հին ըրապատմական այլևայլ հուշարձանների վրա։ Աղբյուրագիտական-բանասիրական քննության են ենթարկվում Ագաթանգեղոսի, Կորյունի, Փավստոս Բուզանդի, Ղազար Փարպեցու, Եղիշեի, Դավիթ Անհաղթի, Եզնիկի, Հովհան Մանդակունու, Ջենոբ Գլակի և այլ մատենագիրների երկերը։

---

11 *Տե՛ս* К. Патканян, Ванские надписи, 1874—1881; Ալֆրեդ Ֆոն Գուտշմիդ, *Մովսես Խորենացու Հայոց պատմության արժանահավատության մասին, 1876*; М. Эмин, М. Хоренский и древний эпос армянский, 1881; Մ. Գարագաշյան, *Քննական պատմություն Հայոց, հ. I, 1980*; Ա. Կարիեր, *Մ. Խորենացին և նահապետների ծննդաբանությունը, 1891*։

12 *Տե՛ս* Ա. Կարիեր, *Մ. Խորենացու նոր աղբյուրը, 1892—1893*; Ստ. Մալխասյան, *Սեբեոսի պատմությունը և Մ. Խորենացի, 1899*; Բ. Սարգիսյան, *Տեսություն Սեբեստրոսի պատմության և Մ. Խորենացվո աղբերաց, 1893*; Պ. Տեքրեր, *Մար Աբաս Մծուրնացու մասյաց, 1893*; Н. Марр, О начальной истории Армении Анонима; его же, К критике Истории М. Хоренского, 1898; его же, Арабское извлечение из Сирийской хроники Марибаса, 1902, Гр. Халатянц, Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского, 1896; Գ. Խալաթյանց, *Մ. Խորենացու նորագույն աղբյուրների մասին, 1898*; Гр. Халатянц, Армянские Аршакиды в Истории Армении М. Хоренского, 1903; Գ. Տեր-Մկրտչյան, *Խորենացու պատմության ուսումնասիրությունը, 1896*; Մ. Աբեղյան, *Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ, 1899* և այլն։

Հայ դասական մատենագրության հուշարձաններից բացի, աղբյուրագիտական բանասիրական լուրջ քննությունների ու գիտական հրատարակությունների են արժանանում վաղ միջնադարում հայերեն թարգմանված միջազգային գրապատմական հուշարձանները։ Այդ բնագավառում գիտական բացառիկ արժեք են ներկայացնում Հակոբոս Տարչանի ուսումնասիրությունները, նվիրված հատկապես Կեղծ-Կալիսթինեսի Ալեքսանդր Մակեդոնացու վարքին (1892), «Վարդապետութիւն Առաքելոց» կոչված անվավերական կանոններին (1896), Խիկար իմաստունի խրատներին (1901) և այլն։

Հին ձեռագրերից հայտնաբերվում, հրատարակվում և ուսումնասիրվում են դավանաբանական պայքարի նշանավոր գործիչների վաղ միջնադարում հայերեն թարգմանված գործերը, որոնց մի մասի բնագրերը կորած լինելով, հայերեն թարգմանությունները ձեռք էին բերում կուլտուր-պատմական բացառիկ արժեք։ Նման բնագրերի հայտնաբերման և հրատարակման գործում խոշոր ավանդ են ներդնում Կարապետ Տեր-Մկրտչյանն ու Երվանդ Տեր-Մինասյանը։ Կ. Տեր-Մկրտչյանը հայերեն ձեռագրերից մեկում հայտնաբերում է II դարի նշանավոր հեղինակ Իրենեոսի գրվածքների հայերեն թարգմանությունները, որոնցից մեկը «Ցոյցք առաքելական քարոզութեան» կորած էր և միայն անունով էր հայտնի։ Վերջինս, Ե. Տեր-Մինասյանի աշխատակցությամբ, թարգմանում է գերմաներեն և թարգմանությունը հայերեն բնագրի հետ Ադոլֆ Հառնակի ծանոթագրություններով 1907 թ. հրատարակում Գերմանիայում („Des Heiligen Irenäus Schrift zum Erweise der apostolischen Ver-Kündigung")։ Այն հետագայում թարգմանվում է ռուսերեն և անգլերեն[13],

Նույն հեղինակները 1908 թ. հրատարակում են V դ. նշանավոր հեղինակ Տիմոթեոս Կուզի Քաղկեդոնի ժողովի սահմանումների դեմ գրած «Հակաճառությունը», որի բնագիրը ևս կորած էր։ Նույն թվականին Գալուստ Տեր-Մկրտչյանը տպագրում է «Տիմոթեոս Կուզի Հակաճառության հայ թարգմանության ժամանակը» հմտալից ուսումնասիրությունը, ուր ստույգ որոշում է այդ նշանավոր գրվածքի թարգմանության թվականը (480—484 թթ.), մերժելով այն VI դարում դնողների կարծիքները։ Նա միաժամանակ հավաստում է, որ հունարան դպրոցը սկզբնավորվել է V դ. երկրորդ կեսին, և այդ ժամանակ էլ կատարվել է Աստվածաշնչի երրորդ նորաբեր հայ թարգմանությունը։ Մեկ տարի անց ներսես Ակինյանը հրատարակում է «Տիմոթեոս Կուզ հայ մատենագրության մեջ» ուսումնասիրությունը, քննելով Տիմոթեոսի կենսագրությունը, Հակաճառության նյութը, թարգմանության ժամանակը, Հակաճառության ազդեցությունը հայ գրականության վրա և հարակից այլ խնդիրներ։

Նիկ. Մառը «Тексты и разыскания по армяно-грузинской филологии» մատենաշարի III պրակում (1901) հրատարակում է Իպոլիտի «Երգ-երգոցի մեկնության» վրացերեն բնագիրը, որը միջնադարում թարգմանված է եղել հայերենից, իսկ IV պրակում (1904 թ.)՝ Ֆիզիոլոգի VI—VII դդ. հունարենից հայերեն և VIII—IX դդ.՝ հայերենից վրացերեն կատարված թարգմանությունները, ռուսերեն թարգմանությամբ և տեքստաբանական-բանասիրական ուսումնասիրությամբ հանդերձ։

---

13 Մ. Աբեղյան, *Երկեր*, հ. է, 1975, էջ 413։

Մասը 1905 թ. լույս է ընծայում նաև Սինայի ձեռագրերում իր իսկ հայտնաբերած Ագաթանգեղոսի արաբական մի խմբագրություն («Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием») ռուսերեն թարգմանությամբ, բանասիրական-աղբյուրագիտական ուսումնասիրությամբ ու մանրակրկիտ ծանոթագրություններով։ Հակոբ Մանանդյանը 1903 թ. Մարբուրգում հրատարակում է Գրիգոր Նազիանզացու հինգ ճառերի Նոնոսի մեկնությունների հայերեն թարգմանությունների համեմատական բնագիրը՝ գերմաներեն առաջաբանով („Nonnos, Die Scholien zu fünf Reden der Gregor von Nazianz“)։

Բացի հետազոտություններից ու դրանց կից բնագրերից, 1870 թ. ի վեր, հատկապես Մխիթարյանների կողմից, հրատարակվում են միջնադարում տարբեր լեզուներից հայերեն թարգմանված բազմաթիվ մատենագրական հուշարձաններ, որոնք կուլտուր-պատմական կարևոր արժեք են ներկայացնում[14]։

Հայ բանասիրական միտքը հիշյալ ժամանակաշրջանում, ազգային մատենագրական աղբյուրների ուսումնասիրությունից բացի, մեծ նպաստ է բերում նաև միջազգային աղբյուրագիտությանը։ Հայ և այլազգի բանասերների անձնուրաց ջանքերով խիստ բարձրանում է հայկական և հայերեն լեզվով պահպանված օտար մատենագրական աղբյուրների պատմամշակութային նշանակությունը, և հայ աղբյուրագիտությունը դառնում է միջազգային բանասիրության կարևոր օղակներից մեկը։

Քննական աղբյուրագիտությանը զուգընթաց ծայր է առնում ու զարգանում նաև համեմատական տեքստաբանությունը։ 1870—1917 ԹԹ. ընթացքում տարբեր տեղերում վերահրատարակվում են հայ նշանավոր մատենագիրների երկերը։ Միջնադարյան ձեռագրերից հայտնաբերվում, հանվում և հրատարակվում են մատենագրական նորանոր հուշարձաններ, պատմական աղբյուրներ, գրական ստեղծագործություններ, կազմվում են բնագրական նոր տիպի աշխատություններ, հայ մատենագրական մի քանի նշանավոր հուշարձաններ թարգմանվում են եվրոպական տարբեր լեզուներով, իսկ եվրոպացի և ռուս հայագետների մի շարք ուսումնասիրություններ թարգմանվում են հայերեն։

1871 թ. Վաղարշապատում առաջին անգամ լույս է տեսնում Ուխտանես Եպիսկոպոսի «Պատմություն հայոցը», իսկ 1873 թ.՝ Սիմեոն Երևանցու «Ջամբռռը»։ 1874 թ. Վենետիկում երկու ստվար հատորով հրատարակվում է «Վարք և վկայաբանությիւնք սրբոց» ժողովածուն, քաղված 30 տարբեր ճառընտիրների համապատասխան նյութերից։ 1877 թ. Պետերբուրգում Քերովբե Պատկանյանը հրատարակում է Անանիա Շիրակացու «Մնացորդք բանից» և

---

14 Նման թարգմանություններից են, օրինակ, Միխայիլ Ասորու «Ժամանակագրությունը» (1871), «Գիրք վաստակոց» (1877), Եվսեբիոս Կեսարացու «Պատմութիւն եկեղեցւոյ» (1877), II դարի նշանավոր քրիստոնական գործիչ Արիստիդես Աթենացու երկը՝ լատիներեն կից թարգմանությամբ («Հետք Սրբոյն Արիստիդեայ իմաստասիրի Աթենացւոյ», 1878), Նեմեսիոս Եմեսացու «Յաղագս բնութեան» (1889), Փիլոն Երրայեցու ճառերը հունարեն բնագրերի համեմատությամբ (1892), «Գիրք հերձուածոցը» (1892), որ Գ. Տեր-Մկրտչյանը վերագրում է Եպիփան Կիպրացուն, Գեորգ Պիսիդեսի «Վեցօրեայք» պոեմը՝ հունարեն բնագրով և ծանոթություններով (1900), Ֆրանց Ֆինկի կազմած «Նեղոսի դպրապետի կարգագրությունը» (1902), հայերեն ձեռագրերի բաղդատությամբ և հունարեն բնագրով և ուրիշներ։

խորենացուն վերագրվող «Աշխարհացույցի» ռուսերեն թարգմանությունը՝ հայերեն բնագրով և ընդարձակ ծանոթագրություններով («Армянская география VII века»): Իսկ 1879-ին, նա Սեբեոսի Պատմության հետ մի գրքով տպագրում է Մխիթար Աննեցու Նորահայտ Պատմությունը, որ մինչ այդ կորած էր համարվում։ 1893—1917 թթ. ընթացքում Գյուտ ավագ քահանա Աղանյանցը Թիֆլիսում 13 մեծադիր հատորով հրատարակում է «Դիվան հայոց պատմության» մեծարժեք ժողովածուն, որն ընդգրկում էր հիմնականում XVIII—XIX դդ. արխիվային պատմական վավերագրեր։ Դա առաջին և ցարդ չգերազանցված պատմական վավերագրերի բազմահատոր հրատարակությունն էր, որ փաստագրական խոշոր նշանակություն ունեցավ հայոց նոր շրջանի պատմության գիտական ուսումնասիրության համար։

1896 թ. Ղևոնդ Ալիշանը «Կամենից» խորագրով հրատարակում է լեհահայ գաղութի տարեգրությունը, լեհահայերի մասին այլ աղբյուրներից քաղված լրացուցիչ նյութերով, որոնք աղբյուրագիտական կարևոր արժեք ունեն Լեհաստանի և Ռումինիայի հայկական գաղթավայրերի պատմության ուսումնասիրության համար։ Իսկ 1901 թ. նա տպագրում է «Հայապատում» մեծադիր ժողովածուն, ուր ընդգրկված են ձեռագիր ու տպագիր տարբեր աղբյուրներից վերցրած շուրջ 400 հոդված, որոնք Հայաստանի տարբեր ժամանակաշրջանների պատմության ու մշակույթի ուսումնասիրության համար ունեն կարևոր նշանակություն։

Համեմատական կամ բնական տեխնաբանության առաջին և լավագույն օրինակն է դառնում Վ. Բաստամյանի 1880 թ. էջմիածնում հրատարակած «Մխիթար Գոշի Դատաստանագիրք Հայոցը», որ կազմված էր Գոշի Դատաստանագրքի բազմաթիվ ձեռագրերի բաղդատությամբ և օժտված կազմողի իրավագիտական ու աղբյուրագիտական ծավալուն հետազոտությամբ։ Վ. Բաստամյանի այս հրատարակությունը մեծ ազդեցություն է գործում համեմատական բնագրագիտության հետագա զարգացման վրա։

1895 թ. Կ. Պոլսում լույս է տեսնում Աստվածաշնչի գիտաբաղդատական բնագիրը՝ եբրայերեն և հունարեն բնագրերի համեմատությամբ։ Նույն թվականին Երուսաղեմում հրատարակվում է Թադեոս վարդապետ Աստվածատուրյանի կազմած «Համաբարբառ Հին և Նոր կտակարանաց» մեծածավալ գործը, որը և ունի գիտատեղեկատվական բացառիկ արժեք։

Կրոնաեկեղեցական հուշարձանների քննական բնագրերին զուգորդում է աշխարհիկ բովանդակությամբ մատենագրական երկերի գիտական հրատարակությունը։ Նիկ. Մառը 1894—1899 թթ. երեք մեծադիր գրքով տպագրում է «Сборник притч Вардана» կապիտալ աշխատությունը՝ բաղկացած հայ միջնադարյան առակների քննական-բանասիրական հետազոտությունից, առակների ժողովածուների համեմատական բնագրերից և աղբյուրագիտական մանրամասն ծանոթագրություններից ու նկարագրություններից։

1900-ական թվականներից ի վեր սկսվում է միջնադարյան մատենապիրների մեծ ու փոքր երկերի և գրական այլ հուշարձանների քննական-համեմատական բնագրերի կազմումն ու հրատարակումը։ Այդ գործում մասնավորապես մեծ վաստակ ու նախաձեռնություն են ներդնում Գալուստ Տեր-Մկրտչյանն ու Ստեփանոս Մալխասյանը։ 1902 թ. Ստ. Մալխասյանի նախաձեռնությամբ և մի խումբ հայագետների ջանքերով էջմիածնում սկիզբ է դրվում «Պատմագիրք հայոց» մատենաշարի գիտական հրատարակությանը։

նախատեսվում է հրատարակել հայ պատմիչների ճշգրտված բաղդատական բնագրերը։ Այդ մեծ նախաձեռնությունը թեպետ մասամբ է իրագործվում, սակայն պատմական կարևոր դեր է խաղում հայ գիտական տեքստաբանության հետագա զարգացման գործում։

«Պատմագիրք Հայոց» մատենաշարով Թիֆլիսում լույս են տեսնում Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանի կազմած Ղազար Փարպեցու «Պատմութիւն Հայոց և Թուղթ առ Վահան Մամիկոնեան» գործերի գիտա-բաղդատական բնագրերը (1904), Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Կանայանի՝ Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց» երկի շուրջ չորս տասնյակի հասնող ձեռագրերի հիման վրա կազմած համեմատական բնագիրը (1909) և Մանուկ Աբեղյանի և Սեթ Հարությունյանի կազմած Մովսես Խորենացու Հայոց պատմության գիտական բնագիրը, 35-ից ավելի ձեռագրերի համեմատությամբ (1913)։ Խորենացիով դադարում է «Պատմագիրք Հայոց» մեծարժեք հրատարակության բազմախոստում կյանքը։ Մյուս կողմից շարունակվում է այլևայլ մատենագիրների ու մատենագրական հուշարձանների գիտա-բաղդատական բնագրերի հրատարակությունը[15]։



Գալուստ Տեր-Մկրտչյան

Այսպիսով, 1870—1917 թթ. ընթացքում, հայ ժողովրդի հասարակական առաջընթացի պահանջների համեմատ և միջազգային բանասիրության նոր մեթոդների ու ուղղությունների բարերար ազդեցությամբ, հայ բանասիրության մեջ վերջնականորեն ձևավորվում, հաստատվում և առանձնանում են գիտական նոր մասնաճյուղեր՝ մատենագիտություն, ձեռագրագիտություն, քննական աղբյուրագիտություն, համեմատական տեքստաբանություն, որոնք արդյունավորվում են մեծարժեք և մնա-

---

15 1903 թ. Հ. Մանանդյանի և Հր. Աճառյանի աշխատասիրությամբ Վաղարշապատում հրատարակվում են «Հայոց նոր վկաները» խորագրով ուշ միջնադարյան վկայաբանությունների գիտահամեմատական բնագրերը։ 1904 թ. Վենետիկում Բարսեղ Սարգիսյանը լույս է ընծայում VII դարում հեղինակված «Անանուն ժամանակագրության» բաղդատական բնագիրը, բանասիրական-աղբյուրագիտական քննություններով։ 1905 թ. Մխիթար վարդապետը և Սիրական Տիգրանյանը Վաղարշապատում տպագրում են Դվինի ժողովի կանոնների բաղդատական բնագիրը, բազմաթիվ ձեռագրերի համեմատությամբ։ 1910 թ. Կարապետ Կոստանյանը հրատարակում է Գրիգոր Մագիստրոսի քղթերի սմբադչական ժողովածուն, 1914 թ. Կ. Տեր-Մկրտչյանը՝ «Կնիք հաւատոյ» խորագրով դավանաբանական քղթերի մեծարժեք ժողովածուն՝ ձեռագրերի բաղդատությամբ և պատմաբանասիրական խորհրդատ հետազոտությամբ։ 1915 թ. Նիկողայոս Ադոնցը Պետրոգրադում լույս է ընծայում «Дионисий Фракийский и армянские толкователи» քննական-բնագրագիտական աշխատությունը, բաղդատական բնագրերով, ձեռագիր աղբյուրների նկարագրությամբ և վերականգնված բնագրերի բանասիրական քննություններով։

յուն աշխատություններով և իրենց հերթին նպաստում բանասիրության մյուս բնագավառների՝ լեզվաբանության, գրականագիտության և բանագիտության զարգացմանը։

Գրականագիտություն։ XIX դարի 70-ական թվականներից սկսած՝ հայ գրականագիտական միտքը, շարունակելով զարգացնել նախորդ շրջանի ավանդները, դարավերջին և մանավանդ XX դարի սկզբներին, վերջնականապես ձեռք է բերում իր հիմնական ուղղությունները։ Բանասիրական քննադատությունն այս շրջանում գալիս էր մեծապես նպաստելու գրականագիտական մտքի առաջընթացին, նախապատրաստելու այն կայուն հողը, որի վրա պետք է բարձրանար հին գրական երկերի գրականագիտական ուսումնասիրությունը։ Մյուս կողմից, քննական աղբյուրագիտությունը համընթաց, միջնադարյան բանաստեղծների տաղերի մամուլում ցած ու ցիր տպագրությունները փոխարինելու են գալիս ամբողջական ժողովածուների հրատարակություններ կամ առանձին հեղինակների ու հին գրական երևույթների մասին մենագրական ուսումնասիրություններ։ Գրականագիտական միտքը հին գրական հուշարձանների ու գործիչների ուսումնասիրման ասպարեզում սկսում է աստիճանաբար անջատվել բանասիրությունից և վերջնականապես ձևավորվել իբրև հայ հին գրականության պատմության հետազոտման ինքնուրույն բնագավառ։ 1873 թ. Վենետիկում լույս է տեսնում Ղևոնդ Ալիշանի «Շնորհալի և պարագա յուր» մենագրությունը, նվիրված Ներսես Շնորհալու կյանքի, գրական-հասարակական գործունեության փաստաթղթերի ուսումնասիրությանը։ Այն կարևոր երևույթ էր ժամանակի հայ գրականագիտության մեջ։

1878 թ. Վենետիկում հրատարակվում է Գար. Զարպհանալյանի «Պատմութիւն հայերէն գրոց» երկի երկրորդ հատորը՝ նվիրված XIV—XIX դարերի հայ գրականությանը։ Այն նշանակալից ազդեցություն է գործում հայ գրականության հետագա պատմագիտության վրա։

1890-ական թթ. սկսած վերելք է ապրում հայ միջնադարյան բանաստեղծական երկերի հրատարակությունն ու առանձին բանաստեղծների կյանքի ու գործի ուսումնասիրությունը։ Արևելահայ իրականության մեջ այդ գործի մեծագույն վաստակավորն է դառնում Կարապետ Կոստանյանը։ Նա էջմիածնի Գևորգյան և Մոսկվայի Լազարյան ճեմարաններում պաշտոնավարելիս, հայ հին լեզվի և գրականության դասավանդմանը զուգահեռ, միջնադարյան ձեռագրերից հանում, տպագիր հայտնի ու ձեռագիր տարբերակների բաղդատումով, տարբեր հրատարակություններով լույս է ընծայում բազմաթիվ բանաստեղծական արգասիքներ, համապատասխան ծանոթություններով ու հետազոտություններով։ 1892—1903 թթ. Կ. Կոստանյանը չորս պրակով տպագրում է «Նոր ժողովածու. միջնադարյան հայոց տաղեր և ոտանավորներ» խորագրով, տարբեր հարյուրամյակների հայտնի ու անհայտ հեղինակների բանաստեղծություններ։ Նա առանձին ժողովածուներով հրատարակում է նաև Հ. Թլկուրանցու, Գր. Աղթամարցու և Մկրտիչ Նաղաշի տաղերը, ուսումնասիրություններով հանդերձ։

Արևմտահայ իրականության մեջ հայ միջնադարյան բանաստեղծությունների հրատարակության և ուսումնասիրության բնագավառում խոշոր ավանդ են ներդնում Արշակ Չոպանյանը, Մկրտիչ Պոտուրյանը և Ներսես Ակինյանը։ Ա. Չոպանյանը XIX դարի վերջերից սկսած էջմիածնի, Վենետիկի, Վիեն-

նայի, Փարիզի մատենադարաններուն հայ հին ձեռագրերից պրպտում, հանում, բաղդատում և հրատարակում է միջնադարյան հայտնի ու անհայտ բազմաթիվ բանաստեղծների տաղեր ու ոտանավորներ, որոնցից շատերը մինչ այդ անհայտ էին հայ բանասիրությանը։ Նման գործերից են նրա կազմած «Նահապետ Քուչակի դիվանը» (1902) և «Հայ էջեր» (1912) մեծարժեք ժողովածուները։ 1910 թ. Ա. Ջոպանյանը Փարիզում լույս է ընծայում «Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը» աշխատությունը, տարբեր ձեռագրերից հանված ու բաղդատված բանաստեղծ Նաղաշ Հովնաթանի տաղերով, նկարիչ Հովնաթան Հովնաթանյանի նկարչական գործերի բազմաթիվ վերարտադրություններով, նրանց կյանքի ու վաստակի բովանդակալից բնութագրումներով։ Ջոպանյանը մեծ ծառայություններ է մատուցել ոչ միայն հայ բանասիրությանը, այլև հայ բանաստեղծական մտքի լավագույն արգասիքների թարգմանությանն ու պրոպագանդմանը։ Նա ֆրանսերեն է թարգմանել և հրատարակել Նարեկացու, Աբովյանի, Պեշիկթաշլյանի, Դուրյանի, Քուչակին վերագրվող հայրենների, ժողովրդական ու աշուղական բանաստեղծության ընտիր նմուշները[16]։

Մկրտիչ Պատուրյանը 1905 թ. ձեռագրերից հանում և տպագրում է XIV դարի խոշոր բանաստեղծ Կոստանդին Երզնկացու ստեղծագործությունների մի ստվար մասը, նրա կյանքի ու գրական ժառանգության համառոտ հետազոտությամբ, իսկ 1914-ին՝ «Առաքել Սյունեցի և իր քերթվածները», բանաստեղծի կենսագրությամբ և ստեղծագործությունների հրատարակությամբ։ Գրապատմական կարևոր արժեքով են հատկանշվում Ներսես Ակինյանի «Զաքարիա եպիսկոպոս Գնունյաց և յուր տաղերը» (1910) և «Հովնաթան Նաղաշ և Նաղաշ Հովնաթանյանք» (1911) աշխատությունները։

Եթե 1890—1900-ական թվականների հայոց հին գրականության պատմագիտությունը, անկախ նշված հետազոտություններից, բնորոշվում է հիմնականում միջնադարյան բանաստեղծական երկերի հայտնաբերմամբ և հրատարակմամբ, ապա 1910-ական թթ. այն հատկանշվում է հին գրական երևույթների ու դեմքերի գրապատմական համակարգմամբ, գրական դարաշրջանների պարբերացմամբ և մենագրական ուսումնասիրություններով։ Այս տասնամյակում հայ գրապատմական և գրականագիտական միտքն առհասարակ թևակոխում է զարգացման իր նոր շրջափուլը և արգասավորվում որակական նոր արդյունքներով։

1910 թ. Հարություն Մրմրմրյանը Կ. Պոլսում հրատարակում է «Պատմություն հայ գրականության» ձեռնարկը՝ բանասերների և ուսանողների համար։ Այս շրջանում գրված հայ հին գրականության լավագույն համակարգված պատմությունն է դառնում Աբրահամ Ձամինյանի աշխատությունը («Հայ հին գրականության պատմություն», 1914)։ Այն սկսվում է հայ հին բանահյուսությունից և ավարտվում XVII դարով, ընդգրկելով տարբեր հարյուրամյակների գրական ժառանգությունն ըստ բնույթի ու բովանդակության, յուրաքանչյուր հարյուրամյակի քաղաքական ու մշակութային կյանքի ընդհանուր բնութագրումներով։

Բայց հայ գրականության պատմագիտության նոր վերելքը՝ որակական

---

[16] „Poèmes arméniens anciens et modernes" (1902); „Chantes populaires arméniens" (1903); „Les Trouvères Arméniens" (1907).

իր նոր փոխակերպումներով, կապվում է Մանուկ Աբեղյանի անվան հետ։ Նրա հայ հին գրականության անդրանիկ ուսումնասիրությունը («Շարականների մասին») լույս է տեսնում 1912 թ., ուր հայ հոգևոր մշակույթի պատմության տեսադաշտի վրա, գրական-բանասիրական լայն ըմբռնումներով, ընդգրկվում են հայ հոգևոր քնարերգության ծագումն ու զարգացումը, բացահայտվում նրա գաղափարական ու գեղարվեստական հատկանիշները։

Իր հաջորդ՝ «Ս. Գրիգոր Նարեկացի» մենագրությամբ (1916) Աբեղյանը, հակառակ հին հոգևոր երգերի, Նարեկացու պատմական մեծ առաքելությունը տեսնում է իրական կյանքը, բնությունը, կնոջ անձն ու արտաքինը բանաստեղծության առարկա դարձնելու և անհատական անկեղծ ներշնչմամբ երգելու մեջ։ Դրանով Աբեղյանը, առաջինը մեզանում, Նարեկացուն դիտում է գրապատմական նոր տեսանկյունից, եվրոպական վերածննդից դեռևս շատ առաջ, իբրև վաղ վերածննդի ուղղությունն ու գաղափարները հայ բանաստեղծության մեջ արմատավորողի։

Հայ հին բանահյուսության ու գրականության իր ուսումնասիրությունների տեսական արդյունքները Աբեղյանն ամփոփում է ու համակարգում 1917-ին հրատարակած «Ընդհանուր տեսություն հայոց հին բանաստեղծության» մենագրական ուրվագծում։ Հակառակ գրականության նախորդ պատմաբանների, Աբեղյանը հին մատենագրությունից առանձնացնում է միայն գրական-գեղարվեստական երկերը և սահմանում դրանց զարգացման բնույթն ու օրինաչափությունները։ Ի տարբերություն նախորդների, նա գրական դարաշրջանները պարբերաբաժանում է ոչ թե պարզ ժամանակագրական սկզբունքով կամ ձևական-երկրորդական հատկանիշներով, այլ գրականության զարգացման ընթացքի որակական ներքին փոխակերպումներով և դրանք պայմանավորող պատմահասարակական միջավայրով ու գաղափարաբանական տեղաշարժերով։ Աբեղյանն իր գրապատմական հետազոտություններով տեսական մի նոր աստիճանի է բարձրացնում հայ հին գրականության պատմագիտությունը, որն այնուհետև շարունակում է ընթանալ ու զարգանալ նրա բացած հունով։

Հայ նոր գրականության բուռն զարգացման հիմքի վրա, այս շրջանում, մի կողմից վերելք է ապրում տեսական-գրականագիտական միտքը՝ գեղագիտական իր բնդհանուր չափանիշներով, մյուս կողմից՝ գրական կենդանի պրոցեսն ուսումնասիրող գրաքննադատությունն ու գրականության պատմագիտությունը՝ առանձին հեղինակների նվիրված մենագրություններով և նոր գրականության համակարգված պատմություններով։ Հայ գրականության վերելքը 1890—1900-ական թվականներին առաջ է բերում գրաքննադատության խիստ աշխուժացում։ Մամուլում հանդես են գալիս քննադատների նոր անուններ (Ս. Աբեղյան, Լեո, Լ. Մարգսյան, Մ. Բերբերյան, Ա. Չոպանյան), որոնք մեծապես նպաստում և ուղղություն են տալիս գրականության առաջընթացին։ Քննադատական հոդվածներում ու գրախոսականներում արծարծված տեսական հարցադրումները, որոշ դեպքերում, անգամ իրենց ձևակերպված հիմնավորումն են ստանում առանձին աշխատությունների տեսքով։ 1894 թ. Թիֆլիսում լույս է տեսնում Հակոբ Ճաղարեցյանի «Բանահյուսության տեսություն» ձեռնարկը, նվիրված գրականության տեսության հիմնական խնդիրներին։ 1895—1898 թթ. «Նոր դարի» էջերում լույս է տեսնում Մ. Աբեղյանի «Գրական դպրոցներ» աշխատությունը, շարադրված ժամանակի ֆրան-

սիական գրականության ամենաակնառու տեսաբանների ու պատմաբանների աշխատությունների հիման վրա։ Եթե Հ. Ճաղարբեգյանի գիրքը իր մանկավարժական-կրթական նպատակներով գալիս էր նպաստելու արևելահայոց մեջ գրականության տեսական սկզբունքների տարածմանն ու դպրոցներում դրանց ուսուցմանը, ապա Աբեղյանի աշխատությունը, մասներիալիստական կուռ պատմահայեցությամբ, ընթերցող լայն խավերին ծանոթացնում էր գրական դպրոցների ծագման ու հերթագայության պատմությանը, նրանց սկզբունքային տարբերություններին, տեսական հիմնադրույթներին, մյուս կողմից՝ հայ գրականության երևույթները քննում և արժեքավորում էր գրականագիտական ընդհանուր օրինաչափություններով։

1900-ական թթ. հենց սկզբներից, տարբեր հեղինակների կողմից գրվում և հրատարակվում են գրական ու հասարակական տարբեր գործիչների նվիրված մենագրական ուսումնասիրություններ, կենսագրություններ, գրական դիմապատկերներ, որոնք գալիս են մեծապես նպաստելու հայ նոր գրապատմական մտքի զարգացմանը։ Այս բնագավառում խոշոր ավանդ են ներդնում մասնավորապես Ա. Ջոպանյանը, Սիմեոն Երևանցին և Երվանդ Շահազիզը։ Սկսած XIX դարի վերջերից, Ա. Ջոպանյանը պարբերական մամուլում տպագրում է նոր ժամանակների հայ նշանավոր գրական, գիտական-հասարակական գործիչներին նվիրված դիմապատկերներ։ Գրապատմական առանձնակի արժեք ունի նրա «Մկրտիչ Պեշիկթաշլյանի կյանքն ու գործը» մենագրությունը (1907)։

Երվանդ Շահազիզը 1897 թ. հրատարակում է Միքայել Նալբանդյանի կենսագրությունը՝ պատմական հարուստ վավերագրերով («Միքայել Ղազարյան Նալբանդյանց»)։ Նույն հեղինակը 1903 թ. տպագրում է «Խորեն արքեպիսկոպոս Գալֆայանը և Նալբանդյանի Աղցմիքը» աշխատությունը։

1913—1914 թթ. Վենետիկում Սիմեոն Երևանցյանը յոթ հատորով լույս է ընծայում «Ազգային դեմքեր. գրագետ հայեր» խորագրով աշխատություններ, բաղկացած հայ միջնադարյան բանաստեղծների ու աշուղների, բայց հիմնականում XIX—XX դդ. արևելահայ ու արևմտահայ գրողների գրական դիմապատկերներից։ Այն արժեքավոր նյութ էր ընձեռում հայ գրականության պատմագիտությանը։

Այս շրջանում միմյանց են հաջորդում նրիտասարդ գրականագետ Արսեն Տերտերյանի նոր ու թարմ հարցադրումներով գրաքննադատական հետազոտությունները, նվիրված հիմնականում ժամանակի խոշորագույն գրողներին ու բանաստեղծներին՝ Վահան Տերյանին, Հովհ. Թումանյանին, Շիրվանզադեին, Հովհ. Հովհաննիսյանին, Լ. Շանթին, Մուրացանին, Նար-Դոսին։ Այդ ուսումնասիրություններով Ա. Տերտերյանը շոշափում է ժամանակի հայ գրականության գրեթե բոլոր բնագավառները, տալիս գրական կերպարների տիպաբանական և բնարուկան հերոսների հոգեբանական վերլուծության ուսանելի օրինակներ, գեղարվեստական երկերը քննում և գնահատում զուտ գեղագիտական չափանիշներով, ի հակակշիռ ժամանակի հրապարակախոսական քննադատական մոտեցումներին։ Ա. Տերտերյանի շնորհիվ հայ գրաքննադատական միտքը զգալապես թարմանում է գեղագիտական նոր շնչով և առավել մասնագիտանում։

Հայ նոր գրական դեմքերին նվիրված մենագրական ուսումնասիրություններին զուգահեռ և դրանց հիմքի վրա՝ 1900-ական թվականների սկզբ-

Ներին ձևավորվում է նաև հայ նոր գրականության պատմագրությունը։ Առաջին օրինակը տալիս է Լեոն իր «Ռուսահայ գրականությունը» աշխատությամբ (1904)։ Հաջորդ փորձը պատկանում է Հրաչյա Աճառյանին, որը 1906—1912 թթ. երեք պրակով հրատարակում է «Պատմություն հայոց նոր գրականության» աշխատությունը։ Հայ նոր գրականության գիտական պատմության ստեղծման գործում մեծ աշխատանք է կատարում Մանուկ Աբեղյանը։ 1908—1909 թթ. «Արարատում» տպագրած «Ուրվագծեր XIX դարու հայոց գրականության պատմությունից» աշխատությամբ, նա առաջադրում է հայ նոր գրականության սկզբնավորման ժամանակի խնդիրները և քննում XIX դարի առաջին երեսնամյակի գրական դեմքերն ու երևույթները։

Արևելահայ գրականության համակարգված պատմության շարադրման փորձերից է Լեոն Մանվելյանի 1909—1910 թթ. չորս պրակով հրատարակած «Ռուսահայ գրականության պատմությունը», որն ընդգրկում էր XIX դարի գրականությունը, սկսած Հար. Ալամդարյանից մինչև Ավ. Խահակյան։

1910 թ. լույս է տեսնում Վրթանես Փափազյանի «Պատմություն հայոց գրականության» ծավալուն աշխատությունը, որի մեջ ամփոփվում են նախնական բանահյուսությունը, միջին դարերի, նոր (XVII—XIX դդ.) և նորագույն շրջանի արևելահայ և արևմտահայ գրականություններ։ Փափազյանի երկը հայ գրականության ամբողջական պատմության առաջին շարադրանքն էր, ժամանակագրական պարզ շրջաբաժանման և որոշակի համակարգման ենթարկված։

Հայ նոր գրականության, գիտության ու մշակույթի պատմության փորձերի շարքը պետք է դասել նաև Մխիթարյան միաբաններ Բ. Սարգիսյանի «Երկհարյուրամյա գրականական գործունեություն և նշանավոր գործիչներ Վենետիկ Մխիթարյան միաբանության» մենագրությունը (1905) և Ն. Ակինյանի «Ակնարկ մը Վիեննական Մխիթարյան միաբանության հարյուրամյա գործունեության վրա» ուսումնասիրությունը (1911)։

1916 թ. Մոսկվայում, Վալերի Բրյուսովի խմբագրությամբ լույս է տեսնում «Поэзия Армении» մեծարժեք ժողովածուն, որի ներածական ծավալուն ուսումնասիրության մեջ, Բրյուսովը, գրապատմական մի շարք երևույթների նոր բացահայտումներով ու քարմ դնահատականներով, ուրվագծում է հայ գրականության զարգացման բազմադարյան ընթացքը, իր սկզբնավորումից առ ի XX դար։

Գրականության տեսության ու պատմության ուսումնասիրությանը զուգահեռ, այս շրջանում հայ բանասերները զբաղվում են նաև հայ բանաստեղծության տաղաչափական ձևերի հետազոտությամբ։ Եթե մինչև 1870-ական թթ. հայ բանասիրության մեջ տաղաչափությունը ենթակա էր քերականագիտությանը, և տաղաչափական հետազոտությունները գերազանցապես կատարվում էին լեզվի քերականության առնչությամբ, ապա 70-ական թթ. սկսած, տաղաչափությունն աստիճանաբար անկախանում է քերականությունից և դառնում ինքնուրույն առարկա։ Առաջին օրինակն այս տեսակետից դառնում է Էդուարդ Հյուրմյուզյանի «Հայկական տաղաչափություն» հոդվածը (1873), որի մեջ ընդգծվում էր հատկապես շեշտի կարևոր դերը հայկական ոտանավորում։ Հայ տաղաչափության մասին առաջին մենագրական ուսումնասիրությունն է դառնում Ավետիք Բահաթրյանի «Հին հայոց տաղաչափական արվեստը» աշխատությունը (1891)։ 90-ական թվականներին և

հետո երևան են գալիս նաև տաղաչափության ուսումնական ձեռնարկներ, որ փորձ է արվում ժամանակի եվրոպական տաղաչափագիտության սկզբունքներով համակարգել հայ տաղաչափական հասկացություններր։ Հայ տաղաչափագիտության մեջ շատ կարևոր նշանակություն են ունենում Մ. Աբեղյանի հետազոտությունները, մասնավորապես «Հայերեն տաղաչափության մասին» ուսումնասիրությունը (1916), որով ապացուցում է հայ տաղաչափության շեշտական բնույթը և նրա միջին դիրքը ռուսական ու ֆրանսիական ուսանավորների նկատմամբ։ Դա նոր խոսք էր հայ բանասիրության բնագավառում, որը համակողմանի ընդհանրացվեց ու խորացվեց նրա «Հայոց լեզվի տաղաչափություն» հետազոտության մեջ (1933)։

Այսպիսով, XIX դ. վերջին քառորդից սկսած՝ հայ գրականագիտությունը նոր հայագիտության, գրականության և ընդհանրապես հայ մշակույթի մեծ վերելքին համընթաց, վերջնականապես ինքնուրույնանում է, դառնում հայ բանասիրության մեջ մի անկախ բնագավառ, իր նոր ու տարբեր ձյուղերով՝ գրաքննադատություն, նոր գրականության պատմագիտություն, գրականության տեսություն և տաղաչափագիտություն։

Բանագիտություն։ XIX դարի 70-ական թվականներից սկսած վերջնականապես ձևավորվում և բուռն զարգացում է ապրում հայ ժողովրդագիտությունն ընդհանրապես, մասնավորապես բանագիտությունը՝ ժողովրդական բանահյուսության կարդավորված հավաքումը, հրատարակումն ու ուսումնասիրությունը։ Թեպետ հայ բանահյուսական հուշարձանների գրառումն ու հետազոտությունը սկսվել էր նախընթաց տասնամյակներին, սակայն բանահավաքչությունը կրում էր պատահական ու թռուցիկ բնույթ, իսկ բանագիտությունը զբաղված էր սոսկ վաղ միջնադարյան մատենագիրների երկերում պահպանված բանահյուսական հին նմուշների բանասիրական քննություններով։

Հայ բանահավաքչության սկզբնավորման ու զարգացման վրա նշանակալից ազդեցություն է գործում XIX դարի առաջին կեսերին համեմատական լեզվաբանության հիմքի վրա ձևավորված համեմատական առասպելաբանությունը՝ իր ռոմանտիկական մեկնաբանություններով, որի հիմնադիրն ու կարկառուն ներկայացուցիչներն են դառնում Գերմանիայում Յակոբ և Վիլհելմ Գրիմ եղբայրները։ Գրիմ եղբայրները մեծ զարկ են տալիս ժողովրդագիտության զարգացմանը, որը դարակեսին փոխանցվում է մյուս ժողովուրդներին, այդ թվում նաև հայերին։

Հայ իրականության մեջ ռոմանտիկական այդ ուղղության խոշոր ներկայացուցիչ է դառնում Գարեգին վարդապետ Սրվանձտյանցը։ 1873 թ. Մշո Առնիստ գյուղից նա առաջին անգամ հայտնաբերում և գրի է առնում «Մասնա ծուռը» ժողովրդական վեպի մի պատում, որը 1874 թ. Կ. Պոլսում, բանահյուսական-ազգագրական այլ նմուշների հետ հրատարակում է մի գրքով՝ «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» խորագրով։ Դիրքը, մանավանդ վեպի նորագյուտ պատումը մեծ խանդավառությամբ է ընդունվում արևմտահայ և արևելահայ մտավորական շրջաններում։ Այդ, ինչպես նաև Կ. Սրվանձտյանցի հետագա տարիներին հրատարակած ժողովածուները մեծ զարկ են տալիս ժողովրդագիտական նյութերի գրառմանն ու հրատարակմանը։ Սրվանձտյանցը դառնում է հայ բանահավաքչության ռահվիրան՝ ուղի հարթող առաջամարտիկը։ Նրա հետևությամբ XIX դարի վերջին բանահյա-

կում, հայ բանագիտության մեջ հանդես է գալիս բանահավաքների մի ամբողջ սերունդ, որի անդուլ ջանքերով գրառվում և տպագրվում է ժողովրդական կենդանի բանահյուսության մի պատկառելի ժառանգություն։

Գ. Սրվանձտյանցից հետո, ժողովրդական նյութերի գրառման և հրատարակման իր ծավալուն գործունեությամբ, աչքի է ընկնում Տիգրան Նավասարդյանը (1861—1927)։ 80-ական թթ. սկզբներից նա մեծ ջանասիրությամբ զբաղվում է բանահյուսական նյութերի հավաքումով, միաժամանակ կազմակերպում Հայաստանի տարբեր գավառներից, տարբեր բանահավաքների գրառած նյութերի հրատարակումը։ 1882—1903 թթ. ընթացքում Տ. Նավասարդյանը հրատարակում է «Հայ ժողովրդական հեքիաթների» տասը գիրք, որոնց մեջ, բացի հեքիաթներից, զետեղված էին նաև բանահյուսական և ազգագրական այլևայլ նյութեր։ 1883-ին տպագրում է իր իսկ գրառած բանահյուսական փոքր ժանրերի ժողովածուն, «Հայ ժողովրդական ավանդություններ» խորագրով։

1880—1900-ական թթ. հանդես են գալիս բանահավաքների նոր անուններ, բանահյուսական արժեքավոր ժողովածուներով, որոնցից հիշարժան են Հ. Ճանիկյանի «Հնություն Ակնա» (1882), Հ. Ալլահվերդյանի «Ուլնիա կամ Զեյթուն» (1884), Գևորգ Տեր-Աղեքսանդրյանի «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը» (1885), Գևորգ Շերենցի «Վանա սազ» (I, 1885, II, 1899), Գարեգին Հովսեփյանի «Փշրանքներ ժողովրդական բանահյուսությունից» (1892), Երվանդ Լալայանի «Ջավախքի բուրմունք» (1892), Գևորգ Տիգրանյանի «Առածք, ասացվածք և զրույցք հայոց Նոր Նախիջևանի» (1892), Գևորգ Բարխուդարյանցի «Բարոյական առածներ» (1898), Տիգրան Վարդանյանի «Ժողովրդական անգիր բանաստեղծություններ» (1900), Հ. Գավառացու «Երգեր, առակներ, հանելուկներ, թերահավատություններ խոտըրջըրո» (1903) և ուրիշներ։

Դարասկզբին ժողովրդագիտության զարգացմանը մեծ թափ ու ծավալ են հաղորդում Երվանդ Լալայանի հիմնադրած «Ազգագրական հանդես» և Գր. Խալաթյանի «Էմինյան ազգագրական ժողովածու» բազմահատոր հրատարակությունները, որոնք իրենց ընդգրկած հարուստ ու բազմապիսի նյութերից բացի, մեծապես նպաստեցին հայ ժողովրդագիտական մտքի կազմակերպմանն ու աննախադեպ վերելքին։ «Էմինյան ազգագրական ժողովածուի» Ա հատորով հրատարակվում է Աղեքսանդր Մխիթարյանի «Փշրանք Շիրակի ամբարներից» հարուստ ու բազմաբովանդակ ժողովածուն (1901), իսկ Բ (1901), Դ (1902), Ե (1904) և Զ (1906) հատորներում՝ հայ ժողովրդագիտության մեծավաստակ մշակ Սարգիս Հայկունու (1838—1908) երկարամյա բանահավաքչական գործունեության արդյունքների մի ստվար մասը։ Ե. Լալայանը 1913 թ. երեք ծավալուն հատորով հրատարակում է «Մարգարիտներ հայ բանահյուսության» վերտառությամբ հեքիաթների ժողովածուն, որը Տ. Նավասարդյանի գրքերից հետո հայկական հեքիաթների լավագույն հրատարակությունն էր։

Ժողովրդագիտական նյութերի այս պատկառելի ժառանգության հիմքի վրա, XIX դարի վերջերին, ձևավորվում և աստիճանաբար զարգանում է հայ նոր բանագիտական միտքը։ Եթե հայ ժողովրդագիտական շարժումը սկզբնավորվել էր Սրվանձտյանցի հայտնաբերած «Սասնա ծռեր» վեպի հրատարակումով, ապա նոր բանագիտական միտքն էլ իր ձևավորումն սկսում է այդ նոր ժողովրդական վեպի հետազոտությամբ։ Եվ առաջին փորձն այդ ուղղությամբ

կատարում է Գրիգոր Խալաթյանը (1858—1912)։ Տակավին համալսարանական ուսանող, նա ռուսերեն է թարգմանում, ծանոթագրում, մասամբ հետազոտում և 1881 թ. տպագրում է Գ. Սրվանձտյանցի գրառած վեպի պատումը՝ «Давид Сасунский, армянский народный эпос» խորագրով։ Այնուհետև «Общий очерк армянских сказок» (1885) ուշագրավ հետազոտությամբ, առաջինը մեզանում, հիմք է դնում հեքիաթների համեմատական ուսումնասիրությանը։

Հայ բանագիտական մտքի զարգացումն այնուհետև, հիմնական գծերով կապվում է Մ. Աբեղյանի անվան հետ։ 1886 թ. էջմիածնում նա Մոկացի Նահապետից գրի է առնում «Սասնա ծռեր» վեպի Սրվանձտյանցից հետո երկրորդ պատումը, որը 1889 թ. հրատարակում է «Դավիթ և Մհեր» խորագրով։ Նույն թվականին, Սրվանձտյանցի և իր գրառած պատումների հիման վրա, Աբեղյանը տպագրում է «Սասնա ծռերի» մասին մի ծավալուն հետազոտություն («Ազգային վեպ»), ուր հետևելով ժամանակի ռուս բանագիտության տեսական դրույթներին, քննում է «Սասնա ծռերի» պատմական և դյուցազնական-առասպելաբանական հիմքերը, բացահայտում պատմական և առասպելական տարբեր հնության հիշատակներ։

Հաջորդ տասնամյակներին, տարբեր բանահավաքների կողմից, գրառվում են վեպի նորանոր պատումներ։ 1892 թ. Աբեղյանի ջանքերով Թիֆլիսում լույս է տեսնում Գարեգին Հովսեփյանի գրառած վեպի ևս երկու նոր պատում, երեք այլ պատումների համեմատությամբ, «Սասմա ծռեր» խորագրով։ Այնուհետև մինչև 1917 թ. Բագրատ Խալաթյանի, Արտաշես Աբեղյանի, Սարգիս Հայկունու, Խաչիկ Դադյանի, Երվանդ Լալայանի, Ստեփան Կանայանի, Հարություն Ավչյանի, Տիգրան Զիքունու կողմից գրառվում և հրատարակվում են վեպի նորանոր տարբերակներ, որոնց ընդհանուր քանակը 1874—1917 թթ. հասնում է 22-ի։

Վեպի գիտական ուսումնասիրությունը զարգացման մի նոր փուլ է թևակոխում XX դարի սկզբներին, պայմանավորված վեպի նորանոր տարբերակների հայտնաբերմամբ և բանագիտական մտքի ընդհանուր հասունացմամբ։

XIX դարի վերջերին, ժողովրդական վեպերի ուսումնասիրության մեջ, հասունանում և տիրապետող է դառնում մասնավորապես Վսեվոլոդ Միլլերի պատմական մեկնաբանությունների տեսությունը, որն իր զգալի ազդեցությունն է գործում նաև հայ բանագիտական մտքի զարգացման վրա։

Բ. Խալաթյանը 1903 թ. տպագրած իր «Հայ ժողովրդական դյուցազնական վեպը» աշխատության մեջ փորձում է բացահայտել վեպի պատմական արմատներն ու վիպական-դյուցազնական հատկանիշները։ Իր մի քանի անընդունելի տեսակետներով հանդերձ, Բ. Խալաթյանը Դավթի ճյուղի պատմական հիմնական ատաղձն է համարում արաբական տիրապետության ժամանակաշրջանում, մասնավորապես IX դարում արաբական ճնշումների և հարկահանության դեմ բռնկված ապստամբական կռիվները, մի տեսակետ, որը հետագայում ընդունվեց և զարգացվեց հայ վիպագիտության կողմից։

1906 թ. տպագրված «Մամիկոնյանց պատմություն» և «Ջոջանց տան Սասմա ծռեր Դավիթ և Մհեր» (1907) ուսումնասիրություններում Ստեփան Կանայանը վեպի պատմական հիմքն է համարում IV—VII դդ. Մամիկոնյանների հերոսական պատմությունը, միաժամանակ վիպական մի շարք անուններ փորձում նույնացնել պատմական անձնանուններին։

«Մասնա ծուռը» վեպի գիտական մեծարժեք տեսությունը, որը հետագայում իշխող դարձավ հայագիտության մեջ, զարգացնում է Մ. Աբեղյանը. 1908-ին հրատարակած իր «Հայ ժողովրդական վեպը» մենագրությամբ։ Այստեղ նա համակողմանի քննելով վիպասացների արվեստն ու սոցիալական պատկանելությունը, վեպի տարածման աշխարհագրական միջավայրը, նրա ծագման ու վերջնական ձևավորման ժամանակշրջանն ու պատմական առաջադիմական հատկանիշներն ու հին առասպելների և վեպերի հետ ունեցած աղերսը, սոցիալ-կենցաղային ու գաղափարական բովանդակությունը, միաժամանակ հավաստում է ու ապացուցում «Պարսից պատերազմ» և «Տարոնի պատերազմ» պայմանական անվանումներով երկու հին վեպերի գոյությունը, որի հատվածները պահպանված է գոնում միջնադարյան հայ պատմիչների երկերում։ Նա վիպական ժառանգականության կապ է սահմանում «Մասնա ծուռի» և այդ հին վեպերի միջև, վերջինը համարելով նախորդ երկուսի վիպապատմական ձևափոխությունը IX—XIII դարերում։ Այս տեսությունը նա առավել խոր ու հիմնավորված զարգացնում է հետագայում՝ իր «Հայ վիպական բանահյուսություն» աշխատության մեջ (գրված 1933 թ.), որով վերջնականապես ձևակերպում է հայ վիպական բանահյուսության պատմատիպարանական զարգացման իր դարակազմիկ ուսմունքը։ Մինչև «Հայ ժողովրդական վեպի» հանդես գալը, 1899 թ., Աբեղյանը հրատարակում է „Der armenische Volksglaube“ («Հայ ժողովրդական հավատքը») և «Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ» մենագրությունները, որոնք մեծապես նպաստեցին հայ ժողովրդագիտության հետագա առաջընթացին։ Առաջինում նա համակարգում և հնդեվրոպական ժողովուրդների համանման հավատալիքների համեմատությամբ քննում է հայկական հավատալիքներն ու առասպելաբանական պատկերացումները, իսկ երկրորդում՝ պատմական ու բանասիրական քննություններով մի կողմից ճշգրտում ու հերքում է Խորենացու Հայոց պատմության վիպական-բանահյուսական հատվածների նկատմամբ Մ. Էմինի և Գր. Խալաթյանի արտահայտած տրամագծորեն միմյանց հակադիր կարծիքները, մյուս կողմից վերականգնում և ապացուցում այդ հատվածներում առկա վաղնջական հայկական առասպելներն ու Հայոց հին պատմառասպելական վեպը՝ Վիսպասանքը։

Հայկական առասպելները (Վահագնի, Հայկի, Արամի, Անգեղյա Տորքի, Արա Գեղեցիկի) Աբեղյանն ուսումնասիրում և հիմնավորում է ինչպես հնդեվրոպական ժողովուրդների հնագույն առասպելների, այնպես էլ իր ժամանակի հայկական առասպելական զրույցների համեմատությամբ, որով ճշգրտում և վերականգնում է հայկական առասպելների նախնական և վիպապավանդական նկարագիրը։

Իր այս երկու աշխատությամբ Մ. Աբեղյանը հայ ժողովրդագիտության մեջ հիմնադրում է հայ առասպելաբանության և ժողովրդական հավատալիքների գիտական ուսմունքը։

XIX դարի վերջերին և XX դ. սկզբներին հասարակական լայն հետաքրքրություն է առաջանում ժողովրդական երգերի նկատմամբ։ Աբեղյանը Կոմիտասի հետ ձեռնամուխ է լինում հայ գեղջկական երգերի հավաքմանն ու ուսումնասիրմանը։ Աբեղյանի և Կոմիտասի համատեղ աշխատանքով 1903 և 1905 թթ. լույս են տեսնում ժողովրդական երգերի երկու պրակ՝ «Հազար ու

մի խաղ» խորագրով։ Երգերի շուրջ երկուսուկես տասնյակ հազար նմուշների հիման վրա, Աբեղյանը գրում և 1904-ին «Ժողովրդական խաղեր» վերտառությամբ հրատարակում է գյուղական փոքրածավալ երգ-խաղիկներին նվիրված անդրանիկ ուսումնասիրությունը։ Այստեղ, ժամանակի բանագիտության տեսական նվաճումների հիման վրա, հետազոտվում են հայկական երգերի ժանրային, տիպաբանական-կառուցվածքային, տաղաչափական հատկանիշները, տարբերակների առաջացումը, երգերի հարակցումն ու զարգացումը և դրանց բովանդակության հիմնական գծերը։ Աբեղյանը հայ բանագիտության մեջ հիմք է դնում քնարական բանահյուսության դասական ուսումնքին։

Այսպիսով, XIX դարի վերջին քառորդից սկսած, ձևավորվում ու հասունանում է հայ բանագիտությունը։ Այն առանձնանում է բանասիրական մյուս գիտություններից, ձեռք է բերում իր գլխավոր ուղղությունները ու դրվում տեսական բարձր մակարդակի վրա և զարգանում իբրև ինքնուրույն մասնագիտություն։

3. ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

XIX դարի առաջին տասնամյակներից եվրոպացի և ռուս գիտնականների ուշադրությանն են արժանանում Կովկասի ժողովուրդների նյութական մշակույթը, արվեստը, հարտարապետական հուշարձանները։ 1850 թ. հիմնադրվում է Ռուսական աշխարհագրական ընկերության Կովկասյան բաժանմունքը, «Записки Кавказского отделения Русского Географического общества» պարբերականում տեղ են գտնում հրապարակումներ նաև Հայաստանի հնագիտական հուշարձանների մասին։

Դարի երկրորդ կեսին ազգային-ազատագրական շարժումների, ազգային ինքնագիտակցության զարթոնքի, հասարակական մտքի աշխուժացման պայմաններում հայ մտավորականության շրջանում բուռն հետաքրքրություն է արթնանում դեպի հայ ժողովրդի ստեղծած հոգևոր ու նյութական գանձերը։ Ազգային զարթոնքի դարաշրջանի խնդիրներից մեկն է դառնում բազմադարյան մշակույթի հետազոտությունը. ծնունդ է առնում հայագիտության կարևոր բնագավառներից մեկը՝ հնագիտությունը։ 1871 թ. Ալեքսանդր Երիցյանը (1841—1902) Գուգարքում՝ Որնակ (Ակներ) գյուղում կատարում է հնագույն դամբարանադաշտի պեղումները։ Այս աշխատանքներով սկզբնավորվում է Հայաստանի հուշարձանների գիտական ուսումնասիրությունը։ Ալ. Երիցյանի կողմից հնագիտական նյութերի առաջին հրապարակումները որոշակի ներդրում էին տարբեր քաղաքակրթությունների հուշարձաններով հարուստ Հայաստանի հնագիտական ուսումնասիրության մեջ։ Ալ. Երիցյանի օրինակին են հետևում ուրիշները։ Հայաստանի տարբեր վայրերում հայտնաբերվում, ուսումնասիրվում են պատմամշակութային մեծ արժեք ներկայացնող հետաքրքիր նյութեր։

1871 թ. հոկտեմբերին Թիֆլիսում ստեղծվում է «Կովկասյան հնագիտական կոմիտեն», որը հետագայում վերանվանվում է «Հնություների կովկասյան ընկերություն»։ Նորաստեղծ հասարակությունը զգալիորեն առաջ է մղում Անդրկովկասի հնությունների ուսումնասիրության գործը։ Հայաստանի հնագիտական հուշարձանների սիստեմատիկ ուսումնասիրությանը նպաստեց 1881 թ. Թիֆլիսում գումարված հնագիտական համագումարը։

XIX դարի 80-ական թվականներին Ալավերդու պղնձահանքերի ինժեներ

Ժակ դը Մորգանը պեղումներ է կատարում Դեբեդի ձորում, ուր հայտնաբերվում են հնագույն մշակույթի հետաքրքիր նյութեր։ Հայաստանի նյութական մշակույթի հուշարձանները իրենց արտացոլումն են գտել 1888-ից հրատարակվող գիտական ուսումնասիրությունների, հոդվածների «Материалы по археологии Кавказа»[17] կոչվող հնագիտական ժողովածուի քան հատորներում։

Այդ տարիներին Հայկական լեռնաշխարհի նյութական մշակույթի հուշարձանները գրավում են նաև հայ մշակույթի գործիչների ուշադրությունը։ Ականավոր բանահավաք և ազգագրագետ Գարեգին Սրվանձտյանցը, շրջագայելով Արևմտյան Հայաստանի գրեթե բոլոր գավառները, բանահյուսական, ազգագրական նյութերից բացի, կատարել է Աղթամարի, Նարեկա վանքի, Տարոնի եկեղեցիների, ինչպես նաև խաչքարերի, կոթողների նկարագրությունը։ 80-ական թվականներին պարբերական մամուլի էջերում իր հայրենի Դսեղ գյուղի հնություններին է անդրադառնում Հովհ. Թումանյանը։

Հայաստանի հնագույն շրջանի պատմության և մշակույթի յուրօրինակ սկզբնաղբյուրներին՝ ժայռերին փորված պատկերների ուսումնասիրության անհրաժեշտությանը տակավին անդրադարձել են ականավոր հայագետ Դ. Տեր-Մկրտչյանը (1860—1918), այնուհետև, մի փոքր ավելի ուշ, նաև Մեսրոպ Տեր-Մովսիսյանը, Գրիգոր Ղափանցյանը և Հարտաբարպետ Լևոն Լիսիցյանը։

XIX դարի վերջին տասնամյակներում սկսվում է Արևմտյան Հայաստանի հնագիտական սիստեմատիկ ուսումնասիրությունը։ 1890 թ. գերմանացի գիտնականներ Լեման Հաուպտը և Վ. Բելքը Վանա լճի արևելյան ափին իրականացնում են V—IV հազարամյակներին վերաբերող բազմաշերտ հուշարձան Շամիրամ Ալիթի պեղումները։ Դարավերջին ռուս գիտնական Ա. Ա. Իվանովսկին Մենուախինիլի քաղաքի ուսումնասիրության առիթով հնագիտական աշխատանք է ծավալում Արարատ լեռան հյուսիսային լանջին։ XIX դարի վերջին տասնամյակները Հայաստանի հնագիտական ուսումնասիրության մեջ նշանավորվեցին իբրև մեծ թիվ կազմող հնագիտական նյութի հայտնաբերման, կուտակման և նախնական իմաստավորման շրջան։ Այդ տարիների հնագիտական ուսումնասիրությունների պսակն են կազմում Անիի պեղումները, որոնք անխզելիորեն կապված են Ն. Յա. Մառի (1864—1934) անվան հետ։ 1892 թ. Մառը եռանդով ու խանդավառությամբ ձեռնամուխ է լինում և շուրջ երկու տասնամյակների անխոնջ աշխատանքով իրականացնում հայ ժողովրդի բազմազարյան պատմության մեջ տնտեսական, քաղաքական ու մշակութային կարևոր դեր խաղացած մայրաքաղաքի ուսումնասիրությունը։ Պեղումները որոշ ընդհատումներով շարունակվեցին մինչև 1917 թ.։ Գիտական արշավախմբին մասնակցում էին Թ. Թորամանյանը, Հ. Օրբելին, Ն. Բունիաթյանը, Ա. Քալանթարը, Ն. Տոկարսկին, Տարագրոսը, Լ. Քալանթարը, Ա. Վրուլրը և ուրիշներ։ Պեղումների ընթացքում բացվում են քաղաքի պարիսպներն ու աղբունի պալատը, պաշտամունքային կառույցներ ու հյուրատներ, քաղաքային բնակչության ամենատարբեր խավերի քաղամասեր, հայտնաբերվում են մեծ քանակությամբ հնագիտական իրեր, որոնք ոչ միայն

---

17 Տե՛ս Б. Б. Пиотровский, Археологическое изучение древнейшего Закавказья, ВДИ, 1947; его же, Археология Закавказья, Л., 1949.

ամրապնդում են քաղաքի մատենական պատմության հավաստիությունը, այլև բացահայտում միջնադարյան Հայաստանի արհեստագործության և առևտրի խոշորագույն կենտրոնի տեղը Մերձավոր Արևելքի քաղաքային կենտրոնների համակարգում, նրա առևտրական ու մշակութային կապերը հարևան երկրների հետ[18]։ Պեղումների արդյունքները հետագայում ամփոփվեցին Ն. Յա. Մառի «Անի» մենագրության մեջ։

Պեղումների շրջանում Մառը հիմնում է Անի քաղաքի թանգարան, ստեղծում Անիի մատենաշարը։ Պեղումներին զուգրնթաց նա ուսումնասիրում է Հայաստանի նյութական մշակույթի բազմաթիվ այլ հուշարձաններ Արագածի լանջերին և Լոռիում, Դվինի և Արտաշատի տեղը որոշելու նպատակով կարճատև հետախուզական պեղումներ կատարում Դվին ամրոցում։ 1909—1910 թթ. հնագետը իրականացնում է Գառնիի I դարի հեթանոսական տաճարի պեղումները։ Տեղեկանալով Գեղամա լեռներում գտնվող կոթողների մասին, Գառնիի տաճարի պեղումների մասնակից, ականավոր արևելագետ, հնագետ Յա. Ի. Սմիռնովի հետ Ն. Մառը գիտական ուղևորություն է կազմակերպում դեպի Գեղամա լեռները, որի արդյունքը լինում է հետագայում Յա. Ի. Սմիռնովի հետ ձեռնակերպ վիշապ քարկոթողներին նվիրված հանգամանալից ուսումնասիրության հրապարակումը։



Ն. Մառ

Հայաստանի հնագիտական ուսումնասիրության մեջ մեծ է Հովսեփ Օրբելու ներդրումը։ 1906 թ. սկսած նա անընդմեջ մասնակցում է Անիի պեղումներին։ 1909—1910 թթ., երբ Մառը զբաղված էր Գառնիի հեթանոսական տաճարի պեղումներով, Անիում բոլոր աշխատանքները ղեկավարում էր Օրբելին։ Ն. Մառի հանձնարարությամբ նա հավաքում և հրատարակության է պատրաստում Անիի, Մարմաշենի և այլ վայրերի վիմագիր արձանագրությունները։ Անիի հուշարձանների գիտական նկարագրությանը, 1892—1909 թթ. պեղումներին, մայրաքաղաքի քաղաքացիական պատմությանն ու ճարտարապետական հուշարձաններին և Անիի թանգարանի նյութերի գիտական իմաստավորմանն են նվիրված Հ. Օրբելու «Անիի մատենաշարով» լույս ընծայած «Краткий путеводитель по городищу Ани», «Каталог анийского музея древностей», «Развалины Ани» աշխատությունները։ 1909 թ. Արցախի եպիսկոպոս Գավառում Հ. Օրբելին ուսումնասիրում է Գանձասարի հուշարձանախումբը, հավաքում ավելի քան 200 վիմագիր արձանագրություն, ուսում-

18 Ր. Առաքելյան. Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ., հ. 1, Երևան, 1958, էջ 6—8։

նասիրում Խաչենի կենցաղային բանդակները։ 1911 թ. Հ. Օրբելին Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի կողմից գործուղվում է Վան, ուր Մուշի և Մոկսի բարբառների ուսումնասիրությանը զուգընթաց զբաղվում է ուրարտական հուշարձաններով։ Նա Վանի մերձակայքում՝ Թոփրախ-կալեում հայտնաբերում է չափազանց հետաքրքիր հնագիտական հուշարձաններ[9]։ Արևմտյան Հայաստանում գործուղման միջոցին Հ. Օրբելին հանգամանորեն հետազոտում է Աղթամարի հուշարձանախումբը, որի արդյունքը լինում է արվեստագիտական քննությանը նվիրված նրա հմտալից ուսումնասիրությունը[20]։

Հայաստանի հնագիտությանը մեծ ծառայություն է մատուցել ճարտարապետ Թորոս Թորամանյանը։ Նա Անիի հնագիտական ուսումնասիրության գիտական արշավախմբի գլխավոր դեմքերից մեկն էր։ Ն. Յա. Մարը նրան է հանձնարարում ճարտարապետական հուշարձանները չափագրելու, գծանկարելու, առանձին կառույցների վերակազմության դժվարին աշխատանքները։ Թ. Թորամանյանի թողած գիտական վիթխարի ժառանգության մեջ քիչ չեն տարբեր ժամանակաշրջանների հնագիտական հուշարձաններին նվիրված ուսումնասիրությունները։

Թ. Թորամանյանը ծրագրել էր Յ. Ստրժիգովսկու հետ իրականացնել հայկական ճարտարապետությանը նվիրված ծավալուն հետազոտության հրատարակությունը։ Վերահաս պատերազմը խափանեց նրա մտահղացումը։ Թ. Թորամանյանի ուսումնասիրությունների ու չափագրությունների հիման վրա հրապարակ եկավ Յ. Ստրժիգովսկու՝ Հայաստանի ճարտարապետությանը նվիրված մեծարժեք հետազոտությունը։ Թորամանյանի աշխատությունները, որոնք ամփոփված են «Նյութեր հայ ճարտարապետության պատմության» երկու հատորներում, հետազոտության հարուստ նյութ են տալիս և՛ հնագետներին, և՛ արվեստագետներին։

Հայ ականավոր ազգագրագետ և բանահավաք Սրվանձ Լալայանի գիտական ժառանգության մեջ նվազ տեղ չեն գրավում հնագիտական աշխատանքները։ Ե. Լալայանը 1904 և 1913 թթ. հետաքրքիր նյութեր է հայտնաբերում Նախիջևանի Քյուլ-թափա հնավայրում, հետազոտում Շրեշ բլուր բնակավայրը։ Մոսկովյան հնագիտական ընկերության Կովկասյան բաժանմունքի հանձնարարությամբ 1905—1906 և 1908 թթ. Սևանա լճի ափամերձ վայրերում Ե. Լալայանը պեղում է բազմաթիվ (516) դամբարանաբլուրներ (կուրգան) և դամբարանային հուշարձաններ[21]։

1900—1908 թթ. Դվինում և Զվարթնոցում պեղումներ է կատարում Խաչիկ վ. Դադյանը[22]։ Հայ մտավորականներից Հայաստանի նյութական մշակույթի հուշարձանների նկատմամբ հետաքրքրություն է հանդես բերել Ատրպետը։ «Ազգագրական հանդես», «Գեղարվեստ» պարբերականներէ էջերում նա հրապարակել է կիկլոպյան ամրոցների, հայկական դրամների, Անիի պեղումների մասին հոդվածներ և հաղորդումներ։ Այդ հաղորդումների մեջ

---

19 *Տե՛ս Б. Н. Аракелян*, И. А. Орбели., Ереван, 1957; *К. Н. Юзбашян*, Академик Иосиф Абгарович Орбели, 1968.

20 *Տե՛ս И. А. Орбели*, Избранные труды в двух томах, т. I, М., 1968, стр. 17—197.

21 *Տե՛ս* Ե. Լալայան, Դամբարանների պեղումներ Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931։

22 *Տե՛ս* Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 39։

տառանձնանում է Ճորոխի ավազանում նրա ուսումնասիրած վիշապ-քարակոթողներին նվիրված հոդվածաշարը, որը 1929 թ. Վիեննայում հրատարակվեց առանձին գրքով։

Զգալի աշխատանք է կատարվում նաև ուրարտական վիմագիր արձանագրությունների հավաքման, ուսումնասիրության ուղղությամբ։ XIX դարի առաջին տասնամյակներից արևելագետների շրջանում գնալով աճում է հետաքրքրությունը **Վանի Թագավորության** և ուրարտական սեպագիր արձանագրությունների նկատմամբ։ Մովսես Խորենացու նկարագրած Շամիրամի հուշարձաններն իրենց վրա են հրավիրում արևելագետների ուշադրությունը։ 1827 թ. Վանի շրջանն է գործուղվում Շուլցը։ Երիտասարդ գիտնականը խնամքով պատճենավորում է սեպագիր արձանագրությունները։ Նրա մահից հետո սկսված աշխատանքները թեև ընդհատվում են, սակայն հետաքրքրությունը ուրարտական հուշարձանների նկատմամբ չի դադարում[23]։



Թորոս Թորամանյանը Անիում

Հայկական լեռնաշխարհում հայտնագործված սեպագիր արձանագրությունների հավաքմանը զուգընթաց արձանագրությունների որոնումներ են կատարվում Արևելյան Հայաստանում։ **1862-ին Մեսրոպ Սմբատյանցը** սեպագիր արձանագրություն է հայտնաբերում Ախուրյանի ձախ ափին՝ Ղանլիջա (Մարմաշեն) գյուղի մոտ, ապա Սևանա լճի ափին (1863)՝ Ծովինար (Քյոլագրան) ամրոցի մոտ։ 1869 թ. սկսած Մ. Սմբատյանցը պատճենավորում է ուրարտական արձանագրությունները և հրապարակում էջմիածնի «Արարատ» հանդեսում։ Սեպագիր հիշատակարանների ուսումնասիրությանը գործոն մասնակցություն են ունեցել Ք. Պատկանյանը, Մ. Նիկոլսկին, Գ. Տեր-Մկրտչյանը։ 1896 թ. Մ. Նիկոլսկին իր վերծանություններով վերահրատարակում է Անդրկովկասի սեպագիր արձանագրությունների ժողովածուն։ 1915—1917 թթ. ուրարտական արձանագրությունների հավաքման ուղղությամբ զգալի աշխատանք է կատարվում ռուսական զորքերի կողմից գրավված Արևմտյան Հայաստանի տարածքում։ 1916 թ. Հովսեփ Օրբելին Վանա ժայռի խորշում հայտնաբերում է ուրարտական Արգիշտիի որդի Սարդուրի Թագավորի տարեգրությունը։

XIX դ. 80-ական թվականներին Միջնավոր Արևելքում ուսումնասիրություններ էր կատարում հայ գիտնական **Ս. Ս. Աբամելիք-Լազարևը** (1857—1916)։ Նա 1882 թ. մասնակցելով Պալմիրայի պեղումներին, հայտնաբերել է «Պալմիրյան տարիֆ» կոչված երկլեզվյան (արամերեն և հունարեն) նշանա-

[23] Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, стр. 8—13.

վոր արձանագրություններ, որը գիտությանը հայտնի սեմական վիմագիր ամենախոշոր հուշարձանն է։ Իր հնագիտական ուսումնասիրությունների արդյունքներն Աբամելիք-Լազարևն ամփոփել է «Пальмира» (1884) և «Джераш» (1897) աշխատություններում։

Սակայն հին և միջնադարյան Հայաստանի սոցիալ-տնտեսական, քաղաքական պատմության և մշակույթի բազմաթիվ խնդիրներ երկար ժամանակ մնում էին չլուսաբանված, քանի դեռ չէին հայտնաբերվել, ուսումնասիրվել և գիտական շրջանառության մեջ դրվել յուրօրինակ հնագիտական աղբյուրները՝ արամերեն, հունարեն, լատիներեն և հայերեն արձանագրությունները։

XIX դարի սկզբներից Հայաստանում ևս հայտնաբերվում են հունարեն ու լատիներեն առաջին արձանագրությունները, սկզբնավորվում է հայերեն վիմագիր հիշատակարանների հավաքման և հրատարակման գործը (Բժշկյան, Շահխաթունյանց, Չալալյանց)։ Հայկական արձանագրությունների հավաքման և հրատարակման գործին մեծ ուշադրություն է նվիրել Ներսես Աշտարակեցին։ Խաչատուր Աբովյանն Անիին, Գևորգի վանքին նվիրված իր հոդվածներում, բազմաթիվ առիթներով հայ մատենագիրներին հղած իր նամակներում ընդգծում էր ոչ միայն Հայաստանի հնավայրերի ուսումնասիրության, այլև վիմագիր արձանագրությունների հավաքման, հրատարակման կարևորությունը։

XIX դ. երկրորդ կեսի համփորդական, տեղագրական գրականության էջերում (Ներսես վ. Մարգսյան, Աբել վ. Մխիթարյան, Գաբրիել վ. Սրվանձտյանց, Քաջբերունի, Մակար Բարխուդարյանց, Մեսրոպ արք. Սմբատյանց, Ղևոնդ Ալիշան) պատկառելի տեղ են գրավոցնում հայերեն վիմագիր հիշատակարանները։

Հայերեն արձանագրությունների հավաքման, հրապարակման գործում նշանակալից վաստակ ունեն օտարազգի գիտնականներ Բրոսեն, Լանգլուան, Դյուբուան։ Հայ գիտնականներ Ալ. Երիցյանը, Մկրտիչ Էմինը, Խաչատուր Հովհաննիսյանը և ուրիշներ բանասիրության ուշադրության են հանձնում նշանակալից թվով հայերեն արձանագրություններ[24]։ 1913 թ. լույս է տեսնում Կ. Կոստանյանցի «Վիմական տարեգիրք» ժողովածուն։ XX դարի սկզբին հայերեն արձանագրությունների հավաքման, հրատարակման աշխատանքներին իրենց լուման են ներդրել Երվանդ Լալայանը, Մ. Փափազյանը։ Այդ տարիների հրատարակություններից անթերի վերծանություններ են Գ. Հովսեփյանի հրապարակած արձանագրությունները։

Հայերեն արձանագրությունները գիտական եղանակով հավաքելու և հրատարակելու պատմությունը սերտորեն կապված է Անիի հնագիտական ուսումնասիրության, Ն. Յա. Մառի, նրա աշակերտ Հ. Օրբելու անունների հետ։ Ն. Մառի հանձնարարությամբ Օրբելին հավաքում է Անիի արձանագրությունները, հրատարակում Բագարանի, Բագավանի, Մարմաշենի և այլ հնավայրերի վիմագիր հիշատակարանները։

Հովսեփ Օրբելին մշակեց վիմագիր սկզբնաղբյուրների հավաքման և հրատարակման ժամանակակից գիտության պահանջները բավարարող գիտական սկզբունքներ, որոնք ուղեցույց հանդիսացան հետագա ուսումնասիրողների համար։

---

[24] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», հ. Ա, Երևան, 1966, էջ 20։

4. ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդին վերաբերվող ազգագրական գիտելիքների կուտակումը սկսվել է վաղ անցյալում (ուրարտական սեպագիր արձանագրություններ, անտիկ պատմիչներ)։ Ազգագրական տեղեկություններն առավել առատ ու բազմակողմանի են դառնում հայ գրերի ու գրականության հանդես գալու շնորհիվ։ Միջնադարի հայ մատենագիրների, ինչպես նաև այլազգի ճանապարհորդների երկերն արժեքավոր շատ նյութեր են պարունակում ժողովրդի ղրաղմունքի, նիստուկացի, վարքուբարքի մասին։

XVIII դարի վերջերից և հատկապես XIX դարի առաջին կեսին հայ իրականության մեջ բուռն հետաքրքրություն է առաջանում ժողովրդի ընդերքում դարերով կուտակված մշակութային գանձերի նկատմամբ։ Մի շարք հեղինակներ հանդես են գալիս նյութերի սիստեմատիկ շարադրմամբ (Մ. Բժշկյան, Մ. Թաղիադյան, Մ. Էմին և ուրիշներ)։ Հիշատակության արժանի է հատկապես Խաչատուր Աբովյանի դերը այս բնագավառում։ Իր գեղարվեստական երկերում ժողովրդի նյութական ու հոգևոր մշակույթը լայնորեն ներկայացնելուց բացի, նա գրել է նաև ազգագրական բնույթի աշխատանքներ[25]։

Ազգագրական գիտությունը Հայաստանում իր լիակատար իրավունքների մեջ սկսեց մտնել հատկապես 1860—1870-ական թվականներից։ Արդեն բավականաչափ կուտակված նյութերի հիման վրա կազմվեցին ազգագրական բնույթի առաջին հարցարանները[26] (Մ. Միանսարյան՝ 1868, Ալ. Երիցյան՝ 1874)։

Այս շրջանում առանձնապես աչքի ընկան ազգագրության ու բանագիտության ականավոր ներկայացուցիչ Գ. Սրվանձտյանցի (1840—1892) երկերը։ Անձնուրացությամբ ձեռնամուխ լինելով այդ գործին, նա տասնամյակներ անընդմեջ անձամբ շրջագայեց գրեթե ամբողջ Հայաստանը և միմյանց հետևից հրատարակեց ժողովրդի հոգևոր գանձերը ներկայացնող իր երկերը՝ «Գրոց ու բրոց» (Կ. Պոլիս, 1874), «Հնոց ու նորոց» (Կ. Պոլիս, 1874), «Մանանա» (Կ. Պոլիս, 1876), «Թորոս աղբար» (երկու մասով, Կ. Պոլիս, 1879, 1884), «Համով հոտով» (Կ. Պոլիս, 1884)։

Գ. Սրվանձտյանցի երկերի արժանիքն այն է, որ նա ամենայն հմտությամբ պահպանելով նյութերի անաղարտությունը, դրանք ներկայացնում է դեղարվեստական շնչով, միաժամանակ անելով ազգագրագիտական ու բանագիտական նուրբ դիտողություններ։ Ահա ինչու նրա ժողովածուները, ճանաչողականից բացի, ունեն գիտական որոշակի արժեք։ Գ. Սրվանձտյանցի մեծագույն ծառայությունը «Մանանա ծոցը» դյուցազնավեպի հայտնաղործումը, գրառումը և հրապարակումն է։

Գ. Սրվանձտյանցի երկերի երևան գալը մի նոր, հուժկու խթան ծառայեց հայ ժողովրդագիտության հետագա զարգացման համար։ Եվրոպական և ռուսական ազգագրական գիտության սկզբունքներին քաջատեղյակ Գր. Խալաթյանցը, հիմնվելով հատկապես Գ. Սրվանձտյանցի երկերի վրա, կազմեց գի-

---

25 Տե՛ս Խ. Աբովյան, Ակնարկ Թիֆլիսում ապրող հայերի կյանքի և հատկապես նրանց հարսանեկան սովորությունների մասին, «Երկերի լիակատար ժողովածու», հ. 8, Երևան, 1958։

26 Ազգագրական հարցարանը որոշակի համակարգով կազմված դաշտային նյութերի հավաքման մեթոդական ուղեցույց-ծրագիր է, որն ընդգրկում է գործնական ցուցումներ և հարցագրումների խմբավորված բաժիններ։ Այն մեծապես նպաստում է նյութերը գիտականորեն հավաքելուն։

տական հիմունքներով շարադրված առաջին համահողմանի ազգագրական հարցարանը՝ «Մրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորությունների» (Մոսկվա, 1887) վերտառությամբ։

Անցյալ դարի վերջին տասնամյակները և XX դ. սկիզբը նշանավորեցին ազգագրական գիտելիքների աննախադեպ կուտակմամբ։ Այդ ժամանակաշրջանի հայ գրականությունը, դրա ամենալայն ըմբռնմամբ, ողողված է ժողովրդի առօրյան, կենցաղն ու սովորույթները համակողմանիորեն արտացոլող առատ նյութերով։ Այդ երևույթն իր արտահայտությունը գտավ թե՛ պարբերական մամուլում (հատկապես «Հանդես ամսօրյաում», «Բազմավեպում», «Մշակում», «Բյուրակնում» «Տարազում» և այլն), թե՛ գեղարվեստական գրականության մեջ (Րաֆֆի, Պ. Պռոշյան, Ռ. Պատկանյան, Մուրացան, Հ. Թումանյան, Մ. Նալբանդյան, գյուղագիրները), ինչպես նաև արվեստի բնագավառներում (Վ. Սուրենյացի, Լանսերեի, Ֆեքվաճյանի, Գ. Բաշինջաղյանի, Կոմիտասի, Կարա-Մուրզայի, Ռ. Մելիքյանի, Թ. Թորամանյանի և ուրիշների ստեղծագործություններում)։ Հայ ազգագրական նյութի մատուցման ու մեկնաբանման գործում նշանակալից ներդրում կատարեցին Ղ. Ալիշանը, Ս. Ամատունին, Ա. Ղլտչյանը, Մ. Մխրախոյանը, Վ. Հացունին, Մ. Հայկունին, Գ. Ախվերդյանը և ուրիշներ[27]։

Այս պայմաններում հայ իրականության մեջ առաջ եկավ առաջին ազգագրական մասնագիտական պարբերականը՝ «Ազգագրական հանդեսը», որը նշանակալից երևույթ էր հայ ժողովրդագիտության բնագավառում։ Այն սկսեց լույս տեսնել Շուշիում, 1895—96 թթ.։ Երկրորդ համարից շարունակվեց Թիֆլիսում ու պարբերաբար հրատարակվեց շուրջ քսան տարի (մինչև 1916 թ.), բանվեց գրքով՝ ականավոր ազգագրագետ, բանագետ ու հնագետ Երվանդ Լալայանի (1864—1931) խմբագրությամբ։ Ե. Լալայանը հիմնավոր մասնագիտական կրթություն էր ստացել Ժնևի և Լոզանի համալսարաններում, աշխատել էր Վիեննայի Մխիթարյանների մոտ և Փարիզի մարդաբանական դպրոցում, բազմաեղյակ էր ժամանակի ազգագրական և մարդաբանական գիտությունների հիմունքներին։ Նա ժամանակի ընթացքում կարողացավ «Հանդեսի» շուրջը համախմբել լավագույն գիտական ուժերի (Մ. Աբեղյան Թ. Թորամանյան, Հ. Աճառյան, Լեո, Մելիքսեթ-բեկ, Ե. Շահազիզ, Ա. Սամվելյան, Ա. Զևինակի, Կարա-Մուրզա, Բենսե-Սահակ Մովսիսյան, Ստ. Լիսիցյան և ուրիշներ), ինչպես նաև գյուղական մտավորականության։ Ե. Լալայանը տասնամյակներ անընդհատ, չընկրկելով ամեն տեսակի զոհողությունների առջև, շրջագայեց գրեթե ամբողջ Հայաստանը, ժողովելով ազգա-

---

27 Ղ. Ալիշան, Այրարատ, բնաշխարհ Հայաստանեայց, 1890։ Շիրակ, տեղագրություն պատկերազարդ, 1881։ Սիսական, տեղագրություն Սյունեյաց աշխարհի, 1893։ Սիսվան, համագրություն Հայկական Կիլիկիո և Լեռն Մեծագործ, 1885։ Հին Հավատք կամ հեթանոսական կրոնք հայոց, 1810, Հայրենասեր, կամ հայկական բուսաբանություն, 1895, բոլոր հրատարակությունները՝ Վենետիկ—ս. Ղազար։ Ս. Ամատունի, Հայոց բառ ու բան, Վաղարշապատ, 1912։ Ա. Ղլտչյան, Հայոց հին իրավունքը, Ալեքսանդրապոլ, 1918։ Ամուսնություն, ամուսնալուծություն և քաղաքացիական պսակ, Ալեքսանդրապոլ, 1904։ Մ. Մխրախոյան, Նկարագրական ուղևորություն ի Հայաստան գավառս Արևելյան Տաճկաստանի (տեղագրությունք սարեն ու ձորեն, հնեն ու նորեն պիտանի գիտնոց), Կ. Պոլիս, հ. 1, 1884, հ. 2, 3, 1885։ Վ. Հացունի, Ճաշեր ու խնջույք հին Հայաստանի մեջ, Վենետիկ, ս. Ղազար, 1912։ Ս. Հայկունի, Բագրեւանդ չրաբաշխ գավառ, 1, էջմիածին, 1894։ Ю. Ф. Ахвердов, Тифлисские амкары, Тифлис, 1883.

գրական բազմապիսի նյութեր, արձանագրելով նաև նոր սոցիալ-տնտեսական հարաբերությունների ներթափանցման շնորհիվ կյանքի բոլոր ոլորտներում կատարվող փոփոխությունների ընթացքը։ Ե. Լալայանն իր գործն սկսեց, ունենալով մի որոշակի սևեռուն հավատամք՝ «Մեր կոչումն այժմ միայն նյութեր ճավաքել է... Մենք կկրենք քարերը և նրանի նրան, ով կգա այդ քարերով ազգային ինքնուրույնության շենքը կառուցանելու և համամարդկային էվոլյուտիոնի օրենքները գծելու»[28]։



Ե. Լալայան

«Ազգագրական հանդեսը» դարձավ հայ կյանքի մի յուրօրինակ հանրագիտարան։ Այն հրատարակվում էր որոշակի համակարգով, ամեն մի համարը (կամ գիրքը) հիմնականում ընդգրկում էր Հայաստանի որևէ գավառի կամ Կովկասի որևէ հայաբնակ շրջանի (Ջավախք, Լոռի, Վարանդա, Գեղարքունիք, Սիսիան, Վասպուրական, Նոր Նախիջևան, Համշեն, Հարք և այլն) ստվարածավալ ու համակողմանի նկարագրություն, մեծ մասամբ շարադրված իր իսկ՝ Ե. Լալայանի կողմից։ «Հանդեսի» էջերում ուշագրավ նյութեր են հրատարակվել նաև բռշաների, քրդերի, ասորիների, պարսիկների, տեղի ռուս և ուկրաինացի աղանդավորների, ուտիների, վրացիների, հույների և այլոց ազգագրության վերաբերյալ[29]։

Ե. Լալայանի եռանդուն ջանքերի շնորհիվ Թիֆլիսում 1900 թ. ստեղծվեց Ազգագրական հրատարակչական ընկերություն, որը 1906 թ. վերածվեց Հայոց ազգագրական ընկերության։ Այն հարատևեց շուրջ տաս տարի, մեծապես խթանելով ազգագրական-մարդաբանական-հնագիտական աշխատանքների ծավալմանը ոչ միայն Հայաստանում, այլև ամբողջ Կովկասում։ Ընկերությունը կազմակերպեց հայագիտական-կովկասագիտական հարուստ գրադարան ու թանգարան, ուր կենտրոնացվեցին ստվարածավալ գրականություն և ազգագրական ու հնագիտական նորագյուտ բարձրարժեք նյութեր՝ հայթայթված ընկերության կազմակերպած դաշտային աշխատանքների միջոցով։ Այդ ամենը հետագայում հիմք հանդիսացավ թե՛ Վրաստանի թանգարանի և թե՛ Հայաստանի պատմության թանգարանի հիմնադրման համար։ Ընկերության շնորհիվ առանձին գրքերով հրատարակվեց ազգագրական-բա-

---

28 «Ազգագրական հանդես», Ա գիրք, Շուշի, 1895 (1896), էջ 6։

29 Տե՛ս Վ. Փափազյան. Հայ բռշաներ, «Ազգագրական հանդես», Դ գիրք, Թիֆլիս, 1898։ Ե. Լալայան. Մայականներ, «Ազգագրական հանդես», VII—VIII գրքեր, 1901։ Լ. Բաթայան. Պարսկաստանի կրակապաշտները, «Ազգագրական հանդես», XVIII գիրք, 1908։

նահյուսական բնույթի բազմազան գրականություն։ Միաժամանակ Ե. Լալայանը հոդվածներով ու զեկուցումներով հանդես էր գալիս միջազգային համաժողովներում և ռուսերեն ու ֆրանսերեն պարբերականներում։

«Ազգագրական հանդեսի» էջերում հանդես էին գալիս նաև Բենսեն, Ա. Փորթուգալյանը, Քաջբերունին, Մուրադյանը, Մալխասյանը և ուրիշներ։ Սակայն նրանց մեջ դարասկզբից առանձնանում է Խաչիկ Սամվելյանը (1873—1941), որը սկսած 1904 թ., պարբերաբար հանդես է գալիս հայ սովորութային և ընտանեկան իրավունքին նվիրված հոդվածաշարերով, որոնցում փաստական հարուստ նյութի հիման վրա փորձում է բացահայտել հայ սովորութային և պետական իրավունքի աղերսները[30]։

«Ազգագրական հանդեսի» շնորհիվ, ազգագրությունը Հայաստանում լիովին ձևավորվեց որպես գիտության ուրույն բնագավառ, սահմանազատվելով մասնավորապես բանագիտությունից։ «Հանդեսի» միջոցով կորստից փրկվեցին ու հետագա սերունդներին կտակվեցին հայ ժողովրդական ավանդութային մշակույթի շատ ու շատ նյութեր, որոնք նոր, կապիտալիստական սոցիալ-տնտեսական հարաբերությունների ներթափանցման հետևանքով ենթարկվում էին արմատական փոփոխությունների։

Ուշագրավ է մեր դարի սկզբներին հրապարակ եկած մի պարբերական ևս՝ «Էմինյան ազգագրական ժողովածուն», որը հրատարակվեց Լազարյան Ճեմարանի ուսուցչապետ Մ. Էմինի կտակով (Մոսկվա, 1901—1913), ինը գրքով, Գր. Խալաթյանցի խմբագրությամբ։ Ժողովածուն արժեքավոր շատ նյութեր հրապարակեց բանահյուսության, բարբառների, ընտանիքի ու հավատալիքների և այլնի վերաբերյալ, նպաստելով հայ ժողովրդագիտության զարգացմանը[31]։

Առհասարակ հայերի ներքին կյանքի ու սովորույթների, մասնավորապես անտեսական զբաղմունքների ու կենցաղի վերաբերյալ առատ նյութեր են պարունակում նաև XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին հրատարակված ռուսական մի շարք մատենաշարեր ու պարբերականներ[32]։

Հայ ազգագրական նյութի գիտական ուսումնասիրության առումով նախահեղափոխական շրջանում առանձնահատուկ տեղ են գրավում Ն. Ադոնցը և Ս. Տղիտարյանը, առաջինն իր «Հայաստանը Հուստինիանոսի ժամանակաշրջանում» աշխատությամբ, ուր պատմաազգագրական նյութերի բննությամբ բացահայտվում է միջնադարյան Հայաստանի քաղաքական-բնատարածքային կազմավորումների ազերսը տոհմային-ազգակցական ու համայնքային կազմավորումների հետ[33], երկրորդն իր «Գյուղական համայնքը» և

30 Ա. Սամվելյանի հիշյալ հոդվածաշարերը տե՛ս «Ազգագրական հանդեսի» X—XXIII հատորներում։

31 Ուշագրավ է հատկապես «Էմինյան ազգագրական ժողովածուի» IX հատորը, որն ամբողջությամբ ներկայացնում է Հր. Աճառյանի «Հայերեն գավառական բառարանը»։

32 Տե՛ս «Кавказский календарь», Тифлис, 1845—1917; «Материалы для описания местностей и племен Кавказа», Тифлис, 1883—1903; «Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края», Тифлис, 1887—1889 (в 5 томах); «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», Тифлис, 1885—1887 (в 7 томах); «Известия Кавказского отдела Русского географического общества», Тифлис, 1872—1917.

33 Տե՛ս Н. Адонц, Армения в эпоху Юстиниана СПб., 1908.

«Քաղաքային համքարությունները» աշխատություններում XIX դարի հայ գյուղական համայնքի և արհեստավորական համքարությունների հետազոտությունները զուգորդում է ազգագրական նյութերի օգտագործման հետ, հանգելով կարևոր հետևությունների[34]։

5. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հայ բուրժուական գաղափարախոսությունը ձևավորվել է XVIII դարի երկրորդ կեսում, հանձինս Մադրասի հայկական համայնքի առաջավոր մտավորականներ Հովսեփ Էմինի (1726—1809), Մովսես Բաղրամյանի և Շահամիր Շահամիրյանի (1723—1797)[35]։

Հայկական բուրժուազիան օտար բռնակալների լծից ազատագրվելիք Հայաստանն իրավամբ դիտում էր որպես կապիտալի շահավետ օգտագործման ընդարձակ ասպարեզ, որտեղ հայկական վերածնունդը պետք է կատարվեր բուրժուական սահմանադրության սկզբունքների հիման վրա։ Այս ծրագիրը հանգամանորեն շարադրված է Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, սր կոչի յորդորակ» (1772 թ.) և Շահամիրյանի «Որոգայթ փառաց» (1788—1789 թթ.) աշխատություններում։ Տնտեսագիտության պատմության համար առանձնապես արժեքավոր են հեղինակների հայացքներն ազատագրված Հայաստանի տնտեսական կառուցվածքը և երկրի տնտեսական քաղաքականությունը լուսաբանող հարցերի վերաբերյալ։

Բուրժուազիայի գաղափարախոսներ Շահամիրյանի և նրա կողմնակիցների նպատակը «մարդու բնական իրավունքի և արդարութեան»[36] պահանջն է, որով նրանք հակադրվում են ֆեոդալական կարգերին, մերժում ճորտատիրական հարաբերությունները և դասային արտոնությունները։ Բուրժուական հասարակության սրբության սրբոց՝ մասնավոր սեփականությունը հռչակվում էր որպես հասարակական հարաբերությունների հիմք։ Հայկական կապիտալի գործունեության հիմնական նպատակը պետք է լիներ ազատագրված հայրենիքի հարստությունների արդյունահանումն ու վերամշակումը։ Հայկական գաղթօջախների առևտրական կապիտալի ոսկեդարն արդեն անցել էր, և Շահամիրյանը կոչ էր անում հայ կապիտալիստներին՝ «Առեք ձեր գանձերը միասին և գնացեք իսկույն Հայաստան աշխարհ, որովհետև այն է ձեր տունը և միայն ձերն է»[37]։ Շահամիրյանի խմբակի անդամների աշխատությունները

---

34 Տե՛ս С. А. Егиазаров, Исследования по истории учреждений в Закавказье, часть I, Сельская община, Казань, 1888, часть II, Городские цехи, там же, 1891, Ս. Եղիազարյանը առաջիններից է, որ լրջորեն զբաղվել է քրդերի ազգագրության հետազոտությամբ (տե՛ս նրա «Краткий этнографический очерк курдов Эриванской губернии», Тифлис, 1884).

35 XIX դարի հայ տնտեսագիտական մտքի պատմությունը ուսումնասիրված է հետևյալ աշխատություններում. Х. Г. Гуланян, Очерки истории армянской экономической мысли XIX в., М., 1955; Ս. Շ. Զաւուրյան, Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր, Երևան, 1959; Ա. Պ. Օհանյան, Արևելահայ տնտեսագիտական մտքի պատմությունից, Երևան, 1960.

36 «Որոգայթ փառաց», Թիֆլիս, 1913, էջ 24։

37 Տե՛ս Թադ. Ավդալբեկյան, Հայագիտական հետազոտություններ, Երևան, 1969, էջ 252։

կրում են բուրժուական տնտեսագիտության մերկանտիլիստական հոսանքի որոշակի ազդեցությունը[38]։

Ռուսաստանին միանալուց հետո Անդրկովկասում նպաստավոր պայմաններ են ստեղծվում արտադրողական ուժերի զարգացման համար։ Հայ մեծատունները ծավալում են շահավետ առևտրաարդյունաբերական գործունեություն, և առևտրական կապիտալի գաղափարախոսների դերում հանդես են գալիս ինչպես լիբերալ, նույնպես և պահպանողական հոսանքների ներկայացուցիչները։ Այդ տեսակետից 1840-ական թվականներին հետաքրքիր է Մխիթարյանների գործունեությունը, որոնք իրենց հրատարակություններում և «Բազմավեպ» հանդեսում զգալի տեղ են հատկացնում նաև տնտեսագիտության հարցերին։ Այսպես, Ղ. Տերտերյանը տնտեսական գործունեությունը բաժանում էր երեք մասի՝ երկրագործություն, արդյունագործություն և վաճառականություն։ Վերջինս նա համարում էր արտադրության զարգացման խթան և աշխատանքը «բաժանելուն պատճառ»[39]։ Տերտերյանը թեպետև տուրք է տալիս գռեհիկ տեսություններին, շփոթում է ապրանքների արժեք ու գին կատեգորիաները, սակայն մոտենում է արժեքի գիտական բնութագրմանը։

«Բազմավեպի» հոդվածագիրներից Տ. Թնկրյանը ապրանքի, փողի, արժեքի, գնի մասին իր հայացքները շարադրում է Ադամ Սմիթի անմիջական ազդեցությամբ։ Նա որոշակիորեն տարբերում է ապրանքի արժեքը նրա գնից, գտնելով, որ ապրանքի գինը պայմանավորված է առաջարկի ու պահանջի հարաբերությամբ, իսկ արժեքը որոշվում է արտադրության ծախսերով։ Սմիթի արժեքի աշխատանքային տեսությունը հեղինակը համարում է միակողմանի, պահանջելով, որ չանտեսվի նաև կապիտալի և հողի դերը։ Թնկրյանը փողը դիտում է որպես ապրանք, որը, սակայն, արժեքի չափանիշի ֆունկցիա ունի և հարստության ընդհանրական ձև է, բայց որպես հարստություն, այն ապրանքից չի տարբերվում։ Հեղինակը կտրականապես հակադրվում է մերկանտիլիստներին՝ նրանց ուսմունքը համարելով մոլորություն[40]։

Թնկրյանը փորձում է ստեղծել արտադրության երեք հիմնական տարրերի՝ աշխատանքի, կապիտալի և հողի մասին ամբողջական ուսմունք։ Նա լուսաբանում է աշխատանքի տեխնիկական, հասարակական և միջազգային բաժանման հարցերը՝ կապված հարստության մեծացման և արդյունավետ օգտագործման պրոբլեմի հետ։ Թնկրյանը պահանջում էր կապիտալը տարբերել փողից, բաժանելով կապիտալը երկու՝ հիմնական և շրջանառու մասերի. «Հաստատուն կամ անփոփոխ ինչք... շենքեր, մեքենաներ, կենդանիք», և «փոփոխական՝ նախնական նյութերը, զանազան աշխատանքները, գործավորաց վճարքը, որոնք փոփոխություն կրելու հետ են միշտ»[41] Հողը համարելով արտադրության կարևոր տարր, Թնկրյանը գտնում էր, որ այն առանց աշխատանքի և կապիտալի «ինքնիրմե չկրնար պտղաբեր ըլլալ»[42]։ Այսպիսով, աշխատանքը, կապիտալը և հողը նա դիտում է որպես եկամտի երեք գլխա-

38 «Արոգայլի փառաց», էջ 252, 262, 263։

39 Ղուկաս Տէրտէրեանց. Գիտութին վաճառականութեան, Վիեննա, 1848, էջ 2։

40 Տե՛ս «Բազմավեպ», 1848, 1 սեպտեմբերի, էջ 265։

41 «Բազմավեպ», 1848, 15 ապրիլի, էջ 125։

42 «Բազմավեպ», 1848, 15 մայիսի, էջ 155։

վոր աղբյուրներ, ըստ որում, ձեռնարկատիրոջ նկամտի աղբյուրը համարում է կապիտալի շահույթի հետ միասին նաև նրա ծախսած աշխատանքը։

Քաղաքատնտեսության տեսական հարցերն ավելի հանգամանորեն են շարադրված արևմտահայ մտավորականության ականավոր ներկայացուցիչ Նիկողայոս Զորայանի (1821—1859) «Քաղաքական տնտեսության վրա տեղեկություններ» աշխատության մեջ։ Ի տարբերություն իր նախորդների, որոնք քաղաքատնտեսությունը համարում էին «մարդկային ընկերությունը երջանիկ ընելուն հնարքներ» ուսուցանող գիտություն, Զորայանն այն բնութագրում է որպես հասարակության հարստության արտադրության, բաշխման և սպառման օրենքներն ուսումնասիրող գիտություն[43]։ Նախամարքսյան շրջանի հայ տնտեսագիտության մեջ քաղաքատնտեսության առարկայի այս բնութագրությունը մնաց որպես ուշագրավ մի հայտնագործություն։ Իր վերլուծությունը Զորայանն սկսում է փոխանակության պրոցեսից, որը առաջ է գալիս ու զարգանում աշխատանքի բաժանման հիման վրա. նա գտնում է, որ ապրանքների փոխանակությունը կատարվում է ըստ նրանց արժեքի՝ փողի միջոցով։ Նա մերժում է փողի անվանական տեսությունը և նշում, որ փող ապրանքի արժեքը որոշվում է նրա արտադրության ծախսերով ու աշխատանքով[44]։ Սակայն, հեղինակն իրեն ժամանակակից բոլոր տնտեսագետների նման հաճախ շփոթում է և նույնացնում արժեք ու գին հասկացությունները։

Զորայանը որոշակիորեն սահմանազատում է փող և կապիտալ հասկացությունները, նկատելով, որ «ինչքը» ավելի լայն է, քան դրամագլուխը կամ, ինչպես ինքն է անվանում, սերմիչեն (փողային կապիտալ)։ Ինչքը կարող է լինել ինչպես փողի, այնպես էլ արտադրության միջոցների ու ապրանքների ձևով, այն «կերպարանքե կերպարանք փոխվելով՝ վերջապես դրամագլուխի ձևով կրկին սերոջ ձեռքն է»[45] վերադառնում։ Կապիտալի կերպարանափոխությունների մասին Զորայանի ասելիքները նոր խոսք են իր նախորդների ու ժամանակակիցների համեմատությամբ։ Նա կապիտալը համարում է հարստության մեծացման միջոց. «հարստությունը հարստությամբ կը վաստկի»[46], որով և այն տարբերվում է փողից ու մնացած ապրանքներից։ Լինելով նոր զարգացող բուրժուազիայի գաղափարախոս, Զորայանը մասնավոր սեփականությունը համարում է հարստության արդյունավետ օգտագործման հիմքը և մերժում շահույթի, տոկոսի և ռենտայի անարդարացի եկամուտներ լինելու մասին տեսակետը։

Հեղափոխական-դեմոկրատ Միխայել Նալբանդյանի (1829—1866) թողած հարուստ գրական ժառանգության մեջ ծավալուն տեղ է գրավում սոցիալ-տնտեսական երևույթների վերլուծությունը, որով Նալբանդյանը մտնում է հայ տնտեսագիտական մտքի պատմության մեջ որպես մի ինքնատիպ դեմք[47]։ Տիրող կարգերի խոր և սուր քննադատության հիման վրա նա հանդում է հեղափոխական հետևությունների և առաջադրում հասարակության արմատական

---

43 Նիկողայոս Զորայան. Ընթերցանութիւն, կ. Պոլիս, 1852, էջ 315։

44 Նիկողայոս Զորայան. Քաղաքական տնտեսության վրա տեղեկություններ, կ. Պոլիս, 1849, էջ 31—32։

45 Նույն տեղում, էջ 75։

46 Նույն տեղում, էջ 73։

47 Տե՛ս Վ. Աղայոզմյան. Միքայել Նալբանդյանի սոցիալ-տնտեսագիտական հայացքները, Երևան, 1955։

հեղաշրջման պահանջ, որը նա հիմնավորում է՝ ելնելով առաջավոր սոցիալական գիտությունների սկզբունքներից։ Քաղաքատնտեսությունը պետք է զբաղվի աշխատավորների ապրուստի պայմանների ուսումնասիրությամբ և «նպաստի մարդու կենցաղը՝ իր տունն ու բոլը բավարարելուն»[48]։ Դրա համար մարդիկ պետք է կազմակերպեն նյութական բարիքների արտադրություն, որի գլխավոր տարրերն են աշխատանքը և նյութը, որոնք պետք է հանդես գան միասնաբար, քանի որ «Աշխատությունը առանց նյութի և առանց հիմքի,— գրում է Նալբանդյանը,— հասարակաց վերաբերությամբ չունի այն ուժը և զորությունը, ինչ որ ունի աշխատությունը, երբ նորա հետ զուգընթաց է նյութը, երբ այդ բոլորը հաստատված է հիմքի վրա»[49]։

Ի տարբերություն իր նախորդների, Նալբանդյանը, նկատելով տնտեսական կատեգորիաների սոցիալական բովանդակությունը, բացահայտում է արտադրության տարբերի հակամարտ բնույթը կապիտալիստական կարգերում, որտեղ աշխատողը «վարձկան է, իսկ վարձկանի աշխատությունը յուր համար չէ, վարձկանի առաջ բերած արդյունքը վայելում է նորա տերը»[50]։

Աշխատավոր բնակչության ազատագրումը շահագործման լծից Նալբանդյանը բնութագրում է որպես «կենաց ու մահու» նշանակություն ունեցող տնտեսական խնդիր, այն Գորդյան հանգույցը, առանց որի լուծման «հասարակությունը յուր ընկերական հարաբերությանց մեջ ազատ»[51] լինել չի կարող։ Այդ տնտեսական խնդրի լուծման միակ ուղին Նալբանդյանը համարում է աշխատավորների զինված ապստամբությունը և մերժում ռեֆորմների միջոցով հասարակության վերակառուցման ծրագիրը։ «Մարդուն համար վերևից եկած ազատությունը նման է այն ցողի կաթիլին, որը ցընդում է արևի առաջին իսկ ճառագայթից»[52], գրում է Նալբանդյանը։

Ապագա հասարակության տնտեսական ծրագրի հիմքը համարելով ազատ երկրագործությունը, Նալբանդյանը ընդգծում էր նաև արդյունաբերության և առևտրի զարգացման անհրաժեշտությունը։ Ազգային վաճառականությունը պետք է զարգանա գերազանցապես արդյունաբերական ապրանքների արտահանման հիման վրա, «երբ նա գլխավորապես հայի առաջ բերած նյութը և արդյունքը վաճառե»[53], գրում է Նալբանդյանը։ Նա գործարանային արդյունաբերության զարգացման համար մեծ ապագա է գուշակում, չնկատելով կապիտալիստական հարաբերությունների հակասությունները։

70–80-ական թվականներին Ռուսաստանում և Անդրկովկասում, կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով հայ իրականության մեջ ձևավորվում է մանրբուրժուական տնտեսագիտությունը, որի ներկայացուցիչները Հանդիսացան Գ. Ախվերդյանը, Պ. Շանշյանը և Ս. Եղիազարյանը։ Նրանց աշխատություններն արժեքավոր ներդրում էին Անդրկովկասի քաղաքային արհեստավորական կազմակերպությունների և ագրարա-

---

48 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 4, Երևան, 1949, էջ 213։
49 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 3, Երևան, 1940, էջ 62։
50 Նույն տեղում։
51 Նույն տեղում, էջ 36։
52 Նույն տեղում։
53 Նույն տեղում, էջ 72։

յին հարաբերությունների ուսումնասիրության բնագավառում։ Սակայն, որպես մանր բուրժուազիայի գաղափարախոսներ, նրանք չհասկացան պատմական առաջընթացի բովանդակությունը և փորձում էին ապացուցել, որ քաղաքային համքարական կազմակերպությունները և գյուղի համայնական հարաբերությունները մանր արտադրողներին աշխատանքով և ապրուստի միջոցներով ապահովելու լավագույն տնտեսական ինստիտուտներն են։ Բայց մանր արտադրողների բնույթին վերաբերող առանձին հարցերում նրանք տարբեր կարծիքի էին։ Այսպես, եթե Ախվերդյանը գտնում էր, որ Թիֆլիսի համքարությունները էապես տարբերվում են արևմտաեվրոպական միջնադարյան համքարական կազմակերպություններից[54], ապա Եղիազարյանը ընդհակառակը՝ գրում էր, որ «XVIII—XIX դարերի երկրորդ կեսում եղած համքարությունները գտնվում էին զարգացման նույն մակարդակի վրա, ինչպիսիք էին XIII և XIV դարերի Եվրոպայի ցեխային կազմակերպությունները»[55]։ Համքարությունների լավ կողմերն Ախվերդյանը համարում էր այն, որ նրանք ապահովում են աշխատողին «հանապազօրյա հացի կտորով» և «տանելի ապրուստով»[56]։ Համքարությունը Պ. Շանշյանը համարում է «հասարակության անագորուն թշնամու՝ աղքատության դեմ հուսալի պատվար»[57], Եղիազարյանը թեպետև վեր է հանում համքարությունների և համայնքների ներհակությունները և ցույց տալիս դրանց քայքայման պրոցեսը, բայց որպես մանր արտադրության ջատագով, փառաբանում է այդ հաստատությունների ներսում գոյություն ունեցող հարաբերությունները և միանում մյուս հեղինակներին՝ մանր արտադրողներին վերագրվող բարեմասնությունների հարցում։

Կապիտալիզմի զարգացման հետ միասին հանդես եկան նրա գաղափարախոսները, որի ականավոր ներկայացուցիչները հայ իրականության մեջ հանդիսացան եվրոպական կրթություն ստացած տնտեսագիտության դոկտորներ Գր. Արծրունին (1845—1892) և Ավ. Առախանյանը (1857—1912)։ Որպես բուրժուական առաջընթացի մարտական դրոշակակիր, Գ. Արծրունին անխնա մերկացնում էր հոգևորականության, կալվածատերերին և վաշխառուներին՝ որպես ձրիակերների և հասարակության ղեկավար ուժը համարում էր նոր զարգացող արդյունաբերական բուրժուազիային։

Արծրունու «Մշակը» մերժում էր Ռուսաստանում կապիտալիզմի զարգացման անհնարինության նարոդնիկական ըմբռնումը և պաշտպանում կապիտալիզմի անխուսափելիության մասին տեսակետը։ «Մշակը» գտնում էր, որ կապիտալիստական կարգերն անհրաժեշտ են «հակաբնակերական ոգի» ունեցող հայ ժողովրդի համար, որը «մինչև չի անցնի կապիտալիզմի վերլուծող և կրկին միացնող տնտեսական լաբորատորիայով՝ չի բնակեանա ընակերական մեծ գաղափարի հետ»[58]։ Արծրունին համոզված էր, որ պետությունը կարող է վերացնել կապիտալիզմի բերած թշվառությունները և լուծել տըն-

---

54 *Տե՛ս Ю. Ахвердов*, Тифлисские амкары, Тифлис, 1883, стр. 3.

55 *С. А. Егиазаров*, Исследования по истории учреждений Закавказья, Казань, 1891, стр. XVIII.

56 *Ю. Ахвердов*, Тифлисские амкары, стр. 19.

57 *П. Шаншян*, Два слова об амкарах, Тифлис, 1857, стр. 33.

58 «Մշակ», 1884, № 6։

տնտեսական հակասությունները[59]։ Պետական միջոցառումների հետ միաժամանակ կապիտալիստական հասարակության կատարելագործման ուղին նա համարում էր նաև փոխառու ընկերությունները, «էժան կրեդիտը», որը «հասարակության տնտեսական ուժ կազմող» «ժողովրդի ստորին, աղքատացող դասին, այսինքն գյուղացի երկրագործին և քաղաքային արհեստավորին» կազատի վաշխառուների և առևտրականների շահագործումից[60]։

Քաղաքատնտեսության տեսական հարցերի Արծրունու մեկնաբանությունները կրում են ինչպես բուրժուական դասական, այնպես և գոհրիկ ուղղությունների ազդեցությունը։ Հարստության և կյանքի աղբյուրն ընդհանրապես նա հավասարում է աշխատանքը, որ երկիրը «ոչինչ չէ տալիս մեզ առանց աշխատանքի»[61]։ Հասարակական հարստության ստեղծման գործում Արծրունին կանգնած է Սեյի եռանդամ բանաձևի սկզբունքների վրա՝ շեշտելով հատկապես աշխատանքի և կապիտալի ստեղծագործական նշանակությունը։

Հայ հասարակական մտքի պատմության մեջ բուրժուական տնտեսագիտության ականավոր ներկայացուցիչ էր նաև Ավետիք Առաքելյանը։ Նա տեսնում էր կապիտալիստների և բանվորների տնտեսական շահերի հակադրությունը, իսկ դասակարգային տարբերությունների հիմքը համարում էր այն, որ «նորա զանազանվում են միմյանցից իրանց... հասարակական դիրքով տերության մեջ»[62]։ Առաքելյանի խմբագրած «Մուրճ» ամսագիրը, անդրադառնալով սոցիալիզմի հարցին, նշում էր, որ ինքը չի բաժանում որոշ հեղինակների արմատական հետևությունները և նրանց հակադրում է իր հետևյալ դիրքորոշումը. «Մենք վերաբերվում ենք դեպի սոցիալիզմը կրիտիկաբար և ընդունում ենք աստիճանական զարգացումը իբր առողջ զարգացման լավագույն ճանապարհ»[63]։

Ավ. Առաքելյանը գտնում էր, որ մասնավոր սեփականությունը, անշուշտ, ունի թերություններ, որոնց առաջը պետք է առնել, «բայց իհարկե, ոչ անպատճառ նորա խոպան վերացնելով, այլ օրինակի համար, հողային հարկերի սիստեմը փոխելով»[64]։ Արծրունու և Առաքելյանի գաղափարական հայացքների մեջ սկզբունքային տարբերություն չկար։ Երկուսն էլ կապիտալիստական արտադրության եղանակը դիտում էին որպես արդյունավետ համակարգ և հասարակության առաջընթացի նպատակը համարում նրա հետագա կատարելագործումը։ Առաքելյանի հայացքների առավել դեմոկրատական բնույթը բացատրվում է Կ. Մարքսի աշխատությունների նրա վրա ունեցած ազդեցությամբ, որը և նրան մղում է «Կապիտալի» առաջին հատորի թարգմանությանը (1905)։

Առաքելյանը բարձր է գնահատում ֆիզիոկրատներին, որոնք մերժելով մերկանտիլիզմը, հարստության ստեղծման պրոբլեմի ուսումնասիրությունը շրջանառության ոլորտից փոխադրեցին նյութական արտադրության բնագավառ։ Բայց միաժամանակ ճիշտ է նկատում, որ նրանց ուսմունքը

---

59 «Մշակ», 1888, № 26, 1888, № 46։

60 «Մշակ», 1873, № 10։

61 Գրիգոր Արծրունի. Աշխատություններ, Թիֆլիս, 1904, էջ 42։

62 Ավետիք Առաքելեան. Ազգաբնակչութիւնը և ազգաբնակչութեան շարժումները, Թիֆլիս, 1883, էջ 12։

63 «Մուրճ», 1895, № 11, էջ 1451։

64 Ա. Առաքելյան. Հողի արդյունաբերությունը և հասարակությունը, Թիֆլիս, 1884, էջ 60։

միակողմանի է այն առումով, որ հարստության աղբյուրը համարվում էր միայն գյուղատնտեսությունը, առանց տեսնելու գործարանային արտադրության ձևով հարստություն գոյացնելու ուժը»[65]։ Արասխանյանը իրավացիորեն նկատում էր, որ նյութական բարիքների արտադրության նպատակը կատարված ծախսերը ծածկելուց բացի «մի բան էլ ավելացնելն է»[66], այսինքն հավելյալ արժեքի արտադրությունը, որի էությունը, սակայն, նա չկարողացավ ըմբռնել։ Ռ. Ռիկարդոյի rենտայի ուսմունքը բարձր գնահատելով հանդերձ, Արասխանյանը հարստության ստեղծումը քննում էր արտադրության ծախսերի տեսության դիրքերից և rենտայի առաջացումը կապում բնակչության աճման և «հողի նվազող պտղաբերության օրենքի» հետ։ Պահանջելով տարբերել արժեք և գին հասկացությունները, Ա. Արասխանյանը, սակայն, շփոթում էր արժեքն ու սպառարժեքը, կապիտալը նույնացնում էր արտադրության միջոցների և նույնիսկ բնության ուժերի հետ։

Նախահեղափոխական շրջանի հայ տնտեսագիտական մտքի պատմության ականավոր դեմքերից են բուրժուական լիբերալ տնտեսագետներ Ս. Գուլիշամբարովը, Մ. Բունիաթյանը, Վ. Թոթոմյանցը։

Առաքել Գուլիշամբարովը *(1849—1915)* ավարտել է Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտը, սկզբնական շրջանում որոշ հակում է ունեցել դեպի հաարդնիկական շարժումները ու նրանց գաղափարախոսությունը, բայց հետո հանգել է այն հաստատ համոզման, որ Ռուսաստանի ապագան կապիտալիստական հասարակությունն է։ 1875—79 թթ. եղել է «Бакинские известия» թերթի խմբագիրը, 1891-ից պետական պաշտոններ է վարել Պետերբուրգում, գործուն մասնակցություն ունեցել «Ռուսական գյուղատնտեսական լիակատար հանրագիտարանի» *(1900—1912)* ստեղծմանը։ Լինելով բազմաթովանդակ հետաքրքրությունների տեր բեղմնավոր գիտնական, Ս. Գուլիշամբարովը թողել է տեխնիկական, տնտեսագիտական, վիճակագրական, գյուղատնտեսական, աշխարհագրագիտական բնույթի հարուստ գրական ժառանգություն[67]։ Նրա հիսունից ավելի մենագրությունների մի մասը թարգմանվել է տարբեր լեզուներով։

Գուլիշամբարովի տնտեսագիտական բնույթի աշխատությունները նվիրված են Ռուսաստանի և հատկապես Անդրկովկասի, ինչպես նաև Միջին Ասիայի արտադրողական ուժերի ուսումնասիրությանը, որի հիմքում ընկած էր երկրի ինդուստրիալ զարգացման գաղափարը։ Արդյունաբերության զարգացման ուսումնասիրության ընթացքում հեղինակը հաճախ է անդրադառնում բանվորական հարցին։ Սակայն նա հասու չի լինում այն ճշմարտությանը, որ իր ակնկալած բարեփոխություններով բանվոր դասակարգի դրությունը կապիտալիզմի պայմաններում չի կարող բարելավվել։

Իր տևական շրջագայությունների ընթացքում եվրոպական երկրներում և Ամերիկայում Գուլիշամբարովը մտերիմ ծանոթանում է զարգացած կապիտալիստական երկրների տնտեսական կյանքին և մի շարք աշխատություններ նվիրում այդ հարցին։ Դրանցում կենտրոնական տեղ են գրավում նավթային գործին նվիրված ուսումնասիրությունները, որոնք կարևոր գիտական

---

65 Նույն տեղում, էջ 15։

66 Նույն տեղում, էջ 5։

67 Տե՛ս Ա. Հովսեփյան. Առաքել Գուլիշամբարով. Երևան, 1973։

հետաքրքրություններից բացի հետապնդում էին նաև գործնական նպատակ՝ կապված համաշխարհային նավթային շուկայում ռուսական նավթի տեղի ու դերի, նրա հեռանկարների լուսաբանման հետ։

Բեղմնավոր է նաև Գուլիշամբարովի գործունեությունն արտադրանքի տարբեր տեսակների համաշխարհային շուկաների ուսումնասիրության հարցում։ Նա հարուստ վիճակագրական տվյալների հիման վրա ցույց է տալիս արտադրանքի գլխավոր տեսակների արտադրության և արտահանման պատկերը միջազգային շուկայում և առանձին երկրների տեղն ու դերը համաշխարհային ապրանքաշրջանառության մեջ։ Հատկապես արժեքավոր է ավելի քան երկու տասնյակ երկրների արտադրողական ուժերի, կապիտալիստական արտադրական հարաբերությունների և Ռուսաստանի հետ ունեցած նրանց տնտեսական կապերի զարգացման ընթացքի ուսումնասիրությունը։ Գյուղացիների ազատագրումը կուլտուրական երկրների մեծ մասում, գրում է Գուլիշամբարովը, «ստրկական աշխատանքի փոխարինումն ազատ աշխատանքով մեծ կլանք տվեց և նոր ձեռներեցություն հաղորդեց աշխատանքին»[68]։ Իր ազատամիտ գաղափարներով հանդերձ Գուլիշամբարովը մնաց լիբերալ բուրժուական հոսանքի շրջանակներում։

Մենատ Բունիաթյանը *(1877—1967)* հայտնի է քաղաքատնտեսության տեսական հարցերին նվիրված իր աշխատություններով, որոնցից առանձնապես արժեքավոր է նրա գերարտադրության տնտեսական ճգնաժամերի մասին ուսումնասիրությունը։ Սովորել է Լայպցիգի, Բեռլինի, Պետերբուրգի և Մյունխենի համալսարաններում, 1903 թ. եղել է Մյունխենի համալսարանի քաղաքական գիտությունների դոկտոր, 1915 թ. Մոսկվայի համալսարանի, այնուհետև Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի պրոֆեսոր, *1925—1940 թթ.*՝ Փարիզի համալսարանի պրոֆեսոր։ Կապիտալի մասին նրա ուսմունքի մեջ գրականը այն է, որ վերջինս դիտվում է որպես կապիտալիստական արտադրության բնորոշ կատեգորիա։ Կապիտալիստական արտադրության ցիկլային բնույթը նա բացատրում է «տնտեսական կյանքի հիմքում ընկած հակասություններով»[69]։ Բայց գերարտադրության տնտեսական ճգնաժամերի նրա տեսությունը խարխլվում է արժեքի սուբյեկտիվ ըմբռնման վրա։ «Ելնելով միայն արժեքի սուբյեկտիվ տեսությունից,— գրում է հեղինակը,— կարելի է հանգել գների պարբերական շարժման երևույթի բավարար բացատրության, որն ընկած է տնտեսական ճգնաժամերի հիմքում»[70]։ Բունիաթյանը համոզված է, որ կապիտալիստական արտադրության եղանակն ամենակատարյալն է, իսկ նրա թերությունները կարելի է վերացնել պետության տնտեսական քաղաքականության միջոցով[71]։ Նա հանդես է գալիս որպես «կազմակերպված կապիտալիզմի» տեսության ներկայացուցիչ։

Վ. Թարնովյանցը *(1875—1923)* ծնվել է Աստրախանում, սովորել եվրոպական համալսարաններում (Բեռլին, Ցյուրիխ, Ժնև, Բրյուսել)։ 1898 թ. ավարտել է Բրյուսելի համալսարանը և ստացել սոցիալական գիտություն-

---

[68] *Տե՛ս О. Гулишамбаров.* Всемирная торговля в XIX веке и участие в ней России, СПб., 1898, стр. 186.

[69] *М. А. Бункатян.* Экономические кризисы, Москва, 1915, стр. 278.

[70] Նույն տեղում, էջ 110—111։

[71] Նույն տեղում, էջ 292։

ների դոկտորի աստիճան։ Դասավանդել է սկզբում Բեռլինի, ապա Պետերբուրգի և Մոսկվայի համալսարաններում որպես քաղաքատնտեսության և կոոպերացիայի դասախոս։ Այնուհետև աշխատել է Պրագայում, Բուլղարիայում, Իտալիայում, հրատարակել է կոոպերացիայի տեսության և պատմության վերաբերյալ մի շարք աշխատություններ։

Թոթոմյանցը կոոպերատիվ շարժման լիբերալ-բուրժուական ուղղության տեսաբան է։ Այս հոսանքի գաղափարախոսները շահագործման և սոցիալական անարդարությունների գոյությունը չեն ժխտում։ Դեռ ավելին, «սահմաններ չճանաչող անխնա շահագործումը դարաշրջանի բնորոշ գիծն է»[72], գրել է Թոթոմյանցը։ Բայց նա այն հաստատ համոզմանն է, որ արտադրական և սպառողական կոոպերատիվ կազմակերպությունների միջոցով հնարավոր է բնակչությանն ազատել շահագործողների կեղեքումից, բարելավել աշխատավորների ապրուստի, բնակարանային պայմանները, ապահովել նրանց կրթության և դաստիարակության գործը։ Կապիտալիստական հասարակարգում կոոպերատիվ շարժման նշանակությունը և նրա ուտոպիկ բնույթը սպառիչ կերպով բացահայտեց Վ. Ի. Լենինը։ Կապիտալիզմի պայմաններում, գրում է Վ. Ի. Լենինը, կոոպերացիան կապիտալիստական կոլեկտիվ հիմնարկություն է, ուստի կոոպերատիվ «սոցիալիզմը» իրոք «ռոմանտիկ, նույնիսկ դոնկիխոտ» ուսմունք է, որը քարոզում է «դասակարգային հաշտություն»[73]։

XX դարի սկզբին բանվորական շարժումը գնում էր դեպի հեղափոխություն, և այդ բազայի վրա մարքսիստական գաղափարախոսությունն արագորեն տարածվում էր աշխատավորական լայն զանգվածների շրջանում։ Այս նոր ուսմունքի դրոշակակիրները հայ իրականության մեջ հանդիսացան Ս. Շահումյանը, Ս. Ապանդարյանը, Բ. Կնունյանցը, Ա. Մյասնիկյանը, Ս. Կասյանը և ուրիշներ։ Նրանք մարքսիստական տնտեսագիտության ստեղծագործական պրոպագանդան սերտորեն կապում էին Անդրկովկասի բանվորական շարժման խնդիրների հետ, միաժամանակ մերկացնելով բուրժուական հոսանքների հակահեղափոխական գործունեությունն ու գաղափարախոսությունը։ Հայ ականավոր մարքսիստները բացահայտում էին կապիտալիստական կարգերի զարգացման առանձնահատկություններն ու հակասությունները և, ղեկավարվելով մարքս-լենինյան քաղաքատնտեսական տեսական սկզբունքներով, հիմնավորում այդ կարգերի կործանման անխուսափելիությունը։

Հասարակության զարգացումը դիտելով որպես բնապատմական պրոցես, նրանք ընդգծում են արտադրողական ուժերի որոշիչ դերը հասարակության առաջընթացի գործում[74]։ Հասարակական-տնտեսական ֆորմացիաների հաջորդափոխության պրոցեսը կատարվում է արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների միջև խորացող հակասության բռնի լուծման միջոցով։ Այս տեսանկյունով Շահումյանը հանգամանորեն վերլուծում է կապիտալիստական հասարակության հակասություններն ընդհարապես և դրանց դրսևորման կոնկրետ արտահայտությունները Անդրկովկասում։ Հա-

---

72 В. Тотомянц, Мощь кооперации, СПб., стр. 2.

73 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 563։

74 Տե՛ս Սա. Շահումյան, Երկ, հ. 1, Երևան, 75 էջ 122; Ավ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 32—33։

վելյալ արժեքի օրենքի հիման վրա տեղի է ունենում հարստության և աղքատության բևեռացում, խորանում է «այն վիհը, որ բաժանում է միմյանցից ներկայիս երկու հակամարտ դասակարգերը՝ բուրժուազիան և պրոլետարիատը»[75]։

Ս. Սպանդարյանը, բացահայտելով կապիտալիզմի հիմնական հակասության էությունը, ցույց է տալիս, որ ժամանակակից հասարակության հակասությունները պայմանավորված են «Արտադրության հասարակական բնույթով և հասարակական արտադրության արդյունքները մասնավոր կերպով, առանձնապես (անհատորեն) յուրացնելու բնույթով»[76]։

Կապիտալիզմի զարգացումը հանգամանորեն ուսումնասիրելով, հատկապես «Արդի տնտեսական կյանքը» ծավալուն հետազոտության մեջ (1912) Մյասնիկյանը վեր է հանում Ռուսաստանի և Անդրկովկասի տնտեսական զարգացման առանձնահատկությունները։

Ելակետ ունենալով իմպերիալիզմի լենինյան ուսմունքի սկզբունքները, հայ մարքսիստները մերկացնում էին իմպերիալիստական պետությունների միլիտարիստական քաղաքականությունը, որի հիմնական խնդիրն էր աշխարհի տերիտորիալ վերաբաժանման հետ միաժամանակ «կանգնեցնել հեղափոխության հետագա զարգացումը և սանձահարել բանվորներին և գյուղացիներին»[77]։ Բայց հետադիմական ուժերը չեն կարող կասեցնել պատմության ընթացքը։ Իրադարձությունները ծավալվում են վերահաս հեղափոխության անխուսափելիության նշանաբանով և «Եվրոպայի սոցիալիստական բոլոր կուսակցությունների հիմնական խնդիրը ներկայումս մենք համարում ենք սոցիալական հեղափոխության ուժգին պրոպագանդան»[78]։ Մարտնչող պրոլետարիատը, գրում է Ալ. Մյասնիկյանը, «կոփում է կռվի շառաչող սուրը», որը շուտով, «կավետե մեզ հեղափոխության մի նոր գրոհի մասին»[79]։

Ագրարային հարցի ճշտակ լուծման համար պահանջվում էր նրա հակագիտական ըմբռնումների մերկացումը, որը և ծավալուն տեղ է գրավում հայ մարքսիստների աշխատություններում։ Հանգամանորեն ուսումնասիրելով խոշոր և մանր տնտեսությունների զարգացման օրինաչափությունները, Մյասնիկյանը քննադատում է Սիսմոնդիի, նրա ռուս աշակերտների՝ նարոդնիկների «մանր տնտեսությունների կենսունակության» տեսությունը և ցույց տալիս, որ XX դարի ռևիզիոնիստները փորձում են վերակենդանացնել կյանքի կողմից վաղուց արդեն հերքված այդ ուղղությունները[80]։

Ճշմարտության չափանիշը, սակայն, պատմական զարգացման ընթացքն է, և վերահաս սոցիալիստական հեղափոխությունը հաստատեց մարքս-լենինյան ուսմունքի գիտականությունը։

6. ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

XIX դ. վերջին հայ փիլիսոփայական մտքի մեջ ձևավորվում են պոզիտիվիստական, էկլեկտիկ և մատերիալիստական ուղղությունները։ Պոզի-

75 Ստ. Շահումյան, ԵԼԺ, հ. 2, էջ 93։
76 Ս. Սպանդարյան. Երկեր, հ. 1, Երևան, 1959, էջ 212։
77 Ստ. Շահումյան. ԵԼԺ, հ. 3, էջ 123։
78 Նույն տեղում, էջ 17։
79 Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 8։
80 Տե՛ս նույն տեղում, էջ 62—76։

տիվիզմի ներկայացուցիչ էր Գր. Արծրունին, նա պնդում էր, որ գիտության հիմքը ոչ թե դրական փաստերի հետազոտությունն ու տեսական ընդհանրացումն է, այլ նրանց նկարագրությունը։ Այստեղից էլ փորձի ըմբռնումը, որպես սուբյեկտիվ զգայությունների կամ պատկերացումների գումար։ Արծրունին առաջադրեց անհատականության բուրժուական հայացքը, գրելով, թե «Ամեն ուղղությունը, որին մենք հետևել ենք, կարող է որոշվել երկու խոսքով, ձգտում դեպի անհատականության զարգացում»[81]։

Էկլեկտիցիզմի ներկայացուցիչներ էին հայ նարոդնիկները, որոնք ռուս նարոդնիկների նման պնդում էին, թե պատմությունը կերտում են ոչ թե ժողովրդական զանգվածները, այլ առանձին աչքի ընկնող գործիչներ, «բնատարաբար մտածող անհատներ»։

Հայ մատերիալիստական մտքի զարգացման գործում մեծ է Գալուստ Կոստանդյանի (1843—1898) դերը։ (Հարկ է նշել, որ նա XIX դարի վերջերի մատերիալիզմը հասցրեց աթեիզմին)։ Նրա նշանավոր աշխատությունը «Մեքոդին վրա» երկն է, որը լույս տեսավ Զմյուռնիայում 1878 թ.։ Այն հարցին, թե ինչն է առաջնային՝ հոգին, թե՞ մատերիան, գոյը, թե՞ գիտակցությունը, Կոստանդյանը առանց վերապահումների պատասխանում է, որ սկզբնականը սուբստանցիան է, մատերիան, որն առաջանալ չի կարող, նա եղել է, կա ու պիտի լինի։ Նյութը մշտական է, նա ոչ սկիզբ ունի, ոչ էլ վերջ։ «Իրերու սկիզբ ու վերջ մը դավանիլը տղայություն է»։ «Նյությունն նշմարված է, թե նյութը ոչ կավնչնա և ոչ կը պակսի, այլ կը փոխվի...»[82], որ երկնքում էլ աստված չկա, կա միայն մատերիա, թե հազարավոր տարիներն ի վեր պաշտված արևը նյութ է, նյութի գոյության մի ձև, և ոչ թե աստված։ Այն տեսակետը, գրում է Կոստանդյանը, թե մատերիան ստեղծող կամ իդեալի ստեղծումն է, անհիմն է, որովհետև աստվածը երևակայության արդյունք է և մարդն է նրա ծնող հայրը։ Քննադատելով մետաֆիզիկան և աշխարհը ճանաչելու հնարավորությունը ժխտող ագնոստիցիզմը, նա մատերիալիստական սկզբունքը տարածեց նաև իմացաբանության և մեթոդաբանության վրա, ստեղծեց իմացության մատերիալիստական մեթոդը։

Մատերիալիզմի մյուս ներկայացուցիչը Ղ. Աղայանն էր։ Նա գիտակցությունը ծագեցնում էր փորձից, նյութական աշխարհից, մտածողությունը, հասկացությունները, միտքը դիտում որպես մատերիայի մտածողություն, արդյունքը, նրանից ածանցվածը։ Այլ կերպ ասած, բոլոր մատերիալիստների նման Աղայանը ելրակացնում է, որ ոչ թե մտածողությունից են գնում դեպի իրերը, այլ իրերից դեպի մտածողությունը[83]։

XX դ. սկզբին հայ փիլիսոփայական մտքի պատմության համար բնորոշ են երեք հոսանքներ. 1) սուբյեկտիվ իդեալիզմը՝ բուրժուազիայի գաղափարախոսության փիլիսոփայական հիմքը, 2) մատերիալիզմի և իդեալիզմի միջև տատանվող էկլեկտիզմը՝ մանրբուրժուազիայի փիլիսոփայությունը, 3) մարքսիստական փիլիսոփայությունը, պրոլետարիատի աշխարհայացքը։

1905—1907 թթ. հեղափոխության և այնուհետև ռեակցիայի տարիներին առանձնապես սուր ձևով դրսևորվեց ճակատամարտը գաղափարախոսու-

---

81 «Մշակ», 1891, № 147, 1878, № 2։

82 Տե՛ս Գ. Կոստանդյան, Մեքոդին վրա, Երևան, 1961, էջ 134։

83 Ղ. Աղայան, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 295, հ. 4, էջ 45։

թյան հակադիր երկու աշխարհը ըմբռնումների՝ մարքսիստական փիլիսոփայության և իդեալիստական փիլիսոփայությունների միջև։ Պայքարը մարքսիզմի դեմ ընթանում էր հիմնականում երկու ձևով՝ մարքսիզմի փիլիսոփայության հիմունքների բացահայտ քննադատության և իրենց մարքսիստ կոչող ունիզիոնիստների կողմից մարքսիզմի աղավաղման։ Երկու դեպքում էլ մարքսիստական փիլիսոփայությանը հակադրվում էին սուբյեկտիվ իդեալիզմը և մետաֆիզիկան։

Դաշնակցության գաղափարախոսներ Մ. Վարանդյանը (Հովհաննիսյան), Ե. Ֆրանդյանը, Վ. Խորենին, Ե. Կուղելյանը, Արշ. Հովհաննիսյանը և ուրիշներ սկսեցին արևմտաեվրոպական երկրներից առատորեն ներմուծել սուբյեկտիվ իդեալիզմի մոդայիկ ուղղություններ՝ պոզիտիվիզմը, նեոկանտականությունը, մախիզմը և ագնոստիցիզմը։ Նրանք հրապարակեցին զգալի քանակությամբ գրքեր, հոդվածներ, որոնցում քննադատում էին մարքսիստական փիլիսոփայությունը, գովերգում Բերկլիի և Յումի ուսմունքը, պրոպագանդում էմպիրիոկրիտիցիզմը։ Սուբյեկտիվ իդեալիզմի և մետաֆիզիկայի դիրքերում կանգնեցին նաև «սպեցիֆիկները»՝ Բ. Իշխանյանը, Դ. Անանունը և ուրիշներ։

Սուբյեկտիվ իդեալիզմը հայ իրականության մեջ ապրեց իր էվոլյուցիան։ Դարի սկզբին այն հանդես եկավ նեոկանտականության և պոզիտիվիզմի պատմանանով, իսկ ռեակցիայի տարիներին իր ավարտին հասավ մախիզմի ձևով։ Մախիզմը եղավ այն որոնված և գտնված փիլիսոփայական դարպասը, որով հրապուրվեցին հայ բուրժուական մտավորականության ոչ քիչ ներկայացուցիչներ, որոնք պոզիտիվիզմի և մախիզմի խառնուրդից սանձեցին ֆենոմենալիզմը։ Նրա էմպիրիոկրիտիկները զգացությունները հայտարարում էին միակ ռեալությունը, ապա հայ ֆենոմենալիստները ընդունում էին զգայություններից դուրս ֆենոմենի ռեալ գոյությունը։ Գոյի և գիտակցության հարաբերության հարցը ֆենոմենալիզմն իր որոշ յուրահատկությամբ հանդերձ սուբյեկտիվ իդեալիզմի ոգով է լուծում։ Սուբյեկտիվ իդեալիզմի ոգով են լուծվում նաև փիլիսոփայական կատեգորիաների՝ օբյեկտի, պատճառականության, պատահականության, անհրաժեշտության, ազատության հարցերը։

Հայ փիլիսոփայական մտքի պատմության մեջ հանդես եկավ մի ուղղություն ևս՝ մատերիալիզմի և իդեալիզմի միջև տատանվող, մատերիալիզմից նահանջող ուղղությունը, ի դեմս հնչակյան կուսակցության գաղափարախոսներ Ա. Կենձյանի, Ա. Կիտուրի, Ռ. Խանազատի, Սապահ-Գյուլյանի և ուրիշների։ Նրանք քննադատում էին իդեալիստ փիլիսոփաներին, որոնք մատերիայի սկիզբն ու վերջն էին փնտրում և ջանում իմանալու, թե մատերիան որտեղից, ինչպես և ով է առաջացրել կամ ով է ստեղծել։ Բայց մյուս կողմից նրանք տուրք էին տալիս գոհիկ մատերիալիզմին, վերագրելով մատերիային այնպիսի ատրիբուտներ, որոնք չեն հակասում իդեալիստական կոնցեպցիային, դրանով իսկ ճանապարհ հարթում գեպի իդեալիզմ։ Այսպես օրինակ, Կիտուրը օբյեկտիվ իրականության ատրիբուտ էր համարում գգայությունը։ «Հյուլեներն ունեն զգացողություն և ձգտում կամ կամավոր շարժում, ասոր փոխարեն կրնանք ըսել՝ հյուլերն ունին հոգի»[84]։

Հայ ականավոր մարքսիստներ Ստ. Շահումյանը, Բ. Կնունյանցը, Ս. Սպանդարյանը, Ալ. Մյասնիկյանը, Արշ. Մելիքյանը, Ալ. Բեկզադյանը, Ս. Կասյանը, Ա. Մռավյանը և ուրիշներ, հետևողական պայքար ծավալեցին

84 Ա. Կիտուր, Մարքսիզմ, պոզիտիվիզմ, Հոգին ու նյութը, Հալեպ, 1939, էջ 23—24։

մարքսիստական փիլիսոփայության բացահայտ կեղծարարների և ռևիզիոնիստ-աղավաղողների դեմ։

Ստ. Շահումյանը գրել է. «Ով ծանոթ է բուրժուական փիլիսոփայության և հասարակական գիտությունների մեջ այժմ իշխող «էմպիրիոկրիտիցիզմ» կոչվող «նոր» ուղղության հետ, նրա համար հասկանալի կլինի, որ այդ երեվույթը մի բացառիկ և պատահական երևույթ չէ։ Նույնացնել իրականությունը «գիտակցության» հետ, «գաղափարի» հետ և ապա ժխտել այդ իրականությունը, հանուն վերացական «գաղափարի», հետո միստիկական ու ֆանտաստիկական կերպարանքով ներկայացնել կենդանի հասարակական պրոբլեմները և միամիտ ընթերցողների աչքերին թոզ փչել, շփոթություն առաջացնել անգիտակից մասսաների ուղեղներում,— ահա թե ինչ է տալիս հասարակական գիտությունների մեջ «կրիտիցիզմը» բուրժուական փիլիսոփայության այդ «վերջին խոսքը»[85]։

Հայ մարքսիստների աշխատություններում համակողմանիորեն լուսաբանված են՝ կեցության ու գիտակցության հարաբերության, դիալեկտիկայի և իմացության, փիլիսոփայության կուսակցականության, պատմության մատերիալիստական ըմբռնման, բազիսի և վերնաշենքի, հասարակության զարգացման օբյեկտիվ օրինաչափությունների, դասակարգային պայքարի, սոցիալիստական հեղափոխության, ազգերի ինքնորոշման և այլ կարևորագույն հարցերը։ Արշավիր Մելիքյանը նշել է. «Ստ. Շահումյանը և Ս. Սպանդարյանը և նրանց համախոհներն իրենց մատերիալիստական աշխարհայացքով, դավանած հեղափոխական մարքսիզմով, պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարով, անշեղ ու անաղարտ միջազգայնությամբ՝ հիրավի մի նոր դարաշրջան են կազմում մեր կյանքի զարգացման ընթացքում, հիրավի մի նոր դարագլուխ են բացում մեր իրականության մեջ»[86]։

7. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Քիմիա, ֆիզիկա—Դեռ հնագույն ժամանակներում Հայաստանում մաթեմատիկայի ու բնական գիտությունների հետ միասին սկզբնավորվել և միջին դարերում հայտնի զարգացում էին ստացել հանքային, բուսական և կենդանական ծագում ունեցող հումքի վերամշակման արհեստ-արվեստները։ Կուտակվել էր նախաբնիկների և հարևան առաջավոր երկրների ժողովուրդների փորձի օգտագործմամբ հարուստ սեփական բազմադարյան փորձ։

Հին Հայաստանում բարձր զարգացման էին հասել լեռնային գործը, կիրառական քիմիան, տեխնիկական և քիմիական գիտելիքները, մետալուրգիան՝ ոսկու, արծաթի, պղնձի, երկաթի, կապարի, ցինկի, մանգանի, անագի, ծարիրի, զառիկի, անդիկի արդյունահանությունն ու վերամշակումը, միահալույթ-համաձուլվածքներ (բրոնզ, արույր) և ամալգամներ պատրաստելու արվեստը, ինչպես նաև ոչ մետաղական օգտակար հանածոների՝ ծծմբի, շիբի, կրի, ագատի, հասպիսի, քվարցի, հատուկ կավերի, տուֆի, օբսիդիանի, հրաբխային խարամների լայն օգտագործումը, բարձրորակ գունազարդ խե-

---

85 Ստ. Շահումյան, նշվ., հ. 2, էջ 69։

86 Ա. Մելիքյան. Բնկումն հայ հասարակական կյանքի ու մտքի զարգացման մեջ, «Նոր աշխարհ», 1922, № 2, էջ 46—49։

ցեղենի, բազմագույն ջնարակի, հախճապակու, գունավոր ապակու, ձյութի, բեեկնի, հանքային, բուսական և կենդանական ծագում ունեցող դեղորայքի, անուշահոտ յուղերի, կոսմետիկական պատրաստուկների, թանաքների, մինչև այժմ էլ չգերազանցված որակով բազմերանգ պայծառ ներկերի, արտադրությունը, կաշի աղաղելու (դաբաղելու), բարձրորակ մագաղաթ պատրաստելու գործը, խմորման պրոցեսների օգտագործմամբ գարեջրագործությունը, գինեգործությունը, ձեթերի, յուղի և կաթի վերամշակությունը և այլն։

Դրանց բազմապիսի և բազմաթիվ իրեղեն վկայությունները (մետաղաձուլարաններ, բրոնզե կացիններ և այլ իրեր ձուլելու կաղապարներ, զանազան զենքեր, արդուզարդեր, պաշտամունքի և կենցաղային այլևայլ իրեր, ճարտարապետական կառույցների բաղադրիչ տարրեր, բաղնիքի երկաթյա խողովակներ և այլն) հայտնաբերվել են Մեծամորի (III—II հազարամյակ մ. թ. ա.), Կարմիր բլուրի, Էրեբունիի (I հազարամյակ մ. թ. ա.), Երվանդաշատի, Գառնիի, Զվարթնոցի, Դվինի, Ամբերդի, Լենինականի ավազահանքերի, Լճաշենի և շատ այլ վայրերի պեղումներով, և գտնվում են ինչպես մեր, նույնպես և այլ երկրների բազմաթիվ թանգարաններում։

Տարբեր ժամանակներում եվրոպական երկրներում մի շարք նյութեր անվանվել են „Sal armeniacum", „Salis armeniaca" «հայկական քար», «հայկական աղ», ակներևաբար նրանց Հայաստանից ծագած և այնտեղից արտահանված լինելու պատճառով, իսկ միջնադարի, արաբական և եվրոպական ալքիմիկոսներն իրենց զբաղմունքի զանազան առիթներով հաճախակի օգտագործում էին «հայկական» բառը, անշուշտ նույնպիսի պատճառով։

Պատմական տարաբախտ պայմանների հետևանքով հայրենիքում աշխատելու և ստեղծագործելու հնարավորություններ չունենալով, հայ գիտնականներն ստիպված էին իրենց աշխատանքի համար տանելի պայմաններ փնտրել այլ երկրներում։ Եվրոպայում և Ռուսաստանում հանդես եկան մի շարք հայ քիմիկոսներ և ֆիզիկոսներ (Ա. Ե. Արծրունի, Ջ. Հ. Ջամշյան, Հ. Աբելյանց, Վ. Դեմիրչօղլյան, Հ. Ադամյան), որոնց աշխատությունները լուրջ ներդրում էին գիտության մեջ։

Երկրաբան, հանքաբան և բյուրեղաքիմիկոս պրոֆ. **Անդրեաս Արծրունին** (1847—1898) սովորել է Դորպատի և Գերմանիայի մի քանի համալսարաններում։ Ուսումնասիրել է Կովկասի և շուրջ քսան տարի՝ Ուրալի օգտակար հանածոների հանքավայրերը, մասնակցել մի շարք դժվարին ու պատասխանատու գիտական արշավների՝ Բրիտանական Գվինեայում, Նուբիայում։ Արծրունին օգտակար հանածոներ և հանքային ջրեր հայտնաբերելու նպատակով Մոսկվայի հանքաբանական ընկերության հանձնարարությամբ ուսումնասիրել է Կովկասի մի շարք շրջաններ, այդ թվում Սևանի ափերը, Ղարաքիլիսայի, Լոռու շրջանները, բարձրացել Փոքր Մասիսի գագաթը (1894)։ Մամուլում արծարծել է Կովկասի հանքային հարստությունները (ոսկի, արծաթ, կոբալտ, ծծումբ, մարմար, շինանյութեր) օգտագործելու և Կովկասում քիմիական արդյունաբերություն զարգացնելու միտքը։ Նա հանդիսացել է միաժամանակ Թիֆլիսի Կովկասյան թանգարանի երկրաբանական-հանքաբանական բաժնի հիմնադիրը և մինչև կյանքի վերջը հարստացրել է թանգարանի հավաքածուներն իր արշավախմբերի նյութերով (այդ թվում Զանգեզուրի Ագարակի հանքավայրերից բերված քվարցի ոսկեպատ մի հազվագյուտ նմուշով)։

Արծրունին Ռուսաստանում համալսարանական ամբիոն չստացավ և աշխատեց Գերմանիայում՝ Բեռլինում (1875—1879), որպես հանքաբանական թանգարանի տնօրեն, Ստրասբուրգի հանքաբանության ինստիտուտում, Բրեսլաուի (Վրոցլավի, 1883) համալսարանում՝ էքստրաօրդինար պրոֆեսոր, իսկ 1884-ից մինչև կյանքի վերջը՝ Աախենի պոլիտեխնիկումում (հաստիքային պրոֆեսոր, ամբիոնի վարիչ, ֆակուլտետի դեկան)։

Բյուրեղագիտական իր հետազոտություններում Արծրունուն հետաքրքրում էին բյուրեղների քիմիայի հարցերը, մասնավորապես այն կարևորագույն հարցերից մեկը, որով զբաղվում են աշխարհի շատ քիմիկոսներ մինչև այժմ։ Նրա լույս ընծայած մոտ հինգ հարյուր աշխատություններից[87] շուրջ վաթսունը նվիրված են այդ խնդրին։ Այդ աշխատանքների արդյունքները հանրագումարի են բերված նրա «Բյուրեղների ֆիզիկական քիմիան» մենագրությունում[88], որը ակադեմիկոս վ. Վերնադսկու գնահատմամբ «...հանդիսանում է տպագիր նյութին միանգամայն բացառիկ տիրապետելու հոյակերտ (մոնումենտալ) մի հուշարձան. այն երկար ժամանակ կպահպանի այդ բնագավառում ամեն մի աշխատողի համար անհրաժեշտ տեղեկատու գրքի նշանակությունը»[89]։

Արծրունին լայն կապեր ուներ ինչպես Եվրոպայի ականավոր քիմիկոսներ Լե Շատելյեի, Լեկոկ դե Բուաբոդրանի, Դեննշտեդտի, Ֆրիդելի, Կրաֆտսի, Ջամշյանի, այնպես էլ ռուս գիտնականներ Երյոմինի, Ջերնիշևսկու, Կարպինսկու, Վերնադսկու և ուրիշ խոշոր գիտնականների հետ։ Թեև նա հեռու էր հայրենիքից, սակայն մշտապես կապի մեջ էր Կովկասի և հայ մտավորականների հետ, «Մշակ» թերթում պարբերաբար տպագրում էր բազմաթիվ քաղաքակցություններ, քննադատական և հրապարակախոսական հոդվածներ, այդ թվում նաև արտասահմանյան հայերի տնտեսական և մշակութային-կենցաղային հարցերի մասին։ Նա երազում էր ապրել և աշխատել իր հայրենիքում, օգտակար լինել նրան և դրանով իսկ իրեն «...դեթ մեկ անգամ... երջանիկ զգալ...»։ Արծրունին գերմանական և արտասահմանյան մի շարք գիտական ընկերությունների անդամ էր՝ Պետերբուրգի (1895), Տուրինի և Բավարիայի գիտությունների ակադեմիաների թղթակից-անդամ։

Եվրոպայում և Ամերիկայում լայնորեն ճանաչված խոշորագույն օրգանիկ-քիմիկոսներից էր Ջակոմո (Հակոբ) Ջամշյանը (1857—1922)։ Նա իր գիտական և մանկավարժական աշխատանքն սկսել է Հռոմի համալսարանում, 1887 թ. ընտրվել է Պադուայի, իսկ 1889 թ.՝ Բոլոնիայի համալսարանի պրոֆեսոր, որտեղ էլ աշխատել է մինչև կյանքի վերջը, վարելով ընդհանուր ու անօրգանական և օրգանական ու կենսաբանական քիմիաների դասընթացը։

Ջամշյանն օժտված էր նոր խնդիրներ առաջ քաշելու և կոնցեպցիաներ մշակելու հատուկ տաղանդով։ Նրա գիտական գործունեությունն աչքի է ընկնում մեծ բազմակողմանիությամբ, մտահղացումների խորությամբ և առանձ-

---

87 *Е. О. Романовский*, Arzruniana. Список ученых трудов А. Е. Арцруни, Записки СПб. минер. общества, 1899, ч. 36, вып. 2, стр. 47—88; «Материалы к истории и геологии СССР», Библ. словарь, М., 1965, стр. 419—471.

88 *Andreas Arzruni*, Physikalische Chemie der Kristalle. Braunschweig. 1893.

89 *В. И. Вернадский*, Очерки и речи, II, Петроград, 1922, стр. 120.

նակի բեղմնավորությամբ։ Նրա հրապարակած շուրջ չորս հարյուր աշխատությունները (մենագրություն, հոդված, զեկուցում) նվիրված էին ֆիզիկական, օրգանական և կենսաբանական քիմիայի պրոբլեմներին։

Սպեկտրալ (էմիսիոն սպեկտրոսկոպիայի վերաբերյալ) աշխատանքներում նա հայտնագործեց մի էֆեկտ, ըստ որի քիմիական տարրերի պարբերական համակարգի միևնույն խմբի տարրերի սպեկտրներն իրենց պատասխանատու բաղադրիչներով շատ նման են միմյանց և դրա հիման վրա, ըմնտային տեսության հանդես գալուց շատ առաջ, զարգացրեց մի տեսություն, որի համաձայն պարբերական համակարգի միևնույն խմբի տարրերը պետք է ունենան համանման կառուցվածք։ Այդ տեսությունը շատ ավելի ուշ ճշտորեն հաստատվեց հետագոտությունների ժամանակակից մեթոդների օգնությամբ։ Ջամշյանը լուծիչների մոլեկուլների և իոնների միջև կոմպլեքսներ գոյանալու մասին գաղափարն առաջին արտահայտողներից մեկն եղավ։ Քիմիական կառուցվածքի և օրգանական միացությունների պինդ լուծույթների վերաբերյալ նրա ուսումնասիրությունը ելակետ ծառայեց շատ հետաքրքրքիր աշխատանքների համար, որոնք հանգեցրին պինդ լուծույթների մասին Բուռնիի դասական աշխատանքին։

Ջամշյանի աշխատությունների առավել ընդարձակ խումբը նվիրված է մեծ թվով բազմապիսի կարևոր կենսական միացությունների կամ նրանց հետ ծագումնաբանորեն կապված նյութերի մեջ որպես բաղկացուցիչ կառուցվածքային միավոր հանդիսացող պիրոլի և նրա ածանցյալների, ինչպես նաև քիմիական լծորդված կապերով միացությունների ուսումնասիրություններ։ Այդ աշխատանքների արդյունքները և նրանցում առաջ քաշված հարցերը շատ կարևոր էին և հետագայում օգտագործվեցին բլորոֆիլի ու հեմատինի հետազոտությունների ժամանակ և ընդհանրացվեցին «Պիրոլը և նրա ածանցյալները» մենագրությունում (1888) և «Դարի վերջին քառորդում պիրոլի քիմիայի զարգացման մասին» Գերմանական քիմիական ընկերությունում կարդացած զեկուցման մեջ (1904)։ Ջամշյանի կատարած աշխատանքներին Մայերը և Յակոբսոնը տվել են հետևյալ գնահատականը. «Պիրոլի յուրահատուկ հատկությունները լուսաբանվել են մի ամբողջ շարք սքանչելի հետազոտություններով, որոնցով մենք պարտական ենք Ջամշյանին և նրա աշակերտներին»[90]։

Ջամշյանը ուսումնասիրեց և պարզեց որոշ օրգանական միացությունների կառուցվածքը։ Մաֆրոլի, սեգանոլիդի, էվգենոլի, ապոլի և այլ նյութերի ուսումնասիրությունները գործնական նշանակություն ունեցան հիլֆորտոպինի և վանիլինի արտադրության համար, իսկ նիահուրի յուղի բաղադրիչների և նաև կեղևի մեջ գտնվող պսեդոպելլետյերին ալկալոիդի ուսումնասիրությունը նպաստեցին Վիլշտաների հետագա աշխատանքներին։

Ջամշյանի աշխատությունների մեջ մեծ տեղ են գրավում օրգանական լուսաքիմիայի՝ օրգանական նյութերի վրա լույսի քիմիական ազդեցության ուսումնասիրությունը։ Հայտնագործվեցին և ուսումնասիրվեցին լուսաքիմիական շատ ռեակցիաներ, որոնցից մեկը հայտնի է «Ջամշյանի ռեակցիա» ան-

[90] Berichte der deutsch. chem. Gesellschaft, 1922.

վամբ։ Այդ ռեակիցաներն ընդհանրացվել են ֆրանսիական քիմիական ընկերության նիստում կարդացված զեկուցման մեջ (1908)[91]։

Ջամշյանն ակտիվորեն մասնակցել է կիրառական քիմիայի միջազգային կոնգրեսների և կոնֆերանսների աշխատանքներին (Բեռլինում, Փարիզում, Հռոմում, Լոնդոնում, Նյու Յորքում), հանդես գալով իր հետազոտությունների արդյունքների մասին զեկուցումներով որպես Իտալիայի պաշտոնական ներկայացուցիչ։ Նրա լաբորատորիայում աճել է գիտնականների մի ամբողջ համաստեղություն։ Նա սերտ կապերի մեջ էր բոլոր խոշորագույն քիմիկոսների և առանձնապես էմիլ Ֆիշերի (որը նրան ներկայացրեց Նոբելյան մրցանակի), Արմստրոնգի հետ, նամակագրական կապեր ուներ Դ. Ի. Մենդելեևի հետ։

Ջամշյանը 1910 թվականից իտալական սենատի անդամ էր և ակտիվորեն մասնակցում էր նրա աշխատանքներին, առանձնապես կրթության, գիտական դաստիարակության և քիմիական արդյունաբերությանը վերաբերող հարցերի քննարկմանը։ Նա միաժամանակ իտալական ու արտասահմանյան բազմաթիվ ակադեմիաների ու գիտական ընկերությունների անդամ էր։

Ջամշյանի մահից հետո Տրիեստի «Հայկական փողոցը», ուր գտնվում էր այն տունը, որտեղ ապրել էր Ջամշյանն իր պատանեկության տարիներին, վերանվանվել է «Ջամշյանի փողոց», իսկ տան վրա փակցվել է բրոնզե հուշատախտակ՝ մակագրությամբ և դիմանկարով։ Բոլոնիայում նրա տան մոտ գիտնականի աշակերտները կանգնեցրել են նրա հուշարձանը, իսկ նորակառույց քիմիական ինստիտուտը անվանել «Ջակոմո Ջամշյանի անվան քիմիական ինստիտուտ»։

XIX դարի վերջի և XX դարի սկզբների աչքի ընկնող հայ քիմիկոսներից էր նաև Հարություն Աբելյանցը (1849—1921)։ Ավարտելով Թիֆլիսի Ներսիսյան դպրոցը, ապա Հելդելբերգի համալսարանը (1869), նա իր կրթությունը շարունակեց Ցյուրիխի համալսարանում (1869—1872), աշակերտելով ականավոր գիտնականներ Բունզենին, Հելմհոլցին, Կիրխհոֆին, Վիլիգենիուսին։ Ավարտելով համալսարանը, նշանակվել է համալսարանի քիմիական լաբորատորիայի կառավարիչ և պրիվատդոցենտ, Ցյուրիխի կանտոնալ (նահանգային) քիմիկոս, 1884 թ.՝ քիմիայի էքստրաօրդինար պրոֆեսոր, 1890 թ.՝ հաստիքավոր պրոֆեսոր, ապա նաև փիլիսոփայության ֆակուլտետի դեկան (1892—1894)։ Ավելի քան քառասուն տարի համալսարանի բժշկական և փիլիսոփայական ֆակուլտետներում դասավանդել է անալիտիկ քիմիա, դեկավարել է լաբորատոր գործնական աշխատանքները։

Աբելյանցը վերամշակել է Շտեդլեր-Կոլբեի քիմիական բանակական անալիզի դասագիրքը. նա տպագրել է նաև մեծ թվով աշխատություններ անդամ-մերկրի և համեմունքների հետազոտությունների վերաբերյալ, որոնք թարգմանվել են տարբեր լեզուներով։ Աբելյանցի որոշ ուսումնասիրություններ ունեն գործնական կիրառություն (օրինակ՝ նավթի փորձարկման ապարատը)։

Գիտական աշխարհին անհայտ է մնացել Վահագն Խմիշոզլյանի (1875—1936) անունը, որը, չունենալով բարձրագույն մասնագիտական ֆիզիկական և քիմիական կրթություն (ավարտել էր էչմիածնի ճեմարանը), ինքնուրույն

[91] Bull. Soc. chim. France, 1908, (4), III a XXVII.

ձեռք է բերել անհրաժեշտ գիտելիքներ իր ժամանակի ֆիզիկայի հիմնական նվաճումների վերաբերյալ և ղբաղվել ֆիզիկայի ու քիմիայի առավել բարդ, շատ կողմերով դեռ չլուծված բաժիններով՝ ատոմի ու նրա միջուկի կառուցվածքի, տարրերի արժեքականության էլեկտրոնային տեսության տեսական ուսումնասիրություններով։ Այդ ուսումնասիրություններից լույս տեսան մի քանիսը[92], այն էլ սահմանափակ տպաքանակով։ Դեմիրչօղլյանը կապեր չուներ մասնագետ գիտնականների հետ և գիտական հասարակայնությանը անհայտ մնացին նրա այդ աշխատությունները։ Մինչդեռ այդ աշխատություններում շարադրված էին գիտական կարևորագույն կանխատեսումներ մի շարք հիմնական երևույթների մասին, որոնք հաստատվեցին շատ ավելի ուշ, Եվրոպայի և Ամերիկայի առաջնակարգ լաբորատորիաներում։

Քննարկելով ատոմի արժեքականության հարցը, Դեմիրչօղլյանն առաջարկել է տարբեր տարրերի ատոմների տարածական կառուցվածքի մոդելներ, Ռ. Աբիգից և Ջ. Թոմսոնից հետո արտահայտել է ատոմի արժեքականության էլեկտրոնային բնույթի հիպոթեզը։ Նա առաջ քաշեց ատոմի միջուկի թաղանթային կառուցվածքի հիպոթեզը, կարողացավ ինքնուրույն կերպով բացատրել ատոմի պարբերականության պատճառը, տեսականորեն հիմնավորել Մենդելեևի օրենքը։ Նա կատարել է մի շարք սկզբունքային կարևոր նախագուշակումներ, որոնք տարիներ անց ընդունվել են որպես փորձնական տվյալներ և տեսություններ։

Ֆիզիկայի բնագավառում Հովհաննես Ադամյանի (1879—1932) անվան հետ է կապված XX դարի կարևորագույն հայտնագործություններից մեկի՝ պատկերները հեռագրով հաղորդելու-լուսահեռագրի, եռագույն հեռուստատեսության համակարգի, հեռուստացույցի հայտնագործումը։

Տարածության վրա պատկերներ հաղորդելու և տարածությունից պատկերներ ընդունելու ապարատ ստեղծելու համար նա 1907 թ. ապրիլի 28-ին ստացել է գերմանական առաջին արտոնագիրը[93], 1908 թ.՝ առաջին ռուսական արտոնագիրը, 1913 թ. հունվարի 19-ին՝ միջակա կլիշեների օգտագործմամբ պատկերները հեռագրով հաղորդելու ապարատի համար՝ գերմանական արտոնագիրը, որոնց հաջորդեցին նույն բնագավառին վերաբերող հետագա կատարելագործությունների համար գերմանական, ռուսական, ֆրանսիական և արտասահմանյան այլ, ինչպես նաև հետագայում՝ սովետական արտոնագրեր, այդ թվում՝ 1923 թ. անթափանց արգելքի միջով տեսնելու ապարատի (հեռուստացույցի) համար և գունավոր պատկերների ընդունիչ-հաղորդիչի [գունավոր (եռագույն) հեռուստատեսության] համար։ Նույնպիսի ապարատ անգլիացի Բերդն առաջարկեց Ադամյանից երեք տարի հետո՝ 1928 թ.։

Ադամյանի հայտնագործությունը մեծ հետաքրքրություն առաջացրեց և բարձր գնահատվեց գիտական աշխարհում։ Այժմ էլ Ադամյանի առաջարկած համակարգը չի կորցրել իր նշանակությունը և համարվում է գունավոր հեռուստատեսության հիմնական համակարգերից մեկը։

---

92 *В. С. Демирчоглян*, Валентность с точки зрения моей теории образования химических элементов, Тифлис, 1914; *его же*, Валентность и строение атома (Обзор моей теории строения атома), Эривань, 1926.

93 Kaiserliches Patentamt. Bredschrift 197443. Klasse 21a. Gruppe 50/28/IV. 1907.

Ադամյանը կատարել է ավելի քան երեսուն մեծարժեք հայտնագործություն։ Իր գործունեության վերջին տարիներին աշխատել է Երևանում։

Աստղագիտություն։ Աստղագիտությունը մեծ զարգացում է ապրել հին ու միջնադարյան Հայաստանում. հատկապես ուշադրության արժանի են Անանիա Շիրակացու (VII դ.), Հովհաննես Իմաստասերի (XI դ.), Մատթեոս և Ղուկաս Վանանդեցիների (XVII դ. վերջին քառորդ—XVIII դ. առաջին քառորդ) աշխատությունները։

Նոր ժամանակների պահանջից բխող հետաքրքրություններ աստղագիտության նկատմամբ առաջանում են արդեն XIX դարում։

Խաչատուր Աբովյանը դեռևս Դորպատում ուսանելիս, ծանոթանալով տեղի աստղադիտարանի աշխատանքներին, գրում է գիտահանրամատչելի երկասիրություն՝ նվիրված տիեզերագիտությանը, ուր հիմնականում նկարագրում է արևակենտրոն համակարգը, խոսում է աշխարհի նյութական լինելու, տիեզերքի անվերջության, այլ երկնային մարմինների վրա կյանքի գոյության, «անշարժ» համարվող աստղերի շարժման և այլնի մասին։

«Հյուսիսափայլում» 1859 թ. տպագրած իր երկու հոդվածներում Միքայել Նալբանդյանը առաջ է քաշում մատերիալիստական այնպիսի առաջավոր մտքեր, ինչպիսիք են տիեզերքի անվերջությունը, մարմինների առաջանալն ու էվոլյուցիան։ Նալբանդյանը արևակենտրոն համակարգի կողմնակից էր և իր հոդվածներում այն հիմնավորում ու պրոպագանդում էր, նույնիսկ ենթադրում էր նոր, դեռևս անհայտ մոլորակների գոյությունը[94]։

Իրենց բովանդակությամբ և արծարծվող հարցերի ընդարձակությամբ աչքի են ընկնում Մ. Սահակյանի «Տարերք տիեզերագիտության» (Վենետիկ, 1881), Գ. Տեր-Գաբրիելյանցի՝ «Ընդհանուր աշխարհագրություն ուսումնական և բնական» (Թիֆլիս, 1883), Ս. Խապայանի «Նոր դասագիրք տիեզերագրության» (Նուխա, 1884) աշխատությունները։ Գիտական բարձր մակարդակով են գրված Ա. Պալճյանի «Հրահանգք աստեղագիտության ի վերայ երկնագնդոյ» (Վիեննա, 1845), Մ. Մագաքեյանցի «Համառոտ բնական գիտություն» (Վիեննա, 1842) և հատկապես Հ. Բարսեղյանցի «Սկզբունք աստղագիտական» (Կ. Պոլիս, 1880) և «Գիսաստղք» (Կ. Պոլիս, 1885) մեծածավալ աշխատությունները, որտեղ հեղինակը շարադրում է նաև իր ուսումնասիրությունների արդյունքները (արևաբծերի ու գիսավոր աստղերի վերաբերյալ)։ Այդ ժամանակաշրջանում հայերեն են թարգմանվում Կ. Ֆլամարիոնի, Ֆ. Արագոյի, Ա. Բատիրևի, Ի. Վադնեռի և Վ. Լունկևիչի գործերը։

Չնայած արևակենտրոն համակարգի մասին Հայաստանում խոսվել է սկսած XVII դարից, սակայն պայքարը, որին մասնակցում էին ոչ միայն գիտնականները, այլև ուրիշ մասնագիտության տեր առաջավոր մտածողներ, հաղթանակով ավարտվեց միայն XIX դարում։ Եկեղեցին այլևս անկարող էր խոչընդոտներ հարուցել։ Կոպեռնիկոսի արևակենտրոն համակարգը համընդհանուր ճանաչում ստացավ։ Իրենց աստղագիտական գործունեությամբ XIX դարում հատկապես աչքի են ընկնում վենետիկյան հեղինակներ Ս. Սինանյանն ու Վ. Հովսեփյանը։ Վերջինս Լոնդոնից ձեռք է բերում աստղագիտական գործիքներ ու անձամբ դիտումներ կատարում։ Մասնավորապես նա աշխատում է ճշտել լուսատուների հորիզոնական կոորդինատները։ Ուշադրու-

---

94 Տե՛ս Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հ. 2, Երևան, 1948, էջ 164։

թյուն են գրավում Հալլեյի գիտավորի նրա կատարած ուսումնասիրությունները։ Նա իր հետազոտությունների արդյունքները համեմատում է ուրիշների կողմից կատարվածների հետ և նրանցում շտկումներ մտցնում[95]։

XIX դարի 40-ական թվականներին Վենետիկի ս. Ղազար կղզում հիմնադրվում է հայկական աստղագիտարան, որը, բացի ուսումնական նպատակների ծառայելուց, հնարավորություն է ընձեռում նաև կատարելու որոշ գիտական հետազոտություններ։ Առանձնապես ուշագրավ են Խորեն Սինանյանի (1868—1928) ուսումնասիրությունները, նրա գրչին են պատկանում Կենդանաշրջանային լույսի ու երկրի մթնոլորտում ԲՔվածնի քանակության վերաբերյալ գիտական հոդվածները։ Նա գիտողական ու տեսական հետազոտություններ է կատարել գիսավոր աստղերի և արեգակնային հրվիժակների վերաբերյալ։ Սինանյանը ճշտել է Արեգակի հեռավորության որոշման Արիստարքոս Սամոսացու առաջարկած մեթոդը, հաշվի առնելով լույսի բևեռումը Երկրի մթնոլորտում, դիտողի սեփական սխալները, գործիքային թերություններն ու այն, որ Լուսինը առաջին քառորդի ժամանակ Երկիր-Լուսին-Արեգակ մարմինները ուղիղներով միացնելիս ստացված ուղղանկյուն եռանկյան գագաթներից մեկը պետք է գտնվի ոչ թե երկրի մակերևույթի վրա, այլ նրա կենտրոնում։ Իր ժամանակին մեծ հետաքրքրություն առաջացրեց Սինանյանի առաջարկած տիեզերաձնական նոր վարկածը, որում մասնավորապես օգտագործում է մոլորակների ու արբանյակների պտտման օրինաչափություններ։

Աստղերի առկայծման վերաբերյալ XIX դարում և XX դարի սկզբներին կային բազմաթիվ տեսակետներ, որոնք հաճախ մեկը մյուսին հակասում էին։ Որոշ հետաքրքրություն է առաջացնում նաև Սինանյանի վարկածը։ Նա առկայծումն ու աստղերի գունափոխությունը ցանկանում է կապել Արեգակի շուրջը Երկրի և միջաստղային տարածությունում Արեգակի շարժմամբ։ Ավելին, այդ երևույթը նա ցանկանում է օգտագործել լուսատուների հեռավորությունները որոշելու համար, որը հիմնավորված չէ[96]։ 1894 թ. Խ. Սինանյանը ս. Ղազարի հայկական աստղադիտարանում աշխարհում առաջին անգամ հայտնաբերում է Յուպիտերի վեցերորդ արբանյակը։ Այդ մասին նա հայտնում է Վատիկանի աստղադիտարան, սակայն ստանում է բացասական պատասխան, ուր մասնավորապես նշվում է, որ իբր Յուպիտերը հինգից ավելի արբանյակ ունենալ չի կարող և որ նրա տեսածը աստղային ֆոնի աստղերից է։ Ինչպես հայտնի է, Յուպիտերի այդ նույն արբանյակը նորից «գտնվում է» 1904 թ. և այդ հայտնագործությունը սխալ կերպով վերագրվում է Պերայնին։

Այսպիսով, XIX դարի կեսերից հայ աստղագիտության բնագավառում զգալի առաջխաղացում է նկատվում։ Հայ հեղինակները ոչ միայն թարգմանում էին օտարերկրյա գիտնականների աշխատությունները, այլ իրենք էլ զբաղվում էին աստղագիտական զանազան հարցերի լուսաբանմամբ։

Կենսաբանություն։ Դեռևս V—VII դարերի հայ մատենագիրների գործերում հանդիպում են բազմապիսի կենսաբանական դիտումներ։ Երբակա-

---

95 Վ. Հովսեփյանի ու նրա գիտական գործունեության մասին մանրամասն տե՛ս ԵՐԿՀԲՐԲ-ամյա գրականական գործունէութիւն եւ նշանաւոր գործիչներ Վենետկոյ Մխիթարեան միաբանութեան, Վենետիկ, 1905։

96 Սինանյանի այս վարկածի մանրամասն վերլուծությունը տե՛ս Բ. Բալամանյան, Հայ աստղագիտության պատմություն, հ. 2, Երևան 1968, էջ 53—58։

ցու «Աշխարհացույցում» բերվում են բավական հետաքրքիր տեղեկություններ պատմական Հայաստանի գավառների բուսական և կենդանական աշխարհների վերաբերյալ։ Ուշագրավ է Գրիգոր Տաթևացու (1340—1410) «Հարցմանց գիրքը», որը միջնադարյան յուրատեսակ հանրագիտարան է։

XVII դարի հեղինակ Աբրահամ Պոլսեցու՝ «Պատմություն անասնոցը», ունեցել է ժամանակի եվրոպական գիտական կենդանաբանության մակարդակը[97]։

XVIII դարում և XIX դարի սկզբներին տպագրվում են կենսաբանական տեղեկություններ պարունակող որոշ գրքեր։ 1796 թ. Հռոմում լույս է տեսնում Ստեփանոս Աբգարյանի «Գրքույկ որ կոչի սկզբունք բնական գիտության», կազմված հարց ու պատասխանի ձևով, ուր տրված են տեղեկություններ բույսերի և կենդանիների մասին։ Ավելի հետաքրքիր տվյալներ է պարունակում Հակոբ Ստեփանյանի «Տեսարան աշխարհի բովանդակիչ բնական և բարոյական գիտության» գիրքը, որը հրատարակվել է Վենետիկում 1810 թ.։ Եվրոպական կրթություն ստացած հայ բժիշկներ Պետրոս Քալանթարյանի (1735--1798), Հովակիմ Օղուլուխյանի (1773—1815), Միքայել Ռեստենի (Պատկանյան, 1774—1844) աշխատություններում ևս կան ուշագրավ փաստեր կենսաբանության մասին։

Առավել նշանակալից դեմք է խոշոր հասարակական գործիչ, հայտնի բժշկապետ և բուսաբան **Ստեփանոս Շահրիմանյանը** (1766—1830)[98]։ Նա ծնվել է Թիֆլիսում, սովորել Տրիեստում, ապա Վենետիկի համալսարանում։ Ժանտախտի ժամանակ աշխատելով Կոնստանդնուպոլսում, գրել է «Անդեղայ ժանտախտի» աշխատությունը (ձեռագիր)։ 1807 թ. Ս. Շահրիմանյանը Մոսկվայի համալսարանում բժշկության գծով քննություններ է հանձնել։ 1815-ից ակտիվորեն մասնակցել է ազգային և հասարակական կյանքին. կապված է եղել Ներսես Աշտարակեցու և դեկաբրիստների հետ։ Ս. Շահրիմանյանի ստվարածավալ ձեռագիր աշխատությունում՝ «Նկարանություն կամ Փոքրս Հայաստանի», որն այժմ պահվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում, նկարագրված են պատմական Հայաստանի 800 դեղաբույսեր։ Ինչպես Հայաստանում, այնպես և Եվրոպայում կենսաբանության զարգացումը մինչ այդ կրել է նկարագրական բնույթ և սերտորեն կապված է եղել բժշկության հետ։ Հետագայում, Կ. Լիննեյի դասակարգման (1735 թ.) հետ, սկսվում է զարգացման երկրորդ փուլը՝ կուտակված նյութերի կարգավորումը։ Այդ ժամանակ Կովկասում, առաջինն օգտվելով Լիննեյի դասակարգումից, Ս. Շահրիմանյանը գրեց իր աշխատությունը։

Երրորդ փուլը կապված է Չ. Դարվինի նոր էվոլյուցիոն ուսմունքի հետ, որն իր հետևորդներն ունեցավ նաև հայ իրականությունում։ Վիեննայի և Վենետիկի Մխիթարյանները որոշ դեր կատարեցին բնագիտական գիտելիքների ժողովրդականացման գործում։ «Բազմավեպի» էջերում երևան եկան մի շարք ինքնուրույն և թարգմանական գործեր («Սկզբունք բուսաբանության», 1846, «Տարերք բուսաբանության», 1883, Հ. Պ. Քավտաջյանի «Տարերք կենդանաբանության», 1885, Ս. Ե. Երեմյանի «Նմույշ հայ կենդանաբանության» 1879 և այլն)։

97 Ա. Գ. Տեր-Պողոսյան. Բժշկական մտքի զարգացումը Հայաստանում, Երևան, 1960։
98 К. С. Марджанян, Степанос Шариманян. ՊԲՀ, 1971, № 3.

1884 թ. Վենետիկում լույս տեսավ Հ. Սափարյանի «Բուսաբանությունը», որը կազմված էր եվրոպական դասագրքերի լավագույն ավանդույթների հիման վրա։ Իսկ 1895 թ. հրատարակվեց Ղ. Ալիշանի «Հայբուսակ կամ հայկական բուսաբանություն» աշխատությունը, որն առաջին հրատարակված գիրքն է Հայաստանի բուսականության մասին։ Այստեղ Ալիշանը նկարագրել է հայկական բնաշխարհի ավելի քան 3400 բույսեր, կատարել տերմինաբանական նորամուծություններ։ Քիչ ավելի ուշ Վիեննայում հրատարակվեցին Գ. Մենևիշյանի «Բուսաբանությունը» և «Կենդանաբանությունը» (1897)։ Կենդանաբանությանն էր նվիրված նաև Ս. Երեմյանի «Կենդանաբանություն և մարդակազմություն» գիրքը (Վենետիկ, 1896), որում հեղինակը, նկարագրելով կենդանական աշխարհի ներկայացուցիչներին, կանգ է առնում նաև Հայաստանի ֆաունայի վրա։ 1912 թ. Սեբաստիայում լույս տեսավ Կ. Գաբիկյանի «Հայ բուսաշխարհ» աշխատությունը։

Արևմտահայ կենսաբան-գիտնականների մեջ հատուկ տեղ է գրավում **Նազարեթ Տաղավարյանը** *(1862—1915)*[99]։ Նա առաջինն էր, որն առանձին գիրք հրատարակեց դարվինիզմի սկզբունքների վերաբերյալ։ 1878 թ. ավարտելով Փարիզի երկրագործական վարժարանը և միաժամանակ աշխատելով այդ մասնագիտությամբ, Տաղավարյանը ստանում է նաև բժշկական կրթություն և Պաստյորի ինստիտուտում ուսումնասիրում մանրէաբանություն։ Երկար տարիներ նա բժշկությամբ է զբաղվում Կ. Պոլսում և զոհ գնում 1915 թ. մեծ եղեռնին։

Ն. Տաղավարյանը կենսաբանական գիտության անխոնջ ժողովրդականացնողներից էր։ Նրա աշխատություններից առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում «Բնական պատմությունը», «Մարդկային սաղմնախոսությունը», «Մանրէաբանությունը», «Բժշկարանը», «Կենդանաբանությունը» (ձեռագիր), «Տարվինականությունը»։ 1885 թ. Ն. Տաղավարյանը Կ. Պոլսում հիմնադրեց առաջին գիտական ամսագիրը՝ «Գիտական շարժում», որի էջերում հրապարակվում էին կենսաբանության և գիտության այլ հարցերին նվիրված հոդվածներ։

Արևելահայ իրականության մեջ Մ. Նալբանդյանն առաջիններից էր, որ հայ ընթերցողին ծանոթացրեց էվոլյուցիայի գաղափարին և կենսաբանության այն հարցերին, որոնք կապված էին դարվինիզմի հետ։ Նալբանդյանի հետաքրքրությունը դեպի կենսաբանական պրոբլեմները, բացի տեսական նշանակությունից, հետապնդում էր նաև կենսաբանության նվաճումները կյանքում օգտագործելու նպատակ։ Այստեղից էլ բխում էին նրա ուսումնասիրությունները գործնական կենսաբանության բնագավառում՝ կենդանիների և բույսերի ակլիմատիզացիա, շերամապահություն, մեղվաբուծություն, ձկնաբուծություն և այլն։

Բնագիտական, կենսաբանական խնդիրների և դարվինիզմի հետ կապված հարցերի մասին XIX դարի վերջին, XX դարի սկզբներին հոդվածներ էին տպագրում «Մշակ», «Տարազ», «Փորձ», «Մեղու Հայաստանի», «Արարատ» թերթերն ու ամսագրերը։ 1899 թ. Թիֆլիսում լույս տեսավ Ա. Ջելինեկու «Բույսերի գործածությունը Երևանի նահանգում», իսկ Պետերբուրգում՝ Ա. Բուդաղ-

---

99 Ռ. Ի. Դարբինյան. Ակնարկներ դարվինիզմի և բիոլոգիական մտքի պատմության հայ գրականության մեջ (XIX—XX դդ.), Երևան, 1963, էջ 213—327։

յանի երկու գիրքը՝ «Ժառանգականություն և դաստիարակություն» (1901) ու «Դոյության կռիվ» (1904)։

Դարվինիզմին և էվոլյուցիոն ուսմունքին ամենից շատ տեղ է հատկացրել «Մուրճ» ամսագիրը։ «Մուրճում» հետաքրքիր հոդվածներով հանդես էին գալիս մի շարք հեղինակներ, այդ թվում և Սամվել Բալաղյանը (1865—1952)։ Բարձրագույն բնագիտական կրթությունը նա ստացել է Օդեսայի համալսարանում, նրա դասախոսներն են եղել Ի. Մեչնիկովը և Ա. Կովալևսկին։ Ս. Բալաղյանի հետագա ամբողջ կյանքն անցել է Թիֆլիսում, ուր նա բնագիտական առարկաներ է դասավանդել ներսիսյան դպրոցում և զբաղվել դարվինիզմի լայն պրոպագանդայով։ Առանձին գրքերով լույս են տեսել Բալաղյանի «Միկրոբները», «Հողի մասին», «Պատյոր», «Դարվինիզմ» աշխատությունները։ Վերջին գիրքը, որ տպագրվեց 1890 թ. Թիֆլիսում, վերահրատարակվեց 1904 թ., իսկ սովետական իշխանության օրոք՝ 1926 թ. Երևանում։

Ռուսաստանում անասնաբուծության զարգացման գործում զգալի ավանդ ունեն Մոսկովյան Պետրովյան հողագործական ու անտառային ակադեմիան ավարտած Ալեքսանդր և Ավետիս Քալանթարներր։ Կաթնամշակության գործում համառուսաստանյան հեղինակության արժանացած Ավ. Քալանթարը (1859—1937) ակտիվ մասնակցություն է ունեցել Վոլոգդայում 1911 թ. գյուղատնտեսական կաթնամշակության առաջին ինստիտուտի ստեղծմանը, եղել է Տիմիրյազևի անվան գյուղատնտեսական ակադեմիայի (1920-ից) և Երևանի անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի (1930-ից) ամբիոնի վարիչ։ Ալ. Քալանթարը (1855—1913), որ եղել է «Մշակ» թերթի խմբագիրներից մեկը, զգալի աշխատանք է կատարել նաև Կենտրոնական Ռուսաստանի բազմաթիվ նահանգների անասնապահության վիճակի ուսումնասիրության ու նկարագրության ասպարեզում, աշխատություններ գրել Կովկասի խոշոր և մանր եղջերավոր անասունների բուծման վերաբերյալ, կազմել է կովկասյան ոչխարների լրիվ բնութագրությունը։

XIX դարի վերջի և XX դարի սկզբի նշանավոր գիտնականներից է Վ. Ի. Վարդանովը (1853—1919)՝ Ի. Պ. Պավլովի աշակերտներից մեկը Պետերբուրգի ռազմաբժշկական ակադեմիայում։ Վ. Ի. Վարդանովը զբաղվում էր էլեկտրական երևույթների և կենդանական աշխարհի փոխհարաբերությունների հարցերով։ 1906 թ. Պետերբուրգում հրատարակվեց նրա «Ֆիզիոլոգիայի դասընթաց» գիրքը, իսկ 1915 թ.՝ ներվամկանային ֆիզիոլոգիային նվիրված մի ուրիշ ձեռնարկ։

Այդ տարիներին է սկսվում նաև ֆիզիոլոգիական գիտության ականավոր ներկայացուցիչ Լևոն Սերեբրյու (1882—1958) գիտական գործունեությունը։ Լ. Ա. Օրբելին ոչ միայն ղարգացրեց իր ուսուցիչ, ռուս մեծ գիտնական Ի. Պ. Պավլովի ուսմունքը, այլև ստեղծեց նոր, ինքնուրույն ուղղություններ ֆիզիոլոգիայում։ Լ. Ա. Օրբելու անվան հետ է կապված էվոլյուցիոն ֆիզիոլոգիայի ուղղության ստեղծումը։ Արդի նեյրոֆիզիոլոգիայի զարգացման գործում մեծ դեր են խաղացել նրա աշխատությունները վեգետատիվ ներվային համակարգի և զգացողական օրգանների ֆիզիոլոգիայի բնագավառում։

Մեծ գիտնականի և նրա ստեղծած դպրոցի (որը նոր ուղղություն տվեց XX դարի ֆիզիոլոգիայի զարգացմանը) հաջողությունները ֆիզիոլոգիայի տարբեր բնագավառներում, նրա բազմաթիվ էլեկտրները մամուլում և ռա-

դիտոյով, համագումարներում և կոնգրեսներում մեծ ճանաչում բերեցին նրան ինչպես մեր երկրում, այնպես և նրա սահմաններից դուրս։

Դարասկզբին են սկսել իրենց գործունեությունը սովետահայ մի շարք կենսաբան-գիտնականներ՝ Ս. Աբովյանը (1869—1942), Հ. Բեդելյանը (1874—1940), Ա. Տեր-Պողոսյանը (1880—1954), Պ. Բ. Քալանթարյանը (1887—1942), Ռ. Գաբրիելյանը և ուրիշներ։

Երկրաբանություն: Հայաստանն իր երկրաբանական կառուցվածքով, մագմատիզմով և օգտակար հանածոներով համարվում է երկրագնդի ամենահետաքրքիր և բարդ կառուցվածք ունեցող շրջաններից մեկը։ Այստեղ կարելի է հանդիպել Երկրի երկրաբանական տարեգրության բոլոր տարիքի շերտախմբերին և նրանց նստվածքներին, մագմատիզմի ամենաբազմապիսի երևակումներին և Մենդելեյևյան սանդղակի համարյա բոլոր տարրերին։ Հայաստանը համարվում է հանդած հրաբուխների դասական երկիր, ուստի իր վրա է բևեռել ինչպես հայրենական, այնպես էլ օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը։

XIX դարի կեսերից, մոտ 30 տարի (1844—1875 թթ.) ռուսական կառավարության հրավերով Կովկասում և Հայկական լեռնաշխարհում երկրաբանական ծավալուն հետազոտություններ է կատարել գերմանացի նշանավոր բնագետ Ա. Հումբոլտի աշակերտ Հ. Աբիխը[100], հիմք դնելով երկրամասի երկրաբանական կառուցվածքի գիտական ուսումնասիրությանը և քարտեզահանելով Հայկական լեռնաշխարհի տարածքը 1:420.000 մասշտաբով (1887), մի գործ, որն իր ժամանակի համար համարվեց գիտության խոշորագույն նվաճումներից մեկը։ Նա ուսումնասիրում է Հայաստանի (այդ թվում նաև Արևմտյան Հայաստանի) լեռնային ապառները և օգտակար հանածոները, տեկտոնիկան և հրաբխականությունը, նստվածքների շերտագրությունը և բրածոները։ Հ. Աբիխը առաջիններից մեկն էր, որ բարձրացավ Արարատի ու Արագածի գագաթները և հաստատեց դրանց հրաբխային ծագումը։ Նրան իրավամբ անվանում են «Հայկական երկրաբանության հայրը»։ Հայաստանում և Կովկասում կատարած բեղմնավոր աշխատանքի համար 1866 թ. Պետերբուրգի գիտությունների ակադեմիան նրան ընտրում է իսկական անդամ։

Սակայն երկրաբանությունը, որպես գիտություն, Հայաստանում մեծ զարդացում ապրեց XIX դարի երկրորդ կեսից։ Հ. Աբիխի գործունեությամբ վերջանում են միայնակ հետազոտողների ուսումնասիրությունները Հայաստանում և սկսվում են Կովկասյան լեռնային վարչության երկրաբանների խմբային ուսումնասիրությունները (Գ. Խալաթով, Գ. Ծուլուկիձե, Վ. Արխիպով, Ս. Սիմոնովիչ և ուրիշներ)։ Հատկապես պետք է նշել այդ վարչության գործունեությունը պլանաչափ 1։ 210.000 մասշտաբի երկրաբանական քարտեզահանման բնագավառում, որը հիմք դրեց երկրամասի սիստեմատիկ ուսումնասիրություններին։ Կովկասյան լեռնային վարչության աշխատանքներին զուգահեռ Հայաստանում երկրաբանական ծավալուն աշխատանքներ են կատարում անվանի գիտնական Ֆ. Յու. Լևինսոն-Լեսսինգը, որը հետագայում դարձավ ՍՍՀՄ ԳԱ Հայկական բաժանմունքի հիմնադիրը և նրա առաջին նախագահը, Ա. Ա. Ստոյանովը, Վ. Ի. Միլլերը, Լ. Կ. Կոնյուշևսկին,

---

100 *Э. Г. Малхасян*, Герман Абих и геология Армении. Труды IV Закавказской конференции по истории науки, 1974.

Ա. Էրնը, Վ. Ի. Բոգաչևը, Գ. Մ. Ամիրնովը և ուրիշներ։ Կովկասյան երկրաբանների հետ միաժամանակ և հիմնականում Հ. Աբիխի աշխատանքների ազդեցության տակ, Հայաստանի երկրաբանությամբ հետաքրքրվում են նաև օտարերկրյա մի շարք հետազոտողներ (Ֆ. Օսվալդ, Պ. Բոննե, Կ. Ռեգլիխ, Գ. Արտաբեր, Ի. Վալենտին)։ Սակայն այս ժամանակաշրջանում, բացի գիտական հետաքրքրություններից, մի շարք օտարերկրյա ընկերություններ գործնական նպատակներով սկսում են ուսումնասիրել Հայաստանի օգտակար հանածոները։



Անդրեաս Արծրունի

XX դարի սկզբներին հիմք է դրվում ամբողջ Կովկասի և Հայկական լեռնաշխարհի սիստեմատիկ, պլանաչափ երկրաբանական քարտեզահանման աշխատանքներին, կազմվում է 1 : 42.000 մասշտաբի երկրաբանական քարտեզ։ Ռուս և օտարերկրյա հետազոտողների կողքին հանդես են գալիս հայ առաջին երկրաբանները։ Հայկական լեռնաշխարհի երկրաբանական կառուցվածքով և նրա տեկտոնական ու գեմորֆոլոգիական շրջանացման հարցերով է զբաղվում անվանի երկրաբան Աբրահամ Ղուկասովը։ Հայրենի երկրի հանքավայրերը և երկրաբանական կառուցվածքն է ուսումնասիրել պրոֆ. Հովհաննես Կարապետյանը (1875—1943), որը հետագայում դարձավ Հայաստանի ԳԱ երկրաբանական ինստիտուտի կազմակերպիչը և առաջին դիրեկտորը։ Հայրենի մագմատիզմի առանձին հարցերին են նվիրված Պետերբուրգում ստեղծագործող տաղանդավոր երկրաբան Վարդան Լոդոչնիկովի (Նավակատիկյան, 1887—1943) առանձին հոդվածները։

Այդ նույն ժամանակաշրջանում երկրաբանության բնագավառում հայ մտավորականության աչքի ընկնող մի շարք ներկայացուցիչներ գործում էին Եվրոպայի և Ռուսաստանի քաղաքներում։ Նրանցից նշանավորը Անդրեաս Արծրունին էր։

Լինելով օգտակար հանածոների ուսումնասիրության բնագավառում խոշոր գիտականներից մեկը, նա միաժամանակ, հիմք է դնում ժամանակակից գեոքիմիայի ուսմունքին[101]։ Նրա անունով «Արծրունիտ» է կոչվում իր ժամանակի նորահայտ հանքատեսակներից մեկը։

---

101 Հայաստանում Ա. Արծրունին ուսումնասիրել է Արարատ հրաբխային սարը և նրա խառնարանը, Լոռու շրջանի պղնձային հանքանյութերը և հանքային ջրերը, Աղվերանի մարմարները, զբաղվել է նաև քիմիական արդյունաբերության հումքի հարցով։

Հայ անվանի երկրաբաններից էր նաև Լեոնիդ Սպենդիարյանը (Սպենդիարով)՝ կոմպոզիտոր Ա. Ա. Սպենդիարյանի եղբայրը, որն ապրեց չափազանց կարճ, սակայն բեղմնավոր կյանքով (1869—1897)։ Նրա գրչին են պատկանում Կովկասի և Ղրիմի երկրաբանությանը նվիրված մի շարք ուսումնասիրություններ, որոնցից առավել հետաքրքիր է Կովկասի ծովային ոզնիներին նվիրված աշխատությունը։

Միջազգային երկրաբանական կոնգրեսի ամենաբարձր մրցանակը, որը մինչև այժմ էլ շորս տարին մեկ հանձնվում է այն երկրի լավագույն երկրաբանին, որտեղ տեղի է ունենում կոնգրեսը, կրում է Լ. Ա. Սպենդիարյանի անունը։

Առողջապահություն և բժշկագիտություն։ *Մինչև Ռուսաստանի կազմի մեջ մտնելը, Արևելյան Հայաստանում չի եղել ոչ մի առողջապահական հիմնարկ կամ որևէ սանիտարական կազմակերպություն, չի եղել բարձրագույն կրթություն ստացած և ոչ մի բժիշկ։ Ժողովրդի բուժօգնության գործը գտնվում էր մի քանի ինքնուս բժիշկների, ոսկրահարթների, վարսավիրների, տատմարների և բժշկագիտության հետ առնչություն չունեցող անձանց ձեռքում։*

Ձեռագիր և հնատիպ գրքերի վկայությամբ երկիրը գտնվել է ծայր աստիճան հակասանիտարական վիճակում և եղել է մալարիայի, տիֆերի, դիզենտերիայի, բնական ծաղկի և մի շարք այլ սուր վարակիչ հիվանդությունների օջախ։

Այլ էր գրությունը հայկական գաղթավայրերում։

Մինչև 1828 թ. Ռուսաստանի հայաբնակ վայրերում՝ Կամենից-Պոդոլսկում, Լվովում, Նոր Նախիջևանում և այլուր արդեն աշխատում էին հայ բժիշկներ, որոնք մասնագիտական կրթություն էին ստացել ռուսական բուհերում։ Այսպես օրինակ՝ Պետրոս Քալանթարյանը 1764 թ. ավարտելով Մ. Պետերբուրգի բշժկական բուհը, 1793 թ. Նոր Նախիջևանում հայերեն լեզվով հրատարակում է «Բժշկարան համառոտ» հետաքրքիր աշխատությունը, ուր խիստ քննադատության է ենթարկում եվրոպական հեղինակների մատչածին, վիտալիստական, փորձով չստստատված դիտողություններ[102]։ *Սոլոմոն Տեր-Ղուկասյանը առաջին հայ բժիշկներից մեկն է, որ Մոսկվայում 1824 թ. պաշտպանեց և ստացավ բժշկական գիտությունների դոկտորի աստիճան, 1825 թ. վիրադարձավ Կովկաս, աշխատեց Գորիում, Բելավում, ապա՝ Թիֆլիսի քաղաքային վարչության բժշկական բաժնում՝ «վրաչերնի ուպրավայում»*[103]։

Ռուսական բժշկագիտության նվաճումները հայ միջավայրում պրոպագանդվում էր ռուս ականավոր գիտնական բժիշկների գործերի հայերեն թարգմանությամբ։ Այսպես, գեռևս 1808, 1809 և 1814 թվականներին Նոր Նախիջևանի բժիշկներ Կարապետ Մանուկյանի և Սրապիոն Առաքելյանի օգնությամբ հայերեն են թարգմանվում պրոֆ. Ն. Մ. Ամբոդիկի «Բժշկական բուսաբանության...» երկու գրքերը և «Բնագիտություն...» ֆիլիոլոգիայի վերաբերյալ աշխատությունը։ Մինչև 1828 թ. Կովկասում հայ բժիշկները բժշկա-

---

102 *Տե՛ս* Ա. Ս. Կծոյան, *Բժ. գ. հ. Քալանթարյանը որպես ռուսական բժշկագիտության առաջին հայ սաները*, «Առողջապահություն», Երևան, 1978, № 1։

103 Ա. Ս. Կծոյան, *XIX դարի կեսի ռուսական բժշկագիտության առաջին հայ սաները*, «Տեզեկագիր», ԳԱ հաս. գիտ., 1952, № 7։

կական պրակտիկ գործունեությունից բացի, օգտակար գործ են կատարել նաև հայ ինքնատիպ բժշկական մշակույթի պահպանման և հարատևման ուղղությամբ։

Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանին միացումից հետո, 1829 թ. ռուսական զինվորական բժիշկ Շումլերի նախագահությամբ Երևանում կազմակերպվում է հակաժանտախտային, իսկ 1856 թ.՝ ծաղկի հիվանդության դեմ պայքարի կոմիտեն։ Առաջին առողջապահական հաստատությունը՝ զինվորական հիվանդանոցը (հոսպիտալ) իր դեղատնով հիմնադրվել է 1828 թ.։ Ռուս զինվորական բժիշկները բժշկական օգնություն են ցույց տվել նաև տեղի ազգաբնակչությանը։

Հայաստանի առաջին դիպլոմավոր բժիշկը՝ Սիմոն Լոռու-Մելիքյանը, 1832 թ. ավարտել է Մոսկվայի համալսարանը և նշանակվել Հայկական մարզի բժիշկ[104]։

XIX դարի երկրորդ կեսին որոշ չափով վիճակը փոխվում է. Անդրկովկասու Արևելյան Հայաստան են գալիս ռուսական առաջադեմ հասարակական բժշկագիտության գաղափարներով դաստիարակված, մասնագիտական կրթություն ստացած մի շարք բժիշկներ, որոնք նանդով ձեռնամուխ են լինում ժողովրդի առողջապահության կազմակերպմանը և բժշկական գիտելիքների տարածման գործին[105]։

Մինչև Ռուսաստանի հետ միացումը սպանության, բունավորման և մարմնական վնասվածքների դեպքերում պատասխանատվության ենթարկելու նպատակով, տուժածը դատաբժշկական փորձագիտական քննության չէր ենթարկվում։ 1832 թ. օգոստոսի 5-ին Ռուսաստանից ստացվում է դատական նպատակներով դիահերձումներ կատարելու հրահանգչական ցուցումներ, կազմված Ի. Վ. Բուլյակով «Զեռնարկ բժիշկների համար դիակ զննելու դեպքում» (1826 թ.) գրքի հիման վրա[106]։ Կարապետ Քոչարյանցն առաջիններից էր, որ օգտագործելով ռուսական, եվրոպական բժշկական գիտամատչելի գրականությունը և հենվելով իր անձնական հարուստ փորձի վրա, 1863 թ. հրատարակեց «Տանու բժիշկ կամ հասարակաց բժշկարան» աշխատությունը։ Այն ընդգրկում էր գրեթե ամբողջ կիրառական բժշկությունը։

Մոսկվայի համալսարանի բժշկական ֆակուլտետն ավարտած Դավիթ Ռուսոմյանը (1815—1868) հրատարակեց «Տեղագրություն, Բագուս» խորագիրը կրող աշխատությունը, որտեղ տրված է Բաքու քաղաքի աշխարհագրական, բնակլիմայական, սուր վարակիչ և երկրային հիվանդությունների նկարագրությունը։ Հետագայում, 1865—1868 թթ. Ռուսոմյանը հրատարակում է «Հասարակաց բժշկականություն» աշխատությունը, որի նպատակն էր մատչելի ձևով ժողովրդին հաղորդակից դարձնել բժշկագիտության նվաճումներին և բարձրացնել նրա սանիտարական կուլտուրայի մակարդակը։

1864 թ. հայ բժիշկների ակտիվ մասնակցությամբ Թիֆլիսում հիմնվում է Կովկասի բժիշկների ընկերությունը։ Հասարակական գործիչ, Դորպատի

---

104 Տե՛ս Ա. Ս. Կծոյան, XIX դարի առաջին կեսի ռուսական բժշկագիտության առաջին հայ սաները («Տեղեկագիր» ԳԱ Հաս. դիա., 1952, № 7, էջ 107—118)։

105 Տե՛ս Л. А. Оганесян, История медицины в Армении с древнейших времен до наших дней, IV ч., Ереван, 1947; Ռ. Ս. Փաշայանյան, Հայ բժշկության պատմությունից, Երևան, 1958։

106 Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 74, վ. 204բ, 63։

Համալսարանավարտ բժիշկ Լեոն Տիգրանյանը (1842—1906) Երևանում հրատարակում է «Առողջապահական թերթ» (1842—1884), առաջին գիտահանրամատչելի հանդեսը, որը հատուկ ուշադրություն է նվիրում բժշկական գիտելիքների պրոպագանդմանը և դպրոցական առողջապահության հարցերին։ Լ. Տիգրանյանը հանում է այն քանին, որ քաղաքի հայկական դպրոցներում մտցվում են առողջապահության և մարմնամարզության դասեր։

Տիգրանյանի ջանքերով Երևանում ստեղծվում է առողջապահական հանձնաժողով, որը պետք է հսկեր և կարգավորեր քաղաքի փողոցների, բակերի, շուկայի և հասարակական այլ վայրերի սանիտարական-հիգիենիկ վիճակը։ Համաճարակների դեմ պայքարելու նպատակով նա հանդանակություն է կազմակերպում և Բաշգեղից քսան կիլոմետր հեռավորության վրա գտնվող աղբյուրներից ջրատար է հասցնում Երևան։ Հայ բժիշկներից Ավետիք Բաբայանը (1844—1913), որն ավարտել էր Պետերբուրգի բժշկավիրաբուժական ակադեմիան, առաջինն էր, որ ուսումնասիրեց Հայաստանի և Կովկասի լեռնակլիմայական գործոնները և հանքային ջրերը։ Հայ բժշկական մշակույթի պատմության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում Ներվիզմի ուսմունքի ուղղությամբ կատարած նրա կլինիկական փորձագիտական աշխատանքները։ Ջգալի է նաև Ա. Բաբայանի ներդրումը տուբերկուլյոզի դեմ մղվող պայքարում։ Հենվելով իր ուսումնասիրությունների վրա, Բաբայանն առաջին անգամ հարց է բարձրացնում, որ սոցիալական այդ ահավոր ախտի բուժման համար Աբասթումանի, Սարիղամիշի և Համզաչիմանի լեռնակլիմայական գործոնները շատ նպաստավոր են։ Նա առաջարկում է այդ վայրերում կառուցել ժողովրդական առողջարաններ։

Հայ բժշկության երախտավորներից է նաև Մարգար Առուստամովը (Առուստամյանը, 1854—1901), Պետերբուրգի բժշկավիրաբուժական ակադեմիայի սան։ Իր ծննդավայր Նուշի քաղաքում ծավալած դեմոկրատական ակտիվ գործունեության համար ցարական իշխանությունները նրան արտաքսում են Աստրախան, ուր նա նվիրվում է ձկնորսարանների հազարավոր բանվորների աշխատանքի և կենցաղի սանիտարահիգիենիկ պայմանների ուսումնասիրության և բժշկական օգնության կազմակերպման գործին։ Առուստամյանը հատկապես մեծ ճանաչում է ստանում 1892 թ. բռնկված խոլերայի ահավոր համաճարակի դեմ անձնախոնջաց պայմաններում հերոսական պայքար կազմակերպելու գործում։

Իուր նշանավոր գրող Վ. Գ. Կորոլենկոն այդ մասին գրել է. «Առուստամյանի և նրա ընկերների անունները որպես իսկական խիզախության օրինակ կանցնեն հասարակության պատմության մեջ»[107]։ Հետագա տարիներին ևս Առուստամյանը ժանտախտի համաճարակի դեմ պայքար է կազմակերպել Աստրախանի նահանգում և Միջին Ասիայում։ Առուստամյանի գիտական ժառանգության մեջ առանձնահատուկ տեղ է գրավում «Ձկան թույնի բնույթի մասին» կլինիկափորձագիտական ծանրակշիռ ուսումնասիրությունը[108]։ Այս աշխատության մեջ, որին նա նվիրել էր շուրջ 11 տարի, Առուստամյանը առաջիններից էր, որ ապացուցեց ձկան թունավորումից առաջացած ծանր

---

107 *В. Г. Короленко*, Карантин на девятифутовом рейде. Полное собрание сочинений, кн. 9, 1914.

108 *М. И. Арустамов*, О природе рыбного яда. Աշխատասիրությամբ Լ. Հովհաննիսյանի և Ա. Կծոյանի, Երևան, 1958։

հիվանդության (բոտուլիզմ) ինֆեկցիոն բնույթը։ Այդ ուղղությամբ նա լաբորատոր փորձեր կատարեց Աստրախանում, Պետերբուրգում և Փարիզում (Ի. Ի. Մեչնիկովի լաբորատորիայում) և արժանացավ ընդհանուր ճանաչման ու հատուկ մրցանակի։

Ժողովրդի առողջապահության կազմակերպման գործում եղած սոցիալական աղաղակող անհավասարության դեմ իր հոդվածներով և աշխատություններով[109], կրքոտ պայքար է մղել ճանաչված բժիշկ **Արտաշես Հովհաննեսի Բուդաղյանը** *(1864—1915)*։ Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ XIX դ. վերջերին և XX դ. սկզբներին ռուսական առաջադեմ գիտնականների և հայ բժիշկների միջև առաջանում են ստեղծագործական, անշահախնդիր բարեկամական կապեր։ Ռուսական կլինիկաներում և լաբորատորիաներում հայ բժիշկները ձեռք են բերում մասնագիտական որակավորում և զարգացնելով այն, դառնում են ճանաչված գիտնականներ։



Բժշկագիտության դոկտոր Մարգար Առուստամյան

Հայ բժշկական մշակույթի աչքի ընկնող գործիչներից է նաև **Վահան Մարգարի Արծրունին** *(1857—1947)*։ Նա ավարտել է Փարիզի համալսարանի բժշկական ֆակուլտետը և մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը գործել Թիֆլիսում։ Լինելով Կովկասյան բժիշկների ընկերության ամենաեռանդուն անդամներից մեկը, նա հսկայական աշխատանք է կատարում ժողովրդի մեջ բժշկասանիտարական գիտելիքների տարածման և դպրոցական առողջապահության կազմակերպման ուղղությամբ։ 1892 թ. հրատարակված նրա «Խոլերայի մասին» գիտահանրամատչելի գիրքը թարգմանվում է Անդրկովկասի ժողովուրդների լեզուներով և արժանանում ընկերության մրցանակին։ 1897 թ. Արծրունին տպագրում է «Ժանտախտ» հիվանդությանը նվիրված գիրքը։ 1903—1905 թթ. Թիֆլիսում նրա խմբագրությամբ լույս է տեսնում «Առողջապահիկ թերթ» մասնագիտական հանդեսը[110]։

Բժիշկ և նշանավոր հասարակական գործիչ **Բագրատ Աբրահամի Նավասարդյանը** *(1852—1934)* 1880 թ. Թիֆլիսում աղքատների համար հիմնադրում

---

109 Տե՛ս, Արտաշես Բուդաղյան, Ժողովրդական առողջաբանություն, Ս. Պետերբուրգ, 1908։ Նույնի, Գոյության կռիվ, Ս. Պետերբուրգ, 1904։ Նույնի, Ժառանգականություն և դաստիարակություն, Ս. Պետերբուրգ, 1901 և այլն։

110 Սովետական կարգերի հաստատումից հետո Վ. Արծրունին եռանդուն մասնակցություն է ցուցաբերում Հայաստանում բժշկական բարձրագույն կրթության հիմնադրման, կադրերի պատրաստման և բժշկագիտության զարգացման գործին։

է ծրի բուժարան։ 1881 թ. նա կազմակերպում է Ելիսավետպոլի և Բաքվի նահանգներում բռնկած ժանտախտի համաճարակի դեմ մղվող պայքարը։ 1882 թ. Բ. Նավասարդյանը մեկնում է Արևմտյան Հայաստան՝ ուսումնասիրելու ժողովրդի մեջ առավել տարածված հիվանդությունները և մոտիկից ծանոթանալու երկրին, որի քաղաքական դրությունը նրան մշտապես հուզում էր։

Առանձին անհատ բժիշկների ջանքերը, սակայն, ի վիճակի չէին վճռական դեր խաղալու ժողովրդի առողջապահության բավարար կազմակերպման գործում։ Նյութական միջոցների և պետական պատշաճ օժանդակության բացակայության պատճառով մի շարք հիվանդություններ շարունակում էին լայն տարածում գտնել։ Այսպես, Երևանի նահանգական բժիշկ Դ. Ս. Մալյուժենկոյի տվյալների համաձայն, 1906 թ. Երևանի 29.000 բնակիչներից 18.000-ը տառապել են մալարիայով, իսկ 1912 թ. ամբողջ նահանգում բոլոր հիվանդությունների 33,5 տոկոսը կազմել է մալարիան։ Ոչ բոլոր սուր վարակիչ հիվանդները հնարավորություն ունեին մեկուսացվել ու հոսպիտալացվել։ 1911 թ. տվյալներով հիվանդանոցներում բուժվել է որովայնային տիֆով հիվանդների միայն 22,3%-ը, բծավոր տիֆով հիվանդների՝ 65,4%-ը, հետադարձ տիֆով հիվանդների՝ 12,7%-ը, դիզենտերիայով հիվանդների՝ 6%-ը, իսկ հազարավոր մալարիկների միայն 1,9%-ը[111]։

1885 թ. Ղամարլուում (Արտաշատ) բացվում է առաջին հիվանդանոց-ընդունարանը, իսկ 1887 թ. հիվանդանոց-ընդունարաններ են հիմնվում նաև գավառական մյուս կենտրոններում։ 1890 թ. Երևանում բացվում է առաջին բուժարանը, իսկ 1882 թ. միակ խղճուկ հիվանդանոցը, որն ուներ ընդամենը 12 մահճակալ, 1913 թ. նահանգում գործում էր վեց հիվանդանոց՝ 212 մահճակալով։ Այդ տարիներին Երևանում գործում էին նաև բժիշկներ Ավետիքյանի և Հովհաննիսյանի երկու փոքր մասնավոր հիվանդանոցները։

Ազգաբնակչությանը սպասարկում էին 13 բուժական կետեր և յոթ դեղատուն։ 1913 թ. Հայաստանում աշխատում էր 57 բժիշկ (որոնցից 12-ը՝ գավառական կենտրոններում), 16 ատամնաբույժ և 153 միջին բուժաշխատող։ Այսպիսով, 100.000 բնակչին ընկնում էր 0,6 բժիշկ, 1,5 միջին բուժաշխատող և 2,1 մահճակալ[112]։

Բժշկական միջոցառումներին տրամադրվում էր չնչին գումար, իսկ պետական բյուջեի զգալի մասը հատկացվում էր ոստիկանական ապարատին։ Այսպես օրինակ՝ «1912 թվականին մեկ շնչի բուժօգնության համար տրամադրվել է ընդամենը 25 կոպեկ, իսկ դրա կողքին ոստիկանության և բանտերի պահպանման ծախսերը (բնակչության մեկ շնչի նկատմամբ) կազմել են 5 ռուբլի 85 կոպեկ կամ 23 անգամ ավելի»[113]։

XIX դարում և XX դարի սկզբին որոշ աշխուժություն է ապրում նաև արևմտահայ բժշկագիտությունը և առողջապահությունը։ Նրա պատմության մեջ առաջնակարգ տեղերից մեկը պատկանում է բազմավաստակ բժիշկ Մի-

---

111 Упр. мед. частью гражданского ведомства на Кавказе, Отчет о состоянии народного здоровья и организации врачебной помощи в Закавказье за 1911 г., Тифлис, стр. 21.

112 Տե՛ս Ս. Նանայան, Թ. Փարսադանյան, Ս. Խրիմլյան, Առողջապահությունը Սովետական Հայաստանում, Երևան, 1961, էջ 4։

113 Նույն տեղում, էջ 55։

բայել Ռեստենին (Տեր-Պետրոսյան, 1774—1844 թթ.)։ Հենվելով իր երկարամյա բժշկական փորձի վրա և օգտագործելով ժամանակի գիտական գրականությունը, նա 1832 թ. Վենետիկում հրատարակում է «Բժշկություն» բազմահատոր աշխատությունը, որը տասնյակ տարիներ հայ ընտանիքներում և բժիշկների ու բժշկությամբ զբաղվողների համար ծառայեց որպես սեղանի գիրք։ 1833 թ. Մ. Ռեստենը Եգիպտոսից տեղափոխվում է Կ. Պոլիս, ուր և ապրում է մինչև իր կյանքի վերջը։ Այստեղ նա լույս է ընծայում «Կրթություն բժշկական արվեստի» (1833) գիրքը և այլ աշխատություններ։

Արևմտահայ բժշկական մշակույթի ասպարեզում աչքի ընկնող դեմք էր հունգարահայ բժիշկ Անդրիաս Փափովիչը (1809—1858), որը բժշկական բարձրագույն կրթություն էր ստացել Բուդապեշտում և տեղափոխվել Կ. Պոլիս 1850 թ. Նա հրատարակում է «Ուրվեստ երկայնակեցության, որ է առողջ երկայն ու երջանիկ ապրելու ուսումը», երկու գրքից բաղկացած գիտահանրամատչելի աշխատություններ։

Կ. Պոլսում բժշկական բարձրագույն կրթական հաստատություններ հիմնադրվել է 1838 թ. Թուրքիայի արքունի բազմավաստակ բժիշկ Մանվել Շաշյանի նախաձեռնությամբ։ Տարբեր տարիներ այդ հաստատություններում աշխատել են 20-ից ավելի արևմտահայ ականավոր բժիշկ-գիտնականներ։ Նրանցից Սերվիչենը (Սերովբե Վիչենյան) (1815—1887) աշխատել է նաև Կ. Պոլսի Աղգային հիվանդանոցում։ Նա Կ. Պոլսի բժիշկների ընկերության կազմակերպիչներից էր։ 1849—1852 թթ. Սերվիչենը խմբագիրն էր ֆրանսերեն լույս ընծայվող «Gazette medicale d'Orient» բժշկական հանդեսի, գրել է հայերեն և ֆրանսերեն գիտահանրամատչելի և գիտական աշխատություններ («Մանուկների խնամքը», 1844, «Բարոյականության սկզբունքները», 1851)։

Արտասահմանյան երկրներում համբավ էր ձեռք բերել բժիշկ Հովսեփ Բեյրաքը (1825—1866), որը 1854 թ. Կ. Պոլսից տեղափոխվում է Փարիզ և բժշկական ակադեմիա ներկայացրած «Ամբողջ բժշկական գործի վիճակը Թուրքիայում» աշխատության համար ընտրվում է նրա անդամ։ Նա գրում է «Ընդհանուր ախտաբանություն» ծավալուն գործը, որը կարճ ժամանակում երկու անգամ վերահրատարակվում է։ 1863 թ. ֆրանսիական կառավարությունը այդ աշխատության համար նրան շնորհում է Պատվավոր լեգեոնի կոչում։ Արժեքավոր է նրա «Կանանց սեռական օրգանների արատների առաջացման մասին» (1862) մենագրությունը։ Բեյրաքը հայտնագործել է նաև միզուկահատիչ, որն ընդունվել է Փարիզի բժշկական ակադեմիայի հատուկ հանձնաժողովի կողմից։ 1865 թ. նա հրատարակում է «Միզուղիների հիվանդություններ» իր կարդացած դասախոսությունները։ Ֆրանսիական պետական ֆորմակոպեայի մեջ է մտել վեներական հիվանդությունների բուժման համար նրա առաջարկած Opiat դեղապատրաստուկը՝ Opiat de Beyran անունով։

Փարիզի Պաստյորի ինստիտուտի գիտնական եղբայրներ Մանվելյանը իր մորֆոլոգիական հետազոտական աշխատանքների համար 1900 թ. արժանացում է Փարիզի բժշկական ֆակուլտետի դափնեկրի պատվավոր կոչման։ Հետագայում նա ընտրվում է Հայկական ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ։ Միհրան Պատաբյանը ԱՄՆ-ում ճանաչված ռենտգենաբան էր։ Նրա ռենտգենաբանու-

թյան մասին գրած դասագրքով էին սովորում Ամերիկայի բժշկական բոլոր բուհերի ուսանողները։ 1907 թ. դրա երկրորդ հրատարակությունը թարգմանվում է նաև գերմաներեն։ Ղասաբյանը մշակել է չարորակ նորագոյացությունների ռենտգեն ճառագայթային բուժման եղանակը և կատարել բազմաթիվ այլ ուսումնասիրություններ։ Մշակային հիվանդությունների բնագավառում զգալի հաջողություններ է հասել Նյու-Յորքի բժշկական ակադեմիայի պատվավոր անդամ Միհրան Պարունակյանը։

XIX դարի արևմտահայ բժիշկները առաջ են մղում նաև հիվանդանոցների հիմնադրման ու զարգացման գործը։ 1834 թ. Հարություն ամիրա Պեզճյանի միջոցներով Կ. Պոլսում կառուցվում և շահագործման է հանձնվում 300—350 մահճակալանոց հիվանդանոցը, որը թերապևտիկ, վիրաբուժական և հոգեբուժական բաժանմունքներից բացի ուներ նաև անխնամ ծերերի և որբերի բաժիններ։ Հետագայում այն կոչվում է «Ազգային ս. Փրկիչի հիվանդանոց»։ Այդ հիվանդանոցի գործունեությունն ընթացել է վերելքներով ու վայրէջքներով, որը պայմանավորված է եղել նրանով, որ այն պահվել է նվիրատվություններով, չի ունեցել կայուն բյուջե, բժշկական մշտական անձնակազմ և այլն։

Տակավին XVIII դարի վերջերից Կ. Պոլսում գործել է նաև հայ կաթոլիկների ս. Հակոբի ազգային հիվանդանոցը, որը նույնպես պահվում էր նվիրատվությունների միջոցներով։ 1836 թ. կառուցվել է այդ հիվանդանոցի նոր հարմարավետ շենքը։

XVIII դարի վերջերից Զմյուռնիայում գոյություն է ունեցել ս. Լուսավորչի ազգային հիվանդանոցը։ Այդ քաղաքում 1879 թ. (տեղացի Հովհաննես և Հակոբ Սպարտալյան եղբայրների նվիրատվության միջոցներով) կառուցվում է 40—50 մահճակալանոց իր բոլոր հարմարություններով մի նոր հիվանդանոց, ուր բուժվել են նաև այլազգի հիվանդներ։

Այսպիսով, XIX դ. երկրորդ կեսին և XX դ. սկզբներին և՛ արևելահայ և՛ արևմտահայ կյանքում, նմանապես և հայկական գաղթօջախներում առաջընթաց է կատարվում ինչպես բժշկության, այնպես էլ բժշկագիտության մեջ։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1870

14 մայիսի—Դյուզացիական ռեֆորմը Հայաստանում և Ադրբեջանում։

16 հունիսի—Ցարական կառավարությունը հրատարակեց քաղաքային կանոնադրություն։

14 սեպտեմբերի—Ղզլարում ծնվեց նշանավոր հեղափոխական Իսահակ Խաշատուրի Լալայանը։ (Մեռավ 1933 թ.)։

Կ. Պոլսում սկսեց լույս տեսնել «Հայրենիք» օրաթերթը։ (Լույս է տեսել մինչև 1909 թ., 1897—1900 թթ. ընդհատվել է)։

Ախալցխայում բացվեց եզիտաբերյան օրիորդաց դպրոցը։

Կ. Պոլսի Ղալաթիասարայի լիցեյի հայ ուսուցիչների նախաձեռնությամբ կազմվեց «Դպրոցասիրաց ընկերություն»։

1871

1 հունվարի—Ջմյուռնիայում լույս տեսավ «Արևելյան մամուլ» ամսագիրը Մատթեոս Մամուրյանի խմբագրությամբ։ (Հրատարակվեց մինչև 1909 թ.)։

30 հունվարի—Ալեքսանդրապոլում բացվեց Արդուքյան օրիորդաց դպրոցը։

17 մայիսի—Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղում ծնվեց նշանավոր հայագետ Նիկողայոս Ադոնցը։ (Մեռավ 1943 թ.)։

Մոսկվայի Լազարյան ճեմարանն անցավ լուսավորության մինիստրության տնօրինության տակ։

1872

1 հունվարի—Թիֆլիսում լույս տեսավ «Մշակ» լրագիրը Գրիգոր Արծրունու խմբագրությամբ։ (Հարատևեց մինչև 1920 թ. փետրվարը)։

21 հունվարի—Մեռավ հայ նշանավոր բանաստեղծ Պետրոս Դուրյանը։ (Ծնվել է 1852 թ. Կ. Պոլսում)։

3 մարտի—Վանում կազմակերպվեց «Միություն ի փրկություն գաղտնի ընկերությունը»։

10 հոկտեմբերի—Շահագործման հանձնվեց Փոթի-Թիֆլիս երկաթուղին։

24 հոկտեմբերի—Ալեքսանդրապոլում ծնվեց Գարեգին Լևոնյանը։ (Մեռավ 1947 թ.)։

Նոյեմբեր—Թիֆլիսում լույս է տեսնում «Кавказская старина» պատմա-ազգագրական և հնագիտական ամսագրի առաջին համարը պատմաբան Ալ. Երիցյանի խմբագրությամբ։

1873

22 նոյեմբերի—Ախալցխայում ծնվեց ակադեմիկոս Հակոբ Համազասպի Մանանդյանը։ (Մահավ 1952 թ. Երևանում)։

1874

22 ապրիլի—Կ. Պոլսում մեռավ «Մեղու» թերթի խմբագիր, արևմտահայ հեղափոխական-դեմոկրատ Հարություն Սվաճյանը։ (Ծնվել է 1831 թ.)։

20 հունիսի—Մեծ Ղարաքիլիսայում կազմակերպվեց «Հայրենիքի սիրո գրասենյակ» կազմակերպությունը Համբարձում Բալասանյանի գլխավորությամբ։

19 հուլիսի—Ցարական կառավարությունը լրացուցիչ կանոններ հրատարակեց հայկական դպրոցների համար, ըստ որոնց հայկական դպրոցները մնում են հայ եկեղեցու տնօրինության տակ։

23 սեպտեմբերի—Բաքվում բացվեց Հռիփսիմյան օրիորդաց դպրոցը։

28 սեպտեմբերի—Էջմիածնում բացվեց Գևորգյան ճեմարանը։ (Փակվեց 1917 թ. դեկտեմբերի 21-ին)։

5 նոյեմբերի—Բացվեց Երևանի նահանգի Արազդայանի ջրանցքը։

Երևանի նահանգը բաժանվեց 7 գավառի՝ Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Նախիջևանի, Սուրմալուի և Շարուր-Դարալագյազի։

Հայ ականավոր բանահավաք Գարեգին Սրվանձտյանցը հայտնաբերեց, գրի առավ և հրատարակեց հայ ժողովրդական էպոսի առաջին տարբերակը «Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» խորագրով, զետեղելով այն «Գրոց-Բրոց» ժողովածվում։

1875

14 մայիսի—Կանոններ հրատարակվեցին թիուլդարների մասին։

Մայիս-հունիս ամիսներին—Կողբի աղահանքերի հուզումները։

Հոկտեմբերին—Ապստամբություն բռնկվեց Զեյթունում։

18 հոկտեմբերի—Ալեքսանդրապոլում ծնվեց հայ գրականության դասական, բանաստեղծ Ավետիք Իսահակյանը։ (Մեռավ 1957 թ.)։

Քութայիսում և Թիֆլիսում ստեղծվեցին Անդրկովկասի առաջին նարոդնիկական ինտերնացիոնալ կազմակերպությունները։

1876

15 ապրիլի—Կ. Պոլսում հիմնվեց Արարատյան ընկերությունը։

18 օգոստոսի—Ալեքսանդրապոլում ծնվեց հայ բանաստեղծուհի Շուշանիկ Կուրղինյանը։ (Մեռավ 1927 թ.)։

29 նոյեմբերի—Կ. Պոլսում վախճանվեց բժիշկ, գրականագետ, հասարակական գործիչ Նահապետ Ռուսինյանը։ (Ծնվել է 1819 թ.)։

1 դեկտեմբերի—Թուրքական կառավարության ցուցումներով հրդեհվեց Վանի շուկան, զգալի նյութական վնաս հասցվեց տեղի հայ բնակչությանը։

11 դեկտեմբերի—Թուրքիայում հրապարակվեց սահմանադրություն, որը մեծ վեզիր Միդհատի անունով կոչվեց Միդհատյան։

Կ. Պոլսում հիմնվեց Արևելյան ընկերությունը։

Թիֆլիսում լույս տեսավ «Փորձ» ամսագիրը Արզար Հովհաննիսյանի խմբագրությամբ։ (Հրատարակվեց մինչև 1880 թ.)

1877

6 փետրվարի—Ախալքալաքում ծնվեց Դերենիկ Դեմիրճյանը։ (Մեռավ 1956 թ.)։

12 (24) ապրիլի—Ալեքսանդր II-ը ստորագրեց Թուրքիային պատերազմ հայտարարելու մանիֆեստը։

18 (30) ապրիլի—Ռուսական զորքերի Երևանյան ջոկատը գեներալ Տեր-Ղուկասովի ղեկավարությամբ, հայ աշխարհազորայինների հետ միասին գրավեց Բայազետ քաղաքը։

5 (17) մայիսի—Ռուսական զորքերը գեներալ Լորիս-Մելիքովի հրամանատարությամբ գրավեցին Արդահանը։

28 մայիսի—Ռուսական զորքերը մտան Ալաշկերտ։

5 սեպտեմբերի—Ցարական կառավարությունը լրացուցիչ կանոնադրություն է հաստատում Երևանի նահանգի և Թիֆլիսի նահանգի Ախալցխայի գավառի պետական գյուղացիների մասին։ (Կանոններ «բարձր դասին» չպատկանող հողատերերի և նրանց հողերի վրա ապրող գյուղացիների մասին)։

3 հոկտեմբերի—Ռուսական զորքերը գեներալ Լազարևի գլխավորությամբ Ալաջայի բարձունքներում Կարսի մոտ ջախջախում են Մուխտար փաշայի թուրքական բանակը։

1 նոյեմբերի—Կազմակերպվում է Կարսի մարզը, որը հետագայում բաժանվում է չորս օկրուգների՝ Կարսի, Արդահանի, Կաղզվանի և Օլթիի։

6 Նոյեմբերի—Ռուսական բանակը գեներալ Հովհաննես Լազարևի հրամանատարությամբ գրավում է Կարսը։
8 Նոյեմբերի—Թիֆլիսում բացվեց Մարիամյան-Հովնանյան օրիորդաց դպրոցը։

1878

1 Հունվարի—Կ. Պոլսում Դպրոցասիրաց և Արևելյան ընկերությունները միանում են և կազմում Դպրոցասիրաց—Արևելյան ընկերությունը։
19 Հունվարի—Ադրիանապոլսում դինադադար կնքվեց Ռուսաստանի և Թուրքիայի միջև։
8 (20) փետրվարի—Ռուսական զորքերը գրավեցին Կարինը (Էրզրում)։
19 փետրվարի (3 մարտի)—Տարական կառավրության և Թուրքիայի միջև ստորագրվեց Սան-Ստեֆանոյի պայմանագիրը։
4 մարտի—Նկատերինադարում (Կրասնոդար) ծնվեց հայ ականավոր ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը։ (Մեռավ 1936 թ.)։
8 մարտի—Հայկական հարցը Եվրոպական պետություններին ներկայացնելու և ապա Բեռլինի կոնգրեսին մասնակցելու նպատակով Կ. Պոլսից Եվրոպա մեկնեց հայ պատվիրակությունը։
23 մայիսի (4 հունիսի)—Կնքվեց անգլո-թուրքական համաձայնագիրը, որով Անգլիան Թուրքիայից գրավեց Կիպրոս կղզին։
1 հունիսի (13)—Բացվեց Բեռլինի կոնգրեսը, որի աշխատանքները շարունակվեցին մինչև 1 հուլիսի (13)։
Օգոստոս—Սկսվեց Զեյթունի ապստամբությունը։
7 սեպտեմբերի—Բեռլինի պայմանագրի համաձայն Կարինը (Էրզրում) վերադարձվում է Թուրքիային։
1 հոկտեմբերի—Ծնվեց հայ ականավոր մարքսիստ, հեղափոխական Ստեփան Շահումյանը։
Վանում ստեղծվեց «Սև Խաչ գաղտնի կազմակերպությունը։
Վանում բացվեց Համբարձում Երամյանի օրինակելի կոչվող դպրոցը։
Մուշում բացվեց Կենտրոնական վարժարան։ (Փակվեց 1890 թ.)։
Էրզրումի էյալեթը բաժանվեց չորս նահանգի՝ Կարինի, Վանի, Հնքյուրիի ու Մուշի։
Ամերիկյան միսիոներները Խարբերդում բացեցին «Արմենիա» կոլեջը, որը հետագայում կոչվեց «Եփրատ կոլեջ»։

1879

1 Հունվարի—Մկրտիչ Փորթուգալյանի նախաձեռնությամբ Վանում բացվեց Վարժապետանոց։
11 ապրիլի—Կ. Պոլսում հիմնվեց Ազգանվեր հայուհյաց ընկերությունը։
16 ապրիլի—Մոսկվայում մեռավ հայտնի հրապարակախոս «Հյուսիսափայլի» խմբագիր Ստեփանոս Նազարյանցը։ (Ծնվ. 1812 թ.)։
1 հոկտեմբերի—Երևանում բացվեց առաջին քաղաքային դուման։
16 դեկտեմբերի—Ալեքսանդրապոլում ծնվեց հայ նշանավոր կոմպոզիտոր Արմեն Տիգրանյանը։ (Մեռավ 1950 թ.)։
Արևմտյան Հայաստանում ստեղծվեցին Դերսիմի ու Խարբերդի կամ Մամուրեթ ուլ Ազիզի նահանգները։
Կ. Պոլսում արգելվեցին հայերեն ներկայացումները։
Գարնանը սկսվեցին Կարինի և Արաբկիրի քաղաքային բնակչության ելույթները իշխանությունների դեմ։

1880

17 փետրվարի—Նոր Նախիջևանում ծնվեց մեծ նկարիչ Մարտիրոս Սարյանը։ (Մեռավ 1972 թ.)։
9 մարտի—Թիֆլիսում հիմնադրվեց Հայոց հրատարակչական ընկերությունը։
15 մարտի—Երևանում լույս տեսավ առաջին պարբերականը՝ «Ոսակ» շաբաթաթերթը Վասակ Պապաջանյանի խմբագրությամբ։
1 հունիսի—Կ. Պոլսի Աբարատյան, Դպրոցասիրաց-Արևելյան և Կիլիկյան հայկական բարեգործական ընկերությունները միավորվեցին «Միացյալ ընկերություն հայոց» անունով՝ Մ. Չերազի և Ա. Արփիարյանի ղեկավարությամբ։

30 օգոստոսի—Ք. Դաան հրամանով արգելվեց «Հայաստան» անվան օգտագործումը պաշտոնական գրություններում։

Դերսիմը միացվեց Խարբերդի նահանգին, իսկ Հնջյարին՝ Վանի նահանգին։

Քիֆլիսում սկսեց գործել Արևմտահայ ժողովրդի ազատագրման հարցերով զբաղվող Գր. Արծրունու խմբակը։ (Դադարեց գոյություն ունենալուց 1883—84 թթ.)։

Սկսվեց Շեյխ Օբեյդուլլայի ապստամբությունը Թուրքական կառավարության դեմ՝ «Ազատ Քուրդիստան» լոզունգով։

Բացվեց Նոր Նախիջևանի և Բեսարաբիայի Քեմի հայկական ծխական դպրոցը։

1 8 8 1

Մայիսին—Խաչատուր Կերնջյանի նախաձեռնությամբ Կարինում հիմնադրվեց «Պաշտպան Հայրենյացս» գաղտնի կազմակերպությունը։

6 հուլիսի—Բժիշկ Բագրատ Նավասարդյանի և դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանի ջանքերով Քիֆլիսում ստեղծվեց «Կովկասի հայոց բարեգործական ընկերությունը»։

Հուլիսին—Սկսվեց Երևանի գավառի Պողնի գյուղի բնակիչների պայքարը մուլքադարի դեմ։ (Ավարտվեց 1899-ին)։

Հուլիսին—Բժիշկ Լևոն Տիգրանյանի խմբագրությամբ Երևանում լույս տեսավ «Առողջապահական Քերթիկ» ամսագիրը։

1 հոկտեմբերի—Կարինում հիմնադրվեց Սանասարյան վարժարանը։

1 նոյեմբերի—Բացվեց Երևանի ուսուցչական սեմինարիան։

Մոսկվայի հայ ուսանողության ջանքերով ձևավորվեց «Հայրենասերների միություն» գաղտնի խմբակը, որը հրատարակեց «Ազատության ավետաբեր» անլեգալ թերթը։

1881—82 թթ. Երևանում գործում էր «Հայասեր-ազգասեր» գաղտնի խմբակը։

1 8 8 2

21 փետրվարի—Քիֆլիսում լույս տեսավ «Արձագանք» լրագիրը Արգար Հովհաննիսյանի խմբագրությամբ։

25 հունիսի—Ծաղկաձորում ծնվեց սովետական ականավոր գիտնական, ակադեմիկոս Լևոն Օրբելին։ (Մեռավ 9.12.1958 թ. Լենինգրադում)։

20 օգոստոսի—Քիֆլիսում բացվեց Կովկասի հայոց ուսուցիչների առաջին ընդհանուր ժողովը։

17 սեպտեմբերի—Մեռավ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Դ-ն (IV-ը)։

1882—83 թթ. Քիֆլիսում ձևավորվեց Նարոդնիկական ինտերնացիոնալ կազմակերպությունից անջատված հայ նարոդնիկների առաջին խմբակը, որը հարատևեց մինչև 1886 թ.։

Նոր Նախիջևանում բացվեց Գոգոյան օրիորդաց դպրոցը։

Կովկասում վերացվեց փոխարքայությունը և ստեղծվեց Կովկասի քաղաքացիական մասի գլխավոր կառավարչապետություն։ Կովկասի կառավարչապետ նշանակվեց իշխան Ա. Մ. Դոնդուկով-Կորսակովը (1882—1890 թթ.)։

1 8 8 3

Հունվար—Քիֆլիսում լույս տեսավ արևելահայ առաջին մանկական պատկերազարդ ամսագիրը՝ «Աղբյուրը» Տիգրան Նազարյանի խմբագրությամբ։ (Հարատևեց մինչև 1918 թ.)։

8 մայիսի—Գործարկվեց Քիֆլիս-Բաքու երկաթգիծը։

20 դեկտեմբերի—Քիֆլիսում լույս տեսավ «Նոր դար» լրագիրը Սպանդար Սպանդարյանի խմբագրությամբ։

Մկրտիչ Փորթուգալյանի ջանքերով Վանում բացվեց Կենտրոնական վարժարանը։

1 8 8 4

2 հունվարի—Կ. Պոլսում լույս տեսավ «Արևելք» օրաթերթը։

Հունվար—Պետերբուրգում կայացած պետական խորհրդակցությունը ընդունեց հայկական եկեղեցական դպրոցների նոր կանոնները, որոնք անկաշկանդ միջամտության իրավունք էին տալիս պետական մարմիններին։

Հունիս—Թուրքական հարկային ռեֆորմի դեմ ապստամբություն բռնկվեց Զեյթունում քաղաքագլուխ Պապիկ իշխանի ղեկավարությամբ։

26 հոկտեմբերի—Մեռավ Կ. Պոլսի հայոց պատրիարք Ներսես Վարժապետյանը։

1885

25 հունվարի—Ախալքալաքի գավառի Դանձա գյուղում ծնվեց հայ նշանավոր բանաստեղծ Վահան Տերյանը։ (Մեռավ 1920 թ. հունվարի 7-ին)։

Փետրվար—Յարի հրամանով փակվեցին Կովկասի հայկական եկեղեցական ծխական դպրոցները։

Թ. Դաան հրամանով Վանից արտաքսվեցին Մկրտիչ Խրիմյանն ու Մկրտիչ Փորթուգալյանը։

20 հուլիսի—Մ. Փորթուգալյանը հաստատվեց Ֆրանսիայի Մարսել քաղաքում և ձեռնարկեց «Արմենիա» թերթի հրատարակությունը։ (Հարատևեց մինչև 1923 թ.)։

20 դեկտեմբերի—Ելիսավետպոլում ծնվեց նշանավոր կուսակցական, պետական գործիչ Ասքանազ Մռավյանը։ (Մեռավ 1929 թ.)։

Մ. Փորթուգալյանը Մարսելում կազմակերպեց «Հայոց հայրենասիրական միությունը», որը հետագայում դարձավ Արմենական կուսակցության կորիզը։

Յարի կողմից կաթողիկոս հաստատվեց Մակար արքեպիսկոպոսը։ (Մեռավ 1891 թ.)։

1886

6 հունվարի—Կ. Պոլսում ծնվեց նշանավոր դերասան Վահրամ Փափազյանը։ (Մեռավ 1966 թ.)։

28 հունվարի—Նոր Նախիջևանում ծնվեց Կոմունիստական կուսակցության և Սովետական Պետության ականավոր գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանը։ (Մեռավ 1925 թ.)։

Սկզբներին—Յարական կառավարությունը թույլ տվեց վերաբացել 1885-ին փակված հայկական դպրոցները։

1 սեպտեմբերի—Կ. Պոլսի Ղալաթիա թաղամասում մինաս Չերազի տեսչությամբ բացվեց Կենտրոնական վարժարանը։

Գ. Ղարաջյանը Ժնևում ծանոթացավ Գ. Պլեխանովի հետ։

Նյու-Յորքում հիմնվեց ամերիկահայ առաջին հասարակական կազմակերպությունը՝ «Հայկական միությունը»։

Արևմտյան Հայաստանը բաժանվեց Էրզրումի, Խարբերդի, Դիարբեքիրի, Դերսիմի, Բիթլիսի (Բաղեշ), Վանի, Հեքյարիի ու Սվազի նահանգների։

1887

1 հունվարի—Վիեննայի Մխիթարյան միաբանությունը հրատարակեց «Հանդես ամսօրեայ» ամսագրի առաջին համարը։

8 մարտի—Քութայիսում ծնվեց սովետական ականավոր գիտնական Հովսեփ Օրբելին։ (Մեռավ 1961 թ.)։

2 հունիսի—Անդրկովկասում բրիստոնյաների համար մտցվեց պարտադիր դինվորագրություն՝ 1886 թ. մայիսի 18-ի ցարական հրամանագրի համաձայն։

17 հունիսի—Շուշիում ծնվեց նշանավոր կուսակցական հասարակական-քաղաքական գործիչ, ականավոր պատմաբան, ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը։ (Մեռավ 1972 թ.)։

Յարական կառավարությունը Կարսի մարզում տասանորդը (աշարը) փոխարինեց դրամահարկով։

Անգլիահայ գաղութի հանաչված գործիչ Կ. Հակոբյանի նախաձեռնությամբ Լոնդոնում կազմակերպվեց «Հայկական հայրենասիրաց ընկերությունը»։

Ժնևում կազմակերպվեց Հնչակյան կուսակցությունը։

Ալավերդու պղնձահանքերի կոնցեսիան անցավ ֆրանսիական կապիտալիստների ձեռքը։

Երևանում գործարկվեց Քաիրոյի գինու, օղու և կոնյակի գործարանը։

1888

17 փետրվարի—Բիթլիսում մեռավ հայ նշանավոր պատմավիպասան Սերենցը՝ Հովսեփ Շիշմանյանը։ (Սկսվել է 1882 թ. Կ. Պոլսում)։

21 մարտի—Մոսկվայում ծնվեց սովետական անվանի գրող Մարիետա Շահինյանը։

25 ապրիլի—Բիթլիսում վախճանվեց հայ գրականության դասական Բաֆֆին (Հակոբ Մելիք-Հակոբյանը։ (Սկսվել է Սալմաստի գավառի Փայաջուկ գյուղում 1835 թ.)։

Անդրկովկասի բոլոր գավառները բաժանվեցին տեղամասերի (ուչաստկաներ), որոնց կառավարման համար նշանակվեցին պետեր (պրիստավներ)։

Թուրքական կառավարությունը խստագույն արգելքներ դրեց Կ. Պոլսի և Արևմտյան Հայաստանի հայ պարբերականների հրատարակության վրա։

Լույս տեսավ Ամերիկայի առաջին հայ պարբերականը՝ «Արեգակ» ամսաթերթը։

1889

19 փետրվարի—էջմիածնում մեռավ հայագետ Ստեփանոս Պալասանյանը։ (Ծնվ. 1837 թ.)։

2 ապրիլի—Պետերբուրգում մեռավ ականավոր հայագետ, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, պրոֆեսոր Քերովբե Պատկանյանը։ (Ծնվ. 1833 թ.)։

Մայիսին—Վանի նահանգի Ջուխ գյուղի մոտ զոհվեցին հայ ազատագրական շարժման առաջին մարտիկներից Վարդան Թոլոշյանն ու Հովհաննես Ագրիպպասյանը։

15 սեպտեմբերի—Թիֆլիսում բացվեց գյուղատնտեսական և արդյունաբերական արտադրանքների Կովկասյան ցուցահանդեսը։

15 նոյեմբերի—Լոնդոնում ֆրանսերեն լեզվով լույս տեսավ «L'Armenia» (Հայաստան) քաղաքական և գրական ամսաթերթը Մինաս Չերազի խմբագրությամբ։

Թուրքիայում ձևավորվեց «Օսմանյան միությունը», որը 1894 թ. իրեն մկրտեց «Միություն և առաջադիմություն» (Իթթիհատ վե Թերաքի) անունով։

Խորեն Աշըգյան պատրիարքը Մադաթիա Օրմանյանի աջակցությամբ Արմաշի վանքում բացեց եկեղեցական բարձրագույն ուսումնարան՝ Արմաշի դպրեվանքը։

Թիֆլիսում լույս տեսավ «Մուրճ» ամսագիրը Ավետիք Արասխանյանի խմբագրությամբ։ (Հրատարակեց մինչև 1907 թ.)։

1890

1 հունվարի—Թիֆլիսում լույս տեսավ «Տարազ» շաբաթաթերթը (ապա ամսագիր) Տիգրան Նազարյանի խմբագրությամբ։

18—20 հունիսի—Ղեղարում կառավարական զորքերի և Կարինի անզեն հայ բնակչության միջև։

15 հուլիսի—Կ. Պոլսում հնչակյանները կազմակերպեցին Դում-Քափուի ցույցը։

Ամռանը—Թիֆլիսում կազմակերպվեց «Հայ հեղափոխականների դաշնակցություն» կուսակցությունը, որը հետագայում կոչվեց «Հայ հեղափոխական դաշնակցություն»։

4 սեպտեմբերի—Մեծ Ղարաքիլիսայում (Կիրովական) ծնվեց սովետահայ անվանի գրող Ստեփան Զորյանը։ (Մեռավ 1967 թ.)։

24 սեպտեմբերի—Մարգիս Կուկունյանի խումբը անցավ Թուրքական սահմանը։

Տարոնի Վարդենիս գյուղը Մարգար Ամրոյանի (Մարգար վարժապետ) զենավարությամբ պինված դիմադրություն ցույց տվեց թուրքական հարստահարիչներին։

Կովկասի կառավարչապետ նշանակվեց Ա. Ռ. Շերեմետևը (1890—1896 թթ.)։

1891

Փետրվար—Սուլթան Աբդուլ-Համիդ II-ը կազմակերպեց համիդեական գնդերը (Համիդիե)։

12 փետրվարի—Պետերբուրգում կայացավ պետական խորհրդակցություն, որը մշակեց հայ ժողովրդի նկատմամբ ազգային հալածանքն ուժեղացնելու նոր քաղաքականության սկզբունքները։

Մայիսից սկսեց լույս տեսնել դաշնակցության «Դրոշակ» թերթը։

27 մայիսի—Կ. Պոլսում մեռավ հայ ականավոր երգիծաբան Հակոբ Պարոնյանը։ (Ծնվ. 1842 թ. Ազրիանապոլսում)։

4 հունիսի—Կ. Պոլսում մեռավ հայ աշխարհահռչակ դերասան Պետրոս Ադամյանը։ (Ծնվ. 1849 թ.)։

Տեր-Ավետիքյանը Երևանում հիմնեց մետաղամշակման և գյուղատնտեսական գործիքների արտադրության կիսամեքենայացված գործարան։

1892

23 օգոստոսի—Նոր-Նախիջևանում մեռավ հայ նշանավոր բանաստեղծ Ռափայել Պատկանյանը։ (Ծնվ. 1830 թ.)։

18 նոյեմբերի—Կ. Պոլսում մեռավ հայ բանահավաք Գարեգին Սրվանձտյանցը։ (Ծնվ. 1840 թ.)։

19 դեկտեմբերի—Թիֆլիսում մեռավ անվանի հրապարակախոս, «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունին։ (Ծնվ. 1845 թ.)։

Թիֆլիսում ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որի վրա պարտականություն դրվեց մշակել Անդրկովկասի հինգ նահանգների, Կարսի մարզի, Բաթումի և Արդվինի օկրուգների պետական գյուղացիների հողաշինարարության ծրագիրը։

Թիֆլիսում հիմնադրվեց «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիա» կազմակերպությունը։ (1895 թ. ցարական ոստիկանությունը հայտնաբերեց և ջախջախեց)։
Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվեց Մկրտիչ Խրիմյանը։
Սուլթանի հրամանով դադարեցվեց «Միացյալ ընկերությունք հայոցի» գործունեությունը։
Կազմակերպվեց «Փարիզի հայոց բարեգործական ընկերությունը», որը հետագայում կոչվեց «Աղքատախնամ ընկերություն Փարիզի հայոց» կամ ուղղակի «Աղքատախնամ»։
Յրեզնոյում հիմնվեց «Հայոց գրադարանի միություն» կազմակերպությունը։

1893

1 փետրվարի—Երևանում բացվեց քաղաքային հիվանդանոց։
23 հունիսի—Թիֆլիսում լույս տեսավ «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիայի» օրգան «Ազատ Հայաստան» անլեգալ թերթը։
Բ. Դռան հրամանով արգելվեց արևմտահայերի Ազգային Սահմանադրությունը։
Սուլթանական կառավարությունը դադարեցրեց Կ. Պոլսի Ազգային ժողովի գործունեությունը (Լիովին խափանվեց 1896-ին)։
Թուրքական իշխանությունները ձերբակալեցին արևմտահայ ազգային ազատագրական շարժման գործիչներ Միհրան Տամատյանին, Տարոնի հոգևոր առաջնորդ Ներսես Խարախանյանին և ուրիշների։
Կ. Պոլսում հաստատվեց մանկավարժ Ռեթեոս Պերպերյանի կազմած ազգային նախնական կրթության կանոնագիրը։
1893—94 թթ. Հովսեփ Աթաբեկյանցը գերմաներենից հայերեն թարգմանեց «Կոմունիստական կուսակցության մանիֆեստը» և Ֆ. Էնգելսի «Սոցիալիզմի զարգացումը ուտոպիայից դեպի գիտություն» (Մ. Հովհաննիսյանի հետ) աշխատությունները։
Երևանում բացվեց Թիֆլիսի պետական բանկի բաժանմունք։
Երևանում հիմնվեցին Աֆրիկյանի և Դյոզալյանի գինու, կոնյակի գործարանները։

1894

1 օգոստոսի—Սասունի հերոսական ինքնապաշտպանությունը։
22 օգոստոսի—Կարսի մարզի Հաջիքենդ գյուղում ծնվեց նավատորմի ծովակալ ԻվանՍտեփանի Իսակովը։ (Մեռավ 11.10.1967)։
1 սեպտեմբերի—Նշվեց հայ լրագրության 100-ամյակը։
1 դեկտեմբերի—Հրատարակվեց «Հայ բանվոր հեղափոխականների» ասոցիացիայի նոր օրգան «Կռիվ» թերթը։
Թուրքական կառավարության կողմից Յոզղադում կախաղան բարձրացվեց հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ Ժիրայրը։
Թուրքական կառավարությունը կախաղան բարձրացրեց Տարոնի երիտասարդության ղեկավար վարդենիսցի Մարգար վարժապետին։
Երևանում բացվեց Սարաջևի գինու, կոնյակի գործարանը։

1895

Հունվարին—Մեծ տերությունների Կ. Պոլսի դեսպանների պահանջով Սասուն ժամանեց թուրքական կառավարության քննիչ հանձնաժողովը հայկական ջարդերի պատճառները պարզելու համար։
7 մարտի—Սարգիս Կուկունյանն ու նրա ընկերները աքսորվեցին Սիբիր, Սախալին։ (Մեռավ 1913 թ. Օրյոլի տաժանակիրների բանտում)։
11 մայիսի—Կ. Պոլսի՝ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները ընդարձակ հուշագիր և հայկական բարենորոգումների նախագիծ ներկայացրին Բ. Դռանը։
30 սեպտեմբերի—Կ. Պոլսում հայոց մայր եկեղեցու բակում հնչակյանները կազմակերպեցին բողոքի ցույց «Մայիսյան ծրագրի» իրագործման պահանջով։ Ցույցը կոչվեց Բաբը Ալիի ցույց։
5 հոկտեմբերի—1 նոյեմբերի—Հայերի զանգվածային ջարդեր Բաբերդում, Տրապիզոնում, Դերջանում, Երզնկայում, Ջարսանջակում, Կամախում, Քղում, Ուրֆայում (Եդեսիա), Շապին—Գարահիսարում, Կարինում, Խարբերդում, Մալաթիայում, Մարզվանում, Դիարբեքիրում։

12 հոկտեմբերի—Զեյթունում ապստամբություն բռնկվեց։

17 հոկտեմբերի—Ցարական կառավարությունը ձերբակալեց Ղ. Աղայանին և Ալ. Շիրվանզադեին։

18 հոկտեմբերի—Երկրում ծավալվող ընդհանուր զայրույթը կասեցնելու համար սուլթանը ստորագրեց մայիսի 11-ի բարենորոգումների ծրագիրը, որը չիրագործվեց։

13 նոյեմբերի—Ալավերդու շրջանի Սանահին գյուղում ծնվեց Կոմունիստական կուսակցության և Սովետական պետության ականավոր գործիչ Անաստաս Միկոյանը։ (Մեռավ 1978 թ.)։

8 դեկտեմբերի—Կովկասի կառավարչապետը կարգադրեց հայկական ծխական դպրոցները ենթարկել պետական դպրոցական իշխանություններին։

Ալեքսանդրապոլում տեղի ունեցավ Մալխասյանի տպարանի բանվորների գործադուլը։

Ժնևում Հնչակյան եռամսյա «Գաղափար» հանդեսի հուլիս-սեպտեմբեր համարներում առաջին անգամ հայերեն հրատարակվեցին «Կոմունիստական կուսակցության մանիֆեստի» երկու գլուխները։ (Հրատարակության վայրը ցույց է տված Աթենքը)։

Պետերբուրգում Վ. Ի. Լենինի գլխավորությամբ ստեղծվեց «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միությունը»։

Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը մեկնեց Պետերբուրգ ցարին այցելության, Հայկական հարցի վրա նրա ուշադրությունը հրավիրելու նպատակով։

1896

Հունվար—Թիֆլիսում լույս տեսավ «Լումա» ամսագիրը Գյուտ ավագ քահանա Աղանյանցի խմբագրությամբ։

30 հունվարի—Զեյթունի ապստամբությունից հետո հաշտության պայմանագիր կնքվեց ապստամբների, թուրք կառավարության և վեց տերությունների ներկայացուցիչների միջև։

8 ապրիլի—Տեղի ունեցավ Ախթալայի երկաթուղու շինարարության առաջին տեղամասի բանվորների գործադուլը։

3 հունիսի—Սկսվեց Վանի հերոսական ինքնապաշտպանությունը։

Օգոստոսի սկզբին—Լոնդոնում կայացավ Հնչակյան կուսակցության առաջին ընդհանուր ժողովը, որտեղ արևմտահայ պատգամավորների մեծ մասը հեռացավ կուսակցության շարքերից և ստեղծեց «Վերակազմյալ Հնչակյաններ» կուսակցությունը։

11 օգոստոսի—Բանվորական ընդվզումներ Ախթալայի երկաթուղու երրորդ տեղամասում։

14/26 օգոստոսի—Կ. Պոլսի Օսմանյան բանկի՝ «Բանկ Օտոմանի գրավումը»։

Օգոստոսի վերջին—Հայերի զանգվածային կոտորածներ սկսվեցին Կ. Պոլսում։ Տևեց երկու ամիս։

Սեպտեմբերին—Հայերի զանգվածային կոտորածներ սկսվեցին Ակնում։

16 նոյեմբերի—Կ. Պոլսում լույս տեսավ «Բյուզանդիոն» օրաթերթը Բյուզանդ Քեչյանի խմբագրությամբ։

Երվանդ Լալայանի խմբագրությամբ Շուշիում լույս տեսավ «Ազգագրական հանդես» եռամսյա հանդեսը։

1897

28 հունվարի—Ռուսաստանում առաջին անգամ կատարվեց ընդհանուր մարդահամար, որի արդյունքները հրատարակվեցին 1905 թ. «Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г.» ժողովածվում։

1 մարտի—Կարսում ծնվեց սովետահայ մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցը։ (Մեռավ 1937 թ.)։

2 հունիսի—Ցարական Պետական խորհրդի որոշումը հայկական եկեղեցական-ծխական բոլոր դպրոցները լուսավորության մինիստրությանը ենթարկելու մասին։ Որոշմանը չենթարկվելու պատճառով այդ դպրոցները փակվեցին։

Օգոստոս—Դաշնակցականները կազմակերպեցին «Խանասորի արշավանքը»։

Հոկտեմբեր—Բանվորական ելույթներ տեղի ունեցան երկաթուղու շինարարության Կարսի տեղամասում։

Հոկտեմբեր—Թուրքական կառավարության կարգադրությամբ փակվեցին Թուրքիայում հրատարակվող հայ պարբերականների զգալի մասը։

2 դեկտեմբերի—Չարդախլու գյուղում ծնվեց ականավոր զորավար Սովետական Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը։

Կովկասի կառավարչապետ նշանակվեց իշխան Գ. Ս. Գոլիցինը (1897—1904)։

Ղափանում սկսեց գործել Մելիք-Ազարյանցի «Ույունիք» պղնձաձուլական գործարանը։

4. Պոլսի հայոց պատրիարք Մաղաքիա Օրմանյանի ջանքերով ստեղծվեց կոտորածներից տուժածներին օգնող «Նպաստից հանձնաժողովը»։

Մասկվայում լույս տեսավ «Братская помощь пострадавшим в Турции армянам» *ժողովածուն։*

1898

Փետրվար—Երևանում բացվեց Կովկասյան գյուղատնտեսական ընկերության բաժանմունք։

13 փետրվարի—մինչև 11 մարտի—Գործադուլ արեցին Թիֆլիսի էնֆիաջյանցի ֆաբրիկայի բանվորները։

10 մարտի—Մեռավ հայ ականավոր կոմպոզիտոր Տիգրան Չուխաջյանը։ (Ծնվ. 1836 թ.)։

17 մարտի—Ռուսաստանի մինիստրների կոմիտեն հատուկ որոշում կայացրեց հայկական գրպրոցներին պատկանող գույքը պետական իշխանությունների տնօրինությանը հանձնելու մասին։

10 սեպտեմբերի—Գերմանիայում մեռավ նշանավոր գիտնական Անդրեաս Արծրունին։ (Ծնվ. 1847 թ.)։

Նոյեմբերին—Փարիզում լույս է տեսնում «Անահիտ» ամսագիրը Արշակ Չոպանյանի խմբագրությամբ։

Թիֆլիսում կազմակերպվեց հայ բանվորների առաջին սոցիալ-դեմոկրատական, մարքսիստական խումբը։ (Գործեց մինչև 1901 թ. գարունը)։

Ցարական իշխանությունների կարգադրությամբ սահմանափակվեց կովկասահայ բարեգործական ընկերությունների գործունեությունը։

1899

Հունվարի 1—Շահագործման հանձնվեց Թիֆլիս-Ալեքսանդրապոլ երկաթուղագիծը։

15 հուլիսի—Ավարտվեց Թիֆլիս-Կարս երկաթուղու շինարարությունը։

Ամռանը—Ստ. Շահումյանի դեկավարությամբ Ջալալօղլիում (Ստեփանավան) ստեղծվեց Հայաստանի առաջին մարքսիստական խմբակը։

Նոյեմբեր —Ազգային ազատագրական շարժումների նշանավոր գործիչ Սերոբ Աղբյուրի (Սերոբ Վարդանյան) մահը։

Ռուս կապիտալիստ Ն. Լ. Շուստովը Երևանում գնեց Ներսես Թաիրովի կոնյակի գործարանը և ընդարձակեց սպիրտային խմիչքների արտադրությունը։

1900

19 ապրիլի—Թեոդոսիայում մեռավ աշխարհահռչակ ծովանկարիչ Հովհաննես Այվազովսկին։ (Ծնվ. 1817 թ.)։

14 օգոստոսի—Թիֆլիսում սկսվեց երկաթուղային արհեստանոցների բանվորների գործադուլը։

3 դեկտեմբերի—Փարիզում ֆրանսերեն լույս տեսավ «Pro Armenia» երկշաբաթաթերթը։

24 դեկտեմբերի—Գերմանիայի Լայպցիգ քաղաքում լույս տեսավ «Իսկրա» թերթի առաջին համարը Վ. Ի. Լենինի խմբագրությամբ։

Ե. Լալայանի ջանքերով Թիֆլիսում հիմնվեց Ազգագրական հրատարակչական ընկերությունը, որը 1906 թ. վերածվեց Հայոց ազգագրական ընկերության։

1901

2 հունվարի—Մեռավ արևմտահայ մանկավարժ, գրող, հրապարակախոս Մատթեոս Մամուրյանը։ (Ծնվ. 1837 թ.)։

3 հունվարի—Մեռավ արևմտահայ վիպագիր Սրբուհի Տյուսաբը։ (Ծնվ. 1842 թ.)։

23 փետրվարի—Մեռավ արևմտահայ հրապարակախոս Ստեփան Ոսկանը։ (Ծնվ. 1925 թ.)։

1 մայիսի—Ցարական կառավարությունը օրենք հրատարակեց «Անդրկովկասի պետական հողերում բնակվող գյուղացիների հողաշինարարության գլխավոր հիմունքների մասին»։

12 հունիսի—Ցարական կառավարության օրենքով Անդրկովկասում վերացվեցին ծխահարկն ու հողահարկը, մտցվեց պետական բարերային տուրքը։

1 նոյեմբերի—մինչև 27-ը—Արևմտյան Հայաստանում Անդրանիկի չոկատի և Թուրքական կանոնավոր զորամասերի միջև տեղի ունեցավ Առաքելոց վանքի կռիվը։

9 նոյեմբերի—Մեռավ նշանավոր հայագետ և գրող Ղևոնդ Ալիշանը։ (Ծնվ. 1820 թ.)։

10—20 դեկտեմբերի—Ռիգայում տեղի ունեցավ Ռուսաստանի հայ ուսանողների համագումարը, որտեղ Ստ. Շահումյանը ղեկավարում էր հեղափոխական սոցիալ-դեմոկրատական խումբը։

13 դեկտեմբերի—Բացվեց Ալեքսանդրապոլ-Երևան երկաթուղագիծը։

Սոցիալ-դեմոկրատական լենինյան-իսկրայական խմբակ ստեղծվեց Երևանում։

Ստ. Շահումյանը Ռիգայի Պոլիտեխնիկական ինստիտուտում հիմնադրեց մարքսիստական «Բեռլինկա» խմբակը։

Հաղարչության միջազգային բյուրոն Բեռնում (Շվեյցարիա) հաստատակայնության և քաղաքական շրջանների ուշադրությունը հրավիրեց Հայկական հարցի վրա։

1902

21 փետրվարի—Մեռավ հայագետ Ալեքսանդր Երիցյանը։ (Ծնվ. 1841 թ.)։

2 մարտի—Ստեփան Շահումյանը գլխավորեց Ռիգայի Պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանողության խոշոր դասադուլը, որի պատճառով հեռացվեց ինստիտուտից և արտաքսվեց Կովկաս։

10 ապրիլի—Հիմնադրվեց Թիֆլիսի հայոց դրամատիկական ընկերությունը։

Ամռանը—Ստ. Շահումյանը Բ. Կնունյանցի, Ա. Ջուրաբյանի, Ս. Կանոյանի և ուրիշների հետ միասին Թիֆլիսում հիմնադրեց լենինյան-իսկրայական ուղղության «Հայ-սոցիալ դեմոկրատների միությունը»։

4—7 հուլիսի—Բրյուսելում կայացավ միջազգային կոնֆերանս հօգուտ Հայկական հարցի արդարացի լուծման։

9 հուլիսի—Վիեննայում մեռավ հայագետ Արսեն Այտընյանը։ (Ծնվ. 1825 թ.)։

Հոկտեմբերին—Լույս տեսավ լենինյան իսկրայական ուղղության «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» օրգան «Պրոլետարիատ» առաջին համարը։

1903

Մարտի կեսերին—Թիֆլիսում տեղի ունեցավ սոցիալ-դեմոկրատական կազմակերպությունների առաջին համագումարը, որտեղ ստեղծվեց ՌՍԴԲԿ Կովկասյան միությունը։

Ապրիլի կեսերին—Տեղի ունեցավ Շամխորի պղնձահանքերի բանվորների գործադուլը։

21 ապրիլի—օրենք հրատարակվեց Անդրկովկասում հողաշինարարական աշխատանքների չարտոնակման և հողաբաժանումների անցկացման մասին։

Ապրիլ-մայիս—Վրացական «Բրձոլա» և հայկական «Պրոլետարիատ» թերթերը միացվեցին և նրանց փոխարեն լույս տեսան ՌՍԴԲԿ Կովկասյան միության միասնական օրգան «Պրոլետարիատի կռիվ» (հայերեն), «Պրոլետարիատիս բրձոլա» (վրացերեն), «Борьба пролетариата» (ռուսերեն) թերթերը։

Մայիսին և նոյեմբերին—Տեղի ունեցավ Լոռու շրջանի Հաղպատ գյուղի գյուղացիների զինված ելույթը կալվածատեր Բարաթովի դեմ։

12 հունիսի—Նիկոլայ II-ը հաստատում է հայ եկեղեցապատկան գույքի և կալվածքների բռնագրավման ու պետականացման մասին օրենքը։

17 հուլիսի—Բացվեց ՌՍԴԲԿ II համագումարը։

29 հուլիսի—Ալեքսանդրապոլի բնակչության բազմահազարանոց ցույցը եկեղեցական ունեցվածքը բռնագրավելու դեմ։

3 օգոստոսի—Երևանի բնակչության ցույցը հունիսի 12-ի օրենքի դեմ։

4 օգոստոսի—Խրիմյան Մկրտիչ կաթողիկոսը հրամայեց Սինոդին չհրապարակել հունիսի 12-ի օրենքը, իսկ օգոստոսի 21-ին կոնդակ ուղարկեց բոլոր թեմերին՝ եկեղեցու ունեցվածքը քաղաքացիական իշխանություններին չհանձնելու կարգադրությամբ։

31 օգոստոսի—Զինված ընդհարումներ Թիֆլիսում հունիսի 12-ի օրենքի կենսագործման կապակցությամբ։

14 հոկտեմբերի—Հնչակյանները մահափորձ կազմակերպեցին Գոլիցինի դեմ։

Հոկտեմբերի երկրորդ կեսին—Թիֆլիսում գումարվեց ՌՍԴԲԿ Կովկասյան միության II համագումարը։

ՌՍԴԲԿ Կովկասյան Միությունը կազմակերպեց Հավլաբարի ընդհատակյա տպարանը, որը գործեց մինչև 1906 թ.։

Ժնևում հիմնվեց «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը» (սպեցիֆիկներ)։

Բաստոնում լույս տեսավ հնչակյան կուսակցության օրգան «Երիտասարդ Հայաստան» թերթը։

1904

27 հունվարի—Սկսվեց ռուս-ճապոնական պատերազմը։

22 փետրվարի—ՌՍԴԲԿ կենտկոմը Ժնևում հաստատում է հայերեն և վրացերեն լեզուներով սոցիալ-դեմոկրատական գրականություն հրատարակող հանձնաժողովի կազմը։

Փետրվար—Սկսվեց Սասունի հերոսական ինքնապաշտպանությունը։ (Տևեց մինչև մայիսի կեսերը)։

29 ապրիլի—Տեղի ունեցավ Ալեքսանդրապոլի արդյունաբերական և այլ ձեռնարկությունների աշխատողների գործադուլը։

Մայիս—Տեղի ունեցավ ՌՍԴԲԿ Կովկասյան միության III համագումարը։

22 դեկտեմբերի—Ժնևում լույս տեսավ «Вперед» թերթի առաջին համարը Վ. Ի. Լենինի խմբագրությամբ։

1905

9 հունվարի—Արյունոտ կիրակին Պետերբուրգում։ Ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության սկիզբը։

6—9 փետրվարի—Ցարական իշխանությունների կողմից հրահրված հայ-ադրբեջանական ընդհարումներ Բաքվում։

28 փետրվարի—Ցարի բարձրագույն անվանական հրովարտակը Կովկասում փոխարքայությունը վերականգնելու մասին։ Կովկասի փոխարքա նշանակվեց Ի. Ի. Վորոնցով-Դաշկովը (1905—1915 թթ.)։

Մարտին, մայիսի 1-ին, հուլիսի 26-ին—Ժողովրդական հուզումներ Բիթլիսում։

8 մարտի—Սկսվեց Ալավերդու պղնձաձուլական գործարանի բանվորների գործադուլը։

Ապրիլ—Սկզբներին Անդրկովկասում սկսվեց երկաթուղային բանվորների ընդհանուր գործադուլը, որին ակտիվ մասնակցեցին Ալեքսանդրապոլի երկաթուղիները։

3—15 ապրիլի—Բիթլիսում կայացավ հայաբնակ 24 կենտրոնների ներկայացուցիչների ժողովը, ուր ձևակերպվեցին համակովկասյան հայ բուրժուազիայի պահանջները։

25 ապրիլի—Լոնդոնում բացվեց ՌՍԴԲԿ III համագումարը։

Ապրիլին—Լենինի հանձնարարությամբ Ստ. Շահումյանը Բեռլինում մասնակցեց «Եվրոպայի հայ ուսանողների միության» կոնգրեսին։

Մայիսին—Ստեղծվեց ՌՍԴԲԿ Բորչալուի (Լոռում) գավառական կոմիտեն։

12 մայիսի—Ընտրվեց ՌՍԴԲԿ Երևանի քաղաքային կոմիտեն։

Հուլիս—Լույս տեսավ Վ. Ի. Լենինի «Սոցիալ-դեմոկրատիայի երկու տակտիկան դեմոկրատական հեղափոխության մեջ» գիրքը։

21 հուլիսի—Մահափորձ Արդուլ Համիդի դեմ։

Ամռանը—Հրապարակվեց Բիթլիսի կոմիտեի նշանավոր կոչը՝ «Բորչալուի գյուղացիներին»։

1 օգոստոսի — Նիկոլայ II-ը չեղյալ հայտարարեց 1903 թ. հունիսի 12-ի օրենքը։ Վերաբացվեցին հայկական եկեղեցական ծխական դպրոցները։

16 հոկտեմբերի—Սկսվեց Հայաստանի երկաթուղայինների ընդհանուր գործադուլը։

15 նոյեմբերի—Երևանի նահանգի փոստ-հեռագրական աշխատողների ընդհանուր գործադուլը։

19 նոյեմբերի—Սանահինի կայարանի բանվոր-ծառայողների գործադուլը։

20 նոյեմբերի—Ալավերդու հանքագործների գործադուլը։

Հեքիմյան եղբայրները Ալեքսանդրապոլում հիմնեցին մետաղամշակման արհեստանոց, որը 1908 թ. դարձավ կիսամեքենայացված գործարան։

1906

2 հունվարի—Բիթլիսում ստեղծվեց «Սահմանադրական-դեմոկրատական կուսակցության հայ արմատական ֆրակցիան» (հայ կադետներ)։

Փետրվար—Ցարական զորքերը ապստամբ գյուղացիներին ահաբեկելու նպատակով ամբակոծեցին Սեխրանի Անգեղակոթ, Բանակոթ գյուղերը։

Սկզբներին—Էրզրումում տեղի ունեցան քաղաքային բնակչության հուզումներ ուղղված Թուրքական կառավարության հարկային քաղաքականության դեմ։

1 ապրիլի—Թիֆլիսում լույս տեսավ բոլշևիկյան «Կայծ» թերթը Ստ. Շահումյանի և Ս. Սպանդարյանի խմբագրությամբ։ (Օգոստոսին թերթի հրատարակությունն արգելվեց)։

10 ապրիլի—Ստոկհոլմում բացվեց ՌՍԴԲԿ 4-րդ «Միավորիչ» համագումարը։

26 մայիսի—Բաքվում լույս տեսավ «Կոչ-Դևնեք» հայերեն-ադրբեջաներեն լրագիրը։

3 հունիսի—Ալավերդու ֆրանսիական ընկերության պղնձաձուլական գործարանի բանվորների գործադուլը։

Հունիսին—Թիֆլիսում ստեղծվեց «Կովկասի հայոց դպրոցների ուսուցիչների և վարժուհիների միությունը»։ Պաշտոնական ճանաչում ստացավ 1907 թ. հուլիսին։

2 օգոստոսի—Բոլշևիկների ղեկավարությամբ Ալավերդում սկսվեց խոշոր գործադուլ։

17 օգոստոսի—Էջմիածնում բացվեց «Հայոց կենտրոնական ազգային ժողովը» (համագումար)։ Ցարական կառավարության հրամանով փակվեց օգոստոսի 30-ին։

Օգոստոս—լույս տեսավ «Նոր խոսք» թերթը։ (Արգելվեց սեպտեմբերի 21-ին)։

4—15 սեպտեմբերի—Երևանի տպագրիչ բանվորների, փականագործների գործադուլը։

19 սեպտեմբերի—Տպագրական բանվորների գործադուլը Ալեքսանդրապոլում։

9 նոյեմբերի—Ցարական կառավարությունը օրենք հրատարակեց և իրավունք տվեց եվրոպական Ռուսաստանի պետական գյուղացիներին դառնալու իրենց հողաբաժինների սեփականատերը։

3 դեկտեմբերի—Ստեղծվեց Բաքվի Հայոց կուլտուրական միությունը։

Երևանում գործարկվեց քաղաքային ձիաքարշը (կոնկան)։

Ցարական իշխանությունները Թիֆլիսում հիմնեցին գյուղացիական հողային բանկի բաժանմունքը։

Ամերիկայի հայ բանվորությունը ստեղծեց իր առաջին կազմակերպությունը՝ «ԱՄՆ-ի սոցիալիստական հայ կազմակերպություն» անունով, որը հարեց ԱՄՆ-ի սոցիալիստական կուսակցության ձախ թևին։

1907

27 Հունվարի—Երևանի Մարաջևի գործարանի բանվորների գործադուլը։

10 մարտի—Ալեքսանդրապոլի տպագրական բանվորների գործադուլը։

6 մայիսի—Ալեքսանդրապոլում սկսվեց խառատագործ բանվորների գործադուլը։

30 ապրիլի—Լոնդոնում գումարվեց ՌՍԴԲԿ 5-րդ համագումարը։

Մայիս—Երևանում գործարկվեց առաջին հիդրոէլեկտրակայանը։

6 մայիսի—Ալեքսանդրապոլում սկսվեց խառատագործ բանվորների գործադուլը։

26 մայիսի—Սուրմալուի գավառում հաստատվեց հայ ազատագրական շարժման գործիչ Գևորգ Չավուշը։

3 հունիսի—Ստոլիպինյան պետական հեղաշրջումը Ռուսաստանում։

Հունիսին—«Սոցիալիստ հեղափոխականների կուսակցության հայ կազմակերպություն» ստեղծումը։

Ամռանը—Ժողովրդական ընդվզումներ Բիթլիսում ուղղված կառավարության հարկային քաղաքականության դեմ։

29 սեպտեմբերի—Էջմիածնում մեռավ կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը։ (Ծնվ. 1820 թ.)։

Հոկտեմբերին—Կահուլբագործների և կոշկակարների գործադուլը Վանում։

23 նոյեմբերի—Մեռավ հայ գրականության դասական Պ. Պռոշյանը։ (Ծնվ. 1837 թ.)։

27 դեկտեմբերի—Փարիզում հրավիրվեց Թուրքիայի ընդդիմադիր կուսակցությունների և խմբերի կոնգրես, որին մասնակցեցին «Արմենիա», «Ռազմիկ» և «Հայրենիք» թերթերի նեկայացուցիչները։

1908

Տարեսկզբին—Ժողովրդական հուզումներ Դիարբեքիրում՝ ուղղված կառավարության հարկային քաղաքականության դեմ։

17 փետրվարի—Կազմակերպվեց Թեհրանի հայոց Ազգային խորհուրդը։ 1911 թ. պաշտոնապես ճանաչվեց պետության կողմից և կոչվեց «Թեհրանի հայոց համայնական վարչություն»։

20 փետրվարի—Ավարտվեց Ուրմիա-Ջուլֆա երկաթուղու շինարարությունը։

24 հունիսի—Երիտթուրքերի հեղաշրջումը Թուրքիայում։

Ամռանը—Զանգեզուրի Բաշքենդ գյուղի բնակիչների ելույթը։

Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրվեց Մատթեոս Իզմիրլյանը։
1908—1912 թթ.— Շատախի գավառի Ծիծանց գյուղի բնակիչների ելույթը։
1908—1913 թթ.— Չխուրի գավառի 33 գյուղերի ելույթը աղայական լծի դեմ։
1908—1913 թթ.— Սղերդի սանջակի Ոզմ գյուղի բնակիչների ելույթը կալվածատիրական լծի դեմ։
1908—1913 թթ.—Չարսանջակի գյուղացիների ելույթը։

1909

31 մարտի—13 ապրիլի—Ադանայի և շրջակայքի հայերի կոտորածները։
14 ապրիլի—Գահընկեց արվեց սուլթան Աբդուլ Համիդը. իշխանությունն անցավ երիտթուրքերի ձեռքը։
Ապրիլ-մայիս—Լույս տեսավ Վ. Ի. Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» աշխատությունը։
Դմիտրի Բլագոևի և Վասիլի Կոլարովի ցուցումներով բուլղարահայերը հիմնադրեցին «Նոր հոսանք» աշխատավորական սոցիալ-դեմոկրատական խմբակը։
Թուրքական կառավարությունը օրենք հրատարակեց հայերին զորակոչելու մասին։

1910

Հուլիսին—Գործադուլ հայտարարեցին Ալավերդու հանքարդյունաբերական շրջանի Սիսիմադանի պղնձաձուլական գործարանի բանվորները։
Կ. Պոլսում ստեղծվեց Հնչակյան ուսանողական միությունը։
Գյուղացիական ելույթներ Երևանի գավառի Ելղովան, Գյոյբիլիսա և Էջմիածնի գավառի Հախս, Աղարակ, Նազիրվան և Թալին գյուղերում։

1911

Փետրվարին—Կոզրի բանվորների գործադուլը։
Մայիսին—Ղափանի բանվորների մայովկան։
14 մայիսի—Բաքվի Բայիլովի բանտում մեռավ ականավոր բոլշևիկ, պրոֆեսիոնալ հեղափոխական Բոգդան Կնունյանցը։ (Ծնվ. 1878 թ. նոյեմբերի 14-ին)։
Գարնանը—Երզնկայի մանուսայագործների գործադուլը։
20 հունիսի—Մեռավ Ղազարոս Աղայանը։ (Ծնվ. 1840 թ. ապրիլի 5-ին)։
13 դեկտեմբերի—Ամենայն հայոց կաթողիկոս ընտրվեց Գևորգ V-ը (Սուրենյանցը)։ Մեռավ 1930 թ. մայիսի 8-ին).
Էջմիածնապատկան Բջնի գյուղի բնակիչների ընդվզումը։
Երևանի գավառի Յուվա և Ղարադաղլու գյուղերի բնակիչների հուզումը։
Բասենի գյուղերի ելույթները թուրքական պետության հարկային քաղաքականության դեմ։

1912

5 հունվարի—Պրագայում բացվեց ՌՍԴԲԿ համառուսաստանյան 6-րդ կոնֆերանսը։ Ս. Սպանդարյանը և Ստ. Շահումյանն ընտրվեցին Կենտկոմի կազմում։
17 հունվարի—Պետերբուրգի սենատի դատական ատյանում սկսվեց «Դաշնակցության գործի» քննությունը։ (Վերջացավ մարտի 19-ին)։
Հունվարին—Երևանի նորակառույց ջրմուղի բացումը։
8 փետրվարի—Մոսկվայում մեռավ հայագետ պրոֆեսոր Գրիգոր Խալաթյանը։ (Ծնվ. 1853 թ. Ալեքսանդրապոլում)։
13 մարտի—Թիֆլիսում մեռավ հայ դասական դրամատուրգիայի հիմնադիր Գաբրիել Սունդուկյանը։ (Ծնվ. 1825 թ.)։
5 մայիսի—Լույս տեսավ բոլշևիկյան «Պրավդա» թերթի առաջին համարը։
Հունիսին—Սվազի «Շարք» ընկերության գորգագործների գործադուլը։
19 սեպտեմբերի—Հայ հասարակական տարբեր խավերի ներկայացուցիչներից Թիֆլիսում հրավիրված ժողովը դիմեց ռուսական կառավարությանը Հայկական հարցի նոր արծարծման համար։
9 հոկտեմբերի—Սկսվեց Բալկանյան առաջին պատերազմը, որին մասնակցեց Անդրանիկի գլխավորած հայկական ջոկատը։ (Տևեց մինչև 1913 թ. մայիսի 30-ը)։

10 Նոյեմբերի—Կաթողիկոս Գևորգ V-ը ստեղծեց ազգային պատվիրակություն Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ Հայկական հարցը ուսումնասիրելու և եվրոպական դիվանագիտության առջև բարձրացնելու համար։

Աշնանը—Վան քաղաքի և նրա նահանգի, Կարկառ, Սպարկերտ գավառների բնակիչների ելույթը կառավարության և աղաների հայկական քաղաքականության դեմ։

16 դեկտեմբերի—Հ. Թումանյանի նախագահությամբ Թիֆլիսում կազմակերպվեց հայ գրողների կովկասյան ընկերությունը։

20 դեկտեմբերի—Ցարական կառավարությունը օրենք հրապարակեց «Թիֆլիսի, Քութայիսի, Երևանի, Ելիսավետպոլի, Բաքվի նահանգների ժամանակավոր պարտավորյալ, կախյալ գյուղացիների՝ կալվածատերերի նկատմամբ ունեցած պարտավորությունները դադարեցնելու և պետության օժանդակությամբ հողաբաժինները պարտադիր կերպով ետ գնելու մասին»։

21 դեկտեմբերի—Կ. Պոլսում Հայոց Ազգային ժողովը որոշում ընդունեց Հայկական հարցը բարձրացնել Լոնդոնում հրավիրվելիք դեսպանների կոնֆերանսում։

Վերջերին—Մեծ տերությունների հետ դիվանագիտական բանակցությունների վարելու գործում կաթողիկոսին օգնելու նպատակով Թիֆլիսում կազմակերպվեց Հայկական Ազգային բյուրոն։

1912—1913 թթ.— Հուզումներ բռնկվեցին Երևանի, Ալեքսանդրապոլի, Կաղզվանի, Սարեղամիշի, Օլթիի զինվորական միավորումներում։

1913

29 Հունվարի—Թուրքիայում իշխանության գլուխ կանգնեց Էնվեր, Թալեաթ և Ջեմալ փաշաների հեղաշրջումը։

Ապրիլի սկզբներին—Կ. Պոլսի պատրիարքարանը ռուսական դեսպան Գիրսին ներկայացրեց բարենորոգումների իր նախագիծը։

4 մայիսի—Երևանում բացվեց հեռախոսային ցանցը։

Մայիսին—Կ. Պոլսի Ազգային ժողովի հատուկ հանձնաժողովը հուշագիր ներկայացրեց Թուրքական կառավարությանը հայկական նահանգներում տիրող դրության վերաբերյալ։

Հունիսին—Ալեքսանդրապոլի գավառի Փոքր Ղարաքիլիսա, Փամբ, Ղաչաղան գյուղերի ելույթները։

Հունիսի սկզբներին—Ռուսական դեսպանատան առաջին թարգմանն և խորհրդական Ա. Մանդելշտամը մշակում է Արևմտյան Հայաստանի բարենորոգումների նախագիծը։

29 Հունիսի—10 օգոստոսի—Բալկանյան II պատերազմը։

3 Հուլիսի—Կ. Պոլսի Ենի-Քյոյ արվարձանում իր աշխատանքներն սկսեց «Հայկական բարենորոգումների հանձնաժողովը»։

14 դեկտեմբերի—Կերմանիան Թուրքիա ուղարկեց գեներալ Լիման Ֆոն Սանդերսի գլխավորած ռազմական պատվիրակությունը։

Ավարտվեց Կարս-Սարիղամիշ-Կարաուրգան երկաթուղու շինարարությունը։

Էրզրումի բնակչության ելույթը Թուրքական կառավարության հարկային քաղաքականության դեմ։

Կարճկանի գավառի Ուրանց գյուղի գյուղացիների ելույթը աղայական լծի դեմ։

«Արագածյան» պետական կալվածքի գյուղացիների ելույթը։

1914

26 Հունվարի—Կ. Պոլսում Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվեց համաձայնագիր՝ Արևմտյան Հայաստանում ռեֆորմներ անցկացնելու մասին, որը չիրականացավ։

29 մարտի—Թիֆլիսում հիմնվեց Հայոց պատմական և հնագիտական ընկերությունը։

19 Հուլիսի—Սկսվեց առաջին համաշխարհային պատերազմը։

20 Հուլիսի—Կ. Պոլսում կնքվեց Գերմանիայի և Թուրքիայի գաղտնի դաշնագիրը։

12 օգոստոսի—Նիկոլայ II-ի հրամանով պատերազմական դրություն հայտարարվեց Կովկասի բոլոր շրջաններում։

Սեպտեմբերի սկզբին—Հայտարարվեց հայ կամավորական խմբեր ստեղծելու մասին։

16—17 (29—30) հոկտեմբերի—Գերմանական ծովակալ Սուշոնի գլխավորությամբ գերմանա-թուրքական նավատորմը ռմբակոծեց Ռուսաստանի Սևծովյան նավահանգիստները։

20 հոկտեմբերի (2 նոյեմբերի)—Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային։

21 հոկտեմբերի (3 նոյեմբերի)—Ռուսական զորքերը գրավեցին Դիադինն ու Բայազետը։

28 հոկտեմբերի (10 նոյեմբերի)—Ավարտվեց Ալաշկերտի ամրոցը հովտի գրավումը ռուսական զորքերի կողմից։

10 (23) նոյեմբերի—Թուրքական զորքերի պարտությունը Էրզրումի տակ։

1915

Սկզբներին—Կայացավ իթթիհատական կուսակցության կենտկոմի գաղտնի նիստը, որը որոշեց և մշակեց արևմտահայության տեղահանության և բնաջնջման միջոցները։

Փետրվար-Մարտ—Բոլշևիկների արտասահմանյան սեկցիաների Բեռնի կոնֆերանսը։

11—22-ը ապրիլի—Հայերի ինքնապաշտպանական կռիվները Տարոնում։

15 ապրիլի—Թալեաթի, Էնվերի և Նազըմի ստորագրությամբ գաղտնի հրաման ուղարկվեց տեղական իշխանություններին՝ արևմտահայության տեղահանության և բնաջնջման վերաբերյալ։

24-ի լույս 25-ի գիշերը ապրիլի—800 հայ մտավորականների ձերբակալումը Կ. Պոլսում և սպանությունը աքսորի ճանապարհին։ Հայկական մեծ եղեռնի սկիզբը։

20-ը ապրիլի—Վանի հերոսական ինքնապաշտպանությունը։ (Տևեց մինչև մայիսի 19-ը)։

12 հունիսի-3 հուլիսի—Շապին-Կարահիսարի խոշոր ինքնապաշտպանությունը։

15 հունիսի—Կ. Պոլսի սուլթան Բայազետի հրապարակում թուրքական կառավարությունը կախաղան բարձրացրեց հնչակյան կուսակցության 21 ղեկավարների։

13 հուլիսի—Սուետիայի՝ Մուսա լեռան նշանավոր ինքնապաշտպանությունը։

14 հուլիսի—Ցարական կառավարությունը օրենք ընդունեց «պաշտպանության» համար աշխատող պետական գործարաններում պատերազմական դրություն մտցնելու մասին։

Օգոստոս—Ցիմմերվալդյան միջազգային սոցիալիստական կոնֆերանսը։

13 հուլիսի—Սուետիայի՝ Մուսա լեռան նշանավոր ինքնապաշտպանությունը։

4 հոկտեմբերի—Բաքվում տեղի ունեցավ ՌՍԴԲԿ կովկասյան կազմակերպությունների խորհրդակցությունը Ստ. Շահումյանի ղեկավարությամբ։

Դեկտեմբեր—Թիֆլիսում սկսեց լույս տեսնել միացյալ սոցիալ-դեմոկրատական կազմակերպության «Պայքար» շարաթաթերթը, որը մինչև 100-րդ համարը (1917 թ. հունիս) ուներ բոլշևիկյան ուղղություն։

Ստեփան Շահումյանի նախաձեռնությամբ Բաքվում ստեղծվեց «Նպաստամատույց կոմիտե», որն օգնության էր հասնում Թուրքիայից գաղթածներին։

Վերջերին—Ստեղծվեց «Եգիպտահայ նպաստամատույց մարմինը»։

Նիկոլայ Նիկոլաևիչ Ռոմանովը նշանակվեց կովկասյան ռազմաճակատի հրամանատար և Կովկասի փոխարքա (1915—1917)։

1916

1 հունվարի—Մոսկվայում լույս տեսավ «Армянский вестник» շարաթաթերթը։

Փետրվար, մարտ—Ռուսական զորքերը գրավեցին Մուշը, Բիթլիսը, Մամախաթունը։

Գարնանը—Շվեյցարիայի Կինտալ գյուղում կայացավ միջազգային սոցիալիստական 2-րդ կոնֆերանսը։

Մայիսին—Փարիզում կազմակերպվեց «Ֆրանսիա-Հայաստան» կոմիտեն, որի կազմի մեջ մտան ականավոր գիտնականներ ու քաղաքական գործիչներ։

Մայիսին—Կովկասի փոխարքան հրաման տվեց կազմալուծել հայ կամավորական խմբերը։

Մայիսին—Պետրոգրադում լույս տեսավ «Сборник армянской литературы» ժողովածուն Մ. Գորկու խմբագրությամբ։

14 նոյեմբերի—Հուզումներ Ղափանի Ուղուրլայի պղնձաձուլական գործարանի բանվորների ու ծառայողների շրջանում։

26 նոյեմբերի—Ֆրանսիայի կառավարությունը որոշեց կոտորածներից ազատված հայ տարագիրներից կազմել կամավորական Արևելյան Լեգիոնը, որը կռվելու էր Թուրքիայի դեմ և դառնալու էր ապագա հայկական բանակի կորիզը Կիլիկիայում։ (Լուծարքի ենթարկվեց 1920 թ. սեպտեմբերի 27-ին)։

Մոսկվայում Հայկական կոմիտեի հրատարակությամբ լույս տեսավ «Поэзия Армении с древнейших времен до наших дней» ժողովածուն Վ. Բրյուսովի խմբագրությամբ։

1916—1917 թթ.—Օդեսայում լույս տեսավ «Армяне и война» ամսագիրը։

Բուխարեստում սկսեց հրատարակվել հնչակյանների «Ինքնավար Հայաստան» կիսաշաբաթաթերթը Ս. Սապահ-Գյուլյանի խմբագրությամբ։

1917

27 փետրվարի—Բուրժուադեմոկրատական II հեղափոխության հաղթանակը և ցարիզմի տապալումը Ռուսաստանում։

2 մարտի—Բուրժուական Ժամանակավոր կառավարության ստեղծումը Ռուսաստանում։

Մարտ—Հայաստանի մի շարք քաղաքներում ու գորամասերում (Երևան, Ալեքսանդրապոլ, Կարս, Սարիղամիշ, Նոր Բայազետ) ստեղծվեցին բանվորների, զինվորների և գյուղացիական կոմիտեներ ու սովետներ։

9 մարտի—Ժամանակավոր կառավարությունը որոշեց վերացնել Կովկասի փոխարքայությունը և ստեղծեց Անդրկովկասի հատուկ կոմիտե (ОЗАКОМ).

16 մարտի—Թիֆլիսում հիմնվեց «Հայ ժողովրդական կուսակցությունը»։

24—29 ապրիլի—Պետերբուրգում կայացավ բոլշևիկների կուսակցության համառուսաստանյան VII (Ապրիլյան) կոնֆերանսը։

2 մայիսի—Ջորավար Անդրանիկի նախագահությամբ Երևանում բացվեց արևմտահայերի առաջին համագումարը։

11 մայիսի—Թիֆլիսում բացվեց հայ ուսուցիչների կովկասյան համագումարը։

26 հուլիսի—Իր աշխատանքն սկսեց ՌՍԴԲԿ 6-րդ համագումարը, որը կուսակցությանը նպատակադրեց զինված ապստամբության։

15 օգոստոսի—Ալավերդու պղնձագործ բանվորների գործադուլը։

18 օգոստոսի—Շուշիում լույս տեսավ «Ննեցուկ» քերթը՝ ՌՍԴԲԿ տեղական կազմակերպության օրգանը, Աշ. Հովհաննիսյանի խմբագրությամբ։

29 սեպտեմբերի—Թիֆլիսում բացվեց հայկական ազգային համախորհրդակցությունը։

2 հոկտեմբերի—Թիֆլիսում բացվեց Կովկասի բոլշևիկների առաջին համագումարը։

25 հոկտեմբերի—Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը Ռուսաստանում։

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔՍԻԶՄԻ ԴԱՍԱԿԱՆՆԵՐ

Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, *Երկեր*, հ. 13, Երևան, 1940։
Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, *Կոմունիստական կուսակցության մանիֆեստը*, Երևան, 1958։
«Կ. Մարքսը և Ֆ. Էնգելսը արվեստի մասին», Երևան, 1934։
«Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի նամակագրությունը ռուս քաղաքական գործիչների հետ», Երևան, 1954։
Կ. Մարքս, *Կապիտալ*, հ. 3, Երևան, 1949։
Маркс и Энгельс, Сочинения, т. 3, 9, 16, 18, 19, 22, 25, 32, 34.
Վ. Ի. Լենին, *Երկերի լիակատար ժողովածու* հ. 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10, 12, 13, 15, 16, 17, 18, 19, 20, 21, 22, 23, 24, 25, 31, 32, 33, 34, 35։

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՈՐՈՒՅԶՆԵՐ

Շահումյան Ստ., *Երկեր*, հ. 1—5, Երևան, 1975—1978։
Շահումյան Ստ., *Նամակներ*, Երևան, 1959։
Օրջոնիկիձե Գ. Կ., *Ընտիր հոդվածներ և ճառեր*, Երևան, 1950։
Կեռնեսյանց Բ., *Ընտիր երկեր*, Երևան, 1978։
Կասյան Ս., *Ընտիր երկեր*, Երևան, 1967։
Կասյան Ս., *Ռուսական ինքնակալության քաղաքականությունը Անդրկովկասում*, «Նորք», 1923, № 3։
Կախոյան Ա., *Հոդվածներ և հուշեր*, Երևան, 1963։
Մյասնիկյան Ալ., *Կուսակցությունները գաղութահայության մեջ*, Թիֆլիս, 1924։
Մյասնիկյան Ալ., *Ընտիր երկեր*, Երևան, 1957։
Սպանդարյան Ս., *Երկեր*, հ. 1, 2, Երևան, 1959։
Սպանդարյան Ս., *Հոդվածներ գրականության, արվեստի, կուլտուրայի և կրթության մասին*, Երևան, 1949։
Խումարյան Ա., *Հայ բանվոր հեղափոխական ասոցիացիան*, «Մարտակոչ», Հունվար, 1924։

ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ

Մ. Մաշտոցի անվան մատենադարան, արխիվային բաժին, կաթողիկոսական դիվանի Ֆ. Թղթ. 227, վավ. 222, 244, Թղթ. 228, վավ. 23, Թղթ. 230, վավ. 228, 231, 236։
Ա. Ալպոյաջյանի Ֆ., Թղթ. 11, վավ. 273։
Անհատ անձանց Ֆ., Թղթ. 74, վավ. 204 բ, Թղթ. 132, վավ. 221, Թղթ. 182, վավ. 1 ա, 1 բ։
Հայկական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվ (Հայկ. ՍՍՀ ԿՊՊԱ), Քաղվածքների ֆոնդ, գ. 39, Լենինգրադի հավաքածու, Ֆ. 3, գ. 22։ Ֆ. 5, ց. 1, գ. 134։ Ֆ. 11, գ. 13։ Ֆ. 31/94, գ. 841։ Ֆ. 35, ց. 1, գ. 93։ Ֆ. 38/102, ց. 1, գ. 95 ա, 96։ Ֆ. 49/113, ց. 2, գ. 513։ Ֆ. 56, ց. 1, գ. 24, 387, 388, ց. 3, գ. 5, 32, 50, 199, 314, ց. 4, գ. 24, 145, ց. 6, գ. 114։ Ֆ. 57, ց. 1, գ. 837, 1228, 1884, 1889, 1942, 1950, ց. 2, գ. 115, 195, 669, 680, 703, 715, 973, 1246, 1834, 1905, 2110։ Ֆ. 70/70, գ. 254։ Ֆ. 70, ց. 1, գ. 86։ Ֆ. 94, ց. 5, գ. 92, 223, 270, 300, 340, 341, 390, 402, 440, 452, 458, 473, 525, 574, 589, 599, 613, 648, 674, 832, 833, 837, 847, 848, 852, 1013, 1015, 1030, 1054, 1198, 1208, ց. 6, գ. 1604, 1694։ Ֆ. 101, գ. 27, 5։ Ֆ. 102, գ. 40, 81, 83։ Ֆ. 103, ց.

1, գ. 73, 74; Ֆ. 113, ց. 1, գ. 92 ա; Ֆ. 114, ց. 2, գ. 51, 53; Ֆ. 115, ց. 1, գ. 2, 15, 36, ց. 2, գ. 12; Ֆ. 119, ց. 1, գ. 15; Ֆ. 122, գ. 3; Ֆ. 124, գ. 11; Ֆ. 133, ց. 1, գ. 192 բ, 4993, 5116; Ֆ. 139, ց. 1, գ. 662, ֆ. 190, բ. 507, գ. 129; Ֆ. 195, ց. 1, գ. 655; Ֆ. 200, ց. 1, գ. 237; Ֆ. 370, ց. 1, գ. 76; Ֆ. 1022, ց. 1, գ. 6։

ՀՍՍՀ Պատմության պետական թանգարան, Նոր պատմության բաժնի ֆ., գ. 949։

ՀՍՍՀ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, գ. 61, 63, 161, 196։

Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, արխիվային բաժին, Թորոս Ագռավունի ֆ., III բաժին, գ. 40, 46, 47, 49, 57, 59, XII բաժին, գ. 9416, 9439, 9444, 11506, 11507, 11512, Դ. Անանունի ֆ., գ. 21։

ՀՍՍՀ պետական պատկերասրահ, արխիվային բաժին, Փանոս Թերլեմեզյանի ձեռագիր հուշերը։

ՍՍՀՄ Կենտրոնական պետական պատմական արխիվ (ՍՍՀՄ ԿՊՊԱ), ֆ. 59, ց. 1, գ. 56; Ֆ. 95, ց. 1, գ. 341; Ֆ. 229, ց. 2, գ. 1136; Ֆ. 361, գ. 26, 16937; Ֆ. 381, գ. 17313; Ֆ. 396, ց. 2, գ. 1160, ց. 3, գ. 565, ց. 7, գ. 401; Ֆ. 398, ց. 75, գ. 420; Ֆ. 587, ց. 33, գ. 1148; Ֆ. 776, ց. 12, գ. 49; Ֆ. 821, ց. 6, 1867, գ. 52, ց. 7, գ. 237, ց. 138, գ. 103, ց. 139, գ. 54, 84, ց. 140, գ. 53, 60, 73, 135, 1755, ց. 147, գ. 20, ց. 150, գ. 272; Ֆ. 1152, ց. 10, գ. 20, ց. 12, 1896 թ., գ. 88; Ֆ. 1268, ց. 19, գ. 62, ց. 21, գ. 199; Ֆ. 1276, ց. 11, գ. 350, ց. 19, գ. 2; Ֆ. 1281, ց. 6, գ. 59, ց. 7, 1867 թ., գ. 52, Ֆ. 1282, ց. 3, 1901 թ., գ. 458; Ֆ. 1284, ց. 67, 1871 թ., գ. 169, ց. 194, գ. 31, 88, 99, ց. 223, գ. 131, 1885 թ., գ. 174, 1887 թ., գ. 175; Ֆ. 1288, ց. 25, գ. 17; Ֆ. 1300, ց. 26, գ. 14; Ֆ. 1396, ց. 1, գ. 34, 172; Ֆ. 1405, 1883—84 ԲԲ., ց. 83—84, գ. 11224, ց. 521, գ. 396; Ֆ. «Ոստիկանության դեպարտամենտ», գ. 3, 1883 թ., գ. 172։

Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ (ՌԱՔԱ), Ֆ. «Քաղ. արխիվ V—Ա.», 1879 թ., գ. 1093, 1881 թ., գ. 1625, 1881/1884 ԲԲ., գ. 1625, 1889—1894 ԲԲ., գ. 1630, 1894—1895 ԲԲ., գ. 3335, 1900 թ., գ. 70, 1903 թ., գ. 1013, 1905 թ., ց. 482, գ. 539, 541, 1906 թ., գ. 1642, 1643, 1908 թ., ց. 482, գ. 46, 1909 թ., ց. 482, գ. 544, 1645, 1910 թ., ց. 482, գ. 1646, 1912 թ., գ. 3727, 1912—1914 ԲԲ., ց. 482, գ. 1044, 1648, 1913 թ., գ. 1047, 3470, 3891, 1913 թ., ց. 482, գ. 719; Ֆ. «Գլխավոր արխիվ», 1874 թ., գ. 1086, 1081; Ֆ. «Կոստանդնուպոլսի դեսպանություն», 1881 թ., գ. 1567, 1887 թ., գ. 1573, 1898 թ., գ. 235, 1584, 1907 թ., ց. 517, գ. 1400 բ, 1908 թ., գ. 1595, 2676; Ֆ. «Դրասենյակ», 1896 թ., գ. 28, 29; Ֆ. «Պարսկական դիվան», գ. 874։

ՍՍՀՄ Կենտրոնական պետական Ռազմապատմական արխիվ (ՍՍՀՄ ԿՊՌԱ), ֆ. 1, ց. 2, գ. 687; Ֆ. 349, ց. 3, գ. 1013, ց. 17, գ. 1041; Ֆ. 369, ց. 13, գ. 87, ց. 21, գ. 29, 1916; Ֆ. 400, գ. 103; Ֆ. 418, ց. 1, գ. 4348; Ֆ. 2000, ց. 1, գ. 752, 3386, 3885, 3891։

ՍՍՀՄ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության կենտրոնական պետական արխիվ (ՍՍՀՄ ՀՀՍՇԿՊԱ), ֆ. 102, 1915 թ., գ. 5, մ. 6, 1916 թ., գ. 5, մ. 92, գ. 74, մ. 92, 1917 թ., գ. 341, գ. 27, մ. 10, 1915; Ֆ. 540, ց. 1, գ. 992; Ֆ. 1318, գ. 46։

ՍՄԿԿ կենտկոմին առընթեր Մ.Լի կենտրոնական կուսակցական արխիվ (Մ.Լի ԿԿԱ), ֆ. 25, ց. 20, գ. 34403; Ֆ. 124, ց. 1, գ. 153, ց. 2, գ. 92; Ֆ. 157, ց. 2, գ. 57։

ՍՄԿԿ կենտկոմին առընթեր Մ.Լի Հայկական մասնաճյուղի արխիվ, ֆ. 1, ց. 33, գ. 25; Ֆ. 5, գ. 51; Ֆ. 8, գ. 87; Ֆ. 33, գ. 5, 102, 143, 167, 364 ա, 418, 517, 696; Ֆ. 38, գ. 8; Ֆ. 40, գ. 3, 5; Ֆ. 124, ց. 1, գ. 2041; Ֆ. 4047, ց. 1, գ. 830, Գ. Ղարաջյանի ֆ., Ս. Սպանդարյանի ֆ.։

ՍՄԿԿ կենտկոմին առընթեր Մ.Լի Վրացական մասնաճյուղի արխիվ, ֆ. 31, գ. 23, 170; Ֆ. 33, գ. 466; Ֆ. 93, ց. 2, գ. 760։

Վրացական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 1, ց. 5, գ. 6, 83, 430; Ֆ. 2, ց. 1, գ. 3195, 3196, 3198, 3599, 4670; Ֆ. 3, գ. 22, 78, 100, 123, 119, 525; Ֆ. 5, ց. 1, գ. 2093; Ֆ. 7, գ. 4, 8, 23, 326, 329, 436, 585; Ֆ. 12, ց. 10, գ. 38/50, 760, ց. 11, գ. 297; Ֆ. 13, ց. 3, գ. 2291, ց. 7, գ. 68, ց. 11, գ. 297; Ֆ. 13/21, գ. 3162; Ֆ. 13/29, ց. 1, գ. 431, 3614, 4331; Ֆ. 14, գ. 29; Ֆ. 23, գ. 19, 758; Ֆ. 27, գ. 430; Ֆ. 34, գ. 431, 432, 570, 1046; Ֆ. 39, գ. 126; Ֆ. 41, գ. 169; Ֆ. 71, գ. 7, 76; Ֆ. 521, ց. 2, գ. 492; Ֆ. 1082, ց. 5, գ. 531, 738, 3614։

Վրացական ՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության կենտրոնական պետական արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 117, 128; Ֆ. 24, ց. 2, գ. 14։

Ադրբեջանական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 132, գ. 13։

Ուզբեկական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 1, ց. 3, գ. 564, ց. 20, գ.

1438, Ֆ. 33, ց 1, գ. 122,
Թուրքմենական ՍՍՀ Կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 2688, ց. 2, գ. 227, 274, 4238, 7154,
Կրասնոդարի երկրամասի պետական արխիվ, ֆ 454, ր. 2, գ. 96,
Կրասնոդարի երկրամասի պետական արխիվի Նովոռոսիյսկի մասնաճյուղ, ֆ. Ռ—9, ց. 1, գ. 685,
Ղրիմի մարզային պետական արխիվ, ֆ. 63, ց. 1, գ. 422, 455, Ֆ. 169, ց. 1, գ. 96, Ֆ. 706, ց. 1, գ. 203, 411, 416,
Ռոստովի մարզի պետական արխիվ, ֆ. 91, ց. 1, գ. 166, 940, 1268, 1608, ց. 3, գ. 405, ց. 4, գ. 78,

ՏՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Հ Ա Յ ե Ր ե Ն

Ա–դո, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912,
«Ազգային հերոս զորավար Անդրանիկ և իր պատերազմները», Փարիզ, 1953,
«Անդրանիկի հուշերը», Բեյրութ, 1935,
Անդրեասկի, Մարտական հրահանգներ, Ժնև, 1907,
«Անդրանիկի կյանքը, պատերազմները և հուշերը», Պեյրութ, 1932,
Անտոնյան Ա., Մեծ ոճիրը. Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա. Պաշտոնական հեռագիրներ, բնագիրներու ստորագրությամբ և բազմաթիվ պատկերներով, Բոստոն, 1921,
Ավետիսյան Մ., Հայ ազատագրական ազգային հիանամյա (1870—1920) հուշամատյան, Փարիզ, 1954,
«Արմաշու դպրեվանքին 25 ամյա յոբելյանին առթիվ, 1889—1914», Կ. Պոլիս, 1914,
«Արևմտահայ գրողների նամականի», Երևան, 1965,
«Ատենագրություններ Ազգային ժողովո», 1864—1892,
Բզեյան Մ. և Ս., Հարազատ պատմություն Տարոնո, խմբագրեց Ազան Տարոնեցի, Կահիրե, 1962,
Բենսե, Բուլանըխ կամ Հարքի գավառ, Թիֆլիս, 1901,
Գեղամյան Ե., Հիշողություններ, Լումա, 1906, № 4,
«Դատավարություն Թալեհաթ փաշային», սղագրական զեկուցում, Վիեննա, 1921,
«Դիվան հայոց պատմության», գիրք ԺԴ, Թիֆլիս, 1915,
Երիցյան Մ., Զորավար Սմբատի հուշերը, Փարիզ, 1936,
«Երկհարիւրամեայ գրականական գործունեութիւն եւ նշանաւոր գործիչներ Վենետկոյ Մխիթարեան միաբանութեան», Վենետիկ, 1905,
Զարդարյան Վ., Հիշատակարան, հ. Բ, «Հայ գաղութը և մամուլը Եվրոպայի մեջ», Ֆրանսահայ տարեգիրք, 1926,
«Զեյթունի պատմագիրք», Պուենոս-Այրես, 1960,
«Զորավար Անդրանիկի Կովկասյան ճակատի պատմական օրագրությունը 1914—1917», Պոսթոն, 1924,
Էփրիկյան Հ. Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1903,
«Ընդարձակ օրացույց ս. Փրկչյան հիվանդանոցի հայոց», Կ. Պոլիս, 1903,
«Ընդարձակ օրացույց ազգային հիվանդանոցի», Կ. Պոլիս, 1900,
«Թիֆլիզի հայուհյաց բարեգործական ընկերության 25-ամյակը, 1882—1907», Թիֆլիս, 1907,
Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915,
Լևո, Անցյալից, Թիֆլիս, 1925,
Խանազատ Ե., Հիշողություններ Խրիմյանի մասին, Թիֆլիս, 1908,
«Մրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանին», Կ. Պոլիս, 1878,
«Մրագիր ս. դ. Հնչակյան կուսակցությանն», Լոնդոն, 1897,
«Կազմական կանոնագիր ազգային նախնական կրթության», Կ. Պոլիս, 1893,
«Կանոնագրություն Քեմական հոգևոր դպրոցի վիճակին հայոց Նոր Նախիջևանի և Բեսարաբիո», Նոր Նախիջևան, 1882,
«Կանոնագրություն և ծրագիր հայ եկեղեցական-ծխական դպրոցներիո», նախագիծ, Թիֆլիս, 1906,
«Կանոնագրություն հայրենասիրաց ընկերության ի Վառնա», Կ. Պոլիս, 1889,
«Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում», Երևան, 1972,

«Հայ մանկավարժներ (XIX դար)», կազմեց և խմբագրեց պրոֆ. Ա. Մ. Շավարշյանը, գիրք Ա, Երևան, 1956, գիրք Բ, XIX—XX դդ. (1920), Երևան, 1961։
«Հայկական վաշտը», Բաքու, 1914։
«Հայկաշեն», գիրք II, Փարիզ, 1943։
«Հայկական ՍՍՌ ատլաս», Երևան-Մոսկվա, 1961։
«Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք I, Երևան, 1958, գիրք II, Երևան, 1961։
«Հիշողություններ Վ. Ի. Լենինի մասին», գիրք I, Երևան, 1957։
«Հիշատակարան», պրակ. ժ, Կ. Պոլիս, 1910։
«Հինգամյակ 1887—1937 սոց. դեմ. հնչակյան կուսակցության», Փրովիտենս, 1938։
«Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960։
«Հրահանգ բարեկարգության ազգային վարժարանաց», Կ. Պոլիս, 1873։
«Հուշամատյան մեծ եղեռնի, 1915—1916», Բեյրութ, 1965։
«Հուշեր Արմենակ Եկարյանի», Դահիրե, 1947։
«Ղարաքաղի հայոց հոգևոր քնմական դպրոցի 75-ամյակը», Շուշի, 1913։
Ղարաջյան Գ. (Ս. Տ. Արկոմեդ), Անցյալի հիշողություններից, Թիֆլիս, 1918։
Մալխաս, ճամբուս վրա, հ. Ա, Նյու-Յորք, 1950։
«Միացյալ ընկերություն հայոց Եռամյա տեղեկագիր 1908—1911», Կ. Պոլիս, 1911։
Միրախորյան Մ., Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի (տեղագրությունք սարեն և ձորեն, հեղեղ ու նորեն պիտանի գիտնոց), Կ. Պոլիս, հ. 1, 1884, հ. 2, 3, 1885։
Մկռւնդ Տիգրան, Ամիսյալի արձագանքները, Նյու-Յորք, 1950։
Նաթանյան Պողոս ծ. վ., Արտօսր Հայաստանի կամ տեղեկագիր Բալուա, Քարբերդու, Չարսանճագի, ճապաղջուրի և Երզնկայի, Կ. Պոլիս, 1883։
«Նպաստից հանձնաժողովի Հաշվեցուցակ և տեղեկագիր», Կ. Պոլիս, 1897—1908։
Շեռենց Գ., Սրբավայրեր, տեղագրություն Վասպուրականի, Վանի նահանգի գլխավոր եկեղեցաց, վանորեից և ուսումնասիրությանց, Թիֆլիս, 1902։
«Պատմական համառոտ տեսություն Բաքվա հայոց մարդասիրական ընկերության 25-ամյա գործունեության (1864—1889)», Բաքու, 1891։
«Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ (1902—1921)»—ժողովածու, Երևան, 1960։
«ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերենցիաների և կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում», մաս 1, Երևան, 1954։
Սյուրմենյան Գ., Երգնկա, Դահիրե, 1947։
«Սոց. դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության ծրագրի նախագիծը, կազմակերպական սիստեմը և կանոնագրությունը», 1905 թ.։
Սրվանձտյանց Գ., Հնոց և Նորոց, Կ. Պոլիս, 1874։
Սրվանձտյանց Գ., Թորոս աղբար Հայաստանի ճամփորդ, մաս Ա, Կ. Պոլիս, 1879, մաս Բ, Կ. Պոլիս, 1884։
Սրվանձտյանց Գ., Երկեր, հ. 1, Երևան, 1978։
«Վանի երամյան վարժարանը», Կ. Պոլիս, 1914։
«Վարդապետարան Հայաստանի ազատության», Մարսել, 1891։
«Տեղեկագիր գավառական հարստահարության», Կ. Պոլիս, 1876։
«Տեղեկագիր Կովկասի հայոց բարեգործական ընկերության և նրան կից հիմնարկությունների 1917 և 1918 քք.», Թիֆլիս, 1919։
«Տեղեկագիր և հաշիվ Բագվա հայոց կուլտուրական միության 1906—1907 տարեշրջանի գործունեության», Բագու, 1907։
Տեր-Կարապետյան Գ., Հողային հարցը հայաբնակ նահանգներուն մեջ, Կ. Պոլիս, 1911։
«Փարիզի հայկական միություն», Փարիզ, 1906։
«Քսանամյա տեղեկագիր Սանասարյան վարժարանի, 1881—1901», Կ. Պոլիս, 1903։

ՌՈՒՍԵՐԵՆ

Аверьянов П. И., Этнографический и военно-политический обзор азиатских владений Оттоманской империи, СПб., 1912.
«Аграрная политика царизма и крестьянское движение в Армении в начале XX в.»,

сост. проф. В. Рштуни, при участии К. Степаняна, Ереван, 1951.
«Азиатская Россия», т. 1, СПб., 1914.
Аракелян А. А., Статистика армянского населения Малой Азии («Известия Кавказского отдела императорского русского географического общества»), Тифлис, 1941, т. 22, вып. 2.
«Армянские добровольцы 1914—1915 гг»., Тифлис, 1916.
«Армянский вопрос перед мирной конференцией», Екатеринодар, 1919.
«Ближний Восток как рынок сбыта русских товаров». Отчет о деятельности, организованной в 1912 г. министерством торговли и промышленности экспедиции для изучения рынков Ближнего Востока, в составе зав. делами экспедиции В. К. Лысенко, СПб., 1913.
«Ванский вилайет», М., 1910.
«Весь Кавказ, промышленность, торговля и сельское хозяйство Северного Кавказа и Закавказья». Составил и издал М. С. Шапсович, Баку, 1914.
Витте С. Ю., Воспоминания, т. 2, М., 1960.
«Всеподданнейший отчет о состоянии Карсской области», за 1884 по 1893 гг.
«Всеподданнейшая записка по управлению Кавказским краем генерал-адъютанта графа Воронцова-Дашкова», СПб., 1907.
«Всеподданнейший отчет за пятилетие управления Кавказом генерал-адъютанта Воронцова-Дашкова», СПб., 1910.
«Вся Астрахань и весь Астраханский край. Памятная книжка Астраханской губернии на 1905 г»., Астрахань, 1904.
«Второй съезд РСДРП», М., 1957.
«Второй съезд РСДРП. Протоколы», М., 1959.
«Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов», под редакцией проф. М. Г. Нерсисяна, Ереван, 1966.
Гиппиус А. И., Статистические таблицы вилайетов Турецкой империи, прилежащих к Закавказью, Тифлис, 1889.
Гиппиус А. И., Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, т. 1, 2, Вилайет Сивас, Тифлис, 1890.
«Государственная Дума первого созыва», Стенографические отчеты, т. 2, СПб., 1906.
«Государственная Дума второго созыва», стенографические отчеты, т. 1, СПб., 1907.
«Государственная Дума», указатель к стенографическим отчетам, второй созыв, СПб., 1907.
«Дело партии Дашнакцутюн...», т. 1, 3, 4, 5.
Джемаль паша, Записки 1913 — 1919 гг., перевод с английского, Тифлис, 1923.
«Дневник Д. А. Милютина», тт. 1 — 4, М., 1947—1950 гг.
«Доклад его императорскому высочеству наместнику кавказскому главного инспектора учебных заведений д. с. с. Неверова».
Ерицов А. Д., Список населенных пунктов бывшей Эрзерумской области, находившейся во временном правлении России, Тифлис, 1883.
«Закавказье». Статистико-экономический сборник, Тифлис, 1925.
«Записка об армянских школах», составители А. Л. Харузин и А. Петров, СПб., типография МВД, 1911.
«Записки Кавказского отдела императорского русского географического общества», книжка 18, Тифлис, 1896, книжка 19, Тифлис, 1897.
«Известия Кавказского отдела русского географического общества», Тифлис, 1872—1917.
«Итоги урожая и состояние скотоводства в Закавказье в 1913 г.», Тифлис, 1914.
«Кавказский календарь», Тифлис, 1870—1917.
Ключников Ю. и *Сабинин А.*, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, М., 1929.
Колюбакин А. М., Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, т. I, Тифлис, 1888, т. III, Тифлис, 1891.
Колюбакин А. М., Статистический обзор северо-восточной части Эрзерумского вилайе-

та от Арарата на Восток до Эрзерумской равнины на Западе, Тифлис, 1889.
«КПСС». Справочник, М., 1963.
«Краткий исторический очерк состояния и деятельности Бакинского человеколюбивого общества во имя св. Григория просветителя Армении с 1869 по 1896 гг.», составил А. Калустянц, Баку, 1896.
«Краткий обзор коммерческой деятельности Закавказской железной дороги за 1910 г.».
«Краткие сведения о состоянии на Кавказе сельского хозяйства», Тифлис, 1900.
«Краткий обзор коммерческой деятельности Закавказских железных дорог по статистическим данным о перевозках пассажиров и грузов, за 1910 г. »,Тифлис, 1912.
«Крестьянское движение в Армении в XIX веке», составил В. А. Рштуни при участии К. Степаняна, Ереван, 1949.
«Кубанский календарь на 1902 г.», Екатеринодар, 1902.
«Кустарная промышленность на Кавказе», вып. II, Тифлис, 1903.
«Листовки Кавказского Союза РСДРП 1903—1905», М., 1955.
«Листовки московских большевиков в период первой русской революции», М., 1955.
Маевский В. Т., Военно-статистическое описание Ванского и Битлисского вилайетов, Тифлис, 1901.
Маевский В. Т., Ванский вилайет, военно-статистическое описание, Тифлис, 1901.
Малама Я. Д., Описание Эрзерумского вилайета, СПб., 1874.
Малама Я. Д., Деньги, весы и меры Эрзерумского вилайета, Тифлис, 1876.
Малама Я. Д., Средства продовольственные, фуражные, перевозочные и денежные северо-восточной части азиатских владений Оттоманской порты (вилайет Эрзерум и часть вилайета Трапезунда), Тифлис, 1876.
«Материалы к истории и геологии СССР», Библ. словарь, М., 1965, АН СССР.
«Материалы для описания местностей и племен Кавказа», Тифлис, 1883—1903 гг.
«Материалы для географии Азиатской Турции, Очерки Верхней Армении». Приложение I к тому II, «Известий Кавказского отдела императорского русского географического общества», Тифлис, 1873.
«Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», т. 1 — 7, Тифлис, 1886 — 1887.
«Материалы по вопросу о распространении действий крестьянского поземельного банка на Закавказский край», СПб., 1904.
«Мусульманский мир», Петроград, 1917.
«Народовольцы после первого марта 1881 г.», М., 1928.
«Народы Турции. 20 лет пребывания среди болгар, греков, турок, албанцев и армян дочери и жены консула», перевод с английского, СПб., 1877—1879.
«Начало первой русской революции, январь—март 1905 г. Сборник документов и материалов», М., 1955.
«Обзор деятельности состоящих при Кавказском армянском благотворительном обществе: армянского центрального комитета и отдела по снабжению продовольствием беженцев Кавказского фронта», Тифлис, 1917.
«Обзор отраслей промышленности в Закавказском крае, служащих источником косвенных налогов и поступления акцизного по краю дохода за 1901 г.», Тифлис, 1901.
«Обзор Карсской области», за 1896—1910 гг.
«Обзор Эриванской губернии», за 1887—1914 гг.
«Общий свод по империи результатов разработки данных Первой всеобщей переписи населения, произведенной 28 января 1897 г.», т. I, т. II, СПб., 1905.
«Отчет о поездке по Азиатской Турции генерального штаба подполковника Томилова в 1904 г.», ч. I, СПб., 1907.
«Отчет по главному управлению наместника кавказского за первое десятилетие управления Кавказским и Закавказским краями его императорским величеством великим князем Михаилом Николаевичем , 9 декабря 1862—6 декабря 1872 г.», Тифлис, 1873.
«Отчет попечителя Кавказского учебного округа о состоянии учебных заведений за 1878, 1894, 1897 гг.», Тифлис, 1879, 1895 и 1898 гг.

«Отчет о состоянии учебных заведений Кавказского учебного округа за 1914 г.», ч. 1, ч. 2, Тифлис, 1915.

«Отчет о деятельности состоящих при Кавказском армянском благотворительном обществе армянского центрального комитета помощи пострадавшим от войны», Тифлис, 1917.

«Очерки Карсской области, экономические и хозяйственные нужды», вып. I, Тифлис, 1912.

«Памятная книжка Эриванской губернии», на 1900 — 1914 гг.

«Первый съезд народов Востока». Стенографический отчет, Петроград, 1920.

Петрович П., Хлопководство в Закавказье, Тифлис, 1912.

«Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.», М., 1896.

Пржевальский А. М., Вилайет Эрзерум, ч. 1, 2, Тифлис, 1904.

«Раздел Азиатской Турции по секретным документам б. министерства иностранных дел». Под ред. Е. А. Адамова, М., 1924.

«Район Тифлисско—Карсско—Эриванской железной дороги в экономическом и коммерческом отношениях», исследования А. М. Аргутинского-Долгорукова, В. П. Бочкарева и Р. И. Даниловича, Тифлис, 1897.

«Революционное движение в Армении 1905—1907 (сборник материалов и документов)», Ереван, 1955.

«Революция 1905 г. в Закавказье (хроника событий, документы и материалы)», Тифлис, 1926.

«Революция 1917 г. в исторических документах (сборник архивных документов)», Тифлис, 1930.

«Россия в первой мировой войне 1914—1918 гг.(в цифрах)», М., 1925.

«Россия: Законы и постановления. Полное собрание законов Российской империи», т. 20, СПб., 1902.

«Россия: Законы и постановления. Полный свод законов Российской империи в двух книгах» под ред. А. А. Добровольского, кн. I, СПб., 1911, тома I—VIII.

«Сборник дипломатических документов. Реформы в Армении», Петроград, 1915.

«Сборник географических, топографических и статистических материалов по Азии», вып. LXVI—Записки о Малой Азии Генерального Штаба полковника Путята, СПб., 1896.

«Сборник консульских донесений», вып. VI, 1899.

«Сборник материалов по русско-турецкой войне 1877—1878 гг. на кавказско-малоазиатском театре», вып. III, ч. 2, СПб., 1903.

«Сборник статистических сведений о частном землевладении в Тифлисской и Кутаисской губерниях, изданный тифлисским дворянским депутатским собранием» под редакцией Ф. Г. Гогичайшвили, Тифлис, 1910.

«Сборник статистических сведений по Закавказскому краю» (под редакцией Е. Кондратенко), ч. I, Тифлис, 1902.

«Сборник сведений о Кавказе», тт. 4, 5, 6, 7, Тифлис, 1878 — 1880 гг.

«Сборник статистических сведений по Закавказскому краю», ч. 1, Тифлис, 1902.

«Сборник статистических данных о землевладении и способах хозяйства в пяти губерниях Закавказского края», Тифлис, 1899.

«Сборник областного войска Донского статистического комитета», вып. II, Новочеркасск, 1901.

«Свод законов Российской империи», т. 9, СПб., 1899, т. 11, СПб., 1913.

«Свод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края», в пяти томах, Тифлис, 1887—1889.

«Свод статистических сведений по учебным заведениям Кавказского учебного округа за двадцатилетний период 1878—1898 гг.».

Сегаль И. Л., Крестьянское землевладение в Закавказье, Тифлис, 1912.

«Сельское хозяйство и аграрные отношения (1801—1920)», т. 2, 4, сост. проф. П. В. Гугушвили, Тбилиси, 1950, 1955.

«Сельскохозяйственный обзор по Закавказью за 1910 г.», Тифлис, 1911.

«Собрание узаконений и распоряжений правительства», отдел I, второе полугодие, СПб., 1904.

«Соперничество торговых интересов на Востоке», доклад члена совета общества востоковедения М. Н. Федорова, СПб., 1903.

«Статистический сборник Таврической губернии», Симферополь, 1915.

«Стенографические отчеты Государственной Думы», четвертый созыв, 1912—1913 гг., сессия первая, Петербург, 1913.

Тейлор Д., Путешествие по Курдистану. Дневник путешествий по Армении, Курдистану и Верхней Месопотамии в 1866 г., Тифлис, 1873.

Термен Р. И., Отчет о поездке в санджак Хекиари Ванского вилайета в 1906 г., Тифлис, 1910.

Термен Р. И., Отчет о полевой поездке 1907 г. в Ванском, Битлисском и Диарбекирском вилайетах, Тифлис, 1909.

Тимофеев С. Н., Статистика хлопководства в Закавказском крае, Тифлис, 1914.

«Тифлис и его окрестности», Тифлис, 1913.

«Третий съезд РСДРП», Протоколы, М., 1959.

«Труды Кавказского общества сельского хозяйства, год тридцать третий, сентябрь—декабрь», № 9 — 12, Тифлис, 1888.

«Труды II съезда представителей военно-промышленных комитетов», П., 1916.

«Труды съезда хлопководства в гор. Тифлисе 1—6 ноября 1912 г.», Тифлис, 1914.

«Труды первого кавказского съезда сельских хозяев 15—24 ноября 1909 г. в Тифлисе». Доклады, Тифлис, 1911.

«Труды императорского Кавказского общества сельского хозяйства», т. 3—4, Тифлис, 1893.

«Управление медицинской частью гражданского ведомства на Кавказе. Отчет о состоянии народного здоровья и организации врачебной помощи в Закавказье, за 1911 г.», Тифлис.

Филипов В. Н., Военный обзор Азиатской Турции, СПб., 1881.

Филипов В. Н., Военно-топографический и статистический обзор северо-восточных провинций Азиатской Турции, СПб., 1874.

Хаджетлаше М. Б., Убийца на троне, Петроград, 1918.

«Хроника социалистического движения в России (1878—1887)», Официальный отчет, М., 1906.

Циммервальдская и Кинтальская конференции (официальные документы), М.—Л., 1924.

Шувалов Н. А., О Берлинском конгрессе 1878 г. /«Красный архив», 1933, № 4 (59)./

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հ Ա Յ Ե Ր Ե Ն

Աբրահամյան Վ. Ա., *Հայ համքարությունները Անդրկովկասի քաղաքներում (XVIII—XX դարի սկիզբը)*, Երևան, 1971։

Աբրահամյան Ա. Գ., *Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության*, հ. 2, Երևան, 1967։

Ա.-Բո, *Մեծ գեպքերը Վասպուրականում 1914—1915 թվականներին*, Երևան, 1917։

Ագանց Մ. Հ., *Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը XX դ. սկզբին*, Երևան, 1968։

Ալիշան Ղ., *Այրարատ։ Բնաշխարհ Հայաստանեաց*, Վենետիկ, ս. Ղազար, 1890։

Ալիշան Ղ., *Շիրակ։ Տեղագրութիւն պատկերացոյց*, Վենետիկ, ս. Ղազար, 1881 թ.։

Ալիշան Ղ., *Սիսական։ Տեղագրութիւն Սիսնեաց աշխարհի*, Վենետիկ, ս. Ղազար, 1893։

Ալիշան Ղ., *Սիսուան։ Համագրութիւն Հայկական Կիլիկիոյ և Լևոն Մեծագործ*, Վենետիկ, ս. Ղազար, 1885։

Ալպոյաճյան Ա., *Արաբական միացյալ հանրապետության Եգիպտոսի նահանգը և հայերը (սկիզբն մինչև մեր օրերը)*, Գահիրե, 1960։

Ալպոյաճյան Ա., Պատմություն Մալաթիոյ Հայոց, Պեյրութ, 1961։
Ալպոյաճյան Ա., Պատմություն Եվդոկիոյ Հայոց։ Տեղագրական պատմական և ազգագրական տեղեկություններով, Գահիրե, 1952։
Ալպոյաճյան Ա., Մինաս Չերազ։ Իր կյանքը և գործը, իր 60-ամյա հոբելյանի առթիվ, Գահիրե, 1927։
Ալպոյաճյան Ա., Պատմություն հայ գաղթականութեան, նոր դարու սկզբնե մինչև 20-րդ դարուս սկիզբը, հ. 3, Գահիրե, 1961։
Ալպոյաճյան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրե, 1950։
Ակեռուի Է., Կովկասյան վերքեր, Ժնև 1903 թ.։
Ազայան Էդ., Հայ լեզվաբանության պատմություն (սկզբից մինչև մեր օրերը), հ. 1, Երևան, 1958։
Ազայան Ս. Պ., Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ., Երևան, 1955։
Ազայան Ս. Պ., Արշավիր Մելիքյան (ծննդյան 90-ամյակի առթիվ), Երևան, 1969։
Ազայան Ս. Պ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976։
Ազայան Ս. Պ., Հայ և ադրբեջանական ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1961։
Ազասի, Չեյթուն և իր շրջակաները, Պեյրութ, 1968։
«Ազասիի Չեյթուն և շրջականեր գիրքը հակասություններով», Պեյրութ, 1969։
Անասյան Հ., Տաճկահայոց հարցի պատմությունը (սկզբից մինչև 1915 թ.), Նոր Նախիջևան, 1915։
Անենյան Ա., Պատմություն Արևելյան պատերազմի, հ. Ա., կ. Պոլիս, 1879։
Անենյան Հ., Հայոց հայրիկ «Նվաղող վշտից հայրենյաց հայոց», Թավրիզ, 1929։
Անֆիտեատրով Ա., Եվրոպա և Հայաստան, Թիֆլիս, 1906։
Այվազյան Ա., Ամերիկահայ ընկերական կազմակերպություններ, Ամերիկահայ տարեցույց, 1912։
Անանուն Գ., Ռուսահայերի հասարակական գործունեությունը XIX դարում (1800—1870), հ. 1, Բաքու, 1916, հ. 2, Էջմիածին, 1922, հ. 3, Վենետիկ, 1926։
Անտոնյան Ա., Պատկերազարդ ընդարձակ պատմություն Պալքանյան պատերազմին, հ. 1—4, կ. Պոլիս, 1912—1913։
Ավդալբեգյան Հ. Հ., Հողային հարցը Արևելյան Հայաստանում (1801—1917 թթ.), Երևան, 1959։
Ավդալբեկյան Թ. Հ., Արսեն Թոխմախյան, Երևան, 1926։
Ավետիսյան Վ. Ա., Սուրեն Սպանդարյան, Երևան, 1951։
Ավետիսյան Վ. Ա., Ստեփան Շահումյան, Երևան, 1953։
Ավետիսյան Վ. Ա., Մի էջ Հայաստանի բանվորական շարժման պատմությունից (1896—1900), Երևան, 1961։
Ավետիսյան Վ. Ա., Հայ հասարակական մտքի զարգացման մարքս-լենինյան փուլի սկզբնավորումը, Երևան, 1976։
Աւոմ, Ազգային սահմանադրություններ։ Դիծեր մեր մշակույթի պատմությունեն, կ. Պոլիս, 1914։
Աւոմ, Պետական վերանորոգումները և հողային հարցը, կ. Պոլիս, 1910։
Աւարեան Դ., Արևմտյան հայ գաղթականությունը («Մուրճ», 1904, № 7)։
Աւարատյան Ա., Հայ գաղթականությունը Ամերիկայի մեջ («Արշալույս» տարեգիրք, 1929)։
Արզումանյան Մ. Վ., Բոլշևիկների գործունեությունը և ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1907—1917 թվականներին, Երևան, 1954։
Արզումանյան Մ. Վ., Հայաստան 1914—1917, Երևան, 1969։
Արզումանյան Մ. Վ., Ստեփան Շահումյան, Երևան, 1978։
Արծրունի Գր., Աշխատություններ, Թիֆլիս, 1904։
Արծրունի Գր., Թուրքաց հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894։
Արկոմեդ Ս. Տ., Բանվորական շարժումը և սոցիալ-դեմոկրատիան Կովկասում, մաս 1, Երևան, 1929։
Արշարունի Ա. Մ., Մոսկվայի հայ մամուլը, Երևան, 1971։
Արշարունի Ա. Մ., Մոսկվայի համալսարանը և հայ առաջավոր ինտելիգենցիան, Երևան, 1955։
Բաբայան Լ., Հայերը Մոլդավիայում և Բուքովինայում, Թիֆլիս, 1911։
Բաբայան Լ., Պարսկաստանի կրակապաշտները, «Ազգագրական հանդես», VIII գիրք, Թիֆլիս, 1908։
Բաղալյան Խ., Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի կոնգրեսում 1878, Երևան, 1955։

Բաղալյան Խ., *Հայաստանը ռուս-թուրքական պատերազմում*, Երևան, 1959։

Բաքաքան Հայկ. *Արդի Եթովպիա և հայ գաղութը։ Ատտիս-Ապեպա*, Վենետիկ, 1930։

Բարբի Հանրի, *Սարսափի երկրին մեջ։ Նահատակ Հայաստան*, Կ. Պոլիս, 1919։

Բարսեղյան Խ., *Հայաստանի կոմունիստական պարտիայի կազմավորումը*, Երևան, 1965։

Բարսեղյան Խ., *Մարքսիզմի տարածումը Հայաստանում*, գիրք առաջին, Երևան, 1967, գիրք երկրորդ, Երևան, 1975։

Բարսեղյան Խ., *Ստեփան Շահումյան։ Կյանքի և գործունեության վավերագրական տարեգրություն (1878—1918)*, Երևան, 1968։

Բյուրատ Ս., *Եղերգեն Սասուն*, Կ. Պոլիս, 1910։

Բյուրատ Ս., *Արյունին ճամբուն վրա*, Կ. Պոլիս, 1911։

Բյուրատ Ս., *Սասունեն ետքը*, մաս Ա, Կ Պոլիս, 1911։

Բյուրատ Ս., *Զեյթունի վրեժը*, Կ. Պոլիս, 1911։

Գաբամաճյան Ա., *Հայ տարրը Եգիպտոսի պետական, տնտեսական և առևտրական ասպարեզներուն մէջ* («Եգիպտահայ տարեցույց», 1914)։

Գաբրիկյան Խ., *Հայկական հարցը*, Պեյրութ, 1962։

Գաբրիելյան Հ., *Հայ փիլիսոփայության պատմություն (սկզբից մինչև մեր օրերը)*, Երևան, 1976։

Գաբրիելյան Հ., *Հայ պատմափիլիսոփայական մտքի քննական տեսություն*, Երևան, 1966։

Գաբրիելյան Հ., *Ազգերի և ազգային կուլտուրաների զարգացման օրինաչափությունները*, Երևան, 1973։

Գաբրիելյան Մ. Ս., *Ազգային քաղաքականություն հայոց*, Նյու-Յորք, 1893։

Գաբրիելյան Ռ. Ք., *Ակնարկներ դարվինիզմի և բիոլոգիական մտքի պատմության հայ գրականության մեջ (XIX—XX դդ.)*, Երևան, 1963։

Գազանճյան Լ., *Վերածնունդ Վան-Վասպուրականի*, Պոսթոն, 1950։

Գալուստյան Գր., *Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն*, Նյու-Յորք, 1934։

Գալոյան Գ. Ա., *Ռուսաստանը և Անդրկովկասի ժողովուրդները*, Երևան, 1978։

Գարամանուկյան Ա., *Հայկական լեգիոնը պատմական, իրավական ու քաղաքական հարցերու լույսի տակ և վավերագրեր*, Պեյրութ, 1974։

Գելաֆյանց Սոկրատ Խան, *Հայ գործավորը Ամերիկայի մէջ*, Ամերիկահայ տարեցույց, 1912։

Գեղամյան Ե., *Հայ ազատագրական շարժումները 19-րդ դարում*, Բաքու, 1915։

Գեղամյան Ե., *Ռուս բյուրոկրատիան և հայերը (մտորումներ)*, Բաքու, 1917։

Գյոզալյան Գ., *Հայ քաղաքական մտքի զարգացումը և Հ. Հ. դաշնակցությունը*, Փարիզ, 1927։

Գյոզալյան Գ., *Խրիմյան Հայրիկ*, Պեյրութ, 1954։

Գյուլխանդանյան Ա., *Ազգային շարժումների դրդապատճառները ԺԹ դարերում*, Փարիզ, 1939։

Գորոյանց Ն. Հ., *Պարսկաստանի հայերը*, Թեհրան, 1968։

Գրիգորյան Զ. Տ., *Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին և նրա պատմական բախտը*, Երևան, 1978.

Դուլանյան Խ. Գ., *Մարքսիստական տնտեսագիտական մտքի տարածումը հայ իրականության մեջ, 1890—1920*, Երևան 1961։

Դուլանյան Խ. Գ., *Ուրվագծեր հայ տնտեսագիտական մտքի պատմության XVIII դարի վերջերից մինչև XIX դարի 90-ական թվականները*, Երևան, 1959։

Դարբինյան Ռ., *Հայ ազատագրական շարժման օրերեն*, Փարիզ, 1947։

Եզանյան Մ., *Հայաստանի հետռեֆորմյան ագրարային հարաբերությունները*, Երևան, 1964։

Երամյան Հ., *Հուշարձան Վան-Վասպուրականի*, հ. 1, 2, Աղեքսանդրիա, 1929։

Երիցյան Ա., *Գրիգոր Արծրունու և նրա քսանհինգ տարվա գրական գործունեութեան առթիվ (1865—1890 թթ.)*, Թիֆլիս, 1890։

Երկանյան Վ., *Պայքար հայկական նոր դպրոցի համար Անդրկովկասում (1870—1905 թթ.)*, Երևան, 1970։

Երևանյան Գ., *Պատմություն Չարսանչակի հայոց*, Պեյրութ, 1956։

Զեյթունցի, *Զեյթունի անցյալեն և ներկայեն*, հ. Ա., Փարիզ, 1902։

Զուրաբյան Ս. Տ., *Հայ տնտեսագիտական մտքի զարգացման ուրվագծեր XVIII դարի վերջին քառորդ—XIX դ. 90-ական թվականներ*, Երևան, 1959։

Էլիզե Ռեկլյու, *Լազիստան, Հայաստան և Քուրդիստան*, Վաղարշապատ, 1893։

Էլմար Յ., *Եփրեմ (1862—1912)*, Թեհրան, 1964։

Էմիլ Պերղրան, *Նուպար փաշա*, Կ. Պոլիս, 1910։

Էտուար Տոխո, *Արևելյան խնդիրը և Հայկական հարցը*, Կ. Պոլիս, 1913։

Քնմիրյան Ա., *Քեսապ (1909—1946)*, Բեյրութ, 1956։
Քերզյան Յ., *Կիլիկիոյ աղետը*, հ. II, Կ. Պոլիս, 1912։
Քոխմախյան Ա., *Մասիս լեռների հարավային ստորոտներ*, մ. 1, 2, Թիֆլիս, 1882։
Քոխմախյան Ա., *Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին*, Թիֆլիս, 1881։
Քոփուզյան Հ. Ե., *Ծգիպտոսի հայկական գաղութի պատմություն (1805—1952)*, Երևան, 1978։
Քումայան Կ., *Պատմություն Արևելյան խնդրո և առաջնորդ Հայկական հարցի*, հ. 1, 2, Լոնդոն, 1905։
Քումանյան Բ., *Հայ աստղագիտության պատմություն*, հ. 2, Երևան, 1968։
Քաւշյան Հ., *Սարդարապատի հերոսամարտը*, Երևան, 1969։
Ժամկոչյան Ա., *Ջորավար Անդրանիկ կպատասխանե իր հակառակորդներուն*, Փարիզ, 1945։
Իգնատյան Ա. Հ., *Լազարյան Ճեմարան*, Երևան, 1969։
Իզմիրլյան Կ., *Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցյալեն և ներկայիս քննական տեսություն*, Պեյրութ, 1964։
Իզմիրլյան Ս., *Դատումներ մեր հարյուրամյա հեղափոխության մասին*, Պեյրութ, 1962։
Ինճիկյան Ա., *Հովհաննես Քումանյան*, Երևան, 1969։
Ինճիկյան Հ., *Բոգդան Կնունյանց*, Երևան, 1957։
Իշխանյան Բ., *Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան*, Թիֆլիս, 1907։
Իշխանյան Բ., *Թուրքիայի ապագան, (քննական էտյուդ)*, Թիֆլիս, 1908։
Լազյան Գ., *Դեմքեր հայ ազատագրական շարժումներեն*, Գահիրե, 1949։
Լազյան Գ., *Հայաստան և հայ դատը*, Կահիրե, 1957։
Լեո, *Դյադատոն (կյանքը և քաղաքական գործունեությունը)*, Թիֆլիս, 1899։
Լեո, *Գրիգոր Արծրունի (կյանքը և գրական գործունեությունը)*, հ. 1—3, Թիֆլիս, 1902—1905։
Լեո, *Երևանյակ հայոց բարեգործական ընկերության Կովկասում*, Թիֆլիս, 1911։
Լեո, *Պատմություն Երևանի հայոց թեմական հոգեւոր դպրոցի 1837—1912*, Թիֆլիս, 1914։
Լեո, *Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգեւոր դպրոցի 1838—1913*, Թիֆլիս, 1914։
Լեո, *Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը*, հ. 1, Փարիզ, 1934, հ. 2, Փարիզ, 1935։
Լեփսիուս Նոհաննես, *Հայաստանի ջարդերը*, Կ. Պոլիս, 1919։
Լինչ, *Հայաստան, ուղևորություններ և ուսումնասիրություններ*, հ. 1—2, Կ. Պոլիս, 1913—1914։
Խաժակ, *Հարկերը Տաճկաստանում*, Բաքու, 1914։
Խոնդկարյան Մ. Ա., *Արևելյան Հայաստանի ագրարային հարաբերությունների պատմությունից, XIX դ. վերջ և XX դ. սկիզբ*, Երևան, 1974։
Խոջաբեկյան Վ. Ե., *Հայաստանի բնակչությունը և նրա զբաղվածությունը (1828—1978)*, Երևան, 1979։
Խրիմյան Մ., *Ամբողջական երկեր*, Նյու-Յորք, 1929։
Խուրշուդյան Լ. Ա., *Սովետական Ռուսաստանը և Հայկական հարցը*, Երևան, 1977։
Կարինյան Ա., *Իմպերիալիստական պատերազմը և Հայաստանը*, Երևան, 1924։
Կարինյան Ա., *Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության*, հ. 2, Երևան, 1960։
Կենջյան Ա., *Սոցիալ-դեմոկրատ հնչակյան կուսակցությունը և Կիլիկյան ինքնավարության ակտը*, Պեյրութ, 1958։
Կիտուր Ա., *Պատմություն Ս. Դ. Հնչակյան կուսակցության*, Բեյրութ, 1962—63։
Կիրակոսյան Ջ., *Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը (1914—1916 թթ.)*, Երևան, 1965։
Կիրակոսյան Ջ., *Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 70-ական թթ.)*, Երևան, 1978։
Կիրակոսյան Ջ., *Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.)*, Երևան, 1980 թ.։
Կոստանեդյան Է., *Գարեգին Սրվանձտյանց (կյանքը և գործունեությունը)*, Երևան, 1979։
Կրիմսկի Ա., *Մահմեդական աշխարհն ու նրա ապագան։ Իսլամի անցյալը, մահմեդական ազգերի ժամանակակից վիճակը, նրանց մտավոր ընդունակությունները և նրանց վերաբերմունքը դեպի եվրոպական քաղաքակրթությունը*, Վաղարշապատ, 1906։
Հակոբյան Հ., *Երկեր*, Երևան, 1951։
Հակոբյան Թ. Խ., *Երևանի պատմությունը (1879—1917 թթ.)*, Երևան, 1963։
Համբարյան Ա. Ս., *Ագրարային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914)*, Երևան, 1965։

Համբարյան Ա. Ս., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1908—1914 ԹԹ.), Երևան, 1979։
«Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Երևան, 1958։
«Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության ուրվագծեր», Երևան, 1967։
«Հայ ժողովրդի պատմություն։ Հնագույն ժամանակաշրջանից մինչև մեր օրերը», խմբագրությամբ պրոֆ. Մ. Գ. Ներսիսյանի, Երևան, 1972։
«Հայ նոր գրականության պատմություն», հ. 3, 4, 5, Երևան, 1964, 1972, 1979։
Հայկ Վահե, Խարբերդը և անոր ոսկեդեն դաշտը, Նյու-Յորք, 1959։
Հայկազ Ադամ, Շապին Գարահիսար ու իր հերոսամարտը, Նյու-Յորք, 1957։
Հայկունի Ս., Բագրևանդ Ջրաբաշխ գավառ, մ. Ա, էջմիածին, 1894։
Հարությունյան Ա. Բ., Կամո, Երևան 1957։
Հարությունյան Խ., Ներսիսյան հոգևոր դպրոցի սանների առաջին դպրոցական ճանապարհորդությունը, Թիֆլիս, 1894։
Հարությունյան Գ., Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 ԹԹ., Երևան, 1956։
Հովհաննիսյան Ա. Գ., Էնգելսը և հայկական հարցը, Մոսկվա, 1931։
Հովհաննիսյան Ա. Գ., Նալբանդյանը և նրա ժամանակը, գիրք 1, 2, Երևան, 1955, 1956։
Հովհաննիսյան Ա. Գ., 19-րդ դարի 50—60-ական թվականների արևելահայ հասարակական-քաղաքական հոսանքները (Պատմա-բանասիրական հանդես, 1965 № 4, 1966 № 1)։
Հովհաննիսյան Ա. Գ., Արծրունու և Բաֆֆու գաղափարական ներհակության ակունքը (Բանբեր Երևանի համալսարանի, 1968, № 1)։
Հովհաննիսյան Ա. Գ., Արևելահայերի մասնակցությունը Ռուսաստանի և Անդրկովկասի հեղափոխական շարժումներին (1860—70-ական ԹԹ.) (Պատմա-բանասիրական հանդես, 1968, № 1)։
Հովհաննիսյան Ա. Գ., 80-ական թվականների առաջին կեսի արևելահայ ազգային նարոդնիկական խմբակները (Բանբեր Հայաստանի արխիվների, 1968 թ., № 2)։
Հովհաննիսյան Ա. Գ., Արևելահայ լիբերալիզմի և նարոդնիկության ներհակությունները իննսունական թվականների սկզբներին (Բանբեր Հայաստանի արխիվների, 1969, № 2)։
Հովհաննիսյան Ա. Գ., Հնչակյանների կազմավորման գաղափարական արմատները, (Պատմա-բանասիրական հանդես, 1968 № 2)։
Հովհաննիսյան Ծ. Մ., Ագրարային հարցը Երևանի նախկին նահանգում 19-րդ դարի վերջին 20-րդ դարի սկզբին, Երևան, 1949։
Հովհաննիսյան Ռ. Փ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյացը» կազմակերպությունը 19-րդ դարի 70—80-ական ԹԹ., Երևան 1965։
Հովնան Ի. Ն., Ռուս-հայ գրական կապերը 19-րդ—20-րդ դարերում, գիրք առաջին, Երևան, 1969։
Հովսեփյան Ա., Ստեփան Գուլիշամբարով, կյանքը և գործունեությունը, Երևան 1973։
Հովսեփյան Գ., Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան և կաթողիկոսական ընտրություն, Թիֆլիս, 1911։
Ղարաջյան Գ., (Ս. Տ. Արկոմեդ), Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը Անդրկովկասում, Թիֆլիս, 1927։
Ղարիբջանյան Գ. Բ., Վ. Ի. Լենինը և հայ գործիչները, Երևան, 1980։
Ղարիբջանյան Գ. Բ., Լենինը և Անդրկովկասը 1893—1924 ԹԹ., հ. 1, Երևան, 1970, հ. 2, Երեվան, 1973, հ. 3, Երևան, 1975։
Ղլտչյան Ա., Պատմություն Ալեքսանդրապոլի հայոց հոգևոր վիճակային դպրոցի (1840—1912), Ալեքսանդրապոլ, 1912։
Ղուրդնյան Գ., Հայերի մասնակցությունը համաշխարհային պատերազմին, Փարիզ, 1931, (Բարգ. ֆրանսերենից)։
Ճաճկուլյան Հ., Հիշատակներ հայկական ճգնաժամեն, մաս Ա-Բ, Կ. Պոլիս, 1913։
Ճիզմեճյան Մ., Պատմություն ամերիկահայ քաղաքական կուսակցությունների 1890—1925, Տրևզնո, 1930։
Ճիզմեճյան Մ., Խարբերդը և իր զավակները, Տրեզնո, 1955։
Մալխաս, Ներկա սովը և իր պատճառները, Տրապիզոն, 1909։
Մալխասյան Ստ., Համառոտ պատմություն Ներսիսյան հոգևոր դպրոցի յոթանասունհինգամյա գոյության (1824—1899), Թիֆլիս, 1900։
Մամուրյան Մ., Անգլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը, Զմյուռնիա, 1881։
«Մասնական պատմություն հայ մեծատուններու 1400—են 1900», գրեց Տ. Գ. Մ., Կ. Պոլիս, 1909։

Մարկոսյան Ս., Արևմտահայության վիճակը 19-րդ դարի վերջերին, Երևան, 1968։
Մատիկյան Ն., Հայկական կերպարվեստի պատմություն, հ. 1, 2, Երևան, 1975 թ.։
Մարուխյան Ա., Գյուղացիության դրությունը նախասովետական Հայաստանում (1900—1920 թթ.), Երևան, 1948։
Մելիքյան Մ. Ա., Հայ ազգի կազմավորման և նրա սոցիալական վերափոխման հարցի շուրջը, Երևան, 1957։
Մելիքյան Ա., Բհկումն հայ հասարակական կյանքի ու մտքի զարգացման մեջ, «Նոր աշխարհ», 1922, № 2։
Մելիքյան Հ. Ս., Մարքսիստական կազմակերպությունները և ռևոլյուցիոն շարժումները Լոռիում (1899—1908), Երևան 1957։
Մելիքյան Հ. Ս., Հեղափոխական շարժումները կովկասյան բանակում (1914—1917), Երևան, 1975։
Մելիք-Թանգյան Ն. Վ., Հայոց եկեղեցական իրավունքը, գիրք Ա, Շուշի, 1903։
Մելիք-Յոլչյան Նր., Զորս տարի Հայաստանի բանվորական շարժման պատմության, 1903—1907, Երևան, 1924։
Մելքումյան Բ. Գ., Հայաստանի պղնձարդյունաբերության պատմություն (XVIII դարի II կեսից մինչև 1920 թ.), Երևան, 1972։
Մրմրեան Մ., Թուրքահայոց հին վաճառականութիւն և վաճառականք (1740—1890), Կ. Պոլիս, 1908։
Միհայլյան Վ. Ա., Ղրիմի հայկական գաղութի պատմություն 1801—1917 թթ. Երևան, 1970։
Միհայելյան Վ. Ա., Դովակալ Լ. Մ. Սերերբրյակով (Հ. գաղթ Մարկոսի Արծաթագործյան), Երեվան, 1978։
Միխիթարյան Մ. Հ., XIX դարի երկրորդ կեսի արևելահայ պարբերական մամուլի պատմությունից («Փորձ», «Արձագանք»), Երևան 1976։
Միխիթար վարդապետ, Հայերը Ռուսաստանում, Վաղարշապատ, 1906։
Մնացականյան Ա. Ն., Գերմանա-թուրքական զավթիչների գործակալության ձախողումը Կովկասում առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին, Երևան, 1948։
Մնացականյան Ա., Լենինը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, 1963։
Մնացականյան Ա., Հոկտեմբերի բարիկադների վրա, Երևան, 1967։
Մովսիսյան Ս. Ա., Ժողովրդական կրթության վիճակը և մարքսիստական մանկավարժական գաղափարների տարածումը Հայաստանում (1900—1917), Երևան, 1955։
Մուրկենբաուէ Հ. Ամերիկյան դեսպան Մորկենթաուի հիշատակները և հայկական եղեռնի գաղտնիքները, Կ. Պոլիս, 1919։
Մորկենբաուէ Հ., Դեսպան Մորկենթաուի պատմածները, Կ. Պոլիս, 1919։
Մրավյան, Ժամանակն է սթափվելու, Վիեննա, 1906։
Մրավյան, Դաշնակցության կրիզիսը, Բաքու, 1907։
Մուշեղ Եպ., Ատանայի ջարդը և պատասխանատուները, Բոստոն, 1910։
Մուրադյան Գ. Ա., Հայաստանը ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին (1905—1907), Երևան, 1964։
Մուրատյանց Մ. Եպս., Երկու խոսք Ռուսաստանի հայոց կրոնական և կրթական վիճակին վրա, Կ. Պոլիս, 1888։
Մուրադյան Մ., Հայ երաժշտությունը 19-րդ դարում և 20-րդ դարաշրջանում, Երևան, 1970։
Ներսիսյան Մ. Գ., Նարոդնիկական խմբակներն Անդրկովկասում, Երևան, 1940։
Ներսիսյան Մ. Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ, 1850—1870 թթ., Երևան, 1955։
Ներսիսյան Ա. Ն., Հայերի մասնակցությունը 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին, Երևան, 1958։
Նշկյան Հ., Առաջին կայծերը, էջ մը Կարնո գործոնքեն, Պայքարի տպարան, 1930։
Նշկյան Մ. Ի., Իվ փշացուց հայությունը, Ֆրեզնո, 1920։
Նուրիխան Մ., Պատմություն ժամանակակից, հ. Բ, Գ, Վիեննաիկ, 1868, 1879։
Շահպազյան Յ., Քյուրդո-հայ պատմություն, Կ. Պոլիս, 1911։
Շահվերդյան Ա., Հայ երաժշտության պատմության ակնարկներ, 19—20 դդ., Երևան, 1959։
Շահումյան Լ., Կամո, Երևան, 1962։
Շիրվանզադե, Ե. Լ. Ժ, հ. 9, Երևան, 1961։
Յակեան Հ., Վասպուրական-Վանի վանքերը, Վիեննա, մասն Ա, մասն Բ, 1940, 1942։

Չալխուշյան Գ., *Մտքեր, խոհեր, դեմքեր*, Թիֆլիս, 1914։

Չարըգ Ղազար, *Յուշամատյան Բարձր Հայքի, Կարինապատում*, Բեյրութ, 1957։

Չերազ Մ., *Թե ինչ շահեցանք Պերլինի վեհաժողովեն*, Կ. Պոլիս, 1878։

Չերազ Մ., *Հայաստան և Իտալիա*, Կ. Պոլիս, 1879։

Չերքեզյան Ս., *Օրմանյանը զրպարտության ցանցերում*, Թիֆլիս, 1911։

Չոպանյան Ա., *Հայաստանը թուրք լուծին տակ*, Պոստոն, 1918։

Չոպանյան Ա., *Հայ ազգը «մեղավոր» չէ*, Փարիզ, 1926։

Չոպանյան Ա., *Դեմքեր*, Փարիզ, 1924։

Չոպանյան Ա., *Հայ ազգն ու իր մշակույթին արժեքը*, Փարիզ, 1946։

Չորմիսյան Լ., *Համապատկեր արևմտահայ մեկ դարու պատմության*, հ. Ա, Բեյրութ, 1972։

Պապիկյան Հ., *Ատանայի եղեռնը*, Կ. Պոլիս, 1919։

«Պատմութիւն ս. դ. հնչակյան կուսակցության 1887—1962», հ. Ա, Պեյրութ, 1962։

Պարսամյան Վ., *Հայկական հարցի զարգացման պատմական ուղիները մինչև Բեռլինի կոնգրեսը*, Երևան 1946։

Պարսամյան Վ., *Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ.*, Երևան, 1955։

Պարսամյան Վ., *Հայ ազատագրական շարժումների պատմությունից*, Երևան, 1958։

Պարսամյան Վ., *Հայ ժողովրդի պատմություն*, հ. 3, Երևան, 1967։

Պարսամյան Վ., *Ռուսաստանը և հայ ժողովրդի պատմական բախտը*, Երևան, 1978։

Պարտիզակցի Վահան վ., *Խոսք զհայրենյաց*, Կ. Պոլիս, 1879։

Պետրոսյան Հ. Ա., *Անդրկովկասի բոլշևիկների պայքարը ռազմաարդյունաբերական կոմիտեների դեմ (1915—1917 թթ. փետրվար)*, Երևան, 1964։

Պետրոսյան Հ. Ա., *Անդրկովկասի բանվոր դասակարգը և բոլշևիկյան կազմակերպությունները առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (1914—1917 թթ. փետրվար)*, Երևան, 1977։

Պողոսյան Հ. Պ., *Հաճընի ընդհանուր պատմութիւն և շրջակա Գոզանդաղի հայ գյուղերը*, Լոս Անճելոս, 1942։

Պողոսյան Ս., *Թրքահայ սպայի մը օրագիրը*, հ. Բ, Փարիզ, 1947։

Պողոսյան Հ. Վ., *Տասնեան գերդաստանը*, Վիեննա, 1968։

Պողոսյան Ա. Մ., *Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կարսի մարզում 1878—1920*, Երևան, 1961։

Պողոսյան Հ. Մ., *Զեյթունի պատմությունը*, Երևան, 1969։

Պոյաճյան Տ. Հ., *Հայկական լեգեոնը*, Բոստոն, 1965։

Ռշտունի Վ., *Հայ հասարակական հոսանքների պատմությունից 19-րդ դարի երկրորդ կես, հետռեֆորմյան շրջան*, Երևան, 1956։

Ռշտունի Վ. Տ., *Ուրվագծեր Հայաստանի գյուղացիության պատմության*, հ. Բ, Երևան, 1968։

«Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին» (հոդվածների ժողովածու), Երևան, 1955։

Սահակ-Մեսրոպ, *Հայոց տարեցույց*, Կ. Պոլիս, 1913։

Սահակյան Ռ. Գ., *Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919—1921 թթ.*, Երևան, 1970։

Սապահ-Գյուլյան Ս., *Փոքր Հայքի հիշատակներ*, Չիկագո, 1917։

Սապահ-Գյուլյան Ս., *Ինքնավար Հայաստան*, Գահիրե (առանց թվական)։

Սասունի Կ., *Պատմություն Տարոնի աշխարհի*, Բեյրութ, 1956։

Սասունի Կ., *Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրդական հարաբերությունները*, Պեյրութ, 1969։

Սարգսյան Ե., Սահակյան Ռ., *Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ*, Երևան, 1963։

Սարգսյան Ե. Ղ., *Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունն Անդրկովկասում 1914—1918*, Երևան, 1964։

Սարգսյանց Լ., *Այց թուրքաց Հայաստանին*, Թիֆլիս, 1890։

Սարուխան, *Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում*, Թիֆլիս, 1912։

Սաֆայի Էբրահիմ, *Սահմանադրության առաջնորդները*, Թեհրան, 1965։

Սերոբյան Մ., *Ամերիկահայ գաղութի ծագումը*, *«Ամերիկահայ տարեցույց»*, 1912։

Սերոբյան Մ., *Հայկական մղձավանջը*, Պոստոն, 1916։

Սերոբյան Մ., *Հայկական հարցը և անոր փուլերը*, Պեյրութ, 1937 թ.։

Սեոբյան Մ., *Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով*, Գահիրե, 1948։
Սիամանթո, *Ընտիր երկեր*, Երևան, 1957։
Սյուրմեյան Ա., *Պատմություն Հալեպի հայոց*, հ. 3, Փարիզ, 1950։
Սվաճյան Հ., *Հրապարակախոսություն*, Երևան, 1960։
Ստեփանյան Գ., *Ուրվագծեր արևմտահայ թատրոնի պատմության*, հ. I, II, III, Երևան, 1962, 1969, 1975։
Վարանդյան Մ., Հ. Հ. *Դաշնակցության պատմություն*, հ. 1, Փարիզ, 1932, հ. II, Գահիրե, 1950։
Վարանդյան Մ., *Հայկական շարժման նախապատմությունը*, հ. 1, 2, Ժնև, 1912, 1913։
Վարդան Վանեցի, *Հայկական տասնհինգը և հայերու լքյալ գույքերը (քննական ակնարկ ըստ թրքական վավերագրերու)*, Պեյրութ, 1970։
Վարդանյան Հ. Գ., *Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասարակական-քաղաքական հոսանքները XIX դարի վերջին քառորդում*, Երևան, 1967։
Վարդապետյան Ս. Հ., *Հայերը Լիբանանի մեջ*, Բեյրութ, 1951։
Վարժապետյան Մ., *Հուշիկք Զեյթունի*, Մարզվան, 1912։
Վերֆել Ֆր., *Մուսա լեռան քառասուն օրը*, Երևան, 1964։
Տալյան Հ. Յ., *Հայ բնակչությունը Սև ծովեն մինչև Կարին, պատմա-ազգագրական հարևանացի ակնարկ մը*, Վիեննա, 1921։
Տարոնցի Գլակ, *Ապստամբ Սասունը, մի էջ Սասունի նորագույն դեպքերից*, Ժնև, 1903։
Տեովլեթ Գ., *Զեյթուն*, հ. Բ, Փարիզ, 1946։
Տերյան Վ., *Երկեր*, հ. 2, Երևան, 1973։
Տեր-Պողոսյան Ա. Գ., *Բիոլոգիական մտքի զարգացումը Հայաստանում*, Երևան, 1960։
Րաֆֆի, *Երկեր*, հ. 9, 10, Երևան, 1958, 1959։
Րիխարդ, *Ինչո՞ւ ենք անջատվում դաշնակցությունից (առանց տեղի և թվի)*։
Րիֆաթ Մեվլան-Զադե, *Օսմանյան հեղափոխության մութ ծալքերը և իթթիհատի հայաչինջ ծրագիրները*, Պեյրութ, 1968։
Փաւսադանյան Ռ., *Հայ բժշկության պատմությունից*, Երևան, 1958։
Փափազյան Վ., *Երկերի ժողովածու*, հ. 5, Երևան, 1959։
Քեշյան Բ., *Պատմութիւն ս. փրկչի հիվանդանոցին հայոց ի Կ. Պոլիս*, Կ. Պոլիս, 1887։
Քալանթյան Ս., *Տրանսիլվանիայի հայերի պայքարը ազգային ինքնուրույնության պահպանման համար ԺԲ դարի վերջից մինչև Ի դարի սկիզբը (Էջմիածին, 1964, № 12, 1965, № 1, 7, 1966, № 2—6)*։
Քոսյան Հ., *Հայք ի Զմյուռնիա և ի շրջակայս*, հ. Բ, Վիեննա, 1899։
Օհանջանյան Շ., *Անդրկովկասի երիտասարդության հեղափոխական շարժումների պատմությունից 1905—1907 թթ.*, Երևան, 1968։
Օրմանյան Մ., *Ազգ և խոսք*, Երուսաղեմ, 1929։
Օրմանյան Մ., *Ազգապատում*, հ. 3, Երուսաղեմ, 1927։
Յայնց էլ Պոսեյն, *Հերոսական հայության անցյալեն։ Քարդերը Հայաստանի մեջ (ականատեսի վկայություններ)*, Գահիրե, 1960։

ՌՈՒՍԵՐԵՆ

Аветисян Г. А., Раффи Хитаров, Ереван, 1971.
Аветисян Г. А., В. И. Ленин и пролетарский интернационализм в революционном молодежном движении, Ереван, 1979.
Аветисян Г. А., Комсомол Закавказья в борьбе за победу и упрочение советской власти (1917 — 1921), Ереван, 1964.
Аверьянов П. И., Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX столетия, Тифлис, 1900.
Агаян Ц. П., Крестьянская реформа в Азербайджане в 1870 г., Баку, 1956.
Агаян Ц. П., Вековая дружба народов Закавказья, ч. 1, Ереван, 1970.
Агаян Ц. П., Роль России в исторических судьбах армянского народа, М., 1978.
Адонц М. А., Экономическое развитие Восточной Армении в XIX в., Ереван, 1957.
Амфитеатров А. В., Армянский вопрос, СПб, 1906.
Амбарян А. С., Развитие капиталистических отношений в армянской деревне (1860 — 1920), Ереван, 1959.

Антелава И. Г., Государственные крестьяне Грузии в XIX в., т. II, Пореформенный период 1864 — 1900 гг., Тбилиси, 1962.
Аргутинский-Долгоруков А., История сооружения и эксплуатации Закавказской железной дороги за двадцать пять лет ее существования 1871—1896, Тифлис, 1896.
Арешян С. Г., Армянская печать и царская цензура, Ереван, 1957.
Арутюнян А. О., Кавказский фронт 1914 — 1917 гг., Ереван, 1971.
Арутюнян Г. С., Иранская революция 1906 — 1911 гг. и большевики Закавказья, Ереван, 1957.
Арутюнов Г. А., Рабочее движение в России в период нового революционного подъема 1910 — 1914 гг., М., 1975.
Арцруни Г., Восточный вопрос, Тифлис, 1876.
Баграмян И. Х., Мои воспоминания, Ереван, 1979.
Бакрадзе Г. К., Возникновение и развитие капиталистической промышленности в Грузии в XIX веке, Тбилиси, 1958.
Барбюс Анри, В стране ужаса. Мученица Армения, Тифлис, 1919.
Барсегян Х. А., Степан Георгиевич Шаумян, М., 1975.
Барсегян Х. А., Степан Шаумян, Ереван, 1978.
Барсегян Х. А., История распространения марксизма-ленинизма в Армении, Ереван, 1978.
Бекгулянц Р., По Турецкой Армении. Впечатления от поездки летом 1914 г., Ростов-на-Дону, 1914.
Беляев Н. И., Русско-турецкая война 1877—1878 гг., М., 1956.
Борьян Б. А., Армения, международная дипломатия и СССР, т. 1, 2, М.-Л., 1928, 1929.
«Братская помощь пострадавшим в Турции армянам», М., 1897.
Брейтерман А. Д., Медная промышленность России и мировой рынок, Л., 1925.
Брюсов В. Я., Поэзия Армении, М., 1916.
Вантель Альберт, Армяне и турецкие реформы, СПб, 1908.
Веселовский Ю., Трагедия Турецкой Армении, М., 1911.
Волкова Н. Г., О расселении армян на Северном Кавказе до начала XX века (Историко-филологический журнал, Ереван, 1966, № 3).
Воровский В. В., Избранные произведения о первой русской революции, М., 1955.
Галоян Г. А., Россия и народы Закавказья, М., 1976.
Галоян Г. А., Рабочее движение и национальный вопрос в Закавказье 1900 — 1922, Ереван, 1969.
Гарибджанян Г. Б., В. И. Ленин и большевики Закавказья, М., 1971.
Гарибджанян Г. Б., Коммунистические организации Армении в борьбе за победу Советской власти, Ереван, 1957.
Гернет М. Н., История царской тюрьмы, т. 3, М., 1961.
Гиббонс Г. А., Последние избиения в Армении, Петроград, 1916.
Голобородько И., Турция, М., 1912.
Гордлевский В. А., Избранные сочинения, т. III, М., 1962.
Грязнов Ф. Ф., Военный обзор передового театра в Азиатской Турции, т. I, II, Тифлис, 1895, 1897.
Гугушвили П. В., Развитие промышленности в Грузии и Закавказье в XIX—XX вв., Тбилиси, 1957.
Гугушвили П. В., Развитие сельского хозяйства в Грузии и Закавказье в XIX — XX вв., Тбилиси, 1968.
Гуланян Х. Г., Очерки истории армянской экономической мысли XIX в., М., 1955.
Гулишамбаров С. И., Обзор фабрик и заводов Тифлисской губернии, Тифлис, 1883.
Гулишамбаров С. И., Очерки развития и современное состояние нефтяной промышленности Бакинского района, Тифлис, 1880.
Гулишамбаров С. И., Историко-экономический обзор шелководства Закавказского края, СПб., 1898.
Гурко-Кряжин В. А., История революции в Турции, М., 1923.

Гусейнов Мирза Давуд, Партия «Мусават» в прошлом и настоящем, Заккнига, Тифлис, 1929.

Дадян Мкртич-бей, Армяне Оттоманской империи, Тифлис, 1878.

Дадян М., Современное армянское общество, Тифлис, 1878, (перевод с французского).

Дарьян В. А., Шелковая промышленность Армянской ССР, Ереван, 1956.

Диев А., Армянский вопрос в Турции, М., 1893.

Дживилегов А. К., Армяне в России, М., 1906.

Дживилегов А. К., Будущее Турецкой Армении, М., 1911.

Джордж Ллойд, Правда о мирных договорах, т. 1, 2, М., 1957.

Егиазаров С. А., Краткий этнографический очерк курдов Эриванской губернии, Тифлис, 1884.

Егиазаров С. А., Исследования по истории учреждений в Закавказье, ч. 1, Сельская община, Казань, 1889; ч. 2, Городские цехи. Организация и внутреннее управление закавказских амкаров, Казань, 1891.

Ерицов А. Д., Опыт статистического очерка народонаселения Турецкой Армении, Тифлис, 1881.

Ерусалимский А. С., Внешняя политика и дипломатия германского империализма в конце XIX в., М.—Л., 1948.

Желтяков А. Д., Петросян Ю. А., История просвещения в Турции (конец XVIII — начало XX вв.), М., 1965.

Жуковский М. П., Земледельческая Турция, под ред. акад. Н. И. Вавилова, М., 1933.

Заваров С., Опыт исследования сельского хозяйства хлебородного района Эриванской губернии и Карсской области, Тифлис, 1899.

Заваров С., Экономические условия Карабага и голод 1906—1907 гг. СПб., 1907.

«История Азербайджана», т. 2, Баку, 1960.

«История Болгарии», т. 1, М., 1954.

«История дипломатии», второе издание, т. 2, М., 1963.

«История классовой борьбы в Закавказье», кн. 1, Тифлис, ЗКУ, 1930.

«История русской армии и флота», т. II, М., 1913.

«История XIX века», под ред. проф. Лависа и Рамбо, т. 7, 8, М., 1907.

«История СССР», т. 2, (в трех томах), М., 1965.

«История СССР», т. V, VI (в двенадцати томах), М., 1968.

«История Коммунистической партии Советского Союза», т. 1, 2, М., 1964, 1966.

Камсаракан К. П., Вторжение шейха Обейд-Уллы в Персию в 1880 г. (Сборник материалов по Азии», вып. IX, СПб., 1884).

Карлайль Мак-Коан, Наш новый протекторат. Описание географических, этнографических и экономических свойств Турецкой Азии, М., 1884.

Каспарова И. Г., Меднорудная промышленность дореволюционной Армении и иностранный капитал, Ереван, 1961.

Кашмашев С. О., Война в Турецкой Армении 1877—1878 гг., СПб., 1884.

Киракосян Дж., Западная Армения в годы первой мировой войны, Ереван, 1971.

Корсун Н. Г., Эрзерумская операция на Кавказском фронте мировой войны в 1915—1916 гг., М., 1938.

«Краткая история рабочего движения в России (1861—1917 гг.)», М., 1962.

Крупская Н. К., Воспоминание о Ленине, М., 1975.

Лазарев Я. Д., Причины бедствий армян в Турции и ответственность за разорение Сасуна, Тифлис, 1895.

Ленский Н. А., О правовом положении землевладения в Турецкой Армении, Петроград, 1916.

Либкнехт К., Мой процесс по документам, Петроград, 1918.

Лисенко В. К., Ближний Восток как рынок сбыта русских товаров, СПб, 1913.

Линч Х. Ф. Б., Армения. Путевые очерки и этюды, т. II, Тифлис, 1910.

Манучаров И., Мой процесс, «Былое», 1900, № 7.

Мегрелизде Ш. В., Вопросы Закавказья в истории русско-турецкой войны 1877—1878 гг. Тбилиси, 1969.
Миллер А. Ф., Краткая история Турции, М.-Л., 1948.
Мкртчян Л. Х., Мкртчян Я. К., Из истории армянских общин Бирмы. «Народы Азии и Африки», М., 1961, № 3.
Мочалов В. Д., Крестьянское хозяйство в Закавказье к концу XIX в., М., 1958.
Новичев А. Д., Очерк экономики Турции до мировой войны, М.-Л., 1937.
Овнанян С. В., Армяно-болгарские исторические связи и армянские колонии в Болгарии во II половине XIX в., Ереван, 1968.
Оганесян Л. А., История медицины в Армении с древнейших времен до наших дней, IV ч., Ереван, 1947.
«Очерки истории большевистских организаций Дона. 1898—1920», Ростов-на-Дону, 1965.
«Очерки экономического развития Дона (1861—1917)», Ростов-на-Дону, 1960.
«Очерки истории Грузии», т. 5 (в восьми томах, на груз. языке), Тбилиси, 1975.
Парсамян В. А., История армянского народа 1801—1900 гг., Ереван, 1972.
Петрович П., Хлопководство в Закавказье, Тифлис, 1912.
Петросян Ю. А, «Новые османы» и борьба за конституцию 1876 г. в Турции, М., 1958.
Петросян Ю. А., Младотурецкое движение (вторая половина XIX — начало XX вв.), М., 1971.
Пичикян Г., Капиталистическое развитие нефтяной промышленности в Азербайджане (в сборнике статей «История классовой борьбы в Закавказье», книга I, Тифлис, ЗКУ, 1930).
«Пробуждение Азии. 1905 год и революция на Востоке», Соцэкгиз, 1935.
«Революция 1905—1907 гг., в национальных районах России». (Сборник статей). М., 1955.
Ролен-Жекмен М. Г., Армения, армяне и трактаты. Перевод с французского, М., 1896.
Рудольф Н. Ф., Обзор деятельности Кавказского учебного округа. 1908—1912 гг., Тифлис, 1914.
Рштуни В., Крестьянская реформа в Армении в 1870 г., Ереван, 1947.
Саркисян Е. К., Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы первой мировой войны, Ереван, 1962.
Саркисян Е. К., Аграрная политика Османского правительства в Западной Армении во второй половине XIX века, Ереван, 1957.
Степанян С. С., Армения в политике империалистической Германии, Ереван, 1975.
Тарле Е. В., Европа в эпоху империализма 1871—1919 гг., М.-Л., 1928.
Терещенко А. Г., Новонахичеванцы в революционном народническом движении. (Историко-филологический журнал, 1975, № 4).
Тулумджян Л. С., Из истории революционного движения в Сочинском округе (1905 — 1907), Сухуми, 1958.
Туманян О. Е., Экономическое развитие Армении, ч.1, Ереван, 1954.
Убичини А., Современное состояние Оттоманской империи, СПб., 1877.
«Формы национального движения в современных государствах», СПб, 1910.
Фортунатов П. К., Война 1877—1878 гг. и освобождение Болгарии, М., 1950.
Хачапуридзе Г. В., Революция 1905—1907 гг. в Грузии, М., 1955.
Хоштария Э. В., Очерки социально-экономической истории Грузии, Тбилиси, 1974.
Церцвадзе М. В., Революционное движение в Грузии в 1914—1917 гг., М., 1957.
Чалхушян Гр., Армянский вопрос в России, Ростов, 1905.
Щербина Ф., История Армавира и Черкезогаев, Екатеринодар, 1916

ԳԵՐՄԱՆԵՐԵՆ

Bruck, Die Türkische Baumwollwirtschaft, Jena, 1919
Butyka D., Das ehemalige Vilayet Derssim, Wien, 1892.
Butyka D., Meine Reise von Kharput nach Diarbekir, Wien, 1893.
Chassein, Die Türkenherrschaft und Armeniens Schmerzenschreie, Zürich, 1918.

„Der Bericht des russischen Konsuls in Bitlis für das Jahr 1899".
„Deutschland und Armenien. 1914—1918. Sammlung diplomatischer Aktenstücke". Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius, Potsdam, 1919.
Friedrich E., Handels und Produktenkarte von Kleinasien, Halle, 1898.
Grothe H., Türkisches Asien und seine Wirtschaftswerte.
Grunzel J., Die wirtschaftlichen Verhältnisse Kleinasiens, Wien, 1890.
Haurand R., Meine Reise im Kaukasus und in Armenien, Stuttgart, 1888.
Hecker, Die Eisenbahnen der asiatischen Türkei. Archiv für Eisenbahnwesen, 1914.
Herman, Anatolische Landwirtschaft, Leipzig, 1900.
Heyfelder O., Die Armenier und ihre Zukunft, Wien, 1890.
Koch K., Der Kaukasus: Landschafts und Lebensbilder aus dem Nachlasse von K. Koch, Berlin, 1882.
Koch K., Die Kaukasischen Länder und Armenien in Reiseschilderungen von Curzon, K. Koch, Leipzig, 1865. *Koch K.*, Reise im Pontischen Gebirge und türkischen Armenien, Weimar, 1864.
Kohler J., Das Recht der Armenier, Stuttgart, 1888.
Krischtschian M., Deutschland und die Ausrottung der Armenier in der Türkei. Ein Rückblick... Potsdam, 1930.
Kutschera H., Administrative Einteilung und Bevölkerung der asiatischen Turkei, Wien, 1877.
Lepsius J., Bericht über die Lage des armenischen Volkes in der Türkei, Potsdam, 1916.
Lepsius J., Der Todesgang des armenischen Volkes. Bericht über das Schicksal des Armenischen Volkes in der Türkei während des Weltkrieges, Potsdam, 1919.
Mühlmann C., Deutschland und die Türkei 1913—1914. Politische Wissenschaft, Grünewald.
Mühlmann C., Das deutsch-türkische Waffenbündnis im Weltkieg, Leipzig, 1940.
Nauman E., Reise in Anatolien, Brunsvik 1895.
Nolde E., Reise nach Innersarabien, Kurdistan und Armenien. 1892, Brunsvik, 1895.
Pauli G., Von Wan bis an den Tigris, Brunsvik, 1878.
Pauli G., Von Tabris bis Wan, Lübeck, 1887.
Petersen W., Artwin, das Ausland, Stuttgart, 1883.
Petersen W., Aus Transkaukasien und Armenien, Leipzig, 1884.
Dr. Polek Johann, Die Armenier in der Bukowina, Czernowitz, 1906.
Dr. Polek Johann, Das armenische Kloster Zamka bei Suszawa in der Bukowina, Czernowitz, 1901.
Radde G., Reisen in Hocharmenien, 1875.
Radde G., Reisen in Kaukasien und dem armenischen Hochlande, 1876.
Radde G., Reise im russischen Karabagh, 1890.
Radde G., Briefe über seine Bereisung in Hocharmenien, 1873.
Radde G. Der Bin-göl-dagh, der Tausend Seen Berg, das Quellgebiet des Aras, 1877.
Rohrbach P., Armenier und Kurden, Berlin, 1900.
Rohrbach P., Aus Turan und Armenien, Prußische Jahrbücher, Berlin, 1897.
Rohrbach P., Deutschland und die Armenier. „Prußische Jahrbücher", Berlin 1899.
Rohrbach P., Von Kaukasus zum Mittelmeer, Leipzig, 1903.
Sommer E., Die Wahrheit über die Leiden des armenischen Volkes in der Türkei während des Weltkrieges, Frankfurt A. M., 1919.
„Stambul und moderne Türkentum. Politische, soziale und biographische Bilde von einen Osmanen", Leipzig, 1879.
Sstebnitzki J., Die russisch-türkiscke Grenze in Klein-Asien nach dem Berliner Trachtat von 1878, Gotha, 1882.
Strzygowski J., Die Baukunst der Armenier und Europa, B. 1, 11, Wien, 1918.

Supan A., Verteiung der armenischen Bevölkerung in Türkisch-Armenien, Kurdistan und Transkaukasien, Gotha, 1896.
Thielmann M. G. F. von, Streifzüge im Kaukasus in Persien und in der asiatischen Türkei (1872—1873), Leipzig, 1875.
Vambery H., Das nationale Erwachen der Armenier, Tübingen, 1890.
Vierbucher H., Was die kaiserliche Regierung den deutschen Untertanen verschwiegen hat. Armenien 1915, Hamburg-Bergedorf, 1915.
Werfel F., Die vierzig Tage des Musa Dagh. B.-Wien-Leipzig, 1933.
Wegner A., Offener Brief auf den Präsidenten der Vereinigten Staaten von Nord-Amerika, Herrn Woodrow Wilson über die Ausbreitung des armenischen Volkes in die Wüste, B.-Schoneberg, 1919.
Zwiedenek F. Von Türkisch Armenien und seine Bewohner, Wien, 1891.
Dr. Totomjanz V. und Topschtjan E., Die Sozial-ökonomische Türkei, Berlin, 1901.

Անգլերեն

Aslan Kevork, Armenia and the Armenians. New York, 1920.
Barkley H. C., A Ride through Asia Minor and Armenia, London, 1891.
Bent J. T., Notes on the Armenians in Asia Minor. Manchester, 1890—1896.
Bliss C. M., Turkey and the Armenian Atrocities. A Reign of Terror, Philadelphia 1896.
„British Documents on the Origins of the War", London.
Bryce Viscount, The Treatment of Armenians in the Ottoman Empire. Document Presented to Viscount Grey of Follodon, London, 1916.
Burgin G. B., My Visit to Armenia, London, 1897.
Buxton, Travel and Politics in Armenia, London, 1914.
Cole G. R., Transcaucasia, London, 1877.
Davey R., Turkey and Armenia, London, 1895.
Dillon E. J., The Condition of Armenia, London, 1895.
Emin Ahmet, Turkey in the World War, London, 1930.
Eversley L., and Chirol V. The Turkish Empire from 1288 to 1914, New York, 1969.
Fisher S. M., The Middle East, A History, New York, 1959.
Geffcken F. H., Turkish Reforms and Armenia, London, 1895.
Gladstone W. E., The Armenian Question, London, 1895.
Guinness R., The Massacres in Turkey, London, 1896.
Harris J. R., Letters from Armenia, New York, 1897.
Harvey G., History of Burma, London, 1925.
Hepworth G., Through Armenia on Horseback, London, 1898.
Hodgetts E. A., Round about Armenia (1895), London, 1896.
Hew W. Williams, Armenia; Past and Present, London, 1916.
Knap G., The Story of an Armenian Refugee, Boston, 1897.
Lanin E. B., Armenia and the Armenian People, London, 1890.
MacCall M., England's Responsibility Towards Armenia, London, 1895.
Macdonald A., The Land of Ararat, London, 1893.
Malcolm J. A., An Armenian Cry for Armenia, London, 1890.
Morgan J., The History of the Armenian People. From the Remotest Times to the Present Day, New York, 1949.
Norman, Armenia and the Campaign of 1877, London.
Papazian B. S., Tragedy of Armenia, Boston-Chicago, 1918.
Pauls G., Short History of the Armenian Community in Netherlands, India, 1935, Batavie.
Pears E., Turkey and Its People, London, 1912.
Pears E., Life of Abdul Hamid, New York, 1917.
Probyn J. W., Armenia and Lebanon, London, 1877.
Saraftan K., History of Education in Armenia, Los-Angeles, 1930.

Sarkissian A. O., History of the Armenian Question to 1885, Urbana, 1938.
Set Abgar, The Case for the Armenians, London, 1978.
Seth M. J., Armenians in India, Calcutta, 1937.
Sevasly M., Armenia in and before 1878, Boston, 1905—1906.
Telfer J. B., Armenia and Its People, London, 1891.
„The Crown Jewels of Iran, Bank Markai Iran" (Published by the Central Bank of Iran), Teheran, 1973.
„The Memoirs of Naim Bey. Turkish Official Documents Relating to the Deportations and Massacres of Armenians", London, 1929.
„The Record of Virginia Company of London", v. III.
Toynbee A., Armenian Atrocities, the Murder of a Nation, London-New York, 1915.
Tozer H. F., Turkish Armenia and Eastern Asia Minor, London, 1881.
Williams, Armenia. Past and Present, London, 1916.

ՖՐԱՆՍԵՐԵՆ

Doumergue E., L' Arménie, les massacres et la question d' Orient, Paris, 1916.
Colonel L' Hospitalier, Histoire des Anciens Combattans Arméniens 1924—1918, Paris, 1956.]
Jorga N., Les Arméniens de Roumanie, Patru Conferinţi despre Armenia, Bucureşti 1929.
De Contenson L., Les réformes en Turquie d' Asie, Paris, 1913.
„La situation des Arméniens en Turquie; exposée par des documents...", 2, 191.
„La - défense héroïque de Wan", Genève, 1916.
„La Turquie d' Asie. Géographie administrative, statistique, descriptive et raisonnée de chaque province de l' Asie mineure", par Vital Cuinet, Paris, 1892.
Leart Marsel, La question arménienne à la lumière des documents, Paris, 1913.
Lenormant F. Histoire des massacres de Syrie en 1860, Paris, 1861.
„Le rapport secret du Dr. Johannès Lepsiuas président de la Deutsche Orient-Mission et de la Société Germane-Arménienne sur les massacres d' Arménie", Paris, 1918.
„Le traitement des Acméniens dans l' Empire Ottoman (1915—1916)", Documents présenté du vicomte of Falleden Secrétaire d' Etat aux Affaires Etrangère par le vicomte Bryce, Paris, 1916.
„Les aspirations des Arméniens", Paris, 1916.
Mandelstam A. N. Le sort de l' Empire Ottoman, Paris, 19.
„Mémoires de l' ambassadeur Morgenthau", Paris, 1919.
„Poèmes arméniens anciens et modernes 1902. Chutes populaire arméniennes 1903", Les Trouvers Armeniens, 1907.
Stuermer Harry Deux ans de guerre à Constantinople, Paris, 1917.
Tacquot, Antioche, Beyrouth, 1931.
„Un Livre noir. Diplomatie d'avant-guerre d'après les documents des archives russes" Paris, v. II, 1923.

ՌՈՒՄԻՆԵՐԵՆ

„Academia Română, Grigorie M. Buiuciu 1840—1912, Testament-Biografie, Familia Buiuciu, Catalogul bibliotecei armeneşti", Bucureşti, 1914.
Dimitrie Dan, Obiceiuri şi credinţe armene la naştere, nuntă şi înmormântare, Cernăuţi, 1904.
Dimitrie Dan, Minas din Tokat, Persecutarea armenilor din Moldova în anul 1551, Cernăuţi, 1895.
Episcopul Melchisedec, Inscripţiunile bisericelor armenesci din Moldova, Bucuresci, 1882.
Lucian Predescu, Enciclopedia Cugetarea, Bucureşti, 1940.
N. Iorga, Armenii şi Românii: O paralelă istorică, Bucureşti, 1913.

N. Iorga, Distrugerea armenilor din Turcia, „Neamul Românesc", 1916 № 79.
„Presa muncitorească şi socialistă din România, Vol I 1865—1900." Bucureşti, 1964.
Rudolf Şuţu, laşii de odinioară Iaşi, 1923.

ՀՈՒՆԳԱՐԵՐԵՆ

Avedik Lukács, Szabad Királyi Erzsébetváros monográfiája. Szamosújvárott, 1896.
Szongott Kristóf, Szamosújvár, a magyar örmény metropolis. Szamosújvárt, 1893.
Szongott Kristóf, Szamosújvár szab. kir. város monográfiája (1700—1900) Szamosújvárt, 1—2, 1901.

ԹՈՒՐՔԵՐԵՆ

Arif Baftin, ilk Dünya harbinde Kafkas cephesi 29 tümen ve 3 alay sancagr (Hatıratları), Istambul, 1946.
Yusuf Hikmet, *Bayur* Türkiye Devletinin Dış Siyasası, Istambul, 1938.
„Belleten" (Türk Tarih Kurumu), Ankara, 1960.
Esat Uras, Tarihte Ermeniler ve Ermeni Meselesi, Ankara, 1950.
Kâzim Karabekir, Cihan harbine neden girdik, nasıl idare ettik, kit. I Istambul, 1938.

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

«Ազատ Հայաստան», *1893, № 2, 3*։
«Ազատության ավետաբեր», *1884, № 4*։
«Ազատամարտ», *1909, № 11, 20, 23, 51, 67, 1910, № 321, 343, 1911, № 60, 658*։
«Ազգագրական հանդես», *1895, գիրք Ա, 1898, գիրք Գ, 1901, գիրք VII—VIII, 1908, գիրք XVIII*։
«Ամենուն տարեցույց», *1912*։
«Ամերիկաճայ տարեցույց», *1912*։
«Անահիտ», *1899, № 10, 1907, № 6—9*։
«Աշխատանք», *1912, № 39—95, 1911, №№ 1, 48, 53*։
«Ապագա», *1937, № 10*։
«Ասիա-Զայն Հայաստանի», *1874, № 87*։
«Արարատ», *1873, № 12, 1876, 1877, 1886, № 7, 1895, 1896, 1910, 1915, № 7—8*։
«Արմաս», *1894—95, գիրք Բ, 1897*։
«Արծվի Վասպուրական», *1862—1863, 1873 մարտ*։
«Արձագանք», *1883 № 40, 1887, № 36, 1888, № 11, 1892, № 80, 1894, № 3, 1899, № 35*։
«Արմենիա» *1888—1889, № 47, 1892, № 13, 1888 3 նոյեմբեր, 1890, 17 դեկտեմբեր, 1899, № 47*։
«Արշալույս», *տարեգիրք, 1922*։
«Արև», *1926, 12 և 13 մայիսի, 1946, 26 հունիսի*։
«Արեւելք», *1895, 22 հունիսի, 29 հուլիսի, 18 օգոստոսի*։
«Արեւելյան մամուլ», *1878, № 5, № 33, 1881, սեպտեմբեր, հոկտեմբեր, 1883*։
«Բազմավեպ», *1848, 15 ապրիլի, 15 մայիսի, 1851, 1 հունվարի, 1919*։
«Բանբեր Հայաստանի արխիվների», *1963, № 3, 1965, № 1, 1968, № 3, 1971, № 1, 1974, № 1, 1975, № 3*։
«Բանբեր Երևանի համալսարանի», *1969, № 2, 1971, № 2*։
«Բանվորի խոսք», *1918, № 1*։
«Բյուզանդիոն», *1897, № 112, 1898, № 423, 1908, № 3660, 1909, № 3765, 3776, 3787, 3973, 1911, № 4443, 4577, 4625, 1912, № 4643, 4683, 4761, 4769, 4774, 4904, 4939, 1913, № 5046, 5083, 5098*։
«Բյուրակն», *1907*։
«Գաղութ», *1914, № 4, 19, 25, 30, 32, 33, 36*։
«Գարուն», *1970, № 5*։
«Հեղարվեստ», *1911, № 4, 1914, № 5*։

«Գյուղատնտես», 1909 թ., № 4, 1910 թ., № 29, 1912 թ., № 22։
«Գործ», 1884 թ., № 1, 1882 թ., 1908 թ., 4 նոյեմբերի, 1917 թ. № 3։
«Դրոշակ», 1891 թ., № 10—11, 1892 թ., 1896 թ. № 6, 1898 թ. № 6, 1899 թ., № 2, 1900, № 1, 1901 թ., № 1, 7, 1904 թ. № 6, 11, 1907 թ. № 6, 7, 8։
«Եգիպտահայ տարեցույց», Կահիրե, 1914 թ.։
«Երբելաար» (Բնհրան, պարսկերեն), 1970 թ. մայիսի 30։
«Երիտասարդ Հայաստան», 1925 թ., 25 ապրիլի։
«Երկրի ձայն», 1906 թ., № 1, 2, 8, 9, 1907 թ., № 25, 28, 70։
«Զանգակ», 1908 թ., № 24։
«Էջմիածին», 1963 թ., № 1, 1964 թ., № 12, 1965 թ., № 1, 7, 1966 թ., № 2—6։
«Թատրոն», 1876 թ., № 198։
«Ժամանակ», 1908 թ., № 2։
«Լենինյան ուղիով», 1957 թ., № 4։
«Լրաբեր հասարակական գիտություններին», 1968 թ., № 8, 1975 թ., № 3։
«Լրաբեր» (լրագիր) 1960 թ., 6 հունվարի։
«Լրագիր», 1878, № 5։
«Լումա», 1906 թ., № 4։
«Լույս», 1905 թ.։
«Խաբարալա», 1908 թ., № 25։
«Կայծ», 1906 թ., № 1, 19, 47, 71, 1918 թ., № 3։
«Կյանք», 1904 թ., № 16։
«Կոմունիստ», 1926 թ., № 220։
«Կոմունիստ» (շաբաթաթերթ), 1918 թ., № 8։
«Հայաստան», 1917 թ., № 27, 32։
«Հայկական տարեցույց», 1898 (Դալաց)։
«Հայրենիք», 1908 թ. 18 մայիսի։
«Հայրենիք» (ամսագիր), 1923 թ., № 11, 1925 թ. № 1, 1927 թ., № 2, 11, 1929 թ., № 6, 1944 թ., № 2—3, 1955 թ., № 4։
«Հայրենիքի ձայն», 1972 թ., № 47, 1973 թ., № 31։
«Հանդես ամսօրյա», 1894 թ., ապրիլ, 1908 թ.։
«Հնչակ», 1887 թ., № 1, 1888 թ., № 1, 2, 3, 1889 թ., № 1, 2, 4, 1891 թ., № 14, 15, 16, 1902 թ., № 2, 1906 թ., № 6, 1907 թ., № 2, 1908 թ., № 1, 6, 7։
«Հոսանք», 1906 գնկտ. 1։
«Հովիտ», 1914 թ., № 46։
«Հարիզոն», 1911 թ., № 113, 1913 թ., № 7, 1914 թ., № 65, 165, 1915 թ., № 146, 1917 թ., № 27։
«Հուշարար», 1907 թ., № 6, 7։
«Մանգամի կիմիար», 1873 թ., № 2083։
«Մասիս», 1872 թ., № 1239, 1876 թ., ՆՆ 1859, 1875, 1877 թ., № 1963, 1878 թ., ՆՆ 2145, 2148, 1879 թ., № 2224, 1880 թ., № 2718, 1881 թ., № 2827, 2851, 2872, 2881, 1883 թ., № 3463, 3464, 1893 թ., № 3988։
«Մարմարա», 1945 թ., ՆՆ 712, 723։
«Մարտակոչ», 1924 թ., հունվար։
«Մեղու», 1870 թ., № 16։
«Մեղու Հայաստանի», 1879 թ., ՆՆ 45, 50, 1881 թ., № 21, 1882 թ., № 74, 1883 թ., № 72։
«Մշակ», 1872 թ., № 3, 30 մարտի, 13 ապրիլի, 1873 թ., № 10, 1877 թ., № 50, 61, 83, 1878 թ., № 13, 15, 20, 28, 48, 64, 98, 126, 1879 թ., № 48, 125, 1880 թ., № 90, 1881 թ., № 174, 1882 թ., № 216, 1884 թ., № 6, 1886 թ., № 116, 1888 թ., № 49, 1889 թ., № 26, 67, 69, 1890 թ., № 81, 1891 թ., № 68, 147, 1895 թ., օգոստոսի 5, 1896 թ., 6 օգոստոսի, 1898 թ., № 86, 1900 թ., № 25, 1901 թ., № 227, 1904 թ., № 122, 126, 253, 265, 277, 1905 թ., № 36, 61, 63, 64, 109, 162, 167, 211, 1906 թ., № 23, 26, 58, 119, 155, 180, 185, 1907 թ., № 18, 86, 134, 135, 148, 1908 թ., 2 փետրվարի, 1909 թ., № 119, 152, 251, 1910 թ., № 108, 150, 1911 թ., № 34, 171, 1912 թ., № 9, 10, 19, 32, 37, 49, 63, 64, 74, 80, 127, 145, 194, 195, 200, 208,

209, 246, 288, 1913 թ., № 113, 136, 146, 147, 1914 թ., № 148, 234, 245, 1915 թ., № 133, 1916 թ., № 54, 239, 289, 1917 թ., № 21, 196, 210, 213։
«Մուրճ», 1891 թ., № 2, 1895 թ., № 7, 11, 1896 թ., № 6, 1897 թ., № 10, 1899 թ., № 1, 10, 1901 թ., № 5, 1902 թ., № 7, 1904 թ., № 7, 8, 9, 1905 թ., № 77, 1907 թ., № 1, 2։
«Նոր աշխարհ», 1922 թ., № 2։
«Նոր դար», 1885 թ., № 139։
«Նոր դպրոց», 1912 թ., № 17, 18։
«Նոր խոսք», 1906 թ., № 3, 21, սեպտեմբերի 3։
«Նոր կյանք», 1900 թ., № 14, 21։
«Շարժում», 1889 թ., № 179, 188, 1901 թ., № 5, 8, 15 և 19 դեկտեմբերի։
«Պահակ», 1920 թ., № 54։
«Պայքար», 1916 թ., № 9, 49, 1917 թ., № 27, 95, 128։
«Պայքար», 1955 թ., 11 ապրիլի, 1958 թ., 18 մարտի, 2 և 11 նոյեմբերի, 1960 թ., 24 հուլիսի։
«Պատմա-բանասիրական հանդես», 1958 թ., № 2, 1959 թ., № 2—3, 1962 թ., № 1, 1965 թ., № 4, 1966 թ., № 1, 3, 1971 թ., № 3, 1974 թ., № 3, 1975 թ., № 4։
«Պարսկահայ տարեցույց», 1927 թ.։
«Պարտիական կյանք», 1956 թ., № 10։
«Պրոլետարիատ», 1902 թ., № 1։
«Պրոլետարիատի կռիվը», 1903 թ., № 2—3։
«Պրոլետարիատի կռվի բերիկ», 1903 թ., № 3, 1904 թ., № 5—6։
«Ռահվիրվելոս», 1915 թ., № 24։
«Սիոն», 1866 թ., 1959 թ.։
«Սովետական արվեստ», 1965 թ., № 9։
«Սոցիալ դեմոկրատ», 1917 թ., № 3։
«Վան-Տոսպ», 1913 թ., № 15, 21։
«Վերելք», 1924 թ., № 4—5։
«Վտակ», 1908 թ., № 28, 47, 57, 70, 73, 134, 23 մարտի։
«Տարազ», 1897 թ., № 36։
«Տեղեկագիր» ՀՍՍՀ ԳԱ նաս. բաժանմունքի, 1952 թ. № 7, 9, 1955 թ., № 5, 1961 թ., № 10, 1962 թ., № 6։
«Ուսումնասեր», 1858 թ., № 95։
«Փարոս Հայաստանի», 1881 թ., № 1։
«Փյունիկ», 1899 թ.։
«Փորձ», 1877—78 թ., № 4, 1879, № 7—8։
«Օրենք», 1905 թ., № 2։
«Ցեղասպան հայ տարեգիրք», 1926 թ., 1927 թ.։

«Армяне и война», 1916, № 6.
«Армянский вестник», 1916, № 34.
«Асхабад», 1900, 15 и 20 августа.
«Бакинские известия», 1903 г., № 44.
«Бакинский рабочий листок», 1905, № 6.
«Баку», 1907, № 74.
«Былое», 1906, № 7, 1907, № 2.
«Вопросы истории», 1957, № 2.
«Голос», 1877, 24 декабря.
«Жизнь национальностей», 1919, № 34.
«Закавказская речь», 1911, № 256.
«Известия Бакинской городской думы», 1914, № 3.
«Известия Кавказского отдела императорского русского географического общества», 1912, т. 22, вып. 2.
«Известия эриванского губернского комиссариата», 1917, № 55.
«Искра», 1901, № 6, 1902, № 21, 22, 1903, № 32, 45, 47, 49, 51.
«Историк-марксист», 1940, № 11.
«Кавказский рабочий», 1917, № 103, 142, 145.

«Кавказский рабочий листок», 1905, № 6.
«Кавказское слово», 1914, 31 декабря, 1917, № 51, 80, 83, 119, 125, 130.
«Кавказское сельское хозяйство», 1902, № 417, 1905, № 601.
«Каторга и ссылка», 1924, № 12, 1926, № 29.
«Коммунист», 1915, № 12, 1957, № 203.
«Красный архив», 1929, № 3, 1931, № 44, 1933, № 4.
«Крым», 1889, № 39, 1892, № 37.
«Народы Азии и Африки», 1961, № 3.
«Народное хозяйство Закавказья», 1929, № 17 — 18.
«Новое время», 1908, 20 марта, 1912, 19 января.
«Новое обозрение», 1896 г., 1 марта, 30 апреля, 20 июня.
«Огонек», 1958, № 10.
«Поход», 1941, № 59 — 63.
«Правда», 1917, № 1.
«Промысловый вестник», 1907, № 9.
«Путь правды», 1914, № 14.
«Рабочая правда», 1913, № 13, 27 июля.
«Рабочий и солдат» (орган Александропольского Совета рабочих, солдатских и крестьянских депутатов), 1917, № 28, 52.
«Речь», 1912, 14 декабря.
«Русская старина», 1914, № 3.
«Русское знамя», 1912, 29 января.
«Русское слово», 1912, 10 ноября, 1913, 9 января, № 7.
«Слово», 1908, 2 апреля.
«Социал-демократ», 1914, № 35, 1916, № 51.
«Страж свободы», 1917, № 52.
«Терек», 1916, 2 февраля.

„*Ararat*", London, 1913, №№ 2, 3, 4, 5, 1914, № 8, 1916 June.
„*Armenia*", London, 1894, № 65, 1896, № 93.
„*Die Rene Zeit*", 1895—1896.
„*Revista Nouă*", 1888, № 4. Bucureşti.

Ց Ա Ն Կ Ե Ր

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Աբազյան Դ. 188
Աբամելիք-Լազարյան (Լազարև) Ս. Ս. 758, 924, 925
Աբաշիձե Դ. 303
Աբաշիձե Կ. 612
Աբարգյան Գր. 136
Աբացին, գեներալ 550
Աբբաս-Ալի Սալեհի 715
Աբգար Սեթ 115, 698, 701
Աբգարյան Դիանա Ա. 740
Աբգարյան Ստ. 950
Աբդուլ Ազիզ սուլթան 46
Աբդուլլա էմիր 733
Աբդուլլա Հաչի 269
Աբդուլլա փաշա 270
Աբդուլ Կադեր 516
Աբդուլ Համիդ Զիա բեյ 130
Աբդուլ Համիդ II 43, 98, 113, 123, 129—131, 193, 234, 246, 279, 280, 285, 286, 471, 483, 487, 490, 493, 494, 496, 497, 499—501, 504, 506, 507, 511, 517, 578, 770, 829, 877, 967, 972, 974
Աբդուլյան Դ. 775
Աբդուլ-Քերիմ փաշա 542
Աբդուշելիշվիլի 348
Աբդուշելիշվիլի Դ. 169
Աբդուր-Ռահման խան 720, 721
Աբդուր Ռեզաք 516
Աբելյան Ալեքսանդր 826
Աբելյան Հովհ. 643, 650, 823—826, 828, 829, 831
Աբելյան Ներսես 145, 148, 177, 184
Աբելյանց Հարութիւն 943, 946
Աբեղյան Արտաշես 547, 918
Աբեղյան Մանուկ 767, 782, 824, 902, 903, 910, 913—916, 918—920, 927
Աբիգ Ռ. 947
Աբիխ Հ. 953, 954
Աբովյան Խաչատուր 786, 825, 862, 882, 891, 895, 912, 925, 926, 948
Աբովյան Ս. 953
Աբրահամ 250
Աբրահամյան Ա. Գ. 11
Աբրահամյան Ալ. 427
Աբրահամյան Գ. 824
Աբրահամյան Ռ. Ա. 11
Աբրահամովիչ Ջոն Խրիստոֆ 683
Աբրամով Պ. 305
Ագաթանգեղոս 906, 908
Ագապյան Արշակ 798
Ագրիպասյան Հովհ. 151, 152, 967
Ադամալյան Աբրահամ 235
Ադամյան Ա. 179
Ադամյան Նվգինե 839
Ադամյան Թամարա 145, 148, 174, 188
Ադամյան Կարապետ 862
Ադամյան Հեղինե 839
Ադամյան Հովհ. 752, 943, 947, 948
Ադամյան-Ներսիսյան Թամարա, տե՛ս Ադամյան Թամարա
Ադամյան Պետրոս 109, 643, 650, 679, 820—823, 859, 867
Ադամյան Սաթենիկ 825, 831
Ադամովա 662
Ադելխանով 73, 227, 302, 303
Ադելյան (Դանիելյան) Ազարիա 334, 798
Ա.-Դո (Տեր-Մարտիրոսյան Հովհ.) 70, 276, 277, 895
Ադոյաշյան Վ. Լ. 11
Ադոնց Ժ. Մ. 12
Ադոնց Նիկողայոս 886, 888, 910, 929
Ադրիեն Էբրար 115
Ազատյան Գ. 662
Ազատյան Հ. 587
Ազատյան Վ. Դ. 11
Ազիմբեկով Մ. 424, 430, 438
Ազիմ Ջադե Մուխտար 439
Ազնավուրյան Հ. 854
Ազնիվ Հրաչյա 820, 822
Աթաբեկյան Լևոն (Բիխարդ) 418, 420, 421
Աթաբեկյան Նիկոլայ 334
Աթաբեկյանց Հովսեփ 219, 407, 408, 968

Աքա բեյ 489
Աքանասյան Աշոտ 870
Աքանասյան (Այնալով) Սարգիս 350
Աքաբրեկյան Գ. 425, 430, 588
Աքենացի Արիստիդես 908
Աքոյան Ա. 741
Ալամդարյան Հարություն 641, 915
Ալաջալովա Նինա, տե՛ս Աղաջանյան Նինա
Ալավերդյան Ստ. 588
Ալավերդով Կ. 403
Ալեաթճյան Գր. 142
Ալենբի, գեներալ 562
Ալեքսանդր 290
Ալեքսանդր II 55, 99, 100, 109, 114, 121, 174, 963
Ալեքսանդր III 762
Ալեքսեև 64
Ալեքսեև Պյոտր 173, 221, 222
Ալբըն Անտոն 681
Ալբըն Ժան (Ալբունյան Հովհ.) 691
Ալի բեկ 255, 257—259
Ալիբեկյան Իսահակ 825, 826, 829
Ալիխանով 302
Ալիխանով-Ավարսկի 375, 390
Ալիխանով Կ. 169
Ալի Հասան Օղլի 60
Ալիշան Ղևոնդ 116, 853—885, 909, 911, 925, 927, 951, 971
Ալի Ռզա փաշա 269
Ալի փաշա 275
Ալիքսանյան Տիրան 694
Ալլահվերդյան Հ. 917
Ալխազյան Հովհ. 864
Ալխազով Ցա Կ. 105
Ալոյան Գալուստ 239
Ալպոլաճյան Արշակ 692, 879, 892
Ալփիար Հարություն 728, 805
Ալֆատան, գեներալ նահանգապետ 375
Ախվերդյան Գ. 927, 933, 934
Ախվերդովներ 646
Ակինյան Ներսես 886, 907, 911, 912, 915
Ակչուրա Յուսուֆ օղլի 230
Ակսակով Բ. 121
Ահարոնյան Ահարոն 237, 664
Ահարոնյան Ավետիս 151, 625, 808
Ահարոնյան Հովհ. 253, 258
Ահմեդ Ալի շահ 714
Ահմեդ բեկ 136
Ահմեդ Էմին Յալման 573, 574
Ահմեդ Մուխտար փաշա 101, 102
Ահմեդ Ռեֆիկ փաշա 112
Ահմեդ Ռիզա բեյ 511, 512
Աղաբաբյան Գ. 179
Աղաբաբով Գ. Գ. 649
Աղաբաբով Հ. 414
Աղաբեկյան Մ. 692
Աղաթոն Մկրտիչ 138
Աղամալյան Տիգրան 437
Աղամիրյան Սաքո 188
Աղամյան 382, 386
Աղայան Ծ. Գ. 11
Աղայան Ղազարոս 158, 162, 166, 237, 242, 495, 781, 782, 784, 793, 794, 843, 866, 940, 969, 974
Աղայան Մ. 824, 835
Աղայան Վ. Ք. 745
Աղանյանց Գյուտ, ավագ քահանա 890, 909, 969
Աղանուր Ա. 744
Աղաջանյան Նինա 333, 340, 648
Աղաջանյան Ստ. 863, 864
Աղասի (Թուր-Սարգսյան Կարապետ) 239, 251, 253, 254
Աղաև Ա. 230
Աղբյուր Սերոբ (Վարդանյան) 288, 290—292, 517, 970
Աղթամարցի Գրիգոր 911
Աճառյան Հրաչյա 640, 718, 903, 904, 910, 915, 927, 929
Աճեմյան Հովհ. 821
Աճեմյան Մ. 408, 451
Աճեմօղլու-Փոփովիչ 674
Ամատունի Էդ. 432
Ամատունի Հ. 615
Ամատունի Նապոլեոն 821
Ամատունի Ս. 903, 927
Ամաօղլի Հեյդար 713
Ամբոդիկ Ն. Մ. 955
Ամբրոսիոս (Գվիդոն Լուսինյան) 692
Ամիրխանյան Հ. 547
Ամիրյան Ա. (Մրավյան) 418—421, 587, 874
Ամիրյանյան Բեգլար 839
Ամրիկյան Մ. 820
Ամրոսյան Մարգար, տե՛ս Մարգար վարժապետ
Ամֆիտեատրով Ա. 285, 894
Այրիս Ալի խոհան փաշա 540
Այդինով 305
Այվազյան Գ. 142
Այվազյան Դ. 172, 173
Այվազյան Խոջա Գրիգոր 737
Այվազյան, տպարանատեր 402
Այվազյանց Ա. 396
Այվազով 72
Այվազով 169
Այվազով Ա. 414
Այվազովսկի (Այվազյան) Գ. 692, 892
Այվազովսկի Հովհ. 654, 658, 659, 775, 857—859, 970
Այվատյան Սահակ արքեպիսկոպոս 481, 721
Այտընյան Արաեն 782, 902, 971
Անանյան Գրիգոր 269
Անանյան Միշա 329

Անանով 73
Անանով Ի. 169
Անանուն Դ. 364, 423, 870, 892, 893, 897, 941
Անատոլ Ֆրանս 480, 560, 578
Անդրանիկ (Օզանյան) 287—296, 469—471, 474—477, 517, 548—551, 614, 615, 640, 670—673, 709, 974, 977
Անդրաշի Յու. 111, 116
Անդրեասյան Աս. 253, 256
Անդրեասյան Հարություն քահանա 677
Անդրեասյան Հովհ. 698, 701
Անդրեասյան Տիգրան 570
Անդրեև, Ելիսավետպոլի փոխնահանգապետ 355, 356
Անեցի Մխիթար 909
Անիսիմով 545
Անտոնյան Ա. 782
Աչըգյան Անտուան 727
Աչըգյան Խորեն պատրիարք 234, 774, 967
Աշխուժ 834
Աշոտ 473
Աշչյան 486
Աշտարակեցի Ներսես 891, 925, 950
Աշուրով 303
Ալչզպաշչյան Արամ 238, 484, 554
Ասպահ (Դմգմյան Պետրոս) 251, 253, 255, 256, 258
Ապոնի, հունգար կոմս 687
Ապտեկման Օ. 179
Ապրո (Սահակյան Մկրտիչ) 290
Ապրոյան Առաքել 730
Աջարակի Զաքարիա-բեկ 396
Առանձար 805
Առաքել Գրիգոր 736
Առաքել (Տիգրան Աբաչյան) 470
Առաքելյան 402
Առաքելյան Ա. 460
Առաքելյան Հ. 395, 418, 451, 866, 878
Առաքելյան Մեղրակ 865
Առաքելյան Սրապիոն 955
Առուստամյան Լ. 460
Առուստամյան (ով) Մարգար 650, 752, 957, 958
Ասադ Սարդար 714
Ասադուլաև Շ. 303
Աստրյան Աստվ. 177
Աստուր Զաքել 782
Աստուր Հրանտ 771, 782, 879, 880
Աստուրյան Հովհ. 144
Աստուրովա Ուլյանա 177
Ասլան (Էլմակյան Մինաս) 251
Ասլան բեյ 251
Ասլանյան Գրիգոր աղա 269
Ասլանյան Մանուկ 486
Ասլանյան Ստեփան 110, 118
Ասլանով(յան) Ալ. 839
Ամֆինյան Հարություն 256
Ասորի Միխայիլ 908
Աստղիկ (գերասանուհի) 822, 830
Աստվածատուրյան Թադեոս վարդապետ 909
Աստվածատուրյան Հոմանոս 650
Աստվածատուրով Մ. 660
Ասրիբեկով Ե. 622
Ասրիև Ալ. 663, 664
Աստանազ Մ. 782
Աստվիթ (Անգլիայի վարչապետ) 581
Ավագյան Հակոբ 253
Ավագով(ներ) 73, 646
Ավալով, իշխան 348
Ավակիմով 646
Ավանեսով Ս. 662
Ավանեսով Վասիլ 648
Ավան-Յուղբաշև 72, 302
Ավգուստ Լոֆտուս 108
Ավդալբեգյան Թ. 870
Ավենարիուս 431
Ավետիսյան Անահիտ 677
Ավետիսյան Լիպարիտ 677, 679
Ավետիսյան Լևոն 332
Ավետիսյան (Թերլեմեզյան) Մկրտիչ 141, 149, 150, 187, 262, 264
Ավետիսյան Սարդար 235
Ավետիք Լուքաչ (Ավետիքյան Ղուկաս) 688
Ավետիքյան (բժիշկ) 959
Ավետյան 105
Ավետյան 311
Ավետյան Գ. 825, 829, 831
Ավետով Ս. 414
Ավետովներ 650
Ավթանդիլյան Ավագ խան 719
Ավնի բեյ 250
Ավո 292
Ավչյան Հարություն 918
Ատրպետ 237, 842, 923
Արաբո 150, 238, 240
Արագո Ֆ. 948
Արազի (Մովսես Հարությունյան) 587, 820
Արազյան Ռ. 844
Արաղյան Գր. 174
Արամ (բուժակ) 671
Արամյան Արամ 197
Արամյան Շ. 692
Արամյանց 72, 73, 302, 303, 312, 397, 398
Արապիանյանց Ավետիք 166, 867, 934—936, 967
Արաքսյան Պողոս, տե՛ս Քալանթարյան Պ.
Արգիշտի 924
Արղուման Հ. 693
Արղումանյան Մ. Վ. 11
Արղումանյան Ստ. 878
Արթին Յաղուր փաշա 696, 727, 730
Արթինովիչ Անդրեաս 683
Արթինովիչ Քրիշթոֆ 683
Արթուրյան Արմենակ 572

Արխանյան Գալուստ (Մնձուրիի առյուծ) 238
Արխիպով Վ. 953
Արծաթպանյան Հմ. 861
Արծրունի Անդրեաս (երկրաբան) 752, 943, 944, 954, 970
Արծրունի Գրիգոր 117, 124, 134, 135, 139, 146—149, 158, 160, 166, 183, 184, 196, 228, 234, 235, 237, 786, 827, 865—867, 878, 891, 934, 935, 940, 962, 965, 967
Արծրունի Վահան (բժիշկ) 693, 824, 871, 958
Արկերյան Արշակ 427, 428
Արկոմեդ Ս. Տ. տե՛ս Ղարաջյան Գ.
Արղության Հ. 547
Արմենակ 703
Արմենյան Արմեն 643, 679, 731, 824, 828, 831
Արմատորոնք 946
Արշարունի 522
Արվելաձե Պ. 588, 621, 624
Արտագարեր Գ. 954
Արտեմյան Արգ. 145
Արտեմով եղբայրներ 649
Արփիարյան Արփիար (Հայկակ) 109, 134, 158, 166, 185, 238, 249, 697, 699, 728, 731, 771, 772, 795, 803, 878—880, 964
Արփիարյան Տիգրան 880
Ափինյան Կարապետ 435
Աքսելրոդ 358
Աֆանասև Ֆ. 22, 226
Աֆրիկովներ (յաններ) 59, 73, 305, 308, 443, 547, 968

Բաբալյանց Գ. 663
Բաբախանյան Առաքել, տե՛ս Լեո
Բաբախանով(յան) Վ. 59, 73
Բաբայան Ավետիք 957
Բաբայան Մարգարիտ 839
Բաբայան Սոֆյա 760
Բաբայան Վ. 459
Բաբաջանյան Մ. 632, 736
Բաբան 175
Բաբլոյան Մ. Վ. 11
Բաբկեն (Պողոս Գրիգորյան-Ավագյան) 473
Բաբկենց 798, 799
Բաբը Ալի 250
Բագրատունի Տիգրան Դ'Ալբրո 730
Բագրևանդի Սահակ Վարդապետ 265
Բադան Ա. 453
Բադիր խան 713, 715
Բադրուպանյան Ղուկաս 688, 689
Բալադյան Սամվել 952
Բալասանյան Համբարձում 134, 962
Բալզակ Օնորե դը 795, 796
Բալթազար Աբգար 681
Բալֆուր Արթուր Ջեյմս 580
Բախ Ա. (Նարոդովոլեց) 175, 176
Բակունին Միխայիլ Ալ. 216
Բակունց Երեմիա 431
Բակրաձե Ա. 169
Բահաթրյան Առաքել 781, 782
Բահաթրյան Ավետիք 915
Բահաթրյան Լաուրա (Վարդանուշ) 655, 656
Բահաթրյանց Արմենակ 655
Բահաթրյանց Բ. (բժիշկ) 396
Բաղդասարյան Ե. 840, 843
Բաղդասարյան Մելիք 333
Բաղդասարյան Վ. 401, 403, 459
Բաղդասարով Ա. 460
Բաղչյան 727
Բաղրամյան Հովհ. 969
Բաղրամյան Մովսես 930
Բայուր Հեքմեթ 573, 574
Բայրոն Ջորջ Նոել Գորդոն 689
Բանվորյանց Սեդրակ 713
Բաշայլյան Լեոն 238, 697, 699, 795, 879
Բաշինջաղյան Գևորգ 857, 859, 860, 927
Բաչիաշվիլի Սանդրո 228
Բասիլոսյան (Սուրենյան) Կարապետ 253, 256—258
Բասիլոսյան (Սուրենյան) Պապ 253, 256
Բասմաջյան Կարապետ 678, 782, 886
Բաստամյան Վահան (Եղիա) 780, 909
Բավտին Արիֆ 540
Բատիրև Ա. 948
Բարաթով, իշխան 323, 347, 348, 350, 371, 397, 544, 971
Բարաթովա, իշխանուհի 399
Բարդինա Սոֆյա 173
Բարդուղիմեոս վարդ. տե՛ս Թագաճյան Բարդուղիմեոս վարդ.
Բարիկյան եղբայրներ 63
Բարժանսկի 403
Բարխուդարյանց Գևորգ 917
Բարխուդարյանց Մակար 925
Բարխուդարյան Սարգիս 841, 842
Բարխուդարյան Վ. Բ. 11
Բարյատինսկի Ա. Ի. 28, 55
Բարսեղյան Գեղամ 879
Բարսեղյան Խ. Հ. 11
Բարսեղյանց Հ. 948
Բաուման Ն. Է. 224
Բաքստոն եղբայրներ 701
Բան Ն. Գ. 850
Բեբել Ավգուստ 280
Բեդելյան Հ. 953
Բեդրիկյան Խոսրով վարդապետ 470
Բեդրխան 154
Բեզազյան 666
Բեթհովեն Լյուդվիգ վան 838
Բեժանյան Ճ. 425, 460
Բեյր Վ. 921
Բեկզադյան Ալ. 332, 941
Բեկզադյան Ս. Գ. 586

Բեկզադյան Տ. 451
Բեհաեդդին Շաքիր 553, 575
Բեհզադ Քյարիմ 715
Բեյրության Ա. 373
Բեյթան Հովսեփ 960
Բենիգսեն 276
Բենկլիեններ 653
Բենան Ս. Մ. 829
Բեռնշտեյն Ս. Ն. 897
Բերանշտամ 449
Բերար Վիկտոր 480, 482, 578, 695
Բերբերյան Մ. 174, 644, 913
Բերդ (ֆիզիկ) 947
Բերթլո, Բերթելո Պիեռ Էժեն 481
Բերկլի 941
Բերոյան Արտեմ 679, 831
Բերոյան Մարի 826
Բեքմեզյան Թորոս 269
Բըյիքըլըօղլի Թևֆիք 574
Բժշկյան Մինաս 925, 926
Բժշկյանց (Գայի հայրը) 713
Բժշկյանց Հայկ (Գայ) 548, 664
Բիկով 356
Բիսմարկ Օտտո Էդուարդ 98, 116, 119, 121, 122
Բիքոնսֆիլդ, լորդ 108, 116, 124
Բլագոև Դիմիտրի 673, 974
Բլանկենբուրգ 60
Բլեքուելլ Ալիս 700
Բյորն, Անգլ. արքեպ. 578
Բյորոնսոն 824
Բյուիսոն Ֆերդինանդ 578
Բյուլման (անգլ. հյուպատոս Սեբաստիայում) 274
Բյուխներ Կ. 431
Բյուրատ Սմբատ 554, 677, 728, 729, 731
Բշարե Խալիլ աղա 469
Բշարե Զաթո 277
Բոբրինսկի Վ. 452
Բոգաչև Վ. 954
Բոգդանով Ա. Ա. 429, 430
Բոգուսլավսկի 356
Բոդլեր Շառլ 862
Բոզաջյան Գրիգոր 734
Բոզարջյան 73, 227, 302
Բոկով Ի. Վ. 427
Բոմարշե Պիեռ 824
Բոյաջյան Գ. 836
Բոյաջյան Զարեհ 701
Բոյաջյան Թովմաս 701
Բոնապարտյան Պետրոս 269
Բոննե Պիեռ 954
Բոպպ Ֆրանց 899
Բոտև Քրիստո 159, 669, 672
Բորիս, Բուլղարիայի թագավոր 855
Բորյան Բագրատ 459, 873
Բորոյան Սմբատ 470, 471, 475, 476
Բոցարիս 158
Բոռն 945
Բրայս Ջեյմս 115, 568, 578, 701
Բրայս Վ. 894
Բրանդես Գեորգ 894
Բրեմոն Է. 561—563
Բրիան Արիստիդ 280, 563, 580, 581
Բրյուլով Բերնգարդ 281
Բրյուսով Վալերի 559, 889, 915, 976
Բրոդսկի 442
Բրոնևսկի 531, 532
Բրոսսե Մարի 884, 887, 925
Բրուտյան Արշակ 834, 835
Բուարոդրան Լեկոկ դե 944
Բուգգե Սոֆուս 900
Բուդաղյան Արմենակ 875, 951—952, 958
Բուզանդ Փավստոս 906
Բուզուզան Գեորգե 677
Բուիկլիու (Բըյըկլյան) Քրիստեա 680—681
Բուլիգին 377
Բուլղարացի Գր. 566
Բույալսկի Ի. Վ. 956
Բունզեն Ռոբերտ (քիմիկոս) 946
Բունիաթյան Մենտոր 936, 937
Բունիաթյան (ով) Ն. Գ. 850, 851, 855, 921
Բունիաթով 303
Բունին Ի. Ա. 559
Բուսլաև Ֆեոդոր 902
Բուրգոեն 98
Բուրժե Պոլ 880

Գարիկյան Կ. 951
Գաբրիելյան Գ. 861
Գաբրիելյան եղբայրներ 58, 310, 404
Գաբրիելյան Մ. Ս. 709
Գաբրիելյան Ռ. 953
Գազազյան Զ. 880
Գազազյան Հ. 138
Գազանճյան Հ. 782
Գալանտերյան Նիկոլ 719
Գալեմքերյան Գր. 685, 905
Գալիկյան Հրանտ 486, 566
Գալճյան Սարգիս 256
Գալստյան Անդրեաս 60
Գալստյան Գ. Դ. 741, 742
Գալստյան Կարապետ 703
Գալոնճյան Մարտ. 855
Գալֆայան Խորեն (Նար-Պեյ) 113—115, 118, 138, 692, 820
Գալֆայան Կարապետ 679
Գամ-Բեյլիեն Փանոս 251
Գամբետա 119
Գայան Միհրան 251
Գաչեչիլաձե Կ. 303
Գասպարյան Ն. 209
Գասպարով Գ. 414

Գասպիրալի Իսմայիլ բեյ 230
Գավառացի Հ. 917
Գավաֆյան Գ. 137
Գարագաշյան Անտոն 782, 783, 888, 889
Գարագաշյան Երանուհի 821, 822
Գարագաշյան Երվանդ 431
Գարագաշյան Խաչերես 677
Գարագաշյան Վերգինե 821, 822
Գարագաշյան քույրեր 830
Գարակյոզյան Հմայակ 571
Գարգալաչև Ֆ. 460
Գարվանով 481, 670
Գափամաճյան եղբայրներ 697
Գափամաճյան Մինաս 875, 876
Գափրինդաշվիլի Գ. 303
Գելովանի Վ. 451
Գեյցեր Հայնրիխ 887
Գեղամյան Գաբրիել 105
Գեղամյան Եղիշե 158, 895
Գեղամով Պ. 456
Գեյման, գեներալ 102
Գենով, գեներալ 671
Գենչօղլյան 448
Գենև 671
Գերասիմյան Ա. 741
Գերցեն Ա. Ի. 190, 215, 216
Գիբբոնս Գ. 894
Գիբոնս Հերբերտ Ադամս 555, 675
Գիգոլյանով Պ. 892
Գինոսյան Ստ. 414
Գիպիուս Ա. Դ. 891
Գիրս Մ. Ն. (Կ. Պոլսի ռուս. դեսպան) 522, 523, 528, 531, 533, 975
Գիրս Ն. Կ. 762
Գլադստոն Ուիլյամ 116, 187
Գլասկ Ա. 179
Գյոզալյան(ով) Գ. 59, 73, 968
Գյոթե Յոհան Վոլֆգանգ 861
Գյուլիզար 151
Գյուլքեխյան Հ. 651
Գյուրջյան Հակոբ 695, 863
Գոդոբերիձե Ն. Գ. 172, 173
Գոգոյան Մ. 643
Գոթիե Թեոֆիլ 880
Գլինկովա Ելիզավետա 343
Գոլիցին Գ. Ս. 16, 324, 351, 355, 356, 374, 407, 664, 969, 971
Գոլոբորոդկո Ի. 24, 894
Գոլոշյան Վարդան (Ալեքսանդր) 151, 152, 967
Գոլոշապով, 390
Գոլոշչոկին Ֆ. Ի. 461
Գոլովով 305
Գոճայան Հար. 251
Գոշե Ռիխարդ 899
Գոչունյան Միսակ 879, 880
Գոպչյան (Կոպչայան) Լևոն 688
Գովրիկյան Գրիգոր վարդապետ 687, 688, 889
Գորդլևսկի Վ. Ա. 768
Գորկի Մաքսիմ 225, 390, 432, 559, 863, 874, 880, 976
Գորչակով Ա. Մ. 108, 116, 120, 121, 125
Գրգո (Մոսեսյան Գրիգոր) 242
Գրեյ օֆ Ֆալլոդոն Էդուարդ 482, 530
Գրիբոյեդով Ա. Ս. 822
Գրիգոր արքեպ. 738
Գրիգոր Մագիստրոս 910
Գրիգորյան Լևոն 719
Գրիգորյան Տեր-Խաչատրյան Մ. 738
Գրիգորյանց Ա. Ա. 11
Գրգիոր Պոլ 736
Գրիմ եղբայրներ 916
Գրյազնով 375
Գրո 386, 387
Գրուզենբերգ Օ. 449
Գուդշմիդ Ա. 887
Գուլագոզյան 152
Գուլազյան Կարապետ 152
Գուլազյան Օլգա 826, 829
Գուլիշամբարով Ստեփան 936, 937
Գուլկևիչ 534
Գույումջյան Համբ. փաշա 723
Գույումճյան Սարգիս 666, 697
Գուշակյան Թորգոմ 746
Գուչկով Ա. Ի. 428
Գուստին Դիմիտրիե 677
Գուրգեն 291
Գուրկո Ի. Վ., ռուս. զորավար 100
Գուրո, ֆրանս. զորավար 562
Գևորգ IV կաթողիկոս 109, 114, 756, 759, 833, 965
Գևորգ V (Սուրենյանց) կաթողիկոս 520, 974, 975
Գևորգյան (Կևորկով) 443, 653
Գևորգյան Մուրատ Վանիկօղլու 678

Դաղիանի Հ. 303
Դաղիվանյան Նիկողայոս 329
Դալյան Խաչիկ վարդ. 918, 923
Դան Դիմիտրիե 685
Դանդուրով(յան) Ստ. 225
Դանիել Էրնեստ 689
Դանիելով 228
Դաշտոյան Ռուբեն 335, 872
Դաստակյան Աբրահամ 147, 148, 179
Դավիթ Անհաղթ 906
Դավթյան Դավիթ 839
Դավթյան Եփրեմ տե՛ս Եփրեմ խան (Դավթյան)
Դավթյան Ս. 782
Դավո (Դհերցի Դավիթ) 478
Դարբինյան Արտակ 870
Դարբինյան Մաթևոս 820

Դարբինյան Մաթևոս 820
Դարվին Չարլզ 680, 950
Դաուդ փաշա Արթին Կարապետ 723
Դեղովա Կ. 616
Դելյանով Ի. Դ. 761, 762
Դեմիդով 646
Դեմիրճյան Դերենիկ 807, 826, 963
Դեմիրչօղլյան Վահագն 943, 946, 947
Դեմուրյան Ս. 836
Դենիկին 656
Դենշտեդտ 944
Դեշանել Պոլ 560
Դերվիշ Տիգրան (Հակոբյան Տ.) 471, 713
Դերբի, լորդ 698
Դիլ Շառլ 689, 856
Դիլոն է. 894
Դիկշտեյն Ս. 218, 221
Դիցգեն 429
Դիքս էդ. 702
Դյուրուա 925
Դյուլորիե էդ. 691, 884, 887
Դյումա Ա. 823
Դորրովեյն Վ. 863
Դոզոչիև 449
Դոլգորուկով 408
Դոլուխանյան Պ. 451
Դոլուխանյան Սոֆյա 827
Դոլուխանով 72, 302
Դոնդուկով-Կորսակով Ա. Մ. 16, 965
Դոնիկով Մկրտիչ 174
Դրագոմիրով Մ. Ի. 100
Դրոզդով Վասիլի 356
Դուբրովին Ն. 894
Դուրյան-Արմենյան Եկատերինա 826
Դուրյան Ե. արքեպ. 521
Դուրյան Պետրոս 156, 820, 912, 962
Դուրնովո Ի. 762
Դև (Ղարաբեգյան Մարգար) 719
Դեղորիանի Ա. 382
Դենի, գեներալ 101, 102

Եբրայեցի Փիլոն 908
Եզդանշիր 153
Եզյան Կարապետ 115, 234, 235, 775, 888
Եզնիկ Կողբացի 906
Եկատերինա II 634
Եկարյան Արմենակ 239, 566, 568
Եկմալյան Մակար 833—835, 839—841
Եղբրյերյան Լևոն 572
Եղիազարյան Լ. 836
Եղիազարյան Սողոմոն 893, 929, 930, 933, 934
Եղիազարյան Վասիլ 146
Եղիազարով(յան) 73, 302, 308, 346, 443
Եղիկյան 713
Եղիշե 906
Եմեսացի Նեմեսիոս 908

64—1246

Ենգիբարյան Մ. 459
Ենիտունյան Եղյա, տե՛ս Նորաշխարհյան Եղյա
Ենիտունյան Նշան, տե՛ս Նորաշխարհյան Նշան, իշխան
Ենովք Եղիա 732
Ենուկիձե Ա. 430
Եսայան Զապել 615, 642, 880
Եսայան Միհրդատ 263
Եսայան Տիգրան 864
Եվանգուլյան Ալ. 179
Երամյան Համբարձում 775, 776, 964
Երեմյան Սիմեոն 782, 914, 950, 951
Երզնկացի Կոստանդին 912
Երզնկյան Արամայիս 335, 362, 587, 870
Երզնկյան Գրիգոր 350
Երզնկյան Եզնիկ քահանա 834, 869
Երզնկյան Հարություն 350
Երզնկյան Շաքար 350
Երիցյան Ալ. 824, 825, 891, 892, 920, 925, 926, 962, 971
Երիցյան Ռաֆայել 505
Երկանյան Արամ 575
Երկանյան Կարապետ քահանա 254, 258
Երկանյան Վ. Ս. 11
Երմոլով Ա. 355
Երմոլովա Մ. Ն. 829
Երյոմին 944
Երվանդ 515, 742
Երուխան (Սրմաքեշխանլյան Երվանդ) 554, 681, 795
Երփեմ խան (Դավթյան) 236, 713—716
Երևանցի Սիմեոն 908

Զարել, դերասանուհի 824
Զալյան Միք. 145
Զամինյան Արր. 912
Զատուլիչ Վ. 218
Զավարյան Սիմոն 148, 179, 195, 242, 407, 893
Զավեն Տիգրան 870
Զավեն պատրիարք 561
Զավրիև, բժիշկ 522
Զատիկ Հակոբ 675
Զարհանալյան Գ. 782, 902, 905, 911
Զարգարյան Հ. 226
Զարգարյան Հակոբ 332
Զարդարյան Ռուբեն 54, 782, 795, 803, 804, 880
Զարիֆյան Հովհ. 825, 826, 829, 831
Զարմանյան Հովհ. (Թաթուլ) 670
Զարուդնի 449
Զաքար (Աղբյուր Սերոբի եղբայրը) 292
Զաքարյան Բարսեղ (Լևոն) 240
Զաքարյան Խաչիկ 676
Զաքարյանց Գևորգ Ավետ 744
Զաքարյան Հովսեփ 686
Զաքի (Կարմրաշապիկ վարժապետ) տե՛ս Թավաքալյան Բաղրատ

Զաքյան (Զակիև) Պողոս 656
Զգոնյան Մանուկ 142
Զգանովիչ Գ. 172, 173
Զելինսկի Ա. 927, 951
Զելքունյան 486
Զելքունցի (Սեմներճյան Մ.) 894
Զեննեյան Նիկ. 677
Զենոբ Գլակ 906
Զեքերիա (Զաքարիա) 517
Զեքի փաշա 231, 243, 245
Զինա էպու 821
Զինովև 275, 282
Զիլի է. 687
Զիլի Հ. 687
Զոլա Էմիլ 801
Զոլոտարև 60, 387, 388
Զոլոտովսկի 168
Զոհրաբյան (Զուրաբով) Պ. Ա. 847—849
Զոհրապ Գրիգոր 136, 138, 238, 498, 502, 521, 522, 554, 795, 804, 805, 878—880
Զոմբարտ 898
Զորայան Նիկ. 932
Զորյան (Առաքելյան Ստեփան 195, 807, 967
Զուբալով 72, 303, 827
Զուդերման Հերման 824
Զուրաբյան Արշակ (Ռաշիդ-Բեկ) 220—221, 329, 333, 335, 339, 340, 357, 359, 407, 409, 870, 971
Զուրաբյան Ի. 179

Էբրահիմ Սաֆայի 715
Էդիլյան Գուրգեն 767, 782, 783
Էքալիկյան Ալ. 144
Էքհեմ փաշա 259
Էլիզե Ռեկլյու 894
Էլիոտ, Կ. Պոլսի անգլ. դեսպան 124
Էլմաս Ստեփան 839, 841
Էլչիբեկյան Հ. Մ. 11
Էկինյան Հայկակ 709
Էկսֆելլ Ֆոն 572
Էմին բեյ 264
Էմին Հովսեփ 930
Էմին Մկրտիչ 768, 884, 885, 919, 925, 926, 929
Էմին փաշա 277
Էյնաթյան Գալուստ 486
Էյնաթյան Մելիքսեդեկ 486
Էնգելս Ֆ. 9, 83, 95, 97, 129, 194, 215—220, 227, 334, 335, 337, 342, 363, 432, 796, 867, 968
Էնվեր փաշա 538—540, 553, 574, 575, 664, 975, 976
Էնֆիաջյանց 73, 202, 227, 302, 970
Էսայան եղբայրներ 773
Էսմաիլ Ռահիմ խան 715, 716
Էվոյան Սիմոն 403, 425, 460
Էրիվանակի Ազախան 396
Էրն Ա. 954
Էրվին Գուստավ 578

Ըստկարյան Վարդան վարդ. 688

Թագաճյան Բարդուղիմեոս վարդ. 251, 252, 254, 255
Թադևոսյան 72, 302
Թադևոսյան Սղիշե 856, 863, 864
Թադևոսյան Զորա 703
Թադևոսյան Հ. 179
Թալեաթ փաշա 496, 531, 533, 534, 538, 553, 555, 557, 573—575, 975, 976
Թահսին փաշա 242
Թաղիադյան Մեսրոպ 718, 926
Թաղին եղբայրներ 849
Թաղին Հ. 303
Թամամշև(յան) Դաբր. 73, 826
Թամանյան Ալ. 844, 850, 851, 964
Թայիրյան (Թաիրով) Ն. 59, 73, 76, 302, 305, 966, 970
Թանդիլյան Մ. 460
Թանդիլյան Պ. 425
Թաշճյան Նիկ. 833, 834
Թաշչյան Մկրտիչ 719
Թաուսյան Պատվական 869
Թավաքալյան Բագրատ 148, 239
Թավաքալյան Ն. Ա. 11
Թավդիշվիլի Ս. 588
Թավլիշյան Պ. 227
Թարխանյան 105
Թարխանյան Ալ. 824
Թարխանյան Ս. 196
Թեհլերյան Սողոմոն 574, 575
Թեմիրյան Ա. 722
Թերզիբաշյան Ա. 615
Թերզիև 646
Թերզյան Բ. 821, 842
Թերզյան Մ. Վ. 722
Թերզյան Սարգիս Քըզլը (Մեծ) 732, 733
Թերզյաններ 854
Թերլեմեզյան Տաճատ 478
Թերլեմեզյան Փանոս 150, 239, 566, 567, 863, 864
Տեոդիկ (Աբգինյան Թեոդորոս) 880, 905
Թեոդորյան Սարգիս 692
Թեքելյան Վահան 728, 731, 807, 879, 880
Թեքելյան Տիրան 571
Թեփիրդաղցի Նուվրուզ 473
Թեֆիկ բեյ 250
Թզիբաու, Բիրմայի քաղավոր 738, 739
Թիրաքյան Հ. 113
Թլկատինցի (Հարությունյան Հովհ.) 554, 776, 795, 803, 804, 911
Թյությունճյան Մկրտիչ 667, 669
Թյուֆիկչին 481

Թնկրյան Տ. 931
Թոթոմյանց Վ. 936—938
Թոխատեցի Մինաս 685
Թոխմախյան Արսեն 143, 147, 151, 152, 154, 158—162, 182
Թոխմախյան եղբայրներ 61
Թոմսոն Ջորջ, անգլ. ֆիզիկոս 947
Թոյնբի Առնոլդ, անգլ. պատմաբան և սոցիոլոգ 701, 894
Թոսակրատսկի Մոսյա 684
Թովմաճյան Հովհ. 732
Թովմաճյան Պողոս 732
Թովմասյան եղբայրներ 674
Թովմասյան Ն. Ռ. 11
Թոտյու Ֆ. 100
Թորամանյան Թորոս 855, 856, 921, 923, 927
Թորգոմ (Թուման Թումանյան) 471, 473, 671
Թորգոմյան Վ. 678
Թորոսյան Հ. 664
Թորոսյան Ս. 613
Թորոսյան Օնիկ 481, 670
Թոփալովներ(յաններ) 653, 659
Թոփհանելյան Մ. 703
Թոփչյան Եղիշե (Վահե) 391, 418, 420
Թոփուզյան Օ. Խ. 11
Թոփուրիձե Դ. 339, 358
Թոքատյան Մարտիրոս 697
Թրնասե Կոստանտին 681
Թրյան Դավիթ 820, 821, 824, 825, 830
Թումաճյան Մ. 832
Թումանյան Աշոտ 329, 403, 425, 460, 872
Թումանյան Անուշավան 329, 403
Թումանյան Բենիկ 11
Թումանյան Գրիգոր 73
Թումանյան եղբայրներ 712
Թումանյան Կ. 701, 894, 895
Թումանյան Մարիամ 826
Թումանյան Հովհ. 128, 151, 237, 390, 521, 547, 781, 795, 807—810, 813, 838, 843, 856, 880, 914, 921, 927, 975
Թումանյան Հովսեփ 73
Թումանովա Ե. 173
Թումանովա Հ. 173
Թուրաբյան Հակոբ Վարագդատ 656

Ժամկոչյան Ներսես 263
Ժամհարյան Իսահակ 473
Ժասմեն, դերասանուհի 829
Ժելյաբով Ա. 179
Ժիրայր (Պոյաճյան Մարտիրոս) 238, 240, 968
Ժորդանիա Ն. 225, 338, 339, 358, 609
Ժորես 483, 484
Ժորժ Ժան 280, 481, 695

Իբրահիմ Շինասի 130
Իբրահիմ փաշա 277, 489, 492
Իբսեն Հենրիկ 824, 825
Իբրըիլեանու Կարապետ 680
Իգնատև Ն. Պ. 98, 107, 108, 110
Իզզեթ բեյ 505
Իզմիրլյան Մատթեոս 114, 974
Իլև Հաջի Քրիստո 481, 670
Իմիրզյան Հովհ. 572
Ինտրա 880
Իշխալացյան Հակոբ 114, 233
Իշխանյան Բախշի 363, 364, 431, 514, 941
Իշխանով Ա. 663
Իշխանով Ջ. 169
Իպոլիտ 907
Իսախանյան Տ. 363, 364
Իսակով Իվան Ստ. 968
Իսահակյան 169
Իսահակյան Ավետիք 237, 701, 781, 807, 810, 811, 880, 915, 963
Իսահակյանց 73
Իսարլով Ի. 169
Իսմիրյան Տ. 673
Իսոպեսկուլ Օկտավիան 685
Իսպիրյան Միհրան 554
Իսրայելյան Սերգո 329 ,403
Իսրայել Օրի 888
Իվանով Կ. 169
Իվանով Ս. 176
Իվանովսկի Ա. Ա. 921
Իրենեոս 907
Իփեքյան Գր. 727
Իփեքչյան (Ցարրիկաթորյան) Գրիգոր 63
Իֆֆեթ բեյ 253

Լազար Արիս 678, 679
Լազարյան Խ. 159, 758
Լազարև Է. 169
Լազարև Հովհ. 103, 105, 106, 136, 963, 964
Լաղյան Ի. 651
Լալայան Երվ. 917, 918, 923, 925, 927—929, 969, 970
Լալայանց Իս. 217, 329, 337, 648, 962
Լամին Էտյեն 560
Լայնս, լորդ 115
Լանգլուա Վ. 884, 925
Լանիս (Շահազիզյան Լևոն) 678
Լանսերե 927
Լավին 62
Լավրով Պյոտր 175, 188, 190
Լասսալ 221
Լաֆարգ Լաուրա 218
Լաֆարգ Պոլ 221, 899
Լաֆոնտեն 862
Լեժավա Նոյ 459, 588
Լեյարդ 106, 109, 124

Լեյբովիչ Ա. 60
Լենին Վ. Ի. 7—11, 15, 25, 34, 36, 54, 73—75, 79, 80, 89, 93, 165—167, 171, 179, 181, 195, 197, 200, 215—217, 236, 299, 300, 326, 328, 329, 332—339, 350, 357, 359, 361—366, 376, 377, 379, 404, 408, 411, 414, 416, 421, 424, 426, 428—430, 444, 453, 460, 461, 467, 487, 494, 502, 536, 584—587, 597, 599, 601, 602, 606—611, 620, 621, 623, 626, 635, 648, 672, 716, 754, 871, 938, 969, 970, 972, 974
Լե Շատելյե 944
Լեո (Առաքել Բարախանյան) 114, 237, 547, 731, 866, 878, 891, 894, 905, 913, 915, 927
Լեոնց 237
Լեվին Ժորժ Ռաֆայել 560
Լերմոնտով Մ. 822, 823
Լեփսիուս Յ. 531, 533, 557, 894
Լըժին 412, 449
Լիանոզով(ներ) 72, 302, 712
Լիապով 481
Լիբկնեխտ Կարլ 221, 558
Լիդեն Էվալդ 901
Լիման ֆոն Սանդերս 537, 975
Լիմերման 610
Լիմոնջյան Բարա Համբ. 833, 834
Լիննել Կարլ 950
Լիննիչենկո Ի. 888
Լին Հ. 702, 890
Լիսիցյան Լ. 921
Լիսիցյան Կ. 767, 781
Լիսիցյան Ստ. 547, 767, 781, 783, 824, 927
Լիտվինով Ալ. 175
Լիտոն Բնչվեր 862
Լլոյդ Ջորջ 537, 580, 581
Լյուքսեմբուրգ Ռոզա 468
Լոբանով-Ռոստովսկի 284
Լոդոչնիկով (Նավակատիկյան) Վ. 954
Լոլոպուլոներ 436
Լոպատին Գ. 176, 177
Լոռիս-Մելիքյան Հովհ. 188, 196—197
Լոռիս-Մելիքով Մ. Տ. 101, 102, 105, 106, 117, 118, 125, 323, 963
Լոռու-Մելիքյան Ս. 956
Լոտի Պիեր 685
Լորան Ժորժ 482
Լվով 608
Լուբեն 482
Լուչին . 225
Լութֆյան Տ. 668
Լուկաչ Գ. 689
Լուկաչ Լ. 689
Լուկաչ Մ. 689
Լունաչարսկի Ա. 434
Լունկևիչ Վ. 948
Լուրյան Խ. 688

Լևինսոն-Լեսսինգ Ֆ. Յու. 953
Լևոն 150
Լևոն Զ. 137
Լևոն IV թագավոր 690
Լևոնյան Գ. 857, 870, 905, 962
Լևսկի Վասիլ 159, 669

Խադամյան Ա. 643
Խաժակ Եղիա 826
Խաժակյան Արշ. 221 225
Խաժակյան Գ. 407
Խալաթյան Բ. 918
Խալաթյան Գ. 768, 885, 906, 917—919, 926, 929, 974
Խալաթով Գ. 953
Խալիլ աղա 292, 549
Խալիլ բեյ, տե՛ս Խալիլ աղա
Խալտուրին Ստ. 221
Խամետովսկի 449
Խայաթ (աշուղ) 834
Խայյաթ Խալիլ 727
Խանազատ(յան) Ռուբեն 188, 189, 193, 196, 233, 283, 484, 845, 941
Խան-Ադով 60, 317
Խան-Անուշյաններ 435
Խանասորցի Վարդան (Մեհրաբյան) 548, 550
Խան (Բարսեղ Թիրաքյան) 473
Խանդամիրյան Մ. 848
Խանդամիրյան Ն. 825
Խան-Խոյսկի 436
Խանճյան (Անաստաս) Զապել (Սիպիլ) 772
Խանոյան Սերգո 221, 223, 330, 335, 339, 587, 874, 971
Խանջյան Աղասի 875
Խանջյան Խոսրով 486
Խաչատրյան 703
Խաչատրյան Եղիշե քահանա 269
Խաչատրյան Մ. 421
Խաչատրյան Պողոս վանահայր 270
Խաչատրյան Մարգիս 864
Խաչատրյան Ս. 613
Խաչատրյան Սուրեն 827
Խաչատրյան Վ. 425
Խաչատրյան Վ. Ա. 11
Խաչատուր, Աղթամարի կաթողիկոս 272
Խաչատուրով 646
Խաչիկյանց Ա. 664
Խաչիկովներ 650
Խաչոյանց Ա. 414
Խապայան Ս. 948
Խաչին Ա. 382, 386
Խաչին Ի. 460
Խաուլամով Վ. 611, 612
Խատիսյան Ա. 373, 413, 451, 608
Խատիսյան Գ. 547
Խատիսյան Կ. 343, 373, 451

Խարազյան Ամո 825, 828
Խարախանյան Ն. 242, 968
Խարասանով 646
Խարիտոնով եղբայրներ 177
Խարիտով Պ. 348
Խեչոյան Գ. 243
Խերպիկյան Մ. 732
Խիաբանի Մուհամմեդ 713
Խիկար Իմաստուն 907
Խլղաթյան 486
Խոյեցյան 646
Խոշաբակյան Վանո 862
Խոշամիրով 73
Խոշանեթյան Հ. 151
Խոջաև (Խոջայան) Գ. 175
Խոսրովյան Ն. 780
Խորենացի Մ. 688, 884, 885, 889, 906, 909, 910, 919, 924
Խորխորունի Վ. 421
Խրիմյան Մկրտիչ (Հայրիկ) 110, 113—117, 120, 122, 123, 132, 133, 140, 152, 154—156, 185, 186, 193, 234, 352, 354, 375—377, 393, 394, 481, 482, 775, 966—969, 971, 973
Խուրլարով 302
Խումարյան Աշոտ 221, 224, 335, 340, 650, 651, 872
Խունդաձե 601

Ծառուկյան Թորոս 238
Ծատուրյան Ա. 196, 302
Ծատուրյան Ալեքսանդր 237, 707, 860, 880
Ծատուրյան Գ. 664
Ծատուրյան Էմիլ 744
Ծատուրովներ 619, 646
Ծերեթելի Ս. 169
Ծերեթելի Գևորգի 172, 173
Ծերեթելի Ի. 303, 372
Ծերենց (Հովսեփ Շիշմանյան) 693, 784, 788, 875, 896, 966
Ծովյան Գ. 705
Ծովյանով 723
Ծուլուկիձե Ա. 359
Ծուլուկիձե Գ. 953
Ծուլուկիձե Ս. 225

Կադիր բեյ 271
Կազալս Պարլո 695
Կազարինով 449
Կալդին Ա. Վ. 847
Կալինին Ն. 169
Կալոյան Հ. 133
Կախանով, գեներալ 64, 312, 317
Կախոյան Աստուր (բանվոր խեչո) 227, 359, 382, 403, 405, 439, 460
Կամարի Հ. 587, 874
Կամբոն Ժյուլ 231, 266
Կամո 339, 340, 384
Կամսարական 427
Կամսարական Կ. 140, 141, 148, 153
Կամսարական Տ. 238, 795, 803, 878, 879
Կայալով եղբայրներ 656
Կայալով Մելքոն 176, 638
Կայծակ Վաղարշակ (Բաղդասրյան) 476
Կանայան Ստ. 910, 918
Կանանով Ն. 169
Կանայլյան Բ. 832
Կանդաուրովներ 169
Կապուտան Մարտո 688
Կապրի (Գաբրի) Ժորժ 683
Կապրի Մունուիլ 684, 685
Կապուտիկյան Բ. 486
Կապուտիկյան Մ. 486
Կասըմ (Ղասըմ) բեյ 277
Կասյան Սարգիս 10, 366, 430, 431, 460, 871—873, 838, 896, 941
Կաստրեկով Խալիլ 613
Կատկով 122
Կարաբեքիր Քյազըմ փաշա 542
Կարաբլևակի 449
Կարագյոզյան եղբայրներ 697
Կարաքեոդորի Ալ. փաշա 119—121
Կարախանյան Գ. Հ. 11
Կարախանյան Հովս. 440, 713, 872
Կարա-Մուրզա Պ. 451
Կարա-Մուրզա Ք. 658, 832, 833, 835, 839—842, 927
Կարայան Ստ. 522
Կարապետ Պողոս 727
Կարապետ վանահայր 270
Կարապետ (վանեցի հայդուկ) 291
Կարապետ քեհյա 251
Կարապետյան 105
Կարապետյան եղբայրներ 251, 253—256
Կարապետյան Հովհ. 954
Կարապետյան (մեծահարուստ) 302
Կարապետյան Ն. Վ. 11
Կարապետյան Սամսոն 829
Կարապյով 656
Կարավելով Լյուբեն 669
Կարդաշյան Ս. 188
Կարիեր Ա. 691, 906
Կարինյան Ա. 459, 587, 854, 872, 873
Կարմիրյան Գ. 571
Կարպենկո Ա. 177
Կարպինակի 944
Կարստ Յոզեֆ 901
Կաուցկի Կ. 219
Կաֆյան Գ. (Շամավոն) 188, 189, 233, 495
Կաֆյանց 646
Կենճյան Ա. 941
Կեսխանյան Ավ. 253, 256

Կերենսկի Ա. 449, 544
Կերթքյան Խ. 133, 140, 142—144, 233, 965
Կեցխովելի Լ. 225
Կիզևետեր 408
Կիլիկյան Սարգիս եպիսկ. 136
Կինոյան Ֆ. 186
Կիպիանի Ն. 169
Կիպրացի Եպիփան 908
Կիսաշվիլի Վ. 588
Կիսխանյան Ավ., տե՛ս Կեսխանյան Ավ.
Կիտուր Ա. 486, 941
Կիրխհոֆ 946
Կիրով Ս. Մ. 559
Կլեմանսո 280, 580, 581
Կլոդտ Մ. 859
Կծոյան Ա. Ս. 11
Կյալամով Հաչի Իրզա 443
Կյուլեսերյան Բ. 886
Կյուլեսերյան Ն. 699
Կյուլպենկյան Գ. 523, 697, 723
Կյուլպենկյան Ս. 495, 547
Կյուրճյան Մելքոն 554, 879
Կյուրճյան Միքայել 879, 880
Կնորր Ս. Է. 594
Կնունյանց Բոգդան 10, 226, 288, 329, 333, 335, 339—341, 343, 344, 357, 358, 366, 413, 424, 753, 866, 871, 896, 898, 938, 941, 971, 974
Կնունյանց Լյուդվիգ 332, 343
Կնունյանց Տիգրան 333, 343
Կնունյանց Փաուո (Փարանձեմ) 333, 343
Կոզիկյան Գ. (Նսայեմ) 227, 364
Կոզմին Վ. (Սրբմաբրյուկ Բոգդան) 676
Կոժոկար Հովհ. 684
Կոլարով Վ. 673, 974
Կոլենգան Լ. 175
Կոլեչ Ս. 179
Կոլյանց Ս. 663
Կոլյուբակին Ա. Մ. 891
Կոկանյան 727
Կոմիտաս (Սողոմոն Սողոմոնյան) 237, 437, 554, 731, 751, 832—842, 864, 919, 927
Կոնդորով(Ներ) 304, 436, 600
Կոնիբեր Ֆ. 887, 906
Կոնիկյան Ղ. 677
Կոնյոշևսկի Լ. Կ. 953
Կոնտանսոս Լ. Դե 894
Կոպիտնիկոս Ն. 948
Կոռնիլով Լ. 621, 622
Կոստանդ Ջուղայեցի 743
Կոստանդյան Գ. 940
Կոստանդյան Է. Ա. 12
Կոստանդյան Ար. 839
Կոստանյան Կ. 885, 910, 911, 925
Կովալևսկի Ա. 952
Կովալևսկի Մ. 559
Կորբա Աննա 179
Կորգանով Ի. 603
Կորշ Ֆ. Ե. 768
Կորյոն 477, 906
Կորոլենկո Վ. Գ. 650, 957
Կորոստիլենկո 624
Կորտի 115, 116
Կրասիլնիկյան Ա. 868
Կրավչինսկի Ս. 181
Կրաֆտս 944
Կրիմսկի Ա. Ե. 559, 768
Կրինա Կարապետ 684
Կրիտյան Ար. 134
Կրուպսկայա Ն. Ի. 424
Կուդրյաշև Վ. 177
Կուզեյան Ե. 416, 941
Կուզմիններ 169
Կուլմանեսյան Ն. 253, 256, 257
Կուկունյան Ս. 234—236, 238, 640, 715, 967, 968
Կուշև Մ. Ն. 31
Կուռնատովսկի Վ. 342
Կուսիկյան Կ. 768
Կուրդինյան Շուշանիկ 434, 819, 820, 880, 963
Հաբեթ (Միհրանի եղբայրը) 418
Հալիմ բեյ 262, 264
Հալիմ փաշա, տե՛ս Հալիմ բեյ
Հալլեյ 949
Հախումյան Ս. 870
Հակոբ (Ադրյուր Սերոբի որդին) 292
Հակոբ Գուրգեն 774
Հակոբ Մարկավագ 141, 142, 150, 151, 234
Հակոբյան 727
Հակոբյան 402
Հակոբյան Կարապետ 186, 698, 701, 966
Հակոբյան Հակոբ 380, 425, 432—434, 587, 615, 818—820, 872, 873
Հակոբյան Համլակ 861
Հակոբյան Ն. 697
Հակոբյան Պողոս քահանա 677
Հակոբյան Վարդան վարդապետ 239
Հակոբջանով Գ. 663
Համազասպ (Սրվանձտյան) 548
Համալյան Կյուլբեկ 238
Համամչյան Սարգիս բեյ 107
Համբարձումյան 666
Համբարձումյան Ս. Ե. 138
Համբարյան Ա. Ս. 12
Համլին 779
Հայկազունի Պ. 134
Հայկունի Գ. 587, 588, 615
Հայկունի Ս. 677, 917, 918, 927
Հայնե Հ. 861
Հայրապետյան 666
Հայրապետով Մկ. 175
Հանբո Կ. 686
Հաֆիբեկով Ա. 169

Հառնակ Ադոլֆ 907
Հասան Իզեթ փաշա 271, 539
Հասմիկ, գերասանուհի 826
Հարեթ Սպիրու 679
Հարություն 143
Հարությունյան Արշակ 824, 829
Հարությունյան Արտաշես 554, 880
Հարությունյան Աբտուշ 329
Հարությունյան Բ. 588
Հարությունյան Գ. Ս. 12
Հարությունյան Դ. 105
Հարությունյան Թ. 718
Հարությունյան Խ. 782, 783
Հարությունյան Լիզիկ 826
Հարությունյան Մինք. 675
Հարությունյան Ս. 644
Հարությունյան Սամսոն 373, 395, 406, 451
Հարությունյան Ս. Բ. 12
Հարությունյան Սեդրակ 329, 450, 547
Հարությունյան Սեթ 910
Հարությունյան Վ. Մ. 12
Հարությունյանց (մեծահարուստ) 73
Հարությունյանց Թ. 414
Հացագործյան Արս. 486
Հացունի Վ. 927
Հաուպտ Լեման 921
Հաուպտման 880
Հաֆիս Հաքքը բեյ 540
Հելհոլց (թիմիկոս) 946
Հեմբսոն (անգլ. հյուպատոս) 270
Հեպնյան Տիգր. 732
Հերման Անտոն 687, 688
Հեքիմյան եղբայրներ 310, 972
Հեքիմյան Ս. 820
Հիլմի Թաւնալ 511
Հիլմի Սահդ փաշա 502
Հինդլյան Հովհ. 777, 783
Հիտով Պ. 100
Հյուբշման Հ. 688, 899—901
Հյուգո Վիկտոր 156, 880, 882
Հյուսեին էֆենդի, տե՛ս Հյուսեին փաշա
Հյուսեին փաշա 292, 492
Հյուսիսյան Վահան 571
Հյուրմյուզյան Էդ. 915
Հոլոշի Կորնելիա 689
Հոլոշի Սիմոն 689
Հոհենլոհե, իշխան 115
Հոնթինգտոն 593
Հովակիմյան Ալ. 135
Հովակիմյանց 174
Հովան (հայդուկ) 241
Հովհյան Գր. 732
Հովհաննես Իմաստասեր 948
Հովհաննես քահանա 245
Հովհաննիսյան Աբգար 164, 780, 868, 963, 965
Հովհաննիսյան Աշոտ 12, 588, 966, 977
Հովհաննիսյան Արշ. 416, 941
Հովհաննիսյան (բժիշկ) 959
Հովհաննիսյան Հաչ. 925
Հովհաննիսյան Հովհ. 158, 806, 807, 914
Հովհաննիսյան Մ. 744
Հովհաննիսյան Մ. 219, 968
Հովհաննիսյան-Մատակյան Դայանե 146, 760, 773
Հովհաննիսյան Ռ. Փ. 12
Հովհաննիսյան Ս. 416
Հովհաննիսյան Տ. 373
Հովնաթան Նաղաշ 912
Հովնաթանյան Հակոբ 719
Հովնաթանյան Հովնաթան 912
Հովնանյան Ս. Վ. 12
Հովսեփյան Դարեգին 642, 767, 857, 885, 917, 918
Հովսեփյան Հ. 587
Հովսեփյան Ս. (Սուրին Ն.) 873
Հովսեփյան Վ. (աստղագետ) 948, 949
Հովսեփյան Վահան 460
Հովսեփյան 656
Հորդանանյան Մանուկ 718, 745
Հոֆ (նորվեգացի գնդապետ) 534
Հոֆֆենգաուզեն Ն. 179
Հոֆֆենգաուզեն Ս. 179
Հրայր (Արմենակ Ղազարյան) 242, 288, 469, 471, 475
Հրանդ տե՛ս Կյուրճյան Մելքոն
Հրաչյա (Հրաչյա Մարալ, Ղարիբյան Գրիգոր) 251, 253, 255
Հումբոլդտ Ա. 953
Հունո (Սալմաստեցի Հարություն աղա) 150, 234
Հուսեյն աղա 154, 269
Հուսեյին բեյ, տե՛ս Հուսեյն աղա
Հուսեյն Հաջի, տե՛ս Հուսեյն աղա
Հուստինիանոս կայսր 886

Ձերժինսկի Ֆ. 224
Ձիլոցյան 361

Ղազար (հայդուկ, ջոկատի պետ) 475
Ղազարյան Գարեգին 334, 587
Ղազարյան Հ. 679, 829
Ղազարյան Մ. Մ. 12
Ղազարոսյան Գ. 836
Ղազարոսյան Ն. 251
Ղազիկյան Ա. 905
Ղալաղյան Գ. 460
Ղալիպ փաշա 264
Ղամբարյան Պ. 373
Ղասարյան Մ. 960, 961
Ղարաջյան Գ. (Արկոմեդ Ս. Տ.) 148, 179, 217—219, 227, 339, 896, 966
Ղարդաշյան Ստ. 172, 173
Ղափանցյան Գր. 888, 921

Ղորղանյան Գ. 551, 839, 841
Ղորղանյան Կ. 839
Ղորղանյան Հովհ. 839
Ղորղանյան Հովս. 839
Ղորղանյան Մարիա (Մարիա Սվեցաուե) 839
Ղորղանյան Ներսես 839
Ղորղանյան (Դարիալի) Նինա 839
Ղորղանյան Ս. 180, 181
Ղորղանյան (Կորգանով) Վ. Դ. 837
Ղորղանյան-Տեր-Ղևոնդյան Հեղինե 839
Ղրիմյանոսյան Կիրակոս 254
Ղուկաս Վանանդեցի 948
Ղուկասյան Գասպար 571
Ղուկասյան Ղուկաս 875
Ղուկասով Աբրահամ (երկրաբան) 954
Ղուկասով 72, 302
Ղումրիկյան կարապետ 141
Ղևոնդյան (Տեր-Ղևոնդյան) Հակոբ Սարկավագ, տե՛ս Հակոբ Սարկավագ

Ճաղարբեգյան Հ. 913, 914
Ճանիկյան Հ. 835, 917
Ճանկուլյան Հ. 234
Ճապուրոֆ Պ. 674
Ճգնավորյանց 343
Ճերմակյան 495
Ճիննկոզյան Պ. 258—259
Ճիվանյան Մ. 859
Ճիվելեկյան Տ. 138, 878
Ճուղայի Հ. 798

Մադաթյան Գ. 221, 225
Մադաթյան Ն. 775, 847
Մադոյան Գ. Ա. 12
Մադիյան Հ. 855
Մաթոսյան Կ. 727
Մաթոսյան Հովհ. 727
Մաթորեզ Ժ. 690
Մաթևոսյան Պ. 703
Մալաքյան Գ. 777
Մալամա, գեներալ 374, 375, 891
Մալդոմ Ջեմա 186, 700
Մալեք Ջադե 715
Մալիյան Ստ. 689
Մալխաս (Հովսեփյան Ա. Կ.) 515
Մալխասյան Ալ. 360, 384, 403
Մալխասյան Է. Գ. 12
Մալխասյան Սոֆյա 663
Մալխասյան Ստ. 824, 892, 903, 909, 910, 929
Մալխասյան (տպարանատեր) 201, 969
Մալկոլմ Մակքոլ 125
Մալլուժեննո Դ. Ս. 959
Մալումյան Խ. 148, 179
Մախ 431
Մախսրաձե Ֆ. 225, 342
Մախոխյան Վ. 859
Մահար արքեպ. 761, 966
Մակգաան 124
Մակինցյան Պ. 618
Մակլակով Վ. 408, 451
Մակլեր Ֆր. 691
Մակոսանով 646
Մահտեսյան Ա. 708, 709
Մահտեսյան Է. 658, 859
Մահուրի Գևորգ 834
Մաղալյան Սեդրակ 82.
Մաղաքյան Արմ. 486
Մաղաքյան Պ. 820
Մամիկոնյան Աբշ. 825
Մամիկոնյան-Էնիկոլոպյան Ն. 719
Մամիկոնյան Կ. 173, 188
Մամիկոնյան Ջհանգիր Էնիկոլոպ 719
Մամիկոնյան Սուսաննա 662
Մամիկոնյան Վ. 677
Մամիկոնյան Վարդան 137, 157
Մամիկոնյաններ 918
Մամուլով 169
Մամուրյան Մաքենս 156, 158, 160, 166, 692, 780, 782, 783, 877, 896, 962, 970
Մայեր 945
Մայիլյան Անտոն 840, 843, 870
Մայլով 72, 302, 646
Մայորով Ֆ. 225
Մայսուրյան Օլգա 825, 829,
Մանանդյան Հակոբ 908, 910, 962
Մանդակունի Հովհան 906
Մանդելշտամ Ա. 528, 530, 574, 894, 975
Մանդինյան Ամիրան 822
Մանդինյան Սեդրակ 779, 781, 782
Մանն Պողոս 242, 244
Մանթաշյան Ա., տե՛ս Մանթաշով
Մանթաշյան Հ. 386
Մանթաշով 72, 73, 196, 302, 303, 312, 317, 343, 723
Մանիսալյան Ա. 674
Մանիսալյան եղբայրներ 674
Մանջավիձե Խ. 228
Մանսուրյան 105
Մանվելյան Ե. 960
Մանվելյան Լևոն 237, 781, 826, 915
Մանվելյան Մխքայել 825, 826
Մանուկյան Ազատ 838, 843
Մանուկյան Արամ 566, 567
Մանուկյան Ռ. 855
Մանուկյան Ե. 741
Մանուկյան Կ. 955
Մանուկյան Հ. 664
Մանուկյան Հովս. 738
Մանուկյան Մ. 656
Մանուչարյան Ա. (Ջար) 362—363
Մանուչարյան Մ. 425, 454, 460
Մանուչարյան թուլթեր 745
Մանուչարով(յան) Հովհ. 174, 177, 188, 638

Մաշուրյան Մ. 588
Մաշտոցեի Վ. 169
Մառ Ն. Յա. 559, 851, 855—887, 907—909, 921—925
Մասեհյան Հովհ. 719, 720
Մատակյան Հ. 146
Մարգար Վարժապետ 150, 185, 238, 240, 292, 967, 968
Մարիա, Ռուս. կայսրուհի 766
Մարի-Նվարդ 821, 822, 830
Մարկոզով 168
Մարկով 321
Մարկով Ա. 454
Մարկով Ի. 100
Մարկով Ն. II 452
Մարկովիչ Բ. 177
Մարկվարտ Հ. 887
Մարջանյան Կ. Ս. 12
Մարջանով Կ. 829
Մարսիալ Ռընե 690
Մարտիկ (Սարուխանյան Մարտիրոս) 262, 264
Մարտիկյան 522
Մարտիկյան Գր. 269
Մարտիկյան Ս. 221, 224
Մարտին Ջոն 702
Մարտինի էքել Առաքել 740
Մարտիրոսյան Ա. 425, 454, 460
Մարտիրոսյան Ն. 151
Մարտիրոսյանց 73
Մարտով 358
Մարուաշվիլի 457
Մարքս Կարլ 54, 129, 167, 168, 175, 192, 194, 215—223, 227, 330, 334, 335, 337, 342, 363, 432, 735, 863, 867, 935
Մաքսիմիլյան Վ. 681
Մաքսիմով 272
Մանսկի Վ. Տ. 277
Մեդեմ Վ. 422
Մեդվեդև Յա. Ս. 34, 35
Մելիք-Ադամյան Ա. 373
Մելիք-Ազարյանց Ա. 57, 73, 303, 304 448, 970
Մելիք-Ադամալյան Ադամալ 841
Մելիք-Ադամալյան Հ. 451
Մելիք-Ադամալով 323
Մելիք-Ադաջանյան Ալ. 432
Մելիք-Բախտամյանց 323
Մելիք-Բեգլարյան Հովս. 736
Մելիք-Գրիգորյան Բ. 151
Մելիք-Գրիգորյան Գ. 329
Մելիք-Դադյան Հ. (Հայկ-Ոննիկ) 147, 155
Մելիք-Հովսեփյան Հ. 329, 343
Մելիք-Ղարագյոզով 73
Մելիք-Մկրտչյանց Ստ. (Եխալի) 418
Մելիք-Շահնազարյան Գ. 421
Մելիք-Սարգսյանց Ս. 663
Մելիք-Ստեփանով 73, 456
Մելիք-Փարսադանով 73
Մելիքյան Արմենակ 826
Մելիքյան Արշավիր 332, 366, 431, 459, 875, 896, 941, 942
Մելիքյան Բալա 839
Մելիքյան Կ. 179
Մելիքյան Հ. 547
Մելիքյան Մելիք (Դեդուշկա) 227, 228, 335, 342, 359, 382, 425, 587, 588, 872, 874
Մելիքյան Պողոս վարդապետ 141
Մելիքյան Ռոմանոս 647, 838, 840, 841, 927
Մելիքյան Սպիրիդոն 836, 838, 842
Մելիքյան Ստ. 261
Մելիքյան Վ. 824
Մելիքով Կ. 169
Մելիքսեթ-Բեկ Լևոն 888, 927
Մելիքսեթյան Ս. Ա. 12
Մելքոն (Մելքում) խան 118
Մելքոն Միրզա 719
Մելքոնյան Գ. 727
Մելքոնյան Կ. 727
Մելքումյան Կ. 350
Մելքումյան Հ. 664
Մելքումովներ 650
Մեծարենց Միսաք 807, 811, 813
Մեհմեդ V 497, 504
Մեհմեդ Յավեր փաշա 671
Մեհրաբյան Ա. 221
Մեհրաբյան Բ. 844
Մեհրաբյան Վարդան 239
Մեղավորյան Հ. 188, 196, 220
Մեյե Անտուան 560, 691, 900, 901
Մեյերհոլդ Վ. 861
Մենդելեև Դ. Ի. 946, 947
Մեննելիք, Եթովպիայի թագավոր 732, 733
Մենշիկով Մ. 412
Մեննեիչյան Գ. 782, 951
Մեշտուճյան Գ. 677
Մեշտուճյան Վ. 678, 681, 682
Մեշչիկով Ի. 952, 958
Մեսխի Ս. 169
Մեսրոպ եպիսկ. 547
Մերզա Դյուլա 687, 688
Մերկերյան 256, 258
Մերչանով Սվետոսլավ (Սլավի) 670
Մըրզեսկու Գեորգե 677
Մըրմըրյան Հար. 912
Միանասարյան Մ. 781, 926
Միդհաթ փաշա 130
Միհանդրոնցև եղբայրներ 649
Միլլեր Վ. Ի. (Երկրաբան) 953
Միլլեր Վ. Յ. (արևելագետ) 768, 918
Միլյուկով Պ. 451, 526
Միլյուտին Դ. Ա. 99, 112
Միով 849
Միխայլովսկի 431

Միկոլաձե 601
Միկոյան Անաստաս 587, 588, 620, 623, 874, 969
Միհրան 417, 418, 474
Մինախորյան Վ. 421
Մինասյան Հովհ. (Մինաս օղլի) 150, 238
Մինասյան Սիմեոն 703
Մինդու, Բիրմայի թագավոր 738, 739
Միսակ Մամուկ 820
Միրախորյան Մ. 677, 899, 927
Միրազյան Գ. 823
Միրաքյան Մարտիրոս (բանվոր Շանթ) 340, 403, 404, 872
Միրզայան Հուլիոս, տե՛ս Մերզա Դյուլա
Միրզախանյան Ժ. 615
Միրզոյան 105
Միրզոյան Գ. 148, 174, 184, 185
Միրզոյան Հովս. 221, 224, 719
Միրզոյան Միք. 843
Միրզոյաններ (Միրզոններ) 72, 73, 302, 323, 421
Միրզոն 402
Միրիջանով Ս. 481
Միր Մհն 507
Միքայել Ռեատեն, տե՛ս Պատկանյան Միք.
Միքայելյան Կ. 880
Միքայելյան Միք. 863
Միքայելյան Վ. Ա. 12
Միքայելյան Քր. 148, 179, 195, 279, 280, 483
Մլեհ (Տամաճյան Աս.) 251, 253
Մխիթար Գոշ 734, 909
Մխիթարյան Աղեքսանդր 917
Մխիթարյան Վ. 588
Մխիթարյան Աբել վարդ. 925
Մխիթար Վարդապետ 910
Մխիթարյաններ 778, 881, 886, 887, 891, 900, 901, 908, 915, 927, 931, 950
Մխո (Աղբյուր Սերոբի Եղբայրը) 292
Մխո Շահեն (հայդուկ) 251
Մկրյան Մ. Մ. 12
Մկրո (ալաշկերտցի հայդուկ) 291
Մկրտիչ, Սսի Կաթողիկոս 136
Մկրտիչև Կ. Ա. 661
Մկրտչյան Ք. 460, 588
Մկրտումյան Գ. 202, 227
Մկրտումյան Հար. 739
Մհերյան Ք. 146
Մյասնիկյան Ալ. 424, 638, 753, 819, 896, 938, 939, 941, 966
Մյուլլեր Ֆր. 899
Մնակյան Մ. 822, 830
Մնացականյան Գ. (Բաբկենց Գ.) 235
Մնացականյան Պ. (Պիեր) 221, 224, 225
Մնացականով Ա. 663
Մնոյան Մկր. 486
Մոլիեր 822, 825
Մոլնար (Մոլնարյան Ա.) 689
Մոկացի Նահապետ 918
Մոմճյան Կ. 253
Մոմջյան Հ. 673
Մոմջյան (մեծահարուստ Ղրիմում) 653
Մոպասան 824, 862
Մոսեյան Գ. 243—245
Մոսինյան Վ. 370
Մոստիճյան Հար. 497, 696
Մովսիսյան Բենսե-Սահակ 927
Մորգան Ժակ դը 921
Մոցարտ 838
Մռավյան Ասքանազ 384, 403, 404, 413, 427, 587, 588, 872—874, 966
Մռավյան Վ. 588
Մսերյան Լ. 688
Մստո 269
Մուգաստեմ գերդաստան 723
Մուխտար փաշա 963
Մուհամմեդ էֆենդի 470
Մուսա բեյ 151, 277, 491
Մուսայան Գ. 656
Մուսին Տ. 588
Մուսյո Ալի 713
Մուստաֆա Փ. 169
Մուրադ 238, 242, 245, 470, 474—477, 486, 496
Մուրադբեգյան Խորեն արքեպ. 705
Մուրադյան Ա. 382
Մուրադյան Ա. 673, 692, 929
Մուրադյան Ա. Մ. 12
Մուրադյան Դ. Ա. 12
Մուրադյան Հ. 221
Մուրավևցկի Ս. 848
Մուրավյով Ն. 894
Մուրացան (Գրիգոր Տեր-Հովհաննիսյան) 153, 795, 796, 799—802, 828, 896, 914, 927
Մուրբ 681
Մուրզայան Մելքոն 173
Մուրթուլլա բեյ 265, 516

Յագուվ Ֆոն 528, 530, 532
Յազկևիչ 399
Յազմաճյան 781
Յակիմանակի 260
Յակոբսոն 945
Յակովլև Ն. Ն. 586
Յակուբովիչ Պ. 176
Յակուլով Գ. 864
Յաղուբյան Ե. 569
Յաղուբյան Լ. 403, 404
Յաղուպյան Լ. 254
Յաղուպյան Ք. 254, 256
Յաղուպյան Ս. 253—254
Յանովսկի Կ. Պ. 761—763
Յացկևիչ 375
Յոթնեղբայրյան Մ. 572

Յոննեսկու Օ. 679
Յոն Մելիք 680
Յորգան Ն. 675, 676, 682
Յուդենիչ 576
Յուզբաշյան Գ. 180
Յուժին-Սումբատով Ա. Ի. 829
Յում 941
Յուսուպ խան Հովսեփ 721
Յուսուֆ 572
Յուվանակի 261

Նադիր շահ 720
Նազարբեկ Մարո, տե՛ս Վարդանյան (Նազարբեկ) Մարո
Նազարբեկյան (Նազարբեկ) Ավ. 188, 190, 192, 194, 283, 484, 485
Նազարբեկյան Դ. 713
Նազարեթ (Կարեն-Սուրեն) 486
Նազարյան Ստ. 644, 768, 891, 902, 964
Նազարյան Տ. 781, 965, 967
Նազարյանց 343
Նազրմ փաշա 261, 489, 553, 574, 976
Նազիանզանցի Գր. 908
Նազիկ Մ. 303
Նաթալի Ե. 678
Նաթանյան Մ. 140, 151, 179
Նալբանդյան Գ. 733
Նալբանդյան Հովհ. 658, 839
Նալբանդյան Միք. 94, 109, 134, 138, 157, 159, 168, 174, 180, 183, 190, 222, 225, 638, 640, 642—644, 729, 736, 792, 796, 862, 874, 882, 895, 898, 902, 914, 927, 932, 933, 951
Նալբանդյան Տ. 839
Նալբանդով Բ. Կ. 638
Նալբանդով Ի. Կ. 638
Նալբանդովներ 653
Նալչաջյան Ա. 342
Նախշումյան 656
Նակաշիձե 356, 389
Նազաշ Մկրտիչ 911
Նասիրբեկյան Ա. 663
Նավասարդյան Բ. 143, 147, 168, 760, 958, 959, 965
Նավասարդյան Տ. 917
Նավարյան Ա. 678
Նար-Դոս (Միքայել Հովհաննիսյան) 791, 795, 801—803, 826, 914
Նարեկացի 912, 913
Նարիմանով Ն. 424, 430, 438, 560
Նարինյան 703
Նաֆիլյան Լ. 854, 855
Նելիդով 107, 248, 280, 281
Նեմիրովիչ-Դանչենկո Վլ. Ի. 829, 861
Նեչաև 169
Նեգվոյդով Ան. 175
Նեպրինցև Մ. 848
Ներսատով 527
Ներսես (Պետրոսյան Գ.) 261—262
Ներսիսյան Դ. 145, 148
Ներսիսյան Ներսես խան 694
Նժդեհ Գարեգին 671
Նիազի Դաուդ 133
Նիկայան Հ. 244
Նիկոլ (Տեր-Հակոբյան Ն.) 262
Նիկոլա 56
Նիկոլաևն Եկատերինա 172
Նիկոլաևն Նիկոլայ 172, 173
Նիկոլաևն Օլգա 172
Նիկոլայ I 28
Նիկոլայ II 351, 377, 380, 400, 410, 445, 463, 520, 580, 598, 764, 972, 975
Նիկոլայ Նիկոլաևիչ 580
Նիկոլայ, մեծ իշխան 729
Նիկոլաև 550
Նիկոլսկի Մ. 924
Նիկողայոս եպիսկ. 136
Նիկողոսյան Գր. 139
Նինիաշվիլի 403
Նիցշե 431
Նշկյան Կ. 144
Նշկյան Հ. 233
Նոբել եղբայրներ 57, 72, 302
Նորաշխարհյան Եղյա 256, 258
Նորաշխարհյան (Ենիտունյան) Հակոբ 253
Նորաշխարհյան Նշան իշխան 252, 254
Նորաշխարհյան (Ենիտունյան) Պապիկ իշխան 136
Նորաշխարհյան (Ենիտունյան) Սարգիս 253, 256
Նորատունկյան Դաբրիել 153, 581, 698
Նոնոս 908
Նուբար փաշա Նուբարյան 115, 117, 118, 727, 730
Նուրի բեյ 489
Նուրյան Հովհ. 110, 136

Շադով Ն. 453
Շադիկ (դերասանուհի) 821
Շաթիրյան Մ. 195
Շալյապին 863
Շավան Ռիննեդե 560
Շախովսկի 275
Շախտախտինսկի Մահմեդ աղա 406, 408
Շախրամյաններ 854
Շահազիզ Երվանդ 892, 914, 927
Շահազիզ Սմբատ 157, 768, 860
Շահամիրյան Շահ. 930
Շահբազյան Ստ. 673
Շահեն Ենովք 554
Շահին Էդգար 695, 862
Շահինյան Ա. 425, 588
Շահինյան Մարիետա 966

Շահինյանց Ե. 414
Շահինյանց Խ. 399
Շահխաթունյանց 925
Շահմալյան Ն. 839
Շահմուրադյան Ա. 731, 839
Շահնազար Հ. 146
Շահնազարյան Կ. 156, 692, 699
Շահնազարյան Հ. 460
Շահնազարով Ա. 663
Շահսուվարյան Ա. 873
Շահվերդյան Ալ. Ի. 836
Շահվերդյան Դանուշ 335, 425, 460
Շահվերդյան Ն. Կ. 654
Շահրիմանյան Մտ. 950
Շահումյան Մտ. 10, 91, 198, 199, 329, 333—335, 339, 340, 334, 360—366, 369, 387, 392, 393, 395, 403—407, 417, 420, 421, 424, 425, 427—431, 434, 461, 478, 479, 576, 586—588, 612, 620, 623, 650, 701, 753, 783, 784, 794, 818, 867, 871—874, 893, 896—898, 938, 941, 942, 964, 970—976
Շամբանյան Եղբայրներ 62
Շամշինյան Հարութ. 861
Շամտանձյան Միք. 880
Շամ-Քնշիշյան Փ. 256
Շանան Իբրահիմ 169
Շան-Գիրեյ 64, 312, 317, 616
Շանթ Լևոն (Սեդրոսյան) 615, 781, 817, 818, 826, 914
Շանհայե Ա. 888
Շանշիկ 323
Շանշյան Գ. 933, 934
Շաշյան Մ. 960
Շապանյան Ա. 859
Շապոշնիկյան 448
Շապովալով Հ. 174, 176
Շավերդովա Ն. Ս. 649
Շատալադյան Մ. 254, 255
Շարասան 880
Շարաֆ բեյ 374
Շաքիր աղա, տե՛ս Շաքիր փաշա
Շաքիր փաշա 250, 263, 265, 277, 508
Շելկովնիկով Բ. Մ. 105
Շենիկցի Մանուկ 475—477
Շեպելյով Ս. 179
Շերամ (Գրիգոր Տալյան) 834
Շերեմետև Ս. Ա. 16, 312, 458, 762, 967
Շեքսպիր 689, 701, 719, 822, 823, 825, 861
Շեֆիկ բեյ 511
Շեֆֆելովից 901
Շիլլեր 820, 822, 825
Շիմայի Գրեյ (Շիմայան Գրիգոր) 686
Շինգարև Ա. 451
Շիշմանյան Գար. 667
Շիշմանյան Գր. 683
Շիշմանյան Ն. 667
Շիշմանյան Ռուբեն 238, 471, 515
Շիրակացի Անանիա 908, 948—950
Շիրակյան-Աբեշյան 575
Շիրինկին 375
Շիրկով Վ. 517
Շիրվանզադե (Մովսեսյան Ալ.) 185, 237, 679, 694, 791, 795—800, 803, 824—826, 828, 856, 857, 860, 863, 866, 880, 914, 969
Շիրվանզադե Մ. 863
Շիրվանյան Հովհ. 186
Շիրվանյան Ն. 133
Շլյումբերգ 560
Շմիրլինգ 610
Շնորհալի Ներսես 911
Շոպեն 685
Շոպենհաուեր 431
Շորվայան (Շովրոյան) Ղազար (Հաղրո) 251, 253
Շչերբակով 356
Շչերբանինա Ն. Գ. 767
Շչերբատով, իշխան 850
Շտեյգեր-Կոլբե (քիմիկոս) 946
Շտերն Գ. 847
Շտեֆրնեսկու Մ. 682
Շտոկովիչ Ֆ. 102
Շույց 924
Շուկալով 604
Շուման 685
Շումլեր 956
Շուշանյան Ա. 404
Շուստով Ն. Լ. 305, 306, 369, 442, 616, 716, 970
Շուվալով 112, 118—120
Շևքեթ Մահմուդ փաշա 489, 501

Ոսկան Երվանդ 863
Ոսկան Երևանցի 691
Ոսկան Հակոբոս 722
Ոսկան (Ոսկանյան) Մտ. 156, 692, 970
Ոսկանյան Արուս 826
Ոսկանյան Եաչ. 703
Ոսկանյան Մ. 521
Ոստանիկյան Եաչ. 677
Որբերյան Ռուբեն 807
Որսորդ Գևորգ 473

Չագրյան Ավագ 253, 256
Չագրյան Հարութ. (Չոլաք վարժապետ) 136, 234
Չագրյան Պետրոս 253, 256
Չագրյան Փանոս 256
Չաթո (Հայդուկ) 238
Չալարյան Ս. 651
Չալարով Ե. 73, 399
Չալխուշյան Գր. 640
Չախարյաշ (Պոդյասկայա) Ս. 179
Չակալարով 481

Ջամչյան Մ. 882, 884, 892
Ջամչյան Ջակոմո (Հակոբ) 752, 943—946
Ջայկովսկի 684
Ջավուշ Գևորգ (Ադամյան Գևորգ) 242, 245, 288, 470, 475—477, 973
Ջավուշ Դանիել 238
Ջավուշ Հովհ. 672
Ջավուշ Նազարեթ 251—253, 256, 569
Ջարենց Եղիշե 969
Ջարդց Արամ 807—808
Ջելաբով 305
Ջելիձե Վ. 382, 386
Ջեխով Ա. 828
Ջեյմպրս 62
Ջերազ Մինաս 113—115, 122, 123, 134, 139, 149, 159, 185, 696, 697, 700, 771, 772, 774, 783, 964, 966, 967
Ջերնիչև Ռաֆայել 176
Ջերնիչևսկի Ն. Գ. 158, 173, 190, 215, 432, 650, 867, 944
Ջերնյան Մ. Գ. 97
Ջերնոզուբով 541, 548, 549, 552
Ջերչիլ 542
Ջերջեղ Միք. 676
Ջերքեզիշվիլի Վ. 169
Ջերքեզյան Գ. 169
Ջերքեզյան Մ. 677
Ջեքի (Ջեքյան) Գր. 689
Ջիլլան Արշակ 263
Ջիհանով 64
Ջիբունի Տ. 918
Ջիլինգարյան Արշ. 713
Ջիլինգարյան Գ. 713
Ջիլինկարյան Ա. 781
Ջիլինկերյան 292
Ջիլինկերյան Գր. 156, 166
Ջիչեքճյան Տրդ. 821
Ջիքջե Սարաֆ Օնիկ 805, 880
Ջխենձե Ն. 451, 601
Ջխենկելի Ա. 451, 452, 612
Ջմշկյան Գևորգ 821—823
Ջմշկյան Սաթենիկ 822, 824
Ջյսկյուրյան Տ. 554, 880
Ջոլաղյան Եղբայրներ 252
Ջոպանյան Արշակ 110, 238, 249, 261, 547, 581, 694, 695, 857, 879, 881, 911—914, 970
Ջոփուրյան Էդ. 486
Ջուրինաձե Գ. 303
Ջուբար Գևորգ 643, 828
Ջուխաչյան Տիգրան 821, 829—833, 838, 839, 841, 842, 970

Պալասան Թևոդոր (Աստվածատուր) 681
Պալասանյան Ստ. 692, 781, 889, 902, 967
Պալաքյան Գր. վրդ. 521
Պալաքյան Տ. 742
Պալճյան Ա. 948
Պալճյան Մարգիս 254
Պալմերստոն 283
Պալյան Եր. 364, 870
Պալյան Լ. 854
Պալյան Կ. 854, 855
Պալյան Հ. 679, 693, 854
Պալյան Ն. 693, 854
Պալյան Պ. 854
Պալյան Ս. 854
Պահլավունի 679
Պայծառ 834
Պանիրյան Պ. 482
Պաշինո Դ. Ա. 739
Պապահճյան Թորոս վրդ. 854
Պապայան Նաղեժդա 650, 839
Պապաջանյան Մ. 451, 452, 582, 611—612
Պապաջանյան Վ. 146, 964
Պապիկ իշխան (Ջելիմնի քաղաքագլուխ) 138, 965
Պապիկյան Հակոբ էֆենդի 497, 499
Պապովյան Ա. 547
Պապպ Գուստավ 687, 688
Պավլով Ի. Պ. 952
Պատկանյան Գ. 891
Պատկանյան Միք. 950, 960
Պատկանյան Ռափայել 106, 109, 157, 166, 187, 640, 641, 643, 644, 760, 768, 783, 862, 927,
Պատկանյան Քերովբե 885, 887, 904, 908, 924,
Պարզյանց Սուրբատ արքեպ. 394
Պարթևեմ 260
Պարթևյան 62
Պարթևյան Ս. 697, 700, 880
Պարնհայմ 260
Պարոնիկյան Տ. 221
Պարոնյան Հակոբ 156, 157, 166, 646, 688, 781, 784, 785, 789—791, 805, 825, 875—879, 967
Պարվուս 219
Պարունակյան Մ. 961
Պեդերսըն Հոլգեր 901
Պեզճյան Հար. ամիրա 961
Պեշեքերով եղբայրներ 648
Պեշեքերով Պետրոս 175, 176, 638
Պեշեքերով Պլատոն 175
Պեշեքերով Սերոբ 174, 175, 638
Պեշիկթաշլյան Մ. 156, 820, 912
Պեյլերյան Մարի 249
Պելլերյան Տ. 140, 186, 667, 668
Պեննե 554
Պենրվե 560
Պեննկյան Ս. 679, 821, 929, 830
Պեննեհյան 464
Պետրման Հ. 899

Պետրե Թ. Միխիր 680
Պետրեսկու Յանկու 681
Պետրիչեյկու Համդեու 682
Պետրոս (Նիռովպիայի դեսպան) 732
Պետրոս Մեծ 520, 888
Պետրոսյան Ալ. 147—148, 179
Պետրոսյան Ալ. (Պետո) 239, 262, 264
Պետրոսյան Գ. (Օրդուբաթյան) 822, 824, 825, 828
Պետրոսյան Հ. Ա. 12
Պետրոսյան Հար. 744
Պետրոսյան Հովհ. 744
Պետրոսյան Մ. 820
Պետրոսով 646
Պետրովիչ 684
Պերայն 949
Պերովսկայա Սոֆիա 221
Պերպերյան Ավ. 892
Պերպերյան Ռիքեոս 772, 774, 780, 783, 968
Պերևերզևն Պ. 612
Պըլըգյան (Բուլուկլիու) Գ. 681
Պըլըգյան (Բուլուկլիու) Թ. 681
Պիկո Ժորժ 561, 579
Պիճիկյան Գ. 364
Պիխիդես Գ. 908
Պիտոև 72, 302
Պլեխանով Գ. Վ. 191, 216—218, 222, 337, 359, 362, 429, 432, 896, 966
Պլըչինտար Դ. 686
Պլևե Վ. 352, 353
Պյուպյուլյան 777
Պոբեդոնոսցև Կ. Պ. 138
Պոգնանսկի 64
Պլևկ Յոհան 685
Պոլենով Վ. 864
Պոլմար 369, 381, 382
Պոլսեցի Աբրահամ 950
Պողոս 671
Պողոս Նուբար փաշա 521—523, 531, 561, 581, 582, 696, 730, 975
Պողոսյան Ավ. 547
Պողոսյան Գ. 269
Պողոսյան Հ. 587, 874
Պողոսյան Հովհ. 666
Պոյաճյան Համբարձում, տե՛ս Մուրադ
Պոպով 226
Պոպով Մ. 176, 177, 638
Պոտտո Վ. 894
Պոտուրյան Մ. վարդապետ 678, 687, 688, 905, 911, 912
Պողոյան Պերճ (Տեր-Առաքելյան Հովհ.) 158, 238, 757, 783, 784, 791—793, 927, 973
Պրնյանսե Ֆր. 280, 479—481, 695
Պրժեվալսկի Ն. Մ. 891
Պրոտոգերով Ալ. 672
Պրուդոն 222
Պրունկուլյան (Բրունգուլյան) 683, 685
Պրուսալյան Հովհ. 186, 700
Պուշկին Ա. Ս. 860
Պուսե 775
Պրուշկևիչ 412
Պուրսալ Ժան, տե՛ս Պրուսալյան Հովհ.

Ջարարդարի Ի. Ս. 172, 173
Ջալալյանց 925
Ջամալի 834
Ջանան Մկրտիչ 830
Ջանդիերի Լ. 169
Ջանփոլադյաններ 58, 73, 305, 442, 650
Ջավախիշվիլի Ի. 888
Ջավահիր (Բաֆֆու քույրը) 239
Ջափարիձե Ա. 225—226
Ջափարիձե Պ. 430, 424, 438
Ջաֆարով Մ. 451, 612
Ջաֆարով Ն. 382
Ջելլաթ (Զրփանոսյան Կ.) 251, 252
Ջեմալ Ազմի 575
Ջեմալ փաշա 533, 538, 572, 574, 575, 975
Ջիակոմետի 823
Ջին Թորոս 251
Ջիվանի (Բենկոյան-Լևոնյան Ս.) 158, 834, 835
Ջիվիլեգյան Ալ. 893
Ջհանգիր խան 719
Ջունդ եղբայրներ 674, 685
Ջրբաշյան Տ. 486
Ջրպետյան Հակոբ Շահան 691
Ջևադ բեյ 497, 498
Ջևդեթ-բեյ, տե՛ս Ջևդեթ փաշա
Ջևդեթ փաշա 549, 565, 568

Ռադեցկի Ֆ. Ֆ. 100
Ռահիֆ բեյ 141
Ռակովսկի Գ. 669
Ռահիմ խան 714
Ռահիմով Ի. 169
Ռամիշվիլի Նոյ 407
Ռաշմաճյան Տ. 781, 783
Ռայնհա Յան 224
Ռասթկելենյան Հար. 572
Ռասուլ-զադե 583
Ռավչինսոն Հենրի 721
Ռաֆայելյան 653
Ռաֆայիլով Ի. 175
Ռեդիգեր 409
Ռեդլիխ Կ. 954
Ռեմզի Մուստաֆա փաշա 255, 257—259, 497, 498
Ռեմզի փաշա, տե՛ս Ռեմզի Մուստաֆա փաշա
Ռեշադի 483
Ռեստեն Միք., տե՛ս Պատկանյան Միք.
Ռզա բեյ 274
Ռիդ Ջոն 287

Ռիզա Ահմեդ բեյ 230, 485
Ռիզա Թևֆիկ բեյ 498
Ռիկարդո Դ. 936
Ռիշելյե, կարդինալ 691
Ռոնդել Հ. 690
Ռիպս Սոֆի 483
Ռիվոլա Ֆրանչեսկո 691
Ռշտունի Անտոն 820
Ռշտունի Գ. 821
Ռշտունի Վ. Հ. 12
Ռոբեսպիեր 159
Ռոբինզոն Էմիլա 578
Ռոբինզոն Էմիլ 702
Ռոբինզոն Ջոն 578
Ռոդեն Օգյուստ 863
Ռոդիչև Ֆ. 408, 451
Ռոլեն-Ժեկմեն Մ. 20, 22, 894
Ռոմյանկո Մ. Վ. 608
Ռոմանով Մ. Ն. 16, 100
Ռոմանով Ն. Ն. 100, 608, 976
Ռոմանչենկո Տ. 177
Ռոմաշկա Աստվ. 684
Ռոջերս գերդաստան 701
Ռոստոմյան Դ. 759, 956
Ռոստևանով 646
Ռոտշիլդ 57, 72, 302, 343
Ռուբեն (հայդուկ) 291
Ռուբենի Ալ. (Սատուրյան) 340, 364
Ռուբենս 775
Ռուսինյան Նահ. 693, 875, 963
Ռուսինյան Ն. 159, 166
Ռուսճուգլյան 110
Ռևաղով 849

Սաադեդդին փաշա 216, 263—265
Սաադուլլա բեյ 107
Սաբահեդդին 511
Սաբիր 390
Սագալյան Ա. 879
Սագրդ Հովհ. 878
Սադրազամ Քյուչուկ Սայիդ փաշա 480, 481
Սազայի 834
Սազոնով 522, 527, 528, 531, 533, 580, 581
Սաքիբ խան 713, 715
Սախդ Հալիմ փաշա 575
Սալար-էդ Դովլե 715
Սալիհ փաշա 475
Սահակ կաթողիկոս 569
Սահակ վարդապետ 263
Սահակյան Ա. 547
Սահակյան Բ. 460
Սահակյան Կ. 667
Սահակյան Մ. 948
Սահակյան Ս. 587
Սաղաթելյան Հ. 373, 406, 408, 427, 428, 451
Սաղաթելյանց Մ. 948
Սամյան Գ. 717
Սամոյլով Ֆ. 453
Սամոսացի Ար. 949
Սամվելյան Խ. 927, 929
Սայադ-Նովա 859
Սայիդ-Հալիմ փաշա 534
Սայքս Մայքլ 561, 579
Սանասարյան Մ. 775
Սանդ Ժորժ 791
Սանդալ տե՛ս Պետրոսյան Ալ.
Սանդերս Ջոն Լիման 525
Սանոսյան 727
Սապահ-Գյուլյան Ս. 512, 513, 679, 941, 977
Սավանելի Խ. 169
Սավֆեթ փաշա 98, 107
Սատթար խան 438
Սարահեդդին իշխան 485
Սարաճյան Հովս. վարդապետ 481, 704
Սարաջև Ալ. 172
Սարաջև Դ. Զ. 59, 369, 388, 968, 973
Սարաջև(յան) Կ. 839
Սարաֆով Բ. 481, 670
Սարգիս Ս, 736
Սարգիսբեկով Հ. 663
Սարգիսյան Բ. 886, 905, 910, 915
Սարգսյան Ա. 138
Սարգսյան Ե. Զ. 12
Սարգսյան Լ. 196, 373
Սարգսյան Լևոն 868, 913
Սարգսյան Ներսես վարդապետ 925
Սարգսյան Ս. 224
Սարգսյան Վ. 832
Սարդարյան-Արևշատյան Ա. 823, 825
Սարբյան Մկրտիչ 142, 151, 776
Սարիբեկով Յ. 169
Սարկիսով 169
Սարկիսով Վ. Ս. 849
Սարյան Մարտիրոս 864, 865, 964
Սարուխանյան Ա. 895
Սարուխանյան Գ. 664
Սարուխանյան Հովհ. 425, 450, 460, 588
Սարուխանով Ի. 228
Սափարյան Հ. 951
Սաֆարյան Ար. 174, 179
Սաֆարյան Պ. 727
Սաֆարյան Վ. 179
Սաֆարյան Օ. 173, 179
Սաֆարով(յան) 227, 303
Սաֆարովա Ս. 824
Սաֆրազյան Ալմա 823
Սաֆրազյան Ստ. 823
Սաֆրաստյան Ար. 486
Սեբաստացի Մուրադ, տե՛ս Մուրադ
Սեբեոս 909
Սեթյան Մ. 737
Սեիդ Ալի շեյխ 227, 505, 507, 515

Սելիֆ Ուստա 731
Սելյանով 442
Սեմերճյան Հ. 832
Սեպելյան Կ. 224
Սեպուհ (Քեռյան Երվ.) 513
Սետեֆճյան Ռ. 820, 821
Սեֆերյան Մխո 150
Սեֆիլյան Մկր. 186
Սեֆերովներ 659
Սերնբրյակովներ 653
Սերեմճյան Գ. (Պետո) 481, 670
Սերենկուլյան Վ. (Հովհ.) 471, 498
Սերեվէք բեյ 250
Սերոբ 469
Սերովկին Ալ. 458
Սերվանտես 689
Սերվիչեն (Սերովբե Սերվիչյան) 114—115, 118, 159, 166, 960
Սերվուտին խան (Հովսեփյան Ղուկաս) 721
Սիամանթո (Յարճանյան Ատոմ) 238, 554, 807, 813—815, 817, 880
Սիլյե 578
Սիլվիո-Ռիչչի 483
Սիխուրալիձե Ի. 303
Սիմենս եղբայրներ 57, 302
Սիմյան Հարութ. 572
Սիմոնյան Ս. 308
Սիմոնյան Վ. 844
Սիմոնյանց Գ. 164, 868
Սիմոնովիչ Ս. 953
Սինա 908
Սինանյան Ա. 838, 839
Սինանյան Գրիգոր 838
Սինանյան Գևորգ 839
Սինանյան Թագուհի 838
Սինանյան Խորեն 948, 949
Սինանյան Հարություն 838, 839
Սինանյան Հովսեփ 838, 839
Սինանյան Պողոս 697
Սինանյան Վերոնիկ 838
Սիսմոնդի 939
Սիրանույշ 643, 650, 679, 731, 822, 824—826, 828—831
Սիփահդար 714
Սլո 492
Սկլյարենկո Ա. 217
Սկոբելև Մ. 451
Սկրյաբին 510
Սմբատյանց Մեսրոպ արքեպ. 924, 925
Սմիթ Ադամ 593, 931
Սմիռնով Յա. Ի. 922
Սմիրնով Գ. Մ. 954
Սյունի Ա. 671
Սյունի Գ. 775, 843
Սյունիք 656
Սյուրմելյան Ա. 722
Սոլոզուբ Ֆ. 559
Սոլովյան Հ. 495, 587, 651
Սոլսբերի, լորդ 115, 116, 118, 119, 121, 124
Սոխիկյան Ա. 350
Սոկոլով (իրավաբան) 449
Սոկոլով Պ. (հայգուկ) 670
Սոկոլովսկի Գ. 360, 384, 404, 406, 425, 430, 459
Սողո 290
Սողոմոնյան 186
Սողոմոնով Հ. 73, 306
Սողոմոնյան Ազնիվ 663
Սողոմոնյան Անդրանիկ 663, 679
Սոնգոտյան Խ. 687, 688
Սոսե (Աղբյուր Սերոբի կինը) 292
Սոսյուր Ֆերդինանդ 900
Սոֆոկլես 689
Սպաղանցի Մակար 241, 290, 470, 475—477
Սպանդարյան Սպանդար 164, 868, 965
Սպանդարյան Սուրեն 10, 333—335, 366, 387, 392—396, 399, 414, 416, 424, 425, 430, 461, 559, 753, 783, 784, 828, 868, 871, 872, 896, 898, 939, 941, 973, 974
Սպարտալյան Հակոբ 961
Սպարտալյան Հովհ. 961
Սպենդիարյան Ալ. 658, 838—843, 860, 955
Սպենդիարյան Լ. 955
Սպենդիարյան Հ. 373, 547
Սպենդիարյան Յու. 657
Սպենդիարյաններ(ովներ) 653, 659
Սվազլ Մհերան 186, 700, 701, 708
Ավազլյան Մ., տե՛ս Սվազլ Մհերան
Սվաճյան Հար. 106, 729, 875, 962
Սվաճյան Վ. 839, 841
Սվերբեև 527, 528
Սվերդլով Յա. Մ. 655
Ստալին Ի. (Ջուղաշվիլի) 226, 424
Ստանիսլավսկի Կ. 861
Ստասովա Ե. 430
Ստեփան 150
Ստեփանե Ե. 780
Ստեփանյան 105
Ստեփանյան Ալ. (Սև Սանդրո) 147
Ստեփանյան Կ. 373, 547
Ստեփանյան Հակոբ 950
Ստեփանյան Հովհ. 825
Ստեփանյաններ 652
Ստոլետով Ն. Գ. 100
Ստոլիպին 410, 411, 413
Ստոյանով Ա. Ա. 953
Ստապանի Ա. 872
Ստրանգֆորդ 698
Ստրժիգովսկի 856, 923
Ստուկա Պ. 224
Ստրուվե 408
Սրապիոնյան Մ. (Լուկաշին) 638, 644

Սրմազաշյան Լուսիկ 677
Սրվանձտյանց Դ. 46, 62, 123, 133, 135, 152, 153, 211, 773, 782, 916—918, 921, 925, 926, 963, 967
Սրվանձտյան Վ. 832
Սուրոտինա Վերա 173
Սուրոտինա Օլգա 173
Սուլեյման բեյ 250, 268
Սուլթանով Մահմեդ 346
Սուխոմլին Վ. 176
Սուխովո-Կոբիլին Ա. 822
Սունդուկյան Գաբրիել 147, 760, 784, 791, 793—796, 804, 820, 821, 866, 965, 974
Սունյանց Հակոբ 174
Սուշոն (գերմ. ծովակալ) 538, 975
Սուչչինսկի Անտոն 458
Սուչչինսկի, գեներալ 610
Սուրաբյան Ս. 829
Սուրենյան 105
Սուրենյան Ե. 256
Սուրենյան Կ. 256
Սուրենյան Ստ. 839, 841
Սուրենյանց Վ. 848—849, 856, 857, 860, 861, 864, 927
Սուրխաբյան Հ. 874
Սուփայաթ (Բիրմայի թագուհի) 739
Սուքիասյան Կարապետ 251
Սուքիասովներ 650
Սևակ Ռուբեն 554, 807, 817, 880
Սևյան Վ. Դ. 12
Սևումյան Լյուսի 826
Սևումյան Օվի 827, 828, 831

Վագներ Ի. 948
Վադդինգտոն Վ. Հ. 115, 119, 124
Վազգեն (Տերոյան Տ.) 261
Վալենտին Ի. 954
Վախթանգով Ե. Բ. 647
Վախթանգով Տ. 340
Վաղարշյան Վ. Բ. 647
Վահանյան Հմ. 495
Վանանդեցի Մաթևոս 948
Վանգենհայմ 525, 533
Վանդալ Ա. 894
Վանդերվելդե 483
Վանիկ 554
Վանչիր 826
Վասիլև 605
Վասիլև Կոնտա 679
Վարանդյան Մ. (Հովհաննիսյան) 413, 941
Վարդան 291
Վարդանյան Ա. 425, 460, 588
Վարդանյան Ալ. 227
Վարդանյան Անուշավան 342, 432, 820
Վարդանյան (Նազարբեկ) Մարո 188
Վարդանյան Տիգրան 917
Վարդանյան Տրդատ 146
Վարդանյան Օնիկ 486
Վարդանով Վ. Ի. 952
Վարդգես տե՛ս Սերենկուլյան Հովհ.
Վարդկերես Ֆոն Պրունկուլ 684
Վարդկերեսովիչ Ստ. 683
Վարդկերեսովիչ Սևերին 685
Վարդիկյան Մակար 839
Վարդովյան Հակոբ 820, 821, 829, 830
Վարդ-Պատրիկյան Հ. 234
Վարդուհի (Նամուրազյան) 822, 823
Վարդումյան Դ. Ս. 12
Վարժապետյան Ներսես պատրիարք 109, 110, 113, 120, 122, 771, 774, 965
Վացեկ Ի. 226
Վարուժան Դանիել (Չրպուքքարյան Դանիել) 554, 807, 808, 813—817, 880
Վաքր Օգյուստ 825
Վեդենև Իվան 458
Վելունց Սարգիս 664
Վեմյան Ավ. 143
Վեռլեն 862
Վեսելովսկի Ա. Ն. 768
Վեսելովսկի Յու. 559
Վեսպեր 486
Վեստենենկ 534
Վերդի 838
Վերմիշյան Ալ. 179
Վերմիշյան Ս. 386
Վերմիշյան Ք. 624
Վերնադսկի Վ. 944
Վերֆել Ֆրանց 569
Վիթթո Հենրիկո 260
Վիլդենբրուխ 824
Վիլհելմ II կայսր 281, 285
Վիլշտետեր 945
Վիլֆրուա Գիյոմ 691
Վինդիշման Ֆրիդրիխ 899
Վիշաու 57, 302
Վիսլիցենուս 946
Վլիսլոցկի Ֆոն Հենրիկոս 686, 688
Վիտաե 355
Վոգաու Ֆ. Մ. 304
Վոլնիցկի 619
Վովչոկ Մարկո 177
Վորոնցով Մ. Ս. 374
Վորոնցով-Դաշկով Ի. Ի. 322, 323, 374, 375, 377, 380, 389, 407, 413, 445, 520, 521, 539, 547, 576, 598, 608, 764, 972
Վորովսկի Վ. 426
Վրթանեսյան Մ. 740
Վրչարյան Օ. 687
Վրուբել 863
Վրույր Արամ 663—665, 831, 921
Վուլկան Պետրու 675

Տաճեացի Դրիգոր 950
Տալյան Պայծառ 777
Տաղավարյան Հ. 261, 498
Տաղավարյան Ն. 780, 951
Տամատյան Մ. 242, 561, 563, 581, 968
Տաշիր (Հովյան Ս.) 484
Տաշյան Հակոբոս 886, 900, 904, 905, 907
Տատյան Առաքել բհ. 107
Տատյան Հարություն փաշա 280—281
Տատյաններ 83
Տարագրոս 921
Տարասով Հովհ. 646
Տարատինով Ն. Պ. 58
Տեմիրճիպաշյան Եղիա 238, 780, 782, 879
Տեմիրճիպաշյան Լ. 521
Տեսլենկո 408, 449
Տեովլաթյան Ղուկաս 571
Տեովլեթյան Գ. 656
Տեր-Ակոպով 72
Տեր-Ակոպով Մ. 169
Տեր-Ալեքսանդրյան Գևորգ 917
Տեր-Աստատուրյան Դմիտրի 147
Տեր-Ավետիքյան Ե. 60, 310, 967
Տեր-Ավետիքյան Ս. 406, 408
Տեր-Բարսեղյան Հ. 181
Տեր-Գաբրիելյան Գ. 948
Տեր-Գևորգյան Ալեքսի 739
Տեր-Գրիգորյան 646
Տեր-Գրիգորյան Էմիլ 825, 826
Տեր-Գրիգորյան Սիմոն 145, 179, 182
Տեր-Գրիգորյան Սրապիոն 145, 146
Տեր-Դավթյան Գևորգ 822—824
Տեր-Դավթյան Հովսեփ 839
Տեր-Զաքարյան Հովհ. 146, 615
Տեր-Թոդիկ 787
Տեր-Հակոբյան Կարապետ 251, 253
Տեր-Հարությունյան 228, 303
Տեր-Հարությունյան Արտեմ 227
Տեր-Հարությունյան Նիկ. 143
Տեր-Հովհաննիսյան Գ. 495
Տեր-Հովհաննիսյան Լ. 425
Տեր-Հովհաննիսյան Հ. 780
Տեր-Հովհաննիսյան Հ. Մ. 850, 852
Տեր-Հովնանյանց Հ. 888
Տեր-Հովսեփյան Լևոն 403, 459
Տեր-Ղազարյան Ավ. 254
Տեր-Ղազարյան Ղ. 364
Տեր-Ղազարյան Ն. 364
Տեր-Ղազարյան Պ. 143
Տեր-Ղուկասով Ա. 101, 102, 105, 115
Տեր-Ղուկասով, գեներալ 963
Տեր-Ղուկասյան Մ. 955
Տեր-Ղևոնդյան Ան. 938, 842
Տեր-Ղևոնդյան Հ. 155
Տեր-Ղևոնդյան Ն. 781
Տեր-Մաթևոսյան Տ. 308
Տեր-Մարուքյան Ա. 641, 862
Տեր-Մելիքյան Բ. 304
Տեր-Մելիքով Գ. 848
Տեր-Մինասյան Ե. 907
Տեր-Մինասյան Խ. 861
Տեր-Միրաքյան Հ. 373
Տեր-Միրաքյան Հովհ. 783
Տեր-Միքայելյան Ի. 613
Տեր-Միքայելով 646
Տեր-Միքելով Գ. 849
Տեր-Մկրտչյան Ավ. 661
Տեր-Մկրտչյան Գ. (Մխաբան) 148, 179, 182, 886, 907—910, 921, 924
Տեր-Մկրտչյան Կ. 886, 907, 910
Տեր-Մկրտչյան Կարապետ վարդապետ 394
Տեր-Մկրտչյան Նիկ. 661
Տեր-Մովսեսյան Հ. 160, 180
Տեր-Մովսիսյան Մ. 921
Տեր-Նիկողոսյան 402
Տեր-Պետրոսյան Պ. 62
Տեր-Պետրոսյան Մ. 237
Տեր-Պետրոսյան Սիմոն, տե՛ս Կամո
Տեր-Պետրոսյանց Գ. 396
Տեր-Պողոսյան Ա. 953
Տեր-Պողոսյան Սամսոն («հեռնքի» հերոս Վարդանը) 102
Տեր-Սահակյան 456
Տեր-Սարգսյան 310
Տեր-Սարգսյան Ա. 421
Տեր-Սարգսյան Աշխեն 826
Տեր-Սարգսյան Խ. 414
Տեր-Սարգսյան Մ. 826
Տեր-Սարկիսով (Սաթունց) Ք. Բ. 849
Տեր-Սիմոնյան Սիսակ 221, 224, 225
Տեր-Ստեփանյան Ս. 221
Տերմեն Ռ. Ի. 518
Տերյան Վահան 521, 807, 811—813, 863, 872, 914, 966
Տերվիշյան Սերովբե 900
Տեռեերյան Արսեն 914
Տեռեերյան Ղ. 931
Տեռեերյան Մհ. 677
Տիգրան Զավեն 514, 515
Տիգրան, հայդուկ 291
Տիգրան II 889
Տիգրանյան Արմեն 840, 842, 964
Տիգրանյան Գևորգ 917
Տիգրանյան Լևոն 146, 957, 965
Տիգրանյան Հ. 451
Տիգրանյան Ն. 835, 839, 841
Տիգրանյան Ս. 373, 406, 408
Տիգրանյան Ս. 910
Տիմոթեոս Կուզ 907
Տիմոթեոս Վարդ. (Հասան Կալե վանքի) 268
Տիրացյան Արտաշես 486

Տմլաքյան Պետրոս 569
Տյուսաբ Սրբուհի (Վահանյան) 772, 784, 791, 970
Տյուրիկյան Ավագ 571
Տնտեսյան Եղիա 126, 831, 837
Տոլպաշյան Մինաս (Գայլ Վահան) 474
Տոլստոյ Գ. 762
Տոլստոյ Լ. Ն. 783, 796, 863, 880
Տոկաթսկի Ն. 921
Տողրամաճյան Վահան (Մանվելյան) 471
Տոնիկյան Ալ. 664
Տրանկու-Ճաշ Գր. 677
Տրդատյան Տ. 333
Տրոցկի 358
Տրուխին 550
Տուտյան Ա. 727
Տևկանց (Ս. Տեր-Սարգսեանց) 152

Բամիշվիլի Ն. 609
Բաֆֆի (Հակոբ Մելիք-Հակոբյան) 86, 102, 106, 107, 139, 146, 150, 152, 153, 156—158, 160, 162, 166, 183—186, 239, 701, 702, 717—719, 784—788, 796, 866, 878, 895, 927, 966
Բաֆֆի Աննա 701
Բաֆֆի Արամ 697, 701
Բաֆֆի Արշակ 701
Բևպեճյաններ 854
Բոդին Պ. 174

Ցեյտլին 455
Ցըրանու (Ցարանյան) Դ. 676
Ցիմմերման 531
Ցխակայա Միխա 225, 359, 405, 424

Ուայլ 861
Ուբեյդ-Ուլլա շեյխ տե՛ս Օբեյդուլլա
Ուիթուճյան Գրիգոր 684
Ուիթուճյան Գևորգ եպիսկ. 677, 696
Ուիթուճյան Կ. 875, 879
Ուիթուճյան Մ. 693
Ուլյամս 263, 265
Ուիլյամս Ա. 578
Ուլյանով Ա. Ի. 179
Ուխտանես եպիսկ. 908
Ունճյան Աբրիգ 774
Ուշինսկի Կ. Դ. 779, 781, 783
Ուպարին-Ուշարով 738
Ուրաս Էսատ 573

Փանյան Մելքոն 139
Փանոսյան Կարապետ 113, 133, 774, 876
Փառանձեմ, դերասանուհի 824
Փարամազ (Սարգսյան Մ.) 554
Փարեմուդով Ա. 892
Փարթամյան Վ. Հ. 12
Փարպեցի Ղազար 906, 910
Փարսադան, Հայդուկ 291
Փարսադանյանց Ա. 663
Փարսադանով 227
Փարվանյանց Բ. 619
Փափազյան 666
Փափազյան Գարեգին 698, 701
Փափազյան Դավիթ 486
Փափազյան Խաչիկ 820
Փափազյան Ղևոնդ քահանա 677, 678
Փափազյան Մ. 925
Փափազյան Ստ. 110, 113, 117, 118, 123, 771
Փափազյան Վահրամ 731, 826, 830, 831, 966
Փափազյան Վրթանես 61, 158, 211, 495, 615, 677—679, 719, 781, 795, 800, 801, 826, 880, 897, 915
Փափովիչ Ա. 960
Փեմբեջյան 727
Փեշնեքերով Պ. տե՛ս Պեշնեքերով Պետրոս
Փեշնեքերով Ս. տե՛ս Պեշնեքերով Սերոբ
Փեշտիմալճյան Տ. 138
Փիլիպոս Գ. Հանդուգն, թագավոր 690
Փիլիպոսյան Կ. (Ստեփանյան Հար.) 148
Փիլոսյան Հայկ 227, 228
Փիրուզյան Ս. 382, 386, 403
Փիրումյան Ալ. 173—174
Փիրումյան Գ. 829
Փիրումյան Ն. 334
Փիրումյան Տ. 147
Փոլատ Տ. 862
Փորթուգալյան Մ. 133, 134, 139—141, 149, 185—188, 218, 668, 695, 698, 771, 775, 964—966
Փորսուղյան 182
Փորշեյան Խ. 640, 929
Փրիդոնյան 442
Փուդինյան Ն. 820
Փուրցելաձե Ա. 169

Քալանթար Ալ. 180, 373, 395, 451, 866, 952
Քալանթար Աշխ. 888, 921
Քալանթար Ավ. 952
Քալանթար Լևոն 827, 828, 921
Քալանթարյան (Արաքսյան) Պ. 823—825, 827, 828
Քալանթարյան Պ. Բ. 953
Քալանթարյան Պ. 950, 955
Քաղցածյան Ա. 658
Քաջազնունի Հ. տե՛ս Տեր-Հովհաննիսյան Հ. Մ.
Քաջբերունի 925, 929
Քավտաջյան Հ. Պ. 950
Քարակյոզյան Հ. 570
Քափանակյան Ստ. 827
Քելեկյան Տ. 523, 554
Քեմալ Մահմեդ Նամըկ 130, 821
Քեմալ Ցուսուֆ 497
Քեշիշյան Գաբրիել, տե՛ս Միհրան

Քեշիշյան Ս. 227
Քեշիշյան Փ. 137
Քեոսե բինբաշի 475
Քեչյան Բյուզանդ 879, 969
Քեչյան Փիլիկ 155
Քեոր (Դավաֆյան Արշակ) 548, 713, 715
Քեոր տե՛ս Շիշմանյան Ռուբեն
Քեսրավ Ահմեդ 715
Քերզոն, լորդ 537, 580
Քերբի, անգլ. դեսպան 274
Քիլար Պիչոո 480—482, 687, 695
Քիշմիշև Ս. 105, 894
Քիպերտ 117
Քյաթիպյան Հովհ. 138
Քյամիլ փաշա 129, 499, 501, 527
Քյափեյյան Խորեն 572
Քյոլյան Հակոբ 681
Քյոո Հյուսեին փաշա 277, 507—509
Քյուչուքյան Խորեն 667
Քյուրդյան Ս. 855
Քյուրքճյանով Հովհ. 724
Քյուրքչյան եղբայրներ 63
Քյուրքչյան (Կարենց) Օհաննես 745
Քնարիկ (Բաբայյան) 828
Քոթակով Իվան 670
Քոլանջյան Ս. Է. 12
Քոլոզ (Կիրակոսյան Հովհ.) 242
Քոնտ դը Բիգանի 63
Քոչարյան Հ. 547
Քոչարյանց Կ. 956
Քոսյան Հայկ 566, 888
Քոռնտ Վոլֆ ֆոն Վոլֆսկահրեն 572
Քուշնարյան Հ. 636
Քուշնարյան Ք. Ս. 836, 888
Քուչակ 912

Օբեյդուլլա շեյխ 153—155, 516, 965
Օբերովներ 653
Օգանեզաշվիլի Ս. 839
Օգանովսկի, գեներալ 552
Օգան Խորայել 571
Օգանյան Անդրանիկ, տե՛ս Անդրանիկ Օգանյան
Օգանյան Շապուհ 571
Օլիեցյան Ա. 782
Օ'Կոննոր 578
Օկուաշվիլի Ա. 342, 439
Օհան 151
Օհանջանյան Ավ. 146
Օղուլուխյան Հով. 950
Օշերովսկի Լ. 894
Օշին Թագավոր 690
Օտով 601
Օսմանհոֆ Հերման 901
Օսման բեյ 154, 243
Օսման փաշա, տե՛ս Օսման բեյ
Օսվալդ Ֆ. 954
Օտտոֆ Հ. 688
Օտտրովսկի 34
Օտտրովսկի Ա. 822, 828
Օվաճգյան Գ. 667
Օտյան Գ. 107, 113, 118, 123, 166, 875
Օտյան Երվանդ 162, 249, 697, 700, 728, 729, 795, 805, 806, 879, 880
Օտյան Տ. (Ասո) 554
Օրբելի Լևոն 952, 965
Օրբելի Հովսեփ 516, 855, 888, 921—925, 966
Օրբելյաններ 323
Օրժիխ Բ. 176
Օրմանյան Մ. 144, 472, 523, 772, 774, 775, 884, 967, 970
Օրջոնիկիձե Գ. 424, 430, 438, 461, 714
Օրոնյան Տ. 197

Ֆաբրիկաթորյան եղբայրներ 858
Ֆախդ բեյ 498
Ֆահրեդդին բեյ 533
Ֆահրի փաշա 572, 573
Ֆասուլաճյան Բ. 830
Ֆասուլաճյան Պայծառ 830
Ֆասուլաճյան Պետրոս 820
Ֆարեր Կլոդ 685
Ֆեթվաճյան 864, 927
Ֆեյրի 739
Ֆեոդորով Կ. Մ. 650
Ֆերբեր 703
Ֆիդներ Վ. 179
Ֆիզիոլոգ 907
Ֆինկ Ֆրանց 903
Ֆիշեր Էմիլ 946
Ֆիոլետով Ի. 424
Ֆլամարիոն 948
Ֆլերով Ն. 179, 225
Ֆլոնդոր Մ. 685
Ֆնտզյան Գ. 697, 701
Ֆրանգյան Ե. 416, 431, 432, 941
Ֆրանկոպուլոներ 436
Ֆրանչեսկին Ի. 342
Ֆրանս Անատոլ 695, 862
Ֆրանց Իոսիֆ կայսր 463
Ֆրենքյան եղբայրներ 674
Ֆրեսել Ֆ. 760
Ֆրիդել 944
Ֆրիդրիխ Վիլհելմ, Գերմ. թագաժառանգ 116

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Աախեն 944
Աբաղայի դաշտ 467, 473, 491
Աբասթուման 849, 957
Աբխազիա 103
Ագարակ 214, 456, 943, 974
Ագուլիս 757, 847
Ադաբազար 555, 777, 830, 831
Ադանա 83, 86, 252, 255, 261, 466, 553, 563, 565, 580, 687, 704, 725, 777, 814, 815, 881, 974
Ադանայի կուսակալություն (նահանգ, վիլայեթ) 18, 86, 497—499, 503, 527
Ադելաիդա 742
Ադենի ծոց 732
Ադիս-Աբեբա 578, 732, 733
Ադլչևազ (Ալչավազ) 22, 70, 277, 492, 506, 507, 509
Ադրբեջան 28, 29, 31, 41, 68, 95, 209, 302, 312, 314, 321, 340, 343, 344, 369, 384, 440, 441, 538, 602, 624, 849, 962
Ադրիանապոլիս 100, 103, 107, 109, 110, 480, 481, 501, 502, 555, 670, 672, 964, 967
Ազովի ծով 637
Ազատի բերդ 254
Աթենք 220, 830, 969
Ալաշկերտ 44, 70, 101, 112, 137, 147, 148, 150, 151, 543, 548, 576, 963, 976
Ալաշկերտի գավառ 52
Ալաշկերտի հովիտ 101, 120, 542
Ալաշկերտի շրջան 70
Ալաջայի բարձունքներ 102, 963
Ալավերդի 10, 57, 76, 92, 226, 302, 330, 341, 345, 347, 348, 360, 369, 381, 382, 386—388, 402, 403, 412, 415, 425, 438, 454, 455, 459, 460, 591, 592, 596, 600, 609, 611, 615, 616, 623, 843, 920, 966, 969, 972—974, 977
Ալբանիա 501, 502, 520
Ալեքսանդրապոլ 7, 10, 21, 55, 56, 59, 60, 73, 75—77, 92, 101, 105, 134, 145, 179, 201, 202, 224, 226, 235, 301, 306, 314 316, 330, 331, 345, 354, 360, 361, 366, 369, 373, 378, 381, 383—391, 396, 399—404, 412, 425, 435, 439, 451, 454, 458, 459, 545, 576, 584, 588, 597, 605, 609, 611, 616, 620—624, 751, 757, 760, 766, 767, 823, 828, 842—844, 852, 869, 870, 874, 962—964, 969—975, 977
Ալեքսանդրապոլի գավառ 16, 34, 46, 60, 66—68, 78, 79, 104, 203, 204, 206—310, 313—320, 325, 370, 399, 414, 444, 457, 603
Ալեքսանդրետ 722
Ալեքսանդրիա 83, 84, 726—731
Ալեքսանդրովկա 307
Ալիանք 240, 244
Ալիանքի հովիտ 475
Ալիքուչակ 56
Ալյուր 151, 486, 491
Ալվառինջ 214, 290
Ախալցխա 41, 101, 102, 354, 576, 584, 757, 760, 763, 766, 823, 828, 847, 848, 852, 869, 962
Ախալցխայի գավառ 48, 963
Ախալքալաք 101, 102, 576, 757, 847, 852, 963
Ախալքալաքի գավառ 346, 966
Ախթալա 57, 201, 349, 439, 969
Ախի-Օրման 667
Ախլաթ 473, 492
Ախտա 619
Ախուրյան գետ 75, 924
Ակն 273, 518, 831, 969
Աղաղան 715
Աղբակ 50, 70, 148, 152, 154, 264
Աղբակի գավառ 24
Աղբերիկի կիրճ 292
Աղթամար 265, 272, 477, 486, 505, 921
Աղստաֆա 301
Աղփարա 203
Ամասիա 83, 84, 270, 274, 465
Ամասիայի գավառ 18
Ամարապատ 739
Ամարապուրա 737
Ամբերդ 943
Ամենափրկիչ վանք 718
Ամերիկա (ԱՄՆ) 20, 63, 64, 83, 193, 287, 319, 464, 536, 537, 547, 562, 577—579, 593, 631, 636, 641, 700, 702—710, 723, 738, 740, 870, 880, 936, 944, 947, 961, 966, 973
Այգեհատ 398
Այդին 580
Այնթափ 84, 271, 287, 466, 555, 579, 698, 776, 778, 779

Անապա 644
Անատոլիա 82, 543, 554, 571, 580, 831
Անգեղակոթ 972
Անգլիա 98, 99, 107—112, 116, 118—120, 122, 124, 125, 148, 160, 164, 246, 248, 263, 278—286, 462, 463, 481, 501, 524, 525—528, 530, 532, 534—537, 547, 559—563, 578—583, 631, 636, 666, 695—697, 700, 727, 880, 895, 964, 968
Անգղ 133
Անդիջան 659, 660, 765
Անդրկովկաս 7, 8, 15, 16, 21, 25—38, 49, 55—62, 65—72, 76, 81, 90, 92, 93, 105, 118, 138, 143, 146, 147, 163—165, 169—175, 178—187, 194, 200—202, 206, 215, 217, 223—228, 239, 284, 287, 291, 301—306, 312, 313, 316, 320—325, 329—334, 338—342, 344, 345, 351, 352, 354, 355, 362, 367—370, 375, 378, 379, 384—391, 394, 402, 406, 407, 411—416, 421—426, 430—434, 438—446, 450, 451, 454, 455, 459—463, 496, 537—547, 557, 565, 568, 575, 576, 583, 586, 589—602, 608—615, 618, 622—625, 640, 641, 648, 660, 664, 673, 712, 755, 760—762, 765, 766, 769, 785, 792, 823, 825, 838, 844, 848, 852, 867, 868, 874, 887, 890—893, 896, 898, 920, 924, 931, 933, 936, 938, 939, 958, 963, 966, 970—972, 977
Անդրկասպյան մարզ 659, 660—662
Անդրկուրանյան գոտի 645
Անդրուն զավառակ 254
Անդրուն քաղաք 254, 255
Անի 245, 687, 689, 850, 851, 855, 887, 921, 923, 925
Անի-Ձոր 256
Անկարա 555, 557, 565
Անձևուր 214
Անտոր 242, 244, 245, 292, 476, 569, 722, 725
Անտիոքի ծովախորշ 569, 570
Անտվերպեն 636
Աշաչուր 456
Աշխարաձոր (Ասխարաձոր) 659—664, 765
Աշտարակ 56, 313, 321, 354, 390
Ապշերոնյան թերակղզի 72
Աջարիա 539
Աջարիա-Ծղալի գետ 539
Աչեմշեր 666
Առաքելոց վանք (Մուշում) 45, 142, 290, 469—471, 970
Առնե 492
Առինջ 511
Առնիատ 916
Ասիա 9, 55, 98, 112, 124, 281, 285, 410, 487, 536, 631, 721, 735
Ասիական Թուրքիա 111
Աստվածածին վանք (Դերիկում) 239
Աստվածածին վանք (Բասենի մոտ) 270
Աստվածածին վանք (Սարիում) 270
Աստվածածնի Կարմիր վանք 45
Աստրա 713
Աստրախան 165, 629, 630, 637, 641, 648—651, 659, 662, 750, 763, 765, 767, 823, 870, 937, 957, 958
Աստրախանի նահանգ 355, 957
Ասուրլի 549
Ավա 737
Ավագկալ (Մխալ) 136, 251, 257
Ավան 208
Ավանց 504
Ավզուտ 214
Ավիշտով (Սլիստովո) 665
Ավինյոն 691
Ավստրալիա 579, 631, 741, 742
Ավստրիա 331, 501, 524, 682
Ավստրո-Հունգարիա 20, 108, 111, 116, 121, 462, 502, 528, 536, 537, 582, 682
Ատրպատական 712—717։
Ատրպատականի նահանգ 711
Արաբիայի անապատներ 553
Արարկիր 62, 70, 84, 85, 211, 268, 271, 272, 464
Արարկիրի գավառակ 276
Արագած (Ալագյազ) 37, 68, 922, 953
Արագածոտն 855
Արագդայան 64, 619, 963
Արալբխ-Բաշքենդ 203
Արաղ 471, 517
Արամո 723
Արարատ 686, 921, 953
Արարատյան դաշտ 39, 58, 79, 126, 313, 316, 326, 855—856
Արարատյան նահանգ 106
Արաքս 239
Արաքսի հովիտ 55
Արգավանք 151
Արգահան 68, 101, 102, 104, 108, 113, 120, 575, 963
Արգահանի շրջան (օկրուգ) 16
Արգանուշ 539
Արգաշար 205, 208
Արդեբիլ, Արդաբիլ 714, 716
Արդեբիլի գավառ 711
Արդվին 539, 540, 575
Արդվինի օկրուգ 34, 967
Արեգին (Ալաբաշ) 251, 254, 256
Արզաքենդ (Արդական) 614, 619
Արզնի 346
Արզնի-Մաղենի գավառ 18, 70
Արեւակի շրջան 70
Արեւիշ 22, 70, 265, 277, 273, 518, 542, 566, 568, 682
Արեւիշի վանք 682

Արճի 519
Արմաշի վանք 774, 967
Արմավիր 644, 646, 647
Արմյանսկայա 645, 652, 653, 657, 659
Արմուտլի 208
Արշիպելագի կղզիներ 830
Արտամետ 70, 270
Արտաշատ 922
Արցախ 922
Արևելյան Անատոլիա 543
Արևելյան Եվրոպա 631, 672, 685
Արևելյան Թրակիա 671
Արևելյան Հայաստան 7, 8, 10, 11, 16, 17, 19—21, 24, 27—33, 36, 38—41, 49, 53—68, 71, 77, 80, 81, 90—92, 95, 106, 121, 126, 134, 163, 167, 202, 205, 206, 209, 210, 301—325, 441, 442, 474, 521, 538, 557, 575, 580—592, 594, 597, 600—605, 640, 750, 766, 774, 843, 846, 891, 924, 955, 956
Արևելյան Ռումինիա 186
Արևմտյան Անատոլիա 557
Արևմտյան Եվրոպա 9, 10, 170, 217, 631, 671, 893
Արևմտյան Հայաստան 10, 11, 15—19, 22—24, 90, 95, 104, 106, 108—111, 116—121, 125—129, 137, 139—147, 160—165, 167, 170, 178, 182, 184, 187—189, 194—197, 211—216, 234, 235, 239, 248, 266, 272, 276, 278, 283—294, 340, 346, 451, 452, 466, 467, 471—473, 484, 487, 488, 491, 493—496, 499—503—500, 509—511, 514, 515, 518—521, 524—526, 535, 537, 542, 544—548, 550, 552, 554, 557, 560, 568, 576, 578—582, 597, 612, 614, 631, 640, 646, 647, 652, 657, 668—670, 698, 700, 701, 726, 728, 748, 771, 774, 790, 831, 842, 851, 854, 877, 880, 881, 891, 921, 923, 924, 953, 959, 964, 966, 967, 970, 975
Արևմտյան Վրաստան 384, 409
Արրա 251
Աֆղանստան 463, 475, 659—661, 711, 720, 721
Աֆրիկա 20, 124, 276, 281, 536, 631, 734

Բաբադաղ 677, 679
Բաբը Ալի 249
Բաբաէսկի 603
Բաբերդ 52, 266, 272, 273, 518, 543, 604, 831, 968
Բաբերդի գավառ 492
Բագավան 925
Բագարան 925
Բագրատունյաց թագավորություն 887
Բազարջիկ տե՛ս Թաթար-Բազարջիկ
Բազլու 214
Բաթավիա 743, 745, 746
Բաթման գետ 475
Բաթում 7, 55, 71, 73, 74, 76, 101, 102, 103, 112, 120, 202, 227, 228, 319, 330, 338, 339, 341, 344, 353, 354, 358, 359, 408, 442, 466, 520, 539, 576, 584, 823, 828, 850
Բաթումի մարզ 20, 355, 426, 539, 541, 542, 544
Բաթումի օկրուգ 34, 967
Բալի կղզի 745
Բալկանյան երկրներ (Բալկաններ) 22, 99, 116, 170, 193, 276, 279, 281, 287, 449, 496, 501—503, 537, 670
Բալկանյան թերակղզի 665
Բալկանյան ռազմաճակատ 99, 103
Բալչիկ 665, 674
Բալու 62, 70, 268
Բալուի գավառ 70, 213
Բախչիսարայ 230
Բահրու 677
Բակուրիանի 849
Բաղդադ 243, 281, 285, 286, 544, 555, 578, 579, 708, 730
Բաղեշ տե՛ս Բիթլիս
Բաղեշի գավառ տե՛ս Բիթլիսի գավառ
Բայազետ 101, 102, 104, 105, 108, 112, 120, 522, 548, 550, 576, 963, 975
Բայազետի գավառ 18, 519
Բայազետի հովիտ 121, 542
Բայբուրթ տե՛ս Բաբերդ 543, 604
Բանդունգ 743, 746
Բաշգեղ 957
Բաշկալե 152, 264, 473, 542, 549
Բաշկալեի շրջան 23
Բաշնորաշեն 56
Բաշքենդ 436, 973
Բասարգեչար 310
Բասեն 53, 473, 506, 509, 974
Բասենի դաշտ 70, 290
Բավարիա 944
Բարանդուզի գավառ 711
Բարբարայի հովիտ 475
Բարդիզ 540
Բարդուղիմեոսի վանք 148
Բարսում 715
Բարվար 507
Բարձի նահանգ 15, 20, 28, 29, 48, 65, 66, 355, 390, 426, 450, 959
Բաքու 7, 55, 57, 67, 68, 71, 74—76, 92, 93, 103, 104, 145, 165, 202, 224, 226—228, 289, 302, 303, 315, 319, 330—333, 338—346, 353—359, 362, 364, 366, 368, 369, 373, 379, 381, 383, 389, 390, 401, 404, 418, 421, 424—429, 435, 437—439, 442, 451, 459—461, 520, 541, 548, 576, 584, 586—588, 591, 595, 596, 600, 602, 606, 620, 623, 639, 640, 648, 649, 659, 714, 715, 723, 752, 757, 759, 763, 766—768, 818, 823—828, 844, 848, 849, 869, 870—874, 956, 963, 965, 972—976
Բերբերկ 604

Բելգուշեն 268
Բելատոկ 389
Բելգիա 54, 462, 483, 537, 582, 585, 636
Բելոռուսիա 25, 28
Բելթ-ուլ-Շյուրաբի շրջան 23
Բելյան 722, 725
Բելոկաթոպա 733
Բելրութ 281, 286, 579, 723, 725
Բելրութի նահանգ 722
Բենի Սուեֆ 726
Բերլին 9, 98, 111—114, 116, 118, 120—126, 135, 139, 141, 147, 153—156, 160, 161, 168, 186, 187, 197, 230, 285, 363, 472, 479—482, 527, 534, 575, 669, 700, 719, 720, 725, 729, 733, 788, 759, 937, 938, 944, 946, 964, 972
Բեռն 479, 48 , 584, 971, 976
Բեսարաբիա 20, 108, 113, 636, 642, 657, 684, 763
Բեսարաբիայի քեմ 965
Բեսարաբիայի մարզ 355
Բեսեյն գետ 737
Բերդակ 238, 268, 290, 470, 477
Բերդուս (Բերգիս) գետ 351
Բերկրի 265, 548, 550
Բերբի-Հեյբաթ 343
Բիթհաս 569
Բիթլիս 23, 24, 62, 141, 142, 211, 212, 239, 240, 242, 243, 246, 262, 272, 275, 282, 287, 292, 464—466, 470, 475, 476, 486—492, 504, 506, 510, 517—519, 522, 531, 542, 548, 550, 551, 556, 573, 966, 972, 976
Բիթլիսի դավառ 18, 70, 86
Բիթլիսի նահանգ, կուսակալություն, վիլայեթ 18, 23, 24, 43, 70, 267, 517, 523, 524 533, 534, 580
Բիչար 544
Բիստ 205
Բիրալի 314
Բիրմա 578, 579, 631, 737—740, 743
Բյուզանդիա 886
Բյուրականի (Բինգյոլի) արոտավայր 70
Բոգորոդսկ 146
Բոլոնիա 944
Բոմբեյ 735
Բոսնիա 97, 108, 121, 501
Բոստոն 508, 704, 705, 708, 709, 972
Բոսֆոր 108, 109, 130, 273, 280, 524
Բոտոշան 673, 674, 677, 679
Բորժոմ 849
Բորչալու 104, 201, 371, 382, 398, 399, 403, 405, 425, 439, 459, 460, 597, 972
Բորչալուի գավառ 348, 891
Բջնի 456, 974
Բռնակոթ 962, 972
Բռնաշեն 50
Բրազիլիա 732
Բրաշով 686
Բրեսլաու (Վրոցլավ) 944
Բրբեշտ 683
Բրբլիա 674
Բրինգտոն 742
Բրիսքեն 742
Բրիտանական Գվիանա 943
Բրիտանական կղզիներ 696
Բրյուսել 356, 480, 481, 733, 886, 937, 972
Բրոկելհոլլ 742
Բրուսա 555, 777
Բուդապեշտ 686—689, 960
Բուլանըխ 22, 50, 53, 70, 89, 212, 214, 467, 491, 492
Բուլղարիա 97, 100, 108, 116, 121, 148, 149, 186, 189, 196, 462, 473, 477, 480, 501, 502, 631, 641, 665—667, 669, 673, 676, 685, 831, 854—855, 880, 938
Բուխարայի էմիրություն 659
Բուխարեստ 502, 673—675, 677—682, 977
Բուկովինա 682—685
Բուհամլու 346
Բուրգաս 665, 666
Բուրգունդիա 690
Բուրսա 830

Գագրա 849
Գալաթասարայ (Գալաթիո) 131
Գալատա 670
Գալաց 673—677
Գալիպոլիի թերակղզի 539, 542, 543
Գալիցիա 537, 585, 684
Գալուստենք 256
Գանձա 966
Գանձակ տե՛ս Ելիսավետպոլ
Գանձասար 922
Գառնի 922, 943
Գավաշ (Ռշտունիք) 141, 265, 519
Գատը-գյուղ 778
Գեգերնֆ 734
Գելիեգուզան 240—244, 291, 292, 471, 475, 476
Գեղամա լեռներ 68, 922
Գեղաշեն 292
Գեղարդի վանք 41, 48, 925
Գեղարքունիք 928
Գենջ 240, 492
Գենջի գավառ 18, 242
Գեորգեն 686
Գեոյա 686, 687, 689
Գետաբեկ 57, 302
Գելք 68
Գերմանիա 98, 99, 116, 122, 125, 219, 263, 278, 280, 281, 284—286, 310, 319, 362, 463, 524, 525, 528, 530—538, 546, 558, 560, 582, 606, 636, 701, 907, 916, 944, 970, 975
Գըլարս 214

Գըրգաղաճ 84
Գիզե 726, 727
Գիլան 713, 714
Գիլանի նահանգ 711, 712
Գյառգյառ 400
Գյոդաքլու 206
Գյոզալդարա 206, 414
Գյոլքաշ 519
Գյոյթիլիսա 207, 455, 456, 974
Գյուլագարակ 399
Գյուլիջա 207, 457
Գյումուշխանե 270
Գյումուրջինա 671
Գոգորան 603
Գոլովինո 399
Գոմել 389
Գոմաձոր 296
Գոմեր 477
Գոմս 214
Գորի 338, 847, 955
Գորիի գավառ 345
Գորիս 347, 436, 843, 846
Գվալիոր 735
Գրըկ-Խանում 725
Գրիգորիպոլ 642
Գրոզնի 623, 646, 829
Գուգարք 920
Գում-Գափու 193, 773
Գուրա Հումորալու 683
Գուրիա 338, 339, 345, 602

Դալլար 619
Դակահլիե 726
Դահար 102
Դաղստան 23, 27, 105, 374, 647
Դաղստանի մարզ 644
Դամասկոս 286, 722, 725, 726
Դանուբ 100, 108
Դավալու 473
Դավթի բերդ 240
Դատեմի վանք 45
Դարաբազ 399
Դարալագյազ 68, 346
Դարաշի 439
Դարդանելի նեղուց 108, 280
Դարմուն 568
Դաքքա 735
Դըմաշեն 602, 617
Դեբեդ 347, 829, 921
Դեզարմենիեն 690
Դեյր-էզ-Զոր (Տեր-Զոր) 555, 722, 725
Դետրոյտ 704—705
Դերսա 730
Դերեդավա-Ջիրութ 732, 733
Դերիկ 239
Դերջան 52, 70, 968, 976
Դերջանի գավառ 266
Դերջանի գետահովիտ 70
Դերջանի կազա 214
Դերսիմ 18, 70, 141, 154, 515, 965, 966
Դերսիմի նահանգ 18, 964
Դիադին 101, 576, 975
Դիարբեքիր տե՛ս Տիգրանակերտ
Դիարբեքիրի գավառ 18
Դիարբեքիրի դաշտ 70
Դիարբեքիրի կուսակալություն (նահանգ, վիլա-յեթ) 18, 23, 24, 43, 46, 52, 70, 89, 211, 525, 524, 533, 556
Դիլիջան 60
Դիլման 541, 549, 551
Դիմոտիկա 671
Դոբրիչ (Տոլբուխին) 665
Դոբրուջա 673
Դոբրուջայի նահանգ 682
Դոն 576, 637, 641, 642
Դոնի ավազան 633, 634, 637, 638, 642
Դոնի մարզ 355, 632, 633, 635, 639
Դոնի հայկական գաղութ 631, 632, 636, 638, 640, 643
Դոնի Ռոստով 58, 73, 310, 343
Դոնի տափաստան 635
Դորպատ 146, 943, 948, 956
Դսեղ 921
Դվին 206, 207, 855, 910, 922, 923, 943
Դվին-Քյուրդիքենդ 207
Դրամդաղի լեռներ 102
Դրեզդեն 173
Դուզ-դաղ 549

Եգիպտոս 70, 82, 84, 112, 120, 125, 193, 194, 278, 279, 283, 485, 537, 561, 575, 578, 631, 701, 708, 726—730, 734, 777, 830, 864, 880, 888, 960
Եդեսիա տե՛ս Ուրֆա
Եթովպիա 631, 731—734
Ելենովկա (Սևան) 601, 846
Ելիսավետպոլ (Գանձակ) 103, 104, 224, 344, 354, 355, 436, 442, 451, 584, 766, 767, 823, 828, 847, 966
Ելիսավետպոլի գավառ 346, 389
Ելիսավետպոլի (Գանձակի) նահանգ 15, 16, 20, 28, 29, 41, 48, 65, 66, 204, 325, 355, 390, 396, 406, 409, 426, 427, 450, 457, 959
Ելողվան 346, 455, 974
Եկատերինբուրգ (Սվերդլովսկ) 461
Եկատերինոդար (Կրասնոդար) 58, 175, 310, 646—648, 964
Եկատերինոսլավ 217, 342, 461, 633
Եկատերինոսլավի նահանգ 632, 633, 635, 637, 653
Եղիսաբեթուպոլիս (Դամբրվեն) 686, 687
Եղվարդ 48, 446

Եյակ 175
Ենիճեկալե 255
Եվդոկիա, տե՛ս Թոքատ
Եվլախ 55, 592
Եվպատորիա 651, 652, 654, 657, 659
Եվրոպա 20, 55, 62, 63, 67, 70, 97—99, 107, 114—116, 145, 147, 149, 150, 160, 187, 190, 192, 193, 198, 217, 220, 239, 260, 261, 272, 276, 282, 285, 332, 363, 364, 463, 472, 480, 481, 487, 495, 512, 514, 521, 523, 531, 536, 537, 546, 631, 637, 673, 691, 695, 698, 700, 712, 715, 721, 723, 733—735, 749, 752, 760, 770, 882, 886, 887, 943, 944, 947, 950, 964
Եվրոպական Ռուսաստան 21, 27, 31, 32, 54, 60, 210, 301, 302, 308, 313, 319, 635
Երզնկա 62, 63, 141, 142, 144, 150, 243, 238, 256, 266, 271, 504, 519, 539, 544, 551, 553, 571, 777, 831, 968, 974
Երզնկայի գավառ 18, 213, 214
Երվանդաշատ 943
Երուսաղեմ 193, 234, 722, 733, 751, 909
Եփրատ 555, 557
Երևան 7, 20, 26, 29, 39, 48, 55—60, 64, 73—77, 92, 104, 105, 133, 143—148, 151, 162, 168, 201, 202, 235, 239, 305, 306, 313, 314, 330—332, 346, 354, 360, 366, 369, 372, 378, 384—389, 391, 401—404, 411, 412, 416, 422, 425, 429, 430, 435—442, 451, 454, 456—459, 473, 542, 584, 588, 595, 597, 601, 604, 605, 609, 611—619, 622, 751, 752, 757, 760—762, 765—768, 783, 823, 825, 828, 843, 844, 849, 869, 870, 875, 892, 948, 952, 956, 957, 962—973, 975, 977
Երևանի գավառ 16, 17, 31, 34, 39, 40, 46—48, 64, 66, 68, 78, 79, 81, 203—210, 308, 313, 314, 317, 325, 436, 444, 455, 456, 458, 577, 603, 604, 618, 619, 965, 974
Երևանի նահանգ 15, 16, 20—22, 28, 29, 41, 47, 48, 58, 59, 64—68, 74, 75, 78—81, 103, 126, 203, 204, 207, 209, 210, 301, 306, 310, 312—319, 321—325, 346, 355, 373, 390, 399, 406, 412, 421, 426, 427, 442—447, 450, 590, 592, 594, 595, 597, 602, 603, 605, 613, 617—619, 765, 766, 769, 959, 963, 972

Զագազիգ 726, 731
Զամանլու 201
Զամկա վանք 685
Զանգեզուր 10, 20, 34, 39, 40, 47, 57, 74, 78, 79, 303, 304, 313, 316, 317, 319, 325, 326, 346, 390, 415, 436, 446, 447, 459, 460, 588, 591, 592, 608, 619, 659, 943, 973
Զառ 436
Զաքաթալա 104
Զաքաթալայի օկրուգ 65, 346, 355
Զեյթուն 10, 133, 135—137, 143, 239, 250—255, 257—261, 565, 569, 777, 963—965, 969
Զեյթունի գավառակ 254, 260
Զեյվա 550
Զիարեթ 214
Զիլե 83
Զիլոա 270
Զմմառի վանք 722, 726
Զմյուռնիա 84, 112, 463, 464, 466, 565, 580, 692, 696, 698, 725, 727, 751, 754, 774, 778, 779, 782, 783, 830, 831, 875, 877, 880, 881, 940, 961, 962
Զող 456
Զոհրաբլու 81, 206
Զոր 473
Զվարթնոց 855, 923, 943
Զուգդիդիի գավառ 346

Էգեյան ծով 108
Էգեյան ծովի կղզիներ 501
Էլզաս-Լոթարինգիա 98, 119, 537
Էլ-օբեյդ 734
Էնզելի 713, 714, 829
Էնոս 502
Էջմիածին 41, 48, 49, 56, 60, 105, 106, 114, 203, 208, 313, 346, 354, 375, 384, 393—396, 411, 418, 431, 436, 437, 440, 446, 447, 575, 576, 588, 597, 605, 610, 641, 657, 667, 675, 679, 684, 705, 707, 738, 745, 756—762, 765, 767, 780, 781, 832—834, 843, 847—849, 861, 881, 891, 900, 908—911, 918, 924, 946, 953, 967, 973
Էջմիածնի գավառ 16, 17, 31, 34, 39, 40, 48, 66, 78, 79, 104, 203—210, 308, 313, 317, 318, 321, 325, 346, 399, 436, 444, 456, 580, 974
Էսքիշեհիր 831
Էրեբունի 943
Էրզապ 519
Էրզրում տե՛ս Կարին
Էրզրումի գավառ տե՛ս Կարինի գավառ
Էրզրումի էյալեթ տե՛ս Կարինի էյալեթ
Էրզրումի նահանգ, վիլայեթ տե՛ս Կարինի կուսակալություն (նահանգ, վիլայեթ)

Թադեի վանք (Մակուի գավառում) 473, 713, 718
Թալին 436, 456, 974
Թաթար-Բազարջիկ 665—668, 674, 677
Թաղ 508
Թամին 727
Թանթայ 726
Թավրիզ 120, 221, 239, 486, 541, 711—713, 716—718, 829
Թաուսկերի տեղամաս 66
Թափակերտ 308
Թգալ 744
Թելավ 847, 955

Թելեմելիք 254
Թեհրան 438, 712—718, 720, 829, 973
Թեմերնիկ 638
Թերմեզ 659
Թիմարի գավառ 491
Թիֆլիս 7, 16, 27, 28, 34, 55, 58, 64, 67, 71—76, 81, 92, 93, 103, 133, 134, 138 139, 143, 145—148, 151, 162, 165, 168, 169, 179, 184, 185, 195—197, 201, 202, 221, 225—228, 234, 237, 239, 242, 279, 301, 303, 310, 319, 322, 330—335, 338—344, 347—350, 353—355, 358—362, 368—373, 375, 379—384, 387, 391, 392, 396, 399, 401, 404—407, 418, 425, 429, 433, 434, 436, 437, 439, 442, 451, 455, 460, 461, 495, 514, 520, 547, 548, 575, 584, 587, 588, 593, 594, 608—611, 617, 620, 624, 641, 668, 714, 717, 741, 750, 752, 754, 757, 759—763, 766—768, 780, 781, 821—828, 833, 837—839, 844, 847—849, 856, 859—862, 865, 867, 869—874, 899, 909, 910, 913, 918, 920, 927, 928, 934, 937, 943, 946, 950—952, 955—958, 962—977
Թիֆլիսի նահանգ 15, 16, 20, 29, 41, 48, 65, 66, 345, 355, 426, 963
Թլկատին 62
Թղիրուլի 55
Թոմարտաշ 208, 209
Թորթում 70, 268, 509
Թորթում լիճ 543
Թորնովո 566
Թոփրախ-Կալե 203, 923
Թորոս 83, 85, 87, 133, 274, 464, 466, 727, 777, 779
Թոքատի կամ Եվդոկիայի գավառ 18
Թրակիա 501, 502, 557
Թութրակ 665
Թունիս 119, 124
Թուրքեստան 662, 663
Թուրքեստանյան երկրամաս 659—664
Թուրքիա 18, 20, 22—24, 27, 35, 45, 60, 61, 71, 82—99, 103, 107—127, 130, 131, 137—144, 147, 148, 154, 156, 160, 161, 170, 183, 186—192, 197, 199, 210, 215, 219, 230, 237—239, 248—252, 259, 260, 263—266, 272, 274, 277—288, 291, 293, 300, 314, 317, 407, 422, 441, 449, 452, 462, 463, 466, 468, 480—487, 493—496, 500—503, 506, 510—513, 522, 524—526, 529—541, 545, 555, 558—562, 573—575, 578—580, 629, 631, 636, 641, 644, 645, 648, 651, 656, 657, 659, 666, 670, 672, 673, 682, 692, 694, 696, 697, 701, 704, 706, 708, 723, 725—732, 770, 773, 778, 779, 784, 785, 789, 790, 829—831, 879—881, 894, 960, 963, 964, 967, 969, 973, 975, 976

Ժնև 172, 173, 188, 190, 193, 197, 216, 220, 221, 279, 281, 283, 358, 362—364, 376, 477, 481, 870, 927, 937, 966, 972
Իգդիր 56, 101, 151, 313, 425, 459, 460, 548, 768
Իզմիր տե՛ս Զմյուռնիա
Իլխիարի 208
Իմերեթիա 547, 765
Ինդոնեզիա 578, 579, 631, 741, 743—746
Իշխանաց կղզիներ 108
Իշխնձոր 243—245, 475, 476
Իռլանդիա 578
Իսպանիա 689
Իտալիա 114—116, 119, 308, 462, 528, 536, 537, 580, 666, 692, 701, 938
Իրան 20, 27, 90, 95, 116, 118, 120, 145, 148 154, 155, 192, 225, 235, 239, 262, 263, 265, 274, 300, 314, 317, 438, 440—443, 463, 466, 477, 481, 486, 487, 501, 524, 541, 631, 659—661, 664, 690, 691, 694, 697, 711—720, 735, 736, 741, 829, 863, 886, 894
Իրանական Ադրբեջան 537, 541, 565
Իրաք 524
Իրբիտ 637
Իուոյամա 740

Լաթակիա 722, 723
Լահե 729
Լայպցիգ 329, 781, 833, 937, 970
Լանգեդոկ 690
Լանկաշիր 697
Լեհաստան 25, 26, 368, 426, 478, 537, 585, 589, 888, 909
Լենայի ոսկու հանքեր 454
Լենինականի ավազահանք 943
Լենինգրադ 965
Լենքորանի գավառ 346
Լեչան 405
Լեռնային Լիբանանի ինքնավար մարզ 722, 723
Լեսբոս կղզի 481
Լիբանան 70, 82, 113, 115, 524, 562, 575, 578, 579, 631, 721, 722, 724—726
Լիմ անապատ (կղզի) 141, 265
Լիոն 310, 693
Լիվերպուլ 696, 697
Լիվոնիա 691
Լիտեն 683
Լիտվա 25, 28
Լճաշեն 943
Լոզան 220, 927
Լոձ 64, 310, 389
Լոմբոկ կղզի 745
Լոմի 666
Լոնդոն 99, 108, 115, 116, 139, 149, 186, 193, 194, 284, 304, 337, 356, 376, 404, 480, 481, 501, 502, 521, 523, 527, 548, 561, 579, 694—

701, 719, 720, 733, 735, 894, 946, 948, 966, 967, 969, 972, 973, 975
Հոռի 10, 17, 40, 60, 307, 308, 312, 316, 317, 330, 346, 360, 366, 370, 371, 397—400, 403, 405, 425, 447, 619, 922, 928, 943
Հոռու գավառամաս 20, 39, 68, 316, 323, 347, 954, 971
Հոս-Անջելես 705
Հորենս 705
Հով 955

Խաթունարխ 206
Խանասոր 274
Խանասորի լեռնանցք 549
Խաչան 473
Խաչեն 923
Խաչենի գավառ 922
Խաչիգեղ 304
Խաչիկ 208
Խասգյուղ 292, 773
Խասկո-ղո 665
Խարապալար 214
Խարբերդ 61—63, 70, 85, 87, 246, 268, 276, 287, 455, 456, 464—467, 491, 510, 518, 531, 776, 778, 779, 804, 853, 964, 966, 968
Խարբերդի դաշտ 44, 70, 853
Խարբերդի կամ Մամուրեթ-ուլ-Ազիզի կուսակալություն (Նահանգ, վիլայեթ) 18, 23, 24, 43, 62, 70, 524, 533, 964, 965
Խարզան 277
Խարթում 734
Խարկով 146, 168, 173, 217, 319, 332, 342, 637, 641, 655, 823
Խդրբերդ 569
Խեկգեղ 133
Խերսոնի մարզ 355
Խրղլաղաճ 213
Խիանք տե՛ս Իշխնձոր
Խիզան 50, 70, 277, 505, 507, 515, 975
Խիվայի խանություն 659
Խլաթ 290, 500
Խմուղ 471
Խնձորեսկ 346
Խնուս 50, 52, 150, 238, 240, 242, 290, 473, 491
Խոժոժվանք 241
Խոյ 274, 291, 466, 473, 541, 551, 713
Խոյի գավառ 711
Խոշաբի գավառակ 70, 276
Խոշխարաբա 56
Խոջայարալու 457
Խոցեվանք 227, 228
Խորասանի նահանգ 712
Խութ 50
Խուփ 244, 245
Խոսանի 292
Ծաղկաձոր 965
Ծաղկունք 205, 617
Ծավտան 270
Ծիծանց 508, 517, 974
Ծովասար 240, 242
Ծովինար (Քյոլաշռան) ամրոց 924
Ծովք 268

Կազան 146, 217, 230, 342, 378, 893
Կազանչիկ 663
Կալիֆորնիայի նահանգ 704
Կալկաթա 720, 721, 735, 736, 741, 750
Կալուան 746
Կահիրե 83, 693, 726, 728—730, 736, 751, 830, 855
Կաղզվան 66, 102, 104, 206, 235, 305, 450, 458, 460, 591, 604, 605, 611, 963, 975
Կաղզվանի շրջան (օկրուգ) 16, 66
Կամախ 267, 968
Կամենեց-Պոդոլսկ 955
Կանադա 704
Կապան բերդ 254, 255
Կապուլա 733
Կասպից ծով 659, 712, 715
Կասսալա 734
Կավալլա 830
Կավառնա 665
Կավկազսկի 175
Կարաբաղ գյուղ 66
Կարաբուլախ 205
Կարադուրան 725
Կարակալա 370
Կարահիսարի գավառ 18
Կարաուրգան 301, 975
Կարին 18, 24, 44, 52, 61—63, 85, 87, 101—103, 105, 107, 133, 135, 137, 140—150, 157, 193, 211, 212, 233, 238, 239, 243, 246, 268, 275, 282, 286, 287, 464—466, 477, 486, 489, 490, 504, 510, 516, 518, 522, 531, 539, 540, 543, 545, 548, 551, 555, 556, 563, 566, 703, 751, 752, 774—779, 831, 853, 964—968, 973, 975, 976
Կարինի գավառ 18, 52, 78
Կարինի էյալեթ 964
Կարինի կուսակալություն (Նահանգ, վիլայեթ) 18, 23, 24, 43, 70, 523, 524, 533, 534, 574
Կարկառ 505, 506
Կարկառի գավառ 975
Կարճկան 70, 265, 277, 491, 506
Կարմիր բլուր 943
Կարմիր ծով 732
Կարմիր վանք (Կարինում) 778
Կարմիր վանք (Նախիջևանում) 41, 48
Կարնո դաշտ 50, 268, 852
Կարս 7, 10, 59, 66, 75, 101—108, 113, 120, 201, 224 235, 237, 242, 291, 301, 306, 307,

314, 316, 354, 356, 360, 378, 380, 381, 383, 385, 391, 407, 408, 425, 435, 437, 439, 454, 458—460, 541, 543, 575, 576, 588, 597, 609, 611, 613, 760, 766, 768, 828, 843, 845, 846, 852, 963, 964, 969, 970, 975, 977
Կարս-Բազար 255
Կարսի բարձրավանդակ 37
Կարսի մարզ 16—18, 20, 21, 34—36, 38, 47, 60, 66—68, 78, 79, 126, 204, 206, 209, 305, 313—317, 319, 320, 324—326, 331, 355, 371, 399, 407, 426, 442, 445, 446, 542, 591, 595, 603—605, 610, 617, 765, 766, 963, 966—968
Կարսի շրջան (օկրուգ) 16
Կարուց գետ 846
Կելեսա 733
Կենտրոնական Անատոլիա 86
Կենտրոնական Ռուսաստան 32, 55, 80, 614, 637, 649, 660, 661, 952
Կենրանց 270
Կեսարիա 83, 84, 86, 238, 464, 555, 557, 777
Կերմենլի 667
Կերչ 174
Կերս 66
Կզըլ-Արվաթ 660, 662, 663, 765
Կզըլ-Ռաբաթ 544
Կրոխ Բուլաղ 843
Կիզա 84
Կիլիկիա 18, 22, 82, 86, 125, 286, 486, 497, 529, 554—565, 569, 579—582, 726, 771, 776—778, 881, 976
Կիլիս 725
Կինտալ, գյուղ Շվեյցարիայում 586, 976
Կիպրոս 112, 119, 283, 561, 698, 964
Կիսլովոդսկ 645
Կիսկիմ 70
Կիրաշլու 204
Կիրենաիկա 501
Կիր (Հողամաս) 64
Կիև 173, 217, 218, 332, 342, 344, 389, 461, 655, 823 893
Կյուրին 142, 238, 491, 778
Կոգլուջա 666
Կոթուր 542
Կոթուրի (Կոտոր) գավառ 120
Կոլոշվար (Կլուժ) 686
Կոկանդ 659—661, 663, 765
Կոնիաոն գավառակ 255
Կոկուլու 268
Կողբ 58, 200, 208, 305, 422, 617, 963, 974
Կողբ (Նոյեմբերյանի շրջանում) 421
Կոճանիս 23
Կոնգո 534
Կոնիա 580, 779
Կոչանի 672
Կոպենհագեն 485
Կոստանդնուպոլիս տե՛ս Կ. Պոլիս
Կոստանցա 673, 674, 677—679
Կովկաս 16, 28, 31, 34—36, 54, 56, 75, 81, 91, 95, 97, 125, 133, 138, 139, 148, 165, 182, 186, 188, 194, 208, 218, 224—228, 233, 240, 274, 276, 281, 301, 305, 310, 312, 321—324, 332, 333, 338, 339, 351, 353—364, 371—376, 380, 383, 390, 399, 400, 408—412, 426, 435—440, 445, 446, 457, 471, 477, 484, 485, 492, 495, 496, 501, 530, 539, 541, 547, 549, 552, 561, 575—580, 586—591, 594, 598, 600—605, 608—612, 622—624, 641, 645, 650, 653—657, 664, 708, 715—718, 730, 745, 756, 759, 760, 761, 762, 764, 765, 769, 775, 822, 829, 833, 839, 859, 870, 871, 873, 890, 896, 920, 928, 943, 944, 950—957, 965—967, 972, 975—977
Կովկասյան երկրամաս 16
Կովկասյան լեռնաշղթա 230
Կովկասի փոխարքայություն 659, 890
Կորլցելի 683
Կ. Պոլիս 22, 41, 42, 44, 53, 70, 82, 84—88, 98—100, 106—110, 113—116, 120, 122, 124, 130—141, 144, 147, 148, 150—155, 174, 185, 186, 189, 193, 212, 213, 230, 233, 234, 238, 239, 252, 254, 259, 265, 266, 271—274, 279, 281, 282, 289, 377, 422, 437, 463—466, 485, 486, 489, 490, 497—502, 505—508, 512, 518, 520—522, 525, 527, 529—533, 538, 541, 553, 554, 557, 561, 573, 574, 578, 667, 684, 692, 696, 703—709, 719, 723, 725—728, 739, 750—754, 770—774, 777—782, 820—824, 829—833, 838, 854, 864, 875—881, 890, 892, 899, 909, 912, 916, 950, 951, 960—970, 974—976
Կտուց կղզի 265, 863
Կրասնովոդսկ 659, 660, 662, 765
Կրետե կղզի 503
Կուբան 576, 646
Կուբանի մարզ 644, 645, 647
Կուղուլու 268
Կուլչուխ 268
Կուռարաչ 491
Կուտ-էլ-Ամարա 544
Կուրավլու 477
Կուրի Հովիտ 55
Կուրսկ 442, 849

Հաբեշստան 578, 579
Հարթվան 151
Հաղստան 492
Հաղոյի գավառակ 242
Հաղոյի դաշտ 89
Հալեպ 243, 254, 259, 270, 286, 556, 572, 722—726
Հալեպի կուսակալություն (նահանգ, վիլայեթ) 18, 497, 722, 725

Հախս գյուղ 456, 974
Հաղպատ 10, 330, 347—350, 359, 360, 371, 397, 398, 403, 405, 460, 614, 971
Հաճըն 564, 565, 777, 779, 853 854
Հաճկատարի վանք 685
Համադան 544, 715, 716
Համամլու 56
Համայ 722
Համգաշիման 56, 957
Համիդիե 725
Համշեն 928
Հայաստան 7, 15, 19, 24, 28, 32, 63, 67, 68, 71—76, 92, 96, 105, 107—119, 124, 134, 137, 146, 149, 158, 165, 174, 175, 183, 184, 187, 190—193, 197, 201, 219, 228, 234, 239, 279, 314, 329, 330, 339, 340, 343, 344, 347, 360, 362, 369—373, 377—391, 396, 397, 399, 401—403, 410, 411, 415—417, 424—426, 430, 434—436, 438—447, 450, 454, 458—461, 513, 521, 524, 528, 531—535, 585—594, 604, 609, 611—615, 618—623, 639, 642, 657, 658, 670, 674, 682, 685, 687, 691, 694, 709, 719, 735, 740, 749—754, 757, 762, 786, 798, 810, 848, 850, 855, 856, 859, 863, 865, 869, 871, 873, 875, 883—895, 898, 900, 909, 920—930, 942, 943, 948—954, 957, 959, 962, 972, 977
Հայդամակերտ 152
Հայկական լեռնաշխարհ 921, 953
Հայոց Ձոր 263, 265, 270, 276, 473, 566
Հանկույսներ, գետակ 851
Հաչի Բաղիր 457
Հաչի Հարիրլի 569
Հաչինազար-գյուլի 208
Հաչի-օղլու Բազարջիկ 665—667
Հաչիքենդ 968
Հաուեղ 133
Հասան Կալեի վանք 268
Հասան-Մանդար 271
Հասքովոյի շրջան 670
Հարավային Ադրբեյան 568
Հարավային Ամերիկա 575
Հարավային Բեսարաբիա 121
Հարավային Դորրուջա 502
Հարավային Իրան 720
Հարավային Ռուսաստան 631, 634, 635, 637, 638
Հարար 732, 733
Հարիք 243
Հարսիկ 268
Հարք 928
Հելիոպոլիս 731
Հելդելբերգ 946
Հեռավոր Արևելք 284, 319, 579, 711
Հերկերտ 213, 492
Հերցեգովինա 97, 108, 121, 501
Հեքյարի 151, 965
Հեքյարիի գավառ 18, 23, 70
Հեքյարիի Նահանգ 18, 964, 966
Հեքյարիի սանջակ 579
Հին Ղրիմ 651, 653, 659
Հյուսկինիկ 779
Հյուսիսային Ամերիկա 575, 636
Հյուսիսային Բիրմա 738
Հյուսիսային Դորրուջա 108
Հյուսիսային Իրան 541, 715
Հյուսիսային Կովկաս 23, 54, 126, 165, 291, 319, 537, 538, 559, 576, 614, 624, 629, 630, 635—637, 644—649, 765
Հյուսիսային Սիբիր 724
Հնդկաստան 20, 285, 481, 487, 530, 578, 579, 631, 691, 697, 700, 711, 713, 721, 735—737, 740, 741, 743, 888
Հնդստան գյուղ 133
Հոհենհայմ 219
Հոմս 722
Հոնկոնգ 735
Հորդանան 524
Հորտենց գյուղ 133
Հոթամ 204
Հոում 480, 527, 575, 733, 944, 946, 950
Հրազդանի կիրճ 843
Հունան գյուղ 474
Հունաստան 116, 158, 259, 462, 501, 670, 830, 880
Հունգարիա 631, 686—689, 888

Ղազախ 205, 447
Ղազախ-Շամշադինի գավառ 40
Ղազախի գավառ 20, 39, 40, 78, 79, 205, 316, 317, 319, 446, 456, 891
Ղազախի շրջան 39
Ղազախստան 301, 650, 659
Ղազանչի 308
Ղաղիկշլակ 207
Ղալվին 829
Ղալաթիա 774
Ղամարլու (Արտաշատ) 306, 313, 317, 354, 613, 959
Ղանդահար 720
Ղանլիջա տե՛ս Մարմաշեն
Ղաշխա 721
Ղաշաղան 370, 457, 975
Ղարաքաղ 104, 659, 765, 892
Ղարադաղ 713, 715
Ղարադաղի գավառ 711
Ղարադաղլու 456, 976
Ղարասուբազար 651—653, 657
Ղարաքիլիսա տե՛ս Մեծ Ղարաքիլիքա
Ղարս տե՛ս Կարս
Ղարսի մարզ տե՛ս Կարսի մարզ
Ղափան 10, 57, 76, 92, 401, 412, 413, 425,

435, 436, 438, 443—455, 460, 592, 600, 601, 609, 611, 616, 843, 970, 974, 976
Ղզլաղաջ 288
Ղզլար 644—648, 828
Ղրիմ 23, 82, 97, 99, 105, 113, 153, 174, 175, 230, 290, 291, 374, 496, 537, 629, 636, 642, 651, 652, 655, 657, 658, 750, 765, 792, 859, 955
Ղուբիչան գավառամաս 213
Ղուլալի (Կարմիր գյուղ) 614

Ճապաղջուր 50
Ճապոնիա 462, 536
Ճավա 20, 697, 698, 718
Ճիաթուրա 57, 303, 338, 433
Ճիհան գետ 563
Ճորոխ գետ 266
Ճորոխի ավազան 924

Մադրաս 735, 930
Մազանդարան 714
Մազանդարանի նահանգ 711, 712
Մալաթիա 62, 269, 289, 500, 779, 968
Մալաթիայի դաշտ 70
Մալաթեայի գավառ 18, 70
Մալանդ 744
Մալգարա 671
Մալիշկա 208
Մակասար 743, 746
Մակեդոնիա 121, 465, 471, 480, 494, 497, 501, 502, 520, 670, 672
Մակու 145, 147, 473
Մակուի գավառ 711
Մամաղ-Արաղ 203
Մամախաթուն, տե՛ս Դերջան
Մամրաանքի շրջան 270
Մայկոպ 646
Մանազկերտ 50, 519, 542, 548
Մանաշքուտ 50
Մանգիշլակի աղահանք 861
Մանդալայ 737, 739, 740
Մանես տե՛ս Ալավերդի
Մանչեստր 696—700, 702, 723
Մաստարա 48, 207, 446
Մավենք 254
Մարալիկ 321
Մարաղայի գավառ 711
Մարաշ 83, 84, 251, 252, 254, 255, 260, 261, 272, 287, 525, 564, 565, 777, 778, 881
Մարբուրգ 908
Մարգարա 346
Մարդին 579
Մարդինի գավառ 18
Մարզվան 83, 84, 240, 269, 270, 465, 779, 968
Մարիցա գետ 671
Մարիուպոլ 548, 641
Մարմաշեն 922, 924, 925
Մարմարա ծով 273, 671, 672
Մարմեր 854
Մարոշ Վաշարհել 686
Մարսել 60, 149, 186, 188, 218, 310, 466, 668, 690—693, 695, 745, 966
Մեդան 744
Մեզրե 214
Մելբուրն 742
Մելիտինե կղզի 481
Մելիտոպոլ 652
Մեծամոր 943
Մեծ Բրիտանիա 116, 482, 530, 532, 542
Մեծ Թուրան 575
Մեծ Հայք 22, 106
Մեծ Ղարաքիլիսա 56, 74, 316, 345, 354, 379, 588, 610, 943, 962, 967
Մեծ Ջամուշլու 204
Մեծ Սալա 633, 634, 641
Մեծ Քյափանակ 203
Մեհրաբ-Բանարաշ 207
Մեհրաբլու 207
Մեհրաբ-Քյուրդիքենդ 207
Մենուախինիլի 921
Մեսեն 556
Մերկեր 475
Մերհամլա 671
Մերձավոր Արևելք 97, 278, 463, 524, 525, 535, 537, 561, 666, 841, 842, 924
Մերձբալթիկա 202
Մերձբալթյան երկրներ 368, 538
Մերսին 83, 252, 254, 261, 580, 777
Մերվ 659, 660, 662, 765
Մըգընըեշտ 683
Միդիա 501, 502
Միզոկ 519
Միլան 310, 481, 839
Միխայլովո 344
Միմեո 739
Մինգրելիա 374
Մինեա 726
Մինքենդ 390
Միջագետք 86, 524, 525, 537, 539, 541, 544, 555, 557, 562, 569, 571, 572, 575, 726
Միջերկրական ծով 230, 278, 280, 570, 692
Միջին Ասիա 20, 25—27, 202, 301, 319, 426, 537, 575, 649, 660—664, 765, 829, 936, 957
Միջին Արևելք 463, 525, 535, 718, 841, 842
Միսիլմի 667
Միրաք 204
Մյունխեն 856, 860, 861, 937
Մյուրցշլագ 463
Մոզդոկ 644—647, 829
Մոզկա սար 473
Մոլդովա 673
Մոլլագեոկչա 207
Մոկսի գավառ 22, 50, 70, 265, 507, 516, 923

Մոդես 415
Մոնաստր 494
Մոնոդո 744
Մոնպելիե 690, 693
Մոշոկետտո 744
Մոսկվա 20, 54, 64, 73, 139, 145—148, 157, 162, 165, 168, 172—174, 177, 178, 180—182, 195, 217, 218, 304, 310, 335, 342, 351, 368, 384, 386, 390, 442, 461, 548, 600, 606, 626, 629, 630, 636—642, 663, 668, 712, 750, 758, 768, 781, 823, 829, 839, 848—851, 856, 884, 885, 894, 911, 915, 937, 938, 943, 950, 952, 955, 956, 962, 964, 965, 970, 974, 976
Մոսուլ 70, 473, 556
Մոսուլի վիլայեթ 579
Մոտկան 212, 492
Մորնինկ 212
Մոուլմեյն 740
Մուդրոս 562, 574
Մուզարեթ 604
Մութ Զոր 251
Մուղանի հարթավայր 321
Մուղնի 48, 446
Մուշ 22, 23, 50, 61, 141, 142, 147, 151, 211, 238—245, 251, 270, 274, 275, 292, 469, 470, 477, 542, 550, 551, 556, 565, 568, 569, 703, 772, 776, 778, 881, 916, 923, 964, 976
Մուշի գավառ 18, 70, 85
Մուշի դաշտ 53, 70, 89, 212—214, 245, 275, 276, 471, 476, 492, 506, 519, 771
Մուշի Նահանգ 18
Մուշի սանջակ 492, 511, 568
Մուսա լեռ (Ջերել Մուսա) 565, 568—571, 725, 976

Յալթա 290, 641, 651, 659, 848, 849
Յաղուբլի 203
Յամրոլ 665
Յանին 502
Յաշ 674, 683
Յասնայա Պոլյանա 637
Յեշիլ Քյոլ (Կանաչ գյուղ) 107
Յողդող 83, 240, 968
Յողուն-օլուք 569, 570
Յուվա 456, 974
Յուրմուզ 254

Նագիրվան 456, 473, 974
Նալէ 733
Նախիջևան 55, 58, 176, 286, 308, 313, 425, 584, 597, 768, 847, 923, 963
Նախիջևանի գավառ 16, 31, 34, 39, 40, 58, 66, 79, 104, 205, 305, 313, 317, 321, 346, 373, 577
Նարրոն 690
Նարեկա վանք 45, 265, 921
Նեապոլ 839
Նեչրլու 206
Նեսվիտա 633, 634
Ներքին Ագուլիս 308
Ներքին Ալուչալու 203
Ներքին Ղուլլասար 346
Նիժ 234
Նիժնի Նովգորոդ 217, 637
Նիկոմիդիա 777, 778
Նիկոպոլ 100
Նիմ 690
Նյու Յորք 464, 548, 704, 706, 707, 709, 946, 961
Նյու Ջերսի 704
Նոթր Դամ դը Դամ 691
Նովո-Լադոժսկի գավառ 850
Նովոչերկասկ 177, 412, 448, 635, 638
Նովորոսիյսկ 168, 169, 175, 538
Նոր Անի 703
Նոր Բայազետ 21, 56, 60, 74, 76, 205, 346, 425, 427, 456, 459, 597, 601, 610, 760, 843, 846, 963, 977
Նոր Բայազետի գավառ 16, 31, 34, 39, 40, 67, 78, 79, 203, 204, 206, 307, 310, 313—317, 319, 320, 323, 325, 326, 436, 444, 602, 603, 617—619
Նոր գյուղ 133, 491
Նորդուզ 70, 203, 263, 270
Նոր Նախիջևան 165, 174, 175, 354, 548, 629—643, 657, 750, 754, 757, 760, 763, 765, 766, 768, 820, 828, 829, 862, 928, 955, 964—967
Նոր Ջուղա 711, 713, 718, 737, 740, 741
Նոր Ջուղայի գավառ 712
Նուբիա 943
Նուխի 186, 234, 828, 847

Շալճա 734
Շահալի 304, 379
Շահրիզ (Դևդամավան) 617
Շաղրազ 62
Շամախի 757
Շամախիի գավառ 346
Շամախիի բեհ 765
Շամդինան 154, 155, 515, 516
Շամդինանի գավառակ 70
Շամիրամ 477
Շամիրամ Ալթի 921
Շամիրամի հուշարձաններ 924
Շամլուղ 345, 971
Շամխոր 715
Շամշադինի շրջան 39
Շապին-Կարահիսար 238, 248, 267, 289, 565, 571, 572, 968, 976
Շաուռխ 50, 151, 212, 240, 270, 277, 464, 465, 486, 506—508, 517, 542, 565, 566, 568, 573, 574, 974

68, 79, 208, 313, 314, 317, 399, 458, 577, 963
Շար-Քյոյ 672
Շենգավիթ 203
Շենիկ 240—244, 475
Շինուհայր (Շնհեր) 346, 347
Շիպկա 100, 107
Շիվիլիկ 254
Շիրակ 17, 126, 235
Շիրակի բարձրավանդակ 855
Շիրակի գավառ 838
Շիրազալա 208
Շիրվանշեխ 214
Շնող 460
Շոռուտ 308
Շորագյալ 370
Շորժա 307
Շվեյցարիա 173, 188, 332, 479, 586, 610, 634, 971, 976
Շտիպ 672
Շտուտգարտ 219, 413
Շրեղ բլուր 923
Շուլավեր 388
Շումեն 665—668
Շուշանց 568
Շուշի 20, 55, 145, 308, 354, 373, 378, 389, 584, 751, 752, 757, 766, 767, 781, 823, 825, 828, 847, 848, 869, 874, 927, 957, 966, 977
Շուշնամերկ 241
Շուշու գավառ 39, 40, 58, 79, 78, 308, 313

Ոզմ 974
Ոխշարերդ 603
Ոսկեղջյուրի ծոց 287
Ոստանի գավառակ 276
Որնակ (Ակներ) 403, 920
Ջալդր 633
Ջայ գետ 475
Ջանանաբ 308
Ջարդախլու 969
Ջարչոու 659, 660, 664, 765
Ջարանջակ 46, 70, 213, 268, 506, 508, 509, 968, 974
Ջելեկեն կղզի 661
Ջերբրոն 744
Ջերնոզերբա 97, 108, 116, 501, 502, 670
Ջերնովցի 683—685
Ջերքեզիա 644
Ջիբուխլի (Վարդանաշեն) 346
Ջիկագո 636, 704, 706, 707
Ջիկ-Սեպվիզ (Ֆրումոաա) 686
Ջինաստան 20, 300, 487, 721
Ջիշրա 735
Ջլդր 68
Ջլդրի գավառ 18
Ջխուր 277, 506, 519, 974

Ջմշկածագ 492
Ջնքուշ 62
Ջոխ Գյադուկ կիրճ 152
Ջոլու (Վարսեր) 617
Ջուխ 967

Պագուա 692, 944
Պալմիրա 924
Պակրան 66
Պագեստին 524, 537, 544, 562, 578, 579, 730
Պամիր 524
Պանագաս 671
Պաշքեո 214
Պավե 519
Պարսից ծոց 230
Պարսկաստան տե՛ս Իրան
Պարտիզակ 486, 830, 831
Պեգու տե՛ս Պեգու Սիրամ
Պեգու Սիրամ 737, 740
Պեկին 339
Պեշիկթաշ 854
Պետերբուրգ 20, 35, 73, 108, 109, 114, 115, 145, 146, 165, 168, 169, 172—177, 180, 188, 195, 200, 201, 203, 216—221, 234, 235, 275, 287, 304, 307, 328, 329, 342, 351, 368, 374, 378, 442, 448, 453, 461, 487, 521, 529, 530, 533, 548, 580, 586, 593, 600, 606—610, 620, 621, 624, 626, 629, 630, 638, 639, 641, 642, 654, 712, 750, 761, 763, 775, 780, 781, 823, 829, 839, 848—851, 856—860, 863, 885—888, 908, 910, 936—938, 944, 951—958, 965, 967, 969, 972, 974, 976, 977
Պետրոգրադ տե՛ս Պետերբուրգ
Պերեկոպի գավառ 653
Պերզնկա լեռ 136
Պերզնկալի բարձունքներ 258
Պիանչա 679
Պիրեյ 830
Պլատանոս 672
Պլովդիվ 665, 668
Պլևնա 100, 107, 676
Պլատիգորսկ 645
Պոլիս տե՛ս Կ. Պոլիս
Պոլտավա 637
Պորտ-Սաիդ 561, 571, 730
Պորտ-Սուդան 734
Պորտ-Ֆիլիպպ 741
Պտղնի 206, 965
Պրագա 461, 716, 938, 974
Պրովանս 690

Ջալալօղլի 329, 330, 354, 383, 387, 399, 403, 425, 454, 460, 614, 970
Ջահան գետ 251, 254, 255
Ջանիկ 550
Ջանֆիդա 205

Քասպարա 744
Քաչուն 75, 206
Քավախք 928
Քավա կղզի 742
Քևբել-Հաուբան 722
Քևբել-Մուսա 555
Քևրկիսե 519
Քևնովա 691
Քևրզի Սիքքի 709
Քևրմուկի կիրճ (Կիլիկիայում) 256
Քզխլար 208
Քիրումի 733
Քոկյակարտա 743
Քրաշեն 63
Քուլամևրկ 23, 70, 519, 547
Քուլֆա 55, 75, 301, 314, 345, 439, 541, 973
Քուրա (Նոր Քուրա) 741, 745
Քուրջով 686

Ռանդուն 737—741
Ռևշտ 713—716, 718, 829
Ռևջաֆ 734
Ռևսնա 494
Ռբղրուց 683
Ռիգա 334, 442, 461, 626, 970
Ռշտունիք 787
Ռոդոստո 481, 501, 671, 830, 831
Ռոման 673, 674, 677
Ռոստով 174—177, 632, 633, 636, 638—640, 644, 648, 682, 823, 829
Ռոստովի գավառ 632
Ռումելիա 82
Ռումինիա 83, 99, 108, 116, 148, 290, 502, 536, 631, 641, 673—682, 685, 888, 909
Ռուսական կայսրություն 172, 282, 547, 659, 888
Ռուսաստան 7—10, 16, 19, 20, 23—28, 32, 35, 41, 54, 57, 58, 62, 65—76, 81, 91, 92, 95—99, 103, 106—113, 116—128, 135, 139, 144, 149, 150, 158—164, 168—175, 215, 217, 221, 224, 228—231, 236—239, 246, 248, 263—265, 276, 278, 280—287, 290, 299—306, 310, 314, 323, 324, 328, 331—338, 344, 357, 367—369, 373, 375, 378, 383, 384, 393, 395, 401, 407—411, 424, 425, 431, 440, 441, 445, 446, 449, 452—455, 461—466, 472, 484, 487, 501, 502, 512, 520—538, 542, 544, 546, 547, 559, 575, 576, 579—583, 586, 589—602, 605—611, 614, 615, 620—626, 629—633, 636, 639—643, 648—651, 657, 659, 661, 665, 666, 674, 679, 682, 685, 696, 712—715, 729, 738, 739, 749—752, 755, 757, 759—765, 769, 823, 839, 845, 850, 857, 859, 882—888, 891—895, 898, 923, 931, 933—939, 943, 944, 952—956, 968—970, 973, 975, 977
Ռուսչուկ (Ռուսե) 100, 665—666
Սաարիի ավազան 537
Սարունչի 613
Սախդա 725
Սալմաստ 151, 152, 239, 261, 274, 466, 548, 713, 717
Սալմաստի գավառ 549, 711, 966
Սալոնիկ 494—496, 543, 774
Սախալին 235, 715, 968
Սաղիբ 256
Սամաթիա 773
Սամարա 217, 329
Սամարղանդ 305, 659—664, 765
Սամարղանդի մարզ 661
Սամիրանդ 746
Սամսոն 83, 150, 266, 282
Սամարևդիա 55, 344
Սամուզարվիշ 457
Սանահին գյուղ 614, 969
Սանահին կայարան 330, 360, 361, 379, 381, 386, 972
Սանամևրկ 291
Սանդուխ լիճ 256, 257
Սանդուխի կիրճ 256
Սան-Ստեֆանո 9, 107—114, 116—119, 121, 125, 130, 135, 777
Սասուն 10, 50, 70, 137, 151, 224, 238, 240—246, 275, 278, 290, 292, 469, 471, 473—477, 480, 492 512 517, 518, 568, 569, 724, 745, 968, 972
Սարայ 548
Սարատով 173, 342, 389
Սարդարաբադ 206, 346
Սարդարաբադի տափաստան 204, 321
Սարիղամիշ 10, 301, 314, 383, 458, 540—542, 548, 551, 588, 611, 957, 975, 977
Սարջալար 203
Սերաստիա 142, 150, 238, 246, 271, 273, 286, 464, 465, 491, 504, 531, 555, 556, 563, 571, 777—779, 831, 951, 974
Սերաստիայի գավառ 18
Սերաստիայի կուսակալություն (նահանգ, վիլայեթ) 18, 23, 24, 43, 85, 523, 524, 533, 966
Սեդան 734
Սեմալ 240—244, 475, 476
Սեմարանդ 743, 744
Սեմյոնովկա 307
Սեն-Լուիգա 704
Սեյդաբադ 735
Սեյստան 660
Սերբիա 97, 108, 116, 462, 501, 502, 670
Սիբիր 23, 25, 173, 175, 177, 202, 225, 301, 304, 454, 968

Սիդնեյ 742
Սիլիստրա 665—668, 673, 674, 677
Սիհան գետ 563
Սիմֆերոպոլ 641, 651—653, 656—659
Սինար 734
Սինգապուր 735, 741
Սինգարաջ (Բալի կղզի) 744
Սիս 136, 565
Սիսիան 928, 962, 972
Սիսիմադան 454, 591, 974
Սիրդարյան մարզ 660, 663
Սիրետ 683
Սիրիա 70, 82, 84, 86, 524, 539, 544, 561, 562, 579, 631, 721—726, 729, 730
Սիրիամ 737
Սիրիայի նահանգ 722
Սիփան 863
Սլաղուն 670
Սլիվեն 665—668
Սղերդ 62, 142, 240, 270, 272, 466, 506, 556
Սղերդի գավառ 18, 85 507, 510, 974
Սմբրդան 676
Սմոլնի 655
Սյունիք 888
Սոլուխ 477, 973
Սոխորթ 469
Սողանլուի բարձունք 101
Սողանլուի (Մեծրանց) լեռներ 108
Սողանլուի տեղամաս 604
Սոչի 645, 648
Սովետական Հայաստան 705, 784
Սովետական Ռուսաստան 548, 563, 577
Սորբոն 188
Սորդար 214
Սոուջբուլաղի գավառ 711
Սոֆիա 100, 483, 665, 667, 670—672, 855
Սպահան 544, 712, 713, 716
Սպահանի նահանգ 711
Սպաղանք 241, 275
Սպարկերտ 505
Սպարկերտի գավառ 975
Սպեր 70
Սպիտակ 152
Սվագենք 256
Սվազ, տե՛ս Սեբաստիա
Սվազի գավառ, տե՛ս Սեբաստիայի գավառ
Սվազի նահանգ, տե՛ս Սեբաստիայի նահանգ
Սվազ-Կեսուկի անցք 256
Սվանվերդի 208
Սվիշտավ 100
Ստամբուլ տե՛ս Կ. Պոլիս
Ստավրոպոլ 175, 645, 647, 648
Ստավրոպոլի նահանգ 644
Ստարա-Զագորա 665
Ստեձներայա 683
Ստոկհոլմ 404, 973
Ստրասբուրգ 944
Սրվանձուղ 414
Սուրաշի գյուղ 656
Սուրաշի լիճ 654
Սուդան 734
Սուդակ 653
Սուեզի ջրանցք 120, 541
Սուետիա 569, 976
Սուլդուզի գավառ 711
Սուլթանաբադ 716
Սուլթան-Թեփե 672
Սուլթան Սալա 633
Սուլինա 677, 679
Սուխումի 103, 828, 849
Սուխումի օկրուգ 426
Սուչավա 683—685
Սուտին 305, 441
Սուրաբայա 743, 745, 746
Սուրբ Խաչ (Պրիկումսկ քաղաքում) 644—647
Ս. Խաչ վանք (Նոր Նախիջևանի) 176, 640, 641, 643
Ս. Խաչ վանք (Վանի նահանգում) 45
Ս. Կարապետ վանք (Կեսարիայում) 777
Ս. Կարապետ վանք (Մշո Սուլթան ս. Կարապետ) 45, 239, 470, 477
Ս. Կիրակոս վանք (Կեղսու) 270
Ս. Հովհաննես վանք (Վանի նահանգում) 45, 477
Ս. Ղազար կղզի 949
Ս. Նշան վանք (Լիբանանում) 725
Ս. Սորսորու վանք (Վանի նահանգում) 45
Սուրբ Վարդան գյուղ 270
Սուրմալուի գավառ 16, 34, 40, 48, 60, 66, 79, 104, 203, 207, 208, 308, 310, 313, 317, 356, 439, 577, 963
Սևան 846, 859, 923, 924, 943
Սևանի ավազան 39
Սևաստոպոլ 290, 291, 651, 653, 656
Սևերեկ 211
Սև ծով 83, 97, 108, 120, 278, 321, 487, 537, 539, 544, 637, 645, 674, 692
Սևծովյան նահանգ 20, 355, 634, 644—647

Վադըֆ 569
Վալախիա 673
Վաղարշապատ, տե՛ս Էջմիածին
Վան 24, 53, 61—63, 85, 87, 132—134, 137—143, 147—151, 185—187, 211, 238, 239, 246, 261—265, 272, 275, 282, 286, 287, 290, 464—466, 473, 477, 478—486, 490, 491, 504, 505, 508—511, 516, 520, 522, 531, 539, 542, 548—551, 555, 565—568, 573, 574, 666, 703, 713, 751, 752, 771, 774—779, 831, 851, 852, 863, 895, 923, 962—966, 969, 973, 975

Վանա ժայռ 924
Վանա լիճ 542, 543, 550, 682, 921
Վանի գավառ 18, 85, 212, 491, 492, 505
Վանի թագավորություն 924
Վանի կուսակալություն (նահանգ, վիլայեթ) 18, 23, 24, 43, 45, 52, 53, 62, 70, 277, 519, 523, 524, 533, 534, 566, 574, 580, 965, 967
Վանանդ 308
Վառնա 148, 149, 666—668, 855
Վասպուրական 10, 43, 82, 132, 133, 137, 140, 149, 152, 154, 185, 235, 238, 261, 263—265, 275, 276, 473, 486, 505, 713, 772, 852, 854, 928
Վատրա Դորնեյ 683
Վարագա լեռ 186, 264—265
Վարագա վանք 45, 140, 151, 775
Վարազ 568
Վարանդա 928
Վարդաբլուր 617
Վարդենիս 238, 967
Վարդո 50, 492
Վարշավա 305, 310, 442
Վենետիկ 687, 692, 751, 778, 782, 855, 857, 862, 883, 886, 899, 908, 910, 911, 914, 949—951, 960
Վերին Ագուլիս 308
Վերին Ախտա 204
Վերին Բիրմա 738
Վերջինիա նահանգ 702, 703
Վիգին 666
Վիեննա 480, 511, 527, 683—687, 719, 733, 751, 778, 856, 870, 899, 900, 911—912, 924, 927, 950, 951, 966, 971
Վիտոշ լեռ 483
Վլադիկավկազ 645, 647
Վյատկայի նահանգ 224
Վոլգա 524, 649
Վոլգայի շրջաններ 594
Վոլոգդա 952
Վոլլուզի նահանգ 691
Վրաստան 28, 41, 59, 75, 95, 105, 173, 209, 225, 302, 314, 321, 340, 343, 344, 369, 379, 389, 440, 441, 547, 719, 765, 782, 849, 888, 928

Տագանրոգ 175, 632, 637, 638
Տաթև 346
Տալվորիկ 240—245, 475
Տալվորիկի ձոր 70
Տաճկաստան տե՛ս Թուրքիա
Տաշքենդ 26, 659, 660, 662, 664
Տավրիկիա 653, 655
Տավրիկյան մարզ 355
Տավրիկյան նահանգ 652, 655, 658
Տավրոս 772
Տավրոսի լեռնակածաններ 136
Տարասկոն 690
Տարոն 44, 50, 53, 82, 150, 151, 238, 240, 242, 288, 290, 467, 469, 471—473, 475, 477, 568, 772, 779, 921, 967, 968, 976
Տարսոն 73
Տափրկ 474, 475
Տաք-Ազրյուր (Մխրզաչան) 473
Տենիս (Տինիս) 507
Տերգեվանք 477
Տերևանք 238
Տըրգու-Օկնա 673
Տըրնովո 100
Տխարի շրջան 23
Տիրեք 463
Տիգրանակերտ 62, 86, 212, 239, 243, 246, 270, 271, 276, 277, 464—466, 489, 492, 510, 518, 531, 579, 724, 779, 966, 968, 973
Տոլովա 683
Տոկիո 720
Տոմ 214
Տոմսկ 218, 360, 384, 389
Տոսկան 519
Տվերի նահանգ 175
Տրանզուա 740
Տրանսիլվանիա 682, 686—688
Տրապիզոն 83, 120, 150, 189, 266, 271, 273, 282, 464, 466, 522, 523, 531, 533, 544, 555, 580, 651, 778, 831, 968
Տրիեստ 946, 950
Տրիպոլի 725
Տրիպոլիս 482
Տրիպոլիտանիա 501
Տուլա 54, 145, 173, 239
Տուրն 119
Տուլչա 677, 679
Տուրունգ-Ագունդ 744
Տուրդա 686
Տուրին 944
Տուրուբերան տե՛ս Տարոն

Ռես-յուլ Այն 556
Ռիզե 544

Ցամաքաբերդ 204, 207
Ցարուկ 268
Ցիմմերվալդ 585, 976
Ցյուրիխ 172, 173, 937, 946
Ցրոնք 291

Ուեր 734
Ուզունյար 403, 617
Ուզուն-Համիդյար լեռնաշղթա 671
Ուզուն-Քյոպրի 671
Ուլխատ-Հոպրքըն 704

Ուլուխանլու 301, 330, 345, 385, 404, 454, 622, 973
Ումբրահնա 28, 97, 332, 537
Ունդուրչայ 600, 976
Ունչի 390
Ունյուլ-Օվա 268
Ունջիլիսա 208
Ուսքր 508, 704, 705, 707
Ուսումներա 214
Ուրալ 304, 943
Ուրանց 507
Ուրմիա 713
Ուրմիա լիճ 501
Ուրմիայի գավառ 541, 711
Ուրֆա 84, 267, 271, 465, 466, 555, 572, 579, 968, 976

Փամբ 457, 975
Փայաչուկ 274, 717, 966
Փարիզ 97, 108, 115, 117, 119, 173, 188, 217, 230, 280, 303, 480, 481, 484—486, 494, 501, 511—514, 523, 527, 548, 560, 563, 636, 656, 679, 691—696, 700, 708, 715, 730, 751, 774, 778, 831, 855—859, 862—866, 881, 886, 896, 912, 927, 946, 951, 958, 960, 970, 973, 976
Փարնասուս 207
Փարսպի 313
Փեքար 477
Փեշնվար 721
Փշուշ սար 476
Փոթի 55, 344, 584, 633, 692, 962
Փոցխով գետ 66
Փոքր Ասիա 22, 275, 283, 285, 524, 525, 537, 539, 557, 563, 665
Փոքր Հայք 486
Փոքր Ղարաքիլիսա 457, 975
Փոքր Նասիս 943
Փոքր Շահրիար 346
Փրովիդենս 704, 705

Քաբուլ 720
Քանաքեռ 78, 604
Քաջբերունիք 265
Քարահանքեր 670
Քերուսին 569
Քեմախ-Բողազ 555
Քեմախի գավառակ 86
Քեշան 671
Քեշիշքենդ 208, 613, 768
Քեսաբ 565, 725, 726, 779
Քերմանշահ 544
Քերքի 659
Քեւի 242
Քեւիի բարձունք 245, 476
Քեւիի լեռնալանջեր 244
Քեւիի լեռներ 569
Քըղի 52, 62, 70, 211, 212, 492, 518, 777, 968
Քըղիի գավառ 85, 519
Քիլիս 725
Քիշինև 99, 305
Քյասմա 203
Քյոփրի քյոյ 543, 548
Քյուլ-Թափա 923
Քյոթակ 831
Քոռաղբյուր 204
Քութայիս 55, 57, 58, 105, 179, 310, 338, 339, 344, 963, 966
Քութայիսի նահանգ 15, 20, 28, 29, 65, 66, 324—326, 345, 372
Քրդստան 154, 155, 516

Օդեսա 146, 168, 173, 177, 196, 217, 235, 237, 344, 389, 538, 655, 674, 682, 829, 952, 977
Օզուրգեթի գավառ 345
Օլթի 305, 458, 473, 543, 591, 963, 975
Օլթիի գետ 66
Օլթիի օկրուգ 16, 66
Օհանավանք 255
Օմդուրման 734
Օշական 48, 446, 847
Օսմանիե 725
Օսմանյան կայսրություն 9, 10, 22, 41, 60, 84, 98, 120, 121, 127, 130, 131, 152, 162, 231, 248, 279, 280, 283, 286, 287, 463, 501, 503, 513, 524, 529, 537, 538, 559, 560, 573, 574, 579, 582, 770
Օրդուբադ 17, 58, 308, 313
Օրդուբադի գավառ 308
Օրշան 548
Օրյոլ 236, 968
Օքսֆորդ 718

Ֆամագուստա 119
Ֆայում 726, 728
Ֆերզանայի հովիտ 662
Ֆերզանայի մարզ 660, 661
Ֆիլադելֆիա 703, 704, 706
Ֆիլիպոպոլիս 665—668, 671
Ֆիլիպպէ (Պլովդիվ) 473, 481
Ֆինլանդիա 26
Ֆոկշան 674, 677
Ֆռնուզ 136, 252, 255, 257
Ֆոֆռբար ժայռաբլուր 245
Ֆրանսիա 70, 98, 99, 115, 116, 119, 148, 246, 248, 263, 278—281, 284, 285, 305, 308, 319, 462, 463, 482, 524—528, 532, 534—537, 547, 559—565, 575, 578—583, 631, 666, 689—694, 700, 701, 727, 732, 770, 880, 966, 968, 976
Ֆրեզնո 706, 968

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Առաջարան (Մ. Պ. Աղայան) 7

Բ Ա Ժ Ի Ն Ա

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԱՐԻՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇԵՐՋԱՆՈՒՄ

Գլուխ առաջին.—Հայաստանի սոցիալ-տնտեսական և բաղաքական դրությունը 1870—1900 թթ.

1. Վարչական բաժանումը և ազգաբնակչությունը (Ա. Ս. Համբարյան) . 15
2. 1860—1870-ական թվականների բուրժուական բարենորոգումները. Գյուղացիական ռեֆորմը Անդրկովկասում և Արևելյան Հայաստանում (Ա. Ս. Համբարյան, Վ. Հ. Ռշտունի) 25
3. Հողային հարաբերությունները. Հարկերն ու պարհակները (Ա. Ս. Համբարյան) 33
4. Հայաստանի արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը (Ա. Ս. Համբարյան) 54

Գլուխ երկրորդ.— Հայ բուրժուազիայի և պրոլետարիատի ձևավորումը

1. Արևելահայ արդյունաբերական բուրժուազիայի և պրոլետարիատի ձևավորումը (Խ. Հ. Բարսեղյան) 72
2. Դասակարգային շերտավորումը արևելահայ գյուղում (Ա. Ս. Համբարյան) 77
3. Արևմտահայ բուրժուազիայի ու պրոլետարիատի ձևավորումը (Ա. Ս. Համբարյան) 82
4. Հայ բուրժուական ազգի ձևավորումը (Ն. Ա. Քավաքյան) . . . 89

Գլուխ երրորդ.—1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և հայկական հարցը (Թ. Փ. Հովհաննիսյան)

1. Արևելյան ճգնաժամը, 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և հայերը 97
2. Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի կոնֆերանսում և Բեռլինի կոնգրեսում 107
3. Հայկական հարցը և միջազգային դիվանագիտությունը . . . 123

Գլուխ չորրորդ.— Ազգային-ազատագրական շարժումները 1870—1880-ական թվականներին (Թ. Փ. Հովհաննիսյան)

1. Ազգային ճնշումները և հայածանքները և ազատագրական շարժումները 70-ական թվականներին 128
2. Ազգային-ազատագրական շարժումների վերելքը 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո 135
3. Ազատագրական-հայրենասիրական խմբակներն ու կազմակերպությունները 139
4. Թուրքական լծի տակ հեծող ժողովուրդների համագործակցության խնդիրը 153
5. Ազգային-ազատագրական շարժումների հարցը հայ հասարակական մտքի գնահատմամբ 156

Գլուխ հինգերորդ.— Հայ հասարակական-քաղաքական հոսանքներն ու բուրժուական կուսակցությունների ձևավորումը (Ա. Գ. Հովհաննիսյան, Ս. Պ. Աղայան)

1. Հասարակական հոսանքների քաղաքական դիրքորոշումը . . . 163
2. Նարոդնիկությունը և հայ իրականությունը 170
3. Նարոդնիկության քայքայումը և բուրժուական լիբերալիզմի ուժեղացումը 181
4. Հայ քաղաքական կուսակցությունների ձևավորումը 185

Գլուխ վեցերորդ.— Բանվորական և գյուղացիական շարժումները: Մարքսիզմի տարածման նախադրյալները

1. Բանվորական շարժումները XIX դ. 70—90-ական թվականներին (Խ. Հ. Բարսեղյան) 200
2. Գյուղացիական շարժումները (Ա. Ս. Համբարյան) 202
3. Մարքսիզմի տարածման նախադրյալները (Խ. Հ. Բարսեղյան) . . . 215
4. «Հայ բանվոր հեղափոխականների ասոցիացիան» (Խ. Հ. Բարսեղյան) . 221
5. Բանվորական առաջին մարքսիստական խմբակները հայ իրականության մեջ (Խ. Հ. Բարսեղյան) 225

Գլուխ յոթերորդ.— Ազգային-ազատագրական շարժումները XIX դարի 90-ական թվականներին

1. Թուրքական կառավարության հայահալած քաղաքականությունը և ժողովրդական ելույթները 90-ական թվականների սկզբներին (Ռ. Փ. Հովհաննիսյան) 230
2. Սասունի 1894 թ. հերոսամարտը (Ռ. Փ. Հովհաննիսյան) . . . 240
3. Բարենորոգումների մայիսյան ծրագիրը (Ս. Պ. Աղայան) . . 246
4. Զեյթունի 1895 թ. ապստամբությունը (Ռ. Փ. Հովհաննիսյան) . . 250
5. Վանի 1896 թ. ինքնապաշտպանությունը (Ռ. Փ. Հովհաննիսյան) . . 261
6. Հայկական ջարդերն ու ինքնապաշտպանական մարտերը (Ս. Պ. Աղայան) 265
7. Հայկական ջարդերը և մեծ տերությունների քաղաքականությունը (Ս. Պ. Աղայան) 277
8. Հայդուկային շարժումները 90-ական թվականների վերջերին: Անդրանիկի «մարտական հրահանգները» (Ս. Պ. Աղայան) 287

ԲԱԺԻՆ Բ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Գլուխ ութերորդ.— Արևելյան Հայաստանի սոցիալ-տնտեսական դրությունը XX դարի սկզբին (Ա. Ս. Համբարյան)

1. Ռուսաստանի թևակոխումը իմպերիալիզմի փուլը: Տնտեսական նոր տեղաշարժեր 299
2. Արևելյան Հայաստանի արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացումը 303
3. Ցարիզմի հողային ու հարկային քաղաքականությունը 319

Գլուխ իններորդ.— Սոցիալ-դեմոկրատական, լենինյան իսկրայական կազմակերպությունների ձևավորումը և հեղափոխական շարժումներն Անդրկովկասում ու Հայաստանում (Խ. Հ. Բարսեղյան)

1. Մարքսիզմի զարգացման լենինյան փուլի սկիզբը: Լենինյան իսկրայական կազմակերպություններն Անդրկովկասում ու Հայաստանում . . 328
2. Բանվորական և գյուղացիական շարժումները 341
3. Հայկական եկեղեցական կալվածքների բռնագրավումը և ժողովրդական ելույթները 1903—1904 թվականներին 350
4. Բոլշևիկյան կազմակերպությունների ձևավորումը 356

Գլուխ տասներեքերորդ.— Հեղափոխական շարժումները Արևելյան Հայաստանում 1905—1907 թվականներին (Թ. Ա. Մուրադյան)

1. Հեղափոխական շարժումները Հայաստանում 1905 թ. դարնան-ամռան ամիսներին 368
2. Փոխարքայության վերականգնումը Կովկասում։ Հեղափոխական շարժումների հետագա վերելքը 1903 թ. հունիսի 12-ի օրենքի վերացումը . 374
3. Հեղափոխության զարգացման բարձրագույն աստիճանը 1905 թ. հոկտեմբեր-դեկտեմբերյան իրադարձությունները Հայաստանում . . 378
4. Հեղափոխության տեղատվությունը։ Գործադուլային շարժումները Հայաստանում 1906 թ.։ Բոլշևիկների պայքարը աշխատավորների ինտերնացիոնալ միասնության համար։ Առաջին Պետական դուման . . 387
5. Գյուղացիական ելույթներն ու զինվորական հուզումները Հայաստանում 1906—1907 թթ.։ Գործադուլային պայքարը 1907 թվականին . . 397
6. ՌՍԴԲԿ բոլշևիկյան կազմակերպությունները Հայաստանում։ Երկրորդ Պետական դուման։ Հեղափոխության պարտությունը . . . 402

Գլուխ տասնմեկերորդ.—Հայաստանը ռեակցիայի տարիներին (1907—1910 թթ.) (Մ. Վ. Արզումանյան)

1. Ստոլիպինյան ռեակցիան և իրադրությունը Հայաստանում . . . 411
2. Պայքար ռեակցիայի հարձակումների դեմ... 417
3. Ժողովրդական հուզումները Հայաստանում ռեակցիայի տարիներին . 434

Գլուխ տասներկուերորդ.— Արևելյան Հայաստանը հեղափոխական նոր վերելքի տարիներին (1910—1914 թթ.) (Թ. Ա. Մուրադյան)

1. Սոցիալ-տնտեսական դրությունը 441
2. Հասարակական բախումները արևելահայ իրականության մեջ։ Չորրորդ Պետական դուման 448
3. Բանվորական շարժումները և գյուղացիական ելույթները, բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը 1910—1914 թվականներին . 453

Գլուխ տասներեքերորդ.— Արևմտյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և բաղաքական դրությունը 1900—1908 թվականներին

1. Արևմտահայերի սոցիալ-տնտեսական վիճակը 1900—1908 թթ. (Ն. Վ. Կարապետյան) 462
2. Ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում XX դարի սկզբներին (Ն. Վ. Կարապետյան) 469
3. 1904 թ. Սասունի ինքնապաշտպանությունը (Ն. Վ. Կարապետյան) . 474
4. Ազատագրական շարժման տրձագաղբները և քաղաքական շրջանների դիֆերենցումը (Ն. Վ. Կարապետյան) 479
5. Ժողովրդական շարժումների վերելքն Արևմտյան Հայաստանում 1905—1908 թթ. (Ա. Ս. Համբարյան) 487

Գլուխ տասնչորսերորդ.— Արևմտյան Հայաստանը 1908—1914 թվականներին

1. 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը և արևմտահայության վիճակը (Ն. Վ. Կարապետյան) 494
2. Ազգային-ազատագրական և սոցիալական շարժումներն Արևմտյան Հայաստանում երիտթուրքերի կառավարման տարիներին (Ա. Ս. Համբարյան) 503
3. Արևմտյան Հայաստանի ենթված ժողովուրդների համագործակցության հարցը (Ա. Ս. Համբարյան) 511
4. Հայկական բարենորոգումների խնդիրը 1912—1914 թվականներին (Ն. Վ. Կարապետյան) 520

Գլուխ տասնհինգերորդ.— Հայաստանն առաջին համաշխարհային պատերազմի տարիներին

1. Պատերազմական գործողությունները Կովկասյան ռազմաճակատում (Ե. Ղ. Սարգսյան) 536
2. Հայերի մասնակցությունը պատերազմին և կամավորական շարժումը (Ե. Ղ. Սարգսյան) 546
3. Արևմտահայերի զանգվածային ջարդերն ու տեղահանությունը (Ե. Ղ. Սարգսյան) 553
4. Ռեքնապաշտպանական մարտերը (Ե. Ղ. Սարգսյան) 565
5. Հայ գաղթականությունը (Ե. Ղ. Սարգսյան) 575
6. Միջազգային դիվանագիտությունը և հայկական հարցը պատերազմի տարիներին (Ե. Ղ. Սարգսյան) 579
7. Կուսակցությունների վերաբերմունքը դեպի պատերազմը (Հ. Ա. Պետրոսյան) 582
8. Պատերազմը և Արևելյան Հայաստանի տնտեսության քայքայումը. Աշխատավորների դրության վատթարացումը (Հ. Ա. Պետրոսյան) . 589
9. Դասակարգային պայքարի սրումը և հեղափոխական շարժումները Արևելյան Հայաստանում (Հ. Ա. Պետրոսյան) 599

Գլուխ տասնվեցերորդ.— Հայաստանը Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության նախապատրաստման ժամանակաշրջանում (Հ. Մ. Էլչիբեկյան)

1. Հայաստանը Փետրվարյան հեղափոխության օրերին. Ժամանակավոր կառավարության տեղական մարմինները Անդրկովկասում ու Հայաստանում. Արևմտահայերի առաջին համագումարը 606
2. Հեղափոխական շարժումները Հայաստանում Փետրվարյան հեղափոխությունից հետո. Հայաստանը հուլիսյան դեպքերի և կոռնիլովյան հակահեղափոխության օրերին 615
3. Հայաստանը Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության նախօրյակին 622

Բ Ա Ժ Ի Ն Գ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱՎԱՅՐԵՐԸ

Գլուխ տասնչորսերորդ.— Ռուսաստանի հայկական գաղթավայրերը

Հայկական գաղթավայրերը 1870—1917 թթ. (Վ. Բ. Բարխուդարյան) . 629
1. Նոր Նախիջևան (Վ. Բ. Բարխուդարյան) 631
2. Հյուսիսային Կովկաս (Վ. Ա. Խաչատրյան, Վ. Լ. Ադոբաշյան) . . 644
3. Աստրախան (Վ. Ա. Խաչատրյան) 648
4. Ղրիմ (Վ. Ա. Միքայելյան) 651
5. Միջին Ասիա (Ա. Ա. Գրիգորյանց) 659

Գլուխ տասնհնգերորդ.— Եվրոպայի և Ամերիկայի հայկական գաղթավայրերը

1. Բուլղարիա (Ս. Վ. Հովնանյան) 665
Հայկական վաշտի մասնակցությունը Բուլղարիայի ազատագրական մարտերին (Մ. Պ. Աղայան) 679
2. Ռումինիա (Ս. Է. Քոլանջյան) 673
3. Բուկովինա (Ս. Է. Քոլանջյան) 682
4. Տրանսիլվանիա և Հունգարիա (Ս. Է. Քոլանջյան) 686
5. Ֆրանսիա (Մ. Ա. Բարլոյան) 689
6. Անգլիա (Վ. Հ. Փարթամյան) 696
7. Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Ա. Դ. Աբրահամյան) . . . 702

Գլուխ տասնիններորդ.— Ասիայի և Աֆրիկայի հայկական գաղթավայրերը

1. Իրան (Դ. Ս. Հարությունյան) 711
2. Աֆղանստան (Ռ. Ա. Աբրահամյան) 720
3. Սիրիա և Լիբանան (Օ. Խ. Թոփուզյան) 721
4. Եգիպտոս (Օ. Խ. Թոփուզյան) 726
5. Եթովպիա (Ռ. Ա. Աբրահամյան) 731
6. Սուդան (Ռ. Ա. Աբրահամյան) 734
7. Հնդկաստան (Ռ. Ա. Աբրահամյան) 735
8. Բիրմա (Ռ. Ա. Աբրահամյան) 737
9. Ավստրալիա (Ռ. Ա. Աբրահամյան) 741
10. Ինդոնեզիա (Ռ. Ա. Աբրահամյան) 743

Բ Ա Ժ Ի Ն Դ

ՄՇԱԿՈՒՅԹԸ ԵՎ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Գլուխ հասներորդ.— Դպրոցը, գրականությունը, արվեստը և մամուլը

Հայկական մշակույթի զարգացման ընդհանուր ակնարկ (Վ. Ս. Երկանյան) 749
1. Դպրոց (Վ. Ս. Երկանյան) 754
2. Գրականություն (Մ. Մ. Մկրյան) 784
3. Թատրոն (Ս. Ա. Մելիքսեթյան) 820
4. Երաժշտություն (Մ. Հ. Մուրադյան) 831
5. Ճարտարապետություն (Վ. Մ. Հարությունյան) 843
6. Կերպարվեստ (Մ. Մ. Ղազարյան) 856
7. Մամուլ (Խ. Հ. Բաբսեղյան, Գ. Ա. Մադոյան) 865

Գլուխ հասնմեկերորդ.— Գիտությունը

1. Պատմագիտություն (Վ. Ս. Երկանյան) 882
2. Հայագիտություն (Ս. Բ. Հարությունյան) 898
3. Հնագիտություն (Գ. Հ. Կարախանյան) 920
4. Ազգագրություն (Դ. Ս. Վարդումյան) 926
5. Տնտեսագիտություն (Ն. Ռ. Թովմասյան) 930
6. Փիլիսոփայություն (Վ. Ղ. Սևյան) 939
7. Բնական գիտություններ (Վ. Դ. Ազատյան, Բ. Թումանյան, Կ. Ս. Մարչանյան, Է. Գ. Մալխասյան, Ա. Ս. Կծոյան) 942

Ժամանակագրություն (Է. Ա. Կոստանդյան) 962
Մատենագիտություն (Է. Ա. Կոստանդյան) 978
Ցանկեր (Թ. Մ. Ադոնց) 1003

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ VI

Հրատարակչական խմբագիր
Ա. Մ. ԱԴՈՆՑ

Դեղարվեստական խմբագիր
Հ. Ն. ԴՈՐԹԱԿԱՀՅԱՆ

Նկարչական ձեավորումը
Լ. Ա. ՍԱՂՈՅԱՆԻ և Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆԻ

Տեխնիկական խմբագիր
Լ. Ա. ԱՋԻՋԲԵԿՅԱՆ

Սրբագրիչ
Ա. Ա. ՂԱՓԼԱՆՅԱՆ

Հանձնված է շարվածքի 19. 11. 1979 թ.։ Ստորագրված է տպագրության 3. 07. 1980 թ.։
ՎՖ 04782 Չափը 70×108¹/16, թուղթ № 1։ Տառատեսակ՝ գրքի սովորական, տպագրությունը՝ հարթ, Պայմ. 96,2՛, տպագր. 65,74+4 քարտեզ մամուլ։ Հրատ.—հաշվարկ 91,26 մամուլ։
Տպաքանակ 12,000։ Պատվեր № 1246։ Հրատ. № 5169։ Գինը 6 ռ. 75 կ.։
ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչություն, 375019, Երևան, Բարեկամության փ., 24 գ։
ՀՍՍՀ ԳԱ Հրատարակչության տպարան, 375019, Երևան, Բարեկամության փ., 24։
Издательство АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24 г.
Типография Издательства АН Арм. ССР, 375019, Ереван, ул. Барекамутян, 24.

ЦЕНА
1 т
(2515